LG 67
C 3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍՈՍԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Երուանդ Լալայեանից.

0183 27/ամ 29


2010

03
5-97 Կր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ

ԲԱՌԱՐԱՆ



1006
29451
526

ՆՇԽԱՏԱՄԻՐԵՅ

Հ· Ս· ԷՓՐԻԿԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա — Ր

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1902

Հայոց Ազգագրական բեկ. Թիֆլիս

Հանրային Գրադարան Ա. Մխիթարեանց Անուան Публичная Библиотека

31130-42

+ 14227-58

Ա Զ Գ



ՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ մէջ կը նկարագրուին. Ա. — Մեր բոլոր նահանգները, գաւառները, քաղաքները, աւանները, գիւղերը, լեռները, դաշտերը, լճերը, վանքերը, և այլն նշանաւոր և յիշատակաց արժանաւոր տեղուանք։ — Բ. — Յատուկ խնամքով ազգային աշխարհագրական պատմութիւնն, ինչպէս նաև հնախօսութիւնն, իրենց բաժինն ունին գործոյս մէջ, և իւրաքանչիւր նահանգաց, գաւառաց և քաղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւն կը տրուի։ — Գ. — Մեր դաղթավայրերն ևս կը մտնեն Բառարանիս մէջ և ըստ կարելւոյն երկրագնդոյս վրայ գտնուող այն ամէն քաղաքներն՝ յորս բնակած և յիշատակ մը թողած է հայութիւնն, և կամ տակաւին կը բնակի։ — Դ. — Զանազան ձեռագրաց և չինուածոց յիշատակարանաց մէջ յիշուած աշխարհագրական անուններէն այն ամէնը՝ որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը ջանանք դուրս չթողուլ։ — Ե. — Կը յիշատակենք նաև այն ամէն այլազգաբնակ գիւղերն, յորս կը գտնուին ինչ ինչ յիշատակարանք և բերկորք հայրենի հնութեանց։ — Զ. — Նշանաւոր անուանց չատերու ստուգաբանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ոմանց դիմաց ըստ տեղւոյն կը նշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով։ — Է. — Ի տարև այն անուններուն, որոց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են ուրիշ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ տուած են օգտակար տեղեկութիւններ առանձին գրքոյս կամ թերթերու մէջ, կը նշանակենք համառօտագրութեամբ նոյն գիրքն կամ թերթն և գլուխն կամ էջն։

Բնաշխարհիկ Բառարանի այս երրորդ պրակն հրապարակ հանած ժամանակ, կը փութանք յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները այն ամենայն ազգային բանասէրներու, լրագրաց և հանդէսներու յարգելի խմբագիրներուն՝ որոնք բարեյօժար կամաք փութացին թէ առանձին նամակներով խրախուսել զմեզ և թէ տպագրութեամբ գրախօսականներ կամ ազդեր հրատարակել։

Որովհետև շատեր փափաքեցան գիտնալ թէ քանի պրակաց մէջ պիտի ամփոփուի ամբողջ Բառարանս, ուրենք գոհացնելու համար մէկին հաշուով մը միայն կրնանք ըսել, թէ կարելի է լինի 10էն 12 քսանթերթեան պրակ։

Ամէն դասակարգի անձանց դիւրամատչելի ընելու համար Բնաշխարհիկ Բառարանը, որոշած ենք չարունակաբար քսանեան թերթերէ ձեւացած պրակներով հրատարակել զայն. և փոխանակ ամբողջ գործին բաժնեգինը մէկ անգամով կանխաւ գանձելու, ամէն անգամ երբ նոր պրակի մը հրատարակութիւն խմանան՝ այն ժամանակ թող բարեհաճին բաժանորդք ղրկել նոյն պրակին բաժնեգինը։

Միեւնոյն ժամանակ կը փութանք ծանուցանելու Բնաշխարհի սիրով տոչորող ամէն հայու, թէ քիչ ժամանակի մէջ ունենալիք բազմաթիւ բաժանորդներ, որք օր աւուր բազմանալու վրայ են. ուստի Բնաշխարհիկ Բառարանը ունենալ փափաքողք փութալու են օգուտ քաղել այժմեան բարեյաջող պարագայէն, պրակ պրակ գնելով Բնաշխարհիկ Բառարանը, վասն զի, հակառակ պարագային կարելի է որ սպառին տպագրուած օրինակներն։

Բնաշխարհիկ Բառարանի երրորդ պրակի հետ կը ղրկենք մեր բոլոր բաժանորդներուն և փափաքողաց, նոյն բառարանի առաջին և երկրորդ պրակներու վրայ ազգային թերթերու մէջ հրատարակուած զանազան գրութիւններու հաւաքածոյ մը։ Կը փութանք յայտնելու նաև յարգոյ հասարակութեան և ի մասնաւորի գրագիտաց դասուն, որ բառարանիս կատարելութեան

համար հարկաւոր ամենայն միջոց և ջանք մեր կողմանէ անպակաս են, և կը խնդրենք որ իրենք ևս աղնուօրէն չյարուցանակել մեզ ալակցելու, ղրկելով մեզ արժանաւոր վայրերու լուսանկարներ, անձանօթ տեղերու նկարագրութիւններ, մասնական կամ ընդհանուր վիճակագրական տեղեկութիւններ, և այլն։ Ա՛ս այս հրապարակաւ կը կրկնենք մեր խորին և կանխիկ շնորհակալութիւնները։

Բնաշխարհիկ Բառարանի տպագրուած օրինակներու մեծագոյն մասն թէև սպառած է, սակայն շատերու խնդրանաց համեմատ, գիներ միշտ նոյն կը մնայ. իւրաքանչիւր պրակ կ՚արժէ զուտ 3 ֆր. (1,20 ռուբլի = 60 ակիճ), ճանապարհի ծախքը մեր վրայ։ Ա՛յն անձանց, որ կարենան մէկ անգամէն տասը օրինակ գնել, մէկ օրինակ նուէր կը ղրկուի։

Ա՛յս գիրքը ունենալ փափաքողներ, փութալու են այս տարին չաւարտած, և օրինակները բոլորովին չսպառած, գիմելու մեր հետեւեալ հասցէին.

Direction de l'Imprimerie Arménienne St. Lazare – VENISE (Italie)

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԹԵՐԹԵՐԸ
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ ՎՐԱՅ

Վենետիկ... անուն մը որ նոյնքան քաղցր ու անուշ կը հնչէ մեր ականջներուն, որքան Բնաշխարհին նուիրական ու յիշատակելի վայր մը։ Ինչո՞ւ այսչափ կապուած Հայ արուին հետ։ Չան ոչ Հայկ ազատութեան առաջին մարտը մղեց. ոչ Տիգրան մը կամ Լէոն մը բազմեց, և ոչ ալ Վարդան մ՚իննկաւ։ Սակայն Հան ծնաւ Հայութեան ներկան։ Գար մը առաջ երբ Մխիթար Սեբաստացի իր ոտքը Վենետիկ կոխեց, այն օր Հայկական վերածնութեան սկիզբը դրուեցաւ։

Հայ տպագրութիւնը եթէ Ս. Ղազարի մէջ չը ծնաւ, սակայն հոն կեանք ունեցաւ։

Գար մ՚առաջ մտէք Հայաստան ու Հայ դպրութիւն փնտռեցէք հոն՝ Մակեդոնի գարէն հետզհետէ ծլած ու ծաղկած մատենագիրները փոշիներու մէջ կը փառէին, իսկ Հայ միտքը որ ընդունակ էր վերածնութեան, թանձր քօղին տակ ծածկուած կը մնար։ Վերածնութեան այդ հակայ գործին առաջին քայլը Վենետիկ առաւ։

Ո՞մանք կանգ առնելով Վենետիկի գրական քուրատաններին առաջ, Զամչեան, Ինճիճեան, Հիւրմիւզ, Բագրատունի, Ալիշան հակայ անուններէն վերջ Վենետիկի ներկան աղքալի կացութեան մէջ կը գտնեն։...

Վենետիկ ալ նշանակելի երկ մը չի արտադրեր, ահա, այն խուռ դանգաղը որ վերջերս չարունակ կուղղուէր Ս. Ղազարի բազմօգուտ տպարանի հասցէին,

Ու այս խոհմանց մէջ սեղանիս վրայ գտայ «Բնաշխարհիկ Բառարան»ը (Ա. պրակ), Ս. Ղազարի էն վերջին հրատարակութիւնը։

«Բառարան» Բանաստեղծներ չեն պատրաստեր։ Թուղ գրասենեակի, առանձնութեան, յարատեւ և մեղուաջան աշխատասիրութեան արդիւնք է բառարան, զի նա կը կազմուի ճշգրիտ իրականութիւններէ։ Բնաշխարհիկ Բառարանը արժանի է ամեն գնահատութեան, որուն հեղինակը քրանաջան աշխատութեան հետ, ցոյց կուտայ և հաւաքողի սուր ընդունակութիւն։

Նախ հեղինակն թողլ խօսի՝ «Մրջյափ ախուր, մրջյափ և աղբալի մեր քնաշխարհի ներկայ վիճակը, այնքան սիրելի, այնքան և ցանկալի իւր տարակաց պղտեկաց համար իրենց հարց և նախնեաց անմահ յիշատակներն, զորս ներկայ բառարանիս մէջ փափաքեցանք և ջանացինք ի մի ամփոփել։...

Եթէ մեր ջանից ու փափաքանաց և հասարակաց զգացման համապատասխան երկ մը վկայուի առաջիկայ ծանր աշխարհութիւնս ի Բանասիրաց՝ մենք զմեզ երջանիկ պիտի համարինք»։

Ուրեմն հեղինակին ջանքն է «Բառգրքի» մը մէջ հաւաքել Հայրենի աշխարհին նահանգն ու գաւառ, քաղաքն ու աւան, չէն ու գիւղ, լեռ, դաշտ, գետ, վանք, ու վերջապէս բնաշխարհին ամեն անկիւն պիտի խօսի հոն, պատմական յիշատակներով համեմած։

Ներկայ պրակը որ կը վերջանայ Ծովային Կիլիկիոյ Անտառաւ գաւառով՝ (ի հնումն Տհշոկատար Տրուանդան և մեծ ու չէն քաղաք), կատարեալ յաջողութիւն կը խոստանայ այս կարեւոր ձեռնարկին։

Հեղինակ իր այս աշխատութիւն կատարելու համար ձեռքի տակ ունեցած է Բնաշխարհի մասին հրատարակուած թէ հայերէն և թէ եւրոպական լեզուներով գրեթէ բոլոր հրատարակութիւնները ու անոնցմէ խնամով օգտուել ու դասաւորել գիտցած է։...

Բնաշխարհիկ Բառարանի Ա. Պրակ կը բաղկանայ 20 տպագրական թերթերէ։ լաւ թուղթի վրայ, և մաքուր տպագրութեամբ։

Ամեն անոնք որոնք կը հետաքրքրուին քնաչխարհով, ու կուզեն իրենց չգիտցած աննուններու մասին տեղեկութիւններ առնել «Քնաչխարհիկ Բառարան» ունենալու են։

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԱՑ, 1900 թ. 22։

***

Պատկերազարդ Քնաչխարհիկ Բառարանի երկրորդ պրակը հետ ի հետ թղթատելէ ետքը աքանչացած մնացի։ Ձիշտն ըսելով, առաջին պրակը աւետած չեմ, բայց ներկայս թէ՛ առաջնոյն և թէ՛ յետիններուն վրայ կարող է նպաստաւոր գաղափար տալ մեզի։

Վենետկայ Մխիթարեան Վէր. Հարք իրենց ազգ առաւել գործերով յաջողեցան մեզի ապացուցանելու որ իրենք ալ՝ եւրոպական ապրանաւէրներու պէս՝ կրնան, համեստ դուռնբի մը փոխարէն, ազգը հարստացնել թէ՛ պարունակութեամբ, թէ՛ ընդհանուր աղնուութեամբ և թէ՛ պատկերներուն գեղեցկութեամբ ևսխ հրատարակութիւններով։

Այս երկրորդ պրակը, որ 160 երկսիւն էջեր կը բաղկանայ, Ալաւարուտ բառին չարունակութեամբ կ'սկսի և Արտաշատի վրայ տեղեկութիւնները չ'վերջացուցած կը վերջանայ։ Այդ 160 էջերուն իւրաքանչիւր պարբերութիւնը, և նոյն իսկ իւրաքանչիւր բառը մեզ մեկ նորութիւն կամ մեկ մեկ վերյուշում կը ներկայացնէ Հայկական սիրտերու։ Մանաւանդ գաւառացիք, անոնք որ երկայն տարիներէ ի վեր պանդխտած են օտար աշխարհ, յուզեալ սրտով և արտասրակաթ աչքերով պիտի կարդան իրենց մանկական զբօսավայրերու նկարագրութիւնը, աչքերուն առջև տեսնելով այն վայրերէն չատերուն պատկերները։ Այսօր ալեզարդ ծնողներ՝ իրենց սեռնեկէն առանց դուրս ելլելու՝ պիտի կրնան վերստին այցելել այն ուխտատեղիները, ուր կը վազէին պաշտելի մտամտութեամբ և հաւատացեալի սրտաբուղխ ջերմեռանդութեամբ կեանքի այլևայլ պարագաներու մէջ։ Երիտասարդներն ալ, այն աւելցակաց կայսերուն մէջ՝ զոր յոտահօրէն պատկերացած պիտի գտնեն այն պրակին մէջ, թերևս պիտի կրնան որոշել և ճանչնալ ծառի կոճղ մը, կիսաւեր կամար մը, հայկական ամրոցի մաս մը, ժայռ մը, որ իրենց սիրտերը պիտի թրթռացնէ անմոռանալի անցեալի մը յուշով։

Պրակիս մէջ մանաւանդ յիշատակութիւնն արժանի են Ալի քաղաքին և աւերակաց վրայ հմտալից տեղեկութիւնք, որոնք 30 էջ զբաւած են 30 պատկերներով։

Աշտարակ, Ալիկիւրիա (Ենգարէ), Ատրպատական, Արմաւիր լսփուելիք գրութիւններ են։ Անգղեայ և Հայոց մէջ եղած յարաբերութիւնք ալ իրենց չահեկանութիւնն ունին։

Անկարելի է պրակիս պարունակութեան վրայ մանրամասն տեղեկացնել ընթերցողը, կը բաւականանամ միայն յայտնելով այն կարծիքը, թէ գործոյս ամբողջութիւնով ամբողջ մեր հայրենիքը պիտի ունենանք մեր յարկին տակ։

ԱՐՇԱԼՈՅՍ, 1900 թ. 128։

***

Բազմավէպ սկսած է նաև հրատարակել Քնաչխարհիկ Բառարան խոշգրին տակ աքանչելի աշխատասիրութիւն մը զոր կը տառագրէ Ն. Սուքիաս Էփրիկեան։ Անունէն կրնանգաւել «Բիւրակն»ի ընթերցողները թէ ինչ է այս բառարանին նիւթն ու նպատակը։ Հանդիսարանի Հոկտ. համարի մէջ կը խօսի Ամասիոյ վրայ, բազմակողմանի ծանօթութիւններով ի վեր կը հանէ պատմական, աշխարհագրական, տեղագրական, նկարագրական, երկրագործական, արուեստական և վաճառականական կարեւորութիւնը, վիճակագրական տախտակներով։

ԲԻՒԶԱՆԴ, 1898 թ. 37։

***

Un savant Mékhitariste, le P. S. Epriguian, vient de publier, à Venise, le premier volume d'un magnifique ouvrage, intitulé «Dictionnaire illustré de la mère-patrie». D'un prix modique de 3 fr, ce beau livre mérite d'être lu par tout Arménien, comme par tout étranger qui s'intéresse à la géographie, à l'histoire, à l'archéologie et à l'art arméniens.

L'ARMÉNIE, 1890 N°. 137.

***

Առջեւնիս ունինք այս կարեւոր բառարանի առաջին քսանթերթեան պրակն, որ կը հասնի մինչև ԱՆԱՄՈՒՆ անունը, զարդարուած ընտիր պատկերներով և այլազան արձանագրութեամբք. գործ մը՝ որուն նմանը չէր տեսնուած դեռ մեր մէջ, ի բաց առնելով Մխիթար աբբահօր և ն. ձիվանիանի Յաւուկ անուանց բառարանները, որոնք,— պէտք է խոստովանիլ, — որքան ալ առաջնութեան պատիւը վայլեն՝ չեն կրնար հասնարիլ Վեր. Հ. Էփրիկեանի երկասիրութեան։ Գործին այսքան կարեւորութիւն տանալուն գաղտնիքն հոն է որ՝ Վեր. Հեղինակը կրցած է օգտուիլ ազգային և օտար ամէն կարգի հրատարակութիւններէն։... Վերջապես գործ մը՝ զոր կրնանք յանձնարարել ամէն կարգի կրթասցողներու, յայտնելով նաև թէ մեզի չափ գոհ պիտի ըլլան նաև ամէնքն ալ։

ԲԱՆԱՍԻՐ, 1899 էջ 345

***

Հայագիտանի աշխարհագրական բառարանի այս երկրորդ պրակն ալ հրատարակուած է որ կը բաղկանայ 161–320 երեսներէն և կը հասնի մինչև «Աշտիշատ»։ զարդարուած է 91 պատկերներով։ Այս պրակի մէջ կը գտնուին վիճագրական, կրթական և այլ ընդարձակ տեղեկութիւններ Ատրպատականի, Անիի (բազմաթիւ պատկերներով), Ատանաի, Արաքսկերի, Արճէշի, Արղընի Մատենի, Անկիւրիոյ, Աշտիշատի, Անգղեաի-Լոնտոնի և Մանչեսթրի Հայ գաղութները—Ատրպատականի և այլ բազմաթիւ քաղաքներ.

բի վրայ որոնք կամ մեր հայրենի երկրին կը վերաբերին և կամ հայ գաղթականներ կը բնակին կամ բնակած են այն տեղեր։

Աւելորդ է ըսել որ այս կարևոր և հսկայ աշխատութիւն—արդիւնք մանրազնին և երկար խուզարկութիւնների և ուսումնասիրութիւնների — չատ հետաքրքրական ու չահեկան է ամեն Հայի համար, ինչպէս և ամեն անոնց համար որոնք Հայերի և Հայաստանի մասին կը հետաքրքրուին։

ԱՐՄԷՆԻԱ, ԺԲ. Թ. 5։

* *

Հ. Էփրիկեանի այս աշխատութիւնը արժանի է առանձին ուշադրութեան։ «Բնաշխարհիկ Բառարան»—դա աշխարհագրական անուններուն մի հարուստ ժողովածու է։ Մինչեւ այժմ հրատարակվել են այդ գործի առաջին եւ երկրորդ հատորները, որոնք միասին կազմում են 320 մեծադիր, երկու սիւնակից բաղկացած երեսներ։ Այդ հատորների մէջ դեռ չէ վերջացել Ա. տառը. այս հանգամանքը արդէն ցոյց է տալիս, թէ որքան առատ ու պատկառելի պիտի լինի ամբողջ աշխատութիւնը։ Մի աշխատութիւն, որ յիշեցնում է Վենետիկի այն ժամանակները, երբ ակադեմիական հատատփոր հրատարակութիւններ էին լոյս տեսնում։

«Բնաշխարհիկ Բառարան» ասելով չը պէտք է հասկանալ այն տեղերի բառարանը, որոնք Հայաստանում են գտնվում։ Ո՛չ։ բառարանի մէջ մտնում են եւ այն բոլոր տեղերը, ուր հայը առ է դրել իր գարաւոր թափառութիւնների ժամանակ։ Արպէս, դուք այս բառարանում գտնում էք եւ «Անգլիա» բառը։ Այդտեղ Մեծ Բրիտանիայի մանրամասն կամ համառօտ տեղագրութիւնը չէք գտնում դուք, այլ տեղեկութիւններ այն մասին, թէ հայերը Անգլիայում երբ են եղել, ինչ վաճառականութիւն էին անում, ինչ անուններ են թողել եւ այլն։ — Ահա թէ որքան լայն ծրագիր է վերցրել Հ. Էփրիկեան։

Գալով հայաբնակ տեղերի նկարագրութեան, մենք այստեղ տեսնում ենք նոյն իսկ աննշան գիւղերի անուններ, ի հարկէ, այն անունները, որոնք կարող էին յայտնի լինել վենետիկում նստած հայ վարդապետին։ Հինն ու նորը, աւերակ ու կանգուն վանքը, մի խօսքով այն ամենը, ինչ աշխարհագրական տեղ է ներկայացնում եւ թողել է անուն, մտել է «Բնաշխարհիկ Բառարանի» մէջ։ Ինչ կասկած, որ բոլոր տեղերի մասին Հ. Էփրիկեանը չունի լիակատար տեղեկութիւններ։ Այդպիսի բան չէ էլ կարելի պահանջել։ Ուստի եւ անհետաքրքրութեան է պատահել բառարանի մէջ այսպիսի բացատրութիւններ։ «Գէնիա—գիւղ. Ախալքալաքի, 18 տուն բնակչօք»։ «Ագ—Դաշ—գիւղ Ճոլկասաք (Այրարատ) գաւառի մէջ»։ Բայց դրա փոխարէն այն տեղերը, որոնք յայտնի են, ուր նոյն իսկ հարուստ տեղեկութիւններ, նկարագրված են շատ մանրամասն կերպով, որքան այդ հետաքրքրական է մի բառարանում։ Այսպէս, Անին գրաւում է 30 երես, Ախալցխան — 8 երես, Ախալքալաքը — 6 երես, Ալէքսանդրօպօլը — 6 երես։ Նկարագրութիւնների մէջ չէ մոռացված անցեալը. իսկ ներկան շատ տեղերում լուսաբանված է նաեւ վիճակագրական տեղեկութիւններով։ Այս վերջին տեղեկութիւնները առատ են մանաւանդ ռուսաց Հայաստանում գտնվող տեղերի նկարագրութեան մէջ. հեղինակը ձեռքի տակ ունեցել է Կովկասեան լոյս տեսած պաշտօնական վիճակագրութիւնները։

Բառարանի մի մեծ առաւելութիւնն էլ այն է, որ նա պատկերազարդ է։ Պատկերների կողմից Հ. Էփրիկեանը շատ նպատակաւոր պայմանների մէջ է գտնվում. Ս. Պազարի միաբանները վաղուց են սկսել պատկերազարդ տեղագրութիւններ տալ. բաւական է յիշել Հ. Ալիշանի «Այրարատ», «Միսեւան», «Սիսական», «Շիրակ» պատկերազարդ գործերը։ Ուրեմն բաւականաչափ պատրաստ պատկերներ կան Հ. Էփրիկեանի տրամադրութեան տակ։ Եւ Բառարանի պատկերները մեծ մասամբ հին են, արդէն մի քանի անգամ տպված։

Այժմ խօսենք այս գեղեցիկ գործի պակասութիւնների մասին։ Առաջին պակասութիւնն այն է, որ, ինչպէս իմանում ենք մեզ գրած նամակից, Բառարանը տպվում է միայն 500 օրինակ եւ այդ քանակութեան կէսը արդէն վաճառված է, այնպէս որ գիրքը չուտով պիտի սպառվի։ Երկրորդ պակասութիւնն այն է, որ Բառարանը մաս-մաս նախ տպագրվում է Բազմավէպում» եւ ապա առանձին։ «Բազմավէպը» փոքրիկ ամսագիր է եւ չէ կարող մեծ կտորներ տալ։ Մայիսի համարում տպված է բառարանից միայն 3 երես եւ դեռ Գ. տառը չէ վերջացել։ Այս հաշվով քանի՞ տարի պիտի ձգձգվի բառարանի ամբողջ տպագրութիւնը։ Յանկալի կը լինէր, որ Ս. Պազարի վանքը վերացներ այս մեծ անյարմարութիւնը։

Հ. Էփրիկեանը իր այս գեղեցիկ եւ պատուաբեր գործը դլուխ հանելու համար կարօտ է մեր հասարակութեան աջակցութեան։ Թող չը կարծեն թէ դրամական օգնութիւն հասցնելու հարւէր ենք կարդում։ Ս. Պազարի վանքը, ունենալով շատ համեստ եկամուտներ, շատ նեցուկում է իր հրատարակչական գործունէութիւնը առանց լուրջ մի բացակայութեան դիմելու։ Ներկայ դէպքում պահանջվում է բարոյական աջակցութիւն։ Ահա ինչպէս։

Թիւրքաց եւ Ռուսաց Հայաստանում կան շատ տեղեր, որոնց նկարագրութիւնները հրատարակված չեն, բայց որոնք պէտք է մտնեն Բառարանների մէջ։ Ուստի Հ. Էփրիկեան մի շրջաբերական նամակով դիմում է բոլոր գրասէր Հայերին, որ նրանք օգնեն իրան։...

«Բնաշխարհիկ Բառարանի» պէս բովանդակութեամբ եւ արտաքինով գեղեցիկ մի գիրքը կարող է պատուաւոր տեղ բռնել իւրաքանչիւր նոյն իսկ խոստապահանջ Հայի տեղանի վրա։ Խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այդ գիրքը, մանաւանդ որ գինն էլ շատ մատչելի է. ամեն մի հատոր արժէ 1 բուբլի 20 կոպէկ։ Կարելի է ձեռք բերել եւ Թիֆլիսի գրավաճառանոցներում։

Լ.

ՄՇԱԿ, 1091 Թ. 111։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԲՆԱԾԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ա.

ԱԲԱՆՊ. — Գաւառ Սիւնեաց աշխարհի, Ազահէնք, Ծղուկ և Բաղք գաւառաց մէջ տեղ։ Տես ՀԱԲԱՆՊ։

ԱԲԱՍ. — Գիւղ 20 տուն բնակչօք, Ա. յարաբառայ Բաղրեւանդ գաւառի Խալի–Եաղի վիճակի մէջ, Շեւհան գետի ակ կողմը։

ԱԲԱՍԱՁՈՐ. — Ջորահովիտ Ա. յարաբառայ Նիգ գաւառի Բջնոյ վիճակի մէջ. համանուն գիւղ մը կը յիշուի յարձանս Հազարծնոյ, զոր Վրաց Գորգի Թագաւորն նուիրած է նոյն վանաց։ Կիրակոս պատմիչն ալ նոյնը կը հաստատէ ըսելով, թէ « ... եւս (Գորգի Վրաց Թագաւորն) եկեղեցւոյն, ձեռնադրեաւ իւրով գերիւս գիւղան՝ զԱբասաձոր և զՅանձուան». կը յաւելու ի վերջ նոյն գլխուն, թէ կար և բով մի յԱբասաձոր։ Այդ բովը առաջ պղինձ պարունակելուն համար, ժամանակ անցնելէ վերջ ձորահովիտը կոչուեր է Պղնձահանքի ձոր, և այժմ կը կոչուի Մխիթարեայի ձոր։ Այս հովտէն վազող Ջանգի (Հրազդան) գետի մէկ ճիւղն՝ հաւանական է որ ի հնումն կը կոչուէր Աբասաձորի ջուր ու յետոյ փոխուած Պղնձահանքի ջուր, և այժմ Մխիթարեայի ջուր։ Այս ձորի մօտ է Արտաշազդայ Ապարանք կոչուած վանքը։ Տես ի կարգին։ Տեղւոյս բովէն շատ ժամանակէ ի վեր պղնձահանութիւնը դադարեր է, այժմ սկսած են նոյն տեղերէն մարմար քար հանել։ Ոմանք սխալմամբ Աբասաձորը կը դնեն Այրարատ։ — Կիր. պատմ. ԺԲ։ Հ. Հայ. 313։ Հնախ. Հայ. հատ. Ա. 182։ Սմբատեան. Գեղարքունի, 184, 346, 364։

ԱԲԱՍԱՁԵՆ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Ներսիսեանց Ս. Կարապետ եկեղեցւոյ՝ 1296ին գրուած արձանագրութեան մը մէջ յիշուի անունս։ — Միսակեան, 196։

ԱԲԱՍ ԹՈՒՄԱՆ. Տես ԱՊԱՍ ԹՈՒՄԱՆ

ԱԲԱՍ–ԿԻՕՂ կամ ԱՊԱՍ–ԿԻՕՂ. — Լճակ Ա. յարաբառայ Ճակատաք գաւառի մէջ, որոյ մօտ կայ համանուն հայաբնակ գիւղ մը, որոյ բնակիչք են 44 տուն հայ և 4 տուն թուրք։ Հայք ունին Ս. Սարգիս եկեղեցի մը։ Լճակի ջուրն կը գործածեն գաշտերը ոռոգելու։ Գիւղիս հարաւային և հիւսիսային կողմերն կառուցած են Ռուսաց պահակատուներ։ Ասոր ճամբուն վրայ գտնուած է (1859) ընտիր ածխահանք, շնորհիւ Մկրտիչ Պէյի Ռէյիզեան։ — Այրարատ, 110։ Այրտ. Ամսագիր. 1870, էջ 273։ Հայկոռնի. Բագրեւանդ, 365։

ԱԲԴԻԼԱ–ՍԱՐ կամ ԱՊՏԻԼ–ԱՍԱՐ. — Հրաբղխային լեռ Սիւնեաց Գեղաքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային կողմը. բարձր 8753'։ Լեռս այսպէս կոչուած է նահատակի մ'անուամբ, որոյ գերեզմանը կը գտնուի վրան և ուխտատեղի է։ — Միսակեան, 26։ Տիւսպուռա Գ. 340։

ԱԲԵԼԵԱՆՔ, ԱԲԵՂԵԱՆՔ կամ ԱԲԵՂԵՆՔ. — Աբշակունեաց ժամանակ նախարարու- թիւն և գաւառ մ'էր Աչրարատայ, այժմեան Ստորին Բասենի արեւելեան մասին մէջ։ Ի գիրս նախնեաց գժուար է գտնել ասոր անուամբ քաղաք մը կամ գիւղ, և հազիւ երբեք յիշուած է գաւառն։ Վաղարշակ Աբ- շակունին, ըստ պատմիչը Խորենացւոյ, կը կարգէ « զԳաբաղ ոմն ի վերայ կուսից և զԱբեղ Սպասարար և Գահնաւոր, և շէնս պարգեւէ նոցա, յորոց անուն և կոչին տապէս նախարարութիւնքն Աբեղեան և Գաբեղեան». ատոր կը յայտնուի թէ գաւառս իւր անունն առած է համանուն նախարարութենան Աբել նահապետի անունէն։ Աբեղենք տահմանա- կից լինելով Գաբեղենից և միւնոյն ժամա- նակի մէջ ձեւացած, գրեթէ շատ անգամ միասին կը յիշուին ի պատմութեան. բայց նախարարական տոհմիս անունն՝ Ջ. գարէն առեւ չի յիշուիր, մինչդեռ Գաբեղեանք կը տեսնեն մինչեւ ԺԲ դար։ Ս. Տահակայ Գահ- նամակի մէջ կրկին իշխանք կամ գահակալք կը յիշուին, անգամ մը՝ ԻԹ. Աբեղենից տէր, տպտ ԼԶ. Ամլ Աբեղեանն, կը յիշուին նաեւ Մեծին Ներսիսի Գահնամակի մէջ՝ ՁԸ, Ա- բեղոռնիք։ Աշխարհապատում բանակի մէջ Գաբեղենից և Հաւնունեաց նման՝ 300 էր նաեւ Աբեղենից զօրաբաժինը։ Ի գարու սկիզբը Աբեղ անուն նահապետ մը կը յիշուի այս տոհմի, « այր շայա և շղոմարար և տու- տակատպատ »։ Քաջին Վարդանայ ժամանակ Աբեղենից Տէր էր Գագրիկ։ Գար մը վերջը Ներսէս Բ ժամանակ, Գունայ ժողովքի մէջ վերջին անգամ մ'ալ կը յիշուի տոհմիս իշ- խան Գրիգոր Աբեղեան։ — Ստորին Բա- սենի այս արեւելեան մասը՝ արեւմտեանէն առնլի ընդարձակ է, և կը տահմանուի հիւսիս —արեւելեան կողմէն Օշականու լեռներով, և անոնց շարունակութեամբ Գագաք բեփէ, Գափլոռ գայա, և այլ լեռներով կը բաժնուի Վանանդ և Գաբեղենք գաւառներէն. հարա- ւային կողմը կ'ինկնայ Հաւնունեաց և արեւմ- տակողմը՝ Ստորին Բասեն։ Գաւառիս մէջէն կ'անցնի Երասխը, յորում կը թափին շատ մը վտակներ, որոց անուանները չեն յիշուիր բաց ի մէկ քանիէն։ Երկիրը թէեւ փոքր բարձրութիւններով բիչ մը ալեհար է, բայց կրնայ առնլի գաշտային համարուիլ, վասն զի չունի նշանաւոր բարձր լեռներ։ Գլխաւոր տեղն է Մժնկերտ հին բերդաւանը, որոյ նկարագիրը, ինչպէս նաեւ գաւառիս զանա- զան գիւղերը կը գրուին երկոց կարգին։ — Խոր. պատմ. Բ. Ը. Կ։ Խոր. աշխ. 640։ Ղազար փարպ. 126, 167։ Ստ. Հե. Հայ. հա. Բ. 154։ Աշխարհատ. 37—44։

ԱԲԵՂՆԵՐ. — Լեո Վասպուրականի Ան- ձնացեաց գաւառի մէջ, Հոգւոց վանքի մօտ։ 1648ին մեծ վնասներ տուող երկրաշար- ժով խորտակեցաւ, երեք մարդ տակը մնա- ցին, պիտացը գանուած ձորէն վազող և գա- նազան ջրաղացներ գարձընող գետոյն ըն- թացքն ալ խափանուեցաւ — Զամչեան Պատմ. հա. Գ. 627։ Նոր Հայ, 157։

ԱԲԵՂՈՒՆԻԲ. Տես ԱԲԵԼԱՆՔ։

ԱԲԼԱՀ. — Գիւղ Աշտարակ Ջրաբերդ (հն. Մեծկաւանք) գաւառի, Գեառչինի հիւսիսային կողմը, ձորի մէջ։ Բնակչաց թիւն է 200, ո- րոնց մէկ մասը գաղթած է Հալէպերքէ և ուրիշ տեղերէ։ Երկիրն ջրաբեր հարթինաւէտ, օդն բարեխառն, ջուրն քաղցրահամ։ Ունի հայա- կաս եկեղեցի մը Ս. Մեսր, կառուցուած 6 սիւներու վրայ. երկայնութիւն 18 մեթր 85 սանթիմ., լայնութիւն 10 մեթր 30 սանթիմ.։ Եկեղեցիս ամխիզէի վրայ գրուած երեք գրչագիր աւետարան. առաջինը գրուած է Հայոց ՋԾԲ (= 1463) թուին, վան քա- ղաքի մէջ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուա- ծածնին և Սուրբ Վարդան զօրավարին։ Ե- պիսկոպոս մը գտնուով այս՝ Պուզուխ անու- նով մէկէն, նուիրած Էջմիածնի. թէ ինչ- պէս հոս բերուեր է չիմացուիր։ Երկրորդն ունի անհաւատալի թուական մը ՌՃԶԳ (= 834). Մարկոսի աւետարանէն վերջ կայ ազաւաղեալ լեզուով գաւմական յիշատա- կարան մը, կը յիշուն կիրեվանեաց ձորեր և սարեր։ Երրորդ ընդրութեան ժամանակն անյայտ է։ — Ս. Ալիշանեան ուխտատեղի մ'է գիւղիս հիւսիսակողմը՝ բարձր սարի վրայ, ուր կայ խաչարձան մը, և մօտը՝ հացի և մե- ծամեծ կաղնի ծառ։ Հին ժամանակ խաչ- արձանի վրայ կայ լեր մնացուս, որ վազուց փլած է։ — Արցն, 267—9։

ԱԲԿԱՎԱՆՔ. — Յիշուի Սիսնեաց Արեւիք գաւառի մէջ։

ԱՐՆԱԳԵՂ. Տես ԱՓՆԱԳԵՂ։

ԱՐՆԻԱ. — Գիւղ Ախալքալաքի, 18 տուն քրակչօք։

ԱԲՐԱՀԱՄՈՒ ՎԱՆՔ (Ս.) կամ Ս. ԱԲՐԱՀԱՄՈՒՆՔ. — Վանապարհականի (երեւանեան) Հայոց ձորի գաւառի մէջ, Վանայ լճի արեւելեան կողմը, խէքուց վանքէն երկու ժամ հեռու դէպ ի հիւսիս կ՚ինկնայ, Գետնդեանց աշակերտի Աբրահամու խոստովանողի անապատս։ Քայսմաւուրաց մէջ դիպ. 20ին կը յիշուի հետեւեալը. «Գնացեալ (Ս. Աբրահամ) դադարեաց ի գաւառն Հայոց ձոր». և վերջը, «Թագեցին զմարմին Աբրահամու յիւրում անապատին. և կոչի տեղին՝ Սուրբ Աբրահամ հարեւանք, մինչեւ ցայսօր ժամանակի»։ Աբրահամ խոստովանողի վրայ կը ճառէ նաեւ ազգն Եղիշէ։ Աբրահամ մենակեցիս մեռնելէն ետքը՝ այս կողմի բարեպաշտ քրիստոնեայք միաբան աստ յանուն Ս. Աստուածածնի փոքրիկ մենաստան մը կը շինեն, որոյ հիւսիսակողմը՝ տաճարի կից՝ կ՚ամիսիսին եւ բանելոյն նշխարներն և վրան մատուռիկ մը կը կառուցանեն։ Վանքն այժմ ամայի է և կիսակործան մնսւր գրից մէջ, արձանագրութիւն ամենեւին չունի. տարին անգամ մը Համբարձման ատնին կը խաւիին հոս բազմաթիւ ուխտաւորք, նոյն օրը կու գայ նաեւ խէքուց վանքի վանահայրը և կը պատարագէ։ — Տեղագրութիւն 280։ Պտկ. Նոր Հայ. 53։ Մխիթարեան, Նկար. ուղեւորութիւն, մասն Ա. 164–7։

ԱԲՐԱՀԱՄԵԱՆՔ. — Արշակ Թագաւորի և սրբոյն մեծին Ներսիսի ժամանակ տունմ մը անուն էր. 100 հոգւով մանաւակցեցան աշխարհազաւմար՝ բանակին։

ԱԲՈՒԼ Լ. և Գդ. Տես ԱՊՈՒԼ։

ԱԲՈՒՍԱՀՔ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի Թալի–Եազի վիճակի մէջ, Շեհան գետի հարաւային եզերաց մօտ. բազկացած 10ի չափ բրդայց տներէ։ Գիւղս ունի շատ ապգային հնութիւններ և գերեզմանաքարեր, որոց արձանագրութիւնք մաշած են։ Գիւղացի քուրդ մը տանը հիմերը փորելով գտած է շատ հարստութիւն, ուրիշներ ալ նոյն օրինակին հետեւելով գտած են փոխանակ ստակի՝ գերեզմանաքարեր, խաչարձաններ, կաւէ անօթներ. վերջին տարիներս գտած են նաեւ 3 հատ հին գանգակներ անընթեռնելի արձանագրութեամբք։ Նշանաւոր է դէպ ի արեւմտեան հարաւ բարձրացած քարաւերան մը վրայ կառուցուած հին ամրոցն, որ ունի արտաքին և ներքին կրկին պարիսպներ. արտաքինն մեծ մասը փլած և պատած է բլրոյն հիւսիսային երեսը։ Ներս թէև մեծաւ մասամբ կործանած է, բայց դեռ կը նշմարուին իւր ընդարձակ մեհերանացներն, նեռ արձակելու պատուհաններ, սրբատաշ քարերէ գրանց և պատուհանաց եզերքները, ջրամբարներ, և այլն։ — Հայկունի, Բաղդեւանդ, 85–9։

ԱԳ–ԱՀՄԻՑ. — Այս անուամբ երկու Թրքաբնակ գիւղ ունի Այրարատ. մին Ճակատք գաւառի Սուրմառի վիճակին մէջ. միւսն Շարուրայ մէջ։

ԱԳ–ԱՊԱՏ. — Վիճակ Իգմիաի նահանգին Գանձակէ գաւառի մէջ։ Ըն. 6, 288, յորոց Հայք 900, և ունին 1 պլրոց 45 աշակերտօք։

ԱԳԱՐԱԿ. — Անուն բազմաթիւ գիւղից մեր աշխարհի զանազան գաւառաց մէջ։

Այրարատ նահանգն ունի չորս հատ։ — Առաջինն կը կոչուի նաեւ Ագրակ և Էգրեկ, և կ՚ինկնայ Շիրակայ մէջ, Տեկոռէն կէս ժամ հեռու դէպ ի արեւմուտք։ Ըէնի չափաւոր մեծութեամբ խաչաձեւ և գմբեթաւոր եկեղեցի մը, որոյ կից է հիւսիսային կողմէն ուրիշ քառակուսի եկեղեցի մը, երկայն 15 մեթր և լայն $5\frac{1}{2}$. երկրորդ եկեղեցւոյս բաց ի պատերէն ամենայն ինչ կործանած է։ Գմբեթաւոր և կանգուն (թիւ 1) եկեղեցւոյ վրայ կայ արձանագրութիւն ՆՇԸ (= 1006) թուականս, բայց հիմնարկութիւնն կը թուի դեռ ետելի հին։ — Երկրորդն՝ ձակատք գաւառի կողր վիճակի մէջ, համանուն գետակի ձախ կողմը. այժմ թրքաբնակ է. կ՚ենթադրուի որ ի հնումն մեծ շէն մը եղած բլլայ։ — Երրորդն է, Արագածոտն գաւառի Ակներդ վիճակի մէջ. բնակիչքն թուրք են, ունին ընդարձակ անդաստաններ։ — Չորրորդն, Մազազ (Գառնի) գաւառին մէջ, որ ըստ Սիմէն կաթողիկոսի՝ Այրի վանայ կալուածներէն մին էր։ — Տեղագրութիւն 214։ Այրարատ 112, 119, 158, 334, 349։

— Միւնեաց մէջ վեց հատ. մին՝ յԱրեւիք,

կարճատևի հիւսիսային և փարախ լերան հարաւակողմը. մօտերը կը գտնուի կապարահանք։ Միւսներն են Բաղք, Ճահուկ, Խոզ, Հաբանդ և Վայոց Ձոր գաւառաց մէջ, որոց վրայ նշանաւոր պիտելիք չկայ։ Այս գիւղերէն ամենք՝ ըստ հին ցուցակաց Հարկատու եղած են Սիւնեաց եկեղեցւոյն։ — Սիսական, 98, 255, 274, 302, 481, 505։ — Զորբորդ Հայոց Ծոփք գաւառի, այժմեան Ջմշկածագ նոր վիճակի մէջ ալ կայ Ագարակ գիւղ մը, որոյ բնակիչք խառն են Հայք և Քուրդք։ Հայք ունին գեղի ծայրը հնագոյն եկեղեցի մը, որոյ մօտէն կը բղխեն սառնորակ, չինչ և առատ ջրոց երկու ակունք, որոց միոյն Ակնչիչռուր կ'ըսեն, ականջացաւը բուժելուն համար։ Ուրիշ աղբիւր մ'ալ կայ գեղէն վար, զոր Դողի աղբիւր կը կոչեն. որոյ ջրով կը լուացուին ջերմ ունեցողներն և կը բժշկուին։ Գեղս ունի սքանչելի դիրք, ընդարձակ դիրեզմանատուն, հրապուրիչ տեսարաններ, երկիրն ալ բերրի է։ Ի հնումն հարիւրաւոր տներէ բաղկացած հայաբնակ մեծ գիւղ մ'էր սա, որ այժմ գրեթէ բոլորովին օտարացած է։ Գիւղիս մօտ է կարմիր վանք, խեղճ գրից մէջ։ — Տես ի կարգին։ — Թորոս. Աղբ. 113—4։


— Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ ևս կայ Մեծ Ագարակ հայաբնակ գիւղ մը, բն. 400. ուրիշ մ'ալ Հոռոմ Ագարակ։

— Գուգարաց Տաշիր գաւառն ևս ունի Ագարակ անուամբ գիւղ մը Լոռւոյ Ձորոյն եզերքը, որոյ երկիրը բերրի է։ Բնակիչք ամբողջ հայ են գրեթէ 600հոգի։ Գիւղի մօտ է ճգնաւորի մը վիճարանը, որոյ առջեւէն քաղցրահամ ջրոյ վտակ մը կը վազէ և ջրաղացներ կը գարձընէ։ Կ'աւանդուի՝ թէ վտակս բղխած է սուրբ ճգնաւորին աղօթիւք։ — Ջալալեանց. Ճանապարհորդութիւն, մասն Ա. 125։

— Համանուն գիւղեր կան նաեւ Ծորոփոր և Ջորոփոր գաւառաց մէջ. ինչպէս նաեւ Տայոց Պարաիզագիոր (Օլթի) գաւառին մէջ, և այլուր։ Տես ՉԻՖՏԼԻԿ։ — Վերոյիշեալ գիւղերու ամենց մօտէն կ'անցնին Ագարակ անուամբ գետակներ, որոց վրայ յիշատակութեան արժանի բան չկայ։

ԱԳԱՐԱԿԱՑ ԲԵՐԴ. — Հին ժամանակ ամրոց մ'էր կոթճէից Ճահուկ գաւառի մէջ։

ԱԳԱՐԱԿԻԿ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ։



1. Ագարակ գիւղի եկեղեցին։

ԱԳԱՐԱԿԻ ՁՈՐ. — Այժմ կը կոչուի Ալեար կամ Ագեար. գալարագեղ այգիներով և բազմաթիւ օսանկներով զարդարուած գիւղս ըստ նոր բաժանման կ'ինկնայ Ալրիա գետոյն ձախակողմը, Երեւան նահանգի Դալարագրղ վիճակի մէջ. իսկ ի հնումն Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, և Նորավանից օտացուածքներէն մնէր։ Բնակիչք ամբողջ հայ են 257հոգի։ Սիւնեաց աթոռոյն ատեանէն վերջ (ԺԲ դարու վերջին տարինե-

րը), Ներավանքի մէջ եպիսկոպոսական աթոռ հաստատուեցաւ և նոսաւ Տէր Յակոբ նոյնպէս շնորհազարդեց. սա նուէր առացաւ Ելտկուզ Աթաբէկէն ապ այս գիւղս։ Տէր Յարգիս եպիսկոպոսի ժամանակ Ագարակի ձոր գիւղը վանքէն յափշտակուած բլլալով, հայկական ՈԿ (=1211) թուին Մեծն Լիպարիտ շատ ազաչանքով Ամիր սպասալար Զաքարիային կը խնդրէ և նա կ'առնու. Զաքարիան ալ հետեւեալ խօսքերը կը զրէ իր ձեռքով. «Ես մեղուցեալ ծառայս Քրիստոսի Զաքարէ Ամիր սպասալար, որպէս Մեծին Յարգսի, Հայոց և վրաց սպարապետի, զարձուցի զԱգարակի ձոր գիւղն ի Ներավանս, ազատ յամենայն հարկաց, և խնդրեցի ի Տէր Յարգսէ առաջնորդէ սուրբ ուխտին՝ ի տարումն ինձ ի օր պատարագ, զոր պարտին անխափան կատարել և յետ մեր մի ոք իշխեսցէ ի մերոց կամ յօտարաց յափշտակել զայս գիւղս ի սուրբ եկեղեցւոյն». և այլն։ — Յիսակաւ 185–6, 203–5։

ԱԳԱՐԱԿՈՒ, ՀԱԳԱՐՈՒ կամ ԱՂԱՒՆՈՑ ԳԵՏ. Թ. Հաքարա–չայ. — Զանազան գետակներէ կը ձեւանայ Միւնեաց Աղահէճք գաւառի մէջ. գլխաւոր ճիւղերն կամ օժանդակքն են, Հոչանց և Ագ–օղլան։ Կ'անցնի Հարանդ գաւառէն և Քուշանիքի մէջ Որոտան գետոյն հետ խառնուելով կը թափի յԵղասխ։

ԱԳԱՐԼՈՒ, ՀԱՔԻՐԼՈՒ. — Գիւղ Միւնեաց Վայոց ձոր (Զանգէզուր) գաւառի մէջ։

ԱԳԲՈՒՆԱՐ. — Գիւղ և վանակ Աղբատայ վանանդ գաւառի մէջ։

ԱԳԲՈՒՆՂԱՐ. — Գիւղ Բարձր Հայոց Դաբանագի (Կամախ) գաւառի, վերին կեղիի մէջ. բամբակի մշակութիւն ունի։

ԱԳ կամ ԱՔ–ԳԱՒՂ (Սպիտակ Բերդ). — Բերդաւոր գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտեան կողմը ցամաքակղզւոյ մը վրայ. ունի 30էն աւելի տներ։ Նշանաւոր և յիշատակաց արժանի են շուրջը գրուած հայկական հին ուխտակներ։ — Յիսակաւ 40։ Տիւզռնա, Գ. 312։

— կամ ԳՈՒՂ. — Բերդ ծովային կիլիկիոյ (Թիւ 2), Լամոսի հարաւային կողմը, բաղկացած է կրկին կոփածոյ քարակերտ շէնքէ։ Հին անունն յայտնի չէ, և այժմ ամայի զրից մէջ կը գտնուի. նոր ուղեւորաց գնուելիւնք թերեւս ժամանակաւ աւելի ընդարձակ տեղեկութիւն տան մեզ ասոր նկատմամբ։ — Միսռաւան, 347։ — Ագ–գուղէ անուամբ կան նաեւ ուրիշ քանի մը անշնան գիւղեր յայլ և այլ գաւառս։

ԱԳ–ԳԱՅԱ — Ալսպէս կոչուի Կիլիկիոյ Սեւ Լերանց մէկ մասը։

ԱԳ–ԳԻԼԻՍԻ (Սպիտակ Եկեղեցի). — Գիւղ Ալբարառայ Արեզեան (Ներքին Բաբան) գաւառի մէջ. ամայի մնացառան մ'ունի, որ 1570ին յիշատակարանի մը մէջ յիշուած ձեռնակ վանքն կը կարծուի։

— Գիւղ Ալբարառայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ։ Բնակիչք ըստ 1873 տարւոյ աշխարհագրին՝ էին 416 հոգի ամբողջ հայ, այժմ են 528։

— Թրքաբնակ գիւղ Ալբարառայ Ուրծ Գաւառի մէջ, Սեւ (Գարա կէօլ) լճակի եզերքը. ասա կը նշմարուին հին եկեղեցւոյ ուեբակներ և գերեզմանք։

— Թաթարաբնակ գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառին մէջ Շորաւագայ արեւելեան հարաւային կողմը։ Գմբեթաւոր եկեղեցի մը և բնակարանաց աւերակներ ունի։ Եկեղեցւոյ արձանագիրք անվերծանելի են, բայց ի խաչքարի մը վրայինէն, որ կը յայտնէ Գաւիթ եպիսկոպոս մը նորոգող ի Թուին Հայոց ՈԿ (=1611)։ — Միւնեաց Վայոց ձոր և Սոզք գաւառաց մէջ ևս կան ուրիշ Ագ–գիւղաւ գիւղեր, որք այժմ հայաբնակ չեն, բայց հայկական հին յիշատակարաններ ունին։

ԱԳ ԴԱՇ. — Բարաբլուր Ալբարառայ վանանդ գաւառի մէջ։

— Գիւղ Ճակատաք (Ալբարատ) գաւառի մէջ։

ԱԳ–ԵԱՋԻ. — Վիճակ Իզմիրի Ատապազար գաւառի մէջ, ունի գրեթէ 48 գիւղ, բնակիչք Թիւն է 7,448, հայք 1,100։

ԱԳ ԵԱՐ. — Գիւղ Ալբարառայ վանանդ գաւառի մէջ, ունի հին խաչքարերով գերեզմաններ։

ԱԳ ԵՕԳՈՒՇ. — Գիւղ Միւնեաց Սոզք գաւառի հիւսիսային արեւելեան անկեան մէջ, համանուն լերան ստորոտը։

ԱԳ ԹԼՓԼ. — Գիւղ Խոբխոռունեաց գաւառի մէջ, Սիփան լերան հիւսիսային կողմը։

— Ուրիշ մը Տիգրանակերտի արեւելեան հարաւային կողմը։

— Երկու լեռ կայ այս անուամբ, մին Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ և միւսն Աէյրարատայ Աբագածոտն և Արշարունեաց գաւառաց մէջտեղ։


ԱԳԼՈՒ. — Գիւղ Զարսանճաքի (Տէրսիմ), բնակիչք հայ և քուրդ։

ԱԳ ԽԱՅԱՆ ԿԱՄ ԽԱՅԱԼԻ. Թ. خيان. — Դարուս սկիզբներբը 20 տունէ ձեւացած հայաբնակ գիւղ մ'էր Խարտաւսի հիւսիսային կողմը։ Հայք այս տեղէն ցրուելով այժմ օտարազգիք կը բնակին։ Գիւղս իր անունն առած է Ագ խայա լեռնէն, որուն տարբաթը շինուած է։ Այդ լեռնէն տեսակ մը հող կ'եղնէ որուն Թաթարները ձաղ-տրդան անունը կուտան, և կը գործածեն մուշտակներ ներկելու։ Լերան վրայ Օպա կոչուած հողաբլուրն պեղելով գտած են կամարաշէն գեղեցման և մարդկան տակրտաիք ի հնուց մնացած։ — Ծնպրհ. ի Լեհաստան, 259։

ԱԳ ԿԼՕԼ (Սպիտակ լիճ). — Փոքրիկ լճակ Աէյրարատայ կողմիտ գաւառի արեւելեան հարաւային կողմերը Արտազայ սահմանին մէջ։

— Համանուն լիճ մ'ալ կայ Լեռնային Կիլիկիոյ (Գարամանիա) մէջ, Էրեկլիի մօտ։

ԱԳ ՀԱՄԶԱԼԻ. — Մեծ գիւղ Աէյրարատայ Մազազ-Ոստան գաւառի մէջ, բնակիչք



100 տունէն աւելի հայ և թուրք։

ԱԳ-ՀԻՍԱՐ. Տես ԱԳՇԷՀԻՐ։

ԱԳՃԱ ԳԱԼԼ. Թ. آغچه قلعه — Կը հասմարուի փոքրիկ վիճակ մը Աէյրարատայ Գա-

բեղէնք գաւառի արեւելեան մասին։ Նոյն վիճակի կամ կէչուանայ մէջ կը գտնուի համանուն գիւղ մը Պայամ գետի ձախակողմը։ — Ագճա գալէ բերդ մը կ'ենթադրեն Գաբեղենից գաւառի հարաւային ծայրը, Շիրակայ սահմանաց մօտ՝ Պուղաթլխէ լերան ընտրոտը և կը կարծուի, թէ այս բերդի ապատ. Դ, 36. Է, 80։ Զաքէլեան Պատմ. հռ. Գ, 544։

— ՎԵՐԻՆ ԵՒ ՍՏՈՐԻՆ. — Գիւղք Ա. բագածոյն (Ալբարատ) գաւառի Թալին վիճակի մէջ։ Մտորին Ագճագալէի մօտ է Գաբագալէ բերդը։

— Խօշապայ մէջ գրեթէ 4 ժամ Հա-



3. Բարդուղիմէոս Առաքելոյն հանգստեան վէմը։


նաւամբ կաշուեր է համանուն վիճակին։

— Կամ ԱՂՋԱՂԱԼԱՁ. — Ալիժեան անուն հին Երուանդակերտի, Ալբարատայ Աբշարունեաց գաւառին մէջ։ Առաջին անգամ Առաքել պատմիչ կը յիշէ անունս. «Երուանդակերտն՝ որ այժմ ասի Աղջաղալայ». և իրմէ առած կը յիշեն ի վերջոյ նաև այլ մատենագիրք։ Տես ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ։ — Առաքել գաց վանքէն հետու լերան վրայ համանուն բերդի մը աւերակներ կային, որ գարուս սկիզբը բոլորովին քանդուեցաւ։ Պեղմանց և հետազոտութեանց կարօտ վայր մը կը թուի։

— Գիւղ Վանանդայ Զարիշատ վիճակի մէջ։ Նոյն անուամբ գիւղեր կան նաև ուրիշ մի քանի գաւառաց մէջ, որոց վրայ հետաքրքրական տեղեկութիւնք չըլլալով զանց կ'ընենք։

ԱԳՃԱ–ԳՇԼԱԳ. — *Մեծ և Այգեվէտ գիւղ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Երեւանի*

ԱԳՃԱՏԱՂ. — *Լերինք Մելիտինոյ և Ջէյթունի մէջտեղ, որոց մէջ կը բնակին*



4. Ագուլիս։

հարաւային արեւելեան կողմը։ — Ուրիշ մ՚ալ Մազազ–Ոստան գաւառի մէջ։

130էն աւելի քրդաց գիւղեր։ — Մշակ Բ. 18։

ԱԳՃԱ *կամ* ԱԳՃԱՔԻՆՏ. *Տես* ԱԽՏԱ։

ԱԳՃԱՔԻՆՏ. — *Թրքաբնակ գիւղ Սիւ-նեաց Աղահէճք գաւառի մէջ։ Բն. 139։ Տես* ԱՏՋԱՐ։

ԱԳՃԻ. *Տես* ԱԽՏԱ։

ԱԳՃԻՇԵՂԷՐ. — *Գիւղ լճանային կիլիկիոյ (Գաբամանիա) մէջ, Ագ կէօլ լճի հարաւային կողմը։*

ԱԳՃԿՊԻԼ (*Սպիտակ կամուրջ*). — *Տուրուբե-բանի Հարք գաւառին մէջ, Խնուսայ Հերթ գիւղի մօտ կը տեսնուի մայիս սկիզբը կը բղխէ ականակիտ ազբիւր, և կը ձևացընէ բաւական մեծ վտակ մը։ 40 օր կ'ածի, 40 օր այնպէս կը մնայ և 40 օրուան մէջ ալ երթալով կը նուազի և անհետ կ'ըլլայ։*

ԱԳ ՄԷՋՐԷ. — *Լճեա Տայոց Պարտիզաց-փոր գաւառի հարաւային կողմը։ Տես* ՄԵՆ-ԲԱՅ Լ. (*Ծօղանդու*)։

ԱԳՄԷՋԻԳ կամ ԱԳՄԷՋԻՔ. *Տես* ՍԻՄ-ՖԵՐՈՓՈԼ։

ԱԳՇԱՐ, ԱԳ կամ ԱՂ ՇԷՀԷՐ (*Սպիտակ քաղաք*). — *Աղաւաղանօք կոչուած է նաև Աչխար և Աղշարապատ. հին տաճն կամ թէ բանիմ դարուս սկիզբները պետուր քա-ղաք էր համանուն գաւառին Շապին Գա-բահիսար (փոքր Հայք) նահանգին մէջ, այժմ գարձած է ասան մը։ Իւր անուամբ կը կո-չուի Ագշարօվա (Ագշարի գաշտ) դիմացը տարածուած լայնածաւալ և գեղեցիկ գաշտն։ Մեր պատմիչներէն ոմն քաղաքս կը յիշէ Թոմման Մեծոփեցին։*

ԱԳՇԷՀԷՐ. — *Քաղաք Ղանիա նահանգի համանուն ձկնաշատ լճի հարաւակողմը, ունի երկաթուղւոյ կայարան։ Քաղաքիս հայք բաղդատմամբ այլ ազգաց սակաւաթիւ են, ունին եկեղեցի և գպրոց։ Ըստ Վ. Քինէի համանուն գաւառն ունի 2 վիճակ, 86 գիւղ և 39,811 բնակիչ։*

— կամ ԱԳՇԻՈՍԱՐ (*Սպիտակ բերդ*). — *Իզմիթի նահանգի Կէյվէ գաւառին մէջ, Աա-քարիա գետոյն ձախ կողմը շատ հին քա-ղաք մ'է, որ երկրաշարժէ կործանուելով, տակաւին ունի հին շինուածոց հրաշալի մը-նացորդներ։ Բնակիչք են 1,438 հոգի, յորոց 456ը հայ։ Վերջին գէպքերէն հայք կորուստ ունեցան 50 անձ և 15,000 ոս-կի։ Համանուն վիճակին ունի 11,626ն. յորոց 2,100ը կը համարուին հայք և ու-նին 4 գպրոց 200 աշակերտաւք։ Վիճակիս պետուր վաճառքի նիւթն է համով պանիրն որ տարին 100,000 հոխայ (128,295 քիլօյ) կը հանուի ի վաճառ։*

— *Այս անուամբ ուրիշ գաւառ մ'ալ կայ Իզմիրի նահանգի մէջ, որոյ տարա-ծութիւնն է 1,469 քառակուսի հազարա-մեթր. ունի 58 գիւղ և 31,746 բնա-կիչ։ Գաւառիս պետուր քաղաքն կը կոչուի նոյն անուամբ, բն. 12,000 յորոց 882ը հայ են և ունին եկեղեցի մը և երկու գպրոց տղայոց և աղջկանց։*

ԱԳՈՐԻ. — *Գիւղ Գուզարաց Զարսփար գաւառի մէջ, որոյ մօտ կը տեսնուին ապա-րանից աւերակներ։*

ԱԴՈՒԼԻՍ կամ ԱԴՈՒԼԻՈՒ. Դղ. AKOULIS. Ի. Акулисъ. — *Յաւգարանուի ըստ ոմանց Այ-գիներով լի, շատ այգիներ ունենալուն համար՝ և ըստ տեղական աւանդութեան, իբր Թէ Ս. Բարդուղիմէոս գիշեր մը բարձրակարկառ քարի մը մօտ (Թ. 3) ննջելով, աչքերը կը բա-նայ առաւօտեան լուսոյն, անոր համար նոյն տեղը կոչուեր է Ակն ի լոյս, յորմէ ապաւաղած կը համարին Ադուլիս։ Այդ տեղը և վէմը տա-կաւին կայ, և տեղացիք կը պատուեն նրա-ներ վառելով։ Բայց այս կրկին առասպաա-նութիւնք ևս գոհացուցիչ չեն. ԺԱ. դարու սկիզբը Սարգիս կաթողիկոսի կնդակի մէջ գրուած է թ տառի յաւելուածով Աղգուլիք. նոյնպէս կը գրէ նաեւ Զաքարիա գիտուա-կան վարդապետն ԺԷ. դարու կէսին՝ Ա-ստուածաշունչի մը յիշատակարանին մէջ։*

— *Երկրորդ վիճակ Սիւնեաց Գողթն գա-ւառի, կը սահմանուի նեղ և փոքրիկ ձո-րակով մը, արեւելեան կողմն է Որդուատ և արեւմտեանը Տրունիք։ Վիճակս՝ Թէեւ ըստ հին բաժանման բազմաթիւ գիւղեր չունէր, բայց ըստ նոր բաժանման ունի բաւական Թուով Հայոց և այլազգեաց գիւղեր ինչպէս կը տեսնուի հետագայ վիճակագիր տախտակի մէջ։ Խօշլի լեռնէն վտակ մը, (Գուլիս Գ.) կը բղխէ և հալած ձեանց ջրերով առատանալով կ'անցնի իւր միջէն, և երբեմն մեծ վնասներ ալ կու տայ. բայց ամառը այնչափ կը նուազի որ մինչեւ երասխ չի հասնիր։ Շրջապատուած է ձորեզերեայ լեռներով, որք ձմեռը խա-*

փանելով արեւու ճառագայթից ծաւալումը՝ ցուրտը կը սառակացընեն և մինչեւ գարունը առաջ չերթայ՝ սառնամանիք չեն հալիր։ Իսկ ընդհակառակն ամառն ալ լերինք լերկ ըլլալով, ճառագայթները սաստիկ կը ցոլանան պատճառելով խիստ տաք և տօթ։ Ամրան ջրոց նուազութիւնը կը ընծայ շատ մը առաւարուղխ ապրիւրներ, և երկրին այգիները, թթենիք, տեսակ տեսակ պտուղներն և պտուղական ծեղրն կը մնայընեն ձմրան խստութիւնը։ Բնակիչք՝ բարեկազմ են և քաջարիք և կրնան համարուիլ հարազատագոյն սերունդք Գաղիներուց, որք իրենք գիրենք կը կոչեն Զօկ կամ Զոկ, և իրարու մէջ կը խօսին յատուկ բարբառով մը, որ կը կոչուի զոկերէն, բայց այլոց հետ կը խօսին նաեւ զուտ հայերէն։ Այս բարբառը ուսումնասիրեց բանասէրն Պ. Սարգիս Սարգսեանց, և հրատարակեց գիրք մը երկու մասէ բաղկացած, 1883ին ի Մոսկվա։ Վիճակ՝ քան այժմեան աշխարհագրականբաժանման՝ կ'ինկնայ Երեւան նահանգի Նախիջեւան գաւառի մէջ։

— Վերին Ագուլիս. — *Առաջին քաղաքաւան համանուն հին վիճակի, փառաքեաց կամարներով կամրջի մը վրայ կ'անցնի գետակ մը, որ կը հոսի ձորի մը մէջէն։ Ունի 1,000 տուն հայ, 200 տուն պարսիկ և 100 տուն ռուս։ Ունի 4 եկեղեցի, 2 դպրոց, 1 դեղատուն, 1 հիւանդանոց, 1 փոստ, 1 հեռագրատուն, 1 ոստիկանատուն, 1 զինուորանոց, 1 ռուսական դպրոց, 1 ռուսական եկեղեցի, 1 ռուսական հիւանդանոց, 1 ռուսական գերեզմանատուն, 1 ռուսական զինուորանոց։ Ունի 2 ջրաղաց, 1 ձիթհան, 1 գինետուն, 1 գարեջրատուն, 1 օղեվառարան, 1 կաշեգործարան, 1 ճրագագործարան, 1 ոսկերչատուն, 1 դերձակատուն, 1 կօշկակարատուն, 1 կոշկեղէնի խանութ, 1 ռուսական խանութ, 1 ռուսական գինետուն, 1 ռուսական գարեջրատուն, 1 ռուսական ոսկերչատուն, 1 ռուսական դերձակատուն, 1 ռուսական կօշկակարատուն, 1 ռուսական կոշկեղէնի խանութ։ Ունի 2 ռուսական ուսուցիչ, 1 ռուսական ուսուցչուհի, 1 ռուսական բժիշկ, 1 ռուսական դեղագործ, 1 ռուսական գրագիր, 1 ռուսական հեռագրատան պաշտօնեայ, 1 ռուսական ոստիկանապետ, 1 ռուսական զինուորական պետ, 1 ռուսական զինուորական գրագիր, 1 ռուսական զինուորական բժիշկ, 1 ռուսական զինուորական դեղագործ, 1 ռուսական զինուորական գրագիր, 1 ռուսական զինուորական հեռագրատան պաշտօնեայ, 1 ռուսական զինուոր

է եօթն թաղերու, ունի երկայարկ և երբեմն եռայարկ կառոյցներ, յորոց ոմանք ունին մէկ մէկ պարտէզ խնամքով գարգարուած, ուր կ'աճին ոսթք, թթենիք, լիմոնք, նռնենիք, թզենիք, վարդենիք և զանազան տեսակ ծաղկունք։ Վաճառատոհմերը լի են ամէն տեսակ եւրոպական և ասիական նիւթերով. կան մեծաքանչ գործարաններ, 100էն աւելի արուեստանոցներ, յորս նշանաւոր են կաուազործք և ասրազործք։ Գովութեան արժանի են հասարակաց ընթերցարանը և երկտեղ դպրոցներն, որոց յաճախադիմութեան համար ամենայն հոգ և խնամք կ'ընեն տեղւոյս բարերարք։ Քաղաքիս վրայ մեծ ծովեզերով կը խօսի գաղղիացի տիկինն Շանթր, որ անձամբ տեսնելով և վայելելով բնութեան գեղեցկութեան հետ՝ քաղաքակիրթ բնակչաց ազնիւ հիւրասիրութիւնը, մեծ ցաւով մեկնած է ասոր։ Այս կ'ըսէ. «Հանճարեղագոյ կեղրան մը կրնայ համարուիլ (Ագուլիս)՝ աշխատասէր, լուսաւորեալ և հարուստ ժողովրդեան»։


Ագուլիսի սկզբնական պատմութիւնն մեզ աւանդած չեն պատմիչք, բայց յայտնի է որ ժէ. դարու սկիզբը բաւական բազմամարդ

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԳՈՒԼԻՍ ՎԻՃԱԿԻ 1893 ՏԱՐԻՈՅ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՅՔ		ՕՏԱՐՔ	ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՅՔ		ՕՏԱՐՔ
	Տուն	Հոգի	Հոգի		Տուն	Հոգի	Հոգի
Ագուլիս Վերին Գաբեղ	201	1670	393	ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ	639	5433	5154
Ագուլիս Սաորին	110	996	—	Նաւթպուտ	—	—	215
Ագա Վերին	125	793	40	Ուռնուս	—	—	186
Ագա Սաորին	19	108	198	Ուսթուպի	—	—	742
Ախազուլ	58	547	—	Ուրումիա	31	377	—
Ազրի	—	—	79	Քինանաք	85	965	17
Նախատա	—	—	58	Պիլեւ	—	—	769
Ազամէչ Վերին	—	—	261	Սազ	—	—	7
Ազամէչ Սաորին	21	146	178	Սունգաթեան-գիւղ	—	—	77
Բազմաղի	—	—	45	Վայտաղ	—	—	141
Բուշրուա	—	—	140	Վանանդ	—	—	791
Բուտա	52	655	650	Վարակարա (փառա)	60	568	405
Գարեա Մելիք	—	—	44	Տեռնիս (Տրուճիս)	—	—	428
Գեղտար	15	75	89	Տէր	71	478	—
Էյպիէր	—	—	1565	Տիլեաղ	—	—	64
Լիւռվալի-Սուլթան-գիւղ	—	—	12	Տիվա (Տիւի)	—	—	424
Խանագա	—	—	194	Տիկլիւն	—	—	247
Խուտավերտի-Բէկ-գիւղ	—	—	60	Տիկլիւն-գիւղ	—	—	33
Խուբա	—	—	61	Տնակերա	66	527	—
Կարճաւան	58	475	—	Տոսթի	—	—	1510
Հիւսէին-Ալի-Բէկ-գիւղ	—	—	51	Փառակա	55	759	94
Ձհաֆէր-խան-գիւղ	—	—	56	Քալանթար-գիւղ	—	—	55
Միրզէ-Հասան-գիւղ	—	—	51	Քաղաքիկ	57	514	—
Միրզէ-Ձհաֆէր-գիւղ	—	—	18	Քնանդէ	—	—	215
Նասիրապատ	22	250	141	Քեարխ-Գուլի-գիւղ	—	—	229
Նուշտաէ	—	—	297	Քէմար	—	—	128
Նաւանաս	—	—	273	Քիլիա	—	—	289
ԳՈՒՄԱՐՆ	639	5433	5154	ԲՈՎԱՆԴԱԿ ԳՈՒՄԱՐՆ	1042	9399	11898

քաղաք մ'էր, և Ղափանեցւոց պատմութեան մէջ կը յիշուի 10,000 տուն բնակչօք որ չափազանց կ'երեւնայ, սակայն Ղալեանն ալ կ'ըսէ. «Այս գիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր 8,000 տուն Հայ, այժմ հազիւ թէ կայ 1,000»։ Շատ մը պատերազմներ, այլազգեաց յարձակմունք և աւարառութիւնք, միով բանիւ՝ բազմազիսի աղէտք և տառապանք զանազան ժամանակաց մէջ, պատճառ

եղած են քաղաքիս բնակչաց նուագութեան։ Այժմեան պետութեան շնորհիւ բնակիչք հանդիսա վճռակ մ՚ունին, և ըստ 1893ի աշխարհագրին կը համարուին 1263 հոգի, յորոց ոչնչ թիւ մը կը կազմեն այլազգիք և նիւթապէս եւս խնդձ վիճակ մ՚ունին։ Քաղաքիս հին ժամանակ ունեցած մեծութեան և շքեղութեան վկայք են՝ դեռ մինչեւ օրս հմաբիլ Ս. Թովմայի կամ Ագուլեաց վանքը, (Թ. 6) որ ըստ աւանդութեան հաստատուած է Ս. Բարդուղիմէոսէն, ուր թաղուած է իբր կաւմնի աշակերտը, այլ պատճառաւ վերջէն եղած է եպիսկոպոսական աթոռ Գողթն գաւառի, որ և հին Հայաստանի նախագահ եպիսկոպոսարաններէն մին էր։ Վանքիս առաջին շինութեան վրայ տեղեկութիւն չունինք ոչ



Թ. 6. Ս. Թովմայի վանք Ագուլեաց։


կանգուն մնացած եկեղեցիք և մատուռնք, որոց թիւը կը հասնի 12ի։ Ի դարու կիսուն Աւաքիլ վարդապետը և ԺԲի առաջին կիսուն Աբրահամ կաթողիկոսը՝ պետարարաբար չորս եկեղեցի կը վնեն Ագուլիս, Ս. Թովմայի վանքէն զատ, որք նորոգութեան Մովսէս և Փիլիպպոս կաթողիկոսաց ժամանակ։ Եկեղեցեացս գլուխ և առաջին կրնանք մեր մատենագիրներէն և ոչ յարձանագրութենց, վասն զի մեզը գտնուած արձանագրութիւնք բոլոր նորոգութեան ժամանակին կը վերաբերին։ Հնագոյն արձանագրութիւնն է 1694 թուին, որ փորագրուած է եկեղեցւոյ մեծ դրան ճակատը, նոյն տեղը քանդակուած է նաեւ Ս. Թովմաս, որ ձեռքը կը մխէ Քրիստոսի սիրտին կողը։ Այս արձա-

նպարուելիւնը կ'աւանդէ Մ. Բարգոպիմէոսէն վերջ Մ. Լուսաւորչի գալուստը և նոյն վիճակին գանագան դիւղեր սեփականելը ։

Բարդուղիմէոս ի Հայս եկեալ,
Զտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ,
Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ.
կումսի անուն զիւր աշակերտն
Տեսուչ տեղւոյս զնա եդեալ.
Որ եւ ըզտուն Գողթ գաւառիս
ի նա յանձնեալ ըզհօտն ընտրեալ,
Մերձ Ագուլիս եւ Դաշտ գովեալ,
Ցղնա, Ռամիս սրմա յանձնեալ.
Բուստ, փառակա եւրս տրվեալ.
Բուհրուտ, Տեւի անքակ եդեալ.
եւ Շրջու ընդ Մասրեւան,
Աղաւնեցիկ ցանկ հաստատեալ.
Դաստակ, վանանդ կցորդ եղեալ.
Տրունիս, Տնակերտ միաբանեալ,
Օքովանիս եւ Քաղաքիկ
եւ անապատն Հանդամիջաց,
վեռն?, Գետցիկ եւ Գեղերեցիկ,
Նունիս. յՈրդվատ Բաժին կարգեալ.
Սուրբըն Գրիգոր յորժամ եկեալ՝
ի Առաքելոյն Նոմոս տեսեալ.
Ձեռագրով զայն հաստատեալ.
եւ նզովիւք ամրափակեալ.
Ցամի Տեառն ԳՀՃ եւ ինգ հասեալ
Լուսաւորչին պատճէն գրեալ
Աբծան գրիս որ աստ եդեալ։

Աստ գաղափարուած պրոց յիշատակարանաց մէջ՝ իրրեւ հնագոյն՝ ծանօթ է Նարեկացւոյ ապօթագիրք մը, գրուած 1375ին վարդան անունով անձէ մը, որ այժմ կը պահուի Էջմիածնի մատենադարանի մէջ. իսկ 1424ին ալ Տաթեւացւոյ հարցմանց գիրք մը, յանպիսիսպասութեան Տեառն Տէրոյենականի՝ որ սուրբ և երանեալ կոչուած է։ Երկրորդ գրքին յիշատակարանն կը յայտնէ նոյն ժամանակի վանքի միաբաններէն զոմանս, հանդիպած իրենց պաշտօններով, ինչպէս՝ Յակոբ սեն հոգեւոր հայր և վարժապետ, Յակոբ արեւդայ, Բարսեղ չնորհալի գրագիր, Յովհաննէս եկեղեցպան, Ստեփանոս հայր վանացն, Յաւան և Մկրտիչ աշխատասէր եղբարք, Ֆաւստոս անտես, և այլն։ Գրիչն՝ Մատթէոս վարդապետ կը յիշէ նաեւ ժամանակին քաղաքական անցքերէն, և կը յայտնէ թէ այն տեղն Ագուլեաց առաջնորդներն էին Աղա-


Գէորգ, Ըռաչիս՝ Սահր Բէկ, և տանուտէր՝ Էդիլշայ։ Նոյն տարիները (1436) գրուած է հոս նաեւ Մ. Թէոդորոս զօրավարի պատմութիւնը, որոյ գրիչն է սոն Յովհաննէս վարդապետ։ Այս թուականէս վերջ գրեթէ



200 տարի անծանօթ և անյիշատակ կը մնայ մեզի մինչեւ 1636 թուականը, յորում կը վերականգնի Մովսէս կամպսկասի աշակերտ Խաչատուր առաջնորդի ձեռամբ, որոյ համար կ'ըսեն. «Նորոգեաց ի

հիմանց զսուրբ ուխտս Թովմայի, բարձրա-
բերձ կամարակապ և զմբեթաձեւ զսուրբ և-
կեղեցին, և բարձր պարսպով և չորեքանկիւնի
խուցերով և մռռդբախերով (խահանոցք) զար-
զարեաց, և բազում նեղութեամբ և չարչարա-
նօք չինեաց»։ Բայց եկեղեցւոյ նորոգութեան
արձանագրութիւնը կը նշանակէ 1694 տա-
րին, ինչպէս է նաեւ խաչքարդակի մը (թ. 7)

պարիսպներն, որք քառակուսի կը շրջա-
պատեն. հիւսիսային արեւմտեան անկիւնն
է կամարակապ քարաշէն առաջնորդարանը.
միաբանից սենեակները կ'ինկնեան հիւսիսային
և արեւելեան կողմերը, խահանոցն և ամառա-
տունն՝ արեւելեան հիւսիսային անկիւնը, ուր
կայ նաեւ ինքնարուղն պատուական ջուր.
հարաւային արեւմտեան կողմն է ամբարա-




8. Եկեղեցի Ս. Թովմայի վանաց։

վրայինը, ուր փորագրուած է խաչատուր ա-
նունը, բայց կամ ուրիշ խաչատուր է այլ
և կամ Թուականը վերջը գրուած է Ռևո-
փրիոս անուամբ մէկէ մը։ Հաւանական եւս
է կարծելն՝ թէ 1679ին Աչքարատայ մեծ
երկրաշարժին ժամանակ խախտած ըլլայ նաեւ
մեհտատունն և վերջը 1694ին վերստին շի-
նուած։ Դեռ կանգուն են վանքիս ամենը

նոցը, որոյ վրայ ի յհանոյ կառուցուած է
150–200 մանեանց վարժարան։ Վանքի՝
մայր կամ աւագ գուռն է արեւմտակողմեան
պարսպի վրայ, որ ճիշդ եկեղեցւոյ արեւմտեան
դրան կը նայի։ Եկեղեցին (թ. 8) կառու-
ցուած է պարսպին մէջտեղը, ընդարձակ քա-
ռակուսի ձեւով, չափաւոր բարձրութեամբ։
Մէջտեղէն չորս սաւառ սեանց վրայ կը

բարձրանայ վայելուչ կամարիկէն, իսկ երեք ուրիշ փոքրիկ կամարիկներ ևս իրենց դան-դակատան կը բարձրանան եկեղեցւոյ երեք դրանց վրայ, չորս զանգակօք։ Մէջը կայ մարմարեայ զարդարուն խորան մը՝ ձեռա-կերտ պարսիկ արուեստագիտի։ Բաց ի մեր յիշածներէն, դրանց վրայ կան նաեւ քանի մը ուրիշ արձանագրութիւնք, յորս կը յիշուին զանազան բարերարաց անուանք, որք օգնած են եկեղեցւոյ վերաշինութեան։ Վանացս մօտ հիւսիսային կողմը՝ կայ փոքրիկ հին պարսպա-պատ մատուռ մը Ս. Բարդուղիմէոսի Կուսանի

թեամբ։ Ս. Յովհաննէս (թ. 9) լերան սարսռալը անհարթ քարերէ շինուած, ճակատն և գմբէթին ալ ագիւսով, զանգակատունը փայտայարկ, նշանաւոր է զարդարուն ճարտարապետութեամբ դուռն (թ. 10), շինուած՝ փայտի զանազան մանր կտորներէ իրեն սատափով և փղոսկրով. համառօտ արձանագրութիւն մ՚ալ ունի շինել սուղին, 1682 թուականին։ Միւս եկե-ղեցիք և մատուռնք կը կոչուին. Աստ-ուածափրկիչ, Ս. Աստուածածին փոքր, Ս. Մինաս, Ս. Ստեփանոս, Ս. Յակոբ Ալփեան, Ս. Հնձանաց Լոյս, Ս. Յակոբ Մծբնայ։



9. Ս. Յովհաննէս եկեղեցի։

աշակերտի անուամբ, որ հոն թաղուած կը համարուի և ուխտատեղի է։


Այժմ Աղուլիսի գլխաւոր եկեղեցին է Ս. Քրիստափոր, որ կը յիշուի ի գերս, Ս. Թով-մայի վանաց վերաշինութենէն յառաջ. ա-սոր մօտ հաստատուած է ազգկանց վար-ժարանը։ Եկեղեցիներէն՝ Ս. Աստուածածին կամ Ննապատ կոչուածը՝ քաղաքին քիչ մը դուրս է, գեղազուարճ դիրքի, ուր զբօսավայր է Աղուլեցւոց. իսկ Ս. Միքայէլ կամ Շնորհն՝ քաղաքին մէջ է, որոյ մօտ կը կարծուի թէ կուսաստան եղած բլլայ. եկեղեցւոյս մէջ կը գտնուին խաչքարեր համառօտ արձանագրու-

Առաքել պատմիչ, Մօկացի Պօղոս վար-դապետի վարուց մէջ, որ անապատական կե-նաց նորոգողներէն մին էր, կ՚ըսէ թէ՝ Նորա Աղուլիս քարոզած աեներ ժէ. զարու սկիզբը Ս. Թադէոս առաքելոյն անուամբ եկեղեցի մը կար գուռը գոց զար ոչ ոք կրցեր էր բանալ. և այս Պօղոս վարպապետը այգապաշտօն ը-նելով և երկրորդ օրը (կիրակի) զոհրացէք, երեք անգամ դրան կը զարնէ, գուռը ինքն-իրեն կը բացուի և բոլոր ժողովուրդը ներս մանելով ժամերգութիւն և Հանդիսաւոր պա-տարագ կը կատարեն։

Տօնակատարութիւն Աղուհաց վերնագրով

յօդուած մը հրատարակուած է Ճռաքեայի 1862 տարւոյ 85–88 իջից մէջ, յորում լաւ կը տեսնուի նահանգն Ագուլեցւոց, հոգեւորական հանդիսից մեծ կարեւորութիւն տալն։ Մանրամասնաբար նկարագրուած է 1861 տարւոյ օգոստոսի մէջ Ս. Աստուածածնի վերափոխման տօնին կատարուած մեծաշուք թափօրն։

Ցիշելու արժանի է նաեւ միակամար գեղեցկակերտ կամուրջը (թ. 11), շինուած 1713ին, երկու կողմն հայերէն և թուրքերէն արձանագրութիւններով, յորս նշանակուած են յուխտիւնը սուսուիկ ոգեւորուած, անպատմելի քաջութեամբը ամենայն ճիգն կը թափէր օտարաց չծէն ազատելու համար, Ագուլեցիք այդ միջոցին իրենց անձնական շահերուն և օգտին հետեւելով, իրենց բարգաւաճութիւն Մելիք Մուսիի հետ, կը գաւաճանեն Դաւիթ բէկը և կը սպանուին նորա աջակից Մելիք Փարսադանը։ 1751ին (հմմտ. 12) Աբդալա տականի կողմնակալ Ագաա Խանը մեծաւոր քաղաքին, բնակիչներէն պատգամաւորներով կը խնդրէ իւր զօրաց համար պաշար և 100,000 գահեկան, բայց երբ քանի մը



10. Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դուռը։

շինութեան համար նպաստողաց անուանք։ Քաղաքիս շուկան կ'ինկնայ հին և մեծ գեղեցկատան մէկ մասին վրայ, միւս մասն ալ հասարակաց պարտէզ դրած են, փոխադրելով տապանաքարերը, եկեղեցւոյ նորոգութեան և շինութեան գործածելու համար։


Պարսից թագաւորաց խնամարկութեամբ ԺԶ–ԺԷ դարուց մէջ շատ բարգաւաճած է վաճառականութեամբ, բայց միեւնոյն ժամանակ երկու թշնամի ազգութեանց պատերազմներէն ոչ սակաւ վնասներ ալ կրեր է։ Դաւիթ բէկի պատմութեան մէջ տեսուէջ մ'ունի, մինչդեռ Սիւնեաց աշխարհի հանգամ Ագուլեցիք կը մերժեն Խանի այս պահանջը, Ագաա Խանը կր յարձակի կատադած զօրքերով քաղաքին վրայ. բնակչաց մէկ մասը կը չարդուի, մաս մ'ալ գերի կը տարուի։ Ժամանակակից մէկը մանրամասն կը նկարագրէ այս վերջին ազգասպի դէպքն, զոր հրատարակած է Մեծ. Հ. Դ. Ալիշան՝ Սիսականի 331–3 իջից մէջ. նոյնը հրատարակուած է նաեւ Մասիս շաբաթերթի 1886 տարւոյ 729–30 իջից մէջ։ Ագաա Խանի յարձակումէն վերջ շատ կ'անշքանայ Ագուլիս, և անգութ սրոյ հարուածներէն ազատուող բնակչաց մէկ մասն կը գաղթէ ի

Հնդիկս և այլ երկիրներ, մանաւանդ ի Կ. Պօլիս, ուր ձեռք կը գարնէ իրեն բնածին վաճառականական արուեստին։

Երբ գաղարեցան հակառակամարտ գահավիրաց խռովութիւնք, քաղաքս վերստին սկսաւ զարգանալ իր արուեստներով և վաճառականութեամբ, մանաւանդ ներկայ պետութեան ժամանակ։ Գլխաւոր վաճառքին ութիւնն է մետաքսն. բնաւիր են թթենիք, որոց մէկ տեսակը՝ որ Բեզանայ կը կոչուի, զերծ զոյն քաղցր պտուղներ ունի, զոր կը չորցընեն ձմեռուան համար. ուրիշ տեսակ մ՚ալ Ջաա կոչուածը, որ այնչափ քաղցր չէ՝ կը գործածեն ցքոյ համար։ Մետաքսէն զատ կը վաճառեն նաեւ բուրդ, բամբակ, կտաւ և մեղր։ Հին առեն Ագուլեցիք ոչ միայն Ռուսիոյ վաճառաշահ քաղաքները՝ այլ և Եւրոպիոյ զանազան կողմերը կը ճամբորդէին, յորոց ոչ սակաւք եկած են մինչեւ ի վենետիկ։ Այժմ եւս Ռուսիայէն դուրս՝ ի Պարսկաստան, Հնդկաստան, Հոլանտա, Անգղիա, Գաղղիա՝ կը գտնուին Ագուլեցիներ, որք կը պարապին յանձնակատարութեամբ և վաճառականութեամբ։ Ագուլեցին՝ սակաւ է առ նուազն 7 տարի պանդխտութեան մէջ մնալ, և յետոյ հարցատացած կը վերադառնայ իր բնաւայրն, իր տունը շէնցընելու և վաստակոց պատուղն վայելելու։

— Ստորին Ագուլիս. — Գրեթէ երկու մղոն վերին Ագուլիսէն դէպ ի հարաւ կ՚ինկնար գարուս սկիզբը՝ Դաշտ գիւղը, զոր 1820—5 տարիներու մէջ, Հայերը գնելով Պարսից թագաժառանգ Ապպաս Միրզայէն՝ կոչեցին Ներքին կամ Ստորին Ագուլիս։ Բնակիչք ամբողջ Հայք են 110 տուն, իբր 1000 հոգի։ Ունին երեք եկեղեցի, Ս. Երրորդութիւն, Ս. Սարգիս և Ս. Միհրապ։

Ագուլեաց նկարագրութիւնը տարտեղ



11. Կամուրջ Ագուլիսի։

վերջ, յիշենք նաեւ 1884 տարւոյ մայիս 21ին պատահած աղետալի արկածը։ Նախ, ձուաչափ մեծութեամբ կարկուտ կու գայ և ապա սաստիկ անձրեւ՝ որ առաջ կը բերէ սարսափելի հեղեղ մը, որով բոլոր այգիները փճանալէ զատ գրեթէ 70 տուն ջնջուեցան, 44 հոգի մեռան, և ամբողջ Ագուլիսը տղմով և սիով լեցուեցաւ։ Եղած վնասը հաշուեցաւ 500,000 ռուբլիի։ Ողբալով գրեցին ժամանակին լրագիրներէն՝ Արձագանք, Նոր Դար, և մանաւանդ Մշակ (թ. 58. ԺԹ տարի) մանրամասն նկարագիրը հրատարակեց Խ. Մալումեանցի նամակով։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ս. ՄԱՍՈՒՆԻՑՈՑ Անվան Публичная Библиотека
1004/29451
1427-38

Զանազան քաղաքաց մէջ վերաբերող համար հանգամանալուծիւնք եղան, և փութացին վերանորոգել և կարգաւորել զայն։ Քաղաքիս այս արկածէն քիչ օր վերջը վախճանեցաւ աղջկանց և տղայոց վարժարանաց հիմնարկու և բարերար Աւետիս Տէր Մկրտչեան 93 տարեկան։

— *Միւռական 323–337։ Առաքել պատ. 216, 247, 346, և այլն։ Զամչեան Պտմ. հտ. Գ, 854։ Ագռաւեցոց Բարբառը Մ. Ա. 4–15։ Փորձ. Բ. բ. 363–367։ Տիկ. Շաւիթր. Բազմավէպ ամսգր. հտ. ԾԲ (1894), 533–539։*

ԱԳ–ԶԱՅ (*Սպիտակ գետ*). Թ. آق چای. — *Վտակ Ալբարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ. կը բղխէ Գաբախաչ լեռնէն և Էլլի–ուէրէ գետակի հետ միանալով՝ կը թափի յԱրփա։ Տես ՏՂՄՈՒՏ։*

ԱԳԶԻ ՏԱՂ. — *Լեռ և գաւառ Մալազիոյ նահանգին մէջ. բն. 37,850, յորոց 2,000ը Հայ են։*

ԱԳ–ՊԱՇ կամ ԱՂ–ԲԱՇ, Վերին և Ստորին. — *Անուն կրկին գիւղից Ալբարատայ (Երեւանի նհնգ.) Ոստան գաւառի մէջ. առաջինն կ'ինկնայ Ասորի Գրունէն փարախ մը հեռու. բն. 85 հոգի թ. իսկ երկրորդն գուա Հայարնակ է 486 հոգւով, 94 տան բաժնուած։ Հրաշալի է դիրքն, Գառնի գեղոյն ալակողմը. երկիրը արգաւանդ է և կը բերէ ձմեռուկ, սեխ, ցորեն, կորեկ, բամբակ, կնճիթ, մանաւանդ ազնիւ տեսակ բրինձ և այլ ընդեղէններ։ — Մշակ, Ջ. 83։*

ԱԳՊԱՊԱ. — *Լեռ Ալբարատայ վանանդ (կաթս) գաւառի մէջ, բարձր 2050՛։*

ԱԳՊՈՒԼԱԳ. — *Գիւղ Ալբարատայ Շիրակ գաւառի, 22 վերստ Ալեքսանդրապոլէն հեռու, դէպի արեւելեան հարաւ. բնակիչք ամբողջ Հայ են 967 հոգի, բաժնուած 98 տան։ Համանուն վիճակն ունի 30,861ն. յորոց 26,164ը Հայ են։*

Այս անուամբ ուրիշ չորս հայաբնակ գիւղեր կան այժմեան Գանձակ և Բագու նահանգաց և Շուշի գաւառի մէջ, որոց իւրաքանչիւրի բնակչաց թիւն է 130 էն 400 հոգի։ Կան նաև այս անուամբ քանի մը այլազգաբնակ գիւղեր։ Տես ԱՂԲՈՒԼԱՂ և ԿԱՊՈՑ Գ։

ԱԳՈՒԱՒԱՑ ՔԱՐ. — *Վտապուրակաձի Անձեւացեաց գաւառի մէջ, Հոգւոց վանքի մօտ, կանգուար լերանց մէկ մասը կը համարուի, զոր յիշէ Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ։ Ամրան առատ ջրոց առուակներ կը հոսեն այս լեռնէն և կ'երթան կը խառնուին Տիգրիսի հետ։ Տես ԴԱՐԲՆԱՑ ՔԱՐ։*

ԱԳՈՒԱՒԻ ԳԵՐԵԶՄԱՆ. *Տես ՍԻՍՎԱՌՆԱՎԱՆՔ։*

ԱԳՈՒԱՒՈՑ ԲՈՑՆ. Β. Χοράκεων φωλία. — *Դաշտային կիլիկիոյ մէջ, Անարզաբա քաղաքի մօտ լերանց հովիտ մ'է։ Ցոհան Ալեքս Պերփեռուժեն կայսրը՝ 1137ին, Անարզաբայի և Պարոն Լեւոնի բոլոր երկիրներուն տիրելէ և անոր ընտանիքն ի կ. Պոլիս գերի ղրկելէ վերջ, այս հովիտս մէջ որսորդութիւն ըրած ժամանակ, ինչպէս կ'ըսէ պատմիչն. «Իբրև եղ զդիզեալ նեռն յաղեղն՝ և քաշեալ ի լի, խոցոյն խոցեաց սըրտին, և պատառեաց զձախու ձեռն. և ի զօրութենէ դեղոյն մահանայր»։ — Միսռաւա, 240։*

ԱԳ ՍԷՐԱՑ. — *Վիճակ Ղոնիա նահանգի Նիկաէ գաւառին մէջ, ունի 160 գիւղ գաղաղան ազգերէ։*

ԱԳ ՍՈՒ (*Սպիտակ ջուր*). — *Այս անուամբ երկու գետակներ ունի Ալբարատ, մին՝ Գաբեղենից և միւսն՝ Ուրծ գաւառի մէջ, վերի գետոյն օժանդակներէն է մին։ Տես ԱԳ ՕՂԼԱՆ։*

ԱԳ ՏԱՂ (*Սպիտակ լեռ*). — *Լեռ Ալբարատայ Ոստան և Ուրծ գաւառաց մէջտեղ. նշանաւոր է Պօզպուռուն կատարը, բարձր 4410՛։ Համանուն ուրիշ լեռ մ'ալ կ'ինկնայ Կոգովիտ գաւառի մէջ, Գայլատուայ (Գալդղ կեօղ) լճակի հարաւային կողմը, բարձր 11,000՛։ Տես ԳԵՂ։*

ԱԳ ՏԱՂ, ՄԱՏԻՆ. — *Գաւառ Անկիւրիոյ նահանգին մէջ. ունի 1 վիճակ, 170 գիւղ և 32,942 բնակիչ, յորոց 5,000ը Հայ են և ունին 2 եկեղեցի և 4 դպրոց 350 աշակերտօք։ Գաւառիս գլխաւոր քաղաքն կը կոչուի նոյն անուամբ և կ'ինկնայ Եօղղաթէն գրեթէ 75 հազարամեթր դէպի հարաւային արեւելք։ Նշանաւոր է գաւառիս մէջ Ագ տաղ լեռը, որ ունի արծաթահանք քայց 20 տա-*

բի է որ այդ բոլոր անգործութեան պատա-պարտուած է, արդիւնքն եղած ծախքերը չը-գոցելուն պատճառաւ։

ԱԴ ՏԻՎԼԼԻՐ (*Սպիտակ ուղտեր*). — *Լեռ Ա-յրարատայ վանանդ գաւառի հարա-ւային կողմը, բարձր 2,874՛։*


ԱԴ ՏԻՐԻ (*Սպիտակ ձոր*). — *Գիւղ Գան-ձակ նահանգի Շուշի գաւառի մէջ։ Բն. 124 հոգի Հայ։ — Սիւնեաց Վայոց ձոր (Ջան-կեազօր) գաւառի մէջ ևս, Սալեմայ ալ կող-մը կայ այս անուամբ այլազգեաց գիւղ մը։*

ԱԳՐԱ. — *Հռչակաւոր քաղաք անգղիա-կան Հնդկաստանի Պենկալայի գաւառին մէջ, բն. 170,000։ Ա-յժմ թէև չկան քաղաքս*

ԱԳՐՃԿՈՑՍ. — *Ասողիկ կը յիշէ (Բ. բ.) այս անուամբ գաստակերտ մը Ա-յրարատայ Արշարունեաց գաւառին մէջ. շինուած Արմ-բատ Թոսատովանողէն 836 թուին։*

ԱԴՓԱՐԱ. — *Հայաբնակ գիւղ այժմեան Երեւանու նահանգի (Նոր Պայազիտ) մէջ, բն. 607։*

ԱԴ-ՔԻՆՏ. — *Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, այժմեան Տարալագըզ վիճակի մէջ, բն. 546 հոգի Թ։ Գիւղս սահմանագիծ է Շուշեցի Պ. Գէորգ Թառումեանցի՝ որ գնած է Քեսարի—ալի պարսիկ խանէն։ Քիչ տարիներ առաջ գետնի տակէն գտնուեցան եկեղեցւոյ աւերակներ, որուն քարերը այլազգի բնա-*



12. *Բեւեռագրաց Ազամխանի։*

Հայեր, բայց ի հնումն կային բաւական թուով՝ որք 1652 թուին կառուցած են մինչև ան-դամ եկեղեցի մը, որ Հնդկաստանի Հայոց եկեղեցիներէն հնագոյնն է, կան նաև ազ-գային ննջեցելոց տապանաքարինք։

ԱԳՐԱՆ. — *Լեռ Ա-յրարատայ (Բասէն), Գարեղնիոց հիւսիս արեւմտեան կողմը, Տայոց սահմանագիծը. բարձր 2693՛։*

— *Ինչպէս Ագարակ նոյնպէս և Ագրակ անուամբ շատ գիւղեր կան Հայոց երկրի զա-նազան կողմերը. երեք հատ Տուրուբերան նահանգի Ներքին Պուլանըք, Խոյթ, և Խլաթ նոր վիճակաց մէջ։ Մէկ հատ յԵրզնկա, ուրիշ մը Ալին գաւառի մէջ, և այլուր։*

կիչը գործածեցին իրենց շինուածոց։ — Մի-սաքան, 163։ Տես ԿԻՐԱԿՈՍԻԿ։

— *կամ ԱԴ-ՔԻՆՏ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Զանկեազօր գաւառի մէջ բն. 365 հոգի։ Նոյնանուն (Սպիտակ Շեհ) ուրիշ գիւղ մ՚ալ կայ Գանձակ նահանգի Շուշի գաւառի մէջ, բն. 385, ամբողջ Հայ։*

ԱԴ ՔԻՐՓԻ կամ ՔԻՕՓՐԻԿ։ — *Գիւղ քըր-դաց Սիւնեաց՝ այժմեան Զանկեազօր գաւա-ռի մէջ, բն. 490 հոգի։ Ուրիշ մ՚ալ՝ Գաւ-գարաց այժմեան Պօրչալու վիճակին մէջ, բն. 400 հոգի Հայ։*

ԱԴՔԻՐՄԱՆ. Տես ԱԽՔԻՐՄԱՆ։

ԱԴ ՕՂԼԱՆ կամ ԱԴ ՍՈՒ. — *Հազարու*

գետոյն ձախակողմեան դիմաւոր օժանդակ-ներէն մին, Միւնեաց Ագահէնք գաւառի մէջ։ Երկրորդ անուամբ կան նաև ուրիշ քանի մը վանականներ, գանազան կողմեր։

ԱԴԱ. Տես ԱՏԱ ԹԼՓԻՒ։

ԱԴԱԼԻԱ. Տես ԱՏԱԼԻԱ։

ԱԴԱՄԱԿԵՐՏ. Տես ՀԱԴԱՄԱԿԵՐՏ։

ԱԴԱՄԱՆՑ ՔԱՐ. — Վաղապետականի Տասը գաւառի, Էջեգ գիւղի մօտ քարաբլուր մ՚է. չի գիտցուիր այսպէս կոչուելուն պատճառը։

ԱԴԱՄԽԱՆ. — Ծառերով և պարտէզնե-րով զարդարուած գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառին մէջ, Երանոս գիւղի հարաւային կողմը։ Բնակիչք ամբողջ Հայ են 804 հոգի, բաժնուած 86 տան. ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը, որոյ հարաւային պատի կից խաչքարի մը վրայ կայ համառօտ արձանագրութիւն մը ՋՂԴ (= 1544) թուականաւ։ Գերեզմանատունն ունի արձանագրութիւններով տապանաքարինք։ Գիւղիս արեւմտեան հիւսիսային կողմը կայ Ս. Սարգիս անունով աւերակ եկեղեցի մը առանց արձանագրութեանց։ Գամխանի մօտերը Ամիրատեան Մեսրոպ արքեպիսկոպոսը 1863ին գտաւ 7 տապով բեւեռաձեւ արձանագրութիւն մը (թ. 12), և նոյն տարին հրատարակեց Մոսկուայի Համբաւաբեր Ռուսիոյ ամսաթերթի մէջ։ Նոյնը հրատարակեց և մեկնեց Մորդման. լուսանկարեց Կովկասու Հնախօսական Ընկերութիւն և Պ. Մէյա մեկնեց նոյն լուսանկարի վրայէն. ասոր վրայ ուրիշ գրողներ ևս եղան։ Բեւեռաձեւ արձանագրութեանց ընթերցողներէն ամենք, պատմական և աշխարհագրական հետաքրքրքրական տեղեկութիւններ կը գտնեն արձանագրութեանս բովանդակութեան մէջ։ — Միաբան, 53։ Գեղարքունի, 507—8, 760։

ԱԴԻԱԽ կամ ԱԹԱԽ. — Ձայսմաւուրաց մէջ յիշուի այս անուամբ քաղաք մը Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ։ Տես ԱԹԹԱԽ։

ԱԴԻՇ. Տես ԱՏԻՇ։

ԱԴՐԻԱՆԱ. Տես ԱՅԱՍ։

ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ. Տես ԷՏԻՐՆԷ։

ԱԶԱ, Վերին և Ներքին. — Միւնեաց Գողթն գաւառի, այժմեան Ագուլիսի վիճակին մէջ են այս իրարու շատ մօտ, կրկին գիւղերը, կիլեան գետի եզերքը։ Ներքին Ազան վայի բնակիչք թուրք են Հայ և Թուրք, ընդամենը 306 հոգի։ Իսկ Վերին Ազան գաւ. Հայարնակ է 795 հոգւով, բաժնուած 129 տան։ Երկու գիւղերն ալ ունին մէկ մէկ եկեղեցի, բայց նշանաւոր բան մը չունին և խեղճ վիճակի մէջ են։ Բնակիչք երկրագործութեամբ կ՚զբաղին, լեռնային խիստ ապաւաղեայ է, մանաւորական կարողութիւնին սակաւ, բնութեամբ ծոյլ և զանգաղ են, ձիւնի և օդի խիստ շատ կը սիրեն։ Օդը մաքուր և առողջարար է։ Փայտի նուազութեան համ թէ ըսեմ ապքանութեան պատճառաւ կը վառուն սեմաւ։ Ագայի մէջ ապրիւր չկայ և գետի ջուրը կը գործածեն։ Վերին Ագայի և Մերձակայ Տէր գիւղի մէջտեղ, Կիլեան գետի վրայ ձգուած է հնգակամար քարաշէն կամուրջ մը, ծախիւք Հանգուցեալ Ագուլեցի Աւետիս Տէր Մկրտչեանի։ Այստեղ կայ շիրիմ մը (թ. 13), որոյ ձեւն և ճարտարապետութիւնն չեն թուիր հայկական։ — Միաբան 346։ Մշակ, Ը. 50։ Փորձ, Բ. բ. 359։

ԱԶԱԲ. — Ամայի գիւղ Ալբարատայ վանդոյ (կաթ) գաւառի մէջ, Գանլու գիւղի արեւմտեան և Իւշաւիլ լերան հիւսիսային կողմը։ Գիւղիս մօտ կայ ապրիւր մը որ ոխտատեղի է Հայոց. կ՚ըսեն թէ հոն Ս. Թադեոս առաքեալն անուամբ վանք մը եղած է և աւերակներն ալ կը ցուցընեն. իսկ ապրիւրը կը վազէ միայն օգոստոսի սկզբէն մինչև սեպտեմբերի վերջը։ — Ալբարատ, 78։


ԱԶԱՅԻ ՇԷՆ կամ ՆՈՐԱՇԷՆ. — Գիւղ Ալաւնից Գարգման գաւառի մէջ, կառուցուած սարահարթի վրայ. օդն և ջուրը պատւական, երկիրն արգաւանդ։ Այժմեան բնակչաց նախնիք գաղթած են Խաչէն գաւառի Տաշ—պուլաղ, Ալաջաձոր, Խնձորատան և Վարանդայի Նախջուանիկ և Հզորդի գիւղերէն։ Ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին, որ կիսով չափ փայտաշէն է, յորում պահուի Աբգարեան Ալաւնեցի Ս. Լուսաւորչի մատունքը, զետեղուած արծաթեայ ականապարզ խաչի մը մէջ։ Բնակչաց թիւն է գրեթէ 700 հոգի, ամբողջ Հայ, բաժնուած 83 տան։ — Աղուանք, 207։

ԱԶԱԽ կամ ԱԶԱԴ. թ. ازاخ · Դ. Azof. — Հին ժամանակ վաճառականութեամբ ծաղկած նշանաւոր և ամուր քաղաք Տան գե-

տին բերանը. որուն գրեթէ 700 տարի ա-ռաջ տիրեցին Ճենովացիք, յետոյ Թաթարք, Օսմանցիք, Ղազախք և հուսկ ուրեմն Ռուսք։ Այժմ բնակչաց թիւն է 25,000 գանագան ազգերէ։ Ի հնումն քաղաքիս մէջ բազմաթիւ էին վանականաց Հայք, որք ունէին նաև եկեղեցի մը Ս. Գրիգորի անուամբ։ Հայ տիկին մը Ֆֆեոտի՝ զուտար Նախիջեւանի 1341–2 թուին երկու սամ (խս. sommo) դրամով աւետարան մը կը գնէ և կ'ընծայէ «ի Ս. Գրիգոր ՅԱզախ քաղաքի եկեղեցին,....»։ 1715 թուին քաղաքիս մէջ նա-մանակ (16–26 յունիս, 1878), մեծ ընդունելութիւն ըրին։ — Այրարատ, 32։

ԱԶԱՏ. — Հին գիւղ Վայոց ձոր (Սիւնիք) գաւառի մէջ, որուն համար Օրպէլեան Սմբատ իշխանը Նորավանից արձանագրութեան մէջ կ'ըսէ. «Տուաք զԱզատ գիւղն՝ իւր ամէն սահմանովն, շրջակայ լերամբ և դաշտով, սկսեալ ի բարձր գիտաւոր սարէն որ Քառասնապատաց կոչի՝ մինչ ի յերեւանն Հոզոցմոց և ձաւաձոր և ի գլուխն Ախուոյ»։ — Միսաքան, 177։

— Հին և անուանի գետ Այրարատայ



13. Շիրիմ Ազատի մէջ։

հատակուեցաւ յայլազգեաց, Գողթն գաւառի Բուհրատ գիւղէն գեղեցկագէմ պատանին Ս. Սահակ, որոյ նահատակութեան պատմութիւնն հրատարակուած է Միսաքանի տեղագրութեան 528–30 էջից մէջ։

ԱԶԱՊ կամ ԱԶԱՓ. — Գիւղ Այրարատայ Տարօն Բասեն գաւառի մէջ, Երասխայ օժանդակ Համանուն Ազատ–Սու գետակի վրայ, Աբուռոզ գիւղի արեւմտեան կողմը։ 1829–30 թուին գիւղիս բնակչաց մէկ մասը գաղթեց ի Ռուսիա։ Ռուսաց վերջին պատերազմէն յետոյ, տեղւոյս Հայերը առաջնորդութեամբ Թ. Տիգրանեանի, իրենց համագղի Լազարեֆ զօրավարի կարմէն գառնալու ժամանակ (16–26 յունիս, 1878), մեծ ընդունելութիւն ըրին։ — Այրարատ, 32։

ԱԶԱՏ. — Հին գիւղ Վայոց ձոր (Սիւնիք) գաւառի մէջ, որուն համար Օրպէլեան Սմբատ իշխանը Նորավանից արձանագրութեան մէջ կ'ըսէ. «Տուաք զԱզատ գիւղն՝ իւր ամէն սահմանովն, շրջակայ լերամբ և դաշտով, սկսեալ ի բարձր գիտաւոր սարէն որ Քառասնապատաց կոչի՝ մինչ ի յերեւանն Հոզոցմոց և ձաւաձոր և ի գլուխն Ախուոյ»։ — Միսաքան, 177։

— Հին և անուանի գետ Այրարատայ Մազազ–Ոստան գաւառի մէջ, որ միջին գաբէն ի վեր կը կոչուի Գառնոյ ջուր անուամբ։ Գառնոյ ձորոյ ջրաշատ լեռներէ բազմաթիւ վտակներ և աղբիւրներ օձապտոյտ ճամբաներով կը սահին կը թափին գետոյս մէջ։ Հանրածանօթ Հ. Ալիշանը գետոյս համար կ'ըսէ. «Թէպէտ և ակունք և առաջք գետոյն յանձուկս և ի գժուարին վայրս զօդեալք են և աշխատութեամբ իմն գերծանի, բայց ինքն կոչի Ազատ, ոչ գիտեմ վասն որբունի ոստանին մատուցութեանն՝ եթէ յայլ ինչ ասկս, այլ հարկ է թէ նշանական ինչ ունիցի պատճառս»։ Ձեռոյ կը յիշէ հին աշխարհագիր մը, որ գետս

յիշած առեն կը կրկնէ անուն ու կ'ըսէ. «Եւ արդարեւ Ազատ». և ապա աշխարհագրօրէն կը նկարագրէ. «Որոյ ակունք բղխեն ի Գետող լեռնէ, ի սախուրակ (սահաւոր կամ դարուվար) տեղւոյ. որ իջանելով ընդ Գուխն՝ արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, և անցեալ ընդ հարաւ՝ անկանի յԵրասխ»։ Գետոյս պիտաւոր վտակներէն կամ օժանդակներէն մին՝ կը բղխէ Մազազ–Ոստան գաւառի Հիւսիսային արեւելեան կողմէն, որ Գեղայ (Նալթէվէ) լեռնէն իջնելով՝ ձորակի մը միջէն կ'անցնի Գեղարդայ վանից արեւմտեան կողմէն և կը հասի ուղիղ դէպի Գառնի. ուրիշ մը՝ արեւելեան հարաւային կողմէն կ'անցնի Պայպուրթ վիւղէն եւ Գառնիի քով կը թափի յԱզատ։ Գետս Գառնիէն անցնելով՝ քանի առաջ կ'երթայ այնչափ աւելի կ'ընդարձակի և գետի կերպարանք առնելով Ազդաշ և Ագճա–Գլշագ գիւղերու միջեւէն՝ ձորէն դաշտ կ'իջնէ և կ'իջնէ դէպի արեւմտեան հարաւ ու Զիլիխանլու գիւղի մօտ կը թափի յԵրասխ։ Ազդաշի մօտերէն, դաշտի միջէ, Ազատ կը բաժնուի բազմաթիւ առուակներու, որոնք ամրան կը ցամքին։

Մ. Խորենացի խոսրով Բի համար կ'ըսէ. «Ամառս մի առ Ազատ գետովն անկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակի»։ Իսկ Բուզանդ աւելի մանրամասն կը նկարագրէ այդ անտառի ընդարձակութիւնն և դիրքը։ Վարդան աշխարհագիրն ալ կը հաստատէ թէ՝ «Ազատ գետ՝ Գառնոյ ջուրն է»։ Պատմագիր մեր Հ. Զամչեան՝ Խորենացւոյ և Ասողկայ խոսքերն ի մի ձուլելով կ'ըսէ. «Այս (Արտաւազդ Բ) կամեցաւ յաւուր միում գնալ յորս վարագոյց և ցուոյց առ Մասիս լերամբ. և հասեալ ի գետն Ազատ որ և Մեծամօր կոչի, էանց ընդ կամուրջսն Արտաշատու»։ Բայց որովհետև մեր հին աշխարհագիրք Ազատ և Մեծամօր առանձին գետեր կը յիշեն, ուստի և մեզ հաւանական է կարծելն թէ Ազատ գետը չէր կոչուիր միևնոյն ժամանակ նաև Մեծամօր, այլ իրաւ բաժնուած ճիւղերէն մին, որ կ'անցնէր Արտաշատի մօտէն, և մերձակայ դաշտն ալ իր անուամբ կը կոչուէր Մեծամօրի դաշտ։

Փրկչական 600 թուին, երբ Օշականցի Հայ Մօրիկ կայսրն Բիւզանդիոնի, մեր աշխարհը Պարսից և Յունաց մէջ բաժնեց, այդ երկու տէրութեանց սահմանը կը կարէր նոյն այս Ազատ գետը, ինչպէս կը վկայէ Յոհան կաթողիկոս. «Վասն դի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հաստանէր»։ Գետոյս ձախակողմէ դէպի հարաւ և արեւելք տակաւին կ'երեւին անտառային ծառեր։ — Խորենացի, Գ. Ը։ Բուզանդ, Գ. Ը։ Զամչեան Պտմ. հտ. Ա. 352, Բ. 937։ Յոհան կաթ. ԺԲ։ Ասողիկ, Ե. 53։ Հնախ. Հայ. Ա. 148–9։ Այրարատ, 6, 331–32։ Ս. Մարքեւ, հտ. Ա. 40–41։

— ԳԻՐԱՆ. — Սրբոյն Վահանայ Գողթնեցւոյ ժամանակ, այսպէս կը կոչուէր Սիւնեաց Գողթն գաւառի հին Բատաճոր ընդարձակ և երկայն հովիտը, որ այժմ կոչուի Պեղեւ։

— ՄԱՍԻՍ. — Այս մակդիրով կը կոչուի Մասիս Գողթան երգոց մէջ, երբ Խորենացին պատմելով Արտաւազդ Թագաւորի ահագին վէի մը մէջ խնկուելն և անհետ ըլլալն, նոյն երգիչներու խոսքերն ի մէջ կը բերէ, որք կ'ըսէին թէ Արտաւազդայ գլուխն եկաւ իր հօր Արտաշէս Բի անէծքը, որ մահուան ժամանակ ըսաւ. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս, անդ կացցես և ղոյս մի տեսցես»։

Մեծն Տիգրան երբ Մարաց յաղթեց, Մասիս լերան շրջակայեցիք բնակեցուց անոնց գերիները, յորս կային ոչ սակաւ պետականք և թագաւորազունք. և որովհետև մեր լեզուով Ազատ կը կոչուէին արքայազունք և պետականք, ուստի և Գողթան բանաստեղծները, այս մակդիրով կոչեցին նաև այդ պետականաց բնակութեան վայրերը։ Թովմա արծրունին ևս կը յիշէ այս մակդիրը (Դ. 11). «Ընդդէմ նայիլով լերանց Այրարատեան Ազատին Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարափիճակ»։ Շնորհալին ալ վիպաց մէջ նոյն Արտաւազդայ համար կ'ըսէ.

Քաջայ ասեն գնա կալեալ,
ՅԱզատ Մասեաց լերին տարեալ։

Տես ՄԱՍԻՍ։ — Խորեն. պտմ. Բ. ԿԱ։ Հնախ. Հայ. հտ. Ա. 61։

— ՔԱՂԱՔ. — *Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ հին քաղաք մ'էր, այժմեան Նոր-Պայազիտ քաղաքէն 7 վերստ հեռու դէպի հիւսիս, Հայրապետքի մօտ, ծովեզերքի վրայ։ Տանց, պանդոկաց, կրպակներու, կարաւանոցներու և այլ շինուածոց ահագին աւերակներ տարածուած են դաշտի երեսը։ Այս քաղաքի ե՛րբ և որո՞ւ ձեռքով հիմնուած ըլլալն անծանօթ է, և հետազօտութեան ու քննութեան կարօտ։ Աւերակաց մէջ դեռ կը տեսնուին եկեղեցիներու հետքեր և արձանագրութիւններ ունեցող խաչարձաններ և տապանաքարիներ։ Միմէոն կաթողիկոս կը յիշէ 1766 թուին Ազատ Քաղաք անուամբ գիւղ մը Հայրապետից վիճակներէն, որ նոյն ժամանակ շէն և եղեր։ Մասեաց Աղաւնի ամսագիրը (1858, էջ 59–63) քաղաքիս համար կը գրէ. «կոթի գիւղաքաղաքն է տեղին կնիք անուանեալ քաղաքին, զոր յետ վաստակայ՝ իշխանք Միւնեաց շինեցին փոխանակ Ազատ Քաղաքին, զոր աւերեալ էին ոխատապահ նախարարք Հայոց, վասն լինելոյ անդ առուշանի կրակի»։*

— *Սողք գաւառի մէջ ևս կեօտաքարէ պիղծ հարաւակողմը 4–5 վերստ հեռաւորութեամբ կան աւերակներ, որոնց տեղացիք Ազատ Քաղաք կ'անուանեն։ — Միսակեան, 40, 66։ Գեղարքունի, 33, 438–47։*

ԱԶԱՏԱԿ կամ ԱԶԱՏԵԿ. — *Մեծ և գեղեցկաշէն գիւղ Միւնեաց վայոց ձոր գաւառի, Մարտիրոսի ձորահովտի մէջ, Բոռ գիւղի արեւմտեան հարաւային կողմը, վտակի մը ափերը քով։ Բնակիչք ամբողջ Հայ են 755 հոգի, բաժնուած 75 տան։ Գաղթած են Պարսից բաժնէն. ունին եկեղեցի մը Ս. Ստեփաննոս Նախավկայի անուամբ, հանդերձ նոր (1677) արձանագրութիւններով։ — Միսակեան, 178։*

ԱԶԱՓ. Տե՛ս ԱԶԱՊ։

ԱԶԷՐՊԷՃԱՆ. Տե՛ս ԱՏՐՊԱՏԱԿԱՆ։

ԱԶԻԶԻԿ. — *Գիւղաւոր քաղաք Համանուն գաւառին, Սերասաիոյ նահանգին մէջ. բն. 1,600 յորոց 400ը Հայ են։ Ամբողջ գաւառին մէջ կան գրեթէ 3,000 Հայ։*

— *Կան նաև ուրիշ Ազիզիէ գաւառներ, յորս սակաւաթիւ են Հայք։*

ԱԶԻՐ. — *Նոր գաւառ Կիլիկիոյ, Առանայի նահանգին մէջ։*

ԱԶՂՈՐ, ԱԶՂՈՐ կամ ԱՍԿՈՒՐԻՔ. Վ. Աճխուեի. Թ. يوزغاد. Ռ. Адхуръ. — *Վաղեմի բերդաքաղաք Տայոց Ազորդ գաւառի, այժմ պիսաւոր քաղաք կամ լաւ եւս աւան համանուն վիճակին (թ. 14). կ'ինկնայ Ախալցխայի հիւսիսային արեւելեան կողմը, 20 վերստ հեռաւորութեամբ։ Կառուցուած է կուր գետոյն ձախակողմը, բարձր և պաշտպանութեան յարմար և միանգամայն գեղեցիկ վիրքով։ Նշանաւոր է ժայռի վրայ կառուցուած ամուր բերդը, որ զանազան ժամանակաց մէջ, շատ անգամ գիմադրած է թշնամեաց ուժերուն. տակաւին կը տեսնուին առաւելապէս վերջացած պարիսպքն, հին շէնքերու մնացորդներ, վրացերէն արձանագրութեանց բեկորներ և գետէն վեր ջուր տանելու համար քարուկիր ճամբայ մը։ Բերդաքաղաքս ոչ միայն օտար այլ և մեր պատմիչներէն կը յիշուի ի գարու սկիզբը, Ակուրեի կամ Սակուրեի կոչմամբ. այն ժամանակները, ըստ Յոհան կաթողիկոսի, հոս եկաւ ապաւինելու մեր Բագրատունի քաջ թագաւորն Աշոտ երկաթ, իր Աբաս եղբօրը և 250 կարիճներու հետ, և յարձակելով թշնամեաց վրայ, հալածեց և կորակոր եւս գարձուց երկու գաւառան Գնունի եղբարք և 4000 մարդ։ Նոյն գարու վերջերը Տայոց Դաւիթ կիւրապաղատը, այս քաղաքս Ափխազաց Բագրատ թագաւորէն առնելով, ընծայեց մեր Ամբատ Տիեզերակալ թագաւորին, ի փոխարէն իրեն ըրած օգնութեան։*

Շատ անուանի է տեղւոյս Տիրամօր ուխտատեղին, ըստ աւանդութեան Վրաց, Անդրէաս Առաքեալը հոս բերած է Ս. Աստուածածնի պատկեր մը, և հրաշքներ ու բժշկութիւններ ընելով՝ տեղւոյս կառաւնը կոչեցաներ, և եկեղեցի մը շինելով, պատկերը հոն դրեր է։ Կ'ըսեն նաեւ, թէ մինչեւ Հերակլ կայսրն իսկ ուխտի գալով հոս, և բակելով հին եկեղեցին (վր. Ծուեղ–Էկկեսիա) նոր, մեծ և փառաւոր եկեղեցի մը շիներ է, որ և ժամանակ մը վրաստանի Սամցխէ գաւառի երկոտասան եպիսկոպոսանիստ աթոռներէն մին էր։ Եկեղեցիս երեքտասաներորդ դարու վերջերը՝ մեծ երկրաշարժէ մը

կոթծանուելով, կ'ըսեն, զմբէթն իջեր և հովանիի պէս ծածկեր է սուրբ պատկերը։ Վերոյհն կանգներ են եկեղեցին և շատ անդամներ տեղւոյս իշխողք՝ ծանր ծանր գնով ուխտական և հրաշազործ պատկերս գերութենէ կամ գողութենէ ղարձուցեր են իր տեղը, մինչեւ ԺԶ դարու վերջը։ Յետոյ այլազգեաց ձեռքը անցնելով քաղաքս, եկեղեցին կործանուեր է, պատկերն ալ այժմ կը գտնուի Գէլաթի վանքին մէջ։ Կիսակործան եկեղեցւոյս աւերակաց վրայ կը տեսնուին ճարտարապետութեան և նկարչութեան գեղեցիկ նշաններ. բայց արձանագրութեանց մէնեւին հետք մը չկայ։ Պրոսէ՝ քաղաքս այցելած ժամանակ, տեսած է եկեղեցւոյս բարերէն ցիր և ցան գործածուած շատ աներու պատերու մէջ։



14. Ազղոր։

Վրաց Հերակլ Թագաւորը 1770ին Ռուսաց նիզակակցութեամբ յաղթեց Թրքաց՝ քաղաքիս պարապաց տակ։ 1828ին երբ Ռուսք Ախալցխայի տիրեցին, Ազղորն ալ իր շրջակայքով անոր վիճակներէն մին եղաւ։ Դրխմու պատերազմի ժամանակ, ահաւոր պատերազմի տեսարան մը բացուած էր նաեւ հոս. օսմանեան բանակն յարձակելով Ռուսաց վրայ, չկարողացաւ գիմադրել և շատ կորուստով յաղթուած նա գարձաւ։ Այժմ (1893) բերդաքաղաքիս Հայ բնակիչք, որոց թիւն է 305 հոգի, կը գրաւին վաճառականութեամբ. միւս բնակիչք Վրացի են 1272 հոգի։ Բոլոր Ազղորի վիճակի մէջ գտնուած Հայոց թիւն է 1818 հոգի, բաժնուած 178 տան։ Իսկ ընդհանուր Հայ, Վրացի, Թուրք, և ուրիշ ազգաց թիւն՝ կը հասնի 14,303 հոգւոյ, բաժնուած 1709 տան։ — Նշուարք Հայկ. Ա. Պր. 13—4։ Տա. Հ. Հայ. 336—7։ Զամչեան Պատմ. հտ. Բ. 870։ Մ. Մաթբեե, հտ. Ա. 84։ Պրոսէ, Բ. Պր. 117—18։ *Le Tour du Monde, XLVII, 404*։

ԱԶՆԱԲԵՐԴ. — Լեռ Միւնեաց Ազուիք և Գողթն գաւառաց մէջ. 8900′ բարձրութեամբ, ուսկից կը բղխէ Գետամայ ջուրը։

— Միւնեաց Նախիջեւան գաւառի խոր վիճակի մէջ, համանուն գետակի երկու մասակաց միանալու տեղը գիւղ մ՚է, որուն այլազգիք Ալմապիւրտ կ՚ըսեն։ Հայկական անունը և հարաւակողմը գրուած աւերակները կը ցուցընեն թէ հին ժամանակ ասնուանի բերդաւան մը եղած է, թէ և այս մասին մեր պատմչաց մէջ ամենեին յիշատակութեան մը չենք հանդիպիր։

Ձենովայի Հայոց Մ. Բարթուղիմէոս եկեղեցւոյն մէջ, հետեւեալ տապանագիր գտաւ

Այս է տապան Հայրապետին՝
Որ է որդի Անանիային.
Սա յերկրէն է Գողթան տանին,
Եւ ի գեղջէ Ըզնայբերթին. և այլն։

Ազնաբերդի բնակչաց մեծամասնութիւնն կը կազմեն Հայք 1162 հոգի. բաժնուած 94 տան. իսկ այլազգիք են միայն 188 հոգի։

ԱԶՆԱՄԻՐ. — Ամայի գիւղ Միւնեաց Գողթն գաւառի Բաստառոր (Պելիւ) վիճակի մէջ։

ԱԶՆՈՒԱԶՈՐ. — Աղբիւր Նահանգի հին

գաւառներէն մին։ Այժմ ծանօթ է աւելի կամ պակաս Տէրէ անուամբ, որ Բաղէշի հիւսիսային արեւելեան կողմը, $3^1/_2$ ժամ հեռաւորութեամբ գեղեցիկ և ընդարձակ դաշտ մէ։ Այս դաշտի մէջ կան առ առաւելն իրարմէ $2^1/_2$ ժամ հեռաւորութեամբ 11 Հայ և 4 Քիւրդ գեղեր։ Գաւառակիս բնակիչք խիստ խեղճ վիճակ մ'ունին, ոչ միայն տպիտութեան մէջ են այլ և աղքատութեան և անխիղճ հարստահարութեանց տակ ընկճուած։

— Այս անուամբ ձորակ մը կայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի կամայ վիճակին մէջ։ Անուանս իմարմանութեամբ յայլազգեաց Կիւզել Տէրէ կը կոչուի ձորոյս մէջէն անցնող գետակն, որոյ մէկ ճիւղն կը բղխէ Համանուն Կիւզել Տէրէ (Գեղեցիկ ձոր) լեռնէն։ Տես Կիւզել Տէրէ։

ԱԶՈՐԴ կամ ԱԶՈՐԴԱՓՈՐ. — Տայոց աշխարհի հին գաւառներէն մին, որոյ կը համապատասխանեն այժմ Նահիանի և Թորթումի։

ԱԶՈՒԽ. — Գիւղ Արցախի Պանծկանք գաւառի, ձորահովիտ մը մէջ. բնակչաց մէկ մասը գաղթած է Ղարաբաղ։ Օդը ամրան ասթմագին է, բայց ջուրն պատուական։ Ունին եկեղեցի մը քարուկիր՝ Ս. Աստուածածին, որոյ երկայնութիւնն է 14 մեար 70 հազրմ. և լայնութիւնն 8 մեար 17 հազրմ։ Գիւղս ունի 140 տուն և 840 բն։

ԱԶՈՒՇԵՆ (Ազատաշէն). — կարնոյ գիւղերէն մին. բնակիչք Թուրք են 15—20 տուն։

ԱԶՏՐՎԱՆՑ. — Գիւղ Տայոց Ասեացփոր գաւառի, այժմեան Խերդզրակ վիճակի մէջ. որոյ Հայ բնակիչք գարուս սկիզբը ամայացան։

ԱԶՐՈՒՆ. Տես ԱՐԶՆ։

ԱԹԱԽ. Տես ԱԴԻԱԽ։

ԱԹԱՆ. — Գիւղ Գուգարաց, այժմեան Լօռի գաւառի մէջ, բն. 193, ամբողջ Հայ։

ԱԹԱՆԱԳԻՆԵԱՑ Վ. Տես ԱՆԹԱՆԵԱՆ։

ԱԹԱՆԱՆՑ. — Գիւղ Վասպուրականի, Վանայ ծովակի արեւելեան կողմը, Արտա-



15. Աթէնք։

մեաի և Ոստանայ մէջտեղերը։ Բնակիչք ամբողջ Հայ են գրեթէ 50 տուն. ունին հին և կեղեցի մը։ Գիւղիս հարաւային արեւելակողմն ձորակի մը մէջ, Աւեր վանք կոչուած աւերակ մը կայ, ուր կը տեսնուին եկեղեցւոյ հիմունք և 3—4 տապանաքարերնք, որոց արձանագրութիւնք անընթեռնելի են։

ԱԹԻՆԷ. Գր. ATHÈNES. — Մայրաքաղաք Յունաստանի (թ. 15). ի հնումն կեդրոն ըլլալով արուեստից և գիտութեանց շատ հռչակաւոր եղած է։ Պատմութիւնն մեզ կը յայտնէ թէ շատ Հայկազունք Դուռ գարձն սկսեալ ինչպէս ուրիշ քաղաքներ, նոյնպէս և Աթէնք գալով, ուսմանց և գիտութեանց մէջ կը զբաղանային։ Նշանաւոր է Գրիգորի ասաւածա-

բանի Բարսղի մահուան արձանագանին քահերոդ ճառի մէջ ըսածն, թէ ինչպէս Բարսղէն առաջ Աթէնք եկած Հայկազուններէն ոմանք կը վիճէին ընդ նմա։ Նոյնը կերպով մը կը յիշէ նաև Վանական վարդապետը. «Օրէն էր ուսանել յԱթէնս լաւ կալով և ի հնազանդութեան. այլ զմերոցն ամբաստանանն՝ թէ սակաւ ուսանին, և խօսիլով երկար վիմանան։ Զայս Աստուածաբանն հռչակեցոյց ի Բարսղի արձանագանին»։ Հռչակաւոր հանդիսացած է ի ճարտասանութեան, չորրորդ դարու մէջ Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, որ ըստ վկայութեան Եւնապիոսի, այնչափ անուանի եղաւ, որ ինչուան արձանն ալ կանգնեցին Հասմայ մէջ, մանաւանդ

տալով իրեն թագաւոր Ձայրատաճանուրբեան։ Ս. Յահակայ և Ս. Մեսրոպայ աշակերտներէն ալ շատեր եկած են Աղէքս, յորս ա- մինէն ուսոյն անուն հանած է Գաւիթ Ան- յաղթ փիլիսոփայն։

Աղէքսի բնակչաց թիւն է 115,000։ Քա- զաքիս և Պիրէնդի մէջ գանուած Հայոց թիւն է 150, բաժնուած 30 ընտանեաց։ Վերջին գէպքերէն առաջ հոս կային հազիւ 50–60 հոգի Հայ։ Քիչ մը ժամանակ հոս ապաւեցաւ Հնձակ Թերթը, այժմ ևս կը ապսպրի Մխոբիւն ամսաթերթը։

Քաղաքիս Հայերը չունին ոչ եկեղեցի և ոչ քահանայ, նիւթապէս ալ ազքատ են և հազիւ ապրուստնին կը ճարեն։

ԱԹԹԱԼԻ. — Մահիտոս Աստղիկ իր ժա- մանակ Ջորբորդ Հայոց մէջ պատահած եր- կրաշարժին վրայ գրած առեն (Գ. Ղ.), յի- շէ նաև անուններ հետևեալ կերպով. «Թար- խանլեալ Ճապաղջուր բերդին Դիլմէթայ, Ա- ֆեխայ և Ամմայ, և ամենայն քարուկիր գեղեցկաշէն եկեղեցեաց և ապարանից»։

ԱԹ–ԹԱՇ (Քարաձի). — Ամայի վիպ Միւ- նոյց Գեղարքունի գաւառի մէջ, Աղրիճէ գե- տակի եզերքը. այսպէս կոչուած է, անշուշտ գետեզերքը, Աղըլթասարի սառոյտը գտնուած քարէ ձիարձանի համար։ — Տ. Աւետիքեան Ն. 39։

ԱԹԹՈՑՔ. — Գիւղ կը յիշուի Միւնոյց (Բաղք) եկեղեցւոյ հարկատուաց հին ցու- ցակի մէջ։

ԱԹԼԻՔ. — Միւնոյց եկեղեցւոյ հարկա- տու գիւղ, Ծղուկ գաւառի մէջ (Հին ցուցակ)։

ԱԹՄԱ. — Թրքաբնակ գիւղ Ակն գաւառի մէջ։ Այս անուամբ վանք մը Հայ հռոմից, յիշուի ՌԼԱ (= 1582) թուին գրուած ժա- մագրքի մը յիշատակարանին մէջ։

ԱԹՇԻ. — Փայտակարանի հին գաւառնե- րէն մին։

ԱԹՈՒԻԿ. — Գիւղատեղի Գուգարաց, Հաղբատայ քով, կայան բերդի պիտոյ, Պղնձահանքի սահմանին մէջ։ Ասոր մօտ բլրակի մը վրայ կառուցուած է Աղբէի զօրավարի ժեռարանը, որ այժմ բոլորովին խարխլած է։ Մեռարանիս վրայ հետեւեալը կը գրէ Կիրակոս (ԽԱ). «Առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյն վարդանայ՝ ա- ռաքէ առ կաթուղիկոսն Կոստանդին ի կլայն Հռոմէական. և ինքն եկեալ ի Կայանայ ժեռարանն իւր, զոր Ս. Աղբէ կոչէին՝ հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ պատարեալ յուսուցանել զպատուս, որք ա- շակերտէին նմա վարդապետական բանին»։

Սոյն այս վարդան վարդապետը վանաց մէջ խաղաղական մահուամբ կը վախճանի, որուն վրայ կանդնած են հսկայաձև խաչ- քար և փորագրած են մահուան թուականը ՉԻԲ (= 1273)։ Աչքատեղէն վեր ձորակը ատրածուած կը տեսնուին Աղբոսիկ գիւղի սխուր աւերակները։ — Ատրպատ Ալեագիր, Ի. 306–7։

ԱԹԻԱԿ. — Միւնոյց եկեղեցւոյ հարկա- տու հին գիւղերէն մին (Հին ցուցակ)։

ԱԹԻԱՆԱԿԱՆ. — Ար. اجدنقان (Լծատա- եկեալ). — Անուն ծանօթ է մեզ Խորենաց- ւոյ պատմութենէն. Աժդահակայ սպանմա- նէն վերջ, Տիգրան Հայկազն Մարաց գե- րիներու մէկ մասին ալ բնակութեան վայր սահմանեց այսուհետև սկսեալ մինչև Նախ- ճաւան. «Իսկ ի միւս կողմանէ գեաղն գրե- լոր զաշան, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանայ»։ Խորե- նացւոյ սոյն յիշատակութենէն դժուար պի- տի ըլլար տեսնել, թէ որ նահանգի և ինչ գաւառի մէջ կ'ինկնար Աժդանական, եթէ արտաքին պատմիչն Խոն Խալիկ, չյիշէր, թէ Թրքաց Ժ.Ը դարու մեծ աշխարհակալ Սա- լահէտտինի հայրն՝ ծնած էր Յէնճանէքան կամ ըստ մեզ Աժդանական, որ ետեն կամ արուարձան մ'էր Դըվնոյ, Աղբատայ Մա- զազ–Ոստան գաւառի մէջ։ — Խոր. պտմ. Ա. Լ։ Ալիշան, 414։

ԱԹՏԻՐԻՈՆ. Տես ԱՍՏՐԱԹՈՆ։

ԱԼԱԳԱՐԱ. — Գիւղ Աղբատայ Ծաղ- կոտն (Պայազիտ) գաւառի մէջ։

ԱԼԱԳԻԼԻՍԱ. — Գիւղ Ճունայ 20 տունէ ձեւացած, Աղբատայ Շիրակ գաւառի մէջ, Սիի լերան ստորոտը վտակի մը մօտ։

ԱԼԱ ԳԻԼԻՍԻ. — Գիւղ Սեբաստիոյ՝ ա- բեւելեան կողմ, բնակիչք Հայ 700 հոգի. ունին եկեղեցի մը՝ Ս. Մինաս և երկսեռ վարժարան մը՝ Նարեկեան։

— կամ ԱԼԱՃԱ ԳԻԼԻՍԻ. — Գիւղ Սա- րին Բասենի (Աղբատայ) մէջ, Ագռաղ գե-

տայն եղերքը. այսպէս կոչուած է, հին օրո-
ցաձև եկեղեցւոյն կարմիր ու ճերմակ գոյ-
ներով քարերուն համար։ Եկեղեցիս որ վեր-
ջին (1878) պատերազմի ժամանակ բիչ մը
աւրուեցաւ, այժմ զարձած է Քրդաց մարագ։
— Աչրարատ, 33։

ԱԼԱԳԻՐ. — Հայաբնակ գիւղ Աչրարատայ
Շարուր (Տարալաղըզ) գաւառի մէջ. ըն. 665։

ԱԼԱԶԱՆ. — Գետ Ա-
դուանից, ձախակողմեան
օժանդակ Կուրայ։

ԱԼԱԿԵԱԶ կամ ԵՂԵ-
ԳԵԱՑ ԳԵՏ. — Գետակ
Սիւնեաց վայոց ձոր գա-
ւառի մէջ։ Տես ԵՂԵԳԻՔ։

ԱԼԱԿԻԶ. Տես ԱՐԱԳԱՆ։

ԱԼԱԿԻՕԶ–ՄԱԶՐԱ. —
Գիւղ Սիւնեաց, այժմեան
Նախիջեւան գաւառի մէջ.
բնակիչք 372 հոգի, բաժ-
նուած 65 տան։

ԱԼԱԿԻՕԼ. Տես ԱԼԱՀԱ-
ԿԻՕԼ։

ԱԼԱՀԻԶԱՆ, ԱՐԱՀԵԶ.
— Գիւղ Տայոց աշխարհի
մէջ, հայրենիք Գիւտ կա-
թողիկոսի։

ԱԼԱՃ. — Աչյս ա-
նուամբ երկու լեռ կայ Աչ-
րարատայ Շիրակ գաւառի
մէջ։ Մեծ–Ալաճան կ'ինկ-
նայ Աղուց արեւմտեան
կողմը, և բարձր է 2098մ,
իսկ փոքր–Ալաճան կ'ինկ-
նայ Տիկորի հիւսիսային
կողմը։

— կամ ԱԼԱՃԱՆ. —
Լոռի Վ. Լանկրուայի գիւղ
Լեռնային Կիլիկիոյ, յո-
րում կայ բիւզանդական եկեղեցւոյ մը (թ.
16) չքնաղ մնացորդներ։ Մեբձաւոր լերան
բարձրոյթի վրայ, տեսած է նոյն ուղեւորը
արձանաքանդակ մը (թ. 17), խորհրդական
նշանագրերով. որ խիստ հին ժամանակի և
անծանօթ ազգի կը վերաբերի։ — Սիւռեան,
134։ — Աչյս անուամբ Թրքաբնակ գիւղ
մ'ալ կայ Կարնոյ մօտ։ Տես ԱՐՋՈՑ ԱՒԻՃ։

ԱԼԱՃԱԽԱՆ. — Բերդագիւղ և նահիւ Սե-
բաստիոյ կուսակալութեան մէջ։

ԱԼԱՄԱՆ կամ ԱԼԷՄ. — Գիւղ Աչրարա-
տայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ,
Ալաճա լերան հարաւային սառոյցը, գեղե-
ցիկ դիրք ունի. այժմ Աղեմ կը կոչուի և
բնակիչքն են Պարսիկք։ Գիւղիս մէջ է աչ-
խարհիս ամենահին եկեղեցին, շինուած



16. Աւերակ եկեղեցի Ալաճայի մէջ։

Քրիստոսի 636–7 թուականին, ինչպէս կը
ցուցընէ եկեղեցւոյ ճակատին վրայի մեծա-
տառ արձանագրութիւնը։ Մեծութեամբ չա-
փաւոր է, քառաթև և գմբեթաւոր։ Ս. Աճաճեի
անուամբ կը կոչուի եղեր եկեղեցիս ինչպէս
յայտ է դրան վրայի արձանագրութենէն, զոր
գրած է Աշոտ Ողորմած գաւառն Սոփի Թա-
զուհին Հայոց և Վրաց։ — Շիրակ, 125։

ԱԼԱՄԵՆՑ ԴՈՄԵՐ. — *Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ. բն. 186, բաժնուած 32 տան։ Հոս ծնուած է բանաս-տեղծ Պետրոս Մատաթեանցը, անոր համար գիւղս կը կոչուի նաև Մատաթ-քենտ։*


ԱԼԱՄԵՒ. — *Փոքրիկ գիւղ Բաղէշի հիւսիսային կողմը, Ռահվայի մէջ։ Գիւղիս անունէն Ադաւենց խան իջեւան մը կայ, Դատվան տանող ճանապարհի վրայ։*

ԱԼԱՄԻՒՒ. — *Լեռ Միւնեաց Բաղք գաւառի մէջ։*

ԱԼԱՄՈՆԻԿ. — *Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարու։ Տես ԱԼԱՄԱՆԵԱԿ։*

ԱԼԱՑ. Հն. ԿՈՒԱԿԵՍԻՈՆ. Պղ. ALAYA, Թ. Ալայ, Լ. CORACESIUM, Յն. Κοράκήσιον. — *Ծովային կիլիկիոյ զեղեցկագիր և ամուր քաղաքաց մին է սա, անուանի հնութեամբն, կառուցուած համանուն հրուանդանի վրայ (թ. 18)։ Հին պատմութեան մէջ ծանօթ է Կուակեսիոն անուամբ։ Պոմպոր զեղեցիկ կերպով կը նկարագրէ քաղաքս, բնական ամրոց մը համարելով իւր անառիկ և պատսպարեալ դիրքը, որոյ բազմաթիւ կիսակործան աշտարակներն և պարիսպները ապացոյց են, թէ հին իշխեցողք ևս ջանացած են իրենց անմատչելի ապաստանարան յարգարել զայն։ Բարձրը, լեռան վրայ, հոչակաւոր Դիոզոր Տրիփոն՝ ծովահիներէ պետը, կառուցանել տուած էր ամրոց մը, իւր աւարը և կողոպուտը հոն ապահովելու համար։ Լեռան շուրջը տեղ տեղ դեռ կը նշմարուին Պոմպէոսէն կործանուած այդ ամրոցի մնացորդները։*

Մեծին Լեւոնի թագաւորութեան ժամանակ՝ Կալոնուս անուամբ կը յիշուի բերդաքաղաքս, Սիր Ատանայ աշխարհի մէջ։ Սիր Ատանը կամ Ատոմը Լեւոնի Պայլն, գաւառիարակ էր նաև իր պայազատին, Զաւիկ բամբշան։ Սիր Ատանը դեռ չվախճա-



17. Արձանագրանոցակ Ալայայի մօտ։

նած, իր թոռն կամ որդին Կիւ Վարդը զբաղած էր աէր Կալոնուոսի. Լեւոնի ու Սիր Ատանի մահէն վերջ, դեռ Հեթումը արքայական գահը չբարձրացած, մինչ խռովութեան մէջ էր իշխանութիւնը, յարմար ժամանակ գտնելով Իկոնիոնի նոր սուլտանն Ալայէտտին, յափշտակեց զայն։ Ահա հետեւեալ կերպով կը պատմէ մեզ Սմբատ պատմիչ. « Էառ (Ալայէտտին) յԱտոմայ թոռնէն՝ ի կիւ Վարդէն՝ զբերդն Կալոնուոս, և զդուստր նորա ի կնութիւն՝ յոչ կամաց, և վասն քրիստոնէութեանն՝ չհանդեաւ ի հեծեծանաց՝ աղջիկն »։ Ալայէտտինի բերդիս տիրելէն վերջ, իր անուան առաջին երկու վանկերու հնչմամբ կոչուեր է Ալայա։


Թէ երբ սեփականութիւն դարձած է Հայոց բերդաքաղաքս, հանգերձ իր շրջակայ գաւառաւ, պատմութիւնն անտեսած կը թողու, ինչպէս նաև այս մասին տիրող Սիր Ատանայ ինչ ազգի վերաբերութիւն։ Եւրոպացի հայագէտներէն ոմանք թէև կը համարին որ բուլայ փոռնկ ումն (Ադամ) խաչակրութեամբ այս կողմերն եկած, բայց մեր կիրակոս պատմչի վկայութենէն թէ՝ « էր Հռոմ դաւանութեամբ » կը յայտնուի, որ ոչ լատին էր և ոչ յոյն, այլ նոյն ժամանակի յունածէս հայերէն։ Իւր Ատան անունն ալ ծերեալ է անշուշտ յունասէրներէն, ովի ինչ-

պէս վերը տեսանք, Սմբատ պատմիչ ուղիղ հայկական անուամբ կ'անուանէ Ատոմ։

Ըստ կարծեաց ոմանց, հաւանական է որ Սիր Ատամի նախնիք՝ Ատամհաններ, Ռուբինեաններէն առաջ կը տիրէին այս կողմանց, հպատակելով յոյն կայսերաց, ինչպէս էին նաև Ալղարիպեանք Տարսոնի մէջ։ Սենեքերիմ արծրունւոյ այն պայազատանէրէն էին անշուշտ Ատամայ նախնիք, որք յետ վատպուրականէն գաղթելու ի Սեբաստիա, ընդունեցան Յունաց պաշտօնքերը, և այս կողմերը գալով, փոխանակ իրենց սիրելի Վանին և Բզնունեաց ծովակի կապուտակ ալեաց, այս կարկառակոյտ գագաթներէն կը դիտէին համառաստած Միջերկրականին ասպարէզը. և ինչպիսի մտածմունքներ։

Իսկ Պագուդա արաբացի անուանի աշխարհագիր ուղեւորը, 1340ին տեսնելով քաղաքիս, աշխարհիս գեղեցկագոյն մասն կը համարի և բնակչաց հնութեամբ ածականները կը յատկացընէ. կայսաս, գեղեցիկ, մաքրագոհատ, բարերարոյ, հիւրասէր, և այլն։ կը յայտնէ թէ նոյն ժամանակ քաղաքիս պիսպոս վանաձոր նիւթն էր փայտը, և թէ բազմաթիւ նաւեր կու գային ատա Աղեքսանդրիայէն, Գահիրէէն և յԱսորոց։ ԺԴ դարուն և անկէց առաջ ալ, Ալայայի նաւահանգիստը միշտ յանախած են իտալացի վաճառականաց նաւեր, յորս նշանաւոր են Վենետկեցիք, Ձենովացիք և Լոմպարտացիք, կու գային նաև Կաթալանք և Մայորիկացիք Սպանիոյ։ Զանազան իտալական անուամբք կոչուած է բերդաքաղաքս և իւր մերձակայ վայրերէն ոմանք մինչև ԺԵ դար, և անշուշտ ատ ժամանակ մի տիրած են սոքա այս կողմերուն։ Իտալացիք իրենց բոլոր ուժր Թագաւորին 1471—3ին միջոց, ուղիղով գրաւել ծովային կիլիկիան, և Գարամանցիները զօրացընել ընդդէմ Օսմանեանց. բայց երբ վերջինքս Պարսից յաղթեցին, այն ժամանակ եւ քաշուեցան։ Կէտիկ—Ահմէտ փաշան (1471ին) եկաւ քաղաքիս վրայ, Իկոնիոնի սուլտանաց պայազատ Գըրճ—Ալըսլանը, որ կ'իշխէր քաղաքին անձնատուր ըլլալով, տարուեցաւ Օսմանեանց սուլտանին։ Նոյն ժամանակ գերի տարուեցան ի կ. Պոլիս նաև կիպրոսի Յակոբ Թագաւորէն, քաղաքին պաշտպանութեան համար զրկուած երիք հարիւր բազմաթուրները։

Ինչպէս ըսինք, քաղաքիս դիրքը սքանչելի է և նկարչական (թ. 19, 20), տները նորօրինակ զրիւք իրարմէ վեր կը բարձրանան




18. Ալայա քաղաքի յատակագիծը և հրուանդանը։

մինչև քարաժայռի գագաթը, ծովու երեսէն բարձր 117 մետր։ Ժայռի սառրատը, ծովու եզերքը, կայ բաւական մեծակ այր մը. աւանդութիւնը կ'ըսէ, թէ այրիս մէջ կիլիկեան ծովահէնք, կը պահէին իրենց գանձը, և նոյն տեղը զրամ ևս կը հատանէին. զննութեան կարօտ այս այրը կարելի է մտնել նաւակով մը։ Ականաւոր կողմը նայող ժայռի վրայ, կայ երեսուն տարի, որ յայտնուեցան Աստղկան մեհենի մը մնացորդները ի ձեռն Աւստրիացի Հնախօս Մորովսքի կոմսին, որ նոյն առասուածուհւոյն արձան մը, գաղտագողի նոյն տեղէն փոխադրած է ի Վիեննա։

Քաղաքս որ այժմ մերձաւորապէս ունի

5000 բնակիչք. Թուրք և Յոյն, երէմալով կ'ընդարձակի և կը տարածուի դէպ ի հարաւ գաշտի մէջ, ուր կան գեղեցիկ և մեծ պարտէզներ, զարդարուած՝ նարնջի, կիտրոնի և արմաւի ծառերով և այգիներով։ Շէնութեանց մեծ և փոքր և 10 գպրոց 250 աշակերտօք. իսկ Յոյնք 5 եկեղեցի և 2 գպրոց 100 աշակերտօք։ Եաւաշհանգամի մօտ կայ լայնակոյտ ուխտանիւնի աշտարակ մը Գզըլգուէ անուամբ, 30 մետր տրամագծով և



Նկար 19. Աղայա։


մէջ չկայ նշանաւոր ինչ, փայտակներն նեղ են և ծուռումուռ։ Աւելցա զուրկ է ըմպելի ջրոյ աղբիւրներէ, ուստի թէ՛ խմելու և թէ այլ պիտոյից համար կը գործածեն ջրամբարներու ջուր։ Թուրքերն ունին 32 մզկիթ

30 մետր բարձրութեամբ (Թ. 21)։ Քաղաքիս նաւահանգիստը բաւական բանուկ է. Անգղիոյ, Աւստրա–Հունգարիոյ, Յունաց և Օսմանեանց վաճառքի նաւեր կը յաճախեն ասա. տարեկան մէջ միջին հաշուով կը

մանեն 126 չոգենաւ և 565 առագաստանաւ։

Համառօտ վիճակն ունի 37,000 բն. և 136 գիւղ. օդը բարեխառն է, երկիրը արգաւանդ։ Երկրիս բերքերէն կը յիշուի ի Բժշկարանս

chij), կորնգան երկայնծաղիկ (Cerastium macranthum), Քռեկան կամ Խշխաշնուկ նեզտերեւի (Lathyrus stenophyllus), Գետնանոճ ալպեան (Chamæpeuce alpini), Եզնագլի նրբատաւուղ (Verbascum steno-



Տես էջ 20.

ժեր. «Մօզ, կամ Քիւրա, միրգ մի է որ յԱղայոյ գայ». Իսկ նոր բուսաբանք կը յիշեն քաղաքիս սահմանաց մէջ հետեւեալքն. Որթ արեւելեան (Vitis Orientalis), Ձիւնկի տեսակներ (Silene Oreades, S. Heldrei-


carpum), Փիլիպէա պնդապատիճ (Pilipæa axyloba), և այլն։ — Միտուան, 311–6. Վ. Քինէ, Ասիական Թուրքիա. հտ. Ա. 867–70։ Կիլիկիա, 259։

ԱՂԱՆԿԻՋ. — Շրջայք լերանց Սիւնեաց

աշխարհի, որք Գեղամայ ծովակի հարաւային կողմէն գրեթէ անընդհատ կ'ելլընան մինչև Երասխ, և Սիւնիքը կը բաժնեն Վասպուրականէն։

ԱԼԱՆԱՑ ԴՈՒՌՆ. — Այսպէս կը կոչուէր այս գուռը Ճորայ Պաձակի և կասրից դրան հետ։ Տես ԴԱՐԵԱԼ։

ԱԼԱՆՔ. — Սարմատացւոց ազգերէն մին են, որք ի հնումն կը բնակէին Վրաստանի հիւսիսային կողմը, Կովկաս լերան մօտերը,



Նկար 21. Ալանաց դուռն։

ի հնումն, Ալանաց երկրի հարաւակողմը կովկաս լերանց այժմեան Դարեալի կիրճը. շատ անգամ այս գունէն կամ կրճէն ի'արշաւէին հիւսիսային ազգերը ի Վրաստան և ի Հայաստան։ Երբեմն շփոթած են ամանք, ի Թուրքաց կը կոչուին Լէկգի կամ Լէզգի Թաթարք։ Մեր Աբուաշէս Բ. աշխարհաշէն Թագաւորի ժամանակ, Ալանք իրենց հետ միաբանած հիւսիսային Լեռնական ազգերը և Վրաց աշխարհի արեւելեան մասին ու-

բելով կու գան բանակ կը դնեն Կուր գետի եզերքը։ Նոյն միջոցին Աբաուշէս ալ բազմաթիւ զօրքերով կը հասնի և բանակ կը դնէ գետի հարաւային եզերքը։ Երբ Ալանաց թագաւորի որդին Հայոց քաջերէն գերի կը բռնուի, կ'սահպուհին Ալանք հաշտութիւն խնդրել. Աբաուշէս իրեն կնութեան կ'առնու Ալանաց Սաթինիկ օրիորդն, և այսպէսով խաղաղութեան դաշն կը հաստատուի երկու ազգաց մէջ։

Սաթինկան հայրը մեռնելով՝ երբ բռնաւոր ումն կը թագաւորէ Ալանաց, Աբաուշէս կը դրկէ իւր քաջ սպարապետը Սմբատ, որ բռնաւորը վանելով կը թագաւորեցընէ Սաթինկան եղբայրը, և հակառակորդաց երկիրն աւերելով բազմաթիւ գերիներ կը բերէ յԱբաուշատ։ Այդ գերիները թագաւորի հրամանաւ բնակեցան Մասեաց հարաւային արեւելեան կողմը, Շաւարշական գաւառի մէջ. և որովհետեւ այդ գերեաց կամ գաղթականաց բնիկ աշխարհն կը կոչուէր Արկազ կամ Արտազ, այդ պատճառաւ ի յիշատակ իրենց հին հայրենեաց, նոյն անուամբ կոչուեցաւ նաև երկրորդ հայրենեաց բնակավայրը, որ վասպուրականի գաւառներէն մին էր։

Խորենացին մանրամասն Ալանաց և Հայոց վերաբերութիւնք պատմելէ զատ, կը գովէ այս ազգը իբրև քաջ ազեղնաւորք և հզօր պատերազմողներ։ Երբեմն Ալանք կոչուած են նաև Աղուանք, իրարու մօտ լինելնուն պատճառաւ։ — Խոր. պտմ. Բ. Խթ. Ը. Ուր։

ԱԼԱՇԿԵՐՏ. Գղ. ALACHGUERD. Թ. ئەشكەلا. Ռ. Алашкертъ. — Հին վարչաշկերտ բերդաքաղաքի անուան պատանդութիւնն է, որ Աբրաատայ Բագրեւանդ (Պայազիտ) գաւառ այժմեան վիճակներէն մին կը կազմէ. սահմանքն են Ար.էն Գարա-Քիլիսէ և Տիմանին, Արմ.էն Կարնոյ գաւառը, Հր.էն Ալաթապ և Հս.էն Շահկոլ լերինք կամ Ռուսաց սահմանը։ Վիճակս ունի ընդարձակ, բերրի և ջրաբեր դաշտ մը. գլխաւոր բերքերն են ցորեան, գարի, կտաւատ, կորեկ, և զանազան տեսակ բանջարեղէններ։ Երկիրը առատ խոտ ունենալով, կը սնուցանէն գոմէշ, ոչխար, այծ, եզ, կով. բայց սրոց խիստ ծանրութեան պատճառաւ, ժողովուրդը միշտ աղքատութեան մէջ կը մնայ։ Ըստ այժմեան բաժանման՝ ունի 115 գիւղ, 2,637 տուն և 20,111 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք	13,873	հոգի
Հայ-լուսաւորչականք	3,207	»
Հայ-կաթոլիկք	2,754	»
Հայ-բողոքականք	99	»
Այլեւայլք	178	»
Գումարն	20,111	հոգի։

Ամբողջ վիճակին մէջ կան 10 նախակրթական վարժարաններ, յորոց չորսը կը վերաբերին Հայոց։

Այսպիսի արգաւանդ և ազգային յիշատակօք լի վիճակի մը մէջ, Հայոց թուոյն նուազութեան գլխաւոր պատճառներն են, անվերջ հարստահարութիւնք և կենաց և գոյքի անապահովութիւնն, որով ստիպուեր են զանազան ժամանակաց մէջ (1829, 1878) գաղթել դէպի ուրիշ կողմեր. ինչպէս յայտնի է ամենուն, նոյնպիսի գաղթականութեանց շարժառիթներ պակաս չեղան նաև վերջին տարիներս։

ԱՇԽԱՐՀԱԳԻՒ ԱԼԱՇԿԵՐՏ

ՎԻՃԱԿԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԻՑ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	1880 Տուն	1880 Հոգի	1893 Տուն
Թոփրագ-գալէ (Ալաշկ.)	108	739	130
Մուլա Սիւլէյման	83	822	135
Խաչու	65	396	110
Ամատ	66	641	113
Աչղալէ կամ Աչխալի	9	96	14
Հաճի Սաֆար	2	17	2
Ֆէրան	4	31	4
Պայաբէկ	45	165	30
Երիցու կամ Իրիցու գիւղ	35	248	35
Բլուր (Թիմիթաւիէ)	69	451	76
Չըլկանի կամ Ջլկանի	34	254	60
Խաստուր	73	665	112
Ջեւկան կամ Ջէյտիխան	32	275	30
Խոչան	41	407	25
ԳՈՒՄԱՐՆ	604	4907	876

Վիճակիս մէջ գտնուած Հայաբնակ գիւղից այս կրկին 1880 և 1893 տարիներու վիճակագրութեանց մէջ, կը տեսնուի ահագին

տարբերութիւն. որով յայտնի կ'երևի, թէ օր առաւ բնակիչք կը բազմանան. իսկ եթէ ըղձացեալ կատարեալ խաղաղութիւնն տիրէ այս կողմերը, կ'ենթադրուի թէ այն ժամանակ դեռ աւելի պիտի բազմանան։

Ալաշկերտ անունը շատ անգամ պատմիչներէն յատկացուած է ամբողջ Բագրեւանդ գաւառին, որ այժմ բաժնուած է չորս վիճակներու։ Այժմ վիճակիս գլխաւոր աւանն կը կոչուի Թօփրագ–գալէ (Հողաբերդ), որ և աւելի ճշդութեամբ կը կոչուի նաեւ Ալաշկերտ։ Սա կը համարուի բուն հին Վաղարշակերտը կամ Վաղաշկերտը, զոր կառուցած է Բ դարու վերջերը, Արտաշէս Բի որդին, Վաղարշ Արշակունի թագաւորը։ Դիրքն բարձր է գրեթէ 5950 ոտք, համանուն դաշտի հիւսիսային եզրէն դէպ ի Շահիոլ բարձրանալու սկսած վայրը։ Արեւմտեան կողմը տարածուած դաշտն և շուրջը պատած լեռնաշղթայք, մէկ հայեացքով քաղաքաւանէն դիտողի աչաց հրապուրիչ տեսարան մը կը ներկայացընեն։ Ս. Սուքիասանց վարդապետաց՝ Սրբոց Յակոբանց, հին վկայաբանութեան մէջ կը յիշուի աւանս հետեւեալ կերպով. «ի տեղին շինեալ աւան սեճ ի թագաւորէն Վաղարշայ, անդ զորդի իւր քնակեցուցանէր, սակս տեղւոյն բարեխառնութեան, Վաղարշակերտ յանուն իւր կոչեցեալ»։ Ագաթարակոյս, թագաւորաշէն աւանս թէ գեղեցիկ գրիւքը և թէ հանդէսներովը կը մրցէր Բագաւանայ հետ. Ս. Սուքիասանց ճգնութեան և նահատակութեան սրբանուէր վայրաց մօտ ըլլալով, մեծապէս պայծառացաւ Ս. Գրիգորի և Տրդատայ ժամանակ։ Եօթներորդ գարու կիսուն Ներսէս Շինող կաթողիկոսը, իբրեւ ուխտական երեւելի վայրերէն մին, ասա շինել տուաւ հոյակապ եկեղեցի մը Ս. Աստուածածնի նուիրելով։ Տաներորդ գարու սկիզբը քաղաքս Բագրատունի թագաւորաց ձեռքն էր. նոյն ժամանակները զուր տեղը պաշարուելով Յուսուֆ սատիկանէն և Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորէն, բնակչաց անվեհեր քաջութեամբ, սատրուեցան թշնամիք մեծ ամօթով պաշարումը վերցընել։ Գրեթէ միշտ երազասահ ժամանակի զանազան շրջանաց մէջ, հետ զհետէ ինչպէս քաղաքս, նոյնպէս և վիճակս, յետ իր սեփհական տեարց ձեռաց յափշտակուելու, զարձած է տիրապետութիւն օտար իշխողաց, որոց այժմեան յաջորդք կը համարուին, այս կողմերը ցրուած քուրդ ազգաբնակութիւնք։ Տեղւոյս օդոյ բարեխառնութիւնն, թէ և շատ կը զովուի, սակայն բոլորովին զերծ մնացած չէ Ալաշկերտ՝ մահաբերաժամի անդում ձիրանչներէն։ Այս նկատմամբ Ս. Թաթիոյ կենսագիրը կը պատմէ հետեւեալը, որ հանդիպած է Զ–դ դարու վերջերը. «ի վաղարշակերտ քաղաք մահաբերաժամ սաստկացաւ, և մեծ տագնապ պատուհասի հասոյց, զի տրագ սպանանէր, քան զմի օր և զերկուս չ ներէր այլ աւելի. և պատճառ մահուն այս էր, խաղաւարտ փոքրիկ նման խաղոդոյ ծիրանագոյն»։ Կը շարունակէ խօսքը ըսելով, թէ՝ այս հիւանդութենէն ազատուելու համար ուրիշ միջոց չգտան, բայց եթէ ուխտի երթալով Ս. Թաթիոյ և Վարոսի գերեզմանաց և ամբողջ գիշերը հսկումն և ջերմեռանդութիւն ընելով։

Ձմեռը սաստիկ է այստեղ. հոկտեմբերի մէջ կը սկսի ձիւնն իւր սպիտակ վերարկուով ծածկել լերանց գագաթներն. նոյեմբերի բուկիզը կը սփռուի նաև դաշտի մէջ, և 7 ամսուան համար, ամբողջ Ալաշկերտի դաշտի գիւղերու բնակիչք կ'ստիպուին բանտուիլ իրենց տանց մէջ։ Ջերմաչափը գեկտեմբերի մէջ զրօյէն մինչ 8° խոնաւրհ կը ցուցընէ և յունուարի մէջ դեռ աւելի կը խոնաւրհի մինչև 16°–18°։ Երբեմն սաստիկ հովը յառաջ կը բերէ ահաւոր բուքը, որ շատ անգամ ճանապարհորդները շնչարգել ընելով կը խզէ։ Իսկ ամառն հրաշալի և անպատում է, յորում բնակիչք իրենց երկրագործական բազմունքներէն զատ ունին նաև զանազան հանդիսից և զուարճութեանց օրեր։

Այժմ հին վաղարշակերտի շքեղութիւնն և փարթամութիւնն, բաց ի բնական դիրքէն, բոլորովին աչնչացած են, և միայն ողբալի ու տխուր աւերակաց կոյտեր մնացած են ասա և անդ ցիր և ցան։ Քաղաքաւանն բաղկացած է հազիւ 700 տներէ, յորոց 130ը միայն հայ են, մնացեալք մեծաւ մասամբ քուրդ. 150 տան չափ ալ՝ 1877ին պատերազմէն վերջը կարսէն, կազ-

զուանէն և Պայազիտէն գալիսած Թուրքեր։ Իւր հիւսիս արեւմտեան կողմը բարձրացած կրէ և կրաքարէ կազմուած բլրան գագաթը, կը տեսնուին հինաւուրց պարիսպը, հիւսուած՝ որձաքարով և կրով։ Քսան տարի առաջ, պարսպի շուրջը կային մեծաւ մասամբ կանգուն՝ տասնի չափ աշտարակներ, գրս 15–20 տարիներէ ի վեր կը քանդեն այլազգիք, բաբերը վար գլորելով, նոր շինուածներ գործածելու համար։ Այդ քանդումներէն յայտնուեցան այլեւայլ գազանի ներքնոսկիներ, որք հաղորդակցութիւն ունէին բերդի դանադան մասանց հետ։ Բերդս ունի կրկին մուտք, մին արեւելեան կողմը, գժուարագնաց ճանապարհով մը, հետեւակաց համար. երկրորդն արեւմտեան կողմը, որուն ճանապարհը բաւական հանդիստ է և սայլեր ալ կրնան երթալ։ Պարսպի ներքին կողմը կայ սալայատակ ճուռաձեւ տափարակ մը և կիսաւեր տներու մնացորդք։ 1860–76 թուականներբուն, բաց էր բերդիս պլխաւոր ներքնոսկին, և մէջը ճրագով մտնելով, բաւական տեղ առաջ կ'երթայինք. ներսը տեսած են կարծր ժայռի վրայ կոփուած սանդուխներ։ Վերջին քանդմանց ժամանակ, քննութեան կարօտ այդ ներքնոսկեայ բերանը, բոլորովին գոցուած է աւերակաց բեկորներով։ Դարուս սկիզբներբը (1820–25), տակաւին շէն էր այս բերդը. այժմեան բէկերու նախնիք՝ ունէին հոս պալատ, բանտ, զաւասատանարան, կախարան, դահճատուն, ձիանոց, պահականոց, և այլն։

Ալաշկերտի այժմեան շուկայէն բաւական բարձր, բերդի հարաւային սահրոտը կ'եբեւին հին շուկայի հետքերը, որ ըստ աւանդութեան՝ 1,500 կրպակ կը պարունակէր. այդ աւերակաց միջէն վերջին տարիներս գտնուած են արծաթէ դրամներ։ Նոր շուկան՝ որ հինէն գրեթէ 1 հազարամետր վար և նոյնչափ ալ դաշտի եզերքէն դէպ ի վեր, արեւելեան հարաւ հակեալ դիրքի մը վրայ կ'ինկնայ, ձեւացած է երկու փողոցներու վրայ շարուած, մէկ գնով նեղ և մօթ 100 կրպակներէ։ Աւանս կանոնաւոր շէնքեր չունի, հազիւ վերջերս շինած են քանի մը բաւական ձեւաւոր կրպակներ. կան նաեւ ոչինչ թուով սրբատաշ քարով կառուցուած շէնքեր, որոց քարերը կամ շատ հեռուէն բերած են և կամ բերդի, գերեզմանատան, հին վանքի և այլ աւերակներէ հանած. վասն զի աստ քարահանք չի գտնուիր և եզածներն ալ խիստ փխրուն են։ Կարնէն կը բերեն հոս ոգելից ըմպելիքներ, իսկ խարբերդէն՝ ընտիր կարմիր գինի և օղի. բայց տեղւոյս օղին լաւագոյն է, կը պատրաստեն չամիչէ։ Կառավէրէնք ընդհանրապէս Բազէշէն կը բերեն, ինչպէս նաեւ խազող, չամիչ, կաղին, ընկոյզ, պատեղ, տանձ, խնձոր և պատուական նուռ։ Ատ տարուան մէջ միջին հաշուով առուտուր կ'ընեն.

Կառավաճառք	5,000	օսմ. ոսկւոյ։	
Մանրավաճառք	1,000	»	»
Գինեվաճառք	1,000	»	»
Ոխտավաճառք	2,000	»	»
Նպարավաճառք	1,000	»	»
Համագումարն	10,000	օսմ. ոսկի։	

1879–90 թուականներուն տեղւոյս վաճառականութիւնն բոլորովին Հայոց ձեռքն էր, իսկ այժմ խիստ ինկած վիճակի մէջ է։ Տեղւոյս աւերակները, ջրմուղները, բնակչաց աւանդութիւնն և այլ հանգամանքներ կը հաստատեն, թէ սա է բուն հին Վաղարշակերտը. աւերակաց հետքերէն կը մակաբերուի որ ժամանակաւ մօտաւորապէս 10,000 տուն եզած բլրան այտահղ։ Բերդէն կէս ժամ հեռու դէպ ի արեւելեան հիւսիս և յարեւմուտս, մինչեւ Թաւնուժի աղբիւրի մօտ, կը նշմարուին հնութեանց մնացորդներ, և ազբիւրի մօտ բիչ մը բարձրը կան մեծ շինութեանց աւերակներ Ակերներ անուամբ, որ ըստ աւանդութեան, հին ժամանակ բազաբաւանի ամրարանոցն եզած է։

Ալաշկերտի աւերակ և շէն թաղօրայք են. Պէյձան, Յորանցոց, փեթակձոց, Գարադի, Տարադաձի, Թաւնուդր եահուդազներ, Ձրաբրեներ, Շեներուռ կամ Գետի, Զքոյի, Տուքեներուռ, Բերդի տակի, Միրանի, և այլն։ Ատանիս եկեղեցին թէ եւ ըստ հնոյն կը կոչուի Ս. Աստուածածնի անուամբ, բայց խիստ խեղճ դրից մէջ կը գտնուի. երկար ժամանակի ընթացից մէջ կ'երեւի հինն բոլորովին աւերակ դառնալով, ի յետոյ շինուեր է ներկայն, որ հազիւ 100 տարուան հնութիւն ունի, փայտեայ ծածքով, նոյնպէս տասն-

երկու փայտեայ սեանց վրայ, փլելու երկիւղէն մարդ չի համարձակիր ներս մտնելու։ կը պատմեն թէ քանի մը անգամ այրած է. Փասքեւիչի պատերազմի ժամանակ, Թուրքերը մէջը ռազմամթերք և ծեղանօթներ պահեցած էին. վերջին անգամ 1889 թուին, րամազանի գիշերն քրդերը զարձեալ հրդեհեցին և մաս մ'ալ այրեցաւ։ Եկեղեցիէն 20 վայրկեան հեռու դէպ ի արեւելեան հիւսիս, կը գտնուի գերեզմանատունը. այս երկրի մէջ մղուած անընդհատ պատերազմներն, ինչպես հասուցած են նոյն իսկ աւանիս գերեզմանատան. ի բաց տարուած են շինութեանց համար հին և ընտիր տապանաքարերը, իսկ մնացածներն աննշան են։ Գերեզմանատունը միջէն անցնող ճանապարհի վրայ, հին եկեղեցւոյ մը հիման քարերը կ'երեւին. կ'ըսուի թէ՝ այդ ըլլայ հռչակաւոր և հրաշագործ Ս. Կիրակոսի վանքը։ Այս եկեղեցւոյ հարաւակողմը կայ առատաբուղխ սառնորոյ պատուական աղբիւր մը. շատ անգամ ամրան՝ այս աղբիւրէն էշերով ջուր կը տանին յաւանն։ Համբարձման և գարնան կիրակի ու տօնի օրեր ժողովրդեան համար դրօսավայր մը դարձած է տեղս։ Աղբիւրէս քիչ մը վեր կը գտնուի քարակոյտ մը որ կոյս Խանուտի նշխարաց տեղն է. 1730—35 թուականներուն մէջ այս կողմերը անտանելի չարչարանօք նահատակուած է եւ բանուհին կոյս Խանուտ, որոյ վրայ Բազմավիպի 1859 տարւոյ հատորի 70 իջին մէջ՝ տող մը հրատարակուած է. «Տաղ ի վկայուհի Ս. Խանուտ նահատակի ի Թոփրագալէ» վերնագրով։


Քաղաքաւանիս հիւսիս արեւմտեան կողմը, ամենէն բարձր դիրքի վրայ շինուած է քրդեր աղօթատունը, որոյ դրան վրայ կայ ընդարձակ յիշատակարան արաբական տառերով։ Գրեթէ 160 տարուան այս շէնքը, կառուցուած է սրբատաշ քարերով և լաւ ճարակով։ Այդ քարերը բերուած են մաս մը Ալիգանայ վանքէն, մաս մ'ալ Զէյթունկայ Ս. Լուսաւորչի վանքէն և գերեզմանատներէ, ասկոր որ հայկական հին յիշատակարանք բոլորն ալ սրբած են կամ սրմի մէջ հիւսած։

Տեղւոյս հին և բազմամարդ վաղարշակերտը լինելուն ապացոյց են նաեւ հեռու տարերէ մեծ և կարծր փողրակներով բազմաթիւ աղբիւրներ քաղաքս բերելը. այդ աղբիւրներու գլխաւորն կը համարուի Շահկոլ կամ ըստ ումանց Շահեոլ լերանց աղբիւրն. միւսներն են Այվազ աղի, Գերեզմիններու, Ճմճրմի, Սեղբնքարի, Խաղլան ձորի, Ահմոտ Հանոյի, Շոռիկ, Բաղոյի, Կաւնոցի, Փաշի, Ֆախիքներու և Խանուտի աղբիւրներ։ Այս աղբիւրներէն շատերն այժմ անգործածելի են, և գործածելիներէն շատերն ալ աւանէն հեռու։ 1750ին տեղւոյս կառավարութիւնն աշխատած է Շահկէօլի աղբիւրի քովէն ուրիշ նոր ջրուղի մը շինել՝ աւանը ջուր բերելու համար, բայց չէ յաջողած։ Քրդերը այդ հին աղբիւրներու ագուգաները գետնի տակէն հանելով և աւանս բերելով, ոչինչ գնով կը վաճառեն և գնողներն ալ իրենց ջրորդան կը գործածեն տանիքներու վրայ։ — Ճգնաւորի տեղ կը կոչուի Ալաշկերտէն մէկ հազարամեայ հեռու արեւմտեան կողմը, ժայռի մէջ փորուած աղօթատեղի մը, որ քարայրի ձեւ ունի։ Իսկ Ս. Սարգիս անուամբ ուխտատեղի մ'ալ կայ բերդի արեւմտեան հարան, որուն համար աւանդութիւնը կ'ըսէ, թէ ժամանակաւ բերդս պաշարուելով բանակոր թագաւորէ մը, Սարգիս անուամբ զօրավար մը յանձնուած է թագաւորին, որ միջի ժողովուրդը ազատուի։ Բայց երբ թագաւորն չարաչար կը տանջէ զՍարգիս, բերդի ժողովուրդն այս տեսնելով, կը սկսին ուժով պիտարել և զինուիմին վանել։ կ'ըսեն նաեւ, թէ Ս. Սուքիասեանց ընկերներէն եղած է Սարգիս, որ իր ընկերաց ի Սուկաւէտ նահատակուած ժամուն, խոյս տուած է և բերնաւորն վրայ հասնելով, սպանուած է այստեղ։

Ալաշկերտի ձեռագրաց մէջ, իբրեւ նշանաւոր կը յիշուի հին Կարմիր Աւետարան մը, որ կոչուի նաեւ «Դաւթի տան Աւետարան». գրուած է մագաղաթի վրայ, զոր տեսնողն չէ կարողացած օրինակել հին յիշատակարանը. ունի արծաթազօծ կողեր և զարդարուած է պատկերներով։ — Այրարատ, 535—6։ Բագրեւանդ, 46—74։ Զաքեան Պտմ. հտ. Բ. 752—3։ Ս. Մարթեն, հտ. Ա. 124—6։ Ստ. Հ. Հայ. 405—6։ Ասողիկ, Գ. Դ, և Գ. ԼՐ։ Լաստիվ. Գ։ Ճռնան. կաթ. Խ։ Ազաքել, էջ 35, 53։ Ն. Հայ. 116—19։

Պտկ. Ն. Հայ. 47։ Տեղգր. Հայս. 221–22։ Վ. Բիւնէ, ճտ. Ա. 237–38։

ԱԼԱՋԱԼՈՒ կամ ԱԼԻՋԱԼՈՒ. Հն. ԿԹԱՆՈՑ. — Այս անուամբ երկու գիւղ ունի Միւնեաց Գեղարքունի գաւառն, Գեղամայ ծովակի հարաւային կողմը, հին Վանեվան ձորոյն ժէջ, համանուն գետակի եզերաց վրայ։ Վերին Ալաչալուն ունի 84 տուն թաթխար բնակիչ. իսկ Ստորին Ալաչալուն սր աւելի ծովակին մօտ է և կը համապատասխանէ Ստորին Կեթանոցի ունի 1060 Հայ բնակիչ, բաժնուած 120 տան։ Այս կրկին գիւղերու ժէջտեղ կայ Քիւիսէ խարապա (Աւեր եկեղեցի) կոչուած հին գիւղատեղի մը, որ կը կարծուի լինել հին Վերին Կեթանոցը, յորմէ կը տեսնուի բոլորաձև, գեղեցկաշէն սրբատաշ քարէ, ութանկիւնի եկեղեցի մը, կիսակործան վիճակի ժէջ։ Ստորին Ալաչալու և Գօյանը Գառն գիւղերէն դէպ ի ծովակը երկնցած է փոքր լեռնագօտւոյ մը հրուանդանը։ Այդ հրուանդանի վրայ է Օձաբերդը, որ ի հնուց մնացած և քարուքանդ եղած բերդատեղի մ'է, որոյ ծովահայեաց կողմը, ժայռի վրայ կայ 19 տողէ ձեւացած բեւեռաձեւ արձանագրութիւն մը (թ. 22)։



22. Բեւեռագիր Ալաչալուի։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱԼԱՋԱԼՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՍՏ Պ. Մ. ՆԻԿՈԼՍԿԻԻ

1. Խաղչիացւոց պղծմամբ... Իւսա,
2. Սարդուրիի որդի, ես այս նահանգները,
3. ամրութիւնները, որոնք են վիճակ քաղաքին Բարուաշտուրի·
4. երկիրն Ագահունի (Ագահունիք), երկիրն Ուելիգա, երկիրն Կումերուհի,
5. երկիրն Շերիկուբինի (Շիրակ), չորս թագաւորներու նահանգները որ կը կոչուին երկիր Լայինի,
6. երկիրն Ուբեմինի, երկիրն Շամտաուանի (Աւանտունի), երկիր Տերխուիշաինի,

7. Երկիրն Ինշուաինի (Ինշուանի), երկիրն Զուաինի, երկիրն Ակուանի (Աղուանիք), երկիրն Ամանինի,
8. Երկիրն Իրկիմանինի, երկիրն Ելաինի, երկիրն Ելիեչուաինի
9. Երկիրն Ադիգամանինուանի, երկիրն Գուրիաինի, երկիրն Ալդիրանի (Արգի)
10. Երկիրն Պիրուաինի, երկիրն Մելաինն երկիրն Ուշեգուինի
11. Երկիրն Ատազաինի (Աստազ), Երիաինի (Երևան), երկիրն Ազամերուինին,
12. տասնուինը թագաւորներուն երկիրները, որք կը կոչուին երկիր... Իգուաինի.
13. Հարկատու ընդ ամենը 23 թագաւորներու ամրութիւններն ես նուաճեցի.
14. Մարդիկները, կանայքն ի Բիայնա (Վան) երկիրը ես տարի այս տարի.
15. ես Ռուսա Նորոգեցի մարդկան ապարանքները . . . . .
16. Մարդկանց երկիրները. . . . . .
17. Տէիշբա չաստուածին կործանուած այս տաճարը ես նորոգեցի . .
18. Տէիշբա չաստուածին կործանուած ապարանքները ես նորոգեցի . .
19. (Այս տողը ծովակի ալիքներէն մաշուած է և անընթեռնելի):

Առաջին անգամ օրինակեց և հրատարակեց արձանագրութիւնս Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան, Մոսկուայի Համբառնական Ռուսիոյ Հայոց ամենապրի մէջ 1863 թուին: Նա օրինակած է 19 տող և 20ոդ տող մ'ալ կը համարի ալիքներու շփմամբ ջնջուած: Նոյնը օրինակեցին և մեկնելով հրատարակեցին նաև ուրիշներ. բայց ամենէն աւելի լաւ յաջողեցան Ռուսիոյ կայսերական Հնագիտական Ընկերութեան անգամ Պ. Մ. Նիկոլսկի և իր ճանապարհորդական ընկերն Պ. Ա. Իվանովսկի: — Գեղարքունի, 553, 560, 753–60: Նիկոլսկի, Բեհիստագիր արձանագրութիւնեներ Ռուսաց Հայաստանեայց, Թրքին. Պ. Խ. Յովհաննիսեանց. տպ. Վ. Վենետիկ, Ս. Ղազար. 1897, էջ 56–64: Հանդես Ամսօրեայ, 1894. 67–71: Արձագանք, 1894, թ. 6, 7:

ԱԼԱՊԱՇ կամ ԱՐԵԳԻՆ. — Հայաբնակ գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի արեւելեան հարաւային կողմը, 5 ժամ հեռաւորութեամբ: Ռուբինեանց ժամանակ նշանաւոր էր գիւղս: Աբեղնի վանքի մէջ էր կառավարչական աթոռը: Մեծին Լեւոնի թագաւոր օծուելու հանդիսին ներկայ եղող 14 եպիսկոպոսներէն, կարգաւ երկրորդ կը յիշուի տեղւոյս Գրիգորիս արքեպիսկոպոսը: Բնակիչք քաջ են և ճարպիկ. Զէյթունի կռիւներուն միշտ մասնակցած են, և շատ անգամ առաջին յարձակողն իրենք եղած: Բազկացած է 300 տներէ, որք ցրուած են Շամպէկ կոչուած բարձր բլուրի արեւելք, հարաւ և հարաւային արեւմտեան կողից վրայ, մինչև ձիհան գետի եզերքները: Գիւղիս արեւելեան կողմը կառաբուած է Զէյթունի (1862) նշանաւոր և պատմա-

կան պատերազմի առաջին ճակատամարտը:

ԱԼԱՊԱԶԱՆ. Տես ԱՆԴՐԻԱՍԵԱՆՑ:

ԱԼԱՍՏԱՆ. — Գիւղ Հայ–կաթոլիկաց, Զաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ, վարելահող հիւսիսային կողմը, գետակի մը մօտ: Բնակիչք 1334 հոգի, բաժնուած 184 տան: Գիւղիս Ս. Աստուածածնի քարաշէն եկեղեցին կառուցուած է 1863ին:

ԱԼԱՏԱՂ. Տես ԾԱՂԿԻՈՑ Լ. և ԱԼԱՂ ՏԱՂ:

ԱԼԱՏԻՆ. — Փոքր գիւղ Հայոց և Բրդաց Մշոյ դաշտի մէջ, Մեզափի մօտ:

ԱԼԱՐ կամ ԱԼԱՐԱ. — Աւան ծովային Կիլիկիոյ, Համանուն գետակի աջակողմը, որոյ մօտ կան քառակուսի հին շինուածքի մը աւերակները: Մեպաձև քարաբլրի մը վրայ, խրոխտ կերպով կեցած է Համանուն բերդն Այարա–գաշկի կոչուած այժմ ի Թրքաց և Սմբատ պատմչէն Ակարոյ Բերդ, որուն կը տիրէր Լևոն Թագաւորի լիճ պարոններէն մին՝ Մանուգատայ Միխայէլ իշխանը: Շատ գեղեցիկ և բարերեր են աւանիս սահմանները, ուր կան հարուստ դաշտեր բամբակի, ծխախոտի, կնջրեթի և բրնձի. կ'աճին նաև արմաւենիք, ձիթենիք, կաղնիք, դափնիք, դափնեվարդ, և այլն. այս կողմերը կը գտնուին նաև կինճք: Աւանիս մէջ 1845 տարուոյ հոկտ. 19ին, գիշերեց զաղղիացի կոմսն Փուրթալէս: — Միսուաւե, 310:

ԱԼԱԻԱՆ. Տես ԱԼԵԻԱՆ:

ԱԼԱԻԻՍ. Տես ԱԼՅՈՒՍ:

ԱԼԱՓԱՐՍ. Հն. ԱՅԼԱԲԵՐԻՑ ԳԻՒՂ. — Գիւղ Ա.յրարատայ Կոտայք (Նոր Պայազիտ) գաւառի հիւսիսային կողմը և Բջնոյ հարաւակողմը կէս փարսախ հեռաւորութեամբ. որոյ արեւմտեան կողմէն քիչ մը հեռուէն կը վազէ Հրազդան գետը: Գիւղիս բնակիչք որ

1830ին Մակուէն գաղթեր են այստեղ, այժմ կը համարուին 1923 հոգի, բաժնուած 257 տան։ Գիւղս հին ժամանակ ևս Հայաբնակ եղած է, որոյ ապացոյց են հին խաչաձեւ եկեղեցւոյ մնացորդներն. սակայն արձանագրութիւնք բոլորովին խանգարուած են, և միայն կը նշմարուի 30 թուականը մը, որ է Քրիստոսի 901 թուականը, և Գրիգոր իշխան անն, զոր Շահխաթունեան կը համարի Սիւնեաց Գաբուռ վասակ իշխանի որդին։ 1857 թուին կառուցած են Ս. Վարդանայ զօրավարի անուամբ եկեղեցի մը, հնոյն մօտ, ուր ուխտի գալով շրջակայ գիւղերու բնակիչք, ամէն տարի հանդէսներ կը կատարեն։ Եկեղեցւոյս մէջ կան զանազան սրբազան հնութիւնք, որք են. ա. մասունք նշխարաց Թադէոսի Առաքելոյն. բ. մասունք Մերկեհրոսի վիճաւորին. գ. Ս. Նշան կոչուած, փայտեայ նուրբ փորագրուած խաչն, խաչելութեան և Առաւուածածնի պատկերներով. դ. սեւագոյն քար մը, շրջապատուած արծաթեայ խաչով, զոր հաւատքնին բերած են Մակուէն, և կը համարին Ս. Վարդանայ արեամբ ներկուած։ Կայ նաև ձեռագիր աւետարան մը, գրուած խորտկաց գիւղի մէջ, ՋԺԳ (= 1464) թուին։ Սրբատառ քարով նոր եկեղեցի մ'ալ սկսան շինել Աղափարցիք 1893ին Ս. Առաւուածածնի անուամբ։

Գիւղիս արեւելեան կողմը կայ մեծ ապրիւր մը, որոյ ջուրը կը գործածեն գիւղացիք դաշտերուն և այլ պիտոյից, այս աղբիւրի անուամբ անշուշտ, Ա՛յլ-Աղբերից կամ Աչլաբերից գիւղ, կոչուած է գիւղս երբեմն, զանազանելու համար Աղբերից կամ այժմեան Գետարիս գիւղէն։

Ի՛ր դարու սկիզբը այս գիւղէն Հայոց կաթողիկոս եղաւ Տէր Մուշէ։ Տես ՆՈՎԱՑԱ ՆԻԿՈԼԱՑԵԻԿԱ. — Այրարատ, 286։ Գեղարքունի, 300–305։

ԱԼԲԱՈՒՏ. — Այս անուամբ քանի մը Թաթարաց գիւղեր կան Գանձակ նահանգին մէջ։

— Գիւղ Հայոց՝ Բագու նահանգի Շամախու գաւառի մէջ. բն. 336, բաժնուած 46 տան։ Նոյն գաւառի մէջ համանուն երկու գիւղ ալ ունին Թաթարք։

ԱԼԵՔԵՐԴ. — Ասոդիկ (Բ. 2.) կը յիշէ բերդս ուրիշ ամրոցներու հետ, երբ Թէոփիլոս կայսեր (829) համար կ'ըսէ. «Սա ի խաղաղն իւր յարեւելս կոյս ի սահմանս Հայոց՝ առնու զԾմուռ բերդն Հայոց, զԱաղիճ, և զՄեծկերտ, և զԱլբերդ ի գաւառին Գեղամայ»։ Գեղարքունեաց գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային կողմը այժմեան Ղարաւլըխ գիւղի մօտ արեւմտակողմը, կան կը նշմարուին այս բերդի աւերակներն, և տեղացիք տակաւին նոյն Ալբերդ անունը կու տան։ Այս աւերակաց հարաւային կողմը մատուռ մը կայ Ս. Մարեաս կոչուած, յորում կը պահուին խաչքարերնք։ Տեղացիքն աւանդութիւնը կ'ըսէ թէ՝ Մեծին Ներսեսի հետ կեսարիա գացող Սիւնեաց իշխաններն, հետերնին բերելով Մամաս ճգնաւորի մատունքը, նախ այս մատրան մէջ դրած են զայն, և ապա տարած են ի Վայոց ձոր՝ Քարագլուխ գիւղէն մէկ վերստ հեռու, տափարակ տեղ մը ամիսփկելով, վրան վանք մը շիներ են Մամասայ Վանք, որ կայ այժմ քայքայուած վիճակի մէջ։ Գեղարքունի, 539։

— Այս անուամբ Բղոյց գիւղ մը կայ Աղձնեաց մէջ, Բաղէշի արեւելեան կողմը, յորում կան քանի մը տուն Հայ։


ԱԼԵՔՍԱՆԻ կամ ՂԱՄԵԱՆԻ. Հն. ՈՂՈՀԻ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի, հին Բասեան և այժմեան Ազուլիս վիճակի մէջ. բն. 347 ամբողջ Հայ, բաժնուած 38 տան։ Գիւղիս մօտ կայ Թէոդուղոր հանքային աղբիւր։

ԱԼԵՒԱՆ. — Փայտակարանի գաւառներէն մին։

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ, ԳԻՒՄՐԻ կամ Հն. ԿՈՒՄԱՅՐԻ. Գ. ALEXANDRAPOL. Ռ. Александрополь. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Շիրակայ (Այրարատ) արեւելեան մասին մէջ. արեւմտեան կողմէն երկու վերստ հեռաւորութեամբ խոխոջալով դէպ ի հարաւ կը վազէ Ախուրեանը. հարաւային արեւելեան կողմն է Երեւանը 125 հազարամետր հեռու, և 65 հզրմ. դէպ ի հարաւային արեւմուտք կ'ինկնայ կարսը։ Քաղաքիս հիւսիս—արեւմտեան կողմերը վեռ կը տեսնուին հին և խարխուլ տանց մնացորդներ, նախնի Կումայրի կամ Գիւմրի գիւղին։

Առաւօտ Մամիկոնեանը, 771 թուին

Աբաբացւոց հարստահարութենէն նեղուելով, Նախարարաց ոմանց հետ միաբանելով, և Դրւնի մէջ իր զօրաց մեծ պատրաստութիւն տեսնելէ վերջ, « ... հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպասանէր զհրաման թանութիւնը կ'ընէ. « Գիւտրի բառը կրճատուած է Գաւռմարի բառից, որովհետեւ սա եղած է զօրաց գումարման տեղ Գագիկ արքայի ժամանակ, որ նստում էր Անի քաղաքումը » : Գիւմրին ժամանակի զանազան



Գիւմրի. 23 Յունուարի 1921։

մանատար հարկին։ Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով. գնայր ի կոչմանս վրաց աշխարհին ... »։ Յ. Թօջայեանց, չգիտեմ ինչ հիմամբ գիւղիս անուան հետեւեալ ստուգա-

շրջանաց մէջ փոփոխակի Հայերէն անցած է Պարսից, Վրաց, Թրքաց ձեռքը. Նորուն 1828ին վերջնական կերպով ազատեցին Ռուսք հանդերձ իրեն շրջականերով։ 1830ին կարնէն, կարսէն, Պայազիտէն և Բաղէշէն

Ռուսաց բաժինը գաղթող Հայ ժողովրդոց մէկ մասը, տեղւոյս պրից յարմարութիւնն տեսնելով՝ այստեղ ընտրեց իրեն երկրորդ հայրենիք, և հզօր պետութեան թեւարկութեամբ, փողոցներու և թաղերու բաժնելով հին Գիւմրիի մօտ գտնուած դաշտը, քիչ ժամանակի մէջ սկսաւ շէննալ և քաղաքի կերպարանք առնուլ. և երբ 1836ին, գրեթէ 1 վերստ քաղաքէն հեռու դէպ ի արեւմուտք, հանդիսով հիմն ձգեցին ամուր բերդին Կարսի և Օսմանցւոց զօրութեան դէմ կենալու համար, դեռ աւելի բարգաւաճեցաւ, և անկից վերջ Ռուսաց կայսրուհւոյն անուամբ կոչուեցաւ Ալեքսանդրապօլ։ Քաղաքս (թ. 23) իր այժմեան արտաքին դիրքով, գեղեցկութեամբ, կանոնաւոր փողոցներով, բաւական փառաւոր շէնքերով, բազմամարդութեամբ, օր աւուր բարգաւաճող վաճառականութեամբ՝ մանաւանդ նոր երկաթուղւոյ շնորհիւ, կովկասու առաջնակարգ և Հայաշատ քաղաքներէն մին կըրնայ համարուիլ։ Իւր շինութեանց աւելի գեղեցկութիւն և հրապուրիչ տեսք տուողն են կարմիր և սեւ փխրուն քարերը, զոր կը հանեն շրջականերէն։ Մանաւորաբար խաչքար և Ղաւնիձա գիւղերն անուանի են իրենց սեւ քարով. իսկ Դէրպենտ, Ղօնահդրեան և Ջաջուռ՝ կարմիր քարի կողմանէ։ Շինութեանց փայտ ընդհանրապէս կը բերեն Ախալցխայի և Բորժոմի անտառներէն և Սօղանլուկէն. փայտի նուազութեան և թանկութեան պատճառաւ, շատ տներ աթար կը վառեն։ Շէնքերու կտուրները սովորաբար տափարակ են. իսկ փողոցները սալայատակ չըլլալով, հողմոտ օրեր շատ անգամ ասիպուած են քաղաքացիք փոշւոյ մեծ քանակութիւն կրելով։ Քաղաքս ծովու մակերեսէն բարձր է 1548մ. օդը աշնան վերջը և ձմեռը սաստիկ ցուրտ է և ձիւնապատ, գարունը անձրեւոտ և ամառը բարեխառն է և զուարթ մինչեւ աշնան սկիզբը։ Ունի առատահոս և պատուական աղբիւրներ և բազմաթիւ ջրհորներ։ Երբեմն անձրեւաց սաստիկ յորդութեամբ՝ մեծ վնասներ կրած է քաղաքս, և ի մասնաւորի 1862 և 1878 թուականներուն։ Ա.յսպիսի վնասներու դիմաց առնելու նպատակաւ, շինած են կամարակապ երկայն ջրանցքներ։ Հողն արգաւանդ է, շատ ընտիր և առատ է ցորենն, գարին և հաճարը, առատ է նաեւ ձէթը։ Քաղաքիս հարաւային կողմը են բանջարանոցները, յորս կը բուսնին անոնական պիտոյից կարեւոր եղածները. ինչպէս սոխ, տարդուն, մաղադանոս, հաւեմ, վարունգ,



24. Սահմանադրական Գիւմրիի մօտ։

զգում, մեծագլուխ կաղամբ, սոխպղին, բա-
զուկ, և այլն։ Սովորաբար այս կողմերը կը
անկեն ուռենի և բարտի, իսկ պաղատու ծա-
ռերէն գլխաւորաբար խնձորենի, ծիրանենի և
բալենի միայն կը յաջողին պատուղ տալու, և
սոսը պատճառն է երկրի բարձրութիւնն և
օդոյ ցրտութիւնը։ Սակայն երբեք չի զըր-
կուիր պտղէ, իր ժամանակին առատութեամբ
կը բերեն Երեւանու ընտիր խաղողն և ձմե-
րուկ և Ախալցխայի հռոտաւէտ խնձորն, տան-
ձը և այլ տեսակ պատուղներ։

Ալեքսանդրապօլը անպարիսպ է, տարա-
ծուած գաշտի վրայ, որոյ արեւելեան հա-
րաւային կողմէն կ'երեւի Ագրագածի յափըշ-
տակիչ զեղեցիկ կատարը. արեւմտեան կող-
մը երկայն ծառուղի մը կայ, որ կը շարու-
նակուի մինչեւ բերդը։ Այս բերդը, զարուս
զինուորական նշանաւոր շէնքերէն մին կա-
րելի է համարել, թէ՛ ամրութեամբը և թէ
ճարտարարուեստ կառուցմամբը։ Ընդարձա-
կութեամբն ևս անուանի է. ունի զինուց
մեներանոցներ, ամբարանոց և գրեթէ 16,000
հոգւոյ բնակարան, մեծ բանտ մը, առանձին
հիւանդանոց, շատ գեղատափոր և կամարա-
կապ տեղեր և բերդապահ զօրավարի հա-
մար յատուկ պալատ։ Ազոնցմէ զատ ունի
խաչաձեւ, գեղեցիկ եկեղեցի մը լայնանիստ
գմբեթով, շինուած 1853ին Նիկողայոս Ա
կայսեր հրամանաւ, և հիւսիսային կողմը կար-
ւիր կոչուած աշտարակ մը։ Մէկ խօսքով
բերդս իւր այս ամենայն հանդամանօք, շըր-
ջապատի մարտկոցներով և խոր ու լայն
խրամներով կրնար երկար ժամանակ դիմա-
դրել Թշնամոյ ուժերուն, եթէ կարսի նուաճ-
մանէն վերջ իւր կարեւորութիւնն չկորուսա-
նէր. այժմ իբրեւ պահեստատուն կը ծառայէ։

Վերջին նոր վիճակագրի համեմատ Ա-
լեքսանդրապօլի բնակիչք հետեւեալ կերպով
կը բաժնուին


Հայք	3,654	տուն	22,921 հոգի
Մահմետականք	89	»	884 »
Յոյնք և Ռուսք	75	»	386 »
Այլեւայլք	10	»	42 »
Գումարն	3,825	տուն	24,230 հոգի։

Այս ցուցակէն կը տեսնուի թէ քաղա-
քիս բնակչաց մեծամասնութիւնն կը կազ-
մէ Հայք. ինչպէս պիտի տեսնենք վերջը,
նոյն համեմատութեամբ են նաեւ համանուն
գաւառի մէջ։ Ալեքսանդրապօլի երկայն և
կամարակապ շուկայն նշանաւոր է. որուն
երկու կողմը կան կրպակներ և մէջտեղը
հրապարակ. թէ՛ արուեստները և թէ վաճա-
ռականութիւնը, գլխաւորաբար Հայոց ձեռքն
է։ Օտարականաց և ուխտաւորաց համար
կան քանի չափ պանդոկներ, և քանի մը
հայկական բաղնիքներ։

Բերդի եկեղեցիէն զատ, հոս կան ուրիշ
վեց եկեղեցիներ, մին Ցունաց՝ որք հայա-
խօս են, և հետեւեալ հինգը Հայոց. ա. Ա-
ւետարերիչ, քաղաքի կեդրոնը, շինուած է
1859—1873 տարիներու մէջ, Աւետ կա-
թուղիկէին ձեւովը, որ իր մեծութեամբն ու
փառաւորութեամբ Ալեքսանդրապօլցի Հայոց
ջերմեռանդութեան ճշմարիտ պարծանքն է։
Պ. Գեղամեանց եկեղեցւոյս համար կ'ըսէ.
«... եթէ գոթական ճարտարապետութեամբ
շինուած լինէր, միշտ կարող էր մրցել Վիեն-
նայի Ս. Յակոբեանոս եկեղեցւոյն հետ, մա-
նաւանդ սորա և նորա պիրքն զարմանալի
նմանողութիւն ունին»։ Հրաշակերտ եկե-
ղեցւոյս համար 100,000 ռուբլիէ աւելի
ծախք եղած է. բաց այսի, միշտ կարգաւ
ձրիաբար աշխատած են քաղաքի արուես-
տաւորները։ Աւետարերիչէն կը վերաբերին
մօտը շինուած միակարգ և գեղեցիկ կրպակ-
ները։ բ. Ս. Աստուածածին, որ Կովկասի
Հայոց համար նշանաւոր ուխտատեղի է իւր
մէջ պահուող Եօթն վիրաց կամ խոցից
կոչուած հրաշագործ հին պատկերովը։ Ա-
ւանդութիւնը Ս. Ղուկաս աւետարանչէն նկա-
րուած կը համարի այդ պատկերը, որ ի
Հայս բերուած է Գրիգոր Մագիստրոսէն և
երկար ժամանակ մնացած Հասանգալէի Բա-
սենու կամ Կարմիր Վանքի մէջ. իսկ քա-
ղաքս բերած են իրենց հետ Բասենցի Հայ
գաղթականք։ Եկեղեցւոյս հիւսիսային կողմը
են ուխտաւորաց յատուկ սենեակները, որոց
մէջ գրեթէ միշտ լի են բազմաթիւ ուխտա-
ւորներ, և մանաւանդ վերափոխման ատենին։
Իւրաքանչիւր տարի ուխտաւորաց և բարե-
պաշտից նուիրատուութիւններէ ձեւացած գու-
մարէն կը նպաստեն Ալեքսանդրապօլի և
Հարիոյ հոգեւոր ուսումնարաններուն։ գ.

Ս. Նշան, կառուցուած է հանգուցեալ իշխան Ղահրաման Աբղութեանի ծախիքը։ դ. Ս. Գեորգ և Ս. Աստուածածին, Հայ կաթոլիկաց (50 տնուոր), շինուած և օծուած

նէն զատ, արժանայիշատակ Ալեքսանդր Վ. Աբարատովի ժամանակ ուրիշ հոգեւոր պէտք մ՚ալ ունէին քաղաքիս Հայ–կաթոլիկները, ուր տարբեր ուսմունքներ կը սովորէին



25. Աւերակ եկեղեցի Ալեքսանդրապոլի մօտ։

է 1843–1855 տարիներու մէջ, Ջանիւք Աւետիկեանց Ալեքսանդր վարդապետի Աբարատով։ Այս եկեղեցիներու սպասաւորող քահանայից թիւը կը հասնի գրեթէ երեսունի։ Հայոց վիճակային հոգեւոր ուսումնարա-

20ի չափ փոքր մանուկներ, և գրեթէ նոյնչափ թուով ալ, շրջակայ գեղերէն եկած պիրներ քահանայութեան կը պատրաստուէին, որոց ուսմանց շրջանը կը տեւէր եօթը տարի։ Ալեքսանդրապօլը ունի նաեւ

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ

ԳԱԻԱՌԻ 27 ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԱՆՈՒԱՆՔ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ	ՀԱՅՔ				ՕՏԱՐՔ		Տունք	Ընդամէնք կիլ. պար.
	Լուս.		կաթ.		Ռուս. ցմ. թ. ք. դխ.			
	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.		
1 Ջալուռ (7 գ.)	3221	3127	—	—	—	—	724	6348
2 Քեաֆթարլու (9 գ.)	3290	3020	521	447	—	—	837	7278
3 Քեալթախճի (5 գ.)	2311	2087	—	—	—	—	459	4398
4 Քէփէնէկ (5 գ.)	1555	1504	—	—	53	36	404	3148
5 Միրաք (9 գ.)	—	—	—	—	1857	1477	380	3334
6 Հաճի Խալիլ (14 գ.)	2669	2412	—	—	676	598	720	6355
7 Ալիխան (6 գ.)	917	897	—	—	—	—	196	1814
8 Եասաղուլ (9 գ.)	2958	2756	—	—	—	—	664	5714
9 Իլի Գարագիլիսէ (9 գ.)	2418	2224	37	28	89	78	544	4874
10 Գըզլղօչ (12 գ.)	1428	1280	872	800	—	—	498	4380
11 Փոքր Գարագիլիսէ (7 գ.)	2856	2762	863	735	104	92	933	7413
12 Ղփչաղ [Հաճի] (6 գ.)	3259	2878	—	—	—	—	742	6137
13 Մօլա Կէօքճէ (6 գ.)	2057	1859	625	621	4	—	610	5166
14 Եէօկիւղիւ (5 գ.)	2552	2231	—	—	—	—	551	4783
15 Թաւչան–Ղըշլաղ (13 գ.)	4600	4073	—	—	—	—	1132	8673
16 Հառամ (8 գ.)	3086	2797	—	—	—	—	761	5883
17 Համամլի (3 գ.)	2025	1714	—	—	—	—	415	3739
18 Մեծ Բէկքէնա (5 գ.)	3044	2333	—	—	—	—	556	5377
19 Պօղիքէնա (1 գ.)	877	696	—	—	—	—	157	1573
20 Վարդնաւ (3 գ.)	1379	1264	—	—	—	—	256	2643
21 Վասկրէսէնակա (1 գ.)	—	—	—	—	226	227	78	453
22 Մեծ Գարագիլիսէ (1 գ.)	1420	1266	—	—	—	—	380	2686
23 Ղըշլաղ (2 գ.)	815	691	—	—	—	—	161	1506
24 Նիքիթինոյ (1 գ.)	—	—	—	—	257	247	66	504
25 Սարալ (10 գ.)	858	743	—	—	1685	1387	567	4673
26 Սխսխաւէն (1 գ.)	—	—	—	—	119	105	38	224
27 Եաղուպլի (3 գ.)	907	968	—	—	293	257	251	2425
Գումարն	50502	45583	2918	2631	5363	4504	13080	111501

գաւառական մեծ վարժարան մը հայ, յոյն, լատին և ռուս լեզուներու։ Հայոց ունեցած ուրիշ 10էն աւելի ուսումնարաններէն յիշենք պետարանները. Արութեան, և Սահակեանաշեան՝ օրիորդաց համար։ Քաղաքիս օդոյ և ջրոյ պարզութեան և մաքրութեան շնորհիւ, տղայոց մեռքերն շատ արթուն և յիշողութիւններն սուր է, և եթէ դեռ աւելի խնամք տարուի ուսումնարանաց բարգաւաճման և բազմացուցման, քիչ ժամանակի մէջ հսկայական պիտի յառաջադիմէ, ոչ միայն վաճառականական այլ և գրական տեսարիզի մէջ։ Ուսումնասիրութիւնն արդէն բաւական արծարծուած է նոյն իսկ հասարակաւոր դասակարգի մէջ, կրպակաւորք իրենց պարապոյ ժամերը կ'անցընեն լրագրաց ընթերցմամբ. քաղաքիս սրճատուներն կրնան համարուիլ մէկ մէկ հասարակաց ընթերցարան։ Ռուսիոյ և Եւրոպայի զանազան քաղաքաց մէջ կան Ալեքսանդրապօլցի ուսանողներ։ Քաղաքս թէ և ունի մէկ երկու տպարաններ, սակայն ցարդ մէկը ձեռնարկած չէ հրատարակելու օրագիր կամ ամսաթերթ մը։ Քաղաքացւոց գիտնական դասակարգն լաւ կ'ընէր, եթէ այսպիսի կարեւոր գործի մը սկիզբն տար. մանաւանդ որ Ալեքսանդրապօլը ունի բաւական թուով անձինք չափաւոր թերթի մը նիւթ տալու համար։

— Ջերքէզի–Ծոր. Ալեքսանդրապօլի արեւմտեան կողմը բերդի մօտ է ձորակ, որ մեծ գրօսավայր է քաղաքացւոց։ Այս ձորակի մէջէն կ'անցնի գետակ մը որոյ եզերքները կը զարդարեն բարտիներ և ուռենիներ. այստեղ կան աւազաններ, պաղ ջրոյ աղբիւրներ, փայտեայ և քարէ նստարաններ, ճեմելիքներ և մի քանի ուտեստեղինաց և ըմպելեաց տնակներ։ 1867 թուին սեպտեմբեր գիտուորական աշխատասէր գունդը, ջրի ճամբայ բանալու համար ձորակ պեղած ատեն, գետնի տակէն յայտնուեցաւ աւերակ եկեղեցեակ մը, երեք մատուռներով (թ. 25). այս մատրանց միոյն վրայ գտեր են հայկական «Թվ. Մե» (756) թուականը։ Ցայսդուեր են նաեւ եօթը գերեզմաններ, որոց միոյն վրայ հայատառ արձանագրութիւն կայ մաշուած և դժուարընթեռնելի վիճակի մէջ։

— Քաղաքիս անուանի կաչուղ գաւառն, երեւանու նահանգի եօթը մասերէն մին է, և կը համապատասխանէ հին Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին։ Սահմանքն են Ամ. էն Արփա և Ախուրեան գետերը, Ար. էն Արագածոտն գաւառի Արագած, Նոռը Ահմետ, Գարախաչ, Աղյաղան, Գոշ Թեփեսի կամ Թերգի Ղըշլա լերինք, Հր. էր Արագածոտն գաւառը և Հս. էն Գուգարաց աշխարհի Լօռիձոր, Մատաբեփ, Լէճի, և այլ լերինք։ Ունի չորս վիճակ, 27 հասարակութիւն և 161 գիւղ։


Ալեքսանդրապօլի գաւառի բնակչաց հետ գումարելով համանուն քաղաքի բնակիչներու թիւն, ընդհանուր գումարն կը լինի 135734 բն. յորոց 124555ը Հայ են։ Գաւառիս տարածութիւնն կը համարուի 3760 քառակուսի հազարամեար. հիւսիսային մասը լեռնային է և ջրաշատ, իսկ հարաւային կողմը դաշտային է և սակաւաջուր, և քանի մը լեռնաբլուրներէ զատ բարձր լեռ չունի։ Գետակներն են Լօռրիձոր, Ագլայ, Ելի տերէ, Գարաւնկա (Կարկաչ), Սօռզ պուռլագ, և այլն։ Լեռներէն յիշենք Սիփ 2450 մ, Կամիռռտ 2107 մ, Շիշքեփէ 2287 մ, Գզըլ տաղ 1803 մ։ — Պետուդ պտմ. Լդ. 136, Կառուն Հ. Աշխ. 1862. 226–234։ Արարատ Ամսագիր, 1870. 312–15, 344–47, Փորձ, Դ. դ. 56–80։ Շիրակ, 154–55։

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՏԱ, ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱԿ կամ ԻՍԿԻՆՏԷՐՈՒՆ. Գր. ALEXANDRETTE. Թ. ᱡᱤᱭᱪᱟᱱᱞᱟ. — Ծովեզերեայ վաճառաշահ գիւղաւոր քաղաք Համանուն գաւառակի (Ծով. Կիլիկիա), որ կը վերաբերի Հալէպի վիլայէթին։ Կառուցուած է Ամանոս լերանց ստորոտը, հին Հայոց ծոցի և այժմեան Համանուն կամ Իսկէնտէրուն ծոցի (թ. 26) խորը, ալ ափանց վրայ։ Ունի 160 հազարամեար երկայնութեամբ կառաց ճանապարհ մինչև Հալէպ քաղաքը։ Շուրջը կան 800 պարտէզ և 200ի մօտ այգիներ։ Գաւառակի բնակիչք են 24,000, իսկ քաղաքը միայն՝ 7,000 հոգի, կէսէն աւելի քրիստոնեայ, Հայ, Յոյն, և այլն։ Գրեթէ երեսուն տարի առաջ Ալեքսանդրեակը իր ճահճային և վատառողջ օդոյն պատճառաւ, հազիւ 3–400 հոգի պարունակող աւան մ'էր, ուր կը տիրէր չարունակ ջերմախտը։ Բայց այժմ,

ձեռք առած առողջապահական չափերու և միջոցներու շնորհիւ թէ և բաւական բարեփոխուած է, սակայն հարկ կը լինի գործել, ժողովրդեան բարեկեցիկ դասուն, ամրան մէջ

մինչև Պարսկային ծոցը, երկաթուղի հաստատելու յոյսը կատարուի, այն ժամանակ քաղաքս մեծապէս պիտի բարգաւաճի։

Քաղաքիս չուրը, որ փոշևար պաշը կո-



Ալեքսանդրեւտա, ընդ ծովեզերեայ


3—4 ամիս հեռանալ քաղաքէս և բնակիլ 15 հզրմ. հեռու Պէյլանի լեռնային և զբօսարճալի ամառանոցները։

Երբ Ալեքսանդրեւտակէն Հալէպ և անտի

չուած աղբիւրէ մը կը հոսէ, մաքուր է և քաղցրահամ։ Իսկ հաւրեան առ այժմ երկրագործական և արհեստական արուեստներու թիւն չունի, միայն մօտ տարիներս քաղա-

քէն հետու դէպ ի հարաւ ծովեզերեայ Գա-
պավ աւանի մօտ Ճիմկեան քեօյ գիւղի մէջ
գտնուեցաւ քարիւղի հոր, որոյ շահագործ-
ման արտօնութիւնը արուած է Ամերիկ Ե-
ձաթի անուն էֆէնտիին, 75 տարուան պայ-
մանաժամով։

Իսկէնտէրունի նաւահանգիստը շատ ըն-
դարձակ է և կարող է ընդունել մեծամեծ
նաւատորմիղներ. գիրքն ապահով է և լաւ
պատսպարուած և քիչ աշխատութեամբ կա-
րելի է դարձնել պատուական նաւամատոյց
մը։ Միջերկրական ծովի արեւելեան եզե-
րաց վրայ գտնուած նաւահանգիստներու մէջ
Պերութէն վերջ սա է նշանաւորագոյնն, և հոս
կը համբարուին Տիարպէքիրի, Հալէպի և
ամբողջ Միջագետաց ներածութեան և ար-
տածութեան վերաբերեալ վաճառականական
նիւթերն։ Քաղաքիս հետ տասն և հինգ



28. Հին դրամ Ալեքսանդրեայի։

օրեայ կանոնաւոր երթեւեկութիւն հաստա-
տած են հետեւեալ շոգենաւային ընկերու-
թիւնները. Գաղղիական Մեսաժըրի Մարի-
թիմ, Ռուսական շոգենաւային ընկ., Օսմա-
նեան Խտարեի Մախսուսէ, Աւստրիական
Լոյտ, Եգիպտական Թրտիվիյէ. կան նաև
ոչ կանոնաւոր, բայց յաճախակի երթեւե-
կող շոգենաւներ, ինչպէս գաղղիական Ֆա-
պեր, անգղիական Պէյս, Մօս, Լէյլանտ, և
այլն։

1890 տարւոյ մարտ 1էն մինչև *1891*ի
փետր. *28*ը այս նաւահանգիստը յաճախեր են.

Անգղիական	69	շոգենաւ,	1	առագաստանաւ
Գաղղիական	65	»	—	»
Եգիպտական	55	»	—	»
Օսմանեան	31	»	215	»
Իտալական	24	»	—	»
Աւստ. Իտալ. և Սամս կղ.	12	»	25	»
Գումարն	274	»	241	»

Նաւահանգստէս արտահանուած պիտուր
ապրանքներն են. բուրդ, ձեռագործներ,
արմաւիք, արջառ և ոչխար, պիտուր մա-
տուտակի արմատ, պիտակ, նուշ, չամիչ,
մրգի, մետաքսի բոժոժ, չբանուածած պղինձ,
բամբակ, խէժ, կնդուխ, շինելափայտ, ծխա-
խոտ, այծի մազ, մեղրամոմ, և այլն։

Այս նիւթերն տարուած են հետեւեալ եր-
կիրները.

Թուրքիա	8, 556, 590	ֆր. վաճառք
Եգիպտոս	4, 892, 450	» »
Գաղղիա	4, 347, 445	» »
Անգղիա	2, 060, 525	» »
Իտալիա	1, 749, 655	» »
Ամերիկա	884, 250	» »
Աւստրիա	287, 440	» »
Յունաստան	99, 600	» »
Չանազան երկիրներ	1, 285, 550	» »
Համագումարն	24, 157, 975	ֆր. վաճառք։

Իսկ ներմուծուած պիտուր ապրանքներն
են, ձեռագործ և բամբակեղէն, դեղօրայք,
ատաղեղէն, լեզակ, մետաքսեղէն, կաշի, շա-
քար, բանուած պղինձ, քարիւղ, երկաթե-
ղէնք, սուրճ, կապար, անագ, զինկ, բրինձ,
պինդ, ալքոլ, թղթեղէն, գիրք, որդան կար-
միր, ապակեղէնք, կաժուած մետաքս, պըղ-
պեզ, և այլն։

Այս նիւթերը բերած են հետեւեալ եր-
կիրներէն.

Անգղիայէ	22, 547, 250	ֆր. վաճառք
Գաղղիայէ	7, 185, 440	» »
Թուրքիայէ	6, 179, 975	» »
Աւստրիայէ	5, 805, 570	» »
Եգիպտոսէ	1, 901, 440	» »
Իտալիայէ	902, 965	» »
Ռուսիայէ	700, 450	» »
Չանազան երկիրներէ	429, 200	» »
Համագումարն	43, 622, 070	ֆր. վաճառք։

Որով նոյն տարուան մէջ եղած է

Ներածութիւն	43, 622, 070	ֆրանկաց
Արտածութիւն	24, 157, 975	»
Գումարն	67, 780, 045	ֆր։

Իսկ մինչեւ հաշուով կը լինի

Ներածութիւն	39, 915, 720	ֆրանկաց
Արտածութիւն	63, 632, 471	»
Գումարն	63, 566, 191	ֆր։

Ընդհանրապէս կ'ընդունուի թէ Իսկէնտէ-
րունը հիմնած է մեծն Աղեքսանդր, Դարեհի
դէմ ըրած մեծ յաղթութեան յիշատակին,
և ուրիշ համանուն քաղաքներէն որոշելու
համար հին տեղն կը կոչէին Աղեքսանդրիա
առ Իսսեռս Ἀλεξάνδρια ἡ κατ' Ἴσσον, կամ

Ալեքսանդրիա Կիլիկիոյ Ἀλεξάνδρια Κιλικίας. *Միջին դարու մէջ կոչուեցաւ նաև* Փոքր Ալեքսանդրիա, Alexandria Minor, Ալեքսանդրեօլա, Alexandriola, *և ի վերջոյ՝ ինչպէս նաև այժմ* Ալեքսանդրետտա, Alexandretta, *կամ* Ալեքսանդրեակ։

Քաղաքէս դէպ ի հարաւ հինգ մղոն հեռաւորութեամբ կը գտնուէր փիւնիկեցւոց երեւելի Միւրիանդոս *քաղաքը։ Նոյնպէս քառորդ ժամու հեռաւորութեան վրայ կը գտնուի* Ալեքսանդրեաւայի *բազմահնչիւնի բերդը, որուն միայն հիմքը կը տեսնուին։*

այժմ ևս օր աւուր կ'ընդարձակի։ Կան բազմական քարաշէն վայելուչ բնակարաններ, եւրոպական զբեթէ բոլոր առբութիւնները ունին հիւպատոսարան, նոյնպէս Ամերիկոյ Միացեալ Նահանգները։ Ցեղոյս Հայք ունին պարոց և եկեղեցի և առանձին առաջնորդ. զբաղած են վաճառականութեամբ և յանձնակատարութեամբ։ Քաղաքիս մէջ կան 41 վաճառանոցք, 300 կրպակ, 14 խջեւան, 11 փուռ, 2 գինետուն և 13 ճաշարան։ Կարմելական միանձնուհք հոս ունին եկեղեցի մը, Հրէայք ժողովարան, և Թուրքերն ալ մզգ-



28. *Ալեքսանդրեակ քաղաքի մէկ մասը։*

Խաչակրաց առաջին գալստեան ժամանակ 1097 թուին, Տանկրի տիրեց քաղաքիս. որուն տեղացի Հայերը և Թուրքերը ընծայեր բերին։ Որոշ չգիտենք, բայց շատ հաւանական է թէ Ալեքսանդրեակը բաւական ժամանակ մնաց Հայոց ձեռքը։ Եգիպտացիք Ա. յասը աւերելէ վերջ, նուաճեր էին նաև այս նաւահանգիստը, բայց 1347 ին Հայերը կոստանդին Դ. Թագաւորի ժամանակ, Հռոդոսի ասպետաց օգնութեամբ, անգամ մը ևս ազատեցին զայն Թշնամեաց ձեռքէն։

1823 ին երկրաշարժէն մեծապէս վնասուեցաւ, բայց վերջը շէնցաւ (թ. 27), և

կիթ մը։ — Միսռաեան, 417–18։ Կիլիկիա, 229–239։ Վ. Բիւե, Բ. 201–208։

ԱԼԷՊՈՒ. — *Հայաբնակ գիւղ այժմեան Երեւանու նահանգի Սուրմաղի գաւառին մէջ, 694 բնակչօք։*

ԱԼԷՊՈՒԱ *կամ* ԱԼԻՊՈՒ. — *Գիւղ Միւնեաց (Զանկեզաղօր) Ծղուկ գաւառի մէջ, Սալվարա լերան ստորոտը, համանուն վտակի մօտ։ Ունի Ս. Գեորգ հին և փոքրիկ եկեղեցի մը։ Բնակիչք 1828ին գաղթած են Պարսկաստանէն. 362 հոգի, բաժնուած 79 տան։ Ժողովրական գիւղական աշխատութիւններէ և խաշնարածութենէ զատ, այս*

գիւղացիք, նաեւ ազ կը տանին Նախիջեւան-նէն Շուշի։

— ԴԱՇՏ. — *Ալ. գաշտ կը յիշէ Մատթէոս Ուռհայեցի (ՃՁ), Զօրքօրդ Հայոց Հան-ձիթ (Խարբերդ) գաւառի մէջ, ուր քաջն Թոռնիկ ազգն Սասնոյ և որդին Մուշեղայ, փիլատաոսի յաղթեց, և շատ աւարաւ դար-ձաւ ի Մասուն։*

ԱԼԷՄ. *Տես* ԱԼԱՄԱՆ։

ԱԼԷՅԵԱՆ ԴԱՇՏ. *Յն.* Ἀλήϊον πεδίον. *Լ.* Campus Alejus. *Թ.* Զուխուր Օվա (*Խորա-դաշտ*). — *Հարթ դաշտավայր Կիլիկիոյ, գրեթէ 1500 քառակուսի մղոն տարածու-թեամբ, Ջահան և Սարոս գետոց միջավայ-րը։ Ի հնուց սկսեալ միշտ գովուած է այս պարարտ և արգասաբեր երկիրը, ինչպէս ազգային հին տեղապրող մ'ալ կ'ըսէ. «Է ա-մենաբեր հանգոյն երկրին Յորդանանու»։ Ոմանք ալ Եգիպտոսի Նեղոսէն առգուած բերրի դաշտերուն կը նմանցնեն, վասն զի Նեղոսի նման Կիլիկիոյ գետերն ևս արգա-սաբեր ադմով կը պարարտացնեն երկիրը։ Դաշտին բազմաթեսակ բերոց անուանք պիտի յիշենք Կիլիկիոյ նկարագրին մէջ։*

ԱԼԵՈՒՍ կամ ԱԼԱՒՍ. — *Գետ Լեռնային Կիլիկիոյ, աջակողմեան օժանդակ Սարոսի, Հաճընէն վար։*

ԱԼՃՆՁԱՔ. *Տես* ԵՐՆՋԱԿ։

ԱԼԹԸՆ ՀԻՍԱՆԻՆ. — *Գիւղ Հայոց Վերին կեղիի մէջ, որոյ մօտէն կը հոսի վտակ մը որ կը խառնուի Օրօրի հետ։ — Նոյն գա-ւառի մէջ համանուն գիւղ մ'ալ ունին Բուրդք, որոյ մօտ կը գտնուի ապի հանք։*

ԱԼԻԱՊԱՏ. — *Հայաբնակ գիւղ Երեւանու Նախիջեւան գաւառի մէջ. բն. 410, բաժ-նուած 76 տան։ Ալեսպատցիք 1828 ին գաղթած են Պարսկաստանէն, և վերանորո-գած աւերակ վիճակի մէջ գտնուած այս գիւղը։ Գիւղս ունի յորդահոս միակ ապրիւր (քահրեզ) մը, որ կը զարձնէ երկու երեք ջրաղացներ և կ'ոռոգէ այգիները և դաշտերը։ Ալեսպատցիք ժիր երկրագործներ են, ունին այգիներ և պարտէզներ. ոմանք ալ Նախի-ջեւանի մէջ խանութի և առուտուր ունին։*

ԱԼԻԲԷԿԼՈՒ. — *Գիւղ Հայոց՝ Երեւան նա-հանգի (Ազատաձոռն), Վաղարշապատու վի-ճակին մէջ. բն. 338, բաժնուած 92 տան. ունին Ս. Լուսաւորչի անուամբ եկեղեցի մը։*

ԱԼԻԲՈՒՂԱՐ. — *Գիւղ Տիգրանակերտէն մէկ ժամ հեռաւորութեամբ Տիգրիսի արեւմը-տեան կողմը. ունի պատուական ջրոյ ակն, որ ջրաղացներ կը զարձնէ։ Բնակիչք խառն են. Հայք, Թուրք և Քիլտանցիք։ Կան եր-կու եկեղեցիք, մին Հայոց, Ս. Աստուա-ծածին, և միւսն Քիլտանցոց Մար Քրիա-քոս (Ս. Կիրակոս)։*

ԱԼԻԲՈՒՆԱՐ. — *Փոքրիկ գիւղ Հայոց՝ Տիգրանակերտէն կէս ժամ հեռու, ունի պա-տուական ջուր փայտաս առոյգ, որ մինչև քա-ղաք տարած են։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։*

ԱԼԻ-ԴՂԼ. *Տես* ԱԿՈՒՒԻ ՆՈՐ։

ԱԼԻԽԱՆ. — *Գիւղ Ալեքսանդրապոլի գա-ւառի։ Համանուն հասարակութիւնն ձեւա-ցած է հետեւեալ գիւղերէն, որոց բնակիչք ամբողջ Հայ են։*

Ալխան	54	տուն, 346	բն.
Պաշգեղ Ե	24	» 250	»
Գաբաքլխէ Պ.	54	» 332	»
Քէֆլու	56	» 285	»
Սամսուրլի	25	» 239	»
Սարիար Փոքր	42	» 562	»
Գումարն	195	տուն, 1814	բն։

ԱԼԻԳԱՄԱՐ կամ ԱԼԻՔԻՄԷՐԼԻԻ. — *Հա-յաբնակ գիւղ Երեւանու (Ճակատք) Սուրմա-ղի գաւառի մէջ, 1045 բնակչօք, բաժնուած 126 տան։*

ԱԼԻ-ԴՂՐԲԼ կամ ԱԼԻ-ԴՂՐԱԼ. *Յն.* Խա-ՉԱՉՈՐ. — *Հայաբնակ գիւղ Սիւնեաց Գե-ղարքունի (Նոր Պայազիտ) գաւառի, կոթող վիճակի մէջ։ Բնակիչք 1830ին գաղթած են Բայբուրդայ Ս. Յովհաննու վանքի (Խչ-քիլիսա) գիւղէն. այժմ կը համարուին 1049 հոգի, բաժնուած 121 տան։ Ունին Ս. Պետրոսի և Պօղոսի եկեղեցի մը, որոյ շուրջը կան խաչքարեր և գերեզմաններ։ Գիւղիս արեւմտեան կողմի ձորակի մէջ քա-րաժայռերու վրայ կան խաչանշաններ, ո-մանք հին արձանագրութիւններով։ Իսկ ա-րեւելեան կողմը հասարակաց ճանապարհի վրայ կայ խաչքար մը ՉԻԹ (= 1270) թուականի արձանագրութեամբ։ — Ս. Հռիփսիմէ, Ալի Ղրուախի արեւմտեան կողմը պարապատառ և կոփածոյ քարերով կառու-ցուած վանք մ'է, այժմ քայքայուած. այս*

կոչմը կայ նաև աւերակ գիւղատեղի մը։ — Ջօրաւոր Խաչ, այսպէս կը կոչուի, մեր վերը յիշած ձորակի մէջ գտնուած խաչաքանդներէն մեծագոյնը, որուն ամէն տարի ուխտի կ'երթան շրջակայ գիւղերու բնակիչք Ս. Խաչի տօներուն։

Մեր նախնեաց բարեպաշտութեան նշանակ այս սրբազան նշաններէն զատ, գիւղիս մօտ կ'երևին կարծես արհեստական բլուրներ, որոց մէջ կը գտնուին հին թրծեալ աղիւսներ՝ զարդարուած գանագան նկարներով. պեղման և ուսումնական քննութեանց կարօտ են այս վայրերը։ — Գեղարդուհի, 543–545։

ԱԼԻԳՈՒԼԻ–ՔԻՆՏ. — Այս անուամբ երկու գիւղ կայ Սիւնեաց Զանկեզաղօր այժմեան գաւառի մէջ, մին ունի 883 բն. ամբողջ Հայ. իսկ միւսն 643 Հայ և 175 Թաթար բնակիչք։

ԱԼԻՃԱՆ. — Գիւղ Երեւանու Սարմաղի (Ճակատք) գաւառի մէջ, Երասխայ մօտ։ Բն. 666, բաժնուած 87 տան, ամբողջ Հայ։

— Գիւղ Հայոց Մշոյ գաշտին մէջ, բն. գրեթէ 800, բաժնուած 70 տան։ Կան նաև մէկ քանի տուն Քրդեր, որք շատ կը նեղեն զգիւղացիս։

ԱԼԻՆՃԱ. — Տես ԵՐՆՋԱԿ։

ԱԼԻՇԷՐ. — Լեռ Կիլիկիոյ Մարաշի և Ադպիստանի մէջտեղ, Ջէյթունի արեւելեան կողմը։ Համանուն գիւղ մ'ալ կայ մօտերը, թումա գետակին ձախակողմը Հայ և Թուրք բնակչօք, որոց թիւը 1000 էն աւելի է։

ԱԼԻՋԱՅՈՒ. Տես ԱԼԱՋԱՅՈՒ։

ԱԼԻՍ կամ ԱԼԻՒՍ. Գր. HALYS. Թ. قزيل ايرماق (կարմիր գետ). — Հռչակաւոր և մեծ գետ փոքր Հայոց. կը ձեւանայ երկու վտակներէ, յորոց մին կը բղխէ Բէօսէ տաղի կոչուած լերան սառոյցէն և միւս մեծագոյնը՝ Գըզըլ տաղը (կարմիր լեռ) ըսուած լերան սառոյցէն։ Կարմիր լերան հողը կարմիր ըլլալով, գետոյս ջուրն ալ կարմրագոյն է, և այդ պատճառաւ ի Թրքաց կը կոչուի Գըզըլ ըրմագ։ Գետս ոչ միայն նշանաւոր է իր բնական աշխարհագրական դիրքը, այլ և հին ժամանակները մեծ դեր կատարած է՝ իբրև քաղաքական սահման, գանագան ազգաց և ժողովրդոց։ Եփրատէն աւելի երկար ժամանակ Ալիս բաժանիչ սահմանագիծ եղած է Արեւմտից և Արեւելից. հոն կ'ապրէին հելլէնական ժողովրդոց տիրապետութիւնը և յունական արուեստներն. անոնք կը սկսէին արամէական լեզուներն և ասորական արուեստներն։ բղխած տեղէն ուղղուելով դէպ ի Հր. — Ա.Մ., կ'առաջէ նախ Զարա (1360մ), ապա Սերասախա (1250մ), և ընդունելով շատ մը մանր օժանդակներ կ'ընդարձակի և կը մտնէ Ակնիւրիոյ կուսակալութեան մէջ։ Նոյն ուղղութեամբ առաջ կ'երթայ՝ առանց նշանաւոր պտոյտներու՝ մինչև Եարապզուռն, Ղայսէրիէն ոչ այնչափ հեռու, և անոնց մինչև նշանաւոր հովիտ իջնելու. բայց հոն Խոռնա տաղ լերան շղթանեբէն արգիլուելով կը դառնայ դէպ ի Հս. — Ա.Մ., յետոյ դէպ ի Հս., և ի վերջոյ դէպ ի Հս. — Ա.Ր., ձևացնելով մեծկակ աղեղ մը, որուն լարին երկայնութիւնը Հս.էն Հր. 250 հազարամետրէն աւելի է։ Պաֆրա գիւղաքաղաքի վերի ծայրէն անցնելով քիչ մ'ալ առաջ կերթայ և կը թափի Սեւ ծով։

Իւր բովանդակ ընթացից երկայնութիւնը կը համարուի 1000 հազարամետր։ Խորհնացին կրկին անգամ կը յիշէ գետս, ծայրը ս տառի յաւելմամբ, Արտաշիսի տիեզերակալութիւններն պատմած ժամանակ. «.... չեւ ընդ Ալիսս գետ անցեալ, զլիւդականն սատակեաց զզօրս, և կալաւ զկրիւսոս». և «կրիւսոս անցեալ ընդ Ալիսս գետ քակեսցէ զիշխանութիւնս»։ Գետոյս վրայ ձգուած կամուրջներէն նշանաւոր են ա. Եալըն կեօզ (Միակամար), որ Ղայսերիէն երեք ժամ հեռու կ'ինկնայ, և մէկ կամար ունենալուն այսպէս կը կոչուի, որուն երկայնութիւնն է 160 ոտք, և ջրի երեսէն բարձր է 115 ոտք, և լայնքն է 5 քայլ։ բ. Սերասախոյ մօտ՝ Էյրի քեօփրիւ (Ծուռ կամուրջ), շինել սուած է, ըստ աւանդութեան, Անեղքերիմ թագաւորի աղջիկը, մեծամեծ կոփածոյ քարերով և 12 կամարներով։ Գետին զօրութենէն չկործանուելու համար, գիտմամբ ճարտարապետը ծուռ շինած ըլլալով, անունը դրեր են Ծուռ կամուրջ։ գ. Քեսիկ կամ Գըզըլ կամուրջն ալ շինուած է նոյնպէս մեծահատոր քարերով, ունի վեց կամար։ Ուրիշ

կամուրջ մ՚ալ ունի Ալիս 14 կամարներով, զոր կառուցած է Կեսարացի Գրիգոր Ճարտարապետ ումն, զրեթէ երկու դար առաջ։ Ն. Հայատառաւ, 30։ Տես. Մեքառտիոյ, 135–139։ Թոր. Պտմ. Բ. գ.։ Վ. Բիւնէ, Ա. 639–640։ Վ. Ֆլորիվալ. Բառգիրք պտմ. և աշխարհ. 13։

ԱԼԻՏԱՂԸ. — *Երկգագաթ լեռ Առաջին Հայոց, Էրճիշ լերան և Կեսարիոյ կամ Ղայսէրիի մէջտեղ։ Վրան կայ ուխտատեղի մը Ս. Կարապետի, որ կը կոչուի նաև Ս. Բարսղի անուամբ, ուր երբեմն ճգներ է նոյն սուրբ Հայրապետը։ Այժմ անշէն և ամայի վիճակի մէջ է։ Այժմ տարի Համբարձման ուխտի կ՚երթան Հայը և Յոյնք։ Եկեղեցւոյն խորանին տակ քառակուսի կանգնաչափ դուռ մը կայ, ուակից մնանելով, մինչև մէկ ժամուան ճամբայ առաջ կ՚երթան, և կ՚աւանդեն թէ այդ ըլլայ սուրբ Բարսղի ճգնութեան այրը։ Ն. Հայատառաւ, 311։*

ԱԼԻՒՐ, ԱԼՈՒՐ *կամ* ԱՅԼՈՒՐ. — *Գեղեցկագիր գիւղ վասպուրականի Տոսպ գաւառի, վանայ ծովակի արեւելեան և Մարմէտի հիւսիսային կողմը, կառուց անապատի դիմացը։ Գիւղիս անուանակոչութեան համար կ՚աւանդեն, թէ Թագէոս առաքեալը հոս գալով և շրջակայից զուարճալի վիրքը տեսնելով բռած է. Այլ ուր երթամք. և անկից գիւղիս անունը մնացած է Այլուր որ վերջը ամկէն փոխուեցաւ Ալուր։ Ունի ընդարձակ արտեր և պտղատու ծառոց պարտէզներ, և Ս. Աստուածածնի անշուք վանք մը։ Ուրիշ վանք մ՚ալ ունի գիւղս բարձր գրիւք, որ կը կոչուի Ալրոց կամ Ալիւրոց Ս. Գեորգ, այս երկրորդ վանքի մէջ կը նստի գիւղի առաջնորդը։ 1640ին երկրաշարժէն վանայ շրջակայքը կործանուած վանքերուն մէջ Դաւրիժեցին կը յիշէ նաև Ալերու վանք։ Ալիւր գիւղը ունի երկաթ վարժարան, մանաւորապէս ամառը 40 աշակերտօք և ձմեռը 200։ Գիւղիս տանց թիւը կը հասնի՝ 250ի։ Այս գիւղէն էր 1655ին նահատակուող Սիրուն անուն երիտասարդը։ — Դաւր. 542–3։*

ԱԼԻՒԵՄԲԻԼԻ. *Տես* ԱԼԻՂԱՄԱՐ։

ԱԼԻՒԵՈՁԱԿ. — *Գիւղ Երեւանու նահանգին մէջ (Նիզ), վարչապետանէն 70 վերստ հեռու, Ախտարդու վտակի մօտ, Ազատծոր բլուրներու արեւելեան ոտից ստորոտը, յորոց կը բղխեն սառնորակ ջրոց աղբիւրներ։ Բնակիչք ամբողջ Հայ են 1412 հոգի, բաժնուած 163 տան։ Գիւղիս եկեղեցին նուիրուած է Ս. Խաչի։*

ԱԼԻՒԼՊՕՆ. — *Գիւղ Հայոց՝ Մշոյ դաշտի մէջ. բն. 650, բաժնուած 50–5 տան, յորոց քանի մը տուն Քուրդ են։*

ԱԼԼԱՀ–ԿԻՕԼ *կամ* ԱԼԱԿԻՕԼ. — *Այսպէս կը կոչուի Սիւնեաց Սողք գաւառի մէջ, իրաբու մօտ գտնուած և շատերը առուակներով միացած տասնի չափ լճակներէն մեծագոյնը։ Համանուն վտակ մը կը վազէ այս լճէն, որ դէպ ի հիւսիս առաջ երթալով, և Մաքենոցաց վանքի մօտէն անցնելով, անունը կը փոխէ և կը կոչուի Մաքենոցաց գետ։ — Նոյնպէս այս անուամբ քանի մը լճակներ կան Զանկեազօր (Ծղուկ) գաւառի մէջ։*

— ԵԱՐՍԻՆ–ՊԱՇԻ. — *Հրաբղխային շիջեալ լեռ Սիւնեաց Սողք գաւառի մէջ, վերոյիշեալ լճի մօտ։*

ԱԼԼԱՀՎԱՐՏԻ. — *Գիւղ Ծունոց և Հայոց՝ Գուղարաց Զորափոր (Պօչալու) գաւառի մէջ. բն. 1167, բաժնուած 245 տան։ — Համանուն հասարակութիւնն ձեւացած է հօրեր գիւղերէ, որոց բնակիչք մեծաւ մասամբ Քոյն են։*

ԱԼԼԱՀ *կամ* ԱԼԱՏԱՂ. — *Լեռնագօտի կիլիկիոյ, որ Պոչղար տաղի արեւելեան ոտաոռուածքէն սկսած կը ձգուի դէպ ի հիւսիսային արեւելք։ Աստղ ամենաբարձր գագաթը կը կոչուի Ախիշ քար։*

— *Համանուն բարձր լեռ մ՚ալ կայ Բասենու մէջ, որուն ստորոտները կան զանազան Թրքաց գիւղեր։*

ԱԼԱԹԵԱՆ. *Տես* ԱԽԱԹԵԱՆ։

ԱԼԱՆՋԻ. — *Գեղաշէն Պօչալու գաւառի մէջ, աշակողմեան օժանդակ կուրայ։ Սոյն գեղաւիս ձորակն կը կոչուի Ալանջաձոր։*

ԱԼԱՒ. *Տես* ԱԿԻԼ։

ԱԼՁԱՐԱԿ. — *Լճակ Աղցախի Ջրաբերդ գաւառի մէջ, երիվանքէն մղոն մը հեռու, թուրքերէն կը կոչուի Գէօք–կէօլ. շրջապատուած է անտառախիտ լեռներով։ 1140ին Գանձակայ մեծ շարժին ժամանակ Աղնաբակ անուամբ լեռ մը կործանուելով ձեւացուցեր*

է այս լճակը, որ երկու մասի բաժնուած է, և վերին մասը կը կոչուի « Ըստծոռ ծով » այսինքն, Աստուծոյ ծով։ Լճակէն այժմ կ'որսան երեք տեսակ ձուկ։ — Կիրակոս, 66։

ԱՂՄՈՒՔ. — Հայաբնակ գիւղ Դաւրիժու (Աբրպատական) գաւառի մէջ, բն. 216, բաժնուած 36 տան. ունին 1 եկեղեցի և 1 դպրոց։

ԱՂՈՒԻ. — Արցախի Հարձլանք գաւառի մէջ, մնացած է միայն այս Հայաբնակ գիւղն։ Բնակիչք բնիկ են, օդն, կլիման և ջուրը պատուական. եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին։ Բն. 458, բաժնուած 74 տան։

ԱՂՁԱՊՕՆՁՈՒԽ կամ ԱՆՁԱՊՕՆՁՈՒԽ. — Ծագկաւէտ և ջրառատ լեռ Բասենու, Խոսրովական գիւղի մօտ։

ԱՂՁԱՒԱՁ. Տես ԱՐՇԱԿ։

ԱՂՄԱՂԸ. — Խասկալէն երեք ժամ հեռաւորութեամբ, արեւելեան կողմը, բարձր բլրի մը վրայ հաստատուած Հայոց գիւղ մը (Նիկոմիդիա), բնակիչք 200էն աւելի են, և ունին Ս. Կարապետ փառաւոր եկեղեցի մը և աղբատիկ դպրոց։ Ժողովուրդը մեծաւ մասամբ հողագործ է և շերամապահ։

ԱՂՄՇԿԱ. — Փոքրիկ գիւղ Հայոց, Բասենի վիճակին մէջ։

ԱՂՆՁԻ ՎԱՆՔ. — Գրոց յիշատակարանները ծանօթ է անունս, որ վանք մը եղած կը թուի Խազախաց մէջ։

ԱՂՈՒԻՆ. — Այս անուամբ կը յիշուին հովիտ տեղիք Աղուանից Թաւասորին, Պարսաւի մօտ։

ԱՂՈՒՍ. — Կիլիկիոյ նոր վիճակի մը անուն, Անտիոքի վիլայէթի մէջ։

ԱՂՊԱՂ. Տես ԱՂԲԱԿ։

ԱՂՊԻՍՏԱՆ կամ ԱՊՂԱՍՏԱՆ. — Քաղաքաւան Համանուն գաւառի, Մարաշի արեւելեան հիւսիսային կողմը, 69 հղմտ. հեռաւորութեամբ։ Ամբողջ գաւառն ունի 135 գիւղ և 45,000 բնակիչ, որոնց 3000ը Հայ են, որք կը բնակին քաղաքաւանի մէջ։ Ալպիստանը կառուցուած է Քիւրա լերան առջեւ։ Ջահան գետը կը բղխէ մերձակայ արեւմտեան լեռներէն, և քաղաքիս մօտ երկու ճիւղի բաժնուելով իր մէջը կ'առնու Ալպիստանը, և յետոյ նորէն կը միանայ։ Բազմաթիւ պտղատու ծառեր և արտաքաղեր գաշտեր կը շրջապատեն քաղաքս։ Մեր պատմիչները չեն յայտներ, թէ ո՛րքան ըլլան տեղւոյս Հայք։ Լեւոն Մեծը 1205ին յարձակեր է բերդի վրայ, սակայն չէ յաջողած ո՛րեվէրս։ Բայց Համանուն գաւառի մասը բերդերէն շատերը, եղած է ժամանակ, որ ենթարկուեր են Հայոց իշխանութեան։ Ալպիստանի մօտ է իշմէ անուն ջերմուկը։ Այս գաւառի մէջ կան ամենահին ժամանակաց պատմութեան հետքեր։ — Կիլիկիա, 349—354։

ԱՂՎԱՒԻՆՁ. — Մշոյ գաշտի մէջ Հայոց գիւղ. ունի գրեթէ 1000 բն. և 110 տուն։

ԱՂՎԱՐ. — Հին գիւղ վերին Բասենի (Այրարատ), Հասանգալէի հարաւային կողմը, Աղբերականց գաշտի մէջ, ուր 488 թուին հետամուտ լինելով Մամիկոնեան քաջին Վահանայ, բանակած էր Պարսից Միհրանեան Շապուհ զօրավարը։ 1354ին Իտալիոյ Պիզ կամ Փիզա քաղաքի մէջ, Աղվարցի Թորոս արեղայ մը, օրինակած է Ս. Պատարագի մեկնութեան թարգմանութիւն մը, որ այժմ պահուի Վիեննայի կայսերական գրատան մէջ։ 1664ին Մկրտիչ անի երէց կարնէն գիւղս գալով, սատարութեամբ Ոսկերիչ Մխիթարայ և այլոց, կը գնէ աւետարան մը։ Այս գիւղը գիշերօթեցին 1830 տարւոյ յունիս 22ին Ամիահ և Տուայլի ամերիկացի քարոզիչները, մինչ տեսայս 16 տուն Հայ բնակիչք Ռուսաց բաժինը զաղթելու կը պատրաստուէին։

ԱՂՔԱՆԱ. — Գետակ Աբրպատականի, աջակողմեան օժանդակ Երասխայ։

ԱԽԱ. — Երբեմն բազմաբնակ աւան Հայոց վերին Բասենի (Այրարատ) մէջ, Միրանեաց լերան արեւմտեան սահրատը, Երասխայ ձախակողմեան օժանդակ վտակի մը աջ կողմը։ Այժմ բնակչաց մեծամասնութիւնն կը կազմեն Թուրքերը։

ԱԽԱԼՔՈՐԻ (Նոր Կոթի). — Գիւղ Տփխեսու նահանգի, Տուչէթի գաւառի մէջ. բն. 573 Հայ և 60 Վրացի։

ԱԽԱԼՇԷՆ. — Գուգարաց մէջ կան այս անուամբ վրացւոց քանի մը գիւղեր։

ԱԽԱԼՍՈՓԵԼԻ. — Գիւղ Կոթի (Տփխիս) գաւառի մէջ, բն. 382, Հայ և Վրացի։

ԱԽԱԼՑԱՊԱ. — Գիւղ Տփխիսու կօրի գաւառի մէջ, բն. 201, Հայ, և 282 վրացի։

ԱԽԱԼՑԻՒԱ կամ ԱԽԱԼՑԻՒԱ (Նոր բերդ). Գ. AKHALTZIKH. Թ. ახალციხე. Ռ. Ахалцихъ. Վ. ახალი ციხე. — Գլխաւոր բերդաքաղաք համանուն գաւառի. նշանաւոր հնութեամբն, նկարչական լերանցամէջ դիրքովը և պատմական բազմադիմի դէպքերովը։ Ըստ ազգային և օտար բանասիրաց, հին ժամանակները Ախալցխայի գաւառի մէջ նախ բնակած է Ս. Գրոց մէջ յիշուած Ջաբեթի Մոսոք թոռն, յորմէ սերած են Մեսախք ըսուած կովկասեան ժողովուրդք, որոց երկիրն կ'ինկնար Հայոց, Վրաց և Եղերաց մէջտեղ։ Ինչպէս կ'երեւի առաջին անգամ Վրացիք տիրելով իրենց այս սահմանակից երկրի, անուաներ են զայն Սա–Մցխէ (Երկիր Մեսխաց), և գլխաւոր քաղաքն ալ Ախալի ցիխէ (Նոր բերդ)։ Վարդան աշխարհագիրը յետ ըսելու թէ «Սամցխէ Ախլցխա է», կը յաւելու նաեւ «իշխանաց երկիրն է». և յիրաւի եղաւ ժամանակ մը, որ Ախալցխան ազատ իշխաններով կառավարուեցաւ, և նոյն առեն կոչուեցաւ ի Հայոց Իշխանաց երկիր։

Ըստ բնական աշխարհագրական բաժանման՝ Ախալցխան իր գաւառով, յատուկ մասն համարուած է Հայաստանի։ Մեր աշխարհակալ Թագաւորաց ժամանակ, երբեմն բոլորովին Հայոց ձեռքը մնացած է, և երբեմն ալ հարկատու կամ հպատակ եղած։ Կը համապատասխանէ Տայոց լեռնոտ նահանգի ձակը գաւառի։

Շատ պատերազմներ և ազետալի տեսարաններ ունեցած է Ախալցխան, զանազան ժամանակներ, և իր բնակչաց քաջութիւնն միշտ գովուած է, և առած մ'ալ յատկացուած, թէ «Մէկ Ղարսեցի երեք Երեւանցի կ'արժէ, և երկու Ղարսեցի մէկ Ախալցխացի»։

ԺԴ–ԺԶ դարու մէջ, Թամարաց արշաւանաց ժամանակ, երբ Վրաց տէրութիւնն խիստ տկարացած էր, Ախալցխայի՝ ինչպէս նաեւ Ախալքալաքի բնակիչք անկախութեան կը ձգտին և ինքնագլուխ կ'ուզեն կառավարել իրենց երկիրը։ Այդ ազատութեան և անկախութեան ժեծագէս կը նպաստէ քաղաքիս անառիկ դիրքն և տեղացւոց անվեհեր քաջութիւնն, որով ԺԴ դարու առաջին կիսուն մէջ, Վրաց Գէորգ Թագաւորն ստիպուեցաւ ազատ և անկախ համարել Ախալցխան և Ախալքալաքը՝ իրենց գաւառով և առաջին Ամթաբէկ (Հայրիշխան) եղաւ Սարգիս անուանով մէկը, և այնուհետեւ այս երկիրն փոխանակ Սա–Մցխէ կոչուելու, կոչուեցաւ Սա–Ամթաբէկ (Երկիր Ամթաբէկաց կամ ըստ մեզ Իշխանաց երկիր)։

1444 (ՊԿԴ) Թուին Իւանէ Ամթաբէկի ժամանակ, Ախալցխայի մէջ պանդխտութեամբ բնակող Պարսիկները Հայոց և Վրաց հետ կռուելով և թշնամանալով, գաղտուկ քաղաքէն երթալով կ'երթան Բագրեւանդայ Վաղշակերտ քաղաքը, և Յուսուփ ամիրային դանգատելով կը գրգռեն զինք Տայոց աշխարհի վրայ, և առաջնորդելով ամիրայի զօրաց կու գան մինչեւ Ախալցխա, և նենգութեամբ քաղաքը կը մատնեն անօրինաց ձեռքը։ Առաքել Դաւրիժեցին ալ կը յիշէ ՊՂԴ (= 1444) Թուին Ջահշահի քաղաքիս վրայ յարձակիլն և բնակիչները գերի առնելն։ Իսկ 1484ին Մողոլաց անիշխանութեան ժամանակ, Եաղուպ խանը, յետ Ջաւախքը աւարելու կու գայ կը պաշարէ Ախալցխան։

Մինչեւ 1463 Թուականը ամթաբէկները կը հասատատուէին Վրաց Թագաւորներէն, այդ տարին կուարկուարէ ամթաբէկը ինքզինքը բոլորովին անկախ ըրաւ։ Ջուր տեղ Վրաց Թագաւորներն աշխատեցան հպատակեցընել ամթաբէկները, որով և առիթ եղան ոչ սակաւ արիւնահեղութեանց և պատերազմաց։ 1547ին երբ Թուրքերը սկսան յառաջ խաղալ Ճորոխի և Կուրայ հովտաց մէջ, Շահ–Թահմազ–խանը օգնութեան եկաւ նոյն ժամանակ իշխող Քէյխոսրով ամթաբէկին։ 1553էն 1580, այս երկրի մէջ շարունակարար անպակաս եղան պատերազմք, կոտորածք և աւերմունք։ Կոխն դեռ աւելի ոստոհացաւ երբ Կուարկուարէ և Մանուչար դիւցազունք՝ յաջորդեցին իրենց Քէյխոսրով հօրը։ Աւերմութիւնը շատ բաներ կը պատմէ այս կրկին քաջայ՝ եօթը տարիներու մէջ ընդդէմ Թրքաց մղած յաղթող պատերազմներու վրայ. բայց ափսոս որ իրենց քաջութիւնն միայն քանի մը տարի ուշացուց

իրենց կործանումը. և ինչ կարող էին ընել ամբողջ Օսմանեան բանակին դէմ։ Վերջապէս 1579ին Թուրքերը Ախալցխայի սիրեցին. նայն տարին կուարկուարէ և իր եղբայրն Մանուչար կ. Պոլիս երթալով, պատուով ընդունուեցան։ Մանուչարի կարգէ դուրս քաջութիւններն և անձնական ձիրքերը, իրեն ձգած էին Թրքաց զարմանքը. այդ պատճառաւ, սուլտանը զինքը իր հայրենիքը դարձուց, և փաշայութեան տիտղոս տուաւ։

Սակայն ինչպէս կ'երեւի, շուտ ղղջացին Թուրքերը, Մանուչարի այս կերպով տեսակ Սէֆէր, որուն ապա յաջորդեցին իրեն սերունդը։

Ռուսները պաշարեցին Ախալցխան 1810ին Թարխազով զօրավարի ձեռքով, և տիրեցին յետ ահաւոր պատերազմաց՝ տասնեւեւթ տարի վերջը, Փոսքեւիչի ձեռքով։

Այդ միջոցին (1828), Ախալցխան՝ Ասիական Տաճկաստանի ամուր և հարուստ քաղաքներէն մին էր. վաճառականութիւնը, որ մեծաւ մասամբ Հայոց ձեռքն էր, շատ բանուկ էր, յարաբերութիւն ունէր Երեւանու, Թիֆլիզու, Տրապիզոնի և Կարնոյ հետ։



29. Ախալցխա, հին քաղաքն և բերդին տեսարանը։

մը անկախութիւն տրուելուն, և փորձեցին իրեն վնասել, բայց չյաջողեցան։ 1587ին խաղաղութիւն հաստատուեցաւ, և Ախլցխան Թրքաց ձեռքէն ելաւ, և Մանուչար իշխեց այնուհետեւ մինչեւ 1614 թուականը, և մեռնելով յաջորդ թողուց իր համանուն որդին Մանուչար։

Մուրատ Դ. 1625ին պաշարել տուաւ Ախալցխան՝ Սէֆէր փաշայի ձեռքով, և յետ 23 աւուրց բնակիչք կամովին անձնատուր եղան։ Այնուհետեւ ձեւացաւ Ախալցխայի փաշայութիւնը, և առաջին փաշան եղաւ Բայց ի բերդերէն, շրջապատ ամուր պարիսպ մ'ունէր աշտարակազարդ։

Այրիանուալօղայ պաշտպրութեամբ՝ երբ Ախալցխան ուրիշ երկիրներու հետ բոլորովին Ռուսաց տրուեցաւ և կարինը վերատին Թրքաց ձեռքն մնաց, կարնեցի բազմաթիւ Հայեր՝ իրենց գաղթավայր ընտրեցին Ախալցխա քաղաքը, և յետ բազում վշաց և ճանապարհի նեղութեանց, 1830 թուէն եկան հաստատ իրենց ընտրած երկրորդ հայրենիքը։

Ցետ պատերազմին բոլոր քաղաքը ա-

բուած կործանուած վիճակի մէջ կը գտնուէր, որով նոր գաղթականաց համար հարկ էր նոր քաղաք մը հիմնել. այդ պատճառաւ բաւական ժամանակ վրաններու տակ բնակեցան, և ակրութենէն բաշխուեցաւ ըրամ, ցորեան, արուեստաւորաց համար, մետաքս, բամբակ, երկաթ, և զանազան նիւթեր և գործիքներ։ 1832 տարւոյ գարնան սկիզբը, սկսաւ այժմեան նոր քաղաքի շինութիւնն։

1833 Թուին եղած աշխարհագրէ մը կը քաղենք Ախալցխայի բնակչաց և տանց հետեւեալ թիւերը.

ԲՆԻՆՔ				
Հայ–կաթ.	.	385 տուն	623 արք	
Հայ–լուս.	.	26 »	64 »	
Վրացիք	.	44 »	94 »	
Հրեայք	.	117 »	327 »	
Մահմետականք		24 »	42 »	
ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՔ				
Հայ–լուս.	.	1542 »	4004 »	
Հայ–կաթ.	.	430 »	296 »	

Գումարն 2268 տուն 5447 արք։

Այս թիւերէն կ'երեւին, որ պատերազմէն առաջ, քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնն կը կազմէին Հայ–կաթոլիկները։ Մեծին Մխիթարայ Աբբայի աշակերտն Հ. Ցակոբոս Վ. Բուզայեան՝ 1728ին քաղաքս քարոզած ժամանակ, իրեն ունկնդիր եղած են մինչեւ 2000 հոգի. նա հոս հաստատած է զանազան եկեղեցական հանդէսներ, ինչպէս Յանդուայ, Թաղումն Քրիստոսի, և այլն։ Նոյն տարին (1728) մինչ ահաւոր համաճարակ ժանտախտը, անհամար մարդիկ մահուան կը մատնէր, Հ. Բուզայեանի խորհրդով շատ ընտանիքներ լեռը կը փախչին և կ'ազատին, իսկ ազահութեան կամ չքաւորութեան պատճառաւ քաղաքը մնացողները՝ գրեթէ ամբողջ կը մեռնին։

Ախալցխան այժմ ձեւացած է երկու մասերէ. հին քաղաքը (Ռապատ) կառուցուած է Կուրայ օժանդակ և երբեմն Ախալցխա և այժմ Փոցխով կոչուած գետոյն ձախակողմը, քանի մը ալէձեւ բլուրներու վրայ. ճիշդ արեւելեան քաղաքաց նմանութիւն ունի, նեղ ծամածուռ փողոցներով, փոքր փայտաշէն կամ կաշա քարաշէն և երբեմն նաեւ գեղատիպ տներով (էջ. 29)։

Գետեզերքէն դէպ ի վեր բարձրացող, խորաւորուռ, ահեղատեսիլ և մեծաւ մասամբ հրաժայրային պարիսպէ ձեւացած բարձանց վրայ, դեռ կը տեսնուին հին բերդի աւերակ նաձեւ վերջացած պարիսպներն, և խորաձորից մէջ կխտակործան հին գրանց կամարակապերն։ 1828ին պատերազմէն վերջ կործանուեցան բոլոր մզկիթներն և բերդի մէջ գտնուած տներն։ Մզկիթներու մէջ աչքէն նշանաւորն բերդի մէջ կառուցուածն էր, որ արդարեւ ճարտարապետութեան գլուխ գործոց մը կրնայ համարուիլ։ Բերդի շինութեան ժամանակն անծանօթ է, յոմանց կը համարուի Թամար Թագուհիէն շինուած. իսկ մզկիթն կառուցուած է, հին աթաբէկաց սերունդ Ամիրա փաշայէն, խալացի ճարտարապետի մը ձեռքով։ Կանոնաւոր խորանարդի մը վրայ բարձրացած է կիսաբոլոր 49 ոտք տրամագծով կապարապատ գմբէթն. ձեւով ճիշդ նման է Կ. Պոլսի Ս. Սոփիայի, պատուհանները զարդարուած գունաւոր ապակիներով, որոց նկարներն կը ներկայացնէին Ղուրանի գանազան խօսքերը։ Գաւիթն ևս գեղեցիկ է, երեք փոքրիկ գմբէթներ բարձրացած են երկաթաքար սեանց վրայ, որոց խարխոխներն և գլուխներն պղինձապատ են։ Գաւթի մէջ կայ հայկական խաչարձան մը, հազիւ քանի մը գիր ընթեռնլի արձանագրութեամբ։ Բերդի հարաւային գրան վրայ քանդակուած արաբական արձանագրութենէն կը յայտնուի, որ բերդս նորոգուեր է 1707ին. իսկ մզկիթի շինութեան համար ալ, որ կառուցուած է 1752ին, ուրիշ արձանագրութիւն մը կայ գաւթի գրան վրայ։ Նշանաւոր էր նաեւ բերդի մինարէն 130 ոտք բարձրութեամբ, սրբատաշ քարէ, զոր Ռուսք կործանեցին։ Բերդէն իրրեւ 10 վերստ հեռաւորութենէ, մեծամեծ ջրմուղով, վերոյիշեալ Ամիրա փաշան բերել տուաւ ջուր՝ մինչեւ մզկիթի գաւիթը։ Պատերազմի ժամանակ մզկիթն շատ չվնասուեցաւ և Ռուսք, քանի մը նորոգութիւններ և փոփոխութիւններ ընելով՝ եկեղեցւոյ վերածեցին գայն։

Փոցխով գետի վրայ ձգուած փայտեայ կամուրջ մը կը միացընէ հին քաղաքը նորի (Պրաճ) հետ, ուր կան բաւական թուով նոր շինուած պալատներ, գեղեցիկ և ճաշակաւոր

աներ, հարիւրաւոր կրպակներ, կարգաւորեալ փողոցներ, սրբատաշ քարէ եկեղեցիներ, բազմաթիւ աղբիւրներ, կարաւանատներ, բաղնիքներ, վարժարաններ, հասարակաց պարտէզ, և այլն։

Երկար ժամանակ վրաց հետ խառն ապրելով քաղաքիս բնիկ Հայ–կաթոլիկները, և մանաւանդ իրենց մայրենի լեզուն, այժմ մեծաւ մասամբ վրացերէն կը խօսին, թէ և իրենց եկեղեցիներու մէջ միշտ հայերէն կը կատարուին ժամերգութիւնք և այլ աստուածային պաշտամունք։ Վերջին հրատարակուած Կովկասի ազգաբնակութեանց աշխարհագրի մէջ, մեծ սխալմամբ և կամ չգիտեմ ինչ դիտմամբ, քաղաքիս Հայ–կաթոլիկաց թիւն դրած են միայն 739 հոգի, և բոլոր վրախօս Հայ–կաթոլիկները խառնած են Վրացիներու հետ կամ յիշած են Հոսվէհան–կաթոլիկ անուամբ։

Մշակը 1883 տարւոյ 70 թուոյն մէջ, պաշտօնական հրատարակութենէ հանելով, հրատարակած է Անդրկովկասի Հայ–կաթոլիկաց թիւն, յորմէ կը քաղենք քաղաքիս Հայ–կաթոլիկաց իւրաքանչիւր եկեղեցւոյ ուղղեցած ծխականներու հետեւեալ թիւերը.


Ս. Մկրտիչ	եկեղեցի	1480	ծխականներ
Ս. Խաչ	»	748	»
Ս. Աստուածածին	»	740	»
Ս. Խաչ Երեւման	»	708	»

Գումարն 3576 ծխականներ։

Այս թիւերն կը վերաբերին 1882 տարւոյ, իսկ եթէ առաջ գալով հաշուենք նաեւ 17 տարուան մէջ աւելցած անձանց թիւերը, պիտի տեսնենք որ Ախալցխա քաղաքի Հայ–կաթոլիկները 4000ի կը մօտենան։

Քաղաքս Կովկասի Հայ–կաթոլիկաց կեդրոնավայրն է, և իր հոգեւոր կառավարութենէն կախումն ունին Ախալքալաքի, Լօռուայ և Ալեքսանդրապօլի վիճակները. իսկ հոգեւոր կառավարութիւնն՝ քանի որ Կովկասը չունի առանձին Հայ–կաթոլիկ եպիսկոպոս, վերաբերութիւն ունի Արաքսովի լատին եպիսկոպոսին։ Այժմ ինչպէս ամբողջ Կովկասը, նոյնպէս և քաղաքիս Հայ–կաթոլիկները մեծ վիճակի մէջ կը գտնուին։

Կարնէն գաղթող Հայ–կաթոլիկները առաջ բնակեցան հին քաղաքի մէջ, իրենց կրօնակից վրաթոս Հայերու հետ, և չուգեցին ակրութեան առաջարկած հողի վրայ նոր եկեղեցի շինել, բաւականանալով արդէն եղած ազգային կաթոլիկ եկեղեցիներով։ Բայց քիչ առեն, տեղացի վրաթոս Հայ–կաթոլիկաց ցուցած հակակրութենէն և անհիւրասիրութենէն կը ստիպուին նոր քաղաքի մէջ հիմնել այժմեան Ս. Աստուածածնի վե-



30. Երեւման Ս. Խաչի եկեղեցին։

րափոխման եկեղեցին 1833–34 թուականներու մէջ, և մեր վանաց միաբան, և գաղթականաց առաջնորդ բազմարդիւն Հ. Եփրեմ Վ. Ամիեան կատարեց հիմնարկութեան օրհնութիւնը, Ախալցխայի ուրիշ բնիկ քահանայից հետ «առաջի սպասկոյտ աւագանւոյ տեղւոյն՝ իշխանացն Ջաւախոց և առաջի բազմամբոխ ժողովոյ համօրէն քաղաքին յամենայն ազգաց»։ Եկեղեցւոյս մեծ կառուցուած վերափոխման ուսումնարանի վրայ հետե-

ւեալը կը կարդանք 1882 տարւոյ Մշակի 184 թուոյն մէջ. «Մ. Վերափոխման ուխտաւորաններ ամենաժողոված ժամանակն էր, երբ Հայր Ալէքեանցը, դասատու էր այս ուխտաւորանոցում. այդ ժամանակ դաս դաս մանկտիք անխտիր թէ Լուսաւորչական և թէ Հայ–կաթոլիկ պիտոյ էին Հայր Ալէքեանցի մօտ և յագեցնում իրանց ծարաւը։ Երջանկայիշատակ Հայր Ալէքեանցը տիւ և գիշեր աշխատում էր իր աշակերտաց և ուսումնասիրանի առաջադիմութեան վրայ։ Հայր Ալէքեանցը և Հայր Եսայեան առաջինը եղան, որ սերմանեցին Ախալցխայում լուսաւորութեան և ուսումնասիրութեան գաղափարի սերմը՝ ամեն Հայ անհատի սրտում. նոցա աշակերտներից է և մեր Ղ. Աբարատեանը։ — Մեծաւ Հայր Ալէքեանցը, նորա հետ մեր ուսումնարանը ընկաւ մի անբուժելի հիւանդութեան մէջ, որովհետեւ վճռեսիկից էլ չեկան մեզ վարդապետներ»։ Հ. Ալէքեանցի յիշատակն դեռ վառ է քաղաքիս բնակչաց սրտերու մէջ. նորա գերեզմանն է եկեղեցւէն դուրս անմիջապէս աւագ խորանի եաեւը, հանդերձ յատուկ քանդակազարդ տապանաքարով, և ուխտաւորի եղած է, «և որպէս սրբոյ տանէն գՀոգն ի շիրմէն վառն ախտաժետաց, և ասէն լինի բժշկութիւն»։ Եկեղեցւոյ մօտ կան նաեւ մի քանի ուրիշ վարդապետաց և քահանայից գերեզմաններ, արձանագրութիւններ ունեցող տապանաքարերով։

Վերափոխման եկեղեցիս շինուած է համակ սրբատաշ քարէ, ունի նաեւ խաչակիր գմբեթակատուն շինուած 1843ին։ Հ. Ալէքեանցէն վերջ Հայ–կաթոլիկաց ուսումնասիրանը մնաց տիրացուներու ձեռք, և քանի մը տարի ալ փակ. միայն Տ. Սիմոն Շահինեանցի ժամանակ, Մխոբ Էօքսիւզեանց ուսուցչի ձեռքով քիչ մը յառաջադիմեց։ 1875 թուէն հետ քաղաքէն մի քանի վրացիոս Հայ–կաթոլիկներ՝ նոր քաղաքը բնակուելիէն հասատատելով, կը յաջողին վրացիոս քահանայ մը ունենալ Վերափոխման եկեղեցւոյ մէջ, որ և ժամանակ մը հայերէն Աւետարանէ վերջ՝ կը կարդար նոյնը վրացերէն, որով երկար ժամանակ ոչ սակաւ կռիւներու առիթ եղաւ Հայ և վրացիոս կաթոլիկներու մէջ։ Ի վերջոյ Հայք, որ չերմ պաշտպան են ազգային ծիսից և արարողութեանց, յաղթող կը հանդիսանան, և վրաց լեզուն եկեղեցւոյ մէջ գործածութիւնը ամրութեան կ'արգիլուի։

Հին քաղաքի մէջ եղած Հայ–կաթոլիկաց եկեղեցիներէ Ս. Նշան կամ Երեւման Ս. Խաչ (թ. 30), կառուցուած է բարձրը բլրան վրայ, Հայոց միջին դարու եկեղեցեաց ձեւով, ոչ այնչափ սրածայր կամոդիկիւմ, որ բաւական հնութեան նշան է։ 1828ին պատերազմի ժամանակ, Ռուսաց յարձակմունքը կ'ուղղուի եկեղեցւոյ վրայ, ուր ամրակարգրելի կռիւ մը տեղի կ'ունենայ։ Ջանազան ժամանակաց մէջ նորոգուած է եկեղեցիս, սակայն Տիւզուա յոյժ արուեստաց (baroque) կը գտնէ այդ վերանորոգութիւնքը, որովհետեւ որմոց մէջ պէտք եղած տեղերը՝ փոխանակ նոր սրբատաշ քարեր գործածելու, ագուցած են շուրջը գտնուած տապանաքարեր կամ խաչարձաններ, հանդերձ կիսաւեր արձանագրութեամբք։ Պ. Պրոսէ ընդօրինակած և հրատարակած է այդ արձանագրութիւններէն մի քանին, որք կը վերաբերին Ջ (= 1451), ՋԴ (= 1454), ՋԻԴ (= 1475) և ՋՀ (= 1491) թուականներուն։ Նշանաւոր է եկեղեցւոյ գերեզմանատունը, հին ոճով խոյակերպ տապանաքարերով, յորս կայ նաեւ ՊՀԻ (= 1426) թուականաւ արձանագիր։ Սպիտակ կճեայ քար մը նոյն գերեզմանատան մէջ կը ծածկէ Հայ–կաթոլիկ Պետրոս Յովհէփովիչ Պէժանով քահանայի նշխարները, որ 1828 տարւոյն օգոստոս 15ին յարձակման պահուն՝ քաջութեամբ իկաւ։ Իւր վիւցաշնական արժանիքն ճանչցաւ Ախալցխայի ժողովուրդն, և երկու դեղեցիկ արձանագրութեամբք ոուսերէն և վրացերէն, զարդարեց նորա տապանաքարը։ Ս. Խաչի վերջին նորոգութիւնն եղած է 1866ին, Գիւուրեան եղբարց արդեամբք։

Ս. Աստուածածին, որ կառուցուած է 1356 թուէն Ս. Խաչէն քիչ մը աւելի վար, ամենեւին եկեղեցւոյ նմանութիւն չունի, այլ սովորական տուն մ'է նորոգուած 1442ին։ Արեւելեան որմի վրայ կան երկու արձանագրութիւնք, որոց մէկն մէջ յիշուի կառուցանող եկեղեցւոյս Աբրահամ աբեղայ, և երիցորդին

մէջ ունի Շարաւադ նորոգող։ — Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցւոյ մէջ քարի մը վրայ, որ աւանդաւան գրան իբրեւ բարաւոր կը ծառայէ, կայ հայկական Ձխ (= 1298) թուականը առանց այլ յիշատակութեան. ուրիշ չորս խաչաքանդակներով զարդարուած քարի մը վրայ ալ կը կարդացուի 1511 թուականը։ Եկեղեցւոյս անմիջապէս մօտ կը տեսնուի մեծ խաչարձանի մը քարէ խաբիսին, վրաց եկեղեցական առաւերով գեղեցիկ արձանագրութեամբ, բայց առանց թուականի։ Պետրոս Բեզաւրեան, եկեղեցւոյս շինութեան թուականը կը դնէ 1750։ Նոյն անձը կ'ըսէ թէ՝ Հայ–կաթոլիկաց երկրորդ Ս. Խաչ քարաշէն եկեղեցին, կառուցուած է 1691 թուին, արդեամբ Մելիքեան եղբարց։

Կարնեցի բազմաթիւ Հայ գաղթականաց գալստեամբ քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնն կազմեցին Հայք (լուսաւորչ.) ո-րոց առաջնորդ կարապետ արքեպիսկոպոսը մեծ արդիւնք ունի, իւր բազմազիմի ազգասիրական գործերովը։ Կարապետ արքեպիսկոպոսի ժամանակ շինուեցան Ս. Փրկիչ, Ս. Աստուածածին և Ս. Լուսաւորիչ եկեղեցիները։ Ս. Լուսաւորչի եկեղեցին նախնաբար առանձական մկիթի մ'էր, ուր կարապետեան ուսումնարանը շինուելէ առաջ, կը հաւաքուէին Հայ մանկտիք, ազգային լեզուն և կրօնագիտութիւն սորվելու համար։ Ս. Փրկիչ՝ որ քաղաքիս Հայոց Մայր եկեղեցին կը համարուի, շինուեցաւ 1835–37 թուականներուն, և մէջը գեռեզուեցան օսմանեան երկրէն բերուած վանքերու և եկեղեցիներու անօթները, զարդերը, սրբոց մասունքները և զգեստները։ 1875ին կազմուած ցուցակ մը այդ սպասուց և մասունքներու գումարն կը հանէ 486 կտորի, որոց մէջ արծաթէ շինուած էին 111 խաչ և սրբոց մասունքներ, 7 սկիհ, 17 սաղաւարտ, 6 բուրվառ, 3 զոյգ քշոցներ, 9 զոյգ մեծ և փոքր աշտանակներ, 2 կանթեղ, 10 գօտի, 7 մանուածուխ և մեռոնաածուխ, 13 վակաս, 5 գաւազան, 62 արծաթապատ աւետարան, 13 եպիսկոպոսական թագ՝ երկուքը բաւական թանկագին, մէկ կոնք և ջրաման, 25 հոխայ 203 զրամ (4 փութ 5 ֆ.) կարդուած արծաթեղէնք։ Կարապետ արքեպիսկոպոսը, ժամանակին կալուածոց աճանուիրէն օգուտ քաղելով, չնչին գներով գնեց շատ տներ, խանութներ և զանազան գիւղեր, որոց մի մասը, Գէորգ արքեպիսկոպոս Տէր–Պետրոսեանի գնած ուրիշ կալուածոց հետ, նուիրեց Ս. Փրկիչ եկեղեցւոյն։ Ս. Վարդանանց գմբեթաւոր եկեղեցին սկսաւ կառուցուիլ Մարտայ թագի մօտ Ս. Նշան կոչուած տեղւոյն վրայ՝ 1862ին, արդեամբք և ծախիւք ազգասէր և բարեպաշտ իշխան Մահտեսի Վարդան Վարդանեանցի։ Ս. Նշան կ'ինկնայ քաղաքի հարաւակողմը բարձր բարաժայռի վրայ. այսպէս կոչուելուն առտյգ պատճառն չգիտեմ, մի գուցէ Վարդան աշխարհագրի, «... անդ (Ախալցխա) է օձեալ խաչն սուրբ հայրապետին Գերսխի, որ այժմ Մանասագ ասի», յիշած սուրբ խաչն՝ ժամանակաւ այդտեղ պահուած լինի։

Ախալցխան ունի քաղաքական վարժարան և արուեստանոց. Հայոց ուսումնարաններէն գլխաւորն է կարապետեանը, ազգայոց համար, կառուցուած վերոյիշեալ Կ. արքեպիսկոպոսի ժամանակ 1842–44 տարիներու մէջ, որ իւր եկամուտներով, Տփխիսի Գերսխեան ուսումնարանէն վերջ առաջինը կը համարուի, իսկ օրիորդաց ուսումնարանները՝ նշանաւորն է, Եղիսաբէթեանը, զոր կազմց, նոր յաջորդարանի հետ, Պարզեան Սուքիաս եպիսկոպոսը անխոնջ չանիւք, որ Ախալցխացւոց համար միշտ անմոռանալի անձ մը եղած է։ Միւս ուսումնարաններն են վարպետեան, Ռափայէլեան, Մեծատունեան, Ս. Աստիսանեան, Նոր Աշտարայ, և այլն։

Ալեքսանդրապօլի նման քաղաքս ալ տակաւին չունի իր մէջ տպուող ազգային օրագիր կամ ամսաթերթ մը. թէ և 1885ին, սկսան տպուիլ Պ. Մկրտիչ Ղալէմքարեանի տպարանը Մանկավարժանոց ամսագրի Բ տարեշրջանի պրակները, սակայն շարունակութիւն չունեցան։

Ախալցխայի Կարնեցի ազգային գաղթականաց յաջորդք, մեծաւ մասամբ անխախտ պահած են իրենց հին սովորութիւնը։ Անոնց և կանանց զգեստուց տարազներն, ժամանակի յառաջանալուն հետ, սկսած են











31–35. *Տարազք Ախալցխայի և Ախալքալաքի հայ կանանց.*

փոփոխութիւններ կրել. բայց տակաւին մեծամասնութիւն կը կազմեն հին տարազներ գործածողները, մանաւանդ կանանց դասուն մէջ։ Տիկինն Շանթը քաղաքս այցելելով (1890), իւր ուղեգրութեան մէջ կը գրէ հետեւեալը. «Ոչ ինչ այնքան վայելչագեղ է ինձ համար, որքան Ախալցխայի Հայ կանանց տարազը։ Գործածուած պատառներու զեղեցկութիւնը, զգեստուց հիանալի պարզութիւնը, գոհարեղինաց ճաշակաւոր հարթաւութիւնը, այնպիսի յարմար և ներդաշնակ ամբողջութիւն մը կը կազմեն, որ այս լիբաւի նշանաւոր կանանց կերպարանքին աւելի փայլ մը կ'ընծայեն»։

Ռուսները բերդի եկեղեցիէն զատ, նոր քաղաքի մէջ եկեղեցւոյ վերածած են նաեւ տուն մը, ուր ամէն կիրակի ու տօնի օրեր կը յաճախէ զինուորութիւնը իր հոգեւոր պարտքերն կատարելու։ Վրացիք ալ ունին իրենց յատուկ եկեղեցի հին քաղաքի մէջ։

Քաղաքիս Հրեայք որ 2545 հոգի կը համարուին, կը բնակին առանձին թաղի մէջ, դէպ ի հին քաղաքը բարձրացնող ճանապարհի աջակողմը։ Կը համարին որ Երուսաղէմի գրմանէն վերջ, իրենք հաստատուած ըլլան այստեղ։ Ունին երկու քարաշէն և երկհարկաթ կանանչ ներկուած տանիքնեբով ժողովարաններ, որոց միոյն մէջ, խնամքով զլաններու վրայ փաթթուած կը պահուին խիստ հին թաւմուռներ։ Բնակարանք շատ խեղճ են և դուրկ Հայոց տանց յատուկ մաքրութենէն։ Կը խօսին թէ վրացերէն և թէ հայերէն, մազերնին առհասարակ շէկ են և աչքերնին կապոյտ և ոմանց կանաչագոյն։ Մէջերնին կան ինչպէս հարուստ վաճառականներ, նոյնպէս և փողոցները պատող մանրավաճառներ և հնոտիներ գնողներ։

Նոր քաղաքի մէջ գրեթէ ամէն տուն ունի իւր պարտէզն, զարդարուած՝ խնձորի, տանձի, դեղձի, բալի, ճանճուղի, ծիրանի, սալորի, թթի և այլ տեսակ պտղատու ծառերով. կան նաեւ բանջարանոցներ, ուր ամէն տեսակ կանաչեղէններ կը բուսնին։

Ախալցխայի բնակչաց թիւն է 16,116, յորոց 12–13000 են Հայք, իսկ մնացեալը Հրէայ, Վրացի և ոչինչ թուով Ռուս, Լեհ, Յոյն, և այլն։ Արհեստները, ասկերչութիւն, կօշկակարութիւն, դարբնութիւն, և այլն, գլխաւորաբար Հայոց ձեռքն է. իւրաքանչիւր արհեստի գործողաց կրպակներն կառուցուած են միմեանց մօտ. արհեստաւորներն ունին իրենց յատուկ գրօշներն, զորս կը գործածեն հանդիսաւոր օրեր։ Վաճառականութեան և առուտուրի նուազութեան պատճառաւ, շատեր թողած են քաղաքս և ուրիշ քաղաքներ գացած իրենց ապրուստն ճարելու։ Երբ Իւրպարծուի Բորժոմէն Ախալցխա երկաթուղւոյ շարունակելու ծրագիրն, այն ժամանակ մեծապէս պիտի յառաջադիմէ քաղաքս, և իր արդաւանդ երկրի արդիւնաբերութիւնք գլուխ գրկելով ուրիշ կողմեր՝ պիտի ճոխանայ հարստութեամբ, և այնուհետեւ միայն պիտի գտնէին, առուտուրի նուազութեան նկատմամբ ժողովրդեան ըրած մշտական գանգատները։

Քաղաքս Ռուսաց ձեռքն անցնելէ վերջ, ազատ մնաց հին ժամանակներն ունեցած ժանտախտի ահաւոր կոտորածներէն. թէպէտ երբեմն կը պատահին ուրիշ հիւանդութիւններ, սակայն ժանտախտի քով ոչինչ նշանակութիւն չունին։ Առողջապահութեան կանոնաց համեմատ գերեզմանոցներն շինուած են քաղաքէն հեռու. և եթէ փողոցներու, և Մարտայ չայ գետակի, որ նոր քաղաքի մէջէն կ'անցնի, մաքրութեան աւելի հսկողութիւն լինի, այն ժամանակ հիւանդութիւնք բոլորովին կ'անհետանան։

Տեղւոյս կլիմայն բարեխառն է, ձմեռն չափաւոր ցուրտ. ամրան բնակչաց մէկ մասն կ'երթայ յԱպարծուան, հանքային ջրերու բաղանեաց և մէկ մասն ալ յՈջրավէդ, ուր կայ նաեւ պատուական առողջարար սառ երկաթջուր։ 1833 թուին քաղաքիս մօտ կուր գետի քովերը նորանշան անձրեւ մը եկաւ, մանանայի նման, զոր ապրատ, նոր գաղթող ժողովուրդը Եդիպատացւոց նման ժողվեց, հաց շինեց և կերաւ։

Մշակ ժողովրդական օրաթերթը, հրատարակած է իր համարներու մէջ Ախալցխայի վրայ, երբեմն Ա. Ա. և երբեմն Ա. Ա. և այլ առորագրութեամբք, ոչ սակաւ օգտակար տեղեկութիւններ, վաճառականական, արհեստական, ուսումնական և այլ կարեւոր հարցերու նկատմամբ։

— Համանուն գաւառն Տփխիսի նահանգի հօթը բաժանմունքներէն մին է. ունի Կոպլիանի, Ազդոբի և Ուրավելի վիճակներն, 12 հասարակութիւն և 185 գիւղ։ Ամբողջ գաւառի տարածութիւնն կը համարուի 2656 քառ. հաղմ. և բն. 42,675, որոց մեծամասնութիւն կը կազմեն Վրացիք և Մահմետականք։ Գաւառս իր աշխարհագրական վը, որոնց մէջ կան կ'ըսեն, օրը 19էն մինչեւ 24 լիտր կաթ առաջնեք. անոնց բնակիր կարագը կը գրկուի նաեւ Տփխիս և Քութայիս։ Անասնային բաժնի բնակիչք լեռնցիներու նման առողջակազմ են և բաւական հարուստ. կը մատակարարեն շինութեան փայտեղէն նիւթերը և վառելիք (փայտ և ածուխ), իրենց երկրագործութեան ար-

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԽԱԼՑԽԱՅԻ

ԳԱՒԱՌԻ 12 ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԱՆՈՒԱՆՔ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ	ՀԱՅՔ				ՕՏԱՐՔ		Տուն	Ընդամէնը երկ. տես.
	Լուս.		Կաթ.		Ռուս. վր. հ. թ.			
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.		
1 Ադիկեօն (27 գ.)	—	—	22	21	2758	2427	663	5228
2 Վալէ (13 գ.)	310	276	1176	1141	851	729	476	4483
3 Վարխան (19 գ.)	—	—	—	—	2192	1918	599	4110
4 Ուտէ (18 գ.)	—	—	839	702	1444	1177	598	4162
5 Ածղուր (17 գ.)	139	151	12	12	2784	2448	737	5546
6 Խառւմալա (11 գ.)	317	334	—	—	1557	1435	369	3643
7 Քլուխ (21 գ.)	438	424	—	—	2245	2007	608	5114
8 Վալէ Բ. (4 գ.)	186	183	—	—	147	130	69	646
9 Խառւմալա Բ. (4 գ.)	—	—	—	—	442	397	92	839
10 Լէպխա (29 գ.)	—	—	14	23	2564	2227	480	4828
11 Քլուխ Բ. (3 գ.)	48	45	—	—	54	55	29	202
12 Ուրավէլ (29 գ.)	—	—	—	—	2047	1827	389	3834
Գումարն	1438	1413	2063	1899	19085	16777	5109	42675

ւիրքով բաժնուած է զանազան լեռնային, անտառային, դաշտային և ձորային մասեբու։ Լեռնային և սարահարթ մասանց բնակիչները կը պարապին անասնապահութեամբ. նոքա կը մատակարարեն Ախալցխայի խլզը, պանիրը, բուրդը և մորթեղէն կենդանիներ։ Կովերը նշանաւոր են իրենց առատ կաթնա-

դհանց մէկ մասն կը վաճառեն քաղաքը, ինչպէս ցորեն, գարի և այլ ընդեղէն, գորս կը սերմանեն անտառի բաց տեղերը և առաբոտանները։ Կան նաեւ քանի մը գիւղեր, որք ունին իրենց առանձնայատուկ պարապմունքները։ Սազէ, Մեծ և փոքր Պամաճ, Ծուղրութի և մի քանի այլ գիւղերու մէջ առ-

բածուած է մեղուապահութիւնը, մանաւանդ Պամաճի մեղրը, իր լաւ յատկութիւններով ամբողջ գաւառի մեղրերէն գերազանցն է։ Ծուղրութի մէջ կայ քարահանք, որ տեղէն կը բերեն քաղաքի շինութեանց համար սրբատաշ և անսաղ կարծր քարեր։ Ծղսասպիլա և Մօխրէք գիւղերու մէջտեղ կայ ալապասդրի հանք։ Նշանաւոր է Սաղէլի և Պամաճի շողգամը։ Դաշտային մասը խիտ փոքր տաբածութիւն կազմելով, քաղաքացւոց համար ալիւր և ցորեն կը բերեն գլխաւորաբար Շիրակէն։ Պարտէզներու կողմանէ կը գերազանցեն կոպլիանի գիւղերը, որոց մրգերը թէ առատ են և թէ տեսակաց ընտիր յատկութիւններով կը մրցին ուրիշ գիւղերու հետ, մանաւանդ Ուզէլի և Ալիկեօնի շահագրգիռ խնձորը և լաւագիր տանձը։ Սագէլ, Ալ և Գրէչ գիւղերը ամէն տարի կը պատրաստեն մօտ 5000 ցախաւել, զոր կը դրկեն Ախալքալաք և Ալեքսանդրապոլ։ Ջորային մասանց մէջ կը մշակեն մեծագլուխ կապամբ, խաշոր, փխրուն և գիմացկուն (կարտոֆիլ) գետնախնձոր և ճակնդեղի զանազան տեսակներ. ամենէն աւելի ընտիր են Սուխրես կամ Սուֆլիս գիւղի վարունգը, գետնախնձորը, ստեպղինը, ճակնդեղը, և Վալէի դդումը ու կապամբը։ Տափարակ տեղեր 20 տարի առաջ փորձած են (առաջին անգամ Սեբաստացի հայ մը) նաեւ ծխախոտի մշակութիւն, և տարուէ տարի աստիճանաբար տարածուելէ այդ շահաբեր անկատարծութիւնը. գլխաւոր գաշտերն են Ասպինձայի հասարակութեան մէջ. ամենէն աւելի ընտիր ծխախոտ կու տան Ասպինձա, Մեծ և Փոքր Օշօրայ և Տօլօշ գիւղերը։ Լեռնային մասանց մէջ քիչ քանակութեամբ կը հաւաքեն նաեւ լուսածաղիկ, որ գեղեցիկ և խոշոր է։ Գաւառի օդը նպաստաւոր է և թթենիներն առատ, շերամապահութեան համար. արդէն տարիներ առաջ սկսած են այդ շահեկան աշխատութեան և երթալով կը տարածուի։ Ախալցխայի լերանց վրայէն ժողմած է Պ. Տիւպուա 1833 տարւոյ օգոստ. 24ին 58 տեսակ բոյսեր։ — *Մշակ 1882, թ. 187. 1887, թ. 68։ Տիւպուա, Բ. 256–292։ Պրոսէ, Բ. Պր. 139–149։ Le Tour du Monde, XLVII, 406–413. LXIV, 182–3։* Ն. Ադոնց.

Ա. Պր. 12։ Ն. Հայ. 120–5։ Մ. Մարբեն, Ա. 14. 77. Բ. 427։ Զարհեան Պտմ. հտ. Գ. 458։ Պտմ. Դավրիժեցւոյ, 85, 628։ Մասեաց Աղաւնի, 1862, 175–6։

ԱԽԱԼՔԱԼԱՔ կամ ԱԽԱԼՔԻՆԼՔ (Նոր քաղաք)։ Գղ. AKHALKALAKI. Թ. اخل كلك. Պրսկ. آخسقه جديده (Սպիտակ քաղաք). Ռ. Ахалкалаки. Վ. ახალი ქალაქი. — Գլխաւոր բերդաքաղաք համանուն գաւառի, որ կը համապատասխանէ Գուգարաց հին Ջաւախք գաւառի։ Ախալցխայի հարաւային արեւելեան կողմէ 55 հգմտ. հեռու, և Տփխիսոյ արեւմտեան հարաւակողմէ 117 հգմտ. հեռաւորութեամբ։ Թափարաւան և Ղըրխ–պուլաղ (Քառասուն աղբիւր) գետերն որ իրարու հետ միանալով Ախալքալաքէն քիչ հեռու կը կոչուին Ախալքալաքի գետ, կը ձեւացնեն 1690՛ բարձր թեքակղզի մը, որոյ վրայ կառուցուած է Ախալքալաքը և իր բերդը։ Հարաւային հիւսիսային և արեւմտեան կողմերը կան միջակ խորութեամբ ձորեր, իսկ արեւելեան կողմը ընդարձակ դաշտ է, որ երկննալով կը միանայ Շիրակայ լայնածաւալ դաշտի հետ։

Հին քաղաքը որ շինուած է եղեր բերդի հիւսիսային կողմի զառիվայրերու վրայ, այժմ բոլորովին աւերակ է։ Կիսակործան պարսպի մնացորդներէն կը տեսնուի որ հին Ախալքալաքը պարսպապատ է եղեր, և միայն արեւմտեան ձորերու մէջ և արեւելեան կողմը բացուած ճանապարհներով հաղորդակցութիւն է ունեցեր գաւառի հետ։ Արեւելեան պարսպի պրան վրայ, մինչև ցարդ պահ մնացած է վրացերէն Մհսրոպեան հին տառերով համառօտ արձանագրութիւն մը։ Աւերակաց մէջ այժմ նշմարելի են երկու եկեղեցիներ, հացի հորեր, տորերկրեայ ճանապարհներ, զանազան տանց որմեր. հողի տակ ծածկուած կը մնան դեռ ուրիշ շատ բաներ։ 1882ին արքունական մեծ շէնքի մը համար, այս աւերակներէն քարեր հանելու ժամանակ, հանդիպեր են քարուկիր պատի մը. շարունակելով փորել՝ գտած են սրբատաշ քարերով շինուած սալայատակ, քանի մը գերեզմաններ, խաչքարեր, քարէ աշտանակ մը, եկեղեցւոյ պրան քարէ բա-

բաւար մը, հարիւ ընթեռնլի Ջ (= 1451) թուականաւ, և այլն։ Գանուած քարերու շատերը ծածկուած են եղեր հայերէն ԱԳ, ԱԴ և ԱԵ զարերու վերաբերող արձանագրու-թիւններով։

Տասներորդ զարու մէջ երբ Գուգարքի մէկ մասն կ'ինկնայ Հայոց Կիւրիկեան թագաւորաց ձեռքը, Ջաւախք զաւառը կ'անցնի Վրաց իշխանութեան ներքոյ։ Վրաց Բագրատ Գ թագաւորը (980–1014) կը հիմնէ Ախալքալաքը առանց բերդի, և իւր թոռը Բագրատ Դ (1027–1072) 1045 թուին Լիպարիտ Օրբելեանի հետ ունեցած պատերազմի ժամանակ կը կառուցանէ բերդը։ Աւսր թագաւորութեան ժամանակ ՇԱԴ (= 1064) թուին, ըստ պատմիչ Մատթէոսի Ուռհայեցւոյ. «Յարուցեալ սուլտանն (Ալփասլան) ահագին բազմութեամբ իւրով մտաւ յաշխարհն Վրաց, ... և իչեալ բանակեցաւ ի զաւառն որ կոչի Ջաւախես, և պատերազմեալ մեծաւ պատահաց զքաղաքն որ կոչի Ախալ, և ուժգին զօրութեամբ առաւ Ախալքաղաքն, և առհասարակ զամենայն քաղաքն որով կոտորեաց՝ զայր և զկին անողորմ, և զամենայն քահանայան և զկրօնաւորան և զիշխանան սրախողխող արարեալ, և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ զոյ թիւ»։ Վարդան ևս կը յիշէ հետեւեալ կերպով, թէ ինչպէս Հայոց թագաւորութեան Անիէն վերնալէն վերջ, Տուղրիլի հօրեղբօրորդին Ալփասլան, «... եկն զարձեալ հարիւր հազարաւ, և առ զնոր քաղաք, զոր Վիրք Ախալ-քալաք սանն»։

ԺԳ-ու զարու մէջ քաղաքս Ախալցխայի հետ սկսաւ անկախութեան ձգտիլ և ԺԳ-ու զարու առաջին կիսուն սկսաւ ամբաւկիներով կառավարուիլ։ 1484ին մոդոլաց Եաղուպ շահը Ախալքալաքը պաշարելով կ'առնու, բնակիչները գերի կը տանի և քաղաքը կ'այրէ։ 1637ին Ախալքալաքը, իր շրջակաները Թրքաց տիրապետութեան կ'ենթարկուի և կը սկսի բէկերով կառավարուիլ։ 1772ին Կախեթու Հերակլէս և Իմերէթի Սողոմոն թագաւորները կը պաշարեն քաղաքս, և քիչ կը մնայ որ տիրեն, բայց Սողոմոն թագաւորը ժամանակէ բանուելով, պաշարումն կը վերցնեն։ 1807ին Ռուսք, Գուրասովիչ զօրավարի առաջնորդութեամբ, կը պաշարեն քաղաքս, չեն կարողանար տիրել, 2000էն աւելի զինուոր կ'ինկնան բերդի պարսպաց տակ և 3 թնդանօթ կ'անցնին Թրքաց ձեռքը։ 1810ին (տես. 4), զարձեալ Ռուսներ փաւլուչչի գնդապետի հետ, գիշերանց յարձակելով՝ մեծ չարդ կու տան Թրքաց և շատ աւար կ'առնուն։ Իսկ 1811ին (դիտ. 7), անպատմելի նեղութիւններով, Գաթթալեվսքիի առաջնորդութեամբ անցնելով Թրիալէթու լեռներէն, գիշերով կը յարձակին Ախալքալաքի վրայ, մեծ շփոթութիւն կը ձգեն Թրքաց մէջ և բերդին կը տիրեն։ Թուրքերը թողլով 16 թնդանօթ և 2 զրօշակ կը փախչին, բայց հաշտութենէ վերջ, զարձեալ իրենց ձեռքը կը մնայ քաղաքս մինչև 1828 թուականը։ Նոյն տարւոյ յուլիս 23ին, Ռուսք փասքեվիչի առաջնորդութեամբ յարձակելով բերդի վրայ, յետ արիւնահեղ պատերազմի կը տիրեն, ձեռք ձգելով 14 թընդանօթ և 13 զրօշակ։ Ադրիանուպօլսի դաշնագրութեամբ (1829, տես. 29), բոլորովին Ռուսաց ձեռքն անցաւ Ախալքալաքը։

Մեզ ծանօթ ազգային տապանաքարերու անձանագրութիւններէն յայտնի է թէ Հայք բնակած են այստեղ ԺԳ-ու զարէն սկսեալ. անշուշտ անկէց առաջ ալ կային քաղաքիս մէջ Հայեր, բայց զայդ հաւաստող յիշատակարաններ, զէթ առ ժամն կը պակսին։ ԺԳ-ու զարու մէջ Անիէն Ախալքալաքի վրայով Լեհաստան և Մոլտաւիա գաղթող Հայոց աննշան մէկ մասը մնաց քաղաքս, որոնք բնիկ հին Ախալքալաքցի ազգակցաց հետ, գաղթած են ի վերջոյ Գուժայիս, Տփխիս, Ռուսիոյ ուրիշ զանազան քաղաքներ և մինչև Մոսկուա։ Վերջին 1828ին պատերազմի ժամանակ, Ախալքալաքի բնակիչք փախչելով և ցրուելով զանազան կողմեր, քաղաքը բոլորովին ամայացաւ. պատերազմէն վերջ ևս քաղաքացիներու մէկ մասն վերադառնալով, հաստատուեցաւ Թոսփիա գիւղը։

Մինչդեռ 1829ին կարնէն և մասամբ Ալթահանի զաւառէն եկած Հայ գաղթա-

կանները, Ախալքալաքի գաւառի մէջ կը հիմնեն գրեթէ 50 գիւղ, քաղաքը կը մնայ առաւելն աւերակ և ամայի վիճակի մէջ, մինչև 1831ին Ախալցխայէն մի քանի Հայեր գալով, բերդի հարաւային կողմը կը կառուցանեն սրճատուն, փուռ և քանի մը բնակարաններ։ Աչխուհան հետզհետէ ուրիշներ ևս գալով բնակութիւն կը հաստատեն, և կ'սկսի ձևանալ փոքրիկ գիւղ մը։ Երեսուն տարուան ընթացքէ մէջ (1860), Ախալքալաքի բնակչաց թիւն կը բարձրանայ 2180 հոգւոյ, և 1874ին կ'ունենայ 2967 բնակիչ։ Նոյն տարին Ախալքալաքը կը լինի Գ կարգի գաւառական քաղաք, իսկ 1890ին կը դառնայ գաւառական Բ. կարգի քաղաք, և 1896ին կ'ստանայ քաղաքային պարզ ինքնավարութիւն։

1893ին հրատարակուած վիճակագրի համեմատ, քաղաքիս բնակիչը կը կազմեն հետևեալ ազգերը

Հայք (լուս. և կաթ.)	4084 հոգի
Ռուսք . . .	57 »
Հրեայք . . .	53 »
Վրացիք . . .	45 »
Յոյնք . . .	40 »
Այլեւայլք . . .	24 »
Գումարն	4303 հոգի։

Ախալքալաքը (թ. 36) ունի եօթը բաւական լայն և կանոնաւոր փողոցներ, որոնք կը կարուին ուրիշ վեց, աւելի կարճ փողոցներով։ Այս փողոցներէն բաց ի միոյն, միւսները խճուղի չունին, ուստի և աստիճ ցեխն և փոշին պակաս չեն։ Տները ընդհանրապէս քարաշէն են, ցած, մխյարկանի և գրեթէ բոլորն ալ արուարձանս սպիտակացուցած։ Աբևելեան կողմը կառուցուած են մեծ և փոքր երկյարկանի զօրանոցներ։ Քաղաքիս Հայ–կաթոլիկները յոյժ սակաւաթիւ լինելով չունին ոչ եկեղեցի և ոչ մատուռ, իսկ Հայ–լուսաւորչականք, ունին Ս. Խաչի եկեղեցի, զոր 1856ին կառուցած է Պ. Կաբալեա Եպատուեան՝ գլխաւորապէս իր և մատամբ հասարակութեան զրամով։ Եկեղեցիս անշուք է և առանց գմբէթի, հասարակ շէնքերէն կը տարբերի միայն զանգակատունովը։ Ս. Խաչի գաւթի մէջ են Հայոց եկեղեցական ծխական Ս. Մեսրոպեան արգասյոց՝ և Ս. Աստղատեան օրիորդաց երկդասեան դպրոցները։ Ս. Մեսրոպեան դպրոցը հիմնուած է 1836ին կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ և ծախքով. շինութիւնն հին է և անյարմար. աշակերտաց թիւն է 140–160։ Աստղատեան ուսումնարանը բացուած է 1870ին, Ախալցխայի նախկին յաջորդ Գեր. Սուքիաս վարպապետի (այժմ եպիսկոպոս) յորդորմամբ և այլոց օգնութեամբ. տղայոց դպրոցին պատկանող մի գաւառուած բաւական յարմարաւոր շինութիւն է, աշակերտուհեաց թիւն է 150–180։ Այս դպրոցներէն զատ Ախալքալաքը ունի նաև քաղաքական ուսումնարան, բացուած 1889ին։ Նոր կառուցուած վայելուչ շէնք մ'է, որուն վրայ քաղաքը ծախսեր է 15,200 ր. 18 կոպէկ. աշակերտաց թիւն է 130–140։ Ունի նաև գիւղատնտեսական նոր դպրոց։ Քաղաքիս մէջ 1880 թուի մայիս 24ին Հայք բացին, Ս. Աստղատեան դպրոցի կից զրադարան–ընթերցարան մը, որ բաժնուած է երկու մասի, արուականաց և իգականաց։ Այդ զրադարան–ընթերցարանը այժմ ունի մօտ 1500 օրինակ հայերէն և ռուսերէն գրքեր, և տարին կ'ընդունի նաև նոյն լեզուներով 24 աւելի պարբերական թերթեր։ Օրիորդաց դպրոցի ընդարձակ դահլիճի մէջ տարուան մէջ զանազան անգամներ, թատերական ներկայացումներ կը տրուին, և գոյացած արդիւնքը կը յատկացնեն, ա և է բարեգործական նպատակի մը։

Քաղաքիս հիւսիսային ծայրը, կը գտնուի պարապատառ Ռուսաց եկեղեցին, որ կառուցուած է Ալէքսանդրապօլցի Պ. Մանեա նոս Աճանիկեանցի աշխատութեամբ և ըստ բաւականի նիւթական օժանդակութեամբ, որով և արժանացած է առաջին քաղաքական առիթիս առանալու։ Իսկ հարաւային կողմն ալ ընդարձակ պարապատառ տարածութիւն մը, յատկացուցած են Հայոց եկեղեցւոյ համար, զոր սկսած է կառուցանել տեղացի արժանապատիւ Գրիգոր Կիրակոսեանի ժառանգները։ Ախալքալաքը ունի նաև հասարակաց պարտէզ մը 1880 թուին ձևացուած, որ ճաղերով շրջապատուած է, և ունի հո-

վանոց մը. ապրիւր կամ աւազան չունի, մէջը անկուած սակաւաթիւ ծառերը, կը ջրեն ջրհորի ջրով։


Ախալքալաքցիները բարքով ու վարքով և սովորութիւններով շատ չեն տարբերիր Ախալցխացիներէն, ինչպէս նաև զգեստուց տարբերներով համամատան են, նա մանաւանդ կանանց գասը։

Քաղաքիս վրացի բնակիչը կը պարապին երկրագործութեամբ, իսկ Հայերը արհեստագործութեամբ և քարտաշութեամբ։ Այս երկու ազգերն ալ կրօնիս յունադաւան են և ունին եկեղեցի մը։ Հրեայք կը պարապին վաճառականութեամբ։ Հայոց ձեռքն է քաղաքիս գրեթէ բոլոր արհեստները, որոց գլխաւորներն են ոսկերչութիւն, կաշեգործութիւն, հիւսնութիւն, գարբնութիւն, ներկարարութիւն, և այլն։

Քաղաքացւոց գլխաւոր ըղձաւայրերն են երկու կողմի ձորերն։ Արեւելեան կողմը կայ փոքրիկ և կիսատ մատուռ մը, զոր վանք կ'անուանեն, և մօտը նշմարուող աւերակներէն կ'երեւի որ այդ տեղ կան եղեր նաև ուրիշ շինութիւններ։ Նոյն տեղը կայ սառն ջրոյ աւազան մը, որոյ մէջ տենդով բռնուողները կը լուացուին և իրը կը բժշկուին։ Վանքի հանդէպ, գետի աջ կողմը կայ ուրիշ մատուռն մը մնացորդներ, և քանի մը այլ բեր, յորոց մին կը կոչուի Ձգնաւորի այր։ Այս ձորի աւերակները արձանագրութեանց բեկորներ անդամ չունին։ Ուշադրութեան արժանի են այստեղ անձրեւի ջրերով ծառութենէն, երկար ժամանակաց մէջ, ժայռերու մէջ մնացած կարծր քարերու առած զանազան գեղեցիկ ձեւերը։ Ախալքալաքի առևտրականն ձորն ալ նոյնպէս գլխաւոր է. Ղըրխապուլաղ գետակը կ'անցնի նորա միջէն, իւր ձախ կողմէն ընդունելով մի քանի սառն և քաղցրահամ աղբիւրներ։ Գետակի երկու կողմը կան բանջարանոցներ, ուռենիի և բարտիի բազմաթիւ ծառեր, որոց սաւերներու տակ ժողովուրդը կը զբօսնու և կերուխում կ'ընէ։

Քաղաքիս ջուրը կը մատակարարեն ձորերու մէջ բղխող 4 պատուական աղբիւրներ. կան նաև մի քանի ջրհորներ, որոց ջուրը չեր խմեր։

— Համանուն գաւառն Տփխիսու նահանգին կը պատկանի, և ունի 10 հազարակութիւն, 110 գիւղ և 59496 բնակիչ, որոյ վրայ աւելցնելով նաև քաղաքի բնակչաց թիւն, գումարն կը լինի 63799 բն. որոց 50467ը ազգաւ Հայ են։



36. Ախալքալաք։

Սահմանքն են Հա.էն Բորժոմի հազարակութիւնը Թաո-Քորելի, Ջառել, և այլ լեռներով։ Ա.Մ.էն Ախալցխայի գաւառը՝ Կուր գետով։ Հր.էն Ազուահանի գաւառը խոզապիճ լճով, կէօք-տաղի լեռնաշղթայով, Իշլ-Թեփէկէր, Օրթուլ-տաղ լեռներով և Ալեքսանդրապօլի գաւառի Մատաբէփէի սարերով։ Ար.էն Գարահաչ, Մոկրիա, Տաշաղրան, լերանց շղթաներով, Մարաեվի ձորով, Իլան-տաղ, Ղոյուն-տաղ, փիրքեր, Տէլի-տաղ, և այլ լեռնաշղթայիւք։ Գաւառիս տարածութիւնն է՝ 2392 քառակուսի վերստէն աւելի։ Ունի արեւմուտքէն գէպի արեւելք աս-

տիճանաբար բարձրացող, 650 քառ. վերստ մակերեւոյթով դաշտավայր մը, որ միջին հաշուով ծովու երեսէն բարձր է 6000 ոտնաչափ. այս դաշտավայրը կը բաժնուի երկու մասանց՝ որք և կը կոչուին Գարելչայի և Ջրեղոզ դաշտավայրք։ Գլխաւոր լճակներն են Մեծ և փոքր Ապռղ, Կոտորեպի, Յաւսար, Ղարաղոզեզի, և այլն։ Ասոնք լճակներէն ամենք մինչև գարուս կէսը ծածկուած էին անտառ-

կը կոչուին նոյն անուամբ։ Կլիման բաւական առողջարար է, և այդ՝ շնորհիւ իւր բարձր դիրքից և առատ ջրերուն։ Ձմեռը թէպէտ ցուրտը չափաւոր է, բայց չափազանց ձիւն կու գայ։ Ցերեկուան բարեխառնութիւնն գրեթէ միշտ 0° կը լինի և քիչ անգամ 3°ի կ'իջնայ. իսկ գիշերը մինչև 10° կը ցածնայ, և հազիւ երբեք 13°էն ցած։ Ամառին կան գեռ աւելի ցուրտ կողմեր, ուր օդոյ բարե-

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

ԳԱԽԱՌԻ 10 ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԱՆՈՒԱՆՔ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ	ՀԱՅՔ				ՕՏԱՐՔ		Տունք	Ընդհանուր գրկ. պա.
	Լուս.		Կաթ.		Ռուս. ցմ. ղ. ն. Դուխ. Մհմ.			
	Ա.Ր.	Ի.Գ.	Ա.Ր.	Ի.Գ.	Ա.Ր.	Ի.Գ.		
1 Ալագովա (13 գ.)	2871	2562	759	715	139	114	818	7160
2 Բարալէթ (23 գ.)	4218	3788	—	—	815	705	1014	9526
3 Վարեւան (9 գ.)	1081	1007	1860	1683	586	509	768	6726
4 Տիլիջա (9 գ.)	1565	1445	—	—	865	823	519	4628
5 Խրթըզ (11 գ.)	13	12	—	—	1510	7282	417	2817
6 Վաչիան (11 գ.)	3879	3405	—	—	293	256	851	7833
7 Գարել (8 գ.)	—	—	—	—	3322	3326	829	6646
8 Կաթծախ (10 գ.)	1092	950	—	—	1054	877	441	3973
9 Ամթխա (8 գ.)	2813	2609	—	—	321	260	656	6003
10 Էշտիա (8 գ.)	922	849	1165	1044	76	57	496	4114
Գումարն	18454	16626	3784	3442	8981	8209	6809	59496

նաւորով, բայց 1853 տարուց պատերազմի և Գաւխարուսներու գաղթականութեան ժամանակ անխնայ կտրուելով, բոլորովին ամայացան, և այժմ միայն մնացուածներ կան։ Լճակներն ձիշնոք Թափարաչան, Տուռնան–կիօլ, Խոզապին, Թապիսցխուր, Խոնչալի։

Ասոր լճակներէն կը բղխեն գետակներ և վտակները, որոց շատերը

խառնութիւնն կ'իջնէ մինչև 20–30°։ Ամբողջ գարնան և ամրան մէկ մասը, շարունակ անպակաս են այս գետակի մէջ տեղատարափ անձրևներն, որով և բուսականութիւնն խիստ կը կրէ, և որովհետև ամբան առատօրներն ալ սաստիկ ցուրտ հովեր կը փչեն, դաշտերու բոյսերը կարճ կը մնան։ Ասոր դաշտավայրի բուսականութեան մեծ

ինչպես տուրդներէն մէկն ալ է կարկուտն, որ տակաւ կը պատահի և գրեթէ միջին հաշուով, տարին 200,000 րուբլիի կը հասնի այդ ինսան։

բի, կաուատա, գեռնախնձոր (կատօֆիլ)։ Բանջարանոցներու մէջ կը բուսնին ուեղուկ, բազուկ, սեհան, տարդուն, ծնեփրան, կոռմ, կազամբ, հաւեմ, մաղադանոս, սամիթ,

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱԻԱՌԻ ԳԼԽԱՒՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻՔ

ԱՆՈՒԱՆՔ ՈՒԽՏԱՏԵՂԱՑ	ՈՒՐ ԳՏՆՈՒԻԼՆ ԵՒ Ի՞ՆՉ ԼԻՆԵԼՔ	ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆՑ ՕՐՔ ԵՒ ԱՐԴԵԱՆՑ ՈՒՄ ՊԱՏԿԱՆԻԼՔ
1 Ս. ԳՐԻԳՈՐ ԱԻԵՏՈՒԱՆ.	Կուռնաչէթի գիւղի եկեղեցւոյ մէջ, ձեռագիր հին աւետարան մ'է։	Առաւաւծածնին. արդիւնքը կը պահպանի Ախալքալաքի Հայոց դպրոցին։
2 Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ. . .	Գանձայի մօտ, լերան մը գագաթը։	Համբարձման։
3 Ս. ԳԷՈՐԳ	Սուլդայի մէջ, Սբբ Աթէ վրայ, հասարակ խաչարձան մ'է։	Աչխարհամատրան կիւրակին։
4 Ս. ԳԷՈՐԳ կամ ՕՂԼԱՆ ՎԵՐԱՆ	Կարծախի մէջ, կէօքտաղի լանջին, ժայռերու մէջ. ուխտի կ'երթան ամուլ կանայք։	Առաւաւծածնի և վարդավառի երկուշաբթի օրերը։
5 ՃԳՆԱՒՈՐԻ ՎԱՆՔԸ. .	Ախալքալաքի ձորի մէջ, գեղի մօտ, փոքրիկ մատուռ է։	Մայիս 7ին։
6 ՏԱՒԻՇԱՆ ԹԼՓԻՒ ՍՈՒՐԲԸ.	Ախալքալաքի Տաւշան–թէփէ բլրի գագաթան վրայ։	Ս. Գէորգայ ասնին։
7 ԼՈՒՍԱՒՈՐԻՉ . . .	Վաչկանի մօտ՝ Լուսաւորիչ կոչուած լերան լանջին։	Կիւրակի օրեր։ Գարնան կիւրակի օրեր։
8 Ս. ԹԼՈՒՈՐՈՍ . . .	Թաքչայի ձորակի մէջ, աւերակ մատուռ։	
9 Ս. ԽԱՉԱՏՈՒՐ . . .	Ապուլ լերան լանջին։	Գարնան կիւրակի օրեր։
10 Ս. ՅԱԿՈՎԲ	Գաղէչի մէջ, խաչարձան։	Կիւրակի օրեր։
11 Ս. ԳԷՈՐԳ	Գոմ գիւղի մէջ, խոչէ աթէ վրայ՝ խաչարձան։	Կիւրակի օրեր։
12 Ս. ՄԻՆԱՍ	Ախադովա գիւղը, բլրակի վրայ խաչարձան։	Կիւրակի օրեր։
13 Ս. ՍԱՐԳԻՍ. . . .	Ախադովա գիւղի բերդի պարսպի մէջ։	Չատկին։
14 ԱԳՒԲԱՏ ՍՈՒՐԲ. . .	Փոքր Ախադեալի մէջ։	Կիւրակի օրեր։
15 ՕԽՏՆ ԱԽՊԱՐ . . .	Բզաւէա գիւղի քահանայի տան մէջ հօմը աւետարան։	Կիւրակի օրեր, արդիւնքը քահանային է։
16 ՓՈՔՐԻԿ ԱԻԵՏՈՒԱՆ. .	Դիֆիլ գիւղը, քահանայի տանը մէջ, վեհնեակի ապուած, հին փոքրագիր աւետարան մը։	Կիւրակի օրեր, չափը քահանային է։
17 Ս. ԱԻԵՏՈՒԱՆ . . .	Ձանձղա գիւղը, գիւղացիի մը տան մէջ։	Կիւրակի օրեր, վաստակը տանտիրոջն է։
18 ԹԱԶԱՐԱՆՆԵՐ . . .	Բզաւէաի մէջ, մին գիւղի արեւելեան կողմը, միսը Ապուլի հանապարհի վրայ։	Կիւրակի օրեր, և Ապուլ երթալու ժամանակ։
19 Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ. ՄԻՒՆՏՈՒ ԵՕԱՆԷ	Բարաւէթի արեւելեան հիւսիսային կողմը 2 վերստ հեռաւորութեամբ. քառանկիւնի քար մ'է, գրուած՝ երկու քարէ պատուանդաններու վրայ, ծայրը կայ քարէ խաչ։	Համբարձման. թէև վրացւոց ձեռքն է ուխտատեղին, սակայն Հայք ևս խնամն բաղմութեամբ ուխտի կուգան։ Աղբիւրն Բարաւէթու վրացի եկեղեցւոյն է։
20 ՍԻՐԿ ԱԻԵՐԱԿԻ ՄԱՏՈՒՌ.	Սիրկ աւերակ գիւղի մէջ, գեղի ափը, փոքրիկ մատուռ մ'է. գրան մօտ գրուած է խաչքար մը, որոյ վրայ քանդակուած են երկու մարդ, ձեռքերնին մէկ մէկ խաչ բռնած։	Կիւրակի օրեր։
21 Ս. ՍՏԵՓԱՆՈՍ . . .	Բարաւէթի գիւղի մէջ։	Կիւրակի օրեր։

Ախալքալաքի գաւառն զուրկ է անտառներէ, սակայն ունի հարուստ արօտատեղիներ։ Գրաներու մէջ կը ցանեն ցորեան, գա-

սոխ, սխտոր, վարունգ, և այլն։ Բայց այս բոյսերու մէջ ամենէն նշանաւորն է կեծնտուու և վաչկանու շաղգամը, որ մեծ քա-

նակութեամբ կը գրկեն Ալեքսանդրապոլ վաճառելու։ Գաշատց մէջ կը գտնուին հետեւեալ ծաղիկներէն. անթառամ, ապրի ծաղիկ, աւելի ծաղիկ, դաւի ծաղիկ, զեղին ծաղիկ կամ ծուծք, լորի աչք, լուի ծաղիկ, խաշխաշ, խնկածաղիկ, խորոտ մորոտ, կակաչ, կովծուծ, կուժկտորուկ, հինա, ձնծաղիկ, մանուշակ, մեխակ, նաւրուզ, նուզլու, շանբերան, սպիտակուկը, տուղտ, քրքում, օշոշ, և այլն։

Կանանչներէն և խոտերէն նշանաւոր են. առուցտ, ատոլ, աւել, բաթաթուկ, բոզկուկ, գառիխոտ, գիլու փսխիկ, գնձիձուկ, գոմէշ կոտրուկ, գոմշի անկամ, զազձ, թել բանջար, խելար խրխնուկ, կաթնխոտ, կծմրնձուկ, կոճղէզ, կոպուխ, կովնակուկ, սիպեխ, և այլն։ Խրթզու ձորի և մարգասատնի մէջ կ'աճին թթենի, ընկուզենի, կեռասենի, խնձորենի, տանձենի։ Ամբակ կայ նաև ծխախոտի մշակութիւն։

Մշակի 1882 տարւոյ 220 թուի Ախալքալաքէն գրուած նամակի մը մէջ հրատարակուած է հետեւեալը Ախալքալաքի գիւղերու և բնակչաց վրայ. «Երբ անցնում ես գիւղից գիւղ, լսում ես Հայոց բարբառը ամենի բերանից, ժողովրդական երգերը, որ կալսելիս է երգում գիւղացին, իր որդոց և ընտանեաց հետ։ Ամբակ ամեն ամիս ժողովուրդը առեւծաղծում է երգեր, հանելուկներ, հեքեաթներ, և այլն։ Յաւելլ սրան պէտք է ասել, որ մեր բանասէրները չեն հետաքրքրւում այս գաւառով, որտեղ գեռեզված է Հայոց այն տարրը, որ ընդունակ է տոկուն աշխատութեան, և որի վրա անփոփոխ մնացել են Հայի ամեն առանձնայատկութիւնները, և ինքնուրոյնութիւնները»։ Մշակի նամակագրի յայտնած փափաքն զուգակի արդեամբ կատարեց Պ. Ե. Լալայեան, գաւառիս վրայ ընդարձակ տեղեկութիւններ հրատարակելով, Ջուռախք վերնագրով գրքի մէջ, որ տպուած է ի Տփխիս, 1897ին։ Ամբակ գրուածքի մէջ կը խօսուի երկրի, բնակչաց, անտեսական գրութեան, ժողովրդի լուսաւորութեան, Հայ գիւղացւոց բնակարաններու, զգեստուց, զարդուց, ընտանեկան բարուց, և այլ կարեւոր և շահեկան նիւթոց վրայ։ Ախալքալաքի գաւառը ունի բազմաթիւ ուխտատեղիներ, գրեթէ ամէն մի գեղեցիկ լեռան գագաթը, ամէն մի ջրառատ և սիգաւէտ դաշտ, ուխտատեղի է. զարունը, ամառը և աշունը, գանազան որոշեալ օրեր ուխտի կ'երթայ բարեպաշտ ժողովուրդը։

Ամբակ ուխտատեղեաց գէմ գլխաւորները կարեւոր համարեցանք յիշել առանձին տախտակի մէջ։ — Մշակ, 1882, թ. 188, 220։ Փորձ, Գ. էջ. 109—118։ Կռռնկի, 1862. 220—224։ Որոնցեցի, 175։ Ամուռել, 112։ Վարդան, 101։ Ղ. Հայ. 127։

ԱԽԱՅԵԱՆՑ ԱԽԱՅԵՆՑ, կամ ԱԽԱՅԻՒՆՑ. — Ըստ հին ցուցակի, հարկատու գիւղ Սիւնեաց եկեղեցւոյ, Գեղարքունեաց գաւառի մէջ։ Յովհաննէս կաթողիկոս (Գ. Կ.), պատմելով Աշոտ Բ թագաւորի առաջին յարձակումն Գարդմանաց Սահակ իշխանի վրայ կ'ըսէ. « ... երկաքանչիւրք նորա զօրաժողով լինէին ի մարտ ընդ միմեանս պատրաստեալ, և այնուհետև հասեալք ի մի վայր ի գետն Ախայեանս, ճակատս առնուն մարտակաց ընդդէմ միմեանց պատրաստեալին »։

ԱԽԱՆԻ Վ. Տես ԹԱՆԱՀԱՏԻ Վ.։

ԱԽԱՇԻՆ. — Բրդարնակ գիւղ Ալաշկերտու, 12 տուն բնակչօք։ Հայանուն գիւղիս մէջ, անշուշտ ժամանակաւ կը բնակէին Հայք։

ԱԽԱՎԱՆԱՑ, ԱԽԱՎԱՆՑ կամ ԱԽԱՎԱՆՔ. — Վանայ ծովակի հարաւային եզերաց վրայ, Աղթամարայ Ջրճանեն կամ Գրսի առուեն է, ուր կը գտնուի կաթողիկոսի գրսի վեհարանը։ « Ո՞րքան նազելի կը ճեմէ ու կը բազմի Ախավանցն այս եզերաց վրայ։ Ջազացքներ կը բանին անզգաստ, ջրեր կը կակաչեն որոտալից, ծառերը բարձրացած են յուռթի տերեւալից, պատուղներ ի կախ և ի սփիւռս ի զրախտին, կլօրն ու ձմերուկ հասունացած են....». Հաւով Հոտով, 45։ 1899 տարւոյ Բէրլակն լրագրի 197—200 էջերու մէջ հրատարակուած սիրային աւանդավէպ մը կը յայտնէ ինչպէս Աղթամարայ նոյնպէս և Ախավանս անուանց ծագումն, սակայն գիւղիս անուան ճիշդ առւգաբանութիւնն քննութեան կը կարօտի։

ԱԽԹԱԼԱ. Տես ԱԽՏԱԼԱ։

ԱԽԵՆԻՔ. — Հին գիւղ Սիւնեաց Սող գաւառի։

ԱԽԲՒ ՏԱՂԸ. Տես ԱՄԱՆՈՍ։

ԱԽԹԱ կամ ԱԹԽԱ. Տես ՄԱԿԱԲԱՑԵՑԻՈՑ Վ։

ԱԽԹԱՄԱՐ. Տես ԱՂԹԱՄԱՐ։

ԱԽԻՋԱ. — Գիւղ Թրքաց, Աբատանուէի վիճակին մէջ, 28 տուն բնակիչօք։

ԱԽԻԼՈՒ. — Փոքրիկ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, որոյ մօտ կայ հին կարաւանատուն։

ԱԽԻՍ. Տես ԱՂՍ։

ԱԽԼԱԹ. Տես ԽԼԱԹ։

ԱԽԼԱԹԵԱՆ կամ ԱՂԱԹԵԱՆ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի, ընկած է գաշտավայրի մը մէջ, որոյ արեւմտեան կողմէն կը հոսի Աչրի գետը, և արեւելեան հիւսիսէն Ղարա–սու վտակը, որ գիւղէս վար կը խառնուի տուաջնոյն հետ։ Ախլաթեանի արեւելեան կողմը բարձրացած են Եալլիձոր, շղթայի Պատպատի և Գափրլու լեռները, իսկ արեւմտեան կողմը Լատա լեռը։ Բնակիչք 1088 հոգի, բաժնուած 111 տան։ Եկեղեցին Ս. Սարգիս՝ ագքառին, փողոցները ծուռ ու մուռ, տները հողաշէն։ Գերեզմանատան մէջ կան երկու փոքրիկ և խեղճ մատուռ։ 1896 տարւոյ երկրաշարժէն բաւական վնասուեցաւ գիւղս, և իր մէջ բղխող հանքային ջուրն, երկրի ճեղքուելովը ցրուեր է և այժմ անխնամ մնացած։ — Սիսական, 77։

ԱԽԼՅԽԱ. Տես ԱԽԱԼՅԽԱ։

ԱԽԽԱՉ. — Փոքրիկ գիւղ Սիւնեաց Ճահուկ գաւառի մէջ, տուի մը ընդքը, հին խոռատատունիքի արեւելեան հարաւային կողմը, փարախ մը հեռուրեմէն։ Բնակիչք են 30 տուն, կէսը Հայ և կէսը Թաթար. մօտը կայ հին եկեղեցի մը։ Ստեփանոս պատմչի յիշած Աղրեւրախաչն ըլլայ թերեւս այժմեան Ախխաչը։

ԱԽՃԱ կամ ԱԳՃԱԳԱԼԷ. — Գիւղ Աբարատայ Աբագածոտն գաւառի, վազարշապատու գաշտի մէջ, ունի Ս. Գէորգ կամ Ս. Փրկիչ եկեղեցի մը։ Գիւղիս մէջ 1647 տարւոյ նոյեմբեր 10ին գիշերօթեայ գաղղիացի ուղեւորն Պուլէյ–Լըկուզ, որ և հրատարակած է փոքրիկ բերդի պատկերն (Թ. 37)։

ԱԽՃԻԲԵՐ կամ ԱՂՃԻԿԻՐ. — Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, 50 տնով այլազգաբնակ գիւղ մ՚է։

ԱԽՆԷՆ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի։

ԱԽՆՋԻ. — Օժանդակ վտակ, Աբցախի Տաւուշ գետակի։

ԱԽՇԱՐ կամ ԱՇԽԱՐՕՎԱ. Տես ԱԳՇԱՐ։


ԱԽՈՌ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի, 36 տուն բնակիչօք. ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԱԽՈՒԱՏՈՒՆ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի։

ԱԽՈՒՃԻԿ կամ ԱԽՈՒՃՈՑ. — Գիւղ Աբարատայ, վերին Բասենի մէջ։

ԱԽՈՒՆԵՐ. — Գիւղ Արտոյ Մաահէնի, որ թէ և այժմ Քրտաբնակ է, բայց ունի աւերակ եկեղեցի։

ԱԽՈՒՐԱ կամ ԱԽՈՒՐԻ. — Վտակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ. հարաւային օժանդակ Արփա գետոյն։ Տես ԱԿՈՒՌԻ։




37. Ագճագալէ, ըստ Ղլիուզի։

ԱԽՈՒՐԵԱՆ, ԱՀՈՒՐԱՑ, կամ ԱԽՈՐԻՆ. Գղ. AKHOURIAN. Թ. آخورى (Ախուրի–չայ). — Հին գետ Աբարատայ, հզօրագոյն օժանդակ Երասխայ։ Կը սկզբնաւորի Շիրակ գաւառի հիւսիսային ծայրէն, Գուգարաց սահմանակից Արփա լճէն, և ի Թրքաց նոյն անուամբ կը կոչուի Արփա–չայ (Գարեգէտ)։ Նախ կը վազէ արեւելք արեւմտեան, հիւսիսային կողմէն ընդունելով Գուգարաց և Տայոց լերանց կողերէն հոսող բոլոր վտակները. Էօրթիւղիւ և Շիշքիփէ լերանց մէջտեղ խառնուելով Էօրթիւղիւ գետակի հետ, Շիշքիփէի Չերմուկի մօտէն կը շեղի դէպ ի հարաւ, և տեղ տեղ քիչ մը պտոյտներ ընելով, գրեթէ նոյն ուղ-

զուխամբ առաջ կ'երթայ մինչև Երասխ, Շիրակ գաւառը բաժնելով երկու զլխաւոր մասանց՝ արեւելեան և արեւմտեան։ Ոչ միայն այժմեան Ախթա–չայը, այլ և կարուց գե–

նոյնը կը հաստատէ ըսելով. «Վանանդ և Շիրակ ի հիւսիսոյ (Երասխայ), յորոց ե–կեալ գետն Ախուրեան հանդերձ Մեծագե–տովն՝...»։




Ախուրեան գետ և Անւոյեան գիւղ։ 83

տոյ (Ղարս–չայ) գէթ մեծամասնութիւնը, այն է՝ կարս քաղաքէն վերջը, մինչև Ախթա–չայի խառնուրդն, հաւանականապէս ի հնումն կը կոչուէին Ախուրեան (Թ. 38)։ Խորհնա–ցւոյ աշխարհագրութեան ճոխ օրինակ մը

...Վանանդայ կարուց քաղաքի մէջէն անց–նող Ախուրեանը կը խառնուի Շիրակայ Ա–խուրենի հետ արեւմտեան կողմէն, Ասաե–զանիէն քիչ մը վար, ձեւացնելով թերա–կղզեակ մը։ Գետայր արեւմտեան մաս օ–

ժանդակներն են. Շիրակաւանուռ, Շօրեկիլի կամ Գարահասան գետն, և Ցեկորոյ գետակը. իսկ արեւելեան կողմէն չունի նշանաւոր ժանդակներ, այլ Գզլիւօչ լեռնէն իջած վտակներն, Իլի տէրէ, Կարկաչան, և ուրիշներ։

Նշանաւոր էր գետս ի հնումն իւր եղեբաց վրայ կառուցուած քաղաքներով և վանքերով, որոց բազմաց այժմ հազիւ տեսուր հետքերն կը նշմարուին։ Իւր արեւելեան կամ ձախ կողմը կ'ինկնայ Մարմաշէն և Ալեքսանդրապոլ, իսկ արեւմտեան կամ աջ շերի արարեալ զայս՝ մերձ ի գուռն քաղաքին Անւոյ»։ Երանգ Բ «... շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան,...»։ Աշխարհունեաց գաւառի մէջ, աջ կողմը թողլով հին Երասանդակերտի աւերակները, կը թափի յԵրասխ։ Զորերու մէջ (թ. 40) ահաւոր և բերդի մը կ'առնու Ախուրեան, փրփրադէզ ալեօք չրվէժանման խոխոջելով արագավազ կ'ընթանայ, իւր վրայ զարձնելով ուղեւորի ուշքն, ակամայ կը զարգնէ անցելոյն փառաւոր յիշատակօք, և ներկայի կեսակօր-



36. Կամուրջ Անւոյ Ախուրեանի վրայ։

կողմ Հասանոսի վանք, Անի, Մրեն, Բագարան, և այլն։

Բագրատունեաց մայրաքաղաքին Անւոյ շէն եղած ժամանակ, գետոյս վրայ ձգուած էին մի քանի կամուրջներ, յորոց երկուքի տեղերը ցարդ կը տեսնուին և միոյն երկու կողմի զուխներն ևս (թ. 39), և կոթծանուած կամարի մնացորդն, միակամար եղած կը թուի։ Մատթէոս Ուռհայեցի (ՀԴ), սուրբ միւռոնին համար կ'ըսէ, թէ Պետրոս կաթողիկոսը «... պահեաց ի յԱհուրան գետն երկաթի ամանօք իբրև լիտր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հասանոյ. (որ) կայ պահեալ մինչև ցայսօր ժամանակի. ի պիծան շինուածոց ողբալի մնացորդօք, ի սուզ և ի թախիծ կը համակէ զսիրտն ազգասէր։ — Շիրակ, 2։ Այրարատ, 4–5։ Խոր. պտմ. Բ. ԼԹ, խ. խԶ։

ԱԽԶԱՆ. — Գիւղ Մշոյ գաշտի մէջ։

ԱԽՄԱԽ ԹԱՒՒՉ. — Ամայի գիւղ Սիւնեաց Արեգունիք վիճակի մէջ։

ԱԽՎԱՅԻՍ. — Գիւղ Հայոց, Այրարատայ ձակատը գաւառի, Բլուր և Իկոիր մեծ գիւղերու մէջտեղ. բն. 942, բարձուած 126 մետր։

ԱԽՏԱ. — Այս անուամբ, իրարմէ գրեթէ 7 վերստ հեռու, կրկին գիւղեր կան Այրարատայ վարչութեանը (Նոր Պայազիտ)

գաւառի մէջ։ Վերին Ախտա, ունի 150 տուն Հայ բնակիչ, և հին ու անշուք եկեղեցի մը Ս. Աստուածածին։ Հարաւային կողմը կը վազէ պատուական յորդառատ աղբիւր մը, որոյ վրայ գիւղացիք շինած են մաղաւ, և կը պատուեն իբրև սխրատեղի Ս. Յակոբայ աղբիւր անունով։ Ստորին Ախտա, ձեւացած է Ներքին թաղէ, որոյ բնակիչք են 55 տուն Մալական, և Վերին թաղէ, որ ունի 206 տուն Հայոց։ Այս գիւղը մերձակայ ուրիշ գիւղերու բաղդատմամբ, մեծ ճանապարհի վրայ գտնուելուն համար, ամենէն նշանաւորն է թէ՛ շէնքե-

քարերու վրայ քանդակուած զանազան ձեւերով խաչեր։ Եկեղեցւոյն հարաւային որմոյն կից է, բարձր մահարձան մը, ծայրը Տիրամօր պատկերաւ և Յիսուս դիրկը։ Մահարձանի արձանագրութիւնք եղծուած են, մերձարեւակ Պարսիկներէն, կը համարին որ այդտեղ թաղուած ըլլայ սրբազան անձ մը, որուն վրայ գիշեր ժամանակ լոյս տեսնելով, կը պատուեն եղեր զոհերով և պատարագօք։ Մօտերը կան նաև ուրիշ խաչքարեր, կանգնուած Պոշի իշխանութեան ժամանակ, հանդերձ համառօտ արձանագրութեամբք։ Ստորին Ախտա, որ Վերին Ախ-



40· Ձոր Ախուրեան գետոյ։

բովը և թէ բարեկեցութեամբը։ Եկեղեցին կը կոչուի Ս. Խաչ, կառուցուած է 1864ին, որմունքն և կամարակապ առիթքն քարուկիր, իսկ սեղանն սրբատաշ քարով։ — Գեղարքունի, 340—1։ Փորձ, Բ. գ. 199։

— Սիւնեաց Վայոց ձոր գաւառն ևս ունի այս անուամբ երկու գիւղ, որք կը թուին հին ցուցակի մէջ մէկ անուամբ յիշուած Ախտաբոյնքը։ Վերին Ախտա շրջապատուած է լեռներով և ձորերով. այժմ այլազգարնակ է, բայց հայկական յիշատակարաններէ զուրկ չէ։ Ձորերէն միոյն մէջ, բարձր քարաժայռի վրայ կը տեսնուի աւերակ եկեղեցի մը, և

տակէ 3 փարսախ հեռու է, ունի փոքրիկ քարաշէն հին մատուռ մը, ըրան վրայ կայ խաչվէմ և արձանագրութիւն։ Մատրան արեւմտակողմը կը բարձրանայ չքնաղակերտ մահարձան մը, քան և հինգ կանգուն բարձրութեամբ և տասն կանգուն լայն. գագաթը կայ խաչվէմ։ Երկու շղթայակապ ահեղատեսիլ առիւծներու քանդակներ ևս կան նոյն մահարձանի վրայ, և ՉԻԲ (=1263) թուականաւ արձանագրութիւն։ Մատրան մօտ կայ սագաշէն եկեղեցի կամ ժամատուն մը, 16 կանգուն երկայնութեամբ և 10 կանգուն լայնութեամբ, կառուցուած կո-

փածոյ հասարակ քարերէ, չորս վայելչագիր սեանց վրայ։ — Ջալալ. Բ. 204—5։ Միսաակաև, 175։

— կամ ԱԳՃԷ. — Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Սիւնեկ լերան ա.բեւմտեան հիւսիսակողմը՝ մինչև Ջաւչէ երկրացած շղթայի վրայ՝ ահեղատեսիլ կիրճ մ'է. ասկից դէպ ի հիւսիսային արեւելք, Ռուսաց սահմանին մէջ կայ հովտավայր մը տասնի չափ եղիսխներու դիւղերով։ Նոյն լերանց շղթայի հարաւային արեւմտակողմը քիչ մը խոնարհ, կ'ինկնայ Ախտա հովտավայրը, յորում համանուն կամ Ախտի ջրբոյն ալ և ձախ կողմերն կան հինգ իրաբու մօտ քրդական դիւղեր, որք ծանօթ են Ախտի գիւղեր անուամբ. ընդամէնը 50 տուն բնակիչք ունին, ամէնքն ալ ազքատ վիճակի մէջ։ Վերոյիշեալ կիրճն Ա.յրարատեան դաշտէն Բագրեւանդ մտնելու դուռ մ'է, այդտեղէն կը մտցնէին Կողբայ ապր ի Բագրեւանդ, և Թերեւս ասոր համար կոչուած է Ախտա կամ Այ–տապ։ Նոյնպէս Ախտայի ձորն կարելի է համարել Ասողկայ պատմութեան մէջ յիշուած Աղտից ձորը. «Որք (զօրք կիւրապաղատաին Գաւթի) յատաջ երթեալ ի լեառն Սոչկաւ, ի ձորն Աղտից՝ պահէին զանալս պարսիկ զօրուն, կարծելով նախ ի Բագրեւանդ մտանել»։ Որչափ որ այժմեան Ախտայի ձորը Սուկաւէտէն 12 ժամ հեռու՝ դէպ ի արեւելք կ'ինկնայ, սակայն նոյն լերանց շղթայի շարունակութեան վրայ գըտնուելուն, պատմիչն ի լեառն Սոչկաւ զրած է, և կամ հին ժամանակ Սուկաւ կամ Ջըբաքաշի կը կոչուէին Սուկաւէտէն յարեւելս ձգուած ամբողջ շղթային։ — Ասողիկ, Գ. ԽԱ։ Բագրեւանդ, 271—2։

ԱԽՏԱԼԻ կամ ԱԽԴԱԼԱ. — Գիւղ Գուգարաց Ջորափոր (Պօռչալու) գաւառի, ձորի մէջ Լալվարու առուրաը, ձօճկանէն երկու ժամ հեռու՝ արեւմտեան հարաւային կողմը։ Կ'բսուի թէ վարդապետ մը գիւղս անթնելով, բնակիչք ախտաւորուեցան և սկսան հետ գհետէ մեռնիլ, և անկից կոչուեցաւ, Ախտալի. Այժմ բնակիչք Քոյն են, մէկ երկու Հայ ևս կան։ Նշանաւոր է գիւղիս մօտ Ա.տուռա–ժառօր ուխտը, հոյակապ երիտանման կաթուղիկով և չքնաղ քանդակներով։ Ա.յստեղ կը հաւատան որ երբեմն եղած ըլլայ եպիսկոպոսարան, բայց որոշ յայտնի չէ Հայոց թէ Քուենց։ Եկեղեցին արձանագրութիւն չունի, միայն մօտը գտնուած մատրան մը փոքրիկ խաչին վրայ կայ հայկական ՈՂԳ (= 1244) թուականաւ արձանագրութիւն մը։ — Ջալալ Ա. 85։

ԱԽՏԱԽԱՆԱ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Ջանկեազօր գաւառի մէջ. բն. 279, բաժնուած 26 տան։

ԱԽՏԻ. — Բաւական մեծ գեղակ Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, կը ձեւանայ երկու ճիւղերէ. մին կը բղխէ Ջաւչէ լերան կողերէն, կ'իջնայ դէպ ի հարաւ Մերկեզերի կամ Դիւ–աւաձայ անուամբ, և դեռ դաշտն չհասած՝ պտոյտներ կ'ընէ. իսկ երկրորդ ճիւղն կը կոչուի Ախտի կամ Ձեւի–Ջաթոյի չոգր, որ Ախտի և Սիւնեկ լեռներէն չորս ժամու չափ յարեւմուտս կը խոնարհի, անցնելով Ախտա գիւղերէն կու գայ մինչև Ձեւի–Ջաթոյ, ճանապարհին ընդունելով այլ եւ այլ օժանդակներ։ Քեռոյ կը գտնայ ա.բեւմտեան հարաւ, ու $2^1/_2$—3 ժամ վազելէ վերջ՝ Տառոպի գիւղէն վար կը միանայ Մերկեզերի հետ։ Ա.յնուհետեւ Տաշլի անուամբ կ'երկարի գաշտի մէջ դէպ ի հարաւ, Ստորին Տառոպի, Երաւնոս գիւղերու և Գարաքիլիսեի արեւմուտքէն անցնելով կը խառնուի Քօրի հետ, և ապա կը թափի ի Մոդրատ։ — Բագրեւանդ, 28։

— ՍԱՐ. — Լեռ Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի, Սիւնեկ լերանց արեւմտեան հիւսիսային՝ և Ջաւչէի արեւելեան հարաւային կողմը. կը նայի Ալաշկերտի գաշտի վրայ և կը սկզբնաւորէ այժմեան Ախտա կամ հին Աղտից ձորը։

ԱԽՐՋԻՄԱՆ. — Խնուսի (Տուրուբերան) հարաւային մասի մէջ, զրախտանման ընդարձակ մարգագետին. կ'ոռոգուի Մ. Գանիկ գետակով։

ԱԽՔԻՐՄԱՆ կամ ԱՔԵՐՄԱՆ. Գ. AKKERMAN. — Մոլդաւիայեաց բերդաքաղաք Ռուսիոյ Պեսարապիոյ գաւառին, Տնեստեր գետին բերանը։ Բնակիչք են 45000, Ռուս, Հայ, Քոյն և Հրէայ։ Քաղաքիս Հայք, որ բաւական հին ժամանակներէ ի վեր կը բնակին ատա, ունին քարաշէն եկեղեցի մը։

Հետեւեալ յիշատակարանին մէջ երեք տաճարներ կը յիշուին այստեղ. «Վերսահն նորոգեալ զրեցաւ յանդ գանձարանիս Թվին ՌՃՂԶ ի ծովահայեաց քաղաքն Ախքիրման, ի գուռն Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Օգսենտիի, և Սուրբ Յովհաննուս աւետարանչին երից սրբոց տաճարաց»։ — Ճնսրհ. ի Լեհաստան, 246–7։

ԱՆԱՆԱՅ ՁՈՐ. — կը յիշէ Թ. Արծրունին.... «գնացեալ ի Ձորն Աֆանայ ի խընդիր փախստէից». կը կարծուի որ գանուի Վասպուրականի նահանգի Ոշտունեաց գաւառին մօտերը։

ԱՆՂՈՐ. Տես ԱՂՂՈՐ։

ԱՆՈՒԻ. — Վանք Սիւնեաց նահանգի. դիրքն և որ գաւառի մէջ գանուիլն անծանօթ։

ԱՆՈՒՂ. Տես ԴԱԼԱՐԻՍ։

ԱՆՊՏԵՐ. — Ագլարօվայի դաշտի մէջ (Շապին Գարահիսար) կան վէրի և վարի Աֆպտեր անուամբ երկու գիւղ Հայոց, որոց մօտ է Երկոտասան Առաքելոց վանքը։ Վերջին դէպքերու ժամանակ մեծապէս վնասուեցան այս գիւղերը։

ԱԿԱՄՍԻՍ. Լ. ACAMPSIS. — Յունական անուն Ճորոխ գետոյ՝ զոր յիշեն Պլինէոս և Պտղոմեոս։ Պետոց պատմիչ կը յայտնէ գետոյս բղխած տեղն և ուր թափուիլն հետեւեալ խօսքերով. «... եւ ինքեանք անցեալ ընդ գետն Ակամսիս, որ ի Տայոց բղխեալ՝ երթայ գհիւսիսով արեւմտից, անցանելով ընդ Եղեր՝ մտանէ ի Պոնտոս»։ — Հնախ. Հայ. Ա. 150։ Պետոն, 168։

ԱԿԱՆԱ. — կը յիշէ անուն կիրակոս պատմիչ (207), կը թուի թէ առանձին գաւառ մը կամ վիճակ մ'էր Խաչենոյ կամ Արցախի սահմանաց մէջ։ — Այս անուամբ քաղաք մ'ալ կար Արցախի Մեծկունեաց գաւառի մէջ, որուն մօտ Թարթառայ կամ Տրտուռական գետոյն եղերքը, մայրեւոր ձեռնարանաց մէջ, առժամանակ մը կեցաւ Ս. Մեսրոպ, և երկար ժամանակ իւր աշակերտաց մէկ մասը, ուր և նահատակուեցան Հոնաց զօրքերէն, որոց մարմինները և զգեստները մերձակայ բլրան վրայ սփռուած մնալով, գիշերը առագի նման փայլեցան և այդ պատճառաւ բլուրն կոչուեցաւ Առագբլուր։ — Պոկ. Ն. Հայ. 89։

— Գիւղ Հայոց Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի, Բարալէթի հառարակութեան մէջ. բն. 409, բաժնուած 54 տան։

ԱԿԱՆԵԱՑ ԼԵՒՈՆ. — կը յիշէ Յոհան կաթողիկոսը, Յուսուփայ վրայ գրած մանեակ, թէ սա Աղձեւացիաց երկրէն հնչելէն վերջ, «Զուէ գնայ ընդ կողմն Լերինն Ականեաց, ի գաւառն Աղբակոյ»։

ԱԿԱՆԻՍ ԴԱՇՏ. — Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Վանանդէն եկող Ախուրեանի երկոյ կողմերը տարածուած դաշտավայր մ'է։ Եօթներորդ դարու մէջ, երբ Պարսիկները Մօրիկայ կայսեր սպանման վրէժխնդիր լինելու համար պիտեցի Յունաց վրայ, որք գաղթած էին ի Շիրակաւան, Յոյները գետէն անցնելով ի Գաշտն Ականիս խայտառակեին։

ԱԿԱՆՑ. — Հին գիւղ Վասպուրականի Արճիշահովիտ գաւառի՝ դաշտի մէջ, կարնոյ ճանապարհին վրայ, Վանէն 99 հզրմ. հեռու հիւսիսային կողմը։ Երբ անցեալովին հրդեհակաւոր և ներկայիս ոգրալի Արճիշոյ բերդն և քաղաքն, Վանայ ծովակի առատանալովն սկսան ընկղմիլ ջրոյ մէջ, Արճիշոյ հովտի գիւղերէն ամենէն աւելի չարմար և կեդրոնատեղի ըլլալով Ականց՝ զարձաւ գաւառապետ։

Բնակիչք կը բաժնուին հետեւեալ կերպով.

Հայք (լատ. և կաթ.)	1490 հոգի
Մահմէտականք	629 »
Հրեայք	60 »
Գումարն	2179 հոգի։

Հայք ունին երկու եկեղեցի, մին Ս. Թադէոս Առաքեալ և միւսն Ս. Գէորգ, որ ժամանակաւ վանք եղած է, և 224 տարիներէ ի վեր նորոգմամբ եկեղեցւոյ ձեւի վերածուած։ Աւանդութեամբ կ'ըսեն, թէ եկեղեցւոյս խորանը շատ հին է, Առաքելոց ժամանակէն մնացած։ Ականցիք ընդհանրապէս ամէնքը երկրագործ են, վաճառականութիւնն թողած են Վանեցւոց և Բազիշեցւոց ձեռքը։ Գիւղաքաղաքիս հին պատմութեան նկատմամբ թէ և կը պակսին գրաւոր տեղեկութիւնք, սակայն բնիկ ծերունիք և ականջալուր նոցա սերունդք կը

պատմեն շատ դէպքեր։ Ականցի ամենահռչակ և փառաւոր ժամանակէն այժմ կան միայն 4—5 տուն Հայք, իսկ մնացեալքն վերջը եկած են զանազան կողմերէ։ Աւսոր մօտ՝ երկու հզրմ. դէպի արեւելք կը գտնուի բըլուր մը, որ ունի կրաքարի հանք 3 հզրմ. երկայնութեամբ և գրեթէ 300 մեար լայնութեամբ։ Բլրան գագաթը կը վերջանայ բաւական ընդարձակ սարահարթով մը, ծածկուած քսան Պ. Թոխմախեանի Իրիշատի բերդի՝ և քսան Վ. Քինէի Զերնակ (Zernak) քաղաքի աւերակներով։

— ԱՆԱՊԱՏ կամ ԱԿՆԵՐ ՎԱՆՔ. — Հռչակաւոր վանք և գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Ցախուա գաւառի մէջ։ Հայ թագաւորաց սրտից յոյժ սիրելի վայր մը պարձած կը գտնենք Ակներ։ Լեւոն Ա. թագաւորը, իր տէրութեան մէջ կարգած վանքերէն ամենէն աւելի կը սիրէր այս վանքը, ինչպէս կը վկայէ Կիրակոս պատմիչը. «Ծորոց մի է ի վանորէիցն զոր կարգեաց նա՝ Հռչակաւոռն Ակներ կոչեցեալ վանք. որ մինչև ցարդ ևս վարի՝ նովին կարգաւորութեամբ զոր նայն կարգեաց, զամենայն աւուրս շաբաթուն պահօք կատարել, այլ միայն լուծանել ձկամբ զշաբաթ և զկիրակէն»։ Իսկ Վահրամ պատմիչ կ'ըսէ.

«Զակառաւոր ուխտէն կազմեալ
Որոյ՝ Ակներ անուն ձայնեալ»։

Նոյն Լեւոն թագաւորը երբ վախճանեցաւ, գերեզմանը ընտրելու համար շատ վէճեր տեղի ունեցան. վասն զի ամէնք կ'ուզէին ի Սիս՝ թագաւորանիստ քաղաքը թաղել, և այլք, ըստ պատմչին «... ի վանքն որ կոչի Ակներ, զի յոյժ սիրէր նա զայն վանքն՝ վասն բարիոք կարգաւորութեան նոցա, և հաճոյական ազօթից...»։ Իսկ ամէնք ալ պատշաճ չհամարեցան այստեղ թաղել, «զի եղէր տեղին այն», այսինքն թշնամեաց սահմանին մօտ՝ և որովհետև շատ թշնամիներ ունէր, վախցան որ չ'ըլլայ թէ այլազգիք վրէժխնդրութեան ոգւով մարմինը հանեն և այրեն։ Վերջապէս ամէնքը միաբան որոշեցին և մարմինը թաղեցին ի Սիս, իսկ «ըզսիրտն և զփորն տարան ի վանքն Ակներ»։

Կարծես սեփական հնարքը մոռնացեր է Ակներ առ ինքն ձգելու մեծահոգի սրտեր և միխիթարելու զայնս, իրենց առատապատաց վիճակի մէջ։ Լեւոնի յաջորդն և փեսայն Հեթում Ա., իր երկարաժամ և բազմարիւծ թագաւորութենէն վերջ, երբ լսեց բանակին անակնկալ պարտութիւնը, մեծ որդւոյն մահը և անդրանկան գերութիւնը, սաստիկ տըրտմութենէն բեկած սիրտը սփոփելու համար «... եկն ի տուրբ և ի գերահռչակ ուխտն միանձանց, ի յԱկանց անապատն. և աստ միխիթարեալ սակաւ մի ի միեղէն եղբարց տուրբ ուխտիս, կեցեալ աւուրս ինչ, մինչ եկաւ Թուրքն յերկրէս»։ Ցետոյ կամաւոր հրաժեշտ առաւ Հեթում աշխարհի, իր արքայաշուք ծիրանւոյն վրայ առնելով միանձնական սեաւ սքեմն և կրօնաւորական Մակար անուամբ սրբութեամբ ապրելով այստեղ, վախճանեցաւ 1270 տարւոյ Հոկտ. 28ին, իսկ մարմինն փոխադրուեցաւ Դրազարկու վանքը։ Հայրենեաց անդորրութեան համար Հալէպի բանտի մէջ մեռած Պատրիարքին մարաջախտի մարմինն ալ 1336ին փոխադրուեցաւ յԱկներ։

Վանացս եկեղեցիք, Մեծին Լեւոնի ժամանակէն կը յիշուին Ս. Աստուածածին և Ս. Աթաթկալք։

Ոչ սակաւ նշանաւոր վարդապետներ ունեցեր է Ակներ, որոնք շարադրած կամ թարգմանած են զանազան տեսակ գրքեր։ Այս մասին փափաքողք կարող են գտնել ընդարձակ տեղեկութիւն Մխիթարեան տետրակաւոր 153—6 և 535 էջից մէջ։ Կիլիկիոյ ուրիշ վանքերու նման Ակներ ևս այժմ ամայի և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ — Կիրակոս, 77, 94։

ԱԿԱՆՑ. — Գետակ Սիւնեաց՝ Սողից գետահովտին մէջ։ Ի հնումն համանուն գիւղ մ'ալ եղած կը թուի նոյն կողմերը։ — Նոյն անուամբ գիւղեր կային նաև Աղահէնք և Ծղուկ (Ալլահ) գաւառաց մէջ։

— կամ ԱԿԱՆՑ. — Այս անուամբ գիւղ մը կը յիշատակուի Շերակայ արեւմտեան մասին մէջ. անշուշտ Ականց չուր կոչուած վտակին քով, զոր Մխիթար վանահայրը գարձուց բերաւ Հոռոմոսի վանքը։

ԱԿԱՐԴՈՆ. — Հին գիւղ Սիւնեաց Հաբանդ գաւառի մէջ։

ԱԿԼ. — Վասպուրականի հին գաւառ-

ներէն մին, որուն այժմ կը համապատասխանէ պարսկահայաստանի Մակուայ վիճակի մէկ մասը։ Վաղարշակ Թագաւորի ժամանակ այս գաւառի մէջ բնակող տոհմն կը կոչուէր Ակեացիք։

ԱԿԼ, ԱԿԻԼ կամ ԷԿԻԼ. ՀՆ. ԱՆԴԵՂ. Գղ. AKIL, EKIL. ﭐ. اكيل. Ասոր. ܐܟܝܠ (Ագէլ) կամ ܐܓܝܠ (Ագիլ). — Ի հնումն անուանի բերդաքաղաք Անգեղտան (Զօրրորդ Հայք) գաւառի մէջ, որոյ հին Անգեղ անունն ժամանակի շրջանաց մէջ փոփոխուելր եղեր է նախ Անգել, ապա Ագել, ի վերջոյ Ակիլ և հուսկ ուրեմն Ակլ կամ Էկիլ։ Ըստ այժմեան աշխարհագրական բաժանման կ'ինկնայ Տիգրանակերտի կուսակալութեան Ճրղանայ գաւառի մէջ։ Տակաւին կանգուն է լերան գագաթը կառուցուած քարափոր հինաւուրց բերդը, որ ունի երկու միակաւոր քարէ բուրգեր և ջրհոր կամ գուբ մը լերան ծայրէն մինչև վարը փորուած, որոյ յատակը կայ քարաշէն աւազան, ուր կը հաւաքուի Տիգրիս գետոյն մղուած ջուրը։ Պաշարման ժամանակ ջուր առնելու համար դիւրութեամբ, առանց թշնամւոյն տեսնուելու, բազմաթիւ ստորհանդներով կ'իջցուի այդ գրոյն յատակը. հոն բացուած ծերպէ մը կարելի է հնել նաև Տիգրիսի եղերքը։ Բերդէն վար արեւելակողմը լայն ձոր մը կայ, որուն երկու կողմերը կ'երեւին բազմաթիւ վիմափոր փոքր սենեակներ կամ այրեր, որոնք կը կարծուին թէ ժամանակաւ եղած ըլլան երեւելի արանց շիրիմներ։ Զօրոյն ծայրը կայ նոյնպէս վիմափոր տեղ մը, յորում կը տեսնուին եկեղեցւոյ խորանաց կամ մեհենի բազնաց սեւցած քարեր։ Այս ամէնը տեսողաց վրայ հիացումն, ապշանք և հետաքրքրութիւն կ'ազդեն և վկայք են միանգամայն թէ ի հնումն այս տեղ կային շատ շէնութիւնք և բնակութիւնք։

Մեր պատմիչներէն Բիւզանդ, կրկին անգամ կը յիշէ Ակլայ բերդը իւր հին ատենաբանութեամբ. « Եւ գային (զօրք Պարսից) պահ արկանէին շուրջ զԱնգեղ ամուր բերդին, որ է յԱնգեղ ասէին գաւառի. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն (յոմն և թագաւորազնեայցն) գերեզմանք շիրմացն ապանդն արշակունեաց », բաց ի շիրիմներէն կը յայտնէ նաև թէ, « Բազում գանձք միթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ »։ Վերոյիշեալ Պարսից զօրքերը բերդը պաշարելով. « ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թագուհին և գնային։ » Տիրանայ և իւր որդի Արշակ թագաւորաց ժամանակ Դրաստամատ ներքինին « Լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին »։

Ակլ բերդի հեռուէն խոր ժայռերու միջով կ'անցնի Տիգրիս և կ'երթայ դէպ ի Տիգրանակերտ, և իւր երկու կողմերն տարածուած են այգեստանք։

Բերդաւանիս Հայք կը համարուին 200 տուն, և ունին մէկ եկեղեցի Ս. Նշան, որ ուխտատեղի է միանգամայն, և ինչպէս կը պրէ Սրուանձտեանց, մէջը կայ երկաթէ մեծ խաչ մը, իբր հարիւր պատառներով պատատուած, կոմը միայն կը համբուրեն. կ'աւանդեն թէ՝ այն տաշտին մասն է, յոր Տիրամայրն զՄանուկն Քիստոս կը լուար։ Կօշմարիկն բերուած է ատոր։

— Համանուն վիճակին ունի խոպոպ և պատուական գինի և պատեղ։ Տիգրանակերտի կուսակալութեան փայտը ասկէ կը տանին Տիգրիսի վրայով Քալակ կոչուած լաստով։ Ակլայ մօտ գտնուած Հայարնակ գիւղերն են.

Փիրան. ունի 1 եկեղեցի Ս. Աստուածածին և 42 տուն Հայոց։

Հըէդան. 1 եկեղեցի Ս. Աստուածածին. տունք Հայոց 42։

Թիլ Բաղդատ. տունք Հայոց 45։

Չօփիկ. 1 եկեղեցի Ս. Գէորգ. տունք Հայոց 15։ — Ն. Հայ. 223–24։ Թորոս Աղբար, 181–183։ Բիւզանդ, 142, 206։

— Գեր. Սրուանձտեանցի հետ մենք ևս շփոթելով, Ակլին Ակիլի հետ նոյն պիտի համարէինք, սակայն քննութեամբ տեսանք որ բոլորովին տարբեր քաղաքի մը անուն է. ուստի ի կարգին նկարագրած չլինելով այդ քաղաքը, հարկ կը համարինք հոս առաջարկել։

Ակլի կ'ինկնայ Մոկաց աշխարհի կողմերը՝ ըստ Բայսմաւուրաց հոս հանելով Հոխտիմեան սուրբ կուսանք, զորոնք սխա-

արար Ջուրը սրբեցին։ Խորհուրդին ևս կը յիշէ անունս երբ Ազատաշէս Բի մեծ խնամակալին Ամիրատայ համար կը գրէ թէ՝ «Հրամանաւ Ազատաշխի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱկի նստուցեալ զրագմութիւն գերույն»։ — Խոր. պտմ. 132։


ԱԿԱՆԼՈՒ. — Երկու փոքրիկ գիւղ, Այրարատայ Ազատածոյն գաւառի մէջ։ Վերին Ակռանլու անի Ս. Աստուածածնի եկեղեցի մը, իսկ Ներքին Ակռանլուի եկեղեցին նուիրուած է Ս. Լուսաւորչի։

ԱԿՆ կամ ԷԿԻՆ. Պգ. EGHIN. Թ. اكين. — Գեղեցկագիր և աւելի իբ անցեալին քան ներկայ վիճակով հռչակաւոր քաղաք Փոքր Հայոց, որ նոյ ձորակի մը մէջ, Եփրատայ աջ կողմէն ամփիթէատրոնաձև սարեմանաբար կը բարձրանայ բարձրակատար լերան մը կողը (թ. 41), զրեթէ մէկ հզրմ. բարձրութեամբ և երեք հզրմ. երկայնութեամբ։ Ճարտար զրիչ ազգային այցելու մը իր խօսքերն Ակնայ ուղղելով հետեւեալ նկարագիրն կ'ընէ. «Միթէ կ'արժէ՞ դու, մեծահամբաւ քաղաքդ, այսքան նեղութիւններ կրել տալ քեզ այցելու եկողին։ Ճղտարև երբ ճնշուած՝ բարերէ, խորերէ, վախերէ, բրտնաթաթախ և արիւնաշաղախ ելեւջներէ, յանկարծ կը տեսնես Ակն՝ ձորակի գագաթէն, այնքան շքեղ շէնքերով և գեղեցկազարդ ծառատունկերով, կարծես արքայութիւն մի է այն. իջնալ պէտք է մինչև կիրճին խոր յատակը, և երկրպագելով Եփրատի թագաւորութեան պատուանդանին, ապա անցնիլ կամուրջով մը, յայժմէ կը տեսնես թէ այդ արքայութեան հանդիսա կարծած քաղաքդ՝ քանի դժուարին և անելանելի առապար մ'է, ինչպէս մարդ պատէն կամ պարսպէն ի վեր ընթանայ. քարերու մէջ ենք, քար կը կոխենք, քարերն ի վեր կ'երթենք, եթէ միթերարութիւն մը կայ՝ քարաշար անդունդներն են, խոխոջացող առատ ջրեր, և ծառոց ու բուսոց կանանչ ազարմներ, որ տարածուելով փողոցներու պատերէն դուրս՝ գեղեցկութիւն մը սփռած են»։

Կառուցուած է Ակն միջավայրի մը վրայ, իր հարաւային արեւելեան կողմը կ'ընկնայ Խարբերդ 95 հզրմ. հեռաւորութեամբ, հիւսիսային արեւելեան կողմը Երզնկա 100 հզրմ. հեռու, 35 հզրմ. զէպ ի հարաւ Ամարկեր, և 97 հզրմ. հոյնպէս զէպ ի հարաւ Մալաթիա. իսկ Զմիւռնիայէ հեռու է 14 ժամ և Տիվրիկ 12. իրեն մօտ են նաև Քէմախ (հն. Անի ամրոցն) և Կիւմիւշ–Մաաէն (հն. Կապան) աւանները։ Միայն հայկական տոհմութիւնն և հիմն կարող էին այսպիսի ապառաժուտ քարային մեծ անապատի մը մէջ, Եփրատայ մեծափառ խոխոջանքէն և ակնապարար խաղացքէն և այլ բազմոյժի առաւելութիւններէն զգուած՝ հիմնել քաղաքս։ Մարդկային ձեռքն ալակոծելով բնութեան՝ այնքան բազմազան և գեղագուարճ զարձուցած է Ակն, որոյ նմանը գժուար է գտնել մեր Բնաշխարհի ուրիշ կողմերը։ Աւելի վաստուրականի քան Ակնոյ գպղծականք են Ակնեցիք, բայց կարելի է հաւանական համարել նաև այն կարծիքն, թէ Վաստուրականի գպղծականաց վրայ, ի վերջոյ աւելցած ըլլայ մաս մը ևս ողբացեալ Ակնոյ բնակչաց։

Քաղաքիս Ակն անուան առաւաբանութիւնն հետաքրքրական է, և հետևեալ կերպով կ'աւանդուի։ Ակնոյ կրթնամանէն վերջ, նոյա Հայ բնակչաց հարստա և կարևոր մէկ մասը, նոր հայրենեաց մը ի խնդիր ելած, կու գայ կը հասնի Ակնայ ձորը, Ակի ամբոցի նեղ կապանէն անցնելով, և պատահելով այս ձորի մէջ լեռնէն հոսող առատ ջրոյ մը, կը ցանկայ գտնել նոյա Ակն, և երբ կը յաջողի, կը հիմնէ անդ քաղաքն, որ ջրոյն ական անուամբ կը կոչուի Ակն։ Ազատաբուղխ ջրոյ այս առուակն, որ վերին Թաղի հիւսիսային կողմէ, մեծ մզկիթի վերեւը ապառաժի մը ներքեւէն կը հոսի իբր 1 կամ 1½ կանգուն տրամագծով, բնութեան ամենագեղեցիկ տեսարանաց մին կ'ընծայէ։ Բղխած տեղն մեծամեծ ապառաժներով շրջապատուած աւազան մը կը կազմէ, ուսկից առուակներու բաժնուելով, մէկ մասն ջրագացներ դարձնելու, պարտէզներ ջրելու կը ծառայէ, և մէկ մասն ալ խողովակներով կը բաժնուի, փողոցներու մէջ գտնուած հասարակաց և կամ տանց մէջ մանուածոյց աղբիւրներու։ Այս ջուրն գարնան կ'առատանայ, և մէկ հզրմ. բարձութենէն մինչև

Եփրատ գետը կը գահավիժէ ահեղագոչ ո-
րոտմամբ, խլացուցիչ շառաչմամբ, և սպի-
տակափրփուր։ Ա՛յս ամենատառա, վճիտ և
զով ջրէն զատ, կան նաև ուրիշ ջրեր, ինչ-
պէս Կարա—աղբիւրի, Ակն—ծովի կամ Ակն—
զովի, Խանակի, Բերդի—աղբիւրի, Խնկաձո-
րի, և այլն։ Քաղաքիս ձորերն են Մեծ ձոր,
Զրիկ կամ Ձարիկ, Պզտիկ կամ Տափակ և
Արեգի ձոր՝ որոյ ջուրն հեռուներէն կու գայ,
Ջոխա—մարի (Ճոխա—մայր) և Գուչաճի ջուրց
հետ միանալով ջրաղացներ կը գործէ,
կարատեաց ամենամուրք ճարտարապետու-
թենէն մինչև փողոցներու յետին անպիտան
քարն, խիճն ու աւազն մանուածոյ հոգածու-
թեամբ և յատուկ աշխատասիրեամբ և ծախ-
քով կարգաւորուած և գետեղուած են։ Քա-
րայրներն մը ատապարի զառիվայր կողին
վրայ արուեստական թումբեր կանգնելով
հարթ կամ նուազ հակեալ մակերեսյի առնե-
ծել՝ փոխադրելով անդ ի հեռուստ հող և
աւազ պարտէզի կամ որմաստունկի վերա-
ծելու համար զայն, ամէն երկրի բնակչաց



41. Ակն քաղաքի տեսարանը։

պարտէզներ կը ջրէ և կը թափի յԵփրատ։
Ակնայ լերանցամէջ և միանգամայն բարձր
վիրքն, բնականաբար իրեն կը պարգեւեն
առողջարար օդ, ամրան զով և ախորժելի և
ձմեռն նուազ ցուրտ, գինքը շրջապատող
բարձր լերանց շնորհիւ ապատ է նաև ամ-
պամուխ խորշակէ։

Ակնեցիք ամենայն միջոց ի գործ գնելով
կրցած են նուաճել բնութեան անհամբոյր և
խժդժուն կողմատառնները, զի սկսած ամենց
արեգակնահնեցէն, պատշգամներէն և կահ-
համար ամենօրեայ գործ մը չէ գէթ Ամիոյ
այս կողմերու մէջ, զի կը պահանջէ նիւ-
թական կամ անասնական կարողութենան
չնորհուած բարեկեցութենան ճաշակ և զգա-
ցում, յորում Ակնեցւոց ամուսնանը գերա-
պանցապէս կը փայլի։ Մարդ պատկառանք
կ'զգայ քաղաքիս փողոցներէն անցած ատեն,
երբ ի յուշ ածէ, թէ օսմ. վեհապետաց և
նախարարաց պետական ծառայութենանց մէջ
երբեմն այնքան փայլող հաչակաւոր ամիրայից
հայրենեաց մէջ գտնուի, ուր կը նշմարուին

նոցա փառաց և մեծութեան կանգուն և խոնարհեալ բազմազունակ նշխարներ և յիշատակարաններ։

Մէկն Ակնայ նկարչական գեղեցիկ գրից վրայ գազափար մ՚առնելու համար, պէտք է բարձրագոյն տան մը վրայ կանգնած պիտի այն երեսները խառնեալ տեսնել, եկեղեցիներ, մզկիթներ, ծառեր, պարտէզներ, որթատունկեր, ջաղացքներ, այլ և այլ առեւտրատարածք՝ և այլն, որք անհատն բայց զուգակից ներդաշնակութեամբ իրարու յօրգուած, հրապուրիչ տեսարան մը, կամ թէ ըսեմ գեղափայլ և գեղազարդ ամառոց մը կը ներկայացնեն գիտողի աչաց։

Ոչ միայն պատուական առատ չրերը, այլ և անշուշտ տեղւոյս բնական ամուր գիրքն գիտելով նախկին հիմնարկողք Ակնայ, որսորդներէ հալածուած թռչնոց նման՝ ապաստանած են այս անմերձենալի և անառիկ բարերուն։ Քաղաքս իր արեւելեան և արեւմտեան ամենանեղ և զժուարակոխ կապանները բռնելով կարող է արգելուլ ամէն յարձակմունք, իսկ հիւսիսէն և հարաւէն գրեթէ բացարձակ անհնարին է մտնել անդր լեռներու երեսէն։ Ուշադրութեան արժանի է Ակնայ ձորոյն մէջ արձագանգի առաջացութիւնն. փոքրիկ ատրճանակի մը պայթումն անգամ այնպիսի ահաւոր գոռում գոչում կը պատճառէ, որոյ հետեւանքը գուցէ հրաբուխներու մեղանօթներու միահատոյն պայթմունք չեն կարող առաջ բերել լսոյնածաւալ գաշտերու մէջ։ Ահաւոր և սարսափելի է նաև երկնից որոտման գոռումը, որ կը թուի աշխարհի բոլոր լեռնակոյտերու մի և նոյն ժամու մէջ փլուզման ահեղ ձայնը։

Քաղաքիս և մօտակայ գիւղօրէից անոթը մեծաւ մասամբ երկայարկ և եռայարկ են, կան նաև քառայարկ ապարանքի պէս տներ։ Վերի յարկերը ընդհանրապէս փայտաշէն են, իսկ ստորին յարկերը քարաշէն։ Վերին յարկի և թաշ—տիպիի տներն շինուած են իրարու վրայ, և միոյն տանիքն կը ծառայէ իբրև ճանապարհ կամ հրապարակ միւսոյն։ Բաց ի վերին և թաշ—տիպիի տներէն, միւս բոլոր յարկերն ալ փոքր ի շատէ զարդարուած են պարտէզներով, յորս կը գտնուին թուխ, սալոր, խաղող, խնձոր, տանձ, ընկոյզ, և այլ տեսակ պտուղներ և բանջարեղէնք։ Եփրատ գետը որ անցնելով Երզնկայի մօտէն և Կամախէն կու գայ կ՚անցնի քաղաքիս ձիշդ ստորոտէն, ունի իւր բազմաթիւ օգուտներն. հետը կը բերէ շինութեանց և վառելու փայտեր, և կ՚ընծայէ զանազան տեսակ շիշէկ, մզ, վազ, թեփիկ, շաղփուշ, ցոիկ, տափակ—բերան և այլ անուններով ձկներ։ Քալակով կամ տիկաստով ալ՝ ուղեորութիւն և ապրանաց փոխադրութիւն կ՚ընեն, հոսանքէն ի վար միայն։ Ակնայ ապջիը՝ գետոյս վրայ ձգուած կամուրջն, որոյ երկու կողմը քարէ սրմներ՝ և մէջ տեղերն փայտաշէն են, ՌՃՉԸ թուին, սուրբ Յակոբայ բարեկենդանի շաբաթ օրը այրելով, տեղացիք վերստին շինած են զայն։

1880 տարւոյ վիճակագրութեան մը համեմատ, քաղաքիս Հայոց թիւն է 5442, իսկ Թրքաց 4286։ Հայք ունին երկու եկեղեցի Ս. Աստուածածին, վերին թաղի մէջ, որ 40 տարի առաջ ի հիմանէ վերըսաին կառուցաւ քարուկիր և սիւնազարդ, տուն վրայ գրեթէ 5—6000 ոսկի ծախք եղած է. Ս. Գեորգ, վարի թաղի մէջ, 1874—76 տարիներու մէջ այս ալ վերստին կառուցուած է գմբէթաւոր և աւելի ճարտարապետեալ։ Գերեզմանատունը Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն վերի կողմէն սկսելով մինչև լերան ստորոտը և դէպ ի հարաւ կը տարածուի, պարիսպ չունի, և ամէն ընտանեաց համար փոքր և ցած տարիերով բաժնուած գատ գատ մասեր կան։ Ի հնումն կայ եղեր ատա նաև Ս. Յովհաննու ոսկերբերանի եկեղեցի մը, որ ՌՃԳ թուին Եղիական պահոց մէջ այրեր է, ըստ յիշատակարանաց Յայսմաւուրց։ Վարի թաղին մէջ է Ներսիսեան վարժարանը և Վերի թաղի մէջ Նարեկեանը, իսկ Ալեգի թաղի մէջ կայ Հայկազեան ծագկոց. աշակերտաց թիւն կը հասնի 400ի և աշակերտուհեաց 140ի։ Քաղաքս ունեցեր է նաև զանազան կրթական ընկերութիւններ, ինչպէս «Ազգասիրական ընկ.», «Ուսումնասիրական ընկ», «Արամեան ընկ.», «Ուսումնական միութիւն», որոց ոմանք ոչնչացան։ Թուրքերն ևս ունի իրենց պլրոցները, և հինգ մզկիթ, յորոց մին, որ կը

դանուի վերին թաղի հիւսիսային կողմը, կ'ըսեն, թէ հին ժամանակ եկեղեցի է եղեր։

Ընդհանրապէս Ակնեցիք, գիւղաբնակներն անգամ, քաղաքացւոյ կեանք կը վարեն, երկրագործութիւնը զբեթէ բոլորովին մէջերնէն վերցած է, արդէն մշակութեան յարմար հողեր ալ կը պակսին։ Այս պատճառաւ թէ՛ գիւղացիք և թէ քաղաքացիք կը զիմեն յօժարութիւն, անդ վաստակելու և ի հայրենիս վայելելու։ Առած մը կ'ըսէ թէ՝ «Ակնցւոյ երկու ոաքէն կաղն մինչև Հնդկաստան հասեր է, մէկ ոաքէն՝ մինչև Զինուսմաչին»։ Ինչպէս ծիծեռնակը, որ իւր բոյնը կը շինէ քարի մը կող, և ինքն արագ արագ կը սլանայ յայս և յայն կոյս որդ և կուտ կը կրէ իւր ձագուց, նոյնպէս և Ակնցին շարունակ կ'երթայ կու գայ, կը բերէ, կ'սպառէ, և նորէն կը վերադառնայ։ Կան նաև ոչ սակաւ Ակնցիներ աշխարհիս զանազան կողմերը, որք գաղթականութեամբ հաստատուած են, և իրենց գործն և առուտուրն կարգի դրած։

Ակնայ արհեստաւորք՝ ոսկերչական, կօշկակար, զարբին, պղնձագործ և կլայիկով, սկաւերիչ, ներկարար, խաղախորդ և սեղանաւոր, ընդհանրապէս Հայ են։ Վաճառականաց, մրգավաճառաց, գեղագործաց, և ժամագործաց մեծագոյն մասն ալ Հայ են. իսկ մսավաճառաց, արմտավրաց, հիւսանց կէսը Հայ են և կէսը Թուրք. հացագործաց ալ մէկ մասը Հայ, և մաս մ'ալ Թուրք և կիւմիւշ-խանէյի պանդուխտ Յոյներ։

Ազգային գործոց և քաղաքակրթութեան մէջ, յոյժ զարգացած և յառաջադիմած էր Ակն, ի գործ գնելով Սահմանադրութիւնն՝ ունէր իւր բոլոր պաշտօնական մարմիններն, Երեսփոխանական ժողովն սկսեալ մինչև Թաղական խորհուրդներն և Հոգաբարձութիւնք, ամէնայն ինչ ի կարգի էին։

Կամարկաց և Ապուչեխ թէպէտ ըստ պաշտօնական վիճակագրութեանց առանձին գիւղեր են, սակայն իրենց մերձաւորութեամբն կրնան համարուիլ մէկ մէկ թաղ կամ արուարձան, յորս կը տիրէ մի և նոյն քաղաքակրթութիւնն, բնաւոր ճաշակն, և այլ ամէնայն ինչ որ յատուկ է Ակնայ։

Քաղաքս իւր շրջակայ Հայոց գիւղերով, բաւական չէին անդադար ի հնուց ի վեր կրած հարստահարութիւնքն, վերջին ահաւոր պատգոյն հարուած մը ունեցաւ 1896 տարւոյ սեպտեմբերի մէջ։ Հայոց վերին թաղի տներու մեծագոյն մասն հրոյ ճարակ եղան։ Ընդհանուր անձանց կորուստն ըստ յրպրտից համարուեցաւ 2000 հոգի։ Ամենայն անսասկի խժդժութիւնք ի գործ գրուեցան, Հայոց կրկին եկեղեցիք այրուեցան և երիցունք սպանուեցան։ Նոյն թշուառութիւնն պիտի գար քաղաքիս վրայ 1895ին, եթէ Հայք 1500 լիրա փրկանք չտային։ Այս դէպքէն վերջ, հարուստ Ակնի սղջ մնացած ժողովուրդն բոլորովին յետին աստիճանի աղքատացաւ և մինչև անգամ չոր հացի կարօտ մնաց։

Ակնայ առաջնորդ եղած է ժամանակաւ և նորա նկարագիրն իր Թուրս Աղբօր 243–48 էջից մէջ հրատարակած հանգ. Գաբեզին եպ. Սրուանձտեանց։ Պ. Բ. Կ. Ճանիկեան բնիկ Ակնցի, 1895ին Տփխիսու Հայոց Հրատարակչական Ընկերութեան միջոցով հրատարակեց Հնութիւնք Ակնայ վերնագրով բաւական առուտր հատոր մը, յորում մանրամասն կը խօսի քաղաքիս և շրջակայից հին և նոր պատմութեան և տեղագրութեան վրայ։ Տեղեկութիւն կու տայ նաև ազգային զանազան սովորութեանց, բարուց, գաւառաբարբառի և տեղական երգերու վրայ։ Պ. Մարկոս Նալբանեան, 1885 տարւոյ Մասիսի 870–72 և 947–49 էջից մէջ, հրատարակեց քաղաքիս ճոխ նկարագիրն, զոր մասամբ մը համառօտելով հրատարակեց նաև Պ. Ս. Գույումիրեանց Աբաքահ Բ գրքի 33–37 էջից մէջ։ Ներկայ նկարագիրս քաղուածք մ'է վերոյիշեալներու մանաւանդ Նալբանեանի գրութեան։

— Համանուն գաւառակի կամ վիճակի սահմանքն են Հս.էն Սերաստիոյ և կարնոյ կուսակալութիւնները, Ար.էն Տէրսիմի գաւառը, Հր.էն Արաբկերի վիճակը և Ամ.էն Սերաստիոյ կուսակալութիւնը։ Նորագոյն վիճակագրութիւն մը չունենալով, առանձին տախտակի մը մէջ կը տնեմք 1880ին կատարուած մարդահամար մը։ Բազմաթիւ գիւղեր, որոց այժմեան անուանակոչութիւնք իսկ կը յայտնեն թէ ժամանակաւ Հայոց եղած են, այժմ Թրքաբնակ են, թշնամոյ

սուրն և հուր և բազմապիսի խժդժութիւնք սոսկեր են նոցա Հայ բնակչաց կրօնափոխ և միանգամայն լեզուափոխ լինելու։ Վիճակիս մէջ կան նաև քանի մը գիւղեր, որոց բնակիչք Հայհոռոմք կը կոչուին։ Ասոնք լեզուաւ և սովորութիւնովք Հայ են, թէպէտ և ազգին անդին ճանապարհորդող մարդիկ զիւանն նաև յունարէն։ Կարևոր կը համարիմ սոյն և հուր և բազմապիսի խժդժութիւնք սոսկեր են նոցա Հայ բնակչաց կրօնափոխ և միանգամայն լեզուափոխ լինելու։ Վիճակիս մէջ կան նաև քանի մը գիւղեր, որոց բնակիչք Հայհոռոմք կը կոչուին։ Ասոնք լեզուաւ և սովորութիւնովք Հայ են, թէպէտ և ազգին անդին ճանապարհորդող մարդիկ զիւանն նաև յունարէն։ Կարևոր կը համարիմ

տունք երեսիք եկեալք ի գաւառէն Ակնայ։ Ազգ սոցա յայտնի իմն երևի սերեալ յազգէ Հայոց, և կրօնիւ գարձեալ ապա առ Յոյնս, և ոչ սերեալ ի Յունաց, և գլեզուն փոխեալ ի Հայկականն. այսպէս գնէ և Մխիթար Այգարանցին ի գիրս իւր յամի տեառն 1410, զոր ունիմք առ ձեզ և կոչէ գնոսա ծամի Հայեր։ "Եւ ոմանք կոչին ծամի Հայեր,

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԿՆԱՅ ՎԻՃԱԿԻ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ	ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Լուս.	Ցմուխ.			Լուս.	Ցմուխ.	
Ակն քաղաք	5442	—	4286	ՓՈՒՆԴԻԿԱՆՔ ԳՈՒՄԱՐ.	8060	526	10588
Ապուչիխ	1066	—	958	Փեսպան	—	—	210
Կամարկաղ	1135	—	242	Ուռնկ	—	—	542
Կարուչա	204	—	154	Ալերակ	—	—	78
Բակիր	—	—	636	Եազուպլու	—	—	214
Արկու	—	—	494	Բաղըչաուշ	—	—	186
Հաբեղնոց	—	—	752	Պախճա	—	—	42
Ագրակ Հաբեղնոցի	—	—	638	Զէօվլէր	—	—	104
Քիւնաիր	—	—	118	Թաւուզ	—	—	170
Ագարանք և Զալիք	—	—	350	Խաաս	—	—	230
Նարվեր	191	—	76	Հըզատար	—	—	352
Տիւս	—	—	20	Բաչակէկ	—	—	106
Ադըլ	—	—	38	Ամանախաբ	—	—	48
Պըտմըչէն	—	—	132	Կազերան	—	—	112
Կաշոյ	—	—	546	Գամըտկան	—	—	118
Վանք	—	180	54	Բաշագի	—	—	110
Զորակ	16	134	66	Ռապատ	—	—	102
Շրդու	—	138	116	Ախտօսր	—	—	132
Ագարակ Շրդուի	—	—	100	Ախմա	—	—	142
Մէջին գեղ	—	—	126	Լիճք	307	—	256
Ադրիկ	—	—	122	Սերկեւիլ	—	—	464
Ալաչէղու	—	—	138	Սանտըգ	—	—	114
Վան գեղ	—	—	96	Սարը Զիչէկ	—	—	—
Մուչեղկան	8	34	132	Բինկայ	874	—	60
Կեճեկի	—	—	448				
ԳՈՒՄԱՐՔ.	8060	526	10588	ԸՈՎԱՆԴԱԿ ԳՈՒՄԱՐՔ.	9441	526	14280

սաա ի մէջ բերել Հ. Ինճիճեանի Հայհռոմոց վրայ գրածն. «Ցառաջագոյն անխառն առնուին և տային Հայոց գրաբար ի կնութիւն, այլ այժմ յաւուրս սուլթան Համիտի նոր քարոզիչք Յունաց առաքեալք առ նոսա ընդ նպատիւք պատուիրեցին չառնուլ և չտալ զդստերս իւրեանց ի կնութիւն Հայոց։ Գաւառին ի Հայհռոմոց ի Կ. Պոլիս քաղաքի

որ լեզուով գրով և ազգաւ են Հայք. բայց գաւանութեամբ և ամենայն օրինօք են Յոյնք, և ամենայն կերպիւ հնազանդ նոցա,,։ Վասն այնորիկ կոչէ գնոսա ծամիս, զի յայնմ ժամանակի գնէ գնոսա միաբանս ընդ ծայրի Յունաց ոմանց՝ որք զհետ երիցային ազանդոյ Անդրէասեայ ուրումն եպիսկոպոսի կեսարու։ Հաստատեան գայս նախ առաջին

պատմագիրք մեր յառաջ քան զՄխիթար Աբարանցին, որք գրեն Թէ ի մէջն անդ ԺԱ դարուն ի ժամանակս կոստանդին կայսեր Տուկիճ կամ Տուքաս կոչեցելոյ, նոյնպէս յԵլս անդ ԺԲ դարու ի ժամանակս Բ Մահակայ կայսեր, առաքիկ իմն բռնագաւութիւն եղև Հայոց բնակելոց ի կողմանս Սերաստիոյ կամ Սեաստոյ առ ի զարձուցանել զՀայս ոչ միայն հաւատով, այլ և ծխիւ ի կրօնս Յունաց»։

Վիճակիս մէջ վաճառականութիւնն այնչափ զարգացած չէ. ցորեն, ոչխար, պանիր, իւղ և այլն, շրջակայ գաւառներէն կը բերեն. իսկ զգեստեղէններ, շաքար, սուրճ, օճառ, թղթեղէնք, գրենք, երկաթ և այլ մեծաքեղէնք մեծաւ մասամբ Կ. Պոլսէն և Հալէպէն։ 1871էն սկսեալ մեծ գործած է այս կողմերը Հայոց մէջ նաև բողոքականութիւնն, որոց թիւն տակաւին 100ը անցած չէ։ Վերջին տխուր դիպաց ժամանակ Ակնայ Հայոց դիւղերն ալ զերծ չմնացին, 1000էն աւելի անձեր կողոպտուեցան և շատերն ալ այրուեցան։ — Ս. Երեւումն կամ Ս. Փրկիչ Վանք. Ակնէն 6 ժամ հեռու զետ ի հիւսիս Զէօփլեր Թրքաց գիւղի վերեր բարձրաւանդակի մը վրայ կառուցուած է մենաստանս, որոյ աջ կողմն կը գտնուի Գոհանամ լեռը. ունի առողջարար օդ և պատուական ջուր։ Աւանդութիւնը կ'ըսէ, Թէ սուրբ Եւստաքիոսի կամ Աղլաիտոսի զօրավարին յիշատակին շինուած է վանքս Բ դարու մէջ, ուր Ս. Թաչէն երեցեր է սրբոյն եղջերուի մը գլխուն վրայ։ Աստ այժմ կայ եկեղեցի մը, քանի մը սենեակներ, փուռ, տխուռ և այլն։ Բիչ մը վերև կը գտնուի Երեման մատուռն, որոյ շէնքն եկեղեցիէն աւելի հին է։ Ակնայ առաջնորդն է միանգամայն վանացս վանահայր, բայց բաց ի մի քանի մշակներէ և սպասաւորներէ ուրիշ վանական կամ միաբան չի գտնուիր։ Վանքս ունի երկու ձեռագիր աւետարան, և եկեղեցական զգեստներ և անօթներ, որոց մեծագոյն մասը ապահովութեան համար փոխադրած են քաղաքը։ — Աբակայի կամ Գրիգոր Նարեկացւոյ Վանք. Տես ԱԲԱԿԱ։ Վիճակիս միւս ուխտատեղիներն են Ս. Կոզմոս և Դամիանոս կարուշլայի մէջ. Ալեճահոբիւն, գետեզերքը Մեծ Ձորի մօտ. Ս. Յակոբ, Թաշ–տիպիի վերեւ

լերան սատրոտը մեծ վէմ մի է. Ս. Թաղոս, Ակնայ գեղեցմանատան մէջ, ուր երբեմն ժամերգութիւն ալ կը կատարուի. Ս. Լուսաւորիչ, Արեգի Թաղի վերեր, պարսպապատ, խորան մ'ունի, գիւտ նշխարաց սուրբ նոին պատարագ կը մատուցուի. Ս. Յարգիս, Վանք գիւղի Հայհոռոմց եկեղեցւոյն կից մատուռ մ'է. Լուսաղբիւր, քաղաքին դիմաց Ցնծալենց պարտէզներուն վերը։ Բաց ի այս ուխտատեղիներէն, ուխտի կ'երթան նաև Բուսաղէմ, աշնան ճամբայ կ'ելնեն, ձմեռն հոն կ'անցընեն և Զատկէն վերջ կը վերադառնան։ Ամենք ալ՝ մանաւորապէս արք, կ'երթան Մշոյ սուրբ կարապետին։ — Նոր Հայ. 301–309։ Վ. Բիւր, Բ 362–366։

— Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ։

ԱԿՆԴԱՇՏԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՆԻ Վ. — Վանք Վաղարշապատի Բոզումիք (Չամուկ) գաւառի մէջ, Վանայ արեւմտեան հարաւային կողմը. կը կոչուի նաև Խուրսանդոսի վանք, որուն համար կ'ըսուի, Թէ այս վանքի մէջ բնակած ըլլայ։ Մօտը կը բղխէ յորդահոս աղբիւր մը, որոյ ջուրը շատ ջրաղացներ գարձընելէ վերջ, կ'երթայ կը խառնուի Տիգրիսի հետ։ Ն. Հայ. 145։

ԱԿՆԵՐ. — Գիւղ Մանազկերտ գաւառի, Արածանւոյ ձախ կողմը. բնակիչք 30 տուն Հայ և Քուրդ խառն։

— ՎԱՆՔ. Տես ԱԿԱՆՑ ԱՆԱՊԱՏ։

ԱԿՈՇ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, զոր՝ ըստ արձանագրին, ՋՐ (=1259) Թուին Մահիանոս սին արհիւպիսկոպոս, նուիրած է Ս. Սիոն անապատի։

ԱԿՈՌԻ կամ ԱՐԿՈՒՐԻ. Գր. AGORHI կամ ARKOURI. — Հին և գեղեցկագիր մեծ աւանագիւղ մ'էր Այրարատայ Մասեացոտն գաւառի մէջ, Մեծ Մասիսի հիւսիսային կողմի ահաւոր վերհի եզերքը, գրեթէ 5000 ոտք բարձրութեան վրայ։ Գիւղիս անուան հետ կապուած են մեր պատմութեան վերաբերեալ շատ յիշատակներ, աւանդութիւններ և նոյն իսկ առասպելներ։ Ըստ ազգային աւանդութեան Նոյ նահապետը տապանէն եղնելէ վերջ այստեղ անկած է որթոյ ատ և այսպէս կոչուեր է Արկ–ուռի անունն, սակայն մեր բոլոր հնագոյն մատենագիրք միշտ

կը գրեն Ալոռի։ Այս աւանդութեան հաժամաւ աւանս լինելու էր, յետ ջրհեղեղի, աշխարհիս ամենահին գիւղը։ Ակոսի շէն էր մինչև 1840ին մեծ շարժը. բնակիչք՝ որոց թիւը 1500ը կ՚անցնէր, կը զբաղէին այգեգործութեամբ, և ընտիր ու գոլուած էր միշտ իրենց գինին. ունէին նաև ցորենով և գարւոյ արտեր, խնձորի, տանձի, դամասնի, կեռասի, ծիրանի, զեղձի, ընկուզի և այլ պանդաստան տեսակ պտղատու ծառերով զարդարուած պարտէզներ։ Այդ պարտէզները կ՚ոռոգէին բազմաթիւ առուակներով, և ընդգէմ մնթրապաշտ ազգին Պարսից զոր նկարագրէ Ղազար, և Սիմէոն Ապարանեցի իւր Վիպասանութեան մէջ հետեւեալ կերպով կը համառօտէ.

«Նախ յԱրկուսի պատերազմէ՝ զՊարսիկս սրոյ հատ(րակ ապին.
Նրբեք հարիւր զօրականք՝ զեօթն հազար կոտորեցին.
Որպէս երբեմն Գեդէան զերիւքս բիւրոց այլասեռին»։

Այս յաղթութիւնը քանի մը խարեբաներ ուզելով սուտ հանել, գուժկան գացին ի Դաւին և բսին թէ, «... ամենայն զօրքն



42· Արտաւազդ կը գահավիժի Ակոսոյ վիհը։

ժամանակ կ՚ըլլար որ գրեթէ կը սպառէր Գինոյ գետոյն ջուրը։

Մեր պատմիչներէն առաջին անգամ կը յիշէ գիւղս Ղազար Փարպեցին Եւ զարու վերջերը, երբ Հայոց զօրագունդը, քաջին Վահանայ եղբօր՝ Երանելւոյն Վասակայ առաջնորդութեամբ խոյս տալով Պարսից մարզպանէն. «Եւ եկեալ չուեալք բանակեցան ի գետոյն Մասեաց, որում անուն էր Ալոռի»։ Այստեղ փառաւոր յաղթութիւն մ՚ըրին Հայք Հայոց ի լանջակոզմանս Արկոսոյ առապատանկեալ պիակնացան»։ Ութերորդ գարու սկիզբն ալ (702ին), Հայք զգուշով Աբասեացիներէն՝ ապստամբեցան, և երկու հազար ձիաձէ բազկացած խմբով մը, Վասպուրականի կոզմերէն եկան հասան «ի մեծ աւանն Ալոռի». որոց վրայ Նախճաւանէն գալով յարձակեցան մօտ 8000 Արաբացիներ, բայց Հայք փութով Ակոսիէն իջնելով, երասխէն անցան և վարպանակերտ աւանի


ժէդ դիշնամին կատարեցին։ Դարձեալ գրեթէ 240 տարի վերջը, երբ Աբբասեան բռնաւորը նեղը ձգեց մեր Աբաս Բագրատունի թագաւորը, Գագիկ Աբծրունին իւր զօրքերով եկաւ բանակեցաւ այս կողմերը «առ լերամբ Գինոյ կոչեցեալ բլեր». ուր մեծ յաղթութիւն մ'բրին Հայք և թշնամեաց կոզմէն գրեթէ 8000 հոգի անկան և մնացածներէն շատերն ալ գերի տարուեցան։

Ակռոն ունի նաև խաղաղական և սրբազան յիշատակներ, յորոց մին է Յայտնութեան պատմած, մեր Ս. Թարգմանչաց աշակերտ, խաչատուր անուն վարդապետի մը տեսիլքը, որ տատուածային Յայտնութեան տօնին հանդիպեցաւ «... ի գիւղն Ակռոի, որ առաւզաբանի Աղկ–ուսի, յԱրտազ Մատեաց. վասն զի յերանելի Նոյի ի տապանէն և յիջանելն ի լեռնէն, անդ անկեալ այրի, և անուանեաց զտեղին Աղկ–ուսի»։ Տեսլեան մէջ երեցոյն էր նոյն գիւղէն նոր վախճանող մէկը, որ կ'ըսէր. «Ես առնուաէր էի գեղջիս Ակռոյ, և է անուն իմ Ղազար. ունիմ և որդի մի Գաւիթ անուն. որոյ՝ ի մեռանելն իմում թողեալ եմ նմա շէն տուն, լի ամենայն բարեօք, և արծաթ վեց հազար դահեկան. և նա բնաւ ոչ յիշեաց զիս ողորմութեամբ ի տուրս ազքատաց և քահանայից. վասն այնորիկ կամ տխուր և տրտում»։ Այս տեսիլքը պատմեցոյ խաչատուր, Ղազարայ որդին Գաւթի, իւր անհոգութեան մեղքը կը խոստովանի, և շատ ողջակէզներ ընելով գհայրը կը զոհացնէ։

Զմռնանք յիշելու ատա նաև այն առաջնորդական աւանդութիւնը, որ կը համարի թէ Աբրահամեան գոտոզ Աբրաւազդը, որ սորգութեան համար Գինոյ գեղջն մեռաւ գացած ժամանակ, յանկարծ բարձրէն կը գահավիժի (թ. 42), մեզ ծանօթ Ակռուոյ ահաւոր վըհի յատակը, և կը կատարուի իւր հօր անէծքը. «Անդ կացցես և զղջաս մի տեսցես»։ Այս գէպքէն մեր նախնի ռամիկ ժողովրդոց մէջ տարածուած էր այն հանրածանօթ աւանդութիւնն, թէ Աբրաւազդ արգիլուած է հոն այրի մը մէջ, կապուած երկաթի շղթաներով, որ գեռ գուրս պիտի գայ աշխարհս տակն ու վրայ ընելու, եթէ Հայոց գաղբիններըը, չծնծեն անդադար իրենց երկաթի սալերը. այս աւանդութիւնն տակաւին ուրիք ուրիք մնացած է ժողովրդեան մէջ, և գաղբիններըը կիրակի և տօնի օրեր անգամ, նախապաշարմունքով լեցուած, անհրաժեշտ հարկ կը համարին, քանի մը անգամ ծեծելու իրենց սալերը։

Տիւղատ բաց ի Ս. Յակովբայ վանքի եկեղեցիէն, յատուկ եկեղեցի մ'ալ կը յիշէ Ակռուոյ, զոր կ'անուանէ նաև Աղաքելոց վանք։ Ակռեցի Ներսէս կաթողիկոսը որ Ներսէս Գ սեպհականն էր, և նոյն Հայրապետի Հայածանաց պատճառաւ ի Տայս գըտնուած ժամանակ վերակացու էր Գունայ հրաշակերտ եկեղեցւոյ շինութեան, այն ինչ բարձրացաւ ի գահն Հայրապետական, 660-7 տարիներու մէջ, ինչպէս կը պատմէ Ասողիկ, «... զեկեղեցին Ակռուոյ վայելուչ շինեաց»։ Ոչ թէ միայն եկեղեցի, այլ նաև կղերականաց բնակարան, միաձանց մենաստան և աղքատաց ալ հիւրանոց շինեց նոյն տեղը, որոց վրայ ճոխ կերպով տեղեկութիւն կու տայ Յովհան կաթողիկոսը. «Շինէ զպայծառապանծ եկեղեցին ի Հայրենի բնակութեանն իւրում, ի վանս պատակերաին Ակռոյ, կացուրդ գնա յարդարեալ քահանայական սեռի միակրօնից և այլոց ևս կղերց եկեղեցւոյ, ի պաշտօն աստուածային խորանին, և ի ամօղութիւն հանգստեան հիւրոց և տնանկաց և աղքատաց»։ Նոյնը համաձայն կը յիշէ Վարդան ըսելով. «Շինէ զեկեղեցին Ակռուոյ, եղբայրանոց յօրինեալ և հիւրանոց»։ Այս երկու պատմչաց խօսքերը, մինչև ցարդ եղան շատեր, որ յատկացուցին Ս. Յակովբայ վանքին, մինչդեռ այն վանքին կառուցումը Ակռուոյ Աղաքելոց վանքէն վերջն է և Ս. Յակովբայ եկեղեցին իր փոքրութեամբն ասելի մատրան մը կը նմանէր և չէր կարելի զայն պայծառապանծ եկեղեցի անուանել։ Երթալու ճանապարհորդը ժէ դարու մէջ Ս. Աստիրաս և Մատթէոս առաքելոց անուամբ ևս կը կոչեն Ակռուոյ եկեղեցին։ Տիւղատ Հելուեատացին հրատարակելով եկեղեցւոյ սիւներէն միոյն վերնախարիսխը (թ. 43), որուն վրայ կանգնեալ կամ կանգնեցած բառի տառերը կը նշմարուին, և յատակագիծը (թ. 44), կը գնէ


նաև մեծութեան չափերը և կը համարի թէ Էջմ զարու մէջ շինուած ըլլայ, որ ճիշդ կը համապատասխանէ Աղաստաս կաթողիկոսի կառուցածին։ Եկեղեցւոյն ներքը լուսաւորուած էր կամուղիկով մը՝ որոյ ներքին արամագիծն հաւասար էր 15 ոտքի։ Երկայնութիւնն էր 54 ոտք և լայնութիւնը 30. ամբողջութիւնը շինուած էր սեւագոյն խանձաքարէ։ Միմներէն միոյն վրայ արձանագրուած էր, Աշոտ Գէ որդի Գագիկ Ա թագաւորի հրովարտակի մը



43. Ակոռւոյ եկեղեցւոյն սիմներէն մին։

պատճէնը, որով Ակոռին ազատ կ'ընէր ի հարկաց։ Եկեղեցւոյս կառուցուելէն վերջը, զարաւոր ժամանակաց մէջ, չորս կողմի հողն այնչափ բարձրացեր էր, որ Տիւպուայի այցելած ատեն, կողմնակի զռներն կիսով չափ թաղուած էին հողի մէջ։ Նոյնպէս ծածկուած էին երկրի մէջ բազմաթիւ գերեզմանաքարեր, յորոց մին ունէր հայկական ՆԴ (= 955) թուականաւ արձանագրութիւն մը Սահակ անունով անձի մը, որ աղօթք կը խնդրէ իր հոգւոյն փրկութեան համար։

Ակոռեցիք համարելով որ Նոյ առաջին անգամ ոզջակէզ մատուցած ըլլայ եկեղեցւոյս տեղւոյն վրայ, յատուկ չերմեռանդութեամբ կը պատուէին զայն, մանաւանդ որ հոն գտած էին Ս. Մաթէոս Աւետարանչի գագաթն և Անդրէասայ նշխարները։ 1647ին ատա գրուած աւետարանի մը գրիչը կը յայտնէ, թէ Ակոռին թեմ էր Խորվիրապի, բայց չի պիտցուիր քաղաքական խոչընդոտներնց թէ երկրին սատանութեան համար ժամանակը անբաւական կը կոչէ ըսելով, թէ «յաւէն օր երեսման կու կենանք»։ Ըստ յիշելոյն Զաքարիա սարկաւագի (Բ. 165), Երեւանայ սատանութեան ժամանակ աւանիս մէջ՝ իբրև նշանաւոր տեղ, կը նստէր այլազգի կոզմնակալ մը, Սուլթան տիտղոսով։



44. Ակոռւոյ եկեղեցւոյն յատակագիծը։


Ակոռին վերջին շարժէն կործանուելէն առաջ, ունէր ըստ ումանց 300 և ըստ այլոց 200 Հայոց տներ, բոլորը քարաշէն, և ան-ձանց թիւն էր զրեթէ 1600, վարձկան Քրդերէն զատ։ 1840 տարին մեր ազգային պատմագրութեան մէջ տխուր պատկեր մը կը ներկայացնէ նկատմամբ Ակոռւոյ և շրջակայից։ Նոյն տարւոյ յուլիս 2ին, ըստ նոր տոմարի, Մատեաց Վրէի խառնարանին յանկարծական բորբոքումն և վերափչումը, տխրահռչակ աւանդապուղս իր բնակիչներովը, ծածկեց, վերցուց, թաղեց, անհետացուց ըրաժայռերու և լաւաներու կոյտերու տակ։ Այս

մխուր գէպքը Ակուոյ մերձարնակ ակա-նատես մէկը, հետեւեալ կերպով կը նկա-բագրէ. «Եղև անկարծ պատառումն, որ է ձոյր Մասեաց լեռնէն ելեալ՝ կրակախառն ևս քամի զարմանատեսիլ. որպէս ծծումբ այրէր, և բարձրանայր ի վեր Մասիս՝ բո-լոր նոյն վանքովն (Ս. Յակովբայ), և ի նմին եղեալ միաբանք, վարդապետք և Պետ-րոս յաջորդն վանից. այս ամենայն բո-վանդակ բարձրացաւ ընդ քամուն, և անկեալ ի վերայ գիւղին՝ երկու բաժին եղև. ևս կրկին այն ևս քամին առեալ Մասիսու սառնամա-նիք պռոզն և ձիւնն խառն կրակով, անկեալ ի վերայ գիւղին կորուս զամենեսեան. թիւն աւելի քան 1500 անձինք բնակիչք գիւղին այնր, արք և կանայք կամ ծերք և տղայք. բաց ի սոցանէ 600 տաճիկ Քուրթ անձինք՝ իւրեանց չատրովքն, ևս ոչխարքն 2000էն աւելի, որ այս նմանապէս կորեան. միայն եօթն անձինք ի բնակչէն Ակուոյ զերծան, այն որ յայգիսն էին և կամ յայլ տեղի. այլ ևս յայտնի երկու անձինք նոյն կրակէն զերծան. զի տեսանէին (զէմք) նոցա իբր պարուրով այրած. որ հրամանաւն Աստուծոյ ողջացան զեղով, որք են Մկրտիչ և Թա-դէոս անուանքն։ Դարձեալ ևս նոյն կրակա-խառն քամին եկեալ՝ զեղի պարիսպացն վա-ռեալ եղեալ ծառքն՝ բոլորովին հանեալ յե-րեսս երկրի ծառոց արմատքն. զի այնպէս աւերեալ (էր) որ այժմ տեսողքն կարծեն՝ թէ քնաւ տեղիքս այս ոչ է եղեալ շինու-թիւն։ Եւ յետ նորա 14ին (26 ն. տ.) օրն յուլիսի կրկին եղև գետաշարժ մեծ. կի-րակի գիշեր ի հաւախօսի ժամուն՝ շարժեալ երկիր, բազում աւերութիւն եղեւ Բեւռնայ գաւառն՝ Սիւրմէլի գիւղին. և այն օրն մինչ ի 12 անգամ շարժ եղև։ Ցետ նորա զենին բազում մնասաղ՝ որ առ Աստուած այլ առնէ»։ Ահասոր երկրաշարժէս ազատող Քուրդ մը, 1858ին կը պատմէր ժիլ անուն Ռուս բանասիրին թէ գիշերը հեռուն լերան վրայէն լսելով ահեղ գղրդումը, երկրորդ օրը փու-թացեր է յԱկոռի տեսնել իւր տունը, և գտեր է միայն քարերու կոբրուկներ, որոց տակ թաղուած էին իւր որդիքը և բոլոր ու-նեցածը։ Ասոր նման 114 հոգի ևս գեղէն դուրս գտնուելով, զերծ մնացին հասարակաց հարուածէն, և գալով գտան իրենց գիւղը իբրև տխուր և ամայի գերեզման մը, և ա-մենևին շէնքի մը կամ կենդանութեան նշան չգտան։

Այս գէպքէն գրեթէ երեք տարի վերջ, վահնէր երկրաբանը, կողմանցս քննութեան գալով, հետեւեալը կը գրէր. «Ակոռի գեղին ալ և ոչ ամենափոքր նշմարանքը կը մնար, եթէ յափշտակաւէր քիւրտերը զժբախտու-թիւնը լսելուն պէս՝ բան գողնալու համար, քանի մը տեղեր շուտ մը եկած ճամբայ բա-ցած չըլլային։ Ջանազան տեղեր՝ սուր քա-րերն ու հողերը շատ ծանր չըլլալով՝ շէն-քերը բոլորովին փլուցած չեն, ծակեր ու խոռոչներ կը տեսնուին, յորոց դուրս ցցուած են տղին անդին աներու յարկի գերաններ։ Մենք ցուրտ գիշերները բացօթեայ եղած առեներս՝ այս գերանները կը վառէինք։ Ի-րիկուն մը տեսայ որ ինծի հետ մէկտեղ հկող Հայերուն մէկը վերջին ատաճանի տխուր զէմքով գերան մը կրակը կը գնէր. Ասիկա իմ տանս մէկ գերանն է, բոլոր զժբախտ մարդը ու աչքերն արցունքով լեցուեցան։ Իւր տնէն 23 հոգի կորուսեր էր, կին, զա-ւակներ ու թոռունք. ինքը ունևոր ու երջանիկ է եղեր, բայց այժմ իր ծերութեան առեն, միայնակ մնացած էր ու ամենագառն աղ-քատութեան մէջ կը տառապէր»։ Այսպէս ահա Հայաստանեայց հնագոյն և անուանի աւաններէն մին Նափոլիի, Փամիլի և Հեր-քուլան քաղաքաց պէս թագուեցաւ կորուսե-ցաւ քարերու, հողերու և լաւաներու տակ, և չգիտենք ևս, թէ պիտի գա՞յ արդեօք օր մը և կամ հնարաւոր պիտի լինի՞, որ զէմ վերոյիշեալ քաղաքաց նման, պեղումներով դուրս բերուին անյայտացած և թագնուած հնութիւնները և յիշատակարանները։

Ս. Յակովբայ Վանքը եւ Աղբիւրը. — Նայեան տապանի Մասիսի կատարը հանդ-չելուն տուգութեան մեծագոյն փաստ մ՚ալ կը համարուի, Ս. Յակովբայ Մծբնայ հայ-րապետի, նոյն տապանի փայտերուն ի խնդիր երթնեկն։ Մասիսը բաւական հին ժամանակ-ներէ սկսեալ, իւր ստորին կողին վրայ ու-նեցեր էր մինչև 1840 թուականը, վերոյի-շեալ հայրապետի անուամբ հրաշագործ աղ-բիւր մը և վանք։ Առաջին անգամ հին

Հարանց վարուց մէջ կը պատմուի, թէ ինչպէս սրբակրօն ծեր մը կը բնակէր Մասիս լերան ստորոտը, Ս. Յակովբայ աղբիւր կոչուած տեղը, որուն գալով մեղաւոր իշխան մը, յետ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ իր մեղքերն քաւելու, կը փափաքի բնակիլ ծերուն մօտ և սրբութեամբ իր օրերն անցընել, սակայն ծերն խորհուրդ կու տայ միաբանակեցաց վանքերէն մին երթալ։



45· Մասեաց լեռները, ըստ Պուէյ Լըկուզի։

1· Հանդիստ ստացանին։ – 2· Ձիւն։ – 3· Մառախուղ։ – 4· Արարատեան լեռները։ – 5· Ս· Յակովբայ Մծբնայ։ – 6· Սրբոյն հետ խոսող ձայն։ – 7· Ոտն Մասեաց։

Թալ, « ... ի Սուկաւ կամ ի Սուրբ Յակի կամ յԵրաշխաւորն կամ ի Մաքենոցն »։ Ասոր կ'երևի թէ, Ըրդ դարուն մէջ, յորում ծագկեցաւ Մաքենոցաց վանքը, այսոհդ տակաւին կառուցուած չէր Ս. Յակովբայ վանքը։ Գաղղիացի ուղեորն Պուէյ Լըկուզ 1647ին Պարսկաստան գացած ժամանակ եբևանէն անցնելով և Մասիս լեռը նկարագրելով, մեզ կը ներկայացնէ նաև անոր պատկերը (թ· 45), որուն ստորոտը նկարած է գՍուրբն Յակովբ գաւազան ի ձեռին ծնրադիր, զոր անդիմութեամբ կը համարի Հայոց վարդապետներէն մին։ Աւանդութիւնը կը համարի, թէ Ս. Յակովբայ վանքը շինուած էր ճիշդ այն տեղ, ուր նա յոգնած նստեց, և հրաշիւք հրեշտակի ձեռքէն ընդունեցաւ տապանի փայտը։ Փոքրիկ մենաստանիս դիրքը Ակոռիէն աւելի վեր էր, գրեթէ 5992 ոտք բարձրութեան վրայ, Աւազ Մասիսի հիւսիսային արևելեան ստորոտը Գինոյ գետակին աջ կողմը, և շրջապատուած էր տաքաւածտա պարսէզով մը, ինչպէս կը տեսնուի Փարրօթի հրատարակած պատկերի մէջ (թ· 46)։ Մենաստանի կիսքրոնն էր փոքրագոյն խաչաձև և գմբեթաւոր եկեղեցին, որոյ չորս կողմը կային քանի մը բնակարաններ և խրճիթներ միաբանից։ Եկեղեցեակը կառուցուած էր լերան սեաւ խանձաքարերէն, որմոց մէջ կային խաչանշան քանդակներ, և պատուհանաց մօտ ոչ սակաւ արձանագրութիւնք, յորոց հնար էր որոշել շինութեան ժամանակը, եթէ աղգային ուղեոր մը ժամանակին ընդօրինակած լինէր։ Դարձեալ շնորհակալ լինինք Տիւպուայի, որ այդ արձանագրութեանց ամենց գէթ գաղղիական թարգմանութիւնն մեզ հասուց, որք գրուած են ԺԴ դարու մէջ և ԺԴի սկիզբը։ Զի (= 1271) թուին Մխիթար ոմն և իւր կինն Թաւար կը նուիրեն վանացս իրենց բոլոր ստացուածքները, և միաբաններք կը խոստանան չորս պատարագ Տեառնընդառաջի ատենն։ Սմբատ անունով մէկն ալ ՋԻԳ (= 1274) թուին կու տայ Զոլա (Zola) և Զիպի (Zibi) երկիրներուն վեցերորդ մասն, և ի փոխարէն կը մատուցուի տարին չորս պատարագ, երկուքը իրեն և երկուքը ամուսնոյն համար։ Հնագոյն արձանագրութիւն մ'ալ կը ծանուցանէ, թէ Ղիչախ անունով մէկուն որդին, որ ծառայ է եղեր Սարգսի ուրուքն, գալով ի վանս ընդուներ է քրիստոսական սուրբ կրօնքը։ Բազմաթիւ յիշատակաց խաչքարերով ծեփուած են եղեր եկեղեցւոյ արտաքին որմերը, յորոց մին ՋԾԲ (= 1303) թուականու ի յիշատակ Հասանայ. ուրիշ մը ի յիշատակ Յովհաննէս, և այլն։

Վանքիս մէջ կը պահուէր Եղեան տապանի փայտի կտորն և Ս. Յակովբայ մէկ

մաան, որոնք շղթայով մը միացած, այժմ կը պահուին յԷջմիածին։ Վանահայրերէն մեկ ծանօթ են երկու վերջիններըը, մին ծեր րուն կարապետ վարդապետը, զոր 1829ին փարթամ գերմանացին մեր Պ. Խաչատուր Աբովեանի հետ առաջին անգամ Մասիսի կատարը բարձրացած առնն տեսած էր, և հետեւեալ նկարագիրը թողած. «Աչխատասէր և զուարթմ ծերուն մ'էր սա, որ գերեզմանը առաջուց փորել և սրմել տուած էր, թէ պէտ ժամանակին Պարսիկներէն շատ տապաստանք կը կրէր, բայց միշտ Նոյի լերան պահապան կը կենար»։ Երկրորդն՝ Պետրոս վարդապետը, որ իր միաբաններովը Մասիս մը միր ղէպ ի արեւելք, ահաւոր վիհին եզերքը։ Ըստ աւանդութեան բղխած է Արբոյն ագօթքով կամ արտասուօքը, որ յետոյ մարան ձեով պարապատառուելով, մեծ ուխտաւորի գարձաւ. Յաւրը ամաններով կը առնէին հեռուր տեղեր և կը սրսկէին այն գաշտերու վրայ ուր մարախները կը ձգտէին, և մէկէն կ'իջնային հոն խմբովին մարախատառ թռչուններ, որոնք առիկէն կը կոչուին Ս. Յակովբայ Գուչ (թռչուն)։ Վենետաց տարեգրոց մէջ կը պատմուի, թէ 1473ին կիպրոսի Յակոբ թագաւորը, երկու Հայեր գրկեր է ի Մասիս այն այս հրաշագործ մարախահալած չրէն իր երկիրը բերելու



46. Ս. Յակոբայ վանքը։

սխտ մարգարեակ մեսերուն ամենէն բարձր տեղը բարեպաշտութեամբ կ'ապրէր, գժբախտ դէպքին զոհ գնաց։ Պօղոս Մանուկով առնուամբ մեկը հետեւել կերպով կը նկարագրէ ահաւոր շարժը. «Երկու ահագին շարժուն ահագին գլորմամբ. և կայր ի վերոյ գիւղին (Ակուռայ) վանք մի գեղեցիկ յանուն Սրբոյն Յակոբայ. և իւր հրաշալի Աղբիւրն, որ յերկրէ յերկիր առնէին գՆուրն, որ բազում հրաշս առնէր. և վանքն յետ ապրիւրին բարձրացաւ մինչ ի լեառն Մասիս և անկաւ ի վերոյ գիւղին...»։

Հրաշագործ ագրիւրը՝ որ անհատական ևս կոչուած է յոմանց, կը գտնուէր վանքէն քիչ մը վեր դէպ ի արեւելք, ահաւոր վիհին եզերքը։ Ըստ աւանդութեան բղխած է Արբոյն ագօթքով կամ արտասուօքը, որ յետոյ մարան ձեով պարապատառուելով, մեծ ուխտաւորի գարձաւ. Յաւրը ամաններով կը առնէին հեռուր տեղեր և կը սրսկէին այն գաշտերու վրայ ուր մարախները կը ձգտէին, և մէկէն կ'իջնային հոն խմբովին մարախատառ թռչուններ, որոնք առիկէն կը կոչուին Ս. Յակովբայ Գուչ (թռչուն)։ Վենետաց տարեգրոց մէջ կը պատմուի, թէ 1473ին կիպրոսի Յակոբ թագաւորը, երկու Հայեր գրկեր է ի Մասիս այն այս հրաշագործ մարախահալած չրէն իր երկիրը բերելու համար։ Երկրաշարժէն վերջ ագրիւրս փոխեց իր ընթացքն, և չհանէն գաւթ նետուած քարերու ու հողերու մէջէն սկսաւ բղխել։

— Այրարատ, 470—474։ Գազար, 376։ Ն. Հայ. 260։ Պտկ. Ն. Հայ. 69—71։ Ղևոնդ, 24։ Թ. Արծրունի, 338։ Յ. Կաթողիկոս, 116։ Վարդան, 70։ Վարք Հաթանց, 485—7։ Հնախաօս. Հայ. Ա. 71, 274. Գ. 14, 15։ Ստ. Հին Հայ. 445։ Հիւսուածք, Գ. 151։ Բիւզանդիոն, 1897, p. 344։ Տիւպուա, Գ. 465—78։ Փարպոր, Բ. 126, և այլն։ Վակներ, 78—96։

— Գիւղ Գուգարաց Տաշիր գաւառի Լոռի վիճակին մէջ, 45 տուն բնակչօք։

մէ, որ այժմ կը կոչուի Ախուրի գիւղի անուամբ, որոյ բնակիչք են Թաթարք 51 տուն։ Տես ԱԽՈՒՐԱ և ՆՈՐ ԱԿՈՒՌԻ։


ԱԿՈՒՌԻ. — Գիւղ Տփղիսու նահանգի Թելաւ գաւառի մէջ. բնակիչք 1512, մեծագոյն մասը Վրացի, կան նաև սակաւաթիւ Հայեր։

ԱԿՈՒԱՎԱՐ. — Անուն Տաթեւու վանուց արտաւարներէն միոյն, Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ։

ԱԿՈՓԻ. — Վանայ բերդէն դէպ յարեւելս նայելով՝ այգեստանեայց հիւսիսակողմը փոքրիկ լեռնագօտի մը կայ, որոյ արեւելեան գլուխը կ'ըսուի Զրմիզրմի մաղարայ, արեւմտեան ծայրը Ակոփի, և մէջտեղը Մըհերի դուռն։ Զրմիզրմի մաղարան ընդարձակ քարայր մէ, որուն մէջ մարդիկ կ'երթային շրջելու, և ուր ձայնը զրմփ զրմփ արձագանք կուտար։ Կառավարութեան հրամանով արգիլուած է թէ՛ այս և թէ Վանայ ուրիշ հնագարեան քարայրներու մուտքը, որովհետեւ հետաքրքրութեամբ և կամ հարստանալու փափաքով շատեր ներս մրտնելով այլ ևս չեն վերադարձած։ Ժամանակաւ այս այրի ներսը գացող անձի մը պատմութիւնն կը տեղեկանանք, որ խորը գնալ գտնագան կողմերը առնոց ճանապարհներ կան եղեր և տեղ տեղ քարափոր և քանդակագարդ սենեակներ, որոնք լինելու են անշուշտ, խորհնացեայ պատմած Շամիրամայ շէն սասրերկրեայ ապարանքները։ Անգլիացի հնագէտն Պ. Սրմիթ և ապա Պ. Բրէյթին, լեռնոս բերդաձեւ գագաթն և ուրիշ կողմեր պեղուելեր լրնել տալով, գտան ոչ սակաւ հնութիւններ, ինչպէս քարէ աւազաններ, պղնձէ վահաններու կաղապներ, արոյրէ ձուլուած եզան գլուխներ, փղոսկրեայ կիսարձան մը, պղնձէ ամանեղէններ, ձեւաւոր և խորհրդաւոր շէնքեր, գիտարանի կամ դպրոցանոց համար, ընդունելութեանց սրահներ, և այլ ուրիշ շատ շէնքերու աւերակներ, որոց վրայ նայելով մարդ ժամանակին ճարտարապետութեան վրայ կ'սքանչանայ։ Բայց տեղացիք ևս գաներ են դեռ աւելի նշանաւոր առարկաներ. ոսկեղէն և արծաթեղէն զանազան զարդեր, արոյրէ ոսկեզրած արձաններ և ծագկեայ բազկաթոռներու մասեր, երկաթի սլաքներ։ 1856ին յայտնուած է փուռ մը, մէջը լեցուն մօտ 500 հատ զանազան մեծութեամբ ջրամաններ կամ փարչեր։ Դեռ ուրիշ անթիւ յարգի հնութիւններ կը գտնեն այդ տեղերէն շինութեան համար քար հանող մշակներ, բայց ափսոս որ այդպիսի հնութիւններ չեն պահուիր յատուկ տեղական թանգարանի մը մէջ, և մերթ ընդ մերթ անձանց ձեռքով կը փճացուին, ինչպէս օրինակ, 1880 թուականին, մշակ մը կը գտնէ բեւեռագրերով ծածկուած ձուլուած բազկաթոռ մը և կը վաճառէ քաղաքացիի մը, և սա զարմինին կը յանձնէ անդին հնութիւնը, իր սայլի անիւներուն գործածելու համար։

Զրմիզրմի լեռը կը ձեւանայ կարգ մը ժայռերէ, որոց կրաքարը նոյն նիւթէն կը թուի ինչ որ է Վանայ միջնաբերդինը. ժայռերը բարձրացած են կիսաբոլոր՝ որոց մէջտեղը, քանի մետր դեռնէն բարձր, կարծր քարի վրայ, որ ի մէնջ Ակոփի քար կը կոչուի, քանդակուած է քառանկիւնի տափարակ դուռն մի, 5 մետր բարձրութեամբ և 2մ. լայնութեամբ (Թ. 47). այս դրան վրայ կան սեպագիր արձանագրութիւնք, բայց ոմանց մինչև 95 տող բովանդակութեամբ, որոց սկզբնի տողերը, աւելորդապաշտներէ ջնջուած են։ Մօտ երկու կողմը կան նրբատարաններ և 25—30 հարիւրորդամետր լայնութեամբ սանդղոց աստիճանք, գրեթէ բոլորը միակտուր քարաժայռէն։ Տեղացիք զայս կոչեն Մհեր—Գափուռուռ կամ աւելի սովրական Մհեր կամ Մհիրայ դուռն, և զանազան առասպելներ կը պատմեն մասն նրկատմամբ։ Մհեր անունով պաժան և չարաբարոյ հրէշ մը կայ եղեր, որ իւր աշխարհաւեր չարութիւնը, մեր երկրի մէջ ևս աւելի չարաթափելու համար, վերնատատ հրամանով մը ինքն և իւր ձին կը փակուին Ակոփիի դրան ներսը, ուր ձախրի ֆալակ կը պառնայ, այսինքն աշխարհի մարդկանց կամ երկրագործին ճախրը, անիւը։ Մհերը շաբաթական անոր վրայ կը նայի. երբ այդ անիւը գադարի, այն օր Մհեր կատաղի զօրութեամբ և մրրիկին ձին հեծած դուրս պիտի ելնէ այս գոնէն և աշխարհ ամենայն տակն ու վրայ պիտի բնէ։ Ասոր առասպելին

խիստ նման է խօսենացւոյ Արտաւազդայ վրայ գրած առասպելաբանութեանը։ Գարձեալ կ'ըսեն, թէ ամէն տարի Համբարձման գիշերը երկինք գետին գիրար կը համբուրեն. և այդ րոպէին Մհերի դուռը կը բացուի. ան որ արթուն մնացեր և այդ վայրկեանը տեսեր, ինչ որ սիրտն ուզեր, այն պէս եղեր է։ Եւ որովհետեւ Մհերի դուռն բաց է այն րոպէին, ան որ ներս մտնէ, որքան ոսկի ուզէ կ'առնէ դուրս կ'ելնէ, վասն զի հոն աշխարհի ոսկին կուտուած է։ Քանի մը մարդիկ փորձեր են, և ազահ լինելնուն համար ետքէն ոչինչ գտեր։



47. Ակոփի ժայռերը և արձանագրութիւնը։

լով շատ վերցրնելու համար ուշացեր, դուրս գոցուեր, ներսը մնացեր են։

Կը կոչուի նաև Զոպան–Գափռուռ, Հովուի դուռն, իբր թէ, հովիւ մը ննջելով այս գրան առակ, երազ կը տեսնէ, յորում բարի հոգի մը կը յայտնէ իրեն այդ կախարդեալ դուռը բանալու գաղտնիքը։ Գտած նիքն էր քանի մը խորհրդաւոր բառեր արտասանել, որք քանդակուած էին գրան վրայ. հաղիւ արձնցած հովիւն կ'արտասանէ մագական բառերը, մէկէն դուռն կը բացուի կռնակի վրայ, առջեւն հանելով ոսկւով և ադամանդով լի քարայր մը։ Երբ ներս կը մտնէ դուռը կը գոցուի, նա կը փութայ մախտը լեցընել թանկագին աւարով. կը կրկնէ մագական բառերը, դուռը կը հետազոտի իր հրամանին և թոյլ կու տայ դուրս ելնելու։ Մինչ արագութեամբ տուն կը տանիր գտած գանձերը, կը տեսնէ որ արտորանքի ժամանակ ցուլը մոռցեր է։ Եկած ճամբով շուտով ետ կը գառնայ. երրորդ անգամ մի ևս դուռը կը բացուի, բայց երբ գաւազան գտած այրէն կ'ուզէ դուրս ելնել, յիշողութիւնը կը պակսի. չի կրնար յիշել մագական խօսքերը, կը մնայ ներսը, և վեռ

կ'ապրի քարայրի մէջ փակուած. ուսկից երբեմն կը լսուին իր ողբոց ձայները։

Գրանս արձանագրութիւնը երկպիր տեսակէն է, զոր օրինակից և հրատարակեց Շուլց (Թ. ԺԼ)։ Գարձեալ օրինակից Լէյէբռ. կազապարից Տէլրօլ. հրատարակից և մեկնեց Մորտման (Թ. Գ)։

Ակոփին նշանաւոր է ոչ միայն իր հնութիւններովը, այլ և հրաշալի պերքովը, և գեղագուարճ տեսարաններովը։ — Այս առնուամբ Հայոց պիւղ կամ հանգրուան մը կայ, լերանս մօտ՝ այգեստանեայց կողմը, որ յայլազգեաց կը կոչուի Ակ–Քէօփրիւ։ —

Աթթիւ վաստ. 1858, 272–275։ Գրոց Բրոց, 132–35, 137–183։ Համով Հոտով, 60–61։ Journal Asiatique, 1840, N. 52, 300–309։ Մշակ, 1881, թ. 119։

ԱԿՍԻՈՄՈՒ կամ Ս. ՅՈՀԱՆ. — *Վանք Աչրարաւայ Բասէն գաւառի մէջ Միրանեաց լերան սառոյցը, զոր հեռուէն կերպով յիշէ Ասողիկ (Գ. Թ) ժէդ դարու վերջերը. «Սա (Յովհաննէս խաչակիր վարդապետաբ) մեռաւ ի մոլեալ ապգէն Վրաց սրով. և թաղեցաւ ի վանս որ Ալսիգումն ասի, ի Բասէն գաւառի, և այժմ Ս. Յոհան՝ առ սառոյտաւով լերինն Միրանեաց»։*

ԱԿՐՈԻԹԱՉ. *Տես ՆՂՈՒԿ։*

ԱՀԱԿՅԱՆ կամ ԱՂԱՔԻՉԻՔ. — *Գիւղ Աչրարաւայ Արագածոտն գաւառի Թալին (Մարտարապատ) վիճակի մէջ։ Բնակիչք 290, բաժնուած 33 տան, Հայք և Թաթարք խառն։*

ԱՀԱՎԱՆՔ. — *Իբրև ապարակ Աղթամարայ յիշէ Թ. Արծրունի (258)։*

ԱՀԱՐ կամ ԱՀԷՐ. — *Վասպուրականի արեւելակողմեան հին Գառնի գաւառի մէջ կ'ինկնայ քաղաքս, Երասխայ օժանդակ համանուն գետոյն վրայ, որոյ անուամբ կը կոչուի նաև գաւառն։ Քաղաքիս բնակիչք կը համարուին 700 տուն։ Զորս կողմը ուներ սեպհենեաց պարսէզներ և պտղատու ծառեր, զվնասուր բերքն են արմտիք։ Ողը ցրտային է. ջուրը ագուցանելով էշքէնների լեռնէն կ'իջնէ ի քաղաքն։*

ԱՀԱՐՈՆ. *Տես ԱՀՐՕՆՔ։*

ԱՀԱՒԿԱՆԻՑ կամ ԱՀԵՒԱԿԱՆԻՑ ԳԻՒՂ. — *Թ. Արծրունի (էջ 241), հեռուէն կերպով կը յիշէ գիւղս Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, Զորոյ վանքի մօտ. «... գառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարեւելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեղջն Կոխապատնից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեղջն Աճեւականից, ի կառարածի լուսաւորութեանն Հայոց. քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից վահեւահանի»։*

ԱՀԵՐՄՈՆԻ Վ. *Տես ՀԵՐՄՈՆԻ Վ.*

ԱՀՄԱՆԿԱՆ. — *Լիս Միւնեաց Գեղարքունի գաւառին, Գեղամայ ծովակի արեւմտեան և հիւսիսիւրի հարաւային կողմը։ Ի Թրքաց կոչուի Գանկը կիօլ (Արեան լիճ), փոքրիկ լճակի մը անուամբ, որ կը գտնուի լերանս առոյգաջուր։*

ԱՀՆԻՋՕՐԱՎԱՐ. — *Գիւղ Հայոց, այժմեան Լօռուայ վիճակի մէջ. բնակիչք 154, բաժնուած 17 տան։*

ԱՀՐԻՎԱՆ. — *Գիւղ Մալմասաի՝ զոր Բափիի կը համարի հին Զարեհաւան քաղաքի տեղը։*

ԱՀՐՕՆՔ. — *Գիւղ Ցուրուբերանի այժմեան խուրի վիճակի մէջ, Սասնոյ արեւմտակողմը. բնակիչք գրեթէ 200 տուն զուտ Հայք։*

ԱՂԱԲՈՑ ՎԱՆՔ. — *Ճիշուի Միւնեաց Գեղարքունի գաւառի հին Վանեվանի արձանագրութեանց մէջ։*

ԱՂԱԴԻՐ. — *Գիւղ Բարձր Հայոց Դերջան կամ հին Մալահունիք գաւառի մէջ։*

ԱՂԱԶՕՐ կամ ԱՂԱՍՈՐ. — *Աչրարաւայ կոտայք գաւառի մէջ, գիւղ Հայոց. բն. 170 բաժնուած 32 տան, յորոց երկու տուն Թաթարք։ Գիւղիս արեւելեան ծայրը կը գտնուի կաթնաղբիւր կոչուած ջուր մը, որ յատկութիւն ունի կանանց կաթը շատցնելու. շատ կողմերէ կուգան այս ջրոյս կատայք, և նպատակնուն հատած կը վերադառնան։*

ԱՂԱԹԱՄԱՐԱԹ. *Տես ՆՂՈՒԿ։*


ԱՂԱ–ԼԻՄԱՆ կամ ԱՂ–ԼԻՄԱՆ. — *Կիսաթոլոր գոգ (թ. 48) Ծովային Կիլիկիոյ, որ այժմ կը ծառայէ իբրև նաւահանգիստ Սելեւկիոյ, յորմէ հեռու է գրեթէ իսը մղոն։ Արեւմտեան եղերքը կը գտնուի Թրքաքրնակ Աղա–Լիման Իսկէհէի գիւղը, որոյ հիւսիսային կողմը կը տեսնուի փոքրիկ, կիսաւեր, անկանոն ուխտանկիւնի բերդ մը. սառաւ են պարիսպները և անկիւնները կան մէկ մէկ աշտարակ։ Սելեւկիան չհասուցուած, հոս էր հին Հղոմի կամ Հորմիա քաղաքը, բայց Սելեւկիան կառուցուելէ վերջ, Հոլմիացիք հոն փոխադրուեցան։ Ժէ դարու ընկիզբը Միջերկրականի հինից շատնալովը, շատ անգամ անոնց հետ կը պատերազմէին Իտալացւոց նաւերը. 1612ին Մալթայի ասպետները և Թոսքանացիք անոնց հասէն ինկնալով կով կղզւոյն տիրեցին։ Իտալա-*

ցոց զէմ զրկուեցաւ Օսմանեան Մուհամմէտ Էօքիւզ կամ Տամատ ծովապետը։ Պաւերազմի մը մէջ յելուզակները բռնելով քառասուն Ֆիորենցացիներ սպաննեցին և զբլուխները շարեցին Ադա–Լիմանի բերդի պարըսպաց վրայ։ Թոսբանացի Ֆոզմդ գուքսը սաստիկ բարկացած, զրկեց պատերազմական վեց նաւեր, Ս. Յովհաննոսի կարգէն կեան Թագաւորաց և իշխողաց ժամանակ։ — Սիսուան, 326–327։

ԱՂԱԹԵՐՊ. *Տես* ՀԱԲԱՆՊ։

ԱՂԱՀԵՅԻԿ. *Տես* ԱԳՈՒԼԻՍ։

ԱՂԱՀԷՃԻ. — *Բաւական ընդարձակ և բնութեան հանգամանաց համեմատ գեղեցկագիր գաւառ մ՚է Սիւնեաց աշխարհի ա-բեւելեան հիւսիսային կողմը. հիւսիսէն և*



48. *Ադա–Լիման* 1 / 15,000։

քառասուն գինուոր և ութիշ գօրքեր, որոնց հետ միանալով նաև այլևայլ ազգերէ ոչ սակաւ ինքնակամ գինուորներ, 1613ին եկան յարձակմամբ բերդիս ալրեցին, 240 բրիստոնեայ գերիներ ազատեցին, և գերեցին 300 հոգի և ութ նաւ՝ երկուքը պատերազմական։ Ափսոս որ չգիտենք, թէ այժմ աւերակներով լի Ադա–Լիմանը և իւր շրջակայքը ինչ վիճակի մէջ էին, մեր կիւլիաբեւմուտքէն կը սահմանուի Ծարայ և Ծրդկոյ լեռներով, արեւելքէն Ագցախ նահանգով և Հարաւէն Հարանդ գաւառով։ Թէ պատմական և թէ տեղագրական ծանօթութիւնը խիստ նուազ են գաւառիս վրայ։ Երկիրը ջրաշատ է, գլխաւոր գետն կը կոչուի Աղաւնոյ կամ Հագարուռ (ևս Ագարակոռ), և ունի գանազան օժանդակներ, ինչպէս Ագարա, Մուճնուռիս, Նարուռան չայ, Հո-

չանց կամ Հօլաս, Ղօրաձլրխ, Խնաւրիմ, Ագ—օղլան։ Այս գետոց և վտակաց պատճառաւ Աղահէճք ունի շատ ձորեր, և իրեն պրացի Արցախի նման գրեթէ ամէն տեղ անառատախիտ է։

Անդայտ է գաւառիս Աղանիճք կամ Աղանիճջ անուան ծագումը, և որովհետեւ իւր մեծ գետն Աղաւնոյ՝ գրուած կը գտնենք նաև Աղռնիից, հաւանական է կարծելն, որ երկիրն աղային բնութիւն ունենալուն՝ այսպէս կոչուած լինի, և կամ գրացի Աղուանից կարծուած Աղոռ նահապետին անուամբը։

Գաւառիս հին անուան ծագման պէս, անծանօթ են մեզ նաև իր երկրորդական Քաշաձաղք կամ Քշտաղք և Խոժոռաբերդ անուանց ծագումը։ Միւնեաց պատմիչը, իր աշխարհի գաւառաց վրայ տեղեկութիւն տուած ժամանակ գաւառիս համար կ'ըսէ. «Հինգերորդ Աղահէջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և Խոժոռաբերդ»։ Ինճիճեան այս վերջի անուններն կը համարի յաւուրկ երկու բերդերու, զի պատմիչն ևս քիչ վերջը բերդերու կարգին մէջ կը յիշէ Քաշէ բաղոռց բերդ և Խոժոռաբերդ։ Ուրիշ գաւառաց պէս, չի յիշուիր և ոչ իշխան կամ տէր Աղահէճոյ. զուրկ է գաւառս նաև քաղաքաշէն ղէպքերէ, և առիթ կը կարծուի թէ հին ժամանակներէ ի վեր, Միւնեաց իշխաններու ձեռքէն ելնելով անցած ըլլայ Աղուանից իշխանութեան տերքև, և կամ մանաւանդ այլազգեաց բռնաբարութեան տակ, որք փոքացուցին աւերեցին գաւառիս վայելչագեղ ձորահովտաց մէջ գտնուած հին ազգային յիշատակները։ Պատմութեան մէջ կը յիշուի, թէ ինչպէս Վչիճ արաբացի սպասիկանի որդին Փատգոս, 847 թուականին Գանձակայ կողմերէն գալով «... յաշխարհն Միւնեաց գերի վարեալ զբազացն սահմանս՝ գայ ի Ջանէ յԱղաւնէջ գաւառ, յաւան մի Արքուռ անգետ կոչեցեալ. իսկոյն հրամայէ այրել գեկեղեցին՝ որ Սրբոյն Գրիգորոյ էր անուանագրեալ. և յայնժամ զօրութիւն առաւուածային հասեալ, հեծեալ մի ի ձի ճերմակ՝ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս, ակն յայտնի ամենեցուն ընթացեալ ի բանակն, շփոթեալ զայրն անօրէն հանգերձ զօրօքն իւրովք ի փախուստ դարձուցանէր ընդ սարն՝ որ կոչի Եղչերխ։ Եւ անդ հոգին զժնդակ մրրկեալ շրջապատեալ զնոսա. և միայն ի ձի ապառատան փախուցեալք զերծան։ Իսկ կալանաւորքն և առապարք ի լեռանց վերայ կորեան. իսկ գերեալքն մեացին խաղաղութեամբ փառս տալով Աստուծոյ»։ Կաղնկատուացի, (Գ. Ի)։

Միւնեաց եկեղեցւոյն Հարկատուաց ցուցակին մէջ յիշուած գաւառիս յաւուրկ գիւղերն են հետեւեալք, հանդերձ իրենց արից բաժնովը.

Աւժէն	10
Ախէժ	12
Տանձուտ	7
Հացեաց աղբիւր	12
Քեղանոր	40
Հակ	15
Արտանգետ	12
Մեղի	12
Ականք	8
Արուական	6
Մշենի	6
Քաշաձաղք	6
Վերին Շէն	6
Ձիաւար	6
Մատրակերտ	6
Մինի	6
Հունչաք	12
Մարգք	10
Պոխոչոխ	10
Սուրբ Գէորգ	8
Լաորք	8
Ագարակու գետ	10
Շապոկի	7
Կարկասան	6
Պախախոնիք	12
Մոշենք	10
Որբոջոյ քար	8
Արահուձ	6
Ծիծառւոյ վանք	10
Կատոմորիք	12
Հայելեակ	6
Մախուլն	10
Խրու	8
Ծորացիք	10
Խախծիք	12
Վժնաբերդ	12
Հայրի	8
Անուշաւան	12
Սղտաւ	6
Շամթեայ	8
Աքքոյ	6
Վասակակերտ	12
Ասորոկ	10

վերջին ցուցակաց մէջ կը յիշուին նաև հետեւեալները Քաշաթաղի և Խաժառաբերդի մէջ.

Սթունիք
Աղուէսաձագի
Եզնագոմեր
Փուլ
Սպիտակաջուր
Քարագլուխ
Շրուական
Խոզնավար
Հալաքս

Այս հին գիւղերէն շատերուն և ոչ խակ տեղերն յայտնի են, շատերն ալ ազատագեալ հնչմամբ և գրութեամբ կը յիշուին այժմ. կան նաև քանի մը թրքանուն գիւղեր, ինչպէս Գաշլոռ, Ագձաքեմ, Եալղոռզտամ, Ղոռչի, են։ Գաւառս թէ և ունի բաւական լեռներ, սակայն շատերը գրեթէ 6000 ոտք բարձրութիւն ունին, և քիչերը կ'անցնին 7000 ոտքը։ Ազահէնք ունի գլխաւորաբար երեք ձորահովիտներ, որք կը կոչուին Ջորաձովիտ Հօյանց, Ջորաձովիտք Ագարու, և Ջորաձովիտ Բուն Ագարու կամ Հագաբու։ Այս գեղազուարճ հովտաց մէջ գըտնուող նշանաւոր և յիշելու արժանաւոր գիւղերու և վանքերու վրայ կը խօսուի ի կարգին։ — Միսակաև, 265–271։

ԱՂԱՀԻ. Տես ՕՂՈՒԿ։

ԱՂԱՀՈՐԴ. — Գիւղ Սիւնեաց Բաղք (Զանկեզուր) գաւառի, վիճակս և Ագարակ գիւղերու մէջտեղ. բն. 700, բաժնուած 67 տան, ամբողջ Հայ։

ԱՂԱՂ. — Տուրուբերանի Բդնունեաց գաւառի մէջ, վանայ ծովակի արեւմտեան եզերաց վրայ 18–20 տուն բնակչօք Հայոց գիւղ մ'է։ Գրեթէ քառասուն տարիներէ ի վեր գիւղիս բնակիչք գարձած են Բաղոքական։

ԱՂԱՂԲԻՒՐ. — Աղային հանքայուր, Այրարատայ հին Գաբեղէնք գաւառի արեւելեայ կողմը, Երասխայ մօտ գտնուող Պռչաձորք կոչուած գետաձորակի մէջ։

ԱՂԱՃԱՐԻ ՋՈՒՐ. Տես ՉԻՑԹՈՒՆ։

ԱՂԱՃԳԱԼԷ. Տես ԱՇԳԱԼԱ։

ԱՂԱՆՁ. Տես ՕՂՈՒԿ։

ԱՂԱՊԱՏՐՈՒՇ. Տես ԵՂԻՊԱՏՐՈՒՇ։

ԱՂԱՍԱՐ կամ ԱՂԱՍԻՐ. — Գիւղ Թորթումի, այժմ Թրքաբնակ։

ԱՂԱՍՏԵԻ. Տես ԱՂՍՏԵԻ։

ԱՂԱ–ՏԻՏԻ. — Այրարատայ Վանանդ (Կարս) գաւառի Բէռնա և Զարեվաղու գիւղերու մէջտեղ կը բարձրանան այս անուամբ կրկին լեռնաբլուրներ, որոց միոյն վրայ կան գերեզմաններ, վանքի աւերակներ և սաղարտը Հայոց գերեզմանատուն և Լուսաւորիչը մը։

ԱՂԱԻԵՐ. — Թրքաբնակ գիւղ Կարնոյ։ Համանուն Թաւթարաբնակ գիւղ մ'ալ կայ ի Սիւրմէլի (Երեւան), 41 տուն բնակչօք։

ԱՂԱԻՆԱՁՈՐ. Տես ԸՂՆԱՁՈՐ։

ԱՂԱԻՆԱՏՈՒՆ. — Գիւղ Հայոց, Այրարատայ Արագածոտն (Լեռնիածին) գաւառի մէջ. բն. 635, բաժնուած 104 տան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Գէորգայ։ Համանուն հասարակութիւնն ունի 7 գիւղ, 544 տուն և 3509 բնակիչ։

ԱՂԱԻՆՈՑ ԳԻՏ. Տես ԱԳԱՐԱԿՈՒ Գ։

ԱՂԱՔԻՉԻՔ. — Գիւղ Հայոց և Թաթարաց, Այրարատայ Արագածոտն գաւառի այժմեան Թալինի հասարակութեան մէջ. բն. 209, բաժնուած 33 տան։

ԱՂԲԱԳ. Տես ԱՂԲԱԿ։

ԱՂԲԱԹԱՆԵՑ ԳԻՒՂ. — Հին գիւղ Վասպուրականի Ռշտունեաց գաւառի մէջ։ Կը յիշեն գիւղս Յովհաննէս կաթողիկոսը և Ասողիկ, յայտնելով թէ ասկէ էր Աբրահամ Ա կաթողիկոսը։

ԱՂԲԱԿ, Մեծ ԱՂԲԱԳ կամ ՍԻՐ ԱԼՊԱՂ. Գղ. AGHPAG կամ ELBACK. — Վասպուրականի հին գաւառներէն մին, որ այժմ ևս Վանայ գաւառներէն կամ վիճակներէն մին կը ձևացընէ։ Սահմանքն են Հս. Մահմուտի գաւառը և Պարսկաստան, Ար. Պարսկաստան, Հր. կէվէտ գաւառը և Մ. Նորդուզ և Մամուրէթ–իւլ–Համիդ գաւառները։ Դիրքը դաշտային է, ունի նաև բարձր ու ցած խոտաւէտ լեռներ. ջուրը առատ, կան քանի մը ձկնաշատ վտակներ։ Օդը ձմեռ սաստիկ ցուրտ կ'ընէ և շատ ձիւն կու գայ, իսկ ամառը բարեխառն է։ Հողը բերրի է, կը մնուցանէ ընտիր ոչխար, կով, եզն և գոմէշ։ Գաւառիս Օրտատեր գիւղի մօտ կաւճի բլուր մը կայ։ Գաւառապլուխն է Պաշգալէ աւանը, վանէն 18 ժամ հեռու։

Աղբակու արեւելակողմը կը բնակին Շամբսքցի բռնած Քուրդ Հաշիրէմ, որք կը համարուին 5—550 տուն. արեւմտակողմը Տէվանցիք 100—120 տուն, հարաւակողմը Աբասցիք 1000 տուն և հիւսիսային կողմը Շկակ կոչուածներն 600 տան չափ։ Ասոնց Քրդաց մեծամասնութիւնն կը բնակին սովորաբար լերանց ձորաբերանները և կամ միջավայրերը, իսկ սակաւաթիւ մաս մ՚ալ, որք հայերէն ևս կը խօսին, կը բնակին գաշտի վրայ։ Ընդհանրապէս կորովի, ուժեղ և յաղթանդամ են կողմանցս բնակիչք, Հայը կ՚զրպուին երկրագործութեամբ և Քուրդը խաշնարածութեամբ։ Կանայք կը զործեն ճարտարութեամբ այլ և այլ գոյներով գիմացկուն գորգեր և ընտիր շալ։

Արեւելեայի մէջ կը կարդանք, թէ Աղրակցիք «Հայաստանի ամենէն ուելի նահապետական սովորոյթին և կեանքը պահող բնակիչներէն են. գոյա թէ՛ բնկերական և թէ՛ ընտանեկան յարաբերութիւնը հնութիւնը կը պատկերացունեն. պանդուխտներ չունին, բնոյ թարմ և առողջ երիտասարդներ, մեծ քաղաքաց մէջ բնակուելու ներքին, ապականեալ կեանքի մը մէջ չեն մաշիր. նահապետական պարզութիւն և հիւրասիրութիւն կը տիրէ բնտանիքի մէջ որ սովորաբար բազմաթիւ անդամներէ կը բազկանայ»։

Գաւառիս գիւղերու թիւն Հայ տեղեկագրող մը (1884ին) կը համարի 80, և բն. 20000, յորոց 10000ը Հայ, և մնացածն Քուրդ, Ասորի և Հրեայ։ Իսկ Վ. Քինէ ամբողջ բնակչաց թիւն կը դնէ 42870, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	Թուրք.	3690	28270 բն.
	Քուրդ	22580	
Քրիստոնեայք	Հայք	3000	13000 »
	Ասորիք, են.	10000	
Հրեայք			1600 »
	Գումարն		42870 բն։

Գաւառիս մէջն է Ս. Բարթուղիմէոսի հայակառ վանքը, որուն նկարագիրը կ՚ընենք ի կարգին. կան նաև ուրիշ վանքեր, բերդեր և ապառաժներու աւերակներ, շինուած Արծրունեաց հարստութեան ժամանակ։ Աղրակայ մէջ էր նաև հին Ս. Թաքի վանքը Օսի գիւղի մէջ, ուր կը թագուէին Արծրունի իշխանազանց պիտակներ։ Արծրունեաց Հադամակերտ անուն Ոստանն ալ այս գաւառի մէջ կը դնէ Թ. Արծրունին։

Աղրակ սահմանակից լինելով Պարսկաստանի, շարունակ առեւտրով յարաբերութեան մէջ է Սալմաստի հետ։ Ինչպէս մեր անցեալ պատմութեան շատ էջերու մէջ, նոյնպէս և վերջերս, զէն ուելի տխուր և անհնարագրելի դէպքերու տեսարան մը դարձած է Աղրակ։ — Ստ. Հին Հայ. 206—208։ Նկար. ռուկեւորոբիւն, Բ. 54—56։ Հաւոյ Հոտով, 84—85։ Մշակ, Ա, 27, 29. Գ. 20։ Վ. Քինէ, Բ. 734—737։ Արեւելեայ, 37։

— ՓՈՔՐ. — Կոթռէք նահանգի գաւառներէն մին, յորում սակաւ կը յիշէ Թ. Արծրունին Սրինգ և Ջրմար երեւելի ամրոցները. «Բայց կին ումն յազգէ Ամատհակայ բնակէ յամուրսն Ջրմար և Սրինգ ի գաւառին Փոքր Աղրագ, և անուն կնոջն Ջայլմար՝ որ և զամուրն յիւր անուն անուանէ»։ Այս գաւառս կը համապատասխանէ այժմեան Ջուլամերկ գաւառի։ — Ստ. Հին Հայ. 148—149։

ԱՂԲԵՆԻՍ. — Գիւղ Տարօնոյ, վարդենիս գիւղի մօտ՝ հարաւային կողմը։

ԱՂԲԵՐԱԿԱՆՑ ԴԱՇՏ. — Այրարատայ (վերին Բասէն) մէջ բաւական ընդարձակ գաշտ, Հասանդուլէի հարաւակողմը. այսպէս կոչուելուն պատճառն է, Երասխայ աղբերաց սոյն գաշտիս միջէն անցնիլը։ Մեծին Վահանայ Մամիկոնեանի քաջագործութեանց ժամանակ, իր թշնամիք եկան այս կողմերը Գուռ գեղին մօտ բանակեցան «ի Գաշտին Աղբերականց՝ զոր Արծաթաղբիւրեան կոչեն»։ — Ղազար, 446։

ԱՂԲԵՐԱՋՈՐ. Տես ՍՈՂԻ։

ԱՂԲԵՐԻՍ. — Ագարակ՝ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Ներաւանից կալուածներէն մին։

ԱՂԲԵՐԻՑ Գ. Տես ԳԵՒԱՄԲԻՍ։

ԱՂԲԵՐԿԱՑ ՀՈՂ. — Ձիշուի վայոց ձորի (Սիւնիք) Ս. Սիոն անապատի արձանագրութեան մը մէջ, զոր Քօքօր սուն գնելով՝ նուիրեր է նոյն վանաց։

ԱՂԲԵՐԿԱՑ կամ Ս. ԱՂԲՐԻԿ ՎԱՆՔ. — *Տուրուբերանի հին խումբ գաւառի և այժմեան համանուն գաւառակի մէջ, Բանաշէն աւանի մօտ՝ հիւսիսային կողմը կ'ինկնայ թէ՛ հին ժամանակները և թէ այժմ նշանաւոր ուխտատեղի դարձած վենաստանս։ Ա.անդուխթիւնը կը համարի, թէ վանացս եկեղեցին շինուած է Ս. Թադէոս առաքեալէն, և ներքին անհարթ ու ռձև կամարներն, և ամբողջ շինուածին իսկ իւր անարուեստ ճարտարապետութեամբն կը ցուցընէ թէ խիստ նախկին ժամանակաց կը վերաբերի։ Թադէոս առաքեալը քարոզութեամբ այս կողմերս գալով, և գաւառապետ Բանիկ իշխանի որդին բժշկելով, և զինքն քրիստոնեայ դարձընելով, կը խնդրէ անկէ կառուցանել Աստուծոյ տաճար մը։ Բանիկ իշխանը, որոյ բերդի աւերակները տակաւին կը տեսնուին վանացս մերձակայ լերանց միոյն գագաթը, կ'ուզէ ոչ միայն քարէ այլ ոսկեձոյլ և արծաթաձոյլ յօրինել զայն, բայց յետոյ առաքելոյն խրատով քարաշէն կը կառուցանէ։ Ժամանակ անցնելէ վերջ կը կառուցուի հին տաճարի կից ուրիշ վայելչաձև և գմբէթաւոր եկեղեցի մը, որուն շինութիւնը Ս. Լուսաւորչի կու տան։ Այս եկեղեցին ներքին գմբէթ մը կը հաղորդի առաքելաշէն եկեղեցւոյն հետ, և ուրիշ գմբէթ մ'ալ հին եկեղեցիէն կը մնայուի մատրան կամ տաճարի մը մէջ։ Մատրանս խորանի տակն է Ս. Թադէոսի սքանչելաբուխ աղբիւրն, որուն անուամբ Ս. Աղբիւրիկ կոչուեցաւ վանքը։ Աղբիւրիս ջուրը ատորերկրեայ ճանապարհով կը հոսի վանքէն դուրս գտնուած ուրիշ տեղ մը մէջ՝ յորմէ բմպելով ամէն մարդ կը հրաշանայ, իբրև հիւանդութենէ յանկարծակի բժշկուած, վասն զի անհնար է թէ՛ քաղցրութեամբը և թէ թեթեւութեամբը։ Կ'ըսեն թէ աղբիւրիս մէջ ձգած բլուայ Ս. Թադէոս Քրիստոսի բեւեռներէն մին, և այդ պատճառաւ միայն բմպելու կը գործածեն և արբաչոյր կ'անուանեն, կամիլ մը անգամ գետին թափելու կը խղճեն։ Մենաստանիս մէջ կայ նաև Գործելոյարոյց մականուանուած սուրբ Նշան մը, որուն համար կ'ըսեն, թէ Մանազկերտի գաւառապետին որդին ընտանեաց անզգուշութեամբը թռչնիրը ինկնալով և այրելով կը գառնայ գործնէի կամ ածուխ, և յետոյ այս սուրբ Նշանի զօրութեամբ մանուկը կենդանանալով, հայրը բոլոր Մանազկերտը վանացս թեմ կ'ընէ։ Այս բոլոր պատմութիւնք բնդարձակ գրուած են մենաստանիս հին կոնդակի մէջ, յորոց համառօտած է Հ. Ղեւոնդ։ Այն ինչ մանրամասն կը մնայ վանացս նկարագրութիւնը (1899), լրագիրք սկսան ծանուցանել, թէ Ս. Աղբիւրիկը կողոպտեր են այլազգիք, և վանահայրը և ուրիշ մէջը գտնուողները սպաններ — Տեղագրութիւն 238—239։

ԱՂԲԵՐԻ. — Հանգրուան Աւլրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ։

ԱՂԲԵՐ ՋՈՐ կամ ԱՂԲՐՋՈՐ. — Թորթումի գիւղերէն մին, այժմ բնակիչք Թուրք են, 75 տուն։

ԱՂԲԵՐՑ ՎԱՆՔ. Տես ԳԱՅԼԵՋՈՐ։

ԱՂԲԵՐՔ կամ ԱՂԲԵՐՑ Գ. Տես ԱԼԱՓԱՐՍ։

ԱՂԲԻ. — Գիւղ Մանոյ, 35 տուն Հայ բնակչօք։

ԱՂԲՆ կամ ԱՂԲԻՆ. — Ճիշուի Միւնեաց պաշտէն (157), իբրև շէն Միւնեաց Ծղուկ կամ Բազք գաւառի մէջ։

ԱՂԲՆԱԳԵՂ. — Աւլրարատայ Շիրակ գաւառի մէջ գտնուող Հոռոմոսի վանաց յիշատակարանաց մէջ կը յիշուի պիւղս։

ԱՂԲՈՒԼԱՂ կամ ԱԳՈՒՐԼԱՂ. — Գիւղ Տփղիսու Հարաւ—արեւմտեան կողմը 52½ վերստ հեռու, բաւական բարձր և գեղեցիկ տեսարաններ ունեցող դիրք մը վրայ։ Օդը բաւական է, ջուրն պատուական։ Բնակչաց թիւն է 376, բաժնուած 61 տան. մեծամասնութիւնն վրացիք են, կան նաև Հայեր, որոց ձեռքն են գրեթէ բոլոր արհեստները և առեւտուրը։

— Լեռ Բագրեւանդայ, Ջաւխէ և Պօղթեփէ լերանց միջավայրը, Ամառ գիւղէն 4½ ժամ դէպի հիւսիս, Ջրաբաշխի շրջթային վրայ գեղեցիկ դիրք մ'ունի, վճիտ և քաղցրահամ ադբերակներ։ Հիւսիսային արեւելեան և հիւսիս. — արեւմտեան կողմերէն հոսող ջրերն կը ձեւացնեն խորանդունդ ձորակներ, յորոց մին իրաւամբ վիշապաձոր անուն առած է, որ բան ժողովրդեան վաղեմի ջոջ կ'րսուի։ Լեռս հարաւային կողմէն առատ ջուր կու տայ Կալոյի

ձորին, որ վիանալով Ջամչէէն իջած ջրին՝ առաջ կ՚երթայ մինչև Շեռեան։ — Բաց. թեւաձև, 12։

ԱՂԲԻԿ. — Ակաւաբնակ գիւղ Թորթումի։ Տես ԱՂԲԵՐԿԱՑ վ.։

ԱՂԴԱՄ. — Գիւղ Ալբարաւայ վանանոց գաւառի Ջարիշաւայ վիճակին մէջ։

ԱՂԴԱԻ. Տես ՃԱՃՈՒԿ։

ԱՂԵԱԻ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Տես ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. Տես ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՏԱ և ԵԳԻՊՏՈՍ։

ԱՂՋՔ ԱՋՔԿ. — Գիւղ Ալբարաւայ վանանոց գաւառի Ջարիշաւայ վիճակին մէջ, բնակիչք 26 տուն։ Նոյն անուամբ երկու Քրդաց գիւղեր ալ կան Կազզուանայ վիճակին մէջ։

ԱՂՋՐՊԻՃՈՑԻԿ կամ ԱԼԱՎԷՐՏԻ. — Լեռ

ԱՂԷՕՐԷՆ. — Գիւղ Կարնոյ, բնակիչք 84, Թուրք և Քուրդ։

ԱՂԷԼ. — Ալլազգաբնակ գիւղ Ակնի։

ԱՂՄՆ. — Հայաբնակ գիւղ Արարկերի, ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը և 230 բնակիչ։

ԱՂՄՆՍԻ կամ ԱՂՄՆՁԻԿ. — Գիւղ Խարբերդի, բնակիչք 60 տուն Հայ են և քանի մը տուն ալ Թուրք։ Հայք ունին Ս. Կարապետ եկեղեցի մը։

ԱՂՐՐ կամ ԱՀՐՈՒ ՏԱՂ. Տես ՄԱՍԻՍ։

ԱՂԹԱՐՈՑՆԻ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂԹԱՄԱՐ կամ ԱԽԹԱՄԱՐ. Գղ. AGHTHAMAR. ت. اختمار. — Վանայ ծովակի կղզիներէն հռչակաւորն է սա (լծ. 49), որ ծովու երեսէն բարձր է գրեթէ 5528 ոտնաչափ կամ 1685մ. և կ՚ինկնայ 38° 22′ 00″ լայնութեան և 60° 38′ 00″



49. Աղթամար կղզւոյն տեսարանը։

Գուգարաց Տաշիր գաւառի արեւելեան հիւսիսային ծայրը. բարձր 5460 ոտք։

ԱՂՋԻ կամ ԱՂՋՈՑ. — Զգիտեմ իրմէ կ՚իջու թէ իրմէ լեռ յիշուի Վասպուրականի հին Ակէ գաւառի կողմերը։

ԱՂՋԻԿԻՐ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, այժմ այլազգաբնակ է. ունի կիսաւեր վանք մը, յորում կայ Ձեռն (=1288) թուականաւ հայկական արձանագրութիւն մը։ Տես ԱԽՃԻԿԵՐ։


ԱՂՋՈՒՆԻՔ. — Գիւղ Հայոց և Քրդաց Ջարահանճաղի (Զորբորդ Հայք). Հայք են 60 հոգի և ունին Ս. Սարգիս եկեղեցի մը, իսկ Քրդաց թիւն է 150։

ԱՂՋԿԻ. — Հին գիւղ Գուգարաց Տաշիր (Լօռի) գաւառի մէջ, որ այժմ բոլորովին աւերակ է։

երկայնութեան մէջ։ Սահմանքն են Ար.էն և Հր.էն արեւելեան և հարաւային ծովափունքը, Ամ.էն Ասաէր կղզին և Հս.—Ար.էն գրեթէ 18 մղոն հեռու է կաուցը։ Աղթամար, ըստ Տէյրօլի հեռու է վանայ Ասանց գիւղի նաւահանգստէն $2^1/_2$ ժամ կամ 4 հազարաժեար և Ախալանքէն մէկ ժամ։ Հայ տեզագիրք կղզիս փոքր կը համարին կաուց և Լիմ կղզիներէն և մեծ քան զԱռաէր. տարածութիւնը կը համարուի մօտաւորապէս 15—16 քառակուսի հազարաժեար։

Աղթամարայ խոժոռ ժայռերն և անառիկ դիրքն զիտելով հնագոյն նախնիք մեր, զինքը սահմաներ են իրմէ ամրոց ընդդէմ յարձակմանց թշնամեաց։ Մեր պատմիչներէն գլխաւորաբար Թ. Արծրունին է, որ ճոխապար կը խօսի կղզւոյս վրայ, սակայն իր

արքունական զօրքերէն 6150 վարձուոր արհեստաւորներ, շատ տարիներ շարունակ աշխատեցան, ընդարձակեցին կղզիս ահաւոր ամբարտակներով և ապա շրջապատեցին պինդ պատեր, ևն։ Ալերիչ ժամանակը և ծովակի ջրերու բարձրանալովը, Գագիկայ հրաշակերտ շինուածոց մեծամասնութիւնն անհետ եղած է, և այժմ իբրև յիշատակ անցելոյն,



Ընդհանուր տեսք Ա. Խաչին։

թանձր պարսպով և բուրգերով ու աշտարակներով զարդարեցեր։ Կառուցին նաև մեծ աշխատութեամբ գեղեցիկ նաւահանգիստ մը, կղզւոյ մէջ բարձրացան բերդեր, պալատներ, մեծամեծ ամբարանոցներ, շտեմարաններ, պէսպէս արհեստանոց։ Կանգուն մնացած է քանդակօքն չակուռ Ա. Խաչի տաճարը (թ. 50) Գագիկայ հրամանաւ և ձեռնտուութեամբ 9 –921 թուականաց մէջ կառուցուեցաւ չակապանծ եկեղեցիս, որոյ քաջ արուես-


տագէտ ճարտարապետն Մանուէլ՝ չխնայց իւր բոլոր ճիգը թափել, մինչև իւր օրերը մեր աշխարհը գտնուած տաճարներէն ամենէն շքեղը և ամենէն հոյակապը կառուցանելու համար։ Խաչաձեւ է տաճարս և անոնէն, հրաշալի և բարձրակառոյց է կամարդիկէն. արտաքին որմունքը զարդարուած սրբոց պատկերաց, կենդանեաց և բուսոց քանդակներով։ Կանխաւ ճոխ էր եկեղեցիս պատկերներով և արծաթի գարդերով. այլ ժամանակ առ ժամանակ ենթակայ ըլլալով աւարառութեանց անշքացեր է, և քանդակներէն շատերը վնասուած են բիրտ և կործանիչ ձեռքերէ։ Տաճարիս կոփածոյ քարերը բերուած են Բագիշու Կոտոմ գիւղէն. հաբաւային գրան վրան կայ Թագաւորի պատմութեան, որուն հին մուտքը կամ սանդուխները ծածկուած են. կխեղդ է նաև հարաւային որմոյն վրայի հին արձանագրութիւնը. զանգակատունը և ժամատունը նոքաշէն են։ Ըստ կոնդակի վանացս, 921 թուին մեծահանդէս նաւակատիք կատարուեցաւ Ս. Խաչի, և նոյն օրէն ձեռնադրուեցաւ Աղթամարայ թեմին առաջին կաթողիկոս Տէր Եղիշէ արքեպիսկոպոսը, ազգակից Գագկայ։ Այս կաթողիկոսութիւնը յաջորդաբար շարունակուելով հասաւ մինչև 1895 թուականը, յորում վախճանելով Խաչատուր կաթողիկոսը, այլ և այլ պատճառներով, մինչև ցարդ պարապ մնացած է աթոռն, կառավարուելով տեղապահէ մը։ Ամանք կղզւոյս կաթողիկոսութեան հաստատութեան սկիզբը, հետեւեալ կերպով կը պատմեն. Վասպուրականի եպիսկոպոսներն Գրիգոր Գ կաթողիկոսին հակաթոռ ընտրեցին Գաւիթ (Թոռնիկեան) Աղթամարայ արքեպիսկոպոսը։ Եւ երբ ազգային ժողովրդի մէջ Գրիգոր օրինաւոր կաթողիկոս ճանչցուեցաւ, Գաւիթ Աղթամար կղզւոյն վրայ ինքնագլուխ կաթողիկոսութիւն մը հաստատեց (1113)։

Աղթամարայ վանքը (թ. 51) շրջապատուած է պարիսպներով և չորս կողմերը ունի մէկ մէկ դուռ, հարաւայինը՝ որ գլխաւոր դուռն է, կը նայի դէպի Ռշտունեաց աշխարհը։ Լայն և ընդարձակ գաւթի մէջ կանգնած է վերոյիշեալ Ս. Խաչի փառաւոր տաճարը, դէպի արեւելք է գեղեցկաշէն վեհարանը, արեւմուտք միաբանից և ուխտաւորաց երկյարկանի բնակարանները, հարաւ՝ վարժարան, իսկ դէպի հիւսիս գերեզմանատունը, յորում կան նաև կաթողիկոսաց ոմանց շիրիմներ, հանդերձ խաչքարերով և արձանագրութեամբք։ Ի հնումն բազմաթիւ միաբաններ ունեցող Աղթամարայ վանքը, այժմ հազիւ ունի 15 վարդապետ, 4—5 սարկաւագ և վարժարան մը 20—25 աշակերտներով։ Ունի բաւական ընդարձակ թեմ մը, և վերջին տխուր դէպքերէն առաջ, ունէր տարեկան մօտ 50,000 րուբլի եկամուտ։ Թեմերը կը կազմեն Վասպուրականի հարաւային գաւառները, Երուանդունիք (Հայոց ձոր), Ռշտունիք (Գաւաշ—Կարճկան), Ջերմաձոր (Շատախ), Անձեւացիք (Ներղուզ), Մոկք, Կորճայք և Խլղան մինչև Տիգրանակերտ։ Աղթամարայ վերջին խաչատուր կաթողիկոսը մեռնելու ժամանակ, կտակած է զրեթէ 10,000 րուբլիի գումար մը, Աղթամարայ մէջ կանոնաւոր ուսումնարան մը պահելու նպատակաւ։

Թ. Արծրունին կ'ըսէ, թէ կղզին մշակուեցաւ պաղատաւ և անպտուղ ծառերով և գոյզգոյն ծաղիկներով զարդարուեցաւ, որոնք կ'ոռոգուէին աղբերակով մը։ Սակայն այժմ Աղթամարը տարբեր կերպով կը ներկայանայ ականատեսներու։ Վանքի պարսպէն դուրս կայ նորատունկ խաղողի որթատունկ մը և սակաւ ծառեր և ջրհոր մը որ կը մատակարարէ ամբողջ վանքի ջուրը։ Իսկ կղզւոյն արեւմտեան ծայրը ձորակի մէջ, կայ փոքրիկ սիրուն անտառ մը, նուշի, պտմի, պղինձի, սոճի, և ընկոյզի ծառերով. բոլոր բոլին ցածր ծովակի եզերքը, բարձրացած է երկայնահասակ և հաստաբոյն հնադարեան ընկուզի ծառ մը։ Անտառի մէջ և կղզւոյ շուրջը կան զանազան թռչուններ, ինչպէս արագիլ, աղաւնի, ծիծեռնակ, խէժխէժ, ձըկընկուլ, վայրի բադ, արօրիկ, եւ ազռաւներ։ Աղթամարայ ամենաարձակ կառոյը, որ անտառի ճիշդ արեւելեան կողմը, կը բարձրանայ, կը կոչուի Բարձր—քար, սև ժայռ, երկինքը զապաթով հրաւիրգան մի է, հիմքը ծովակի անկնդոց մէջ հաստատուած։ Կղզւոյս հարաւային ծայրը քարակուռ ժայռ


մէկ մասը երկար ժամանակի մէջ, անընդհատ ծուխակի ջուրց բախմամբ գաւուեր է ցամաքէն և ձեւացեր մի փոքրիկ կղզեակ, այնպէս որ ջրերը ցածնալու պահուն ցամաքն կ'երեւի և առանց նաւակի ալ կ'երթցուի այդ կղզեակը։ Այդ տեղ քարաժայռի վրայ դեռ կ'երեւին հինաւուրց ամրոցի մը տխուր մնացորդք. անդ է նաև Աբծրունի Թամար Թագուհւոյ ազգ. Թաւեղին, և յիշատակաց արժանի պատմաբան Յովհաննէս Դրասխանակերացւոյ շիրիմը։ Աբծրունեաց ճախուխեան ժամանակ երբ քաղաքի կերպարանք ունէր Աղթամար, իւր մէջ կային տասնեակ մը եկեղեցիներ և մատուռներ, յորոց մնան տակաւին մի քանին ամայի և անշէն։ Կղզւոյս մէջ իրև հնութիւն նշանաւոր է, Ս. Խաչի տաճարի բակը զրուած զորշագոյն և երկանաքարի ձեւով տաշուած, երկու ոտք տրամագծով և մէկ ոտք բարձրութեամբ վէմ մը, որոյ երկու երեսներն ծածկուած են բեւեռաձեւ արձանագրութեամբք (թ. 52)։ Պ. Կ. Յ. Պատմաճեանի մեկնութենէն կ'երեւի որ Մհնուաշէն շինուած ջրմուղի մը յիշատակարանն է, և հաւանական է որ Գագկայ Աբծրունւոյ ժամանակ շինութենանց բարերու հետ բերուած ըլլայ ի կղզին, և այժմեան կլոր ձեն ալ վերջը տրուած կը թուի։ Արձանագրութիւնս օրինակած և հրատարակած են Շուլց (թ. Ի և ԻԱ.) և Հ. Ներսէս (թ. Ը և Ե)։ Նոյնը օրինակած են նաև Լէյկեր և Տէյրօլ. Մարտիան հրատարակեց և մեկնեց (թ. Թ և Ժ), մեկնեց նաև Մէյս։ Աղթամար ունի նաև իւր դրամ տուռնը, այսպէս կը կոչուի իր հաստատութիւնը դիմացը ցամաքի վրայ, Ախտամանքի մէջ կառուցուած տուն մը, որոյ մէջ են վանքի ամբարանոցներն, ախոռները, մշակաց և հովիւներու բնակարանները. այդ տեղ կան նաև կաթողիկոսի համար յատուկ շինուած քանի մը սենեակներ։ Մէկ տարի անպակաս են Աղթամարայ ուխտաւորները։ — *Journal Asiatique*, N°. 52, 313։ Տեղագրութիւնք 175–178։ Ծատ. Հին Հայ. 172–178։ Նոր Հայ. 151–2։ Պտկ. Նոր Հայ. 52–53։ Արարատ, 1897, 51–61. 1898, 69–79։ Կայծեր, Բ. 570–590։ Եւ այլն։

ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎ. Տես ՎԱՆԱՅ ԾՈՎ։



51. Աղթամարի խաչատեղին։

ԱՂԹԱՆՑ – ՓՈՍ. — Գուգարաց աշխարհի ժէջ, Հաղբատայ հռչակաւոր վանքի մօտ արեւելեան կողմն կը գտնուի այս տեղս, որուն համար աւանդապահ ծերունիք կը պատմեն, թէ ԺԴ դարու սկիզբը Ասիոյ մեծ բռնակալն Լանկ–Թամուր շատ աշխարհներ աւերելէ վերջ մտաւ ի Հայաստան և շատ արիւնահեղութիւններ ընելով քեանս մահուան պատրաստեցուց՝ և ուղելով միայն զերծուիլն պահել կենդանատու սուրբ խաչն, զոր բռնած թափօրով ելան բռնակալին դիմացը, որպէս զի համգիտն վիրքը և իւր զթութիւնը խնդրեն։ Լանկ–Թամուր, այս թափօրն տեսնելով և զարհուրելով սուրբ Նշանի աներեւոյթ հրաշքէն, ճիշդ այս Աղթանց–փոս տեղն աճապարելով բոլոր զօր-



52. Աղթամարայ բեւեռագիր արձանագրութիւնը ըստ Շուլցի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆՈՑՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՍՏ Պ. Կ. Յ. ՊԱՄՄԱՃԵԱՆԻ

Թ. Ի. «... Ախտունիկաչ
քաղաքն... երիսուիչի երկիրն...
Մենուաչին մայրաքաղաքին մէջ...
մեկնեցայ քաղաքէն?... Ալիզուչի
երկիրն... արձանագրութիւնն... ջրմուղն
շինեցի... զօրութեամբ եղած...
այս ջրմուղն շինեցի... Մենուաչ
եմ...»։

Թ. ԻԱ. «Խազաեաց իշխանք՝
այս արձանագրութիւնն՝
Իշպուինեան Մենուաչը
փորել տուաւ։ Խազաեան
ասասուածոց զօրութեամբն
Մենուաչն Իշպուինեան..
...»։

կոթծանեց բազմաթիւ քաղաքներ և գիւղեր, և եկաւ հասաւ լեռնային ճանապարհով մինչև Հաղբատայ սահմանը Խաչի–Դուռ կոչուած գիւղը, և անկէց ալ գիմելով Հաղբատայ վանքի վրայ, եկաւ հասաւ մինչև Աղթանց–փոս բոուած տեղը։ Հաղբատայ բոլոր բնակիչք և վանքի կուսակրօն միաբանք, աղօթելով առ Աստուած, և գինքերով սկսաւ փախչիլ։ Այն օրէն ցետոյ անունը Աղթանց–փոս, այսինքն յաղթանաց կամ յաղթութեանց փոս։ — Տես. Հաղբատայ, 98։

ԱՂԻ, ԱՅԻ կամ ԿՈՒՒԻՒՃԱՆ. — Պարսկահայոց հին գաւառներէն մին է, զոր յիշէ Խորենացին։ Թումա Արծրունին ալ կը յիշէ գաւառս (292). «Գուրգէն եղեալ զհետ նորա

հազար արամբք, վառեալ ի զէն և յաս-պազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ»։ Ստ. Չին Հայ. 152։

— Այս անուամբ գիւղ մը կը յիշէ Թովմա Մեծոփեցին յԱրճէշ (47). «Զա-զաթա պարոն մի ի Բերդէն Բասենու եկն 400 մարդով ի գիւղն Աղի»։ Ուրիշ տեղ մ'ալ (92—93) կը յիշէ թէ քանի հոգի գերի տարաւ նոյն Զազաթան «եւ 27 գերի ի գեղչէն Աղոյ»։ Զազաթայի աւարառու-թեանց և գերեվարութեանց ժամանակ կը յիշուի «Գորգի մէլիքն Աղոյ տանուտէրն», որ ուրիշ Աբծկէի և Արճիշոյ տանուտերաց հետ գնաց առ բունաւոր Սքանդարն, ա-նոր բարկութիւնը շիջուցանելու համար։

ԱՂԻ ԾՈՎ. Տես ՎԱՆԱՅ ԾՈՎ։

ԱՂԻՆ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գա-ւառի Արեւելեան մասին մէջ, Գըղըզ—թեփէ լերանց մօտ, Ախուրեանի ձախ կողմը մէկ վերստ հեռու։ Գիւղիս անմիջապէս մերձա-ւոր սարը կը կոչուի Աղինի սար։ Բնա-կիչք ամբողջ Հայ 108 տուն, գաղթած են Կարսի, Ալաշկերտի, Խնուսի և Սերաստիոյ կողմերէն։ Եկեղեցին նուիրուած է Ս. Յա-կովբայ, խիստ հին, խարխուլ և վտանգա-ւոր վիճակի մէջ։

ԱՂԻՈՎԻՏ, ԱՂԻՈՑՈՎԻՏ կամ ԱՂՂՈՎԻՏ. — Հին գաւառ Տուրուբերանի, որ կը հա-մապատասխանէ այժմեան Մարըսու և Բաղ-նոց վիճակաց։ Գաւառիս մէջ Արշակունեաց հարստութեան ժամանակ կը բնակէին ար-քայազունք. Խորենացին կը գրէ Արտաւազ-դայ համար, թէ «Յառաջեցուցանէ զեղ-բարս իւր և զբարս ի գաւառին Աղիովտի և Ասբերանոյ թոռլով ի նոսա զմեան ար-քունի՝ որ ի շէնս այնմ գաւառաց»։ Ար-տաւազդ Բ ևս հալածեց և այս գաւառի մէջ բնակեցուց արքայորդիքը. «Հալածէ յԱյրարատայ զամենայն եղբարս իւր ի գա-ւառս Աղիովտայ և Ասբերանոյ,...». Նոյն-պէս կ'ընէ նաև Տիրան։ Վարդանայ հետե-ւեալ խօսքերէն կ'երեւի, թէ Աղիովիտ մա-նաւանդ մը սեպհական գաւառ է եղեր Գնու-նեաց. «Ա՛ռ սա (այսինքն առ Աշոտ Բա-գրատունի Մահկերտ) բազում կալեալ ազգին Գնունեաց՝ թափել զնոսա յիսմայելացւոց, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գա-ւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախիւռ իւրեանց, տանի բնակեցու-ցանել ի Տայս»։ Գաւառիս մէջ էր հին նշա-նաւոր Զարիշատ քաղաքը։ Այս անուամբ, կամ Աղուանիա և Աղուանից անուամբ գաւառ մ'ալ կը յիշուի Վասպուրականի մէջ, սա-կայն ինչ որ կ'երեւի, նոյն այս Տուրուբե-րանի գաւառս է, որ սահմանակից լինելով Վասպուրականի, երբեմն յատակացուած է անոր։ — Խոր. պատմ. Բ. ԻԲ, ԿԱ, ԿԲ, ԼՆ։ Վարդան, 32, 77։ Ստ. Չին Հայ. 124—128. Հնախօս. Հայ. Բ. 303—4։

ԱՂԻՈՐՍԻ. — Հետեւեալ տողից մէջ իբ-րև քաղաք Ապահունեաց կը յիշէ Բուզանդ (51). «Այլ յերկրին Ապահունեաց, յո-տին մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որասացուք. տեղւոյն՝ որում անուն կոչի Աղիորսք»։ Ասա յիշուած Մասիսն չէ Այ-րարատայ միջինը, այլ լինելու է վանայ ծովակի հիւսիսային կողմը բարձրացող Սի-փան—Մասիք մեծ և գեղեցիկ լեռը։

ԱՂԻՍ. Տես ԱՂՅՍ։

ԱՂԻՏՈՒ կամ ԱՂՈՒՏԻ. — Հին գիւղ Հայոց, Սիւնեաց Ծղուկ (Սիսիան) գաւա-ռի, Այծի և Որոտնոյ վանքի մէջտեղ, Բար-կուշատի ձորոյն ձախ լանջի վրայ։ Գիւղս զարդարուած է ծառերով. բնակիչք այժմ բոլոր Թաթարք են 1162 հոգի։ Տակաւին Աղուտիի կեդրոնը կ'երեւին հին եկեղեցւոյ մը աւերակներն, որոց մօտ գերեզմանա-տան մէջ կան հայկական արձանագրու-թեամբք տապանաքարեր։ Ստեփ. Օրպէ-լեան (Գլ. ԺԱ) կը պատմէ Սիւնեաց նա-խարարահութեան համար, թէ «Ընդ Այծ և Աղիտու սաստիկ հակառակութիւն եղեւ։ Իսկ հնագիտակք Աղիտուացեաց գԱյծնե-ցեացն հաստատեցին ի վրաց աշխարհէն լինել պանդխտ և ծիղեհ յամենայն Սիւ-նեաց։ Եւ զարձեալ՝ Շաքւոյ և Աղիտուայ հրամայեցաւ զկնի Շաղատայ զնախաղատու-թեան ունել զվիհագոյնն զերկրորդականն պատիւ»։

ԱՂԻՒՆ. Տես ԱՌԻՒՆ։

ԱՂԻՍՈՑ ԱԳԱՐԱԿ. — Բարձր Հայոց Մանանաղի գաւառի մէջ գիւղ մ'էր, զոր կաշէ գիւղին հետ յիշէ Լաստիվերացի (Գլ. ԻԳ) իբրև կալուած երկու Թոնդրակեցւոց

ազանդոյն հետևող կանանց։ Ա.յս երկու գիւղերու բոլոր բնակիչները միաբանեցան այդ կանանց ազանդոյն։

ԱՂԱԹԱՆ. — Լեռ Գուգարաց Տաշիր գաւառի արեւմտեան ծայրը և Ապոց լերանց հարաւակողմը. բարձր 9400 ոտք։

ԱՂԱՆՕԼ. — Վասպուրականի Երուանդունիք գաւառի վերին խոշոռ վիճակի մէջ՝ Սալախանա գիւղի արևմտակողմը, Հայոց գիւղ մ՚է, որ 95 տարիներէ ի վեր ամայացած է և որոյ աւերակաց վրայ կը տիրապետեն այժմ քանի մը տուն Քիւրտեր։

Գիւղիս անունն ծագած է իւր համանուն լճակէն Աղի լճակ, որ բաւական ընդարձակ է. հովիւք երբեմն սոյն լճակէ, իբրև ազի ջրէ, կը խմցնեն իրենց ոչխարաց։ Վանայ ծովակի նման այս լճակէս ալ կարելի է աղ ստանալ, եթէ իւր եզերաց վրայ շինուին բորակի ածուներ։

ԱՂԱՆ. — Փոքրիկ գիւղ Թրքաց, Բարձր Հայոց Եկեղեաց գաւառի արևմտակողմը. Հայոց Կարմրի գիւղի մօտ։

ԱՂԱՈՒՆԾ կամ ԱՂԱՈՒՆՁ. — Գիւղս յիշուի Այրարատայ Արագածոտն գաւառի (կամ բի Պասար) Յազմատավանից արձանագրութեան մը մէջ։

ԱՂԶՆ. Տես ԱՐԶՆ։

ԱՂԶՆԻՔ. Գ.ղ. AGHTZNIK. — Մեծ Հայոց տասն և հինգ նահանգներէն երրորդն, որ կը կոչուի նաև երբեմն Աբան՝ իւր առաջին և նշանաւոր գաւառին անուամբ։ Օտարազգի մատենագիրներէն՝ ի հնումն նահանգս կոչուած է Աղբանից կամ Աղուանից, երբեմն ալ կը կոչուի Կողմն Ատրպատականի։ Հեռաւեալ ատենից մէջ այսպէս կը կոչէ Խորենացին (Գ. Զ և Ի) Աղձնեաց Բակուր բդեշխին երկիրը. «Առաքեաց զՄամեհիր հարաւային զօրօք, և զկիլիկեցի զօրս ընդ նմա զկողմամբ Ատրպատականի... ճակատս տուեալ ընդ Բակուր բդեշխին՝ սատակէ զնա և զզօրս նորա»։ Յայտնի է թէ պատերազմը Ատրպատականի մէջ չեզաւ, այլ Աղձնեաց աշխարհը, վասն զի Բակուր հոն տիրապետած էր։ Ուրիշ տեղ մ՚ալ (Ա. ԻԹ), Աղձնեաց Սասուն գաւառի մէջ գտնուող Սիմ լերան համար կ՚ըսէ, թէ կը գտնուի Ատրպատականի կողմերը։ Ագաթանգեղոս ալ (650) Աղձնեաց բդեշխը կամ սահմանակալը այս անուամբ կը կոչէ «...առնոյր ընդ իւր (Տրդատ)... զչորեսին գահերէցան իւրոյ տաճարին, որ Բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Ներ Շիրական կողմանէն, երկրորդ սահմանակալն՝ յԱտրպատականեայց կողմանէն»։ Այսպէս կոչուեցաւ անշուշտ Ատրպատականի սահմանակից ըլլալուն համար և կամ Ատրպատականեայց Սենեքերիմ Թագաւորին Աշնասար որդւոյն հոս բնակելուն և հոս բազմանալուն համար, որոնք անշուշտ կը պահէին նաև իրենց յատուկ լեզուն և սովորոյթքն։

Նահանգս կ՚ընկնայ Հայաստանի արեւմտեան հարաւակողմը, Զորբորդ Հայոց, Տուրուբերան և Մոկք նահանգաց և Ատրպատանի միջավայրը։ Տիգրիսն կ՚անցնի իւր միջէն, ունի նաև Թոռիա գետը որ կը թափի Բզնունեաց ծովը, և ուրիշ վտակներ։ Լեռներէն գլխաւորները կը յիշուին Սիմ, Տօրոս, Խոյր, Աւդովի, Խուչիի, Տարդուշ։

Աղձնիք ըստ հին աշխարհագրական բաժանման ունի հետեւեալ տասն գաւառները, որոց պիտոյ չափաւոր տասւգրութեամբ, կը գտնենք այժմեան նոր գաւառները կամ վիճակները։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՂԶՆԵԱՑ

ՀԻՆ ԳԱՒԱՌՔ	ՆՈՐ ՎԻՃԱԿՔ
Ա. ԱՐԶՆ ԿԱՄ ԱՐԶՆ	ԽԱՐԶԱՆ
Բ. ՆՓԵՐԿԵՐՏ	ՄԻԻՓԱՐՊԻՆ
Գ. ՔԵՂ.	ԽԱՐԶԱՆ. ԽԶՈՒԻ
Դ. ԿԵԹԻԿ	ՏԻԱՐՊԱՔԻՐ ?
Ե. ՏԱՏԻԿ	ՏԱՏԻԿ
Զ. ԱԶՆՈՒԱԶՈՐ	ԿԻՉԼԱՏԻՐԻ
Է. ԽԵՐՀԵԹՔ (ՍԵՐԽԵԹՔ)	ՍՂԵՐԴ
Ը. ԳԶԵՂ.	ԽԻԶԱՆ
Թ. ՍԱԼՆԱԶՈՐ	ԲԱՂԷՇ
Ժ. ՍԱՍՈՒՆՔ	ՍԱՍՈՒՆ

Աղձնեաց մօտերը կամ ժէջը կը յիշուի երկաթահանք կոչուած բլուրը, և երկաթահատաց ձոր. Բուզանդ (Գ. ժ) կ՚անուանէ «...Լեառն երկաթահատաց և կապարահատաց»։ Ա.յս երկաթհանքը սահմանակից էր վասպուրականի Ռշտունեաց գաւառի։ Խորենացին նահանգիս բերդ մէջ կը յիշէ երկաթ, զոր անշուշտ կը հանէին վերոյիշեալ լեռնէն։ Բերքերէն կը յիշուին նաև նաւթ և

զղեցոր. իսկ Թագնոց միջէն Դեզակ կամ Դեզհակ։

Ըստ Խորենացւոյ (Ա. ԻԹ) Թէպէտ այս նահանգը նախ մեր Սկայորդի նահապետը առաւ Սենեքերիմայ Սանասար որդւոյն, որոյ յաջորդք բազմանալով «լցին զՄիմն անուանեալ լեառն», բայց վերջը, ինչպէս կը պատմէ Թ. Արծրունին (55), Մեծն Տիգրան ժառանգութիւն առաւ Արծրունեաց տոհմին։ Վաղարշակ Ա հոս բդեշխութիւն հաստատեց, որուն համար Խորենացին (Գ. Ը) հետեւեալը կը գրէ, նշանակելով նաև անոր սահմանը. «Եւ զՇարաշան ի սահմանէ Սանասարայ հաստատէ բդեշխ մեծ և կուսակալ յաբեւմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Աղոբեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգեւելով զԱրձն, որ շուրջ գնովաւ, և զլեառն Տօրոս և զՄիմ, և զկղեսուրն ամենայն»։ Տրդատ Թագաւորը Աղձնեաց բդեշխը իրեն ութ իշխաններէն մին ըրաւ, որոնք 400 իշխանաց գլուխ էին։ Մեր պատմիչներէն զանազան տիտղոսներով կը կոչուի նահանգիս իշխանը, ինչպէս Բդեշխ, Կուսակալ, Տահմահակալ, Մեծ Իշխան Աղձնեաց, Գահերէց կամ Բարձերէց արքունի տաձարին. կոչուած է նաև Բդեշխ մեծ և անգամ մ՚ալ ի Բիւզանդայ Թագաւորի։ Այս երեւելի բդեշխութիւնս Դուռ գաղտն մէջ մեզմէ ապստամբեցաւ, կամ ըստ Բուզանդայ (Գ. Թ) «Հատաւ յերկրէն իշխանութիւնն Հայոց», որուն պատճառը կը գնէ Խորենացին (Գ. Դ) այսպէս. «Գանգի ի վախճանել երանելւոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր՝ որ բդեշխն Աղձնեաց անուանէր՝ տեսեալ զմանուտրուկ Թագաւորեալ ի փայտակարան, գնոյն և ինքն խորհեցաւ, թէ պէտ ոչ Թագաւորել՝ զի ոչ էր Արշակունի, այլ տիրազլուխ կամեցաւ լինել. ճեղքեալ ի միաբանութենէ Հայոց՝ ձեռն եւս յՈրմիզդ Պարսից արքայն»։ Նոյն ժամանակ Խոսրով Բ Հայոց Թագաւորը, բազմաթիւ զօրքերով պատերազմի ղրկեց Կորդուաց, Ծոփաց, Սիւնեաց, Հաշտենից և Բասենոյ իշխանները, որք արշաւելով Աղձնեաց աշխարհի վրայ «... առ հասարակ ընդ սուր հանին զամենայն, և սպանին զրպեաշխն, եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ»։ Այնուհետեւ վաղնակ Սիւնին զրուեցաւ բդեշխ նահանգիս, բայց քիչ վերջը խեշտ Բակուրի որդին, որ կոտորածէն զերծած փախած էր Հայոց Վաչէ զօրավարի քով, տիրեց իւր հայրենի ժառանգութեան և այսպէս զաւուած մնաց Աղձնիք Հայոց տէրութենէն։ Խոսրով Բ այս բաժանման վրայ ալ փոյթ չըրաւ, որուն համար Խորենացին կ՚ըսէ. «Այլ և ոչ վասն հաստատելոյ կողմանց (փայտակարանի և Աղձնեաց) հակառակեցաւ ինչ յետ միոյ նուագի, զոր ի յուսկանացն կրեցին զօրաց. այլ ի կամս թողեալ զարքայն Պարսից՝ խաղաղութիւն ընդ նմա առնէ, բաւական համարեալ՝ միացելոց սահմանացն տիրել»։ Խոսրով Բէ յաջորդ Բ Տիրանայ ժամանակ, Բուզանդայ խօսքերէն (Գ. ԻԲ) կը թուի, թէ դարձեալ Հայոց իշխանութեան տակ անցաւ, վասն զի կ՚ըսէ. «... ածին առ Թագաւորն Տիրան, ի գաւառն Աղձնեաց ի Բառաւէջ յաւան»։ Նոյնպէս Հայոց իշխանութեան տակ էր Տիրանայ յաջորդ Արշակ Բէ ժամանակ, վասն զի նոյն ինքն Բուզանդ (Գ. Ի) կը գրէ Արշակայ համար. «Զուտաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն»։ Սոյն այս Արշակ Թագաւորի ժամանակ նորէն ապստամբեցաւ նահանգս. «Եւ զօրն և աւերն առհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային Պարսից Շապհոյ, և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն. զրուեան գնէին, և զաւուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց»։ Բուզանդ, Դ. Ը։ Պապ Թագաւորին Մուշեղ սպարապետը, վերստին տիրելով Աղձնեաց, հարկաւոր ըրաւ։ Բուզանդ, Ե. ԺԶ։

Այսպէս սակաւ սակաւ պատահած ապստամբութեանց պատճառաւ է՝ որ Աղձնիք օտարազգի մատենագիրներէն մատն չի հանդիպիր մեր աշխարհի. Եղիշէի գրոց մէջ անգամ (18) օտար աշխարհաց հետ կը յիշատակուի, իբրև զաւուած առանձին երկիր մը. «Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի վրաց և յԱղուանից և ի Լփնաց, ի Ծովէից և ի Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց....»։ Նահանգիս առան-

ձին եպիսկոպոս կը յիշուի Ըղդ դարու մէջ Սիոն անուամբ մէկը, որ վերջը կաթողիկոս եղաւ։ — Ստ. Հին Հայ, 62–87։ Հնախ. Հայ. Բ. 130. և.ն։

ԱՂՃԱՄԵԼԻՔ. — Հայարնակ գիւղ Տուրուբերանի Հարք (Խնուս) գաւառի մէջ. բն. 350։

ԱՂՃԱՆ. — Գիւղ Հայոց Տուրուբերանի (Տարօն), Մշոյ գաշտի մէջ, գրեթէ 1000 բնակիչ ունի, յորոց ոչինչ թիւ մը Քաւորք են։

ԱՂՃԱՎԱՆ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Վանայ մօտ։

ԱՂՃԱՔԻՆՏ. — Այս անուամբ կրկին Հայոց գիւղեր կան Գանձակի մէջ։ Վերին Աղճաքէնտ ունի 1017 բնակիչ, բաժնուած 108 տան։ Ստորին Աղճաքէնտ ունի 942 բն. բաժնուած 117 տան։ Երկոքա ևս ունի նոյնանուն փոքրիկ գիւղ մը։

ԱՂՄԷՋԻՐ. — Գիւղ Հայոց Զարսանճապի, բն. 30 տուն. ունին Քառատառեն մանկական եկեղեցի մը։

ԱՂՄՂՈՒՈՒ կամ ՅԱՂՄՂՈՒՈՒ. — Գիւղ Մոկաց (Վան), ունի քարուկիր Ս. Աստուածածնի եկեղեցի մը. բնակիչք սակաւաթիւ են։

ԱՂՆԱԹԱՍ. Տես ԲԱՂԻ։

ԱՂՆՃՈՑ ԲԵՐԴ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂՈՊՆ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, կը յիշուի Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուաց ցուցակի մէջ։ Հ. Ալիշան, Ջորակ Աղոպենաց կ'անուանէ նոյն գաւառի մէջ գտնուող Էղթինա գետակի հովիտը։

ԱՂՈՋՐԻԿ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԱՂՈՎԻՏ. Տես ԱՂԻՈՎԻՏ։

ԱՂՈՐԻ կամ ԱՂՕՐԻ. — Իբրեւ աշխարհ և գաւառ կը յիշուի Լաստիվերացիէն (4, 82). «Թագաւորն (Վասիլ կայսր) անցեալ յաշխարհն Աղորի՝ մերձ յամուրն որ Հաշաձիչ կոչի, երեկօթս առնէ»։ Դարձեալ Լիպարտի Իւանէ որդւոյն համար կ'ըսէ. «Որում առեալ էին ի պարկեւի տեղիս բնակութեան գմեծ աւանն Երիզայ ի գաւառն Հաշտենից, և որ շուրջ գնովաւ գաստակերաք, սա իբրև լուաւ զայն՝ թէ թագաւորութիւնն (Յունաց) յերկուս բաժանեալ է, գնաց և խաբանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեալ, և արարեալ զայն ընդ իւրով ձեռամբ, զանձայ անդրէն ի գաւառն Աղորի և յամուրն որ կոչի Հաշաձիչ,...»։

ԱՂՈՐԻԿ. Տես ԱԿՆ։

ԱՂՈՒ. — Ձիշուի լեռս Տուրուբերանի Աղիովիտ գաւառի մէջ, Արճիշու մօտ։ Տես ՁԱՂՈՒԿ

ԱՂՈՒԱՆԴՈՒՈՑ կամ ԱՂԱՆԴՈՒՈՑ. — Վաղարշապատի հին գաւառներէն մին։

ԱՂՈՒԱՆԻՑ ԲԵՐԴ. — Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ կը յիշէ զայս Թովմա Մետոբեցին հետեւեալ տողերով (83). «Իսկ Սքանդար որ նստաւ թագաւոր ի Թավրէզ շահաստանին յ871 թուականին՝ եկեալ զօրօք իւրովք ի վերայ Խլաթայ, և առեալ գերկիրն զամենայն՝ նստաւ ի վերայ բերդին Աղուանից։... սուր եղեալ ի վերայ քրիստոնէիցն՝ 150 ոգի սպանին ի ժողովրդենէն որ անդ կային և 60 հոգի.. զենուլ հաւուն ի Ծղակայ և յԱղուանից,..»։

ԱՂՈՒԱՆՔ, ԱՂԲԱՆԻԱ կամ ԱՇԽԱՐՀ ԱՂՈՒԱՆԱՑ. — Քաղաքական տեսակէտով յետ Հայոց և Վրաց երրորդ անուանի ազգն և աշխարհն է, որոյ սկզբնական պատմութիւնն թագուած է խորին մէթութեան մէջ։ Մեր աշխարհի սահմանակից լինելով, մեր պատմութեան մէջ աւելի ծանօթ է, և երբեմն իւր սահմանաց ընդարձակած ժամանակ, մեր Ուտի և Արցախ նահանգներն իւր մասն կազմած ըլլալնուն, աւելի շփումն և առնչութիւն ունեցած է Հայոց հետ, այդ պատճառաւ կարեւոր կը համարիմք, իր նկատմամբ ցարդ ծանօթ տեղեկութիւնք համառօտիւ ամփոփել աստ։ Իւր վերջին սահմանքն համարուած են Ար. էն կասպից ծովը, Հս. էն Դարբանդէն մինչև Ալազան երկընցած հին պարիսպը, Մ. էն Ալազան և Խրամ գետակները և Հր. էն կայենի լեռները, ամբողջ Գարգման, Գանձակ և Արցախ և Երասխի ձախ ափերն։ Այս սահմանաց մէջ տարածուած երկիրը մեր մատենագիրներէն կոչուած է Աղուանք կամ Աշխարհ Աղուանից, ի վրաց՝ Ռանի, Յունդերէն՝ Աղերիանոս, Պարսիկներէն՝ Արան կամ Արանշահր, Արաբներէն՝ Ռան և յԵւրոպացւոց Ալբանիա։ Երկիրը ընդհանրապէս լեռնային է, գոլկաս լերանց շղթաներն տարածուած են իւր մէջ ձեւացնելով բազմաթիւ սարաւանդներ, ան-

պընդամոր ձորեր և ձորակներ. Կովկասէն վերջ նշանաւոր բարձրութիւնք ունի Արցախի լեռնաշղթան, որոյ բարձրագոյն գագաթներն են Մըռաւ, Աղոռիւռն, Փիրս, Դիզափայտ, են։ Լեռնաշղթայէս երկնցած են բազմաճիւղ լեռնագօտիներ Արցախի, Գանձակի և Գարգմանի գաշտի կողմերն, որք տեղ տեղ կը կազմեն ահարկու վիհեր, սարսափելի կիրճեր, զարհուրելի անցքեր, օձապտոյտ ձորակներ, լերկ ապառաժներ հազար ու մէկ տեսակ ձեւերով։ Այս կրկին անուանի և բարձրակատար լեռնաշղթաներէ զատ կան նաև ուրիշ փոքր լեռնագօտիներ։ Գետերէն ամենամեծն է Կուր՝ որ աղ կողմէն կ՚ընդունի Խրամ, Ջորագետ, Աղստեւ, Հասան, Տաւոշ, Ջակամ, Շամքոր, Բանանց, Գանձակ, Կոշրակ, Սեւ (Ղարա—չայ), Տրտու (Թարթար), Խաչէն և Գարգարի գետակները. իսկ ձախ կողմէն՝ Ագազան, Կախաւան, Արչիան, Թոշրկան, Կոկիսու (Կեօք—չայ) Գարդման, Սպիտակ և փիր—անաթ գետակները։ Երկրորդ գետն է Երասխ՝ որ Կուրի հետ միանալով կը թափի Կասպից ծովը։ Կովկաս լերանց հիւսիսային և արեւելեան լանջերէն կը բղխեն և Գարբանդէն մինչև Բագու՝ կը թափին Կասպից ծովը հետեւեալ գետերը. Բուբաս, Փոքր Սաւուր, Մեծ Սաւուր, Գուսար, Ղուբա, Աղ—չայ, Ղարա—չայ, Զաղաչուղ, Վալվալա, Շաբրան, Գաւազի, Կիլհիւ, Աքա, Աքրաբ, Սուղայիդ։

Գլխաւոր գաշտերն կը կոչուին Գարգաբացոց կամ Արցախի դաշտ, Աղուանից դաշտ, Վաղարշապատ դաշտ և Զարդուռնի դաշտ. կան նաև գաշտակներ, յորոց նշանաւորն է Սարուջա կոչուածն։ Աղուանք նշանաւոր է իւր անուանիներով որք տարածուած են Արցախի, Գանձակի, Գարգմանի, Ղազախի և Շաւարդնաց մեծ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերու վրայ. նոյնպէս ընդհանրապէս Կովկասեան մեծ լեռնաշղթան առանրոտներէն մինչև կէսն ծածկուած է անտառներով, կան նաև անտառներ կուր գետի աջ և ձախ ափանց վրայ։ Այս անտառաց մէջ կան կաղնի, ընկուզի, համարի, թեղի, լայնատերեւի, սխկի, կաղնենի, հացի, բեխի, ճղատի, լորենի, սղոսի, կիչի, գենի (գիհի), ցրտնի, մայրի, ճըա—սանձի, ճըա—խնձորի, մոխրի տանձի, տիզղնի (արքայկաղնի), զկոի (զղեաբի), ծաի տանձի, սալորի, լիքրնի, թթենւոյ, և այլ տեսակ ծառեր։ Վերոյիշեալ անտառաց մէջ առատ են որսալու կենդանիներ, ինչպէս են քոշ, եղջերու, եղնորթ, կինճ. մացառուտներու մէջ՝ նապաստակ, փասեան, կաքաւ, սալամն, մուշտակ, և գաշտաց մէջ՝ այծեամն, կատակ հաւ, լորամարգի, հաւիթալ, ագաւնի և առատրակ։ Գազաններէն և գիշակեր թռչուններէն կան առիւծ, վագր, յաւազ, ինձ, արջ, գայլ, լուսեան, աքիս, ագռաւէս, չաղալ, սեականջ, արծիւ, անգղ, գառնաբարձ, լաչին, բազէ, ուրուր, ցին, հողմահար, ճայ, ձկնկուլ, զուլ, բու, ագռաւ, կաչաղակ, են։ Ընտանի կենդանիներէն կան գոմէշ, եզն, կով, ոչխար, այծ, ուղտ, ձի, ջորի, աւանակ։ Ունի ոսկւոյ, արծաթի, կապարի, պղնձի և ծծմբոյ հանքեր, յեսան, նաքարեր, քարահանքեր, ագահանքեր և ծծմբային ջերմուկներ։ Գլխաւորաբար Աղուանից մէջ առատ տեղ կը յիշուին նաև թի ագրիւրներ. ամենէն նշանաւորն է Բագուի հիւսիսային կողմն Բալախանի կոչուած տեղւոյ նաւթահորերը, ուսկից նաւթը կը հանեն շոգեշարժ մեքենաներով։ Ագահատակատ նաւթեան գլխաւոր նիւթերն են առատ ցրեն, գարի, լուբիա, բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպղին, բոզկ, ճակնդեղ, տանձ, խնձոր, չիր, գեղձ, թուզ, խաղող, գինի, օղի, սերկեւիլ, նուռն, զղեաբ, ընկոյզ, արքայկաղին, շագանակ, խոռնիկ, վարունգ, սեխ, ձմերուկ, մեղր, ձուկն, ձկնահաւկիթ, ձկնապուխտ, սուսամբ, կով, եզն, գոմէշ, ոչխար, այծ, ձի, ջորի, ուղտ, բոժոժ, մեսաքս, բամբակ, բուրդ, ընկուզի կոճղ, կաշիներ, մորթեր և շատ նաեւ։

Աշխարհիս աշխարհագրական գրից և բերոց փոքր ի շատէ ծանօթանալէ վերջ, ակնարկ մ՚ալ տանք, իւր պատմութեան և բնակչաց վրայ։ Աղուանից տզգը ծագած կը համարուի մեր Հայկազն Միսակ նահապետէն, որ իւր հօր Գեղամայ երկիրները ժառանգելէն և իւր անուամբ այն աշխարհը Սիսական կամ Սիւնիք կոչելէ վերջ, ընդարձակեց իւր երկիրն մինչև Հռեւաստակերտ քաղաքը։ Միսակ իւր բազգր և անուշ բնաւորութեան

համար կը կոչուէր նաև Աղու, և կը կարծուի թէ այդ պատճառաւ իւր տիրած աշխարհի այս մասն կոչուած ըլլայ Աղուանք։ Նահապետիս սերունդք բազմանալով և լեցուելով Կուրայ և Սիւնեաց մէջտեղ եղած տարածութեան վրայ, յետոյ դեռ ընդարձակելին իրենց երկիրը, տիրելով սահմանակից Մոլկանայ և Հերայ երկիրներուն։

Մօտաւորապէս 1828 տարի Քրիստոսէ առաջ՝ Հայկազն Արամ նահապետը կը նուաճէ արեւելեան կողմերը, ուր էր նաեւ Աղուանից երկիրը, և նուաճուած ցեղերու վրայ իշխաններ կը կարգէ Սիսական ցեղէն (Խոր. պտմ. Ա. ԻԲ.)։ Վեցերորդ դարու մէջ, նոյնպէս Քրիստոսէ առաջ, Տիգրան Ա. Հայկազնեան, Մարաց Աժդահակայ դէմ պատերազմելու համար իւր զօրաց հետ կը տանի նաև վրաց և Աղուանից ընտիր զօրքերը։ Ասոր կը հետևի, թէ Աղուանք հպատակ էին Հայոց Արամի օրէն, և թէ ունէին ընտիր, կարիճ զօրքեր։ Վաղարշակ Թագաւորը Սիսակայ ցեղէն քաջ և անուանի Առանը կը կարգէ կուսակալ Աղուանից։ Կաղանկատուացին այս նկատմամբ ընդարձակելով խօսքերը կը գրէ (5—7). «Վաղարշակ արքայ Հայոց, որ ի կարգել իւրում գհիւսիսայինն՝ կոչեաց զվայրենի եկամուտ ազգս (Կազրք, Լփնիք, Ճիղրք, Մազղութք), որ ի գաշտէն հիւսիսոյ կամ որ զսահմռոով կովկասու, կամ որ ի հովիտս և ի խորաձորս գհարաւով մինչև ցմուտս գաշտին։ Պատուէր առնէր՝ զաւազակութիւն և զմարդապատութիւն թողուլ և հարկաց արքունի հնազանդ կալ։ Ապա կարգեաց նոցա առաջնորդս և վերակացուս, յոց գլխաւոր ունն ի Սիսական տոհմէ ճարտարական ծննդոց կարգի հրամանաւ Վաղարշակայ՝ Առան անուն, որ ժառանգեաց զգաշտս և զվերինս Աղուանից»։ Նոյն պատմիչը խօսքը առաջ տանելով, Սիսակայ յատուկ Աղու մականիրը, կը յատկացնէ Առանայ. ընդհակառակն Առանայ իշխանութեան ժամանակ Աղուանքը կոչուեցաւ Առան կամ աշխարհն Առանայ։ Մեր մէջին Տիգրանայ նիզակակից էր Աղուանից վարազ անուն իշխանը, որ էր անշուշտ Առանայ սերունդներէն մին։ Հայոց նիզակակից եղան Աղուանք Արտաւազդ և Երուանդ Թագաւորաց ժամանակ։ Տրդատ Թագաւորի ժամանակ, Աղուանից Ուռնայր Թագաւորը Հայաստան գալով կը մկրտուի Սուրբ Լուսաւորչէն և բոլոր ազգն ալ իւր հետ կը դառնայ քրիստոնէութեան։ Բայց աշխարհիս քրիստոնէութեան առաջին քարոզիչ կը համարուի Թադէոս առաքելոյն աշակերտներէն մին Եղիշէ, որ նախ քարոզեց Զոդա մայրաքաղաքի մէջ, և յետոյ ի Սահատ և ապա Նուխիի մօտ գտնուած Գիս գիւղաքանը, ուր կառուցանելով Աղուանից առաջին եկեղեցին, մատոյց սուրբ Պատարագը։ Զարդունի գաշտէն անցած ժամանակ, ուր կուռքերու շատ զոհարաններ կային, հոն կապաշաններէն նահատակուեցաւ, և մարմինն ալ մահապարտներու գուբը նետուեցաւ, ուսկից շատ տարիներէ վերջը հրաշքով գտնուեցաւ։ Վաչէ Թագաւորի ժամանակ Աղուանք Գրիգոր Լուսաւորչի թոռը զուարճ Գրիգորիս իրենց կաթողիկոս ուղեցին, որ վեց տարի 342—348 կաւարեց իւր բարձր պաշտօնը, և նահատակուեցաւ ի Մազքթաց։ Չորրորդ դարէն մինչև դարուս սկիզբը տեւեց Աղուանից կաթողիկոսութիւնն. այդ կաթողիկոսները ընդհանրապէս օձուն առած են Հայոց ընդհանուր կաթողիկոսներէն։ Աղուանից աշխարհը ունեցեր է գլխաւոր հինգ թագաւորական կամ իշխանական հարստութիւններ, որք են Ա. Ասանշահիկք, Բ. Միհրականք, Գ. Ասան–Սիւնիք, Դ. Թագաւորք Դարբանդայ, Ե. Բագրատունի Կորիկեան Թագաւորք։ Աշխարհս շարունակ ենթակայ է եղած ճնշման, օրացութեան, արիւնհեղութեան, սովի և գերեվարութեան. հիւսիսէն հարաւ և հարաւէն հիւսիս անցուդարձի միակ ճանապարհն կամ զուռն լինելով, շատ անգամ առնակոխ եղած է բանաւորաց հրոսակներէն, մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելէ վերջ։ Փրկչական Ա. դարու մէջ Ալաններն միացած բոլոր լեռնականներու հետ՝ Դարբանդի գռնէն կը խուժեն Աղուանից երկիրը, և միայն Արտաշէսի հուժիւ սուրը յետ մղելով բարբարոսները, կը տանի յաղթութեան փառքը։ Ի դարուն նոյն գռնէն արշաւելով, Խազրաց և Բասլաց միանալ զօրքը երբ մտրախի նման ծած-

կած էին Աղուանքը, կը հասնի մեր վաղարշ թագաւորը և կոտորելով ու հալածելով զՀնդիան երկիրը կ'ազատէ։ Գ դարուն ևս Մեծն Տրդատ մինչև իրենց բնակած լեռները կը հալածէ աւերիչ լեռնականները և երկիրը կը խաղաղացնէ. (Խոր. Ը. կե. Ձե)։ Ե դարու մէջ Աղուանքը Պարսից իշխանութեան ներքեւ ինկնալով, երկիրը կ'աւերի, եւ կեղեցիք կը քանդուին, շատեր կը նահատակուին, և շատեր ևս ակամայ կ'ընդունին հրապաշտութիւնը։ Կաղանկատուացին (73—8. 104—192. են.) կը պատմէ, թէ Ինչպէս այնուհետև մինչև Ը-րդ դար Թշուառ երկիրը կ'ենթարկուի կեղեքման, գերեվարութեան, կողոպտման. եկեղեցիները և մատեանք հրոյ ճարակ կը դառնան և անթիւ մարդիկ կը նահատակուին։ Ը-րդ դարու մէջ երկիրը Աբաթացւոց տիրապետութիւն դառնալով, սրոյ և տանջանաց զօրութեամբ, շատերուն ընդունել կու տան մահմետական նութիւնը. իսկ Թուղայի ժամանակ, համաբեա արիւնով կը ներկուի բոլոր երկիրը։ Ժ դարուն Աղուանք կ'անցնի Սելճուկեանց ձեռքը. ԺԲ դարուն Թամթարաց և ԺԳ դարու մէջ Լանկ—Թամուրի և Ջհան—Շահի արշաւանաց վայր կը դառնայ։ Ջանց կ'ընեմք յիշատակել այդ ժամանակամիջոցին պատահած տխուր դէպքերը. ցանկացողք կրնան կարդալ Մով. Կաղ., Յովհ. կաթ., Կիր. Գանձ. և Թ. Մեծոփեցւոյ պատմութիւններն։ ԺԲ դարերու մէջ Օսմանցւոց և Պարսից պատերազմները դառնալով աշխարհս, բնակիչք կրկին սերու մէջ կը մնան և մեծամեծ վնասներ կ'ունենան։ Նոյն ԺԲ դարու մէջ Նատր—Շահը կը կործանէ Շամախի քաղաքը և շատ գիւղեր կ'ամայացնէ և մօտ 700000 Հայ և վրացի գերիներ կը տանի Պարսկաստան։ 1712 և 1722 թուականներուն Լէզկիները և Խազիրները, խժդժութիւններ և կոտորածներ ընելէ վերջ, բազմաթիւ Հայեր ալ գերի կը տանին իրենց երկիրը (Եսայ. կաթ. 23—26 և 35—40)։ 1796—1826 թուականներուն Աղուանից երկրի մէջ կը կատարուին ռուս—պարսկական պատերազմներն, և վերջապէս ողբալի և բազմարկած երկիրս կ'անցնի Ռուսաց տիրապետութեան ներքև։

Աղուանից երկրի գաւառները՝ բնութեան բնական սահմաններով բաժնուած են երեք գլխաւոր մասերու Ստորին, Վերին և Միջին։ Ստորին գաւառները ամբողջապէս դաշտային են և կ'ինկնան Կուր գետի ձախ ափանց և Պօղ—տաղ լեռնաշղթայի մէջ, կասպից ծովեզերքի կողմէն մինչև Քանդակ գիւղը։ Վերին գաւառները ընկած են Պօղ—տաղի և Կովկասեան ամենաբարձր լեռնաշղթայի շարունակութեան մէջ, Շամախու արեւելեան կողմէն մինչև Ալազան։ Միջին գաւառներն ընկած են Պօղ—տաղ լերան շղթաներու մէջ։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՅՈՒՑԱԿ ԱՂՈՒԱՆԻՑ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ

ՀԻՆ ԴԱՒԱՌՔ	ՆՈՐ ԴԱՒԱՌՔ
Ստորին գաւառներ	
Ա. ՀԵՋԱՐ, ՀԱՄԲԱՍԻ, ՀԵՃԱՐԻ	···· ՂՈՇԱԻՆ
Բ. ՔԱՂԱ, ՔԱՂԱԴԱՇՏ, ՔԱՂԱՆԵԱՏ, ՇՐՈՒԱՆ	···· ԲԱՐԿՈՒՇԱՏ
Գ. ՀԱԲԱՆԴ, ՀԱԲԱՆԻ ԱՂԲԵՐԴ, ԱՂ—ՏԱՇ	···· ԱՐԱՇ
Վերին գաւառներ	
Դ. ՈՍՏԱՆԻ, ՈՍՏԱՆ, ՀԱՇՈՒ, ՇԱՄԱԽԻ	···· ԿԱՊՐԻՍՏԱՆ
Ե. ՄԱՐԶՊԱՆԵԱՆ, ԳԱՐԴՄԱՆ, ԴԱՍԱՆ	···· ԳԻՐԳԻՄԱՆ կամ ···· ԼԱՀՃ
Զ. ԲԵԼԻ, ԲԵՅ ԿՈԿԻՍՈՆ	···· ԿԷՕՒ—ՉԱՅ
Է. ԳԵՂԱԽՈՒ, ԳԵՂԱՈՒԻՉ ԿԱՊԱՂԱԿ	···· ՂԱՊԱԼԱ
Ը. ՇԱՔԻ, ՇԱՔԻ—ՈՍՏԱՆ, ՇԱՔԻ	···· ՆՈՒԽԻ
Թ. ԿԱՄԲՉՃԱՆ ԿԱՄԲԻՃԱՆ, ԿԱՊԻՃԱՆ, ՃԱՐ	···· ՉԱՔԱԹԱԼԱ
Ժ. ԲԱՂԱՍԱԿԱՆ, ՃԱՐՈՑ ԲԵԼԱՔԱՆ	···· ԲԱԼԱՔԱՆ
Միջին Գաւառներ	
ԺԱ. ԽՈՂՄԱՂ, ՀՈՂՄԱՂ ՀՈՂԻ, ԴԱՇՏԱԿ	···· ԱՐԱՇԻ
ԺԲ. ԽՆՆԻ	···· ԽՆՆԻ

Սուրբն Մեսրոպ հինգերորդ գարու մէջ մեր և վրաց գրերը գտնելէ վերջ, անցաւ Աղուանից երկիրը անոնց Աբուլազէն կամ Եւլաղէն թագաւորին ու երեմիա եպիսկոպոսին քով, որոց հաւանութեամբ հնարեց նաև անոնց ալխազուր և կոտրատած լեզուին գրերը։ Աղուանից լեզուն նոյն էր Գարգարացւոց, Ուռէացւոց և այն կողմերը բնակող մի քանի ժողովրդոց լեզուներու հետ, որոց Ս. Մեսրոպ քարոզեց քրիստոնէութիւնը և միևնոյն ժամանակ հարկադրուեցաւ իրենց հայերէնէ եղած, բայց մերձակայ ազգաց շփմամբ բոլորովին այլափոխուած լեզուին համար նոր նշանագրեր հնարել։ Աղուանից մատենագրութիւնն այրեցաւ Ջղ դարու մէջ Թագրաց ձեռքով (Մովս. կաղ. 10 և 91)։ Գագղիացին ե. Պօրէ իւր Հայաստանի ու դեւորութեան մէջ կ'ըսէ, թէ Էջմիածնի ձեռագրաց մատենադարանին գրքերէն միոյն կողքին մէջ գտեր է Աղուանից այբուբէնը, որոնց ձեւերը, ինչպէս կ'երևի գաղափարուած օրինակէն, շատ նման են մեր նօտրագիր տառերուն։ Այս լեզուին իրեն ճաշակ մը հասած է ձեռքերնիս համառօտ քերականութիւն մը, զոր յօրինած է Տաշպուլազգի Հայրապետ Աթիխանեան անունով գիր մը։

Աղուանից երկիրը ունի ի հնուց մնացած բազմաթիւ բերդեր, որոց վրայ համառօտ տեղեկութիւն կը տրուի իւրաքանչիւր գաւառի նկարագրութեան մէջ։ Այժմ Աղուանից ազգի մնացորդք կը համարուին Նուխի գաւառի Նիժ, Վարդաշէն, Սոչլրան Նոխի և այլ գիւղերու մէջ բնակող այն Հայերն որք Ուտիացիք կը կոչուին և կը խօսին ուտիարէն։ Նոյնպէս ազուանից մնացորդք են Շամախւոյ Մատրասա գիւղի 500 տուն աւելի Հայերն, և Ղուբայի գաւառի Խաշմաս ևՔիլվար գիւղերու 150 տուն աւելի Հայ բնակիչք։ — Բարխուդարեանց՝ Աղուանք, 42—302։ Ալիշան՝ Աղուանք, ձեռագիր. 357—387։ Սմբատեանց՝ Նկարագիր Շամախւոյ բեմի, 191—254։ Մ. Կաղանկատուացի, Պտմ. Աղուանից. Հտ. Ա և Բ, տպ, փարիզ 1860։ եւ այլն։

ԱՂՈՒԶՈՒՄ. — *Հայաբնակ գիւղ Ալաշկերտաց, այժմեան Շօրխկէ գաւառի մէջ. բնակիչք 256, բաժնուած 35 տան։*

ԱՂՈՒԽ կամ ԱՂԱՍԼԻՐ. — *Ուտի նահանգի հին գաւառներէն մին։*

ԱՂՈՒԽՍԱՀԱԳԻ. Տես ԱՂԱՀԷՃԻ։

ԱՂՈՒԽՍԱՇԷՆԻ ՋՈՒՐ. — *Եղիսաբեթուպոլի նահանգի մէջ աջակողմեան օժանդակ գետակ Շամքորի։ Գետակիս անունն ծագած է անշուշտ Աղուխասչէն անուն գիւղէ մը, որոյ վրայ տեղեկութիւնք կը պակսին։ Աղուխասչէնի ջրի ձախ եզրի վրայ կը գտնուի հօրն եկեղեցի կոչուած տեղը։ Այդ եկեղեցի ըսուածները բարձր և գրեթէ անմատչելի ուղղահայեաց ժայռի մէջ փորուած խուցեր են, որոց մէջ, ինչպէս կը հաւատացնեն, հին ժամանակները պատերազմէ հալածուածները պատսպարան կ'որոնէին։ Կը պատմեն նաև, թէ այդ հօրն եկեղեցիներէն ստանք կը պարունակեն գանազան իրեր։ Այս եկեղեցիներէն միայն միոյն մէջ յաջողելով մտնել պարոն մը, չէ գտած ոչ հնութիւն մը և ոչ այլ ինչ. միւս վեց եկեղեցիք անմատչելի են, և չի գիտցուիր թէ կայ արդեօք գոցա մէջ մեր նախնեաց պատմութեան վրայ նոր լոյս սփռող յիշատակներ։ — Մշակ, ԺԲ. 129։*

ԱՂՈՒՄԲՈՒՒ։ — *Հին գիւղ Գաւգարաց Դմանիք կամ Քուիշափար (Պօռչալու) վիճակի մէջ։*

ԱՂՈՒՆ կամ ՅԱՂՈՒՆ. Տես ՅԱՂԻՆ։

ԱՂՈՒՇԷՆ. — *Գիւղ Թորթումայ գետոյն աջակողմը Օսկի և Աղորդ գիւղերու մէջտեղ։*

ԱՂՈՒՈՑ ՎԱՆՔ կամ ԱՂՎԱՆՔ. Տես Ա-ՐԵՒԻՔ։

ԱՂՈՒՏ. Տես ԼՕՒԻ։

ԱՂՈՒՏԻ. Տես ԱՂԻՏՈՒ։

ԱՂՊԻԼԱՔԻՆՏ. — *Գիւղ Գանձակու Նուխի գաւառի մէջ. բնակիչք 778, ամբողջ Հայ։*

ԱՂՋԿԱՑ ԲԵՐԴ (Թ. Ղզղալա). — *Ուտիի Աղուէ գաւառի մէջ, համանուն գիւղի հիւսիսակողմը կը բարձրանայ լեռ մը, ուրոյ արեւելեան և հարաւային կողերը զառիվայրեր են, իսկ հիւսիսային և արեւմտեան կողմերն, սարսափելի ուղղահայեաց բարձր ժայռեր։ Այս լերան վրայ կը գտնուի Աղջկայ բերդը, այժմ աւերակ վիճակի մէջ։ Ինչպէս կ'երևի մնացորդներէն, հաստ*

պարիսպ մը և խոր ու լայն խրամ մը կը շրջապատեն եղեր լեռս՝ որոյ գագաթը նոյնպէս կ՝երեւի պարիսպ մը, որ անշուշտ կը շրջապատէր միջնաբերդը։ Բերդիս արեւմտեան լանջին վրայ կան երեք աւազաններ. դանուած փղրանքներէն կը յայտնուի, որ ջուրը բերուած է եղեր փլեկի սարէն։ Միջնաբերդի մէջ կան սառբերկրեայ շինուածիններ։ Հիանալի է տեսարանը, հիւսիսային կողմը, մէկ վերստ հեռու ցցուած է Քարին—կտուր սարը, արեւմտակողմ Մեծ Նահատակի և Աղաչքար, իսկ հարաւային կողմը Փոքր Նահատակի և փլեկի սարերը, արեւելեան կողմն ալ տարածուած է բնդարձակ դաշտավայր մը։ — Ալրցախ, 135։ Վարանդա, 51։

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ. — Ի հնումն հռչակաւոր վանք Ալրարատայ Մազազ—Ոստան գաւառի, Գառնոյ ձորի վիճակի մէջ, Ալրի վանքի հարաւային արեւելեան կողմը։ Վանացս մօտ կար նաև համանուն Աղջոց գիւղ մը, ուսկից էր ԺԲ դարու մէջ Մելքիսեդ կաթողիկոսը։ Հաւանական կ՝երեւի թէ ասկէ վանքէն քան թէ վանքն գիւղէն առած ըլլայ նոյն անունը, որ աշ նշանակէ մխուխիւն աղջ կամ աղջատոդղջ, այլ ծագած է աղչիկ բառէն, վասն զի Հոխիսիմեան կուսանաց ընկերներէն ումանք այս կողմերը եկած բնակած են, որոց հետ կը յիշուին նաև երեք քահանաներ։ Յայտնաւորք կը յիշեն նաև այդ քահանայից մէնյն Առեփաննոս անունը. «որոյ անդ կեցեալ կատարեցաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի տեղւոջն. և յետոյ Սուրբն Գրիգոր ապդմամբ հրեշտակաց եկեալ, արարին ըզտեղին վանք միաբանակեցաց, որ մինչև ցայժմ կոչի Աղջոց վանք. և զանունն ևս ուսաւ ի հրեշտակէ՝ Առեփաննոս զոլ. վասն որոյ ասի Աղջոց վանաց Ս. Առեփաննոս»։ Կը թուի թէ սրբոյս նշխարները վերջը բաժնած են այլ և այլ տեղեր, վասն զի վարդան աշխարհապերը և այլք՝ առանձին կը յիշեն «զԱ Ս. Առեփաննոս քահանային»։ Ասա զրին յետոյ Ս. Աբեստակիսի Աղբ և նաև ուրիշ սրբութիւններ, ինչպէս կը տեսնուի 1442 թուին յիշատակարանէ մը, ուր կ՝աւանդուի նաև վանացս եկեղեցւոց սեռնունները. «...ի Ջորս Քեղդ, ի վանքս Աղջոց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Ս. Կարապետիկիս, և Ս. Առեփաննոս նահատակիս և Ս. Աջոյն և Թրի Ս. Նշանիս և Ս. Խաչիս և Թեւատ Ս. Գրիգորիս, և այլ բազմահատոր Սրբոցս որ ասա կան հաւաքեալ»։ Վանացս սրբութիւններէն գրեթէ ոսուրները երկու Աչերը, ժէ գարու ընկիզբը Մելքիսեդ կաթողիկոսը, իրենց թանկագին պահարաններովը «Բերեալ եզ ի գրաւ առ այլազգի մահմետականս, և առեալ գրամ ետ պարտատուացն»։ Նոյն մահմետակաները վանացս առաջնորդ էր ուն Միքայէլ եպիսկոպոս, որ և ի Լեհս գրկուած կաթողիկոսական կոնդակին առարգրած է այսպէս. «Ես Միքայէլ առաջնորդ սուրբ ուխտիս Աղչկոց վանացն, որ է Նահատակ Ս. Առեփաննոս քահանային. վկայ եմ այս բանիս և նամակիս»։ Մեծն Վարդան վարդապետ, Վիրապի վանաց մէջ սկսած Դանիէլ մարգարէի մեկնութիւնը, հոս աւարտեց 1268ին, «յառաջնորդութեան Երեմիայ գովելի ասպնջականի և գոհանալի եղբաւ»։ Երեւանու մեծ շարժին ժամանակ վանքս ալ ընաւազեցաւ, սակայն անծանօթ է մեզ թէ որճան ձեռքով ապրոգեցաւ. վասն զի անկէց վերջ ԺԸ գարու սկիզբը կը յիշուի իբրև վանք և առաջնորդն էր Մովսես անունով մէկը։ Մինչև գարուս կէսն ալ Սիմէոն կաթողիկոսի Ջամբռ (281) գրոց մէջ կը յիշուի իբրև շէն և վիճակներն էին Ճարդասն, Մեծ և Փոքր Գրան. սակայն այժմեան գրութեան վրայ տեղեկութիւնք կը պակսին։ — Ալրարատ, 352—354։

ԱՂՋՐԻԿ. — Գիւղ Բարձր Հայոց, այժմեան Թորթումայ վիճակին մէջ։

ԱՂՋՐՏԱՓ. — Յիշուի անունս Վայոց ձորի (Սիւնիք) Ս. Սիոն անապատի արձանագրութեանց մէջ։

ԱՂՈ կամ ԱԽՈ. — Ալրազգաբնակ գիւղ Ալրարատայ Ուրծ և Ագած (Վեհի—Պասար) գաւառի մէջ։

ԱՂՈՒՆ. — Մակաւարնակ գիւղ Հայոց, Վանայ Մահմետան վիճակի մէջ։

ԱՂՑՏԻ, ԱՂԱՑՏԻ կամ ԱՂՑՏԱՖԱ. — Հին Ուտի Նահանգի այժմեան Ղազախի գաւառի մէջ մեծ և անուանի գետ, որ իւր ընկիզը կ՝առնու Բամբակի լեռներէն։ Իւր ալ կողմէն հետզհետէ կ՝ընդունի զԼոռաւորագէտ

Տիլիժանի կամ Պղնձահանք, Թարս–չայ և Քարավանատրա վտակները. իսկ ձախ կողմէն Ջոհտուակ–վանքի, Պողոս–քիլիսեի, Մրնաձորի, Հալաջրի, Ոսկեպարի և Նեռքիսի Աղտանի վտակներ և ջրեր։ Հրաշալի է Աղստաֆայի հովիտը. երկու կողմէն արձանացած հրաբխային լեռներու շղթաներն, զարմանալի բուսականութիւնն, ընդարձակ և թաւ անտառներն և բազմաթիւ առատաբուղխ վտակաց խոխոջքն, անմոռանալի յիշատակ կը թողուն ուղեւորի մտաց մէջ։

Ասողիկ (272) ՃԻԴ դարու մէջ կը յիշէ այս անուամբ գաւառ մը, երբ Ա. Գագիկայ համար կ'ըսէ. «Եւ ընդ Գազ բերդ անցանելով եկ նա ի գաւառն Աղստեւ»։ Անշուշտ կը կազմէր Ղազախ գաւառի հիւսիսային արեւելեան մասը, բայց ասոյդ յայտնի չէ թէ մինչև ո՞ւր կը տարածուէր։ Գաւառիս մէջ գտնուող մի քանի հին վանքերը և գիւղերը կը տեսնենք ի կարգին։

Աղստաֆիա անուամբ թաթարաբնակ (16 տուն) գիւղ մը կայ այժմ Համամուն գետի եզերքը, որ է երկաթուղւոյ կայարան։

ԱՂՎԱՆԻՍ. — Գիւղ Հայոց Շապին Գաբահիսարի, 80 տուն բնակչօք։

ԱՂՎԱՆՈՒ. Տես ԱՐԵՒԻՒՔ։

ԱՂՎԷՐԱՆ. — Քրդաբնակ գիւղ Խոտասայ։ Գիւղիս մօտ այնքան յորդահոս է Եբասխ՝ որ բազերն անգամ չեն իշխեր մէջը մտնել և երբեմն սայլապրներ անցած առնէն վտանգած են։

ԱՂՏԱԽ. Տես ԴԵՂԹԱՓ։

ԱՂՏԱՂՏ. — Ալլազդաբնակ գիւղ Կարնոյ հարաւակողմը. Ջերմուկ ունի։

ԱՂՏԱՄ. — Այս անուամբ թաթարաբնակ գիւղ մը կայ Գանձակու Շուշի գաւառի մէջ։ Ուրիշ մ'ալ կայ քրդաբնակ՝ Կաղզուանու (Կարս) վիճակին մէջ։

ԱՂՏԱՆ. — Երկին հայաբնակ գիւղեր կան Գանձակու Ղազախ գաւառի մէջ։ Ասոնցմէ Վերին ունի 1127 բնակիչք, բաժնուած 90 տան, և Ներքին Աղտան՝ 20 տուն, 200 բնակչօք։

ԱՂ–ՏԱՇ. — Գիւղաքաղաք Աղուանից Արցախ գաւառի մէջ, Դռեղիական գետակի ակ կողմը։ Համարուած է Արտշի գաւառաղուխը, ուր կան հեռագրատուն, նամակատուն, արքունի դատարան, գաւառապետ, ևն։ Այգիներով և պարտէզներով ամբողջ ծածկուած է գիւղաքաղաքս. ամրան օդը ծանր է և անպակաս են գողի և ջերմի հիւանդութիւնք։ Ցեղոյս բնակչաց մեծամասնութիւնն մահմետական են. կան նաև Արցախէն, Գանձակէն, Շաքիէն և Շամախէն եկած շատ Հայեր, որք կ'զբաղին վաճառականութեամբ, դերձակութեամբ, հիւսնութեամբ, սեպհատաւորութեամբ, կօշկակարութեամբ և այլ արհեստներով և արքունի պաշտօններով։ Գիւղաքաղաքս նշանաւոր է վաճառականութեամբ. Աղուանից երկրի բոլոր բերքերն և շատ կենդանիներ ուրիշ քաղաքներէ աւելի աստ կը վաճառուին։ Շէնքերու մէջէն ընդհանրապէս նշանաւորները Հայոց կը վերաբերին, որք թէև եկեղեցի չունին, բայց հանգուցեալ Պ. Կարապետ Գանջեցեանց կտակած է այդ նպատակին համար 10000 րուբլի։ — Աղուանք, 283–4։

ԱՂՏԱՐԱ. Տես ԱՊ ՏԻՐԻ։

ԱՂՏԱՒ. Տես ԱՂԱՀԷՃՔ։

ԱՂՏԻՍ կամ ԱՂՏԻ. Տես ԱԽՏԱ։

ԱՂՏԻՑ ՁՈՐ. Տես ԱԽՏԱ։

ԱՂՅՈՒ կամ ԹՈՒՉ ՀԻՍԱՐ. — Գիւղ Սեբաստիայէն 6 ժամ հեռու։ Բնակիչք 1700 ամբողջ Հայ, ունին Ս. Կարապետ քարաշէն եկեղեցի մը և Հրեշտակապետեան վարժարան մը, 200 աշակերտօք։

ԱՂՐԻ կամ ԱՅՐԻ–ՁԱՅ. — Գետակ Սիւնեաց, Աչրարատայ Ուրծ և Աբուած գաւառի սահմանագիծը. կը բղխէ Արխաշան լեռնէն և կը թափի Գեղամայ ծովակը։ — Տես ԱԳՈՒԼԻՍ։

ԱՂՐԻ ՏԱՂԻ. Տես ՄԱՍԻՍ։

ԱՂՅՈՒ, ԱՂՋՔ կամ ԱՂԻՍ. — Հին գիւղ Աչրարատայ Աբագածոտն գաւառի մէջ, ղիրքն ևս կը յիշէ Բուզանդ (Դ. ԻԻ), «... յամուր ի գիւղն՝ որ Աղնքն անուանեն, յԱչրարատ գաւառին, որ կայր ի խինձս, ի գոգս, ի ծոցս, յանձուկս, ի գժուարս լերինն մեծի՝ զոր Աբագածն կոչեն»։ Զօրաւոր գարու կիսէն վերջը, երբ Պարսից Շապուհ թագաւորի զօրավարները չկարողացան բռնել մեր Արշակ թագաւորը, մեծ վրէժխնդրութեամբ Գարանաղիի Անոյ ամրոցի գանձուց հետ իրենց աշխարհը կը դերէին

նաև մեր թագաւորաց ոսկորները, զորս յետոյ նախարարները առնելով, «թագեցին յաւանին Աղցս, որ յառին Արագած կոչեցեալ լերին» (Խոր. Բ. ԻՀ)։ Գիւղիս ա-բեւելակողմը կան մեծ եկեղեցւոյ մը աւերակներ, և անոր մօտ պէպ ի հիւսիս՝ կա-մարայարկ, մանր քարերէ հիւսուած և փոքր ու ցած գմբեթով մատուռ մը։ Հիւսիսային որ-մոյն վրայ քանդակուած է բազկաւարած մարդ մը՝ վրան յարձակող երկու առիւծ-ներու մէջտեղ. իսկ հարաւային որմոյն վը-րայ ալ քանդակուած են ագուէն, թռչուն, ծաղիկներ, որսորդ, և այլն։ Ա. ղիսի այլազգի բնակիչք (36 տուն), լուսա-մուտի տեղ մրճով բացած են երկու ծակեր՝ և կը պատուէն այս մատուռը իբրև արբա-զայր մը։ Կան նաև հողի տակ ուրիշ շի-նուածոց մնացորդներ, սալայատակներ և խաչ-արձաններ։ Աբեւմտակողմը կը գտնուի հին գերեզմանատունը, յորում կան մաս մը կանգուն և մաս մը տապալած խաչքարեր։

Աղցք գիւղը ընծայեց Զ^րդ դարուն ըզ-Կամիտաս, որ կաթողիկոս եղաւ (615–623), և նորոգ շինելով վաղարշապատու սուրբ Հռիփսիմեանց վկայարանը, քերդո-ղօքէն երգեց հանրածանօթ և գեղեցիկ շարա-կանն Ա՛ճ՛ինք նոհիրեալք։ Աբրահամ Ա կա-թողիկոսի ժամանակ՝ 606 թուին, կը յի-շուի Մինայէլ անուամբ մէկը վանացեալ Աղցից։ Ժե դարու սկիզբը, այս գիւղէս կը յիշուի Գ.իդան կամ Աղիդան անն սերած Հայոց ազատներէն, որ Լէնկթիմուրի էօմէր Թոնէն սպրդուած, ուրացաւ իր կրօնքը, բայց ի վերջոյ երբ երկիրը խաղաղեցաւ, ինքն ալ զղջացած սրբեց ուրացութեան կեղ-ը։ — Աբարատ, 147–8։

ԱՂԻՈՅՈՎԻՏ. Տես ԱՂԻՈՎԻՏ։

ԱՂՓԱՐԱ. — Հայարնակ գիւղ Աբա-բատայ Նիզ (Նոր Պայազիտ) գաւառի մէջ. մղոն մը Մաքրաւանքէն հեռու, զէպ ի հա-րաւ գետեզերքի մօտ։ Բնակիչք 607, բաժ-նուած 70 տան. ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԱՂՔԱՂՈՐ. — Գիւղ Բազիշոյ արեւելեան կողմը կիւզէլաէրէ (Գինուաց–ձոր) գաւառի մէջ։ Բնակիչք 10 տուն Հայք և 20 տուն Քուրդք։

ԱՂՕՆՔ. — Աչյս անուամբ Վերին և Ստո-րին կրկին գիւղեր նշանակուած են Բաբերդի հարաւային արեւելակողմը։ Աչյժեան վիճա-կին և բնակչաց նկատմամբ տեղեկութիւնք կը պակսին։

ԱՂՕՐԻՆ. — Թրքաբնակ գիւղ կարնոյ արեւմտակողմը, Իլիճայի մօտ։

ԱՂՕՐԻ. Տես ԱՂՅՈՒՐԻ։

ԱՃԱՆԱՆ կամ ԱՃԻՆ. — Հին գիւղ Սիւ-նեաց Բազք գաւառի. յիշուի Սիւնեաց եկե-ղեցւոյ հարկատուաց ցանկի մէջ։ Գիւղիս անուամբ իբրև առանձին վիճակ Ա.Ճանան կոչուեր է Բազաց արեւմտեան մասը։ Տես ԲԱՂՔ։

ԱՃԱՐԱ. — Վերին և Ստորին Ա.Ճարա անուամբ կրկին վիճակներ կան Տայոց սահ-մանակից, համանուն գետոյն երկու կողմե-րը։ Աչյս վիճակաց բնակիչք ամբողջ մահ-մետական են, մեծաւ մասամբ վրացիներէն զարձած, և բնութեամբ արիւնարբու են և աւազակ։ Ա.ճարացիներու միջահամուռ թիւն է 30000։

ԱՃԻՄԻՇ. Տես ԷՕՃԻՄԻՇ։

ԱՃԻՄԻԻ կամ ԱՃԻՄ–ՕՂԼՈՒ. — Հայա-բնակ գիւղ գաշտային կիլիկիոյ։

ԱՃԻՋՈՒՐ. Տես ԱՐՋԱՋՈՐ։

ԱՃԻՇԻՆ կամ ԱՃԻՒՇԻՆՏ. — Գիւղ Հա-յոց, Գանձակու այժմեան երկրորդ վիճակի մէջ, 40 տուն բնակչօք։

ԱՃԻ–ՉԱՅ. — Գետ Աչյրարատայ ձո-կաստք գաւառի արեւելակողմը, որոյ օժան-դակն է Զիլկ։


ԱՃՄԱՆՈՒԿ. — Գիւղ Քրդաց Մշոյ դաշ-տի մէջ։

ԱՄԱՂՈՒ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, համանուն ձորի մէջ, Արփայի օժանդակ վտակի մը ձախակողմը՝ հարթ և բարձրաւոր դաշտի վրայ։ Մինչեւ գարու նը-շանաւոր գիւղս որ Սիւնեաց Աթոռոյն հարկ կու տար 10 բեռ, այժմ անշքացած է և ունի միայն 30 տուն մահմետականներ։ Գրեթէ 40 տարի առաջ կային այստեղ վան-ցի և Աչշկերացի գաղթական Հայեր, որք նորոգելով հոսարակ քարէ շինուած աւերակ եկեղեցին, խառն կը բնակէին Թաթարաց հետ, բայց 1856–1860 թուականներուն բոլորովին ցրուեցան Տարալագըզի էնկիճէ

և Ակար հայաբնակ գիւղերը։ Գիւղիս առջև կը տարածուի բաւական ընդարձակ և ջրառատ դաշտ մը, ուր կը ցանեն այժմեան Ամաղուեցիք ցորեն, գարի և կորեկ։ — Հին Ամաղու կը կոչուի այժմ Նորավանքի հարաւակողմի ժայռի գլուխը գտնուող հին Տխարբ գիւղը, որ աւերակ է։

այգիներով, որոց փոխարէն այժմ կան ծիրանի ծառեր։

ԱՄԱՂՈՒԱՑ ՆՈՐԱՎԱՆՔ. — Ամաղու գիւղէն երկու երեք վերստ հեռու, խոր ձորի մէջ, բարձր հարթավայրի մը վրայ գեռ կանգնած են երբեմն հռչակաւոր վանուց տխրատեսիլ աւերակներն (թ. 53)։ Պատմութիւնն




53. Ամաղուայ Նորավանքից ընդհանուր տեսքը։

ԱՄԱՂՈՒ ՁՈՐ կամ ԱՄԱՂՈՒԱՁՈՐ. — Աջձուկ ձորակ վայրց ձորի, որ Կնիշիկայ ձորոյ գրեթէ զուգահեռական կ'երկննայ հարաւ դէպի հիւսիս։ Հռչակաւոր էին ի հնումն ձորոյս մէջ Նորավանքը, Հրաշկաբերդը և Արփա գիւղն, ուր նստաւ Օրպէլեան իշխանները զոռոզագոյն Տարտարիճը։ Ձորս և Ամաղու գիւղի դաշտը ի հնումն ծածկուած էին մեզ կ'ասանդէ, թէ այժմեան աւերակ եկեղեցիներու և շինութիւններու կառուցուելէն շատ ժամանակներ առաջ՝ Ամաղուայ տեղ և անձուկ ձորակի մէջ՝ պատշաճաւոր տեղ մը շինուած էր կրաշաղախ քարերով Սուրբ Կարապետ անուամբ եկեղեցի մը, որ խիստ սքանչելագործ, ահարկու և անուանի էր մեր ձակայ սահմանաց բնակչաց համար։ Ասոր

մեռ կը բղխէր քաղցրահամ ապրիւր մը, և ամբողջ ձորը զարդարուած էր այգիներով և մրգաբեր ծառերով։ Նոյն ձորի մէջ ի թանձրաւած կաշկառուտին կար նաև ուրիշ եւ կեղեցի մը Ս. Փոկաս Հայրապետի անուամբ, որոյ բեմի տակէն կը բղխէր ձիթախառն բժշկական ապրիւր։ Հնագոյն աւանդութիւն ներէ կ'երեւի, որ այդ տեղ բերուած և դրուած է Ս. Փոկաս Հայրապետի նշխարը, յորմէ և տեղոյն անունն ալ կոչուեր է Փոկաս։ Այս երկու եկեղեցիներն իրենց բժշկարար ապրիւրներով իրրև ուխտատեղի՝ մեծ հռչակ հանած էին վայոց ձորի մէջ։ Ս. Փոկաս Հայրապետի եկեղեցւոյ տեղն և դիրքն թէև տակաւ չի գիտցուիր, սակայն հաւանական է ենթադրելը, թէ այժմեան Նորավանից մօտ հասարակ քարէ, կրաշաղախ և կամարակապ շինուած մեծարան տեղն ըլլայ, որուն մէջ կը բղխէ տակաւին բժշկարար ջրոյ ապրիւր մը։ Այս մեռուան չունի ո՛չ յիշատակարան և ո՛չ արձանագրութիւն, և Քաջբերունին դրան տեմի վայտեայ գերանէն կը հետեցնէ թէ հին շինուածին չէ, որով անշուշտ ի վերջոյ բազմաշատ ժողովուրդն հին և քայքայուած եկեղեցւոյն յիշատակին կատարած է զայն։ Իսկ Ս. Կարապետի եկեղեցին պատմչի խօսքերէն կ'երեւի որ կը գտնուէր ճիշդ Նորավանից մէջ։ Այսպէսով ձորի հռչակն գնալով աւելի տարածուեցաւ, երբ Բաղաց Թագաւորութեան վերջանալէ և իշխանական տոհմի և աշխարհի աւերակէն յետոյ, նոյն իշխանական տան վերջին տարաբաղդ անդամ ներէն մին՝ Յովհաննու վանաց Յովնանն եպիսկոպոսը, Համասունեան Հասանայ որդին, յետ ատ անդ շրջելու, հայկական ՇՃԴ (=1105) թուին եկաւ վայոց ձոր գաւառը, «... և կամեցաւ բնակիլ ի խորաձոր Աննապատին Նորավանից, մերձ անտառիկ դղեկին Հրաւեկայ բերդոյն, առ հիազօր և մեծաքանչ եկեղեցւոյն Սրբոյ Կարապետին». (Օրպելեան, ԿԴ, կե)։ Նոյն օրէն սկսաւ Նորավանքը գտնել կրօնաւորաց և ճգնաւորացիկ արանց մեծատատան, Յովհաննէս եպիսկոպոսը հետացուց այն տեղէն աշխարհական մարդիկ, ամբոխի նշանները կանգնեց վանքի շուրջը, որպէս զի կանայք և լկտի մարդիկ չանցնին։ Եկեղեցւոյ և վանքի հասոյթից համար, սահմանակից Գանձակեցի և Տիարբեկցի գիւղացիներէն հողեր և անպատաններ առաւ։ Մերձակայ Հրաւեկայ դղեկի պարսիկ բերդապահը չարամտութեամբ կամեցաւ որոշ և սպանանել վերոյիշեալ Յովհաննէս եպիսկոպոսը և աւերել կրօնաւորաց նորահաստատ վանքը, սակայն նահանդն եպիսկոպոսը հմուտ լինելով Պարսից լեզուին և հազուստը պարսկական ձեւի վերածելով գնաց Սպահան սուլտանի քով՝ և բժշկելով նորա մահամերձ որդին՝ ստացաւ ի ժառանգութիւն Նորավանից Հրաւեկայ և Ալնապատայ բերդերն և 12 գաւառակ։ Շատ տարիներ տառապելէն Նորավանից առաջնորդութիւն և հովուութիւն ընդունել Յովհաննէս եպիսկոպոսը, վախճանեցաւ սրբութեամբ ՈԴ (=1155) թուին և թաղուեցաւ նոյն վանքի մէջ, որուն գերեզմանէն, ըստ պատմչին՝ անթիւ հրաշքներ կ'ըլլային։ Ատ թաղուեցաւ նաև 1168ին Սիւնեաց Մեղրցի Գրիգոր եպիսկոպոսը։ Յետոյ Մեղրեցւոյ որդին Տէր Ստեփանոս շնորհազարդ եպիսկոպոսը, որ Աթաբէկէն Փախրըդմանեն (Քրիստոսասեր) կոչուեցաւ, ԺԲ դարու երրորդ քառորդին եկաւ բնակեցաւ Նորավանից մէջ, և հոն հաստատելով թեմական աթոռ, փոխանակ Սիւնեաց աւերեալ աթոռոյն, հրովարտակներով և ընծայաբերութիւններով աւելի ապահովեց վանքի ներկան ու ապագան և Հայոց Գրիգորիս կաթողիկոսի շրջաբերական թղթով՝ շրջակայ գաւառները Նորավանից սուրբ ուխտի վիճակ սահմանեց։ Տէր Ստեփանոս վախճանեցաւ Աբիա գիւղը 1216ին և մարմինը թաղուեցաւ ի Նորավանս։ Յետ անոր արդէն ձեռնադրուած էր յաջորդն, իւր քրոջ որդի Տէր Սարգիս եպիսկոպոսը, որ հակառակութեան հանդիպեցաւ Տաթեւի վանքի Յովհաննէս եպիսկոպոսէն, որուն վիճակած ըլլալով նոյն աթոռը՝ կը պահանջէր իւր թեմի բոլոր վիճակներն։ Թագաւորական Սարգիս եպիսկոպոսը զգուշանալով խռովութիւն ներէ, կը համաձայնի և կու տայ Տաթեւի բոլոր վիճակները. Նորավանից աթոռոյն համար միայն կ'առնու վայոց ձորի գաւառը, Ձահուկը և Նախիջեւանը։ Յետոյ Հայոց Տէր Կոստանդին կաթողիկոսին երթալով, շրջա-

բերական թուղթ կ'առնու Նորավանից վե-
րայիշեալ նոր գաւառաց համար, որպէս զի
հաստատուն վիճակներ ըլլան և մէկը չհա-
մարձակի զայնս յափշտակելու։

Նոյն ժամանակները Ս. Կարապետի հին
և խարխուլ եկեղեցին չէր գոհացներ Նո-
րավանից եպիսկոպոսական աթոռն, որով
և հարկ էր հիմնովին վերանորոգել զայն։
Վայոց ձորի իշխանաց իշխան Լիպարիտ
Օրպելեանի և վանացս Մարգիս եպիսկոպո-
սի խորհրդակցութեամբ, հայկական ՈԿԵ
(= 1216) թուին հիմնարկուեցաւ, և մեծ
աշխատութեամբ և անչափ ծախիւք, եօթը
տարուան մէջ աւարտեցաւ հրաշակերտ և
գեղեցկայարմար եկեղեցին՝ որ կրկին՝ Ս.
Կարապետ և Ս. Նահատակաց անուամբ կը
յիշուի յաբձանս։ Նորակառոյց սուրբ տա-
ճարի նաւակատիքը կատարեցին փրկչական
1223 թուականին չքեղապանծ հանդիսով,
ուր ներկայ էին եպիսկոպոսներ, վարդապետ-
ներ, գահակալուն իշխաններ, տանուտէրներ,
և այլն։ Հանդիսին ներկայ էր նաև Բուլակ



54. Նորավանից Ժամատունը և Օրպելեանց Դամբարանը։

մեծ իշխանը, Լիպարիտ Օրպելեանի անները՝
և Աթաբէկ Իւանէի նշանաւոր գործակալը,
որ նուիրեց վանքին իւր սեփական Աղբերիս
գիւղը իւր սահմաններով, և վանքի միա-
բանք սահմանեցին տարին տասը պատա-
րագ վարպետաի տանին նորա մեր հոգւոյն
համար։ Նոյն ժամանակ, վանքէս յա-
փշտակուած Ագարակի ձոր գիւղն ալ, Լի-

պարիսի խնդրանօք՝ Զաքարէ սպասալարը կը վերադարձնէ Նորավանքին։ Լիպարիտ իշխանը գարդարեց նորաշէն եկեղեցին սպասներով, գոյքերով և ժառանգութիւններով, և ինքն քանի մը տարի վերջը միջօրեայ հասակի մէջ յանկարծակի նեռէ հարուածուելով Բորոտնոյ բերդին պիտացը, կը վախճանի Գողշոտի վանքը, և յետոյ մարմինը կը բերեն կը թաղեն Նորավանքի եկեղեցւոյն մէջ։ Տէր Սարգիս եպիսկոպոսն վանացս վրայ մեծ արգիւնք ցոյց տալէ վերջ, գնաց Երուսաղէմ և անկէ ղրկեց Ս. Սիսփանոս Նախավկայի աջը Նորավանքի հաւատարիմ, և ինքը հոն կնքեց մահկանացուն մարտիրոսական մահուամբ։ Ս. Կարապետի եկեղեցին գեռևէն չորս տասիճան բարձր՝ կամարակապ է և ամբողջապէս շինուած սրբատաշ կարմիր քարէ չորս սրճակից վայելչաձև սիւներու վրայ. փառապանծ կաթողիկէն 1840 թուի շարժէն արդէն ղրկուած լինելով, բարեպաշտ ուխտաւորաց աշխատասիրեմբ այժմ ծածկուած է փայտով և հողով։ Պատուհանք չորս են և գուռն մի՝ արեւմտակողմէ։ Բացի սուգ խորանէն ունի ութ խորաններ, երկու երկու իրարու վրայ շինուած, բեմին և ղրան աջ և ձախ կողմերը։ Տաճարիս սրմոց վրայ կան արձանագրութիւնք գանազան նախնեաց թեանց վերաբերեալ։ Ս. Կարապետի կամ Նախավկայի եկեղեցւոյ պիտաց, Լիպարիտի սրդի Սմբատ իշխանը, Աստիճանոս եպիսկոպոսի ժամանակ, կառուցանել տուաւ չքնաղագոյն ժամատուռնը կամ Աղօթարանը (թ. 54), բնզարձակ և քառանկիւնի, ամրացած ութ սրճակից բոլորիկ սիւներու վրայ, ուրոց կամարներն միանալով առասպազի հետ, երդիկը կը կազմեն լուսամուտ մը։ Ունի երկու գուռն, հարաւայինը՝ այժմ ծածկուած է քարակոյտներով և արեւմտեանը կը գործածուի։ Որմերու վրայ կան երեք լուսամուտներ, որոց իւրաքանչիւրը, խաչագոյս և ճարտար գրուագօք քանդակուած բարակ միջասիւներով բաժնուած են երկուքի։ Հիւսիսային կամարի տակ քանդակուած է կարծեօք Սմբատ իշխանի կամ Օրպելեանց ուրիշ քոյրի մը պատկերը, որ արագաշարժ ձիու վրայ նստած, գլուխը եռանկիւնի սաղաւարտ դրած, ձեռքը բռնած կեռ սուրը կ'իջեցնէ կառապի վագրի կամ առիւծի մը գլխուն։ Արեւմտեան գրան վերի լուսամուտի վերը և վարը կան քանդակագործ պատկերներ. մին Տիրամայրը գահի վրայ նստած և Քիստոս ի գրկին, գլխուն վրայ իջած է աղաւնակերպ Սուրբ Հոգին և աջ ու ձախ կողմերը երկու ծերունիներ, և ՉՀ (= 1221) թուականաւ արձանագրութիւն մը։ Միւս պատկերը կը ներկայացնէ գՀայր Աստուած հինաւուրց կերպարանքով և լայն հանդերձներով, ձախ ձեռքով բռնած է Աղամայ գլուխը և աջովը կը խաչակնքէ. այս արձանին աջ կողմը քանդակուած է Քրիստոսի խաչելութիւնը՝ Աստուածածնի և Մագդաղենացւոյ հետ, և ձախ կողմը հրեշտակ. երկրորդ քանդակապատկերը ալ ունի արձանագրութիւն։ Ներսը սրմերու վրայ կան բազմաթիւ արձանագրութիւնք, յորս կը յիշուին Սմբատ իշխանի վանացս նուիրած գեղերն Աւէշ, Աճապատ, Ազատ, և մի քանի այլգիներ Ակոռեի, Արթիա, Աշտարակ, Զոռայ, Հողոցիմ, Ծաղկաձոր գիւղերու մէջ։ Ժամատան յատակը ծածկուած է կարգ կարգ տապանաքարերով, յորս ամփոփուած են Օրպելեանց ցեղի նշանաւոր անձանց և հոգևորականաց նշխարները։ Վանացս ակատուան և մանրագնին նկարագրող Քալբենին, ամբողջ 27 գամբան կը գրէ և երեք կարգի կը բաժնէ զայնս, արեւմտեան գրան մօտէն սկսելով և հարաւէն գէպի հիւսիս համրելով։ Յիշենք կարգաւ այդ շիրմաց մէջ հանգչողաց գէթ անուանք և թուականք, սկսելով առաջին կարգի տապանաքարերէն Ա. Աւետիք եպիսկոպոս, Ռի (= 1571)։ Բ և Գ քարերն արձանագրութիւն չունին։ Դ. Ստեփանոս եպիսկոպոս, ՉՈԲ (= 1303)։ Ե. Աբրահամ Յովհաննէս, ՉՀԹ (= 1324)։ Զ. Արձանագրութիւն չունի։ Երկրորդ կարգի մէջ Ա. Իվանէ մանուկ, ՉՁԳ (= 1294)։ Բ. Ուրուս պատանի։ Գ. Արձանագրութիւն չունի։ Դ. Սահմուէլ մանուկ։ Ե. Կայանէ։ Զ. Նահել տիկին։ Է. Պարոն Նահել, 1313։ Երրորդ կարգի մէջ Ա. Սարգիս եպիսկոպոս, ՉՂ (= 1298)։ Բ. Գրիգոր եպիսկոպոս, ՉՈԴ (= 1305)։ Գ Ստեփանոս եպիսկոպոս,

զթ (= 1260)։ Դ. Յովհաննէս Եպիսկոպոս...։ Ե. Աւփան տիկին։ Զ. Փախրադուլա քաջն։ Է. Իվանէ որդի Լիպարտի։ Ը. Այլիկում իշխանաց իշխան։ Թ. Աբրիորդ Թամթիկին։ Ժ. Պարոն Թաղենց։ ԺԱ և ԺԲ անգիր են և չախչախուած։ Մնացեալ Իշխանը Գաւրիժու մէջ մեռնելով 1273 թուին սեռից վրայ. սա այժմ ծանօթ է Գաւրիթան անուամբ։ Ունի փոքրիկ բեմ և սեղանի վրայ կան երեք սրմնափակ սիւներ, որոց իւրաքանչիւրին վրայ քանդակուած են խորհրդաւոր բերանաբաց և լեզուաբաձակ օձեր։ Հիւսիսային սրմնոյ արտաքին անթուական արձանագրութիւնն կը յայտնէ, որ գամբա-



55. Բուրթել իշխանը կառուցած երկայարկ եկեղեցին։

մարմինը մեծ Հանդիսով կը բերեն Ի Նաբաւանս. ուր իւր Տարագիծ եղբայրն կը շինէ ըստ պատմչին յատուկ «տուեն տապանի, և եկեղեցի յանուն Սրբոյն Գրիգորի, և անդ փոխէ զեղբայր իւր Սմբատ» (Օրգեղ. պտմ. ԿԶ)։ Այս եկեղեցին կից է Ս. Կարապետի հիւսիսային սրմնոյն, կառուցուած է սրբատաշ քարով կամարակապ և չորս սրմնայար բանից շինուածքը յանձնած էր Տարագիծ Միրաւեան անուն վարպետի մը, և տարին վարձուն ապիտակ հարկ յատկացուած է եղեր Հալէձոր գիւղի։ Նոյն սրմնոյ հներքին կողմը կան զանազան ընծայաբերութեանց վերաբերեալ երկու արձանագրութիւնք, մին Մխոյ խաժուխի, միւսը Դովենց Գրիգորի և իւր կնոջ Ասիայի։ Արեւմտեան պատ


վերեւ գեռ ճնացած է Տարսայիճ իշխանի համառօտ արձանագրութիւնը և շինութեան թուականը ՉԻԴ (= 1275): Դամբարանիս վէմ թաղուած են յետ Ամբատայ Օրպելեանց հայկապ և հռչակաւոն իշխանաց և իշխանուհեաց մարմինք: Բեմին պիտացը յատակը ծածկուած է երկու կարգ քանդակազարդ տապանաքարերով, թուով ասն և մէկ, որոց երեքը արձանագիր չունին, իսկ միւսները հետեւեալք են Ա· Ամբատ իշխան, ՉԻԲ (= 1273): Բ· Տարսայիճ իշխան, ՉԼՔ (= 1289): Գ· Փախրադաւլ որդի Տարսայիճի, ՉԼԹ (= 1296): Դ· Մինայ խանձուն արքայուհի, ՉԽՀ (= 1298): Ե· Էլիկում որդի Տարսայիճի, ՉԼՓ (= 1300): Զ· Թամթա խանձուն մայր Բուրթելի, ՉԿԱ (= 1312): Է· Ամբատ մանուկ որդի Բուրթելի: Ը· Բուղդա երիտասարդ եղբայր Բուրթելի, ՉԿՀ (= 1318): Թէ՛ ժամատան և թէ դամբարանիս տապանաքարերու արձանագրութիւնք, յորոց միայն անուանք և թուականք քաղեցինք, իրենց համառօտութեամբն, լեզուի մաքրութեամբ, ազգու խօսքերով, յոյժ հռչակաւոր են, և Հայաստանի բոլոր տապանատանց մէջ չեն գտնուիր տանց նմանը և ոչ իսկ հռչակաւոր Հռոմոսի, Հաղբատայ, Սանահնի, Տաթեւոյ և այլ վանքերու մէջ: Դամբարանէն գրեթէ քան հինգ քայլ հեռու զէպ ի հարաւ, վանացս կիսակործան պարսպի մէջ է Բուրթել իշխանի հայկական ՉՉՐ (= 1339) թուին կառուցած հայկապ և ճարտարապետուհատ եկեղեցին (Թ. 55): Եկեղեցւոյ



56· Բուրթել իշխանի կառուցած եկեղեցւոյն դրան քանդակը:

անունն յայտնի չէ, բայց կը կարծուի թէ նուիրուած ըլլայ Ս. Աստուածածնի: Ամբողջ շէնքը կառուցուած է միայն մէկ տեսակ բաց գեղին սրբատաշ քարէ. թէ՛ ներքին և թէ վերին յարկերն ունին մէկ մէկ գուռն արեւմտեան պատի վրայ, գեղեցկաքանդակ հիանալի շրջանակներով: Ներքնայարկի դրան վերը (Թ. 56), կիսաբոլոր կամարապոյն քարի վրայ քանդակուած է Ս. Աստուածածնին՝ Քիստոս գիրկը, նստած աթոռի վրայ, գլխուն վրայ բարձրաքանդակ գրուած է Մայր Աստուծոյ, և աջ ու ձախ կողմերը կեցած

են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետաներ- ցույց չինուվեան տարին։ Երեք կամ չորս
բը, որոց անուանք ևս գրուած են բարձ- աստիճաններով կը մտցուին եկեղեցւոյս ներ-



57. Բուրթել Լշխանի կառուցած եղեղեցւոյն վերնայարկը։

բաքանպակ։ Այս քանպակապատակերէն քիչ քիչ յարկը, որոյ կամարակապ առաստաղը
մը վեր քանդակուած է հրաշալի տառերով մը վեր քանդակուած է չորս սրմնափակ սիւներու վրայ.
ՉՉԸ (= *1339*), *որ կը ցուցընէ եկեղե- չունի ոչ բեմ և ոչ խորան, այլ պատճա-*

աու կը կարծուի որ գամբարան եղած ըլլայ, որովհետև յատակը ծածկուած է գեղեցկաքարերով՝ որք թուական չունին։ Աստառապի չորս անկիւնները քանդակներ կան, մին է Յիսուսի կիսարձանը, միւսներն են ցուլ, առիւծ և արծիւ։ Ներքնայարկի դրան աջ և ձախ կողմերէն կը բարձրանան քարէ նեղ աստիճաններ, որք թուով 13 ոտյգ են, և մէկ ծայրով միայն ամրացած են պատի մէջ։ Աստնք կը միանան երկրորդ յարկի դրան առջև և կը կազմեն անոր մուտքը և նիքը։ Վերնայարկի (Թ. 57) դրան շրջանակը ունի գեղեցկանկար է. վերը կիսաբոլորի մէջ քանդակուած է Փրկչի պատկերը, որ ձախ ձեռքով բռնած է աւետարան և աջով կը տեսնացնէ, ներքեւը



58. Բուրթել իշխանի ծաղկազիր աւետարանը։

պրուած է Յիսուս Փրկատոս. երկու կողմերը կանգնած են Պետրոս և Պօղոս առաքեալները իրենց անուններով. կան նաև երկու սրաձիգ բազէներ կամ արծիւներ, որք կիսաբոլորի վերի անկիւնները կեցած իրար կը նային։ Իսկ փրկչական պատկերէն վեր բարձրաքանդակ տառերով գրուած է Բուրթել իշխանաց իշխանի յիշատակարանը, երեք միմեանց կից սրբատաշ քարերու վրայ, բայց ափսոս որ միջին քարն արդէն ինկած է գետին և միւսներն ալ ենթակայ են նոյն վիճակին։ Մանրագրուագ հիւսիսային լուսամուտի մօտ ևս քանդակուած է Փրկչատոսի պատկերը վերնոյն նման աւետարանով և խաչակնքելով, և երկու կողմերն կան հրեշտակներ։ Ցաճարիս գմբէթը որ անշուշտ սուրբ Հաճի անունով է, ունի ներքին մասանց նման հրաշակերտ էր, 1840ին շարժէն կործանուեր է, որոյ մնացորդք, ճակատէն և որմերէն փրած քարերու հետ թափուած են խառն ի խուռն թէ՛ վերնայարկի յատակը և թէ գետինը։ Այդ մնացորդաց մէջ կը տեսնուին քանդակազարդ սեանց կտորներ, յորոց կը մակարերուի թէ գմբէթին սիւնազարդ եղած ըլլայ. կան նաև զարդը և ներսը գեղեցկաց մէջ՝ ոչ սակաւ քանդակուած քարեր և խաչարձաններ, որոց վրայ կը փայլի ժամանակին ճարտարութիւնն։ Վերնայարկի ներսը կամարակապ է և աւազ խորանի երկու կողմն կան փոքրիկ խորաններ նուրբ և գեղեցիկ արձնափակ սիւներով բաժնուած։ Աւազ խորանի կամարի վրայ քանդակուած է Փրկատոս Յիսուքրիստոս

Բաց ի վերոյիշեալ շինութեանց տարեր վրայ գտնուած յիշատակարաններէն, վանացս մէջ կան տակաւ ևս ուրիշ արձանագրութիւնք և խաչարձանք այլ և այլ բարերարաց և նուիրատուաց։ 1256ին Շատլոյս անունով մէկը նուիրեր է իր ձեռագունակ այգին. ուրիշ մը՝ թուական չկայ,

Հաղարի և ամուսինն Մելիք՝ ընծայեր է Զուայ գիւղէն այգի մը։ Մահեան ան իշխան, նուիրեր է իւր սեփական Նրբոյն բերդը, և այգիով ատեն մը Արփայի մէջ։ Ա-միրա և իւր եղբայրը Աղթամարեանք, ընծայած են մէկ մէկ այգի Արխա գիւղէն։ Սիւնեաց պատմիչ Մաթեոսնոս եպիսկոպոս Օրպելեանը, որ վանացս հօրեղբօրմ առաջնորդն եղած է՝ և յետ բազմաթիւն կենացն թաղուած է փրկչական 1503 թուին Ժամատան մէջ, նուիրած է Աբաասչեն գիւղը և Ս. Սահակ Փողաձաձորի մէջ, իւր հայրենաբաժին Հրաւեկայ բերդը, Արատես գիւղը, Զուայ գիւղը, զոր 21000 դրամով գներ է իւր Ջալալ եղբօրէն, և այլն։ Դեռ ուրիշներ ևս նուիրեր են այգիներ և գիւղեր. այս նուիրատուաց յիշատակարանը կը հատնի մինչև ԺԴ դարու սկիզբը։

Վանացս պարսպէն դուրս ատենակներու մէջ դեռ մնացած է փոքրիկ կամարակապ սենեակ մը, որ կը կոչուի Հիւրատուն։ Ներսը հարուածին օրմոյն վրայի անթուական արձանագրութենէ կը հասկցուի՝ որ Տարսայիճի հրամանաւ շինել տուած է հիւրատունս Սարգիս եպիսկոպոս վանացս առաջնորդը. գանազան գիւղերու և այգիներու մուրքն ալ յատկացուած է եղեր այս հիւրընկալ ատեն։ Վանացս պատմութիւնն Սահփանոս Օրպելեանի յաջորդ Յովհաննէս եպիսկոպոսէն վերջ, որ մեռած է 1224ին, մեզ համար թաղուած է մթութեան մէջ, բայց 1569 և 1571 թուականներուն ատենաբարերու արձանագրութիւններէն կը յայտնուի՝ որ Ներսիանքս տակաւին շարունակեր է իւր ընթացքը և եղեր են իւր մէջ եպիսկոպոսներ և միաբաններ։ Ինչ որ կ'երեւի 1840ին երկրաշարժէն վերջ բոլորովին ամայի և անտէր մնացեր է, որ Թուրքերը 1857 թուէն առաջ և յետոյ ոչնչացուցեր են հաչակաւոր մենաստանս։ Այժմ Ամատու գիւղի հետ սեփականացուցածք է վանքս Երեւանցի Պ. Սահփանոս Եղիազարեանի ժառանգներուն։ Երբեմն հաչակաւոր մենաստանս՝ որ ամէն տարի բազմաթիւ ուխտաւորներ և մեծ հանդէսներ կ'ունենար, այժմ միայն վարպետաձեւ կու գան տակաւ ուխտաւորներ, մեծ մասը կանայք Տարաչաղբիւր Արխա, Կնիշիկ և Խաչիկ գիւղերէն և Շարուրի Ուխտ Նոբաշէն գիւղէն. կը մնաուցուի Ս. Պատարագ, կ'ազօթեն և մատաղ կ'ընեն։ Տես ՆՈՐԱՎԱՆՔ։ — Միսակեան, 184—203։ Ջալալեանց, Բ. 170—183։ Քաջբերունի, Արարատ տարագիր, 1889 և 1890 տարիներ։ Եւ այլն։


ԱՄԱՅԻ. — Վիճակ կամ բերդաքաղաք Գաշտային Կիլիկիոյ, զոր Յովհան Պերիներուժէն կայսրը՝ Ա. Լեւոնի գերութեան ժամանակ ուրիշ քաղաքաց և բերդերու հետ նուաճեց։

ԱՄԱՆ կամ ԱՄԱՆՈՍ. Լ. AMANUS. Ճն. Ἀμανός. — Լերինք Կիլիկիոյ արեւելեան հարաւակողմը, որք կը բաժնեն Ասորիքը Կիլիկիայէն և Փոքր Հայքէն։ Միջին գարուց մէջ թէ՛ յօտարաց և թէ մեր ազգէն Սեաւ Լերինք կ'անուանէին, իսկ այժմ ամբողջ շղթան կը կոչուի Էլմա—տաղի, եւ հիւսիսային կողմը երկնցած մասը, քիւտանեայ լեռնցի բնակչաց բազմութեան պատճառաւ Կեավուր—տաղի։ Լերանս գագաթները Անթիտորոսէն աւելի բարձր են և կը հասնին մինչև 7000 ոտնաչափ բարձրութեան։ Բազմաթիւ գետակներ լերանս ճիւղերէն իջնելով կ'ոռոգեն հին Ճկեր և Հռոսոս գաւառները և կը թափին Հայոց ծոցը։ Լերանս ջրերէն և բարձրութիւններէն աւելի նշանաւոր են կիրճերը կամ նեղուցները, յորոց պէսպէսութեամբ մէկ կամ երկուքը կը համարուին նշանաւոր, Ա՛ինջ կամ Դրունք կոչուելով։ Ձիշտը միայն լերանցս մէջ նշանաւոր հին քարաշէն և կամարակապ Ա-մանոսեան Պրունք ը (թ. 59), որ այժմ ի Թրքաց զանազան անուններով կը կոչուի Սեաւ կամ Երկաթի դռռան (Գարա գափու, Տեմիր գափու) և Գոչրտ—գոչագ (Գայլ-ականջ), մերձակայ համանուն հանդրուանի անուամբ։

Այս ի բնէ ամրացեալ լերանց ամայի թաղաղութեան մէջ գրեթէ բրիստոնէութեան կիլիկիոյ մէջ մնաց գանելէն ի վեր՝ առանձնացած էին բազմութիւնք կրօնաւորաց և ապաստանականաց՝ այլ և այլ ազգերէ, որոց մէջ գլխաւորք էին Հայք, Ասորիք և Յոյնք, ինչպէս յետոյ իրենց միացան նաև Վրացիք

և Լատինք խաչակրաց ժամանակ։ Զանազան անգամ այս անգէն և օգտաւէտ ժողովուրդն, որք իրենց օրական ապրուստը ճարելու համար՝ իրենց ազօթից և սուրբ խոկ-

բեան ըստ Ուռհայեցւոյն (223). «..բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մահուենցան ի բերան սրոյ և յայրուձն հրոյ, և եղեն կերակուր գազանաց և թռչնոց, և ոչ ժամա-



59. Ամանոսեան պրոնք։

մանց ժամերէն զուրս, երկրագործութեան կ'զբաղէին, ենթակայ եղան հարստահարութեանց, կեղեքմանց և կոտորածի՝ բարբարոս իշխողաց և ասպատակաց նոյն տեղւոյն և շրջակայ կողմանց. որոց հրամանաւ երնեցին ծածկել հողով, վասն զի ձեացին անթաղք մինչև յաւիտեան. և անթիւ վանորեայք և գեղք այրեցան հրով»։ Այս անթիւ վանքերէն, որք յետոյ վերստին շինուեցան և շէնցան, հազիւ թէ աստ և անդ ցիրուցան

ափսուած՝ պատմչաց քով կը գտնուի տասնի մը չափ անուններ կամ պոյտն յիշատակութիւն, այն ալ՝ ուղիի ժԲ դարու մէջ, որք են Պատ–Լահոյ (Դրախտ Աստուծոյ), Արիգի, հռչակաւոր Շուշոր անապատը, յորմէ անբաժան են նուիրական յիշատակք Գրիգոր Լուսաւորչի Փոքր Վկայասիրի և իւր եղբօր՝ Ներսէսի Շնորհալւոյ, ինչպէս նաև Ներսէսի Լամբրոնացւոյ. գարձեալ Բարսեղացւոյ անապատ, վանդիկոզեն, Մաշկեւոր կամ Մաշկաւոր, որ ոչ միայն մենաստան, այլ և թեմական եպիսկոպոսանիստ աթոռ էր, ուր ծաղկեցաւ նշանաւոր վարդապետն Բարսեղ, Մարկոսի Աւետարանին մեկնիչը. Բարաչիթար կամ Բարաշիթոռ վանք, տեղի վարժութեան Սարգսի՝ կաթողիկեայց թղթոց մեկնչի, Շահիրին մենաստան, ուր վարժեցաւ և գրեց Իգնատիոս վարդապետ իւր ոսկեղինիկ մեկնութիւնն Ղուկասու Աւետարանին, Պաղակ–ձիւակ վանք, և հուսկ ուրեմն Ս. Գէորգ՝ Լատին Բենեդիկտեան կրօնաւորաց և Ս. Սարգիս՝ Կիսաերսեան միանձանց։ — Միսռաեան, 403–410։ Բազմավէպ, թԳ. 397–398։

ԱՄԱՌԱՇԻՆ. — կը յիշէ գիւղս Օրպելեան, Միւնեաց երկնչակ գաւառի մէջ։

ԱՄԱՌՆԱՄԱՏԱԿԻ ՋՈՒՐ. — Ցիշուի ա նունս Ձրի վանաց 1200 թուականաւ արձանագրութեան մը մէջ։

ԱՄԱՍԻԱ. — Երբեմն հռչակաւոր քաղաք Պոնտոսի երկրորդ Հայոց սահմանին մօտ, և այժմ գլխաւոր քաղաք համանուն գաւառի։ Կ՝ընկնայ 33° 32′ արեւելեան երկայնութեան և 40° 39′ հիւսիսային լայնութեան մէջ, 72 հղմտ. եւզոկիայէն և 147 հղմտ. Սեբաստիայէն հեռու, գրեթէ նոյն ուղղութեան վրայ։ Հաղորդակցութիւն ունի այս կրկին քաղաքաց և Սեւ ծովու հետ՝ Յամանոնէն թաղրերդ եղած կառաշնաց ճանապարհով։ Քաղաքս բարձր է ծովու մակերեւոյթէն 405մ. և կը տարածուի արեւմուտք արեւելք, սեղմուած յատթի բուսականութեամբ զարդարուած հովտի մը մէջ, զոր կը կազմեն Քալէ–տաղի և Զահաւի (թ. 60) լերինք։

Քան և հինգ գարերէ ի վեր ծանօթ Ամասիան, այն սակաւագիւտ քաղաքներէն է, որ կրցած են իրենց անունը երկար ժամանակ պահել ամփոփոխ։ Ըստ պատմութեան և աւանդութեան հիմնուած է Մեծին Ազեքսանդրի Ամասիա անուն հօրեղբօրէն։ Շատ ժամանակ անցնելէ վերջ, մեր Մեծին Տիգրանայ թագաւոր Միհրդատ, որ իւր անուրէն կողմնապատ զրուած էր Մաժակ քաղաքին մէջ, կու գայ կը գրաւէ Ամասիան և այսպիսով կ՝անցնի Հայոց իշխանութեան ներքեւ։ Միհրդատ քաղաքս ընդարձակելով արքունիքը կառոյց գետին հիւսիսային կողմը բարձրաբերձ նաւակին սասրոսը, և Շամիրամայ նման շինել տուաւ նաեւ քարակոփ շիրիմներ, սանդխաձեւ ճանապարհներ և գանձուց քարայրներ։ Ըստ պատմչին, այդ քարայրները գանձերով լեցնելով բաւական տարիներ տիրեց Միհրդատ մինչեւ Պոմպէոսի գալուստը, որ պատերազմելով յաղթեց և քաղաքէս տիրեց։ Երբ Պոնտոսը հռովմէական գաւառ դարձաւ, Ամասիա անոր մետրապոլիսն կամ մայրաքաղաքն անուանուեցաւ. մեր հին պատմագրի համեմատ, այդ ժամանակ քաղաքս «... լի էր ամենայն չարեօք և պաշտամունք սատանայի, մինչեւ ի կենսարար քարոզութիւն առաքելոցն՝ յորում բազումք հաւատացին ի Տէր»։ Յետ ոչ սակաւ ժամանակաց գարձաւ Տրապիզոնի Գունաց տէրութեան գլխաւոր քաղաքներէն մին. և ապա Կոմնենոսաց ձեռքէն անցաւ Սելճուկեանց։ Տրապիզոնի Գունաց տէրութեան ամբողջական կործանումէն 65 տարի վերջը, 1397 թուականէն ի վեր Ամասիա գարձած է օսմանեան տէրութեան անուանի քաղաքներէն մին։

Պայազիտ Ելդըրըմի ժամանակ Լէնկ Թիմուր հօրէք ամիս քաղաքս պաշարեց և ամուր գրից պատճառաւ չկարենալով տիրել, յարձակեցաւ մերձակայ գիւղերու վրայ և բոլոր բնակիչները սրէ անցուց։ 1472ին Ամասիա վերստին վտանգի մէջ ինկաւ Ուզուն–Հասանէն, բայց Մահմէտ Բէ որդին Մուսթաֆա, որ տեղւոյն իշխողն էր, զօրեղ յարձակմամբ մը թշնամեաց բանակը ցրուելով քաղաքը ազատեց։

Իրիս (Եէշիլ ըրմաք) գետը քաղաքիս միջէն անցնելով, կը բաժնէ զայն կրկին մասանց. երեւելի շէնքեր, եկեղեցիներ, մզկիթ-

ներ, շուկայն, և այլն, կառուցուած են գեղ. տոյն հարաւային կողմը, իսկ հիւսիսային կողմի շէնքերէն նշանաւոր են Զիյա պէյի վայելուչ շինուած կառավարութեան պալատը և հասարակաց ժամացոյցի աշտարակն։ Ի. բիսի վրայ տեղ տեղ քարաշէն և փայտեայ կամուրջներ ձգուած են, որոնք կը միացնեն քաղաքին երկու մասերը։ Գետս՝ որ Ամասիոյ մեծ գեղեցկութիւն և նկարչական տեսարաններ զատ կ՚ընծայէ նաեւ առատ ձկունք, ունի նաեւ իւր վտանները. գարնան և աշնան անձրեւաց յաճախութեամբ ջուրը բարձրանալով կ՚ողողէ մերձակայ պարտէզները, փողոցները և տները, տարուան մէջ քանի մը անձ ալ մէջը կը խղդուին։ Պարտէզը և այգեստանը հրաշալի տեսարաններով կը տարածուին գետոյս երկու կողմերն, որոց ջուր կը մատակարարուի Իրիսի վրայ հաստատուած ջրաղաշխական զոյգակիր անիւներով։ Գետոյս վրայ կառուցուած են բաւական թուով ջրաղացքներ, որոց մէջ ամենէն գերազանցն է գերմանացի Պ. Մէյնէրը, որ ունի նաեւ մեծ տաքսի թել հանելու և ոլորելու ընդարձակ գործարան։ Գիտական զարուս լուսաւորութիւնն և զարգացումն եթէ մեծապէս կը պատուէն այս տեղս, որ իրենց կանանց համար ուսուցանելի գաձած է. վասն զի ներսը գրան մեծ ձախակողմը քարէ կամարաշէն գեղեցիկ տեղ մը մէջ փայտէ դագաղներով կը պահուին երկու մեռելոց անփուտ մարմինք և երբորդի մը ոսկորները՝ գորս ամէն մահկանացու ծնրադրութեամբ և ագօթիւք կը ցուցընեն, բայց չի գիտցուիր թէ որոց են այդ մարմինները։ Կէօզ մէարէսի գիմացն է Ղլիճ Ասլանի փառաւոր մահարձանը՝ սեւ կճեայ կափարիչով և արձանագրութեամբ. ասոր մօտ կան նաեւ ուրիշ շիրիմներ, զորս կը համարին թէ ըլլայ անոր կնոջը և որդւոց։ Թիւնարխանէ կամ Ցիմարանոց անուամբ նշանաւոր ուրեք մը կայ կառավարութեան պալատին գիմացը, Իրիսի հարաւակողմը, որոյ դրան շրջանակը զարդարուած է արաբական մանր քանդակներով և վրան կայ արձանագրութիւն. ներսը կանգուն ճեացած սենեակներն արքունի ամրաբանոց բրած են։ Ըստ աւանդութեան, այս է եղեր ժամանակաւ Ռէյ մօրն չատատա-

կոր՝ գրեթէ առաջնոյն կից, կառուցուած ՌՄԳ. (= 1841) թուին, աւելի ընդարձակ է և փառաւոր. գ. Ս. Աստուածածին՝ Ամասիոյ թաղը բարձրագիր և գեղեցկաշէն, կառուցուած ՌՄԺԹ (= 1804) թուին, որոյ ներքին սրմունք, սիւներն և առաստաղը նկարուած են սրբազան պատկերներով։ Այս եկեղեցիներն ունին գեղեցիկ գրիք և բաւական ընդարձակ խաչքարակներ, ծառեր և սեմեակներ. իւրաքանչիւր բակի մէջ կան երկսեռ ծազկոցներ։

Մզկիթներու մէջ ամենէն շքեղն և հոյակապն է Սուլթան Պայազիտ՝ Իրիսի եզերքը, կրկին մինարէով, կճեայ սիւներով, արաբական նկարներով և քանդակներով, մանաւանդ ընդարձակ հրապարակովը և գեղեցիկ գիրքովը. բակին մէջ կան մեծամեծ նոճի ծառեր և մէկ կողմը ընդարձակ վարժարան մը։ Նշանաւոր է նաեւ մանաւանդ հնութեամբը կէօք մէտրէսէ ըսուած մզկիթը՝ քաղաքին արեւմտակողմը, զոր ամանք կը համարին թէ ժամանակաւ եկեղեցի եղած ըլլայ. ունի ինը գմբէթ և գրսի գրան քով մաս մ՚ալ աւերակ։ Թէպէտ այժմ անգործածելի է, սակայն թուրքերը մեծապէս կը պատուեն այս տեղս, որ իրենց կանանց համար ուխտատեղի գաձած է. վասն զի ներսը գրան մօտ ձախակողմը քարէ կամարաշէն գեղեցիկ տեղ մը մէջ փայտէ դագաղներով կը պահուին երկու մեռելոց անփուտ մարմինք և երբորդի մը ոսկորները՝ գորս ամէն մահկանացու ծնրադրութեամբ և ագօթիւք կը ցուցընեն, բայց չի գիտցուիր թէ որոց են այդ մարմինները։ Կէօք մէարէսի գիմացն է Ղլիճ Ասլանի փառաւոր մահարձանը՝ սեւ կճեայ կափարիչով և արձանագրութեամբ. ասոր մօտ կան նաեւ ուրիշ շիրիմներ, զորս կը համարին թէ ըլլայ անոր կնոջը և որդւոց։ Թիւնարխանէ կամ Ցիմարանոց անուամբ նշանաւոր ուրեք մը կայ կառավարութեան պալատին գիմացը, Իրիսի հարաւակողմը, որոյ դրան շրջանակը զարդարուած է արաբական մանր քանդակներով և վրան կայ արձանագրութիւն. ներսը կանգուն ճեացած սենեակներն արքունի ամրաբանոց բրած են։ Ըստ աւանդութեան, այս է եղեր ժամանակաւ Ռէյ մօրն չատատա-

Մահմետականք սիւննիք	. .	13500
» շիիք	. .	6500
Հայք լուսաւորչականք	. .	9760
» կաթոլիկք	. . .	240
Գումարն....		30000

Հայոց եկեղեցիք երեք են ա. Ս. Նիկողայոս՝ ուր է առաջնորդարանը. բ. Ս. Յա-

ծոց մեհեանը, զոր հրձիգ ըրաւ Մ. Թէոդորոս զինուորը։ Շինուածոց մէջ նշանաւոր են նաեւ բազմաթիւ երեւելի Թրքաց անոնը և Զահրալի լերան կողմի հովանոցները (քէօշք)։ Բաւական մաքուր, վրան գոց և ձեւաւոր է քաղաքիս շուկայն, որուն մէկ մասը 1885ին կրակով մը այրեցաւ։ Թաշխանը՝ ուր է մաքսատունը և վաճառականաց սենեակները, բոլոր շուկային մէջ միակ քարաշէն և նշանաւոր կերեւուածն համարուած է։ Պիգեստենը՝ որուն վրայ գոլեսաւիք կը խօսին նախկին ուղեւորը, անզործածելի է և աւերակաց կարգն անցած։ Գեր. Արտանեանց քաղաքիս Հայոց դպրոցաց վրայ դժգոհութեամբ կը գրէ, և կը յիշէ 1 ուսուիարան Ներսիսեան. 1 երկսեռ վարժարան Մեսրոպեան, 3 ծագկոց մանկանց և 2 ծագկոց աղջկանց։ Թէեւ Ամասիոյ գաւառին օդը բարեխառն է, սակայն քաղաքս խոր ձորակի մէջ լինելով՝ ամառը սաստիկ տաք կ'ընէ և յաճախ տենդի հիւանդութիւն կը տիրէ, այս պատճառաւ բնակչաց մեծամասնութիւնը կը տիպուի բնակիլ դեզդեզուարճ պարտէզներու և այգիներու մէջ։ Ջերմաչափը ամառը շուքի մէջ կը բարձրանայ մինչեւ + 38° Հասիւրամեան, և ձմեռը կ'իջնայ մինչեւ — 10° Հարիւրամեան. այս բարձրադոյն և ստորին աստիճաններէն զատ, շատ անգամ կոզմանցս կլիմայի փոփոխութիւններ կ'ունենայ, որուն պատճառ են շրջակայ բարձր լեռները։


Ամասիոյ մէջ տեզական պիտոյից համար ամէն տեսակ արհեստներ կը գտնուին, որոնք ընդհանրապէս Հայոց ձեռքն են։ Ճարտարարուեստից, բերոց և բանուկ վաճառականութեան վրայ որովհետեւ պիտի խօսինք համառօտ գաւառի նկարագրութեան մէջ, այժմ անցնինք ակնարկ մ'ալ տալ հնագիտեան մի քանի մնացորդաց վրայ, որք իրրեւ յուշարարք հնոյն Ամասիոյ մնացած են մինչեւ ցարդ և տեսողաց վրայ հետաքրքրութիւն կ'ազդեն։ Քալէ—տաղի որ բարձրացած է քաղաքի հիւսիսակողմը, իւր գագաթան վրայ կը կրէ հնաշէն բերդի և պարսպաց աւերակները. ինչ որ կը տեսնուին աւերակներէն, բերդս զուարկ է մեծագործութենէ, և չենք կարող հաւաստեաւ ըսել, թէ Միհրդատէն շինուած ըլլայ։ Աւելի աչքի ընկնող և նշանաւոր է բերդի մէջ շինուած ջրամբարը՝ զոր տեղացիք Ճլանգուզլա կ'անուանեն։ Խոտորնակի կամաւ ի շեղ կամարաձեւ ստորերկրեայ ուղի մ'է սանդուխներով, որ գրեթէ ժամ մը կը տեւէ և կ'իջնայ մինչեւ քաղաքի արեւելեան հիւսիսէն հոսող Թէրտախաւն գետը։ Ըստ ոմանց այդ ճանապարհով պաշարման ժամանակ ջուր կ'առնէին, և ըստ այլոց գաղտուղի մը համարուած է։ Ճլանգուզլայի մուտքի պիմացն է յանգստարան մը՝ որ Ամասիա գնացողաց գուբը՝ որ Ամասիա գնացողաց անուամբ ծանօթ է ամէնուն. խոնարհութիւնն է վեց կամ եօթը մետր, ուր կ'իջնցնէին չուանով յանգստարանը և վրան քառակուսի խոպով կը գոցէին։ Գրեթէ 35 տարի առաջ վերոյիշեալ բերդը շէն էր. բերդապահ քալէի անուանեալ բնակիչը հոն կը բնակէին և ազատ էին ամէն տեսակ հարկատուութենէ և զօրք տալէ։ Բերդի արտաքին պատին մօտ սենեակի մը վերնատան մէջ ամիսփուած կը պահուէին հին զրահներ և նետեր, տեսակ տեսակ ձեւերով սաղաւարտներ, լանջապանակներ, շղթայաշար զրահներ, ձիոց պլխանոցներ, և այլն. ամէնքն ալ երկաթէ, որոց և ոչ մին մնացեր է այժմ. Զկայ պէյ անունով Միւմեասրիֆը՝ որ երեւելի է իւր բազմաթիւ բարեկարգութիւններով և շինութիւններով, այս հնութեանց կարեւոր մասը գրկած է ի կ. Պոլիս։ Բերդին մէջ կան մի քանի թուրքերէն արձանագրութիւնք. կան նաեւ յունարէն արձանագրութիւններ, զորս քաղաքի ուրիշ մասանց մէջ գտնուածներու հետ հրատարակած է Հ. Ներսէս Վարդիսեան։

Նոյն լերան քաղաքի կողմը նայող երեսի վրայ կրկնակամար և քառակուսի գռներով փորուած քարայրներ կան, և ժայռերու վրայ փորուած սանդուխներ, այդ քարայրները ելլելու և իջնալու համար։ Այսպիսի քարայրներ և սանդուխներ կան նաեւ քաղաքի հարաւային, արեւելեան և արեւմտեան կողմերու ժայռերուն վրայ։ Այս քարայրներէն եթէ ոչ ամէնքը՝ գէթ մեծամասնութիւնը, մնացորդք են անշուշտ մեզ արդէն ծանօթ Միհրդատայ գանձուց համար փորած քարայրներուն։ Գիտնականներէն եղան շատեր, որք այս քարայրներուն և Պերսեպոլսի թա-

գաւօրական շիրմաց մէջ մեծ նմանութիւն գտնելով, համարեցան որ եղած ըլլան ժամանակաւ Մարաց թագաւորաց գերեզմանք։ Գալէ–տաղիի մէկ կողին վրայ ալ դէպ յարեւելս կայ գեղեցիկ Թէքքէ (վանք) մը, շինուած Շիրվանզատէ Խուշտի փաշային, որ Սուլթան Ազիզի օրով կ. Պոլսի մէջ մեծ և պարգոս էր, բնիկ Ամասիացի, որոյ ծնողք Շիրվանէն (Ազուանք) գաղթած եկած են եղեր հոս։ Ցիշեալ եպարքոսի ծնողաց մարմինք կ'ափոփուին սոյն Թէքքէի մէջ, ուր

Թուրք ազօթողաց և այցելուաց համար շինուած են կանոնաւոր սենեակներ. ամբողջ շէնքը պարսպապատ է, ներսը ծառազարդ, ղիրքը հովասուն և բարձրադիտակ։

Յայժ նշանաւոր է քաղաքին արեւելակողմը



60. Ամասիա քաղաքի ընդհանուր տեսարանը։

Այնուամենայնիւ քարայրը՝ որ ձեւով նման է միւսներուն, բայց ներսը և մասամբ մ'ալ դուրսը ապակէրասով ծեփուած ըլլալով, այնքան փայլուն է եղեր որ գրսի բոլոր տեսարանները իրենց ի հայելւոջ ցոլացմամբ կը տեսնուին եղեր. այժմ խաւարամած է և

ծուխով սեւցած։ Կը պատմեն թէ փաշա մը ձիով դիմացէն անցած աեեն, ձին խրտչեր և գինքը գետին զարկեր է, այս պատճառաւ նոյն փաշան յարդ վառել տալով, թամնձր ծխով սեւցուցեր է։ Աչրիս մէջ ըստ հին ուղեւորաց կան եղեր շատ նկարէն պատկերներ, ինչպէս նաեւ կամարին վրայ գետ կը նշմարուին երկոտասան Առաքելոց պատկերները, և գրսէն ալ ճակտին վրայ յունարէն արձանագրութիւն մը։ Կը կարծուի թէ այս կանխաւ եղած ըլլայ գանձատուն կամ մեհեան և քրիստոնէութեան ժամանակ եկեղեցւոյ փոխուած։ Տրապիզոնի թագաւորաց աեեն քարաքոս կար Յունաց հոչակաւոր եպիսկոպոսարան. Հայք եւս ունին եպիսկոպոսարան, որոց Առաջնորդական աեղապահ է այժմ Նիկողայոս վ. Ֆրանկիւլեան։ Քաղաքս հայրենիք է Սարաբան մեծ աշխարհագրին, և քրիստոնէութեան առաջին պատուց մէջ մեզ ընծայեց զաւրք Թէոդորոս զինաւորը։

Ուխտատեղիք. — Աչինալը մագաթայի գիմացը գետոյն միւս կողմն է Ամասիոյ Բասիլիոս եպիսկոպոսին գերեզմանը, զոր յիշէ Խորենացին (Բ. ԶԸ). առաջ այստեղ եկեղեցի է եղեր, իսկ այժմ կայ միայն քարակոյտ մը։ Քաղաքիս Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ պահուած ձեռագիր Յայտնութեան մէջ կը յիշուի, թէ սուլթան Մուրատի ժամանակ Խորեր անունով փաշա մը քակելով ուխտատեղւոյս եկեղեցւոյ մնացած հիմունքը, յայտնուեր են Ս. Բասիլիոսի նշխարները խորանին տակը, զոր վերստին ծածկելով նոյն տեղը պահած են։ Ս. Յովհաննէս, քաղաքէն ժամ մը հեռու քարայր մ'է և միջէն ջուր կը բղխի, ուր կը յաճախեն տենդիւ ախտացեալները. այստեղէն գտած են Ս. Յովհաննու կարապետի գլուխը։ Թաւիշ անունով ուխտատեղի մըն ալ կայ Մարզուանու և Ամասիոյ միջտեղ, որուն համար կ'ըսեն, թէ Ս. Թէոդորոսի սպանուած վիշապին գերեզմանն է։

Վերյիշեալ Ս. Յովհաննու աղբիւրէն ժամ մը հեռու զարմանաց արժանի է Միհրդատայ ջրանցքը որ լայն առու մ'է՝ կռանաքարուած ապառաժ լերան երեսը մարդկային բարձրութեամբ. երկայնութիւնը կը տեւէ կէս ժամ աւելի, և այժմ աւերակաց կարգին համարուած է, զոր Թուրքերը Ֆեհրատ կոչեն։

Համանուն ԱՄԱՍԻԱ գաւառն կ'ընկնայ Սեբաստիոյ նահանգին հիւսիս—արեւմտեան կողմը, Գրզրլ—ըրմաք գետոյն, Քաստամունիի, Տրապիզոնի և Անկիւրիոյ նահանգաց և Զոգոկիա գաւառի միջեւ։ Ամբողջական տարածութիւնն է 29450 քմ. հզրմ։ կը բաժնուի 8 վիճակաց, և ունի 1201 գիւղեր։ Գաւառիս բնակչաց թիւն է 259600, բաժնուած հետեւեալ կերպով.

Մահմետականք սիւննիք .	132000
» շիիք .	66000
Հայք լուսաւորչականք .	44000
» կաթոլիկք .	3500
» բողոքականք .	1100
Յոյնք	14000
Գումարն	259600

Երկրագործութիւն. — Օսմանեան Ասիոյ ամէնէն աւելի արգասաբեր երկիրն է Ամասիոյ գաւառն։ Բուսական ամէն տեսակ բերքեր առատութեամբ առաջ կու գան. շնորհիւ լեռներէն հոսող Գրզրլ—ըրմաք և Եէշիլ—ըրմաք գետոց օժանդակ բազմաթիւ գետակներու՝ երկիրն չորութենէ ազատ է։ Նշանաւոր են ցորենն, փափունն, կանեփն, պամիան. առատութեամբ կը մշակուին ամէն տեսակ պտուղներ, գլխաւորաբար Ամասիոյ հովտին և քաղաքին հոչակուած պարտիզաց մէջ։ Անդուզական և հոտաւէտ խնձորներն, տանձն և սերկեւիլն և սալորն մեծ քանակութեամբ կը ղրկուին Կ. Պոլիս։ Առանց ուզելու երկարել մեր խօսքն ուրիշ պտղոց և բերոց վրայ, կը գնեմք աստ միջին հաշուով, գաւառիս տարեկան բերքերու ցանկն և քանակն։

Ցորեն	35 000 000	Հսխայ
Դարի	15 000 000	»
Հաճար	5 000 000	»
Վարսակ	95 000	»
Եգիպտացորեն . . .	50 000	»
Կորեկ	1 000 000	»
Բրինձ	250 000	»
Բակլայ	67 500	»
Փոխադրելի գումար .	56 462 500	Հսխայ

Փոխադրեալ գումար	56 462 300 Հրանք
Լոբի	1 150 000 »
Ոսպ	900 000 »
Սիսեռ	1 500 000 »
Պամիա	975 000 »
Խաղող	4 000 000 »
Խնձոր և տանձ	10 000 000 »
Ձանազան պտուղներ	11 000 000 »
Գազի խէժ	31 500 »
Մեղրապ (սալէպ)	10 000 »
Դեղին Հունա (Graine jaune)	150 000 »
Ծխախոտ	60 000 »
Անիսոն	800 »
Ափիոն	2 300 »
Խաշխաշի Հունա	100 000 »
Մոմ	7 000 »
Մեղր	1 000 »
Պրօն (թիֆթիֆ)	34 000 »
Նուշ	1 000 000 »
Ձոր խաղող կամ Ձամիչ	600 000 »
Գինի	15 00 000 »
Ռուփ (պէգմէզ)	2 400 000 »
Գումարն	91 884 300 Հրանք

կամ մերձաւորապէս 106 միլիոն հազարագրամ։

Տարուան մէջ միջին հաշուով կենդանիներէն առած կու գան

Եզ և կով	20 000 գլուխ
Ձի	10 000 »
Էշ	4 000 »
Ոչխար և այծ	171 630 »
Գումարն	205 630 գլուխ կենդանի։

Արուեստական արտադրութիւնը. — *Գաւառիս գլխաւոր արուեստներէն մին է ոսկերչութիւնը։ Այս արհեստը որ բոլորովին անձական է, գլխաւորաբար Ամասիա քաղաքին մէջ 2500 արհեստաւորներ ձեռքով կ'աշխատին, և Մարզուանի մէջ գրեթէ 3000 կտայք և աղլկունք իրենց տանց մէջ կ'աշխատին։ Գործածներն են 9 կանգուն երկայն պատառներ, ճերմակ, կարմիր և կապոյտ գծերով զոր կը վաճառեն Անկիւրիոյ նահանգին մէջ։*

Արուեստներու երկրորդ ճիւղ մ'ալ է ալիւրի վաճառականութիւն, որ 38 տարիներէ ի վեր մնած է այս կողմերս զուիցեբացի Պ. Քրուկի ձեռքով։ Առաջին տարիները թէպէտ այնչափ ընդունելութիւն չգտաւ այս արուեստը, սակայն 15 տարի է որ շատ ծաւալ առացած է և այժմ Ամասիա և իր շրջակայքը տարին 150000 պարկ ալիւր կը հանեն։ Մեծամասնութիւնն կը սպառուի ի Յառնոն, Պաֆրա, Զարշամպա. 30000 պարկ ամէն տարի կը գրկուի Սեւ ծովու այլ և այլ նաւահանգիստները։ Ներառութիւնն ժամանակաւ յոյժ ծաղկած էր Ամասիա և տարին գրեթէ 7էն 800000 հազարագրամ խազակ կ'ելնէր։ Ներառի հիւանդութեան սկսելէն վերջ, այս արուեստը շատ ինկաւ, և տարեկան բերքն իջաւ 30000 հազարագրամի։ Բայց յորմէ հետէ մուտ գործած է փասթէօղի գրութեամբ ձուաբերութիւնը, վերստին սկսաւ բարգաւաճիլ և 1890ին ունեցան 80000 հազարագրամ, և այժմ դեռ աւելի շատցած է։ Մեծ օգտակարութեամբ նորոգ հաստատուած են Ամասիոյ մէջ նաեւ երկու գաւառներ։

Գաւառիս մէջ կան զանազան տեղեր հանքային ջրեր, և տեղ տեղ ալ երկաթի, պղինձոյ և արծաթախառն կապարի հանքեր, որոց երկուքն շահագործած է ազրութիւնը։ Ունի կաղնիի և փիճի գեղեցիկ անտառներ Լաթիհի շրջակայքը։ Թաֆչաև—տաղի բարձանց վրայ Մարզուանու, Հաճի—քէօյի և Ղավզայի վիճակաց մէջ եւս նոյն տեսակ ծառոց անտառներ կան, ինչպէս նաեւ Աքտաղի վրայ։ Այս անտառները լի են կենդանիներով և թռչուններով. նապաստակները այնչափ շատ են լեռներէն մեկոյ վրայ, որ իրենց անուամբ նոյն լեռը կոչուեր է Թաֆչաև—տաղ (Նապաստակաց լեռ)։ Կան նաեւ եղջերուներ և կիմճիներու երամակներ. արջն եւս առկաւապիտ չէ, գայլ, ագռաւ, լուսան, սամոյր, սամսար եւս կը գտնուին։ Պակաս չեն կաքաւներու խմբեր, փասիան, կոցար, սագ, վայրի բազ, արօս և ուրիշ որսի մանր թռչուններ։

Վաճառականութիւն. — Ամասիա գրաւելով Պաղտատի մեծ ճանապարհի վրայ, միշտ նշանաւոր եղած է իր բանուկ վաճառականութեամբը, մանաւանդ երբ ցամաքային ճանապարհով կ'երթեւեկէին ի կ. Պոլիս. այժմ եւս Պաղտատէն ապրին գտնուած քաղքաց վաճառքներն և մարդիկ այս գծով

կ՚իջնեն ի Յաման, որ գաւառիս վաճառականական շարժման կեդրոնը և միակ նաւահանգիստն է։ Այժմ գաւառս մինչեւ հաշուով տարին վաճառքներ կը ղրկէ և կ՚ընդունի, հետեւեալ ցուցակաց համեմատ.

ԱՐՏԱՏՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՆԱՒ ՎԱՃԱՌԱՑ	ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ կամ կշիռ		ԱՐԺԷՔՆ ֆրանկով
Ցորեն	25000	ակռչփ.	250000
Գարի	20000	»	160000
Ալիւր	100000	պարկ	1540000
Սիսեռն	700000	Հղրգր.	105000
Դեղին Հունտ	1879	»	1725
Ափիոն	500	»	18000
Խաշխաշի Հունտ	20000	»	10000
Գազի խէժ	25960	»	45125
Մեղրապտ	1704	»	3680
Պտուղներ	20658000	»	2300000
Կանաչեղէնք	600000	»	70000
Խաղող	100000	»	55000
Կարագ	40000	»	46000
Մոմ	5556	»	5980
Մեղր	400	»	1200
Բուրդ	140000	»	100000
Պրոն (Խիֆթիկ)	29000	»	52000
Ձրագու (Suif)	30000	»	17000
Դինի	100000	»	50000
Ռուպի	1000000	»	230000
Ոչխար	?	»	100000
Զի	?	»	15000
Այծու Մորթ	40000	կտոր	65000
Կովու »	?	»	30000
Եզան »	?	»	60000
Ոչխարի »	40000	»	72000
Գառան »	?	»	50000
Նապատաւակի »	8000	»	2960
Ջրշան »	40	»	1000
Աղմաարի »	400	»	630
Աղմայրի »	500	»	4500
Աղուեսու »	1500	»	34500
Շինուածեան փայտ	?	»	10000
Գորգեր	?	»	150000
		Գումարն	5732500

Գաւառիս դիմաւոր գետերն են Գըզըլ–ըրմաք, Թոզանլի–սու և Զէրքէրէք–չայ, որոց միախառնուելովը կը ձեւանայ Եէշիլ–ըրմաք կամ Ամասիոյ գետը. միւս գետերն են Թէրեսախան, Տէլի–չայ, Աք–սու, և այլն։ Լեռներէն յիշենք Քեմէր–տաղ, Աք–տաղ, Ալպտաղ, Պէլ–տաղ, Ֆէհրատ–տաղի, Զաքալլար–տաղի, Քալէ–տաղի, և այլն։

Մանօթ վէլքերու ժամանակ թէ՚ Ամասիա

ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՆԱՒ ՎԱՃԱՌԱՑ	ՎԱՃԱՌՈՂ ՏԵՂԵՐԸ	ԱՐԺԷՔՆ ֆրանկով
Բրինձ	Թոսախ–Պայապատ	66132
Օճառ	Ադրիապ–Ադախ.	43125
Լէզակ	Մարսիլիա	15000
Երկաթ	Շուտա–Խուսխա	104100
Անագ	Մարսիլիա	7027
Չէյ	Բէյրութ–Մեսիլինէ	6210
Քարիւղ	Պաթում	64400
Մոմ	Մարսիլիա	2760
Ապակեղէն	Գերմանիա	12175
Անելիներ Ներկ	Մարսիլիա	2900
Նրբաբեւեռ	Փարիզ	10350
Շաքար	Թրիեսթ–Մարսիլիա	49162
Սուրճ	Մարսիլիա	74520
Բամբակ	Ատանա–Թարըերդ	147200
Լաւգկի	Թրիեսթ	42000
Թուղթ	»	42000
Մանր երկաթեղէնք	Գերմանիա	11000
Հնդիկ պատառաքաղ	Մէնչըսթըր–Օաեսա.	200000
Քալիքսթի կտաւ	» »	50000
Շաւխայ	Գերմանիա–Ռուսիա	55000
Ֆէս	Թրիեսթ	16000
Կարմրիա	Մարսիլիա	15000
Եղէն	Կարս–Կարին.	25000
Ռում	Աւստրիա–Ամերիկա	4200
Ալքոլ	Աւստրիա	1610
Գոնեակ	Մարսիլիա	3000
Օղի	Զանազան տեղերէ.	13300
	Գումարն	1063371

39–67։ Ձնպրն. ի Բաբէլոն, 5–8։ Տեղագրութիւնք, 54–58։ Քաղաքական աշխարհ. 553։ Վ. Քինէ, Ա. 738–756։

ԱՄԱՍԿՈՆԻ. — Տահմի մը անուն, յիշուի գօրաբաժնին մէջ։

ԱՄԱՍՐԻԱ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԱՄԱՍՐՈՑ ՎԱՆՔ. — Այս անուամբ վանք յիշուի ի Սիւնիս, ըլրքն և տեղն անյայտ։

ԱՄԱՏ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի, կայոյ և Աիտա գետոց մէջտեղ, երիցու գիւղի մօտ՝ հիւսիսակողմը։ Բնակիչք են 113 տուն ամբողջ Հայ, ուսնին փոքրիկ փայտաշէն եկեղեցի մը և ուսումնարան։ Գիւղացւոց վիճակն խիստ դառն

է և աղբատին, գրեթէ 70–80 երիտասարդներ պանդխտութեան ժէջ կը հեծեն։ Գիւղէս քառորդ ժամ հեռու դէպ ի հիւսիս ձորակի մը եզրը Նորեդուզի անուամբ ծառատան մը կայ, որ ուխտատեղի է. իսկ արեւելեան կողմը բարձր դիրքի վրայ կայ խաչքար մը, որուն տեղացիք Սահաման կամ Յաստան խաչ կ'ըսեն։ Ակնէց գէպի արեւելեան հիւսիս, Քերխանի ձորի ստորոտը կայ գիւղի մը աւերակ. հոս գտնուած են տապանաքարեր, խաչքարեր, և քարէ նշխարքի տեղ մը՝ վրան փորագրուած Քրիստոսի խաչելութիւնը և խաչի քառաթեւերու ժէջի անկիւնները նոսր տառերով գրուած՝ Ես – Էմ Հացս – կեցաց։ Գիւղէս գրեթէ 1½ ժամ հեռու, հիւսիսային կողմը, բարձրացած է լեռ մը, որոյ գագաթին կառուցուած է անշէն բերդ մը։ Այս լեռը արդէն բերդի ձև ունի, մանաւանդ տեղեր ևս շրջապատուած են պարիսպներով՝ յորս կան քարայրներ։ Ըստ ժողովրդեան աւանդութեան, սա միշտ ժողովրդեան ապաստանարան եղած է և կը կոչուի Ամատայ բերդ։ Ամատայ շրջակայքին կը գտնուին Կրձմրիկ, Գետ Մաքսուտ, Զաք և Ֆերաճ քրդաբնակ գիւղերն։ Ամատայ բնակիչներէն իրեն հին և հարուստ գերդաստան կը յիշուի Գանաիլեան ցեղն. ուրիշ մ'ալ Ամատայ Մելիքի տունը, վերջնոյս գլխաւորներէն Մելիք և Օհան ազատները և իրենց որդիքը 1891ին բանտարկուեցան։ — Բագրեւանդ, 129–131։

ԱՄԱՏԱ. Տես ԱՄԵՏԻԱ։

ԱՄԱՏՈՒՆԻՔ. Տես ԱՐԱԳԱՆՕՏՆ։

ԱՄԱՐԱՍ կամ ԱՄԱՐԻՆ. — Նշանաւոր վանք Արցախի վարանդա գաւառի, Շուշիէն 45 վերստ հեռու, Մուղանի դաշտի ժէջ, ուր Լոչաւորչի և Խազեզի ստորերը կը ձեւացնեն գեղեցիկ հովիտ մը, որոյ միջով կը հոսի Ամարասռ վտակ, ակիզբն առնելով շրջակայ գիւղերու աղբիւրներէն։ Հին ժամանակները հոս կայ եղեր գիւղ մը, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնարկեր և իր Թոռն Գրիգորիս՝ աւարտեր և օծեր է եկեղեցի մը։ Ս. Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի նահատակութենէ վերջ, աշակերտները հաւաքելով անոր նշխարները, բերեր ամփոփեր են այս եկեղեցւոյ ժէջ։ Այնուհետև Ամարաս գիւղն դարձեր է նախ եպիսկոպոսանիստ, և ապա Աղուանից կաթուղիկոսանիստ։

Հինգերորդ դարու վերջերը Աղուանից Վաչական Գ Թագաւորը փնտռել տալով՝ եկեղեցւոյ արեւելեան կողմը 489ին կը գտնէ Ս. Գրիգորիսի մարմինը, և նորէն ամփոփելով, շուրջը գերեզմանին վրայ մատուռ մը շինել կու տայ։ Ժամանակ անցնելէ վերջ Վաչական շինել կու տայ նաև հոյակապ տաճար մը սրբոյն անուամբ, և նշխարները գնելով միակաւոր քարէ տապանի ժէջ կը պահէ ծածկաբար իր առաջնոյն հին տեղը։ ԺԳ. դարու վերջերը Թաւթաթաց Բայտուն խանը, ըստ պատմիչ Օրպէլեանի (Գլ. Հ.), կողոպտեր է այս վանքը և տաբեր Ս. Գրիգորիսի գաւազանը և ոսկեձոյլ 36 ակներով զարդարուած խաչ մը։ Ցուներց կայսեր Գեսպինա գուստրը, որ Ապաղա խանին կինն էր, խնդրեր և դրկեր է այդ խաչը և գաւազանը ի կ. Պոլիս։ 1387 Թուին Ամարաս ևս Արցախի ուրիշ վայրերու հետ, ենթարկուեր է Լէնկ – Թիմուրի աւերմունքներուն։ Գեռ ժողովուրդը կը պատմէ, Թէ ինչպէս այդ բռնաւորը Ամարասէն մինչև Արաքսը շարելով իր զօրքերը, հրամայեր է վանքի և արքայաշէն հրաշակերտ եկեղեցւոյ քարերը մխտանց տալով գետը թափել։ Ցետ սատակման Լէնկ–Թիմուրի, շրջակայ բնակիչք տեղւոյն, նախկին եկեղեցւոյ հիման կիսուն վրայ, անարուեստ բայց ամրակուռ և կրաշաղախ եկեղեցի մը շինեցին, որ տեւեց մինչև 1858 Թուականը։ Եօթնեւտասաներորդ դարուն, Ամարասայ միաբանութեան համար իրեն ամարանոց, կառուցեր են Հիրեր գիւղի ժէջ գեղեցիկ եկեղեցի մը և սենեակներ։ Կը կարծուի, Թէ նոյն վանքի ամարանոցն եղած լինի, նաև վերին Թաղավարդէն դէպ ի հարաւային արեւմուտք 1½ ժամ հեռու գտնուող և գետնի ժէջ Թաղուած եկեղեցին, որ այժմ Բարեւածառ անունով ուխտատեղի է։ Եկեղեցւոյ ժէջ կան արձանագրութիւններ ՆԽԶ (=997) Թուականաւ։ Բարեւածառի համար աւանդութիւն մը կայ, Թէ հին ժամանակներ այստեղ կ'ապրէր սուրբ եպիսկոպոս մը, և ամէն անգամ, երբ նա երկար

ծոմապահութենէ և ճգնութենէ վերջ պատարագ կը մատուցանէր, շրջակայքի ծառերը ողջոյնի ժամանակ երեք անգամ կը խոնարհեցնէին իրենց գագաթները և միմանց կպցնելով ողջոյն կու տային։ Ութնատանի բորգ գարուն, վարանդայի իշխան Մելիք Շահնազար Հայկազն՝ ուզելով ի հիմանց նորոգել այս ուխտատեղին և վերսին մէջը միաբաններ հաստատել, նախ եկեղեցւոյն չորս կողմը, քառակուսի ամրոցաձև պարսպեր է։ Պարսպի չորս անկիւնները կան բրգաձև աշտարակներ, իսկ ներսը խոհանոցներ, սեղանատուններ, սենեակներ, թէ՛ ուխտաւորաց և թէ միաբաններու համար։ Այս շինութիւններէ վերջ մահր վրան հասնելով, չկարողացաւ շինել նաև եկեղեցին։ Դարուս (ԺԹ) սկիզբը, վանքս անտէր մնալով ընկեր է Թուրքաց ձեռքը, զոր իրենք Աղ–Օղլան (Սպիտակ–Տղայ) կ'անուանէին և իրենց սրբավայր էին դարձուցեր։ Այսպէս կոչուելուն պատճառն այն է, որ հրաշագործ Սուրբ Գրիգորիսը միշտ կ'երեւէր սպիտակազգեստ և մանկատեսիլ, ահ ձգելով շրջակայ բնակչաց վրայ։ Ա. ժամանակ մը Ռուսաց զօրաց իբրև բերդատեղի ծառայած է վանքս, և 1832 էն մինչև 1847 մաքսատուն և զած է։ Մեսրոպ Արքեպիսկոպոսն Տէր Բաղդասար Ջալալեան, շատ աշխատելով՝ վերջապէս յաջողեցաւ մաքսատունը տեղափոխել Երասխի ափի մօտ, և վանքն իր կալուածներովն 1848ին վերադարձաւ Հայոց հոգեւոր իշխանութեան։ Այժմեան վանացս եկեղեցին նորոգ կառուցուած է 1858ին պ. Ղուկեցւոց օժանդակութեամբ. նոյն տարւոյ ապրիլ 23ին, եղաւ երկրորդ գիւան նշխարաց Ս. Գրիգորիսի, և մեծ հանդէս կատարուեցաւ։ Եկեղեցւոյս երկայնութիւնն է 23 մետր, լայնութիւնն զրեթէ 13ս և բարձրութիւնն 6ս. կառուցուած է ամբողջապէս կամնագոյն սրբատաշ քարերով։ Ջորս քառանկիւնի անսպառ աղբիւրներ կը բղխին անմահական կամարակապ ձեղունը։ Ունի աւագ խորանէն զատ երկու փոքր խորաններ, տասն մեծ լուսամուտ, մէկ դուռ արեւմտակողմը, երկու խորհրդարան, մէկ աւազան, և փոքրիկ կամուղիկ մը՝ որ կը ծառայէ իբրև զանգակատուն։ Աւազ խոռանի տակ է տորերկրեայ հին վիրապ մը 3, 75 մետր երկայնութեամբ, 1, 90ս լայնութեամբ և $3^1/_2$ մետր բարձրութեամբ, ուր ամփոփուած են Ս. Գրիգորիսի նշխարները։ Դասի հարաւային կողմն բեմի մօտն է այդ վիրապի կամ փոքրիկ մատրան մուտքը, ուսկից սանդուղներով կ'իջցուի ներքև։ Մատուռս՝ որ ամբողջապէս շինուած է խազերի հանքի սրբատաշ քարով, բացի այժմեան մուտքէն, ունեցեր է նաև ուրիշ դուռ մը արեւելեան կողմէն, որ այժմ փակ է։ Հիւսիսային պատի մօտ պատի կից, կայ 1889ին Շուշեցի ճարտարապետ Միքայէլ Տէր Իսրայէլեանցի աշխատութեամբ շինուած, Ս. Գրիգորիսի քանդակազարդ գեղեցիկ տապանաքար մը հանդերձ արձանագրութեամբք։ Խորհրդարաններէն միոյն մէջ զրուած է Ս. Գրիգորիսի մասունքը, զետեղուած՝ արծաթեայ, ոսկեզօծ, ականակուռ և մատանիներով զարդարուած աջի մը մէջ։ Վրայի արձանագրութիւնը կը յայտնէ՝ թէ շինուած է 1870ին անվարձ աշխատութեամբ Շուշեցի մի քանի ոսկերիչներէն։ Վանքիս պարսպի կից թէ և կանգուն են տակաւին հին 24 կամարակապ և բաւական բարձր սենեակները, սակայն մասնաւոր նորոգութեան մը կը կարօտին։ Այժմ վանքս ունի միայն մէկ վանահայր վարդապետ, որոյ բնակութեան համար նորոգած են մի քանի սենեակներ։ Ամարասի կալուածներն և առացուածքներն են զրեթէ 300 հարիւրակալ վարելահող և նոյնչափ այգեստեղի, մէկ ջրաղաց, 10 կով, 1 ձի, և այլն։ Տարեկան եկամուտը կը հասնի 700 րուբլիի։ Վանացս հարաւային կողմը, վտակի աջակողմեան լանջի վրայ կը տեսնուին ընդարձակ աւերակներ Ամարաս գիւղին կամ քաղաքաւանին։ Աւերակաց մօտ է նաև գերեզմանատունը, որ նոյնպէս ընդարձակ է։ — Ճռաքաղ, 1859, էջ 332–348. 1860, 219–220։ Արցախ, 113–115։ Վարանդա, 7–8, 37–39։

ԱՄԱՐԻՒԻ. — Հայաբնակ գիւղ Ատրպատականի Գարատաղ գաւառի Մենգու վիճակի մէջ. բնակիչք 180, բաժնուած 30 տան։ Արարատ ամսագրի 1872 տարւոյ

332 իջին մէջ, հրաւառակուած է տեղեկագիր մը, յորում նկարագրուած է այլազգեաց դիւրից վրայ յարձակիլն և եկեղեցին ու տները կողոպտելը։

ԱՄԱՐԻՆ. Տես ԱՄԱՐԱՍ։

ԱՄԱՐՈՆ. — Գիւղ Տուրուբերանի, վարդոյ վիճակին մէջ. բնակիչք Հայք և Քուրդք խառն, ամբողջ 25 տուն։

ԱՄԱՐՈՍԱՆ. — Վարդանայ աշխարհագրի ընդարձակողը կ'ըսէ, թէ Շամիրամ վանայ բերդը շինելով, քաղաքը անուանեց Ամարասան։

ԱՄԱՅ. — Այս անուամբ հին գիւղ մը կը յիշուի Պարսկահայոց մէջ։

ԱՄԲ կամ ԱՄՊ. — Փոքրիկ գիւղ Հայոց Բաղիշոյ հարաւային արեւմտակողմը. ունի ուխտատեղի Ս. Յակովբայ եղբօր Տեառն։ Նշանաւոր է մերձակայ ապառաժներու մէջէն բղխող պաղ ջուրն։

ԱՄԲԵՐԴ. Տես ԱՆԲԵՐԴ։

ԱՄԲԻՉ. Տես ՉՈՐՔ։

ԱՄԲՐԱԻԱՒԱՐ. — Թուի անուն գիւղի կամ կալուածի մը՝ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, զոր իշխան ումն Աշոտ՝ որպի Կարապետոյ ՇԼԲ (=1089)թուին նուիրած է Տաթեւու Ս. Նշանին։

ԱՄԵՆԱՉԱՏ. — Փոքր գիւղ Հայոց Վանայ շրջակայքը, բնակիչք 100էն աւելի, եկեղեցի չունին։

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ. — Վանք և ուխտատեղի Գիւլտան (Գանձակ) գիւղէն 1½ վերստ հեռու, բարձր ժայռի մը հարթացած գագաթան վրայ։ Վանացս հիւսիսային և հարաւային կողմէն կը հոսին երկու վտակներ, որոնք արեւելեան կողմը իրար հետ միանալով կը ձեւացնեն Խնչա գետը։ Եկեղեցիները կառուցուած են իրարու մօտ, և ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնք, երկու դարէն աւելի հնութիւն ունին։ Վանքս այժմ ցաւալի ղրութեան մէջ կը գտնուի և քայքայուած է թէ՛ արտաքին և թէ ներքին կողմէն։ Աբեղաներու խուցերը շինուած են ընդհանրապէս նեղ և առանց լուսամուտի։ Գիւղացոյն կոյր օրիորդ մը 1888 թուականին, նորոգել տուեր է եկեղեցիներէն մին, ուր կը ղիմեն այժմ ուխտաւորները։ — Նոր Դար, Լ. 132։

— Այս անուամբ կուսանաց վանք կամ անապատ մը կ'ինկնայ Սիւնեաց Աբեւիք գաւառը, Մանդեւու ձորակին մէջ։ Կը յիշուի միայն Տաթեւու թեմին վանօրէից ցուցակին մէջ։ — Ամենափրկիչ անուամբ ուրիշ վանքեր ևս կան մեր երկրի զանազան կողմերը, Տրապիզոնի մօտ, Զէյթունի մօտ, և այլուր, որոց վրայ կը գրուի նոյն քաղաքաց նկարագրէն վերջ։ Տես ՀԱԻՈՒՑ–ԹԱՌ։

ԱՄԵՐԻԿ. — Գիւղ Աղձնեաց այժմեան Խզու կամ Հզու գաւառի մէջ, բնակիչք Հայք և այլազգիք խառն։

ԱՄԵՐԻԿԱ. Տես ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ։

ԱՄԵՏԻԱ կամ ԱՄԱՏԱ. — Գաւառակ Վանայ այժմեան Հէքեարի գաւառի հարաւակողմը, որուն մէկ մասն կ'ինկնայ մեր հին Մոկաց և կորճէից նահանգաց մէջ, և մէկ մասն ալ մեր երկրէն դուրս։ Կը բաժնուի 5 վիճակաց և կը բովանդակէ 366 գիւղ։ Բնակչաց ընդհանուր թիւն է 23940, մեծագոյն մասը Քուրդ են, յետոյ Նեստորականք, Քաղդէացիք, Հրեայք, Եզիտիք և Թուրքք, իսկ Հայք այս գաւառակի մէջ խիստ նուազ թիւ մ'ունին։ Գլխաւոր քաղաքն ևս կը կոչուի Ամետիա և ունի 5000 բնակիչք. ուր կը նստի Քաղդէացւոց եպիսկոպոս մը, և Մուսուլի Դոմինիկեան Հարք առաքելութիւն մ'ունին, և ամառն հոս կ'անցնեն։ Փոքրիկ քաղաքս կառուցուած է սարահարթի մը վրայ, որ գրեթէ 400ո բարձր է պարսպէներով և այգիներով զարդարուած գեղեցիկ հովտէ մը. հեռու է Վանէն 150 հզրմ. և Ջուլամերկէն 65 հզրմ. իսկ Պաշ–գալէէն 125 հզրմ։ Հիւանդաց բերդին համար, ուր մանք կը կարծեն թէ Աբգարէն թագաւորէն շինուած ըլլայ։ Գաւառակիս գլխաւոր բերքերն են գղձոր, ծխախոտ, բնաւոր խաղողի զանազան տեսակներ՝ որով և բնաւոր գինի, թուզ, ցորեն, գարի, բրինձ, ձիթապտուղ, խնձոր, նուռն, գազպէ, և այլն։ Գրեթէ ընկերքը հաւասարապէս բաժնուած է, լաւ ոռոգուած գաշտային մասանց և գեղեցիկ անտառազարդ լեռներու։ Կենդանիներէ ունի արջ, գայլ, վագր, յաւազ, ազուէս, ճագար, նապաստակ, նաև ջայլամն, և անապատ տեղեր կը գտնուի նաև առիւծ։ — Հ. Հայ. 245–248։ Քիւէ, Բ. 758–760։

ԱՄԵՐՈՒՏ. — Լեռ Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։

ԱՄԵՒՆԱՓՈՐ. Տես ՍՈՂՔ։

ԱՄԻՏԻՒ. Տես ԱՄԵՏԻԱ։

ԱՄԻՒ, ԱՄԻԹ, ԱՄԻՏ, ԱՄԻՏԱ. Տես ՏԻՓԱՆԱԿԵՐՏ։

ԱՄԻՐԴԱՐԵԱՆՑ ՁՈՐ. — Ընձուկ ձորակ Աչրարատայ Կոտայք գաւառի մէջ Երեւանայ մօտ, զոր յիշէ Զաքարիա սարկաւագ Ղապղնց ձորի հետ։

ԱՄԻՐՎԱՆ. — Հասարակութիւն և գիւղ Գանձակու Ազրաշի գաւառի մէջ. բնակիչք 1012, ամբողջ Հայ, բաժնուած 152 տան։

ԱՄԻՒԿ, ԱՄՈՒԿ կամ ՀԱՄՈՒԿ. — Ի հնումն հռչակաւոր ամրոց բարձր քարաժայռի վրայ՝ Վասպուրականի Աղբերանի (Գուռունի) գաւառի մէջ, Վանայ ծովակի արեւմտեան եզերքը։ Թ. Արծրունին (241) կը պատմէ՝ Թէ ի՛նչպէս Աշոտ իշխանը ամրոցիս Ոչրմանիկ կոչուած այլազգեաց դէմ պատերազմի գնաց ի վրէժ Ռոստոմ Վարաժնունիի արեան, և անառիկ դիրք ունենալուն չկրցաւ տիրել։ Արծրունեաց քաջերը, մանաւանդ Դերենիկ անուանուած Գրիգոր իշխանը, շատ աշխատեցան և պատերազմեցան ամրոցիս տիրելու, սակայն այդ փառքն պահուած էր քաջին Գագկայ՝ որ զիշեր ժամանակ «գողանայ զամրոցն, և սրախողխող արարեալ զընակիչս բերդին՝ բնաջինջ բառնայ յերկրէ»։ Գագիկ բազմաթիւ արհեստաւորներով և շատ ծախքով շինութիւններ կառուցանել տուաւ հոս և լերին գագաթէն մինչև վար ամուր պարսպով շրջապատեց. այնպէս որ այլազգեաց արշաւանաց ժամանակ, իբրև անառիկ և անմատչելի պատսպարան բրիստոնէից, յետ Ագթամարայ սա միայն կը յիշուի։ Ամրոցիս իբրև տէր կը յիշուի, Սենեքերիմ Արծրունւոյ տոհմակից Աբղըլմըսեհ կուրապաղատն և ապա իւր որդին Աւուզի իշխանը։ Ցետ ժամանակաց, ինչպէս կը յիշատակէ Վարդան (124), Պարսից Ելկուզ աթաբէկը, առաւ ամրոցս թեւդենիկ Արծրունիի ձեռքէն։ Թոմմա Մեծոբեցին ևս կը յիշէ Ամիւկ իբրև բերդ, և տեղ մ՚ալ զայն կը կոչէ Քար Ամկոյ։ Գագկայ և անկէ առաջ եղած շինութիւններէն բան մը մնացած չէ այժմ, բացի ահագին և զուարթևանդի ապառաժէն, որոյ ծայրը դէպ կը մնայ փոքրատարած հինաւուրց ամրոցն։ Հ. Ինճիճեան կը յայտնէ Թէ բերդի վրայ կան ասա և անդ անծանօթ գրուածքներ, որոնք կարելի է Թէ լինին խուզարկութեան արժանի բեւեռագրեր։ Կը կարծուի Թէ Գագկայ շինութիւնքն ծովակողմն եղած ըլլան, զորս ծովը բարձրանալով իր մէջ առած է այժմ և հասած է մինչև քարաժայռի ստորոտը։ Քարաժայռի մօտ ձորամէջը կը զբաղուի համանուն գիւղը, որոյ բնակիչք Հայք և Թուրքք խառն են։ Հայոց Թիւն կը հասնի 200ի, ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։ Գիւղս Թեմ է Լմայ, որուն ծովեզերեայ գրսի անէն երկու ժամ հեռու է։ — Ստորգր. Հին Հայ. 224—5։

ԱՄՈՒՏԱ. — Գիւղ Համշէնի։

ԱՄՈՂ. — Մակաւարնակ գիւղ Հայոց, Պօրչալուի Լոռւայ վիճակին մէջ։ Դիրքն շատ գեղեցիկ է և զուարճալի. ունի սագաշէն փոքրիկ եկեղեցի մը և 50 բնակիչ։

ԱՄՈՒՏԱՆ կամ ՀԷՄԻՒՒ. — Հին բերդ Դաշտայրն կիլիկիոյ, Ջահանայ ալ կոչմբ՝ զոր ամենէն առաջ նուաճեց Թորոս Բ, գեներալիսիմ ազատելէ վերջ։ Լեւոն Թագաւորը 1212ին ապրիլի մէջ յաւուրս պարզուագրով մը Ամմուտան բերդն և ուրիշ կալուածներ նուիրեց իրեն սիրելի Ցեւոմնեան ասպետաց։ Կէս դարէն աւելի Ցեւոմնեանց ձեռքը մնաց բերդս մինչև Եղիպտացւոց մեծ և բազմաղէտ արշաւանքը (1266), յետ զերելոյ վէւոն Բ և սպանուելոյ անոր Թորոս եղբայրը, առաջ գալով և նուաճելով Ջահանայ ձախակողմեան բերդերը, գեղին հռնէն անցան և տիրելով բերդիս, մէջը ապաւինող 2200 հոգիներէն, մէկ մասը կոտորեցին և կանայք ու մանկունք գերի տարին։ — Սիսուան, 199—200։

ԱՄՊ. Տես ԱՄԲ։

ԱՄՊԱՐԱՆ. — Գեղակ Աչրարատայ, կը բղխէ Արագած լերան արեւելեան կողմէն. օժանդակ է Քասաղ գետոյն։

ԱՄՊԸՐԿԱՑ. — Հայաբնակ գիւղ Աբաքեղի, բնակիչք 500էն աւելի են, ունին Ս. Նշան եկեղեցի մը և 1 վարժարան։

ԱՄՈՒԹԵՐՏԱՄ, ԱՄՈՏԵՐԴԱՄ կամ ԱՄՈՏԵԼՈՂԱՄ. Տես ՀՈՂԱՆՑԱ։

ԱՄՐԱԳՈՄ. — Գիւղ Ալբարատայ Հա-
նունեաց գաւառի մէջ՝ Երասխայ մօտ ձա-
խակողմը, գրեթէ փարախ մը վաղարշապա-
ւէն հեռու, հասարակաց ճանապարհի վրայ։

ԱՄՐՏՕԼՈՒ կամ ԱՄԼՈՐԴԻՈՑ ՎԱՆՔ. Տես
ԲԱՂԷՇ։

ԱՄՕՔ. — Բիւզանդ (265) կը յիշէ գիւղս
յաւուրս Մեծին Ներսիսի։ Երբ փաւստոս
եպիսկոպոսի ճգնազգեաց եղբայրն Ասոստոմ՝
անապատի մէջ վախճանեցաւ, մարմինը
բերին և «թաղեցին ի բուն ի գիւղն հայ-
րապետին Ներսէսի, որում անուն Ամօքն
կոչի». գիրքն և գաւառն անյայտ է։

ԱՅ. — Հին կոթճէք նահանգի անծանօթ
գաւառներէն մին։

ԱՅԱԶԼՈՒ. — Գիւղ Ալբարատայ (Երե-
ւան) այժմեան Քէմէրլիի վիճակի մէջ. բնա-
կիչք 400 Հայք և 50 Թաթարք։

ԱՅԱԶՄԱ. — Գիւղ Հայոց Պորչալուի
(Գուգարք) Թիրիալէթի վիճակի մէջ. բնակիչք
320, բաժնուած 33 տան։

ԱՅԱՇ. Տես ԵԼԵՒԱՍ։

ԱՅԱՍ. Հն. ԵԳԻ կամ ԵԳԷԱՍ. Լ. AEGÆ. Յն. Αἰγαί. — Այժմ փոքրիկ աւան Ծովային Կիլիկիոյ, և Ռուբինեանց ժամա-
նակ հռչակաւոր բարգաւաճ և վաճառաշահ
քաղաք։ Աբեմմակոզմն է ի հնումն նոյն
անուամբ կոչուող հռչակաւոր խորշը, որ
այժմ Եռամղրպալըք (Զռռանց) գիւղի ա-
նուամբ կը կոչուի, և ուր ձմեռ ժամանակ
կը կենայ Միջերկրականի անզգիական նա-
ւատորմիղը։ Հին ժամանակները քաղաքս
կոչուած է Եգէաս և հաւանօրէն կառու-
ցուած է ի ծունից, դի իւր անուամբ յաւուրս
ղրամ ևս կայ (Թ. 64) յունական գրութեամբ։
Աշխոյժ նաւահանգստովը շուտով հսկայա-
քայլ յառաջ գնաց քաղաքս և Հռովմայեցւոց
ժամանակ ազատ քաղաքի պատուանունն
ստացաւ։ Քրիստոնէութեան ժամանակ հոս
հաստատուեցաւ Կիլիկիոյ երկրորդ արքե-
պիսկոպոսական աթոռ, ուր նահատակուեցան
ոչ սակաւ մարտիրոսներ Հռովմայեցի կուսա-
կալի ձեռքով։ Քաղաքիս յոյն եպիսկոպո-
սունք կը յիշուին մինչև Զ դարուն մէջ,
իսկ անկից վերջը ան նշանաւոր քաղաքա-
կան դէպք և ոչ եպիսկոպոսունք կը նշանա-
կուին մինչև ԺԳ դար. յորում իր երկար
լռութենէն յանկարծակի փառօք կը զարթնու
Այաս վայելելու նոր կեանք մը, թէպէտև ոչ
երկար, քան տեւելոյ բաղդի Ռուբինեան
իշխանութեան, բայց այնքան օգնչից և շարժ-
մամբ և եռանդեամբ՝ որ աշխարհիս յաւեր-
ժայիշատակ քաղաքաց կարգը կրցաւ անց-
նել։ Վասն զի մեր իշխանաց ամբողջ դար
մը հարատութեան ժամանակ՝ եղաւ ամենա-
բարգաւաճ վաճառաշահ առևտրօք և բազմա-
թիւ ազգաց երթևեկութեամբ, և ինչպէս Սիս
գլուխ էր հայկական աշխարհին և տէրու-
թեան, այսպէս և Այաս՝ նոյն մարմնոյն սիրտն
էր, և աշխարհածանօթ համբաւուն՝ գլխէն
ուելի փառաւոր, իսկ վաճառականական մըրց-
մանց մէջ՝ յաղթող Ասորւոց և Եգիպտոսի
ամէն շահաստանաց. համառօտ ըսելով՝ ԺԳ
դարուն կիսէն մինչև ԺԴ դարուն կէսը՝ եղաւ
առաջին նաւահանգիստ ևս տեղի վաճառուց



61. Դրամ Եգէասայ = Այասու։

հին արեւելեան աշխարհաց՝ Պարսից, Հընդ-
կաց և Չինաց, և արեւմտեան աշխարհաց՝
Իտալիոյ, Սպանիոյ, Գաղղիոյ, Գերմանաց,
և այլոց։

Մեր պատմութեան մէջ, չենք հանդի-
պիր ուրիշ քաղաքի մը, որ իբրև նաւահան-
գիստ և շահաստան հռչակ ստացած լինի
հանդերձ Այասոյ, որ յօտարաց կոչուած է
նաւահանգիստ Հայոց թագաւորի։ Ինչպէս
այժմ կ. Պօլիս, նոյնպէս և յայնժամ քա-
ղաքս կեդրոն լինելով վաճառականութեան,
լի էր վաճառականներով ամէն ազգէ և կրօն-
քէ։ Եւրոպացի վաճառական ազգերէն Այաս
երթևեկողներէն եղան գլխաւորաբար Վենետ-
կեցիք, Ճենովացիք և Սիկիլիացիք, որոնք
մեր թագաւորներէն մանաւանդ արտօնութիւն-
ներ ևս ստացան, ասոնց յաջորդեցին հետզ-
հետէ գրեթէ Իտալիոյ բոլոր ազատ քա-

զաբացիները , Փիզացիք , Փղորենեացիք, Փիալենեցացիք , Փաշիացիք, Ակռնացիք, Մանրուացիք, և այլն։ Իսկ միւս արեւմտեան ազգերէն Սպանիայէն Կադալանք , Սեվիլիացիք, Պարցիլոնացիք, Սարակոսացիք, Մայորքացիք. Գազղիայէն՝ Մարսիլիացիք, Նիմիացիք, Նարպոնացիք, Մոնփելիեցիք. կու գայլն նաև Անգղիացիք , Ֆլամանք և այլք։ Այս ազգերէն ղիւաւորները, Այասայ մէջ ունէին առանձին թաղեր, մթերանոց և եկեղեցի, ինչպէս նաև ապարանք պայլերու կամ ազգապետներու, որոնք սովորաբար Բօնսոլ (բստ Հայոց Գոռնից) կ՝անուանէին։


Այասու հին հասարակաց շինուածներէն, բաց ի հրապարակի մը, միայն արքունի ապարանքն կը յիշուի յարեւմտեայց կամ մեր թագաւորներէն ունանց դրուած զիւանական գործոց մէջ, և տեղը կ՝աւանդուի ցամաքային բերդին դրան դիմաց. նոյն ապարանից մէջ էին նաև պաշտօնարանք և գաւառանք, որոց զլխաւորն է Արքունի դարպասն։ Արքունի ապարանից մէջ ուրիշ զանազան պաշտօնատեարց, քարտուղարաց, թարգմանաց հետ՝ հաստատուած էր նաև վարժարան լատին լեզուի, արեւմտից հետ զիւանական վերաբերութեանց համար, որոյ մէջ կը յիշուին նաև յանուանէ զանազան իտալացի ուսուցիչք։ Շահաստանիս տարեկան առեւտրական շարժումն թէև ահագին էր, սակայն չունէին ժամանակակից վիճակագրութիւններ։ Կարելի է վերձաւոր գաղափար մը կազմել այլ և այլ յիշատակութիւններէ։ Զօրօրինակ, Այաս նստող վենետկեցւոց պայլը, որ իւր ազգակիցներու վաճառականական գործառնութիւններէն կէս առ հարիւր իրաւունք ուներ, մէկ ու կէս տարուան մէջ կը պահանջէր 7200 ֆրանկ. հետեւաբար մէկ ու կէս տարուան մէջ միայն՝ վենետկեցւոց առևտուրն գումարն կը հասնէր 1400000 ֆրանկաց։ Հռչակաւոր էր բազաքիս Բաժառնիր, զոր եւրոպացիք իբրև յատուկ անուն կը գործածէին և կ՝ըսէին Pasidonium (Բազիտոնիում)։ Պառքսիմոս կը կոչուէր արքունի մաքսատան հաշուակալն և բաժանն վերակացուն։ Վերոյիշեալ բաժանը որ կշռելի նիւթերէն 2—4 առ հարիւր տուրք կ՝առնար, հարկաւ միլիոնաւոր գումարներ կը հասցնէր Սսոյ արքունի գանձարանին։ Միւսոնայ 367—389 էջերն կը բովանդակեն կարեւոր գոյն, հմայազոյն և նորանոր ծանօթութիւններ Այասու բաժանից, վաճառուց, վաճառականաց, բաժից, չափուց և զրամոց վերաբերեալ։

Այասը արեւմտաբէն կ՝առանար. զգեստուց մետաքսեղէն, ցխոխ, բամբակեղէն, չուխայ. շաքար, խունկ, օճառ, ձէթ, պըղինձ, կլայեկ, ոսկի, արծաթ, լեզակ, անդիկ, բուտա, համեմներ, առաղձ, նաւերու կազմած, նաւեր, զէնքեր, և այլն։ Իսկ յարեւմտեաս կը զրկէր. համեմներ, շաքար, որդան—փայա (Brazil), պղպեղ, այծու առեւ, աստղեղէն, բամբակ, քլիման, երկաթ, պղինձ, պաղկեղ, ձի, ջորի, էշ, արջառ, մուշտակ, գոմէշի մորթ և եղջիւր, ցորեն, գարի, չամիչ, գինի, հաւեղէն, հաւկիթ, անասուն փայտ, մետաքս, աղ, և այլն։

Որչափ որ Արեւմտեայց հետ վերաբերութիւն շատցընելով՝ կ՝օգտուէին Հայք անոնց մտերմութեամբն և նիւթական շահուք, այնչափ ալ Եկիպտացւոց առեւտրութիւնն իրենց դէմ կը զրգռուէր, որովհետեւ նորածին զրշխոյն Հայոց ծովուն՝ Այաս, յաղթանակել կ՝ակսէր յղփացեալն Ագեքսանդրիոյ. ուստի Այասայ զարգացումն համարելով իբրեւ խաւարեցուցիչ իրենց նաւահանգստացն ու շահաստանին, շատ և զանազան անգամներ ջանացին Եգիպտոսի սուլտաններն կամ բոլորովին խափանել իրենց նախանձորդին բարգաւաճութիւնն ու պայծառանալն, և կամ զէթ զաշինքով կամ գինու զօրութեամբ մանուկիլ անոր շահերուն։ Ուստի այլ և այլ անգամ յարձակեցան և ասպատակեցին Եգիպտացի զօրքերը Այաս և կամ անոր շրջակայքը, մերթ աւերելով և աւարելով և մերթ աւերածի և աւարի ենթակայ ըլլալով։ Այս ամէն ասպատակութիւնք և դիմադրութիւնք Օշնի իշխանութեան օրերն ի գործ կը զբաղէին. բայց վերջնոյս մեռնելէն վերջ, երբ յաջորդեց իրեն տղայահասակ մանուկն Լեւոն Դ, երեք և չորս անգամ յարձակեցան դաձեալ Եգիպտացիք աշխարհին զանազան կողմերը, բայց ամենէն աւելի ազետալի եղաւ աւերածովք 1322ին, յորում բոլորովին

քար ու քանդ եղաւ Ա.յասը։ Աննկարագրելի էր այն ընդհանուր թախծութիւնը որ տիրեց Հայոց և բոլոր քրիստոնեայ աշխարհի վրայ. վասն զի կործանուողը պարզ քաղաք մը չէր, այլ համաշխարհային վաճառանոց մ՚էր, ուր կը վազէին ամէն կողմէ հարբուսուսիւն փնտռելու։ Այնչափ ցանկալի և անհրաժեշտ էր Ա.յասի գոյութիւնը, որ ժամանակին Յովհաննէս քահանայապետը 30000 ֆլօրին դրկեց անոր վերաշինութեան համար։ Հայերն ալ իրենց կողմէն մեծ զոհաբերութեամբ, և հաւանութեամբ և նոյն իսկ զրամական օգնութեամբ աւերածու նասիր սուլտանին, կարճ ժամանակի մէջ վերականգնեցին քաղաքը և բերդերը նախկին պայծառութեամբը։ Եգիպտացիք պայման դրած էին տարեկան հարկ տառնալ 1200000 դրամ և Ա.յասու բաժան հասոյթի կէսն. սակայն այսու հանդերձ յաճախ կը զրգռուէին և հանգիստ չէին թողուր քաղաքը։ 1337 կամ '38ին զարձեալ աւերող արշաւանք մ՚ըրին Եգիպտացիք, և զաշնադրութեամբ Եգիպտացւոց ձեռքն էնկան քաղաքս և Ջահանայ արեւելակողմեան մասը։ Ա.յնուհետեւ թէև զԱ.յաս ազատելու զանազան անգամ փորձեր ի գործ դրուեցան և առ ժամանակ մը ազատութիւն իսկ երեցաւ վայելել, բայց կարճ ժամանակի տեւողութեամբ. և թէպէտ չենք գիտեր թէ կոստանդին Բ՚ի զայն ազատելէն վերջը ո՛րչափ ատեն դեռ Հայոց ձեռքը մնաց Ա.յաս, և կամ ե՛րբ այս հայկական Ցիւրոն բոլորովին ի գերութիւն մատնեցաւ, բայց այս յայտնի է՝ որ հայկական տէրութեան ցլեակին շունչը՝ Ա.յասու կորուստն անդժկելի վէրք եղած էր իրեն։ Քրիստոնեայ Ա.յասի վերջին յիշատակն է Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորին քաջասիրտ Ջանքն՝ ազատելու զայն յայլազգիներէ. բայց անօգնական մնալով ըսախտուեցաւ տեղի տալ։ Կոստանդին Բ՚ի մահէն վերջը, Հայք հրաւիրեցին վերոյիշեալ Պետրոս Ա. քաջայաղթ թագաւորը իրենց վրայ թագաւորելու, որուն անուամբ հայատառ դրամ ևս հասած է ձեռքերնիս (Թ. 62)։ 1367 թուականին Շահ–Սուար Զիւլգադարեան, ուրիշ քաղաքաց և բերդոցէից հետ նուաճեց նաև Ա.յասը, և յետոյ հետզհետէ անցաւ Վենետկեցւոց, Օսմանցւոց, Պարսից և Եգիպտացւոց ձեռքը, և 1522 թուականէն վերջը Սուլթան Սիւլէյման այս կողմանց տիրելով՝ քաղաքիս մէջ ևս նորոգութիւններ ըրաւ։ Ա.յասը մեր հարստութեան ժամանակ այնչափ համբաւ էր ըսատացեր, որ ժամանակակից Եւրոպացի բանաստեղծներ, ինչպէս Պոքքաչիոյ, Արիոստոյ և Զոսըը, իրենց հռչակաւոր գրիչներուն նիւթ են ընտրել անոր անունը։

Ա.յաս՝ զինքը վերջին անգամ նուաճող հզօր ձեռաց ներքև հաստատուն մնալով մինչև ցայժմ, և օր աւուր քայքայելով, այսօր կը ներկայանայ մեզ խեղճ գիւղի մը կերպարանօք։ Ունի միայն 600 բնակիչ, յոյս և բաւական թուով Հայք։ Էին մեծամեծ շէնքերու աւերակներն ցանուցիր ընկած են



62. Հայատառ դրամ կիպրոսի Պետրոս Ա. թագաւորին։

շրջակայքը՝ որք և անբաւբառ բարով են իւր անցեալ բարգաւաճ վիճակին։ Բերդերն ևս խարխուլ են (Թ. 63). ցամաքի բերդի և հիւսիսային լեռնէն վար սահող վտակի մը միջավայրը կան եղեաս քաղաքի հին շինուածոց աւերակներն, ապիւսաշէն եկեղեցիք, բաղանիք, կամուրջք, և այլն։ Ա.յժմեան Ա.յասի նորագոյն շէնքերն են Հայոց և Յունաց երկու եկեղեցիները, մզկիթ մը և 1 բաղանիք. բնակչաց տները զուրկ են վայելչութենէ և կառուցուած են բերդի մէջ։ Շրջակայքը կան մեծամեծ անտառներ և նարնջի ու լիմոնի լայնատարած պուրակներ։ Հիւսիսային կողմը տարածուած է խոտաւէտ դաշտ մը, որոյ մէջ կան տեղ տեղ չերքէզ գիւղացիներ։ Ա.յս կողմերը լի են սրսկական կենդանիք նապաստակ, կինճ. նաև գազան-


ներ՝ բորեան, հնդայլ. ծովեզերքը՝ կաքաւ, կարապ, սագ, բադ, ջրլոր. ինչպէս նաև ձեծաձեծ ձկներ և կրիաներ։ — Միւռեան, 356–397։ Բազմավէպ, 1885 էջ 392–396։ Կիլիկիա, 207–219։

ԱՅԱՐ կամ ԱՐԱՐ. — *Հայաբնակ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Տարթաղըզ վիճակի ժէջ. բն. 460, բաժնուած 50 տան։*

ԱՅԱՒԱՆՔ. — *Հին գաւառ Կոթճէից։*

ԱՅԳԱՈՒՔ. — *Հին գաւառ Կոթճէից։*

ԱՅԳԵՀԱՏ կամ ԻԳԱՀԱՏ. — *Հայաբնակ գիւղ Գուգարաց Ձորափոր (Պորչալու) գաւա-*



Ագռաւաձոր վարդապետական դասարան։ Գ. 63։

ոի, գիրքը լաւ չէ և ջրոյ նուազութիւն ունի։ Այսպէս կոչուած է տեղւոյն գիրքէն, ուր այգիները մինչև հոս կու գան և կը գա- գրէն, այդ պատճառաւ առած է Այգեհատ

անունը։ Բնակիչք երկայնահասակ են, թուով 350, բաժնուած 41 տան։ Գիւղիս մօտ են Հ. ուռմայրի Ս. Նշան և Քոբայը ուխտերը, որոց վրայ ի կարգին։

ԱՅԳԵԶՈՐ. — Հայտնուն գիւղ Տայոց այժմեան Օլթի գաւառի մէջ։ Բնակիչք 80. ամբողջ թուրքք։

— կամ Ի.ԿՈՒ. — Գիւղ Հայոց Ագձնեաց Գոգով (խիզան) գաւառի մէջ, բնակիչք 80*։ Գիւղիս մօտ է Ս. Գամագիէլի վանքը, զոր՝ ըստ աւանդութեան շինած է Թագէոս առաքեալը, իւր հետ բերելով Գամագիէլի գլուխը։

ԱՅԳԻ. — Գիւղ Շատախու (վան), բնակիչք 90*։ Ունի Աւետարկիչ և Ծղնայ վանքերը։

ԱՅԳՈՑ ՀՈՂ. Տես ՄԱՂԱՐԴԱՑ ՎԱՆՔ։

ԱՅԳՈՐԴ. — Լեռնակ Աղբարատայ վերին բաւենի մէջ։

ԱՅԺՈՒՏԱՊ. Տես ՅՈՒՏԱՊԻ։

ԱՅԻԳԱՆ. — Քրդաբնակ գիւղ Բագրեւանդայ, Շեհեան գետի ակ աիին վրայ. բնակիչք են 20 տուն։ Ունի հին վանքի մը աւերակներ. իւր անուամբ վտակ մը ևս կայ։ Գիւղիս մօտ կը գտնուի ամենաբնաիր կաճի բլուր մը, այդ կաճէն կը գործածեն Աղաշկերտի վարժարանաց մէջ։

ԱՅԼԱԲԵՐԻ, ԱՅԼԱԲԵՐԻՑ կամ ԱԱԼԱԲԵՐԻՑ ԳԻՒՂ. Տես ԱԱԼԱՓԱՐՍ։

ԱՅԼԱԽ. — Ի հնումն Սիւնեաց Ծղուկ գաւառի երկու զիւաւոր վիճակներէն մին. կը յիշուի միայն հարկաւոր գիւղօրէից ցուցակի մէջ։

ԱՅԼԱՆԼՈՒ. — Հայոց կրկին գիւղեր Աղբարատայ Արագածոտն գաւառի, Վաղարշապատու մօտ՝ արեւմտեան հիւսիսային կողմը։ Վերին Այլանլու ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը և 250 բնակիչք, իսկ Ներքին Այլանլու՝ Ս. Սարգիս եկեղեցի մը և 75 բնակիչք։

ԱՅԼԻ. Տես ԱՂԻ։

ԱՅՆԱՄԱՆՑ ԵՐԿԻՐ. — Կը յիշուի Աղբարատայ Արագածոտն գաւառի, Աշտարակ գիւղի Ս. Մարիանէ մատրան արձանագրութեանց մէջ։

ԱՅՆԵՆԱՑ կամ ԱՅՆԻՑ ԲԵՐԴ. — Բերդ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Զոր դարու սկիզբները մեր Սմբատ բագ. իշխանը յաղթելով Պարսից զօրաց, և սպանանելով վախտանգ սպարապետը, անոր որդին և կինը կը բերէ և կը պահէ այս բերդիս մէջ (Յովհ. Մամիկոնեան, 38)։ Կանխաւ կը կոչուէր Արծուիք, զոր յայտնէ մեզ Զենոբ (29–30), և որուն սաուգարանութիւնն կ'ընէ հետեւեալ կերպով. իբրև թէ Հաշտենից իշխանը հեղնելով՝ Արծռոյ ձագ ըսեր է Սիւնեաց իշխանին, իսկ Սիւնեաց իշխանն ալ սպանանելով Հաշտենից իշխանը՝ ըսեր է. «Տեսցեն զբեզ անգեղք, և զիտասցեն՝ եթէ Արծռոյ հարեալ է գնապատառիկ։ Եւ ինքն դարձաւ։ Որ մինչև ցայսօր Արծուիք կոչեն տեղւոյն»։

ԱՅՆԵՆԱԿԱՆ ՏՈՀՄ. — Կը յիշուի տոհմն գօրարատի մէջ, որ 100 հոգւով կը մասնակցէր մեծ բանակին։

ԱՅՆՏԱՆ. Տես ՅԵՏՍԱՆԵՔ։

ԱՅՂՅՈՒ–ԿԻՕԼ. — Լճակ Աղբարատայ վանանդ գաւառի մէջ, Սօղանլու լերանց ստորոտը, կարապ հիւսիսակողմը։ — Աչս անուամբ ուրիշ լճակ մ'ալ կայ Կարնոյ հիւսիսակողմը, Քէօսէ Մէհմէտ գիւղի մօտ։

ԱՅՆԱԶՈՐ. Տես ԸՂՆԱԶՈՐ։

ԱՅՆԹԱՊ կամ ԱՆԹԻՊ. Գղ. AÏNTAB. — Գլխաւոր քաղաք Հալէպի կուսակալութեան համանուն գաւառակի՝ որ իւր մէջ կը բովանդակէ 346 գիւղ և 87 000 բնակիչք։ Քաղաքիս դիրքը լեռնադաշտային է, և ծովու մակերեւոյթէն 2500 ոտք բարձրութիւն ունի։ Կը գտնուի Մարաշի և Հալէպի մէջտեղ դէպի արեւելք շեղուած. առաջինէն հեռու է 18 ժամ և երկրորդէն 24, ունի նոր շինուած կառքի ճանապարհ մինչև Հալէպ, որոյ երկայնութիւնն է 150 հազարամետր։ Այնթապ կառուցուած է արեւելքէ արեւմուտք երկոցուն երեք բլրակներու վրայ. ամէն կողմէն պատող լայնատարած այգիները և երկու ծայրերէն սկսող ծառաստաններն զեղեցիկ երեւոյթ մը կ'ընծայեն իրեն։ Տներն առհասարակ քարաշէն, ապխտակ և կրկնայարկ են, և փողոցներն՝ լայն բաւական կանոնաւոր և շատ մեղ սալարկուած։ Քաղաքիս ջուրը բերուած է յատուկ ջրմուղով, Աջլուր գետի ակբիւրէն՝ որ 3 ժամ հեռու է, դէպի արեւմտակողմը։ Աջլուր գետը, որ

կը ձեւանայ Օանա—օն—տէրէ և Ղարդայ—չայ գետակներէն՝ կ'անցնի Այնթապի արեւելեայ կողմէն և քիչ մը ետք կը կոչուի Այնթապի ջուր, և ապա յառաջ երթալով ալ կողմէն կը թափի Եփրատ գետը։ Բայց ի վերոյիշեալ գետէն, գետառակիս մէջ կան նաև ուրիշ մի քանի գետակներ. իսկ լեռներէն նշանաւոր են Գարապըչըղը վիւղի սարերը։

Մեծին Աղեքսանդրի մահէն վերջ Այնթապի գետառը ինկաւ Սելեւկեան իշխանութեան՝ Եփրատացիք կոչուած բաժանման մէջ։ Հին աշխարհագիրներէն ոմանք Անտիոք առ Տօրոսի քաղաքի կիրքը Այնթապի կ'ընծայեն։ Երբ մեր Մեծն Տիգրան Արշակունին յաղթութեամբ վերջացուց Սելեւկեան թագաւորութիւնը, հարկաւ այս գետառն ալ անցաւ Հայոց տիրապետութեան ներքև, մինչև որ 18 տարի վերջը (Ն. Ք. 64), Պոմպէոսի ձեռքով Հռովմէական կերիշխանութեան ենթարկուեցաւ։ Եօթներորդ դարուն՝ Արեւելեան կայսրութեան ձեռքէն յափշտակեցին Արաբները, և մինչև ԺԲ դարու մէջ յունական բանակները դարձեալ յաղթեցին և հայ բերդապահներ դրուեցան Տլուքէն մինչև Մմբէճ, բայց վերստին այլազգի բռնաւորաց գօրութիւնը վերահաստատուեցաւ։ Թաչակրաց օրով Այնթապ ամուր ապաստան դարձաւ քրիստոնէից, այն ժամանակի պատմիչներն «անուանին և մեծն Անթափ» կը կոչեն քաղաքս։ Բայց քրիստոնէից ապաստութիւնն երկար չտեւեց, 1152ին Նուրէտտին եկաւ տիրեց. 1182ին ալ Սալահէտտինի ձեռքն անցաւ, և այնուհետև յաջորդաբար եգիպտոսի սուլտաններն և ուրիշ այլազգի իշխաններ տիրացան։ Հեթում Ա թագաւորը 1266ին երկու անգամ արշաւելով քաղաքիս վրայ, չէ յաջողած զայն գրաւելու։ Զորեք տասանեւորդ դարու սկիզբը Ապուլֆէտա կը նկարագրէ Այնթապը իբրև մեծ և գեղեցիկ քաղաք, որ ունէր ժայռափոր և անառիկ միջնաբերդ, մեծ շուկայ, առատ ջուր և լայնատարած այգիներ։ Այնթապ մեծ աւերմունք կրեց Լէնկթիմուրէն 1404ին։ Սուլթան Գաթիթպայ 1480ին վերաշիներ է քաղաքիս բերդը, որոյ վրայ կը կարդացուի այժմ իրեն անուան արձանագրութիւնը։ Վերստաստանած դարու սկիզբը հոս երեւցան Օսմանցիները. Մէրձի—տապրզ գաշտի վրայ կատարուած պատերազմի մէջ Սուլթան Սելիմ յաղթեց Գանսու Ղաւրիին (1516), և նոյն ժամանակ Եգիպտացիներէն Օսմանեանց անցան ամբողջ Կիլիկիան և հիւսիսային Ասորիքն։ Դարուս մէջ ևս Իպրահիմ փաշայի առաջնորդութեամբ Եգիպտացիք արշաւեցին և սկսան տիրանալ այս կողմանց, բայց յետոյ օսմար տէրութեանց միջամտութեամբ հարկադրուեցան թողուլ և դառնալ Եգիպտոս։

Այժմ Այնթապը ամբողջ կուսակալութեան մէջ Հալէպէն վերջ առաւտուրքն և ճոխութեամբն ինքն է առաջին. իսկ օդոյ բարեխառնութեամբն և ջրի առատութեամբը՝ նախատաս է նոյն իսկ Հալէպէն։ Յարաբերութիւնը գլխաւորապէս Հալէպի հետ է, բայց ունի նաև ուղղակի գործառնութիւն Պէյրութի, Իզմիրի, Աղեքսանդրիոյ և Կ. Պոլսի հետ։ Գլխաւոր վաճառականութեան կամ արտածութեան նիւթերն են, արմաւիք, ծխախոտ, չամիչ, ասփ, պիստոր, գահրի, սակամանի, բուրդ, այծու մազ, բամբակեղէն ձեռագործներ (մանուտա և կատեղէն) և այծու կաշիէ մարոկէնի։ Վերոյիշեալ բամբակեղէն ձեռագործներէն և մարոկէնիէն զատ, իբրև արհեստական արտադրութիւն համբաւաւոր են Այնթապի օղին և ձկիը։ Ներածութեան նիւթերն են, սուրճ, շաքար, քարիւղ, երկաթեղէնք, պղինձ, անագ, ապակի, կերպասք, չուխայ, մետաքսեղէն, գոյնզգոյն մանած բամբակ՝ մանուտա գործելու համար, և այլն։

Քաղաքիս մէջ կան 36 մզկիթ, 57 մէսճիտ, 21 մեդրէսէ, 4 թէքէ, 5 եկեղեցի, 1 սինագոկ, 13 բաղնիք, 31 խան, 30 փուռ, 45 ներկատուն և կաշիի գործարան, 11 ջաղացք, 8 գինետուն, 5 օճառի գործարան, 2300 խանութ և 3800 գատակահ մանուածագործներու և ջուլհակներու։ Այնթապի մէջ կան 6500 տուն 43000 բնակիչներով, որոնց 16500ը հայազգի, 857 հրէայ, մնացածը արաբ և թուրք մահմետական. կան նաև Հալէպէն գաղթած սակաւաթիւ յոյն, սորի և մարոնիտ։

Հայք կրօնական երեք բաժանումներ ունին, այն է լուսաւորչական, բողոքական և կաթոլիկ։ Հայ լուսաւորչականները կը հա-

մարուին 12 000 և բաժնուած են 2400 տան։ Մինչև ցարդ ունէին միայն Ս. Աստուածածին եկեղեցի մը, որ հիմնարկուած էր գրեթէ 95 տարի առաջ, որ և անճաշակ շէնք մը լինելէն զատ ժողովրդեան բազմութեան ևս չէր բաւեր։ Ուստի մօտ 25 տարի առաջ, Սարգիս պէյ Պալեան արքունի ճարտարապետի ձեռքով սկսան ձեռնարկել հոյակապ եկեղեցւոյ մը շինութեան, որ այժմ աւարտած է։

Վերջին 40 տարիներու մէջ կրթական վիճակը բաւական յառաջացած է, որուն գլխաւոր պատճառներէն մին եղած է նախ Ակնցի Պ. Յովհաննէս Քիւրքճեան՝ որ իր կեանց վերջին մասն այստեղ անցուցեր է։ Ցետոյ՝ 1867ին հաստատուած Վարդանեան Ընկերութիւնը, 1875ին հիմնուած Ադիւնական Ընկերութիւնը, նոյնպէս ուրիշ միութիւններ զգալի գործ տուին կրթութեան գործին։ Ներսէսեան և Հայկանուշեան վարժարաններն ունին հաստատ հասոյթի ապրիլ՝ ազգային խան մը, որը գնուած է գրեթէ ամբողջապէս Յովսէփ տարկաւագ Աշճեանի կտակած դրամով։ Վարպետեան կրթարանին բարերար հիմնադիրն եղած է ազնուաշուք վաճառական Պ. Գալուստ Ղազարեան։ 1886ին այս վարժարանին կողմէն կը հրատարակուէր Մեհեան վերնագրով կիսամսեայ հանդէս մը, հայերէն և թուրքերէն լեզուներով։

Հայ բողոքականաց թիւն կը հասնի 4000ի, ունին 3 եկեղեցի և 8 վարժարան։ Աշխերկացի միսիոնարներն հաստատած են նաև «Կեդր. Թուրքիոյ Բոլիճ» և Օրիորդական բարձր վարժարան մը։ Կրթական հաստատութիւնաց չնորհիւ բողոքականաց մէջ ուսումնարուն թիւը աւելի տուաւր է, և դրամական մասին ևս լաւ վիճակի մէջ են։ Պ. Ատուր Նիշիլեան, կարեւոր պատասխաններ է բերէ զգլուցաց՝ և մեծ քաջալերութիւն է ընծայէ կրթութեան գործին։ Հայ բողոքականաց ուրիշ բաժանում մի ևս էր Անգլիական և կամ Եպիսկոպոսական հաստատութիւնն, որոնց գլուխն եղաւ քաղաքիս նախկին (1866) առաջնորդ և Ասոյ կաթողիկոսական տեղապահ Սէմէրճեան Մկրտիչ եպիսկոպոսը, որ անձնական գժտութիւններով այս հերձուածի մէջ ինկաւ։ Նոյն անձը Անգլիա ուղեւորելով դրամ հաւաքեց և Զմիւռնիայի մէջ հիմնեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի մը. բայց նիւթական նպաստաք և հետեւողք նուազելով, յաջող ելք մը չունեցաւ։

Հայ կաթոլիկաց թիւն յայժնուազ է 400–500 հոգի. սակայն չգիտեմք ինչ հաշուով Վ. Քինէ 2000ի կը հանէ այդ թիւը։ Ունին նաև փոքր եկեղեցի մը, որոյ շինութեան համար, ժամանակաւ դրամական նպաստ ստացած էր Նափոլէոն Գ կայսրը. ունին նաև առանձին դպրոց մը։ Քսան տարի կայ որ այստեղ հաստատուած է Ֆրանչիսկեան կրօնաւորներու վանք մը։ Մօտ 100 աշակերտներ, մեծաւ մասամբ հայ, կ'ուսանին այս կրօնաւորաց մօտ։

Ակնթապի Հայք շատոնց մոռացեր են մայրենի լեզուն, սիրող լեզուն թուրքերէն է, թէ և իրենց կրօնական և առանձին հայերէն բառերու թիւն Սեպհականներէն և Ատանացիներէն աւելի շատ է։ Վերջին տիպար ժամանակ քաղաքս ևս ունեցաւ իր ինամներն. հոս ևս բացուած է որբանոց մը, որուն հոգաշունչ կը հոգացուի Մենչըսթըրի ազգայնոց կողմէն։ Ակնթապի գաւառակը ունի միայն մէկ հայաբնակ գիւղ Օրուշ անուամբ։ Կիլիկիա, 353–367։ Փինէ, Բ. 188–191։ Արեւելք, Ա. 196։ Եւ այլն։

ԱՅՈՒՆ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ՝ գոր ուրիշ կալուածոց հետ Լեւոն նուիրեց Ալամանոց։

ԱՅՈՒՉԱՅ. — Գեղակ Ակրաբատայ Արաքածոյ գաւառի, օժանդակ Քասաղ գետոյն։

ԱՅՊՈՒՂԱՆ կամ ԱՅԻՊՈՒՂԱՆ. — Ամայի գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Հայր–Ցովնաձ վանից հարաւակողմը. մնաց կան հին եկեղեցւոյ կամ մենաստանի մը աւերակներ։

ԱՅՍԱՍ. Տես ԱՐԱՏԻՍ։

ԱՅՎԱԹԼՔ. — Գիւղ Զարսանճագի, բնակիչք 110 Հայք՝ որք ունին Ս. Մինաս եկեղեցի մը, և 40 այլազգի։

ԱՅՎԱԼՂԴ. — Գիւղ Ծովային Կիլիկիոյ, Այասի արեւմտակողմը։

ԱՅՎՈՍ. — Գիւղ Խարբերդի, բնակիչք 1200 Հայք, որք ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը, և 350 Ասորի և Թուրք։

ԱՅՏԸՆ կամ ԱՅՏԻՆ. Գ. AÏDIN. — Գլխաւոր քաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան համանուն գաւառակին, 60 հազարամեայ հնաւորութիւն ունի Զմիւռնիոյ երկաթուղւոյ կայարանէն, գրեթէ $3\frac{1}{2}$—4 ժամուան մէջ Զմիւռնիայէն մեկնող շոգեշարժ կառախումբը կը հասնի Այտընի առջև։ Քաղաքիս հիւսիս—արեւելեան կողմը բարձրացած է լերանց գօտի մը, որ հրաբղխային երեսոյթ ունի, որուն նոր արգասիքն իսկ տարւոյն (1899) մէջ երեւցաւ, շատ վնասներ տալով Այտընի և շրջակայից։ Ի հնումն քաղաքս Տրալէս կոչուած է, և Հռովմայեցւոց կայսրութեան ժամանակն ալ կեսարիա։ Երկրաշարժով մը, լեռնադաշտի վրայ կառուցուած այս հին քաղաքը երկուքի բաժնուեր է և մէջտեղ ձեւացեր է ձոր մը։ Ձորին աջ և ձախ կողմերն շինուած է այժմեան Այտընը, որ կ'ըսուի նաև Կիւզել Հիսար։ Հին քաղաքի աւերակներն տակաւին կը տեսնուին ձիթենիներով զարդարուած լեռնադաշտի վրայ. 1890ին Հուման զերմանացի հնախօսն, տեղ տեղ պեղումներ ընելով՝ հանած է արձաններ և կոթողներ։ Վերյիշեալ ձորոյն աջ կողմը կը գտնուին Թրքաց և Հրէից թաղերն, իսկ ձախ կողմը Յունաց, Հայոց և տակաւաթիւ Իտալացւոց, Գաղղիացւոց, Անգղիացւոց և Աւստրիացւոց բնակութիւններն։ Գարաւիլդ և Նազիլի կոչուած կրկին քարաշէն կամուրջներն, կը միացնեն քաղաքիս երկու մասերն իրար հետ։ Ժամանակակից քաղաքս կուսակալանիստ էր և ունէր 60 000 բնակիչ, իսկ յետոյ կուսակալն փոխադրուելով ի Զմիւռնիա՝ Այտընը եղաւ աւելոր գաւառապետի։ Այժմ բնակչաց թիւն կը համարուի 36250, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք. . .	26000	հոգի
Յոյնք.	8500	»
Հայ լուսաւորչականք.	250	»
Հայ կաթոլիկք և Լատինք	114	»
Հրեայք	1406	»
Գումարն	36250	հոգի

Մահմէտականք ունին 22 մզկիթ և 10 դպրոց, որոնց մէջ նշանաւոր է Իտատիէ կոչուածը, որ բարձր գիրքով շինուած է հին քաղաքի քարերով. այս դպրոցը կը յաճախեն նաև քրիստոնեայք։ Յոյնք ունին երկու եկեղեցի, Ս. Գեորգ և Ս. Ղազարապտոս, հիւանդանոց մը և երկու դպրոց. արհեստով վաճառականներ են։ Հրեայք ընդհանրապէս աղքատ են, ունին սինագոկ մը և դպրոց։

Հայք գրեթէ 350 տարի յառաջ գաղթած են Այտընը Հայաստանի զանազան կողմերէն և ի սկզբան բաւական բազմաթիւ են եղեր. ըստ հին արձանագրութեանց կը բաղկանային առ նուազն 500 տունէ. տակաւին ի վերջոյ շրջակայ քաղաքներն գրաւելով, մանաւանդ շատերը Զմիւռնիա իջնելով, այժմ հազիւ 40—50 տուն մնացած են։ Ունէին յանցելումն 1638 թուին կառուցուած երկու խարանով եկեղեցի մը, որուն տեղը 1834ին կառուցած են այժմեան Ս. Աստուածածնի եկեղեցին։ Հին հայկական արձանագրութիւններով ծածկուած և շատ տեղ ոտքերով տապանաքարեր գործածած են եկեղեցւոյս սանդղոց և պատ սեմոց և այլ մասանց շինութեան համար։ Այսօր պատ ճակատի մարմարիոն քարի վրայի արձանագրութեան հակառակ, եկեղեցիս փոխանակ հինգ խորանաց ունի երեք խորան. աւագն՝ նուիրուած է Ս. Աստուածածնի, աջակողմեանը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի և ձախակողմեանը Ս. Գլխակիր. բայց անշուշտ արձանագրողը ի միասին հաշուած են նաև աւանդատան խորանն որով կը լինի չորս խորան. իսկ հինգերորդին տեղն լինելու է ձախակողմեան որմի վրայի կամարակապի մէջ, ուր այժմ խորան չկայ։ Եկեղեցին մեծութիւնն է 13,80 մետր երկայն և 10,20 մետր լայն. մարմարիոնէ չորս սիւներու վրայ հաստատուած է կամարակապ ձեղունը։ Այսօր պատ վրայ կայ կանոնց վերնատուն, որուն տակ հաստատուած են երկու սիւներ, վերյիշեալ սեանց ուղղութեամբ։ Ներքնի արձանագրութիւնք չկան, բայց ի քանի մը պատկերաց եզերքներէն գրուած նուիրատուաց յիշատակարանները է։

Եկեղեցւոյս մօտ է Ս. Գրիգորի վարժարանը, կառուցուած 1874ին. փայտաշէն է բայց գեղեցիկ և հովասուն լաւ դիրք ունի։ Վարժարանիս մէջ յանցելումն կար Ընթերցարան մը, որ նիւթական պիտոյից պատճառաւ առ ժամանակ մը գոցուած ըլլալով՝

1897ին Գրբբազանցի Յովհաննէս Եփ. Մբ. սրբուհւոյ փառատաբանի նախաձեռնութեամբ և քանի մը երիտասարդաց միութեամբ վերստին կը բացուի։ Այս ընծերցարանի գրոց մէջ կան չորս ձեռագիր Գանձարան և Մաշտոց։ Մինչև 1893 եկեղեցւոյ պարտիզի մէջ էր Հայոց գերեզմանատունը, բայց այժմ առաջնորդական պայմանաց համեմատ կը թաղեն եկեղեցւոյ կռնակը բարձրացող բլրակի վրայ։ Հին գերեզմանաքարերէն թէև հարիւրէն աւելի գործածուած են շինութեանց, սակայն դեռ կան անոնցմէ բազմաթիւ, ուսանք հոդի տակ ծածկուած, ուսանց յիշատակարանք մնացած և ուսանցը տակաւին անջինջ մնացած։

Քաղաքիս Հայ կաթոլիկներն են պիտառարար Գաղատացի տակաւաթիւ վաճառականներ և մի քանի Եւրոպացի բնտանիքներ։ Վիեննայի Միխիթարեան Միաբանութիւնը 1850էն ի վեր հոս հաստատած է առաքելութիւն մը և 1853ին ունեցան մատուռ մը, զոր 1859ին աւելի ընդարձակեցին և նորոգեցին Ս. Աստուածածնի. ուրեմն նաև վարժարան մը։ Հայ կաթոլիկաց գերեզմանատան մէջ կան գերեզմանաքարեր, հանգերձ հայատառ՝ բայց թրքալեզու արձանագրութեամբք։ — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, նոր. Բ. 1—47։ Բիւն, Գ. 591—599։

ԱՑՏՈՒԱՆՔ — կօրճէից հին գաւառներէն մին։

ԱՑՏՕՂՄԱՋ. — Գիւղ Սերաստիոյ՝ արեւմտակողմէ։

ԱՑՐԱՒ. — Լեռ կիլիկիոյ, կը բարձրանայ Զէյթունի հիւսիսային կողմէ այգեստաններու քովէն։

ԱՑՐԱՐԱՏ կամ ԱՐԱՐԱՏ. Աս. ՈՒԲԱՐՏՈՒՒ. Վր. ARARAT. Երր. אֲרָרָט. — Հայ աշխարհի հրոչակաւոր և վեհագոյն նահանգն՝ կ'ընդգրկէ մեր միւս նահանգաց միջավայրն, և այդ պատճառաւ նահանգապետը Մի ջնաշխարհի կը կոչուի Բուզանդէն։ Այրարատը շրջապատող նահանգներն են, արեւելքէն՝ Սիւնիք հիւսիսէն՝ Գուգարք. արեւմուտքէն Տայք և Բարձր Հայք. հարաւէն՝ Տուրուբերան և Վասպուրական։ Ինչպէս որ վայել է թագաւորական վիճակի՝ ընդարձակագոյն է Այրարատ մեր բոլոր միւս նահանգներէն. զրկէ 160 մղոն երկայնութիւն ունի Վերին Բասենու ծայրէն մինչև Գեղաքունեաց լճակները, և 120 լայնութիւն, Աշոցքէն մինչև նահանգիս Ծաղկոտն՝ և Վասպուրականի Ադիլվիա գաւառները բաժնող լճակագօտին։ Ընդարձակութեան համեմատ բաժնուած է նաև շատ մասերու, քանի գաւառներու, և այս աւելի Արշակունեաց հարստութեան վերջնական էին յետոյ. վասն զի ասանց ժամանակ զանազան գաւառներ իրարու հետ միացած կազմէին միայն մեծ գաւառ մը, որ էր արքունի նահանգն Այրարատայ. անոր համար խորենացւոյ աշխարհագրութեան օրինակաց ամենց մէջ առանձինձ գաւառք կը յիշուին Այրարատայ, միւս չորս կամ հինգ գաւառները ի միասին համարելով սեփհական Այրարատեան երկիր, ուր կը բնակէին հին Հայկազունք Ամենակէն սկսեալ, որ և վերջը Արշակունի թագաւորաց Առաջի եղաւ։ Այս նահանգը կամ բուն Այրարատեան երկիր ըսուածը՝ կը տարածուի Հայոց բարձրադոյն լերանց, Մասեաց և Արագածու մէջտեղ, Հր.էն գէպ ի Հս. և Հիրակայ առհմանները կամ Ախուրեան գետէն՝ մինչև Գեղաքունեաց լճակները։

Երկու գլուխ հայկական գետահովտաց վիճակ է Այրարատ, Երասխայ և Արածանւոյ, յորոց առաջինն ընդարձակագոյն է. վասն զի Երասխ իւր ազբերակունքներէն, այսինքն Բասենու արեւմուտքէն՝ գրեթէ ուղղակի վազելով գէպի արեւելք՝ աշխարհին բովանդակ երկայնութիւնը կը կտրէ, մինչև մեծ գաշտը՝ որ կ'ընդունայ Շարուրայ և Նախճաւանու մէջտեղ։ Երկրին մեծագոյն մասը Երասխայ ձախակողմն է, այսինքն հիւսիսային կողմը, և այս մասին մէջ են բոլոր արքունական քաղաքներն և ամրանները։ Իսկ Արածանի փոքր մաս մը ունի Այրարատայ մէջ, և են գեղեցիկ գաւառքն Ծաղկոտան և Բագրեւանդայ. վերջինս շատ ընդարձակ է և կը թուի թէ ի սկզբան առաջնոյն հետ միացած՝ առանձին տէրի մը կամ նահապետութեան վիճակուած բլլայ և ապա յարքունիս գրաւուած։

Լեռներ. — Այրարատայ վերոյիշեալ գետահովիտները կ'անջրպետեն Աղրի կոչուած լեռներն, որք Մասիսէն սկսեալ կ'երկննան յարեւմուտս մինչև Առկաւէտ, և անկից ալ

ոչ այնչափ որոշ գօտիներով՝ մինչև լայնա-
նիստ Արմանց (Պինկեօլ) լեռը, Տաւրուբե-
բանի և Բարձր Հայոց մէջտեղ. որով՝ գրեթէ
երասխայ ամբողջ երկայնութեամբ ալ կողմը
կը տարածուի երկայնաշարք լեռնատափ մը:
Նահանգիս արևելեան հարաւային կողմը
բարձրացած հոչակաւոր Մեծ և Փոքր Մա-
սեաց վրայ երկարօրէն կը խօսուի ի կար-
գին. առջևց արևմտակողմէն կը բարձրանան
փամպուռգ կամ Խալկետառէկ, Չիլկիլ, Սըչան-
ղը (Մկնեռտ), Ախպաճ 9650′, Միևկ 9058′,
Մեծ Շիշբեփէ կամ Ջօր 12000′, Քօչպաշ,
Փիրիլի 10650′, որ գրեթէ տարւոյն մեծ
մասը ձիւնապատ է, Քեօր–օղլու 8320′,
բուն Աղրի–տաղ 9054′, Պօզ–տաղ, Սուռ-
կաւհտ (Քեօսէ–տաղ) 11276′: Այրարատայ
արևմտեան մասին մէջ կը ձևացնեն ուրիշ
հարաւագոյն լերանց պար մը՝ Շեռխան իրեն
ոստերովը, Թօփ–տաղ, և ուրիշներ մինչև
կարնոյ արևելակողմեան լեռները, որ ըստ
նախնեաց կոչուած կը թուին Մակեդոնիա:
Ցիշենք նաև Բասենու և Վանանդայ Յօղանի
լեռները, և առանձնակ կատարքն Բա-
սենու՝ Ագրակ, Ագ–մէգրէ, Ջաւար 9222′,
Ս. Թաէ 9562′ Մծնկերտի մօտ, և այլն:
Վանանդայ մէջ չկան բարձրաբերձ լեռներ
այլ մի քանի անջատ լեռնակներ, իսկ Շի-
բակայ սահմանակից կան նաև չափաւոր
բարձրութիւններ, ինչպէս Եաղլըձա 9752′,
Քոդուր 9145′, Հաձի Թաղիլ 9130′, և այլն:
Ծաղկոտն գաւառի մէջ են Նպատ և Ծաղկոյ
լեռները. ուրիշ անջատ լեռներ կան նաև
միւս գաւառաց մէջ: — Բուն Այրարատեան
նահանգի մէջ յետ Մասեաց՝ պլխաւոր և ա-
ռաջին լեռն է լայնագագաթի և լայնատարած
Արագած 12606′, և նոյն դաշտի մէջ Արայի
լեռ (Գառնի–ևարդգ), Շամիրամայ լեռ (Հա-
տիս) և Քեօրաև տաղ. Ձանկի, որ հիւսիսային
կողմէն Արագածը կը միացնէ Գուգարաց
Բամբակի լերանց շղթայի հետ: Արագածու
արևելակողմը մինչև Սիւնեաց լեռները, մի
քանի առանձնակ լեռներէ զատ՝ բոլոր եր-
կիրը դաշտային է, և այդ պատճառաւ ընդ-
հանրապէս Արարատեան դաշտ կը կոչուի:

Կարելի է նոյն իսկ ամբողջ Այրարատ
աշխարհը դաշտային կոչել, ինչպէս ի հնումն
ևս կը կոչուէր Երասխեան դաշտ. վասն զի
Աղրի լերանց շղթաներէն զատ՝ որոնք լայնա-
նիստ ալ չեն, չկան ուրիշ լերանց մեծ շղթա-
ներ, այլ եզածները կամ առանձնակք են
կամ շեղջաձեւ:

Գետեր. — Այրարատայ պլխաւոր և ա-
միական գետն է Երասխ, որոյ օժանդակներն
են Մորից, Ազատ–սուռ, Աղստոդ–չայ, Թա-
լի–չայ, Սարը–գամըշ–սուռ, և ուրիշ բազմա-
թիւ վտակներ, մինչև Ախուրեան գետը՝ որ
իւր ամէն օժանդակներէն հզօրագոյնն է:
Նահանգիս մէջ Երասխայ միւս օժանդակ-
ներն են Մեծամօր (Գառա–սուռ), Քասախ,
Հրազդան, և այլ ուրիշ ոչ սակաւ գետակ-
ներ, զորս մի առ մի յիշելն աւելորդ կը
համարիմ, քանի որ իրենց կարգին իւրա-
քանչիւրին մանրամասն նկարագիրն կը
արուի: Ծաղկոտն և Բագրեւանդ գաւառաց
մէջէն անցնելով կը վազէ դէպ ի Տաւրուբե-
բան Արևելեան Եփրատ (Մուրատ չայ) կամ
Արածանի գետն, որոյ օժանդակք են Շե-
ռխան, Տուռնապի, և ուրիշ շատ վտակներ:

Գետերէ զատ ունի Այրարատ նաև լճակ-
ներ, որոց մեծագոյնը կ'ինկնայ Կոգովիտ
գաւառի մէջ. ի հնումն կը կոչուէր Ծովակ
Գայլատուոյ և այժմ Պալըգկեօլ (Ձկնաւիճ)
տատա ձուկ ունենալուն համար: Կան նաև
մօրուս կամ ճախճախուտ տեղեր Բասենու
դաշտին մէջ, ինչպէս նաև երկրին արևելեան
մասին մէջ, Երասխայ ալ եզերքը:

Բնութիւն երկրին. Կլիմայ. Բնակիչք. — Ընդհանրապէս երկրին կազմուածքը
մանաւանդ արևելեան մասին՝ հրազանգուած
կամ պղտուռնական է, որուն ակներեւ վկայք
են մեր աշխարհի երեք բարձրագոյն լեռները,
Մեծ և Փոքր Մասիք և Արագած և ասոնց
մերձակայ կոգովիտ, Արագածոտն գաւառնե-
րու և սահմանակից Գեղամայ լեռները, ո-
րոնք երբեմն երկրիս ահեղագոյն հրաբուղխ-
ներէն էին, և իրենց վառարանաց շիջմանէն
վերջ ևս, անդադար ներքին ներգործութիւն-
ներէ և շարժերէ հանգիստ չեն թողուցած
երկիրը, և երբեմն ևս կողից պատառմամբք
և ժայթմամբ աղմոյ և սկոյ, և մեծամեծ քա-
նանց թաւալմամբ, յատակ բերած են ագե-
ատալի ձկանաներ:


Այրարատ նահանգի վերքը բարձր ըլլալով
2500 ոտքէն մինչև 6000′, և լերանց հետա-

գումեամբ անպատասպար լինելով՝ օղը ցըրտային է։ Նուազ են նաև անտառներ. այդ պատճառաւ չորրորդ դարու կիսուն Խոսրով Բ անտառ անկել տուաւ Գառնայ և Գառնոյ մէջտեղ. ինչպէս նաև ի հնումն Երուանդ անկել տուած է իրեն դաստակերատեղ մեծ Ախուրեանի և Երասխայ խառնրդոց սահմանը. թողունք Աբմաւրայ հին ասոնցմէն, որք կը համարուին անկուած Հայկայ Արմենակ որդիէն։ Բնիկ Այրարատայ մէջ կենդանի անտառ ոչ մի տեղ չկայ, բաց ի երկու Մասիսներու մէջ եղած թխաենենաց անտառէն։ Իսկ արևմտեան մասին մէջ են հանրածանօթ մայրիքն Մեծրաց (Ծօղանկու լերանց), Բասենու և Վանանդայ մէջ. որոնք յայտնի է թէ ի հնումն աւելի ընդարձակազոյն էին, որ այնչափ գարերէն ի վեր կարելով՝ տակաւին մնացած են։ Ա. Գ. գարուն Հուլաւու գանն հոս գրկեց զՄիքաա Օրպելեան, «վասն մնացեալ մայրափայտից, զի շինէին զմեծ արքունիքն որ ի Գառն գաշտի», Ստ. Օրպել. կԶ։ Թուականքիս որ 1704 տարւոյ օգոստոս 26ին անցած է անտառէս՝ Ղարսէն կարճ գացած ժամանակ, կը յիշէ նոճիներու և կաղամախեաց գանազան տեսակներ։

Հոչակաւոր է Այրարատ պտղաւէտութեամբն և հարստութեամբը, ինչպէս նաև տեսարանաց գեղեցկութեամբը. մեր պատմիչներն առաջիններէն սկսեալ մինչև վերջիններըը լիաբերան գովեստներ կու տան։ Ագեթէն աւելի երկ գարու պատմիչներէն մին՝ Ղ. փարպեցին՝ (20—28) շատ գեղեցիկ կերպով նկարագրած է աշխարհիս բուսաբերութիւն և կենդանիներն։

Արշակ Գ թագաւորին համար կ'ըսէ. թէ «... լքեալ մերժեալ թողոյր զբարի և զգնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Այրարատու, զնոյակազն և զնշխարաւորն և զակնաւորն, զաւենաբոյսն, զաւենաբերսին, զաւենալիլն, զաւենագիւտն ի շահս և ի զարմանս մարդկային սիրայիցս կենաց և վայելչութեան և սքանչելեան»։ Կը թողուր Արշակ Այրարատայ ընդարձակ որսալից գաշտերը, գեղեցկանիստ և պարարտաբոյս լեռները՝ լի որսի կենդանիներով, որոց կաւարներէն իջած ջրերը՝ գաշտերը ոռոգելով՝ հացի և գինւոյ առատութիւն կու տան, բուսոց և բանջարաց քաղցը համ և խտացուպլն ընդեղէններուն անուշութիւն։ Լերանց լանջերու վրայ կամ սարահարթ վայրերը երբ մարդ աչերն դարձունէ, կը տեսնուին բազմերանգ ծաղկունք գոյնզգոյն հանգերձի նման սիրուած։ Պարարտաբոյս, պարարատհամ և թանձրախիտ անտ խոտերն կը կերակրեն անթիւ արօտականներ՝ թէ' ընտանի էշեր և թէ վայրի էրէներու անհամար երամներ, որոնք իրենց բոլոր մարմնով կ'ելնեին դէր, թանձրախիտ անտառ և առոգաւետ։ Իսկ անուշահոտ ծաղկանց հոտը, քաղ արտասէր մարդոց և բացօթեայ հօտարածներուն առողջութիւն կու տայ, և կը վերանորոգէ և կը կազդուրէ անոնց միտքը ու զգայարանքը։ Այրարատայ մէջ կան նաև գանազան բոյսերու արմատներ, յորոց օգտակար գեղեր կը շինեն։ Ունի նաև սակի, պղինձ, երկաթ և պատուական քարեր, որդան կարմիր բուսած ճճին՝ որ կը ծնանի բոյսերու տերևներու վրայ, ուսկից ազնիւ ծիրանեգոյն կարմիր ներկ կ'ըլլայ։ Գետերն կը մատակարարեն գանազան տեսակ մեծ և փոքր համեղահաշակ ձկներ։ Այրարատ կը մնուցանէ իւր մէջ նաև գանազան հաւեր. կրկլաձայն, առատպարասէր, վիմասոյզ, սորամուտ կաքաւուց և Սալամբաց երամներ. կամ եղջերաձագ, թփամուտ, մացառաղօղ, պարարատամարմին և անուշահամ վայրի Աքատաց տեսակներ. ինչպէս նաև ջրասուզակ, մամռախնդիր և մեծամարմին փոր (կարապ), Թաւնձր (Otis?) և Սագ. թողունք միւս անհամար ցամաքային և ջրային թռչնոց տեսակներն։ Նոյն Ղ. փարպեցւոյ նկարագրածի համեմատ, նախարարները որսի եղկելով, ունէին այծեամներու և վայրի էշերու հաւերէն կը վազէին, ուրիշներ ձիով կ'ինկնային եղջերուի և եղնիկի երամներու հետէն. մէկ քանին ալ որով կը սպանէին առատկանգամ վարազները։ Իսկ նախարարաց փոքր որդիք՝ իրենց դաստիարակներու և ծառաներու հետ միասին բազէներով գանազան տեսակ թռչուններ կը բռնէին և կը բերէին ընթրիքնին ճոխացնելու համար։ Այժմ եւս Այրարատ նշանաւոր է պտղաւէտութեամբը և բերքը, որ և կը հաստատէ Փարպեցւոյ նկարագրութեան արժանահաւատ և բնական լինելը։

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — *Հին ժամանակները Այրարատ աշխարհի արեւելեան կողմը, Արագած և Մասիս լերանց մէջտեղ Այրարատեան դաշտի վրայ, առաջին անգամ որպէս հիմնեց Երասխի եզերքը ամրագոյն և ընդարձակ քաղաքն Արմաւիր, որ անկէց վերջ գրեթէ 2000 տարի Հայոց հանդիսաւոր մայրաքաղաքն եղաւ. և ինչ-*



Տես առաջին հատորի 64.

պէս որ քաղաքն կոչուեցաւ իւր անուամբ, նոյնպէս և իւր Շարայ արգոյն անուամբ, կ'ըսուի թէ կոչուեցաւ Արագածու մերձակայ Շիրակ գաւառը, և գետն ալ իւր Թոռան ա-

բնակութիւն հաստատեցին որպիք և Թոռունք Հայկայ: Ըստ մեր պատմութեան, Հայկայ անդրանիկն Արմենակ Արագածի տորոտար կառոյց իւր տաճարն, յետոյ իւր Արամայիս

նուամբ Երասխ։ Արամայիսի անդրանիկն Ա-մասխա՝ Երասխ գետէն անցնելով անոր ալ կողմը կամ դէպ ի հարաւ, բնակեցաւ Մա-սեաց Ոաքը, իւր անուամբ կոչելով մեծ լեռը, և անոր սաորոաքը իւր երկու կրասեր որդ-ւոց անուամբ կառուցանելով Ցոլակերտ և Փառախառտ քաղաքներն, զարձաւ վերստին յԱրմաւիր։ Իսկ իր անդրանիկն Գեղամ, Արմաւիրը թողլով իւր Հարմայ որդւոյն, «ինքն գնաց զմիւս լերամէն արեւելեան հիւ-սիսոյ, յեզր ծովակի միոյ (Սեանայ), շինէ զեղր ծովակին, և թագու անդ բնակիչս. և յիւր անուն սա զքաղաքն անուանէ Գեղ, և զշէնսն Գեղաքունի, որով կոչի և ծովն» (Խոր. Ա. ԺԲ)։ Հոն ծնաւ Միսակը, որուն ժառանգութիւն տուաւ Գեղաքունեաց ծովէն մինչև Երասխայ քարափագքը, և այն երկիրը կոչուեցաւ Միսական կամ Սիւնիք, որ երէկ նոյն ժամանակ անբաժան մնան կը համա-րուէր Այրարատայ, վերջը զատուելով և-պաւ Հայաստանի 15 նահանգներէն մին։ Գեղամ նորէն Այրարատ գառնալով շինեց իրեն ձեռակերտ մը և անուանեց Գեղամի, որ յետոյ իւր Գառնիկ թոռան անուամբ կո-չուեցաւ Գառնի։

Պատմութիւնն մեզ այսչափ միայն կ'ա-ւանդէ Այրարատայ մէջ Հայկազուն նահա-պետաց շինութեանց նկատմամբ։ Հարմայ մինչև վերջը բնակեցաւ յԱրմաւիր, այսպէս նաև իւր յաջորդքն և պայազատք, քաջն և աշխարհակալն Արամ, և իւր որդին Արայ Գեղեցիկ, և ասոր որդին Արայեանն Արայ, և ապա Անուշաւան։ Ասկէց կը զտղրին Հայկայ ազգատոհմին որդւոց որդի ուղղակի յաջորդութիւնք, և չի գիտցուիր վերջը եկող նահապետաց և թագաւորաց ազգասերու-թիւնը, և ոչ ալ երկրի մէջ եղած շինութիւնք և սահմանաց ընդարձակուիչն կամ նուա-զուն. այլ միայն յայտնի է որ տէրութեան գահն էր յԱրմաւիր, և արքունի կալուածոց յայտնի սահմանքն էին՝ արեւելքէն Գեղամայ ծովէն սկսեալ մինչև արեւմուտք վանանդայ կողմերը. իսկ անկէ անդին մինչև կարնոյ լեռները կամ աշխարհիս արեւմտեան մասը, այսինքն վերջէն անուանուած վանանդ և Բա-սենաց և անոնց կից քանի մը փոքր գաւառ-ները, որք կը թուին թէ հին ժամանակներուն Բասենաց կոչուած օտար ազգի մը ժառան-գութիւն եղած ըլլան, և չէ յայտնի թէ ե՛րբ նուաճուեցան Հայկազուններէն։ Բայց երբ ալ նուաճուած ըլլան, յայտնի է թէ Այրա-րատայ արեւելեան մասին պէս արքունական սեփական կալուածներ չեղան, այլ մեր նա-հապետաց և թագաւորաց ձեռաց տակ կամ հարկատու, ունէին իրենց առանձին նախա-րարներն կամ զաւառապետները։ Ցետ բարձ-մանն Հայկազանց հարստութեան, մեր եր-կրորդ հարստութեան հեղինակն Վաղարշակ Արշակունին, որոյ համար կ'ըսուի թէ ի Մծբին հաստատած ըլլայ գահը, սակայն Արմաւիրն ալ երեսէ չէգնեց, և մանաւանդ անոր մեհեանները զարդարեց իւր նախնեաց արձաններով։ Սա և իւր երեք յաջորդները, Արշակ որդին, Արտաշէս Թոռը, և Տիգրան Թոռնորդին, իրենց տէրութեան սահմանները Արտամէն աւելի ընդարձակեցին։ Ասոնց ժա-մանակ կը կարծուի որ միացան աշխարհիս հետ հարաւային արեւելեան կրկին գաւառ-ները, որ կը գտնուէին Արածանւոյ գետա-հովտին մէջ, և այսպէս Այրարատը հա-սաւ իւր վերջին ընդարձակութեանը։ Ար-շակունեաց թագաւորութիւնը դեռ չվերջա-ցած, քիչ մը ժամանակ երկիրը երկու մասի բաժնուեցաւ, և նորէն հին նահապետական կամ հայկազնեան Այրարատ գաւառը մնաւ իրեն անձուկ սահմանին մէջ, և եղաւ Պար-սից հովանաւորութեան ներքև թագաւորա-կան վիճակ մը. բայց Հայոց միւս նահան-գաց և գաւառաց մէջ իշխող նախարարաց սպրանօք, երկար չտևեց և վերջ արուեցաւ Այրարատայ արքունի պայազատութեան. այնուհետև երկիրն ալ բաժնուեցաւ հինգ կամ վեց առանձնակ գաւառաց, ժառանգութիւն գտնելով քանի մը ազատագղի տոհմերու։ Այրարատ բաւական երկար ժամանակ մնաց Պարսից իշխանութեան ներքև և ի վերջոյ մասամբ մը և Թուրքաց. իսկ այժմ մեծաւ մասամբ Ռուսաց իշխանութեան ձեռքն է, և առ ժամս միայն Բասէն, Բագրեւանդ, Ծաղկ-ոտն և Կոգովիտ գաւառներն մնացեր են Թրքաց։

ԱՅՐԱՐԱՏԱՑ ԳԱՒԱՌՆԵՐՆ. — Ի սկզբան միայն երկու գաւառական անուններ կը լիշուին մեծ նահանգիս մէջ, Արագածոտն Արմենա-

կէն, և Մասեաց ոտն Ամասիայէն. որոց վրայ աւելցաւ վերջը Շիրակ. իսկ Գեղաքունն, ինչպէս տեսանք, թէ և առաջ անբաժան մասն էր Այրարատայ, բայց շատով անկէց զատուեցաւ։ Թագաւորութեան վերնալէն վերջ, վերոյիշեալ երկու լեռնոտքն եղան առանձին գաւառներ, յայտնի չէ թէ որ տոհմի ձեռաց տակ. առաջնոյն վիճակուեցան հին մայրաքաղաքն Արմաւիր և Վաղարշապատը. իսկ վերջը շինուած Դուինը, մերձակայ հին Արտաշատ քաղաքովը, որք բուն Ոստան կը կոչուին Երդ գաւառ մէջ, Մազազունեաց տոհմին անուամբ կոչուեցան Մազազ. բայց երբեմն Դուինայ դաշտ ալ կը կոչուի այս

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՅՐԱՐԱՏԱՅ

ՀԻՆ ԳԱՒԱՌՔ	ՆՈՐ ՎԻՃԱԿՔ
Ա. ԲԱՍԵՆ	ՎԵՐ. ԲԱՍԵՆ, ՀԱՄԱՆԳԱԼԻ
Բ. ԳԱՌՆԻԵԱՆՔ	ԿԱՂԶՈՒԱՆ, ԿԶՈՒԱՆ
Գ. ԱՌՆԵՂԵԱՆՔ	ՍՏՈՐԻՆ ԲԱՍԵՆ
Դ. ՀԱԻՈՒՆԻՔ	ԱՐԵՒԵԼ. ՎԵՐԻՆ ԲԱՍԵՆ
Ե. ԱՐՇԱՐՈՒՆԻՔ	ԿԱՂԶՈՒԱՆ, ՇՈՐԼԿԻԼ
Զ. ԲԱԳԱՐԵՒԱՆԴ	ԱԼԱՇԿԵՐՏ
Է. ՆԱՂԱՍՈՏՆ	ՏԻԱՏԻՆ
Ը. ՇԻՐԱԿ	ՇՈՐԼԿԻԼ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Թ. ՎԱՆԱՆԴ	ԿԱՐՍ
Ժ. ԱՐԱԳԱԾՈՏՆ	ՍԱՐՏԱՐԱՊԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ
ԺԱ. ՁԱԳԱՁՈՐ	ՏՒՐՔԻՆՏՆ, ԿՈՂԲ
ԺԲ. ՄԱՍԵՑԱՑՈՏՆ	ՏԱՇՊՈՒՌՈՒՔ
ԺԳ. ԿՈՓՈՎԻՏ	ՊԱՅԶԱՏ
ԺԴ. ԱՇՈՑՔ	ԱՊԱՐԱՆ ?
ԺԵ. ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ	ՏՒՐԻ ՁԻՁԻԿ
ԺԶ. ՆԻԳ	ԱՊԱՐԱՆ
ԺԷ. ԿՈՏԱՅՔ	ԳԵՐԹՊՈՒԼԱՓ, ԵՐԵՒԱՆ
ԺԸ. ՄԱԶԱԶ ԵՒ ՈՍՏԱՆ	ԴԱՒՆԻՊԱԶԱՐ, ԴՈՒԻՆ
ԺԹ. ՈՒՐՈՒ ԵՒ ԱՐԱՆ	ՎԵՏԻՊԱԶԱՐ
Ի. ՇԱՐՈՒՐ	ՇԱՐՈՒՐ–ՏԱՐԱԼԱԳԵԶ

երկիրս։ Բուն Այրարատայ մէջին մասն և գաւառ Կոտայք գաւառ, որ վերջին դարուց մէջ և մինչև ցարդ՝ երևան բերդաքաղաքովը համարուեցաւ Այրարատայ բնակավայրը և նոր ոստան մը, յայնորդ չորս նախնի մայրաքաղաքաց (Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին), Թողլով երեսունդայ շինուածները, որ քիչ ժամանակ Թագաւորանիստ եղան։ Կոտայք գաւառի հիւսիսային կողմը Գուգարաց սահմանակից՝ ձեացան Նիգ և Ծաղկունիք կամ Վարաժնունիք գաւառները, և ասոնց արևմտեան հիւսիսային կողմը Աշոցք։ Ասոնք կը համարուին Այրարատ արքունական նահանգի սեփական գաւառներն կամ վիճակներն։ Իսկ Շիրակ՝ որ ի Հայկազանց հաստատուած և արքունի սեփականութիւն էր՝ Մեծին Տրդատայ ժամանակէն, օտար կամաբարկանաց տակին ժառանգութիւն տուեցաւ, ինչպէս նաև Երասխաձոր, որ այն տոհմի նահապետին անուամբ կոչուեցաւ Ապշարունիք։ Ասոնց նման արքունի սեփականութիւն և մասն Այրարատայ կը թուի լինել և Ձակատը, որ կը գտնուի գրեթէ նահանգին կեդրոնը, և առանձին գաւառ ըլլալու ժամանակն չի գիտցուիր։ Նոյնպէս և Կոգովիտ՝ Մասեաց հարաւային արևմտակողմը, սեփական էր երբեմն արքունեաց, և տուեցաւ ի ժառանգութիւն կրտսեր արքայորդւոց։ — Ասոնցմէ զատ կը յիշեն երկու Եփրատական գաւառներն՝ Ծարկոտն և Բագրեւանդ, որ յայտնապէս օտար են բուն Այրարատեան հին նահանգին, նոյնպէս և արևմտեան գաւառներն, Վանանդ՝ որ երբեմն Անփայտ Բասեան կոչուած է, և յետոյ վունդ բուլղարի մը անուամբ այսպէս։ Բասեանք՝ շատ ընդարձակ լինելուն համար երիսւքի բաժնուած, որուն հարաւակողմը՝ հաւանօրէն իւր հին մասերն՝ Աբեղեանք, Գաբեղեանք և Հաւնունիք, որոնք վաղարշակէն պարգև տուեցան, քանի մը ապաստ և պաշտօնէից և համարուեցան առանձին գաւառներ։ — Այրարատայ վրայ գրուած կան բազմաթիւ հին և նոր գրուածքներ, թէ՛ աշխարհագրական և թէ պատմական տեղեկութիւններով լի, բայց ամենէն աւելի ընդարձակն և նորն է Մեծ. Հ. Ղևոնդ Ալիշանի մեծահատոր և հմտալից տեղագրութիւնն, յորում բովանդակուած կը գտնենք ամենայն ազգային և օտար ազբիւրներ, հանգերձ մեծագիր աշխարհագրական քարտեսիւ. տպ. Վենետիկ — Մ. Ղազար 1890, էջ 590։

ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԼԵՐԻՆՔ. Տես ՄԱՍԻՍ։

ԱՅՐԻ կամ ԱՅՐՈՒ. — Լեռ Միւնեաց Ծրդուկ գաւառի. բարձր՝ 10160′։

ԱՅՐԻ–ՁԱՅՐ. — Գետ Միւնեաց Ծղուկ գաւառի. սկիզբն կ'առնու համանուն Այրի տաբէն, և անցնելով Շելար, Ալար, Ալշաթեան, Տոլորս և Ոյծ գիւղերէն՝ կը թափի Բարկուշատ գետոյն մէջ։ Գետայս զբխատուր օժանդակն է Միսխան։

ԱՅՐԻՃԻ. — Ա.յլազգաբնակ գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ. ունի պաշտուական օդ և ջուր, այս պատճառաւ Գաւալուեցի Հայք ամառը այստեղ կ'անցնեն, և բնիկ քաջ Մահուեցիներ ըլլալով, ամենևին երկիւղ չունին յայլազգեաց։ Գիւղիս մօտ կայ ագի ջրոյ ագբիւր մը, որ առողջարար դեղ է զանազան ցաւոց։ Ա.յրիճէ կը համապատի հին Աբգիճի գիւղն։

ԱՅՐԻ ՎԱՆՔ կամ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ. Գղ. AÏRI – VANK'H. — Հռչակաւոր և հրաշա-



65. Ա.յրի վանք կամ Գեղարդայ վանք։

կերտ հին վանք Ա.յրարատայ Մագազ գաւառի Գառնոյ ձորի մէջ։ Ինչպէս կը տեսնուի առաջիկայ պատկերին (թ. 65) մէջ, բոլոր մենաստանն՝ քառակուսի բրգանման պարիսպներով շրջապատուած է, որոյ հիւսիսային և արեւմտեան կողմերն հանդչած են բարձրաբերձ ապառաժներու վրայ, իսկ միւս կողմերն ունի ցած են։ Արեւելեան կողմը փոքր դուռ մը կը հանէ Գառնոյ գետը, որ քանի մը քայլ հեռուէն ահաւոր խոխոջանօք կը վազէ։ Ա.ւազ դուռը արեւմտակողմն է, ուսկից ներս մտնելով, յանկուման կ'երևի մեծ ժամատունն (թ. 66, 67) որբատաշ վիմօք, որ յարակից տաճարին՝ և հինգ փոքրագոյն եկեղեցիներու կամ մատրանց հետ միասին Եօթն եկեղեցիք կը կազմէ, ինչպէս երբեմն կը կոչուէր բոլոր մենաստանը։ Ընդ ամէնը քառասուն խորան կամ պատարագի սեղան կայ այս եկեղեցեաց մէջ, թէպէտ 1680ին մատենագիր մը 10 հատ ուելի կը գտնէ, «հովանաւորութեամբ Ծ (յիսուն) խորանացն»։ Ա.յրի վանք կը կոչուի լերան լանջին վրայ շինուած բլլալուն և քարայրներու


նման փորուած մատրանց համար։

Ինչպէս յատակագիծն (թ. 68) մէջ կը տեսնուի, վանացս շինուածոց մէջէն ընդարձակագոյնն է Ժամատուռն կամ առաջին եկեղեցին (Ա), որ հաւասար քառակուսի է, 8 մետրէն քիչ մ'ուելի երկայնութեամբ և լայնութեամբ. յատակէն կը բաձրանան չորս ոտուար սիւնք հատա պատուանդանօք և խոյակօք, որոց վրայ ձգուած են լայնաբաց կամարքն, որ կը բռնեն կիսաբոլոր և քառակուսի գմբէթն՝ մեծ խորշխորշ ձեղուամբ, որ պարզութեամբ հանդերձ՝ ունի իւր մեծ-

վայելչութիւնն և գրեթէ իւր տեսակին մէջ մէկ հատիկ է, և ունի միայն մէկ լուսամուտ, որոյ մօտ՝ տանիքի արեւելեան կողմը կը բարձրանայ փոքրիկ սիւնազարդ զանգակատուն մը։ Ցիւղուա այս ձեւը կը համարի իբր նախատիպ օրինակ արաբացի կամ մաւրիկ կամարներու և խորանաձեւ գոգոց։ Զորս մեծ կամարներէն զատ, ուրիշ ութ փոքրագոյն կամարներ կը կազմեն ձեղունը, նոյնպիսի խորշերով և ճարտար գրուագներով.

ճիճ եւ Աւագիճ եւ յառագնորդութեամբ Բարսղի միաբանութիւն եւ ազիատութեամբ եղբարցն չիճեցւոյ կաթուղիկոս մեծապատ, ՈԿԳ....։

Արժանաւոր չհնուած արժանապատիւ շինողաց, որք Բագրատունեաց հաւատար և նման Հայաստանեայց եկեղեցիքը զարդարեցին մեծագործութեամբ։ Նոյնպէս իրենց արժանաւոր են երկու խաչքանդակներն, մանաւանդ հիւսիսակողմանը՝ որոյ վրայ կայ «Թվ. Պ» (=1351). բայց հարաւակող-



66. Այրի վանից ժամատունը կամ Ա եկեղեցին։

իսկ սիւներու խոյակներն և կամարաց զարդերն բոլորովին նման և համաչափ չեն։ Ժամատունէն ի Կաթուղիկէն կամ յԲ Ցաձարը տանող գրան աջ և ձախ կողմը գտնուող երկու պատուանդանաւոր մեծամեծ խաչվիմից քանդակներն յոյժ գեղեցիկ են։ Ժամատան այս կողմն կամարին վրայ արձանագրուած է շինութեան յիշատակը, 1214 թուին, հետեւեալ կերպով. Ի ժամանակս բագաւորացոյն Ջաքարիայի եւ իւանէի որբին եղբարացն եւ որդւոց եղբին Շահանշա-

մանն ևս գրեթէ առաջնոյն կը հաւասարի, և վրան հնագոյն թուական մը ՈԿԲ (=1213) կը նշմարուի երեցագոյն քան զշինութիւն եկեղեցւոյն։ Մինչդարան կամ գաւթին արեւելակողման երկու անկեանց մէջ կան կրկնայարկ փոքրիկ մատուռնք. հարաւակողմանն վերին գրան վրայ կայ կիսեղծ արձանագրութիւն մը, որ թուի թէ 1278ին գրուած է։

Բուն եկեղեցին կամ այս տաճարս երկար քառակուսի է, որոյ միջավայրը կը բարձրա-


նայ անսիւն կամարակիկէն, անոի միայն լոյս ընդունելով. բեմն հինգ աստիճան աւելէն բարձր է. կիսաբոլոր խորան մ՚ունի, և երկու կողմերը երկայնաձեւ նեղ մատուռնք կամ կրկնայարկ աւանդատուներ, որոց վերնատանց վանդակ շէնքն կոփածոյ քարերով շինուած է՝ բաց ի միջնադռնէն։ Ցաճարիս խորանին ձէջ երբեմն կը պահուէր Գեղարդն Քրիստոսի՝ Հայոց սրբութեանց պարծանքը, որ այժմ Էջմիածին է, և այն պատճառաւ Այրի



67. Այրի վանից ժամատան աւազ դուռը։

գնեն բեմին վրայ կը բացուին։ Աբեւմտեան կողմի մատուռնք փոքր են քան զսուսա բայց նոյնպէս կրկնայարկ, և վերնայարկաց սիւնազարդ գնեն՝ նեղ սանդուղներով բացուած են որմից ձէջէն, և թուի թէ աւազոբերոյն աղօթատեղիք էին։ Բուվանդակ երբեմն Գեղարդայ վանք ևս կը կոչուի, ինչպէս նաև լեռը Գեղարդասար և ձորը Գեղարդաձոր (թ. 69)։ Յայտնի չէ թէ ե՞րբ բերուեցաւ աստ այս սրբազան զործիքը, միայն ձեռ զարուն կը յիշուի. իսկ վարդան աշխարհակիրը ԺԴ դարուն կը հա-

մաբի և այսպէս կըսէ. «Ակրի վանքին, ուր կայ սուրբ Գեղարդն ասաուածամուխ ներկեալ արեամբ Կենարարին, և Ցախտակն սուրբ տապանակին Նոյայ. և նա է տուն կանաւ վրայի արձանագրութիւնն, ու կ'ըսուի, թէ սա արժանաւոր հետեւող էր Զաքարեանց՝ քաջութեամբ և շինութեամբ. Պըռօշ ընծայից սուրբ գէնքը այս արքարանին



68. Ընդհանուր յատակագիծ Ակրի վանից։

հաւատոյ Հայաստանեայցս, հաստատեալ ի Ս. Լուսաւորչէն»։ Բայց արծաթէ երկփեղկ Գեղարդայ պահարանը՝ որ ցարդ ի վիտակն կը պահուի յԷջմիածին, յիշատակ է Պռօշ իշխանին, ինչպէս կը յայտնէ 1268 թուա-

յորում և պատրաստեց իւր հանգստարանը, գրելով միանգամայն տաճարիս խորանի հիւսիսակողման կամարի վրայ իւր նուիրած Ողջաբերդ և Բերդաղ գիւղերն և այլ գանազան ընծաներ և 10000 սպիտակ (դրամ)։

Տաճարիս մէջ կան նաև ուրիշ նուիրատուաց և նորոգողաց կիսեղծ և անեղծ արձանագրու-թիւններ։

Ժամատունը և տաճարը ճարտարապետա-կան արհեստով շինուած են, միայն հիւսի-սային սրմը կը կազմէ յդկուած միապա-դաղ քարաժայռ մը, յորում փորուած են եկեղեցիները։ Ժամատան և տաճարի մէջ կան պռներ, յորոց կ'երթցուի միւս եկեղե-ցիները։

պատներ՝ խանդարուած և եղծուած արձա-նագրութեամբք, և կը համարուին Պռոշի զարմին հանգստարանները, որոյ գաստա-կերտն է այս սրբարանը, ինչպէս արձանա-գրուած է հարաւային սրմի վրայ։ Դարձեալ Պռոշի նշանն կը թուի այն մեծ քանդակը (Թ. 71), որ կը գտնուի այս հանգստարա-նաց երկու կամարաց վրայ. քոշի կամ նա-խագի գլուխ մը կայ մէջտեղ, բևեռին մէջ ունի մանեակ մը, ուստի կը մեկնին երկու




69. Գեղարդաձոր և Այրի վանք

Գ եկեղեցեակն կամ մատուռն (Թ. 70) փոքրիկ քառակուսի է, և ձեղուան վրայ եր-կայն բոլորակ գմբէթ մ'ունի, որ իբրև լու-սամուտ կը ծառայէ. գետնէն բարձր է 28 ոտնաչափ, և զարդարուած է գանազան զբ-բուաղներով։ Ամէն մասունքը՝ բեմը, խորանը և սեղանը փորուած և կոփուած են միակը-տուր քարէ. հիւսիսային կողմը տասուար սիւ-ներով երկու կամարակապ խորշեր շինուած են, յորում կը գտնուին գերեզմանաց տա-

շղթաներ՝ կապելով երկու կողմերը մէկ մէկ առիւծ և մէջտեղը կէս թեւատարած արծիւ մը՝ որ մագլօքն գառ մը բռներ է և վրան կը նայի։ Ժամատանս հիւսիսային կողմը սեւագոյն և անհամ ջրոյ ազբիւր մը կը բղխէ վիմայ միջէն, որ յատակին տակէն անցնելով գետը կը թափի։ Գ եկեղեցին գրեթէ ձեւով և եր-կայնութեամբ հաւասար և նման է Բ եկե-ղեցւոյն, միայն անկէ քիչ մը նեղ է և ա-ւելի խաչաձև. անոր նման պրուազազարդ

լուսամուտ կամուրիկ մը ևս ունի։ Եկեղեցւոյս արեւմտեան թեւը միւսներէն աւելի զառուած կ'երեւի, անոր համար ամենը երկու եկեղեցի կը համարին։ Կ'ըսուի թէ երբեմն ասոր մէջ կը պահուէր Նոյեան տապանի մասն՝ որ այժմ Էջմիածին է։ Յատակաձեւին նայելով ե եկեղեցին մեծ ժամատան արեւմտահիւսիսային կողմը կը գտնուի, քառակուսի, փոքր և գմբեթաւոր՝ յորում է լուսամուտն. ասոր մէջ ևս ապրիւր մը կայ, որ Տիւպուայի քննութեան ժամանակ սառած ըլլալով, հազիւ կրցաւ սղոսկելով ներս մտնել և ուրիշ բան մը չի յիշեր, ինչպէս նաև այլք։ Անոր համար չի գիտցուիր թէ ասոր մէջ արդեօք արձանագրութիւն կա՞յ. չգտուեցաւ նաև Գ եկեղեցւոյն մէջ, ուստի և մեր մատենագիրները միւսներէն աւելի հին կը կարծեն զայն. անդ պահուած է, կ'ըսէ օտարազգին՝ Վարպետայ յիշած Նոյեան տապանի մասը։ Այս երեք (Գ. Դ. Ե.) եկեղեցիներէն վեր կը գտնուի վիմափոր միւս մեծ եկեղեցին (Է), որ արտաքին քարաժայռի միջէն ևս յատուկ ճանապարհ մ'ունի, որ կը հանէ նախ նեղ և երկայն գաւիթի (Զ) մը և անտի մեծ գռնով եկեղեցւոյն մէջ։ Այս եկեղեցին կամ լաւ ևս մատուռը Ս. Սարգիս (թ. 72) կը կոչուի, և հաւատարակուղ քառակուսի է, Բ մեծ տաճարին նման, չորս սուտար սիւներու վրայ բարձրացած է կամուրիկն՝ բոլորշի պատուհանով. չորս կողմը կան երկերկու որմասիւնք, որոց վրայ ձգուած են կամարք. յատակը հարթ է և չունի ոչ բեմ և ոչ սեղան։ Շինողն՝ 1288ին, Պաշշի որդին Պապաք՝ հիւսիս — արեւելեան սեան վերնախարսխին վրայ փորագրուած արձանագրութեան մէջ, ժամատուն կը կոչէ այս մատուռս։ Հարաւ—արեւելեան սեան վրայ ևս կայ սանտուսր արձանագրութիւն մը, անհետական և ոչ հին։ Այս ժամատանս վերնայարկին վրայ կան նաև մանր փորածոյ խցկունք, ումանք առանձին և ումանք մէջ ընդ մէջ անցքերով, յորս կան նաև պատարագի սեղաններ։

Բաց ի վերոյիշեալոց Այրի վանից պարսպի մէջ և դուրսը կան ուրիշ բազմաթիւ վիմափոր մատուռնք և այրեր (թ. 73), պատարագի սեղաններով. ումանց վրայ կան արձանագրութիւններ։ Այս այրերէն ոմանք բնական կը թուին, ոմանք ձեռագործք, և են արդիւնք երկարատև համբերութեան և աշխատութեան։ Սոքա երբեմն եղան ապօթից և վանդակաւոր ապաստանարանք, անոր համար խուզարկելով կարելի է արձանագրուած շատ յիշատակներ գտնել։ Ասոր վկայ է ականատես քննիչն Տիւպուա, որ տեսեր է բազմաթիւ երկար արձանագրութիւններ, և կ'ըսէ թէ վանքին ներսի և դրսի արձանագրութիւններով՝ կարելի է գիրք մը յօրինել։ Իսկ քարի տեսակին նկատմամբ՝ յորում փորուած են մատուռներ և եկեղեցիք, կը համարի որ կարծրակուռ պորփիւրի խառնուած մը ըլլայ, գորշագոյն և սպիտակագոյն՝ մեծ մեծ բծերով. հողի զանգուածներու մէջ կը գտնուին անկիւնասեր ժայռերու կտորներ, շատը պորփիւրէ։ Վանքն կամ միանձանց բնակարանք եկեղեցեաց շինուածոց նման, բոլոր քարաշէն են, պարսպի հարաւային և արեւելեան կողմերը։




70. Գ Մատուռն Այրի վանից։

Ոչ պատմիչք և ոչ ցարդ ծանօթ արձանագրութիւնք մեզ չեն յայտներ ատուգիւ, թէ ե՛րբ հիմնուեր է մենաստանս. միայն կը

հաւատաւն՝ թէ Զաքարեանց և Պռոշեանց հօրը եկեղեցիները շինելէն առաջ, որ է նախ քան ՌԴ տարի, կային անդ կրօնաւորներ և Ս. Աստուածածին եկեղեցին՝ յորում կը կարդանք հնագոյն թուական մը 1177 տարւոյ, և քան զայն աւելի հնագոյն խաչքարերու վրայ՝ 1165։ Արդեօք ձմեռնային ապառաժ վայրերուս մէջ բնակութիւն հաստատեց. ձմեռնային վիմաց ծերպերուն մէջ շինեց Աստուծոյ տաճարները, ուր հազիւ սրբազնները ապրուստի կարող էին մնալ. ձմեռնային ամանք կամ քահանաներէն այստեղ ձգուած կամ՝ վախճանած ըլլալով, ինքն ալ իր և ժամանակի սովորութեան համեմատ խաչ մը անկեր է հոս և այսպէս սկսեր է միանձնաց բնակարան դառնալ։

Արդիս քրիստոնէութեան առաջին դարերէն այս տեղս կոչուեցաւ Այրից վանք, ինչպէս յայտնի է վարդանայ աշխարհագրի խօսքերէն. և յոմանց համարուեցաւ մայր Հայոց վանքերու։ Կ՚ատենդուի Մեծին Ներսէսի հոս գալը. բայց աւելի սադյգ է նորա արգելոյն



71. Քանդակ Այրի վանից Գ մատրան մէջ։


արդեօք քրիստոնէական փառաբանութեան արձանդրներով ընդհատեց ծածուկ անձնուիրեալ մշանջենաւոր լռութիւնը։ Պէտք է հաւատալ աւանդութեան և վարդանայ աշխարհագրին խօսքերուն, թէ Լուսաւորիչ հաստատեր է ատա Աստուծոյ տաճարը. և ատ՝ կամ հեթանոսական պաշտամանց տեղ մի էր, և ինքն փոխեց ճշմարիտ Աստուծոյ տաճար, և կամ որ աւելի հաւանական է, երբ ինքն Ս. Հոիփսիմեանց ցրուած ընկերները կը փրնտռէր, և տեղւոյս մօտերը գտնելով անոնց հետերը Աղջոց վանքի մէջ, և թերեւս ա-

Մեծին Սահակայ գալուստը, ինչպէս կը յայտնուի Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի հետեւեալ տողերէն (419), որ Յուսեփայ և անոր տեղակալ Ներսէս հինհարութեանց ժամանակ (923 թուին) ապաստանած էր ատա, և «ապա եկեալ ի վանացս անտի Այրեցաց, ի կացորդից սրբոյն Սահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ՝ ի ձորակի միջ, զէպ ուղիղ գնացաք և եկաք ի վերին վանս, ուր կայանք անասնոցն էին»։ Նոյն պատմիչն կը յայտնէ թէ վանացս մէջ կը գտնուէին բնական կամ ձեռագործ ամրոցներ,

իբրև ապաստանարանք մարդկանց և ընչից։ Նոր քաղ մարդիկներէ գրգռուելով և խմա- նալով որ հոս կը գտնուին շատ գանձեր, կարասիք և թանկագին եկեղեցական զար- դեր, խոկայն հեծեծմներու բազմութիւն մը և դիմուած լեգէոններ գրկեց, որք յանկար- ծակի մանելով վանքի մէջ բռնեցին կրօնա-ւորները, և շատ ծեծելէ և չարչարելէ վերջ, պահած ինչքերը ոսկան պահանջել։ Կրօնա- ւորներէն ոմանք, սաստիկ գանակոծութենէն, թէպէտ ոչ առժամայն, սակայն քիչ վերջը մեռան։ Ապրուհետև հուզիսհար գալով նը- ման յափշտակեցին գրքերը, եկեղեցւոյ զար-

զիշտանը, եկաւ առանձնացաւ այստեղ և լսիկ մնջիկ միշտ աղօթքի կը պարապէր, ուսկից յետոյ ոզջամիտ նախարարները իր աթոռը դարձուցին։ Այս վանքս ճրը եղաւ բնակարան Ս. Սահակայ, նախնիք յիշա- տակած չեն. թերևս այն ժամանակ՝ երբ վաթսուն խարազնագլուխ աշակերտներ ժո- ղովելով, հոգևորական սուրբ կրթութեան կը գրաղէր։

Թէպէտ այժմ այն հնագոյն ժամանակաց շինուածները չեն տեսնուիր, և ոչ պատմա- բան կաթողիկոսին յիշատակներէն մինչև ԺԲ դարս կէսը, բայց տեղւոյն ամրութիւնը,



72. Այրի վանից Ի մատուռն Ս. Սարգիս։

պերը, կենդանիները ու մեղուաց փեթակները, «և գղեկեցիկ շինուածս չքնաղագիղս որ ի կուսաստանի անդ՝ հրակիզեալ հրկիզեալ, չոգան ի բաց». Ցոհ. կար. ԿԶ։

Այս խօսքերէն ընթերցողն ինքնին կը դուշակէ, թէ այն ժամանակ Այրի վանից մէջ կը գտնուէին զարմանալի և գեղեցիկ շէնքեր. և պէտք էր շուրջն ալ գտնուէին ոչ միայն աբօտաստեղիք, այլ և մարգեր և պար- տէզներ մեղուաց խումբերուն համար։ Պատ- մութեան գրեթէ զար մը յառաջ (839), նորա անուանակից և վիճակակից՝ Յովհան- նէս Ե Ողայեցին, ոմանց քաջութեամբ նա- խատուելով Բագարատ իշխանէն և նովին

հին սրտերու և մատուռներու գոյն հետքեր կը հատատեն թէ ի հնուց այս տեղ բնակու- թիւն եղած է։ ԺԲ դարս կիսէն վերջը յայտ- նուած է և ուշի պայծառացած ԺԳ դարս մէջ, վերոյիշեալ եկեղեցւոց շինութեամբ, որոց արձանագրութիւնք ամբողջ զար մը ժամանակի անոր յիշատակները կ՝ատենեն և կը յիշեն նաև առաջնորդներէն գոմանս։ ԺԳ դարս կիսուն ուրիշ գլխաւոր վանորէից առաջնորդաց հետ կը յիշուի նաև ասորը, որ սատրագրած է Կոստանդին կաթողիկոսի կոնդակին. նոյն առեներդը վանացս մէջ ա- ռանձնացած կը ճգնէր Հաչականուն Յովհան- նես Գառնեցի վարդապետը։

Կ՚ուզեմ թէ ԺԹ դարու վերջերը այս վանքս հասեր է աշխարհաւեր Լանկթիմուրը կամ իրեն զօրքերը, և աւերեր ու կոտոպաեր են շատ գանձեր. Մօրիէ անգլիացին կը յիշատակէ ասոր նկատմամբ նաև երկար արձանագրութիւն մը, փորագրուած մեծ և կնգեցւոյն սեղանին ճակատը։ Բերանացի աւանդութիւն մ՚ալ կ՚ըսէ, թէ Լանկթիմուրի եկած ժամանակ՝ Աստուծոյ հրեշտակը ե-

ժամանակները Աչքարաւոյ վանորէից նորոգող Սիմեոն րաբռաբապետն († 1428) կըրկին անգամ նկեր բնակեր է հոս և բոլոր կարգերը ու կանոնները ուղղեր և աստուածային պաշտամունք անխափան կատարելու ուխտ ընել տուեր է։

ԺԶ դարու մէջ վանացս վրայ ծանօթ շատ յիշատակութիւններ չկան, իսկ ԺԷ մէջ՝ ոչ սակաւ. և նախ 1605ին պատահած



73. Քարափոր մատրունք Գեղարդասարի։

բեւեր և արգիլեր է աւերածը, և բռնաւորը զարհուրած եղեր գացեր է. և անոր համար վանքն յայլազգեաց Կեօր–կէչ (տե՛ս և անցիր) կոչուեր է։ Հնգետասաներորդ դարու մէջ աւելի յառաջ կը յիշուի մենաստանս զոր յիշատակարանաց մէջ՝ Յատուկ Մանուէլի անապատ ևս կոչուած է այս սրբատաշներէն մին, բայց այդ Մանուէլ անուն անձի վրայ տեղեկութիւնը կը պակսին։ Նոյն


հետեւեալ ազետալի դէպքը։ Երբ Շահաբաս հրաման հանեց Հայերուն Պարսկաստան գաղթելու, վանացս առաջնորդ Աստուածատուր եպիսկոպոսը և Հաւուց Թառայ վանից Մանուէլ եպիսկոպոսն, կարեւոր պետերէ՝ կրակրոյ և ըմպելեաց պատրաստութիւն տեսնելէ վերջ, իրենց ազգակից և մերձաւոր անձանց հետ կ՚ամրանան Գեղարդաձորի բազմաթիւ այրերուն մէջ։ Ամիրգուն խանը ի-

մանալով այս բանս զօրքերով կու գայ և խուզարկութիւններ ընելով կը գտնէ. Մա-նուէլ եպիսկոպոսն կը գլխատուի և միւս ան-ձանց շատերն ևս կ'սպանուին: Այս դէպքս մանրամասն կը յիշէ Ստեփ. (47–48). իսկ վերոյիշեալ Աստուածատուր եպիսկոպոսը պատուած կը թուի այդ կոտորածէն, վասն զի 1640ին ստորագրած է Մելքիսեդ կաթո-ղիկոսի կոնդակին:

Երուսաղէմի առաջին ուղեւորն Թաւեռնիէ գաղղիացին, զրեթէ 1655 թուականին եկաւ այս կողմերս, և կը յիշէ ոչ միայն վանքն և եկեղեցին հանդերձ իւր առատաւոր սիւներովը, և Գեղարդ և Կեօր–կէչ անուանքը, այլ նաև սուրբ տիզին պատկերը՝ զոր անդ զծագրեց, ինչպէս մեկուկէս դար վերջն ալ՝ Մորիէ անդ-ղիացին յիշ֊ի֊ածին (թ. 74):

Երեւանու մեծ երկրաշարժին առեն, յո-րում զրեթէ զաւառն բոլոր նշանաւոր շէն-քերը կործանեցան, Զաքարիա և ուրիշ ժա-մանակակից յիշատակագիրք կ'ըսեն, թէ Գե-ղարդայ վանքն ևս կործանեցաւ. որոց մին ակնարկելս՝ այսպէս կը գրէ (1684ին). «Ա֊յրի վանից ձորակին մէջ աւելի եկաւ աւերած և կործանումն, վասն զի բոլանդակ շէնքն կանգնած է խոր ձորին մէջ և շըր-ջապատած է ահագին քարերէ. ուստի եր-կրաշարժին առեն այդ սոսկալի քարերը չորս կողմանէ Թաւալեցան վանքին վրայ, և զը-րեթէ ուրիշ բան չէր նկատուեր անդ՝ բայց միայն քարանց կոյտեր, որք տեսողաց վրայ սոսկումն և սարսուռ կը բերէին. նոյն իսկ բոլոր ճանապարհները խափանուած էին, ուս-ոի թէ որ հարկ լինէր ոչխարհիկ կերակուր առնել նոցա՝ ուսոց և թիկանց վրայ առած կ'երթային»: Վանացս առաջնորդը՝ երկրա-շարժին առեն Երեւանու Աստապատ եկեղե-ցւոյն մէջ լինելով՝ անոր փլատակին տակ մեռաւ: Իւր յաջորդն և եղբօրորդին Դաւիթ՝ յետ երեք կամ չորս տարիներու սկսաւ շի-նութեանց եռեւ ըլլալ, և բան վերոյիշեալ գրչին, «աներկիւղ և անկասկած մնաւ շի-նութեանց մէջ, իբրև քաջ պատերազմող թա-գաւոր մը՝ որ ամենեւին չի վախնար պա-տերազմէ և ինքնին կը վարէ պատերազմի խումբերը. այսպէս անվհատաբար մնաւ փլած և խարխլած տան մէջ նորոգելու համար, կանգնեց բարձրաբերձ պարիսպներ տաշտած քարերով, հաստատուն և ամրապինդ, նոյն-պէս նաև բոլորակաձև շէնքեր, թանապայք, քհօշք, ապարանք, սենեակք, խոհանոցք և ուրիշ շահեմարաններ, տաշտած քարով և կր-բով, զոր տեսողքն կը հիանային: Շինեց նաև արծաթէ տուփ (դռբի) աստուածամուխ Գե-ղարդին պահարան, և զարդարեց պատուա-կան և թանկագին ակունքներով և ոսկիէզ-բեց. շատ ծախք գնաց, մինչև քան և հինգ թումանէն աւելի և ոչ պակաս: Ուրիշ այլ և այլ շէնքեր ևս շինեց, զոր չեմ գրած. վասն զի այս երկրորդ նորոգութիւնս աւելի եղաւ քան զառաջինն»:

Եօթնեւտասներորդ գարուն վերջերը (յա-մի 1694 յունիս 2), Ճեմելլի խուալացի ու-ղեւորն Երեւանէն հոս եկաւ՝ ութ ժամ ձիա-վարելով, և առանց մանրամասն տեղեկութիւ-




74. Ս. Գեղարդն ըստ Մորիէի:

ներ կը յիշէ գայն Kiekart կոչելով, և ըստ Թաւեռնիէի Ս. Գեղարդան հոս բերողն ըզ-Մատթէոս առաքեալն կը համարի փոխանակ Թադէի: Ութեւտասներորդ գարուն Աբրահամ կաթողիկոսն դեռ գահը չբարձրացած, ըստ իւր պրովեանն, եկաւ ի վանս և մնաց երկու գիշեր. կը յիշէ նաև (Գլ. ԺԶ), Նահաբ շահի և անոր զօրաց Ս. Գեղարդայ և Գօրադա-բայի կողմերու լերանց գագաթը ելնելը, և երկու ամիս վերջ լեռնէն իջնելը: Այդ գա-րուս կէսէն ալ յառաջ՝ շէն էր Ա֊յրի վանքն, և նոյն միջոցի Սիմէոն կաթողիկոսն (Զամբ, 272–275) Երեւանու մէջ ունեցած վիճակ-ները և գիւղերը կը նշանակէ, Նորագաւիթ, Նորք, Եկնիձէ, Տաճարափակ, Բարձափի, Պորտիկ. և կալուածները՝ Պորտիկ գիւղն, Ագարակ և Վերի Աշղալներ, ուսկից տասա-նորդ կ'առնուր, նոյնպէս Գողթն գիւղի բեր-

քերան կէսը, գարձեալ ուրիշ շատ այլեւ այլ մանր, չրագացներ, ձիթահանններ, երկիրներ, և այլն, այլ և այլ վիպորդից մէջ, որոց մեծ մասը առացած էր տեղւոյն առաջնորդն Պետրոս վարդապետ Ճահկեցի։ Քիչ վերջը ամայացաւ շրջակ և մեծափառ վանատունս, ինչպէս կ'երեւի՝ երբ Պարսից պետութիւնը Լեհաց ասպատակէն յուզեալ շփոթեցաւ. Մարիէ անգղիացին ևս լսած է որ վանատունը ամայանալէն այսպէս եղած է, 40 կամ 50 տարի առաջ քան իւր այցելութիւնը (1813), և տակաւին բաւական շէն է կ'ըսէ իւր հաստատուն և ամուր շինուածեան պատճառաւ և սակաւ ծախքով կարելի է կատարելութեան հասցնել. բայց շինուածքին ոճն անհարթ և անարուեստ թուեցաւ իրեն։

Վերոյիշեալ Մարիէ անգղիացւոյն հայրենակիցը Քէր–Փորթըր՝ որ քիչ տարի վերջ եկաւ աստ քննելու (1819), վանացս համար կ'ըսէ. «..շատ նորանշան և մեծակառոյց շինուածք մի է սա, կանգնած բուն լերան սրտին մէջ. սրբազան տաճարն կը բարձրանայ աւերակաց և վերեզմանաց մէջ, ամէն կողմանէ անպատապար և խորին միայնութեան մէջ, որ յիրաւի խորին և վսեմական ազդեցութիւն կը տպաւորէ մարդուս սրտին մէջ։ . . . Հին նահատակներու բազմաց մարմիններն լծած են ատա, որոց անուանք կենաց գրքին մէջ գրուած են. արդի Ջերմեռանդն երկրպագուք կը համարին, թէ նոյն ինքն Ս. Գրիգոր (Հայոց մեծ պահապան հրեշտակը) հաստատած է». և այլն։ Ker–Porter II, 630. Նոյնը կ'ըսէ, թէ մեծ եկեղեցւոյն կամարաց և սիւներու ձեւն և պրուպտները ճշդիւ սաքսոնական ճարտարապետութեան ոճոյն կը նմանին։

Ուրիշ անգղիացի մը ևս (Մոնթիթհ զօրավար), որ ասոնցմէ առաջ և յետոյ Հայոց ու Պարսից սահմանները քննեց, յիշեալ փորագոյ եկեղեցիներն կ'ըսէ. «Թէպէտ Հնդկաստանի նոյն տեսակ գործոց մեծագործեան համեմատ նշանակութիւն չունին ասանք, սակայն սիւներու եկիպտական ձեւն շատ նշանաւոր են»։ Այս երեք անգղիացիներէն վերջ 1834ին քննութեան եկաւ այս տեղացս Տիպուա հնչուտիացին, և իբրեւ դժգոհեց վանքին և եկեղեցիներուն արտաքին երեւոյթէն և յատակաձեւն, և մա-



75. Աւերակ Աղիտու գիւղն մէջ (էջ 101)։

մաւոր տերքին տեսիլն և մասամբ ինչ քանդակաց։ Նոյն տարին Յովհաննէս Բ. Թողիկոսն վանքս յանձնեց Յովհաննէս առնուն Նախիջեւանցի վարդապետի մը, որ սկսաւ շինուածեան և նորոգութեան եռանդ ընդել. բայց վեռ չտարաւած վրայ հասաւ Այրարատայ մեծ երկրաշարժը (2 յուլիս 1840) և շատ մեծ գործեց (բ) մեծ ապարին և բնակարանաց։ Քիչ ժամանակ վերջը Սեւանայ վանքէն Մարտիրոս վարդապետ

պատգիի առաջնորդութեամբ եկան մի քանի կրօնաւորք և վերատին սկսան շինել, և այսպէս վանացս մէջ բնակութիւն վերահաստատեցաւ։ Վերջին շինութեան առեն խնամքով վառատակեցաւ վանահայր Մրքտիչ Վ. Ջանիկեանց, և հարաւային գրան վրայ հին արձանագրութեան տակ աւելցուց իր արձանագրութիւնն 1855 թուականաւ, յորում կը յիշէ թէ երբորդ անգամ նորոգեցաւ ժեռատանս։ Այլ այս ամբողջ նկարագրէն կը յայտնուի, որ Աղբի վանքն Հայոց հնագոյն վանքերէն մին է, և թէ ի սկզբանէ բնակարան եղած է միաբանակեցաց և ճգնաւորաց, թէպէտև Ս. Սահակէն սկսեալ մինչև թուղ գարու կէսը յիշատակութիւն մը չունք գաներ, նոյնպէս նաև յետոյ մի քանի դարուց մէջ։ Տեղւոյս ծանօթ վանահայրերէն ոմանք եպիսկոպոս են և ոմանք վարդապետ։ Այս վանքէս էր ԺԴ դարու վերջերը և ԺԵ սկիզբները ապրող վարդապետ և մատենադիր ոմն Մխիթար՝ որ կը կոչուի Աղբի վանեցի, և որուն նշանաւոր գործն է Ժամանակագրութիւն մը աշխարհիս սկիզբէն մինչև Հայոց ՉՀԷ (=1328) թուականը։ Այժմ վանացս մէջ միաբանութիւն չկայ, միայն Էջմիածնէն նշանակուած վանահայր մ'ունի։ Սակայն մեր միւս վանքերու համեմատութեամբ աւելի շէն և բարեկարգ է, մուտքի սակաւ միճակն ևս խիստ լաւ է, ունի եղներ, կովեր, ձիեր, աշխարհներու հօտեր, ինչպէս նաև զանազան տեսակաց մէջ, կալուածներ, այգիներ և անոնք։ Ուխտաւորք տարուան մէջ շատ անգամ կ'այցելեն վանքս, և զլխաւորաբար վարդավառին և Աստուածածնի վերափոխման տօներուն. այդ օրերը կը կատարին միանգամայն ազգային ժողովրդական հանդէսներ։ — Աղբարատ, 336—351։ Տիշպռեա, Գ. 382։ Աղբարատ տեսագիր, 187, Գ. 10, 92։ Արաքս, 1892 Բ. 31—39։ Եւ այլն։ Տես ՀԱՅՐՈՒՎԱՆՔ։


ԱՅՐՈՒՄ. — Երբեմն Ուտի նահանգի նոր գաւառներէն մին էր, իսկ այժմն այս անուամբ գանագան հատարակութիւններ կան Գանձակու նահանգի մէջ։

ԱՅՐՔ. — Հին գիւղ Սիւնեաց Սողք գաւառի մէջ։

ԱՆԱԳՈՆ. Տես ԲԱՂՔ։

ԱՆԱԶԱՐԲԱ. Տես ԱՆԱՐԶԱԲԱ։

ԱՆԱՆԻԻ. — Վարդան (117) կը յիշէ այս անուամբ գիւղ մը, երբ Մեղրիկ կոչուած Գէորգ վարդապետի համար կը գրէ. «Էր ի



76. Անանուռի բերդը։

վասպուրական գաւառ (նահանգէ) ի յԱխալիւր կոչեցեալ գեղջէ»։

ԱՆԱՀՏԱՅ, ԱՐՏԵՄԻԴԱՅ ՄԵՀԵԱՆ և ԱՐՋԱՆՔ. Տես ԵՐԻՋԱ, ԱՇՏԻՇԱՏ, ԱՐՏԱՇԱՏ։

ԱՆԱՀՏԱԶՈՐ. Տես ԲԱՂՁ։

ԱՆԱՀՏԱՑ ԱԹՈՌ. — *Բուզանդ* (*Ե. Խե.*) կը յիշէ անունս, *Եպիփանու անապատաւորին վրայ գրած ժամանակ. «Նսաւէր սա ի Կիլիկիոյ, և այժմ գաւառակ Ամանայի վիճակի։ Ունի 96 գիւղ և մօտ 17000 բնակիչ, որոց մեծագոյն մասը վրանաբնակ են և ամառը կը քաշուին լեռները, իսկ ձմեռը*




77. Ապառաժներ Ամանուսի ափունքը։

մեծի լերինն ի տեղիսն՝ զոր կոչեն Ամանոս Ամանտայ»։

ԱՆԱՄՈՒՒ կամ ԱՆԵՄՈՒՒ. Գղ. ANAMOUR. Յն. Ἀνεμούριον. — *Հռչակաւոր հրուանդան և մեծ ու շէն քաղաք ի հնումն Ծովային Ծովեզերեայ Խրնիճնեաց. գաւառակիս կը պրոնատեղին է Ջօրագ։*

Հին Անամուռ քաղաքը Կիլիկիոյ արեւմտեան մասի նաւահանգիստներէն է և Կիպրոս կզգոյ խիստ մօտ։ Նաւահանգիստս հովերու

դէմ պատապարտած չըլլալով, բաց ի արեւմտեան հարաւէն, ուր կ'երկննայ հրաւանդանը, վաճառականութիւնը քանուկ չէ, և նաւագնացութիւնը անկանոն են։ Առեւտրական գլխաւոր արտադրութիւնքն են կնձիթ, արմտիք ամառ, և մեծաքանակ շինուածեան փայտ։ Մաքսատան հասոյթը տարին կը հասնի հազիւ 150-200000 դահեկանի։ Այս նաւահանգիստը 1889ին մտաբէն մինչեւ 1890ի փետրուարը, մտած և ելած են միհամուռ 355 նաւ, յորոց 55ը շոգենաւ. մեծաւ մասամբ անգղիական, ծագեալը յունական և օսմանեան։ Նաւահանգիստս ժողովրդեան կեդրոնատեղի չէ, ունի միայն չորս հինգ պաշտօնական շէնքեր. իսկ քաղաքը կը գտնուի աւերակ վիճակի մէջ, որուն Թուրքք Էսկի–Ամասիա կը կոչեն։ Նշանաւոր աւերակներն են, ջրմուղ մը, պարսպի մասեր, ջրամբարներ, երկու թատրոն և ընդարձակ դերեզմանատուն մը, ուր կան բազմաթիւ նոյնաչափ գամբաններ գանազան ձեւերով՝ որք արձանագրութիւն չունին։



78. Ամասիոյ հրապարակը։

Հռչակաւոր Ամասիոյ հրապարակին (թ. 78) վէպ ի ծոյլ երկնցած ծայրն՝ բոլորաձեւ բարձր պատկ մի է, մէկ կողմէն անմատչելի, իսկ միւս կողման վրայ խրոխտ կերպով բարձրացած է հինաւուրց բերդն՝ (թ. 76) շրջապատուած պարիսպներով և աշտարակազարդ որ մեծաւ մասամբ կանգուն է, և այժմ կը կոչուի Մահտրիէ։ Դղեկիս ընդարձակութիւնն է 1 քառակուսի հազարամեակէն աւելի. պարիսպները ամուր են և հաստ աշտարակներով ամրացած։ Ներքին կողմէն պարիսպն ունի ատրճղկրեայ անցքեր. իսկ արտաքին կողմէն ատրոտը կայ լայն խրամ մը, որը՝ հանդիսականօրէն պատերազմի ժամանակ կը լեցնէին մօտակայ գետէ ջրով։ Այս խրամը կը պատէ բերդիս երեք կողմերը, իսկ չորրորդ կողմը ծովափնեայ է. ուստի միայն քաղաքէն կամրջով մը կը մտցուի բերդը հոյակապ գռնէ մը. ուրիշ երկու գռներ եւս կան՝ բայց շարժական կամրջօք հնարաւոր է մնալ՝ որոց մնացորդք այժմ կ'երեւին։ Բերդիս ներքին կողմը բաժնուած է՝ ատուաւ պարսպով մը և աշտարակներով, երկու մասանց։ Այս մասերէն մին, հարաւային անկիւնը վէպ ի ծովակողմը, ունի ներքին մարտկոց կամ միջնարերդ մը ձեւացած պարսպէ շրջապատով մը և երեք հաստ աշտարակներով՝ յորոց մին մասամբ մը խորտակուեր է։ Բերդիս իւրաքանչիւր մասերն ունին ընդարձակ ջրամբարներ, յորս ջուր կը բերէին ապուրանեներով միջնադարեայ գեղէն։

Ոմանք կարծեցին թէ այս բերդս կառուցուած է Մեծին Աղեքսանդրի ձեռքով։ Ցի

մինարէ, և պահակագօր ևս դրաւ, բայց քիչ ժամանակէն թողուց։ Գրեթէ 40 տարի վերջը Զօրագլխանութիւնը ուզեց վերստին օգտակար ընել այս բերդը, և այս նպատակին

և ուրիշ վայրի կենդանեաց բնակարան դարձած է։

Բերդէս 20 մետր հեռու ցլխաւոր գրան գլխաց կայ հին բաղնիք մը, որուն պատերը



79. Ամասիա։

համար քանի մը նորոգութիւններ ևս ըրին. բայց տարի մը վերջը աշտարակներէն միոյն խորտակուելովը, բոլորովին անոյշ և անբնակ վիճակի մէջ թողուեցաւ, և այժմ կինճերու

դեռ կանգուն են։ Այս բաղանեաց հնութեան վրայ տարակոյս չկայ, վասն զի ամենեւին նմանութիւն չունի այժմեան Թրքական բաղանեաց։ Բոլոր սալայատակը քակած հա-

նած են, բայց քանի մը մեսրոպեաններէն կա-
րելի է ստուգել, թէ աւազի տակ թաղուած
կան ընտիր մոզայիկներ։ — Մխսուռաև, 321
—322։ Քիւնէ, Բ. 84—86։

ԱՆԱՆԱՎԱՆՔ կամ ԱՆՆԱՎԱՆՔ. — Փոքր
գիւղ վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, վա-
նայ հիւսիսային կողմը, Աժենաշատ և Ծակ-
դար գիւղերու մէջտեղ, Մարմէա գետոյն
մօտ։ Բնակիչք կը համարուին 150 հոգի,
ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԱՆԱՇԱ. — Բերդ Լեռնային Կիլիկիոյ,
Կուկլակի կապանէն քիչ հեռու, համանուն
Անաշա (Թ. 79) անապատէ լերան գագաթը,
4000 մետր բարձր։ Կուկլակի բերդի նման,
կառուցուած է սև տաշած քարերով։ Ընդար-
ձակ է բերդս, լերան գագաթան գրից հա-
մեմատ երկայնանիստ. պարիսպները տա-
կաւին կանգուն են արեւմտեան և հիւսի-
սային կողմերը, իսկ միւս երկու կողմերն
բնական անմատոյց լինելով, ձեռագործ ամ-
րութեան պէտք չունին։ Գարուս (ԺԹ) ա-
ռաջին քառորդին դեռ կանգուն էին այստեղ
չորս հզօր աշտարակներ կամ բուրգեր, եր-
կաթէ գռներ, վեց մարտակոյներ, և ջրի հա-
մար քարէ փողրակներ։ Երկու ագուցաներ
ջուր կու տային, մին բերդին և միւսն պար-
տէզներուն։ Բերդէս վեր գաւառած քարա-
ժայռի մը վրայ կան մնայր խաչքանդակներ։
Բերդիս ստորոտը արեւմտեան հիւսիսային
կողմը, քիչ մը հեռու կը գտնուի Անաշա
գիւղն, պարտիզաց մէջ. բնակիչք Հայք և
Թուրքք խառն։ Գիւղիս մօտ կայ խիստ պաղ
ջրոյ աղբիւր մը։ — Մխսուռաև, 131—132։

ԱՆԱՊԱՏ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գա-
ւառի, Որդուառէն մէկն մը հեռու հիւսի-
սային արեւելեան կողմը։ Այժմ բնակիչք
Թաթարք են 270 հոգի։ Անուան համապա-
տասխան է գիւղիս երեւոյթն, որ ի հնումն
եղած կը թուի բնդարձակ և բազմամարդ
քաղաքաւան։ Կը կարծուի որ հոս եղած ըլ-
լայ նաև անապատաւորաց միաձուարան, յո-
րում կեցած է, ըստ ոմանց, Ս. Մեսրոպ։
Դեռ կը տեսնուին Ս. Յովհաննու եկեղե-
ցւոյն աւերակները (Թ. 80) շինուած անտաշ
քարերով, յորում կան խաչվէմներ և քարեղէն
աւազան մը։ Այս քաղաքաւանէս յանուանէ
կը յիշուի, իբրև հարուստ հայ վաճառական
Խաղոզ կամ Խաղոզիկ ոմն որդի Թորոսի,
որ 1663ին վճռեակիկ կը գտնուէր։ Ութե-
տասներորդ դարու կիսուն Անապատցի Հայք
գաղթած են հաւանականօրէն ի Զմիւռնիա։
— Մխսուռաև, 319—320։

ԱՆԱՊԱՏ. — Վանք Ա. յրարատեայ Ար-
ագածոտն գաւառի Սերկեւդոյ ձորի մէջ, Քա-
սաղ գետոյն վրայ։ Անապատս՝ որ շինուած
է կաթողիկի Յովհաննէս եպիսկոպոսէն, ըստ
Զաքարիա պատմչի՝ պարսպապատ էր և
ունէր շատ կթօնատուրներ, սեղանատուն, արն-
ատեսուն, փայտեայ ժամատուն, ինչպէս նաև
այգի և պարտէզ տեսակ տեսակ անուշահամ
և քաղցրահոտ մրգերով։

ԱՆԱՊԱՏ. — Մականաւրնակ գիւղ Հայոց
Ագձնեաց այժմեան Խիզան վիճակին մէջ.
ունի Ս. Գեորգ քարաշէն եկեղեցի մը։ —
Նոյն անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Մոկաց
մէջ, Ս. Ստեփաննոս քարաշէն եկեղեցեաւ։

ԱՆԱՊԱՏ ԿՈՒՄԱՆԱՑ. Տես ՇՆՀԵՐ և ՇՈ-
ՌՈԹ։


ԱՆԱՊԱՏ (ՄԵԾ). Տես ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ։

ԱՆԱՊԱՏ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. — Ա. յրարա-
տեայ Արագածոտն գաւառի մէջ, Սաղմոսա-
վանից մօտ ձորի մէջ ճգնարան մի էր ա-
նանձնակեցից, զոր կը յիշէ Վարդան «սուրբ
Անապատն հրեշտակարնակ» կոչելով։ Ակէց
էր ժէ դարու սկիզբն Յակոբ անուամբ մի-
այնակեաց մը, որ ականատես լինելով Ա
Շահաբասի ժամանակի Օսմանեանց և Պար-
սից պատերազմաց, գոյնս պատմած է Զա-
քարիա Սարկաւագի։

— Ս. ՓՐԿՉԻ. — Լեռնային Կիլիկիոյ
մէջ, Զաւնտըր բերդի հարաւային արեւմ-
տեան կողմը 1 ժամէն աւելի հեռու Տեկիր-
մեն—տէրէսիի պարսպող լերանց միոյն գե-
գադիտակ գահաւանդի վրայ կան մնասա-
նիս վիմափոր խցկանց մնացորդներ և
մատուռ մը՝ որ միայն հիւսիսային կողմէն
մատչելի է, որովհետև միւս կողմերը ան-
մատոյց փոսեր և անդունդներ են։ Այս տեղ-
ւոյս այժմ Թուրքք Քիլիսէ կամ Քէյի պօ-
ղազը (Անցք Եկեղեցւոյ կամ Այծից) անուն-
կու տան։ Մատուռը կանգուն է բաց ի տա-
նիքէն, եւ արտաքին որմոյն վրայ փորագրուած
է 17 տող կարեւոր հայատառ արձանագրու-
թիւն մը Կոստանդնի արքայահօր. զոր՝ ան-

մատչելի դրից պատճառաւ, հեռուէն հեռա-
պիտակով գնահատուած է Հ. կղեմէս
Միպիլեան, գրեթէ 12 ժամ աշխատելով։
Այս արձանագրութիւնէն թէ և կը հասկցուի
բիշ դէպքեր, տեւողութիւնն և առաջնորդն։
— Միտռաճ, 74–76։

ԱՆԱՊԱՏԻ ԲԵՐԴ. — Կը յիշուի բերդս
Սիւնեաց վայոց ձոր գաւառի Ամաղուայ ձորի



98. Ներքին Անապատ գիւղն ու վերի Անապատ գիւղերուն տեսարանը։


թէ վանքս կառուցած է Թադեոս ոմն վար-
պապետ, արքունի հրամանաւ և ծախիւք, սա-
կայն Թուականն կը պակսի։ Յայտնի չեն
նաև վանատեղւոյս յիշատակաց արժանի ու-

ժէջ, որ ի վերջոյ եղած է Ամաղուայ Ե-
րամանքի կաթուածներէն մին։ — Անապատ
անունը սովորաբար կը գործածուի ոչ սակաւ
վանքերու անուանց հետ, կը տրուի նաև

զանազան աւերակ սրբատեղեաց և մատուռանց։

ԱՆԱՏՕԼՈՒ. — Աչմեան անուն Փոքր Ասիոյ յորում է և Փոքր Հայք։

այժմ ամայի, ախուր և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Կառուցուած է Սէն 25 հազարամեայ հետու՝ դէպ ի հարաւային արեւելք, Սաւրանի և Սոյ գետոյն խառնմանէն




Ծնոմամ տանիլացը • 18։

ԱՆԱՐԶԱԲԱ, ԱՆԱԶԱՐԲԱ կամ ԱՆԱԻԱՐԶԱ. Գր. ANAZARBE. Ար. عين زرّ. Ծն. Ἀνάζαρβας կամ Ἀνάζαρβος. — Երբեմն հռչակաւոր և հին մայրաքաղաքս Գաշտային Կիլիկիոյ,

չեւացած ածկիմնատեզոյն մէջ։ Ճետ Սոյ՝ երկրորդ փառաւոր ոստանն էր բոլոր Կիլիկիոյ մէջ, և կարելի է ըսել նաև մին ի թատերաց՝ աշխարհիս շքեղութեանց և խառ-

նիճադանճ բազմութիան մարդկան։ Երկայնանիստ քարաբլուր մը՝ իր երկհիւղ գագաթան վրայ կը կրէ Կիլիկիոյ ամրագոյն բերդերէն մին, որոյ ստորոտը արեւմտեան կողմը, կը տեսնուին քաղաքի աւերակները՝ քառակուսի պարսպով և չորս գռներով (Թ. 84)։

Անազարբայի այս դիրքը շատ նման լինելով վան քաղաքին և բերդին, կ'ենթադրեն որ արեւելեան ազգի մը գործ լինի, մանաւանդ որ իւր անունն ալ սեմական ծագում ունի և արաբերէն կը նշանակէ դեղին աղբիւր «այն զարբա»։ Ի հնումն քաղաքս յատուկ դրամներ ունէր որոց միոյն վրայ (Թ. 82), որ ըստ Սուիդասայ կոփուած է Ցունաց կամ Ադեքսանդրի 180 թուականին, գրուած է Անազարբացւոց անունը։ Ծագոստոս կայսրն քաղաքացիներէն մեծարուելով, քաղաքս անուանեց Կեսարիա և միւս համանուն քաղաքաց հետ չշիտեթիու համար կոչուեցաւ Կեսարիա Անազարբեան, Cæsarea ad Anazarbum, կոչուած է նաև Դիոկեսարիա. սակայն հին անունը միշտ ընդունելի համարուեցաւ և անխափան մնաց։ Մեզ կը յայտնէ պատմութիւնը քաղաքիս պայծառանալը Հռովմայեցւոց ինքնակալութեան բռնկիզները. որոց կոմսանէ գառաւոր իշխան մը կը նստէր հոն, որոյ հրամանաւ նահատակեցան Տարագոսեան վկայքն։ Դիւթական ճակատագիր մը սահմանուած կ'երեւի Անազարբայի, որ չորս անգամ տապալեցաւ սաստիկ գետաշարժէ, և երեւս նոյնպիսի պատահարաւ մ'ալ վերջին անգամ՝ անկանդնելի մնաց։ Առաջին կործանումը կը յիշուի Բ դարու վերջերը. նորոգեց Ներուաս կայսրը. երկրորդը՝ Ցուստինիանոս կայսեր ժամանակ 525 թուին, որ նորոգեց և կոչեց Ցուստինիանուպոլիս։ Երրորդ դարու սկիզբը կը կո-



82. Դրամ Անազարբացւոց։

չուի մայրաքաղաք, ինչպէս կը տեսնուի Վալերիանոս կայսեր (253—260) ժամանակ հատեալ պղնձէ դրամի մը վրայէն (Թ. 83)։ Փոքր Թէոդոսի օրով (444ին) եղաւ Բ Կիլիկիոյ մայրաքաղաք, իսկ Ա. Կիլիկիոյ մայրաքաղաքն էր Տարսոն, ինչպէս կը յիշէ նաև Խորենացին (603)։

Որչափ որ մարդկային ճարտարութիւնն կը ջանար նորոգել քաղաքս, այնքան ևս բնութիան և ընչաքաղց աշխարհակալաց բռնութեան ենթակայ կ'ըլլար, մերթ յափշտակուելով յԱրաբաց և մերթ ի Հոռոմոց։ Ժ. դարու կէսերը Եգիպտոսի ամիրապետաց ձեռքն անցաւ, յորոց թէ և ոս ժամանակ մի Նիկեփոր կայսրն ազատեց զայն և ամրացոյց, բայց Թէոդորա Դշխոյին ատեն զարձեալ պլլպզեաց ձեռքն ինկաւ՝ անթիւ կոտորածով և գերութեամբ. որոյ թէպէտ և զարձեալ տիրեցին Յոյնք, բայց զերթէ խաչակրաց յԱրեւելս գիմած ատեն՝ բարերարդն Ա. Թորոս Ռուբինեան՝ առած էր զայն ի Ցունաց, որոյ Դղեկին մէջ ժոզվեց նաև ի Մանուէլեանց հանած աւարն, և հոն Տիրարօր Պատկերին համար, զոր առած էր ի Ցունաց, շինեց հռչակաւոր յատուկ եկեղեցի մը։ Անազարբայի բերդն, որ վերանորոգուած է նախ Ա.



83. Դրամ Անազարբայի Վալերիանոս կայսեր ժամանակ։

Թորոսէն և ապա Լեւոն Մեծէն, ի բնէ երեք կողմերէն անմատչելի է, իսկ չորրորդ կողմը՝ որ 700 ոտնաչափ բարձրութիւն ունի, ապառաժուտ է և գժուարելանելի. կրկին բարձր պարսպօք ամրափակուած է և Կիլիկիոյ ուրիշ շատ բերդերէն աւելի կանգուն և անկործան մնացած է տակաւին հանդերձ իւր բարձր աշտարակներով։ Արեւմտեան կողմի աշտարակներն որք շինուած են կիսաբոլոր և ու-

ռուցիկ տաշած քարերով, ըստ Լանկլուայի՝ արդիւնք են բաւզանդական ճարտարապետութեան. արեւելեան կողմն հայկական շէնք է։ Բերդիս չորս պատերէն արեւմտեանը կը նմանի հոյակապ յարմարական մեծ կամարի մը, ասոր դիմաց կանգնած կայ բուն յարմարական կամար մը։ Առաջին պարսպին մէջ կը գտնուի վերոյիշեալ Ա. Թորոսէն շինուած Գէորգ և Թէոդորոս Զօրավարաց (թ. 84) եկեղեցին, որ դեռ մեծաւ մասամբ կանգուն է. չորս սիւներ, որոց մին ինկած է, երեք մասանց կը բաժնեն եկեղեցիս, և տակաւին վեր բռնած են ձեղունի մէկ մասը։ Ներսը սրմոց վրայ նկարուած կան պատկերներ, բաւական լաւ մնացած.




84. Անարզաբայի Զօրավարաց եկեղեցին։

երեք կողմնակի պատոց մէկ կամարին վրայ գրուած է յունարէն ΕΥΑΓΓΕΟС, (Աւետարան)։ եկեղեցւոյս սրմոց վրայ չորս կողմը կան մեծաւասպ արձանագրութիւնք Թորոսի, բայց ափսոս որ խանգարուած լինելով՝ ամբողջութիւնը որոշ չի կարգացուիր։ Մեր նախնիք յոյժ չերմեռանդ էին Գէորգ և Թէոդորոս զօրավարաց, և անոնց օգնութեամբ շատ յաղթութիւններ կը տանէին. Թորոս Ա., մինչ ան ատեն ունէր յատուկ կնիք (թ. 85) մը, որուն մէկ կողմը կան այս սրբոց պատկերները և միւս կողմը յունասպան արձանագրութիւն մը, որով գինքն կը յանձնէ ի պաշտպանութիւն կրկին քաջայաղթ վկայից։ Աւելի մեծ եկեղեցւոյ մը աւերակներն կը տես-

նուին քաղաքէն բերդը տանող ճանապարհի կիսուն վրայ. որոյ ստորին մասը փորած են ժայռի մէջ, իսկ վերինն շինած են մեծամեծ քարերով. երկրի սասանութենէ շատ աւելի վնասուած է այս քան վերոյգրեալն, և ներկայ (թ. 86) պատկերս թերևս ասորը ըլլայ։ Պարսպի արեւելեան ծայրը՝ քարաժայռն ճեղքուած է արուեստով զօրաւոր բազկի Մեծին Լեւոնի (1188ին), և դիմացը շինուած է միջնաբերդն կամ Կլայն (թ. 87), ուր միայն հնարաւոր էր անցնիլ շարժական կամրջով, որ այժմ չըլլալուն պատճառաւ՝ անմատչելի և անքննելի մնացեր է ամրակուռ բերդն, բայց մեծ բլրան մը վրայ անապարա մնացած է արձանագրութիւն մը, զոր հեռուէն կարդացած են, որ կը վաւերացնէ Լեւոնի զօրութեան և հանճարոյն մեծութիւնը։

Թորոս Ա.էն մինչև Մեծն Լեւոն բա-



85. Կնիք Թորոսի Ա. Պարոնին Հայոց։

ւական դէպքեր ունեցաւ Անարզաբա նախ՝ 1107ին պարսիկները տասուերկու հազար հոգւով անցնելով Տօրսս լեռնէն աւերեցին քաղաքիս շրջակայքը, և շատ գերիներով և աւարով անցան գնացին Մարաշու գաշտէն։ Երկրորդ անգամ 1110ին, ըստ գրելոյ պատմչին Կիլիկիոյ. «Հաղվեցան զօրք Թուրքաց և մանր յաշխարհն Անարզաբայ, և կոտորեցին զբրիստոնեայս գաւառին Մարապայոյ. և իշխանն Հայոց Թորոս որպի Կոստանդեայ՝ ոչ համարձակեցաւ ելանել ընդ նոսա ի պատերազմն. և նոքա գնացին յաշխարհն իւրեանց»։ Ասկէ վերջ Թորոս դեռ ապրեցաւ և իշխեց 12 տարի խաղաղութեամբ և մեծ համբաւով Անարզաբայի մէջ։ Իր եղբօր Ա. Լեւոնի իշխանութեան ժամանակ Յովհան Աչեքս Պերփեռոժին կայսրն՝ անձամբ պատերազմի գալով 1137ին, 37 օր

սաստիկ պաշարելով քաղաքին տիրեց, և ըզ-Լեւոն Ա. իւր ընտանիքովը գերի ղրկեց ի Կ. Պոլիս։ Բիչ վերջը Լեւոնի որդին Թորոս Բ Բիւզանդիոնի բանտէն ազատուելով, առաջին նուաճած տեղերուն հետ Անարզաբան ևս ձեռք ձգեց, և այնուհետև քաղաքը Ռուբինեան իշխանաց ամրոանիստ եղաւ։ Երբ Լեւոն Ա. դեռ Սսոյ ամրութիւնները չշինուած, ուրիշ ամրացուց բերդը, Անարզաբան կը համարուէր պետութեան ամենէն առաջնակարգ ամրոցը։ Լեւոն քաղաքը այլ և այլ շէնքերով զեղեցկացնելէ վերջ, շրջապատեց զայն բաւական պարսպով և միացուց բերդի պարսպին։ Երբ Սիսը մայրաքաղաք դարձաւ, այնու հանդերձ Անարզաբան բոլորովին երեսէ չձգուեցաւ, և վանդի ժամանակ թէ՛ կը պաշտպանէր իւր մէջ ապաւինողները, և թէ այն գարերու ազգորութեան համեմատ, կրակով նշան կու տար շրջակայ բերդերուն։

Թէպէտ և արքեպիսկոպոսական աթոռ էր Անարզաբա թէ՛ Ցունաց և թէ մերայնոց ժամանակ և աթոռն հաստատուած էր ի կաստաղոն, բայց պատմութեան մէջ սակաւ կը յիշուին աթոռակալներէն. որոց մէջ քան զամէնն ուրիշ նշանաւոր անձն է Գրիգոր, որ յատկապար Անաւարզեցի կոչուեցաւ, որոյ գրաւոր երկասիրութեանց պիտուրն կրնանք համարիլ Հայոց, Ցունաց և Լատինաց Ցայտնի աւետարք մը, որ թերևս կաթողիկոսութենէն առաջ յօրինած է։ Իշխանական աթոռն ի Սիս փոխագրուելէն վերջը քիչ անգամ Անարզաբա անունն կը յիշուի պատմութեան մէջ, քանի մը անուր դիպաց յիշատակօք. իսկ Հայոց թագաւորութեան վերցուելէն յետոյ՝ կը յիշուի Անարզաբա՝ Զիլկաարեան Շահնուարի (1467) ասպատակութեան ժամանակ՝ վերջինիս բնակարանալ քաղաքաց թուոյն մէջ. այնուհետև քաղաքին վրայ գրաւոր տեղեկութիւնք կը պակսին, և չի գիտցուիր նաև լքման և աւերման ժամանակն։ Սակայն ինչպէս ըսինք, մեծաւ մասամբ կանգուն է տակաւին Անարզաբա, և հետաքրքրութիւն կը խարհ զուղեւորն, տեսնելով բարձր պատեր և պալատներ, բերդի պարիսպներն և բրգաձեւ աշտարակները, սիմետրով և քանդակագործ շէնքեր, և վանդի ժամանակ թէ՛ կը պաշտպանէր իւր մէջ ապաւինողները, և թէ այն գարերու ազգորութեան համեմատ, կրակով նշան կու տար շրջակայ բերդերուն։




86. Աւերակ եկեղեցի Անարզաբայի։

Թէպէտ և արքեպիսկոպոսական աթոռ էր Անարզաբա թէ՛ Ցունաց և թէ մերայնոց ժամանակ և աթոռն հաստատուած էր ի կաստաղոն, բայց պատմութեան մէջ սակաւ կը յիշուին աթոռակալներէն. որոց մէջ քան զամէնն ուրիշ նշանաւոր անձն է Գրիգոր, որ յատկապար Անաւարզեցի կոչուեցաւ, որոյ գրաւոր երկասիրութեանց պիտուրն կրնանք համարիլ Հայոց, Ցունաց և Լատինաց Ցայտնի աւետարք մը, որ թերևս կաթողիկոսութենէն առաջ յօրինած է։ Իշխանական աթոռն ի քեր, գերեզմաններ, և այլն, որոնք կարծես կը խոստանան իրեն առաջնորդելու դէպ ի ծագած և բազմամարդ քաղաք մը, բայց երբ կը մօտենայ այդ յոյսերն ի դերև կ'երևին։ Ցիշատակաց արժանի են հին հռոմէական բազմակամար ջրմուղները, որոնցմով սարեբէն ջուր կու գար քաղաքացւոց խմելու համար. ասոնց միայն 32 կամարներն դեռ կը ծնան անկործան։ Երեսուն տարի առաջ Յրիպօլսեցի Ալան Եղիազոս անուն ասորւոյ մը Ջանքով, քաղաքին աւերակաց մէջ հաստատուեցան 20 տուն ասորիներ. նոյն անձը քաղաքին տեղը և շրջակայքը մասամբ գնեց և մասամբ վարձեց ներկայ պետութենէն, և սկսաւ մշակել։

Անարզաբայի սահմանին մէջ ի նախնեաց յիշուած նշանաւոր տեղերն են՝ Քաղրդիկ, Միմանակայ բերդ և Տոռնկի. իսկ ներկայ վիճակին մէջ իւր չորս կողմի սահմանքն անծանօթ և անհետանակ մնացած են աշխարհացոյց տախտակաց մէջ, բայց ի քանի մը պիւղերէ, յորս են Հաճիլեր, Զեօրեկլի Սայ-

համապատասխանէ հին Անէ բերդը։ — Միսռաան, 236–244։

ԱՆԱՐԾԱԹ ԲԱՇԿԻ ՎԱՆՔ. — Երբորդ Հայոց Մելիտինէ քաղաքի մերձաւոր հին վանքերէն մին, որ այժմ ամայի վիճակի մէջ կը գտնուի։ Միայն կանգուն մնացած են մատրան երկու կամարներն. շուրջը զբա-



87. Անարզաբայի միջնաբերդը կամ Կալյն։

չա, Սոյսուռմ, և այլն։ Սոյն վիճակիս մէջ կը գտնուի կղզիացեալ քարաբլրոյ մը վրայ կանգնուած Միսռանայ հզօրագոյն և Թերեա պատմական նշանաւոր ղիպաց վկայ և ապարէզ եղող բերդերէն մին, որոյ հին անունն անծանօթ կը մնայ, իսկ այժմեան կոչումն է Թումլա կամ Թումլու գալէսի, որոյ Թերեա

նուող աւերակաց կայտերէն կ'երեւի որ ժամանակաւ բաւական շէն վանք մը եղած է։ Աղբիւրն կը բղխէ մեծ ջուր մը, որ կ'ըսուի Բռեղդար պաշի. գուարճալի է վայրս՝ զարդարուած յուռթի բուսականութեամբ։

ԱՆԲԵՐԴ կամ ԱՄԲԵՐԴ. — Վիճակ Ա.յբարատայ Արտաշատոյ գաւառի, կարբոյ վի-

ճակի, Սարատարապատու, Վաղարշապատու և Արագածի հարաւ—արեւելեան ոտաց մէջ տեղ։ Մինչեւ գարուն աւելի բնակաբնակ էր վիճակս, և մինչև անդամ գաւառ ևս կոչուած է Արագածոտն անուան տեղ։ Գագիկ՝ Անբերդ գաւառը կառակեց իրեն յաջորդ Յովհաննէս–Սմբատ թագաւորին. իսկ Զաքարիա մեծ սպասալարը գայն նուաճեց 1196ին։ ԺԳ գարու առաջին կիսուն մէջ կը յիշուի նաև Մկրտիչ անուամբ մէկը Անբերդու եպիսկոպոս։ Նոյն եպիսկոպոսը, ինչպէս կը յայտնուի Յովհաննաւանքից արձանագրութենէ մը, Անբերդը իբրև վիճակ ստեր է նոյն վանից։ ԺԴ գարու սկիզբը (1311ին) Յովհաննավանից հայր Վասիլը, կը կոչուի առաջնորդ Շիրակայ և ամենայն Անբերդու։ Այժմ Անբերդ ունի երկու գեառակաց հովիտները. մին Լազրեւանայ կամ փարպիի և միւսն Անբերդի, որոնք Արագածու հարաւային ծոր–ծորներէն կ'իջնեն, և կը դիմեն արեւելք դէպ ի հարաւային արեւմուտք։ Անբերդ գեառակը Բիւրականէն վար արեւմտեան կողմէն ընդունելով Տեղերոյ վտակը, և գետ ասլի վրէն Լազրեւանը, այնուհետեւ կը կոչուի Շաղուեղոտու գետ, և ապա Օշականի մօտ կը խառնուի Քասաղ գետի հետ։

Հին Անբերդ ամրոցը կամ շէնը՝ ինկած է Արագած լերան սարատափի մը վրայ, Բիւրականի արեւմտեան հիւսիսային կողմը՝ հօթը կամ ութ մղոն հեռու, երկու ձորակաց մէջտեղ, որոնք անմատոյց և գահավէժ ափունք ունին։ Այժմ կ'երեւին միայն աւերակաց մնացորդներ, ջրամբարի և աշտարակաց հետքեր, որձաքար կոփածոյ քարերով պատեր։ Մեծաւ մասամբ կանգուն մնացած է, ձորակաց միացման կէտին վրայ, միջակ մեծութեամբ, քարաշէն, անսիւն և գմբեթաւոր եկեղեցի մը. սեղանոյն երկու կողմերը կան երկու մատրունք կամ աւանդատունք, և գուռն է հարաւային կողմը։ Շինութեան թուականին գրան վրայի արձանագրութիւնը ջնջուած է, բայց ներսը կայ արձանագրութիւն մը, Իվանէի և Շահրնշահի աէրութեան ժամանակէն, յորում կը յիշուի Անբերդու գաւառի վերակացու սմն Վասէ։ Այս Վասէն էր որդի Սարգսի Վասչուտեանց՝ զոր Զաքարէ Սպասալարը վերակացու գրաւ Արագածոտան, Անբերդու և այլ կողմանց։ Ի՛ գարու սկիզբը, երբ Պարսիկները այս կողմերս Օսմանցիներէն առին՝ Երեւանու Ամիրկիւնէ կողմնակալը՝ գաւառա-



88. Անարզարայի մօտ յունագիր արձանագրանդակ։

պետ դրաւ Կոռէից և Անբերդու Գաւիթ սմն Քանաքեցի։ Անբերդու աւերակներէն ոչ այնչափ հեռու կը գտնուին քանի մը այլազգեաց գիւղեր, ինչպէս Արխաշան, Գօշաղուշաղ, Քէօսթէկլիւ, Անագլու։ — Այրարատ, 156։

ԱՆԳԵՂԱԿՈԹ կամ ԱՆԿԵՂԱԿՈԹ. — Մեծ գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի՝ Սիսիանի հարաւակուսեան, Շաղատ և Շաքի գիւղերու մէջտեղ, մէկ մասը ինկած է Պազար–չայի ձախ ափին, իսկ միւսը՝ քիչ մը զառիվեր բարձրաւանդակի մը վրայ։ Ժե դարուն գրուած աւետարանի մը յիշատակարանի հա-

ժամաս, յորում գիւղս կոչուած է գիւղա-քաղաք Անկեղակոթ, նոյն ժամանակ եկե-ղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին բարձրացած է գիւղի կեդրոնը, բարձրաւանդակի վրայ, որոյ պիմացէն կը հոսի Պազար—չայը, և իւր ծա-ռազարդ ափերով գեղեցիկ տեսարան մը կ'ըն-ծայէ գիւղիս։ Եկեղեցիս քարաշէն է և բա-ւական գեղեցիկ. ներքուստ գարպարուած է խաչկալով և ջահերով։ Կան նաև ուրիշ եր-կու հին եկեղեցիներ, մին՝ Ս. Յովհաննես, հասարակ շէնք է, պատերու մէջ կան տա-պանաքարեր, յորոց միոյն վրայ կը կար-դայուի ՉԼԲ (=1283) թուականը. գրան վրայ կայ շինողի արձանագրութիւնը ՌՃԾԷ (=1708) թուականաւ։ Միւս եկեղեցին, գոր տեղացիք Ս. Հազարփրկիչ կ'անուանեն, փո-քրիկ աւերակ շէնք մ'է և կը գտնուի քիչ մը դէպի արեւելք, բարձր ժայռերու կից։ Թէ՛ այս և թէ Ս. Յովհաննես եկեղեցւոյ մնացէն կը վա-ղեն առատաբուղխ աղբիւրներ։ Գիւղս ունի երկու հին գերեզմանատուն, տապանաքա-րերով և արձանագրութիւնամբք։

Աշխեղոթէն դէպի արեւմուտք, գրեթէ քառորդ հազարամեայ հեռաւորութեան վը-րայ, բարձր ժայռերու կից կան երկու եկե-ղեցիներ, յորոց մին մասամբ ժայռի մէջ փորուած է։ Այս եկեղեցիները, որ այժմ աւերակ վիճակի մէջ են, ըստ աւազացոյց նուիրուած են Ս. Վարդանանց, որոց տա-նին բաւական ուխտաւորներ կ'երթան։ Հոս կան ՉԼ (=1281) թուականաւ տապանա-քարեր. այս եկեղեցիներու մնացէն կը բղխեն հինգ աղբիւրներ։

Ժէ. դարու վերջերը գիւղիս տանուտէրն էր Մելիք Շաֆուազ, որուն քով 1699 թուին Իսրայէլ Որիի թելադրութեամբ ժողովեցան մնացուսր աւաններու 9 կամ 10 տանու-տէրներ, Հայոց տէրութիւնը վերականգնելու խորհրդակցելու համար։ Այժմեան բնակիչք ամբողջ հայ լուսաւորչականներ են, Թաւրիզի Ղարա—Քհօֆշան գիւղէն գաղթած. ընդ ա-մէնը 1700 հոգի, բաժնուած 180 տան։ — Սիսական, 212։ Սիսիան, 79–81։

ԱՆԳԵՂԻ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որոյ աւերակի տեղը կը կար-ծուի լինել այժմեան Հայարնակ Չաուան-քենտ գիւղէն մէկ ու կէս մղոն հեռու դէպի հարաւ։ Ասոր մնացերն լինելու է նաև Սի-նեաց պատմչի յիշած (49) Անգեղ ձորը, ուր Վարդանանց պատերազմէն վերջը նահա-տակուեցան ի Պարսից ոչ սակաւ հայ զօր-քեր։ Հոն բլրոյ մը կողին վրայ կայ այժմ քարաշէն և փոքրիկ մատուռ մը, զոր Ըն-գեղի մատուռ կը կոչեն, և մերձակայ բնակիչք ուխտի կ'երթան։ Բայց նորագոյն նահա-տակի մը հանգստարանը կը համարուի մա-տուռս՝ յորում արձանագրութիւն մի ևս կայ. իսկ մօտը կը տեսնուի խաչքար մը ՉԽ (=1294) թուականաւ։ Ջալալեան՝ Ս. Կի-րակոս կ'անուանէ մատուռս, և կ'ըսէ, թէ ըստ աւանդութեան՝ նահատակը պատարա-գի ժամանակ սպանուեր է աւազակներէ։

ԱՆԳԵՂ, ՏՈՒՆ. — Զորրորդ Հայոց կամ Մեծ Քրիստոսի հին գաւառներէն մին, յորում անուանի էր Անգեղ բերդաքաղաքը։ Այս-պէս կոչուած է վաղարշակ թագաւորէն հան-ատուած նախարարական տոհմի մը ա-նուամբ, որոյ նախահայրն էր Տօրք Հայկազ-նը, որ դիմաց ազգութեան պատճառաւ կո-չուեցաւ անգեղեայ, և տոհմն ու գաւառն Անգեղ տուն։ Տես ԱԿԼ։

ԱՆԳԻԱ. Տես ԱՆԳԻԱ։

ԱՆԳՂ., ԱՆԳԵՂ կամ ԱՆԿՂ. — Գիւղ Վասպուրականի (Վան) Տոսպ գաւառի, այժ-միան Ոստանայ վիճակի մէջ. նոյնանուն Անգղ կամ Խոշապ գետոյն աջ ափի մօտ, Արտամետի հարաւային արեւելեան կողմը։ Հրաշալի տեսարան և ծառաստաններ ունի։ Բնակիչք կը համարուին 70 տուն, յորոց պանդխտութեան մէջ կը գտնուին մօտ 50 անձ։ Եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ։ Անգղայ մէջ կան երկու բլրակներ, մին Ս. Յարգիս և միւսն Ս. Ծիրանաւոր, որոց վրայ կը նշմա-րուին տակաւին հին եկեղեցւոց տեղերը։ Գիւղս յատաջ կը բերէ այս կողմանց յա-տուկ բերքերէն զատ, ընտիր շորգամ մեծ քանակութեամբ, յորոց մին երբեմն կը կշռէ մինչեւ մէկ օխայ. նշանաւոր է քաղցրու-թեամբն, զոր շատ անգամ կ'ուտեն բնա-կիչք խնձորի նման։

Անգղէն 10 վայրկեան հեռու դէպ ի ա-րեւելք Սալան Ջրվէժի մօտ կը գտնուի Անգղայ Ս. Աստուածածին անուամբ վանք

մը՝ որոյ մէջ պահուած հին կտակ մը և տեղական աւանդութիւնն հետեւեալն կը պատմեն։ Ս. Թադէոս առաքեալը իրեն հետ առած Բրիատոսի ասուածամուխ գեղարդը, Տիրամօր պատուական քօղը և իւղոյն շիշը, քարոզելով եկաւ հասաւ այս տեղ և տես նելով գեղեցիկ դիրքն, և բարձր ու ահագին կոց պատկեր մը որուն երկրպագութիւն կ'ը նէին բազմաթիւ մարդիկ, շատ ցաւեցաւ որ մարդիկ ճշմարիտ Աստուածը թողած դիւա կան պատկերի երկրպագութիւն կ'ընէին։ Գիշեր մը Ս. Առաքեալն աղօթած պահուն, յանկարծ Տիրամայր Ս. Աստուածածինն ան պատմելի փառօք երեւեցաւ իրեն Աստուած որկին ի գրկին և ըսաւ որ խորտակէ դիւա կան կոց պատկերը և տեղը տաճար մը շինէ, մէջը ամիսօրհնով վերոյիշեալ իւղոյն շիշը, ի նշան բժշկութեան ամէնայն ախտա ժէտաց։ Ս. Առաքեալը շատ մարդիկ յԱս տուածպաշտութիւն դարձնելով երբ կոց պատկերը խորտակելով հիմն դրաւ և սկսաւ շինել տաճարը, գիշեր ժամանակ գետերը գա լով կը քանդէին գայն և քարերը Աչաւ գետը կը նետէին՝ որ Անդղայ գետոյն մէկ մասն է։ Երկար ժամանակ այսպէս շարունակուե ցաւ՝ միշտ շինելով և քանդուելով։ Այս ան յաջողութեան վրայ մինչ Առաքեալը տրամա խախտ և արտասուալեզր աչօք կը ներհէր, կրկին անգամ իրեն երեւեցաւ Տիրամայրն և ըսաւ, թէ «Խաչ մի օծէ և իւղոյն շիշը վրան դիր և դու պիտի տեսնես Աստուծոյ սքանչելիքը»։

Առաքեալն տասւօրեայ երկնով քարէ խաչ մը շինեց և իր ձեռքով օծելով՝ իւղոյն շիշը վրան դրաւ և տաճարի հիման մէջ դետեղեց։ Այնուհետեւ շինուածն անխափան ընաց, իսկ քարերը քակող դիւերն մարմնաւոր տեսքով տեսա ագռաւուց նման կապուած թռկած էին, և այն պահուն անդր թռչնոց երամք եկան և Առաքելոյն հրամանով կտցով գարնելով բռնեցին գանոնք և ձգեցին ի Աչան։ Այս վերջին կռուն հետեւեալ կերպով եւս կը պատմուի. երբ դիւերն իրենց սովորականի համաձայն քանդելու եկան, շուտով անոնց հետեւէն հասան Աստուծոյ հրեշտակները անդր թռչունի կերպարանքով, իսկ դիւերը տես ագռաւներու կերպարանք առնելով և ա նոնց առջեւէն փախչելով գնացին ծովը լե ցուեցան ագաղակելով սա—չէ—այն, սա— չէ—այն, յորմէ կազմուեր է Աչաւ գետոյն անունը։

Անդղներ գեռ մինչեւ ցարդ բազմութեամբ կան վանացս մօտ Աչան ջրվէժի ուռենի ներու մէջ, և որսորդաց հալածանքն անգամ չէ կարող գայնս այն տեղէն հեռացնել։ Այս պատճառաւ գիւղն կը կոչուի Անգղ և վանքն Անգղայ Վանուոց Ս. Աստուածածին։

Վանքս ունի երեք խորան, մինչեն Ս. Աստիսանոս, աջակողմեանը Ս. Գէորգ և ձա խակողմեանը Ս. Աստուածածին։ Ս. Գէոր գայ խորանին մօտ կայ ուրիշ խորան մ'ալ Ս. Յովհաննու Կարապետի, հոն փոքրիկ պատուհան մը կայ, ուսկից չոր բարի մէջէն կաթ կաթ կը բղխէ հրաշալի սուրբ իւղը, որ հաւատացելոց ամէն վէրքերու միակ դար մանն է։ Այս իւղը կաւաւտի ձէթի համ ու հոտ ունի. ժամանակաւ առատ է եղեր այս ձէթը, և վաճառքի և շահու նպատ գարձը նելուն պատճառաւ՝ նուազեր է։ Տխուր և ամայի է այժմ մենաստանս։ Տաճարի հետեւ կան մի քանի խաչքարեր յորոց 2—3ին հա մար կ'ըսուի, թէ վարդանանց ժամանակէն մնացած են։ Մ. Մխիթարեան վերոյիշեալ գիւղը կը համարի Եղիշէ (98) յիշած Անգղ գիւղաքաղաքը, սակայն տատգութենէ ձըշ գութենէ զուրկ է այլ, որովհետեւ նոյն գիւ ղաքաղաքը կ'ենթադրէ Աղբատասայ Ծագկոտն գաւառի մէջ։ — Նկարգ. Ուղեւորութիւն, Ա. 132—136։ Արեգ, 1897. 20—21։

ԱՆԴՂ. Յն. Ἀνγλών. — Ի հնումն ամուր բերդ և գիւղաքաղաք Աղբատասայ Ծագկոտն գաւառի մէջ, Արածանւոյ մօտ։ Եղիշէ (98) և Ղ. Փարպեցի կը յայտնեն, թէ Պարսկաստանէն եկող մոգերու և Հայ նա խարարաց գունդը տօթագին եղանակին գա դարեցաւ այս տեղ։ Պտսկոպիոս յոյն պատ մագիրը, գիւղիս գիրքը կը գնէ լերան մը ստորոտը, և ամուր բերդը գագաթան վրայ. Դբնէն հեռու կը համարի 120 ասպարէզ։ Թ. Արծրունւոյ ընդարձակողի յիշած Աս գեղան մեծ ատենին հետ նոյն կը համա ըսւի այս գիւղս՝ որուն տէրն էր տիեզերա կալ իշխանաց իշխանն Աղուշ։

Գիւղս Մանազկերտէն Ծագկոտն անցնե-

լու ձանապարհին վրայ գտնուելով, ի հնումն իբրեւ պատերազմական վիրք մեծ նշանակութիւն ունեցած է իւր բերդովը։ Շատ ճակատամարտներ եղած են այս տեղ, սակայն մենք միայն երկու ծանօթագոյնները յիշենք։ Պարսից Խոսրով Անուշաէան թագաւորէն զրկուած Նապետ հրամանատարը չորս հազար զօրօք, այս բերդս ամրացնելով ծառեր կոճղերով և վիմաց կոշկոններով՝ և խաբէութեամբ աւանի տուներու մէջ զարանելով իւր զօրաց մէկ մասը, ձայն հանել տուաւ իբրեւ թէ բերդէն փախած ըլլայ։ Այս պատերազմի մէջ Յունաց Յուստինիանոս կայսեր զօրավարաց գլխաւորներն էին Վալեր. Պատերազմաց Պարսից, Բ. իե)։ Իսկ հեծելայը կը պատմէ Սիբէոս (74)։ Պարսից Խոսրով Ապրուէզ թագաւորի Սենհատամ Խորով զօրավարը կը պատերազմի Յունաց Թէոդոր Խորխոռունիի հետ՝ որ բանակած էր գիւղիս մօտ, Անգեղ բերդի մէջ։ Յունաց բանակը տեսնելով Պարսից զօրաց բազմութիւնն, նախ չուզեց պատերազմիլ, այլ բերդը տալ և խաղաղութիւն ընել. բայց վերջը իւր ամուր դիրքէ վրայ վաստահացած, պատերազմեցաւ և չարաչար յաղթուեցաւ. երկրորդ օրը՝ Անգեղ բերդին եւս տիրեց Պարսից Սենհատամ զօրավարը, և հոն բերդակալ մը դնելով ինքը մեկնեցաւ. իսկ Թէոդոր



89. Լոնտրա քաղաքը։

թիաւոռս Հայոց զօրագլուխը, Մարտին՝ Արեւելից սպարապետը, և ուրիշներ. ասոնց հետ էին նաեւ կամաւորական քաջերն Ներսես և Յովհաք, հայկական և Հերուլացի գնդերով։ Յունական բանակն անդէտ եղած զարհուրակալութեան՝ երբ սկսան Անգեղ բերդը մտնել, Պարսիկներն մեծ հարուած տուին և յաղթող հանդիսացան. հռչակաւոր եղաւ այս մարտին մէջ քաջն Ներսէս և անգամ մի եւս յետ մղեց Պարսից գունդը, սակայն աչքին բբէն վիրաւորուեցաւ և երկար չդիմանալով մեռաւ, որով և մեծ կորուստ եղաւ Յունաց։ Վերոյիշեալ պատերազմը կը նկարագրէ Բիւզանդացի պատմիչն Պռոկոպիոս (Պատերազմաց Պարսից, Բ. իե)։ Իսկ հեծելայը կը պատմէ Սիբէոս (74)։ Պարսից Խոսրով Ապրուէզ թագաւորի Սենհատամ Խորով զօրավարը կը պատերազմի Յունաց Թէոդոր Խորխոռունիի հետ՝ որ բանակած էր գիւղիս մօտ, Անգեղ բերդի մէջ։ Յունաց բանակը տեսնելով Պարսից զօրաց բազմութիւնն, նախ չուզեց պատերազմիլ, այլ բերդը տալ և խաղաղութիւն ընել. բայց վերջը իւր ամուր դիրքէ վրայ վաստահացած, պատերազմեցաւ և չարաչար յաղթուեցաւ. երկրորդ օրը՝ Անգեղ բերդին եւս տիրեց Պարսից Սենհատամ զօրավարը, և հոն բերդակալ մը դնելով ինքը մեկնեցաւ. իսկ Թէոդոր Խորխոռունին ալ պատուով դրկուեցաւ Խոսրով թագաւորին։

Հաւանական կը թուի կարծելն, թէ Աբածանուոյ երկու կողմերը գտնուած այժմեան Ղարղալիճ կոչուած գիւղերէն մին եղած ըլլայ մեր նկարագրած հին Անգղ աւանը։ — Այրարատ, 518։ Բագրեւանդ, 291—293։

ԱՆԳՂԱՑ ՎԱՆՔ. Տես ԱՆԳՂ։

ԱՆԳԼԻԱ կամ ԱՆԳԻԱ. Անգղ. ENGLAND. Գղ. ANGLETERRE. Լ. ANGLIA. — Մեծին Բրիտանիոյ հարաւային մասն, որ Բրիտանական կայսերութիւնը ձեւացնող երեք աշխարհներէն ամենէն հարուստն և բազմամարդն է։ Կը բաժնուի քառասուն կոմսու-

թեանց յորոց 20ը ցամաքային և 20ը ծովային։ Տարածութիւնն է 134626 քառ. հղմ. 29500000 բնակչօք. մայրաքաղաքն Լոնտրա կամ Լոնտոն։ Ծովուց և վաճառականութեան դշխոյ կը համարուի Անգղիա, որոյ հետ Հայք վերաբերութիւն ունեցած են ի հնուց, Արեւմտեան Եւրոպիոյ ուրիշ աշխարհներէն առաջ։ Երեքտասաներորդ դարուն կիսուն հոն կ'երեւին մերայինք, ոչ միայն Կիլիկիայէն այլՄեծ և Հայքէն, Թէպէտ և շատերը աշխարհաւեր Թաթարաց ձեռքէն փախչելով։ 1252ին Երիկ Գ կը գրէ մեր Հեթում Թագաւորին՝ խաչակիր արշաւանք մի ընելու պատրաստուիլն։ Դեռ աւելի կապիտացւոց հետ՝ Հնդկաց աշխարհի մէջ։

— Մեռաքսարեր Հայոց արեւմուտքէն տարած դիմաւոր վաճառքներէն մին էր անգղիական չուխան, այդ պատճառաւ Բրիտանիոյ աւելի ճարտարարուեստ բազաքները կը դիմէին Հայք, և մանաւանդ ի Լոնտոն։ Հայտ անգղիացին որ գրած է կրակապաշտ Պարսից ազանդոյն վրայ, կ'ըսէ թէ շատ տեղեկութիւններ անոնց ծիսից նկատմամբ ուսած է վաճառական Հայերէն և ամենէն աւելի Շափազեան Աշեահքեն։ 1674—5ին ժամանակները հայ պուեհիկոս մին Տէր Յակոբ Գրիգորեան, ինչպէս ինքը կ'ըսէ «աշխարհատեսութեան պատճառաւ» Անգղիա



90։ Լոնտրայի աշտարակը։

նաւ (1228ին) կը յիշուի հայ ուխտաւոր եպիսկոպոսի մը Անգղիա երթալն, և անկէ հոչակուած է Քիսուա ապտակ զարնող կարտափիլոսի (Cartaphilos) կենդանի մնալը, և կ'ըսուի ասկէ սահեցուած և գրուած է Թափառական Հրեայ վիպասանութիւնը։ Տասնէն աւելի նամակներ և գրուածներ ծանօթ են մեր և Անգղիոյ Թագաւորաց և իրենց դեսպանաց, ԺԳ—ԺԴ դարուց մէջ, վերջին Լեւոնի պանդխտութեան ժամանակ գրուածներէն զատ։ Բայց, ինչպէս վերջը պիտի տեսնենք ի կարգին, պատմական, քաղաքական և վաճառականական տեսակէտով աւելի մեծ յարչութիւն ունեցած են Հայք գալով Օքսֆորտի մէջ կը գրէ տառնաւար գովաստութիւն «վասն այր Պրիթանիա կրկզոյս և այրոց բանականաց մեծի և փոքրոյ, առ հասարակ ամենեցուն»։—Ժ. գարու սկիզբը (1701) Թոմաս Պագա անունով մէկը և իրեն ընկերները կողոպտուելով Քիա անուն նաւակէ մը, գաղտ իրենց ինչքը կը խնդրէին. ասոնց ազերբագիրը կը պահուի Լոնտոնի Գանձատան պիւռոի մէջ։ — Քանի մը տարի վերջը կը յիշուին ի Լոնտոն Հաճի Ցարոտիւն եղբայր Հաճի Սարգսի, որոնցմէ առած էր ոմն ծոխ վաճառական Վենեսկոյ Պետրոս Սիւնան, 920 գոմշի մորթ և 4100 գուկատաց փոխառնագիր մը, որ և կը պատուիրէր

իր կաւակին մէջ (1712) վերայիշեալ Յարութեան հաստատանել մարթիներու դիրը, երբոր վաճառատին։ Ա՛յս պարսա (ԺԸ) մէջ ասելի շատցած են հայ յաճախորդք ի Լոնտոն և ոմանք ալ բնակած են հոն բնաւոնեօք, յորոց մին կը յիշուի 1767—90 տարիներու մէջ, Ագուլեցի Պետրոս արդի Պօղոսի, որ վերջը հակառակութեան մը պատճառաւ մեկնած է յԱմստերդամ։

Հայք ոչ միայն արեւելեան վաճառքներ կը տանէին յԱնգղիա, այլ և իտալական, և մանաւանդ Վենետկոյ ապակեղէններ։ 1641ին վաճառականն Պապա Թաչատուր, Վենետկէն կը տանէր 30 արկղ հայելի, 14 արկղ ուլունք և 7 արկղ բաժակներ, վճարելով նաւագչէք 300 ոսկի։

Ռափայէլեան վարժարանի անմահանուն բարերարի արդին և Մխիթարեանց աշխարհական եղբայրն, Պ. Ազեքսանդր Թաֆայէլ Ղարամեան և իր ազգատոհմին Հընդկաստանէն անցնելով յԱնգղիա շատ տարիներ բնակած են ի Լոնտոն, որուն մօտ Տիրրոնթայմզ կոչուած գիւղի մէջ, իրմէն կառուցուած մատրան մը մէջ կը հանգչին ի փամբանի՝ ոսկերք նոյն ազգային մեծ բարերարին սիրասուն արդւոյն։

Իննևտասներորդ դարու մէջ դեռ ասելի բազմացած են Անգղիոյ Հայք և սկսած են գաղթականութիւն մը ձեւացնել։ Դեռ տասը տարի առաջ Լոնտրայի մէջ կային 120 Հայք, որոց թիւն վերջին տարիներս ասելի շատցաւ։ Կոլկոտայի Գեր. Եսայի վարդապետ Ամատունեան Տաճարեանի Կանքով Լոնտրայի հայ գաղթականութիւնն ունեցեր է փոքրիկ և գեղեցիկ մատուռ մը, որ կեդրոն եղած է, գէթ կիրակի օրերն իր մէջ հաւաքելով քաղաքին հայ տարրն։ Որովհետև տեղւոյս Հայոց մէջ շատեր կան որ չեն հասկնար հայերէն լեզուն, Աբժ. Եսայի վարդապետ հրատարակած է Հայատառնեայց եկեղեցւոյ Պատարագամատոյցը, հայերէնի հետ անգլիերէն ալ դէմ առ դէմ դնելով։ Ա՛յդ հայ—անգլիերէն հրատարակութեամբն բաւական թուով օրինակներ շարուած կան մատրան մէջ պատեղաններու վրայ։ Լոնտրայի մէջ վերջին տասն տարիներու մէջ ժամանակ մը կը հրատարակուէր Հայաստան լրագիրը, և ապա l'Arménie անուն. Մ. Զերպի խմբագրութեամբ. հոս հրատարակուած են նաև Հրեշտակն և Ապտակ, առաջինն երբեմն կը գալի և երբեմն կ'սկսի. կը հրատարակուի նաև Նոր Կեանք և Մարտ։

Անգղիոյ մէջ, Լոնտրայէն 5 ժամի չափ հեռու է Մանչեսթերը վաճառաշահ քաղաքը, ուր պատուաբեր Հայոց գաղթականութիւն մը կայ։ Մանչեսթերի Հայք գրեթէ ամէնքն ալ վաճառականական գործերով կ'զբաղին. մեծ մասը կ. Պոլսեցի և Զմիւռնիացի են. կան նաև Հայաստանի մի քանի քաղաքներէն հայ վաճառականներ։ Ա՛յս գաղթականք կառուցած են վայելչագիր փոքրիկ եկեղեցի մը հանգերձ պարտիզով և ունին իրենց հոգեւոր հովիւ։ Մանչեսթերի հայ գաղթականութիւնը եւրոպացնակ հայ գաղթականութեանց մէջ միշտ կարեւոր դիրք մը բռնած է և հայութեան փառք և պարծանք կը բերէ։ 1898 տարւոյ մէջ Մանչեսթերի քանի մը երիտասարդ հայեր, սկսան հրատարակել Վաղուան Հայը վերնագրով կիսամսեայ հանդէս մը, որուն ձայնը շուտով մարեցաւ։ — Միասկան, 459։ Արմենիա, 1888, թ. 2,3։

ԱՆԴՇՏԱՆՑ. — Փոքրիկ հայաբնակ գիւղ Վասպուրականի (Վան), այժմեան Ռուսաց գաւառակի մէջ. բնակիչք 60 տուն, ունին Ս. Յակոբեանց քարաշէն եկեղեցի մը։

ԱՆԴՈՆԵՔ կամ ԱՆԿԱՆԵՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՆԴՈՒՄԵՆԵՐՈՒ ՎԱՆՔ. Տես ՎԱՆ։

ԱՆԴՈՒՏԻՔ. — Գիշուի անուանս Միմենաց Երինջակ գաւառի մէջ։

ԱՆԵ. — Հայաբնակ գիւղ Ագնուաձոր (Բաղէշ) կամ Կիւղէ Տէրէ գաշտի մէջ։ Բնակիչք 30 տուն են և խեղճ վիճակ մ'ունին։ Գիւղիս հարաւակողմն է եկեղեցին՝ նուիրուած Ս. Յակոբեանց։ — Ա՛յս անուամբ փոքրիկ գիւղ մ'ալ կայ Ա՛յրարատայ Ուրծ և Արած գաւառի մէջ. 160 օտար բնակչօք։

ԱՆԴԱԿ կամ ԱՐԴԱԿ. — Բլուր կամ լեռնակ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, որոյ վրայ ի հնումն եղած կը թուի ամրոց։

ԱՆԴԱՄԱՆՋ. — Կրկին գիւղք Միմենաց Գողթն գաւառի, այժմեան Ագուլիսի վիճակին մէջ։ Վերին Անդամանջ ունի 260 այլազգի բնակիչներ, իսկ Ստորին Անդամանջ 330 բնակիչք, յորոց 166ը Հայք։

ԱՆԴԵՆՑ. — Մակաւարնակ գիւղ Հայոց, հին Աղձնեաց նահանգի, այժմեան Խիզան վիճակի մէջ. ունի Ա. Մ հինաւ կամ Ս. Աւետարանիս անուամբ քարաշէն եկեղեցի մը։

ԱՆԴՈՒԿ. — Աղձնեաց լերանց պարբ ձեւացնող լեռներէն մին։ Յատուկ լեռներէն ամենաբարձրն է Անդոկ, որոյ բարձանց վրայ 1894ի դէպքերու ժամանակ ապաստանեցան հայ գիւղացիները։ Լերանս գագաթէն շրջակայքը դիտողի աչքին կը ներկայանայ հեռաւոր։ Հիւսիսային կողմը կ'երկննայ ամբնաւաքէն զէպ ի հարաւ ուղղութեամբ կորոյզ լերանց շղթայն՝ որ կը բաժնէ Մուշը Յատունէն։ Հարաւային կողմը մինչեանց կը յաջորդեն Տալորիկի սարերը, յորոց նշանաւոր են՝ Մերկիտ և Սպիտակ սարերը։ Հիւսիս—արեւելեան հորիզոնի վրայ կը նշմարուին Խուխայ մեծին գագաթները։ Արեւելեան և հարաւ—արեւելեան կողմերը զետնուած է Ծովասարը իր լայնատիպ լանջերով։

Անդոկի կողքերու վրայ շատ կը բուսնի լայնատարած և մեծ տերեւներ ունեցող խաւարծիլ կոչուած բոյսը, զոր կողմանցս բնակիչը կը քաղեն և կ'ուտեն։

ԱՆԴՈԿԱԲԵՐԴ. — Կը յիշուի Օրպէլեանէն (Գլ. Գ) Միւռեաց ամուր բերդերու կարգին մէջ ի Քաշունիս, զոր անշուշտ կառուցած է Անդոկ իշխանը։

ԱՆԴՈՒԼ, ԱՆԱՊԱՏ. — Ի հնումն Գաշտային կիլիկիոյ մէջ կար այս անուամբ վանք մը, զոր 1238ին բարեպաշտ Հեթում թագաւորը և աստուածասէր Զապէլ թագուհին, իրենց Հովանաց անուանեցին։ Նոյն ժամանակները այս տեղ Գրիգորիս երգեցող ոմն Սրբոյ կ'օրինակէր աւետարան մը, Գրիգոր պատուաւոր վարդապետի և անոր Պօղոս աշակերտին համար։ Այս վանքին վրայ առ ժամս ուրիշ տեղեկութիւնք կը պակսին։

ԱՆԴՈՒԿ կամ ԷՆՏԻԿ. — Հին գիւղ Այրարատայ Հաւունունեաց գաւառի մէջ, արքունի ճանապարհէն քիչ հեռու զէպի արեւմտեան հարաւ՝ վտակի մը ձախակողմը։ Այս գիւղիս մերձաւոր լերանց լանջից վրայ գերմանացի ուղեւորն Վակնէր հանդիպեցաւ Հայոց Աղբերաց Աբիւն կոչուած գեղեցկագոյն ծաղիկներէն միոյն։

ԱՆԴՈՒՇՏԱ. — Բերդ Ծովային կիլիկիոյ մէջ, որուն կը տիրէր Պր. Պաղտին։

ԱՆԴՐԻՃ Ս. — Գուգարաց Զարեհաւոր նահանգի մէջ միայնարան, Կայանայ անտառիկ բերդի դիմաց, յորում կը բնակէր մեծ վարդապետն Վարդան։

ԱՆԴՐԻՃԱ. — Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարի, 300 բնակչօք։

ԱՆԴՐԻՃԱ. — Գիւղ կամ աւան Թաւիտաց, Ղզլարի հարաւակողմը, մէկ ու կէս օրուան ճամբայ հեռու, Սուլուբ և Աքսայ գետոց մէջտեղ. ամբացած է բարձրաբերձ լեռներով և անառանելիով։ Հոս կան նաեւ բազմաթիւ Հայեր, որք եկած են Գարբռնդէն և Տփղիսէն և վաճառականութեան կ'զբաղին. ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին։

ԱՆԴՐԻԱՍԱՆՑ ԲԵՐԴ. — Լեռնային կիլիկիոյ հին բերդերէն մին։

ԱՆԴՐԻԱՍԱՆՑ կամ ԱԼԱՊՈՋԱՆ. — Գիւղ կամ սակաւաբնակ փոքրիկ շինտեղի Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի հարաւակողմը 4—5 ժամ հեռաւորութեամբ։ Ապրէլ կոչուած է բնակչաց մէջ նշանաւոր եղող Անդրեաս անձի մը անուամբ, իսկ Ալապոզան կը կոչուի ի Թրքաց։

ԱՆԴՐԻՆ ՎԱՆՔ կամ ԱՆԴՐԻԱՍԱՆՑ ՈՒԽՏ. — Ի հնումն հռչակաւոր վանք Լեռնային կիլիկիոյ մէջ, Բարձրբերդի մօտ։ Վանքս զրոց յիշատակարանաց մէջ մեզ ծանօթ է ԺԲ դարու վերջերէն մինչև ԺԴ դարու կէսը. հոս գրուած են զանազան եկեղեցական մատեանք, աւետարան, շարական, մանրուսումն, են։ Կ'երեւի որ Բարձրբերդի եպիսկոպոսանիստ վանքն եղած ըլլայ այս Անդրիասանց Ուխտը, որոյ անունն կը յիշուի իբրև առանձին թեմ՝ Յովհաննէս Արքայեղբօր Բարձրբերդի եպիսկոպոս և տեսուչ անուանուելէն առաջ. իսկ հաստատութիւնն Ռուբինեանց տիրելէն առելի կանխագոյն կ'երեւի, յանուն Սրբոյն Անդրէի Զօրավարին և Բանակի եորին, որք այս կողմերս նահատակեցան։ — Միսռեան, 149—151։

ԱՆԴՐԻ. — Աբարկերի մօտ գիւղ այլազգաց։

ԱՆԴՐՈՒՆ. — Կը յիշուի այս անուամբ Հայոց գիւղ ի Կիլիկիա, 1332ին գրուած մաշտոցի մը յիշատակարանին մէջ։ Կը կար-

ծուի որ գիւղս կը գտնուէր դաշտային կիլիկիոյ մէջ, Ջահան գետը թափող Ակտրըն–առ կոչուած վտակի մօտերը. վասն զի հոն դաշտին ծայրը տակաւին կ'երեւին աւերակներ եկեղեցւոյ մը և բերդի։

ԱՆԵՄՈՒՆ. Տես ԱՆԱՄՈՒՆ։

ԱՆԶՈՒԻ կամ ԱՆԶԻՒ. — Այս անուամբ ի հնումն երեք հայաբնակ գիւղեր կային Սիւնեաց երկրակ գաւառի մէջ, կոչուելով Վերին, Միջին և Ներքին, յորս կը բնակին այժմ այլազգիք և կ'անուանեն Պաշ, Օրթա, և Տիպ Ակզոր։ Ակզոր անուն կ'ոտուգաբանուի իբրև աղաւաղումն Ընկուզաձորի, վասն զի այն ձորակն՝ յորում կը գտնուին այս գիւղերը, ունի բազմաթիւ ընկուզենիներ։

Վերին Անզուր բնակիչք են 228. ուր կը տեսնուին տակաւին Հայոց ժամանակէն մնացած քարաշէն, վայելչակերտ և փոքրագիր եկեղեցւոյ մնացորդները. սիմնաքարէ և կամարակապ տանիքն ինկած է. սեղանոյն երկու կողմերն կան երկու փոքրիկ աւանդատուն։ Դրան արտաքին ճակատաքարի վրայ Ռ՚ԿԸ (=1719) թուականին արձանագրուած է հիմնարկողի անունն։ Գիւղիս ամբիւմասկովին է Հայոց ընդարձակ գերեզմանատունը։

Միջին Անզուր ունի հազիւ 50 բնակիչ, հոս ևս կան հայ շինուածոց կիսակործան աւերակներ։ Ասոր եկեղեցին աւելի աւեր վիճակի մէջ կը գտնուի. կառուցուած է գիւղի արեւմտակողմը բարձրաւանդակի վրայ՝ մեծ մեծութեամբ և անշուք։ Հարաւակողմը՝ մերձակայ Հայոց գերեզմանատան մէջ կան ԺԲ դարու վերաբերեալ թուականներով տապանաքարեր։ Եկեղեցւոյ արեւելեան կողմն ևս, ճանապարհի ձախ թեւի վրայ կայ ուրիշ հնագոյն գերեզմանատուն մը, որուն տապանաքարերու արձանագրութիւնք եղծուած են։

Ներքին Անզուր ունի 262 բնակիչ. կանխաւ եղած է Հայոց բազմամարդ աւան մը, որուն ապացոյց են կիսաւեր, քարաշէն և փառաւոր շինութեանց մնացորդք և ընդարձակ գերեզմանատունը։ Եկեղեցին վերի երկուքէն աւելի մեծ և հոյակապ շէնք է չորս սիւնեպով. տանեաց մէկ մասն և որմոց շատ տեղերն փլած են։ Գիւղիս մէջտեղ ձգուած կայ ձիթհանքի քար մը՝ Ռ՚ՃԾ (=1701) թուականաւ արձանագրութեամբ։ Գերեզմանատան մէջ կան ԺԶ դարէն մինչև ԺԸ դարու սկիզբներու վերաբերեալ թուականներով և արձանագրութեամբ տապանաքարեր։ Այս թուականներէն կը յայտնուի որ գեռ ԺԸ դարու սկիզբները հայաբնակ էին այս գիւղերը, նոյն դարու մէջ, Թշնամեաց անողոք սուրն և բռնակալութիւնն ջնջեր է այս գիւղերու հայ բնակիչներն և կործաներ նոցա յիշատակներն։ — Միսակաե, 361–362։ Հնոտրիւնք Հայրենեաց, 116–120։

ԱՆԷ. — Կիլիկիոյ հին բերդերէն մին։

ԱՆԷԺ. Տես ԱՂԱՀԷՃ։

ԱՆԷՐ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան վարդոյ վիճակին, բնակիչք Հայք և Քուրդք խառն։

ԱՆԷՆՖԷԼՏ. — Գիւղ Եղիսաբեթուպոլի գաւառի մէջ. բնակիչք 500 հոգի, յորոց 60ք հայ։

ԱՆԸՍՏԱՆ. — Հին գիւղ Վասպուրականի Բողունիք գաւառի մէջ, կը յիշուի Թ. Ադծրունիէն։

ԱՆԹԱՆԱՆ կամ ԱԹԱՆԱՆ. Տես ԱԹԱՆԱՆՑ։

ԱՆԹԱՆԵԱՑ կամ ԱԹԱՆԱԳԻՆԵԱՑ ՎԱՆՔ. — Հին մենաստան Աղձնեաց Տաւրոս գաւառի մէջ Մոճկունիս գիւղի մօտ։ Աւանդութիւնը վանքս շինուած կը համարի Ս. Գրիգոր Լուսաւորչի Աբիատակէս որդիէն։ Ցայժ ամայի և աւերակ վիճակի մէջ լինելով, 1849ին մշոյ Մեղոի գիւղէն Պօղոս վարդապետը՝ միաբան Առաքելոց վանքի, ի հիմանց վերանորոգեց։ Վանացս չորս կողմը անտառ է կաղնի ծառոց և կան գեղատեսիլ բլուրներ, գիմացէն ալ կարկաչաձայն կը հոսի գետակ մը՝ որուն եզերքը մատրանաձև տեղէ մը կը բղխէ առողջարար ջուր։ Կը կարծեն ոմանք, թէ ի հնումն այս վանքի մէջ պահուեցաւ Ծիծառնէից խաչը։

ԱՆԹԱՊ կամ ԱՆՏԱՓ. — Այժմեան Պայազիտի կառավարութեան հինգ բաժանումներէն մին, որ ըստ ոմանց կը համապատասխանէ Տուրուբերանի Տուարածատափ գաւառի։ Սահմանքն են յարեւելից Արածանի, հարաւէն Քէօսէկայ ջուրը, յարեւմտից Բարազան լեռները մինչև Բասեան, որ զգ–Խնուս կը բաժնեն Ախթամպէն, և հիւսիսէն

Ղլիճկեաուկի շղթայն, որ բարձրացած է Ալաշկերտի և Անթապի միջավայրն։

Անթապ գաւառակն որ այժմ 100է աւելի զուտ քրդաբնակ գիւղեր ունի, 1760–80 թուականներուն ամբողջապէս հայաբնակ էր. 1815–20 թուականներուն դեռ ժողովրդեան կէսը հայ էր, 1830ին 30 մեծ գիւղեր կային։ Ամբողջ բնակչաց թիւն այժմ կը հաշուի 8000, յորոց հազիւ թերեւս 500ը հայ լինին։ Արածանւոյ ալ ափին վրայ 12 ժամ ի հարաւ և նոյնչափ եւս յարեւմուտս տարածուած անհարթ երկիր մ'է Անթապ, և թերեւս այս անհարթութեան պատճառաւ կոչուեր է Աղաւափ։

Անթապ գաւառակի ամէն կողմը կը տեսնուին հայկական հնութիւններ, եկեղեցիներ, վանքեր և բերդեր, յորոց շատերը կործանուած և շատերն եւս դեռ կանգուն կան և զտեսողս կը հիացնեն։ Գաւառակիս այժմեան քրդաց գիւղերու անուանք ատկաւին հայահնչիւն են, ինչպէս Սեւք, Տերք կամ Տէրք, Կաւէ, Կալէ, Խեւէ, և այլն. այս գիւղերէն զոմանս կը յիշեմք ի կարգին. — Բագրեւանդ, 302–4։ — Տես ԱՅՆԹԱՊ։

ԱՆԻ կամ ԿԱՄԱԽ. Աւար. ანი. Գղ. ANI, GAMAKH. Թ. خاخ. Յն. Κάμαχα. — Ի հնումն անուանի ամուր բերդ բարձր Հայոց Գարանաղեաց գաւառի, և այժմ վաճառաշահ և գլխաւոր բերդաքաղաք Երզնկայի Կամախ կամ ըստ Թրքաց Քէմահ գաւառակին։ Կ'ինկնայ Երզնկայէն Ակն տանող ճանապարհի վրայ, Եփրատայ ձախ կամ հարաւային կողմը։ Գեղեցիկ է դիրքն, պարէզներով զարդարուած դաշտի մը ծայրը, բարձր քարաձերի մը գլուխը, որ մասամբ մը պատեալ է խիստ հին և ամուր պարսպօք, և մէկ մասը ծառազարդ զառ ի վայր է. արեւելեան կողմէն կը վազէ Թաւնաձոր վտակն։ Հին ժամանակ անառիկ էր, բայց այժմ զրժուար է որ կարենայ դիմանալ ռմբակոծութեանց, վասն զի իր մօտ կան բարձր լեռներ, մանաւանդ հարաւային կողմը։

Բերդիս շինութեան ժամանակն, ինչպէս նաեւ անուան առյգ ծագումն, յայտնի չէ. թերեւս ի նախնումն Աւանիսու զիցուհւոյն անունէն առաջ եկած ըլլայ Ակն, և ի վերջոյ կամաձեւ կոչուած է, որ եղած է կմախք բառէն, վասն զի իւր մէջ կը թագուէին Արշակունի թագաւորները։ Առաջին անգամ Ակն ամրոցը կը յիշուի Ս. Արտաշիսի ժամանակ, որուն մեռնելէն վերջ, այս ամրոցիս մէջ պահեցին, անոր ծունօտատանէն առած չատատուածոց կուռքերը և անոնց քուրմերը։ Արտաշէսի որդին Տիգրան, իւր հօր քաջութեամբ Հայաստան բերած ծունօց ամենամեծ չատատուածոյն ամենաշքեղ կերպարանն, որ էր «Ոլիմպիական պատկերն» կանգնեց յԱկն, և վերոյիշեալ քուրմերն ալ սպաս կը մատուցանէին այն կուռքին։ Իբրեւ մեհենական պաշտամանց և պզրութեան տեղի մեծ հռչակ ստացաւ Ակն, ուր Ույիպ քուրմն Բ դարու սկիզբը կը գրէր ժամանակին պատմութիւնը, յորում և Արտաշէս Բի որդին Մաժան քրմապետ էր Գիսայ գլխ, ո՞րոնց երկասիրութիւններն աչքէ անցուց մեր յորասոյց և մեծ բանասէրն Բարդուծան ասորի, որ և այս տեղ ասորերէն թարգմանեց Հայոց քրմաց պատմութիւնը և Մաժանայ մահուան գլխքը։ Երրորդ գարու վերջերը շատ տարիներ հոս ամրանալով Ամատունեաց Օտայ նախարարը «իբր ի կաղապի հանդարտութեան զօդեալ» (խոր. Բ. էն) կը պահէր Տրդատայ խոսրովիգուհւոյ քոյրը, և արքունի գանձերը և կուռքերը, ինչպէս նաեւ երեքին երեսանդ թագաւորը, հոս կը պահէր քաջակորով Մժրատ Բիւրատեանի զօրաւորքը։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կործանեց ամրոցիս Արամազդայ կուռքը և մեհեանը սրբեց ու ճշմարտին աստուծոյ տաճար յարգարեց։ Արշակունի թագաւորաց վերջին ժամանակներն եւս եղաւ անոնց գանձարան և հանգստարան։ Պարսից Շապուհ Բ թագաւորը բերդիս տիրեց իւր սպարապետին ձեռքով և մեր նախարարաց օգնութեամբ, կործանեց պարիսպը և մէջը գիւղաւած թագաւորական գանձերը յափշտակելէն զատ, հանեց նաեւ վերեզմաններէն Արշակունի թագաւորաց ոսկորները. միայն Սանատրուկ թագաւորին վերեզմանը չկրցաւ քակել ամուր և հսկայապործ շինուածքին համար։ (Խոր. Գ. իկ. Բիւզ. Գ. իդ)։ Մինչեւ գարուն Բիւզանդիոյ կայսերք Ակն ամրացուցին և մէջը գրին հեծելագունդ. անունցմէ առին Հագարացիք,

յորոց առաւ Սուլթան Պայէզիտ. վերջնական կերպով նուաճեց Սուլթան Սելիմ 1515ին։

Բերդի ճանապարհը զառիվեր է և ունի անդրնաձեւ ելք և երիք դուռ. բաւական ընդարձակ է, շէնքերէ զատ ունի նաեւ անշէն տափարակ մը, որուն այլազգիք Երգեն-կեան—ևերի կը կոչեն, իբրեւ Երզնկացւոց ապաւէնի վայր։ Կան չորս քարաշէն՝ բայց լքուած եկեղեցիներ, և շատ մկիկիներ՝ երկուքը միաբերով. մկիկիներէն ամենը կանխաւ եկեղեցի եղած կը թուին։ Ամրոցին հիւսիսային կողմը լերան մէջ փորուած է խոր ճամբայ մը բոլորապատյա և երկու կամրջակ լայնութեամբ ասիճաններով, տեղ տեղ կան բնական և արուեստական լուսամուտներ, և այս սանդխաւոր ճամբուն ծայրը կը բարձրանայ գեղեցիկ աշտարակ մը, կէսը նոյն լեռնէն և կէսը արձաքար վիմօք շինուած. վերնայարկը կան լուսաբեր պատուհաններ։ Այլազգիք մինչեւ յայսօր այս աշտարակս կը կոչեն Գաւալ գրգրն չարտակը, այսինքն թագաւորի գաներ պահպանմամբ, որ կը յիշեցնէ Մեծին Տրպատայ քոյր խոսրովիփսիմեը, որ ասոր մէջ կը պահուէր։ Աշտարակիս ներսը, վերոյիշեալ ճանապարհի ծայրը կայ քարափոր լայն ջրամբար, որ կը լեցուի մօտակայ Թանտաձոր վտակէն. կան նաեւ այս քարուղւոյն մէջ մանր քարանձաւներ։

Հարաւային կողմէն բարձր լեռնէն փայտեայ խողովակներով կու գայ քաղաքին ջուրը և կը բաժնուի աղբիւրներու։ Ամրոցի արեւմտեան կողմն ալ կայ բարձր լեռ մը, միապաղաղ երեսներով, կը տեսնուի իբրեւ տաշուած և ողորկուած, և մէջը փորուած կան շատ մը կամարաձեւ գժուարելանելի քարայրներ։ Արեւմտեան կողմը լերան գագաթայրի վրան է քաղաքի շուկան հարիւրի չափ երկկարգ կրպակներով և անկէ վար Հայոց թաղը. ունին մէկ եկեղեցի շէն, նուիրուած Ս. Աստուածածնի և երկու հատ եւս աւերակ։ Իսկ քարաւերին ասորոտը Եփրատայ ափի մօտ կայ ուրիշ հոյակապ Ս. Հրեշտակապետաց անուամբ կամարակապով եկեղեցի մը, որոյ կէսը կոփուած է ժայռի մէջ և կէսը քարով և կրով շինուած։ Դարուս սկիզբը քաղաքս ունէր մօտ 1500 տուն բնակիչք, մեծաւ մասամբ Թուրքք. բայց բերդատեղին մեծ ըլլալով կրնայ բովանդակել մինչ 4000 տուն։ Այժմեան քաղաքաւանի բնակչաց թուոյն վրայ ճիշդ տեղեկութիւն չենք կրնար տալ։


Կամախ գաւառակը ունի 86 գիւղ և 3076 տուն. բնակչաց թիւն կը համարուի 18872, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք . .	14547	հոգի
Հայ լուսաւորչականք.	3505	»
Հայ բողոքականք .	189	»
Յունադաւանք . .	633	»
Գումարն...	18872	հոգի։

Գաւառակիս այլազգի բնակչաց մեծամասնութիւնք, ժամանակաւ հայ քրիստոնեաներ էին, որուն վկայք են բազմաթիւ հայանուն գիւղերն, և աւերակ ու կիսակործան տաճարներն։ Հայք այժմ ունին շէն վիճակի մէջ 9 եկեղեցի և 1 վանք, ինչպէս նաեւ 8 նախնական վարժարան։ Երկիրը լաւ մշակուած է, առատութեամբ յառաջ կը բերէ արմտիք, ամէն տեսակ բանջարեղէններ, և պտուղներ։ Ունի տասնի չափ ջրաղացներ, և արուեստական արտադրութեանց մէջ նշանաւոր են գեղեցիկ գորգերը. — Տես. Հին Հայ. 7—9։ Նոր Հայ. 101—103։ Աշիշան, Բարձր Հայք ձեռգր. 29—30։ Բիւնէ, Ա. 220—222։

ԱՆԻ. Ա. Ս. Ա. Պ. և Թ. ئا. Գ. ANI. Ն. Ани. — Հռչակաւոր մայրաքաղաք Բագրատունեաց վերջին հարստութեան. Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ. հեռու է կարսէն 20 մղոն և Ալեքսանդրապօլէն 50 վերստ։ Մոգիչ և յափշտակիչ անուն մը զարձած է Անի, որ հառաչանաց խոր արձագանգ մը հնչել կու տայ զինքը և զազգը ճանչցող Հայու մը, ոչ միայն բնաշխարհէն այլ և հեռի աշխարհներէ, Լեհաստանի գաշտերէ և Տաւրիոյ ծովակոծ եզերքներէ սկսեալ, մինչեւ այն ամէն գաղթավայրերէն, ուր կենդանի է հայութիւնն, մանաւանդ երբ անոր կիսակործան և վհետ աւերակաց տարաններն ներկայանան իրեն աչաց։ Բազմաթիւ ազգային և օտար ուղեւորներ և հե-

Անին կ՚ինկնայ Հասմոսի վանքի հա-
րաւային արեւմտեան կողմը՝ գրեթէ փար-
սախ ու կէս հեռու, Ախուրեանի աջակողմը
1500 մետր ծովու երեսէն բարձր և բարուա-



Տես յօդուածը էջ 16.

1. Դեպի Կաղզուան. — 2. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 3. Պատ դաւթի. — 4. Ս. Փրկիչ. — 5. Մանկանց. — 6. Կաթողիկէ. — 7. Ս. Փրկիչ. — 8. Դամասկոսի եկեղեցի. — 9. Ս. Գրիգոր Մագիստրոսի եկեղեցի. — 10. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 11. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 12. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 13. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 14. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 15. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 16. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 17. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 18. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 19. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 20. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 21. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 22. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 23. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 24. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 25. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 26. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 27. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 28. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 29. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 30. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 31. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 32. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 33. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 34. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 35. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 36. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 37. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 38. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 39. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 40. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 41. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 42. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 43. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 44. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 45. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 46. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 47. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 48. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 49. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 50. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 51. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 52. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 53. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 54. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 55. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 56. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 57. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 58. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 59. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 60. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 61. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 62. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 63. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 64. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 65. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 66. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 67. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 68. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 69. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 70. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 71. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 72. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 73. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 74. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 75. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 76. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 77. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 78. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 79. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 80. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 81. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 82. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 83. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 84. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 85. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 86. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 87. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 88. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 89. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 90. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 91. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 92. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 93. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 94. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 95. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 96. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 97. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 98. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի. — 99. Ս. Գրիգոր Պահլաւունի եկեղեցի. — 100. Ս. Գրիգոր Տիգրանի եկեղեցի.


պինակներ հիացմամբ և սրտառուչ նկարա-
գրած են Անին, որ աւելի քանի մը դար
հազիւ ապրած է իր փառաք և ճոխութեամբ,
մանաւանդ թէ դար մը միայն, և երկու

բարձրաւանդակի մը վրայ, որ եռանկիւնա-
ձեւ թերակղզւոյ մը կը նմանի։ Այս թե-
րակղզւոյ հարաւային կողմէն ամենամեծ և
խոր ձորի մը միջէն օձապտոյտ և փրփրա-

վար ալ երկրորդական կամ կիսակատար շը-
նորհքով. իսկ հինգ վարէ ի վեր որաշարժ
և սգաշարժ մեծ մահարձանի կաղափար
Մ՚ընծայած է և կ՚ընծայէ։

դէզ կը վազէ Ախուրեանը. արեւմտեան կողմն տարածուած է համեմատաբար փոքր՝ Ծաղկոցաձորը, որոյ միջէն կը վազէ Աչառա վտակը՝ որ ըստ ումանց կը համարուի պատմական Ռահ գետակը, արեւելեան կողմն է աւելի փոքր և սակաւաջուր Գայլիձոր կամ Գիհձորը, իսկ հիւսիսային կողմէն թեւ բակզիս լայն պարանոցով մը կը միանայ պաշտի հետ։ Եռանկիւնաձև թերակղզւոյս մակերեսոյթը հարթ հաւասար չէ, այլ ունի բարձրութիւններ. ներքին շրջապատն կը համարուի 4100 մետր, որով և քաղաքիս արամադիրը կամ երկայնութիւնը հիւսիսէ հարաւ հաւիւ կը լինի 1 հազարամետր. իսկ լայնութիւնը արեւմուտքէ արեւելք կէս հազարամետրէն քիչ մը աւելի։


Անւոյ հիմնարկութեան սկիզբն յայտնի չէ, սակայն հաւանական է որ Հայկազունք տեղւոյս անմատոյց վիրքն վիճելով հոս կառուցած են ամրոց մը, նման Բարձր Հայոց Դարանաղեաց գաւառի մէջ կառուցուած համանուն բերդին, և անունն ալ առած կը թուի նոյնպէս Անահիտ վիշուհւոյ անունէն։ Սակայն սկզբնաւորութիւնն գոնէ առանց երկար դար չանք թափելու, հեռեւինք պատմութեան։ Դեռ չորրորդ դարէն առաջ կը յիշուի իբրև լոկ բերդ, զոր շրջակայ Շիրակ գաւառով ի միասին Մեծն Տրդատ պարգեւեց, գրեթէ 324 թուականին, իր խնամի Կամսարականաց ցեղին, որոց ձեռքը մնաց մինչև Ը դարու վերջերը, յորում Կամսարականք վաճառեցին Բագրատունեաց։ Աշոտ Գ Ողորմածը՝ աթոռը Երազգաւորսէն Անի փոխադրեց. իր ժամանակ (964) քաղաքս ընդարձակեցաւ, վայելչացաւ և ամրացաւ։ Աշոտ Գը ի միջի այլոց շինեց Անւոյ առաջին պարիսպը, բուրգերով և աշտարակներով զարդարուած, և անոր առջեւը փորել տուաւ լայն խրամ մը։ Տասն և հինգ տարի վերջը իր որդին մեծագործն և սէգն Սմբատ Բ Տիեզերակալ և Շահանշահ կոչուածը, Ախուրեան



92. Անւոյ դուռը և պարիսպները։

գետին եղերքէն մինչև Ծաղկոցաձոր՝ նոր ընդարձակ հատու և ամուր պարիսպ մ'ալ բարձրացուց. լաւ քարերով և կրով ամրացուց, աշտարակներով ու բուրգերով զարդարեց, լայն խրամով շրջապատեց, անփուտ փայտով և երկամներով ամրացուց դռները. միով բանիւ իր ժամանակ Անին ամրութեան և վայելչութեան ծայրն հասաւ, ապրայոց սիրելի և պանծալի, իսկ օտարաց նախանձելի դառնալով։ Անւոյ տիրանալը և արտաքին ու ներքին խշտամբ ներէ հետզհետէ ոտնակոխ լինելը սկսաւ Գագկայ Առաջնոյ մահէն վերջը՝ իր Յովհաննէս և Աշոտ որդւոց ժամանակ 1020

թուին։ Թագաւորական գահը ժառանգելու համար երկու եղբարց մէջ վէճ ծագելով և նախարարաց և ժողովրդեան մէջ կուսակցութիւններ կազմուելով՝ սկսաւ նոքին պատերազմ, յորմէ օգուտ քաղելով 1021ին Վրացիք եկան Անին պաշարեցին, և առաջին բարոյական և նիւթական հարուածը տուին։ Փիչ վերջը 1040ին քաղաքս պաշարեցին Ցունաց Միքայէլ կայսեր 100000 զօրքերը, որոց անասելի քանութեամբ դէմ դրին Հայոց 30 հազար հեծեալները և 20 հազար ձիաւորները, առաջնորդութեամբ ալէզարդ և քաջարի վահրամ Պահլաւունւոյ։ Երրորդ անգամ Անին պաշարուեցաւ 1042ին ճաս եղան Անեցի Հայոց գաղթականութեան վտանգաւոր գործին։ Հինգերորդ անգամ 1094 թուին Սկիւթացի Թաթարք 7000 զօրքով Անին պաշարեցին, բայց Գրիգոր իշխանը իր քաջ զօրականներով զինչտամին ցրուեց։ Վեցերորդ անգամ Հայոց ցանկութեամբ Անին պաշարուեցաւ վրացիներէն և 60 տարի Պարսից ձեռքը մնալէն և օրէօր քանդուելէն յետոյ 1124ին անցաւ Վրաց Դաւիթ թագաւորի ձեռքը։ Անոյ Վրացւոց ձեռքը անցնիլը լսելով Ալփասլան սուլթանի որդին Փառաւ, ի Պարսից բազմաթիւ զօրքեր վարձելով, ամբողջ տարի մը Անին պաշարելէ վերջ, տասանաւ ժողովրդեան հետ




93. Անոյ արեւմտակողմեան մերկին պարիսպները։

մէկ կողմէն Մոնոմախոսի զօրքերէն, և ասոր թելադրութեամբ, միւս կողմանէ Պարսիկներէն, որոնք թէև Գագկայ կարիճներէն հալածուեցան, սակայն յաղթութիւնը չպատկուեցաւ. վասն զի ներքին շփոթութեան պատճառաւ, 1046ին Մոնոմախոսի զօրքերը կրկին Անին պաշարելով, վերջապէս անոր և գաւառին տիրեցին, և երկրի կառավարութիւնն ալ ենթարկեցին իրենց իշխանութեան։ 1064ին Ցունաց տիրապետութեան ժամանակ Անին պաշարուեցաւ Սելջուկ Ալփասլանի բազմաթիւ զօրքերէն, և մեծ սրածութեան, աւերածի և քանդման ենթարկուեցաւ։ Այս ամենայն խժդժութիւնը պատպայման կապից և մնաւ քաղաքը (1126ին) առանց ո՛և է վնաս հասցնելու. այս երկար պաշարման միջոց, Հայ ժան տ՚Արքն Այծեւենիկ տիկին, քանի՛ քանի՛ անգամներ իր կանացի կուրծքը դէմ տալով թշնամեաց նետերուն, կառավարեր կը կոչէր քաղաքի պարիսպներու վրայէն։ Երեքերորդ անգամ 80000 զօրքերով Անին պաշարեց Շահարմէն ամիրան, և թէպէտ վրաց Գեորգի թագաւորը մեծ կոտորած և վնաս հասուց անոր զօրաց, բայց այնու հանդերձ երկար ժամանակ չկարողանալով պարսկական անընկճելի յարձակմունքներէն պաշտպանել իր աշխարհը, ստիպուեցաւ Անին անոնց վե-

բաղարձնել, թէև 1174ին գօրանալով նո-
բէն եա առաւ։ Ովթերօղլ անգամ 1239ին
Թամթարաց Ջարմագան խանը մեծ աւերա-
ծով տիրեց Անւոյ. և անկէ վերջ գար մը
միջոց ալ շատ անգամ վտանգուելով և
նորոգուելով՝ հասաւ իր յաճին մեծ ար-
կածին, այսինքն բնդհանուր կործանման,
աւերման և անմարդութեան։ Սակայն տա-
կաւին անյայտ մնացած է և պատմութիւնն
հիանալի լռութեամբ մը կեռ ծածկեր է
ձեզմէ. Անւոյ վերջին ամայանալուն ժամա-

դատաւններ մեր բնաշխարհի և օտարու-
թեան մէջ ապրող, օրք իրենց նախահարց
քաղաք կը համարին զԱնի։ Անիէն գաղ-
թողաց պիտուր տեղերն են Հայաստանի
մէջ, Նախճաւան, Ջուղա, Վան, Սիս,
Համշէն, Կարին, և Փոքր Հայոց մէջ, Սե-
բաստիա և Տրապիզոն. իսկ հեռաւոր օտար
աշխարհաց մէջ Վրաստան, Ազտրախան,
Ազովբայ, Ղրիմ և Լեհաստան։ Այս գաղ-
թականութիւնք ամբողջ մի և նոյն ժամա-
նակ եղած չեն, այլ ժէ դարու կիսուն ի



94. Անւոյ արեւելեան կողմի պարսպի բուրգերը։

նակն և պարագաներն։ Շատերը կը կար-
ծեն, որ 1319ին մեծ երկրաշարժն, բազ-
մաբնակ, բազմաշինեալ և բազմահարուստ
քաղաքս գարձուցեր է ի բազմաշխարհի ա-
ւերակ, և ի թագուհի աւերակաց աւերա-
կացեալն Հայաստանի։ Բայց որչափ ալ մեծ
վնաս հասուցած լինի այդ երկրաշարժն, ա-
ւերակ եկեղեցեաց մինչև ԺԴ դարու կիսէն
վար գտնուող արձանագրութիւնք, կը ցուցը-
նեն, որ յետ երկրաշարժին տակաւին շէն
էր Անի։ Մինչև ցարդ իսկ կան շատ գեր-

կափա գրուած յայտմաւուրքի մը յիշատա-
կարանին համեմատ, յԱքսէրայ գաղթած
են ԺԳ դարու վերջերը 1299ին, ի Ղրիմ՝
1330ին, և այլն։ Թէ և ամայացած՝ տա-
կաւին առաջին դարուց մէջ՝ այսինքն ԺԱ—ԺԲ,
յայտնի է թէ աւելի շէն էր, քան յետին
ԺԱ—ԺԲ և մեր դարուն մէջ, յորում սկսաւ
քննուիլ և ծանօթանալ։ 1638ին սկսեալ
մինչև վերջին Ռուսաց և Թուրքաց պատե-
բազմը (1877) Անին ժառանգութեամբ մնաց
Խաթու Օղլուի ցեղի ձեռքը, և կը ծառայէր

իբրև արուարձանի հովուաց։ Գարուս (ბორ) սկիզբները կը յիշուի Անի Աբուխանի վիպասանութեան մէջ այսպէս. 1820 տարուոյ յուլիս 23ին Ագասի վիւցարդը գումարելով իրեն հետ 300 քաջակորով հայազգի երիտասարդներ և ապստամբելով ի Պարսից, ամրացաւ քաղաքիս աւերակաց մէջ. և Հիւսէին խանը յանգէաս այստեղ գալով և զօրաց հանգիստ առած ժամանակ, յանկարծակի Ագասեանք յարձակեցան Պարսից վրայ, շատը կոտորեցին, մէկ մասը փախուցին և իրենք ալ աւարն առնելով գացին Կարս, ուր մեծ սիրով ընդունուեցան Փաշայէն։ Պատմական այսչափ տեղեկութիւններ ի մի տեղ գտանին հաւասար՝ տեղ տեղ կիսատ կործան, աշտարակներ ալ ունի բայց սակաւաթիւ են և՝ ներքին պարսպին չեն հասարիր։ Ներքին պարիսպը (թ. 94) աւելի ամբողջ և անկործան մնացած է. միւս պարսպի նման կառուցուած է գլխաւորաբար սև, կարմրագոյն գեղին և մոխրագոյն կաղնաչ տաշած քարերով։ Աշտարակներն կը բարձրանան մէկ մէկէ քիչ հեռու. քարէ են և բաւական ճարտարաշէն, բայց ամենուն ծայրերն ալ քիչ շատ քանդուած ըլլալով՝ որոշ բարձրութիւնին չի գիտցուիր։ Այս աշտարակներուն շատն բոլորաձև են և սակաւք բառակուսի. ամէնն ալ երկայարկ



95. Դունայ կամ Երեւանայ դուռը։

ամիոփելէ վերջ, սկսինք այժմ մի առ մի համառօտիւ պիտել և հետազօտել Անւոյ կիսակործան և աւերակ վիճակի մէջ իսկ վեհ մնացորդները։ Անին շրջապատող պարիսպներէն հարաւային կողմինը կործանուած է և բնական ամրութիւն ունի Ախուրեանի ձորը, ինչպէս նաև արեւելեան կողմն։ Հիւսիսային կողմն, որ ինչպէս կանխաւ ըսինք, լայն պարանոցաձև մնացած է Շիրակայ դաշտի հետ, պատած է ներքին և արտաքին կրկին պարիսպներով. երկու պարսպաց մէջտեղի լայնութիւնն է գրեթէ 20 քայլ։ Արտաքին պարիսպը Ծաղկոցաձորի գունէն մինչև արեւելեան կողմը կը հասնի, տեղ տեղ կամ եռայարկ են և քարէ կամարակապ ներով. ներսի եզերաց կողմէն անցուխներ ունին, որ մէկ յարկէն մէկալը կը հանեն։ Աշտարակաց, ինչպէս նաև պարսպի վրայ, կան այլ և այլ ձևերով վայելուչ քանդակներ և արձանագրութիւններ։ Այս աշտարակները միայն քաղաքը շրջող և գարշապարող Աշոտի և Սմբատայ կառուցածները չեն, այլ անոնց առեն և անոնցմէ վերջը եկող իշխանազուն մարդկանց ալ, ինչպէս կը յայտնուի վրայի արձանագրութիւններէն. և կ՚երեւնայ թէ գանոնք շինած են թէ՛ իրենց յիշատակին և թէ իրենց պալատներու պաշտպանութեան համար։ Այս աշտարակ-

Ներու բազմութենէն յայտնի կը լինի նաև, թէ Անի ունէր բազմաթիւ պահապան զօրքեր, ինչպէս մեր պատմութենէն ևս գիտենք։ Աշտարակներէն կամ բուրգերէն իրեն նշանաւոր յիշենք գէթ երկուքը, զորս Շահնուշ անուանած խաթուն մը ԺԲ դարու քրիստոնեները կառուցանել տուած է. իւրաքանչիւրին վրայ փորուած են քարէ գոյգ մը վիշապ, որ պարսպէն երևելով՝ մէկ մէկու կը պլլուին աշտարակաց վրայ մինչև վեր, և հան երկուքն ալ պլուխ պլխի կը բերեն, մէջերնին ալ եղան պլուխ մը և ուրիշ զարդ մը կայ։ Բրգանց վրայի արձանագրներէն և Տիգրանակաց։ Այս անուններն առած է իւրաքանչիւր դուռ ըստ իրեն գրից։ Աւագ կամ միջին գրան երկու կողմը լայն և բարձր աշտարակներ կան. մէկուն վրայ քովէ քով երեք գեղեցկաքանդակ մեծ խաչեր կան կարմիր քարէ. միւսին մօտ պարսպին վրայ քառակուսի մեծ քարով առիւծ մը քանդակուած քալելու դիրքով։ Ռուս հեղաքննողն վայրացս Մուրաւիեֆ՝ 1846ին փախանակ այս գրանս, խօշունի կամարագուռն կարծելով Անույ նախագուռն, անոր վերագրած է իտալացւոց աշխարհածանօթ քիրմոզահօր Տանիէլի Դժոխոց գրան վերատաւութիւնն.



96· Անույ կաթուղիկէին արտաքին տեսքը։

կը յայտնուին շինել տուողաց անուանք, յորոց յիշենք Զաքարիա, Լաւոտա, Մխիթար Գանձակեցի, Աբրահամ, Աշոտ իշխան, Սարգիս որդի Սամուէլի, Մամխաթուն, և այլն։

Անույ պարիսպներու կիսակործան վիճակէն անկարելի է որոշել իր գռներու ճիշդ թիւն, սովորաբար արտաքին պարսպին միայն երկու դուռն կու տան, իսկ ներքին պարսպի գռներէն կը յիշուին հետեւեալք. Աշտակ դռուն, Գաղտ, Գիհաձորի, Գետակկրոցի, Գռեհայ (թ. 95) կամ Երևանայ, Իգաձորի, Ծաղկոցաձորի, Կամրջաց, Կարուց, Զորդռուն

Per me si va nella città dolente; . . .

Ընդ իս մուտք են ի քաղաքն ադետաւոր . . .

Եւ յիրաւի, երբ այս գռնէն ներս մտնես, սովի ակնարկ մը տանք, ահա բովանդակ ադետաւոր կամ տրտմաթախիծ Անին մեր դիմաց կը տարածուի, ջարդած, փշրուած, փլած, ահագին աւերակներ գարձած. կը տեսնուին գեղեցիկ քանդակներ, սիւներ, խոյակներ և այլ բազմատեսակ շէնքերու բեկորներ հողի հաւասարած և ծածկուած։ Այս ծովանման աւերակաց մէջ դեռ կեցած

են քանի մը հայակառ շէնքեր, իբր յատկանական յիշատակ աշխարհաքարոզ քաղաքին. ուր էր թէ ժամանակը բառնականա-նալով իր մինչև ցարդ ըրած աւերմունք-ներով, խնայէր այս քանի մը մնացորդնե-րուն մինչև որ բաղդի շրջանն դառնալով՝ վերսին ոտնին Անի մարգարնակ և հա-յաբնակ լինէր։


Անին իբր պայծառութեան օրերն այն-չափ շէն և բազմամարդ էր և լի հարստու-թեամբ և գեղեցկութեամբ, որ յաւուրն ա-ռակ մ'ալ ունեցեր է. «Անին շէն, աշ-խարհս աւեր. աշխարհս շէն, Անին աւեր». այսինքն երբ Անին շէն էր՝ բոլոր աշխարհը գուցէ նոյնչափի նշան ալ գտնուի։ Սակայն կրնանք ընդունիլ Անուց հազար ու մէկն՝ եթէ խորհրդածենք, որ նախ ժամանակն՝ անգութ օդնականներով՝ ոչ միայն զարկ զար այլև տարիէ տարի կը մաշեցնէ, կոր-ծանէ և հողաթաւալ կը ծածկէ շինուածեան նշաններն ալ. եօթանասուն տարի հաղիւ կայ՝ որ սկսան ճանապարհորդք քիչ մը աւելի մտապրութեամբ քննել զԱնի. և երբ անոնց զրուխիւնները ժամանակի կարգաւ կարդանք, զգալի փոփոխութիւններ կը գըտ-նենք նախորդներու և վերջիններու մէջ։ Թէպէտ պատմիչք այն առակաւոր հազար ու մէկէն զատ թիւ մը չեն բսեր եկեղեցեաց,



97. Անուց կաթուղիկէի ներքին տեսքը։

աւերակ կ'երեւար անոր պիսաց. երբոր Անին աւերեցաւ՝ այն ատեն աշխարհս շէն երե-ւեցաւ։ Սակայն իր շրջագրութեան և մեծու-թեան համեմատ, խիստ փոքր է իր պարըս-պաց միջի տարածութիւնն, և այսպիսի փոքր տեղւոյ մէջ անհնարին երեւցած է շատերուն՝ հազարաւոր եկեղեցիներ և պա-լատներ լինելը։ Ցայտնի է որ «Անուց հա-զար ու մէկ եկեղեցին» բսել և երդնուլը՝ ազգային առակ մ'է բազմաթիւ նշանակե-լու. այսօր եթէ նկատենք Անուց մնացած աւերակները՝ հաղիւ 20 եկեղեցի և մա-տուռն որոշ կը նշմարենք, թէ՛ կանգուն թէ կործան, և թէ աւելի մանր տեղիներ՝ յանուանէ ալ՝ հիմնական մնացածներէն զատ հազիւ հինգ վեց մը կը յիշուին, և թէպէտ մեր միջին անուանի պատմիչներէն մին՝ Կիրակոս՝ միայն «Եկեղեցի բազում կայր ի նմա» կ'ըսէ և կ'անցնի, սակայն իրեն ժամանակակից եւրոպացի մը, Անիէն անցած ատեն 1255ին, կը յիշէ որ 100 եկեղեցի կար հոն և 2 մզկիթ։ Իսկ անկէ դրեթէ 30 տարի առաջ գրող Արաբացի պատմիչ մը՝ կ'ըսէ, թէ Ալփասլանի Անին առնու ժամանակ՝ 500էն աւելի եկեղեցի կար հոն։ Եթէ ատոնց վրայ աւելցնենք նաև Պագրատունեաց լայն քարափանց վրայ փո-րուած մատուռներն և շրջակայից եկեղե-

ցիներն և մատուռնք, ինչպէս նաև աշտարակաց մէջի խորաններն, վասն զի Վարդան պատմիչ ներքնատարապին համար կ'ըսէ, թէ շինողն՝ Աշոտ Ողորմած՝ «զամենայն բզուռնան եկեղեցիս յօրինեաց», մանաւանդ եթէ եկեղեցեաց ամէն մէկ խորաններն առանձին եկեղեցի համարինք, ինչպէս կ'երեւան ալ են, այն ատեն առակն աստուածաշունչ կը դառնայ։ Անհաւատալի չի լինիր այլ ևս Անւոյ 1001 եկեղեցին, մեծ ու փոքր, հանգերձ մատրամբք գերեզմանաց և խորանօք. և ժ՞ դարու պատմիչն Մատ-




98. Կաթուղիկէի խորանին խորշերը։

թէոս Ուռհայեցի՝ կրնայ ըսել Անւոյ պայծառ ժամանակին համար, թէ «Ցայնմ աւուր հազար և մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի Քնի». ինչպէս որ բնակչաց համար ալ կ'ըսէ. «Էր Անի բազմամբոխ, լցեալ քաղաքն, բիւրք բիւրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց. որ և հիացումն արկանէր տեսողացն. զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց էգէ»։ Ո՛ւր թողունք և սուրբ երկրեայ քաղաքը. վասն զի Անւոյ մէջ տեղ տեղ ներքնատուներ ըլլային անտառակոյս է, և արդէն քանի մը տեղեր գետնափոր մատեռներ ծանօթ են, որոց մէկն նոյն իսկ Ախուրեան գետոյն տակէն կ'անցնի, ինչպէս Լենոնոնի Թամիզ գետոյն գետնանցքն. կ'ըսուի նաև, և չէ անհաւան, թէ քաղաքին մեծ մասն կամ բոլորն ալ իր ներքնայարկն ունի, ինչպէս ուրիշ քանի մը աշխարհաց մեծ քաղաքներն ալ, զոր օրինակ Հռոմ, Փարիզ, և այլն. ուստի անտառակոյս եկեղեցիներ և մատուռներ ունէր նաև ներքնայարկն։

Անւոյ այժմեան, գուցէ և ի հնումն ունեցած շինուածոց և աւերակաց վհկագոյն և սրբազնագոյնն է մեծութեամբն և գեղեցկութեամբ հոչակաւոր Մայր Եկեղեցին կամ Կաթուղիկէ Ս. Աստուածածին (թ. 96), որ կ'ինկնայ քաղաքին հարաւ — արեւելեան կողմը։ Ասողիկ (Գլ. Լ.) հետևեալ կերպով կը նկարագրէ մեծակառոյց եկեղեցիս. «ա մեծապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք զմեհեծաւորեալ՝ խորան երկնանըմման. (զոր շինողն) զարդարեաց ի զարդ ծիրանեծագիկ ոսկեքեզել անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց, և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որով ջահանայր ըստ երկնային կամարին, կաթուղիկէն սուրբ»։ Իր սրբազան գրկաց մէջ կը մանկանայնի Բագրատունի Շահանշահք մեր. թագաւորք և հայրապետք կ'օծուէին, և կը կատարուէին շատ սքանչալի և մեծամեծ հանդէսներ։ Ինչպէս որ Անին մեր ազգային ճոխութեան և ճարտարապետութեան յետին և յայտնի թագաւորն է, կաթուղիկէս ալ անոր գլխոյն է և հազար ու մէկ եկեղեցեաց թագուհին։ Բնութիւնն և բնութիւնն երկար ժամանակի մէջ չեն յաջողած բոլորովին հիմնայատակ կործանել հրաշակերտ տաճարս, վասն զի հաստատ հիմն և ամուր պատեր պրած էր անոր կանգնողն կամ սկզբնաւորողն՝ Սմբատ Տիեզերակալ. և հինգ կարգ մեծամեծ քարերով ալ ասպիճանաձև եկեղեցւոյն չորս կողմը պատեր։ Թիրքն կը թուի որ քաղաքին բարձրագոյն յատակին վրայ էր. անոր համար մինչև այսօր իսկ այնպէս մեծ, վեմ և ահեղահայեաց կ'երեւի։ Խորհրդաւոր ժամանակ մը՝ Քրիստոսի


երկրորդ հազարամեայ զարուն սկիզբն ա-
ւարած է կաթուղիկէի շինութիւնն, Ամբա-
ւայ հարսին, և Գագկայ կնոջ Կատարա-
միկ Թագուհւոյն ձեռամբ։ Այս մեծակա-
վրայ է պանծալի արձանագրութիւնն կատ-
րանիկէ կամ Կատարամիկէ Թագուհւոյն, որ
կը յայտնէ թէ կառուցած է զայն հրամա-
նաւ ամն իւրոյ Գագկայ շահանշահի։ Եկե-




99. Կաթուղիկէի քանդակներէն նմուշներ։

ոյց եկեղեցւոյս շինութեան համար, ոմանք
կը համարին որ տեւած ըլլայ 20 տարի,
և այլք 4 տարի 989էն մինչև 993 թուա-
կանը։ Կաթուղիկէի հարաւային կողման
կեցւոյս օծողն՝ Սարգիս կաթողիկոս, ուրիշ
արձանագրութեամբ մը կը յայտնէ իր հրա-
մանն, թէ ամսոր մահէն վերջը, վարպետէն
սկսեալ 50 օրուան միջոց՝ 40 օր եկե-

դեցւոյս սպասաւորք պատարագին վասն հոգւոյ Կառաբանիզեայ բարեպաշտ թագուհւոյ։ Մինչ Կառամիզէ թագուհին մայր եկեղեցւոյ շինութեան կ՚զբաղէր, Գագիկ թագաւորն ալ, կը համարուի որ մի և նոյն ժամանակ ուրիշ հոյակապ և հիանալի յիշատակարան եկեղեցի մը կը կանգնէր յԱնի։ Ասոր կը վկայէ բնիկ Անեցի Յամուէլ պատմիչն՝ և իրմէ առաջ ալ ծերունի ժամանակակիցն Ասողիկ կ՚իմացնէ, որ Գագիկ ի կուսէ Յովհաննէսեան՝ ի բարձրաւանդակ տեղւոջն, տարիատենչ տեսողացն, մեծատաշ վիմարկեան կոփածոյ վիմօք, մանուածոյ քանդակեալ յօրինուածովք, լուսանցոյց պատուհանօք, երկաթի գրամբք, սքանչելատես տեսմամբ գմբեթաւորեալ, գունակ գեղամբարձ և երկնանման գոլոն»։ Այս խօսքերէս կ՚երևի թէ թագաւորին շինածը մեծի բաղմապարկ մանր աշխատութեամբ շինուած էր քան թէ կաթուղիկէն. սակայն



100. Կողմնակի տեսիլ կաթուղիկէին։




101. Ս. Գրիգոր Ապուղամրենց։


ուղղով կենդանացնել մեծ յիշատակ մը, — այսինքն Ներսէս Գ. Շինող կաթողիկոսի է. դարու կիսուն՝ վաղարշապատու մէջ շինած հրաշալի յուշապարտ և մեծ եկեղեցին Ս. Գրիգորի, որ այն առեն կործանած էր, բայց աւերակներն կը քարոզէին իր մեծութիւնը և ճոխութիւնը, — ազնուախոհ թագաւորն անոր չափն և ձևն առնուլ տուաւ և սկսաւ «նոյնաձև չափով և յօրինուածով յարդարել ի բազաքն Անոյ. հիմն արկեալ

կամ ոչ հաւասար հաստատուն, և կամ աւելի նախանձու նպատակ ըլլալով, այսօր իր մեծն գարմանալիքէն անհետացեալ եղած է աւերակաց կոյտերու տակ։ — Կաթուղիկէի ձևն է քառակուսի՝ 35,53 մետր երկայն, և 23,64 մետր լայն ամբողջապէս շինուած է գեղին, սև, կարմիր և գորշ գունով հրաղկայնի կոփածոյ քարերով։ Արևելեան, հիւսիսային և հարաւային կողմերը դրէն երկերկու սիւն՝ պատը սուր անկիւ-

նաձև խորշի պէս ներս մտած է, և իւրաքանչիւրի վրան գեղեցիկ քանդակազարդ կամարաշէն ձեացուցած են։ Եկեղեցւոյն մէջը (թ. 97) որչափ որ պարզ է, այնչափ ալ վսեմ և զարմանալի, մանաւանդ գեղեցիկ և պատշաճ չափակցութեամբը։ Խորանը ճիշդ արեւելեան կողմը կէս կլոր խորշ մի է, որ մինչև ձեղունը նոյն կիսաբոլոր ձեով կը բարձրանայ և կը խառնուի բեմին կամարապօտներու հետ։ Այս կիսակլոր խորշը դիմաց դիմաց հարաւային և հիւսիսային կողմերը, և մին արեւմտակողմը՝ որ է աւագ դուռն, որոյ վերև, ինչպէս նաև ուրիշ կողմեր ևս, կան անեղծ մնացած արձանագրութիւններ. արեւ. ժամացոյց մը ևս կայ հայերէն այբուբենով նշանած։ Կամարվիկէի մէջ չորս սքանչելի սիւներ կը բարձրանան՝ խաչաձև և 16 անկիւնի, 3 մետր սաւառնութեամբ. գեղեցիկ սեւ մեծամեծ կոփածոյ քարերով, բոլորակ, կիսաբոլոր, բա-



102. Ս. Փրկիչ եկեղեցի։



103. Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի։

սաբոլոր մեծ խորշը կամ լաւ ևս խորանի կոնքը, վարէն մարդաչափ բարձրութեամբ բաժնուած է 10 խորշերու (թ. 98) պատին մէջ. երկու ծայրի խորշերը մէկ մէկ դուռներ են, որոնց մէջէն քարէ սանդուխներ բոլ կ'իջնցուի երկու կողմնակի վերնայարկեր կամ մատուռներ, որոնց ներքինը կան ուրիշ մատուռներ կամ պահարաններ՝ բոլորն ալ քարաշէն ու կամարակապ։ Եկեղեցին ունի երեք դուռներ՝ խորանչիրը մեց կամարով, ռակուսի, կոթնթարդ և անկիւնաւոր ձևերով մեծ և փոքր շերտեր ձգուած են սքանչելի նկարագրակութեամբ այդ սիւներու վրայ վեր բէն մինչև վար. նոյն ոճով շինուած են նաև մեց թևերանիւնք կամ սրմանիւնք՝ որք կամարները պատերուն կը հպատրպեն ի հիւսիս, ի հարաւ և յարեւելս։ Այս սիւներու վրայ ձգուած կամարներն, եկեղեցին կը բաժնեն երեք թևերու, միջինն աւելի լայն և բարձր քան երկու կողմնակի-

նները։ Կամարաց վրայէն ձգուած ուրիշ կամարագօտիներ՝ վեր կը բռնէին իրենց արժանաւոր, երկնանման գմբէթը, որ ամբոն 830 տարիներէ ասդի քաղաքին վրայ հովանի ըլլալէն վերջ՝ ծռ գարու առաջին կիսուն վերջերը կործաներ էին, և եկեղեցւոյն մէջտեղ բլրակաձև աւերակաց կոյտ մը ձևացուցեր։ Գմբէթին զագաթան վրայ էր երբեմն, մարդաչափ բարձրութեամբ արծաթի խաչն՝ զոր աւերածու Ալփարսլանի դիմաւորները վերցուցին և տեղը պրիսկէզօծ մահիկ. նոյն ժամանակ խաչին տակը մը, երեք հատ գաւազ, որոնց մէկը երկայն և երկուքը կլորաձև, մէկ մէկ բոլորակ՝ կողմնակի աւանդատուց վրայ, արեւմտեան դրան վրայ ևս կան մէկ բոլորաձև բարձրը և մէկ քառակուսի աւելի վարով. յայտնի է որ գմբէթին ալ զարդարուած լինելու էր պատուհաններով։ Գետնոյ կամարաց և պատուհաններու եզերքներն, մանաւանդ ամենքը, զարդարուած են հրաշալի նուրբ քանդակագործ գրուագներով, որոնց իրրև նմոյշ մը թող լինին մեր պատկերներն (թ. 99, 100)։ Ժամատունն կամ գաւիթ չունի, և կ'երևի




104. Ս. Գրիգոր Լուսաւորչի վանք։

նախքանէ կախուած բիւրեղէ մեծ ջահն ալ պահին ինկաւ և չախչախեցաւ։ Այդ ջահը 12 լիտր կը կշռէր, և նոյնքան ալ ձէթ կը տանէր, և էր յիշատակ առատաձեռնութեան եկեղեցւոյս հիմնադիր Սմբատ Բ.։ Ասոր մի Հնդկաստանէ բերել տուեր էր բիւր գանձ (ըստ ոմանց գրեթէ 120—150000 ֆր.) ծախս ընելով։ Կողմնակի դրանց վրայ կան երեք երեք երկայնաձև պատուհաններ. երկերկու հատ արմատեանց և արեւմտեան պատին մէջտեղը, մէկ հատ երկայն և քառակուսի խորանի վրայ արեւելեան կողմը, երեք հատ գաւազ, որոնց մէկը երկայն և երկուքը կլորաձև, մէկ մէկ բոլորակ՝ կողմնակի աւանդատուց վրայ, արեւմտեան դրան վրայ ևս կան մէկ բոլորաձև բարձրը և մէկ քառակուսի աւելի վարով. յայտնի է որ գմբէթին ալ զարդարուած լինելու էր պատուհաններով։ Գետնոյ կամարաց և պատուհաններու եզերքներն, մանաւանդ ամենքը, զարդարուած են հրաշալի նուրբ քանդակագործ գրուագներով, որոնց իրրև նմոյշ մը թող լինին մեր պատկերներն (թ. 99, 100)։ Ժամատունն կամ գաւիթ չունի, և կ'երևի թէ ունեցած ալ չէ, բայց չորս կողմը ուրիշ մատրանց կամ շէնքերու հետքեր կան. որոց մէկն ալ լինելու է Սարգիս կաթողիկոսի շինել տուած «Վկայարանն սրբոց Հռիփսիմեանց», ուր և փոխադրեր էր մեծ հանդիսիւ անոնց նշխարքը։ Կաթողիկէին նորոգութեան ամենէն յիշատակութիւն չըկայ, ինչպէս ուրիշ եկեղեցւոց. միայն արտաքին չորս կողմի աստիճանները նորոգեր է յամին 1213 Տիգրան իշխանն, Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքի շինողն։ Կաթողիկէի շինութեան վերակացուն և արուեստա-

տան էր, հին հայ ճարտարապետաց մէջէն ծանօթն և անմահանալին Տրդատ։


Ս. Գրիգոր Ապուղամրենց՝ (թ. 101) որ կ՚ինկնայ կաթուղիկէի արեւմտեան հիւսիսային կողմը, գեղեցկահայեաց պիրքովը, ճարտարապետական արուեստի կատարելութեամբն և ամբողջ և անկործան մնալովն, Անոյ միւս եկեղեցիներէն ամենէն ուշի 900 տարիէ ուշի է որ անխախտ մնացած է առանց ամենևին նորոգութեան։ Արտաքուստ ձեով երկոտասանանկիւնի է խորհրդով, բայց անանկ լայն են անկիւնները՝ բազգաւորն կրնայ համարուիլ, մանաւանդ որ հնութեամբն ալ գամբիքը կը գերազանցէ։ Փոքր է, բայց վայելուչ և ճարտարաշէն. որմերը հաստ են և զօրաւոր, որով



105. Գոթական կամարի մէկ կողմը։ Ձախ էջ տեսնվող մնացորդն մէկ կողմն է։

ուժգնաւորն կրնայ համարուիլ, մանաւանդ որ հնութեամբն ալ գամբիքը կը գերազանցէ։ Փոքր է, բայց վայելուչ և ճարտարաշէն. որմերը հաստ են և զօրաւոր, որով

որ գրեթէ բոլորակ կ՚երեւի, և տրամագիծն է. արտաքին պատէն չափելով 12 մետր. մէջն՝ որ վեց հաւասար կիսաբոլոր բաժնուած է եղերքէն՝ հազիւ 10 մետր տրամագիծ ունի։ Գրէն պատի խարխլէն բիչ մը աւելն երկու կոմման մէկուն մէջ պատնկիւնաձեւ խոր խորշ բացուած է։ Ներքին վեց կիսաբոլորակաց վերջացած տեղէն կանգնած են մէկ մէկ սիւն, որոյ մեծ բոլորակ մ՚ալ կը ձեւանայ կեդրոնը, որուն վրայ կը բարձրանայ վայելուչ և գեղեցիկ կոնաձեւ գմբէթը՝ 12 պատուհանօք։ Եկեղեցւոյ դուրսը թէ և կ՚երեւին քանդակք՝ այլ ոչ խուռն և շատ, ներսն ալ աւելի պարզ է, բնական և անկարօտ գեղեցկութեամբ լցեալ. այնպէս որ հայկական ճաշակի և ճարտարապետութեան բնաւոր օրինակաց մէկն կրնայ բնծայել. և անշուշտ




106 · Խաչվէմ Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ։

Ամեայ այն շէնքերէն մին է, որոց վրայ հիանալով անզգիացի և գագղիացի ճանապարհորդք՝ վկայեցին որ յոյնական ճաշակ և փափկութիւն ունին։ Արձանագիրք և ձեւոյն փաքրութիւնը կը վկայեն որ կառուցած են գայն Պահլաւունիք իրենց առհմին հանգստարանի համար։ Շինութեան թուականն յայտնող արձանագրութիւն կը պակսի, բայց գրան վերը կայ Ամեայ հնագոյն արձանագրութիւններէն մին ՆԽԳ (=994) թուականաւ, Շուշանայ տիկնոց տիկնոջ՝ ամուսնոյ Գրիգորի իշխանաց իշխանի՝ որ վախճանած է 982ին։ Միւս արձանագրութիւններն են Գրիգորի և Շուշանայ որդւոց. մին Վահրամայ՝ իշխանաց իշխանի, ուրիշ մը Ապլղարիպայ Հայոց մարզպանի, յամի 1040. յորմէ կ՚իմացուի որ եկեղեցիս շիներ է, իբր հանգստարան իւր հօրը, Համզէ եղբօրը և Սեպհ քրոջը համար։ Ապլղարիպ շիներ էր նաև եկեղեցւոյս կից երկու սենեակ կամ մատուռն Ս. Յովհաննու և Ս. Բրխտափոր. որք հաւանօրէն են եկեղեցւոյ հիւսիսակողմը գտնուած աւերակ գեղեցիկ մատուռներն։ Եկեղեցւոյս համանման է Նախիջեւանի եկեղեցին Աղիէն գուրս՝ քառորդ ժամ հեռու, որոյ համար կ՚աւանդուի թէ հարուստ հովիւ մը շինած ըլլայ, և այն պատճառաւ այսպէս կը կոչուի, և այլազգիներէն կը թարգմանի Զօրաւոր—իլիսեան։

Մեծահարուստ և մեծահաւատ Պահլաւունի Ապլղարիպ մարզպանի՝ ծնեցեալ ձեռակերտաց վիճակոյն համարուած է Ս. Փրկիչ (թ. 102) եկեղեցին, որ կ՚ինկնայ Ամեայ արեւելեան կոմին և կաթուղիկէէն հեռու հազիւ 65 մետր և գլխաւորէն 22ս։ Զուտ և ճարտարապետական ոճով բաւական նման է Ս. Գրիգորի, բայց անկէ մեծ է և աւելի զարդարուն։ Ի հեռուստ թէև բոլորշի կ՚երեւի տակայն բազմանկիւնի է, և իւրաքանչիւր անկեան եղերքը կրկնակի սիւներ կան, որոց վերնախարխխներէն ձգուած են կամարներ։ Ամբողջապէս շինուած է մեծամեծ սրբատաշ կարմիր և գորշ հրաբղխային քարերով և ունի երկու դուռ հարաւային և արեւմտեան կողմերը։ Ներսը բաժնուած է ութ բոլորակաց, յորոց վեցը ի-

բարու հաւասար են, եօթնեւրորդն՝ որ է խորանին տեղն՝ աւելի մեծ է, իսկ ութեւրորդն որ է աւագ դրան տեղը, աւելի շիտակ է քան թէ բոլորակ: Այս բաժանմանց միջոցն մէկ մէկ միակաւուր սիւն կայ,



107. Մահարձան Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ:


որոց վերնախարսխաց վրայ կը հանդչի եւ կեդեցւոյն շրջաբոլոր պատն կամ պատեբուն շրջանակն, և կը վերցընէ բոլորշի գմբէթին՝ 12 բարձր և նեղ կամար բաժնուած՝ բարակ և զուգակ սիւներով, մէջերնին պատուհաններ: Գմբէթի բոլորշի գլանն բաւական լայն և մեծ լինելով, և եկեղեցին ալ շատ մեծ և քառակուսի չլինելով՝ դուրսէն բոլոր եկեղեցին երկու յարկ կ'երեւի, վարն բազմանկիւն և վրան բոլորաձև: Ունի երկու նեղ պահարաններ պատերուն լայնութեան միջոցը, և հարաւային գրան գիմացը կիսաբոլորին մէջտեղը բարձրկեկ ամպիոն մը, ուր կ'ելլըցուի քարաշէն սանդուղներով պատին միջէն, և անկից ալ վեր մինչև տանիքը: Եկեղեցւոյս ներսը պատեբու վրայ կան աւրշակած նկարէն պատկերներ:

Ս. Փրկչի ճարտարապետն կրնայ Տըրդատայ աշակերտ մ'ըլլայ. վասն զի շինութիւնն աւարտեր է յամին 1036, «շատ ջանիւ և մեծածախ գանձիւ» Ագլղարիպայ, ինչպէս կը յայտնէ արձանագիրն. ուրիշ արձանագրութիւն մ'ալ կ'իմացնէ՝ որ նախընթաց տարին՝ Ագլղարիպ, Սմբատ-Յովհաննէս թագաւորէն հրովարտակ առած՝ գնաց ի Կ. Պոլիս առ Միքայէլ կայսր, և նոյնպէս «շատ ջանիւ և մեծածախ գանձիւ» բերաւ մասն ի սրբոյ խաչէն. և առաջարին շինութիւնն կատարելով՝ կանգնեց «զնշանն յաւագ ի պատ հարսին Քրիստոսի». զոր և զարդարեց և հարստացուց շատ հողերով և կուզպակներով, «ոսկւով և արծաթով և ականբք պատուականօք... հին և նոր կտակարանօք»: Չերկարենք նկարագիրն՝ մի առ մի յիշելով նուիրատուաց անուանք, միայն ըսենք որ եկեղեցիս նորոգուած է երկու երեք անգամ: Նախ նորոգած են 1173ին, Տրդատ ումն քահանայ և իր խուշուշ երիցակիներն, շինելով նաև «ժամատուն ամառանոյ և ձմերանոյ», որոնք այժմ չեն երեւիր: Երկրորդ 1294ին Շերասցի Մխիթար ումն, աստ շինած է Ջանկակատուն և կախեր է զանկակներ. և երբ կ'ըսէ «զլարձանէք ի ձայնից սորա՝ առացէք, Տէր Աստուած, ողորմիա Մխիթարայ և ծնողաց իւրոց». և այլն: Ասկէ գրեթէ 50 տարի վերջ, ԺԴ դարու կիսուն մօտերը (1342) և Աստուածածին ամայութենէն քիչ առաջ, Երկայնաբազուկ մեծին Ջաքարիա սպասալարի ցեղէն ուրիշ Ջաքարիայի մը թոռն՝ Ամիրէկ վահրամ՝ վասկ անուամբ մեկու

մը ձեռօք նորոգեր է Ս. Փրկչի գմբէթը, ի յիշատակ իւր և նախնեացն։

Ընդ այսմ արեւելեան հարաւային ծայրը, Ախուրեան գետոյն քարափան մօտ կը գտնուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ (թ. 103) որ կոչուի նաև վանք Ս. Գրիգորի (թ. 104)։ Ասկէ գրեթէ 800 տարի առաջ, Տիգրան իշխանն յազգէ Հոնենց, որ մեծն Զաքարիա կը նորոգէր զԱնի, անոր հաւանութեամբ ինքն ալ գանազան նորոգութիւն և շինուածներ ընելով, եկաւ նաև այս գեղեցիս, ուր հնուց սխտաաեզոյ պէս եկեղեցեակ մը կայ եղեր Մատռաան Աստուածածին կո-

րանները իշխանաց. որոց ամենուն հարուստ կալուածներ կային էջ, գեղ, տուն, այգի, կրպակ, պարտէզ, փնդուկ, Ջաղաց, միլ, և այլն, թէ՛ մօտ և թէ հեռու տեղեր. ուրիշ վանք մի ևս շինած է Բնթենց մականուանեալ, և զայն ալ Ս. Գրիգորի առաջնորդին հոգաբարձութեան յանձներ է։ Այս արձանագրիւ գրած է յամի 1215, յեա կատարելոյ շինութիւնը գոր սկսած է Զաքարիայի օրով և անոր որդւոյն իշխանութեան ժամանակ աւարտած։ Այս թուականէն կը յայտնուի որ եկեղեցիս, Անուց միւս եկեղեցիներէն ամենէն վերջը շինուած է, և



108. Գաւիթ Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ։

չուած, և վանք մի ևս յանուն Ս. Լուսաւորչի. բայց գանազան քաղաքական փոփոխութիւնից պատճառաւ աւեր ամայի թողուած և լքուած։ Տիգրան կը գնէ զայն, ինչպէս կ'ըսէ, իր «հալալ գանձով ի հնէն արհեստիցն. և բազում աշխատութիւնամբ և գանձով պարապեցի շուրջանակի. շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Լուսաւորչին Գրիգորի, և զարդարեցի բազում զարդիւք», և այլն. և իր երկար արձանագրութեան նայելով՝ յիրաւի շատ և շատ տեսակ նուէրներ տուեր է եկեղեցւոյն և վանաց, զոր նոյնպէս ինքն նոր շիներ է, նաև բնակա-

այդ պատճառաւ, թէ՛ ներսն և թէ դուրսն խիստ լաւ և անկործան մնացած է։ Զեռվ նման կամարիկներ, բայց անկ փոքր երկայնաձև քառակուսի է, գրեթէ 14 մետր երկայն և 10ա լայն. ունի մէկ դուռ ապահովութեամբ։ Ս. Լուսաւորիչը շինուած է նոյնպէս կարմիր, գորշ և սեւ քարերով և արտաքին պատերու տեսքը նման է կամարիկներ. բայց աւոր սիւները կրկնակ են, և կամարներու, լուսամուտներու շրջանակաց, գոմիներու և այլ մասանց վրայ փորուած գեղեցիկ և նուրբ քանդակներն կարելի է նախապատ համարել։ Արտաքին

սրմնց սահմց վերնախարխնեերէն վեր պե-
ղեցիկ և խիտ բնական քանդակած են բա-
զէներ, արծիւներ, ագաւնիներ, ասիծներ,
վագրեր, ինձեր, և այլ տեսակ կենդանի-
ներ։ Եկեղեցւոյս մէջ չորս կիսասիւներ,
որք միացած են իրարու հետ կամարնե-
րով՝ կ՚ամբառնան գմբէթին, որ արտաքուստ
բաժնուած է սիւնակներով 18 կամարակապ
մասերու և ունի ութ լուսամուտ՝ նորք
բանդակազարդ եզերքներով։ Խորանի երկու
կողմն կան երկու նեղ և հատատարաչափ
աւանդատուներ։ Ամբողջ եկեղեցւոյն ներքին
մասը ծածկուած է կիսեղծ պատկերներով,
որոց համար յայլազգեաց Նագըշը—քիլիսէ
կոչուած է։ Հաւանական է որ այդ պատ-
կերներէն մէկ մասն կտխատ ի Հայոց տը-
կարուած ըլլան, և մէկ մասն ալ վերջերը
Յունաց և Վրաց սիրատպատուհեան ժամա-
նակ. վասն զի շատերուն վրայ կան
համապատասխան յոյն և վրացի արձա-
նագրութիւնք։ Եկեղեցւոյս գրան կից և
աջմէն փոքրիկ և գեղեցիկ կամարակապ և
սիւնազարդ գաւիթ մը կայ (Թ. 108).
բայց կամարներու մեծ մասը և սիւնե-
րէն երկուքը կործաներ են, և կտտրուածքը
ցարդ կը տեսնուին գետնի վրայ։ Այս պա-
տմիս իւր չափակցութեամբ, հոյակապու-
թեամբ և սահմց խարխսաց և պատկաց,
ինչպէս նաև կամարաց նորք քանդակեր-
ով հայ ճարտարապետութեան սքանչելի
գործ մ՚է։ Գաւթի աջակողմը կայ մատուռ
մը, նոյնպէս կործանած. բայց կամարներն
կանգուն մնացեր են։ Գաւթի և մատրան
ներքը կան քանի մը կիսեղծ պատկերներ։
Ս. Գր. Լուսաւորչի արձանագրութիւնք,
որք թուով ութ են, փորուած են արտաքին
սրմնց վրայ, յորոց ամենաընդարձակը կը
պատկանի եկեղեցիս շինող Տիգրանի, և է
արեւմտեան պատի վրայ. միւս արձանա-



109. Աւերակ եկեղեցի կաթողիկէի մօտ։

գրութիւններէն կը տեսնուի որ այլ և այլ
անձինք գանազան նուէրներ բրած են վան-
քին և անոր համար Ջուր բերել տուած։
Որչափ որ Տիգրանայ գլխաւոր գործն՝ և-
կեղեցին՝ անարատ մնացեր է, այնքան
քովի ուրիշ շէնքերն, որք էին վանականաց
և իշխանաց բնակարանք, բոլորովին կոր-
ծաներ, աւերուեր և եկեղեցւոյն քով բլրի
գլխ գիզուեր են, մնձատանդ հիւսիսային
կողմն։ Արեւելեան կողմն կ՚երևան քաղաքին
գետնայարկը կամ առորերկրեայն տանող
կամարակապին մնացորդքն. և երկու կողմն՝
քարակտուր ատաձանններով ճանապարհ մը

կայ կամարակապ դռնուած, որ կ'երթայ մինչև Ախուրեանի կտրած կամուրջը։ Այս ճանապարհի ձախին կան աւերակ սենեակներ, և մեռը ժայռի վրայ դուռ կարմիր քարէ շինուած երկու գեղեցիկ մատուռներ, անապատ և կանգուն մնացած։ Արձանագրութիւնը կը պակսին, բայց աւանդութիւնը կ'ըսէ, թէ թագուհւոյ մը համար շինուած են այս մատուռները, և մերձակայ աւերակ սենեակներն ալ՝ անոր բնակարաններն են։


Ագուլամբենց Ս. Գրիգոր եկեղեցւոյն հիւսիս–արեւելեան կողմն է Ս. Աստուածոյ եկեղեցին, քառակուսի խաչաձև, չափաւոր մեծութեամբ։ Նոր տեսակ ճարտարապետութեամբն կը տարբերի քաղաքիս միւս եկեղեցիներէն. գմբէթ չունի, բայց բարձր սազաշէն ձեղունով ծածկած է, լայն և ապահաձև կամարներու վրայ դրուած։ Եկեղեցւոյս միմիայն միջի մասը այժմ մնացած է, մնացեալ մասանց փլատակները դիզուած են արեւելեան, արևմտեան և հիւսիսային կողմերը։ Զարդարուած է բազմաթիւ խաչարձաններով և հիանալի նուրբ քանդակներով. ունի չորս սեւաքար վիթխարի սիւներ։ Ս. Աստուածոյ եկեղեցւոյ նորօրինակ ձևն տեսնելով առիթն՝ զայն հմայած էր Նուշիրվանայ թագաւորին խոհեմութիւնը, որ կ'երթայ մինչև Ախուրեանի կտրած կամուրջը։ Այս ճանապարհի ձախին կան աւերակ սենեակներ, և մեռը ժայռի վրայ դուռ կարմիր քարէ շինուած երկու գեղեցիկ մատուռներ, անապատ և կանգուն մնացած։ Արձանագրութիւնը կը պակսին, բայց աւանդութիւնը կ'ըսէ, թէ թագուհւոյ մը համար շինուած են այս մատուռները, և մերձակայ աւերակ սենեակներն ալ՝ անոր բնակարաններն են։

Ագուլամբենց Ս. Գրիգոր եկեղեցւոյն հիւսիս–արեւելեան կողմն է Ս. Աստուածոյ եկեղեցին, քառակուսի խաչաձև, չափաւոր մեծութեամբ։ Նոր տեսակ ճարտարապետութեամբն կը տարբերի քաղաքիս միւս եկեղեցիներէն. գմբէթ չունի, բայց բարձր սազաշէն ձեղունով ծածկած է, լայն և ապահաձև կամարներու վրայ դրուած։ Եկեղեցւոյս միմիայն միջի մասը այժմ մնացած է, մնացեալ մասանց փլատակները դիզուած են արեւելեան, արևմտեան և հիւսիսային կողմերը։ Զարդարուած է բազմաթիւ խաչարձաններով և հիանալի նուրբ քանդակներով. ունի չորս սեւաքար վիթխարի սիւներ։ Ս. Աստուածոյ եկեղեցւոյ նորօրինակ ձևն տեսնելով առիթն՝ զայն հմայած էր Նուշիրվանայ թագաւորին խո-



110. Անւոյ աւերակներէն տեսարան մը։

ղեցւոյս շինողի անունը և տարեթիւը. այլ դրեթէ ամենուն բովանդակութիւնն զանազան նուիրատուութեանց կը վերաբերի, և ամենք ևս այլ և այլ քաղաքական հարկաց այնչափ հնութիւնն և բնութիւնն, որքան մարդկային բռնութիւնն եղած կը թուի պատճառ այդ աւերմանց. վասն զի արևմտեան կողմը գետնէն վեր՝ ուր որ մարդու




111. Պահլաւունեաց կամ Բագրատունեաց պալատան դուռն։

նուազեցնելն կամ պակսեցնելն կը յայտնեն։ Բազմաքանդակ և զարմանաշէն եկեղեցիս, շատ աւելի քայքայուած և աւերած է, քան մեզ ծանօթ միւս եկեղեցիք. ոչ ձեռք հասեր է, հանած և կոթծանած են հրաշալի քանդակներն. միւս կողմերն ևս մեծամեծ քարերէն շատերը հանած են, և շատերն ալ գետին ինկած խորտակած են։


Ս. Առաքելոց հիւսիսային կողմը կից կայ աւերակ մատուռ մը, որոյ աւերակներն ևկայ են հոյակապ շինուածքի։ Ուրիշ մեծագոյն մատուռ մի կայ քովեքի հարաւ–արեւելեան կողմը, որուն խորանի տեղը և պատերուն մի քանի մասերը կանգուն են. ուր կայ նաև թերատ արձանագիր մը։

Անոյ բազմաթիւ եկեղեցիներու մէջ աւելի



112· Արքունի խորհրդարան կամ մզկիթ Անոյ։


կանգուն մնացածներէն այս մի քանին յիշելով բաւականանանք, և անցնինք դիտելու նաև ուրիշ շինուածները։ Քաղաքիս մէջ ե՛կեղեցիներէն գատ քիչ և ամենաքիչ շէնքի մնացորդ կայ. և այն առասպելանման յիշատակ հազարաւոր ոսկեզօծ պալատներէն, կամ յետին պատմչի մը նմանցուցած օրիորդաձև և հարսնապաճոյճ տուներէն և ոչ մէկ մի կանգուն մնացեր է։ Բայց Անոյ արեւմտեան–հիւսիսային անկիւնը, ճիշդ այն ահեղ բարափի գլուխը, որոյ ներքև Ծաղկոցաձորը երեք մասանց կը ճիւղաւորի, տարածուած են վիթխարի շինուածեան մը մնացուր, կիսատ կտրած և թանձր պատերը և քանի մը կամարներ, շինուած պարսպի և աշտարակաց նման ծեղնադոյն քարերէ։ Ռամիկը այս շէնքը կը կոչէ Նաւուխլեվանայ պալատ, իսկ հայ և եւրոպացի ճանապարհորդը կը համարին Պահլաւունեաց պալատը։ Ասոր պալատ լինելուն թէ և տարակոյս չկայ, բայց Պահլաւունեաց թէ այլոց, անկարելի է ստոյգ իմանալ, վասն զի արձանագրութիւնը կը պակսին և պատմութիւնն ևս կը լռէ։ Այս պալատի այժմ երեցող մնացուածքէն կ՚երեւին, տատերկրեայ ներքնատուներէն գատ։ Բէր Փորթերը պալատիս քանդակաց համար կ՚ըսէ «Աչխոխի սքանչելի բանուածքով զարդարուած է, որ անկարելի է տատրագրութեամբ հասկըցընել այն ճարտարագործ քարերուն զարդուց գանազանութիւնը և հարտութիւնը, կամ այն բարակ բանած միտիան ձեւերը, որոնցմով պալատ-



113· Պահլաւորդաց տնակ (կարծուած)։

տան տեղիս սրահներու յատակներն պեղեկացած են»: Այլ ափսոս որ երկար ժամանակի մէջ այդ ուղեորի նկարագրած պեղեկութիւններէ, մեծաւ մասամբ, այժմ պալատս գրկուած է: Պալատիս մեծագործ ծուխեան մի մեծ ապացոյց է նաև ներքնատունը կամ գետնայարկը, որ վրայի յարկէն աւելի վեհ և ահաւոր է: Հարաւային կողմէն գնալ մը կը մտցուի երկայն սրբահի մը մէջ՝ որ բոլոր կամարակապ սրմանեանց վրայ շինած է, ու մէջը կան մեծ ու փոքր բարձր ու ցած սենեակներ, սրահներ ու նեղ ճամբաներ. յատուկ զարուեալ այսպէս շինուած պատկերքն կան, ուսկոր պժգալի թշնամութիւնն այս պատկերիս պրլուխն թռուցեր է, անոր համար չի պիտցուիր այս արձանի թագաւոր լինելն. բայց հաստատակաց աւանդութիւն է՝ թէ պարապաց շինող Ամբատ Տիգերակալին պատկերն է. զոր ամենք կարծեցին թէ Անուց մատնչին պատկերն բլլայ, և թէ անոր համար գլուխը կտրած և ձեռքը պրտած էր: Գրեթէ 1845ին, կ'ըսուի, թէ Ռուսք փոխադրած են զայս ի Փեթերպուրկ, կայսերական թանգարանը զնելու ուրիշ քանդակաց հետ:


Այս պալատան մօտ արեւմտակողմն,



114. Արքունի խորհրդարանին ներքին տեսքը:

համբայ մ'ալ կը հանէ Ծագկոցաձորի մէջ, որոյ յատակն և պատերը շատ ուրտած են: Պալատան մնացորդաց մէջ նշանաւոր է պէս յարևելս զարձած սենեկաց մէկուն միջի՝ պատի կից քարեայ ջրի աւազանն՝ գմբեթաձև խորշով, կարմիր ու սև քարեքով և ծաղկաձև քանդակներով զարդարուած: Ուրիշ յիշատակաց արժանի մնացորդ մ'ալ կայ պալատիս հիւսիսակողմն, զրսի պատին վրայ, բնական մեծութեամբ մարդու բարձրաքանդակ մը, գինուորակերպ հագած. ձեռաց մէջ շինքին պատկերը բռնած, ինչպէս որ եկեղեցեաց ոմանց վրայ ևս Ծագկոցաձորի պարսպաց մօտ [illegible] աւերակ մատուռ մը փորուած կարմրագոյն քարով, անոր բով կայ նաև ուրիշ փոքրագոյն վիմափոր մատուռ [illegible] Անուց գրեթէ կեսրոնը 100—150 [illegible] կաթուղիկէի ա[illegible] բեմնակողմն կայ ուր[illegible] քառակուսի երկայնաձև շինք մը (թ[illegible] 12), արեւելքէ արեւմուտք ձգուած. [illegible] երկու կարգ երեք եր[illegible] կարճ ու [illegible] սիւներով՝ երեք թև բաժնուած [illegible] որոցմէ կամարներ ձգուած են իրարու [illegible] չորս կողմի 12 սրմանեանց վրայ. [illegible] կամարայարկ տեղ մ'է, ոչ մի[illegible] նման և ոչ եկեղեցւոյ, և ոչ ալ

ժամատան՝ ինչպէս կարծուած ևս է, համարելով թէ արևմտեան կողմն եղած ըլլայ եկեղեցին, որուն հետքն չկայ։ Մեզ այսպէս կը թուի՝ որ ժամատնակաւ եղած լինի արքունի խորհրդարան (թ. 114) և ապա փոխուած ի մզկիթ։ Ջեղունն և յատակն նորաձեսիկ կերպարանք մ'ունին. գեհինն 12 քառակուսի բաժնուած է քարերուն շարուածքով և սիւներու դիրքով. բայց ոչ սիւներու հաւասար են, և ոչ քարերու շարքով, որոց պէսպէս դիրքն, սիւներուն և գոյնն այլևայլ ձևով միւսիններ չկայ, ըստ միհմէտական օրինաց, բեմ կամ տեղի ընթերցման. այլ յատակին տակը կայ ներքնատուն կամարակապ և մէջէ մէջ դռներով։ Արտաքին պարսպի վրայ կան արձանագրութիւններ, մին քուֆի գլրով շատ թերի, գրուած է Մանուչէի ժամանակ 1072 թուականին։ Հիւսիսային կողմն ալ կայ երկայն պարսկերէն արձանագիր մը՝ իբր Էպուսայիտ Թաթարաց խանին անուամբ և հրամանաւ գրուած ի պարու առաջին քառորդին, որով կը պատուիրէ քաղաքին վերակացուաց՝ չնեղել բգ-



115. Անւոյ մինարեաթափակը։

համ նաղաշներ կ'ընծայեն, և ճարտար ձևեր կամ շարքեր ևս ունին։ Ջեղունն տեղ տեղ կլորակ է, տեղ տեղ ալ տափակ, մեծամեծ քարէ տախտակներով կցուած։ Արևելեան հիւսիսային անկեան քառակուսի միջոցը կանգնած է մինարէն՝ ութանկիւնի ձևով, 85 աստիճանով, ան ու կարմիր քարերով շինուած։ Արևելեան պատին վրայ կան մեծամեծ պատուհաններ, որ Ախուրեան գետի վրայ կը նային. արևմտեան պատին կէսն փլած է, մաս մ'ալ հիւսիսայնոյն. մնացածն բաւական շէն է։ Մէջը ժողովուրդը հարկապահանջութեամբ, և բաց ի բաժէ և կնքէ (տամղայ) ուրիշ բան չառնուլ, ինչպէս որ առաջ կ'առնուին. և անոր համար, կ'ըսէ, քաղաքացի և գաւառցի տանուտեարք (քեխիւտէ) սկսեր էին թողուլ զԱնի և զԵրեան՝ և երթալ յօտար աշխարհս։ Ահա արձանագրութիւնէն վար կան երեք լեզուով մէկ մէկ տող արձանագրութիւնք. առաջի երկուքն՝ պարսկերէն և վրացերէն՝ կ'ըսեն. «Ես Զաքարիա Աբաբէկ որդի Ճաղգուեաւ . . . Ճառատաեցի ի թուին 1258». իսկ երրորդն հայերէն և անհետա-

կան կ՚ըսէ միայն. «Հաստատուն պահապան աւրճնին Ասուածոյ»: Այս հայերէն արձանագրութիւնն գրուած է նաև քաղաքի կեդրոնը գտնուող միւս ուխտանիւթի մեծ աշտարակին (թ. 115) վրայ: Այլ մեծ և խրոխտ աշտարակն, որ գրեթէ եօթն կամ ութ գաւ կանգուն մնացած էր, պեռ քիչ տարիներ առաջ քայքայած և յերկիր տապալած է, որուն մէկ բեկորն կը նշմարուի առաջիկայ (թ. 116) պատկերի մէջ:

Անոյ հարաւային արեւմտեան կողմն 80 մետրի չափ բարձրութեամբ, ան կճեայ վիթխարի քառակուսի ձեով ժայռի մը գագաթը կը գտնուի Միջնաբերդն կամ Ներքին կայտն, որ ի Թրքաց կը կոչուի Իչ—գալէ: Արեւելեան կողմէն գրեթէ ուղղահայեաց վիրք ունի պէսպէս Անուրեան ձորը, արեւմտեան կողմը որ կը նայի դէպի Ծաղկոցաձոր՝ աւելի զառիթեայր է, մինչև պարիսպը, կանգնած խորդուբորդ ձորի գագաթը: Միջնաբերդի յատակն կը հաւասարի պարսպաց աշտարակներուն, պատերազմական տեղ մ՚ըլլալով՝ ի հարկէ թշնամութեան աւելի նպատակ եղած և աւրուած է: Ամբողջ ժայռի գագաթը ծածկուած է փլատակաց շեղջերով, որոց մէջ 16 հատ քառակուսի մեծկակ միմեանց կից սենեակներու հիմքեր կ՚երեւին: Ժայռի արեւելեան կողմը կանգուն մնացած է երկայն սրահ մը, որոյ ճակատը դէպ յարեւելս կը նայի և արեւմտեան կողմէն որ արդէն քանդուած է, հաւանական՝ նօթէն միացած լինելու էր վերոյշեալ սենեակաց հետ: Հ. Ալիշան միջնաբերդի մէջ գտնուող այս սրահն (թ. 117) որ անշուշտ կամնաբականաց կամ Բազրատունեաց ապարանից մէկ մասն էր, իւր Ներշմարքի մէջ համարած է Պահլաւունեաց պալատի մի մասը, որ ընդհակառակն շատ հեռու կը գտնուի Միջնաբերդէն: Մեր պատկերի մէջ երեւցող արքայական խոյակքն այժմ չկան, չարաճճի ձեռքեր քանդած հանած են:

Միջնաբերդի մէջ, ժայռի արեւելեան կողքին, Անուրեան ձորին գլուխը, կայ կիսաւեր փոքրիկ եկեղեցի մը կլորակ գմբէթով: Ուրիշ բոլորակ եկեղեցի մը կամ մատուռն կայ նոյնպէս միջնաբերդի հարաւային կողմը, որ միւս մատուռներէն կը զանազանուի, կամարաց անկիւններու մէջ զետեղուած կենդանեաց գլուխներու քանդակօք: Այլ եկեղեցեաց հետքեր և աւերակներ ևս կը նշմարուին, բայց թէ՛ միջնաբերդն և թէ իւր եկեղեցիք զուրկ են արձանագրութիւն-



116. Անոյ մեծ աշտարակին բեկորը:

նեւէ: Միջնաբերդի աւերակաց մէջ գտած են և կը գտնեն շատ անգիր, և յունական, պարսկական և արաբական դրամներ:

Միջնաբերդի դիմաց և անկէ ալ վար, Անուց արեւ—հարաւային մասը, գետն արմունկաձև պատելով թերակղզեակ մը ձեացուցած է, որ երկու ձորոց միջոց երկայնաձև քարաբլրոյ պէս բարձրացած է: Թերակղզեայս վրայի շէնքերուն մէջ գլխաւորն է Կարմիր եկեղեցի (Գըզլ—քիլիսէ) բուսածն,

ուր և վանք մը կար, Հաւատօքէն և կուսաստան, Զաքարիա սպասալարէն շինուած կամ նորոգուած ՌՓ դարու սկիզբն, և իր Աահակապսիա մօրը և քերդ հոգւոյն ապօթելու տեղ սահմանուած, ինչպէս կը յայտնուի կիսեցած արձանագրէն։ կը կարծուի որ այստեղ եղած լինի հին հայկազնեան Աիւղ ամրոցն և կուսասէնն, զոր Մ. Գրիգոր փոխեր է յեկեղեցի. և յետոյ տեղն ալ իր անուան նուիրուեր է։ Մ. Աստուածածնի վանք ևս կոչուած է այս եկեղեցին, որոյ արեմտեան կողմն կ'երևին ուրիշ շինուածի մը հետքեր, զոր իրեն գաւիթը կամ ժամատունը համարեցան քանի մերը, իսկ արեմտեան պատի կէսը և բոլոր միւս մասերը քանդուած և ահագին շեղջակոյտ մը ձեացուցած են եկեղեցւոյ մէջ, յորում կը նշմարուին գեղեցիկ սիւներու և կամարաց մեծամեծ բեկորներ։

Քաղաքիս արևելեան հարաւային ամրոցը և Մ. փրկիչ եկեղեցին գլխի հարաւ 100 քայլ հեռաւորութեան վրայ կայ երկայն քառակուսի աւերակ մը, որոյ ամրերքը արդէն գետնի հաւասարած է։ Պրոսէ արքունական բազանիք կ'անուանէ այս աւերակն, որոյ երկայնութիւնն է 18 մետր և լայնքն՝ 14մ։ Ներքը բաժնուած է հինգ բոլորակաձև գմբեթաւոր սենեակաց, մին մեծ՝




117. Միջնաբերդի մէջ ապարանից սրահ։

նոցը։ Հիւսիսային պատի լուսամուտի քով քանդակուած էր կարմիր քարեղէն տախտակ մը (թ. 118) հինգ բոլորակներով՝ որոց մէջ կան հայերէն տասեր ծածկագրութեամբ։ Այս ծածկագիր տախտակի ընթերցման վրայ շատ աշխատեցան և գրեցին՝ Ներկոտս Հովսեան (Բազմավէպ, 1850, էջ 24–28), և ուրիշ մը կանխաւ (Հայասաան Օրագիր, թիւ 146), որոց խօսքերէն, Պրոսէ թարգմանաբար գրած է իւր Աիւղ աւերակաց պատմութեան մէջ։ Վերոյիշեալ եկեղեցւոյ ձեն քառակուսի է, գրեթէ 11 մետր երկայն և $6\frac{1}{2}$ լայն. անկասս ձեացած են հարաւային և արեւելեան պատերը, իսկ արեմտեան պատի կէսը և բոլոր միւս մասերը քանդուած և ահագին շեղջակոյտ մը ձեացուցած են եկեղեցւոյ մէջ, յորում կը նշմարուին գեղեցիկ սիւներու և կամարաց մեծամեծ բեկորներ։

Քաղաքիս արևելեան հարաւային ամրոցը և Մ. փրկիչ եկեղեցին գլխի հարաւ 100 քայլ հեռաւորութեան վրայ կայ երկայն քառակուսի աւերակ մը, որոյ ամրերքը արդէն գետնի հաւասարած է։ Պրոսէ արքունական բազանիք կ'անուանէ այս աւերակն, որոյ երկայնութիւնն է 18 մետր և լայնքն՝ 14մ։ Ներքը բաժնուած է հինգ բոլորակաձև գմբեթաւոր սենեակաց, մին մեծ՝ մէջտեղը, և չորսը փոքր՝ անկիւնները, և անոնց մէջ մեծ բոլորակին չորս կողմն՝ կան չորս քառակուսի փոքր սենեակներ. երկու մեծագոյն սենեակներ ևս կան հարաւակողմը պատով զատուած. այս բոլոր սենեակները իրարու հետ հաղորդուած են դռներով։ Բազանիքի մեծ դուռն կը դառնայ արեմտակողմը. գետ կ'երևին ջրոյն ծորակաց տեղեր. բայց գրեթէ բոլոր աւերուած են։

Այդ մինչև ցարդ, զլխաւորաբար հետևելով ուրիշ անթիւ տպրեւրներէ զատ, Պ. Յ. Գեղամեանի տեղագրութեան, և մանաւանդ Հ. Ալիշանի Նշմարքի Ե պրակին,

յարմէ շատ անգամ ամբողջապէս քակտուելով, կը յուսամք, թէ բոլոր կանգուն մնացած և յիշատակաց արժանի շինուածոց վրայ, բաւական ընդարձակ պատճառ մը կազմեցինք։ Հարկաւ պիտ ապագային նոր բաներ բննութիւնը և հնագիտական պեղումները շատ օգտակար տեղեկութիւններ պիտի յայտնեն մեզ։ Մեր ցարդ նկարագրածներէն զատ, քաղաքիս մէջ մնացած բոլոր շէնքերը, կամ ամէն բրգաձեւ պիզուած մնացած են։ Աւերակներէն կը տեսնուի՝ որ տանց ձեները ընդհանրապէս քառակուսի են և փոքր։ Փոդոցները նեղ և անհաւասար, որոց շատերու




118. Արձանագրանդակ Ս. Աստուածածնի վանից։

անուանք կը յիշուին արձանագրութեանց մէջ, ինչպէս՝ Դարբնոց, Վերին փողոց, Ներքին փողոց, Ջարփնայ փողոց, Ցանըբայիր փողոց, Բուռն փողոց, Սառած փողոց, Փողոցկտեր, և այլն։ Փողոց բառի տեղ գործածած են երբեմն նաև գուխակ՝ որ է Թուրքերէն առոգ բառը։ Կը յիշուին նաև արուեստաւորաց և վաճառուց շէնքեր. չեն յիշուիր կարաւանատունք կամ իջևանք և անկեղանոցք, այլ փնդուխք (ֆօնտուք ըստ Ալթաթաց), որ կը նշանակեն իջևաններ և միանգամայն վաճառականաց մերաններ։ Իսկ յիշատակուած գործարանք կամ արուեստանոցներն և արուեստներն, որոց անուններն թագեր կային, են՝ Կօշկակարաց, Դարբնոց փողոց, Բազմոց (կերպասագործք), Նալպանդոնց, Գառակիարաց, Ներկարարք, Լարարարք, Ջիրահանք, Ջաղացք, և այլն։ Աստ ծանօթ Ծաղկոցաձորէն և Գայլձորէն զատ, կը յիշուին նաև հետեւեալ ձորերը. Իգաձոր, Բուժաձոր, Կարմրիկի ձոր կամ Աբելաձոր։ Աստ քննութիւնք մնացածց մէկն ալ է Ծաղկոցաձորն, որուն երկու զարուվար երեսներուն վրայ, խճաքառն կակուղ քարերու մէջ փորած են անթիւ մեծ և փոքր զանազան ձեւերով կըրպակներ. ոմանք պատուհան չունին, ոմանք ալ մէկ կողմէն կամ երկիքէն. շատ տեղ երկու կարգ են այս խանութները։ Վարի կարգի մուխ տեղերը գոցուած են, և վերիններն ալ մանելը շատ դժուար է. շատերուն մէջ կ'երեւնան զարաններ ու խորշեր, բայց ամէնն ալ բնութենէ և հնութենէ աւրուած են։ Ներկայ պատկերս (էջ. 119) որ կը ներկայացընէ վիմափոր զերեզմաններ, կը թուի թէ այս ձորիս կը վերաբերի, և կամ Աստ մի ուրիշ մասին։ Աստ արձանագրութիւնները ուշադրութեամբ ընթերցողը կը տեսնէ, որ ժամանակ առ ժամանակ քաղաքին տիրապետող ազգերը, ունեցեր են իրենց ազդեցութիւնը ժողովրդեան վրայ։ Լեզուի մէջ անգամ մտած են շատ օտար բառեր, անուններ և ոճեր։ Բոլոր արձանագրութիւնք երկաթագիր են և երբեմն ծաղկազարդ, որոց փորագրողն կը յիշուի Գեւորգ անուանով մէկը, որ շատ արձանագրութեանց տակը կ'աւելցընէ «գրիչ Գեւորգ յիշեցէք» և կամ լոկ «գրիչ Գեւորգ»։ Քաղաքիս մէջ կը բաւնի ընդհանրապէս վայրենի բոյս մը, զոր Հայք վայրենի կոտեմ՝ իսկ Թուրքերը չոր—չոր կ'անուանեն. ուրիշ տեսակ բոյսեր գրեթէ չկան։ Աւերակաց մէջ գտնուող սովորական կենդանիներն են՝ խլուրդ, բզէզ, վայրենի կատու, ոզնի, պաշտամուկ, կաքաւ, ագռաւի և բազմաթիւ բուեր։

Աստ ամայանալուն ոչ միայն բնութիւնն այլ և տուաւել շրջակայ այլազգաբնակ պետերու բնակիչք պատճառ եղած են. երբ նա լքուած մնաց իր բնակիչներէն, մի և

նոյն ժամանակ նա ապառնայու խչնա-
ձեաց յարձակմանքներէն։ Սակայն մնաս-
կայ քնակիչք օր աւուր սկսան քանդել նորա
ամէնէն վեհագիրկ և ճարտարաշէն առնար-

ները Անւոյ շինուխճանց բարերով։ Անւոյ
այսչափ բարուքանդ եղած վիճակին տեսնե-
լով, միշտ երախտապէտ պէտք է լինի հայ
ազգն կարուց Գեր. Ալուանեան Գրիգորիս




119. Վիմագիր գեղջմանաձեր Ծաղկոցաձորի։

ները, իրենց սխոռներ, գումբ և բնակա-
րաններ շինելու համար. այսպէս նաև Ջաղ-
կոցաձորի մէջ բանջարներ ցանող Պարսիկ-
ները, շրջապատեր են իրենց բանջարանոց-

եպիսկոպոսին՝ որ իւր առաջնորդութեան
օրով, յաջողեցաւ Ռուսաց բարեհնամ ա-
րութենէն հրաման ձեռք բերելու, և քանի
մը հարիւր րուբլի հատուցելով Անւոյ Մ.

Երեքը Լուսաւորիչ եկեղեցին և վանքը մաքրեց և ժէջը պաշտօնեաներ հաստատեց, Աստուծոյ փառաբանութեան և այցելուաց առաջնորդութեան և ասպնջականութեան համար։ Նոյն անձը մաքրեց նաև Մայր եկեղեցին և պահականոց մը շինեց

քաղաքները կարող են գանել ընդարձակ տեղեկութիւն այդ մասին Շիրակի տեզագրութեան ժէջ։ Անոնց մեծ է Հոռոմոսի վանքը և Բագրատունի թագաւորաց հանգստարանը, որուն նկարագիրն տես ի կարգին։ Հին գարուց ժէջ Անին այցելող մի քանի օտար



120. Անդ տեսիլ տաճարի մի Մագոյի։

մեր նախնի մեծութեան այդ աւերակները պահելու համար։ Քաղաքիս իշխեցող Հայ թագաւորաց և իշխանաց, ինչպէս նաև Հայրապետաց կարգն յիշելն և իւրաքանչիւրի գործոց վրայ տեղեկութիւն տալն համառօտութեան համար դանց կ՚ընենք, փափաքողներէ գաս ծէ գարու ժէջ (1655ին) առաջին անգամ քաղաքս կը յիշէ գաղթական վաճառականն և ճանապարհագիրն Թեվենիէ. անկէց գրեթէ 20 տարի վերջն ալ ազգային սուն Պետրոս Պետիկ՝ որ իր լատիներէն գրուածքին ժէջ կը նկարագրէ

զԱնի։ Տասը տարի վերջը 1694ին իսա-լտցի բազմաշրջիկ պիտակատն Ճեմելլի, քաղաքիս մօտէն անցնելով Համառօտիւ կը նկարագրէ։ Ամրոցէ ԺՏ. գարու մէջ, գրեթէ ամենեին չի յիշուիր Անին քննող և այ-ցելող մէկը։ 1804ին այցելեցին Անի՝ Էջ-միածնի կրկին միաբան Խաչատուր և Յով-հաննէս քահանայք, և տեսան 40ի չափ կան-գուն և կիսականգուն եկեղեցիներ և ընդօ-րինակեցին բաւական արձանագրութիւններ։ Դարուս կիսուն մօտերը ուրիշ ազգային վարպետներ ևս այցելելով տպագրու-թեամբ հրատարակեցին կարևոր տեղեկու-թիւններ։

Օտարազգի նշանաւոր քննողներէն է Քէր—Փորթէր անգլիացին՝ 1817ին։ 1830էն վերջ բաւական անգլիացիներ եկան Ան-ւոյ աւերակաց քննութեան, և նաև Մորիէ որ Այիչէ կամ Աղջիկն Դարասայ վիպա-ռանութեան մէջ կը յիշէ քաղաքս։ Ճար-ատր կերպով գրեց քաղաքիս աւերակաց և ճարտարապետական արուեստի վրայ Չէմիլլրլն, որ 1836 տարւոյ յունիս 13ին քննեց։ 1837ին նաեւ եան երեք այցելուներ ունեցաւ Անի. նախ մայիս 8ին մանրախոյզ բաւաքնին գերմանացին Քոհլ, որ հոյակապ տեսից և գրաւոյց վրայ հրաշացած կը գրէ, և որ Ախուրեանի ա-փոնց վրայ գտաւ 20 տեսակի չափ բոյսեր և ծաղիկներ։ Երկու շաբաթ վերջը, մայիսի 20ին, կարճէն եկաւ Լեպտոր անգլիացին, և իրմէ վերջը նայիմերեր Կին իւր հայրե-նակիցն Ռէյլրլհեմ։ 1838ին եկաւ գաղ-ղիացին Ե. Պօռէ, որ եօթն օր գրագնացաւ արձանագրութիւններ օրինակելու և տեղն նկարագրելու, և երկրորդ տարին 1839ին Թևսիէ ճարտարապետը, որ շատ շէնքերու պատկերներն նկարեց։ 1841—1851 տա-րիներու մէջ աւելի շատ և կարևոր քննու-թիւններ եղան յԱնի, թէ յագգացոց և թէ օտարներէ։ Է. Ենրսէս վ. Սարգիսեան միաբան Ս. Ղազարու, 1845ին, Հոռոմոսի վանքէն սանդուկ բերելով և աչաց սուր տես-ութեամբն չբաւականանալով՝ գործածեց նաև պիտակ և շատ աշխատութեամբ գաղափա-րեց այն բոլոր արձանագրութիւնները զորս կրցաւ տեսնել։ Շահնազարեան կարապետ վ. այցելեց 1848ին և Աբէղ վ. Մխիթա-րեան 1850ին։ Մեծ երկրագէտն և Կով-կասեան գաւառաց բազմամեայ քննող գեր-մանացին Ապիխ 1844ին հասնելով նաև քա-ղաքիս ձեր և մէջը եղած շէնքերուն տեղերը նշանակեց։ 1846ին եկաւ Մուրաւիէֆ. և իրմէ երկու տարի վերջը 1848ին Ռուս զօրապետ Խանիքով։ 1850ին փեմբրոքեցի Գիւտուէհանց ճեմարանէն գրկից գգերմանա-ցին Ֆէրքիւհր, որ շատ օրեր (6—17 օ-գոստ.) Անի մնալով, երկրորդ անգամ գը-ծեց քաղաքի շրջապատի և յատակի ձևն, և ընդօրինակեց եկեղեցիներու և այլ շինու-թեանց մնացորդաց շատերը, զորս 10 տարի վերջը (1860) Պրոսէ՝ գաղղիացի արեւելա-գէտն, որ հմուտ էր նաև Հայոց և Վրաց լեզուներու, հրատարակեց վիմատիպ պատ-կերներով և կարևոր տեղեկութեամբք իր Աւերակք Անւոյ (Les Ruines d'Ani) գրքին մէջ։ Վերջին պատերազմաց ժամանակ (1878), անգլիացի սպայն Քրէյ հետևէն կամ մօտէն հետզհետէ գնահատով Անին, 1880ին հրատարակեց՝ անոր իւր վրայ ըրած ապա-տորութիւնը։ Ուրիշ ճամբորդներու և քննող-ներու միջէն մասնաւորաբար կը յիշուին երկու Ռուսք, Պոչյոշկին՝ որ հանած է քաղաքիս փոքրիկ յատակագիծը և նշանա-կած է 19 եկեղեցւոյ տեղեր, և Խոռոտ-պաշէ՝ ոչ այնչափ ճշդագիր։ Անւոյ վրայ յատգոյն գրուած մ՚ալ ճարտարապետական քննութեամբ հրատարակած է Ռուսն Կրիմ, որ անձամբ, վերոյիշեալ Քէմբերէն քիչ առաջ, չափած և գծագրած է քաղաքիս շէնքերէն շատերը։ Քեռ այսչափ այցելու-ներ յիշելու աւելորդ կը համարինք գնել տան նաև ուրիշ նորագոյն այցելուները, ո-րոց գրուածոց մէջ, թերևս նոր գիտելիք մի ևս չգտանուի։ Միայն ըսենք, որ 1888ին անգլիացի գիտնական բանասէրն և հայա-գէտն Բռնիսլիր՝ այցելելով քաղաքս, ըստ իւր գրութեան, հանդիպած է կիկլոպեան շինացուածոց. և ուրիշ Ռուս հայագէտ մ՚ալ Պ. Մառ՝ իւր շատ անգամ Անւոյ վրայ ըրած հետազօտութեանց իբրև արդիւնք, վերջերս հրատարակեց պատմական և հնա-գիտական տեղեկութիւններ, որոն մէկ մասն թարգմանուած հայերէն, հրատարա-

կուեցաւ Բագմավիպի 1899 տարւոյ պրակաց մէջ։

Ագգասիրական եռանդեամբ և ջանքով Պ. Յովհաննէս Քիւրքճեան՝ լուսանկարած է քաղաքիս գրեթէ բոլոր մնասերն և պատրիսպներն, ինչպէս նաև աչ սակաւ արձանագրութիւնք և քանդակք, այս լուսանկարներու թիւն 100ը կ՚անցնի։ Օտարազգի լուսանկարիչներ ևս հանած են քաղաքիս լուսատիպ պատկերները և տեսակ տեսակ տեսարանները։ Անոյ վրայ գրուած են հայերէն աչ սակաւ առանձնատրներ, յորոց նորագոյնները նշանաւոր են Հ. Ալիշանի «Անդորբանք Անւոյ» վերնագրով հատոր տողով



121. Անկիւրիոյ տեսարան։

քերթուածն, և Ակնբառդը Վ. Աբեղեանի հանրածանօթ գիմանուական տղերգն, որ կ՚սկսի.

Անի քաղաք նառեր կու լայ.
Զոկայ բառդ՝ Մի՛ լա, մի՛ լա.
Կ՚բանեն քիչ է, բազ մրճայ լայ։ Ին պես։

Քաղաքիս գրեթէ ամէն այցելուք, մանաւանդ ազուհով կամ կաւճով գրած են ուրեակ սրմնդ վրայ իրենց անունն ու ազգանունը և քանի մը օրառաւչ տողեր։ Այդ գրութիւնները միայն հայերէն չեն, այլ և առաբերէն, գաղղիերէն, գերմաներէն, անգլիերէն և թուրքերէն։ — Զամչեան. Պատմ. Հայոց. Բ. 415, 837, 851, 872, 931–36, 978–82. Գ. 44, 79, 147, 213, 317, և այլն։ Մատրգր. Հին. Հայ. 417–427։ Հնախօս. Հայ. Ա. 344. Բ. 49. Գ. 287, և այլն։ Հ. Միքեան Բժշկ. Պատմութիւն Անւոյ, 1830, տպ. Վենետիկ։ Բազմավիպ, Գ. 324. Ե. 5։ Հայաստան լրագիր, 1848–1849։ Աբել Վ. Մխիթ. Ճանապարհորդութիւն յԱնի, կ. Պոլիս, 1855։ Ջալալեանց, Բ. 1–15։ Հ. Ալիշան. Տեղագր. Հց. Մեծաց, 26–32։ Ներսիսեան Հայկական, Բ. Պր։ Շիրակ, 34–111։ Տեղագ. ի Փ. և ի Մեծ Հայս, 103–143։ Յով. Տէր Ներսիսեան. Տեղագրութիւն Անւոյ քաղաքի հանդերձ տեսարանացոյց պատկերօք. Թէոդոսիա, 1867։ Պ. Յ. Գեղամեան. Ախլցխայից մինչև Անի, Փորձ. 1880, Գ. յաւելուած, 33–64. Զ. 50–96. Ը. 91–115։ Եւ այլն։

ԱՆԻ. — Ալլապպարնակ գիւղ Ալթարատայ Շիրակ գաւառի Ախլմանեան մնասի մէջ, կէս մղոն Անի քաղաքէն հեռու՝ արեւմտեան կողմը։ Իւր մէջ հնութիւն մը չկայ, այլ քաղաքին և իւր մէջտեղը կան նահատակաց երկու գերեզմանոներ, որք քառ արձանագրաց, նահատակուած են ՃԺ դարու մէջ։

ԱՆԹՂՆԱՊԱՐ ՎԱՆՔ. — Վասպուրականի Ռշտունեաց գաւառի ուրիշ վանքերու հետ կը յիշէ և վանքս Վարդան աշխարհագիր։

ԱՆԿԱՃԱՒՈՒԻ ԽԱՉ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ բլրակ մը կայ, գագաթը կամ ծակ քարով գոր նուիրական կը համարին և ականջացաւի բուժիչ։

ԱՆԿԱՆԵԻՍ. Տես ԱՆԿՆԻՍ։

ԱՆԿԱՆԵՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՆԿԵՂԱԿՈՒԹ. Տես ԱՆԳԵՂԱԿՈՒԹ։

ԱՆԿԻՒՐԻԱ կամ ԷՆԿԻՒՐԻՒ. Պղ. ANCYRE. կամ ANGORA. Թ. ՕՃՃՅ. — Հնութեամբն և բազմամիմի դէպքերովք ի հնուց մինչեւ ցարդ երեւելի հանդիսացած է քաղաքս, որ երբեմն մայրաքաղաք էր Գաղատիոյ, և այժմ պիտա-

ւոր և վաճառաշահ քաղաք համարուն վի-
լայէթի։ Յայժ հռչակ ունեցած է քաղաքս
փոխադրուելէն անկախութեան ժամանակ. հին-
կութեան թուականն որոշ չի պիտցուիր, վասն
զի, այս նկատմամբ մինչեւ ցարդ ծանօթ
հին մատենագրաց առած տեղեկութիւնք,
համարուած են լոկ առասպելախառն աւան-
դութիւններ։ Պատմիոս կ'ըսէ, թէ Անկիւ-
րիոյ հիմնադիրն եղած է Կորդիոսի որդին՝
Փռիգիոյ Միջոս թագաւորը, որ այստեղ
Արամազդայ համար կառուցուելիք տաճարի
մը հիմն փորել տուած ժամանակ, գտաւ
խարիսխ մը, և այդ պատճառաւ քաղաքս
անուաներ է Խարխա (յն. Ἄγκυρα) որ բուն
մեր հնչման եղեր է Անկիւրա և Անկիւրիա։
Ապոլլոնիոս կարիացի պատմագիրն ալ, այս
խարիսխն կը համարի մին այն խարիսխնե-
րէն, զորս հին Գաղդիացիք կամ կելտք
բերած էին, Պաղատէսէն գրկուած եղիպտա-
կան նաւատորմիղին դէմ իրենց ըրած յաղ-
թութեան իրրեւ նշանակ։ Սակայն այս առա-
պարանութիւնն առեղծուածոտնալ կը մնայ,
որովհետեւ քաղաքս նոյն անունն ունէր նաեւ
Մեծին Աղեքսանդրի ժամանակ, որ Անկիւ-
րիոյ դիմացը կեցաւ, Պափլագոնիացւոց
պատգամաւորները ընդունելու համար։ Այն-
ըսկ կը համարինք, յիշել առաջքիս ծագ-
ման մասին պատմուած ուրիշ զրոյցներ։

Հռովմէական տիրապետութենէն առաջ
Անկիւրիա կառուցուած էր այժմեան բերդա-
տեղւոյն վրայ. Հռովմայեցիք գայն ընդար-
ձակեցին և բերդի պարիսպներն երկնցուցին
մինչեւ գաշտը։ Պատմական անթիւ դէպքեր
ունեցած է քաղաքս ի հնումն, որոնք մեզ
հետ ուղղակի վերաբերութիւն չունենալուն,
զանոնք կ'ընենք մանրամասն յիշելը։ Յովհաննու
կայսրը Անկիւրիոյ մէջ առաւ կայսերական
ծիրանի. իսկ Յուլիանոս հոն ընդունուեցաւ
մեծաշուք հանդէսներով։ Հերակլիոսի կայս-
րութեան ժամանակ Խոսրով Պարսից թագաւո-
րը քաղաքիս տիրեց. քանի մը տարի վերջն
ալ Արաբացիք յարձակեցան, և ապա Գոնիայի
Սէլճուկեաններուն ձեռքն անցաւ։ Ըստ Թա-
չակրաց պատմութեան, առ ժամանակ մը
Աղտիոքայ Բահեմնդ իշխանն եւս տիրեց
Անկիւրիոյ։ Յետ բազմատեսակ խառնակու-
թեանց, զորս պատմութիւնն չէ կարողացած
լիովին և ճշդութեամբ արձանագրել, քաղաքս
նուաճուեցաւ Մուրատէն Մուրատեան 1362ին։
Զրպուզք—աւռ գաշտի պատերազմով, 1402ին
Պայազիտ յաղթուելով Լէնկթիմուրէն, Ան-
կիւրիա քիչ մը ժամանակ մնաց Մոնղոլաց
ձեռքը. բայց Մէհէմմէտ Ա. գայն շուտով
վերստին գրաւեց և այնուհետեւ քաղաքս
Օսմանցւոց ձեռքէն եղած չէ, բայց միայն 6
ամիս 1833ին, Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի
փաշայի տիրապետութեան ժամանակ։

Անկիւրիա նշանաւոր է նաեւ իրրեւ քրիս-
տոնեայ քաղաք. Ս. Պօղոս գնաց քարոզե-
լու գԱնտիոքացիներն, անթիւ կուռքերով լի քա-
ղաքիս մէջ, և քրիստոնէական ճշմարիտ
կրօնքն հոն ունեցաւ իրեն ապաղաւորներ։
Զորրորդ դարու առաջին կիսուն, Ս. Յուլիոս
քահանայապետաց, Անկիւրիոյ եկեղեցին ա-
ռաքելական եկեղեցեաց կարգը դասեց. ասա
գումարուած են շատ ժողովներ, յորոց ո-
մանց կանոնքն եւս հասած են ձեռքերնիս։

Այժմեան քաղաքն հեռուէն հիանալի և
նկարչական դիրք ունի, ամիսիմէատրոնի
ձեւով սարածուած է, 120 մետր գաշտէն
և 920ոտ ծովու մակերեւոյթէն բարձր բլրոյ
մը՝ արեւելեան, հարաւային և արեւմտեան
կողմերը, որոյ գագաթան վրայ հանդչած է
մեծաւարած և եռապարիսպ բերդը։ Բոլոր
պարիսպները քարակերտ են, որք ոչ այնչափ
մեծապատկառելիութեամբ, որչափ բարձրութեամբ
և աշտարակներով վեհ կ'երեւան։ Հիւսի-
սային ծայրն՝ որ կը կոչուի Ագ—գէղէ (Սպի-
տակ աշտարակ), ամենէն բարձր կէտն է և
արտաքուստ սեպացած գառիվայր ապառաժուն
ահաւոր տեսարան մը կ'ընծայէ։ Արտաքին
պարիսպը շատ տեղ կիսով չափ կործանուած
և ի վերջոյ մասամբ մը նորոգուած է Մէ-
հէմմէտ Ալիէն. նորոգութեան համար գործ-
ածած են հին յիշատակարանաց բեկորներ՝
յատկապէս հռովմէական արձանագրութիւն-
ներով։ Բերդի դրանց անուններն են. Հի-
սար գափուղ, Իչ հիսար գափուղ, Տէմիր գա-
փուղ, Աբդազար գափուղ. այս դռներէն ներ-
կուքն, հոյակապ յիշատակարաններ են հին
գարուց։ Իչ հիսար դրան վրայ կայ յատնա-
բերն արձանագրութիւն. նոյն դրան մօտ կան
քանի մը բարձրաքանդակներ, հորիզոնական
պատկերուած պարսպին մէջ։ Ամենամեծ դրան

մօտ և Ագգուլէի մէջ կան առուծներու արձաններ, որոնք յատկապէս արուեստի հիանալի գործ կը թուին։ Քաղաքիս միջնաբերդէն զատ, ուր այժմ վառօդ կը պահեն, Անկիւրիոյ բոլոր միւս ամրութիւններն և պարիսպները խարխուլ և աւերակ վիճակի մէջ կը գտնուին. հին բերդի շատ մասերը գործածուած են իբրեւ հիմունք ի վերջոյ կառուցուած տներու։ Այժմ քաղաքն զեռ աւելի ընդարձակուած է և շէնքեր կառուցուած են մինչեւ միջնաբերդը շրջապատող պարսպի գոմերը։

Անկիւրիոյ հնութեանց մէջ առաջինն կը համարուի հռչակաւոր Օգոստոսի տաճարը, որ ոչ միայն զեռ մասամբ կանգուն միացած արմոց սրբատաշ և հաւասարաչափ մարմարիոն քարերով, ճարտարապետական ձեւովն և զարդերով, այլ և ընդարձակ արձանագրութիւններովն, յոյժ հետաքրքրական և թանկագին միացորդ մ'է հնութեանց յաչս հնախօսից և պատմաբանից։ Թուրքք այս տաճարին Հաճի Պէյրամ անունը կու տան, մերձակայ համանուն մզկիթի անուամբ, որոյ մէջ է Հաճի Պէյրամի շիրիմը կամ գաղաղը։ Հին արձաններ, խոյակներ, սիւներ և այլ հնութեանց միացորդներ կը զբաղեցնեն քաղաքիս զանազան կողմերը։ Միջնաբերդին մէջ կայ երկաթէ գնակ մը, ուսկից 700 աստիճաններով զեռնափոր սանդղով մը կ'իջնուի բլրան տարօրինակ, ուսկից կը վազէ Անկիւրիոյ գետակը, և անկից ալ գնացքին քով կ'անցնի։ Ասկից ալ գնալով կը հասնինք Անկիւրիոյ ամենէն գեղեցիկ տեսարանին։



122. Անկիւրիոյ հայկական թաղի մէկ մասը։

Ասկից ալ գնալով կը հասնինք Անկիւրիոյ ամենէն գեղեցիկ տեսարանին։ Ամբողջ քաղաքը կը տեսնուի ոտքերնիդ տակ, ուր ամէն կողմ ցրուած են մինչեւ հորիզոնը տարածուած տներ, որոնց կարմիր տանիքները կը տարբերին ամէն կողմ տեսնուած ծառերու կանաչութենէն։ Ամենէն աչքի զարնող շէնքերն են ամրոցին մնացորդները, որոնք կը բարձրանան քաղաքին վրայ, ինչպէս նաեւ մզկիթներու բարձր մինարէները։ Ամենէն հեռուները կը տեսնուին ծառերու մէջ ցրուած տասնեակ մը հողմաղացներ, որոնք կը գործեն քաղաքին մօտ գտնուող բլուրներու գագաթներուն վրայ։ Քաղաքացիք բերդէն մինչեւ գետակը տանող զետնափորը կ'անուանեն Սոլոզք, որ անշուշտ պաշարման ժամանակ գետակէն ջուր առնելու կը ծառայէր. իսկ գիմացի բլրան վրայ ծածուկ ճանապարհով կ'իջնէին գիշերանոցին գետակը։ Տիքիլի թաղ կը կոչուի բերդէն դուրս գտնուող բոլորշի բայց ոչ մեծաւոր քար մը, քառակուսի պատուանդանով, որոյ վրայ, բուն ծերոց, ի

հնուն կար լաւին արձանագրութիւն։ Քա-
զաքէն դուրս Թրքաց գոռներու մօտ կայ
անձանօթ հին աւերակ մը Եօղուզ առւվար
կոչուած. առուար որմոց գանագան մասունք
են, որոց մէջ կայ կամարակապ ճանապարհ
և ջրոյ ագուզաներ. ըստ ամենոց բաղնիք կը
համարուի։ Ալաճիսաճի կը կոչուի ի հնուց
ճեացած գազանամարտի վայրը, որ կը գըտ-
նուի բերդէն դուրս. ունի քարակերտ ամուր
սենեակներ, որոնք տեղ տեղ աւերած են
և ի վերջոյ հին շէնքերուն հետ միացուցած
կառուցած են նոր սենեակներ, և կը գործ-
ածուին իբրեւ ընթերցարան մըլլալից։ Այս
տեղ շատ են հին արձանագրութիւնք, սա-
կայն մեծաւ մասամբ խանդարուած։

Անկիւրիա որչափ որ ի հեռուստ հրա-
պարիչ երեւոյթի մ՚ունի, այնչափ ալ տխուր
է իւր տեսքն ի մօտոյ, բաց ի քանի մը
նորոգ կառուցուած ապիտակագոյն շէնքերէ
և մինարէներով մզկիթներէ, ճեացած ամրոց-
չուէիներն, այրուած քաղաքի մը նմանութիւն
ունի. փողոցներն նեղ են, ապատ և ծուռ
ու մուռ. տներն ընդհանրապէս շինուած են՝
արեւու տակ չորցած յարդախառն շաղախով
և այդ պատճառաւ սեւ ու տխուր տեսք ու-
նին։ Քաղաքս այժմ ունի տասս ըմպելի
ջուր, զոր չքանցքներով բերած են, 20 հա-
զարամեայ հեռուէն վազող Էրմա—սուռ վտա-
կէն. 1890 տարւոյ ապրիլի 25ին այդ նոր
ջրանցքներու բացման առթիւ քաղաքական
մեծ հանդէս կատարեցին։

Գարուս (ԺԹ) սկիզբը Անկիւրիոյ բնակ-
չաց թիւն կը հասնէր 40էն 50000ի, իսկ
այժմ վերջին վիճակագրութեանց համեմատ
ունի 30էն 35000 բնակիչ։ Մեծամասնու-
թիւնը կը կազմեն Թուրքք, որոնք մեծաւ մա-
սամբ կը զբաղին պետական գործերով, կան
նաեւ երկրագործք և անասնապարմանք, ինչ-
պէս նաեւ արհեստաւորք։ Ունին 18 մզկիթ՝
շատերը աւերակ վիճակի մէջ, քաղաքի մօտ
երկու գինուորանոց մին հեծելազօրաց, միւսն
հետեւակաց, այժմ կը կառուցանեն նաեւ
ընդարձակ հիւանդանոց մը, ամէն ազգաց
աղքատաց համար։ Բազմութեան կոմմունէ
երկրորդ կու գան Հայ կաթոլիկները, որոց
թիւն կը համարուի 9000էն 10000, և
1850 թուականէն ի վեր ունեցած են եպիս-
կոպոս առաջնորդներ, որոց մէջ իր վարուքն
և գործօք հռչակաւոր հանգիստացած է Գեր.
Ահարոն Շիշմանեան (1850—1862), որուն
դամբանն կը գտնուի մայր եկեղեցւոյ աւագ
խորանի կոնակը և ունի արձանագրութիւն։
Նոյն բազմավաստակ եպիսկոպոսի օրով բա-
ցուած կղերանոցն այժմ փակուած կը մնայ։
1861ին Գէորգ փէրոյ գաղղիացի ուղեւորն,
մեծ գովեստիւք կը խօսի կղերանոցիս վրայ,
յորում կանոնաւոր դասախօսութիւնք կ՚ըլ-
լային գանագան լեզուաց, և որուն աշա-
կերտք առաջինն եղան ամբողջ քաղաքի
հայ հասարակութեան մէջ հայերէն լեզուն
մշակողն և խօսողն, վասն զի մինչեւ նոյն
ժամանակ Անկիւրիոյ բոլոր Հայք կը խօսէին
միայն Թուրքերէն։ Ունին չորս եկեղեցի, Ս.
Աստուածածին՝ է մայր եկեղեցին, որոյ մօտ
կը գտնուի վայելուչ առաջնորդարանը. միւս
եկեղեցիներն են Ս. Կղեմէս, Փրկիչ և Ս. Պե-
տրոս Պօղոս։ Այս եկեղեցւոյ ամենոց մօտ
կը գտնուին տարրական դպրոցներ. կանխա-
կար նաեւ գաղղիացի Էսկինէոս Պօրէլէն հաս-
տատուած լիսէոյ դպրոց մը։ 1883—84
տարիներու մէջ արժանաւոր Յովսէփ Գրը-
մըզեան քահանայի ջանիւք բացուեցաւ Սրբ-
ոյն Յիսուսի կամ Քառասնից կոչուած
վարժարան մը, որ այժմ փակուած է, և
որուն ի մօտոյ բացուիլն կը մտադիրենք։ Գեր.
Յովհաննիսեանի (1887—1899) առաջնոր-
դութեան ժամանակ, Անկիւրիոյ մէջ հաս-
տատուեցան գաղղիացի Քրիստոնեայ դպրո-
ցաց Եղբարք, և այս պատճառաւ միւս դըպ-
րոցներն գոցուեցան և բացուեցաւ միայն
այդ գաղղիացւոց դպրոցն, որուն վրայ շատ
ազգս ինաց ժողովրդեան մեծ մասն, որոնք
կ՚ուզէին զաւակներնին ու-
նենալ, և իրենց նախնեաց լեզուն ուսուցա-
նել սերնդոց։ Անկիւրիոյ մէջ գտնուող ձեռն-
երէց անձանց և գիտուն հոգեւորականաց
չնորհիւք կը յուսացուի, որ ի մօտոյ բացուին
վերստին ազգային վարժարաններ։ Հոս հաս-
տատուած են նաեւ հայազգի Բորք Ալեքսան
Ցղոչեան, որք կը զբաղին աղջկանց դաս-
տիարակութեամբ։ Կաթոլիկոսեայ Հայք մե-
ծաւ մասամբ հարուստ են, և ազքատք սա-
կաւաթիւ. ունին մօտ 30—40 քահանաներ,
զոր մեծապէս կը յարգեն ու կը պատուեն։

Լուսաւորչական Հայք խառն կը բնակին առանձին թաղի մէջ, կաթուղիկեայ Հայոց հետ միասին, որոց թիւն կը համարուի 3000, մեծամասնութիւնը ապքատ են և հարուստք սակաւաթիւ։ Ի հնումն ունէր բազմաթիւ եղած են և ունէին եօթը եկեղեցիներ որոց անուանք են. Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Աստիածնոս, Ս. Կղեմէս կամ Ս. Թաէ, Ս. Լուսաւորիչ, Քառասուն մանկունք և Ս. Հոգի։ Այժմ այս եկեղեցիներէն երեքը միայն կայ, իսկ միւս չորսէն ոմանք հիմնայատակ եղած են և իրենց նախկին պայծառութենան հետքեր միայն նշմարանք մը թողացած, և ոմանք կաթուղիկեայ Հայոց ձեռքն անցած։ Վերոյիշեալ երեք եկեղեցիներէն ալ միայն երկուքը կը գործածուին,



123. Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանքը։

Ս. Նշան՝ որ բաւական արծաթեղէն անօթներ ունի, և Ս. Թաէ՝ որ կառուցուած է բերդի մէջ։ Այս եկեղեցւոյ արեւմտեան կողմը գտնուելով Ս. Կղեմայ Հայրապետի վերեզմանը, կաթուղիկէ Հայք ևս կը յաճախեն ուխտի. սոյն գերեզմանի վրայ գեղեցկաշէն գմբէթ մը կայ և շրջապատուած է երկաթեայ գեղեցիկ վանդակներով. հոս կան նաև ուրիշ սրբոց գերեզմաններ։

Լուսաւորչական Հայոց սեփականութիւն է, Անկիւրիոյ հիւսիսային կողմը՝ գրեթէ կէս ժամ հեռու դաշտի մէջ գտնուող Ս. Աստուածածնի (թիւ 123) վանքը, յորում կը նստի քաղաքին առաջնորդը, երկու կամ երեք վարդապետներով։ Ունի 24 սենեակ և երեք դուռ, մին ուխտաւորաց, ուրիշ մը միաբանից և երրորդ մը աշխարաց և արքատոց համար։ Բոլորշի և գմբէթաւոր եկեղեցին հիմնուած կը համարուի Ս. Պօղոս առաքեալէն, կամ լաւ ևս ունենք ըսածին համեմատ, ի հնումն մեհեան եղած է, զոր ապա առաքեալը սրբեր և օծեր է տաճար Աստուծոյ. և այդ կարծիքը հաւանական ևս է, վասն զի գմբէթը խորշ խորշ յօրինուած է, կոց արձանները համար։ Բայց ինչպէս որ ալ ըլլայ, տաճարս ոչ այնչափ մեծապատկառելի է։ Ունի հինգ խորան, արեւելեան կողմն է աւագ խորանը, և անոր աջ ու ձախ կողմերը երկերկու խորան։ Աւագ խորանը որ եկեղեցւոյ յատակէն 1,20 մեթր բարձր է, շինուած է ամբողջապէս կաւտինայի սպիտակ և կապոյտ խճկիով, ինչպէս նաև պատերն և յատակը, որոնց շինուիլեան թուականն ըստ Հեբրէի 1174 (= 1758) փորագրուած է սեան մը վրայ։ Եկեղեցւոյ մէջ, ինչպէս նաև գաւիթը կը գտնուին բաւական թուով պատկերներ իտալացի և անգլացի հնդկահայերէ նկարուած։ Իտալական նկարներէն միոյն վրայ կայ իտալերէն յիշատակարան մը, 1774 թուականաւ և Հռոմի քաղաքին անունը։ Այս պատկերներէն ոմանք, ըստ ասից տեղական քահանայից, բերուած են Հռոմէն։ Վանացս մէջ կայ բաւական ընդարձակ առաջնորդարան մը, որուն մէկ փոքրիկ սենեկին մէջ կը պահուին եկեղեցւոյ սուրբ անօթները, գաւազանները և ծանրագին զգեստները։ Առաջնորդարանին մէջ կայ նաև մատենադարան մը, հին և նոր գրքերու հաւաքածոյիւ մը։ Վանքս ունի առատ և համեստ, հասոյասուն կալուածներ, արմտիք ցանելու արաեր, թիթենոյ և մրգեղինաց պարտէզներ և այգիներ. ունի նաև կովեր, եղներ և ոչխարներ. ասոնցմէ զատ ուխտաւորներէն ալ բաւական նուէրներ կու գան։ Սակայն ցաւալի է ըսելն, թէ այսչափ առատ եկամուտներով հանդերձ, վանքն չունի ոչ կանոնաւոր գպրոց և ոչ գիտուն հոգեւորականներ պատրաստելու կղերանոց. միայն վերջին ազգասէր դէպքերէն հարկադրուած բացած են այժմ սրբանոց մը։ Անկիւրիոյ պարծանք և Մխիթարեանութեանս բազմարդիւն և սրբակեաց անդամներէն մին՝ Հ.

Մկրտիչ Վ. Ալպերեան, իր Գեր. Սահիանոս եղբօրմէն ամենայն բերած է ի Ս. Ղազար Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանաց ձեռագիր յիշատակարան մը 152 էջերով։ Այս յիշատակարանի մեծ մասն բռնած են, նոյն վանաց նուիրատուաց անուանք և նուիրաց քանակն և նկարագիրն։ Պատմական և կարեւոր կողմ մ՚ալ կայ, որով կը յայտնուի, թէ, վանքս հաստատուելն եցած է ամն ի Հայոց Տէր Ներսէս, զոր ապա Հայկական ՋԻԲ (= 1469) թուին, իր հարազատ եղբայրը Տէր Նիկողայոս արքեպիսկոպոս՝ աւելի կարգաւորած և շէնցուցած է։ Թէեւ վանացս վրայ գրելու շատ նիւթ կայ, սակայն բռնցմով մինչեւ անգամ կարելի է հատորիկ մը ձեւացնել, սակայն բառագրոյս ոճէն չշեղելով՝ այսչափով բաւականանանք։ — Անկիւրիոյ Հայոց սակաւաթիւ մասի մը մէջ մեծ գործած է բողոքականութիւնն, սակայ թիւն հազիւ կը հասնի 150ի, որք ունին ժողովարան մը։

Քաղաքիս Ցոյնք կը բնակին աւանդին թաղի մէջ և կը հաշուուին 1600 հոգի. ունին երկու եկեղեցիներ, Ս. Գէորգ և Ս. Երրորդութիւն, և ապչկանց և ազայոց զպրոցներ, որոց շնորհիւ անցեալին մէջ իրենց կորսնցուցած մայրենի լեզուն՝ այժմ սկսած են վերստին ձեռք բերել. ընդհանրապէս վաճառականութեամբ կը զբաղին և նիւթական լաւ վիճակի մէջ կը գտնուին։ Իսկ Հրեայք 400 հոգի են աւանդին թաղի մը մէջ, ունին Սինագոկ մը և մայրենի լեզուն կորսնցուցած չեն երբեք։

Որոշ չէ գիտցուիր թէ ո՞ր թուականին գաղթած և հաստատուած են ատա Հայք. բայց ըստ աւանդութեան կը կարծուի որ այս գաղութի մէկ մասն եկած է Պարսկահայաստանէն Ջ.ՁՈ դարու առաջին քառորդին մէջ։ Թէեւ մէջերնին կրօնական բաժանմունք կան, սակայն իրենց բարքն, սովորութիւնք և ընդհանուր յատկութիւնք իրարմէ ամենեւին չեն տարբերիր։ Հիզահամբոյր են, համարձակ, հաստատամիտ, աշխատասէր և ամէն բանի աջողակ՝ մանաւանդ առեւտրոյ. որով քիչ ժամանակի մէջ շատ առաջ կ՚երթան և կը հարստանան, քաղաքէն աւելի օտարութեան մէջ։ Մեծամեծ առջեւ արեւելեան անվիհեր համարձակութեամբ, յոյժ անուանի են Անկիւրացիք, որով իրենք գիրենք պատկառելի կ՚ընեն ծանր բարքերնին և անշփոթ ու պատրաստ պատասխաններով։ Յամառնակաւ փաշայ մը վախնալով որ չըլլայ թէ ծածուկ քրիստոնեայք իրեն դէմ ապստամբին, խստիւ արգիլեր է հայ լեզուի գործածութիւնն, և անոր հետեւանք դիտ մինչեւ ցարդ հայերէնը ուրացած չէ տեղւոյս ազգայնոց մէջ, թէպէտեւ մեծ յառաջադիմութիւն կայ և նորանոր չանքեր ալ պակաս չեն. սրամիտ են և գիւրաւ կ՚ուսանին օտար լեզուներ։ Առտուիկ հետաքրքիր են, մանաւանդ կանայք, քաղաքն եկով գացով օտարականները դիտելու։ Շատ հիւրասէր են, և կը վշտանան եթէ չկարենան մէկը հիւրասիրել։ Ամառնային եղանակին և մանաւանդ կիթոց ժամանակ, քաղաքէն դուրս գտնուող անուանի այգիները կ՚երթան և շատ օրեր հոն ուրախութեամբ և զուարճութեամբ կ՚անցնեն. իսկ ձմեռն սովորութիւն ունին գիշերները իրարու տուն այցելութեան կամ նստի (օթուրմա) երթալու։ Այցելուները կը պատուասիրուին նախ ծխախոտի գլանիկներով, որ վերջը եւս կը շարունակուի, յետոյ սեխի կուտով, որ շատ յարգի է Անկիւրիոյ մէջ և ամէն տուն անպատճառ պիտի գտնուի. վերջը կու գայ պատուական օղին, և ապա ազգի ազգի մրգեղէններէ, խմորեղէններ և ուտելիքներէ վերջը, ուշ ժամանակ կը մեկնին տուներնին, կրկին գիրար հրաւիրելով նոյնպիսի զուարթ գիշերներ անցնելու։

Անկիւրիոյ արեւելեան և հիւսիսային կողմերն թրջելով կ՚անցնի Համանուն գետակն, որոյ վրայ ձգուած են զանազան կամուրջներ, և յորոց նշանաւոր է մին քարաշէն։ Այս գետակ քաղաքին հիւսիսային կողմէն քիչ մը տեղ մէկ է հարաւային արեւմուտք լինելով՝ ապա կը շեղի արեւմտեան հիւսիս, կոչուելով Թաւպադիաճայի գետակ, և կը թափի Զաքարիայ գետոյն մէջ։ Քաղաքիս կառավարութեան պալատը նշանաւոր է մեծութեամբն, յորում թուրք լեզուի ապարան մի եւս կայ. շուկայն ձեւացած է երեք հազարի չափ խանութներէ. կան 12 բաղնիք, 24 խան, յորոց սմանք խիստ հին. պեզեստեն

մը և գետակի վրայ բազմաթիւ ջրաղացներ։ Անկիւրիոյ շրջակայից և վիլայէթի բերքերն են. հաշակուած այծամազն, բուրդ, սպիտակ գունաթափ և քաղցր համեղ անուռանի մեղր, ցորեն և ուրիշ արմտիք, խէժ, խաշխաշ, ալաժահրի (ճէհրի), խապտղ, ամանձ, ինձոր և ուրիշ տեսակ տեսակ պղեղիկ և անուշահամ միրգ-պէտներ։ Կենդանիներէն անուանի են երկայն մազոտ այծերն, բրդոտ կատուներն և շներն։

Քանի որ Անգիւրացիք՝ Գլխոյ գաղթականութեան կլիմային սկսան վարժեցընել Անկիւրիոյ այծերը, բանական փոփոխեցաւ բազմաթիւ վաճառականութիւնն, զոր մի իր պիտուր և հարստութեան ապրիւր վաճառքն-բէն միոյն արտածութիւնն շատ նուազեցաւ։ Սակայն այսուհանդերձ տակաւին շատ թուով կը գտնուին այս կենդանիներէն և ամէն տարի բանական մուտք մը կը գոյանայ։ Տարուան մէջ միջին հաշուով կ'արտածուին հետեւեալ նիւթերէն.

Պրօն կամ այծամազ . .	1 500 000 քիլ.
Բուրդ	2 000 000 »
Այծամազ հատորակ . .	250 000 »
Բամբակ	60 000 »
Գազի խէժ	180 000 »
Գեղին հունտ . . .	600 000 »
Ծխախոտ	125 000 »
Խաշխաշ	40 000 »
Բրինձ	800 000 »
Կարագ	300 000 »
Պատղներ	5 000 000 »
Խապտղ	7 000 000 »

Կ'արտածեն նաեւ ամէն տարի գրեթէ 100 000 ոչխար, 200 000 այծ ու մորթ, 20000 եզան մորթ։ Արմտեաց արտածութիւնն կը համարուի 4 000 000 քիլէ։ Պաշտօնական տեղեկութեան մը համեմատ 1893ին արտածուած է 12,500 000 ֆրանկէն աւելի արժողութեամբ ապրանք։ Ներմուծուած ապրանքներու արժէքն ասկէ աւելի է. նիւթերն են, շաքար, սուրճ, բամբակեղէն և բրդեղէն լաթիկէնք, հերոպական չուխայ, ֆէս, երկաթ, պողպատ, գանազան մետաղք, քարիւղ, և այլն։ Անկիւրիոյ առեւտրական արտադրութեանց մէջ ժամանակաւ մեծ շահու դուռ էր պրօնի կամ թիֆթիֆիի պատրաստութիւնն, ինչպէս նաեւ տեղական գործուած շալիներն. այս երկու արհեստներն եւս այժմ ինկած են։ Նշանաւոր է Անկիւրիոյ խմուղն (սուճուղ) և ապուխան (պատարմա). անուանի են նաեւ գինին և օղին։

Անկիւրիան այժմ սկսելով կապուիլ երկաթուղւոյ գծերով կ. Պոլսոյ և ուրիշ վաճառաշահ կեդրոններու հետ, իր վաճառականական շարժումն եւս օր բան օրէ առաւելու վրայ է. այս պատճառաւ կարելի է որ քաղաքն եւս գարդանայ և բարգաւաճի և մէկ խօսքով գրեթէ իր արեւելեան քաղաքաց յաւասէկ խօսուն բունէն։ Տիղիճարնակ առու յատկապէս երթևեկով, յատանկարած է Անկիւրիոյ 130էն աւելի տեսարաններն և բազմաթիւ հնութիւնաց յատանկարները։ — Տեղեկագր. Գաղատիոյ, 1873, 1–78։ Տեղագր. Հայս. 48–52։ Բիւեհ, Ա. 1867, էջ 257 և 247–284։ Բազմավէպ, 1899, էջ 27, 137, և այլն։

ԱՆԿՈՂ. Տես ԱՆԴՈՂ։

ԱՆԿՈՆԻՈ կամ ԱՆԿԱՆԻՈ. — Յովհան Մամիկոնեան կը յիշէ Վերին եւ Ներքին Աղձնիս կրկին տեղեր ի Տարօն։

ԱՆԿՇՏԱՆ կամ ՀԱՆԿՇՏԱՆՔ. — Հին գիւղ Վասպուրականի Երուանդունիք գաւառի, կը գրուի նաեւ (Տես) Ալգշտանց։

ԱՆՀԱՆԳՍՏԻՑ ՎԱՆՔ. Տես ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔ։

ԱՆՁԱԻԻՁՈՐ կամ ԱՆՁԱՀԻՑ–ՁՈՐ. — Վասպուրականի գաւառներէն մին էր ի հնումն, կը գրուի նաեւ Աղձոսաձոր և Ծնձոսից–ձոր։ Այս գաւառս բուն Թոմայի Արծրունւոյ կ'ասէ թէ Պարսկահայոց Հնոր քաղաքի սահմանաց մէջ էր։ Նոյն պատմիչը հետեւեալ տողերով կը յայտնէ նաեւ գաւառիս այսպէս կոչուելուն պատճառը. «Իսկ Աղձահից–ձոր վանն այսր կոչեցին. բազում ունելով ինչս ի կոխակս բարձրաւանդակս, և ի կիրճս ներքակեանս, ի գետս և ի խոխոմս ձորոյն ի ծոխ և ի բոխ երկրին անբնակ մարդկան»։ Նշանաւոր է ձորոյս մէջ գտնուող կոտոր բերդը, որոյ անուամբ կը կոչուի այժմեան Քոդուր վիճակը։

ԱՆՁԱՒ. — Փոքր գիւղ Վասպուրականի Առբերանի (Բերկրի) գաւառի մէջ, վանէն

ոչ այնչափ հեռու։ — Այս անուամբ դիպ մ'ալ կայ այժմեան Օլթիի գաւառի համանուն հաստարակութեան մէջ. բնակիչք այլազգի են։

ԱՆԶԵՒԱՅԻՔ կամ ԱՆԶԱՒԱՅԻՔ. — Հին գաւառ Վասպուրականի՝ արեւմտեան հարաւային ծայրը։ Կը թուի թէ ասոր վերջն, բոլոր բնակչացը վրայ յարմարցուց Անձեւացիք անունն, վասն զի ամէն կողմէ լի են անձաւներ, խորաձորներ, ծործորներ, և այլն. և ամբողջ գաւառն կը նմանի ամուր բերդի մը, և կամ թշնամիներէ խոյս տալու և ապաւինելու անմատոյց վայրի մը՝ ինչպէս կը յայտնեն մնացորդքերը, յորոց ի մէջ բերինք Յովհան. կաթուղիկոսի՝ Ասողիկայ Անձեւացեաց իշխանին համար բառը, թէ իր ակրոպոլեան բնակիչներք. «Ամրաւնայր ի վերոյ ամուր լերանց աշխարհին



124. Անտիոքեան դրամ Տիգրանայ Արշակունւոյ։

(Անձեւացեաց), ամրապահեաս զնոսա առնելով ի խորաձորս և ի խորխորատ վիհս փոսոց, և ի ծործորս բլրոց»։ Վաղարշակ Թագաւորը գաւառիս մէջ նախարարութիւն հաստատեց, որ ժամանակ մը եղաւ իրեն ապահին իշխանութիւն. իսկ Ա. Ամբաս Թագաւորի ժամանակ, նուաճուած էր, թագաւոր Աբծրունեաց դրածի համեմատ. «Ընդ ձեռամբ վասպուրական իշխանութեանն»։ Աբծրունի Թագաւորաց ժամանակ երբեմն երբեմն տէրտէրիւն կոչուած է ինչպէս. «Յետ բազում յուզիցն և պատերազմացն (ի'րաւ Թ. Աբծրունի՝ Գուրգենի համար) եհաս սիրել նմա Անձաւացեաց տէրութեանն»։ և այս պատճառաւ, կամ Աբծրունեաց արքայատոհմից ոմանց հոն նստելուն համար, երբեմն կոչուած է նաև Թագաւորութիւն։

Շատ անգամ կը յիշատակուին գաւառիս եպիսկոպոսներ. նախ Եղիշէի և Դաւթայ մէջ յիշուած Աբրահամու ժողովոյն եպիսկոպոսաց առաջադրութեանց մէջ, Եղբայր եպիսկոպոս Անձեւացեաց. և յետոյ նոյն պատմագիրներէն և Թ. Աբծրունիէն կը յիշուի Շմաւոն եպիսկոպոս Անձաւացեաց։ Նոյնպէս Գիխայ ժողովոյն եպիսկոպոսաց առաջադրութեանց մէջ կը յիշուի Գրիգոր եպիսկոպոս Անձեւացեաց։ Բայց ամէնէն աւելի երեւելի հանդիսացաւ և փայլեցաւ ի գարս մէջ առաքինութեամբ և արթութեամբ, Ս. Գրիգոր Նարեկացւոյ հայրն՝ Խոսրով եպիսկոպոսն Անձեւացեաց։ Գաւառիս նշանաւոր ամրոցն էր Խորնոցիէն և Աբծրունեաց պատմէն յիշուած կաճգուհար բերդը։ Հոս է նաև անուանի և հին ապառաժեղէն Հոգւոց Վանք։ Յայտնաւորաց ոմանց մէջ, գաւառիս իրրև նոր անուն, գրուած Քարպան։ Հին Անձեւացեաց գաւառին կը համապատասխանէ այժմեան Նոտուզ գաւառակը։ — Ստեր. Հին Հայ. 196–199։ Հեռաւոս. Հայ. Բ. 65, 166. Գ. 283։

ԱՆԶԻՏ կամ ԱՆՆԻՏ. Տես ՀԱՆԶԻԹ։

ԱՆԶԿԱՅԻՔ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԱՆՃԱՊՕՆՃՈՒԹԻՒՆ. Տես ԱԼՃԱՊՕՆՃՈՒԹԻՒՆ։

ԱՆՃԻՒ ԱՆԱՊԱՏ. — Կը յիշուի անապատս Սիւնեաց Գեղաքունիք գաւառի մէջ, և ունի Ս. Մինաս եկեղեցի մը, որուն 1670ին վարդենցիք ընծայներ են ասեպատան մը։ Թերևս նոյն ըլլայ անապատս Սիմոն կաթուղիկոսի յիշած Վարդենեաց Աճապատ հեռս։

ԱՆՄԵՒ. — Հին գիւղ Սիւնեաց Ծորք գաւառի մէջ։

ԱՆՆԱ ՎԱՆՔ. — Փոքր գիւղ Վանայ հիւսիսակողմը, 150 բնակչօք. ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԱՆՆԷՖԻԼՏ. Տես ԱՆԷՖԻԼՏ։

ԱՆՈՒՇԱՎԱՆՔ. Տես ՃԱՀՈՒԿ։

ԱՆՈՒՇԱՒԱՆ. Տես ԱՂԱՀԷՃՔ։

ԱՆՋՐԻՒ. — Հայաբնակ գիւղ Աբաթկեղի. բնակիչք 800 հոգի։ Ունի վարժարան մը և եկեղեցի մը Ս. Նշան։

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆԹԱՒԻԱ. Գր. ANTIOCHE — Քաղաք Ասիական Տաճկաստանի (Ասորիք), Որոնտէս գետոյն վրայ. Հալէպի

արեւմտակողմը 95 հազարամեաւոր հեռաւորութեամբ, և Միջերկրական ծովէն 25 հազարամեաւոր հեռու։ Բնակիչք 25000 հոգի, յորոց գրեթէ 5000ը Հայք՝ կաթոլիկք և լուսաւորչականք, 4000 Յոյնք, 300 Հրեայք, և մնացածն Արաբք, Ասորիք, Թուրք, և այլն։ Հին ժամանակ քաղաքս կը կոչուէր Հռեբլաթ, զոր վերանէն կոչեցին Անտիպտոս, և ապա Անտիոք և կարգի գնելով և գարդարելով իւր որպէսի անուամբ կոչեց Անտիոք Մեծ։ Գաղթական Յունաց, Ասիացւոց և Հրէից գալաւամբ՝




125. Անտիոքեան լատինագիր դրամ Լեւոնի։

այնչափ բարգաւաճեցաւ վաճառականութեամբ և ճոխութեամբ, մինչև կոչուեցաւ Թագուհի Արեւելից։ Յոս նախ Բրիտասի հաւատացեալները կոչուեցան Քրիստոնեայք. և սրովհետև նախ ասա հաստատուեց Ս. Պետրոս իւր աթոռը՝ քաղաքիս պատրիարքութիւնը նախապատիւ եղաւ, և Թէոդոսի ժամանակ կոչուեցաւ Թէուպոլիս, այսինքն է. Աստուածաքաղաք։ Պարսից խոսրով թագաւորը քաղաքս կործանեց, և վերջը վերըստին շինուեցաւ. անուանի է քաղաքիս ատուն ի խաչակրաց. շատ արիւնահեղ պատերազմներ եղած են ասոր մօտ։

Քաղաքիս հետ վերաբերութիւն ունեցող օտար ազգաց պատմական դէպքերն առանց յիշելու, բաւ է միայն, որ մեր քաջակորով Տիգրան Աշխատանի թագաւորը 83 թուին Ն. Ք. քաղաքիս տիրեց. և ի յիշատակ իւր յաղթութեան մնատուռ դրամ (Թ. 124) ևս կոխած է։ ԺԲ դարու մէջ ալ քաղաքիս բրիտանները խնամութիւն ունեցած են, մեր Կիլիկիան իշխանաց հետ։ Լեւոն Ա մտադիր էր Անտիոքը միացնել Կիլիկիոյ հետ, սակայն չյաջողեցաւ. առաջին անգամ պաշարելով կ'առնու քաղաքս 1203 տարւոյ Նոյեմբեր 11ին, և երեք օր վերջը նորէն կը թողու։ Երկրորդ անգամ 1206ին կը մտնէ Անտիոք և Բուրէնը իշխան կը գնէ քաղաքին, Պրեմոնդ Գ անց, սակայն քիչ տարիէն վերստին Պրեմոնդ տիրացաւ Անտիոքայ։ 1212ին գինու գօրութեամբ Լեւոն զԲուրէն Անտիոք կը մոռնէ և քաղաքը կ'աւարէ։ 1216ին երրորդ անգամ Լեւոն կ'առնու Անտիոքը, և մեծ փառքով Բուրէնը կը հաստատէ բրինձ քաղաքին։ Այս բոլոր պատմութիւնը մանրամասն գրած է Հ. Ալիշան՝ Սիսուանի Լեւոն Մեծագործի նուիրուած մասին մէջ։ Լեւոնի մահէն վերջ, այլ ևս չենք տեսներ զԱնտիոք Հայ իշխանաց և կամ իրենց իրաւմներու իշխանութեան մէջ, այլ օտարներ կը տիրեն անոր. իսկ 1516ին կ'անցնի Թուրքաց ձեռքը։

Անտիոք՝ որ ի հնումն բազմաթիւ ապարանքներով և հոյակապ շէնքերով կը պարծէր և մինչև անգամ կը հաւատարիր Հռոմայ՝ այժմ բոլորովին անշքացած է։ Գրեթէ միշտ 50 տարին անգամ մը երկրաշարժի ենթակայ կ'ըլլայ. 1872ին քաղաքիս կէսը աւերակ դարձաւ երկրաշարժէ։ Տակաւին կը տեսնան հին հաստատուած պարսպաց (Թ. 127) և ջրանցից աւերակներ։ Անուանի են ջերմուկները. ա-



126. Դրամ Բուրենի Բրինձ Անտիոքայ։

ճառականութիւնն այնչափ ծագկած չէ։ Հայերիկ է. Անտիոք Ս. Դուկասու և Ս. Յովհաննու Ոսկերերանի. իր մէջ եղած են շատ ժողովներ։

Անտիոքայ պատառակին մէջ գտնուող վերակէն հանելեալներուն մէջ, Պիրազ, Հաճի Հապաշ, Եօղուն Օղուխ, Խրտրրբեկ, Քէպրուխ, կան 1200 տուն Հայք, որոնք գրաբարի սնոյ հին հայերէն մը կը խօսին։


ԱՆՏԻՏԱՒՐՈՍ. — Տաւրոս լերան մէկ կողմն բազուկն է, որ կը ձգուի դէպի հիւսիսային արեւելք՝ Փոքր Հայոց մէջ, և կը հասնի մինչև Պոնտոսի սահմանները։ Ըստ

խոբենացւոյ ունի շատ հանքեր ոսկւոյ, արծաթի, պղնձի և երկաթի։

ԱՆՏՐԱՔ. — *Աչք անուանի կրկին պիղծ*

ԱՆՓԱՅՏ ԲԱՍԵՆ. *Տես* ԲԱՍԵՆ։

ԱՆՔՈՆԱ *կամ* ԱՆԿՈՆԱ. *Իտ.* ANCONA — *Ծովեզերեայ վայրչապիր քաղաք և նաւա-*



Անգիսոլեան տիկ վիտուած ձախակող. 127։

կը յիշուին Գուզարաց Թոռնէք գաւառի մէջ։

ԱՆՏՐԻԱ. — *Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարի. ունի գրեթէ 400 բնակիչք։*

Հանգիստ Աղբիւրականի. որ թէպէտ ժամանակաւ վէնեակոյ և Ճենովայի հետ չկրցաւ մրցիլ վաճառականութեամբն, բայց առնցալ

շատ վար ալ չմնաց։ Իտալական քաղաքաց շատերէն առաջ ասպնջական եղած է հայ վանականաց և ուխտաւորաց, անշուշտ նաև վաճառականաց։ Քաղաքս ունի հայ պաշտպան սուրբ մը, Ս. Լիբերիոս, որ կը թարգմանուի Ազատ. մեր պատմիչներէն ամենևին չյիշուած այս սրբազան անձնաւորութիւնն, բաս ամանց կը համարուի Հեթում Թագաւորի որդին, և բաս այլոց, գես աւելի հնադոյն հայ թագաւորի մը կամ իշխանի որդի։ Ամէն տարի մայիսի 27ին, Անթոնացիք մեծ հանդիսով կը կատարեն սրբոյս տօնը։

Ս. Հեթմոյ Թագաւորութեան ժամանակ սկսած են բնակիլ ատա Հայք, որոնք Վենետիկ նաւած առեն կը հանդիպէին նաև



128. Հին արձան Անտիոքայ։

այս նաւահանգիստս։ Նոյն գարուց սովորութեան համեմատ, քաղաքիս պարիսպներէն դուրս Քալաճոյ կոչուած գրան մօտ տեղատուած էին Հայք՝ հաստատելով իրենց Հոգետունն Ս. Հոգի, ինչպէս կը կոչէ Ինոմիկնա Գ քահանայապետը 1248ին, այն կանդակի մէջ, որով թոյլ կու տայ եկեղեցի կառուցանել։ ԺԳ և ԺԴ գարուց մէջ ատա բնակող Հայոց վրայ տեղեկութիւնք կը պակսին, և ոչ իսկ կ՝երևին, Մաղաքիա գալի յիշած այն «բազում տերեզմանատարք հայ գրով փորագրեցեալք»։ 1538ին կղնիմէս Ե քահանայապետի հրամանաւ քաղաքիս պատուարաց և պարսպաց շինութեան ժամանակ, Հայոց հին հոգէտունը

բոլորովին անյայտացեր է։ 1539ին իբրև մեծափարթամ վաճառական կը յիշուի անն Գէորգ որդի Մուրատայ, որ հրաման կ՝առնու և քաղաքիս բնակիչ կը գրուի։ Նոյն հայազգին Գէորգ, Ս. Օգոստինոսի եկեղեցւոյն մէջ նկարել տուաւ, Պոլոնիացի աշնաւանի Ֆ. Փեղլեկրեհնոյ Փեղլեկրինի, բաս այլոց Փրիմիթիւոյ՝ նկարչին Բրիսաոսի Մկրտութեան մեծ և գեղեցիկ պատկեր մը. 1560ին ալ շատ ծախքով մայր եկեղեցւոյն աւագ խորանը շինեց, Բրիսաոսի Յարութեան գեղեցիկ պատկերով, որոյ տեղ այժմ գրուած է նկարչին պատկեր, ֆաւա պատկերահաներէն նկարուած։

Նոյն ժամանակները (1549) Հռովմայ պետութեան յորդորներով, քաղաքիս վաճառականութիւնն բաւական ծաղկեցաւ, և պատմիչներէ յիշուած վաճառականաց կարգին մէջ կան նաև Հայք։ 1580ին կը յիշուի Հայոց գոռնց կամ գոնսուլ անն Հերոնիմ Թոռնաեան։ Նոյն ժամանակները վաւերական դաշնագրութեամբ Հայոց ձեռքն անցաւ Ս. Աննատասիա եկեղեցին, յորում գրեթէ 200 տարի ազգային ծիսիւ կատարուած են տատուածային պաշտամունք։ 1584ին գլխաւոր վաճառականներէն մին Սիմոն Միանեան նաւաբեկութեամբ մեռնելով, ինչքն կը գրաւէ գունդը. բայց Աբգարու տալպրոդի Սուլդանշահ որդին՝ Հռովմէն գալով, գունդին ձեռքէն կ՝առնու զայն և կը սեփականէ վերոյիշեալ եկեղեցւոյն։ ԺԶ գարու սկիզբը (1626) կը յիշուի հայ և պարսիկ վաճառականաց գալուստն Անքոնա։ Նոյն ժամանակները, Հայոց հոգէտան վերակացու կը յիշուի օտարազգի մը Բեռնարդ Զագէր։ 1655–61ի տեներները, քաղաքիս ինչպէս նաև Հռովմայ Հայոց եկեղեցիներու նորոգութեան գրամ հանգանակելու համար, փոխարքային հրամանաւ կը շրջէր Նեապոլսի մէջ անն՝ Տէր Վարդան որդի Հայրապետի։ Մինչև ԺԸ գարու վերջերը, նոյն Ս. Աննատասիա եկեղեցին կը գործածէին Հայ երիցուներ և քանի մը եպիսկոպոսներ, որոնք հոն կը կենային կամ կը հանդիպէին, յորոց էին և Գրիգոր Պաստաճի (1777), որ երբեմն պատրիարք էր ի Կ. Պոլիս, Ղազար Աբեղարմին եպիսկոպոս, ուր

և վախճանեցաւ 1783ին, և Մխաբանով Հարց վերջինն ինանասեան Հ. Թովմաս Իտալերտենց՝ † 1794։ Ցետոյ Հայք այս եկեղեցին Թողլով, իրենց բոլոր սպասներով փոխադրուած են Ս. Հերոնիմոսի եկեղեցին, զոր կոչեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ։ 1766 Թուին ազգային հաւատաւորք ոմանք Զմիւռնիայէն քաղաքս գալով, ուզեցին կուսասան հաստատել, և միաբանական կեանք կը վարէին Ս. Աստուածասիրայի եկեղեցւոյն մօտ, ուր և թաղուած են անոնցմէ երիցպատիւները։ Վերջը ուրիշ տորեր ևս գալով՝ 1780ին իրենց բնակութիւնն հաստատեցին Լորենցոյի մէջ, Տիրամօր հոչակաւոր ուխտատեղւոյն մօտ. ուսկից 1787ին փոխադրուեցան ի Քասթելֆիտարդոյ, և անկէց ալ 1838ին գաղձան վերսաին յԱնքոնա, և բնակեցան Հայոց հին և նոր եկեղեցւոց մօտ։ Հայազգի և հայրենասէր Գրիգոր Նուռի (Զըպլագեան) յաջնուածէս կանոնիկոսի օգնականութեամբ 1848ին կանգնեցին կուսասան Ս. Բարպողիմէոսի եկեղեցւոյն մօտ՝ Ս. Լուսաւորչի անուամբ, և իրենք Հոսիոսիեանք կոչուեցան. բայց քիչ սարի վերջը (1859ին) կաթոլիկ Հայոց կաթողիկոսը զիրենք փոխադրեց ի Հռոմ։ 1872էն ի վեր ազգային ամէն շաուխիղ ջնջուած կամ ցրուած է քաղաքէս. և յետին հոգևոր առաջնորդն հարկադրուելով մեկնել անտի՝ վերադարձը հարք ժառանգած են Հայոց վերջին եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ, յորում կայ նաև Ս. Հռիփսիմէ կոյսի յատուկ խորան, բայց գոն քաղաքացիներէն շատերը Հայոց եկեղեցի կ'անուանեն։ Ցատուկ քընդումեան պէտք կայ, և հաւանական է որ շատ ազգային յիշատակներ դուրս գան քաղքէս գիւանները, եպիսկոպոսարանէն և ժողովրդապետական եկեղեցիներէն։ Անքոնայի մօտ հարաւակողմը գտնուող փոքրիկ Ռեքանաթի քաղաքին մէջ 1897ին բացուեցաւ Հայոց որբանոց մը, որոյ կրթութեան գործն յանձնուած է վենետկոյ Մխիթարեանց Միաբանութեան։ — Սիսական, 452–454։

ԱՇԱՂԸ–ԿԵՏԻԿԼԸՐ. — Հայաբնակ գիւղ կարսի, 400 բնակչօք։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՐԿԻՐ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇԱՆ. — Քրիստոնեակ գիւղ Ալաշկերտի, խաչլուայ արևմտեան հիւսիսային կողմն. բն. 15 տուն։ Ամենապատուական ժամկը բունի գիւղիս մօտերը. ժողովուրդը գարնան կը հաւաքէ, կը խաշէ, և աղջուր պնելով ձմեռուան համար կը պահէ. պահը աւուր ուսելիք է կողմանցս Հայ գիւղացւոց համար։

ԱՇԱՆ. — Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ, Եմիշեան գիւղի արևմտեան կողմը, ձորի մը հարաւահայեաց լանջի վրայ։ Բնակչաց թիւն է 556, որոց մէկ մասն եկած է Ջրաբերդէն. ունին և եղեցի մը Ս. Աստուածածին։

ԱՇԱՐՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇԴԱԼԱ կամ ԱՂԱՃԱԼԻ. — Գիւղ կարնոյ արևմտակողմը, 8 ժամ հեռաւորութեամբ, կը զբաղի նաև Աշխալա։ Բնակիչ 500 հոգի, յորոց 200ը Հայք։ Կողմանցս բնակչաց Ախալցխա գպրեվէնն առաջ, գիւղս ունէր 103 տուն հայ։ Գիւղիս մօտ կայ բարձր և երկայնաձիւտ բլուր մը, որոյ վրայ ի հնումն ամրոց կար։ 1868ին այդ բլրէն քար մը փրթելով, կ'ինկնայ աւանիս վրայ, և Աստրիկ անունով հայու մը տան մէկ մասը կը կործանէ։ Ի. Ը. գարու առաջին քառորդին մէջ, ատա գանուելով Գրիգոր անի հայ ուղղափառ քահանայ, կը ձեռնուի ի Հայոց, և մեր միաբանութենէն Հ. Յակովբ վարպապետը՝ կը գրամանէ. տարիներ վերջը հալածանաց ժամանակ կը բանտարկուի նոյն քահանան, և Հ. Յակովբը կ'ապաստ, բայց այնչափ քաշած տառապանքներով տկարացնալով կը վախճանի և կը թաղուի գիւղիս մէջ. կ'ըսեն, թէ գերեզմանէն բժշկութիւնը կը լինին։

ԱՇԴԱԼԻ կամ ԱՇԻԱԼԻ. — Գեղեցկագիր հայաբնակ գիւղ Բագրեւանդայ Ալաշկերտի վիճակին, Երանոս գիւղի արևմտակողմը՝ կէս ժամ հեռու, գաշտի մէջ։ Աշխալի ի հնումն ունէր 300–500 տուն հայ բնակիչ, իսկ այժմ 14 տուն հայ և 100 տուն քուրդ, որ 15 այլ և այլ ցեղերէ կազմուած են, և հեռզհեռէ հաւաքուած են գիւղս։ Աւսոր մօտերը կան աւերակներ, ինչպէս՝ Աղթաւալի, Մանուչիներ, Թաշլի։

Ընտիր է տեղւոյս ցորենը, և Հայք քրդևբէն աւելի լաւ օգուտ կը քաղեն երկրագործութենէ։ Հին աւերակ եկեղեցին անհնամ մեալով քրդերը մեռերը անոր շինած են, և գայն աղբանոց դարձնելով՝ հիմերն անդամ անհետացուցած են։ Նոյնպէս հին մեծ գերեզմանատան գարգարուն խաչքարերով քրդերը զարդարած են իրենց ախոռները, որով գերեզմանը զուրկ մնացած է ա և է հնութենէ։ — Բագրեւանդ, 147—151։

ԱՇԻԹԱ. — Վիճակ և աւան հին Կոռճէից նահանգի Աչդարք գաւառի մէջ։

ԱՇԻՆՈՑ ԱՄՐՈՑ. — Հին բերդ կը յիշուի Վասպուրականի Անձախիձոր գաւառի մէջ։

ԱՇԻԱՂԱ. Տես ԱՇԳԱՂԱ։

ԱՇԻԱՂԻ. Տես ԱՇԳԱՂԻ։

ԱՇԻԱՐ կամ ԱՇԻԱՐԱՊԱՏ. Տես ԱՊՇԱՐ։

ԱՇԻԱՐՉԱԲԵՐԴ. — Կը յիշէ անունս Թ. Արծրունի. «Եւ ինքն (Գուրգէն) անցեալ գնայր առ իշխանին ի յամուրն յԱշխարհաբերդն կոչեցեալ». կը կարծուի որ Ի՛ննկնար Սպերոյ կողմերը։

ԱՇԻԱՐՕՎԱ կամ ԱՊՇԱՐՕՎԱ. Տես ԱՊՇԱՐ։

ԱՇԿԱՆ. — Գիւղ Վանայ Նահանգի այժմեան Նորաւուզ գաւառակի մէջ։ Սակաւաթիւ են հայ բնակիչք, և ունին Ս. Յովհաննէս եկեղեցի մը։ — Այս անուամբ հայրենակ գիւղ մ'ալ ունի Զմշկածագ (Ծոփք), Ս. Գէորգ եկեղեցիով։

ԱՇՄՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՄՈՒՆԻՔ։

ԱՇՄՈՒՇԱՆ կամ ԱՐՇԱՄՈՒՇԱՆ. Յն. Ἀρσαμώσατα կամ Ἀσμώσατα. — Հին և հրաշակաւոր քաղաքս յիշուած է ի պատմութեան, և այժմ իւր որոշ տիրքն և աւերակաց վայրն անյայտ։ Հաւանական է որ Ի՛ննկնար Տուրուբերանի Արշամունիք գաւառի մէջ, և կամ Զորրորդ Հայոց մէջ, և շինուած է Արշամ Թագաւորէն։ Մատթէոս Ուռհայեցին Աբուածանուց վրայ կը գրէ բերդաքաղաքս Աշմուշատ՝ ձագաղջուրի մօտ։ Թէոփիլոս կայսրը ինքներորդ գարուն մէջ աւերեց Աշմուշատայ և Հանձրատայ սահմանները. իսկ ԺԱ գարուն Սանոյ Թոռնիկ իշխանին ձեռքն էր քաղաքս, որ անկէ հրնեղով ընդդէմ Փիլատոսի 1073 Թուին, մեծ յաղթութիւն ըրաւ Ալէքսեայ գաշտի մէջ։ ԺԲ գարուն Հռոմկլայու Յոզոմոյն եպիսկոպոսաց սատրագրութենաց մէջ կը յիշուի տեղոյս եպիսկոպոսը, կիպրոսի եպիսկոպոսէն վերջ և Նիկիերաի եպիսկոպոսէն առաջ, Թէոդորոս եպիսկոպոս Աշմուշատայ։ Կը յուսանք որ ապագային նորանոր քննութեամբք, աւելի ընդարձակ և ճիշդ տեղեկութիւններ սատնանք հին քաղաքիս վրայ։

ԱՇՆԱԿ. — Հին անուանի աւան Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Թալին գիւղի արեւելեան կողմը մէկ ժամ հեռաւորութեամբ, Արագածի հարաւային արեւմտեան սահրամբ, և համանուն Աշնակ լեռնակի հիւսիսակողմը։ Ի հնումն ձմերոց էր մեր Արշակունի թագաւորաց, զոր ուրացեալն Վասակ ուրիշ քաղաքաց և շինից հետ աւերեց հինգերորդ դարու մէջ. բայց մանաւանդ մեծ շէն էր մինչև ԺԱ դար։ Սամուէլ Անեցի 1162 Թուին արկածը պատմած ժամանակ, հետևեալ կերպով կը յիշէ նաև աւանս. «Զմեծ աւանն գԱշնակ՝ այրեալ չարագլուխ Ելակումն, զոր ՍՊ (= 2800) ասեն զայրածան կամ Բ (= 5000)»։ Աւանս որ ի հնումն ըստ աւանդութեան ունէր մինչև 12000 բնակիչ, այժմ չորս նուազութեան պատճառաւ ունի միայն 70 տուն այլազգի։ Հայկական հնութեանց միակ յիշատակ կը մնայ աւերակ բարաշէն եկեղեցի մը, որոյ ձևոյն և արձանագրութեանց վրայ տեղեկութիւնք կը ձակ, պակսին։ — Այրարատ, 142—143։

ԱՇՈՑ կամ ԱՇՕՏԻ. — Սերաստիոյ կուսակալութեան Տէրճան գաւառակի մէջ վիլայրում կան բաւական թուով Հայեր։

ԱՇՈՏԱՅ ԵՐԿԻՐ. — Կը յիշուի յիշատակարանի մը մէջ, և կը թուի Այրարատայ Գաբէղէնք գաւառի մէկ մասն։

ԱՇՈՏԻ ԹԻՒՐԻՆ կամ ԲԵՐԴ. — Այսպէս կը կոչուի Վանայ Մահմուտի գաւառակի մէջ բաւական ընդարձակ լերանմը վրայ գտնուած քարափոր զուռ մը։ Այս լեռը մօտ է փական և Սալախանէ գիւղերուն. երկնցած է արեւելք արեւմուտք մէջակ բարձրութեամբ, և նեղ կիրճով մը երկու զլխաւոր մասերու բաժնուած, որոյ երկու կողերուն վրայ փորուած են մեծա-

մեծ խաչեր։ Խիստ հին ժամանակաց արքայական կամ իշխանական բերդի մը մնացորդ կը թուի այս գուռը, և արդէն ներսն վրայ կը գտնուին այլ և այլ խորութիւնք ու մանուածոյ այրեր։ Դրան բարձրութիւնն է 4 մետր, լայնութիւնը 2 և խորութիւնը 1։ Վէրի–կողմը 1 մետր երկայնութեամբ 10 կարգ բեւեռազրերով զարդարուած է, ու մանք հինգ տող կը համարին՝ կրկնագիր տեսակէն։ Այս արձանագրութիւնս կը թուի 1863ին ուսուցիչ Վիւնշի գտածն, որ և կազապարեց և լուսանկարն հանեց. ուրիշ բանասէրներ ևս գտնագան ժամանակաց մէջ զրած են ասոր վրայ։ Երեսպացիք ասոր–բար կը զրեն Աշրուտ–Տէրկէ (Aschrut–Darga), տէրկէ պարսկերէն բառ է, որ կը նշանակէ դուռն՝ թագաւորաց. կողմանցս բնակիչք թէ Հայք և թէ Քուրդք միշտ Աշոտի դուռն կամ Աշոտի բերդ անունը կու տան։ Բերդիս կողերուն վրայ արձանի կամ կոց պատուանդանի տեղեր կը տեսնուին, քառակուսի և ուղղանկիւն ձևերով։ Վերոյիշեալ զրան հարաւակողմն կը նշմարուին հինաւուրց ոչ սակաւ քնակութեանց հիմունք, որոնց նկատմամբ միայն ասանդութեամբ զիտենք՝ թէ հին և մեծ քաղաքի մը տեղերն են։ — Նկարգր. Ողևորութիւն, 48–50։

ԱՇՈՐՆԻՔ Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇՈՑ կամ ԱՇՈՑՔ. — Ա.յրարատեայ գաւառներէն մին, որ թէ և պատմութեան մէջ փոքր ի շատէ ծանօթ է, սակայն աշխարհագրութեան մէջ կրնանք ըսել թէ անծանօթ է։ Դիրքն վեր ի վերոյ յայտնի է և ոչ որոշակի, և մեր պատմիչներն չեն յիշեր գաւառիս յատուկ գիւղ մը կամ շէն մը։ Պատմական յիշատակութիւններէ կը համարուի որ կ'ընդհանայ Տաշրաց հարաւակողմը, Շիրակայ հիւսիսային՝ և Կանգարաց և Ջաւախաց հարաւային կողմը։ Կը համարուի զարձեալ Գուգարաց Ալոց վիճակն, որ ծանօթ է Վրաց պատմութեան մէջ, ու բոլոր փոխան հայերէն թարգմանութեան մէջ ըստ Ջուանշիրայ գրուած է Աշոցք, և կը նշանակուի սահմանակից Տաշրաց։ Ըստ Խորենացւոյ (Բ. Ը), վաղարշակ թագաւորը Գուշարայ որդւոց յատկացուց «զՏէրութիւնն Աշոցայ և զսպասկանութիւնն Տաշրաց»։ Պատմական զանազան զէպքերէ և յիշատակներէ կը յայտնուի որ գաւառս ժամանակաւ եղած է միջասահման մեր և Վրաց աէրութեան։ Վրացիք Վաղարշակ թագաւորէն ալ առաջ կը յիշեն գաւառս, իբրեն հռչակաւոր փառաւազի ժամանակ. կը յիշեն նաև Ա. գարու վերջերը Բ Աբռաշիսի օրով։ Պատմութեան մէջ կը յիշուի նաև Ջոր Աշոցայ, որ անշուշտ գաւառիս գետահովիտ մի էր։

Աշոցայ տարածութիւնն և ընդարձակութիւնն կ'երևի չափաւոր էր, որ և արքունական բանակի զօրաբաժնին կու տար 500 հոգի։ Գաւառիս իշխաններէն կը յիշուի Գդարու մէջ Տաճատ, որ Հայոց նախարարաց հալածանաց և տագնապի ժամանակ, մինչ Աբռաշիր Սասանեան կը կատարէր Աբռաւաղդայ Մանդակունւոյ Տրդատայ գայեկի առհմը, ազատեց անոր մէկ բոյրը և իրեն կին առաւ, որուն փոխարէն Տրդատ վերջը զինքը Աշոցայ իշխան դրաւ։ Հայոց թագաւորութեան վերնալէն վերջ, կը յիշուի Հմայեակ Աշոցայ Տէր։ Վարդանանց ժամանակ կը յիշուի Հրահատ, և նոյնը կը թուի որ անունց նահատակութենէն վերջը, ուրիշ նախարարաց հետ զերի փնաց ի Պարս. — Ասոնցմէ վերջ զրեթէ երեք դար պատմութեան մէջ Աշոցայ իշխանաց յիշատակ չկայ. բայց Ը դարու երրորդ քառորդին մէջ Սիոն կաթողիկոսի օրով յԱղուանս եղած ժողովքին մէջ կը յիշուի Արտաւազդ Աշոցայ Տէր։ Նոյն ժամանակներն կամ քիչ վերջը, Աշոտ և Շապուհ Բագրատունի եղբարք, Աբռաբացւոց ձեռքէն առին Շիրակայ հետ նաև Աշոցք և Տայք գաւառները։ Անկէց վերջը կը թուի թէ վարչութեամբն միացած է Շիրակայ հետ, և յատուկ իշխաններ չեն յիշուիր։ ԺԳ դարուն Հաղբատայ արձանագրութեան մէջ կը յիշուի որ Զաքարիա սպասալարը տուեր է նոյն Ախաթին՝ իր «Հայրենի գիղերն որ յԱշոցք՝ զՀալալաշէն և զՎանս. և զի այս գեղերս հետի էին ի Հաղբատայ», ասոնք կը փոխէ Հաղբատ գիւղի տիրոջ հետ և գայն կը նուիրէ վանացն։ Ահա միայն այս երկու գիւղերն կը յիշուին ի

նախնեաց Աշոցայ մէջ։ Քաղաքի բնակութեան և ուսումնասիրութեան պէտք կայ գաւառիս ճիշդ աշխարհագրական կէտը, լեռները, գետերն և գիւղերն որոշելու համար։ — Աշխարհատ, 127–128։

ԱՇՈՒՇԷՆ. — Հայաբնակ գիւղ (Սեբաստիա) Տիւրիկու, 700 բնակչօք։ Ունի մէկ եկեղեցի Մոգուց Թագաւոր, և մէկ վարժարան Մխիթարեան՝ 80 աշակերտօք։

ԱՇՈՒՆՔ. — կը յիշէ անունս Վարդան, հետեւեալ կերպով. «Գրեաց պատասխանի (Թղթոյն փոռայ) Յահակ Մռւսեն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի յԱշունքն»։

ԱՇՎԱՆ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի, 800 բնակչօք։ Ունի երկու եկեղեցի՝ Ս. Գէորգ և Ս. Սարգիս։

ԱՇՏԱՐԱԿ. — Նշանաւոր և պէտքաւոր գիւղ Աշտարատայ Արագածոտն գաւառի համանուն վիճակի մէջ, Էջմիածնի հիւսիսային կողմը 20 վերստ հեռու։ Կառուցուած է քառակող գետոյն աջակողմը, գեղագիտակ սարահարթի վրայ. հիւսիսային և արեւմտեան կողմերէն կը բարձրանան Արագած լերան ճիւղերը, իսկ հարաւային կողմն են գիւղի ընդարձակ այգիները, և մինչեւ Մասիսի առորոգքը, գրեթէ 60 վերստ երկայնութեամբ՝ լայնատարած դաշտ է։ Աշտարակի հիւսիսային կողմը գրեթէ կէս ժամ հեռու կը գտնուի Մոզնի, և հարաւային կողմն է Օշական, մէկ ժամ հեռաւորութեամբ։

Թէպէտեւ ցարդ ծանօթ պատմութիւնն մեզ կը յայտնէ Աշտարակի անունն իննսերորդ դարու մէջ, յիշելով զայն իբրեւ հայրենիք Գէորգ Ա կաթողիկոսի, բայց իր հին շինուածոց և պարսպաց մնացորդներէն կարծելն հաւանական է, որ իննսերորդ դարէն շատ առաջ եւս գոյութիւն ունեցած ըլլայ, և թերեւս Արագածոտն գաւառի ամենէն բազմամարդ քաղաքաւանն եղած։ Մօրիէ անգղիացին, որ 1813 տարւոյ յունիսի 16ին աստ իջեւանեց, կը վկայէ թէ Աշտարակ՝ բարգաւաճ և քաղաքակիրթ երկրի քաղաքի մը հաւասար շքեղութիւն և արժանիք ունի։ Գերմանացի Քոխ բաւարարեալ եւս 1837 տարւոյ ապրիլի 18ին աստ դիշերօթեց, որ և Քասաղ գետոյն խոխոջանքն, ժայռերու վրայ սիրուած լուսնի լուսոյ ընծայած նոսրբինակ երեւոյթներն և այլ պարագայք, որ իրեն վրայ ազդեցութիւն են ըրեր նոյն դիշերուան խորին լռութեան մէջ, գեղեցիկ կերպով կը նկարագրէ։ Իսկ բնիկ Աշտարակցի երեւելի վիպասանն Պերճ Պռոշեանց՝ որ իւր կեռնաժադիկ վիպասանութեան մէջ շատ անգամ կը յիշէ և կը նկարագրէ գիւղս, ի միջի այլոց կը գրէ և հետեւեալը. «Աշտարակ — դա աչքն է Արագածոտն գաւառի, դա Արագած սարի բազմատեսակ հոտաւէտ ծաղիկներից կազած փնջի գլխի զարդն է, դա կատարելատիպն է բոլոր Արագածոտնում գտնուող իւր նմանների»։ Եւ յիրաւի դեռ մինչեւ ցայսօր այս կողմերու բնակչաց ամենուն բերնէն կը լսուի, թէ Աշտարակը՝ իւր այժմեան նահանգի, երեւանու աչքն է։ Գոլուած են միշտ ոչ միայն գիւղիս հրաշալի կիրքն այլ և բարեբեր պարտէզներն և անուանի այգիներն, կենսատու ջուրն և մաքուր, առողջարար ջուրն, որ մինչեւ անգամ Աշտարակայ մէջ առած է գարձեր. «Գազացնե՛մ ես, Աշտարակ գնա՛ առողջացիր»։

Քասաղ գետէն դատ ունի նաեւ ուրիշ առուակ մը, որ Մոզնիի վերէն կը սկզբնաւորի և ճամբան ուրիշ աղբիւրներով առատանալով՝ կու գայ ի՛անցնի գիւղիս միջով և առատ ջուր կը բաշխէ այգիներու և պարտիզաց։ Արեւելեան կողմէն իւր ձորի միջով ահագին խոխոջանքներով վազող Քասաղի վրայ ձգուած է եռակամար, կոփածոյ խարտեաշ քարերով շինուած հինաւուրց գեղեցիկ կամուրջ մը, զոր կը յիշէ նաեւ Զաքարիա Սարկաւագ իվ. դարու սկիզբները. շինողի արձանագրութիւնն՝ բանդակուած երկու կամարաց մէջտեղը, բոլորովին ապրուած է. սակայն բնակիչք աւանդութեամբ կ'ըսեն, թէ շինուած է Քանաքեռցի Խօջա Փիւռ կոչուած հայ մեծատան մը ծախքով։ Կամրջին վիմացը կը բարձրանայ Փոկսբերդ կոչուած բնական պարսպաձեւ երկարաձիգ քարաժայռ մը։

Հին բերդաւանդն կը կոչուի Բերդաւանդաղ, որոյ արեւմտեան կողմը տակաւին կը մնայ հին պարսպաց մէկ մասն, իսկ միւս կողմերն, և պէտքաւորաբար արեւելակողմը գահավէժ ձորախունդ լինելով մինչեւ դեռ,

արուհատական ամբուխնանց պէտք չեն ունեցած։ Բերդախտի մէջ և գուրսը կը գտնուին գիւղիս բնակարաններն, որոնց թիւն այժմ կը հասնի 450ի, և բնակիչք են գրեթէ 3500 հոգի ամբողջ հայ։ Բերդի մէջ կան երկու լքուած եկեղեցիներ. մին Սպիտակաւոր կոչուած, միւսն Ծիրանաւոր՝ նուիրուած Սուրբ Աստուածածնի, շինուած է բարձր դրից վրայ կոփածոյ քարերով. Մատաթայի և Փարպիի եկեղեցւոց նման, անմիջապէս եկեղեցւոյս որմոց չորս կողմէն բարձրացուցած են կրկին որմեր, և ձեւացեր է իբրեւ անմատչելի աշտարակ մը. մինչեւ 1815 թուականը հոս կը կատարուէին ժամերգութիւնք, բայց նոյն տարին տանիքը կործանելով՝ լքուած մնաց։ Բերդէն գուրս



129. Տաճարն Ս. Մարիամայ։

բուն գիւղի մէջ ալ կան երեք եկեղեցիներ՝ որոց երկուքի մէջ կը կատարեն պաշտամունք։ Աւետարիչ, որոյ միայն խորանն շինուած է ի հնուց սրբատաշ քարերով, իսկ միւս մասերն, ինչպէս կ'երեւի, վերջերը շինուած են, պատերն հասարակ քարերով, և տանիքն փայտածածք։ Ս. Մարիամայ (թ. 129) փոքրիկ, վայելչաձեւ, քարաշէն և սրածայր կամուղիկով տաճարն կը գտնուի գիւղիս արեւմտակողմը, և չորս կողմն ունի պարիսպ և բուրգեր, մեծամեծ որձաքարերով շինուած։ Կ'ասանդուի թէ այս տաճարս և պարիսպներն, Լջմիածնի կամոզիկոսի հրամանաւ, ապաշխարութեան համար՝ շինած է երիտասարդ երէց մը, որուն կինր մեռնելով ուզած է երկրորդ անգամ ամուսնանալ։ Ս. Մարիամայ տաճարն եւս ունի ժամանակ մը լքուած մնալէ վերջ, 1838ին նորոգելով սկսան ասոր մէջ եւս կատարել բոլոր աստուածային պաշտամունք, և պատճառն այն էր որ Աւետափրիչ եկեղեցին բաւական չէր ժողովրդեան բազմութեան։ Գիւղիս բնակիչ Պ. Գէորգ Փարպանանց, իւր ծախքովը փոքրիկ գանգակատուն մը կառուցանել տուաւ եկեղեցւոյս տանեաց վրայ։ Մեր ներկայ պատկերն գծուած է Մարիէ անգղիացիէն, և կը ներկայացընէ Ս. Մարիամայ եկեղեցւոյն վերջին նորոգութենէն շատ տարիներ առաջ ունեցած երեւոյթին։ Եկեղեցւոյս գուրսը և ներսը որմոց վրայ կան ոչ սակաւ արձանագրութիւնք նուիրատուաց. հարաւային պատն մեռ ալ կայ քանդակուած կէս բոլոր արեւաշուք ժամացոյց մը. արձանագրութիւններէն հնագոյնը կը վերաբերի 1285 թուականի և նորագոյնը 1326 տարւոյ։ Արձանագրութիւնքս կը յայտնեն, թէ եկեղեցւոյս մեռ կար միաբանակեցաց վանք, ուր և Յակոբ ոմն երէց շինած է Հիւրատեղի ԺԴ դարու սկիզբը։ Կարմրաւոր կոչուած եկեղեցին է գիւղի արեւելեան հիւսիսային ծայրը՝ բարձրաւանդակի վրայ, և է փոքրիկ, խաչաձեւ և գմբեթաւոր տաճար մը, կմախքարով ծածկուած. սա եւս պարսպապատ է և այժմ լքուած, ամայի։ Կ'ըսեն թէ երբեմն հոս կը բնակէին կուսանք՝ և ունէին եկեղեցւոյս մեռ վանք կամ կուսանոց։ Եկեղեցւոյս շինուելեան արձանագրութիւնը, կը պատմէ արտաքուստ հարաւային կողմէն սկսելով և կ'աւարտի հիւսիսային կողմը, տեղ տեղ ալրուած է. թէպէտ թուական չկայ, սակայն շինուածոյ անուանք անկինչ մնացած են։ Այս արձանագրութեան տակը 1292ին գրած է Յակոբ երէց, անշուշտ վերոյիշեալ հիւրատուներն շինողը, ուրիշ արձանագրութիւն մը, որով կը յայտնէ գիւղի մեծ ատուն ճանապարհը նորոգելը։ Կարմրաւորի պարիսպներն շինած են Ախտուսը և Դաւտաշէսք գուակիցքն, որոց արձանագրութիւնը քանդակուած է պատոյի հարաւային դրան վրայ։

Այս վերոյգրեալ երեք եկեղեցիներն և վանորայք՝ կը յիշուին աւետարանի մը մէջ 1478 թուին, զոր գրել տուաւ Պատրոն

Բչնեցի և ընծայեց այս առաքաց, հետևեալ կերպով գրելով. «Ես Պատրոն և ամուսին իմ Մելիք խաթուն, սատցաք գուրք աւետարանս ի յարդար վաստակոց մերոց, և տուաք զսա յընծայ՝ ի գուն Ս. Աննե վարիրկչին և Ս. Մարիանին և Ս. Կարմրաւոր րին, ի վայելումն մանկանց սուգա. . .։ Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել... ի գրոնէ Ս. Աննայ վարիրկչին և սուրբ Վանօրէացս»։

Ուրիշ Ս. Կիրակի անուամբ եկեղեցւոյ մը մնացորդներ և կարծեցած գմբեթին մէկ մասն կ'երեւին գիւղի հարաւային ծայրը Շոշխոնց կոչուած այգիներու մօտ։ Ի հնումն Ս. Կարապետի նուիրուած եկեղեցի մ'ալ, աւեր և ամայի գտնուելով, այժմ փոխած են մարագ։ Կարմրաւոր եկեղեցւոյն շուրջը և աւելի հիւսիսային և արեւելեան կողմերն է հասարակաց գերեզմանատունը, յորում կան նաեւ հին շիրիմներ մեծամեծ խաչքարներով և պատուանդանօք։ Այս շիրմաց մէջ կայ հրաշալի քանդակներով խաչքարեան մը բարձր գրիւք, Մողնի Ս. Գէորգայ վանքը տանող ճանապարհի արեւելակողմը. խարխոր կամ պատուանդանը մատրանաձեւ է, և ունի խորշ մը, այլ պատճառաւ բնակիչք Ծակ–խաչ կ'անուանեն. կառուցուած է Թումմաս քահանայէ մը, Արծրունեաց ցեղէն Սպասն անունով իշխանի արեւշատութեան համար, և ունի մասամբ եղծուած արձանագրութիւն Ձժէ (= 1268) թուականաւ։ Գիւղի արեւմտեան հարաւային կողմն ալ կան ուրիշ գերեզմաններ Օղորաև այգիներու մօտ, որ կը կոչուին Թորոսենց, Գէորգենց կամ Շահազիզենց տոհմին անուամբ։ Այս տոհմն նշանաւոր է եղեր Աշտարակի մէջ և յաջողեր է իր համար յատուկ գերեզմանատեղի որոշել։ Շահազիզեանց գերեզմանատունն այժմ լքուած է և թաղելու տեղ չկայ. որպէն գիւղն ալ ընդարձակելով գրեթէ իր մէջ է առեր գերեզմանատեղին և արգիլուած է նոր ննջեցեալ թաղելը։ Վերոյիշեալ նշանաւոր տոհմէն էր Հոչականուն կաթողիկոսն Էջմիածնի և գիւղիս անմոռաց պարծանքն՝ Ներսէս Ե (ծն. 1771 † 1857)։ Աշտարակը ընծայեր է ազգին նաեւ ուրիշ ոչ սակաւ նշանաւոր եպիսկոպոսներ, վարդապետներ, գործունեայ իշխաններ և պետականներ։

Գիւղիս արեւմտակողմէ երկու կամ երեք մղոն հեռու կը բարձրանայ Ալաստիսիկ կոչուած սարահարթը, որ զբօսատեղի է բնակչաց։ Հիւսիսային կողմն ալ ձորակի գլուխը Գամշախաչում բուսած տեղւոյն մօտ կան փայտայարկ քարայրներ՝ Յէրեր կոչուած, որոց մէջ երբեմն կ'ապաւինէին Աշտարակի բնակիչք վտանգաց ժամանակ. հոն կ'երեւին նաեւ քանդուած մատրան հետքեր։ Աշտարակցիք ընդհանրապէս շատ ժիր և աչքաբաց մարդիկ են, ունին մեծ յարգանք գէպ ի լուսաւորութիւնը, և շատ կան Մոսկուայի մէջ և ուրիշ տեղեր ուսումնասիրաբար Աշտարակցիներ. այժմ եւս պակաս չեն ուսանողներ գտնազան քաղաքաց մէջ։ Բոլոր Աշտարակցիք ունին այգիներ և իրենց գլխաւոր պարապմունքն է խաղողէն ընտիր գինի և օղի պատրաստել, որոնք կը ծախեն Ալեքսանդրապօլի, Ախալքալաքի, Ջալալօղլուի և Նոր Պայազիտու գաւառաց մէջ։ Աշտարակի գիւղիս բնակիչք շատ յաջողակ և առուտուրէ հասկցող մարդիկ են, և Աշտարակի մէջ եւս կան բաւական թուով կրպակներ։

Աշտարակի բոլոր բարեկեցիկ հանգամանքներու պատճառաւ է, որ ի հնումն մեր թագաւորները, նախարարները և հայրապետները կ'երթային հոն, եթէ ոչ ամբողջ ամառն, գէթ մի քանի շաբաթ կամ մի քանի օր հրաշատարշ գիւղիս վայելչութիւններով զուարճանալու։ Շատ անգամ ալ Աշտարակ, իր եզակի և անզուգական յատկութեանց շնորհիւ թշնամութեանց և սխալ տեսարանաց եւս ենթարկուեր է։ Երեւանու խաներն և բէկերը ոչ սակաւ չարչարանքներ և նեղութիւններ հասուցեր են Աշտարակցոց վրայ։ Երբեմն եղեր է նա սեփականութիւն Էջմիածնի, երբեմն ալ՝ որ և է պարսիկ խանի մը կալուած, ապա Պարսից տիրապետութեան։ Թուրաց Պետութեան ձեռքն անցնելէ առաջ, եթէ լաւ տեղեկանանք պատմութեան, կը տեսնենք որ Աշտարակը քանի մը տասնեակ տարիներ շարունակ մի և նոյն դրութեան մէջ չէ մնացեր, և այս ամէնը, բոլոր իրեն նմանները գերազանցելուն պատճառաւ։ Աւանիս ձորեզերքը տեսակ տեսակ վայրենի բոյսերէ

զաս, կ'ընծայէ նաեւ պատուական անդամ բարձրագին քանջարեղէններ, ինչպէս՝ եղինջ, ջոջ-լապատ, ծնեբեկ, պարսն բանջար, և այլն։ Գերմանացի Քոխ բուսաբանը, Աշտարակի սահմանաց և Քառապի ձորոյն մէջ կը յիշէ 30 տեսակ աւելի բուսոց անուանք՝ պատճառ ծաղերէն զատ. սոսկայմէ մանուածոյ կը գովէ ծիրանն ու գեղձը։ — Կառուցածոյ, 1—134, տպ. Թիֆլիս, 1878։ Մշակ, 1874, թ. 45։ Շահխաթունեանց, Սորգր. Լեռմ. Բ. 83—89։ Այրարատ, 185—188։

ԱՇՏԱՐԱԿ. Տես ԿՈՎՅԱԿԱՆ։

ԱՇՏԱՐԱԿԱՑ ԳԻՒՂ. — Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ կը գտնէ գիւղս Յովհան կաթողիկոս. ասկէ էր Ղեւոնդ Բ կաթողիկոսը։

ԱՇՏԻՇԱՏ կամ ՅԱՇՏԻՇԱՏ. — Հին և հռչակաւոր, նախ գիւղաքաղաք և ապա բերիս առանձնաւէր քաղաք կամ աւան Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Եփրատայ ձախ-կողմն Արածանւոյ ալեկոծմէ բարձրացող Քարքէ լերան սարահարթի բարձրաւանդակի մը վրայ. Ս. Կարապետի վանից արեւելեան կողմէ՝ 6 ժամ հեռու, և Մատրավանից հիւսիսակողմէ 4 ժամ հեռաւորութեամբ։ Այսպէս կոչուած է իր մեհենին մէջ հաստատեալ գոհեր և պաշտամունք շատ կատարելոյն պատճառաւ, ինչպէս կ'ըսէ նաև Ագաթանգեղոս (606). «Որ և անուանեալ բան յառաջագոյն պաշտամանն տեղեացն Յաշտիշատ»։ Կ'առաջարկուի իբրև Հաշտարան կամ Հաշտարեւան տեղ վասն զի առաջին վանին Աշտ եղած է պարսկերէն اشتی Աշտի բառէն, որ կը նշանակէ Հաշտարիւն, և շատ մասնիկին միանալով յառաջ անուանց հետ կը նշանակէ քաղաք կամ տեղ, ինչպէս՝ Երուանդաշատ, Վարդանաշատ, Վաղարշապատ, և այլն, այս առաջարանութեան ճշդութեան խորհուրդին ևս կը վկայէ, երբ Աշտիշատի իբրև թագադրանութեան կը գրէ. Յաշտից տեղիք։

Մեր բոլոր պատմիչներէն առաջ, Աշտիշատի անունն կը յիշուի Զենոբայ պատմութեան մէջ, վաղարշակի օրով։ Մինչ սա նոր կը հաստատէր Հայ—Արշակունեաց թագաւորութիւնը, Հոդիատանէն փախուցեալ եկան և իրեն ապաստանեցան Գնեւեան և Գիւսանէ կոչուած երկու իշխաններ, որոց բնակութեան տեղ տուաւ Տարօնոյ գաւառը։ Հոն Օձ կամ Վիշապ քաղաքը շինելէ և մէջը օձակերպ կուռք մը կանգնելէ վերջ, եկան Աշտիշատի մէջ ևս կանգնեցին ուրիշ կուռքեր, և իրենց հայրենի ծիսով կը պաշտէին։ Տան և հինգ տարի վերջ վաղարշակ յանգուցեալ գտնելով վերոյիշեալ իշխանները՝ սպաննեց, բայց երկիրը թողուց անոնց կռտաս, Մեղտի և Հոռեաց սրոյց, որոնք ի յիշատակ իրենց հարց Աշտիշատի մօտ փարքէ լերան վրայ կանգնեցին անոնց կուռքերը՝ զոր չորս դար վերջը Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Հայոց ուրիշ կռոց հետ շատ ժուռաբութեամբ կործանեց։ Զգիտեմք ինչ պատճառաւ Գնեւեան և Գիսանէ կռոց յիշատակութիւնն ամենեին չեն ըներ Խորենացի, Ագաթանգեղոս և Բուզանդ, այլ միայն բնիկ Տարօնոյ պատմիչն Զենոբ։ Եւ նոյնպէս մինչ վերոյիշեալ պատմիչք կը յիշեն Աշտիշատի հռչակաւոր Վահեվահեան մեհեանն, Զենոբ՝ բոլորովին լռութեամբ կ'անցնի։

Աւանս Աքաշէսի ժամանակ և Վաղարշակայ օրով իսկ սեպհականութիւն էր Վահունեաց զաւրին. բայց վերջը Միջին Տիգրանը բարկանալով ասոնց, որ իշխեր էին մեհենին մէջ Հերակլեայ արձանը կանգնել, զիրենք քրմութենէ ձգեց և Աշտիշատը յաբբունիս գրաւեց։ Ցետոյ ամբողջ գաւառովը միասին անցաւ Մամիկոնեանց ձեռքը. անոր համար Խորենացին (Գ. կէ) Մեծին Սահակայ թագումը պատմած առեն՝ իբրեւ ցիշդ կ'անուանէ Աշտիշատը, Մամիկոնեաններ նկատելով. որոց Թատրիկ տիկինն՝ Հոս բերաւ հանգոյց սրբոյն մարմինը, ինչպէս կը վկայէ նաև Ասողիկ (Բ. Ա)։ Աշտիշատի մեծագանձ և փառահեղ մեհեանն՝ շինուած էր Միջին Տիգրանէն առաջ. իսկ Միջին Տիգրանը Խորենացւոյն ակնարկածին համեմատ, կամ ի հիմանց՝ և կամ բան մասին նորոգեց։ Այս հռչակուած մեծ մեհեանը բաժնուած էր երեք մեհենաց, որոց իւրաքանչիւրի մէջ կային մէկ մէկ բազմութիւնք՝ նուիրուած զանազան չաստուածոց։

Առաջին մեհեանը կը կոչուէր Վահեվահ-

եաև, յորում էր Հերակլեայ բազինը և պղնձաձոյլ ոսկեզօծ առնապատկերը, զոր շինած էին Կրետացի երկու երեւելի ճարտարներ Ոկիւլէս և Դիպինոս. Պլինիոսի գրածին համեմատ, ասոնք նախ ծագկեցուցին քանդակագործութեան արհեստը, և Ապողոնի պատգամաւորին հրամանաւ և Սիկիոնացւոց խնդրանօք՝ շինեցին Ենահատայ, Հերակլեայ և Ալթենատայ արձանները։ Ա.յս ճարտարներէն շինուած Հերակլեայ արձանը, մեր Արտաշէս Ա. Թագաւորը Ասիոյ մէջ գրա-



130. Աշտարակ գիւղի Ս. Աստուածածնի եկեղեցին (էջ 222)։

նելով, բերաւ Հայաստան Արմաւիրի մէջ կանգնելու համար. բայց Վահունի քրմապետները՝ որոնք սերունդք էին մեր Վահագն Թագաւորին, իրենց նախնոյն Վահագնի արձանը կարծելով, Արտաշիսի մահէն վերջը կանգնեցին Աշտիշատ աւանին մէջ, որ և եղաւ կ... համարեցաւ Վահագնի ութերորդ արձանն է... Այս արձանը կը ներկայացնէր Հերակլ... իւրայատկին գլուխը հատանելը, ինչպէս յունաց... Անդրեդոսի մէջ բացայայտ կերպով գրուած է...

նէր Անգան Ութերորդ արձանին հաչակաւոր Վիշապահեղձոյցն Հերակլեայ». իսկ Հայերէնի մէջ թարգմանուած և փոխուած է. «Ութերորդ պաշտօն հաչակեալ անուանեալ Վիշապաքաղն Վահագնի»։ Բուզանդ այս մեհենի վերջն կը դնէ սարաբարձր տեղ մը, գրեթէ քարընկէց մը Հացեաց դրսեհատ կոչուած տեղէն վար։

Երկրորդ մեհեանն նուիրուած էր Անահատայ՝ որուն Հայք Ոսկիահատայր և Ոսկիածին անուանները կու տային, և որոյ բազինն կը կոչուէր նաեւ Ոսկիահատ։ Այս մեհեանս և բազինս, միւս երկուքէն հին էր, վասն զի անոնք Ա. Արտաշէսի մահէն վերջը գրուեցան։ Անահատայ տաճարին նուիրուած էին սպիտակ արջառներ, որոնց արածիլը տեսնելով Լուկուլլոս հասմայեցին՝ Արածանւոյ ափերու մօտ, սքանչացաւ։ Պլուտարքոս՝ Լուկուլլոսի Անահատայ արջառոց տեսնելն յիշելով, կ'ըսէ միանգամայն, թէ այս կողմանց բնակիչք մեծ հանդիսով կը տօնէին նոյն պիտուհին։

Երրորդ մեհեանն կը կոչուէր Վահագնի սենեակ, որոյ մէջ կանգնած էր Հայոց անպարտելի վիւցազնի գեղեցկուհին՝ ոսկիաձոյլ Աստղիկը։ Ասոր արձանը Արտաշէս Ա. բերաւ Յունաստանէն, և Մինչև Տիգրանն կանգնեց այստեղ։ Յորենացին Տիգրանայ մեհենաց շինութիւնն պատմած ժամանակ, Ագաթիան կամ ըսա Յունաց Ագիրոպիտայ արձանին համար կ'ըսէ. «Բայց զԱֆրոդիտայ գպատակերն՝ իբրեւ Երակլեայ տարփուորի՝ առ նոքին պատկերի Երակլեայ հրամայեաց կանգնել յԱշտից տեղիսն»։ Խոր. Բ. ԺԲ։

Մեր նախնեաց հեթանոսութեան ժամանակ, Հայոց տաբեմտին, Նաւասարդ ամսոյ սկիզբը, այստեղ կը կատարուէր ընդհանուր աշխարհախումբ ուրախմբութիւնը։ Կը ներկայանային Հայոց Թագաւորն, մեծ քրմապետը, նախարարները, մեծամեծ իշխանները և ժողովրդեան բազմութիւնը, և մեծէն մինչեւ փոքրը, ամէնքը կը մասնակցանէին իրենց զոհերը։ Նոր տարին իւր հետ կը բերէր նաեւ նոր կեանք, և Հայաստան պարտական էր այդ ուրախմբութեան ժամանակ, իւր աստուածոց ցոյց տալ իւր անցած տարուան յառաջադիմութեան պտուղներն։ Վա-

հագն՝ քաջութիւն կը պահանջէր, Անահիտ՝ արհեստ, իսկ Աստղիկ՝ սէր և բանաստեղծութիւն։ Հոն կը կատարուէին հանճարի և քաջութեան մրցութիւններ։ Բանաստեղծն իւր յօրինած երգը կ'երգէր, երաժիշտն իւր բամբիռն կը զարնէր, ըմբիշը ցոյց կու տար իւր բազուկներու զօրութիւնը, իսկ վարպետը՝ իւր գեղարուեստի արդիւնքը։ Կը լինէին զազանամարտութիւնք, արշաւանքներ՝ կառքով, ձիով և առքով։ Ցաղթողները կը տանային այն վարպետ պահակներէն, ո՛ր ընդմէջ գարպարուած և վառուած կը լինէր նոյն օրը Աստղիկն տաճարը. այդ պատճառաւ այս տօնախմբութիւնը կը կոչուէր նաեւ Վարդավառի տօնախմբութիւն։ Հին տարւոյ մեղքերը քաւելու և նորը մաքուր սկսելու համար, նոյն օրը կը կատարուէր նաեւ ընդհանուր մկրտութիւն մի։ Մեծ բրմապետը՝ ոսկեայ ցնցուղով կ'առնէր Արածանիի սուրբ ջուրը և կը սրսկէր բազմութեան վրայ, և ապա բոլոր ուխտաւորներն ալ միմեանց վրայ ջուր կը սրսկէին։ Այդ միջոցին օդը կը լեցուէր անթիւ սպիտակ ափաւնիներու բազմութեամբ. ամէն ուխտաւորք կը ձոցընէին մէկ մէկ ափաւնի։ Այս հանդէսներու սկզբնապատճառը, աւանդութիւնն շատ հին դարերու մէջ կը գտնէ։ Ենթադրութիւն կը համարի գայն Նոյ նահապետի Այրարատ լերան գագաթէն աւետաբեր ափաւնին ձոցնելուն, և ապաքէն զուրս գալէն վերջ, հաշտութեան առաջին գոհը մատուցանելուն։ Նոյի աւանդապահ որդին, Սեմը, Այրարատէն Ցարօն գալով, և բնակելով Սիմ լերան ստորոտը, առաջին անգամ նուիրագործեց այս խորհրդաւոր աւանդութիւնը, որ և ապա շարունակուեցաւ գարուց ի գարս։

Ագաթանգեղոս կը պատմէ, թէ ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մատրավանքը շինած ժամանակ՝ հրամայեց տալ քրիստոնեայ իշխանաց և զօրաց՝ կործանելու նաեւ Աշխիշատի հրաշակերտ մեհենաց բակիններն։ Ս. Հայրապետի դիտաւորութիւնն էր անշուշտ միայն բակինները կործանել և հեթանոսական մեհեանները սրբել ի տաճար Աստուծոյ. բայց իշխանները դիւաց ընկղմութեամբ, որոնք մեհենաց գռները ծածկեր էին, չկարողացան ներս մտնել, սկսան փորձել արտաքուստ որմերը քանդելու, սակայն չյաջողեցան, «և ոչ գծեաց, ի՛ըստ պատուիրէր, երկաթի գործոյն»։ Նոյն ժամանակ հարկադրուեցաւ Ս. Գր. Լուսաւորիչ առատաձեռն հրաշիւք, ի հիմանց կործանել և անհետացնել ընդ այս մեհեանները. «Եւ այնչափ կորոյս, զի չեւ այնօրիկ սչինչ յայնմ տեղւոջ նշմար էր գտանել, ոչ քարի և ոչ փայտի, ոչ ոսկի և ոչ արծաթի, ոչ բնաւ երեւիլ թէ լեալ էին իցէ անդ»։ Ագաթ. ձծե։

Անդուհետեւ Ս. Լուսաւորիչ նոյն մեհեանները տեղ՝ հիմնեց առաջին սրբութեան սեղանը և Հայաստանի առաջին Մայր եկեղեցին, որոյ մօտ ի վերջոյ վանատուն եւս շինուելով, կոչուեցաւ Աշտիշատի վանք։ Որչափ որ պատուած էր մեհենագարդ Աշտիշատը հեթանոսական դարերու մէջ, այնչափ եւս պատուեցաւ քրիստոնէութեան ժամանակ։ Վարդավառի տօնախմբութիւնն փոխուեցաւ Քրիստոսի Ա֊յլակերպութեան տօնին հետ, որ կը հանդիպի Նաւասարդի ամսոյ առաջին օրերու մէջ, և նախնական սովորութիւնները մնացին անփոփոխ։ Դարձեալ, կը ներկայանար հոն Հայոց քրիստոնեայ թագաւորը, մեծ քահանայապետը, նախարարները և ժողովրդեան բազմութիւնը, և կը կատարէին հին աշխարհախառն տօնախմբութեան հանդէսը։ Դարձեալ մրցութիւններ կ'ընէին, ափաւնիներ կը ձոցնէին, ջուր կը սրսկէին, և միով բանիւ ամբողջապէս կը կատարէին հին սովորութիւնները, որոնց շատերը հասած են նաեւ մինչեւ մեր օրերը։

Սուրբն Գրիգոր իւր Գանիէլ աշակերտը քորեպիսկոպոս անուանեց Աշտիշատի եկեղեցւոյն։ Ասանիկ անուամբ թէեւ ուրիշ եւս պիսկոպոսներ չեն յիշուիր, սակայն կարող եպիսկոպոսանոց, իբրեւ կայան Ս. Հայրապետաց, յորում՝ ըստ Բուզանդայ (Գ. ժԹ), Ս. Յուսկան Պապ և Ա֊ֆեանագենէս անարժան որդիքն, ուսուլու և սրբեցնելու ժամանակ՝ իբրենց անտառակ վարուց ի պատիժ, սատակեցան Աստուծոյ հրեշտակէն։ Ս. Ներսէս կաթողիկոսն Աշտիշատի վանից և մայր եկեղեցւոյն այցելած ժամանակ, հոս կու գայ նաեւ Հայր մարդպետը, և մեծ ու գեղեցիկ հրապարակի վրայ ճեմած ժամանակ, տեսնելով շրջա֊

կայից մոգիչ գեղեցկութիւնն և հրաշալի բարձր, առողջարար դիրքն, նախանձելով միաքը դրաւ նոյն տեղը արքունի ապարանք կառուցանել. բայց նպատակին չհասած՝ նե-տահար սատակեցաւ Շաւասպ անունով կարիճէ մը: Ռուզաևդ, ժԲ: — Իբրև ա-ռաջնակարգ և պատուաւոր տեղ, աւանիս մէջ գումարուած են երեք եկեղեցական ժո-ղովներ, Ս. Ներսէս Մեծի, Ս. Սահակայ և Ս. Յովսեփայ կաթողիկոսութեան ժա-մանակ:

Հայաստանեայց առաջին և Մայր եկե-ղեցին է զարու կիսուն կործանուեցաւ Մահ-մետի բեռորդի Ալպուսահիմէն. ժամանակ անցնելէ վերջ Մամիկոնեաններէն վերսին շինուեցաւ մեծակառոյց: Աւերածու Լինկթի-մուրը նորէն քակեց եկեղեցիս և վա-նտատունը, ասոնց քարերով Սուլու-խի մօտ Եփրատայ վրայ քայքայած կամուրջը շինելու համար: Աշխ-շատէն մինչեւ կամուրջը, որ երկու ժամ հեռաւորութիւն ունի՝ շարել տուաւ, կ'ըսեն, Լենկթիմուր զօր-քերը, և այնպէս մէկ մէկու ձեռք տա-լով փոխադրեց քարերը: Մամի-կոնեանց մեծագործութիւնը տակա-ւին կ'երեւի եկեղեցւոյս աւերակնե-րէն, որ այժմ գեռնի հաւասարած է հանդերձ իր արտաքին պարիսպ-ներովը: Ներքին կողման երկայ-նութիւնն է ճիշդ 38 ոտք, և լայ-նութիւն 31, իսկ բարուկիր որ-մերու թանձրութիւնն 8 ոտք: Յա-տակը ծածկուած է փլածոյներով, և հարկ է պեղել, եկեղեցւոյս սիւնազարդ կամ ան-սիւն ըլլալն որոշելու համար:

Եկեղեցւոյս քիչ մը հարաւակողմն է Ս. Սահակ Պարթեւի մատուռը, որ քայքայուած և աւերակ վիճակի մէջ գտնուելով, Հայոց ՌՄԹԲ (= 1810) թուին, Ս. Կարապետի վանահայրն և առաջնորդ վանեցի Մկրտիչ վարպապետ, աղբատին, փոքրիկ և գեղա-փոր մատուռ մը շիներ է, որուն մէջ՝ աջ կողմն է Ս. Սահակայ և ձախ կողմը՝ Ս. Շուշանայ գերեզմաններըն: Այս մատրան յետոյ կցեր են գիւղացիք գեղջուկ ժամա-տուն մը. շուրջը կան ոչ սակաւ գեղազան ձեւերով հին քանդակազարդ խաչքարեր:

Աբդեօք պիտի գայ օր մը, որ արդեամբ՝ Մա-միկոնեաններու առաքինութեանց հետեւող հայրենասիրաց, տեսնենք ազգային լուսա-ւորութեան գործոյն մեծապէս նպաստող՝ բազմարդիւն մեծ քահանայապետի՝ այժմեան անշուք գերեզմանին վրայ կառուցուած փա-ռահեղ տաճար մը և յաւէրժական յուշարձան մը: — Հին Աշտիշատին անունն է այժմ Տէրթը, և բնակիչք կը համարուին 150 Հայք: — Տես. Հին Հայ, 92–96: Ռաֆֆի, Սամուէլ, Ա. Թ:

ԱՇԱՐԱՆ. — Գիւղ Աթպաւատականի Ղա-բաւաղ գաւառի Քէչվան վիճակի մէջ: Բնա-կիչք 12 տուն Հայք, ունին եկեղեցի մը:

ԱՋԱՂՈՒ. — Հին գիւղ Սիւնեաց Բաղք



131· Աշատրակ գիւղի Կարմրաւոր եկեղեցին (էջ 222):

(Ձճանան) գաւառի, որ սրսուած էր իբրև կալուած Վահանայ վանից:

ԱՋԱՋՈՒՐ. — Հայաբնակ գիւղ Գանձա-կու Ղազախ գաւառի մէջ, Ս. Մակարայ վանքէն գրեթէ 11 վերստ հեռու: Բնակիչք 1845 հոգի, բաժնուած 151 տան:

ԱՋՐԴՊԱՇ. — Այս անուամբ հայաբնակ գիւղ մը կար գաւուս սկիզբը, Բարձր Հայոց եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ:

ԱՋԻՒՈՅ. — Կը յիշուի Մոկք աստան-ակ գաւառի մէջ:

ԱՋՔԱՀԱՆ. — Կը յիշէ գիւղս Ջալալեան՝ Լօռու գաւառի մէջ:

ԱՋՔԱՋՈՐ կամ ՁԱՂԱ. — Հայաբնակ գիւղ

գաւգարաց, այժմեան Պօշալու վիճակի մէջ. բնակիչք 12 տուն՝ 121 հոգի։

ԱՊԱՀՈՒՆԻՔ. — Հին գաւառ Տուրուբեր բանի, որուն կը համապատասխանէ այժմեան Մանազկերտ կամ Մէլազկերտ գաւառակը։ Վաղարշակ Թագաւորը գաւառիս մէջ հաստատեց յատուկ Ապահունեաց նախարարութիւնը։ Ժամանակ անցնելէ վերջ Ասողկայ պատմածի համեմատ (Գ. ԺԵ), Վասիլ կայսրը այս գաւառս, սահմանակից Հարք և ուրիշ գաւառաց հետ տուաւ Տայոց Դաւիթ կուրապաղատին, որպէս զի անոնց փոխարէն իրեն օգնութեան զօրք ղրկէ։ Թ. Աբծրունին կայսիկ անուամբ այլազգի ժողովուրդ մը կը յիշէ գաւառիս մէջ, Հայոց Սմբատ Թագաւորի ժամանակ։ Թ. Մեծոփեցին ալ, գաւառիս անուամբ գաշտ մը կը յիշէ. « Եւ միւս օրն ելեալ գնաց (Շառուհ որդի Լանկիթամուրին) ի Գաշտն Ապահունեաց... »։ Գաւառիս մէջ կատարուած պատմական դէպքերն, տակաւին զրաւորապէս և մանրամասն ծանօթացած չեն։ Գաւառիս գլխաւոր քաղաքն էր Մանազկերտ։ Ապահունիք Հայաստանի եպիսկոպոսական գաւառներէն էր, և կը թուի թէ կանխաւ Հարք գաւառի հետ մէկ թեմ կը կազմէր, և հինգերորդ դարու մէջ բաժնուեցան այդ երկու գաւառներն և ունեցան առանձին եպիսկոպոսներ. որովհետև Աբրահամի ժողովոյն ներկայացան Հարքայ անունով Մելիտէ եպիսկոպոսը, և Ապահունեաց անունով Եղեմիա եպիսկոպոսը։ Այժմ Ապահունիք (Մանազկերտ) Մշոյ առաջնորդութեան մէկ վիճակը կը կազմէ, և ունի 23 գիւղ։ Տես ՄԱՆԱԶԿԵՐՏ։

ԱՊԱՂԱ. — Վասպուրականի Աղբերանի գաւառի համապատասխանող այժմեան Բերկրի գաւառակի մէջ նշանաւոր գաշտ մ՚է, զոր գիտնականներէն ոմանք սխալմամբ համարեցան Ջիրաւ գաշտը։ Վասպուրականի ամենէն անապահով և երկիւղալի տեղերէն մին է այս գաշտը, որոյ երկայնութիւնն է 80 հազարաւոր և լայնութիւնը 24 հզրմ։ Այդպէս ընդարձակութեան մէջ դուն ուրեք կը տեսնուին հաւկթի մը մեծութեամբ քարեր, և ամէն տարի կու տայ առատ բնտիր խոտ, որոյ բարձրութեան մէջ ժամանակին մարդս կը թաղուի։ Վանայ գաշտատափէն աւելի բարձր ըլլալով, պտուղ և ծառ չունի։ Հողն է սեւագոյն, պարարտ և բարեբեր, որ կրնայ բուսցնել առատ և ամենապատուական ցորեան և մանաւանդ գարի, բայց ափսոս, որ այժմ հայ բնակիչ չունի. այլ միայն 400—450 քուրդ ընտանիք՝ պիտաւորաբար Հայոտարանցի ըսուած Հաշիլթեթիւն (հատուած) վերաբերեալ, որք երկիրը անմշակ ձգած են, ցիրուցան կը բնակին և կ՚ապրին միայն ոչխարաբուծութեամբ։ Այս ընդարձակ գաշտը աշնան ժամանակ կը բնակցնեն, որ երկրորդ տարին աւելի առատ խոտ բուսցնէ։

Հին ժամանակ գաշտս ունէր 300ի չափ Հայոց գիւղեր, որոնց շատերու աւերակներն տակաւին կ՚երևին. կան նաև բերդերու աւերակներ, զարմանալի այրեր ու խոռոչներ։ Ապաղա անուամբ բերդաքաղաք մի ևս կար ԺԲ դարու մէջ այս կողմերը, գաշտս շրջապատող լերան մը վրայ, որ ունէր 4 ամուր բերդեր. բայց որովհետև աւազակաց բոյն դարձած էր, որոնց կ՚իշխէր եէզիտի պէյ մը, այն պատճառաւ 1788ին Վանայ փաշան շատ զօրքով վրանին յարձակելով, աւազակները ցրուեց և բերդերէն մին կործանեց, իսկ միւս երեք բերդերն ալ ամայի և աւերակ ձեացին։ Լայնատարած գաշտիս շրջապատի լեռներէն բղխած ջուրերն ժողովուելով՝ կը ձևացնեն Պանասմահու (Աղեսա) կոչուած գետը, որ ոլորապտոյտ ընթացքով կ՚ոռոգէ գաշտս, և յորդութեամբն վտանգ ծուլը թափող գետերէն կրնայ առաջինը համարուիլ։ Կը պատմուի, թէ Ապաղայի զիւղօրէից շէն եղած ժամանակ գետս երբեմն բոլորովին կը ցամքէր, ըստ որում կը բաժնուէր արաօրէից վրայ։ Ապաղացի Հայք, ժիր մշակք և երկրագործք, իրենց առատ ցորենն ազատու համար, ժամանակաւ գետոյս վրայ ունէին 20ի չափ ջրաղացներ, իսկ այժմ չկան։ — Եկարդ. Ոզևորոբիւն, Գ. 19—20։ Մատիս շաբաթարերք, թիւ 3803, 546—548։ Նոր Հայ, 157—158։

ԱՊԱՆԱ. — Գետակ Սիւնեաց վայոց ձոր գաւառի՝ արևմտա—հիւսիսային ձորահովտի մէջ։ Համանուն հին զիւղի մը աւերակներն կը տեսնուին գետակիս մօտերը։

132 • Սպասվածում •

Ռաֆֆի • Ժամանակ

ԱՊԱՄ. — փոքրիկ գիւղ Ալբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։ Ալիժեան բնակիչք քուրդ են 15 տուն։ Գիւղիս մէջ կը տեսնուին եկեղեցւոյ և գերեզմանատան հետքեր։

ԱՊԱՍ–ԹՈՒՄԱՆ կամ ԱԲԱՍ–ԹՈՒՄԱՆ. — Հռչակաւոր ամառանոց և քաղաքաւան Տփղիսու նահանգի Ախալցխայի գաւառի մէջ, Ախալցխա քաղաքէն հեռու է 25 վերստ և Քութայիսէն 91 վերստ։ Ջեռեդաւած է 5 վերստ երկայնութիւն ունեցող ահագին ձորի մը մէջ, որոյ մէջէն կը վազէ համանուն Ապաթուման (հն. Օձիկ) գետակն։ Ձորի երկու կողմերն բարձրացող լեռներն, ծածկուած են եղեւնիներով, շաճիներով, բարդիներով, ընկուզենիներով և ուրիշ տեսակ ծառերով։ Աբասթուման բարձր է ծովի մակերեւոյթէն մօտ 1273 մետր. անուանի է իր օդովն և առողջարար բնական տաք (47° R) ջրերով, պիտուրապէս խլացաւի և յօդացաւի դէմ։ Աբասթուման, իր բնական աշխարհագրական դիրքովն կ'ինկնայ Հայաստանի հիւսիսային արեւմտեան սահմանագլուխը. հին ժամանակներն շատ կռիւներ և պատերազմներ եղած են այս կողմերը։ Ալիժեան քաղաքաւանէն քիչ հեռու, կը գտնուի Օրձախոսէն կառուցուած Ցծրախէ կամ Ցնձրախէ բերդաւանը լերան մը սարբոտը, որ և շատ տարիներ իշխանանիստ եղած էր և գարուս կէս առաջ Լազիկացիներէն կործանուեցաւ և այժմ բոլորովին ամայացած է. կ'երեւին միայն քանի մը աւերակ եկեղեցիներ և գերեզմաններ։ Մեր Աբրաշէս Բ թագաւորի ժամանակ, Վրացիք Հայաստան արշաւելով, հալածուեցան մեր քաջակորով Սմբատ Բիւրատեան սպարապետէն, որ «յաջողութեամբ մտեալ ի Քարթլ՝ աւերեաց զերկիրն, և շինեաց բերդ մի յերկիրն Ոնձրխոյ զՍարգիսէ, և եմոյ անդ զօրս օգնական Ծունդացւոցն, որք հնազանդեցան նմա»։ Ջոռաձիր Գր. Ե։ Ալս Սմբատէն շինուած Սարգիսէ բերդն կոչուած է նաև Գեմոր ըստ Վրաց պատմչի, և Գեմոհիս՝ ըստ հայ թարգմանութեան։ Կողմնացս ազգասէր երիտասարդաց ուշադրութիւնն կը հրաւիրենք այս հայկական հին բերդի գէթ աւերակաց լուսանկարն առնելու և նկարագրութիւն ընելու։

1869ին Ռուսաց օգոստափառ կայսեր հրամանով, Աբասթուման հանքային ջրերը յանձնուեցան Կովկասի բժշկական կառավարութեան։ Տէրութիւնը յատուկ գումար նշանակեց և երեւելի բժիշկ Պ. Բէմմէրտի ձեռքով, քաղաքաւանիս հանքային ջրերու նախկին խրճիթներն, փոխուեցան և զարդարուեցան Եւրոպայի նշանաւոր ջերմկաց նման շինութիւններով։ Աբասթուման այժմ ունի 110էն մինչև 130 փայտաշէն շքեղ բնակարաններ, որոնք կը պատկանին պիտուրարար Թիֆլիսի, Ախալցխայի և Բագուի հարուստներուն։

1892–1899 տարիները հոս բնակեցաւ Ռուսաց Թագաժառանգ († 1899) Մեծ Իշխան Գէորգի Ալեքսանդրովիչ։ Աբասթուման երեք մասերէն, Վերին մասի մէջ որ ամենագեղեցիկն է, կը գտնուի Թագաժառանգի պալատը, իր միւս բազմաթիւ տներով, ծաղկանոցներով և ճեմելիքներով կը բռնէ մօտ 1 վերստ տարածութիւն. հոս է նաև մեծ իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնայի գեղեցիկ պալատը։ Աբասթուման երկրորդ մասն է Վերին թաղը, ուր շինուած են մեծամեծ գեղեցիկ տներ և հոն կ'ապրին հարուստները։ Իսկ Ներքին թաղի մէջ են մթերանոցները, շուկան, և այլն։ Վերջին երկու թաղերը իրարմէ բաւական հեռու են, և մէջ տեղ կը գտնուին հանքային ջրերը և անոց վերաբերող գեղեցիկ շինութիւնները։

Աբասթուման շատ հարուստ է պրօտավայրերով, հանքային ջրերու լողարաններու մօտ կան ծառատունկներ և ճեմելիքներ. անուանի են Վերին թաղի կրկին ծառատունկները, ուր պրօմենադ համար կան թաղեր, և ուտելեաց և ըմպելեաց անոյշներ։ Ունի յատուկ շէնք մը, ուր կը կատարուին պարահանդէսներ, և երբեմն թատերական տեսարաններ։ Հիանալի է Թոքախտաւորներէ զուրկ գառիվեր կոչուած ճանապարհը, որ կը բարձրանայ ահագին լերան մը գագաթը, և ապա կ'իջնէ միւս կողմը։ Ալս լերան գագաթէն սքանչելի տեսարան կը բացուի մարդու առջև, ամբողջ քաղաքաւանը իր գեղեցիկ շինութիւններով, ծաղկանոցներով և ծառուղիներով, կախարդական տպաւո-

բուխին կը գործէ մարդու վրայ։ Ուրիշ աղբիւրներէ գաս, նշանաւոր է Միրոյ ազբիւրը իւր սառ ջրով, անուանի է նաև վարդանի կիրճը, ջրվէժ մը և կամուրջ մը՝ որ կը կոչուի Պ. Բէմիէբաի անուամբ։ Ամբողջ Ռուսիոյ մէջ նշանաւոր է քաղաքաւանիս պետական հիւանդանոցը, հիմնուած 1865 թուին, յորում Ռուսք ունին փոքրիկ եկեղեցի մը։ Ներքին թաղի մէջ կը գտնուի Լուսաւորչական Հայոց նորակառոյց և բաւական գեղեցիկ Ս. Գէորգ եկեղեցին, շինուած ի պատիւ հանդուցեալ թագաժառանգի՝ Բագրատ Հարուստ Պ. Յակոբ և Յովակիմ Ադամեաններու ծախքով։ Կամուրջկեայ Հայք ևս ունին մի փոքրիկ մատուռն։ Տարուան մէջ միջին հաշուով Աքսանիւման կ'այցելեն 5000էն 5500 անձ։ 1892էն ի վեր քաղաքաւանս ունի յատուկ առողջաբաշխական պետարան, որ ծովու մակերեւոյթէն բարձր է 1292 մետր։ — Մշակ, 1875, թ. 41. 1886, թ. 94։ Նոր Դար, 1899, թ. 135, 136։

ԱՊԱՐ. — Հին գիւղ Զորբորդ Հայոց Խորձեան (Կեղի) գաւառի մէջ։ Գիւղիս ա. նուամբ տակաւին այժմեան Կեղի գաւառակին մէջ կայ վանք մը Ապարու Ս. Կարապետ. ունի Հարուստ կալուածներ և հատատաւն ամուր սենեակներ։ Վանացս, այժմ կեղ ըսուած արտին մէջ, գտնակոծուեր է Ս. Խաչ Հայրապետը։


ԱՊԱՐԱՆ կամ ՊԱՇ–ԱՊԱՐԱՆ. — Վիճակ այժմեան Երեւանայ Նահանգի Էջմիածնի գաւառի մէջ, որ կը համապատասխանէ Այրարատայ հին Նիգ գաւառին արեւմտեան մասին։ Վիճակիս մէջէն կ'անցնի Քասաղ գետը որ Ապարան ևս կը կոչուի։ Որչափ և բնութեան տեսարանօք գուարճալի և գեղեցկատեսիլ է Ապարան, սակայն տխուր տպաւորութիւն կ'ընեն բազմաթիւ ամայի և աւերակ գիւղերը, յորոց շատերը ցարդ այլազգի անուններ ունին, մինչդեռ երկու դար առաջ բոլոր Հայանուն էին։ Այդ գիւղերու ցուցակն և բնակիչց թիւն կը տեսնուի հետեւեալ տախտակի մէջ։ Վիճակիս գլխաւոր աւանն կը կոչուի Քասաղ, կամ Պաշ–Ապարան զոր պիտի նկարագրենք ի կարգին։

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՊԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԻ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՅՔ		ՕՏԱՐՔ
	Տուն	Հոգի	Հոգի
Ալիքոչաղ	165	1412	—
Անգըրատ	—	—	140
Ասատուածընկալ	27	257	—
Ափնագետ	111	866	—
Գալաչա	46	459	—
Գարանլըգ	45	469	—
Գարապուլաք	84	636	—
Գարաքիլիսէ	84	848	—
Գիւլապլու	57	574	—
Գիւլլիճէ	117	889	—
Թամճէրլու	96	877	—
Թագեաբլու	49	587	—
Իլանչալան	44	345	—
Իմէրլի	46	535	—
Հաճի Բեքիր	27	297	—
Համամլը	—	—	555
Ղազանճար	144	1216	—
Ղուշճի	29	287	—
Մուղճի	49	495	—
Մալա–գասըմ	82	776	—
Նորաշէն	15	142	—
Շիրազալա	102	806	—
Ջամբրլու	112	1022	—
Պազարճըգ	55	491	—
Պաշ Ապարան	152	1555	—
Պապաքիլի	—	—	455
Պլխեր	71	692	—
Սաղմասավանք	10	97	141
Սամասէրվիշ	46	426	—
Սաչլու	87	616	—
Փերսի	—	—	229
Քիրաճլու	—	—	744
Քիւրա Ալի	—	—	102
Քոշուր	18	122	80
ԳՈՒՄԱՐՆ	1964	17342	2224

ԱՊԱՐԱՆ կամ ԱՊԱՐԱՆԵՐ. — Երբեմն հայաբնակ մեծ աւան կամ գիւղաքաղաք Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Երնջակայ գետոյն աջակողմը, և այժմ 84 տուն թաթար բնակչօք անշուք գիւղ։ Ի դարու սկիզբն Մխիթարեցոց գլխաւոր բնակութեան տեղն եղաւ, ուր փոխադրեցին նաև իրենց հայրապետական աթոռն Նախճաւանէն. բարգաւաճէր ոչ միայն կրօնաւորական կարգօք, այլ և երկրի մշակութեամբն և բերքերով։ Նոյն ժամանակ Ապարաներ ունէր 500 տուն, և

Միաբանութեան եպիսկոպոսանիստ եկեղեցին կը կոչուէր Աստուածածին Սրբոց անուամբ, և կառուցուած էր խոշոր քարերով աւանին մէջ տեղը բարձրաւանդակի վրայ, որ 1848ի երկրաշարժէն բոլորովին աւերակ դարձաւ (թ. 133)։ Եկեղեցւոյն մէջ կան զանազան արձանագրութիւնք ԺԲ և ԺԴ դարուց վերաբերեալ թուականներով։ 1870ին այլազգի բնակիչք եկեղեցւոյ տակ գտան ներքնատուն, և հանեցին սպասներ, որոնք նշանաւոր բան մը չէին։ Արձանագրութեանց թուականներէն կը յայտնուի, որ Միաբանութեան ուխտի այտեղ հաստատուելէն առաջ ևս Ապարանները շէն էր։ Միաբանութեան եպիսկոպոսը ԺԷ դարու սկիզբը, Ապարանի սահմանները կը յիշէ նաև ուրիշ հինգ մատուռներ, յորս միայն ամառնական օրեր կը կատարուէին պաշտամունք։ Ինիկ ումն Մխիթար՝ որ գինքը Ֆրա Մխիթարիչ կ'անուանէ, և բան իր գրութեան 50 տարի (1360–1410) գրքերով գրազած է, գրոց յիշատակարանաց մէջ, Ապարանի Միաբանութեան վանքի եկեղեցին կը կոչէ յանուն «Սրբոյն Աստուածածնին», և Ս. Յակոբոս փաւոսի Նախավկայի և Ս. Յակոբոսի Առաքելոյ և Աւետեան Սրբոց, Հազարապետաց խորհրդոցն Աստուծոյ». կը յիշէ նաև կրօնաւորաց անուանք։ Ապարանից Միաբանութեան պատմութիւնն ընդարձակ գրուած է Հ. Ալիշանի Սիսականի տեղագրութեան 369–374 էջից մէջ։ Այս կրօնաւորաց մէջ գիտութեամբ և գրուածներով իրեն նշանաւոր են, Հ. Օգոստինոս Բալճեց որ եպիսկոպոս ևս եղաւ, և Հարքն Մատթէոս և Թադէոս։ Ոչ սակաւ Ապարանցիներ, թէ՛ եկեղեցականք և թէ աշխարհականք գացած են ի Հռոմ, և ոմանք ևս անդ կնքած իրենց կեանքը։ Երուսաղէմի ուղեորներէն զլխաւորաբար աւանիս այցելուներն են Թուռնեֆէ, Շարտէն, Հ. Վիլլոթ և Հ. Պովռայիէ Յիսուսեանք. ասոնք ամէնքն ալ աբանչցած և գովեստիւք կը խօսին Ապարանից պատոյ առատութեան և ազնուութեան վրայ։ Այս-



133. Աւերակ եկեղեցի Ապարանների։

նէս կէս մղոն հեռու ճանապարհի վրայ կայ սահմանաքարէ մը (թ. 134)։


ԱՊԱՐԱՆԵՐ. Տես ԱՊԱՐԱՆ։

ԱՊԱՐԱՆԵՑ ԳԵՏ. — կը յիշուի Ծղուկ (Միւնիք) գաւառի Միւնեաց եկեղեցւոյն հարկատու գիւղերու կարգին մէջ. կը կարծուի թէ եղած լինի փոքրիկ գետակ մը, որոյ ձկանց որսերէն մեռն կը հանուէր եկեղեցւոյն։

ԱՊԱՐԱՆՋԱՆ. — Յիշուի տղբիւրս Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ. Վարագայ մեռս։ — Աղթ. Վասպ. Գ. 105։

ԱՊԱՐԱՆԵՔ կամ ԱՊԱՐԱՆԵՑ Ս. ԹԱՂ. — Մօկաց աշխարհի Մոկք Առանձնակ (Մամբռանք) գաւառի մէջ կ'ինկնայ՝ երբեմն

հռչակաւոր և այժմեան գրութեամբն սպասւոր վանքս, համանուն հայարնակ գիւղէն քառորդ մը հեռու՝ հիւսիսային կողմը։ Հին ժամանակները վանացս տեղը կառուցուած է եղեր Հայոց երեւելի նախարարներէն միոյն ապարանքը, որոյ անուամբ, կ՚ըսեն, ի վերջոյ կոչուեր է վանքս։ Ապարանից ուխտի հիմնարկութեան ժամանակն որոշ չի գիտցուիր, ինչպէս նաեւ անծանօթ է իւր հին պատմութիւնն։ Տասներորդ դարու մէջ կը սկսի պատմութեան մէջ յիշուիլ այս հռչակաւոր վանքս, որ կը թուի, թէ Մոկաց



134. Սահմանաքարաչ Ապարանների մօտ։

աշխարհի եպիսկոպոսանիստ ամրոն էր։ Հայոց Աբրաս թագաւորի և Աշնանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ, Մոկաց եպիսկոպոսն էր՝ սրբութեամբ, առաքինութեամբ և խմաստութեամբ հռչակաւոր Դաւիթ անուամբ մէկն, որ խոր ծերութեան հասնելով, վախճանեցաւ և թաղուեցաւ Ապարանից վանքի մէջ, որոյ շիրմէն և գերեզմանին հողէն շատ բժշկութիւններ կը լինէին։ Այս երանելի Դաւիթ եպիսկոպոսը, իւր կենդանութեան ժամանակ, եղբօրը գաւառ որպէս Սահակ քահանայ ձեռնադրած էր, և վարդապետութեան պատիւ նոյն առաջնորդ գրած, որ վերջն ալ Մոկաց աշխարհին եպիսկոպոս ձեռնադրուելով՝ կը նստէր նոյն վանքի մէջ։

Վանքս կանխաւ ունեցեր է Ս. Կարապետ եկեղեցի մը, որոյ խորանին մէջ է Դաւիթ եպիսկոպոսի հրաշագործ գերեզմանը։ Ստեփանոս եպիսկոպոսի վանականութեան ժամանակ շինուած է նաեւ ուրիշ եկեղեցի մը Ս. Ստեփանոս Նախավկայ։ Նոյն Ստեփանոս եպիսկոպոսը շատ նորոգութիւններ բրաւ, և սկսաւ վանաց մէջտեղը հիմնարկել Ս. Աստուածածնի մեծ և փառաւոր եկեղեցի մը։ Այս նորոգութեանց և շինութեանց միջոց, վերոյիշեալ եր. Դաւիթ եպիսկոպոսի եղբօրը որդին Մանդակաւ՝ կ. Պոլսի մէջ, իւր հօրեղբօր գերեզմանին հողով ոչ սակաւ հրաշքներ և բժշկութիւններ ընդելով, ժամանակին իշխող կոստանդին և վասիլ կայսրներէն մեծապէս պատուեցաւ, և ի վերջոյ ըստ բաղձանաց Ստեփանոս եպիսկոպոսի և վանականացն Ապարանից, խնդրեց և ընդունեցաւ ոսկեհուռ և ձուլածոյ փառաւոր խաչի մը մէջ գնեղուած՝ մասն ինչ կենաց փայտէն և ուրիշ անգիւտ մասունքներ, փրկչի փուշ պսակէն, սպունգէն, բեւեռներէն, դեղձակէն և Ս. Աստուածածնի հանգերձէն։ Այս ամէնը վայելուչ կերպով ամփոփուած ճարտարապետ երկու գմբեթով տապանակի մը մէջ, հետն առած Մանգլաւս իշխանը մեծ շքով մեկնեցաւ կ. Պոլսէն, և բերաւ Ապարանից վանքը։ Ստեփանոս եպիսկոպոսն իւր վանականներով մեծ հանդիսիւ հանդոյց զայն նախ Ս. Կարապետի եկեղեցւոյն հրաշակառոյց խորանին վրայ. այնուհետեւ եռանդեամբ և փութով սկսաւ առաջ տանիլ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն շինութիւնը. որուն փառաւորութեան և գեղեցկութեան, քանդակներու, նկարներու, մանր բանուածքներու, մեծագին զգեստուց և սպասուց նկարագիրը՝ մանրամասն բրած է Գր. Նարեկացին։ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն հետ միացուց մեբձակայ Ս. Ստեփանոսի և Ս. Կարապետի եկեղեցիները։ Աստուածածնի եկեղեցւոյն շուրջը շինեց նաեւ մեծամեծ խորաններ կամ փոքրիկ մատուռներ՝ յանուն Ս. Աթաքելոց, Ս. Լուսաւորչի, և Ս. Գրիգորեանի, և անոնց մէջը գրաւ,

նոյն սրբոց նշխարներէն. ասոնց հետ պրաւ նաեւ Անդրէի առաքելոյն, Ստեփանոս եպիսկոպոսի վկայից, Քառասուն Մանկանց Սերաստիոյ, Ղեւոնդեանց քահանայից, և ուրիշ սրբոց մասունքներ։ Երբ եկեղեցւոյ շինութիւնն ըստ ամենայնի աւարտեցաւ, Ստեփանոս եպիսկոպոսի հրաւիրելովը, վանքս մէջ ժողովեցան բազմաթիւ եպիսկոպոսներ, վանականներ, կղերիկոսներ, մեծամեծ իշխաններ, նախարարներ, նաեւ վասպուրականի թագաւորներն երեք եղբարք՝ Աշոտ Ողորմած, Գուրգէն Խաչիկ և Սենեքերիմ Յովհաննէս։ Ասոնք ամէնքը, բազմամբոխ ժողովրդեան հետ, փառաւոր թափօրով և շքեղ հանդիսով կենաց փայտի տապանակն առին Ս. կարապետի եկեղեցիէն և փոխադրեցին Ս. Աստուածածնի նորակառոյց եկեղեցւոյ մէջ, փրկչական 983 թուին, մեծ պահոց աւագ ուրբաթու խորհրդաւոր օրը։ Այս հանդիսին ներկայ էր նաեւ Ս. Գրիգոր Նարեկացին, որ ի վերջոյ Ստեփանոս եպիսկոպոսի խընդրանօք՝ զրնց Թէ՛ Ապարանից պատմութիւնը և Թէ Ս. Խաչի հրաշալի ներքոյն։ Կենաց փայտի մասին այս վանքս բերուելէն վերջ, Ապարանից ոչխարի անունն փոխեցին, և այնուհետեւ սկսան անուանել Ապարանից Ս. Խաչ։

Հռչակաւոր վանքս, ժամանակի յաջող և ձախող ընթացից համեմատ իր դոյութիւնն պահած և հասած է մինչեւ մեր օրերը, սակայն պատմական կարեւոր տեղեկութիւնք և դէպքեր, զրուխեամբ մեր ձեռքն հասած չեն։ Այս վանքէն էր ԺԹ դարուն բանաստեղծ Սիմէոն վարդապետը, որ տաղաչափից Պահլաւունեաց և Մամիկոնենից վիպասանութիւնը։ ԺԹ դարու երկրորդ կիսուն մէջ վանքս հին ձեռագիր մատեանք, թանկագին ոսկեղէնքը և սրբութիւնները, և բոլոր իններքերը աւարառութեամբ գրաւած է քիւրտ Օսման աղան. այժմ եւս նոյն քրդի Հասան և Աղատուլ—բահման որդւոց ագարակն (չիֆթլիկ) եղած է։ Հայ մը իր ընտանիքով կը բնակի վանքս մէջ, որ բանի սախտուած է շէնքին պահպանութիւն ընելու, շուրջը եղող մարգագետինները մշակելու և արտիւնքը վերոյիշեալ քրդաց ձմերոյն տանելու։ Տաճկաւին կանգուն է վանքս հիմնաւորեալ չքնաղ դակերտ գմբէթաւոր հոյակապ եկեղեցին, որ ունի երեք խորան և հինգ լուսամուտ։ Մօտակայ Ս. կարապետի եկեղեցւոյն գմբէթն և արտաքին շէնքեր քանդեր են քուրդերն և այժմ անտէր և ամայի կը մնայ։ Վանքս միւս բոլոր շինութեանց վրայ կը փայլի հին արուեստի գեղեցկութիւն. չնայելով զանգակատունն ալ խարխափած են քուրդերը։ Այսպէս ահա երբեմն հռչակաւոր և հոյակապ Ապարանից վանքս, այսօր կը գտնուի Հայոց իրաւասութենէն դուրս, տխուր և ողբալի վիճակի մը մէջ։

ԱՊԱՐԱՆՔ. — Հայաբնակ գիւղ Ապարանից վանքի մօտ, լեռնային գրիւք, գրեթէ ½ ժամ հեռու է Մոկաց վտակէն, և վանէն երեք օր՝ անոր արեւմտեան հարաւային կողմը։ Բնակիչք կը համաբուին 60 տուն, ունին Ս. Աստուածածին քարաշէն եկեղեցի մը։ — Ապարանք կամ Ապրանք անուամբ գիւղ մը ևս ունի Ալին, որոյ բնակիչք այլազգի են այժմ։ — Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՊՐԱՀԻՆՏԻ. — Գիւղ կարնոյ, 50 տուն, բնակչօք, կէսը հայ և կէսը թուրք։ Հայք ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԱՊՐԱՊՈՒՀԱՐ կամ ԱՊՈՒԼԲՈՒՀԱՐ. — Գիւղ Տուրուբերանի Տարնոյ գաւառի մէջ, կը նայի Մշոյ լայնածաւալ դաշտի վրայ։ Ունի 30—35 տուն հայ, որք շատ հիւրասէր են և ունին պարզ եկեղեցի մը։

ԱՊՐՐՆԷՍ. — Հայաբնակ գիւղ Թորթումի (Բարձր Հայք). բնակիչք 60 տուն։

ԱՊԻԷՐՋԷՆ. Տես ՀԶՈՒ։

ԱՊԻԿԷՐՄ. Տես ՋԵՐՄԻԿ։

ԱՊԻՇ կամ ԱՓԻՇ ՔԱՐ. — Կիլիկիոյ Ա. լատաղ լերանց բարձրագոյն կատարն։

ԱՊԻՊԻՏԼԻՍ. Տես ԲԱՂԷՇ։

ԱՊԼԱՍՏԱՆ. Տես ԱԼՊԻՍՏԱՆ։

ԱՊՈՍ. — Մարաբան կը յիշէ լեռս, Հայաստանի արեւելակողմը, Մարաց սահմանին մօտ։

ԱՊՈՑ. — Փոքրիկ վիճակ Գուգարաց, զոր այլազգիք Գայքուղի անուանեն. վիճակս ունի իր անուամբ լեռներ։ Վախուշտ կ'ըսէ, Թէ անփայտ է երկիրը և անպտուղ, բայց ունի մարգեր, և հովտաց մէջ տեղ տեղ կը բուսնի նաև ցորեն, գարի և վարսակ։ Վախտանգ վերջին շատ շինութիւններ բրաւ վիճակիս մէջ,

գոբս յետոյ Նահիր Շահ գրաւեց։ Բնակիչք Հայազգի են, կոռովի և բարբարոսական, և արուեստով իւղագործ։ Նոյն վախուշտ աշխարհագիրը վիճակիս իբրև քաղաքաւանը կը յիշէ Ղազաձէի, և հետեւեալ գիւղերը, սկսելով արեւելեան կողմէն. Բանձարկոռտ, Դիւարգ, Մխրխ, Շահնազար, Խադ, Փաւնուս, Խոչի, Ֆարեհուզ, Մելիքպեկ, Օրբլուռ, Կիրակոս, Ծքարոս, Տէվեկիօզ, Բեվայ, Լօքսիւզ կրկին, Կեօղ կրկին՝ լճակի մը մօտ, Գորգոր կրկին, Տիքմեքաշի, Թերզիօղլուռ, Սատանա, Պեկ, Ճալ, Մերտապաղ, Թաշքեօփրիւ, և այլն։ Այս անուններէն, որք հայկական են կամ տաճկական, կը հասկըցուի թէ երկիրս առելի Հայոց կը վերաբերի քան Վրաց։ Տես Աշոց։

ԱՊՈՒՋՆԱԿ. — Գիւղ Զորրորդ Հայոց, այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ։

ԱՊՈՒԼ կամ ԱԲՈՒԼ. — Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի ամենաբարձր լեռն է, որ կը բարձրանայ գրեթէ գաւառի կեդրոնը։ Բաղկացած է երկու գագաթներէ, որ իրարմէ հեռու են մօտ 22 մետր։ Կը կոչուին Մեծ և Փոքր Ապուլ. առաջինը բարձր է 10826 ոտնաչափ, և երկրորդը 9194 ոտն։ Մեծ Ապուլէն կը բղխէ քաղցրահամ աղբիւր, որ առուակ մը ձեւանալով կ'անցնի համանուն Ապուլ գիւղէն։ Գիւղացիք կը պատմեն, իբր թէ նախնիք խմեր են այդ ջրէն և ատաղիկ հաւնելով ըսեր. «Խոտակ ապուր է», յետոյ այժմեան գիւղի տեղը բնակութիւն հաստատեր և գիւղն ու սարը կոչեր են Ապուր, որ աղաւաղուելով դարձեր է Ապուլ։ Մեծ Ապուլի արեւմտեան լանջին կը նկատուի պղնձի հանք և սրիկ, սակայն դեռ հետազօտուած չէ։ Լերանս գագաթը ամառն ևս ծածկուած է ձիւնով։ — Փոքր Ապուլի լանջին ի հնումն կայ եղեր ամրոց մը, որ այժմ աւերակ է։ Այս երկու լերանց մէջտեղ կը գտնուի փոքրիկ Ապուլ լիճը։ Ապուլ գիւղի բնակիչք ամբողջ հայ են 732 հոգի, բաժնուած 65 տան։ — Ջաւախք, 15։

ԱՊՈՒԼԲՈՒՀԱՐ. Տես ԱՊՐԼՊՈՒՀԱՐ։

ԱՊՈՒՋԵԻ. Գիւղ կամ արուարձան Փոքր Հայոց Ակն քաղաքի։ Ունի Ս. Նշան փառաշէն եկեղեցի մը և մէկ վարադայ վարժարան։ Բնակիչք 1066 հայ և 838 այլազգիք։ Տես Ակն։

ԱՊՈՒՍԻ. Տես ՀԱՊՈՒՍԻ։

ԱՊՊԱՍԱՊԱՍ. Տես ԱՍՏԱՊԱՍ։

ԱՊՊԱՍ–ԿԻՕՂ. Տես ԱԲԱՍ–ԿԻՕՂ։

ԱՊՏԱԼ–ԱՂԱԼԸ. — Հայաբնակ գիւղ Միւնեաց Գեղարքունեաց գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային եզերաց մօտ։ Բնակիչք 543 հոգի, բաժնուած 59 տան։

ԱՊՏԻԿ–ԱՍԱՐ. Տես ԱԲԴԼԱ–ՍԱՐ։

ԱՊՏՈՒՀԵՐ կամ ԱՊՈՒ–ՏԱՀԻՐ. — Այլազգաբնակ գիւղ Խաբրերդու։ Համանուն վիճակն ունի արգաւանդ երկիր. կը բուսցնէ առատ արմտիք, ցորեն, գարի, եղ. և տեսակ տեսակ պաուղներ, յորս նշանաւոր է չամիչն՝ զոր վաճառելու կը տանին Ալթարկեր և Ակն։

ԱՊՐԱԿ կամ ԱՄՐԱԿԻՑ. — Հին գիւղ Գուգարաց Տաշիր գաւառի մէջ։

ԱՊՐԱԿՈՒՆԻՍ կամ ԱՊՐԱԿՈՒՆԻՒՔ. — Հին գիւղ Միւնեաց Երնջակ գաւառի մէջ, Երընջակայ գետոյն աջ թևի վրայ, Քոնայէն մղոն մը հեռու։ Թէ և պատմութիւնը ԺԳ դարու անցից մէջ կը յիշէ գիւղիս անունը. բայց անշուշտ նոյն ժամանակէն առելի հին պիտի լինի։ Ապրակունիք ևս Միաբանութեան ձեռքն անցած է. եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ, որ Ապարաների եկեղեցւոյն նման հին եղած կը թուի, զոր 1868էն վերջը հիմնովին նորոգած են։ Գիւղիս վանքն ևս կը կոչուէր Ս. Գէորգ. Մխիթար Ապարանեցի այս վանքս կ'անուանէ վերին վանք, անշուշտ մերձակայ Ս. Կարապետի վանքին հետ համեմատելով, և կ'ըսէ, թէ կաթողիկոսի Մաղաքիա վարդապետը ճարտարութեամբ առնելով, մէջը վարժարան հաստատեր է, Յարդիս անուն վարդապետի մը ձեռաց տակ, բայց յետոյ անցած կը թուի վերստին Միաբանութեան ձեռքը։ Ժէ. դարու սկիզբը 12 միաբաններ ունէր վանքը և գիւղը 100 տուն բնակիչք։ Երեմեայ նուագած է բնակչաց թիւն, և ըստ Ջահկեցւոյ կաթողիկոսի, մեծ մասն զարձած են Պարսից կողմն, և մեզ կը թուի թէ մէկ մասն ալ գաղթած է ուրիշ կողմեր։

Այժմ Ապրակունիք ունի 79 տուն գուտ հայ բնակիչք. հին բնակչաց սերունդներէն

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՊՐԱԿՈՒՆԵԱՑ ՎԻՃԱԿԻ

ԱՆՈՒՆԱՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Ցուն	Հոգի	Հոգի
Ալխանլու-Ջէնաարին.	—	—	595
Անզաւր Վէրին. . .	—	—	228
» Ներքին . .	—	—	262
» Մէջին. . .	—	—	41
Ապարաներ. . . .	—	—	589
Ապրակունիք . . .	79	703	—
Արազին.	59	271	552
Արավատ.	—	—	227
Գազանճի–Միւլա. .	99	858	262
Գազապ–Գէրզէրլինս-կէյ.	—	—	512
Գէլէճա.	5	25	144
Ջուղալա	—	—	49
Թէյվազ.	—	—	140
Լաճքաթաղ. . . .	—	—	119
Խանազա	—	—	322
Խաչափարա . . .	—	—	485
Խոշկաչէն	—	—	154
Կղնուա.	199	1516	100
Կեալ–Ջարջուր . .	20	238	—
Կեչնուկ (Գոչնուկ). .	—	—	141
Կէօլա–Քէմէր . . .	—	—	60
Ձամալտին. . . .	—	—	480
Նախչի–Նարկիզ . .	—	—	45
Նազաժիր	—	—	312
Նաճախ–Ալիբէկղիզ.	—	—	75
Նէզրամ.	—	—	2319
Նորաչէն	39	259	453
Շահմիրանշահ. . .	—	—	269
Շուռթ	56	555	402
Պոյ–Ահմէտ. . . .	—	—	75
Ջուղա	90	649	—
Սալմաս.	—	—	574
Սուբաղ.	—	—	738
Սուրմալիզ. . . .	—	—	112
Վայխիր.	—	—	215
Փորագաշտ. . . .	36	481	—
Քէրպալայ-Օրուճղիզէ.	—	—	90
Քանա	—	—	465
ԳՈՒՄԱՐՆ . . .	662	5555	11100

ունացած է ոչինչ թիւ մը։ Բնակչաց շատերն զաղթած են Սալմաստէն և ուրիշ տեղեր. կ'զբաղին երկրագործութեամբ, ժիր են և յաջողակ. իրենց երկրի հունձքը աւարտելէ վերջ, կ'երթան Միսխան և անկէ ալ Շարուր, և այն կողմանց ցորեան և բրնձի հնձողաց օգնելով դրամ կը շահին և կը դառնան. ժէջերնին կան նաև արուեստաւորներ, և ճարտար քարակոփք։ — 1868ին հին եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ, հիմերը փորելու ատեն յայտնուեցան խաչքարեր, որոնց ունանց վրայ կը նշմարուէին անարուեստ ձեռքի գրած արձանագրութիւնք անվերծանելի. միոյն վրայ կար թուական ՇՄ (= 1052) և գանձայ պատկեր Ս. Աստուածածնի՝ Քիսուս գիրկը։ Եկեղեցւոյն հարաւային կողմը, 30 քայլ հեռու, առապարի մը վրայ կայ կիսաւեր մատուռ մը Ս. Յովհաննէս, ուր ամէն կիւրակամուտ երեկոներ կը յաճախեն բարեպաշտ կանայք և ճրագ կը վառեն։ Գիւղին հիւսիսային կողմը առուակի ալ թեի վրայ, կայ ուրիշ բլրակաձև առապար մը, որոյ վրայ կը տեսնուին երեք մեծամեծ քարէ սահմանախաչեր. այս առապարի վրայ և սորոտը սփռած են Միաբանողաց ժամանակի գերեզմաններ, գրեթէ հողի հետ հաւասարած։

Ապրակունիք ըստ այժմեան աշխարհագրական բաժանման, կը կազմէ Նախճաւանի գաւառի երրորդ վիճակը, որ ունի 38 գիւղ, որոց անուանք և բնակաց թիւերն գրուած են առանձին ցուցակի մէջ. — Հմմտ. Հայրենեաց, 35–45։ Միասական, 376–378։

ԱՊՐԱԿՈՒՆԻՔ. *Տես* ԱՊՐԱԿՈՒՆԻՄ։

ԱՊՐԱՆԻՑ ՎԱՆՔ. — *Իբրև գիւղ կոտերոյ երկրին, յիշուի անուամբ յիշատակարանաց մէջ։*

ԱՊՐԱՆՈՒՑ ՁՈՐ. — *Կը յիշուի Աբրահամ Շիրակ գաւառի Հոռոմոսի վանաց արձանագրութեանց մէջ։*

ԱՊՐԱՆՑ. *Տես* ԱՊՐԱՆՔ։

ԱՊՐԱՆՔ կամ ԱՊՐԱՆՑ. — *Գիւղ Բարձր Հայոց Գերջան գաւառի մէջ։ Գիւղիս մօտ է Ծակերաբի Ս. Գաւիթ վանքը. ունի մեծ խաչարձան մը, որոյ արձանագրութիւնք դժուարընթեռնելի են։ — Ապրանք անուամբ գիւղ մի ևս կայ Ջորբուրդ Հայոց Բալու գաւառակի մէջ, Բալու քաղաքէն ժամ ու կէս հեռաւորութեամբ՝ հիւսիսային կողմը։ Բնակիչք զուտ հայ են 25 տուն, և ունին և եկեղեցի մը։*

ԱՊՐԻ. — *Գիւղ Տուրուբերանի հին կոթի գաւառի և այժմեան Ներքին Պուլանըխ գաւառակի մէջ, Լիճ գիւղէն $1^1/_4$ ժամ հեռու՝*

արեւելեան հիւսիսային կողմը։ Բնակիչք բաժնուած են 80—90 տան, կէսն հայ և կէսը քուրդ։ Հայք ունին անշուք եկեղեցի մը, կը պարապին երկրագործութեամբ, և հասարմար ծառայք են տեղւոյն քրդաց, որք շեխ կը կոչուին։

Գիւղիս շեխերէն միոյն տան մէջ օձախ կոչուած քար մը կայ, որ իբր թէ լինի գերեզման Մամբրէ հովւոյն, որ Մանեայ այրին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն գտաւ և Թորգան աւանին մէջ թաղեց։ Այդ գերեզման համարուած քարին, թէ՛ Հայք և թէ՛ Քուրդք ուխտի կու գան, իբրև սրբոյ մի յարգելի գերեզմանին։ Քուրդերն կը պատմեն՝ որ իրենք յունական ծագումն ունին, և իրենց այժմեան ջամիի ժամանակաւ քրիստոնէական եկեղեցի մը եղած է։ Ապրիի հիւսիսակողմը քարահանք կայ, յորմէ շրջակայ գիւղերը ջաղացքի քարեր կը հանեն։ Իսկ արեւելեան հիւսիսային կողմն ալ կարմիր վանք ըսուած աւերակ մը կայ, ուր Հայք ուխտի կ'երթան, որ կը կարծուի լինել Թիլ աւանը։ Գիւղիս հարաւային կողմի աւերակներու մէջ կան ոչ սակաւ խաչքարեր։ — Նկրգր. Ողևորութիւն, Գ. 87—89։

ԱՋԱԲԱՋ կամ ԱՋԲԼՋ. — Հին գիւղ Սիւնեաց Զորք գաւառի, որոյ վրայ յարձակեալ Տէր Ալեաիք՝ միջի բոլոր այլազգի բնակիչները կոտորեց։ Այժմ ունի 38 տուն այլազգի։

ԱՋԱՌԱԳԱՒԹ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՋԱՒԵՐԵԿ ԱՆԱՊԱՏ. — ՋԼԱ (= 1482) թուին գրուած շարականի մը հետևեալ յիշատակարանին մէջ կը հանդիպինք անուանս. «... ի յերկիրս Աբարատեան ձեռամբ անիմաստ զրչի, վրթանէս սուտանուն կրօնաւորի, ի յանապատս որ կոչի մականուն Աջաւերեկ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Յակոբիս...»։ Տես ԱՐՋԱՒԵՐԵԿ։

ԱՋԲԼՋ. Տես ԱՋԱԲԱՋ։

ԱՋԻԹ. — Գուգարաց աշխարհի մէջ, Հաղբատայ վանքի մօտ աւերակ գիւղատեղի մ'է, Ամիր—Ջաքար լերան ստորոտը։ Ունի մշակութեան ընդարձակ գետին, անտառներ և պաղատու ծառեր, աւերակ ջրաղացներու տեղեր։ Տխուր կերպով ամացած են տակաւին կիսակործան եկեղեցւոյն և կրկին թաղերու բնակութեանց աւերակներն, ինչպէս նաև հին գերեզմաններն՝ անտաշ տապանաքարերով։ Թէ ե՞րբ կամ ո՞ւր գաղթած են տեղւոյս բնակիչք, յայտնի չէ։

ԱՋՈՂՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՌԱՋ. — Մակաւաբերակ գիւղ Վանայ Մահմուտան վիճակի մէջ։ Ունի Ս. Սարգիս քարուկիր եկեղեցի մը։

ԱՌԱԼ. — Գիւղ Ախալցխայի գաւառի մէջ, 52 տուն բնակչօք։

ԱՌԱԿ. — Կը յիշէ գիւղս Ագաթել պատմիչ (Գլ. ԽԸ), Աւետիս նահատակի պատմութեան մէջ։

ԱՌԱՂ կամ ԱՌԱՂՍ. — Հին գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ արեւելակողմը ձորագետայ մը բերանը։ Զորը և գետակը կը կոչուին Այրղնոր, որ շատ բարերը է, և կ'երկնայ գէպի հարաւ մինչև Սասուն՝ շատ ձորակներու բաժնուելով։ Յովհան Մամիկոնեան (25) կ'ստուգաբանէ անունս, երբ Հայոց ընդդէմ Պարսից յաղթութիւնն պատմելէ վերջ կ'ըսէ. «Եւ միւս ընկերքն առեալ աւազ մատուցանէր և ասէր. Պարսից խորակարար, Ա՛ռ զաղս։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Առաղս մինչև ցայսօր. զոր և աւան իսկ շինեաց»։ Ի հնումն աւելի շէն եղած կը թուի գիւղս, որուն վկայ են բազմաթիւ տանց և սրմոց աւերակներն։ Այժմ ունի 70 տուն հայ բնակիչ, և երկու տուն քուրդ։

ԱՌԱԿԱՅ. Տես ԷՐԻԿԱՅ։

ԱՌԱՆ կամ ԱՌՆԱՑ. — Ձիշտ անունս Աղձնեաց Սէրխէվէք գաւառի մէջ. տեղեկութիւնք կը պակսին։

ԱՌԱՆԱՑ ԱՇԽԱՐՀ. Տես ԱՂՈՒԱՆՔ։

ԱՌԱՆՁՆԱԿ ՄՈՒԿ. — Մուկաց աշխարհի հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Մոկը վիճակը։

ԱՌԱՆՐՈՑ կամ ԱՓԱՆՈՑ. — Ուտի նահանգի հին գաւառներէն մին։

ԱՌԱՊԱՆ. Տես ՌԱՊԱՆ։

ԱՌԱՊԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ. — Այսպէս կոչուած է ի հնոց Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Վաղարշապատէն գէպի հիւսիսային արեւելք և մինչև Օշական եղած քարուտ և աւազոտ երկիրն։

ԱՌԱՊԱՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ. — Վերոյիշեալ

վաղարշապատու Ա. Հռիփսիմէ Աստուածածնի կէս ժամ հեռու՝ արեւելակողմն կը գտնուի երբեմն հռչակաւոր եկեղեցիս, որ այժմ գրեթէ բոլորովին անհետացած է։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ այստեղ Տրդրատ թագաւորը ընդ առաջ եղաւ սրբոյն Գրիգորի. ուստի և այդ յիշատակին ի զարու մէջ Ներսէս Գ. Շինող կառուցանել տուաւ հոյակապ և հրաշակերտ եկեղեցի մը, որ Սիրիոսի գրածին համեմատ, նախ կոչուեցաւ յանուն Երկնաւոր Զօրաբրնոց, և ի վերջոյ փոխուած է յանուն Ս. Գրիգորի։ Մեր բոլոր յետագայ ականատես և չտեսնող պատմիչը, մեծ զրուատիօք կը յիշեն եկեղեցիս, և կը թուի թէ բոլոր Հայաստանի մէջ յոյժ հռչակաւոր և ճարտարապետական եզական շէնք մը եղած է։ Աստղակայ պատմածի համեմատ տասներորդ զարու մէջ արդէն փլած և կործանած լինելով եկեղեցիս, Գագիկ Ա. Թագաւորը ցանկացաւ նոյն ճարտարապետական ձեւով և նոյն Ս. Գրիգոր անուամբ տաճար մը կառուցանել յԱնի։ — Ներսէս Շինողը եկեղեցւոյն շուրջն ալ պարսպով պատեց, և մէջը կոփածոյ քարերով բնակարաններ կառոյց իրեն և այլոց համար։ Քաստող գետէն ջուր բերել տուաւ, այդի անկեց և մէկ խօսքով առատապար և անկրկի վայրը զարդարեց բուսականութեամբ։ Յանկալի է որ ի հնումն այնչափ հռչակուած տաճարիս այժմեան մեծ խուռ ճեացուածոց վրայ նոր գննութիւնք կատարուին, որովք թերեւս յայտնուին նոր բանոր պատմական տեղեկութիւնք։ — Ա. յարատ, 244—246։

ԱՌԱՋԱԶՈՐ. — Գիւղ Արցախի Պարզկանք գաւառի մէջ, Չիլէթ սարի հարաւային սոսբոտը. պատուական է օդն, ջուրն և կլիման։ Բնակիչք ամբողջ հայ են 1500 հոգի, բաժնուած գրեթէ 200 տան։ Ունի եկեղեցի մը Ս. Աստուածածին, որոյ հարաւային կողմի արձանագրութենէն կը յայտնուի թէ կառուցուած է Ուճժի թուին։ Եկեղեցւոյ մէջ կան երկու ձեռագիրք, մին Աւետարան և միւսն Աստուածաշունչ, երկուքն ալ ունին յիշատակարաններ։ Գիւղս կէս ի ծմակահող տանող ճանապարհի վրայ կան մարդաչափ բարձրութեամբ երկու խաչարձաններ, զորս կանգնած է Սէր անուն ումն՝ իւր ծնողաց գերեզմաններու վրայ, ՈՉՉ թուին, ինչպէս կ'երեւի համառօտ արձանագրութենէն։ Առաջաւոր գիւղի սահմանները կան քարայրներ և ուխտատեղիներ, ինչպէս նաև հին գիւղերու տեղեր և գերեզմանատներ։ Այդ ուխտատեղիներէն և մատուռնեբէն անուամբ կը յիշուին հետեւեալքն. Կարմիր եկեղեցի, Նահատակ, Աճապատ, և այլն։ — Արցախ, 185—189։

ԱՌԱՋԻՆ ՀԱՅՔ. — Ի հնումն փոքր Հայոց երեք բաժանմունքներէն մին այսպէս կոչեց մեր Արամ քաջ նահապետը։ Այս մասին գլխաւոր քաղաքն էր Կեսարիա։

ԱՌԱՋՆԱԳԼՈՒԽ. — Լեռ Գուգարաց աշխարհի մէջ, Հաղբատայ վանից մօտ։

ԱՌԱԻԱՆ. — Հայանուն՝ բայց յունարնակ գիւղ Լեռնային Կիլիկիոյ. ունի Ս. Թէոդորոս եկեղեցի մը։

ԱՌԱԻԵԼԱԴԱՇՏ. — Օրբելեան կը յիշէ այս անուամբ զաշտ մը Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Ցուրայ վանքի մօտերը։

ԱՌԱԻԵՂԵԱՆՔ կամ ԱՌՈԻԵՂԵԱՆՔ. — Նախարարական տոհմ մ'ևր Հայոց Մեծոց մէջ, սերած Ալանաց ազգէն։

ԱՌԱԻԵՂԵԱՆՔ. — Հին նախարարական տոհմ, սերած Վահագնի Առաւան որդիէն։

ԱՌԱԻԻՏՈՒՅՑ ԳԻՒՂ. — Այրարատայ Ծաղկոտն գաւառի մէջ, Շահապիվանի մօտ. ուր գտարեց Գնէլ Արշակայ գացած ժամանակ, և առաւօտը անոր ներկայացաւ։

ԱՌԱՓՍՈՒՆԵՔ կամ ՌՈՓՍԵԱՆՔ. — Հին նախարարական տոհմ ի Հայս, սերած Տիգրան Գ. Ռոփսեայ կնոջէն։

ԱՌԱՔ. — Գիւղ Տուրուբերանի Ապահունեաց գաւառի մէջ։ Այժմ սակաւաբնակ է, բայց ի հնումն ունէր մինչ 80 տուն։

ԱՌԱՔԵԼՈՑ ԲԼՈՒՐ. — կը յիշուի այս անուամբ բլուր մը Աղձնեաց և Վասպուրականի սահմանագլուխ, Իշտունեաց գաւառի մօտ, Երկաթահատաց և Կապարահատաց կոչուած լերան շղթայի մէջ։

ԱՌԱՔԵԼԻՍ կամ ԱՌԱՔԻԻ. — Հայաբնակ գիւղ Գանձակու այժմեան Ճիլպայիլ գաւառի մէջ. բն. 645 հոգի։

ԱՌԱՔԵԼՈՑ ԵՐԿԻՐ. — կը յիշուի Մազաղայ վանից Թեմերու յիշատակագրի մէջ, որ կ'ենկնար Պարսկահայոց կողմերը։

ԱՌԱՔԵԼՈՑ ԼԵՌՆԵՐ. — *Այս անուամբ լեռներ կը թուի թէ կը դանուին Մշոյ կողմերը. կը յիշէ սակն տէր Յովհաննէս երգոց մէջ հետեւեալ կերպով.*

«Առաքելոց լեռներ ձուն է
Աշխարհ կասէ Ամին տուն է»:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. — *Կը գտնուի ամայի վանքս Գանձակու Դաշտին (Գրտան) գաւառի մէջ, Ողունթալայ կայարանէն շեղեալ դէպի աջ, մօտ 32 վերստ հեռաւորութեան վրայ: Վանքս կը բազկանայ հոյակապ տաճարէ մը՝ շինուած սրբատաշ քարով և սուր կամարակապով: Ներքուստ զարդարուած է եղեր տաճկանկարներով, որոնք այժմ ուրուած են, ի՛նչպէս տակաւին Ս. Գէորգայ կիսեղծ պատկերն և ուրիշ նկարներու մնացորդներ: Տաճարի առջև կայ վայելուչ կամարակապ գաւիթ, որոյ միակ պատուհանն տանիքէն է: Գաւթի դրան արտաքին ճակտի վրայ կայ ՌՂԴ (= 1244) թուականաւ արձանագրութիւն. կան նաև մի քանի ուրիշ արձանագրութիւններ: Վանքիս չորս կողմը կայ եղեր քարաշէն պարիսպ, և ներսը բնակարաններ և անտեսատուն. այժմ մնացած է միայն պարսպի հարաւային մասը և անտեսատունը: — Աբձագանգ, էջ. 158: — Այս անուամբ ուրիշ մի քանի վանքեր ևս ունինք, ի Շապին Գարահիսար, ի Կիլիկիա և այլուր: Տես ԵՂԻՎԱՐԴ և ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ:*

ԱՌԱՔԻԻ. *Տես ԱՌԱՔԵԼԻՈ:*

ԱՌԲԵՐԱՆԻ. — *Ըստ հին աշխարհագրական բաժանման, Վասպուրականի գաւառներէն մին էր, և սովորաբար կը յիշուի Տուրուբերանի Ադիովիտ գաւառի հետ, յորս կը բնակէին մեր թագաւորաց եղբարք և քորք: Գաւառս արեւելակողմէն ունի աղիղնաձև լեռնոց շղթայ մը՝ ամենք հիւսիսէն ի հարաւ տարածեալ. արեւմտակողմն է Վանայ ծովակն: Երկիրն ընդհանրապէս դաշտային է, առատջարար օգով, ջրով և արգաւանդ հողով, որոյ բարեբերութենէն թերևս ծագումն առած լինի այժմեան Բերկրի անունը, որ հաւանականաբար բերրի բառին աղաւաղութիւնն է, և կամ ինչպէս կ'աւանդուի, նախնի ժամանակներն շատ ծառաստաններ ունենալով, որոնք ամէն տարի առատ պտուղներ կու տային և բնակիչքն, իրարու բերկրի՛ (ուրախացիք) ըսելով պտղոց առատութենն կ'աւետէին միմեանց: Գաւառիս գլխաւոր քաղաքն է Բերկրի, որոյ նկարագիրն ինչպէս նաև շրջակայ գիւղերն կը նկարագրուին իրենց կարգին: Տես ԱՂԻՈՎԻՏ: — Նկարագր. Ոզևորոբիւն, Գ. 17—18:*

ԱՌԴԷՈՍ. — *Լեռ Առաջին Հայոց մէջ, կեսօրական մասն:*

ԱՌԵՂ. — *Սակաւարնակ գիւղ Հայոց, Մոկաց այժմեան Շատախ գաւառակի մէջ. ունի աննշան եկեղեցի մը: Գիւղիս արեւելակողմը կէս ժամ հեռու կայ Ս. Վարդան անուամբ փոքրիկ վանք մը, կառուցուած բլրակի մը կողին վրայ: Այս վանքը ամայի վիճակի մէջ կը մնայ, և տարին անգամ մը Ս. Վարդանայ ծովին գիւղիս քահանայն կը պատարագէ ի ներկայութեան բազմաթիւ ուխտաւորաց:*

ԱՌԵՍՏ. — *Հին աւան Վասպուրականի Աղբերանի գաւառի մէջ, համանուն գետի վրայ, Վանայ ծովակի եղերքը: Այստեղ մեր խոսրով թագաւորը Վրթմանէս քահանայապետի ազօթիւք յաղթեց Պարսից անհամար զօրաց: Աբշակ թագաւորի ժամանակ ևս Բագրեւ զօրավարն՝ տեսնելով Պարսից զօրքերը, «...զի հասեալ բանակէին ի վիրայ ձիհատանիցն Առեստեայ», յարձակեցաւ և մեծ յաղթութիւն տարաւ: Բիւզանդ, Գ. ԻԲ. և Գ. Ը: Աւանս իւրանուն գետէն կ'ըստանար առատ ձուկ. և իւր մօտ կար յատուկ ձկնաւաճառք կամ ձկնատեղիք (ձուկ ծախելու տեղ) արքունի: Փաբպեցին Առեստ աւանը քաղաքագիտէ կ'անուանէ. իսկ Ղևոնդ (Գլ. Զ), ասոր մօտ գտնուած գաշտն կ'անուանէ Առեստակողմն:*

ԱՌԵՍՏ ՓՈՔՐ. — *Զգիտեմք վերոյիշեալ աւանն է, թէ անոր մօտ ի հետեւի գտնուող մի ուրիշ փոքր գիւղ, որ հայրենիք էր ըստ Ասողկայ (Բ. Բ) Ղևոնդ կաթողիկոսի. «ի գաւառէ Աղբերանոյ ի գեղջէ փոքր Առեստոռ»: Ցոհան կաթողիկոսն յիշելով Ղևոնդ կաթողիկոսն կը գրէ «...էր ի փոքր Եստատայ...», որ անշուշտ կամ գրչի վրիպակ է, և կամ այդպէս ևս կը կոչուէր ի ոմանց:*

ԱՌԵՍՏ կամ ՊԱՆՏՈՒՄԱՀԻ. — *Վասպուրականի հին Աղբերանի գաւառի և այժ-*

մեան Բերկրիի պիսաւոր և պատմական գեան է։ Գարնան շատ կը յորդի և երբեմն զօրաղ-ղումեանց առիթ ևս կը լինի, մարդկային կեանքեր կուլ տալով։ Գետս ունի հին, բայց ամրակէն կամուրջ մը. իր ընթացից մէջ կան զուարճալի տեղրաներ, ուր բաւ-կան քանակութեամբ եղէգներ կը բուսնին։ Ինչպէս ի հնումն, նոյնպէս և այժմ անուա-նի է գետս առատ ձկներովը, զորս գարնան կողովներով կ'որսան։

ԱՈՒԿ. — Գիւղ Զորրորդ Հայոց այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ։

ԱՈՒԿՆ կամ ՅԱՈՒԿ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գա-ւառի մէջ, վանայ ծովակի հիւսիսային կո-ղերքը։ Բնակիչք 160 տուն հ ունի, ու-նին անզարդ քարուկիր եկեղեցի մը Ս. Լուսաւորիչ, և ծաղկոց մը։ Ծովեզերեայ գիւղս յորլիս և օգոստոս ամիսներու մէջ վանեցի և Բազիշեցի վաճառականներով կը լեցուի, որք ապրանք և մրդեղէններ կը բե-րեն վաճառելու և նաւերով ցորեան կը տա-նին մինչև սեպտեմբեր ամսոյն վերջը։

ԱՈՒՆԴԵՂ. — ԺԲ գարուն գրուած աւե-տարանի մը վերջին յիշատակարանի մէջ կը հանդիպինք անուանս, որ կը թուի լի-նել Թաբրեզու հին գիւղերէն մին։

ԱՈՒՆՋՈՒՑ կամ ԱՈՒՆՋԵԱՑ ՎԱՆՔ. — կը յիշուի 1505 թուին, Այրարատայ կո-ատայք գաւառի մէջ, Աղինճ գիւղի մօտ։

ԱՈՒՐՈՄ կամ ՅԱՈՒՐՈՄ. — Մականա-բնակ գիւղ Հայոց, Մոկաց աշխարհի այժմեան Շատախ գաւառակի մէջ։

ԱՈՒՆՁ կամ ԱՈՒՈՒՉ. — Հայաբնակ գիւղ Զորրորդ Հայոց Վարի Կեղի գաւառակի մէջ, Մէլիքան գիւղաքաղաքի վիճակը։ Բնա-կիչք կը համարուին 200 տուն. ունին Ա-ւետարանիչ եկեղեցի մը՝ որ երկրաշարժէ քայքայուեր և ապա նորոգուեր է։ Նշանա-ւոր են բերքերէն ընկոյզը, տանձը, սունկը, և այլն։

ԱՈՒՆՁ. — Հայանուն՝ բայց թուրքա-բնակ (14 տուն) գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Տակաւին կը տեսնուին իր մէջ աւերակ եկեղեցւոյ մը չորս որմնակից սիւներն և որմերը, սեղան մը և աւազան՝ հանդերձ արձանագրութեամբ։

ԱՈՒՆՁ. — Ուրիշ գիւղ Սիւնեաց Շահա-պօնք գաւառի մէջ։ Բնակիչք 43 տուն հայ. ունին եկեղեցի մը և ընդարձակ ագարակ-ներ։

ԱՈՒՆՁ կամ ԱՈՒՆՉ. — Գիւղ Այրարա-տայ Կոտայք գաւառի մէջ, Ազան գիւղի հիւսիսակողմը, արքունի ճանապարհի վրայ։ Բնակիչք 578 հոգի, բաժնուած՝ 75 տան. ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։ Հին և կիսաւեր մատուռ մ'ալ կայ գիւղիս արևե-լեան կողմը՝ բազմաթիւ գերեզմանաց և խաչքարերու մէջ։ Շահ Աբասի աւերմունք-ներէն և գերեվարութենէն վերջ, երբ ամայի մնաց գիւղս և մերձակայ սահմանքն, նոյն ժամանակներէը Առաքել պատմիչ (Ա. ԼԱ) կը յիշէ այս գիւղէն ալեւոր ոմն՝ որ Ֆա-նաբեանէն շալակը աղ բարձած յԱղինճ գաս-նալու ժամանակ՝ գայլերու կերակուր եղաւ։

ԱՈՒՆՉ կամ ՅԱՈՒՆՉ. — Գիւղ Մոկաց աշխարհի Հին Ջերմաձոր գաւառի մէջ։ Բնա-կիչք մօտ 40 տուն, ունին Ս. Աստեփանոս քարուկիր եկեղեցի մը։

ԱՈՒՆՉ կամ ԱՈՒՆՁ. — Գիւղ Կաթողի-կեայ Հայոց, Տուրուբերանի Տարօն գա-ւառի մէջ, Մշոյ հիւսիսային կողմը, կէս ժամ հեռու, շրջապատեալ ծառազարդ պար-տէզներով։ Տները ցրուած չեն այլ կից մի-մեանց. ընդհանուր գիւղը երկու թաղերու կը բաժնուի, որ է վերին թաղ և վարին թաղ. 150 տուն է ընդ ամէնը, իսկ բնա-կիչք 900–1000։ Եկեղեցի մը կայ զոր տէզացիք Իրեք խորան կը կոչեն, անշուշտ մէջը երեք խորան գտնուելուն պատճառաւ։ Աւազ խորանին տեսիլը կից է քարաշէն գետ-նափոր մատուռ մը, որուն մէջ կը գտնուին շատ հին գերեզմաններ, որոց տէրերն յայտնի չեն։ Եկեղեցւոյն չորս բոլորը կը շրջապատէ հին գերեզմանոցը՝ զարդարուած բարձր ծառերով, բայց այժմեանը գիւղէն դուրս է։ Յովհան Մամիկոնեան (Դշ. Գ) ա-նուանս ասուպարանութիւնը կ'ընէ ըսելով. «Եւ նոցա (այսինքն զօրացն Պարսից) ա-պաղակեալ ասեն, Ա՛ւ ինչ զարձայք անդրէն ի պատերազմ, ո՛վ աւելաթօսք. և կոչեցաւ ա-նուն տեղւոյն Աւելիչ»։


ԱՈՒՆՁ. — Բարձր Հայոց հին Աղիւծ գաւառի մէկ մասն է, և կը ձեւացնէ առան-

ձին վիճակ մը։ Կ՚ինկնայ Կարնոյ գաւառի Հարաւակողմը, երկիրը լերնային է. գլխաւոր տեղն է Ախիձ կամ Ախլ աւանը։

ԱՈՒՆԶՎԱՆՔ կամ ԱՈՆՃՎԱՆՔ. — Հայաբնակ գիւղ Հայոց, Տարօն գաւառի մէջ, Ախնչ գիւղի մօտ, Մշէն 4 ժամ հեռու։ Բնակիչք 50–60 տուն են, յորոց 5ը քրդաց է։

ԱՈՒՆԻՔ կամ ԱՈՒՆԻՔԵՐՊ. — Կիլիկիոյ բերդերու կարգին մէջ կը յիշուի նաև այս անուանը բերդ մը, որ Ռուբինեանց ժամանակ Հայոց ձեռքն անցաւ։

ԱՈՆՂԱԿ. — Գիւղ Տարսուբերանի Ապա-



135. Առնեղ գիւղի Ս. Գրիգորի եկեղեցին։

ՀԱՒԱ. Տես ԱՒԻՆՁ։

ԱՒԻՒԻԾ. — Բարձր Հայոց երկրորդ գաւառն է, որուն կը համապատասխանեն այժմ Կէրձանիս և Շէյխան վիճակները։ Գաւառիս մէջ է Ախլաճ լեռն ուր կը բնակէր Ս. Գանիելի Շաղիտայ աշակերտը, որ անկէց տեսաւ Ս. Մեծին Ներսէսի փոխանումը։ Երբ Մեծն Ներսէս կեսարիայէն կը դառնար, Արշակ Թագաւորը իրեն ընդ առաջ ելաւ մինչև այս լերան գլուխ։

ԱՒԻՒԻԾ կամ ԱՒԻՒԾԵՐՊ. — Կիլիկիոյ բերդերու կարգին մէջ կը յիշուի նաև այս անուանը բերդ մը, որ Ռուբինեանց ժամանակ Հայոց ձեռքն անցաւ։

ԱՌՂԱԿ, — Գիւղ Տարսուբերանի Ապահունի գաւառի մէջ։ — Փիրդալհէ, Զորս ընկերք, 44։

ԱՌՂԱԶՈՐ կամ ԱՌՂԸԶՈՐ. — Զոր Տարսուբերանի Տարօն գաւառի մէջ։ Տես ԱՌԱՂ։

ԱՌՂԱՒԻՍ. — Գիւղ Շապին Գարահիսարի, 80 տուն հայ բնակչօք։

ԱՌՂՈՒ. — Մակաւաբնակ գիւղ Հայոց,

Մոկաց աշխարհի այժմեան վերին կարկառու վիճակի մէջ։

ԱՌՄԷՆԻԱ· *Տես* ՀԱՅԱՍՏԱՆ։

ԱՌՆԱ. *Տես* ԸՌՆԱ։

ԱՌՆԱՈՒՏ. — *Գիւղ Սիւնեաց Ազահէնք գաւառի մէջ, Հօչանց գետոյն ձախակողմը։*

ԱՌՆԵՂ. — *Հին գիւղ Հայոց, Սիւնեաց Գեղարքունիք գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտակողմը։ Այժմ կը կոչուի Փաշաքէնտ կամ Մեհմէտ–Աղալի, և ունի 1965 հայ բնակիչ՝ բաժնուած 244 տան։ Գիւղիս մօտ գտնուող բլրակի սառոռուէն կը բղխեն քանի մը աղբիւրներ և կը սկզբնաւորեն Կեօք–լայ կոչուած գետակն։ Ունի կրկին եկեղեցիներ, մին Ս. Գրիգոր (թ. 135) շինուած սրբատաշ քարերով և փոքր կամարակիէով, որ քայքայուած լինելով, բնակիչք վերջին տարիներուս մէջ նորոգած են՝ միւս աւելի հին եկեղեցին կամ վանքն Ս. Աստուածածին։ Ս. Գրիգորի եկեղեցւոյ մօտ գտնուած է արձանագրութիւն մը ՋՂԹ (= 1549) թուականաւ, յորմէ կը յայտնուի թէ նոյն տարին ոմն Տաղուզան՝ գուսան պարոն Գաւթի և կնոջակից Փիրհամզայի, նորոգած է եկեղեցւոյ շրջապատը։ Ս. Աստուածածնի եկեղեցին ըստ արձանագրին կառուցուած է ՅԽԷ (= 898) թուին, Աննեղ գիւղի Շաղութաթ անուն իշխանէն։ — Գիւղէս դուրս կայ աւերակ եկեղեցի մը, որոյ մօտ կայ ՌՃԽ (= 1691) թուականաւ տապանաքար մը։*

ԱՌՆԷՏ. — *Աւերակ գիւղատեղի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Քաջբերունիներ գայս կը համարի հին Արտատաւուղ գիւղը։*

ԱՌՆԻՍՏ. — *Գիւղ Տարսւերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելակողմը։ Բնակիչք 70–80 տուն ամբողջ հայ, բայց այս կողմանց յաւուրն թշուառ վիճակի մէջ ունին։*

ԱՌՆՁԻԿ կամ ԱՌՆԶԻԿ. — *Գիւղ Տարսւերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելեան հարաւակողմը. բնակիչք քուրդ են։*

ԱՌՆՁԻՎԱՆԻ. *Տես* ԱՌԻՆԶԻՎԱՆԻ։

ԱՌՆՁՈՑ կամ ԱՌՆԶՈՑ ՀՈՒՆ. — *Կը յիշուի անուն Սիւնեաց Գեղարքունեաց գաւառի գիւղորէից ցանկի մէջ։*

ԱՌՆՈՑՈՏՆ կամ ԱՌՆՈՑ ՈՏՆ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին։ Կը կարծուի թէ կ'ինկնայ Վանայ ծովակի հարաւային արեւելակողմը Աբնոս կամ Աբնոյ լերան մօտերը կամ ոտքը։*

ԱՌՆՁԻԿ. *Տես* ԱՌՆՁԻԿ։

ԱՌՆՈՍ կամ ԱՌՆՈՍԱՍԱՐ. — *Լեռ Վասպուրականի այժմեան Թօշաղ գաւառի մէջ, Վանէն Պաշգալէ տանող ճանապարհի վրայ. բարձր է 3350 մետր։ Լերանս արդի անունն է Զոռխա։*

ԱՌՆՋԿՈՑՍ. — *Գիւղ Տարսւերանի Խորխոռունեաց (Աբծկէ) գաւառի մէջ, Վանայ ծովակի հիւսիսային կողմը։ Բնակիչք 200էն աւելի. ունին Ս. Գեորգ և Ս. Յարուքիւն եկեղեցիք։*

ԱՌՈՍՊԻԺԱՆ. — *Փայտակարանի հին գաւառներէն մին։*

ԱՌՈՒԱԼԻՃ. — *Հայաբնակ գիւղ Տարսւերանի Տարօն գաւառի։ Գիւղիս մօտ ալեւձ ապառաժուտ մը կը ցուցնեն տեղացիք, և Մեհերի գութանարն է կ'ըսեն։*

ԱՌՈՒԱՆԻՑ կամ ԱՌՈՒԵՆԻՑ ՁՈՐ. — *Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին։ Գաւառս ունի և նոյնանուն ւան մը՝ որ Մոկս քաղաքէն հեռու է 6 ժամ։ Բնակիչք քուրդ են 120 տան չափ։ Թ. Աբծրունեաց գրութեան համեմատ ի հնումն գաւառս սահմանակից էր Ռշտունեաց գաւառի։*

ԱՌՈՒՋ. *Տես* ԱՌԻՆՁ։

ԱՌՈՒՆ. — *Գեղ Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ, այժմեան անունն է Պալըք–լայ։*

ԱՌՈՒՍ. — *Հին ւան Փայտակարանի (Թալիշ) Առոսպիժան գաւառի մէջ. ունի 105 տուն թաթար բնակիչք։*

ԱՌՋԱԿ. *Տես* ՀԱՌՋԱԿ։

ԱՌՎԱՆՈՏ. — *Հին գիւղ Սիւնեաց Կուսական գաւառի. կը յիշուի Հարկաւոր գիւղորէից ցանկի մէջ։*

ԱՌՎՑՆԱՑ. *Տես* ԱՌԻՐՏՈՑ։

ԱՌՏԵԱՆ. *Տես* ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ։

ԱՌՏԷՐ. — *Վանայ ծովակի կղզիներէն մին է. կ'ինկնայ Աղթամարի արեւմտակողմը մղոն մը հեռաւորութեամբ, և նոյնչափ ալ հեռու է ծովակի հարաւային եզերքէն։ Անուանս ստուգաբանութիւնն կը գտնենք հետեւեալ աւանդութեան մէջ. «Երբ օր մը առաւօտուն Ս. Գրիգոր Նարեկացին ըստ սովորութեան գետնատակ կ'աղօթէր իր ճգ-*

նարանի լերան ժայռի վրայ, ձայն մը կու գայ իրեն հիւսիսէն. աչքերը կը պարձնէ դէպ ի ծով, կղզեկիս վրայ կը տեսնէ Ս. Կոյսն՝ Յիսուս մանուկն գիրկը, և ձայնը՝ կը կոչէր Նարեկացիին. Գրիգոր ելի առ տէր, որում ցանկանալով ցանկանայիր: Սուրբն յափշըտակուած՝ կ'իջնէ փութով ճգնարանէն, կ'անցնի ծովը իբրև ցամաքի վրայ քալելով, կ'ելնէ կղզին և կ'երկրպագէ Տիրուհւոյն և Աստուածորդւոյն: Այս հրաշալի տեսլեան օրէն ի վեր կղզեակս կոչուած է Աստէր»: Ոմանք այս սիրուն աւանդութիւնը չընդունելով, կղզեակս կ'անուանեն Աստեր՝ Ակթամարայ վանքը ասոր վրայ արտեր ունենալէն հետեւցնելով: Սուրբն Գրիգոր իր այս սքանչելի տեսլէն մանրամասն կ'ստորագրէ Աչքն ծով ի ծով տպագիր մէջ. կը յիշէ նաև իր աղօթից մէջ (ԺԲ և ԺԷ):

Այս տեսլեան ի յիշատակ ի հնումն կղզեկիս մէջ կառուցին մենաստան և եկեղեցի Ս. Աստուածածնի նուիրուած. բայց ժամանակ անցնելէ վերջ քայքայելով, անցեալ գարու մէջ, ումն Ցակոբ վարդապետ Բատակացի, վերանորոգեց այդ վանքի և եկեղեցին և յարակից շէնքերն և քանի մը կրօնաւորներ հաւաքելով, հոն միաբանական ուխտ մը հաստատեց: Նոյն վարդապետը քանի մը տարի վերջը 1772ին նահատակուելով՝ միաբանները ցրուեցան, և վանքն ալ վանայ բղուերէն կողոպտուեցաւ և կործանեցաւ: Տակաւին կը մնայ լքեալ և կիսակործան քարաշէն տաճարը: Կղզեակս այժմ Աղթամարայ վանքի սխրարներու պատատեղին է. ունի բաւական թուով պտղի (սախըզ) ծառեր: — Ն. Հայս. 153—154: Բիւզանդիոն, 1897 թ. 135: Եւ այլն:

ԱՌԻՔՏՈՑ կամ ԱՌՎՏՆԱՑ. — Տասնոյ գիւղերէն մին, որոյ բնակիչք այժմ քուրդ են:

ԱՌՓԱ. Տես ԱՐՓԱ:

ԱՍԱՂԻՆ. Տես ԱԼԲԵՐԴ:

ԱՍԱՐԵԴ. — Անունս կը յիշուի ի խիզան:

ԱՍԲԻՆԵԱ. — Գիւղ Ախալցխայի գաւառի Խաւմախայ հասարակութեան մէջ, համանուն գետակի եզերքը՝ որ գիւղիս մօտ կը խառնուի Կուրի հետ: Բնակչաց թիւն է այժմ 378, որոց մեծամասնութիւնը կը կազմեն այլազգիք, և միայն քանի մը տուն են Հայք և վրացիք: Ի հնումն առանձին վիճակ մը կը կազմէր Ասբինծա, և ունէր 12 գիւղ: Գիւղս ունի 3500' բարձրութեան վրայ քառակուսի ձևով բերդ մը, որ Թրքաց տիրապետութեան ժամանակի գործ կը թուի, և յորում կը նստէր վիճակապետը: Գիւղիս հանդէպ, Կուրի ձախ կողմը կան համանուն հանքային գազ ջրեր: Ասբինծայի սահմանքն զարդարուած են ծառերով և յուռթի է բուսականութիւնն:

ԱՍԵԱՅՓՈՐ կամ ԱՍԵՅՓՈՐ. — Տայոց հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Բերդպարակ վիճակը:

ԱՍԻՎԻՆԹ կամ ԱԶԱՎԻՆԹ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ: Բնակիչք 1146 հոգի, բաժնուած 104 տան:

ԱՍԼԱՆԲԻԿ կամ ԱՍԼԱՆ ՊԻՑ. — Ջուա հայաբնակ գիւղս կը գտնուի Փոքր–Ասիոյ ծայրը, Նիկոմիդիայէն հետիոտն երեք ժամ ճանապարհ հեռու է, կառուցուած է գեղեցկագիր բարձր բլրոյ մը վրայ: Բնակչաց թիւն է մօտ 4000, ունին Ս. Աստուածածնի նուիրուած փառաւոր եկեղեցի մը, և Մաւիկոնեան կոչուած պղպջոց մը: Ասլանբէկցոց զբաղումն է գլխաւորաբար շերամաբուծութիւն, այգեգործութիւն, ածխագործութիւն և երկրագործութիւն. այժմ սկսած են նաև ծխախոտի մշակութիւն: Գործունեայ, աշխատասէր և քաջ են Ասլանբէկցիք, իրենց շրջակայ թուրք, լազ և չերքէզ գիւղերու հետ յաճախ կռուելու առիթ կ'ունենան և միշտ քաջ կը հանդիսանան: Ուսման և դիպուածներու առնդն ալ բաւական տիրած է իրենց մէջ: — Ասլանբէկի բարբառի վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Պ. Հրաչեայ Ճ. Աճառեան, տպ. 1898, Ս. Ղազար–Վենետիկ:

ԱՍԼԱՆ ՂԱՅԱ. — Ապառաժուտ բարձր լեռ, կարնէն 10 ժամ հեռու՝ Սպերու ճամբուն վրայ:

ԱՍԼՔ կամ ԱՅՐԼՔ. — Այրարատայ Նիգ գաւառի արեւելեան մասին մէջ, Պապաքիշի հիւսիսակողմը ձորի մէջ կան այս անուամբ անծանօթ մենաստանի մը աւերակներն: Այդ մնացորդներէն կը տեսնուի թէ եկեղեցին հոյակապ շէնք է եղեր և սիւնազարդ.

խակ նշխարեալ արձանագրութիւնք կը յայտնեն, թէ վաչուանանց զաստակերտ եղած է։

ԱՍԻՈՋ. *Տես* ՍՈԴՒ։

ԱՍԿԱԾԱԿ. *Տես* ՀԱԲԱՆԴ։

ԱՍԿՆՋԱՒՍ *կամ* ՅԱՍԿՆՋԱՒՍ. — *Հայաբնակ գիւղ Մոկաց. բնակիչք 150 հոգի, ունին Ս. Յովհաննէս քարուկիր եկեղեցի մը։*

ԱՍԿՈՒՍԱՍ. — *Բերդ Լեռնային Կիլիկիոյ։*

ԱՍԿՈՒՐՒԹ. *Տես* ԱԶՂՈՐ։

ԱՍՂԱՊԱՏ. — *Քաղաք անպիկասպեան, յորում կան մօտ 150 տուն Հայք, և ուր նին յատուկ եկեղեցի և պարոց։*

ԱՍՂՆԲԵՐԴ. *Տես* ԱՍՏՂԱԲԵՐԴ։

ԱՍՄՆՋՈՒԿ *կամ* ԱՆՅՄՆՅՈՒԿ. — *Զորակ և վտակ Դաշտային Կիլիկիոյ, Սոյ մօտ։ Ի հնուց վտակիս վրայ ձգուած էր կամուրջ մը, որուն մէկ մեծ աչքը կամ կամարը փլած լինելով, ազնուատոհմ ոմն Գրիգոր որդի Պաղտինի և եղբայր Լեւոնի, 1350–60 տարիներու մէջ նորոգած է։*

ԱՍՈՐԵՄԱՑՒ ԱՆԱՊԱՏ. — *Կը յիշուի ա նապատս Զօրրորդ Հայոց Մոփք գաւառի մէջ (Ճլոկ. ԺԹ դ.)։*

ԱՍՈՐԻՈՑ ԴՐՈՒՆՔ. — *Նշանաւոր կապան կամ դուռն Ծովային Կիլիկիոյ մէջ, Ալեքսանդրեակ քաղաքի մօտ՝ հիւսիսային կողմը։ Այսպէս կոչուած է, վասն զի ասկէց միայն երթևեկ կը լինի Կիլիկիայէն յԱսորիս։ Այս անցքին այլազգիք Սագալ–Թուրքան կ'ըսեն, իբր թէ ոմն այս նեղ անցքէն անցնի՝ նետ դուելով ձեռքով մրուքը կը բռնէ։ — Միաուռան, 416։*

ԱՍՊԱԳՈՒՆԻՔ. *Տես* ԱՍՊԱԿՈՒՆԻՔ։

ԱՍՊԱՀԱՆ. *Տես* ԻՍՊԱՀԱՆ։


ԱՍՊԱԿՈՒՆԻՔ *կամ* ԱՍՊԱԳՈՒՆԻՔ. — *Տուրուբերանի հին գաւառներէն մին։*

ԱՍՊԱԿՈՒՆԵԱՑ ՁՈՐ. — *Ձոր կը գտնուի անշուշտ Տուրուբերանի վերոյիշեալ Ասպակունիք գաւառի մէջ։*

ԱՍՊԵՆԴՈՍ. *Յն.* Ἄσπενδος. — *Հին քաղաք (Բ. 138) Ծովային Կիլիկիոյ (Պամփիւլիա), Աստլիոյ արեւելակողմը։ Այժմ կը գտնուի աւերակ վիճակի մէջ. բլրոյ մը գագաթը թէ ոմն որ այս նեղ անցքէն անցնի՝ նետ դուելով ձեռքով մրուքը կը բռնէ։ — Միաուռան, 416։*



136. *Ասրւոց Դրունք = Սագալ–Թուրքան։*




137. *Աշտարակ Ասպենդոսի մօտ։*

ԱՍՊԻՍԱԿ *կամ* ԱՊՍԱԿ. — *Գիւղ Տուրուբերանի Աղիովիտ (Արճէշ) գաւառի մէջ, Արճիշու մօտ. այժմ կը կոչուի Հասպիսինակ։ Ունի 70–80 տուն հայ բնակիչ և եկեղեցի մը։*

ԱՍՊԻՍԸՆԿԱՅ ՎԱՆՔ. — *Վերոյիշեալ Ասպիսակ զիւղի մօտ կը գտնուի վանքս, որ կը կոչուի նաև Սուրբ ուխտ Յարուցեալ։ Տես* ՅԱՐՈՒԹԻՒՆ։

Տոսք գաւառի մէջ, վանայ շրջակայքը։ Բնակիչք սահաւաթիւ են, ունին Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։

ԱՍՏԱԶՈՐ. — *Հայաբնակ զիւղ Սիւնեաց*



Ի գաւառապետական վերնատ տանցմանէ։

ԱՍՊՇԱՏ. — *Սահաւաքնակ զիւղ Հայոց, Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ վանայ շրջակայքը. ունի Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։*

ԱՍՊՍԱՆ. — *Գիւղ Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, վանայ շրջակայքը։ Բնակիչք սահաւաթիւ են, ունին Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։*


ԱՍՏԱԶՈՐ. — *Հայաբնակ զիւղ Սիւնեաց Հին Գրեւիք գաւառի և այժմեան Զանգեզուրի մէջ. հռչակուած է սպիտակ գինին։ Բնակիչք 795 հոգի, բաժնուած 99 տան։*

ԱՍՏԱԽԱՆԻ կամ ԱՍՏԵՂԱՆԻ. — *Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի, Ախուրեան և*

Աբղինայ գետոց խառնման անկեան մէջ։ Այժմեան բնակիչք օտարազգի են. ունի փոքրիկ բերդ մը։ Արձանագրութեանց մէջ կը գրուի Ատեղաւի, և կը թուի թէ իր գրիւքն ի հնումն անշուշտ տեղ մը եղած չէ։

ԱՍՏԱՊԱՏ կամ ԱՊՊԱՍԱՊԱՏ. — Երբեմն հռչակաւոր պիւզաքաղաք Միւնեաց Նախճաւան գաւառի մէջ, Երասխայ ձախակողմը։ Անուանս կը յիշէ նախ Թովմա Արծրունին՝ երբ Խրամ աւանին համար կ'ըսէ թէ կը գտնուի «ի ներքոյ Աստապատոյ վանացն», և Խաչիկ Ա. կաթողիկոսի կոնդակին մէջ 976 թուին։ կը յիշէ նաեւ Օրբէլեան պատմիչը գիւղ կոչելով, որուն մօտ ԺԲ գարու կիսաւեր, Միւնեաց Բարսեղ եպիսկոպոսը Յորիով եւ

որ յետոյ գտնալով իւր հայրենիքը, և հաւատաւորաց վանք մտնելով և ապաշխարելով վախճանած է։ — Աստապատ շատ անգամներ Պարսից ասպատակութեանց ենթակայ լինելով, երթալով անշքացած է և սակաւաբնակ գիւղ մը գարձած, այնպէս որ ԺԹ գարու առաջին քառորդի մէջ, Պարսից թագաժառանգ Ապպաս Միրզան, ռազմագիտական նպատակով այն միացած ժողովուրդն ալ ուրիշ տեղ փոխադրեց։ Այնուհետեւ հերոսացի ճարտարապետաց խորհրդով, մասամբ մը ամայի շէնքերը քակելով, շինեց Աստապատի տեղը մեծ ամրոց մը, քառակուսի, ընդարձակ պարիսպներով և խրամով։ Այս ամրոցի մէջ գրաւ զօրքեր և զէնքեր և դի-



139. Աստապատ, Ապպաս Միրզայի բերդը։


րասխ գետը խնկնալով և խեղդուելով, հանեցին և տարին թաղեցին Մաղարդայ վանքը։ Ի վերջոյ աւելի բարգաւաճելով և բազմամարդ գտնալով կոչուեր է գիւղաքաղաք։ ԺԴ գարու վերջերը Միաբանոցաց հակառակորդ Մաղաքիա Ղրիմեցին՝ հոս գրոց հաստատեց Սարգիս վարդապետի տեսչութեան տակ, ասկէց էր նոյն ժամանակները Տաթեւացւոյն աշակերտ Աշետիս վարդապետը։

ԺԵ գարու սկիզբը Շահ Աբաս գերի տարաւ Աստապատու բնակիչներն ի Պարսս, և ըստ պատմելոյ Զաքարիա պատմչի (Ա. Ի), իրեն իրրեւ հարճ առաւ Կիւլէլ (Գեղեցիկ) անուամբ Աստապատցի հայազգի կին մը,

նուորական ամենայն ռազմամթերք և 20 թնդանօթներ։ Թագաժառանգի անուամբ ամրոցը կոչուեցաւ Ապպասապատ. բայց քիչ օգտակար կրցաւ ըլլալ, վասն զի փոխանակ հիմունքը մեծամեծ քարերով հաստատուն գնելու, վերին կողմերը ծանրացուցած էին խոշոր քարերով, որով և շուտով սկսաւ քակտիլ, և ապա վրայ հասաւ Ռուսաց պատերազմը, որը գրեթէ առանց աշխատութեան տիրեցին 1827ին։ Այժմ բոլորովին ամայի և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Ցիշատակաց արժանի է Աստապատու մեծահոգի եկեղեցին՝ շինուած նախնի բնակիչներէն, և ունի բազմաթիւ արձանագրութիւններ գրուած՝ ԺԵ–ԺԸ գարու սկիզբներու։ Եկե-

դեցիս կառուցուած է Ս. Վարդանայ Մա-
միկոնեան զօրավարի անուամբ և կոչմանցս
բնակիչք Աստապատ անուան առուգաբա-
նութեան համար կ'աւանդեն, թէ մեծին Վար-
դանը կ'առնուն և կը տանին կ'ամիրափեն
Մահուայ մէջ. և այն օրէն այս տեղս կո-
չուեցաւ Աստապատ՝ իբր ասա պատած։

Աստապատու Ս. Վարդան եկեղեցին բա-



140. Աստապատու Ս. Վարդան եկեղեցւոյն դուռը։


դանայ և ընկերայ նահատակութենէն վերջը,
անոնց մարմինները հոս կը բերեն, և գա-
նոնք թաղելու համար պատանած ժամանակ,
Մահուայ քնակչաց երեւելիներէն կու գան

ւական մեծ է և հաստատուած է չորս սիւ-
ներու վրայ. ունի բարձրաբերձ գմբէթ, մէկ
սեղան, երկու աւանդատուն և ընդարձակ
գաւիթ։ Տաճարս վերանորոգած են ժէ դա-

րու մէջ, 1655ին ումն Խօջայ Սաֆար, ըստ արձանագրին, իւր հաշոյ ընչիւք կառուցանել տուած է հրաշագան յօրինմամբ Ս. Վարդանայ մեծ գուռը, որուն ճակատը, ինչպէս կը տես- նուի պատկերի մէջ, զարդարուած է այլ և այլ ճարտարարուեստ քանդակներով։ Դրան վրայ կայ Տիրամօր քանդակապատկերը, մանուկ Քիստոսը գիրկը և գլխացը ծնրադիր մէկը, թերեւս եկեղեցւոյս շինողը. կան նաեւ հրեշ- տակներ որոնք թագեր բռնած են Տիրուհւոյ և ծնրադիր անձի մը գլխոց վրայ։ Ա.յս քան- դակապատկերի վերը և երկու կողմերը կը տեսնուին զարդարուն խաչարձաններ՝ որոց արձանագրութիւնք, մասամբ անընթեռնլի են։ Դրան կամարի երկու կողմերն եւս կան արձանագրութիւնք և խաչարձաններ։ Եկե- ղեցւոյ աւագանն սեաւ կճէ է, և ունի ՌՃՀ (= 1681) թուականաւ նուիրատուաց արձանագրութիւն։ Գաւթի սիւներէն միոյն վրայ գրուած է ՌՃՄԲ (= 1703) թուին եկեղեցւոյս վերակացու Մարտիրոս վարդա- պետի յիշատակագիրը, որ կ'երեւի թէ շատ աշխատութեամբ աւարտած է գաւթի շինու- թիւնը կամ նորոգութիւնը։ Ս. Վարդանայ եկեղեցւոյն կից և անկից կը մտցուի ուրիշ փոքր, սագաշէն և կարմիր ագիւռներով ե- կեղեցի մը Ս. Պետրոս և Պօղոս առաքելոց նուիրուած։ Ապագաս Մխիթար Թագաժառանգի օրով, վերոյիշեալ գեղեցկաշէն Ս. Վարդա- նայ եկեղեցին ամրոցի մէջ մնաց, և ամ- բարանոց դարձաւ։

Ա.ստապատու գեղեցիկ դիրքն և նախ- ճաւանի աւելի մերձ լինելն, շատ նպաստա- ւոր էին իրեն բարգաւաճանաց. ասոր կը վկայէ նաեւ Թաւեռնիէ՝ որ ԺԷ դարու կի- սուն երկու օր հոն մնաց, և կ'անուանէ քաղաք փոքր բայց շատ գեղեցիկ, որոյ իւրա- քանչիւր տուն ունէր աղբիւրներ և մէջը կային 4 կարաւանատուներ։ Մահմետականք յաւելի և այգեւէտ կը նկարագրէ նոյն ուղեւորը, ուր և գտած էր Ռոնաս, Ronas, կոչուած կարմրանեղկ արմատ։ Թաւեռնիէ, Ա. 47։ — Վանահայրութեամբ հետու աշխարհներ գացող Ա.ստապատցիներէն յիշենք Խօճայ Յովհաննէս ումն որդի Մահակայ, որ վեհե- ռեալ լինելով 1666ին, Ս. Խաչի եկեղեցւոյ նորոգութեան համար ընծայեր է երկու սիւն։ Ա.սոր ժամանակակից կը յիշուին Բարսեղ, Թորոս և Ա.ռաքել վանահայրներ, որոնք արծաթի անօթներ և սպասներ նուէր տուած են Ա.նկիւրիոյ Ս. Ա.տուածածնի վանաց. զորս նոյն վանաց յիշատակագիրն Ա.զատ- պատեցի կ'անուանէ։ — Ա.ստապատու ազ- գայնոց արուեստից և այլ յատկութեանց վրայ տեղեկութիւն չեն տար մեր մատենա- գիրք, և գիւղաքաղաքէն աւելի կը հռչակեն անոր վանքը, որ կը կոչուի Ա.ստապատայ վանք և գրեթէ 2 մղոն հեռու կը գտնուի հարաւային արեւելեան կողմը, Երասխայ արեւելեան եզերքը բարուա լերան մը տա- րածին վրայ՝ որ գետին երեսէն բարձր է մօտ 60 մետր։ Կը կոչուի նաեւ Քարատակի վանք և շէնքին կարմրագոյն բարանց պատ- ճառաւ Կարմիր վանք։ Եկեղեցին կառու- ցուած է պարսպաց մէջտեղը բարձր գրիւք, չափաւոր մեծութեամբ, հիմերը քարով և որմերը թրծեալ աղիւսով շինուած։ Հաս- տատուած է երկու սեանց վրայ. ունի մէկ սեղան, երկու աւանդատուն, մէկ գուռ ա- րեւմտակողմէ, քարաշէն գաւիթ երկու սեանց վրայ, և փոքրիկ գանգակատուն մը. իսկ եկեղեցւոյն կաթողիկէն բարձրացած է տա- ճանց մէջտեղէն։ Յայտնի է թէ վանացս կամ եկեղեցւոյս առաջին շինութեան ժամանակն շատ հին է, ըստ ոմանց Զ՟ դարու մէջ կատուցուած. խաչիկ Ա՛ կաթողիկի մէջ կը յիշուի 976ին, և նոյն թուականաւ խաչվէմ մի եւս կը գտնուի ապուցուած տաճարի գրան աջ կողմը։ Կան նաեւ 1277, 1471, 1477 և 1481 թուականներ, որոց ոմանք ունին համառօտ արձանագրութիւնք։ Վանացս տա- ճարի և գաւթի մէջ կան քանի մը վարդա- պետաց՝ թերեւս և առաջնորդաց վանացս՝ գամբաններ, մարմարիոնէ քարերով և արձա- նագրութիւններով։ Գամբաններէն մին՝ որ ունի 1673 թուականաւ արձանագրութիւն, կը վերաբերի Յակոբ վարդապետի, որ ու- սումնակից էր պատմիչ Զաքարիա վարդա- պետին, և նորոգած ու պայծառացուցած է վանքս շինութիւններով։ Գաւթին մէջ՝ ա- րեւմտեան հարաւային անկիւնը կը գտնուի Յովսէփ արհիեպիսկոպոսի տապանն, որոյ կճեայ կափարչի վրայ կայ 1706 թուական նաեւ արձանագրութիւն։ Մայն Յովսէփ ար-

հիեպիսկոպոս, յիշատակագրի մը գրածի հա-
մեմատ, վանացս առաջնորդ եղած ժամա-
նակ, 1697 թուին սկսաւ նորոգել մեհտա-
սատս. « ... ի կողմն յարեւմտեան, կոթա-
ծոյ վիմօք, ներքնատնօք և վերնատնօք զար-
դարեալ կամարակապ »։ Վանացս արտաքին
պարիսպը կառուցուած է կարմիր կոփածոյ
քարերով, բաւական բարձր՝ մեհտաւանդ հիւ-
սիսային կողմանը, ուր ունի ցած դիրք
ունեմուտքն պատճառաւ։ Այս պարիսպը ունի
տեղ տեղ նոյնպէս քարաշէն բուրգեր, որոնք
գեղեցկութիւն և մեծավայելուչ կերպարանք
մը կ'ընծայեն ամբողջ վանքին։ Ունեցեր է
ժամանակաւ և ներքնապարիսպ մը, որ երկու,
արեւելեան և արեւմտեան մասանց կը բաժնէ
ամբողջ վանքը, բայց քայքայուած է այժմ,



141 • Վեմքարի մեհտաւանդ

և միայն կանգուն մնացած է անոր դրան
քարաշէն կամարը, որոյ ձէջտեղը դրան վերի
կողմը կայ խաչվէմ, և անթուական արձա-
նագրութիւն մը, պարիսպը նորոգողաց, որք
են Աստապատցի քահանայք և ժողովուրդք։
Վանացս արեւմտեան մասին ձէջ է եկեղե-

ցին, յորում նշանաւոր են քանի մը գեղեցիկ քանդակները և ի միջի այլոց՝ Յիսուսի մկրտութիւնն ներկայացնող խորաքանդակը։ Նոյն մասին մէջ են քարաշէն և կրկնայարկ բնակարանները, լաւ վիճակի մէջ։ Աբեւելեան մասի մէջ են վանացս միւս կարեւոր շէնքերը, գոմը և 60 ձիոց բաւական ախոռ մը։ Աբեւելեան հիւսիսային անկիւնը կը գրաւէ վանացս արտաքին կամարակապ, քարաշէն դուռը, որոյ վրայ կայ խաչվէմ և 1707 թուին արձանագրութիւն մը Յովաննէս վարպապետի, որ վերակացու եղած է պարսպի նորոգութեան կամ շինութեան։ Աստապատու բերդի շինութեան համար Ապաս Միրզան քակել տուաւ նաեւ այս պարսպի մէկ մասը, ինչպէս նաեւ կուսան կանանց մենաստանի եկեղեցին, որ կ'ինկնար Աստապատու և Կարմիր վանաց մէջտեղ։ Աստապատու այս երկրորդ մենաստանն կը կոչուէր Ս. Յովհաննէս, որոյ այժմ միայն ախուր աւերակներն կը տեսնուին։

Կարմիր վանքի առաջնորդ Նիկողայոս վարպապետը 1831ին նորոգել տուաւ եկեղեցւոյն արտաքին հիմերը, որք ուրիշ շէնքերու հետ բաւական վնասուեցան 1840ին երկրաշարժէն։ Այժմ տակաւին շէն է վանքս, և է ընդ տեսչութեամբ Նախճաւանու հոգեւոր կառավարութեան։ — Յատուկ աշխարհահամարի մէջ նշանակուած է Կարմիր վանք անուամբ հայաբնակ գիւղ մը, որ ծուխ թէ կը գտնուի վանացս մօտ. ունի 17 տուն՝ իբր 80 բնակչօք։ — Աբրահամ կաթողիկոսը 1736ին այցելելով Աստապատ, կ'ողբայ ու կը հառաչէ տեսնելով տեղւոյն դրից վայելչութիւնն և ամայանալն. նոյն ժամանակ. կիրակի օր մը պատարագի սուրբ խորհուրդն կատարելով, կը ձեռնադրէ երեք եպիսկոպոսներ։ Որչափ և ախուր է Աստապատ՝ իւր ամայի շէնքերով, սակայն զուարթ են տակաւին իւր սահմանքն և զարդարուած են բազմաթիւ մրգաբեր ծառերով, յորս հոչակուած են խնձորն արքունական (պրսկ. սիպի առչրանի), դեղձը, տանձն, ծիրանն, և այլն։ Կարմիր վանքի սահմանները, լերան կողեբուն վրայ կը տեսնուին բրածոյ քարայրներ, որոնք համարուած են գանձուց և զրոց պահարաններ։ — Շահխաթունեանց, Ստորագր. Բ. 297–304։ Սիսական, 507–514։

ԱՍՏԱՐԱ. — Գեղեցուր քաղաք Թալիշ (Քայաքարան) նահանգի, համանուն գետոյն վրայ։

ԱՍՏԵՂԱՆԻ Տես ԱՍՏԱՓԱՆԵ։

ԱՍՏԵՂՕՆՔ կամ ԱՍՏԵՂՈՒՆՔ. Տես ԱՍՏՂԱԲԵՐԴ։

ԱՍՏՂԱԲԵՐԴ, ԱՍՂՆԲԵՐԴ կամ ՄՈԿԱՑԲԵՐԴ. — Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելակողմը $1^1/_2$ ժամ հեռու լեռնակի մը վրայ կը տեսնուին երբեմն հոչակաւոր բերդիս աւերակներն։ Դիրքն հրաշալի, չորս կողմերն կան ահագին խոռոչէտ հովիտներ։ Ամրոցիս վիթխարի պարսպաց մեծագոյն մասն, ի բաց առեալ արեւմտեան կողմանը, տակաւին կանգուն է։ Աւերակաց միջէն ոչ սակաւ Մշեցիներ փորելով գտած են հնութիւններ, և այնպէս հարուացած։ Կ'ըսուի թէ ամրոցս խիստ հին ժամանակներէն եղած է Զրուանայ բնակարան, զոր կառուցանել տուած է նորա Աստղիկ քոյրը։ Յովհան Մամիկոնեան կը յիշէ Աստղաբերդի եկեղեցին, կոչելով Մեծ կարուղիկ, որ կործանեցաւ Ապաւառահիմի արշաւանաց ժամանակ։ Նոյն պատմիչը գտնադան ձևերով կը գրէ այս պատմական բերդի անունն, ինչպէս Աստեղոնիք, Աստեղօնք, Աստղօնք։


ԱՍՏՂԱԲԵՐԴ կամ ԱՍՏՂԲԵՐԴ. — Գիւղ Զարբոյր Հայոց, այժմեան վերին Կեղի գաւառակի մէջ, լերան մը սոորոտը։ Բնակիչք գրեթէ 300 տուն կէսը Հայք։ Բերքերէն անուանի է ընտիր և առատ ընկուզը։ Գիւղիս մօտ է Ս. Գէորգ անուն մենաստան մը որ ունի յորպառատ և բաբեհամ ապրիւր։ Իսկ այս մենաստանէն ալ քառորդ մը հեռու է Ս. Կիրակոսի վանքը, անառագարդ, չքարերի և պզտիկ տեղւոյ մը մէջ, որոյ մօտ կայ Լուռաղբիւր։ Գիւղիս դիմացը Օրօր գետէն անդին կը տեսնուի հին քարաշէն և քայքայած բերդ մը, որ ըստ պատմելոյ բնակիչաց կը վերաբերի Աստղ անուն թագաւորի մը։ — Նոր Հայս. 108։

ԱՍՏՂԱԲԼՈՒՐ կամ ԱՍՏԵՂԲԼՈՒՐ. — Կը յիշուի այս անուամբ ղալար մը Արցախի Մեծկունեաց գաւառի մէջ։ Տես ԱԿԱՆԱ։

ԱՍՏԼԻԿ. — Գետ և լեռ Սեբաստիոյ, այսպէս կոչուած է ի Հայոց Թարգմանելով Թուրքերէն Եըլտըզ տաղի և Եըլտըզ առ անուններէն։ Գետս կը բղխի նոյնանուն լեռնէն և Գաւառ գիւղէն անցնելով կը կոչուի Գաւառչըչար. իսկ Սեբաստիոյ միջէն անցնելով կը կոչուի Մուրատառ առ, որովհետև քաղաքին բոլոր ազատութիւնք իր միջ կ'առնու, և կ'երթայ կը թափի Գալը բրմագի մէջ։ Գետս իւր ընթացից մէջ զեռ Սեբաստիա չհասած կը զարձրնէ ոչ սակաւ ջրադացներ։ — Աստղիկ լերան սոսրոտը հինաւուրց շէնքերու փլատակներ կան և կը կարծուի թէ երբեմն լայնատարած քաղաք մը եղած լինի նոյն տեղը։ Աւանդութեամբ կը պատմեն, թէ Հայոց Սենեքերիմ թագաւորի կրտսեր որդին Ասոմ՝ իւր եղբօրը յաջորդած ժամանակ, իմանալով անգութ Տուղրիլի արշաւանքը, բոլոր թագաւորական գանձերը և հայրապետական գլխանները ի միասին առնելով՝ սոյն լերան սոսրոտը կը պատսպարուի։

ԱՍՏԼՈՒՆՔ կամ ԱՍՏԼՕՆՔ. Տես ԱՍՏԼԱԲԵՐԴ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Հին գիւղ Այրարատ



142. Սպիտակաւոր Աստուածածնին = Կիւլ վանք։

տեղ, որ ներկայիս կը կոչուի Ալթընտաղ (Ոսկի լեռ), ուր Արտաշէս Ա. հաստատեց իւր մայրաքաղաքը, որ ետքը Արտաշատ կոչուեցաւ։ Ասոր մերձակայ Բասեն գաւառի մէջ. կը յիշէ Ասողիկ (Գ. ԽԴ) երբ կ'ըսէ. «Եւ եկեալ ի հանդիպումն միմեանց՝ Գուրգէն և մեծիսատոան ի մայրաքաղաքին լերին Մեծրաց, ի գիւղն որում սուրբ Աստուածածնին կոչի՝ անուամբ եկեղեցւոյն որ ի նմա»։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — փոքր և անշուք մենաստան Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, վանայ ծովակի արևմտեան ափանց վրայ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Գիւղ Միւնեաց Սոդք գաւառի. կը յիշուի Հարկատու գիւղօրէից ցանկի մէջ։


ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Աւերակ վանատեղի Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Ունի փոքրիկ համարակալ եկեղեցի մը, սակրքը կոթծանած և ներսը հարաւային որմին վրայ կան ԺԴ–ԺԴ դարուց վերաբերեալ արձանագրութիւնք։ Եկեղեցւոյս շուրջը կան գամբարներ և խաչարձանք՝ յորոց ոմանք ունին արձանագրութիւններ, մասամբ եղծուած։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. — Հին մենաստան Միւնեաց Վայոց ձոր գաւառի Գայլեձորոյ հովտին մէջ։ Կը կոչուի նաև Մարիամ Աստուածածին կամ Սպիտակաւոր Աստուածածին՝ եկեղեցւոյն սպիտակագոյն քարերուն համար (Թ. 142). իսկ այլազգիք կը կոչեն Կիւղ վանք, շուրջը խիտ առ խիտ բուսած վայրի վարդենիներուն համար։ Դիրքը գեղեցիկ է, շրջապատուած է բազմաթիւ պտղատու և վարդի ծառերով։ Հիւսիսային կողմը պարսպապատ է, միւս կողմերն կան 30ի չափ սենեակներ, ոմանք կամարակապ։ Եկեղեցին փոքր է, քառակուսի և բարձրաթումբեթ. ունի չորս գեղատգոյն քարէ սիւներ, վայելուչ քանդակուած պսակներով սեղանին վրայ, ինչպէս նաև գմբեթի չորս անկիւնները չորս աւետարանչաց քանդակապատկերները, բոլորն ալ անվնաս մնացած։ Վէմ քարի վրայ քանդակուած կայ ծերունի քահանայի մը պատկերը, ձեռքերը վեր բարձրացուցած։ Արեւմտեան դրան ճակատը սպիտակ քարի վրայ քանդակուած է Տիրամայրն՝ Քիսուս գիրկը։ Եկեղեցիս ունի նաև փոքր գաւիթ մը, որոյ առաստաղը բոլորովին խոնարհած է, և գեղեցկաշէն զանգակատուն մը։ Ցաճարի մէջ անարատ մնացած է նաև մկրտութեան աւազանն՝ գեղեցիկ զրուագներով զարդարուած շրջանակով։ Արտաքին հիւսիսային որմին վրայ կայ քանդակապատկեր մը, որ կը ներկայացնէ լայն զգեստով, մեծաշուք և գլուխը խայր զրած մարդ մը՝ ձեռքը ադեղ բռնած. կը կարծուի թէ Պօղոս իշխանն է. նոյն ձևով զարդարուն զգեստներով պատանի մ'ալ կայ մնոր, որոյ գլխոյն վրայ գրուած է Ա՛ՏԻՒ ՀԱՍԱՑ ՈՐԴԻ ՊԱՒԱՒԱՅ։ Եկեղեցւոյ արեւելեան որմոյն վրայ պատուցուած են խաչքարերնք. հարաւայնոյն վրայ կայ երկու խաչակիր ձեռաց քանդակ և ՉՉԳ (= 1334) թուականը, այդ քանդակներն տեղերնէն ինկած լինելով այժմ գրուած են եկեղեցւոյ մէջ։ Վանացս եկեղեցւոյ գուբսը և ներսը կան բաւական թուով արձանագրութիւնք ԺԴ–ԺԵ դարուց, որք են յիշատակագրութիւնք զանազան միաբանող և նուիրատու անձանց։ — Միսակաև, 137–139։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Ամայի և կիսակործան վանատեղի Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Յախտացքարի վանքէն քիչ հեռու արեւմտեան կողմը (Թ. 143)։ Եկեղեցին փոքր է (9 քայլ երկայն և 8 լայն) չորս սրմնափակ սեանց վրայ, հինգ սեղանով, ունի նաև ընդարձակ ժամատուն (20 քայլ երկ. 8 լայն) վեց սրմնափակ սեանց վրայ, որոյ տանիքը ինկած է։ Հարաւային կողմէն զոնով մը կը մտցուի ուրիշ ժամատուն կամ մատուռ մը (12 քայլ երկ. 5 քայլ լայն) նոյնպէս հաստատուած վեց սրմնեայր սեանց վրայ, ամբողջ կոփածոյ քարերով. մէջը կայ տապանն Ութանայ որ Թուի Խաչենոյ իշխանազունենէն մէկը, ՉՀԵ (= 1326) Թուի արձանագրութեամբ։ Վանացս պարսպի հարաւակողմը կայ ուրիշ եկեղեցի մ'ալ բաթգարկ և չորս սրմնափակ սեանց վրայ հաստատուած, որոյ կամարաձև առաստաղը խոնարհած է, մնաց կան բնակարանաց աւերակներ և գերեզմաններ։ Պարսպի դրան վրայի արձանագրութիւն մը կը յայտնէ, թէ Աստուածածնի վանքս նորոգուած է ՈՀԱ (= 1222) Թուին։ Վանքս ունի նաև ուրիշ արձանագրութիւններ, բայց ափսոս որ իւր հիմնարկութեան տարին չեն յայտներ։ Այժմ վանացս միաբաններու կիսականգուն սենեակց մէջ, մերձակայ Թուրքերը ոչխարներ կը պահեն. եկեղեցւոյ յատակն ալ կենդանեաց աղբով ծածկուած է, և միով բանիւ սրտաճմլիկ տեսարան մը կը ներկայացնէ այս վաղեմի աւերակներն։ — Միսակաև, 137–139։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Գիւղ Վասպուրականի, Վանայ հիւսիսակողմը, Լիմ կղզւոյն դիմացը։ Բնակիչք 50 տունէն աւելի են, և ունին գեղեցկաշէն հոյակապ կաթուղիկէով

եկեղեցի մը Ս. Աստուածածնի, որոյ ա-նուամբ կոչուած է գիւղն։ Վերափոխման տօնին բազմաթիւ ուխտաւորներ կը գիմեն ատ. ուր կը ցուցնեն Ս. Կուսի հողմթա-փը և գլխոյն ծածկոցը։ — Աստուածածնին անուամբ գեռ ուրիշ բազմաթիւ եկեղեցիներ և վանքեր կան մեր աշխարհի զանազան քարուկիր եկեղեցի մը, որ 500 տարուան շէնք կը համարուի։ Բնակիչք եկեղեցասէր չեն և պատճառ բերելով եկեղեցւոյ հնու-թիւնն կ'ըսեն. «ծերացած է այլ ևս չի լսեր մեր աղօթից ձայնը»։ Ցեղւոյս ժո-ղովուրդը եկեղեցի չերթալու ուրիշ նախ-նական պատճառ մ'ալ ունի, այն է թէ ի-



143. Ս. Աստուածածնի եկեղեցւոյ աւերակները։

կողմերը, ինչպէս ի Զէյթուն, յՕծոպ, ի Նշուա, և այլն։

ԱՍՏՈՒԱՆԱԶՈՐ. — Գիւղ Միւնեաց՝ կը կո-չուի նաև Աստազօր (Ցես)։

ԱՍՏՈՒԱՆԱՇԵՆ. — Հին գիւղ Վասպու-րականի, Վանայ հարաւային արևելակող-մը, Հայոց ձորի մէջ։ Ունի 80 տուն բնա-կիչ, յորոց 50էն աւելին Հայոց է և մեա-ցածը Քրդաց։ Հայք ունին Ս. Աստուա-

ծենք թերևս սերնդական շառաւիղ են այն հարց՝ որք երբեմն չաստուածներ կը շի-նէին գիւղիս մէջ, որոյ համար աւանդու-թիւնը կը պատմէ, թէ «Հայկ նահապետը գեռ այս կողմերը չեկած՝ գիւղս կառպաշտից ար-հեստարան էր. ատ կը շինէին զանազան չաստուածներ, որոց պատճառաւ Աստուա-ծաշէն կոչուեցաւ։» Երբ յիշեալ Նահապե-ը այս տեղ կու գայ կը կործանէ կոսց ար-

հետաքրքիրներն և արհեստաւորներն կը գործէնէ յԱստուածպաշտութիւն։ Գիւղս ունի ընդարձակ հին գերեզմանատուն, յորում կան զանազան ձևերով և գոյներով խաչքարինք։ Աստուածաշենէն քառորդ մը հեռու կը գտնուի կործանուած բերդ մը զոր կը կոչեն Վարդանայ բերդ, և կ'ըսեն, թէ քաղն Վարդան կառուցած է և ժամանակ մը մէջը բնակած։ — Նկարգր. Ոզնևորոբիւն, Ա. 145—147։

ԱՍՏՈՒԱՆԱՇԵՆ. — Բարձր լեռ Կիլիկիոյ կապան գաւառի մէջ։

ԱՍՏՈՒԱՆԸՆԿԱԼ կամ ԱՍՏՈՒԱՆԸՆԿԵԼ. — Հայարնակ գիւղ Աչրարատայ Ապարան վիճակի մէջ, 27 տուն բնակչօք։ Աչտպէս կոչուած է, սուրբ խաչի մասին համար, որ կը պահուէր հոս եկեղեցւոյ մէջ, որ կառուցուած է բարձր դիրքով, և որոյ մօտ կար նոյնանուն վանք մը։ Ցակաւին կանգուն է բաբաշէն եկեղեցին, փոքր, գմբեթաւոր և վայելչաշէն։ Աւանդաւոր հարաւային որմոյն վրայի արձանագրութիւնն կը յայտնէ եկեղեցւոյ շինողն՝ 1244թուին, որ է Քուբդ Իշխանաց իշխան որդի Մեծին Վաչէի։ Կ'ապացուցուի թէ եկեղեցւոյ շինութեան ժամանակ, սեղանոյն հիման մէջ ամփոփած են Ս. Ցակոբայ առաքելոյ մէկ կողը կամ աջը երգարան Թովմաս Վանանդեցւոյն հետևեալ տողերն ալ անշուշտ այս կ'ակնարկեն.

«Աստուածընկալ երկրպագեալ,
Ս. Ցակոբայ աջըն պատուեալ,...»

Եկեղեցւոյ կից կան փոքրիկ մատուռներ կամ խցիկներ, և դրան մը վրայ կայ 1207 թուականու արձանագրութիւն, յորմէ կը յայտնուի թէ վանքը նորոգուած է նոյն թուին. հետևապէս հիմնարկութիւնն ասկէ հին ժամանակաց մէջ եղած է։ Աչժմ հապիւ կը տեսնուին վանքի բնակարանաց հետքերը. կան նաև շիրիմներ և մեծամեծ խաչքարեր։ Աչրարատ, 254։

ԱՍՏՐԱԽԱՆ, ԱԺՏԻՐԽԱՆ կամ ՀԱՇՏԱՐԽԱՆ. Գ. ASTRAKHAN. Ռ. Астраканъ. — Գլխաւոր քաղաք Ռուսիոյ համանուն կուսակալութեան. վոլկա գետոյն բերնէն հեռու է գրեթէ 45 հազարամետր և կառուցուած է նոյն գետոյն ճիւղերէն ձևացած կղզւոյ մը վրայ։ Եթէ պատմութեան վրայ աչք դարձնենք, պիտի տեսնենք որ Աստրախանի նահանգը ենթակայ եղած է բազմազիմի անցքերու և պատմական մեծ դեր կատարած, ծառայելով իբրև դուռն և ճանապարհ Եւրոպա գաղթող նախկին ցեղերու։ Ոչ սակաւ արագ արագ իրարու յաջորդող վայրենի թափառականներ այս երկրի մէջ ատ ժամանակ մի բնակութիւն հաստատած են, և ապա կռիւ մղելով իրարու դէմ ակարն զօրաւորն տեղի տալով փախեր է։ Այդ



144. Աստրախանի Հայոց Ս. Աստուածածնի եկեղեցին։

թափառական ազգերէն ծանօթ են Ալանք, Ռոկսոլաններ, Ակացիրներ, Ավարացիք, և այլն։ Վայրենի ազգաց ժամանակամիջոցէն պատմական ատյգ տեղեկութիւնք կը պակսին, և արդէն մեր նպատակէն դուրս է զայնս քննելը։ ԻԳ. դարու մէջ քաղաքս Թաթար խաներու իշխանութեան ներքև մնալով, ըստ սմանց՝ այն միջոցէն Հաճի Թարխան իշխանի անուամբ՝ սկսեր է կոչուիլ Աչտէրխան։

Ռուսաց Իւան Ահեղ (Грозный) թագաւորը Ղազան քաղաքը նուաճելէ վերջ, 1554 թուէն սկսեց նաև Աստրախանի և բոլորովին ոչնչացուց Թաթար խաներու իշխանութիւնն։

Նոյն թագաւորը 1568 թուին հին Ասպահանէն 10 հազարամեայ հեռու հիմնեց այժմեան քաղաքը, որուն վիրքը գաշտային է, և մէջէն կ՚անցնին երկու ջրանցք, մին կը կոչուի Կոշտուռմ, իսկ միւսն Վարվացիւ-վեան ջրանցք, Վարվացիւվ յոյնի անուամբ, որ փորել տուած է 1805ին։ Կլիման բաւեհատն է, օդը և ջուրը ընդհանրապէս առողջարար։ Ռուսիոյ հարաւային քաղաքներէն մին լինելով, և ծովային ճանապարհով հաղորդակցութիւն ունենալով Պարսկաստանի հետ, վաճառականութիւնը բաւական ծաղկած վիճակի մէջ է։ Արտածութեան կողմանէ Ասպահան Վոլգայի 10 նաւահանգիստներէն առաջին տեղին կը գրաւէ, իսկ ներմուծութեան մէջ երրորդ։ Ազգային նաւահանգիստները կը գրկէ գլխաւորաբար ձուկ և քարիւղ. իսկ ի Պարսկաստան, բամբակեղէնք, կտաւներ, շաքար, մետաղեղէնք, և արուեստական զանազան նիւթեր։ Կ՚ընդունի Պարսկաստանէն, Բուխարայէն և Խիվայէն, բամբակ, պատուդներ, բրինձ, մետաքս, կաշի, բուրդ, և այլն։ Գրեթէ տարուան մէջ միջին հաշուով Ասպահանի նաւահանգիստը կը մտնեն 4000—4600 նաւ և նոյնչափ ևս կ՚ելնեն։ Արուեստական մասին մէջ քաղաքս այնչափ ծաղկած չէ, սակայն ունի գործարաններ մետաքսի, մեքենաներու, օճառի, մոմի, կաշիի, գարեջրոյ, և այլն։ Ըստ վերջին (1897 տր.) վիճակագրութեան, Ասպահանի բնակչաց թիւն կը հասնի 125000ի, մեծամասնութիւնն կը կազմեն Ռուսք, միւս ազգերն են Հայք, Թաթարք, Հրեայք, Պարսիկք, Գերմանացիք, և այլն։ Քաղաքս ունի զանազան դպրոցներ, նաւային վարժարան, մէկ զինուորական և երեք քաղաքական հիւանդանոցներ, յիմարանոց, ծերանոցներ, երկու որբանոց, հասարակաց գրատուն (14000 հատորներով), թատրոն, և այլն։

Եւրոպայի և Ասիոյ զանազան կողմերը ցրուած Հայերէն ամենէն հինները և նշանաւորները կը համարուին հին Ասպահանցիք, որք Անոյ վրայ եղած ութերորդ կամ վերջին արշաւանաց և աւերմանց ժամանակները 1239ին, Թաթարաց Ջամարղան զօրավարին ձեռքէն խոյս տալով ապաստանեցան քաղաքս, յորում գրեթէ 100 տարի բնակելէ վերջ, բազմութեամբ ոմք եկան և Թաթարաց հետ պատերազմելով, անցան Խրիմ և անկէց ալ կամաց կամաց Լեհաստան, Հունգարիա և այլ աշխարհներ։ Այժմեան Ասպահանցի Հայոց նախնիք Ազեցիներ չեն։ Վերոյիշեալ դէպքէն վերջը որոշ չի գիտցուիր, թէ քաղաքիս մէջ մշտաբնակ Հայեր կային. բայց յայտնի է որ ժէ. դարուն սկիզբները Պարսկաստանէն բաւական թուով Հայ վաճառականներ եկած են և հոն տեղաւորուած։ Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը, լաւ ըմբռնելով Հայոց ազգի վաճառականութեան և արուեստից ունեցած մտնաւոր յարմարութիւնն և հանճարն, նա ինքն հրաւիրեց զՀայս յԱսպահան, և մտնաւոր արտօնագիր ևս շնորհեց անոնց՝ որպէս զի իւր տէրութեան մէջ ծաղկեցնեն թէ՛ վաճառականութիւնն և թէ արուեստներն։ Տեղւոյս Հայերը արտօնագիր ընդունած են նաև ուրիշ կայսրներէ. բայց իրենց շնորհուած ազատութիւնները անփոփոխ չմնացին, մանաւանդ մէ իրենց կամաք՝ մասամբ մ՚ալ աէրութեան կողմանէ երբեմն աւելցան և երբեմն պակսեցան։ Քաղաքիս Հայք հետզհետէ բազմացած են զաղթելով զանազան կողմերէ, ինչպէս Պարսկաստանէն, Արցախէն, Կուրիէն, Ղազանէն, Տարօնէն և Աղուանից աշխարհէն։ Այժմ Ասպահանի Հայոց թիւն կը հասնի 6500 հոգւոյ։ Ունին չորս հոյակապ եկեղեցիներ, որք են Ս. Աստուածածին, Ս. Պետրոս Պօղոս, Ս. Կատարիճէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ. հինգերորդ եկեղեցի մ՚ալ ունին քաղաքէն դուրս Ս. Յակոբիւճ անուամբ՝ գերեզմանոցի մէջ։ Ս. Աստուածածին (թ. 144) է մայր եկեղեցին. կառուցած է չորս սիւներու վրայ, գմբեթայարկ և գեղեցկաշէն. ներքուստ զարդարուած ոսկեզօծ նկարներով և արծաթաշատ պատկերօք։ Իսկ զարդուց, զգեստուց և արծաթեղէն անօթոց և սպասուց կողմանէ ևս խիստ ճոխ է։ Ունի նաև վայելչաձև և գեղեցիկ զանգակատուն մը՝ շքեղ կաթուղիկէով։ Այս զանգակատան մէջ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանց 1850ին անխնամ ձգուած զատ և ցուցակագրեց այլ և այլ ձեռագիր և տպուած գրքեր, զորս հաւաքած

էր Ցուխէի արքեպիսկոպոս Աբգուխեանց՝ զանազան կողմերէ, որոց մէջ կար նաև Գրիգոր Նիւսացւոյ երգ երգոցի մեկնութիւնը գրուած Հայոց ՁԽԲ (= 893) թուին և բերուած հոս ի Սանահնէ։ Աստրախան կը կազմէ Ռուսաստանի Հայոց թեմերէն մին, հետևաբար ունի իր առաջնորդ թեմական եպիսկոպոսը կամ արքեպիսկոպոսը, զոր կ՚առաջարկէ Էջմիածնի կաթողիկոսը և կը հաստատէ Ռուսաց կայսրը առանձին հրովարտակով։ Ներկայ թեմական առաջնորդն է Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։ Մեծաշէն և փառաւոր առաջնորդարանը կառուցուած է մայր եկեղեցւոյ մօտ։ 1795 թուին Ցուխէի արքեպիսկոպոս Աբգուխեանց ատա հիմնած էր Աստրախանի միակ հայկական ապարանն, ուր ապրած են բոլ մեծի մասին եկեղեցական գրքեր և օրացոյց։ Ցաւալի է ըսելն որ այդ ապարանն շատ տարիներէ ի վեր անգործածութեան դատապարտուած է։ Ս. Պետրոս Պօղոս (թ. 145) եկեղեցին ևս յոյժ գեղեցիկ և հայկական շէնք է, գմբեթաւոր և երկու եռայարկ և սրածայր զանգակատամբք։ Այս եկեղեցիս ևս հարուստ է ծանրագին շուրջառներով և անօթներով, արծաթեայ սպասուարներով, խաչերով, Ջահերով, կանթեղներով, բուռվարներով, և այլ զարդուք։ Ջալալեանց գմայլած տաճարիս գեղեցկութեան և ճոխութեան վրայ կ՚ըսէ. «... Համեմատ նմին եկեղեցի չունին ամենևին Հայք ո՛չ ի Հայաստան և ո՛չ ի Ռուսաստան»։ Եկեղեցւոյս մէջ է Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի խաչէն վար առնելու և գերեզման դնելու պատկեր մը, որ յոյժ գեղեցիկ օրինակութիւն մ՚է հռչակապատ Խաչացի նկարչին Ռափայելի, որուն բուն օրինակն կը գտնուի Հռոմ։ Այս պատկերին համար կը պատմեն, թէ Ռուսաց Սուվարով զօրապետը Իտալիայէն բերելով նուիրած է կաթարինէ թագուհւոյն, և նա տուած է իրենց քաջ զօրավարին իշխան Գրիգոր Պոտէմկինի։ Իսկ Պոտէմկին իշխանն ալ Ցովհէի արքեպիսկոպոս Աբգուխեանցի, նա ալ ընծայած է եկեղեցւոյս։ Եկեղեցւոյս հիմն ձգած է Մինաս արքեպիսկոպոսը, և կաթուղիկէն վերսին շքեղազարդած և նորոգած է Ցովհէի արքեպիսկոպոսը, իսկ զարուս (ԺԹ) կիսուն թէ՛ ներքուստ և թէ արտաքուստ աւելի ճոխացուց և պայծառացուց Մեծ. Գրիգոր Դանիէեան Յարգսեանց։ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին ի հիմանց կառուցած է Մեծ. Դանիէլ Յարգսեան՝ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ մօտ, իրեն սեփական ծախքով, և արքունական գանձարանի մէջ յատուկ վրայ մպզուխ ևս վրած է, ուսկից տարեկան նուիրագրութեանց և ծախուց համար որոշեալ



145. Աստրախանի Հայոց Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին։

գումար մը կ՚առնուն։ Ս. Կաթարինէ եկեղեցին փոքր է և կ՚ինկնայ քաղաքին գլուխ հարաւակողմը, Մայր եկեղեցին կէս մղոն հեռի, հին գերեզմանատան մէջ։ Քաղաքիս սխտատեղին գտնած է, ուր կը գիմեն բազմութիւն ժողովրդոց, և աւելի Յարգիս անուն վարպետի մը հրաշագործ գերեզմանին։

Աստրախանի մէջ կանխաւ կային նաև կաթուղիկէ Հայեր, որոց թիւը թէև քիչ էր, սակայն լաւ գիրք ունէին։ Դեռ 1830ին ժամանակիները իրենց թիւը կը հասնէր մօտ 300ի, և ունէին կրկին եկեղեցիներ. մին՝ վերափոխման՝ գեղեցիկ և նորաշէն, երկու զանգակատամբք։ Եկեղեցւոյս մօտ

էր կրնայարկ վանատուն մը 8 սենեակներով, և ուրիշ մերձաւոր շէնքի մը առօրեայ կարիքի մէջ ալ կ'ուսանէին կամուրիկէ Հայոց մանկունք։ Միւս եկեղեցին կը գտնուէր քաղաքէն դուրս իրենց գերեզմանատան մէջ և կը կոչուէր յանուն Գաբրիէլի հրեշտապետի։ Այժմ ցաւ ի սիրտ պէտք ենք ըսել, թէ այդ հասարակութիւնն զուրկ մնալով խնամատուն և ազգասէր հովիւներէ, ժամանակի ընթացքից մէջ կորսնցնելով իրենց ազգային ինքնուրոյնութիւնը, ձուլուեր և միացեր է Ռուսաց հետ։ Ներկայապէս թէ և կան մի քանի ընտանիք, սակայն ազգատին և չնչին ապրուստով հազիւ կարող են ապրեցնել իրենց գոյութիւնը։

Ասթրախանի ազգայինք անտարբեր չեն եղած դէպի ուսումն և գիտութիւն։ 1806ին Հայազգի սիմ պարոն Աղապապեանց ամբութենէն թղթատպութիւն կը տանայ և իրեն սեփական ծախքով կը հիմնէ ազգային վարժարան մը Աղապապեան անուամբ, որ և մինչև ցայսօր կայ։ Այս վարժարանը անտեսակտնապէս բոլորովին ապահովուած լինելով՝ զուտ ազգային կրթութեամբ կը շարունակէ իր գոյութիւնը մինչև 1896 թուականը։ Այնուհետև կ'անցնի Ռուսաց կառավարութեան ձեռքը և կ'ընդունայ Լուսաւորութեան Նախարարութեան անմիջական հսկողութեան տակ. սակայն հայերէն լեզուի ուսումն՝ հիմնադրի ժառանգներու աշխատութեամբ բոլորովին չի վերցուիր։ Այժմ վարժարանս կը կոչուի «Ասթրախանի Հայոց գաւառական ուսումնարան». ունի հայ հասարակութենէն ընտրուած վեց անձինքներէ բազկացած հոգաբարձութիւն մը. ուսումնարանիս պետական կառավարիչները միշտ եղեր են հայ։ 1860ին առեներն Հայք ունէին նաև առանձին հոգևոր դպրանոց մը, որ քանի մը տարի բաց մնացած է։ Ունեցեր են նաև արական և իգական սեռի մի քանի դպրոցներ, որոնք կը կոչուէին «Հայոց եկեղեցական ծխական դպրոցներ»։ Այս դպրոցներէն մին՝ աղայոցը, կը գտնուի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւիթը և ուրիշ մը օրիորդաց՝ Ս. Կաթողիկէ կոյսի եկեղեցւոյ գաւիթը. 1896ին երբ բոլոր Հայոց դպրոցներն անցան կառավարութեան ձեռքը՝ վերոյիշեալ երկու դպրոցները փակուեցան։ Ուրիշ օրիորդական՝ երկդասեան դպրոց մ'ալ կայ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ մօտ, որ այժմ չորեքդասեան եղեր է և կը շարունակէ իր գոյութիւնը։ Հայք նոր կառուցած են Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ դիմաց, փառաւոր և հոյակապ քարուկիր շէնք մը, որ լինելու է ազգային դպրանոց. սակայն բացման ըղձալի թոյլտուութիւնն դեռ առացուած չէ կառավարութենէն։

Հայոց նիւթական գնահատական վիճակն ընդհանրապէս լաւ է. կը զբաղին գլխաւորապար արուեստներով, ունին մեծ և փոքր վաճառականներ և կրպակներ, առուտուրը յաջողակ է։ Մեծ վաճառականներ քիչ կան, հազիւ մէկ երկու անձինք, որք բազմաթիւ ռուս գրամատէրներու հանգոյն կը գրաւին ձկան առևտուրով։ Երբ Ռուսիոյ մէջ արուեստներն այնչափ ծաղկած չէին, Ասթրախանի Հայք խիստ յառաջացած էին ներկարարութեան արուեստին մէջ. մինչև անգամ քաղաքէս ի Մոսկուա հրաւիրուած են հայեր, այդ արուեստն Ռուսաց սովորեցնելու համար։ Այժմ Հայոց մէջ կան նաև շղթայաւ և առաջատանաւ ունեցող վաճառականներ։— Քաղաքիս ազգայինք ունին նաև յատուկ հոգաբարձութիւն մը հայ անտնկաց համար, որ ունի մօտ 150,000 րուբլի, և բաւական մեծ գումար մ'ալ պիտի աւելնայ դրացի Յովսէփ սարկաւագի կտակով որ մեռ Ռուսաց ձեռքն է։ Ասթրախանի Հայոց նիւթական վիճակն սրչափ որ լաւ է, ի հակառակին իրենց միջէն ազգային ինքնուրոյն կեանքը օր ըստ օրէ կը պակսի, շռայլ կեանք վարել սկսած են, թղթախաղը տարածուած է, պահակ նուագած և անոր հետեւանք փոխանակ բազմանալու կը նուազին։ Յանկալի է որ այժմեան Ասթրախանի հայ հասարակութիւնն, հետևելով իր նախնեաց բարի բարի սովորութիւններուն, ևս կենայ այդ վեհասակար և ազգակործան վիրքէն, աւելի ուժ և միութիւն տայ ազգային լուսաւորութեան, ուսմանց, արուեստից և գիտութեանց մէջ յառաջանալու գործին. որովք միայն կարող պիտի լինի ապագային ունենալու ընտիր յաջորդներ։

Քաղաքիս մէջ Ռուք ևս ունին արքեպիս-

կոպսական աթոռ. իրենց բազմաթիւ եկե-
ղեցիներէն գեղեցկագոյնն է մայր եկեղեցին,
յորում կը պահուին գանազան հնութիւններ,
այսինքն զգեստներ, սպասարկներ, թան-
կագին ակումբներով զարդարուած աւետա-
րաններ, և այլն։ Այս հնութիւնից հետ կը
պահուի նաև Ղուկաս կաթողիկոսի մէկ
կնդակը։ — Ասորեստան՝ ժամանակի շրջա-
նաց մէջ ունեցեր է գանազան անուանք պա-
տահարներ. ժամանակս՝ ԺԲ դարու երկրորդ
կիսուն, և վերջին անգամ 1887ին. հրդե-
ներ 1709ին, 1878ին և 1880ին. հնդկահա
(choléra) 1830ին, որով մեռան 3000 հո-
գիք. ողողմունք՝ ամենէն աւելի վնասարար
1861ին. երկրաշարժ՝ երկու զօրաւորագոյնքն
1660ին, և 1886ին աւելի թեթեւ։ —
Ձնկպրի. ի Լեհաստան, 390—403։ Ձնկպրի.
Ջալալեանցի, Բ. 438—444։ Եւ այլն։

ԱՍՐԱՆ կամ ԱՇՐԱՆ. — Այս անուամբ
վերին և ներքին կրկին հայարնակ գիւղեր
կան Աթոռպատականի Գարատաղ գաւառի
Քէվլեան վիճակի մէջ։ Մէն ունի 29 տուն
բնակիչ, միասն 12։

ԱՍՐԱՖ. — Գիւղ Տաւրուբերանի Ագիովիտ
(Արճէշ) գաւառի մէջ։ Բնակիչք 70 տուն
կը համարուին. ունին Ս. Աստուածածին
հայակապ եկեղեցի մը։ Անուանի են գիւղիս
այգիներն. առատաբեր լաւ վիճակի մէջ։

ԱՎԱՆԱՁԵՆ. — Հայարնակ գիւղ Ագուա-
նից կողման գաւառի մէջ, կառուցուած՝
գագաթ հոլմի մը հարաւահայեաց լանջի
վրայ։ Հոլմեան ճահիճներ ունենալով՝ ամ-
բան օդն վնասակար է և ջուրն լաւ չէ։
Բնակիչք 1060ը կ'անցնին. գաղթած են
Արցախի Գիշակ և Վարանդայ գաւառներէն,
խաչենի Թաշ—պուլաղ գիւղէն և Սիւնեաց
Զանգեզուր գաւառէն։ Գիւղիս հայակապ և-
կեղեցին կառուցուած է չորս սեանց վրայ
1752 թուին, նորոգուած է Ս. Աստուա-
ծածնի։ Եկեղեցւոյ արեւմտեան կողմը շինուած
է նաև փառաւոր ուսումնարան մը։ Գիւղիս
անուան առաւգարանութեան համար բնա-
կիչք կը պատմեն, թէ Ալանաշէն կոչուած
է իր հիմնադիր Ալան—Խզպաշիի անուամբ
որ իրեն ժողովրդովը եկած է այս տեղ Ար-
ցախի Շօշու գիւղէն։ — Ադոռանք, 194։

ԱՎԱՆՑ. Տես ԱՒԱՆՑ։

ԱՎԵՒՈՒ կամ ԱԻԵՒՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՇԻՆ. — Վանք Աղձնեաց Սալնոյ ձոր գաւառի մէջ, Բաղէշի արեւելեան կողմը, ½ ժամ հեռու։ Վանքս ունի բաւականին վարելա-
հողեր, և չափաւոր եկամուտ։ Մօտը կան թագէոս և Թոմմաս առաքելոց անուամբ գոյզ մ'աղբիւր, որք պրոպատիկէ մը զար-
ձած են ամէն տեսակ հիւանդութեանց։ Այս աղբիւրները կ'սկզբնաւորեն Ալեխու ջուր կո-
չուած վտակէն։ Մենաստանիս մօտ ապա-
տաժուռ լերան քարերու մէջ կը բուսնի աղբրաց արիւն ծաղիկը, զոր կը գործածեն գեղերու մէջ։ Ի հնումն այս կողմերը Ալեխ անուամբ գիւղ մը եղած պէտք է լինի։ Ասա է նաև Ալեխու ձոր։

ԱՎԸՐԴՆԻ. — Պաղաւէտ գիւղ Ջորբորդ Հայոց, այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ. բնակիչք խառն։

ԱՎԹՈՑ. — Ցիշուի Աղձնեաց Տատիկ գա-
ւառի մէջ։

ԱՎՇԷՆ. — Ծառազարդ գիւղ Բարձր Հայոց, այժմեան Կամախ գաւառակի մէջ։ Երբեմն բազմամարդ և շէն եղած է, իսկ այժմ՝ ինկած։

ԱՎՈՒՇ. Տես ԱՒԻՇ։

ԱՎՏԻԼԻԿ. — Գիւղ Ա. Լերդաստայ այժմեան Ալեքսանդրապոլի գաւառի մէջ, 120 տուն հայ բնակչօք։


ԱՎՏՈՒՒ. — Հայարնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ, Հացի գիւղի արև-
մտեան կողմը, կառուցուած՝ ձորի մը երկու լանջերու վրայ։ Երկիրն բերրի և պաղաւէտ, պատուական օդն, կլիման և ջուրն։ Եկե-
կեղին Ս. Աստուածածին, կամարակապ է, շինել տուած են Մարգիս բէկ և Ցարութիւն բէկ Ղազանց։ Բնակիչք 847 հոգի, բաժ-
նուած 125 տան։

ԱՎՐԻԱՐ կամ ԷՎՐԻԱ. — Լիս Ա. Լերդաս-
տայ Վանանդ (Կարս) գաւառի մէջ։

ԱՏԱ. — Հայարնակ գիւղ Աթոռպատա-
կանի, Ուրմիոյ գաւառի մէջ։ Բնակիչք հա-
գիւ 50 հոգի։

ԱՏԱԲԱԶԱՐ կամ ԱՏԱՊԱԶԱՐ. Գղ. ADA-
BAZAR. — Գլխաւոր քաղաք Իզմիտի Նահան-
գի համանուն գաւառի։ Նոր գիւղէն հեռու է 3 ժամ, և Նիկոմիդիայէն 8 ժամ. ըն-
դարձակ դաշտի մը վրայ գեղեցկագիր և

թեթնաշատ վայր մի է։ Ունի 25000 բնակիչ, որոց 12000ը Հայք, և մնացածը Մահմետականք և 1600 Հրեայք։ Լուսաւորչական Հայք 10700 են, և ունին չորս հոյակապ և փառաւոր եկեղեցիներ։ Առաջինն թաղի բաժնուած են, և ունին ամեն եկեղեցւոյ յատկացեալ արական և իգական սեռի դպրոցներ։ Հայք ընհանրապէս վաճառականութեամբ կ՚զբաղին, աշխատասէր են բայց ոչ այնչափ հարուստ. շերամապրծու-




146. Ծղոմպոյի վերնամաս տեսարան։

և հնագոյնը կը կոչուի Ս. Հրեշտակապետ, ապա մեծ է վայելուչ եկեղեցատունը. միւսներն կը կոչուին Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ և Ս. Աստիածնայ։ Այս չորս եկեղեցիներու համեմատ քաղաքիս Հայք չորս

թիւնը այսօրիկ շատ տարածուած է։ Բազմաքանի Հայք են 1300 հոգի, ունին ժողովատեղի մը և արական ու իգական սեռի մէկ մէկ դպրոց։ Քազաքիս Անուա = Կղզի կոչուելուն պատճառն այն է որ երկու կողմէ


շրջապատուած է գետերով, մին է Սպանճայի գետն և միւսն Սաբարիա։ Ատաբազար իր ջուրն կ'ընդունի վերոյիշեալ Սպանճայի գետէն, որոյ վրայ գրուած է մեծ գոյլակիր անիւ մը, որ ջուրը ամեհով կը լեցնէ ջրամբարներու մէջ, և ատոնցմէ կը խողովակներով մինչև քաղաքը գալով ապրիւրներու կը բաժնուի։ Քաղաքիս վաճառականութիւնն չափաւոր է, ունի մեծ վաճառանոց (պազար) մը, որ վերջին տարիներս նորոգ շինուեցաւ քարէ, որովհետև հինն մեծ հրդեհէ մը բոլորովին կործաներ էր։ Տարեկան վաճառականութեան նկատմամբ գումարն կը հասնի միջին հաշուով 14,000,000 ֆրանկաց։ Բիւզանդիոն 1897. թ. 170։



147. Յատակագիծ Ատալիոյ։

ԱՏԱ ԹԻՓԼ. — Քարաբլուր Միւնեաց, Գեղամայ ծովակի արեւելեան եզերքը. Այս կոչուած փոքրիկ թերակղզւոյն վրայ։

ԱՏԱԼԻԱ, ԱՏՏԱԼԻԱ կամ ՍԱՏԱԼԻԱ. Յն. Ἀττάλεια. — Գլխաւոր և հին քաղաք (թ. 146) Կիլիկիոյ համանուն գաւառի մէջ, Պամփիլիոյ ծովեզերքը, որ հայկական տիրապետութեան արեւմտեան ծայրագոյն սահմանն է, վասն զի Մեծին Լեռնի յարձակեան սուրբ մինչև այս կողմերը իրեն հպատակեցուց։ Կառուցուած է համանուն ծոցի մէջ 25 մետր բարձրութեամբ ժայռի մը վրայ, և ունի 25000 յոյն և թուրք բնակիչք և սակաւաթիւ հայեր։ Ակոսպէս կոչուած է իր հիմնադրին անուամբ՝ որ է Ատտալոս Բ Եղբայրասէրն, Քրիստոսէ առաջ ու կէս առաջ։ Հռովմայեցւոց ձեռքն անցնելով (132ին Ն. Ք.) Պամփիլիոյ մայրաքաղաք եղաւ։ Քրիստոնէութեան սկիզբները պատուեցաւ քարոզութեամբ Ս. Պօղոս և Բառնաբաս առաքելոց, և Ակերբս կայսեր առեն՝ միտրապօլիտական աթոռով։ Բիւզանդացւոց ձեռքէն անցաւ կարգաւ Սելճուկեանց, Իկոնիոնի Թուրքաց, Գարամանեանց, Օսմանեանց. 1471ին վենետկեցիք թէպէտեւ տիրեցին քաղաքիս, բայց փուխով ատիպուեցան տեղի տալու, առանց նաւահանգիստ միջնաբերդը։ Եթէ ոչ պատերազմաւ, զէթ վաճառականութեամբ, Ատալիա միմոյնեան օգտուեցան իբր նաւահանգստէն գետազան պատահական արեւելեան բերքերով, զոր կը կրէին յարեմտեան ԺԲ—ԺԵ դարուց մէջ։ Հիանալի է քաղաքիս դիրքն, պարսպապատ է, և նշանաւոր շէնքերն են մզկիթք, եկեղեցիք և հասարակաց վաճառանոցք։ Տակաւին կը տեսնուին հին շէնքերու գեղեցիկ քիւաքարդները, յորս ամենէն նշանաւորն է ի պատիւ Ադրիանոսի կանգնուած հոյակապ յոդիա-




148. Ատալիոյ պարսպաց վրայ փորագրեալ դամբեր։

կան կամարն։ Շրջակայ պարտէզները լի են նարնջի, լիմոնի, թուզի և խուրմի ծառերով և այգիներով։ Ա. հասարակ Ատալիոյ դաւառը բարեբեր է և ունի շատ տեսակ ծաղիկներ. առևտրական գլխաւոր նիւթերն են արմաւիք, բնձաւի, փայտ, բուրդ, բամբակ և ափիոն։ Տարուան մէջ քաղաքիս նաւահանգիստը կը հանդիպին միջին հաշուով 1100 օսմ. առագաստանաւ, և 180 շոգենաւ՝ որոց մեծ մասը Անգլիական և Գաւնական, և մնացածը՝ Օսմանեան։ 1895 տարուոյ օգոստոսին, քաղաքս ունեցաւ մեծ հրդեհ մը, որով այրեցան մօտ 400 տուն։ Ատալիայէն քիչ հեռու կը գտնուի հիանալի ջրվէժ մը, որ 100 մետրաչափ բարձրութենէ քա-

բաժայրից գազաթներէ դէպ ի ծով կը թա-
փի ահաւոր շառաչմամբ։ — Միտչաև, 302—
305։

ԱՏԱՆԱ. Կղ. ADANA. — Գլխաւոր և վա-
ճառաշահ քաղաք Համանուն կաւսակալու-
թեան, ընդարձակ և բարեբեր դաշտի մը
մէջ, Սարոս (Սէհուն) գետի ափանց վրայ։
Կիլիկիոյ գրեթէ կեդրոնն զանուելով, կը հա-
մարուի անոր նոր մայրաքաղաքը. շրջապա-
տուած է ոչ սակաւ գիւղերով և ամաններով։
Հին ատեն Ադանա անունն ծանօթ չէր, և
իր հիմնարկութեան նկատմամբ ալ որոշ
տեղեկութիւնք չկան։ Եթէ Ցունաց առաս-
պելներու հաւատանք, Երկինից և Երկրի որդի
Ադանան և Սարոս շիներ են քաղաքս, ո-
րոնք երկու զօրավարներ են եղեր, և որոնց
անուամբ կոչուեր է թէ՛ քաղաքը և թէ գետը։ Ուրիշներ ևս կ'ըսեն, թէ Ադան՝ փիւ-
նեկեցւոց լեզուով կը նշանակէ ուռենի, որով-




149. Հին դրամ Ադանայի։

հետև շատ ուռենիներ կ'աճէին Սարոսի ա-
փունքը։ Շրջերնիս հասած են քաղաքիս հին
դրամներէն, յորոց է նաև հետևեալ պղնձա-
դրամը (Թ. 149)։ — Ադանայի անգամ ի պատ-
մութեան կը ներկայանայ անունս Քսենո-
փոնի Նահանջ բիւրոյց դրքին մէջ. յետոյ
Միհրդատեան պատերազմաց ժամանակ, հա-
դիւ կէս դար առաջ քան զԴատականն Քրիս-
տոս. ուր Մեծն Պոմպէոս մաս մը ծովա-
յին հինից գերիներէն բնակեցուց, ատիպե-
լով երկիր մշակելու. անկէ վերջը հռովմէա-
կան քաղաքաց կարգը անցաւ, Թէպէտ և
ոչ առաջնակարգ։ Ամրութիւններէ զուրկ
ըլլալով քաղաքս՝ Իսաւրացւոց յարձակմա-
նէն աւերեցաւ. բայց յետոյ նորոգուեցաւ
Զ դարուն մէջ ի Յուստինիանոս կայսերէ։
Աւելորդ է կրկնել՝ թէ կիլիկիոյ միւս քա-
ղաքաց նման՝ Ադանա ևս զանազան ան-
գամ Աբաբացւոց և Բիւզանդացւոց պատե-
րազմաց և հարստահարութեանց ադէտքը
կրեց. բայց Բ. Թորոսի իշխանութեան ժա-
մանակ՝ Ադանա ծագկեալ և բազմամարդ
կ'աւանդուի։ Առաջին Թաչակրաց արշաւան-
քին առեն՝ վերջինքս յափշտակեցին զայն
Թուրքաց ձեռքէն. զոր յետոյ կրկին անգամ
առաւ Ցունաց ձեռքէն՝ Տանկրեա, և մի-
ացոյց Անտիոքայ իշխանութեան հետ, որ ի-
րեն բաժին էր ինկած։ Տանկրեահայ անա-
րի յաջորդաց ձեռքէն ազատեց ուրիշ շատ
տեղերու հետ նաև զԱդանա մեր Պարոն
Լեւոն. զոր երբ իր գերութեամբն կորընչ-
ացուց՝ կրկին անգամ յափշտակեցին զայն
իր որդին՝ Բ. Թորոս և թոռն Բ. Ռուբէն։

Ընդհանրապէս կ'երևի, որ Մեծն Լեւո-
նի և իւր յաջորդաց թագաւորութեան ժա-
մանակ՝ երկրորդական քաղաք կը համա-
րուէր Ադանա։ Եգիպտացւոց ձեռքով կի-
լիկիոյ առաջին աւերմանէն յետոյ՝ Ադանա
կը սկսի կամաց կամաց պատմութեան մէջ
նշանակութիւն առնել. վասն զի Հոն յա-
մին 1340, Պապին նուիրակին առջև հաս-
տատեցան Կիպրոսի թագաւորին Հէնրի-
կոս Բ և իւր եղբօր Ամմուրեայ գաշինքն.
գարձեալ Հոն յամին 1346 ժողովեցաւ վերջ-
ընթեր աշխարհաժողով սիսնհոգոսն, յորում
եկեղեցւոյ ուխտին հետ ի միասին բազմե-
ցան նաև աշխարհիկ հայ իշխանազունք. այս
պիսուածիս մէջ Ադանա կը կոչուի հոյա-
կապ և թագաւորական քաղաք, ինչպէս նաև
ժողովատեղին՝ տաճարն Ս. Մինասայ կը
գտնուէր ի թագաւորական պալատին։ Ե-
րիբաւ, Սսոյ և ուրիշ քաղաքաց աւերմանէն
յետոյ հոս ապաստանած կ'երևին մեր յե-
տին թագաւորքն, յորոց՝ Գ. Լեւոն անկա-
կած կեցեր էր, երբ յամին 1335 առպա-
տակեց իր վրայ Ալմալուն—պաշ Նայիսն Չալ-
պայ, որոյ ձեռքէն հազիւ կրցաւ ազատիլ
Լեւոն՝ փախչելով ի Մորևան բերդն։ Այս
յիշատակաւս կը լռեն նաև Ադանայի վէպքն՝
Հայկական թագաւորութեան մերձաւոր անկ-
ման հետ։

Բաց ի վերոյիշեալ Ս. Մինաս եկեղե-
ցիէն՝ կը յիշուին յԱդանա նաև եկեղեցիքն
Հաւերթ կամ Աննահաբեր Ս. Աստուածած-
ծին, Մօրօթոս, Ս. Յակոբոս։—Հայոց տէրու-
թեան անկման ժամանակ թուրք Բամազա-

նի ցեղը ինքնագլուխ տիրեց շինանիստ տե- ղեաց՝ Լհանի գերումինէն երեք տարի վեր- ջը (1378), և յաջորդաբար՝ կ՚իշխէր երկրի մեծ մասին։ 1467ին Շահսուր Ջիլղադարեան ամբումիւնները քանդեցին, բայց գաշնագրու- թեան համաձայն՝ շուտով գարձեալ Օսմա- նեանց տուին, որք նորէն Բամազանեան ցեղը պետ կարգեցին քաղաքիս վրայ։ Բա-




150. Ատանա գաղթի տեսարան։

Ատանայի տիրեց, բայց քիչ վերջը Օսման- ցիներէն նուաճուեցաւ, և իրենց հպատակ քաղաքներէն մին դարձաւ։ Ժե դարու վեր- ջերը եգիպտացիք Ատանայի տիրելով՝ անոր մազանեանք ինքնագլուխ տիրապետութեան ձգտելով Օսմանցիներէն բոլորովին նուաճուե- ցան 1575ին. Թէպէտև նոցա տերունդներն վերջին ժամանակաց մէջ ևս ապստամբե-

ցան, որք այժմ ևս յայտնի են Բաւազան-Օղլու կամն Պէնի Բաւազան անուամբ։ Ատանան բացի Բաւազանեաններէն, յաճախ տակին ու վրայ եղեր է նաև ուրիշ ժողովուրդներ ցեղերու բնաւոր պահելէ, յորոց յիշեմք Թաւիլ անուն ոմն, որ 1606ին Սիսն և Մսիսը պաշարելէ վերջ, կը յարձակի քաղաքիս վրայ և կը կողոպտէ։

Ժէ. դարու երրորդ քառորդի մէջ կը յիշուին քաղաքիս պլխաւոր տանուտէրները՝ Խաչատուր Մալապուլանենց, Սարգիս, Մանուէլ, Եռուռֆ, և այլք։ 1836 թուին դեռ կանգուն էր Ատանայի հին, բիւզանդական ճարտարապետութեամբ շինուած աշտարակաձեւ ամրոցը, որ կ'ինկնար արեւմտեան



151. Ատանա և Սարոս գետը։

շինք Թաւիլ անուն ոմն, որ 1606ին Սիսն և Մսիսը պաշարելէ վերջ, կը յարձակի քաղաքիս վրայ և կը կողոպտէ։

Ժէ. դարու երրորդ քառորդի մէջ կը յիշուին քաղաքիս պլխաւոր տանուտէրները՝ Խաչատուր Մալապուլանենց, Սարգիս, Մանուէլ, Եռուռֆ, և այլք։ 1836 թուին դեռ կանգուն էր Ատանայի հին, բիւզանդական ճարտարապետութեամբ շինուած աշտարակաձեւ ամրոցը, որ կ'ինկնար արեւմտեան կողմը, Սարոսի եզերքը բարձրացող կարծր ապառաժի վրայ։ Եպիսկոսի փոխարքայ Մհէժէա-Ալէն, նոյն տարին երբ պատերազմ ծագեցաւ իւր և Մահմուտ Քէ մէջ, քանդել տուաւ այս ամրոցը, որ 300 քայլ շրջա-


պատ ունէր։ Մինչև անցեալ պարս վերջերը, քաղաքիս մէջ գեռ կը տեսնուէին հին հռովմէական մեծ ջրմուղի հետքեր, որք այժմ բոլորովին անհետացած են։ Ատանան 1844 թուէն սկսեալ բոլորովին Օսմանեան երկիր մը դարձած է, յորում կը նայի Բ. Դրան նշանակած կուսակալն։

Այժմ Ատանայի հնագոյն յիշատակարանն է Սարոսի վրայ ձգուած հոյակապ կամուրջն՝ որ 22 աչք ունի և երկայնութիւնն է 400 կանգուն, և սկզբանէ մինչև այժմ շատ անգամներ նորոգուած է այս կամուրջը։ Ճիշտ շատակութեան արժանի է նաև Ույուձ–ձամի, որ ժամանակաւ յունական հին եկեղեցի մի լինելով, Բամազան–Օղլուի ձեռքով դարձեր է մզկիթ. գուրը և մինարէն զարդարուած են ևս ուսպիտակ ութանկիւնի մարմարիոն քարերով. գեղեցիկ են պատուհանաց քանդակազարդ երկաթի վանդակները (թ. 152)։ Ատանա իր կեդրոնական դիրքովը և այլ հանգամանքներով՝ մեծ ապագայի յոյսեր կը խոստանայ։ Մերսինի նաւահանգստի հետ կապուած է քաղաքս երկաթուղիով, որ օձապտոյտ սրընթացութեամբ կ'անցնի Տաւրոսի Լեռնաշղթայից սաստրակէն և որ մեծապէս նպաստած է վաճառականութեան։ Բնակչաց թիւն է 45000 (հաշուած նաև պանդուխտները)։ Հայերն են մօտ 13000, բաժնուած են երեք պատանութեանց. Մահմէտականք են 13,000. մնացած ազգերը բազմութեան կազմած են, Յոյնք, Պարսիկք, և այլն։ Պանդուխտ կամ բանուոր բնակած ներսէն թիւն է 12–15000, որոնք ամէն տարի երկու երեք ամիս կը կենան տան՝ բամբակ կշռելու և խոտակելու համար։

Այս տեղ ամառը թէև շատ տաք կ'ընէ, սակայն օդը վատառողջ չէ. Սարոսի ջուրը շատ աքանչելի և առողջարար է, որ կը բղխէ Տաւրոսի մեռուա կողերէն։ Ատանա ունի նարնջի և ուրիշ պտղատու ծառերու բնդարձակ պարտէզներ, ողկուզաւէտ այգեստաններ որոնք թատեթուփ անտառի մը նմանին կու տան երեն։ Քաղաքիս մէկ քանի փողոցները թէև լայն են, բայց չինուած լինելով պարզ աղիւսէ, և գիշերային անկոչ հիւրերու երկիւղէն՝ կոմիսակի ի պատուհաններ չտնեցնալով, խիստ տխուր երեսյթ մը ունին։ Տներէն շատերը կրկնայարկ են. նշանաւոր շէնքեր կրնան համարուիլ, կառավարութեան պալատն գետի ալ կողմը, բնգհսպահնն, շուկան և այլ մի քանի բազաքական վարչութեան վերաբերեալ պաշտօնարաններն։ Հասարակաց շէնքերէն են նաև քանի մը մեծ բազնիքներ, 1 յիմարանոց, 29 խան, 2 հիւրանոց, 1 թատրոն. կնջուխի ձիմահաններ, մահուդի մեծ գործարան մի՝ զինուորական զգեստեղէններու համար, թպիլքի գործարաններ և ներկարաններ, 7 բամբակի գործարաններ՝ 5 շոգեշարժ մեքենաներով՝ բամբակն խտացկելու համար, 55 ջրաղացներ, 2 կղմինարի եւրոպական գործարան, 10 օղի քաշելու գործարան, 1 կաշիի, 5 գարեջրոյ և 1 կերպասի գործարաններ։ Տեղական արհեստները մեծաւ մասամբ Հայոց ձեռքն է, ինչպէս նաև վաճառականութիւնն. Հայք կ'գրաղին նաև երկրագործութեամբ, որուն համար մանաւանդ գործիքներ բերել տուած են Եւրոպայէն։ Քաղաքիս մէջ կը շինեն գանազան արծաթեղէն զարդարանքներ, անձեռոցներ, թաշկինակներ, կարպետ, կաշի, պարկ, քուրձ, տեսակ մը հասա կտաւ՝ տպած, խեցեղէն անօթներ, և այլն։ Ատանայի Լուսաւորչական Հայք՝ բաղդատմամբ միւս երկու հայ հասարակութեանց ամենէն բազմաթիւ են, և ունին ի հնուց ի վեր հաստատուած երկու եկեղեցիներ՝ Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս, որք ժամանակի ընթացից մէջ նորոգուած են։ Ունին երկու վարժարան Աբգարեան և Աշխէնեան, ինչպէս նաև Աբաժեան կոչուած տարրական ուսումնարան մը։ Այս վարժարանները կը յաճախեն 1200ի մօտ երկսեռ աշակերտներ։ Ի հնուց քաղաքս ունեցեր է հայ եպիսկոպոսական աթոռ, սակայն բաւական տարի է որ այս վիճակն տաջնորդի գործ ընելով, տեղապահով մը կը կառավարուի։ — Կաթուղիկոսական Հայք այժմ են 170 ընտանիք, և ունին իրենց եկեղեցին որ հնացած լինելով, ձեռնարկած են կատուցանելու ուրիշ մը, որ նուիրուած է Աստուածածնի Վեղարեան Ս. Կուսի։ Կաթուղիկոսական Հայոց եպիսկոպոսն Գեր. Պօղոս Թէրզեան կը նայի տաս, և ամենայն եռանդնամբ կ'աշխատի ի բարգաւաճանս իր հօտին, հաստատելով թեմին գանազան կազմերը

պարոցներ, որ և միջոցներ հայհոյուած է քաղաքիս մէջ արուեստից վարժարան մը և ապագրատուն մը բանալու։ — Բողոքական Հայոց Թիւն ունի նուազ է. ունին ժողովարան մը, և ազայոց և աղջկանց քանի մը վարժարաններ։—Ցոյնք ևս ունին եկեղեցի մը և ուսումնարաններ։ Մահմէտականք ունին 18 մզկիթ և 8 թէքէ (վանք), և պարոցներ։ Ունին նաև վարժարան Գաղղիացի Ֆիսուեան կրօնաւորաց, ուր կը յաճախեն 400 աշակերտք։

Ատանայի Հայք մեծաւ մասամբ Թրքախօս են, բայց հայերէնի գործածութիւնն որ



152. Երկաթի վանդակ պատուհանի Ուրւ–ճառի մզկիթին։

պագրած էր 300 տարիներէ ի վեր, այժմ չնորհիւ պարոցներու սկսեր է ընդհանրանալ։ Շատ հիւրասէր են և զուարճասէր, կրօնասիրութեան և ջերմեռանդութեան մասին ալ ոչ նուազ նախանձախնդիր են, նոյնը կրնանք ըսել նաև կրթութեան և գաղափարակութեան համար։ Քաղաքիս մերձակայ հայարնակ գիւղերն են, Շէյխմուհրատ արեւելեան հարաւակողմը 40 տուն բնակչօք. Ապտօղլու դէպ ի հարաւակողմը 50 տուներ. Կեաւուր քէօյ կամ Հայ գիւղ, Տարսոն վերին ափանց մօտ 20 էն աւելի տուներով. Գօզ–օլուք 20 տուներ, և այլն։ Ատանայի հիւսիս–արեւելեան կողմը գտնուող լեռնաշղթայից վրայ վերջերս կատարուած պեղումներով գտնուած են կապարի, պղնձի և արծաթի հանքեր։

Ատանայի կուսակալութեան տարածութիւնն կը համարուի 52,432,000 տեօնիւմ կամ 40,000 քառակուսի հազարամեայ. իսկ բնակիչք 403,403 հոգի։ Վաճառականութիւնն բաւական զարգացած է այս նահանգի մէջ. արտածութեան գլխաւոր ապրանքներն են, ցորեն, գարի, վարսակ, շինութեան փայտ, բամբակ, մեղրամոմ, բամբակի հատ, ոսկեհատ, կանեփի հատ, քնջութ, խաշխաշ, գազի խէժ, բուրդ, կորեկ, ոսպ, ափիոն, չամիչ, ազած միս, ճարպ, զորգեր, մետաքսի բժժած, կենդանիներ, չոր մրգեր, և այլն։ Այս նիւթերն կ'արտածուին գլխաւորապար Մերսինի և մի քանի երկրորդական նաւահանգիստներէ։ Այս ապրանքներէն ամենէն աւելի կը ներմուծուին Գաղղիա, ապա Տանկաստան, Աւստրիա, Իտալիա, Անգղիա, Սպանիա, Եգիպտոս, Ռուսաստան, Ցունաստան, և այլ զանազան երկիրներ։ Վ. Քիւնէի նշանակած թիւերու համեմատ 1890 թուականին Ատանայի նահանգէն արտածուած է 24,150,000 ֆրանկաց ապրանք։ Իսկ նոյն տարին ներմուծուած է 8,528,000 ֆրանկաց ապրանք՝ հետեւեալ աշխարհներէն. Անգղիա, Ամերիկա, Աւստրիա, Գաղղիա, Գերմանիա, Իտալիա, Ցունաստան, Ռուսաստան Տանկաստան, և այլն։ Ներմուծուած ապրանքներն են, բմպելիքներ, սուրճ, համեմունք, ապագի, կապարի, պղպեղաի և պղնձի բանուածքներ, պաստառներ և գլխաշեղէններ, մեքենաներ, գործիքներ, պատրաստած կաշի, նաւթ, թղթեղէն, լուցկի, այծի մազ, ապակեղէնք, բրինձ, շաքար, ոճառ, ծխախոտ, և այլ զանազան նիւթեր։ — Ատանա քաղաքի ալեւելեան կողմը՝ Սարոսի գետացի ափունքը, կայ ընդարձակ ծառաստան ուր կը թափանին վայրի անասուններ և թիւրքմէններու հօտեր։ Անուանի է քաղաքիս և Տարսոնի մէջտեղ տարածուած Ատանայի բերրի և ծաղկազարդ դաշտի այն մասն, որ այժմ Ադաչայիր կը կոչուի, որոյ վրայ 1488ին կատարուեցաւ Օսմանեանց և Եգիպտացւոց պատերազմն, որ վերջիններուս յաղթութեամբ վերջացաւ։ Մեզ համար աւելի նշանակութիւն ունի Ատանայի և Մսիսի մէջտեղ

ինկած գաշտը, որ վկայ եղաւ հայ իշխանաց նեբքին պատերազմին Թագաւորական տոհմի հետ։ Մեծին Լևոնի մահէն վերջ՝ 1220 թուին՝ քանի մը հայ մեծամեծներ ապստամբելով Թագաւորական ցեղի դէմ, 5000 զօրքով վրայ յարձակեցաւ և սոսկաց փախչելու մինչև Տարսոն։ — Միսուռաւ, 256–262։ Կիլիկիա, 95–109։ Եւ այլն։

ԱՏԱՊԱԶԻ. — *Գիւղ Տարսուսեցւոյ Բզնունեաց գաւառի մէջ, վանայ ծովակի արեւմտեան ափանց վրայ։*

ԱՏԵԱՄԱՆ կամ ԱՏԻԱՄԱՆ. — *Գիւղ Ակնբարատայ Արագածոտն գաւառի մէջ, Թալնայ վիճակի հիւսիսային սահմանագլուխը։ Ունի 533 հայ բնակիչ, բաժնուած 50 տան։ Թէև գիւղիս հին հայկական անունն ծանօթ չէ, սակայն հնութիւնքը վկայ է հոյակապ և անսիուն գմբեթաւոր եկեղեցին, որ ոչ այնչափ ընդարձակ, բայց վայելուչ է, և շատ կը նմանի Էջմիածնի մայր Հռիփսիմեանց վկայարանին։ Եկեղեցին ունի չորս պատուհան, և 12 գմբեթին՝ որոյ վերին ծայրը կոթծանած լինելով, փայտերով ծածկած են բնակիչք։ — Ակրարատ, 134։*

ԱՏԵԱՄԱՆ ՎԵՐԻՆ. — *Հայաբնակ գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի, կոթայ հիւսիսային կողմը կէս փարսախ հեռու, իշխանագեաի եզերքը բարձր դիրքով։ Բնակիչք 987, բաժնուած 77 տան. զպրեած են Ալշկերտի թեմատուր գիւղէն. ունին եկեղեցի մը՝ Մ. Գեորգ՝ անշուք ձեւով։ Տես ԿՈՓ։*

ԱՏԵԱՄԱՆ կամ ՀԱՍԱՆ ՄԱՆՍՈՒՐ. — *Փոքրիկ քաղաք Երրորդ Հայոց, Մալաթիոյ գաւառի մէջ։ Բնակիչք են Թուրքք, Ասորիք և Հայք՝ Լուսաւորչական, Կաթուղիկեայ և Բողոքական։ Լուսաւորչական Հայոց եկեղեցին նորոգուած է Մ. Աստուածածնի. ունին նաև վարժարան մը Ռուբինեանց։*

ԱՏԻՈ. *Տես ՅԱՏԵՈ։*

ԱՏԿԻՒԶԷԼ. — *Մակաւարնակ գիւղ Վասպուրականի, Վանայ շրջակայքը։ Ունի Մ. Աստուածածնին փայտաշէն եկեղեցի մը։*

ԱՏԻԼՃԷՎԱՉ. *Տես ԱՐՇԿ։*

ԱՏԻԼՈՒ. — *Գիւղ Արցախու Դիզակ գաւառի մէջ։ Բնակիչք 425 Հայք, և 75 այլազգիք։*

ԱՏԻՃԱՆՍ կամ ԱՏԻՃԱՆՑ. — *Գիւղ Մոկաց աշխարհի Մոկք գաւառի մէջ, ունի մօտ 200 հայ բնակիչ, և Մ. Աստուածածնայ, Մ. Յովհաննիսի քարաշէն եկեղեցիք։*

ԱՏԻՇ կամ ԱԴԻՇ. — *Գիւղ Զորքորդ Հայոց, Արշոյ Մասէնի առաջնորդութեան թեմին մէջ։ Բնակիչք 1500 Հայք, և սակաւաթիւ այլազգիք։ Հայք գրեթէ բոլորն ալ ի Կ. Պոլիս պանդխտելով կ'ապրին, և մեծաւ մասամբ հացագործ են։ Ունին եկեղեցի մը Մ. Կարապետ, և մէկ վարժարան։*

ԱՏԻՇԷՆ. — *Աւերակ գիւղատեղի Արցախի Գարգման գաւառի մէջ։ Փառիսոսի վանքի արեւելեան կողմը և Փառիսոս վտակի ձախակողմեան բարձրութեան վրայ։ Տակաւին կանգուն է գիւղիս եկեղեցին։*

ԱՏԿՈՆ կամ ՀԱՏԿՈՆԻ. — *Գիւղ Տարսուսեցւոյ Նեբքին Պուլանըխ գաւառակի մէջ, Լիկ գիւղի հարաւակողմը։ Հայք են 100 անուանք, և ունին Մ. Աստուածածնայ անուամբ եկեղեցի մը և նախակրթարան։ Կան նաև քանի մը տուն այլազգիք։*

ԱՏՆԱԿԱՆՑ. — *Հայաբնակ գիւղ Վասպուրականի, Վանայ շրջակայքը։ Բնակիչք 30 տուն, ունին Մ. Աստուածածնայ քարաշէն եկեղեցի մը։*

ԱՏՇԱ կամ ԱՏՐՇԷ. — *Գիւղ Տիգրանակերտի Ալիվան գաւառի մէջ։ Ունի 40 տուն հայ բնակիչ և մէկ եկեղեցի։*

ԱՏՈՎՄԵԱՆՑ ՎԱՆՔ. — *Կը գտնուի Աղձնեաց այժմեան Հզու վիճակի մէջ, կոնտաս վանքէն քառորդ ժամ հեռու։ Այժմ բոլորովին ամայի և աւերակ վիճակի մէջ է։*

ԱՏՋԱՐ. — *Հին գիւղ Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, զոր Մովսէս Սիւնեցին Միւնեաց՝ նուիրեց Գնդեվանքի։*

ԱՏՈ. *Տես ԲԱՂՔ։*

ԱՏՐԵՆԻՍ. — *Ձիշատակագիր մը 1313 թուին, կը յիշէ այս անուամբ գաւառ մը Փոքր Միւնեաց մէջ։*

ԱՏՐՄՂԵՆԱԲԱԿ. *Տես ՍՈՂԲ։*

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ կամ ԱԶԷՐՊԻՃԱՆ. — *Հին աշխարհ Հայաստանի արեւելեան հարաւակողմը, որ իւր մէջ կը պարունակէ Մեծին Հայոց Պարսկահայք և Փայտակարանդհանդներն և մասն ինչ Վասպուրականի։ Բուն Ատրպատական նահանգը կ'ինկնար Ուրմիոյ*

ծովակի արեւելակողմէն մինչև Կիլանայ սահմանները. հիւսիսային կողմէն կը տարածուի մինչև Գարատաղ և Մուղան գաւառները կամ մինչև Երասխ գետը, և հարաւային կողմէն մինչև Պարսից Քիւրտիստանը և Իրագ-Աճէմ, որ է հին Մարաց աշխարհը կամ Մեծ Մարք բառածը, որուն մէկ մասը կը համարուէր Ատրպատական և կը կոչուէր Փոքր Մարք: Որովհետև այս նահանգը մերթ ի Հայոց և մերթ ի Մարաց կը նուաճուէր, կամ թէ կէսը մէկին և կէսը միւսին կը վերաբերէր, այդ պատճառաւ կը կոչուէր Ատրպատական Հայոց և Ատրպատական Մարաց: Ըսյնք կ'ըսեն, թէ նահանգս Ատրպատ նախարարին անուամբ կոչուեր է Ատրպատական, Պարսից Դարեհ Զ Թագաւորի ժամանակէն. սակայն աւելի հաւանական է թէ ատր բառէն ելած է, որ պարսկերէն կրակ ըսել է, և ասկէց կը հետևցնեն թէ կրակապաշտութիւնը նախ հոս հնարուած է:

Ատրպատական աշխարհը Մեծն Աբշակ Պարթև իւր վաղարշակ եղբօրը տուաւ, զինքը Հայաստանի վրայ թագաւոր դնելով: Վաղարշակէն մինչև Ա. Արտաւազդայ ժամանակ, կ'երևի թէ Հայք կ'իշխէին նաև այս ընդարձակ աշխարհի վրայ, և անկէց վերջ անցաւ Պարսից ձեռքը, և երբեմն երբեմն ինքնագլուխ եղաւ, փայտակարան նահանգի և Պարսկահայոց մէկ մասի հետ: Այժմ Ատրպատական Պարսկաստանի գաւառներէն մին է, և տարածութիւնն է 104840 քառակուսի հազարաւոր՝ գրեթէ 2 000 000 բնակչօք: Երկիրը տեղ տեղ խոխոջ բարերեր է, մանաւանդ Դաւրիժու կողմերը, ուր գրեթէ ամէն տեսակ բերք առատ կու գայ, և ունի ճերմակ մարմարիոնի նման քարահանք, երկաթ, պղինձ, հանքային ջրեր, տաք աղահանքեր և նաւթ: Դիրքը բարձր է գրեթէ 12–1500 մետր ծովու երեսէն. ունի շատ լեռներ՝ յորս նշանաւոր են Սահանտ և Սաւալան: Վաճառականութեան պլխաւոր նիւթերն են, ցորեն, խաղող, շաղ, կաշի, չոր պտուղներ, ափիոն, և այլն: Ատրպատականի պլխաւոր քաղաքն է Դաւրէժ կամ Թաւրիզ: 1898 տարւոյ Այրարատ ամսագրի պրակներու մէջ «Պարսկահայք» վերնագրի տակ հրատարակուեցան այս նահանգիս հայաբնակ քաղաքաց և գիւղերու վրայ օգտակար տեղեկութիւններ ի Պ. Ա. Ճակոբեանէ: Մենք կարևոր կը համարինք աստ առանձին տախտակի մէջ հրատարակել Ատրպատականի հայաբնակ վայրերու վիճակագրութիւնն, յորմէ կ'երևի թէ ամբողջ այս նահանգի հայ բնակչաց թիւն 30000ը կ'անցնի: Այս նահանգը կը կազմէ Հայոց առաջնորդական մի առանձին թեմ. այժմեան առաջնորդն է Սահակ Եպ. Ադամեան: Հայերը ընդհանրապէս ցրուած կը բնակին, և չկայ գաւառ մը ուր իրենք կազմեն մեծամասնութիւն: 1828 թուականի գաղթականութեամբ Հայոց թիւն շատ նուազեցաւ, և այնուհետև շատ չկարողացաւ աճիլ, որովհետև առևտուրի և այլ հանգամանքներու պատճառաւ, շարունակաբար մանուկներ փոքր գաղթականութիւններ ալ եղած են: Բայց երբեմն ևս Ցանկաստանի սահմանակից գաւառներէն գաղթած և հաստատուած են այս տեղ Հայք, վերջին Ռուս-Թրքական պատերազմի պատճառաւ Ադրակ գաւառէն բազմաթիւ ընտանիքներ Սալմաստ հաստատուեցան, և այժմ տեղացի կը համարուին. վերջին զժբախտ դէպքերու պատճառով ևս շատ ընտանիքներ գաղթեցին: — Ատրպատականի հայ ժողովուրդը ընդունակ է և հիւրասէր. բայց լաւ յատկութիւններու հետ, միացուցեր է նաև պարսկական խորամանկութիւն, որ գարերու ընթացիկ մէջ միրապեսող այժի ազդեցութեան տակ արմատացեր է: Սակայն մեռուրապէս չէ ենթարկուած տիրապետող ժեծ այժին. բուն մը ժողովուրդ ահագին մղեռանդ ամբոխի մէջ իւր ազգային յատկութիւնները չկորցնիլէ գատ, յառաջադիմութեան յայտնի նշաններ ալ ցոյց կու տայ: Ամբոր բոլոր Պարսկաստանի մէջ, միայն հայն է, որ քաղաքակրթութեան ընդունակ է, և այդ պատճառաւ շատ անգամ Պարսից շահերու գոհունակութեանց եւ համակրանաց արժանացած է: Մօտ 200000 բնակիչ ունեցող Դաւրէժի մէջ, միայն 580 տուն Հայերն են, որ ունին ուսումնարաններ, ընթերցարան, լսարան և թատրոն: — Վաճառականութեան մէջ ևս Հայերն են առաջին. իւրաքանչիւր հայ վաճառական ամէն տարի ահագին քանակութեամբ մրգեղէններ կ'արտածէ դէպի արտասահման: — Կրթական

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵՆՑ	ՏՈՒՆ	ՀՈԳԻ	ՔԵՀԵԿԻՆ	ԲԱԺԻՆ
Ա· ԴԱՎՐԷԺ				
Դավրէժ քաղաք	580	2850	2	6
Մուժումբար	116	696	1	1
Ալէամուլք	56	216	1	0
Սէօհրիզ	10	66	1	0
Բ· ՄԱԿՈՒ				
Մակուայ Բերդ	78	375	2	1
Քիշմիշ Թէփէ	67	395	1	1
Գարաքիլիսէ	29	223	0	0
Գարաչամ	55	235	1	0
Գ· ԽՈՑ				
Խոյի Արուարձանք	94	517	2	1
Սէյդավար	80	480	1	0
Մահլազան (Մալխազան)	30	195	1	0
Վառ	42	262	1	0
Փէռա	15	93	1	0
Թիզէ	8	50	1	0
Թազէքէնտ	7	45	0	0
Ռօմաւր	32	192	1	0
Դ· ՍԱԼՄԱՍՏ				
Հաֆթվան	325	1829	1	1
Փայաճուկ	238	1284	1	1
Մահլամ	180	922	1	1
Վալտասար	70	507	1	1
Սառնա	74	450	1	1
Հաճվերան	46	294	1	0
Սալրա	109	629	1	1
Սարամերիկ	81	586	1	1
Հին Գաղաք (Զարևանդ)	70	526	2	1
Ախթիանա	46	337	1	0
Կզլճա	41	251	1	1
Վառդան	40	268	1	0
Քեաբրիկ	28	200	1	0
Քեաչաչան	25	150	1	0
Այան	22	141	1	0
Թերիշկ	23	144	1	0
Խոսրովայ	23	117	1	1
Աչանիկ	14	93	1	0
Շէյխանաւա	21	107	1	0
Ճարա	12	66	1	0
Քէօչամիշ	12	80	1	0
Ուլա	14	61	1	0
Չէվաճուկ	9	72	0	0
Ըռկաւա	8	81	0	0
Համբանաւա	9	62	1	0
ԳՈՒՄԱՐ	2799	16124	41	20

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵՆՑ	ՏՈՒՆ	ՀՈԳԻ	ՔԵՀԵԿԻՆ	ԲԱԺԻՆ
ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ	2799	16124	41	20
Հովատար	7	49	1	0
Շիտան	5	25	0	0
Աղիամայէլ	2	13	0	0
Գիւլիվան	3	22	1	0
Ղարաքուլախ	12	84	1	0
Ե· ՈՒՐՄԻ				
Ուրմի քաղաք	45	230	1	1
Ճէմալաւա	5	32	1	0
Կերտապատ	120	660	1	1
Գարագըղ	20	130	0	0
Ֆախկի քէկլու	20	122	1	0
Բաղլքէօ	40	220	1	0
Զէյնալու	6	33	0	0
Ղզլարու	19	106	0	0
Խանքախան	20	115	1	0
Նախչևանթէփէ	75	488	1	1
Ագա	8	45	1	0
Սիւփրըղան	12	66	1	0
Ղարաճալու	21	110	1	0
Գարակէօզ	8	42	0	0
Իքի աղաճ	40	250	1	0
Շիրապատ	20	115	1	0
Խաչու	35	210	1	0
Խահվայ	105	640	1	1
Դիկէլէ	25	137	1	0
Աղջա Գալէ	10	58	1	0
Թէքէկու	12	72	0	0
Խանիլան	2	11	0	0
Թասմալու	10	66	0	0
Սարաճուկ	1	7	0	0
Շմբուլապատ	17	112	1	0
Ջամաքի	5	32	0	0
Զիչկքլու	14	80	0	0
Ջարբաչ	24	125	1	0
Զ· ԲԱՐԱՆԴՈՒԶ				
Բաբառի	30	325	1	0
Բէլանէժ	16	100	1	0
Դարբարի	25	145	0	0
Դիզաֆիափայ	35	192	1	0
Թամաքար	30	176	1	0
Նորաչէն	12	71	0	0
Սհաթլու	8	50	0	0
Սարդառւի	20	130	1	0
Սարալան	5	34	0	0
Քուքէ	5	28	0	0
ԳՈՒՄԱՐ	5770	21882	67	24

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ	ՏՈՒՆ	ՀՈԳԻ	ԵԿԵՂԵՑԻ	ՑԱՄԱՔ
Ե· ՍՈՒԼԴՈՒԶ				
ՓՈԽԱԴԲՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ· ·	3770	21882	67	24
Նաղաղեչ · · · · ·	46	254	1	1
Զայլանէ · · · · ·	5	36	0	0
Կէօրնավայ · · · · ·	8	32	0	0
Քարվան սարայ · · ·	3	26	0	0
Թօփչավայ · · · · ·	6	46	0	0
Բախտանէ · · · · ·	9	51	0	0
Տիւշաա · · · · ·	6	37	0	0
Մէհմէդեաւ· · · · ·	30	166	1	0
Քիօհլ · · · · ·	7	43	1	0
Ը· ՍՕՎՈՒՃ ԲՈՒԼԱԳ				
Սովուճ քուլաղ· · · ·	12	56	1	0
Գարալըղ · · · · ·	30	178	1	0
Լաճ · · · · ·	4	27	0	0
Քեաբլաբզաան · · · ·	8	43	0	0
Թ· ՄԻԱՆԴՈՒԱԲ				
Միանդուաբ· · · · ·	16	78	1	0
Սէօյլիէվի · · · · ·	3	16	0	0
Գարա վերան · · · ·	6	39	0	0
Թաղիապատ · · · ·	27	155	1	0
Գարաջալ · · · · ·	1	8	0	0
Ժ· ՄԱՐԱՂԱ				
Մարաղա քաղաք · · ·	178	838	1	1
Բեհրիվայ · · · · ·	5	25	1	0
Խօճամիր· · · · ·	8	35	0	0
ԺԱ· ԳԱՐԱՏԱՂ				
Ա· ԴԻԶՄԱՐ				
Աղաչան· · · · ·	41	326	1	1
Իւրկիվէն · · · · ·	51	311	1	0
Ղշլախ · · · · ·	29	174	1	0
Սարդար · · · · ·	44	261	1	1
Խանագահ · · · · ·	91	543	1	1
Ղուլիար · · · · ·	31	191	1	0
Նորաշէն · · · · ·	41	242	1	0
Օզա · · · · ·	30	222	1	0
Բ· ՄԷՇԱՓԱՐԱ				
Մղկիթ · · · · ·	23	135	1	0
Ոզան· · · · ·	49	311	1	0
Քլալայ · · · · ·	24	132	1	0
Կերաւիաաւ· · · · ·	21	163	1	0
Նեփեչա · · · · ·	24	139	1	0
Մի-քիտի· · · · ·	12	66	1	0
ԳՈՒՄԱՐ · · · ·	4698	27285	90	29

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ	ՏՈՒՆ	ՀՈԳԻ	ԵԿԵՂԵՑԻ	ՑԱՄԱՔ
Դ· ՄՆՃՎԱՆ				
ՓՈԽԱԴԲՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ· ·	4698	27285	90	29
Ակահող · · · · · ·	15	93	1	0
Քարագլուխ · · · · ·	23	176	1	1
Ամրագուլ · · · · ·	30	179	1	0
Վիճնա · · · · · ·	24	154	1	0
Դ· ՔԷՑՎԱՆ				
Սըղըն · · · · · ·	118	675	1	0
Ասրան · · · · · ·	29	180	1	0
Ասմանան· · · · · ·	10	85	1	0
Նորաշէն· · · · · ·	16	104	1	0
Աչրաթի · · · · · ·	12	84	1	0
Գուկէյդարա · · · · ·	33	180	1	0
Վասուրմաշէն · · · ·	40	306	1	0
Բերգին · · · · · ·	40	212	1	0
Սիւրիւն · · · · · ·	33	209	1	0
ԳՈՒՄԱՐ · · · · ·	5119	29897	105	30

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՑՈՑ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ	ԴԻՒՂ ԼՔՐ·	ՏՈՒՆ	ՀՈԳԻ	ԵԿԵՂԵՑԻ	ՑԱՄԱՔ
Գավրէժ կամ Թաւրիզ ·	4	742	3828	5	7
Մահու · · · · · ·	4	209	1226	4	2
Խոյ · · · · · ·	8	308	1836	8	1
Սալմաստ · · · · ·	30	1569	9427	27	10
Ուրմի· · · · · ·	28	739	4514	17	4
Բարանդուզ · · · · ·	11	203	1251	5	0
Սուլդուզ· · · · ·	9	120	691	2	1
Սովուճ քուլաղ· · · ·	4	54	304	2	0
Միանդուաբ· · · · ·	5	53	296	2	0
Մարաղա · · · · ·	3	190	896	2	1
Նահանգի Դիզմար · · ·	8	358	2270	8	3
Նահանգի Մէշափարա · ·	6	153	946	6	0
Նահանգի Մնճվան · · ·	4	90	582	4	0
Նահանգի Քէյվան · · ·	9	331	2030	9	0
Արտաւիլ · · · · ·	1	31	220	1	1
Զանազանք · · · · ·	—	50	273	0	0
ԳՈՒՄԱՐ · · · · ·	134	5200	30392	304	30

գործին մէջ դեռ ասելի յառաջադիմելու պէտքին մէջ կը գտնուի Ամերիկան. մեր վիճակագրի մէջ որոշ կը տեսնուի որ կան շատ գիւղեր զուրկ ուսումնարանէ։ Նոյնպէս շատ գիւղեր չունին քահանայ. եղած քահանաներն ալ, քիչ բացառութեամբ, տգէտ են։ Ամերիկեան ունի չորս վանքեր, որոնց Դէրիքի Ս. Աստուածածինը աւերակ դարձեր է (1894ին). Գարատաղի Ս. Գէորգը միայն չունի, Ամասիոյ Ս. Թադէոս Առաքեալ և Գարաշամի Ս. Ստեփանոս անխնամ վիճակի մէջ են։— Ամերիա, 1898. Ա. 143—152։

ԱՏՐՊԱՏՈՒՆԻՔ կամ ՏՐՊԱՏՈՒՆԻՔ. — Վասպուրականի հին գաւառներէն մին. կար նաև նոյն անուամբ մեծ նախարարութիւն մը Արշակ Թագաւորի և Մեծին Ներսէսի ժամանակ։

ԱՐԱԲԿԵՐ կամ ԱՐԱԲԿԻՐ. Գղ. ARABKIR. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, երկրորդ Հայոց մէջ. մահկանաձ տարածուած է դիդեցիկ և բարձր դիրքով Ակնաիտւորոսի ստորոտը, եփրատայ արևմտակողմը՝ անոր վտակին մօտ։ Մալաթիայէն հեռու է 55 հազարամեայ և Խարբերդէն 75, իսկ Եփրատ դէպէն 25 հղրմ։ Բնակիչը կը հաշուին 20000 հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	10,000
Լուսաւորչական Հայք . .	9,365
Կաթուղիկէ Հայք . . .	300
Բողոքական Հայք. . . .	335
Գումարն. . . .	20,000

Քաղաքիս անուան համար Պ. Մարկոս Նալպանեան կ'ըսէ. «Տեղացւոց ումանք Արք և կէր կ'առուգաբանէին, բայց Մարպանաբաղի մը գործ լինել չէին կարող հաստատել։ Ոմանք Արաբակերտ բառի ապաւաղում կը համարէին Արաբկեր անունը, բայց ճիշդ աբարական ձեռակերտ լինելուն հաստատ ապացոյց չկայ, թէպէտ և հին աշխարհագրութիւնը չնշանակեր այս քաղաքը և միջին դարու գործ լինելուն հաւանականութիւնն ապէլի զօրաւոր թլլայ։» Զևոլֆ շատ կը նմանի Բաղէշի, անոր պէս շինուած լինելով երեք ձորերու մէջ, բլրաձև զարեւանդներու կողերու վրայ։ Տուները կառուցուած են ամֆիթէատրոնի ձևով, սանդղանման կարգ կարգ բարձրանալով։ Քարակերտ են և յատակները մեծաւ մասամբ ծածկուած՝ կամ սրբատաշ քնաթիր քարերով և կամ տախտակով։ Ամրակեր յատուկ ուազանման սև հող մը ունի, որ իբր խիւս մածանալով՝ միապաղաղ և միակաուր քարի պէս կը պատապարէ տանց տանիքներէն, որով կաթուածներէ և անձրեւահոսութենէ ազատ կը մնան տունները։ Ներքին կահ կարասիքն ևս ասելի բեղմնաւոր և յարդարուն են քան Հայաստանի ներքին քաղաքաց, և այդ ամենը արդիւնք են պանդխտութեան՝ որ իւր բազմադիմի ձեռնարկներովն հանդերձ, քաղաքակրթութեան ճաշակն զարգացնելու յատկութիւն ևս ունի։ Շուկայ, խանութ, տուն գործարան, պարտէզ, այգի, առուակներ, ծառ ու ծաղիկ, շէնքերու սև ու ճերմակ ծեփմունք, սոքա ամէնքը միախառնուելով, հրաշալի և նկարչական երևոյթ մը կ'ընծայեն Ամրակերտի։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՐԱԲԿԵՐԻ

ՀԱՅ ԳԻՒՂԱՐԻՆ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՆ	ՀԱՅՔ	
	Ար.	Իզ.
Ամպըրկայ կամ Ամբրկայ. .	442	267
Շեփիկ	286	236
Անջրդի	308	302
Ծագ	275	212
Մաշկերտ.	285	249
Աղբն	119	105
Սաղմըկայ	111	86
Վաղշէն	114	110
Գուշնա	130	140
Ծաղկվար	12	10
Խոռոչ	58	40
Վանք	51	55
Նշհնէգիք	61	64
Կռանի	42	29
Հացկնի կամ Հասկնի . .	39	41
ԳՈՒՄԱՐՆ . . .	2551	1924

Լուսաւորչական Հայք ունին չորս եկեղեցիներ։ Մայր եկեղեցին, որ Ս. Աստուածածին կը կոչուի, հոյակապ է, ընդարձակ և քարուկիր. միւս եկեղեցիներն կը կոչուին.

Ս. Յակոբ, Ս. Գէորգ և Ս. Լուսաւորիչ. ա-ռաջնոր ունի փոքր են։ Ունին առաջնորդարան, և 13ի չափ պղպջուներ, յորոց մին կը կոչուի Ս. Թարգմանչաց անուամբ, մէկն ալ Է օրիորդաց վարժարան Զարուհեան անուամբ. միւսներն ծագկոցներ կամ մէջէն կարգի վարժարաններ են։ Մայր վարժարան բուսածը ծագկոց մ'է, ուր կ'ուսանին 200 աշակերտք ձրի, Ազգաթիկեան կարապետ ազգի կտակած 50000 դահեկանի ոսկոսով։ Բոլոր վարժարանաց աշակերտաց թիւն 1000ը կ'անցնի։ Կաթուղիկեայ Հայք ունին եկեղեցի մը Ս. Փրկիչ և մէկ վարժարան։ Իսկ Բողոքական Հայք՝ ժողովարան մը և 2 վարժարան։ Այս երեք գաւանանքի վերաբերող Հայ հասարակութիւնք իրարու հետ խիստ լաւ և սիրով են։

Քաղաքիս մէջ առաջին արուեստն համարուած է մանիսա գործել, որ երբեմն մեծ շահու պատ էր Աբարկերցոց. բայց երբ եւրոպական լաթերէնք սկսան մեծ քանակութեամբ ներմուծուիլ Թուրքիոյ քաղաքներն, այս արդիւնաշատ արուեստն սկսաւ խնկնալ, որով ամէն պարապուրեցան Հայք պանդխտութեան դիմելու։ Այժմ քաղաքի մէջ կան 15 գործարան մանուսայի, 9 վաճառական մանած բամբակի և 18 պատառոց։ Աբարկերի մէջ կան նաև 2 գրավաճառ, 2 գեղավաճառ, 2 ժամացուցագործ, 5 վաճառական Հալէպի սճառի, 3 ոսկերիչ, 5 պղնձագործ, 5 արճարան, 2 գինեառուն, և այլն։ Ընդհանրապէս արուեստներն Հայոց ձեռքն է. կան հայ ճարտարագործներ, որք գիւրութեամբ կը շինեն եւրոպական զէնքեր, մեքենաներ և նոյնը գործիքներ։ Վերջին տխուր դէպքերու ժամանակ, քաղաքս ևս շատ վնաս կրեց, 600էն աւելի անձինք զոհ գացին, բազմաթիւ տուներ կողոպտուեցան, եկեղեցիներէն երեքը այրեցան, և այլն։

Աբարկերի բազմաթիւ գիւղերէն միայն 15ը հայաբնակ են, որոց անուանք և բնակիչց թիւն կը տեսնուին առանձին ասխատակի մէջ։ Այս գիւղերն ունին մէկ մէկ եկեղեցի և վարժարան, եկեղեցիներէն շատերը կը կոչուին Ս. Աստուածածին, և մէկ քանին Ս. Նշան։ Քաղաքիս մօտ կայ ուրիշ հին քաղաք մը, զոր Հայք Աճի–քաղաք կ'անուանեն և Թուրքք՝ Էսկի շեհիր, ուր տակաւին կը բնակին այլազգիք, և կան մնացուածով մկիտիներ. հազիւ 100 տարի կայ որ Հայք բոլորովին թողած են զայն և գաղթած նոր քաղաքը։



153. Խնդրոյն Աշտիճ նահանգ, մնացորդք ոսկեղենի։

Հին Աբարկերն կը կարծուի որ շինուած է Աբծրունի Սենեքերիմայ գաղթականութեան միջոցին։ — Թորոս Աղբար, Ա. 270–297։ Մասիս, 1885, էջ 655–656։ Եւ այլն։

ԱՐԱՓ. — Գիւղ Տարսնի Տարօն

գաւառի, Մշոյ գաշտի մէջ, բնակիչք Հայք և Քուրդք խառն։ Հայք ազգութեի վիճակի մէջ կը գտնուին, միշտ հարստահարութեանց ենթակայ լինելով։

լեռներէն գրեթէ բոլորովին զատուած է, և ինքնուրոյն լերանց խումբ մը կը ձևացնէ։ Ըստ Խորենացւոյն՝ Արագած կոչուած է լեռս Հայկայ Արմենակ որդւոյն անուամբ։ Ար-




154. Արագածոտն գիւղ գոտեմարտ։

ԱՐԱԳԱԾ. Գ. ARAKADZ. — Նշանաւոր և բարձր լեռ Այրարատայ Արագածոտն գաւառի, հիւսիսային արևմտեան մասին մէջ։ Այս ազգիք Այակէզ անունը կուտան լերանս։ Մասին նման Արագած ևս մեր աշխարհի մեծ

մեծ երեսէն բարձր է 4100 մեար կամ 12, 874 սանտչափ, այս պատճառաւ գագաթին ճեղքուածներու մէջ մշտնջենաւոր սառնամանիք կը գտնուին։ Թէպէտև այսչափ բարձր է, և գրեթէ 10000' Էջմիածնի գերբէն վեր

է, բայց ուրիշ լերանց պէս չի ազդէր մարդուս վրայ վսեմ բարձրութեամբ մը, ասոր պատճառն է իւր մեծատարած լայնութիւնը. շրջապատին երկայնութիւնն ըստ Ռուսաց կայսերական գրապետին մղոն է 150 չափ։ Արագած գլխաւոր չորս կոնաձեւ կատարներ ունի, և իւր բազմաթիւ հովիտներով և պատառիներով Մասիսէն շատ կը տարբերի։ Չորս կատարներու վրայ ևս կան գեղեցիկ լճակատշաներ։ Հնագարեան հրաբղխային ապառաժներն ևս Մասիսէն աւելի փխրած և



155. Արագած լերան քոշ։

հող գարձած են, և գետինն ալ աւելի բուսաւէտ և արգաւանդ է։ Այս երեւոյթին պատճառը, կ'ըսէ Վահնէր, ոչ Արագածի ժայռերուն տեսակէն և ոչ ալ անոնց հնութենէն է, այլ ապրիւրներու առատութենէն ու գատառիներու և լճակատոլիճներու շատութենէն, որոնց վրայ հալած ձիւներու և անձրեւներու ջուրը կը ժողվի, և լուծիչ օդին հետ միանալով երկրի վրայ աւելի կ'ազդէ։ Հին ժամանակներն մեր նախնեաց ծանօթ էր լերանս հրաբղխային զօրութիւնն, որոյ համար միջին գարուց աշխարհագիրն (Վարդան) կ'ըսէ. «Մեծագանչ լեառն Արագածայ, որ առօրոտէն մինչև ցկատար լերինն աւուրս ամէն ճանապարհ է, ի չորս բաժանի լինելոյ մեծամեծք, և մէջ նոցա գոգ հովտաձև հարթ յատակ, և չորեքին ծայրք լերանցն՝ հանդէպ միմեանց խաչանման.» կը յաւելու նաև հետևեալ ռամկական աւանդութիւնն. «Աստն թէ օրհնեալ և օծեալ նշան տէրունական՝ շնորհաբաշխ աջովն սուրբ Լուսաւորչի լերինքն այն, ի փառս խաչելոյն Քրիստոսի. և է ի մէջ հովտին քարաժերպ այր մեծ. ի նմին այրի շինեալ տաճար փոքրիկ խորան, և կախեալ կանթեղս առանց չուանի, և փոխանակ ջրոյ՝ արտասուօք լցեալ, և հրով երկնային վառեալ. և մնայ մինչև ի գալուստն Քրիստոսի ի դատաստան. որ բազմաց յարժանաւորացն տեսեալք են և տեսանեն զհրաշն զայն ի փառս Քրիստոսի»։ Լերանս հրաբուղխ կանթեղներն ի վազուց շինած են, բայց թերևս գեռ կը ծխային մեր պատմական ժամանակաց սկիզբներեր, և հեթանոսական առասպելից աւանդութեամբ հասնելով առ քրիստոնեայ սերունդս՝ փոխուեցան Ս. Լուսաւորչի հրաշագործութեանց, որուն արտասուաց փոխան՝ այժմ կ'երևին լերանս գագաթը և սարատափներու վրայ տասնէ աւելի լճեր։ Այս լճերէն ոմանց արամագիծն կէս մղոնաչափէն աւելի է, և յայտնի կ'երևի որ հրաբուղխներու խառնարաններ եղած են ժամանակաւ, և այժմ հալած ձեանց ջրով լեցուելով՝ շրամարաններ գարձած են բազմաթիւ առուակաց և ապրեաց, որոնք ձորերն անցնելով գետեր կը ձևացնեն։ Լճակներէն մեծագոյնն և բարձրագոյնը, արեւելեան կողմը կը գտնուի, և կը կոչուի Գառա կեօղ (Սեաւ լիճ). արևմտակողմն կան երկու լճակներ, որոց մեծագոյնը՝ Գզըլ կեօղ (Կարմիր լիճ). միւսներն որ կ'ինկնան արևմտեան հարաւակողմն և մէջտեղը՝ անուն-ները նշանակուած չկան աշխարհացոյց տախտակաց վրայ։ Արագած իւր առատ ջրերու համար ոչ միայն ձորեր և ծորձորներ ունի, այլ և տեղ տեղ քարավէժ սահանքներ։ Գառգաթնից հիւսիսային արևմտակողմն՝ կայ հրաբղխի մը շրջարտլոր խառնարան՝ գրեթէ 40՝ տրամագծով, յորմէ հոսած թխագոյն

լաւան կը տեսնուի լերանս սառոյցը։ Հոս երկրաբանական նշանաւոր զէպքերէն մին պիտեց Քարթհաուզ, այսինքն հրաբղխային արտասոյ ապառաժին մէջ անբաւ որձաքարեր տեսաւ, որ կանխաւ գոյացած լինելով՝ կ՚երևի թէ արտասոյ ապառաժը հրաբղխային զօրութեամբ վեր նետուելու առեն՝ որձաքարերն ալ պատռած, փրցուցած ու մէկտեղ վեր բերած է։ Լերանս հարթ կողերու և սարահարթներու հողն սև է և պարարտ։ Մայիսի կէսէն սկսեալ մինչև սեպտեմբերի վերջերը խիստ գեղեցիկ և զմայլեցուցիչ երևոյթ մնի լերս, ջրերովն, յատակ և առողջարար օդովն, բազմաեռակ երանգ երանգ և բաղդրաբոյր ծաղիկներովն։ Ծաղիկնց մէջ գեղնագոյն խիստ շատ են, կան նաև կապտագոյն վայրի շուշանք կամ հիրինք, կակաչք, բոկք, զանգակ—ծաղիկ և ուրիշ շատ տեսակներ։ 1888ին Պր. Աղեքսանդր Գալանթարեան, Արագածու բոյսերէն շատ տեսակներ անձամբ քաղելով դասաւորել տուաւ Տփղիսու բուսագիտաց, որք տասնևվեց ապգաց բաժնեցին, որոց անուանք հրատարակեց Հ. Ալիշան՝ Այրարատի 549—550 էջից մէջ։ Վակնէր գերմանացին գմայլած կը նկարագրէ լերս, որուն վրայ ելաւ 1843ին, և շատ տեսակ ծաղկանց հետ հաւաքեց նաև միջատաց և ճճիներու տեսակներ, և ամենէն աւելի նշանաւոր և միայն Հայաստանի կողմանց սեփական՝ Ուժեղն (Callisthes) կոչուածն, խիստ փայլուն կապտագոյն և նորօրինակ ձևով, որ լերանց բարձունքը և ձեռնց սահմանները կը գտնուի։ Արագածի ծաղկանց կ՚այցելեն նաև օգտակար միջատներն՝ մեղուներու երամք, և կուտան պատուական մեղր, մանաւանդ կարբիի սահմաններէը։ Ամրան ամիսներու մէջ խիստ սքանչելի է Արագած, իսկ ձմեռն խիստ երկայն լինելով շատ անգամ չեն հասուներնար պիտանի բոյսեր, երբեմն և ոչ իսկ գարին կը հասնի։ Հայաստանի լեռներէն առաջինն կրնայ համարուիլ Արագած իր օգտակարութեամբն. շատ անգամ Արարատեան սրբազան լեռնէն վանսներ հասած են մեզ, բայց այս լերան բարիքները ի հնուց մինչև ցարդ ծանօթ են ամէն հայու։ Մեր նախնեաց հարստութեան ժամանակ, Պարսից տիրապետութեան օրով, և նոյն իսկ մեր օրերը, լերանս սարատափներն զուարճալի զբօսավայրեր և ամարանոցներ եղած են։ Անվտանգութիւնը և խաղաղարածք վիճակ՝ Հայք, Պարսիկք և Քուրդք խուռն բազմութեամբ բաժին բաժին կը բռնեն Արագածայ ծորձորք, խորաձորք և աղբիւրաշատ սիզաւէտ հովիտներն, և տարուան չորս եղանակաց համեմատ տեղափոխութիւն կ՚ընեն։ Լերանս վրայ կը գտնուին նաև վայրի այծեմունք և վիթք, գեղեցիկ, ոտրկ սուր և երկայն եղջիւրներով, մինչև 0,70 մետր երկայնութեամբ։ Արագածու ճիւղերն կամ ստորը առանձին թրքաձայն անուններով ծանօթ են. արևմտեան հիւսիսային կողմը՝ Գզըլտար, արևելեան հիւսիսային կողմը՝ Զանկիլ, արևմտահարաւակողմը՝ Տիքլե թաշ, Ամբերդ, և այլն։ — Այրարատ, 129—131։ Մ. Վակներ, Ճնպրն. Բ. 115—118։ Եւ այլն։

ԱՐԱԳԱԾՈՏՆ. — Այրարատայ գաւառներէն մին, և մեր աշխարհի շատ գաւառներէն աւելի հռչակագոյնը, թէ բնական պիրքովն և թէ քաղաքական տեսութեամբ։ Սահմանքն են Ար.էն Կոտայք և Ոստան, Հր.էն Մասեացոտն և Ձակատք, Ամ.էն Աշտարունիք և Շիրակ, իսկ Հս.էն Նիփ։ Այսպէս կոչուած է վերը նկարագրուած Արագած լերան անուամբ, որ կ՚ինկնայ գաւառիս հիւսիսային կողմերն և իր ոտները կամ ոտքը կը տարածէ աւելի գէպ ի հարաւ։ Արագած իր բազմաթիւ բարեմասնութիւններով, յորպտատ ջրերով, զուարճագիղ բուսաբերութեամբը և յատակ օդովն կեանք և կենդանութիւն կուտայ իր ոտքը տարածուած գաւառիս։ Արագածոտն հռչակաւոր կրնայ ըսուիլ նաև քաղաքական տեսակէտով, ըստ որում իր մէջ կը բովանդակէ մեր աշխարհի հնագոյն մայրաքաղաքներն. գարձեալ հռչակաւոր է, որովհետև իր մէջ կը գտնուի Հայոց ազգի պատմական և նուիրական Լջմիածինը։ Գաւառիս մէջ ըստ աւանդական պատմութեան անդրանիկն Հայկայ Արմենակ նախ այս կողմերն սկսեր է շէնցնել, որուն կալուածները տարածուած էին այս կողմերը և կը կոչուէին Ոտն Արագածու։ Ցայսմիկ չէ Արմենակայ բնակութեան կեդրոնը կամ քնիկ դաստակերտը, բայց կը թուի թէ աւելի դաշտակողմը լինէր,

Քաղաք գեղջկան արևելեան կողմերը, վասն զի շինութեան աւելի յարմար էին, քան անհարթ լեռնաւայրերը. և որովհետև Աղթամարայ վիճակին Դաւիթ կաթողիկոսը կամ եպիսկոպոսը, ժ. դարու (923) սկիզբներէն, կ'ըսուի թէ էր Արագած գիւղէն և ազգակից Մաշտոցի կաթողիկոսի՝ և ասոր հայրենիքն լինելով Եղիվարդ գիւղն, հաւանական է կարծելն թէ նոյն Եղիվարդ գիւղն է և կամ անոր մօտերն կը գտնուէր Արագած շէնը: Արագածոտն ի հնումն արքունի սահմանաւորեալ եղած կը թուի. ոչ միայն նշանաւոր էր իւր բնական ամրութիւններովն, այլ և ձեռակերտ բերդերովն, գաւառակերտներով և ձմերոցներով: Գաւառիս անուամբ իշխաններ կամ նախարարներ չեն յիշուիր. միայն Տրդատայ Գահնամակի մէջ՝ ըստ Մեսրոպայ Երից կը յիշուին նաև Արագածեանք: Հայկազեանց հարստութենէն շատ ժամանակ վերջը Արտաշէս Բ ի ժամանակները, գաւառիս գէթ մէկ մասը (արևելակողմը) արուեցաւ օտար ազգի, Ամատունեաց, որոց վրայ կը խօսինք Օշականի անդագրութեան մէջ, ինչպէս նաև անոնց եպիսկոպոսներու վրայ: Գաւառիս նշանաւոր վանքերն են Յովհաննավանք, Սաղմոսավանք, Ծաղկավանք, Ուշոյ վանք (Ս. Սարգիս), Լագեվանք, Մուգնոյ Ս. Գէորգ, Եղիվարդայ վանք, և այլն: Այս վանքերուն վրայ իրենց կարգին կը խօսինք. ասա միայն ըսենք, որ ասոնցմէ հռչակաւոր ներու սկզբնաւորութիւնն եղած են Արշակունեաց ժամանակ: Յայտնի է թէ այս վանքերու կառուցման համար ձեռնտու եղած են երկրի մէջ բնակող բազմաթիւ ազնուականներ և նոյն իսկ Հայոց արքունիքն: Անոնց բակոյս միաբանակեցեալ վանքերէն զատ, կային նաև ճգնաւորաց միայնարաններ և նահապատներ, Արագածու անջոյիմ խորշերու և ծերպերու մէջ: Ժէ. դարու վերջերը Արագածու վրայ՝ քարերու խոռոչներու մէջ, որ սորդ մը գաւառ ճգնաւոր մը մնացած, և նահապետական ապացած, վրան փիլոն և գլուխը վեղար դրած. զոր յետոյ Սաղմոսավանից եպիսկոպոսն և առաջնորդն Սարգիս՝ թողեց, և անկէց ապրուեցաւ միանձնական կենաց կարգը հաստատելու և վերանորոգելու, զոր մանրամասն կը պատմէ Առաքել Պատմիչ (Գլ. ԻԱ):

Գաւառիս անուամբ մինչև ցարդ կայ տոհմ մը Արագածունի, որոնց ցեղէն կը յիշուի ոմն Մխիթ Սեդրակ 1685ին, և այլ թիւէն հին չի յիշուիր այլ ոք. այս տոհմի սերունդը պահած ունին Թադաւորաց վկայական կոնդակներ և հրովարտակներ: — Ի հնումն Արագածոտն մանաւանդ վիճակաց բաժնուած չի յիշուիր. իսկ միջին և վերջին դարուց մէջ աւելի սակ կը հանդիպինք փոփոխութեան: Մեզ ծանօթ գաւառիս պիտանի առարքաժանումներն կամ վիճակներն են, Ա. Թալին, Բ. Թալիշ, Գ. Սարտարապատ, Դ. Կարբի կամ Կարբի պազար, Ե. Այներդ կամ Բիւրական, Զ. Վաղարշապատ: Պարսից իշխանութեան ժամանակ, գաւառս Երևանայ մեծ կուսակալութեան մաս լինելով, պիտանի քաղաքաւանին անուամբ կը կոչուէր Սարտարապատ: Իսկ այժմ Գաւառաց պետութեան նոր բաժանման համեմատ՝ Երևանայ նահանգի հինգ գաւառներէն մին է Արագածան՝ որուն կը համապատասխանէ Էջմիածնի կամ Վաղարշապատու գաւառն: — Այրարատ, 129—133:

ԱՐԱԳԵՂՑ. — *Այս անուամբ ձոր մը կը յիշէ Ղևոնդ Պատմիչ, որ կը թուի թէ կ'ինկնար Աչրարատայ Կոգովիտ գաւառի մէջ:*

ԱՐԱԳԻ. Տես ԱՐԵԳԻՆ:

ԱՐԱԳԻ. — *Այս անուամբ լիճ և գետակ մը կայ Միւնեաց Ծղուկ գաւառի մէջ:*

ԱՐԱԳԻԲՈՑՆ. — *Գիւղ Տարսւերանի Տաբոն գաւառի մէջ, Մշոյ արևելեան հարաւային կողմը:*

ԱՐԱԳՈՎԱ. Տես ԱՐԱԿՈՎԱ:

ԱՐԱԶ. Տես ԵՐԱՍԽ:

ԱՐԱԶԻՆ. — *Գիւղ Միւնեաց Երնջակ գաւառի մէջ. 39 տուն հայ և 43 տուն թաթար բնակչօք: Հայք գաղթած են Պարսից բաժնէն, և ունին անշուք եկեղեցի մը:*

ԱՐԱԶ ՕՂԼԻՆ. — *Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ (Շօրվկէ) գաւառի մէջ: Բնակիչք 300, բաժնուած 40 տան:*

ԱՐԱԹ կամ ՀԱՐԱԹ. — *Գիւղ Մոկաց Մամրատանք գաւառակի մէջ, 20 տուն բնակչօք. ունի Ս. Պետրոս—Պօղոս եկեղեցի մը:*

ԱՐԱՂՐԴ կամ ԱՐԱՂՔ. — *Թաթարաբնակ գիւղ Աչրարատայ Մասեացոտն գաւառի հիւսիս—արևելեան սահմանագլուխը. ունի*

պաղաւէտ պարէզներ և այգիներ։ Այս ա-
նուամբ ուրիշ քանի մը գիւղեր ևս կան Այ-
բարատայ գաւառաց մէջ, բոլորն ալ այլազ-
գաբնակ։

ԱՐԱՒԼԻՈ կամ ԱՐԱՒԼՈՒԻՈ. — Գիւղ Այբա-
րատայ Շիրակ գաւառի, Ախուրեան և Գա-
րախանէ գետոց միացմանէն ձևացած թերա-
կղզւոյն վրայ։ Ունի 40 տուն բնակիչ՝ զանա-
զան ազգերէ։ Ցիշատակաց արժանի է մէջը
գտնուած քառակուսի ձևով հին ամրոցն, ո-
րոյ սրմունքն ճնացած են։ Խանդարուած ար-
ձանագրութեան մէջ որոշ կը կարդացուի
Հազարբեկ անունն, և թուական մը ՌՄ կամ
ՌԳ գարու վերաբերեալ։ Գրան մօտ կայ
մեծ քար մը, որուն վրայ արձանագրուած
է միայն ՈՀԸ (= 1228) թուականը։

ԱՐԱԽՈՑՋ կամ ԱՐԱԽՈՒՍ. Տես ԱՐԱՄՈՒՍ։

ԱՐԱՆ. — Փոքր գաւառակ Այբարատայ,
կ'ընկնայ Ուրծ գաւառի հարաւակողմը և կը
համարուի անոր վիճակն։ Նախնիք գաւա-
ռակիս տուած են նաև Աբաճոյ կողմն կամ
Աբաճակողմն անունը։ Աբածոյ անուամբ ոչ
իշխաններ կը յիշուին և ոչ տոհմ մը. միայն
ազգային զօրաբաժնի ցուցակին մէջ կը կար-
գանք Աբաճացի տոհմի մը անուն, որ թեր-
ևս սխալ գրուած լինի փոխանակ Աբաճա-
ցիի, վասն զի Աբաճ անունն ամենևին ու-
րիշ տեղ չի յիշուիր։ Ի նախնեաց կը յի-
շուի Աբաճ անուամբ գիւղ մը կամ աւան մը,
որուն տեղն այժմ մեզ անյայտ է։ Այս գիւղն
հայրենիք էր Ղեւոնդեանց ընկերաց տուրք նա-
հատակացն Սահառելի երիցու և Աբրահամոյ
սարկաւագի, որք քաջութեամբ ատերեցին Աբ-
տաշատայ ատրուշանը, Յազկերտի հալա-
ծանաց ժամանակ, և իրենց ընկերներէն առաջ
արժանացան մարտիրոսական տուրք պսա-
կին։ — Աբածոյ գիւղաւորներէն կը յիշուի Զ դա-
րու վերջերը ոմն Սահակ որդի Հաճազատապայ։
Վերջին անգամ գաւառակիս անունն կը յի-
շուի 832 թուին, յորում Գաւիթ Բ կա-
թողիկոսը մեռնելու առեն՝ կաթողիկոսարա-
նին կալուածները յափշտակողաց հետ, ա-
նիծից նաև Ապուչափր անունով Աբածացին։
Տես ՈՒՐՈՒ։ — Այբարատ, 445։

ԱՐԱՆԱԿՈՂՄՆ. Տես ԱՐԱՆ։

ԱՐԱՓԱՆԻ. — Եփրատայ արեւելեան գօրա-
ւոր ճիւղն է, որ այժմ ծանօթ է Մուրատ չայ
անուամբ։ Կը բղխի Այբարատայ Ծաղկոտն
գաւառի Ծաղկանց լեռներէն. ունի բազմա-
թիւ ճիւղեր. երկու գլխաւոր ճիւղերն Ս. Ո-
կեանց սրբավայրէն խոնարհ, Ջէյնալի ձորին
ստորին մասին վրայ կը միանան։ Այ կազ-
մէն կ'ընդունի բազմաթիւ ընտիր ջերմուկնե-
րու ջրեր, որոնք տեսնողներու վրայ մեծ
ազատութիւն կը թողուն։ Այս ջերմուկնե-
րու ջրերէն վար՝ կ'անցնի կրային ջրէ կազ-
մուած բնական մեծ կամուրջի մը ներքեւէն։
Երկու ժամ ու կէս ևս ի հիւսիս շարունա-
կելով իր ընթացքն, տակաւ առ տակաւ կը
շեղի յարեւմուտս. յանկարծ գուրս կու գայ
Տիատինի գաշտի մէջ և Տիատին գիւղաքա-
ղաքի մօտէն քերելով կ'անցնի Ջիրաւայ գաշտի
միջէն, աջակողմէ թողլով հին Բագաւանը և
ուրիշ գիւղեր, նոյն ուղղութեամբ պտոյտներով
առաջ կ'երթայ մինչև Գարաքիլիսէ։ Հոն կ'սկսի
շեղիլ դէպ ի հարաւ և կ'ընդունի ոչ սա-
կաւ գետակներ, և Շէխան գետը արեւմտեան
կողմէն։ Այնուհետև Անթեպ գաւառակէն
անցնելով կը շարունակէ իր ընթացքն Մա-
նազկերտի և Ապահունեան գաւառներու մէջ,
իւրաքանչիւր գաւառ երկու մասանց կը բաժ-
նէ, աջ ու ձախ գաշտային և լեռնային մա-
սեր թողլով։ Ուղղուելով դէպ ի հարաւային
արեւմուտք կ'անցնի նաև Հարբ և Տարօն
գաւառներէն, եղերքները թողլով հին և նոր
բնակեալ վայրեր։ Տուրուբերանէն գուրս գա-
լով, Զորրորդ Հայոց արեւմտեան սահմանա-
ձայրն, Բարուշ գիւղի մօտ կը միանայ
Արեւմտեան Եփրատի հետ։ Մ. Մխիթարեան
բան՝ գետոյս վրայի կամրջաց նուազութիւնն
յայտնելով, կ'ըսէ, թէ գարնան ժամանակ
երբ գետս կը յորդի, վրայէն անցուգարձի
համար կը գործածեն 12 կամ 16 այծու
տիկերէ կազմեալ անպատապար ականաւ մը։
Այդ տիկերն իրարու հետ կապուած են,
որոց վրայ կը ձգեն խեղճ ճիւղերէ գոր-
ծուած վանդակ մը, և 4—5 հոգի վրան
նստելով կենաց մեծ վտանգով կ'անցնին
մէկ կողմէն միւսը։ Շատ անգամ կամրջաց
նուազութեան պատճառաւ այս օրինակ ար-
կանաւակներով անցնելով մարդիկ զոհ գա-
ցած են։ Իսկ երբ գետոյս յորդութիւնն իջ-
նայ, ձիով կարելի է անցնիլ։ Մանազկերտ
գաւառի մէջ կայ 13 աչքէ գեղեցկաշէն

կամուրջ մը, շատ հատատուն և հին գործ, բայց ափսոս որ մէջ տեղի երեք աչքն քանդուած լինելով, անցուդարձ ընելն անկարելի եղած են։ — Նկարագրկ. Ողևորութիւն, Գ. 56–59։ Բագրեւանդ, 21–24։

ԱՐԱՔԱՆՈ. — *Ակս անուամբ գիւղ մը կը յիշուի յԱղուանս, Ս. Գրիգորիսի նշխարաց գիւտի պատմութեան մէջ. «Զու արարեալ արքային (Վաչագանայ) ի Գաւառականէ... հասանէին ի գետ մի Արաքանս»։*

ԱՐԱԿԱՅ. — *Գիւղս որ ունի 50 տուն Թուրք բնակիչ, երբեմն Ակնայ գիւղ է եղեր, իսկ այժմ Տիվրիկի կը վերաբերի. Ակնէն և Տիվրիկէն հեռու է վեցական ժամ։ Գիւղէս դուրս լերան կողին վրայ է Ս. Գրիգորի Նարեկացւոյ վանքը, գրեթէ 12 մետր երկայնութեամբ և 10^մ լայնութեամբ պարսպով պատած. ներսն է մատուռն, գաւիթն և մատաղատունն։ Աւանդութեամբ կ'ըսուի, թէ այն կրօնաւորները որք ԺԱ դարուն Սենեքերիմ Թագաւորի հետ վանայ Նարեկայ վանքէն փոխադրուեցան այս կողմերը, իրենց հետ բերին Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ մարմինը, և հոս վանք շինելով եկեղեցւոյ մէջ հանգուցին զայն. ասկէ գիւղն ալ նախ կոչուեցաւ Նարեկայ գիւղ, որ վերջը ապականեցաւ փոխուեր է Արակայ։ Ակս աւանդութեան ճշդութեանը նկատմամբ թէպէտ ծանօթ փաստեր և տեղեկութիւններ չկան, սակայն վանքս՝ այժմ ամայի վիճակի մէջ գտնուելովն հանդերձ, կը լեցուի բազմաթիւ ուխտաւորներով, մանաւանդ Ս. Գր. Լուսաւորչայ գիւտ նշխարաց, Վարդավառին և Ս. Աստուածածնի ծննդու օրեր։ Շրջակայքը ունի բաւական գետին, ուր վրանները կը կանգնեն ուխտաւորք և մատաղ կ'եփեն։ Ի հիւսիս քիչ մը վար կը գտնուի Զոպնի (հովտի) գերեզման կոչուած ուխտատեղին, որոյ մօտ մացառ մը կայ՝ վրան բազմաթիւ քուրջեր կապած։ Հարաւակողմը կը գտնուի Լուռս աղբիւր կոչուած ջուրը։ Վանքս ոչ կալուած ունի և ոչ պահապան. երբեմն ուխտաւորաց հետ մէկ երկու քահանայ կու գան, պատարագ մատուցանելու և մատաղ ներն օրհնելու։ Կ'ըսեն թէ խորանին ներքև շէնք մը կայ, և հոն է սրբոյն մատունքը։ Շատ ախտաժէտներ և լուսնոտներ հատատ քով ուխտի գալով բժշկուած են։ Քանի մը տարի ուխտաւորաց նուէրներէն գոյացած արդիւնքն յատկացուած է եղեր մերձակայ հայաբնակ Նարվեր գիւղի Հայոց վարժարանին։ — Հնոտիւնք Ակնայ, 36–37։*

ԱՐԱԿԵԼ ՄԵՆ. — *Գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաքի) գաւառի մէջ։ Բնակիչք 555, յորոց 49 քուրդ են և մնացածք ամբողջ հայ։*

ԱՐԱԿԵԼ ՓՈՔՐ. — *Նոյնպէս գիւղ Գուգարաց Ջաւախք գաւառի. 307 բնակչօք, մեծամասնութիւնը Հայք, և սակաւաթիւ այլազգիք։*

ԱՐԱԿՈՎԱ կամ ԱՐԱԳՈՎԱ. — *Հայաբնակ գիւղ Գուգարաց Ջաւախք գաւառի մէջ, Ախալքալաքի հիւսիսային կողմը 9 ½ վերստ հեռաւորութեամբ, համանուն գետի ափունքը։ Հին ժամանակները գիւղս բակլացած է եղեր Ակրա բերդէն, որ կառուցուած է եղեր գետի ձախակողմը բարձրացող լերան վրայ, և կովա գիւղէն՝ որ կը գտնուի եղեր բերդի հիւսիսակողմը՝ գետի աջ ափունքը։ Յետոյ այդ երկու անուններդ միանալով կազմեր են այժմեան գիւղի Աբակովա անունը։ Այժմ Ակրա բերդը աւերակ է, որոյ միջէն ստորերկրեայ անցք մը կը հանէ մինչև գետի եզերքը։ Հոն կայ նաև կիսաւեր եկեղեցւոյ պատը, որոյ միջի խորանն զարձած է ուխտատեղի Ս. Սարգիս անուամբ։ Կովա գիւղն ալ բոլորովին քանդուած է, իւր տեղ շինուած են մարագներ։ Բերդի դիմաց հինգ բլուրներ գիրար կարելով կը ձևացնեն ձոր մը, որ յատուկ անուամբ Մեծ ձոր կը կոչուի. մօտը կայ բլրակ մը և վրան խաչ մը, որ ուխտատեղի է Ս. Միհաս անուամբ։*

Գիւղիս եկեղեցին շինուած է բերդի լերան լանջին, հարթ տեղւոյ մը վրայ. բաւական մեծ է և գեղեցիկ։ Գաւիթը կը գտնուի նաև Հայոց պլրոցի համար սրբատաշ քարերով շէնք մը, որ Ռուսաց պլրոցի հիմնուելէն վերջ, կը ծառայէ իբրև հասարակաց շտեմարան։ 1882ին հատատուած է Աբակովայի գիւղական արքունական պլրոցը, շինուած՝ գետի աջ կողմը բարձրացուցիկի վրայ. աշակերտաց թիւն կը հասնի 525–550։ Գետի ափունքը զարդարուած են ծառերով և ուկի ուռենիներով։ Ցնորը

ընդհանրապէս կիսագետնափոր են, բաց ի քահանայի տնէն, որ շինուած և զարդարուած է եւրոպական ճաշակով։ Բնակիչք զաղթած են կարնոյ Ձ՚ինիս գիւղէն, ընդ ամէնը կը լինին 1000 հոգի։ Կը զբաղին պխտորաբար երկրագործութեամբ, անասնապահութեամբ, ֆուրգոններ ևս կը բանեցնեն։ — Ջաւախք, 33–34։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՐԱԿՈՎԱՑԻ

ՀԱՅԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՆՈՒԱՆԱՌ ԳԻՒՂԻՑ	ՀԱՑՔ		Օտարք
	Լուս.	կաթ.	
Ագուլ	722	—	—
Աբակովա	621	—	—
Բաւբա	—	296	5
Բգաւէթ	566	—	—
Խոսպիա Մեծ	—	—	242
Խոսպիա Փոքր	551	—	—
Խուլկումոյ	—	526	—
Կարտիկամ	—	852	6
Կոբխ	658	—	—
Կուլիկամ	634	—	—
Մահամախա	584	—	—
Օլավէբա	558	—	—
Օրմա	659	—	—
ԳՈՒՄԱՐՆ	5455	1474	253

ԱՐԱՀ. Տես ՀԱՑՆԻ։

ԱՐԱՀԵՋ. — Հին գիւղ Տայոց աշխարհի մէջ, զիրքը անյայտ։ Ղազար Փարպեցի (333) կը յիշէ գիւղս իբրև հայրենիք Գիւտ կաթողիկոսի, ըսելով «ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ»։

ԱՐԱՀՈՒԾ. Տես ԱՂԱՀԻՆՁԻ։

ԱՐԱՂ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, շինուած ընդարձակ ձորի մը բերանը. բնակիչք 100 տունէն աւելի։ Կ՚ասանդեն թէ ի հնումն գեղեցիկ քաղաք մը եղած լինի գիւղս, և այս ասանդութեան ճշդութեան վկայք են, այժմ նշմարելի բազմաթիւ հնութեանց բեկորներն։ Հնախօս գիտնականաց պեղմանց և քննութեանց կը կարօտին այս կողմերս։

ԱՐԱՄԱՑ ԳԻՒՂ. Տես ԱՐԱՄՈՒՍ։

ԱՐԱՄԱՆԱՑ ԳԻՒՂ. — Հին գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, որուն գիրքը հետեւեալ կերպով կ՚ատորագրէ Ղազար (165). «Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի որոյ անուն էր Արամանայ ի նահանգին Բագրեւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարածատափայ»։ Եկողներն էին Մեծն Վարդան և իւր զրան միահամուռ բազմութիւնն, որք կ՚ուզէին գիտել Յունաց աշխարհը, կրակապաշտ Պարսից բռնութենէն ազատելու համար։ Սակայն երբ Ղևոնդ երէց և ուրիշ քահանաներ, Արշարունեաց Արշաւիր իշխանը և այլ տանուտէրներ ազաչաւոր եկան, այն ժամանակ Մեծն Վարդան ետ կեցաւ իւր խորհրդէն և զարձաւ Հայոց բանակը։

ԱՐԱՄԱՆԵԱԿ. — Շապկն Գարահիսարի այժմեան Ալամունիկ հայաբնակ գիւղի հին անունն կը թուի։ — Այս անուամբ բերդ մը կար ըստ Թ. Արծրունւոյ (218) Սպեր գաւառի մէջ կամ սահմանակից։ Պատմութիւնն մեզ կը յայտնէ, թէ իններորդ զարու կիսուն Գուրգէն Արծրունին խոյս տալով Բուղայէն գնաց «ի Սպեր գաւառ, և էր յայնժամ առեալ ի Յունաց գողաբար իշխանիկ կոչեցեալ ի տհմէ Բագրատունի, զբերդն Արամանեակ կոչեցեալ, և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով։ Եւ առաւեսեացց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանկանն առնուլ զամրոցն, և անդ Գուրգէն բազում արութիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ մի անգամ այլ բազում անգամ....»։ — Վարդան Արամանեակ անուամբ գաւառ մը կը յիշէ, որ անշուշտ կ՚ինկնար Մեծ Հայքէն դուրս։

ԱՐԱՄԻՍ. Տես ԻՐԻՄԻՍ։

ԱՐԱՄՂՈՒ կամ ԱՐԱՄԱՆԻՑ ԳԻՒՂ. — Գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Օշականի արեւմտակողմը. բնակիչք այժմ այլազգի են, 10 տուն։

ԱՐԱՄՈՒՍ կամ ԱՐԱՄՕՆՔ. — Հայաբնակ հին գիւղ, Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, 1129 բնակչօք։ Եղիշէ Երամնոս անուանած է գիւղս, բայց հարկ էր որ ուղղականի մէջ կոչուէր Արամոնք և կամ Արամունիք, ինչպէս կը կոչեն Սամուէլ և Կիրակոս պատմիչներն, և անոնցմէ առաջ Ասողիկ՝ Արամոնեաց կ՚ըսէ։ Անուն եղած է քաջին Արամայ անուանէն, ինչպէս որ կաթողիկոսաց գաւազանազրոց մէջ զրուած

է Գիւղ Ագռանց, որուն մօտ էր Աբեխեղ կամ Աբեխուս քաղաքն ուր քաղսմանց Շամիրամեան պատերազմէն վերջը ինկած լինելով Ագռ, Ասորւոց թագուհին փնտռել տուաւ անոր դիակը։ Յովհաննէս պատմարան կաթողիկոսը գիւղիս համար կ'ասէ, թէ « Այս գեղ սեպհական էր տան կաթողիկոսարանին. նախ քան զչարչարանս Ս. Գրիգորի՝ յարքայէն Տրդատայ նուիրեալ եւ իսկ հաստատուն պայմանաւ ընձեռեալ. որոյ և յետոյ վճռանն պահի մինչև ցայսօր ժամանակի »։ Այս գիւղէս 729 թուականին կաթողիկոս ընտրուեցաւ Գաւիթ Ա, որ և շինեց « ... եկեղեցի ի գետոյն Աբամնոյ, գեղիցայարմար զարդարմամբ ». մեռն ալ վայելուչ բնակութեան տեղի շինելով, հոն ութ տարի բնակեցաւ, և վախճանելով նոյն եկեղեցւոյ մէջ թաղեցաւ։ Այս հին եկեղեցւոյ քայքայած սրմոց հազիւ մէկ մասը կայ այժմ, շինուած կոփածոյ քարերով. անյայտացած է Գաւիթ Ա կաթողիկոսի գերեզմանատեղին։ Այժմեան եկեղեցին կը կոչուի Ս. Յակոբ, զոր փոխանակ հնոյն նորոգ կառոյց քարաշէն Տէր Յովհան քահանայ 1863 թուին։ Երկու եկեղեցիներն ևս ունին թ դարու արձանագրութիւնք երկու տող, գօտւոյ նման սրմոց շրջապատուին փորագրած։ Օրպէլեան պատմիչը կը սխալի՝ Գաւիթն առաջ կաթողիկոսանիստ համարելով այս գիւղս. ընդ հակառակն իր յիշած Յովհաննը նստած է Աւան գիւղը, ինչպէս կ'ասացինք հնագոյն պատմիչը։ Թէպէտև քիչ ժամանակ կաթողիկոսանիստ եղած է գիւղս, սակայն այնու հանդերձ բարգաւաճեր և զարգարուեր է շինութիւններով և արբունիքամբք՝ յորոց կը յիշուի ԺԵ դարուն Աբամնոյ Ս. Խաչն Ագռոց վանքի մէջ։ — Աբամնոյ արեւելեան հարաւային կողմը բլրակի մը ծայրը շինուած է սրբատաշ քարով մատուռ մը Ս. Աստուածածնի՝ հայկական ՅՒԶ (=907) թուականին։ Աբամնադարութիւնն՝ որ միւս եկեղեցւոց նման շրջապատած է չորս կողմը, կը յայտնէ որ Գրիգոր Սիւնեաց աէրը վաճառ Հայկազնի որդին, շատ գանձիւք գներ է Աբամնվքայ (Աբամնոյ) գիւղը Հազարացիներէն, և մի և նոյն ժամանակ նորոգած է այս մատուռը։ — Ակրաբատ, 289։ Մատրագր. Հին Հայ. 455–6։ Գեղարդեան, 272–276։

ԱՐԱՅԻ ԳԻՒՂ. — Աւերակ գիւղատեղի Ակրաբատայ Աբագածոյն գաւառի մէջ, Պաղարճուղ գիւղի մօտ՝ հարաւակողմը։

ԱՐԱՅԻ ԼԵՌ. — Նշանաւոր և պատմական լեռ Ակրաբատայ Աբագածոյն գաւառի մէջ, Աբագածոյ արեւելեան գօտւոյն վրայ։ Կը պատմուի թէ այսպէս կոչուեր է Աբա գնդակի անուամբ, որ Ասորեստանի Շամիրամ թագուհւոյ դէմ պատերազմի երթելու ժամանակ՝ լերանս ստորոտը բնակեցաւ։ Այս աւանդական պատմութեան վկայ կրնայ համարուիլ նաև Շամիրամայ անուամբ կոչուած լեռը, որ կ'ինկնայ լերանս գիմաց՝ Կոտայք գաւառի մէջ, և որոյ ստորոտն ալ բանակած է եղեր Ասորեստանի թագուհւոյ զօրքը։ Այս երկու լերանց մէջ ստրածուած է պատահարձի յարմար լեռնապաշտ մը։ Լերանս գիրքը կտրտած է, բայց ոչ այնչափ սրտացայր. հիւսիսային և հարաւային երեսները՝ միապաղաղ գագաթէն քիչ մը վար, ունի պատառուածքներ՝ անշուշտ երկրաշարժներու ազդեցութենէն եղած, այս պատճառաւ այլազգիք լերանս Գառնի ետրզգ (հերձափոր) անունը կու տան։ Հարաւային կողմի պատռուածոյն ձորացած տեղւոյն մէջ, մինչև գարգ կը պատուի քարայր մը, իբրև գերեզման վաղեմեայ կուսի, ուր կը գիմեն բազմաթիւ ուխտաւորք Համբարձման տօնին։ Գեղեցիկ են տեսարաններ Աբայի լերան շրջակայքը, զարգարուած լինելով ոչ միայն բնութեան հրաշալի տեսարաններով, այլ և սրբաշէն վեհատաններով, ինչպէս Եղուարդայ և Թեղենեաց վանքերը, Քղնոյ վանքը Հրազդանի խորաձորի մէջ, Ազդմոսավանք, Յովհաննաւանք և Սերկևի (հն. Միզի) տեղատատ։ — Վաղարշապատ, Ա. 28–30։ Ակրաբատ, 161։

ԱՐԱՅՎՈՍ կամ ԱՐԼԻՊՈՒՏ. — Փոքր Հայոց գաւառակ, Ակիսեան Նիկաէ գաւառի մէջ, ունի 14 գիւղ. ի հնումն կը կոչուէր նաև Աբապիտոս։

ԱՐԱՆՈՑ. — Հին գաւառ Աղուանից, գիրքը գաշտային է. այժմ միացած է Տոի գաւառի հետ և ծանօթ է Քեսապիլու անուամբ։ Բնակիչք մահմետական են։

ԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ. Տես ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ:

ԱՐԱՇԱՏ Տես ԵՐԻՇԱՏ:

ԱՐԱՇ Տես ԱՐԻՇ:


ԱՐԱՇԻՆ. — *Լեռ Միւնեաց երկրի գաւառի հիւսիսային կողմը. բարձր 9940′:*

ԱՐԱՈՒՍ. — *Հայարնակ գիւղ Միւնեաց Ծղուկ գաւառի մէջ, 45 տուն բնակչօք:*

ԱՐԱՊԻՍՈՍ. Տես ԱՐԱՁՊԻՈՍ:

գրական սխալ չէ, չգիտեմ ինչ հիմամբ այդպէս փոխած են:

ԱՐԱՏԻՒ. ԱՐԱՏԵՆՔ *կամ* ԱՐԻՏԵՒ. — *Հին գիւղ Միւնեաց Վայոց ձոր գաւառի՝ բոլորաձեւ հովտի մը մէջ, վտակի մը աջակողմը: Այժմ ծանօթ է Աղասի անուամբ, և ունի 45 տուն այլազգի բնակիչ: Գիւղիս մէջտեղը բարձրաւանդակի վրայ ի հնումն*



156· *Արատէս վանքի աւերակները:*

ԱՐԱՍՈՒՍ. Տես ՀՈՌՈՍ:

ԱՐԱՍՏԱՄՈՒՂ. — *Հին գիւղ Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ. այժմ անծանօթ է:*

ԱՐԱՎԱՐԴԱՆ. — *Գիւղ Աղբարատայ վանդակ գաւառի մէջ, Կարսի արեւմտակողմը. բնակիչք յոյն: Այժմեան Առւտաց վիճակացոյց տախտակաց մէջ, գիւղիս անունն գրուած է Կարաւ–վարդան, որ եթէ տպա-*

կառուցուած էր հայակապ վանք մը՝ Արատեսի վանքը, զոր կը յիշէ Միւնեաց պատմիչը, որ և գիւղին հետ իւր Տարսայիճ հօրէն իրեն ժառանգութիւն վիճակելով՝ նուիրեց Ներսեհանից հաչակաւոր ուխտի միանձանց, իբրեւ կալուած և բնակարան ամրան: Տակաւին թէ և մասամբ կանգուն են վանացս եկեղեցիներն, սակայն ամայի, և օրէ օր

քայքայման և կործանման ախուր վիճակի մէջ են։ Ա.յս եկեղեցիներէն գլխաւորն կառուցուած է չորս սրմանփակ սեանց վրայ. ունի երկու աւանդատունք կամ մատուռներ աջ և ձախ կողմերը, որոց մէջ կան պատառ բապի սեղաններ։ Ունի նաեւ ժամատուն՝ կոփածոյ քարերով շինուած, վեց սրմանփակ սիւներով, և երկու խորանօք և պատուհաններով։ Աբեղաքին կողմէն հարաւային սրմնոյ վրայ քանդակուած կայ արեւային ժամացոյց, տասներկու շառաւիղներով իւրաքանչիւրի ծայրերը հայկական տառերով Ա. Բ. Գ. մինչեւ ԺԲ։ Աբեւելեան սրմնոյ մօտը կայ արոցաձեւ տապան մը ՉԼԹ (= 1280) թուականաւ գեղեցկատառ արձանագրութեամբ, յորում հանգչին նշխարք վանքս նորոգող Բարձրաբերդի Հայրապետի։ Ժամատան հարաւային սրմնոյ վրայ եւս կայ Մաւաքա անուն անձի մը նուիրատուութեան յիշատակարանը. ներքին սրմներու վրայ եւս կան արձանագրութիւնք։ Հիւսիսային կողմէն գետով մը կը մացուի երկրորդ եկեղեցին, կանգնած չորս սրմափակ բարձր և նուրբ սեանց վրայ, որոյ տանիքն խախտած է և այժմ թեւերուս կործանած։ Վերոյիշեալ ժամատան կամ գաւթի վրայ շինուած է եղեր փառահեղ զանգակատուն վայելուչ կամարներով, որ ասդ այժմ կործանած է։ Նոյն սխալ բազդին են վիճակուած այժմ նաեւ գաւթի հիւսիսային և հարաւային պատերն, և միայն մնացած են կամարակապ արբանաշ քարէ առաստաղը և սիւներն։ Գաւթի արեւմտեան դրան ճակատը կայ ճարտարապետական պատկեր Տիրամօրն՝ Յիսուս գիրկը, և երկու կողմն կրկին անձնաւորութիւնք։ Երրորդ նոյնպէս կիսակործան եկեղեցւոյն քանդակներն և դրան զրաւազները ասելի նուրբ արուեստով շինուած են, ուր կը տեսնուին զանազան ձեւերով խաչեր, ողկուզներ, կենդանիներ, և այլն։ Վանացս եկեղեցեաց սրմներու և խաչարձաններու վրայ կան բազմաթիւ արձանագրութիւններ, յորոց մին կը յայտնէ երեք եկեղեցիներուն անուանք, որք են Ս. Սիոնի, Ս. Աստուածածնին և Ս. Կարապետ։ Վանացս արձանագրութիւններէ չի յայտնուիր հիմնարկութեան թուականն, եղած թուականներէն հնագոյնն է ՆԻԴ (= 975), և նորագոյնն՝ ՌՃԿԲ (= 1713)։ Գիւղիս մէջ գրուած խաչքարերէն նշանաւոր են 200 քայլ եկեղեցիներէն հեռու գտնուած երկու գեղեցկաքանդակ խաչարձանք՝ բարձր պատուանդաններով, որոց մին ընկած է գետին։ — Միսկաեան, 141—145։ Հնութիւնք վանիոյ, եր. 279։ եւ այլն։

ԱՐԱՐ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։

ԱՐԱՐԱՏ. Տես ԱՅՐԱՐԱՏ։

ԱՐԱՐՈՒՑ ՎԱՆՔ. Տես ԱՐԱՐՔ։

ԱՐԱՐՏԱԿ. — Ա.յս անուամբ լեռ մը կը յիշէ Ա.ղուիկ, որ կը թուի թէ կ՚ինկնար Ա.յրարատայ Բասէն գաւառի մէջ։ Յուսահատ նախնւոս կայսրը բազմաթիւ զօրքերով Հայաստան եկած ժամանակ, այս լերան մօտ իր զօրքերը երեք մասանց բաժնեց։

ԱՐԱՐՔ. — Հին երեսփի գիւղ Հայոց, Վասպուրականի Ճուաշ գաւառի մէջ։ Գիւղիս մօտ կամ մէջ էր անշուշտ Ա.ղարուց վանքը, որ Մաղարդայ Ս. Յակոբեանոսի վանքի թեմերէն էր, սահմանուած Մեծէն Ներսիսէ։ Տես ՎԱՆ։

ԱՐԱԻԱԴԵՏ. — կը յիշուի Սիւնեաց Բաղք գաւառի մէջ։

ԱՐԱԻԻՈ կամ ԱՐԱԻՍԵԱԿ. — Հայանուն՝ բայց այլազգարնակ գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի Ա.պրակունեաց վիճակի մէջ։ Կայ նաեւ համանուն վտակ մը։

ԱՐԱԻԻՈ. — Հայարնակ փոքր գիւղ Սիւնեաց Հարանդ (Ջահ եղուր) գաւառի մէջ. բնակիչք 160, բաժնուած 20 տան։

ԱՐԱԻԻՈԱԲԱԿՔ. Տես ՍՈԴՔ։

ԱՐԱԻՍԵԱԿ. Տես ԱՐԱԻԻՈ։

ԱՐԱԻՐԱԿ. Տես ԱՐՕՐԱԿ։

ԱՐԲԵՆՈՒՏ կամ ՍՐԲԵՆՈՒՏ. — Ա.յս անուամբ բարեհամ աղբիւր մը կը յիշուի Բարձր Հայոց մէջ։

ԱՐԲԵՐԴ. Տես ՅԱՐԲԵՐԴ։

ԱՐԳԱՐ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ։

ԱՐԳԱՃԻՆ կամ ԱՐԳԻՃԻ. — Հին գիւղ Գեղաքունեաց (Սիւնիք), որուն համապատասխանող կը համարուի Ա.յրիճէ գիւղը։

ԱՐԳԱՍՈՎԻՏ. — Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին։ Գաւառիս անունն գրուած է նաև Ջարդարեաց ովիտ։

ԱՐԳԵԱՋ. Տես ԱՐԿԱՋ։

ԱՐԳԵԼ. — Հայաբնակ գիւղ Աղբարատայ կոտայք գաւառի մէջ։ Բնակիչը 458, բաժնուած 56 տան։

ԱՐԳԵԼԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՆԻՆ ՎԱՆՔ. Տես ՏԻՐ ՅՈՒՍԿԱՆ ՈՐԴԻ։

ԱՐԳԻՆՈՍ. — Ագէոս գրուած յիշեցինք լեռս ի կարգին, Ասաղին Հայոց մէջ, կը գրուի նաև փախանակ ա՛ր տառով։ Աղբագիք ուրիշ զանազան անուններ տուած են լիրանս, ինչպէս Լրձիկ կամ Արձիաս, որ է ազատագրութիւն հին Արիէոս անուան կ՚անուանեն նաև Ճհսկի հրաձախ։ Լեռս անուանի է թէ՛ հին և թէ նոր պատմութեան մէջ, աշխարհիս մեծամեծ լեռներէն մին կրնայ համարուիլ, լայնանիստ է և բարձր։ Գագաթը միշտ ծածկուած է ձիւնով, որ իրրև սպիտակ գլխարկ մը կ՚երևի երկու երեք օրուան ճանապարհ հեռուէն. օդասաս ամսոյն մէջ անգամ հոն ձիւն կու գայ։ Ունի ագրիւր մը, որոյ ջրոյն առատջարաբութիւնն և պատուականութիւնն հռչակուած է։ Լերանս վրայ կը գտնուին արջ, գայլ և ուրիշ կենդանիներ։ Սաբրատները կան ցիրուցան հին կամարակապ շինուածոց աւերակներ, և փոքրիկ քարակոփ այր մը, յորում կը գտնուին մարդկանց ոսկրտուիք, և կը կարծուի որ գերեզմանատեղի եղած լինի։ Լերանս մօտ կը գտնեն հնագէտք նաև հին կեռաբիոյ աւերակները։ — Նոր Հայ. 310։

ԱՐԳԻՆԱ. — Երբեմն անուանի գիւղաքաղաք Աղբարատայ Շիրակ գաւառի մէջ, և այժմ փոքրիկ տանկարնակ գիւղ Կարսոյ Ախուրեան գետոյ ձախակողմեան եզերքը։ Մեր պատմիչներէն Մաամիկոս Ուռհայեցին միշտ Մեծ Արգինա կ՚անուանէ գիւղս, անշուշտ մէջը գտնուած հռչակաւոր վանաց և վարդապետարանին համար, որոյ սկզբնաւորութեան ժամանակն յայտնի չէ. այդ վանքի մէջ կար նաև ուխտական խաչ մը։ Կամնարականաց ժամանակ, Զոր զարէն սկսեալ նշանաւոր է եղեր գիւղս, իր ընդարձակ և ամուր բերդովը։ 603 Թուականին երբ Պարսիկք Շիրակաւանէն չուող Յունաց վրայ կ՚երթային, շրջակայ գիւղորէից բնակիչը այս բերդս ապաւինեցան և օգտուելով ամուր դիրքէն և երկու գետոց անձուկ միջոցէն, ուսկից պիտի անցնէր պարսկական բանակը, յարձակեցան գերանդիներով անոնց վրայ, մեծ վնաս հասուցին և աւարն առնելով ամրացան վերըսաին իրենց բերդը։ Իսկ Պարսիկներն յաղթութեամբ գառնալով, երբ տեսան իրենց զօրաց հասած մեծ չարիքը, արշաւեցին բերդիս վրայ և տիրելով՝ շատ մարդ սրով սատակեցին. շատերն ալ երկիւղալից իրենք դիրենք բերդէն գահավէժ վար նետեցին, մէկ մասն ալ գաղտնի ճանապարհով, գետի կողմն բացուող գռնէն դուրս ելնելով փախաւ. իսկ մնացած բոլոր ժողովուրդը գերի տարին, ինչպէս նաև բոլոր գաւառի մէջ եղած աւարը։ Այս պատմական դէպքս կը յիշէ Սեբէոս (Գլ. ԻԲ) և գիւղիս անուն կը գրէ Երգինա։ Ասկէց վերջը գրեթէ երեք դար չի յիշուիր Արգինայի նկատմամբ դէպք մը, և կը թուի թէ իններորդ դարուն, Բագրատունեաց սպանութենէն ի Շիրակաւան հաստատուած միջոց, փոխադրուած է նաև կաթողիկոսական աթոռն Արգինայի մեծ վանքը, որ անկէց վերջ գրեթէ դար մը միշտ յԱնի փոխադրուած ժամանակ Եիսա կաթողիկոսաց կոչուած է։ Անանիա Մոկացի կաթողիկոսը՝ որ ժ. դարու կիսուն եղաւ, կը թուի թէ աստ շինուածներ ըրած է, ուր և թաղուած է իր մարմինն։ Անանիայի քրոջ որդին և յաջորդը Խաչիկ Ա (972–990), ըստ Ասողկայ (Գ. Թ) պատմութեան, «Ղորղնեայ գաւառն կաթուղիկոսարանին ի Շիրակ գաւառի, ի գիւղաքաղաքին Արգինայ, յեղերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի Տեառն Անանիայի՝ Հայոց վերապիսպոպ. և ի նմին գիւղ շինեաց գկաթողիկէ եկեղեցին վիմարկեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք, գմբեթաձեւ խորան երկնամած. հանդերձ երեք եկեղեցւօք նորոգաձև հրաշակերպ չքնաղագեղ յօրինուածովք. և գարդարեաց մեծապայծառ ծիրանածագղիկ ոսկեթել անկուածովք. ի զարդ ոսկւոյ և արծաթոյ, և ամենագարդ պայծառութեամբ ջահարորբոք լուսաւոր անօթոց։ Այլ և զաստուածախօս կաւակս յօրմոցի սաստիկ զգիրս սուրբս... հանդերձ ամենայն վարդապետացն Հայոց»։ Հայոց մեծ ճարտարապետ Տրդատ կառոյց այս հրաշակերտիկ կաթողիկէն, Անուշ մայր եկեղեցին առաջ։ Խաչիկ կաթողիկոսն վախճանեալ 990

թուականին, կը գտնեն եկեղեցւոյս հիւսիսա-յին կողմը, իրեն յատուկ հանգստարանի մէջ։ Կաթողիկոսական աթոռոյն ասկէ վերնայէն վերջ ևս, Արգինա իւր վանքովն և վարդա-պետներով, քանի որ երկիրը շէն էր, միշտ անուանի եղաւ։ ԺԱ. դարու կիսուն Ասողիկ Հայոց խմառաուն վարդապետաց կարգը կը գասէ նաև ումն «Տէր Ղեւոնդ ի Բագրեւանդ գաւառէ՝ իշխան Հայոց... այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և խմառասաւէր, ուսեալ ի մեծն Արգինա, հասեալ ամենայն չնորհաց ասառւածեղէն կտակարանացն», և այլն։ Աչտիսի նշանաւոր տեղւոյ մը այժ-մեան տեսուր վիճակն խիստ սրտաճմլիկ է։ Ասողկայ յիշած եկեղեցիներն բոլորովին կոր-ծանած և գետնի հաւասարած են, միայն կաթողիկէին հիւսիսային որմն և արևմտա-կողմեան կէս մասը որ կանգուն մնացած են, բաւական են ցուցընելու համար, թէ ամբող-ջութեամբ և ձեւովն հրաշալիք մի է եղեր, և քաջարուեստ ճարտարապետին Տրպատայ ա-նունն անմահացնող վսեմ կոթող մը։ Արև-մեան դրան վրայի արձանագրութիւնն բո-լորովին խանգարուած է, կը նշմարուի շի-նուիեան թուականն ՆԿԱ (= 1012) և շի-նողի անուն.... քեսորդի խալկայ կաթողի-կոսի։ Ուրիշ տող մը արձանագրութիւն ևս կայ հիւսիսային որմոյն վրայ ներքին կող-մէն։ Գիւղիս արևմտակողմը ձորոյն մէջ կը տեսնուին աւերակաց քարակոյտեր, և սև-պացած բլրոց եզերքը ամրոցի աւերակներ։ Կաթողիկոսարանին և ոչ հետքերը կը նշմա-րուին։ — Շիրակ 12։ Տեղագ. Հայս. 173։

ԱՐՈՒՆԻՔ. Տես ԱՌՈՒՆԻՍ։

ԱՐԱԱՆՍՈՆ. — Հին գիւղ Զորբորդ Հայոց Խորձային գաւառի մէջ, զոր Քուստինիանոս կայսրը ամուր պարսպով պատելով՝ բերդ ը-րաւ և մէջը զօրքեր դրաւ։

ԱՐԱԱՒ կամ ԱՐԱԱՓ. — Սակաւածանօթ գիւղ Այրարատայ Ձահուկ գաւառի մէջ։ Մխաքանոցաց ժամանակ, գիւղիս բնակիչք կը յիշէ Ագաբիա Ֆերհատն 30 տուն, 100 հաղորդընկալք և 70 տղայք։ Հ. Ալիշան կը համարի թէ Արթաս կը համապատասխանէ հին Որդոք գիւղի։

ԱՐԱԱԿ. Տես ԱՆԴԱԿ։

ԱՐԱԱՒԱՍԻԿ. — Այրարատայ Արագած-ոտն գաւառի մէջ, Բիւրականի արևելակող-մը ձորակի մէջ Զրվշտիկ կոչուած վտակի մօտ կար այս անուամբ հին մատուռ մը սրածայր գմբեթով։ Կ'աւանդեն թէ այդտեղ վախճանելով ճգնաւոր ումն, Աստուծոյ հրեշ-տակը բերելով հոն քահանայ մը ըսած է. «Արդ առաւիկ երթ և թաղեա զդա». և քահանայն թաղելով զայն ձորակի արևելեան եզերքը, կը կանգնէ վրան մեծ խաչվէմ մը, և ջրոյն արևմտակողմը այս մատուռը։ 1840 թուականի ջրոց հեղեղները տապալելով կոր-ծանեցին մատուռս։ Ըստ ամենց այդ տեղ-ւոյ տապդ հին անունն էր Արտաւագիկ։

ԱՐԵԱՆԱ. Տես ԸՆՋԻՆ։

ԱՐԵՐԹ. — Հայաբնակ գիւղ Տարօնի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արևելեան հիւսիսային կողմը։ Բնակիչք 100 տուրքէն աւելի են։

ԱՐԻԿ. — Բազմամարդ հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Հաւճոյ վանքի հիւսիսային արևմտակողմը գրեթէ մղոն մը հեռու, գետակի և ձորի մը երկու եզե-րաց վրայ։ Բնակիչաց թիւն է այժմ 2558, բաժնուած 367 տան. գաղթած են Կարնէն և Կարսէն։ Գիւղս ունի երկու հնաշէն և գե-ղեցիկ եկեղեցիներ. մին մեծ Ս. Գրիգոր խաչաձև կիսաբոլոր թեւերով, անսիւն է և գմբեթեն ինկած. միւսն ևս սիւն չունի և ա-ւելի փոքր է, նուիրուած է Ս. Աստուածա-ծնի։ Այս եկեղեցիներու շինուածք յայտնի չեն, որովհետև տարին կողմերը արձանագրութիւնք չկան, և բարձրերը եղած արձանագրութիւնք ևս այցելուներէ կարգա-ցուած չեն։

ԱՐԻՍ-ՈՒՊԱՆԻ. — Հայաբնակ գիւղ Գու-գարաց Զորոփոր (Տփղիսու վիճ.) գաւառի մէջ։ Բնակիչք 192, բաժնուած 25 տան։

ԱՐԴԱՆ. — Հայաբնակ գիւղ Զորբորդ Հայոց, Բալուի առաջնորդութեան մէջ. բնա-կիչք 50 տուն. ունին եկեղեցի մը Ս. Մի-քայէլ։

ԱՐԴԻՒԻ. — Հինաւուրց նշանաւոր գիւղ Հայոց, Գուգարաց Տաշիր գաւառի մէջ, Օ-ձուն գիւղի արևմտեան հարաւային կողմը։ Գեղեցիկ դիրք ունի, երեք կողմերն ունի մատոյց անառատագարդ բլուրներ, իսկ արևե-լեան կողմը բաց է, ուսկից կ'երևի Լօռուայ


գաւառակի մեծ մասը։ Ըստակչաց ըսելով, ո՛ր թիւն է 160, գիւղիս անունը կանխաւ եղեր է Մելիք–գիւղ (Մելիք–քեանդ)։ Ուխթերոց գարու մէջ, ըստ աւանդութեան, զրպարտութեան մը համար Յովհան Օձնեցին իւր ծննդավայրէն երեսելով կու գայ Յարդուի, ուր և կը շինէ իւր համար ճգնելու տեղ և եկեղեցի։ Իբր թէ Յովհան Օձնեցին Օձունէն հեռացած ժամանակ անիծեր է գիւղը և Մելիք գիւղը գալով՝ վերջինս անուաներ է Աւտուխ, այսինքն Մելիքն ատի և Օձուձը տուր։

Յովհան Օձնեցիի վանքը այժմ կը գտնուի Արդուինէն ½ վերստաչափ հեռու արեւմտեան հիւսիսային կողմը, լերան լանջի վրայ։ Ոչ կարուած ունի և ոչ վանահայր կամ տիրացու, ունի միայն երեցփոխան մը. երբեմն Արդուինի քահանայն կը հանդիպի կարևոր դէպքերու ժամանակ։ Վանքի տօնը Կարմիր կիրակէի օրն է, ուր կը դիմեն բազմաթիւ ժողովուրդք ամէն կողմերէ։ Այս վանքը շատ խարխուլ վիճակի մէջ է, ունի հին բրգաձև և հաստահիւն զանգակատուն մը։ Եկեղեցւոյ ներսը սեղանի առջև կայ քարեայ հաստատուն դագաղ մը, վրան ծածկուած նոյնպէս քարէ անուշաշ կափարիչով, զոր է Յովհան Օձնեցի իսմաստասիրի գամբարանն։ Ի հնումն Արդուի գիւղը և շրջակայքը, սեփհական կալուած են եղեր Յովհան Օձնեցիի տոհմին, որ՝ ըստ պատմագրաց «Էր յազգս տանէ»։ Գիւղս միշտ կառավարեր են Օձնեցիի տոհմի շառաւիղները, որոնց մէկ մասը Մելիք և միւսը Քալանթար տիտղոսը գործածած են։ Վերջին գարերու մէջ գոքա կը կոչուէին Լօռուց–Մելիքներ և Լօռուց–Քալանթարներ, որովհետև Պարսից տիրապետութեան ժամանակ իրենք կը վարէին երկրի մելիքութեան և քալանթարութեան պաշտօնները. բայց իրենց իսկական տոհմանունը եղած է Տայիենեանք։ Իրենց անուամբ Արդուիի մէջ Տայիենեանց բաղ մի ևս կայ, ուր կ՝երեւին նոցա ապառանից աւերակներու հետքերը։ Գիւղիս մօտ ձորակն կը կոչուի Վիշապաձոր։ Արդուի ըստ երեւութին, շատ մեծ գիւղ է եղեր, սակայն ինչպէս տեղացիք կը պատմեն, ժողովուրդը մեծ բազմութեամբ գաղթեր է Ախտալուին քաղաքը, որ իւր անունն առած կը համարուի գիւղիս անունէն։ Այս գաղթականութիւնն եղած է անշուշտ անցեալ գարու վերջերը, երբ Լազկիները աւերեցին Թէ՛ գիւղս և Թէ մենաստանը։ Լօռու Մելիքանդներն և Քալանթարեանները, այս գիւղիս կալուածատէրեր են, վերջնոցս մեծ մասը կը բնակին Արդուիի մէջ։ — Ջալալեանց Ճնապրհրդ. Ա. 103–104։ Լուսակ, ե. Գիրք Ա. 275–280։

ԱՐԴՈՒԻՆ. Պղ. ARTVIN. Ե. Артвинъ. — Հայաշատ և գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Խուճայիսի նահանգի մէջ, Ճորոխ գետի ձախակողմը։ Ե. Մարկով ուսս ճանապարհորդն սքանչացած քաղաքիս դիրք վրայ լաւ կերպով կը նկարագրէ զայն, յորմէ կը քաղենք մասն ինչ։ Իբրեւ գեղեցիկ նկար մը առաջանալ կ՝երևի յօդս Արդուին (թ. 157) բարձադիր և կիսաբոլոր ձևով քարուտ լեռան վրայէն, և ամիիթեատեր ձևով կ՝իջնէ ձորոյն մէջ։ Տներն ընդհանրապէս ձեւուր, բազմայարկ և սպիտակ քարաշէն են. որք դրեթէ լերան գագաթէն մինչև ստորոտը ցիրուցան սփռեալ կ՝երևին կողէն ամէն կողմը. շրջապատուած բազմաթիւ պարտէզներով՝ որք գարնան ժամանակ իրենց կանանչ գալարիօք, կը ներկայացնեն հակապատկեր մը քաղաքին շրջակայ մերին, մերթապոյն և լերկ ժայռերուն։ Քաղաքին ծայրը աջակողմը՝ բարձր սեպացեալ ժայռի վրայ, կայ կիսաւեր հին ամրոց մը, որ իւր զօրաւոր և շրջակայից վրայ տիրող դիրքի համար, երբեմն անառիկ և անմատչելի համարուած էր։ Շատ մնասմբք նշանաւոր է Արդուին և իւր առաւելութեանց չափ չկայ. քաղաքին վերին մասը կը գտնուի բարձր դիրքի վրայ, ուր փութով կը հասնի գառնաշունչ ձմեռն և ուր շատ համառօտ կը տեւէ ամառն։ Որչափ դէպ ի վար կը խոնարհի քաղաքն լերան մեղմիկ գարեանդին վրայ, այնչափ ևս շրջապատող բուսականութիւնն կենդանի և բարգաւաճ է։ Վերի բարձրաբերձ ստեպաց կը փոխանակեն ստոր խիտ ու խիտ կաղնիք, և բազմաթիւ այգեաց մէջ կը հասունանան խաղողին հրաշալի տեսակքն։ Տաք է վարը՝ լերան ստորոտը, տաք է ձմեռուան մէջ անգամ, հանդոյն ամրան տօթագին աւուրց։ Անդ կ՝աճին դեղձենիք, նռենիք, և ձիթենիք՝ որոց արտ-

մատները կը թմրայ ձմրան իւր պղտոր կո-
հակներով։ Արդուինի այս օրինակ գրից չնոր-
հիւ՝ բնակիչք տարւոյն մեծ մասը կը վա-
յելեն պարիզաց և անդոց բազմազգի բեր-
քերը։ Մինչդեռ լերանց գագաթներն կը հե-
ծեն բազմակոյտ ձեան խաւերու ներքև, մի
և նոյն ժամանակ վարը ձորոյն ափանց
վրայ՝ կը հասունանան բանջարեղէնք և պը-
տուղք, և դեռ ևս սաքս չը սպառած, կը
սկսին հասունանալ գարնանային վրայ գոր-
ւածներն։ — Արդուինի շատ օգտակար է բազ-

կեայ Հայոց թիւն 5500էն աւելի է, որոնք
երբեմն ունէին եպիսկոպոս, բայց այժմ ե-
պիսկոպոսական այդ հին թեմն, գանազան
իրաց հանգամանքներով թափուր մնացած է։
Ունին չորս հետևեալ եկեղեցիները, Ս. Ա-
ստուածածին, Պօղոս—Պետրոս, Գրիգոր Լու-
սաւորիչ և Ս. Խաչ։ Ա՛յս եկեղեցիք կառու-
ցուած են չորս գանազան մասանց մէջ, ո-
րոց անուանք են. Մինճաքաղաք, Խայփէյ,
Կօլօրտօ և Կորձուլ։ Եպիսկոպոսարանը, մայր
եկեղեցին և պիտուր ուսումնարանն կը գըտ-



157. Արդուինի քաղաքի տեսարանը։

նան Մինճաքաղաքի մէջ։ Միւս եկեղեցիներ-
ուն մօտ ևս կան մի մի ուսումնարան, սակայն
ուսուցչութեան կերպը և ուսմանց առարկա-
ները, դեռ նախնական հին վիճակէ նոր է
սկսեր բարեփոխիլ։ Քաղաքիս թէ՛ եկեղեցինե-
րը և թէ ուսումնարանք բարաշէն են, մա-
նաւանդ մայր եկեղեցին լաւ շէնք է և քովն
ունի փառաւոր նորաշէն զանգակատուն մը։
Էջմիածնական Հայք՝ որոց թիւը 1000ը
կ՛անցնի. ունին յատուկ եկեղեցի և վար-
ժարան։

Արդուինի գաւառի մէջ պիտուր պարապ-

մանեսը կը թմրայ ձմրան իւր պղտոր կո-
հակներով։ Արդուինի այս օրինակ գրից չնոր-
հիւ՝ բնակիչք տարւոյն մեծ մասը կը վա-
յելեն պարիզաց և անդոց բազմազգի բեր-
քերը։ Մինչդեռ լերանց գագաթներն կը հե-
ծեն բազմակոյտ ձեան խաւերու ներքև, մի
և նոյն ժամանակ վարը ձորոյն ափանց
վրայ՝ կը հասունանան բանջարեղէնք և պը-
տուղք, և դեռ ևս սաքս չը սպառած, կը
սկսին հասունանալ գարնանային վրայ գոր-
ւածներն։ — Արդուինի շատ օգտակար է բազ-
մաղբիւր ձորոյն գետն, որոյ վրայ ձգուած է
գեղեցիկ, բարձր և միակամար կամուրջ մը։
Ձորոյնը իւր նաւարկութեան յարմար ընթաց-
քովին կը կապէ Արդուինը Պաթումի հետ, հե-
ւանաբար և բովանդակ քաղաքակրթացեալ աշ-
խարհի հետ։

Արդուին ունի մօտ 1300 տուն, և բնակ-
չաց թիւն երկու սեռներն ևս մէկտեղ առնե-
լով՝ 8000ը կ՛անցնի։ Ամենէն բազմաթիւ
են Հայք՝ որք երկու հասարակութեանց բաժ-
նուած են. Յաճկաց թիւն է 1600, իսկ
վրացիք հազիւ 10—15։ Արդուինի կաթուղի-
կեայ Հայոց թիւն 5500էն աւելի է, որոնք
երբեմն ունէին եպիսկոպոս, բայց այժմ ե-
պիսկոպոսական այդ հին թեմն, գանազան
իրաց հանգամանքներով թափուր մնացած է։
Ունին չորս հետևեալ եկեղեցիները, Ս. Ա-
ստուածածին, Պօղոս—Պետրոս, Գրիգոր Լու-
սաւորիչ և Ս. Խաչ։ Ա՛յս եկեղեցիք կառու-
ցուած են չորս գանազան մասանց մէջ, ո-
րոց անուանք են. Մինճաքաղաք, Խայփէյ,
Կօլօրտօ և Կորձուլ։ Եպիսկոպոսարանը, մայր
եկեղեցին և պիտուր ուսումնարանն կը գըտ-

մունք այգեգործութիւնն է, որ խիստ շահաբեր է։ Շարունակեալ ջերմ ամառուան շնորհիւ՝ բնակիչք տարին երկու անգամ հունձք կ'ընեն, և սովորաբար յետ լազուրը հնձելու՝ զարի կը սերմանեն։ Բազմաթիւ պարտիզագ մէջ՝ որ սիրուած են Արգուինի շրջակայքը և տարածուած զառիվեր լեռնակողից վրայ կը հասունանան տեսակ տեսակ պտուղներ. խնձոր, տանձ, դեղձ, սալոր, խաղող, կաղին, թուզ, ձիթապտուղ. յետինքս կը բերեն 20 արտաւարկ ածելի տարածութիւն։ Այնքան տարածուած է աստ ձիթենւոյ մշակութիւնն և այնքան առատ է ձիթապտուղն, որ տարուէ տարի Արգուինի գաւառէն դուրս կը դրկուի ի Պաթումի և արտաքոյ քան զսահմանս տէրութեան մինչև 100,000 երկլիտր ձիթապտուղ, թէ՛ ուտելու և թէ ձէթ հանելու տեսակէն։ Արգուինի վաճառականութեան բերքերն են նաև ծխախոտ, ընկոյզ, խաղող, թուզ, շագանակ, սերկևիլ, մեղր, մոմ, և այլն։ Քաղաքին մէջ կը գտնուին կաշեղինաց գործատուներ, որք կը սփռեն ամերիկեան դուրս հազարաւոր այծամորթներ։

Արգուինցիք ընդհանրապէս անուանի են ճարպիկութեամբ և աշխուժութեամբ. լաւ դիտեն ձեռնագ ազգասէր և ուսումնասէր, ինչպէս նաև ջերմեռանդ և հոգեսէր։ Արտաքին յարաբերութեանց մէջ ևս խիստ քաղաքավար կը ձեռնտան։ Հիւրասիրութեան կոչմանէ չեն կարող այնչափ պարծենալ Արզուինցիք։ Զգեստուց արտաքին զարդարանքները, թէ՛ արանց և թէ կանանց շլացուցիչ են։ Իգական սեռը կը զարծածէ հին յունական տարազով զգեստներ, ճակատն և կուրծքըն զարդարելով շարեշար ոսկիներով։ Արանց հագուստները ընդհանրապէս լազերու տարազի նման են։ — Արգուին գաւառի հայաբնակ գիւղերը վեց են. Տանձոտ, Նորաշէն, Սարիչ, Մամաճէխիս, Փխիկուր և և Օքրօրակէր։ Գաւառիս մէջ կան նաև քանի մը հանքեր, ինչպէս Օրճոխ գիւղը ունի մարմարի քարահանք, Մորզուլը պղնձի, իսկ Խօզը երկաթի։ Թէթենիներու առատութիւնն և տեղւոյն կլիմայն խիստ յարմար կը թուին շերամապահութեան, սակայն քիչեր կ'զբաղին այս գործով։ Արգուին գաւառի արդիւնաբերութեան վրայ օգտաշատ տեղեկութիւններ հրատարակած է Մշակ գազաթն անգամներ։ — Բազմավէպ, 1889, էջ 392–395։ Մշակ, ԺԱ, 75, 173. ԺԳ, 36, 58. ԺԵ, 137։ Եւ այլն։

ԱՐԹՈՒԻՆ. — Գիւղ Գուգարաց Թոռնոզ գաւառի մէջ։

ԱՐԵԱՆ ԼԻՃ. — կը յիշուի Թ. Աթթուինի կորճէից Որսիրանք գաւառի մէջ։

ԱՐԵԳԱԿՆԱՆԱՊ. — Այս անուամբ բլուր մը կը յիշուի Տարօնոյ Տարօն գաւառի մէջ Տարօն լերան առաջատը, արեւելեան կողմը։ Ցիշատակարանի մը համեմատ, աստ ամիսփեցին սուրբ առաքելոց նշխարներն, և վրան եկեղեցի և վիճակից վանք կառուցին, որ է այժմեան Առաքելոց կամ Վարդաւու վանքը։

ԱՐԵԳԻՄ. — կը յիշուի Սասնոյ մէջ, տեղեկութիւնք կը պակսին։ — Այս անուամբ փոքրիկ գիւղ մը կայ Խոտրջոյ վիճակի մէջ։

ԱՐԵԳԻՆ. — Գիւղ Մոկաց աշխարհի այժմեան Սպարկերտ վիճակի մէջ. բնակչաց թիւն 100ի կը հասնի։ 1884 թուին տեղագրութեան մը մէջ գրած կը գտնենք Արագիլ անուամբ գիւղ մը Սպարկերտի մէջ, որ ինձ կը թուի թէ նոյն այս Արեգին գիւղն լինելու է։

ԱՐԵԳՈՒՆԻ կամ ԱՐԱԳՈՒՆԻ. — Վիճակ Միւնեաց աշխարհի Գեղարքունի կամ ածիլ Սոզք գաւառի։ Այսպէս կոչուած է արեւելեան դիրքովը, ինչպէս նաև յայլազգեաց կը կոչուի Կիւեւեիք։ Կ'ընկնայ Գեղամայ ծովակի արեւելեան ափունքը, երկիրը տնձուկ է, որովհետև ծովակէն քիչ հեռու կը բարձրանան լերինք և կը պարապին վիճակս։ Այդ լեռներէն կը բղխեն քանի մը գետակներ և կարճ ընթացք մը ընելով կը թափին ծովակն։ Վիճակիս գիւղերն՝ որոց անուամբ կը կոչուին նաև գետակներէն շաւակը, կը յիշուին իրենց կարգին։ — Միսաքան, 76։

ԱՐԵԼԱՆԱՅ ՎԱՆՔ. — կը յիշուի ԺԵ դարու վերաբերեալ յիշատակարանի մը մէջ։

ԱՐԵՆԻ կամ ՅԱՐԵՆԻ. — կը յիշէ գիւղս Առաքել Պատմիչ (ԻԱ) Այրարատայ Արտաշատոն գաւառի մէջ կարբիի մօտ, որ ի հնումն շէն է եղեր և իւր ժամանակ աւերակ և անմարդաբնակ։ Այս գիւղէն էր Սամսոնականից Սարգիս եպիսկոպոսը ԺԶ դարու սկզբներն։ Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐԵՆՑ կամ ՅԱՐԵՆՑ. — Գիւղ Մոկաց աշխարհի այժմեան Մոկը գաւառակի մէջ. ունի 100էն աւելի բնակիչ և Ս. Աստուածածնի քարաշէն եկեղեցի մը։

ԱՐԵՒԱՆՈՍ կամ ԱՐԵՒԱՆՈՍ. — Յայտնի աւերակ կը յիշեն այս անուամբ քաղաք մը Վասպուրականի Աղբակ գաւառի մէջ. բայց Խորենացին (Բ. ԼԻ) հետևեալ տողին մէջ որշ բան մը չի յայտնէ. «Եւ Բարդուղիմէոս առաքեալ՝ որ և կատարեցաւ առ մեզ յԱրեւբանոս քաղաքի»։ Օտարազգի մատենագիրներէն քաղաքս կոչուած է. Քորվաւսոպիս Մեծի Հայոց, Աչմանոպոլիս և Ոչվանոպոլիս։ Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ Ներքանոս կ'անուանէ քաղաքս՝ ըսելով «Եւ ինքն սուրբ առաքեալն հրեալ աւետարանել ի Հայս, և կատարեցաւ յԱրբրանոս քաղաքի ի Բարմ անուանեալ տեղւոջն յանուն առաքելոյն»։ Տես ԲԱՐՄ։

ԱՐԵՒԵԼՔ. Տես ԱՐԵՒԻՔ։

ԱՐԵՒԵՒՍ. Տես ՆՂՅՈՒԿ։

ԱՐԵՒԸՆԴԱՆ. — Ամրոց Եփրատացւոց երկրի մէջ, Կուբիս ամուր քաղաքի մօտ։ Եղեսիոյ Բագրեւն կոմսը 1117 թուականին եկաւ տիրեց այս բերդիս և շրջակայ վայրաց, որոնք Բագրատ անուն հայ իշխանի մը ձեռքն էին։

ԱՐԵՒԻՔ կամ ԱՐԵՒԵԼՔ. — Փոքրիկ գաւառ Սիւնեաց աշխարհի հարաւակողմը. սահմանքն են Ար.էն Կովսական, Հո.էն Կապան, Ա.Ժ.էն Գողթն գաւառները և Հր.էն Երասխ գետը։ Գրեթէ գետն է Մեղրի՝ որ ունի բաւական թուով օժանդակներ. կան նաև աւելի մէկ քանի գետակներ որք կը թափին Երասխ։ Ունի բարձր և ցած լերանց շղթաներ, գեղեցիկ վայելուչ ձորակներ և հովիտներ։ Ա.յդիներովին և բազմաթիւ պտղատու ծառերով մեր երկրի արգաւանդ և բարգաւաճ գոյն գաւառներէն մին կրնայ ըսուիլ։ Օդը ամառը սաստիկ տաք է և ձմեռն չափազանց ցուրտ, մանաւանդ երբ հովերն կը հնչեն շրջակայ բարձրաբերձ լեռներէն։ Բնիքերու մէջ առատութեան կոմսնէ կը յիշուին մանաւանդ բազէն շերամ և բամբակ. ունի նաև կարճատեսի մօտ փոքր արծաթահանք մը։ Գաւառիս ընդարձակութիւնն է հիւսիսէն հարաւ 15 մղոն և արեւմ. նոյնչափ ալ լայնութիւնը։ Կը կարծուի թէ ի հնումն առանձին իշխանութեան մը գաւառ կամ վիճակ եղած չէ Աբեւիք, վասն զի իբրեւ առանձին նահապետ կամ իշխան ոչ ևս չի յիշուիր, այլ հաւանական է որ մատն եղած լինի ուրիշ ընդարձակագոյն գաւառի մը (Թերեւս Գողթան), և ապա զառանցելով համարուեր է Սիւնեաց աշխարհի գաւառներէն միոն։

Սիւնեաց եկեղեցւոյն հարկաւորաց ցանկի համեմատ, Աբեւիք ունէր միայն 24 գիւղ, զորս կը գնենք աստ, հանդերձ իրենց տրից բաժնովը.

Աղվանք կամ Աղուց վանք	7
Կաւատի	15
Մայրի	8
Աբկավանք	8
Մալունու (Մանլեւ)	8
Տաիեար	8
Մեղրոյ վանք	20
Լոճավանք. Լանավանք	30
Որդիշոյ վանք	20
Լուսակայ վանք	12
Խոլավանք	12
Ջուարի վանք	12
Կարճաւանք	12
Մոլոշան	12
Տաշտուն	12
Կուբաւանք կամ Կուբինք	8
Աղարակ	8
Մանաղու կամ Մանուղու	8
Մել	6
Տենի	8
Կորեկնեք	10
Թաղաւայրի	6
Խոզուշիւղ կամ Խոզուղիւղ	6
Վարդանաձոր	6

Այս գիւղերէն ոմանք, ինչպէս կը տեսնուի, կը բարգուին վանք բառով, որոնք անշուշտ կրօնաւորաց բնակարաններ եղած են. վասն զի գաւառս որչափ որ անծանօթ և անյիշատակ է քաղաքական պատմութեան մէջ, ընդհակառակն մեր եկեղեցական պատմութեան մէջ նախածանօթն կրնայ համարուիլ՝ բարոզութեամբ սրբոյն Բարթողիմէոսի և իւր աշակերտաց. և հաւանօրէն վերը յիշուած Լուսակայ վանքն, իւր անունն առած է առաքելոյն Լուսիկ անուն աշակերտէն որ ծանօթ է ի պատմութեան։

Օրպէլեան Պատմիչ կը յայտնէ, թէ իւր

ժամանակ փոխանակ Արեւելից՝ երկու անուն կու տային գաւառիս, Դաշտոն և Մեղրի մէջը գտնուած կրկին նշանաւոր վիճակաց անուամբ։ Մեղրի աւանը պէտուր լինելով գաւառիս բոլոր գիւղերէն, իւր մէջէն վազող գետն և բոլոր երկիրն իսկ երբեմն կոչուած է Մեղրածոր։ Տասնի թեմին վերջին ցուցակաց մէջ կը յիշուին գաւառիս մէջ երկու վիճակաց անուններ, Մանգրու և Կաքաւաբերդ, որոց մէջ կը յիշուին վերոյգրեալներէն զատ հետեւեալ գիւղերն.

ՄԱՆՑՐՈՒ	ԿԱՓԱՒԱԲԵՐԴ
Թօս	Լիճ
Աղաւնեակ	Սեւատաղա
Գոմերանց	Տիկնատափ
Շուանսիծոր	Քարն
Իչխուն	Նորաշինիկ
Նաւուն	Թաղմեճ
Մեծնաձոր	— փոքր
Կարմրաձոր	— Մեջին
Մեզրէն	Թխկոտն. Թիկոտն
Ափկէս	Լէօք կամ Լեկ
Երկտաստանց	Կաւծն
Կուավանք. Կուրուս	Քուջերդ
Վանքն	Կալեր
Նուշանց	

Գաւիթ Բէկի պատմութիւն մէջ կը յիշատակուին նաև հետեւեալ տեղերը.

Գտանիս	Լեւազ
Տանրաւայ	Լէչկին կամ Լեշկին
Պուղաքար	Քիս կամ Աքիս

Ալիշան երկու վիճակաց կը բաժնէ Արեւիք, Մեղրածոր և Կնեաւուզ։ — Միսակեան, 298–308։

ԱՐԵՒՈՑ կամ ԱՐԵՒՈՒ ԲԼՈՒՐ. — կը գրտնուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ. կը կոչուի նաև Աչեւեաց Բլուր։ Հոս կը ճգնէին սուրբքն Աղաւն և Կրօնիդէս, Բաբեհամ աղբիւրի մօտ՝ որ կը կոչուի նաև Քաղցրահամ աղբիւր։

ԱՐՋԱՓԱՆ եամ ԱՐՋԱՓԼՆՑ. — Մեծ գիւղ Աչրարատայ Նիզ գաւառի մէջ. բնակիչք 1045, յորոց 750ը Հայք և մնացածը այլազգիք։ Հայք ունին երկու եկեղեցիներ, մին գիւղին հիւսիսային ծայրը, գերեզմանաց մէջ, կը կոչուի Ս. Գեորգ, որ հնութեամբն խարխըլած լինելով, նորոգուած է ի վերջոյ հասարակ քարերով և փայտով ծածկուած։ Երկրորդ եկեղեցին նորաշէն է և կը գտնուի գիւղի մէջ. նուիրուած է Ս. Աստուածածնի։

Գրեթէ գիւղս քառորդ ժամ հեռու հիւսիսային կողմը, լերանց ծոցերաց մէջ կայ մենաստան մը Ս. Աստուածածնի Նեղոտի կոչուած, մերձակայ աւերակ Նեղոտ գիւղի անուամբ։ Այժմ այս վանքս կը կոչուի Աբգարեանց անուամբ։ Եկեղեցին փոքր է, անաին և գմբեթաւոր, երկու կողմերը ունի մատուռներ կամ աւանդատունք, և արեւմտեան կողմէն գռնով մը կը մտցուի բնական կամարակապ ժամատուն մը չորս սիւներով զարդարուած։ Արեւմտեան հարաւային անկեան գետն խիտ ճարտար աբեւեաթիւ և վայելուչ շինուած է, և ունի արձանագրութիւն, բայց երկրաշարժի պատճառաւ քարերը խախտած լինելով անհնաւոտ կը մնայ։ Թերակատար արձանագրութիւն մի ևս կայ տաճարի գրան վրայ 1271 թուականաւ։ Տաճարի սրմոց վրայ կան նաև նուիրատուաց արձանագրութիւններ։ Վանայա միաբանից բնակարանները բոլորովին աւերած են։ Տաճարի արեւմտեան կողմը քարընկէց մը հեռու կը տեսնուին գեղեցկաշէն մատրան մը աւերակները, հոն կան նաև գերեզմաններ և խաչքարեր։ — Աղրատ, 258։

ԱՐՋԻՆԿԱՆ, ԱՐՋԻՆՃԱՆ. Տես ԵՐԻՋԱ։

ԱՐՋՆ. — Ագձնեաց նահանգի հին գաւառներէն մին, գրուած է նաև Աղձն և Աղձն ձեւերով։ Օտար մատենագիրք ևս գտնագան կերպերով գրած են գաւառիս անունն, ինչպէս Արքասեի, Արզանիեի, Արզուն, եայլն։ Գաւառիս սկզբնական պատմութիւնն, ինչպէս նաև անուան ստուգաբանութիւնն տակաւին անծանօթ են։ Խորենացւոյն պատմութենէն կը տեղեկանանք որ Մամասարայ ցեղէն ոմն Շարաշան երբ կուսակալ գրուեցաւ մեր աշխարհի արեւմտեան հարաւային կողմանն, այս գաւառս ալ իրեն պարգև տրուեցաւ։ Թ. Աղծրունեաց գաւառս կը համարի նախկին բնակավայր Աղծրունեաց տոհմի, և այդ պատճառաւ կը կարծուի, թէ կոչուած են նախ Արզրունիք և ապա փո-

փոխանակ Աժդրուձիք։ Այս կարծեաց ճըշդութիւնն կամ անճշդութիւնն առանց կասկածու հաստատել, բանիք միայն, որ Աժդրուձեաց ցեղի վերջին շառաւիղներն եւս ոչրած են այս գաւառս։ Ասոզիկ կը յիշէ գաւառս ալ Ազրու անուամբ քաղաք։ Ազրն սահմանակից է Տարօնագերանի Խոյի և Ասպահունիք գաւառաց, այժմ կը կոչուի Խարզան։ Երկիրը լեռնային է, ունի նաև գետակներ. բնակիչներն են հայ և քուրդ։ Գաւառս ալ կայ այժմ Խարզան անուամբ այլազգարնակ գիւղ մը (158), որ կը կարծուի թէ լինի հին Ազրն քաղաքի տեղը։ Ազրնի հայ բնակիչք կարովի են և քաջ։

ինացօրդներն, ինչպէս նաև հին եկեղեցին։ Պարիսպներէն զատ հիւսիսային կողմը կան երկու մատրունք տաշած քարերով շինուած, և գերեզմաններ հանդերձ խաչարձանօք։ Գերեզմանատան մէջ գտնուած խաչքարերու արձանագրութեանց ծանօթ թուականք կը վերաբերին ԺԶդ դարու։ Մեսրովբ արքեպիսկոպոս Ամրատեանց, հետևեալ կերպով կը տուգաբանէ Ազրնի անունն. « Ազրնի բառն տուգաբանի Աբրայ գնիւ. այն է՝ Աբրայ յետ սպանմանն ի Շամիրամայ՝ տասգնիւ, բուռ սրում Շամիրամայ անունով լերան մնա է գիւղն »։ Ժե դարու կիսուն կը յիշուի գիւղս անունն ճաշոցի մը յի-



158. Արզն = Խարզան։

ԱՐՋՆ. — Հին և պխաւոր քաղաք Ագձնեաց, համանուն գաւառի մէջ։ Որուն վերջը և տեղն յայտնի չէ, և քննութեան կը կարօտի, թէև յոմանց կը համարուի Խարզան տանը։

ԱՐՋՆԻ կամ ԱՐՃՆԻ. — Ի հնումն բազմամարդ և գուռ հայաբնակ գիւղս, այժմ ունի միայն 110 տուն օտարազգի բնակիչներ։ Կ'իյնայ Աչրարատայ կոտայք գաւառի մէջ, Հրազդան գետոյ ձախակողմը, Նուռնուռ և Քիղրան գիւղերու մէջտեղ։ Աչրագիք գիւղս կը կոչեն Ծարաչիւռ։ Արզնիի հին մեծութենան վկայք են պարսպաց և բազմաթիւ ամայի տանց աւերակներն և շառաւակարանին մէջ։ Սուլթան Մուրատի արշաւանաց ժամանակ (1635) իւր զօրքերէն ոմանք բռնելով երկու հայ մանուկներ այս գիւղս կը բերէին, և հասնելով Գեժարադիճ կոչուած բարձր քարանց գլուխը, մանուկները կը խնդրեն որ քիչ մը տանեն ձեռքերնին արձակեն, և միասին ժայռերու ծայրն երթելով, անօրինաց ձեռքերէն ազատելու համար իրենք գիրենք վար կը նետեն, և ապա ձորի մէջ թաղուած քրիստոնեայք վերցնելով մարմինները, կը տանին կը թաղեն Արզնի գիւղը։ Գիւղիս մօտ, ձորի մէջ կան բազմաթիւ քարայրներ, որոց մէջ կը պատսպարուէին Արզնիի բնակիչք այլ-

ազգի բարբարոսաց ձեռքէն ազատելու համար։ Աբղնի թէև շատ անգամներ ենթակայ է եղեր թշնամեաց յարձակմանց և աւերմանց, սակայն բոլորովին հայ բնակիչներէն զրկուեր է դարուս մէջ։ Այժմեան Ասորի յունադաւան բնակիչք, հայկական հին և կեղեցւոյ քարերով կառուցած են իրենց յաուկ եկեղեցի։ — Գիւղիս մօտ կայ փօս աղբիւր կոչուած հանքային ջուր մը, որ քօս և քոր բժշկելու զօրութիւն ունի։ — Այրարատ, 288։ Գեղարքունեաց, 223–230։

ԱՐԶՈՒՆ. Տես ԱՐԶՆ։

ԱՐԶՐՈՒՄ. Տես ԿԱՐԻՆ։

ԱՐԶՐՈՒՏԻ. Տես ԱՐԾԻՒՏԻ։

ԱՐԻՇ, ԱՐԱՇԻՆ կամ ԱՐԱՇ. — Ադուանից աշխարհի սասորին գաւառներէն մին, որ մեծաւ մասամբ Թերքաբնակ է։ Հայաբնակ գիւղերն են. Խանուաշատ, Քանդակ, Հաւարիկ, Մազրդուշ, Արեշ, Նեմիթապատ։ Գաւառիս մէջ կան Ադուանից հին բերդերէն երեք հատ։

ԱՐԻՇ, ԱՐԱՇ կամ ԷՐՄԱՆԻ–ԲԱԶԱՐ. — Հայաբնակ գիւղ Ադուանից վերոյիշեալ գաւառի մէջ Արչկաւ գետակի ձախ ափի վրայ, արքունի ճանապարհի մօտ, համանուն թերքաբնակ գիւղի կից։ Նշանաւոր են գիւղիս և շրջակայից սեխն, ձմերուկն, սոխն, սխտորն, վարունգն, տանձն, խնձորն և ընկուզն։ Բնակչաց թիւն կը հատնի 200ի, իրենց բարբառն խառնուրդ մի է Արցախի, Ջոկերու և Թոյի բարբառներու. ծերունիք կը վկայեն թէ փոխադրուած են այստեղ մերձակայ Թալդաև գիւղէն, որ այժմ աւերակ է։ Գիւղիս եկեղեցին, որ ունի ՉԻԲ (= 1279) թուականաւ կառուցանուղի արձանագրութիւն, աւանդութիւնը կը համարի թէ հիմ նուած է Եղիշէ առաքեալէն։ Ադուանից Եպիսկոպոսի 1718 թուին հաւաքած արձանագրութեանց մէջ, եկեղեցիս կոչուած է Ռեեկայ տաճար։ Կաղանկատուացիի պատմածի համեմատ, թէ Եղիշէ առաքեալի մասունքներն գտնուելէ վերջ՝ Ուտեկան գիւղացի Մահիանոս անուն բահանայ մը առաքեալի գլուխն յափշտակելով փախաւ և տարաւ ամիսփոխ իրեն գիւղը, վերոյիշեալ աւանդութիւնն կը հաստատուի։ — Ադուանք, 177–284։

ԱՐԻՇՈՒՆ. Տես ԱՐԱՑՎԻՈՒ։

ԱՐԻՏ. Տես ԱՐԻՏ։

ԱՐԼԻՎԱՆԻ. — Այս անուամբ երեք հայաբնակ գիւղեր կան Այրարատայ Շիրակ գաւառի մէջ։ Երկուքը կը կոչուին Արըխվելի Մեծ եւ Փոքր, և կ'ինկնան Նորաշէն գիւղի հարաւակողմը, իրարմէ քիչ հեռու։ Իւրաքանչիւրն ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը. առաջնոյն բնակչաց թիւն է 1013, և երկրորդին 590։ Այս կրկին գիւղերու բնակիչք գաղթած են Խնուսի Զևիրմէ գիւղէն։ Ասոնց մէջ 1837 թուին յայտնուեցաւ ազատող մը՝ Թոնդրակեցւոց նման, որոց վրայ երկար կը գրէ Ղ. Երիցով փորձի (Դ տարի, Թ. ժ., 91–130) մէջ։ — Երրորդ կամ Նոր Արըխվելի կոչուած գիւղն ունի 500 բնակիչ, և կ'ինկնայ Սարիար Մեծ և Թէօփարլիւ գիւղերու մէջտեղ, Ալեքսանդրապոլի հիւսիսային կողմը։

ԱՐԸՆԳԱՐ. — Այս անուամբ վայր մի կը յիշէ Փիրղալէմեան, Տուրուբերանի Ագիովիտ գաւառի մէջ, Ասրաֆ գիւղի մօտերը։ — Ճորա Ըզնկերք, 40–41։

ԱՐԸՆԳԷՐ կամ ԱՐԻՒՆԳԱՐ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Կարնոյ։

ԱՐԹԱՍԻԱ. Տես ԱՐՏԵՍԻԱ։

ԱՐԹԷՔ. Տես ԾՂՈՒԿ։

ԱՐԹԻԳԱՊԱՏ կամ ԱՐԹԻԳՈՎԱ. — Այս անուամբ գաշտ և աւան մը կայ Եւդոկիոյ և Սեբաստիոյ մէջտեղ։

ԱՐԹԻԿ. Տես ԲԱՂՔ։

ԱՐԻԳԻ. — Այլ կերպ գրուած անուն Կիլիկիոյ մէջ գտնուած Արեգին գիւղի և վանքի։

ԱՐԻԳԼԻ. — Լեռ Սիւնեաց աշխարհի Ծղուկ և Շահապունիք գաւառաց մէջտեղ։ Կայ նաև համանուն այլազգաբնակ գիւղ մը, լերանս մօտ։ Կը գրուի նաեւ Աբագլի։

ԱՐԻՄԱԿՏՈՍ. — Լեռ և գետ Ծովային Կիլիկիոյ մէջ։

ԱՐԻՏ կամ ԱՐԷՏ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, որ սահմանակից էր Հաբժէից և Տամալեկուց գիւղերու, և զոր 907 թուականին Հայկազուն Սուփասեան իշխանները ընծայեցին Տաթեւոյ։ Գիւղիս նախնական վիճակին, ինչպէս նաև վերջին ամայանալուն վրայ տեղեկութիւնք կը պակսին։ Ջանազան անգամներ Արիտ

Տաճիկ վանքէն օտարացած լինելով, վերըս-տին սեփականուեր է իրեն։ — Միսա-կան, 246։

ԱՐԹԱՇԱՆ. — Լեռ Միւնեաց Գեղարքու-նեաց գաւառի արեւմտեան սահմանագլուխը։

ԱՐԹՈՒՆԴ. — Հայաբնակ գիւղ Տիգրա-նակերտի. ունի 30. Մխիթար եկեղեցի մը։ Բնակիչը 30 տուն։

ԱՐԾԱԹԱՀԱՆԴ. — Կը գտնուի Աղցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Մեհմանանց գիւղա-տեղիէն կէս մղոնաչափ վեր, լեռնաշղթայի մը հիւսիսային կողմը։ Փորուածներէն կ'ե-րեւի որ ի հնումն գործածութեան մէջ է եղեր հանքս։ 1870ին այստեղ Ցոյներ գտած կը վարձեն հանքս և մեծ բնակութիւն կը հաստատեն։ Ըստ իրենց խօսքին, իբր թէ արծաթին կապարախառն լինելով, եղած ծախ-քերն գժուարաւ կը գոցէ, անոր համար հանքն այժմ անգործածելի է։ — Աղցախ, 215։

ԱՐՆԱԹԱՂԲԵՐԴ. — Աչսպէս կը կոչուի Աղբարատայ Բասէն գաւառի մէջ, կարնոյ սահ-մանակից լեռներէն բղխող այն ապերակուռնը, որը կ'սկզբնաւորուին Երասխ գետը։ Ոմանք փարպեցւոյ յիշած Արծաթաղբերքը կը գնեն կարնոյ հիւսիսակողմը, Արծաթի գիւղի մօ-տերը։

ԱՐՆԱԹԻ կամ ԱՐՆԸԹԻ. — Հին և ա-նուանի գիւղ Բարձր Հայոց կարնոյ գա-ւառի մէջ, կարնէն 4 ժամ հեռու՝ հիւսի-սային կողմը, Տումլու լերանց ստորոտը։ Նշանաւոր է բարձր դիրքովին և առատ ջրովը. ունի 70–80 տուն՝ յորոց 50ը կաթո-ղիկեայ Հայք են, 10ը Լուսաւորչական Հայք և 20ը Մահմետականք. իւրաքան-չիւր տան մէջ կը բնակին երկու՝ երեք՝ չորս ընտանիք։ Ճանգելումն ունի բազմա-մարդ և ունի ծագիեալ վայր մը եղած կը թուի, որուն վկայք են աչ ու ձախ ցրուած գեղեցկաձև խաչքարերն և հնութեան պատ-կանող սիրուն քանդակներու բեկորները։ Ղազար Փարպեցի (454) կը պատմէ թէ 483 թուին Մուշեղ Մամիկոնեան և Ներսեհ կամսարական, որք նիզակակից էին Մեծին Վահանայ, մնալով այս կողմերս կը գե-գերէին։

Արծաթի՝ կարնոյ կաթողիկեայ Հայոց համար մեծ նշանակութիւն ունի և յարդ. գիւ-ղապետացութեան համար հաճոյական վայր մի է։ Գիւղէն քառորդ ժամ հեռու, հիւսիսային կողմը գտնուած ջերմուկն, կը ծառայէ յա-ռողջութիւն այս կողմերու բնակչաց։ Լու-սաւորչական Հայք ունին եկեղեցի մը Ս. Նշան, իսկ կաթողիկեայ Հայոց եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Վերջինս նշանաւոր է հնութեամբն, և 1½ մետր սուրբ պատերովը. երկայնութիւնն է 22 մետր, և լայնութիւնն 11՝։ Ունի միջավայրն իրարմէ չափաւորապէս հեռու 6 քարուկիր սիւներ, որոց վրայ հաստատուած է ձեղու-նը։ Եկեղեցւոյս ներսը և դուրսը արմերու մէջ և առջևը, գեղեցուած կամ կանգնուած կան քանդակազարդ հին խաչքարեր, որոնք արձանագրութիւն չունին։ Եկեղեցւոյս մէջ կայ միայն ՌՃԶԹ (= 1750) թուակա-նով նուիրատուութեան մը արձանագիրը, քանդակուած սիւներէն միոյն մէջ։ Հասաս-տուած՝ քարի մը վրայ։

Արծաթի գիւղն նշանաւոր է նաև իր կամակը բարձրացած լեռնակի բարձանց վրայ գտնուած Ս. Լուսաւորչի վանքովը, որ մեծ ուխտատեղի է կարնոյ կաթողիկեայ Հայոց։ Ի հնումն սա բաւական մեծ և շէն վանք մը եղած կը թուի, իսկ այժմ մնացած է միայն փոքրիկ եկեղեցի մը Ս. Լուսաւորիչ անուամբ, որուն շուրջը կը տեսնուին հին-աւուրց շէնքերու հիմերն և քարերը։ Աչս եկեղեցին ալ, իբր հնութեամբն կարծանելու վտանգի մէջ գտնուելով, գիւղացւոց գոր-ծունէութեամբ և քաղաքացւոց օգնութեամբ, վերջին ժամանակներս նորոգ կառուցուած է հնոյն հիման վրայ։ — Բազմավէպ, ԻԳ. 326–328։ Հանդես Ամսօրեայ, ԻԳ. 338–340։

ԱՐՆԱԿ. — Կը յիշէ գիւղս Դ. Փար-պեցի Աղբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։ Աչստեղ Ս. Վարդանայ Հաւատարիմ նա-խարարները բռնեցին Զանգպատն ուխտա-նենգ մատնիչը, և մերձակայ Բերդկունք գիւղի մէջ քարկոծեցին։

ԱՐՆԱՓ. — Հին և անուանի բերդաւան Աղբարատայ Կոգովիտ գաւառի. Պայազիտէն հեռու է 12 մղոն՝ արեւմտեան հիւսիսային կողմը, Զինկիլի լեռնահովտին մէջ, գետակի

մը եղերքը։ Առաջին անգամ դիւցս ի պատմութեան կը յիշուի Զ դարու վերջերը կամ Է-ի սկիզբը, Դուին գումարուած Աբրահամ կաթողիկոսի ժողովքի մէջ, ուր ժողովականաց մէջ կը յիշուի տեղւոյս վանաց երէցն՝ Յովհաննիկ։ Աբաբացւոց աշխարհակալութեան ժամանակ, նշանաւոր դէպքեր հանդիպած են այստեղ։ Նախճաւանի կողմերէն, 643 թուականին, այլազգեաց գունդ մը գալով բանակեցաւ աւանիս բերդի դիմաց, և պատերազմելով սկսաւ շատ վնասներ հասցընել։ Իսկ բերդի մէջինները, կախաւանակոտոր կոչուած գահաւանդէն ծածուկ ճանապարհաւ դուրս ելնելով զացին օգնութիւն խնդրեցին Դաբօնից բերդէն, և Սմբատ Բագրատունին՝ Վարազ Սահակայ որդին, տուաւ 40 մարդ։ Անոնք գիշեր ժամանակ մտան Արծափի բերդը, և խմայէլացիք գիտելով, նոյն ճանապարհով ներս մտան և պահապանները 10 հոգի բուն եղած ժամանակ ոչնչացին, և երկրորդ օրն անոնցի վրայ հասցին։ Բայց շուտով արծուարար վրայ հասաւ Թէոդորոս Ռշտունին, և այլազգեաց զէմ իր հայրենակցաց վրէժն լուծեց։ Այս դէպքէն գրեթէ 800 տարի վերջը դարձեալ կը յիշուի Արծափի իբրև ամուր բերդ։ Դարուս (ԺԹ) սկիզբը, և Ռուսաց Եբևանը նուաճելէն առաջ, Արծափեցի կարճ մը Մանուկ Բաղեհան, հետը վիրաւորած ուրիշ հայ քաջեր, Պարսից և Քրդաց վրայ սպասի կը դնէր. բայց ի վերջոյ տասը դաւաճան Պարսիկներէ յանկարծակի շրջապատուելով, անոնցմէ վեցը գետին տապալեց և ինքն ալ ինկաւ։ Ռուսաց և Թրքաց վերջին պատերազմի առեն, Տէր Ղուկասով Պայազիտը նուաճելէ վերջ, բանակը գետեզեց դիւցիս մէջ (1877ին) մայիսի սկիզբը, և նոյն ատեն 8 ին գնաց նուաճելու Ծաղկոտան կողմերը։ Այժմ Արծափ ունի գրեթէ 50 տուն հայ բնակիչ։ Գիւղիս սահմանաց մէջ կը յիշուին Ս. Գէորգ աւերակ վանքը, և Ծաղկավանք։ — Այրարատ, 509—510։

ԱՐՏԼԹԻ. Տես ԱՐՏԱԹԻ։

ԱՐՏԻԱՍ. — Գաշտ մի է փոքր Հայոց Կիզիստոս քաղաքի մօտ, ուր Հռոմէ բանեցին Հայոց Գագիկ Թագաւորը և սպաննեցին։

ԱՐՏԻԻ, ԱՐՋԻ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Հարժիք գիւղի արեւմտեան հիւսիսային կողմը, զոր 839 թուին Գաւիթ եպիսկոպոսը գնեց Սիւնեաց Փիլիպպոս գահերէց իշխանէն, Բերդկաներիչ գիւղի հետ՝ 10000 դրամով։

ԱՐՏԿԻ, ԱԼՃԱԻԱՉ կամ ԱՏԻԼՃԻՎԱՉ. Գղ. ARDZGUÉ. — Վանայ նահանգի գաւառներէն մին, որ կը համապատասխանէ հին Տուրուբերանի Խորխոռունեաց գաւառի մէկ մասին։ Կ'ընկնայ Խլաթու, Պալուորայ, Մանազկերտի և Արճէշի մէջտեղ, հարաւային կողմէն սահմանափակուած է Վանայ ծովակով։ Երկիրը լեռնային և բլրային է առհասարակ, միայն ծովու եզերքներն դաշտային են, և օքանչելի տեսարաններ կ'ընծայեն ճանապարհորդի աչաց։ Կլիման բարեխառն է և հողն բարեբեր. ունի բազմաթիւ պտղատու ծառեր, յորս առատ են ընկուզենիք և ծիրանիք։ Ընտիր է գաւառիս ցորենն, յորմէ ամէն տարի ահագին քանակութեամբ, նաւերով կը տանին կը թափեն Վանայ հրապարակի վրայ, ուր արդարև սով կը տիրէ, երբ Արճիշու և մանաւանդ Արծկէ գաւառիս ձիւնի նման սպիտակ ցորենի շեղջերն չտեսնուին յաչս ժողովրդեան։ Գաւառիս երկայնութիւնն Արեւելք Արեւմուտք կը համարուի 10 ժամ և լայնութիւնն՝ Հարաւ Հիւսիս 6—7 ժամ։ Սիփան—Մասիք մեծ և գեղեցիկ լեռը նստեր է գաւառիս վրայ, պարզելով թեւեր և ոտներ մինչև Արճիշու, Մանազկերտի և Պալուորայ սահմանները։ Սոյն հսկայ և հրաբղխային լերան գլուխը 7—8 տարի ընդարձակութեամբ լեռնադաշտ մ'է, ուր սաստիկ ցուրտ կը լինի նոյն իսկ վարդավառի ամիսներուն։ Սիփանայ ալ թեւին տակը սիրուռակաձև հովիտ մը կայ Առքեն անուանով, որ աւազան է մշտաբուղխ ջրոց, և երկրին ձիոց, խաշանց և գուարաց պարարտ ու գուարթ արօտատեղի։ Լերանս ձեան ջուրն վերի և վարի Սիփան կոչուած հայաբնակ գիւղերու ջրազացներն կը բանեցնէ, և ջուր կու տայ բնակչաց, որոնք առանց Սիփանայ կեանք չունին։ Գաւառիս բնակիչներն են Հայք, Թուրքք, Չէրքէզք և Քուրդք՝ դանազան ցեղերէ։

վ. Բինէի համեմատ գաւառս ունի 44 գիւղեր, և 12697 բնակիչք, հետեւեալ ազգերէն.

Հայք.	Լուսաւորչականք	8000	հոգի
	Կաթողիկեայք. .	93	»
	Բողոքականք. .	45	»
Մահմէտականք	Թուրքք	145	»
	Քուրդք	4000	»
Հրեայք		74	»
Այլ և այլք		340	»
Գումարն . . .		12697	հոգի:

Բայց այս թիւերն, մանաւանդ նկատմամբ Հայոց, խիստ նուազ են, վասն զի 1880 թուականէն վերջը կատարուած վիճակագրի մը համեմատ, միայն գաւառիս Հայոց թիւն կը հասնի 15—16000ի։ Հայաբնակ գիւղերու թիւն հազիւ 30ի կը հասնի, սակայն ամէնքն ալ, բազմամարդ են։ 1858 թուին վասպուրականի Արծռոյ մէջ հրատարակուած վիճակագրութիւնն, գաւառիս Հայոց գիւղերն կը հաշուէ 17, որք են հետեւեալք.

Արծկէ (քաղաքաւան)	Արջրայ (Արջրա)
Ցուռու	Գարագէշիշ
Նորշնչղը	Վրճակացուկ
Գաշկուն (Տաշխուն)	Ալնջկոյս
Էգէծոր	Յաւին (Աւին)
Կժինորշէն	Խոռանց
Պէշնագոմեր	Վերին Սիփան
Գօզոխ (Կեաղուխ)	Վարին Սիփան
Կոճեր	

Իսկ աւանդմամբ գաս յիշուած գիւղերն են՝ Մաճիկ, Բարկատ, Կոչգել, Մոչրխոչս, Ալճուչ—Աղբիւր, և այլն։ Գաւառիս Հայ բնակիչք առաւելապէս կ'զբաղին երկրագործութեամբ, և արմտեաց մէջ ամենէն աւելի ցորեան կը ցանեն. կը պահեն նաև քիչ քանակութեամբ ոչխար։ Մահմէտականք մեծաւ մասամբ խաշնապարմանք են, և երկրագործութեամբ զբաղողներ խիստ քիչ են։ Գաւառիս վանքերն երեք են, հոչակաւոր է Սքանչելագործ վանքը։ Վերջին դէպքերու ժամանակ, գաւառիս թէ Արծկէ գիւղաքաղաքի և թէ վերոյիշեալ գիւղերու Հայ բնակիչք մեծ զոհեր և վնասներ ունեցան, վանքերն և եկեղեցիներն ալ աւերի ենթարկեցան։

Արծկէ կամ Արծխէ. — Հին աւան կամ քաղաք Վանայ ծովակի հիւսիսակողմը, զոր մեր պատմիչները կը գնեն Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, որ ըստ նոր տեղագրողաց, սահմանակից է Բզնունեաց և մասն՝ Խորխոռունեաց։ Այժմ գլխաւոր քաղաքաւան է վերոյգրեալ համանուն գաւառի. Վանէն հեռու է 165 հազարամետր, ծովոյ երեւեկութիւնք կը կատարուին 4—5 ժամուան մէջ։ Գեղեցիկ և նկարչական է ծովեզերեայ դիրքովն, զարդարուած՝ մրգատեր ծառաստաններով և առատ ու վճիտ ջրերով։ Բնակչաց թիւն այժմ կը համարուի 2457, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք (Թուրք և Քուրդք)	1245	հոգի
Հայք (Լուսաւորչականք, կաթողիկեայք և Բողոքականք) .	1138	»
Հրեայք	74	»
Գումարն. .	2457	հոգի:

Աւանիս սկզբնաւորութեան ժամանակն և հին պատմական դէպքերն ծանօթ չեն։ Խորենացին և այլք կը յիշեն սա՝ իբրև հայբենիք Սոռբոնաց հակառակաթոռ կաթողիկոսի։ Շատ պատերազմներու ենթակայ եղած է Արծկէ զանազան ժամանակաց մէջ, և իր ամուր դիրքովն երբեմն դիմադրած թշնամեաց և երբեմն նուաճուելով, սխուր և սրատամիկ տեսարանաց ենթակայ եղած։ Ինուանի է աւանիս առումն ի Տուղրիլայ, ԺԱ. դարու սկիզբը, որ շատ մարդիկ կոտորեց և բազմաթիւ գերիներ տարաւ։ Նոյն ժամանակներէն, ինչպէս կ'երևի Լատիվերատցիի (Գ. ԺԶ) գրածէն, Արծկէ բարգաւաճ վիճակի մէջ կը գտնուէր՝ և անուանի էր իր անառիկ և ամուր բերդովն։ Կրկին բերդեր ունեցեր է աւանս, մին լերան ստորոտը դէպ ի ծովեզերքը՝ որ շրջապատ պարսպի հետ, ծովու ալիքներէն բոլորովին կործանած է և ջրոյ տակ ծածկուած. և միւսն մեծ քարաշէրտն գագաթը՝ որ թէև մեծաւ մասամբ կանգուն է, բայց ամայի վիճակ մ'ունի։ Վերնաբերդէն մինչև ծովեզերքը կ'իջնեն հինաւուրց պարիսպներն։ Աւանիս հին մասին մէջ կը տեսնուի հայկական հին եկեղեցի մը և նոյնպէս հին մզկիթ մը։ Ցիշատակարանաց մէջ կը յի-

շուին Արծկէի կրշին եկեղեցիք, Ս. Աստուածածածին և Ս. Նշան, անշուշտ ասոնցմէ մին լինելու է այդ եկեղեցին, որ յայսպիսոց քննուած չէ տակաւին։ Արծկէի շէնքերը և կրպակները գիւղական բնակարանաց հանգոյն, խեղճ երեսյթ ունին։ Հայոց նիւթական և բարոյական վիճակը ողորմելի է։ Ասանիս մօտ՝ հիւսիսային կողմը Միփանայ մէկ կողին վրայ կառուցուած է հռչակաւոր վանքն՝ ի հնումն Երաշխաւոր կոչուած, և այժմ Սքանչելագործ։ Մեծ ուխտատեղի է վանքս, յորում կը պահուի, ըստ աւանդութեան Քրիստոսի մանկութեան ժամանակի լուացման տաշտի մի փոքրիկ մասն։ Այս սուրբ նշխարը, մահտարաժամի և փոխադրական հիւանդութեանց ժամանակ բոլոր երկիրը կը շրջեցնեն։ — Տեսրդր. Հին Հայ. 120—1։ Տեղգր. Ողևորութիւն, Գ. 36—42։ Համով Հոտով, 95—6։ Եւ այլն։

ԱՐԾԿԷՈՑ ԿՂԶԻ, — կղզեակ վանայ ծովակի հիւսիսային արևմտեան կողմը, Արծկէ աւանի դիմաց, յորում նշանաւոր էր Ս. Ստեփանոսի մենաստանը, որ ցիսկա ևս կը կոչուէր։ Թովմաս Մեծոփեցի տակաւ կը յիշէ այս անապատս՝ որ կոչուած է նաև Դաստակ՝ Ս. Ստեփանոս Նախավկայի դաստակի նշխարն իւր մէջ պահուելուն համար։ Այս մենաստանի մէջ ծաղկեցաւ Գրիգոր Խլաթեցին՝ որ Յայսմաւուրքները ճոխացուց, և ուրիշ գիրքեր յօրինեց, որ և 1455 թուականին Քուրդերէն սպանուեցաւ։

ԱՐԾՆ կամ ԱՐՋՆ. — ի հնումն հռչակաւոր քաղաք և շահաստան Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ, որոյ մնացորդներն և աւերակներն այժմ կը տեսնուին Գաբարզ կամ Խարարզ հայաբնակ գիւղի շրջակայքը։ Կ՚ենկնայ կարնոյ հիւսիսային արևմտեան կողմը $3^1/_2$ ժամ հեռու, և Մեծ Ջրոյ (Գարասու) աջակողմը, ծովու երեսէն բարձր է գրեթէ 6000′։ Ոչ կառուցման ժամանակին կը յիշուի և ոչ դէպք մը առաջին գարուց մէջ։ Ցոյնք կ՚անուանեն (Ἀρθ ՞Αρτξε), և Թուրքք Էրզն։ Կ՚երևի թէ ԺԱ. գարուն շատ ծաղկած է վաճառականութեամբ և ճոխութեամբ, վասն զի կ՚ըսեն, թէ նոյն գարուս կիսուն ունէր 300000 բնակիչ և 800 եկեղեցի, որոց տեսուչ կը յիշուի Գաւրթուկ անուն քորեպիսկոպոս մը։ Կոստանդին Մոնոմախոս կայսրը հրամայեց Պետրոս կաթողիկոսի նստել այս քաղաքս, որ և ժեծահանդէս կատարեց Յրօրհնեաց և Ասուածայայտնութեան ատենը։ Լատինվերացին՝ որ ականատես եղած է Արծնի ուրախ և տխուր օրերուն, և իրեն քաղաքը կ՚անուանէ, մեծ գովեստիւք կը խօսի անոր վրայ, որուն խօսքերէն ի մէջ բերենք հետեւեալը. «...Հոյակապ և ականաւոր էր (Արծն) ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք՝ որ ի վերայ լերին կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր... նման իմն էր նորահարսն կնոջ, որ զեղոյն վայելչութեամբ՝ ցանկալի զոլ ամենեցուն... վաճառականաք՝ եկեղեցւոյ շինողք և զարդարիչք, կօճռաւորաց օթևանք և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և զարմանիչք... փառաւորք և օգնողք թագաւորաց։ Եւ իբրեւ ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենևին գեղեցիկ, ամենևին զարդարուն»։ Իսկ Մատթէոս Ուռհայեցի (Ա. ՀԹ) քաղաքիս համար կ՚ըսէ, թէ ունէր «...անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ և դիպակաց» ուրոց առարտութեան համար 1049 թուականին Սելճուքեան Թուրքաց Տուղրիլ սուլտանի զօրքերն յարձակեցան քաղաքիս վրայ, «...և քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն՝ միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեալ շուրջ զզեցուք քաղաքին սաստիկ և առհասարակ պատերազմին. և զմեծ ժամն աւուրն զմիմեանս կոտորէին, և արեամբ լցան անդաստանքն... և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրք քաղաքին և ի փախուստ դարձան, և այլազգիքն որով յարձակեցան ի վերայ քաղաքին». բնակիչներէն քիչեր խոյս տալով ապաստանեցան կարնոյ քաղաքը, այլք կոտորեցան, և սմանք ալ տանիքներէն քարեր կը նետէին, անոր համար թշնամիք քաղաքին չորս կողմէն կրակ տուին և «օդոյն ձեռնաւորութիւն եղև կործանական աւուրն. զի հոգմ ուժգնակի շնչեցեալ՝ բորբոք արկանէր հրաժին, մինչև ծուխն ծառացեալ յերկինս հասանէր... ամենայն քաղաքն լի էր վիակամբք անկելոցն. վաճառափողոցք, նրբափողոցք և ընդար-

ձակ սրահը»։ Նոյն օրուան ահաւոր պատերազմի մէջ 140 կամ 150000 հոգի ի սուր և ի հուր մատնեցան, յորս և 150 քահանայք. բոլոր քաղաքին ճոխութիւնը և եկեղեցեաց սպասներն աւարի առնուեցան։ Միայն Դաւթոյ քրեպիսկոպոսի հարստութեան համար կ'ըսեն, թէ «... 40 ուղտոյ բարձաւ գանձատուն նորա, և վեց փիճ և դանց եղանէին ի տանէ նորա»։ Այս ահաւոր կոտորածին համար կը կարծուի, թէ Արծն յայլազգեաց կոչուեր է Գարարդ կամ Գարա—Արգ, այսինքն Սեաւ Արծն, հանդիպն Սերաստիոյ մօտ եղած Սեաւ—Հողերուն եւ Տիգրանակերտի մօտ Սեաւ—Աչերակին։ Վերոյիշեալ պատերազմի ժամանակ, Յոյնք Հայոց հետ թշնամացած լինելով, բոլորովին անփոյթ եղան օգնելու։ Բայց Արծն կը թուի թէ քիչ տարի վերջ, վերոհին տուան զարձած է փախստականներէ, ուստի դի ուէ տարի վերջը, այլազգի ազգատոհմերը Բլուր գիւղի վրայ դիմած ժամանակ, հոն ազգատնտած էին Արծն տունի բնակիչը։ Քաղաքիս այսչափ թշուառութեանց ենթակայ լինելուն գլխաւոր պատճառն էր իր անպարիսպ և ոչ պաշտպանեալ դիրքը։ Մանրագնին քննութեան և հնախօսական պեղմանց կը կարօտին Գարարդ և մերձակայ Վազաւեր և Ղուշճի գիւղերու սահմանքն։ — Լազարեվերտցի, 43, 53, 57, 62, 85, 109։ Տտորգր. Հին Հայ. 35—36։ Եւ այլն։

ԱՐԾՆԻ. Տես ԱՐՉՆԻ։

ԱՐԾՈՒԱՔԵՐ ՎԱՆՔ. — Վարպան աշխարհագիր կը յիշէ մենաստանս Արծիշոյ դաւառի մէջ։ Կը գտնուի Սասկուն գիւղի մօտերը։ — Այս անուամբ մատուռ մը կը յիշէ Հ. Ինճիճեան, Մշոյ Ս. Յովհաննէս վանքի մօտ, մէջը արծուէ մը բերուած հին աւետարան մը պահուելուն համար, այսպէս կոչուած է։

ԱՐԾՈՒԱՆԻԿ կամ ԱՐԾՈՒՆԻԿ. — Գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ, և պիտուր տեղի համանուն հասարակութեան։ Բնակիչք՝ 855, բաժնուած 98 տան, ամբողջ Հայ։ Արծուենիկի հասարակութիւնն ունի հետեւեալ երեք հայաբնակ գիւղերն. Միւքէչան, Զափնի և Սեւաքար։

ԱՐԾՈՒԱՔԱՐ. — Հին անուն այժմեան հայաբնակ Ղշլաղ գիւղի՝ որ կ'ընկնայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտեան կողմը, Նոր—Պայազիտաւ գիմաց՝ երկու մղոն հեռու, գեղատեսիլ մը արեւելեան եզերքը։ Ունի գրեթէ 1100 բնակիչ, բաժնուած 115 տան։ Գիւղիս եկեղեցին անշուք է, կը կոչուի Ս. Աստուածածին։ Քիշատակաց արժանի են Արծուաքարի հանդիպ, գետի միւս ափունքը՝ հին կամրջի մօտ գտնուած խաչքարերն, որոց վրայ կան հայկական արձանագրութիւններ ԺԶ դարու վերաբերեալ, և հնագոյններ՝ առանց թուականի։ Գիւղիս սահմանները, ծովի մօտ կայ Արծուաբախչ անուամբ վանք մը, որոյ արձանագրութիւնն եղծուած լինելով, շինութեան թուականն յայտնի չէ։ — Գեղարքունի, 491—493։

ԱՐԾՈՒԻԿ. Տես ԱՅՆԹԱՑ ԲԵՐԴ։

ԱՐԾՈՒԻԿ. Տես ԹԱԼԱՐԻՍ։

ԱՐԾՈՒԱՆԱՑ ՁՈՐ. Տես ԵՄԱՆՈՒ ՁՈՐ։

ԱՐԾՐՈՒՆԻՔ. ARDZOUNIK. — Նշանաւոր նախարարական տոհմ՝ սերած Աստեւածատնցւոց Մինեքերիմ թագաւորի Ադրամելիք որդիէն, որ իւր Մարտասար եղբօր հետ գՀայքն ապստամբելով փախաւ ի Հայս։ Այս նախարարութիւնն հաստատեց Վաղարշակ Ա, և իրենց պաշտօնն էր արծիւ տանել թագաւորի դիմացէն, և ասկից ծագած կը համարուի իրենց անունն Արծրունիք կամ Արծիւ—ունիք, թէ և իրենց անուան ծագման առասպելաբանութիւնն ուրիշ կերպերով ևս կ'ընծան։ Իրենց նախկին բնակութեան տեղն էր Աղձնեաց աշխարհի մէջ, որոյ Արզն գաւառի անուամբ Արզրունի կոչուած կը համարուին։ Այս նախարարական տոհմէն շատ անուանի և քաջ իշխաններ եկան, ինչպէս նաև թագաւորներ։ — Գագիկ Արծրունի իշխանը ի դարու մէջ շատ զօրանալով՝ և Հայոց Բագրատունի թագաւորաց դէմ ելնելով՝ վասպուրականի մէջ առանձին թագաւորութիւն հաստատեց 908ին, որ է Արծրունեաց թագաւորութիւնը։ Արծրունի թագաւորաց յաջորդութիւնն հետեւեալ կարգաւ ասացած են մեզ պատմիչք. Ա. Գագիկ, Բ. Գերենիկ Աշոտ՝ որդի Գագկայ՝, Գ. Աբուսահլ Համազասպ՝ որդի Գագկայ՝ եղ-


բայր Դերենկան, Դ. Աշոտ Սահակ որդի Աբուսահլի, Ե. Գուրգէն Խաչիկ՝ եղբայր Աշոտի՝ որդի Աբուսահլի, Զ. Սենեքերիմ Յովհաննէս՝ եղբայր Գուրգէնի, որ 1021 թուականին երկիրը Ցունաց տալով, փոխադրուեցաւ ի Սեբաստիա, ուր թագաւորեցին յետ Սենեքերիմայ՝ Գաւիթ Աբծրունի, Ատոմ և Աբուսահլ։ Այս թագաւորութիւնս վերջացաւ 1070 ին։ Աբծրունեաց տոհմի ծագման, անուան, պաշտաման, իշխանութեան, թագաւորութեան, երկրի, ոստանի, ձմերոցի, և երեսելի անձանց վրայ, փափաքող կարող են օգտաշատ տեղեկութիւններ գտնել, Հայաստանի Հնախօսութեան Բ հատորի 109—121 էջից մէջ։

ԱՐԾԻՒԻՏԻ կամ ԱՐԶՐՈՒՏԻ. — Այրատաղ Բագրեւանդ և Գաբեղէնք գաւառաց մէջտեղ բարձրացող Ագ—պուշագ կամ Շահ—եղ կոչուած լերանց մէջ բարձր կատար մ'է։ Լերանս տեղմանները կան շատ լքուած և ամայի գիւղեր։

ԱՐԿԱԴՈՒԿԵՐՏ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐԿԱԶՆ կամ ԱՐԿԱԶԱՆ. — Գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Մալիշկա գիւղի հիւսիսային կողմը 5 վերստ հեռաւորութեամբ։ Շրջապատուած է ծառկազարդ լեռներով, օդն առողջարար է և ջուրն պատուական։ Արկազու բնակիչք այժմ այլազգի են 50 տուներ, և քան իրենց հնչման գիւղս կը կոչուի Արգեազ։ Գիւղիս մօտ է ի հնումն նշանաւոր Աւազ ակն կոչուած առատաբուղխ աղբիւրը, որ շատ արտեր և այգիներ կ'ոռոգէ, և չրագացներ կը գործէին Մալիշկայէն սկսեալ մինչեւ Մոզ գիւղաքաղաքի աւերակները։ — Արկազէն քիչ հեռու հարաւակողմն կը գտնուի Ս. Խաչ վանքը, որ հռչակաւոր ուխտատեղի է այս կողմանցս, և ծանօթ է Արգեազու Ս. Խաչ անուամբ։ Տեղական աւանդութիւնն կը համարի որ կեռնաց փայտի մէկ մասն՝ և այն Հացունեացը՝ զոր Միւնեաց Բիւրեղ սիկինը ընդունած էր Հերակլ կայսրէն, թաղուած է վանացս եկեղեցւոյն որմոյն տակ։ Այժմ եւս թէև կայ սուրբ Խաչի մասն պահուած հարաւային խոյանի մէջ խաչքարի տակ, սակայն պատմական առոյգ տեղեկութիւնք կը պակսին հաւաստելու համար թէ, այդ մասունքն նոյն ըլլան Հացունեաց խաչի հետ։ Ազնաւօթ է նաեւ վանացս սկզբնական պատմութիւնն. միայն Մարգիս արքեպիսկոպոս Զալալեանցի ճանապարհորդութեան գրոց Բ հատորի 132 էջէն կը տեղեկանանք, որ 1857 թուականին, այժմեան վանքի տեղը կայ եղեր հին եկեղեցի մը. «Շինուածքն է միջակ՝ կառուցեալ ի կոփածոյ քարանց, որոյ երկայնութիւն վեշտասան քայլ, և լայնութիւնն՝ չորեքտասան։ Ցաջմէ և յահեկէ սեպհական գոն աւանդատունք»։ 1868 թուին Գէորգ Դ կաթողիկոսի հրամանով սկսած են զրամ հաւաքել, կառուցանելու համար հին եկեղեցւոյ տեղ այժմեանը։ 1872 թուին նոր եկեղեցւոյ շինութիւնն աւարտելով Ս. Խաչի տօնին օրը Հոկտեմբերի 10ին, խնդն բազմութեան ներկայութեամբ, կ'օծէ զայն Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց։ Եկեղեցիս կառուցուած է կապտագոյն՝ բայց փխրուն սրբատաշ քարերով, զոր բերած են Մալիշկա գիւղի մօտի քարահանքէն։ Ինչպէս պատկերի մէջ կը տեսնուի (թ. 159), ունի բարձր գմբէթ, չորս սուսեր սիւներու վրայ հաստատուած. երեք գոյն հիւսիսային, արեւմտեան և հարաւային կողմերը. 12 լուսամուտներ՝ իւրաքանչիւր կողմերը երեք երեք հատ։ Գմբէթին իւր շուրջը ունի միաշար պատուհաններ, և ծայրը կայ երկաթեայ խաչ։ Աւագ խորանը մեծ է և բեմը լայն, որոյ աստիճանները երկու ծայրերէն են։ Երկու կողմնակի խորաններէն հարաւայինի մէջ գտեղուած են վերոյիշեալ կենաց փայտի մասունքը։ Տաճիքը ծածկուած լինելով աւազախառն կրամածով, անձրեւի ժամանակ ջուրը առատապէն կը կաթէ եկեղեցւոյ մէջ. թէ և սակաւաքարով ծածկելու խորհուրդ յղացուած է, սակայն գործադրութիւնը՝ կարծեմ տակաւին եղած չէ։ Թէ՛ ներքին և թէ արտաքին կողմն արձանագրութիւնք չկան։ Զանգակատուն չունենալով՝ Քեշիշբաշեանք Գրիգոր քահանայի վանացս նուիրած միակ զանգակն, կախուած է եկեղեցւոյ արեւմտեան պատն առջեւ։ Եկեղեցւոյս գաւիթը փոքր է և քառակուսի, շրջապատուած հաստատակ քարեայ պարապով, տեղ տեղ բոլորովին քանդուած. պարապի հարաւային մասը ի հնուց շինուած է։ Պարապէն ներս կը մտցուի երկու գռնե-

րով, մին հիւսիսային և միւսն արեւմտեան կողմէն։ Գաւթի մէջ հիւսիսային, արեւմտեան և հարաւային պարսպապատին կից կառուցուած են միայարկ, քարաշէն բայց խեղճ ու նորագութեան կարօտ սենեակներ, ուխտաւորներու համար։ Ա֊յս սենեակներէն հա֊կառուցուած են բաւական թուով միաշար, փոքրիկ և խարխուլ խանութներ, որոնք վար֊ձու կը տրուին վաճառականաց, Ո. Խաչի ուխտի հանդիսաւոր օրերը։ Հարաւային պարսպէն դուրս քարակոյտներու մէջ կայ խաչքար մը ՉԾԹ (= 1304) թուականաւ



159. Արկազ գիւղի Ս. Խաչի վանքը։

գիւ մէկ քանին կը ծառայեն ուխտաւորաց, սմանք ալ զարձած են ախոռ կամ յարդա֊նոց, իսկ միացածներն ալ վանքի միաբանու֊թեան, որ կը բաղկանայ վանահայրէ մը, մէկ երկու աիրացուէ և քանի մը ծառանե֊րէ։ Հիւսիսային պարսպի կից արտաքուստ արձանագրութեամբ. այս խաչքարն է ան֊շուշտ այն երեք գեղեցկաքանդակ խաչար֊ձաններէն մին զոր տեսած է Ջալալեան հին եկեղեցւոյ արեւմտեան գրան մօտ։ Ըստ Ջալալեանի վանացս մէջ էր Սուրբ Քրիստա֊փորի անյաղթ զօրավարի սենեակն, յորում

ամիսփուած էր նոյն սրբոյն նշխարքը. նոյն սենեկի մէջ առ ժամանակ մի հանգուցած են նահատակ Սիւնեաց Յովհաննոս եպիսկոպոսի մարմինը, ԺԹ դարու վերջին քառորդի մէջ։

Վանքս վայոց ձորի մէջ առաջինն է իւր բազմաթիւ ուխտաւորներով՝ որոց թիւն կը հասնի մինչ 6000ի. ուխտագնացութեան օրն է Ս. Խաչի տօնի հոկտեմբերի 8ը կամ 11ը։ Ուխտաւորները կու գան մեծաւ մասամբ վայոց ձորէն, Շուլաւերէն, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գաւառներէն, Նոր Պայազիտի, Նախիջեւանի, Զանգեզուրի, Շուշւոյ և այլ կողմերէ։ Այս ուխտաւորաց հետ կու գան նաեւ ոչ սակաւ այլազգիք, ոչ այնչափ ուխտի որչափ կողոպուտի։ Քաջբերուներն՝ որ տեղւոյս նկարագիրն ըլլած է ընդարձակօրէն, ուխտագնացութեան վրայ խօսելով՝ կը յիշէ նաեւ ուխտաւորաց կրած նեղութիւններն, թէ՛ ի ճանապարհին և թէ վանքի շուրջն՝ պարիսպներէ դուրս բնակած ժամանակ։ Ուխտաւորաց նուէրներու մէկ մասն ամէն տարի կը ղրկուի Էջմիածին։ — Արկազան գիւղի հարաւակողմը, բլրոյ մը գագաթը, կայ քարաշէն փոքրիկ եկեղեցի մը (7 քայլ երկ. 5 լայն) գեղեցիկ պրուազներով, որ այժմ քայքայած վիճակի մէջ կը գտնուի։ Ունի մի քանի արձանագրութիւններ ԺԹ—ԺԹ դարուց վերաբերեալ. անթուական արձանագրութենէ մը կը յայտնուի թէ այս մասերան տէրն կամ կառուցանել տուողն եղած է Պռոշ իշխանը։ — Սիսական, 118—119։ Արարատ ամսագիր, 1889, 165—183 և 227—233։ Հնուրիւնք վաճառքէ թ. 274։ Եւ այլն։

ԱՐԿԱԹԱՆԻ ՇԷՆ. — Հայարնակ գիւղ Արցախի վարանդայ գաւառի, Շօշու գիւղի մօտ, հովտանման ձորակի մը մէջ։ Բնակիչք 250, ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԱՐԿԵՆՑ. Տես ՑԱՐԿԵՆՑ։

ԱՐԿՆԻ, ԱՐՂՆԻ կամ ԱՐՂԱՆԱ. Գղ. ARGHANA. ت. ارغنى. — Ի հնումն նշանաւոր և ամուր բերդ Ձորքորդ Հայոց Պաղին գաւառի մէջ. իսկ այժմ գլխաւոր քաղաքաւան Տիգրանակերտի համանուն գաւառին։ Ըստ հնախուզից բեւեռագրանգակներու մէջ Արքանա կոչուած է քաղաքս, և ըստ Լատինաց Արսինիա (Arsinia)։ Կառուցուած է Քոլոդ լերան կողին վրայ գեղեցիկ դիրքով. ծովու երեսէն բարձր է 2884′, և կը նայի Տիգրանակերտի դաշտին վրայ։ Ջուրը վայր դրից համեմատ բաժնուած է վերին, Միջին և Յատրին թաղերու կամ մասերու։ Բնակիչք են 6150, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք	Լուսաւորչականք	2000 հոգի
	Բողոքականք	525 »
Մահմէտականք	Թուրքք	1625 »
	Քուրդք	1000 »
Ցայնք		1000 »
	Գումարն.	6150 հոգի։

Հասարակաց շինուածներն են 3 մզկիթ, 10 մեհեան, 1 եկեղեցի Ցունաց, 3 պանդոկ, 1 բաղանիք, 30 աղբիւր, 10 սրճատուն, 60 կրպակ, 1 դեղավաճառանոց, և այլն։ Հայք ունին Ս. Սարգիս անուամբ կրկին եկեղեցիք, մին վերին թաղի և միւսն վարինի մէջ։ Կրթական և ուսումնական վիճակն խեղճ է։ Օդը առողջարար է և ջուրը պատուականագոյն, որ կու գայ Ալի—տաղը կոչուած լեռնէն։ Լերան առորոտէն, այսինքն հիւսիսային կողմէն կ'անցնի Տիգրիսի Պաղնոյ—գետ ըսուած մէկ վտակը։

Թէ՛ լերան առորոտը և թէ քաղաքաւանս զարդարուած են բազմաբեր այգիներով, արտերով ու պարտէզներով։ Բերքերն են ցորեն, գարի, ամէն տեսակ բանջարեղէններ, միրգեր, մանաւանդ խաղող՝ յորմէ պատրաստուկան ընտիր գինի կը շինեն։ Այս կողմերը բամբակ ևս կը մշակեն։ Ըստ Հ. Ինճիճեանի, այս գիւղաքաղաքս գրեթէ 300 տարի առաջ չկար, և բոլոր լեռը անտառ էր՝ լի առիւծներով և ուրիշ գազաններով, իսկ շրջակայ գիւղերը աւերեղէն վերջ, բնակիչները այս տեղ ժողովելով կառուցած են քաղաքս։ Կը յիշէ նաև աւերեալ գիւղերու եկեղեցիներէն Ս. Եղիաս, Ս. Մամաս, Ս. Լուսս, Ս. Աստուածածին, և այլն, որոց ոմանք բոլորովին կործանած և ոմանք ալ կիսակործան դրից մէջ կը գտնուին։ Արկնիի

բնակիչք այդ եկեղեցիներու ծանր օրեր ուխտի կը գնան, իւրաքանչիւր ոք իրեն նախնեաց գիւղի եկեղեցւոյն։

Լերան ծայրը կը գտնուի ահեղատեսիլ հին բերդն կամ Ամուրեն Աբղնոյ՝ ինչպէս կը կոչեն մեր մատենագիրներն։ ԺԱ. դարու կիսուն, բերդիս մէջ ամրացած էին հայկազուն իշխաններ՝ Հարել անունով մէկու մը որդիք. որոց անզրանիկը Հարպիկ կը կոչուէր և կը պահէր բերդս ընդդէմ Մոնոմախ կայսեր Պեռոս զօրավարին։ Ուռհայեցին (Ա. ՀՉ.) Հարպիկ իշխանին համար կ'ըսէ, թէ «... առեալ արս և ելեալ պահէր զտեղին, և զաւուրս երեք ոչ իշխեաց ննջել ամենևին, (և վերջը նենգաւորներէ խաբուելով) ննջեաց, զի ձանձրացեալ էր յոյժ, և իբրև քաղցրացաւ ի քունն իւր, յարուցեալ ազգականն իւր հատանէր զզլուխն Հարպկանն զհօրն և քաջի, և զնոյն պիշերն հասուցանէին զզլուխն առ Պեռոս կառավարն. և սպանողքն ոչինչ օգտեցան՝ բայց միայն առնէին։ Եւ հրամայեաց Պեռոս ի ձող ցցեալ զզլուխ Հարպկանն և առնել ընդդէմ զրան բերդին. ի լուսանալն տեսեալ եղբարցն նորա և ծանեան, և վազվազակի բացեալ զդուռն և արկեալ հոգ ի վերայ զլխոց իւրեանց, և լալով գային երեք եղբարքն (Դաւիթ, Լեւոն և Կոստանդին), և անկանէին առաջի հառեալ զլխոյ Հարպկան. և այնչափ կոծ առեալ նոցա, մինչև ոդբս առեալ լային ամենայն զօրք բանակին։ Եւ այսպիսի օրինակաւ սիրանայր Պեռոս ամուր բերդին Աբկնոյ...»։ Այս դէպքէն առաջ առաջի վերջ՝ 1062 թուականին, Տուղրիլ սուլտանի զօրքերը յանկարծ յարձակելով Աբղնոյ գաւառին վրայ, զայն նուաճեցին մերձակայ վիճակաց հետ, որոնց զարձեալ սիրեցին Յոյնք. յետոյ առին Թուրքք. ԺԴ. դարու վերջերը Եւստաթ Դավրիժէն գալով սիրեց Աբղնոյ և Ծոփաց կոզմերուն, յետոյ ուրիշներ ևս փոփոխակի սիրած են այս կողմանց, և ի վերջոյ Օսմանեանք։ Աբկնի մօտ է հռչակաւոր Բարձրաձայնաց Ս. Աստուածածնի վանքը, որոյ նկարագիրն տես ի կարգին։

Աբկնի կամ Աբղնտա գաւառի տարածուքիւնն կը համարուի 8530 քառակուսի հազարամեաւ. բաժնուած է 3 գաւառակաց և 11 վիճակաց. ունի 1083 գիւղ։ Բոլոր գաւառի բնակչաց ընդհանուր թիւն է 134547, յորոց 20000ը Հայք են, և մնացածը զանազան ազգեր։ Երկիրը ընդհանրապէս լեռնային է, և ունի պղնձի և երկաթի առատ բովիր. հանքեր ունեցող լեռներէն գլխաւորը կը կոչուի Քափուր — մատեան բարձր է 4222'. միւս լեռներն են Աբղնոյ լեռ 3753', Քաղաք — տաղ, Ալի — տաղ։

ԱՐԿՆՈՑ ՎԱՆՔ. Տես ԲԱՐՁՐԱՀԱՅՑԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ։

ԱՐԿՈՒ. — Ալլազգաբնակ գիւղ Ակնայ։

ԱՐԿՈՒ ԳԵՏ կամ ԱՐԳՈՒԳԵՏ. Տես ՁԱՀՈՒԿ։

ԱՐԿՈՒԻՒ. Տես ԱԿՈՒԻ։

ԱՐԿՐՈՒՍ. Տես ՅԱՐԿՐՈՒՍ։

ԱՐՀՆի կամ ԱՐԻՆի. — Եղիշէի մէջ կը յիշուի Հայոց աշխարհի ամուր տեղերու հետ, զորս նախարարները Մեծին վարդանայ հետ միաբանելով ապառեցին Պարսից ձեռքէն։ Ինձ կը թուի, թէ սա լինի մեր վերոյգրեալ հինաւուրց և անառիկ Աբկնի բերդը։

ԱՐՁԱԻ. Տես ԱՐՑԱԻ։

ԱՐՁԱԻԱՄԱՅՐԻ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ.

ԱՐՁԱՆ. — Լիս Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Այսպէս կոչուած է Աբձան քրմապետի անուամբ, որ լերանս վրայ սպանուեցաւ Անգեղ տան իշխանէն։

ԱՐՁԱՆԱՁՈՐ. Տես ԲԱՂՔ։

ԱՐՁԱԻԱԿԱՑ ԳԻՒՂ. — Հին գիւղ վասպուրականի Անձաւացեաց գաւառի մէջ, զոր յիշէ Թ. Արծրունին։

ԱՐՁԱՆԱՁՈՐ կամ ԱՐՁԱԻԱՁՈՐ. — Միւնեաց Աբեւիք գաւառի մէջ կը յիշուի առնուս, յայտնի չէ ինչ լինելն։

ԱՐՁԻԻ. Տես ԱՐՏԻԻ։

ԱՐՁԻԻԱԿԱՏԱՐ. — Հին գիւղ Միւնեաց Ոզոզի գաւառի մէջ։

ԱՐՁԿԱՂ. Տես ԴԱՒԱՐԻՍ։

ԱՐՁՆԻ. — Հին գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Արածանիի օժանդակ վտակներէն միոյն մօտ։ Մեր պատմութեան մէջ նշանաւոր է գիւղիս մօտ մղուած այն պատերազմն ընդ մէջ Հայոց և այլազգենից, որ աւելի ծանօթ է Բագրեւանդայ կռիւն վերնագրով, որուն գեղեցիկ նկարագիրն գրած է Ղազխիկեանց հեղինակն։ Ազգային

մատենագիրներէն Ղեւոնդ Պատմիչ (Գլ. Ը) մանրամասն կը նկարագրէ այս պատերազմն։ — Այրարատ, 524–5։

ԱՐՂԱՆԱ. Տես ԱՐԿՆԻ։

ԱՐՂԱՆԱ կամ ԱՐՂՆՈՑ ՄԱՏԷՆ։ — Ան. ան Արկնի գաւառի մէջ, հնագոյնը է հանքերուն. ի թուրքաց կը կոչուի նաև Պաքըր Մատեն։ Արկնիէն հեռու է 18 հազարամեայ հիւսիսային արեւմտեան կողմը։ Դիրքը լեռնային է, և տունները լերան գագաթէն մինչև ստորոտը կը տարածուին, այնքան մինչև ձորը, ուրկէ կանցնի ջուր մը։ Գիւղիս բնակիչը ընդհանրապէս կ'աշխատին հանքերու վրայ, որոց թիւն երբեմն կը բազմանայ և երբեմն կը նուազի։ Մէջէն հաշուով այժմ ունի 3155 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք (Լուսաւորչական).	1000	հոգի
Թուրդք	1000	»
Յոյնք.	750	»
Հրեայք.	405	»
Գումարն. . . .	3155	հոգի։

Հայք ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին և մէկ վարժարան։ Յոյնք ևս ունին եկեղեցի մը. իսկ Մահմէտականք 3 մզկիթ։ Իւրաքանչիւր ազգաց թաղերն զատ են. կան նաև արաբեր և պարէզներ։ Օդն աղէկ չէ, ամառը սաստիկ տաք կ'ընէ. ջուրն ալ լաւ չէ, բայց Տիգրիս գետի ջուրը կը գործածեն, որ գիւղին արեւելեան կողմէն կ'անցնի, ուր 10 կամ 15 կանգուն լայնութիւն ունի և ձուկեր ալ կը պարունակէ։ Թէ՛ գիւղիս և թէ շրջակայ լեռներու մէջ առատ պղինձի հանք ըլլալով, լեռներուն վրայ շատ տեղ այրեր ու գուբեր փորած են, մանաւանդ Մաղարա լերան վրայ։ Գիւղին ամէն թաղերուն մէջ խոշոր խոշոր պղինձախառն հանքային քարեր ձգուած են, յորոց շատեր գործածուած են նաև տներու շինութեանց մէջ։ Տեղւոյս հանքը շատ հարուստ է. տարին մինչև 2500000 հոխայ պղինձ կ'ելնէ։ Այս բոլոր հանքառատ լեռները՝ որ երբեմն երկնաբերձ ծառերով անտառացեալ էին, այսօր չոր ու լերկ ապառաժուտներ են. վասն զի գարերէ ի վեր հանքահանները հատած պղինձն գտնելու համար՝ հալեցնելու կրակի տեղ զանոնք անխնայ կտրած ու վառած են, առանց անոնց տեղ նոր ծառեր անկելու։ — Աբդաննա Մատէն գաւառակի ընդհանուր բնակչաց թիւն է 46500, յորոց միայն 7000ը Հայք են։ — Ճնգրմ. ի Բաբելոն, 48։ Վ. Քիւրէ, Բ. 480–485։ Արեւելք, թ 1193։

ԱՐՂԻՇ. — Այս անուամբ գաւառ մը կը յիշէ Թ. Մեծոփեցի Այրարատայ մէջ, որ թուի թէ վիճակ մի էր ճակատաք գաւառի, եթէ սխալ գրութիւն չէ՝ փոխանակ Արճիշոյ։ Էնկլիսուրի ասպատակախմբէն բոլորովին կողոպտուած է այս երկիրը։

ԱՐՂՆԻ. Տես ԱՐԿՆԻ։

ԱՐՃԷՇ. Ասոր. ארגיש Գր. ARDJECH. Թ. ارجيش Լ. Arsissa. Յն. Αρσες, Αρξες. — Ի հնումն մեծ և անուանի քաղաք Վասպուրականի Արճիշակովիտ գաւառի մէջ, համանուն՝ կամ Վանայ ծովակի հիւսիսային ճղոքը։ Քաղաքիս նախնական պատմութիւնն շատ ծանօթ չէ, բայց յայտնի է որ մեր աշխարհի հնագոյն քաղաքներէն մին էր։ Սակայ կը յիշէ քաղաքս կոստանդին Պերփերուժէն կառավարութեան գրոց մէջ (Գլ. ԽԹ)։ Յովհան Կաթողիկոս քաղաքս կը դնէ Աղիովիտ գաւառի մէջ և գիւղ կ'անուանէ՝ ըսելով. «Յաջորդէ զաթոռ հայրապետուն թեանն Եղիա ի գեղջէ Արճիշոյ յԱղիովտէ յեպիսկոպոսութենէ Բդնունեաց»։ Թ. Արծրունեայ շարունակողը, Արճէշը կը դնէ Գնունեաց գաւառի մէջ, երբ Սրահանդայ Հազարացի ներքինւոյն համար կ'ըսէ, թէ ԺԱ. դարու մէջ առաւ «զԱրճէշ քաղաք Գնունեաց գաւառին»։ Իսկ Թ. Մեծոփեցի և Վարդան աշխարհագիր՝ Արճիշոյ սահմանքն կամ գաւառը կը կոչեն Քաջբերունի, նոյնանուն ցեղի մը անուամբ որ այս երկրի մէջ բնակեցաւ։ Իօթներորդ դարու մէջ Հռոմկլայոբ Արճէշը այրեց, յորում կը բնակէին Պարսից զօրքերը։ Ասողիկ, Բ. Գ։ Սենեքերիմ Արծրունին, ուրիշ քաղաքաց հետ քաղաքս ալ առաւ Յունաց Վասիլ կայսեր։ Ի դարէն վերջ մերթ Յունաց և մերթ Պարսից ձեռքն անցած է քաղաքս, և ապա զանազան ասպատակութեանց և սխրուր պատերազմաց եղած է, յորոց շատերը կը նկարագրէ Թ. Մեծոփեցին։

Դարուս սկիզբը տակաւին շէն էր քաղաքս, և ունէր գրեթէ 1500 տուն բնակիչք, մեծամասնութիւնը Քուրդք և տակաւ Հայք՝ որք ունէին երկու եկեղեցիներ։ Մօտէն կ'անցնի վտակ մը, որ կը կոչուի Արճիշոյ գետ։ Գրեթէ 70–75 տարի առաջ այս պատմական և հին բերդաքաղաքն ծովու կատաղի ալեաց չկարողանալով դիմադրել, անոր ալեաց մէջ ծածկուեցաւ, այդ պատճառաւ բնակիչներն հետզհետէ քաշուեցան Արճիշոյ դաշտի գիւղերն։ Այժմ կիսաւեր և բոլորովին ամայի դարձած է, սխուր աւերակաց մեծամեծ բեկորներն ծովու ազային ջրերէն շրջապատեալ կը կենան, խորհրդաւոր և բեւեռի մ'ունին նաեւ բերդի կիսակործան պարիսպներն։ Արճէշ՝ երբեմն համանուն գաւառի ամենէն բազմամարդ տեղն եղած է, և վաճառականութեան մէջ խիստ յառաջացած։ — Ատորգր. Հին Հայս. 216

ԱՐՃԷՇ. — Գաւառ Վանայ նահանգի, կը համապատասխանէ հին Արճիշակովիտ կամ Քաջբերունեաց գաւառի։ Կ'ընդհնայ Արճկէի, Մանազկերտի, Ալաշկերտի, Պայազիտի և Բերկրիի մէջտեղ, հարաւ արեւելեան կողմէն շրջապատուած է ծովով։ Հին Արճէշ քաղաքի անբնակ լինելէն վերջ, գաւառակզուխն եղած է Ալանց աւանը։ Դիրքը դաշտային է և լեռնային. օդը բարեխառն, ջուրը առատ, հողը արգասաբեր։ Ունի այգեստաններ և ծառաստաններ։ Ցորենը, ձին, ոչխարը և արջառն անուանի են։ Գետերու մէջ յիշելու արժանի են Օրօրանայ և Արճիշոյ գետերը։ Ձիլանայ ձորի մէջ կան ծծմբային ջերմուկներ, ուր կը նշմարուին հին մարմարեայ աւազաններու նշխարներ։ Ձիլանայ ձորի մէջ կայ նաև պղնձահանք։ Բոլոր այս գաւառիս սիրող լեռն է Ծազկաց լեռը (Ալա–տաղ), որ յոտից ցգլուխ պճնուած է պարարտ արօտներով և գոյնզգոյն տեսակ տեսակ ծաղիկներով։ Այս լերան մէջ կան շատ և ընդարձակ քարայրներ, որոց վրայ կան նաև յատուկ առասպելներ, Արևքար, Օձաքար, և այլն։

Վ. Քինէ գաւառիս բնակչաց թիւն կը դնէ 14774, որ խիստ քիչ է, և հետեւեալ կերպով կը բաժնէ.

Հայք (Լուսաւորչ. և Կաթողիկ.)	9490 հոգի
Մահմետականք (Թուրքք և Քուրդք)	5129 »
Հրեայք և զանազանք	155 »
Գումարն...	14774 հոգի։

Ընդհակառակն 1882ին վիճակագրութեան մը համեմատ գաւառիս Հայոց թիւն էր 10569, ուրիշ տեղագրող մ'ալ կը համարի մինչև 26900։ Հայաբնակ գիւղերը հետեւեալք են.

Ականց	Ցաղիովիտ
Բլուրմակ	Ասրաֆ
Թարկէն	Բերդաղ
Կտրաճ քար	Թոնդրաս
Սոսկուն	Տիրան, Տիլան
Բայ գիւղ	Գանձակ
Օրօրան	Արմիզոն
Ներքին Բիշատ	Ծայծակ
Վերին Բիշատ	Ճիւտկեան
Մաճառս	Գրագոմ
Ցասքոնակ	Փիրօմար
Ցարուխիւն	Ջիրաքլու

Վերջին դէպքերու ժամանակ այս գիւղերէն ոչ սակաւք մեծ վնասներ ունեցան և շատերուն եկեղեցիներն աւերի ատնուեցան, ինչպէս նաև գաւառիս 4 վանքերն, յորս հռչակաւոր է Մեծոբայ Վանքը։ — Համով Հոտով, 96–97։ Մշակ, ժ. 121։ Եւ այլն։

ԱՐՃԷՇ. — Այս անուամբ գետ և քաղաք մը կայ Ռումէլիոյ (Վալաքիա) մէջ, 3000 բնակչօք. ունի եպիսկոպոսական աթոռ և կղերանոց։ Եկեղեցին Վալաքիոյ եկեղեցիներու մէջ գեղեցկութեան կողմանէ առաջին կը համարուի։ Քաղաքս իր անունն առած կը կարծուի Վասպուրականի Արճէշ քաղաքի անունէն, և կ'ըսուի թէ ԺԳ դարու մէջ Հայաստանի նոյնանուն քաղաքէն Հայեր գալով ի Ռումէլիա բնակած են այս տեղ։ Այս քաղաքիս վրայ քննական յօդուած մը հրատարակուած է 1888 տարւոյ Բազմավէպի 211–217 իջից մէջ։

ԱՐՃԷՇ. — Հայաբնակ գիւղ Արցախի Ղազախի գաւառի մէջ։ Բնակիչք 65 տուն, ունին Ս. Քակոր եկեղեցի մը, և նոյն անուամբ հին մատուռ մը։

ԱՐՃԻԱՆ. — Լեռ Գուգարաց Ջաւախք գաւառի հարաւ արեւմտեան կողմը, Ջըլտըր և Խոզապին լճերու մէջտեղ, բարձր՝ 8700'։

ԱՐԱԻՇԱԿՈՎԻՏ կամ ԱՐԱԻՇԱՀՈՎԻՏ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին, ո՛ր ուն մասամբ մը կը համապատասխանէ այժմեան Արճէշ գաւառն։*

ԱՐԱՇՈՒ ԾՈՎ.. *Տես* ՎԱՆԱՅ ԾՈՎ.։

ԱՐԱՈՒԱՆ կամ ԱՐԱՈՒԱՆ ԱՄՐՈՑ. — *Ալ ո անուամբ գիւղ և ամրոց կը յիշէ Թ. Ա՛ծրունին, Վասպուրականի մէջ։*

ԱՐՄԱՂ. — *Լեռ Գուգարաց Տաշիր գաւառի մէջ, որոյ վրայ Քարթլաւ կառոյց Օրբէք անուն բերդը։*

ԱՐՄԱՇ. Գր. ARMACH. — *Ալան Պէյի նման զուտ հայաբնակ և անուանի գիւղ Իշխնիմիի (փոքր Ասիա) գաւառի մէջ. Նիկոմիդիայէն հեռու է 6 ժամ՝ հիւսիսային ա՛րեւելեան կողմը։ Բնակիչք 1500 հոգի, կը զբաղին ընդհանրապէս շերամագործութեամբ և երկրագործութեամբ։ Ծանօթ է գիւղս իւր հռչակաւոր Զարխափան Ս. Աստուածածնի վանքովն (թ. 160), որ կառուցուած է բլրի վրայ և շրջապատուած ու զարդարուած է գեղարճալի պարտէզներով։ Թէ՛ գիւղի և թէ վանքի հիմնարկութիւնն եղած է 1611 թուականին, և բնակիչք սերունդք են 1608ին Պարսկաստանէն փոքր Ասիա եկող հայկական այն մեծ գաղութին, որոյ մեծագոյն մասն հաստատուեցաւ Աստրազար, և մէկ մասն ալ այստեղ։ Թադէոս եպիսկոպոս եղած է վանքի հիմնադիրը նոյն 1611 թուին, և Արմաշու վիճակին առաջին առաջնորդը, իրեն ներքեւ ունենալով Կէյվէ, Բազար, Սեօղեօզ, Կիւրլի, Պանտրմա, Պալըքեսէր, Քիւրաւսրի և Պիղա իրենց թեմերով։ Վանքս իւր սկիզբէն մինչեւ ցայժմ ունեցեր է 24 առաջնորդներ, զորեմէ ամէնքն ալ եպիսկոպոսներ կամ արքեպիսկոպոսներ եղած են։ Բարթողիմէոս արքեպիսկոպոս Կապուտիկեանի առաջնորդութեան ժամանակ 1786ին կը սկսի Արմաշու համար նոր շրջան մը, կանոնաւոր միաբանութեան և ուսումնարանի հաստատութեամբ։ Նոյն ժամանակ տաճարը ի հիմանէ նորոգուեցաւ և վանքը նորէն շինուեցաւ ընդարձակ և հոյակապ, բայց 1804ին վանքն ու եկեղեցին, ուսումնարանն և մատենադարանը պէտք ունեցան նորոգութեան։ Ուստի Պօղոս արքեպիսկոպոս Ղարախօճեան, 1820ին վերաշինութեան հրամարտակ առանալով չորս տարուան մէջ վերաշինեց եկեղեցին, նորոգեց նաեւ վանքն և ուսումնարանն բանալով վանքի զարգացումը ամենուն։ Սահիանոս արքեպիսկոպոս Զաքարեան, որ աւելի ծանօթ է Ազգանի մականունովը, 1825ին առաջնորդ լինելով, ուսումնարանի զարգացման ջանքերը կրկնապատկեց, ի նորոյ շինեց վանքին փառաւոր Առաջնորդարանը և Մխիթարեան թաղը



160. *Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքը։*

և հիւսիսային հիւրանոցը՝ որք ցարդ կը մնան, նախկին ուսումնարանը և մնացեալ հիւրանոցները որք 1888ի հրդեհին այրեցան։ Առեփանոս արքեպիսկոպոս Մագաքեանի առաջնորդութեան (1856–1865) օրով, վերջին տարիներու մէջ խանգարուած վանքը, վերաշին ծաղկեցաւ, բացուեցաւ Արմաշու տպարանն և սկսաւ հրատարակուիլ Ծոյս անունով գրական հանդէսը։ 1866 Թուականին Արմաշու վանքը Նիկոմիդիոյ միաճակէն գաւազեցաւ, իրեն թեմ պահելով միայն Արմաշ և խասկալ գիւղերը. այնուհետև իր առաջնորդներն սկսան կոչուիլ վանահայր։ Ասոի կը սկսի վանքին երբորդ կամ նոր շրջանը, վիճակային խնդիրներէ ազատելով զոկ ուսումնական և կրթական գործակցութեան ծառայելու համար։ Խորէն արքեպիսկոպոս Աշրգեանի վանահայրութեան (1872–1888) ժամանակ, բացուեցաւ վանացս Ս. Ղևոնդեանց դիշերօթիկ վարժարանը, և քանի մի տարի փայլուն կերպով յառաջանալէ վերջ, 1878ին եղեմնական տագնապներով, նոյն վարժարանը փակուեցաւ և Ծոյս հանդէսի հրատարակութիւնն դադրեցաւ։ Մագաքիա եպիսկոպոս Օրմանեանի ժամանակ (1889–1896), Արմաշու վանքը մեծապայլ յառաջացաւ։ Անմիջապէս բացուեցաւ եկեղեցական վարժարանն, և այս առթիւ վանքն ալ կոչուեցաւ Արմաշու Դպրեվանք, և եօթնամեայ շրջանով 1889–96 տարիներու մէջ երկու գաւառացիներ աւարտեցին, և ապն ունեցաւ դաս մը գիտնական վարդապետներ։ Վանքի վրայ եղան նշանաւոր նորոգութիւններ, տաճարն ներսէն և դուրսէն վայելչապէս նորոգուեցաւ և զանգակատունն ալ եղաւ, ընդարձակ քարուկիր ուսումնարան մը կառուցուեցաւ, նմանպէս եւթը յարկանի հիւրանոց մը, շերամատան յարմար ընդարձակ շէնք մը, փուռ մը, կաթոլիկոսարծնակալ ջրաղաց մը, և այլն։ Ցնկուեցան նաև նոր թիթաստաններ, և շերամաբերմի պատրաստութեան ընդարձակ գործ բացուեցաւ։ Այժմեան Արմաշու վանահայրն է Եղիշէ եպիսկոպոս Դուրեան՝ որ կ'աշխատի Դպրեվանքին վանական և ուսումնական բարեկարգ ընթացքը կատարելապէս շարունակել և ևս քան զեւս արդիւնաշատ ընել զայն։


Վանացս Ս. Ասուածածնի հրաշագործ պատկերը, որ անարուեստ բան մէկ և աչ ալ հին, առաջ գրուած էր աւազ խորանին վրայ, և ի վերջոյ ուխտաւորաց գիւրութեան համար փոխադրած են զաւթին մէջ, իսկ աւազ խորանի վրայ գրած են Ասուածածնայն ուրիշ պատկեր մը աւելի ճարտար նկարուած իտալացիէ մը։ Փոքր Ասիոյ ամէն կողմերէն բազմաթիւ ուխտաւորներ կը գիմեն այս հրաշագործ պատկերին. գլխաւորապէս ուխտաւորաց խումն բազմութեամբ կը լցուի մեծատառն սեպտեմբերի մէջ Ս. Ասուածածնի ծննդեան և վերացման խաչի տօներուն։ Մայիս և Յունիս ամիսներու մէջ ևս պակաս չեն ուխտաւորք։ Ամէն տարի այս ուխտաւորաց թիւն կը հասնի 6էն 7000ի։ Ուխտաւորք կու գան ոչ միայն Արմաշու շրջականերէն, այլ և Կոստանդնուպոլսէն, Աղբիանուպոլսէն, Փիլիպպուպոլսէն. Պրուսայի, Պիկէնիկի, Զմիւռնիոյ, Կաւսիոյի, Գազատիոյ, և Իկոնիոյ նահանգներէն։ — Արմաշի Դպրեվանուց եկամուտները կը կազմեն հոգային արտադրութիւնը, շերամատերմի հասոյթ, ուխտաւորութեանց արդիւնք, և յատուկ բարերարութիւնք։ Վերջերս ատ բացուած ազգային որբանոցն կը կառավարեն Դպրեվանուց խնամակալութիւնն և վերատեսչութիւնը, պատրիարքարանէ սահմանեալ նպաստով մը։ Դպրեվանուց շրջանաւարտ աշակերտներէն շատերը գաւառաց մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարեն, իսկ վարդապետներէն ոչ սակաւք զանազան քաղաքաց մէջ տեղապահութիւն կամ առաջնորդութիւն կ'ընեն։ — Ընդարձակ Օրագոյց Ազգ. Հիւանդանոցի, 1900, էջ 175–186։ Վ. Բիւրեւ, Գ. 364–367։ Տեղագր. Հայս. 36–38։ Եւ այլն։

ԱՐՄԱՒԱՃԵՆ. — Այս անուամբ Վերին և Ներքին կրկին գիւղեր կան Սիւնեաց Շահապօնք գաւառի մէջ։ Անոնց թէեւ հայաձայն՝ սակայն գիւղերուս բնակիչք այլազգի են, որք և ծամածռելով Արմաւաշէնը ըրած են Իրամեշին։

ԱՐՄԱՒԻՐ. Գղ. ARMAVIR. — Հին և անուանի մայրաքաղաք Հայաստանի, որոյ աւերակներն կը գտնուին Այրարատայ Արտաշատոն գաւառի Մարտարապատու վի-

ճակին, կամ Արմաւրայ գաշտի մէջ բարձրացող հանգոյն բլրակին վրայ։ Մեր հնաւանդ պատմութեան համեմատ՝ Հայկայ թոռը «Արմայիս (կամ Արամայիս) շինէ իւր առն բնակութեան ի վերայ ասոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր, և զանուն գետոյն՝ յանուն թոռին իւրոյ Երասխայ»։ Խոր. Ա. ԺԲ։ Խորենացիին վերջ Սերիոս՝ Արմայիր կը կոչէ

քաղաքս, իսկ մեր պատմիչներէն առելի հնագոյն՝ մեծ աշխարհագիրն և աստղաբաշխն Պտղոմէոս, Բ գարու մէջ, ասոր անունը յաւետարէն կը գրէ Արմաւեիրա կամ Արմաւրիա (Ἀρμαουϊάρα, Ἀρμαυροία)։ Արմաւրայ բլուրը բարձր է հարթածաւալ գաշտի երեսէն 300′, և ծովու մակերեւութէն 2942′, գրեթէ երկու փարսախ հեռու է Երասխ գետէն՝ անոր հիւսիսակողմը, Թէլիէ-



161 • Արմաւիր աւերակ։ Գետնա գիրեր աւերակ։

տեսի կոչուած Հայաբնակ գիւղի մօտ, ա-
բեւմտեան կողմը։

Բլրոյն վրայ տակաւին կը տեսնուին բեր-
դանման շինուածոց և պարսպաց աւերակ-
ներ, յորոց շատ քարեր տարած են ուրիշ
նոր շէնքերու գործածելու համար, և մա-
նաւանդ Սարատարապատ բերդաքաղաքի հա-
մար։ Դեռ շէն էր բերդս մինչեւ Ե դարու
կէսը, զոր ուրիշ արքունի զօրանիստ տեղե-
րու հետ առին և կործանեցին Վասակեանք։
Յայտնի չէ թէ մինչեւ այն ժամանակ կայ՞ն
նաեւ պարիսպներու աշտարակաց խրոխտ
գագաթներն։ Քաղն Արամ Մարաց Մագէս
Նիւքար կոչուած իշխանը ձերբակալելով
քաղաքս բերաւ,
և վերոյիշեալ աշ-
տարակներէն
միոյն ծայրէն՝
հրաման տուաւ
որ երկաթէ ցը-
ցով ճակտէն գա-
մեն։ Մարիբա-
սեան պատմու-
թեան համե-
մատ, սօսինե-
րու ծառատան
կար յԱրմաւիր,
յայտնի է թէ
բլրոյն տարբա-
քը, և կը կոչուէր
Արմենակայ ա-
նուամբ։ Ակռէ
կը գուշակուի,
թէ Արմայիսի քաղաքս կամ բերդս շինելէն
առաջ, իւր հայրն Արմենակ բնակած է այս
կողմերս։ Հեթանոսութեան ժամանակ այդ
սօսիներն անցան կրօնի պաշտամանց կարգը,
մինչեւ անգամ մարդիկ գիրենք կը նուիրէին
սօսեաց, և անոնց տերեւոց շարժմանէն հմա-
յութիւններ կ'ընէին։ Խորենացին (Ա. Ի)
Արա Գեղեցկի Ենուշեան որդւոյն համար
կ'ըսէ, թէ «... ձօնեալ էր ըստ պաշտա-
մանց ի սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր.
զորոց զաղարթուցն սօսափիւն, ըստ հան-
գարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյ եւեթ
սաստ շարժուիլն, սովորեցան ի հմայս յաչ-
խարհիս Հայկազանց. և այս բազում ժա-
մանակս»։ Ա յս պատճառաւ Սօսանուռէր կը
կոչուէր Ենուշեան։ — Բլրոյս արեւմը-
տակողմը ըստ աւանդութեան կողմանցս
բնակչաց, երկիրը հերկած ժամանակ, գտած
են ծառոց մեծամեծ արմատներ, զոր ա-
մանք կը համարին այն հնադարեան սօսեաց
ճեացօրդիները, որք մեր երկրի մէջ շատ
կ'աճին և կը սուսւարանան։

Հայկազանց հարստութենէ վերջ, Արշա-
կունեաց նահապետ Վաղարշակ՝ Ագեքսան-
դրի յաջորդաց կողմնակալներն մեր աշխար-
հէն վանելու պատրաստուած ժամանակ, Ար-
մաւիր մօտ՝ երասխայ ափունքը, խմբեց իւր
զօրքերը, և շատ օր հոն ճեալով բոլոր աշ-
խարհին զինուո-
րական զօրու-
թիւնն միացնե-
լով՝ հասաւ մին-
չեւ Խազտեաց
սահմանները։
Թշնամին նուա-
ճելէ և երկիրը
կարգաւորելէ
վերջ՝ մեհեան
շինեց յԱրմա-
ւիր, մէջը հաս-
տատելով արե-
գական, լուսնի,
և իւր նախնեաց
արձանները։
(Խոր. Բ. Ը)։
Վաղարշակի
թոռան Արտա-
շիսի ծննդատանէն գերած կուռքերէն, Վա-
հեւունի քուրմերը Արմաւիր մեհենին մէջ
կանգնեցին Արտեմեայ պղընձաձոյլ ոսկե-
զօծ անդրին՝ Ապոլոնի անդրոյն հետ։
Արտաշիսի որդին Տիգրան՝ Հրեայ գերի-
ներու մէկ մասն բնակեցուց քաղաքիս
մէջ և մէկ մասն ալ մերձակայ Վարդկսի
աւանը՝ որ յետոյ Վաղարշապատ եղաւ։ —
Արտաշիսէն մինչեւ Երուանդ Բ ժամանակ
գրեթէ 20 կամ 25 դարուց միջոց, այրա-
րատեան դաշտի վրայ շատ փոփոխութիւններ
եղան։ Երասխ գետն ալ իւր ընթացքն փո-
խեց և սկսաւ հոսիլ Արմաւիրէն գրեթէ 4
վերստ հեռու, որուն հին հունը մինչեւ ցարդ



162. Նիւքար իշխանը գամուած Արմաւիրի աշտարակի ծայրէն։

կ'երեւի բլրի սաղրատը, որուն այլազգիք Գոռ-ղոռ Արազ (Յամաք Երասխ) անունը կու տան։ Երուանդ Բ՝ կ'երեւի Ջրոյ Նուագու-թեան կամ Երասխի հեռանալուն պատճա-ռաւ և աւելի ամրագոյն տեղւոյ մը ի խնդիր երթալով, կառոյց Երուանդաշատը և հոն փո-խադրեց արքունիքը. նոյն ժամանակ Արմաւիր հռչակաւոր մեհենին կաւաքերն ալ փոխադրեց ի Բագարան։ Զորրորդ դարու մէջ Աբշակ Բ Արմաւիր մէջ կոտորել տուաւ Կամնարակա-նաց ցեղն. այդ միջոցին Խորենացին (Բ. ԼԱ.) լրեալ արքունիք կը կոչէ քաղաքս։

Արմաւիրայ բլրոյն վրայ և իր սահմանաց մէջ գտնուած են բաւական թուով բեւեռագիր արձանագրու-թիւններ. որոց սաղդ ընթերց-ման միայն հը-նարաւոր պի-տի լինի ճշդիւ տեղեկութիւն-ներ ստանալ քա-ղաքիս նախա-պատմական ժամանակի մէջ ունեցած հռչա-կին վրայ։ Ռուս հնագէտն Ու-վարով, բլրոյն վրայ և ստո-րոտքը պեղումներ ընելով, այլ խիստ հնու-թեան նշաններ չգտաւ, բայց եթէ հողէ անօթներ. իսկ մերձակայ ցածուն հո-ղաբլրոց մէջ գտաւ արծաթէ մանեակներ, մատանիներ և այլ այսպիսի իրեր, որոնք ըստ իւր կարծեաց քրիստոնէական Գ–Ե դա-րուց կը վերաբերին. միայն բարձրաւանդա-կի մը փորուածքին միջէն գտաւ քարեղէն գլխքեր և գանակներ, որոնք խիստ հին ժա-մանակաց կը վերաբերին։ Փոխիպիր անգ-պիացի նոր հայագէտը, որ 1888ին այցե-լեց Արմաւիր, կ'ըսէ՝ թէ գեղացիները բլրոյն վրայ հաստ պարիսպ կամ պատ մը քա-կած ժամանակ, յայտնուեր է գետնուղեայ մուտք մը, որ հողով լեցուած լինելով ինքը չէ կարողացած ներս մտնել, բայց կը հա-մարի որ բլրոյն խորը գտնուին քարափոր սենեակներ՝ վանայ սենեկաց նման։ Ռուս գիտնականն Նիկոլսկի, իր հրատարակած Ռուսաց Հայաստանի բեւեռագիր արձանա-գրութեանց գրքի մէջ, ընդարձակօրէն կը խօսի Արմաւիրայ վրայ։ Արմաւիրայ բլրոյն ա-բեւմնահողմը կը տարածուի երկարաձեւ ա-ռապար մը, յորում կը նշմարուին վաղեմի շինուածոց հիմունք, որոնք թերեւս լինին քաղաքին արուարձանքն կամ թագերն։ Մէջ տեղը կայ Ս. Գաբրայ կոչուած ուխ-տատեղի մը, հատարակ քարերով հիւսուած, փոքր և ցած գմբոյթ, ուսկից կը մտնեն ծերա-դիր. ներսը կան-գնած կայ սիւ-նակ մը, և կը կարծուի լինել հին մեհենատե-ղի. այժմ ուխտի կ'երթան հոն Նոր կիւրակէին։ — Այրարատ, 148 – 152։ Ստորգր. Հին Հայս. 498–500։ Բազմա-վէպ, 1897, էջ 197–203 և 241–248։ Եւ այլն։




163. Անուշաւան կը նուիրուի Արմաւիրի սոսիներուն։

ԱՐՄԱՒԻՐ ՆՈՐ. — Հայաբը-նակ աւան կամ քաղաքաւան Ռուսիոյ Գու-պան գաւառի մէջ, Գուպան գետին ձախ եզեր-քին վրայ, փրօչնօ–Սբօփ ըսուած ամրոցէն մէկ մղոնի չափ հեռու։ Քաղաքս հիմնած են եզե-րահայք կամ Զէրքէզի Հայք 1848 Ռուսաց Չար զօրապետին յորդորանօք։ Չարս կողմը ունի խորունկ խրամ և չորս դուռ. հիւսիսային կողմը թերակղզի մը կայ, և բնակիչները երբեմն հոն կը փախցնէին իրենց սաացուած-քը, կանայքն ու տղայքը, եթէ յանկարծ Զէրքէզները վրանին յարձակէին։ 1852ին շինուած է քաղաքիս քարաշէն եկեղեցին, որոյ շինութեան համար Ռուսաց ակրու-թիւնը 40 հազար ֆրանկի չափ օգնութիւն

բրած է։ Բնակիչներու թիւն այժմ կը հասնի 6400։ Վաճառականութիւնը բաւական է։ — Մատեաց Ազգաւի, Բ. 322։

ԱՐՄԵԱՆՈՒ կամ ԱՐՄԵԱՆՈՒԻ ՊԱՂԱՐ. — Գիւղաքաղաք Եւրոպական Ռումելի Տաւրիոյ կուսակալութեան, 130 հազարամեայ Փիլիպէն հետու հարաւային արեւելեան կողմը, և 3 հազարամեայ Փերեքովի հարաւակողմը։ Բնակիչներու մեծամասնութիւնն կը կազմեն Հայք, որք մեծաւ մասամբ եկած են Ենախիչեանէն, և ունին կաթուղիկէով եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին։ Բաց ի Հայոց կան նաև Թաթարք, Հրեայք, Ռուսք, և այլն։ Վաճառականութեան և անցուդարձի պէտուր կեդրոն է. վասն զի կը գտնուի Սիմֆերոպոլի և Մոսկուայի մեծ ճանապարհին վրայ։



164 • Բեւեռային Արջուկի կամ Մեծ Արջի խումբը։

ԱՐՄԵՆԱԿՈՒ կամ ՄԵՆԱԿՈՒ. — Ա՛յլ կերպ

գրուած անուն Աբրահամեակ բերդի։

ԱՐՄԵՆԻԱ. Տես ՀԱՅԱՍՏԱՆ։

ԱՐՄԵՆՈՊՕԼԻՍ. Տես ԿԵՐԱՍ։

ԱՐՄԵՆՕԳԱԼԻՊՏ. Տես ԹԱՂՏԻՔ։

ԱՐՄԷՆ. — Այս անուամբ լեռ կը յիշուի Լեռնային Կիլիկիոյ մէջ, Լամբրոնի ա-ռոտիկ ամրոցի մօտ՝ արեւելակողմը։ — Լեռ-բանս հիւսիսային կողմէ ի հնումն կար կրօ-նաւորաց Աճապատ կամ Լաւրաւան մը, որ կոչուած է մերթ Աբուենի Աճապատ՝ և մերթ Յովաննիսի։ 1233 թուին Յակոբ անուն կրօնաւոր ոմն ասա օրինակած է աւետարան մը։ Վանացս մէջ գրուած ուրիշ գրոց յի-շատակարաններէն կը յայտնուի՝ թէ տեղւոյս առաջնորդ կը կոչուէին Մ. Աստուածածին և Մ. Փրկիչ։ — Մխսուան, 96—97։

ԱՐՄԷՆՈԿԻԼԻԿԻԱ. Տես ԿԻԼԻԿԻԱ։

ԱՐՄԷՋԱՆ, ԱՐՄԷՃԱՆ կամ ԱՐՄՈՒՃԱՆ.— Գիւղ Բալուայ (Զորրորդ Հայք) առաջնոր-դական թեմի մէջ, 60 տուն հայ բնակչօք։

ԱՐՄԻԶՈՆ. — Գիւղ Վասպուրականի Աբճէզ գաւառի մէջ. բնակիչք 250էն աւելի, ունին Մ. Սարգիս քարաշէն եկեղեցի մը։

ԱՐՄԻԿ. — Գիւղ Այրարատայ Ուրծ և Աբած (Վէտի—Պասար) գաւառի մէջ, 560 այլազգի բնակչօք։

ԱՐՄՆԱԼ. կամ ԱՐՄՆԱՅ. Տես ՍՈՒԻՔ։

ԱՐՄՇԱՏ. — Հայարնակ գիւղ Վանայ նահանգի Շատախ գաւառակի մէջ։ Բնա-կիչք 200, ունին Մ. Վարդան քարաշէն եկեղեցի մը։

ԱՐՄՈՒԹԱԼ. — Գիւղ Տիւրիկու, 50 տուն հայ բնակչօք, որք ունին Մ. Գէորգ եկե-ղեցի մը։ Արմուխտալի մէջ կան նաև քանի մը տուն այլազգիք։

ԱՐՄՈՒՃԱՆ. Տես ԱՐՄԷՋԱՆ։

ԱՐՄՈՒԱՏ. — Այլ կերպ գրուած ա-նուն Աշմուշատ քաղաքի։

ԱՐՄՈՒՏԱՆ կամ ԱՐՄՏԱՆ. — Այս ա-նուամբ կրկին հայարնակ գիւղեր կան Բարձր Հայոց Գաբռնագրի (կամախ) գաւառի մէջ։ Մեծ Արմուան ունի գրեթէ 1400 բնակիչ, իսկ փոքր Արմուան մօտ 600 բնակիչ։

ԱՐՄՈՒՏԻՒՆ կամ ՏԱՆՋՈՒՏ. — Այս ա-նուամբ քանի մը գիւղեր կան մեր աշ-խարհի զանազան կողմերը։ — Մէկ հատ ունի Այրարատայ Արագածոտն (Աթարա-բատպատ) գաւառը, 590 բնակչօք, յորոց 372 Հայք են և ունին Մ. Աստուած եկե-ղեցի մը, իսկ մնացածը այլազգիք։ — Ու-րիշ մը, նոյն նահանգի Աբեղեանք գաւառի մէջ, Պաշքէօյի արեւմտակողմը, 5390 բար-ձրութեան վրայ։ Ունի 70 տուն հայ բնա-կիչներ։ — Երրորդ մը նոյնպէս Այրարա-տայ Շիրակ գաւառի մէջ, 77 տուն հայ բնակչօք, որք գաղթած են Կարսի, Բա-ջնոյ և Ալաշկերտի գիւղերէն։ Եկեղեցին կառուցած են 1859 թուականին, կը կո-չուի Մ. Սարգիս։ Գիւղս շինուած է հա-մանուն բլրակի մը առակ, երեք կողմէ կան բաւական ընդարձակ դաշտեր։ — Այս ա-նուամբ ուրիշ գիւղեր ևս կան Սպերի և Մե-բաստիոյ մէջ, և այլուր։

ԱՐՆԱՐԻՒՈՄ. — Գիւղ Կարնոյ գաշտի, ունի 300 հայ բնակիչ և Մ. Աստուածա-մայր եկեղեցի մը։

ԱՐՇԱԿԱՒԱՆ. — Հին քաղաք Այրա-րատայ Կոգովիտ գաւառի մէջ, զոր հիմնեց Աբշակ Բ, և մէջի բնակիչները շատցնելու համար հրաման հանեց որ ամէն չարագործ մարդիկ որ հոն ապաւինին ազատին։ Ա-սով քիչ ժամանակի մէջ քաղաքը լեցուե-ցաւ ամէն տեսակ չարագործ մարդիկներով։ Շատ անգամներ նախարարները բողոքեցին այս բանիս համար, բայց Աբշակ ամենեւին մտիկ չըրաւ, և ոչ իսկ Մ. Խորէն՝ որ տե-ղապահ էր Մեծին Ներսիսի. ընդհակառակն հոն արքունի ապարանք ևս շինել տուաւ։ Մեծն Ներսէս Վաղէսի արգելանէն ազա-տած Հայաստան դառնալով, շատ յանդի-մանեց զԱբշակ, որ այս չարեաց պիմացն առնէ, և երբ մտիկ չըրաւ, Մ. Հայրա-պետի անէծքով փոխադրական չարակեղ և ժանդ բռնած հիւանդութիւններն եկան Աբ-շակաւանի վրայ և շատ մարդիկ մեռան։ Յետոյ նախարարներն ալ միաբան բազմա-թիւ զօրքերով քաղաքին վրայ յարձակելով, երեք օրուան մէջ 18—20 հազար տուն բնակիչ կոտորեցին և քաղաքն կործանեցին։ Այս կոտորածէն ազատեցին միայն կաթնասուն ազգքը, զորս Մեծն Ներսէս նախարարնե-րուն ձեռքէն առաւ, ու որթի ճիւղ հիւսած կողովներու մէջ գնել տալով, գրկից մօ-տակայ գիւղ մը, որ յետոյ աւան դառնա-

լով Որթք ըսուեցաւ, այս պիսուածին համար։ Արշակ այս դէպքս իմանալով, վրացի գնդով դիմեց նախարարաց վրայ, իրեն ձեռակերտ Արշակաւանին վրէժը լուծելու համար. ահաւոր պատերազմ մը տեղի ունեցաւ և երկու կողմէն շատ մարդիկ ինկան, մինչև եկաւ Մեծն Ներսէս և մէջտեղ մտնելով խաղաղութիւն բրաւ։ Թէպէտև Արշակ յետոյ զարձեալ վրէժխնդիր եղաւ և նախարարներէն շատերը կոտորեց։ Բայց անիծուած քաղաքը կամ աւանը աւերելով կործանեցաւ, և գրեթէ անհետացաւ։ Այժմ Քրդերէն Թարապայ—Պաժառ (Աւեր քաղաք) կոչուած աւերակներն, որ կը գտնուին Որկովի և Մասեաց լերան մէջտեղերը, կը համարուին հին Արշակաւանի մնացորդները։ — Ստորգր. Հին Հայս. 448—449։ Այրարատ, 494։

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ. — երկրորդ հարստուԹիւն Հայոց Թագաւորաց, սկսած Արշակ ՊարԹեւ Պարսից արքայի վաղարշակ եղբօրէն 149 Թուին Ն. Ք։ Այս հարստուԹենէն Հայք ունեցան 28 Թագաւորներ, ո՛րոց վերջինը է Արտաշէս կամ Արտաշիր։ Այս Թագաւորութիւնը տեւեց հինգ դարէն աւելի և վերջացաւ Ս. Սահակ Հայրապետի օրով, Պարսիկ Սասանեանց ձեռքով՝ և Հայ նախարարաց մատնութեամբ։ — Ճնախաօս. Հայս. Բ. 6—34։ Եւ այլն։

ԱՐՇԱՄՈՒՆԻՔ կամ ԱՇՄՈՒՆԻՔ. — Հին գաւառ Տուրուբերանի, սահմանակից Զորբորդ Հայոց Հաշտենից գաւառի։ Գտնուայ ժողովոյն առաջադրութեանց մէջ կը յիշուի գաւառս յատուկ եպիսկոպոս մի Թէոփիլոս։ Աշմունեաց գաւառի այժմ համապատասխանող կը համարուին Վարդոյ և Խուրի վիճակները։

ԱՐՇԱՄՈՒՇԱՏ. Տես ԱՇՄՈՒՇԱՏ։

ԱՐՇԱՐՈՒՆԻՔ. — Այրարատայ գաւառներէն մին, որ կ՚ինկնայ Ձակատք, Արագածոտն, Շիրակ, Վանանդ և Գաբեղէնք գաւառաց մէջտեղ, և է հին Երասխաձորի արեւելեան մասը։ Տրդատ Թագաւորը գաւառս տուաւ Արշաւիր կամսարականին՝ որ սիրելով այս երկիրը, «յիւր անուն անուանէր Աշտարունիս, քանզի յառաջ Երասխաձոր կոչիւր»։ Խոր. Բ. Ղ։ Գաւառիս ա նունը ժամանակի ընթացից մէջ փոփոխուԹիւններ կրելով գանազան կերպերով գրուած կը գտնենք. ինչպէս Աշարունիս, Աշրունիք, Աշշակունիս, Աշշունիք, Թերեւս սխալմամբ գրուած է նաև Աշոտաց երկիր փոխանակ Աշշօրացի և ուրիշ տեղ մը Աշակերտաց երկիր. գարձեալ բնական գրից համեմատ՝ փոխանակ Երասխայ՝ Աշրունեաց Զոր։ Գաւառիս մէջ ի հնումն նշանաւոր էին Երուանդաշատ և Երուանդակերտ քաղաքները, Արտագերս և Կապոյտ բերդերն։ Գաւառիս մէջ բնակեցաւ Արշաւիր ցեղն, որ յատուկ իրեն նախնոյն անուամբ կամսարական կոչուեցաւ և առանձին նախարարութիւն մը եղաւ։ Այս տոհմը իր քաջագործութիւններով նշանաւոր եղաւ հինգ դար, Թէ՛ Հայաստանի մէջ և Թէ դուրսը՝ Յունաստանի, Իտալիոյ և Ափրիկէի մէջ։ Արշակ Բ Արշարունիքը յարքունիս գրուեց և կամսարականաց ցեղը բոլոր չարդել տուաւ. բայց յետոյ Արշաւիր որդւոյն Սանդարատին ձեռքով՝ որ փախեր էր այս կոտորածէն, նորէն բազմացաւ Արշարունեաց կամ Կամսարականաց ցեղը, որ և հօՀներորդ գարու մէջ խիստ ծագկած էր գիտութեան կողմանէ և երեւելի էր գաւառիս վարպետարանը։ Ութերորդ գարու վերջերը Բագրատունիք Արշարունեաց գաւառը գնեցին։

Արշարունեաց գաւառի եկեղեցական իշխանութիւնը առաջ Բագրեւանդայ հետ մէկ էր մինչև Մ. Խորենացիի ժամանակ, բայց նոր Խորենացին մեռաւ, Արշարունեաց մէջ ալ առանձին եպիսկոպոս նստաւ։ — Ստորգր. Հին Հայս. 389—391։ Այրարատ, 55—57։ Եւ այլն։

ԱՐՇԱԻԱՆ. — Հայաբնակ գիւղ Կարնոյ գաշտի, որոյ բնակիչք 1896ին մեծ քաջալերութիւն ցոյց տուին ընդդէմ այլազգեաց։ Առաջին անգամ գիւղիս անուան կը հանդիպիմ 1896 տարւոյ Թրօշակ Թերթի 208—209 էջերու մէջ։

ԱՐՇԵՆԻ կամ ԱՐՇՆԻ. — Հայաբնակ գիւղ Կարնոյ գաշտին մէջ։ Ունի 30 տուն բնակիչք և Ս. Մինաս եկեղեցի մը։

ԱՐՇՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՐՈՍ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Գառնաւորը գաւառի մէջ, Թնուայ վտակին եզերքը։

ԱՐՈՍԻԿ կամ ԱՐՈՋԻԿ. — Գիւղ Խարբերդու առաջնորդական թեմի մէջ։ Բնակիչք 50 տուն, ունին Ս. Գեորգ եկեղեցի մը։

ԱՐՈՒԱԿԱՆ Տես ԱՂԱՀԷՁՈՐ։

ԱՐՈՒԱՆԹՈՒՆԻ. Տես ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ։

ԱՐՈՒԹԻՒՆԱՑ ՇԷՆ կամ ԿԱՐՄԻՐ–ՔԱՐ. — Կը գտնուի Արցախի Խաչէն գաւառի մէջ, վաղահաս գիւղի մօտ։ Բնակիչները տեղափոխուած են վանք գիւղէն։ Գիւղիս մօտերը կան երեք ամայի գիւղերու տեղեր և եկեղեցիներ։

ԱՐՈՒԹԻՒՆԱՑ ՍԱՐ. — Արցախեան լեռնաշղթայի բարձրագոյն կատարն է, որ կ'ինկնայ Գարդման գաւառի մէջ, և բարձր է 11085 ոտք։ Սառոյցէն մինչև սարիս գլուխն բարձրանալու 5 ժամ կը տեւէ։ Սարիս կատարը չորս կալաչափ մեծութեամբ տափարակ է. հոն կայ գերեզման մը և շուրջը շարուած են շատ քարեր։ Այս եւ բեւեռին ենթադրել կու տայ թէ այստեղ ի հնումն եղած լինելու է մատուռն։ Ըսխտաւ նէս եպիսկոպոսը կը յիշէ այս լեռս՝ որոյ ստորոտն է Բարաղաբղոյր՝ որուն այժմ Գոդուր (Գազագ–թէփէ) անունը կու տան։ Աւանդութիւնը կ'ըսէ թէ Արութիւն անուն ճգնաւոր մը ձմեռներն կը բնակի եղեր սարիս կատարը իւր անձն անտանելի սառնամանիքներով ճնշելու համար։ Սարիս լանջերէն և ստորոտներէն կը բղխեն Գանձակ գետի մէկ մասը, Արութիւնայ վտակն, Գարդման վտակն և Փառիս վտակը։ — Արցախ, 202–303։

ԱՐՈՒՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐՈՒՃ. — Հին տուն կամ գիւղաքաղաք Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Արագածի հարաւային ստորոտը, համանուն գետակի մօտ։ Հինգերորդ դարուն այս տունն ալ արքունի զօրաց ձմերոցներու կարգն էր, զոր առաւ վաստակ և աւերեց։ Հայոց անիշխանութեան և Բագրատունեաց հարստութեան ժամանակ, բարգաւաճած է տունս Թորնայ նման. մանաւանդ եօթնեքորդ դարու մէջ կը յիշուի տեղւոյս մեծութիւնը, և այն ժամանակէն կը ծնան հոյակապ դաստակերտաց մնացորդներ։ 605ին կը յիշուի տունիս վանաց երէցն, ումն Գրիգոր։ 654ին հոս կը նստէր Արաբացւոց Հաբիբ անունով կուսակալը կամ զօրավարը։ Երբ Արաբացի բռնաւորաց հաճութեամբ մեր աշխարհի իշխանապետ եղաւ (670) Գրիգոր Մամիկոնեան, Արուճի մէջ շքեղ շինութիւններ ըրաւ, զոր կարգաւ կը յիշեն ժամանակագիրք և պատմիչք։ Մէջ բերենք միայն պերճաբան Ցովհ. Կաթողիկոսի նկարագիրը. «Բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին՝ որ ի մեծ դաստակերտին Արուճ, շինէ զնա սիպտով, երկնային իմն ձեմարան հաստատեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ կողմանէ գնէ զարքունեսեան իւր՝ յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպ վիմարդ քարանցն, որ զեղերս ունի իբրև զպատկ պատուարի. և ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»։ Թէ՛ այս հոյակապ եկեղեցւոյ և թէ պալատի աւերակներն տակաւին կը տեսնուին։ Եկեղեցւոյ մէջ կան ոչ սակաւ արձանագրութիւններ. գմբէթին որ երբեմն վսեմ կերպով կը բարձրանար չորս կրկնակ տուաւար կամարներու վրայ, այժմ կործանած է։ Արձանագրութիւններէն նորագոյնը ունի 1275 տարւոյ թուականն։ — Արուճ աւանը այժմ այլազգաբնակ գիւղ մի է և կը կոչուի Թալիշ, որ և համանուն թաղիշ վիճակի շինազուրկն կը համարուի։ — Այրարատ, 143–145։ Ստորգր. Հին Հայս. 440–441։

ԱՐՈՒՃԱԳՐԱԿ կամ ԱԼԻՃԱԳՐԱԿ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Բասէն գաւառի մէջ։ Ընտիր է գիւղիս և սահմանակից վայրաց ցորենն։ Թուիլէնեվ 1655 թուականին այս տեղէն անցնելով տասնիկ ձեան պատճառաւ ութ օր հոս մնաց։ Երասխ ունի գիւղիս անուամբ օժանդակ մը՝ Ալիճուռ գետակն։

ԱՐՈՒՃԼՈՒՆ. Տես ՂՂՈՒԿ։

ԱՐՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻ. Տես ՀԱՒՈՒՑ ԹԱՌ։

ԱՐՈՒՆԴ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Տարօնոյ այժմեան Բռնաշէն վիճակի մէջ։

ԱՐՈՒԹՈՒ. — Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ, զոր 871 թուականին Ջուան-

շիր իշխանը առաւ Սոդոմն եպիսկոպոսին և փոխարէն առաւ Կոմսական գաւառի Բեխ գիւղը։

ԱՐՋԱՎԻՍ. — *Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարի, գրեթէ 100 տուն բնակչօք։*

ԱՐՋ *կամ* ԱՐՋՔ. — *Կը յիշէ անունս Զենոբ քրմաց պատերազմի պատմութեան մէջ, ըսելով. «Իսկ իշխանն Արջայ փախուցեալ.. ընդ անտառն՝ կարօն փայտի էանց ընդ սիրտ նորա, և անդէն մեռաւ.... և անուանեցաւ տեղին Արջուց ձոր»։ Այս երկիրն կամ ձորն կ'ինկնայ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Յովհան Մամիկոնեան (56—59) ևս կը յիշէ Արջուց իշխանը Գայլ Վահանի և Մժեռատայ ժամանակ, ինչպէս որ գրուած է Ծիծառնէի խաչին պատմութեան մէջ։ Արջուց յատուկ եպիսկոպոս ևս կը յիշուի, որուն յանձնեց Վահան խաչափայտի մէկ մասն։*

ԱՐՋԱ *կամ* ԱՐՃԱ. — *Գիւղ Ալբարատայ Բասեն գաւառի մէջ, Մանուգոմ գիւղի հարաւային արեւմտեան կողմը։*

ԱՐՋԱԿ. *Տես* ՀԱՌՋԱԿ։

ԱՐՋԱԿԱՊ. *Տես* ՔԻՒԼԻԻՍ։

ԱՐՋԱԶՈՐ *կամ* ԱՃԻՋՈՒՐ. — *Գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի արեւմտեան մասին մէջ, Շհարջուկ գիւղի արեւելեան հիւսիսային կողմը։ Բնակիչները Հայեր են 510 հոգի, բաժնուած 57 տան. ունին հին եկեղեցի մը։ Կը պարապին մշակութեամբ և խաչնապարմանութեամբ. երկիրը պաղաբեր է. ունին նաև Ղափանի կտաւ կոչուած ընտիր ձեռագործ։*

ԱՐՋԱՆ. *Տես* ՅԱՐՋԱՆՑ։

ԱՐՋԱՌԵՐԵԿ *կամ* ՈՒՐԾԱՅ ԱՆԱՊԱՏ. — *Ալբարատայ Ուրծ գաւառի մէջ յիշուած միայնակ վանքն է սա, որոյ անունն գրուի նաև Աջսաւերեկ՝ ինչպէս յիշած ենք ի կարգին։*

ԱՐՋԱՒԱՐ. — *Արցախի Քուստի գաւառի մէջ օժանդակ վտակ Թովուզ գետակի. մտնէ կայ գետ և պատուական պղնձահանք։*

ԱՐՋԻ ԿՈԹԵՐ. — *Ձորի մը անուն, որ կը գտնուի Արցախի Քուստի գաւառի մէջ։*

ԱՐՋԻԿ. — *Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Կարնոյ։*

ԱՐՋՈՑ ԱՒԻՃ. — *Ի հնումն բաւական շէն գիւղ և վանք Ալբարատայ Շիրակ գաւառի մէջ, Բագնայրի հարաւակողմը կէս փարսախ հեռու, Ալաճա լերան արեւելեան ստորոտը՝ բարձր դիրքով։ Այժմ ունի սակաւաթիւ այլազգի բնակիչներ, և կը կոչուի Ալաճա։ Հոյակապ եկեղեցւոյն աւերակներէն կը տեսնուի որ ժամանակաւ բաւական բազաւոր և իշխանաշէն մենաստան մը կայ եղեր հոս, բայց կիսակործան վիճակի մէջ գտնուելով, և արձանագրութեանց քարերէն շատերն ինկած լինելով, չի յայտնուիր շինութեան թուականն և շինողի անունը։ Ծանօթ արձանագրութիւնները կը վերաբերին ԺԹ դարու։ Եկեղեցին Բագնայրի եկեղեցիէն քիչ մը փոքր է, և անոր պէս երկու մասանց բաժնուած է, տաճար և ժամատուն։ Ժամատունը կամարակապ է և անսիւն. տաճարի խորանին երկու կողմերը կան զմբեթայարկ վայելուչ փոքրիկ մատուռներ կամ աւանդատուներ։ Եկեղեցին 1844 թուականէն ի վեր կիսափուլ և օր աւուր քայքայման վիճակի մէջ է. արձանագրութիւնները կը յայտնուի որ տաճարն նորոգուած է եղեր Յ. Աստուածածնի, և մատուռներէն մին կը կոչուի եղեր Յ. Լուսաւորիչ։ Արձանագրութեանց ծանօթ հնագոյն թուականն է 1207, և վերջինն 1289։ — Շիրակ, 121—123։ Տեղագր. Հայաստ. 190—192։ Ջալալեան, Բ. 58—62։*

ԱՐՋՈՆԻՑ ՎԱՆՔ. — *Անշուք մենաստան Վասպուրականի Աղիովիտ (Արճէշ) գաւառի, Արմիզոնք գիւղի հարաւային արեւմտեան կողմը։*

ԱՐՋՈՎԻՏ. — *Ալբարատայ Բասեն գաւառի մէջ նշանաւոր պատերազմի վայր, կապուտաւու բերդի մօտ։ Կեղբենոս Բիւզանդացին և մեր Ուռհայեցին (125) մանրամասն կը պատմեն այն պատերազմին, որ 1049 թուականին տեղի ունեցաւ այստեղ։*

ԱՐՋՈՒՏ. — *Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Ալբարատայ Շիրակ (Ալեքսանդրապոլ) գաւառի մէջ։*

ԱՐՋՈՒՑ ՁՈՐ. *Տես* ԱՐՋ։

ԱՐՋՐԱՑ *կամ* ԱՌՋՐԱ. — *Սակաւաբնակ Հայոց գիւղ, Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գաւառի մէջ։*

ԱՐՄԵԱՅՓՈՐ. — *Այլ կերպ գրուած ա-*

նուն Տայոց Ասեացփոր գաւառի։ Տայոց աշխարհի ամէն գաւառաց մէջ կը բարձրանան համանուն Ասեաց լեռները։

ԱՐՍԻՍ. — Գիւղ Տայոց աշխարհի Ասեացփոր Գաւառի մէջ։

ԱՐՍՈՒՍ. — Գետակ Ծովային Կիլիկիոյ, Հռոսոսի մէջ։ Տես ՀՈՒՍՈՍ։

ԱՐՎԱՆԵ. — Անունս կը յիշուի Ագրաթաայ Շիրակ գաւառի մէջ գտնուող Հռոմոսի վանաց արձանագրութեանց մէջ։

ԱՐՏԱԲՈՑՆՔ կամ ԱՐՏԱԲԻՆ. — Հին գիւղ Հայոց, Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, կիսաւիր–պաւազ վտակի մօտ։ Այժմ կը կոչուի Էրտաբիլ, և ունի 45 տուն հայ բնակիչ։ Գիւղս կառուցուած է այգեվէտ և գեղեցիկ ձորի մը մէջ, ունի գեղեցիկ, փոքր և քարաշէն եկեղեցի մը։ Բնակիչները գազթած են խոյի սահմաններէն։ Արտաբոյնէն երկու ժոն հեռու կը գտնուին երկաթահամ հանքագրիւրներ, և քարաժայռ լերան մը կատարը, կիսաւեր ընդարձակ բերդ մը։ — Ագրարատ, 158։

ԱՐՏԱԳԵՏ. — Հին գիւղ Միւնեաց Ագահէճք գաւառի, յիշուած հարկատուաց ցանկի մէջ։

ԱՐՏԱԳԵՐՍ կամ ԱՐՏԱԳԵՐԻՑ ԲԵՐԴ. — Հին և պատմական դէպքերովն նշանաւոր և ամուր բերդ Ագրարատայ Աշրարունեաց գաւառի մէջ, երեսունպաշատէն ոչ այնչափ հեռու՝ հիւսիսային արեւմտեան կողմը։ Ցոյնք գտնագան կերպով կը գրեն բերդիս անունն, ինչպէս Ἀρτάγειρα, Ἀρταγῆραι, Ἀρταγιγάρτα, իսկ Լատինք Artagera կամ Artogerassa. Փրկչական երկրորդ Թուականին, Հռոմայեցւոց մեր աշխարհը նուաճելու ժամանակ, բերդիս պահապան Ասոր կամ Ատոն իշխանն դէմ կը դնէր Թշնամեաց, բայց վերջապէս մատնեցաւ Թշնամեաց ձեռք և պատիսները քանդեցան. սակայն այս կուռն մէջ Հայերէն անբուժելի կերպով վիրաւորուելով մեռաւ Գայիոս Կեսար՝ Օգոստոս տիեզերակալին սիրելի թոռը, որով և մեծ սուգ պատճառեց կայսերական տոհմին։ Ինչպէս ի հնումն, նոյնպէս և չորրորդ դարու մէջ Արտագերս մեր աշխարհի ամրագոյն բերդերէն մին էր, և կը պատկանէր Աշրարունեաց գաւառի տէր կամնարական նախարարներուն։ Յետոյ Աշշակ Բ կամ սարակատաց տոհմն կատարելով բերդիս տիրոջ և մէջը արքայավայել շինութիւններ բրաւ։ Ամիհանոս Մարկելլինոս ժամանակակից լատին պատմիչը, Խոսրենացւոյ և Բիւզանդի նման մանրամասն կը պատմէ բերդիս ազէտալի պաշարումն ի Պարսից, որ տեղի ունեցաւ Աշշակայ գերի բռնուելէն և Խուժաստանի Անյուշ բերդի մէջ բանտուելէն վերջ։ Փառանձեմ Թագուհին, մանուկն Պապ՝ զոր յետոյ ի Կոստանդնուպոլիս տարին, 14000 այր և 6090 կին, բերդիս մէջ պաշարուած մնացին տասուերեք ամիս, բայց խիստ ամուր և անմատչելի դիրք ունենալով Պարսիկները չկրցան տիրանալ։ Զարեքաւտաններորդ ամսէն վերջը պաշարուողները սովէ և համաճարակ հիւանդութենէ սկսան մեռնիլ, և այնչափ բազմութենէն մնացին միայն Փառանձեմ Թագուհին և երկու նաժիշտները։ Այս միջոցին Հայը մարդպետ ներքինին ծածուկ ճանապարհով մտաւ բերդս և մեծապէս Թշնամանեց զԹագուհին։ Հուսկ ուրեմն Պարսիկները մտնելով բերդիս մէջ Թագուհին բռնեցին, և մէջը ամբարուած Հայոց Թագաւորի գանձերը փոխադրելու համար, ինն օր և ինը գիշեր աշխատեցան։ Բերդս միանգամայն այրեցին, սակայն ի վերջոյ նորէն նորոգուեցաւ, ուստի գի հին գերորդ դարու մէջ Վարդանանց ժամանակ կը յիշուի արքունի զօրանիստ ամրոցաց հետ։ Թաֆֆէլ գեղեցիկ կերպով վիպասանօրէն կը նկարագրէ Արտագերսի պաշարման ժամանակ տեղի ունեցած դէպքերը, Սառուհլի (տպ. 1886) 461–577 էջերու մէջ։ Եօթներորդ դարուն Արտագերսը անցաւ Մամիկոնեան նախարարներու ձեռքը, իսկ տասներորդ դարու մէջ Բագրատունեաց ամուր բերդերէն մին էր։ Ոմանք Արտագերսը և Կապույտ բերդը միևնոյն կը համարին, բայց եղիշէ յիշելով այն բերդերը զոր ե դարու մէջ ախտապահները աւերեցին, Արտագերս և Կապույտ բերդերու անուններն առանձին առանձին կը յիշէ։ — Ստորգր. Հին Հայս. 396–298։ Ագրարատ, 57–58։ եւ այլն։

ԱՐՏԱՋ. — Վասպուրականի հին նշանաւոր գաւառներէն մին, որոյ հիւսիսային

կողմն կը գտնուի Մասեացոյն գաւառը, արեւմտակողմը Կոգովիտ, հարաւակողմը հին Մարդաստան գաւառը և արեւելեան կողմը Երասխ գետը։ Այժմեան Մակու գաւառն մասամբ մը կը համապատասխանէ հին Արտազ գաւառին։ Գաւառիս անունն գանազան ձեւերով գրուած կը գտնենք, ինչպէս Արտազակն գաւառ, Արտազակէ, Արտազ։ Ի հնումն գաւառս կը կոչուէր Շաւարշան, և իբր Արտազ անունն առացաւ այն ժամանակ, երբ Արտաշէս Բ. հրամանով Սիրտա Բագրատունին հոս բնակեցուց Ալանաց երկրէն բերած գերիներն, ինչպէս խորենացւոյ (Բ. ԾԲ) հետեւեալ խօսքերէն յայտնի կը տեսնուի. «Հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զինիկ անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի»։ — Հին ժամանակներէն Արտազու մէջ հաստատուած կար եպիսկոպոսարան, բայց եպիսկոպոսները չեն յիշուիր գաւառիս անուամբ, այլ Թադէոս առաքելոյն անուամբ, ինչպէս ԺԳ դարուն՝ Տիրացու եպիսկոպոս, և ԺԴ դարուն՝ Զաքարիա արքեպիսկոպոս՝ Ծորժոռեցի մականուանուածը, և ուրիշներ զոր մի առ մի յիշելը աւելորդ է։

Արտազ նշանաւոր է իւր հին և նուիրական վայրերովը, որոց մին է Թադէոս առաքելոյ վանքը, որ մինչև հիմայ ալ կայ. հոս է նաև վարդանանց պատերազմին վայրն Աւարայրի դաշտը և Տղմուռ գետը։ — Ստորգ. Հին Հայս. 201—202։ Հիւսուռաժք, Գ. 16—17։ Եւ այլն։


ԱՐՏԱՀԱՆ. Գր. ARDAHAN. Ռ. Ардаганъ. — Հին և ամուր քաղաքաւան Գուգարաց համանուն գաւառի մէջ, կուր գետոյն հիւսիսային եզերքը, որ քաղաքիս անուամբ Արտահանի գետ ևս կը կոչուի։ Կառուցուած է բարձրաւանդակի մը կողերուն վրայ. ծովու երեսէն բարձր է 5500′։ Գետոյն հարաւակողմն ևս կան շինուածիներ՝ որ կը կազմեն քաղաքին մի փոքր մասը։ Փայտաշէն կամուրջ մը իրարու հետ կը միացնէ Արտահանի կրկին մասերն։ Քաղաքս ամրացած է 25 ոտք բարձր և 6′ լայն պարիսպներով, ունի նաև քառակուսի մարտկոցներ և աշտարակ մը։ Բերդը կառուցուած է բարձր դարեւանդին վրայ հիւսիսային արեւելեան կողմը. ձեւով քառակուսի է. որ 30′ բարձր պարիսպներով և աշտարակներով երբեմն ամրացած էր, բայց 1828ին Ռուսները բոլորովին խանգարեցին զայն և ամայացուցին։

Կ'ըսուի, թէ քաղաքս առաջին անգամ կառուցած է Ջաւախոս՝ Թորգոմայ Թոռնորդին, և նուիրեր է Աբուաց, անոր համար Հուր կոչուած է, կ'ըսէ վրաց աշխարհագիրը. բայց նա շփոթած կը թուի թէ՛ անունը և թէ՛ գէպքը. վասն զի վրաց հին պատմիչն Ջուանշէր՝ Արտահանը նուաճող Երուանդայ Արշակունւոյ համար կ'ըսէ, թէ «բնակեցոյց ի նմա մարդ գիւաքօս և անուանեաց զնա Քաջատառն». որ կոչուեցաւ նաև Քաջաց քաղաք, և վրացիներէն ևս Քաջաց Ցիխէ, այսինքն Քաջաց բերդ, և յայտնի է թէ հմայք և հարցուփորներ և թերեւս Հայոց Տրի պէս պաշտօնն հաստատեց ասա, վերոյիշեալ Արշակունի թագաւորն։ Քագրատունեաց պատմագրութեան ժամանակ Արտահանի մէջ կը նստէր կոզայ իշխանը։ — Ռուսաց 1828ին պատերազմէն առաջ, քաղաքս ունէր գրեթէ 400 տուն բնակիչ, որոց մէջ կային բազմաթիւ կաթողիկեայ Հայք՝ որք մեծաւ մասամբ գաղթեցին Ռուսաց բաժինը։ Այժմ Արտահան ունի 800էն աւելի բնակիչ, յորոց 457ը թուրք են, 172ը ռուս, 158 հայ և 48 յոյն։ Քաղաքիս կաթողիկեայ Հայք՝ ըստ հոգեւոր իշխանութեան կը վերաբերին Արզումնի թեմին, և ունին յատուկ եկեղեցի և դպրոց, իսկ Լուսաւորչական Հայք, խիստ սակաւաթիւ են, հազիւ 15 հոգի։ Արտահանի գլխաւոր վաճառքներն են ցորեն, պտուղներ, աչխարի մոյ ապուխտ, փայտ, և այլն։ Հայկազնեայց պետութեան վերնալէն բիչ վերջ, քաղաքիս մօտ, Հայք և Վրացիք նիզակակցութեամբ Օսաց և Քուէյց և աոաջնորդութեամբ Փառնաւազայ, յաղթեցին Աղեքսանդրի Ազան կոչուածներն և անոր հեծելազօրուն, և Մակեդոնացի Յունաց լուծը թօթափեցին։

Գուգարաց հին Արտանան գաւառի անունն այժմ սահմանուած է համանուն շրջանակին առաջին վիճակին, որոյ սահ-

ժանքն են Հս.էն Էրուշէթ, Ամ.էն Շաւշէթ, Ար.էն Զուխուրէթի և Ջաւախք։ Կուր գետը կող գաւառէն գալով, կ'ընթանայ բոլոր վիճակիս միջէն արեւմուտք դէպ ի հիւսիսային արեւելք, և զուրս կ'ելնէ Ախալքալաքի սահմաններէն, ընդունելով հիւսիսային կամ ձախ կողմէն բազմաթիւ գետակներ, յորս նշանաւոր է Էրուշէթի գետակն։ Երկիրն ընդհանրապէս սարիարակ է. կազմուածին պղտուռնական է, շատ տեղեր կը տեսնուին կարմիր չհշաքարեր. արեւելակողմը Զուխուրէթի սահմանները գտնուած հանի գաւառն ի հնումն նախ վրաց ձեռքն է եղեր, և ապա մերթ Հայոց և մերթ վրաց. մանաւանդ մեր Արտաշէս Բ թագաւորին հանճարեմբ՝ առնելով, հարկատու եղան Հայոց։ Ռուսաց պատերազմէն առաջ խիստ բարգաւաճ էր վիճակս, բայց պատերազմի ժամանակ 1829ին ոտնակոխ եղաւ և շատ գիւղեր ամայացան. այժմեան գիւղերը գրեթէ բոլորն ալ այլազգաբնակ են։

ԱՐՏԱՄԵՏ կամ ԱՐՏԱՄԱՏ. — Ի հնումն պատմական և նշանաւոր քաղաք կամ աւան Վասպուրականի Տօսք գաւառի մէջ,



165. Արտահան։

խարտաձորերը պղտիրաքարէ են։ Լեռները սովորաբար ապառիւ են, և քիչերու վրայ կը տեսնուին նոճիներու և եղեւնեաց անտառներ։ Ձմրան երկարութեան և վիճակիս բարձր դիրքէ պատճառաւ, գաշտաց բուսաբերութիւնը նուազ է. բայց բարեխառն կողմերն և մարգագետինք յուսիի և գալարագարձ են, յորս յաճախ կը տեսնուին կանգառներ, և զեղեցկագոյն ծաղիկներ. ինչպէս բոպքուսակ, երինջակ, սերեփուկ, հրածագիկ, շահոզրամ, նուաբատակ, եղնախոտ, և այլն։ Կուրի ձախճախուտ ափունքներն՝ պարարտ արօտք են անդէպ։ Արտա-

վանայ հարաւային արեւմտակողմը, ծովակի արեւելեան եզերքը, և այժմ գրեթէ 500 տներէ բազկացեալ գիւղ մ'է, յորոց 150ը Հայոց են և մնացածք Մահմետականաց։ Կառուցուած է եռանկիւնաձեւ ապառաժ գարափի մը վրայ հրաշալի դիրքով և գմայլեցուցիչ տեսարաններով։ Արտաշէս Բ Արշակունին, իւր մանկութեան ժամանակ երբ Հայրենի օրինաց նախանձախնդիր և քաջասիրտ Սմբատ իշխանի առաջնորդութեամբ, անհաւատալ երեւոյթ թագաւորի կառաւարմանէն ի Պարսկաստան կը փախչէր, բանական օր գիւղիս մօտ քարափայ-


ներու մէջ պահուրտած մնաց, մինչեւ որ Երուանդայ խնդրակիները ձեռնունայն ետ դարձան։ Եւ երբ Պարսից Դարեհ թագաւորի ձեռնասունեամբ Արտաշէս կրկին իւր հայրենի թագն ժառանգեց՝ բոլոր Հայաստանի միահեծան թագաւորելով, և Աղանաց պատերազմն ալ մեծ քաջութեամբ աւարտելէ և անոնց Սամիրիկ անուն չքնաղ օրիորդն հարս առնելէ վերջ, իւր լայնածաւալ սէրտութիւնը խաղաղացուցած, սկսաւ շինութեանց ձեռք գարնել, այս Արտաշեսաւ ծովահայեաց տեսարանով հրապուրած, որուն վիմամէջ այրերը իւր փրկութեան ապաւէնն էին եղած, հրաման հանեց և բազմաթիւ աշխատաւորներով, ամենամեծ յարուց կերպով շինել տուաւ այս քաղաքը։ Թ. Արծրունին գեղեցիկ կերպով կը նկարագրէ Արտաշեսը, հետեւեալ տողերու մէջ. «... շինէ զքարաքաղաքն ապարանս արքայական աշխանայինս պայծառայարդս գեղեցկայարմար պարսպաւորս ընդգէմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսոյ նայեցուածով, արեգակնայնի ի վերայ խաղալով ճառագայթիւք ճեմականացն, յելս և ի մուտս ձկան իմն թուելով ի վերայ ալեացն խաղալով, ընդգէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք (Արարատ) կոչելով, բարձրագագաթն ձիւնաւիր սպիտակափառ, իբր զմեծագոյր մեծամայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց, առաջի անանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձեւ ծովն. գառատակերտս մեծամեծս շուրջ զեզերն անտառախիտ ծառովք և զիներիք սրթովք և զանազան պտղովք. գշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցատն անտառախիտ բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. ոչ միայն ի տեսիլ խաղալոյն աչաց և ի զուարճութիւն հոտառելեաց, այլ և ի կազմութիւն զեղոյ բժշկական հնարագիւտ խմոտատասիրութեանց կազմեալ Աւակդեսեայ վարժմամբն։ Իսկ շուրջ զբերդատնին ապարանօքն՝ պարսպէ զբերդն շուրջանակի յապառաժուտ առչելոց քարանց, քաղաք ամենալից զհոլիան ամրացուցանելոյ։ Իսկ ի վերայ բղխեալ ապերն, զարձեալ պարսպէ զքարաքերդն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք, և շէն մարզարիտ զքարաքերդն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելի ձեռաց պատերազմողաց, հեշտալիր առ զգուշութիւն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ։ Իսկ ի մէջ երեքբարմանեան գագաճեւ հովտին փոքու՝ որ յերից բլրոցն խոնարհի, շինէ աշտարակ բարձրաբերձ փարուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱռաղիեան պատկերն, և մնա նորա զառն գանձու պաշտպանութեան կոչի։ Կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բաւականս։ Գառնէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ ապրիւր ականաւարուղիս, որոյ ջրմուխս կազմեալ՝ ածեալ հասուցանէ ի մէջ հովտին։ Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց գաշտավայրին ի մուտս կոյս և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զդոգն, ընդ այգեստան անկախիս պատրաստութեան ակնախիտս վայելչութեամբ։ Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին, և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն, ի վերայ պայծառայարդար պատրաստութեան շինուածոյն։ Եւ ածեալ զդիւիկն Սամիրիկ զբոսնեալ զաշնանային եղանակն՝ յամարատան գեղադէզ ապարանս զարդարեալ բերդին։ Իսկ զանուն քաղաքին կոչեաց Արտաւատ, որ թարգմանեալ առուգարանի Արտաշէսի եկք, զի բան պարսիկ ձայնի Ամատ՝ եկք թարգմանի»...։

Այսպէս հետեւալի կերպով նկարագրած քաղաքիս, այժմ առ և անդ ցրուած կը գտնուին ոչ սակաւ մեծաւոր մնացորդները։ Տներու շարերը կառուցուած են հին քաղաքի աւերակաց քարերով։ Թ. Արծրունին կը յիշէ նաև քրիստոնէութեան ժամանակ քաղաքիս եկեղեցին. «Գնաց անտի Ժիրաք, և եկն եհաս ի վանատոմս, և ի յանձին հրէից արար զմեծ եկեղեցին յաւանին Արտաւատայ»։ Այժմ ևս Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ պարզ եկեղեցի մը և երկայարկ ուղեկցիկ տեսարան ունեցող վրկտոց մը։ Հայոց բնակութիւնքն ամիսի և իրարու վրայ սեպհուած են յիշեալ եռանկիւն ապառաժին վրայ. իսկ Տաճկացը ե-

զերբը կը գտնուին և ընդարձակ այգեստա-
նեայց մէջ սիրուած են։ Տարւոյ չորս ե-
զդանակաց մէջ և մանաւանդ ամառը, ա-
նուանի Շամիրամայ պատուական ջուրը հա-
բիւրաւոր ճիւղերու բաժնուած՝ այգիներու
մէջէն և թուրք բնակութենանց իւրաքանչիւր
թաղէն կարկաչաձայն կ'ընթանան, և սա-
զարթազեղ ծառոց սքանչելի տեսարանին
հետ միացած՝ մարդս կ'զմայլեցնեն։ Ար-
տամեան մէջ հատարակաց ճանապարհի վրայ
կը գտնուի այն աղբիւրն, որոյ մէջ Մ.
Յակորայ առեն, անպարկեշտ աղջիկներ
լուացուած ժամանակ՝ սրբոյն անէծքով սպի-
տակացան անոնց զլխոց մազերը։ Գիւղիս
Հայ ժողովուրդը երկրագործ և մեղուագործ
է. իսկ մահմետականք քիչ մնուով
երկրագործ են, կ'ապրին այգեաց պատու-
ղներով։ Այգեաց մէջ հազիւ 2—3 հատ
խազողի են և մնացեալ 3—350 այգիները,
բայ ի խազողէն, ամէն տեսակ պտուղներ
յառաջ կը բերեն, յորս նշանաւոր և համ-
բաւուած է անուշահոտ խնձորն, որ պտղա-
բերած տարին թէ ծառով և թէ ցամաքով
մեծ բանակութեամբ կը տանին վաճառելու
ի Վան և ուրիշ կողմեր։ Վանի այգեստա-
նի պտուղներէն զատ ունի նաև փաշևկի և
մեհրապիկ կոչուած տարբեր տեսակներ. կե-
ռասն և բալն ևս առատ են, ինչպէս նաև
ընկոյզն՝ որ նշանաւոր է հաւկթի մեծու-
թեամբն և բարակ կեղեւովը։ Արտամեցի
Հայոց մէջ, ժամանակ առ ժամանակ կը
տեսնուին նշանաւոր առակախօսներ. տասնը
զուրկ չեն նաև վեհանձն ձիրքերէ։ 1870
թուականին կազմած են իրենց մէջ միու-
թիւն մը՝ Արշակուհեան Ընկերասիրութիւն, որոյ
բուն նպատակն է զպրոցի ապագայն նիւ-
թապէս ապահովել։

Տեղւոյս նկարագիրն չատարած սրբա-
վայրերու և հնութենանց վրայ ևս ակնարկ
մը տանք։ Եռանկիւն ապառաժին մէկ ան-
կիւնն Բերդ կը կոչուի, որոյ վրայ յանուն
Մ. Սարգիս զօրավարին շինուած կայ փոք-
րիկ մատուռ մը։ Երկրորդ անկիւնն կ'ա-
նուանեն Տէր Յուսկան որդոյ պառակ, ա-
սոր վրայ ևս կառուցուած է փոքրիկ մա-
տուռ մը։ Սա անշուշտ լինելու է ԺԳ դա-
րուն ապրող Տէր Յուսկան՝ որդի Մաթիա-
նոս վարդապետի ուխտաւորին։ Այս մատ-
եան շուրջը 2 քարընկէց հեռու տարա-
ծուած են Արտամետի հին ու նոր գերեզ-
մաններն, յորս կը գտնուին վիմեայրի խաչ-
քարինք. յիշատակարանք կը վերաբերին
մինչև ԺԹ դարու, կան նաև հնադրմներ,
որոնք անընթեռնելի զարձած են։ Երրորդ
անկիւնն վրայ կը գտնուի այժմեան եկեղե-
ցին, որ մեծ է և ունի ցած ու նեղ պա-
տուհաններ։ Եկեղեցիս առձարաւոր է և
շինուելեան առոյգ թուականն անծանօթ, սա-
կայն շատ հին կը թուի։ Հին եկեղեցւոյն
կից և շինուելեամբ հազիւ 50 տարուան
կայ ուրիշ եկեղեցի մը աւելի պարզ, և կի-
սաբաց, ուր ամառ եղանակի մէջ ժամա-
տացութիւնք կը լինին։ Գիւղիս մէջ կան
նաև հետեւեալ սրբավայրերն, Մ. Շմաւոն,
Մ. Թոռն մանուկ, Մ. Զօրք, Մ. Յակոբ,
յորոց իւրաքանչիւրը անշուշտ ունեցած է
իւր անցեալն։ Այգեստանի արեւմտակողմն
կը գտնուի Մ. Աստուածնոս կիսաւեր եկե-
ղեցին, որոյ քարաշէն պարսպաց հիւսուածքն
և արեւելեան մասերն տակաւին կանգուն
կը կենան։ Ըստ աւանդութեան. «Եկեղեց-
ւոյս շէն եղած ժամանակ իւր մէջ պա-
հուած է եղեր, կիլիկիոյ Տարսոն քաղաքի
Լեւոն Թագաւորի քեռորդի Վասիլ սպարապե-
տի ժամանակը, Հայկական ՉՃՀԴ (=1225)
թուականին գրուած կեռաս կեռաս անուամբ
աւետարան մը, որ երբեմն հրաշք գործած
է»։ Աւետարանս կը պահուի այժմ Արտա-
մետի մերձակայ Կոնկու վանաց մէջ։ Այ-
գեստանի մէջ կան նաև Պռոշագ Պէկ, Կար-
միր Թաղ ուխտատեղիք և Մ. Թադեոս՝ որ
ջգային հիւանդութենանց բուժիչ է։ — Ար-
տամետի այգեստանի արեւմտակողմն $^3/_4$ ժամ
հեռաւորութեամբ կայ Կատեպաղից կոչուած
գրեթէ ծովեզերեայ տեղ մը, ուր կը տես-
նուին հին շէնքերու նուիրական բեկորներ
և աւերակներ։ Չոս փոքր անտառակի նման
ծառոց մէջ կը գտնուի Մ. Յովհաննէս ա-
նուամբ ուրիշ ուխտատեղի մը։ Հոչակաւոր
Շամիրամայ գետն կամ առուն ասկէ կ'անց-
նի սիգաձեմ։ Կատեպաղնցի մօտ Շամիրա-
մայ առուի երկու եզերքը կան երկու մե-
ծամեծ և առշուած քարեր՝ բանդակուած
բեւեռաձեւ արձանագրութիւններով։ Ցեղս

քարընկէց մը հեռու կայ ահագին լեռնակտրկաս մը փորուած, զոր տեղացիք Թահմազուայր կանուանեն. քարէ գռնով մը կը մտնուի մուքով յատակագէս փորուած սենեակ մը, և ներսը մէջէ մէջ կան ուրիշ քարափոր սենեակներ։ Այս արուեստական այրերու համ սենեակաց համար կ'ըսեն, թէ Թահմազ Դ.ուլի խանին այս կողմերս աւերմամբ և գերեզմ արշաւած ժամանակ, բազմաթիւ խեղճ բնակչաց տեղի ապաւինի եղած են։ — Տտորգր. Հին Հայս. 187–190։ Արծռի վաղագոշ գաւառի, և դիմաւոր տեղի այժմեան համանուն վիճակի։ Կառուցուած է զառիվերի մը վրայ, որոյ արեւմտեան կողմը կը բարձրանայ ահագին բարձրաբերձ ժայռ մը, և վրան կայ ընդարձակ տափարակ մը, որոյ տարածութեան տրամագիծը կը տեւէ գրեթէ քառորդ ժամ։ Այդ բարձրաւանդի վրայ կը տեսնուին հոկայ պատերու, քառանկիւնի աշտարակներու, ամրաշէն աւազաններու, բանտերու, և այլ զանազան գետնափոր շինութեանց փլատակներ։ Աբրահամ Թէ և նշա-



166· Արտանուչ։

րակաւի, 1859, էջ 13–18 և 39–43։ Նկարագ. Ոզեւոր. 229–240։ Եւ այլն։

ԱՐՏԱՆԴԱՆ ԴԱՇՏ. — Բիւզանդ (Ե. Թ.) կը յիշէ այս անուամբ գաշտ մը. «Եւ էառ զկողմն մի զերկիրն Հայոց, և բանակեալ էր յԱրտանդանն դաշտին»։

ԱՐՏԱՆԻՃ կամ ԱՐՏԱՆՈՒՃ. — Գիւղ և գետակ Միւնեաց Գեղարքունիք գաւառի Ա. րեզունի վիճակի մէջ։

ԱՐՏԱՆՈՒՋ կամ ԱՐՏԱՆՈՑՁ. Ռ. Արդապոյ. — Բազաքաւան Գուգարաց կղարջք նաւսր է բնական անմատոյց վերջոնք, սակայն շրջապատուած է նաեւ բոլորակ և ամուր պարսպով մը։ Ունի երկփեղկ բերդագուռ մը, որու բարաւորին վրայ կը նշմարուի եղծուած և անընթեռնլի արձանագրութիւն մը։ Հիւսիսային կողմը զառիվայրին վրայ կան հին եկեղեցւոյ մը աւերակը, մեծամեծ քառակուսի քարերով, որոց սմանց երկայնութիւնն է 10′ և լայնքը 6′, ե զարմանք կ'ազդեն տեսողաց վրայ, թէ ինչպիսի ճարտարութեամբ շինողներն այդ բարձրու-

թեան վրայ հանած են վիճակաւոր քարերը։ Քաղաքաւանիս առօրեայէն կը վազէ ձ՛որոխի ժամադակ Արտանուչի գետն՝ որոյ ափունքն գեղեցկապէս զարդարուած են վարդենիներով, ուռենիներով, փշատենիներով և այլ տեսակ ծառերով։ Գետոյն երկու կողմէ՝ ահագին ժայռեր և բլուրներ կը բարձրանան, որոնք կարծել կու տան թէ գետն առեղօք շատ մեծ բլլալով և ճիշդ առոյգ վրայէն հոսելով՝ զանոնք ողողեր և հեռզհեռէ հարիւրաւոր կանգուն վար իջեր է։ Ասոր պարզ ապացոյցներ են ժայռերու կոզմնակի երեսաց վրայ եղած անթիւ քարայրներն, որոնց բերանին վրայ մարգկային ձեռօք շինուած ամուր պատեր և ցցուած վերաններ կը տեսնուին։ Տեղւոյս ժողովուրդը, աւանդութեամբ կը հաստատէ, թէ այդ ծերպերու և այրերու մէջ թագուած լինին հնագիտական թանկագին առարկաներ, բայց կը վախեն և չեն համարձակիր ներս մտնելու։ Ընդհանրապէս, Արտանուչ՝ իբրեւ հին բերդաքաղաք մը, ուներ ոչ սակաւ հնութիւններ, թէ՛ մէջը և թէ շրջակայքը, որոնք քննութեան և ուսումնասիրութեան կը կարօտին։ — Արտանուչի հինաւուրց բերդը կը գտնուի բարձր քարաժայռի գագաթան վրայ՝ զոր այլազգիք Կեվկերիք գալեհ կ՛անուանեն, երկայնութիւնն է 400 ոտք և լայնութիւնը 120—130 ոտք։ Այս բերդը կ՛երկցուի միայն մէկ նեղ և վտանգաւոր ճանապարհով՝ որ փորուած է ապառաժ լերան վրայ. մինչեւ կէսը կարելի է դրաստով երթել, իսկ անկէ վեր ոտքով կ՛երթըցուի։ Բերդիս մէջ կան հին ջրամբար և շինութեանց աւերակներ. յիշատակաց արժանի է փոքր քարաշէն եկեղեցի մը. այժմեան աւերակներէն և ճեացօրինակէն կ՛երեւի, թէ ժամանակաւ խիստ ամուր և հայկական է եղեր բերդս։ Վախուշտ՝ ասոր կառուցանողն կը համարի Վրաց Վախտանգ Գուրգասլան կոչուած թագաւորն, և դարու վերջերը։ Մրեան արաբացի զօրավարը 1201 դարու մէջ Արտանուչը աւերեց, իսկ Աշտա Կիւրապագատար վերստին շինեց, և ինքն անոր մէջ նստաւ և մեռաւ։ Կոստանդին Պերփերուժեն քաղաքս կը յիշէ ի դարու կիսոն և կը զրէ Բերդ Ագրանուչ (Καστρος Ἀδρανουτξίον), ոտոր կ՛անուանէ նաեւ լայնաթռամ և ամուր քաղաք և շահատան Վրաց, Հայոց, Աբխազաց և Աղուոց վաճառքներու։ Արտանուչի առաջին շինութիւնն և հիմնարկութիւնն, ըստ մեզ, աւելի հնագոյն կը թուի քան զվախտանգ, և հաւանօրէն շինուած է ի Հայոց։ Քաղաքիս անունն՝ ըստ ոմանց կը թուի, ազատագութիւն Արտանուշ կամ՝ աւելի ճիշդ Վարդանուշ անուան, որ մեր մէջ իսկական անուն է։

Արտանուչի բնակչաց թիւն այժմ կը հասնի 1000ի, յորոց 960ը են Հայ Կաթոլիկներ, և մնացածը՝ 1828ի պատերազմի ժամանակ Ախալցխայէն գաղթող Թրքեր են։ Հայք ունին քարաշէն եկեղեցի մը Ս. Աստուածածին՝ կառուցուած 1836ին. և վարժարան մը։ Բնակչաց մեծագոյն մասն վաճառականութեամբ կ՛ապրին. զերձակք, կօշկակարք, դարբինք, ներկարարք, նպարավաճառք և այլ արհեստաւորք բոլոր Հայերն են, ոչ միայն քաղաքաւանիս մէջ, այլ և ամբողջ վիճակի մէջ։ Արտանուչի վիճակն ունի 54 գիւղ, յորոց միայն երկուքը, Նոբաշէն (Ἐξὴ—բաբաթ) և Ցանձաո Հայաբնակ են։ Երկրի բարեբերութիւնը բաւական նշանաւոր է։ Քաղաքաւանն գտնուելով քարափոխ տեղ մը՝ կլիման այնչափ առողջարար չէ. ձմեռն կը տիրէ սաստիկ բեւեռային ցուրտ, և ամառն հասարակածի ջերմութիւն։ Գլխաւոր բերքերն են ցորեն, գարի, կորեակ, եգիպտացորեն, բնաիր ծխախոտ, բանջարանոցի ամէն տեսակ բոյսեր և բազմազգի պտուղներ։ Բայց ամենէն աւելի անուանի արդիւնաբերութիւնն է ամենապատուական գինի և օղի։ Այս կողմերը մանաւանդ խնամք կը տարուի նաեւ օրթոց և թթենեաց, և եթէ գինեգործութեան արուեստն եւս լաւ գիտնային, կրնային ըսել, որ Արտանուչի գինին կրնայ մրցիլ աշխարհի ամենէն ընտիր գինիներու հետ։ Բաց ի վիրոյիշեալներէն Արտանուչի վաճառականութեան գլխաւոր նիւթերն են նաեւ ընտիր բնկուզի կոճղ, երկանաքար, կտաւատ, բուրդ, եղի, կովի, այծի, ուլի, գայլի, ազուէսի, խոզի և գամշու մորթ։ Այս նիւթերէն կը գրկուին Արզուէն, Պաթում, Տրապիզոն, Կ. Պոլիս, Կարս, Կեօլա և Փենէք քաղաքներն. մորթերն կ՛ուղարկուին

նաեւ մինչեւ Մաւրիտիա և Փարիզ։ Արտաշատ նորաչ ներմուծուած նիւթերն են կաուիճէն, մետաքսեղէն, չուխայ, ապակեղէն, զարդեղներ, շաքար, սուրճ, բրինձ, բամբակ և այլն։ Տեղական արուեստներու մէջ նշանաւոր են մեծաւ մասամբ հայկական իգական սեռի ձեռագործները։ Հոս կը գործեն ադնիւ և փափուկ գենջակներ՝ մետաքսէ և բամբակէ,



167· Գերմանիկոս։

բնտիր և պիտացիուն կերպաս մը՝ մանուածապատ կոչուած, նուրբ անձեռոցիկներ, մետաքսեղէն այլ և այլ գործուածքներ, մագիղէն կապերտներ, և այլն։ — Մշակ, ժ. 136։


ԱՐՏԱՇԱՏ. Գլ. ARDACHAD· Լ. ա. Artaxata. Յն. Ἀρτάξατα կամ Ἀρταξίασατα. — Հոչակաւոր և հին արքայանիստ մայրաքաղաք Հայաստանի, Աբրաատայ Ոստան գաւառի մէջ։ Արտաշէն և բնիկ պատմիչներն երկու Արտաշէս կը յիշեն որ այս քաղաքին շինողն եղած լինին։ Մէկն է, ըստ արտաքնոց, Արտաշիսես Հայկազն իշխանը որ մեծին Անտիոքոսի Աստուց Թագաւորին կողմանէ, Արշակունեաց Թագաւորութենէն առաջ, Հայաստանի մէկ մասին վրայ կուսակալ դրուած էր, որ և կը թուի, թէ յետոյ ապստամբելով Սելեւկիացիներէն առանձին կ'իշխէր։ Նոյն ժամանակներուը, Կարքեդոնացի Հոչակաւոր զօրավարն Աննիբաղ, Անտիոքոսի Հռովմայեցիներէն յաղթուելէն յետոյ ուրիշ ապիացի Թագաւորաց արքունիքները պեղբելէ վերջ, եկաւ Արտաշիսի մօտ, և իրեն շատ օգտակար խորհուրդներ տուաւ։ Կ'ըսեն, թէ Աննիբաղ գեղեցիկ և բարերար տեղւոյ մը վրայ, որ անմշակ թողուած էր քաղաքի մը յատակագիծը գծեց, և զԱրտաշիսես նոյն տեղը տանելով, ցուցուց և յորդորեց որ նոյն յատակագծին վրայ քաղաք մը կառուցանէ։ Սա խնդրեց Աննիբաղէն՝ որ ինքը



168։ Դրամ Գերմանիկոսի և Արտաշեսայ։

այդ շինուածքին գլուխ կենայ։ Քիչ ժամանակի մէջ շինուեցաւ հոն Հայաստանի բնդարձակ և հոյակապ մայրաքաղաքը, որ Արտաշիսի անունով կոչուեցաւ Արտաշատ։ Սարաբոն Արտաշատ քաղաքը ամրաշէն կ'անուանէ, շինուած այն կտոր տեղւոյն վրայ, որ երեք կողմէ Երասխ և Մեծամօր գետերով շրջապատուած էր. միայն չորրորդ կողմն կրնար մատչելի լինել, այն ալ ամրացուցին խրամատով և թմբերով։ — Նախ արտաքին մատենագրաց յիշած Արտաշատին հետ ծանօթանանք, և ապա սկսինք նկարագրել մեր Արտաշէս Բ. Թագաւորին կառուցած քաղաքն։ Տիգրանայ պատերազմաց ժամանակ, Լուկուլլոս՝ Տիգրանակերտի առնելէն վերջ, կը փափաքէր առնել նաեւ Արտաշատն, և կը յորդորէր իւր զօրքերը նուաճել զայն։ Իսկ Տիգրան մէջը ապահովելով կանայքը և մանկունքը, աճապարեց արդելուլ Թշնա-

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՅԱՏԱԿԱԳԵԻՐ



1. Գլխակն կամ Մխիթարերդը. – 2. Արտաշատ գիւղը. – 3. Մխիթարերդի գուռը. – 4. Եկեղեցի. – 5. Բնակարանաց աւերակներ. – 6. Գերեզմանական կարկառներ. – 7. Մեծամորի գետը. – 8. Հին խրամ և հիւսիսային գուռը. – 9. Բրնձնոց. – 10. Ագուցայք. – 11. Արեւելեան գուռը. – 12. Պարտէզք. – 13. Երեսխայ ցամքած հուները:

մոյն գալուստը։ Անմատոյց և անառիկ ինաց Արտաշատ նաև Լուկուլլոսի յաջորդաց. Հռովմայ հաշակառուն զօրավարներն Պոմպէոս, Կրասոս և Անտոնիոս՝ որք Հայաստան արշաւեցին, բայց Արտաշատի երեսը չտեսան։ Օգոստոս կայսեր ժամանակ, երբ Հայաստան ևս Հռովմայեցւոց մարզ եղաւ, կայսերական առհմէն Գերմանիկոս (թ. 167) գրկուեցաւ ի Հայս, որ Արտաշատ գալով Հայոց թագաւոր պատկեց Պոնտոսի Պոլեմոն թագաւորին Զենոն որդին, և նորընտիր թագաւորը քաղաքին անուամբ Արտաշէս կամ Արտաշիաս կոչուեցաւ։ Այս



169. Դեմիտիոս Կորքուղոն։

յաջող գործին համար, Հռովմայ մէջ Գերմանիկոսի յաղթական կամարներ կանգնեցան, և յատուկ դրամներ շինուեցան երեն և թագաւորին անուամբ (թ. 168)։ Արտաշիասէն վերջը, երբ Պարթեւաց Արտաւան թագաւորը իւր Արշակ որդին Հայոց վրայ թագաւորեցուց՝ Հռովմայեցիք անոր դէմ հանեցին Վրաց Փարսման թագաւորի Միհրդատ եղբայրը, և եկան Արշակայ զաւաճան սպասաւորաց մատնութեամբ Արտաշատի տիրեցին, Փրկչական 35 թուականին։ Երբոր Միհրդատ սպանուեցաւ (51 թուին) Գառնոյ տահմանները, զաւաճանութեամբ իւր Հռոդամիդ եղբօրորդւոյն, Պարթեւները Հայոց հաւանութեամբ մտան քաղաքն և Հռոդամիդը վռնտուեցաւ. բայց Պարթեւաց հեռանալովը զարձեալ եկաւ, և երկրորդ անգամ հալածուեցաւ Հայերէն։ Փախչելու ատենին ժամանակ՝ ողբերգական ծանօթ դէպքն կատարուեցաւ. որով զարկաւ իւր Զենոբիա կնոջը՝ որ Թշնամեաց ձեռքը չինկնայ, որ և յերասխ նետուելով, ազատուեցաւ հովուաց ձեռքով թէ չըէն և թէ մահէն։ Նոյն առիւներդ վազարշ Պարթեւ Հայոց թագաւոր գրաւ իւր Տիրիբ կամ Տրդատ եղբայրը, որուն դէմ Հռովմայեցիք զրկեցին իրենց ճարտար Դոմիտիոս Կորբուղոն (թ. 169) զօրավարը, որ մի քանի բերդերու տիրելէ վերջ եկաւ Արտաշատայ վրայ։ Տակիտոսի Տարեգրութեանց (ԺԳ. Ի) մէջ նկարագրուած է այս պատերազմն, որ վերջացած է բնակչաց անձնատուր լինելովն, և Արտաշատի այրուելովն և հիմնայատակ կործանելովն. բայց հիմնայատակ կործանուելէն մի քիչ չափազանցութիւն կը թուի։ Յետոյ Ներոնի հաւանութեամբ և օգնութեամբ՝ հրդկիզուած Արտաշատը վերանորոգեցաւ Տիրիդէն, և այս պատճառաւ առժամանակ մի կոչուեցաւ Ներոնիա։ Այսչափ առժամս ծանօթ է մեզ արտաքին մատենագրաց Արտաշատի վրայ գրածներէն, զոնանք այժմ մեր պատմիչներուն։

Արտաշատ քաղաքի երկրորդ շինողն է, ըստ պատմութեան Մովսէսի Խորենացւոյ (Բ. ԽԹ), Արտաշէս Բ Հայոց թագաւորը։ Այս իշխանը մանկութենէ ի վեր երեւանպայ երկիւղէն արտասահման եղած, շատ աշխատանքով ու վտանգներով թագաւորութիւնը ձեռք ձգելէ վերջը, եկաւ իր հայրենատուր գաւառները պարտելու, և երթալով այն տեղը, կ'ըսէ պատմիչը, «.... ուր խառնին երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Զեռնաու լինի նմա և երասխ փայտիւք մայրից. վասն որոյ անաշխատ և երազ շինեալ...»։ Քաղաքին չորս կողմը պարսպից կրկնապարիսպ որմեբով, զարարչուրին չորս կողմն ալ երկու կարգ պարսպով պատեց, և պարսպէն դուրս խոր խրամ բանալով բլուրը ամէն կողմէ ան-

կասկածելի բրաւ։ Ա.յսպիսի ամբութեամբ ապահոված բլրան ծայրը շինուց ամրոց, ուր իր յաւուրս արքունիքը և գանձը շտեմարանեց։ Բլրան ուսց վրայ շինուց հոյակապ մեհեաններ իր հայրենի կուռքերուն համար. փախարկուց հոն նաև հին Պարթեւաց անպրինեալը՝ որ վաղարշակ կանգներ էր Ա.րմաւիր ժէ ի պատիւ նոցա։ Իսկ Հայոց աշխարհի խնամակալ, երկրին բեղմնաւորիչ ու ծննդոց արգասաւորիչ Ա.րեւիկայ աստուածուհւոյն համար շինուց տաճար, ու անոր անպրին Բագարանէն հոն փոխագրուց։ Բայց Ապոլոնի մեհեանն ու արձանը կանգնուց մեծ ճամբուն վրայ, ուսկից որ քաղաք կը մտցուէր ու կ՚ելլուէր, որ պահպանողական աչք ընդլայնած՝ իւր հսկաներաւորութեան առակ կը պատասխարէր Թորգոմեան առնմի բաղդատութեամբ սերունդը։ Ա.ռանցմէ զատ որշափ յաղթական սիւներ, կոթողներ, շիրիմներ, անպրինեալներ որ գտաւ Երուանդայ քաղաքին մէջ, Ա.րմաւիրէն հոն տարած, ամէնը բերաւ Ա.րտաշատ, և անոնց մէ շատ աւելի ալ իր կողմանէ աւելցնելով, բրաւ իրր ակրոպոլիս մը զարմանալի սեռ բով և շքեղութեամբ։ Ա.յդ այս այն Ա.րտաշատն է, որուն սահմանաւորութեան առակը սակի փշի տեղաց Ա.րտաշեսի գլխոյն, որուն լուսահայեաց հսկաներին առակը տեղ մարգարիտ տեղաց Աթենիկայ գլխոյն։ Ա.յս այն Ա.րտաշատն է որուն գահլիճէն տասնիմն խրախոյս ու մրցանակ եղաւ աշխարհաշինութեան, բազմամարդութեան, ուսումնասիրութեան, ճարտարութեան, երկրագործութեան և բոլ ծով ու ցամաք վաճառաշահելոյ։

Ա.րտաշատ այլ և այլ կամուրջներ ունէր Երասխայ ու Մեծամօրի վրայ։ Մեծամօրի կամուրջը՝ յետոյ Վաղարշապատի կամուրջ անուանեցաւ, այսինքն այն որ ի Վաղարշապատ կը տանէր. իսկ միւսը յիշատակոյ արժանի՝ կը կոչուէր Տափերական, որ կէս մղոնի չափ քաղաքէն հեռու էր։ Ա.յս Տափերականը անուանի եղաւ նենգաւոր Ա.նակով, երբ իր եղեռնաւոր ձեռքը խոսրովային արեան թաթխելով ինք գինքը յերասխ նետեց արդար վրէժխնդրութենէն ազատելու համար։ Ա.րտաշեսի որդին Ա.րտաւազդ, խաւարչուտ մահուան խորխորատը հասնելէն առաջ, վերջին անգամ՝ անցաւ այս կամուրջէն։ Ուրիշ ոչ սակաւ յաղթական և ախորհրդական դէպքերու հանդիպած է կամուրջս երկար ժամանակ։

Ա.րտաշատ քաղաքը արքայանիստ եղաւ շինող Ա.րտաշեսով և նոյն պատուոյն ժէջ մնաց մինչև Տրդատայ Խոսրով որդին, գրեթէ 259 տարուան չափ ժամանակ։ Թէև վաղարշապատ քիչ մը ժամանակ անոր թագաւորական աթոռը յափշտակեց, բայց ոչ երբէք կրցաւ ճոխութիւնն և փառքը վերցրնել։ Ա.յս մեծ քաղաքը քանի գնաց ընդարձակեցաւ, բազմամարդեցաւ, և խոսրովեան անառանեներով արքայավայել ու զուարճալի պատահերա մը դարձաւ, ուր Ա.րշակունեաց փառքը կը ցոլանար։

Մեր նկարագրած Ա.րտաշատէն վեց մղոն դէպ ի հարաւ կ՚ինկնայ հռչակաւոր Խոր վիրապը, ուր նետուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ որուն ձեռքով Քրիստոսական կրօնից ճշմարտութեան աւրբ նշոյլը ծագեցաւ Տրդատ թագաւորին սիրտը, որ վառուած ու գրահատրած «... խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱ.րտաշատ քաղաք, աւերել անդ զբագինան անահատական պին». Ագաթանգ. ՃՐ։ Աստուածները կորան և պաշտօնատէր անձինք քաղաքէն հեռացան։ Նոյն ժամանակները թէպետև վաղարշապատի ժէջ հիմնուեցաւ Հայոց մայր եկեղեցին, ուր էր նաև բահանայապետական աթոռը, բայց նշանաւոր և մեծ էր նաև Ա.րտաշատի եկեղեցին։

Ա.րտաշատ մեծ կորստեան ենթակայ եղաւ Պապ թագաւորի առնրը, Քրիստոսի 382 թուականին։ Բուզանդ (Դ. ԻԵ) մանրամասն կը նկարագրէ, լսելով Շապհոյ զօրքերուն համար. թէ «եկին ի քաղաքն մեծ Ա.րտաշատ և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին և անտի զգանձս մեծս բնաւս որ կային, և գերեցին զամենայն քաղաքն. և խաղացուցին ի Ա.րտաշատ քաղաքէ լինն հազար տուն երկ Հրեայս, զոր ածեալ էր Տիգրանայ արքայի Ա.րշակունոյ յերկրէն Պաղեստինացւոց, և բառասուն հազար տուն երկ Հայ, (գրեթէ ամբողջ 500000 հոգի) զոր Ա.րտաշատ քաղաքէ խաղացուցին. և զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին՝ զփայտակերսն և զքարակերսն.

քանդեցին պարիսպն քան նմին օրինակի, և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունս ապականեցին. և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ, անմարդի և թափուր յաւիտեան բնակչաց իւրոց կացուցանէին»։ Բուզանդայ այս նկարագիրն քիչ մը չափազանց կը թուի, վասն զի ենէ Արտաշատը բոլորովին հիմնայատակ կործանուած լինէր, այնչափ իրարու յաջորդող հարուածներու և նեղութեանց մէջ, չէին կարող Հայք վերահաստատնել զայն, և չէր կարող այնպէս շէն լինել, ինչպէս որ Վարդանայ և Վահանայ օրերը կը ցուցընեն մեր պատմիչները։ Արտաշատու մէջ 449ին Յովսէփ կաթողիկոսը եկեղեցական մեծ ժողով գումարեց առանձնաւոր եպիսկոպոսներով և բազմաթիւ եկեղեցականներով, Յազկերտ Բ Պարսից թագաւորին՝ Հայերը մոգութեան կրօնը պարտընելու գրած հրաւիրագրոց պատասխան գրելու համար։

Հինգերորդ դարու վերջերը սկսեր է Արտաշատ իր պայծառութենէն ինկնալ տեղի տալով Դունայ. բայց դեռ այժմեան աւերակներուն վրայ չխօսած, ակնարկ մը տանք այս մեծ մայրաքաղաքին վաճառականութեան։ Ինչպէս որ շրջութեան, քաղաքական և կրօնական պաշտամունց առաջին հանգիսարանն էր բոլոր Հայաստանի մէջ, նոյնպէս էր նաև շահու և բարգաւած վաճառականութեան առաջին կեդրոն։ Հռոմոց կայսրները եւ պարս սկիզբը (440ին) երբ իրենց սեփհական նուագաւ Հայոց մէկ մասը, Մծբնայ հետ՝ Արտաշատ կը յիշեն իբրև արեւելեան մեծ շահատան, և կը գնեն որ վաճառականութեան համար անկէց անդին չանցնին և Պարսից հետ առուրեան չընեն։

Մեծ քաղաքին գէմ անուան յիշատակը, շատ տարեր վերջ կը լսուի տեղ տեղ. ինչպէս Ցովհ. Կաթողիկոս, յիշելով Ը դարու վերջերը, Թուգիմա ասորեաց կաթողիկոսարանին կալուածները և գաւառակերտները յաւիշատակելը, անոնց հետ կը գնէ նաև Արտաշատ. իսկ Թ. Արծրունին յաջորդ դարուն վերջերն, Դունայ ժամը նշանակած ատեն, ի՛ըսէ «հանդիպ քաղաքին Արտաշատու»։ Թէ ե՞րբ բոլորովին աւերեցաւ և անհետացաւ Արտաշատ, ոչ ոք կը յիշէ, սակայն կը կարծուի որ կամ Թամերլանց աշխարհաւեր արշաւանքներէն և կամ Ախոյ նման մեծ և սաստիկ երկրաշարժէ մը կործանուեր է։ Ալլեայլ երոսղացի հետախոյզ ճանապարհորդներ, Թավեռնիէ, Շարռէն Մորիէ, Տիւպուա, և այլք, այցելած են տեղատեսը բազմիս աւերակներուն։ Մեր ներկայացուցած յատակագիծը Տիւպուայի ուղեւորութենէն դրքէն առնուած է։ Գիտնական և հայասէր ճանապարհորդը հետեւեալ կերպով կը գրէ. «Վաղեցի դէպ ի աւերակները, աչքերս յաղեցան անոնց ընդարձակութեամբը. վասն զի մեծութեան ու կործանման կողմանէ առաջ նմանը տեսած չէի։ Հայոց այս հին մայրաքաղաքը Մեծամօրին յերասխ մնած բերնին վրայ էր. այժմ գերասխ պատուարին չորս կին ալորած չտեսնելով, ըսին ոմանք թէ այս ընդարձակ աւերակը չի կրնար Արտաշատիները ըլլալ, առանց անգամ մը տարակուսելու թէ երասխ կրնայ դեռ տեղը փոխած ըլլալ, ինչպէս իրօք ալ անտակ է։ Վասն զի այս անհատատա գետը յաղեցած ամեայի պարիսպներ թրջելէն, իր սրընթաց ալիքները տարաւ հարիւր վերստի չափ դէպ ի հարաւ։ Այս գետին համար չկայ անտակ գիւրին բան, ինչպէս իր նիստը կամ անկողինը տեղափոխել տեղւոյն պէս շիտակ պաշտամայրի վրայ, որ իր ջրերէն բիչ բարձր է և այլ և այլ խրամներով ու ափօտներով կարուած, որ երասխին ողողած պահուն կրնան ջրերը մէկ կամ միւս կողմը խոտորիլ»։

Այս ընդարձակ աւերակը այն կողմը գրած նուած աւերակներուն մէջ հնագոյնն է։ Հիւսիսային արեւելեան կողմը գրեթէ հարիւր սանդաչափ բարձր հողաբլրակ մը կայ, որուն վրայ էր ապերդաձև գիրքով միջնաբերդը, ապեղը դէպ ի քաղաք գարձած և լաբը յերասխ։ Գլխին տաքը երկու կարգ շրջապարսպով պատած է, որ ներսի պատուարէն չափով 1350 քայլ է։ Այս պարիսպներն ու պատնէշները շինուած են մեծամեծ հողի աղիւսներով, որոց նմանը կը տեսնուի Ախորհոսանի հնագոյն քաղաքաց աւերակներու մէջ։ Պարիսպները շիտակ չեն, այլ տեղ տեղ կիսաբոլոր մարտակոյտեր ունէին յիսնական տաք իրարմէ հեռու։ Մէկ պարիսպը միւսէն յիսուն տաք հեռու է, և անոր գու-

պահեստական, մարտկոցներն ալ առաջինին-
բուն համապատասխան. միայն արտաքին պա-
բսպի բարձրութիւնը ներքինէն 15 ոտքի չափ
ցած էր: Արտաքին պարսպէն դուրս խիտ
լայն խրամ մը կար, որուն խորութիւնը չենք
կրնար գուշակել, որովհետև այժմ լեցուած
ու մշակուած գետին է, մէկ մասն ալ բրընձ-
նոց: Միջնաբերդին մէջ տեղը բլրակի մը
ծայրը կը նշմարուի առաւելն թագաւորի
ապարանքի աղիւսակերտ հիմը: Շարաէնի
յիշատակած թագաւորական պալատը որ և-
բեռն և վից ահագ ու սեաւ սիւներու
վրայ կեցած է եղեր, բլլայ թերեւս վերոյի-
շեալ ապարանքը: Թագաւորիկի ժամանակ ես
այս աւերակներու մէջ կը տեսնուէին եղեր
մեծ ապարանքի մը մնացուածք, բայց այժմ
ամենայն ինչ փշրած ոչնչացած է:

Քաղաքիս շրջանակն ալ միջնաբերդի նման
երկու կարգ պարսպով պատած է, բոլորա-
շէն մարտկոցներով, որք շինուած էին ա-
դիւսով և խրամէն հանած կաւով: Այս պարըս-
պին շրջապատը 7000 քայլ հաշուած են:
Այժմ այս մեծ քաղաքատեղւոյս վրայ ուրիշ
հին շինուածոց մնացորդ չեն տեսնուիր, բայց
եթէ բանի մը պատերու հիմունք և փոքրիկ
եկեղեցւոյ մը աւերակ: Քաղաքի կեդրոնին
մօտ պատէհներու հարաւային կողմը դասյ,
կ'րսէ Տիւպուա, տասը տասուերկու հատ զե-
բեդմանական կարիատներ, ձեւացած միայն
հագէ անօթներու բեկորներով ու այրած աս-
կերաց մնթորով, որոց ամէն մէկը 15–20
ոտք բարձրութիւն ունին: Քաղաքին լաւա-
գոյն թաղը կ'երեւայ թէ այս կարիատներու
և միջնաբերդին մէջտեղ կ'ընկնար: Իսկ հա-
րաւային կողմը պարտէզներ էին, որ Երաս-
խին վրայ կը նայէին:

Գրեթէ 140 տուն հայ բնակիչք՝ որոց
թիւը 1400ի կը հասնի, կը բնակին այժմ
հին Արտաշատի հիւսիսային ծայրի պատուա-
բին ու միջնաբերդին մէջ: Ասոնք մեծաւ
մասամբ գաղթած են Սալմաստի կողմերէն,
և իրենց այժմեան ձեւացուցած գիւղն ծանօթ
է Արտաշատ կամ Արտաշիր անուամբ: Ա-
ւերակաց մէջ կան նաև երկու առանձնակ
բլրաբերդակ թաղեր, որք կը կոչուին նոյն-
պէս Արտաշատ: — Մտորգր. հին Հայ. 485–
497: Բազմավէպ, ԺԲ. 46–54: Այրարատ,
395–404: Հիւսուածք, Գ. 82–85: Եւ
այլն:

ԱՐՏԱՇԱՒ. — Գիւղ Այրարատայ Աբազա-
ման (Մարտարտպատ) գաւառի մէջ, 50 տուն
բնակչօք:

ԱՐՏԱՇԱՒԻ. — Գիւղ Աբցախու Վայկունիք
(Զանգեզուր) գաւառի մէջ, 250 բուրդ բնակ-
չօք: Մօտը կայ հանգստուն սար մը:

ԱՐՏԱՇԵՆ. Տես ՀԱԲԱՆԴ:

ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ԱԻԱՆ. — Թ. Աբծրունին
(Գ. ժԷ) կը յիշէ անունս ըսելով. «Աշտա
վերջաւորեալ եկին բանակեցաւ յԱրտաշէսեան
աւանի»:

ԱՐՏԱՇԵՆ. — Հայանուն ուան Ճանիկու,
Սեաւ ծովու հարաւ արեւմտեան եզերքը:
Պ. Մուշեղ Աբծինեան, ճանապարհորդելով
այս կողմերը, իբր թէ գտած է հայկական
շինուածներ և արձանագրութիւններ ԺԴ
դարու վերաբերեալ. որոնց վրայ նկարագրու-
թիւն մը հրատարակեցաւ 1847 տարւոյ
Հայաստանի լրագրի 49 թուոյն մէջ. ուս-
կայն նոյն լրագրոյն 53 թուոյն մէջ ալ հրա-
տարակեցաւ այս նկարագրութեան ի հի-
մանց սուտ լինելը:

ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ԴԱԻԱՌ. — Վաստակաւո-
ր հին գաւառներէն մին, Պարսկահայոց
սահմանաց մօտ:

ԱՐՏԱՇԻՐ. Տես ԱՐՏԱՇԱՏ:

ԱՐՏԱ–ՉԱՅ. Տես ԳԵՏԻԿ:

ԱՐՏԱՍԱՄՈՒՂ. — Ա՛յլ կերպ գրուած ա-
նուն Արտաւանուղի:

ԱՐՏԱՎԱՉՔ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց,
Վանայ շրջակայքը:

ԱՐՏԱՍՈՒՊԱՆ. — Գիւղ Վրաստանայ հին
Մանգլեացւոյս (Տփղիս) գաւառի մէջ.
Լնտակէմ գիւղէն հեռու է 2 վերստ: Բնակիչք
են 25 տուն Հայք՝ որ գաղթած են Ղա-
րապաղէն, կը հասկնան հայերէն և մեծ մա-
սը կը խօսին. ունին փոքրիկ բարշէն եկե-
ղեցի մը:

. ԱՐՏԱՐԱՍ. Տես ՎԱՐՁՈՑ ՁՈՐ:

ԱՐՏԱԻԱԶ. — Ըստ հին պատմագրաց այս
անուամբ քաղաք մը կար Այրարատայ Կոգ-
ովիտ գաւառին մէջ, Մասիս լերան մօտ,
ուսկից էր, կ'ըսեն, Լէոնկիմնար:

ԱՐՏԱԻԱԶԴԱՑ ԱՊԱՐԱՆՔ. — Այս անուամբ
ամայի վանք կամ անապատ մը կայ Այ-

բարատայնիզ գաւառի ԲՀնոյ վիճակի մէջ, Ա-բաստձորի մօտ։ Վանացս եկեղեցին շինուած է սրբատաշ քարերով, որոյ առնիքը խոնարհած է և մնացած են միայն սրմունքը։ Եկեղեցւոյս դրանց և սրմնոց վրայ կան բաւական խաչով արձանագրութիւններ, որոնք կը վերաբերին ԺԲ և ԺԴ դարուց։ — Գեղարքունի, 364—366։

ԱՐՏԱԻԱԶԻԿ. Տես ԱՐԴԱԻԱԶԻԿ։

ԱՐՏԱԻԱԶՈՒՑ ԳԻՒՂ. — Հին գիւղ Սիւնեաց աշխարհի, կը յիշուի իբրև արեւմտեան սահման Կովսական գաւառի Ենոքաշէնիկ գիւղի։

ԱՐՏԱԻԱՆԵԱՆ ԳԱԻԱՌ. — Վասպուրական հին գաւառներէն մին։

ԱՐՏԱԻԻԼ, կամ ԷՐՏԱՓԻԼ. Պգ. ARDABIL. — Հնութեամբն նշանաւոր քաղաք Ատրպատականի, Գավրէժէն 5 օրուան ճանապարհ դէպի արեւելք, ընդարձակ դաշտավայրի մը վրայ։ Դաշտի արեւմտեան հիւսիսային կողմը բարձրացած է Սավալան լեռը 12197 ոտք բարձր ձիւնապատ գագաթով, որուն առատ կան բազմաթիւ հանքային ջրի աղբիւրներ։ Արտաւիլի դաշտը ծովէն կը բաժնուի կիլանի անտառապատ լեռնաշղթայով. ծովի և անտառի մօտաւորութեան պատճառով օդը խիստ խոնաւ է, ձմեռը մեղմ իսկ ամառը բաւեխառն։ Քաղաքս ունի շատ հնութիւններ, այստեղ են Սէֆիվէի ցեղի նախահայր Շէյխ Սաֆիէլտինի խոհակի և իր եղբօր Շահ Իսմայէլի գերեզմանները, որոց վրայ կառուցուած է Շէյխի կոչուած հրաշալի մզկիթ մը։ Երկու գերեզմաններն ևս շինուած են անթուա փայտէ և թանկագին ծածկոյթով պատած. իրենց քանդակներով, ոսկիէ, արծաթէ, փղոսկրէ, սաւառիէ և փերուզէ զարդերով՝ արուեստի հրաշալի գործ մի են։ Մզկիթի սրահներէն մին լի է մեռաղէ, ճենապակիէ և հոգէ հին անօթներով, որոնք նախկին ուխտաւորներու բերած նուէրներու մնացորդներ են. ուրիշ սրահ մ՚ալ յատկացուած է ձեռագիրներու։ Կը պատմեն թէ 1827 թուին, երբ Ռուսները այս քաղաքը գրաւեցին, ձեռագիրներու մէկ կարեւոր մասը Փեթերսպուրգ փոխադրեցին. այն օրէն ի վեր պարսիկ ժողովրդեան համար ուխտաւորի լինելէն դադրեր է, համարելով իբրև քրիստոնեաներէն պղծուած։ Թէև գաղթու աղղեցութիւնը հետզհետէ կ՚եղծանէ այս շէնքը, և գողութեամբ կամ անհոգութեամբ կ՚անհետանան շատ իրեր, սակայն գործակալ կրնայ համարուիլ հնութեանց անզուգական թանգարան մը։

Քաղաքին կից արեւելեան հարաւային անկիւնը շինուած է բերդը, հոգէ կրկին պարիսպներով. հոն է կառավարչի բնակարանը, բանտը՝ ուր կը գրկուին Պարսկաստանի այն յանցաւորները, որոնք գլխատուելէ ազատ պէտք է մնան։ Արտաւիլի շուրջը գտնուղ աւերակներէն կ՚երեւի, որ ժամանակաւ շատ ընդարձակ և նշանաւոր է եղեր. այժմ ընկած գրութեան մէջ է, տները հողաշէն, ճառանոցը ապրատ. արտահանութեան ոչ մի բերք չունի. եթէ քիչ մը կենդանութիւն ունի, այն ալ Աղթարա նաւահանգստի մօտ գտնուելովն է։ Կիլանի լեռնաշղթան կիրճ մը ունի, որ կասպից ծովէ սկսելով կ՚երկնայ դէպի արեւմուտք մինչև 40 վերստ. ժեւտար է երեւակայել այսպիսի ճանապարհ մը՝ որ կասպից ծովի և Ատրպատականի հազորդակցութեան միակ միջոցն է։ Ձիերը և ջորիները միայն կրնան մեծ դժուարութեամբ այս ճանապարհով երթեւեկել. այդ պատճառաւ Ուրմիայէն, Մարագայէն և Գավրէժէն եկած ուղեւ ահագին կարաւանները սախլուած են իրենց բեռները Արտաւիլ թողուլ, ուսկից քիչ քիչ կը փոխադրեն ծովեզերք։ Աստրախանէն և Բագուէն եկած սուսկան ապրանքներն ալ Աղթարա նաւահանգստէն Արտաւիլ կը բերեն և ապա կը տարածեն Ատրպատականի միւս գաւառները։

Քաղաքիս բնակչաց թիւն կը համարուի 12000, մեծամասնութիւնը թուրք են, կան նաև քիչ մ՚ալ Հրեայք։ Հայք 31 տուն են 220 հոգի, որք գաղթած են Գավրէժէն և կ՚զբաղին առեւտուրով։ Գեռ ԺԹ դարու սկիզբները թէև կային այստեղ տակաւին հայ վաճառականներ, սակայն չունէին եկեղեցի։ 1850 թուականէն վերջ կ՚սկսին քիչ քիչ շատնալ Արտաւիլի Հայք։ Նշանաւոր եղած է Հայոց մէջ իր մարդասէր և ազնիւ բնաւորութեամբն Պ. Խաչատուր Շահրիւզեանց, որոյ առաջարկութեամբ 1878 թուին շինեցին և աւարտեցին քաղաքիս մէջ գեղեցիկ, ապիւսաշէն և գմբէթաւոր եկեղեցի մը։

Ունին նաև ուսումնարան մը, թատերական փոքրիկ սրահ մը և գրադարան – ընթերցարան։ — Այրարատ ամսաթերթ, ԼԱ. 503–504։ Մշակ, Ը. 128։

ԱՐՏ. — Հայտնուն՝ բայց այժմ այլազգաբնակ գիւղ Այրարատայ Հաւնունեաց գաւառի մէջ։

ԱՐՏԻՄԻԴ. Տես ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

ԱՐՏԻՆ. — Այս անուամբ կը կոչուէր ի հնումն Այրարատայ Արագածոտն գաւառի լեռնոտէն մին։

ԱՐՏԻՑ ԳԱԻԱՌ. Տես ՍՈՂՔ։

ԱՐՏԻՑ ԵՒԿ. — Ի հնումն գիւղ Տարօնոյ Տարօն չաւառի մէջ, Մ. Կարապետի վանքի մօտ. որ ըստ Ցոհան Մամիկոնեանի (41) ունէր նաև ամրոց։

ԱՐՏԻՈՆՔ. — Գիւղ Տարօնոյ Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտեան կողմը, գրեթէ 50 տուն բնակչօք։

ԱՐՏԿՈՒՆՔ. — Գիւղ Տիգրանակերտի, 30 տուն հայ բնակչօք։

ԱՐՏՈՍ. — Վաղարշակերտի բարձր լեռնէրէն մին, որ կ'ընկնայ Ռշտունեաց գաւառի մէջ։ Թ. Ուրբաստին (328) հետեւեալ նկարագիրն կ'ընէ. «Այլ և ի հարաւակողմն կուս ամրոցին (Ոստանայ) կայ բարձրաբերձ լեառն Արտոս, որ ի գարնանայինն հասանելոյ ամենայն ինչ ի ցաշնանայինն եղանակ ամենայնիւ պահէ յինքեան զղալարութիւն արմատոց և ծաղկանց,... Նաև ի գլխոյ լերինն հոսեալ ինչ ոմն զեղ սահանակարկաջ յորդահոսք, որով ոռոգանի երկիրն առ հասարակ»։ Արտոս կը ձեւացընէ Ոստանայ հովիտը, որուն երկայնութիւնն է հիւսիսէն հարաւ $2^1/_2$ ժամ, և արեւելքէ արեւմուտք գրեթէ 1 ժամ։

ԱՐՏՈՍ. — Գիւղ և լեռ Բարձր Հայոց այժմեան Կամախ վիճակին մէջ։

ԱՐՏՈՍՊ. — Գիւղ վերին Բասենի (Այրարատ) համանուն գետին վրայ. ի հնումն Հայոց նշանաւոր շէն մը եղած կը թուի։ — Այս անուամբ գիւղ մ'ալ կայ Կիւմիւշխանէի հիւսիսային արեւմտեան կողմը։

ԱՐՏՈՍՊ. — Մեծ գիւղ Այրարատայ Վանանդ գաւառի մէջ, գետակի մը եղերքը, Ազպապա լերան հիւսիսային կողմը։ Գիւղիս մէջ կայ հին և մեծ եկեղեցւոյ մը աւերակ ներն. այժմեան բնակիչք Ծանաթէն եկած Հայ ներ են, 70 տուն։

ԱՐՏՈՑ ԳԵՏ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐՏՕՆ. — Կը յիշուի իբրև բերդ Ձորքսրդ Հայոց մէջ։

ԱՐՏՕՆԿՆ. — Հին անուն գետի մը, Այրարատայ Շարուր գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այժմեան Ձանախաձր գետը։

ԱՐՏՕՆՔ. — Գիւղ Տարսերեանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելեան հարաւային կողմը։ Ունի 100 տուն հայ, և 6 տուն քուրդ բնակիչ։

ԱՐՏՕՍՐ. Տես ԱՒՆ։

ԱՐՑԱԽ կամ ԱՐՋԱԽ. — Հայոց Մեծաց 15 նահանգաց շառաւիղն փոքրագոյն է ամենեւին նահանգն Արցախ, որոյ սահմաններն էին վաղարշակ Թագաւորի ժամանակ Երասխ գետը, Արցախեան ամենաբարձր սարերու գագաթնագիծը և Հնարակերտ ամրոցը։ Այս սահմանաց և կովկաս մեծ լերան մէջ տարածուած երկրի վրայ կառաւակալ գրուած էր նոյն վաղարշակ Թագաւորէն, Սիսական ցեղէն Առան անուամբ խելացի մարդ մը։ Բայց Ա. գուանից Արշակունի Թագաւորութիւնը սկսելով, Հայոց և Աղուանից մէջ հակառակութիւն կը ծագի սահմանաց համար, և նոյն ժամանակ Արցախի և Աղուանից երկրի մէջ սահմանագիծ կ'որոշուի կուր գետը։ Հինգերորդ գարուն Աղուանից Թագաւորութեան կ'ենթարկուի ամբողջ Արցախեան նահանգը։ Մեծ Սիւնեաց Թագաւորները ձգտելով իւրացնել Արցախի մի քանի գաւառները, կը ծագի երկարաւոր հակառակութիւն և խռովութիւն Մեծ Սիւնեաց և Աղուանից Թագաւորութեանց և հոգեւոր իշխանութեանց մէջ։ Այս գարաւոր խռովութեանց վերջ տալու համար Հայոց Մարզպետ կաթողիկոսը ՆԻՒ (=1006) թուին հանեց յատուկ շրջաբերական կոնդակ, որով կ'երեւի, թէ նոյն ժամանակները Արցախի սահմանագիծն եղած է Երասխ, կուր, Թրամ և Հաղարի գետերու և կայներն, Տիլիժանի, Գեղամեան ամենաբարձր լերանց գագաթնագծի մէջ եղած տարածութիւնն։

Խորենացին (609) թէեւ գրած է թէ 13 գաւառ ունի Արցախ, բայց ինք նահանգի գաւառներու շարքին մէջ կը յաւելու «... և

այլ գաւառս (Արցախայ) գոյս ի Հայոց հանեալ է (թագաւորն Աղուանից), Շիկաշէն, Գարգման, Կողթ, Ջաւէ, և այլ բազմ գաւառ մինչեւ ցխառնուածն Երասխայ ի կուր գետս»։ որով Արցախի բոլոր գաւառներու թիւը կը լինի քսան և չորս։ Այս հանգամանքը զանազան գարերու մէջ փոփոխութիւններ կրելով՝ Հայկէն կոչուած է Գարգար, Արցախ, փորը Սիւնիք, Խաչենք, Սեաւ Ալգի, իսկ Պարսիկներէն և Տաճիկներէն՝ Գարապաղ։ Այսպիսի փոփոխութեանց ենթարկուած են նաև նահանգիս բոլոր գաւառաց անուններըը։ Բնութիւն ճարտարապետը երեք մասի բաժնած է Արցախի բոլոր գաւառները՝ որք են Գաշտային, Լեռնային և Հարաւային և կամ Ստորին, Միջին և Վերին։ Գաշտային կամ Ստորին գաւառներն բնակած են երասխ և կուր գետոց, Աղստեւ գետի և փոքր–լեռնաշղթայի միջավայրի տարածութեան վրայ։ Լեռնային կամ Միջին գաւառները բնակած են փոքր–լեռնաշղթայի և Մեծ–լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերու և Զարպախաի միջև տարածուած մասի վրայ։ Հարաւային գաւառներն բնակած են Հազարդ գետի ձախ ափանց, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերու մէջ, երասխէն մինչև Ծար գաւառի սահմանը։ Ինչպէս նահանգիս տեզագրական մասին նայողս և գաւառաց գաւառրութեանն կը հետեւինք Գեր. Մ. Բարխուտարեանցի։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՅՈՒՑԱԿ ԱՐՑԱԽԻ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ

ՀԻՆ ԳԱՒԱՌՔ	ՆՈՐ ԳԱՒԱՌՔ
Ստորին Գաւառներ	
Ա. ՊԱՆԱՆՔ	.... ՃԻՊՐԱՅԻԼ.
Բ. ՄԱՒԹԱՆՔ, ՄԱՒՐԱՆ .	.... ՄԻԼԻՆ ԳԱՒԱՌ
Գ. ԱՐԱՆՈՒՏ	.... ՔԵՒԱՊԻՐԼԻՒ
Դ. ՏՈՒԲ	
Ե. ԹՈՒՅՊԱՏԵԱՆ	.... ՋՈՒԱՆՇԻՐ
Զ. ԱՂՈՒԽ	
Է. ՏՈՒՀՔԱՏԱԿ, ՏԻՒՔԱՆԱՔ, ԿԵՐՏ, ԹԱՒՈՒՆԳԻՒՏ .	.... ՇԱՀ–ՊՈՒԼԱՂ
Ը. ՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱԿ, ՈՒՏԻ ԳԱՒԱՌ	.... ՋՈՒԱՆՇԻՐ
Թ. ՇԻԿԱՇԷՆ, ՇԱԿԱՇԷՆ, ԱՐՇԱԿԱՇԷՆ, ԳԱՆՁԱԿ, ԳԱՆՁԱՆՁԱ	.... ԳԱՆՁԱԿ
Ժ. ԿՈՂԹ, ՇԱՄՔՈՐ, ՋԱԿԱՊ	.... ՂԱՁԱԽ
Միջին Գաւառներ	
ԺԱ. ՊԱՁԱԿԱՆՔ, ՊԱՆՅԱԿԱՆՔ, ԴԻՋԱԿ	.... ՃԻՊՐԱՅԻԼ
ԺԲ. ՄԻՒՍ ՀԱՐՑԱՆՔ, ՀԱՐՑԱՆՔ, ԱՄԱՐԱՍ, ՎԱՐԱՆԴԱ .	.... ՎԱՐԱՆԴԱ
ԺԳ. ՄԵՆԻՔԱՆՔ, ՄԵՆՔԱՐԱՆՔ, ՆԵՐՔԻՆ ԹԱՁԵՆ . .	.... ԹԱՁԵՆ
ԺԴ. ՔՍՏԻՍԱԿԱՆ, ՔՍՏԱՆԿ, ՀԱՒՈՒՆՔ	.... ՋՐԱՐԵՐԴ
ԺԵ. ՄԵՆԿՈՂՄԱՆՔ, ՄԵՆՔԿՈՒՆԱՔ, ՁԱՐԱՌԵՐԴ, ՋՐԱՌԵՐԴ, ԹԱՂԱԾ, ԿԻՒԼԻՍԱՆ, ՋՐԱՌԵՐԴ .	.... ՋՈՒԱՆՇԻՐ
ԺԶ. ԳԱՐԴՄԱՆ, ԳԱՐԴՄԱՆԱՑ ՁՈՐ, ԳԱՐԹՄԱՆԻԿ .	.... ԳԱՆՁԱԿ
ԺԷ. ՓԱՐՆԱՍ, ՓԱՒՍՈՒՍ, ՓԱՌՈՍ	.... ՂԱՁԱԽ (ՇԱՄՇԱՏԻԼ.)
ԺԸ. ՔՈՒՍՏԻ, ՔԱՒՍ . . .	.... ՂԱՁԱԽ (ՇԱՄՇԱՏԻԼ.)
ԺԹ. ՁԱՒՂ, ՁՈՐԱԳԵՏ, ԵՐԿԻՐ ՍԵՒՈՐԴԵԱՑ, ԵՐԿԻՐ ԿԱՅՏԱՑ	.... ՂԱՁԱԽ
Վերին գաւառներ	
Ի. ԲԵՐԴԱՁՈՐ, ԲԵԼԱԻԿԱՆ, ՂԱԼԱՂԱՐՇԱՂԻ ՁՈՐ, ՂԱԼԱ–ՏԱՐԻՍԻ	.... ՃԻՊՐԱՅԻԼ
ԻԱ. ՀԱՐՃԼԱՆՔ ՁԱՒԻՍՏ .	.... ՀԱՃԻԼԵՐ
ԻԲ. ՎԱԿՈՒՀՆԻՔ, ՎԵՐԻՆ ՎԱՅՔ, ԿՈՒՀՆԻՔ	.... ՁԱՆԳԵԶՈՒՐ
ԻԳ. ՍԻՍԱԿԱՆ–ՍՍՏԱՆ, ՅԱՐ, ՁԱՐ	.... ՁԱՐ

Կ՚երեւի թէ խորենացին այս գաւառներու հետ հաշուած է նաև վարդանակերտ գաւառը, որով կը լրանայ Արցախեան նահանգի քսան և չորս գաւառները։

Ջալալեան Մարկոս արքեպիսկոպոս, իր ճանապարհորդութեան մէջ հետեւեալ նկատողութիւնը կ՚ընէ նահանգիս վրայ. «Լեռնային է տեղին, թաւալմուտ և մացառապատ, ուր բանաւոր են բազմաթիւ խորաձորք և գարեւանդք


և բարերար պաշտաձեւ հովիտք. յոր գտա-նին գեղեւս կիսակործան և մանուպատեալ ամայի վանօրայք և բերդատեղք ասենալի իշխանաց ... և ի կողմանէ ամրութեան ոչ վրիպի սր կոչել զտա երկրորդ Կոմիտաս. ծագկածին են լերինք, յորդաջուր և անուռատաշատ»։ Արցախեան լեռնաշղթայի գլխաւոր սարերէն յիշենք հետեւեալները. Աղուերիւենց սար, Մառաւ, Բիբ, Բեբի, Կայլենի լեռներ, Մրդուզ, Ս. Գեորգի սար, Բեսարակ, եւն։ Գետերէն ժեծերը են. Կուր և Երասխ, իսկ գետակներն են. Բեսնիդաղան, Գարգար, Խաչենագետ, Թարթառ, Ղարա-Չայ, Կռռբակ, Ասկանապատի կամ Գանձակ, Բանանց, Շամքոր, Ջակաւ, Տաւուշ, Ջորագետ, եւն։ Եղանդիս մէջ կան տասէն աւելի լճակներ և մի քանի հանքային տար և պաղ ջրեր։ Արցախի բազմաթիւ անտառները լի են կաղնի, ճարկի, լայնատերեւի, կազենիի, սխկի, թեղի, հացի, բեխի, կիչի, լորի, տոտասխի, և այլ ծառերով։ Իսկ սաղարդի, սուտ ընկուզի և կարմրատայտ ծառերն կը գտնուին միայն Կուր գետի անտառի մէջ և Քոլ կոչուած տեղը։ Գի և բեւեռնի Կիւլիստանի անտառները, Թարթառի ձորերը և Գետափայի լեռնաշղթայի գէպի Երասխ իջնուարհած մասերը. մայրի և վայրի ուռենի Տիլիժանի անտառները. կապամախի, սօսի, բարտի և փշատի ծառեր միայն գաշտային մասերու մէջ։ Պտղատու ծառերէն յիշենք. ճըռ տանձի, ծառ տանձի, ճըռ խնձորի, զհոի (զղհաբի), սղոնի, սալորի, հոնի, սիրդոնի (արքայակաղնի), ընկուզի, մնոքատատանձի և լիմիոնի։ Երկիրը առաջ կը բերէ ուրիշ շատ տեսակ թուփեր, կանաչեղէններ և գետզգոյն ծաղիկներ։ Անտառները և սարերը լի են վայրի տարբ կենդանիներով, որք են. քօշ, այծ, եղջերու, եղն, կինճ, խոզ. տակի գաշտերու մէջ այծեամին, և անպատանոց մէջ նապատակ։ Գազանները կը գտնուին տասիճ՝ խիստ տակու, մարդ՝ նոյնպէս, ինձ, բորենի, արջ, գայլ, ագռաւ, սեւակռնջ, չագալ, տամբար, սիկու, առնէտ, խլուրդ, ջրշուն։ Թռչուններէն են. արծիւ, բազէ՝ շատ տեսակ, ցին, ուրուր, չորեքտոտ, բու, հողմահար, գայլագռաւ, կաչաղակ, կոցահար, փասիան, սալամի, կաքաւ, կռունկ, արագիլ, ծիծեռնակ, հաւիրաչ, ագռաւնի, տատրակ, լորամարդի, մուշահաւ, արտուտ, արոս, սագ, բազ, կու, յոտոտ, սոխակ, լծի, չլածիա, գեղձանկի, շիլշիլոյ, եւն. եւն։ Կան շատ տեսակ օձեր, մողէզ, կրիա, խեցգետին, սղնի, կարիճ, և ուրիշ գետնոտ և միջատոտ գետազան տեսակներ։ Հարուստ է նաև ընտանի կենդանիներով՝ որք են. գոմէշ, եղն, կով, արջառ, երինջ, ոչխար, այծ, խոզ, ուղտ, ձի, ջորի, էշ, եւն։

Բներքերն են. ցորեն, գարի, կորեկ, սիսկ, համար, սորեկ, կաուտա, ոսպ, սիսեռ, բակլայ, լուբեայ, խաշխաշ, վարսակ, գդում, սոխ, սխտոր, բողկ, ճակնդեղ, գազար, գետնախնձոր, սեխ, ձմերուկ, ամբուկ (ան պատկինճան), կարմիր տատիկ, պղպեղ, տանձ, խնձոր, գեղձ, սերկեւիլ, թուզ, նուռն, ընկուզ, գդեաղ, արքայակաղին, խաղող, գինի, օղի, բուժ, մեռաքս, բամբակ, բուրդ։ Արցախ ունի նաև հանքեր՝ սակիս, արծաթի, պղնձի, երկաթի, երկանաքարի և ուրիշ շինուելեանց բարերաս. Ասի Ազանձոյ գետաւ մէջ ալ կայ նաւթահանք։ Գահանդիս բերդերու վրայ տեղեկութիւն կը տուի իւրաքանչիւր գետաւ հիմարադրին մէջ։

Արցախ նշանաւոր է մեր պատմութեան մէջ իր մի քանի հռչակաւոր վանքերով. իր մէջ է Ամարաս՝ յորում ամփոփուած են Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի նշխարները. հոն է Գանձասարու վանք, ուր մինչև վերջին ժամանակները կը նստէին Աղուանից կաթողիկոսները։—Արցախ, 1—434։ Տտորգր. հին Հայս. 301—346։ Ջալալեան. Ճանապարհորդութիւն, Բ. 350—366։ Եւ այլն։

ԱՐՓԱ. — Հին և նշանաւոր գիւղ Սիւնեաց վայոց ձոր գետաւ մէջ, համանուն գետոյն եզերքը։ Օրթիւեանները յաճախ գիւղիս հին բնակիչը կը յիշուին Ախթամարեան գաւառն։ Օրթիւեան թոռնաց իշխանը Տարսայիճ՝ հոս շինած էր իրեն դարպաս, որ և տատ վախճանելով 1290ին, տարին թագեցին Եղուարդեանց մէջ։ Ատոր ժամանակ Եղուարդից Սարգիս եպիսկոպոսը, յիշատակաց արժանի գործ մի ըրաւ, այն է, Արփայի մէջ գետոյն վրայ «կամուրջ կամարով զարմանալի, տաշածոյ վիմօք, յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ

աշխատութեամբ, հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճէն»։ Պատմչի գովաբանական խօսքերն կը հաւաստեն մեծադործ կամրջիս մինչեւ ցայսօր մնացած աւազեայ աւերակներն, յորոց կը յայտնուի, թէ նոյակամար եղած է և ամբողջ մնծրա- գին արբատաշ քարերով կառուցուած։ Ժդ դարուն Արփայի մէջ կը բնակէր նաեւ Կա- նուէիւն, բաց ի կիսակործան և ամայի և- կեղեցիէն։ Սահմանսոյ յաջորդ Յովհաննէս եպիսկոպոսն կառուցած է փոքրիկ և վայե- լուչ եկեղեցի՝ յանուն Ս. Աստուածածնի, որ 1840ին խափանիլով՝ սիրուն կամուրիկէն ալ խնդարհած է։ Ամբողջապէս շինուած է մաքուր արբատաշ գեղին քարերով, քառա- կուսի ձեւով. ունի չորս լուսամուտ երա-



170. Արփա գիւղի աւերակ եկեղեցին։

պանեցի Մահուանեան իշխանաց պայազատն՝ Աժիրա որդի Զաւրէի, որ Տարսայիճէն 4000 զրամով գնելով Աղրաց կոչուած այգին, նուիրեց Ըորամանից, և Սահմանսոյ եպիսկո- պոսն ալ սահմանեց իրեն համար հինգ պա- տարագ ամէն տարի անխափան կատարել։ Հին Արփայի մէջ չկայ իշխանական ապա- րանք և հնութեամբն աչքի ընկնող մի շի- նութիւն, բաց ի կիսակործան և ամայի և- կեղեցիէն։ Սահմանսոյ յաջորդ Յովհաննէս եպիսկոպոսն կառուցած է փոքրիկ և վայե- լուչ եկեղեցի՝ յանուն Ս. Աստուածածնի, որ 1840ին խափանիլով՝ սիրուն կամուրիկէն ալ խնդարհած է։ Ամբողջապէս շինուած է մաքուր արբատաշ գեղին քարերով, քառա- կուսի ձեւով. ունի չորս լուսամուտ երա-

քանչիւր կողմն մէկ մէկ հատ, և երկու դռներ արեւմտեան և հարաւային կողմերը։ Եկե- ղեցւոյս ներսի կողմն խաչաձեւ է, առանձնա- կի բարձրացած չորս քոլորակ սիւներ կը վերջնեն առնիքը՝ որ արբատաշ քարերով սալած է։ Դեռ եւս անխափան մնացած են բեմն, սեղանը, վէմքարն և երկու կողմնակի խորաններն։ Եկեղեցւոյս արեւմտեան գռնէն

կը մնացուէր երբեմն գեղեցկաշէն ժամատունը, որ այժմ աւերակ է. նոյն գրան վրայ կիսաթողորի մէջ կայ Տիրամօր քանդակապատկերը, ճիսուս գիրկը գահի վրայ նստած, ամբողջ ներքազգեստ ոդկուղներով և ծալիկներով զարդարուած շրջանակի մէջ առնուած։ Շրջանակէն դուրս քանդակուած է ՉՀԱ (= 1322) թուականին շինողի արձանագրութիւնը. ուրիշ արձանագրութիւն մի եւս կայ հարաւային գրան վրայ։ Գաւթի մէջ կան բաւական թուով խաչքարեր և քանդակազարդ տապանաքարեր՝ հանդերձ արձանագրութեամբը։ Տապանաքարերու արձանագրութեանց ընդհանուր թուականը կը հասնին մինչեւ մեր դարը։

Հին Արփա գիւղը այժմ ամայի է, վասն զի ժամանակի ընթացքից մէջ գետը մշած ըլլալով այն հողաթմբերն որոյ վրայ կը զբաղուէր գիւղն, բնակիչք գրեթէ դար ու կէս առաջ, Արփայէն քիչ մը աւելի ցած դէպ ի արեւմուտք փոխադրուած և նոր գիւղ մը հիմնած են հնոյն անուամբ։ Այժմեան Արփա գիւղը ունի 60 տուն հայ բնակիչ, որոնք իրենց մեսեաները կը թաղեն հին Արփայի գերեզմանատան մէջ։ Գիւղիս բնակիչները, տարին մէկ անգամ ուխտի կ'երթան հին Արփայի եկեղեցւոյն, ուր պատարագ եւս մատուցանել կու տան։ — Արփայէն քիչ հեռու Գարա—սու (Սեւ ջուր) կոչուած աղբերակի մօտ, քարաթլրոյ մը առորոտ կան երկու նահատակաց ուխտական գերեզմանները։ Վերոյիշեալ աւերակ կամրջի արեւմտակողմն ալ բլրակի վրայ՝ որոյ սահմանն կը կոչուի Վարդապետի ձոր, կայ սրմնայարկ խաչարձան մը ՉՄՌ (= 1303) թուականի արձանագրութեամբ։

Ժէ դարու սկիզբը Արփայի բնակչաց մէկ մասը ուրիշներու հետ գերի գնաց ի Պարսկաստան, որոց մէջէն Գրիգոր անուամբ մէկը, ըստ Ասաքել պատմչի (ԺԹ) «պարթեւահասակ և յատկանշական, և սրտիւն արի, բանիւք և խելօք հանճարեղ, և հաւատոյն և սիրոյն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն», կը բնակէր Փարիսյ գաւառի Խոյիկան կոչուած գիւղը, և կը քաջալերէր գերեկիցները հաստատուն կենալ իրենց հաւատոց մէջ. որ և ի վերջոյ պինդ կենալով քրիստոսական հաւատոց վրայ, վկայօրէն կատարեցաւ 1621 թուին։ Այս գիւղէն էր նաեւ խաչիկ անունով մէկուն Ադիզ կոչուած զուսարը, որ սուտ ամբաստանութեամբ մը յուրացութիւն ստիպուելով, հաստատ կեցաւ հաւատոց մէջ, և Ղափանէն դուրս մերկայէն պարանով կախելով վար ձգուեցաւ. քրիստոնեայք վերցնելով պատուով թաղեցին, 1679 թուին։ — Սիսական, 181—184։ Հնութիւնք Վաւօրհից, թ. 266։ եւ այլն։

ԱՐՓԱ. — Լճակ Սիւնեաց Սոզք գաւառի մէջ։

ԱՐՓԱ ՉԱՑ. Տես ԱԽՈՒՐԵԱՆ։

ԱՐՓԱԿԻՏԻՒ. — Լեռ Սիւնեաց Ազահէճք գաւառի հարաւ արեւելեան կողմը։

ԱՐՓԱՆԵԱՆ. — Կը յիշէ Եղիշէ (117) Հայոց առասանի այն բերդերուն հետ, զոր Հայք առին ի Պարսից Վարդանանց ժամանակ։

ԱՐՓԱՇԷՆ. — Գիւղ Տայոց Կող գաւառի մէջ։ Այժմեան բնակիչք քուրդ են 36 տուն։

ԱՐՓԱԻՈՒՏ. — Հայաբնակ գիւղ Խոյոյ գաւառ (Փոքր Հայք) վիճակին մէջ։ Բնակիչք 70 տունէն աւելի են. ունին Ս. Գէորգ եկեղեցի մը։ — Այս անուամբ Հայոց գիւղ մ'ալ կայ Շամախու մէջ։

ԱՐՓԻ. — Հայբնակ փոքր գիւղ Ագձնեաց, Մօտիան գաւառակի մէջ։

ԱՐՓՈՒՆՋ. Տես ՍՈՂՔ։

ԱՐՔԱՅԿԱՂՆԻ ՎԱՆՔ. — Կիլիկիոյ երբեմն հռչակապանծ և եպիսկոպոսանիստ վանքերէն մին էր սա, որ կ'ինկնար Մսխի աբեւելեան հարաւակողմը Նուր լերան Պազ Ադամի կոչուած կաղնիներու, սօսիներու, բեւեկնիներու, թխենիներու և ձիթենիներու անտառի մէջ։ Կաղնիներու մէջ ծածկուած լինելուն պատճառու անշուշտ այսպէս կոչուած է. կը կոչուէր նաեւ Թեկտոր (այսինքն Հաճկատար), ուսկից կը գուշակուի թէ եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի, վասն զի սովորաբար Հաճոյակատար մակդիրը Տիրամօր կը տրուի։ Ցայսմ չէ վանացս սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց կը յիշուի ԺԲ դարու կիսուն. 1167ին, Մեծին Լեւոնի հօր՝ Ստեփանէի խաշուած գիակը բերին հոս թաղեցին։ Նոյնպէս 1203ին հոս հանդուցաւ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի մարմինը։ Նոյն ժամանակի վանահայրն Գա-

ւիճ արքեպիսկոպոս, որ Լեւոնի Թագադրութեան հանդէսին ներկայ եղող եպիսկոպոսներու շարքին ւոջ առաջին նշանակուած է, քանի մը տարի վերջը կաթողիկոսական գահը բարձրանալով իւր հայրապետութեան առաջին երկու տարիները (1206–8) բնակեցաւ վանացս ւոջ։

Ձեռագրաց յիշատակարաններու ւոջ վանքս կոչուած է «... հոյակապ մայրաքաղաքացեալ սուրբ աւետարան Արքայակաղնիս». այնչափ բարձր և պատուաւոր անուններ ունենալուն ւոջ պատճառն ալ այն է, որ Լեւոնի ժամանակ Մամեստիա քաղաքը, որուն եպիսկոպոսը կը նստէր վանացս ւոջ, դեռ Հայոց մայրաքաղաքը կը համարուէր։

Արքայակաղնի վանքը ունէր բազմաթիւ միաբաններ, իրեն գրադարանը լի էր հազուագիւտ ձեռագիրներով, և մեզուաչան աշխատաւէր կրօնաւորները շարունակաբար կը գրէին և կ'ընդօրինակէին ուրիշներ։ 1269 տարւոյ մեծ երկրաշարժէն ասոնիկ վնասուեցաւ մենաստանս, ինչպէս նաեւ իւր շուրջը գտնուած բազմաթիւ ճգնարանները, ազօթատնտները կործանեցան։ Ժամանակակից գրիչ մը ողբալով կը նկարագրէ այդ սխուր պատահարը։ Այս կործանմանէն վերջ թէեւ յոմանց նորոգուած կը համարուի Արքայակաղնի վանքը, սակայն ինչպէս կ'երեւի չէ կարողացած երկրորդ անգամ հասնիլ իւր նախկին պայծառութեան և փառքին։

Վանքս մեծ հռչակ ստացած է իբրեւ հայկական երաժշտագիտութեան կեդրոն. բազմազան եղանակներով մեղեդիներ և այլ եկեղեցական երգեր հնարուած են Արքայակաղնիի երաժշտագէտներէն և երաժշտահմիներէն։ Այս երգերը յատկապէս կը կոչուին Մանրուամուռնք և Կցուրդք. բազմաթիւ օրինակներ ընդօրինակուած են այդ երգերէն, բոլոր գեղեցիկ գունազոյն ոսկեկար զարդերով, և տարածուած են թէ Կիլիկիոյ և թէ Հայաստանի միւս վանքերը։ Մի և նոյն երգը քանի մը տեսակ եղանակներ ունէր և ամէն եղանակ առանձին անուամբ կը կոչուէր։ Արքայակաղնի վանքի եղանակներու տեսակն կը հասնէր եօթանասունի. մեր այժմեան եկեղեցական երաժշտութեան ւոջ անոնցմէ հազիւ մէկ քանին մնացած են։ — Սիսուան, 253–254։

ԱՐՔԱՅԻՑ ԴԱՒԱՌ. — *Մօկաց աշխարհի գաւառներէն մին։*

ԱՐՔԱՈՒՆԷՐ. *Տես* ՍՈՂՔ։

ԱՐՔԱՎԱՆՔ *կամ* ԱՐԳԱՎԱՆՔ. — *Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի ւոջ։ Բնակիչք Հայք են 60 տուն աւելի, բայց աւարառութեանց և թշուառութեանց են թիակայ։*

ԱՐՔԵՎԱՆ. — *Հայանուն՝ բայց թաթարաբնակ (200 տուն) գիւղ Բագուայ կուսակալութեան ւոջ։ — Այս անուամբ գիւղ մ'ալ կայ Վրաստանի ւոջ։*

ԱՐՔՈՑ. *Տես* ՀԱՐԱՆՑ և ԱՂԱՀԷՆՔ։

ԱՐՔՈՑԿԱ. *Տես* ՁԱՀՈՒԿ։

ԱՐՔՈՒՆԱԳՆԵՑ. — *Աւան Սիւնեաց Աղահէնք գաւառի ւոջ, զոր յիշէ Կաղանկատուացի (Գ. Ի) վկայ ասոիկանին արշաւանքը պատմած ժամանակ։ Գիւղիս եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր։*

ԱՐՔՈՒՆԱՇԵՆ. — *Հին Գիւղ Գաւազրաց. Զորափոր գաւառի ւոջ։ Հայրենիք՝ Սահակ Գ կաթողիկոսի։*

ԱՐՔՈՒՆԻ. — *Գիւղ կարնոյ (Բարձր Հայք). ունի 25 տուն հայ, և Ս. Յակոբ եկեղեցի մը։*

ԱՐՔՈՒՆԻՍ. — *Գիւղ Օլթիի (Տայք) գաւառի ւոջ. այժմեան բնակիչք Թուրք են, 51 տուն։*

ԱՐՕՍ. — *Գիւղ Տուրուբերանի Վարաժնունիք (Խնուս) գաւառի ւոջ, 50 տուն բնակչօք, յորոց 10ը Թուրք են և մնացածը Հայ։ Հայք ունին նորաշէն եկեղեցի մը և ծադկոց մը 40–50 ուսանողաց համար։ Ժողովուրդը չերմեռանդ է, և մեծ սէր ունի ուսման և դաստիարակութեան։ Գիւղիս գերեզմանատան ւոջ աւերակ հին եկեղեցի մը կայ, շինուածին խուսկանն անծանօթ է, բայց կը համարուի ԺԱ դարու գործ, ուրոյ շէն եղած ժամանակ, կը պատմուի, թէ գիւղս ունէր 250 տուն հարուստ բնակիչ։ Տապանաքարերը շինուած են ձիու կամ ուղտի կերպարանօք։ Արօսի արեւմտեան հատակողմը երկու բարձրակէզ հեռու լերան մը լանջին ւոջ կայ միակաւոր քարէ փորուած եկեղեցի մը, որոյ արձանագրութիւնք բոլո-*

բովին անբնթեռնելի դարձած են. մէջը ցարդ կան մկրատարանը և խորանը: Կը տեսնուին նաև քանի մը հին խաչեր եկեղեցւոյս պատերու ներսի կողմերուն վրայ: Գիւղիս արեւելեան հարաւակողմն ալ մէկ ժամ հեռու կայ ընծիր քարահանք, որոյ դիւրաւառ քարերէն շինուած են, այժմեան եկեղեցւոյ չորս սիւները 6 մեթր միակտուր բարձրութեամբ: — Նկարագր Ոշկեւորոբիւն, Ա. 28–29:

ԱՐՕՐ. — Միւնեաց վայոց ձոր գաւառի հին գիւղերէն մին:

ԱՐՕՐԱԿ, ԱՐԱԻՐԱԿ կամ ԱՐԱԻՐԱԿԱՑԻՈՑ ՓԱՂԱՔ. — Ի հնումն այս անուամբ քաղաք մը կար Փոքր Հայոց մէջ, Եկեղեաց պաւառի մօտ, ուսկից էր Ս. Եւսթրատիոս, որոյ մարմինը նահատակութենէն վերջ հոս ամփոփեցաւ տապանի մէջ:—Ցայտ. 13 դեկտ:

ԱՑՈՒԵՐՍ. — Պարսկահայոց հին գաւառներէն մին:

ԱԻԱԴ ՎԱՆՔ. Տես ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔ. Վ.:

ԱԻԱԳԱԼ կամ ԱԻԱԳ–ԿԱԼ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի արեւմտեան հարաւակողմը. նշանաւոր մեծութեամբ և բազմամարդութեամբ. Թուրքերէն կը կոչուի Մրխալ կամ Մոռղալ: Բնակիչաց թիւն 3000ի կը հասնի, ունին եկեղեցի մը Ս. Սարգիս:

ԱԻԱԳԱԿԱՆ ԱՂԲԻՒՐ. — Փոքրիկ վտակ Միւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, որ անցնելով Աբկոդն գիւղի հարաւային կողմի դաշտերէն և Մալիշկայի ջրաղացներէն կու գայ Մոզն գիւղը:

ԱԻԱԳԵՆՔ կամ ԵԶԻՏԼԷՐ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունէն երկու ժամ հեռու: Բնակիչաց թիւն 200ի կը հասնի:

ԱԻԱԶԱՆ. Տես ՍՈՂՔ:

ԱԻԱԾ. Տես ԱՐԱԾ:

ԱԻԱՆ. — Նշանաւոր աւան Այրարատայ կոտայք գաւառի մէջ, Երեւանի մօտ արեւելեան հիւսիսային կողմը, Համանուն Աւան կամ Գըրգպուղագ գեաղի եղերքը: Յովհաննէս կաթողիկոսը քաղաքագէտ կոչած է գիւղս: Մովսէս կաթողիկոսի մահէն վերջ, երբ Բագրատունիները վերստին մեր աշխարհը բաժնեցին, և յունական մասին առաջնորդ եղաւ Յովհաննէս Սիւնեցի՝ սա հայրապետական աթոռը հոս հաստատեց և փառաւոր եկեղեցի մը շինեց: Յետոյ պատերազմի ժամանակ փախաւ կարին՝ ուր ուրիշներու հետ գերի բռնուելով տարուեցաւ Ահմատան՝ և հոն մեռաւ 640 թուին ու մարմինը բերին թաղեցին Աւան գիւղը իւրաշէն եկեղեցւոյն մօտ: Նոյն ժամանակներ Աւանայ վանաց երկրն էր Ցուսան կամ Ցուսան անուամբ մէկը, որ գտնուեցաւ Աբրահամ կաթողիկոսի ժողովի մէջ: Գիւղիս մէջ ցարդ կան հին քարաշէն եկեղեցւոյ ապերակներ, և արտաքին որմոյն վրայ 1285 թուականաւ արձանագրութիւն: Այժմեան եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին. բնակչաց թիւն 500ը կ'անցնի: — Այրարատ, 292–3: — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Արագածոտն գաւառի մէջ, որոյ բնակիչք թաթար են:

ԱԻԱՆ–ԱՄՈՒՐ. — Գիւղ Ագուանից Հոդի գաւառի մէջ կոկիսանի ալ ափին վրայ, Վանքաշէնի դիմաց: Դիրքն ամուր, տեսարանն սքանչելի, օդն, կլիման և ջուրը պատուական: Բնակիչաց թիւն 1000ի կը հասնի, ունի նորաշէն եկեղեցի մը Ամենափրկիչ, և միաբանեան ուսումնարան մը որ կը կոչուի Գեորգեան:

ԱԻԱՆԻԿ. — Հին գիւղ Այրարատայ Մազազ–Ոտան գաւառի, որ երբեմն եղած է կալուած Հաւուց Թառայ և ապա թեմ Խոր Վիրապի վանաց:

ԱԻԱՆՁՈՒԿ. — Ըստ Վախուշտի հին գիւղ Գուգարաց Տաշիր գաւառի հիւսիսային կողմը, Բողնոփորի կամ Դմանիսի մէջ:

ԱԻԱՆՑ կամ ԱԻԱՆՍ. — Վասպուրականի Տոսպ գաւառի գիւղերէն առաջինն է, որ Վան քաղաքէն հազիւ $^3/_4$ ժամ հեռու է, ծովեզերքը դէպ ի հիւսիս: Թուրքերը գիւղս կ'անուանեն Իսկեղէ քեօյիւ այսինքն Հաւգատի գիւղ ըստ որում գիւղս է առաջին նաւահանգիստ ոչ միայն Վանայ այլ և ամբողջ Բզնունեաց ծովակին: Դիրքն տափարակ է և տեսարանն հիանալի. ունի պաղատու ծառաստաններ և բաւական թուով մեծամեծ և պատուական խաղողի այգիներ: Գիւղիս սկզբնաւորութիւնը շատ հին լինելու է. Մեծին Ներսէսի պատմութենէն կը տեղեկանանք, որ 360 թուականի ժամանակները, Մեսրոպ երէցի գրածի համեմատ, սուրբ Հայրապետը Վասպուրականի կողմերը

երթալով շատ օրեր կեցեր է այս մեծ և ա-նուանի գիւղաքաղաքս՝ խիստ հաւնելով՝ ասոր ծովահայեաց սքանչելի դրիցը, երկնանման եկեղեցեաց և առողջարար ջերմուն, որ և ամէն մեկնած ժամանակ օրհներ է Աւանս բոլոր իւր սահմաններով ըսելով՝ «Մի նուազ զեսցիս ի բարութենից քոց յաւիտեան»։

Ծովակի կատարի ալիքները երբէք հանդիստ չեն թողուցած գիւղիս բնակիչները, որոնք շարունակ սախպուած են իրենց խեղճ տնակները ծովեզրէն գէպ ի վեր փոխադրել։ Այժմ գրեթէ բոլորովին փոխուած է Աւանց իւր նախկին տեղէն. Ս. Յովհաննիս անուամբ հին եկեղեցին ալ գրեթէ 70 տարի առաջ ծովը իւր մէջն առաւ։ Այժմեան եկեղեցին եւս կը կոչուի Ս. Յովհաննիս՝ որ նախորդ եկեղեցիէն 60–70 մետր հեռու կառուցած են չափաւոր մեծութեամբ և վայելուչ գիրքով. մօտը կայ վարժարան մը, որուն աշակերտաց թիւը կը հասնի 80ի։ Աւանց 300 տուներէն աւելի բնակիչ ունի, ամբողջ Հայ, որք խիստ ճարտար են և ընդհանրապէս կը զբաղին նաւավարութեամբ, երկրագործութեամբ, այգեգործութեամբ և բորակ հանելու արհեստով։ Նաւավարութեան մէջ այնչափ ճարտար են, որ գիշերուան ամենախաւար առեներն անգամ՝ ծովուն վրայ ճամբորդութիւն կ'ընեն առանց կողմնացոյցի։ Վանայ ծովային վաճառականութեան միակ ճանապարհն և դուռն լինելով՝ աշխոյժ և շարժուն վիճակ մ'ունի։ Բորակագործները ծովակի մակերեւութէն աւելի ցած ածուներու մէջ կ'առնեն ջուրը, ուր արեգական ջերմութեամբ չրային մասունքն գոլորշիանալով 120 օր վերջը, ածուներուն երեսը կը մնայ 3–5 մատ թանձրութեամբ ծովային ագը կամ բորակը։ Այս բորակը ապա սղոցով քառակուսի կտորներու վերածելով վաճառելու կը դրկեն ի վան, Բաղէշ, Սղերդ և մինչեւ Պարսկաստան։ — Արժուն վասպուրականի, 262–264։ Նկատագր. Ոզեւորութիւն, Բ. 202–212։

ԱԻԱՐԱԳԵՏՔ. Տես ԲԱՂՔ։

ԱԻԱՐԱԿ. — Հին գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ։

ԱԻԱՐԱՅՐ. — Հռչակաւոր և պատմական դաշտ Վասպուրականի Արտազ գաւառի մէջ, որոյ վրայ կատարուեցաւ Վարդանանց մեծ պատերազմը։ Նոյն գաւառի մէջ էր նաև համանուն Աւարայր գիւղը, Տմոնաց գետի մօտ, զոր կը յիշեն մեր պատմիչները։ Ընդարձակ քննական յօդուածներ գրուած են Աւարայրի վրայ զանազան անգամներ ազգային թերթերու մէջ։ — Ստորգր. հին Հայ. 205։ Հիւսուածք, Գ. 117–121։ Արտատ ամսագիր. Ե. 423–6, 463–470. Զ. 185–188։ եւ այլն։

ԱԻԱՐԻՍ. — կը յիշուի Մոկաց մէջ։

ԱԻԵԼՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. Տես ԱՎԵԼՈՒ։

ԱԻԵՍՈՐ. Տես ԱԻԻՍԱՍ։

ԱԻԵՏԱՐԱՆՈՑ ԱԻԱՆ. — Գիւղաքաղաք Արցախի Վարանդա գաւառի մէջ, Շուշիէն հեռու է 17 վերստ. այլազգիք Զաւախլի կը կոչեն։ Կառուցուած է Քեօնդալան ձորի ձախ եզերքի վրայ, արեւելահայեաց գիրքով. օդն, կլիման և ջուրն պատուական են։ Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին, կառուցուած է չորս սիւներու վրայ՝ փոքրիկ կաթուղիկէով. գրան ճակատի քարին վրայ կայ «Թվ. ՌՃ.»։ Եկեղեցւոյս մէջ կան երկու արձանագրութիւն, մին ՌՃի (= 1671), և միւսն ՌՃՂ (= 1659) թուին գրուած Քահանայ գիւղի մէջ։ Բնակչաց թիւն է 1822 հոգի, բաժնուած 265 տան, որոնք կահաւորուած են մեծաւ մասամբ գեղեցիկ և եւրոպական ճաշակով։ Խանութներէն շինուած են վայելուչ. կան նաև երեք մետաքսի գործարաններ։ Բնակիչք կը պարապին երկրագործութեամբ, անասնապահութեամբ, այգեգործութեամբ և առեւտրով. գիւղաքաղաքիս մօտ կը գտնուի Կուսանաց Աչապատր (Տես ի կարգին) և հին մէկիքներու մի քանի պարարանքներ, որոց սմանք կործանած են։ Արեւմտեան հարաւային կողմն է հին գերեզմանատունը ուր կան բազմաթիւ ուշագրաւ թեան արժանի քանդակազարդ տապանաքարեր։ — Արցախ 94–95։ Վարանդա, 31–33։

ԱԻԵՏԵԱՑ ԲԼՈՒՐ. Տես ԱՐԵՒՈՑ ԱԼՈՒՐ։

ԱԻԵՏԵԱՑ ԹԱՂ. — Այս անուամբ տեղ մը կը յիշուի Այրարատայ Ծաղկոտն (Տիատին) գաւառի մէջ, ուր ըստ Ցայսմաւուրքաց (27 օգոստ) երեւցած է Քրիստոս սրբոց Սուքիասանց։

ԱԻԵՐ ՎԱՆՔ. — Վասպուրականի Արճէ-

շակովիա գաւառի մէջ, Աբեղչէն ժամ մը հեռու, ոյոյ եկեղեցին կանգուն է և շինուած է ՊՂԱ (= 1442) թուին, ինչպէս կը ցուցնէ արձանագրութիւնը։

ԱԽԵՐ ՔԱՂԱՔ. — Այսպէս կը կոչուին հին Աբծն քաղաքի աւերակները։

ԱԽԵՐԱԿ. — Հայաբնակ գիւղ Վասպուրականի Տոսբ գաւառի մէջ, Վանայ շրջակայքը։ Բնակիչք 100 տուն. ունին Ս. Աստուածածին քարաշէն եկեղեցի մը։

ԱԽԵՐԱԿԻ կամ ԷՎԼԻԼԿ. — Գիւղ Բաբերդի (Բարձր Հայք). վերջին դէպքերէն առաջ ունէր 82 տուն հայ բնակիչներ և 2 եկեղեցի։

ԱԽԵՐԱԿԻ. Տես ՁԱՀՈՒԿ։

ԱԽԵՐՔ. Տես ԲԱՂՔ։

ԱԽԶԱՂԲԻՒՐ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, 100 տնէն աւելի բնակիչ ունի։ — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ նոյն գաւառի մէջ։

ԱԽԶՈՒՏ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, 40 տուն հայ բնակչօք, կան նաև 16 տուն քուրդ։ Գիւղէս կէս ժամ հեռու բլրակի մը վրայ կայ եկեղեցի մը, որոյ պիմաց Աւգաքիմ անուամբ անցք մը կայ։

ԱԽՃՈՒՐԻԿ. — Գիւղ Խորխոռունեաց գաւառի մէջ, Սիփան լերան հիւսիսային ստորոտին կողմը։

ԱԽՇ. — Հին գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի, զոր 1261 թուին Լիպարտի որդին Սմբատ՝ Աղուպատ գիւղի հետ նուիրեց Ներսեհանից։ Այժմ Թաթարաբնակ է և կը կոչուի Հաւուշ կամ Ավուշ։

ԱԽՐՆԴԱՆՔ. — Գիւղ Մոկը Առանձնակ գաւառի մէջ, Ապարանից ութսի մօտ, որուն եկեղեցին, շարականի մը յիշատակարանին համեմատ, նուիրուած էր սրբոցն Պետրոսի Պօղոսի և Գէորգայ զօրավարի։

ԱԽՐՆԿԱՑ. Տես ԱԽՆԻԿ։

ԱԽԹԱՄՆԱ. — Վանք Տիվրիկոյ գաւառի մէջ։ 1348 թուականաւ յիշատակարանի մը մէջ կը յիշուի վանացս եկեղեցին Ս. Աստուածածնի անուամբ։

ԱԽԻՃԻՆ. — ԱՂՀԷՃԻ։

ԱԽԻՍԱՍ կամ ԱԽԵՍՈՐ. — Շնքուշի վանաց առաջնորդ կը գրուի 1703ին Աբհասացի կամ Աբեսորեցի եղիազար անուն վարպապետ մը։

ԱԽԼԱՏ. — Հին գիւղ և գետ Գուգարաց Թոռեղբ գաւառի մէջ։

ԱԽԼՈՒ կամ ԱԽԼՈՑ. — Գիւղ Վարին կեղիի։

ԱԽԿԱՄԻ կամ ՕԿԱԽԻՄԻ. — Բազմամարդ տան Աչրարատայ Բասեն գաւառի մէջ, Ծիրանիս լերան ստորոտը, զոր կը յիշէ Լասախվերացին (Գէ. ԺԲ). այժմ կը կոչուի Ոկամի։

ԱԽԿԱՐՄ. — Գիւղ Սատոյ։

ԱԽՆԻԿ կամ ԱԽՐՆԿԱՑ ԳԵՕՂ. — Այրարատայ Հաւնունեաց գաւառի իշխանանիստ վայրն է, որոյ այժմեան բնակիչք մահմետականք են և կը թուին սերունդք Հայոց։ Ամբողջ գիւղը ձեւացած է 60 կէս ստորերկրեայ տներէ։ — Աւնիկ որ ըստ Թուրքաց ձիվան գալէսի կը կոչուի գիւղիս մօտ բարձր ապառաժի վրայ գտնուած հին ամրոց մ'է։ — Ն. Հայս. 89։ Ստեր. հին Հայս. 386։

ԱԽՇԱԿԱՆ. Տես ՕՇԱԿԱՆ։

ԱԽՇԱՐԱՆ Տես ԲԱԳԱՒԱՆ։

ԱԽՇԷՆ. — Այլ կերպ գրուած Աչէնի, զոր տես ի կարգին։

ԱԽՍԻ. — Գիւղ Աղբակ գաւառի, ուր Ս. Խաչի վանքի մէջ կը թագուի Վասպուրականի Աշոտ իշխանը ՅԻԵ թուին։

ԱԽՍԻԴ. Տես ԹԼԿՈՒՐԱՆ։

ԱՒՍՏՐԻԱ. Գրմ. OSTERREICH. Գղ. AUTRICHE. Իտ. AUSTRIA. — Եւրոպիոյ գլխաւոր տէրութիւն, որ Հունգարիոյ հետ միացած կը ձեւացնէ կայսրութիւն մը, որոյ մայրաքաղաքն է Վիեննա։ Լեան Մեծագործի օրով կը յիշուի նաև Աւստրիոյ դքսին դեսպանը ի Կիլիկիա, բայց յայտնի չէ վաճառականութեան թէ ուրիշ գործի համար. նոյնպէս յայտնի չէ միջին դարուց մէջ Հայոց Աւստրիացւոց հետ վերաբերութիւն ունենալն. բայց անտարակոյս Լեհահայոց վաճառականները վերաբերութիւն ունեցած են Աւստրիոյ հետ։ Շահաբասի ժամանակ սկսած են Ջուլայեցիք երթեւեկել. ինչպէս 1715ին Յովհ. որդի Աւետեաց Վենետիկէն հոն կ'երթար, և ազգայիններէն ոմանք երբեմնուրեմն նոտարի դիմաց կը վկայեն թէ բարի և ուղղափառ քրիստոնեայ է նա։ Նոյն դարու վերջերը և ԺԸի սկիզբը Ներսես անունով հայ քահանայ մը կայսեր շատ հաճոյանալով անոր դրան երեց-

ներուն կարգը անցած էր։ Նոյն ժամանակները հոս կը գտնուէր նաև Տէր Յովհաննէս անունով քահանայ մը, որ 1719 թուին 114 տարեկան լինելին կը վկայուի։ Անկէց վերջ սակաւ կը յիշուին հայ երիցուներ Վիեննայի մէջ, Տէր Մինաս 1729ին, Տէր Մաւուռէլ Բէֆիցի, † 1740, Բարդողիմէոս վարդապետ 1733. Բարսղղաց կարգէն Հ. Դաւիդ, 1737. և այլն։ Այս միջոցիս վաճառականներէն համար ոչ սակաւ Հայք Վիեննայի մէջ հաստատուելով, քաղաքին արքեպիսկոպոսը իրենց սաղմոս մը տուաւ 1752ին, Ս. Աստուածածնայ մայր եկեղեցւոյն մօտ։ Այս ժամանակի մէջ եղած հայերէն յիշենք մի քանին. Առաքել սուրհանդակ (courier), Մարգար Ղահվեճի (1737–51), Յարութիւն Պարսկահայ ակնաւաճառներու մուհեհիկ (1749), Օգոստինիոս Աղամալեան արքունի թարգման։ Հայերը 1771ին Աւստրիոյ կայսրէն առանձին հրովարտակ սացան Վիեննայի մէջ վաճառականութիւն ընելու համար։ Հայոց պետաւոր առեւտուրը կամ արուեստն էր ոսկերչութիւն և ակնաւաճառութիւն, ինչպէս է նաև այժմ։ Նշանաւոր է Վիեննայի մէջ Մխիթարեան Հարց մեծ ապագրատունը, ուր տպուած են և կը տպուին ոչ միայն ազգային բազմաթիւն գրքեր, այլ և օտարազգի գրքեր և թերթեր։ Մխիթարեան Հարց միաստանը որ Թրիեստէն փոխադրուած է ատա ՃԹ դարու սկիզբը, կը կոչուի Պաշտպան Ս. Աստուածածնի։ Բայց ի տպարանէ անուանի է ձեռագրատունը, գրատունը, և հին գրամց հաւաքածոյն։—Թրիեստ կամ Տրիեստ քաղաքն որ Աւստրիոյ կայսրութեան առաջին ծովային քաղաքն է, ասպնջական եղաւ նաև հայ վաճառականաց թէ՛ անցեալ և թէ՛ ներկայ դարուս մէջ։ Մխիթարեանք հոն բնակելէն առաջ (1775), մայր եկեղեցւոյն (Ս. Յուստոս) մէջ թագուած են կաթուղիկէ եպիսկոպոս Բաղիշոյ (1756) սուրբ վարքով և մեծ համբաւով, նոյնպէս Յարութիւն Բանեցի (1796)։ Այժմ ևս քաղաքիս մէջ կան բաց ի մի քանի հայ վաճառականներէ և ընտանիքներէ, մի քանի Հայոց խաչատրեան սեռունդներ, որոց մէջ նշանաւոր է Հերմենեգիլդ Թեանց տունը, որ պատուաւոր է նաև քաղաքական պաշտօններով։ — Միսակաև, 451–2։

ԱԻՏԻ. Տես ՈՒՏԻ։

ԱԻՏՈՒՈՆ. Տես ԲԱՂՔ։

ԱԻՏՈՊ. — Գիւղ Տայոց Պարախզայփոր (Ալթի) գաւառի մէջ. բնակիչք թուրք են։

ԱԻՐԱՆ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտին մէջ. 150 տնէն աւելի հայ բնակիչ ունի։

ԱՓԱՏԱՐ. Տես ԴԵՂԱՐՔՈՒՆԻՔ։

ԱՓԿԻՆ կամ ԱՓԿԻՍ. Տես ԱՐԵՒԻՔ։

ԱՓՆԱԳԵՂ կամ ԱՒՆԱԳԵՂ. — Գիւղ Այրարատայ Նիգ գաւառի մէջ, Քասաղ գետոյն եզերքը, Պազարճուխ գիւղի արեւելեան կողմը, երեք մղոն հեռաւորութեամբ։ Գիւղիս մօտ Տալու գետակը կը խառնուի Քասաղի հետ։ Զաքարիա պատմիչ և Սիմէոն կաթողիկոս կը գրեն Աբնագեօղ։ Ունի 111 տուն հայ բնակիչ, 866 հոգի։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։

ԱՓՇԵՐՈՆ. Տես ԲԱԳԱՒԱՆ։

ԱՔԱՆՔ. — Կը յիշուի Սիսիանոյ մէջ։

ԱՔԱՂԱՑՈՒ ԿԱՏԱՐ. — Այս անուամբ բլուր մը կը յիշէ Թ. Արծրունին (242)։

ԱՔՈՒՆԻՍ. — Գաւաշի կամ Նօրաբզի մէջ։ Տեղեկութիւնք կը պակսին։

ԱՔՈՒՈՒԱՈ. — Այսպէս կը կոչէ Թուռնըֆոր Ալկոսի գիւղը։

ԱՔ–ՊՈՒՂԱՂ, կամ ԱՂ–ԲՈՒՂԱՂ. — Փոքրիկ հայաբնակ գիւղ Ագուանից Կոկիսոն գաւառի մէջ։ Օդն, կլիման և ջուրը վատառողջ։ Բնակչաց թիւն է 120, որք գաղթած են Ագցաիի և Սիւնեաց մի քանի գիւղերէն։ Եկեղեցին նուիրուած է Ս. Մեսրոպի։

ԱՔ–ՓԻԼԱՔԵԱՆ. — Գիւղ Ագուանից Խեղնի գաւառի մէջ, շինուած է Պօզ–տաղի լեռնաշղթայի վրայ. տեսարանն հիանալի, օդն, կլիման և ջուրն պատուական։ Բնակչաց թիւն է 460, որոց նախնիք գաղթած են Ջրաբերդի, Խաչէնի և Խոյի գաւառներէն։ Եկեղեցին կը կոչուի Ս. Մինաս։ Գիւղիս աբեւմտեան կողմերը, իբարու մօտ կան մի քանի գիւղատեղիք և աւերակ եկեղեցիներ ու հանդապարաններ։—Ագռաւանք, 231։

ԱՖԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. Տես ԳԱՐԱՀԻՍԱՐ։

Բ

ԲԱԲԱՆՔ կամ ԲԱԲՈՒՆՔ. Տես ՁԱՀՈՒԿ։

ԲԱԲԱՋԱՆ. — Գիւղ Գուգարաց Զորափոր գաւառի մէջ։

ԲԱԲԱՏՈՒԼԱ. Տես ՊԱՊԱՏՕԼ։


ԲԱԲԱՓԻՇԻ կամ ՊԱՊԱՓԻՇԻ. — Գիւղ Այրարատայ վարչժնունիք գաւառի մէջ, վտակի մը եզերքը. 65 տուն հայ բնակչօք, որք ունին Ս. Յովհաննէս եկեղեցի մը։ — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Նիգ գաւառի մէջ, որոյ բնակիչք Թաթար են 68 տուն։

ԲԱԲԵՐԴ, ԲԱՅԲԵՐԴ կամ ՊԱՅՊՈՒՐԹ. BAÏBOURT. Թ. بايبورت. Յն. Παΐπερτε կամ Βαϊβερδων. — Ի հնումն նշանաւոր բերդաքաղաք Հայաստանեաց, և այժմ գլխաւոր քաղաք կամ աւան համանուն գաւառակին։ կառուցուած է Սևաւ ծովէն 5040′ բարձր բլրակաձեւ դաշտավայրի մը վրայ. արեւելեան և արեւմտեան կողմերէն պարսպակալ է ցած լեռներով, իսկ հիւսիսային կողմը արձանացած է բարձր քարալեռ մը՝ երկննալով արեւմուտք արեւելք. միայն հարաւային կողմը ազատ և հարթ է, ուսկից կ'երթըցուի կարին՝ որ կ'ընկնայ քաղաքիս արեւելեան հարաւային կողմը 121 հգմ. հեռաւորութեամբ։ Տեղւոյս դիրքը, անունը և մերձակայ բովուց սահմանները կարծել կու տան թէ Հայոց հնագոյն քաղաքներէն մին լինի ան, և թերևս շինուած լինի Հայկազն Եբուանդեան Տիգրանի Բար որդիէն, կամ չատ ևս Բայ անուամբ մէկէ մը, վասն զի հնագոյնները Բաբերդ կ'անուանեն. ասանդութիւն մ'ալ կայ, թէ Մկիւթացիք շինած են Մեծին Աղեքսանդրի ժամանակ։

Մեր հին պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Ա դարու վերջերը Երուանդայ օրերը, նոյն առիթները Մմբատ Բիւրատեան քաջը «... գերկուս զաներս իւր՝ զՄմբատանոյշ և զՄմբատուհի նուաստացանէ ի Բայբերդի, արս քաջս Թոզլով ի վերայ ամրոցին։ ... Առաքէ Երուանդ և սատակէ զքաջսն ի Բայբերդի, գերեալ զզաներսն Մմբատայ՝ պահէ յամրոցին Անի ոչ վատթարապէս»։ Խոր. Բ. Լ, ԼՀ։ Ասկից կ'երեւի թէ ժամանակին ամուր բերդերէն մին է եղեր։ կը կարծուի, թէ Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ բնակող Բագրատունեաց բերդաքաղաքներեն մին ալ Բայբերդ եղած ըլլայ։ Ասկից ետքը Բագրատունեաց ատենները ալ ոչինչ կը յիշուի Բայբերդէն։ ԺԱ դարու կիսուն Տուղրիլի զօրքերը Թագատեաց աշխարհի վրայ արշաւած ժամանակ, եկան նաեւ մինչեւ բերդաքաղաքիս մօտ, բայց «... հանդիպեալ անդ գունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փռանկք, որք յանդգնեալ միանգամ ի գիմի հարեալք ճակատեցան. և յաղթահարեցին Աստուծոյ զօրացան գունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զդլուխ զօրուն սպանին և զրազումն բնդ նմա, և

զայլն ի փախուստ դարձուցեալ, զառ և զզերի զամենայն Թաթենին». Լատտ. 65. սակայն այս դէպքէն քիչ վերջը, կը թուի թէ դարձեալ այլազգիք վրէժխնդրութեամբ յարձակելով քաղաքիս վրայ, տիրած են և ժէջը իշխանութեան աթոռ հաստատած։ Ի՛ր դարու վերջերը կը յիշուի Բաբերդի Հայ ոէիսը Աստուածատուր անունով բարեպաշտ մէկը, որ զրել տուած է Մշոյ Առաքելոց վանքի մէջ պահուած մեծ և ոսուար տօնականը կամ ճառընտիրը։ Նոյն անձը ԺԴ ուրիշ վէնեակեցի ճանապարհորդ մը՝ ձէմէլլի, Բաբերդէն անցաւ։

Հինաւուրց բերդն կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը բզգաձեւ քարալերան մը գագաթան վրայ, որ երեք կողմանէ անմատոյց է։ Շրջապատուած է կրկին պարիսպներով, որոնց հիմունքը ձգուած են քարալերան անհարթութեան համեմատ տեղ մը բարձր, տեղ մը ցած և նեղ ու դուրս. այդ պարիսպները 1828ին Ռուսաց յարձակման ժամանակ մեծաւ մասամբ կործանեցան, և



171. Բաբերդ։

դարու սկիզբը անիրաւ տեղը սպանուեցաւ քաղաքիս Ալտատին ամիրային։ 1307ին Սսոյ ժողովքին ժէջ կը յիշուի քաղաքիս առաջնորդ եպիսկոպոս մին Յահակ։ ԺԴ դարու սկիզբը Բաբերդէն անցաւ Վենեակեցի Մարկոս Պողոսը՝ որ և կը յիշէ քաղաքին հիւսիսային արեւմտեան կողմը, կիւմիւշխանէի ճանապարհի վրայ գտնուող արծաթահանքը։ Ցաջորդ դարու ժէջ 1474ին անցաւ վերնոյն հայրենակից Յովհէի Պարպարոյ, որ քաղաքին ամրութիւնը կը գովէ և ժէջը 1500 տուն կը հաշուէ։ ԺԷ դարու վերջերն ալ այժմ քայքայեալ վիճակի ժէջ են։ Նոյն յարձակման ժէջոց ներքնապարսպի ժէջ գրաւուած տուներն ամբողջապէս քանդուեցան և կործանեցան, և այժմ բերդը անբնակ է և պահապան անգամ չունի։ Կ՚ըսուի թէ 1828ին Ռուսները Բերդի պահարանները ժիայն ժէջէն հանած են շատ գէնքեր, կահեր և արծաթեայ որոցան մը։

Բերդի ժէջ քովէ քով կան երկու ջրամբարներ կամ քարափոր ջուր բերելու ճանապարհներ. ասոնց շինուածքն և ձեւն նման են Եւսկիոյ և Ամասիոյ ջրամբարներուն,

ատ ի շեղ ուղղաձեւ փորուած մինչեւ գետ-
եղերքը. ասոնք եւս խանդարուած և քայ-
քայուած են: Բերդի արտաքին պատի մէջ և
ձախ կողմերը կան ուժեղ և ընձեւ ան-
արուեստ բարձրաքանդակ պատկերներ, և շատ
մը արաբացի արձանագրութիւններ թէ՛ պըր-
նեռու և թէ ներքնապարսպի վրայ, որոց մէջ
կը կարդացուի Ղլիճ Ալպանի անունը: Բայց
բերդին շինուածոց մէջ կը տեսնուին նաեւ
յունական ձեռաց մնացորդներ, ինչպէս հին
կործանեալ եկեղեցի մը, և յունարէն եպ-
ծուած արձանագրութիւն մը. ուրիշ անեղծ
արձանագրութիւն մ՚ալ Եւրոպացիք վերցու-
ցած տարած են:

Ճորոխ գետը կ՚անցնի քաղաքիս մէջէն
հարաւէն դէպ ի հիւսիս և երկու մասերու
կը բաժնէ զայն, որք իրարու հետ կապուած
են 3—4 կամուրջներով: Գետս իւր ընթաց-
քին մէջ ունեցած երբեմն ազմկալից շա-
ռաչման համար, բնակիչներէն կը կոչուի
Տէվի (Ճիմար) Ճորոխ, որ քաղաքիս ա-
ռաջին բնական զարդն է: Իւր երկու կողմը
բաւական ընդարձակութեամբ ծառազարդ
պարտէզներ, եզերքներուն վրայ եւս կարգաւ
ծառեր տնկուած են: Տեղւոյս բոլոր ջրա-
զացները կը գառնան գետոյս երազրնթաց
ջրերով. Ճորոխի վրայով անառաներէն կը-
արուած փայտերը կը բերեն Բաբերդ: Գե-
տային ճանապարհով քաղաքս միացած է
Թուսաստանի Պաթում քաղաքի հետ, որմէ
հեռու է զրեթէ 126 հղմ: Հակառակ իւր
այս համեմատաբար նպաստաւոր դիրք, որով
մէկ կողմանէ ցամաքային ճանապարհով կը
միանայ Տրապիզոնի, Կարնոյ և Պարսկաս-
տանի հետ, և միւս կողմանէ Թուսիոյ հետ,
այսօրուան օրս Բաբերդ այն ասպիճանի
ծաղկած չէ ինչպէս երբեմն: Սակայն իւր
շրջակայից երկրագործական արդիւնաբերու-
թիւնք խիստ առատ և նշանաւոր են. ընտիր
են արմտիքն՝ ընդեղէններ, պտուղներ, ձի,
արջառ, ոչխար, և այլն: Բաբերդ արհեստ-
ներու մէջ եւս իւր լաւ համբաւն պահած է
տակաւին: Մէկ խօսքով, թէ և իւր նախկին
մեծութենէն ինկած կ՚երեւի, բայց ապա-
գային մէջ անտարակոյս պիտի առնոյ ա-
ւելի նոր փայլ մը և վաճառականական ծայ-
կած վիճակ մը:

*Բաբերդ քաղաքի բնակչաց թիւն որոշ
չենք գիտեր, բայց յայտնի է որ բազմութեան
կողմանէ առաջ են Մահմէտականք, յետոյ
Հայք և ի վերջոյ Ցոյնք: Իսկ համանուն
գաւառակի բնակիչք ըստ Վ. Քինէի կը հա-
շուին 58313 հոգի, հետեւեալ կերպով բաժ-
նուած.*

Մահմէտականք	. . 46812	հոգի
Հայք	. . . 10579	»
Ցոյնք	. . . 589	»
Ալեւայլք	. . . 333	»
Գումարն…	58313	հոգի:

*Քաղաքին տները մեծաւ մասամբ միայարկ
են, ընդհանրապէս անշուք և ողորմելի տես-
քով և հողայարկ. գետին եզերքներէն եր-
թալով կը բարձրանան մինչեւ լերանց սոռ-
րոտը և նոյն իսկ անոնց բարձրութեան կէսը
կը հասնին: Այս պատճառով տուներէն շա-
տերը մէկ կամ երկու կողմերէն խրած են
հողի մէջ և տանիքները հաւասարած են
բլրոյն: Քաղաքի մէջ կայ կառավարչի (միւ-
թէսարըֆ) պալատը, զօրանոց, բանտ, 3
բաղնիք, 15 հասարակաց աղբիւրներ, 481
կրպակ և վաճառատունք, 40 խան, 177
ցորենի ջրաղացք, 3 կառւատի հնձան, 19
փուռ, 1 կաշեգործարան, 2 ոճառի, 1 ներկի
և 1 մոմի գործարաններ: Նշանաւոր է հոյա-
կապ և քառագմբէթ պեզեստէնը, բայց ներսը
խիստ մթին է և աղտեղի: Մզկիթներէն
հնագոյնը և գլխաւորը Ույուճամի, հին ժա-
մանակ եկեղեցի եղած է: Հայոց եկեղեցի-
ները թուով չորս են՝ Ս. Աստուածածին,
Հրեշտակապետք, Աստուածամայր և Ս. Յով-
հաննէս: Առաջին երկուքը կը յիշուին ժէ դա-
րու սկիզբը գրոց յիշատակարանաց մէջ:
Ս. Աստուածածնի եկեղեցին՝ 1848 թուին
գեղեցիկ ձեւով մը նորոգուած է Կիւրինցի
կարապետ վարպետի առաջնորդութեան
օրովը, տեղացի Տէր Յովհաննէս աւագ քա-
հանայի աշակցութեամբ: Միւս եկեղեցինե-
րը ներքուստ մթին են և արտաքին երեւոյթ-
նէն ալ խեղճ: Ժողովուրդը եկեղեցիներու
թուով թաղերու բաժնուած են. ունին արա-
կան և իգական սեռի յատուկ մէկ մէկ վար-
ժարան: Քաղաքին արեւելակողմը բարձր
կրից վրայ տարածուած է Հայոց ընդարձակ*

գերեզմանատունը, ուր կան մինչեւ ՊԶԶ (= 1437) թուականաւ արձանագրութիւնք։ Իսկ արեւմտեան կողմը գաշտավայրի վրայ կան Թրքաց երկու ուխտական շիրիմներ, մին բոլորշի բարձր պատուհանով և կործանած գմբէթով և միւսն բազմանկիւն՝ և մէջը կայ պաղպաղեայ երկայն գերեզման։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԲԱԲԵՐԴԻ

ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԻՑ

ԱՆՈՒՆԱՆՔ ԳԻՒՂԻՑ	Տուն	Եկեղեցի
Լուսհոնք	130	2
Վարդուհան	115	2
Չրկի	56	2
Բլբակ	65	1
Քարաւերակ	150	2
Ահիճկայ	30	1
Խոփաւոլ կամ Խուփա	80	1
Կիւ	43	1
Քանթիա	200	2
Ակմչկա	20	1
Բաւմէլի կամ Աւռաւմէլի	30	1
Մալատա	60	1
Խայեկ կամ Կէյիք	50	2
Գումիա, Թումիան	37	1
Բընջրկա	15	1
Օձաեզ	30	1
Պալախաւռ	90	2
Ս. Թորոս	62	1
Բլուր	112	1
Չինաէ	63	2
Աւերակ կամ Էվէրէկ	82	2
Սղրճի	30	1
Զահմանց կամ Զահմանս	55	1
Նիւ	50	1
Վէրի Քրղի կամ Կռզի	30	1
Վարի Քրղի »	20	—
Սարաճըք	10	1
Խընձաւերակ	12	—
Ռուշախ	28	1
Քիսախսի	5	—
ԳՈՒՄԱՐՆ	1760	36

Բաբերդի գաւառակն կ'ինկնայ կարնոյ կուսակալութեան տակ, և ունի 186 գիւղեր, յորս պլխաւորաբար 30ը հայաբնակ են, ո՛րոնք վերջին դէպքերու ժամանակ մեծապէս վնասուեցան, քաղաքն եւս իր վնասներն և զոհերն ունեցաւ։

Երկրագործութիւն. — Բաբերդի և իր բոլոր գիւղերու պլխաւոր բերքերն են, արմտիք, կաւաւատ, լուբիա, սիսեռ, ոսխ, կամդամբ, շողգամ և ամէն տեսակ պաուղներ, յորս ընտիր և առատ են տանձ, կեռաս, խաղող և թուզ։ Գաւառակս Սպերու հետ միասին ունի 27000 փեթակ, որոնց մեղրը մեծաւ մասամբ կը սպասեն կարնոյ կուսակալութեան մէջ, և մոմը եկեղեցիներու և մկիներու հարկաւոր եղածին չափ առնելէն վերջ, մնացածը Տրապիզոնի ճամբով կը ղրկեն Գաղղիա։

Անասունք. — Գարձեալ Բաբերդի և Սպերու գաւառակներու մէջ կը մնուցանեն բազմաթիւ ընտանի անասուններ, որոնց ամբողջական թիւն կրնր հաշուով կը հասնի 380 000ի։ Արջառոց ցեղէն 60000էն աւելի, ոչխարներու տեսակէն 310 000էն աւելի, ձիոց տեսակէն մօտ 6000 և իշոց տեսակն 2600ը կ'անցնի։

Ձարտարարուեստք. — Բաբերդի մէջ և շրջակաները կը գործեն մեսաքսէ և ոսկեթել գեղեցիկ գործեր, որոնք շատ յարգի են։ Ունեանի են գաւառակիս դիմագործները, իրենց շինած ամէն տեսակ կաւամրելագործուած զէնքերով։ Դանակագործութիւն, թամբագործութիւն և ամէնէն աւելի պղնձագործութիւնը, լաւ գործուածայ և շահաբեր վիճակի մէջ են, և իրենց արտադրած ապրանքներն կը վաճառուին։ Բաբերդի մէջ կարուած կօշիկներն և մուճակներն մեծ համբաւ ունին բոլոր կուսակալութեան և մերձակայ քնակչաց մէջ։ Երկաթագործները կաւարելագէս կ'աշխատին թէ՛ երկաթի և թէ ուրիշ տեսակ մետաղաց վրայ։ Ոսկերիչներն և գոհարավաճառներն կը շինեն արծաթէ, վրան տեսակ կիսաւոյներով զարդարուած, ամէն տեսակ իրեղէններ, այս արհեստով կը զբաղին միայն Հայք, և իրենք զարդացուցած են, թէ՛ Թուրքիոյ գանազան քաղաքաց և թէ Ռուսիոյ և Վրաստանի մէջ։

Բաբերդը տարին մէկ անգամ մայիս և յունիս ամիսներու մէջ տօնավաճառ ունի, որ առաջ հինգ վեց շաբաթ և այժմ 15 օր կը տեւէ։ Այդ աւուրց մէջ բոլոր գիւղացիք տեսակ տեսակ վաճառքներով քաղաք կը թափին և Բաբերդը աւելի շարժուն և կենդանի դիրք մը կ'առնու։ — Տեղագր. Հայաստ. 68–70։ Ձնպրն. Բաբ. 212–214։ Նկրգր.

Ուղեւորութիւն, Ա. 11–14։ Վ. Քինէ, Ա. 222–226։ Եւ այլն։

ԲԱԲԵՐԴ. — *Հին Գիւղ Սերաստիոյ. կը յիշուի 1570ին գրուած Մաշխոցի մը յիշատակարանին մէջ։*

ԲԱԲԵՐՅԻԲ. — *Հին Գիւղ Եկեղեաց (Բարձր Հայք) գաւառի. կը յիշուի գարձեալ ձեռագրի մը յիշատակարանին մէջ։*

ԲԱԲԻՐՍԱ. Յն. Βαβυρσα. — *Այս անուամբ ձակ հողեր սակայն երկիր մշակելու համար բաւական կենդանիներ չունենալով՝ գրեթէ երկրագործութիւնը թողած են։ Գիւղիս արեւմտեան կողմը շինուած է հոյակապ եկեղեցի մը Ս. Յարութիւն անուամբ. իսկ արեւելեան կողմը մարգագետիններու մէջ, ուր ուրեք ծառերու մէջէն կը հոսի զով աղբիւր մը որոյ քով կայ մատուռ մը՝ զոր գիւղացիք Լուսաւորիչ Ս. Սահակ կը կոչեն, ուր*



172. *Բաբերդի ուրիշ տեսարան մը։*

ամրոց մը կը յիշէ Սարաբան Աչրարատայ Մաղազ–Ոստան գաւառի մէջ, Արտաշատայ հիւսիսային կողմը։ Ամրոցիս մէջ կը պահուէին Տիգրան Բ ի գանձերը։

ԲԱԲԵՆԷՆ կամ ՓԱՓԵՆԷՆ. — *Գիւղ Ագձենեաց Սալնաձոր գաւառի, Բաղիշոյ հիւսիսային կողմը, 2 ժամ թախսէֆ գիւղէն հեռու գէպի հարաւային արեւմուտք։ Ունի 40 տուն հայ բնակիչ, որոնք ընդհանրապէս բրուտութեամբ կ'զբաղին. թէև ունին ընդարձակ հողեր սակայն երկիր մշակելու համար բաւական կենդանիներ չունենալով՝ գրեթէ երկրագործութիւնը թողած են։ Գիւղիս արեւմտեան կողմը շինուած է հոյակապ եկեղեցի մը Ս. Յարութիւն անուամբ. իսկ արեւելեան կողմը մարգագետիններու մէջ, ուրուեք ծառերու մէջէն կը հոսի զով աղբիւր մը որոյ քով կայ մատուռ մը՝ զոր գիւղացիք Լուսաւորիչ Ս. Սահակ կը կոչեն, ուր շարունակ աչաց ցաւ ունեցողները կը յաճախեն և իրենց բարեպաշտութեամբ շատ անգամ բժշկութիւն կը գտնեն։ Բաբշէնի մօտ կայ մեծ քարաշէն խէւեան կամ խան մը կարաւանաց և ճանապարհորդաց համար, որ գիւղի անուամբ Բաբշենոց խան կը կոչուի։ — Լուսակ, 1900 Ա. 214։*

ԲԱԳԱՒՈՒ. Տես ՋՈՐՔ։

ԲԱԳԱՒԻՃ կամ ԲԱԳԱՅԱՒԻՃ. — *Հին և նշանաւոր աւան Բարձր Հայոց Դերջան գա-*

ւառի մէջ, Մամախաթունի հիւսիսային ա-
բեւմեան կողմը։ Տիգրան Բ ւաներս մէջ
կանգնեց Եփեսոս պից կուռքը զոր Արտա-
շէս Ա. բերած էր Յունաստանէն. շինեց մե-
հեան և մեհենին առջեւը բագին։ Եփեսոս
որովհետեւ հրոյ չառուած է, անոր համար
Հայք զայն Միհր համարեցան, ուստի և
վերոյիշեալ մեհեանն ալ Ագաթանգեղոսէն
(393) Մրհական մեհեան կոչուած է. «Գայր
հասանէր (Ս. Գրիգոր) ի Մրհական մեհեանն
անուանեալ որպէսն Աբամաղդայ, ի վիշտն
զոր Բագայարիճն կոչեն՝ ըստ պարթեւական
լեզուին։ Եւ զայս ի հիմանց բրեալ խլէին,
և զգանձս մեծերեալս աւար հարկանէին և
ազբատաց բաշխէին, և զտեղիսն նուիրէին
եկեղեցւոյ»։ Այս մեհենին տեղը հիմայ
կը կարծուի թէ ըլլայ այժմեան Բագաւիճ
գիւղի մէջ բարձրացած քարաբլրոյն ա-
բեւելակողմը, ուր երեք փոքր քարանձաւ-
ներ փորուած են. բլրոյն գագաթը կ'ե-
բեան հիմանց նշաններ, ուր որ բուն բա-
գինն եղած կը համարուի։ Այժմ ևս Գեր-
ջանի բարգաւաճ գիւղերէն մին է Բագաւիճ
ունի 5—600 տուն բնակիչ՝ երեք մասը հայ
և մէկ մասը մահմետական։ Գիւղի կեդրոնն
է հին բերդն բնական ժայռերու վրայ, որ
ունի դեռնուղի ճամբայ փախստեան և ջուր
հանելու համար։ Կ. Ս. Ղազանճեան տե-
սած է աստ 14 հատ սեպաձեւ գրեր, որ-
ձաքարերու մէջ փորուած։ — Բագաւիճի ա-
նուամբ կը կոչուի քովի մեծ դաշտը, ուր
990թուին սպանուեցաւ Զորտուանէլ մագիս-
տրոսը, վրահայ Թոռնիկ աբեղայի եղբօրորդ-
ին, վասլի կայսեր զօրաց հետ պատերազ-
մած ժամանակ։ — Ստորգր. հին Հայս. 24
—25։

ԲԱԳԱՒԻՃ ՎԵՐԻ. — Գիւղ Բարձր Հայոց Դարանաղեաց (կամախ) գաւառի մէջ, ունի 80 տուն հայ բնակիչ և Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԲԱԳԱՒԻՃ ՎԱՐԻ. — Նոյնպէս գիւղ Դա-
րանաղեաց, ունի 130 տուն հայ բնակիչ և
Ս. Յակովբ եկեղեցի մը։ Այս գիւղերս որ
կը կոչուին նաև Մեծ ու Փոքր Բագաւիճ,
վերջին դէպքերէն մեծապէս վնասուեցան։

ԲԱԳԱՐԱՆ կամ ԲԱԳՐԱՆ. — Ի հնումն անուանի քաղաք Այրարատայ Աշտարունիք գաւառի մէջ, Ախուրեան գետոյն աջակող-
մեան ափունքը և Երուանդաշատի հիւսի-
սային կողմը հինգ մղոն հեռաւորութեամբ։ Երուանդ Բ շինել տուած է քաղաքս Երուան-
դաշատի նման, որ և մէջը մեհեաններ կա-
ռուցանելով, երբ արքունիքը Արմաւիրէն փո-
խադրեց յԵրուանդաշատ, հոն գտնուած կուռ-
քերն ալ հոս բերաւ, և շատ բագիններ ու-
նենալուն համար կոչուեցաւ Բագարան կամ
Քաղաք կուռց։ Երուանդայ Երուազ եղբայրն
քրմապետ դրուած էր քաղաքիս մեհենաց,
զոր բնել տալով Սմբատ՝ հրամայեց գետ
նետել և անոր տեղ Մոզպաշտէ անունով
մէկը դրին։ Սմբատ Արտաշիսի տարաւ Եր-
ուանդայ գանձերը և հինգ հարիւր ծառաները։
Քաղաքս որ ի հնումն անուանի էր իբրեւ
գլուխ Հայոց հեթանոսական պաշտօնատե-
ղեաց և միջին դարու մէջ սուրբ կրօնիդ
պաշտամամբ, և Բագրատունիներու շինու-
թեամբ և բնակութեամբ, այժմ ախուր և
աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Հրաբուխ
մը և մեծ երկրաշարժ կործանած կը թուի
Բագարան. հին հեթանոսական ժամանակ-
ներու վերաբերեալ մեացորդ մը դեռ յայտ-
նուած չէ և ոչ նախնի բագիններէն կատր մը։

Արտաշէս Բ օրերէն, որ բագարանը անջը-
քացոյց՝ հեթանոսական պաշտամունքները
փոխադրելով յԱրտաշատ, մինչև թէ դար
չի յիշուիր քաղաքիկս պատմութեան մէջ և
իբրև աննշան մնացած կը թուի. վասն զի
Կամսարականներն իրենց ոստանը հաստա-
տեցին Մարմէտի մէջ։ Բայց երբ Աշոտ Մա-
կեր անունց գաւառը գնեց, Բագարանի մէջ
դրաւ իւր ամրոցը, ուր և իւր բարեբաղդ
թոռը Աշոտ Ա. հաստատեց իւր արքունա-
կան ապարանքը, ինչպէս կը պատմէ Յովհ.
կաթողիկոս, որ և շատ կը յաճախէր հոն։
Աշոտ 862 թուին հոն ապարանքի մէջ ի-
րեն գուսպը հարսնացոյց Աբծրունեաց տան
պայազատ Գրիգոր Դերենիկի։ Բայց իւր
որդին Սմբատ Ա. ամրոցը երազգաւորը փո-
խադրեց, անկէց վերջն ալ հաստատուեցաւ
Անւոյ մէջ։ Հ. Ն. Սարգիսեան որ անձամբ
այցելած է տեղւոյս, կը յիշէ քաղաքիս բեր-
դը բարձր քարաժայռի վրայ, երեք կողմերը
խորանդունդ, և չորրորդը անմատչելի, քաղա-
քին հարաւային կողմէն միայն ունենալով

վերելք մը։ Տարածութիւնը անձուկ և երկայնաձեւ է, արեւելեան ծայրը ունի աշտարակ մը, իսկ պարիսպները կիսափուլ են։ Բերդի արեւելեան ծայրը աշտարակին դիմաց կը գտնուի առաջին եկեղեցին Ս. Գէորգ փոքր և կիսակործան, զոր այժմեան 50 մետր հայ բնակիչը ԺԹ դարու կիսուն նորոգեր են տախտակամած, շինելով նաև գաւիթ մը։ Եկեղեցւոյն մէջ կայ փոքրիկ մատուռ խոռանին աջ կողմը, և մէջը որոյնաձեւ շիրիմ, որոյ տակ ամփոփուած կը համարուի Ս. Գէորգայ նշխարներէն մասն մի, որուն բազմաթիւ ուխտաւորներ կուգան մանաւանդ վարդայ Թաշի ատեն, և բժշկութիւնք ևս կը լինին։ Երկրորդ եկեղեցին կը գտնուի բերդը



173. Բագաւանայ Ս. Յովհաննէս եկեղեցին։

տանող ճանապարհի կիսուն վրայ և առաջինէն աւելի մեծ է, սակայն հիւսիսային որմը միայն անկործան մնացած է և ԶԺ թուական մը. մնաց կան շիրիմներ։ Երրորդ եկեղեցին փոքր է և գմբէթաւոր, քարաժայռի մը ծայրը։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ և կեղեցիս շինած է թագաւորի մը աղջիկը, իբր թէ, ատոր շինուելէն առաջ, մեծահասակ մէս ատեն մը օր ուշանալով հասնելու մայրերգութեան, իր բնակարանի մէտ շինած է այս եկեղեցիս։ Չորրորդ եկեղեցին քաղաքի աւերակներէն քառորդ մը հեռու է հարաւային կողմը, և ատոր ալ հիւսիսային որմը կանգուն կը կենայ։ Հինգերորդը չորրորդին մէտ է, որուն չորս կողմի հին պարիսպաց և այգիներու տեղը այժմ արօտատեղի դարձած է։ Սա էր Բագարանի մայր եկեղեցին կամ Մխանձանց ուխտը. արտաքին ձեւովն բազմանկիւնի քառանիստ է, և իւրաքանչիւր նիստի մէտ երկու կողմերէ կան դարձեալ ուրիշ անկիւններ. իսկ ներքուստ չորս նիստերն ալ կիսաբոլոր են, երկայնութիւն և լայնութիւն հաւասար, թէեւ թէեւ 17 մետր։ Ունի չորս ոչ միակատար սիւներ. կործանած է գմբէթը և քովը գտնուած մատուռը. ասոր շուրջը կան բազմաթիւ հին խաչքարեր և շիրիմներ։ Իններորդ դարու կիսուն կամ քիչ վերջը շինուած կը թուի այս եկեղեցիս, յորում կան տասն և մէկ արձանագրութիւնք և ՆԵ (= 956), և ՆՀԳ (= 1034) թուականները, բայց հնագոյնը անվերծանելի է։ Հինգերորդ եկեղեցիս կը կոչուէր Տապանատան Ս. Կարապետի, վասն զի իւր մէջ կը թաղուէին Բագրատունի իշխանատոհմը։ Յովհ. Կաթողիկոս յիշելով Աշոտ որդի Շապուհ սպարապետի թաղումը, կը նշանակէ ատոր բարձրաւանդակ դիրքը, երբ կ'ըսէ. «Եղին զնա ընդ հարս իւրում ի Լիրինն Բնաւարանացն որ ի քաղաքապետն Բագրանու»։ Հոս փոխադրուեցան նաև Մուշեղի և իւր հօր


[illegible]

բազմաչարչար խոստովանող թագուորին Ա. Սմբատայ մարմինները, որոնք գտուով սպանուեցան Յուսուֆէն՝ Գունայ մէջ։ Քաղաքիս եկեղեցիներէն այս վերջինն կը թուի ձեռակերտ Աշոտ, Սմբատ Ա. Թագաւորի Շապուհ եղբօրը որդւոյն, որ ըստ պատմչին «ի սկզբան սպարապետական պայազատութենէն՝ խորհուրդ բարեաց գանձամբ արկեալ, շինէ ապա զպճնապայծառ եկեղեցին Բագրանու՝ որ ի վերայ Ախուրեան գետոյ, և զարդարէ բազում երեսիւք սպասուք, և առնէ նուագ կատար ատուածային գոգցես պատշաճութեամբ»։

Արձանագրութիւններէն կը յայտնուի, որ Բագարան ևս ԺԳ դարու սկիզբը նուաճուեր և նորոգուեր է Թամարայ Թագուհւոյն Զաքարեանց զօրավարներէն. որոնց ժամանակ կը յիշուի (1211ին) Գրիգոր՝ Պարոն Բագարանայ, այսինքն քաղաքապետ կամ կող-

ձնակալ, և 1224ին վարդ՝ ապիւս պատուոյ անուամբ։ Նոյն ժամանակները Մխիթարայ ուխտի կամ Տապանատան վանաց առաջնորդ էր Վարդան, և անկէ վերջ 1233–5 տարիները Մխիթար անն։ Որովհետև այս թուականէն վերջ ուրիշ արձանագրեր չկան, կը կարծուի թէ քիչ տարի վերջ սկսեր է ամլայանալ և աւերիլ Բագարան, կամ ինչպէս բսինք մեծ երկրաշարժ մը և կամ Թաթարաց արշաւանքներէ։ — Տտորգ. հին Հայատ. 394–395։ Տեղգր. Հայատ. 200–204։ Այրարատ, 64–69։ Եւ այլն։

ԲԱԳԱՐԱՆ. — ի հնումն աւան Այրարատայ կոգուիա գաւառի մէջ. այսպէս կոչուած է վերջ Դիցաւան ըստ Պարթեւաց լեզուի, և Բազնագ աւան։ Կառուցուած է Նպատ լերան հիւսիսային սոորոակն վրայ։ Հեթանոսութեան ժամանակ երեւելի էր աւանիս մէջ, վերջին Տիգրանայ եղբօր՝ Մաժան քրմապետի պերեզմանը, ուր կար բագին և հիւրընկալութեան իջեւան. յորում նաւասարդի առաջին օրը մեծ ուրախութիւն կը կատարուէր։ Խոնարհութեան Բարդածանէն առնելով կը յայտնէ թէ Տիգրան շինել տուաւ այդ բագինը և իջեւանը որպէս զի զոհերէն բոլոր ճաշակարհորդները վայելեն և պիշերները հիւրընկալուին. իսկ վերջն ալ Վաղարշ հատուցանց աշխարհախումբ հանդէս նոր տարուն




174. Հին արձանագրութիւն Ս. Յովհաննու որմոց վրայ։

բոյիշեալ բաղաքի անուամբ։ Սմբատէն շինուած է աւանս, որ հոս բերաւ բնակեցուց Երուսաղէմ ծառաները, զորս գերած էր Աշշարունեաց Բագարան քաղաքէն։ Այժմ ծանօթ է Աւան անուամբ, Քանաքեռ գիւղի արեւմտեան կողմն։ կը յիշուի Զ դարու վերջերը իբրև հայրենիք Ցուլիան կաթողիկոսի յունական մասին Հայոց։ — Տտորգ. հին Հայատ. 447–8։ Այրարատ, 493–95։


ԲԱԳԱՒԱՆ կամ ԲԱԳՈՒԱՆ. — Թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ հռչակաւոր աւան Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Եփրատայ ձախ ափին վրայ։ Մեր պատմիչներէն կոչուած է նաև սկիզբը։ Գլխաւոր բագինն էր հիւրընկալութեան վանատրի չաստուածոյն։ Արտաշիր Սատենեան, որ կրակատաշտութիւնն նորոգեց և աճեցուց Պարսից մէջ և քանի մը տարի Հայոց իշխեց, բազմաւոր կարծեց զինքն որ աւանիս մէջ դաւ դնայ կրակի բագին, և հրամայեց մշտավառ պահել «զՀուրն Որմզդական՝ որ ի վերայ բագինն որ ի Բագաւան». Խոր. Բ ՀԵ։ Մինչդեռ Ս. Լուսաւորիչ կնաարիայէն գանդալով ի Հայս կը գանուէր Տարօնի մէջ, Տրդատ իւր զօրքերը առնելով, ինչպէս նաև Աշխէն սիկինը և Խոսրովիդուխտ քոյրը, կու գար կը հասնէր աւանս, և կ'ըսպասէր անոր գալստեան գրեթէ ամիս մը

ժամանակ։ Այդ միջոցին յայտնի է թէ նա տապալել կու տար հեթանոսական մեհեան-ներն և նոր ու սուրբ կրօնից պաշտամանն տեղ կը պատրաստէր։ Ս. Լուսաւորիչ հաս-նելով, հիմունք դրաւ և սկսաւ կառուցանել եկեղեցի, յորում գեաեղեց Ս. Յովհաննու և Աթանագինեայ նշխարներէն մասն ինչ։ Գրեթէ երեսուն օր ազօթիւք և պահօք անց-նել վերջ, աւանիս մօտ, Երիցաձոյ եղեր-քը թագաւորն, իշխանազունք, մեծամեծք, և ժողովրդեան բազմութիւնը մկրտուեցան ի Սրբոյն Գրիգորէ և ընդունեցան սուրբ կրօն-քը։ Աւանիս եկեղեցին մեր հին մատենա-գրաց համեմատ կը կոչուէր Տեղի կամ Մա-



175. Քաղքէացի արձանագրութիւն։

տուռն Ս. Գրիգորի, բայց սովորաբար և աւելի սակաւ և մինչև ցայժմ կը կոչուի Ս. Յովհաննէս, և այլազգիներէն Իէչ–քիլիսէ (Երեք եկեղեցիք), երեք խորանաց համար։ Ս. Սահակ հայրապետաբ, գահընկէցութենէն վերջ հրաժարելով վաղարշապատի աթոռէն, հոս եկաւ վերջացնելու իւր արդիւնաշատ կեանքը, սակայն այս տեղէն ալ հալածուելով, Բլուր գիւղի մէջ հանգեաւ։ Ս. Գրիգորէն շինուած ուրիշ մատրանց և եկեղեցիներու պէս անշուշտ փոքր և անպարզ էր նաև այս Բագաւանայ եկեղեցին և չի յիշուիր, թէ Ս. Սահակ և կամ ուրիշ մէկը ընդարձակած լինի զայն։ Ցայսմի չէ թէ ըրբ շինուած է աւանիս վանքը։ Երիմներորդ դարուն Հե-րակլ կայսրը Պարսից վրայ գացած ժամա-նակ, կ'երեւի թէ դադարած է հոս կամ այցելած սխատաեղւոյն, և յետոյ անոր վե-րաշինութեան սատարած 634 թուին՝ ինչ-պէս կը գուշակուի Թզաչափ մեծատառ ար-ձանագրութենէն, որ փորագրուած է միա-տող եկեղեցւոյն հարաւային, արեւելեան և հիւսիսային սրմոց վերի կողմերը արտա-




176. Քաղքէացի արձանագրութիւն։

քուտա։ Ձարտարապետն եղած է Խորայէլ անուամբ մէկը. շինուածոյն վայելչութիւնը և մեծութիւնն կայսեր արժանաւոր էր. վասն զի Հայաստանի բոլոր հին եկեղեցիներէն մեծագոյն է, և 1260 տարիներէ ի վեր, շատ փորձանքներու հանդիպելով հանդերձ, տակաւին կանգուն է։ Ափսոս որ այս արժա-նաւոր շինուածոյս լուսատիպ պատկերն չգտնե-լով, ստիպուած եմ հոս ներկայացնել անոր ձեռանկար պատկերը (Թ. 173)։ Որմերը խիստ հաստ են և ամուր, և գմբէթը վեր բռնող սիւներն ցած են և լայն։ Ընդարձակ խորանին երկու կողմերը կան մէկ մէկ մա-տուռ։ Երկու խորաններ ևս ի վերջոյ շի-նած են երկու մատրանց կամ խորանաց կոնակը։ Եկեղեցին բոլոր շինուած է մեծա-մեծ սրբատաշ քարերով, և բոլոր մատնց մէջ կը տեսնուի գեղեցիկ չափակցութիւն, բայց հին եկեղեցեաց նման մթին է, մանա-ւանդ որ նորոգութեան միջոց պատուհան-ներէն ամենք գոցած են։ Եկեղեցւոյս մէջ չկան և կամ ծանուցուած չեն տակաւին ու-


բիշ հին արձանագրութիւնք. եղածներն ալ յետին դարուց կը վերաբերին և գեւ ժէկէն հրատարակուած չեն։ Հետաքրքրական են արտաքին որմոց ժէջ հիւսուած քանի մը հին քարեր, որոց վրայ կան պակասաւոր քաղդէերէն կամ հին ասորերէն արձանագրութիւններ (թ. 174—5—6), և կը թուին մեր տտից գիւէն առաջ գրուած, թերեւս Տրպատայ և Ս. Գրիգորի օրերէն մնացած։

Վանայ ժէջ վարպետաի տունին գոնը. ւելով Ներսէս Գ կաթողիկոսը, և տեսնելով որ դասապետները ժաւերգութեան տեն աւուր պատշաճի շարականները փոխոխելով չփոթութիւն կը ձգեն, հրաման տուաւ ձոն մակտուտուած վարդապետի մը, որ շաբականներէն ընտիրները գտաէ, որոնք կոչուցան Ճոնընտիրք։ Ուխերորդ դարու վերջերը Յակոբ կաթողիկոսի ժամանակ վանքս շատ ճոխացած էր ոսկի և արծաթի սպասներով, զորս յափշտակելու համար, 778 թուին Եզիա ոստիկանի Սֆի գործակալը զրպարտութեամբ կոտորել տուաւ վանքի միաբանները, որոց թիւը ըստ Ցովհն. կաթողիկոսի 401 ուտլի էր։ Վանայ եկեղեցւոյ նման պարիսպն ևս հատա և վիթխարի էր, որով ամանք ամրոցի կը նմանցնեն, մեծամեծ և երկաթապատ դռներով և մարտկոցաձեւ բուրգերով։ Թէպէտ և ասոր շինութիւնն ալ հին լինելու է, սակայն յայտնի է թէ եկեղեցիէն աւելի առէպ նորոգուած է, շատ անպաճներ աւազակ Քրդերէ վեասուելուն համար, մանաւանդ աշխարհաւեր Լէնկթիմուրէն, որուն հարուածներէն գրեթէ ամայի մնացած է այս սրբազան վայրը։ Վերստին սկսեր է շինութիւն և բնակութիւն ունենալ ժէ դարու կիսէն վերջ։ Այս ժամանակները Բագրեւանդայ կամ Վաղարշակերտի եպիսկոպոսական աթոռը հոս փոխադրուեցաւ։ Թադէի վանաց Իսահակ եպիսկոպոսը 1685ին շրջաբերական թղթով մը օգնութիւն և նպաստ կը խնդրէ Եւրոպա գտնուող հայ վաճառականներէ, վանայ եկեղեցին նորոգելու համար, որուն վրայ 6 տարի աշխատեր են և չեն կարողացեր աւարտել։ Ուխտական տեղ մը լինելուն համար թէև շատ նուէրներով կը ճոխանար և կը բարգաւաճէր վանքս, բայց միանգամայն շրջապատուած լինելով Քրդերէ, շատ անգամներ կը կողոպտուէր։ Անցած դարու ժէ ևս ոտէպ տխուր դէպքերու հանդիսատես եղած է վանքս, և ամբաշէն լինելուն պատճառաւ, շրջակայ գիւղերու բնակիչներն ևս վտանգի ժամանակ իւր ժէջ կ'ապաստանէին։ Երեւանի խանը 1821ին Ալշկերտի վրայ արշաւած ժամանակ, մեծ գեր խաղաց Ճուճանցի Թաչատուր վարդապետը, որ օգնական էր վանաց առաջնորդ Մահակ եպիսկոպոսին, ոչ միայն ժէջը ապաստանողները այլ և գերի բռնուղներն ազատելով. Թէպէտև յետոյ բռնուելով տարի ու կէս Երեւանի բանտը մնաց, բայց վերջը ազատեցաւ։ — 1862 թուին առաջնորդ Ցովհաննէս եպիսկոպոսը վանաց պարիսպները ի հիմանց նորոգեց և 1864ին ժառանգաւորաց վարժարան բացաւ։ Վերջին Ռուսաց և Օսմանեանց պատերազմից ժամանակ (1877—8) և անոնց բանակաց այս կողմերէն մեկնելէն վերջ, ասպատակող Քրդերէ և անկարգ զինուորներէ մեծապէս վնասուեցաւ վանքս, որոյ ազիատալի անցքերն ծանօթ են ազգայնոց։ Իսկ 1808 էն 1829 տարիներու ժէջ հանդիպածներն երկարօրէն գրած է Պօղոս Ց. Մոռրատեան։ Նոյն 1877ի պատերազմի ժամանակ վանաց ձեռագիրները գետնի տակ թաղելով ի կորուստ մատնուած են։ Այժմ ունի ձեռագիր և տպագիր ընդամէնը 250 կտոր գիրք։


Անցեալ դարու սկիզբը վանաց ժէ և դար ժողով և կաթողիկոս օծուեցաւ Գաբրիէլ Սուրմառեցին. այս ժողովէն ներկայ էին Աղթամարայ կարապետ կաթողիկոսը, Թադէի վանաց Գէորգ արքեպիսկոպոսը և ուրիշ 12 եպիսկոպոսներ գանազան կողմերէ, և բազմաթիւ վարդապետներ։ — Բագրեւանդայ վերջին գաղթականութիւններու պատճառաւ վանաց թիւերը նուազեցան։ Ամբողջ Չիրաւայ դաշտի ժէջ հազիւ 6 հայ գիւղեր կան խեղճ վիճակի ժէջ։ Վանաց պարսպի արեւմտեան կողմէ է վանքի գիւղ կոչուածն, որ 30 տուն բնակիչ ունի, որք մեծ մասամբ ծանրացած են վանքի վրայ։ Վանաց մօտ արեւելեան կողմը շինուած է չորս աչքէ ջրաղաց մը, որ միշտ կը բանի։ Իսկ արեւմտեան կողմը գրեթէ մղոն մը հեռու գետոյն վրայ ձգուած է գեղեցիկ բարաշէն կամուրջ մը որ շինուած կը համարուի ժէ դարու առաջին կիսուն, թէ-



Բագարան. — Եկեղեցի Ս. Շուշանայ։



Բագարան. — Մնացորդք եկեղեցւոյ։



Բագնայր. — Ս. Աստուածածնի և Ս. Գրիգորի եկեղեցիք։

բնա ատելի հին, որոյ խարիսխներէն մին քայքայելով, 1867ին նորոգուեցաւ։ — Ըստ ամանց հին Բագաւանը լինելու է այժմեան վանքի դիմաց կարաւանի ճանապարհի վրայ, եփրատայ ալ կողմը, ուր տեսնուած են բազմաթիւ աւերակներ, կը նշմարուին նաև մեծ եկեղեցւոյ մը հիմերը, որոնք քննութեան կը կարօտին։ — Տարդր. հին Հայաստ. 406—410։ Տեղդր. Հայաստ. 221—2։ Այրարատ, 527—533։ Բագրեւանդ, 272—283։ եւ այլն։

ԲԱԳԱՒԱՆ. — փայտաակարանի հին գաւառներէն մին, Աչտարակ կամ Ափշերոն երկրաշէզուի վրայ։

ԲԱԳԵՆԿՈՒ. — Այս անուամբ կրկին վէրի և Վարի գիւղեր կան Զորրորդ Հայոց Հաշտեանք (Ճապաղջուր) գաւառի մէջ։

ԲԱԳԵԱՆՔ կամ ԲԱԳՈՒՆԻՔ. — Արշակ Թագաւորի ժամանակ այս անուամբ տոհմ մը և իշխանութիւն կար ի Հայս։


ԲԱԳՆԱՅՐ կամ ԲԳՆԵՐ. — Գիւղ և ի հնումն նշանաւոր վանք Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, գրեթէ երկու փարսախ Անիէն հեռու արեւմտակողմը, նոյնպէս ևս հեռու է Ալաճա լերան գագաթէն, անոր հիւսիսային սառոյտին վրայ գեղեցիկ դիրքով։ Տաներորդ դարու վերջերը Պահլաւունի իշխաններ հոս կանգնեցին նոյն ժամանակի հռչակաւոր վանքերէն մին։ Ըստ պատմչաց վանացս բուն կանգնողն է Սմբատ Մագիսարոս։ Բազնայր գիւղը կը կարծուի թէ Բագարանի նման հեթանոսութեան ժամանակ շատ բագիններ ունենալուն այսպէս կոչուեր է։ Նախնիք վրան յիշատակութիւն մը ըրած չեն, և այժմ ամայացած է ի Հայոց, կը կոչուի Ղօզլիճա, և ունի 60 տուն թաթար բնակիչ։ Գիւղիս վանքը բոլորովին կործանած գետնի հաւասարած է. կանգուն կայ տակաւին ինդարեան հոյակապ եկեղեցին Ս. Աստուածածնի հանդերձ գմբեթովը, որ աւազ բոլորովին լքեալ մնացած է, մէկ մասը այլազգեաց ամրարանոց լինելով և մէկ մասն ալ գոմ։ Քիչ շատ նման է Հոռոմոսի վանաց եկեղեցւոյն, և անոր պէս բաժնուած է տաճարի և ժամատան. բայց ասոր տաճարը աւելի նեղ է, իսկ գափերը ընդարձակ քառակուսի։ Զորս գեղեցիկ և մեծամեծ սիւներ կը բարձրանան ժամատան մէջտեղէ և 12 սրմայեց սիւներ վեր կը բռնեն կամարակապ ձեղունը։ Ճիշդ արեւմտեան դրան դիմաց՝ կայ ուրիշ դուռ մը դէպի արեւելք, ուսկից կը մտցուի տաճարը, յորում չորս սուսար և բազմանկիւնի սրմայեց սիւներ և երկու փոքր ևս արեւմտեան կողմէն կամարակրցած իրարու հետ, ինչպէս նաև երկուք ալ խորանին երկու կողմերէն, վեր կը բռնեն վայելչաշուք գմբեթը։ Տաճարին լայնութիւնն հազիւ 8 մետր է և երկայնութիւնը 14։ Տաճարի հարաւային կողմն ալ դուռ մը կայ և դիմացը ցած գափեթ մը երկու կարգ սիւներով և կամարակապ։ Ասոր ծայրը կան իրարու մօտ երկու հաւասարաչափ և գմբեթաւոր մատուռներ, որոց մէն որ անմիջապէս տաճարի մօտ է, այժմ բնակարան դարձած է այլազգեաց, և կը պատուի մօտը գտնուող առանց արձանագրի շիրիմ մը, որուն համար կ'աւանդեն թէ Ս. Լուսաւորչի է։ Բայց եթէ Ս. Գրիգորի նշխարներէն ամփոփած են Բագարանի մէջ, աւելի հաւանական է որ լինէր երկրորդ մատրան մէջ, որը ըստ արձանագրաց նուիրուած է Ս. Գրիգորի։ Գիւղիս մեծ եկեղեցին ունի թէ՛ ներքուստ և թէ արտաքուստ բազմաթիւ արձանագրութիւններ, որոնց ծանօթ թուականներն կը վերաբերին ԺԱ—ԺԲ դարուց։ Եկեղեցւոյն շուրջը, մէջը աւելով նաև կրկին մատուռները ի հնումն պարսպապատ էր և այժմ միայն հետքերը կ'երեւին։ Պարսպապատէն դուրս քարբնկէց մը հեռու եկեղեցւոյ հիւսիսային կողմը կան ուրիշ երկու մատուռներ իրարու մօտ, որոց մին մեծագոյն է և ունի կամուղիկէ, դրան վրայ ևս կայ 1223 թուականաւ համառօտ արձանագրութիւն մը։ — ԺԱ. դարու առաջին կիսուն Բագնայրի մէջ խնամատարութեամբ կը փայլէր Մխիթար վարդապետ, զոր ուրիշ գիտնական վարդապետաց հետ՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը տարաւ ի Կոստանդնուպոլիս։ — Տեղդր. Հայաստ. 176—189։ Շիրակ, 111—121։ եւ այլն։

ԲԱԳՆԱՅ ԱԻԱՆ Տես ԲԱԳԱՐԱՆ։

ԲԱԳՈՒ կամ ՊԱՔՈՒ. Գղ. BAKOU. Ռ. Баку. — Հին և նշանաւոր գաւառապուխ քաղաք Փայտակարանի Բագաւան գաւառի, ծովեզերայ մասին վրայ շինուած։ Պատմու-

թեան մէջ ծանօթ է խիստ կանուխ, մինչև 1500 տարի առաջ։ Յորինուացոյց աշխարհագրութեան մէջ Պղուանից 12 նահանգաց շարքի մէջ կ'երեւի և Բագուն՝ Բագաւան անուամբ։ Կ'երեւի նաև կրակոտ երկիրը Եօթնփորակեան Բագինք անուամբ, որ այժմ կ'ըսուի Սուրախանի, և կրակի բոցը այժմ ևս գետնէն կը բարձրանայ երբ քանի մը մետր կը փորեն և հորի մէջ լուցկի կը վառեն։ Այս կրակոտ երկիրը Քրիստոսի 500 թուին Պղուանից վաչագան Թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր Շէնքերը կառուցուած են մաս մը բարձր դիրքով և մաս մը տափարակ տեղւոյ վրայ. առջեւը ունի խաղաղ և վաճառաշահ նաւահանգիստ, որոյ նաւերը Անդրկասպեան աշխարհէն կը բերեն գեղեցիկ գործուած գորգեր, շալեր, մետաքսեայ գործուածներ, ընտիր և անուշահամ սեխ, են. Ռուսաստանէն կը բերեն ռուսի ապրանքներ, արծաթեայ և ոսկեայ անօթներ, են. իսկ Պարսկաստանէն լիմոն, նարինջ, ձիթապտուղ և ուրիշ տեսակ մրգեղէններ։

Բագուի մէջ իբրև նշանաւոր հնութիւն կը



177. Բագու քաղաքի ընդհանուր տեսարանը։

էր իւր Վարսենիկ դստեր, որոյ Ամերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին։


Քաղաքս կառուցուած է կասպից ծովի արեւմտեան եզերքին վրայ անծանօթ ժամանակներէ, միայն Բագու անունը կը յիշեցնէ նախնի բազմեցաց պաշտամունքը՝ զոր կը մատուցանէին կրակապաշտ Պարսից մոգերը և բուրվառը ինքնաբուղխ կրակին, որ հրաբուղխի պէս միշտ կը մխար և կը վառուէր Բագուի շրջակայքը Ափշերոնի թերակղզւոյն մէջ Սուրախանի ըսուած տեղը, ուր տակաւին ճեպացած է հին տաճարն մը։ Համարուի հին թանկերու պալատն և ամրոցն, որ կրկնապարիսպ է, ունի բաւական ընդարձակութիւն և ծովահայեաց դիրք։ Պարիսպներու բարձրութիւնն է 8—10 մետր և լայնութիւնն 2 մետրէն աւելի։ Թէ՛ պարիսպները և թէ բուրգերը ամբողջապէս շինուած են տորնադոյն տաշած քարերով։ Կանգուն կայ նաև բարձր աշտարակ (մինարէ) մը, որ Ռուսաց տիրապետութեան ժամանակէն սկսեալ մինչև ցայժմ կը ծառայէ իբրև լուսատու փարոս նաւավարաց։ Արտաքին պարսպի հիւսիսային պատն վրայ գտեղուած է հին ցլա-

պուխ արձան մը։ Բերդի դրանց, աշտարա-
կաց և պալատի որմոց վրայ կան բազմա-
թիւ քիւֆի և արաբ գրով արձանագրութիւն-
ներ։ Յայտնի նշաններէ և հնաբերէ կը յայա-
նուի թէ երբեմն նորոգութիւններ եղած են
պարսպաց և միւս մասանց վրայ։ Ազգային
ճանապարհորդ մը կը համարի թէ քաղաքիս
բերդը մնացած լինի Հայոց Արշակունի թա-
գաւորաց ժամանակէն։ Բազուն հետզհետէ
անցած է Հայոց, Ազուանից, Պարսից, Թա-
թարաց, կրկին՝ Պարսից, և ի վերջոյ 1808ին
Ռուսաց ձեռքը։ Յիշխանով ռուս զօրավարը
1806ին գալով գրաւելու քաղաքիս բերդը,
Թշնամւոյն ներգութեամբ կ'սպանուի, որուն
մահարձանը կանգնեց հայկազն Թումման
Յովհաննէսեան Ալվազեանց։ Բազուն երբեմն
(1850–1860) կը համարուէր Շամախու աք-
սորանոցն. իսկ 1860 թուէն սկսեալ մինչև
ցայժմ օր առաւր գնեցկանալու, բարգաւա-
ճելու և յառաջադիմելու վրայ է քաղաքս։
Ասկէց 40 տարի առաջ ունէր հազիւ 50
տուն հայ և քանի մը հարիւր տուն թուրք
բնակիչ, որք կը պարապէին ձկնորսութեամբ
և առեւտրով. իսկ այժմ գրեթէ 2200 կը
հաշուին Հայոց ընտանեաց տէր
կան նաև բազմաթիւ Հայեր որք ընտանեաց տէր
չեն։ Հետեւեալ ցուցակի (1893ա.) մէջ կը
ներկայացնենք Բազուի մէջ ապրող բնակ-
չաց թիւը, ըստ իրենց ազգութեան.

	Ար.	Իգ.	Գումարն
Հայք.	17483	7007	24490
Մահմէտականք .	22974	14556	37530
Ռուսք	12370	9020	21390
Լեհք, Հրեայք, են.	1996	1205	3201
Գումարն. .	54823	31788	86611

Հայք ընդհանրապէս կրպակարնակ են,
և կ'ապրին վաճառականութեամբ, արհեստով,
և ծառայութեամբ նաւային ու նաւթային
գործոց և գործարանաց մէջ, ինչպէս նաև
ուրիշ քաղաքական և պետական պաշտօննե-
րով։ Մահմէտականները, որ կը բնակին
բերդի և քաղաքի հարաւային կողմը, բո-
լորովին անկարգ և խառն ի խառն շինած
են իրենց տները և խանութները. ընդհա-
կառակն բարեկարգ և գեղեցիկ շինուած են
Հայոց տները, խանութները և իջեւանները։
Յովհեքերքը պարսպուած է մեծամեծ աշտա
քարերով, իբրև պատուար ծովու ալէկոծու-
թեանց դէմ։ Բազուի մէջ կան 3 գործարանք
շոգենաւեր և առագաստանաւեր նորոգելու
համար. և ուրիշ 10 գործարանք ձուլելու և
գործիքներ շինելու համար։ Սեւ քաղաք կո-
չուած մասին մէջ ալ կան 180 գործարանք
միայն նաւթ սպիտակացնելու համար։ Բա-
զուի բնակչաց կենցաղավարութեան, ապրուս-
տի, կառավարութեան, սովորութեան և ա-
մէնայն հանգամանաց համար գժուար է գրել,
ըստ որում զանազան աշխարհներէ, քաղաք-
ներէ և գիւղերէ ժողոված, գրեթէ իւրաքան-
չիւրը մէկ մէկ սովորութիւն ունի իր երկրի
և տեղւոյ կառավարութեան համաձայն։ Քա-
զաքս ունի 3 Ռուսաց, 2 Հայոց, 1 կա-
թոլիկաց եկեղեցիներ, Լուտերականաց տա-
ճար մը և 11 մզկիթ։ Հայոց եկեղեցի-
ները քարաշէն են, մին՝ Ս. Աստուածածին
կը գտնուի հին թաղը բերդի մէջ Յովհեքերքի
մօտ, տարածութեամբ փոքր է, նեղ պարըս-
պի մէջ ամուռած, որ նորոգուած է 1799
թուէն հին մատուռի մը տեղը։ Այդ հին
մատուռը, ըստ աւանդութեան, շինուած է ե-
րեք այն բպնեաց տեղը, որ կանգնած էին
մին իբրև կրակի չաստուած և միւսն ծովի,
զոր կործանեց Եղիշէ առաքեալը Ազուանից
աշխարհը գացած միջոց, և տեղը կանգնեց
Քրիստոսի խաչի նշանը, ուր յետոյ Մեսրոպ
Թարգմանիչը շինեց մատուռ յանուն Տիրա-
մօրն։ Իսկ Ազուանից վաչագան բարեպաշտ
թագաւորը փրկչական 500 թուականին կա-
ռոյց եկեղեցի. ըստ այսմ Բազուի ամենէն
հին և նշանաւոր ուխտատեղին է Ս. Աս-
տուածածնի եկեղեցին։ Եկեղեցւոյս վերջին
նորոգողն է Նախիջեւանցի վաճառական Մար-
կոս աղա Թառոյեանց և եղբարքն՝ Զօհրապ,
Յովհաննէս և Կարապետ։ Շինութեան և նո-
րոգութեան արձանագրութիւն չունի։ Ներսը
կան միայն մի քանի գերեզմանաց վրայ տա-
պանագրութիւնք։ Իսկ երկրորդ եկեղեցին
նուիրուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի, և կը
գտնուի մեծ հրապարակի վրայ։ Ժողովըր-
դեան տրօք (մօտ 16000 րուբլի) շինուած է
1863–1869 տարիներու մէջ, և շրջապա-
տուած չափաւոր պարսպով. սա ևս արձա-
նագրութիւն չունի։ Քաղաքիս Հայք երեմա-

լով բազմանալով, վերջին տարիներս երբորդ եկեղեցւոյ մը ևս պէտք զգացին, որոյ համար յատուկ տեղ մը ևս տուած են բակեղուզոյ կայարանի թաղի մէջ։ Բագուի մէջ նշանաւոր է նաև Հայոց վերնմանուտան նորաշէն փոքրիկ մատուռն Ս. Յարութեան, որ գեղեցիկ և բարձր դիրք ունի։ Այս մատուռն ծախքն ըրած է Տփխիսեցի Հայազգի Մարիամ Գրիգորեան Միքատաձէ, որ յատուկ արձանագրութիւն մ'ալ 1894 թուին գնտեղել տուաւ հիման մէջ։ Հայոց այս եկեղեցիներն ունին նորաշէն, փառաւոր, եռայարկ ուսումնարան մը, որ ունի մեծ սենեակներ և դասարաններ. այս ուսումնարանը, որ երբորդ յարկը կը ծառայէ իբրև թատրոն։ Ս. Մեսրոպեան երկդասեան ուսումնարանը ունի մօտ 200 աշակերտ. իսկ Ս. Հռիփսիմեան օրիորդաց երկդասեան ուսումնարանն ունի 180 աշակերտուհիք։ Քաղաքս ունի նաև Հայոց Մարդասիրական Ընկերութիւն հաստատուած Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ, որ շինած է իր ծախքով փառաւոր Աղքատանոց, ուր կը պատսպարուին շատ անկար և անտէր ազգայիններ։ Այս Մարդասիրական Ընկերութիւնն իր պարտական օժանդակութիւնը և խնամքը կը տարածէ նաև Ազուանից գաւառներու աղքատ զպրոցներու և այլ չքաւոր ուսանողներու վրայ։ Մարզ. Ընկերութիւնն ունի նաև ճոխ մատենադարան մը հայերէն, ռուսերէն և գազղիերէն բազմաթիւ պրքերու և ազգային ու օտարազգի թերթերու և հանդէսներու։ Բագուն ունի նաև Հայոց տպարան մը՝ Արօրի տպարան, որ երբեմն երբեմն կը հրատարակէ




178. Բագուի Հայոց Ս. Լուսաւորչի եկեղեցին։

դրքոյկներ, և տակաւին նշանաւոր գործ մը և արդիւնք մը յատակ բերած չէ։ Բագուի ազգայինք ընդհանրապէս նիւթական յաջողութեան մէջ կը գտնուին, և երանի թէ փոյթ և խնամք տանէին ազգային լուսաւորութեան և յառաջադիմութեան գործին։ — Ամրան ծանր է քաղաքիս օդը և կլիման, իսկ ջուրը բիչ մը ազահամ և անախորժ, որոյ համար քաղաքապետութիւնը կ'աշխատի ու կը մտածէ կարը գեակէն ջուր բերել տալ։ Ինչպէս Բագուն հեռագիրներով հաղորդակցութիւն ունի ամէն աշխարհաց եր-

կիրներու հետ, նոյնպէս հան ամէն նաւթահանք, ամէն գործարան և հիւրանոց, մէկ խօսքով ամէն մարդու պատեհնեակ հաղորդակցութիւն ունին միմեանց հետ հեռախօս թելերով։

Բազու բառի առուգաբանութեան կամ նշանակութեան համար տեղացիք Հայը և Թուրքը կը յիշեցնեն Բադքիւբ բառը՝ որով կ'անուանեն Բագո ի բերը, որ ֆարսերէն կը նշանակէ հողմահար, իբրեւ հիւսիսային մշտատեւ հովի առաջին ամնոդ, որ կը կոչուի նաև խազրի կամ խազրաց քամի, վասն զի կը փչէ խազրաց (Զէրբէդ — Զէչէն) և տեսակ, այսինքն սպիտակ, կանաչ և սեւ։ Հանքերը կը պատկանին գանազան ընկերութեանց և անձանց, զոր օրինակ՝ կասպեան ընկերութեան, Ալեքսանեան ընկերութեան, Գաղթան ընկերութեան, Մասխ ընկերութեան, և այլն։ Իսկ Սուրախանի կոչուած տեղը կը բղխէ միայն սպիտակ նաւթ։ Ի սկզբան մենաւաճառի (monopole) ժամանակ արտահանուած նաւթի քանակութիւնը քիչ էր, իսկ մենաւաճառի վերնալէն վերջ տարի տարուան վրայ արտահանութիւնը շատցած է։ 1876ին հանած են 195000 տակառաչափ հում նաւթ և 55000 տակչփ.



179. Տեսարան Բագուի նաւթաղբիւրներու։

աշխարհէն։ — Բազաքիս թաղերը կամ փողոցները կը կոչուին հետեւեալ կերպով. Հայոց փողոց, Վարաւցովկի, Յիլիանովկի, Մովսեզերքի փողոց, Ռուսաց նոր և կեղեցւոյ փողոց, Շահախուռ ձանապարհի փողոց, Հայոց ուսուցչարանի փողոց, Մալականի այգւոյ փողոց, Երկաթուղւոյ կայարանը տանող փողոց, Գերեզմանատուն տանող փողոց, Բարեատիճնկի փողոց, Գուշիբագիճնկի, Գազաւարի, Բայիլի, Բիբիճէյբաթ, Զաւբարաքեանդ։

Բագուէն 10 վերստ հեռու դէպի հիւսիս կը գտնուին նաւթահանքերը Բալախանի ըսուած տեղը, ուր կը բղխէ տասը նաւթ երեք գոյն գոյնի նաւթ։ Ընթերցանքի համար մեզի տրուած նաւթը սպիտակ էր, իսկ 1890ին 3000000 տակչփ. հում և 1000000 տակչփ. զտուած նաւթ։ Ընթերցանքի եղանակը առաջինը եղան, որք քաղաքիս մէջ հիմնեցին հոչակաւոր տուն և գործարան, բարեկարգելով և կիրարկելով նաւթային գործը գանազան եւրոպական նոր նոր մեքենաներով և գործիքներով։ Միւս գործարանատէրք ևս հետեւելով Ընթերցանի պրուժեան, այժմ մեծ քանակութեամբ և աւելի կերպով նաւթ կ'ստանան։ Նաւթը մաքրող գործարաններն՝ որ մեծ քաղաք անունով թաղի մէջ կը գտնուին, Բալախանէն նաւթը կ'ստանան ընդերկրեայ թափօնու երկաթեայ խողովակներով, և զանոնք ու մաքրելէ վերջ

կ՚ուղարկեն այլ և այլ աշխարհներ ի վաճառ։ 1894 թուին թէ ցամաքով և թէ ծովով արտահանուած է Բագուէն 4722760 տակառաչափ նաւթ։ — Այս նաւթահանդեսը մօտ՝ 5 վերստ հեռու կը գտնուին ընդարձակ հրաբուղիներ Սուրախանի կոչուած տեղը, ուր Հնդկաստանէն եկած կրակապաշտներ միացած են մինչև Բագուի շէնքացը և բազմամարդանալը, և ուր կայ տակաւին, ինչպէս յիշեցինք կանխաւ, տաբուշան մը։ Քառակուսի և բարձր շէնք մի է մեր եկեղեցւոյ զանգակատուններու նման, ուր մշտավառ անշէջ կրակը կը պահէին ու կը պաշտէին։ — Բագու քաղաքը նաւթէ զատ որ յայտնի է ամբողջ Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպիոյ և Ամերիկոյ, վերջին տասը տեղեկութեանց համեմատ, իր շրջակայքը ունի նաև ոսկւոյ հանք։ Մանուկեան բերքերն են քրքում, խաղող, սեխ, ձմերուկ և այլ ամէն տեսակ պտուղներ։ — Բագուցիներու զբօսավայրերն են Բայիլ և Բիբհէյբաթ անունով քաղաքի շրջակայքը, երկաթուղւոյ կայարանի ծառուղին և քաղաքամիջի ճեմելքը. գարնան գիշատուր զուարճութեան և



180. Բագուի նաւթաղբիւր։

կերուխումի տեղ է Զիրա կոչուած կղզեակը։ Բագու նահանգի տարածութիւնն է 39306 քառ. հղմ. և բնակչաց թիւն է 820318 (1891), 27 ան 1 քր. հղմ. այս բնակիչներէն 63,000 հոգի հայ են։ — Նկարագր. Շահախաղ թեւի, 368–504։ Աղուանք, 150–154։ Եւ այլն։

ԲԱԳՈՒԱՆ. Տես ԲԱԳԱՒԱՆ։

ԲԱԳՐԱՆ. Տես ԲԱԳԱՐԱՆ։

ԲԱԳՐԱՆԵԹ. — Հին գիւղ Ակիլիճաձորի (Վրահայք) մէջ. կը յիշէ Վախուշտ։

ԲԱԳՐԱՏԱՇԱՏ. — Վախուշտէն յիշուած հին գիւղ Ակիլիճաձորի (Վրահայք)։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ. — Հին տոհմ և մեծ նախարարութիւն Հայոց, որոնց նախահայրն էր Վաղարշակ Թագաւորի Բագարատ իշխանը։ Անոնց իշխանութիւն և պաշտօն որ տուած էր Վաղարշակէն, Արշակունեաց Թագաւորներուն Թագ դնելու։ Անոնք ծագմամբ Եբրայեցի լինելով՝ երկար ժամանակ իրենց ատտուածպաշտութեան կրօնքը պահեցին, ուրուն համար շատեր ևս նահատակուեցան մեր կռապաշտ Թագաւորներէն, ու վերջը Ս. Լուսաւորչայ օրով քրիստոնեայ եղան։ Այս տոհմէն ունեցած ենք շատ երեւելի անձինք, բարեպաշտ իշխաններ, քաջ և գօրաւոր Թագաւորներ։ Բագրատունեաց Թագաւորութիւնը հաստատուեցաւ 885 Թուին, և տեւեց 160 տարի մինչև 1045։ Այս Թագաւորութենէն ունեցանք տասուերկու Թագաւորներ, որք նստան Անի և ուրիշ քաղաքներ, որոց առաջինն եղաւ Աշոտ՝ քաջին Սմբատայ որդին։ Բագրատունեաց բնակութեան վայրն եղած է նախ Բարձր Հայոց Սպեր գաւառը, և յետոյ Այրարատ նահանգի Կոգովիտ, Աշտարակ և Շիրակ գաւառները։ — Այս ցեղէն ուրիշ Բագարատ անունով իշխան մը՝ որ ազգական էր Սմբատ խոստովանողի և փեսայ Արծրունեաց, Ամիրապետէն հաստատեցաւ Պարսից մեծ իշխան Հայոց, տիրելով Սիմ լերան իշխանական փառքով։ — Հնախօս. Հայստ. Բ 96–108։

ԲԱԳՐԵՒԱՆԴ. — Այրարատ նահանգի հարաւային գաւառներէն մին է Բագրեւանդ՝ որ քսան ձեռագրաց կը գրուի նաև Բագրաւանդ։ Տարածութեամբն ընդարձակագոյն կը

համարուի Ա֊յրարատայ միւս գաւառներէն. երկնցած է՝ արեւելքէ արեւմուտք. սահմանքն են՝ արեւելքէն Ծաղկոտն, հարաւէն Տուրուբերան, արեւմուտքէն Բասէն, իսկ հիւսիսէն Հաւնունիք, Գարեղէնք և Ճակատք։ Ըստ արդի աշխարհագրական բաժանման հին Բագրեւանդ գաւառին այժմ կը համապատասխանեն Տիւտուին, Գարաքիլիսէ, Ալաշկերտ և Ախթամար վիճակներն։ Բնական դիրքով գաւառս բաժնուած է երկու զեղեցիկ դաշտագետիններու։ Արեւելեան դաշտագետինը որ պատմութենէ ծանօթ է Ջիրաւ անուամբ, կը տարածուի Նպատ լերան հիւսիսային և արեւելեան կողմերը։ Այս դաշտի միջավայրէն կը հոսի Եփրատ (Մուրատ) գէպի արեւմուտք, այստեղ է Ս. Յովհաննու հոչակաւոր վանքը՝ հին Բագաւանի կամ Դիցաւանի տեղը, ինչպէս նաև Տիւտուին գիւղաքաղաքը, որոյ հարաւային կողմն կան բազմաթիւ ջերմուկներ։ Արեւմտեան դաշտագետինը կը տարածուի Սուկաւէտի արեւելեան հարաւ մինչև Ջիրոյ հայ գիւղը։ Բագրեւանդայ արեւմտեան մասն որ Ա֊լաշկերտ ևս կը կոչուի, բռնած է մեծաւ մասամբ Շէնհան գետոյն ձախ հովիտը, յորում են Թօփրաք֊գալէ (Վաղարշակերտ) և Գարաքիլիսէ վիճակապետութիւնները։

Բագրեւանդ գտնուելով մեր նախնեաց Հայկազանց հնագոյն բնակավայրերու մէջ տեղ, այսինքն Ա֊յրարատայ հարաւակողմը և Տուրուբերանի Հարք և Ապահունիք գաւառաց հիւսիսակողմը, տարակոյս չկայ թէ իւր մէջ բնակեցան Հայկայ սերունդները։ Ի սկզբանէ յարակից մասն եղած է Ա֊յրարատայ, և անուան կազմութիւնն ալ յատուկ ձեւ մը ունի, և ո՛և է տոհմի մը կամ ազգի սեփհականուած չէ։ Դժուար է անուանս ճիշդ ստուգաբանութիւնն ընել, թէև անդամանիկը ծանօթ է տեղական նշանակութեամբ հանդոյն ուրիշ քանի մը գաւառաց, ինչպէս Վանանդ, Մարանդ, Զարեւանդ, են. բայց բուն անունը Բագր կամ Բագրեւ չի դիպչուիր հայկական է, թէ պարթեւական Բագ (պիք) անունն է, որ ունի հաւանական կը թուի, իր գլխաւոր շէնը լինելով Բագաւան կամ Բաղնեաց աւան։ Մեր դպրութենէն առաջ, օտար ազգաց ծանօթ եղած սակաւաթիւ անուններէն մին է և Բագրեւանդ, վասն զի կը յիշատակուի Պաղովէոն (ե. ԺԹ) Բագրաւանդեան կաչմամբ Βαγραυανδηνή, և զանազան ձեռագրաց դրութեան համեմատ Բագրաւդաւանեան Βαγραυδαvηνή։ Աբբունի սեփհականութեան մասն լինելով ի հնումն, չունի առանձին տոհմային պատմութիւն և ոչ զօրաց գունդ աշխարհախումբ բանակի մէջ, ինչպէս նաև նախարարներ և իշխաններ։ Քազաքականէն ունի նշանաւոր եղած է գաւառս եկեղեցականին, կամ լաւ ևս կրօնականին մէջ. վասն զի քրիստոնէութենէն իսկ առաջ հոս հաստատուած են կրօնական պաշտամունք և գաւառիս պայծառութեան և զարգացման մեծապէս նպաստած։ Հին հեթանոսական պաշտամանց Ս. Լուսաւորչի ձեռքով յաջորդեցին քրիստոնէական տօներ և հանդէսներ։ Ս. Գրիգորէն հաստատուած է գաւառիս եպիսկոպոսութիւնը. այս եպիսկոպոսներէն ոմանք կը յիշուին ի գիրս։ Մինչև Մ. Խորենացիի ժամանակը գաւառիս եպիսկոպոսը կ'իշխէր նաև Աբշարունեաց վրայ։ Գաւառիս Տուրք անուն եպիսկոպոսը կը յիշուի Մակարայ Երուսաղէմի հայրապետի թղթոյն մէջ, յորում կը կոչուի նաև եպիսկոպոս Բասենոյ. և ինչպէս կ'երևի սա պատասխանութեամբ կ'ուզէր առանձնել նաև արքեպիսկոպոսական պատիւ։ Մեծն Ներսէս Յունաստան զացած միջոց, Ս. Խադ որ նոյն ժամանակ սարկաւագապետ էր, եպիսկոպոս ձեռնադրեց գաւառիս և Աբշարունեաց։ Խադ յայնմհետէ իւր փեսայն Աստիկ։ Հինգերորդ գարուն վարդանանց ժամանակ Բագրեւանդայ եպիսկոպոս կը յիշուի Արտաշատու ժողովին մէջ, Եզնիկ կամ Եզնակ անն, որ կը կարծուի Կողբացին, և ասոր յաջորդած կը թուի Մովսէս Խորենացին։ Ակնկ դրեթէ դար մը միջոց չեն յիշուիր գաւառիս եպիսկոպոսունք, բայց միայն 525 թուին Տիրիկ և քանի մը տարի վերջը ոմն Մարկոս. յետոյ Ը գարու սկիզբը Ստեփանոս։ Ստեփանոսէն վերջ Բագրեւանդայ անուամբ եպիսկոպոսք ծանօթ չեն և կամ չեն յիշուիր մինչև ԺԴ գար, յորում կը յիշուի Թադէոս եպիսկոպոս Բագրեւանդայ։ ԺԴ դարէն մինչ ԺԷ ժամանակամիջոցի եպիսկո֊

պատուոյ ևս յայտնի չեն. իսկ ժէ. դարէն սկսեալ մինչև ցայժմ գաւառիս եպիսկոպոս կը համարուին Ս. Յովհաննու վանուց ա-ռաջնորդները։

Բագրեւանդ իւր ժէ.երկրեայ դիրքովը և երկայն տարածութեամբը, շատ քաղաքական դէպքերու ենթակայ և ականատես եղած է։ Յունաց և Պարսից բազմաժեայ պատերազմաց ժամանակէն կը յիշուի. խօսքով Ա. Աթուշէվան (576ին) փոքր Հայոց տա-հմանները պիտած տաճն գաւառս անցաւ.



181 • Ահմէտ Մուխթար Փաշայ սալարապետ։

ինչպէս նաև Հերակլ կայսրը Պարսից վրայ պիտած ժամանակ։ — Աբշակունեաց թագաւորութեան վերնալէն վերջ՝ մեր աշխարհի արեւմտեան մասին հետ, գաւառս ալ կը թուի թէ անցած է Յունաց կայսերաց տիրապետութեան տակ. իսկ առանձին հայկական տէրհականութիւն եղած կը թուի՝ նախ կամ տարական իշխաններու, որոնց բնիկ երկրին Երասխաձորի տահմանակից ևս էր տարաւային կողմէ. և Աբաբացւոց հին պատմիչները, կը վկայեն, թէ իրենց աշխարհակալութենէն առաջ, Շիրակ և Բագրեւանդ մէկ իշխանի տիճակ էին. և կ'ըսեն թէ Հայոց կողմանց առաջին նուաճողն է Հապիպ զօրավարը։ Աբաբացւոց նուազելէն կամ Հայոց յունական բաժինը մեկնելէն վերջ, (Ը դարուն), կ'երեւի թէ Բագրեւանդ վիճակած է Մամիկոնեանց տոհմին, և ինչպէս է անոնց ձեռքը մինչ ժ. դար, որուն անդրադարձ քաղաքական թիւններ և պատերազմներ ըրին Աբաբացւոց բանակալութեան միջոց. ինչպէս Մուշեղ Հրանատ կամին սրդին (771—3 թուականներուն) հարստահարող հարկահաններէն իր բնիկ Տարօնոյ գաւառէն հալածելէ վերջ, և կաւ նաև Բագրեւանդ և քաղաքիսամբ յաղթեց այլազգեաց։ Ժ. դարուն վերջերը, այլազգիք մասամբ մը ապականեցին այս գաւառս, երբ ի վրէժխնդրութիւն ընդդէմ Գաթի կիւրապաղատի Մամիկոնի ոստիկանին ձեռքով խմբուած էին, և ինչպէս կը գրէ Ասողիկ (Գ. ԼՀ.), « . . . զամբարօք և ջահիւք այրեցին զդիշերն ամենայն զկողմն Բագրեւանդայ՝ յոլով շէնս՝ որ ըստ արեւելից. և ինքեանք զարձան յերկիր իւրեանց»։ Ուրիշ բազմաթիւ պատերազմներէ զատ յիշելու արժանի է գաւառիս մէջ երկու խրոխտ բռնակալաց Լէնկթիմուրի որդւոյն Նահ—Ռուհի և Գարա Իւսուֆի որդւոյն Աբդնաւրայ պատերազմը, որ տեղի ունեցաւ 1422 թուին։ Թ. Մեծափեցւոյ պատմութենէն յայտնի է որ գաւառս Թուրքմանաց բանակի տեղի եղած է, գուցէ անոնցմէ իսկ առաջ ծաւալած էին այս կողմերը Քրդերը, ուր իրենց գլխաւոր ցեղը Բազուկի կը կոչուէր։ Գարաւս սկիզբները և այժմ այս կողմանց հզօր և բազմաթիւ ցեղը կը կոչուի Մեգիքանլը կամ Միվքանլը, որը ազգակից են Հայաւերանլը Քրդաց։ Օսմանեանց և Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ, երբ Ռուսք նըւաճեցին Պայէզիտը, ապատամբեցան նաև գաւառիս Հայք, բայց հաշտութեան պայմանէն վերջ, վախնալով Թրքաց վրէժխնդրութենէն, հարիւրաւոր ընտանիքներ թողլով իրենց հայրենի հողը և գերեզմանները, Ռուսաց բանակին հետ գաղթեցին Շիրակայ ափերուն մասին մէջ, ուր կը բարգաւաճին մինչև ցայսօր զանազան գիւղերու մէջ տարածուելով։ — Այսպիսի պատերազմական դէպքեր և գաղթականութիւններ եղան նաև

1877 տարւոյ պատերազմի միջոց՝ Վան դի Ռուսները Տիատինի և Պայէզիտի նուաճելէն վերջ, մայիսի կիսուն իջան այս գաւառս հայկազն Տէր Ղուկասովի առաջնորդութեամբ, և շատ օրեր Բագաւանի մէջ բանակելով, յետոյ յունիս կին եկան տիրեցին նաև Գարաքլիսէ աւանին, որովհետև անկէց ալ հեռացած էին Թուրքերը, և պահովեցին Շահ-Հօլի լեռնանցքը, որով և իրենց կազդուրան գանուող գնդին հաղորդութիւնը։ Յետոյ առաջ գալով տէր Ալեշկերտ վիւրաբաղաքը և Զէյտիկեան վիւրը։ Ակէկ վերջը մինչ կ'ուզէին արշաւել Բասենի դաշտերը օսմանեան բանակին վրայ, անոնց քաջ սպարապետը Ահմէտ Մուխթար փաշայ, փութով գրկից ասոնց վրայ զՄահմուտ փաշայ, որ անցնելով Տրամ լերան Սեու կապանէն (Գարա-ալբուկնա), բանակ դրաւ յարմար տեղ մը, այն լերանց լանջից վրայ՝ որ կը նային Ալաշկերտի դաշտը։ Յունիսի 16ին բանակները բաղխեցան, և մեծ կռիւ լինելէն վերջ, Թուրքաց զօրավարը ետկոտալով, ետ մղուեցաւ անոնց զօրքը, որոնց հետ նաև անդրիացի Բէմպոլ զօրավարը։ Ռուսներն ալ ետ գառնալով բանակ դրին Տաղար գիւղի մօտ Տրամ լերան առաջատը. ուր իրենց հասաւ Մուխթար սպարապետը (յունիս 20ին), և մեծ ջանքով բարձրերան մը վրայ հանել տուաւ եօթը մեծամեծ թնդանօթներ, որուն համար Թուրքերը այն լեռը Թօփ-տաղ կոչեցին։ Աւսրդ օր մը յաջողութեամբ ռումբ ձգեցին Ռուսաց բանակը, որք նոյնպէս քաջութեամբ պատերազմեցան, բայց Տէր Ղուկասով տես նելով թէ մթերքները կը պակսին, 500 հոգի կտրանցնելով ետ դարձաւ. իսկ Մուխթար լսելով որ թշնամեաց ուրիշ գունդ մը կը դիմէ իր Զայիմի բանակին վրայ, փութաց այն տեղ Լօռիս Մելիքովը վտնելու։ Ռուսները Բագրեւանդէն մեկնելէ վերջ, շրջակայ լեռներէն վար իջան Քրդերը, ոչ միայն Տէր Ղուկասովի բանակին թողածները աւարելու, այլ և Հայոց գիւղերը կողոպտելու համար։ Այս պատճառաւ և Թրքաց երկիւղէն 2000էն աւելի հայ ընտանիքներ Ռուսաց բանակին հետ անցան Ռուսաստան, շատ տառապանքներ կրելով օտարութեան մէջ, որոնց մէ շատերը մեռան խեղճութենէ, կէսը միացին իրենց գացած տեղերը, և կէսն ալ ազդակցաց ողորմութեամբ վերադարձան իրենց ամայացած տուները։ Վերջին տարիներս ալ ոչ սակաւ թշուառութենէ ետեմակայ եղան գաւառիս Հայք, և շատեր գաղթեցին Ռուսաց քաժինը։ Գաւառիս վրայ առանձին գիրք մը հրատարակած է Մ. Հայկունի Բագրեւանդ Զրարաշէ գաւառ վերնագրով, տպուած 1894ին Մ. Էջմիածնի տպարանը։ — Այբարառ, 520–526։ Յառգր. հին Հայաստ. 402–412։ Եւ այլն։ Տես ԱԼԱՇԿԵՐՏ։

ԲԱԴՆՈՑ.—Եօթանասուն կամ ութսուն տուն բազկացած վիճակ մի է Տարսւրերանի Ալաշկունեաց գաւառի արեւելակողմը. բուն այժմեան բաժանման կ'ընկնայ Մանազկերտի, Ալճէշի, Ալեթապի և Ծաղկոտն գաւառի մի ջավայրը և կը պատկանի Ալեթապի կառավարութեան։ Երեք հայ գիւղեր կան վիճակիս մէջ, որոց վրայ կ'իշխէ Հայաբերդի Հիւսէյն աղան։ Այս տեղ խանում անունով աղջկան մը գլխէն անցած են մեծ դէպքեր՝ Գիւլլիգարէն աւելի, զոր փախցնել տուաւ Մուսա Պէյ։ Բազմոց քննութեանց կը կարծուի, որ հին եկեղեցիներ և սրատաճիկի աւերակաց կայտեր, ինչպէս նաև 3–4 սեպագիր արձանագրութիւններ։ Վիճակիս հայ բնակիչը գաղթած են ի Ռուսիա. այդ պատճառաւ այժմ խիստ սակաւաթիւ են։ Եւկիրը ընդհանրապէս գաշտային է և խառաւեալ։ — Բագրեւանդ, 319–320։

ԲԱԴՐԱԹԻ. — Գիւղ Զմշկածագու առաջնորդական թեմին. ունի 1 եկեղեցի Մ. Յակոբ, և 12 տուն հայ բնակիչ։

ԲԱՂ. — Հեքիարիի վիճակներէն մին։

ԲԱՂ. — Գիւղ Վասպուրականի Աղբերանի գաւառի մէջ։

ԲԱՂԱԲԵՐԴ կամ ԲԱՂԿԵՐՏ. — Գուգարաց Ծորոփոր գաւառի մէջ, անառիկ դիրքի մէ բլրակի մը կառուցած է Հայոց Բագ նահապետը, ինչպէս կը պատմէ Վարդան։ Կրաշէն է և մեծամեծ քարերով. շրջապատեալ է արուարձաններով, հոս կը տեսնուին խիտ ու խիտ բնակութեանց տեղեր, և մզկիթ ծառեր։ Բերդս կ'ընկնայ Խոտակերտ աւանին արեւմտեան հիւսիսային կողմը. դիմացէն խոխոջալով կը վազէ Լալվա-

րուռ գետակը։ Բազարերդ շատ անգամ ա-պատանարան եղած է բրիստոնէից, և Պար-սից կառավարչ յարձակմանց դիմաց մեացեր է անառիկ։ — Ջալալ. Ճնապրհ. Ա. 83։

ԲԱԶԱԲՈՒՆ. — *Գիւղ Ջմշկածագու առաջ-նորդական թեմի. ունի 1 եկեղեցի Ս. Աս-տուածածին, և 21 տուն հայ բնակիչ։*

ԲԱԶԱՐԱՇԵՆ. — *Կը յիշէ այս անունեմբ ընդարձակ երկիր մը, Սիմէոն կաթողիկոս, որ սեփհականութիւն է եղեր Աղբարատայ կառավարչաց Զաքարեանցուց։*

ԲԱԶԱՐ ՁԱՁ. *Տես* ՊԱԶԱՐ ՁԱՁ։

ԲԱԶ–ԲՈՒՆԹ. — *Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմի. ունի 6 տուն հայ բնակիչ։*

ԲԱԶԵՆԻՑ ՎԱՆՔ (Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ). — *Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւառակի մէջ։ Մենաստանս այժմ անշուք և ողբալի վի-ճակ մ'ունի։ Նոյն գաւառակի մէջ, վանաց մօտ կայ Բազենից, ըստ ոմանց Բազմաբից, հայաբնակ գիւղ մը, որ ունի քարաշէն և-կեղեցի մը՝ Ս. Թէոդորոս։*

ԲԱԶԵՒ ԲԵՐԴ. — *Կիլիկիոյ հին բերդերէն մին։*

ԲԱԶԿԱՒԻՁ. — *Կարնոյ պաշտ գիւղերէն մին, քաղաքէն $3^1/_2$ ժամ հեռու հիւսիս ա-րեւմտեան կողմը. ունի 25 տուն բնակիչ՝ մեծամասնութիւնը Թուրքք։*

ԲԱԶԿԵՐՏ. *Տես* ԲԱԶԱԲԵՐԴ։

ԲԱԶՄԱՆԱԿԻՔ. *Տես* ՀԱԲԱՆԴ։

ԲԱԶՄԱՂԲԻՒՐ ԱԻԱՆ. — *Բարձր Հայոց Մանանաղի գաւառի սահմանաց մէջ. կը յիշէ Լաստիվերացին։*

ԲԱԶՄԱՇԵՆ կամ ԲՈՋՄԻՋԻՆ. — *Գիւղ Աղբարատայ Բագրեւանդ գաւառի, Մօղա Ջաւէի արեւելեան կողմը. ունի 15 տուն։*

ԲԱԶՄԱՒԻ. — *Հայանուն՝ բայց Թեմա-բարնակ փոքրիկ գիւղ, Սիւնեաց Գողթն գաւառի՝ Վանանդաձորի մէջ։*

ԲԱԶՄԵՆԻՑ. *Տես* ԲԱԶԵՆԻՑ։

ԲԱԶՈՒ–ՁՈՐ. — *Այս անունեմբ ձոր մը կը յիշուի Աղբարատայ Կոգովիտ գաւառի մէջ։*

ԲԱԶՈՒՄ կամ ԲԱԶՈՒ. — *Գիւղ Տուրու-բերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի մէջ, Ս. Կարապետէ 1 ժամ հեռաւորութեամբ. բնակիչք Հայք և Թուրքք խառն։ Ի հնումն բազմամարդ աւանավուղ մի էր սա, որուն հանար Ջենոբ (38) կ'ըսէ. «Իսկ Բազում որ Թարգմանի Բազմաց կայան, (ունի) երդս՝ երեք հազար երկերիւր. հեծեալս՝ հազար քառասուն, ազեղնաւորս՝ ութ հարիւր քա-ռասուն, և տիգաւորս՝ վեցհարիւր ութսուն»։ Գիւղս Ս. Կարապետի վանաց տասուերկու կալուածներէն մին էր։*

ԲԱԶՈՒՄ. — *Լես Գուգարաց Տաշիրք գա-ւառի մէջ։*

ԲԱԶՈՒՆԻԲ. — *Վարդան այս անունեմբ ևս կը կոչէ Բազարերդը։ Անշուշտ նոյն բեր-դի շուրջը գտնուած մեծաքար աւերակները, հին ժամանակ աւան կամ քաղաք մը կը ձեւացնէին, որ կը կոչուէր Բազումնք։*

ԲԱԶՊԷՆ. — *Գիւղ Կիւմիւշխանէի, ունի պատուական, սպիտակ և շատ քաղցր ջուր։*

ԲԱԶՐԻԱ. — *Գիւղ Արզուխի, 40 տուն Թուրք բնակչօք։*

ԲԱԹՈՒՄ. *Տես* ՊԱԹՈՒՄ։

ԲԱԹՈՒՆՁ. — *Թրքաբնակ գիւղ Աղբարատայ Արագածոտն գաւառի մէջ, որ Անբերդու վիճակին յետին սահման կը համարուի։ Գրի-գոր Մակուեցի կաթողիկոսը 1431–2 թուա-կանները գնեց գիւղս Պարսից Ռուստամ ա-միրայէն, և համարուեցաւ Էջմիածնի սեփհա-կան հօծն գիւղերէն մին, զոր վերջը նորէն Պարսիկները գրաւեցին։ Բանախնձ էր երբեմն կաթողիկոսներու ամարանոցը, և հոն էին խոտ հնձողք և երկնց արօտները։*

ԲԱԺՈՒՆԻԲ կամ ԲԺՈՒՆԻԲ. — *Վասպու-րականի հին գաւառներէն մին։ Խորենացին այս անունեմբ գետ մը ևս կը յիշէ Բժու-նեաց գետ, Հոիփսիմեանց ճանապարհոր-դութեան պատմութեան մէջ։*

ԲԱԼԱ ԲԱԼԱՑ. — *Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմին. ունի 8 տուն հայ բնակիչ։*

ԲԱԼԱԽԱՆԻ. *Տես* ԲԱԳՈՒԻ։

ԲԱԼԱԽԱՏԱՓ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԲԱԼԱԽՈՂՎԻՑ. *Տես* ԲԱԼԱՂՈՎԻՑ։

ԲԱԼԱԽՈՌ կամ ՊԱԼԱԽՈՌ. — *Գիւղ Բա-բերդի՝ գրեթէ չորս ժամ հեռու՝ արեւմտեան կողմը, Կիւմիւշխանէի ճանապարհին վրայ։ Կառուցուած է բարերեր դաշտի մը վրայ, 5015 ոտք ծովուն երեսէն բարձր, հոս կ'իջեւանի կարաւանը։ Բնակիչք Հայք և Թուրքք խառն. Հայք 90 տուն են, և ու-*

նին 2 եկեղեցի։ Ինճիճեան կը յիշէ գիւղիս մէջ Մ. Գեորգ անուամբ մենաստան մը, ո՛րոյ այժմեան վիճակն անծանօթ է։

ԲԱԼԱԽՈՎԻՏ. — Վասպուրականի հին գաւառներէն մին։

ԲԱԼԱՀՈՎԻՏ կամ ԲԱԼԱԽՈՀՈՎԻՏ. — Զորրորդ Հայոց մէկ գաւառը, որուն պէտառը քաղաքն է Բալու։

ԲԱԼԱՍ ՁՈՐ. — Կը յիշուի Աղբարատայ վանանդ գաւառի մէջ։

ԲԱԼԱՑ. — Գիւղ Սիւնեաց Ոզուկ գաւառի։

ԲԱԼԻ. Տես ՊԱԼԻ։

ԲԱԼԻՆՋԻ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական Լ՚՛ թեմին. ունի 10 տուն հայ։

ԲԱԼՈՎԻՏ. — Անառասախտ հովիտ Համշէնի, լի գազաններով։ Հոս կը գտնուի վայրի այծ, որ մինչև հարեմ չափ կը մեծնայ, և տարուան մէջ երեք անգամ մորթին գոյներ կը փոխէ. կը գտնուի նաև արջ։ Հովտիս միջէն կ՚անցնի Բաղովիտ անուամբ ջուր մը, որ կը խառնուի Համշէնի գետոյն հետ։

ԲԱԼՈՒ. Գղ. PALOU. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառակին, Տիգրանակերտի կուսակալութեան Աղղանայի գաւառին մէջ։ Ըստ հին աշխարհագրութեան կ՚ինկնայ Զորրորդ Հայոց Բալահովիտ գաւառի մէջ։ Կառուցուած է Արեւելեան Եփրատի կամ Աղստծանիի հիւսիսային ափի մօտ, 37° 44′ արեւելեան երկայնութեան և 38° 45′ հիւսիսային լայնութեան մէջ. 90 հգմ. Տիգրանակերտէն հեռու հիւսիսային արեւմտեան կողմը, և Աղղանայի հիւսիսային արեւելեան կողմը 50 հգմ. հեռաւորութեամբ։ Քաղաքին դիրքը խիստ ամէն, ել և էջ և խորտուբորդ է. փողոցներն ալ անկանոն։ Բալու բառը կը թուի թէ հին անուն լինի, և հաւանական է որ Հայոց հեթանոսութեան առեն Բահլ անուն կուռքէն ծնացած լինի. աւանդութեամբ կը պատմեն նաև, թէ այս տեղ քաղաք և բնակութեան տեղի գտնուէ առաջ՝ Բէլուտի խիտ առ խիտ անտառ է եղեր, միանգամայն Բալի ծառեր, որ ցարդ կը գտնուին. երեմեւեսկ ճանապարհորդք և վաճառականք աւազակներէ միշտ կողոպտուելնուն՝ սկսեր են բնակութիւն հաստատել, որպէս զի երեմեւեսկացց ապահովութիւն լինի. որով կ՚երեւի թէ քաղաքս իւր անունն առած է Բալուտէն կամ Բալէն, և կամ Բահալէն։

Քաղաքս գտեսլուած է հովտի մը մէջ, որոյ մի ծայրը օձապտոյտ ճանապարհով կ՚սկսի արեւելքէն և մինչև Բալու կը տեւէ տասը ժամէն աւելի. նոյն հովտին մէջէն կ՚անցնի Աղստծանի գետը, որուն երկու կողմերը և դէմ առ դէմ լերանց տատրտանները զարդարուած են այգիներով և պարտէզներով։ Գետս Բալուայ արեւմտեան կողմը բարձրացած ժայռի մը կը զարնուի, որ եթէ չլինէր քաղաքը մեծամեծ վնասներու ենթակայ պիտի լինէր, ջրոց յորդութեան ժամանակ։ Աղստծանին երեք կողմանէ կը շրջապատէ քաղաքս, որով թերակղզի մը կը ձեւանայ. թաղերը, շուկայն և կառավարութեան պաշտօնատունք այս բաժնին մէջ են։ Գետոյն վրայ փայտաշէն կամուրջ մը կայ բաւական երկայն, որուն մէս կողմը կիրճ է և կապան։ Աղստծանիի ջուրը խիստ քաղցրահամ լինելուն՝ բնակիչք մեծաւ մասամբ կը գործածեն իրեն բմպելի ջուր. մէջը ունի պատուական ձկներ։ Բալուի բոլոր բնակիչք առհասարակ ամէն երեկոյ գետոյս զուարճագեղ ափունքը կ՚գբօսնուն։

Տեղւոյս օդն ծանր է, և գետէն զատ բմպելի լաւ ջուրեր չունենալուն, բնակիչք ընդհանրապէս վատառողջ են և գեղնած գէմքերով. գրեթէ սպիտակ մազերով մէկը չի տեսնուիր հոս, և քիչեր կան որ յիսուն տարին լրացուցած մնանին։ Կենաց ճաշակը խանգարելով, մարքերն ևս հիւանդ. ծանրահամ և ջլատակար թուրմի օդին ջրի բաժակով կը խմեն. և կառաւարտ, խաղող, հայհոյող անձինք են մեծաւ մասամբ. ընդհակառակն շրջակայ գիւղացիք լաւ կեանք կ՚անցնեն, ազնիւ են և առողջառէն։

Բալուն ի հնումն ունեցեր է բազմաթիւ բնակիչներ, որոնք գաղթելով նուազեր են, և 1892ին թուա վ. Բինէի ունէր միայն 7500 բնակիչ հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք և Քուրդք	5500
Հայք	1700
Ասորի սրսրք	1000
Ասորի եպիսկոպք	1300
Գումարն	7500

Ա.յս վիճակագրութիւնը քա.ա մեղ ճիշդ չէ նկատմամբ Հայոց, որովհետև ուրիշ ազգա.ին տեղագրողք աւելի շատ կը գնեն Հայոց թիւը. 1880ին ունէր մօտ 5000 հայ բնա.կիչ, իսկ 1885ին քաղաքիս Հայոց ատոց թիւն էր 550. Նորագոյն գրոց մ'ալ կը գնէ 2600 հայ։ 1870 թուականէն սկսեալ քա.ա.քիս և շրջակայից հայ բնակիչք օր ըստ օրէ կը նուազին. գաղթականութիւնը բա.ւական ժամանակէ ի վեր մնա գատ է այս տեղ և կը շարունակուի։ Հայոց գրեթէ հինգերորդ մասը գաղթած է Կիլիկիոյ կեդրոն Ադանա, իսկ մնացեալները մաս մաս գաղթեր են Թարբերդ, Տիգրանակերտ, Պաղէր Մաուէն, Սեբաստիա, Մալաթիա և Բգին։ Գաղթող Հայոց երրորդ մասին չափ հազիւ կ'աւելնան նորեկ Մահմէտականք, որունք կու գան Թարբերդէն, Ճապաղջուրի շրջակայքէն և այլ կողմերէ։

Բալուն նշանաւոր է իւր հին կիսակործան բերդովն, և հեթանոսական ու քրիստոնէական ժամանակաց վերաբերեալ նշխարքան մնացորդներով։ Հիւսիսային կողմը կը բարձրանայ Ս. Մեսրովպայ լեռը, որուն բարձրութիւնը կը համարուի 3098 ոտք։ Լերանս գագաթը կը գտնուի հինաւուրց բերդը, որ մեր նախնիներէն շինուած կը կարծուի։ Երբ մէկը վեր ելնէ այս բերդը դիտելու, ամէն քայլափոխի կը հանդիպի վիթխարի պարսպաց աւերներու ու բեկորներու. քայքայուած մեծ գունդ մը կը մնայուն միջնաբերդը, ուր կը տեսնուին շտեմարանաց, սենեկաց աւերակներ և գետնայարկ կամարափուլ շէնքեր։ Ա.յս բնակութեանց հետքերէն կը կարծուի՝ որ ժամանակաւ քաղաքը կառուցուած է եղեր բերդի մէջ։ Բերդի հիւսիսային կողմի կը գտնուի բեւեռաձեւ արձանագրութիւն մը քանդակուած ժայռի վրայ, 28 ոտ բաւական լաւ մնացած, գոր օրինակեց և հրատարակեց Լայեարտ. հրատարակեց և մեկնեց Մորման։ Արաւոտ ատանց՝ որ աչօք տեսեր է այս հնութիւնը, կ'ըսէ. « 22 ոտ վերը և 7 ոտ վարը քանդակուած. մէջ տեղը բաց ձգուած էր, ուր ոտ մը արարերէն գիր փորագրած էին » . եթէ հայ ուղեւորիս գրածն ճիշդ է, արձանագրութիւնս 29 ոտ լինելու է և ոչ 28 ըստ եւրոպացի գիտնոց։ Արձանագրութենէն վար գրան պէս տեղ մը կայ, որ կ'առաջնորդէ քարէ փորուած մի քանի մեծ սանդեակներ, որոց միոյն մէջ գերեզմանի ձեւով քար մը կայ, որ Ս. Մեսրովպայ գերեզման կ'անուանուի մինչև ցայսօր. ատկացի Հայք երբեմն երբեմն ուխտի կ'երթան հոն և կը պնդեն աւանդութեամբ, թէ Հայոց գիրերը հոս գտնուեցան։ Ա.յս աւանդութիւնը կը հաստատէ նաև վարդան պատմիչ բսելով. « ի լեռան Բալուայ որպէս ատենին ցուցանի գրուչն ատաղձագործ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խրնկովք և ջահիւք միշտ ի տաճկաց և ի քրիստոնէից բնակչաց տեղւոյն »։ Նոյն ԺԳ դարու մէջ, այս սրբանուէր ճգնատանին մէջ պայծառացաւ Գրիգոր վարդապետը՝ որ նահատակեցաւ ի Խարբերդ, որուն « յանձնեցին գուրբ Մեսրովպայ աղօթանոցն և կայարանն որ առ անառիկ պղպակին, և գուրբ Յակոբ՝ որ էր առաջի նորա. զոր յանձն էառ և շինեաց վերատին գեհկեցին և զվանքն, և կացոյց անդ կրօնաւորս և առաջնորդս » (Յայսմ.). այժմ աւերակ գարձած է այս վանքս և մնացորդքն քննուխեան կը կարօտին։ Ա.յս բարանձաւաց մէջ տակաւին կը ցուցընեն այն տախտակը, որուն վրայ սորքն գրած է հայկական գրերը։ Ներատակոյս Ս. Մեսրովպ պատրաստ գտած է այս քարայրները, որ իրմէ առաջ ո գիտէ քանի նպատակի համար կռներ կոփեր են. բնութեան արձանագրութիւնն ալ մնածել կու տայ թէ շատ հին գործ է։ Բերդի գագաթէն մինչև գետի եզերքը գետնի տակէն ճանապարհ մ'ալ կայ հինգ վեց հազար կանգուն երկայնութեամբ։ Քաղաքիս հարաւային կողմի լերան գագաթը՝ Գոմաւաւրք կը կոչեն աւանդութեամբ, և ուխտի կ'երթան Հայք. հիւսիսային կողմի լերան վրայ Ս. Պօղոս անուամբ վանք մը կայ եղեր ժամանակաւ, որ այժմ կործանած է. հոն ևս ուխտի կ'երթան ժողովուրդք։ Բերդի հաներ դէպի հիւսիս հինգ հարիւր անգ բակացեալ տաճկաց թաղ մ'է, ուր կան երկու ագրիւր և երկու մզկիթ։ Մզկիթներէն մին նորոգուած պահուն՝ հիմանց և պատերուն մէջէն քարէ խաչեր գտուս եղեր են, որունք յա

նի նշան են թէ ժամանակաւ Հայոց եկեղեցի եղած է այդ մզկիթը։

Տներուն մեծ մասը աւերածուած է Ս. Մեսրովպայ լերան գահավայրին վրայ, իսկ մէկ մասն ալ նոյն լերան սարալար։ Լերան ճակատը աներուն մնա, Ս. Թարոս անուանով Հայոց ուխտատեղի մը կայ։ Տները ընդհանրապէս կիսով մասամբ շինուած են բոլորովին հողէ և վրան հողածածկ տանիք, և կիսով մասամբ ալ հող և կէսը փայտ։ Կան նաև երկայարկանի անոր, որ առջինին անին փայտաշէն վանդակներով պատշգամ, ամառը ճեմելու և նստելու համար։ Հայոց եկեղեցիները չորս են. Ս. Աստուածածին, Ս. Լուսաւորիչ, Ս. Աստուածածնին և Ս. Կիրակոս։

Մայր եկեղեցին է Ս. Լուսաւորիչ, որ խիստ հասարակ և հոյակապ շէնք է, խաչաձեւ և գմբեթաւոր. համակ շինուած է կոփածոյ սրբատաշ քարերով, և անի բարձր և գեղատեսիլ կամարակիկ։ Ս. Աստուածածնին եկեղեցին ասկէ գրեթէ 25 տարի առաջ մասամբ մը նորոգուելու ժամանակ՝ աւազ խառնի ներքեւէն բաւական մեծիկ շիշ մը միւռոն գտնուեր է հին ժամանակէ մնացած։ Քաղաքիս եկեղեցիներէն միայն Ս. Աստուածածնի և մայր եկեղեցւոյ մէջ մասունքներ կ'ըլլայ, ժողովրդեան նուիրութեան պատճառաւ։

Հայք ունին երկու երկաթ պարոցներ 150–170 աշակերտներով և 80–90 աշակերտուհիներով, որք կ'ուսանին հայերէն, թուրքերէն և գաղղիերէն։ Քաղաքիս Հայոց մէջ կան 30 տուն բոլոքականներ, որք ունին ժողովարան և երկաթ պարոց մը։ Զորս եկեղեցիներու անուամբ՝ չորս խաչերու բաժնուած են Բաղուի Հայք՝ որոց մեծ մասը յեռին ասոխանի տակ, նոխազաշխատել և երկչոտ են։ Կանայք խարբերդու և Զարսանճաղի կանանց նման չելիով կամ եազմայով կը ծածկեն բոլորովին իրենց գլուխ ու երեսները, և չեն երեւար ու չեն խօսիր մարդոց, բայց շատ աշխատասէր են, անապար և բարեպաշտ։ Տեղւոյն Հայոց գլխաւոր պահանջմունքն այն է, որ իրաւու հետ սիրով չեն, միշտ գիրար կ'ատեն ու կը թշնամանեն։ Գովեստից արժանաւոր են Մեսրովպեան ընկերութիւնը որ կը նպաստէ վարժարանաց, և Բարեսիրաց ընկերութիւնը, որոյ նպաստակն է տեղւոյն աղքատաց օգնութեան հասնիլ։ Բալուցիք

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԲԱԼՈՒՑԱՑ

ՀԱՑԱԲՆԱԿ ԳԻՒՂԻՑ

ԱՆՈՒՆԱՆՔ ԳԻՒՂԻՑ	եկեղեցի	տուն
1. Հաւսա	2	160
2. Մրջման մեզրէ	1	27
3. Գամիչլի	1	11
4. Արղան, Արթեան	1	31
5. Խարաբովք, Գարբպէօրք	1	23
6. Կրպայ մեզրէ, Կրբոցիկ	—	8
7. Օղու, Եղ, Օխու	1	27
8. Թէփէ	1	40
9. Տիլիմիլի	1	4
10. Քուրթքան	—	4
11. Գուրքէթ	1	20
12. Գամպէր-Հէյլ	—	3
13. Ճանիկ	—	25
14. Պաղին	—	6
15. Քարնձոր	—	5
16. Խանխո	—	3
17. Տէմիրճի	—	2
18. Գարագայայ	—	4
19. Տէվեճի	—	15
20. Խաապէկ	1	30
21. Խաշմաթ	1	82
22. Նպշի	1	20
23. Երխի	1	28
24. Ապրանք	1	20
25. Շենագ, Զինագ ?	1	45
26. Պղամ	1	35
27. Ապրաթ	1	55
28. Զէթ	1	70
29. Ողուն Օպայ, Ուզունովա	1	25
30. Ուզունովայի մեզրէ	—	6
31. Կաճառ, Խաճար	1	15
32. Ավզավա	—	15
33. Պաշարաթ	—	10
34. Հէլգամ, Հազար դամ	1	20
35. Գարակէլիկ	1	12
36. Կիւլիւշկեր	1	20
37. Ախմեան	1	47
38. Նոր գիւղ	1	18
39. Նոր գիւղի մեզրէ		20
40. Գաւթիք գիւղ	1	20
41. Նորշնակ, Նորշինակ	—	5
42. Սրին	1	7
43. Պաղին	1	170
44. Նաճարան	1	15
45. Թրխէ	1	44
46. Թիլ	1	25
47. Քէնիքէռլի	—	20
48. Զայխրի մեզրէ	—	15

մաքուր հայերէն կը խօսին և տեղական պիտոյից աւէն արհեստներն գիտեն թէ՛ քաղաքացիք և թէ գիւղացիք, շատ ալ տգէտ չունին։

Բալուն իր գիւղերով միասին, բաղդատմամբ Խարբերդի, Փերիի, Աբարկերի, Պադրր Մաւէնի և Կիւմիւշ Մաւէնի, առաջինն է բարեկեցութեան կոչմանէ։ Իր բերքերն են ցորեն, գարի, բամբակ, շուշմայ, կտաւատ, սոգ, սիսեռ, կանեփ, խաղող, գինի, պանիր, իւղ, մեղր, ընտանի անասուններ. գուրս վաճառքի կը դրկէ խէժ, շրէշ, աչխարի և այծի մորթ, բուրդ, մեղրամոմ, նուշ, ապուխտենի, եւն։ Լերանց մէջ կան պտենձի և արծաթի և ուրիշ հանքեր։ Քաղաքի մէջ բաւական ծաղկած է կօշկակարութիւնը, ընտիր կօշիկներ կը պատրաստուին ու կ՚արտահանուին. նոյնպէս տարածուած է մետաքսագործութիւն, որուն գործարանէրն են. Պալեան և Ֆաթիշեան եղբարք. այս տեղ կը պատրաստուին ընտիր մետաքսներ և կտաւներ, ու կը փոխադրուին Խարբերդ, Տիգրանակերտ, Բիլ, Ճապաղջուր, Մուշ և Զարտարեճագ։ Տեղւոյն բամբակը անուանի է, հայ գիւղացիներու մէջ 10000—աւոր լիտր բամբակ հանող ընտանիքներ կը գտնուին, որ կը փոխադրուին Եւդոկիա և այլ տեղեր։ Թօշմաթլեան, Աբրահեան, Փոսչեան, Լարճեան և ուրիշ մի քանի վաճառականներ, աւէն տեսակ ապրանքներ կը առանան կ. Պոլսէն և Բերիայէն։ Իսկ Գամասիսէն մեծ քանակութեամբ գաւիթի կաշի կ՚արտահանեն Բարսեղեան և Թորիկեան եղբարք։ Միւս արհեստները ամբողջովին Հայոց ձեռքն են. թէև այլազգիք հայերէն եռապատիկ շատ են, բայց աւէնքն ալ առանց արհեստի են կամ թափառաշրջիկ, կամ այգեպան, պարէկպան և մրգավաճառ։

Բալուի գաւառակի մէջ հողերը գրեթէ բոլորովին պէկերու և աղանեբու սեպհականութիւն են. Հայք և Քուրդ յաճախ ջանքեր ըրած են խնդիր մատուցանելով կառավարութեան, սակայն չեն յաջողած պէկերէն իրենց վրայ պարձրնելու հողերը. հարիւրէն մէկը հազիւ Հայոց սեպհականութիւն կայ, զոր մասն առ մասն գնած են. բայց անոնն և այգիները տեղացւոց սեպհականութիւնն են։ — Գաւառակիս տարածութիւնն է 3376 քառ. հազարամեայ, հետեւեալ կերպով բաժնուած.

Հերկելու երկիր .	2435 քառ. հղմ.	
Լեռնային մասեր.	514 »	»
Անտառք . .	427 «	«
Գումարն...	3376 քառ. հղմ։	

Արդի աշխարհագրական բաժանման համեմատ, ինչպէս կը գնէ Վ. Քինէ, Բալուն ունի 8 վիճակներ և 365 գիւղեր։ Մենք առանձին ուշադրութեան վիճակի հայաբնակ գիւղերը, որոնց թիւն 48ի կը հասնի։ Այդ գիւղերու վիճակագրութիւնն կազմած ենք Արուանձտեանցի (1 84տ.) և Նալբանեանի (1880տ.) տեղագրութեանց համեմատ։ — Բալուի լեռներէն յիշենք նշանաւորները, Գոհանամ, Կապան—տաղ, Մավը—տաղտար, որոնք զարդարուած են ընտիր անտառներով, ուր կ՚աճին կաղնի, բարդի, գաւին, նոճի, ուռի, կաղամախի, ընկուզի, ձմրան խնձորենի, ձմրան տանձենիներ և սալորենիներ։ Արածանիէ զատ հոս կան քանի մը գետակներ՝ Վարդենիկ—չայ, Պալդայա—չայ, Տերեկեան Առյոռ և Ճառօ—չայ, Ոզոռենովա—չայը. ամէնքն ալ կը թափին Արածանիի մէջ։ Բալուն ունի նաև նշանաւոր ջրվէժ մը, քաղաքի հարաւ—արեւելեան կողմը, Արածանիի հարաւային ափանց մօտ, Գոհանամի լեռնաշղթայի և Կապան լերանց մէջ տեղը, որ գետի մակերեւոյթէն 300—350 ոտք բարձր բարաժայռէն կը թափի Ծուրբաց կոչուած ձորի մէջ, և առաջ վազելով Մուրատ—Քէօփրիի արեւմտեան կողմէն կը խառնուի Արածանիի հետ։ Մուրատ—Քէօփրուսը բուսած կամուրջը ձգուած է Արածանիի վրայ Բալու քաղաքի ճիշդ դիմացը։ մօտաւորապէս 200 տարուան շինուածի է, տաշտած սեւ և բսպիտակ բարերով. 8 կամարներէ կը բաղկանայ՝ իրարքանչիւր բար հատ երկաթով և կապարով ամրապնդուած է։ Բալուն ունի երկու վանք. Հաւուց վանք կամ Քաղցրահայեաց Ս. Աստուածածին, և Պաղինու կամ Ս. Թադէ վանք, որոնց նկարագրութիւնը իրենց կարգին։ — Արտօսր Հայաստ. 15—102։

Թորոս Աղթաց, Բ. 154–171։ Արաքս, 1897 Բ. 38–44։ եւ այլն։

ԲԱՂՈՒԱ. — Փոքրիկ գիւղ Գուգարաց Տաշրաց գաւառի։ (Վախուշտ)։

ԲԱՂՔԱՆ. Տես ԲԱՂԷՇ։

ԲԱԽՇԻ կամ ՀԱՃԻ ԳԻՒՂ. — Արցախի Գարդման գաւառի մէջ, կառուցուած է ձորակի մը ձախակողմը։ Բնակիչք 1870 թուին եկած են հոս Հաճի–բէհնոյ ամարանոցէն, կառավարութեան հրամանով։ Ունին քարուկիր եկեղեցի մը, Ամենափրկիչ, ներսը ունի 1630 թուականաւ արձանագրութիւն։ Գիւղս յայտնի չէ թէ երբ աւերակ դարձած է. ունի ընդարձակ հին գերեզմանատուն։ Բախշիի այժմեան բնակիչք են 36 տուն։

ԲԱԽՈՒԱՆՑ.—Գիւղ Վասպուրականի Ծըղտունեաց գաւառի մէջ. ունի 30 տուն հայ բնակիչ, և Ս. Ատտուածածին եկեղեցի մը։

ԲԱ–ԽՈՒՍ. — Գիւղ Տիգրանակերտի Չորբորդ թեմին մէջ. հայ բնակիչք են երեք տուն։

ԲԱԿ. — Հայաբնակ փոքրիկ գիւղ Շատախու (Վան). ունի Ս. Քրիստափոր քարուկիր եկեղեցի մը։

ԲԱԿԱՎԱՆԵՔ. Տես ՉՈՐՔ։

ԲԱԿԱՓՈՐ. Տես ՍՈՂԲ։

ԲԱԿԵԱՐ. — Բերդ Վասպուրականի Թոնտաւան կամ Ճուշ գաւառի մէջ, զոր յիշէ Ասողիկ (Գ. ԺԴ)։

ԲԱԿԵՐ. Տես ԱԿՆ։

ԲԱԿԵՐՏ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԲԱԿՈՒՐ. — Կը յիշուի Արծնոյ մէջ. տեղեկութիւնք կը պակսին։

ԲԱԿՈՒՐԱԿԵՐՏ. — Աւան մի էր Վասպուրականի Մարանդ գաւառի մէջ. հոս հիւանդանալով մեռաւ Հայոց Աբուսահլ Բ թագաւորը։ Թ. Արծրունին նոյն Աբուսահլ Բ թագաւորի վարուց մէջ այս աւանս կը դնէ Մարաց աշխարհի մէջ, ըսելով. «Գայ գառնէ վախճանեալ զթագաւորն Աբուսահլ ի Մարինդ, և մեռանի անձամբ ընդ այլ շղամարարան յաշխարհին Մարաց ի Բաղկռաբակերտ աւանի»։ Կարելի է որ նոյն ժամանակները Վասպուրականի այս մասն Մարաց իշխանութեան ներքոյ գտնուելով, կը կոչուէր Մարաց աշխարհ։

ԲԱԿՈՒՐԻ ՎԱՆՔ. Տես ԲԱՂՔ։

ԲԱ–ՀԱՋԻԿ. — Գիւղ Տիգրանակերտի երրորդ առաջնորդական թեմի մէջ. ունի տասը տուն հայ։

ԲԱՀԻՋԱՋՈՐ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԲԱՀԼԵԻԱՆ.—Հայաբնակ գիւղ Շատախու։


ԲԱՀՈՒԲԵՐԴ. Տես ԲԱՂՔ։

ԲԱՂԱԲԵՐԴ կամ ՊԱՂԱԲԵՐԴ. — Հոչակաւոր և հին բերդ Բաղաց սահմանակից Սիւնեաց Զորք (կապան) գաւառի մէջ։ Օրպէլեան (Գլ. Բ) ամրոցիս վրայ այսպէս կը գրէ. «Իսկ ամուրք անառիկք ի սմա, որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տէր մատնեսցէ, Բաղաբերդ. որ և մի ոմն ի գարմից Սիսակայ Բագակ անուն, առեալ զայս գաւառս մատն ժառանգութեան, շինէ զքարն Բագակաց ամրոց, որ կոչի Բաղակի քար և ամրացուցանէ զբերդն, և կոչէ Բաղաբերդ»։ Այս տողերէն կը յայտնուի որ Բագակ նահապետը իր անուամբ կոչեց նախ քարաւերը, որուն գագաթը յետոյ կառուցանել տուաւ անառիկ բերդս, որ ծանօթ է ցարդ իւր անուամբ։ Այս բերդս Յովհաննէս կաթողիկոսէն կը կոչուի Ամրոց Բաղաց, և Սիւնեաց աշխարհին ամենէն ուժգի ամուր բերդն էր. այդ պատճառաւ պատմութեան մէջ յաճախ կը տեսնուի, որ երբ երկրին բնակիչները փախչիլ կ'ուզէին, տարբ մէջ կ'ամրանային։ Հոս ամրացան բոլոր բնակիչները և Անդոկ իշխանը, Տիգրան քաղաքը կողոպտելէ վերջ. և Պարսից Շապուհ թագաւորն երեք անգամ բոլոր զօրքերովը յարձակեցաւ բերդիս վրայ, և միշտ յաղթուեցաւ, և երբ չորրորդ անգամ կ'ուզէր յարձակիլ, Պարսից մեծամեծ նախարարները Շապուհի առջեւը խնդրելով. «Աղաչեցին մի ևս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին Բագարբերդու, և տալ կտտորել զբեաց գունդս». (Օրպէլ. Գլ. Ը)։ Ուրիշ շատ անգամներ ևս ապատան եղած է բերդս Սիւնեաց իշխաններու և ժողովրդոյ։ Ըստ դարուն Բուզայի հարուածոց ժամանակ. «յոլովք ի տերանցն կուսակալաց (կ'ըսէ Յովհ. կաթ) յանտուիկ ամրոցն Բագաց դիմեալք՝ հաւաքեալք փրծանէին ի ձեռաց նեղչացն»։

Ժ. դարու կիսուն Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսը, ապաստանելով Աշտիխա Մոկացի կաթողիկոսէն, երեն պաշտպան ունենալով Բագաց և բերդիս Զաւանշիր իշխանը, տա-

որ տարի հոս բնակեցաւ, մինչև մահը։ — Օրպէլեանի (Գլ. Կ) պատմածի համեմատ, 1126 թուին Ամիր Հարոնը եկաւ առաւ «քարն Բաղակու որ էր վանք յորում մեծ

թուականին, ըստ պատմչին, կրկին բարկանալով Աստուած Միւնեաց դահանգին վրայ, ամենուն ապաւէնը և ապաստանարանը Բաղաբերդ անառիկ ամրոցը մատնեց



182. Բաղաբերդի տեսարան։ Տպագրութիւն Վենետիկ

բեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կանգուրանք, որ պղծեալ էին ի գաւառացն — և ամենայնն ի գերութիւն մատնեցան» ։ Իսկ 1170

այլազգեաց ձեռքը որք խաբէութեամբ բերդին տիրեցին, և սաստիկ կատաղած ընդէլ վերջ, ամէնը պահուած բոլոր եկեղեցականաց թանկագին անօթներն և սպասները կողոպտեցին։

Այժմ քննութեան և ուսումնասիրութեան կը կարօտին հոչակաւոր բերդիս աւերակ մնացորդներն։ Բերդիս անուամբ Բաղաբերդ կոչուած է երբեմն շրջակայ վիճակն ևս դաւառն։ — Աշխարհաց, 294–295։

ԲԱՂԱԽԱՆԻՔ. — կը յիշուի Միւնեաց (Քաշունիք) մէջ։

ԲԱՂԱԽԱՐ. — կը յիշուի Գանձակի Ճեւանշիր գաւառի մէջ։

ԲԱՂԱԿԻ ՔԱՐ. Տես ԲԱՂԱԲԵՐԴ։

ԲԱՂԱՆՈՒՈՑ. — Փայտակարանի հին գաւառներէն մին։

ԲԱՂԱՐՋԻ. — Գիւղ՝ Սերաստիոյ արեւելեան հարաւային կողմը։

ԲԱՂԷՇ կամ ՊԻԹԼԻՋ. Կղ. BITLIS. Թ. بتليس. — Գեղեցկատեսիլ, վաճառաշահ և անուանի քաղաք Աղձնեաց Մալոյ ձոր գաւառի մէջ։ Ծովի մակերեւոյթէն 4837 ոտնաչափ բարձր է, կը գտնուի վանայ ծովակի արեւմտեան հարաւային կողմը, գրեթէ 5 ժամ հեռու, և Մշոյ հարաւային արեւելեան կողմը 12 ժամ հեռաւորութեամբ։ Մեր հին պատմիչները խնամերով գարձն առած չեն յիշեր քաղաքիս անունն. առաջին անգամ Թովմա Արծրունին կը յիշէ զայն՝ կոչելով շահաստան։ Իսկ վարդան աշխարհագիրը Բաղէշը կը դնէ Տարօնոյ Բզնունեաց գաւառի մէջ։ Քաղաքիս անունն ուղիղ սակս կը յիշուի վերջին գարերու հեղինակութեանց և գրոց յիշատակարանաց մէջ, և մինչեւ անգամ եպիսկոպոսանիստ քաղաք կոչուած է, բայց յայտնի չէ թէ երբ սկսած և հաստատուած է այս տեղ եպիսկոպոսական աթոռ։ Անցեալ գարերու մէջ յիշուած Բաղէշու առաջնորդներէն յայտնի են՝ ոմն Մեսրոպ վարդապետ, 1685 թուին, Աւետիք վարդապետ, Մանասիոս եպիսկոպոս, և այլն։ Բաղէշ անուան ծագման համար աւանդութեամբ հետեւեալը կը պատմուի. ժէկու մը էշը՝ որ բնակչաց կարծիքով ցուրտին ամենազգայնացուն կենդանին է, ձմեռը Ջլիֆտա կոչուած ձորէն անցած ժամանակ ձեանց մէջ խրելով՝ առաջ կամ պադեր է, և այդ պիտուածէն տեղը կոչուեր է Պաղ Էշ, որ յետոյ, իբր թէ, աղաւաղած և եղած է Բաղէշ։

Կառուցուած է մասամբ ձորերու մէջ և մասամբ լերանց ապառաժներու վրայ, և ամէն կողմէն շրջապատած լինելով բազմաթիւ ձորերով և դժուարամատչելի լեռներով՝ հրաշալի և նկարչական զուարճալի դիրք մ'ունի։ Ջուրս ձոր՝ արեւելքէն, յարեւմտից, հիւսիսէ և հարաւէն երկնալով կը միանան քաղաքիս մէջ. առաջին երեք ձորերու միջէն կը վազեն հետեւեալ վտակներն, Ամպա կամ Հանպա ջուր, Աչեխուռ ջուր, Թոցերուռ կամ Թոսրովուռ ջուր՝ որ քրդերէն Ամրտոլ–չայը կը կոչուի։ Այս վտակները իրենց անուններէն առած են նոյնանուն գիւղերէն. քաղաքիս մէջ իրարու հետ միանալով կը ձեւացնեն Բաղէշուռ ջուր կամ Ապի–Պիթլիզ գետակը, որ վազելով հարաւային ձորի միջէն, և մի քիչ դէպ ի արեւմուտք շրջան ընելէ վերջ, ուղղակի դէպ ի հարաւ կ'ընթանայ ընդունելով ուրիշ վտակներ, ու կը թափի Տիգրիսի մէջ։ Քաղաքս թէև պարսպապատ չէ, բայց գլխաւոր փողոցներու ծայրերը գռներ ունի, որոնք են. ա. Վանի–գափուռը, բ. Ձիրձիլեր–գափուռը, գ. Ախաց–չարսուռ–գափուռը, դ. Ամիրա–չարսուռ–գափուռը (Ամիրուռ շուկայի դուռն), ե. Մէյվահանէկ–գափուռը և զ. Օղրուռն–գափուռը, որ շատ չի գործածուիր և հայերէն Գաղտուն դուռն կը կոչուի։

Տները վերոյիշեալ ձորերու միջէն անցնող վտակներու եզերքէն սկսելով և հետզհետէ ասպիճանաձեւ կարգ կարգ դէպ ի վեր բարձրանալով՝ տարածուած են լերանց գառ ի վայրերուն վրայ. մեծաւ մասամբ իրարմէ հեռու են և ծառազարդ պարտէզներու և արտերու մէջ զուարճալի դիրք մ'ունին։ Ընդհանրապէս երկայարկ են և արտաքուստ ոչ այնչափ ճաշակաւոր. շինուած են մխրտգոյն սրբատաշ փխրուն (փուխ քար՝ ըստ տեղացւոց) բայց գիմացկուն քարէ, որոյ հանքը շատ առատ է քաղաքիս մէջ և շրջակայքը. կան նաեւ գոյնզգոյն քարերով շինուած տներ և մի քանի ուշադրութեան արժանի ապարանքներ և կամարակապ շինութիւններ։ Ջորաբերաններու ճիշդ կեդրոնը, հիւսիսէն դէպ ի հարաւ երկնցած քարանձաւի մը վրայ շինուած է բերդը։ Յայտնի չէ թէ ո՛վ և երբ կառուցած է բերդս. առանդութեամբ այս միայն գիտենք, որ Լէնկթիմուր աշխատեր է բայց չէ յաջողեր բեր-

դիս սիրելու։ Հարաւային կամարակապ և աւերակ դրան վրայ արաբերէն արձանագրութիւն մը կայ, որ կը յայտնէ, թէ բերդս շինուած է տաճկաց 902 թուականին (1496 քրիստոնէից թուականին) սուլթաններէն միոյն ձեռքով. բայց կ'երեւի՝ որ նոյն թուականին սուլթան մը նորոգած է միայն զայն և իւր շինութիւնն աւելի հին է։ Հնագոյն լատիներէն անվերծանելի արձանագրութիւն մը, և ուրիշ յիշատակարաններ և աւանդութիւններ կը ցուցընեն, թէ Բաղէշ ի հնուց Հայոց ճոխ ու բազմամարդ քաղաքներէն մին եղած է, և մեր իշխանութեան կործանման ժամանակ և վերջը, ուրիշ քաղաքներու պէս հայ բնակչաց բազմութենէն և ճոխութենէն զրկուեր է։ Քարանձաւի ամէն կողմի երեսներն խորատուբորտ են, և վերէն վար ուղղահայեաց պիրք մը ունենալուն պատճառաւ շրջապատյայտ ճամբայ մը շինուած է, վրան քարաշէն բարձր կամարով ծածկած։ Այժմ բերդս աւերակ, լքեալ և ամայի վիճակի մէջ կը գտնուի. գոնէն սկսելով ամէն կողմ աւերակաց կոյտեր կը ներկայանան, տեղ տեղ ալ կիսակործան շէնքեր՝ գտնազան ձեւերով։ Անցեալ դարու սկիզբները կան եղեր նաեւ երկար ժամանակ քաղաքին սիրապետող Պարսից խաներու ապարանքներ, որոց հետքն անգամ անհետացեալ եղած է այժմ. տակաւին ճնացած են միայն քանի մը թրքաց հին տուներ և փոքրիկ մզկիթ մը։ Բերդի հիւսիսային ծայրէն քիչ հեռու բլուր մը կայ և վրան քառակուսի աշտարակաձեւ շէնք մը։ Կը պատմեն թէ ասկէ դար մը առաջ այդ շէնքի վերի ծայրէն դէպ ի բերդը կամար մը ձգուած էր, որուն վրայէն քարաշէն խողովակներու մէջ անցուցած հողէ թրծուած խողովակներով ջուր կու գար հիւսիսային կողմի լերան աղբիւրէն և երեք մասի կը բաժնուէր. մէկ մասը բերդին, միւսը կ'երթար կարմրակ եկեղեցւոյն բակը և երրորդը թրքաց կէօք—Մէյտան մզկիթի բակը։ Այժմ այս անցքերը բոլորովին խանգարուած են, վերոյիշեալ կամարն ալ փլած և միայն տեղ տեղ կը տեսնուին խողովակներու ճնացորդներ։ Բերդի արեւելեան և արեւմտեան սահրոտքը մէկ մէկ խոռոչներ կան, ուրկէ դէպ ի վեր տանող քարէ սանդիճաններով գաղտնի նեղ ճանապարհներ փորուած են։ Կ'ըսեն թէ ուրիշ գետնափոր ծածուկ ճանապարհ մը եւս կար, մէկ մզկիթն աւելի երկայնութեամբ, որ քաղաքին հարաւային կողմը վտակին վրայ շինուած Բացխանից անուն կամուրջին քովը կը հանէ եղեր, որուն գոներն այժմ չեն տեսնուիր։

Բաղէշ ի հնումն խիստ բազմամարդ էր և ըստ Հ. Ինճիճեանի ունէր մօտ 25,000 տուն, բայց անդադար խռովութիւններէ և մանաւանդ ԺԲ դարու մէջ պատահած սաստիկ սովէն սոսկալի քաղաքացիք՝ ցրուեր են զանազան կողմեր, այնպէս որ անցեալ դարու սկիզբը կան եղեր միայն 5000 տուն բնակիչ, յորոց 1500 տուն հայ, 200–300 տուն եազուպի տորթի և սակաւաթիւ նեստորականներ. իսկ մնացածը քուրդ և թուրք։ Ազգային ուղեւորն Բարոնտակ պէյ (1847 թուին) կը հաշուէ ընդ ամէնը 25,600 հոգի բնակիչ, որոնց 20,000ը քուրդ և թուրք, 5000ը հայ և 600ի չափ տորթի և եազուպի։ Վ. Բինէ (1892ին) քաղաքիս և նոյնանուն վիճակի բնակչաց թիւն միահամուռ կը հաշուէ 38,886 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք Լուսաւորչական .	16086
» Բողոքական . .	200
Մահմէտականք . . .	20800
Եազուպի տորթ . . .	1800
Գումարն . . .	38886

Ըստ ազգային Պատրիարքարանի 1880 թուի վիճակագրութեան, Բաղէշ ունէր 1532 Հայոց տուն և 10726 հայ բնակիչ։ Նոր և ոսոյգ մարդահամար մը չունենալով՝ քաղաքիս բնակչաց այժմեան թուոյն վրայ տեղեկութիւն չենք կարող տալ. բայց յայտնի է որ Հայք թէեւ վերջին դէպքերուն մեծապէս վնասուեցան և շատ (գրեթէ 1000 անձ) զոհեր ունեցան, սակայն այժմ եւս 10000էն աւելի լինելու են, որովհետեւ 1880էն մինչեւ 1900 թուականը համեմատաբար 1000–1500 անձ բազմացած պէտք են լինել։

Հայք ունին չորս քարաշէն եկեղեցիներ. ա. Կամրակ Ս. Նշան, որ Ս. Կիրակոս եւս

կը կոչուի. վեց սիւներու վրայ հաստատուած գմբեթաւոր եկեղեցի մ'է, կակուղ սրբատաշ քառակուսի քարերով շինուած. նորոգուած է 1844 թուին։ Ի հնումն կը կոչուէր Ս. Կիրակոս, բայց երբ վարդապետ մն Սպահանէն հոս բերաւ Կենաց փայտի մասունքը, որ ամիսփսուած է փաթրիկ քառակուսի արծաթէ տուփի մէջ, և վրան ալ կարմրագոյն գոհար մը կայ, նոյն օրէն ատացաւ կարմրակ անունը։ Այս մասունքը ներկուած կը համարին փրկչի արիւնով և մեծապէս կը պատուեն, նոյն իսկ այլազգիք ի'երդնուն կարմրակ հախի իչոռն, ըսելով։ Եկեղեցւոյս մէջ կը պահուի նոյնպէս Ս. Յակոբեանոս Նահապետի մասունքը։ Բ. Ս. Յարգիս, որոյ աւազ սեղանի տակէն առատ ու անուշ ջուր մը կը բղխէ, և սաստիկ ցաւերով քաղաքին գանազան թաղերու մէջ կը բաժնուի. բնակիչներէն շատերը այս ջուրը կը գործածեն։ գ. Հինգ խորան, կը գտնուի վերոյիշեալ եկեղեցւոյն դիմաց, այսպէս կոչուած է հինգ խորաններ ունենալուն համար։ դ. Ս. Գեորգ եկեղեցի, Աւերմէգա-նայ թաղին մէջ։ Այս եկեղեցիներու հնութիւնը, ինչպէս յայտնի է թուականներէն, երկու և կէս գարէն անդին չեն անցներ։


Բաղէշ այս եկեղեցիներէն զատ ունի չորս վանքեր, երեքը քաղաքին արեւելեան, հարաւ—արեւմտեան և հիւսիս—արեւելեան կողմերը, և մին քաղաքին մէջ, որ կը կոչուի Աղիստոլու կամ յաւ ուս Աղիորդուց վանք, վասն զի կառուցուած է Սրբոյն Յովհաննու կարապետի անուամբ, համանուն թաղին մէջ։ Աւանդութեամբ կ'ըսուի նաեւ, թէ Աւիր և Տօլ անուն երկու եղբայրներ նորոգած լինելով այս վանքը և եկեղեցին, այս պատճառաւ իրենց անուամբ Աղրատոլու վանք կոչուած է. բայց սակայն չի թուիր այս աւանդական ենթադրութիւնը։ Շինուածքը գովութեան արժանի բան մը չունի, բայց գիրքը խիստ գեղեցիկ և զուարճալի է։ Դիմացէն կ'անցնի անընդհատ խոխոջմամբ մեր վերը յիշած նոյնանուն գետակն, որուն եղերք բոլոր վանքի երկայնութեամբ պարսէզ է։ Եկեղեցին սիմետրիկ է և գմբեթաւոր, միւս վանքերու և քաղաքի եկեղեցիներէն ամենէն մեծն է։ Դասին մէջտեղը թաղուած են իշխաու մեծ Վարդան և Բարսեղ վարդապետները, որ իրենց ժամանակին երեւելի եղած են. երկրորդը առաջնոյն աշակերտն է։ Քաղաքիս առաջնորդներն առաջ այս վանքիս մէջ կը նստէին բայց այժմ առաջնորդարանը փոխուած է կարմրակ եկեղեցին։ Վանքիս հիւսիսային կողմը, քարընկէց մը հեռու և աւելի բարձր գիրքով կը գտնուի Ս. Յովհաննէս եկեղեցին, որ այժմ մզկիթ եղած է. ժամանակաւ կար նաեւ Ս. Կղեմէս եկեղեցի մը, որ նոյնպէս այժմ մզկիթ դարձած է։ Միւս երեք վանքերն կը կոչուին, Գումաց Աստուածածնի վանք, Աղեխու Ս. Աստուածածին, Թնդրակատար Աստուածածնի վանք, որոց նկարագիրն ըրած ենք իրենց կարգին։ Բաղէշի Եպիսկոպոսներն ուս ունին եկեղեցի մը, իսկ բողոքական Հայը ժողովարան մը։ Մահմէտականք ունին 15 մզկիթ, յորոց գլխաւորներն կը կոչուին. Լէվիր—Շէմ սէտտին, Ճամիի—Ալիք, Գըզըլ—Մէսճիտ, Մէսճիտի—Թահմուն և Շէրիֆէ, այս վերջինը ամենէն աւելի մեծագործ է և գմբեթը կիսագնդի ձեւ ունի. միւս մզկիթներու համեմատ գմբեթը սրածայր է։ Հայք ունին չորս վարժարաններ՝ Վարպետեան, Մեսրոպեան, Լուսաւորչեան և Ս. Յարգիս։ Բողոքականք ուս ունին իրենց վարժարանները։

Նշանաւոր է Բաղէշ վաճառականութեամբ, թէեւ չունի ազնիւ գործուածքներ ստեղծել և մեսաքոնայ պիպակներու և ուրիշ բարակ նիւթէ զգեստեղէնաց, սակայն իր կարմիր ներկած պատուական կաուն տարածուած է Հայաստանի շատ գաւառաց մէջ, որ և կը կոչուի Բաղէշու շիլէ։ Ժամանակաւ բազմաթիւ հայ կաուագործներ կամ ջուլհակներ կային հոս, որք հետզհետէ գրուելով շատ նուազեցան։ Կաուագործներու շատ կ'օգնեն քաղաքիս մէջ գտնուող բարակային ջրերը, յորս ներկարարները կը լուան իրենց կաուը։ Տեղւոյս կաուը դեռ չներկած՝ գործուածքին խոշորութիւնն կ'երեւի, բայց ատրճանով կարմիր ներկուելէն վերջ, շատ ազնիւ է և թաւշի ընդունակութիւն կը սահայ։ Բաղէշի գրեթէ բոլոր կանայք, թէ ատն մէջ և թէ դուրսը, իրենց մեծագին գգեստուց և զարդուց վրայէն՝ իրրեւ ծածկոյթ կը հագնին այս կաուէն կարած երկար շապիկներ։ Միւս ար-

հեստաւորներէն կը գտնուին ոսկերիչ, գերձակ, երկաթագործ, կօշկակար, խազախորդ, և այլն։ Առեւտուրին համեմատ չէ խանութներու և շուկայի գեղեցկութիւնն, անշուք են և շատ մթին։ Շուկայի տանիքն որ հողայարկ է, կը ծառայէ իբրեւ ճեմելու տեղ, ուր կը վաճառուին նաեւ ցորեն և այլ մթերքներ։ Շուկայի միջէն կը վազէ հիւսիսային կողմէն եկող վտակը, որուն վրայ տեղ տեղ կան քարաշէն կամուրջներ։ Մսավաճառներու և մանրավաճառներու շուկաները լայն, բարձրակամար և աւելի կանոնաւոր շինուած են։ Վաճառատանց և կրպակաց թիւն 900էն աւելի է։ Կան քանի մը մեծ և փոքր քարաշէն խաներ. հին խան, նոր խան, և այլն. երեք մեծ քարաշէն բազնիքներ, խան–համամը, իւնի–համամը, փաշա–համամը։ Ունի 9 փուռ, 4 մեծ սրճարան, յորում լրագիրներ կը կարդան, և ուրիշ 12 սրճարաններ և 11 ջրաղացներ։

Շատ գեղեցիկ և առողջարար է Բաղէշի օդն, որոյ գարունը և ամառը միշտ զովուած է շրջակայ պատառաց մէջ։ Այդ եղանակաց մէջ, քաղաքացիք իրենց բոլոր ազատ ժամանակները կ'անցընեն այգիներու և պարտիզաց մէջ, զուարճանալով բնութեան գեղեցկութեամբ։ Իսկ ձմեռն ընդհակառակը շատ գանդաղունչ և անտանելի է այս տեղ։ Նշանաւոր է քաղաքս նաեւ ջրի առատութեամբ. անուշահամ վտակներէ զատ, հոս գրեթէ ամէն տուն ունի իր աղբիւրը, որոնց գլխաւորներն են. Լօլօլ, Ռաշօ, Շէրիֆ խանի և Մահմադ աղայի աղբիւրները, Սեֆէր պէկենց ակները, և այլն։ Ընդհանրապէս գարնան ժամանակ վտակներու մէջ առատութեամբ կը գտնուին վանայ ծովակի տառեխ ձկան տեսակին նման մանր ձկներ։

Բաղէշի բերքերն են՝ մեղր, գղմոր, խէժ, ծխախոտ, լոշտակ, խաղող, գինի, օղի, ռուպ, նուռ, թութ, թուզ, խնձոր, տանձ, սալոր, սերկեւիլ, ծիրան, կաղին, ընկոյզ, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, և այլն։ Բաղաքիս Հայք



183 · Բաղէշի մեղր։

խոտ ճարպիկ են և գործօն, և գրամ ու հարստութիւն գիզելու մեծ յաջողակութիւն ունենալով, այս կողմանց առաջին վաճառականներն են։ Իրենց մէջ գտնուրկ և ծոյլ

ԱՇԽԱՐՀԱԳՐԻՐ ԲԱՂԻՇԻՒ

ՀԱՅԱՔՆԱԿ ԳԻՒՂ. ՕՐԷԻՑ

	ԱՆՈՒՆՔ ԳԻՒՂԻՑ	ՑՈՒՑ	ՀՈԳԻ
Տանիկ կոստատիք	Ղաւլթիկ, Խաւլթիկ	334	1779
	Մահկանէա, Մահկանք	45	291
	Կեաղհօքա, Գղհուկ	27	184
	Կեհէր	19	147
	Պաա	58	441
	Ոսաին	27	134
	Ծղկամ	41	243
	Վանիկ	60	362
	Սասիկ	27	158
	Շէն	12	75
	Սափ	7	41
	ԳՈՒՄԱՐՆ	635	3853
Կիպրէյէրէ (Ադդամ ցոյց) կոստատիք	Հանդ	58	258
	Տոփ	20	114
	Տաշտափ	15	70
	Որձագ	8	57
	Սագ	47	293
	Նեղ	27	181
	Կարբ	40	333
	Խաւմա	20	162
	Կաւթ	57	514
	Խարդխթ	25	168
	Խարդ	8	64
	Ջըլբան	7	50
	Անգեան	3	22
	Ինանաա	8	60
	Ալբերդ	2	21
	Կաւամ	4	39
	Բալքան	3	18
	Աղբաղար	9	55
	ԳՈՒՄԱՐՆ	339	2459
Ծաւէրի վիրաւոր	Գամբ	58	502
	Մղրկ	20	154
	Բաշչէն	55	525
	Պաա	46	592
	Կամախա	41	266
	Զաւար	17	86
	Խախրև	31	207
	Ակամէնք	4	28
	Ջրհար	57	316
	Շամիրամ	26	214
	ԳՈՒՄԱՐՆ	315	2270
Գաւիտ կոստատիք	Փարխանա	51	334
	Ամզ	8	55
	Խմելջուր	12	74
	Վ. Մարգարգ	7	53
	Ն. Մարգարգ	25	182
	Հարմեզ	14	80
	Կարվաւ	60	575
	Խարխակաղ	4	48
	ԳՈՒՄԱՐՆ	181	1378
Բաղէշի վիրաւոր	Գամաւան	70	512
	Խնձորգին	22	170
	Թաւխ	41	272
	Փրխաւա	107	1311
	Խաւլիկ	11	196
	Ջամալաին	18	160
	Ագրակ	7	63
	Մահնամանք	17	133
	Զարկանք	15	84
	Ծղակ	89	865
	Հերանք, Յեսրանք	19	205
	Թեզաւա	174	1475
	Աչաղ	20	139
	Տափավանք	80	695
	Մեծք	20	202
	Կաշաեան	30	304
	Սօխաւրթ	21	159
	Ձղիրօք, Ձիղրէն	8	70
	Ջաւրթափ	58	334
	Խարապաշէհիր	25	300
	Սփռածար	31	247
	Նապղկ	8	75
	Կծուակ	71	642
	Ծաղկէ	15	95
	Կարմաւնջ	85	570
	ԳՈՒՄԱՐՆ	1058	9436
Մշոյն գաւառակ	Կարբ	6	42
	Բրաւաք	12	84
	Մղրաւկ	12	84
	Որձէնք	8	60
	Գլխա	14	106
	Մէրթթաղ	4	26
	Հաւաւթաղ	9	70
	Խաւր	15	97
	Վէրին Ասպնջեր	15	100
	Ներքին Ասպնջեր	15	91
	Կնձաւ	25	175
	Մշաւ	16	109
	Գաչախ	23	146
	ԳՈՒՄԱՐՆ	174	1188
Մշոյն գիւղ մէջ	Մեծ ձոր	3	21
	Մրձանք	5	33
	Բաղնաւա	15	97
	Շէն	40	292
	Արփի	15	99
	Նիչ	11	96
	Կրխաւ	35	310
	ԳՈՒՄԱՐՆ	124	950
	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ	2846	21534

ժկը չի գտնուիր. շարունակ կ՚երթեւեկեն այլեւայլ գաւառներ կառավարիչներ և այլ նիւթեր վաճառելու համար։ Տգայք անգամ հագիւ թէ քիչ մը գրել կարդալ կը սորվին, անմիջապէս արուեստի կը մտնեն։ Այս պատճառաւ ամբողջ քաղաքին մէջ գժուար է գտնել գիտնական և գրագէտ անձինք։ Բնաւորութեամբ աշխատասէր են, խարուել չգիտեն, բայց լաւ կերպով կը խաբեն. իրենց քաղաքին մէջ արիասիրտ են, իսկ քաղաքէն գուրս երկչոտ։ Բազէշցւոց հայ լեզուն թէեւ մօտ է Մշեցւոց բարբառին, սակայն երկրի գրից պատճառաւ, կամ լաւ եւս, քրդերու ազդեցութեան տակ՝ որոնց շատերն եւս հայերէն կը խօսին, առանձին յատկութիւններ ունի, աւելի ծանր և գժուարհասկնալի է շրջակայ գաւառաց Հայոց։ Տեղւոյս Հայք եւս ունին իրենց ինքնատիպ ազգային սովորութիւնները և երգերն. ինչպէս Համբարձման ատենին վիճակի սովորութիւնը, և այլն։

Բազէշի արեւելեան կողմը գտնուած բարձր լերան գագաթին վրայ քառակուսի միջոցով կիսակործան կամարակապ շէնք մը կայ Տէր-Ոխիվան անուամբ, որ Պարսից խաներու ժամանակէն մնացած է. այս տեղէն կ՚երեւայ քաղաքին ամէն կողմը, նաեւ Ասիական կողմն ալ. Ս. Գևորգ եկեղեցին այս լերան ստորոտը շինուած ըլլալով, լեռն ալ նոյն անուամբ կը կոչուի։ Այս լեռը գոյացած է սեւ կակուղ քարի հանքէ, յորոց կը շինուին գիր գրելու քարեսախտակներ։ Լերանս գիմացը ուրիշ բարձր բլուր մը կայ և վրան բերդակնման շէնքի աւերակներ, որ անցեալ գարու սկիզբները քաղաքիս սիրող Շէրիֆ պէյի ապարանքը եղած է ժամանակաւ։

Քաղքիս անուամբ կը կոչուին գաւառ մը և նահանգ. գաւառի սահմանքն են հիւսիսէ և արեւմուտքէ Մշոյ գաւառը, արեւելքէ Վանայ նահանգը և հարաւէն Աղերտաւ գաւառը։ Ունի 4 գաւառակ, 108227 բնակիչ և 434 գիւղ։ Բազէշի նահանգը ձեւացած է 1875 թուին. կ՚ինկնայ 38° 8′ 40° 42′ արեւելեան երկայնութեան և 37° 45′ 39°30′ հիւսիսային լայնութեան մէջ. շրջապատուած է հիւսիսէն Կարնոյ, արեւելքէն Վանայ, հարաւէն և արեւմուտքէն Տիգրանակերտի նահանգներէն։ Տարածութիւնն է 29 850 քառ. հազարամեաք՝ գրեթէ 400 000 բնակչօք։ Բաժնուած է չորս գաւառաց, որոնք կը ստորաբաժանին 19 գաւառակաց և միահամուռ ունին 2088 գիւղ։

Նահանգս առհասարակ լեռնային է և ունի շատ ձորեր. երկիրը շատ տեղ ապառաժուտ է և սակաւաբեր, բայց կը գտնուին նաեւ պարարտաբոյս և բերրի վայրեր։ Ձմեռ ժամանակ երբեմն ոտաստիկ բուքեր կ՚ընէ և կը ձեւանան բարձր լերանց վերին մասերը և խոր ձորերու վերին եզերքը վտանգաւոր ձեան հիւսք կամ սեղական բարբառով ռաւիլք, որոնք զարնան յանկարծ սարսափելի որոտմամբ կը փլչին, ինչոսելով կամ թաղելով ինչ որ իրենց կը հանդիպի։ Անասունները սակաւաթիւ են և օր աւուր նուազելու ենթակայ, որովհետեւ անկանոն կերպով և անխնայ կարուած են և կը կարուին եղանջները։ Այս պատճառաւ քաղաքի և գիւղերու տները ծածկելու հարկաւոր գերանները և տախտակները կը պատրաստեն կամ պազատաւ ծառերէ և կամ բարաի ծառէ, որ մեծ խնամքով կը բազմացնեն։ Բարձրաբերձ և անմատոյց լերանց վրայ տեղ տեղ կը գտնուին ընկուզի մեծամեծ ծառեր՝ ընկուզաստէր ազատներէ անկուած, որոնց համար աւանդաբար կը պատմեն, թէ «ատոնք շատ ազահ է ընկուզի, որով կշտանալէն յետոյ՝ մի քանի հատ կը տանի և կը թաղէ անմատոյց լերանց վրայ հողին տակ, իբրեւ իրեն պաշար այն ժամանակուան, երբ այլ եւս ծառոց վրայ իր փորը չի կրնար կշտացնել ընկուզով, իրեն նշան գնելով տակը։ Գրած նշանը հատատուն չլինելով, ամէն անգամ ազատը չի կրնար գտնել իր պահած ընկոյզն, որ հողի տակ կը մնայ և բուսնելով մեծ ծառ կը գառնայ այդ անմատչելի վայրերց մէջ»։ Նահանգիս մէջ կան շատ տեսակ խոտեր, ծաղիկներ և բոյսեր, զորս կը գործածեն դեղերու տեղ։ Պտղոց կողմանէ եւս առատ է և ունի բնաբեր տեսակներ մանաւանդ տանձի և խնձորի. հարաւային ձորավայրերու մէջ կը գտնուի նաեւ ձիթենի։ Թռչուններէն յիշենք կաքաւ, լոր, տատրակ, արտս, սարեակ, հազարան պիւլպիւլ՝ որ լորի կը նմանի՝ գլուխը և ապին սեւ, իսկ մարմինը ծիրանի

գեղին և ձայնը քաղցր, վայրի բազ, սազ, և այլն։ Զօրքատանի կենդանիներէն ունի եղջերու, այծեամն, ձի, ջորի, էշ, կով, եզ, աչխար, այծ, վարազ, աղուէս, արջ՝ սպիտակ և սեւ, կան նաեւ վհատակաթ օձեր՝ բայց սակաւաթիւ, և այլն։

Տարուան մէջ Բաղէշի հահանգը, միջին հաշուով յատաջ կը բերէ 2956000 գլուխ կենդանի, հետեւեալ կերպով բաժնուած.

Աչխար և այծ	2 000 000	գլուխ
Գոմէշ, եզ և կով	800 000	»
Ձի	90 000	»
Էշ	60 000	»
Ջորի	6 000	»
Գումարն...	2 956 000	գլուխ։

Նահանգիս բերուց վրայ ընդհանուր զանազան մ՚առնելու համար ի տարեւ կը պիտնք ըստ Վ. Քինէի, միջին հաշուով, տարուան մէջ վաճառքի դուրս գրուած նիւթերը, հանդերձ իրենց արժէքով։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ԲԵՐՈՒՑ	ԱՐԺԷՔՆ օսմ. ոսկի
Գաղի խէժ սպիտակ	2000
» կարմիր	1200
Գեղին հատնած	7000
Գղիմար սեւ	7000
» սպիտակ	8000
Կոճղ ծառոց (կաղնիի, և այլն)	2000
Մոմ	1300
Մեղր	800
Գինի	2000
Ձամիչ	2300
Աչխար	14000
Այծի մորթ	6000
Գոմշու մորթ	2000
Մուշտակներ	4000
Զոր աղիքներ	1200
Կարմիր կաւ	8000
Զանազան նիւթեր	5000
Գումարն...	74000

Իսկ հետեւեալ տախտակէն կը տեղեկանանք, թէ տարուան մէջ որչափ արժէքով և ինչ տեսակ բերքեր կը ներմուծուին նահանգիս մէջ։

ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ԲԵՐՈՒՑ	ԱՐԺԷՔՆ օսմ. ոսկի
Հիւսուածք բամբակի	50000
» մետաքսեղէնք և դրդեզ	33300
Բամբակ	3300
Շաքար	1300
Սուրճ	3300
Թարխուղ	300
Երկաթ	600
Տարօնի արմատ	1200
Երկաթեղէնք	20000
Զանազան նիւթեր	3000
Գումարն...	117900

Որով արտածութեանէն կը գոյանայ

գրեթէ	1700000	ֆրանկ
և ներածութենէն...	2700000	»
Գումարն...	4400000	ֆրանկ։

Ունի նաեւ հանքեր գեղին, կարմիր, սպիտակ և սեւ մարմարիոններու, ինչպէս նաեւ երկաթի, պղնձոյ, ոսկւոյ և արծաթի, որոնք այժմ բարեբաղդաբար գործածութեան մէջ չեն։ Աղտաւութեամբ կը գտնուի նաեւ ծծումբ, և Բաղէշ քաղաքէն խնդրակատար Աստուածածնայ վանքը տանող ձոր մը կայ որ կը կոչուի Գետախոտիկ՝ նայն տեղւոյն ծծմբային գարշահոտութեան համար։ Ընշանաւոր է բազմաթիւ հանքային ջրերով. հարուստ է նաեւ տաղահանքերով, բայց ակրութիւնը կը գործածէ միայն 6 տաւատաղաններ, անզործ թողլով տասնեւհոթիը ընտիր քարացեալ տաղահանքեր։ — Նոր Հայատառաւ, 161—174։ Տեղագր. Հայաս. 239—246։ Ձնպրնդր. ի Բաբերդ, 142—152։ Վ. Քինէ, Բ 523—628։ Եւ այլն։

ԲԱՂԷՇՈՒ ՋՈՒՐ. Տես ԲԱՂԷՇ։

ԲԱՂԸՇՏԱՂ կամ ԲԱՂՇՏԱՁ. — Ալպազաբնակ գիւղ Ակնի։

ԲԱՂԻՆԻԿ. — Հայաբնակ գիւղ Բարձր Հայոց Դարանաղի (կամախ) գաւառի, յիշուած Ինճիճեանէ։

ԲԱՂԼՈՒ. — Գիւղ Տարսւբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ։

ԲԱՂՆԱՏՈՒՆ. Տես ՊԱՂՆԱՏՈՒՆ։

ԲԱՂԵՆԿՈՒՆՔ. — Գիւղ կիլիկիոյ, Ա-ռանդայի մօտ։

ԲԱՂԵՒԲ. — Գիւղ Կարնոյ հիւսիսակող-ման լերանց ոտորոտը գտնուող ընդարձակ բլրոյ մը կողին վրայ։ Գիրքն և տեսարանն բաւական լաւ է։ Ունի 400 տուն բնակիչ, 60ր հայ և մնացեալը Թուրք։ Հայք ունին Ս. Ցակոբ անուամբ գեղեցիկ և անշուք եկեղեցի մը։ Գիւղիս մերձակայ լերանց մէջ կը գտնուի կովճուձ՝ որ ոչխարաց կաթը ծը-ծելով կենդանին կը թունաւորէ, այլ պատճա-ռաւ բնակիչք գտնագան գեղեր կ՚ընեն իայ-նը դուրս բերելու համար, ինչպէս արիւն առնել, պաղ չրով ծծերը լուալ, ևն։ Գիւղիս այժմեան անունն է, ըստ այլազգաց, Ըսմու-տում = Ցոյս։

ԲԱՂԵՒԲ. — Գիւղ Զարսանճագի փէրին թեմին. ունի 15 տուն հայ բնակիչ և Ս. Մինաս եկեղեցի մը։ Այս անուամբ ուրիշ գիւղ մ՚ալ կայ Աբաթկեր, որոյ բնակիչք այլազգի են։

ԲԱՂՇԱՃ. Տես ԲԱՂԸՇԱՂ։

ԲԱՂԶԻՃԻԿ. — Գիւղ Տիգրանակերտի մօտ. ունի 10 տուն հայ բնակիչ։ — Ուրիշ գիւղ մ՚ալ կայ Զմշկածագու առաջնորդական թեմին մէջ։ Ունի 15 տուն հայ, և Ս. Աս-տուածածին եկեղեցի մը։ Տես ՊԱՐՏԻԶԱԿ։

ԲԱՂՔ. — Միւնեաց նահանգի հարաւա-կողման գաւառներէն մին, որ քարքաւածած և առաջնութեան պատիւ ստացած է ի. դա-րու վերջերէն սկսեալ մինչև ԺԲ կէսը, ո-րովհետև այդ միջոցին Միւնեաց Թագաւո-րական գահը հաստատուեցաւ գաւառիս մէջ։ Շրջապատուած է Միւնեաց Հարանդ, Ծղուկ, Ջորք և Կովսական գաւառներէն, արեւելա-կողման սահմանքն անորոշ են։ Գաւառիս անունն եղած է Բաղնակ անունով Միւնեաց իշխանէ մը, յորմէ շինուած է նաև մերձա-կայ հռչակաւոր Բաղաբերդ ամրոցը։ Պատմու-թեան մէջ մանաւանդ դէպք մը չի յիշուիր գաւառիս վրայ սկսեալ Բաղակ նահապետէն մինչև ութերորդ դար։ Բարձր բնաւորի 824 մարուց մեծ կատարածէն վերջ, Սիսա-կան իշխանաց Միւնեաց գաւառները բաժ-նած ժամանակ, Վահան անունով մէկը ժառանգորդ կը լինի Բաղաց, որուն պայա-զատները կը յիշուին կարգաւ մինչև ի. դա-րու վերջերը։ Այս իշխանական տոհմին ա-ռաջ նուէրներով ճոխացուց Տաթեւի եկեղե-ցին. այս տոհմէն վաճառ անունով մէկը կրօնաւորեցաւ և յետոյ կառոյց Վահանավա-նք կոչուած անունի մենաստանը։ — ԺԱ. դարու վերջերը և մինչև ԺԲ կէսը Միւնեաց թագաւորութեան վերջնաշէն յե-տոյ Բաղաց մէջ նշանաւոր կը հանդիսանայ Հաստունեանց տոհմը, որոնց նախահայրն կը կոչուի Պաճն Հաստուն, իսկ իր որդին Հասան՝ ԺԳ. դարու սկիզբը կը կոչուի «մե-ծափառ իշխան Բաղաց, որ ունէր ընդ ձե-ռամբ զաւիճայն ազատս թագաւորութեանն այնմ». ասոր մէկ որդին և յաջորդն էր Հաս-տուն Բ, և միւս որդին Յովհաննէս՝ եպիս-կոպոս էր Յովհաննու վանաց, որ աշխար-հին աւերման համար, փնաց Վայոց ձոր գաւառը, ուր և շինելով հռչակաւոր Նորա-վանքը, հոն առանձնացաւ և մեռաւ։ — Այս-ազգիները 1104 թուին սիրեցին Միւնեաց թագաւորներու կապան կոչուած ամուր քա-ղաքին, և հետզհետէ ուրիշ ամրոցներու, և հուսկ ուրեմն 1170ին ամենէն ամուր և թա-գաւորանիստ Բաղաբերդին. բայց թագաւորը կանխաւ իմանալով, փախեր էր իր հայրենիքը՝ Խաչէն։ Այսպիսով վերջացաւ, կամ ըստ պատմչին, հայկական թագաւորական այս ճիւղը շիջաւ. և երկիրը Միւնեաց ուրիշ գա-ւառաց նման օտարներէն ոտնակոխ և աւերակ դարձաւ։ Միւնեաց հարստութեան ժամանակ, Բաղաց թագաւորներու իշխանութեան տակ կը գտնուէին 1400—2000 գիւղեր, 43 բերդեր՝ յորոց նշանաւոր էին 12ը, և 48 վանքեր։ Գրեթէ 550 տարի վերջ, Գաւիթ բէկի օրով, Բաղաց գաւառի բնակչաց մէջ ևս ծագեցաւ և վառեցաւ քաջագործութեանց սէրը, բայց հռչակաւոն հայրենասիրի մա-հէն վերջը, երկիրը միաց առաջին դրից մէջ։

Ի հնումն միայն Բաղք անուամբ ծանօթ էր գաւառս, բայց ի վերջոյ, բնական դրից համե-մատ բաժնուած է կրկին վիճակաց, մէկ մասն՝ արեւմտեանը կոչուելով Բաղք կամ Աճանան, և արեւելեան մասը կոչուելով Մրւս Բաղք՝ որ ծանօթ է նաև Քաշունիք և Բարկուշատ անուամբ. ԺԴ. դարուն սկիզբը, գաւառս իր դրից համար կոչուած է նաև Բաղաձոր։ Բա-

պաց գլխաւոր գետերն են Զաւրնդոյր, Զեմի և Ագարակու գետ։ Երկիրը այս գետակաց ընթացից համեմատ, ընդհանրապէս խորա ու բորա է և անտառախիտ, թէպէտև չունի այնչափ մեծամեծ լեռներ, բայց կը գտնուին ոչ սակաւ պարապաձեւ բարձրութիւններ, ո՞րոնք խորեր և ձորեր կը ձեւացնեն, որոնց՝ միջ կերպով մը ամուր և անմատոյց կը դառնայ երկիրը։

Գաւառիս Միւնեաց եկեղեցւոյն հարկաւոր գեղերու անուանք՝ հանդերձ իրենց տրից բաժնովը՝ հետեւեալք են, հին ցուցակի համեմատ.

Ա. ԲԱՂՔ = ԱՁԱՆԱՆ

Աչաղու, Աճիլու	8
Աճանան	12
Բարեվայր, Բարձրվայր	6
Շէկք	12
Վարդավանք	6
Տորթն	26
Տափեար	6
Աւարագետք	10
Տագամայր	20
Թոտանան	12
Եղինգն	6
Նորաշինիկ	6
— Միւս	6
Հիւնեաց ձոր	6
Ոսկն	6
Կոտեվանք	12
Ատու	10
Արուքս	6
Հողար	8
Կրաւագետ	6
Թմպեճ	6
Կաւարտ	8
Արկանիձոր	10
Տոգող	6
Զարերիկերտ	10
Տատնեղիշէն	10
Տերունդատ	8
Ագարակ	20
Թուրք	12
Մակարագ	6
Աչագն	7
— միւս	7
Գեղաքունի	10

Պարքեն	6
— միւս	6
Կմեզ	10
Գուկական	10
Փառաւակ	8
Մեծամարգ	12
Կովական գիւղ	12
Արձանաձոր	6

Բ. ՄԻԻՍ ԲԱՂՔ = ՔԱՇՈՒՆԻՔ

Երեց	12
Խողվանի	10
Դաստակերտ	6
Տանձավայր	8
Վանանդ	10
Մաճ	7
Անահտաձոր	6
Շուշնիսխոյ	8
Լերմենիչէ	6
Խախտք	12
Եւեղի	7
Հատատուք	6
Մոգք	6
Մատաղոնի	10
Իցան	6
Տողոր	6
Աւերք	6
Տաճկաձոր	6
Տեխք	8
Կոճարու	7
Մաղմնատուք	6
Խոտի	6
Ջաւթք, Ճաւտք	8
Տուտուստուք	7
Անճնեակ	6
Ակն	6
Բակուրի վանք	12
Տախն, Գախն	12
Մերթակերտ	6
Հացնեան	6
Ծղու	8
Տատայ	12
Բարկուշատ	12
Խիրք	12
Տրեայ	12
Ագատի	8
Ճակկուի, Ճապկուտ	6
Կորակիի	6
Անդոկաբերդ	12

Նակորզան	20
Աբտէն	10
Նախջաւանիկ	10
Արթիկ	10
Թով	8
— միւս	7
Աղաւորդ	10
Բահուբերդ	7
Աժդակ	12
Աթխոյք	12
Երուանդակերտ . . .	6
Վաժունիք	8
Կումեն	6

Այս գիւղերէն զատ Նորագոյն ցուցակաց մէջ նշանակուած են ուրիշ գիւղերու անուններ, (Ա) Աճանանի, (Բ) Բարկուշատի, (Գ) Մաղանջի և (Դ) Զաւընդուրի մէջ։

Ա. Թիլիկանց	Խանձունքաղ
Հոռմանց	Ակադի
Խլաթաղ	Փռօչանց
Թախան	Կաշկառոտ
Մողէս	Խոտորանց
Աղջաձոր	Գ. Երիցամուռք
Շրուենանց	Պաշարաչուր
Զորեր	Հուռիտափ
Ղաձեար	Մազմէ
Հալիձոր	Սեձանց
Խնկանց	Շինոխոռ
Ըռստամանց	Գուշվրանց
Քօլու	Քօսաքարեր
Վչքան	Նոր գիւղ
Գրկոմ	Նակաձդար
Սրիակ	Դ. Նատիր
Ըռակեան	Ջաւն
Պէճանիշէն	Սարաշէն
Բ. Փակահան	Կեղցահանդ
Բերդիկ	Քարագլուխ
Զամնի	Թօփ
Ըրկենանց	Աւտուռն
Սեւաքար	Խորձոր
Երիցվանիկ	Տնկռնակերտ
Սուսնակ	Կարմրահողուտ
Կումեն միւս	Հանդիքռվշան
Վիճանանց	Ախձանագի
Խաչտափ	Ջանալուշէն
Ծրափիկ	Պրիժելանց
Այնաձաս	Քօձանլար
Ղարիպանց	Ղզըլարաղաճ

Գաւառիս նշանաւոր տեղեաց նկարագիրները կը գրուին իրենց կարգին, ասա միայն ըսենք, թէ բազմաթիւ հին գիւղերու անուններէն՝ այժմ բիչերուն կը հանդիպինք աշխարհացոյց քարտիսաց վրայ, շատերն ամայացած են, և ոմանք ալ անուններնին փոխած։ — Միսակաե, 272—285։

ԲԱՁԱԼԱ. Տես ՊԱՁԱԼԱ։

ԲԱՄԲ. — *Գիւղ Ալբարատայ Նիկ (Ալեքսանդրապոլ) գաւառի, Ապարանի վիճակի հիւսիսային ծայրը, Բամբակի լերանց ստորոտը։ Ունի 48 տուն հայ բնակիչ։ Արեւելեան կողմը չորս մղոն հեռու՝ կը բարձրանայ Քեմերլի—Բաղր կոչուած լեռը, որուն հարաւային կողմը փարախ մը հեռու կը գտնուի ուրիշ գիւղ մը՝ Քրդի Բաղր՝ 40 տուն քուրդ բնակչօք։*

ԲԱՄԲԱԿ կամ ՓԱՄԲԱԿ. — *Այս անուամբ ծանօթ է իբրև վիճակ հին Գուգարաց Տաշիր գաւառի ստորին մասը. հարաւային և հիւսիսային կողմերէ շրջապատուած է շղթայաձեւ անտառախիտ և բարձրագագաթ լեռներով։ Վիճակս երկայնաձեւ է ու կը տարածուի Տիլիջանէն սկսելով մինչև Աղբուլախի մերձաւոր Ջաջուռ լեռը, մօտ 70 վերստ երկայնութեամբ։ Վիճակս առատ է ջրերով՝ իր գլխաւոր և պատմական գետն է Բամբակ, որ արեւմտեան կողմէն սկսելով կը կտրէ գրեթէ ամբողջ վիճակս, և իր այս ընթացքից մէջ կ'ընդունի ուրիշ վտակներ՝ որոնք կը կոչուին գիւղերու անուններով։ Այս գետակաց մէջ կը գտնուին երեք տեսակ ձկներ, կարմրախայտ, մուրծի և ճապալ։ Վիճակս իր գլխաւոր գետոյն ձեւացուցած ձորահովտին պատճառաւ ի հնուց կոչուած է Բամբակի ձոր, ինչպէս կ'ըսէ նաև Վարդան աշխարհագիրը. «Տաշրացւոց գաւառն Բամբակի ձորն է»։ Թէ ինչ պատճառաւ Բամբակ կոչուած է վիճակս, յայտնի չէ, թերեւս բամբակի բուսոյն համար լինի, սակայն վերջուշս վիճակիս բերաց մէջ չի յիշեր այդ բոյսն, այլ միայն կ'ըսէ. «Բամբակի ձորն լեռնատ է և արգաւանդ, կը բուսցընէ ցորեն, գարի, վուշ, վարսակ»։ Բամբակի գլխաւոր լեռն է Մայմեխ՝ որ 8000'էն աւելի բարձր կը համարուի ծովի մակերեւոյթէն. յետոյ կու գան Գեղալ և Ջաջուռ լեռները։*

Բամբակի մէջ կան 34 պիւղեր, յորոց 25ը Հայոց են, 7 Թրքաց և 2 Ռուսաց։ Մինք գանց ընելով օտարաց նկարագիրն, մի քանի խօսք ըսենք միայն Հայոց վրայ։ Ընդհանրապէս երկրագործ են, կը զբաղին նաև խաշնարարմանութեամբ, առևտրով և արհեստներով։ Հաս կը գործեն նաև պարսկական և նոր ոճով գորգեր։ Վիճակիս Հայը գրեթէ ամէնքն ալ 70—80 տարուան գաղթականներ են, որոնք եկած են Կարնէն, Երևանէն, Բասենէն և Բայազիտէն։ Ընդկին Ալեքսանդրապոլ։ Բանջարեղէններէն կը բուսնին հաս կաղամբ, բակլայ, սոխ, սխտոր, են։ Պաղատու ծառերէն կը գտնուին խնձորենի, տանձենի և գանազան տեսակ սալորենիներ և կեռասենի։ Հանքերու մասին ևս հարուստ է. գործածութեան մէջ է միայն պղնձահանքը. պղնձահանքեր կան վիճակիս գրեթէ ամէն կողմերը։ Կ'ըսեն թէ կը գտնուին նաև արծաթի, երկաթի և քարածուխի հանքերու հետքեր, բայց գիւղացիք տեղերը ցոյց չեն տար, վախնալով որ իրենց հողերը



184. Բայազիտ քաղաքին տեսքը։

տանեկան սովորութիւնները, կամ կարասիքը և երկրագործական բոլոր գործիքները նահապետական են։ 1890 թուին ամբողջ վիճակիս մէջ հազիւ հայկական 3 ուսումնարան կար։ Բամբակի ուսումնական վիճակին տակաւին անկեալ գրութեան մէջ կը գտնուի, այդ մասին յառաջադիմած է միայն Ղարաքիլիսա աւանը։

Վիճակս բնական հարստութեան կողմէ նշանաւոր է իր անտառներով, յորոց շինութեան և վառելու փայտ կը ստանան, կը պատրաստեն նաև ածուխ՝ որ վաճառքի կը ձեռքերնէն կ'առնեն։ Ալյոպիսի հանքային և բուսական հարստութիւններով լի երկիր մը, հարկաւ բազդաւոր պէտք է լինի, միայն թէ բնիկ ժողովուրդը յառմարութիւն և միջոցներ ունենայ օգտուելու այդ բերքերէն։ Անտառներու մէջ կը գտնուին հետևեալ ծառերը և թփերը. աճառի, կաղնի, փիչուի, լորի, մայրի, բարաի, ուռի, թխկի, թեղի, ճիտուի, ալաժահրի, մասրի, մոշ, ալանի, ցիրացի, գերմաստի, և այլն, և այլն։ Շինութեանց համար ընդհանրապէս կը գործածեն կաղնիի, փիչուիի և լորիի փայտերը,

մասամբ ևս ածաբիւր։ Բամբակի անուտաւները երթալով՝ հետզհետէ կը նուազին. կան տեղեր ուր ժամանակաւ հարուստ անուտաւներ են եղեր, իսկ այժմ մնացեր են միայն թփեր։ Ասոր պատճառն այն է, որ ի սկզբան անմշտաւթեամբ և անխնայ կտրեր են, առանց ապագայն մտածելու. կը յուսանք թէ նոքայ կառավարութեան չնորհիւ այսուհետեւ կանոնաւորապէս կը կտրուին մնացեալ անուտաւները։

Վիճակիս մէջ հնութիւնները շատ քիչ են, և եղածներն ալ բան մեծի մասին չաւ

Բամբակի մէջ կան նաև մի քանի հանքային ջրեր։ Մայմեխի ատորատը Դարփուռ ձորը անուտաի մէջ կայ տաք ջուր. Համզաչիմանի և Բեզալկալ գիւղերու մէջ ալ ծծմբային ջրեր կան։ — Վիճակիս մշակութեան հողը շատ քիչ է բաղդատմամբ բնակչաց, այդ պատճառաւ ընդհանրապէս ապրատ են բնակիչք։ — Նոր–Դար, էջ 129–135։ Մշակ, ԺԲ 181–2։ Եւ այլն։

ԲԱՄԲԱԿԻ ՁՈՐ. Տես ԲԱՄԲԱԿ։

ԲԱ ՄԼԻԹԻՆ. — Գիւղ Տիգրանակերտի



185. Բայազիդի բերդը։

քննուած չեն, որով և անյայտ մնացած։ Սակայն այսուհդ ևս հայկական ուխտատեղիներ պակաս չեն, յայտնի ուխտատեղիներն հետեւեալներն են. Շարուր՝ Համզաչիմանի մէջ, Ս. Կիրակի՝ Վարդանլի գիւղը, Ս. Մարգիս՝ Եազարլիի մէջ, Ս. Աստուածածին՝ Մեծ Դարաքլիսա գիւղը, Ամենափրկիչ՝ Սարմուսախլիի մէջ, Կամակատար՝ Դշլախի մէջ, կարմիր աւետարան՝ Որթաւի մէջ, Ս. Մարգիս՝ Թափանլիի մէջ։ Ուխտագնացութիւնը մաս պահուած է գիւղացւոց մէջ. գրեթէ ամէն կիրակի օր այդ սրբատեղիներն ունին իրենց ուխտաւորները։


վեցերորդ առաջնորդական թեմի։ Գիւղիս Հայք սակաւաթիւ են։

ԲԱՅ. — Սակաւաբնակ Հայոց գիւղ Տարբերբերդի Ագիւղիա (Արճէշ) գաւառի։

ԲԱՅԱԶԻԴ կամ ՊԱՅԵԶԻԴ. Գղ. BAYAZID. — Պատմական նշանաւոր պերճաւոր քաղաք, կարնոյ նահանգի Համամունի գաւառի մէջ։ Ըստ ազգային հին աշխարհագրական բաժանման՝ քաղաքս կ'ինկնայ Աչարքաւայ կազմիա գաւառի մէջ։ Ի հնումն ծանօթ է Դարոյնք հռչակաւոր բերդի անուամբ, այդ պատճառաւ տեղւոյս հին պատմական դէպքերն կը նկարագրենք իրենց կարգին Դա-

րոյնք անուան ներքոյ։ Ժե դարէն սկսեալ մինչև յայժմ կոչուած է Բայազիտ, և ինչպէս հին Դարոյնք հայկական բերդն հռչակաւոր եղած է պատմութեան մէջ, նոյնպէս և սա ոչ նուազ նշանաւոր եղած է նոր պատմութեան մէջ, բազմապիսի պատերազմական դէպքերով։ Կը կարծուի թէ քաղաքս իր անունն առած ըլլայ, Օսմանեան Սուլտան Բայազիդ Ա-էն, և թէ անոր հրամանաւ շինուած է, ընդդէմ Լէնկթիմուրի մղած պատերազմերու ժամանակ, սակայն շատ հաւանաւ եղած էր։ Երբ Օսմանեանց ազգութիւնը Հայաստանի սիրեց Շահսէֆեանց ձեռքէն առնելով, ժամանակին սուլտաններըը Բայազիդի կողմերը յանձնեցին մերձաքնակ Քրդապետ ձեռքը, որոնց գլխաւոր առհմն կը կոչուէր Ալիվանլի, անոր համար գաւառն ալ կոչուած կը գտնենք Ալիվան։ Այս Քրդերը իրեն կէս սիրապուխ կ'իշխէին այս կողմանց վրայ, որոնց իշխանութիւնը հասաւ գրեթէ մինչև մեր օրերը։

Անցեալ դարու սկիզբը (1705ին) կը յիշուի Մէհմէտ պէկ Բայազիդի իշխող, որուն ձեռքէն բերդն առնելով Միւրիւտաճ պէկը զինքը կը խզդէ, որով և մեծ խռովութիւն կը լինի։ Իսկ նոյն դարու վերջերը կը պատմուի Մահմուտ փաշայ, որ հռչակաւոր է ահարկու բռնակալութեամբը, ինչպէս նաև պերճասիրութեամբը, որուն յիշատակներն կը մնան տակաւին (բայց գրեթէ աւերակ) ճարտարապետական մզկիթը և պալատը. որոնց շինողն է հայ ճարտարապետ մը, անունը անյայտ, բայց գործն անմահական



186· Բայազիդի պալատը և մզկիթը։

նակ չի թուիր այս կարծիքն, որովհետև նոյն ժամանակները Օսմանեանք դեռ այնչափ առաջ գացած՝ Եփրատէն անցած և Մեծ Հայոց մէջ մտած չէին։ Մեր պատմիչներէն առաջին անգամ Առաքէլ (Գլ. Լ) կը յիշէ նոր անունս գրելով Բերդն Բիազտի, զոր հանած է 1451ին գրուած Ցայտմաւուրքի մը յիշատակարանէն։ Սուլտան Աէլիմի Միւլկմանի որդւոյն արշաւանաց ժամանակ 1554ին, Թուրքաց զօրքերը բանակեցան Բայազիդի բերդին մօտ, որ նոյն առեն շուտ Մհհմմէտ պէկ Բայազիդի իշխող, որուն ձեռքէն բերդն առնելով Միւրիւտաճ պէկը զինքը կը խզդէ, որով և մեծ խռովութիւն կը լինի։ Իսկ նոյն դարու վերջերը կը պատմուի Մահմուտ փաշայ, որ հռչակաւոր է ահարկու բռնակալութեամբը, ինչպէս նաև պերճասիրութեամբը, որուն յիշատակներն կը մնան տակաւին (բայց գրեթէ աւերակ) ճարտարապետական մզկիթը և պալատը. որոնց շինողն է հայ ճարտարապետ մը, անունը անյայտ, բայց գործն անմահական

և հիացուցիչ բազմաթիւ ևրոպացի ճանապարհորդաց։

Բայազիտ քաղաքը կառուցուած է Աղա տաղ կոչուած լերան կոպին վրայ՝ գետնահարուած Գոլլ տաղ և Շարան քարաբլուրներու մէջ, ըստ 5735′ բարձրութեամբ, կռնատիկ գետակի մօտ, որուն վրայ ձգուած է գեղեցիկ, միակամար և քարաշէն կամուրջ մը, հայէ մը կառուցուած։ Քաղաքին հիւսիսային կողմը Աննոնի դար բարձրագագաթ քարաժայռի վրայ կը բարձրանայ հինաւուրց բերդը. գերմանացին վկայեր, «յանդուգն և հրաշակերտ շէնք մը է, ի՛րաւ, այնպիսի տեղերու վրայ հաստատուած, ուր բազէներն ու անգղները հազիւ թէ կը համարձակին բոյն դնելու»։ Ա՞ւ բան հին Գարոռնից բերդը, որ յետին գարուց մէջ նորոգուելով հանդերձ՝ տակաւին հին կ՚երեւի, զոր եւ բոպացիներէն ումանք համարեցան ԺԲ կամ ԺԳ դարու գործ։ Լերան բոլոր բարացած ասպերուն վրայ կան մէկ մէկ բարձր և բոլորշի աշտարակներ պարիսպները, լերան ձեւուած էր գանազան պրուպդներով և ծաղկանց ու թռչնոց նկարներով։ Մզկիթի մօտ կը գտնուին բերդս կառուցանողի Մահմուտի և իր կնոջ կճեայ շիրիմներն։ Մի քանի գուբեր և խոռոչներ կան այս ապառաժուտ վայրերը, որոցմէ միոյն մէջ, շատ տարիներ բանտարգել մնաց բռնաւոր փաշա յէն, գաղթիացի ժողէր գիտնականը, որ Նափոլէոն մեծէն դեսպանութեամբ դրկուած էր Պարսկաստան, 1805 թուին։ Այժմ բնակիչք շատ բաներ կը պատմեն Մահմուտ




187. Հին Ասիանոսական քանդակ Բայազիտի մէջ։

բերդը. գերմանացին վկայեր, «յանդուգն և հրաշակերտ շէնք մը է, ի՛րաւ, այնպիսի տեղերու վրայ հաստատուած, ուր բազէներն ու անգղները հազիւ թէ կը համարձակին բոյն դնելու»։ Ա՞ւ բան հին Գարոռնից բերդը, որ յետին գարուց մէջ նորոգուելով հանդերձ՝ տակաւին հին կ՚երեւի, զոր եւ բոպացիներէն ումանք համարեցան ԺԲ կամ ԺԳ դարու գործ։ Լերան բոլոր բարացած ասպերուն վրայ կան մէկ մէկ բարձր և բոլորշի աշտարակներ պարիսպները, լերան ձեւուած էր գանազան պրուպդներով և ծաղկանց ու թռչնոց նկարներով։ Մզկիթի մօտ կը գտնուին բերդս կառուցանողի Մահմուտի և իր կնոջ կճեայ շիրիմներն։ Մի քանի գուբեր և խոռոչներ կան այս ապառաժուտ վայրերը, որոցմէ միոյն մէջ, շատ տարիներ բանտարգել մնաց բռնաւոր փաշա յէն, գաղթիացի ժողէր գիտնականը, որ Նափոլէոն մեծէն դեսպանութեամբ դրկուած էր Պարսկաստան, 1805 թուին։ Այժմ բնակիչք շատ բաներ կը պատմեն Մահմուտ

փաշայի վրայ, որ ապստամբուրդ էր և մահմետամ Քէհյ, վայրագ բայց ժեժահոգի։ Սա ուզելով յոյժ չքնաղ և փառաւոր պալատ մը շինել կանչեր և քններ է բոլոր ճարտարապետները, և վերջապէս ընտրեր է հայազգի մը և շատ հաւներ է անոր գործին. բայց չար նախանձով, որպէս դի ուրիշի մը ալ իրենին նման ապարանք չշինէ, ճարտարապետին ձեռքերը կարել տուեր է, որով և մարդը մեռեր է։ Քիչ ժամանակ վերջը ժամտահաւ բռնուելով մեռեր է նաև բռնաւորը, ինչպէս նաև իր որդին և յաջորդը Ահմետ, որուն յետոյ յաջորդեր է եղբայրը Պահլիւլ, որուն օրով՝ հայազգի բանտապետին ժեժանձնութեամբ վերոյիշեալ ժողկը դազդեցին ապստամբ է։ Բանտի դռնէն մօտ քարայերան և որմին մէջ տեղ ձեացած նեղ անցքին մէջ, կայ նշանաւոր հնութիւն մը՝ քանդակուած ժայռին վրայ։ Ինչպէս պատկերէն (թ. 187) կ'երեւի, բանդակուած են երկու քուրմեր՝ հայկական սպատաւորտաձեւ խոյրերով և մէջտեղը բազնի վրայ նուիրական եղջերու մը. քուրմերէն մին անմօրուս ձեռքը բռնած կը թուի գաւազան մը, իսկ միւսն ծերունի է և ձեռքերը բարձրացուցած կ'աղօթէ։ Ներքեւը մանր քննութեանց և խուզարկութեանց կը կարօտին լերանս բարձունքներն։ Գտնելի են նաև Ս. Գրիգոր կոչուած եկեղեցւոյ աւերակներն, որուն մօտ է Լուսաղբիւր ախտաւեղին։

ԺԴ դարու կիսուն կը յիշուին քաղաքիս մէջ 2000 Հայոց տուն. իսկ Թուրքաց և Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ ունէր 1735 տուն Հայոց և 340 տուն մահմետականաց՝ չորս թաղերու մէջ, որոց անուանք են Բանանիկ, Ջիլախանէ, Տեվէնիկ և Ապտիկոր կամ Ապրիկոր, վերջնոյս մէջ էր Հայոց Ս. Վարդան եկեղեցին։ Պարսից 1824 տարւոյ պատերազմէն և սրածութենէն, շատ վտանգուած էր Բայազիտ, և հազիւ թէ քիչ մը հոգի առած էր, սկսաւ 1828ին մեծ կռիւը. որուն մէջ Պահլիւլ փաշան, ծածկապէս Ռուսաց կողմն էր և պատերազմելէ կը զգուշանար. բայց երբ Բրդաց հրոսակախումբը սկսաւ թշնամանալ Ռուսաց, ինքն ալ անոնց հետ սաք եկաւ։ Ռուսաց զօրավար վրացի Ջաւխաւաձէ իշխանը, անցնելով Խալկետուհի լեռնանցքէն (ս. դասաս 28ին) վտնեց Թուրքաց հնծելազօրքն գունդ մը, և բանակ դրաւ քաղաքիս մօտ Ջանկիլօրի մէջ։ Բրդաց գունդ մ'ալ վտնելէ վերջ, քիչ ամբակոծութեամբ Բայազիտի սիրեց (29 օգոստ.) և Պահլիւլ անձնատուր եղաւ։ Յաջորդ տարին (1829) յունիսի կիսուն վտնայ փաշան եկաւ քաղաքս պաշարելու և առնելու զօրաւոր գնդով, զոր Ռուսները բաւական ամրացուցած էին, որոնց հետ միացան և զէնք առին ինքնակամ հազար Հայք, և բաժնուեցան գունդ գունդ ամբոցի զանազան կողմերը. բայց չկրցան Թուրքաց բազմութեան դէմ դնել, որոնք յետ սաստիկ պատերազմի սիրեցին պարսպաց և առնելեան մտրակոցին. սակայն չկրցան սիրել քաղաքիս և վերջապէս ճարահատեալ 2000 մարդ կորնցնելով ետ դարձան, և քրիստոնեաներէն մեռան գրեթէ 500 հոգի։ Այս պատերազմի մէջ քաջութեամբ և հնարագիտութեամբ մեծապէս հռչակուեցան Պաղիտուտին և Պոպով զօրավարները, որոնց հետ նաև աչ սակաւ Հայք, յորս նշանաւոր են Բարսեղ և Մկրտիչ Բայազիտցիք։ — Հաշտութենէ վերջ Հայերէն շատերը գաղթեցին Ռուսաց բաժինը. Պահլիւլ դարձաւ նորէն Բայազիտ, թէպէտև քիչ մը առեն զրկուեցաւ իշխանութենէն, ձկյալի քրդերը չսանձահարելուն պատճառաւ և տեղը զրաւեցաւ Տէվիր փաշայ, բայց շուտով վերահաստատուեցաւ։ Պահլիւլ իր հայրենի ճոխ պալատէն իջնելով բնակեցաւ քաղաքի անտէրն միոյն մէջ. ոչ միայն հոյակապ պալատը անշքացաւ, այլ և գրեթէ բոլոր քաղաքը աչնչացաւ, իբարու յաջորդող նորանոր պատերազմաց պատճառաւ։ Ռուսները երկրորդ անգամ սիրեցին քաղաքիս 1854 թուի յուլիս 29ին. բայց ամէնէն աւելի բազմապէս պատերազմին եղաւ 1877ին։ Հայկազն Աղշակ Տէր Ղուկասեան Ռուսաց զօրավարը Իկաիրի կողմերէն գալով (ապրիլ 26ին) և անցնելով Զինգիլ լեռներէն մտաւ Կոպոլիա, և Արծափ գիւղի արեւմտակողմեան Շաւտուռ լեռնէն ևս անցնելով, նախ սիրեց Ջանկիլօրի և յետոյ մայիսի սկիզբը մտաւ Բայազիտ, ուսկից Աձի Քեամիլ փաշան անպատրաստ լինելով զինուորաց հետ խոյս տուած էր, քա-

պաքը յանձնելով Ռուսաց մարդասիրութեան։ Հայ և մահմէտական քաղաքացիներէն մեծաթանրով ընդունուեցան Ռուսք՝ և փութով նորոգեցին բերդի և մարտկոցներու պարիսպները, և թողլով 2000 պահապաններ գետցին (մայիս 8ին) Ծադկոան և Բազրեանդ։ Ռուսաց բուն բանակին քաղաքիս սահմաններէն հեռանալէ վերջ, Վանայ կուսակալ Ֆայիք փաշան, բազմաթիւ վայրագ Հայուկաբի սահմանները։ Մակայն բերդի մէջ ապաստանածներն առակաւին կը դիմանային սաստիկ ծարաւի և սովու, վասն զի Ջրի ճանապարհն թշնամին արգիլած էր, և սակաւած կ՚ուտէին մինչև անգամ ձիու միս։ Ա.յսպիսի վիճակով բերդի միջի Ռուսք և Հայք դիմացան երեք շաբաթ, և գուժկան գրկեցին հայ Ազարանցի պատանի մը, որ Բերդաց տարազ ծածելով և խնդ ձեւանալով անցաւ



188. Արշակ Տէր Ղուկասով։

բանալի բերելով և առաջնորդութեամբ ձէյշլետտին և Խպատ Ազլան գլխաւորաց, յարձակեցաւ բերդին վրայ (յունիս 18ին). ա հաւոր վէպքեր չտեսաց որ չկատարուէին նոյն օրերը։ Մոլեդին բուրդերը ամբողջ քաղաքը հրով և սրով փճացուցին, կենդանի մնացած մարդիկ ալ սրէ անցուցին կամ գերի տարին, զրեթէ Հայերէն 300 տուն. միայն 100 տուն ազատեցան և փախան Մակուայ և Խշտաժեաց միջէն և լուր տարաւ Ռուսաց բանակին։ Յունիս 10ին հասաւ Տէր Ղուկասով և Թուրքաց երկու գունդերը ցրուեց, որոնց օգնութեան չկարենալով հասնիլ Ֆայիք՝ որ բանակած էր Թէվէրիկ գիւղը, պաշարումը վերցուց և մեկնեցաւ։ Այս պատերազմի մէջ Ռուսք կորնչուցին 120 հոգի և Քոմալեւսքի հրամանատարը, ունեցան 300 վիրաւոր և մնացած զօրքն ալ տկար և հիւանդոտ

լինելով, պրուսեցյան առողջանալու տեղեր. ասոնց հետ մեկտեղ նաև Քրդաց կատաբաժէն ազատած Հայը՝ աւերակ և ամայի դարձած քաղաքի բնակիչը։ Ցեսոյ կիսաւեր բերդէն Հանդերձ քաքաքս ձգեց Տէր Դաւկասով և գարձաւ Իղահր։ Այս պատերազմի պատմութիւնն գեղեցիկ կերպով վիպասանօրէն գրած է Ռաֆֆի։

Քաղաքիս բնակչաց թիւն այժմ կը համարուի 2000, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք Լուսաւորչական		1200
Մահմէտականք	Թուրքք. 235 / Քուրդք. 434	669
Այլ և այլք		131
	Գումարն...	2000

Հայք ունին Մ. կարապետ քարաշէն՝ բայց փայտայարկ եկեղեցի մը. շինութիւնն շատ հին չէ, ինչպէս կը յայտնեն շինութեան և նորոգութեանց արձանագրութիւնք՝ որք կը վերաբերին 1754—1879 թուականներուն. 1818ին գարձեալ նորոգուեր է, երբեմ կաթողիկոսի ժամանակ։ Հնագոյն եկեղեցին Աւետարկիլ՝ որ կը գտնուի քաղաքին արեւմտեան հարաւակողմը, Հայոց նոր գերեզմանաց մէջ, այժմ բոլորովին քայքայած և աւերակ վիճակի մէջ է. ունի մի քանի պակասաւոր կիսեզծ արձանագրութիւններ։ Կ՝ասանուին՝ թէ այս եկեղեցւոյ մէջ թաղուած է Ամբաս անուամբ Հայոց սպարապետ մը. հոս կան նաև և կը պատուին Թոռիս վանուհի, Մ. Սիմոն և Դպրոյ և Գասեւիկ աղբիւր, նուիրական ուխտատեղիք։ Հայրենասէր և քաջ խուզարկու ձեռաց քննութեանց կը կարօտին այս աւերակ գարձած նուիրական վայրերն և Գարօնից բերդի մնացորդներն։

Այժմեան Բայազիդ գաւառին սահմանքն են՝ հիւսիսէն Ռուսաստան, արեւելքէ՝ Պարսկաստան, հարաւէն՝ Վանայ նահանգն և արեւմուտքէն՝ Խնուս և Բասէն գաւառակները։ Բաժնուած է հինգ վիճակաց Բայազիդ, Տիաման, Գարա-Գիլիսէ, Ալաշկերտ և Ախլաթ, որոնք ունին 418 գիւղ և 8448 տուն։ Այս վիճակագրութիւնն է ըստ Բիւնէի, ինչպէս նաև գաւառիս բնակչաց թիւն՝ որ է 52544, հետեւեալ ազգութիւններէն ձեւացած.

Մահմէտականք	41471 հոգի
Հայք Լուսաւորչականք	8652 »
» Կաթողիկեայք	1754 »
» Բողոքականք	99 »
Այլ և այլք	568 »
Գումարն...	52544 հոգի։

Բայազիդի երկրագործական բերքերը տարուան մէջ միջին հաշուով յառաջ կու գան.

Ցորեն	2030000	չինիկ = 5 հոխայ
Գարի	1569000	» »
Կաուուռա	54000	» »
Կորեակ	26000	» »
Ոսպ	1000	» »
Գումարն...	3260000	չինիկ։

Լուբիա	7000 հոխայ
Բակլայ	2000 »
Սեխ և պատատեղ	50000 »
Սոխ	25000 »
Եղիպատացորեն	25000 »
Գետնախնձոր	2000 »
Ծիրան	2000 »
Շաղգամ	15000 »
Կաղամբ	55000 »
Գումարն...	183000 հոխայ։

Կենդանիներէն տարուան մէջ Բայազիդի գաւառը կը մնուցանէ.

Եզ, կով, գոմէշ, ևն.	147000 գլուխ
Ձի և քուռակ	26500 »
Էշ և ջորի	13500 »
Ոչխար, խոյ, գառնուկ, այծ, ևն.	701100 »
Գումարն...	888100 գլուխ։


Ուրիշ բերքերէն տարին յառաջ կու գան.

Բուրդ	80000 հոխայ
Ադամագ կամ պրօն	7000 »
Կաշի և մորթի եզան և գոմշու	2000 կտոր
« ոչխարի և այծի	2000 »

— Աշխարհատ, 499—507։ Նոր Հայաստան, 113—114։ Վ. Բիւնէ, Ա 228—234։ եւ այլն։

ԲԱՅԱԶԻԴ ՆՈՐ կամ ԳԱՒԱՌ. — Գաւառակս բաղաք Նոր Բայազիդի, կը համապատասխանէ հին Գաւառ աւանի, և կ'ինկ-

նայ Միւնեաց Գեղաքրուն պատոի մէջ, համանուն գեղի մօտ, գրեթէ չորս մղոն ծովեզերքէն հեռու, Երեան տանող արբունի ճանապարհի վրայ, և Ազնեղի հիւսիսային կողմը մղոն մը հեռաւորութեամբ։ Հեռուէն՝ բազմամարդ եղած և քաղաք դարձած է հին Բայազիդի գաղթականներով՝ և այլ պատճառաւ այժմ կը կոչուի Նոր–Բայազիդ։ Բերդի գլուխ կը կոչուի. մնաը կան քարայրներ և ձեռագործ սենեակներ, և մէկ մղոնէն աւելի երկայնութեամբ գետափը ճանապարհ մը, որ վէպի գետը կը տանի, հոս գտնուցան կաւեղէն կուռքեր՝ աչքերը ուլունք ապուցուած։ Խանդարուած լինելով հին եկեղեցին, փայտով ծածկեցին գաղթականները և կոչեցին Ս. Կարապետ, իրենց հայրենեաց հին Բայազիդի եկեղեցւոյն անուամբ։ Ուրիշ մեծ եկեղեցի մ՚ալ կառուցին Ծիրանաւոր Ս. Աստուածածին անուամբ, որուն շինութեան նիւթապէս շատ նպաստեց Բարաւոր Աղա Աբծրռեանի։ Քաղաքիս վաճառականութիւնն շատ զարգացած չլինելով, թէև ոչ սակաւ հարուստներ մեկնեցան ասկէ, սակայն այժմ ունի 1128 տուն և 7488




189. Նոր Բայազիդ = Գաւառ։

հին Գաւառ անունը քիչ անպամներ կ՚ճանչնան գրոց մէջ, և Միւնեաց պատմչի գլուխ գերու ցուցակի մէջ չի յիշուիր։ Քաղաքիս արհեստեան կողմը վայելչագեղ ձորակի մը մէջ քարաբլրի վրայ կան ԺԶդ դարու վերաբերեալ տապանաքարեր։ Այս գերեզմանատեղին ի հնումն մէկ կողմէն պարսպապատած էր բերդի ձեւով, այն պատճառաւ

բնակիչ. յորոց հազիւ 50 հոգի օտարազգի կը գտնուի, մնացեալը ամբողջ Հայք են։ Բնակիչը աւելի երկրագործական շահերով կ՚զբաղին քան թէ արուեստներով և առևտրով։

Քաղաքիս գերեզմանաց մէջ, վերոյիշեալ բերդատեղւոյն գագաթը կայ Ս. Յոհաննու մատուռ մը։ Գերեզմանաբարերը զարդարուած

Գեորգ անուամբ ուխտական մատուռը։ Եկեղեցւոյ սպասուց մէջ կան քանի մը արբանեան մատեաններ, Մեծին Ներսիսի բազկի նշխարը, երկու երկաթեղէն խաչեր՝ մէջտեղերը ունենալով ակունքներ՝ որոնց համար աւանդաբար կ՚ըսեն, թէ շինուած են Ս. Թադէոսէն՝ այն կոնքէն՝ որուն մէջ մանկացեալ Քրիստոս լուացուեցաւ։ Մեր ներկայացու-



190. Նոր Բայազիդի եկեղեցւոյ սպասները։


են գեղեցիկ քանդակներով, ուր կը տեսնուին փորուած զգեստուց տարազներ, զանազան զէնքերու ձեւեր, արհեստաւորաց գործիքներ և մեր իշխանաց շքանշաններ. բայց այս յիշատակաց քարերէն շատերը անհետացեալ կերպով քակած և գործածած են եկեղեցւոյ շինութեան։ Ս. Յովհաննէս Իւրաւ (մարգ) կոչուած տափարակին մօտ կը գտնուի Ս.

ցած պատկերի (Թ. 190) մէջ կը տեսնուին քաղաքիս եկեղեցւոյ սպասներէն նշանաւորները։ Ասկէց փոխադրուած է յիշեալ Ս. Աստղիկ և Մատթէոս առաքելոց նշխարաց արծաթէ տապանակ մը, որ նորոգուած է 1725 թուին Գաւազանցի Սիմեոն վարդապետի հրամանաւ։ Նոր Բայազիդի գաւառն բաժնուած է չորս վիճակաց և ունի 96123

բնակիչք՝ յորոց 61367ը Հայք են։ — Ջաղաշտեան, Բ 124–125։ Միւռական, 42–45։

ԲԱՅԱՍ կամ ՊԱՅԱՍ. — Ծովային կիլիկեոյ ժէ[Ա]յասի ճիշդ՝ դիմացը, Հայոց ծոցի

բնակիչ, կէսը հայ և կէսը թուրք։ Ասանիս օղը մերձակայ ճահիճներու պատճառաւ վատառողջ է, մանաւանդ ամառը։ Մէջը կան նշանաւոր հին մզկիթ (թ. 191) մը, բերդ, ի-



Թիւ 191. Բայաս։

արեւելեան ծովափի վրայ, Համանուն վտակի մօտ հաստատուած այս քաղաքը, որ իր շրջականերով ժամանակաւ պատմական մեծ դէպքերու ասպարէզ եղած է, այժմ փոքրիկ աւան մը դարձած է։ Ունի գրեթէ 6000

ջեւանատուն, բաղանիք, եկեղեցի, և այլն։ Բայասէն կ'անցնի Ասանայի և Ալեքսանդրեթի կառաւանի ճանապարհը, ինչպէս նաև նոթաշէն կառուցին։ Հին գարերու մէջ քաղաքիս ունեցած պատմութիւնը շատ որոշ

չէ։ Ռուբինեան թագաւորներու օրով Բայաս կը յիշուի իբրև ձկեր գաւառի մէկ մասը, որոյ իշխանը՝ Լեւոն Ա. թագապրումեան հանդիսի ժամանակ աշխարհականներու կարգին մէջ առաջին նախամեծ բազմեր է։ Լեւոն Ա. 1214ին պարգեւագրի մէջ կը յիշուի Բայաս՝ Abaessa գրուած, իսկ խաչակրաց պատմիչները կը յիշեն քաղաքս կոչականց կամ Աղչկանց բերդ անունով։ Հայկական ՈԿԵ (=1216) թուին Բայասը գիւղ կոչուած է, ինչպէս կը տեսնուի Նոյն տարին տեղւոյս Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ գրուած մաշտոցի մը յիշատակարանէն։ — Ուխտաւորներով դարու վերջերը Բայասը ընկեր է Փիւչիկ Ալինկամ խալիլ պէյ անուն բռնաւորի ձեռքը, որ աւազակութեամբ սարսափ ձգեր է շրջակայքը և մինչև անգամ կը կողոպտէ եղեր Մէքքէի ուխտագնացները։ Ասոր յաջորդը Ցէտէ պէյ ձերբակալելով կը պնդատուի 1817ին։ Նոյն գաւրու մէջ Նալեան պատրիարքը հետեւեալ կերպով կ'ընէ տեղւոյս նկարագիրը. «Փայաս է Ատանայու ծովեզերեայ քաղաք մի, դէպ հարաւ. շէն, հասարատ և բերդաւոր. ունի և մզկիթիս և պանդոկս վաճառականաց... թէպէտ ցած հաւայ ունի՝ բայց վաճառատեղի է. իլիմնին և թուրինճն առատ է. և ապահով լեռն մի հորս կից է»։ Իտալացի ճանապարհորդ մը ժէ. դարու սկիզբը, գովեթիամբ կը յիշէ Բայասի բամբակի և բրոյի վաճառքները։

Բայաս գաւառակը ունի 49 գիւղ և մօտ 20000 բնակիչ։ Երկրի ծովեզերեայ դիրքը և գաղջ կլիման, երկրագործական և առեւտրական զարգացման շատ կ'օգնեն։ Ցարմոջի և լիմոնի ծառերով ծաղկած պարտէզներէն և շերամի որթ մնուցանող թթենիներէն բաւական հասոյթ կը գոյանայ, ինչպէս նաև բրնձի արտերէն՝ որոնք ի հնուց մեծ համբաւ ունին եղեր։ Գաւառակիս մէջ կան նշանաւոր գիւղեր, Զօղ Մերզմեն, Լօզկյրլի, Օձագլը և Էրգին, իրարու դրեթէ կից են և ունին 1000 տունէ աւելի՝ 800ը Հայոց։ Ջիյրուեղուզը (Ջիլիասան) կոչուած լայնատարած անտառը, որ երբեմն Սսի կաթողիկոսութեան կալուած էր, և այժմ պետական դարձած է, կը սկսի Բայասի գաւառակի արեւմտեան հիւսիսակողմէն։ — Միտառան, 443–445։ Կիլիկիա, 220–225։

ԲԱՅԻՍ. — Գիւղ Սիսեանց Ճահուկ գաւառի մէջ, որ է անշուշտ Տաթեւի վանքի հարկատու գիւղերու ցանկի մէջ յիշուած Պաիեատը։

ԲԱՆԱՋՈՒՐ. — Գիւղ Արցախի Գիզակ (Ձիպրայիլ) գաւառի մէջ. կառուցուած է ապառաժուտ ձորի մը ալ լանջի վրայ, ծոր գիւղի հարաւային կողմը։ Բնակիչք 1000էն աւելի են, և ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը՝ չորս սիւներով։ Թէև տեղւոյս օդն, կլիման և ջուրն վատառողջ են, սակայն 70–80 տարի ապրողներ կը գտնուին։

ԲԱՆԱԿՆՏՂ. — Այսպէս կը կոչուի Սիւնեաց Սողք գաւառի մէջ՝ ծովեզերքի մօտ Սեւանայ դիմաց գտնուած այն տեղն, ուր Աշտ Ա. 883 թուին վրաց կողմերէն գաղնաղով բանակ դրած էր։ Այս տեղ Սեւան ագռաւաձի շինող հռչակաւոր Մաշտոցը՝ բարեպաշտ իշխանէն ընդունեցաւ կենաց փայտի մասը։

ԲԱՆԱՆԵԱՐ. — Ուրիշ անուն Ապարանների՝ զոր նկարագրեցինք ի կարգին։

ԲԱՆԱՆՑ, ԲԱՅԵԱՆ կամ ՄԵԾ ԲԱՆԱՆՑ. — Բազմամարդ Գիւղ Արցախի Գարդման (Գանձակ) գաւառի, համանուն հասարակութեան մէջ։ Կառուցուած է Բանանց կամ Արուքիւն (Ղոչ Ղարա) վտակի ձախ ափը, երկու երկար և ցած բլրակներու վրայ, և շրջապատուած է փոխոտ, Ծակ-քար, Ժիրի սեռ և Տատէ սեռ լեռներով։ Ըստ աւանդութեան, այս գիւղը հիմնուած է Գանձակի հետ, և մի և նոյն ժողովուրդը բնակութիւն հաստատած է այս երկու տեղերը։ Ուրիշ աւանդութիւն մ'ալ կ'ըսէ, թէ Բանանց անունը ծագեր է Բանանց (գործարան) բառէն, որովհետեւ այստեղ եղած են քարհատի, երկաթի հալելու գործարաններ.

Գիւղս կանոնաւոր փողոցներ չունի, բայց ընդհանրապէս տներու սենեակները կանոնաւոր են. կան նաև սակաւաթիւ գեղնապոյր խուղեր։ Եկեղեցին՝ որ նուիրուած է Ս. Լուսաւորչի, կառուցուած է 1863 թուին ապառաժի մը վրայ, և բաւական ընդարձակ է ու գեղեցիկ։ Այս տաճարի մէջ կը պահուին տասուերեք աւելի աւետարաններ, ո-

բոց յիշատակարանները հրատարակած է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը։

Գիւղի արեւմտեան կողմը բլրակի վրայ կը գտնուի հին հանգստարան մը, ուր կայ նաև խաչարձան մը ՋԻԶ (=1477) թուականաւ անձանագրութեամբ։ Բանանցի կլիման առատիկ տաք է և խեղդիչ. բուսականութիւնն շատ հարուստ է և ամբողջ ձորակը ծածկուած է պտղատու ծառերով։ Բնակիչները մեծ մասամբ բնիկներ են, ամբողջ հայ լուսաւորչական, մօտ 2000 հոգի՝ բաղկացած 274 տան։ Մատուռ պակաս բուսական զարգացած են. 1872 թուէն ունեցեր են ծխական պարագ. այժմ բացուած է նաև պետական։ Այս գիւղէն են բժիշկ Տէր Միքայէլեան, ճարտարապետ Լեւոն Տէր Միքայէլեան, իրաւաբան Յով. Տէր Իսրայէլեան, ինչպէս նաև Մոսէփան Տէր Աւետիքեանը, որ ծանօթ է Բանանց գիւղի կեանքէն գրած պատկերներովը։ — Բնակիչները ընդհանրապէս արհեստաւոր են, արծաթագործ, ոսկերիչ, դերձակ, քարտաշ, հիւս, որձագործ, սայլագործ, վաճառական, են։ — Արցախ, 278–284։ Ազգագրական Հանդես, 1889 եւ գիրք 308–309։

ԲԱՆԱՆՑ ՓՈՒՐ կամ ԴԱՄԲԼԱՋՈՐ. — *Աւերակ գիւղաւեղի, Մեծ Բանանցէն մղոն մը հեռու, նոյն վտակի ալ կողմը։ Հոս կայ կիսաւեր եկեղեցի մը և մի քանի կրճաճաեալ արձանագրութիւններ։ Գիւղիս մօտ կը գտնուի Նահատակ անուամբ ուխտատեղի մը. իսկ ասոր դիմաց ձորի ձախ կողմը կայ քարայր մը Ճգնաւորի տեղ կոչուած, ուր, կ'ըսեն, ճգներ է ճգնաւոր մին։*

ԲԱՆԻԿ. — *Գիւղ Ալբարատայ Ճակատը գաւառի Սուրմարի վիճակի մէջ։ Ունի 144 տուն հայ բնակիչ։ — Համանուն գիւղ մ'ալ կայ Աբաւհանի շրջանակի Կեօղէ վիճակին մէջ, 23 տուն քուրդ բնակչօք։*

ԲԱՆԻՍԱՂՈՒ. — *Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր (Զանգեզուր) գաւառի մէջ, 36 տուն հայ բնակչօք։*

ԲԱՆԼՂԴ կամ ԴԱՆԼՂԴ, — *Գիւղ Լեռնային Կիլիկիոյ. ունի 120 հայ և 570 այլազգի բնակիչներ։*

ԲԱՆՈՆ. — *Գիւղ Աբճէվ (Վան) գաւառի մէջ. ունի 50 տուն հայ բնակիչ և Ս. Գէորգ անուամբ պարզ եկեղեցի մը։ Գիւղս ճանապարհի վրայ գտնուելով, գրեթէ միշտ անպակաս են բազմաթիւ ազգային և օտար հիւրեր։ Բանանի բնակչաց համար սովորաբար բան է 80էն 100 տարի ապրիլը։*

ԲԱՆԶՈՒ. — *Քաղաքաւան Մոլտավիոյ (Րումանիա), Ֆոքշանի հիւսիս–արեւմտեան կողմը 22 հզրմ. հեռաւորութեամբ. ունի 2500 բնակիչ։ Քաղաքաւանիս մէջ կան 150 Հայք։*

ԲԱՆՋԱՐԿՈՒՏ. — *կը յիշուի Աշոցքի մէջ։*

ԲԱՆՋՐՈՒՏ. — *Գիւղ Տայոց Բերքացփոր գաւառի մէջ, Գալնուս լերանց սառոյցքը, բարերեր հովտի մը մէջ, յորում կան եկեղեցիներու աւերակներ և քարանձաւներ։ Գիւղիս այժմեան բնակիչք յոյն են՝ 43 տուն։*

ԲԱ–ՇԸՄԸԴ. — *Գիւղ Տիգրանակերտի (Մլիճան) առաջնորդական չորրորդ թեմի, ուր 5 տուն հայ։*

ԲԱՇՈԱՅ. — *Գիւղ Տիգրանակերտի (Մլիճան) առաջնորդական չորրորդ թեմի. ունի և եկեղեցի մը և 30 տուն հայ բնակիչ։*

ԲԱՇՆԵՂ. — *Հայաբնակ գիւղ Տիգրանակերտի առաջնորդական հինգերորդ թեմի. ուր 1 եկեղեցի, 1 վարժարան և 70 տուն հայ բնակիչ։*

ԲԱՇՈՒՔ. *Տես ՍՈՂՔ։*

ԲԱՒ. — *Գիւղ Մոկաց մէջ. բնակիչ Հայք և Քուրդք խառն։ Հայք ունին Ս. Գէորգ եկեղեցի մը։*

ԲԱՒԱՆՋ. — *Աւանս կը յիշէ Բուզանդ (Գ. ԺԴ) հետեւեալ տողից մէջ. «Եւ ասին զնա (զծերունին Դանիէլ) և ածին առ թագաւորն Տիրան ի գաւառն Աղձնեաց, ի Բառաէջ աւան»։*

ԲԱՒԻՋԱԿՈՎԻՏ կամ ԲԱՒԻԼՈՎԻՏ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին։*

ԲԱՒՆԱԿՈՒՏ կամ ԲԱՒՆԱՒՈՒՏ — *Հայաստան՝ բայց այժմ այլազգաբնակ գիւղ Այրարատայ Ճակատը գաւառի մէջ, համանուն Բաւնաւառտ գետակի եզերքը։ Թովմաս Մեծոփեցին Լէնկթիմուրի արշաւանաց ժամանակ 1394 թուին, կը յիշէ այս անուամբ առանձին վիճակ մը. «Եկին ի վերայ Ճակատուց երկրին՝ Սուրմառու և կողբայ, և ի վերայ Բառնաւառտին, և գաւառին Արոիշոյ. այս երեք գաւառս ցրուեալ էին. առ հասարակ*

զաճենեսեան կողոպտեցին, և ողորմելիեանքն Աստուծոյ գերին ազատեցաւ ի ձեռաց նոցա»։ — Այրարատ, 116։

ԲԱՍԵՆ կամ ԲԱՍԵԱՆՔ. — Առաջին և ընդարձակագոյն գաւառ Այրարատայ, որուն հարաւային արեւմտեան ծայրը տարածուած է, և սովորաբար ծանօթ է եղակի կոչմամբ, բայց մեր նախնիք յաճախ կը գրեն Բասեանք, ինչպէս նաև թուրքերը՝ Բասենկեր։ Մեր ազգի ինքնիշխանութեան օրերէն սկսեալ արդէն երկու գաւառակներու բաժնուած էր, Վերին և Ստորին Բասեն։ Հին ժամանակ, Ախթայոտ կամ Վերին Բասեն։ կը կոչուէր Վանանդ գաւառն՝ որ երբեմն այս ընդարձակ գաւառի մասն կը կազմէր, և Արշակ Աէ օրով զաւուեցաւ առանձին գաւառ եղաւ։ Հինգերորդ դարու մէջ Բասենի սահմանքն էին հիւսիսէն Տայք, արեւելքէն՝ Վանանդ և Երասխաձոր, հարաւէն՝ Բագրեւանդ և Տուրուբերան, իսկ արեւմուտքէն՝ Բարձր Հայոց Կարնոյ գաւառը։

Գաւառս իր անունն առած է հին Բասեանք տոհմի անունէն։ Օաարագղի մատենագիրներէն այս տոհմի հնագոյն յիշատակողն Փ գրով կը գրէ Փասեանոս Φασιανοί։ Բնական երկրի դիրքն ընդարձակ հովտաձեւ գաշտաւայր է, ինչպէս կը յիշէ Խորենացին, Հովիտ մեծ Բասենոյ գրելով և ուրիշ տեղ մը Գաչ ընդարձակ հովիտն Բասենոյ անուանելով. ուր Աբոտշէս Բէ սպասպապետ Սմբատայ Հայոց Գոմէտիանոսի զօրքերը։ — Զորրորդ գարու կէսէն վերջ անոնցմէ կը յիշուի Բասենի իշխան՝ Մանուակ, և Զ դարու սկիզբները՝ Ներսէհ, որ շատ քաջութիւններ ըրած է Գթոց պատերազմներու մէջ Յուստինիանոս կայսեր օրով։ Զօրաբաժնէն մէջ եղակի կը յիշուի Բասենացին, որ կու տար 600 զինուոր, Որդուններէն զատ, որք կու տային 700, նոյնպէս զրացի Աբրեղենից, Հաւնունեաց և Գաբեղենից նախարարութիւններէն զատ, որոնք կու տային 300ական մարդ։

Այս կողմանց առաջին եպիսկոպոս էր Երեսափոս՝ զոր կարգեց Ս. Գրիգոր քրմաց որպիներէն։ Սրբոյն Վրթանէսի ժամանակ գաւառիս եպիսկոպոսն էր Տոռոք. ուրիշ ծանօթ եպիսկոպոսներն են՝ Արտիր, Մովսէս, Տիրիկ։ Ե դարուն Պարսից Նամակի պատասխանը գրող եպիսկոպոսներէն մին էր Թարիկ եպիսկոպոսն Բասենոյ. Է-րդ դարու մէջ Յաեփ. Օրպէհան կը յիշէ գաւառիս Մանաւասկ եպիսկոպոսը, ինչպէս նաև Քրիստոսատուր՝ Գիշոյ ժողովին մէջ, և Յեսու՝ Մանազկերտի ժողովին մէջ։ Նոյնպէս ԺԴ դարուն կը յիշուի Բասենի Տիրատուր եպիսկոպոսը Սսոյ ժողովին մէջ։ Վաղարշակ Թագաւորը Բասենի մէկ մասին վրայ հաստատեց Որդունեաց նախարարութիւնը։ Նոյն թագաւորի ժամանակ հաստատուեցան Աբեղենից, Հաւնունեաց և Գաբեղենից նախարարութիւնները Բասենի մէջ, որոնց երկիրները կարելի է համարել գաւառիս վիճակներն։

Վերին Բասեն (ըստ Տաճկաց Բասէն-իւլեա) կը կոչուի նաև Բարձր, գրեթէ 5000′ բարձր լինելով ծովու երեսէն։ Երասխ գետը գրեթէ արեւմտահարաւէն դէպի արեւելահիւսիս ոլորտապտոյտ ընթացքով վազելով, Վերին Բասենը կը բաժնէ Ստորին կամ Վարին Բասենէն (ըստ Տաճկաց Բասէն Միւֆլէ)։ Այս երկու մասերն իրարմէ մեծապէս կը տարբերին. Վերին Բասեն իր բոլոր տարածութեամբ տափարակ գաշտ է հիանալի տեսարանաւ, ի բաց առեալ հիւսիսային մէկ փոքրիկ մասը, որ անտառոտ է։ Ստորին Բասենը ունի զանազան լեռնահովիտներ, մեծ ու փոքր ձորակներ, խառն ի խուռն բլրակներ, շատ տեղ ալ գաշտեր և հիւսիսային կողմէ գեղեցիկ և ընդարձակ անտառներ, ուր կան բազմաթիւ մայրի մեծամեծ ծառեր։

Բասեն գաւառը իր պատուական և արգաւանդ հողերով կարնոյ գաւառի տեսակն շատմարտանը կը համարուի, յորմէ դուրս կու գան ամեն տարի մեծ քանակութեամբ ընտիր ցորեն, գարի և ընդեղէնք։ Տեղւոյս Հայ, Տաճիկ և Քուրդ բնակչաց անհոգութեան և ապիտութեան պատճառաւ այս դեղեցիկ և զուարճալի երկիրը, հակառակ իր ունեցած յարմարութեան, մանաւանդ հողին, և կենսատու օդին, գրեթէ ամենապարզ պատուղներէ զուրկ կը մնայ, վասն զի անծանաւտան է, և սովորութիւն չկայ գայնս տնկելու և մշակելու։ Մանաւանդ Վերին Բասենի մէջ շատ տեղեր վտակու փայտ անգամ չի գտնուիր, այդ պատճառաւ և ի նախ-

նեաց անփայտ անունն առած է։ Գաւառիս հիւսիսակողմը զեղեցիկ, խոտաւէտ և ջրաբեր լերանց վրայ, ամառ եզանակին կը լեցուին բազմաթիւ վրանաբնակ քրդեր՝ իրենց ընտանեօք և խաշինքներով։ Ըստ Ազգային Պատրիարքարանի վիճակագրութեան վերին և Սաորին Բասեն միասին ունին 29478 բնակիչ և 20 գիւղեր. Հայոց թիւն 12000ի կը հասնի։ Վ. Քինէ Բասեն գաւառակի (գազա) մէջ կը դնէ 171 գիւղ և 46651 բնակիչ, յորոց միայն 7275 հոգի կը հաշուէ հայ։ Այս մասին քանի որ նոր վիճակագիր չունինք, չենք կարող հաւաստի տեղեկութիւն տալ։ — Ստորգր. հին Հայաստ. 380–387։ Աշխարհաց., 15–44։ Նկարգր. ուղեւորութիւն, Ա. 20–22։ Հիւսուածք, Գ 92–94։ Եւ այլն։


ԲԱՍԿԱՆ. — Գիւղ Տարօնոյ վիճակին մէջ. ունի 566 հայ բնակիչ, բաժնուած 85 տան։

ԲԱՍՈՐ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական ութերորդ թեմի. ունի 15 տուն հայ բնակիչ։

ԲԱՍՈՐԻԿ. — Այս անուամբ երկու հայաբնակ գիւղեր կան Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմի մէջ. մին ունի 15 տուն, միւսն 25 տուն և մէկ եկեղեցի։

ԲԱՍՈՒ. — Գիւղ Զարսանճագի առաջնորդական առաջին թեմի մէջ։ Ունի 25 տուն հայ բնակիչ և Ս. Լուսաւորիչ եկեղեցի մը։

ԲԱՍՏ. — Հայարնակ Գիւղ Ազձնեաց նահանգի, այժմեան Խլզան վիճակի մէջ։ Ունի մօտ 100 տուն բնակիչ և Ս. Աստուածածնայ քարաշէն եկեղեցի մը։



192. Բարդող լեռը։

o. Ոփիա (Ophite). — m. Մառն զեղնակարմիր. — ma. Նշաքար (Amygdaloide). — mr. Կիճաւկիր (Marmorkalk). — s. Օձաքար (Serpentine). — sa. Կայծքար–գաւարց (Silifite–Quartz).

ԲԱՍՏԱՄ. Տես ՍՈԴԲ։

ԲԱՎԼՈՒՍ կամ ԲՕԼՈՒՍ. — Գիւղ Աբթիգասատ պաշտի մէջ. բնակիչը մեծաւ մասամբ հայ են։ Ջմեռ ժամանակ սակաւ հոս կ'օթեւանի կ. Պոլսէն Եւդոկիա գացող կառաւտնը։

ԲԱՏԱԿԱՆՑ. — Գիւղ վասպուրականի Ռշտունեաց գաւառի մէջ, վանայ ծովակի հարաւային եզերքը։ Կ'ըսեն թէ շինուած է Բատ անուամբ իշխանէ մը։ Գիւղիս մօտ կը գտնուին Մանանճիկի բերդի մնացորդները։

ԲԱՏԱՐ. — *Ամուր գիւղ Սիւնեաց Աղահէնք գաւառի մէջ։ Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր ևս կան, մեծ մասամբ այլազգաբնակ։*

ԲԱՏԸԿԱՆՆ–ՔԻՇԼԷ. — *Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական չորրորդ թեմի։*

ԲԱՏԻ կամ ՊԱՏԻ ԳԻՒՂ. — *Կը գտնուի Գանձակէն 67 վերստ հեռու՝ դէպի արեւմտահիւսիս, Պատառձորի հասարակութեան մէջ, բարձր տափարակի մը վրայ։ Գիւղիս արեւմտեան կողմէն կը վազէ Պատա գետը, որ սկիզբն կ'առնու Թալ–ևալ և Լօքիզ–տաղ լեռնաշղթաներէն։ Կէս դար առաջ այս գիւղը կը գտնուէր այժմեան տեղէն քիչ մը աւելի հիւսիս՝ ձորակի մէջ, ուր են այժմ այգիները. սաստիկ տաքէն տախտակներ են բնակիչները տեղափոխուիլ աւելի բարձրը։ Բնակիչքն են 1720 հոգի՝ բաժնուած 246 տան. ունին մէկ հին աւերակ և մէկ նոր եկեղեցիներ։*

ԲԱՏԻՆ ՎԱՆՔ. — *Երուսաղէմի մէջ յիշուած ազգային վանքերէն մին, որ յատկապէս Շիրակացւոց կոչուած է ի նախնեաց, որ և ի վերջոյ անուանուեր է Կնկղաւորաց վանք։*

ԲԱՏՐՈՑ ՎԱՆՔ. — *Նոյնպէս հին վանք Հայոց, Երուսաղէմի մէջ, Դաւթի աշտարակի մօտ, որ կը կոչուէր յանուն Ս. Աստուածածնի։*

ԲԱՐ. *Տես* ՍՈՂՔ։

ԲԱՐԱ. *Տես* ՊԱՐԱ։

ԲԱՐԱՋԱՆ ԼԵՐԻՆՔ. — *Կը գտնուին Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Ալաշկերտի դաշտի արեւմտակողմը, որք Շեւռևաննայ գիւղոյ արեւմտեան կողմը շրջապատած են և տարածուած Թալագի արեւելեան հարաւային բարձունքը մինչև Կէլիճ լեռը։ Այս լեռները Բարազգի կոչուած ըլղպկան քաջ ցեղի մը ամարանոցներն են։*

ԲԱՐԱԼԷԹ. — *Գիւղ Գուգարայ Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ, գետակի մը եզերքը։ Բաժնուած է երկու թաղերու, մին՝ գետի աջ կողմը և միւսը՝ ձախ։ Գիւղիս հարաւային մասի մէջ դեռ կ'երեւին հին մարտկոցի մը պարիսպները, իսկ հիւսիսային կողմը կէս վերստ հեռու կը գտնուի սրբատաշ քարէ Ս. Ստեփանոս անուամբ ուխտատեղի մատուռ մը, որուն ձեղունը քանդուած է և հարաւային դրան վրայ պղտւած արձանագրութիւն մը կայ։ Գետի աջ կողմը կառուցուած են Հայոց և Վրաց քահանչն և բաւական գեղեցիկ եկեղեցիները. գետի միւս կողմը կը գտնուի 1867 թուէն կառուցուած արքունի գիւղական միջատեան դպրոցը. այժմ այս դպրոցը երկդասեան է և ունի գիշերօթիկներ։ Տները կիսագետնափոր են, և փողոցները, ուրիշ գիւղերու բազդատմամբ՝ քիչ մը կանոնաւոր։ Ընակիչներէն 91 տուն՝ 512 հոգի Հայք են, 13 տուն 386 հոգի Վրացիք, 2 տուն Քուրդ և 3 տուն Թուրքք։ Վրացիք և 10 տուն Հայք բնիկներ են, իսկ միւսները գաղթած են Աբասհանէն։ Գիւղիս բնակիչք կը պարապին երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ — Ջաւախք, 31–33։*


ԲԱՐԲԱՆԴ. *Տես* ՀԱԲԱՆԴ։

ԲԱՐ–ԲՐՇ. — *Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական եօթներորդ թեմի։*

ԲԱՐԴՈՂ. — *Հրաբղխային լեռ Այրարատայ ձակատը գաւառի մէջ, Կողբայ հարաւակողմն և Ջնչաւանի արեւմտակողմն։ Բարձր է գրեթէ 7060 ոտնաչափ։ Այլազգիք Թաքեալրուռ կը կոչեն լեռս, արեւելեան սահրամբ գտնուող նոյնանուն գիւղի անուամբ։ Լեռնային ընդհանուր կազմութիւնը օձաքարուած է, թխագոյն և բիւրեզակերպ. հրաբղխի վէրէն ժամանակաւ գուրս նետուած են զանազան գոյներով կճափայլ և կրային մեծամեծ կոշտեր, որոնց տարրալուծութիւնն ըրած է Ապիս երկրաբանը։ Ունենալով քանի մը ինքնաբուղխ ադբիւրներ, կը բուսցնէ տեսակ տեսակ ծաղիկներ և բանջարեղէններ։ Լէնկթիմուրի առաջին արշաւանաց ժամանակ 1387ի, Կողբացի Մարտիրոս անուն քաջ զօրական մը, իր գիւղի քաջերն հետն առած, լերանս վրայ ելաւ, և քաջութեամբ պատերազմեցաւ անօրինաց դէմ։ — Այրարատ, 117։*

ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ Ս. ԱՌԱՔԵԼՈՑՆ ՎԱՆՔԸ. — *Վասպուրականի Աղբակ գաւառի մէջ կը գտնուի հինաւուրց և հռչակաւոր վանք։ Կառուցուած է կոփածոյ ընտիր քարերով, ահաւոր և հսկայաշէն վիրքով, բարձր բլրոյ մը վրայ։ Վանքիս շինութեան որոշ թուա-*

կանն յայտնի չէ, որովհետեւ այդ յիշատակարէն կը գտնուի վաղեմի մեծատոհմ գրան երկու կողերուն վրայ, որ ի վերջոյ ծածկուեր է նոյն գրան մէջ շինուած մի ուրիշ փոքր գրան կամարի տակ։ Բայց կը կարծուի, թէ չորրորդ գարու մէջ հիմնուած է, և թերեւս ժամանակակից ըլլայ Էջմիածնայ քանի մը տարի տարբերութեամբ։ Վանքին տաճարը կը բազկանայ երեք գլխաւոր մասերէ. ա. միջին մասը, որ է Աւագ սեղան. բ. աջակողմեանը Հազարպետի սեղան. գ. ձախակողմեանն՝ փոքրիկ մատուռ մը, ուր է սուրբ առաքելոյն գերեզմանը, որոյ հին տապանաքարի վրայ առանց թուականի հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Աչս տապանաքարս ճանգստանայ Սբբոյն Բարդուղիմէոսի Սբբազան Առաքելոյն առագին Լուսաւորչին Հայաստանեայց ազխարքին»։ Աչս տապանաքարին վրայ կայ ուրիշ նորագոյն մարմարիոնէ տապանաքար մը և ՌՄԼԲ (= 1688) թուականաւ արձանագրութիւն մը։



193. Բարդուղիմէոսի վանքը։

Ս. Բարդուղիմէոսի մեծատոհմ եկեղեցին հաստատուած է վեց կլորակ քարէ սիւներու վրայ՝ որոնց վերի գլուխներն հրաշակերտ արուեստով բարձրանալով կը խառնուին հսկայական կամարին, որոյ ճարտարապետութեան և ամրութեան վրայ նայողն կը հիանայ. մի և նոյն տեսակ կամար մը կը տեսնէ տաճարի առաստաղը։ Աչս երկու տողերին կամարաց կիսրնդական ուղղութեամբ դէպի դուրս շինուած են երկու միջակ մեծութեամբ կամուրիկներ։ Վանքը շրջապատուած է գրեթէ 1½ մետր լայնութեամբ պարսպով՝ որոյ անկիւնաւոր տեղերն կան զօրանոցի ձեւով կերտուած պահարաններ։ Գարասի թէ՛ ներսի և թէ դրսի կողերուն վրայ, քանդակուած կան բազմաթիւ խաչեր, որոնք բարեպաշտ ուխտաւորաց յիշատակարաններ են։

Վանքիս եկեղեցւոյ գրան արտաքին ճակատին վերի կողմը, սքանչելի արուեստիւ քանդակուած կայ Հայր Աստուծոյ պատկերը, նման եզեկիել մարգարէի տեսլեան, առիւծներով և հրեշտակներով։ Վարի կողմը Ս. Բարդուղիմէոս տկար ձեռքը, նժոյգ հեծած կ'սպաննէ վիշապ մը։ Գրան երկու վիմիարի կողերուն վրայ փորագրուած են վանքի չորս ճարտարապետաց պատկերները բնական մեծութեամբ և իրաքանչիւր ճարտարապետ իր գործածած գործիքն ձեռքը բռնած է. ասոնց մէջտեղ կը գտնուի նաև Յովհաննէս Մկրտչի գլուխը, և գրան երկու կողմերը երկու մարդ բուրմամբ ի ձեռին։ Աչս արհեստական նշանաւոր գործերն անկատար

տարած է վանքի շինութեան, պայծառութեան և բարեկարգութեան։ Ս. Բարդուղիմէոսի այս վանքը ունեցած է երբեմն արտարոյ կարգի պայծառութիւն և նոյնպէս երբեմն արտաքոյ կարգի անշքութիւն. ունեցած է ինչպէս շատ ուրախալի ուխտակատ մեծ հանդէսներ, նոյնպէս տեսարան և հանդիսատեսը եղած է բազմապիսի արտաճմլիկ անցքերու։ կը պատմեն՝ թէ ժամանակաւ Ս. Բարդուղիմէոս բազմաթիւ մենաստաններ ունեցեր է, հանդերձ հարուստ և ճոխ սպասներով և եկամուտներով, սակայն զանազան ժամանակներ թշնամեաց աւարառութեանց են թակաւ եղած է, ինչպէս եւս նաև վերջին տխուր դէպքերու միջոց։ Բարձրագիր վանքս ունի եզական տեսարան, պատուական օդ, ջուր, ընդարձակ մարգագետինք և գաշտ բայր։

Վանքիս անմիջապէս քովը 20 տուն բազկացած Հայոց գիւղ մը կայ, որոյ բնակիչը վանքցի կ'ըսուին, վասն զի գիւղն ալ վանատան սեփհականութիւնն է։ Ժամանակաւ գիւղի Հայոց բնակութեանց թիւն 75ի կը հասնէր, որոնք երթալով նուազեցան. այժմ կը բնակին նաև 25—30 տուն քուրդ։ Այս գիւղի թէ՛ հայ և թէ քուրդ բնակիչք առհասարակ կ'ապրին վանքիս հողերով և ի կամուտներով։ Ս. Բարդուղիմէոսի տարեկան հասոյթն կը լինի 150—200 ոսկի, սակայն եթէ օրինաւոր վիճակի մը ալ դրուի, շատ աւելի պիտի լինի։ Եթէ միջոցներն ներեն, և քաջիմաց առաջնորդի մը ձեռք յանձնուի այս վանքս՝ քիչ ժամանակէն ամբողջ Ազգակ գաւառի և շրջակայից համար լուսաւորութեան կեդրոն կրնայ դառնալ։ Զանց կ'ընենք աստ կարգաւ գնելու վանքիս նկատմամբ եղած աւանդութիւնները։ Ս. Բարդուղիմէոսի վանքէն քիչ հեռու դէպի արեւելահիւսիս կը գտնուի Վիշապ ձեր (այր) կոչուած քարանձաւ մը։ — Նկարագրական Ուղեւորութիւն, Բ 73—97։

ԲԱՐԵԲՈՒԽ. Տես ԻՆՆԱԿՆԵԱՆ ՎԱՆՔ։

ԲԱՐԵՊԱՐԵԱՆ. — Հին գաւառ մը, դիրքն և սահմանքն անորոշ։

ԲԱՐԵՁԱՄ ԱՂԲԻՒՐ։—Ուխտատեղի Բարձր Հայոց Գարանաղի գաւառի, Սեպուհ լերան մէջ։ Այս աղբիւրէն ըմպեց Ս. Լուսաւորիչ, ինչպէս կ'ասանդէ Ցովհան կաթողիկոս, ըսելով. «Զսպայ ի Բարձրաւ աղբիւրիկն . . . որ և երասոյ վիմօք պարիսպեալ շուրջանակի և դրամբք պատուեալ, և յորոյ ակոյն մատաղակաղն իսկ էր յարբեցուցեալ իւր՝ սուրբ և անբիծ ձեռնն Գրիգորի»։

ԲԱՐԵՁՈՐ կամ ԲԱՂԱՍՈՐ. — Մակաւաբնակ գիւղ Աղձնեաց այժմեան Խիզան վիճակի մէջ։

ԲԱՐԵՎԱՅՐ. Տես ԲԱՂՔ։

ԲԱՐԹՈՍՈՆՑ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Թորթումի, 10 տուն բնակչօք։

ԲԱՐԻԱՆՁՈՐ ԳԵՏ. — Կը յիշուի Աղցախի մէջ։

ԲԱՐԻՁՈՐ. — Կը թուի այլ անուն Աղձնեաց Նահանգի Ագնուաձոր գաւառի։

ԲԱՐԻՁՈՐՈՑ ՎԱՆՔ կամ ԵՕԹՆ ԽՈՐԱՆ. — Վանք Աղձնեաց այժմեան Խիզան վիճակի մէջ, Փալասօր գիւղի հարաւային կողմը։

ԲԱՐԻՍ կամ ՊԱՐԻՍ. — Գիւղ Գանձակի Վարաչինար հաւասարակութեան մէջ. կը գտնուի Էրչէք գիւղի մօտ, լերան մը լանջի վրայ։ Բնակիչներն են հայ 363 հոգի, որք գաղթած են Հին Բարխէն, որուն բնակիչները այժմ ուուս մալականներ են։

ԲԱՐԹՈՒ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան կինճ վիճակի մէջ։

ԲԱՐՃԱՓԻ կամ ԲԱՐՁԱՓԻ. — Գիւղ Աղբաբատայ կոտայք գաւառի մէջ, Պաշքէնաէն քիչ հեռու՝ արեւմտակողմը։ Ունի 62 տուն հայ բնակիչ և Ս. Ցովհաննէս եկեղեցի մը։ Գիւղս կը կոչուի նաև Էլդրովան կամ Էլդաւան։

ԲԱՐԿԱՇԱՏ· — Աւերակ՝ վանայ ծովակի հիւսիսային ափունքը, Արծկէի արեւելեան հարաւային կողմը։

ԲԱՐԿԱՏ. — Գիւղ Տուրուբերանի Խորխոռունեաց (Աբծկէ) գաւառի մէջ։

ԲԱՐԿՈՑՔ կամ ՊԱՐԿԻՍ. — Գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի մէջ։

ԲԱՐԿՈՒՇԱՏ, — Այս անուամբ ծանօթ է իրեն առանձին վիճակ, Սիւնեաց Բաղք գաւառի արեւելեան մասը։ — Սիւնեաց մէջ կայ նաև Բարկուշատ անուամբ գետ մը։

ԲԱՐՁԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի մէջ։

ԲԱՐՁԱՆ. — Նոյնպէս պիւզ Մշոյ պաշտ։

ԲԱՐՁԱՆՑ կամ ԲԱՐՁՐ ԼԵՌ. — Գուգաբաց Տաշիր գաւառի մէջ։

ԲԱՐՁԻՇԷՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԲԱՐՁՐԱԲՈՒՂ. — Եղիշէ կը յիշէ Հայոց ուրիշ ամուր տեղերուն հետ, զորս Վարդանանք Պարսից ձեռքէն առին։

ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՇԻՆ. — Նշանաւոր վանք Ջորբորդ Հայոց այժմեան Աղբակա գաւառի մէջ. կառուցուած ապառաժ ահագին բարձրութեան մը վրայ՝ որ կը կոչուի Արկնոյ բերդ, ուր կը տեսնուին բերդի պարսպաց մնացորդներ։ Այսպէս կոչուած է բարձր վրից համար. եկեղեցին, կ՚ըսեն՝ թէ հիմնուած է Ս. Թադէոս առաքեալէն, յանուն Ս. Աստուածածնի. բայց երբ ԺԴ դարու մէջ Տիգրանակերտի Մկրտիչ Նազաշ եպիսկոպոսը, տեսնելով Նիրկերտի աւերումը, հոն գտնուած բազմաթիւ սրբոց նշխարները, գրաստներու վրայ բառնալով տարաւ ամիսփեց Մշոյ Ս. Կարապետի վանքը և ուրիշ տեղեր, հօմէ բեռ ալ հոս բերաւ, և նորէն կառոյց գմբեթաւոր եկեղեցին Զեթ (= 1394) կամ ըստ ոմանց ՊԳ (= 1354) թուին, ինչպէս արձանագրուած է պրան ճակատը։ Իսկ վանքի շինութիւնն եղած է ՌՃԺԲ (= 1663) թուին, եղիազար Աղեթապցիի ձեռքով, որ յետոյ կաթողիկոս եղաւ։ Բազիշեցի Նուրաղնեան առաջնորդի օրով այրեցան վանքիս փուռը, խոհանոցը և մառանը, զորս վերջը պարձեալ շինեց կարապետ վարպապետն Լուսիկ, սուլթան Մուսթաֆայի ժամանակ։ Վանքիս թէ սուրբ տաճարը և թէ միւս շէնքերը քարաշէն են, թէպէտ հոյակապ շէնք չունի, բայց բաղդատմամբ երկրին այլ շինուածոց, իրենց նշանաւոր հոչակուած է. բազմաթիւ՝ բայց խառն ի խուռն սենեակներ ունի, և ջրոյ աղբիւր չունենալով, կը գործածեն երկու սառնիճներ։

Արդնոյ առաջնորդական թեմին աթոռն է այս վանքս։ Առաջնորդարանին պարպասը ամէնէն շքեղ շէնքն է, ընդարձակ և կոկիկ. իր ճակատն և մէկ կողմը շինուած են պրաժպատներ՝ յորս գետեղուած են ձեռագիր և տպուած բազմաթիւ գրքեր, բաւական խնամքով պահպանուած։ Գրադարանաց անկիւնը փոքրիկ սուս մը կայ՝ վրան նկարուած երիքսովէն սղկոյղ կրոջաց պատկեր մը. այս գանէն ներս կը մացուի փոքրիկ սենեակ մը յատճապակիով. և մէջը հաղուագիւտ թանկագին անօթներ, սափորներ, եւն.։ Երկու գարանաց գուռն կը ծածկեն երկու ահաւոր պատկերներ Պետրոս և Պօղոս առաքելոց. այս սենեակը կը կոչեն ջանիւադ օտաւոի արքայութեան օթեւան։

Տաճարին մէջը յատճապակիով է, մինչեւ կամարները. ունի խորան մը յանուն Ս. Աստուածածնի, սեղանոյն վրայի Տիրամօր և Մանուկ Քիստոսի պատկերը հոչակաւոր է, զոր Յոյնք ևս կը պատուեն աւանդելով թէ Ս. Ղուկաս Աւետարանչին ձեռանկարն է։ Պատկերը առնուած է արծաթի շրջանակի մէջ՝ որուն վրայ յունարէն տառերով գրուած է 1786 թուականը։ Իսկ Քիստոսի կուրծքին վրայ հայերէն սխալատառ գրուած է. «Քշակ է Մատանու գահանից, իշխանաց և համօրէն ժողովրդոյն, աւուրքն Սասնոյ կարապետ վարպապետին. Թվ. Հայոց ՌՂԳ (?), մարտ ԻԸ»։ Պատուանդանին վրայ գրուած արձանագրութիւն մ՚ալ կը յայտնէ, թէ պատկերս նկարուած է ի Ղալաթիա Կ. Պոլսի, եղիազար վարպապետի միջոցով, ՌՃԴ (= 1655) թուականին։

Վանքիս մէջ կան զանազան արձանագրութիւնք նորոգութեանց և շինութեանց, ինչպէս նաև քանի մը տապանաքարեր հանդերձ գրութեամբք։ Մեծ հոչակ ունին Բարձրահայեաց վանքի սուրբ անօթները և զգեստները։ Այս տեղի անօթները և մատեաններն ալ ժողվուած են, իբրև ապահով և ամուր վայր մը, շրջակայ վանքերէն և եկեղեցիներէն։ Այս հոչակաւոր վանքս ալ, վերջին դէպքերուն, բոլորովին կողոպտուեցաւ և միաբաններն ալ ցիր ցան եղան։ — Թորոս Աղբար, Բ 173–179։


ԲԱՐՁՐԱՇԷՆ. Տես ՆՂՈՒԿ։

ԲԱՐՁՐ ԱՍՏՈՒԱԾԱՇԻՆ. Տես ԳԵՏԱՀԱՅԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՇԻՆ։

ԲԱՐՁՐԱՖԱՇ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆՆԻ կամ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ. — Հին վանք Գուգարաց Ջորոփոր կամ աւելի Տաշիր գաւառի Դրսեղ աւանի մօտ, ձորակի մէջ։ ԺԱ դարուն երբ Մամիկոնեաններէն ոմանք եկան բնակու-

թիւն հաստատեցին Լոռիի լերանց մէջ, Դրսեղ աւանը, իրենց հետ բերին իրենց ա-ւանդութիւնները, որ տակաւին ժողովրդեան բերանն են։ Նոքա այս ահռելի ձորերու մէջ կամուրջներ կառուցին, յուշարձաններ և աղօթարաններ կանգնեցին, որոնք տակաւին կը մնան կանգուն կամ կիսակործան վիճա-կի մէջ։ Նոյն ժամանակները Մամիկոնեան-ները կառուցին իրենց յատուկ ոճով մեհեան

դիպելով պէտք է մտնել ձորը։ Անտառի մէջ ականջի կը զարնէ Ս. Գրիգորի աղբիւրի տխուր խոխոջիւնը։ Աղբիւրէն անցնելով, ճա-նապարհին կը հանդիպին վանքի ձիթհանո-քի ահագին քարերը, վրան գրուած Սարգիս Մարծպանի որդոց անունները։ Քիչ մ՚ալ առաջ երթալով՝ կանաչ անտառի մէջ յան-կարծ մեզ դէմ կ՚ելնեն Մամիկոնեաններու Բարձրաքաշ տաճարի սպիտակ աւերակնե-



194. Բարձրաքաշ Ս. Գրիգորի արեւելեան կողմը։


գերեզմանատուն և աղօթարան այս Բարձրա-քաշ Ս. Գրիգորի ճերմակ վանքը, և ա-պահովեցին ընդարձակ կալուածներով և դիւղերով, ինչպէս կը յիշուին արձանա-գրութեանց մէջ։ Աւանդութիւնը կ՚ըսէ, թէ այնչափ բարձր էր վանքի կամուրջիկէն, որ ծայրի ինձորը դպշտէն կ՚երեւնար։ Վան-քի ճանապարհը, ըստ երեւութին, հետեւե-ուրիշ կողմը և սալայատակ է եղեր։ Կոր-ծանուածքա րդուած խաչարձաններու հան-

րը։ Արեւելեան պատի հարաւային մասն կաթո մը կործաներ է, և բոլորովին կը կոր-ծանէր, ինչպէս կ՚ըսեն դիւղացիք, եթէ Ռո-վակիմ (ոզրպաշի) անունով մէկը, քարերով չամրացնէր։ Այս պատի վրայ կայ գեղա-քանդակ երկգլխանի թեւատարած արծիւ՝ ճանկերու մէջ գառն բռնած։ Վանքին կա-թողիկէն կործանած լցուած է մէջը. բե-կորներու կոյտերու մէջէն բարձրացած են ա-հագին ծառեր։ Աւերակ և ամայի վանքիս ար-

ձանապրութիւնները հրատարակած է Ջարա-
լեան, Բ 108։ — Արաքս, 1897 Բ 47–
48։

ԲԱՐԶԲԵՐԴ. — Հին ամրոց Լեռնային Կիլիկիոյ. Մշուճի արեւելեան և Սոխ հիւ-
սիսային արեւմտեան կողմը, Ջամանդի գե-
ղի հովիտ մէջ։ Ըստ Արաքսայ կը կոչուի Պերագերդ։ Ինչպէս անունէն կը յայտնուի, կառուցուած էր շատ բարձր վիրքով, և

կարող հրաշխատուիլ, որովհետև ուրիշներ կ'ըսեն, թէ Ռուբէնի առաջին մայրաքաղա-
քինն Փոխուիայի մէջ էր, բայց յայտնի է, թէ սր և հայ իշխան մը կանխաւ գրաւած էր Բարձրբերդը։ Ժամանակ մը թագաւորա-
հայր Կոստանդնի սեպհականութիւնն էր, և մօտ կար Կոստընդնոց անուամբ գիւղ մը։ ԺԳ դարու վերջերը եղերական գործեր կա-
տարուեցան հոս, այն է Հեթում Բ-ի աչաց



195. Բարձրաբաշ Ս. Գրիգորի վանքը։

առջեւ սուր էր, որ հայ թագաւորաց գան-
ձը իր մէջ կը պահուէր։ Կիրակոս պատմչի խօսքին համեմատ, Ռուբինեանց առաջին իշ-
խանը Ռուբէն, Բարձրբերդի շրջակայքը կա-
թուղիկոսութեան պատեհու ժամանակ, ձաշի կը հրաւիրուի բերդի եպիսկոպոսէն, և ա-
նոր ծառայից բացակայութենէն օգտուելով՝ կ'սպաննէ եպիսկոպոսը և բերդին կը տիրէ։ Թէև այս պատմութեան ստուգութեան չենք

խարուին, Սմբատ թագաւորի հրամանով, և միւս եղբօր Թորոսի՝ Թեղթարօրէն խեղ-
դուիլը (յունիս 23ին, 1299)։ Նոյն ժամա-
նակներն պիտութեամբ հռչակաւոր կը հան-
պիտանար վարդան Բարձրբերդցի վարդա-
պետը։

Լեւոն Դ թագաւորութեան միջոց (1319 –41) Բարձրբերդ՝ Ղպրի կոչուած իշխանա-
նոց ձեռքն էր, որոնք սերած էին թագա-

սրահայր կոստանդին մեծին զարմին։ Բարձրբերդի իշխան Նզրենց Պաղտին մարտ. Ջախաք, գաշինք կնքելու համար Եգիպտաս դրկուած ժամանակ (1335ին), Հալէպի Ալէթմէն Բայպարսին խաբէութեամբ բռնուեցաւ և բանտի մէջ մեռաւ։ — Այս բերդս է հաւանականօրէն Մանաբվիլէ Անգլիացի հռչակաւոր ճանապարհորդի յիշած Փարսիպեն (Pharsipee)։ Անշուշտ բերդս կոստանդնի իշխանութեան ներքոյ մնաց իր թագաւորութեան ժամանակ, անկէ վերջ Հայոց թագաւորութեան վերջին հասնելով, կը լսեն բերդիս ազգային յիշատակներն. բայց կը կարծուի՝ թէ այնուհետև ևս կանգուն մնացած է բերդս հզօր հայ իշխանի մը ձեռաց տակ, ինչպէս եղած են Տարսոնի և Կիլիկիոյ գահուն ուրիշ բերդերը։ Շահնուար Զիլգաարեան 1467ին նուաճեց Կիլիկիոյ մեծ մասին հետ, նաև Բարձրբերդը։ Մինչև ԺԲ դար բնակութիւն ունէր բերդս և համանուն աւանն. իսկ անկէ վերջ աւազակաց երկիւղէն անբնակ գարձաւ։ Բերդիս անուամբ կը կոչուէր շրջակայ գաւառը։ — Բարձրբերդ ունեցեր է յաւուրս եպիսկոպոսներ, յորոց կը յիշուին Դ. գարու սկիզբը ոմն Աստեփաննոս՝ Սահ և Աստղայի ժողովոց մէջ, և յետոյ Մխիթար կաթողիկոսի ժամանակ, Սահ ժողովին մէջ ոմն Բարսեղ 1342ին։ — Միտուռաւ, 147—149։ Կիլիկիա, 290—191։

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ. — Հին Հայաստանի աստղին նահանգն, որոյ սահմանքն էին արեւելքէն՝ Աղբարատ, հարաւէն՝ Զորրորդ Հայք, արեւմտեանէն՝ Փոքր Հայք և հիւսիսէն՝ Տայք։ Նահանգս կոչուած է Բարձր Հայք երկրին բարձրութեան համար, և մեր հին աշխարհագիրքը, ժամանակին կարծեաց համեմատ, կ'ըսէ. «Բարձր քան զամենայն երկիր», ասոր համար կատար երկրի ևս կոչուած է։ կը կոչուի նաև Կուրծք երկրի, որովհետև չորս կողմերը գետեր կ'արձակէ, ինչպէս կը գրէ նոյն աշխարհագիրքը. «զի բղխէ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմտեան և զԵրասխ յարեւելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս՝ որ է վերն ի հիւսիս». վերջինս կը համապատասխանէ այժմեան Ճորոխ գետոյն, որ խաղաղահայոց սահմաններէն բղխելով՝ կ'ընթանայ դէպի հիւսիս Պոնտոս. իսկ Գայլ ըսածը, որ հարաւակողմը կը վազէ, թերևս չլինի ծանօթ Գայլ գետը՝ որ Երզնկայի մօտ Եփրատի հետ կը խառնուի, այլ ուրիշ Գայլ գետ մը, որ նահանգիս հարաւային սահմաններէն բղխելով՝ Զորրորդ Հայոց մէջ կը թափի յԱրածանի։

Նահանգս մեր մատենագիրներէն շատ անգամ կը կոչուի Կարնոյ Աշխարհ, իր գլխաւոր գաւառի անուամբ։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

ՀԻՆ ԳԱՒԱՌՔ	ՆՈՐ ՎԻՃԱԿՔ
Ա. ԴԱՐԱՆԱԴԻ	ԿԱՄԱԽ, ՏՈՒԺԻԿ
Բ. ԱՌԻՒՆ	ԿԼՐՃԱՆՆԻՍ, ՇԵՒԵԱՆ
Գ. ՄՆԶՈՒՐ (ՄԶՈՒՐ)	ԳՈՒՐՈՒԶԱՑ, ՄՈՒՆԶՈՒՐ
Դ. ԵԿԵՂԵԱՑ	ԵՐԶՆԿԱ
Ե. ՄԱՆԱՆԱԴԻ	ՇՈՒՇԱՐ, ԹԼՔՄԱՆ
Զ. ԴԵՐՋԱՆ	ԴԵՐՋԱՆ
Է. ՍՊԵՐ	ԻՍՓԻՐ
Ը. ՇԱՂԱԳՈՄԲ	ԹՈՐԹՈՒՄ
Թ. ԿԱՐԻՆ	ԵՐԶԻՐՈՒՄ, ՕՎԱՃԿ

Բնական դիրքով լեռնային է, իր սահմանաց մէջ են Բիւրակնեան շղթայի բարձր գագաթները և հովիտները։ Ունի նաև հարթաւազուտ բարձրաւանդակներ կամ բնական դաշտեր, ինչպէս կարնոյ, Երզնկայի, Գերջանայ կամ Բագաւիձոյ, են.։ Մեր հին աշխարհագիրները երեք կամ չորս մեծամեծ լեռներ կը յատկացնեն նահանգիս, առանց յանուանէ յիշելու. բայց այլեւայլ գրոց մէջ անուամբ կը յիշուին հետեւեալ լեռները. Լեռինք Կարնոյ, Լերինք Սպերոյ, Լերինք Թաւրաւաղաց, Մեսրոպ լեառն, Մհրատայ լեռինք, Պախրայ լերինք, են։

Ջրի կողմանէ ևս առատ է Բարձր Հայք և ունի շատ գետոց ակրբակունք. գետերէն նշանաւորագոյնք են, Եփրատ՝ արեւմտեան Ասիոյ առաջին գետը, և Երասխ՝ Հայաստանի սեփհական գետը. միւս գետերէն և վտակներէն յիշենք Գարա—առ, Քեօմիւր—առ, Գերջանայ ջուր, Մանանաղոյ ջուր, են.։ Գետերէ զատ Բարձր Հայք ունի նաև կարնոյ ծովը կամ լճաձեւ ջրշեղջը, և շատ ջերմուկներ և ակբիւրներ, մանաւանդ Կարնոյ գաւառի և Պինգէօլ լերանց մէջ։

Բերքերու առատութեան կողմանէ, նա-

հանդս թէպէտ ցրտին է բարձր դրից պատճառաւ և շատ չեն անտառները, սակայն շատ բարեբեր է։ Հողը արգաւանդ լինելով և ջրաշատ, յատկի է և խոտաւէտ, բանջարաշատ, պաղատու, և բազմաթիւ ծաղիկներով զարդարուած։ Հաչակուած են Պինկէօլի կողմերը, և մինչեւ Ալամայ գրախտին տեղը հոն կարծուեր է, նոյնպէս Երզնկայի և Դերջանի հովիտները։ Լերանց մէջ կը գտնուին նաև տեսակ տեսակ օրսական երէներ, քօշ, եղջերու, այծեամն, վիթ, վարազ, եւն.։ Թռչուններէն՝ կաքաւ, արօս, արագիլ, եւն.։— Հանքերու կողմանէ Բարձր Հայք ունի գանազան տեսակ հողեր և առատ քարացած աղ։

Քաղաքական տեսակէտով՝ այս նահանգս կ՚երեւի թէ յաճախ խառնուեր է սահմանակից Փոքր Հայոց հետ, վասն զի այն կողմէն հաստատուն և բնական սահման ալ չունի։ Երբեք չի յիշուիր նախապար որ միապետ Բարձր Հայոց կամ կարնոյ, մանաւանդ որ Վաղարշակ Թագաւորը արեւմտից կողմնակալ գրած լինելով Անգեղ տան իշխանը, կը թուի որ նահանգիս մէկ մասը ի հնուց ինկած է Անգեղ տան իշխանաց ձեռք։ Աբշահունիներու ժամանակ, և զուգէ անոնցմէ ալ առաջ, նշանաւոր էին նահանգիս արեւմտեան հարաւային գաւառները, Անահատ պից պաշտամունքներով, որոնց վրայ աւելցան նաև Քրիստոսէ առաջ հելլէնական չաստուածները և պաշտամունքները։ Իսկ Գարու սկիզբը, քրիստոնէական կրօնքը և եկեղեցիները շատ բարգաւաճեցին նոյն տեղերը՝ սրբուելով չարչարանօք, բնակութեամբ և ժառանգութեամբ Ս. Գրիգորի Լուսաւորչի և իր որդւոց, որոց ձեռակերտաց և նշխարաց մնացորդները կը մնան դեռ մինչեւ յայսօր։ Յաջորդ դարու մէջ պայծառացան կարնոյ կողմերը, շնորհիւ Թէոդոսիոս քաղաքի և բնակութեամբ Աբշակունիներու յետին շառաւիղաց. և անոնց հարստութեան վերնալէն վերջ, այս կողմերը շատ տարիներ Բունաց բանակի մասն եղան մինչեւ Հագարացւոց և Թուրքաց գօրանալը։ Բունաց և Հոսմայեցւոց շատ գօրավարներ և կայսրներ անցած են այս նահանգէս Բ դարէն սկսեալ։ Մինչեւ դարու մէջ ալ Թաթարաց և Թուրքաց ասպատակութիւններէն շատ աւերածութիւններ և արեան հեղութիւններ եղած են. նոյն դէպքերը շարունակաբար կրկնուած են նաև յաջորդ դարերու մէջ և մինչև մեր օրերը։ — Տարգր. հին Հայատ. 1—2։

ԲԱՐՄ. — Հին աւան կամ երիր վասպուրականի Ագրակ գաւառի մէջ, ուր կառուցեցաւ Ս. Բարդողիմէոս առաքեալը։ Տես ԱՐԵՒԲԱՆՈՍ։

ԲԱՐՁԵՆԻՄ. — Ա.յրարատայ Ճակատք գաւառի նոյնանուն վիճակի մէջ կան այս անուամբ երկու այլազգիական գիւղեր. Բարչևինի Գալալա և Բարչևինի Խարապա։

ԲԱՐՁԻ. — Գիւղ Ա.յրարատայ Շարուր գաւառի. ունի 18 տուն հայ և 52 տուն այլազգի բնակիչներ։

ԲԱՐՍ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Ագձնեաց նահանգի այժմեան խրդան վիճակի մէջ։

ԲԱՐՍԵՂԱՆՑ ԱՆԱՊԱՏ. — Կիլիկիոյ Սեաւ լերան վանքերէն մին։ 1114 թուին խաչի գիւտի կիրակի օրը եղեղեցօրհնէքի ժամանակ այս տեղ պատահեր է մեծ երկրաշարժ, և եկեղեցին կործանուելով տակը մնացեր են երեսուն հայ կրօնաւորներ և երկու վարդապետք։

ԲԱՐՍՂԻ ՎԱՆՔ. — Աւերակ մենաստան Առաջին Հայոց մէջ, Թումարծա գիւղէն քիչ հեռու արեւելեան կողմը, լերան մը սոսրոտը։

ԲԱՐՍՈՒՄ. — Գիւղ Ա.րցախի Փառիսոս գաւառի մէջ, կառուցուած Շամքոր գետակի ձախ ափի վրայ, Գառնակերէն գրեթէ Մղոն մը վար։ Գեղիս տեղը խոր ձոր է, հորիզոնը նեղ և տեսարանը խափանուած։ Բնակիչք, որ այժմ կը հաշուին 154 տուն և մօտ 1100 հոգի, գաղթած են Անի քաղաքէն, ունին նորաշէն եկեղեցի մը։ Բարսումի մատերը կան կանգնուն կամ կիսակործան եկեղեցիներ և երկու վանքեր։ Վանքերէն մին կը գտնուի գիւղի արեւելեան կողմը այգիներու մէջ. մեծութիւնն է միջակ, պատերն քարուկիր, ծածկն՝ փայտաշէն և անունն՝ անյայտ։ Երկրորդ վանքն կը կոչուի Առուր Հախփախէ այգիներու մէջ. ամբողջապէս քարուկիր եղած է, որոյ առաստաղը յետոյ

խնամարհուհիով փայտաշէն ծածկած են։ Այս է Մխիթար Գոշի ակնարկած Ս. Հռիփսիմէի մենաստանը։ Բարսում գիւղը շրջապատուած է բնդարձակ հանդաստարաններով։ Տեղացի ծերունիները կը պատմեն, թէ Լենկ-դիներու դէմ մղուած կռիւներու ժամանակ, նահատակուած բոլոր Հայերը թաղուած են այդ գերեզմանոցներու մէջ, և այդ պատճառաւ այդչափ բազմաթիւ են գերեզմանները։ Այս գիւղէն էր կազմանցս իշխող Մէլիք Ադամը, որոյ նախնիք ծագած են Բագրատունի իշխանազանց սերնդէն։ — Արցախ, 318–319։

ԲԱՐՍՊԻ. — Կը յիշուի իբրև թեմ Աղթամարայ։

ԲԱՐԻԱՏՈՆ. — Կը յիշուի գիւղ 1697 թուին գրուած մաշտոցի մը յիշատակարանին մէջ. «... Մեր Մահմուտ Ագային շէրբ թոռն գԲարտուտոն գաժենն այրեաց և աւար և թալան առաւ ի Ճիւլամէրկ...»։

ԲԱՒ. — Մշոյ արեւելեան կողմի գիւղերէն մին։

ԲԱՒԱՋՈՐ. — Սահմանոս Ադոնցի կը յիշէ այս անուամբ գիւղ մը Աչրարատայ Շիրակ գաւառի մէջ, ուր գտմարեցան Դաւիթ կիւրապաղատի և կարսի Մուշեղ թագաւորի զօրքերը՝ ընդդէմ Սմբատ Բ Շահնշահի, որ յափշտակած էր իւր հօրեղբօր (Մուշեղի) Շաւարիկ գիւղը։

ԲԱՒԱՒՆ կամ ԲԱՒՈՆ. — Հին գիւղ Տուրուբերանի Գաւնտաւորք գաւառի մէջ։ Կը համարուի հայրենիք Սիոն կաթողիկոսի։

ԲԱՒԱՆ կամ ԲԱՒՈՒՍԱՆ. — Վաղարշապատի հին գաւառներէն մին։

ԲԱՒԱՍԵՐ. — Բուզանդ (Դ. ԺԹ) կը յիշէ անունս հեռահաս տոպից մէջ. «Աբշակ երիտասարդ ընդ առաջ նորա (Մեծին Ներսէսի) մինչև ի կոմմանս Բաքասերոյն»։

ԲԱՒՈ կամ ԲՈՒՈ. Տես ՀԱՒԱՆԴ։

ԲԳՆԵՐ. Տես ԲԱԳՆԱՅՐ։

ԲԹԱՒՈՒՃ կամ ԲԹԱՒՈՒՃ. — Գիւղ Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ, Երզնկա քաղաքէն չորս ժամ հեռու։ Բնակիչք 50 տուն Հայք՝ ունին Ս. Սարգիս եկեղեցի մը։ Գիւղէս քառորդ մը հեռու կը գտնուի Ս. Նիկողայոսի վանքը։

ԲԴՆԻ կամ ԲԹՆԻ. — Լեռ Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ. առատապար կը գտնուի Ս. Կիրակոսի վանք։

ԲԵԹԱՆԻԱ. — Տիգրիսի մեծ վտակ և տասնմային գերեզմանատուն Օրբելեանց. ուր հանդիսով թաղեցին քաջն Լիպարիտ։

ԲԵԹԼԵՀԵՄ. — Հռչակաւոր քաղաք և ուխտատեղի քրիստոնէից, ուր ծնաւ Փրկիչն տիեզերաց։ Միջերկրական ծովէն 845 մետր բարձր է, և Երուսաղեմի հարաւային կողմէ 12 հազարամետր հեռու լերան մը վերայ կառուցուած է և չորս կողմէ ձորերով պա-



196· Բեթղեհեմ։

տած։ Աբգարու կինը Հեղինէ բարեպաշտ թագուհին, սուրբ այրը մաքրել տուաւ և պատուի մը շրջապատելով երկրպագութեան տեղ ուրոյն. բիչ տարիներ յետոյ ուրիշ քրիստոնեայք ազօթարան մը շինեցին վրան, զոր 135ին Ադրիանոս կայսրն եկաւ քակեց և տեղը անտառով մը շրջապատելով նուիրեց Ադոնիս չաստուածոյն և մնուրին վրայ Աիրոպիտեայ արձանը կանգնեց։ Քսան տարուընդմէջեան, Մեծին Կոստանդիանոսի մայրը Հեղինէ, կամ նոյն ինքն Կոստանդիանոս կրկին մաքրել տալով սրբազան տեղը՝ շինութեան ձեռք զարկաւ, կամ ինչպէս ազգային աւանդութիւն մը կը հաստատէ, Տըրդատ թագաւորը լրացուց շէնքը փառաւոր

ու հոյակապ տաճար մը կանգնելով։ Ըստ ազգային պատմչաց, եօթներորդ դարուն եւ կեղեցւոյն երկայնութիւնը 2000, իսկ լայնութիւնը 1000 կանգուն էր և 90 մարմարեայ սեանց վրայ քարուկիր կամարներով հաստատուած։ Սակայն նոյն ժամանակէն վերջ, եկեղեցին զանազան վտանգներու և դէպքերու առիթ իր ժեծութիւնը և շքեղութիւնը կորնչուց։ Լատին պատմչաց համեմատ՝ Թաչակրաց Ս. Երկրէն հեռանալէն յետոյ՝ եկեղեցին անտերունչ մնալով քայքայեցաւ և Ագարացիք տանեաց կապարներով՝ հրացանի փոդակներ կը շինէին։ Սակայն զանազան յիշատակարանք հակառակը կը հաստատեն, որ Հայք միշտ պահած ու պահպանած են եկեղեցին, ինչպէս 1227ին Տէր Աբրահամ և Տէր Առաքել անուամբ հայ եկեղեցականք իբրև ակր և իշխող տաճարին՝ ներքին գուռը շինել կու տան տախտակեայ պատուական քանդակագործութեամբ զարդարուած, հետեւեալ արձանագրութեամբ, « Թվին· ՈՂԶ· կազմեցաւ դուռս Ս· Աստուածածնիս ձեռամբ Տէր Աբրահամիճ եւ Տէր Առաքելոյ· ի բազատրութենէ Հայոց Հերմոյ որդւոյ Կոստանդեայ· Քրիստոս Աստուած ողորմի ալիաստուրաց ». կայ նաեւ գրեթէ նոյն ոճով արարագիր արձանագրութիւն Ս. Յովհաննէս առջի եկեղեցին՝ սիւնազարդ գաւթէն սրսով բաժնուած է, և երեք դասէ կը բաղկանայ. հարաւային կողմը և միջին Աւագ Սեղանը՝ որոյ տակն է Սուրբ Աչքը, ճունաց սեփհականեն. իսկ հիւսիսային դասը Հայոց սեփհականուած է 1813 թուականէն ի վեր, Սուլթան Մահմուտի հրովարտակաւ։ Հայք շատ անգամներ վէճեր ունեցած են թէ՛ ճունաց և թէ՛ Լատինաց հետ, և բաւական իրաւունքներ կորսուած էին, բայց վերոյիշեալ թուականին բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ կարողացան դարձեալ հանապազօրեայ Պատարագ մատուցանել Ս. Աչքին սեղանին վրայ և ճունաց ու Լատինաց ունեցածներուն հաւասար կանթեղներ կախել և պատկերներ հաստատել։ Ս. Յովհաննէս եկեղեցին հինգ կարգ սրահ ունի առեւանէն ու երկու դասերէն գուրս, որոնք պատով զատուած են ժողովրդոց կայնելու սրահներէն, և այս հինգ սրահները չորս կարգ կարծրաքար միա-

կտուր սիւներով զատուած են, որք բնդ ամէնը 50 հատ են։ — Բեթղեհեմի բնակիչք 3000 են, Հայք, Յոյնք, Լատինք և Մահմէտականք. Հայք թէեւ սակաւաթիւ (100 հոգի) են, բայց միւս ազգաց վրայ ազդեցութիւն ունին։ — Բագրատեան, Ա. 364—366։ Պատմութիւն սրբազան տեղեաց, 200—209։

Բելլի կամ Բէլլի. — Գիւղ վանապարահանի Ռշտունեաց գաւառի արեւելեան՝ և Ընձաքիսար լերան հարաւային կողմը։ Կ՚ըսուի՝ թէ այսպէս կոչուեր է, իբր մէջը Ներսիսեան կամ Բելայ գերեզմանը գտնուելուն համար։ Գիւղիս հիւսիսակողմը կայ ամայի վանք մը, փոքրիկ, գեղեցկաշէն և զմբեթաւոր։

Բելլիկամ. — Ուտի նահանգի մէջ հին քաղաքի մը անուն։

Բելթ կամ Բիթ. — Գիւղ Միւնեաց կողմանեան գաւառի մէջ, Թոռատուփ լերան հիւսիսային ստորոտը։ Միւնեաց ամենայն հարկաւոր հին պիւղերէն մին էր Բեթ, զոր 871 թուին Ջեանշիր իշխանը ինկրելով առաւ եպիսկոպոսէն և փոխարէն տուաւ Բաղաց գաւառի Արուքս գիւղը։ Վաթանցւոց պատերազմաց ժամանակ 1726ին կամ 1728 թուին, Օսմանեանց կոզմնակալ զօրավարը հոս գալով բանակ դրաւ գրեթէ շաբաթ մը, և չկրնալ նենգել Գաւիթ բէկը և իրենները. բայց հայ քաջերը գիշերանց «ի վերայ հասին նոցա, տարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զիշային հալածական արարին»։ Ժէ գարու երկրորդ կիսուն այս գիւղէն էր Տաթեւի Ղազար եպիսկոպոսը, որ գեղը իսկ նալով կորսուեցաւ։ Բեթի փոքրիկ եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ. փափաք կայ ուրիշ նոր մի ևս կառուցանելու։ Բնակչաց թիւն է 267, բաժնուած 29 տան. որոց մեծագոյն մասն է Փարապանեան ժէիքնեբու տոհմէն։

Բեթենեբջի. — Հին գիւղ Միւնեաց կողմանեան գաւառի մէջ. որոյ համապատասխան կը կարծուի այժմեան Պաղապուռնի գիւղն, որ ունի Ս. Հռիփսիմէ եկեղեցի մը։

Բեթորոս. Տես Բոյխորոն։

Բեշեմնի կամ Պեշեմնի. — Քաղաքաւան երրորդ Հայոց (Մելիտինէ), համանուն

գաւառակի մէջ։ Բնակիչք մեծաւ մասամբ մահմետական են։ Հայք ունին 1 եկեղեցի Ս. Փրկիչ և 1 վարժարան Ներսիսեան։ Բեհեհանի կառուցուած է բարուր լերան մը կատին վրայ, տներք ցրուած են, ուր կան նաև մեացորդներ հին ամրոցի մը, զոր 1146ին առաւ Լեւոն Պարոնէն իշխանը։ Քաղաքաւանին մնացէն կ'անցնի Սաւրուէն գետակը, որ թէև խոր չէ, բայց յայն է և սրընթաց մանաւանդ առաւօտեան ժամանակ։ Շուրջը ունի պարտէզներ և այգիներ, խաղողի սքանչելի և մեծահասակ տեսակներ։ Նոյնանուն գաւառակն ունի 45000 բնակիչ, որոց այժմ միայն 3000ը Հայք են։ Բեհեհանի գլխաւոր վաճառքն են ասխատակ և գերան, վասն զի ունի մեծամեծ անտառներ։


ԲԵԿՆԵՔԱՐ. — Դաշտային կիլիկիոյ մէջ, Սոի մօտ քարանձաւանման ամուր տեղ մը։ Եգիպտացւոց առաջին արշաւանաց ժամանակ (1266թուին), մայրաքաղաքի բնակիչներն հոս ապաստանեցան, բայց մնասմբ մը անոնք թշնամիէն սպանուեցան, և մնասմբ մ'ալ գերի տարուեցան։ Ցեղույս անունն ի հնումն կը կոչուէր Կեանայ։

ԲԵՂԱՄԻՆՋ. — Ցեղույ մը անուն Պարաւաի և Բելուկամայ (Ուսի) մէջտեղ։

ԲԵՂԱՊԱՏ. — կը յիշուի Ուսիի մէջ։

ԲԵՆԱՐ. — Լեռ Ալբարատայ Ծագկան (Տիտաին) գաւառի մէջ։

ԲԵՆԿԵԱՆ, ԲԵՆԿԵԱՆ կամ ԲԵՆԿԱՑ. — Հին և նշանաւոր աւանագիւղ Ակնայ (Փոքր Հայք)։ Դիրքն խիստ ամուր է, և կրնայ հազարաւոր ապաստանարան մը կամ ամրոց՝ ժայռերուն փակած։ Ունի նեղ և խոր կիրճեր, որոց միջէն Եփրատ գետը կծկելով, սպմռելով կ'անցնի պատյարներուց։ Աւաւանի է Բենկեանայ կամուրջը՝ որ ամէն երեկոյ գիներով կը փակուի, և եթէ թշնամի ունենան՝ կամուրջը կը վերցնեն, որով գետը անանցանելի կը լինի։ Բենկեանցի Հայք հաչա-



197. Բենկեանի կամուրջը։

կատած են իրենց քաղաքներուն. ընաիր նժոյգներ ունին, քաղաքաւոյ հեծեալներ են, և արագաոյն գիտեն վազել բարեր ու լեռները։ Ցեղույս Հայք՝ հարուստ, բազաքակիրթ և քաջարի են. և եթէ իրարու հետ սիրով լինին, բոլոր Հայաստեան կրնան օրինակ լինիլ։ Բենկեանի սառոյցը քանի մը աուն թուրքեր կը բնակին գառ, և կ'ապրին Հայոց շնորհիւ։ Թուրքաց թագը կ'անուանի Պաբաբ, և իրօք աւանագիւղիս հին անուանը Հաբաբ եղած կը համարուի, զոր Սենեքերիմայ Բենիկ իշխանը նորոգեր է, և այնուհետև կոչուեր է Բենկայ կամ Բենկան ասուն։ Բնակիչք 1000ի կը հասնին

և ունին երեք եկեղեցի. Հրեշտակապետ, Աստուածածին, Երեք Մանկունք, և երկու վարժարան՝ Մեսրոպեան և Ղազարեան։ Բնիկեանի շուրջը կը գտնուին Ս. Թագաւոր, Ս. Նիկողայոս, Ս. Խաչ, Ս. Յակոբ և խաւարտուռ եկեղեցիներու աւերակներ։ Վերջին դէպքերուն ատենապետը այրեցաւ և ժողովուրդը լմնեորը փախան. բայց ի վերջոյ նորէն սկսաւ շէննալ։ — Թորոս Ագթար, Ա. 238–240։

ԲԵՀՐԻՎԱՑ. — Մակաւաբնակ գիւղ Ասպատեանի Մարաղայ գաւառի մէջ, Մարտա քաղաքէն 40 վայրկեան հեռու՝ արեւմտեան կողմը։ Ունի փոքրիկ եկեղեցի մը։ Բնակիչաց մեծ մասը փախստրուած են քաղաքը։

ԲԵՇ. Տես ՁՈՐԲ։

ԲԵՈՆԱԻ. Տես ԲԷՈՆԱ։

ԲԵՈՆԻԿ. — Գիւղ Տայոց Բերդագիսր գաւառի մէջ։

ԲԵՈՏԱՑ. — կը յիշուի իբրև գիւղ՝ Գաւգարաց Ծորսփոր գաւառի մէջ։

ԲԵՐԱՆ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԲԵՐԲ. — Օրբելեան կը յիշէ Միւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Ցուրայ վանքի դիմաց, այս անուամբ աւազակաց տեղ մը։ — Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԲԵՐԲ. — Գիւղ Ագռանի Քուռսի գաւառի մէջ, կառուցուած Տաւուշ գետակի ձախակողմը։ Ազգագրներէն Թովուզ–Ղալա կը կոչուի։ Բնակիչը ամբողջ հայ են՝ մօտ 1000 հոգի. ունին Ս. Գրիգոր անուամբ եկեղեցի մը որ այժմ փայտածածք է. ներքուստ արեւմտեան օրմի վրայ արձանագրութիւն կայ։ Գիւղիս արեւմտեան կողմը կը գտնուի Ս. Սարգիս բարուկիր ուխտատեղի մատուռ մը և ընդարձակ հանգստարան։ Ս. Սարգսէն վեր կայ գարձեալ ուրիշ բարուկիր մատուռ մը՝ Աչազ Ս. Նշան, և մօտը ուխտաւորաց համար խուցեր։ — Աղցախ, 329–330։

ԲԵՐԲ. — Գիւղ Տուրուբերանի Ապահունեաց (Մանազկերտ) գաւառի մէջ։ Ունի 65 տուն Հայոց և 100 տուն Քրդաց։

ԲԵՐԲ. — Գիւղ Տուրուբերանի Հարբ (Խնուս) գաւառի մէջ։ Ունի 160 տուն Հայոց և 127 տուն Քրդաց։

ԲԵՐԴԱ. — Գիւղ Աղցախի Ջաւէ գաւառի մէջ, կտղր գիւղէն քիչ մը վար, ծոյնանուն վտակի մը ալ կոմը. այլազգիներէն կը կոչուի Ղարաչայ։ Բաժնուած է երկու թաղի, Արեւելեան և Արեւմտեան թաղ, որոնց մէջ կան մէկ մէկ բարուկիր եկեղեցիներ՝ Ս. Գէորգ և Ս. Աստուածածին։ Բնակիչը են 1075 հոգի, բաժնուած՝ 160 տան։

ԲԵՐԴԱԳԱՒԱՌ. — Ալլ անուն Ալբարատայ Մարզպ գաւառի։

ԲԵՐԴԱԳԵՐԱԿ կամ ԲԵՐԴԵԳԵՐԻԿ. — Հին գիւղ Տայոց Աշեացփոր գաւառի ծոյնանուն վիճակի մէջ։ Կառուցուած է Ձորոխի եզերքը, Ձորոխ գիւղի արեւմտեան հիւսիսային կողմը։ Ինչպէս գիւղիս, նաև Բերդագրակ վիճակի գիւղերու բնակչաց մեծամասնութիւնն ալեքեւառաներորդ գարու վերջերը ուծացած են։ Տակաւին կը մնան Բերդագրակի հին եկեղեցիները, որոնք քննութեան կը կարօտին։

ԲԵՐԴԱԹԱՂ. — Ալյսպէս կը կոչուին Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, կառուցաբար բլուրի մօտ գտնուող բերդի մը աւերակները։

ԲԵՐԴԱԿ. — Գիւղ Ալբարատայ՝ վերին Բասենի մէջ, Գաւ գիւղի մօտ՝ հիւսիսակողմը։

ԲԵՐԴԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի մէջ։ Ունի մօտ 150 տուն հայ բնակիչ։

ԲԵՐԴԱԿ. — Գիւղ Վասպուրականի Տոսպ (Վան) գաւառի մէջ, Զաւառամանէն երեք քառորդ հեռու։ Կառուցուած է ձորի մէջ, և իւր անունը առած է, մերձակայ փոքրիկ բլրակէն, որուն վրայ ի հնումն բերդ կար։ Բնակիչը 60 տուն ամբողջ հայ են և ունին Ս. Յովհաննէս անուամբ գեղեցիկ եկեղեցի մը, յորում կը պահուի Ժե դարուն գրուած Յայսմաւուրք մը։ Բերդակիցք երկրագործութեամբ զատ լաւ քարահատութիւն ևս գիտեն։ Տեղւոյս յատուկ բերքն է սեռակ մը մանր բազոյն ատազուտ բար՝ որ կրակի շատ դիմանալուն, վառարանաց և հացի փուռերու կը գործածուի, և վաճառականութեան մեծ նիւթ դարձած է։ Գիւղիս քիչ մը վեր աւերակ վանք մը կայ Ս. Աստուածածին անուամբ։ — Արծուի Վասպուրական, Գ. 63։

ԲԵՐԴԱԿ. — Մակաւաբնակ և փոքրիկ մատուր պերքով գիւղ Աղձնեաց Նահանգի այժմեան Խիզան վիճակի մէջ։ Կառուցուած է

անառատախիտ բլրակի մը կատարին վրայ, Բատա գիւղէն 10 վայրկեան հեռու՝ արեւելեան կողմը։

ԲԵՐԴԱԿ. — *Գիւղ Զօրրորդ Հայոց, Զարահանճատի առաջնորդական առաջին թեմին մէջ։ Ամբր գտան մի կը համարուի Տէրսիմի, և այն կողմանց պէսպէս վանասատեղին է։ Իր մէջի հին շէնքերը կը ցուցնեն Բերդակայ հին բնակչաց վայելչասերութիւնը։ Աղբի բնակիչը Հայր և Թուրքք կրճումենիւ գործ են։ Հայք կը հաշուին 60 տուն և ունին երկու եկեղեցիներ Ս. Աստուածածին և Ս. Շաւարշեան։ Գիւղիս վերի ծայրը կը գտնուի Ս. Թորոս կամ Ս. Տիրին կոչուած հին և հոյակապ վանքն, կիսակործան վիճակի մէջ։ Վանքին գմբէթին կործանած է. կառուցուած է մեծամեծ բարերով, ընդարձակ է և գեղեցկաշէն։ Մեծ գրան տակէն կը բղխէ առատաբուղ և յորդառատ ջուր մը։*

ԲԵՐԴԱԿ. — *Մակաւարեան գիւղ (վան) կարկառ վիճակի մէջ. ունի Ս. Աստուած եկեղեցի մը։ — Այս անուամբ գիւղ մը կը յիշուի նաև Արցախի կամ Ուտիի Տաւբասական գաւառի մէջ։*

ԲԵՐԴԱԿԱՐ. — *Կիրակոս պատմիչ կը յիշէ այս անուամբ հովոցաց տեղի Պուռանից կաթողիկոսաց Ուտիի մէջ. «Սա (Յովհաննէս) փոխեաց գկաթողիկոսարանն ի Բերդակար իւրեանց հովոցաց տեղի, յորժամ հանաւ ի Պարտաւայ»։ Կարելի է որ լինի Բերդաձոր։*

ԲԵՐԴԱՁՈՐ կամ ԲԵՐԴԶՈՐ. — *Արցախի հարաւային գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Ճիպրայիլ գաւառի մեկ մասը։ Գաւառիս բնակչաց մեծամասնութիւնը այժմ մահմետական են։ Հեռաւոր գիւղերը որ կանխաւ հայաբնակ եղած են, այժմ մահմետականաբնակ են, որոյ մէջ կան եկեղեցիներ և հանգստարաններ, սկսելով Երասխի ձախ ափէն մինչև Ղարադղլաղ գիւղը.*

Դիրի	*Հատք*
Թոռնաւ	*Գաշտահատ*
Բայաթ (Բայաթլար)	*Զեք*
Հին–Փոքր Թաղլար	*Փարաչան*
Հորնաւոռտ	*Հին–Մեծ Թաղլար*
Եաբրին–Խոռշ	*Սարգիս*
Երկաբաւոր	*Ջղջիկ (Ջաղջիկ)*
Սաֆիխան	*Սպիտակ շէն*
Թոռնմասրուռ	*Ջամիլի–գամ*
Ամուռտուռկա	*Գաւռնակաշ*
Խոջիկ	*Ծրակարի*
Պատար	

Գաւառիս հայաբնակ գիւղերն են այժմ միայն հետեւեալները. Գոլաւնյար, Խանձաձոր, Քարար, Խցաբերդ, Ղալաղլաղ։ Բերդաձոր ունի ի հնուց մնացած չորս բերդեր. ա. Աճու Տեղ Ալիոց, կառուցուած նոյնանուն լերան վրայ. բաւական մեծ է, պրանչելի է տեսարանն և գիրքն ամուր։ Ունի տակաւին կանգուն մնացած բարեւիր սխտակաձեւ մնասուն մը, գերեզմաններ, և վիմափոր բժշկարար ատպան մը։ բ. Թումաս բերդ, կառուցուած է համանուն տանձնուկ լերան մը վրայ, և ունի աւերակ փոքրիկ եկեղեցի մը։ գ. Ղալաղլու բերդ, նոյնպէս կառուցուած է բարձր սարի վրայ. մէջը կան շատ հին շինուածոց բեկորներ և աւերակ մնասուն մը։ դ. Խցաբերդ, որոյ մէջ կը բնակին Հայք և ունին եկեղեցի. ունի ամուր պարիսպ, պատուական ջուր և գնայլելի տարածութիւն։ — Արցախ, 399–402։

ԲԵՐԴԱՁՈՐ. — *Կը յիշուի Վասպուրականի Ոշտունեաց գաւառի մէջ։ Ի հնումն Բերդաձորոյ Ս. Աստուածածինն կը կոչուէր՝ այժմեան Կարմրակ վանքը։*

ԲԵՐԴԱՁՈՐ. *Տես ՍՈՂՔ և ԴԱՒԼԻՏԻՐԻՍ։*

ԲԵՐԴԱՂ. — *Գիւղ Վասպուրականի Աղձէ (Ականց) գաւառի մէջ։ Բնակիչք 25 տուն աւելի. ունին Ս. Աստուածածին քարաւիր եկեղեցի մը։ — Այս անուամբ գիւղ մ՚ալ կը յիշուի Այրի վանքի արձանագրութեանց մէջ։*

ԲԵՐԴԱՎԱՆՔ կամ ՓԵՐԹԻՎԱՆ. — *Բարձր Հայոց կարնոյ գաւառի գիւղերէն մին, այժմեան բնակիչք մահմետական են։*

ԲԵՐԴԱՏԱԿ. *Տես ԴՂՅԻԿ։*

ԲԵՐԴԱՓՈՐ կամ ԲԵՐԴԱՓՈՐ. — *Տայոց հին գաւառներէն մին։*

ԲԵՐԴԱՔԱՐ. — *Արցախի Հաբերք գաւառի բերդերէն մին։*

ԲԵՐԴԵԳՐԻԿ. *Տես ԲԵՐԴԱԳՐԱԿ։*

ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ. *Տես* ԲԱՑԱԶԻԴ ՆՈՐ։

ԲԵՐԴԻԿ. — *Գիւղ Ալբարատայ վանանդ գաւառի մէջ, համանուն գետակի եզերքը։ Ալժմեան բնակիչք քուրդ են 12 տուն։*

ԲԵՐԴԻԿ. — *Գիւղի մը աւերակ տեղը, Գուգարաց Զարոփոր գաւառի մէջ, անառառներով և քարաժայռերով շրջապատուած։ Բերդիկի հարաւակողմը կը գտնուին խաչարձաններով գերեզմանատներ, և երկու սա, գաշէն քարակերտ մատուռներ՝ հանդերձ արձանագրութեամբք։ Գիւղատեղւոյս մօտ ձոր մի մէջ Գեղեգոյ գետոյն վրայ կը տեսնուի տակաւին Բոմբ անուն իշխանէ մը շինուած քարաշէն կամրջի մը հիմնարկութիւնը։ Այս կիսակատար կամրջի մօտ կառուցած է 1273 թուին Ցուխանդիս անի բահանայ քարաւիր կամուրջ մը. ուր կայ նաև հակայատեա սխտական քարէ խաչ մը՝ յանուն Ս. Ցուխանդու, որոյ պատուանդանի վրայ փորագրուած է կամրջի շինութեան յիշատակարանը։ Այս կամուրջը կործանուելով նորոգուած է 1836 և 1843 թուականներուն։*

ԲԵՐԴԻԿ. — *կը յիշուի Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ։ — Տես* ԲԱՂՔ։

ԲԵՐԴԻՄԱՅՐ. — *Հին և մեծ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որոյ պիրքն անյայտ է։*

ԲԵՐԴԻՈՍ. — *Գիւղ Տայոց Պարտիզացիոր գաւառի մէջ։ Ալժմեան բնակիչք մահմետական են։*

ԲԵՐԴԿԱՆ ԲԵՐԴ. — *Կիլիկիոյ հին ամրացուածքներէն մին։*

ԲԵՐԴԿԱՆԵՐԻՁ. — *Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի։ Տես* ԱՐՆԻԻ։

ԲԵՐԴԿԱՑ ԳԻՒՂ. *Տես* ՊՈՐՏԻԿ։

ԲԵՐԴԿԱՒՆԳ. — *Հին գիւղ Ալբարատայ Բագրեւանդ գաւառի։ Տես* ԱՐՇԱԿ։

ԲԵՐԴՁՈՐ. *Տես* ԲԵՐԴԱՁՈՐ։

ԲԵՐԴՆ. — *Հայաբնակ գիւղ Աղբակատարանի (Գարատաղ) Քէչլան գաւառակի մէջ։ Ունի 40 տուն բնակիչ և 1 եկեղեցի։*

ԲԵՐԴՈՒՍ. — *Հին քաղաք և բերդ Կիլիկիոյ, Մարաշի հիւսիսային կողմը. երբեմն եպիսկոպոսանիստ և իշխանանիստ էր։ Ունէր բնեռանց հարուստութեան սկիզբները, Բերդուս Գող Վասիլի ձեռքն էր։ Նոյն ժամանակ (1107ին) Գող Վասիլ կը յաղթէ պարսիկ սպասատակներուն և Քեսունի կողմը կը վերադառնայ։ Գող Վասիլի մահէն և Ա Լեւոնի գերութենէն վերջ, օտարները սիրեցին անոնց վիճակներուն, բայց երբ Թորոս Բ վերապարձաւ, իւր եղբայրը Աեփհանէ գրաւեց այդ տեղերը. քիչ վերջը Բերդուսը Թորոս Բի կողմէն, խաղաղութեան համար, արուեցաւ Գրիգոր Ալանին (1157)։ 1208 թուին ևս Իկոնիոնի սուլտան Թոսրոսլ շահը, Ցովհաննէս Մածաբարոյ կաթողիկոսի դրդմամբ եկաւ բանակ բերդատէր Գրիգոր իշխանը և Բերդուսի տիրեց։ — Կիլիկիա, 348–349։*

ԲԵՐԴՔ. — *Հին գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառին, զոր Աշոտ Ա. Թագաւորը նուիրեց Սեւանայ վանքին։*

ԲԵՐԻԱ կամ ՀԱԼԷՊ. Գր. ALEP. Ցն. Βεροῖα. — *Գլխաւոր քաղաք համանուն կուսակալութեան Ասորւոց երկրի մէջ. կը գտնուի 34° 45 արեւելեան երկայնութեան, և 46° 13 հիւսիսային լայնութեան մէջ. Ալեքսանդրեկի նահանգապետէն հեռու է 135 հազարամեայ՝ հարաւ արեւելեան կողմը։ Ունի հիանալի տեսարան, բարձր է 300 մետր, կառուցուած բլրակներու սարսրատ հողմի մէջ. նշանաւոր է բարձր բերդովը, պարիսպներով և շէնքերու հնութեամբը։ Բերիա շրջապատուած է ամբողջ լայն պարիսպով, և ունի երկաթէ հօթը գռներ՝ որոնք ազգերական անուններ ունին։ Հին տուները շինուած են ծանր քարուկիր խիտ վիմագուն, տակաւին կը գտնուին մինչև 2000 տարի յառաջ շինուած շէնքեր։ Թաղերը, փողոցները շինուած են սրտրուն ձեւով, ամէն թաղի գլուխ կայ երկաթեայ դուռ. տուներու այն պատերը որ շինուած են փողոցի կողմը՝ բարձր և առանց լուսամուտի են. լուսամուտները տուներու բակ գաւիթներու վրայ են։ Ալժմ նոր տուն շինողներ՝ կը շինեն նոր ձեւով, պարապէն գուրս Ազիզիէ անուամբ նոր և գեղեցիկ թաղ մը շինուած է և օր աւուր կը շատանան նոր տուներ։ Ազգերական լեզուն արաբերէն է. Հայք, Թուրքք, Ցոյնք, Ասորիք, Խալտիք, ամէնքն ալ նոյն լեզուով կը խօսին. մայրենի լեզու գիտցողները բացառութիւն կը համարուին։ Արաբերէն են նաև թաղերու և իշխաններու անուանք։*

Շէնքերը ամէն բանէ աւելի հետաքրքրական են իրենց հնութեամբ. յաւիտենական քաղաք մ'է Բերիա, Աբրահամ նահապետէն սկսեալ, Հապարացւոց, Խաչակրաց, Լէնկթիմուրի, Հայոց, Աւորւոց և այլ իշխանութեանց յիշատակներն ամէն կողմ կերեւին։ Բերդը 4000 տարուան շէնք է կ'ըսեն, և դեռ հազիւ սկսած է քայքայիլ. այն ալ երեսէ ձգուելուն համար, եթէ քիչ մը ներսդսութեան հոգ տարուի դեռ շատ դարեր կրնայ դիմանալ։ Հապարացւոց, Խաչակրաց և Լէնկթիմուրի ժամանակ, որոնք կը քանդէին, կը կոտորէին, կ'ապականէին և աւերակ դարձնելու կ'աշխատէին այս նշանաւոր քաղաքը, սակայն շէնքերու ամրութեան, Աւորւոց ու Աբարացւոց հաստատամտութեան և խորամանկութեան շնորհիւ, դարձեալ կը մնայ անսասան. նեղքին խռովութիւններ ևս պակաս չէին։ Օսմանեան իշխանութեան ներքոյ մնալէ վերջ (1500) սկսաւ տակաւ տակաւ



198. Բերիա = Հալէպ քաղաքին տեսարանը։

Լէնկթիմուր քաղաքս գրաւած առեն, 10000 մարդ յատկացուցած է բերդս քանդելու, որոնք հազիւ զառ ի վայր բլուրին վրայի սալայատակը քիչ մը կը քանդեն, և յուսահատած կը թողուն։ Բերդի մէջ 400 կոտր շէնքեր աւերակներ կը նշմարուին և Հռոմայեցւոց ժամանակէն մնացած եկեղեցւոյ մը աւերակը և աւազանը։ Ամէն կողմ լի են քիւֆի գրով արձանագրութիւններ։

Բերիա շատ բարգաւաճած էր Աբրահամ ձեռքը, թէեւ շատ վտանգներ անցան կու խաղաղանալ և աւելի պայծառանալով, դարձեալ շահատան եղաւ վաճառուց Աւորւոց, Միջագետաց, Աբաբիոյ և Հայոց։ 1822ին մեծ գետնաշարժէն Բերիոյ մեծ մասը կործանեցաւ աւերակ դարձաւ, բնակիչներն ալ նուազեցան և քիչ մը ժամանակ վաճառականութիւնն ինկաւ, բայց վերջը նորէն զարգացաւ։ Շատ կարաւաններ կը յաճախեն հաս. սկսեալ Բաբելոնէ, Երեսխայէ, Տիգրանակերտէ, Խարբերդէ, Աբաբկիրէ, Անթեպէ, Մարաշէ և ուրիշ քաղաքներէ. հա-

զորպակցութիւն ունի նաև Երուսաղէմի, Դամասկոսի, Եգիպտոսի և Հնդկաստանի հետ։ Ներկային վաճառականութիւնը կ՚ընկայ ընդհանրապէս ուղտերու և ձիերու միջոցաւ, մեծ քանակութեամբ ապրանք կու գայ Երուսաղէմէն, մանած, կաւ, չուխայ, երկաթ, սուրճ, շաքար, են., և մեծ քանակութեամբ կ՚երթայ ցորեն, բամբակ, պիտակ, մորթ և մեռաքսեայ կերպասներ, որ ասա կը շինուին խիստ ճարտար արուեստաւ և վայելուչ. ունի շատ ձիթապտուղ, որոյ երկրորդ անգամ եղած իւղով կը շինեն աճառ՝ որ հռչակուած է փոքր Ասիոյ ամէն կողմը։ Բերիա մեծ կեդրոն է առեւտուրի, ունի վաճառատունք և հարուստ վաճառականներ, բայց հոս ալ Երուսաղէմի նման կանխով՝ սկսած են հետզհետէ իրենց ձեռքը անցնել շահաւոր գործերը։ Բերիոյ ժողովուրդը աշխատասէր է, արժուն, խորամանկ, հեռատես, շահասէր վաճառական և յառաջդիմութեան սիրահար։ Հոս կը գործեն զուտ մեռաքսէ, խառն մանածէ և խառն ոսկեթելով շատ տեսակ նիւթեր, փոցխներ, վարագոյրներ, շալեր, են.։

Քաղաքիս բնակչաց թիւն, ըստ Վ. Բինէի, կը հասնի 127149 հոգւոյ, հետեւեալ կերպով բաժնուած.

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՔ	
Ասոր Ափոքք, Թուրքք, են.	97451
ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ	
Ասոր Կաթոլիկեայք	5704
Յոյնք (Մելքիտք)	8004
Հայ Կաթոլիկեայք	3000
» Լուսաւորչականք	2550
Մարոնիտք	2989
Քաղդէացիք	450
Լատինք	1058
Հրեայք	7790
Այլ և այլք	153
Գումարն ...	127149

Բերիոյ մէջ կան բազմաթիւ մզկիթներ՝ որոց մի քանին, կանխաւ եկեղեցի եղած են. քրիստոնեայք ալ ունին իրենց եկեղեցիները, մեծ օտար ազգացը թողլով ծանօթանալ միայն ազգային եկեղեցիներու հետ։ Իր հնութեամբն նշանաւոր է Հայոց Քառասուն Մանկանց եկեղեցին՝ որ կը գտնուի ամուր պարսպապատ և ընդարձակ թաղի մը մէջ, ուր կը բնակին գտնագան ազգք քրիստոնէից։ Այս եկեղեցիս ի հնումն պաճուճեալ էր բնաւիր գարդերով, չինական յախճապակիներով և միսխո նկարներով։ Այսպէ խարանի կամարի ամբողջութեան չափով յատակապէս Չինաստան շինուած և խնամով բերուած շարուած էր Ս. Աւետարանչաց, հրեշտակաց և այլ պատկերներ, հանդերձ հայատառ արձանագրութեամբք։ Ներկայումն կ. Ս. Ղազարճեան, կ՚ըսէ «... այսպիսի մի սքանչելի բան այսպիսի մի յիշատակ քանդել կու տան, այնքան այն պատուական շինուածը իբր հնութեան մի կոշտութիւն փրցունելով՝ կիրով կը ծեփեն, և այն շինուածոյ կտորտանքը կը լեցնեն եկեղեցւոյն մի անկիւն»։ Եկեղեցւոյս դրան վրայի հին յիշատակարին կտրտած է, այժմեան արձանագրութիւնը նոր կը հաստատէ։ Քահանայապետիւթիւն կը կատարուի միշտ Քառասուն Մանկանց եկեղեցւոյն մէջ, իսկ երկրորդ եկեղեցւոյն մէջ, որ Ս. Աստուածածնի կը կոչուի և կը գտնուի նոյն թաղին մէջ, ամեն օրեր։ Կաթողիկեայ Հայք ևս ունին ընդարձակ և փառաւոր եկեղեցի մը։ Երկու հայ հասարակութիւններն ալ ունին իրենց յատուկ երկսեռ վարժարանները և առաջնորդարանները։

Բերիոյ արք կ՚զգենուն արաբական, եւրոպական, թուրքական և հին հայկական զգեստներ, և շատեր զուտիկն ճերմակ կը կապեն. պանդուխտ մը երբ քաղաք մտնէ բնաւ չի կրնար ճանչնալ խլամը կամ քրիստոնեայն, ոչ զգեստէն, ոչ լեզուէն և ոչ անունէն։ Կանանց զգեստները և գարդերը խիստ ծանրագին են, շատ մը ազամանդներու հետ նաեւ իրենց վերարկուներու շուրջը կը շարեն մարգարիտներ։ Սովորութիւնք բոլորովին արաբական և ասորական են. հիւրասիրութեան մէջ քաղաքավարական ձեւերը ծայրայեղութեան տարած են։ — Մինչեւ հաշուով քաղաքիս մէջ կան 150 մզկիթ, 114 մէնթիա, 23 թէքէ (վանք), 15 եկեղեցի, 4 ժողովարան, 73 հասարակաց աղբիւր, 64 բաղնիք, 7500 կրպակ, 1000ի չափ վաճառատուն, 160 սրճարան, 20 դեղատուն, 4 հիւրանոց, 2 հիւանդանոց, 11

կամուրջ, ևն.։ Բերիոյ շուրջը կան 600ի չափ պիտակի, 300էն աւելի ձիթապտուղի և 4–500ի չափ սովորական պարտէզներ, որոնց բաւականէն աւելի յատկացած են հասարակութեան, ուր կը պիտեն բազմութեամբ զբօսանաց համար։ Օտար տէրութիւններէն Գաղղիա, Ռուսիա, Գերմանիա, Անգղիա, Աւստրիա, Իտալիա, Պելճիա, Պարսկաստան, Յունաստան, Փորթոկալ, Տանիմարքա, Շուետ և Նորվեկիա և այլք, քաղաքիս մէջ ունին իրենց հիւպատոսները։ — Թուաբ Նաւակներ, 149–175, Վ. Փիճէ, բ 109–171։

ԲԵՐԿԱ. Տես ԲՈՐԿԱ։

ԲԵՐԿՐԱՑԻՈՑ ԳԱԻԱՌ.—Ա.յսպէս կոչուած է վաղապրականի Աբգերանի գաւառը. յայտնի է թէ՝ իր մէջ գտնուող Բերկրի գիւղաքաղաքի համար։

ԲԵՐԿՐԻ. — Գիւղաքաղաք վանայ կուսակալութեան համանուն գաւառակի մէջ. վանէն հեռու է 77 հազարամեաց, հիւսիսային արեւելեան կողմը։ Նշանաւոր է Բերկրի հին պատմութեան մէջ գտնագան պատահարմանական դէպքերով։ Տակաւին կայ հինաւուրց բերդն կառուցուած քարաժայռի վրայ, որ և գտնագան անպատնեշ նորոգուած է։ Մեր պատմիչները կը յիշեն քաղաքիս Պարսից և Յունաց ձեռքը անցնիլը։ ԺԱ. դարու մէջ Գանձի անուամբ հայ իշխան մը ևս տիրեր է Բերկրիի, բայց այլազգիները վերստին առեր են։ Յունաց Միքայէլ կայսրը շատ զօրք ղրկելով քաղաքիս տիրից, բայց քիչ վերջը Տուրքի սուլտանը պաշարելով Բերկրիի տիրից և մէջի քրիստոնեայ իշխանները կապանօք գերի տարաւ։

Ա.յժմ Բերկրի ունի 3100 բնակիչ, յորոց 2100ը Հայք են և մեծագոյն Թուրք և Հրեայք։ Քաղաքաւանիս մօտէն կ'անցնի Բերկրի կամ Պանտուռմահի գետը, որոյ վրայ ձգուած է հնաշէն բազմակամար քարէ կամուրջ մը։

Բերկրի գաւառակը կը համապատասխանէ վաղապրականի հին Աբգերանի (Տես) գաւառին։ Սահմանքն են հիւսիսէն՝ կարնոյ նահանգը, արեւելքէն՝ Պարսկաստան և Հէքքիարիի գաւառը, հարաւէն՝ վանայ գաւառը, արեւմուտքէն՝ Արճէշի գաւառակը և վանայ ծովակը։ Գաւառակիս մէջ Հայք ունին լիով գիւղ և իրենց թիւն 8000ի կը հասնի, մինչդեռ Թուրք (Աշիրաթէք, Հէյատարանլիք, Լուճիք, Եղմաիք), Թուրք և Հրեայք կը հաշուին 7000 հոգի։ Բերկրիի ազգային նախնական վայրերէն յիշելու արժանի է Տէր Յուսկան Որդի անուն վանքը։ Գաւառակիս մէջ է Սպահան կոչուած լճակին՝ բաժակաձեւ փոքրիկ լերան մը վրայ՝ Գարծոթ գիւղի մնացորդը, որոյ ջուրը կ'սառչէ շրջակայ գաշար։ Հոս է նաև Թոնիր բաւած հրաբուղխ լեռը, որոյ սառրատներէն ծծումբ կը հանուի, և նաւթի կամ քարիւղի աղբիւրներ գտնուցան Աւստրեանց Պ. Նազարէթի ձեռքով, բայց նոյն անձի մահուամբ՝ որ զոհ գացեր է նոյն աշխատութեան, ձեռնարկը անպտղաբերեցաւ։ — Ստոգ. հին Հայս. 194–193։ Մասիս, 3219, 3803։

ԲԵՐԿՐԻ. — Մակաւարնակ Հայոց գիւղ վերին Կարկառու (վան). ունի քարաւիղ եկեղեցի մը՝ Ս. Աստուածածնի։

ԲԵՐԿՐՈՑ ԴԱՇՏ. — Ա.յսպէս կը կոչուի Բերկրիի շուրջը տարածուած բնդարձակ դաշտը, որ այժմ աւելի ծանօթ է Ալպաղա (Տես) անուամբ։

ԲԵՐԿՐՈՑ ՁՈՐ. — Ա.յս անուամբ ձոր մը կը յիշէ Ասողիկ վաղապրականի Աբգերանի գաւառի մէջ։

ԲԵՐՁՈՐ. — Ա.յլ կերպ գրուած անուն Արցախի Բերդաձոր գաւառի։

ԲԵՐՁՈՐ. — Գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի։

ԲԵՐԹՆԻ. Տես ԿՈՎՄԱԿԱՆ։

ԲՋԱԻԼԻՔ. — Հայարնակ գիւղ Գուգարաց Ջաւախք գաւառի մէջ. ունի 366 բնակիչ, բաժնուած 43 տան։

ԲՋՂՈՆ. — Հին գիւղ Սիւնեաց Ճահուկ գաւառի. այժմ աւերակ է։

ԲՋՄՐՇԷՆ. — Գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ։ Ունի 210 տուն հայ բնակիչ և Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԲՋՆՈՒՆԵԱՑ ՅՈՎ. Տես ՎԱՆԱՑ ՅՈՎ.։

ԲՋՆՈՒՆԻՔ կամ ԲՋՆՈՒՆԱԿԱՆ ԳԱԻԱՌ.— Տուրուբերանի հին գաւառներէն մին, որ առնուազն առած է Հայկայ Բազ թոռան անունէն, որ Մանուագայ որդին էր, և բնակեցաւ Աղի ծովուն արեւմտեան հիւսիսային

եղերքը, որոյ անուամբ ծոփն ալ կոչուեցաւ Բզնունեաց ծով, որ այժմ սովորաբար կը կոչուի Վանայ ծով։ — Թէպէտեւ գաւառիս եպիսկոպոսական աթոռն հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորչէն, բայց գրաւոր կերպով մեզ ծանօթ է նախ Առբրնակ եպիսկոպոսը, որ սրբոյն Սահակայ հակառակորդ եղաւ և յետոյ գաւառիս եպիսկոպոս, և Յովհաննու կաթողիկոսի և այլոց աւանդածի համեմատ, սրբոյն Յովսեփայ անզգուշութենան միջոց, սա կը կառուցէր ձեռնադրութիւն, որ գտնուեցաւ նաև Աբրահամայ ժողովի մէջ։ Երանելին Աբրահամ Ղեւոնդեանց աշակերտաց աքսորարանքէն գտնալէ վերջ գաւառիս եպիսկոպոս գրուեցաւ։ Գաւառիս ծանօթ եպիսկոպոսներէն կը յիշուին Յոհաննէս Գինայ ժողովոյն սաստիկացութենանց մէջ, և Թէոդորոս եպիսկոպոս՝ Իմաստասիրի ժողովոյն մէջ։ Եօթնեկրօրեայ գարու վերջերը և ութերորդի սկիզբը, կաթողիկոս լինելէն առաջ, գաւառիս եպիսկոպոս եղաւ Եղիա։ Իսկ ԺԲ դարու մէջ Հռոմկլայու ժողովոյն մէջ կը յիշուի Յովհաննես եպիսկոպոս Բզնունեաց։ Եւ այլն։

Վաղարշակ Թագաւորը, իբրև առանձին նախարարութիւն հաստատեց նաև Բզնունեաց տոհմը, բայց վերջը խոսրով Թագաւորի օրով աչնչացաւ այս նախարարութիւնը, որուն պատմութիւնն կը կարդանք Բուզանդայ մէջ (Գ. Ը.)։ Հայոց խոսրով Թագաւորը կը հրամայէ Բզնունեաց Դատաբէն գլխաւորին որ Պարսից դէմ պատերազմի, սակայն սա նենգութեամբ Պարսից կողմը կը բռնէ, բայց երբ Հայք վաչէ զօրավարի ձեռքով կը յաղթեն Պարսից, կը բռնեն դաւաճան Դատաբէնը և կը քարկոծեն խոսրովու գլխաց. «Եւ զազգ նորա և զկին և զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին Ռշտունեաց յանուանեալն Աղձիամայր կրզուոջ. ի նա և ելեալ վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զկին Թագոյր և ոչ զարու։ Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութենանն այնորիկ և զառն նոցա յարքունիս կալան»։ Թէպէտեւ Մամբրէ Աբշակ Բ֊ի ժամանակ ևս կը յիշէ այս տոհմը։

Գաւառիս գլխաւոր քաղաքն էր Թլմախ որ յատկապէս Քաղաք Բզնունեաց կոչուած է. իսկ մէջ էին նաև Աղծկիկ, Բադէշ, Հիզան, Դատառան, են։ Բզնունեաց գաւառի այժմ կը համապատասխանեն Թլմախ և Աղծկ գաւառակները։

ԲԶՈՎԱՆԴ կամ ԲՈՒԶԱՒԱՆԴ. — Այս անուամբ երեք Գիւղ—Բզովանդ, Գուշա—Ալի Բզովանդ և Ախուռնա Բզովանդ գիւղեր կան Ակրաբատայ Ոստան գաւառի մէջ։ Ակիմ այլազգայնակ են. մնացեր կան շատ աւերակներ՝ քննութեանց կարօտ։

ԲԶՋԱՔԼՈՒ. — Գիւղ Ակրաբատայ Կուտայք գաւառի մէջ։ Բնակիչներն Ապահանի գաւառներէն գաղթած եկած են 1875 թուին մնա յիսուն տան չափ, և կառուցած են այս գիւղս։ Ունին եկեղեցի մը Ս. Յակոբայ նուիրուած։

ԲՂ ԹԱՄՈ. — Գիւղ Տիգրանակերտի երրորդ առաջնորդական թեմի մէջ։

ԲՂԱՆԶԻ. — Գիւղ Ալաշկաւակերտի բարգաւած գաւառի. ունի 100 բնակիչ հայ և մէկ եկեղեցի։

ԲՂԱՒ. Տես ԲԵՂՈՒ։

ԲՂԿԻ ՆԵՐՔԻՆ. — Երբեմն հայաբնակ՝ բայց այժմ թուրքաբնակ գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ։ Թուրքերը այժմ կը կոչեն Բեղլու Հիւսեին—քեհեա Սարայլու. անուշենները հաղիւ թագած են եկեղեցւոյ հետքեր. տակաւին կան մի քանի գերեզմաններ՝ վերջին գարերու վերաբերեալ արձանագրութիւններով։

ԲՂԿԱՒԱՐ—ՔԵԱՆԴ. — Գիւղ Աղուանից Հոգի (Ալբազի) գաւառի մէջ։ Բնակիչք նախիջ գաղթած են խաչէն, Ջրաբերդ և Վարդա գաւառներէն. այժմ կը հաշուին 750 հոգի, բաժնուած 142 տան։ Ունի եկեղեցի մը Ս. Աստուածածին և Ս. Մկրտչաց անուամբ նաև։ Գիւղիս գերեզմանատան մէջ կը գտնուին բաւական հին տապանաքարեր։

ԲՂՈՋԻՆՋ կամ ՓԱՐՋԱՆՋ. — Բազմամարդ հայաբնակ գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ։ Ունի 220 տուն բնակիչ և Ս. Փրկիչ եկեղեցի մը։

ԲԼՈՒՆԱ կամ ԲԼՈՒՆԱԻՍ. — Գիւղ Ակրաբատայ վանական գաւառի մէջ. ունի 58 տուն հայ բնակիչ։ Եկեղեցին կը կոչուի Ս. Լուսաւորիչ։ Հին արձանագրութիւն կը նշմարուի եկեղեցւոյ սեմոց վրայ, և գիւղիս ա-

բեւեռան կողմը կայ զերեզմանատուն՝ հին ձիաձեւ և արտրոցաձեւ տապանաքարերով. քիչ մը հեռուն ալ կան վանքի աւերակներ։

ԲԼՔԼՔՈՒՆԻՔ. *Տես* ՓՈՂՔՆ։

ԲՆՕԼԻՒՔ ԲԱՇԻ. — *Բազմամարդ ագլուզարտակ զիւղ Ա. Լուսաւորչայ Բագրեւանդ գաւառի խաչակոզ վիճակի մէջ։ Ա. ս. սեղ կը տեսնուին եկեղեցւոյ և վանքի աւերակներ, պարսպի հետքեր և ընդարձակ հայկական գերեզմանատուն, որոյ խաչքարերէն շատերը տարած են։ Մինչեւ Հասան խանի պատերազմներու ժամանակ, ինչպէս ամբողջ խաչակոզ՝ նոյնպէս այս զիւղս հայ էին, ուր նէին բազմաթիւ ձիեր, ոչխարաց հօտեր և անասնոց նախիր։ — Բագրեւանդ, 82–83։*

ԲՂՋՎԱՆ. — *Զիւղ Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ։ Ունի 52 տուն հայ բնակիչ։*

ԲՂԼ–ԲՂԼ. — *Զիւղ Տիգրանակերտի առաջնորդական չորրորդ թեմի։ Ունի 14 տուն հայ բնակիչ։*

ԲՂ–ԽՈՐԱՆ. — *Զիւղ Տիգրանակերտի առաջնորդական թեմի մէջ։*

ԲՂՆՋՐԿԱ. — *Ամակաւարնակ զիւղ Բաբերդի. ունի մէկ եկեղեցի։*

ԲՂՐԹԻՆ կամ ԲՂՐԻՆՔ. — *Զիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ։ Ա. ժամանակ բնակիչք զբեթէ բոլորը պղտզդի են։*

ԲԹԱԻԲՃ. *Տես* ԲԻԱԻԲՃ։

ԲԹՆԻ. *Տես* ԲԵՆԻ։

ԲԻԺԱՆՉԱՆՉԱՆԻ. *Տես* ԲԻՁԱՆՉԱՆԻ։

ԲԻՆՈՒՆԻՔ. *Տես* ԲՈՒԻՆՈՒՆԻՔ։

ԲԻԲԻՒ կամ ՁՈՂԱՉ. — *Հայաբնակ աւան (Արցախ) Ղափան գաւառի մէջ, 2200՛ բարձր զիրքով. ունի 35 տուն։*

ԲԻԻՆԻ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԲԻԼԻՕՏԱՆ. — *Հայաբնակ զիւղ Աղուանից Գարդմանի գաւառի. ունի բարձր և հիւսիսահայեաց զիրք, առողջաբար օդ և ջուր։ Բնակիչք 31 տուն գալիճած են Վարանդա գաւառէն։ Ունին մէկ եկեղեցի փայտաշէն ձեղունով, նուիրուած Ս. Աստուածածնի։*

ԲԻՒ. *Տես* ԲՅՈ։

ԲԻՁԱՆՉԱՆԻ կամ ԲԻԺԱՆՉԱՆՉԱՆԻ. — *Փայտահարանի հին գաւառներէն մին։*

ԲԻՆԱՏՈՒՍ. — *Թուրքմենաց զիւղ (Ա. Յարաս) Վերին Բասենի մէջ։*

ԲԻՆԵԱԹԼՈՒ ՇԷՆ. — *Զիւղ Արցախի Պատկանը գաւառի մէջ. կառուցուած է Զիլանի սարի շարունակութեան վրայ։ Բնակիչք 26 տուն են և գաղթած են 1840 թուականին Գարապաղղէն. ունին Ս. Աստուածածին նոր շէնքէն եկեղեցի մը։*

ԲԻՆԻԹ. — *Աւերակ զիւղատեղի Ա. Լուսաւոյ Ըւթ և Արած գաւառի մէջ։*

ԲԻՆԻՋՈՒ. — *Ա. ս. անուամբ անուանի մը կայ Գուգարաց այժմեան Պօղոսալու գաւառի մէջ, Շուլավէր զիւղի մօտ։ Աշտարակ մէջ բոլոր Բզլբզլան և Հաձարկոչտ ապրիւրները, ջուր կու տան Շուլավէր բազմամարդ զիւղին։*

ԲԻՆԿԵԱՆ. *Տես* ԲԵՆԿԵԱՆ։

ԲԻՋԱՆԻՍ. — *Ա. լուսգարնակ զիւղ Զանգեզուր (Սիւնիք) գաւառի մէջ։*

ԲԻՋԵՆԱԿ. *Տես* ԲՋԵՆԱՂ։

ԲԻՍՏ. *Տես* ԲՈՒՍՏ։

ԲԻՐԶԵԻԱՆ. — *Ա. լուսգարնակ զիւղ Սիւնեաց Բաղք (Զանգեզուր) գաւառի մէջ։*

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ. *Տես* ԿՈՒՏԱՆԴԵՈՒՊՈԼԻՍ։

ԲԻՒՍԱԿԱՆ. — *Զիւղ Ա. Լուսաւորչայ Արաքածոտն գաւառի մէջ։*

ԲԻՒՐԱԿԱՆ. — *Գիւղաքաղաք զիւղ Ա. Լուսաւորչայ Արագածոտն գաւառի հին Աներեզ և այժմեան Աշտարակի վիճակի. Աներեզդուռ գիւղաքաղաքի ձախակողմը և էրիմով զիւղի մօտ զէպի արեւելեան հարաւ։ Ա. լուսգիներէ կը կոչուի Բիւրական. ունի 1000էն աւելի բնակիչ, ամբողջ հայ։ Եկեղեցին նուիրուած է Ս. Յովհաննու. զիրքն սարահարթ է, և ունի պղինձներ և գաշտեր։ Աներեզ գիւղաքաղաքը ոչ միայն ի՛սոզէ Բիւրականը, այլ և կու տայ կարմրախայտ բուտած ձուկը։ — Գիւղս առաջին անգամ յիշուած կը գտնենք ի զարու սկիզբը Յովհան կաթողիկոսի պատմութեան մէջ։ Նոյն կաթողիկոսի սնփհականութենէն է եղեր Բիւրական, յորում կը յիշուի ամրոց մը և վանք. իսկ եկեղեցին շինուած էր, ըստ պատմչին, «... հաստատ հեղոյս կոփածոյ քարամբք պերճապաճոյճ շինուածովք և նկարակերտ յօրինուածով, ...։» Ամրոցի և վանքի շինուածքը չկան, այլ մնացած է միայն եկեղեցին չափաւոր մեծութեամբ. անոնէն է և երկու կողմերը ունի մէկ մէկ մատուռ, որոցմէ միոյն մէջ, սեղ-*

ույս նորեկ բնակիչները կը կատարէին ա-
մուսնական պաշտամունք, որովհետեւ եկե-
ղեցւոյ տանիքը կործանած էր, բայց 1841
թուին փայտաշարակ շինեցին և հոն սկսան
կատարել։ Գիւղիս բնակիչք նորեկ կամ
գաղթականներ են, որովհետեւ հին բնակիչ-
ները արաբացւոց արշաւանքներու ժամանակ
սպանուեցան, գերի տարուեցան և գիւղն
ամայացաւ։ — Ժե դարու վէջ (1467ին)
ես կը յիշուի Մեճարաի Բիւրականի Ս.
Աստուածածին և Ս. Յովհան եկեղեցիներով,
ուր Մկրտիչ անուամբ քահանայ մը բնօ-
բինակած է Ցիսառս որդի գերքը։ Այդ գրքի
յիշատակարանէն կը տեղեկանանք որ Բիւ-
րականի Սարգիս վարդապետ շիներ է Տէ-
գերոյ Ս. Աստուածածինը. հոն կը յիշուին
նաև տասնեհինգէն աւելի քահանաներ Ան-
բերդի և Բիւրականի, և երեք եպիսկոպոս-
ներ Կարապետ, Մկրտիչ և Թադէոս։ Գրե-
թէ 200 տարի վերջ Յակոբ Դ. կաթողի-
կոսը ուրիշ քանի մը գիւղերու հետ Բիւ-
րականն ալ սեհեկականից Լիմմիածնի ամէ-
նոյն։ — Կողմանցս օգոց յատակութեան և
ջրոց պատուականութեան համար, 1835
թուին Հաւատները Բիւրականի արեւելեան
սահմանները ամպարտաղներ շինեցին։ Գէորգ
Դ. կաթողիկոսն ալ 1874ին իրեն համար
հայրապետական ամպարտաղ շինեց Բիւրա-
կանի վէջ, և կճեայ տախտակի մը վրայ
գրեց իր յիշատակարանը։ Գրեթէ տասն-
երկու տարի առաջ Բիւրականի սահմաննե-
րը գտնուեցաւ սահմանաքար մը, որ կար-
ծուեցաւ մեր Աբրահամ Ա.ին կանգնուած կո-
թողներէն մին. այդ քարը այժմ կանգնած
են եկեղեցւոյ մօտ։ — Աղրարատ, 156—
158։

ԲԻԲԱԿՆ, ԲԻԲԱԿՆԵԱՆ կամ ԲԻԲԱԿՆԵՐ.
— Այս անուամբ կոչուած է շատ անգամ
հայ տեզապրողներէ Աղրարատայ Արմանց
կամ Պիւնիկոլ լեռը։

ԲԻԲԱԿՆԵԱՆ. Տես ԲԻԲԱԿՆ։

ԲԻԲԱԿՆԵՐ. Տես ԲԻԲԱԿՆ։

ԲԻԲԱՊԱՏ. — Հայանուն՝ բայց այժմ
այլազգարնակ գիւղ Աղրարատայ Բագրեւանդ
գաւառի վէջ։ Գիւղիս արեւելեան հիւսիս-
կին կողմը 1/4 ժամ հեռաւորութեան վրայ
կը գտնուի բլուր մը, որոյ գագաթը կայ
բերդ մը սրբատաշ քարերով։ Գիւղացիք ժե-
ծաւ մասամբ քանդած են բերդը, և վէջն
ալ տեղ տեղ պեղելով գտած են մեծամեծ կա-
բաններ, արծաթեայ ապարանջաններ, ջրի
բաժակներ, հին զրահներ, և այլն։ — Բազ-
րեւանդ, 166—167։

ԲԻԲԻՈՏԻ ՎԱՆՔ. Տես ՎԱՆԻԿ։

ԲԻԲԻՔ. — Հայաբնակ գիւղ Շապին Գա-
բահիսարու. ունի 120 տուն բնակիչ։

ԲԼԱԼԱԿ ՇԷՆ. — Աբցախի վարանդա գա-
ւառի վէջ։ Ունի 15 տուն բնակիչ, որք և-
կեղեցի չունենալով, իրենց հոգեւոր պէտ-
քերը կը կատարեն Սիսորաշէն գիւղի եկե-
ղեցւոյ վէջ։

ԲԼԵԿԱՆՑ. Տես ՎԱՆԻԿ։

ԲԼԷԹԱՆՑ. — Քալանեան կը յիշէ այս
անուամբ հայաբնակ գիւղ մը Սիւնեաց վէջ,
որ ունի սպաշէն եկեղեցի մը երկու սիւ-
ներու վրայ կառուցուած 1696 թուին։

ԲԼԷՑ ԴԱՐ. — Գիւղ Տիգրանակերտի եր-
բոյղ առաջնորդական թեմի վէջ. ունի 50
տուն հայոց և վէկ եկեղեցի։

ԲԼՋԱՆ. — Բարձրադոյն և գլխաւոր լեռ
Տուրուբերանի այժմեան Պալանդրի գաւառի։
Ընկած լինելով Պալանդրեան վէջ անցք՝ կը բաժ-
նէ զայն երկու մասանց վերին և Ներքին
Պռշաւերեաներ։ Լեռս ունի բազմաթիւ թեւեր
և գագաթներ, որոնցմէ նշանաւորներն են՝
Տիւռնաւ, Բերդի սար, Շըխ—խս, Ջոջ—Հա-
յաբ, Փոքր Հայաբ, Խաւիճառ, Քօսայ սար,
Ջոջ ժախնոց, Շաքար պռշաղ, և այլն։
Բլէջան անուան կ'տատպարանուի իբր Բեկայ-
ջան (Բեկայ մարմին), որ հաւանական չէ.
ծերերու պատմածին նայելով՝ սոն Բեկջան
Թագաւոր, երբեմն սիրելով այս կողմերուն,
լեռս կոչուեր է անոր անուամբ Բեկջան։ Լե-
բանս վրայ կայ սրբատաշ քարերով կառու-
ցուած բերդ մը, որուն հսկայական պատերը
տակաւին կանգուն են և միայն տանիքը
քանդուած է։

ԲԼՈՒՐ. — Մեծ գիւղ Աղրարատայ Ճա-
կատք գաւառի վէջ. ունի 200 տուն հայ
բնակիչ։

ԲԼՈՒՐ. — Կը յիշուի այս անուամբ հին
գիւղ մը Աղրարատայ Բագրեւանդ գաւառի
վէջ։ Հիւանդանոցէն վերջ հոս բերուեցաւ
Ս. Մահակ և հոս աւանդից սուրբ հոգին.

ուսկից յետոյ մարմինը տարին Աշտիշատ։ Կորիւն՝ Բլորցաց գիւղ կը դրէ։ Գիւղս այժմ ունի մօտ 80 տուն հայ բնակիչ։

ԲԼՈՒՐ. — Մակաւարնակ գիւղ Բարձր Հայոց այժմեան Թորթումի վիճակին մէջ։

ԲԼՈՒՐ. — Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ դաշտի մէջ, 3 ժամ քազաքէն հեռու։ Բնակիչք 40 տուն հայ և 30 տուն Թուրքք։ Հայք ունին եկեղեցի մը և մէկ ուսումնարան 30 աշակերտներով։

ԲԼՈՒՐ. — Հայարնակ գիւղ Բարիերդի։ Ունի 112 տուն հայ բնակիչ և մէկ եկեղեցի։

ԲԼՈՒՐ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան վերին Պուլանրիս վիճակի մէջ։ Ունի 26 տուն Հայոց և նոյնչափ Քրդաց։

ԲԼՈՒՐ կամ ԲԼՈՒՐՍ. — Բարձրագիր մեծ աւան Ալբարատայ վերին Բասէն գաւառի մէջ։ ԺԱ դարուն իրրև պարսպապատ և ամուր վայր մը Սկևռուկանց արշաւանաց ժամանակ հոս ապաստանեցան բոլոր մերձակայ գիւղերու և վանքերու բնակիչք. և անօրէն թշնամիք կործանելով պարիսպը մէջը գտնուածները բոլոր կոտորեցին։ Պատուաժներու թիւը կը հասնի 7000ի և 60 ալ կրօնաւոր։

ԲԼՈՒՐԵԿ. — Մակաւարնակ գիւղ Հայոց Տուրուբերանի Բռնաշէն վիճակի մէջ։

ԲԼՈՒՐՄԱԿ. — Գիւղ Վասպուրականի այժմեան Արճէշ գաւառ. ունի 60 տուն հայ և նոյնչափ քուրդ բնակիչ։ Հայք ունին եկեղեցի մը և ուսումնարան։ Բլուրման գրաբար գիրք ունի և բնութիւն արձնչի տեսարան, միայն ծառաստանք անպտուղ են։ Հողը գօրաւոր է և խիտ յարմար բարի ծառեր հասցնելու, այնպէս որ 8—10 տարուան անկուած բարին կրնայ համարուիլ օրինաւոր հասած գերան։ Հայ բնակիչք տարուորաբար ցորենի մշակութեամբ կ'զբաղին։

ԲԼՈՒՐՍ. Տես ԲԼՈՒՐ։

ԲԼՈՒԱԿ. — Հայարնակ գիւղ Բարիերդի։ Ունի 65 տուն բնակիչ և մէկ եկեղեցի։

ԲԼՈՑ ՎԱՆՔ կամ ԲԼՈՑԻ ԱՆԱՊԱՏ. — Կիլիկիոյ հին վանքերէն մին, գիրքն անյայտ։

ԲԼՈՑԱՑ ԳԻՒՂ. Տես ԲԼՈՒՐ։

ԲՆԻՆՍ. Տես ՊՆԻՆՍ։

ԲՆԱՅՐ, ԲՆՐԱՑՐ կամ ԲՆՐԱՑՐԻԳՈՄ. — Այս անուամբ գիւղ կը յիշուի Ալբարատայ կոզովիա կամ Տուրուբերանի Ասպագունիք գաւառի մէջ։

ԲՂԲՈՒՋ. — Գիւղի մը անուն, որոյ դիրքն անյայտ է։ Այս գիւղէն էին սուրբքն Թաթեոս և Վարոս, որոց ուխտատեղիք տակաւին կան Ալբարատայ Գարեղէնք գաւառի մէջ։

ԲՂԵՆ, ԲՂԵԱՆ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի։ Այս անուամբ Բղենոյ գաւառ մը կը յիշուի Սիւնեաց մէջ, ինչպէս նաև Բղենոյ բերդ և Բղենոյ ջուր։

ԲՆԱԲԵԿ. — Բերդ Զորրորդ Հայոց Ծոփք (Ճմշկածագ) գաւառի մէջ։ Բերդիս մէջ Տիրան Թագաւորը ապաննից զսուրբն Յուսիկ։ Բուզանդ արքունի բերդ կ'անուանէ և կը յիշէ նաև եկեղեցին՝ որոյ պաշտօնեայք սրբոյն մարմինը փոխադրեցին Գաբանաղեաց Թորգան գիւղը։ Քնաբեղ անունը սխալմամբ գրուած և ապուած կը գտնանք Քնաբերդ։

ԲՆԱՍԱՐ. — Կը յիշուի Սիւնեաց մէջ իբրև սահման Տաթեւի վանաց։

ԲՆԱՍԵՒ. — Վերնոյն նման կը յիշուի Սիւնեաց մէջ։

ԲՆՈՒՆԻՍ կամ ԲՆՈՒՆԻՔ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Ծղուկ (Սիսիան) գաւառի մէջ, Ախլաթեան գիւղէն քիչ մը դէպի արեւելք, Լատա լերան հիւսիսային կողմը, փոքրիկ ձորակի մը մօտ, որուհէն կը հոսէ առուակ մը։ Հարաւային կողմը կը բարձրանայ բլուր մը՝ որոյ սաորոտը կայ աւերակ եկեղեցի մը։ Գիւղիս հիւսիսային կողմը կը գտնուի հին գերեզմանատուն մը, ուր կայ գեղեցիկ և քանդակազարդ գամբարան մը ԺԴ դարու արձանագրութիւամբ. կան նաև հնագոյն թուականաւ տապանաքարեր։ ԺԴ դարու վերջերը Բնունիք և Կիրակոսիկ գիւղու ակէն էր Մարտիրոս անուամբ մէկը որ ժառանգած էր իր նախնիքներէն, որ և իր միակ որդւոյն Օրպէլի մահուան պատճառով նուիրեր է այս գիւղերը Տաթեւի վանքին։ — Գերեզմաններէն մին որ ունի Գրիգորիկ քաջ վարդապետ տապանագիրը՝ գիւղացիներէն սուրբ համարուած է և շատ հիւանդներ կու գան բժշկութիւն խնդրելու։ ԺԴ. դարու մէջ այս գիւղէս էր Աղամեան

Զաքարիա վարդապետաբ, որ շատ լիզուներ գիտէր, քարոզած է կաթոդիկէութիւնն Հայաստանի մէջ և յետոյ Հռոմայ Ս. Մարիամ Եգիպտացի կոչուած եկեղեցւոյ մէջ Հայոց խոստովանահայր եղած է և հատատոյ ծաւալման ապարանք հայկէն գրքերու սրբագրիչ։ Մեռեր է Հռոմմայ մէջ 1688ին, ինչպէս կը յայտնէ տապանագիրը, և իր տապուածքը թողեր է վերոյիշեալ եկեղեցւոյն։ — Միսաքան, 215–216։ Զագեզուր, Ա. 77–79։

ԲՆՈՒՏ. — Հին գիւղ Ա.յրարատայ Արտ և Արած (Վէտի–Պասար) գաւառի մէջ։ Ա.յժմեան բնակիչք այրագլի են 26 տուն։ Գիւղիս մէջ կը տեսնուին եկեղեցիներու տեղեր և հայկական գերեզմաններ։

ԲՇՆԿՈՑ. — Բարձր Հայոց Թորթում վիճակի գիւղերէն մին։

ԲՈՒՈՒՆԻՔ ԲՈՒՈՒՆԻՔ կամ ԲՈՒՒՈՒՆԻՔ. — Վասպուրականի հին գաւառներէն մին։

ԲՈՒՒ կամ ՊՈՒՒ. — Գիւղ Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 15 տուն քուրդ բնակիչ։ Ի հնումն կալուած կամ բնիկ թեմ էր գիւղս Ս. Յովհաննու վանաց։

ԲՈՒՒՈՒՆԻՔ. Տես ԲՈՒՒՈՒՆԻՔ։

ԲՈՁԼՈՒՔ. — Գիւղ Ա.ղուանից Ջրաբերդ գաւառի մէջ, գետակի մը ձախակողմեան բարձրութեան վրայ։ Բնակիչք հայ են 15 տուն, ունին Ս. Մրմաս եկեղեցի մը։ — Գիւղիս մօտ կը գտնուի Ս. Մինաս անուն հին ախտաւանի մը, ուր կայ հին քարակիր եկեղեցի մը և մօտը աւերակ դիւղաքաղաք մը։

ԲՈՂՆԻՍ. Տես ԲՈՂՆԻՍ։

ԲՈՂՈՍ ՍԱՐ. — Լեռ Ա.յրարատայ Շիրակ գաւառի մէջ։

ԲՈՂՈՐԱԲԵՐԴ. — Հին բերդ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ։ Ա.յս անուամբ Բողոքաբերդոյ Ա.նապատ մի եւս կը յիշուի ժէ դարուն գրուած յիշատակարանի մը մէջ. այդ վանապատին եկեղեցին նորոգեալ է և դեր Ս. Աստուածածնի և Ս. Կարապետի։

ԲՈՂՈՐԱՊԱՂԱԿ. — Ա.յս անուամբ պահակատուն կամ իջեւան կը յիշուի Ա.յրարատայ Բասէն գաւառի մէջ։

ԲՈՂՈՐԵՒԻՉ. Տես ՏԱՓԵՒ։

ԲՈՂՈՐԿՈՃ. — Կը յիշուի Աղցախի Խաչէն գաւառի մէջ։

ԲՈՂՈՐՃՈՓ. Տես ՏԱՓԵՒ։

ԲՈՂՍ. — Մահատարածակ Հայոց գիւղ Մոկաց աշխարհի այժմեան Շատախ վիճակի մէջ. ունի Ս. Ա.ստուածածին եկեղեցի մը։

ԲՈՒԿ. — Անուն կը յիշուի Վասպուրականի Թոռնուտան գաւառի մէջ։

ԲՈՒԿԱԹԻՒ. Տես ՋՈՐՔ։

ԲՈՂԱԲԼՈՒՐ. — Կը գտնուի բլուր Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ Նորշէն գիւղէն կէս ժամ հեռու. այժմ ծանօթ է Շատաք անուամբ։ Բազարկեր Հարաւակողմը Մեղրագետն է և Նորշէն գիւղը, հիւսիսային կողմը Յրօնը և հիւսիս արեւելեան կողմը Հայկի գիւղը։ Գագաթեան վրայ կը գտնուին երիմարի և արջառի ձեւով քարեր։ Բլրոյս վրայ կը բուսնի Քաղ անուամբ բոյս մը, որ ժամի կը նմանի և անոր պէս բնակիչք կ'ագռն և կ'ուտեն մեծ պահոց մէջ. Բազարկեր տատրատը գտնուած ապարակները հերկելու միջոց, գիւղացիք կը գտնան հնութիւններ, խեցիի բեկորներ, սանդ, սեանց խարխիններ, են. ուստի հաւանական է որ ժամանակաւ այդ տեղ կայ եղեր գիւղ և բնակութիւն։

ԲՈՂԱՃԷՆ. — Կը յիշուի (Միմիք) գիւղս Մարմնոցայց վանքի նուիրատուի մը արձանագրութեան մէջ։

ԲՈՂԲԵՐԴ. — Հին ամուր բերդ հաւանօրէն Ա.յրարատայ Բասէն գաւառի մէջ, որոյ տեղն անյայտ է։ Վազար Փարպեցի «ամուր բերդն Բասենոյ» կը կոչէ։ Պարսից Շապուհ զօրավարը Գաւ գիւղէն յԱրքաղ (Թորթում) գացած ժամանակ, Ներսէհ և Հրահատ կամաւորական իշխանաց կանայքը թողուց այս բերդիս մէջ, յանձնելով զանոնք Բզդատ–Վշնասպ անուն բերդակալին։

ԲՈՂԵԱՆ կամ ԲՈՒՂԵԱՆ. — Հին գիւղ Սիւնեաց Հարանդ գաւառի։

ԲՈՂԻ. — Կը յիշուի Տուրուբերանի այժմեան Կինճ վիճակի մէջ։

ԲՈՂՆԵԱՑ կամ ԲՈՂՆԻՍ ԳԵՏ. — Գագաթաց Բողնոփար գաւառի մէջ, կ'անցնի Բողնոս գիւղի մէջէն։

ԲՈՂՆԻՍ կամ ԲՈՂՆԻՍ. — Ա.յս անուամբ երկու հայաբնակ գիւղեր կան Վրահայոց Բողնոփար գաւառի և կամ այժմեան Պօտչալու վիճակի մէջ։ Ա.յս գիւղերէն մին կը

կոչուի յատկապէս Բողնիս–Խաչէն կամ Մեծ Բողնիս. Տարահանիա դիպչէն հետու է 10 վերստ, կը գտնուի լեռներով պատած հովտի մը մէջ։ Ներկայիս ունի 91 տուն հայ բնակիչ, որոնք պահած են իրենց բարբառը և սրոց նախնիք Մելիք–Ադոյի ժամանակ գաղթած են Ղարաբաղի Խաչէն գաւառէն։ Գիւղիս արեւմտակողմը կայ Միոն անուամբ հին քարաշէն և կամարակապ եկեղեցի մը, որ ունի վրացերէն արձանագրութիւն. եկեղեցւոյ մէջէն հանած են մեծաւոհ կարասներ։ Մօտերը կը գտնուին 12 փոքր եկեղեցիներու աւերակներ։ Գիւղի հարաւային կողմը, անտառապատ բլրի մը լանջին վրայ կայ բնադարձակ քարաշէն Ծուղրուղաշէն կոչուած վանատան մը, պատուձեւ փոքրիկ կամուղիկով։ Թէ՛ եկեղեցւոյ արմերու և լուսամուտներու և թէ՛ կամարներու քանդակները շինուած են զարմանալի նրբութեամբ կատարելագործուած արհեստով։ Վանատանս շրջապատուած է պարսպով և խցերով, որոնք ասկր են։ Թէ՛ վերոյիշեալ Միոն եկեղեցին և թէ՛ այս՝ անկասկած Հայոց են, որովհետեւ հին ժամանակներր միայն հայ բնակիչներ են եղեր այս կողմերը և այդ պատճառով Յօմխէթ կոչուած է. իսկ վերջերը թերեւս վրացիք բնակելով այս տեղերը սիրեր են ժամանակաւորապէս այս եկեղեցիներուն։

Գիւղս այժմ ունի ծխական նորակառոյց քարաշէն եկեղեցի։ Ներկայս բնակիչք մինչ ցայժմ պահպաներ են իրենց նախնեաց բարքերնին. շրջապատուած լինելով Թուրքերէն, սակայն ունեն եղեր միշտ զէնքը ձեռին պաշտպանելու։ Բողնիսի նշանաւոր բերքն է բամբր գիւղիս։ Գիւղիս մօտ գտնուող Եկատարինֆելդ կամ Դաւեւան գերմանացի գաղթաշէնը, ապրեցութիւն ունեցեր է Բողնիսի բնակչաց վրայ, որով բոլոր իրենց տները շինած են ճաշակաւոր ձեւերով և շատերը նաեւ երկյարկեանի։ Հայերը Գերմանացիներէն սովորեր են նաեւ պղեղործութիւն գինեգործութիւն. իսկ Գերմանացիք ալ փոխադարձաբար Հայերէն սովորած են հագգործութիւն։ Գիւղիս օդը թէեւ վատառողջ է, բայց պատուական ջրոյ և գինւոյ գործածութեամբ ժողովուրդը չի տկաուիր, մանաւանդ որ ամառն ալ կը գնան լեռնային հովասուն տեղեր։ Բողնիսի հարաւակողմը գաշտի մէջ կայ մեծ հնձան մը, ուրոյ մասին աւանդութիւնը կ'ըսէ, թէ այնքան գինի կը քամէր, որ ասրի մը ձմեռ առեն չըներս առած ժամանակ անոր ակրը եօթն օր գինով բանեցուցեր է ջրադացր։ Գիւղիս գերեզմանատան մէջ կայ ուրիշ եկեղեցի մը կարմրատ անունով, որ ունի փոքրիկ գանգակատուն։ Գիւղէս երկու վերստ հետու կայ փոքրիկ եկեղեցի մը Ս. Կատարատար անուամբ, ուր Համրարձման ատենն ամեն կ'երթան գիւղացիք մատաղով և կը խնդրեն անոր պաշտպանութիւնը իրենց անդերը և այգիները բնական պատահարներէ գերծ պահելու։ Հայրենիք է գիւղս մեր միապան և մանկավարժական գրականութեան մէջ յայտնի Պ. Դաւթեան Աղայեանցի։ Համատուն Բողնիս գեաղ կ'անցնի գիւղի միջով, որ ունի համեղ ձուկն։ Բողնիսէն երեք վերստ հեռու բլրի սատրատր կայ սրբատաշ քարուկիր վանք մը Նախշուն վանք անուամբ։ Իսկ գիւղս արեւելակողմը գարձեալ երեք վերստ հեռաւորութեամբ Եղնոյ քաղաք բլրան գագաթը կայ Ս. Գէորգ անուամբ մատուռ մը, որ ուխտատեղի է մանաւանդ մանկամատներու համար։

Մեծ Բողնիսէն հինգ վերստ հետու կը գտնուի Փոքր Բողնիս, ուր բարձր բլրի վրայ կայ Ս. Գէորգայ հռչակաւոր քարաշէն ուխտատեղի մը, ուր կը գիմեն բազմաթիւ ուխտաւորներ և յատկապէս Նայիմբեր 10ին։ Եկեղեցւոյ հարաւային և արեւելեան կողմերը կան ուխտաւորաց համար սենեակներ։ Այս տեղ կան նաեւ տապանաքարեր Մելիք–Ադոյի ժամանակէն։ Ուխտատեղւոյս հիւսիսակողմը բլրի սատրատր շինուած է փոքր Բողնիս գիւղը, սակաւաթիւ հայ և վրացի բնակիչներով։ Գիւղիս անունը չկարդացանք գտնել այժմեան վիճակացոյց և աշխարհացոյց տախտակաց մէջ, բնդհակառակն գտանք Բողնիս–Խաչէնի հիւսիսային կողմը Բողնիս – Ռեփեւեկի այրագարձակ գիւղը 455 տուն բնակչօք։ — Բողնիսեցւոց մէջ մինչև ցայսօր կենդանի մնացած է հրաշակաւոր Մելիք–Ադոյի յիշատակը, տեղ մը ցոյց կու տան անոր տան աւերակը ու-

բիշ՝ տեղ մը անոր բացած առուն, որ տա-
կաւին կը կոչուի Մէյիք–Ագովի արիւ։ Ա.յս
առուով նա ոռոգել տուած է ընդարձակ տա-
րածութեամբ բամբակի արտեր։—Ջալալեանց,
բ 82–84։ Աղձագանգ, գ. 42։

ԲՈՂՆՈՒՏ. — Հայարնակ գիւղ Աղձնեաց
Աղնաձոր (Բաղէշ) գաւառի այժմեան Մօա-
կան գաւառակի մէջ. ունի 15 տուն բնա-
կիչ։

ԲՈՂՆՈՓՈՐ կամ ԲՈՂՆԻՒ. — Գաւգարաց
կամ վրաստանյ գաւառներէն մին։ Դժուար
է որոշել թէ Գաւգարաց հին գաւառներէն
որուն կը համապատասխանէ այս նոր ա-
նուամբ գաւառ։ Գաւառիս երկիրը արգա-
ւանդ է, ունի խնաւեղուփ անտառներ, ծաղ-
կազարդ լեռներ, անուշահամ և կարկաչա-
հոս ապրիւրներ, այգիներ և պարտէզներ։
Ի հնումն ունէր նաև հոյակապ վէնաստան-
ներ և մատուռներ, սակայն բերդեր և բաղ-
մամարդ գիւղեր, որոց մեծամասնութիւնն
այժմ ամայի և աւերակ տեսք ցիւղի մէջ
կը գտնուի։

ԲՈՂՈՆ ԱՄՐՈՑ. — Պրոկոպիոս կը յիշէ
ամրոցս Թէոդոսուպոլսի մօտ։

ԲՈՂՈՏԻ ՋՈՒՐ. Տես ԾՂՈՒԿ։

ԲՈՂՐԽԱՆ. — Մար Աբրցախի վարանդա
գաւառի մէջ։

ԲՈՂՐԽԱՆԻ ՎԱՆՔ. — Վանքս կը գտնուի
Աբրցախի վարանդա գաւառի մէջ, համանուն
սարի հարաւ արեւելեան կողմը երկնցող
ձորակի մը ձախակողմը։ Եկեղեցին կառու-
ցուած է անառաշ կամիտպոյն քարով. ունի
մի մեծ և մի փոքր խորան, մի գուռն, երեք լու-
սամուտ և երկու խորհրդարան։ Վանքս շրջա-
պատուած է պարսպով, որուն հարաւային
և արեւմտեան կողմերը ներքնստս շինուած
են բազմաթիւ խցեր. անկաս կը մնայ միայն
վանահօր սենեակը, մնացեալը բոլոր կիս-
աւեր են։ Անտառապատ է վանքիս շուրջն և
ունի պատուական ջուր և մաքուր օդ։ Աբ-
ցախ, 109։ Վարանդա, 50–51։

ԲՈՑԼՔ. — Գիւղ Բարձր Հայոց Դեր-
ջան գաւառի մէջ։

ԲՈՇԱՏ. — Գիւղ Տիգրանակերտի (Ամի-
վան գաւառ) չորրորդ առաջնորդական թեմի.
ունի 20 տուն հայ բնակիչ։

ԲՈՇԻՒՆՑ ՎԱՆՔ. Տես ԽԱՉ (Ս.)։

ԲՈՍՏ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ։

ԲՈՎԱՋՈՐ. — Կը գտնուի Բողնոփոր (Գա-
գարք) գաւառի մէջ։ — Ա.յս անուամբ ձոր
և կամուրջ կը յիշուին Հոսոմոսի վանաց
արձանագրութեանց մէջ։

ԲՈՐ կամ ՓՈՒ. — Գիւղ Միւնեաց Վայոց
ձոր գաւառի մէջ, որ կը յիշուի նաև Սիւ-
նեաց եկեղեցւոյ հարկաւորաց ցուցակի մէջ։
Ինչպէս կ'երեւի, ի հնումն մեծ գիւղ է եղեր.
իսկ այժմ ունի 50 մոխ աւելի Պարսից
բամնէն գաղթող հայեր և սակաւաթիւ այլ-
ազգիներ։ Քաջբերունեաց տեսած է հոս ԺԳ
և ԺԴ դարուց վերաբերող տապանաքարեր։
Բոլոր տահմանները գեղեցիկ և արգաւանդ
են։

ԲՈՐԻ. — Կը յիշուի Բողնոփոր (Գա-
գարք) գաւառի մէջ։

ԲՈՐԿԱ կամ ԲԵՐԿԱ. — Բաբերդի հիւսի-
սային կողմի գիւղերէն մին։

ԲՈՐՈՏԱՆ կամ ԲՈՐՈՐՆԱՑ ԲԵՐԴ. — Սիւ-
նեաց աշխարհի հին բերդերէն մին։

ԲՈՐՏԻ. — Ա.յս անուամբ Ներքին և Վե-
րին երկու գիւղեր կը յիշուին Միւնեաց Ծղուկ
գաւառի մէջ։

ԲՈՑԻԿ. — Լետ Ա.յրարատայ Հաւունեաց
գաւառի մէջ։

ԲՈՒԱՆ. — Հայարնակ գիւղ Մոկաց աշ-
խարհի Մոկք Ձառանձնաի (Մամրատանք) գա-
ւառի մէջ։ Ունի Ս. Գէորգ անուամբ եկե-
ղեցի մը։

ԲՈՒԻ. Տես ԲՈՒԹ։

ԲՈՒԻՈՒՆԻՔ. Տես ԲՈՒՈՒՆԻՔ։

ԲՈՒԹ կամ ԲՈՒԻ. — Գիւղ Վասպուրա-
կանի Բոզունիք գաւառի մէջ, որոյ բնակիչք
այժմ այլազգի են բացի մէկ հայ տնէ։
Գիւղիս մօտ է Բուխայ Ս. Աստուածածնին
կոչուած հինաւուրց վանքը։ Վանացս արեւ-
ելեան հիւսիսային կողմն են Շիւնակաւ լեռ-
ները, հիւսիսային կողմը Կառուի ձոր, ա-
րեւմտակողմը Մանկանիզ լեռ և արեւելա-
կողմը Ս. Սարգիս լեռը։ Կ'ասանդուի թէ
վանքս շինուած է Ս. Թադէոս և Բարթու-
ղիմէոս առաքելոց օրով։ Կառուցուած է
խիստ հաստատուն, ամրաշէն հիմերով և
պարիսպներով, որոց մէջ կը գտնուին գեղեց-
կայարմար պահարաններ, յորս անընշան մաս
մը քայքայած է վերի կողմերէն, անհետա-

մեալուն պատճառաւ։ Վանքը այժմ ամայացած է, սենեակներէն ամենք փլփլած և ամենք կիսակործան։ Ունի բաւական թիւով խաչքարեր, բայց արձանագրութիւնը կը պակսին, եղածներն ալ անընթեռնլի դարձած են։ Բուխայ վանաց արեւելակողմը երկու քարընկէց հեռու կը գտնուին հայկական գերեզմանաքարեր. իսկ արեւմտակողմը մէկ քարընկէց հեռու լերան սառոյցէն կը բղխէ ահագին քանակութեամբ պաղուկան ջուր մը, որ կը բանեցնէ երկու ջրաղացներ։ Գարձեալ նոյն լերան վրայ կը տեսնուի խանութատուր քարով բլկէն շինուած բերդի մը աւերակ մնացորդքն. ինչպէս կը նշմարուի այդ բերդի շինութեան գործածած են գերեզմանատան քարեր։ Հրաշալի է տեղւոյս տեսարանն, օդն կենսատու և ջուրն անուշահամ։ — Նկարագրական Ռուսերուշրիւն, բ 35–38։

ԲՈՒԹԱԿ. — Գիւղ Ա.յրարատայ վիճին Բասեն գաւառի մէջ։

ԲՈՒԹԿՈՒՒ Ս. ԳԷՈՐԳ. — Հինաւուրց վանք Մոկաց աշխարհի, կ'ինկնայ Մոկը քաղաքէն շատ մաժիր հեռու դէպի Ուշտունեաց գաւառ, լերանց մէջ։ Իրրեւ ապաստանարան ուղեւորաց, ճանապարհի վրայ լինելով, շատ մեծ ծառայութիւններ կ'բնէ, ամառը անցորդները զովացնելով, արեւու առպէն, և պաշտպանելով գիշերը ցրտէն։ Ձմեռը ճամբորդները շատ անգամ օրերով շարաժիներով խոր, կը պատահի, որ վանքը մնան, երկրին յաւուրական ձիւնի և ցրտի պատճառաւ։ Վանքի մէջ վաղեմի սովորութիւն կայ աքաղաղ մը պահելու. ձմեռը մինչև այդ աքաղաղը չկանչէ, ճամբորդները չեն համարձակիր ճամբայ ելնելու, և մեծ հաւատք գոյացեր է երկրի ժողովրդեան մէջ, որ եթէ առանց աքաղաղի ձայնելուն ճամբորդեն, անպատճառ ձիւնի և բուքի կը բռնուին։ Բերդերն ալ շատ մեծ հաւատք կ'ընծայեն այս վանքին, և չեն փութար վանքի ապրանաց, ոչ ալ ոչխարներուն, որք ազատ համարձակ լեռներն կ'արածին։ Այս բանք Հայաստանի մէջ առած է դարձեր, երբ գիւղի մը ոչխարը ամբողջ տարին անփառ կը մնայ թալանելէ յափշտակութենէ, «Բուխիկ մալ է դարձել» կ'ըսեն, և որպէս զի իրենց ոչխարն ու անասուններըը ազատ լինեն այս վտանգութիւններէն, գիւղն տարի ընթրական պարարտ մը կ'զգան, գրեթէ ամէն տուն, բան կարողութեան ուղ, գառ կամ հորթ մը նուէր տալ վանքին, Ս. Գէորգի պաշտպանութիւնն հրաւիրելով իրենց անասնոց վրայ։

Ինչպէս որ Ս. Սարգիս գօրավարն ցամաքի վրայ տարապահաս կը գտնուին գիւղացիք, Ս. Գէորգ գօրավարն ալ ջրերու վրայ պաշտպան տուրք կ'ընդունին։ Ձանցի նաւավարներք երբ փոխորիկ մ'ունենան, Բուխիկու Ս. Գէորգը օգնութիւնն կը կանչեն, ու նաւի մէջ գտնուող ամէն մէկին յանուն Բուխիկուն նուէր կը հաւաքեն։ Վանքը հովւապետ Աղթամարայ իշխանութենան ենթարկուած է։ Հայոց, Թրքաց, Քրդաց, Ասորոց, Եզիտիներու, նաև շատ Ալիւրկիներու մէջ ժողովարարներ ունի այս վանքի վանապանը, որ Բուխիկապան կ'ըսուի։ Աղթամարէն 130 ոսկիի կը ծախուի այս վանքի բոլոր նուէրներու շահաբերութիւնն, ու այդ մենաշնորհն ընդունող աշխարհականը կը լինի վանքի բացարձակ տէր, Բուխիկապան։ Վանքը կրօնական վանահայր չունի. Բուխիկապանը կը պահէ վանքը և կը մշակէ վանքի բաւական ընդարձակ արտերը։ — Ալեւեցք, 1143։

ԲՈՒԹՆԱ. — Բամնենոյ գաւառներէն մին, որուն գլխաւոր քաղաքն է Ֆօքշան։ Թէ՛ քաղաքի և թէ գեղական գիւղերու մէջ ցրուած Հայոց թիւն, 1884ին պատրաստուած վիճակագրի մը համեմատ, կը հասնի 1100 հոգւոյ։

ԲՈՒԹՈՒԱՆ ԳԱՒԱՌ. — Ե գաւառ մէջ այս անուամբ կը յիշուի Ա.յրարատայ Նիգ գաւառի արեւելեան մասը։

ԲՈՒԹՈՒՆԻՔ. — Ա.յսպէս ևս գրուած կը գտնենք Վասպուրականի հին Բաժունիք գաւառն։ Տես ԲԱԺՈՒՆԻՔ։

ԲՈՒԻԿ. — Ա.յս անուամբ կրկին Վերին և Ստորին գիւղեր կան Ա.յրարատայ Արշարունեաց (Կաղզուան) գաւառի մէջ։ Վերին Բուիկ հայաբնակ է, ունի 441 բնակիչ, բաժնուած 51 տան. իսկ Ստորին կամ Սուֆլա Բուիկ ունի 67 տուն քուրդ բնակիչ։

ԲՈՒԼԱՂ-ԱՅՏԻՆ. — Գիւղ Աղուանից Շաքէ գաւառի մէջ։ Ունի 50 տուն հայ բնա-

կիչ, որոնց նախնիք գաղթած են Խաչէն և Ջրաբերդ գաւառներէն։ Եկեղեցին նոսրաթած է Ս. Աստուածածնի։

ԲՈՒԼԼԵՆՑ. — Գիւղ Մոկաց աշխարհի մէջ. ունի 30 տուն հայ բնակիչ և Ս. Գէորգ եկեղեցի մը։

ԲՈՒԼՈՒԽ. — Թորխումի (Բարձր Հայք) գիւղերէն մին։

ԲՈՒԽԱ կամ ԲՈՒԱ. — Տայոց աշխարհի հին գաւառներէն մին։


ԲՈՒԽԲՈՒՏ, ԲԻԽՈՐՈՏ կամ ԲՈՒՀԲՈՒՏ. — Հայտնուն՝ բայց այժմ թախտաբնակ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ։ Տես ԱՂԱԽ։

ԲՈՒՍ կամ ԲՈՍ. — Հին և մեծ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի Բաստաճար (Ղազլիա) վիճակի մէջ, համանուն գետակի եզերքը։ Ունի 633 հայ բնակիչ, բաժնուած 52 տան և 630 թախտար։ Գիւղս ունի հին և ընդ 274 բնակիչ, բաժնուած 35 տան։ — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ նոյնպէս Գուգարաց այժմեան Թրխալէմի վիճակի մէջ, 29 տուն հայ բնակչօք։

ԲՈՒՌՈՍ կամ ԱՌՈՍ. — Փայտակարանի հին գաւառներէն մին։

ԲՈՒՍԻԱՆ. — Այլազգիներէ գիւղ Այրարատայ Շարուր գաւառի մէջ։

ԲՈՒՍՏ կամ ԲՈՍՏ. — Հին և մեծ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի Բաստաճար (Ղազլիա) վիճակի մէջ, համանուն գետակի եզերքը։ Ունի 633 հայ բնակիչ, բաժնուած 52 տան և 630 թախտար։ Գիւղս ունի հին և



199. Բուստ. — Ս. Առաքելոց եկեղեցի։

ԲՈՒՆ. — Գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ, յորում ժամանակաւ կը նստէին քուրդ բէկեր։

ԲՈՒՇԱԳ. — Գետակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ. ձախակողմեան օժանդակ Աբիա գետոյն։

ԲՈՒՇԵՐԻԿ. — Քիշատակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ գաւառ։

ԲՈՒՒԿԱՆՈՍ. — Հրաբղխային լեռ Կիլիկիոյ մէջ։

ԲՈՒՒՆԱՇԵՆՑ. — Հայաբնակ գիւղ Գաւգաթայ Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ։ Ունի 274 բնակիչ, բաժնուած 35 տան։ — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ նոյնպէս Գուգարաց այժմեան Թրխալէմի վիճակի մէջ, 29 տուն հայ բնակչօք։

ԲՈՒՒՈՍ կամ ԱՌՈՍ. — Փայտակարանի հին գաւառներէն մին։

ԲՈՒՍԻԱՆ. — Այլազգիներէ գիւղ Այրարատայ Շարուր գաւառի մէջ։

ԲՈՒՍՏ կամ ԲՈՍՏ. — Հին և մեծ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի Բաստաճար (Ղազլիա) վիճակի մէջ, համանուն գետակի եզերքը։ Ունի 633 հայ բնակիչ, բաժնուած 52 տան և 630 թախտար։ Գիւղս ունի հին և կեղեցի մը և վանք։ Այս գիւղէս էր Յակոբ վարդապետը աշակերտն Ցովհ. Որոտնեցւոյ և Գր. Տաթեւացւոյ. որուն խնդրանքով Գր. Տաթեւացին գրեց փոքր հարցմանց գիրքը։ Ի՛ր գարու սկիզբը (1708ին) կը յիշուին Բաստացի ուրն Տէր Դաւիթ, որ Աղուլեցի Տէր Փիլիպպոսի և այլոց հետ ուխտի կ'երթայր յԵրուսաղէմ։ Աբրահամ կաթողիկոսը գիւղիս անուներ կը գրէ Պուստ. կարգանք իւր հետեւեալ գովասանական տողերը. «Պուստ մեծ գիւղն, յորում կայր պատուական եկեղեցին. և յետ ուխտելոյ յեկեղե-

ցին, եւ ի Վանքն ազատանման ապիտա-
սարան, ի վայելուչ բարձրանիստ տեղի, լի
պարտիզօք, ջրերի և բարեբեր հողով և
պարզ և առողջարար օդով. զուարճացաւ
սիրտ իմ, մանաւանդ զաշխատասիրութիւն ճա-
նապարհին. այլ և առաջնորդ ՏԷր Պետրոս
վարդապետն այր խոհեմ և բարեբարոյ. միա-
բանք՝ սիրով և հնազանդ. և մեծապէ անդ
երկու օր»։ Այնմանօրիկ է ասա նկարագրուած
վանքի ներկայ վիճակը։ Բուսած անուանի
պարտիզաց բերքերէն իրենց տեսակին մէջ
ընտրելագոյն են ընկուզը և խնձորը։ —
Սիսական, 344։

ԲՈՒՐԱՆԴ.— Գիւղ Մակաց աշխարհի մէջ.
բնակիչք Հայք և Քուրդք խառն։ Հայք ու-
նին Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԲՈՒՐԴ. — Գիւղ Աղշաբօվայի, Շապին
Գարահիսարու նահանգի մէջ։

ԲՈՒՐԱՒՏ. — Գիւղ Ալբրատապ Գարե-
դէնք գաւառի մէջ։

ԲՈՒՐՁԱՅ. — Աւերակ գիւղ Ալբրատապ
Ոստան գաւառի մէջ։

ԲՈՒՐՍԱԻԼ. — կը յիշուի հին Զըլպըր
(Կարս) վիճակի մէջ։

ԲՈՒՐՎԻԼ. — Գիւղ կը յիշէ Վախուշտ,
Իրակաճորի մէջ։

ԲՋԱՆԻՄ. — Ալբրատապ Աղահէճը գա-
ւառի մէջ, այլազգաբնակ մեծ գիւղ։

ԲՋՆԱԳ, կամ ԲԻՋԵՆԱԿ. — Լճա Ախլոնաց
ձահուկ գաւառի հիւսիս արեւելեան կողմը։
Լերանս հարաւային կողմը կը գտնուի
Քնջալ գիւղն։

ԲՋՆԻ կամ ԲՃՆԻ. — Նշանաւոր և հին
գիւղ Ալբրատապ Նիգ գաւառի արեւելեան
մասի մէջ, Հրազդան գետոյն աջակողմը։
Հինգերորդ գարու երրորդ քառորդի մէջ կը
յիշուի գիւղս և իւր ամուր բերդն։ Ակիկ
էր որբակեաց Աթիկ քահանայն, որ հաւատոյ
պաշտպանութեան համար վահան Մամի-
կոնեանի հետ միաբանողներէ երկուքն առաւ։
Պահլաւունեաց պայազատութեան ժամանակ,
որոնց ատեանն եղաւ, խիստ բարգաւաճե-
ցաւ Բջնի, այնպէս որ ի գարէն վերջը հա-
կող պատմիչք, քաղաք և բերդաքաղաք
կը կոչեն զայն. ի՛Ա գարու սկիզբն ալ հ-
պիսկոպոսանիստ եղաւ, ինչպէս կը յայտնէ հ-
կեղեցւոյն արձանագրութիւնը։ — Պահլա-
ւունեաց ատենն ատա կը յիշուի ի գարու
առաջին կամ երկրորդ քառորդի մէջ. Դեղմը-
կաց մինչեւ Բջնիի սահմանները յարձակած
ժամանակ, քաջն Վասակ՝ (Գր. Մագխաս-
բոսի հայրը) ամրոցին ակռը, եւլաւ իւր
գնդովը վանից Թշնամին, բայց ինքն ալ
սպանուեցաւ Սիրիսլիի մէջ։ Այս դէպքը
մանրամասն կը պատմէ Մատթ. Ուռհայե-
ցին։ Փիլ տարիներ վերջ Վասակայ որդին
Թամատաւէր Գրիգոր Մագիստրոսը, վերջ-
նոյն Գագկայ Թագաւորութեան ժամանակ
1043 թուին, նոյնպէս քաջութեամբ պա-
տերազմեցաւ ասպատակ Թուրքաց դէմ։ —
Մեծահռչակ և հանճարաշունչ Մագիստրոսս,
որ յատկապէս Բջնեցի կը կոչուի, կառու-
ցանել տուաւ Բջնիի մեծ և հռչակաւոր եկե-
ղեցին, նուիրուած Ս. Աստուածածնի, որ
և մինչեւ ցարդ կանգուն է։ Երկայնութիւնն
է, ըստ Շահխաթունեանի, 21 քայլ և լայ-
նութիւնն 17. անոնք է և համարներու
վրայ բարձրացած է գեղատեսիլ կաթուղի-
կէն։ Մեղմոյ երկու կողմերն կան ատան-
պատուներ. արեւմտեան ատաղ գուռ խցուած
էր ի յետոյ և կը գործածուէր Հարաւայիներ,
որուն մօտ պրէչն արձանագրուած է շինու-
թեան յիշատակարանը, հայկական ՆՉ (=
1031) թուականաւ։

Բջնիի եպիսկոպոսական թեմն ի սկզբան կը
տարածուէր արեւելքէն Գեղամայ ծովէն մին-
չեւ Ախուրեան գետը և հիւսիսէն Գուգարաց
սահմաններէն մինչեւ բնիկ Բջնի վիճակին
հարաւային ծայրը, բայց յետոյ այս կող-
մէն գետ ափի տարածեցաւ։ Ի՛Բ գարէն
սկսեալ համարուած է չորս գլխաւոր ամեռ-
ներէն մին, որոց միաբանութիւնը հարիւ-
ւոր էր կաթողիկոսի բնակութեան համար։
— Պետրոս Գետադարձը որ Յովհ. Սմբա-
տայ հաւանութեամբ հաստատեց այս ամեռ-
որ, քիչ վերջը (1035ին) նոյն Թագաւորէն
մեծապէս հայրապետական ամեռն, տարի
մը բնակեցաւ Բջնիի մէջ՝ հիւրընկալուելով
իր մտերիմ Մագիստրոսէն։ Մագիստրոս
երկար ժամանակ չվայլեց ամուր բերդաքա-
ղաքս և իւրաշէն պայծառ եկեղեցին, վասն
զի Բագրատունեաց Թագաւորութեան վեր-
նալու միջոց, ինքն ալ գնաց (1045ին)
Յունաց Թագաւորին դիմաց և անոր յանձ-

նաց Բջնիի բանաձիները և բոլոր իր հայրենի ժառանգութիները. այս գործով ընդունելցաւ մագիստրոսութեան պատիւ և իրեն բնակութեան տեղ, գիւղեր և քաղաքներ Միջագետաց սահմանաց մէջ։ — Կրնանք բսել թէ հազիւ կէս դար փայլուն վիճակ ունեցաւ Բջնի. այնուհետեւ դար ու կէս մինչև ԺԴ դարու սկիզբը յիշատակութեան մը չենք հանդիպիր։ Առաքինեքն և նորոգող մեծն Զաքարիա և իր իւանէ եղբայրը 1204ին Բջնին այլազգեաց ձեռքէն առին։ Անոնց իշխանութեան օրով, ինչպէս կը ցուցնէ 1209 թուականաւ արձանագրութիւն մը, վահան անունով մէկը կը կառուցանէ Իշխանաւանից մեծ եկեղեցին և կը նորոգէ Բջնիի Ս. Աստուածածնի եկեղեցին։ Մինչև ԺԴ դարուն կէսէն անդին կը գտնուին Զաքարեանց տոհմի Բջնիի ժառանգողաց յիշատակներն։ Մեծին Զաքարիայի Շահանշահ որդւոյն օրով, 1251 թուին Բջնիի երկու եպիսկոպոսաց, տաճարի հարաւային դրան վրայ կ'արձանագրեն, կոստանդին կաթողիկոսի հրամանը, նկատմամբ օրինաւոր ձեռնադրութեան։ ԺԴ դարու վերջերը իւանէի թոռնորդին Զաքարէ, տպահարկ բրաւ Բջնին, իր հրամանը արձանագրելով վերոյիշեալ արձանագրութենէն վեր։ Ձայնդր դարուն սկիզբը (1303—1306) քանի մը նուիրատուներ, զրած են իրենց արձանագրութիւնը տաճարին ներսը հարաւային որմոյն վրայ։ Ամենէն վերջը 1358ին, տոհմին պայազատը Ամարէկ Ամիր Զաղայ, վերաշին առեր է Բջնին այլազգեաց ձեռքէն, որոնք շատ վնասներ հասուցեր են քաղաքին և բրիստոնէից. ինչպէս երկարօրէն արձանագրուած է եկեղեցւոյ հարաւային կողմի պատուհանին ներքի։ Նոյնը արձանագրուած է նաև, քիչ փոփոխութեամբ, հիւսիսային որմոյն վրայ։

Ս. Աստուածածնի մեծ եկեղեցիէն զատ կան նաև ուրիշ փոքրիկ աւերակներ, որոց մէջ արձանագրութիւնք չեն նշմարուիր. բայց հարաւային որմոյն և դրան մօտ կայ փոքրիկ մատուռ մը, որ ունի 1272 թուականաւ անվերծանելի արձանագրութիւն մը։ — Մեծ եկեղեցին շրջապատեալ է ընդարձակ պարսպով, որուն մէջ արեւելեան կողմն էր քաղքացւոց եպիսկոպոսարանը, զոր քարակերտ շինութիւններ արեւմտեան կողմէ՝ քիչ շատ աւերակ, և մեծ դուռ մը հարաւային կողմէ, եկեղեցւոյ հարաւային դրան դիմաց։ Եկեղեցւոյ արեւելակողմը կանգնած կան չորս մեծամեծ պատուանդանաւոր խաչվէմներ, յայտնի չէ թէ որոնց յիշատակին են, վասն զի միայն արձանագրութիւնը միայն քիչ մը կարդացուեցաւ ու 1249 թուականը։

Աշխարհաւեր Լենկթեմուրայ հարուածոց ևս հանդիպեցաւ Բջնի 1387 թուականին, և նոյն միջոց սպառուեցաւ խնամատուն, պահանկան և ողորմած եպիսկոպոսն Տէր Վանական։ — Գրեթէ 120 տարի վերջ կը յիշուի Բջնի աւետարանի մը յիշատակարանին մէջ, յորում աւետիկ դպեակ կոչուած է։ Իսկ այնուհետեւ քաղաքս աւերակ գտնուելով, քանի մը գարու միջոց անյիշատակ կը մնայ, և գրեթէ տխուր վիճակի մէջ կը յիշուի ԺԷ գարու սկիզբը Ձէլալեանց ապստամբութեանց ժամանակ։ Բայց նոյն գարու կէսէն առաջ սկսաւ Բջնի գարձեալ շէննալ, Տէր Փիլիպոս առաջնորդութեան օրով, որուն՝ 1634ին Մովսէս կաթողիկոսը յանձնած էր Բջնիի վանքը։ Այս միջոցին նորոգուեցաւ եկեղեցւոյ տանիքը Ջուղայեցի Թօջայ Պետրոսի ծախքովը. շինեցին նաև ձիթհանքը և ջրաղացը։ Փիլիպպոսի աշակերտն և յաջորդն Մովսէս վարդապետ, վանաց շուրջը պարիսպ շինել տուաւ և բուրգերով ամրացուց։ — Նոյն ժամանակները կը հանդիպի գաղթական Շարտեն երեւելի ուղեւորին գալուստն ի Բջնի, որ 1673 տարւոյ մարտ 6ին դիշերօթեայ վանքի մէջ, որուն նկարագիրն գովաբանութեամբ հրատարակեց յետոյ իր ուղեւորութեան գրոց Բ հատորին մէջ։ Նոյնպէս գովելով կը յիշէ Բջնի Թոռանքիոր բուսաբանը, որ այցելեց տեղւոյս 1700 տարւոյն յունիս 31ին։

Մինչև ԺԲ գարու կէսը կը յիշուին Բջնիի վանաց առաջնորդներ, վասն զի հին եպիսկոպոսարանը վանքի փոխած էին. նաև իր օրերը (1763—80 տարիները) իրեն չէն՝ կը յիշէ Բջնի Միքէոն կաթողիկոս, աւերեալ եկեղեցւոյ տեղւոյն նորոգութեամբ, յիսունի չափ դիզեր կոտայք և վարաժնունք գաւառներու, կոտայք գաւառի մէջ գնելով նաև

Բջնին և ուրիշ դիզիկը, որ Նիգ գաւառին յատուկ են։ Ը. 53 տարուան (1688–1741) ընթացքի մէջ կը յիշէ քանի մը նախրատուներ (շաները Բջնեցի) եկեղեցուն և վանաց, որոնց իւրաքանչիւրի կնքով հաստատուած յեակարներ և մարշակներ, պարակիրէն կամ հայիրէն գրով կը պահուէին էջմիածնի պիւանի մէջ։ Այդ ժամանակէն վերջ կը խօսի թէ գաղրած է վանքի փոքր գիրքերուր մասուն մը առանց արձանագրութեան։ — Այրարատ, 270–276։ Շահխաթունեանց, Բ 180–188։ Գեղարքունի, 316–334։ Ը. այլն։

ԲՈՒԱԲԵՐԻ կամ ԲՐԱԲԵՐԻ. — Գիւղ Մեծամորայ, 37 տուն հայ և 34 տուն խուրք բնակչօք։

ԲՈՒԱԹՈՒՄԲ. — Այս անուամբ տեղ մը կայ Մեհենաց Բազրի գաւառի մէջ։



200· Շարաէմ, ծն. ի Փարիզ 1643, † ի Լոնտրա 1713։

ՔԻ միաբանութիւնն և մեծ եկեղեցին ունեցեր է անհնամ մինչև վերջին ժամանակները։ — Բջնիի վանաց եպիսկոպոսներէն և առաջնորդներէն արձանագրութեանց և պրոց մէջ յանօթի են 19 հոգի։ Այժմ Բջնի գիւղն ունի մօտ 700 հոգի հայ բնակիչ, բաժնուած 94 տան և 76 տուն այլազգի։ — Գիւղիս ամրոցի արեւելակողմը երկնցած է լերան ասա մը, յորում կան գերեզմանատներ,

ԲՈՒԳՆԻՔ կամ ԲՐԳՆԻԿ. — Անբաւական աբեւելակողմը ժամ ու կէս հեռու կը գտնուի գիւղս, որոյ բնակիչք բոլոր կաթողիկէ Հայեր են, և կը հաշուին 1300 հոգի։ Եկեղեցին նախրեալ Ս. Աստգոի, նորաշէն է մեծ և քարակերտ, 20 մետր երկայնութեամբ և 14 լայնութեամբ։ Հետաքննին ազգային ուսումնասէրմը, փափաքելով գիտնալ գիւղիս նախկին պատմութիւնն, գաւ. 1631ին գրուած Ս. Ղևոնդի

վանաց գրքի մը յիշատակարանին մէջ հետեւեալ տողերը. «Բագրատունիք, այն է Բուգնիք, ի սմանէ ասի յամանց թէ էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ ասա առաբին հիմնարկութիւն, և էին տունք իրր եօթն. և յետոյ ի գոհկաց գարձուցեալ զԲագրատունիքն Բոգնիք. և է իրր ժամու և կիսով հեռի ի քաղաքէ Սիրաւոիոյ. և այժմ են ի սմա տունք իրրև հնգետասան. ի թուին Հայոց ՌՁ»։ Բագրատունեաց տեղւոյն մաս մը մեր աշխարհի վրայով մանց միջոց եկած հաստատուած են այս տեղ. ինչպէս նաև խոռխոռունեաց ցեղէն ալ բնակած են Սիրաւոիայէն 9 ժամ հեռու, ջրարբի և զուարճալի գաշտի վրայ, իրենց անուամբ գիւղն տալով խուռխոն անուն։ Բոգնիքի մէջ կը լսուի տակաւին խոռխոն մականունը։ Գարձեալ կարդայ Պինկէօլ լեռանց կոզմերէն եկողները, բնակութիւն հաստատեցին Սիրաւոիայէն երեք ժամ հեռու արեւելեան հարաւային կողմը, աղահանքներու մօտ, և այն տեղը Պինկէօլ կը կոչուի մինչև ցայժմ։ 1827 թուին նամակագիր մը կ'լսէ թէ նոյն ուսումնասէր անձը գտեր է Սիրաւոիոյ մեծ վիմադպրին մէջ գիւղիս անունը գրուած Պաթըուսի՝ որ Բոգնիքէն ուղիղ մօտ է Բագրատունիքի։ Բոգնիք գիւղի հնութեան վկայ է նաև ՉԺՉ (= 1267) թուականու խաչքար մը որ կը գտնուէր հին եկեղեցւոյ մէջ, և այժմ ապուցած են նոր եկեղեցւոյ արեւմտեան սրմին մէջ, բարձրը։ Եկեղեցւոյ բեմին առջեւ կճեայ վիմափոր շիրմի մէջ ամփոփած կը ծնան, 1708 տարւոյ մայիս 6ին նահատակուած ՏԷր Մկրտչէլ քահանայի ոսկերք, որ նախ թազուած էր հասարակաց գերեզմանատան մէջ, և եկեղեցւոյ շինութեան ժամանակ հոն փոխադրուեցաւ։ Բոգնիքի Արեւմտից բնակիչքն էին, Մեծին Մխիթարայ Աբբայի վանուց մէջ յիշուած երկու հազարեան կոչուած կուսանքն Մարգարիտ (Մանուէլ) և Թեւրեզիա (Մարիամ)։ — Բնակիչաց կէսը ջրբեպան են, բայց կառոյց ճանապարհ շինուելէ վերջ, սկսելով տալլեր գործածել, ջրհոսանները մեծ վնաս հասաւ. ծնացած մանն ալ երկրագործ են, բայց իրենց երկերը քիչ լինելով և հողը անբեր, շատ անգամ հազիւ իրենց ուտելու ցորեն կը հասնին։ Այս անյաջող հանգամանքներէն սոսկ պատճառներ կը դիմեն ի կոստանդնուպոլիս իրենց և ընտանեաց պարէնն ճարելու. ընդհանրապէս աշխատասէր լինելով ար և է կերպով իրենց ապրուստն կը գտնեն։ Բազմական ընդարձակ և նոր շէնք մ'է գիւղիս աղջկանց վարժարանը, կառուցուած եկեղեցւոյ մօտ, այս վարժարանը կը կառավարեն Հայազգի Աստրատ Ծղոխեան Փորք։ — Գիւղիս քիչ հեռու կան երկաթային աղբիւրներ, ուր կը յաճախեն բազմաթիւ Սիրաստացի բնակիչներ և կը բնակին վրաններու տակ յունիս և յուլիս ամիսներու մէջ։ — Տեղգր. Հայս. 64։

ԲՈՒԻ ԵՂՑԻ (ԵԿԵՂԵՑԻ).—Այսպէս կը կոչէ ժողովուրդը Արցախի Վարանդա գաւառի մէջ, Հացի գիւղէն դէպի արեւելք, սարի մը լանջին վրայ գտնուող հին հանդրստարանը, և երկու եկեղեցիները. հոն կան նաև երկու մատուռ և երեք բեմ։ Առաջին եկեղեցին կը գտնուի լերան գագաթը. շինուած է սպիտակ անատաշ քարով, անսիւն և կամարակապ, առանց գմբէթի։ Ունի նեղ ատաղ խորան մը և երկու խորհրդարան, որոնց գմբեթները գեղեցիկ զարդերով և խաչերով եղրափակուած են։ Եկեղեցիս արեւմտեան կողմէն կից ունի դասեր, և երկուքը միասին չափելով երկայնութիւնն է միայն 14,76 և լայնութիւնը միայն 8,20։ Մէջը կան բաւական թուով գերեզմաններ. արձանագրութեանց ծանօթ հնագոյն թուականն կը վերաբերի ԺԳ դարու։

Երկրորդ եկեղեցին վերոյիշեալ արեւմտեան կողմն է երեք միայն հեռաւորութեամբ. երկայնութիւնն է մ. 6,50 և լայնութիւնը մ. 4,18։ Արեւմտեան պատը գրեթէ ամբողջովին ծածկուած է խաչերով. միակ գրան շուրջը կան գեղեցիկ բարձրաքանդակներ. ինչպէս առաջին նոյնպէս և այս եկեղեցւոյ արձանագրութեանց մեծ մասը եղծուած են թէ՛ տապանաքարերու և թէ խաչարձաններու վրայէն։ Մատուռներն ևս միեծաւ մասամբ կանգուն են և ունին արձանագրութիւններ։ Երեք բեմերն կը գտնուին իրարմէ ոչ այնչափ հեռու. ունին գեղեցիկ խաչարձաններ և արձանագրութիւններ, կիսա-

եղջ վիճակի մէջ։ — Արցախ, 124–127։ Վարանդա, 47–48։

ԲՈՆԱԿԱՊԱՆ. — Հայանուն գիւղ Կարնոյ արեւմտեան ծայրը, ուղի Դերջան գաւառի մէջ։ Ունի 35–40 տուն բնակիչ, որոց լեզուն թէեւ թուրքերէն է, բայց բարուք, սովորութիւնովք և այլ յատկութիւնովք ամէնի Հայոց կը նմանին։

ԲՈՆԱԿՈՒԹ. — Հին և մեծ եկեղեցի մեր քաղաքաց գիւղ Միւնոյց Երգուկ (Պիսան) գաւառի, կ՚ինկնայ ընդարձակ հովտի մը մէջ, փոքրիկ վտակի մը մօտ։ Գիւղի միջով կը հոսեն առուակներ, որոնց ափերը անկուած են ուռենիներ։ Կանոնաւոր փողոցներ չկան, տները շինուած են ցեխէ և շրջապատուած են ցեխէ պարիսպներով։ Կան միայն քանի մը երկյարկանի տներ, որոնց մէջ նշանաւոր է Մելիք-Թանգեանները (Թանգեան) նախկին ապարանքը։ Գիւղի արեւելեան մասի մէջ կը գտնուի Ս. Գրիգոր եկեղեցին, որ ունի գմբէթաւոր գանգակատուն։ Վերջինս շիներ է մելիք Թանգի Բ, ուր և թաղուած են ինքը, իր կիները, որդին, Ղուկաս բէկը և մելիք Ադրէկը։ Եկեղեցւոյ գաւիթը կը գտնուի Հայոց ծխական գպրոցը։

Գիւղի արեւմտեան կողմը կը գտնուի հին եկեղեցւոյ մը աւերակ, զոր գիւղացիք կ՚ուղղուանեն, ըսելով թէ կայ ՈՒՆԻՒ թուականը՝ եկեղեցւոյ շինուղի Աստուածատուր վարպետի յիշատակարանը։ Եկեղեցւոյ մօտ կան երկու մամռանց մօտ տապանաքարեր, որոց միայն արձանագրութիւնը ունի ՉՀԵ (= 1326) թուականը։ Գիւղիս մօտ կայ նաև խաչեր կոչուած ուրիշ աւերակ եկեղեցի մը, քիչ մը նորոգուած, որուն մօտ կը տեսնուի գիւղատեղի և գերեզմանատուն։ — Բռնակոթէ դէպի հիւսիս 1 հազարամեայ հնոտ կայ բաւական խոր ձոր մը, Թակերի–ձոր կոչուած։ Բաղկացած է կարմիր հողէ և կարմիր ժայռէ. հոս փորուած կան 10–15 արհեստական այրեր, որ կը ներկայացնեն մեծ և փոքր սենեակներ, որոնց մասին Բռնակոթցիք աւանդութիւն մը չունին։ Գիւղիս բնակիչը բնիկներ են 2060 հոգի, բաժնուած 178 տան։ Կը պարապին երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ — Զանգեզուրի Գաւառ, Ա 75–76։

ԲՈՆԱՇԷՆ. — Գաւառս կ՚ինկնայ Տարօնի բերանի հին խոյի գաւառի արեւմտակողմը, Շատախու արեւելակողմը և Մշոյ գաշտին հարաւային կողմը։ Երկիրը ամ հատարակ լեռնային է և անդնդախոր ձորերով. ունի բազմաթիւ կաղնիի ծառեր, իսկ մշակութեան համար քիչ տեղ։ Գաւառիս մէջ նշանաւոր է հնուշէն Ադրէկայ վանքը, զոր նկարագրած ենք իր կարգին։ Բռնաշէնի գիւղերը սակաւաթիւ են ձորերու մէջ. գլխաւոր գիւղն կը կոչուի Բռնաշէն և ունի 100 տուն ազգի հայ բնակիչներ։

ԲՈՆԱՎԱՆ. — Այս անուամբ շահատան մը կը կարծուի թէ կար Միւնոյց մէջ։ Ութծայ Կոպիկ իշխանին վարազներակէ որդին, որ մկրտուած էր Վահանայ հետ և ուխտած սուրբ կրօնից համար պատերազմիլու ընդդէմ անօրինաց, իր ուխտի դէմ ընկերով, «երթեալ աւերէր գՇահաստանն Բռնավիժի։

ԲՈՒՆԻ. — Կը յիշուի Աստղոյ մէջ։

ԲՈՏԱՁՈՐ. — Միւնոյց Գոլթն գաւառի ձորահովիտներէն ընդարձակագոյնը և ամէնէն երկայնը։ Այսպէս կոչուած է Բուսոյ գիւղի անուամբ։ Այժմ ծանօթ է Գնդան կամ Կ՚ընան անուամբ։

ԲՐԱԲԵՐԴ. Տես ԲՈՒԱԲԵՐԴ։

ԲՐԱԹԻ. Ամառանոցի Հայոց գիւղ Զմշկածագու առաջնորդական թեմին մէջ։

ԲՐԱՋՈՒՐ կամ ԱՂԲՐԱՋՈՒՐ. — Գիւղ Արցախի Գաթրմանի գաւառի մէջ, Մխզիկ գիւղի հիւսիսային կողմը։ Բնակիչք ամբողջ Հայ են 33 տուն. ունին եկեղեցի մը Գաբրիէլ հրեշտակապետի անուամբ։ Գիւղիս հարաւային կողմը կայ կայծաքարի և սպիտակ քարի հանք։

ԲՐԱՍԻԲ. — Հայոց գիւղ Զմշկածագու առաջնորդական թեմի մէջ։ Ունի Ս. Աստուածածնին եկեղեցի մը։

ԲՐԳԱՇԷՆ. — Գիւղ Տարօնոց այժմեան Դերջին Գուլանքի գաւառակի մէջ. ունի 38 տուն հայ և 4 տուն քուրդ բնակիչներ։

ԲՐԴԱՀՈՆՋԻՆ կամ ԲՐԴԱՈՒՆՁԻՆ ԵՂՑԻՆ. — Արցախի վարանդա գաւառի մէջ, Քեօնդալանի աջ կողմը, Շիներ տանող ճամբուն վրայ կայ այս անուամբ հին եկեղեցի մը,

որոյ գագաթը կտրծանած է և շինութիւնք տեղ տեղ խախտած. հիւսիսային որմի վրայ կայ խաչքար մը, Խաչս Շաճուէից արձանագրութեամբ։ Լիկեցւոց արեւմտեան կողմը, բարբնկէց հետեւութեամբ, սենեակներու նման կայ քարուկիր հին շինութիւն։ Կը կարծուի թէ այս տեղ վանք եղած լինի, վասն զի եղէգ գիւղ լինէր, պէտք էին նշմարուիլ աւերակներ և գերեզմաններ։ — Արցախ, 90։

ԲՐԴԱՀՈՆՋԻՆ կամ ԲՐԴԱՈՒՆՋ ՂԱԼԱ. — Արցախի վարանդայ գաւառի մէջ, Ներքին բևեխան ասորատառ կը բռնէ ազգիս մը, որ հաւանականօրէն ժամանակաւ չուր կը մատուցանէր բերդին։ Այժմ բերդս ամբողջովին ծածկուած է խիտ անտառով։ — Արցախ, 134—135։ Վարագայ, 52—53։

ԲՐԴԱՋՈՐ. — Փոքրիկ գիւղ Գուգարաց աշխարհի այժմեան Պօլչալու վիճակի մէջ, շրջապատուած է անտառներով։ Բնակիչք կը հաշուին 132 հոգի, բաժնուած 10 տան. ամբողջ հայ են, որոնք հոչակուած են իրենց քաջութեամբ, սարսափ ձգելով նոյն իսկ աւազակներու վրայ։ Այր և կին, ծեր



201. Բօլու սար = Երկայն տաղ։

Թազակարպի արեւելեան կողմը կը գտնուի 3300 ոտնաչափ բարձրութեամբ առանձնացած սար մը, որոյ արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերը ահագին ժայռեր են, իսկ հիւսիսային կողմը սասանիկ գառ ի վայր։ Այս կողմն ձգուած է ժայռէ ժայռ կրկնապարիսպ, արտաքին պարիսպը ունի նաև բուրգեր։ Ահա այս է Բրդաւունջն, որ միայն մէկ դուռ ունի արեւելեան կողմէն։ Լերան գագաթը կը գտնուի միջնաբերդն, ուր կան բնակարաններու հետքեր։ Կը տեսնուին քանի մը այրեր և ջրի աւազաններ։ Բերդիս մէջ ազբիւր չկայ, միայն ա- և ազայ, Բրդաձորի բոլոր բնակիչները հրաժանակիր են և հարկաւոր եղած ժամանակ միահամուռ կը յարձակին իրենց հինամեայ վրայ։ Գիւղս հիմնած է Սանահնեցի Գիժ—Վէրան անուն կարիճ հայկազնը, որ Արգամեանները խաւարմներէն փախչելով ընտանեօք բնակութիւն կը հաստատէ Խոժոռնի և Իշ—Քիլիսէյի մէջ տեղ գտնուող անտառապատ ձորերէն միոյն մէջ։ Ցետոյ գիւղն կը կոչուի Բրդաձոր, իր բնակիչքը կ'ուճեցայ վեց սրտի։ Գիժ—Վէրան կ'ապրի 116 տարի և իր մահէն վերջ սրտիքը թէև կը բաժնուին, սակայն մէջերնին միշտ կը

տեղ համիրաշխութիւն։ — Ազձագանգ, Լ. 753։

ԲՐԻՈՆ կամ ԲՐԻՈՆԻ. Տես ԲՂԲՈՆ։

ԲՐԼԻԻ. — *Հայարնակ գիւղ Զմշկածագու առաջնորդական թեմի մէջ։ Ունի մօտ 30 տուն բնակիչ, և եկեղեցի մը՝ Ս. Գեորգ։*

ԲՐԻՏԻՍ. — *Այս անուամբ գիւղ մը կը յիշէ Աւաքել պատմիչ՝ Աղուանից մէջ։*

ԲՐՈՒՆՑ. — *Հայարնակ գիւղ Աղձնեաց նահանգի այժմեան խիզան վիճակի մէջ։ Գիւղիս մօտ է Եօթն խորան կամ Բարեձորոյ վանքը։*

ԲՐՈՒՏՔ. — *Գիւղ Հայոց Աղձնեաց Մալնաձոր (Բաղէշ) գաւառի այժմեան Մօսկան գաւառակի մէջ։*

ԲՐՏԱՆՑ կամ ՓԸՐԹԱՆՕՍ. — *Այլապրնակ գիւղ Կարնոյ։*

ԲՐՏԵՆԻՔ. — *Կը յիշուի անունս կիմառոցի (Գեղարքունի) արձանագրութեանց մէջն մէջ։*

ԲՐՏԻ ԱՅՐՔ. — *Հին գիւղ և վանք Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այժմեան այլապրնակ Թաշքեան գիւղը։ Մէջը կան շինուածներ և պարսպաց աւերակներ և արհեստական քարանձաւներ։ Ունի կրկին սոպաշէն կոփածոյ հասարակ քարերով եկեղեցիներ, հանդերձ արձանագրութեամբք։ Կազանկատուացին (Բ. Ժ) կը յիշէ գիւղիս վանքը գրելով... «գնացի ես Յովհէփ անապատական, ի գաւառ Գեղամայ, յԱնապատէ Պրտի այրեաց»։ — Միսական, 72–73։*

ԲՒԼԻՑ. — *Գիւղ Տարսւերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ. ունի մօտ 50 տուն հայ բնակիչ։*

ԲՕԼՈՒՍ. Տես ԲԱՎՂՈՒՍ։

ԲՕՋԱԻԱՆԴ. — *Գիւղ Աղուանից Կոկիսոն գաւառի մէջ, Կոկիսոն գետի ձախակողմը՝ վանքաշէնի ուղղութեամբ։ Գիւղս բնական բարձր դիրքովը կատարեալ ամուր բերդ մի է. ունի միայն երկու մուտք՝ արեւելեան և արեւմտեան հարաւային կողմերէն։ Հողն ար-*

դիւնաբեր է. նշանաւոր են ցորենը և այգիները։ Բնակիչք ամբողջ հայ են 50 տուն, որոց նախնիք գաղթած են Գանձակէն, Հաւուրթի և Հոզոթի գիւղերէն։ Եկեղեցին նորոգուած է Ս. Աստուածածնի։

ԲՕՂՈՒ ԱԱՐ. — *Լեռ կրկնագագաթ՝ 7503՛ բարձրութեամբ, Սիւնեաց Եղնջակ գաւառի մէջ, Քանայ վանքի հարաւային կողմը։ Աժմ ծանօթ է Եղբայն տաղ անուամբ։ Հին ժամանակները լատին կրօնաւորներ, գաղնալով Ս. Հռիփսիմեանց աշխարհներէն մաս մը, բնակին պահեցին այս լերանս մէջ, բայց վերջը Աստուածացի Գրիգոր Աչեփքի սպանմամբ, որ սէրութեան հրամանով եկած էր զանոնք գտնելու, տեղը յայտնեցին։ Ասոր յիշատակին հոս շինուեցաւ փոքրիկ մատուռ մը սուրբ կուսանաց անուամբ, և ուխտատեղի է մնացեալ Հայոց, որք Հարան ոչ փեսայ անուն կու տան լերանս, և կ'ասանկեն թէ նորապսակ ամուսիններ փախչելով աւազակաց ձեռքերէն, լերանս գլուխը եկեր են և քար դարձեր։ — Միսական, 368։*

ԲՕՍՏԱՔԻՆՏ. — *Գիւղ Տարսւերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ։ Ունի 50 տուն հայ և քանի մը տուն քուրդ բնակիչներ։*

ԲՕՐԱՂԱՆ. — *Գիւղ Թաթարաց Թերեք գաւառի արեւելեան կողմը։ Հին ժամանակ այստեղ կը բնակէին Հարուստ հայ վաճառականներ, որոնք Սիսաւ Ծովով կ. Պոլսի, և կասպից ծովով Պարսկաստանի և Հնդկաստանի հետ վաճառականական վերաբերութեան մէջ էին։ Ի վերջոյ իրենց ճոխութեամբ նախանձելի լինելով այլազգեաց և անոնց տուած նեղութիւններէն ձանձրացած՝ բոլորովին թողուցին այս գիւղս և փոխադրուեցան Ղարաբաղ և Ղզլար։ — Ջալալեանց, Բ 448։*

ԲՕՐՈՄԻ. — *Աւերակ գիւղաքաղաք կը գտնուի Ուտի Աստանակ գաւառի մէջ, կուր գետի աջ կողմը։ Մէջը կայ Ս. Յովհաննէս անուամբ ուխտատեղի մը։*

Գ

ԳԱԲԵՂԵԱՆՔ կամ ԳԱԲԵՂԷՆՔ. — Այրատաւոյ հին գաւառներէն մին՝ սահմանակից Արեղենիք։ Մեր աշխարհի մի քանի ուրիշ գաւառներու նման Գաբեղէնից ճիշդ սահմանքն ևս որոշելն դժուար է։ Ըստ Հ. Ալիշանի գաւառիս սահմանքն են արեւելքէն՝ Ճակատք և Աղշարունիք, հիւսիսէն՝ Վանանդ, արեւմուտքէն՝ Արեղենք և Հանուսնիք (Բասեն), և հարաւէն՝ Բազրեւանդ։ Իսկ վայրացս առանաւանն Հայկունի, հետեւեալ տողերը կը դրէ գաւառիս վրայ. «Ըստ իս հինն Գաբեղենք այս երկու (Խալեպի և Սիւնեաց) ընդարձակ լեռնահովիտներէն մին լինելու է. որոց մինն, որպէս պիտենք, բուն Աշոտ կերան դաշտի յարեւմուտս բարձր դիրք մի բռնած է խալեպ անուամբ, երկրորդն՝ յարեւելս Սիւնեաց անուամբ հանդիպ իրարու։ — Առաջնոյն մէջ՝ մօտ 20 քրիստոնեայ գիւղեր կան. Գալբաղու և Գաբա գիւղերն ևս այս տեղ են, որք ինձ կարծել կտան թէ Գաբեղեան անուան ազատագոյն եղած լինին։ Երկրորդի մէջ այսօր 160 տան մօտ եղեռ և Թուրք ու քուրդ ժողովուրդ կը բնակին։ Երկուքին մէջ ևս Մարգամիր (Թագաւորական մարգեր) անուամբ լեռնադաշտեր կան. առաջնոյն ի հարաւ արեւմուտս և երկրորդին ի հիւսիս արեւմուտս։ — Պատմագիրներու վկայութեան նայելով վաղիհօր վանքը Գաբեղենից սահմանի վերայ լինելու է. և արդէն երկուքին միջավայրը կը գտնուի այս վանքը. իսկ չենք գիտեր թէ ո՞ր կողմն լինելու է Գաբեղենիք։ — Եթէ Գաբաղ նշանակուած է խոսի կոյտերու վերայ հսկող, երկու յիշեալ վայրերն ևս մին քան զմիսն խոստանա են. սակայն ըստ իմ կարծեաց Գաբաղ նշանակուած լինելու է ձեան կոյտերու առջև արգելուած կարաւանի վերայ հսկող և կարգապրող, որ ամենահարուստն է, այսօր ևս քանի քանի կարաւանք և անձինք բռնահեղձ կը լինին»։

Ինչպէս որ Արբեղենից երկիրն կանխաւ Բասենի մասն էր, յայտնի է թէ այս գաւառս ալ ուրիշ զօրագոյն տոհմի մը վիճակած էր, և վերջը վաղարշակ գաւուով, Գաբաղ անուամբ մէկու մը ժառանգութիւն տուաւ և առանձին նախարարութիւն և գաւառ ձեւացուց։ Պատմական գանագան դէպքերու մէջ կը յիշուին Գաբեղենից տոհմի պայազատներն մինչև ԺԲ դարու մէջ։ — Գաբեղենից անուամբ եպիսկոպոս չի յիշուիր պատմութեան մէջ, բայց յայտնի է, թէ կար գէթ քորեպիսկոպոս մը։ Յետոյ դարուց մէջ միայն վարդիհօր վանքը եղաւ եպիսկոպոսանիստ, և առաջին եպիսկոպոսը կը յիշուի Գրիգոր 1470ին. Ի՛ւ դարու կէսէն առաջ, Ոսկանոյ վիճակագրութեան համեմատ, վերցուած է տեղւոյս եպիսկոպոսական աթոռը. բայց գրեթէ նոյն դարուն կէսէն վերջ, կը յիշէ Շարաէն գաղթիացի ճանապարհորդը, տեղւոյս եպիսկոպոսը կազդուանի մօտ։ Գաբաձալ 1802ին ևս Բազրեւանդայ Ս. Յովհաննու վանաց ժողովին մէջ գտնուեցաւ

վարպիհօր վանքի Մանուէլ եպիսկոպոսը։ — Ա. յիշատակ, 45–54։ Բագրեւանդ, 366–368։

ԳԱԲԵՂԵՆՔ. Տես ԳԱԲԵՂԵԱՆՔ։

ԳԱԲԻԹԵԱՆ. — Վաղապարականի հին գաւառներէն մին էր, Պարսկահայոց սահմանի մօտ։ Ունէր համանուն քաղաք մը, և Քաղցրաձոր (Ալբիա) ծովակը։ — Խորենաց. աշխարհ։

ԳԱԳ. — Լեռ Արցախի սահմանակից Գաւգարաց կողբոտիար գաւառի, Գագայ գետի վրչ, գրեթէ 6 վերստ կոթ գիզէն հեռու։ Պատմական գանագան ժամանակներու մէջ նշանաւոր է եղեր լեռս իբրեւ Գագայ բերդով, որուն երբեմն կը տիրէին Աղուանից թագաւորները։ Տասներորդ դարու վերջերը Տաշրաց իշխանն Գաւեթ եղբօրորդին Գագայ Շահնշահի, ընդարձակելով իր իշխանութեան սահմանները, կը տիրէ նաև բերդս, որոյ նախկին տիրապետող Հայ իշխանը, որ ընդուներ էր վրաց գաւանութիւն և Գիմեաթ անուն, որպէս զի վրացիներէն օգնութիւն գտնէ Գաւեթի դէմ, փախչելով կ'ապաստանի։ ԺԴ դարուն Թամարայ յարձակմանց միջոց շատ բերդեր կ'առնուին, շատ անգեր կ'ամայանան և բնակիչք գերի կ'իննկանան. իսկ Գագայ բերդը անառիկ ապաստանարան կը լինի շրջակայ Հայ ժողովրդոց կենաց և գոյքի. և երբ Մուլար Նուվին Թամար զօրապետ փրկանք կը պահանջէր վանական վարպապետի համար, անոր կնանքը մեծ գնով գնեցին և գրկեցին այս ամուր բերդէ։ — Ամրոցաւոր քարաժայռ լերանս տափարակ գագաթի վրայ շինուած է Ս. Աստուծոյ հռչակաւոր ուխտատեղին, որ ծանօթ է Գագայ Ս. Աստուածածին անունով, և որոյ սկզբնաւորութիւնը մեր եկեղեցական պատմութիւնը Ս. Մեսրոպի կու տայ, որ Ս. Աստուծոյ մէկ առաքեալ խաչի մէջ անցընելով օրհներ և հոս կանգներ էր, ինչպէս կը յիշեն առէպ մեր ԺԴ դարու պատմիչք և վարպապետք, Վանական, Վարդան և Կիրակոս։ Նոյնը կը հաստատէ նաև Ս. Աստուծոյ շարականի հետեւեալ տուներ. « Խաչաչարչար տուր պատպահ, նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի առաւել պայծառ ի գլուխ Գագայ, ի գագաթան տեղւոջ օրհնեալ սրբոյն Մեսրոպայ »։ Այս ուխտատեղիս սրբատաշ քարաշէն մատուռ մի է, առջեւ ունի փոքրիկ գաւիթ իբր կամարակիպով։ Կայ նաև ուրիշ ցած և փոքրիկ մատուռ մը, կոփածոյ քարով, վերնայն արեւելակողմը։ Թէ այս երկու մատուռները և թէ գաւթի պատերէն թափած քարերն, իբր սեպհական ծախքով նորոգեր և իրենց անուն է գրեր Կոմի գիւղացի Աբգուման Տէր Մահակեանցը, 1838 թուին։ Բարի և գովելի է այդ պարոնի գործն, սակայն նա այնպէս արձանագրեր է իր յիշատակարանն գաւթի և ցած մատրան գրանց վրայ, իբր թէ ի հիմանց ինքն է կառուցեր։ Ս. Աստուծոյ մատրան, գաւթի և փոքր մատրան մէջ կան ուրիշ գանագան կիսեղծ արձանագրութիւններ, որոց յայտնի հնագոյն թուականները ԺԴ դարու կը վերաբերին. սակայն այս շինութիւններն գոն աւելի հին ժամանակ կառուցուած լինելու են, որովհետեւ ԺԴ դարու արձանագրութիւնք ևս նորոգութեան յիշատակութիւն կ'ընեն և ոչ ի հիմանց շինութեան։

Մեծագիր լերանս չորս կողմը, գագաթէն քիչ մը վար փորուած են բազմաթիւ այրեր, որոնք ժամանակաւ եղեր են ապաստանարան կամ բնակարան գիւղացւոց։ Այդ այրերէն երկուքի մէջ կան ժայռի վրայ փորագրուած հայկական արձանագրութիւններ, բայց մեռ մը հնութեամբ և մեռն մը, այրերուս մէջ ձմեռ ժամանակ ոչխար պահող խարդ մոլեռանդներու չարաճճութեամբ եղծուած լինելով, կարդացուած է միայն մի քանի բառ և ՈՃԸ (= 1208) թուականը։ Նոյն այրերու մօտ կայ ժայռի մէջ փորուած ջրամբար մը։ — Լերանս հարաւակողմը կը բարձրանան երկու ուրիշ լեռներ. միոյն հնախային կոպի վրայ միակաւոր քարէ փորուած է փոքրիկ եկեղեցի մը, որուն մօտ կայ նաև ջրամբար։ Լերան չորս կողմը տարածուած են անտառ և պարիսպներու աւերակներ. իսկ արեւմտեան կողմը ընդարձակ գերեզմանատուն, մեծ մասամբ հողի հետ հաւասարած և ծածկուած։ — Ալիշան, էջ 161–162։

ԳԱԳ ԲԱՂԻՐ. — Այսպէս ևս կոչուած է վերոյիշեալ Գագ լեռը։

ԳԱԳԱՑ ԴԱՇՏ. — Գաշտ կը գտնուի Գա-

գարաց կոզբոփար գաւառի մէջ. սահմանա- կից է Արցախի։ Իւր վրայ կը բարձրանան Գագ, Գաւառգին և այլ լեռներ։

ԳԱԳԱՑ Ս. ՍԱՐԳԻՍ. Տես ԴԱԳ։

ԳԱԳԱՎԱՆԲ. Տես ԿՈՂՄԱԿԱՆ։

ԳԱԳԻԿ. — Ազգային անպարզուկ անի այս անուամբ քաղաք մը կը գնէ Ազձնեաց Գզեղ (Խիզան) գաւառի մէջ։

ԳԱԳԿԱՆԵՐՏ. — Գագիկ Արծրունի վա- պարականի Մարանդ գաւառի մէջ Օձ ձորոյն դլուխը այս անուամբ դիւղ շինել տուաւ և զօրաց բանակեաղ։



202. Բեւեռարձան Գազանճի գիւղի։

ԳԱԳԿՕՆԲ Թերեւս ԳԱԳԿԱԻԱՆ. — Հին գիւղս կը կարծուի թէ կը գտնուէր Ա.յրա- բատայ Արշարունեաց գաւառի մէջ։ Խծկոնից վանքի Ս. Սարգսի եկեղեցւոյ արձանագրու- թեան մը մէջ կը յիշուի այսպէսէա գիւղս, երասխայ եզերքը, որ 1033 թուին Եղբատու անունով մէկու մը որդիներէն արուած է ի ժառանգութիւն Տեկորի վանաց։

ԳԱԳԱՎԱՆԲ. Տես ՀԱԲԱՆԻ։

ԳԱԶԱ. — Հին ծովեզերեայ քաղաք Պա- զեսթինու, 15 վարսախ Քերբոնէն հեռու, բարերաբ դաշտի մը մէջ։ Քազաքս անուանի էր ի հնումն փղշտացւոց իշխանութեան ժա- մանակ, նոյնպէս Ասիացոն, Գէթ, և ուրիշ քաղաքներ։ Բնակիչը կը հաշուին 16000, յորոց 300ը քրիստոնեայք։ Հայք ունին Ս. Հրեշտակապետաց անուամբ վանք մը։

ԳԱԶԱՆԱԾԱԿԲ. — Այս անուամբ ծակեր կամ այրեր կան Ա.յրարատայ Գաբեղէնք գաւառի մէջ։ Ասոնիկ (Բ. Ե) կ'ըսէ Ս. Թով- մայ համար, թէ « . . . երթեալ ի վայրս գժնդակս՝ ընդ գազանաց և վիշապաց բնա- կանսյր ի տեղին՝ որ այժմ առի Գազա- նաճ.ակը կամ Թասիլոյ վանք »։

ԳԱԶԱՆԻ. — Գիւղ ծովային կիլիկիոյ, Մերսինի արեւելեան կողմը։ Կէս գար առաջ, Եգիպ- տացւոց տիրապետութեան ժամա- նակ, գիւղս էր Տարսոնի նաւա- հանգիստը, բայց յետոյ ծանծա- զացած լինելուն պատճառաւ, նա- ւահանգիստը Մերսին փոխադրե- ցին։ Գիւղս ունի բազմաթիւ հնու- թիւններ։

ԳԱԶԱՆՃԻ կամ ՂԱԶԱՆՃԻ. — Թովմարարենակ գիւղ Ա.յրարատայ ձ.ակատաք գաւառի Սուրմաղի վի- ճակի մէջ, Երասխի ալ ափանց վրայ. ունի 106 տուն։ Գիւղիս մէջ 1886ին գտնուեցաւ բեւեռա- ձեւ արձանագրութիւն մը տափակ և բոլորակ սկաւառակի ձեւով քա- րի մը վրայ մէկ տող (թ. 202)։

ԳԱԶԱՆՃԻ կամ ԳԱՅԳՈՒԼԻ ՂԱ- ԶԱՆՃԻ. — Գիւղ Ա.յրարատայ Ա- շոցք (Ալէքսանդրապոլ) գաւառի մէջ. Շիշմէփէ գիւղի հիւսիսային և Քարաղրիւրի հարաւային կողմը, Նոր Ահ- մէտ (2070′) լերան սառատը։ Եկեղեցին քարակերտ՝ կառուցուած է 1865 թուին, յանուն Ս. Աստուածածնի։ Բնակիչը 537 հոգի, բաժնուած 52 տան, ամբողջ կաթո- ղիկէ Հայք։

ԳԱԶԱՆՃԻ կամ ՂԱԶԱՆՃԻ. — Հայարնակ գիւղ Ա.յրարատայ Շիրակ (Ալէքսանդրապոլ) գաւառի արեւելեան մասին մէջ, Խոլիսպի հարաւ արեւելեան կողմը հինգ վերստ հե- ռաւորութեամբ։ Առատ ջուր ունենալով որ Ղազանճուց ջուր կը կոչուի, ունի նաև շատ

ծառեր. եկեղեցւոյ բակը գեղեցիկ ծառաստան է, պլխաւորաբար բալի, խնձորենի, սեւ սալորենի, եւն: — Եկեղեցւոյ վերաշինութիւնն ժամանակ հիմքի տակէն անյայտ գերեզման մը գտան երեք է. ոսկրատիք այժմ ամփոփած են եկեղեցւոյ մէջ և գամբարան մը շինած: Բաւական ախտաւորներ կու գան շրջակայ գիւղերէն և արխիւրդ յատակացուցած են ուսումնասիրութեան. եկեղեցւոյ մէջ կայ նաև մեծագիր մարգարէական երկաթագիր աւետարան մը՝ վերջի թերթերը և յիշատակարանը պակաս: Գիւղիս բնակիչք կը հաշուին 825 հոգի, բաժնուած 98 տան. եւ կամ են կարսի Պաշ–Ճօրակիզէն և քանի մը տուն ալ Բասենի Պղտասեն գիւղէն: Գանձերի հիւսիսային կողմը շրջապատեալ բլուրներու վրայ բերդի մնացորդներ կ'երեւին. պեղումներ ընելով գտած են պղնձեղէն և երկաթեղէն զանազան գործիքներ և անտիան կարասիներ: Բերդի տակը մեծ քարայր է, ուր կան բազմաթիւ օձեր: — Ա. Թեզեցեան Մատուռ, Իր 889–890: Տես ԴԱԶԱՆՁԻ:

ԳԱԶԱՆՁԱՐ կամ ԴԱԶԱՆՁԱՐ. — Գիւղ Ալբարատայ հին Նիգ գաւառի այժմեան Ալպարանի վիճակի մէջ: Ունի 1216 հայ բնակիչ, բաժնուած 144 տան: — Ալս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Արագածոտն (Մուսմաղի) գաւառի մէջ. բնակիչք քուրդ են:

ԳԱԶԱՐ. — Գիւղ և գետ Աղձնեաց Սղերտ քաղաքաւանի մօտ:

ԳԱԶԱՒՈՆԻ ՎԱՆՔ. — Ալս անուամբ մեր նախնիքներէն վանք մը շինուած կը յիշուի յերուսաղէմ Ա. Յարութեան գրան մօտ, որ և յատակագիծ նուիրուած էր սրբոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ:

ԳԱԶԻՈՑԻՔ կամ ԿԱՄԲԼՆ. — Լիս Մշոնեաց Մղուկ գաւառի մէջ, որ ի նախնեաց «մեծ և գիտաւոր սար» կոչուած է. Տաթեւի արեւմտեան կողմը: Բարձր է 10550′:

ԳԱԶՐԳԵԼԱՂ. — Գիւղ Ալբարատայ այժմեան Մուսմաղի գաւառի մէջ. ունի 293 հայ և 354 թաթար բնակիչներ:

ԳԱԶՐՔ ՔՕՓԱՐԱՆ. — Ալբարատայ Ձագկատոր գաւառի Տէրէքլոյս վիճակի մէջ, Բասենաւտ վտակի ակերքը, կայ այս անուամբ ամրոց մը, և մօտը հանքային ջրեր:

ԳԱԶԻ–ՄԱՂԱՐԱ. — Մերձաւորագոյն 9 ժամ հեռու գիւղի հարաւ կը գտնուի այս անուամբ հայարնակ գիւղ մը 30–40 տուն բնակչօք, որք ունին քարաշէն եկեղեցի մը և գպրոց:

ԳԱԶԼՈՒ ԿՕՂ կամ ՍԱՔՈՒՅ ԼԻՃ. — Լճակը կը գտնուի Ալբարատայ Կոզոլիա գաւառի մէջ:

ԳԱԶԿԻԼԻՍԻՆ. — Լիս Մշոնեաց Հարանդ գաւառի մէջ, Կորչոն հիւսիսային կողմը, 6620′ բարձրութեամբ:

ԳԱԶՐԻԿԵԱՆ կամ ԳԱԶՐԻԳԻՆ. — Վաղարշապատեան հին գաւառներէն մին:

ԳԱԹԱՐԻՆԷՆՖԷԼՏ, ԵԿԱՏԱՐԻՆՖԵԼՏ կամ ՈՒՏԵԻԱՆ. — Գերմանական գաղթաշէն Վրաստանոյ Քութայիսոյ ձորագաւառի մէջ, Խրամայ աջակողմեան օժանդակի մը եզերքը, Բաղնիս գիւղի մօտ հիւսիսային կողմը: Ժթ դարու սկիզբները, Նափոլէոն Ա պատերազմներու ժամանակ աշխարհիս վերջն հասնելու վախ մը ինկաւ Գերմանացի ազդաբնակութեան մէջ, մանաւանդ վիրտեմպերկցոց, որք համոզուած լինելով որ Բրնաբաս նորէն պիտի գայ ի Պաղեստին, նշան իրենց երկրէն՝ ընդ առաջ երթալու երկուսուր գաղութներ: 1818ին էր որ հազարաւոր երկգաձիներ Թաղուցին առն տեղ, ուղեցին քաշելով Գերմանացիքն մինչև Էրզուրում երթալ, գանազան աշխարհներէ անցնելով, ուր նաւերնիւ պիտի նաւեցնէին մեծաւն, ապա ցամաքմէ մեռ մ'ալ Թաւրաց և Կովկասի սահմաններէն հասնելով կամայ և ակամայ հազարեցան առանց ուղի առաջ երթալու՝ այն տեղերը ձմեռ և սպասել: Շատերը նկան Հայոց կողմերը, և Տփղիսէն սկսեալ մինչև այստեղ հինգ վեց գաղթականութիւն հաստատեցին որոց անուանք են Նոր Թիֆլիզ, Ալեքսանտրապոլիճ, Էջիազապբադ, Մարիենֆելտ, Փեթրոսդրիճ և Գնաթարիենֆելտ: Ալս Գերմանացիները իրենց պարզ, կոկ և բարեկարգ տնօրէնութեամբ, քիչ ժամանակի մէջ գարգացան, ի մեծ զարմանս Հայոց, Վրաց, Թաթարաց, Թուրքաց և Պարսից: 1826 տարւոյ Պարսից և Օսմանեանց պատերազմի ժամանակ Գանթարինէնֆելտի մէջ 85 տուն կային, յորոց 30 հոգի սպանուեցան և 130 ալ գերի գնացին: Պատերազմէն վերջ, երբ Ռուսք յայտնեցին Պարսից և Թուրքաց,

ողջ մնացող գերիներն զարձան իրենց գիւղը և սկսան շինութեամբ ծաղկեցնել նորէն գիւղը և բազմանալ։ — Ա. ԺՄ դասնս ունի 1304 բնակիչ, բաժնուած 253 տան, յորոց 36 տունը Հայոց, 2 Վրաց, 3 Ռուսաց և 212 Գերմանացւոց կը վերաբերին։ — Նշմարք, Ա. 19–20։

ԳԱԹԸՐԼՈՒ. — Ա. յս անուամբ վերին և Ստորին կրկին այլազգաբնակ գիւղեր կան Ա. յրարատայ Ձակատք (Մուրմանի) գաւառի մէջ։

ԳԱԹԸԱՆ–ՏԷՐՏԷՍԻ. — փոքրիկ ձորակ քարային Էրիվիխոյ մէջ. այսպէս կոչուած է նա–քաղաք կոչուած հին քաղաքատեղին, ուր կը տեսնուին իրարու մօտ թումբեր, որոնցմէ մին պեղելով գտան կամարայարկ մատրանաձեւ քարակերտ շինուած և համբերեցան գերեզմանի տապան։ Փննութեան արժանի են այս տեղերը, մանր զի հին Ա. րմաւիր ալ մօտ կը գտնուին։

ԳԱԼԱՆՏԱՐ. — Լեռ Ա. յրարատայ Ծաղկան գաւառի մէջ, Նպատ լերան մօտ։ Ստորոտը կը գտնուին կակուղ սպիտակ և դեղնորակ քարեր։ Ռամիկը այդ քարերէն մին արծաթմախատան կը կարծէ և մեռոն ոսկեխառն։



203. Գալիարիճէնֆէլտ։

մախրի ծառեր շատ ունենալուն համար, որոնց Թուրքք Գաբրաճ–աղաձի կ'ըսեն։

ԳԱԼԱՄԵԼԱ. Տես ԳԱՐԱՄԵԼԱ։

ԳԱԼԱՄՇԵՆ. — Գիւղ Գուգարաց այժմեան Փօռչալու գաւառի մէջ. ունի 13 տուն հայ և 18 տուն վրացի բնակիչներ։

ԳԱԼԱՄՈՒՍ. — Կը յիշուի կամախի մէջ։

ԳԱԼԱՅԱՐՒ կամ ԳԱԼԷ–ԱՐԻ. — Հայաբնակ գիւղ Ա. յրարատայ Ա. րտագծոյն (Մարտսարատար) գաւառի մէջ, Շահրիարի մօտ։ Ունի 486 բնակիչ, բաժնուած 62 տան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Գիւղիս արեւմտեան հարաւային կողմը եղած տասնեակ մը տուներու մէջ կը գտնուի Քիւռեղեան աղբիւրը։

ԳԱԼԱՇԻԿ. — Հանգրուան Ա. յրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ։

ԳԱԼԱԶԱ. — Գիւղ Ա. յրարատայ Նիգ (Ապարան) գաւառի մէջ. ունի 439 հայ բնակիչ, բաժնուած 46 տան։

ԳԱԼԱԶԱ. — Հայաբնակ գիւղ Ա. րցախի Դ. ատախ գաւառի մէջ. ունի 1209 բնակիչ, բաժնուած 157 տան։

ԳԱԼԱԶԻ. — Փոքրիկ գիւղ Ա. յրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասի մէջ, Պաշնա գիւղի արեւելեան կողմը։

ԳԱԼԷ–ԱՐԻ. Տես ԳԱԼԱՅԱՐՒ։

ԳԱԼԻԼԻ. — Հայաբնակ գիւղ Ա. յրարատայ Կոտայք գաւառի, այժմեան Հաճի Եայլա

վիճակի մէջ, երեւանէն 10 վերստ հեռու։ Ունի 323 բնակիչ, բաժնուած 52 տան։

ԳԱԼԷՆԻ կամ ՔԵԱԼԱՆԻ. — Գիւղ Ա. յարաբատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի, Պարնասոյի հարաւային կողմը երեք վերստ հեռաւորութեամբ, փոքրիկ ձորակի մը մէջ։ Բնակիչք հայ են 36 տուն, որոց նախնիք 1828ին եկած են Կարսի վիճակէն։

ԳԱԼԷՁԻԿ կամ ԳԱԼԱՁՔՐ. — Գիւղ Ախլիբրիճ կուսակալութեան մէջ, Գըզըլ–ըրմաղի մէկ օժանդակին եզերքը, Ախլիբրիճ քաղաքէն հիւսիս արեւելեան կողմը 52 հազարամեար հեռաւորութեամբ (էջ. 204)։ Բնակիչք են 6790 հոգի. յորոց 375 Հայք և ուացեալք Թուրքք։ Ապառաժ լերան գագաթը ունի փոքրիկ բերդ մը, տները և շուկան կառուցուած են լերան սառոյրքը։ Ա. յդիներով և պարտէզներով զարդարուած են աւանիս շրջակայքը. նշանաւոր և առատ բերքն համարուած է զմուռն։ Հայք ունին Ս. Կարապետ եկեղեցի մը, յորում կը պահեն պատուով երկաթեայ թիերի աւետարան մը, զոր գտած են հողի տակ եկեղեցւոյ նորոգութեան միջոց։ Ունին նաև Լուսաւորեան վարժարան մը, և ազգային ժողովութեանց ջեմ պաշտպան են, որոց վրայ գրուած է 1899 տարւոյ Բիւրակեի 648–550 էջերուն մէջ։

ԳԱԼԷՁԻԿ. — Հայարնակ փոքր գիւղ Ա. յարարատայ վանանդ գաւառի Ջարիշատի վիճակի մէջ, ունի 71 բնակիչ, բաժնուած 9 տան։ Տես ԳԱՐԱ ԳԻԼԻՍԻ։

ԳԱԼԷ ՊԱՇԻ. — Գիւղ Ա. յարարատայ, Սասրին Բասենի մէջ։

ԳԱԼԷ ՍՈՒ. — Ա. յպակէս կը կոչուի Երասխ՝ Հասանգալէի մօտէն անցած ժամանակ։

ԳԱԼԷ ՓԼՕՁ (Բերդագիւղ). — Կիլիկիոյ մէջ և մեր բնաշխարհի ուրիշ կողմերը այս անուամբ քանի մը գիւղեր կան։

ԳԱԼԷՏՏՐԷՍԻ կամ ԲԵՐԴԱՁՈՐ. — Բազմամարդ գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ, 4480′ բարձր գիրքով։ Ունի 2631 հայ բնակիչներ, բաժնուած 387 տան։

ԳԱԼԷ ՏԻՊԻ (Բերդատակ). — Ա. յլազդաբնակ գիւղ Ա. յրարատայ Մաղաղ գաւառի մէջ։

ԳԱԼԻԹՈՒԼԱ. — Քեսթիոլ Զէլէպի այս անունս կու տայ Կարնոյ։

ԳԱԼԻԼԵԱ. Տես ՎԱՐԱԳ։

ԳԱԼԿՈՆՅ. — Կը յիշուի Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ։

ԳԱԼՈՒ ԱՆԱՊԱՏ կամ ԳԱՅԼՈՒ ՎԱՆՔ. — Հին վանք Հայոց, գաշտային Կիլիկիոյ մէջ։ Կը յիշուի 1325 և 1336ին, Սիմէոն քահանայ մը գրած երկու Մանրատումն երգարանաց մէջ. «յաստուածարնակ անապատս, որ կոչի Գալու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, և այլ սրբոց սրբ ասա»։ Կիլիկիոյ ժամանակագիրն ուրիշ կարեւոր տեղեկութիւններ կու տայ վանացս վրայ, որուն շինողն եղած է Մեծն Լեւոն։ Կարգանք իր գրածները. «Եւ ասեն ոմանք՝ թէ եղեալ է երբ-



204. Գալէնիկի տեսարանը։

բեմն՝ որ վանն սրբութեան վանացն առաջնորդին կամ՝ միաբանից, որ գայցէ և առաքեալ զոչխարան, վասն այն կոչի Գայլ վանք. և այժմ Սուրբ Ջերմագործիւր վանք կոչին, որ է հանդէպ Սսոյ»։

ԳԱԼՏԸ կամ ՂԱԼՏԻ. — Գիւղ Սերաստիոյ՝ մէկ ժամ հեռու հարաւային կողմը։ Գիւղիս անունը Լէնկէմիանըէն ծագած է. վասն զի երբ այս մարգախոշոշ բոնատորը՝ բազմաթիւ կաստրածներ, գիւղեր, քաղաքներ աւերել և արեան հեղեղներ վազցնելէն վերջ, կը տեսնէ որ այս գիւղս ալ իր բռնատրական անյագ կրից զոհելու համար օրը իրիկուն եղած է՝ այս ծագ կ'ըսէ, Պուռ գալտը և առկէ կ'առնու Գալտը անունը. ինչպէս կ'առանձին նաև անզպիք։ Հայք 30 տուն կը հաշուին, ունին Ս. Յակոբ եկեղեցի մը և մէկ գպրոց։ Գիւղիս մէջ կան նաև այլազգիներ, որոնք մեծամասնութիւն կը կազմեն։

ԳԱԼԿՐԱՍ. — Ակլազդարնակ գիւղ Բարձր Հայոց Կամախ գաւառի մէջ։

ԳԱԼՖԱՒԻՒ. Տես ԽԱԼՖԱՒԻՒ։

ԳԱՀԱՐ. Տես ԳԱՐՀԱՐ։

ԳԱՀԻՐԻՃ. Տես ԵՒԻՊՏՈՍ։

ԳԱՀԻՒԱՀ. — Ակն անուամբ բերդ մը կը յիշէ Քնեթիոս Զէէլպի, երասխը նկարագրած միջոց, Գարաճա լերան մօտ։

ԳԱՂ. — Հին գիւղ Սիւնեաց երկնչակ գաւառի, Բօշաւարի և Շաղթայ մէջ տեղ, որուն ժողովուրդը Գեալ կամ Կեալ կ'ըսէ, ինչպէս նաև Գեալ–ջարաժուր։ Շինուածոց մնացորդներն բերդի և պարսպաց՝ կը վկայեն թէ Շաղթայ նման ժամանակաւ մեծ և հարուստ գիւղաքաղաք եղած է, նոյնպէս նաև արդի հայ բնակիչք (20 տուն), որոց մէջ կան նաև նորեկներ, կ'ատանդեն թէ երբեմն 700 տուն ունէր և հարուստ վաճառականներ, որոնք Նաւասիր շահի և յաջորդաց հարստահարութեանց համար ցրուեցան զանազան կողմեր, և շատեր ի Զմիւռնիա։ Բազմամարդութեան կը նպաստէր տեղւոյն լաւ օդն և պատուական ջուրն։ Այժմ ևս բուսաբերութիւնն յառիթի է և գեղատեսիլ։ Բնակչաց կէսը կը պարապի այգիներու և դաշտերու մշակութեամբ, իսկ մյլը խաշնադարձութեամբ և մեղուաբուծութեամբ։ Մեծ և հաստատատեալ եկեղեցին նորոգուած է Ցակոբ կաթողիկոսի օրով. ունի չորս սուրբ սիւներ որոնց վրայ կը բարձրանայ կամարակիկն՝ խախտած 1840ի շարժէն։ Սկզբնական երկու կողմերը կան մէկ մէկ փոքր աւանդատներ, ուխտած է քարաշէն և ապիւսաշէն ընդարձակ գաւիթը։ Եկեղեցւոյս զանազան խաչվէրներու վրայ կան արձանագրութիւններ, որոց հնագոյն թուականը կը վերաբերի ԺԶ դարու։

Գիւղէս դուրս արեւմտակողմը կան մատուռներ, մին Ս. Յովհաննէս քարաշէն է և անկոթծան. միսն՝ Նահատակ կը կոչուի և կը գտնուի սահմանի արեւմտեան կողմը լերան սաորոտը. մնացն կը բղխէ զաղջ ջրի աղբիւր, ուր կը գիմեն բազմութիւ ուխտաւորք և ախտաժէտք։ Երկրորդ մատուռն ևս արեւմտակողմը բլրակի մը վրայ կան Աբեբակ կոչուած մատուռն մը մնացորդները։ Գիւղի հիւսիսային կողմը լերան մը սրտի ծայր կաթարին վրայ կայ կիսաւեր Ս. Եղիա անուամբ մատուռ մը. իսկ արեւմտեան հարաւային կողմը այգիստաններուն մէջ կ'երեւի եկեղեցւոյ մը աւերակն, զոր վանք կը կոչեն, և ժամանակաւ այնպէս եղած է։ Գիւղի արեւելեան կողմն է կիսաքանդ պատրիսպներով բերդ մը, որ շատ անգամ բնակչաց ապաստան եղած է. ուրիշ երկու բերդեր ալ կան մին արեւմտեան կողմը և միսն հիւսիսային՝ Ս. Սարգիս կոչուած, որոյ մնացեր են խաչվէմեր։ Գիւղս ունի քանի մը ջրաղացներ, մին Աստքելի կեղ (լիճ) կոչուած, շինողին անուամբ։

Գաղաց վաճառականաւանութեան բարգաւաճման դիպ կը մնան քանի մը յիշատակներ հնաւուր օտար աշխարհաց մէջ, ինչպէս ի Վենետիկ. ուր կը յիշուին 1697–1725 տարիներու մէջ սոն Տիրացու Աստուածատուր, Յովնան, և Յակոբ որ իւր անունը փորագրած է Ս. Մարկոսի եկեղեցւոյ արտաքին պատին սիւներէն միոյն վրայ։ Նշանաւոր է հարստութեամբն նաև Գաղեցի սոն Պաղտասար, որ մեռնելով 85 տարեկան, թաղուած է Ս. Խաչի եկեղեցւոյ մէջ 1733ին։ Այս վաճառականներէն ունի հին ևս Գաղեցի եկեղեցականներ Մխիթարեցոց կարգէն. Թոսկանայի Փլորինեան քաղաքին մէջ 1571ին պրուած լատինահայ ճաշոցի մը մէջ կը գրէ սոն «Տէր Աբէլ Գաղեցի». և ուրիշ մը. «Ես փրա Վարդանես որդի Յարուժան Գաղեցի գայս յիշատակարանս ի թվին մեր Հայոց ՌՃՒԲ»։ — Հնոտիւռնք Հայրենեաց, 142–151։ Միսական, 359–360։

ԳԱՂԱՏՑԻ կամ ԳԱՂԱՏԱՑ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որ տարին 10 բեռ հարկ կու տար Սիւնեաց եկեղեցւոյն։

ԳԱՂԱՏԻԱ. — Փոքր Ասիոյ հին գաւառներէն մին, որուն սահմանակից էին հիւսիսէն՝ Պափլագոնիա, արեւելքէն՝ Կապադովկիա, հարաւէն և արեւմուտքէն՝ Փռիգիա։ Գաւառս անուամբ կը կոչուի նաև գլխաւոր քաղաքն, զոր մենք նկարագրեցինք Անկիւրիա անուան տակ։

ԳԱՂԶՄԱՆ. Տես ԿԱՂԶՈՒԱՆ։

ԳԱՂԴԻԱ. Տես ՖՐԱՆՍԻԱ։

ԳԱՂԱՏ. — Գիւղ կը յիշուի Բագրեւանդի (Շիրակ) արձանագրութեանց միջի մէջ։

ԳԱՂՑԱՌԻՃ. — Ա.յս անուամբ Մեծ և փոքր կրկին գիւղեր կան Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ. երկուքն ալ այլազգաբնակ են։

ԳԱՄԱՂԻԷԼԻ ՎԱՆՔ. — Հին վանք Աղձնեաց Գզնդ (Խիզան) գաւառի մէջ։ Վանացւոց հիմնարկութեան համար, կռնգակին մէջ գրուած է, թէ Թադէոս առաքեալը Գամալիէլի գլուխը իւր հետ բերելով, շինած է այս վանքը նոյն սրբոյն անուամբ։ Ա.յժմ մէջը միաբանութիւն չկայ. մեր ուրիշ շատ վանքերու նման սա ևս ախտաւոր վիճակ մ'ունի։

ԳԱՄԸՇԼՔ. — Ա.յս անուամբ այլազգաբնակ գիւղեր կան Ա.յրարատայ Ձակատաք և վանանդ գաւառաց մէջ. ինչպէս նաև ուրիշ կողմեր։

ԳԱՄԸՇՃՔԻ. — փոքր գիւղ լճակային կիլիկիոյ, կապանի սահմանաց մէջ։

ԳԱՄԻՐԻ. Տես ԿԱՊԱՆՈՎԿԻԱ։

ԳԱՄԲԻՍ կամ ԳԵԱՄԲԻՍ. — Հայարնակ հին գիւղ Ա.յրարատայ Կոտայք գաւառի մէջ, Էրեւանի արեւելեան հիւսիսային կողմը, 10 վերստ հեռաւորութեամբ, և Ազատօր գիւղի մօտ՝ հարաւակողմը։ Ունի 962 բնակիչ, բաժնուած 115 տան։ Եկեղեցին Ս. Յովհաննէս, սաղաձեւ է, շինուած կոփածոյ քարերով հին ժամանակաց մէջ։ Հիմնարկութեան թուական չգիտենք, բայց յայտնի է որ 1679 թուականի մեծ երկրաշարժէն վերջ նորոգուած է։ — Գիւղիս արեւմտեան կողմը կայ Ս. Աստուածածնի փոքրիկ մատուռ մը, որ ունի 1258 թուականաւ նորոգութեան արձանագրութիւն, հարաւային որմի վրայ։ Արձանագրութենէն կը յայտնուի, որ նորոգիչ աուողն է Լիաւոն անուն իշխան մը։ Հիւսիսային կողմին ալ քարի մը վրայ կայ նաւթաուռի մը յիշատակարանն։ Գամրիճի աջակողմէն վազող գետակի վրայ ձգուած է հնաշէն սրբատաշ քարերով կամուրջ մը, որ կիսով չափ նորոգուած է 1855 թուին։ Ա.յս կամրջի տակէն անցնող ջուրը սկիզբն կ'առնու այն յորդ և անուանի ազբիւրէն՝ որոյ անուամբ՝ գիւղս երբեմն Աղբերից գիւղ կոչուեր է։ Գիւղս զարդարուած է զանազան պտղաւու ծառերով. ջուրը բաւական լաւ է և օդն առողջարար։ Գիւղի մէջ կայ թռչիւ Մաճուռկ անուամբ մատուռ մը. իսկ արեւմտեան կողմը քիչ մը հեռու ձորի մէջ կան ծառեր, լաւ աղբիւր մը և Ս. Սարգսի մատուռն, հասարակ քարով շինուած։ Գամբիսի մօտ հողաբլուր մը կայ, որ 1888 ին յորդահոսան հեղեղներէ քանդուելով, յայտնուեցան բաւական թուով պարսկական արծաթի դրամներ։ Պարսից Շահ Աբբասի թագաւորը, այս գիւղիս մէջ բնակեցուց Մակուցի հայերը, երբ հրաման հանեց Մակուայ բերդը քանդել և բնակիչները գաղթել տալ։ — Ա.յրարատ 287։ Գեղարքունի, 261—263։

ԳԱՅԱԼՈՒ (Ա.պառաժոտ). — Ա.յլազգաբնակ գիւղ Մխենաց վայոց ձոր (Զանգեզուր) գաւառի մէջ, գետակի մը մօտ, որուն ալ կողմը կը տեսնուին քարաշէն կամրջի մը մնացորդներ։

ԳԱՅԱ-ԽԱՐԱՊԱ. — Ա.յլազգաբնակ փոքրիկ գիւղ Ա.յրարատայ Ձակատաք (Սուրմառի) գաւառի մէջ։

ԳԱՅԱՁԸԳԼՔ։ — Գիւղ լճակային կիլիկիոյ մէջ։

ԳԱՅԱՊԱՇԻ կամ ՂԱՅԱԲԱՇԻ. — Հայաբնակ գիւղ Աղուանից Հոդի (Արաշի) գաւառի մէջ. կը վերաբերի Նախճաւանի յայգորդութեան և կը գտնուի Նախիջեւանէն 40 վերստ հեռու դէպի արեւելք։ Շինուած է Ա.րչիկան գետակի ձախակողմը և կլոլկասեան լերանց սաորոտը, տափարակի մը վրայ։ Հիւսիսային, արեւելեան և հարաւային կողմերը կան բնդարձակ տափաստաններ, յորս ամառօրէն կը բուսնի ցորեն, և այդ առատութեան շնորհիւ, գիւղիս ժողովուրդը ամէնքն ալ հարուստ են։ Ա.յս գիւղն էր որ 1879 թուին, ցորենի պակասութեան միջոց կերակրելց Նախիջեւանի վիճակը։ Գայապաշիի արեւմտեան կողմէն անցնող Ա.րչիկան գետակը կը մատակարարէ թէ՛ խմելու և թէ այլոներն և մարդագետիններդ ոռոգելու ջուր։ Գետակի երկու կողմերն են թիթեռիներ և խաղողի այգիներ՝ որ բաւականին առատօրէն և լաւ գինի կու տան։ Օդն և ջուրն առողջարար լինելով Գայապաշիք առողջակաղմ, յաղթանդամ մարդիկ են, և այս տեղ հազիւ կը պատահի հիւանդութիւն. միայն ամառը շատ լինելուն պատճառաւ երբեմն անասուններու մէջ հիւանդութիւն կ'ինկնայ։ Գիւղս ունի 1438 բնակիչ, բաժնուած 226 տան,

որոց նախնիք գաղթած են Պարսկաստանի Խոյ քաղաքէն և գաւառներէն։ Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածնայ, ընդարձակ է, չորս սիւներով, ամբողջ քարաշէն։ Գիւղիս հին եկեղեցւոյ նորոգութեան արձանագրէն կը յայտնուի, թէ խոյեցիք այս տեղ գալէ առաջ, արդէն կան եղեր հոս հայ բնակիչներ և եկեղեցի։ Խոյեցիք՝ Շաքի երկիրը փոխադրուած են 1807ին, բայց անոնցմէ մաս մը հաստատուած է գիւղիս մէջ 1824ին։ Հին եկեղեցին նորոգուած է 1830ին, ժողովրդեան արտեամբ. իսկ այժմեան եկեղեցին ի հիմանէ կառուցուած է 1890 թուին։ Բնակիչք ամենքը և կիրակի օրեր առաւ պահելու մեծապէս պաշտպան են. անփոփոխ պահած են իրենց նախկին բարքերը, սովորութիւնները, հագուստը, հայի և կերակուրներու տեսակները, են։ Գիւղս ունի Ս. Նշխանեան անուն ուսումնարան մը 60է աւելի աշակերտներով։ Գայթազաշի հարաւային կողմի դաշտակի վրայ կայ հին եկեղեցւոյ և գիւղի աւերակ, Շինատեղ անուամբ, ինչպէս նաև հանգստարան, անաւաշ, կոպիտ և անարձանագիր տապանաքարերով։ — Նոր Դար, թ 207։ Աղուանք, 224–225։

ԳԱՑԱ–ՊԻԿ կամ ՂԱՑՐԻԿ. — Հայարնակ (30 տուն) գիւղ Ա.յրարատայ Բազրեւանդ գաւառի մէջ, Ալաշկերտ Գարա–Գիլիսէ տանող ճանապարհի վրայ։ Գիւղս Թոփրագ–Գալէէն 2 ժամ հեռու, դէպի արեւելեան հարաւ, դաշտի մէջ փոքրիկ վտակի մը եզերքը կառուցուած է։ Ղայրէկցիք ունին բազմաթիւ արտօրայք և բերքի հող։ Գիւղս ունի ջրաղաց և ձիթհանք։ Գլխաւորաբար կը սնուցանեն զոմշիղէն, որուն չունենալով ոչ խարիղէն շատ քիչ կը պահեն։

Գիւղս ունի խարխուլ գետնափոր եկեղեցի մը, որոյ շուրջը գերեզմանատուն է 1000ի չափ հոշտ տապանաքարերով։ Ղայրէկի բնակչաց կէսը ցեղ մը կը կազմեն, որուն քրդերը Գորոներ (գայլեր) անունը կու տան, և ի՛տանդուր թէ Գայլ վհանէն սերած են։ Գիւղիս մէջ կայ թղթեայ ընտիր ձեռագիր աւետարան մը, զարդարուած բազմաթիւ ձեռանկար գեղեցիկ պատկերներով։

ԳԱՑԱՊՈՒՈՒՆ. — Լճակ Ա.յրարատայ կողմիս գաւառի մէջ, Պայազիտի մօտ։

ԳԱՑԱ ՏԷՐԻՆ. — Լճակաձեւ Միհրանաց Վայոց ձոր գաւառի մէջ։

ԳԱՑԳՈՒԼԻ ՉԻՖՏԱԼԻ կամ ՉԻՖՏԼԻԿ. — Հայարնակ գիւղ Ա.յրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ, Գարախաչ լերան ստորոտը։ Ունի 348 բնակիչ, բաժնուած 39 տան։

ԳԱՑԳՈՒԼԻ ՏԻՒԶՔԼՆՏ. — Նոյնպէս հայարնակ գիւղ Ա.յրարատայ Շիրակ գաւառի, արեւելեան հարաւային կողմը։ Ունի 424 բնակիչ, բաժնուած 56 տան։ Մօտը կայ փար–խաչապատ աւերակ։ Մէջը ևս լինելու է հին եկեղեցի և վանք. տեղեկութիւնք կը պակսին։ — Տես ԳԱՉԱՆՃԻ։

ԳԱՅԻԱՆԻՆ (Ս.) ՎԱՆՔ. — Ա.յրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Էջմիածնի առեւելեան հարաւային կողմը կը գտնուի աւերակ վանք։ Այժմեան դասի գրութեան համեմատ, կառուցուած է ճիշդ այն տեղը, ուր նահատակուեցաւ սրբուհին Գայիանէ երկու ընկերաց հետ։ Ուրբն Գրիգոր 304 թուականին, բազմաթիւ հաւատացեալց հետ հիմնարկած է վկայարանս, և մէջը ամփոփած Ս. Գայիանէի և երկու ընկերաց նշխարները։ Վանքս իր առաջին շինուածնէն վերջ, գրեթէ 329 տարուց չափ, չի յիշուիր յաճախ պատմութեան մէջ, հանդոյն Ս. Հռիփսիմէի վանաց։ Եղեր կաթողիկոսք 630 թուին, տեսնելով որ Ս. Գայիանէի եկեղեցին խիստ մեծին և խնդ շինուած էր, քակել տալով աւելի ընդարձակ և փառաւոր կառուցանել տուաւ զայն կոփածոյ քարերով, և ինչպէս կ'ըսէ Ցովհաննէս կաթողիկոս. «և յարտաքուստ յարգարէր կամարս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն տաճարային խորանին»։

Հազար տարիէն աւելի մեզ յայտնի չէ թէ ինչ դէպքեր հանդիպեցան վանքիս, միայն Առաքել պատմիչ մանրամասն կը նկարագրէ, թէ շատ տարիներ անցնելով բոլորովին աւերած էր Ս. Գայիանէի տաճարը, վտանգի տանիքը խոնարհած էր և միայն չորս սիւները և որմերը կանգուն մնացած էին։ Փիլիպպոս կաթողիկոսը 1651 թուին սկսաւ տաճարիս նորոգութիւնն, և շատ ծախս ընելով ի հիմանց մինչև գագաթը գեղեցկաշէն աւարտեց և գմբեթի վրայ գնել տուաւ

աէրուսական խաչի նշաններ։ Եւ որովհետեւ աւազ խորանի ներքին շինուած մասասուր ուր դրուած էին սուրբ կուսանաց նշխարները, բոլորովին աւերած էր, և նոյն իսկ աւազ բեմը քանդուած էր մինչեւ յատակը, ցոյց հանելէս անուսմ արեզայ մը, ծածկապէս հիմունքը պեղելով գաւառ երեք տապաններ, եկեղեցւոյ հիման առաջ, մին՝ հարաւային կողմը, միւսն՝ հիւսիսային կողմը և երրորդը՝ արեւելեան կողմը, և պատմչի դրածին հա-

տաւ նաեւ երկու փոքրիկ կաթուղիկէներ՝ իրրև գանգակատուն։ Նոյն եղիազար կաթողիկոսը կառոյց նոյնպէս բնակարաններ միաբանութեան համար, և շրջապատեց բոլոր վանքը պարսպով, որուն համար յատուկ յիշատակարան մը արձանագրեց եկեղեցւոյ արեւմտեան պատի դրան աջ կողմը, որ և կը մնայ մինչեւ հիմա։ Եկեղեցւոյ առաջ դրան աջ կողմը կամարի առակ կայ գեղեցկաքանդակ կարմրաքար խաչարձան մը,



205. Ս. Գայիանէի վանքը։


ժամանակ, Ս. Գայիանէի ու երկու ընկերաց նշխարներէն մասն մի առնելով, տապաններուն վերեւէն հողով ծածկեց և անյայտ բրաւ։

Հառմկլայեցի եղիազար կաթողիկոսը 1688 թուին, եկեղեցւոյ արեւմտեան դրան դիմաց շինեց բոլորովին նոր և գեղեցիկ գաւիթ մը, և երկու ծայրերը մէկ մէկ փոքրիկ խորան Պետրոս և Պօղոս առաքելոց անուամբ, որոց պատկերներն ալ սմնոց վրայ նկարել տուաւ, ինչպէս նաեւ իր պատկերը դրան աջակողմը։ Այս խորաններու վրայ շինել

տուաւ նաեւ երկու փոքրիկ կաթուղիկէներ՝ իրրև գանգակատուն։ Նոյն եղիազար կաթողիկոսը կառոյց նոյնպէս բնակարաններ միաբանութեան համար, և շրջապատեց բոլոր վանքը պարսպով, որուն համար յատուկ յիշատակարան մը արձանագրեց եկեղեցւոյ արեւմտեան պատի դրան աջ կողմը, որ և կը մնայ մինչեւ հիմա։ Եկեղեցւոյ առաջ դրան աջ կողմը կամարի առակ կայ գեղեցկաքանդակ կարմրաքար խաչարձան մը,

որ հնութենէ և անգութ ձեռքերէ խանգարուած է, և ունի հետեւեալ արձանագրութիւնը. « Թվ. ՁԵ (626) Խալիս գծող »։ այս թուականը նիւ ստոյգ է, նկարի ժամանակին կը վերաբերի։ Զարքարիա սարկաւագ պատմագիրը յիշելով եղիազար կաթողիկոսի շինութիւնները, կ'ըսէ նաեւ թէ գաւթի հիւսիսային կողմը եղած խորանի առջեւ շինեց և իւր գերեզմանը։ — Թէպէտեւ Էջմիածնի վանքը ունի իրեն մօտ յատուկ գերեզմանատուն, սակայն երկու դարէ ասդին է, որ

սովորութիւն դարձած է, կաթողիկոսները թաղել Ս. Գայիանէի վանքի գաւիթը, բայց ի մէկ քանիէն, որոնք զանազան պատճառներով թաղուած են ուրիշ տեղեր։ Եղիազար կաթողիկոսի և ուրիշ մի քանի տապանաքարեր պատերազմից ժամանակ անհետացած են կամ՝ եղծուած, իսկ արձանագրութիւններով հանդերձ՝ ծանօթ տապանաքարերն կը վերաբերին. Ա. Ղազար Ջահկեցւոյն, † 1751. Բ. Յակովբ Շամախեցւոյն, † 1763 (21 մարտի – 1 ապրիլ). Գ. Սիմէոն 200 տարի վանքս ձեացած կը թուի առանց վերանորոգութեան և խնամքի։ Գիղեցկաշէն եկեղեցւոյն կաթուղիկէի մէկ մասը և մի քանի կամարներ ճեղքուած էին վտանգաւոր կերպով, որմերն ալ ներսէն և դրսէն խանդարուած և քարերէն շատերը խախտած։ Եկեղեցւոյ մէջ կը տիրապետէր սաստիկ մթութիւն և խոնաւութիւն, պատուհաններէն շատերը հիւսած էին, և ձեացած էին միայն հինգ վեց փոքրիկ պատուհաններ։ Վանքը քանի մը մուխ և խարխուլ սենեակներէ զատ



206. Ծառատան Ս. Գայիանէի եւ Ներսիսեան լճակի մէջտեղ։

Եղեւանցիին † 1780 (26 յուլ. 6 – օգոստ.). Դ. Ղուկաս Կարնեցւոյն † 1799 (29 դեկտ. 9 յունուար 1800). Ե. Յովսէփ Արզուխեանցի † 1801 (9–21 մարտի). Զ. Դաւիթ Լնէզէխեցւոյն † 1817 (նոյեմբ. 1–13), և Լ. Մատթէոս Կ. Պոլսեցւոյն † 1865 (26 օգոստ. 7 սեպտ.). ինչպէս նաև Աբրահամ Բ Մշեցւոյն † 1734 և Մինաս Ակնեցւոյն † 1753, որոնց տապանաքարերնք կը պակսին։

Եղիազար կաթողիկոսէն վերջ, գրեթէ բնակարան չունէր. արտաքին պարիսպն ալ տեղ տեղ փլեր էր։ Վանաց վանահայրերու մէջ հոչակաւոր հանգիստացած է Վահան Բաստամեան՝ որ 1872 թուին Գէորգ Դ կաթողիկոսէն առանձնելով վանահայրութեան պաշտօն, կարեւոր նորոգութիւններով պայծառացուց վանքս։ Չիւռուած պատուհաններ բացաւ և մեծցուց 18 պատուհան, նորոգեց գմբեթը և որմերը. եկեղեցւոյ մէջն ալ զարդարեց բիւրեղեայ ջահով, կարեւոր պատկերներով, խաչերով և այլ սպասներով։

խարխալուած պարիսպներն ալ նորոգելով, եկեղեցւոյն մեծ գրան դիմաց, բոլորովին նոր պարսպի վրայ բացաւ կամարակապ մեծադիր դռներ։ Նոյնպէս կառոյց վայելուչ բնակարան վանահօր՝ չորս սենեակներով և կաթսայ կահ կարասիքով, փոքրիկ պարոց մը և ապագրատուն՝ ուր կը տպագրէր Գիրոց անուամբ ամսաթերթ մը, որ հագիւ երկու տարի տեւեց, շատ ծախուց և իրեն էրեսպա դժուարութիւն պատճառաւ։ Էրեսպայէն դառնալով 1879ին, վանացւոց մէջ հաստատեց Ազգագրական թանգարան մը, Հայոց զգեստներու, տարազներու, կահ կարասեաց, ձեռագործոց և այլ իրաց, բայց սփոփո որ շուտով վախճանեցաւ 1884ին (10 նոյ. – 12 դեկտ.), իրեն օրհնագիտական հմտութեանց յիշատակ թողլով գովելի գրուածքն՝ Իրաւաբանական հետազօտութիւն Գաւառատանագրոց Մխիթար Գոշի։ Ցաւալի է ըսելն, որ Վ. Բանասիրեանցի յաջորդներն, նոյն կերպով առաջ չեն տարած իրենց վանահայրապետական պաշտօնն, հոգ տանելով վանացս նորոգութեանց և պայծառութեան։ — Տեսգր. Կարողիկէ Էջմիածնի, Ա. 273–280։ Այրարատ ամսագիր, էջ 29–32։ Այրարատ, 241–244։ Եւ այլն։

ԳԱՅԻՆԻ կամ ԳԱՅՃՆԱՐ. — Գիւղ Ախթարտայ, Մասրին Բառնի մէջ, համանուն գետակի մօտ։ 1829ին ասոր մօտ տեղի ունեցան Իւսուֆ և Թաւրեզ պատերազմները։

ԳԱՅԼ. — Այս անուամբ գետ մը սկիզբն կ'առնու փոքր Հայոց մէջ, որուն ձորը Լիգոս անուներ կու տան, որ գալ կը նշանակէ։ Կ'անցնի Բարձր Հայոց Եկեղեաց գաւառի մէջէն և Երզնկայի հարաւ արեւմտեան կողմէն կը միանայ Երիսաի հետ։ Ագաթանգեղոս (49) կը յիշէ գետս հետեւեալ տողերու մէջ. «Եկին հասին յԵկեղեաց գաւառ ի գետն Երիզա ... իջին բանակեցան առ ափն գետոյն՝ զոր Գայլն կոչեն»։ Դարձեալ ուրիշ անգամ մը ևս կը յիշէ Երզկ ուանի մօտերը։ — Գետոյս այժմ այլազգիք Ջարտագ–առ անուներ կու տան, Ջարտագ լերան առտուանէրէն բղխելուն համար։ — Տես ՋԱՊ–ՍՈՒ։ — Գալ գետի անունէն ածանցած Քալքիւր կամ Քելքիր կը կոչուի Եկեղեաց հիւսիսային արեւմտեան կողմը ինկնող լճանայի և քիչ արտաւանդ փոքր գաւառ մը։

ԳԱՅԼԱԴՈՄ. — Կը յիշուի վաստակաւոր կանի մէջ, Պաշգալէի հարաւակողմը։

ԳԱՅԼԱՁՈՐ. Տես ԳՈՒՅԼԱՍԱՐ։

ԳԱՅԼԱԹԱՁՈՒՏ. — Լեռ Բարձր Հայոց Մանանագի գաւառի մէջ։

ԳԱՅԼԱԿԱԼ. — Հին գիւղ Միջնեաց ձաւհուկ գաւառի մէջ։ Կը յիշուի նաև Գայլաքալի ջուր, որ անշուշտ գիւղիս մօտէն անցնող վտակ մի է։

ԳԱՅԼԱՈՒԾ. — Կը յիշուի Երզնկայի (Բարձր Հայք) մէջ։

ԳԱՅԼԱՏՈՒ կամ ԳԱՅԼԱՏՈՒԱՑ ՆՈՎԱԿ. — Կը գտնուի Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ։ Բառական ընդարձակ լճնելուն պատճառաւ ծովակ կոչուեր է, ուստի դի Վանայ, Գեղամայ և Հիւսիսային (Պալակացիս) ծովակներէ վերջ, մեծութեան կարգանէ մեր բնիկ աշխարհի չորրորդ լիճն է սա։ Իսկ ծովու երեսէն մեր բոլոր ծովակներէն ուելի բարձր է, գրեթէ 2237 մետր, և շրջապատն է 20 մղոն։ Գեղամայ ծովակի նման ջուրը անուշ է, և անկէ ուելի ձկնաշատ, անոր համար այժմ այլազգիներէն Պալըգ – կեօլ (Ձկնաւիճ) կը կոչուի։ Ձկները համով են և մինչև գառնաշափ մեծութեամբ. կանոնաւոր ձկնորսութեամբ կարելի է տարին կէս միլիոն դահեկանի ձուկ որսալ։ Խիտ գետաձալի և գեղեցիկ են ծովակիս շրջակայքը, ծաղկազարդ լճակներով և յատկի մարգագետիններով։ Գայլատաւայ ծովակի հիւսիսային կողմը, արեւելեան ափէն կէս մղոն հեռու կայ կղզեակ մը հանգերձ մեծատատոհով, որ այժմ լքեալ և ամայի ուերակ վիճակի մէջ է. եկեղեցւոյ աւերակներ կան խաչարձանք։ Այս մենաստանն յատուկ քննութեան կը կարօտի։ — Այրարատ, 491–492։

ԳԱՅԼԱՏՈՒՍ. — Սերիոս այս անուամբ քաղաք մը կը յիշէ, որ կը գտնուէր անշուշտ վերոյիշեալ ծովակի մօտ։ Եօթնևերտով պարսն նուաճեր է քաղաքս խոսրով Ապրուէզ պարսից, ընդդէմ Բիւզանդացւոց մղած պատերազմներու ժամանակ։

ԳԱՅԼԴՈՄ. — Գիւղ Տայոց Պարախցափոր (Օլմի) գաւառի մէջ։

ԳԱՅԼԵԶՈՐ, ԳԱՅԼԻԶՈՐ կամ ԳԼԱԶՈՐ. — *Միմնաց վայոց ձոր գաւառի մէջ կը գտնուի ԺԹ–ԺԴ դարուց հոչակաւոր վիճակատեղի։ վարդան վայոց ձորի վանքերու հետ կը յիշէ նաև «զԳայլուձոր, ուր վարժարանն է և սքեմս սուրբ վարդապետաց մերոց»։ Ուրիշ աշխարհագիր մը վանաց ճիշդ տեղմանն կու տայ բսելով, «Գայլուձորն՝ ի տեղիս Եղեգնձորոյ»։ Կ՝երևի թէ ի հնումն ուրիշ անուն ունի եղեր վանքս, զոր պի Միխիթար Այրիվանցիի վարուց մէջ կ՝լսուի. «ի վանան՝ որ այժմ ասի Գլաձոր». իսկ յիշատակագրիներէն մէկը (Յովհաննէս) կը յայտնէ առաջին անունը, գրելով 1291 ին, «ի վիճակատեղիսն՝ որ կոչի Աղբերց վանս և մականուն Գլաձոր»։ Վանացս ոչ շինութեան ժամանակն և ոչ առաջին և վերջին դէպքերն յայտնի են։ Յոռնօրէ է միայն այն, թէ ԺԳ դարու կէսէն մինչև ԺԴ-ի կէսը հոչակուած էր ժամանակին բոլոր վանքերէն աւելի՝ և նոյն միջոց այս տեղ բարգաւաճեց ազգային դպրութիւնն, մանաւանդ Եսայի վարդապետ Նչեցւոյ (1284–1338) առաջնորդութեան օրով, որ յաջորդեց Ներսես Մշեցիին († 1284)։ Ներսէս՝ հմուտ էր յունարէնի, Գայլեձոր գալով աշակերտեցաւ վանական վարդապետի աշակերտ Վարդանայ, որուն մահէն վերջ, անոր սքեմը նստաւ, «... և լուսափայլեաց զազգս Հայոց ուսմամբ պրոց, և հասեալ ի բարիոք ծերութեան՝ հանգեաւ ի Քրիստոս ի նոյն վանս Գլաձորոյ»։ Բայց Ներսեսի աշակերտն և յաջորդն Եսայի, գինքը գերազանցեց, որ գրեթէ յիսուն եւ հինգ տարի առաջնորդութեան և վարդապետութեան բազմ է։ Կ՝բսեն թէ երեք հարիւր վեմեան քահանայից վարդապետական գաւազան աւետ է, որոց մէջ ամենէն նշանաւորն է Յովհաննէս Եղեգնացի։ Եսայի Նչեցւոյ աշակերտներէն գրուած գրոց յիշատակարանաց մէջ, կը գտնենք գովասանական տողեր վանացս համար, ինչպէս, մայր իմաստից, հատատարան, երկրորդ Աքենք և մայրաքաղաք ամենայն իմաստից։ Մեր նեմեզն գաւրս կը լինի ասա յիշեցն այն ամենայն մականուանիրք՝ որք ուսումն ասած են վանացս մէջ։*

վանքս յիշողներէն ամենք կը վկայեն, թէ եկեղեցին նաւթեայ էր և կը կոչուէր Ս. Աստուածածնի կամ Ս. Նահապետի առաքեալ։ Եկեղեցիէն զատ կը կարծուի թէ կար մատուռ մը Ս. Նշան անուամբ։ — Գայլանի չէ վանացս պիրքն և շէնքերու ինչ անսակ լինէին. միայն կը կարծուի թէ ջրաբուղխ և առանձնացած ու բարձր տեղ մը կը գտնուի, և հարկաւ ձմեռ ժամանակ ցուրտ։ Ասոր վկայ կրնան լինել Մխիթար Եղբայրացիի 1314 թուին տաղաչափելով գրած յիշատակագրի մը հետեւեալ տողերն.

«Թուղթըս անկոկ ու գրիչ չկայ,
Ձուռքըս ցուրտ ու պարզկայ.
Ջարտախտ բարձր ու կրակ չկայ։
Դռներս չոր ու սպաս չկայ.
Եւ այս Գլաձորն ոչ պիտնայ»։ Եւ այլն։ վկայացնելով հոչակաւոր վանացս տակաւաբան նկարագրութիւնն, ազգային ուղեւորաց քննութեան կը յանձնենք գայն, վասն զի եկեղեցւոյ և գերեզմանաց արձանագրութեամբ՝ եթէ հետախոյզ ոմն հրատարակէ, պիտի ընդարձակի տեղւոյս նկարագիրն, և այն ժամանակ միայն պիտի կարենանք աւելի ճիշդ տեղեկութիւններ տալ։ — Միսակաև, 130–137։

ԳԱՅԼԵԶՈՐ կամ ԳԼԱԶՈՐ. — Այսպէս կոչուած է ի հնումն Այրարատայ Շիրակ գաւառի մէջ ձորակ մը, Աւուց արեւելեան կողմը։ Այս ձորակս առնող գուռն ալ կը կոչուէր Գեղեձորոյ։

ԳԱՅԼԻ կամ ՔԼՅԼԻ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ։ Ունի 30 տուն բնակիչ և Ս. Կիրակոս եկեղեցի մը։

ԳԱՅԼՈՑ ՎԱՆՔ. Տես ՍՂՈՒԿ։

ԳԱՅԼՈՒ ՎԱՆՔ. Տես ԳԱՒԼՈՒ ԱՆԱՊԱՏ։

ԳԱՅՊՈՑ կամ ԿԱՅԲՈՑ. — Կիլիկիոյ լեռներէն մին։

ԳԱՅՍԵՐԻՒ. Տես ԿԵՍԱՐԻԱ։

ԳԱՆԱՄԵԼԱ. Տես ԳԱՐԱՄԵԼԱ։

ԳԱՆԼՃ. — Գիւղ Այրարատայ վանանդ գաւառի մէջ։ Ունի 30 տուն հայ բնակիչներ և Ս. Յակոբ եկեղեցի մը։ Գիւղիս հնախոյզ կողմը, երկրի տակէն գտնուեցան բրտեղէն անօթներ և անգիր գերեզմաններ։

ԳԱՆԼՃԻ. Տես ԲԱՆԼՃԻ։

ԳԱՆԼՃԱ. Տես ՂԱՆԼԻՃԱ։

ԳԱՆԼՈՒ ՏԷՐԻՆ. — Այս անուամբ ձորակ մը կայ Կարնոյ և Բարերդի մէջ տեղ։

ԳԱՆԿԱՆ. — Բերդաքաղաք Սիրասխոյ կուսակալութեան համանուն վիճակի մէջ։ Բնակիչք մեծաւ մասամբ Հայ են։ Ցուրեի և խոտաւէտ են շրջակայքը, որով և անասուններ պարարտ են։ Ընտիր են այս կողմանց սերն ու մածունը, ինչպէս նաև մեղրը։ Համանուն Գանկալ վիճակի մէջ կան 8000է աւելի Հայք, իսկ այլազգիք 2000ի չեն հասներ։

ԳԱՆՋԱ. — Թիւր Գաւգարաց, այժմեան Գօռչալու գաւառի մէջ։ Ունի 1046 Հայ բնակիչ, բաժնուած 119 տան, և 3 տուն այլազգի։

ԳԱՆՋԱԿ, ԳԱՆՋԱՅ կամ ԵԼԻՍԱԲԵԹՈՒՊՈԼ. Գղ. ELISABETHPOL. Ռ. Елизаветполь. — Նահանգական և գաւառական քաղաք կը գտնուի Ագուանից համանուն գաւառի մէջ, կ'ինկնայ 40°41 հիւսիսային և 64°6′ արեւելեան երկայնութեան աստիճանաց տակ. 1449 ոտնաչափ բարձր վրիքով։ Քաղաքի մէջէն կ'անցնի Գանձակ գետը, բաժնելով դայն երկու նշանաւոր՝ Հայոց և Թուրքաց մասերու։ Հայոց մասը որ կ'ինկնայ գետի ալ կողմը, բաժնուած է Քիլիսաքենդ և Մոլլաչալու թաղերու։ Թուրքաց մասը գետի ձախ կողմը, բաժնուած է Երեւանցոց, Թուրքաց, Բաղրանչիլար և Նորաշէն թաղերու։ Երեւանցոց թաղի մէջ կը գտնուին Ս. Գէորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, զեղեցիկ պալատներ, հիւրանոցներ և ամենալաւ խանութներ։ Թուրքաց թաղի մէջ՝ ընդարձակ հրապարակ, մզկիթը, են։ Բաղրանչիլար թաղը կը տարածուի Թուրքաց թաղէն դէպի արեւմուտք մինչև այգիները մէջ, որոյ բնակիչք մեծաւ մասամբ Թուրքեր են։ Նորաշէն թաղը կը գտնուի մեծ հրապարակէն դէպի արեւմուտահիւսիս՝ Թուրքաց թաղի եռակը։ Այս տեղ են Ս. Աստուածածնի եկեղեցին և Ս. Սարգսի տաճարեղին։ Եթէ համեմատենք Հայոց և Թուրքաց մասերը, կը տեսնենք որ Թուրքաց մասը կը բռնէ ամենալաւ, հարթ տարածութիւնը, իսկ Հայոցը աւելի բարձր և համեմատաբար աւելի վատ տեղը, բայց փողոցներն, շէնքերը և մաքրութիւնը դիտելով, Հայոցը աւելի բարձր և գեղազանց է։ Երեւանցոց և Քիլիսաքենդ թաղերու փողոցները կանոնաւոր և լայն են, իսկ մես թաղերը, բաց ի մի քանիսէն, ընդհանրապէս անկանոն են և նեղ։

Գանձակի զարդը մեծ հրապարակն է, որ կը տարածուի Թուրքաց թաղի մէջ, դէպի ւոր մզկիթի առջեւ. ունի մօտ 150 սաժէն երկայնութիւն և 40ս. լայնութիւն. բարձր, հարթաքարեայ չինարի ծառեր շարուած են չորս բոլորը, մէջ տեղը խոխոջալով կը վազէ չորս ակով ապրիւր, բազմաթիւ խաղողաստաններ կը շրջապատեն հրապարակը. իսկ հազար ու մէկ տեսակ մրգեր և ուտելեղէններ, որ անկարգ ու անկանոն կերպով դիզուած են ծառերու առուերներու տակ, հրապարակին տարտակարգ զեղեցկութիւնն կու տան։ — Գանձակի երկրորդ արհեստիքը փողոցներու երկու կողմը բարձրացող հին չինարի ծառերն են, որոնց մէջէն կը հոսին ջրեր։ Այս չինարիները չափազանց բարձր և հասա են. մինչև անգամ անոնցմէ մէկին փուճ կոճղի մէջ կոշկակարի մը խանութ է բացուած. ձիաքարշի դիծն քաղաքին փողոցներէն անցնելու պատճառաւ ասիպտեցան կտրելու այդ ծառերը։ Հասարակաց այգին կամ պարտէզն ևս զարդարուած է բարձրաղէզ չինարի ծառերով։

Քաղաքիս մօտ քարահանք չլինելով, շէնքերը ընդհանրապէս աղիւսով կառուցուած են։ Տներէն նորերը բաւական կանոնաւոր, զեղեցիկ և բարձր են, իսկ հները, մանաւանդ թուրքացը անկանոն, ձեռ և ցած են։ Հասարակաց շինուածոց մէջ ամենէն հինը թուրքաց ղլխաւոր մզկիթն է, որ նշանաւոր է նաև ճարտարապետական տեսակէտով։ Շինուած է Շահ Աբ ժամանակ, և կը զարդարուի հրապարակի հարաւային ծայրը. շրջապատուած է պարսպով, որոյ դլխաւոր դրան երկու կողմը կը բարձրանան կրկին մինարէներ. գաւթի մէջ կայ շատրուան, հոս է թուրքաց ոտայոյց դպրոցը։ Թուրքերը ունին նաև ուրիշ երկու աննշան մզկիթներ։


Շահ Աբասի մզկիթէն վերջ քաղաքիս ամենահին շէնքն է Հայոց Ս. Յովհաննէս Մկրտչի մայր եկեղեցին, որ կը գտնուի Քիլիսաքենդ թաղի մէջ։ Կառուցուած է քարուկիր՝ միջակ բարձրութեամբ։ Ունի վեց միա-

պաղատ և բոլորշի սիւներ, կանանց վերնատուն, երկու գաւն արեւմտեան և հարաւային կողմերը, մէկ աւագ և չորս միմեանց վրայ շինուած փոքր խորաններ։ Եկեղեցւոյ շինութեան թուականն է ՌՀԲ (= 1633), ինչպէս կը տեսնուի հարաւային որմի վրայ արեւի ժամացոյցի տակ եղած արձանագրութենէն մէջ։ Եկեղեցւոյ վիմացը կայ գաւիթ փոքրիկ կամարիկներ որ է միաղամայն զանգակատուն։ Ինչպէս արձանագրուած է, գաւթի շինութիւնն եղած է 1816 թուին, Մահտեսի Տէր Գէորգ Տէր Յովհաննէսեանի ծախքով։ Իսկ կամարուիկի արձանագրութիւնն կը յայտնէ, թէ շինուած է 1862 թուին, Մահտեսի Աղաջան Խաչատուրեանի սիփհական արդեամբ։ Այս եկեղեցւոյ գաւթի մէջ թաղուած են Գանձակի գրեթէ բոլոր նշանաւոր մարդիկը, ինչպէս Աղաւնիից «Սուրբ Ներսէս» կամարակոսր հարաւային խորանի տակ, 1742ին։ Մելիք Հաթամի որդին՝ Աբէլ Նոյն տեղը՝ 1776ին. Եղիշէ վարդապետ (1757) գաւթի մէջ, ինչպէս նաև հետեւեալները. Զաքարիոյդի Աթանաս վարդապետը (1764), Երուսաղէմի նուիրակ Թոխաթցի Յարութն վարդապետը (1786), Մուսէ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետը (1800), Ս. Սահիանոս նախաւկայի միաբան Յակոբ նոս վարդապետը (1834), և այլն։ Աբրաքունւոց գաւթիս արեւմտեան դրան առջեւ ամփոփուած է Գաղտնիք Վարագայի գրքի պիւցատներէն Գալի–Մահրաւայի մարմինը (1796), հանդերձ տապանաքարով և արձանագրութեամբ։ Երկրորդ պիւցատ մի ևս Թիւրի–Աբզուռմանը (1796)։ — Ս. Յովհաննէս եկեղեցին ունի չորս քահանայ, 11 հատ ձեռագիր աւետարան, և չորս մատուռներ՝ որք են Տէառնեղբօր Յակոբոսի, Յովհաննու կարապետի, Պանտալէոն բժշկի և Ս. Մինասի. տունք ամփոփուած են արծաթեայ խաչերու մէջ։ Այս եկեղեցիս բաւական հարուստ է, և ուրիշ անշարժ կալուածներէ զատ, ունի նաև բաղանիք մը, որոյ արդիւնքը յատկացուած է ծխական երկսեռ ուսումնարանին, որ ունի մօտ 350 աշակերտ և աշակերտուհի։ Հայոց երկրորդ եկեղեցին Ս. Լուսաւորիչ՝ կը գտնուի Բիւլբանքիանդի վերի մասին մէջ գեղեցիկ շրջապատոցով։ Հայակաղ շէնք է և ընդարձակ, հատատաւած չորս սիւներու վրայ, գմբէթի աւարտած չէ։ Բացի լուսամուտներու մեծութենէն որոնք նեղ ու երկար են, եկեղեցւոյս ձեւն և մեծութիւնը նման է Երուսաղէմի Հայոց Ս. Յակովբեանց վանքին։ Ունի երեք գաւն՝ հարաւային, արեւմտեան և հիւսիսային կողմերը, իւրաքանչիւր գաւն արտաքուստ ունի փոքր և գեղեցիկ գաւիթ։ Եկեղեցւոյս երկայնութիւնն է $30^1/_2$ մեար և լայնութիւնը գրեթէ 20 մեար։ Աբեւելեան որմի վրայ արտաքուստ կայ արձանագրութիւն, յորմէ կը յայտնուի, թէ եկեղեցւոյս հիմքը դրած են 1853 թուին և օծած 1869ին։ Այս եկեղեցիս ալ ունի երկսեռ ծխական ուսումնարան մը, մօտ 200 աշակերտներով։ Հայոց երրորդ եկեղեցին Ս. Գէորգ՝ հողաշէն և անշուք, կը գտնուի գետի ձախ կողմը, Մեծ–Շուկայի մօտ։ Եկեղեցւոյս մէջ կը պահուի Ս. Գէորգի մասունքն, զոր բերած է ծխական ժողովուրդը 1814ին Երեւանէն գաղթած ժամանակ։ Չորրորդ եկեղեցին Ս. Աստուածածին՝ հիմնուած է քաղաքի հիւսիսային կողմը Նորաշէն թաղի մէջ։ Եկեղեցւոյս ծխականները գաղթած են Երեւանէն 1712ին, և կառուցած են քարուկիր, բարձրաշէն և հոյակապ եկեղեցիս 1713 թուին։ Եկեղեցիս ունի մեծատառ ձեռագիր աւետարան մը՝ գրուած 1322 թուին. ունի նաև թագէոս առաքեալի մասունքն՝ արծաթեայ փոքր խաչի մը մէջ հատատաւուած։ — Այս եկեղեցիներէն զատ Հայք ունին նաև Ս. Աստուածածին, Ս. Սարգիս և Ս. Կիրակոս և Ցուդիտա ուխտատեղիները, ուր կիրակի և տօնի օրեր կը հաւաքուին բազմաթիւ ուխտաւորներ։ — Ունին և բաւական հոյակապ, փոքրիկ եկեղեցի մը։

Միւս շինութեանց մէջ նշանաւոր են նահանգապետի տունը, ազգային վիճակը, Յիւրալովի հիւրանոցը, քաղաքային ժողովարանը, Հայոց յաշորդարանը, արհեստաւորաց դպրոցը, և այլն։ — Քաղաքիս չուր կը մատակարարէ Պ. Պետրոս Նանասեանէ փիլիւսաքեանց թաղի մէջ շինուած աղբիւրն, ինչպէս նաև մեծ հրապարակի մէջ պարսկի մը շինած աղբիւրը. Նորաշէն թաղը կը գործ-

ածէ ջրհորի ջուր։ Գանձակի մէջէն կ'անցնի ձիաքարշ երկաթուղի, սկսեալ Փիլխաքիանի վերի մասէն մինչև շոգեշարժ երկաթուղւոյ կայարանը, որ կը գտնուի քաղաքէն դէպի հիւսիս 3 վերստ հեռաւորութեամբ։ Քաղաքս շրջապատած է այգիներով, որոնց մէջ նշանաւոր է Էշմիածնասպատական ընդարձակ այգին։ Գանձակի բնակիչները 1886 թուի աշխարհագրի համեմատ են 11543 արս. և 8751 իգ. ի միասին 20294 հոգի, յորոց 8914ը Հայք են, 11139 Թուրքք, և մնացածը Ռուսք, Վրացիք, և այլն։ Իսկ 1897 ի միջնադարեան աշխարհագրի համեմատ, քաղաքիս բնակիչները ածեր են և եղեր 18238 արս. 14852 իգ. ի միասին՝ 33090 հոգի։ Գանձակի մէջ ամփոփուած են համանուն նահանգի և գաւառի բոլոր նահանգական և գաւառական վարչական հիմնարկութիւնները։ Այս տեղ է նաև գաւառին հոգեւոր կառավարութիւնը, որ ենթարկուած է Վրաստանի և Իմերէթի առաջնորդական թեմին։ Քաղաքիս պատմական դէպքերն կը յիշենք ի տարբեր, նոյն գաւառի նկարագրին մէջ։

ԳԱՆՁԱԿ գաւառը իւր այժմեան սահմաններով կը բռնէ հին Ուտեաց աշխարհի Շակաշէն, Գարդման և Աղբակի փառաւոր գաւառները։ Ասոր մէջ կը մտնէն նաև Ջրաբերդի Գիւլիստանը, բաց ի Թալիշ վիճակէն, Գիւլիստան բերդէն և Հառնկայ վանքէն։ Այս գաւառն ալ, ինչպէս կ'ատանդէ խորենացին, վաղարշակ Ա. Արշակունի թագաւորի ժամանակ ենթարկուած էր Սիսակեան Ատան կուսակալին, բայց յետոյ անցաւ Աղուանից թագաւորութեանը։ Սակայն Հայք շատով կրկին տիրեցին գաւառիս, ինչպէս կ'ըսէ Բուզանդ (Ե. ԺԳ). «Եւ թափէր (սպարապետն Մուշեղ) ի նոցանէ (յԱղուանից) բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿոզէ, և այլն»։ Խորենացւոյ ժամանակ Աղուանները կրկին կը տիրեն գաւառիս, բայց Սմբատ Ա (892–914) նորէն յետ կ'առնու, իսկ իւր որդին Աշոտ Բ (915–928), որ շատ կը սիրէր Ուտեաց աշխարհը, երբեմն պատերազմով և երբեմն սիրով նուաճած կը պահէր զայն։ Ինքնորոշ գաւառ մէջ այս գաւառս ևս, ենթակայ եղեր է Բուզայի արշաւանքին, որ 855ին եկած է Գարգմանցւոց գաւառը, ուր փախած էր Վահակ Սիսականը չարդելով Բուզայի զօրքերը և անոնց զօրապետը իւր ձիու սաքերու տակ կոխկռտելով։ Ինչպէս այժմ, գաւառիս նշանաւոր քաղաքն է Գանձակ, նոյնպէս ի հնումն անուանի եղած է Հին Գանձակը։ Մովսէս



207. Գանձակի գլխաւոր մզկիթը մուտքը։

Կաղանկատուացիի բսածի (էջ 265) համեմատ, Պաղատաի ամիրայի հրամանով և արքունի գանձով 836 թուին Շակաշէն գաւառը գալով արաբ խալիֆա–Փառկոսի որդին, կը հիմնարկէ Գանձակ քաղաքը։ Իւր ժամանակի մէջ Գանձակը կը գտնայ Աղուանից մայրաքաղաք, և հոն կը փոխադրուի Աղուանից կաթողիկոսարանը։ Տասներորդ դարու վերջերը Փալաւուն ամիրան կը տիրէ Գանձակի և իւր յաջորդաց ձեռքը կը մնայ մինչև 1088 թուականը, երբ Պարսից Մելիք շահի հրամանով Պուղան սպարապետը պարսպի մէկ կողմը քանդելով քաղաքին կը

աիրէ և իւր կողմէն կատակել կը նշանակէ։ 1139 թուին սաստիկ երկրաշարժէ Գանձակը կործաներ է, շինութեանց փլատակներու տակ թաղելով բնակիչները։ Նոյն ժամանակ վրաց Դեմետրէ թագաւորը, Թամարի և Գէորգայ հայրը, եկեր և տարեր է քաղաքի գոները իւր աշխարհը։ Կիրակոս. էջ 65. Վարդ. Բարձր. 162։ Վերատին կը շինուի Գանձակ ճիշդ իւր փլած տեղւոյն վրայ։ Ապա յայն 1235 թուին զարձեալ կ'աւերի. Թաթարները կը յարձակին Մուղանի դաշտէն, բնակիչք ի սկզբան կը պաշտպանուին, բայց երբ ճշմամբ մերնականներով պարիսպները կը քանդեն, քաղաքացիք յուսահատած իրենց ստացուածքը գետնի տակ կը պահեն և նորէն տալով տներուն կը փախչին։ Թաթարք նախ կը խուժեն սպաննելով ճնացածները և խնայելով միայն մանկանց. յետոյ գետնի տակ պահուած գանձերն գտնելով և քաղաքը թալանելով կը մեկնին։ Ջորս տարի այնուհետեւ ամայի ճնալէն վերջ, Ջալալադան նորէն քաղաքը շինել կու տայ։ 1239ին շինուած Գանձակը 1606ին կը կործանէ Շահ Աբաս Ա, կատարելով բոլոր քրիստոնեաները, և հին քաղաքէն մի քիչ հետու կը կառուցանէ այժմեան Գանձակը։ Տակաւին կ'ենթարկի հին քաղաքի աւերակները նորէն բանական վար գետակի ալ ու ձախ ափերու վրայ։ Կը տեսնուին շուկաներու, տներու, բերդերու, աշտարակներու ճնացորդներ, ինչպէս նաև մի քանի կիսակործան կամուրջներ։ Գետ կը ճնայ Հայոց գիրքերուս մատուռ մը, որուն այժմ Գէօղ-խամամ անունը կու տան այլազգիք և իրենց ուխտատեղի ըրած են։ Հայկական աւանդութեան համեմատ, այս մատրան մէջ թաղած են Հայք բնիկ Գանձակեցի խոսրով նահատակն, որ պիրխատոս չաւարառուն համար նահատակուեր է։ Իսկ պարսկական աւանդութիւնն կ'ըսէ, թէ սա մահմէտականութիւն ընդունելուն համար նահատակուեր է քրիստոնեաներէն։ Գէօղ-խամամ մղկիթի ժամանակաւ հայկական մատուռն կամ եկեղեցի չինելուն ապացոյց են գաւթի մէջ գտնուած գերեզմաններ, և գիրքերի վրայ կանաչագոյն խաչաձեւ գարկերը։ Հին Գանձակի մէջ ծնած և սնած են Մխիթար Գոշ և պատմաբան Կիրակոս Գանձակեցին։ Նոր Գանձակն ունեցեր է առւս-պարսկական պատերազմներ, նախ 1804 տարւոյ դեկտեմբեր 3ին Ռուսները կը յաղթեն և կը տիրեն քաղաքին։ Երկրորդ անգամ 1826ին պատերազմի Պարսիկները բոլորովին վերջնական կերպով կը յաղթուին, և Ռուսները ի պատիւ իրենց Եղիսաբեթ կայսրուհոյն զայն կ'անուանեն Եղիսաբեթպոլ։ Այս վերջին պատերազմի մէջ Հայերէն նշանաւոր հանգիսացան ինչպէս իշխան Մատաթեովը, նոյնպէս և Հայ հնձելագունդը, Մանուչարեան Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդութեամբ։ — Գանձակ գաւառի մէջ եղեր են հետեւեալ Հայ մելիքութիւնները, Մելիք Բէկլարեան, Մելիք Մնացականեան, Մելիք Շահնազարեան և Մելիք Ռոստոմեան։ Ասոնցմէ առաջինը իշխեր է Կիրմիզլոր կամ Գելիստան մահալին, որ նախնի բաժանումով կ'ինկնար Ղարապապի խանութեան մէջ։ Այս մելիքութիւնը կը կազմէր խամսայի (հինգ) մելիքութիւններէն մին, որ ի սկզբան բոլորովին անկախ եղած է և յետոյ ենթարկուած Ղարապապի խանութեան։ Միւս մելիքութիւնները կը գտնուէին Գանձակի խանութեան մէջ, և գրեթէ շարունակ Գանձակի խաներու ձեռաց տակ են եղած։ Այս մելիքներու պատմութեան փափաքողք կրնան ծանօթանալ կարդալով Ե. Լալայեանցի Գանձակի գաւառ գրքի Ա մասի 11—61 էջերը։ — Նշանաւոր էր ի հնումն Գանձակի բերդը, որ կը գտնուէր քաղաքի հիւսիսային կողմը, հարթ դաշտի վրայ։ Բազմաթիւ պատերազմներու առթարէզ գտնուել վերջ, 1870 թուին հիմնովին քանդուեցաւ Ռուսաց կառավարութեան կարգադրութեամբ։ Այժմ այս տեղ շինուած են և կը շինուին գանազան շէնքեր։ Գանձակի բերդը խիստ ընդարձակ էր, ունէր վեց աշտարակ և տարօծութիւնն մէկ քառակուսի վերստէն աւելի էր։

Այժմեան Գանձակ գաւառը կ'ինկնայ 41°9′ և 40°1′ հիւսիսային լայնութեան և 63°7′ և 64°60′ արեւելեան երկայնութեան մէջ։ Տարածութիւնն է 8398,2 քր. վերստ կամ 9557,3 քր. հազարամեայ։ Այս թիւէն կը յայտնուի որ Գանձակի գաւառը Ազգերովկասի բոլոր գաւառներէն մեծագոյնն է, բաց ի Բագու նահանգի Ջեւատու գաւա-

ակն։ — Գաւառիս հարաւային և հարաւ–ա–րեւմտեան սահմաններըը, գրեթէ 125 վերստ երկայնութեամբ կ'երկնայ Հայ–Գանձակեան լեռնաշղթան, Շահ–տաղէն մինչև Մառւ լե–ռը։ Այս լեռնաշղթան կը ծառայէ իբրև ջրաբաշխ այն գետերուն, որք կը թափին մէկ կողմէ Կուր գետը, և միւս կողմէ Ա–ռանձայ լիճը։ Հայ–Գանձակեան լեռնաշղթ–թեայի միջին բարձրութիւնը կը հասնի 9600'ի. իսր գագաթներէն նշանաւոր են Ղարա Ար–խայ (10081'), Յատաւանախաչ, Օղրուջա (10936'), Գիւալ–տաղ (11057'), Բեհեւ–շաւի, Բազիրկեան, Ղաւիշ (12263') և Մառւ (11219')։ Այս գլխաւոր լեռնաշղթ–թեայէս զատ կան նաև ուրիշ փոքր լերանց շղթաներ, յորոց անուանք ունին նշանաւոր գա–գաթներ, ինչպէս են՝ Ղուզդարա (11035'), Հասան Ղալա, Քեամփաս, և այլն։ Գլխա–ւոր լեռնաշղթայի Գանձակի նայող կողմը, կը ներկայացնէ անտառէ զուրկ ալպեան եր–կիր. նոյնպէս անտառէ զուրկ են կողմնակի ճիւղաւորութեանց վերին մասերը, որոնք կը կազմեն ամառնային ընդարձակ արօտատե–ղիներ։ Անտառներով ծածկուած են ընդ–հանրապէս լեռնաշղթաներու և անոնց ճիւ–ղերու լանջերը. գետոց և գետակներու հո–վիտներր, ինչպէս նաև կաւոր գետափր։ Պո–պի, Փալան Թէօքչի և Մուրադայի շղթա–ները, որոնց բարձրութիւնները անընշան են, կը ներկայացնեն անտառէ զուրկ ձմեռնային արօտատեղիներ։ — Հայ–Գանձակեան լեռ–ները կազմուած են կրանիտի և պորփիրի տեսակներէ. մանաւանդ հիւսիսային կո–ղերու մէջ առատ կը գտնուին կառուցային կազմութեամբ կրաքարեր։ Լերանց տարբա–ր կազմուած են նեպտունապրութեան ծագումն ունեցող հրաբուղխներէ, կարծր կրա–քարէ, են.։ — Գաւառիս գետերէն գլխաւորն է Կուր, որ թէպէտ մօտ 125 վերստ ըն–թացք կ'ունի գաւառիս մէջ, բայց իր ան–կողնին խոր լինելով, չեն կարող ընակիչ–ները ոռոգման համար ջուր առնուլ։ Միւս գետերն են. Ինձա–չայ, Ղարա–չայ, Կոշրակ, Գանձակ, Շաւկոր, Զաիամ, և այլն։ Գան–ձակ գաւառն ունի նաև մի քանի փոքր լճեր, որք են՝ Գեօգ–կեօղ, Ասոժոռ ծով, Միշիխ–ևաժով կամ Ջալի–կեօղ։


Գաւառս շատ հարուստ է հանքերով, օր–օր կը գտնուին նորանոր հանքերու տե–ղեր, և ժողովուրդը, կարծես հանքային տեղ–դով բռնուած, հանքեր գտնելու համար կ'ինկ–նայ սար ու ձոր։ Հանքերէն շատ քիչերը կա–նոնաւորապէս կ'արտահանուին, և դեռ նոր կ'սկսուին ընկերութիւններ կազմուիլ, ա–նոնց մշակութեան համար։ Հանքերու տե–սակներն են՝ քիչ քանակութեամբ ոսկի և արծաթ, խիտ առատ պղինձ, երկաթ, պաղ–ղեղ, նաւթ, և այլն։ Այս հանքերու վրայ աշխատողներն են բազմութեան կարգաւ, պարսիկներ, թաթարներ, հայեր, ռուսներ, գերմանացիներ, յոյներ, և այլն։ — Գան–ձակի գաւառն շատ հարուստ է նաև բուսա–կանութեամբ. կլիմայի և հողի յատկութեան տարբերութիւնները պատճառ կը գտնան բուսականութեան բազմազանութեան։ Լա–լայնաց՝ կը յիշէ գաւառիս 64 տեսակ գա–նազան բուսոց, խոտեղիներց և ծառոց ա–նուանները։ Հովիտները բռնուած են պար–ուկներով, ուր կը մշակուին հնձանելի, տանձենի, թթենի, դեղձ, նռնենի, սերկե–ւիլ, շագանակի, և այլն։ Գաշտային ցած մասերը տարածուած են խոզղոի ընդարձակ այգիները, որ առատութեամբ կու տան խա–զողի բազմաթիւ տեսակներ, որոց անուանք են. Լկենի, Թաւրիզենի, Ցեղացի, ասոնց–մով բնաւոր դիներ կը շինուին. Իժապաուկ կարմիր և սեւ, Կանաչկենի և Մարանգենի՝ ասոնք ուտելու խաղողներ են։ Գաւառս զուրկ չէ նաև գանազան տեսակ կենդանիներէ և թռչուններէ. վերջիններէն յիշենք սարեակ, արաւյա, ծիծեռնակ, պիրոլ, ճարնկ, սոխակ, խաղաղանիկ, անձեղ, խածկաճիկ, յայտոյ, և այլն։ Այս թռչունները կը պատկանին հրվեցիկներու խմբին, և ոչ միայն օգտաւէտ են իրենց երգերով մարդս զուարճացնելով, այլ և կը սչնչացնեն քանի մը վնասակար միջատներ, թրթուրներ և ձուներ։ Գետաւային ափերի մեծ թռչուններէն նշանաւոր են՝ կիու և կացահարի քանի մը տեսակներր։ Փե–լամիչներէն յիշենք սպիտակագլի արծիւ, սեւ անգղ, շահէն, և այլն։ Ընտանի կենդանի–ներէն կան՝ գոմէշ, գոմէշ, ձի, էշ, ջորի, ուղտ, ոչխար, այծ, խոզ։ Իսկ վայրիներէն՝ ագռաւ, գայլ, արջ, եղջերու, նապաստակ, և այլն։

Գանձակ գաւառի մէջ կը բնակին գլխաւորապէս Հայք, Թուրքք, Ռուս ազանպատներ և Գերմանացիներ. վերջին երկու ազգերը գաղթականներ են: Հայոց մեծագոյն մասը բնիկներ են, իսկ փոքրագոյնը՝ գաղթականներ Պարսկաստանէն, Ջուանշիրի, Երեւանի և Ղազախի գաւառներէն: Գաւառիս Հայոց գլխաւոր, գարգաց, գանազան տալորակութեանց, կերակուրներու, հիւանդութեանց, դեղոց, և այլն, վրայ մանրամասն կը խօսի Լալայեանց իր Գանձակի գաւառագրքի Բ հատորի մէջ: — Մի քանի խօսք ևս Գանձակի կուսակալութեան համ նահանգի վրայ, որոյ տարածութիւնն էր վերջին հրատարակութեանց համեմատ 44136 քառ. հազարամեար. և ունէր 888954 բնակիչ, ըստ 1897 տարւոյ վիճակագրին: Բնական բերքերէն 1891 տարւոյ մէջ հանած են 39000 տակառաչափ գանազան հատիկներ: Երկիրը յառաջ կը բերէ ամէն տեսակ արմտիք և բարեխառն կլիմայի ամէն տեսակ պտուղներ: Ծխախոտի մշակութիւնը ուելի տարածուած է Գանձակի, Ալաշի, Ղազախի և Նուխիի գաւառաց մէջ. 1892ին 166 գիւղեր 181 հարիւրակալ տարածութեան վրայ 1391 անկապտրծութիւններէ, տասացած են 332 տասկառաչափ ծխախոտ: Ականներն ուելի տարածուած են Գանձակի գաւառի մէջ, և գրեթէ տարուան մէջ 80000 հարիւրալիտր գինի կը շինուի: Շերամաբուծութիւնը խիստ շատ տարածուած է Գանձակի նահանգի մէջ. 540 շերամոցներ 1886–1890 տարիներու մէջ միջին հաշուով տուած են 1565 տասկառաչափ բոժոժ (որուն կէսէն ուելին Դուխիի գաւառէն): Մետաղական մշակութիւնը խիստ շատցած է վերջին ժամանակներս. ամէնէն ուելի տարածուած է Գանձակի, Ալաշի և Ջուանշիրի գաւառաց մէջ, և տարին յառաջ կուգան 35000 տակառաչափէն ուելի արմտիներ, որոնց հիմին հանելով տեղական գործարանաց մէջ կը գրկուի Հիւսիսային Ամերիկոյ Միացեալ Նահանգները: Գանձակի պտուղներն, մանաւանդ դեղձն, տանձն և նուռն խիստ անուանի են, նոյն իսկ նահանգէն դուրս: — Ընտանեպահութիւնն ևս խիստ զարգացած է նահանգիս մէջ, 1890ին կը հաշուէին 69870 ձի, 3878 ջորի, 31406 էշ, 66797 գոմէշ, 393612 ևզ, 1236502 ոչխար, 745 ուղտ, 65555 այծ, 33966 խոզ: Նշանաւոր են Ղարապապաղի ձիերն, որոնք կը գտնուին նահանգին հիւսիսային կողմը: Մեղուաբուծութիւնն խիստ քիչ տարածուած է, և այն ալ ուելի լեռնակատաց մէջ: Ընտանիները կը բռնեն 933000 հարիւրակալ տարածութիւն. որոնց մեծամասնութիւնը կեդրոնացած է Ղազախի և Ջանդիզուլի գաւառաց մէջ: — Արհեստներու վերաբերեալ մեծ գործարաններ քիչ կան, և երկրին արհեստանոցները փոքր են և ուելի տնական: Այս արհեստանոցաց մէջ կը պատրաստուին բրդեղէն և մետաքսեղէն ապրանքներ: 1893ին կային միայն 63 մեծ արհեստանոցներ, որոնք առաջ բերին մօտ 4600000 ֆրանկի ապրանք. 1891 տարւոյ մանրամասն վիճակագրութեան համեմատ, ամբողջ նահանգին մեծ ու փոքր գործատանց թիւն կը հանէր 1517ի, յորս կ'աշխատէին 7795 աշխատաւորք, և տարեկան արդիւնքն կը հանէր մօտ 8 միլիոն ֆրանկի: Այս գործարաններն են՝ շերամոց, գարան, բրատնոցք, կաշւոյ, մետաքսեղինաց, ծխախոտի, օճառի, հալոցք, եւն.: Գանձակի արտաքին վաճառականութիւնն բաւական քանուկ է և օր աւուր զարգացման մէջ. 1890ին նահանգէն դուրս ղրկուեցան 55000 տակառաչափ ապրանք, յորոց գլխաւորներն էին. արմտիք, պտուղք, գինի, մետաքսակ, ընկոյզ, պղինձ, բուրդ, խաղող, գորգ, փայտ, մետաքս, կաշի, բամբակ. իսկ ներս բերին 42000 տակառաչափ ապրանք, յորոց գլխաւորները էին. քարիւղ, աղ, շաքար, երկաթ պողպատ, և այլն: — Ագրգամ, 35–53, Գանձակի գաւառ, Ա 5–10 և 61–94: Եւ այլն:

ԳԱՆՁԱԿ կամ ՔԷՕՍԼ–ՄԷՀՄԷՏ. — Գիւղ Միւնհաց Գեղարքունի գաւառի մէջ, կը կարծուի հին Գանձազանտառ գիւղը: Անցեալ դարու մէջ բարգաւաճեր է գիւղս նոր գաղթող Հայերով. այժմ բնակչաց թիւն 1600ի կը հասնի, բաժնուած 150 տան: Ունի հին եկեղեցի մը Ս. Գէորգ՝ բոլորովին նման Նորատուսի եկեղեցւոյն, կարծես մի և նոյն վարպետ և մի և նոյն ժամանակ կառուցուած

լինէր. գմբէթին կոթծանած լինելով, նոր գաղթականներէն փայտայարկ ծածկուած է։ Ունի մի քանի արձանագրութիւններ, որոց հնագոյն թուականն կը հատնի 1513 տարւոյն։ 1889 թուին, Աբեղ Զաքարեան՝ իրեն ծախքով եկեղեցւոյն չորս կողմը պարիսպ քաշեց. և ուռենիներով զարդարուած հանգստեան ճեմելիքներ պատրաստեց։ — Միաբանական, 42։

ԳԱՆԶԱԿ. — Ձերքակ գիւղ Միւնեաց վայոց ձոր գաւառի մէջ։



208. Քանդակ Գանձակ գիւղի եկեղեցւոյն։

ԳԱՆԶԱԿ կամ ԳԱՆԶԻ. — Գիւղ Միւնեաց Գողթն գաւառի մէջ, այլազգիներէն կը կոչուի Գանասայ կամ Գեանասա։ Գիւղս Միաբանողաց գիւղերէն ամենէն հեռագոյնն է։ 1512ին կը յիշուի Գանձակի գիւղապետն (Մելիք) Սիլուան (Siluan) անուամբ մելիք։ Ժէ (1603) դարու սկիզբը ունէր 70 տուն, 200 հոգի չափահաս և 150 մանկտւնք, և 20 տուն մահմետականաց։ Գիւղս քիչ հեռու կար փոքր վանատուն մը և եկեղեցի յանուն Ս. Աստուածոյ Աստրեի և Յակովբայ։ Նոյն դարու կիսուն 1 տուն և 5 հոգի միաբացած էին Միաբանողներէն, և եկեղեցին կը կոչուէր յանուն Տիրամօր. 1725 ին ալ կը յիշուի այս վանաց հայրն Տէր Պետրոս։ Ներկայ գիւղս բոլորովին այլազգաբնակ է և ունի 28 տուն։ Գանձակայ եկեղեցւոյ մէջ կայ թիւ 208 քանդակն, որ կը թուի խաչի պատուանդան, վասն զի վրան գրուած էր 1476ին. Խալս յիւաստակ Թվ. ՋԻԸ։ — Միաբանական, 320–321։

ԳԱՆԶԱԿ. — Հայարնակ գիւղ Վասպուրականի Ուշտունեաց գաւառի մէջ, Նարեկայ վանքէն 4 ժամ հեռու ծովակի եզերքը։ Ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը և մօտ 50 տուն բնակիչ։ Գիւղէս քառորդ ժամ հեռու, լերան մը կողին վրայ կառուցուած է Լուսապատուղ Ս. Սաւակ փոքրիկ և անշուք մենաստանը։ Այս տեղ, գեռ շէնք չեղած, աղօթելու կու գար Կարմրակայ վանաց միաբան ումն ճգնաւոր, Սահակ անուամբ. և ուրիշ հետեւ ինքը միականի էր, կը խնդրէր Տիրամօրէն որ միւս աչքին ալ լոյս տայ՝ որ գինքը տեսնայ, և այսպէս փափաքով կը տեսնայ գՏիրամայրը, և կայր աչքը կը լուսաւորի, իսկ լուսաւորը կը խաւարի։ Այդ դէպքէն մինչև ցայժմ այս տեղ ուխտաւորք գարձած է և բոլոր աչքի ցաւ ունեցողները հոս կը գիմեն։ — Տեղագր. Հայս, 252։


ԳԱՆԶԱԿ. — Հայարնակ գիւղ Վասպուրականի Արճիշակովիտ (Ականց) գաւառի մէջ։ Ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը։ Գիւղիս մօտ է, գէպ ի հիւսիս կենսափորի կամ Գինաքերոյ վանքը։

ԳԱՆԶԱԿ. — Գիւղ Աղուանից Կոկիսոն գաւառի մէջ. կառուցուած է գոգաւոր սարահարթի մը վրայ։ Օդն և կլիման լաւ են, բայց ջուրը վատ. բնիկներէն նշանաւոր է ցորենն։ Բնակիչք ամբողջ հայ են 1037 հոգի, բաժնուած 144 տան. գաղթած են Գիւմակի և Վարանդայի Հատրութ, Թաղլար, Նէնկի, Կինի և ուրիշ գիւղերէ։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի, կառուցուած 1842ին ժողովրդեան ծախքով. երկրաշարժէ վնասուած է։ Ունի նորաշէն ուսումնարան, որ կառուցուած է Գանձակիս և Թուրի գիւղի հասարակութեան ծախքով. այս գիւղերը իրարմէ միայն կէս ժամ հեռու են։ Ուսումնարանի մօտ եղած հին հանգստարանի խաչքարերու ձեւն, հետախոյզներու լսածի համեմատ, կը վերաբերին ութերորդ դարու։ Ասոնցմէ միայն վրայ գտած են հայկական ՄՔ (= 760) թուականը։ — Գիւղիս հա-

բաւական կողմը ձուաձեւ բլրի մը գագաթը կայ Սուրբ Գանձակ անուամբ ախտաւանգի, ուր կը յաճախեն բազմաթիւ ախտաւորներ։ Ախտաւանգեայս շուրջը ամփոփուած են շատ հին տնջկեցաքներ, ինչպէս կ՚երեւի հին առաջնաբարերէն։ — Ազդարար, 195—196։

ԳԱՆԶԱԿ. — Այս անուամբ վերին և ներքին կրկին գիւղեր կան Այրարատայ ձախակողմ (Ասլանաբ) գաւառի մէջ։ Առաջին երկուքին ևս բնակիչք այլազգիք են։

ԳԱՆԶԱՍԱՐ. — Արցախի ամենէն հռչակաւոր վանքը կը գտնուի խաչէն գաւառի մէջ, Գանձասար լերան հարաւային ստորոտը, գեղգկագիր և տեսարանաւոր բարձրաւանդակի մը վրայ։ Երբեմն վանքիս մօտ կար նոյն անուամբ գիւղ մը, որոյ բնակիչները կը բնակին այժմ վանք գիւղը. մինչեւ ցայժմ կը նշմարուին Գանձասար գիւղի ճեմացարդները։ Վանքս իր անունն առած է Գանձասար լեռնէն, որ այս կողմանց բնակչաց պատմածի համա-



209. Գանձասարի վանքը։

ԳԱՆԶԱՀԱՆԳ. — Կը յիշուի Շիրակայ (Այրարատ) Հոռմոսի վանաց արձանագրութեան մէջ։

ԳԱՆԶԱՁՈՐ. — Հայաբնակ գիւղ Կարնոյ առաջնորդական վիճակի մէջ։ Ունի 300ի չափ բնակիչ և Ս. Կարապետ եկեղեցի մը։ — Այս անուամբ գիւղ մի ևս կայ Օլթի գաւառի մէջ, որ այժմ աւերակակ է։

ԳԱՆԶԱՂԱՆՏԱՈ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

մաս, արծաթի հանք ունենալուն համար այսպէս կոչուած է։ Այս հռչակաւոր վանքի հիմնարկութեան ժամանակն յայտնի չէ, բայց Զալալ-Թօլա իշխանէն առիլ առաջ եղած է, որ յամանց կը կարծուի անոր շինողն, վասն զի Սիւնեաց պատմչէն կը յիշուի ի գարու կիսուն, և Մխիթար Գոշէն ի՛ր գարս մէջ։ Եւ որ [illegible] Զալալայ առհմին տապանատունը այս [illegible] մէջ էր, և Զա-

լալ–Գալայի հայրը կաակով պատուիրած էր իրեն որ հայրենի հանգստարանին վրայ և. կեղեցի շինէ, ուստի սա իր հօր կամքն յարգելով վանքս նորոգեց և շինեց այժմեան հոյակապ եկեղեցին 1216–38 թուականներուն, որուն ընդարձակ արձանագրութիւնն տակաւին անվնաս կը մնայ։ Եկեղեցւոյ շինութիւնը մանրամասն կը պատմէ կիրակոս։ Նաւակատիքը միջահանդէս կատարուեր է 1249 թուին վարդավառի ատենն, այդ հանդիսին ներկայ եղեր են Աղուանից Տէր Ներսէս կաթողիկոսը, շատ եպիսկոպոսներ, վանական վարդապետք, բազմաթիւ քահանաներ և երիցուներ։ Եկեղեցիս շինուած է ամբողջապէս սրբատաշ ազնիւ քարով, չորս հրաշակերտ կամարներու վրայ, և նուիրուած է Ս. Յովհաննէս Մկրտչի։ Ունի հրաշակերտ կաթուղիկէ, մէկ աւագ և ութ փոքր խորաններ, մէկ գաւն արեւմտեան կողմէն, ութ փոքր, երեք միջակ, չորս բոլորակ և չորս մեծ լուսամուտներ և մէկ աւազան։ Երկայնութիւնն է մետր 16,95 և լայնութիւնն մ. 12,25։ Եկեղեցւոյ արեւմտեան կողմը կից շինուած է փառաւոր գաւիթ մը սրբատաշ քարով, որ ունի վեց սիւնակից և երկու միապաղաղ միջնասիւներ։ Մէկ մէկու միջէ անցած չորս խաչաձեւ կամարներու վրայ հանդչած է զանգակատան գեղեցիկ քանդակ գմբէթը։ Գաւիթս ևս ունի իր շինութեան արձանագրութիւնը, յորմէ կը տեղեկանանք թէ Ջալալ–Դօլա, ամուսինն Մամքան և հարազատ որդին Ամարէկ, եկեղեցւոյ շինութիւնն աւարտելէ վերջ հիմնարկած են այս հրաշալի գաւիթը։ Ինչպէս կ'երեւի գաւթիս շինութիւնն սկսուած է Ջալալ–Դօլայի կենդանութեան օրով և աւարտած է նորա մահէն վերջ, իսկ արձանագրութիւնն գրուած է շինութիւնը աւարտելէ վերջը, որովհետև կը կրէ ՁԽԵ (= 1266) թիւը։ Եկեղեցւոյ շինութենէն տասնեւհինգ տարի վերջը, Ջալալ–Դօլա Ղազուին քաղաքը կը նահատակուի անգութ Աղուն խանէն և կը ձգուի ցամաք ջրհորի մը մէջ, որոյ մարմինը յետոյ Ամարէկ որդին բերել տալով կ'ամփոփէ Գանձասարի գաւիթը տաճարի դրան մօտ։ Հայրենի իշխանութեան և միանգամայն բարեպաշտութեան ժառանգն Ամարէկ, վանացս պայծառութեան շատ օժանդակեց. իրեն հրամանով իր հօրեղբօրորդին և վանացս Յովհաննէս առաջնորդը 1271 թուին Գանձասարի կալուածները շատցուց, նոյնպէս իր քոյրը Մամախաթունն՝ պարոն Ռամկի կինը, որ ուխտի եկաւ 1280 ին։ Ուրիշ բազմաթիւ իշխանազունք և բարեպաշտ ոչ սակաւ նուէրներով պայծառացուցած են ուխտս, որոնց արձանագրութիւնք տակաւին կը կենան անեղծ եկեղեցւոյ ներքին և արտաքին սրմոց վրայ։ Գաւթի արտերու վրայ ևս արտաքուստ փորագրուած են բոլոր շարժական և անշարժ կալուած և ինչք նուիրողաց արձանագրութիւնները։ Իշխանազուն պայազատք և Աղուանից կաթողիկոսները շէն պահեցին վանքս մինչև ԺԶ դարու կէսը. յետոյ կը թուի՝ թէ ամբողջ դար մը անշուք վիճակի մէջ մնացած է, վասն դի արձանագրութիւնք կը դադրին. և ապա 1657 ին Յովսեփյ որդին Աբամ Թաւլիշայ մելիքը, նորոգեր է եկեղեցւոյ և գաւթի տանիքը, ինչպէս նաև խախտած սրմերը. մելիք Աբովի արձանագրութիւնն կը գտնուի գաւթի դրան վրայ։ Վանքս ունի բազմաթիւ արձանագրութիւններ։


Գանձասար անուանի եղած է Աղուանից վերջին կաթողիկոսարանն լինելով, սկսեալ 1555 թուականէն։ 1815 թուին Էջմիածնի Ամենայն և Ռուսիոյ ակրութեան ձեռքով Աղուանից կաթողիկոսութիւնն վերցաւ, և դաւ մատրաշօլութիւն։ 1836 ին Աղուանից վերջին կաթողիկոսի և մատրաշօլի Սարգիս Եփ յաղօրդի, Բազմաստր Հասան Ջալալեան արքեպիսկոպոսը, Գանձասարէն աթոռը փոխադրեց Շուշի։ Գաւթի մէջ են կաթողիկոսաց ամանց գերեզմանները, հանգերձ արձանագրութեամբը։ Վանքս շրջապատուած է պարսպով, որ ունի երեք գուռն արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերը։ Ունի քանի մը հին սենեակներ, որոնք թափուր են վանականներէ. միայն մէկ վանական վարդապետ կայ այս տեղ։ Գանձասար, ինչպէս յայտնի է արձանագրութիւններէն, երբեմն ունէր ընդարձակ հողեր, կալուածներ և անասուններ, որոնք օր աւուր չափազանցութեամբ, այժմ մնացեր է միայն 9000 արտաւար հող ու անասուն։ Ախպիսի հոչա-

կատար վանք մը փոխանակ զարգանալու և բնաշխարհի առաջնակարգ վանքերէն մին լինելու, այժմ անհնամ ձգուած է, բարգաւաչելու և նախնական քայքայուելով շարունակաբար։ Հետզհետէ քարերը կը թափին, եկեղեցւոյ առնիքն խախտած լինելով շարունակ կը կամչէ. պարիսպը եւս տեղ տեղ քանդուած է։ Գաղցած են այնքան բնական ձեռագիրներն, մեսագածներն ալ խնդասութեան և անհնամութեան զոհ։ Այժմեսով հոգեւորական պաշտամունք, ժամասացութիւնք չեն կատարուիր այս տեղ։ Վանացս պիմակչէն կ'անցնի խալեն գնացք։ — Ջալալեանց, Ա. 181–152։ Արցախ, 172–180։ Եւ այլն։

ԳԱՆԶԱՓԱՐԱԽ. — Հ. Ինճիճեան և Ա. Լիշան կը գնեն այս անունամբ անապատ մը Սիւնեաց մէջ, որ անշուշտ առաւելեան սխալմամբ գրուած է, և լինելու է Հաւանականաւօրէն Բաղք գաւառի Տանձափարախն։

ԳԱՆԶԱՎԱՆՔ. — Այս անունամբ վանք մը կայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Օրտակլուէն 3 վերստ հեռու։ Կոպմանցս բնակիչք ամայի վանքիս, այժմ Աղգիր վանք կ'ըսեն, ըստ որում, մէջը ոչ մի գրի նշան չի գտնուիր։ Տաճարի շինութիւնը խաչաձեւ է, միջակ գրութեամբ. կառուցուած է բարձր քարափի վրայ՝ ծովու մօտ, հասա ու կարծր քարակիր սրմերով։ Վանքիս մօտէն կ'սկսին շատ հին նահապետական գարու շինուած բերդի և պարսպի մնացորդներ։

ԳԱՆԶԻ. — Կիլիկիոյ հին բերդերէն մին Տաւրոս լերան սարբառը։ Միմէոն անն գրիչ



210 · Գանձակեցւոյ հին չէվերտ տաճարը։

1335ին այս տեղ գրած է ձաշոցի մը մէկ մասը, և միւս մասն ալ Մաշտոցի գիւղը։

ԳԱՆԶԻ. Տես ԳԱՆԶԱԿ։

ԳԱՆՆԻՏԼԻ. — Ծովային Կիլիկիոյ մէջ,

Լամսոյ արեւմտակողմը, այս անուամբ հին աւերակներով նշանաւոր տեղ մը կայ, զոր Լանկլուա համարեց Իսաւրիոյ Նեապոլիսը։ Մնացորդաց մէջ նշանաւոր է հռովմէական տարազով վեց բարձրաքանդակ պատկերներ եւ յունաատառ արձանագրութեամբ մահարձան մը (թ. 211)։ Բաւական շատ են նաեւ քազաքին շինուածոց աւերակներն։ Յայտնուած հինգ եկեղեցիներէն գլխաւորին բեմն, կանքը եւ մի քանի այլ մասերը միայն մնացած են. դրան վրայ կայ յոյն արձանագիր, որմէ ուրայ ևս կը նշմարուին նկարներ։ — Սիռուան, 344–345։

ԳԱՆՋԱՑ. Տես ԳԱՆՋԱԿ։

ԳԱՊԱԴ–ԹԷՓԷ. — Լեռ Ա. Լերարատայ վանդակ գաւառի հարաւային սահմանագլուխը։ — Ա. անուամբ լեռ մը ևս կայ Ճակատաք գաւառի մէջ։ — Կիլիկիոյ մէջ ալ կայ համանուն գիւղ մը տաճկաբնակ, Սսոյ հիւսիսային արեւմտեան կողմը։

ԳԱՊԱԽԼՈՒ. Տես ՂԱՓԱԽԼՈՒ։

ԳԱՊԱՍԱԳԱՂ. — Գիւղ Հերասախոյ՝ հարաւ արեւմտեան կողմը։


ԳԱՊՈՒՐԿԱՂԸ. — Գիւղ Կիլիկիոյ, Մաբաշի և Սսոյ մէջտեղ, աւելի վերջնոյն մօտ։ Ինակիչք Հայք և Թուրքք խառն։

ԳԱՌՉՆԿԵՐՏ. Տես ԳԱՌՆԱԿԵՐՏ։

ԳԱՌԿԱԴՕՆՄԱՁ. — Գիւղ կը գտնուի Ա. Լերարատայ Ղրագածոան (Թալին) գաւառի մէջ։

ԳԱՌԿԱՂԸ. — Ա. անուամբ կրկին գիւղեր կան վերին Կիլիկիոյ (Զորրորդ Հայք) մէջ, Բալուէն 8 ժամ հեռու։

ԳԱՌԿԱՊԱՁԱՐ. — Կրկին գիւղեր կան Գանձակու և Լերեւանու նահանգաց մէջ. երկուքն ալ Թամքարաբերդի են։ — Ա. անուամբ




211. Յունական մահարձան Գանձիտէլիի մէջ։

Ս. Աստուածածին, կառուցուած երեք կամարներու վրայ 1838ին։ Գիւղին մօտերը կան մի քանի վանքեր և ուխտատեղիներ։ — Ծաղկոց վանք, հիմնարկուած է Շամքոր գեաուկի ձախ ափի վրայ ժայռի մը գլուխը։ Վանքը ոչ սիներ ունի և ոչ կաթողիկէ. այլ ունի սովորականէ շատ մեծ գաւիթ, և նեղ նեղ լուսամուտներ։ Հիմնարկութեան թուականն անյայտ է, նկարքուստ ունի ՌՃԼՀ (= 1698) թուականու համառօտ յիշատակարան մը։ Վանքս ունեցեր է նաև փայտաշէն գաւիթ, որ ի վերջոյ հնութեան պատճառաւ քակեր և նոր շիներ են Գառնակերցիք։ Այս մենաստանէն մի քիչ վեր է Գաբրիել և Միքայել Հրեշտակապետաց անուամբ շինուած վանք մը, որ նոյնպէս գետակի ձախ ափին կառուցուած է սապատձեւ։ Ունի երկու փոքր և մի աւագ խորան, և ՌՄԿԶ (= 1816) թուականու շինութեան արձանագրութիւն։ Վանքս ունի իր հին խուցեր՝ նեղ լուսամուտներով. այգի մը ևս ունի և թթենի, կեռասի, ընկուզի, և այլ ծառեր։ Գաղնի խաչ՝ Գառնակերի ամբեմտեան հիւսիսային կողմը ուխտատեղի մի է, և երկրորդն քարայր մը՝ երեք խաչքարերով։ — Աբգարեան, 315—317։ Տես Գեղարդիոնի։

ԳԱՌՆԱԿԵՐՏ կամ ԳԱՌՉՆԿԵՐՏ.— Հայաբնակ գիւղ Խարբերդու առաջնորդական թեմի մէջ։ Ունի Ս. Թովմաս եկեղեցի մը։

ԳԱՌՆԵԿԻՆ. Տես ԳԱՌՆԸ ԵԱՐՔԻ։


ԳԱՌՆԸ ԵԱՐՔԻ կամ ՓԻՐՎԱՆՍԻՐԱՑ ԳԻՒՂ (Կարաւաճի գիւղ). — Կը գտնուի Այրարատեան հին վարչաժունեաց և այժմեան Տարաչիչակ գաւառի մէջ, Ինտամալի հարաւային և Մայրավանից հիւսիսային կողմը։ Ունի 1486 հայ բնակիչներ, բաժնուած 139



212. Գամիհտէլիի աւերակ եկեղեցի։

ատան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Գիւղիս հարաւային կողմը Սուտեօքեն անուամբ մեծ ապառաժ մը կայ, Հրազդան գետակի եզերքը, որուն երբեմն ջուրը զարնուելով կը յորդին և ճանապարհի անցքը կ'արգելուն։ Ցիսպուտ այս պիղիս Գառնեկին անունը կու տայ։ — Տես ԱՐԱՑԻ Լեռ։

ԳԱՌՆԻ կամ ԳԵՂԱՄԻ. — Հին պատմութեան մէջ նշանաւոր բերդիս և քաղաքատեղիս աւերակները կը գտնուին Ազրարատայ Իբ շինասէր պետութեանցը կը հանուի նաև իբ թոռն Գառնիկ, որ իբ պապուն կանգնածը պայծառացուց ընդարձակեց և իբ անուամբը Գառնի անուանեց։ Խորենացին (Ա. ԺԲ) անոր պիրքը և նկարագիրը հետեւեալ կերպով կ'ընէ. «առ առաջս նորին լերինն, ի ձորակի միում ամրոջ, շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնական թոռանէ նորա՝ անուանեցաւ Գառնի». նոյն անուամբ կը կոչուի մինչև ցայսօր։ Ազրարատայ հզօ-



213. Գառնոյ բերդի յատակագիծը և տեսարանները։

1. Բնակարաններ. — 2. Պալատը. — 3. Տրդատայ թաղաքը. — 4. Գառն. — 5. Փողոց. — 6. Աղբաղաններ, — 7. Գառնոյ գետ. — 8. Պատմական ուշադրաւ քարեր. — 9. Հրաբուղիս հսկաներ։

Մագազ գաւառի մէջ, Երեւանայ արեւելեան հարաւային կողմը 4—5 ժամ հեռու, Գեղ լերան հարաւային ստորոտը Ազատ կամ նոյնանուն Գառնոյ գետակի եզերքը։ Հայկազանց առաջին դարերուն մէջ, Հայկայ թոռան Թոռն Գեղամ իբ հայրենատեղւոյն երկիրները որպէսզի մէջ բաժնելէ վերջ, կու գար այս տեղ, ու անշուշտ գրից գեղեցկութեանը և ամրութեանը գնայլած, կը կանգնէր իբ անուամբ Գեղամի գաստակերտը, իբ մեացեալ կեանքը հոն պատկերս մարքով։ բազոյն ամրոցներէն մին համարուած է, ասոր կը վկայէ նաև Եղիշէ Ե դարու կիսուն, «անմատոյց ամուր Գառնի» կոչելով. զոր ուխտապահ նախարարները ազատեցին Պարսից ձեռքէն և յետոյ ուրացող Վասակը աւերեց։ Խորենացին կը պատմէ նաև Գառնի նոր շինութիւնը Տրդատ Մեծին ձեռքով. բայց ամրոցին առաջին շինութիւնը, եթէ Գառնիկէն ալ եղած չլինի, սակայն շատ հին քան զՏրդատ, և այն է հին Գառնիի նշանաւոր մասը, որ Տրդատայ և իբ

որպէս Խոսրովու շինութիւններով աւանա-
ցաւ և գիւղաքաղաք դարձաւ։ Փորթիր անդ-
դիացին այցելած է տեղւոյս, և ընդարձակ
աւերակներն խիստ հետաքրքրական գտած.
նոյն ժամանակ տեսած է հինգ աւերակ ե-
կեղեցիներ, որոնց շինութեան ոճն շատ տար-
բեր գտած է բերդի աւերակներէն։ Տիւպուա
ևս այցելած է նշանաւոր աւերակաց և հե-
տեւեալ նկարագիրն մեզ թողած։ «Երեւանէն
45—47 վերստ հեռու, Գառնի գիւղն ունի
անցքի մը բերնէն երասխայ գաշտին մէջէն
կ'անցնի։ Մենք այս գիւղէն 20




214. Գառնոյ Ս. Կարապետի մատուռը։

վերստ դէպի վեր գնացինք մինչև Գառնի։
Այս գիւղերացս սկիզբները հերձաքար ու
կոպճ լեռներէ պատած է, որոնց տատրատը
ողորկ ու հաւասածեալ է. լերանց երեսը
թերթ թերթ կաճէ ու հրաբղխային բուսա-
կան հողերէ ձեւացած է։ Լերանց անց-
քէն 6 վերստ դէպի վեր, գետը լաւային ա-
հագին յորձանքի մը տատրատէն կ'անցնի,
և այս լաւային տակը կաւճ ու բոլորովին
հրաբղխային հող է։ Յորձանքը յանկարծ
կը կենայ, ու վերջին ծայրը խոշոր կատ-
ներէ սեպաձեւ ժայռեր ձեւացած են։ Մենք
այս լաւային հոսանքին վրայ ելանք, որ
մինչև Գառնի կը տարածուի։ Երեսը խոր-
տուբոտ հրաբղխացեալ ժայռերու կտորնե-
րով ծածկուած է։ Այս լաւային հոսանքը
Գառնիին արեւմտեան կողմը կ'ինկնայ, իսկ
Գառնի գետը քաղաքին արեւելեան կողմէն
ահագին հեղեղատի մէջ կը թաւալի։ Երե-
կոյեան դէմ՝ պարիսպներու, տներու աւե-
րակաց յամախութենէն, ուրուած ջրանցք-
ներէն, ու չարպուած անտառի մը քանի մը
մնացած ծառերուն նման՝ տասին տն-
պին գրուած աւերակաց կոյտերէն խմացանք որ
Մեծ Գառնին հասած էինք»։ Տիւպուա այս
խօսքերէն վերջ կարգաւ կը նկարագրէ բեր-
դը, Տրդատայ թաղարը, և ուրիշ աւերակ-
ները։ 1679ի մեծ երկրաշարժէն մեծապէս
վնասուեցաւ Գառնի։ Տիւպուայի այցելութեան
ժամանակ կիսակործան եկեղեցիներէն, ի-
րեն գեղեցկագոյն երեւցաւ քաղաքատեղին
հիւսիսային արեւմտեան կողմը գտնուող Ս.
Կարապետ մատուռն (էջ. 214), որ արձա-
նագրութիւն ևս ունի հզեր։

Գառնի՝ Տրդատայ և Խոսրովու արքունի
շինութեանց պատճառաւ, կը թուի թէ պա-
տուաւած է նաև եկեղեցական ոեթոռով իբ-
րև մեծ քաղաք, մանաւանդ որ նոյն ժա-
մանակ անշքացած էր Արտաշատ։ Վասն զի
Աբշակ Բ. օրով Դուռ գարու կէսէն վերջ,
կը յիշուի Գէորգ անուամբ ոմն Գառնոյ ե-
պիսկոպոս։ Տեղւոյս եկեղեցական բարգա-
ւաճանաց և մեծութեան վկայ են նաև յա-
ջորդ գարուց մէջ Գառնեցի կաթողիկոսունք
և վարդապետք։ Ինչպէս Ը. գարու վերջերը
Սողոմոն կաթողիկոս, Գէորգ Բ. իններորդ
գարու վերջերը, որուն յաջորդն ալ Մաշ-
տոց կաթողիկոս՝ թուղուեցաւ «ի Գառնի
հուպ առ զարմանալի Թաղան Տրդատայ, և
շինեցին ի վերայ նորա վայելուչ եկեղեցի».
Կիր. պատմիչ, 45—46։ Ասոր յաջորդն ալ
Յովհաննէս Ջ. պատմիչ, ըստ Կիրակոսի՝ Գառ-
նեցի է, բայց սորա բուն հայրենիքն Դրաս-
խանակերտ է, որ անշուշտ Գառնիի և Գու-
նայ մէջ տեղ լինելուն պատճառաւ, պատ-
միչը այնպէս կոչած է. ինչպէս Ասողիկ ալ
նոյն կաթողիկոսն Դունեցի կոչած է։ ԻՀ.
գարու առաջին կիսուն Հայոց խնամատա-
րութեան վարդապետաց կարգը դասուած էր ոմն
Գառնեցի, առանց յատուկ անուան։ Երկու
հարիւր տարի վերջ հաչակաւոր եղած է

Գառնեցի Յովհաննէս *վարդապետը, որուն վրայ երկարօրէն կը խօսի Կիրակոս (ԾՐ), ինչպէս նաեւ Յայսմաւուրք և ուրիշներ։ Ղոյն ժամանակներն էր Գաւիթ մոլորեցուցիչը, որ ինք զինքը Գառնեցի կ'անուանէր և Արշակունեաց սահմէն։ Գառնեցիք կամ թողիկեխ և այլ սուրբ եկեղեցեացս»։ Ղոյն մարդը ժամանակին կաթողիկոսը՝ Պօղոս Բ՝ Գառնեցի կը կոչէ։*

Մեծ հռչակ ունեցող ամրոցը, զոր Բասզանդ արքունեի ամրոց կը կոչէ, շինուած է կամ ի Հայկազանց և կամ առաջին Արշա-




215. Տրպատոյ Թագաւորական Խորովիդեստոյ Հովանոց։

նոյն տեղացի քանի մը առհվիր, իրենք զիրենք Արշակունեաց սերունդ կը կարծէին, և Տրպատայ օրերէն մինչև 1000 տարի Գառնիի վրայ Թագաւորական շուք ու չնորհք կար. զոր 1428ին յիշատակագիր ունի առաջաժապահ գիշերաքաղաք կոչած է, հոն գրելով «առ դրան սուրբ և հրաշափառ կա-

կաւներուն, և կը Թուի, Թէ Ազան և Բասբոց ամրոցաց հանդոյն, պատերազմաց միջոց աշխարհին իշխողաց գանձուց և անձանց պատսպարան եղած է։ Տարեգիրն Տաճիտոս կը հաւատաէ այս (ԺՌ. ԽԴ, Խե), Գոռնէաս (Gorneas) անուններ տալով տեղւոյս, կ'ըսէ. «Էր բերդն այն ամուր՝ տե-

գետն և պահակապանօք, որոց զօրավար է Կէլիա Պոլիոն և հարիւրապետ Կասպեւրիոս»։ Հոս մազապուրծ ինկաւ փրկչական 51 թուականին, վրաց Փարսմանոյ թագաւորին Միհրդատ եղբայրը, որ ի Հռոմայեցոց Հայոց թագաւոր կարգուած էր, և զոր պաւուլ բռնել կ'ուզէր իւր եղբօրորդին Հրատամիզդ և փախանակ իրեն թագաւորել։ Թէ ինչպիսի զէպքեր հանդիպեցան բերդիս Միհրդատէն սկսեալ մինչև մեր Տրդատ, զրեւ-

կաթոգամ և կապարով մածուցեալ»։ Բերդս կը գտնուի հրաբղխական միացուածովք ծածկուած քարաժայռի մը գահաւանդի վրայ, որ կարկառած էր գետի խորաձորին վրայ, աւանին արեւելեան կողմը։ Չեր քառակուսի է, կ'ըսէ Տիւպուա, 2—300 ոտք երկայն ու քիչ մ'ալ պակաս լայն։ Այն կողմը, որուն առակէն Գառնի գետը 4—500 ոտք խորութենէ կ'անցնի՝ սեպաձեւ է. իսկ արեւելեան և արեւմտեան կողմերը, քիչ քիչ ցածնա-




216. Թոսրովիդխտոյ հռովմեցոցին դրուագները։

թէ երեք դար ժամանակ, յայտնի չէ. բայց կը կարծուի թէ Պարթեւաց և Հռովմայեցւոց բազմաթիւ պատերազմներով բաւական խանգարուած է. նաև յայտնի չէ թէ Տրդատ այս տեղ նորոգեց, թէ ինչպէս որ Հաւանագոյն կը ցուցընէ Խորենացին, բոլորովին նոր շինեց։ Կ'երեւի թէ այս շինուածքն շատ ժամանակ գացած է. վասն զի պատմչին հաւատամքն՝ Նիկիոյ ժողովոյն ժամանակները «կատարէ Տրդատ զշինուած Ամրոցին Գառնոյ, զոր արձաքար և կոփածոյ վիմօք, եր-

լով կը հաւասարին ձորի կողերուն. այս կողմանց աւելի ամրութեան համար, մանաւանդ արեւմտեանն, որ ի բնէ լաւ պարսպուած չէ, շինած են պարիսպներ և բուրգեր, հրաբղխային ժայռի մեծամեծ կոշկոնեներով. բաց լաւ կոփուած և ողորկուած են հռովմէական արուեստագիտաց ճարտարութեամբ, ինչպէս կը վկայեն կրկին աւերակաց ուղեւորքն Տիւպուա և Քէր Փորթըր։ Հիւսիսային կողման պատուարները կը նեղկայեանն քաղաքամոյ և աշտարակաց կարգ

մը, որոնց ծայրերը կը միանան արեւելեան և արեւմտեան կողմնց երկու ծայրերուն հետ։ Մի այն մէկ գուռ կերեւի այժմ, արեւմտեան հիւսիսային կողմը՝ երբոր աշտարակին մօտ։ Բերդին հիւսիսային արեւմտեան կողմն են աւերակաց մեծագոյն մնացորդք, որոնց մէջ խառն կը գտնուին նաև մեծամեծ քարեղէն առաջեր կամ գունտեր, ոչ հրանօթներէ, այլ հին ժամանակաց յատուկ պատերազմական մեքենաներէ նետուած։ Հոն կը կարծուի լինել արքունի ապարանքը կամ դղեակը, որոյ գոյքն՝ բայց գեղեցիկ մնացորդք, երկար ժամանակէն և երկրաշարժներէ մաշուելով հանդերձ, կրնան վկայել նախկին շքեղութեանը։ Մեր պատմագիրներէն վերջինը Զաքարիա Արկաւագ (Բ. ԺԱ), երեւանի մեծ երկրաշարժէն կործանած շէնքերը թուած ժամանակ, փոխանակ Գառնիի՝ Տրդատակերտ անունը կու տայ անոր, Արքունի պատատակերտ ներն, ինչպէս նաև եկեղեցիները, զորս անշուշտ մեծ խնամքով և ճոխութեամբ կառուցած էր, բոլորն ալ աւերակ դարձած են, և կը թուի թէ հսկայ թագաւորին ոգին տակաւին կը սաւառնի անմոռանալի վայրացս վրայ։

Գառնիի շինուածոց մէջ սքանչացման արժանի եղած է Տրդատաշէն Հովանոցը, զոր կառուցանել տուաւ իր Խոսրովիդուխտ քրոջ համար։ Խորենացին ասոր նկարագիրն ևս կ'ընէ, ըսելով. «յամրոցի անդ շինեալ և Տուն Հովանոց, մեհարձանօք, սքանչելի գրօշուածովք, բարձր քանդակօք, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխատոյ»։ Այսպէս ճարտարապետեսա շինուածոյս Հովանոց Տրդատայ անունը առած են հիները, իսկ վերջին յիշատակողները ԺԳ դարէն ասդին՝ ճահապէս կոչած են զրիցը համեմատ Սարուպ Տրդատայ, իսկ գեռ աւելի վերջին գրիչներէն և մինչև մեր օրերը կոչուած է Թաղոր Տրդատայ։ Կառուցուած է ամրոցին հարաւային արեւելեան ծայրը, գետոյն ձորեզերքին մօտ, ուր 1350 տարիներէ աւելի կանգուն մնալով, և բաղդով մեծաւ մասամբ անմատոյց լինելով աւերածու ձեռաց, կը հրաշացնէր զինքը տեսողները։ Կիրակոս պատմիչը ԺԳ դարու մէջ երկու անգամ Գառնին յիշած միջոց, չէ կրցած զանց ընել և այս հրաշակերտը, ըսելով, «Ուր գարմանալի Սարաւոյճն է Տրդատայ». կամ «Հուպ առ գարմանալի Թագոն Տրդատայ». նոյնպէս վարդան աշխարհագիրը. «Գեղեցկաշէն և գարմանալի Թախան Տրդատայ»։ Եւ իւրաքանչիւր մեծ երկրաշարժով կործանեցաւ հոյակապ շէնքս և 222 տարիներէ ի վեր, խորտակուած սիւներու, չքնաղ խոյակներու, խարխնեներու և գանազան գրուագազարդ քարանց բեկորներու կոյտ մը, սրտաճմլիկ և ախուր տեսարան մը կը ներկայացնէ։ Հելուեսիացի մանրախոյզ քննողն տեղւոյս, կ'ըսէ թէ երկրաշարժը այն ատեմնանի այս գեղեցիկ շէնքը խախտած է, որ քար քարի վրայ մնացած չէ։ Սեանց հիմունքը մեծաւ մասամբ բնաջինջ եղած են. կ'խտացուի որ ամենէն



217. Խոսրովիդխատոյ Հովանոցի յատակի մնացորդ։

առաջ ատենք խախտած են ու բոլոր շէնքին կատրնեռուն տակը թագուն են։ Դարձեալ Տիւպուայի բռատծին համեմատ, Հայք այնչափ յարդ կու տային անոր որ կատր մը անգամ չեն վերուցած իրենց առանձին շինուածոցը գործածելու և օտարաց ալ թոյլ չեն տար։ Բերդի քարերէն շատերը վերուցած են, բայց թագոի կատրները այնպէս ամրողջ են, որ առանց կատր մ'ալ պակսելու՝ ամրողջ շէնքը կրնայ շինուիլ։ Հոմանոցիս ձեւը քառակուսի էր, 34 ոտք երկայնութեամբ ճակատը՝ կը նայէր դէպ ի բերդին գուռը, ու 6 յարխական գեղեցիկ սիւներ ունէր։ Սիւներուն շրջապատն էր 25 բթաչափ, իւրաքանչիւրի բարձրութիւնը 22 ու կէս ոտք. շէնքին ամէն կատրն ալ փառաւոր էր, քիւքը առիծներու դլուխներով զարդարուած, և անոր ներքնը կարգ կարգ տեսակ տեսակ քանդակազարդներ։ Տիւպուա կործանած մասունքներէն ներծագրելով գծած

է Հովհաննոցի ճակատին ձեւը (Թ. 215), ուր իւրաքանչիւր այցելուներ ևս նկարած են գանազան բնիկորներու ձեւեր (Թ. 216, 217)։ Ճակատին նման ճոխ կերպով զարդարուած էր նաև ձեղունը։ Գետնյն վրայ նայող կողմն ալ ճակատին պէս շինուած էր քիչ փոփոխութեամբ. միւս երկու կողմերն ալ սիմետրապէս էին, և ամբողջ շէնքը 24 սիւներով շրջապատուած էին, ինչպէս կը վկայէ Սիմէոնն Ալաթարանեցին։ Հովհաննոցի արեւմտեան կողմն էր խաչաձեւ պալատը, որ աւելի պարզ ու հեղեցաւի քարերով շինուած էր. և Հովհաննոցի պէս գեղեցիկ էր։ Եւ թախտապարտ լինելու ենք այն իւրաքանչիւր աղբիւրաց, որք մեզ հասուցին այս հայկական Պարթենոնին գէմ նշմարները, և զմեզ բարերաղդ համարելու ենք նաև անոյ, որ մեր թշնամի մաղկային սրբապիղծ ձեռքերէ կործանուած չէ չքնաղակերտ շէնքս, այլ երկրի անտուաճելի շարժումներէն։ Սիմէոնն Ալաթարանեցին ԺԶ դարու վերջերը 1593ին աքանչացմամբ և միանգամայն հառաչական տղերով նկարագրած է տաղաչափօրէն այս Տրպատայ Թաղաը, նշանակելով տեղը թիւը, տաճիճանները, և այլ մասունքը։

Գառնիի տեղմանները իրենց դրից համար նշանաւոր եղած են քաղաքական և պատերազմական դիպաց մէջ։ Ջ դարուն վերջերը Պարսից խոսրով Ապրուէզ թագաւորը ցոյնեըէն օգնութիւն գտնելով, անոնց թողուց աբեւմտեան Հայաստանը և կոտորից գաւառը մինչև Գառնի ատանը, և Ազատ (Գառնի) կամ Հրազդան գետը անջրպետ կը լինէր երկու կողմանց։ Շատ գարերէ և անցքերէ վերջ, ԺԲ դարուն վրացիք զօրանալով նաև մեր աշխարհի կողմերն տուաճելու ժամանակ, Իւանէ Օրպելեան Ապուլէթի որդին, որ Դեմետրէ թագաւորէն տեղապահ գրուած էր Ախլց, 1131 թուին ասպատակից Գառնիի վրայ, բայց զօրքերը յաղթուելուցան տեղւոյն խոտրթէ անուն զօրավարէն։ Գրեթէ գար մը վերջը (1225 թուին), նոյնպէս Ձախորդութեան հանդիպելուց Իւանէ Ապահէկն, վասն դի ձեռնհասութեան խոտրակմիկ Շահը՝ Թահմասնէբէն հալածուելով, բազմաթիւ զօրքերով եկաւ տիրեց Գառնոյ ամբողջ գաշտին և Գառնոյ տեղմանները տարածուելուցան իր զօրաց վրաններն։ Նոյն միջոցին փութալ լուանէ վրաց և Հայոց զօրքերով, իրեն նիզակակից առնելով Գագայ տէրը Վահրամ և ուրիշներ, յարձակելուց Թշնամեաց զօրաց վրայ։ Ի սկզբան սկսան կատարել սլլազդեաց զօրքերը, բայց յետոյ սխալ հասկացողութեամբ, զօրաց մէկ մասը որ յետոյ պիտի միանար պատերազմին, փոխանակ պատերազմի գաշտը վազելու ետ փախեր են իրենց վրաններըը և կարասին թողլով։ Եւ այնպէս շփոթած վազած միջոց, նահանջն կը յարձակին Թշնամիք, շատերը կը կոտորեն և շատերն ալ կը գահավիժեն Գառնոյ ձորը։ Մեր ԺԹ դարու բոլոր պատմիչները կը յիշեն այս պատերազմի դէպքը այլ և այլ հանգամանքներով։ Աւլազդիք ևս մանրամասն կը պատմեն, 60 կամ 70000 հաշուելով Հայոց և Վրաց զօրքը, և 20000 ալ իրենցմէ կոտորած կամ գահավիժած Գառնոյ ձորը։ — Գառնին այժմ յօտարաց կը կոչուի Պաղ-Գառնի, և ունի 1236 հայ բնակիչներ, բաժնուած 115 տան։ — Բազմավէպ, ԺԶ. 174–178։ Այրարատ, 361–370։ Եւ այլն։

ԳԱՌՆԻ կամ ԳՈՒԱՆԻ. — Մակաւարնակ գիւղ Բարձր Հայոց այժմեան Կամախ վիճակի մէջ։

ԳԱՌՆԻԿ ԱՂԲԻՒՐ. — Ուխտատեղի Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ, Պայազիտի մօտ։

ԳԱՌՆԻ-ՊԱՍԱՐ. — Այսպէս կոչուած է վերջին ժամանակաց մէջ Այրարատայ Մաղաղ գաւառը։

ԳԱՌՆԿՈՑ. — Գիւղ Բարձր Հայոց այժմեան Թորթումի վիճակի մէջ։

ԳԱՌՆՈՑ ԳԱՒԱՌ. — Գառնի քաղաքաւանի անուամբ՝ այսպէս կոչուած է երբեմն Այրարատայ Մաղաղ գաւառը։

ԳԱՌՆՈՑ ԳԵՏ կամ ԳԱՌՆՈՑ ՁՈՒՐ. — Հին Ազատ գետն, Գառնոյ դիմացէն անցնելով այսպէս կոչուած է։

ԳԱՌՆՈՑ ՁՈՐ. — Կը գտնուի Այրարատայ Մաղաղ գաւառի մէջ, և ժամանակաւ յատուկ լճանային վիճակ մը կը ձեւացնէր։ Այս տեղ էր Վարդան աշխարհպարէնն առանց անուան յիշած վանքերէն մին, զոր Ժ դարու սկիզբը Սմբատ Ա Թագաւորը պարգեւեց Տաթեւի եկեղեցւոյն իբրև կալուած,

«ի Գառնոձորի գԳուտով վանս», ինչպէս կը գրէ Միհնեաց պատմիչը (Գլ. ԽԱ)։

ԳԱՌՆՈՑ ՋՈՒՐ ՏԵՍ ԱԶԱՏ ԳԵՏ։

ԳԱՌՆՈՎՃՏ. — կը յիշուի Ա. Լուսաւորչայ Աշխարհնեաց գաւառի, Բագարանու եկեղեցիներէն միոյն արձանագրութեան մէջ։

ԳԱՍԱՊԱ կամ ՂԱՍԱՊԱ. Պղ. KASSABA. — Քաղաքս կ'ինկնայ Ջմիւռնիոյ հիւսիսային կողմը. Ալաշէհիր և Ուշակ գացող երկաթուղին կ'անցնի իր առջևէն և 93½ հազարամեայ Ջմիւռնիայէն հեռու է։ կառուցած է զեղեցիկ դաշտի մը վրայ, և Մանիսայէն երկաթուղիով կէս ժամու չափ հեռու է։ Կլիման բաւեխառն է, ջուրն ու պտղատու ծառերն առատ։ Աճեցնելի են գառապայի սերմն, կարագը, մեղրը, սեխը և ձմերուկը։ Քաղաքէս գրեթէ ոտքով քառորդ ժամ հեռու շինուած է երկաթուղւոյ կայարանը։ Շէնքերը ընդհանրապէս միայարկ են, քանի մը առն գուբս հանելով, որոնք կրկին յարկ ունին։ Տներէն շատերը պարապ ունին և մէջը ազբիւր մը։ փողոցները, թէպէտև քարայատակ՝ բայց անմաքուր են։ Գառապայի արուեստեան կողմը կը սեպնուի՝ ոչ այնչափ բարձր լերանց շղթայ մը, և այս շղթային առջեւը կը գտնուին փոքրիկ բլրակներ, որոնց սեղացիք Պին պիր թէփէ անունը կու տան։ Քաղաքս չունի ճարտարապետական կամ հնութեանց վերաբերեալ շէնքերու ծնացորդներ, միայն վերոյիշեալ բլրակաց կողմերը կան այրեր և ծածկուած հնութիւններ։ Այս բլուրներէն միոյն տակ, որուն տեղացիք Լրմէնի թէփէսի կ'ըսեն, վերջերս գտած են քանի մը կաւոր հին քարէ արձաններ, զորս քաղաք բերելով երկու կաւոր զրած են Հայոց եկեղեցւոյ պարտէզը, ուրիշ մ'ալ Ցնծաց հիւանդանոցի պարտիզին մէջ։ Քաղաքս ունի 1000 տաճառատուն, 4 բամբակ մաքրելու գործարան, 27 ջրաղաց, 9 խան, 46 փուռ, 286 ազբիւր։ Հասարակաց շէնքերէն ունի նաև 5 բաղնիք, 34 մզկիթ, 2 ճեմնաց և 1 Հայոց եկեղեցիներ, 2 Հրէից ժողովարան, 56 գպրոց՝ 1321 աշակերտաւք, երկու սեռը ի միասին հաշուելով։ Գառապայի բնակչաց թիւն բան վ. Քինէի, է 23000, հետևեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք	.	.	.	19900 հոգի
Յոյնք	.	.	.	1500 »
Հայք	.	.	.	1000 »
Հրեայք	.	.	.	600 »
Գումարն...				23000 հոգի։

Քաղաքիս Հայք ի հնումն նշանաւոր դիրք մը ունեցած են, բայց այժմ ինկած։ Ազնիւ և չին կազմած մանուածոյ թաղ մը, այլ ցիր ու ցան կը բնակին, սակայն անոնք շատերը կը գտնուին եկեղեցւոյ մօտ։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի. շէնքը ամուր է մէկ մեծ հատուածեամբ պատերով, շուրջը կայ պարսէզ։ Աջակ զրան սեամքը զարդարուած են մարմարիոնե քարերով. ճակատը հատատուած է քար մը՝ որուն վրայ արձանագրուած է շինուածեան յիշատակարանը, 1840 թուին։ Եկեղեցիս կառուցուած է բարեպաշտօն իշխանաց և ժողովրդոց ազդեցութեամբ և աշխատանօք։ Ի ներքուստ անզարդ է. 17½ մեծ երկայնութեամբ և 10½ մեծ լայնութեամբ. կամարակապ ձեղունը հատատուած է որմերու վրայ. միայն աւագ զրան կողմը կան երկու սիւնակներ, որոնք վերնատունը հատատուն կը բռնեն։ Աւագ՝ Ս. Աստուածածնի մարմարիոնէ խորանէն զատ, կան նաև երկու խորաններ աջ ու ձախ կողմը, մին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերով և միւսն՝ Ս. Աստեփանոսի։ Այս եկեղեցի մը ևս ունեցած են Գառապայի Հայք, որուն վերաբերեալ արձանագրութիւն ունեցող քար մը զրուած է նորակառոյց զպրոցի պատին մէջ, սակայն այդ արձանագրութեան թուականը յայտնի չէ։ Վերջին տարիներս եկեղեցւոյ դիմաց պարտէզի զրան կից շինուած է գանգակատունը, որ տեղւոյն գեղեցիկ տեսք կու տայ։ Եկեղեցին ունի իրեն սեփհական բոլորակ կարուած կապարեայ զրամ, մէկ կողմը խաչ, և երկրորդ կողմը զրութիւն մը։ Եկեղեցւոյ պարտէզին մէջ հարաւային կողմը կառուցուած է քարուկիր և կրկնայարկ Հայոց երկսեռ վարժարանը 60 աշակերտներով։ Այս շէնքը զատ զատ դռներով բաժնուած է երկու մասանց. երկու զրանց վրայ ևս կայ հայկական արձանագրութիւն 1893 թուականաւ։ Վանն դի նոյն տարին շինուած են արդեամբ

և ծախիք Ջմիւռնիայի վաճառականի Յակոբ Ձէվահիրճեանի. անոր համար մանչերու դպրոցը կը կոչուի Ձէվահիրճեան, և աղջկանց Տիգրանուհեան, նոյն վաճառականի ախիոջ անուամբ։ Պարտէզը կը գործածուին իբրև պիւրիզմանատուն, ուր կան նաև արձանագրութեամբ տապանաքարեր 1838 թուականէն սկսեալ։ Քաղաքին Հայք կ'ըզբաղին վաճառականութեամբ և պղպեղաճառութեամբ. կան նաև դերձակ, ոսկերիչ, կօշկակար, երկաթագործ, պայտար և հացագործ արուեստաւորներ։ Ազոնց նախնիք գաղթած են Պարսկաստանէն. գործունեայ են, սակաւախօս և հանդարտ։ — Հայք ի Ջմիւռնիա և ի շրջակայս, Բ. 153–161։ Վ. Բիւրեղ, Գ. 552–556։


ԳԱՍԱՊԱ. — Գիւղ քաթային կիլիկիոյ, Գարամանի քաղաքէն 10 կամ 12 մղոն հեռու արեւմտեան կողմը, Գարաւաղ և Հաճիպապա լիրանց մէջ տեղ, 1060 մեար բարձր դիրքով։ Գիւղս ժամանակաւ պարբերապատառ եղած է, որ այժմ կիսակործան և քայքայեալ վիճակի մէջ է։

ԳԱՍԹԱՄՈՒՆԻ կամ ԳԱՍԹԱՄՊՈՒԼ. Գր. CASTAMOUNI. — Գլխաւոր քաղաք Համանուն կուսակալութեան և գաւառին. կ'ընկնայ 34°29′ երկայնութեան և 41°22′ լայնութեան մէջ, Ինէպոլիի հարաւանդստակէն 90 հազար մաժոր հեռու՝ հարաւային կողմը։ Բնակիչք 15567 կը հաշուին, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք . . .	13260 հոգի
Յոյնք	1795 »
Հայք	512 »
Գումարն...	15567 հոգի։

Քաղաքս ունի 1 եկեղեցի Հայոց և 1 Յունաց, 63 մզկիթ, 1 հիւանդանոց, կուսակալի պալատ, հեռագրատուն, ազարան, 15 բաղնիք, 112 աղբիւր, 12 կամուրջ, 3487 տուն, 1751 կրպակ, 80 վաճառատուն, 42 խան կամ պանդոկ, 30 սրճարան, 5 ջրաղացք, 25 փուռն, են.։ Գլխաւոր վաճառքներն են այծամազ, բուրդ, բամբակեղէնք արմոիք պատուգք, ծխախոտ, խաշխաշ, և այլն։ Գաստէմունի կուսակալութեան մէջ գտնուող Հայոց ամբողջական թիւն կը հասնի 1262 հոգւոյ։

ԳԱՍՄԱՆ կամ ԿԱՍՄԱ. — Գիւղ Տիւրիկու. ունի եկեղեցի մը Ս. Աստուածածին և վարժարան մը Ս. Մեսրոբեան՝ 50 աշակերտուհիով. ըստ վերջին վիճակացոյցի վարժարանի անուան եղած է Ս. Լուսաւորչեան։ Գիւղիս բնակիչք Հայք և Թուրքք խառն են. առաջինները թիւը կը հասնի 500ի, բաժնուած 100 տան, իսկ երկրորդներուն 200ի, բաժնուած 40 տան։



218. Գարագալէի մէջ շիրմ։

ԳԱՎԱՌ. — Գիւղ Կիւրինի առաջնորդական վիճակի մէջ, յորում Հայք ունին վարժարան մը՝ սակաւաթիւ աշակերտներով։ — Տես ՍԱՐՔ ԳԱՎԱՌ։

ԳԱՏԱԿԵԱՆ. — Վախուշէնի յիշուած գիւղ Գամանիքի (Վրահայաստան) մէջ։


ԳԱՏՂ ՔԻՕՅ. Տես ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ։

ԳԱՏԻԼԻ. — Ալլըզարեանի գիւղ Ալրաբատայ Ուրծ և Ալրած գաւառի մէջ։

ԳԱՐԱԱՐԹԱՉ. — Լիս Աիւնեաց Գեղարքունի գաւառի Արեգունի վիճակին մէջ։

ԳԱՐԱԲԱԶԱՐ. — *Գիւղ Ալշարատայ Բազբեւանդ գաւառի մէջ, որ 1877ին ունէր 30 և 1882ին 10 տուն հայ բնակիչներ։*

ԳԱՐԱԳԱԼԼ կամ ՋՈՂԿԵՐՏ. — *Գիւղ և մեծ վանք Արարատեան Նահանգի Նախճաւանայ գաւառին մէջ, Նախճաւանայ քաղաքէն 12 քմ. հեռու, ծովի մակերեսէն 2,219 մեթր բարձրութեան վրայ։ Կը գտնուի Ալադաղ լերան հարաւային կողմը, ձորի մը մէջ, որ կը սկսի Ալադաղի գագաթէն և կ'իջնէ մինչև Ախուրեան գետակը։ Ունի 30 տուն հայ բնակիչներ, որոնք կը զբաղին երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Ունի նաև 2 եկեղեցի, մէկ դպրոց և 60 աշակերտ։ Գիւղին մօտ կայ հին վանքի մը աւերակները, որ կը կոչուի Ս. Աստուածածին։ Ունի երկու մեծ դուռ, որոնց վերի մասերը քանդուած են։ Ներսի կողմը կայ մեծ գաւիթ մը, որ կը բաժնուի երեք մասերու սիւներով։ Ներքին պատերուն վրայ կան տեսակ տեսակ պատկերներ, որոնք ներկուած են կանաչ, կարմիր և դեղին գոյներով։ Ներքին պատերուն վրայ կան նաև քանի մը արձանագրութիւններ, որոնք կը պատկերացնեն Ս. Աստուածածնի կեանքի դէպքերը։ Ունի նաև մեծ գրատուն մը, որ կը պարունակէ հին ձեռագրեր։ Վանքին մէջ կայ նաև մեծ գերեզմանատուն մը, ուր կը տեսնուին շատ մը հին տապանաքարեր։ Վանքին մէջ կայ նաև մեծ գերեզմանատուն մը, ուր կը տեսնուին շատ մը հին տապանաքարեր։*



Գարագալլ. — Տեսարան մը Ս. Աստուածածնայ վանքէն։

Վանքին մէջ կայ նաև մեծ գերեզմանատուն մը, ուր կը տեսնուին շատ մը հին տապանաքարեր։ Վանքին մէջ կայ նաև մեծ գերեզմանատուն մը, ուր կը տեսնուին շատ մը հին տապանաքարեր։

բասխէն և խորաձորերով, իսկ նեղ ցամաքի կողմէն ալ պարսպով շինուած կոփածոյ կամարագոյն պորփիւր քարերով և սեւ խանձաքարով, խիտ վայելուչ և ճարտար, յորում կ'երեւին տեղ տեղ հայկական խաչքարեր։ Պարսպաց մէկ մասը նորոգուած է վերջին ժամանակաց մէջ՝ խոշոր քառակուսի սեւ խանձաքարերով, բայց հին շէնքին վայելչութենէն զուրկ է։ Գիւղի վարի կողմը կ'երեւին ի հնուց երեսի վրայ ձգուած հնձանաց և այլնոց տեղեր։ Մինչև Ասլանայ և Պարսից պատերազմին ժամանակ, ասոր կը բնակէին Պարսիկք, որոնց արձանագրութիւն ունեցող գերեզմանները կան Հայոց հին խոյաձեւ և այլ տեսակ գերեզմանաց մօտ, որոնց մէջն է նաև սրագմբէթ (Թ. 218), 12 կողմանի շիրիմ մը, կոփածոյ կամարախայտ քարերով շինուած։ Չի գիտցուիր թէ երբ Հայք բոլորովին լքած են այս գիւղս, որ ի հնումն եղած կը թուի քաղաքաւան։ Տիւզուա այս կողմերս քննած միջոց, (1834, մարտ 18ին), կը յիշէ թէ քանի մը հայ ընտանիքներ, գեռ նոր մնացած էին բնակելու Պարսից լքած տները. բայց կ'երեւի ի վերջոյ ասոնք ալ տեղափոխեր են, վասն զի այժմեան բնակիչք միայն քուրդ են 22 տուն։ Բերդաւանից աւերակաց մօտ, երասխի եզերքը կը տեսնուին, հին ժամանակներէն ձգուած կամուրջի մնացեալք։ Տեղւոյս բոլոր ընդարձակ աւերակները և հոյակապ շինուածոց մնացորդները, կը վկայեն թէ ժամանակաւ մեծ շէն մը եղած լինելու էր, զոր՝ Տիւզուա չգիտեմ ինչ հիմամբ Տիգրանակերտ քաղաք կ'անուանէ. ուրիշ մը՝ կը համարի Արտագերից բերդը կամ Մարաբոնի յիշած Ազշատը. ամենք ալ համաձայն են բուռնգոյ դաստակերտ մը, վասն զի մօտ է անոր շինուածոց։ Հ. Ալիշան՝ հաւաստի կը համարէ, թէ սա լինի Ջողկերտ աւանը՝ զոր եղիշէ կը թուէ մեր Արշակունի թագաւորաց զօրաց կայաններու և ձմերոցներու հետ, որոնց տիրեցին ուրացեալ վասակի կողմնակիցները։ Մեր բժշկարանաց և Համոփիւռ ծաղկան հետեւեալ առասպելախառն պատմութեան մէջ Ջողկերտ կը կոչուի. «Եւ այլք ասացին՝ թէ գառնի ծաղիկն ի Մարմարի, ի գեղն որ կոչի Ջողկերտ. երթ, փորեա չափ տեղի և գտանես զնա »։ «Ասաց Աղանէ. Ես գայ ի Ջողկերտ, և չարն փարձեցի. երանի է նմա որ զբարին գործէ»։ Նշանաւոր եղած է ի հնումն Ջողկերտ, և յաւուրս Ջողկերտեայք անուամբ առհմ կը յիշուի Հայոց թագաւորութեան բարձակալ իշխանաց և առհմերու կարգին մէջ։ Նորանոր քննութեանց կը կարօտի տեղս, որովք միայն պիտի կարողանանք հաւաստի տեղեկութիւններ սահմանել, նշանաւոր աւերակացս հին պատմութեան վրայ։ — Այրարատ, 122—124։ — Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր և բերդեր կան մեր աշխարհի զանազան կողմերը։ Գիւղերէն մէկ քանին մէջ կան սակաւաթիւ Հայք, խառն ընդ օտարաց։ — Տես ՂԱՐԱՂԱԼԱ։

ԳԱՐԱԳԱՅԱ (Մեծ սար). — Այլազգաբնակ գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, վարդամարգ գիւղի հիւսիսային կողմը՝ գրեթէ 2 մղոն հեռու։ Գիւղիս սահմանները կը գտնուին հայկական եկեղեցիներու և գերեզմանաց հետքեր։ — Այս անուամբ սար մը կայ Խնձակաց Ծղուկ գաւառի մէջ։

ԳԱՐԱԳԱՅԿԱՆ. — Այս անուամբ հայաբնակ երկու գիւղեր կան վարի Խզոյի մէջ։ Այսպէս կոչուած են սեւագոյն քարերուն համար։

ԳԱՐԱԳԱՇԼՈՒ կամ ԳԱՐԱՀԱՃԻԼԻ. — Գիւղ Սիւնեաց այժմեան Ջանգեզուր գաւառի մէջ։ Ունի 1465 հայ և 252 այլազգի բնակիչներ։

ԳԱՐԱԳԱՐՈՒ (Մեծ դուռն). — Լիս և նեղ անցք Կիլիկիոյ մէջ։ Եգիպտական պատերազմի ժամանակ, Իպրահիմ փաշայ այս կապանը անանցանելի ըրաւ տեղւոյն ապառաժներու մեծամեծ կաղնիներով լեցնելով. բայց յետոյ հովիտները գտնելով բացին, իրենց հօտերը անցնելու չափ բաւական ճամբայ մը։

ԳԱՐԱԳԱՓՈՒՏՈՒ. — Լեռնակ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ։ Կը թուի, թէ այսպէս կոչուած է աւերակ բերդի մը համար։

ԳԱՐԱԳԻԼԻՍԵ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԵ. — Վիճակ և աւան Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։ Վիճակս կը բռնէ Բագրեւանդայ արեւմտեան գաշտի արեւելեան մասը, և Աղշկերտէն կը բաժնուի Տաշլի գետակով։ Հիւսիսային կողմէն կը տարածուի մինչև


Ախատայ և Թանատարակ լճակները, հիւսիսային արեւելքէն Սիմէկ լճակները և հարաւային արեւելքէն մինչև Ղսպատ։ Գարագիլիսէի անմիջապէս հարաւային կողմն է խամուրայ վիճակը, որ կը բաժնուի Մուրատ գետով։ Բազրեանդայ այս մասը թէև այժմ առանձին վիճակ կը կազմէ և Ալաշկերտի չափ և աւելի ևս բնակիչ ունի, բայց բնական բաժանմամբ ի հնումն, կը կարծուի թէ վաղարշակերտի (Ալաշկերտ) մասն եղած լինի։ — Գարագիլիսէ՝ այժմեան կառավարչանիստ վայրը, նախ գիւղ մ'էր Պարխատանի կալաւանի ճանապարհին վրայ։ 1860–70 թուականներուն, իբրև հինգհոգւոյ կալուած, 10–15 կրպակներ շինուեցան այս տեղ հասատուած կարգ մը Բազիշենի հայ վաճառականներու ձեռնտուութեամբ, և Բազրեանդայ Յովհաննէս եպիսկոպոսի գործակցութեամբ։ Նոյն ժամանակ Գարագիլիսէ ունէր 200 տուն զուտ հայ բնակիչ։ Վերջին ռուս–թուրքական պատերազմին ժողովրդեան մեծ մասը գաղթից. մնաց միայն 80 տուն, բայց յետոյ Բազիշէ, Պուլանըխ, Մանազկերտէ և այլ տեղերէ եկաւորներով բնակչաց թիւը աճեցաւ և հասաւ մինչև 250 տան։ 1885 թուականին Թուրքք սկսան այս տեղ հասատուիլ. առեւտրական կրպակներ և արհեստանոցներ շինուեցան, ինչպէս նաև զօրանոց 1890–91 թուականներուն։ Աչքի առաջ թուրք և քուրդ պաշտօնեայք բազմացան և մօտ 100 տուն ևս աւելցան։ Ջինուորական փաշան ուզած է Գարագիլիսէ (Ան եկեղեցի) անունը փոխել և Ագ–շէհիր (Սպիտակ քաղաք) կոչել, սակայն չէ յաջողած։ — Դիրքը հիանալի է, ամէն կողմէ ունենալով բաց տեսարան. շուրջը կան առատ ապառիներ։ Քօր գետի ալ եզրին վրայ շինուած է կառավարութեան պաշտօնատուները։ Օր առաջ նոր նոր շինութիւններով կը զարգարուի Գարագիլիսէ, և քիչ տարիներու մէջ քաղաք մը դառնալ կը խոստանայ։ Ժողովուրդը երկրագործութեամբ կ'զբաղի, ազբատ, անկիրթ և վարքով ապականուած է։ Այս տեղ 1883ին Մխոց. բնակութիւնը ուսումնասիրած մը բացաւ և երեք տարի շարունակէլ վերջ փակուեցաւ, որովհետև տեղացիք իրենց խոստացած գումարն վճարելու զլացան։ Գարագիլիսէի առեւտրականները Բազիշենցի տայեր են, որք ունին 100 կրպակ, և նշանաւոր են անդուի վաշխառութեամբ։ — Հայոց հին եկեղեցին, որ մեծ և սեւ քարերով շինուած լինելուն համար Գարագիլիսէ կոչուած է քաղաքատունս, պատերազմի միջոց կրակի տրուած լինելով, ի վերջոյ նորը շինած են դիւղի արեւմտեան ծայրը։ Եկեղեցին ունի 25 չափ կրպակներ, որոց հասոյթով բացուած է ուսումնարան մը։ Այս տեղ կայ փոքր գերեզմանատուն մը, յորում միայն մէկ խաչքար կը տեսնուի ՌՃՀ (= 1721) թուականու արձանագրութեամբ։ Օրացաձև քար մ'ալ գրուած է Աղաձան տղա Խաճատիրեանների գերեզմանին վրայ, արձանագրութիւն չունի, բայց վրան կայ բարձրաքանդակ մարդու պատկեր։ Այս քարը բերել տուած են, Գարագիլիսէէն 2½ ժամ հեռու արեւելեան հիւսիս գտնուող փոխան գիւղի Բազկաբերդէն։ — Քազաքատունէս ½ ժամ յաբեւելս է Եզոդի քիր կոչուածը, որ Սիմէկ լիրանց գէպի արեւմուտք խոնարհած թիւն է. արեւմտեան կողմն ալ, նոյնպէս ½ ժամ հեռու կը գտնուի Գաւդի քիրը՝ որ գաշտի մէջ առանձնապէս բարձրացած է։ Այս երկու քիթերուն վրայ վերջին ռուս–թուրքական պատերազմին հաստատուած էին երկու բանակները, առաջնոյն վրայ Ռուսք և երկրորդին Օսմանցիք. թնդանօթներու ռումբերը Գարագիլիսէի վրայէն կ'անցնէին մեծ շաչիւնով, յորում առակաւոր կարգ մը ընտանիքներ աներեւոյթ կը սպասէին Ռուսաց։ — Բազրեւանդ, 253–257։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԻ. — Գիւղ Ալլարատայ վանանդ (Կարս) գաւառի մէջ, ունի 72 տուն։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԻ. — Այս անուամբ Մեծ և Փոքր երկին գիւղեր կան Գուգարաց այժմեան Պօղչալու գաւառին մէջ։ Երկուքն ալ հայաբնակ են. առաջինը ունի 674 հոգի, բաժնուած 65 տան. իսկ երկրորդը 500 հոգի, բաժնուած 50 տան։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ. — Մեծ գիւղ Սիմնաց Ոզոկ (Զանգեզուր) գաւառի մէջ, Պագար–չայ գետի ձախ կողմը։ Գիւղս

կը յիշուի ԺԴ-ոդ դարու մէջ։ Բնակիչները գաղթած են 1829 թուին Թոյէն և Սալմաստէն. կան նաև քանի մը տուն բնիկներ։ 1886ի վիճակագրութեան համեմատ, գիւղս ունի 106 տուն և 977 բնակիչ, 680ը Հայք՝ բաժնուած 69 տանց, իսկ մնացեալը Թուրքք. բայց յայտնի է թէ այժմ այս թիւերը բարձրացած են։ Հայկական Թաղը զետեղուած է գլխաւորապէս գեաի եզերքը, իսկ Թուրքացը քիչ մը վեր բարձրավանդակի վրայ։ Տները քարաշէն են՝ առանձին պարսպապատ բակերով. կանոնաւոր փողոցներ չկան։ Գետի եզերքը և մանաւանդ գիւղի հարաւային կողմը կան ուռենիներ, որք գեղեցիկ տեսք կու տան։



320. Գարագիլիսէի Ս. Յովհաննէս եկեղեցին։

Գարագիլիսէի եկեղեցին կը գտնուի արքունական միլասեան պարոցը, որ բացուած է 1882 թուին։ Ս. Յովհաննէս (թ. 220) հին եկեղեցին կառուցուած է գիւղի արեւմտեան հիւսիսային կողմը, բարձր վիրքով։ Ին-

սրբատաշ քարերով գեղեցիկ շէնք մի է. 19,17 մետր երկայնութեամբ և նոյնչափ մետր լայնութեամբ։ Ներքուստ խաչաձև է և անոնէն. չորս կիսասրահ, չորսական մետր լայնութեամբ թեւեր՝ երկեղեցիս կը բաժնեն չորս մասերու, որոնց անկիւնները կան խորհրդանոցներ՝ իւրաքանչիւրը մէկ պատուհանով։ Կամարները՝ որ կը բոլորուին թեւերու պատերուն կից կեղծ սիւներու վրայ՝ ոտնաձեւ են. ասոնց վրայ կը բարձրանայ 7,2 մետր բարձրութեամբ կաթողիկէն, չորս պատուհաններով. գմբէթը քանդուած է։ Կաթողիկէն զարդարուած է աւետարիչներու և մի քանի այլ բարձրաքանդակ անդրիներով, որոնք արձանագրութիւններ ունին։ Ունի երկու դուռն, արեւմտեան և հարաւային կողմերը, որոնց վրայ կան մէկ մէկ մեծ պատուհան։ Արեւմտեան դրան մօտ կայ արձանագրութիւն։ Եկեղեցիս վերջերս նորոգած են գիւղացիք. մէջը սեղանի՝ այ պատի վրայ ևս կայ արձանագրութիւն ասոնց թուականի։ — Միասական, 213—214։ Զաւիգզոզրի գաւառ, Ա. 87—89։ եւ այլն

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԻ.— Գիւղ Ալաբպատականի Մակու գաւառի մէջ. ունի 223 հայ բնակիչ, բաժնուած 29 տան։ Եկեղեցի և դպրոց չունի։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԻ. — Գիւղ Ալբարատայ Նիգ (Պաշ Ապարան) գաւառի մէջ։ Ունի 818 հայ բնակիչներ, բաժնուած 84 տան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Կը տեսնուին հին եկեղեցւոյ ճեմացորդները, որ կառուցուած է եղեր սեւ քարերով։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ ԻԼԼԻ կամ ԻԼԼՈՒ. — Հայաբնակ գիւղ նոյնպէս Ալբարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, թէքէնիի արեւմտեան հարաւային կողմը՝ երկու վերաս հեռաւորութեամբ և Ալեքսանդրապոլի հարաւային կողմը վեց վերաս հեռաւորութեամբ գաշտային դիրքով։ Ինչպէս Հասան խանի, նոյնպէս և 1854ի կոխտնեան ժամանակ ասնակոս եղեր է։ Պարսիկները շատ անգթութիւններէ և կոտորածներէ զատ, բաւական վերիններ ևս տարեր են, յորոց 80 հոգի կորսուեր են, իսկ միւացեալք ցրուեր են Լօռիի և արեւմտեան Շիրակի կողմերը։ 1854ի պատերազմին Պարսից փոխարքէն Քրդերը մեծ ջհասներ տուեր են և առ ժամանակ մի գիւղս անմարդաբնակ մնացեր է։ Բնակչաց թիւն 350ի կը հասնի, բաժնուած մօտ 500 տան. այս թուոյն մէջ են նաև կաթողիկէ Հայք՝ 853 հոգի։ Միայն 40 տուն եկած են 1854ի պատերազմէն վերջ Ալաշկերտի և Մշոյ գաւառներէն. կաթողիկէ Հայք ևս եկած են նոյն ժամանակ։ Միւսները բնիկ կը համարուին, թէև իրենց նախնիք շատ հին չեն, այլ Հասան խանի ժամանակ և առաջ եկեր են գաղտագաղ կողմերէ։

Ցերեսց հայ կրկին հաստատութիւնք, ուրիշ տեղերու բաղդատմամբ, բացառութիւն կը կազմեն, իրարու հետ խաղաղ և սիրով ապրելով։ Անոնց երջոց Ալարատեանի Ծննդավայրն է գիւղս, և այս քրիստոնէական և արեւակցական սիրոյ գլխաւոր պատճառն է անոր խաղաղասիրական և ազգասիրական ոգին և ուղղութիւնը։ Գիւղիս նախնական անունը եղեր է Գան—Գա՛ա, զոր բնակիչներէն ոմանք կարծացեր են հին եկեղեցւոյ յիշատակարանի մէջ. իսկ գիւղի անունը նախկին եկեղեցիէն առած է, որ շինուած է եղեր սեւ քարերով. Ղբղի յաւելուածն ալ, Պարսկաստանի Ղբղի գիւղէն եկած քանի մը ընտանիքներ գրած են՝ իրենց հայրենի գիւղի անունը պահպանելու համար։ Այժմեան եկեղեցին 1860—65 թուականներուն սրբատաշ քարով և փայտաժանգ շինուած է հին եկեղեցւոյ տեղը, որ մօտաւորապէս իրեն հարիւր տարուց հնութիւն ունեցեր է։ Երբ տեղը. ունի պիտոյ անուամբ աւետարան մը 1601ին գրուած։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ ԽՐԻ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԻ ՓՈՔՐ. — Բազմամարդ հայաբնակ գիւղս կը գտնուի Ալբարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Ալեքսանդրապոլի հարաւային կողմը վեց վերաս հեռաւորութեամբ գաշտային դիրքով։ Ինչպէս Հասան խանի, նոյնպէս և 1854ի կոխտնեան ժամանակ ասնակոս եղեր է։ Պարսիկները շատ անգթութիւններէ և կոտորածներէ զատ, բաւական վերիններ ևս տարեր են, յորոց 80 հոգի կորսուեր են, իսկ միւացեալք ցրուեր են Լօռիի և արեւմտեան Շիրակի կողմերը։ 1854ի պատերազմին Պարսից փոխարքէն Քրդերը մեծ ջհասներ տուեր են և առ ժամանակ մի գիւղս անմարդաբնակ մնացեր է։ Բնակչաց թիւն 350ի կը հասնի, բաժնուած մօտ 500 տան. այս թուոյն մէջ են նաև կաթողիկէ Հայք՝ 853 հոգի։ Միայն 40 տուն եկած են 1854ի պատերազմէն վերջ Ալաշկերտի և Մշոյ գաւառներէն. կաթողիկէ Հայք ևս եկած են նոյն ժամանակ։ Միւսները բնիկ կը համարուին, թէև իրենց նախնիք շատ հին չեն, այլ Հասան խանի ժամանակ և առաջ եկեր են գաղտագաղ կողմերէ։

Ցերեսց հայ կրկին հաստատութիւնք, ուրիշ տեղերու բաղդատմամբ, բացառութիւն կը կազմեն, իրարու հետ խաղաղ և սիրով ապրելով։ Անոնց երջոց Ալարատեանի Ծննդավայրն է գիւղս, և այս քրիստոնէական և արեւակցական սիրոյ գլխաւոր պատճառն է անոր խաղաղասիրական և ազգասիրական ոգին և ուղղութիւնը։ Գիւղիս նախնական անունը եղեր է Գան—Գա՛ա, զոր բնակիչներէն ոմանք կարծացեր են հին եկեղեցւոյ յիշատակարանի մէջ. իսկ գիւղի անունը նախկին եկեղեցիէն առած է, որ շինուած է եղեր սեւ քարերով. Ղբղի յաւելուածն ալ, Պարսկաստանի Ղբղի գիւղէն եկած քանի մը ընտանիքներ գրած են՝ իրենց հայրենի գիւղի անունը պահպանելու համար։ Այժմեան եկեղեցին 1860—65 թուականներուն սրբատաշ քարով և փայտաժանգ շինուած է հին եկեղեցւոյ տեղը, որ մօտաւորապէս իրեն հարիւր տարուց հնութիւն ունեցեր է։ Երբ

921 · Հայրապետական Աթոռ Վաղարշապատի ·

քանդեր են նոր եկեղեցին հիմնելու համար, բացուեր է գերեզման մը և Գէորգ կաթողիկոսի հրամանաւ ամփոփեր են եկեղեցւոյ մէջ. և այն օրէն ուխտ սահմանուեր է։ Քաղաքական իշխանութիւնը թէև աշխատեր է յաչս ժողովրդեան ունայնացնել, բայց բնազդաբար իրենց ջերմեռանդ ուխտաւորութիւնը կը շարունակեն։ Եկեղեցւոյ հիւսիսային կողմը կառուցուած է ուսումնարանը։ Կաթողիկոսաց Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին, կառուցուած է 1859ին։ Գարագիլիսէի մէջ կայ մէկ ազբիւր. հողը մեծաւ մասամբ անջրդի է, Ախուրեանի ձորերը կը մշակեն բանջարեղէններ և վարունգ։ Արագածի ջուրը կը հասնի մինչև այս տեղ և բաւական հողեր անով կը ջրուին։

— Արեւելեան Մամուլ, իբ. 584—585։

ԳԱՐԱԳԻԼԻՍԻ ՄԵՆ. — այսպէսով աւանս կը գտնուի Գետարաց Տաշիր գաւառի Բամբակիձորի մէջ. Տկիլջանէն դէպի Ալեքսանդրապոլ տանող արբանեակեան ճանապարհի վրայ, երկրորդ կայարան է։ Հարաւային կողմը անտառաւէտ լեռներ են, իսկ հիւսիսային կողմը մերկ և գրեթէ անպտուղ սարեր։ Գիւղս քաղաքանման տեսք և ձեւ ունի, փողոցները բաւական լայն ու կանոնաւոր, շէնքերը մեծ մասամբ նոր ձեւով մաքուր ու քարաշէն, անոնք պարսկաստան՝ զարդարուած գլխաւորապէս բալի խրձձորների և ատենների ծառոց մի քանի տեսակներով, և բանջարանոցներով։ Ունի երկաթուղւոյ կայարան, թղթատուն, հեռագրատուն, և բաւական թիւով վաճառականական և արուեստական խանութներ։ Ունի 2686 բնակիչ, բաժնուած 380 տան. սովորութիւնք քաղաքացւոց նման են, անոնք կամ կարսեցի կէս ասիական և կէս եւրոպական. անուանի են հայ կանանց և օրիորդաց ձեռագործ մաքուր գորգերն ու կապերանները։ Զարգացման տեսակէտով գոհացուցիչ վիճակ ունին Գարագիլիսեցիք, երկտես ուսումնարանները իրենց փառքն ու պարծանքը կ'ուզեցնեն։ Կրօնական զգացմունք ևս շատ տիրու Հայոց կրնան բարի օրինակ լինել, ազգային և կրօնական ամէն բարենպաստակ գործի սիրով և ինքնայօժար կը փարին։ Բնակչաց մեծամասնութիւնը բնիկներ կը համարուին, կան գաղթականներ՝ գլխաւորաբար Ալաշկերտէն և մասամբ Միւռնեայ աշխարհէն, որոնց գաղթականութեան ժամանակը մթութեան մէջ թաղուած է։ Կան նաև 1830 թուի Կարնոյ մեծ գաղթականութեան մնացորդներէն, որոնք իբ սկզբան բազմաթիւ էին, բայց ինչ ինչ հանգամանքներէ հարկադրուած շատերը գաղթեր են Ալեքսանդրապոլ և մնացած են հազիւ 80 տուն։ Աւետնոց եկեղեցին կառուցուած է 1834 թուին, կեդրոնէն հեռու հիւսիսային կողմը. ժողովրդեան բազմութեան և կրօնասիրութեան նայելով շատ փոքր է, բայց պատճառը՝ շինութեան ժամանակ ժողովրդեան սակաւութիւնն եղեր է. Պ. փաշա Եղիազարեան վերջին տարիներս մտադրութիւն ունէր իր հաշուով վերանորոգել եկեղեցին, և եթէ հնար եր, քիչ մը մեծցնել։ Աւտնոց հիւսիսային արեւելեան կողմը կը միանան երեք դեռատիներ, մին Աղտաւի ձիւղը արեւելքէն եկող, երկրորդը արեւմուտքէն՝ Բամբակի ջուրը, երրորդը հարաւային անտառաւէտ սարերէն, ասոնց գլխաւոր ձորը տեղացիք կ'անուանեն վանքի ձոր։ Ի հնումն այս ձորի մէջ կան եղեր վանայ Ձորի և Պապաճի անուամբ երկու դիւղեր, հանդերձ վանքերով։ Ձորի գլուխն է Մայրեխ բարձրադիր լեռը, որուն գագաթէն կը տեսնուին Մասիսը և Տժխոխ շրջակայքը։ Այս լերան տատրակէն բղխող ազբիւրը երբեմն այլ և այլ հնութիւններ, ուշադրութիւններ, մեռաղեայ տարադրամներ և փոքրիկ արձաններ դուրս կը բերէ. թէ և այս մասին ուշադրութիւն դարձուցեր է կառավարութիւնը, բայց չէ կարողացեր խմանալ այս ջրաբեր հնութեանց ծագումը։ Մեծ Գարագիլիսեցիք կը պարապին մասամբ վաճառականութեամբ և արհեստներով, և մասամբ հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Հողը քիչ և անպտղաւոր լինելով, իրենց ապրուստի մէկ մասն ալ կը ճարեն փայտավաճառութեամբ և ածխագործութեամբ։ Օդի պատեւականութենէն ժողովուրդը ընդհանրապէս կայտառ և առողջ է. մանկանց մէջ, որք աւելի կրնան ենթակայ լինել զանազան սակաւութեանց, չես գտներ թուշնած դէմքեր, հիւանդութիւնք հազուագէպ են. ջրմէ միայն ծանօթ է Գարագիլիսէ։

լիսեցաց։ Ժողովրդեան մէջ աւանդութիւն մը չկայ աւանիս հիմնուելու ժամանակին և անուան նկատմամբ, բայց հնագոյն խաչքարերը և գերեզմանները ապացոյց են թէ աւանս գոյութիւն ունէր հին անյայտ ժամանակներէ սկսեալ։ Այժմեան անուններ սառցեր է, բլրակի վրայ ամբողջովին սեւ քարերով կառուցուած փոքրագիր եկեղեցիէն, որ ՌՓԹ դարու երկրորդ քառորդի ակիզներուը երկրաշարժէ քանդուեր է։ Հին բնակիչները Հասան խանի հրամաններու կատարի յարձակմանց ենթարկուելով, մինչև խաղազութեան վերականգնումը, ապաստաններ են Լոռիի քարերու և այրերու մէջ։ Վէրք Հայաստանիի մէջ մի քանի երես այս աղեսալի անցքերուն և աւանիս աւերմանը նուիրուած է։

Մեծ Գարագիլիսէի արեւելեան կողմը, չորս վերստ հեռաւորութեամբ կայ Վարդանլի գիւղը՝ որուն մօտ է Ս. Կիրակի ուխտատեղին։ Նախ այս տեղ կայ հզօր խաչարձաններով հանդուսարան, յետոյ Մեծ Գարագիլիսեցի բարեպաշտ մարդ մը մէկ տեղ հաւաքեր է այդ խաչարձանները, և շինել տուեր է մատառաձև, այնուհետև սկսեր են յաճախել ուխտաւորք. թէև ամէն շաբաթ և կիրակի անպակաս են ուխտաւորք, բայց բուն ուխտի օրն է կարմիր կիրակին։ Աւանիս արեւմտեան կողմը, Ղշլախի սահմանի մէջ կայ նոյնպէս կառակատար անուամբ ուխտատեղի մատուռ մը, ուր և ամէն տարի վերափոխման Ս. Պատարագ կը մատուցուի. 1840 թուին վերանորոգած են մատուռս։ Երրորդ ուխտատեղին Ս. Սարգիս՝ կը գտնուի եզդուզլու գիւղը, որուն յատկացեալ ուխտի օրերն են Ս. Սարգսի տօնին և Զատկի առաջին երկուշաբթին։ — Ալեքսեանց Մատմռոյ, Ի.Ջ. 236—237։ Մուրճ, Ե. 1579—1596։ Եւ այլն։

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ՆՈՐ. — Գիւղ Ա.յրարատայ այժմեան Ալեքսանդրապոլի գաւառի, Չիգիխլեր վիճակի մէջ։ Ունի 332 հայ բնակիչներ, բաժնուած 34 տան։

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ՆՈՐ կամ ԳԱԼԼՃԻԿ.— Հայարնակ գիւղ Միւնեաց Ծղուկ (Զանգեզուր) գաւառի մէջ։ Ունի 379 բնակիչ, բաժնուած 43 տան։

ԳԱՐԱԳԵՂԱ. — Կիլիկիոյ մէջ, Ասանայի վիճակներէն մին։

ԳԱՐԱԳԵՂԱՁ կամ ՂԱՐԱՂԵՂԱՁ. — Հայարնակ գիւղ կը գտնուի Միւնեաց Աղահէճք գաւառի արեւելեան և Շուշիի հարաւային կողմը։ Ունի 400էն աւելի տներ, և բաժնուած է քանի մը մասերու։ Տներէն շատերը կը գտնուին լերան գագաթը, իսկ միւսները լերան սոսրասներու։ Գարագշլագի չորս կողմը կան խիտ անտառներ։ Ունի քարաշէն եկեղեցի մը։ — Այս անուամբ ուրիշ քանի մը գիւղեր ալ կան Միւնեաց և Ա.յրարատայ մէջ, որոց բնակիչք այլազգի են։

ԳԱՐԱԳՈՒԶՈՒ. — Լեռնակ Ա.յրարատայ Շիրակ գաւառի մէջ, բարձր՝ 1820 մետր։

ԳԱՐԱԳՈՒԼԱԳ. — Մեծ հայարնակ գիւղ կամ աւան Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ, գրեթէ 3 ժամ Մամախաթունէն հեռու, հարաւային կողմը։ Դիրքը գաշտային է. ասոր մօտ է Շէյթան տերեսի կոչուած ձորը, որ աւազակաց բոյն է։

ԳԱՐԱԳՈՒԼՈՒ. — Հանգրուան Ա.յրարատայ Շիրակ գաւառի մէջ, Ախուրեանի ա՛ջ կողմը։ — Ուրիշ երկու գիւղեր ևս կան Լ.ՂՄիածնի գաւառի մէջ, այլազգի բնակիչներով։

ԳԱՐԱԳՈՒՇ կամ ՂԱՐԱՂՈՒՇ. — Գիւղ Միւնեաց Ձահուկ գաւառի մէջ, Համանուն լերանց արեւելեան կողմը։ Միաբանող Հայոց ամենէն փոքրիկ գիւղն է սա։ Ցրիսոն ժէ դարու սկիզբը 50 տուն բնակիչ կը նշանակէ Գարագուշի, 150 հոգի հազորդընկալը և 100 ազատ. եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին։ Կէս դար վերջը՝ Հ. Դաւիթեկ Ղազար, չորս տուն միայն կը գտնէ և 30 հոգի. Պետիկ՝ 1674ին հինգ տուն. իսկ նոյն դարուն վերջը և ոչ մէկ տուն ունէր։ Գիւղիս մէջ վանք չկար, այլ միայն եկեղեցասուն՝ յորում կար քահանայ մը և սպասաւոր կղերիկոս մը, և բնակչաց նուազած ժամանակ՝ երբեմն Ձահուկէն կու գար քահանայ. թէև 1725ին, գաւառին վանահարց առաջադրութեանց մէջ գրուած է նաև «Գիրս Աղաբիա Ղարայղուշոյ վանից»։ Չի գիտցուիր թէ երբ բնաւորին աւերեցաւ և բնակիչներէ զատաբնակացաւ այս գիւղս, և համանուն ուրիշ գիւղ մը շինուեցաւ խոր վիճակին մէջ։

ԳԱՐԱԳՈՒՐՏ (*Ախ գոյլ*). — *Ա.յրարատայ արեւելեան Մասրին Բասենի մէջ. դիրքը զեղեցիկ է։ Ա.խիւեան բնակիչք են եզերացիք և պահապան կուզան Դ.ազախներէ։*

ԳԱՐԱԳՕՅՈՒՆԼՈՒ (*Ախտախոյ*). — *Ա.յս անուամբ կրկին թռմբարտնակ դիւղեր կան Ա.յրարատայ Ձ.ակատաք (Մուրմուռ) գաւառի մէջ։ — Ա.յս անուամբ ուրիշ շատ դիւղեր կան Ա.յրարատայ, Սիւնեաց և այլ նահան.գաց մէջ, սակայն ամէնն ալ ապ.ազդարնակ են։*

ԳԱՐԱԳԱՁ կամ ՍԵՒ ՔԱՐ. — *Հայարնակ դիւղ Ա.րցախի Ջաւէ (Դ.ազախ) գաւառի. հիմնուած է Հաչա–Ջրի հիւսիսային կողմը, հովտի մը մէջ։ Բնակիչք՝ 2469 հոգի, բաժնուած 475 տան, գաղթած են Կիւլոտան և Ջրաբերդ գաւառներէն։ Ունի պատուական օդ և առողջարար ջուր։ Եկեղեցին նուիրուած է Ս. Պետրոսի։*



222. Գարադաղ խան։

ԳԱՐԱԴԱՁ. — *Լ.ճ և դիւղ Ա.յրարատայ Ձ.ակատաք (Մուրմուռ) գաւառի մէջ։*

ԳԱՐԱԴԱՁ. — *Գիւղ Ծովային Կիլիկիոյ, յարեւմ կան 30 տուն Ա.նասարի Ասորիք։ Հոս կայ նաև Իլխանատունէն մը Գարադաշ խան անուամբ։*

ԳԱՐԱԵԱՊՈՒՊ. — *Հայարնակ դիւղ Էօզդատի վիճակին, ունի Վահանեան վարժարան մը, 60 աշակերտներով։*

ԳԱՐԱԵԱՁ. — *Երկաթուղւոյ կայարան Տփղիսի համանուն վիճակին մէջ։ Բնակիչք 103 տուն զանազան ազգերէ։*

ԳԱՐԱԹԷՓԷ. — *Ա.յս անուամբ քանի մը ապ.ազդարնակ դիւղեր կան Ա.յրարատայ մէջ։*

ԳԱՐԱ ԹՈՒՓ. — *Տանձկարնակ դիւղ Կիլիկիոյ, Ջէյհունի հիւսիս արեւելեան կողմը։*

ԳԱՐԱԻՆԷԿ. — *Լ.ճս Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ։*

ԳԱՐԱԻԼԻՄԱՆԷ. — *Լ.ճս Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ։*

ԳԱՐԱԼ. — *Ձ.երակ և ամռայլ դիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ։*

ԳԱՐԱԼԱՐ. — *Փոքրիկ թռմբարտնակ դիւղ Սիւնեաց վ.այոց ձոր գաւառի մէջ։ — Ա.յս անուամբ ուրիշ դիւղեր ևս կան զանազան կողմեր. ամէնքն ալ ապ.ազդարնակ։*

ԳԱՐԱԽԱՆԷ. *Տես* ՇԷՕՐԼԿԻՆԼԻ ԳԵՏ։

ԳԱՐԱԽԱՆ ՊԷԿՈՒՒ. — *Հայարնակ դիւղ Սիւնեաց Դ.ահճասան գաւառի մէջ։ Ունի 120 տունէն աւելի և եկեղեցի մը։ Սա իր դիրքովը կը կարծուի թէ լինի Եզնիկեա մեծ դիւղը, զոր կը յիշէ Թովմաներէ, և երկու փարսախ հեռու կը դնէ Երասխէն։*

ԳԱՐԱԽԱՁ. — *Լ.ճս Ա.յրարատայ Շիրակ գաւառի մէջ։ — Կիւրճի–հօլ դիւղի արեւելեան կողմը, լերանց մէջ կան մեծ շինուելու աւերակներ, հինգ ձիմաշանձք և շատ Ջրաղացներ. այս աւերակները կը կոչուին Թարադա Գարադաշլի, այսինքն աւերակ Գարադաշ լերան. այս աւերակաց քարերէն տարած են յԱլէքսանդրապոլ շինուելիան համար։*

ԳԱՐԱԽԱՁ. — *Գիւղ Ա.յրարատայ Եւեւան գաւառի մէջ, ունի 786 հոգի, բաժնուած 64 տան, կէսը Հայք են և կէսը Թռմբարք։ — Ուրիշ գիւղ մ՚ալ կայ կարապ վիճակին մէջ, 190 հոգի, բաժնուած 22 տան, ամբողջ հայ են։*

ԳԱՐԱԿԷՕՁ. — *Գիւղ Ուրմիոյ, ունի 42 հայ բնակիչ, բաժնուած 8 տան։ Եկեղեցի և դպրոց չկան։*

ԳԱՐԱԿԷՕՁ. — *Գիւղ Ա.յրարատայ Բասենի գաւառի մէջ։*

ԳԱՐԱԿԷՕԼ (*Ախ լիճ*). — *Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, 8035′ բարձր դիրքով։ Կը կարծուի թէ հրարդհայկեան ներգործութիւնէ ներկ դոգացեր է։*

ԳԱՐԱԿԷՕԼ. — *Լ.ճակ Ա.յրարատայ Ուրծ և Ա.րտ գաւառի մէջ. եզերքը կը զանուի Ադ–գիլիսէ գիւղը։ — Տես* ԱՐԱԳԱԾ։

ԳԱՐԱ–ԿԷՕՂԼՈՒՔ. — *Ա.յս անուամբ լճակներ կան Սիւնեաց վ.այոց ձոր գաւառի մէջ։*

ԳԱՐԱԿԻՒՆԷ. — *Լ.ճս Ա.յրարատայ Բասենի գաւառի արեւելակողմը։ — Ա.յս անուամբ երկու գիւղեր ևս կը յիշուին։*

ԳԱՐԱՀԱՃԻԼԷՐ. — Գիւղ և բերդ Կիլիկիոյ. Ատանայի արեւելեան կողմը։

ԳԱՐԱՀԱՃԻԼԻ. — Ա.յրարատայ և Միւնեաց մէջ կան այս անուամբ քանի մը այլազգարնակ գիւղեր։

ԳԱՐԱՀԱՍԱՆ կամ ՂԱՐԱՀԱՍԱՆ. — Կարնոյ գիւղերէն մին. ունի 70 տուն բնակիչք, կէսը Թուրքք։ Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։

ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Հայաբնակ գիւղ Կիւրինի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի եկեղեցի մը և մէկ երկսեռ վարժարան, մօտ 100 աշակերտներով։

ԳԱՐԱՀԻՍԱՐ կամ ԱՖԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. Գր. KARA-HISSAR։ — Գլխաւոր քաղաք Պրուսայի կուսակալութեան համանուն գաւառի մէջ։ Կ'ինկնայ 28° 5′ երկայնութեան և 38° 44′ լայնութեան մէջ, և կրճնած է հսկայ գահիլների մը կողին։ Առջեւը բաւական ընդարձակ ու բնութեամբ գեղեցիկ դաշտավայրի մը կայ։ Ցիշեալ գահիլներէն առջեւը անջատ և ուրոյն դիրքով կը բարձրանայ (400 մետր) քառաժայռ մը, որ եգիպտական բուրգերը կը յիշեցնէ, և որուն վրայ կառուցուած է հնոցնայ բերդ մը։ Գաւառը ժամու չափ հեռու են քաղաքէն Ակասլուի և Գասապայի բնակութեանց երկաթուղւոյ կրկին կայարանները, որոնք տեղւոյս վաճառականութեան մեծ դիւրութիւններ կ'ընծայեն։ Գարահիսարի նշանաւոր բերքն է ափիոնը, որ ամէն տարի խնամով կը բերէ կողմնակս բարեմիտ գործիներու ձեռքերուն։ Եթէ անոնցմէ եղանակներու սխալ բերմամբ այս փրկարար բերքը պակսի առեւտրական հրապարակէն, գործունէութիւնները կը դադրին, ամէն շահադիտական ոյժեր կը սպառին, ապրուստի միջոցները կը դժուարանան և ժողովուրդը կը տարուբերի դրամական անձկութիւններու մէջ։ Տեղս իր այս բերքով ընդհանրապէս գերազանցած է ուրիշ մերձաւոր քաղաքները։ Քաղաքիս բնակիչները, ըստ վ. Փրինէի, կը հաշուին 17436 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմէտականք . . .	12606 հոգի
Հայք	4612 »
Յոյնք	218 »
Գումարն...	17436 հոգի։

Երեւելի վաճառականները ընդհանուր առմամբ կը զբաղին ափիոնի, պրոնի (թիֆթիկ) և աշարի ընդարձակ ու յանդուգն գործերով։ Մէկ քանի բացառութիւններէ զատ ձեռաց և արհեստից վերաբերեալ գործով զբաղող վաճառականները երկրորդ կարգի կը վերաբերին. օտարական վաճառականներ ևս կան որոնց մէջ մեծամասնութիւն կազմած են կեսարացիք։ Հոս կը գտնուին այնպիսի կալուածատէրեր ու զրամատէրեր, որոնք շատ մեծ հարստութիւն դիզած են։ Հասարակաց շէնքերէն կան զաւառապետի և քաղաքական կառավարութեան պալատներէն զատ, 10 մզկիթ, 2 եկեղեցի Հայոց, 2 հասարակաց դրասուն, 7 խան կամ հիւրանոց, զինուորական շտեմարան մը, 5 վաճառատուն, 2 դեղարան, 1081 կրպակ, և այլն։ Քաղաքի օդն ու ջուրը բաւական մաքուր և առողջարար են, բայց յաճախ պատահող խոնաւութեանց պատճառաւ հարբուխը անպակաս է։ Տեղւոյս Հայք ունին Ս. Աճահիկեան վարժարան մը 250 մանչ և 200 աղջիկ աշակերտներով. կան նաև ուրիշ չորս ազգային ուսումնարաններ՝ մօտ 200 աշակերտներով։ Վերջին (1895ին) դէպքերուն շատ զոհ ունեցան մերազնեայք և առաջնորդարանին թալանուեցան։ — Կ'ըսուի թէ քաղաքս Տրոյիոյ պատերազմէն վերջ կառուցուած բլլայ մակեդոնական գաղթականութենէ մը։ Նշանաւոր էին ի հնումն քաղաքիս մանրարհեստի հանքերը. կ. Պոլսի Ս. Սոփիայի գեղեցիկ սիւներէն ոչ սակաւք հանուած են նոյն քարահանքերէն։ Տեղւոյս քաղաքական կառավարութիւնը կը բազկանայ մահմէտական նահապետ մը և 12 անդամներէ, 7ը մահմէտական են, 5ը հայ և 2ը յոյն։ — Առքր. հանդակ, բ. 291։ վ. Փրինէ, Դ. 224–241։ Եւ այլն։

ԳԱՐԱՀԻՍԱՐ ԹԵՒԵԼԵ. — Ծովային կիլիկիոյ վիճակներէն մին։

ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՊԻՆ կամ ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՐԳԻ. Գր. KARA-HISSAR-CHARKI։ — Գլխաւոր քաղաք Իներասիոյ կուսակալութեան համանուն գաւառի։ Կ'ինկնայ Կարնոյ և Երզնկիոյ մէջ տեղ, Ագշար դաշտի հիւսիսային կողմը, կերասունէն 82 հազարամեար հեռու. կառուցուած է բարձրագագաթ քարա-

լիրան մը ստորոտը և շատ նմանութիւն ունի Ակնիբիոյ։ Միաւ քարաշէրան գագաթը ունի փոքրիկ բերդ մը՝ Կումիենեանց ժամանակներէն մնացած։ Տները և շուկաները շինուած են լիրան ստորոտը։ Բազաքիս բնակիչք, ըստ վ. Քինէի, են 11700 հոգի, բաժնուած հետեւեալ կերպով.

Մահմէտականք	7300	հոգի
Հայք Լուսաւորչական	1700	»
» Կաթոլիկ	750	»
» Բողոքական	300	»
Յոյնք	1650	»
Գումարն...	11700	հոգի։

Շապին Գարահիսարու հայարնակ գիւղերը հետեւեալք են, որոց բնակչաց նոր թուահամարը չունենալով, չկարողացանք ատ գնել։ Այս գիւղերէն գրեթէ ամէնքն ալ ունին մէկ մէկ վարժարան.

Անդրէաս	Ֆէլմունճ աքսունտու
Բիւրք	Սէվինտիք
Սիս	Քէչէլիւրտ
Իսկի Շէհիր (Հին քաղաք)	Կէրաճ, Գրաճ
	Ագարակ
Եէնի քէօյ (Նոր գիւղ)	Մահմատ
Մէսայոց (Մշակնոց?)	Կօլըա հիսար
Քէլթմանոս (Կեծանոց?)	Պուսէյիտ
Գոմէշտուն	Աներդի
Ալամնիկ	Զրտախ
Վարի Աճպտեր	Ծիպերի
Վերի Աճպտեր	Թամզարա
Աբղավիս (Աղբուսիս)	Համամ
Աղուանիս	Լէթարիճ
Ապանա	Տէմիրճիվիք

Հայք ունին երկու եկեղեցի, Ս. Յոհաննու և Ս. Աստուածածին. ունին նաև երկու ուսումնարան, Մուշեղեան և Ս. Փըրկչեան, միասամուռ մօտ 500 աշակերտներով։ Ժողովուրդը աչալուրջ լինելով, տակաւին լաւ վիճակի մէջ է տեղւոյս վաճառականութիւնը։ Քաղաքս նախ կառուցած է Պոմպէոս, և հին անունն կը կարծուի Կոպոլիս. 879 հիճրէթի թուականին Ջահիճ Մէհէմմէտ գրաւեց։ Քաղաքիս մօտ կայ պաղիզի առատ հանք։ Ամբողջ Շապին Գարահիսարի տարեկան վաճառականութեան շարժումն կը հասնի մէջին հաշուով 2133485 ֆրանկաց. յորոց 1469305 ֆրանկը դուրս ղրկած ապրանքներու գինն է և 464180 ֆր. ներմուծուած ապրանքներու գին։ Գաւառին տարածութիւնն է 9800 քառ. հազարամետր. և կը պարունակէ 1100 գիւղեր։ Գաւառիս ընդհանուր բնակչաց թիւն է 77000, յորոց 1800ը Հայք են։ — Վ. Քինէ, Ա. 774–789։

ԳԱՐԱՃԱ. — *Գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ. ունի թաղային վարժարան մը։*

ԳԱՐԱՃԱ. — *Ամասի գիւղ Ակրաբատայ կառապք գաւառի մէջ։*

ԳԱՐԱՃԱԼԱՐ. — *Կիլիկիոյ (Ատանա) վիճակներէն մին։*

ԳԱՐԱՃԱԼՔ ՏԷՐԷ. — *Զորակ լեռնային կիլիկիոյ մէջ։*

ԳԱՐԱՃԱՎԷՐԱՆ. *Տես* ԳԱՐԱՃԷՕՐԷՆ։

ԳԱՐԱՃԱՎԷՐ. — *Գիւղ կեսարիոյ առաջնորդական վիճակի մէջ։ Ունի Ամրաւեան անուամբ վարժարան մը, 30 աշակերտօք։*

ԳԱՐԱՃԱ ՏԱՂ (*Հն. Մեաւ լեառն*). — *Ակրակէս կը կոչուի Տաւրոսի շղթային այն մասն, որ կ'ինկնայ Տիգրիսի և Եփրատի մէջ տեղ։ Միաւ կոչուած են այս լեռները իրենց գոյնին համար. թէ՛ հողը և թէ քարերը հին շիջեալ հրաբուղիի մնացորդներ են։*

ԳԱՐԱՃԷՎԻՋ կամ ԳԱՊԱՃԷՎԻՋ. — *Գիւղ Ճանիկու առաջնորդական վիճակի մէջ։ Ունի Ս. Կարապետեան վարժարան մը և 100 աշակերտ։*

ԳԱՐԱՃԷՕՐԷՆ կամ ԳԱՐԱՃԱՎԷՐԱՆ. — *Գիւղ Ակրաբատայ Նիգ գաւառի մէջ. Զաքարիայէն կոչուած է Սեւաւեր։ Ունի 10 տուն հայ և 30 տուն այլազգի բնակիչներ։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։*

ԳԱՐԱՃՈՐԱՆ. — *Գիւղ Բարձր Հայոց Մանանաղի գաւառի մէջ, Մամախաթունի արեւելեան հիւսիսային կողմը։*

ԳԱՐԱՄԱՆ կամ ԼԱՐԱՆԴԱ. Պզ. KARAMAN. Յն. Λάρανδα. — *Գլխաւոր քաղաք նոյն անուն գաւառի կեդրոնը, 75 հազարամետր Իկոնիոնէն հետու հարաւային արեւելեան կողմը, կ'ենթադրէ—սու վտակի եզերքը։ Ի հնումն քաղաքս Լարանդա կը կոչուէր և իւր շրջակայքով Լիկայոնիոյ վիճակ մը կը կազմէր։ Լեառն Մեծագործ տիրած է քաղաքիս, որ և Ան-*

չեկիման Երուսաղէմի ասպետաց պարգեւած ժամանակ, կը խոստանար իրենց նուիրել նահ Լարամանան։ Լարամանայէն էին հայրենեօք Նիսաոր՝ և իր որդին Պիսանդր բանաստեղծները։ Փրիստոնէութեան սկիզբներէն եպիսկոպոսանիստ թեմ եղած է Իկոնիոյ նահանգին։ Քաղաքին մէջ չկան յունական կամ հասմէական հնութիւններ, բայց կան



223. Գարամանցի ազնուական։



224. Տիկին Գարամանցի

սարակինեան ճեմարտներ. ինչպէս վայելչաշէն կիսաւեր մզկիթներ, մանաւանդ մին՝ գեղեցիկ ճարտարապետութեամբ մեր արաբական քանդակներով և մարմարեայ գմբոյ։ Տափարակ և երկայնանիստ բլրի գագաթը կը գտնուի բերդը, որ ունի գանազան ձեւերով աշտարակներ, ինչպէս բոլորակ, քառակուսի, բազմանկիւնի. պարիսպները շինուած են մեծամեծ գեղին և կարմրագոյն քարերով։ Փա-

դաքս ատեմ ունի 24000 բնակիչ, գանազան ազգերէ, թուրք, հայ, յոյն, և այլն։ Հայք ունին գեղեցկաշէն եկեղեցի մը, և վանականութիւնը Ցունաց և իրենց ձեռքն է։ Զհայէֆի 1848 ին այս պեղէն անցած միջոց, հոս գտաւ շատ հայ գինեվաճառներ՝ կիպրոսի գինւոյ։ Ցէվիս ևս 1875ին հոս եկած է, և կարծեօք կը համարի 1000

տուն բնակիչ, յորոց 100ը քրիստոնէից, և անոնցմէ զատ, ոչ սակաւ կեսարացի հայ և յոյն եկաւոր վաճառականներ։ Քաղաքս նշանաւոր բան մը չունի. սալայատակ փողոցներն ալ միմիայն են՝ տանց պատշգամները առնոց վրայ կարկառած չինելուն պատճառաւ. վաճառանոցներն ալ հարուստ չեն։ Պարտէզներով զարդարուած է Գարամանն, և իր շրջակայից տեսարանը գեղեցիկ է։ — Ասոյ

հոս կը նստէր նահանգի կուսակալը, բայց այժմ փոխադրուած է յիկոնիան. թէև սա կաւին ամբողջ նահանգը՝ որ կը բովանդակէ Լիկաոնիա, Իսաւրիա, Պամփիլիա և Պիսիդիա հին աշխարհները, կը կոչուի Գարամանի, քաղաքին այժմեան անուամբը։ — Մխսեռաճ, 292–293։



225. Կին Ստորին Հայոց։



226. Ազնուական Ստորին Հայոց։

ԳԱՐԱՄԱՆԻԱ. — Ա. յոգէս կը կոչուէր անցեալ գարուց մէջ հարաւային Անատոլիոյ երկիր մը, վերոյիշեալ քաղաքի անուամբ։ Մեր ժամանակակից գրիչները խառնման առնուն կու տան այս երկրին կամ գաւառին։ Ալայէտտին սուլտանը Հայերէն Լրմէնէկը առնելով իրեն զօրավարներէն միոյն տուաւ (1228ին), և հոն երկրին պահպանութեան համար բնակեցուց քանի մը Թուրքմաններ։ Ասոնցմէ մին էր Եռերէ–Պաֆի ածխագործը, որուն համար Համիէր՝ Օսմանեան պատմաբեան հմուտ հեղինակը, կ'ըսէ թէ ազգաւ հայ էր։ Ասիկա շատ անգամ ածուխ վաճառելու համար Լարանտա կ'երթար, և այսպիսով կամաց կամաց հարստացաւ։ Ասոր սրտիքը Գարամանն կը կոչուէին, և սուլտանաց ակռաները վիրաւորելու ժամանակ, սկսան գանդեր կազմել ու այս երկրի սահմանաց վրայ բռնանալ և ախրանալ, և այդ պատճառաւ իրենց անուամբ երկիրը կոչուած է Գարամանիա։ Մեր Կիլիկիոյ արքունի պատմիչը մանրամասն կը պատմէ ասոնց ըրած գործերը, բայց չի յիշեր թէ ասոնք ծագմամբ հայ էին։ Մեր Հեթում թագաւորին կոզմոպոլիտ զօրքերն երկու անգամ կոտորեցան Խարամանները

նէին։ Հայոց Ամբատ սպարապետը Խարա-մանի երկրի մէջէն Մանիաան անուամբ զղեակ մը՝ որ առաջ քրիստոնէից է եղեր, շատ աշխատութեամբ և առատ պարգեւներով ձեռք ձգեց։ Բայց զոռոզ Խարամանը շատ կը նե-ղէր զԱմբատ, որ երեք տարի զղեկին տի-րեց և շատ պրամ վատնեց գինուորաց հա-մար։ Խարաման եկաւ պաշարեց նոյն բերդը և ինն ամիս տատիկ նեղեց մէջինները. այս միջոցին Հեթում թագաւորը հատաբե-լով հեծեալ և հետեւակ բազմաթիւ զօրքեր, եկաւ յաղթեց անօրէն Խարամանին, որ և քիչ ժամանակէ տատկեցաւ, պատերազմի գանելով, խաբէութեամբ մտաւ և ափրեց Ի-կոնիոնի, Խորտակեց նաև եգիպտական գունդ մը, և վերջը լսելով Թաթարներու գալուստը, խոյս տուաւ իր լեռները։ ԺԹ դարու վեր-ջերը Գարամանիոյ տէրը Աւսա կը կոչուէր, և ասոր ժամանակ կը թուի, թէ Իկոնիոնի սուլտանութեան բարձմամբ (1294), ափրու-թեան սահմանները ընդարձակեր են։ Նոյն դարու վերջը և ԺԴ-ի սկիզբը, իշխողն էր Մուհամմէտ Պեկրէտտին։ Աւսա զօրաւոր յաջորդներէն մին 1318 թուին բազմաթիւ հեծեալներով ասպատակեց Տարսոնի սահ-մանները, բայց Պայլն Օշին հանդիպով վեր-



227. Գարամանի խոյ։

ջապահներու վրայ, Պոմպէուպոլսի մօտ կո-ուորեց և վանեց։ Դարձեալ վերնոյն կամ անոր յաջորդի ժամանակ, 1336 տարուց սկիզբը, ժամանակակից մը գրածի համե-մատ, խարամանցիք մտնելով Հայոց սահ-մանին մէջ, շատ վնասներ հասուցեր են։ Գարամանաց տոհմի նահապետ Նուրէ-Սու-ֆիէն վերջը, մինչև ԺԵ դարու վերջերը, իրարու ետեւ յաջորդներ են տասն հոգի։ 1486–7ին այս տոհմը բոլորովին կը նուա-ճուի Օսմանցիներէն։ Վենետիկցի կնասր ա-նուամբ նկարիչ մը, հոչակաւոր Թիցիանոյի եղբայրը, ԺԶ դարու վերջերը, զանազան ազ-գաց տարազներու հաւաքածոյին մէջ հրատա-

բակած է նաև Գարամանցւոցը (Թ. 221–2), ինչպէս նաև նոյն կոմի Հայոցը՝ (Թ. 233–4) Սաորին Հայք կոչելով։ Գագղիացին Պիերպրանսոն այս կոմիրէն և Լարանտայէն անցաւ 1432 թուին։ Պօփբրթի անգղիացին ալ 1811–1812 թուականներուն բնակեց այս կոմիրը և հրատարակեց Karamania-ա-

կը գտնուի Ասի Ասանձնակ գաւառի մէջ, Ղահրիլարի հիւսիսային կոմը։ Ժամանակաւ ամբողջապէս հայ եղած են գիւղիս բնակիչները, բայց այժմ մնացեր է միայն 7 ընտանիք, իսկ մնացեալքն մահմետական են։ Հայք եկեղեցի չունին և իրենց հոգեւոր պէտքերը կը կատարեն Սարով գիւղի



228. Կզնուտ = Գարամըզգ։

նուամբ գիրք մը ի Լոնտոն 1817ին։ Այս կոմանց մեծամեծ խոյերը նշանաւոր են բզի առատութեամբ, ինչպէս նաև գմակի մեծութեամբ. այժմ այս տեսակ խոյերը կըկրին անուամբ Գարամանի կը կոչուին։ — Միտռաճ, 293–296։

ԳԱՐԱՄԱՆԼԸ. — Ա. լլազպարնակ գիւղ լեռնային Կիլիկիոյ, Ջէյթունէն 9 ժամ հեռու։

ԳԱՐԱՄԱՆԼՈՒ կամ ՂԱՐԱՄԱՆԼՈՒ.—Գիւղս եկեղեցւոյն մէջ։ Ա.անղարար կը պատմեն թէ գիւղիս նախկին անունն էր Բօղի։

ԳԱՐԱՄԵԼԼԱ, ԳԱԼԱՄԵԼԼԱ կամ ԳԱՆԱՄԵԼԼԱ. — Հին նաւահանգիստ Կիլիկիոյ. Ա.յսօր բարգաւաճումէն առաջ բաւական նշանաւոր էր։ Լեւոն՝ 1214 թուին, ուրիշ տեղերու հետ կը յիշէ նաև Գանամելլա նաւահանգիստը, գրաւ տալու Հիւրընկալ ասպետաց, անոնցմէ փոխ առած գրամոյն համար։

ԳԱՐԱՑԱՂ. — Լեռնաբլուր Ա.յրարատայ Շիրակ գաւառի մէջ։

ԳԱՐԱՆԼՂԳ կամ ԳԱՐԱՆԼՈՒԽ. — Հա- ռաւ, արեւելեան կողմը՝ կ'երեւի ամայի գիւ- ղաւերին ձանձիկ, զոր Ալիշան կաթողի- կոս իբրեւ շէն կը յիշէ։



229. Խաչարձան Վերին Կզնուտի (Գարանլըգ)։

յաբեակ գիւղ Ա.յրարատայ Նիգ (Պաշ Ապա- բան) գաւառի մէջ։ Ունի 469 բնակիչ, բաժնուած 145 տան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Գիւղէս մղոն մը հե-

ԳԱՐԱՆԼՂԳ, ԳԱՐԱՆԼՈՒԽ (Հն. կգնուտ). — Այս անուամբ այժմ երկու գիւղեր կան Ալանեաց Գեղարքունի գաւառի մէջ։ Վերին Ղարանլուխ՝ ի հնումն կը կոչուէր Վերին

Կզնուտ, ունի այժմ մօտ 200 տուն հայ բնակիչներ, 1600 հոգիէ աւելի։ Եկեղեցին, որ նուիրուած է Ս. Գեորգայ, հին է և անշուք, թէև 1875ին նորոգուած է, ինչպէս կը յայտնէ դրան վրայի արձանագրութիւնը։ Եկեղեցւոյ շրջապատն զարդարած են գեղեցմանատան խաչքարերը։ Գիւղիս դիրքն լաւ է, արեւմտեան ձորակի մէջէն խոխոջմունքով կը վազէ, այս գիւղերու անուամբ կոչուած Կզնուտեանցու գետակն ։ Վերին Կզնուտի մօտ, հին գերեզմանատան մէջ, կան շատ խոյակներ գերեզմանաքարեր, ինչպէս նաև գրուագազարդ խաչարձաններ, որոց արձանագրութիւնք շատ հին չեն։ Թիւ 229 խաչարձանի արձանագրութիւնն գրուած է ԺԸ դարու երկրորդ կիսուն մէջ։ Ստորին կամ Ներքին Ղալանլուխ (Կզնուտ), կառուցուած է ծովակի մօտ, բնդարձակ դաշտավայրի վրայ։ Ունի մօտ 230 տուն հայ բնակիչներ, և Ս. Աստուածածնի եկեղեցի մը։ Ժամանակաւ կայ եղեր նաև Միջին Կզնուտ անուամբ գիւղ մը, որ ի վերջոյ ամայացած է։ — Իսահակեան, 58։ Գեղարքունեաց, 536–539.

ԳԱՐԱՆԼՂԳ կամ ՂԱՐԱՆԼՈՒԽ ԹԼՓԼ. — Լիս Միհնաց վայոց ձոր գաւառի մէջ։

ԳԱՐԱՆԿԱ. Տես ԿԱՐԿԱՋ։

ԳԱՐԱՋԱՄ կամ ԳԱՐԱՋԱՆԹԱ. — Գիւղ այժմեան Կարսի գաւառին մէջ. ունի 47 տուն բնակիչ, զանազան ազգերէ։

ԳԱՐԱՋԱՅՐ. — Հայարնակ գիւղ Էօղզատի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի Աբծրուեանց վարժարան մը՝ 40 աշակերտանոցով։

ԳԱՐԱ–ՁԻՆԱՐ կամ ՂԱՐԱ–ՁԻՆԱՐ.—Գիւղ Արցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Աւետարանոցի գետակի աջ կողմը։ Ունի արբունի պարոց մը, Ս. Յովհաննէս եկեղեցի մը և 805 բնակիչ, բաժնուած 120 տան։

ԳԱՐԱՁԼՂ. — Տայոց աշխարհի մէջ լեռնանցք մի է։

ԳԱՐԱՁՈՒԽԱ. — Ալլահուակայ Աստրին Բասենի մէջ ագարակ մի է Քէօփրի քեօյի մօտ։ — Ալս անուամբ գիւղ մի ևս կը յիշուի, Միհնաց Նախճաւան գաւառի մէջ։

ԳԱՐԱՁՈՒՄԱԿ. — Լիս Ալլահուակայ Ճահկաձոր գաւառի մէջ։

ԳԱՐԱՁՈՊԱՆ կամ ՔԱՐԱՁՈՊԱՆ. — Մեծ գիւղ Հայոց Տուրուբերանի Հարք (Խնուս) գաւառի մէջ։ Ունի 150 տուն՝ բաժնուած 3 թաղերու։ Գեղեցիկ է տեսարանն, օդն կենսատու և ջուրն առատ։ Գիւղացւոց նիւթական վիճակն լաւ կրնայ համարուիլ. ունին Ս. Յակոբ անուամբ քարուկիր եկեղեցի մը 3 խորանաւ և 6 սիւներով։ Տաճարին վրայ, երկու գերաններու մէջ տեղ կախած են Ջիպիխէն բերուած երկու բաւական մեծ զանգակներ։ Գարաչօպանի Հայոց մէջ կը գտնուին այնպիսի անհատներ, որք ձայն ունին Խնուսոյ դատարանին մէջ և մեծ ազդեցութիւն գաւառին վրայ։ Տեղւոյս գիւղացիք սովորութիւն չունին իրենց ննջեցելոց տապանաքարինք օծել տալու, այլ քարին կիսակլոր ձև մը կտուտան և կը նմանցնեն ըղտուս և աւելի յաճախ ձիու՝ հանդերձ թամբով, որ նշան է մեռնողի ձիավարժութեան, և քաջասրտութեան։ — Ներարագրական ուղեւորութիւն, Գ. 106։

ԳԱՐԱՊԱՂ. Տես ՂԱՐԱԲԱՂ և ՄԲՆ։

ԳԱՐԱՊԱՂՂԱՐ. — Ալլազգաբնակ գիւղ Միհնաց Նախճաւան գաւառի, Խոզ վիճակի մէջ։ Ունի մօտ 200 տուն։ Ի. գարու վերջերը Ճեմիլլի խուալացի ուղեւորը, որ 1694 տարուց յառնիս 7ին հոս իջեւանեց, գիւղս կ'անուանէ Գարապա, և մօտը կը յիշէ մեծ և գեղեցիկ կարաւանատուն մը՝ քառակուսի ձեւով, և քաղցր ջրի աղբիւր մը, ուրուն համար աւանդեր են իրեն Հայք՝ թէ նոյն Սեմ որդին բղխեցուցեր է քարի մէջէն։ Թաւիշներէ ևս այցելած է տեղւոյս և անունն կը գրէ ճիշդ՝ Karabagler։

ԳԱՐԱՊԱՂՂԱՐ. — Ալլս անուամբ երեք գիւղեր կան Ալլբարատայ Արծ և Ալրած (վերի պատառ) գաւառի մէջ յորոց մին այժմ ամայի է։ Միւս երկուքն Վերին և Ստորին կոչուածներն, ունին այժմ ալլազգի բնակիչներ։ Ալս գիւղերուս մէջ կը տեսնուին քննութեան արժանաւոր հին եկեղեցիներու աւերակներ։

ԳԱՐԱՊԱՁԱՂ կամ ՂԱՐԱ–ՊԱՁԱԽ.—Բերդաբնակ գիւղ Ալլբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։

ԳԱՐԱՊԱՊԱ կամ ՂԱՐԱԲԱԲԱ. — Հայաբնակ գիւղ Միհնաց Շահապօնք գաւառի մէջ։

ունի 22 տուն, և հին եկեղեցի մը։ Գիւղիս սահմանաց մէջ կան հանքային ընտիր ջրերու փոսեր։

ԳԱՐԱՊԼԿ. — Գիւղ Բարձր Հայոց Աղիւձ գաւառի մէջ։

ԳԱՐԱՊԼԿ. — Այս անուամբ Մեծ և Փոքր կրկին հայաբնակ գիւղեր ևս կան այժմեան Գանձակ նահանգի Ջուանշիրի գաւառին մէջ։ Առաջինն ունի 62 և երկրորդը 78 տուն բնակիչ։

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ (Աւե աղբիւր). — Հայաբնակ գիւղ Այրարատայ Նիգ (Պաշ Ապարան) գաւառի մէջ. Ազայի լերան հիւսիսային սառրոտքը։ Ունի 84 տուն և Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ. — Ամայի գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Դպաղարապատի հարաւ արեւելեան կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ։

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱԲՈՒԼԱՂ. — Հայաբնակ գիւղ Գանձակի գաւառի Էրքէջի հասարակութեան մէջ։ Ընկած է սարի մը լանջին, որոյ սառրոտքն կը հոսէ Կիւրակ գետի վտակներէն մին։ Իւր դրից շնորհիւ գիւղս բաւական մաքուր է, և մեզմ կլիմայ ունենալով, գեղեցիկ ամարանոց է։ Տները ընդհանրապէս հասարակ են, բայց ի մի քանի կանոնաւոր, երկյարկանի գեղեցիկ շէնքերէ։ Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, բաւական հոյակապ է, վեց սիւներով։ Արեւմտեան դրան ճակատակալ քարի վրայ կայ շինութեան արձանագրութիւնն՝ 1716 թուակա-նաւ։ Գիւղիս մէջ կան երկու ուերակ եկեղեցիներ, իսկ շրջակայքը չորս ուերակ գիւղատեղեր և եկեղեցիներ։ Զորս եկեղեցիներէն առաջինը կը կոչուի Ի դի շիւնի եղցի, երկրորդը՝ Գոսի կալ, երրորդը՝ Միջին վանք և չորրորդը՝ Երի վանք (վերին վանք)։ Այս եկեղեցիներու շուրջն կան ընդարձակ գերեզմանատներ։ Գոսի կալի եկեղեցւոյ խոյանի կամարի վրայ, խաչքարի մը առրոտը կայ հայկական ՈՀԹ (= 1230) թուականը։ Գարապուլաղի բնակիչները, որ ժամանակաւ բաւական շատ են եղեր, այժմ միայն 44 տուն են՝ 306 հոգի։ — Գանձակի գաւառ, Ա. 125–126։

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱԲՈՒԼԱՂ. — Գիւղ Գանձակի գաւառի Մխակինոյ հասարակութեան մէջ, Ղալաքենդ բերդի հիւսիսային առրոտէն բղխող աղբիւրէն յառաջացած առուակի ձախակողմը։ Այս տեղ կայ հինաւուրց, գեղեցկաշէն և չորս սիւներու վրայ հաստատուած եկեղեցի մը, ուրուն միայն առնիքը քանդուած է։ Շուրջը և առուակի ափին կան բազմաթիւ գերեզմաններ։ Գիւղիս այժմեան բնակիչք են 67 տուն թաթարք։

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱԲՈՒԼԱՂ. — Գիւղ Արցախի վարանդա գաւառի մէջ, հիմնուած Քեօնդալան գետակի ձորի ձախ կողմը, Աւե աղբիւր յորդառատ աղբիւրի մօտ։ Բնակիչք 532 հոգի հայ, բաժնուած 75 տան. ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։ — Այս անուամբ երեք այլազգարնակ գիւղեր ևս կան Գուգարաց այժմեան Պօղալու գաւառի մէջ։

ԳԱՐԱ–ՊՈՒՒՈՒՆ (Աւե Քիր). — Այսպէս կը կոչուին Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ գտնուող շարք մը խոտաւէտ բլուրներու։

ԳԱՐԱՊՈՒՐՃ. — Այլազգարնակ գիւղ Այրարատայ Շարաւր գաւառի մէջ։

ԳԱՐԱ–ՍԻՎՐԻ. — Լեռ Կիլիկիոյ, 4800 ոտք բարձրութեամբ։

ԳԱՐԱ ՍՈՒ (Աւե ջուր). — Աղբիւր մի է Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Աղիա գիւղի արեւելեան կողմը քիչ մը հեռու։ Աղբիւրիս մօտ քարաբլրոյ սառրոտքը կան երկու նահատակաց՝ Գրիգոր և Մարիամ կոչուած եղբօր և քրոջ, հանգուստարաններ։ Հոս կը յաճախեն բազմաթիւ ուխտաւորներ։

ԳԱՐԱՍՈՒ. — Գլխաւոր գետ Այրարատայ Մասեաց սան գաւառի։ Կը բղխէ Մասեաց արեւելեան հիւսիսային բարձունքներէն, և առաջ կ'իջնէ դէպ ի հիւսիս և ապա դառնալով արեւելք, գրեթէ երեսփոխ գուգահեռական կը վազէ դէպի հարաւ, և անոր հետ կը միանայ Խաչիսայ և Տէվէչի գիւղերու կիմաց։ — Գետոյս անուամբ ամրոց մը կայ Այրարատայ Շուրուր գաւառի մէջ։ Նոյն գաւառի մէջ կայ նաև Գարաւառ անուամբ քրդաբնակ գիւղ մը։ — Տես Մեծամօրի Գետ։

ԳԱՐԱՍՈՒ. — Գետ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ, կը կոչուի նաև Կարնոյ գետ։ Եփրատայ գլխաւոր ակն է. կը բղխէ Թոր-

թումի և Բասենի մէջ տեղ եղած լեռներէն, և գէպի արեւմտեան հարաւ վազելով, կազմոյ գաշտը երկուքի կը բաժնէ՝ հիւսիսային և հարաւային, և Արշամայ գետոյն հետ միանալով Գաղտառիճ գիւղի մօտ, կ'անցնի Ճողաղի ձորէն և կ'սկզբնաւորէ Երիրատ գետը։ Այս գետս կը ձեւացընէ Սազլըգ կոչուած լճակը, կարմոյ հիւսիսային կողմը, Իլիճա և Սօսը Ջերմուկ գիւղերու մէջ տեղ։ Մեր նախնիք ասոր Շատը կարևոյ անուններ կու տային, վասն զի գարնան ջուրերը առատապէս կը բուսնին անբաւ շամբեր, զորս ամրան ջրերու նուազած միջոց կը հնձեն և փայտի տեղ կը վառեն կարմոյ բաղնիքներու մէջ։ Տեսակ տեսակ թռչուններ կը գրաւեն այս շամբի մէջ ինչպէս կը վկայէ նաև խորենացին, յորոց անուանի են վայրի բադը և սագը։ Գետոյս վրայ կան երկու քարաշէն և բազմակամար կամուրջներ։ Գետոյ ջուրը հակառակ իր անուան վճիտ է, բայց համը դառն է, ուստի մէջը մարթ ձգելով կը քաղցրանայ և ըմպելի կը դառնայ։

ԳԱՐԱՍՈՒ կամ ՂԱՐԱՍՈՒ. — Գիւղ Այրարատոյ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 15 տուն կաթողիկէ հայ և 15 տուն քուրդ բնակիչներ։ — Այս անուամբ քանի մը գետեր կան Կիլիկիոյ մէջ, ինչպէս նաև ուրիշ կողմեր։

ԳԱՐԱՍՈՒՊԱՇԻ. — Լճակ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ. բարձր է 6607 ոտք։

ԳԱՐԱՎԱՆՔ կամ ՂԱՐԱՎԱՆՔ (Սեւ վանք). — Հայկական գիւղ Այրարատոյ Գարնիղնք գաւառի մէջ, Կազդուանի հարաւային արեւմտեան կողմը, բարձր դիրքով։ Ունի 70–80 տուն բնակիչներ և երկու եկեղեցիներ, յորոց մին հինաւուրց վանք մի է բարձր դրից վրայ և հոյակապ շինուած, բայց տեղ տեղ քանդուած է։ Երկրորդ եկեղեցին շինուած է վանքի մօտ։ Հինը վանք՝ և նորը եկեղեցի կը կոչուի։ Այս տեղ կայ Ղազախներու ձմեռնաւան և մանքատուն. ժողովուրդը ունի բաւական երկիր և լաւ վիճակ։ Գիւղիս շուրջն պարիսպներու և հին գերեզմաններու բեկորներ կը տեսնուին։ — Այս անուամբ վանք մը կամ գիւղ կը յիշուի նաև Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։

ԳԱՐԱ ՎԵՐԱՆ. — Մակաւարնակ Այրոց գիւղ Այրպատականի Միանդուար գաւառակին մէջ։

ԳԱՐԱՏԱՂ կամ ՂԱՐԱԴԱՂ. — Հին Հայաստանի փայտակարան նահանգի հարաւային մասն է սա, որ ըստ Պարսից պաշտօնեաց կոչման Ղարաձաղաղ կը գրուի. կը գտնուի Թաւրէժի հիւսիսային արեւելեան կողմը, երեք օր հեռաւորութեամբ. սահմաններն են հիւսիսէն՝ Ելրասխ, արեւելքէն՝ Մուզանի անապատը, հարաւէն՝ Հաւանօվայի և Ահարի գաւառները և արեւմուտքէն՝ Մանդկի գաւառը։ Գարատաղ ամբողջապէս լեռնապատ է, թէև շատ բարձր գագաթներ չունի, բայց անհամար լեռնաշղթաներ տարբեր ուղղութեամբ միրար կտրատելով և միանալով կը կազմեն բարձրաւանդակ մը, որ ծովէն 6500 ոտնաչափէն աւելի բարձրութիւն ունի։ Այս լեռները ծածկուած են անտառներով։ Ամբողջ Այրպատականի մէջ միայն այս տեղ կան անտառներ, որ անխնայ կը կտրատուին և կ'այրուին ածուխի համար։ Լեռներէն կը բղխեն բազմաթիւ վտակներ, որք կը թափին Ելրասխի մէջ. նշանաւոր են Զոլիճի, Մարդանաղըմի և Քեալհէյ—բարի գետերը։ Հանքային ջերմուկներով հարուստ է Բէկլեմնի գաւառակը։ Օդը ցուրտ է և խստաշունչ՝ բարձրաւանդակ տեղերը, ուր հազիւ կ'աճի ցորեն. մանաւանդ մշտապատ է, շատ գիւղեր շաբաթներով արեւի երես չեն տեսնար։ Ձորերը և գետաբերանները ձմրան բաւական են, իսկ ամրան ոտաոտիկ տաք, այնպէս որ նոյն տեղերը յաղագ կու գան թիկնի և նռնենի։ Գարատաղ հարուստ է երկաթի և պղնձի հանքերով, կայ նաև արծաթ։ Պղնձի քանի մը հանքեր գէս կը շահագործուին, ինչպէս Աղգամալի, Աչմանի և Աղազանի մօտ եղածները։ Աշխատողները Քոյներ են, որք կը գործեն Անգլիական ընկերութեան մը հաշուով։ Հայերը ևս ժամանակաւ շահագործել տուեր են, և հանքերէն մէկ քանին գէս հայի անուն կը կրեն՝ ինչպէս Աէթ խանի պղնձահանք, և այլն։ Մակայն նոքա այժմ երեսի վրայ ձգած են, գլխաւորաբար ճանապարհներու դժուարութեան և վարպետ հանքագործներու պակասութեան համար։ Տեղացի հայ գար-

բիններըը երկաթի հանքը հալելով, երկրագործական պիտոյից համար պէտք եղածին չափ երկաթ կը պատրաստէին. բայց այժմ ռուսի պատրաստ երկաթ բնդունելով, այլ ևս նեղութիւն քաշելու պէտք չեն տեսնար:

Աղտառները լի են կաղնի և տոլատի ծառերով, կան նաև մոշի, հոնի, ընկուզի, և այլն: Ձորերու և հովիտներու մէջ առատութեամբ կը բուսնին շատ պտղատու ծառեր՝ կեռասի, սալորի, թզենի, նռենի, թթենի, շատ լաւ կը յաջողի նաև խաղող: Բարձրաբանդակները զրկուած են պտղատու ծառերէ. մշակութեան հողի քիչութեան և օդի ցրտութեան պատճառաւ գիւղացիք չկարողանալով իրենց հարկաւոր արմտիք արտադրել, Տզմարի և Մէլափարայի բնակիչները սոխրտած են ամէն տարի մեծ աշխատանքով Ախարէն արմտիք բերել: Աւելի կը ցանեն կարեկ, որ խոնաւութենէն չի վնասուիր. կանայք գիւղերու մօտերը կը մշակեն փոքր բանջարանոցներ, վարունգ, լուբիա, սոխ, պղպէղ, և այլն: Էրասխի հովտի մէջ մեծ քանակութեամբ կը ցանեն կարմրագոյն բրինձ: Աղտառներու մէջ վայրենի կենդանիներէն յայտնի են արջերը, որք ցանքերու և բանջարանոցներու մեծ վնաս կը հասցնեն, ուստի գիւղացիք գիշերը հրացանը ձեռքներնին պահպանութեան բնելու սոխրտած են: Գարատաղի մէջ է Պարսից գահաժառանգի նշանաւոր որսատեղին, որ լի է ամէն տեսակ կենդանիներով: — Գաւառս բաժնուած է չորս գաւառակներու, Դիզմար, Մէլափար, Մռնձան և Բէյլան. առաջին երկուքը բոլորովին լեռնոտ և անտառային են. ճանապարհներ երբէք չկան, հունձը կալատեղ կը բերուի շալակով կամ ջորիով: Գարատաղի բնակիչները են Հայք, Թուրքք, Ալլահիներ, Գարափափախներ և Շահսէվաններ: Հայերը կը բնակին բարձրաբանդակներու և անմատչելի գառիվայրերու վրայ, իսկ Թուրքերը բնած են ձորերը և հովիտները: Հայք կ'զբաղին երկրագործութեամբ և մեղուաբուծութեամբ, կը պահեն նաև ձի և ջորի. առանց ջորիի այս կողմերը ապրիլ անկարելի է: Թուրքերը աւելի անխրտածութեամբ կը պարապին. գիւղացիք կացնի փող անուռով թևերու գումար մը առլով, կերթան որչափ որ կ'ուզեն փայտ կտրել: Հայք իրենց պրտցուց հետ լաւ գրութեան մէջ չեն, և սոխրտած են միշտ արժան մնալ և հրացանով պաշտպանուիլ, այսու հանդերձ գողութիւնք և սպանութիւնք անպակաս են: Գաւառիս գիւղերը մեծաւ մասամբ տեղացի կամ Գավրիժեցի թուրք խաներու և մըլլաներու սեպհականութիւն են: Հայոց Ազատ նորպարանը Թիզմարի մէջ գներ է հետեւեալ Նորաշէն, Օղա Հայարնակ և Խոճ ու Ռաշլու Թրքարնակ գիւղերը, որոնց հասոյթը կ'տատնայ Ազամեան ուսումնարանը Պարսկաստանի նշանաւոր վաճառական Թումանեանցները, որոնց հայրենիքն է Գարատաղ, գներ են բաւական թուով գիւղեր, և գաւառիս ամենէն մեծ կալուածատէրերը կը համարուին:

Գաւառիս մէջ կայ միայն մէկ վանք, Նորաշէն գիւղի սահմանաց մէջ, Ս. Խէորզ անուամբ: Սա Հայաստանի ուրիշ վանքերու նմանութիւն չունի, աւելի մատուռ կարելի է համարել: Հրաշագործի համբառ կը վայէլ և բոլոր գաւառէն ու մինչև անգամ Գավրիժէն Հայեր ուխտ կու գան. Թուրքերն ևս կը յարգեն: Գաւառս թէև հին Հայաստանի մէկ մասն կը համարուի, սակայն իր մէջ չի գտնուիր նախնի Հայոց և ոչ մի հետք, ոչ բերդի կամ վանքի աւերակներ և ոչ հոյակապ եկեղեցիներ: Գարատաղ ի հնումն աւելի բազմաթիւ հայ բնակիչներ ունէր, որոնք գտնագան ժամանակաց մէջ գաղթած են ի Գավրիժ և մանաւանդ Խոյի Հայաստանի գաւառները: Բնակիչներէն շատերն ալ կը պանդխտին Խոյաստան, աւելի Շուշիի և մօտաւոր գաւառաց մէջ. սակայն երկայն տարիներ հայրենիքէ դուրս չեն մնար, գարնան մեկնողները աշնան կը վերադառնան. երթեւեկութիւնք կը կատարուին Էրասխի խուռաթիրրին կամուրջով: Գարատաղցիք խիստ սրամիտ և ընդունակ ժողովուրդ են. այսօր Գավրիժի մէջ աչքի ընկնող բոլոր մարդիկ, քիչ բացառութեամբ, կրնանք ըսել թէ գարատաղցիք են: Գաւառի մէջ գիտութեանց և ուսմանց լոյսը տակաւին մուտ գործած չէ, սակայն վերջին տարիներս առ այս մեծ ջանքեր պակաս չեն: Գարատաղցիք խիստ ժուռ բահանայական բարբառ մ'ունին, որ քիչ մը

նման է Դ.արաբաղի լեզուին։ Տես ԱՏՐՊԱՏԱԿԱՆ։ — Աբեղեան ամենաբերք, էջ. 506–503։

ԳԱՐԱՏԱՂ կամ ՂԱՐԱԴԱՂ. — Լեռ Միջնեաց վայոց ձոր գաւառի մէջ։ — Այսպէս կը կոչուին ի Թրքաց Կիլիկիոյ Ակառ լեռները։

ԳԱՐԱՏԱՂԱՑ, ՂԱՐԱԴԱՂՑՈՒ կամ ԽԱՆՔԵԱՆՑ. — Հայաբնակ գիւղ Գանձակ գաւառի Խանքեանդի հասարակութեան մէջ։ Կը գտնուի Գանձակէն դէպի արեւելք 18 վերստ հեռաւորութեամբ։ Բնակիչաց նախնիք 1828 թուին գաղթած են Ամասպատականի Գարատաղէն. կը հաշուին 172 հոգի բաժնուած 40 տան։ Ունին ազիւսաշէն եկեղեցի մը Ս. Գեորգ՝ կառուցուած 1855 թուին։ Հողը շատ քիչ է. միայն այգիներ կան, որոնք կ'ոռոգուին Աֆիքիւրդ կոչուած ջրով և կու տան բաւական լաւ խաղող։ Գիւղէս կէս վերստ հեռու Կուրակ չայ գետի ափունքը կը գրաւեալ Նահատակ անուամբ ուխտատեղի մը։ Ղարադաղլուի մօտ է Թուրքաց նշանաւոր փոքրիկ գիւղը։ — Այս անուամբ ուրիշ գիւղեր ալ կան գանազան կողմեր, որոնք գրեթէ ամէնքն ալ այլազգարնակ են։

ԳԱՐԱ–ՏԻՐՊԻՆՑ կամ ԿՏԻՒՔ ՏԱՂ. — Լեռ Ալբարատայ Բասէն և Բագրեւանդ գաւառաց մէջ տեղ, որ կը կոչուի նաև Տաղար գիւղի անուամբ. ունի շատ ձորակներ։ Ամիսհ Լեռիս ամբրիկացի քարտուղիչը, 1831 թուին անցնելով լերանցս անցքերէն ձեան և բքի միջոց, շատ նեղուեցաւ։

ԳԱՐԱՏԻԿԻՆ. — Այս անուամբ կրկին այլազգարնակ գիւղեր կան Արշի (Գանձակ) գաւառին մէջ։

ԳԱՐԱ ՏՈՒՐԱՆ. — Հայաբնակ գիւղ Անտիոքի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի ազգային վարժարան մը 22 աշակերտներով։

ԳԱՐԱՐԶ կամ ԽԱՐԱՐԶ. — Գիւղ Բարձր Հայոց, Կարնոյ դաշտի մէջ։ Ունի 90 տուն բնակիչք, յորոց 60ը Հայք են և 30 Թուրքք։ Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ գեղեցիկ տեսքով եկեղեցի մը. իւր խաչկալն ճարտարարուեստ գործ մի է, նուիրեալ և ընտիր։ Ներսէն կ'աւանդուի թէ «Այս է Արծն քաղաք հռչակաւոր և պատմական, բազմաթիւ եկեղեցիներով և հազարաւոր բնակիչներով»։ Այս աւանդութիւնը ճշմարտութեան կը մօտենայ, երբ գիւղիս շրջապատի բնակաձակ ուերակաց տեղերն ի նկատի առնուին, որոնցմէ Մանազկերտ քաղաքի նման, դուրս եկած են երբեմն հին բաղանեաց և այլ շէնքերու հետքեր, պղնձէ անօթք, այլեայլ գարդերու նշաններ և հելլենական գրով կրող դրամներ։ — Նկարագրական ուղեւորութիւն, Գ. 164։

ԳԱՐԱՓՈՒՆՂԱՐ. — Ագրիւր Էրիկիոյ մէջ, 3 ժամ Աղնաւարդայէն հետու՝ հարաւային կողմն։ Ի հետեւն այս ագրիւրէն մինչև քաղաք չորացք կայ, բազմաթիւ քարաշէն կամարներու վրայ հաստատուած։ Այս կամարներէն շատ քանդուած են, և այժմ միայն մէկ քանին կանգուն մնացած են։

ԳԱՐԱՔԻՆՑ կամ ՂԶՂԱԼԱ. — Հայաբնակ գիւղ Ագրցախի վարանդա գաւառի մէջ։ Հիմնուած է Աշան գիւղի արեւելեան կողմը, սարերու մէջ գոգաւոր ձորի մը արեւելահայեաց լանջի վրայ։ Բնակիչք 800է աւելի, բաժնուած 103 տան. մեծաւ մասամբ բնիկ են, քանի մը տուն եկած են Ջրաբերդի Եղակեր գիւղէն։ Երկիրը բարեբեր է և պիներեր. բերքերէն նշանաւոր են գինին, թութէր, նուռն, գետձն և թուզն։ Օդն, կլիման և ջուրն պատուական են. տեսարանն ալ լաւ։ Եկեղեցին նորաշուած է Ս. Աստուածածնի, կառուցուած՝ քարուկիր և կամարակապ։ Եկեղեցւոյ պրան ներսէ, արեւելեան երկրորդ կամարի վրայ կայ շինողի արձանագրութիւնն. տակայն թուական չկայ։ Փոքր Նահատակ կը կոչուի գիւղիս արեւելեան կողմը բարձր բլրի գագաթի կառուցուած նորաշէն և կիսատ մնացուր։ Նահատակի մարմինն վաղուց ամփոփուած է այս տեղ, իսկ մասրան շէնքը քանի մը անգամ նորոգուած է ի հինէնց։ Մեծ Նահատակ ևս մատուռ մի է, շինուած 2492 տաք բարձր սարի մը վրայ, որ տահման է Աշան, Նորշէն և Դ.զդաղա գիւղերուն։ Նահատակի կերեզմանն կը գտնուի մատրան մէջ, որուն շուրջը կան խուցեր և հանգստարան։ Տես ՂԱԶԿԱՅ ԲԵՐԴ։ — Ագրցախ, 122–124։

ԳԱՐԱՔԻՆՑ կամ ԳԱՐԱՔԻՕՑ. — փոքրիկ գիւղ Ալբարատայ կոգովիտ գաւառի մէջ։ Կը տեսնուին գիւղիս մէջ հնութեանց մնա-

ցորիններ, բարձր աշտարակներ, որոնք վկայ են տեղւոյն հին ժամանակաց մէջ բարգաւաճ լինելուն։

ԳԱՐԱԲԻՇԻՇ. — Հայարնակ գիւղ Արծկէի (վ.), ունի Գողգոթայ անուամբ եկեղեցի մը։ — Այսպէս կը կոչուի յայլազգեաց Բրաջուր գիւղը, զոր նկարագրած ենք ի կարգին։

ԳԱՐԱԲԻՆՕՑ. Տես ԳԱՐԱԲԻՆՏ։

ԳԱՐԱԲԻՆՕՓԻՒ. — Հայարնակ գիւղ Տարսուրերանի Հարք (խնուս) գաւառի մէջ։

ԳԱՐԳԱՐԱՑՈՑ. — Առանձնագաւակներէն սերած հայկական ցեղ մը էին, Մեծ Հայոց արեւելեան հիւսիսային կողմը։ Անոնց բնակութեան տեղն էր Լաւի աշխարհին մէջ, ուր և կայ Գարգարացւոց կոչուած բնակարձակ գաւառ։

ԳԱՐԴՄԱՆ կամ ԳԱՐԴԱՄ. — Նշանաւոր և հին գաւառ Լաւի աշխարհի, որ նոյն կը խմբի բլլալ Գարդմանայ ձոր անուան հետ, զոր յիշէ Խորենացին Լաւիի ուրիշ գաւառաց հետ։ Գաւառիս անունը վրիպակաւ գանագան ձեւերով գրուած կը գտնենք այլ և այլ հեղինակներէ. ինչպէս Գարդմանաձոր կամ Գարդմանաւանոր, Գարդմանիկոր, Գարդմանիկ, և այլն։ Գաւառս բնկած է Կուրակ և Շամքոր գետերու և Մոտուտան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ։ Աժենաժեծ մասամբ մակերեւոյթը անհարթ է։ Ամառափերի խոր խոր ձորեր, մութ կիրճեր, օձապտոյտ խոխոմիներ, բարձրագագաթ սարեր, բլուրներ և թմանձրախիտ անտառներ գրաւած են գաւառիս մակերեւոյթը։ Իսկ Մոտուտ և Ազուէթին սարի կողմերն խիստ զուարճալի են՝ հոն կան լեռնահարթեր, ծաղկազարդ հովիտներ, արօտներ, գալարագեղ լեռնալանջեր։—Գարդման գաւառի խուրս անտառամբ իշխանը կը յիշէ Խորենացին, և Յոհան կաթողիկոս Կարնեցի անտառամբ։ Գաւառս ունէր նաև յատուկ եպիսկոպոս, յորոց անունը անտառամբ ծանօթ են, ինչպէս Յովհաննէս, Ներսէս, Սարգիս, և այլն։ Ս. Մեսրոպեան ձեռքով մուած է հոս քրիստոնէութիւն։ — Նշանաւոր էր ի հնումն գաւառիս բերդն. որոյ բարձրութիւնն է մօտ 9000 ոտք. անջրպետուած է Պապա տաղէն և Գարդման գետակին խորանդունդ ձորով և հակայաձիւ երկնցած է դէպի արեւելք։ Ունի մօտ 15 վերստ երկարութիւն և 6–7 լայնութիւն։ Վխմահերձ և ամենաբարձր ժայռեր են սարիս ամբողջ արեւմտեան հարաւային և հիւսիսային կողմերը։ Դէպ ի լահիճ գիւղաքաղաքը թեքուած են ձորակներ, որոնց մէջէն կը վազեն բերդիս ջրերը՝ կազմելով հիանալի ջրվէժներ։ Կասկածելի տեղերը պարսպաւած են. պարիսպներու բարձրութիւնն է 3–4 սաժէն և հաստութիւնն 1 սաժէնէն աւելի. շինուած է ամբողջապէս անաւազ և լեռնային քարերով և կրաշաղախ ցեխով։ Հիւսիսային դուռը և պարիսպն այժմ մասամբ քանդուած են։ Ներսիս վրայ կը փայլի ոչ թէ մարդկային ակար հանճարի հնարագիտութեան արուեստն, այլ Բնութեան ձարտարապետի գերմարդկային սահմռկազդու գործութիւնը։ Այդէն կոյտ անհամաչափ է բերդս. իր մէջ ունի ամէն կենսական պիտոյքներ, առատ վազող ջրեր, ծաղկազարդ և գալարագեղ սարահարթեր, բերրի հող, գեղեցկատես անտառներ և մացառներ։ — Ինչպես նախկին բնակիչներն, Առանձնագաւակները, արդէն ծանօթ են մեզ, որոնք Աբանիշահիկ կամ Եբանիշահիկ կը կոչուէին։ Գիտենք նաև թէ ինչպէս Բաջն վարդան երեք տարուան մէջ շինեց Գարդման բերդս և նուաճեց կովկասեան «վայրագաւուն ազգն», և ճաշի պատրուակաւ գլխատեց 60 հոգի Աբանիշահիկ ցեղէն։ Աստանեան Մհերանէն, որ բնակութիւն հաստատած էր բերդիս մէջ, մինչև վարազ–Տիրիդատ, հեթանոս եղած են և իշխած միայն այս գաւառիս վրայ. իսկ վարազ–Տիրիդատն և իր բոլոր ցեղը քրիստոնէութիւն կ'ընդունին։ Վարազ–Տիրիդատի որդին Ջուանշիր իշխանը իր ծննդավայրի Գարդման բերդիս մէջ կառուցանել կուտայ գեղեցկայարմար տաճար մը, և օծել տալով, մեծ հանդիսով տաճարի մէջ կը դնէ Քրիստոսի խաչափայտի այն մասը, զոր ընծայ տացած էր Յունաց Հերակլ կայսրէն։ 854 թուին Բուզա զալով Գարդման գաւառը, կը պաշարէ նոյնանուն բերդը և կը բռնէ, կարճ իշխանը։ Տանեներով գերու սկիզբը Աշոտ Երկաթ ձերբակալելով իրեն Սահակ անները և յետոյ Գարդմանայ ամբողջ գրաւելով, ամբողջ գաւառը իրեն իշխանութեան

ներքոյ ձգեց։ Պարսիկները մեր աշխարհի վրայ բռնացած միջոց տիրեցին նաև Գարդմանայ, զոր Ջաքարէ և Իսանէ ազատեցին, բայց յետոյ իրենց վրայ ալ յարձակեցան Թամարք։ — Ա֊յժմ հիմնայատակ աւերուած է Գարդման, որուն տեղը հերկած են լահճեցիք, բայց պեռ կ'երեւան խեցեղէն անօթներու, ապրուստներու և տաշտած քարերու խառն ի խառն թափուած բեկորներ և մներու քարուկիր հիմունքներ։ Իսկ Ջուանշիր իշխանի կառուցած Ս. Նշան տաճարը քանդած և քարերովը լահճեցիք շինած են գմբէթի մը՝ մահվէստականի մը գերեզմանին վրայ։ Գմբէթը այժմ կանգուն է, և քարերն պահած են իրենց հեռաւոր հնութեան զրոյցները։ Ներկիս մահկերեւութի ամենաբարձր մասն է հարաւային կողմը, որ ունի հիանալի տեսարան։ Հարաւային կողմերը հեռուէն կ'երեւան փայտակարանի և Աւարայատականի լեռները, Երասխ, Արցախի, Գանձակի և կայենի լեռնագօտիները, Գարգարացւոց և Աղուանից դաշտերը և կուր գետը։ Արեւմտեան կողմէն կ'երեւին Տփղիսի ձառի, Շաքսայ լեռները և դաւառները։ Ներկիս տասորացւոն են Գեավոզր դալա (Քրխատունէի բերդ), Բասխաղ, Թրչան, Ջառնաւան մահվէստականարմատ և Միւժի հրէարնակ գիւղերը։ — Հարաւային եզքն կամ գետն տեղական արտասանութեամբ կը կոչուի կեարդանա։ Խիտ գառիվայր, օձապտոյտ, ամենանեղ և ամենավտանգաւոր ճամբայ մի է այս, որուն տեսքը միայն սոսկում կ'ազդէ նայողին, վասն զի երկու կողմերը խորանդունդ վիհեր են։ — Ադոնց, 186–190։

ԳԱՐԴՄԱՆ ԱԻԱՆ. — *Վկրը նկարագրուած գաւառի գլխաւոր աւանն էր սա, որուն ա֊ւերակները, Բարխուտարեանց կը գտնէ Ա֊դիւտշէն աւերակի արեւմտեան հանդէպ, Գարդմանի գետակի ձախ կողմը։ Ա֊յժմ աւերակ է աւանս և Թրքաբնակ և կը կոչուի Գլուխ֊մանիկ։ Գրքի մը յիշատակարանին մէջ 1699 թուին կը յիշուի աւանս Քարդման գեղ կոչուած, և նոյն ժամանակ ունէր Ս. Գրիգոր և Ս. Միքայէլ անուամբ երկու եկեղեցիներ։ Կիսաւեր եկեղեցւոյ արեւելեան որմի արտաքին երեսին վրայ քանդակուած է խաչքար մը, իսկ հարաւային կողմը քանի մը քայլ հեռու, կը գտնուին 7 հատ միաձեւ մահարձաններ, յորոց միոյն վրայ կայ արձանագրութիւն, ԺԴ դարու վերաբերեալ։ Գրեթէ միւս մահարձանաց արձանագրութիւնք անընթեռնելի են։ Թէև բաւական թուով գերեզմանաքարեր և գեղեցիկ խաչարձաններ ջարդած են մահվէստականք, բայց անոնցմէ ոչ սակաւք տակաւին կան աւանիս մէջ։ — Արբրոմ ուխտատեղի մի է աւանիս հարաւային կողմը քիչ մը հեռու, ուր կայ փոքրիկ մատուռ մը առանց արձանագրութեան։ Մատուռն մօտ կայ $3\frac{1}{2}$ մետր բարձր մահարձան մը՝ հանդերձ 1331 թուականաւ արձանագրութեամբ։ Ա֊յս տեղ կայ ընդարձակ հին հանդստարան՝ յորում կը տեսնուին գեղեցիկ մահարձաններով զարդարուած շատ գերեզմաններ։ — Գարդման աւանէն բաւական վեր կը գտնուի Դոռում քուր (Ղարադ թէփէ) անուամբ ընդարձակ գիւղատեղի, հանդրստարան և եկեղեցի՝ որ տակաւին կանգուն է, ունի չորս սիւներ և հարաւային կողմէն է դուռը։ Ներսի նաև ԺՃ֊ԺԴ դարուկան համառօտ արձանագրութիւն։ Ա֊յս տեղ կը բնակին այժմ մահվէստականներ։ — Արցախ, 301–302։*

ԳԱՐԴՄԱՆ ԳԵՏԱԿ. — *Գետակս կը գտնուի համանուն գաւառի մէջ, կը բղխէ Արտխիւնայ սարի տասրոանտէրէն և կը թափի Շամքոր գետոյն մէջ։*

ԳԱՐԴՄԱՆԱՁՈՐ. *Տես* ԳԱՐԴՄԱՆ։

ԳԱՐԻՆՏԻԼ ՏԱՂ. — *Լեռ կիլիկիոյ մէջ։*

ԳԱՐԿԱԼԸ ՍՈՒ. — *Գետակ Ա֊յրարատայ վտանդ գաւառի մէջ։*

ԳԱՐԿԱՊԱՁԱՐ. — *Լեռ Ա֊յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, որուն մօտ բանակեցան Օսմանցիք 1554 թուին, Պարսից վրայ երթալու միջոց։*

ԳԱՐԿՈՒՃԱՂ. — *Կը յիշուի Ուտի Աղանձակի մէջ։*

ԳԱՐՀԱՐ կամ ԳԱՀԱՐ. — *Հին ամրոց մի էր Տաւրուբերանի Տարօն գաւառի մէջ, Տօրոս լերան վրայ, զոր շինեց Պարսից Վախթանկ սպարապետը։ — Հին պատմութիւն։*

ԳԱՐՈՒԱՑ ԼԵԱՌՆ. *Տես* ԴԱՐՈՒՆ։

ԳԱՐՈՒԻ կամ ԳԱՐԱԼԵՒ. — *Գիւղ ծովային կիլիկիոյ մէջ, 500 մետր բարձր դիրքով։*

ԳԱՐՍԱՆ կամ ԿԱՐՍԱՆ. — *Գիւղ Ա֊յրարա֊*

տայ Բազրեւանդ գաւառի մէջ, Շեռանայ ձախ ափին վրայ, Գոմք գիւղի դիմաց։ Ա֊յժմ ու֊նի 15 տուն քուրդ բնակիչ։ 1822 թուին բազմամարդ մեծ գիւղ մի էր սա Հայոց՝ մե֊ծաւ մասամբ կաթողիկեայք, որք այժմ հաս֊տատուած են ի Մօլլա–Միրէյման։ Գար֊սանի դաշտը ունի լաւ հողեր, որք կ'ոռո֊գուին Ջեռկանայ ջրով։

ԳԱՐՄ–ՋԻՒԼԳԱՏՐԻՒ կամ ԿԱՐՄ. — Ձմռան կ'ինկնայ դաշտային կիլիկիոյ մէջ, մօէն 30 վերստ դէպի արեւելք և Ձառնայէն 85 վերստ դէպի հիւսիսային արեւելք, համանուն վի֊ճակի կեդրոնը, գաւառի մը ամ֊ փոփունքը։ Ունի 1800 բնակիչ՝ մեծ մասը հայ։ Հմուտ արուեստով կառուցուած չորս ամրոցներ կար֊ծես ցոյց կու տան, թէ այս վայրը հայկա֊կան իշխանութեան ամուր պատսպարներէն մին պէտք է եղած լինի։ Բայց՝ ամենեւին յիշատակութիւն մը չ'կայ, թէ ինչ դեր խա֊ղացեր է ատոնց Ռուբինեանց ժամանակ։ Նշանաւոր շէնք մը այժմ չունի։ Ութը ջրա֊զաց կը շարժեն բամբակ յատակելու մեքե֊նան։ Ամառը կը գործեն նաև փիլիմ կո֊չուած գորգեր։ Գարսի Ջիւլգատրիւ մակ֊դիրը՝ համանուն նշանաւոր թուրքմէն տոհ֊մի անունէն է, որ Ռուբինեանց անկումէն վերջ կիլիկիոյ ամբողջ արեւելեան մասին տէր դարձաւ և զօրանալով սկսաւ իւր ներ֊կրի սահմանները ընդարձակել։ Սելիմ Ա. 1515ին տասնց իշխանութիւնը վերցուց։ — Ձմռան մէջ և շրջակայքը շատ հնութիւն֊ներ կը գտնուին, մարմար քարեր, սիւներ, վերնախարիսխներ, քանդակուած քարեր, տապանաքարեր, կոփածոյ քարերով աւերակ վանք մը, և այլն։ Գետակի վրայ ևս կը տեսնուի հին կամուրջի մնացորդներ։ Գար֊սի շրջակայքը շատ արգաւանդ են՝ Ջահան գետոյն մօտիկութեան շնորհիւ։ — Միտուան, 199, Կիլիկիա, 200։

ԳԱՐՊՈՒՒՓ. — կը յիշէ գիւղս Վախուշտ, Թոռոզք (Վրահայաստան) գաւառի մէջ։

ԳԱՒԱՇ. — Նոր վիճակ Վասպուրականի Ուշտունեաց գաւառի, որուն սահմանքն են հիւսիսէն՝ Վանայ ծովակը, արեւելքէն Վա֊նայ գաւառը, հարաւէն Շատախ և արեւ֊մուտքէն կարճկան վիճակները։ Բաժնուած է հինգ նահիէներու և ունի 59 գիւղեր։ Եր֊կիրը ընդհանրապէս գաշտային և լեռնային, ջրաւէտ և օգաստուն, գիւղերը ամբողջ մրգա֊բեր և անպտուղ ծառերով զարդարուած։ Վիճակիս ընդհանուր բնակչաց թիւն է, ըստ Վ. Քինէի 13164, հետեւեալ կերպով բաժ֊նուած.

Հայք Լուս. և Կաթ.	4850	հոգի
Մահմետականք	8130	»
Հրեայք	59	»
Այլ և այլք	125	»
Գումարն...	13164	հոգի։

Վիճակիս գլխաւոր տեղն է Ոստան. իր մէջն են Նարեկայ վանքը և Աբաս լեռը, ինչպէս նաև Ջաղար Ս. Նշանի վանքը՝ ա֊զգս Եղիշէին հանգստարանը։ Վիճակս Ա֊ղթամարայ թեմիքէն մին է, որուն ջերմեռանդ ժողովուրդը ամէն տարի ուխտի կ'երթայ Ա֊կղթամար։ Կը կարծուի, թէ հնուն կար նաև Գաւաշ անուամբ աւան։

ԳԱՒԱՌ, ԿԱՒՎԱՐ կամ ԿԷՎԷՌ. — Վա֊նայ կաւսակալութեան վիճակներէն մին, Հաքեարի գաւառի մէջ Սահմանքն են հիւ֊սիսէն՝ Ազրակայ վիճակը, արեւելքէն՝ Պարս֊կաստան, հարաւային արեւելքէն և արեւ֊մուտքէն Շեմսինան վիճակը, իսկ արեւմուտ֊քէն Ալբամար և Ջուլամերկ վիճակները։ Վիճակս բաժնուած է հինգ նահիէներու և ունի 260 գիւղեր։ Բնակչաց թիւն կը հա֊մարուի 26200. Վ. Քինէ հետեւեալ կերպով կը բաժնէ.


Մահմետականք	14700	հոգի
Հայք	1900	»
Նեստորականք	9000	»
Քաղդէացիք	300	»
Հրեայք	300	»
Գումարն...	26200	հոգի։

Վիճակիս կէսը լեռնային է և կէսը դաշ֊տային. նշանաւոր է Տիզէյի գաշտը, որ միջին հաշուով 40 հազարամեայ երկայնու֊թիւն, և մօտ 20 հազարամեայ լայնութիւն ունի. կ'ոռոգուի Նէհիլ և Մեծ Ջաղ գետակ֊ներով։ Այս տեղ կը տնուցանեն հօտերով գոմէշներ, եղներ, կովեր, ոչխարներ և այ֊ծեր. բայց մեծ գժտարութեամբ, որովհետեւ ձմեռն խիստ զառնաշունչ է և անտանելի։

ԳԱՒԱՌ. Տես ԲԱՅԱԶԻԹ ՆՈՐ։

ԳԱՒԱՌՆԻ. Տես ՍՈՂՔ։

ԳԱՒԱՐՋԻՆ կամ ԳԱՒԱՋԻՆ. — Արցախի սահմանակից Գաւգարայց Կողբոտիոր գաւառի մէջ, Ոսկեպար կամ Ջողազ վտակի ձախակողմը կը գտնուի 1500 ոտք բարձրութեամբ քարաշէտ։ Գագայ բերդէն և Ս. Սարգսի քարայրէն աւելի բարձր է և անկէ քիչ հեռու։ Աբեւելեան սառրաոքը շինած են ի հնուց պարիսպ, որոյ ներսի կողմը կը գտնուին խցեր, որոնցմէ միոյն մէջ կայ ջրհոր։ Լեռնոտ գագաթը բարձրանալու համար միայն մէկ ժժուարագնաց, նեղ, չափազանց զառիվեր պահուըտեր են. պաշարողն ալ հաեւնէն վազելով և չկարենալով դուրս հանել՝ կրակ վառեր և ծխով խեղդամահ ըրեր է զանոնք։ Երբեմն երբեմն արծիւները այս քարանձաւէն՝ որ ժայռի արեւմտեան կողմը կ'ելնէնայ, կը հանեն գորգի և կապերտի փտած կտորներ և վար կը ձգեն։ Գաւարզնի հարաւ արեւելեան կողմը Ոսկեպար վտակի ափի վրայ կը գտնուի Գամիրչիլար այլազգաբնակ գիւղը, որ կանխաւ հայաբնակ եղած է. հոս կայ ընդարձակ հանգստարան և աւերակ եկեղեցի։ — Նշմարք, Ա. 22։ Արցախ, 395։



230. Գաւազնի քարայրաան տեսքը։

և վտանգաւոր ճանապարհ կայ հիւսիսային կողմէն։ Գագաթը հարթ է մօտ երկու կաքաւեղ, ուր բուսած են զանազան թմփեր և վայրի ծառեր։ Ի հնումն նշանաւոր էր Գաւազնի բերդը, զոր անմատչելի ամրոց անուանած է Վարդան։ ԺԴ. դարու մէջ Թմխմարք, Վիրք և Հայ իշխանք իրարմէ յափըշտակել կը ջանային այս ամուր բերդը, որ վերջապէս այլազգեաց բռնութեամբ աւերուեցաւ և ձեացորդք տակաւին կ'երեւին. գագաթն ալ՝ պատուազքին մօտ քարակաւոր ջրամբար մը։ Մօտակայ բնակիչք կ'աւանդեն, թէ Հայ թագաւոր մը երբեմն պաշարեր է Գաւարզնի բերդը. բերդացիք նեղուած լինան գլուխը ելեր և քարանձաւի մը մէջ

ԳԱՒԻԿԱՓԻ ՎԱՆՔ. — Այս անուամբ մեծ վանք մը կար Կիլիկիոյ մէջ ի Սիս։

ԳԱՓԱԳԼՂ. — Կիլիկիոյ մէջ լեռ։

ԳԱՓԼՅԻՒ կամ ԳԱՓՈՒ ԳԱՅԱ. — Լեռ Այրարատայ Բասենի գաւառի մէջ։

ԳԱՓՈՒ ԳԻՒՂԻՆ. — Կը յիշուի գիւղս Այրարատայ Բասենի գաւառի մէջ։

ԳԱՓՈՒՂՈՒ կամ ՂԱՓՈՒՂՈՒ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ։ Կառուցուած է Ախուրեան ափի մօտ, Պայենտուրի արեւելեան կողմը քարակարկառի մը շրջաղորբը։ Քարակարկառի վրայ երբեմն բերդ կայ եղեր, որուն ձեացորդները ցարդ կ'երեւին։ Դէպի Ախուրեան ձգուող դաշտը գոգաւոր ձեւ ունի, ո-

բոյ չորս կողմը թեթեւ բարձրութիւններ և բլրակներ կը շրջապատեն։ Գիւղս թէեւ բաւական մեծ և հարուստ է, բայց ժողովրդեան անմիաբանութիւնը, շատ գիւղերէ յետ մնացեր է։ Բնակիչք եկած են այլ և այլ տեղերէ, որոնց թիւն է այժմ մօտ 1300, *բաժնուած* 150 *տան։ Վազուն ջուր չունենալով, կը գործածեն հորերու ջուր. բաւական հեռու ձորակի մը մէջ թէեւ կայ փոքրիկ աղբիւր մը, բայց հեռաւորութեան պատճառաւ քիչեր միայն կ'օգտուին։ — Արեւելեան Մատոյ, իբ.* 857։

ԳԱՓՈՒՃՈՒԽ. — *Երկգագաթ բարձր սրձաքար լեռ Սիւնեաց Զորք գաւառի մէջ։ Բարձրութիւնն է* 26060 *ոտք։*

ԳԵԱՒ. *Տես* ԳԱՂ։

ԳԵԱՄՐԻՍ. *Տես* ԳԱՄՐԻՍ.

ԳԵԱՈՆԱՓԱՐ. — *Փոքրիկ շէն Արցախի Խաչէն գաւառի մէջ։ Կառուցուած է Հաւասպուկ աւերակ վանքի արեւելեան կողմը. բնակիչք եկած են Ագռաջաձոր և վանք գիւղէն. այժմ են* 12 *տուն։*

ԳԵԹԻՎԱՆ կամ ՔԵԹԻՎԱՆ. — *Գիւղ Ակռաբատայ Բասէն գաւառի մէջ, համանուն գետակի մը աջակողմը։ Գիւղիս մօտ կայ* 6785 *ոտք բարձրութեամբ լեռնանցք մը։*

ԳԵԼ. *Տես* ԳԵԼ։

ԳԵԼԻԵԳԵՆԴԱՆ. — *Գիւղ Շատախու վերին մասին մէջ, Շէնբերդի արեւմտեան հարաւային կողմը. ունի մօտ* 40 *տուն բնակիչ։*

ԳԵԼԻՋՈՐ կամ ԿՕԼԱՍՈՐ. — *Գիւղ Ակռաբատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Եփրատայ ձախ ափի վրայ։* 1820 *թուականին բազմաթիւ հայ ընտանիքներ կային հոս, որոնց մէջ իրրև հարուստ և նշանաւոր կը յիշուի Հայրանի ընտանիքն։ Գիւղիս Հայք մեծաւ մասամբ գաղթած են ի Կիւզէլ–ահէրէ, և ատոնց կան այժմ միայն* 60 *տուն պարսիկ ժողովուրդ։*

ԳԵԼՅՈՒՔ. — *Ամառանոցական գիւղ Տուրուբերանի Խոյթ գաւառի մէջ։ Բնակիչք Հայք և Քուրդք խառն։*

ԳԵՀԵՆԻՔ. *Տես* ՁԱՀՈՒԿ։

ԳԵԼ, ԳԵԼԱՑ կամ ԳԵԼԱՄԱՑ ԼԵՐԻՆՔ. — *Լեռնաշղթայ Սիւնեաց աշխարհի Գեղարքունի գաւառի արեւմտակողմը. իր անունն առած է Գեղամ նահապետէն։ Ակռաբատայ կոտայք գաւառի արեւելեան կողմն կ'ինկնայ. գիրքը բարձր է և լայն սառրատով։ Իր երկայնանիստ գրութեան և ընդարձակութեան մէջ ունի հովիտներ և ջրերու շատ մարաններ, որոնք Գեղամայ ծովակը թափող զանազան գետեր կը ձեւացնեն։ Ընդհանրապէս լեռնաշղթայս բուսականութենէ զուրկ է և հրաբղխային ապացորդներով ծածկուած, ուղեւորը կը տեսնէ լերանս վրայ զանազան գոյներով քարեր և միապագաղ ապառաժներ։ Լեռնաշղթային բարձրագոյն գագաթն կը համարուի այժմեան Իչքսխիր (Երեք գագաթներ) կոչուածը, որ բարձր է* 10054 *ոտք։ Բնաշխարհի լերանց մէջ, մեր նախնեաց յիշատակներով պանծացող մէկն ալ սա է, և ունի իր վրայ Աչքի կամ Գեղարդայ վանք, Գառնի, Հաւուցքեաս, արեւելեան լանջին վրայ՝ վանորայքն Ճողազայի, Վահանատու, Մաքենոցաց, կաթողիկք, և այլն։ — Վարշապատ,* 31–32։

ԳԵԼ կամ ԳԵԼ. *Գիւղ Ակռաբատայ Ուրծ և Ագռաջ գաւառի մէջ, որ անունը առած կը թուի Գեղամէն։*

ԳԵՂԱԽՈՒ. — *Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ. ունի* 45 *տուն, յորմէ* 35 *Հայոց և* 10 *Թուրքաց։ Հայք ունին քարուկիր եկեղեցի մը՝ Ս. Սարգիս։*


ԳԵՂԱՄԲԱԿ. *Տես* ՍՈՂԲ։

ԳԵՂԱՄԱՑ ԳԱԻԱՌ կամ ԵՐԿԻՐ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԳԵՂԱՄԱՑ ԼԵՐԻՆՔ. *Տես* ԳԵՂ։

ԳԵՂԱՄԱՑ ԾՈՎԱԿ կամ ՍԵՒԱՆԱՑ ԼՃ. — *Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ կը գտնուի այս Գեղամ նահապետին անունէն կոչուած լիճս։ Մեր պատմութեան մէջ ծանօթ է նաեւ Գեղաքունի լիճ անունէն. իսկ այժմ օտարազգիներէն կը կոչուի Կեօք չայ (Կապոյտ ջուր), ինչպէս նաեւ Սեւանայ լիճ նոյնանուն կղզւոյ անունէն։ Ընկած է* 40°9′ *և* 40°37′ *հիւսիսային լայնութեան,* 42°41′ *և* 43°22′ *արեւելեան երկայնութեան մէջ, իր ամենամեծ երկայնութիւնն է* 71 *հազարամետր, և ամենամեծ լայնութիւնն՝* 27 *հազարամետր, իսկ տարածութիւնն է* 1393 *քառակուսի հազարամետր։ Գիտնոց ըրած մեր հաշուոյն համեմատ, ծովակս ամէն օր իր մէջ հոսող բազմաթիւ գետակներէ կ'ընդունի մօտ* 33000000 *քառակուսի տուա-*


չափ ջուր, և զարմանալին այն է որ դուրս կ'արձակէ միայն Հրազդան գետով 432000 քառ. ոտնաչափ ջուր և միշտ նոյն չափին մէջ կը մնայ, առանց սահմանները դուրս բնակիչք, կը վկայեն թէ ծովակս գաղտնի օդէնք մ'ունի, որով պայմանեալ ժամանակաց մէջ կ'աճի և կը նուազի, և այս երկբայելի չէ, վասն զի շատ վէպքեր յայտնա-



231 • Գեղամայ ծովակը և Սեւան կղզին։

եղեալ և ոգողելու։ Այսր պատճառ կը հաւմարին ամանք ծովակիս ջրերուն սաստիկ շոշափառնալն, որով աւելի ջուրերը կը նուազին և ամպ գառնալով, կը մնայ միշտ հաւասար վիճակի մէջ։ Բայց Սեւանայ և Գեղաքաղնեայց պէս ցուցին և կը ցուցանեն ջրերու բարձրանալը և ցածնալը, և ըստ այնմ մերթ կը ծածկուին ջուց տակ և մերթ կ'երեւնան ժայռերը և եզերքները և նոյն իսկ ցամաքակղզիներու երեսները։ Մերթ կը գալին

և անշարժ կը մնան ջրազացները, և մերթ կ'սախտուին բնակիչք կղզեանցս, ջուրց յորդութեան պատճառաւ պատսպարել իրենց արտերը և անոնք։ Ամանք կ'բան թէ երկմտրաչափ կը բարձրանայ, իսկ այլք նոյնին կրկնապատիկը. իսկ բարձրանալու և ցածնալու ժամանակը, ամանք 10 տարին անգամ մը կ'բան, և ուրիշներ 14 կամ 20։ Ամանք ալ կարծիք յայտնած են, որ հատանական կը թուի, թէ ծովակս տարերկրեայ ճանապարհներ և հատզպակցութիւններ ունենայ ուրիշ ջրերու հետ, ինչպէս համարուած է նաև Վանայ ծովակը։ Ծովակս Սեւ ծովու երեսէն բարձր է 1932 մետր, և խոր ամենաջրջին խորութիւնն է 110 մետր։ Երկրի հակատներ, մանելով նաւակի մէջ սկսեր են կտուրել տառերը. և այսպէս մինչև ծովակի կէսը հասնելով, յանկարծ տաստիկ հովի բռնուելով ուզեր են հոս դառնալ, բայց անկարելի եղեր է, ալիքները կոտրատած տառերը նաւակի մէջ լեցնելով՝ ծանրացեր է, և ընկղմեր են վարպետները, արեզայն և երկու աշխատաւհասները, իսկ տարկաւագը և մէկ աշխատաւհասները Աստուծոյ ողորմութեամբ ազատեր են։ Այս պէսպէս պատահեր է ապրիլի առաջին օրը։ Տիւտուայի ճանապարհորդութեան միջոց 1834 տարւոյ փետրուար 4ին զարձեալ տառած է ծովակիս ամբողջ երեսը։ Կրնար գոն ասելի թանձր տառոյց կապել ծովակիս վրայ, եթէ մրրիկները և տառա-



232. Իշխանաձուկ Գեղամայ ծովակի։

դրից բարձրութեան պատճառաւ, ձմեռը բաւական ցուրտ կ'իջնէ մինչև 20° Ռէօմիւրի։ Կը պատահի երբեմն որ ամբողջ ծովակիս մակերեսոյթը կը տառի բաւական թանձրութեամբ, մինչև վրան տարով քալելու չափ։ Խիստ տաստիկ կերպով տառեցաւ 1660 թուականին, և ինչպէս կը պատմէ ժամանակակիր մը, ծովակիս միակ կղզւոյն Աիւտայ բնակիչը, քանի որ տառը ամուր էր տարով կ'երթային կու գային. և երբ սկսաւ տառոյցը թուլնալ և վրան մարդ չէր կրնար կենալ, այն տաեն ուզեցին տառերը չարդել որ կաբնան կղզիէն ցամաք անցնիլ։ Բարեհոգ տառատաւ վարպետ մը, հետ առնելով մէկ արեզայ և մէկ տարկաւագ ու երեք աշխատաւհասներ, մտեր են տառակի մէջ սկսեր են կտուրել տառերը. և այսպէս մինչև ծովակի կէսը հասնելով, յանկարծ տաստիկ հովի բռնուելով ուզեր են հոս դառնալ, բայց անկարելի եղեր է, ալիքները կոտրատած տառերը նաւակի մէջ լեցնելով՝ ծանրացեր է, և ընկղմեր են վարպետները, արեզայն և երկու աշխատաւհասները, իսկ տարկաւագը և մէկ աշխատաւհասները Աստուծոյ ողորմութեամբ ազատեր են։ Այս պէսպէս պատահեր է ապրիլի առաջին օրը։ Տիւտուայի ճանապարհորդութեան միջոց 1834 տարւոյ փետրուար 4ին զարձեալ տառած է ծովակիս ամբողջ երեսը։ Կրնար գոն ասելի թանձր տառոյց կապել ծովակիս վրայ, եթէ մրրիկները և տառա-

կաշունչ հովերը գինքը չյուզէին։ Տաստիկ հովը կը փչէ արեւելքէն Սողից կողմէն, այս պատճառաւ նոյն անուամբ կը կոչուի, իսկ հիւսիսայինը՝ Քօյ, որ անտառային կը նշանակէ, արեւմտեանը՝ Գաշտի քամի, վասն զի Աչլրաատեան գաշտէն կու գայ. հարաւայինը՝ Զրնկիլնեղու քամի, վասնզի ձորի գիպի մը անուամբ։ — Հանդարտ ժամանակ ակառակիա և պայծառ են ջուրերը և շատ կապուտակ կ'երեւին, նոյն իսկ հեռուէն և բարձրերէն գիտելով. այս պատճառաւ է Թուրքաց կապոյտ կամ Երկնագոյն ծով (կէօք չայ տենիզ) կոչուած է, իսկ Պարսիկներէն Տէրեայի Շիրին, Գեղեցիկ կամ Քաղցր ծով։ Ըստ յիրաւի ջուրերը քաղցր են, և բաս ո-

մանց լաւագոյն պղպեղներէն աւելի համով։ Ջրերէն աւելի պատուականագոյն են ձկները, իրենց համեղութեամբ և սեւակայ գանազանութեամբ հռչակուած։ Միանայ շրջակայից բնակիչք առանցութեամբ կը համա-

կը գտնուի նաև գետոց մէջ. ծովէն մանելով Հրազդանի մէջ և անկէ յետսոյ. ասոր ագածը աւելի ընտիր կը համարուի քան՝ թարմը։ Ամանք կոգակի ձագերը, և այլ ուրիշ սեւակ ձուկ կը համարին կապուտակ



Նոյնանման գծ. 383.

րին, թէ ծովակս ունի տասուերկու սեւակ ձկներ՝ տասնձին տասնձին անուններով, զորս կարգաւ յիշենք։ Կոգակ՝ պարարտ, համեղ և ուրիշ ձկներէ աւելի առատ է և երկու հազարագրամէն աւելի կը կշռէ, որ յաճախ

կամ կապիտա կոչուածը։ Ընտանի է իշխանաձուկն և կը կշռէ 15 հազարագրամէն աւելի։ Մեծութենէն զատ համեղ ալ է և կ'որսացուի ամառը. Գուգարաց կոմսերը խրատուրա կը կոչուի այս ձուկը, վասն զի ա-

ոտա կը դանուի խրամ գետի մէջ։ Աւսոր ձագը կը համարին ամենը կարապետիկ կոչուածը, և այլք՝ առանձին տեսակ։ Միս տեսակները կը կոչուին Աշտառ, Ագիճան, Բեհրու, Զարաձուկ, Պեռնկ, Կարմրախայտ, Ջուար կամ Ծուար, Գեղարքուն, Բադրակ, Ճանար, Մուրծի և Կաղակուզ։ Գիտնականները ամենը բոլոր այս ձկները երեք տեսակաց կը վերածեն. անոնց մեծութեան և փոքրութեան համեմատ, կ'ըսեն, ոմիկը կը կարծէ և կը համարի զանազան տեսակներ։ Շարաէն, որ երկու կարէ աւելի առաջ, քննութեամբ կ'անցնէր այս կողմերէն, ինն տեսակ ձկներ կը գտնէ։ Թէ՛ գիտունք և թէ ազէաք առ հասարակ կը գովեն այս ձկանց համեղութիւնը և մսալից պարարտութիւնը, ուստի գետային ձկներու նման փշոտ չեն։ Ինչպէս ի հնումն մեր ազգային պայապատաց օրով, նոյնպէս և այժմ այս ձկներու որսորդութիւնը վարձու կու տայ ազերութիւնն, տարին մօտ 30000 ֆրանկաց։ — Ջրային թռչուններէն ծովակիս վրայ կը գտնուի ճայեր և բազէք, որոց, ձկնկուլ, հոգամարդ, և այլն։ Գր. Տաթեւացւոյն քեռորդին՝ Աւետիք Սիւնեցի, ծովակիս մէջ կը յիշէ կարապին, ըսելով. «կարապին մեծ հաւ է որպէս գոչխար մի, և բանգնակ ոսպիտակ, որպէս գէրն. և լինի ի ծով Գեղարքունի։ — Սիսական, 27–30։

ԳԵՂԱՄԱՇԷՆ. — Այս անուամբ ևս կը յիշուի Այրարատեայ Մարզպ գաւառը։

ԳԵՂԱՄԻ. Տես ԳԱՄԻՒ։

ԳԵՂԱՑ ԼՄԻՆԻ. Տես ԳԵՂ։

ԳԵՂԱՆԻ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Օլթիի (Տայք)։

ԳԵՂԱՇԷՆ. — Սակաւաբնակ Հայոց գիւղ Շատախու։

ԳԵՂ ԱՍՈՐՒ կամ ԳԵՂ ԱՅՍՈՐԻ. — Աստրակն 20 տուն) գիւղ Այրարատեայ Մարզպ գաւառի մէջ։ Տես ԳԵՂ։

ԳԵՂԱՐԴԱՋՈՐ. — Այսպէս կը կոչուի Այրարատեայ Մարզպ գաւառի մէջ այն ձորն, յորում հիմնուած է Գեղարդայ վանքը։

ԳԵՂԱՐԴԱՒԱՆ. — Գեղայ լերան ոտա մի է Այրարատեայ Մարզպ գաւառի մէջ երկնցած։ Այսպէս կոչուած է հոչակաւոր Գեղարդայ վանքի անուամբ (թ. 233)։

ԳԵՂԱՐԴԱՒԱՆ ՎԱՆՔ. Տես ԱՅՐԻ ՎԱՆՔ։

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ կամ ԳԵՂԱՐՔՈՒՆԵՔ. — Միանգամ գաւառներէն մին, որ կ'իջնայ դէպ աշխարհի հիւսիսային կողմն և ամբողջ Հայաստանի ամենէն ատելի գեղեցկատեսիլ մասն է։ Իր մէջն է կապուտակ ծովակն Գեղամայ, որ շրջապատուած է բարձրութիւններով։ Հոչակուած է պայծառ օդովն, պաղպաղուն և պատուական ջրերով, գեղեցիկ և յատկի բուսականութեամբ, կենդանիներով և ձկներով։ Շրջապատուած է սահմանակից Այրարատ, Գուգարք, Ուտի, Արցախ աշխարհներէն և Սիւնեաց վայոց ձոր և Սպք գաւառներէն։ Ցեղերնք նախ գաւառս պատմական դէպքերը։ Ամատիա նահապետին Գեղամ որդին, ինչպէս կ'ասանդէ Խորենացին, իր Հայրենի Ամատրայ տուներ թողլով իր Հարմա անպրանիկ որդւոյն, «Ինքն գնացեալ գմիւս կողմանէն արեւելեան Հիւսիսոյ, ուր ծովակի միոյ, շինէ գեղ ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիր անուն և սա գլեաստն անուանէ Գեղ, և գչէնան Գեղաքունի, որով կոչի և ծովն»։ Յետին գրիչներ, գաւառս անուներ կ'ասանգաբանեն Գեղ—արքունի։ Տօնական գրոց գրիչ մ'ալ Խորենացիին վերջ, գաւառս Գեղաքունի անուներ կու տայ, ըսելով «ի գաւառին Գեղարքունի, որ յորջորջեցաւ յանուն նախահարին Գեղամայ»։ Այս երկիրը Մովսէս Կաղանկատուացիէն կոչուած է նաև Գաւառ Գեղամայ. յիշուած է նաև սոսկ Գեղամ անուամբ, և Աշխարհ Գեղամայ։ Ինչպէս յոգհանուր Սիւնեաց աշխարհի, նս առաւել այս գաւառս պատմութիւնն և դէպքերը հազար տարուց չափ անյայտ կը մնան և գրեթէ չի յիշուիր Հայկազանց և Արշակունեաց հարստութեանց ժամանակ. և կը կարծուի թէ նախկին գարուց մէջ Գեղամայ լեռները քաղաքական տեսչութեան անջրպետներ չէին, այլ անոնց երկու կողմերն ալ մէկ իշխանութեան ներքոյ էին։ Երկրորդ գարս սկիզբներէը քիչ ժամանակ գաւառս մէջ բնակած կը յիշուի Այրաքաջն Սմբատ։ Հայկական գպրութեան ծագման ժամանակ, ինչպէս Մեծ Սիւնիք, նոյնպէս և անոր այս մասը՝ մատենագրական հրահանգներով և բնակաշատութեան կարգերով զարգացաւ։ Ա-

*անհանդ տէրութեան վերջին տարիները (629) Խազրաց կամ Հոնաց արշաւանաց միջոց, անոնց հրոսակները և Պարսից՝ Շահր–վարազայ զօրավարին առաջխոյութեամբ, իրարու հետ գարնանացան բուռն զօրութեամբ Գեղամայ ծովակին եզերքը. «ի պարսաւթիւն մատանեալ կոտորեցան Պարսիկք. ոչ ոք էր որ գոժիան լինէր այնչափ արանց»: Կաղանկատուացի, Բ. ԺԲ: Ութերորդ դարու սկիզբը (703) Մահմէտ ոստիկանը արշաւելով գաւառս վրայ, երկար ժամանակ պաշարեց և տիրեց Սեւան կղզւոյն: Տարիներ վերջը, Բարձ Պարսիկը բռնացաւ Սիւնեաց աշխարհին վրայ, վասակ Տահապետին գուսպը առաւ, և գաւառս վրայ յարձակելով, բնակիչները սրէ անցուց, գրեթէ 15000 հոգի և Մաքենոցաց հռչակաւոր ոխթոր այրեց և քանդեց: — Ութերորդ դարու վերջերը Սիւնեաց կը պայազատէր Վասակ՝ աշխարհին տիրանց նոր նահապետը. սա Գեղարքունի գաւառը կամ ծովակին բոլոր ոլորքը ժառանգութեան առած իր երկրորդ Սահակ որդւոյն:

Իններորդ դարուն, ինչպէս բնիկ Սիւնեաց նահապետութիւնը, նոյնպէս և Գեղամեանցը՝ սկսաւ բարգաւաճել և պայծառանալ, եկեղեցիներու և վանքերու շինութիւններով, գրեթէ երկու դարու ժամանակ: Ջանազան վանքերու արձանագրութիւններ, ցոյց կու տան շարք մը նշանաւոր իշխաններու, որք շիներ և պահպաներ են այ սակաւ վանքեր, մեծ մեծ կալուածներ նուիրելով: Օրինակի համար, Շապուհ Բագրատունին՝ Սմբատ Ա. Թագաւորի եղբայրը, նոյն Շապուհ քոյր Մարիամ Սիւնեաց Տիկինը, Բաբայ մեծ սպարապետ, Գրիգոր Սուփան իշխան, Սահակ իշխան, Վասակ Գաբուռն, Աշոտ Ա. Թագաւոր, Գագիկ Ա., և ուրիշ շատեր: — Բաց ի բարեպաշտ իշխաններէ գաւառս ժամանակին տուեր է նաև բաւական հոգեւորականներ, որոց կարգէն են ութ կաթողիկոսներ, և բազմաթիւ եպիսկոպոսներ և վարպետներ, որոնք բարեկարգեր և պայծառացուցեր են վանքերը և գրեր են գանազան գրքեր:

Երկրաշաւտներորդ դարու կէսէն վերջ, վրաց զօրացած ժամանակ, Ջաքարեան քաջ զօրավարները այլազգիներու ձեռքէ կորցած առջին գաւառաց հետ, Կիրակոսի պատմածի համեմատ, առին նաև «զգաւառն որ շուրջ գծովեայն Գեղարքունւոյ»: Թամթարաց աշխարհակալութեան միջոց, անոնց Զօրավարը, Ախին անունէն առաջ, Գեղամայ ծովակի ափունքը գրած էր իր խորանը: Ոչ միայն այս անգամ այլ և ի հնումն և յետոյ շատ անգամներ Գեղամայ գեղեցիկ հովիտները եղած են կռուատեղի և գազար բանակաց Հայոց և ասկի օտարաց: Թամթարաց իշխանութեան ժամանակ, Մաղաքիա ժամանակագիրը կը յիշէ, թէ «վէրիա պէկն Թալանեաց գերկիրն Գեղամայ», բայց թէ ինչպէս, յայտնի չէ: Քանի տարի վերջ (1319ին) ահաւոր երկրաշարժ մը պատահեցաւ, և Սամուէլ Անեցիի բառին համեմատ, «ի Գեղարքունի ընկզմեաց գրազում գեօղս, հանդերձ արամբք և կառամբք»: Այս գաւառս մէջ 1387ին բանակեցաւ նաև աշխարհակալ Լէնկթեմուրը, և ասկէց արշաւեց Երնջակայ ամրոցին վրայ:

Կը թուի թէ ԺԶ. դարու մէջ անպտղաբեր եր է Գեղամայ երկիրը, ուր սկսան են պայազատօրէն տիրել Հայոց մէլիքները: Այս մէլիքներու իշխանութեան ժամանակ ևս հանգիստ չէ մնացած աշխարհը այլազգիներու արշաւանքներէ: Մինչև Ռուսաց տիրապետելը, թէև Երեւանի կոմիսակաչն կամ խանն կ'իշխէր գաւառս, սակայն անոր հպատակութեամբ հայ Մէլիքներն ևս որպէս որպի կը պայազատէին: — Ըստ եկեղեցական իշխանութեան չի յիշուիր ի հնումն յատուկ եպիսկոպոս Գեղամայ, և գաւառս անշուշտ կամ Գառնոյ վիճակին և կամ Սիւնեաց մեծ եպիսկոպոսին իշխանութեան ենթակայ էր: Վերջին դարերու մէջ կը տեսնուի որ գաւառին իւրաքանչիւր գիւղաւոր վանքերը, գիւղերը առանձին վիճակաց բաժնելով, ունէին առանձին եպիսկոպոսներ կամ թեմակալներ: Ոսկան վարպապետի ցուցակի համեմատ, այդ եպիսկոպոսաց աթոռներն էին Սեւան, Մաքենոց, Շորագայ և Հայր Յովհաննաւանք. զորս կը յիշէ նաև Սիմէոն կաթողիկոսը իր Ճամբու (283–4) գրոց մէջ:

Գեղարքունին ի հնումն կը բազկանար չորս մասերէ կամ գաւառիներէ, որք են. Ա. Ծմակ 18 գիւղերով, որ կոչուած է նաև

Գաւառ և որուն այժմ կը համապատասխանէ Նոր Բայազիտ քաղաքը և շրջակայքը. Բ. Կոթ և Գուզաբակ 30 գիւղերով. որ այժմ է Ախլիսանդայ շրջակայքը. Գ. Սոդք և Սոդից գաւառ 47 գիւղերով. որ այժմ է Ջօլֆայ կողմերը. Դ. Արեգունի կամ Արեւգունի գաւառ 17 գիւղերով. որ այժմ է կիւնէյիք՝ Ծովակի հիւսիսային եզերքը։ Այժմ Գեղարքունի գաւառին կը համապատասխանէ Նոր Բայազիտ գաւառի մէկ մասը, յորում կան 31 հայարնակ, 10 մահականի և 69 պարսկարնակ գիւղեր։

Եկեղեցահարկի ցուցակին համեմատ սոսբեւ կը գնենք Գեղարքունեաց քառասան և եօթն գիւղերու անուանք, և իւրաքանչիւրի գնացը, իրենց ստուած հարկի չափն։ Այս գիւղերէն այժմ ամենք միայն ծանօթ են իրենց հին անուամբ, կարելի է որ ուրիշներ ևս շէն վիճակի մէջ գտնուին, բայց անունները այլափոխուած է։

Կոթ կամ Կոթի	20
Կակոյք	12
Գոճոյ–ձոր կամ Կոճոձոր	12
Սկերտ կամ Ըսկերտ	10
Ցըցնի	7
Թնձի–թաղ	7
Ցուիեաց ձոր կամ Ոփեաց ձոր	6
Նորաշէն	7
Եւանակաց կամ Ցիւնակաց հուն	7
Ողնի. Ողի	12
Գանձաղանատաւ	7
Գողնոր	7
Երիզկայք. Երիակոյք	15
Գաստակերտ	10
Վասակաշէն	10
Ջաւազաբակ. Ջաւանագաբակ	7
*Աչմասիա (Մասրիք)	25
Վաժոց	10
Կամբրիւն	15
Հոգք. Հազք	15
Թոկաւինճ	12
Թորոան	15
*Աղգիճի. Աղգաճին	10
Թմոկ	15
Մեհոգաց. Մեհոգաճ	10
Հովուաց ագարակ	7
Ջագ	17
Կաճիք	15
Ուխթրուն	12
Ցուշապերեկ. Ցուլաբերէք	6
Վարդենիք Վերին	6
Վարդենիք Ներքին	15
Թամբարարք	12
Երերուք	15
Աղնձոյ կամ Աղնջոյ հուն	15
Գոմք	12
Պահաւանք կամ Ջահաւանք	6
Կուտրակագոմք	10
Վանաւան	7
Փառականք	10
Բերան	12
Ղեխք, Ղիւք	10
Բրտի այրք	12
Շիկակարքն	15
Գերափուռ	15
Կաղկայ. Ծախկայ	7
Ախայիւնք. Ախայենք	15

Ասա կը գնենք նաև Միէճոն կաթողիկոսէն յիշուած հայանուն գիւղերը, վանորէից թիւերուն բաժանմամբ, Ա. Մեհանայ, Բ. Հայրաւանից, և Գ. Շաղատապայ, դուրս ձգելով այլազգաբնակները։ Վերոյգրեալ անուանց մէջ աստղանիշ անուններ կը յիշէ նաև Միէճոն կաթողիկոս։

Ա.	Բ.	Գ.
Կաղամախի	Փունադար	Կոզլաբակ
Խատակալ	Իլկաւանք	Ջագ փոքր
Վարզել	Ափատար	Եզնիատ
Վարզել միւս	Բիդնի	Շղուաք
Փշմանկալ	Նորատուս	Ծակքար
Կորատեղ	Աչնեղի	Քեթափոր
	Գանձակ	Կարմիրքար
	Պարոնբէկի (գիւղ)	Կարմիրքար միւս
	Թշլաձագ	Բալախատափ
	Բերդ	Վրացաշէն
	Ազատքաղաք	Ամրար
	Կարմիրշէն	Կարմիր աղբիւր
		Գառնակեր
		Գիլիշէն
		Հաբուլ
		Մասրուց անապատ
		Վանք

Իակ նոյն Միմոն կաթողիկոսէն յիշուած Թադրքանուն գիւղին, վերոյիշեալ երեք Թեմիսու համեմատ, են հետեւեալք.

Ա. Պուղատաբերիկ, Ղարադաղու.

Բ. Տէրի գարատաչ, Ղուրալի, Գըշլաղ կամ Ղաշլախ, Պուզիաանէ, Գաբագիլիսէ, Դիւդանկի, Երկանկի, Անդանկի (Երկադանկ, Միադանկ, Երադանկ), Քեամանաստուզաց, Հասանգուզաց.

Գ. Տիլճէի. Եղասիեօղում, Աղբուերթախա:

Գաւառս գաս ի վայրերն ասկի են քան տափարակներբ, նշանաւոր է միայն ծովակի արեւելեան ծայրի տափարակը, որ է Սոպից գաւառը, որոյ մասն կը համարուի նաեւ Մազազ գաւառակն իբր Մազրայ գիւղով: Գեղարքունոյ գետերը հեռուեալք են, որք կը թափին Գեղամայ ծովակը. Գաւառագետ որ է Նոր Բայազիտու գետը, Խրամանագետ կամ Աղբեռամանի գետ, Սոպի կամ Մազրայի գետ. կան նաեւ մեծ ասուն և մէկ գետակներ: — Հարաւային ծովեզերքը Օրզակլուէ սկսած, կը գտնուին քաղաքաց, գիւղից բնակուրս աւերակներ, խիստ հին ժամանակներէ մնացած: Ա.յս աւերակներու միջէն գտնուելը են Օրզակլուի, Ագամիանի, Ալիչալուի, և Ջաղալուի բնեռաձեւ արձանագրութիւնք: — Տես. Հայաս. 263–265: Միսակեան, 27–39: Գեղարքունի' գրեց Մեսրոպ արքեպիս. կոպոս Ամրատեանց, տպ. Վազարշապատ, 1895. Ա–ԺԱ և 1–843 էջ: Եւ այլն:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՈՑ ԲԵՐԴ. — *Բերդս կը յիշէ միայն Սամփատոս Օրզէլեան, Միմոնեաց ապստամբ բնակուրս հետ, որուն վրայ ուրիշ տեղեկութիւն չունինք:*

ԳԵՂԱՔՈՒՆԻ. *Տես* ԲԱՂՔ:

ԳԵՂԱՔՈՒՆԻՔ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԳԵՂԳԻԿ. — *Աշխարհն արեւելեան կողմը:*

ԳԵՂԵԱՅԻ. — *Աժդահակայ և Հանդուրատ Միմոնեաց կոմսական գաւառի մէջ:*

ԳԵՂԵՐԵՅԻԿ. — *Կը յիշուի Միմոնեաց Գողթն գաւառի մէջ գտնուող Ագուլիսի Ս. Թումայի վանաց արձանագրութեան մէջ:*

ԳԵՂԵՐՎԱՆՔ. — *Կը յիշուի Ջորբորով Հայոց Հաշտեանք գաւառի մէջ, Թեղուս լճին այժմեան Գեղ-վանք գիւղն խարբերդի:*

ԳԵՂԵՑԻԿ ՄԱՆՈՒՈՒՔ. *Տես* ՀԱՄԱՆ ՄԱՆՈՒՈՒՔ:

ԳԵՂԻ. — *Հին ամրոց Միմոնեաց կապան գաւառի մէջ:*

ԳԵՂԻԿ կամ ԳԵՂԻԿ. — *Հայաստան' բայց այժմ աշխարհական գիւղ Տայոց Աբաղէ (Թորթում) գաւառի մէջ:*

ԳԵՂԻՄ կամ ԿԵՂԻՄ. — *Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւառի մէջ: Ունի Ս. Քրիստափոր անուամբ եկեղեցի մը: Հարաւային կողմը ըլրակի վրայ կառուցուած է Ս. Յովհաննու անուամբ հոյակապ վանք մը. իսկ արեւելեան կողմը քարուկիր եկեղեցի մը Ս. Սարգիս զօրավարի անուամբ: — Գիւղիս մօտ է նաեւ Ս. Կիրակոս անուամբ վանք մը:*

ԳԵՂՈՑ ՎԱՆՔ. — *Հին ընդարձակ չէն, Միմոնեաց Ջորք գաւառի Գեղաւաձոր վիճակի մէջ:*

ԳԵՂՈՒԱՁՈՐ կամ ԳԵՂՈՒՁՈՐ. — *Հին փոքրիկ վիճակ Միմոնեաց, Ջորք գաւառի հիւսիսային մասը:*

ԳԵՂՈՒՆԱՆՔ. — *Գիւղ Ա.ղբատասայ վերին Բասէն գաւառի մէջ, Հասանկլայի հիւսիսային արեւմտեան կողմը. ծանօթ է նաեւ Թաւուճց անուամբ: Տես* ԳԵՂ-ՎԱՆՔ:

ԳԵՂՈՒՈՑ. *Գիւղ կաթողիկէ Հայոց, Տայոց Աղեացփոր (Բերդագրակ) վիճակի մէջ: Եկեղեցին է յաներն Ս. Աստուածածնի: Գեղաւան մէջ կան երկու հնագոյն մատուռներ Ս. Յակոբեանոյ և Ս. Գէորգայ անուամբ:*

ԳԵՂ-ՎԱՆՔ կամ ԳԵՂՈՒԱՆՔ. — *Հայաբնակ գիւղ խարբերդի (Ջորբորով Հայոց) առաջնորդական թեմի մէջ: Բնակիչք 50 տուն, հոգեւորական են. ունին Ս. Նշան անուամբ եկեղեցի մը և վարժարան:*

ԳԵՄԸՆՋԴԵՐ. — *Հին վանք լեռնային Կիլիկիոյ. կը յիշուի ԺԴ դարու վերաբերեալ յիշատակարանի մը մէջ: Եկեղեցին նորաշէն էր Ս. Աստուածածնի:*

ԳԵՆԴԻՒՒ. — *Քանդուած և Դիոգրաս այս անուամբ գետ մը կը յիշեն կորգուաց և Հայաստանեայց բաժանիչ, որուն լայնութիւնն էր գրեթէ 200 ոտք:*

ԳԵՆԵՆԹԱՂՔ. *Տես* ՀԱԲԱՆԴ:

ԳԵՆՈՒԱ. *Տես* ՁԵՆՈՎԱ:

ԳԵՏԱՐԱԿ. *Տես* ՍՈՂԵՔ:

ԳԵՏԱԲԼԻԿ կամ ԳԵՏԱԲԱԿ ՀԻՆ. — կը գտնուի Գանձակի Զարպախլուի հասարակութեան մէջ, Շամքոր գետակի ձախ կողմը, Գանձակէն մօտ 56 վերստ դէպի արեւմտահարաւ, ձորակի մը մէջ ուսկից կը հոսէ Գետաբլիկի առուակը։ Հոս կը գտնուին գեղմանացի «Միմնոսի և ընկ.» պղնձահանքը՝ գնուած 1864ին, բազմաթիւ կառուցուածքներով և վառարաններով, ուր հանք կը գործեն ածուխի, փայտի և նաւթի միջոցով։ Հանքի բոլոր ծառայողներու և բանուորներու բնակարանները ընկերութեան սեփականութիւն են։ Ընկերութիւնը ունի ամէն ճիզի պատկանող մասնաշէնքեր. բժիշկ, ճարտարապետ, և այլն։ Ունի ուսումնարան, գեղատուն, հիւանդանոց, հեռագրատուն, երկաթգործարան, հիւսնարան և նմանին երկաթուղի թէ՛ գործարանի մէջ և թէ մինչև Ղալաքիանդ և Պայրամ–Ալի, որոնց մէ առաջինի մէջ կը գտնուի գործարանի բաժանմունքը և երկրորդի մէջ է ածուխի և փայտի պահեստը։ Հում կամ սեւ նաւթը կը առնուին Բաքուէ մինչև Գալլար անուամբ երկաթուղւոյ կայարանը, և անկից ալ մինչև Գետաբակ 42 վերստ երկարութեամբ կայ նաւթանցք, պողպատեայ խողովակներով։ Այս գործարանաց մէջ կ'աշխատին մօտ 2000 բանուորներ, որոնցմէ ամենէն շատ են պարսիկները, յետոյ լեռնցիները, ապա հայերը, յոյները, և այլն։ Ի հնումն այստեղ կայ եղեր Հայոց մեծ պիւղ մը, որուն վկայ է ընդարձակ գերեզմանատուներ։ Բլրակի մը վրայ կանգնած է Հայոց Ս. Գէորգ հին եկեղեցին։ Կայ եղեր նաև ուրիշ եկեղեցի մը, զոր պղընձահանքի կապալառուն քանդել տալով քարերը գործածեր է իր շինութիւններու համար։ Գետաբլիկի երկինքը միշտ պատած է գործարաններու ծխով։ — Գանձակի գաւառ, Ա. 71–73 և 120։ Նոր Դար, 1893. 35։ Արձագանգ, Բ. 532։ Եւ այլն։

ԳԵՏԱԲԼԻԿ ՀԱՑՈՒ կամ ՂԱՉԱԽ. — կը գտնուի գիւղս վերոյիշեալ համանուն պղնձահանքէն հարաւ 3 վերստ հեռաւորութեամբ դաշտակի մը վրայ։ Բնակիչները եկած են հոս Հին Գետաբլիկէն, որոնց նախնիք ալ եկած են Ղազախի կոթ, Ոսկեպարիսոյ և Ղալաչա գիւղերէն։ Գիւղիս մէջ նշանաւոր բան չկայ, նոյն իսկ եկեղեցի չունենալով կը յաճախեն Հին Գետաբլիկի եկեղեցին։ Բնակչաց թիւն է 327 հոգի, բաժնուած 44 տան։ Պղնձահանքի ծուխը պատած է նաև այս գիւղս, որ և շատ փնաս կը հասցնէ արտերուն. մերձաւոր տեղերու հասկերը կ'այրէ և հեռաւորները կը խանգարէ և կանոնաւոր աճման արգելք կը լինի։ Ժողովուրդն ճարահատութենէ, պղնձահանքի մէջ ևս շատ գործ չգտնելով, ինդիր մատուցած է կառավարութեան՝ որ ուրիշ լաւագոյն տեղ մը փոխադրուին։ — Գանձակի գաւառ, Ա. 120։

ԳԵՏԱՓԱՂ. — Հայարնակ գիւղ Միւռնեայ Ծղուկ գաւառի Լօրաձորի մէջ, Լոր և Գաբաթաս գիւղերու մէջ տեղ Շնախեաղ գետի ձախակողմը։ Գիւղիս արեւելեան կողմը կը բարձրանայ Լդիխակ գագաթը, իսկ արեւմտեան կողմէն Սաւերծակները։ Վերջինս այսպէս կը կոչուի, որովհետեւ սարի գագաթը ժայռ մը կայ, որոյ ծակերուն մէջ սառոյցը (սառներ) ամբան ժամանակ ևս կը մնայ։ Գետաթաղը ունի չորս սերնդոց վրայ հաստատուած կամարակապ և առանց գմբէթի գեղեցիկ եկեղեցի մը։ Շէզունի մէջ և խորանները վերին կողմերը կան գաղտնի պահարաններ և պաշտպանութեան տեղեր։ Խորանները մօտ կան մէկ մէկ գեղեցիկ խաչարձաններ։ Եկեղեցին շինուած է ՌՃՇԱ թուին։ Բնակիչներէն մեծ մասը գաղթած են Հին Նախիջեւանէն, ընդ ամէնը են 362 հոգի, բաժնուած 39 տան. կը պարապին երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մեղուաբուծութեամբ։ — Այս գիւղէն Բառատունց ընտանիքէն Փիրղատ անուամբ մէկը 1586–7 թուին, անշուշտ վաճառականական նպատակով, ճանապարհորդած է ամբողջ Մեծ և Փոքր Հայաստանը, Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Լեհաստան, Մոլդաւիա և Արեւմտեան Եւրոպա. ձեռքերնիս հասած է իր այս ճանապարհորդութեանց յիշատակարանը, լի բազմաթիւ սխալներով։ — Միսակեան, 220–221։ Միսիա, 63–64։

ԳԵՏԱԿԻՑ. — Մակաւարնակ Հայոց գիւղ ի Մասուն։ Քուրդ բնակիչք ասելի են։ Տես ԾՂՈՒԿ։

ԳԵՏԱԿԻՑԻ. — Այս անուամբ վանք մը կը յիշէ Կիրակոս (Գլ. ԺԷ), Մածնաբերդի սիւ-

բոլ Ազատիմանայ վրայ գրած առեն. « ...կրօնաւորեցաւ ի վանքն որ կոչի Գետակիցք »։ Բայց թէ նոյն է սա Գետակայ վանքի հետ՝ որ կից էր Ազատաս գետոյն, որոշ չգիտենք։

ԳԵՏԱԿՆ. — *Այս անուամբ տեղ մը կը յիշուի Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Սեւան կղզւոյն մօտ, ուր եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք, ժողովք գումարած են Զաքարիա սպասալարի և Իւանէ ամիրայի ժամանակ։*

ԳԵՏԱՀԱՅԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉ կամ ԲԱՐՁ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉ. — *Հինաւուրց վանք վերին կեղի (Զարրօրդ Հայք), Օտնակ գիւղի մօտ. կառուցուած է լերկ ու լայնանիստ շղթայի մը արեւմտեան կողին վրայ. շէշտ կը նայի Օրօր գետակի և կարծես կ'իշխէ ամբողջ կեղի վրայ։ վանքս նորոգ կառուցեր են անցեալ դարու մէջ, ամրապինդ և հոկայապոյծ շէնք է և օրինակելի յատակագիծ ունի։ վերջին ժամանակներս վանացս յարակից սենեակք և պահարանք լերան գառիթափէն վար գլորեցան, բայց եկեղեցին մնաց անվնաս։*

ԳԵՏԱՀԱՏԱՆ. — *Սիւնեաց հին գիւղերէն մին։*

ԳԵՏԱՄ. — *Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ, համանուն Գետամոյ չուր վտակի մօտ։ Ունի 20 տուն թաթար բնակիչներ։*

ԳԵՏԱՄԱՋՈ. — *Հին գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ։*

ԳԵՏԱՇԷՆ կամ ՉԱՅ–ՔԵՆԴ. — *Հայաբնակ մեծ գիւղ Գանձակի Միխայլովկու հասարակութեան, Համի–Քենդէն գլխի արեւելահարաւ, խոր ձորի մը մէջ, ուսկից կը հոսի Կուրակ–չայ գետակը։ Ձորը ամբողջապէս ծածկուած է այգիներով։ Տները կը գտնուին ձորի արեւելահայեաց լանջի վրայ, իսկ արեւմտահայեաց լանջին կան հին հնձաններու աւերակներ և նոր կառուցուած պետական պղտոցը։ Շէնքերու մէջ նշանաւոր են Տէր–Գրիգորեանի քառայարկ գեղեցիկ տունը և Մելիք–Մնացականեաններու նախկին մելիքական ապարանքը։ Գրեթէ գիւղի կեդրոնը կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին, զոր վերջին ժամանակներս նորոգած են. պարզապարտ է և գաւթի մէջ կայ հինաւուրց բոշնի ծառ մը, յորմէ կախուած են եկեղեցւոյ զանգակները։*

Գետաշէնի վարի ծայրը կայ փոքրիկ մատուռ մը, նահատակի մը գերեզմանով։ Այս մատուռը Աւագ Ս. Նշան անուամբ նշանաւոր ուխտատեղի է։ Դրան համապատկեր քարի վրայ կայ ՌՃԼԶ թուականաւ արձանագրութիւն։ Մատրանս մէջ կը պահուին չորս նշանաւոր պրչակեր աւետարաններ և զանազան մատուռքներ, յորոց յիշենք Եղիշէ առաքեալի բազկի մէկ մասը արծաթեայ ոսկեզօծ աջի մը մէջ ամփոփուած, ունի արձանագրութիւն, ՈՒԼ թուականաւ։ Գիւղի վարի ծայրն ալ կայ փոքրիկ կամարակապ անսիւն եկեղեցի մը, որ ունի միայն մէկ խորան և մէկ աւազան։ Դրան վրայ սա ևս ունի արձանագրութիւն, և քիչ մը բարձրը ՌՃՂԲ թուականը։ Աւանդութեան բսելով, սա կառոյց է եղեր, և այժմ տակաւին Ա֊ճապատ կը կոչուի. շուրջը կան խուցեր, մէկ քանին դեռ կանգուն։ Աւսր մօտ է Հայոց եկեղեցական նորակառոյց գպրոցի շէնքը։ Ա֊նապատէն քիչ մը հեռու կայ ուրիշ փոքրիկ կամարակապ, անսիւն և անխորան մատուռ մը, որուն միակ դրան կամարակալ քարի վրայ քանդակուած է, թէ Բրիստոս ինչպէս պիտի կշռէ ննջեցեալոց հոգիները։

Ըստ ասից տեղացւոց, հին ժամանակները Գարապապէն գաղթած հայք հիմեր են գիւղս այս անուամբ և ժամանակաւ ունէր մինչև 700 տուն. սակայն 1800–1828ին միջոցներր բնակչաց շատերը ի Պարսկաստան գերի տարուեր են և շատերը գաղթեր են ի Գարապապ։ Այժմեան բնակիչներէն շատերը գաղթած են Բոլնիսէն, Ջրաբերդէն և Ըստաւակէն. այժմ կը հաշուին 2558 հոգի, բաժնուած 446 տան։ Ա֊ր երկպսրծութեան և այգեպանութենէ զատ, կը պարապին նաև հիւսնութեամբ, դարբնութեամբ, գերձակութեամբ, խամրագործութեամբ, և այլն։ Կանայք առաւօտ մինչև երեկոյ կ'աշխատին անդադար, անեցւոց հագուստները կը կարեն, չուխա կը գործեն և լաւ գործեր կը շինեն։ — Գետաշէնի հողն ու ջուրը բաղդատմամբ բնակչաց թուոյն հետ շատ քիչ են։ Կուրակ–չայի վրայ շինուած է գեղեցիկ կամուրջ մը։ Գետաշէնցիք բաւական կրթուած են, ուստի դի անցեալ դարու կէսէն սկսեալ ունեցեր են գպրոց։ Գիւղս ունի նաև բաւա֊

կան թուով խանութներ, որոնցմէ միայն մէջ կայ նոյն իսկ ձայնագիր (Phonographe) դիպացիները գուարճացնելու համար։ Կը պատմեն, թէ ինչպէս գիպացիք առաջին անգամ ձայնը լսելով, սարսափած փախեր են, կարծելով թէ մէջը սատանայ նստած է։ — Մշակ, 1890. 76–77։ Գանձակի գաւառ, 110–114։ Արցախ, 258–265։

ԳԵՏԱՇԷՆ. — Գիւղ Աղուանից Հոգի գաւառի, կառուցուած Արջկան գետակի ձախակողմեան բարձրաւանդակի վրայ։ Գեղեցիկ է տեսարանն, կլիման և օդն լաւ։ Գլխաւոր բնակիչք են ցորեն և գինի։ Բնակիչք ամբողջ հայ են 574 հոգի, բաժնուած 100 տան. իրենց նախնիք գաղթած են Խաչէն և Ջրաբերդ գաւառներէն և մէկ քանին վաքանդայէն։ Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հին է և փայտաձածք։

ԳԵՏԱՌ. — Այսպէս կը կոչուի Երևանայ սահմանաց մօտ վտակ մը, որ օժտուած է Հրազդանայ։

ԳԵՏԱՎԱՆ. — Կը յիշուի Գառգարաց Տաշիր գաւառի մէջ. անցնելուելիքնք կը պակսին։

ԳԵՏԱՎԱՆԱՅ ՅՈՎ. — Կը յիշուի Միհենաց Գեղարքունի գաւառի մէջ գտնուող վանենից առձանապրութեան մը մէջ։

ԳԵՏԱՐԱՎԱՅՐ. — Հին գիւղ Միհենաց մէջ, որ կը յիշուի իբրև կալուած, Զօրք գաւառի մէջ գտնուող վանաց։

ԳԵՏԱՓԵԼ. Տես ՁԱԳԱՎԱՆԲ։

ԳԵՏԶՐ կամ ԳԵՏԶՔԵՐ. — Հայարնակ գիւղ Մոկաց աշխարհի մէջ, Աստանից ձորայն գիմացը։ Ունի Ս. Առաքելոս եկեղեցի մը։

ԳԵՏԻԿ կամ ԳԻՇ ՄԵԾՈՒԱՅՑ ՎԱՆՔ. — Երբեմն հռչակաւոր և այժմ իր աւերակներով անգամ նշանաւոր վանքս կը գտնուի Այրցախի Քաւատի գաւառի մէջ, Գետիկ կամ Տանձուտ կոչուած գիւղաւանիկ մը վրայ։ Բարձր և անառապատ լեռներ կը պատեն վանքին հարաւային, արեւմտեան և հիւսիսային կողմերը, բաց է միայն արեւելեան կողմը։ Երկոտասաներորդ դարու վերջերը, երբ բարբարոս Մոզոլները իրենց ասպատակութեան ասպարէզ գարձուցին Միհենաց քաջարի իշխաններու օրրանը, երբ այդ արիւնարբու ցեղի հրոսակները անպրիծ սրէն անցուցին նաև Գանձակու բոլոր բնակիչները, ճիշդ այդ ժամանակ 1191ին, իր հայրենեաց աւերմանց ականատես առնելով Մխիթար Գոշ վարպետը, կը հիմնարկէ հռչակաւոր մենաստանս, փոխանակ հին Գետիկ վանաց, որ երկրաշարժէն մեծապէս վնասուած էր, աջակցութեամբ վախտանկ իշխանի և նորա տունուն Զրոյս խաթունի։ Վանքս, որ կը բազկանայ քանի մը եկեղեցիներէ, իր գեղեցիկ դիրքովը ունի բնութեան հրապուրիչ և վերին աստիճանի կենդանի տեսարան մը։

Առաջին եկեղեցին Ս. Աստուածածին, կառուցուած է մեծ ճարտարութեամբ, բնական սրբատաշ բարերով, Գանձասարի եկեղեցւոյ նմանող ձեւով, չորս բարձրաշէն կամարներով։ Ունի չորս փոքր և մի ուղղ խորան, երկու խորհրդարան, սանդուխք լուսամուտ, վեցարանի կամարակիպիկ մը, երկու դուռն՝ արեւմտեան և հիւսիսային կողմերէն։ Եկեղեցւոյս լայնութիւնն է 11,50 մետր և երկայնութիւնն 15,75 մետր։ Երկրաշարժէ վնասուած են կամարակիպն և արտաքուստ արեւելեան սրմն, իսկ ներքուստ արեւմտեան և հարաւային կողմերը։ Ձեղակոմեան գործ երկրորդ խորանի ճակատին վրայ կը կարդացուի ՈՒ (= 1191) թուականաւ վանցս շինութեան արձանագրութիւնն, Ձեռք խորանին վրայ ևս կայ ուրիշ ընդարձակ արձանագրութիւն մը։ Ս. Աստուածածնի աբեւմտեան կողմը կից կայ ընդարձակ գաւիթ մը, կառուցուած չորս հրաշակերտ միապաղ և բազրակ սիւներու և ութ կիսասիւներու վրայ։ Գաւիթս ունի չորս խորան, 11 լուսամուտ և երկու դուռն. երկայնութիւնն է 15,79 մետր և լայնութիւնը 13,40մ.։ Արեւմտեան դրան վրայ կայ ՉԻԳ (= 1294) թուականաւ արձանագրութիւն։

Երկրորդ եկեղեցին, որ կը կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, պատկից է գրեթէ Ս. Աստուածածնի հարաւային կողմին, համակ քարաշէն է և չքնաղ կերտուածներով։ Ձեւով յար և նման է վերոյիշ, բայց առանց գաւթի։ Ունի 11,90 մետր երկայնութիւն և 9,12 մետր լայնութիւն. ասիկա որ քանդուած են ամբողջ կամարակիպէն, խորանակա-


մաթի մէկ քանի քարերը և այլ մասեր։ Այս եկեղեցւոյ կից են զանազան հայ պայազատներու դամբարաններ։ Տաճարս ունի զանազան արձանագրութիւններ, որոնք կը վերաբերին շինութեանց և նորոգութեանց։ Երբոր եկեղեցին Ս. Կարապետ, համարեա թէ կից է Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաթի հարաւային որմին։ Շինուած է համակ սրբատաշ քարով և նորը քանդակներով, որուն սեպանի գոգը շինած է Գրիգոր Տգայ անուանեալ, կաթողիկոսը։ Այս եկեղեցին հիմնարկած է Մարաիրոս անուամբ առաջնորդը, բայց Լուկիմ Մալահպիին արշաւանքներու պատճառաւ չէ կարողացեր աւարտել, սակայն վերջացուցեր է Կապաղեցի Գրիգոր իշխանը ՈՂ (= 1241) թուականին։ Տաճարս ունի երկու փոքր և մէկ մեծ խորան, հինգ լուսամուտ և մէկ դուռն. երկայնութիւնն է 6,90 մեար և լայնութիւնն 5,38մ.։ Հարաւային որմի վրայ արտաքուստ կայ ՈՀՀ (= 1237) թուականով արձանագրութիւն. նոյն որմի քարերն սկսեր են թափիթփիլ։ Դրան երկու կողմերը կան, երկու հրաշակերտ խաչքարեր, որոնք իրենց ճարտար և նորը փորագրութեամբ, Հայոց հռչակաւոր խաչարձաններէն դիմաւորները կրնան համարուիլ։

Ս. Աստուածածնի աջակողմը կը բարձրանայ զանգակատան բարձր և նուազարկ շէնքը, որուն կամարակիկն արդէ բոլորովին քանդուած է։ Գեղանպարիկը մառանատուն է, որուն յատակի վրայ կան քարակիր հսկեր. ունի մէկ դուռն և չորս լուսամուտ։ Միջնապարիկն գաղտնի պահարան է, ուր կը մնայուն վերնայարկի մահից առջև գանուած ծակէ մը։ Վերնայարկն շինուած է խաչաձեւ և ունի դուռ մը հարաւային կողմէն և երկու սեպաններ Գարբիել և Միքայէլ հրեշտակապետաց անուամբ։ Զանգակատան շինողք են երկու եղբարք Գասպար վարպապետ և Կարապետ, ինչպէս կը յայտնէ Ձի (1291) թուականով արձանագրութիւնը։ Զանգակատան պատկից է սեպանաւորները, որ ընդարձակ շէնք մ'է, առնիքը ամրոցային խոնարհուած։ Չորս պատերն շինուած են անտաշ մեծամեծ քարերով. երկայնութիւնն է 17 մեար և լայնութիւնը 12մ.։ Այս ընդարձակութենէն պիտի կարելի է մակաբերել, թէ որքան բազմաթիւ եղած են ուսանողները և վիճակները,

Այժմ քայքայուած են բոլոր միաբանից սենեակները և վանքս շրջապարիսպն, իսկ միայն իրենց տխուր հետքերն և ահեր հիմքերը։ Վերապրիշակ եկեղեցիներու արեւմտեան կողմերը կան բազմաթիւ տապանաքարեր, իսկ արեւելեան կողմերը ամէն տակաւին։ Միմ՝ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ արեւելեան կողմը կայ փոքրիկ մատուռ մը սրբատաշ քարով շինուած, որոյ համար ոմանք կը կարծեն, թէ գրապարան եղած լինի։ Վանքս մօտ Թարսա–չայ գետակի ձախ կողմը, Ջսպան տագի (8435) տապարը կը գտնուի համանուն Գետիկ կամ Գոշա–վանք–շէն կոչուած գիւղը, որուն բնակիչները 1855 թուին տեղափոխուած են այստեղ Ջաւէ գաւառի կոթի, Գասպոյ, Թլնկ և Սոխ գիւղերէն։ Օդն, կլիման և ջուրն պատուական են։ Ընդամէնը կը հաշուին 270 հոգի, բաժնուած 25 տան։ — Ս. Հռիփսիմէ, այսպէս կը կոչուի գիւղի մէջ համակ սրբատաշ քարերով շինուած մատուռ մը, որ ունի 5,70 մեար երկայնութիւն և նոյնչափ լայնութիւն։ Հարաւային որմի և կամարակիկի վրայ կան արձանագրութիւններ։ — Հոգի Սուրբ՝ ուրիշ մատուռ մի է, Ս. Հռիփսիմէէն վեր, գիւղի ծայրը, որ ունի նաև գաւիթ։ Մատուռս և գաւիթս նորոգած է Պ. Յարութ Փարսամեանեան։ Գաւթի մէջ կան երկու տապանաքարեր, որոց միայն վրայ գրուած է Մխիթար։ Այս է Մխիթար Գոշի գերեզմանն, որոյ գլխաւոր հողը, բժշկութեան համար հաւատացեալներ այնքան տարած են որ մեծ փոս ձեւացած է։ Մատուռս հարաւային կողմը կայ պատուական խաչարձանով տապանաքար մը, հանգիստ արձանագրութեամբ։ Քովի ցատկի և ողորկի վիճակի մէջ կը գտնուի Մխիթար Գոշի հրաշակերտ վանքը, հետզհետէ բոլորովին կ'աչխնչանան եկեղեցիները, որոնք ուշագրութեան և նորոգութեան կը կարօտին։ Այժմ վանականներէ զուրկ է, և կիսակործան տաճարներն յանձնուած են քահանայի մը ձեռքը։ Վանքս, ինչպէս կ'երեւի արձանագրութիւններէն, ժամանակաւ ունեցած է սեպհականութիւններ շատ անշարժ կալուածներ, այգիներ,

ջրագացներ, փուռեր, երկիրներ, անասուններ և ամարանոցներ։ Ա֊յժմ անտիրութենան պատճառաւ յափշտակուած են այդ բոլոր կալուածները, որոնցմով 700 տարի պայծառ կեանք և կենդանութիւն ունեցեր է վանքս։ Ա֊յժմ ասուածային պաշտամունք կը կատարէ փուռի քահանան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ։ Ժամանակին մեծ հոչակ ունենալով վանքս, հայ մեծատուններ միշտ մեծամեծ նուէրներ բրած են անոր ապահովելու համար. ինչպէս 1289 թուին, Մանագկերտցի Ձար իշխանը, ընդարձակ հող գնելով նուիրեր է, որուն սրբազրութիւնը գրուած է ներկով։ Ուրիշ նուիրատուներէն յիշենք միայն Գայլ իշխանը 1186ին, իր որդին Գայլաձագը, Սմբատ իշխանի որդին Գրիգոր Հէյսուրը, Խնամախոս անունով վարդապետը, Կիրակոս պատմագիր վարդապետը՝ որ ասած է քանի կտոր գիրք, քառատուն պահեկան և մէկ շուրջառ։

վանքէս քիչ մը վար կը գտնուի աւերակ Ռուբանիչ փուռը, հանգստարանով և կիսաւեր եկեղեցիով։ Իսկ քիչ հեռու, հարաւային կողմն է Տզրկածով անուամբ փուռը, որ այժմ թրքաբնակ է։ Դարձեալ վանքիս հիւսիս արեւմտեան կողմը, սարի հիւսիսային լանջի վրայ կայ աւերակ փուռ մը և հանգստարան, Հին Շար Խաչ անուամբ։ Այս աւերակի և հանգստարանի մէջտեղ կայ բարձր ժայռ մը, որուն հարաւային և արեւմտեան



234. Գետիկ կամ Գոշ Մխիթարայ վանքի ընդհանուր տեսքը։

երեսներուն վրայ շարքով շինուած են քառանիւից հատ մեծ ու փոքր խուչեր, և այս հանգամանքէն փուռս առած է իր անունն, որոյ անուամբ կը կոչուի նաև այժմեան Նոր Շար Խաչ փուռն։ Նոյն սարի առջեւը կը գտնուի Աշոդի փուռատեղին, աւերակի մը ձախ կողմը, ուր կայ նաև հանգստարան։ Ասկէց քիչ մը վերև է Եղջու֊Թուրա կոչուած տեղը, որ ժամանակաւ փուռ է եղեր և ունի հանգստարան ու եկեղեցի։ Այս տեղէն

ոչ այնչափ հեռու կը գտնուի Գէորգ Ձգնաւորի քարայրը և գերեզմանը։ Իսկ ամէն քիչ մը վարով Ազատեւ գետակի ալ ափի վրայ կայ կիսաւեր եկեղեցի մը, որ հաւանականօրէն լինելու է Հին–Գետիկ վանքի աւերակն։ — Յուշգր. Հայաս. 357–360։ Կիրակոս պատ. 79, 81, եւն.։ Ջամչեանց, Ա. 136–145։ Արցախ, 349–357։ Արաքս, 1892 Բ. 40 42։ Արձագանգ, Ի. 116–118։ Եւ այլն։

ԳԵՏԻԿ կամ ՓԻՏԻԿԼՔ. — Ալպրաքաղ Շիրակ գաւառի մէջ այս անուամբ երեք իրարու մօտ հայարնակ գիւղեր կան։ Առաջինը վերին Գետիկ՝ ունի 646 բնակիչ, բաժնուած 72 տան, երկրորդը Մէյիմ Գետիկ՝ ունի 326 բնակիչ, բաժնուած 43 տան, և երրորդը Ստորին Գետիկ՝ ունի 384 բնակիչ, բաժնուած 55 տան։

ԳԵՏԻԿ կամ ԱՐՏԱ–ՁԱՁ. — Ձորակ Միհնեաց Արեգունի վիճակի մէջ։

ԳԵՏԻԿ. — Հին գիւղ Միհնեաց Վայոց Ձոր գաւառի մէջ, որուն կը կարծուի թէ կը համապատասխանէ Զայրխնա թաղամարտնակ գիւղը։ Գալարագիզ և ծառերով զարդարուած ձորի մը մէջ է, ուր կ'երեւին մեռացորդներ և հետքեր Հայոց հին շինութեանց, և ձիթահանից մեծակակ երկանաքար մը։

ԳԵՏԻՆԻՏ. — Կը յիշուի Ջէնկի–Պազարի (Ալբարաս) մէջ։

ԳԵՏՈ ԱԻԱՆ. — Կը գտնուէր հին աւանի՝ վանապարհանի Թոնդաւան կամ Ճուաշտոս գաւառի մէջ, Երասխայ մօտ զատարձալի անցուց մը վրայ։ Հոս Գագիկ Ա. թագաւորը իւրեան համար պրօսանաց անդի կամ ամարանոց մը շինեց։ Թովմա Արծրունին (Թ, ԺԱ) ասոր համար կը գրէ. «Գարձեալ վերակինեալ յառաւօտին կոյս խաղացեալ ի Ճուաշտոս ի Գետս աւան՝ շինէ անդ վայելչական անդի խրախից՝ բլուր մի պարսպեալ առաքարախա շինուածովք, որոյ հայեցուածն առ գաշտակողմն ի վայր կոյս բլրի, ի խաղս գետոյն Երասխայ, ուր հայլքն էրէոյն խայտան, և վայրենեացն, և առեւծոյն մորթքն, և երամք ցոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին, ընդկէմ նայելով լերանց այրարատեան առգաստն Մասեաց»։

ԳԵՏՐՈՆ կամ ՔԻՐԱՆ. — Փոքրիկ գիւղ Թուրքաց, Ալբարատայ կոտայք գաւառի մէջ, Արղնի գիւղէն կէս փարսախ հեռու, հարաւային կողմը։ Գիւղիս մօտ կայ Հրազդան գետոյն վրայ ձգուած կամուրջ։

ԳԵՏՑԻԿ. — Ամուռն կը յիշուի Միհնեաց Գողթն գաւառի մէջ գտնուող Ագուլիսի Ս. Թովմայի վանաց արձանագրութեան մէջ։

ԳԵՐԱՆ. — Գիւղ վանապարհանի Աբատ գաւառի մէջ, որ կը թուի լինել, Ագատ Գիւրան բառածը։

ԳԵՐԱՆԱՑ ԴԱՇՏ. Տես ՔԵՐԱՆ։

ԳԵՐԱՏԱՑ կամ ԳԵՐԱՏԵՑԱՑ ԴԱՇՏ. — Դաշտ կը յիշէ Թովմա Արծրունին Գագկայ երկրորդ վարուց մէջ, ըսելով. «Չհետ մնեալ սակաւ զօրօք հասանէ նոցա ի դաշտին Գերատայ»։ Բայց Հացիւնեաց խաչի պատմութեան մէջ յաւելուածով մը կը յիշուի նոյն դաշտը. «Եկեալ (Հերակլ կայսր) բնակեցաւ ի դաշտին Գերատայ մերձ ի քաղաքն Յասնաւարուկ Ճատարշայ»։ Անկէց կարելի է հետեւցնել, թէ դաշտս կը գտնուի վանապարհանի Ագատ կամ Ճատարշան գաւառի մէջ, և կամ Սանահարուկ գաւառի հետ նոյն է։

ԳԵՐԱՓՈՒ. — Հին Գիւղ Միհնեաց Գեղարքունի գաւառի մէջ. որ բուն հին ցուցակի 15 բնակ հարկ կու տար Միհնեաց եկեղեցւոյն։

ԳԵՐԵԶՄԱՆԹ. — Ալպակս կը կոչուի այժմ վանապարհանի Երուանդաշատ գաւառի Հայոց ձորի մէջ գտնուող այն բլուրն՝ ուր իրեն քաջերով ինկաւ Բէլ, և որուն անունը Հայկ դրած էր Գերեզմանս։

ԳԵՐԻՇԱՑ. Տես ԵՐԻՇԱՑ։

ԳԵՐՈ. Տես ՔԵՐՈ։

ԳԵՐՄԱՂԲԻՒՐ. Տես ՋԵՐՄԱՂԲԻՒՐ։

ԳԵՐՄԱՆԻԱ. Գ. Allemagne. Գերմ. Deutschland. — Երոպիոյ զօրաւոր տէրութիւններէն մին, ունի 540,667 քառ. հգրմ. տարածութիւն և 52 միլիոնէն աւելի բնակիչ՝ մայրաքաղաքն է Պեռլին։ Մեծն Լեւոն՝ Իսաւրացւոց հետ բրած գաշնակցութենէն աւելի առաջ սկսած են Հայք ծանօթանալ և գործել այս ազգութեան հետ։ Երբոր Թաչակրութեան ժամանակ, Գերմանիոյ Փրկերիկոս կայսրը Թուղթ գրեց Լեւոնի և խնդրեց որ իրենց օգնէ։ Լեւոն ոչ միայն ա-

ոտա պաշար դրկից Լրնդ, այլ նաև ապնի ընծաներ, ու առանձին թղթով մ՚ալ կ՚խնայցնէր իր պատրաստակամութիւնը ամէն տեսակ օգնութիւն ընդունելու, նաև զիրենք ընդունելու յօժարութիւնը։ Փրեդերիկոս շատ հաճեցաւ Հայոց այս ասպիճանի հիւրասիրութիւնը վրայ և խոստացաւ, որ Լեւոնը թագաւորեցընէ երբոր ինքը Երուսաղէմ դառնայ։ Բայց դժբաղդաբար Սիլեսիոյ պազ ջրերուն մէջ լուացուելով հիւանդացաւ ու մեռաւ, ո՚րուն մահուան վրայ շատ ցաւեցան Լեւոն իշխանը, Գրիգոր Տղայ կաթողիկոսը, Ներսէս Լամբրոնացին, և ամբողջ ազգը։ Յետոյ Փրեդերիկոսի որդին Հենրիկոս Զ, իր հօր խոստումը կատարեց. Հռոմիայ քահանայապետը Կեղեստինոս փառաւոր թագ մը դրկեց Մոգունտիոյ Կոնրատոս արքեպիսկոպոսին ձեռքով. Հենրիկոս ալ փառաւոր Դրօշ մը՝ վրան առած նկարած։ Ա՛յս միջոցին հա՚ւանական է որ սկսած ըլլան հայ վաճառականներ երթեւեկել Գերմանիոյ զանազան քաղաքները. ասոր վրայ թէև հաւաստի տեղեկութիւններ և փաստեր կը պակսին, սա՚կայն Պալթիկի ծովեզերեայ քաղաքաց մէջ գտնուած բազմաթիւ արեւելեան դրամները, արեւելեան վաճառականաց նոյն կոզմերը գալուն արդասիք կը համարին գիտուիք։ Իսկ ԺԲ. դարու կէսէն վերջ և ԺԲ՚ի մէջ, շատեր կը յիշեն հայ վաճառականաց գալուստն Գերմանիոյ վաճառաշահ քաղաքները, յորոց յիշենք Համպուրկ, Ֆրանկֆորթ, Պրեզլաւ, Տրեզտա, Լայփցիկ, և այլն։ Թաւլհոնիէի բռնաճի համեմատ, Հայք Նուրեմպերկէն կ՚առնուին զարդեղէններ և ծովեզերեայ քաղաքներէն սաթ, և շատ ձեռագործներ Լայփցիկէ։ Ա՚ն՚ցեալ դարու մէջ (1824), վեց Հայեր Լայփցիկէն գտեր են 600000 ֆրանկաց ապրանք և տարեր են Տփղիս և Օսեստա. յաջորդ տարին 1200000 ֆրանկաց և երրորդ տարին 2800000 ֆրանկաց ապրանք. այս թիւերը հաւաստած են նոյն քաղաքի վաճառահամար ցուցակներէն։ Հայ վաճառականութիւնը տարէ տարի շարունակած է և հասած է նաև մեր օրերը։ Ա՚յժմ ևս Գերմանիոյ մի քանի վաճառաշահ քաղաքաց մէջ կը գտնուին հայ վաճառականներ. սա՚կայն ուրիշ ազգութեանց նման, այս երկրի մէջ Հայք մեծ թուով կամ գաղթականութեամբ եկած և հաստատուած չեն։ Ա՚յժմ Գերմանիոյ մէջ ունինք բաւական թուով հայ ուսանողներ։ Վերջին տեղեկագրի համեմատ Պոլինի մէջ կան 26 ուսանող, ո՚րոնք կազմած են հայ ուսանողական գրական միութիւն մը։ Պրեսլաւի մէջ կան 7 ուսանող, Տրեզտայի մէջ 2, Լայփցիկի մէջ 11, Հալլէի մէջ 3, Մինխէնի մէջ 11, և Ե՚նայի մէջ մէկ ուսանող։ Ա՚յս ուսանողներէն եկած են գլխաւորապէս Շուշիէն, Բագուէն, Տփղիսէն, Շամախէն, և այլ հայաբնակ բաղաքներէ։ Ա՚յս ուսանողաց սովորած գլխաւոր մասնագիտութիւններն են բժշկութիւն, հասարակական գիտութիւն, բնագիտութիւն, գիղատնտեսութիւն, տարրաբանութիւն և մեքենայագիտութիւն։

ԳԵՐՄԱՆԻԿ. Տես ՄԱՐԱՇ։

ԳԵՐՄԱՆԻԿՈՊՈԼԻՍ. Տես ԷՐՄԵՆԷԿ։

ԳԵՐՈՆ. — Բիւզանդական պատմութեան մէջ կը յիշուի այս անուամբ փոքր քաղաք մը, Ասանայի (Կիլիկիա) սահմանաց մէջ։

ԳԵՐՈ. Տես ՓԵՐՈ։

ԳԵՑ. — Շարականի մը յիշատակարանին մէջ 1657ին այսպէս գրուած է Սիմեոնաց Ջորք գաւառի հին կիսք գիւղի անուն։

ԳԵՕԳ–ԲՈՒԼԱՂ. — Գեղ Ազուանից (Նախ) Խենի գաւառի մէջ. օդն և տեսարանն պատուական է, բայց ոչ նոյնպէս ջուրը։ Բնակչաց նախնիք գաղթած են Խաչէն և Ջրաբերդ գաւառներէն, կը զբաղին երկրագործութեամբ և այգեգործութեամբ, այժմ կը հաշուին մօտ 1300 հոգի, բաժնուած 200 տան։ Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հին է և անշուք. մէջը կը պահուի Տեառն նշխար Յակովբոս առաքեալի մասունքը՝ հաստատուած նրբագործ, արծաթեայ մեծ խաչի մը մէջ, որ ունի ՈՄԾԷ. թուականաւ արձանագրութիւն։ Կայ նաև հին գրչագիր մագաղաթի վրայ մեսրոպեան տառերով մեծագիր աւետարան մը, որուն յիշատակարանէն կը տեղեկանանք, թէ գրուած է ՈՀԱ (=1232) թուին, Գետիկայ հռչակաւոր վանքի մէջ։ — Եղիշ–Ալաքել՝ կը կոչուի գիւղս արեւելեան կողմը քարաշէն մատուռ մը, որուն տանիքը և արեւմտեան որմը այժմ խնդարհած են։ — Ագուանք, 234–236։

ԳԵՕԳ–ՁԱՅ կամ ԿՅՕՒ–ՁԱՅ. — Դիպ Ազուանից Լահիջ գաւառի և Շամախւոյ Թեմի ա-բեւմնեան վերջին ծայրը, ընդարձակ տափաստանի մը վրայ. արեւելեան կողմէն կ'անցնի Համանուն Գետ–չայ գետն, որ Թէ խմելու և Թէ ոռոգման համար առատ ջուր կը մատակարարէ շրջակայից, բայց ամառը կը նուազի և շատ տաքնալով ձեռատակար կը դառնայ. այս ջուրէն զատ աղբիւրի ջուր չկայ: Դիպ. հարաւային և արեւմտեան կողմերն են վարելահողք. կը ցանեն ցորեն, գարի, բամբակ, կորեկ, և այլն: Շրջակայ դիպերու մէջ առատութեամբ կը մշակեն բամբակ: Օդն այնքան առողջարար չէ. ամառը շատ տաք կը լինի և անհամար մոծակներ յինեան կ'երևին: 300 տան չափ բնակիչ ու խանութպան ունի, 70ը հայ են, կան նաև բողոքականք, ձեռագործք Թուրք են Շիա կոչուած ազանդէն, անոնք մկիկի ու Թագատկան պարոց: Կան հեռագրատուն, նամակատուն և արքունի դանձարան: Հայք բաւական հարուստ վաճառականներ են. կը պատրաստեն ընդհանրապէս ցորենի և բամբակի առեւտրով, և վաճառքը կը գրկեն Աչարի երկաթուղւոյ կայարանն և անտի ի Պաքուոմ: Գաղթած են Նուխիի և Շամախիի վիճակներէն: — Այս անուամբ կը կոչեն այլազգիք Գեղամայ ծովակը: Տես ԿՅՕՒ–ՁԱՅ:

ԳԵՕԳ–ԲԻԼԻՍԱՅ (կապոյտ եկեղեցի). — Դիպ Ազբարաւայ Կոստայք գաւառի. ունի 52 տուն հայ և 45 տուն այլազգի բնակիչ: Եկեղեցին կը կոչուի Ս. Յովհաննէս: Դիպ հիւսիսային կողմը փոքր բլրակի մը վրայ կապտագոյն քարով շինուած եկեղեցի կայ, յորմէ առացեր է գիպղ իր անունը:

ԳԵՕՂԱԿԲԻՒԼԱՂ (կարճ ագրիւր). — Դիպ Միւռնեաց Գեղարքունւոյ գաւառի. այսպէս կոչուելուն պատճառ եղած է մերձաւոր գիպի տակէն բղխող յորդառատ աղբիւրն, որ հազիւ 10–15 քայլ յառաջ գնալով ծովը կը թափի: Եկեղեցին հին է կառուցուած յանուն Ս. Աստուածածնի: Ունի 700 հայ բնակիչ, բաժնուած 82 տան: Գիպիս մօտ գտնուած ուրեմակաց մէջ տեսնուած հին շինուածով քարէ պրան մը վրայ գրուած է «Թվին, ՉԻ. (= 564) Հասաւ կանգնիկի գիպուս»: — Գեօղակրուքղէն վեր կան երկու մատրունք Ս. Աստուածածնի և Ս. Յարդիս անուամբ, ուր կը յաճախեն բազմաթիւ ուխտաւորներ Վարդավառի և Աստուածածնի տօներուն: Այս մատուռներու մօտերը կան անեղու, եկեղեցիներու և զանազան շինուածներու աւերակներ: Կայ նաև բերդատեղի մը հետքեր և ժեռացորներ. Գիպիս հարաւակողմը 4 վերստ հեռաւորութեամբ կան շատ անեղու աւերակներ. տեղացիք այս աւերակները կարմիր խարապա կը կոչեն, ուր կոթծանուած եկեղեցւոյ շուրջը կան բազմաթիւ խաչքարեր: — Գեղարքունի, 596–7:

ԳԵՕՂԱԼ ԴԱՐԱՅ. Տես ԿԻՒՂԱԼ ՏԵՐԻ:

ԳԵՕԼ, ԿՅՕԼ, ԼՃԱՏԵՂ կամ ԵՂԷԳՆԱԳԻՒԼ. — Հայարնակ գիպ Միւռնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որոյ բնակիչք գաղթականներ են Ալաշկերտէն 46 տուն եկած, և այժմ եղած են 140 տուն, 1400 հոգւով: Գիպ. տեղը ի հնումն լիճ լինելուն պատճառաւ, ի Թուրքաց Գետ անուն առացեր է: Եկեղեցին, Ս. Աստուածածին կառուցուած բարձր գրից վրայ, հին է և անշուք: Մօտը կայ հասարակ քարով շինուած մատուռ մը, որոյ մէջ կարգաւ շարուած խաչքարներէն միոյն վրայ կայ ՉԼԴ (= 1284) Թուականաւ արձանագրութիւն: Կ'երևի Թէ գիպիս նախկին հայ բնակիչք սակաւաւոր են ամայի Թողուլ և հեռանալ գիպէս, և կամ աւերիչ և արիւնարբու ասպատակաց զոհ գացեր են:

Գիպիս արեւմտեան կողմը կայ հին եկեղեցի մը և մօտը հին վանք մը Ծոպկեվան անուամբ: Այսպէս կոչուած է ծագիկ հիւանդութեան փարատիչ լինելուն համար, ուր կը գիմեն նմին հիւանդութեամբ վարակուածներ և կ'առողջանան: Գեօլի սահմանամերձ Ենորպիոլի ճանապարհի վրայ կայ գիպատեղի մը, որ Գօղոս անունով իշխանէ մը շինուած լինելուն պատճառաւ, Գօղոսի գիպ կը կոչուի: Այս գիպի աւերակաց մէջ կայ Ս. Հռիփսիմէ մատուռ մը, որոյ մէջ կան խաչարձաններ և ԺԴ–ԺԵ դարուց վերաբերեալ արձանագրութիւններ: Գեօլ գիպի շրջակայ բլրակներն զարդարուած են գրուած և անգիր խաչարձաններով և գերեզմանաքարերով: — Գեղարքունի, 516–518:

ԳԵՕՂ, ՈՒԹԻՑ կամ ԳԱՐԵՆԻ ԹՄԱՆԻՆ. — Այսպէս կը կոչուի կորմայք նահանգի կոր-

գուաց (Ձէկիրէ) գաւառի մէջ գտնուող ա-ւան մը, Ձ'ուաի կամ Կորգուաց լերան առո-բոտը։ Մէջը կան մզկիթ, պղոց և այլ շէնքեր։ Կ'բսեն, թէ նախ Նոյ այս աւանը իջեր է իրեն հետ եղողներով և անկէց Թեօղ Ուրից կոչուած է, առապանէն ելնող ութ անձանց համար։ — Ղ. Հայասատան, 351։

ԳԵՕՑ–ԲԻԿԼՈՒ. — Հայաբնակ գիւղ Ագուա-նից (Նուխի) Շաքէ գաւառի մէջ, դաշտակի մը վրայ։ Ամբան օպը քիչ մը ծանր է և ջուրն ոչ այնքան գովելի։ Բնակիչք 268 հոգի են բաժնուած 50 տան. ասոնց նախ-նիք գաղթած են Թաչենէն և Ջրաբերդէն՝ նախ Պաշճաղ և ապա այստեղ։ Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին։ — Գիւղիս հիւ-սիսային կողմն է Գյշլար–Քեօղիւրտ գիւղը, որ ունի այժմ մօտ 300 տուն միաժամա-կանացեալ Հայեր, եկեղեցւոյ աւերակ և հանգստարան։ — Ագուռաք, 261–2։

ԳՋԵՂ կամ ԳՋԵԼ. — Աղձնեաց աշխարհի հին գաւառներէն մին, որ ունէր Գազիկ քա-ղաքը Տիգրիս գետոյն մօտ։ — Այս անուամբ այժմ գիւղ մը կայ Մօսկան գաւառակի մէջ, 14 տուն հայ բնակչօք։

ԳՋՐԼ–ԱՂԱՁ–ՕՏՈՒՍՈՒ. — Այս անուամբ Հայոց գիւղ մը կը յիշէ Տէվիս անգղիացին, դաշտային կիլիկիոյ մէջ. կայ և լիս մը յԱրշարունիս։ Այլարատայ

ԳՋՐԼ–ԳԱԼԼ. — Փոքրիկ գիւղ կամ հան-գրուան Այլարատայ Շիրակ գաւառի մէջ։

ԳՋՐԼ–ԳԱԼԼ. — Ամայի շէն մը և բերդ Այլարատայ Ձակատք գաւառի մէջ։ — Այս անուամբ գիւղեր կան նաև Հայաստանի ու-րիշ կողմերը, որոնց բնակիչք այլազգի են։

ԳՋՐԼ–ԳԱՅԱ. — Հայաբնակ գիւղ Այլա-րատայ Բագրեւանդ գաւառի մէջ. 1882ին ունէր 22 տուն։ — Այս անուամբ գիւղ մը կայ նաև Ձակատք գաւառի մէջ։

ԳՋՐԼ–ԳԱՅԱ. — Ծովային կիլիկիոյ (Պամ-փիւլիա) վիճակներէն մին։

ԳՋՐԼ–ԳԻԼԻՍԻ կամ ԳՋՐԼ–ՔԻԼԻՍԻ (Կար-միր եկեղեցի). — Գիւղ կարնոյ (Բարձր Հայք), 6–7 ժամ ճանապարհ քաղաքէն հե-ռու, հիւսիսային արեւելեան կողմը, գեղեց-կադիր զառիվայրի մը վրայ։ Մէջ տեղը թրքա-կան մզկիթ մը կառուցեալ է և շրջակայքը պատած են գրեթէ բոլոր բնակչաց տները՝ բաժնուելով երկու թաղի, Վերին ու Ներքին անուններով։ Տեղւոյս դիրքը բարձր է քան երկրաչափից կարնէն 700 կանգուն. այդ պատճառաւ սառնիկ ցուրտ և բքաբեր կը լինի ձմեռը, իսկ գարունը՝ քաղցր և զուարճալի. ամառը՝ գրեթէ բոլոր բնակիչք կ'երթան $2^1/_2$ ամսոյ չափ կը բնակին գիւղիս արեւելեան կողմը խաչափայտի մօտ և սահմանակից կեւավոր–տապը ըսուած լերը։ Օդը շատ մա-քուր է և ջուրը պատուական և զովացուցիչ։ Բնակիչք 65 տուն են, որոց 30ը Մահմե-տականաց և 35ը Հայոց։ 1828ին տեղւոյս Հայք գաղթեր են ի Խուսիա, և այն ժա-մանակի բնիկներէն միայն երկու ընտանիք մնացած են, մին Թուրք, միւսն՝ հայ Աբդի բնակիչք՝ մեծ մասամբ Տրապիզոնի Համ-շէն գաւառակի գիւղերէն 1830ին գաղթա-դաց սերունդներ են։ Հայք՝ Մահմետականաց հետ արհեստակցութիւն և ազգականութիւն ու-նին, գեռ մինչև ցարդ կը գտնուին Հայոց մէջ այնպիսիք, որոց կամ մօրաքրոջ, կամ հօրաքրոջ և կամ հօրեղբօր որդիք մահմե-տական են։ Գիւղիս եկեղեցին՝ Ս. Նշան, բաւական մեծ և շքեղ է, կառուցեալ 1865ին, ջանիք և զոհողութեամբ Տ. Մարտիրոս քահանայի և Քէհեա Աահակի։ Գաղթելով Հայք կանխաւ Ներքին թաղի մէջ՝ ձեղունն ու զուռը ցած և շուրջանակի հողապատ հին եկեղեցի մը ունին եղեր։ Հայք ունին նաև վարժարան մը 52 աշակերտներով 12ը ազ-ջիկ։ — Կը կարծուի թէ գիւղիս անուան պատ-ճառ եղած է՝ բլրոյն վրայի մզկիթէն 10 քայլ հեռու գեղ յարեւելս կարմիր քարերով շի-նուած գմբէթ մը (անշուշտ եկեղեցւոյ), որ այժմ բոլորովին անհետացած է։

ԳՋՐԼ–ԳԻԼԻՍԻ կամ ԳՋՐԼ–ՔԻԼԻՍԻ. — Հայաբնակ մեծ գիւղ Այլարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, որոյ բնա-կիչք եկած են խոշամանքէն և անմարթա-բնակ գաներ են գիւղս։ Կառուցուած է չոր և ապառաժուտ ձորի մը մէջ, Ախուրեանի ձախակողմը. խոշամանքէն հազիւ կէս ժամ հեռու է, դէպ ի հիւսիսային արեւելք։ Նշա-նաւոր է Ս. Գրիգոր (թ. 235) անուամբ հին եկեղեցին, կարմիր քարերով շինուած, յորմէ և մնացած է գիւղի անուն։ Տակաւին կանգուն է հոյակապ գմբէթովը, չորս սիւ-

նեբու վրայ հաստատուած. ձեղունին վրայ կան դեղանկար պատկերներ։ Ինչպէս հա-բաւային որմին վրայի արձանագրութենէն կը տեղնուի, եկեղեցիս կառուցուած է 985 թուին, Հոռոմոսի կամ Խոշոմանաց Աբգիս և Աղոմոն վանահայրերէն և Սամհանի ա-նուն արեգակ ճարտարապետի ձեռքով։ Խո-րանին աջ և ձախ կողմերը կան փոքրիկ ա-ւանդատուներ. արեւմտակողմեան ատենդա-տան դրան վրայ կայ բոլորաձեւ մեծ խաչ,



235. Գղզլ–Գիլիսէի Ս. Գրիգոր եկեղեցին։

նոյնպէս անոր վրայի լուսամուխն երկու կող-մերը կան խաչվէմներ։ Հին շինութենան ար-ձանագրութենան մնաց կայ նաև համառօտ ար-ձանագրութիւն մը նուիրատուութեան՝ Ջա-քարիա ասպատալաբի։ Եկեղեցւոյ արեւելեան որմի վրայ ևս կայ նուիրատուութեան ար-ձանագրութիւն մը Ներսէս Քարխմատեան ա-նուն անձի, 1271 թուականեաւ։ Գիւղիս բնակիչք այժմ հաշուին 837 հոգի, բաժ-նուած 120 տան։ Այս գիւղէն գաղթած են Պուդաս–չենցիք և Հաճի–պալիցիք։

ԳՋՐԼ–ԳԻԼԻՍԼ. — *Հայարնակ գիւղ Ալբա-բաւայ Շերակ գաւառի մէջ, որ վերինէն կը տարբերի Նոր կամ Երկրորդ Գղզլ–Գիլիսէ կոչուելով։ Ունի եկեղեցի մը և 300 բնա-կիչ, բաժնուած 44 տան։ Տես ԳՈՐԵՎԱՆՔ։*

ԳՋՐԼ–ԳԻԼԻՍԼ. — *Գիւղ Ալբարաւայ Բա-սէն գաւառի մէջ, Քէօրօղլու բերդի ստորա-կայ հարաւային կողմը, խոպ վտակի խո-նի գետոյն խառնուրդի մօտ։ Անպէտքի ուղե-ւոր մը գիւղիս մօտ կը յիշէ մեծամեծ ան-առաջ քարերով քառակուսի շինուածքի մը աւերակը։*

ԳՋՐԼ–ԳԻԼԻՍԼ. — *Հայարնակ գիւղ Պօս-չալու (Գուղարք) գաւառի մէջ։ Ունի 610 բնակիչ, բաժնուած 76 տան։ — Ալս ա-նուամբ գիւղ մը կայ Ծովային Կիլիկիոյ մէջ։ Ներիչներ ալ կան Կարսի, Կազդուանի, Պօս-չալուի, և Ախալհանի վիճակաց մէջ, որոց բնակիչք այժմ այլազգիներ են։*

ԳՋՐԼ ԳՈՒԼԼ. Տես ԵՊԵՊՈՒԲ։

ԳՋՐԼ ԴԱՇ. Տես ԳՋՐԼ ԹԱՇ։

ԳՋՐԼ ԴԻՋԼ. — *Կը յիշուի այս անուամբ գիւղ, Ալբարաւայ Կոգովիա գաւառի մէջ։*

ԳՋՐԼԵԱՐ. — *Արեւմտեան հիւսիսային ոստ Ախալցխոյ։*

ԳՋՐԼ ՋԱՖԻՐ կամ ՋԱՖԻՐԼՈՒ. — *Գիւղ Ալբարաւայ Ձակատք (Մուխոյի) գաւառի մէջ. ունի 484 հոգի, բաժնուած 77 տան, յորոց 32 տունք Հայք են, մնացեալք Թա-թարք։*

ԳՋՐԼ ՋԻՒԱՐԼԻՔ. — *Ալբարաւայ լեռնակէն մին, Ախալցխոյ արեւմտակողմը։*

ԳՋՐԼ–ԹԱՄԻՐ կամ ՂՋՐԼԹԱՄԻՐ. — *Հա-յարնակ մեծ գիւղ Ալբարաւայ Ախալցխոյ գաւառի մէջ Օշականի մօտ։ Ունի եկեղեցի մը Ս. Յովհաննէս և 1282 բնակիչ, բաժ-նուած 159 տան։*

ԳՋՐԼ ԹԱՇ կամ ԳՋՐԼ–ԴԱՇ (կարմիր քար). — *Հայարնակ գիւղ Վասպուրականի Հայոց ձոր գաւառի մէջ, Հիրճ գիւղէն մէկ ժամու ճանապարհ հեռու։ Կամարակապ լեռնակի մը սառբատը շինուած լինելով, թուի թէ անկէց առած է անունն։ Ունի 16–20 տուն բնակիչ, և Ս. Երրորդութիւն անուամբ պարզ եկեղեցի մը, կառուցուած քարաժայռի մը սառբատը։ 1885ին գիւղիս մէջ նշանաւոր էր Միտիթար Մ. փոխան ազգայի նահապե-տական տունն, որ բաղկացած էր 40 հո-*

դիէ, ի բաց թողլով խոտաղները և այլ ծառայողները։ Այս առնր սիրով կը հիւրընկալէր ամէն ազգէ բազմաթիւ հիւրեր և ճանապարհորդներ։

ԳՋՐԼ–ԹԱՇ. — *Ակերակ դիւղ Միհնեաց Սոդը գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ԹԼՓԼ (*Կարմիր սար*)։ — *Բլուր Ալբարատայ Աբշարունեաց գաւառի մէջ, Անիւրեանի և Երասխայ խառնրդոց արեւմտեան անկիւնը։*

ԳՋՐԼ–ԹԼՓԼ. — *Բարձր լեռ (10370՛) Միհնեաց Տրզուկ գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ԹԼՓԼ. — *Կիլիկիոյ լեռներէն մին, 8500՛ բարձր։ Երկաթեայկն և հրաբղխայկն կազմուխեամբը կարմրագոյն և խիտագոյն կ՚ելնելն։*

ԳՋՐԼԼԱՐ. — *Լեռնակ (3990՛) Ալբարատայ Աբագածոտն (Թալիշ) գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ԽԱՉ *կամ* ՂՕՉ. — *Հայարնակ դիւղ Ալբարատայ Շիրակ գաւառի մէջ Էլլի–ակրէ փոքրիկ վտակի մօտ։ Պնակելի է հին եկեղեցին, որ արձանագրութիւններ ևս ունի։ Ազիմեան եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին։ Ունի 600էն աւելի բնակիչ, բաժնուած 71 տան։ Շիշմէխիի հարաւակողմը, երկու մղոն հեռաւորութեամբ, կայ սոյն անուամբ Առւոց պահնակատուն մը։*

ԳՋՐԼ ԿՅՏԻ. — *Լեռ Ալբարատայ Աբշարունեաց գաւառի, Կապոյտ գետոյն և Երասխայ մէջտեղ։*

ԳՋՐԼ ԿՅՕԼ (*Կարմիր լիճ*). — *Լճակ Ալբարատայ Կոգովիտ գաւառի մէջ։ — Ալպէս կը կոչուի նաև Աբագած լերան մեծագոյն լճակին։*

ԳՋՐԼ–ՂՕՉ. *Տես* ԳՋՐԼ–ԽԱՉ։

ԳՋՐԼՁԱ. — *Լեռ և դիւղ Ալբարատայ Բասենի գաւառի մէջ, խոտիկ դիւղի հիւսիսային կողմը։*

ԳՋՐԼՁԱ. — *Դիւղ Միհնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վիճակի մէջ, Երնջակ գետոյն ձախակողմը։ Բնակիչք 16 տուն են, 5ր Հայոց և մնացեալք՝ Թեղեթաց։ Ալսպէս կոչուած է հարաւակողմը գտնուղ կարմրահող բլուրներուն համար։ Գեղեցիկ կայ վանաքար անուամբ մեծ քար մը, որ կը համարուի Ս. Կարապետի վանաց սահմանագիծ։*

ԳՋՐԼՁԱ. — *Բերդիկ Միհնեաց Աղահէճք գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ՁԱԳԱՁԱԳ *կամ* ՋԱԽՋԱԽ. — *Դիւղ Ալբարատայ Շիրակ գաւառի մէջ, Ախլիսայի հիւսիսային կողմը, Գարախանէ գետոյն խառնուրդի մօտ։ Ի հնումն բնակիչները էին Հայք, Թուրքք և Պարսիկք, որոնք փոքրիկ բերդ կամ աշտարակ մը կառուցեր էին, 1710ին առիւծները, առպատակներէն պաշտպանուելու համար։ Ամառ կան հանքային ջրեր։ Ալժմեան բնակիչք ամբողջ Հայ են, 1217 հոգի, բաժնուած 148 տան. գաղթած են Բամբակէ, Ալաշկերտ և այլ տեղերէ։ Տուներր քարաշէն են, իսկ եկեղեցին փայտայարկ է՝ բայց հիմունքր քարէ։ 1877 Թուին Առւոնները Շիրակայ արեւմտեան մասը նուաճելու միջոց, վարչութեան կեդրոն հաստատեր էին։ Ժէ դարու վերջերը (1798) Վյաց Դէսպոտ Ժէ Թազատորին Գաւիթ և Յովհան որդիքը, Լոկաց դնդի օգնութեամբ, այս տեղ յաղթեցին Կարսի կուսակալի զօրաց և անոր սահմանները կոզոպատեցին։ — Շիրակ, 8։*

ԳՋՐԼԶՊՈՒԿ. — *Հայարնակ դիւղ Փղիի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի եկեղեցի Ս. Յակոբ՝ և վարժարան 19 աշակերտներով։*

ԳՋՐԼԶՊՈՒԿ. — *Ալս անուամբ դիւղ մը կը յիշուի Ալբարատայ Վանանդ գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ՊԱՇ. — *Լեռ Ալբարատայ Շիրակ գաւառի, 2284 մեար բարձրութեամբ։*

ԳՋՐԼ–ՊՈՒԼԱԳ (*Կարմիր ապբիւր*). — *Դիւղ Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, որ երբեմն հայարնակ էր, այժմ ունի 10 տուն քուրդ բնակիչներ։*

ԳՋՐԼՊՈՒԼԱԳ *կամ* ՁԱԽՐՂՈՒ. — *Դիւղ Միհնեաց Սոդը գաւառի մէջ, համանուն կարմիր ապբիւր գետակի մօտ, որուն բնակիչք այժմ ալլազգի են 160 տուն։ Մէջը կայ փոքրիկ և կիսաւեր հին եկեղեցի մը Ս. Թարգմանիչ անուամբ, որուն անգործին տակէն կը բղխէ յորդ ապբիւր մը։*

ԳՋՐԼՊՈՒԼԱԳ. — *Գետակ՝ Միհնեաց վայոց ձոր գաւառի մէջ, կը հոսէ Ապխատակաւոր Ս. Աստուածածնի վանաց արեւելեան կողմէն, գրեթէ կէս փարսախ հեռաւորութեամբ։ Հոսանաց մէջ ոսկեզոյն աւազ նշմարուելուն համար, այսպէս կոչուած է։*

ԳՋՐԼՊՈՒՉԱԳ. — *Հանդրուան՝ Աչլարաւայ ձնակաւոր (կոզր) գաւառի մէջ։*

ԳՋՐԼ–ՊՈՒՈՒՈՒՆ (*կարմիր քիր*). — *Ապագած լերան ոտաթէրէն մին, արեւմտեան կողմը։*

ԳՋՐԼ–ՊՕՂԱՋ (*կարմիր կապան*). — *Լեռ Միւնեաց Ծղուկ գաւառի մէջ, 10370՛ բարձրութեամբ. սահմանակից է Ագահէճ գաւառին։ Լեռս ունի իր անուամբ Գեղրդօզագ տեղեակ ձոր մը։*

ԳՋՐԼ ՎԱՆՔ. — *Գիւղ Միւնեաց Սպոք (Նոր Բայազիտ գ.) գաւառի մէջ, որուն բնակիչք այժմ այլազգի են, 74 տուն։*

ԳՋՐԼ–ՎԱՐԱՆ. — *Լեռ Աչլարաւայ Ութ և Ագած գաւառի մէջ։ — Աչս անուամբ գիւղ մ՚ալ կը յիշուի Գաւիզէնից (Կէչուան) մէջ։*

ԳՋՐԼ ՏԱՂ. — *Լեռ Աչլարաւայ Մազազ գաւառի մէջ, Գառնոյ արեւմտեան կողմը։*

ԳՋՐԼ ՏԱՂ. — *Լեռ Աչլարաւայ Շիրակ գաւառի մէջ 5550՛ բարձրութեամբ։ Տես ԲԱՅԱԶԻԹ։ — Աչս անուամբ լեռ մի ևս կը յիշուի Միւնեաց մէջ։ — Լեռ և ամրոցանոց Աստանայի մօտ։*

ԳՋՐԼ ՓԼՕՁ. — *Գիւղ Էջմիածնէ (Վաղարշապատ) 25–30 վայրկեան հեռու. ունի 10–15 տուն հայ, առանց եկեղեցւոյ և վարժարանի։*

ԳՋՐԱ. *Տես ձէյրէկ։*

ԳԼԹԻ ԳԱՇՏ. — *Կը յիշուի Միւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։*

ԳԵԼԱՋՕՐ *կամ* ԿՕԼԷՕՒՐ. — *Աչլարաւայ Գէրիքօր գիւղի անուան այլ կերպ գրութիւնք։*

ԳԵԼՃՕՒ, ԿԵԱԼՃՕՒ *կամ* ԳԷՃՈՒԿ. — *Հայարնակ գիւղ Ագձնեաց (Բագրէ) ու Տաճկի գաւառակի մէջ. ունի 27 տուն և 184 հոգի, որք հոգազործ են։*

ԳԵՂԸՄ. — *Գիւղս կը յիշուի Բագրէւի Մօտական գաւառակի մէջ։*

ԳԵՂԸՐՎԱՆ. — *Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի Խուրի գաւառակի մէջ։ Ունի 58 տուն հայ և Ս. Առաքելոյս անուամբ եկեղեցի մը։*

ԳԻՆ. — *Աչլարաւայ Աչշարունեաց գաւառի մէջ որսի տեղ, զոր կը յիշէ Անանիա Շիրակացի. «Որս էր կամնարակատացն ի Գին, և կալեալ երէ բազում,...»։*

ԳԼՈՐԳ (Ս.). — *Շապկին Գարահիսարէն դրեթէ չորս ժամու չափ հեռու, Թամկարայ անուն գիւղին կից է Ս. Գէորգայ նուիրուած վանքս, որ 25 տարիի չափ կամ աւելի առաջ հրկիզի մը պատճառաւ մասամբ այրեցաւ և երկար տարիներ ձեաց այնպէս հրբկիզեալ։ Սերտասիոյ առաջնորդ Տ. Պետրոս եպս. Թահմիզեանի նախաձեռնութեամբ և ժողովրդեան ջանիւք և նպաստիւք կարկլի եւ գաճին չափ նորոգուեցաւ և այժմ ուխտատորք կը գիմեն վանքս Ս. Գէորգայ տօնին օրը։*

Վերջին նորոգութեան ժամանակ եկեղեցւոյ խորանին աջակողմը ծեփին տակ արձանագրութիւն մը գտնուեցաւ քարի վրայ քանդակուած. որուն թէև իմաստները շփոթ, բայց ժամանակին իշխող կաթողիկոսի անուններ որոշ լլլալուն, կը կարծուի թէ վանքս ԺՒ դարու սկիզբներէն, այն է 1716–7ին շինուած լլլայ։ Վանքս ունի սեփհական միայն տասնեհօթին կաոր մշակելի արտօրայք և երկու պարտէզք։ — Բիւզանդիոն, 1900 թիւ 1333։

ԳԼՈՐԳ (Ս.). — *Վանքս կը գտնուի կեսարիայէն երկու ու կէս ժամ հեռու, դէպի արեւմտեան հիւսիս, Էրքիլէթ անուն գիւղի լեռնապրաւրին վրայ կառուցուած։ Շինութեան իմաստները անձամնօթ է, սակայն մեծամեծ քարերն՝ որոնցմով շինուած է և զարդարուն քանդակներն, որոնց վրայ կը զմայլին եւրոպացի ուղեւորք, իր մեծ հնութեան վկայք են։ Վանքս այժմ ամայի է և սեփհականութիւնն ալ անցած է Քուռաց, որոնք կը կոչեն Ակիոս–Խրտրէկոսի վանք։*

ԳԼՈՐԳ (Ս.). — *Աչլարաւայ Բագրեւանդ գաւառի մէջ կը գտնուի նշանաւոր ուխտատեղիս, որ կառուցուած է բարձր դիրքի վրայ, Գամքէն արեւելք մէկ ժամ հեռաւորութեամբ, Գաւոյ գիւղի դիմաց։ Հրաշալի է ուխտատեղւոյս տեսարանն։ Ուխտատեղւոյս որ մերն անարատ կերպով բարձրացուցած է չեմեռնող ժողովուրդը, ուր տարին մէկ անգամ ժամերգութիւն կը կատարուի։ — Ժողովրդական աւանդութեան համեմատ Ս. Գէորգ մին եղած է Ս. Աստիսատոնց բնակիներէն։ Երբ Աստիսատոնք՝ Ագատոգ (Տրազոնց) Քոկեսացւոյ բաժնուեցան, լսեալ լեռ մինչև այս վայրը եկան, այս տեղ հիւանդացաւ ձեաց Ս. Գէորգ, իր մէկ րնկերոջ հետ, հոս մեռաւ և թաղուեցաւ։ — Բագրեւանդ, 210–204։*

ԳԷՈՐԳ (Ս.). — վանքը կը գտնուի Ագուա-նից Շաքէ գաւառի մէջ, Օրարան գետի ալ կողմը, Պաէգ (Պարաէգ) գիւղի մօտ, որուն բնակիչները մահմետականացեալ հայեր են։ Աբաւքուսա քարերը ամբողջապէս ապշուած են, իսկ ներքուստ անապատ։ Ունի աւազան, 2 խորհրդարան. խորանի վերնակ սանդուղը շինուած է բեմի մէջտեղէն։ Ջունի արձանագրութիւն և ոչ շինուելման թուական։ Ուխտի համար հոս կը գիմեն ոչ միայն Հայք, այլ և մահմետականացեալներն։ Վանքս ունի հոգեր շրջապարիսպ և միաբանից սենեակներ, որոնց հետքերը կ'երեւին։ Տաճարի հիւսիս-արեւելեան կողմը քանի մը քայլ հեռու ժայռէն կը բղխէ անուշահամ և առատ պաղատական ապրիւր մը։ Իսկ հիւսիսային և արեւելեան կողմը ամփոփուած են միաբանից մարմինները, որոնց տապանաքարերը անապատանապիր են։ — Ագուանք, 267։

ԳԷՈՐԳ (Ս.). — Այս անուամբ Լատին Բենեդիկտեան կրօնաւորաց վանք մը կայ Կիլիկիոյ Սեաւ լերան վրայ։ — Այս անուամբ ուրիշ վանք մ'ալ Հայք ունէին ի Կիլիկիա, անշուշտ վերինէն զատ, որուն համար թէ և յայտնապէս չըսուիր թէ Սեաւ լերան վրայ կը գտնուէր, սակայն հոն բլլալը հաւանական կը թուի։ Այս Ս. Գէորգ վանքին առաջնորդ կը համարուի ան Ղեբսէս, որ վանականներէն ճակոր անուամբ մէկը իրեն ընկեր առնելով, հաւանօրէն կատաղութեան Թէոդատոսի մահէն վերջ, ուխտի գացած էր արեւմուտք և թերևս նաև նաւէրներ հաւաքելու պիտանիք, որպէս զի նորոգէ աստիճանական աւերած վանքերը և եկեղեցիները։ Այս 1364ին Լոնտան երթալով եղուարդ Գ թագաւորէն դրամ հաւաքելու արտօնագիր ընդուներ է։ — Սիսուան, 410։

ԳԷՈՐԳ (Ս.). — Սիսնոյ Երկնչակ գաւառի մէջ, Երկնչակ քաղաքի հիւսիսակողմը բարձր և դժուարամատչելի լերան մը ծայրը կը գտնուի վանքս, որոյ տաճարի միայն որմերն կանգուն մնացեր են ցարդ։ Ունի սեղան մը և երկու գաւիթ. արձանագրութիւնք կը պակսին։ Աւար մնա ուրիշ փոքրիկ ագօթատեղի մը կայ, բոլորովին աւերակ գարձած։ Հաւանական է որ վանացս մնա ի հնումն բլլար Ս. Գէորգ գիւղ մը, ինչպէս կը յիշուի Միաբանագաց 1601 տարւոյ վիճակագրի մէջ, այդ գիւղը ունէր 170 տուն հայ բնակիչ։ Այդէն վանքի գիմաց դէպ յարեւմուտս լերան գասխվայրին վրայ տասնծուսղ բնդարձակ գերեզմանատունն ալ կերպով մը մեր կարծիքը կը հաստատէ, թէև կարծողներ ևս կան, թէ այդ գերեզմանատեղին երկնչակ քաղաքին հանգուցեալներուն եղած լինի։ Ս. Գէորգայ վանքէն քանի քայլ հեռու հիւսիսակողմը կայ քարապատ խրճիթ մը և մէջը շիրիմ մը՝ ձիրգ-նաւորի կոչուած մերձակայ բնակիչներէն։ Թէ՛ այս շիրիմը և թէ Ս. Գէորգայ վանքը ուխտատեղիք են մնատկայ հայ պիտորէից։

ԳԷՈՐԳ (Ս.). Տես ԱՂԱՒԷՁԻՒ և ՄՈՂՆԻ։

ԳԷՈՐԳ (Ս.) ԵՐԿԱՑՆԻ. — Վանքս կը գտնուի Բարձր Հայոց Եկեղեաց գաւառի մէջ, Երզնկայէն $2^1/_2$ ժամ հեռու հարաւային կողմը, Եկան և Կէնցիք գիւղերու մօտ, Տաժիկ լերանց ստորոտը։ Ունի երկու տաճար, մին՝ ստորին յարկին մէջ, ներսէ ներս տեղ մը յանուն Ս. Գէորգայ, միմին, անշուք ու նեղլաձև. միւսն՝ վերնայարկի մէջ, քառակուսի ու բնական ժայռի մը վրայ կանգնեալ, յանուն Տիրամօր, փոքրիկ քարուկիր ու հաստահիմն։ Այս երկու տաճարներն ալ լքեալ և ապրատ են։ Վանացս մէկ մասը աւերակաց կոյտ մի է, բայց միւս մասն, շնորհիւ քաղաքին պղնձագործ արհեստաւորաց անշահասէր և փոյթհոգածութեան, գեղեցիկ կերպով նորոգուած է մօտ 12 տարիներ առաջ։ Ս. Գէորգ, ինչպէս կ'երեւի իւր մէկ հին Յայսմաւուրքի յիշատակարանէն, երբեմն մեծ ու նշանաւոր վանք է եղեր, բազմաթիւ վիայնակեցներով, արեւդանիներով և վարդապետներով, որոնց թիւն, պաշտօնն ու անուանքն յիշատակուած են նոյն գրքի մէջ։ — Արեւել. Մատոյց, էջ. 437–8։

ԳԷՈՐԳ (Ս.) ԽՆՋՈՐՈՒՏԻ. — Վանք Մոկաց աշխարհի այժմեան վերին կարկառու գաւառակին մէջ, խնձորուտ գիւղի մօտ։ 1895ին աւերմանց ենթակայ եղաւ։

ԳԷՈՐԳ (Ս.) ՇԻՐՆԻՑ կամ ՍԿԱՒԱՒԱԿԻ. — Վանքս կը գտնուի Մոկաց աշխարհի այժմեան Ապարկերտ գաւառի մէջ, Շիրնից գիւղի մօտ։ Այժմ տարի կ'ուխնայ բազմաթիւ

ախտաւորներ Խիզան, Կարկառ, Նղար, Շէրվան, Պէրման, Մամրաւունք, Մոկս և Սպարկիրա գաւառներէն։ Ինչպէս վանացս բարոյական, նոյնպէս և նիւթական վիճակին խիստ ազդալի կացութեան մէջ է, հանդոյն Բուխիկու Ս. Գէորգայ վանաց։ Տաճարն որ պատկառելի հնութիւն և հայկական հին ճարտարապետութեան հրաշակերտ մը կը թուի լինիլ, շրջապատուած և խճողուած է մութ, խոնաւ, անկարգ և անկանոն խցիկներէ, ախոռներէ և գոմերէ, որոց մէջ հաւատարապէս կը բնակին վանահօր բնտանիքն և կենդանիք։ Գեղջուկ հին ատն մը կը նմանի վանքս, ուր կը պատսպարուի հայ բնտանիք մը՝ որ նշան է ապացուցման թէ այս ամայի լերան վրայ եղող սոյն հաստատութիւնը, Հայոց սեփհականութիւն է։ 1895 ագէտալի ատրուց մէջ կողոպտուեցաւ վանքս և երեք հոգի սպանուեցան։ — Արեւելք, Ջ 1748։ Տես ԲԱՂԱՒՈՒՆ և ԳՈՄՍ։

ԳԷՐԹԱԲԱԴ կամ ԿԵՐՏԱՊԱՏ.— Գիւղ Ակրպատականի Ուրմիոյ գաւառի մէջ, Ուրմի քաղաքէն 7 վերստ հեռու դէպ ի հիւսիս, Սալմաստի ճանապարհի վրայ։ Ունի եկեղեցի մը, 1895 թուին նորոգ կառուցուած վայելուչ կերպով։ Գիւղս գուտ հայաբնակ է 120–130 տուն բնակչօք. սակայն պանդխտութեան գնալու սովորութիւնը, արդէնք կը գառնայ հասարակական գործերու յառաջադիմութեան։ Ակրպատականի Հայասիրաց Բարեգործական Ընկերութիւնը չորս տարիէ հետէ այս տեղ ունի գպրոց, և իւր հաշուով կը կրթէ 20–35 աշակերտներ։ Այս գիւղի, ինչպէս նաև տրիշ մօտակայ գիւղերու տարբերը խիստ ծանր են։

ԳԷՐԻՆ. Տես ԿԻՐԻՆ։

ԳԷՕՒԻՆ. — Գիւղ Չաճնոյ (Կիլիկիա), բնակչաց մեծագոյն մասը Թուրքք են, իսկ Հայք սակաւաթիւ։

ԳԷՕՒՆԱՎԱՅ. — Գիւղ Պարսկաստանի Սալմաստ գաւառակի. ունի 10 տուն հայ, և եկեղեցի մը։

ԳԻՋ ԳԱԼԷՍԻ. — Լճակ Միւնեաց վայոց ձոր գաւառի մէջ։

ԳԻՋԼՈՒ ԸՐՄԱԳ. — Սարասի օժանդակ գետ ի Կիլիկիա։ Տես ԱԼԻՕ։

ԳԻՋԼՈՒ–ԲԵԼԻՍԻ. Տես ԳԻՋԼՈՒ–ԳԵԼԻՍԻ։ — ԳԻՋԼՈՒ սկզբնաւորութեամբ անուններքը ընդհանրապէս դրած ենք ԳԻՋԼՈՒ ձեւով։

ԳԻՋ–ԼԻՄԱՆ կամ ԳԻՋԼՈՒ–ԼԻՄԱՆ. — Երկայնաձեւ գեղեցիկ հրուանդան Կիլիկիոյ, Միր Ադանայ աշխարհի մէջ. ի հնումն կը կոչուէր Պսոխրոն։

ԳԻՋՆԱՂ. — Գիւղ Պարսկաստանի Քեաղազ գաւառակի Նոր Ջուղայու։ Ունի 20 տուն հայ բնակիչ, եկեղեցի և վարժարան։

ԳԻՋՆԱՁԱ. — Գիւղ Միւնեաց Աղահէճք գաւառի մէջ։

ԳԻՆԸՃ կամ ԻՆԸՃ. — Գիւղ Էալովայի, Նիկոմիդիոյ առաջնորդութեան և կառավարչութեան տակ։ Շախաշէն գիւղէն ժամ մը հեռու է և ծովու եզերքէն երկու ժամ ներս, արեւմտեան հարաւային կողմը, փոքրիկ բլրի մը վրայ։ Ունի 500էն աւելի գուտ հայ բնակիչ և Ս. Սարգիս անուամբ փոքրիկ քարուկիր գեղեցիկ եկեղեցի մը. ունի նաև նոյն անուամբ Սարգսեան վարժարան մը, 20 աշակերտներով։ Գիւղիս բնակիչք երկրագործ և շերամաբոյծ են և հարստութիւններն միջակ. թէ և աշխատասէր են թէ արք և թէ կանայք, բայց շռայլութեամբ ի զուր կը վատնեն վաստակնին։

ԳԻՄԻՒՇԻ. — Գիւղ Ռումանիոյ Ֆոքշան քաղաքի. բնակչաց մէջ ունի միայն երկու տուն հայ։

ԳԻՆԸԳ կամ ԻՆԸԳ. — Գիւղաքաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան և առաջնորդութեան տակ, Գրըգպազճէն 6 ժամու ճանապարհ հեռու, ընդարձակածաւալ դաշտի մը հարաւակողմը, Աբչա–գայա և Պէշիկճաշ կոչուած լերանց ստորոտը. շրջապատն է 280–300 մետր։ Բնակարանք երկյարկ և հատյարկ են և ընդհանրապէս փայտաշէն։ Գիւղաքաղաքիս հիմնարկութիւնը շատերը Գաւրա Օսմանի կը վերագրեն։ Ունի մօտ 1200 տուն, յորոց 117ը Հայոց է՝ 230 արու և 195 էգ բնակչօք, Յոյնք 250 տուն են, Թուրքք՝ 720 և Չէրքէզք 80 տուն։ Թուրքք 7 մզկիթ ունին մեծ ու փոքր միասին, Յոյնք՝ մէկ եկեղեցի։ Շուկան կը բաղկանայ 200ի չափ խանութներէ, և ունի բամբակի երկու գործատուն։ Ողջ չորս եղանակաց մէջ ևս բաւական բարեխառն է. ամառն զով և ձմեռ ոչ այնչափ ցուրտ։ 40 տղրիւր կայ, ո-

րոց գրեթէ ամէնքն ալ 3 ժամ հեռու Լա-
լայ–Հավլուի լեռնէն կը բղխին։ Բերքերն
են. բամբակ, ափիոն, բուլղ, ցորեն, գարի,
սպիտակ կորեկ, սիսեռն, շուշմայ, բակլայ,
լուբիա, ձէթ, մեղր, խզ, պանիր, կոպի,
ներկ և լաւ բուսականին աչխատ և այծ։ Ա-
նուանի են խաղողն, սեխն և ձմերուկը։ Վա-
ճառականութեան առարկաներն են ընդհան-
րապէս բամբակ, ընդեղէնք և աւելի ցորեն։
Բնակչաց $^{5}/_{6}$ մասը հողագործ է, փոքր մասը
արհեստաւոր՝ դերձակ, կօշիկակար, երկաթա-
գործ, սափրիչ, նպարավաճառ, են.։ Կանայք
շատ բաներու մէջ աշխատակից են արանց։

Տեղւոյն Հայոց նախնիք գրեթէ երկու
դար առաջ գաղթած եկած են Հայաստա-
նի զանազան կողմերէն։ Հայք կառուցած
են Ս. Աստուածածին անուամբ փայտաշէն
եկեղեցի մը, որ 1847ին ի հիմանց նո-
րոգած են ընդարձակ, գեղեցկաշէն և կա-
մարակապ, 10 մեռր լայնութեամբ և 16
երկայնութեամբ։ Ունին Հայկազնեան և վար-
դուհեան անուամբ արական և իգական
վարժարաններ, 50ական աշակերտներով։
Մ. Յովհաննէս ազա իւր ծախքով կառու-
ցած է աղջկանց վարժարանը եկեղեցւոյն
մօտ, պարզ ու կոկիկ և երկու դասարանաց
բաժնուած։ Եկեղեցւոյն բակին մէջ դէպ ի
հիւսիս և յարեւմուտս կ'ընդարձակի գերեզ-
մանատունն, մէկ արտաքոյ շրջապատով։
Եկեղեցին ունի իրեն սեփհականութիւն գե-
րեզմանատան արեւմտեան կողմի պարտէզն՝
երկու արտաքոյ աւելի ընդարձակութեամբ։
Եկեղեցւոյն մէջ կը պահուին ասեղագործ
մը՝ հանդերձ յիշատակարանաւ, և համակ
արծաթամատոյց սպասարան մը՝ գրեթէ 100
տարուան յիշատակագրով։ Գերեզմանատան
մէջ կան արձանագրութիւններ ունեցող տա-
ռատպանաքարեր, յորոց ծանօթ հնագոյնն
130–5 տարուան է։

ԿՐՆԻՔ. Տես Գինեկ։

ԿՐՆԻԱԹ. Տես ՔՐՆԻԱԹ։

ԿՐՆՃԼԱՐ կամ ՂՐՆՃԼԱՐ. — Գիւղ կէս-
մէ գաւառակի Նիկոմիդիոյ, Գաւրապէլէնէն
մէկ ժամ հեռու արեւելեան կողմը։ Կառու-
ցուած է ցած բլրոյ մը միջնամասին վրայ.
մօտը կայ մայրեաց անտառ մը, որ կլիմային
բարեխառնութեան մեծապէս կը նպաստէ. ու-
նի նաև առուտրական և բարեհամ մշտահոսան
ապրելիներ, թթենեաց պարտէզներ և այ-
գեստաններ։ Բնակիչք զուտ հայ են, որոց
թիւն 1500ը կ'անցնի. հոս թէև մեռ գոր-
ծած է բազաքականութիւնը, բայց չէ կրցած
յառաջադիմել։ Ունի Ս. Սարգիս անուամբ
փառաւոր եկեղեցի մը, և Աբշարունեան երկ-
սեռ վարժարան մը, 260 աշակերտներով։
Բազաքականք ունին ընդարձակ ժողովա-
րան մը։ Բնակիչք բուսական ուսումնասէր
են. պարապմունքներէն է պիտուրատէս շի-
նամարտութիւն և այգեգործութիւն. երկ-
րագործութիւնը շատ սահմանափակ է, որով-
հետև բուսական վարելի հող չունին։ Կան
նաև սակաւաթիւ արհեստաւորք և այլ քա-
նի մը գործերով պարապող անձինք. շա-
տերն ալ կ'երթան կ. Պոլիս ապրուստի գոր-
ծարաններու աշխատելու։ 1885ին, գիւղիս
բնակիչներէն փոքրիկ հատուած մը գնաց
բնակուելու հատուածէ մերձակայ Տուզ-
չամ լերան մօտ թաշ–օրուզ կոչուած տեղը,
կառավարական անուտի հողին վրայ և սկը-
սաւ շէնցընել։ Այժմ այդ տեղը կը կոչուի
Նոր գիւղ Գրնճըլար։։

Պատմական Մագարիան՝ գիւղէս գրեթէ
ժամ մը հեռաւորութեամբ շարք մը բլրոց ու
լեր անց ստորոտը քերելով ու գաշտաց կրր-
ծոց վրայէն հետզհետէ իր օձապտոյտ ընթաց-
քը կը շարունակէ. իր վրայ ձգուած Քեօփրի–
պաշը կամրջին հետքերնը կը կարծուի 460
տարուց, զոր շինած է Օսմանեան Սուլթան
Պայազիտ, և ոչ Քունաց Քաւսախոնաս կայս-
րը. ինչպէս ոմանք կը կարծեն։ Երբ Սուլթան
Պայազիտ՝ Անթոյ ներքին գաւառաց հազար-
պակցութիւնը դիւրացնելու համար, այս կամրջ-
ջի շինութեան ձեռք կը զարնէ, ստուարա-
զանգուած և վիթխարի քարերու միացման
համար պէտք եղած ակիչները (գանճա),
ճարտարապետք շինելու կը յանձնեն տեղ-
ւոյս երկաթագործաց, այնուհետեւ սկսեր
են գիւղիս բնակչաց Գանճաքրար անուա-
նը տալ, յորմէ ապաւաղած և ծագած է
այժմեան գիւղիս անունն Գրնճըրար կամ
Ղրնճըրար։ Ի հնումն գիւղս կը կոչուի եղեր
Նոր–գիւղ։ Գիւղիս նախկին բնակիչք եկած
կը համարուին Աւելի 12 ընտանիք, որոց
5ը այսօրեզ կը հաստատուին, իսկ 7ը կը

հիմնեն Գաւրապէչէն դիպը։ Գրնճրլարէն մէկ քառորդ ժամ հեռու կը գտնուի Ս. Սարգիս անուամբ հին ուխտատեղի մը, որ հրաշալի վայր մ'է, իր երկնարերձ հովանաւոր ծառերով, ուր կը սազոսկէ և վճիտ առուակ մը։ Ուխտատեղւոյս ներկեցուոյ հիմունք ցարդ հաստատ կը կենան աւազ սեղանի կամարով միասին. մէջը քարայր մը կայ ուր հազիւ անձ մը կրնայ մտնել. քարայրի ներսը կայ ինքնաբուղխ քաղցրահամ ջուր մը, և եղերքը՝ երեք հատ խաչաձեւ արձաններ։ Խիստ հին ժամանակաց կը վերաբերի այս ուխտատեղիս և յատուկ ընտրեալներ և առաքելասիրեալներ կը կարօտի։ — Գրնճրլարի հիւսիսային և հարաւային ծայրերը կան երկու մեռարանի գործարաններ, որոց մէն շինել առած ու գործածած է հանգուցեալ Մ. Գաբրիէլ ազա անուն նշանաւոր հարուստ անձը։ Ա.յս գործարանաց մէջ կ'աշխատին կանայք և աղջիկներ։

ԳՐՄԱՃՐԳ. — Հայարնակ գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ. ունի եկեղեցի և վարժարան՝ 45 աշակերտներով։

ԳՐՄՐՏԱՂ. — Երկար շղթայ լերանց, Սիւնեաց աշխարհի մէջ։

ԳՐՐ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ գաւառի մէջ. ունի 30 տուն հայ բնակիչ։

ԳՐՐԳԱՂԱՃ. Գ. KIRK-AGATCH. — Քաղաք փոքր-կուսակալանիստ Ջմիւռնիոյ հիւսիս-արեւելեան կողմը հանդուն գաւառակի մէջ. երկաթուղւոյ գծին վրայէն չափելով Ջմիւռնիոյ կայարանէն 146 հազարամեաւ հեռաւորութիւն ունի։ Մանիսայէն մինչեւ Գրրգադաճ շոգեկառքով $3^1/_2$ ժամուան ճամբայ է։ Երկաթուղւոյս կայարանը քաղաքէս դրեթէ 20 վայրկեան հեռու շինուած է։ Դիրքն ու տեսարանը շատ գեղեցիկ է, բարձր լերան մը գառիվայր կողին վրայ շինուած ըլլալով՝ հեռուէն առաջիմանալու ու վրայէ վրայ կառուցուած տները գեղեցիկ կ'երեւան։ Քաղաքիս արեւմտեան կողմը՝ հարաւէն հիւսիս տարածուող լեռներու շղթան, կարծես թէ ժամանակը կը կարճցնէին. ամառ ատեն՝ 5–$5^1/_2$ ին լերան առուները քաղաքին վրայ տարածուած, արեւը լերան հետ իր մարը մտած կը տեսնուի։ Ա.յս լերանց մէկ գագաթը Սարը Գալա կը կոչուի։ Գրրգադաճի արեւելեան կողմերը և հիւսիսայինը կը տարածուին ընդարձակ դաշտադեաներ, իսկ հիւսիսային կողմը՝ բաւական հեռուն՝ կը տեսնուին ցած բլրակներ ու լեռներ, որոնց մէջ նշանաւոր է Պողազ կոչուած կիրճը. այս կրճէն ձմեռը ցրտաշունչ սաստ կը շնչէ Գրրգադաճի դաշտերուն և քաղաքին վրայ, ամառն ալ քաղցրասիրտ հով մը՝ հաճելի կ'ըլնէ տեղւոյն կլիման։

Գրրգադաճի տունը կամ շինութիւնն երկու իրարմէ տարբեր կերպով կը պատմուի տեղացիներէն։ Ոմանք կ'ըսեն թէ քաղաքին նախկին հիմնարկողները՝ տեղւոյն վրայ քառասուն ծառ տնկելով, անոնց տակերին տակ բնակիլ շատ սիրած են, ուստի շինած են խրճիթներ ու տնակներ, որ երթալով ընդարձակուած և այժմեան դիրքը առացած է։ Ուրիշներ ալ կը պատմեն թէ լերան տարբեր քառասունի չափ խրճիթներ կային ժամանակաւ. ճանապարհորդին մէկը իջեւանելով, տօթի ծարաւ, տեղւոյն բնակիչներէն քիչ մը հաց խնդրած է, որոնք զլացած են՝ բանալով թէ մենք ամենքնիս ալ հացի կարօտ և տօթի ենք, բնչի ինչ տանք։ Ծառաքանդ զարմանալով բացատրած է, որ ինն քառասուն տունն ալ տօթի են, Գրրգր տառաձայն բանալով, այս խօսքը ժամանակ առնելով ժողովրդեան բերանը դարձած եղած է Գրրգադաճ։

Գրրգադաճի դաշտադեաններն վրայ կը բուսնին զանազան տեսակ արմաւիք. ընդարձակ մաս մը բռնած են այդեստանները, որոց մեծագոյն մասը յատակ կը բերէ անկուտ (սալթանէթ կամ չէկիրտէքսիզ կոչուած) խաղող։ Ունի ցորենի, գարիի, բամբակի, սիսեռան, բակլայի ընդարձակ արտեր. նշանաւոր է համեղ սեխն, որ ուրիշ քաղաքներ՝ ինչպէս Ջմիւռնիա ևն՝ Գրրգադաճի սեխ անուամբ կը ծախուի։ Այդեստանեայց, պտղաբուծներու և դաշտերու վրայ աճող ծառերուն մէջ կը տեսնուին ընկուզենի, կեռասենի, թխենի, խնձորենի, ձիթենի և ուրիշ ծառեր։ Քաղաքի հիւսիսային կողմը հեռուն $^1/_2$ — $^3/_4$ ժամ հեռու՝ լերան առերսը կը տարածուի սոճի ծառերու անտառակ մը, որ տեղացիներէն Ջամլար կը կոչուի. այս անտառակն է ժողովրդեան զատարձանալու և ուրախանալու

վայրն, ուր երբեմն երբեմն խմբովին կը պիմէ՝ սահմներուն անուշ և առողջարար օդն վայելելու։

Գըրգազած ունի 1500 բնակիչ, երեք ազգերէ, հայ, յոյն և թուրք։ Հայը նշանաւոր հասարակութիւն մը կը կազմէն այս տեղ։ Ի՛Ր գարու կէսերը գաղթած են Գասըլճէն, Սարմասաէն, Ղափանէն, Ղարապաղէն և Եբեւանէն։ Հնագոյն յիշատակարանաց պակասութեան պատճառաւ՝ չէ կարելի որոշ թուական մը նշանակել, սակայն եկեղեցւոյ մէջ գտնուած պատկերաց վրայի յիշատակարաններն, որոնցմէ ամենահինն գրուած է Ի՛Ր գարու վերջերը, միացնելով ժողովրդականացն աւանդութեանց հետ, կրնանք ըսել թէ մէկ ու կէս գարու գաղթականութեան սերունդներ են տեղւոյս Հայք։ Իրենց գաղթականութեան սկիզբը՝ քաղաքին միջավայրը հաստատած կ'երեւին իրենց բնակութիւնն, ուր և Ա՛ձեմ խանի մէկ սենեկին մէջ սեղան կանդնելով պաշտօն կատարեր են ժամանակ մը։ Ցետոյ քաղաքին հիւսիսային կողմը քաշուած և հոն կազմած են իրենց առանձին թաղ մը, ուր կը գտնուին այժմ։ Ա՛յս թաղը քաղաքին ամենապեղեցիկ վայրը կրնայ րսուիլ. թաղին երեք կողմերը բաց, այգեստաններ և արաբեր պատած են, միայն հարաւային կողմը միացած է Ցռենկաց տեղերուն հետ։ Քաղաքիս Հայք այժմ կը համրուին 160–170 տուն (800 հոգի). ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը, որ տեղւոյս բոլոր շէնքերուն մէջ առաջինը կրնայ համարուիլ։ Ա՛րտաքին գաւիթը շինուած է Ջմիւռնիոյ Ս. Սահիանոս եկեղեցւոյ գաւթին նման. երեք կողմերը 14 քարաշէն սիւներ կարպատ շարուած են, որոնցմէ առաջակողմեանները վեր կը բարձրն գեպի դուրս կառուցուած կամարաց վերնատուներ. իսկ աջ ու ձախ կողմանց սիւներուն վրայ հաստատուած է գաւթին հովանաւոր ծածկը։ Շէնքին եռեւն աջ ու ձախ հաւասարաչափ միծութեամբ դուրս ելած են երկու աւանդատանց մասերն, որոնք թէ՛ արտաքուստ գաւթի վրայ և թէ՛ ներքուստ գասին վրայ ունին իրենց յատուկ գռները։ Ա՛ջակողմեան աւանդատան վրայ շինուած է զանգակատան աշտարակը։ Եկեղեցւոյս տեղը կար 1796ին շինուած ուրիշ հին եկեղեցի մը, որուն փոխան 1871ին վերաշինած են. այս շինութեան, բաց ի ուրիշ բարերարներէն միայն Աբրահամ փաշա Եբամեանը նուիրած է 500 օսմ. ոսկի։ Կ'ալժէ որ Գըրգազածցիք եկեղեցւոյ գրան ճակատը հաստատուած մարմարիոն քարին վրայ արձանագրել տան թէ՛ վերաշինութեան թուականը և թէ բարերարաց յիշատակարան մը։ Եկեղեցւոյս երկայնութիւնն է մօտ 23,50 մեար և լայնութիւնը 11,50 մեար, քարաշէն հաստ ամուր պատերով. ձեղունը փայտաշէն և կամարաձեւ է։ Ներքուստ պարզ է և լուսաւոր. աւազ գրան կողմը կան զոյգ մը սիւներու՝ վերնատան ատակ հաստատուած։ Մարմարակուռ բեմին վրայ բարձրացած են խորաններըր, որոնցմէ աւագը նուիրեալ է Ս. Աստուածածնի, աջակողմեանն է Գլխագիր, ձախակողմեանը՝ Պայծառակերպութիւն. աւանդատանց մէջ ևս կան մէկ մէկ խորան, աջակողմեանը նուիրեալ է Լուսաւորչի և ձախակողմեանը Որդւոյն Որսմանն։ Եկեղեցիս թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ զուրկ է արձանագրութիւններէ, ունի միայն քանի մը պատկերաց եզերքներու վրայ գրուած նուիրատուաց հին յիշատակարաններ, որոնք կը կրեն հետեւեալ թուականները ՌՄԻՀ (= 1799), ՌՄԾԱ (= 1802) և ՌՄՀԵ (= 1826) թուականները։ Եկեղեցիս ունի իրեն յատուկ գրամ, որ ժողովրդեան գիւրութեան համար շինուած է. այս գրամին թիթեղէ բոլորակաձեւ կաքուած և վրան Եկ (= եկեղեցւոյ) գրուած է. ժողովուրդն ի փոխարէն մէկ մէրայիկի (10 փարայի) երեք հատ կ'առնու այս գրամիներէն և յետոյ գանձակներու կամ պնակներու մէջ կը ձգէ։ Ունի նաև քանի մը կաղ կալուած, երեք խանութ, երեք տուն, երեք ձիթհատան և հօթեն այգեստան, ամբողջին տարեկան հասոյթն կը հասնի 200–250 մէճիտ, որ կը գործածուի եկեղեցւոյ պիտոյից և պզտոյնեբու. պակասը կը լեցնէ ազգը։ — Եկեղեցւոյ պարտէզին մէջ կը գտնուի կրկնայարկ և բարձրաշէն երկտեղ վարժարանը, որ թէև մէկ շէնք է, բայց առանձին գռներով և սանդուղներով երկու մասի բաժնուած է։ Տղայոց վարժարանի ճակատը գրուած է «Նարեկեան

վարժարան», որ ունի երկու դասարան մօտ 70 աշակերտներով։ Աղջկանց վարժարանի ճակատն ալ գրուած է «Վարպուհեան վարժարան», և ունի նոյնպէս երկու դասարան մօտ 60 աշակերտուհիներով, ուր կը սորվին նաև ձեռագործ։

Քաղաքիս հայ երիտասարդաց և օրիորդաց մէջ կը տեսնուի յառաջադիմութեան փափաք մը։ Լրած են և կան զանազան անուամբ ընկերութիւններ, ինչպէս Առաւիւտ սիրաց, Հոգատար, Խնամակալ, Զիմինեանց, և այլն։ Ընկերութեանց նպատակն է՝ կրթական և մարդասիրական սկզբանց համեմատ ուսանող պարապիլ և կարօտեալներու օգնել։ Ժողովրդեան մէջէն ծերերը առ հասարակ տգիտասէր են, բայց նոր սերունդը կը խօսի հայերէն, և տգիտութէն կը սորվի մի միայն դիւրութեան համար։ Դրդպատճի ժողովուրդը բնաւորութեամբ ժիր, գործունեայ, եռանդուն և աշխատասէր է։ Հայոց մեծագոյն մասը կը զբաղի տեղական արուեստներով, կօշկակարութեամբ, դարբնութեամբ, դերձակութեամբ, են.։ Կան նաև վաճառականներ որոնք բաւական յաջողութիւն գտած են, ասոնց մէջ կը յիշուին Արթին Միմիրսարեան (Զմիւռնիացի), Թադէոս Հաճի Յակոբեան, Մինրան Սահակեան, Կիրակոս Զիվիճեան, Հաճի Գէորգ Եաղճեան, վերջինս իբրև խոզկաղինի (փայտամուխ) վաճառական՝ նշանաւոր է։ Հայերը գործարաններ ևս ունին. քաղաքին հարաւային կողմը՝ ընդարձակ դետնի վրայ հաստատուած է գործատուն մը ալիւրի, բամբակի և ձիթոյ, շոգեշարժ մեքենաներով, որ կը պատկանի հայազգի Գարեգին Դաւթեանի, իրեք թէ և Զմիւռնիացի է, բայց տարիներէ ի վեր ընկերակցութեամբ ուրիշներու՝ յաջողութեամբ յառաջ կը վարէ սոյն գործատունը։ Նոյնպէս Յովհաննէս Գարախաչատուրեան, ունի բամբակի և ալիւրի գործատուն։ Տեղւոյն Հայոց մէջ կան նաև փաստաբաններ, յոբոց յիշենք Յովհաննէս Էֆ. Մրտրեան և Յարութիւն Էֆ. Տայեան։ — Հայք ունին երկու գերեզմանոց, հին և նոր. նորը քաղաքէն չորս հինգ վայրկենի ճանապարհ հեռու դէպ յարեւմուտս, չորս արտաքոյ բնակարձակութիւն ունի, հաստատուն սրմներով շրջապատեալ և ծառերով զարդարուած։ Ա֊յս գերեզմանատունէն 10–15 վայրկեան հեռու դէպ ի հիւսիս լճակ մը կայ, որոյ արեւելեան և արեւմտեան կողմանք զարդարուած են ձիթենիներով. այս լիճն սահրան է հին պեբեզմանատունը, որոյ առջևէն կ'անցնի վտակ մը. այս գերեզմանատան ընդարձակութիւնն է վեց արտաքոյ։ Գերեզմանատանց մէջ չկան նշանաւոր քանդակազարդ տապանաքարեր, կան միայն մի քանի արձանագրութիւնք անցեալ դարու կէսէն վերջը գրուած։ — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, բ 141–153։ Եւ այլն։

ԳԸՐԳ–ԲՅՈՎԱՆԴ. — Գիւղ Երեւանայ նահանգի, Քէմէրլիի վիճակի մէջ. ունի 26 տուն Հայոց և 2 տուն Քրդաց։

ԳԸՐԳ–ԿԱՉԻՏ. — Գետակ և ձորափոր լճնային կիլիկիոյ մէջ։

ԳԸՐԳ–ԿՕՉ. — Լճոյ Միհնեաց Ագահէճ գաւառի արեւելեան կողմը, Աբցախի սահմանակից. բարձր է 8770′։

ԳԸՐԳ–ՊՈՒԼԱԳ. Տես ԴՐՊԻՈՒԼԱԳ։

ԳԸՐԳ ՊՈՒՆԱՐ (Քառասուն աղբիւր). — Ա֊յս անուամբ գիւղ մը կը յիշուի Ա֊յրարատայ վանանդ գաւառի մէջ, ուր 1887 տարւոյ յունիս 4ին բանակ դրաւ Մուխթար Փաշա։ — Ա֊յս անուամբ լճակ մը կայ կիլիկիոյ մէջ։

ԳԸՐԳ–ՏԻԿԻՄԻՆ. — Հայաբնակ գիւղ Ա֊յրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ։ Ունի 853 հոգի, բաժնուած 94 տան։

ԳԸՐԳ–ՄԻՐՋԱ. — Հանդրուան՝ Ա֊յրարատայ կոզովիտ գաւառի մէջ։

ԳԸՐՄԸՉԸ ԳԻԼԻՍԻ. — Փոքրիկ շէն Ա֊յրարատայ Շիրակ գաւառի մէջ, Հոգեվանքի մօտ։

ԳԸՐՇԷՒԻ. — Քաղաք Ակնիւրիոյ կառավարութեան համանուն գաւառի և կնասրիոյ առաջնորդական վիճակի մէջ։ Ունի մօտ 9000 բնակիչ, Թուրք, հայ և սակաւաթիւ յոյն։ Հայք ունին Ս Գէորգ եկեղեցի մը և Հայկական անուամբ դպրոց՝ 130 աշակերտներով. կան ոսկերիչք ու մետաքսաւաճառք։

ԳՓԻՎԱՆԴ. — Կը յիշուի Միհնեաց Ուրակ գաւառի գիւղօրէից շարքի մէջ։ Օրպէլեան կը յիշէ թէ Տարսայիճ իշխանը Գեղիսանքը կառուցած տուեր է Տաթեւու։

ԳԻ կամ ԳԻՀԻ. — Գիւղ Երզնկայի, ի հնումն կը կոչուէր Ա֊յդի։

ԳԻԼԱՔԵՐԴ. — *Վերջին պարսից մէջ Միւռնիայ կաթոլիկան գաւառի յատկացուած ա-ռաջնորդէն մին։*

ԳԻԼԱՋՕՐ կամ ԳԻԼԱՋՈՒՐ. — *Այլ կերպ գրուած անուն Գիլիզօր (տես) գիւղի։*

ԳԻԼԱՆ կամ ԿԻԼԵԱՆ. — *Գետ Միւռնիայ Գաղէն գաւառի Բասմաճոր վիճակի մէջ. կը համապատասխանէ հին Գիրռանայ։*

ԳԻԼԻՇԼԻՆ. *Տես* ԳԻԼԱՐՔՈՒՆԻ։

ԳԻԼԻՈՒՆ կամ ՔԻԼԻՈՒՆ–ԽԱՐԱՊԱ. *Տես* Ա-ԼԱՉԱԼՈՒՆ։

ԳԻԼԻՈՒՆ–ՏԷՐԷՒՍ (Եկեղեցաձոր). — *Միւռնիայ վայոց ձոր գաւառի մէջ։*

ԳԻԼԻՈՒՔԻՆՏ. — *Փոքրիկ գիւղ (20 տուն) Հայոց, Միւռնիայ կովկասեան գաւառի մէջ։*

ԳԻԼԻ. — *Գետ Միւռնիայ Սոպք գաւառի։*

ԳԻՀԻ. *Տես* ԳԻ։

ԳԻՃԻ. *Տես* ԿԻՃԻ։

ԳԻՆԱԹԱՂԼԱՐ. — *Ամրոց կամ հանգրուան Միւռնիայ Աղահէճք գաւառի, Աբցախու լեռնա-տահմանայ մօտ, որ Հաբանդի Գեղեհաբադը գիւղն կը յիշեցնէ։*

ԳԻՆԱԼ. — *Աբցախու Մուսու լերան գա-գաթներէն մին, ասկէց սկիզբն կ'առնու Սև գետակը։*

ԳԻՆԱԿԱՆ ԳԵՏ. *Տես* ՆԼՈՒԿ։

ԳԻՆԱՑ ՎՏԱԿ. *Տես* ԳԻՆԵՂՈՑՆ ԳԵՏ։

ԳԻՆԴՐԱՆՑ կամ ԿԵՆԴՐԱՆՑ. — *Գիւղ վա-նայ կարճկան գաւառակին։ Ունի 25 տուն հայ բնակիչ, եկեղեցի մը և Ս. Պօղոս ա-ռաքեալին։ Կառուցուած է Շաքի քաղա-քէն վեր, կովկաս սարի սառոյտը, Գիս գետակի ալ ափի վրայ։ Հինգերորդ գարու մէջ Ս. Մեսրոպ աշակերտներով կու գայ այս տեղ և կը քարոզէ ճշմարիտ քրիստոնէու-թիւնը, և ապա չարագործներու երկիւղէն, գետի մէջ կ'ամփոփէ արծաթէ խաչ մը, ո-րուն մէջ կար կենաց փայտի մասն։ Նոյն տեղը կը մատուցանեն Ս. Մեսրոպի ա-շակերտաց կէսը և հաւատացեալներէն մէկը շինելով փոքրիկ մատուռ մը, նահատակեալց մարմինները հոն կ'ամփոփէ խնամքով։ Ճե-ւոյ նոյն տեղը կը հիմնեն եկեղեցի և ա-դիւռաշէն գմբէթի մէջ կը դնեն Ս. Մես-րոպի վերոյիշեալ խաչը։ Երկիներորդ գարուն Աճանշահին ցեղէն վարագ–Պետրոս իշխանը կամենալով նորոգել հին եկեղեցին, կը գտնէ Ս. Մեսրոպի խաչը (Մ. Կող. Ա. Խ)։ Ա-ձայ, Հոզամազ, Աբագիլ, կարապ վայրի (փոր), Բազ, Քաջահաւ, և այլն։*

ԳԻՆԵԿ. — *Գիւղ կը յիշուի Բազնայրի (Շիրակ) արձանագրութիւնն մը մէջ, որ կը կարծուի լինել Գրիգոր գիւղը, ուրկէ 1691ին (փետր. 23) անցած է Հ. Վիլլոտ Յիսու-սեանը Էջմիածնէն եկած ատեն, և կ'ըսէ թէ ամէն կողմ ճամբուն վրայ հանդիպած է քա-դաքաց, գիւղերու և եկեղեցիներու աւերակաց։*

ԳԻՆԻՇԿԱՋՈՐ և ԳԻՏ. *Տես* ԳՆԻՇԻԿ։

ԳԻՆՈՑ ԲԼՈՒՐ. — *Ալբարատայ Մասեաց ան գաւառի մէջ, որուն անուամբ կոչուած է մեր վերը յիշած Գինոյ գետը։ Սա կը թուի այժմեան Թարևպուռ կոչուած բլուրը։ Երբ Աբարացիք նեղը ձգեցին մեր Աբաս Թագա-ւորը, Գագիկ Աբծրունին եկաւ այս կողմե-րը և բլրանս մօտ գրաւ իր բանակը. նոյն միջոցին Եղիսէ Հայրապետն ալ «ի կատարս բլրին Գինւոյ» քահանայական գաւազն հետ կ'ապօթէր պատերազմի յաջող ելից համար։*

ԳԻՆՆԻՓԵԱՆ. — *Գիւղ Պարսկաստանի Զաբմահալ գաւառակի. ունի մօտ 50 տուն հայ բնակիչ և եկեղեցի մը։*

ԳԻՒ կամ ԳԻՇ ՎԱՆՔ. — *Աղուանից Շա-քի գաւառի մէջ կը գտնուի հինաւուրց նշա-նաւոր վանքս, Նուխիէն 5 վերստ կամ 1 ժամու ճանապարհ հեռու։ Կաղնիաստուացիի վկայութեան համեմատ այս Աղուանից ա-ռաջին և մայր եկեղեցին, հիմնուած է Եղիշէ առաքեալէն։ Կառուցուած է Շաքի քաղա-քէն վեր, կովկաս սարի սառոյտը, Գիս գետակի ալ ափի վրայ։ Հինգերորդ գարու մէջ Ս. Մեսրոպ աշակերտներով կու գայ այս տեղ և կը քարոզէ ճշմարիտ քրիստոնէու-թիւնը, և ապա չարագործներու երկիւղէն, գետի մէջ կ'ամփոփէ արծաթէ խաչ մը, ո-րուն մէջ կար կենաց փայտի մասն։ Նոյն տեղը կը մատուցանեն Ս. Մեսրոպի ա-շակերտաց կէսը և հաւատացեալներէն մէկը շինելով փոքրիկ մատուռ մը, նահատակեալց մարմինները հոն կ'ամփոփէ խնամքով։ Ճե-ւոյ նոյն տեղը կը հիմնեն եկեղեցի և ա-դիւռաշէն գմբէթի մէջ կը դնեն Ս. Մես-րոպի վերոյիշեալ խաչը։ Երկիներորդ գարուն Աճանշահին ցեղէն վարագ–Պետրոս իշխանը կամենալով նորոգել հին եկեղեցին, կը գտնէ Ս. Մեսրոպի խաչը (Մ. Կող. Ա. Խ)։ Ա-*

դաւանից Եղիազար կաթողիկոսը բոլոր նկեղեցական ուխտով կը փոխուայ ի Գիս, կը կառուցին մեծահանդէս նաւակատիք և Մեսրոպեան խաչի կենաց փայտի մասէն, փոքրիկ կաւոր մը կը դնեն իր ձեռաց խաչի մէջ (Մ. Կաղ. Բ. 19)։ Նոյն օրերէն մինչև ցարդ մեծ ուխտատեղի եղած է վանքը ոչ միայն շրջակայ Հայոց, այլ և մահմետականաց, որք յաճախակի կը լեցուին մեծ բազմութեամբ։ Վանքիս արտաքին ձեւն ու սէմը, հին պատմութեան համապատասխան են. արտաքուստ կիսակլոր է տաճարի սրբութեան կողմը, քառանկիւնի արեւմտեանը և խաչաձեւ վերի կողմն և հնապարիսպ ոճով շինուած կաթուղիկէն։ Արձանագրութիւնք զուրկ է։ Ունի մի քանի սենեակներ, թիթենից պարտէզ մը և 2273 քառ. սաժէն հող, օդն և կլիման լաւ են և ջուրը պատուական։ — Վանացս կից է Գիս գիւղը, գեղեցկագիր բարձրութեան մը վրայ։ Արեւելեան հեռախայեն կողմէն կը հասէ Գիս կամ Քիչ գետը, որ գարնան և աշնան մեծ վտառներ կու տայ։ Գիւղիս բնակիչները թէև ազգաւ հայ են, բայց բռնութեամբ ընդունած են մահմետական կրօնը, գաւառին միւս բնակչաց հետ։ — Ադուանք, 269–270։

ԳԻՊԱՆԻՒ. — Գիւղ Ադուանից Հողի (Նուխի) գաւառի մէջ, հիմնուած կսկիսան գետակի աջ կողմի բարձրութեան վրայ, Քօղաւանդ գիւղի դիմաց։ Ջուարճալի է տեսարանն, գիւրն բերդանման, օդն և կլիման անվնաս և ջուրն ոչ այնքան լաւ։ Տեղական բերքերն են ցորեն, գարի, կարեկ, խաղող, լուբիա, վարունգ և բանջար։ Բնակիչք 150 տուն, որոց նախնիք գաղմած են Արցախի Խաչէն և Վարանդա գաւառներէն։ Եկեղեցին՝ Ս. Աստուածածին՝ շինուած է ըստ արձանագրին 1881 թուին։ Հոս տան մը մէջ կը պահուի սրբատաիի նման արծաթեայ անօթի մը մէջ Ս. Թադէոս առաքելոյն մասունքէն մեծ կաւոր մը. վրան կայ անհետանական բայց հին հայկական արձանագրութիւն. մասունքս գտնուած է գիւղի արեւելեան կողմի ձորով հոսող վտակէն։ Գիւղապետի հանգուցեալներ ունի շատ հին հանդուցեալներ. տապանաքարեր ունենց վրայ կան արձանագրութիւններ։

ԳԻՊԻՒԱՆ. — Հայաբնակ գիւղ Գանձակու Ղազախի գաւառի մէջ։ Ունի մօտ 500 բնակիչ, բաժնուած 50 տան։

ԳԻՐԵՀ կամ ԿԻՐԵՀ. — Գիւղ Ջրաձոր՝ Զորաղբիւր Հայոց Հաշտեանք գաւառի մէջ, զոր յիշէ Յովհաննէս Մամիկոնեան։

ԳԻՐԿ կամ ԳԻՐՔ. — Հայաբնակ մեծ գիւղ Շամախւոյ, մեծութեամբ պատճառաւ գիւղաքաղաք կարելի է համարել։ Կը գտնուի Աղբիսովկասեան երկաթուղւոյ Մխախաւ կայարանէն 25 վերստ հեռու։ Ամենայն հարկաւոր բան առտ գտնել կարելի է. ունի քարաշէն եկեղեցի մը Ս. Աստուածածնի, և ուսումնարան։ Դիրքը լեռնային է, օդը մաքուր, ջուրը առողջարար և հողն արգասաւոր։ Գիւղիս անուան վրայ հետեւեալը կը պատմուի. գիւղատեղը ծոցաւոր լինելուն պատճառաւ կոչեր են Գիրկ, ուստի գիւղը շրջապատուած է երեք կողմերէ և ասչխը բաց. իսկ հարեւան բնակիչները կը կոչեն Գիրք, իբր գրքերով և գրականութեամբ լիքը. սակայն ուրիշ տեղացիք տեղւոյս բնաչաց կրքոտ և կռուարար բնաւորութիւնը տեսնելով, անոնց գիւղը կը կոչեն Կիրք, իբր կրիւք լի մարդկանց բնակարան և գիւղ։ Բնակիչք 250 տուն են. կը պարապին գլխաւորապէս երկրագործութեամբ՝ նահապետական եղանակով, այգեպանութեամբ, անասնապահութեամբ և շերամաբուծութեամբ. արտհետաւորներ ևս կան, ասկերիչ, հիւսն, գարբին, և այլն։ Գինին ընտիր է, կը գրկեն ի Բագու, ինչպէս նաև օղի։ Գիւղիս բնակչաց մեծագոյն մասը վաճառականութեամբ կը պարապին. ասոնց շատերու բնակութիւնք Բագու կը գտնուին, ուր ունին լաւ լաւ խանութներ և բաւական հարստութիւն են։ — Նոր-Դար, էջ 163։ Ադուանք, 197։ Տեսնովյականն։

ԳԻՒՋՈՒԱՆ կամ ԿԻՒՋՈՒԱՆ. — Հայաբնակ գիւղ Շամախւոյ, վերոյիշեալ Գիրք գիւղի մօտ. ունի 46 տուն, և մօտը Նաւատակ անուամբ ուխտատեղի։

ԳԻՒԼԱԳԱՐԱԿ. — Հայաբնակ գիւղ Լօռի (Գուգարք) գաւառի. ունի մօտ 1000 բնակիչ և Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։ Գիւղիս մօտ փոքրիկ բլրի մը վրայ կը գտնուի Ս. Գեորգ ուխտատեղւոյ մնացուն, որոյ տօնին օրն է Յարութեան երկրորդ օրը և Մոգնեի Ս. Գէորգայ ուխտի օրը։

ԳԻՒԼԱՄԲԱՐ. — Գիւղաքաղաք Գանձակ գաւառի Պարիճորի հասարակութեան մէջ, Շամքոր գետոյն վրայ, Գանձակի արեւմտակողմը։ Մօտը կայ Հառուաշէն անուամբ եկեղեցի, ուր երբեմն կրօնաւորներ բնակած են և այժմ աւերակ է. աւանդութեամբ կ'ըսուի թէ այս եկեղեցիս շինուած է եղեր Յունաստանէն (751ին) Հայաստան փախչող կրօնաւորներէն։

ԳԻՒԼԱՓԱՆ. — Մեծ գիւղ (Գանձակ) Շուշիի գաւառի մէջ։ Ամբ ունի 1400 թուրք բնակիչներ։ Գիւղիս մէջ կ'երեւին հայկական գերեզմանաց մնացորդներ. կը պատմուի թէ թուրքը նկատելով գիւղիս լաւ ու բնաւոր գիրքն ու տեղը, հնազհնակ գՀայերը հալածեր և իրենք հաստատուեր են. կան ընդարձակ այգիներ, ծառաստանք, ջրաղացք, և այլն։

ԳԻՒԼԻՋԱՆ. — Գիւղ (Ասրպատական) Սալմաստի. ամբ 3 տուն հայ կայ և ունին եկեղեցի։

ԳԻՒԼԻՍՏԱՆ. — Գիւղ Գանձակու, Ղարաչինարի հասարակութեան մէջ, երկարաձիւ ըլլակի մը վրայ. շրջապատուած է խանդաղան, Ղարաբուլաղ, Գէօղ–թէփէ, Սարամբէչմաշ, Ղազան–պրմազ, Զահմահմ բուլաղ և Քամար–գէօղի լեռներով։ Գիւղիս առջեւէն կը հոսէ Ինջայ–չայը։ Ունի մի ուեր և մի նոր, քարաշէն և գեղեցիկ եկեղեցի, որոյ մէջ կը պահուի «Ծիր–ուանատան» կոչուած ձեռագիր մը, որ շատ հրաշագործ կը համարուի և շատ ուխտաւորներ ունի։ Գիւղիսատեան մէջ նշանաւոր է հին, երեք սենեակներէ բազկացած քարաշէն ապարանք մը, որոյ պրան կամարակալ քարի վրայ կայ արձանագրութիւն։ Բնակչաց թիւն է 350, բաժնուած 42 տան։ Գիւղիս հազիւ չորս ժամ հեռու բարձր, սեպացած քարաժայռի մը վրայ կը գտնուի Գիւլիսատեան հին ամրոցներու նշանաւոր բերդը։

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ՄԱՀԱԼ. — Մէկից բնակարանները յատուկ գաւառ կամ մասն, որ իր անունը առացեր է համնուն գիւղէն և բերդէն, կը կոչուի նաև Թալիշի մահալ՝ Թալիշ գիւղի անուամբ, և իկիմիսրով՝ այսինքն Քաան և չորս, որովհետև կը բազկանար 24 գիւղերէ։ Ասոր նախկին սահմաններն են՝ հիւսիսէն կուրակ գետը, հարաւէն Թարթար գետը, արեւելքէն այժմեան սուրհանդակաց (poste) ճանապարհը և արեւմուտքէն Մասասարը։ Այս երկիրը ժամանակաւ կը կազմէր առանձին գօրեղ մելիքութիւն մը, Մէլիք Բէկլարեանները իշխանութեան տակ, այժմ ևս մեծ մասամբ կը պահպանէ անոնց ժառանգներուն։ Այժմեան աշխարհագրական բաժանմունքով Գիւլիսատանի մեծագոյն մասը կ'ընկնայ Գանձակի գաւառի երրորդ ոստիկանական շրջանի մէջ, իսկ մէկ մասը, ինչպէս Թալիշ գիւղը, Գիւլիսատանի բերդը, Հոսկայ վանքը, կ'ընկնան Ջիվանշիրի գաւառի մէջ։

Այս երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, թէև զուրկ չէ նաև դեղեցիկ սարահարթերէ. հոս կը բարձրանան Շիշ–բլուխ, Դաղ–օ–դաղ և այլ լեռներ, և կը սարածուին Խրխատիւրի, Աղջադալի և այլ հարթութիւններ։ Ամբողջ երկիրը ծածկուած է հարուստ բուսականութեամբ. լեռները պսակուած են անտառներով, որոնց մէջ կան նաև պտղատու ծառեր։ Դաշտավայրերու մէջ կը հանդի խաղող և կու տայ ընաիր գինի, մանաւանդ մուշկետ լուսածը, որ հրաշալի է։ — Գանձակի գաւառ, Ա. 121։

ԳԻՒԼԻՒ–ԳԻՒՋ (Վարդալի դաշտ). — Այսպէս կը կոչուի Միւնհաց Վայոց ձոր գաւառի մէջ գտնուող բազմաթեսակ վարդերով և ծազիկներով լի դաշտ մը։ Այս դաշտի վրայ կան նաև վանքեր, մատուռներ և խաչարձաններ։

ԳԻՒԼԻՒՃԷ. Տես ԿԻՒԼԱՔ։

ԳԻՒԼԻՒՃԷ ԿԱՄ ԿԻՒԼԻՒՃԷ. — Հայաբնակ գիւղ Ալբարատայ (Երեւան) այժմեան Ալէքսանդրապոլի գաւառի Մեծ Գարապլիսէի վիճակի մէջ։ Ունի 860 բնակիչ, բաժնուած 55 տան։ Տես ԿԻՒԼԻՒՃԷ։

ԳԻՒԼ, ՏԷՐՎԻՇ. Տես ՂԻՒԼ, ՏԷՐՎԻՇ։

ԳԻՒԼՈՒՏԻ. Տես ՁՈՐՈՑԲԵՐԱՆ։

ԳԻՒՂԱՒՈՐՈՒԹԻՒՆ. — Այլ կերպ գրուելին Գեղարքունեաց գաւառի անուան։

ԳԻՒՂԻԿ. — Կը յիշուի գիւղս Վասպուրականի Ձուշ գաւառի մէջ։

ԳԻՒՂՎԱՆՑ ԳԵՏ. — Կը յիշուի մեկին. որ գաւառի մէջ գտնուելն անյայտ։

ԳԻՒՄԲԱ. — Միւնհաց Ծղուկ գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ հանդրուան մը։

ԳԻՒՄԻՒՇԽԱՆԷ կամ ԿԻՒՄԻՒՇՀԱՆԷ. Գ. GUMUCH—HANÉ. Յն. Ἀργυροπολις. (Արծաթոյ քաղաք). — Քաղաք Տրապիզոնի կուսակալութեան և առաջնորդութեան ներքեւ, համանուն գաւառին մէջ. կառուցած է սարիւրու զառիվայրի վրայ, գոգաւոր և մանեկաձեւ գրիք. սոսրոպէն կ'անցնի Սահանաւ կամ Համանուն Գիւմիւշխանէի գետը՝ որոյ երկու եզերաց վրայ կը տարածուին ազա Խորայէլեան՝ որ բաց ի ամէն տեսակ աշխատութենէ՝ 3–400 լիրա ալ նուիրած է եկեղեցւոյն շինութեան ժամանակ, ինչպէս կը վկայեն եկեղեցւոյ և Ս. Փրկիչ վանաց յիշատակարանք և արձանագրութիւնք։ Հայք ունին Մեսրոպեան անուամբ երկսեռ վարժարան մը, եկեղեցւոյն մօտ։ 1886ին վարժարանին աշակերտաց Սահուց անուամբ ընկերութիւն մը կազմեցին՝ վարժարանին մէջ




236. Գիւմիւշխանէի տեսարանը։

պարտէզը, ծառաստանը և արտորայք։ Կը գտնուի Տրապիզոնի և Կարնոյ ճանապարհի վրայ, առաջնոյն հարաւային կողմը, գրեթէ 20 ժամուան ճանապարհ հեռու։ Օդն ու ջուրն բնաւոր են և բնակիչք քաջառողջ։ Տներք ընդհանրապէս ներկուած չեն։ Ունի մօտ 600 տուն, յորոց 200ը Հայոց, 300ը Յունաց և 100ը Թուրքաց են։ Հայոց եկեղեցին Ս Աստուածածին՝ բաւական մեծ է ու գեղեցիկ, զոր կառուցած է Յարութիւն մաեռնապարան մը հաստատելու նպատակաւ։

Տեղւոյս ժողովուրդը ընդհանրապէս ազբատ է. Թուրքաց շատը կառավարական պաշտօններով կ'ապրին, ամենք ալ ձորի մէջ պարտէզներ ունին, որք կու տան տանձ, խնձոր, թութ, ընկոյզ, սալոր և պարիսակ. այս պտուղները շատ քնաւոր և համով են, մանաւանդ տանձն ու խնձոր՝ որ կը գրկուին Բարերդ, Կարին, Տրապիզոն և մինչև Ռու-

սաստան։ Հայք և Յոյնք առուտուր կ'ընեն շրջակայ գիւղօրէից բնակչաց հետ։ 25–30 տարի առաջ բոլոր առուտուրն Հայոց ձեռքն էր, բայց չնորհիւ Ցեղաց առաջնորդի քա-

զի հայկական գիւղերը բաւական հեռու են և անոնց առուտուրը Բարերդի և Երիզայի հետ է։ Հայք, բաց ի 5–6 տունէ, ընդհանրա-պէս չքաւոր են. ուսոի և շատերը տեղւոյն



237. Գիւմիւշխանէի Ս. Փրկիչ վանքը.

բազներուն, Յոյնք՝ քաղաքացիք և գիւղացիք, Հայոց հետ առուտուրը գաղրիցընելով սկը-սան կեդրոնացնել իրենց ազգակցաց մէջ, որով Հայոց յոյն յաճախորդք ձեռքէ կ'ելան և ձեացին միայն Թուրքք և Քուրդք, վասն

ապրուստի միջոցները անբաւական գտնելով 25 տարիէ հետէ սկսած են գաղթել Բա-բերդ, Երիզա, Տրապիզոն, Կարին, Կ. Պո-լիս, մինչև ի Փարիզ և Ռուսիոյ քանի մը քաղաքաց մէջ կը գտնուին Գիւմիւշխանէցի

Հայք։ Ծննդավայր է քազաքս՝ Վենետկոյ Մխիթարեանց միաբան, Հայերէնէ Իտալերէն ընդարձակ բառգրքի հեղինակ, Հ. Մանուէլ Վ. Ջախջախեանի (1770–1835)։


Քազաքս հիմնուած է հանքաց շահագործման չորհիւ. իր անունը կ'առնու արծաթի հանքերէն. ունի նաև կապար և այլ հանքեր։ Սուլթան Մահմուտ Ա-ի ժամանակ գտնուեցաւ գեղին մօտ նաև ոսկւոյ հանք. նոյն առեն և Սուլթան Մուսթաֆա Գ-ի ժամանակ բաւական ծախքեր ու չանքեր եղան, բայց շահ չգոյացաւ։ Տասնեհինգ տարիէ ասկի է որ եւրոպական ընկերութիւն մը սկսած է շահագործել անոնց հանքերը։ Հետաքրքրական է անոնել հանքաց բացուած ու բանուած բաները։ Դիզնակարմիր գոյնով ապնակուած քար մը կայ, զոր Ա չափասյով քար կ'անուանեն, և ամէն բնակիչը միահամուռ կը հաստատեն թէ առատ ոսկի կայ այդ քարին տակ։ Ասոր մօտերը կայ երկար փլածոյ մը, ուր կ'ըսեն, արծաթի հանելու համար աշխատող յոյներէն քառասուն անձինք փլածին տերքն ննացեր մեռեր են, քառասունին անունն ալ Պաւլօ. առոնց ընտանիք և բարեկամք այս ազէտի պատճառաւ լալով կը լնուն քազաքը՝ կրկնելով Պաւլօ, Պաւլօ։ Ա-յս պէպքէն շինուեր է առածն. «Ամէն ոք իր Պաւլօն կու լայ»։ այս անգր կը կոչուի այժմ Գրրգ Պաւլօ։ Գիմիշխանէի ձորը թէպէտ ասթռակին է ամառը, սակայն գարնան սքանչելի է, գարգարեալ պազատու ծառերով, որոց պատղները հասմեղ, խոշոր և ազնիւ տեսքով, տարուան ամէն եղանակին մէջ կրնան գտնուիլ։

Գիմիշխանէէն դրեթէ մէկ ժամ հեռու դէպ ի հիւսիս արեւմտեան կողմը, կը գտնուի Հայոց Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ վանքը, գեղեցիկ ձորակի մը մէջ։ Շրջապատեալ է գեղեցիկ բլուրներով ու անտառներով, առջևէն ու ձախ կողմէն փոքրիկ առուոց կարկաչահոս ընթացքը, շուրջը պատող գալար խաւերով և գոյզգոյն ծաղիկներով զարդարուած փոքրիկ լեռնապաշտերն ու պարակը գեղեցիկ և հրապուրիչ տեսարան մը կ'ընծայեն։ Սուրբ առանն փոքր, սիրուն և վայելուչ շէնք մ'է. կառուցուած խիստ հին աւերակաց վրայ։ Տաճարի մօտ կառուցուած են զանազան շինութիւններ և մօտ 20 սենեակ ուխտաւորաց համար, որք ընդհանրապէս կու գան քազաքէն և Բարերդի թեմերէն և օրերով հոս կը մնան։ Գիմիշխանէի հայ ազանները ձեռքն է վանքի կառավարութիւնը։ Վանքս բաւական հարուստ է. ունի սչխարներ, դուար, արտեր, փայտի անտառներ, 2 խանութ, չաղացք մը, կառնասներ, անօթներ և եկեղեցական ընտիր զարդեր։ Ս. Փրկչի վանքին հրովարտակն 20–25 տարի առաջ կորսուած լինելով՝ շրջակայ գիւղօրէից ծոյրք ուզեցին զանազան պատճառներով վանքին տիրել և զատ բացին։ Հայք 6–700 ոսկի վատնեցին և վանքին մնծազումար գրամն ալ մսխուեցաւ, բայց վերջապէս վանքն վերստացաւ նոր հրովարտակ մը, և հաստատեցաւ Հայոց իրաւունքը։ Ցոյժ առողջարար և պատուական է վանացս օդն ու ջուրը։

ԳԻՄՈՒԻՐԴԱ. — Հայարնակ գիւղ Գուզաբաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ, Գօզաշէն գիւղէն գրեթէ 6 վերստ չափ դէպ արեւելահիւսիս։ Ունի մօտ 1200 բնակիչ, բաժնուած 125 տան. ունի նաև ուսումնարան և եկեղեցի մը։ Կառուցուած է ձորի մը գլուխը և ունի հրաշալի տեսարան։ Նշանաւոր է գիւղս հին աւերակ եկեղեցիով մը, որը Ջավախէթի մէջ գտնուող բոլոր պատմական յիշատակներէն կրնայ առաջինը համարուիլ և համեմատաբար աւելի քիչ վնասուած։ կառուցուած է օրթոգանձև, սեւ և կարմիր սրբատաշ քարերով. ներքին ձեւովը բոլորովին նման է Անոյ Ս. Փրկիչ եկեղեցւոյն, բայց անհիւ անհամեմատ մեծ, իսկ արտաքին տեսքով շատ նման է Անոյ կաթողիկէին, միայն ասոր քանդակները աւելի նուազ և կոպտաձեւ են։ Եկեղեցւոյս երկայնութիւնն է 6 սաժէն, լայնութիւնն 5 ս. և 1 արշին, իսկ բարձրութիւնը մինչև կաթողիկէն 7 սաժէն։ Կիսաբոլոր բազմանկիւնի սիւներու վրայ ձգուած են կամարներ՝ որոնց վրայ կը բարձրանայ եղեր գմբէթը, որ այժմ կործանած է։ Սեղանի կիսատաղներու վերին հանդիպակաց անկիւնները կան մարտու մը և կնոջ փոքրագիր քանդակագործ պատկերներ։ Հարաւային կողմը կան պատկից քարեայ երկու աւազաններ։ Եկեղեցիս

ունի նախագաւիթ և գաւիթ և ներքուստ բաւականաչափ գեղեցիկ քանդակներ. արձանագրութիւնները վրացերէն են։

Եկեղեցւոյ չորս բոլորը պատած է հաստ կրկնապատ պարսպով, անառաջ և կոպիտ քարերով շինուած։ Պարսպէն դուրս կան ցորենի հորեր և ձիթհանքի հնաքեր։ Գիւղիս այժմեան բնակիչք՝ Հայք, այս հին և կեղեցւոյ արեւմտեան քանդուած խորշի մէջ



238. Գիմէի վանքի աւերակները։

շիներ են իրենց եկեղեցին, սեզանի համար տեղ առնելով եկեղեցւոյ մէջ, որ բոներ է գրեթէ կէս մասը։ Հին եկեղեցւոյ մնացած մասն ալ կը ծառայէ իբրև շտեմարան ցորենոյ։ Վրացւոց իշխանութեան ժամանակ Գիւմուրդան նշանաւոր եպիսկոպոսանիստ տեղ էր, ուր նստող առաջնորդը կ՚իշխէր բոլոր Ջաւախէթի հոգեւորականներու վրայ։ Այդ եպիսկոպոսներէն մին՝ Յովհաննէս, ժԲ դարու կիսուն, Ափխազաց Լեւան Գ Թագաւորի ժամանակ շիներ է վերոյիշեալ եկեղեցին։ Հարեւր տարի վերջն ալ, Ափխազ–Գարպանիզացւոց Բագրատ Դ Թագաւորի մայրը Մարիամ Թագուհին, շինել տուեր է եկեղեցւոյ գաւիթը։ — Փորձ, Դ պեկտ. 123 125։ Ջաւախք, 43–45։

ԳԻՄԲԻԹ կամ ԳԻՄԲԻԹ. — Ամայի դիւղ Ակրաբատայ վանանդ գաւառի, կաթսէն մէկ ժամ հեռու Ախալքիան գետոյն մօտ։ Ունի բազմանկիւնի ձեւով հին եկեղեցի մը, որուն միայն գմբէթը մնացած է։ — Այս անուամբ այլազգարնակ դիւղ մ՚ալ ունի Կարին։

ԳԻՄՐԻ. — Լիս Ակրաբատայ վանանդ գաւառի մէջ. բարձր է 2850 մետր։ Տես ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ։

ԳԻՆՆԵԻ կամ ԿԻՆՆԵԻ ՎԱՆՔ. — Սա է հին կենվանքը, որ կը գտնուի Սիւնեաց վայոց ձոր գաւառի, Եղեգեաց գետեզերքը, Ակագեղի անտառային ձորի մէջ, ուր կայ այժմ նոյն անուամբ թրքաբնակ փոքրիկ գիւղ մը։ Սիւնեաց պատմիչը՝ վանացս պատմութիւնն և սկզբնաւորութիւնը մեզ կը յայտնէ հետեւեալ տողերով. «Կենէլանք, զորմէ ասեն մանկունք անզէտորդք արաժէյն ջուլիս եզանց, և սկսան խաղալ. և կարեալ կենին մի՝ արարին խաչ և եղեն ի վերայ քարի մի և սկսան երկրպագել և ասել. Ջոր ինչ երէկն առէ և ընծեռնու՝ այն ի վերայ քո եղիցի, և յայոց եզանցս այս երեքս քեզ մատաղ եղիցի։ Եւ զոր նոքա ընդ խաղս արկին՝ Հոգին Աստուծոյ իջեալ անօրինէր նոյնպէս։ Ապա ի ժամ երեկոյին սկսան գնալ. և թէպէտ ջանացին՝ զայն նուիրեալ մատաղն ոչ կարացին յարուցանել ի տեղւոյն։ Գնացին և ազգ ազգին տեղեկացին, և նոքա եւս կամ՚ ոչ կարացին շարժել. և հարցեալ զպատճառն ի մանկանցն՝ խոստովանեցին զոյգիդն։ Կոչեալ այնուհետեւ քահանայս օրհնեցին պնաչն և զենին զեղինսն և պատուեցին ըզանեղին կնիկնոյն։ Ազգ լինէր այս իշխանացն Սիւնեաց, և գայիս ի՝ տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղւոյն և սահմանեցին գնա տուն կրօնատուրաց. բայց գան-

դի կնքնդոյն թեղին ի մէջ եկեղեցւոյն փոս մի զուգնաքեայ, և մինչ յատեր սեղոյն՝ ձէթ բղխէր ի փոսոյն այնքան, զի օտար ձիթոյ ոչ կարօտանային, այլ եկեղեցւոյն կանթեղունքն նոսիւ կերակրէր. և դեռ ևս կայ եկեղեցին և սեղի կնքնդոյն և խաչ ևս, որք վկայեն անուանս զոյ» (Առաք. Պատ. Մխիթեաց, Գ. կԱ)։ Վանքս տակաւին կը մնայ լքեալ և ամայի վիճակի մէջ, ինչպէս կը տեսնուի նաև մեր պատկերէն (թ. 238)։ Եկեղեցին սա գաշէն է, կառուցուած կոփածոյ քարերով, 10 քայլ երկայնութեամբ և 8 քայլ լայնութեամբ, չորս սիւներով, երիս աւանդատներով և մանր պրուպազարդ քանդակներով։ Հիւսիսային որմոյն վրայ կը տեսնուի կիսակոշ արձանագրութիւն մը, յորմէ կը տեղեկանանք, թէ Տարսայիճ իշխանը նուիրեր է Ս. Գրիգորի խորանի այդին։ Այս արձանագրութենէն կը յայտնուի նաև թէ վանացս եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր. ինչպէս հարաւային որմոյն վրայ ալ գրուած է յայտնի կերպով. Նորոգեցաւ Ս. Գրիգոր։ Եկեղեցւոյն ներսը մանելը դժուար է, որովհետև թափուած քարերը դրան մուտքը ծածկած են. ներսը յատակը ծածկուած է աչքարի ապրով. սեղանը դեռ կանգուն է, որոյ երկու կողմերը կան մի մի խորան։ Եկեղեցւոյս նորոգութեան ժամանակ, որոյ թուականն անյայտ է, օրմիոյ մէջ ապուցած են գանագան ասպանաքարեր և խաչարձաններ։ Վանքս շրջապատեալ է, փոքր հասարակ քարերով շինուած պարսպով, այժմ կիսակործան։ Վանացս շուրջը կան պազարիք և վայրենի ծառեր։ Արեւելեան կողմը կան գամբաններ, մին Հերովբէ անուամբ եպիսկոպոսի մը՝ հանգերձ օձանիշ գաւազանի քանդակով։ Ուրիշ մը ունի ՉՀԲ (= 1323) թուականու արձանագրութիւն։ Եկեղեցւոյ արեւմտեան դրան վրայ ևս կայ 1524 թուականու և արձանագրութեամբ խաչարձան մը, զոր անշուշտ վերջը դրած են։ Հարաւային կողմը կան 8 փոքրիկ սենեակներ, զորս թէև շատեր համարած են միաբանից սենեակներ, սակայն տեղացի այլազգիներու բանի համեմատ, զորս շինուած են ի վերջոյ վկաւորներու քարերով, և կը ծառայեն իբրև տեսարանոց։ Միաբանները սենեակներն ևս լինելու են պարսպի մէջ, որոց հետքերն չեն երեւիր, ծածկուած լինելով վկաւորաց տակ։ — Մխսական, 145։

ԳԻՒՆԷԻՑ–ՁԱՐՏԱՐ կամ ԿԻՒՆԻ ՁԱՐՏԱՐ. — Գիւղ Աբցախու (Շուշի) վարչութեան գաւառի մէջ. երեք կողմերէ շրջապատեալ է լեռներով և միայն հարաւ–արեւելեան կողմը բաց է։ Հիւսիսային սարը կը կոչուի Գալին–խոռ, ուր երբեմն կառուցուած է եղեր ամրոց մը. արեւմտեան կողմերը Ս. Եղիշայ կոսի անապատի սարն է։ Գիւղիս անները սիրուած են Գալին–խաւթ լերան լանջերու վրայ, իսկ դաշտերը և կալերը կը գտնուին դէպի արեւելահարաւ, գիւղէն մօտ մը հեռու։ Գրեթէ բոլոր անները պտղաց կան թմենուոյ ծառեր, այնպէս որ համարեա ամբողջ գիւղը ծածկուած է ծառերու մէջ և շատ գեղեցիկ տեսարան ունի։ Կառնուաւոր փողոցներ չկան։ Տներու մէջ կան բաւական թուով երկյարկանի՝ և եւրոպական ճաշակով շինուածներ։ Գիւղիս հին եկեղեցին Աւետարկիչ՝ քարաշինի է. ունի միայն աւազ խորան։ Դրան ճակատակալ քարի վրայ կը կարդացուի ՈՄԼԶ թուականու արձանագրութիւն։ Ուրիշ նոր եկեղեցի մ՚ալ շինած են կալերու մեսին մէջ։ Գիւղս ունի նաև Ս. Գրիգորեան անուամբ միաւանի ուսումնարան մը։ Օդը շատ առողջարար է, ջուրն ալ համեղ և մաքուր։ Գիւղի շուրջը կը տարածուին այգիներ, ուր կան նաև թմենիներ, ասանձենիներ և խնձորենիներ. հռչակուած է տեղւոյս ցորենը։ Բնակիչները զազիեր են խաչենեն, Զարզախլուէն և Ագուլիսէն. ընդամէնը մօտ 2000 հոգի են, բաժնուած 260 տան։ Բնակիչք մեծաւ մասամբ հարուստ են, կը պարապին երկրագործութեամբ, այգեպանութեամբ և անասնապահութեամբ։ — կոհակ առնուամբ ուխտատեղի մը կայ գիւղիս մօտ, ծածկուած ճապկի ծառերով. ուխտ օրն է Համբարձման տօնին։ — Դաւէ չիչէք անուամբ աղբիւր մը կը բղխէ գիւղիս արեւմտեան կողմը, որոյ ջուրն բուժիչ է կարմրուկ (տեղական բարբառով խաւաթներ) հիւանդութեան։ — Աբցախ, 117–118 վրանգա, 34։

ԳԻՒՆԷԻԲ կամ ԿԻՒՆԷԻԲ. — Թաղքերէն անուն Աբեգաւնի վիճակին Մխենից։

ԳԻՒՏԱՑ ՎԱՆՔ. — կը կարծուի թէ վանքս կը գտնուի Միւնեաց Բաղք գաւառի մէջ, և կոչուած է Գողթան գաւառի Շամբիթ իշխանի Գիւտ որդւոյն անուամբ։ Այս Գիւտ կանխաւ կը կոչուէր Վասակ, և ժառանգուելոհան համար պատերազմելով իր Շապուհ եղբայրը վիրաւորեր էր. բայց յետոյ զղջալով ուխտեց որ եթէ եղբայրը առողջանայ, ինքը աշխարհէ հրաժարի, և այնպէս ալ եղաւ։ Հայրենի տունէն հրաժարելով եկաւ Բաղաց կողմերը, ուր առանձնացած տեղ մը բնակեցաւ։ Ատեմ մը Պարսից արքայն որսի ժամանակ հանդիպելով Գիւտայ, կ'սքանչանայ անոր վրայ՝ որ արջերու մէջ կենալով անոնց վէրքերը կը բժշկէր. ուստի հաւատալով ի Քրիստոս և մկրտուելով կոչուեցաւ Քրիստոսասէր, և շատ արծաթ բնելով «շինեցին և ժողովեցին եղբարս բազում»։ և Պարսից թագաւորէն՝ ի սէր որդւոյն, զրկուած հազար գործաւորաց աշխատութեամբ սոյն տեղը շինեցին երեք եկեղեցի Ս. Երրորդութեան անուամբ։ Այս համբաւը ամէն կողմ տարածուելուս, և շուտով վանքս լեցուելուս բազմաթիւ եղբայրներով։ Վանքի մէջ կային 200 եղբարք և 300 ալ մերձակայ քարանձաւաց, անտառաց և անապատաց մէջ։ Ետոյ Գիւտ ինքզինքը յայտնեց իր բնտանեաց և բժշկեց կուրացած մայրը, և Գողթան եպիսկոպոսը հրաւիրելով անոր յանձնեց եկեղեցին։ Կը պատմուի դարձեալ, թէ Քրիստոսասէրի եղբայրն ալ փնտռտելով Ադաւնիից վաչտան թագաւորի, բերդ մը շիներ է նոյն կողմերը վանականները պահպանելու համար։ «Սահմանն հաստին վանիցն և հատն հինդ գիւղ, սկիզբն արարեալ ի Մեհրուսաբ՝ ածեն ի Բորիթս եւ ի վեր և վայր, մինչ ուր ի չորս Թոխանոյն և յայգեստան Աղրկանցին, և անտի գնայ հասանէ մինչ ի շրջանս գետոյ Ազատնոյ, հանդիպ եկեղեցւոյն Նահապատու, և անտի ցուտնն Աստուծոյ, գետք հինգ այսու սահմանօքս»։ վանքս շատ ճոխացած էր, ունէր 1000 արջառ, 1400 ոչխար, 700 ուղտ, 800 ձի, 400 էշ և 700 այծկորթ։ Այս պատմութիւնը մեզ թողած է Գիւտայ վանից Յովհաննէս անուն միաբանն, որ յատկապէս եկեղեցւոյն կոչուած է Տարիներ վերջը, Պարսից թագաւորի որդին կամ թոռը զօրքեր զրկելով աւերեր է ի'բոլն վանքս և եկեղեցին, կրծտուածները շատերն ալ կոտորելով։ Սակայն ճնացեալ կրծտուածները կատարին ուրիշ մը աւելի վայելուչ և ժողովեցան 600 հոգի. ուրկանոցներ սահմանեցին և անոնց պէտքերը վանքէն կու տային։ Հայր Գիւտ ալեծուն և չորս տասնեակ հասակին, Քրիստոսասիրի հետ նահատակուեցաւ անօրէններէն, քաղց տանջուն 15 ին։ Մեծ սգով Գիւտայ աշակերտները, նահատակեալց սուրբ մարմինները ամփոփեցին, Գիւտինը եկեղեցւոյն գաւիթը և Քրիստոսասիրինը եկեղեցւոյն մէջ։ Այս վանքին մէջ կրթուած էր Ճգնաւոր Երիցակը՝ որ շինած է Երիցու վանքը և Միւնեաց եպիսկոպոս եղած։ — Այս վանքի վրայ այսչափ տեղեկութիւնք միայն ծանօթ են մեզ։ Ցանկալի է հետազօտել և գտնել իր բուն տեղը, և տեղւոյն ընտրելագոյն ծանօթացնել։ Մի գուցէ սա լինի Ագաւնիից Գետայ կամ Գետչայ վանք բուսածն, որոյ նկարագիրը տես ի կարգին։ — Միսակեան, 274–283։

ԳԻՒՏԻ կամ ԳՏՈՑ ՎԱՆՔ։ — Ալբարասայ Գաբելեանից գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ վանք մը։ Յայտաւուրքի մէջ գրուած է. «Յետ գառանելոյ գմարմին սրբոյն վարսի, որպէս զսաւրն կոչեցին Գիւտ, նոյնպէս և յայն անուն գմենաստանն։ Այլ և զանդ նորա շինեցին վանք, որ մինչև ցայսօր կոչի Գիւտի վանք»։ Այս վանքը շինած է կամսարական Դաւիթ իշխանը, և Բագրեւանդայ Հնգ գիւղը, հատատուն գրով սեփհականած է վանքին։ — Նորանոր տեղեկութիւնք կարեւոր են վանացս նկատմամբ։

ԳԼԱԿԱՑ ՎԱՆՔ. Տես ԿԱՐԱՊԵՏ (Ս.)։

ԳԼԱՏԱՆ. — վախուշտէն յիշուած գիւղ Ծարափարոյ (Շուլավէրի ձոր)։

ԳԼԱՋՈՐ. Տես ԳԱՅԼՋՈՐ. և ԱՌԱՔԵԼՈՑ վ։

ԳԼԱՎՈՒՋ ԹԼՓԻՆ. — Լեառնաբլուր Ալբատասայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ։

ԳԼԻԹՔԱՐ. — կը յիշուի այս անուամբ լճակ և բերդ Մանդկացփորի մէջ։

ԳԼՈՒՈՐ. — Ասկաւարտակ Հայոց գիւղ Շատախու (Մոկք)։

ԳԼՃԱՐ. — Գիւղ Ալբատասայ Ձակատք

գաւառի, Տէրէքէնա վիճակի մէջ։ — Այս անուամբ այլազգարնակ գիւղ մ՚ալ կայ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Գնդեվանից հարաւային կողմը։

ԳԼՃԿԵՏԻԿ կամ ՂԼԻՃ ԿԵՏՈՒԿ. — Կիրճ Ալլահուակպար Բագրեւանդ գաւառի, Բրճօի կրճի արեւելակողմը և Ալաշկերտի գաշտի ուղղակի հարաւակողմը։ Այս կրճէն կը մտնեն Ալաշկերտի գաշտը Պուլանըխ, Մշէ, Մանազկերտէ և Ախթափէ եկող ճանապարհորդք։

ԳԼԻՋՆԱՁՈՐ. — Աւերակ գիւղաքաղաքի Հազրատայ (Գուզարք) մօտ, ձորագաշտի մը մէջ, Դէբէկ գեղոյն հարաւակողմը։ Ունի բուսական վարելահող, անուռներ և պտղատու ծառեր։ Անունս Գլիգնաձոր՝ կը նշանակէ գլի կամ գլորեցի գնա ի ձոր։ Կ՚ըսեն՝ թէ երկու սիրող իշխաններու մէջ վէճ ծագեր է կալուածատիրույս նկատմամբ, և մին միւսին յաղթելով բարձր տեղէն գլորեր է և ձրգեր ձորի մէջ. նոյն օրէն մինչև ցայգ ճնաց կոչուած է Գլի–գնա–ի–ձոր կոչումը։ Փոքրիկ քարաշէն վիճակի վրայ Ս. Նահատակ անուամբ խաչքար մը կայ։ Կը պատմեն թէ մեծն Վարդան՝ իր գօրքերով ընդդէմ Պարսից պատերազմին համար, Ղուանից օգնութեան գացած միջոց, այս տեղ իջեւաներ է, և իրեն նահատակութենէն վերջ ի յիշատակ իրեն կանգնած են այս խաչքարը։ Աստ կը տեսնուի գերեզմանատուն՝ մեծամեծ տապանաքարերով։ Գեղոյն վրայ ալ կայ եղեր Ցիշոցք կոչուած քարաշէն կամուրջ մը, այժմ քարուքանդ եղած, և հիմունքը միայն կը տեսնուին։ — Հնախ. տեղ. Հոդուածոյ, 104։

ԳԼԻՋՈՐ. Տես ԳԱՅԼԵՁՈՐ։

ԳԼՈՒՑ ՎԱՆՔ. — Կը կարծուի թէ վանքս կը գտնուի Ղուանից կողմերը, որուն համար վարդան իր պատմութեան մէջ կը գրէ այսպէս. «Եւ եկեալ Խոսրէէ (ոմն) հրամանաւ վարազարտաւայ Ղուանից իշխանի, և խնդրեալ զծնօտ Լուսաւորչին՝ տարեալ եդ ի Գլխոյ վանս կոչեցեալ տեղւոջ»։

ԳԼՈՒՆՑ. — Գիւղ Բարերդի՝ $4\frac{1}{2}$ ժամու ճանապարհ հեռի, արեւմտեան հիւսիսային կողմը։ Ապառաժուտ լերանց գլուխը եկեղեցւոյ կիսակործան շէնք մը կայ Ս. Լուսաւորիչ անուամբ. լերան տափարակ գագաթին վրայ ուրիշ աւերակ եկեղեցի մ՚ալ կայ, որ կը կարծուի թէ համանուն վանք մ՚էր ժամանակաւ։ Գիւղս այժմ թրքաբնակ է։

ԳԼՈՏԿ. — Գիւղ Սիւնեաց հարաւ ամբեւչեան կողմը, ուր նահատակուեր է Սեւեբրեանոս սերաստացին։

ԳԼՈՒԽ. Տես ԴԷԼՀՕՔ։

ԳԼՎԻՒՈՑ. Տես ՆՂՅՒԽ։

ԳՄԲԷԹ կամ ԴԻՄՊԼԷԹ. — Գեղակ և գիւղ Ալլահուակպար վանանդ գաւառի Զարիշատ վիճակի մէջ։ Գիւղս այսպէս կոչուած է անշուշտ գմբեթաւոր եկեղեցւոյն համար։ Տես ԴԻՄՊԼԷԹ։

ԳՆԴԱՇԻՆ. Տես ՀԱՐԱՆԴ։

ԳՆԴԵՎԱՆՔ. — Միւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Արփա գետոյն ձախակողմը, գեղեցկագիր և ջրարբի բարձրաւանդակ մը վրայ կը գտնուի այս երբեմն իր հոյակապ եկեղեցիով և վանականով հռչակուած գիւղս, որ Հին Գնդի գիւղի հարաւային կողմը կ՚ընկնայ, գրեթէ 8–9 վերստ հեռաւորութեամբ։ Պատմութեան մէջ ծանօթ է նաեւ Գնդեվանս անուամբ, վերջին դարերու մէջ ռամիկներէն ծերբուելով կոչուեր է Գնդեվաս կամ Գնդեվազ, և այսպէս կը կոչուի նաեւ այժմ։ Գիւղս Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուաց հին ցուցակի համեմատ, որովհետեւ տասը բեռ հարկ կուտար, յայտնի է թէ բաւական ընդարձակ և բազմամարդ լինելու էր նոյն ժամանակ։ Ուրիշ բազմաթիւ գիւղերու հանդէպ սա եւս Հայոց ձեռքէն անցեր է այլազգեաց. բայց անցեալ դարու մէջ գաւառին գանազան գիւղերէն Հայեր գալով բնակութիւն հաստատած են։ Այժմ Հայք կը հաշուին 307 հոգի՝ բաժնուած 38 տան. իսկ Թաթարք 127 հոգի՝ բաժնուած 20 տան. որով բոլոր բնակչաց թիւն կը լինի 434։ Հիւսիսային կողմը կ՚ունենայ բերդի աւերակներ. արեւելակողմը՝ հին գերեզմանատուն և խաչքարեր. իսկ բուն գիւղի մէջ այլազգեաց թաղը կայ ոչ այնչափ հին եկեղեցի մը անսաւ քարերով և պատկերանկար որմերով, որոյ վերնայարկին հիւսիսային մասը քակուած լինելով, ի վերջոյ փայտով ծածկած են։ Դրան վրայ ունի Ռ՚ՃԼԵ (= 1686) թուականով արձանագրութիւն մը, յորմէ կը յայտնուի թէ շինողն է ոմն Պետրոս վարպապետ, և եկեղեցին նորոգուած է Ս. Աստուածածնի։

Գնդեվանից չքնաղակերտ եկեղեցին կը գտնուի վերջին քիչ մը հեռու հարաւային կողմը, զառիթաղի ձորի մը մէջ. արեւմտեան կողմէն կը հոսի Աբթա և ուրիշ առուակ մ՚ալ արեւելեան կողմէն: Շրջապատած է պարսատու և վայրենի ծառերով, ինչպէս լընկուզենի, ծիրանի, շլոռենի, կեռասենի, վեղձի, և այլն. կ՚երեւին նաեւ անթեր և երեսէ ձգուած բազմաթիւ նշխարներ, և տեղեակ տեղւոյն զառիթաղի վերջը, կը մտածէր շինել փառաւոր եկեղեցի մը և բնակեցնել հոն կրօնաւորներ: Այս մտածմամբ վերերը տեսիլք եւս տեղեակով փութով կանչել կու տայ քաջ արուեստաւորներ ու քարտաշներ, և շինութիւնը կը սկսի, ճակոր տեղով մէկու մը յանձնելով հոգաբարձութիւնն և գործը ա-



239. Գնդեվանքի կիրճը կամ Պռօշի Կասպ ըստ ածը:

—


այրեներ: — Օրբելեան պատմիչն մանրամասն տեղեկութիւն կու տայ վանացս եկեղեցւոյ շինութեան և այլ պարագայից նկատմամբ: Սիւնեաց Սմբատ իշխանի բարեպաշտ տիկինն Սոփիա, որ գուստր էր Դերենիկ Աքծրունւոյ, 936 թուականին կամ քիչ առաջ, տեսած գալով այս խորաձոր վայրը, ուր ի հնուց մնասատան կար և սուրբ վիմայից

տարաւելու պաշտօնը: Պատմիչը կը յիշէ վանացս երէց ոմն Հ. Սարգիս և գործակալ Եղիշա երէց նկարիչ: Վանացս մէջ մեծամեծ ճգնութիւններով փայլող կը յիշուի Հայրն Սուրեան Գնդունի: Եկեղեցւոյ շինութիւնը աւարտելով նկարներով կը զարդարեն առաքեալք և սրմերը, յետոյ մեծահանդէս նաւակատիք կատարելով, եկեղեցին կը կոչեն

Ա. վկայից անուամբ, և վանքի մէջ կը բնա-
կեցնեն պաշտօնեաներ ու կրօնաւորաց բազ-
մութիւն: Նոյն ժամանակ ձորին գանազան
կողմերը կը լեցուին խաւակրօն ճգնաւոր-
ներով: Բարեպաշտ սիկիներ վանքս կ'անուա-
նէ Գնդեվանք. և յետոյ կը շինէ համանուն
գիւղն վանքէն վար, անշուշտ ճիշդ այժմեան

մատաճի եր աճակն վայոց ձոր, լիճեցի զառ,
եւ եդի ակն ի վերայ:

Հայկական Նիւր (= 999) թուականին
վանահայրն Բրխատափոր՝ կը շինէ սկեղեցւոյ
գաւիթը. նոյնպէս հայր Գուրգէնը՝ որ երա-
նելի ու առաքր կոչուած է պատմչէն, մեծ
արձանք ունեցեր է վանացս վրայ: Ինչ



240. Գնդեվանքի ներկայ վիճակը:

գիւղի անգը, և սկեղեցւոյն ժառանգաւորներն
կու տայ ամէն Հարկերէ ազատ. նոյնպէս
սկեղեցւոյս կը յատկացնէ Աւետար գիւղը:
Իսկ ամբողջ ձորը վերէն վար մինչեւ Գո-
ղթոյի քար բուսած տեղը հրամանն կու
տայ անկել բազմաթիւ պտղաստու ծառեր,
նոյնպէս կը տնկեն այգիներ: Կը գրէ նաև
իր յիշատակարանն, որը կը վերջանայ հե-
տեւեալ գիտաւոր բացատրութեամբ. . . .

տարիներ վերջը (1008ին) Հայոց Տէր Սար-
գիս կաթողիկոսի և Աշոտի արքի Գագկայ
Թագաւորութեան օրով, վանացս առաջնորդ
ուրիշ հայր Սարգիս մը, մեծամեծ արձանք-
ներ ունեցեր է: Այս Դիտաւոր լեռնէն, ուր
են Ջկնարած գետոյն ակունքը, մեծ ծախ-
քերով և շատ աշխատութեամբ ջուր բերաւ
վանքը և անջրդի տեղերը ջրարբի գար-
ձուց: Եւ սկեղեցւոյն վրայ սեւագեղով յա-

տուկ արձանագրութիւն մը գրելով, ղազրի տակ կը ձգէ այն ամէնքը որ ջուրը կարմն։

Քնաշխարհի ուրիշ բազմաթիւ վանքերու նման Գնդեվանքի նիւթական վիճակն ալ տխուր է։ Վանացոց քարաշէն պարիսպները և աշտարակները այժմ կիսակործան վիճակի մէջ կը գտնուին։ Գեղեցիկ քանդակազարդ սեմերով զարպատն՝ քարերով ծածկուած է։ Ներսի բակը կը մացուի միայն հիւսիսային կողմի պարապի տեղ տեղ քանդուածներու վրայէն անցնելով։ Բակի երեք կողմերը մեծ զարպատէն սկսելով դէպ ի հարաւ և մասամբ ալ դէպ ի արեւելք կան եղեր վանականներու բնակարաններ. այժմ կանգուն մնացեր են միայն դռները, հացատունը, խոհանոցը, սեղանատունը, երկու սենեակներ, ախոռը և ներքնատուն մը, իսկ մնացած բոլոր շինութիւնները կիսակործան գրութեան մէջ են։ Կանգուն մնացածները մեծ մասամբ հարաւային կողմը կը գտնուին, գեղեցիկ և զուարճալի տեսարաններով։ Դէմ յանդիման խրոխտ բարձրացած սուր սուր կատարներով ժայռեր՝ կը ձեւացընեն անառիկ կիրճ մը, որ այժմ կը կոչուի Գնդեվազի կիրճ և ի հնումն Պաշի կապ։

Եկեղեցին կառուցուած է սեւ սրբատաշ մեծամեծ քարերով. շատ ընդարձակ չէ, բայց Ջալալեանի 10 քայլ երկայնութեամբ և նոյնչափ լայնութեամբ։ Ունի գեղեցիկ և վայելուչ կամարակիպ, որոյ երեսը սալած է սրբատաշ քարերով, բայց ափսոս որ տեղ տեղ քանդուեր են, և քանդուելու վրայ են միշտ։ Ներսը բաւական մաքուր պահուած է. չորս սրմնափակ սիւներ վեր կը բարձրանան կամարակիպին. բեմը բարձր է և անվնաս մնացած է սեղանը։ Վերջին վանահայր Պետրոս վարդապետի օրով, գրեթէ 30 տարի առաջ, ամէն տարեւարի օրեր պատարագ կը մատուցուէր, բայց այժմ միայն Ս. Աստուածածնի տօնին կը պատարագէ գիւղի քահանայն։ Բեմին երկու կողմերը ունի մէկ մէկ փոքրիկ աւանդատներ. եկեղեցւոյս երկու հարաւային և արեւմտեան գմբեթէն միայն առաջինը կը գործածուի. երկրորդին վրայ կայ եղեր վայելչակերտ զանգակատուն, որ այժմ կործանած է, գուն ալ քարերով հիւսուած։ Ջալալեանց ժամանակներ նորոգուեր է եկեղեցիս. մեզ ծանօթ են նորոգողներէն երկու անձինք, մին 1309ին անի Գրիգոր, և միւսն 1671ին գիւղի եկեղեցին շինող Պետրոս վարդապետը, որուն արձանագրութիւնը կայ արեւմտեան դրան ճակատին վրայ։ Սոփիա տիկնոջ, պատմչի յիշած արձանագրութիւնը չերեւիր, այլ միայն համառօտ յիշատակութիւն մը կայ արտաքին սրմոց հարաւային արեւմտեան անկիւնը, նոյնպէս կործանած գանգակատան վրայ, բայց կը թուի, թէ այս արձանագրութիւնը ի վերջոյ գրուած են փոխանակ հինեերուն, որոնք անշուշտ մաշած և ջնջուած էին։ Աւագին շինութենէն մնացած կան քանի մը արձանագրութիւններ, յորոց մին ունի 931 թուականը։ Ցիշելու արժանի է, արեւմտեան դրան կամարի մէջի, բազմապատիկ և այլ և այլ զարդերով և պատկերներով Քրիստոսի, սրբոց, թռչնոց, ձկանց, քանդակուած խաչվէմ մը, զոր ըստ արձանագրին, կազմած է Ղարատաչ անունով մէկը ՌԻԲ (= 1573) թուին։ Եկեղեցին որ ի հնումն Ս. Վկայից կոչուած էր, այժմ ծանօթ է Ս. Նախավկայի անուամբ։ Զորս կողմը կան բազմաթիւ գերեզմաններ և խաչքարեր՝ հանդերձ արձանագրութեամբ։ Վանացոց մէջ և մօտերը կը գտնուին հոգի տալկէն հնութիւններ, բրտի անօթներ, անակահ կահեր, պղնձէ անօթներ, կաթսաներ, և այլն։ 1875 թուին Յովհաննէս Տէր Յարութիւնեան ծերունի վարդապետը, որ վանացոց մէջ բնակելով բաւական մաքրեց և կարգաւորեց, հոգի տակէն գտաւ ուրիշ հնութիւններէ գտա, ծնծղաներ 1691 թուականաւ արձանագրութեամբ, երեք պղնձէ բաժակներ և հին զանգակ մը ՋՒԶ (= 1307) թուականաւ արձանագրութեամբ։ — Վանքը այժմ անտէր մնալով, գիւղացիք կ'օգտուին անոր հողերէն և պտղատու ծառերէն։ Վերջին վանահայր Տաթեւացի Պետրոս վարդապետը, շատ նորոգութիւններ բրած է, որ եթէ մնար այստեղ, շատ հաւանական էր, որ Սոփիա տիկնոջ այժմեան կործանման ենթակայ եկեղեցին վերանորոգուէր, և Գնդեվանքը գտնար ծաղկեալ և բարգաւաճ վանք մը։ — Միաբան, 103–107։ Հնութիւնք վանօրէից, Թ. 276 և 277։ Ջալալեանց, Բ 144–147։ Եւ այլն։

ԳՆԴՈՒՒ. — Լեռ Վասպուրականի Նորատուզ գաւառակի մէջ, Հոգւոց վանքի մօտ։

ԳՆԵԿԱՆՑ. — Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի. ունի Ս. Նշան և Ս. Գէորգ ա-նուամբ քարաշէն եկեղեցի։

ԳՆԹՈՒՆԻՔ. — Նախարարական տոհմ, Հայոց Վաղարշակ Թագաւորի ժամանակ, ո-րոնք ծագումնի Քանանացի էին։ Անոնց պաշ-տօնն էր Թագաւորին ձեռնոցները հագցընել։ Այս տոհմի բնակած երկիրը կը կարծուի Այ-րարատայ Նիգ գաւառը։ Պատմութեան մէջ բիչ անգամ կը յիշուի տոհմիս անունն։ Այրքունի զօրաբաժնին տունը կը մասնակցէին 300 հոգւով։ Գնթունեաց երկիրը և տոհմը նուաճուեր է Բագրատունիներէն։ Տասներորդ դարու մէջ Սիւնեաց կողմերը կը յիշուի տոհմիս անունն, և կը կարծուի թէ սերունդ-ներէն ոմանք այն կողմերը գացած ըլլան։

ԳՆԻՇԻԿ, ԳՆՇԻԿ, ԳԻՆԻՇԿԱԶՈՐ և ԳԵՏ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ կը գտնուի ձոր և գետակ։ Ջոր կոչուած է նաև Թմաձոր. ձուաձև կ'երկնայ արեւելեան հա-րաւ պէպի արեւմտեան հիւսիս։ Գետակն կը ձեւանայ գետազան վտակներէ, կ'անցնի համանուն Գնիշիկ գաւ կեղիլիկ գիւղի արեւ-մտեան կողմէն և դէպ ի հիւսիս առաջ եր-թալով կը թափի Աքթա գետը։ Ամագուայ Նորսմանից արձանագրութեանց մէջ կը հան-դիպինք Գինեչիկաձոր գրուած. այս ձորս Ամրատ իշխանաց իշխանը, ուրիշ նատէրներու հետ ընծայած է նոյն վանքին։

ԳՆՋԻ. — Հայոց հին բերդերէն մին, ո-րուն համապատասխան կը համարի Ինճի-ճեան, այժմեան Հրանիքիցի բուսածք։

ԳՆՈՒՆԻՔ.—Նախարարական տոհմ Հայոց, սերած Աորհոամանեայց Մինեքերիմ Թագա-ւորի զաւակէն, որոց նախահայր Վաղարշակ Թագաւորի տակառապետը լինելով, տոհմին անունը կոչուեցաւ Գնունիք, իսր թէ Գնի-ունիք։ Այս տոհմէն միջին Տիգրանի օրով, Հայոց Թագաւորի Գնէ տակառապետը, հե-ծելազօր գնդաւ Երուսաղէմ գրկուեցաւ։ Ար-շակ Թագաւորը գործակալութեան և հա-զարապետութեան մեծամեծ պաշտօններու բարձրացուց այս տոհմը։ Մեծ նախարարաց կարգէն էր տոհմս, և աշխարհախումբ բանա-կին կը մասնակցէր 500 հոգւով։ Ոչ սա-կաւ նշանաւոր անձինք եղած են տոհմէս, որոնք հայրենիքի և եկեղեցւոյ համար պատ-ւաբազմիւր և նահատակուեր են։ Գնունեաց երկրին վրայ թէպէտ յայտնի բան մը գրուած չենք գտներ ի գիրս, բայց Վարդանայ Իսա-քեբէն կը հասկցուի ըլլալ Տուրուբերանի Աղիովիտ գաւառ. մանաւանդ որ Թովմայի Աձթրունւոյ շարունակողը, Աբճէշ քաղաքը կը դնէ Գնունեաց մէջ, ըսելով Սրահանդայ Հպատակի ներքինւոյն համար, թէ ԺԱ. պա-րու մէջ առաւ «զԱբճէշ քաղաք Գնունեաց գաւառի». թէպէտև նոյն քաղաքը Վասպու-րականի Աբճիշակովիտ գաւառի կը վերա-բերի, որ սահմանակից է Աղիովտայ։

ԴԸՇԼԱՓ. Տես Ղշլաղ։

ԴՈՐՋԷՇԹ. — Գիւղ (Ռամանիա) Փորշանի, յորում կան երկու տուն Հայք։

ԴՈՒԱՇԷՆ. — Վրաբնակ (30 տուն) գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի, Ախալքալաքի արեւմտեան կողմը՝ գրեթէ 16 վերստ հեռաւորութեամբ։ Երեք կողմերէ շրջապատած է մեծամեծ ձորերով։ Գիւղս կը պատկանի Ախալցխացի Պ. Գրիգոր Բագրատունեանցի, որ հանգուցեալ Կարապետ արքեպիսկոպոսի ազգականին է։

ԴՈՒՐՈՒԱՋ. — Գիւղ (Ռամանիա) Պոյտուշանի, 2 ժամու ճանապարհ հեռու։ Հայ բնակիչ միայն մէկ երկու տուն ունի։

ԴՈՒՍՈՒ. — Կը յիշուի Ճիրակայ (Ալրարատ) Մարմաշէնու վանքի արձանագրութեան մէջ։ — Վասպուրականի Քաջբերունեաց գաւառի մէջ ևս կը յիշուի։

ԴՈՋՈՒ կամ ԴՕՋՈՒ. — Գիւղ Աբծկէի (Խորխոռունիք). ունի Ս. Աստուածածին ա-ւերակ եկեղեցի մը և 20–30 տուն բնակիչ։

ԴՈՒԱՋՈՐ. — Այս անուամբ Ներքին և Վերին կրկին գիւղեր կը յիշուին Սիւնեաց Ծղուկ գաւառի Ալլահ վիճակի մէջ. որոց այժմեան անուանք կամ պերքերը քննութեան կը կարօտին։

ԴՈՒԻ. — Գիւղ Ալրարատայ Ձակատաք գաւառի մէջ։

ԴՈՒԱՏԱԿԱՑ ԳԵՏ. — Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այլազգիներու Կիզկ տէրէ կոչածն։

ԴՈՒՈՇՏԻ ՎԱՆՔ. — Կը յիշուի Սիւնեաց

վայոց ձոր գաւառի մէջ։ Կը յիշուի նաև Գողշտի բերդ։ Տես և ԳՆԴԵՎԱՆՔ։

ԳՈՀԱՆԱՄ. Տես ՍԵՊՈՒՀ։

ԳՈՂԹՆ. — Սիւնեաց գաւառներէն մին, որոյ սահմանքն են արեւելքէն Արեւիք և Ձորք, հիւսիսէն Ծղուկ և Երնջակ, արեւմուտքէն Երնջակ և Տարաւէն Երասխ գետք։ Ի հնումն Սիւնիք և Վասպուրական, Հայոց երկու իշխանական տոհմերը կը մրցէին մէկմէկու ձեռքէ առնուլ և իրենց սեփհականել այս փոքրիկ գաւառը, որ ժամանակ մը ինքնիշխան եղած կը թուի։ Բայց որովհետև վերջին ժամանակները, Սիւնեաց աշխարհի սեփհական էր և բնական դիրքովն ալ անոր կը վերաբերի, ուստի պատշաճ է նոյն աշխարհի գաւառաց կարգը դասել, թէպէտ և նորին ալ իր ժամանակ Վասպուրականի գաւառ կը համարի։ Գաւառս հիւսիսային կողմը, Ձորք, Ծղուկ և Երնջակ գաւառաց մէջ եղած մասը նեղ է, իսկ ուղիղ լայն է Արեւիքի և Երնջակայ մէջ գտնուած մասը։ Գաւառս իր արեւելեան մասին մէջ ունի գտնագան ձորակներ, երկրացած հիւսիսէ դէպի արեւմտեան հարաւ, ուրմէն ջուրերը կը թափին Լիճառս. իսկ արեւմտեան մասը ունի երկարագոյն ձոր մը և գետ, երկրացած հիւսիսէն դէպ ի հարաւ, և սա է Բառաձորը, որ այժմ Կիլան—չայ կը կոչուի, և կը թուի լինիլ հին Ազատ—Գետան ըսուածը։ Գաւառս գետակները կը կոչուին գլխաւոր աւազաց անուամբ, որոց մտնէն կ'անցնին, և ասոնց անուանք են, Գետամայ չուր, Որդուձաոյ գետ, Ագուլեաց գետ, Տէռնիս, Ուստուփի, և այլն։ Գողթան արեւելեան սահմանը կը պարսպեն Ագանկեգի և Ղազանկեղի բարձրարերձ լեռներք. արեւմտակողմէ կը բարձրանան Դիւռ—ուսդ, Պլուխ, Թաշ—պաշի, և այլն։ Գաւառս մէջ բարձրացող միւս լեռներէն յիշենք միայն Լդրի և Կեռաւուր գագաթ։ — Երկրին հիւսիսային կողմը՝ մանաւանդ Բառաձորը՝ անտառային է, հարաւայինը օգտակար բուսաբերութեամբ ճոխացած՝ այգիներով և պտղաբեր ծառերով, և հին հռչակին համեմատ գիւղաւէտ։ Այժմ Գողթան հին այգիներուն հաւատար կրնան պարծիլ և թեպետ անոնցմէ աւելի շահաբեր են բազմաթիւ թիթեռներ՝ որք շերամից առաջ սքանչով կը մաահակարարեն և մեռաքսի նիւթ։

Գողթան գաւառը ի հնումն մեծ գեր խաղացած է մեր աշխարհի մէջ, թէ՛ զօրութեամբ և թէ կրթութեամբ, և Հայկազանց առանձնակ աշխարհաց և տոհմից նման, երկար ժամանակ իւրաքանչիւր յաջորդեր են իր իշխանութեան։ Հինգերորդ դարուն Վասպուրականի գաւառաց կարգը անցած է, բայց ի վերջոյ Սիւնեաց։ Թովմա Արծրունին յայտնապէս կը վկայէ, թէ Ս. Վահանայ նահատակութենէն վերջ՝ գրեթէ 737ին, Գողթան գաւառը վիճակած էր Սիւնեաց։ Գաւառիս անունը Սիւնեաց միւս գաւառաց հանգոյն քաղցրաձայն չէ, և ասոր պատճառ կը համարուի այս կողմերը գերի բերուած Մարաց գաղթն, ասոնցմէ եղած կը կարծուի նաև լեզուին այլայլութիւնը, որմէ մինչև ցարդ ևս կը տարբերի Գողթնեաց բարբառը։ Գաւառիս անունն ծանօթ էր նաև Պատմչին աշխարհապրին որ ժամանակակից էր գաւառիս պայծառութեան, Արտաշէս Բ. օրով, այնինքն է Քրիստոսի Բ դարու կիսուն. սա կը գրէ Κολθηνή՝ (Գողթինի), և բուա Լատինաց Coltene. Գաւառիս մեծութեան կամ զօրութեան նշան են, իրեն տրուած հետեւեալ կոչումներն. Գողթնաստան, Գողթան տուն, Գողթանց գաւառ։

Մեր պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Քրիստոսէ վեց դար առաջ, երբ Տիգրան Հայկազն Ադիաբենոյ գործէն կը բնակեցնէր «մինչև ի սահմանս Գողթան». ինչպէս կը գրէ Խորենացի։ Իշխանաց կամ նահապետաց կարգէն քիչեր կը յիշուին, և առաջինն կը յիշուի Շաբ կամ Շաբիր, Քրիստոսի Ա դարու կիսուն, և ասոր կինը Նշան, որմէն Խոսրով և Թոռն Վահան։ Ասոնցմէ վերջ Գողթան առաջին իշխանն կը յայտնուի անուն Ղառմ՝ Դ. դարու չորրորդ քառորդի մէջ. նոյն առներ Ներսիսեան գահնամակի մէջ կարգաւ 46րդ կը յիշուի Գողթնեաց աէրը. իսկ Սահակայ գահնամակի մէջ ե դարու սկիզբը 15րդ կը յիշուի։ Աբքունի բանակին Գողթնեաց զօրաթիւն էր 500 հոգի։ Հինգերորդ դարու վերջերը ծանօթ է գաւառիս Շաբիր անուն նահապետաը, որոյ երկու որդիքն էին Վասակ և Շապուհ։ Այս

երիտ. եղբարց մէջ ժառանգութեան կռիւ ծագեցով, Վասակ Արտաւազդ մօտ, որով մեհեանց կը վիրաւորէ եղբայրը, բայց յետոյ զղջալով և եղբայրը առողջանալով, ինքը բոլոր ժառանգութիւնը Շապուհի խոզով, աշխարհէ կը քաշուի և կրօնաւորելով կը կոչուի Հայր Գիւտ։ Ասոնցմէ վերջ գրեթէ ամբողջ դար մը անծանօթի կը մնան Գողթան գաւառի իշխանցողները և դէպքերը. յետոյ է. դարու սկիզբը կ'երևան կ'երևին ումն Վահամ. նոյն դարու կիսուն (652), բուն պատմութեան Դ. հեղինակ, Արարայիք կ'ասպատակեն այս գաւառը, և գերիներ ու աւար առած կ'անցնին Երասխէն։ Հօրմեղբօր դարուն վերջերն էր խոսրով, հզօրագոյն և երևելի վկային Վահանայ Գողթնեցւոյ հայրը։ Վահան է Վահանայ նահատակութիւնն 737 թուին, որոյ պատմութենէն կը յայտնուի նաև Գողթն գաւառի տէրերէն։ Ան չորս տարի գերի ձեռքով Ալանաց ամիրապետի մօտ, ակամայ և բռնի ընդունած էր անոնց դէնը, բայց յետոյ յորդ արտասուքով, զղջմամբ, ճգնութեամբ և նուիրական արիւնովը, բոլորովին ջնջեց և մաքրեց իր բռնի այդ մեղքը. հրաժեշտ առնով իր նոր հարսին (զոր իրեն տուին Սիւնեաց իշխանները), ցանկալի հայրենիքի և բոլոր աշխարհի։ Երեսուն տարի վերջ Գողթան տէր կը յիշուի Սիոն կաթողիկոսի ժողովոյն մէջ ումն Սահակ. իսկ անկէ վերջ չեն յիշուիր հայ իշխանք կամ տեարք այս գաւառիս։ Տասներորդ դարուն սկիզբը, Գաւառեայ հարուածներէն վերջ, կը յիշուի Ամիրայ Գողթան, զրուած Արարացիներէն։ Նոյն դարու վերջերը գաւառիս ամիրայ էր ումն Ապուսուրի կամ Ապուսէրի, որ 983ին տասը տակից դէպ ի Ձուռաշ և Վասպուրականի սահմանները. բայց քանի մը տարի վերջ՝ իր երկիրն ալ աւերեցաւ Աղբակատականի մեծ ամիրայ Յուսիկայի որդի Ապրնձայէն։ Յետոյ Ապուսէրի գարձեալ զօրանալով 989ին տուաւ նաև Դուին քաղաքը և Ամբատ Շահնշահի հետ խաղաղութեան դաշն գրաւ։ Որոշ չի գիտցուիր թէ մինչև երբ տեւեց այս ամիրայից իշխանութիւնը, բայց կը կարծուի թէ տեւած ըլլայ մինչև Թոխմախաց այս կոմսերէն քաշուիլն։ Այս կոմսանց Յուսիկ ակնութեան իշխանութեան ներքև մանելէն առաջ, Պարսից տիրապետութեան օրով, անտարակոյս եղած են հայ իշխաններ կամ մելիքներ։

Գողթն բնական բերքերէն և քաղաքական անցքերէն աւելի նշանաւոր է կրօնական կառոյցը. ժողովուրդը խիստ պաշտօնասէր կը գտչակուի, հին հեթանոսական կրօնից ժամանակէն սկսեալ, և հին աւանդութեանց չափ պաշտպան. սակայն ներկայն մեզ բոլորովին անծանօթ է։ Բրիստոնէութիւնը՝ մեր պատմիչներու աւանդածի համեմատ, բնդունած են Բարթողիմէոս առաքեալէն, թեև նաև Թովմայէն, և բուն այսմ՝ սմանք կ'ըսեն թէ Գողթնեցիները և Սիւնեցիները Հայաստանի միւս գաւառներէն առաջ բնդունած են ճշմարիտ կրօնքը։ Գաւառիս մէջ Ս. Բարթողիմէոս նախ շինեց եկեղեցի՝ զոր կոչեցին Ցեղաւոր բնդ առաչ, և Արդաւազդ վեհասակար ջուրերը բոլորովին անյայտ բրաւ. մկրտեց Շաւարշ իշխանը բոլոր բնտանիքով, և առաջնորդ եպիսկոպոս դրաւ Կումախ անուամբ իր աշակերտն։ Աւարձելոյս աշակերտներէ սկսեալ կը համարուի Գողթան եպիսկոպոսաց կարգը, բնդհանուր ազգիս ի Ս. Գրիգորէ լուսաւորութենէն առաջ։ Ս. Լուսաւորչէն սկսեալ մինչև Թէոդ գար, 303 տարիներու մէջ, Գողթան գաւառի ծանօթ եպիսկոպոսներն են. Մովսես Տարօնացի, Սահակ Տարօնացի, Զրուանդատ, Ստեփանոս, Յովհաննէս, Մուշէ, Աղեաստաս, Սիոն, Մարուխրոս և Եսայի՝ որ յետոյ կաթողիկոս եղաւ։ Իննսերորդ գարէն մինչև ԺԴ. գրեթէ չեն յիշուիր Գողթան եպիսկոպոսները, և յայտնի է թէ Սիւնեաց մետրապոլիտներու իշխանութեան ներքև էր նոյն միջոցները։ Նոյն գարէն վերջ գարձեալ կը յայտնուին եպիսկոպոսներ, Սիւնեաց կամ Տաթեւի թեմէն անկախ, և ծանօթներն են. Սարկաւագ՝ 1280–1300, Տէրտէրեան՝ 1424, Խաչատուր՝ 1669, Պետրոս՝ 1680, Թովմաս Վանեցի՝ 1691–1712, Յովհաննէս՝ 1708, Թովմաս՝ 1737, Յովհաննէս՝ 1740 և Միմոն՝ 1830էն վերջը, որ է վերջին եպիսկոպոս Գողթան. վասն զի 1838ին գաւառիս եպիսկոպոսութեան աթոռը վերցաւ և այնուհետև գրուեցան լոկ առաջնորդներ։

Գաւառիս կրօնական պիտոյ մէջ, յետ Ս. Բարդողիմէոսի և Ս. Լուսաւորչի քարոզութեանց, յիշելու արժանի է մեր գրութեան հօր՝ Ս. Մեսրոպայ Գողթան վրայ ունեցած արկածքն, որ կրկին անգամ լուսաւորեց այս գաւառը և քրիստոնէութեան մէջ հաստատեց ժողովուրդը։ Հայերէն տառից գիւտէն վերջ վերադարձաւ Ս. Մեսրոպ «ի նախնի աշակերտաւոն Գողթն», ինչպէս կ'ըսէ Խորենացին, կամ «յառաջին դաստակերտն իւր», ըստ Կորիւնի, և կրկին ուսուցանէր «կարգէր յամենայն կիւղս գաւառին դասս սրբոց վանականաց. որում և հասեալ ժամանեալ հայրապարտութեն Գաղ՝ սրբոյ Շարաթեայ, առն քրիստոսասիրի, բազում ապաշաւութեամբ՝ իբրև հաւատարի սրբոյ՝ վարդապետին առնէր»։ Ս. Մեսրոպ իւր առաջին գալստեան՝ գաւառիս մէջ հաստատած էր վանք մը, որ իբրեն անուանի յետոյ հանոսկելով կամ ծեքելով կոչուեցաւ Մաշթեւաց, ուր կ'ուզէին ամանք հանդուցանել սրբոյն մարմինը, բայց վախան Ամատունին չթոյլատրեց և տարաւ հանդոյց յՕշական։ — Նոյն ատեններ յորս առանձնացած էր Ս. Մեսրոպ, ժամանակ մը առանձնացաւ, Աղան արծրունի՝ որ էր առաքինազարդ աշակերտ Ս. Սահակայ և ուսուցիչ Դպրաց Փարպեցւոյն։ Ի՛ր գարու սկիզբն ալ, Պօղոս վարդապետը, որ անապատական կենաց ի Հայս վերանորոգող երեք գլխաւոր հայրերէն մին եղած է, սկսաւ քարոզել գաւառիս մէջ, և բաւական հալածանք կրելով սոխակաւանցւոց երեսաց ի Տաթեւ։

Ս. Մեսրոպայ երկրորդ գալստեան ի Գողթն ոչ միայն կրօնական կրթութեան համար էր, այլ և գրականութեամբ ապահովել կրօնքը և զարգացնել։ Գողթան գաւառս իբրեն անփոխարէն առանձնայատկութիւնն ունի նաև գրականութեան մէջ՝ մեր աշխարհի ուրիշ գաւառներէն աւելի։ Իւր բնակիչները հեթանոսական պաշտամանց հետ այնպէս ամուռաց պահած էին նաև իրենց նախնեաց վիպասքական աւանդութիւնները և Հայոց քաջերու և թագաւորաց արուեստան գործերը իրենց քնարերգ և բանաստեղծութիւններով անմահացուցած. մեր պատմահայր Խորենացին այդ բանաստեղծութիւնները, որոնք ծանօթ են երգք բուերեաց և վիպասանութիւնք անուններով, սակայ կը յիշէ։ Գլխաւորաբար երկու վիպասանութիւնք պահուած կ'երեւին Գողթան մէջ. որոնք են Հայկազն Տիգրանայ գործերը կամ Աժդահակայ հետ բրած պա-



241. Ջրվիլը օրհորդ Գողթան կողմանց։

տերազմ այս կողմերը։ Նախ հայերէն տառից գիւտէն առաջ, իբրև աստուածախոհ և մենաւէր անձն, հոս առանձնացաւ, և անդնելով որ տակաւին հեթանոսական ազանդը վերցուած չէ, գաւառին Շարիթի իշխանին օգնութեամբ և իւր քարոզներով, բոլորովին

տերազմը և Աբասաշէս էն գործերը, և ինչ որ նոյն ժամանակները հանդիպած են։ Աբասաշէսի վրայ երգուածը, թերևս իր որդին Վրոյր՝ որ նշանաւոր բանաստեղծ մ՚էր, երգած լինի։ Բուզանդ՝ կը կարծուի թէ Գողթնեցիները կ՚ակնարկէ, երբ մեզապրկով Հայերը կ՚ըսէ, թէ սիրելով և երգելով իրենց նախնեաց վիպասանութիւնները՝ կը խուլանային քրիստոնէական կարգերէն, Մեծին Ներսէսի մահէն վերջ։ Այս երգերու մեր ձեռքն հասած տողերէն, կը տեսնուի թէ ինչ տոտիճան զարգացեալ վիճակի մէջ կը գտնուէր գաւառս ի հնումն։ Այդ երգերն չեն նմանիր այժմեան Գողթնեցւոց ամկական լեզուին, այլ գրուած են բնաիր կամ պարզ հայկական բարբառով։ Այժմեան Գողթնեցւոց բարբառը խիստ կը տարբերի ուրիշ գաւառաբարբառներէ։ Գաւառիս Ագուլիս վիճակի բարբառը, յատուկ և բնական անուամբ Զոկ կը կոչուի, զոր ամենք կը համարին ծագած Պարսից Զօհակ անունէն (որ է Աժդահակ), իբր թէ անոր սերնդոց խառնուրդ լինին Գողթնեցիք։ Մարգիս Մարգսեան 1883ին հրատարակեց Մոսկուայի մէջ լեզուաբանական հետազօտութիւն մը Զօկերի լեզուի մասին. ան կերպով մը կը հաստատի Պատկանեանի կարծեաց, թէ Զօկ հայցականն հոլով է Չօկ կամ Օկ դերանուան, զոր յաճախ Ագուլեցիք խօսելու միջոց կրկնելուն համար, օտարներէն հեղնօրէն նոյնպէս կոչուած է։ Ոչ միայն Ագուլեցիք՝ այլ և Ջղնեցիք և ուրիշ մերձարտակներ, նոյն բարբառը կը գործածեն։ Ամենք կը կարծեն թէ գաւառիս բնակիչք կամաւին այլափոխած են իրենց բարբառը, որպէս զի անհասկանալի ըլլան այլազգիներուն։ Նշանաւոր են Գողթնեցիք վաճառականութեան մէջ և միանգամայն հանճարեղ. յիշենք միայն Վանանդեցի Թովմաս եպիսկոպոսը և իր քեռորդին Դաւիթ՝ որք ժէ դարու վերջին քառորդին և ԺԲ դարուն կիզմնեցիք՝ Հոլանտայի Ամստերդամ քաղաքի մէջ տպագրութեամբ ի լոյս ընծայեցին շատ գրքեր։

Օրբելեան պատմիչը Երնջակ և Գողթն գաւառները միացուցած մէկ գաւառ կը նշանակէ և միայն 30 գիւղերու անուններ կը գրէ, յորոց՝ որոշհետև միայն երրորդ մասը մեզ ծանօթ է գրեթէ, չգիտենք թէ միւս անծանօթները երկու գաւառներէն որուն կը վերաբերին։ Այդ պատճառաւ մենք ատ կը դնենք այդ գիւղերու անուանք հանդերձ եղեցուց տրիւքը, նշանակելով միանգամայն փակագծի մէջ ծանօթներու գաւառը. այս ալ ըսենք, թէ նոյն պատմչի գրոց մի քանի օրինակաց մէջ գրուած է միայն Երնջակ գաւառ՝ ատոր գիւղերով.

Բուստ . . .	12	(Գողթն)
Տեսի . . .	12	(Գողթն)
Ամասրոյ վանք . .	12	(Գողթն)
Նորակերտ . .	12	
Ողոին . . .	12	(Գողթն)
Թեղեակ . . .	8	
Գունդավանք . .	8	
Ոսկեձոր միւս . .	12	
Անգուդիք . .	12	
Նորագիւղ . .	12	
Արեւէք . . .	8	
Շաղկերտ . .	8	(Գողթն)
Ս. Գէորգ . .	8	(Երնջակ)
Զաւաչրի վանք .	12	
Ապարանք . .	12	
Վան . . .	12	(Գողթն)
Գոչեն . . .	8	(Գողթն)
Գաղ . . .	12	(Երնջակ)
Ոփիկ . . .	8	
Մայրեակ . . .	12	
Վանանդ . . .	18	(Գողթն)
Ագուլիք . . .	12	(Գողթն)
Տերեկունիք կամ Քէ- քէրունիք .	12	
Ամատաշէն . .	10	
Ողջաս, Ողջու կամ Ովղաս .	12	
Գռվնա կամ Տքովնա.	8	
Ապրակունիք . .	12	(Երնջակ)
Քարկոփ . . .	12	
Բերդիկ . . .	12	(Երնջակ)
Ռասպատ . .	12	

Ասոնցմէ գաւառ Գողթնան բաժնին մէջ կը յիշուին նոյնչափ ևս գիւղեր, բայց նոր վիճակագրութենէն և արձանագրութենէն, որք են հետեւեալները.

Թագաւորամարգ	Վերֆ֊ի
Դաշտ · Ստորին Ա֊Գետցիկ	
գուլիա	Գեղերեցիկ
Ցղնա	Նուռնինց
Ռամիա	Որդուատ
Բուհրուտ	Վաղատւեր
Փառակա	Փառակերտ
Շըջու	Փորաղաշտ
Աղաւեցիկ	Մցգուն
Դաստակ	Աստուածաճաճնի գիւղ
Տրունիք	Բազմաւի
Տնակերտ	Գանձի
Օքովանիա	Դեղասը
Քաղաքիկ	Սալ
Ամապատ	Պելեւ
Անդամէջ	Թուրս

Գողթան գաւառի հայրենի պայազատութեան գպրեվէն վերջ, վերցաւ նաև իւր անունն, և կոչուեցաւ այլազգիներէն Որդուատ՝ ուր կը նշանակէ ամիրայ մը և կը կատարվէր ամբողջ հին Գողթն գաւառը։ Այնուհետև Պարսից և Օսմանեանց տիրապետութեան միջոց և յետոյ Թուրաց ժամանակ ևս մինչև ցայսօր, այս անուամբ ծանօթ է գաւառս, որ վիճակակից է Նախճաւանի կուսակալութեան։ Պարսիկները կոչած են նաև Լչգաս–ձիրան, որ է մեր հին Ազատ Գիրանը։ Թէպէտև գաւառս այնչափ բնակարձակ չէ և չունի զօրաբաւոր գիւղեր, բայց իւր ձորերու և ձորակաց համեմատ այլազգիներու իշխանութեան ժամանակ բաժնուած էր զանազան վիճակաց։ Այժմ ևս բաժնուած է հինգ մասերու. Ա. Որդուատ իրեն գեղակովը. Բ. Ագուիք. Գ. Տատահի, իսկ մեզ ամէնէն յարմար կը թուի կոչել վանեանդ և վանեանգաձոր՝ անուանի գիւղին համար, և կամ Տրունիք. Դ. Զիճանաւ որ է վանանգայ և Բաղաձորայ մէջտեղ, և կարելի է կոչել Ցղնա. Ե. Պելեւ՝ որ ի դասնեաց կոչուած կը գտնենք Բաղաձոր, և կը թուի թէ նախապէս կոչուած լինի Ազատ Գիրան, վասն զի ցարդ իւր գեղը կը կոչուի Գիլեան և նոյն անուամբ ամէնքակ տեղ մի ևս կայ։ Գաւառիս հարաւ արեւելեան ծայրը կայ Քեալիր անուամբ այլազգաբնակ աւան մը, որ կը համարուի լինել հին Գողթն աւանը։ — Մխակաել, 308–315։ Եւ այլն։

ԳՈՂԹԱՆ ՏՈՒՆ. *Տես* ԳՈՂԹՆ։

ԳՈՂԹԱՆՑ ԳԱՒԱՌ. *Տես* ԳՈՂԹՆ։

ԳՈՂԹՆԱՍՏԱՆ. *Տես* ԳՈՂԹ։

ԳՈՂՋՈՐ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԳՈՂՋՐԵԱՑ ՎԱՆՔ. — *Միաբանաց հին վանքերէն մին կը կարծուի, տեղը և պիրքը անծանօթ։*

ԳՈՂՈՑ ԱԳԱՐԱԿ. *Տես* ՍՈՂՔ։

ԳՈՂՈՑ ԱՂԲԻՒՐ. — *կը յիշէ Յովհաննէս Մամիկոնեան, Տարօնոյ Տարօն գաւառի մէջ։*

ԳՈՁԱՄԱՆ ՊԱՇՏ. — *Հայաբնակ գիւղ Ձառնիի առաջնորդական վիճակի։ Ունի Ս. Յակոբեան վարժարան մը՝ 70 աշակերտներով։*

ԳՈՂՋՈՑ ՎԱՆՔ – *Հին Մոկաց աշխարհի և այժմեան Վանայ կուսակալութեան Մոկաց գաւառի մէջ կը գտնուի վանքս։ 1870 ին՝ ինչպէս կը գրէ Հայրենիք լրագրի թղթակից մը. «Այս ազգային հաստատութիւնն ալ կը զոսպատեր, աւերեր ու ամայացեր է Պարվարեան Օսման ազային և իր խումբին, ցեղեկ առեն՝ յայտնի համարձակ՝ հրապարակաւ, աներկիւղ և անարգել»։*

ԳՈՁՈՑ ՁՈՐ կամ ԿՈՁՈՐ։ *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԳՈՄ. — *Գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի, այժմեան Բարալէթի վիճակի մէջ։ Ունի 800 հայ բնակիչներ, բաժնուած 190 տան։ Գիւղիս մէջ խոշոր սարի վրայ, խաչարձան մը կայ, որ ախոռատեղի է Ս. Գէորգ անուամբ։*

ԳՈՄԱՋՈՐ. — *Երբեմն մեծ չէն և այժմ գիւղ Ակլրատաւոյ Բասէն (Հաճունիք) գաւառի մէջ։ Ասողիկ (Բ. 1) գիւղաքաղաք ևս կը կոչէ գիւղս, ուր Թէոփիլոս կայսեր ժամանակ (836–7), Յաւնաց ինքնապետն առպատակները գալով, «զքաղաքն խողխողեցին սրով». բայց յետոյ իրենք ալ կոտորեցան Վանանգայ կողմերը։ Ունի այժմ 80–100 տուն հայ բնակիչ, որոց գեղջուկ ասմունքը կը կոչուի Գոմաձոր–օղլի։*

ԳՈՄԱՋՈՐ. — *Գիւղ Ակլրատաւոյ Վարաժնունեաց գաւառի արեւելեան ծայրը, Գնդամայ ծովակէն գրեթէ քառորդ ժամ հեռու, շինուած է փոքրիկ ձորի մէջ, լերան մը ստորոտը։ Աշտա Ա գեա չէ յիշատակուած և իր գաւառը Սոփի տիկնին Սիւնեաց, այս գիւղս նուիրեցին Սիւնեայ Ս. Գէորգ եկեղեց-*

ւոյն։ Կը կարծուի թէ Գամաճոր անունն սուացած ըլլայ այն ժամանակ, երբ գիւղս անցը, Մեանայ վանքի անասնոց գոմանոցն է եղեր։ Գիւղս ունի այժմ 50 տուն հայ բնակիչք։ Եկեղեցին Ս. Յակոբ՝ անշուք է։ Աւազքարաբ է անցւոյս ադբիւրի ջուրը։

ԳՈՄԱՋՈՐ. — Գիւղ Ա.յբարատայ վանանդ (կարս) գաւառի մէջ, գետակերքի մօտ, Գաբաճէօրէնի արեւմտեան հարաւային կողմը։ Ա.յս գիւղը այժմ գոյութիւն չունի, մօտը կայ ռուսարնակ Ա.լեքսանդրովկա նոր գիւղը։ — Ա.յս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր եւս եղած են մեր աշխարհի մէջ, որոց ա. նուանք յիսուց այլափոխած են եւ կամ գիւղերն ամայացած։

ԳՈՄԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Հազ. բոյ գաւառի մէջ։ Հայ բնակիչք միայն 2 տուն են։

ԳՈՄԱՆՑ. — Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի կամ վանայ կաւառակալութեան Մոկը գաւառի մէջ։ Բնակիչք կը հաշուին 40 տուն, ունին Ս. Գէորգ անուամբ եկեղեցի։

ԳՈՄԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ կամ ՏԱՏԲԱՔՆԱԿ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Ադձնեաց Ա.լանոյ ձոր գաւառի մէջ կը գտնուի վանքս, Բաղէշ քաղաքի արեւմտեան կողմը, և Գոմս կոչուած գիւղի կամ քաղաքամասի հեռաւորութեան արեւելակողմը, երկու քարընկէց հեռու։ Տատրաքնակ կոչուելու պատճառ եղած են այս տեղ գտնուող բազմաթիւ տատրակները։ Սրբատաշ քարերով կառուցուած վանացս գոգարիկ տաճարի գմբեթակառոյցը կը բարձրանայ վեհ կերպով և կը հսկէ շուրջը գտնուող 8–10 խցիկներու և 2–3 խորանարդաձեւ վաներու։ Տաճարի մէջ կ'ըսեն թէ կը պահուի կենաց փայտի մասն մի, Բարսղի կեսարացւոյ աջը, Լուսաւորչի բեւեռը և Ս. Գէորգայ նշխարներէն։ Վանքս ունի հողային բաւական կալուածներ և մէկ քանի թեմական գիւղեր։ Մենաստանս շրջապատող լեռներ վեհութեան փայլ մը կու տան իրեն և անմահական բոյր մը կ'ազդեն օդին և ջրոյն. ծառերն ու ծաղիկները՝ որ կը պճնագարդեն տեղւոյս գարունը՝ խաչաձիակ և խոց ադբիւրներու մեղրածորան կայլակաց հետ, կ'սքանչացնեն զմայլիկ։ — Վանքիս տաճարի աջ թեւին առակ կը գտնուի, Բաղէշի նշանաւոր վաճառականներէն Շաղիկեան գերդաստանի նահապետ Մ. Դաբիպճեանի ծախքով կառուցուած վարժարանն։

ԳՈՄԱՅ ՁՈՐ. — Բաղէշ (Ադձնիք) քաղաքի ձորերէն մին։

ԳՈՄԱՅ ՎԱՆՔ. Տես ԳՈՄՍ։

ԳՈՄԱՐՏԵՐ. — Գիւղ Սասուն Շատախի, բուն վիճակագրութեան Ագ. Պատրիարքարանի։ Բնակիչք հայ և քուրդ խառն են։

ԳՈՄԵՐ. — Գիւղ Բարձր Հայոց (Գարաճադի) այժմեան կամախ գաւառի, որ իբ մէջ ունեցած ապի և քարածածխի հանքերուն պատճառաւ, նոյն գաւառի կեդրոնավայրը կը համարուի։ Ա.կռի յարգի են ապի լճակներն, որոց ադբիւրը՝ գիւղիս մէջ լճանակի մը սուռրուակ կը բղխէ։ Ա.րեզակեան սաստիկ ջերմութենէն, ապը կը բխբիզանայ մաքուր, ապխտակ և անուշահոտ։ Ա.մառը վեց ամիս այս արծաթափայլ հարիւրաւոր լճակաց երեսը կը հատաքարին շատ հեռուէ տեղէ եկած յամախորդք։ Շատ առողջարար է տեղւոյս կլիման. ի հեռուց հայ անուամբ կը կոչուի Գոմեր, իսկ ի թրքաց Քեօմիւր։ Կը գտնուի Եփրատայ եզերքը։ Ունի 80 տուն բնակիչք, կէսը հայ և կէսը մահմետական։ Հայք ունին Ս. Ա.ստուածածնայ անուամբ փոքրիկ եկեղեցի մը, և Ա.բրահամ անուն քարաշէն գպրոց մը։

ԳՈՄԵՐ. — Գիւղ Տուրաբերանի Տարօն գաւառի մէջ, Մշէն 2 ժամու ճանապարհ հեռու։ Ունի մօտ 100 տուն զուտ հայ բնակիչ։ Գիւղէս վար կը հոսէ փոքրիկ առուակ մը։

ԳՈՄԵՐ. — Գիւղ Մոկաց աշխարհի. ունի Ս. Գէորգ քարաշէն եկեղեցի մը և 50 տան չափ հայ բնակիչներ։

ԳՈՄԵՐ. — Ձայմանուրաց մէջ կը գիշուի գիւղս, Կոզովիա (Ա.լբարատ) գաւառի մէջ։

ԳՈՄԵՐ. — Բարձր Հայոց Մասատ տեղեաց կոչուած տեղը, որ Բաբերդէն մէկ ու կէս օրուան ճանապարհ հեռու է, կը գրաւնուին բազմաթիւ գոմեր և ախոռներ, հողի մէջ մէկ մէկու մօտ փորուած։ Ա.ռանց մէջ կը պահեն, կ'ըսէ Խնձիճեան, արջառներ, ոչխարներ, ձիեր և գրասաներ, և կարծիք կը յայտնէ, թէ հին ժամանակներ եւս այս տեղ գոմեր եղած լինելու են, և հետևա-

կան կը թուի իբր ենթագրութիւնն, եթէ այս գոմերու շուրջն գանուող երկիրներն կը ձեւացնէին Բարձր Հայոց հին Շատգոմք գաւառն, վասն զի նոյն իսկ Շատգոմք անունն ալ նոյն նշանակութիւնն ունի գրաբար լեզուի մէջ, ինչ որ ունի աշխարհաբար Գոմերը։

ԳՈՄԵՐ. — Միւնեաց Մզուկ գաւառն ունի այս անուամբ հին գիւղ մը։ — Շահապօնից մէջ ևս կայ այս անուամբ Հայոց գիւղ մը։ — Այս երկուքին ևս ներկայ վիճակին մեզ անծանօթ է։

ԳՈՄԵՐՈՒ ՋՈՒՐ. — Բարձր Հայոց Կամախ գաւառի մէջ։

ԳՈՄԻՇՏՈՒՆ. — Գիւղ Շապին–Գարահիսարի. 50 տուն հայ և 2 տուն մահմետական կայ։ Հայք հողագործ են, և ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և վարժարան՝ 50 աշակերտներով։

ԳՈՄԸԿԱՆ. — Ամասի գիւղ Բանուշէն գաւառի, Մշոյ դաշտի հարաւային կողմը։ Հայկական աւերեալ եկեղեցին կը մնայ ժողովրդենէ զուրկ։

ԳՈՄԻԿ. — Այս անուամբ երկու գիւղեր կան Այրարատայ մէջ, որոց բնակիչք այժմ այլազգի են։

ԳՈՄԻԿՆԵՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց Կամախ գաւառի մէջ։

ԳՈՄԿՈՒՆՔ. — Հին Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, զոր կը յիշէ Բուզանդ։

ԳՈՄՇԱԹԱՄ. Տես ԱՇՏԱՐԱԿ։

ԳՈՄՇԻՃՈՒՊԱՆ. — Այս անուամբ ադրիւր մը կայ Միւնեաց Աղահէճք գաւառի մէջ։

ԳՈՄՈՑ ԳԻՒՂ. — Միւռական հոլով Գոմք գիւղի։

ԳՈՄՈՒ կամ ԳՈՄՔ. — Գիւղ կամ քաղաքամասն Բաղիշոյ (Աղձնիք), քաղաքէն բիչ հեռու արեւմտեան կողմը, որուն սահմանը կը գծէ խոսրովու կամ խոցերու գետն՝ որ կարճնաց գետ ևս կ'ըսուի, տեղէն 2 ժամու ճանապարհի չափ դէպ ի հիւսիս եզող Արձինաց Ս. Գէորգ կոչուած աւերակ վանքի անուամբ։ Գիւղս ունի մօտ 60 տուն հայ բնակիչներ, որոնց մէկ մասը կը զբաղի թիթեղ երկրագործութեամբ, անոնք չափազանցութեամբ, մէկ բանին նախնական արհեստներով և մնացեալք՝ պանդխտութեան մէջ կը մնան։ Տես ԳՈՄԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք։

ԳՈՄՈՒ կամ ԿՈՄՈՒ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի հին Երիւարք գաւառի և վանայ այժմեան Կարճկան գաւառակի մէջ։ Գիւղացիք տարածուած է Կարճկանի գաշար։ Ունի 50 տուն բնակիչ և Ս. Թովմայ անուամբ անձև եկեղեցի մը։ Տզայք կ'երթան Էդիզիս գիւղի վարժարանը, որ մէկ ժամու ճանապարհ հեռու է։ Գիւղէս 2 ժամու ճանապարհ հեռու դէպ ի հիւսիս լճակին վանայ ծովակի եզերքը շինուած է Գոմայ վանք կամ Ջուղպրէ Ս. Գէորգայ վանքը, որ այժմ անմատոյցնակ է, հակառակ իր դեղեցիկ շինուածքին։ Վանքիս մէջ կը պահուէր Ս. Գէորգայ գլուխը, զոր յետոյ փոխադրած են Գոմս գիւղը, ուր կը նայի նաև վանաց առաջնորդը։ Ունի բաւական հարուստ հողեր Կարճկանի գաշարի մէջ։

ԳՈՄՈՒ կամ ԿՈՄՈՒ. — վանայ շրջակայից հայաբնակ գիւղերէն մին։ Ունի մօտ 50 տուն բնակիչ և Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։ Սիրուն է տեսարանը, բայց սակաւ է ծառատունկը։

ԳՈՄՈՒ կամ ԿՈՄՈՒ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտեան հիւսիսային կողմը։ Բնակիչք 100 անձն աւելի են։ Ունի վարժարան 1870ին հիմնուած։

ԳՈՄՑԵՑ ՁՈՐ. — Այրարատայ Շիրակ գաւառի Հաւնոյ վանաց արձանագրութեան մը մէջ կը յիշուի։

ԳՈՄՔ. — Հայաբնակ գիւղ Զորբոզ Հայոց Հանձիթ (Խարբերդ) գաւառի մէջ։ Բնակիչք 200 տուն կը հաշուին. ունին Ս. Կարապետ եկեղեցի մը և Ս. Փրկիչ անուամբ վարժարան։ Ընտիր է գիւղիս դիրքն. ամէն տուն դիրի կը շինէ և կը պահեն կարասներով։

ԳՈՄՔ. — Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ։ Բնակիչք 70 տուն են, կէսը հայ և կէսը մահմետական։ Հայք ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը։

ԳՈՄՔ. — Այս անուամբ մի քանի գոմեր և այլազգաբնակ փոքր գիւղեր կան Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։ Տես ԳԱՂՈՒՆԻ, ՎԱՅՈՑ ՁՈՐ և ԿՈՒՍԳԵՑ։

ԳՈՑՄԱՀ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ

գաւառի մէջ։ Ունի 40 տուն հայ և եկեղեցի։

ԳՈՆ. Տես ԿՈՎԱԿԱՆ։

ԳՈՆԱԳԱԼՄԱՋ. — Գիւղ Խարբերդի առաջնորդական վիճակի։ Ունի 50 տուն հայ և 100 տուն մահմետական։ Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի և վարժարան. կը գրաղին երկրագործութեամբ։

ԳՈՆԱԳԼՂԻ. — Գիւղ Ձանիկու առաջնորդական վիճակի և Զարշամպա գաւառակի մէջ։ Ունի մօտ 60 տուն հայ բնակիչ. Ս. Լուսաւորիչ եկեղեցի մը և նոյն անուամբ վարժարան մը՝ 40 աշակերտներով։

ԳՈՆԴԻ ԼԱԼԻ. — Գիւղ Տիգրանակերտի Ալխան գաւառի, 2 տուն հայ կայ։

ԳՈՆԴԻ ՋԱՆՈՅ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի մէջ։ Ունի 110 տուն բնակիչ և եկեղեցի։

ԳՈՆԴՂԻ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 8 տուն հայ կայ։

ԳՈՆԵԱ, ՂՈՆԻԱ կամ ԻՈՆԻՈՆ. Գր. KONIAH. — Դիրաւոր քաղաք և կեդրոնավայր համանուն կուսակալութեան և գաւառին. ի հնումն մայրաքաղաք Սելճուկեանց։ Դիրքը թէև կեդեցիկ չէ, կառուցուած հարթ ու ընդարձակ դաշտի մը վրայ և շրջապատուած բարձր լեռներով, բայց օդը լաւ է, իսկ ջուրը լաւ կը լինի եթէ քանի մը ամիս պահուելէ վերջը խմուի։ Ջրոյն այս յատկութեան պատճառ կը համարուի՝ հողին մէջ բաւական խառնուած բլլալն, քան հեռագոտութեան թշխաց։ Բուսական հնութիւնք կան քաղաքին մէջ. սուլթան Ալայէտտինի գահն ու պարիսպը հազ բլրոյ մը վրայ է. գահուն շէնքի հիմքը ճնացած է։ Նշանաւոր են Սէլիմ և Ապուխլ Ազիզ սուլթանաց շինել տուած մզկիթները և Մէվլանայի պարբանրին կանաչ գմբէթը, որ 650 տարուան հնութիւն մ'է, համակ մարմարիոնէ և արուեստի ցցուն քանդակներով։

Քաղաքս ունի 44,000 բնակիչ, և բուս վ. Քինէի հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	39,300
Հայ Լուսաւորչականք	3,000
Հայ Բողոքականք	50
Ցոյներ	1,500
Ղիպտի կաթոլիկներ	150
Գումարն...	44,000

Հայք ունին փաթրիկ եկեղեցի մը Ս. Աստուածածին կամ Ս. Յակոբ անուամբ և վարժարան մը Ս. Մահակեան։ Քաղաքիս հին սուլթաններէն, ինչպէս պատմութենէն յայտնի է, մերթ գաշնակից և մերթ թշնամի եղած են մեր Թուրքմանաց։ Տկուսյս Հայոց գրեթէ կէսը կեսարացի են։ Հայ Բողոքականք ունին ցերեկօթիկ և գիշերօթիկ դպրոց։ Լերոպացի Եղբարք (Ֆրէռ) և Քոլք ունին վարժարաններ։ Ցոյնք անջատ թաղի մը մէջ կը բնակին, ունին իրենց եկեղեցին և վարժարանը։ — Տեղական բերքերու (գորգ, բուրդ, այծմազ, բամբակ, մորթ, արմաւիք, ափիոն, եւն.) առատ արտադրութիւն կայ։ Կ. Պոլսէ՝ Պրուսայի ճանապարհաւ գրեթէ 600 հազարամեար հեռու է, և այժմ երկաթուղիով 30 ժամու գծով մը մօտեցած է Կ. Պոլսոյ։ Ընդարձակ է շուկայն, կան բաւական թուով վաճառատուներ կոկիկ ու կանոնաւոր, մեծ մասն ատրազգգործարան (manufacture), ճնացեալք՝ արհեստաւորաց և մանրավաճառաց խանութներ։ — Քաղաքիս իրր միակ զբօսավայր՝ սուլթան Ալայէտտինի տարահարթը կայ. մահմետական, հայ ու յոյն ժողովուրդը հոն կը վազեն առաւօտ և երեկոյ զբօսնելու և մաքուր օդ ծծելու համար։ Այս տարահարթի վրայ են Հայոց, Քունաց եկեղեցիները ու սուլթան Ալայէտտինի մզկիթը, ուր ամփոփուած է նոյն սուլթանը, ու կը կենայ տակաւին անոզաբար, կանգուն, առանձին կամարակապ մը մէջ։ Հոն է նաև քաղաքին նախասնձուկան ժամացոյցը, Քունաց եկեղեցւոյ կամոզիկէի քով գտնուած։ Այս շէնքերէն քիչ մը հեռու կը տեսնուին Սելճուկներու պալատը, բանտը, գինարանը, և այլն. այսքանն ալ կիսափուլ՝ բայց պատկառելի հնութիւններ են։ — Գաւառի կուսակալութեան մէջ կան մինչեւ 1,088,000 բնակիչ, որոց միայն 10000ը հայ են, ճնացեալք մեծաւ մասամբ մահմետական, յոյն, եւն.։ Կուսակալութեան և գաւառիս վրայ, մինչ այսչափով կը բաւականանանք, փափաքողք կրնան կարդալ վ. Քինէի ընդարձակ նկարագրութիւնը (Հա. Ա, 881–884)։

ԳՈՇ ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՆՔ. Տես ԳԵՏԻԿ։

ԳՈՇԱ-ՎԱՆՔ-ՇԻՆ. Տես ԳԵՏԻԿ։

ԳՈՉԱԹ. — Գիւղ Զարսանճագի, մօտ 200 բնակիչք, 50ը հայ։

ԳՈՉԱՆ. — Ակնէն գրեթէ կէս ժամ հեռու միապաղաղ քարաժայռ լեռ մ՚է։ Այսպէս կոչուած է այն պատճառաւ որ իւր գագաթէն ձմեռ ժամանակ առատ ջուր սահանա-կարկաչ, մեծ բանուեթեամբ և գոչմամբ վար կը հոսի։

ԳՈՉԵՆ. Տես ԳՈՂԹՆ։

ԳՈՉՈՎԻ. — Ալլազգարնակ գիւղ Կամախի (Բարձր Հայք)։

ԳՈՌԻԹ. — Գիւղ Տիգրանակերտի Աչխա-նու գաւառակի, Նիրկերտ գիւղաքաղաքի հա-րաւային արեւելեան կողմը՝ կէս ժամ հեռու։ Բնակիչք են մօտ 100 տուն կաթողիկեայ Հայք. ունին գեղեցկաշէն մատուռ մը. կը զբաղին երկրագործութեամբ և ջրաղացու-թեամբ։ Տներն քարաշէն են, օդն ու ջուրը լաւ։ Քրդախօս են և ունին վարժարան. կը յուսացուի որ նոր սերունդը սկսի ազ-գային լեզուի գործածութեամբ։

ԳՈՒՃԱՆ. — Գիւղ Զարսանճագի. 20 տուն հայ կայ և 8 տուն մահմետական։ Հայք հողագործ են, ունին Ս. Աստուածածին ա-նուամբ եկեղեցի մը։

ԳՈՒՈՋ կամ ԳՈՐՈՋ. — Այսպէս կոչուած է խաչնոյ և Սեւորեցաց մօտ եղող տեղ մը կամ երկրի մաս մը, ուր Թ դարու մէջ Բուղայի ժամանակ վկայեցաւ Մուկաթել վա-նականցին. և որովհետև պատմիչն Թոմխաս Արծրունի կ՚ըսէ «մերձ ի լճառն Քիչ» և այլ լերան անունը կը յիշեցնէ Աղուանից Քիչ վանքը, հաւանական կը թուի կար-ծելն թէ այն կողմերը գտնուի այս տեղս։

ԳՈՍԳԵՇԻ. — Գիւղ Պալուշանի (Ռումա-նիա), 1 ժամու ճանապարհ հեռու. բնակ-չաց մէջ 2 տուն հայ կայ։

ԳՈՍՆՅՆՅԻ. — Գիւղ Էշլի (Ռումանիա) գաւառի. բնակչաց մէջ 1 տուն հայ կայ։

ԳՈՏԱՈՒՃ կամ ԿՈՏԱՐՈՒՃ. — Գիւղ Զար-սանճագի փէրին գաւառակի։ Ունի 30 տուն հայ, Ս. Գէորգ անուամբ եկեղեցի մը և վարժարան՝ 30 աշակերտներով։

ԳՈՏՈՂ կամ ԳՈՏՈՋ ՎԱՆՔ. — Կը յիշուի այս անուամբ վանք մը Աղբրատայ Մա-զաղ գաւառի Գառնաձորի մէջ, զոր Ամբատ Ա. Թագաւորը նուիրեց Տաթեւոյ վանաց։ Գորոզոյ խաչը որ կը պահուէր Մխիթեանա-քարի վանաց մէջ, թերեւս այս վանացս սեփ-հականութիւնն էր, որ ի տարի ո փո-խանելովն միայն կը տարբերի։

ԳՈՏՈՒՍ կամ ԳՈՏՈՒՋ ՎԱՆՔ. — Միմեանց վայոց ձոր գաւառի մէջ Եղեգեաց գետակի աջակողմը։ Վանացս մնասուներէն միայն մէջ կը նշմարուի Չի թուական։ Այս մա-տուռը և կամ ուրիշ փոքրիկ եկեղեցի մը կը կոչուի Սորիկ վանք։ Քննութեան կա-րօտ է այս վայրը։

ԳՈՐԱԳԵՏ. — Կը յիշուի Միմեանց Բազք գաւառի Քաշունիք վիճակի մէջ։


ԳՈՐԱՁՈՐ. Տես ՀԱՐԱՆԴ։

ԳՈՐԳՈՐ. — Կը յիշուի Աչոցք գաւառի մէջ։

ԳՈՐԳՈՓ. — Կը յիշուի Կամախի մէջ (Բարձր Հայք)։

ԳՈՐԻՆ, ԳՈՐԻՍ կամ ԿՈՐԻՆ. — Միմեանց Հարանդ գաւառի մէջ, Զանգեզուրի գաւառի կեդրոնի մէջ կը գտնուի նշանաւոր աւանս՝ որ կը բաժնուի հին և նոր մասերու։ Գո-րիսի արեւելեան կողմն է Ցեղի և արեւ-մտեան կողմը Ուչ–Թեփէկէր բարձրաւանդակ-ները. առաջ գէպ ի հարաւ իջնալու կը մօ-տենան, իսկ հիւսիսային կողմը իջնալէ հե-ռանալով կը ձեւացնեն փոքրիկ հովիտ մը, որոյ միջէն կը հոսի Գորիսի գետակը։ Ցե-ղի բարձրաւանդակը կը կտրուի ուրիշ ձո-րակով մը՝ որ արեւելքէն կ՚ինջէ դէպի արեւ-մտահիւսիս։ Զորակի մօտ կը բարձրանայ Լատա գագաթը, իսկ աւագ մօտ՝ ապառաժ բարձր ժայռ մը՝ որուն վրայ ի հնումն բերդ կայ եղեր և ցարդ կը տեսնուին հետքերը։ Բերդի ժայռն իւր շարունակութեան վրայ ունի զառագան մեծութեամբ կոնաձեւ գա-գաթներ, որոնք կազմուած են ջրոյ ազդե-ցութեամբ։ Նոյնպիսի կոնաձեւ ժայռեր շա-րուած են նաև մօտակայ ձորակի երկու կող-մերը։ Աւազը բնդհանրապէս բաղկացած են կամիր աւազի շերտերէ, տեղ տեղ ժայռ քարերու խառնուրդով. իրրև բացառութիւն կան նաև սպիտակներ։ Նոյնպիսի կազմու-թիւն և կարմիր կամ սպիտակ գոյն ունի նաև բարձրաւանդակի բերդի հանդէպ գըտ-նուող լանջը, որ ուղղահայեաց զառիվայր է։ Այս լանջի, ինչպէս և ձորակի ու բերդի

քերթի մէջ կան բազմաթիւ մեծ և փոքր արհեստական քարայրներ, որոնք կրկնին ծառայեր են իրրև բնակարաններ և այժմ կը գործածուին ամէն իրրև խոտանոց։ Ի հնումն այս արհեստական քարայրներն կը կազմէին մեղիքանիստ Գորիս վիզը, որուն աղքատ գաւառակարգը, զարձեալ կը շարունակէ այդպիսի բնակարաններ կարել իրեն համար. իսկ հարուստները սկսեր են շինել կանոնաւոր տներ։ Գեղի կեդրոնը կը գրաւէ Ս. Հռիփսիմէ հին եկեղեցին և մօտը Մելիք Հիւսէինեաններու նախկին ապա-



242. Գորիս տեսք։

նեկ այդպիսի բնակարաններ կարկ իրեն բանըր, որ այժմ աւեր է։ Գորիսի հին մասը ընդհանրապէս կեղտոտ է, անհանոն և միմեանց վրայ դիզուած տներով, նեղ ու ծուռ ու մուռ փողոցներով։

Գաբիսի նոր մասը հնոյն հակապատակին է։ Ա֊յս մասը հիմնուած է 1870 թուին, Սահարացիի գաւառապետի ձեռքով և Մա֊նուչար–բէկ Մելիք Հիսէինեանի խորհրդով։ Կը գտնուի հնոյն վրայոյ, գետոյն ալակող֊մը։ Հինգ կանոնաւոր և շատ լայն փողոց֊ներ կ'երկինան հարաւէ հիւսիս, ուրիշ հինգ փողոցներ ալ խաչաձեւ կը կտրեն այս փո֊ղոցները։ Գրեթէ կեդրոնը կը գտնուի մեծ հրապարակ մը, յորմէ վար կան շարք մը խանութներու։ Կայ նաև նոր անկած քարա֊քայլն պարսպէզ, որ փողոցով մը երկու՝ վե֊րէն և ներքէն մասերու բաժնուած է. իսկ այս փողոցի եզերքը շինուած է Գ. Մելիս֊մեանի ապրիլը՝ չորս խողովակներով։ Տնե֊րը բնակարանէս գեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի, սրահ քարերով շինուած և փայտէ կամարներով ծածկուած։ Համարեա բոլոր անները իրենց առջև պարտէզներ ու֊նին։ Կայ նաև նորաշէն եկեղեցի մը, ոչ այնչափ մեծ, որուն գմբեթը անհամեմատ մեծ են և պատուհանները չափազանց նեղ։ Ա֊սա կայ նաև պետական երկդասեան դպրո֊ց մը՝ անյարմար և հասարակ շէնքով։ Գիւղիս բնակիչք ամբողջ հայ են մօտ 4000 հոգի, բաժնուած 490–500 տան։ Կը պա֊րապին երկրագործութեամբ, այգեպանու֊թեամբ և առեւտրով։ Շուկան կենդանութիւն կը տանայ՝ երբ սար գնացող թուրքերը կը լեցուին։ — Գերմանացի ճանապարհորդ մը 1850ին տեսնելու գաւառապետին տունը իշնանելով, որ էր հայկազն և ազնուատոհմի ձիճանկիր բեկը, զովութեամբ կը յիշէ ա֊նոր հիւրընկալութիւնն։ Յետս արեւելագէտն Նիկողայոս Խանիքով, այցելած է տանիս 1848 տարւոյ նոյեմբերի մէջ։ — Նոր Գո֊բիսէն վերստ մը հետս գնալ ի հիւսիս, նոյն հովտի մէջ կը գտնուի քարաշէն գե֊ղեցիկ վանքի մը աւերակները, քանդուած պարսպով և քանի մը խցերով։ Փիչ մը վարով կը վազէ եզեր այն տաճարակ ա֊բիւրը, որուն ջուրը վերջերս Գ. Մելիս֊մեանի ծախքով տարուած է Նոր Գոբիս։ Աւերակաց մէջ արձանագրութիւններ չեն յայտնուիր, միայն տապանութեամբ կը պատ֊մուի, թէ երբեմն սա շատ հարուստ վանք է եղեր, ունեցեր է բազմաթիւ հօտեր, ո֊րոնց տուած կաթը խողովակներով տարէն մինչև վանքը կը հասէր։ Ա֊յս տեղ կայ և֊ղեր և այնպիսի մեծ գանգակ մը, որուն ձայնը շատ հեռու կը լսուի եղեր, ուստի և ժո֊ղովուրդը սովորեր է ըսել «Զանգը–զօռ» այսինքն զանգը զօրաւոր, և իրը թէ ասկից առաջ եկած է Զանգեզուր անունը։ — Մի֊սակեան, 261–262։ Զանգեզուրի գաւառ, Բ 26–28։

ԳՈՐԻՍ ՀԻՆ կամ ՎԷՐԻ ՇԷՆ. — Միւնեաց Հարանդ (Զանգեզուր) գաւառի մէջ, Գորիս գեղի ուղղութեամբ, դէպ ի հիւսիս կ'երկինայ բլրակներու շարք մը, որոնց մէջ կայ բարձր, կարմիր ժայռ մը, զոր տեղացիները կը կո֊չեն Պղնձաքար՝ և նոյն անուամբ բոլոր բլրակ֊ներու շարքը՝ Պղնձաքարի սարեր։ Ա֊յս պղնձաքարի ժայռի մէջ կայ 10,65 մեռր երկայնութեամբ, 8,52մ. լայն և մօտ 6,40 բարձրութեամբ բնական այր մը, ուր այժմ ոչխարներ կը մսկապէն։ Մոյն ժայռէն քիչ մը հիւսիս, համանուն բլրակներու լանջի վրայ կը գտնուի Հին Գորիս կամ Վէրի Շէն կո֊չուած գիւղը։ Տներու մեծագոյն մասը, մա֊նաւանդ հնները, փորուած են բլրի լանջին. շատերը այժմ ևս կը ծառայեն իբրև բնա֊կարան։ Գիւղս ունի փոքրիկ, կիսով չափ քերթի մէջ փորուած եկեղեցի մը Նարա֊կեցոց (Նարակնոցք) անունով, որոյ դրան վրայ գրուած է հետեւեալ արձանագրութիւ֊նը. «Թ. ՌՀԲ. Ես Նարսես կաթողիկոս սր֊բոյ եկեղեցիս ի փրկութիւն հոգւոյս»։ Ա֊յս եկե֊ղեցին, այժմ ևս իրը ազօթատեղի է. կայ նաև ուրիշ հին եկեղեցւոյ մը աւերակը։ Աւետա֊րանի մը յիշատակարանի մէջ, որ գրուած է «ի յերկիրս Զագաձոր, ի գիւղս՝ որ կոչի Կորէս», կը յիշուին Ս. Գրիգոր և Ս. Աստուա֊ծածին անուամբ եկեղեցիներ 1667 թուին։ Գիւղս այժմ ունի 312 հայ բնակիչներ, բաժնուած 40 տան. կը պարապին երկրա֊գործութեամբ և անասնապահութեամբ։ — Մելիք Հիսէինեաններու տոհմը յառաջ և֊կած է այս գիւղէն, խոջա Լազարի որդի Լազարէն, որու աւագ եղբայր Պարոնէն՝ սե֊րնդ են այժմեան Պարոնեանները, իսկ կրտա֊սեր եղբայր Աւագէն՝ Աւագեանները։ Պարո֊նեանները աւանդական ասպարէզի մէջ նշա֊նաւոր եղած են և այժմ ևս Նոր Գորիսի

հարաւսա անուրէն մին կը համարուին։ Երբ Թարաքնամայ Թափառականները, Պարսից իշխանութեան միջոց, յարձակելով Հին Գոբիսի վրայ բնակիչները կը կոտորեն, նոյն մեղքերնէն Բաղրը մնունելով կը թողու երկու որդի Յոհան և Աւիր, որոնք Թափառականներու հալածանքներէն փախչելով Ջանախչի գիւղը, կը մնան մեղք Շահեղազարի մօտ։ Հոն Յոհանը իր քաջութիւններով համբաւ կը ստանայ և կ'ամուսնանայ մեծատան մը աղջկան հետ։ Փոչ ժամանակ վերջ Յոհանը, մեղք կը հաստատուի Փառահ խանէն Գորիս, խոտ, Հալիձոր, Բարահունջ, Ալիպուլիքնդ, Տաշքինդ, Մադանջուր և Գորու գիւղերու վրայ։ Մելիք Յոհանը բնակութիւն կը հաստատէ նախ Ջագնձորի մէջ, բայց յետոյ կը հիմնարկէ վերոյդրեալ Նոր Գորիս աւանը։ Մելիք Յոհանի յաջորդներ են որդիքն Յովսէփ, և մեղք Հիւսէին. վերջինս կը մեռնի 1815ին և իրեն կը յաջորդէ Մելիք Յաւսաամ, որ միայն երեք տարի իշխելով կը մեռնի անորդի և կը յաջորդէ եղբայրն Մելիք Յարութիւն։ Սա առաջին անգամ կը մտցնէ Ջանգեզուր գաւառի մէջ գետնախնձորի (կարտոֆիլի) մշակութիւն, որուն համար 1846ին վարձնցուցին Ախտալի ժողովէնով արծաթէ մեդալ կը ստանայ։ 1827ին Ռուսաց ախթապետութեան միջոց, կը կարգուի Ջանգեզուրի կառավարիչ. բայց երբ կառավարութիւնը այս գաւառի մէջ ևս մտցուց բնաւրոգական ռանտաէրութիւնը, Մելիք Յարութիւնը իրեն համար այլ անպատուութիւն համարելով հրաժարեցաւ և հաստարակաց գործերէ ևս քաշուած՝ մեռաւ 1880ին, թողլով որդի մը՝ Մանուչար–բէկ անունով, որ դեռ կենդանի է։ Սա կը պատմէ թէ Հին Գորիսի մէջ կան եղեր երկու բլրակաձեւ բարձր շէնքեր, որոնցմէ միայն վերի քանդել տալով իր հայրը մեղք Յարութիւնը, մտով մը մէջը կախելով, խորը տեսեր է երկու սենեակ և միոյն մէջ գտեր է ձիու պղնձեայ սանձ մը. այդ ահագին սանձը այժմ կը մնայ Մանուչար բէկի մօտ։ Վերջին ժամանակներս այդ հինաւուրց շինութիւնները քանդուեր են։

Գիւղէս դէպ ի հիւսիս 2 վերստ հեռու ձորակի մը մէջ կը բղխէ տաքնորակ ազբիւր մը, որուն մօտ կան ժայռերու մէջ քարայրներ։ Այդ քարայրներէն մին կը համարուի ուխտատեղի, և այժմ ևս Գորիսէն բազմաթիւ ուխտաւորներ կու գան։ Գորիս գեղի հովիտը կը շարունակուի նաև Գորիսէն վար՝ դէպի արեւելահարաւ, և երթալով կը լայնանայ ու կը խոտանայ։ Ջորի երկու կողմերը կան բաւական թուով քարայրներ, մէկ քանին բաւական մեծ։ Ենկատելի է որ այս այրերէն շատերը արհեստական են, և հաւանօրէն շինուած են պաշտպանութեան համար. կան նաև ջրի ազդեցութեամբ կազմուածներ։ Ջորը ամրողջովին պատած է բացի խազողի արթիներէ, նաև թթենիներով, կեռասենիներով, խնձորենիներով, և այլն։ Պարսից սերտապետութեան օրով, շատ վտանգաւոր էր այս ձորէն անցնիլը։ Ջորիս աջակողմը, Գորիսէն հազիւ երկու հազարաման հեռու, կը գտնուի Ոխտաւոր կոչուած բերդը, ահագին ժայռի մը վրայ, որուն մէջ կան բաւական թուով քարայրներ։ Պարիսպը ժայռէն փորուած է և տեղ տեղ պատ բաշած։ — Ջանգեզուրի գաւառ, էջ 8–11 և 30–32։

ԳՈՐՆՈՒԹ կամ ԳՈՐՆՈՑ. — Նշանաւոր և բազմամարդ գիւղ Հայոց, Վասպուրականի Աղբերանի (Բերկրի) գաւառի մէջ։ Ունի գեղեցիկ կիրք և 80–90 տուն բնակիչք՝ որոց նիւթական վիճակը մեծաւոր գիւղերու բազդատմամբ կրնայ բաւական լաւ համարուիլ։ Գիւղիս մէջ կան հետեւեալ նշանաւոր տեղերն, յորոց ոմանք կիսակործան են, ոմանք տաղաւարիկ և ոմանք փոքր մատուռ. ա. Ս. Յովհաննէս, բ. Ս. Կարապետ, գ. Ս. Աստուածած, դ. Ս. Վարոս, ե. Ս. Կապոյտ խաչ, զ. Ս. Ջրնձրուտր (չրթայատուր)։ Գիւղացիք յատուկ տնտուկի մը մէջ կը պահեն բուռ մանուկ անուամբ ձեռագիր աւետարան մը, զոր երբեմն միայն քահանայն մատնեքի նման գուրս հանելով՝ կը կարդայ հիւանդաց վրայ։ Տիզուռ Հայր հայհոյութեանց բանաստեղծ են։ Գործառ Բերկրիի ամենէն շէն գիւղը լինելով 1878ին պատերազմի տարին շատ վնաս կրնայ։ Շէկի ձէլալեանների գօրքերը տասկալի սպրդներ գործեցին և տերսկ գարձուցին գիւղս, բայց

յետոյ վերատին շէնցաւ։ Գործատիք երկրագործութեամբ կը զբաղին և ընդհանրապէս քաջ և աշխատասէր են։ Մերձակայ Լինկերտիներ այս տեղ ունի նախակրթարան մը։ Գիւղիս եկեղեցին կը կոչուի Ս. Կիրակոս։ Գործատի գիմաց, քառորդ ժամ հեռու բարձր բլրի վրայ կը տեսնուի ամայի և աւերակ բերդ մը՝ միջամեծ քարերով շինուած։

ԳԱՐՈՒՆԻ ՎԱՆՔ. Տես ԹԼՈՐՈՒՈՍ (Ս.) Վ.։

ԳԱՐՈՋ. Տես ԳՈՌՈՋ։

ԳԱՐՈՑ. — Ակն անուամբ աւերակ գիւղ կը գիտուի Աղբարատայ կազովիա գաւառի մէջ։

ԳԱՒԴԱՐՔ կամ ԳԱՒԴԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ. — Հայաստանի ընդարձակագոյն նահանգներէն մին, որ կը տարածուի գրեթէ Հայոց Միջագետքի հիւսիսային կողմը։ Սահմանքն են հիւսիսէն՝ Վրաստան, արեւելքէն՝ Ուտի, հարաւէն Աղբարատ և արեւմուտքէն Տայք։ Նահանգիս հիւսիսային սահմաններէն մին Ժամանակներէ և հարաւային սահմաններէն առաջ Վրացիք գրաւելով իրենց սեփականած են երկար ժամանակ, այլ պատճառ չեն գիտեր նոյն իսկ Գաւգարաց գաւառներու շարքի մէջ։ — Նշանաւոր է նահանգս բնական վայրերովն ու անառարուններով, բարձր և խարտեաղ լեռներով, մեծ ապառիթ անտառներով, և մանաւանդ բազմաթիւ լճերովն ու գետերով։ Արեւմտեան կողմէն Տայոց լեռներէն կը բղխէ Աքսաւեռչայ գետը՝ Ձորոխի հզօր օժանդակը, ու բիւր զօրաւոր օժանդակ մ՚ալ Աձարա–սու՝ կ՚ոռոգէ նահանգիս հիւսիսային արեւմտեան եզերքները, ապա մէջ կը բարձրանան Շաւշէթու լեռները։ Այս լեռներու արեւելեան կողմէն կուր գետը երթալով Տայոց կող գաւառէն՝ Աքսահանէն կ՚անցնի, ուր կայ Թէֆենկեղ փոքր լճակը, և անոր արեւելեան կողմը կը գտնուի, նահանգիս և Թիֆլիսու բոլոր Հայաստանի, ի բաց առեալ Ուրմիոյ, Վանայ և Գեղամայ ծովակներն, մեծագոյն լիճն Ջրտրր–կեղ կամ Պաղակաբիս և լաւ ևս Ծովակ Հիւսիսոյ կոչուածը, որուն հիւսիսային կողմն է կեղ–ապաղ և վերջնոյս հիւսիսային կողմն ալ ուրիշ լճակ մը Խոզապիճ անուամբ։ Այս լճակի արեւմտակողմէն գէպ ի հիւսիս կը վազէ կուր գետը, և յետոյ գէպի արեւմտահիւսիս դիմելով՝ կ՚անցնի Ախալցխայի արեւելեան կողմէն, և ապա դիմելով արեւելահիւսիս՝ կը հասնի մինչև Գօղի քաղաքի սահմաններէն, այնուհետև կը սկսի վար իջնալ դէպի հարաւային արեւելք, մինչև նահանգիս սահմանագլուխը։ Իւր այս ընթացից մէջ կ՚ընդունի բազմաթիւ վտակներ՝ ոչ այնչափ զօրաւոր, բայց ստորին կողմերը կ՚ընդունի ամենակողմէն երկու բաւական հզօր օժանդակներ Աղկէ և Խրամ կամ Քիւրէ գետ կոչուածները՝ հանդերձ ասոնց ոչ այնչափ փոքր օժանդակներով, որոնք են Յուրտագետ, Մաշավերի կամ Փոքր Խրամ, Թզուտաւրի, Պօռչալու կամ Ջորոյգետ։ Հիւսիսոյ ծովակի արեւելեան կողմն է Արփա–կեղ լճակը՝ յորմէ սկիզբն կ՚առնու Արփա–չայ կամ Ախուրեան գետը, և անոր հիւսիսային կողմը Լօռրիւր լեռը և Տեսլան լեռները, որոնց հիւսիսակողմն ալ է Սաղամ կամ Խանչալրի լիճը։ Խանչալրի արեւելեան հիւսիսային կողմն է Թուռմանլր կամ Տուռման լիճը և ասոր արեւելեան հիւսիսոր փառաւան կամ Թոփրաւան մեծ լիճը։ Նահանգիս լեռներէն յիշենք. Փառաւան, Տխկորի, Լեռնախոտ, Արքատխոի, Քաշնաբի, Շիրնաւար, Մորրայա (խոնաւ), Ապոց, Պիգոպատ, Բամբակի լերինք, Զարտակլը, Զաւարր տաղ, կնօք տաղ, և այլն։ Լերանց խոր հովիտները շատ անգամ կը պարապին նահանգիս հին գաւառները, որոնք կը ձեւանան Փոր և Ջոր մասնիկներով, ինչպէս Զուրտփոր, Կաղրուփոր, Մանդլեաց փոր, և այլն։ — Աշխարհիս բերքերը առատ են և գտնուած անասուն, պայտ, ընտիզներ, լերանց մէջ կան պղնձոյ և այլ հանքայ բոլիր. մեր հին աշխարհագիրը կը յիշէ Գաւգարաց մէջ «զԱնաղուեթ, զՀաճարաձոր, զՄերկեւիլ, և զՏօսախ». անաղուեթ անուանածը սրոշ չգիտենք ինչ է, բայց աւելի բայս կը թուի և ոչ բնաւորա կենդանին։ Սարաբան՝ պաղաւէտ ծառերէ զատ, կը յիշէ նաև նահանգիս մէջ ձիթենիներ։

Աւելի նշանաւոր է նահանգս քաղաքաներ հանդամանքներով և գանազան վիճակաց բաժանմունքներով։ Ի հնումն սահմանակից և միաձուլոր լինելով այլ և այլ աղգաց և աշխարհաց, անոնց սերտագնութեան ենթակայ եղած են իր մասերը։ Գաւգարք

անուան առուգաբանութեան վրայ ևս քանի մը խօսք բռնենք. նախ կը թուի Գուգարքն ծագած, հաւանական է մեկնիչներէն ամենը բաածն թէ Գուկ և Մագուկ մէկ ազգ էին և իրենց բնակարանն էր այս նահանգս, յորմէ ախոռած տարածած է իրենց սերունդը կովկասու կողմերը և ի Սկիւթիա։ Այնուհետեւ մէջ շատ առասպելներ և արուեստասէր մէջ շատ կարծիքներ կան Գուկայ և Մագուկայ վրայ։ Մենք աւելորդ համարելով երկարել մեր խօսքը այդ կարծեաց վրայ, յայտնենք նաև նեմայրութիւն մը, թէ Գուգարքի մեծ մասը ժառանգելով Գուշար՝ Շաբայի զաւակներէն մին, այսինքն Կանգարք լեռնէն մինչև Հնաբակերտ ամրոցը, թերևս իր անունովը այդ երկիրն Գուշարք բառնալու տեղ, կոչուեր է Գուգարք։ Նահանգիս անունն ծանօթ էր նաև Յունաց Դպրարիճի կամ Կոկարիճի Γωγαρηνή կոչուած Սարաբունէն և քան Լատինաց Gogarene.

Գուգարաց բուն երկիրը Հայկազանց մերոց կը թուի թէ կը կառավարուէր առանձին նախարարներով և թագաւորով և Աղեքսանդր Մեծէն վերջ գրաւուած է ի վրաց և յետոյ գործակալ Հայոց այն թագաւորաց իշխանութեան տակ է անցած, որոնք թագաւորեցին Վաղարշակէն առաջ, Սելեւկիացւոց ժամանակ։ Վաղարշակ թագաւորը հոս մեծ բռնշութիւն հաստատեց, որպէս զի Հայաստանի հիւսիսային կողմն կովկաս լեռանց մէջ բնակող աւազակող ազգերէն պահպանէ, ահա խօսքերը. «Կարգեաց կոչնական հիւսիսոյ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարգայ՝ Բզնունի Գուգարացւոց»։ Այս բռնշիկը կ՚իշխէր միանգամայն երեսին սահմանակից վրաց վրայ. այդ պատճառաւ գրոց մէջ կը հանդիպինք անդ անդ կոչուած Բզնունի վրաց։ Կը թուի թէ երբեմն բուն վրաց թագաւորն իսկ Հայոց թագաւորի գերիշխանութեան ներքոյ եղած լինի միանգամայն նահանգիս բռնշիկ, ինչպէս Տրդատայ ժամանակ։ Այս բռնշիկներէն անուանի կը յիշէ խորենացին սուն Աշուշա՝ բռնշիկ Գուգարացւոց։ Առաջին անգամ Հայոց Արտաշէս թագաւորը Գուգարաց բռնշիկի իշխանութեան վրայ աւելցուց նաև Պնդոյս ծովու կողմնակալութիւնն, ինչպէս կը յայտնէ խորենացին. «Բայց (Արտաշէս) զգուսար իւր զԱրտաշամայ՝ տայ կին Միհրդատայ ուժեմն վրաց բռնշիկի մեծի... և հաւատայ սմա զիշխանակալութիւն հիւսիսային կողմանցն և Պնդոյս ծովու»։ Նահանգիս գաւառներէն մէկ քանին, ինչպէս խորենացին կը գրէ, վաղարշակ թագաւորը ժառանգեցոյց Շաբայի որդիներէն Գուշարայ. «Իսկ Գուշարայ որ յորդւոցն Շաբայի՝ ժառանգեաց զկեանս Մծնէն որ է Կանգարք. և զկէս մասին Ջաւախաց, զկողբ, զՇոր, զՋոր, մինչև ցամուրն Հնաբակերտ»։



243. Աշուշա բռնշիկ։

Երկրորդ Արշակայ օրով, ուրիշներու հետ ապստամբելով նաև այս նահանգս՝ վրաց ձեռքը անցաւ. բայց Պապ թագաւորի քաջակորով սպարապետն Մուշեղ, Բուզանդայ (Ե. ԺԲ) գրածի համեմատ, շուտով ետրէն Հայոց իշխանութեան ներքոյ դնաւ ձեռ. «Այս խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս, և հարկանէր զերկիրն, և վանէր զամենայն աշխարհն վրաց, և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն... և զրկեցին Գուգարաց՝ որ յառաջն ծառայ էր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ պլխատէ... և թափէր զամենայն գաւառն, և առնոյր պատանդս, և զնացեալսն ի հարկի կացուցանէր. և զհին սահմանսն որ յառաջ ունէր լեալ ընդ երկրին Հայոց և ընդ երկրին վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետեւ յինքն վառեալ գտանայր անտի»։ Բայց տարակոյս չկայ որ քիչ ժամանակ վերջը նահանգիս տիրացան վրացիք. յետոյ Բագրատունիք ժամանակ մը

սիրելին արեւելեան և հարաւային մասին։ Վերջին գարուց մէջ Օսմանցիք սիրելին աբեւմեան մասին, իսկ միւս մասն՝ Վրաց Թագաւորի իշխանութեան ներքոյ էր։ Յաւուք՝ Վրաստանի սիրելով, այս մասն ալ իրենց անցաւ. անցեալ գարու մէջ սիրելին նաև Օսմանեանց իշխանութեան ներքոյ գտնուած մասին։ — Այս դահանդէս շատ անգամ հիւսիսային բարբարոս ազգերը անցան ասպատակելով դէպ ի Հայաստան, և շատ անգամներ ևս Հայոց քաղքերը անոնց հաւէն յարձակելով քշեցին այս սահմանադաշտը աշխարհէս, շատ արիւն խառնելով կուռ գետոյն ջրերու հետ։

Մ. Խորենացին Գուգարաց մէջ իննգաւառ կը դնէ, որոնք են. Ա. Կղարջք՝ նահանգին արեւմտեան հարաւային ծայրը, կողի արեւմտեան և թաւալուկեաբայ հիւսիսային կողմը. Բ. Արտահան՝ կղարջայ արեւելեան հիւսիսային կողմը. Գ. Ջաւախք՝ Աբաահանայ արեւելեան հիւսիսային կողմը. Դ. Թուխարք՝ Ջաւախքի արեւելեան հիւսիսային կողմը. Ե. Կանգարք՝ Թաւղրքի հարաւային կողմը. Զ. Տաշիր՝ կանգարաց արեւելեան կողմէ դէպ ի հարաւ. Է. Ծորոփոր՝ Տաշրաց արեւելեան հիւսիսային կողմը. Ը. Զորափոր՝ Ծորափորի հարաւային և արեւելեան կողմը. Թ. Կողբափոր՝ Զորափորի հարաւ արեւելեան կողմը։ Բայց հին օրինակի մը մէջ Ջաւախ անուամբ գաւառ մը ևս կը յիշուի, և է թաւ մեզ Ա. Շաւշեթ։ Աւոնցմէ զատ կան նաև երեք գաւառներ, զորս Վրացիք ի հնումն առած են ի Հայոց, աւոնք են՝ ԺԱ. Մանգլեացփոր՝ բոլոր գաւառներու հիւսիսային կողմը, Տփխոյ և Գօղի քաղաքաց մէջ տեղ. ԺԲ. Բողնոփոր՝ Մանգլեաց հարաւային և Ծորափորոյ հիւսիսային կողմը. ԺԳ. Պարուսր՝ Մանգլեաց և Բողնոփորի մէջ տեղ, Տփխեաց արեւմտակողմը։ Աւոնց վրայ կարելի է յաւելուլ նաև ԺԴ. Կայէն գաւառը՝ որ սահմանակից է Ուտիի և կը գտնուի, Զորափորի, Կողբափորի և Ագստեւ գետոյն մէջ տեղ, մանաւանդ որ Գուգարաց մասն ու գաւառ ևս կոչուած է։ Այս բաժանմունքները, թաւ կարի սահմանները նշանակելով մենք պրինք հայկական աշխարհագրութեան համեմատ, բայց Վրաց Թագաւորութեան օրով նահանգս ունեցեր է ուրիշ զանազան բաժանմունքներ։ Նահանգիս գաւառաց ինչպէս նաև քաղաքաց և վանքերու նկարագիրներն ըրած ենք իրենց կարգին։

ԳՈՒՋԱԼ–ԴԱՐԱՑ կամ ԿԻՒՋԼԻ ՏԷՐ։ — Դիւղ Տիգրանակերտի Ալխան գաւառի, համանուն գեղեցիկ ձորի մը հիւսիսային կողմը։ 50 տուն խրքխաօս Հայք կան։ Տներն հազարչին են, օգն՝ առուղջ և ջուրը՝ միջակ։

ԳՈՒՋԱՑ. — Վիճակ Կարնոյ, բաւ Օսմանեան հին աշխարհագրական բաժանման։

ԳՈՒՋԻՋԱՆ կամ ԳՈՋՈՒՋԱՆ. — Կարնոյ կուսակալութեան ներքոյ, լեռնային և անտառախիտ վիճակ, բաւ հին բաժանման. բնակիչք քուրդեր են Քեւսան տոհմէն։

ԳՈՒՋՈՒ ԳԱՑԱ. — Դիւղ Ալբարատայ Բասեն գաւառի։

ԳՈՒՋՈՒԼՃՈՒՔ. — Հայաբնակ դիւղ Զարսանճագի։ Ունի 30 տուն և Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։ Բնակիչք հազարդործ են։

ԳՈՒՋՈՒԿՈՒՏԷՆ. — Դիւղ Ալբարատայ Արտագծոյն գաւառի, Սարատարապատու վիճակի մէջ։ Ունի 80 տուն հայ բնակիչ և Ս. Գէորգ անուամբ եկեղեցի մը։

ԳՈՒԹԱՆԻ. — Հանգրուան Ալբարատայ Ուրծ և Ալրած գաւառի մէջ։

ԳՈՒԹԱՆ ԼԵԱՌՆ կամ ՔԵՕՔԱՆՏԱՂԻ. — Լեռ Ալբարատայ Կոտայք գաւառի հիւսիսային սահմանագլուխը։

ԳՈՒԹԳՈՒՄ. Տես ԿՈՎԳԱԿԱՆ։

ԳՈՒԹԼՈՒ–ԳՕՇԼԱԳ. Տես ՂՈՒԹԼԻ։

ԳՈՒԹԵՐ, ԳՈՒԹԻ կամ ՔՈՒԹԻ. Գր. KUTY. — Երբեմն բազմահայ քաղաք Լեհաստանի, և այժմ փոքրիկ գեղեցկագիր և գեղաճաշի քաղաք Կալիցիոյ (Աւստրիա–Հունգարիա) արեւելեան անկիւնը։ Մօտէն կ'անցնի Չերեմոշ գետը, որ Լեհաստանը Գալիցիայէն կը բաժնէ։ Տեղւոյս գիրքը անկիւնաձեւ լինելուն՝ Լեհաց լեզուով կոչուած է Գուբի՝ այսինքն անկիւն։ Այս երկիրը նախ անտառալայր էր. յետոյ Աւստրիացիք 20 տուն Հայք եկան հոս, Օգոստոս Բ Լեհաց թագաւորի հրաւիրելովը, որ և յատուկ արտօնութեանց պարգեւագիր տուաւ իրենց 1715 տարւոյ յունիս 18ին։ Այնուհետեւ սկսան

Հայք կառուցանել քաղաքս, և առաջին հիմնարկողն եղաւ Շաապէհ անուն հայ վաճառականը, որ եկաւ Մալաւիայէն։ Հ. Մինաս Թէշիեանի քաղաքիս այցելած միջոց, քաղաքս ունէր 3000 բնակիչ, զանազան ազգերէ. իսկ այժմ ունի մօտ 7000 բնակիչ։ Տեղւոյս Հայք կամէուղիկէութիւնը ընդունած են և այժմ կը հաշուին 1200 հոգիք։ Ի հնումն խիստ անուանի էին հայ վաճառականները, որոց ամենք գիւղերը կը բնակէին և շատերը խաղաղով էին, զի բնաւիր է այս կողմանց կաշին Լեհաց աէրութեան միջոց Հայք շատ արտօնութիւններ ունէին, առանձին դատարան և դատաւորներ։ Քաղաքիս մէջ երբ Հրեայք սկսան բազմանալ, Հայոց ձեռքէն մեծամեծ մի վաճառականութիւնը գնաց և սկսան ազքատանալ։ Հայք գրեթէ առհասարակ վաճառականներ են և միանգամայն ձեռագործք. ինչպէս կ'ըսէ վերջին գրող մը, կը չանան միջին տեղի մը գրաւել ի մէջ առանին և մեծավաճառ գործոց և միանգամայն ըլլալ միջնորդք, վաճառողք և իրենց սեփական ճարտարագործութեանց փոխադրողք։ Ազգի ժամանակները նպաստաւոր չէն Հայոց, և գարմանալու չէ՝ որ Գաւթիի գործերն խեղճ կերպարանք մ'առին՝ մանաւանդ 1887էն ի վեր, յորում ռումանական սահմանաց փակուելովն՝ արդեօք վաճառականութիւնն ևս Հայոց ձեռքէն ելաւ, որք հառաչանօք կը խօսին անցեալ գարու ճարպիղէն մեծերու հին լաւ ժամանակաց վրայ։ Տեղւոյս Հրեայք երբեմն կը խօսէին հայերէն։

Հայք ունէին մեծ և փառաւոր եկեղեցի մը, հիմնուած 1756ին Լեհաց Օգոստոս Գ թագաւորի ժամանակ և կամուրջի Պատակիի հռետրաւութեամբ. 1797ին Լեմպերգի հայ արքեպիսկոպոս Յակոբ Թումանովիչի ձեռքով օծուած է Ս. Աստուածածնի Անարատ յղութեան անուամբ։ Եկեղեցւոյն մէկ կողմը քարաշէն վանական մը կայ՝ մեծ պարսպով շրջապատեալ։ Հայք ունին գպրոց մը, ուր տղայք հայերէն հռետրակ ընթերցումն կ'ուսանին։ Հին եկեղեցին 1870ին այրեցաւ, բայց 1875ին նորէն շինուեցաւ։ Քաղաքս ունի նաև հայկական մատուռ մը գերեզմանատան մէջ, զոր կանգնած է իր ծախքով Հոխոխիէ Յոհաննէս. ուրիշ մատուռ մ'ալ հայ Պանէլով գիւղի մէջ՝ Անտոն Պօղոսովիչի արդեամբ կառուցուած։ Քաղաքիս տեսքն ու կիրքը շատ գեղեցիկ է՝ ածուռներով ու այգիներով շրջապատեալ. արուներք շինուած են պարսպներու մէջ իրարմէ հեռու։ Նշանաւոր են տեղւոյս Հայք իրենց հին սովորութիւնները և արարողութիւնները անփոփոխ պահելուն մէջ։ — Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 127–128։ Բազմավէպ, ԾՀ. 421–422, 520–523։ Եւ այլն։

ԳՈՒԲԳՈՒԲՆԵԹ. — Վախտանգէն յիշուած գիւղ, Գուգարաց Թոհեղք գաւառի մէջ։

ԳՈՒԼԱ. — Գիւղաքաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան Սարուխան գաւառի մէջ։ Տեղւոյս հայ բնակիչք խիստ սակաւաթիւ են։ Աստ կը շինուին սքանչելի գորգեր. կտաւք և օրիորդք իրենց ատն գրան առջև նստած՝ ասեղնագործութեամբ կը պարապին։ Բնակչաց ընդհանուր թիւն կը հասնի 6000ի, մեծ մասը մահմետական, մնացեալք՝ յոյն։ Կան գեղեցիկ ու հոյակապ շէնքեր, մզկիթներ, եկեղեցիներ և կրթարաններ։

ԳՈՒԼԱԳՈՒՐՋ. — Ամայի գիւղ Ա. Լուսաւորչայ Մաղազ Ոսոան գաւառի մէջ։

ԳՈՒԼԱԽՒՆՏԻ. — Գիւղ Միւնճաց Ագահէճք գաւառի Ագարու ձորահովիտն մէջ։

ԳՈՒԼԷԼԻ. Տես ԳՈՒԼԱԼԻ։

ԳՈՒԼՋ ՄԻՐԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Հազրոյ գաւառի. 11 տուն հայ կայ։

ԳՈՒԼԻՇԿԷՐ. Տես ԿԻԼԻՇԿԷՐ։

ԳՈՒԼԻՃԱՆ. Տես ԳՈՒԼԻՃԱՆ։

ԳՈՒԼԻՈՂԿ–ՏԻՋԼ. — Փոքրիկ գիւղ Հայոց, Միւնճաց Նախճաւան գաւառի մէջ. բնակիչք 36 տուն են։

ԳՈՒԼՈՒՏԻ. — Գիւղ Ա. Լուսաւորչայ Նիգ գաւառի, հայերէն անուն է Զորոյբերան։

ԳՈՒԼԶԱՒԱՐ. — Գիւղ Պաֆրայի, յորում 80–90 հայ կայ։

ԳՈՒԿԱԿԱՆ. Տես ԲԱՂՔ։

ԳՈՒԿԱՆ. — Վասպուրականի հին գաւառներէն մին։

ԳՈՒԿԱՆՈՒ. — Գիւղ կը յիշէ Ղեւոնդ Պատմիչ (Գլ. 2) հետեւեալ առիթիս մէջ. «Զայնու ժամանակաւ գտանէալ ասլ հէն գայր ի վերայ գօրուն՝ որ ի կողմանս Վասպուրա-

կանի աշխարհին, և եկեալ յանդիմանեալ լինէին ի գաւառն Ուշաունեաց՝ ի գիւղն ո-րում Գուկանան կոչեն, անդ յանդիման լի-նէին միմեանց»։

ԳՈՒԿԱՈՒՆՃ. *Տես* ՍՈՂՔ։

ԳՈՒՀԱՆՏԱՊ. *Տես* ԿԻՒԼՀԱՆԴԱՊ։

ԳՈՒՂՆԾ. — *Ամայի գիւղ Մամրաւնեաց, ունի Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը։*

ԳՈՒՄԲԼԹ *կամ* ԳՄԲԼԹ. — *Գիւղ Բաղուի, քաղաքէն 5 ժամու ճանապարհ հեռու, հա-սիսային կողմը։ Բնակիչք 30 տուն հայ են և 5–4 տուն մահմետական։ Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և զպրոց. կը պարապին հողագործութեամբ։ Տես նաև բառարանիս 500 էջը* ԳՈՒՄԲԼԹ *անունը, որ սխալմամբ իբր կարդէն գաւառ պրուած է։*

ԳՈՒՄԲԼԹՈՒՐ *կամ* ԳՈՒՄԲԼԹՓՈՐ. — *Կի-լիկիոյ մէջ աղբիւր ջերմ ջրոյ, Սսոյ հա-րաւային արեւմտեան կողմը, որուն այժմ Թուրքք Իլիձա անունը կու տան։*

ԳՈՒՄ ԳԱԼԼ (*Ազազաձոր*). — *Դաշտային կիլիկիոյ մէջ, լերան մը լանջին վրայ, մեծ բերդ մը, այժմ աւերակ դարձած։*

ԳՈՒՄԳՈՒՑՈՒ. — *Հայաբնակ գիւղ Եօզղա-ատ, 30 տուն բնակչօք, որք հողագործ են։ Ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և վարժարան։*

ԳՈՒՄԼՈՒՃԱ *կամ* ԴՈՒՄԼՈՒՃԱ. — *Գիւղ Ա-ղբարատայ Մագոսան գաւառի, 1 ժամ Մալ–Թասէ գիւղէն հեռու։ Ունի 40 տուն քուրդ բնակիչ։*

ԳՈՒՄԼՈՒ ՊՈՒՃԱԳ *կամ* ԴՈՒՄԼԻ ԲՈՒՃԱԽ. — *Հայաբնակ գիւղ Ա-ղբարատայ Մագոսան գաւառի մէջ, ½ ժամ Մուրատ գետէն հե-ռու։ Ունի 30 տուն բնակիչ։*

ԳՈՒՄ ՊՈՒԼԱԳ. — *Գիւղ Ա-ղբարատայ ձո-կաստ գաւառի մէջ։*

ԳՈՒՄՊՈՒԳ ԳԱՅԱ. — *Գիւղ Ա-ղբարատայ Բասէն (Սասուն) գաւառի մէջ։*

ԳՈՒՅԼԱՍԱՐ *կամ* ԳԱՅԼԱՋՕՐ. — *Ա-յս ա-նուամբ Հին և Նոր կամ Վերին և Ստորին կրկին գիւղեր կան Ա-ղբարատայ Ոստան գա-ւառի մէջ։ Վերին Գուլլասար ունի 28 տուն հայ և 3 տուն թաթար բնակիչ, իսկ Ստո-րին Գուլլասար՝ 21 տուն հայ և 91 տուն թաթար բնակիչ։ Վերջինս առաջնոյն արև-մտակողմը կը գտնուի երկու մղոն հեռու, գաշտերու և այգիներու մէջ տեղ։*

ԳՈՒՅՈՒԼՈՒ. — *Գիւղատեղի Ա-ղբարատայ կոտայք գաւառի մէջ։*

ԳՈՒՅՈՒ ՄԱՂԱՐԱ. *Տես* ԿԻՒԼՔ ՄԱՂԱՐԱ։

ԳՈՒՅՈՒ ՏԱՂ. — *Լճակ Սիւնեաց աշխար-հի, վայրց ձոր գաւառի հիւսիսային մասին մէջ։*

ԳՈՒՆԿՈՒՐ. — *Լճակ Սիւնեաց Սոզք գա-ւառի մէջ։*

ԳՈՒՇ ԱՏԱ (Scalanova). — *Զմիւռնիոյ հարաւային կողմը ծովախորշի մը առջեւ շի-նուած քաղաք մ'է։ Զմիւռնիայէն մինչեւ Ա-յասուղուք 77 հազարամեայ երկաթուղով երթալէ վերջ՝ անկէ ձիով կամ կառքով եր-կուք ու կէս ժամու ճամբայ է մինչեւ Գուշ Ադա։ Քաղաքիս անունը, տեղը չտեսնողի մը կարծել կու տայ թէ կղզի մ'է, սակայն այնպէս չէ, անոր շինուած են ծովեզերեայ բլրի մը կողքին վրայ, իսկ իր անունն ա-նուած է՝ քաղաքին առջեւը քանի մը մետր հեռու՝ ծովու մէջ բարձրացած կղզեակէն, որ բնակարան է նապաստակաց։ Տեղւոյն ա-սպարանը շատ զուարճալի է, օդը լաւ, ջուրը թեթեւ. երեք կողմերը կը պատեն այգես-տաններ։*

Ժամանակ մը բաւական վաճառաշահ նա-ւահանգիստ էր. Ա-յասլուխի և Սէօքէլի կողմե-րուն բերքերը ուղտերով ու ձիերով կ'իջնա-յին հոս, և ասկից նաւերով ուրիշ տեղեր կը տարուէին. սակայն Զմիւռնիոյ–Ա-յասլուխի եր-կաթուղւոյն շինութեամբը՝ տեղւոյս վաճա-ռականութիւնն կտրնցուցած է իր նախկին փայլը, և այս կողմի բերքերն այժմ ուղ-ղակի կ'իջնան Զմիւռնիա։ Քաղաքս Նոր Ե-փեսոս կամ կ'անուանի. իր մէկ կողմը կը տեսնուին հին պարիսպներ և աւերակներ։ Գուշ Ադայի կառավարութիւնն է գտնուած գաղթ. ունի մօտ 4000 բնակիչ, մեծաւ մասամբ Մահմետականք, որք ունին 5 մզկիթ։ Ջրոյնք կը համարուին 600 հոգի, ունին և եկեղեցի մը և երկու զպրոց և բաւական յա-ռաջադէմ են։

Հայք երկու դար առաջ գաղթած եկած են Գուշ–Ադա, եկեղեցւոյն պարտէզի մէջ տակաւին կը տեսնուին երկու տապանաքարեր նոյն ժամանակէն։ Քանդակուած աւելի բազ-

մեծին եղած են, իսկ յետոյ հետզհետէ նուազելով, այժմ հազիւ 30 տուն մնացած են։ Եկեղեցին Ս. Աստուածածին՝ փայտաշէն է և փոքրիկ, իր կառուցման թուականը յայտնող արձանագրութիւն կամ յիշատակարան չունի։ Պարէզին մէկ կողմը կառուցուած է զանգակատան աշտարակը՝ քարաշէն ու ցած, որ անցեալ սրբազայր լինելուն մի միայն նշանը կրնայ համարուիլ Եկեղեցին արտաքուստ չունի տեսք և շքեղութիւն. ներսն ալ ու ձախ կառուցած են մոմլաթի վրայ նկարուած պատկերներ, որոնց յիշատակարանները անցեալ դարձած են. միայն Ս. Յարութեան պատկերի մը եզերքը կը կարդացուի. «Յիշատակ եմք Ժողովուրդին Գուշտատու և կնկեցուն 1831. Յնվար»։ Եկեղեցւոյն պարտէզին մէկ կողմն կը գտնուի Ս. Յակոբեան կոչուած երկտեղ վարժարանին փոքրիկ շէնքը, ուր կը յաճախեն 10–15 աշակերտներ։ Եկեղեցին շրջապատ հին բարերարաց ուներ բաւական կալուածք, որոնց եկամտովն կը հոգացուին քահանային և վարժապետին տարեկան պէտքերը։ — Տասը տարի առաջ՝ Հայր իրենց տնջնցնաչները կը թագչին և եկեղեցւոյ պարէզին մէջ. սակայն այժմ քաղաքին հարաւային կողմը առանձին տեղ մը յատկացուած է իրր գերեզմանոց և հոն կը թաղուին մեռելները։ Հին գերեզմանաց վրայ կան արձանագրութիւններ։ — Քաղաքիս մօտ է Ս. Յովհաննու առաքաբանչի գերեզմանատեղին՝ բոլորշի լերան մը մէկ կողին վրայ։ Յարութեան տունի երրորդ կիրակին Հայր գունդագունդ կը դիմեն անդր. կը կանգնուի բնաւթակ վրան մը իրր եկեղեցի. կը կատարուին ժամերգութիւնք և պատարագ կը մատուցուի. շուրջը կը զարնեն բազմաթիւ վրաններ ցանուցիր՝ ուխտաւորաց համար, որք կու գան Ջմիւռնիոյ նահանգի զանազան կողմերէն։ Ուխտատեղիէն քիչ հեռու կ'երեւին հնոյն Եփեսոսի շրջապատի մնացորդք, և այլ աւերակներ՝ որք կը կարծուին թէ թատրոնի, կրկէսի, վաճառանոցի, բանտից և այլ շէնքերու մնացորդներ են. քարաշէն կամ աղիւսաշէն կամարք, կիսախոր գմբէթք, մարմարեայ սիւնք, պատուանդանք, ծաղկեղեակ խոյակք, գերեզմանաքարերք, և այլն։ — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, էջ. 110–115։ Եւ այլն։

ԳՈՒՇ ԹԼՄԻՒ. — Կիլիկիոյ մէջ, Տարսոնի վիճակներէն մին։

ԳՈՒՇ ԹԼՓԼՈՒ. — Լիս Աղբարատայ Շինուկ գաւառի։

ԳՈՒՇԻԼԱՐ. — Գիւղ Սիւնեաց Ագահէճք գաւառի մէջ։

ԳՈՒՇԻՎԱՆ. — Համշէնի գիւղերէն մին։

ԳՈՒՇԿՈՒՐԱԴԱՋ կամ ԳՈՒՇԿՈՒՐԱԹԱՂ. — Լիս Սիւնեաց Կովսական գաւառի։

ԳՈՒՇԱՆ կամ ՂՈՒՇԱՆ. — Հայաբնակ գիւղ Ծալկայի (Պօչալու), Թրամ գետոյն վրայ, 40 տուն բակացեալ։ Գիւղս ունի քարաշէն և սրբատաշ եկեղեցի, զոր իրենց անձնական ծախքով կառուցած են բնիկ գիւղացի Օհան և Յովհաննէ Մհերբեանք, 1866ին. շուրջը գեղեցիկ պարիսպ ունի, ծախք եղած է մինչև 10000 րուբլի։ 1872ին վերոյիշեալ բարերար եղբարք 12000 րուբլի ծախք ընելով Թրամ գետոյն վրայ քարաշէն կամուրջ մը շինել տուին, որ կը ծառայէ բովանդակ Ծալկայի և Ախալքալաք գաւառի։ Գիւղիս Մհերբեանց Տ. Յովհաննէս քահանայի տան մէջ կը պահուի խաչաձեւ մատեան մը՝ որ ունի մագաղաթի վրայ Ռձկ (= 1691) թուին գրուած վկայական, և վաւերացեալ է Նահապետ կաթողիկոսի կնքով։ Այդ մատեանին մէջ կան Ս. Յակոբայ, Ս. Մինասայ և Ս. Պանդալէոն բժշկի մասունքներու։ — Այս անուամբ ուրիշ շատ գիւղեր կան զանազան կողմեր, որք մեծաւ մասամբ այլազգաբնակ են։ Տես ՂՈՒՇԱՆ և ԿԵՉՈՒՏ։

ԳՈՒՇԱՆԻՊԻԼԻԱՆ. — Լիս Սիւնեաց, Սեւաջայ և Վայոց ձորի մէջ տեղ։

ԳՈՒՇԱՆ ՏԻՐԱՆՈՒ. — Փոքր գիւղ, գետակ և ձորակ Սիւնեաց Գեղարքունեաց գաւառի, Արեգունի վիճակի մէջ։

ԳՈՒՇՆԱՆ կամ ՔՈՒՇՆԱՆ. — Հայաբնակ գիւղ Ագարակեցի՝ 5–6 ժամու ճանապարհ հեռու։ Բնակիչք հոգագործ են. ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։ Գիւղիս մօտ կը գտնուի Աստուածամայր անուամբ վանք մը։

ԳՈՒՇՎԱՆՑ. Տես ԲԱՂՔ։

ԳՈՒՆԻՃ. — Կը յիշէ Ինճիճեան գիւղս

Ա.յրարատայ Բասէն գաւառի հովտի մը մէջ։ Գիւղս մօտ է Գուռնիի չորը՝ որուն հետ միա-նալով ուրիշ վտակներ ևս կը զարձնէ շատ ջրաղացներ և յիշոյ կը խառնուի Հասան-զալայու ջրոյն հետ։

ԳՈՒՄ կամ ԳՈՒԶ. — *Ա.յսպէս կ'անուանէ Բզովդ պատմիչը, Ա.յրարատայ Բասէն գա-ւառի և Կաղզուանայ մէջ տեղ բարձրացող լեռները։*

ԳՈՒՄՈՒՊԱՇ. *Տես* ԿՈՒՄՈՒՊԱՇ։

ԳՈՒՄՆԵՆՑ. *Տես* ԿԻՄՆԵՆՑ։

ԳՈՒՏԱՒՏԻ. — *Գիւղ Ռատմանիոյ Դվդոլ գաւառի։ 15 տուն հայ կայ. չունին ոչ ե-կեղեցի և ոչ վարժարան։*

ԳՈՒՏԵՆԻ. — *Հին գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ։ Կայ նաև նոյն անուամբ ձորահովիտ և գետակ։*

ԳՈՒՏԻՆ կամ ԿՈՏԻՆ. — *Գիւղ քարայրի կիլիկիոյ մէջ, համանուն վտակի մօտ։*

ԳՈՒՏՐՈՑ. — *Փոքրիկ և սակաւաբնակ Հայոց գիւղ Շուլավէրի մօտ, Պուչալուի գա-ւառի մէջ։*

ԳՈՒՐԱԳ ՁԱՁ. *Տես* ԿՈՒՐԱԿ։

ԳՈՒՐԳԱՓԱՆ. — *Հանդրուան՝ Ա.յրարատայ կոզովիա գաւառի մէջ։*

ԳՈՒՐԳԻՆ ԲԱՐՁՐ. — *Ա.յրում գաւառի մէջ, Ծարայ հիւսիսային կողմը այս անուամբ լեռ-ներ կը բարձրանան։*

ԳՈՒՐԳՈՒԹԱ. — *Կը յիշուի Պարսատր (Վրաս-տայը) գաւառի մէջ։*

ԳՈՒՐԻՆ կամ ԳՈՒՐԻՆ. — *Ջհաստանեաց գիւղ Ազուանից Գարդման գաւառի մէջ։ Ու-նի 30 տուն հայ բնակիչներ, որոնք շատ տարիներէ ի վեր սկսած են եկեղեցի շինել և դարձ չեն կարողացած աւարտել։*

ԳՈՒՐԻՋԱՁ. — *Վիճակ Կամախ գաւառի, որ հին ժամանակներէն, ըստ Օամանեան աշ-խարհագրական բաժանման, կարնոյ կատա-կաւելթեան գաւառներէն մին էր։ Գուրիչայ այսինքն Ջհաստաք գետ կոչուելուս, վասն զի իր միջէն վտակ մը կ'անցնի, որ Եփրատայ մօտեցած պահուն, 6 ժամ հեռաւո-րութենէ սկսեալ կը սուզուի երկրի խոռոչ-ներու տակ և կը ցամքի։ Բայց գար-նան ժամանակ, երբ կ'առատանայ, առանց ցամքելու կը խառնուի Եփրատայ հետ։ Գու-րիչայ գետոյն մօտ կայ լեռ մը, յորում կը գտնուի թափանցիկ և լուսանցոյց մարմա-րիոն, զոր կոչմանցս մեծամեծները կը գործ-ածեն իրենց պատուհանաց իրկն ապակի։ Եր-կիրը այնչափ արգաւանդ չէ։ — Ն. Հայրա-տան, 105։*

ԳՈՒՐԻՈՒԵԼԻ. — *Վախտշիչէն յիշուած գիւղ, Իրակաձորի մէջ։*

ԳՈՒՐԿ. — *Գիւղ Պարսկաստանի, Նոր Ջու-ղայու Պուրլարի գաւառակի մէջ։ Ունի 14 տուն հայ, որք չունին եկեղեցի և վարժարան։*

ԳՈՒՐՃԱՄ. *Տես* ԳՐՃԱՄ։

ԳՈՒՐԼԱՆ կամ ՂՈՐԱՆ. — *Լիս Ա.յրա-րատայ Մասեաց ոստ գաւառի։*

ԳՈՒՐՇՈՒՆԼՂ. — *Հայարնակ գիւղ Ճանիկու առաջնորդական վիճակի և Զարշամպայ գա-ւառակի մէջ։ Ունի 400 տուն բնակիչ և չորս եկեղեցի՝ Ս. Գևորգ, Ս. Աստուածածին, Ս. Լուսաւորիչ և Ս. Շողակաթ անուններով։ Ունի նաև Ս. Գէորգեան անուամբ վարժա-րան մը 60 աշակերտներով։*

ԳՈՒՐՈՒ. — *Ամայի գիւղ Սիւնեաց Գե-ղարքունի գաւառի մէջ։*

ԳՈՒՐՈՒ ԱՐԱՋ. *Տես* ԱՐՄԱՒԻՐ։

ԳՈՒՐՈՒ ԽԱՐԱՊԱ. — *Ա.ւերակ վայր Սիւ-նեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի եզերքը։*

ԳՈՒՐՈՒԻԿՅՕՂ. — *Բարձր Հայոց այժմեան Երզնկայ գաւառի մէջ։*

ԳՈՒՐՈՒՄՈՒՀԱՆ. — *Գիւղ Գանձակու նա-հանգի Ղազախ գաւառի մէջ։ Ունի 72 տուն հայ բնակիչ։*

ԳՈՒՐՈՒ ՁԱՁ. — *Գետակ Մալաթիոյ։ Տես* ԿՈՒՐԱԿ։

ԳՈՒՐՈՒՊՈՂԱՋ. — *Լիս Ա.յրարատայ, Նիգ գաւառի արեւմտեան սահմանաժայրը. բարձր է 8625 ոտք։*

ԳՈՒՐՈՒՁՈՒԿ. — *Գիւղ Ա.յրարատայ Բա-սէն գաւառի մէջ։*

ԳՈՒՐՊԱԳԱՆ. — *Ա.յս անուամբ վերին և Ստորին կրկին ամայի գիւղեր կան Ա.յրա-րատայ Մազազ Ոստան գաւառի մէջ։*

ԳՈՒՐՊԱՆ ԹԼՓԻ կամ ԹՕՓՐԱԳ ԳԱՆԼ. — *Թուի ամայի գիւղատեղի Ա.յրարատայ Ոս-տան գաւառի, երկու Գանձն գիւղերու մէջ տեղ։*

ԳՈՒՐՊԻՔ ՄԻՋՐԻՍԻ. — *Գիւղ Խարբերդի, 6 տուն հայ և 49 տուն մահմետական բնակ-*

չօք։ Հայք անվն Ս. Կիրակոս անուամբ եւ կեղեցի մը։

ԳՈՒՐՏ ԳԱԼԼԻՍ (Գայլաբերդ)։ — Գաշտաւայինն կիլիկիոյ մէջ կը յիշուի այս անուամբ բերդ։ Թէեւ չկայ բուն բերդ, այլ մեծ եւ ամուր իջեւան մը կաթուածաց՝ որ բաւական է մինչեւ 2000 հոգի պատսպարելու իր մէջ, հանդերձ իրենց զրաստներով։ Կ'բսուի թէ շինուած է Սուլթան Մուրատ Դէն։ Այժմ լքեալ վիճակի մէջ կը գտնուի։

ԳՈՒՐՏ ԳՈՒԼԱԿ (Գայլակաձ)։ — Միեւնոյ վայրոյ ձոր գաւառի մէջ այս անուամբ բլրոյշի լեռնաբլուր մը կայ։ Տես ԱՄԱՆ։

ԳՈՒՐՏԼՈՒ կամ ԳՈՒՐՏ ՔԼՕՑ։ — Գիւղ ծովային կիլիկիոյ, Ադեքսանդրեկի մօտ։

ԳՈՒՐՏՈՒՊՈՒԼԻ։ — Գեղ Ալբրաատայ կողմիա գաւառի մէջ։

ԳՈՒՐՏՈՒ-ՁԱՑ։ — վտակ Ալբրաատայ կողմիա գաւառի, օժանդակ Առուն գետոյն։

ԳՈՒՐՏՊԼԷՆ, ՂՈՒՐՏՊԼԷՆ կամ ՔՒՒՐՏՊԼԷՆ։ — Գիւղ Կէյվէ գաւառակի, Նիկոմիդիոյ առաջնորդութեան եւ կառավարութեան ներքոյ։ Գրնճրլար (տէօ) գիւղէն 3–4 ժամ հեռու, յորմէ ձորակով մը բաժնուած է։ Ունի 750 տուն Հայոց, մօտ 3500 բնակչօք։ Եկեղեցին Ս. Աստուածածին՝ մեծ է, հոյակապ եւ խաչազարդ գմբեթով։ Կայ Ներսիսեան-Հոխոխեան անուամբ երկսեռ վարժարան՝ 400 աշակերտներով։ Բնակիչք՝ արհեստաւոր եւ շերամապոր են եւ բաւական հարուստ վիճակի մէջ կը գտնուին։ 1864ին գիւղիս բնակիչներէն Շուշան անուն կին մը նշանաւոր էր. սա միայնակ Գրնճրլար գիւղի մէջ կ'ամուսնանայ 30 տարեկան հասակին մէջ, 7 մանչ ու աղջիկ որդւոց տէր կը լինի. անոնցմէ 62 թոռ կ'ունենայ՝ եւ աոնցմէ ալ 42 թոռնորդի. 98 տարեկան մեռաւ է. եւ առաւօտ ու երեկոյ նոյնայ կը գտնուի եղեր ժամերգութեանց, եւ լաւ կը տեսնէր, կը կարդար, եւ վիրաբոյժ լինելով մինչեւ 3 ժամու տեղ տաքով կ'երթայ եղեր զառամեալ հասակին մէջ։ — 1889 թուին ի հասոյթ գիւղիս վարժարանին, 110 լիրայի գնուեցաւ Կէյվէի Ագհիսար գիւղի մէջ բաղնիք մը, որ բոլորովին քարուկիր է, եւ հին ոճով հաստատուն հիմանց վրայ եւ կամարօք շինուած։

ԳՈՒՐՏ ՔԼՕՑ. Տես ԳՈՒՐՏԼՈՒ։

ԳՈՒՔԻ. Տես ԿՈՒՔԻ։

ԳՈՒՁԱԲԱԿ. Տես ԿՈՒՁԱԲԱԿ։

ԳՈՒՆԵՐ. — Երբեմն հչակաւոր վանք լեռնային կիլիկիոյ Մոլևունի գաւառի մէջ, Բարձրբերդ գղեկի մօտ. մերթ Ագնապատ կոչուած է եւ մերթ Սուրբ ուխտ։ Այժմ վանացս բուն դիրքը անյայտ է, բայց իր հին մեծութենեն եւ համբաւոյն վիճակութենեն կրնայ համարուիլ վարպան աշխարհագրին այն խօսքերը՝ որով կիլիկիոյ չորս հչակաւոր վանքերու հետ կը յիշէ «և զԳուներոյ սուրբ ուխտն»։ Այս վանքս թէեւ էր Յովհաննու արքայեղբօր, որ պայծառացուցած և հչակաւոր գարձուցած է։ Ասոր գրուած են ոչ սակաւ եկեղեցական գրքեր։ 1263 թուին նոյն Յովհաննէսէ գրուած աւետարանի մը յիշատակարանն է հետեւեալը. «ի Սուրբ անապատն Գուներ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և առաւածածակիր Նշանին կայաքեր կոչեցեալ, և Սրբոյն Միաբնի մօր մեր»։ Վանքէս առ մեզ հասած բոլոր յիշատակները այս Յովհաննէսին են, կամ իր վրայ կը խօսին. միայն գաւազանագրի մը մէջ կը յիշուի Մխիթար կաթողիկոսը, որ առաջնած է Գուներոյ եպիսկոպոս։ — Տես նաեւ, 144–145 և 533–534։

ԳՏԱՅ. Տես ԳՏԻՉ։

ԳՏԱՆԻՍ. Տես ԱՐԵՒԻՔ։

ԳՏԱՒԱ. Տես ՀԱՔԱՆԴ։

ԳՏԻՉ, ԳՏԱՅ կամ ԳՏՉԱՅ ՎԱՆՔ. — Ագուանից Դիզակ գաւառի մէջ, Թաղլար աւանի հանդէպ, Ղարաս չայ գետակի ալ կողմի գեղեցկատես և հիւսիսահայեաց սարահարթեմակի մը վրայ կը գտնուի վանքս։ Շինուած է համակ սրբատաշ տարտնապոյն քարով, խաչաձեւ, բառակուսի, չորս կամարներով, որոց վրայ բարձրացած է գեղեցկաձեւ կամարդիկէն՝ վրան բաւած է մի ճապկի և մի խնձորի ծառ։ Վանքիս տաճարն ունի մի աւագ՝ և չորս փոքր խորաններ, 13 լուսամուտ և մի գուռն։ Երկայնութիւնն է 10 մետր և լայնութիւնը 7,50 մետր։ 1868 թուի մեծ երկրաշարժէն արտաքուստ թափած են տաճարիս հարաւ արեւելեան անկիւնի քարերը։ Հիւսիսային որմի վրայ արձանագրուած է հիմնարկութեան յիշատակարանը, որուն մէջ լինելով նաև վանացս նուի-

բաւած կալուածոց անուններ, կարեւոր կը համարինք առս ամբողջութեամբը գնել.

«Յաւուրն Հաւր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ, ես Սարգիս և վշտանիս եպիսկոպոսք հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ. (= 12·41) թվիս. շատ աշխատութեամբ առագ խորանն խփեցաւ և եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ: Էս տէր վշտանիս կատարեցի բազում աշխատութեամբ և հոգալ արդեամբ իմով ՈՂԲ. թվիս ի դառն և ի նեղ ժամանակիս՝ որ ազգն ևետոդաց զրազում գաղառս ուներաց և մնաց այլասերից արուռ և վիճակ սրբոյն Գրիգորիսի, որ և հաստատեալ ալով և սուրբ նշանաւն և գաւազանաւն սրբով. վիճակեցաւ ս. առիւանով ի յԱղուանից գետոյ մինչև ի Երասխ, մինչև ի Աւազն Գառուձաձի, Վարուճիս Վաղագնագետով, ի Քաբանիս և Խոզանագետով, Ջաւխետ իր գետովն. Հաբարի Հազարագետովն, Քրտագետ իր գետովն, իր սահմանովն, Դիզակ, Բերուական իր գետովն և հայրենիքն եկեղեցւոյս առիւնք, Փարախան և Գոտանոցն, Եկեղեցաձորն իր սահմանովն. Ա. Լուծ հող ի Տալիս. Ա. Լուծ ի Դող ի Գադս, Ա. ի Մոխրենիս. ով որ այս սահմանիս չետ առնի կարուղիկոս կամ իշխան կամ հայրապետ, երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի, յԱստուծոյ և յամենայն սրբոց անիծեալ, մնան և բաժին քնդ Յուդայի առցի»:

Ներքուստ Հարաւային փոքր խորանի ճակատին կայ ՈՂԵ թուականաւ ուրիշ արձանագրութիւն մը Տէր Վշտանէսի: Հիւսիսային փոքր խորանի ճակատն ևս կայ համառօտ արձանագրութիւն մը: Տաճարս ունի նաև հնաշէն գաւիթ, որոյ գոյութիւնը շատ աւելի հին է: Գաւիթս կառուցուած է մի կամարի վրայ. հոս անթափուած են քանի մը եպիսկոպոսներու և վարպետներու մարմիններ, որոնց վրայ կան տապանաքարեր: Տաճարի դրան երկու կողմը կանգնած են երկու գեղեցկաքանդակ խաչարձաններ՝ ոմանց վրայ կան արձանագրութիւն: — Գաւթի արեւելեան հիւսիսային կողման կից է աւերի հին եկեղեցի մը, որոց առջև տապանաքարի մը վրայ կայ հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը. «Ա. յս և տապան տէր Սիմեոնի որդի Մեսրոբ վարպետիս թվիս ՌՃՀԲ: Լուսաւորի Մելիք Եկաւնի ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց կաթուղիկոսական առաւելուրդ: Որ ևկի հատուածի սուրբ արուս թվիս ՋՃՂԶ. ով որ կարդայ, ևկ ինեան ողորմի ասէ»: — Վանքս այժմ քանի մը հին աւերակներ և ևկ աշխարհական պահապան ունի: Գրեթէ ամբողջապէս յափշտակուած են իր կալուածները, և հետզհետէ քայքայման վիճակի ևկ կը գտնուի: — Ա. յցախ, 80–82:

ԳՏԿՈՑ ՎԱՆՔ. Տես ԳԻՏՏԻ ՎԱՆՔ:

ԳՐԱԳՈՄ. — Մակաւաբնակ Հայոց գիւղ վաղուբրականի Արճիշակովիա գաւառի ևկ: Ունի Ա. Աստուածածին եկեղեցի մը:

ԳՐԱՄԲԱ. Տես ԿՐԱՄՓԱ:

ԳՐԳՈՒՍ. — Նշանաւոր և պատմական լեռ Տարսուերանի աշխարհի ևկ, Ներքովի լերան հարաւ արեւմտեան կողմը: Տարածութեամբ փոքր և հատակաւ կարճ է Ներքովէն, սակայն իր բնական գիրքովն աւելի հպարտ և գոռոզ քան զայն: Լեռս իր հինգ գիմիտարի կլոր գլուխներով վեհանձնօրէն բազմած է տափարակ և ընդարձակ երկրի մը վրայ: Իր կողերը ծածկուած են անտառներով: Գրգուռ լերան անուան առուգարանութեան նկատմամբ կը պատմուի թէ Պարսից Վախտանկ զօրավարի Գրիգուռ որդւոյն անուանէն ծագած է: Ա.յս լեռը Հայաստանի բարձր լեռներէն մին կարծուելուն համար, անոգագիք յարմարցուցած են այս ստանդարթիանս որ մինչև ցայժմ մնացած է, իրմի թէ՝ Նոյի տապանը նախ այս լեռը եկեր է, ըստ լոյ. «Գրգուռ առ գիս». լեռն ալ պատառխան տուեր է. «Գնա ի Մասիս, գի բարձր է քան գիս»: Լերանս առաջնակը կը գտնուի Ջրհոր անուամբ հայարնակ գիւղ մը, որոյ բնակիչք մեծաւ մասամբ Գրգուռի անտառներով կ'ապրին: Լերան բնական գոռոզութիւնն կարծես թէ ազդած է այս բնակչաց վրայ: Երբեմն ուրիշ անգերէ անտառահատներ առս գալով լեռնէն փայտ կարել ուզած ժամանակը, Ջրհորցիք գոռոզ կը վանեն ըսելով թէ՝ Գրգուռ մերն է և անոր անտառներն ալ մեր են:

ԳՐԳՈՒՍ ԱԻԱՆ. — Տարսուերանի Տարօն գաւառի ևկ, վերոյգրեալ Գրգուռ լերան ևկ կողին վրայ, ի հնումն Պարսից Վախտանկ

զօրավարը իր որդւոյն անուամբ աւան մը շինեց, որուն դիրքը և աւերակները մասնաւոր քննութեան կը կարօտին։

ԳՐՉԻ կամ ՔՐՉԻ.— Գիւղ Բաբերդի, 5 ժամու ճանապարհ հեռու յարեւմտեան հիւսիս, հայ և թուրք բնակչօք։ Ալլ է վարի Գրչին՝ բոլորովին թուրք բնակչօք։ Գրչի անունն կը համարուի Գղիրի բառի աղաւաղեալն։ Գիւղս առաջին օթեւանը կ'ընծայէ ուղեւորին՝ որ կ'երթայ ի Միւրմէնէ կամ Տրապիզոն՝ լեռնական ճանապարհաւ, սահմանակից է Օձոնց, Վահանիշեհ, Նիւխարու և Խափուչիկ գիւղորէից։ Գիւղիս բնակիչք կ'աւանդեն շրջակայից վանքերու և ուխտատեղեաց պատմական անցքերն։ կառուցուած է բլրոյ մը սոորոտը և 50ի չափ բնակութեանց 30էն աւելին Հայոց են. նիւթական ու բարոյական յեսին աղքատութիւն ընկճած է գիւղինք. պանդխտութեամբ կը հայթհայթեն իրենց օրապահիկի միջոցները։ Երկրագործութենէ վաստակ չկայ. երկիրը թէև մեծ մասամբ ջրարբի, բայց գրեթէ ճախճախուտ է. վասն զի զանազան առուներէ միութիւն կազմած վտակ մը, գարնան՝ արտերուն աւելի աւելին կը դառնայ քան թէ օգտակար։ Քանի մը առնց առջեւ գերեզմաններ կան. յարգանօք կը վարուին այդ գերեզմանատան կոթողներու հանդէպ։ Ներսէն եկեղեցի Ս. Պօղոս անուամբ, 1848ին կառուցուած կիւրինցի կարապետ վարպետի ձեռամբ. ձախակողմեան խորանի մէջ ճարտարապետական մը նկարուած ահաղնահայեաց պատկեր մը կայ։ վարժարան չկայ, և աղայք ձմեռները ախոռի մը կից սենեկի մէջ կը ժողովին։

ԳՐՉ–ՄՕՒՆ.— Գիւղ Տիգրանակերտի Սլիւան գաւառի խուրի գաւառակի մէջ. 10 տուն հայ կայ։

ԳՐՉ–ՍԻՈՒՆ.— Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 7 տուն հայ կայ։

ԳՐՉԽ ԹԼՓԼ.— Լիս Սիւնեաց Ծղուկ և Աղահէնք գաւառաց մէջ տեղ։

ԳՐԹՄԱՆԻԿ.— Ալլ կերպ գրութիւն Գարդմանի անուան։

ԳՐԻԳՈՐ (Ս.) ՆԻՒՍԱՅԻ.— վանքս կը գտնուի կիւսարիայէն 3 ժամու ճանապարհ հեռու, հարաւ արեւելեան կողմը Նիւրգ գիւղի մէջ։ Այժմ կիսաւեր փլած ու աւերակ է, միայն փոքրիկ եկեղեցին և արտաքին պարիսպը կանգուն կը մնան։ Նիւրգ գիւղի քահանային յանձնուած է եկեղեցին, որ երբեմն բարեպաշտ ուխտաւորներու կը բանայ յատիս և յերկրպագութիւն։ Վանացս արեւմտեան պարսպի տակէն ջուր մը կը բղխէ մեծ քանակութեամբ։


ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ.— Այրարատայ Արտագծոյն գաւառի, փարպի գիւղի արեւելեան կողմը այգեստաններու մէջ։ Շրջապատը բոլորովին քանդուած է, իսկ եկեղեցւոյն միայն սրմերը մնացած բլլալով, փարպեցիք պայապարկ ծածկելով առ ժամանակ մը իրը եկեղեցի կը գործածէին։ Վանացս եկեղեցւոյ գրան վրայ կայ 1264 թուականաւ արձանագրութիւն մը։ Ներկայ վիճակին վրայ տեղեկութիւնք կը պակսին։

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ ԽԱՉՈՐԻ.— Հին վանքս կը գտնուի Երզնկայի և Դերջանայ (Բարձր Հայք) մէջ տեղ։ Հիմնարկուած է տասներորդ դարուն մէջ Սիմոն անուն ճգնաւորէ մը. շինութիւնն ժամանակակից է Կամրջաձորի, Հոռոմոսի, Նարեկայ, Տաթեւու վանքերուն, ինչպէս նաև Մշոյ Ղազարու վանքի շինութեան։ Վանացս միաբանները իրենք գիրենք կամովին պարտաւոր կացուցած էին օրը մի անգամ կերակուր ուտելու և մի անգամ ջրով զսպանալու։ Խչաձորի Ս. Գրիգոր վանաց ներկայ վիճակին վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք։

ԳՐԻԳՈՐԻ (Ս.), ՍԱՆԱՊԱՏՈՒ կամ ՋՈՐԱՎԱՆՔ.— Վաստպուրականի Տոսը գաւառի հին վանքերէն մին, որ կառուցուած է վարագայ լերան հիւսիսային լանջի վրայ, կողմանից հայաբնակ գիւղի մօտերը, խոր ձորի մը մէջ։ Վանացս հին կոնդակի մէջ գրուած է թէ ի հնումն կը կոչուէր Սաթանպատու վանք, որուն սուրբ–աստուածաշնչութիւնը ոմանք կը համարին իրը սա–բար–անապատէն առաջ եկած, և ոմանք ալ՝ մեծամեծ սալ քարերով շինուած բլլալէն կը հետեւցնեն։ Վարագայ սարը որ թեւաւորած արծուի կը նմանի, կարծես խորհրդաւոր կերպով իր երկու թեւերու վրայ, իրրև պահապան, կը կրէ երկու վանքեր՝ աջկողմը վարագ, ձախ կողմը Ս. Գրիգոր, մէջ տեղ, որուն՝ վիրն վարագ, կրծքին վրայ՝ կարմրաւոր

Ս. Աստուածածնին, իսկ կաւաթը՝ Աստղիկ բերդ։

Ճարտարապետական ճաշին նայելով սուրբ Գրիգորի վանքը Արծրունեաց ժամանակէն մնացած տաճարներէն գարու պատմական յիշատակներէն մին է, հիմնարկութիւնը ամանք կու տան Մեծին Ներսէսի, իսկ ժողովրդական աւանդութիւնն ալ կը վերագրէ սուրբ Գրիգոր Լուսաւորչի, որ իբր այս վանքը հիմներ է յանուն սուրբ Յովհաննու Կարապետի. և յիրաւի վանքի աւագ խորանն ալ մինչև ցայսօր այդպէս կը կոչուի։ Վանքը ունի երեք մատրանաչափ տաճարներ, նուիրուած Ս. Աստուածածնի, Ս. Յովհաննու և Ս. Գրիգոր Լուսաւորչի։ Այս տաճարներէն միայն մին գործածելի է, և մեանները՝ կիսակործան կամ աւերակ։ — Ժողովուրդը կը պատմէ, թէ ժամանակ մը այս տեղ ապրեր է Ս. Գրիգոր, այս տեղ հանգիստ առեր է մեծ հայրապետը և այս տեղ ապօթեր։ Վանքի արեւմտահողմը լերան լանջի վրայ կայ փոքրիկ բայց գեղեցիկ անտառ մը, որ ամբողջ Վարագի միակ բնական անտառն կարելի է համարել։ Հոն ծառերու առաւելութիւն ունի փոքրիկ մատուռ մը կայ՝ Սուրբ Գրիգորի Ապօրանոցի կոչուած։ — Յովհան կաթողիկոս յիշելով Գէորգ կաթուղիկոսի մահը կը յայտնէ՝ թէ «Եղեն զնա (զԳէորգ) ի քնարանի Զորոյ վանից որ ի Ծոսպ, մերձ յեկեղեցին՝ ուր եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն ակբունական խորհրդոյն՝ զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սրբոց ի Հայս՝ ընդ իւր շրջեցուցանէր»։ Թովմաս Արծրունի ալ կը յայտնէ՝ թէ այս վանացս մէջ հանգուցեալ են Իշխանեանց Համազասպեանի սիկնոջ մարմինը։ Վանացս մէջ թաղուած են նաև ուրիշ ազնուատոհմ և եկեղեցական անձանց մարմիններ։ Կ'ըսուի թէ վանացս եկեղեցւոյ կամարի մէջ կը պահուէր Ս. Հոփսիմեանց փողպատը և հոգեթափիլ։ Վանքս ժամանակ մը եպիսկոպոսանիստ եղած է, ինչպէս 1441 թուին, կիրակոս Ա վիրապեցի կաթողիկոսի ընտրութեան առեն, Ս. Էջմիածնայ ժողովին մէջ գտնուած է վանացս կիրակոս անուն եպիսկոպոսը։ Յովհաննէս կաթողիկոսը



244. Ս. Գրիգորի կամ Սաղմոսատուն վանքը։


իր վերջին օրերն այս Աշխատասեր վանքին մէջ անցուց և այս տեղ վախճանեցաւ 925 թուին. իր յաջորդն Սահիտոնոս Բ կոչո- ղիկոս, աճեալ փոխադրից Աղթամարայ վան- քէ:

Ինչպէս վարագայ ամէն մի անկիւն, նոյն- պէս և Ս. Գրիգորի վանքն ունի բնութեան հրաշալի տեսարաններ: Աշխատասեր չորք կը բղխէ վանքէն դէպ ի հարաւ, սարի կտր- քէն, պաղպաղակ ու յոսակ. կարկաչելով կ'անցնի վանքի պատի տակէն, իր մէջ ըն- դունելով անուռէն վազող վճիտ աղբերակ- ներ, այս ջրոյն եզերքը կան բարձր ոստ- ներ, հաստաբուն ընկուզենիներ և ուռենի- խիտ ուռնիներ: Ս. Գրիգորի վանքն ունե- ցեր է և ունի միշտ իր բազմաթիւ ուխտա- տորները: — Վանքս վերջին տարիներս հա- մարեա անբնակ և ամայի դարձած էր, բայց 1898 թուականին Որբանոց մը բացուեցաւ, որուն ծախքը կը հոգան Ազգ. Պատրիարքա- րանի միջոցաւ Նիւ Եորք քաղաքի որբախո- նամ ազգայիններէն: — Ս. Գրիգոր Լուսաւո- չի անուամբ գեռ ուրիշ շատ վանքեր կան, որոց մէկ մասը նկարագրած ենք ԼՒՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ անուան ներքոյ: Տես նաեւ ԱՄԱՐԱՍ, ՀԵՐՄՈՆԻ, ԱՌԱՊԱՐԻ, ԽՈՐՎԻՐԱՊԻ ՎԱՆՔ. են.:

ԳՐԻԳՈՐԻՍ. — Գիւղ կամ արուարձան էւ- դոկիոյ: 60 տուն հայ բնակիչ կայ: Ունին եկեղեցի Ս. Աստուածածնի անուամբ, և վար- ժարան: Լիքան մը կողին վրայ կը գտնուի. ասա է Ս. Գրիգոր Արքունչելագործ հայրա- պետի ծննդեան վայրը, և ասա գտնուած է նաև որոյն գերեզմանը, և այս պատճառաւ Գրիգորիս կոչուելը է պիւզ:

ԳՐԻԳՈՐԻՈՊՕԼԻՍ կամ ԳՐԻԳՈՐԻՈՊՕԼԻՍ. Ռ. Григоріополь. — Քաղաք Պեսարապիոյ (Ռուսիա), Խերսոնի կուսակալութեան մէջ. 43 հղմ. Տիրասպոլի հիւսիս արեւմտեան կողմը: Քաղաքիս պիրքը երկայնաձիւս է, Տնեսթէր գետոյն եզերքը, որ կ'անցնի իր աջակողմէն: Տներու և կրպակաց շէնքերը անշուք են, և վաճառականութիւնը շատ նը- ւազ: Քաղաքս հիմնուած է 1792 թուի յու- լիս 25ին, հրամանաւ Ռուսաց Կատարինէ կայսրուհւոյն. որուն հիմնարքը օրհնած է Տ. Յովսէփ Երկայնաբազուկ Արքեպիսկոպոսը: Գրիգորուպօլիս կոչուած է վերակացու իշխանին անուամբ: Գրիգորու- պօլսի հիմնարկութեան երկրորդ տարին, 1793ին, Հայք Ս. Փեթրպուրկի մէջ փորա- գրել տուած և տպագրած են քաղաքիս յա- տակագիծը 44×34 հարիւրորդամասը մե- ծութեամբ, որուն փոքրացուցած նմանա- հանութիւնը կը գտնենք աստ: Ի սկզբան Հայոց համար շինուած է քաղաքս, որոնք գաղթած եկած են Խամայիլէ, Քիլիէ, Ղաւ- շանէ և Ռաշքովայէ. յետոյ եկեր են նաև Ռուսք և Հրեայք: Հ. Բժշկեան կը գրէ թէ կանխաւ կային 900 տուն Հայոց, բայց շատերը օդոյն վարժած չլինելով մեռան, և ամենք ուրիշ կողմեր ցրուեցան. իր այցե- լութեան միջոց կային հազիւ 350 տուն, որոնք առանձին դասարան և հինգ դասա- տորներ ունէին: Աստնք Հայերէն դասատանա- գիրք ունէին, որուն կանոնները մեծ մասամբ առնուած էին Ս. Գրքէն. այժմ կը գործածեն Ռուսաց կանոնագիրքը: Քաղաքս այժմ ունի 7000 բնակիչ, Հայ, ռուս և հրեայ, բայց Հայոց ճիշդ թիւը մեզ յայտնի չէ: Ռուսաց Պօղոս կայսրը յատուկ հրովարտակով մը 1799ին Հայոց զանազան արուեստներ տուեր է և 30 հազար հարիւրակալ երկիր, երկրա- գործութեան համար, որուն կէսը յետոյ առ- նելով Գերմանացւոց տուին: Այս հրովար- տակին պատճէնը հետեւեալն է.

«Աստուծոյ արագաձաս ողորմութեամբն մեք Պօղոս առաջին կայսր եւ իշքնակալ ամենայն Ռուսաց... Հաս- տատմագոռնից Հայոց քրիստոնէական օրինի հաստատակա- րեանն քաղաքին Գրիգորիուպոլոյ ամենայն կերպի կող- մանց ամենեցուն ընդհանրապար եւ ամենից յատուկ մերս կայսերական ողորմածագոյն բան... ս. Զպատանիչ ի նոցա- նէ գրաման վասն շինուրեան տանց եւ խանութից, գործից եւ վաճառականուրեան... բ. Վասն աղքատաց շինուրեանց 8041 ռուբլի, վասն շինուրեան նաեւ վանից եւ աւագ եկեղեցոյն... գ. Տացի 30 հազար տեսերին երկիր վասն Հայոց քան Դակիատին որ ի 1794. նոյտ, 12. յաւելուլ յայնմ նաեւ 30 հազար եւ 400 տեսերին մինչեւ ցգետն Տաշլիկ... դ. Նման քաղաքին քան նոյն Դակիատին պատ- րաստել... ե. Ի 4 յունվարի եւ ի 19 ապր. 1799 ամի հրովարտակօք մերովք վերամատուցեալ պիրատուես ըն- դարձակօրին վարել Հայոց ի կայսերուրեան մերում գա- ւառնուրիւն իրենց քրիստոնէական օրինի. շինել վանո- րայս, եկեղեցիս, զանգակատուն... կախեալ գոլով մի միայն յիշխանուրենն Հայոց Պատրիարգին Ղազիասոր Էչմիած- նի, եւ ի փոխանորդ նորին... հաստատելով առ ի դա- տել գնգեւոր եւ զնարմնատոր տեմիին ի Ատրախան գՀայոց նոգեւոր կանցիատորն յինել ի նմա նախագահուրիւն


ПЛАНЪ ГОРОДУ ГРИГОРІОПОЛЮ
Сія Ґрігоріополь Вірменська Область
Сія Ґрігоріополь Вірменська Область
Съ Ґрігоріополь Вірменскія Области
1793
Ґрігоріополь
Ґрігоріополь
Ґрігоріополь

ուճող Արքիմանարիդ մի, եւ երեք գաւառորդ յառագ քահանայից. երիւռ սեկրետարդ (պահիչքն առանձագոյիրք) մինն ի մասին Հայոց՝ վասն գիտողաց գլեզուն Հայոց. իսկ միւսն ի մասին Իռոմայ՝ յաղագս այնց Հայոց, որք ապառել տեղեակ են լեզուին Իռոմայ քան Հայոց. եւ յորս գրագիրք վասն գրագրաբեանն. ենք կառավարութեան սմին կանցիատորի եղիցին ամենայն եկեղեցիք Հայոց եւ ծուխք նոցա...։ գ. Ընդիցին սեպհականք Հայոց իրաւարան ընտրելով գիտաւորս ի ժողովրդենէ իւրեանց. զսկրետարս, եւ զգրագիրս...։ է. Արժանիմք զնուա յարքունական հարկաց եւ ի ծառայութենից, որպիսի կողմանց եւ իցէ...։ ը. Ազատ վաճառականութեամբ արդիւնաւորութեանցն ի ծովս եւ ի ցամաքի...։ թ. Չրամաչիմք ամենայն նախաթարաց պաշտպանել զայսոսիկ նաւարակոչիւնս։

Յամ. 1799. և ի 28 հոկ։

ՊԱՒԼԻ
Գրագի Բաստափչիի »։

Քաղաքիս Հայոց մայր եկեղեցին նուիրուած է Ս. կաւարիելի, փայտաշէն ընդարձակ և անշուք, կառուցուած մեծ հրապարակին վրայ. այս եկեղեցիս քարաշէն կառուցանելու համար ի վերջոյ յարքունեաս պրամ տրուած է։ Երկրորդ եկեղեցին է Ս. Լուսաւորիչ և երրորդն Ս. Թաչ՝ զոր կառուցած են անցեալ գարու առաջին կիսուն մէջ. քարաշէն է բայց անձև, առաջնորդարանի մօտ, ուր կայ նաև Հայոց տպարան ուսումնարան։ Այս եկեղեցիներու վրայ այժմ նոր տեղեկութիւն չունինք, բայց կը յիշէ ոմն, թէ տեղւոյս Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ կը պահուի Ս. Նշան անուամբ պղնձեայ խաչ մը, որոյ համար աւանդութիւն է թէ՝ Քրիստոսի առաջին թափէտս առաքեալի շինած երեք խաչերէն մին է, Այսու հայ գաղթականներէն այս կողմերս բերուած։ Ոչ միայն Հայք, այլ և Ռուսք, Հրեայք և այլք հեռաւոր տեղերէ կու գան յերկրպագութիւն այս Ս. Նշանին։ Քաղաքիս Հայոց եկեղեցիներու մէջ կը պահուին մագաղաթի վրայ գրուած հին յայսմաւուրք, աւետարան, ճաշոց և այլ գրքեր։ Քաղաքս ըստ հոգեւոր վարչութեան կը պատկանի Նախիջեւանայ և Պեսարապիոյ թեմին։ Հայք ունին նաև աղջկանց ուսումնարան Սրբոյ Հեան անուամբ։ — Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 184–186։

ԳՐԻԽ. — *Կը յիշուի Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ։*

ԳՐԻԶՔ կամ ԿՐԻԶՔ. — *Գիւղ Կարնոյ (Բարձր Հայք) 90 տուն բնակչօք։ Հայք 50 տուն են, և ունին Քրիստոս բազաւոր անուամբ պարզ եկեղեցի մը։ Թուրքք 40 տուն են։ Գիւղէս ½ ժամ հեռաւորութեամբ քարայր մը փորուած կայ, զոր քարաքիր կ'անուանեն, որոյ նկատմամբ անսորոշապար կ'աւանդեն թէ՝ Ճիշդ հրաս անուանով մէկէ մը մեռած է։*

ԳՐԻՎԱՆՇԻՔ. — *Գիւղ Ռումանոյ Եաշ գաւառի. բնակիչք մէջ կան քանի մը տուն հայ։*

ԳՒԿԻ կամ ԳՒԿԻՔ. *Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։*

ԳՒՄՈՒ. *Տես ԲԱՂՔ։*

ԳՐՉԱՄ կամ ԳՈՒՐՉԱՄ. — *Միւնեաց Կոլատական գաւառի նոր անուն։ Այս անուամբ բերդ մը ևս կը յիշէ Օրբէլեան, և կը գրէ Միւնեաց ամուր բերդերուն կարգը։*

ԳՈՂՋՆԱՑ. — *Քաղաք Ռումելոյ Թերէքիան նահանգի մէջ, վիլաեիկոլիկասէն 101 վերստ հեռու։ Ամառնային փոշին և ձմեռնային ցեխն անտանելի է. օդն և ջուրը բաւական լաւ են։ Բնակիչք են՝ Հրեայք, Մահմետականք՝ զանազան ցեղերէ, Ռուսք և մօտ 40 տուն Հայք, որոց մեծ մասն գաղթած է վերջին Թէլլաւ և Տուշէթ քաղաքներէն և վաճառականութեամբ կը պարապին. 12 տուն ալ Հին Նախիջեւանէ գաղթած են, որք մեծ մասամբ բրուտ են։ Հայք ունին մեծ քարաշէն եկեղեցի մը, զոր կառուցած են զանազան քաղաքներէ հանգանակութիւն ընելով։*

ԳՈՒՄԱԿ. *Տես ՇՂՈՒԿ։*

ԳՕՋՈՒԼՁԱ. *Տես ՂՕՋՈՒԼՁԱ։*

ԳՕՋ–ՕԼՈՒԳ. — *Գիւղ Տարսոնի (Կիլիկիա), 40 տուն հայ կայ, ունին Ս. Սարգիս առնուամբ եկեղեցի մը։ Դիրքն զուարճալի է և կը ծառայէ իրրեւ ամարանոց Տարսոնի։ Շրջակայքը կան զանազան տեսակ պտղատու ծառեր և մանաւանդ ընկուզենիներ։*

ԳՕԼԱՆԸՂԸՐԻԱՆ կամ ՔԻՕԼԱՆՂԻԱՆ. — *Հայկական գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որ Ըսոլհանէս եպիսկոպոս Շահխաթունեանցի այցելութեան միջոց կը գրուէր Ծովիզերեայ փոքրիկ քարաւ բլրակի մը մօտ, բայց յհոյ 1850 թուին, գիւղացիք տեսնելով որ ծովակի ջուրը երբեմն բարձրանալով իրենց տները կ'ողողուին, գիւղս 100 քայլ ծովէն հեռու փոխադրեր են դէպ ի լերանց վերջին սահմանքը։ Գիւղս*

այժմ ունի 135 տուն, 1300 հոգւով։ Ու-նին Ս. Աստուածածին անուամբ չափաւոր լաւ եկեղեցի մը։ Քէօլանդոան անունն առաջ եր է այն ժամանակ, երբ Լեզկինները այս կողմերը տասպատակելով՝ կոտորեր և չարչեր են հոս։ Քէօլանի անուամբ թրքերը՝ որոշմէ քիչ մը վախեր հասեր են Էջմիածնի գաշտը, և հոն հիմներ են Քէօլանդու գիւղը։ — Քէօլանդոան գիւղէն համարեա 4–5 վերստ հեռաւորութեամբ հարաւ արեւելեան կողմը կայ աւերակ գիւղատեղի մը, ուր կը մնայ մայի եկեղեցի մը երկու խորանիներով. եկեղեցւոյ միայն որմունքն մնացեր են կանգուն. շուրջը կան գեղեցիկ քանդակներով խաչաձանիներ և գերեզմանաքարեր, որոց ամենց վրայ կը նշմարուին հայատառ արձանագրութիւններ. այս եկեղեցւոյ մօտ կան նաև կարմիր քարերով խաչաձանիներ, և այս պատճառաւ գիւղացիքը կը կոչուի Կարմիր խաչեր, որոյ հին անունն խաչքարի մը արձանագրութեան համեմատ, կը կարծուի լինել Վաղաւեր։ Քէօլանդոան գիւղէն 1890 թուականին 13 տուն Հայք, տեղափոխուելով այս կարմիր խաչեր կոչուած գիւղավայրը, բնակուելիւն հաստատեցին և հին եկեղեցին սկսան նորոգել։ — Գէղարքունի, 551–553։

ԳՕԼՔԵՒՆԻ ԲԱԼԱՆԿԱ. — Մահատարածակ Հայոց գիւղ Երզնկայի (Բարձր Հայք) առաջնորդական վիճակի մէջ։

ԳՕՅԹՈՒԿ. — Լիս Ա. Լերարատայ Աբրագածոան գաւառի։

ԳՕՅՈՒՆ ԿԼՃԻՑ. — Հուն կուր գետոյն, Պարտաւի մօտ։

ԳՕՇ ՄԽԻԹԱՐԱՑ կամ ԳՕՇԱՑ ՎԱՆՔ. — Նկարագրած ենք Գետիկ անուան ներքոյ։

ԳՕՉԷԻՍԱՐ. — Գիւղ Սերաստիոյ, 6 ժամու ճանապարհ հեռու, 200 տուն բնակչօք։ Հայք 150 տուն են և ունին Ս. Յակոբ առաջնորդական եկեղեցի մը և վարժարան։

ԳՕՎԱՆՏԻՒՔ. — Հայաբնակ գիւղ Խնուսի (Տարբերքան), ունի 1000էն աւելի բնակիչ։

ԳՕՎԱՌԻԳ կամ ՔՈՒՊՈՒԻԳ. — Ամայի գիւղ Ա. Լերարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։

ԳՕՎԱՌԻԳ ՓԼՒՑ. — Գիւղ Նիկոմիդիոյ առաջնորդական վիճակի մէջ։ Ունի Գեղամեան անուամբ երկսեռ վարժարան մը՝ 40 աշակերտներով։

ԳՕՏԱՒԻՃ. — Գիւղ Զարսանճագի առաջնորդական վիճակի մէջ. ունի վարժարան՝ 30 աշակերտներով։

ԳՕՐԱԴԱՐԱ. Տես ՔՕՐԱԴԱՐԱ։

ԳՕՐԳՈՒՆ. — Գետ և ձորահովիտ լեռնային Կիլիկիոյ։

ԳՕՐԻ կամ ԿՈՐԻ. Ե. Гори. — Գլխաւոր քաղաք Համանուն գաւառի, Տփղիսի նահանգի մէջ. Տփղիս քաղաքէն հեռու է 70 վերստ։ Շինուած է վրացիներէ ԺԲ դարու սկիզբը։ Դիրքը բաւական գեղեցիկ է. ունի մօտ 1370 տուն, յորոց 10ը պետական շէնքեր են, իսկ մնացեալք՝ մասնաւորաց։ Տները մեծ մասամբ քարեայ են և միայարկ։ Քաղաքի մէջտեղը կը բարձրանայ ժայռատ բլուր մը, որոյ վրայ կ'երեւի քանդուած Գօրու բերդը, որ կարծես կու լայ իւր ստորոտը կառուցուած աններու և քաղաքի բնակչաց վրայ։ Գօրի ունի 8000 բնակիչ, յորոց 3500ը Հայք են, մնացեալք՝ Վրացիք, Ռուսք, և ոչնչ թուով ուրիշ զանազան ազգեր։ Քաղաքիս ինը եկեղեցիներէն հինգը Հայոց են. այս հայկական եկեղեցիներէն միայն երեքին մէջ ժամերգութիւն կը կատարուի, իսկ երկուքին մէջ երբեմն՝ իրրև ուխտատեղի։ 36 փողոց կայ, որոց ամենէն կանոնաւորը կը կոչուի յանուն Ա. Գէորգեանցը Բ կայսեր, 1871ին հոս այցելելուն պատճառաւ։ Գօրի նշանաւոր է ջրոյ կողմանէ կուիկատու ուրիշ քաղաքներէ։ Հարաւէն կ'սոսգէ կուր գետը, որոյ վրայ ձգուած է երկաթեայ կամուրջ գէպ ի կայարանն երկաթուղւոյ. քաղաքիս մօտ կուր յինքն կ'ընդունի Լեռնավա գետը, իսկ վերջնոյս հետ կը միանայ փոքրիկ Լեռնավա գետակը, յետոյ Պշնակա կոչուած գետն, որոյ մէջ կը թափի Ծմլինտա–Ծղալի անուն գետն, որ կը հոսի քաղաքիս միջէն. ամենաառատ ջրարբն է Լեռնավայի ջուրը. ասոնցմէ զատ շատ աներ ջրհորներ ունին։ Կլիմայն բնդհանրապէս բարեխառն է. ցրտերը երկար չեն տեւեր և գետերը ձմեռը գրեթէ չեն սառիր։ Բնակչութիւնն առատ է և բազմատեսակ, այգեպանութիւնն և պարտիզպանութիւնը գրեթէ գործ եղած են. խաղողի տեսակները զանազան են։ Վերջին ժամանակներս բնակիչք բաւական հմտացած են լաւ գինի պատրաստելու եղանակին։ Կը պատրաստեն նաև երկրա-

գործութեամբ. արտադրութիւնք են ցորեան, գարի, եգիպտացորեան: Կը պահեն կով, հաւ, հնդկահաւ, սագ, բադ: Բնակիչք երեք կարգ են՝ վաճառականք, արհեստաւոր և ծառայող: Շուկայն կը բաղկանայ 310 խանութներէ, վաճառատուներէ և 20 պանդոկներէ. շուկային դուռ կան քանի մը մզկիթներոց և 4 հիւրանոց: Կան աղիւսի, մեղրամոմի, ներկի, խղի, բրուտի, և այլ գործարաններ: Արհեստներն են հիւսնութիւն, օրիորդութիւն, սափրչութիւն, մաշկագործութիւն, կօշկակարութիւն, պղնձագործութիւն, զինագործութիւն, դարբնութիւն, և այլն: Կան նաև 1 գեղարան, 1 գործարան հանքային ջրոց, 6 ջրաղացք, 1 քաղաքային կրպակ, 1 բաղնիք և 1 քաղաքային այգի: Նախակրթարաններ ցուներ Հայը, Յունը և Վլացիք: Հայոց օրիորդաց Մարիամեան անուամբ աւտուճարանը հիմնուած է 1870 թուին, որ ունի առանձին հոգաբարձութիւն: Արուեստից վարժարան ևս կայ: Հայկական ազգային և իգական սեռի վարժարանները, եկեղեցիներու հասոյթներով կը մատակարարուին: Քաղաքիս մօտէն կ'անցնի երկաթուղւոյ գիծը: — Տեղւոյս Հայը Ազնիւ՝ զարթիականներ են, բայց կորուսեր են իրենց մայրենի լեզուն և վրացերէն կը խօսին: Հայոց եկեղեցիներէն մին Ս. Աստուածածնայ՝ երկյարկ է և կը բաղկանայ երկու եկեղեցիներէ. մին կը գտնուի գետնի տակ, իսկ միւսը բարձրը՝ նոյն եկեղեցւոյ վրայ. ներքին եկեղեցին ուղղակի մեծ վրայի եկեղեցւոյ սեղանի տակն է. ներքին եկեղեցին ունի մէկ պատուհան գաւթի արեւելեան կողմէն, իսկ մուտքը մեծ եկեղեցւոյ խորանէն է: Քաղքիս Հայոց և եկեղեցիներու վրայ նորանոր անկեղութիւններ խնդրած էինք, սակայն ցարդ ձեռքերնիս չհասան: — Գօրիի տահմանաց մէջ հին աւանաց և եկեղեցիներու շատ աւերակներ կան. նշանաւոր է Ութրաց իւխ գուռ Հայաբնակ գիւղը՝ բլրի մը մօտ. այդ բլրի գագաթը կը տեսնուին խիստ հին ժամանակներու կակուղ քարի մէջ փորուած քաղաքի հետքեր: — Գօրիի գաւառի մէջ կան 70էն աւելի գիւղեր՝ որոց բնակիչք կամ արդ[illegible]ին և կամ մասամբ Հայ են: Ամբողջ գաւառիս մէջ, հաշուելով նաև քաղքի բնակիչները, Հայոց թիւը կը հասնի 15,147 հոգւոյ, բաժնուած 2860 տան:

ԳՕՐՆՋՈՒԿ կամ ԳԵՕՐՆՋԱԳ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց, այժմեան Պօլչալու գաւառի մէջ, գեղեցիկ և զուարճալի դիրքով, շրջապատեալ անտառներով ու ծաղկազարդ լեռներով: Ունի Ս. Գէորգ անուամբ համակ կոփածոյ քարերով շինուած եկեղեցի մը, զոր զարդարած և ճոխացուցած է ներքնատա և արուաքնատա հայազգի ազնուականն Գէորգ Եղիայեան Փիլիճանց: Ունի 30 տուն բնակիչ:

ԳՕՐՈՒ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Հաբանդ (Զանգեզուր) գաւառի մէջ: Ունի 516 բնակիչ, բաժնուած 56 տան:

ԳՕՐՈՒՆ. — Հայաբնակ գիւղ Ալլահուակբար կազուվիա գաւառի մէջ, և Բագրեւանդայ առաջնորդութեան ներքոյ: Ձմեռան վիճակն անծանօթ:

ԳՕՐՕԳ. — Գիւղ Թումանեան Գէղուջ գաւառի: Բնակչաց մէջ կը գտնուին քանի մը տուն Հայք:

Դ

ԴԱՒԻ, ԹՈԹԱՅ կամ ԹՈՒԹԱՅ ՎԱՆՔ. — կը գտնուի Արցախի Խաչէն գաւառի մէջ, Թարխան գետի ձախ կողմը, Խաչթայ վանքի ուղղութենէն բաւական մը։ Վանքը առաջին անգամ հիմնարկուած է, ինչպէս աւանդութիւնը կը վկայէ, Թադէոս առաքեալի Դաւիթ անուն աշակերտի անուամբ։ Կոչուած է նաեւ Խաչթայ վանք, Խաչի մը վրայ շինուած բլլալուն պատճառաւ։ Ընդհատ է շինութիւնն թուականը, վասն զի հետզհետէ նորոգուած է վանքը, և իր մէջ գտնուած բազմաթիւ արձանագրութիւնք, մերթին նոր թողութենէ և շինութենէ յիշատակարան ներ են։ Արձանագրութենէ մը համեմատ, ՈՀԱ (= 1182) թուին վանքս վանահայրն էր Վախտանկ Թագաւորազնի որդի Գրիգոր եպիսկոպոսը, առ որ գալով կրօնաւորեցան իր եղբայրն Հասան, և եղբօր կինն Մամա Թագուհին, որոնք ամէն էին Հարերդու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւքաթատրցիի։ Ցետոյ ՈԿԴ (= 1214) թուին Թագաւորազն Վախտանկի բարեպաշտ սիկինն Արզու խաթուն, չորս սիւներու վրայ կառուցանել կու տայ սրբատաշ քարերով վանքս կից հրաշալի եկեղեցի մը, և իր յիշատակարանը գրել կու տայ հարաւային որմի վրայ արտաքուստ։ Եկեղեցւոյս մէջ կան մի քանի նուիրատուաց և միաբանողաց յիշատակարաններ։ Վանքիս եկեղեցին, ինչպէս ըսինք, և գաւիթն Արզու խաթունն շինել տուած է այն նպատակաւ, որ ծառայէ իրեն հանգստարան Վախտանկեան առհասին։ Գաւթի մէջ ամփոփուած են Վախտանկ Թագաւորազնի, Արզու խաթունի, Հասանայ, Գրիգորի, Մամքանայ, և Զաքարիա, Ամանասա, Յովհաննէս, Գրիգոր կաթողիկոսներու և Սարգիս եպիսկոպոսի մարմինները. ասոնց տապանաքարերը ունին արձանագրութիւններ։ Վանքս յաջորդաբար Վախտանկեան տոհմէն վերջ, Դոփեանց տոհմի պայազատներէն շէն մնացեր է։ Այս տոհմէն Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի ձեռքով շինուած է վանքացս գեղեցիկ զանգակատունը։ Զանգակատան մօտ, արեւելեան կողմը կան երկու մատուռներ, որոց մէջ աչքի կը զարնեն երկու հիանալի ճարտարաքանդակ խաչեր՝ հանդերձ արձանագրութեամբք։ — Վասակ Դահատակի որդին Գրիգոր եպիսկոպոս, շինած է վանացս մէջ ուրիշ գաւիթ մը անառաջ քարերով։ — Հասանի որդի Գրիգոր եպիսկոպոսն ալ շինած է ուրիշ եկեղեցի մը չորս սիւներու վրայ, որ վանքէս քիչ հեռու է և կը գտնուի խոճապի և անմաքուր դրութեան մէջ։ — Տիւր է Դապի վանաց ներկայ վիճակին, բաց ի վանահայրէ մը ուրիշ միաբան չունի. այլ և այլ ժամանակաց մէջ, ինչպէս արձանագրութիւնք կը յայտնեն, գանազան իշխաններէ վանացս նուիրուած ահագին կալուածներն, անտառներն և հողերն յափշտակուած են, և վանքս օր աւուր քայքայման և աւերման ենթակայ է։ — Վանացս մօտ ժամանակաւ կարճատոր անտառ գիւղ

մը, որ ունէր մօտ 300 տուն բնակիչ, որք նախ գաղթեր են Երեւանի կողմերը և հոն հիմներ նիհիլա գիւղը և յետոյ տեղափոխուեր են Շուլաւերի կողմերը։ — Դպրի վանքէն վար Թարթառի ձախ կողմը կայ քարայր մը, որուն մուտքը գետնի երեսէն է։ Լուսահոգի Բաղդասար մեսրոպեանի կենդանութեան ժամանակ, Քէօլանի մահմետականներ որոշած մը քոշ մը կը գտնէ, որ թուալղար կ'անցայտանայ։ Լսածէն կը հասնի որոնդրան և կը տեսնէ որ քոշը ընկած մէջաց՝ չարդուեր են այլեւ բերանի փտած փայտերն, այլեւ մէջ ընկած է որան, ուր և շարուած կան շատ գրքեր։ Որոնցմէ առնելով գրքերէն մին կ'անցապարէ Շուշի, կը յայտնէ Բաղդասար մեսրոպեանին, որ պարզն կու տայ որոնդրին և ձեռագրերը Շուշի փոխադրել կու տայ։ Ա.յս գրչագրերու մէջ կայ եղեր բնաիր մաշտոց մը՝ գրուած սուրբ Մեսրոպի աշակերտ Յովհաննես վարդապետի ձեռքով, որ այժմ կը պահուի Ս. Էջմիածնի մէջ։ — Ջարալեանց, Բ 222–228։ Արցախ, 203–210։

ԴԱՎԻՆ, ԴԱՎՈՑԻ կամ ԴԱՎՈՒԻ ՎԱՆՔ. — Միւնեաց վանքերէն մին, կը յիշուի Քաշաթաղի մէջ։

ԴԱՒԻ–ԲԵԿԱՆՑ ՎԱՆՔ. — Կիսաւեր վանքը կը գտնուի Արցախի Կիւլուստան գիւղէն վար, Ինջա գետի աջ կողմը։ Մենաստանին մօտ կան միաբանից սենեակներ և հանգստարան։ — Ջաքին նահատակ անուամբ գիւղաւեղի, հանգստարան և կիսակործան փոքր եկեղեցի մը կայ վանացս հիւսիսային կողմը, Պարնատատ անուն անտառի մէջ, Ինջայի ձախ կողմը։

ԴԱԺԴԱՁՆԻ. — Հին և մեծ տուն Միւնեաց Նախճաւան գաւառի մէջ, Երասխայ եզերքը, Մասեաց լերան արեւելեան կողմը. այժմ կը մնան միայն աւերակները։

ԴԱԼԱՆԿԻ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ գաւառի Ալչար գաւառակի մէջ. 2 տուն հայ կայ։

ԴԱԼԱՄ. — Տարտարեանի հին գաւառներէն մին։

ԴԱԼԱՐԻՍ կամ ԱՅՈՒԿ. — Հին գիւղ Տարսուերեանի Ագահունեաց գաւառի. մեզ ծանօթ է պատմութեան մէջ։ Բուզանդ (Գ. ի) կը գրէ. «Յորժամ եկն եւնուա զօրավարն Պարսից ի ներքս ի գիւղն Դալարիս, ածէր կապիլ զարքայն Տիրան ընդ խր. և առ զվարազ. աղէ՝ անէ՛ք ածուղ, որով երկաթի զօրացուցուք, զի զաշս խարեսցուք զարքային Հայոց. և անդէն բերէին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ։ Ապա ինքն խօսիլ սկսաւ Տիրան՝ և ասէ. փախանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս անգամ, արդ՝ փախանակ Դալարեացս անուան՝ Այծուղ անուն լիցի սմա՝ մինչև ցյաւիտեանս ժամանակաց, և այս երեւելի նշանակս մնասցէ յիմ յիշատակ»։ Վարդան այս զկռիւս աւելի համառօտ կը պատմէ, որոշելով նաև գաւառը, բայց գիւղի անունն կը գրէ Այծուղ։ Ասողիկ ևս նոյն Ագահունեաց գաւառի մէջ կը դնէ, բայց Այծ կաղ կ'անուանէ։

ԴԱԼԱՐԻՆՔ. Տես ՁԱՀՈՒԿ։

ԴԱԼԱՐՋՈՐ կամ ԴԱԼԱՐՋՈՐ. — Գիւղ Յաւուն–Շաւարխի Գայմագամութեան ներքոյ. ունի 30 տուն բնակիչ, մեծապոյն մասը Հայք և մնացեալք՝ Քուրդք։

ԴԱԼԱՐՍ. — Սակաւարնակ Հայոց գիւղ, Մակուց աշխարհի Սպարկերտ գաւառի։ Ունի Ս. Գէորգ անուամբ եկեղեցի։

ԴԱԼԻՂԱՐԹԱՇ կամ ՏԻԼԻ ԳԱՐՏԱՇ. — Գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի մէջ. ունի 3100 հայ բնակիչներ, բաժնուած 315 տան։ Բնակիչք բնաւորութեամբ կոշտ ու կոպիտ են, և զուգէ այլ պատճառաւ գիւղս կը կոչուի Դալի Ղարդաշ (Գիժ եղբայր)։ Եկեղեցին Ս. Խաչ՝ հին է և հասարակ ձեւով, շրջապատած խաչքարերով զարդարուած։ Գիւղի ծայրը կան Ծաղկավանք և Ս. Գէորգ անուամբ երկու մատուռներ։ Կայ նաև Թուխմանուկ կոչուած մատուռ մը։ Գեղեզմանատան խաչքարերը ունին արձանագրութիւններ՝ վերջին դարուց վերաբերեալ թուականներով։

ԴԱՂՔ. Տես ԿՈՎԱԿԱՆ։

ԴԱԽԱՐԵԱՆ. Տես ԿՈՎԱԿԱՆ։

ԴԱԽՆ. Տես ԲԱՂՔ։

ԴԱՀԱՐԱՒ. — Հայարնակ գիւղ Աչբարատաղ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ։ Ունի 661 բնակիչ, բաժնուած 78 տան։ Գիւղիս բնակիչք արեւմտեան Շիրակի գաղտան գիւղերէ գաղթած են։ Ունին Ս. Յով-

հանճեւս անուամբ քարաշէն եկեղեցի մը, 1868ին կառուցուած, և փոքրիկ ուսումնարան մը։

ԴԱՀՐԱՋ. — Հայարնակ գիւղ Արցախի վարանդա գաւառի. հիմնուած Մխիթարէն բառական վեր, արեւելահայեաց գիրքով։ Պառուական են օդն, կլիման և ջուրը։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի, որ կառուցուած է հանգուցեալ Դաւիթ Ագամեանի և Բաղդասար Սողոմոնեանի ծախքով. կամարակապ է և գեղեցիկ։ Գիւղիս բնակչաց թիւն կը հաշուի 470 հոգի, բաժնուած 65 տան։

ԴԱՀՐԱՒ. — Գիւղ Արցախի խաչէն գաւառի, հիմնուած Մէյտի–չէնի արեւմտեան կողմը, բարձր և սեպացեալ քիրթի մը տակ։ Պառուական են օդն, կլիման և ջուրը։ Եկեղեցին Ս. Յովհաննէս՝ կառուցեալ է երեք կամարներու վրայ, երկայնութիւնն է 17, 40 մեար և լայնութիւնն 8,60 մեար։ Դրան ճակատակալ քարի վրայ կայ շինութեան համառօտ արձանագրութիւն մը 1885 թուականու։ Բնակիչք 781 հոգի են, բաժնուած 110 տան։

Գիւղիս հիւսիս արեւմտեան կողմը կան երեք բլուրներ, որոնք իրարմէ մէկ մէկ քարընկէց հեռու են և ունին արձանագրութիւններ՝ ՇԻ (= 1071) և ՉԻԶ (= 1276) թուականներով։ Այս բլուրէ միայն մեծ կայ նահատակի մը գերեզմանը, որուն վրայ շինուած է փոքրիկ մատուռ և ունի արձանագրութիւն։ — Արցախ, 155–156։

ԴԱՂՑԻ ԹԱԶԻՆ. — Հայարնակ գիւղ Տփղիսու գաւառի մէջ, մօտ 1700 բնակչօք, բաժնուած 306 տան։ Գիւղիս բնակիչք մեծ մասամբ աղքատութեան և թշուառութեան մէջ են։ Ունին եկեղեցի և ծխական ուսումնարան։ Գիւղիս անուամբ Տփղիսու գաւառի մէջ կայ նաև ուրիշ Հայոց գիւղ մը, որ կը կոչուի Փոքր Դաղիր, և ունի 5 տուն բնակիչ։

ԴԱՄԱԼԻԱ. — Վախուշտ կը յիշէ այս անուամբ կրկին գիւղեր Թռնգը և Դմանիք գաւառաց մէջ։

ԴԱՄԱՇ. — Գիւղ Պաքուվի (Ռումանիա), բնակչաց մէջ կան մէկ երկու տուն հայ։

ԴԱՄԱՍԿՈՍ կամ ՇԱՄ. Գր. DAMAS. — Գլխաւոր և նշանաւոր քաղաք Համանուն կուսակալութեան։ Բովանդակ բնակչաց թիւն է իբր 150000, որոց 110000ը՝ մահմետականն են, 8000ը՝ հրեայ, և մնացեալն՝ այլ և այլ քրիստոնեայք։ 1860 թուականի կատարածէն առաջ՝ 30 տան չափ բնիկ հայ բնակիչ կային և բառական թուով պանդխտաց վաճառականք, սակայն այլ տուներէն այժմ 5 միայն մնացած են, վաճառականք բնաւ չկան։ Այժմ Հայք 40 տան չափ են՝ միջին հաշուով 300 հոգի, զանազան քաղաքներէ հաւաքուած, և հազիւ օրական ապրուստ կը հայթհայթեն։ Քաղաքիս Հայք են ընդ հովանեաւոյ Լրուսադէմի Պատրիարքութեան։ Դամասկոսի արեւելեան կողմը Ս. Սարգիս անուամբ Հայոց վանք մը կայ, որ քաղաքիս պարսպի կից շինուած է 1860ի հրդեհէն վերջը, Տ. Բառնաբաս վարդապետի ատենութեան ժամանակ, բարձր կամոզիկիւ, անսիւն, մինչև ցիկս սրբատաշ քարերով շատ վայելուչ։ Կատարածի ժամանակ այրեցան Հայոց եկեղեցին, որ 80 տարի առաջ շինուած էր, ատենաբանն և քանի մը եկեղեցական կալուածք։ Վանքս շուրջն ունի ախտաւորաց բնակարան և իրեն սեպհական քանի մը տուն։ Կալուածական տարեկան եկամուտն կը հասնի 100 լիրայի, յորմէ կը լինին կալուածական տուրգութիւնք և ատենաբանի ծախք։ Բաց ի ատենէն՝ որ Եպուսաղէմի վանական վարչութեան կողմանէ կ'ընտրուի և միանգամայն ժողովրդեան հոգեւոր հովիւն է, կան երկու վարդապետք և երկու սպասաւորք։ Վանքս ունի բառական երկիրներ, որոց վրայ եթէ շէնքեր շինուին բառական արդիւնաբեր կը լինին։ Վանացս եկից և մեկից մատակարարութիւն յանձնուած է ժողովրդէն ընտրուած և հինգ անդամէ բաղկացեալ թաղական խորհուրդի մը, որ պարտական է ամէն տարի հաշիւ ներկայացնել ժողովրդեան։ Եկեղեցւոյ մերձակայ սենեակ մը կը ծառայէ իբրև դպրոց, ուր՝ կը յաճախեն մօտ երեսուն հայ երկսեռ աշակերտներ։

Ազուանի է Դամասկոս իր հնութեամբն, որ կը յիշուի շատ անգամ ի Ս. Գիրս՝ Աբրահամէն սկսեալ. և ի հնումն մայրաքաղաք էր Ասորւոց։ Հարաւային կողմը կայ

լերանց շղթայ մը, իսկ միւս կողմերն ընդարձակ դաշտ են չորս ժամու ճանապարհ տարածութեամբ, և զարդարուած են այգիներով ու պարտէզներով։ Շնորհիւ Նահանի և փարփարայ գետոց, ամէն տուն ջուր կայ և կ'ոռոգուին պարտէզը։ Ողը բաւական առողջարար է և պտուղը առատ։ Գաղաքին մէջ կը շինուին լաւագոյն մետաքսեղէնք, ամէնքն ալ ձեռագործ։ Ամէն ազգը ունին կանոնաւոր դպրոցներ. կան բազմաթիւ մզկիթներ, որոց մին ի Հնումն Ս. Յովհաննէս եկեղեցի եղած է։ Գաղաքին բարեկարգութիւնը օր ըստ օրէ կը յառաջանան և ճանապարհաց շինուելնուց համար փոյթ կը տարուի։ Արեւելեան կողմը կայ Պապ իւղ շարգ կոչուած գուռը, որոյ համար մահմետականք կ'ըսեն թէ՝ երբ մեծն Օմար տիրոց քաղաքին, այս գռնէն ներս մտաւ. այս պատն վրայ կայ մետաղէ մը. գարձեալ մահմետականք կ'ըսեն թէ՝ աշխարհիս վերջին օրը Յիսուս երկնքէն այս մետաղէի վրայ իջնելով պիտի մտնէ քաղաքը և զմարդիկս թիւն պիտի կոչէ ի ճշմարիտ կրօնս մահմետականութեան։

ԴԱՄԲԱԼՈՑ. — Գիւղ Տփղիսու նահանգի, Դուշէթի գաւառի մէջ։ Ունի 14 տուն հայ և 9 տուն վրացի բնակիչներ։

ԴԱՄԲԱԼՈՒՏ. — Վախուշտին յիշուած գիւղ, Գաւգարաց Բաղնոփոր գաւառի մէջ։

ԴԱՅԵԿԻ ՔԱՐ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ կը յիշէ Օրբելեան այս անուամբ քարաբլուր մը։

ԴԱՅԼԱԽԼՈՒ. — Ալլազգարնակ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի։ Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Շահապնոր գաւառի մէջ։

ԴԱՅՄԱ–ԴԱՂԼՂ. — Գիւղ Ախալքալաքի կոչման գաւառի, կառուցուած է կակիսոն դեպի աջ կողմը, կովկաս սարի սառոյտը։ Նախ շինուած է եղեր գետի ափի մօտ՝ վտառոզ տեղ մը, բայց գրեթէ 20 տարի առաջ բնակիչք փոխադրած են այժմեան տեղն, որ բարեխառն է և ունի լաւ տեսարան։ Բնակիչք գաղթած են Արցախի Մշկոպատ գիւղէն։ Երկիրն բերրի է և տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, հաճար, ոսպ, սիսեռն, լուբիա, բակլայ, խաշխաշ, վարսակ և գինի։ Ունի 61 հայ բնակիչ, բաժնուած 15 տան։

ԴԱՆԱՓՈՒՐՈՒՆ. — Գիւղ Զաբսանճագի Մեծկերա գաւառակի. ունի 15 տուն հայ, առանց եկեղեցւոյ։

ԴԱՆԻԷԼ, (Ս.). — Գետակ Խնուսայ (Ջուրբերան), որ կ'ոռոգէ Ախլրգհման գրախառնման ընդարձակ մարգագետինը։

ԴԱՆԻԷԼԻ (Ս.) ՎԱՆՔ. — Հինաւուրց վանքս կիսաւերակ Ս. Կարապետի վանքէն 20 վայրկեան հեռու է. ունի 40 սենեակ և եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածնի։ Վանացս կառուցման կամ հիմնարկութեան վերաբերեալ որոշ յիշատակութիւն մը չկայ. միայն իբր վաւերական ինչ կ'ըսուի թէ՝ ի սկզբան կար աստ մեռաւոր մը յանուն Ս. Աստուածածնի, յետոյ կիլիկիայէն գալով Օշին անուամբ իշխան մը՝ կը շինայ անդ և իւր Դանիէլ որդւոյն ի յիշատակ, եկեղեցին կը կոչէ յանուն Ս. Դանիէլի մարգարէի։ Յայտնի չէ թէ ով էր այս Օշին. գերեզմանը կայ վանքին եկեղեցւոյն հարաւային կողմը պատի մէջ, որոյ վրայ կը տեսնուի հետեւեալ արձանագրութիւնը տձեւ և անճոռնի գրերով. «Ի ՌՃԺ թ. վ. ձլե. փոխեցաւ Ոշին Ա. որ զայս կիրս կարդայ հայր մեր որ երկինի ա՜սա հոգոյն»։ Ասոր կցկալ է ուրիշ տապանաքար մ'ալ, որոյ վրայ արձանագրուած է. «Քրիստոս Աստուած ամենայն արդոց բանիւսուրեամբ ողորմեա Բնկի հոգոյն»։ Եկեղեցւոյն գրան վրայ ալ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Ցեսչութիւն երկնային ի բարձանց իջեալ ի յայց, զեհրուենան տաձարս այս վերստին նորոգեաց. յանուն Ս. Դանիէլ քաջազարմ սերնդի, քաչագուն Օշին վեհ մեծանուն իշխանի, օգնութեամբ տրօք Հայկազնեան գրոհի, չանիւք առաչնորդ Խաչիկ զգօն դէտի, որ յաչտրդ արքազան կարապետ վանի, ի գարմ. Դաւիթեան երկրորդ կարմերցի։ Յամի 1839 ռնգա (?) Նոյ. 14»։ Ասոյ Մխիթարէ կաթողիկոսի մէկ կանգակը կայ՝ Դաւիթ անուն վարպետի մը յանձնեալ, ուղղեալ առ «Եկեղեցասէր բարեպաշտ Հայկազունս»։ յարեւմ. վանացս հետեւեան վրայ շատ ներքոյներ հետեւիլ վերջ, կը յորոշէ նպատակամասոյց լինել նոյն վանաց շինութեան և նորոգութեան։ Վանքիս մօտ այրի մը մէջ կան երկու գերեզմաններ, որոց տապանագիրք թէև եզծեալ, սակայն միայն վրայ

գիտ կը կարդացուին «Հանուսակ Քրխատսի» բառերը։ Վանքս յատուկ նկատուա չունի նալով, կ'ապրի ուխատութեաց նուէրներով և իւր արաերը մշակելով։ Թեմերն են Կարմիր, Մուճնուտան և Պարակասի գիւղերը։ Վանքս ունի գրատուն՝ որ բաւական հարուստ է ձեռագիր և տպագիր գրքերով. ամէնքն ալ բարեպաշտ անձինք նուիրած են։ Տես ԿԱԲԱՑ ՎԱՆՔ։

ԴԱՆԻՇՄԱՆ կամ ԴԱՆՇՄԱՆ. — Ալյազաբնակ գիւղ Բասենի (Ալբարաս), Հասանգալէի մօտ։

ԴԱՇԱԼԹԻ կամ ՔԱՐԱՏԱԿ. — Հայարնակ գիւղ Շուշիի, 2 վերստ հեռու. 150 հայ տուներ բաղկացեալ։ Եկեղեցի ունին, բայց գուրկ են պարոցէ։ — Շուշիի գաւառի մէջ ուրիշ նոյն անուամբ գիւղ մի ևս կայ 20 տուն բնակչօք։

ԴԱՇԱՐՈ ՀԱՅՈՑ կամ ԽԱՐԱՊԱ ԴԱՇԱՐՈ. — Գիւղ Ալյբարատայ Շարուր գաւառի մէջ։ Ունի 136 հայ բնակիչներ, բաժնուած 30 տան։

ԴԱՇԱՐՋԱՆ. — Գիւղ Վասպուրականի Մարանդ գաւառի մէջ, Քուհի Նշան լերան ստորից վրայ։

ԴԱՇ–ԲՈՒԼԱՂ. — Գիւղ Ազուանից Թենի գաւառի, շինուած ձորամէջ վայր մը, արեւելահայեաց դիրքով. արեւմտեան կողմը կը բարձրանան քարաժայռ լեռներ։ Կլիման, օդն և ջուրն պատուական են, հողն բերրի. նշանաւոր բերքերն են՝ ցորեն, գարի, կտաւատ։ Գիւղիս մէջ կայ Ֆիլիմհան գործատուն և հողմաղօրի։ Բնակիչք՝ 1355 հոգի կը հաշուին, բաժնուած մօտ 200 տան, որոց նախնիք գաղթած են Ջրաբերդ և խաչէն գաւառներէն։ Եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ, ունի հանուիսալ արձանագրութիւնը. «Ձիշատակարան շինուբեան սուրբ Գէորգայ եկեղեցւոյս ի հասարակ ժողովրդոց Գաչբուռատու ՌՄՀԼ.»։ Եկեղեցւոյս մէջ կայ հին ձաշոց գիրք մը, որ բերուած է Պաշնաձոր գիւղէն և հին ծնծղայ մը, որ բերուած է Քունիսա գիւղի եկեղեցիէն. ծնծղան ունի 1695 թուականու յիշատակարան։ — Գիւղիս նախորդ բնակչաց հանգստարանի մէջ կան շատ տապանաքարեր՝ առանց արձանագրութեան։ Գիւղիս մերձակայ Ղարադարա, Բերբերիւր, Սոխերդու, Մողրադարա, Խնչիլու, Թէրեքա և Օնան–սար կոչուած տեղերը կան հին գերեզմաներ, եկեղեցեաց աւերակներ և հանգստարաններ։ — Ադուանք, 236–237։

ԴԱՇ–ԲՈՒԼԱՂ. — Գիւղ Ալբցախի խաչէն գաւառի. շինուած է խանձէ գիւղի արեւելեան հիւսիսային կողմը, ձորակի մը հիւսիսահայեաց լանջի վրայ։ Երկիրը բերրի է և տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, հաճար, կորեկ և խաշխաշ։ Ամրան՝ օդը ճնշիչ է, իսկ ջուրն անվնաս։ Եկեղեցին Ս. Գէորգ՝ քարտեկիր է կառուցեալ երեք կամարներու վրայ, 17,34 մեար երկայնութեամբ և 8,45 մեար լայնութեամբ։ Բնակիչք բնիկ են, 1124 հոգի, բաժնուած 136 տան։ Գիւղս ունի նաև Ս. Մեսրոբեան անուամբ տղայոց ուսումնարան մը, 25 աշակերտներով։

ԴԱՇ ԳԱԼԻ. — Գիւղ Ալբարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Հոգեվանքի արեւմտեան կողմը։ Ունի 776 հայ բնակիչ, բաժնուած 116 տան։

ԴԱՇԳԱՅԱ. — Լիս Ալբարատայ վերնատղ գաւառի մէջ. բարձր է 2007 մեար։

ԴԱՇ ԳԻՒՄԻՇ. — Բարձրագոյն և կոնաձեւ հրաբուղխ կատար, Ալբարատայ Մասեաց տան գաւառի, Արարատյալատայ և Ալագ Մասեաց մէջտեղ։ Բարձրութիւնը 12000 է աւելի կը համարին։

ԴԱՇ–ԵՈՒՐԹ. — Լիս Ալբարատայ Բագրեւանդ գաւառի։

ԴԱՇ–ԹԼՓԻՒ. — Լիս Ալբարատայ. կը կոչուի նաև Գղղի Ջիւարեր։

ԴԱՇԼՂ կամ ԴԱՇԼԻ. — Գետ Ալբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. օժտղակ Ախթամնուոյ,

ԴԱՇԹԱՋ. — Բլուր Սիւնեաց վայոց ձոր գաւառի, որուն վրայ է եկեղեցի հայարնակ փոքրիկ գիւղը։

ԴԱՇՆԱԻՈՐ. — Այս մականունը արուած է Գեղամայ ծովակին, Ը դարու մէջ գրուած Ցօնական գրոց յիշատակարանի մէջ. «Գաշնաւոր անուանեալ ծովուն Գեղաբրունեաց». թէ ինչ մտքով այսպէս անուանած են, յայտնի չէ։

ԴԱՇԼՈՒՃԱ. — Ալբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ այս անուամբ վերին և Տատ-

բին կրկին գիւղիկ կան և նոյն անուամբ գետակ մը։

ԴԱՇՊԱՇԻ կամ ՔԱՐԱԳԼՈՒԽ. — Հայաբնակ գիւղ Ալբյաքի Դիզակ գաւառի, հիմնուած է Ծամ–ձորի հիւսիսային կողմը քարձի մը վրայ։ Բնակիչք 25 տուն են՝ 203 հոգի, մեծաւ մասամբ բնիկ, քիչեր գաղթած են Գարապաղէն։ Կլիման, օդն և ջուրն լաւ են, երկիրը սակաւ արդիւնաբեր։ Եկեղեցին քարուկիր է և կը կոչուի Ս. Աստուածածին։

ԴԱՇՊԱՇԻ կամ ՔԱՐԱԳԼՈՒԽ. — Գիւղ Ալբյաքի Խաչէն գաւառի. հիմնուած է Շիկաքար կոչուած քլիթի գլուխը։ Վխտահարձ, սեպացեալ և բարձր ապառաժներ կը շրջապատեն գիւղը, ունի միայն երկու մուտք արեւելեան և արեւմտեան կողմերէ, և մէկ խօսքով, գիւղը ի հնում նշանաւոր բերդ եղած կը թուի։ Բնակչաց կէսն բնիկ և մնացեալ կէսն եկած են Սիւնեաց Ագաւնիս և Գարապաղ գիւղերէն և Բարկուշաւէն։ Բնբրելին են՝ ցորեն, գարի, հաճար, կորեկ և խաշխաշ. այգի և պարտէզ չունին։ Ունի զբաղանց օդ և կլիմայ, բայց ջուրն նուազ է։ Եկեղեցին Ս. Աստուածածին ծածկի փայտաշէն է։ Ներկայ բնակչաց թիւն է 638, բաժնուած 79 տան։ Եկեղեցւոյ հարաւային կողմը կայ խաչարձան մը, հանդերձ անթուական արձանագրութեամբ։ — Գիւղիս հարաւ–արեւմտեան կողմը կը գտնուի հին հանդամարան մը, կան խաչազարդեալ նշանաւոր մահարձաններ, որոնց յիշատակարաններէն մին կը վերաբերի ՉԲ (= 1253) թուականին։ Գաշրաշիի հիւսիսային կողմը կայ աւերակ գիւղատեղի և հանդամարան. իսկ հարաւային կողմը աւերակ եկեղեցի և հանդամարան։ Գիւղիս շուրջը կան նշանաւոր քարայրներ, որոց մէկին առաջքը փակուած է քարուկիր պատով։ — Ալբյակ, 167–166։

ԴԱՇՊԱՇԻ. — Լիճ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ։

ԴԱՇՊՈՒԼԱԳ. — Գետակ Ալբյարատայ Ուրծ և Ագաց գաւառի։ — Նոյն անուամբ ջուր մ՚ալ կը հոսի Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ։

ԴԱՇՊՈՒԼԱԳ. — Լիճ Ալբյարատայ Նիգ գաւառի արեւմտեան սահմանագլուխը։

ԴԱՇՊՈՒՈՒՈՒՆ (Քարաքիր). — Հայաբնակ գիւղ Ալբյարատայ Ճակատք (Մուրճան) գաւառի մէջ։ Ունի 1673 բնակիչ, բաժնուած 184 տան։ Ունի վարժարան և եկեղեցի։ Գիւղիս մօտ Ագաւիկ անունով ուխտատեղի մը կայ, ուր միայն խզական սեռը կ՚երթայ յուխտ։

ԴԱՇՏ. — Հայաբնակ գիւղ Ապարկերտ գաւառակի խիզանի։ Ունի 15–20 տուն բնակիչ և Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը։ — Ա՛յս անուամբ ուրիշ հայաբնակ գիւղ մ՚ալ կը յիշուի Մոկաց մէջ, 40 տուն բնակչօք։

ԴԱՇՏ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ, այժմ կը կոչուի Աւորիկ Ագուլիս։

ԴԱՇՏ. — Մշոյ վիճակներէն մին՝ ծանօթ է այս անուամբ։

ԴԱՇՏԱԳԻՄ. — Գիւղ Մշոյ Բանաշէն գաւառակի. ունի 15 տուն հայ և 5 տուն քուրդ բնակիչ։

ԴԱՇՏԱԿ. — Գիւղ Զարսանճագի խոզագ գաւառակի։ Ունի 10 տուն հայ և 12 տուն մահմետական բնակիչ։ Հայք ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը։

ԴԱՇՏԱԿԱՐԱՆ կամ ԴԱՇՏԿԱՐԻՆ. — Կը յիշուի վայրս Զ դարու մէջ, որուն աւեր էր վարաղնեբսեհ։

ԴԱՇՏԱՀԱՏ. — Գիւղ Ալբյաքի Բերդաձոր գաւառի մէջ. այժմ ալլազպարտակ է. մէջը կը տեսնուին եկեղեցւոյ աւերակներ։

ԴԱՏԱՎԱՆՈՒԹ ՁՈՐ. — Կը յիշուի յիշատակարանի մը մէջ. գաւառն անյայտ։

ԴԱՇՏՈՒՆ, ԴԱՇՏՕՆ կամ ՏԱՇՏՈՒՆ. — Հին վիճակ և գիւղ Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ։ Գիւղս կը յիշէ Օրբէլեան պատմիչը, կը յիշուի նաև 1684ին գրուց յիշատակարանի մը մէջ։ Գաւիթ Բէկի ժամանակ, Որպուսաի խաներն ասպատակաց ձեռքով աւերեցաւ, և բնակիչները փախան Զաբնդաւ և ազատեցան։ Գիւղիս եկեղեցին կը կոչուէր Ս. Աստիփանոս։ — Ա՛յս անուամբ գետակ մի ևս կայ. կար նաև Գաշտունի բերդ կոչուած ամրոց մը։

ԴԱՇՔԻՍԻՆ կամ ՔԱՐԱՀԱՏ. — Հայաբնակ գիւղ Ալբյաքի Գարդման գաւառի. հիմնուած է խոր ձորի մը մէջ, բանանց գետի ձախ ափին, որոյ արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերն պատած են բարձրադէզ

սարեր։ Երկիրը ապառաժուտ է և խիտ քիչ արոխնարեր. տեղական բերքերն են՝ ցորեն, գարի և կենդանիներէն ոչխար ու տաւար։ Օդն, կլիման և ջուրն առնական։ Բնակիչք 880 հոգի են, բաժնուած 80 տան. ունին Մ. Աստուածածին անուամբ փայտաշէն եկեղեցի մը։ Գիւղիս մօտ Բանանց գետի աջ ու ձախ կողմերն, լի են երկաթի, պղնձի և զանազան պատուական քարերու հանքեր։ Մեծ Բանանց գիւղի բնակիչները ժամանակաւ շատ օգտուած են այս հանքերէն հալելով և շինելով զանազան խոփ, ձեւիչ, ճամբարակ, արօրի խոփ, եռոտանի, և այլն։ Ցնծութեան պղնձահանքը այժմ կը բանեցնէ Գանձակեցի Ներսէս Բէկ Ցէր Ներսիսեանցը։ Քարհատի հարուստին կողմէ կը գտնուի խոշոր անուամբ Հայոց աւերակ գիւղ մը։ Անունը առած է եկեղեցւոյ ներքին յորջառատ ապրիլէն որ ունի խաչաձեւ ուղղան։ Աւերակիս մէջ նշանաւոր է եկեղեցին՝ շինուած արդաւաշ քարերով չորս սիւներու վրայ, որ ունի ՌՃԾԹ շինութեան թուականը, այս թուականը Լատայեանց կը պրէ ՌՃԻՐ։ Հոս կայ նաև հանդուսարան։ — Աղցախ, 286–287։

ԴԱՇՏԻՆՏ կամ ՔԱՐԱՇԻՆ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Հարանդ (Ջանգեզուր) գաւառ։ Ունի 600 բնակիչ, բաժնուած 58 տան։ Գիւղիս մօտ հարուստին կողմէն կը բղխեն ծծմբային և թթուահամ ջուրեր, զոր այլազգիք կը կոչեն Ղօրուր սու։ — Այս անուամբ ուրիշ հայարնակ գիւղ մ'ալ կայ Շուշի գաւառի մէջ։ Ունի 236 բնակիչ, բաժնուած 35 տան։

ԴԱՇ ՕԼՈՒԳ ԴԱՓՈՒՍՈՒ. — Լեռնային կիլիկիոյ մէջ, 8100′ բարձրութեամբ լեռնանգք. հոս կը գտնուին գեղեցիկ մեխակներ և այլ զանազան ծաղիկներ։ Իսկ թռչուններէ կան մեծամեծ արծիւներ և անգղներ և ձիւնակեաց մանր թռչնոց եզակիներ։

ԴԱՊԱՒՄԵԼԱ կամ ՋԱՒԴԱՄ. — Գիւղ Գառզարեց Պարսար գաւառի մէջ. Բալիճէն 2 վերստ հեռու։ Բնակիչներէն 20 տունը վրացի և 16ը հայ են՝ վրաիոս. ունին փոքրիկ քարաշէն եկեղեցի մը գիւղի հարաւային կողմի բլրի վրայ, զոր իր ծախքով կառուցած է հանգուցեալ Ղազար Ամիրէկեանցը։ Գիւղս կալուած է վրացի իշխան Գաւիթ Քօրդուլովի։

ԴԱՒԹԻ. — Վասպուրականի հին գաւառներէն մին։

ԴԱՒՃՈՆԱԿԵՑ. Տես ԴՐԱՍԽՈՆԱԿԵՑ։

ԴԱՍՆԱԻՈՐՔ. — Տարտրերանի հին գաւառներէն մին։

ԴԱՍՄԱՋՈՐ կամ ԹԱՍՄԱՍՈՐ. — Մակաւարնակ գիւղ կարնոյ, բնակիչք Հայք և Թուրք խառն։ Հայոց եկեղեցին Մ. Թորոս՝ աւերակ է։

ԴԱՍՆՈՑ ԱՆԱՊԱՏ. — Մխիթարայ Գոշի գաւազանագրոց հետեւեալ յիշատակարանին մէջ կը յիշուի. «Ի պատապետութեան տեառն Սահմադոսի տանն Զաքարեից, յաշխարհին Աղուանից. ի ճանապարհ որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատ և յիղբայրանոցս անուանեալ Գաւազոյ, սկզբնաւորեալ ի յեռեակոտմ մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց ակեղեցեաց կուսատատանացն յիշեցելոց»։

ԴԱՍՈՒԼ. — Լեռնանգք Խիզանի մէջ։

ԴԱՍՏ կամ ՏԱՍՏ. — Այլազգարնակ գիւղ Սիւնեաց Գաղձի գաւառի մէջ. սա է հին Գաստակ գիւղը։ Տես ՅԻՊՆԱՅ ՎԱՆՔ։

ԴԱՍՏԱԿԵՑ կամ ԴԱՍՏԱԿԵՒԼ. — Աբցախի Ջրաբերդ գաւառի մէջ աւերակ գիւղատեղի, յորում կայ նաև կիսաւեր եկեղեցի և հանգստարան։ Կը գտնուի Գանի շէնի հիւսիսային կողմը բարձր, տեսարանաւոր, անառապատ և ուշագրաւ տարահարթի մը վրայ։ Բաւական փառաւոր է եղեր քարակիր եկեղեցին, 13 մետր երկայնութեամբ և 10մ. լայնութեամբ։ Ունի շինութեան արձանագրութիւն Ձիւ (1276) թուականաւ. ունի նաև ուրիշ արձանագրութիւններ։ Ժամատունը այժմ աւերակ դարձած է, որուն շինութեան յիշատակարանը կը տեսնուի եկեղեցւոյ ճակատակալ քարի վրայ։ — Այժմ փոքրիկ շէն մը սկսեր է ձեւանալ աւերակ գիւղատեղիս. ունի 90 բնակիչ, բաժնուած 10 տան, որոնք կը զբաղին անասնապահութեամբ։ Լաւ է տեղւոյս օդն և ջուրը։ Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր ևս եղած են ի հնումն մեր աշխարհի Բաղք, Գեղարքունի, Ծղուկ և այլ գաւառաց մէջ։

ԴԱՎԱԼՈՒ կամ ՏԻՎԼԻՒ. — Գիւղ Աղբա-

բաժայ Ուրծ և Ագած (Ալղիբաւար) գաւա-
ոի, երեւանէ Նախիջեւան տանող արբու-
նական ճանապարհի վրայ, ուր կայ և թրդ-
թաւարութեան իջեւան։ Ունի 380 բնակիչ.
260ը հայ, 30ը պարսիկ և 30ը քուրդ։
20–25 Հայք աստիճանաւոր են և ակրու-
թեան գանազան հաստատութեանց մէջ կը
ծառայեն։ Ունի մօտ 100 այգի, քանի մը
մանրավաճառ և արհեստաւոր, և փառաւոր
նկեղեցի մը։ Դիրքը գաշտային, և երկրա-
գործութեան ու այգեգործութեան նպաստա-
ւոր։ Ըստ պատմութեան ծերոց, Հայք գաղ-
թած են Պարսկաստանէ։ Գիւղացիք, գրե-
թէ առանց բացառութեան, ունին իրենց սեպ-
հական վարելահող և այգի։ Օդը բարեխառն
է, ջուրն՝ առողջարար բայց սակաւ։ Ագռա-
բայք կ'առգին վնգի–չայ գետէն, որ առաւ-
ղները բոլորովին կը նետադի։ Գլխաւոր բեր-
քերն են՝ ցորեն, բամբակ, գարի և բրինձ։
Գիւղացիք ընդհանրապէս աշխատասէր և գոր-
ծունեայ մարդիկ են։ Գիւղիս մօտէն կ'անցնի
կախանովի առուն, որոյ համար՝ ըստ վիճա-
կագրութեան ժողովրդեան, 200 հազար բուրլիէն
աւելի ծախք բրած է առուին նախկին ան-
ը. կախանով, և այս պատճառաւ անոնց
կանաչով, իբր 16 գիւղերու հետ վճռաւոր
է Շերեմետեւիէն։

ԴԱՎԱՍՈՒ. — Գիւղ Տիգրանակերտի. 10
տուն հայ կայ։

ԴԱՎԱՍՈՒՍՈՒՆ կամ ԹԱՎԱՍՈՒՍՈՒՆ. — Գիւ-
ղաքաղաք Կեսարիոյ, ձորի մէջ. հայ բնա-
կիչք 120 տուն են. ունին նկեղեցի մը Ս. Թո-
րոս և Մեսրոպեան անուամբ երկսեռ վար-
ժարան մը՝ 45 աշակերտներով։ Գիւղիս հայ
բնակիչք, որ կէս դար առաջ հայախօս էին,
այժմ թուրքերէն կը խօսին։ Գիւղիս մէջ
կան նաև 1000ի չափ թուրքք և 450 Յոյներ։


ԴԱՎԱՋԻ կամ ՏԻՎԱՋԻ. — Գիւղ Բալուի,
3 ժամու ճանապարհ հեռի՝ արեւմտեան հե-
սիսային կողմէ։ Ունի 25 տուն, որոց 15ը
Հայոց և մնացեալք Քրդաց են։

ԹԱՎՈՒԹԼՈՒ. — Հոդաբլուր Ագրարատայ
ձակատը գետոի, որուն ներքեւէն 1886ին
դանուեցաւ բնեւոաձեւ արձանագրութիւն մը։

ԴԱՎՐԻԺ, ԴԱՒՐԻԺ կամ ԹԱՒՐԻԶ. Գր.
TAURIS, Պրակ. ՆՆՁՈ. Ռ. Шавризъ. —
Ագրպատականի Հայոց կեդրոնավայրն և ա-
բեւմտեան Պարսկաստանի ամենավաճառա-
շահ քաղաքն է Դաւրիժ, որ հեռու է Թէհ-
րանէն 536 հգմ. հիւսիսային արեւմտեան
կողմը և Ուրմիոյ լճէն գրեթէ 53 հգմ.
յարեւելս։ Կառուցուած է Ուրմիոյ լճի եզեր-
քէն յարեւելս տարածուող ընդարձակ գաշ-
տի մը ծայրը, Աճի գետի մօտ, Սրհանդի
արեւմտեան առապարը. ծովի երեսէն բարձր
է 1509մ. և կ'ինկնայ 38° 2′ հիւսիսային
լայնութեան և 43° 49′ 37″ արեւելեան եր-
կայնութեան սակ։ Ըստպագիք կ'ենթադրեն
թէ սա Պագոմէսս աշխարհագրի յիշած Գա-
զրիս կամ Տազրիս քաղաքն է։ Հայկական
աւանդութիւնը և պատմութիւնը կ'ըսեն թէ
հիմնուած է երրորդ դարու մէջ խոսրով Մե-
ծէն, որ իւր եղբօրորդւոյն Ագաւանայ ա-
բեան վրէժը առնելու համար, զոր սպան-
նած էր Ագաւիր Սասանեան, ասոր տարի
աւերից Պարսից աշխարհը, և թէ յաղթու-
թենէն վերջ, քաղաքիս տեղը կենալով բա-
ցատադնչած է «Դա ի վրէժ Ագաւիրի», յոր-
մէ ծագեր է քաղաքիս անունը։ Կոչուած է
նաև Գանձակ։ Աւելեւեան պատմագիրք շի-
նուած կը համարին Դաւրիժը Ը (791) գա-
րու մէջ Հարուն–էլ–Ռէշիտ ամիրապետի
Զոպէյտայ կնոջէն, որ կոչած բլլայ Թեպ-
րիզ, այսինքն՝ Ջերմահալած. սակայն Զո-
պէյտայի բրածը պարզ վերաշինութիւն է։
Հայոց մէջ ուրիշ աւանդութիւն մ'ալ կայ,
թէ խոսրով Թագաւորը երեսուադեմն գաւ-
նակով հոս Թագից սուրբ խաչը, քաղաքին
արեւելեան կողմը գտնուող բերդին սակը։
Մեր Տրպատ Թագաւորը 321 Թուին, գե-
րեց Ագարպատականի աշխարհը, և Պարսից
Շապուհ Թագաւորին ձեռքէն առաւ Դաւրիժ
քաղաքը ու նորոգելով ամրացուց։ Մոնդո-
լաց ժամանակ Դաւրիժը գարձաւ Պարսկաս-
տանի մայրաքաղաք և մեծապէս ծաղկեցաւ։
Հալաւուն խանը ԺԴ գարու մէջ հոս հաս-
տատեց իւր գահը, այլ պատճառաւ նոյն
ժամանակ կոչուած է ի Հայոց Հուլաւուս
Թախտ։ Սոֆիներու ժամանակ քաղաքիս
սիրեցին Սէֆի 1514ին, Սուլէյման 1534ին,
Մուրատ Դ վերին Օսման փաշա 1585ին։
Թուրքերէն առաւ Շահ Աբբաս 1610 Թուին.
Պարսից ձեռքը անցաւ 1618ին. Մուրատ
Դ օրով վերստին առնուեցաւ և կորսը-

տուեցաւ թուրքերէն. 1732ին անցաւ Նադիրի Շահի և ժէ դարու վերջերը իսկաւ այժմեան ձեռքը։

Քաղաքս ներկայիս եղեր է ոչ միայն բազմաթիւ պատերազմներու, աւերածութեան, հրիդման և ապստամբութեան, այլ և բնական պատահարներու։ Կը յիշուին հինգ սաստիկ երկրաշարժեր, որոնց չորսը խարխուլ։ Շէնքերէն նշանաւոր են թագաժառանգի պալատը, իշխանական և հարուստներու ապարանները, անները, և քարվանսարանները։ Անցեալ դարու մէջ քաղաքիս անները ընդհանրապէս միայարկ էին թրծեալ աղիւսով շինուած և հոդածածք. ժամանակի յառաջանալով շինութիւններն ալ սկսած են աւելի նոր և ճաշակաւոր ձեւեր առնուլ։



246· Դավրէժի ընդհանուր տեսարանը։

պատահած են փրկչական 634, 1441, 1527 և 1780 թուականներուն։ Առաջինները գրեթէ բոլորովին կործաներ են մեծ քաղաքը, իսկ երկու վերջիններուը աւեր են 70 000 և 40 000 տներ։ Այսպիսով Դավրէժը պրկուած է հսկայապոյծ պալատներէ, մզկիթներէ և այլ սեռակ հնութիւններէ. մի միայն մնացեր են այժմ արեւելեան պրան մօտ Թէհրանի ճանապարհի վրայ կիսաքանդ կէսկլէխոր և 25մ. բարձրութեամբ Ալը կոչուած միջնաբերդը, որ հեռուէն սակաւին ամբողջ կանգուն կ'երեւի, բայց մօտէն կործանուած և Շրջապատուած են գեղեցիկ և զուարճալի պարտէզներով։ Շարաէն՝ որ այցելած է քաղաքիս, 1675ին կ'ըսէ, ունէր 250 մզկիթ, 15000 կրպակ՝ շատերը քարաշէն, չի սակէն սեռակ վաճառքներով, 300 իջեւան, 9 թաղ, 15000 տուն և 550 000 բնակիչ։ Այժմ բնակչաց թիւն կը համարուի 200 000, իջեւաններն են 40 և կրպակներ 4500։ Պարսիկները բազմաթիւ են, Հայք 650–700 տուն, իսկ հրեայք, 20 տուն կը հաշուին։ Դավրէժի խրաքանչիւր թաղ ունի կառավարութենէն նշանակուած թա-

գաղեաթ, և իր յատուկ պրօշակը։ Հայոց Թաղերու (կամ Պարսից կաշածի համեմատ՝ Էրմէնիսէմանի) թաղապետը կը կոչուի Դա-լաբէկ՝ որոյ պրօշի գոյնը կարմիր է։

Հայերը կը բնակին Դալայի (Բերդաձոր) կամ Ղեբսի և Լիլաւայի կամ Դբսի թաղե-րու մէջ։ Դալայի Հայք մօտ 300 տուն են և բնիկ հարուստ վաճառականներ։ Հոս է Ամերիկեան վիճակի Հայոց ա-ռաջնորդարանը, որ անցեալ գարու կիսուն Ս. Թադէոս առաքելոյ վանքէն փոխադրուե-

նուած է Տէր Յովհէփ ուսոյ քահանայ Մե-լիք Յակոբեանի ջանքերով։ Եկեղեցւոյն մուտքի վրան ճակատը, մարմարիոն քարի վրայ արձանագրուած է հետեւեալն. «Շի-նեցաւ սուրբ Աստուածամայր եկեղեցիս ի 1 Այր. 1782 ամի և ի թ. Հայոց ՌՄԼԱ. ի հայրապետութեան Տէառն Դաւիտ, աշխա-տութեամբ Յովսէփ ուսոյ քահանայի Մելիք Յովհաննիսեան արդեամբ բարեպաշտ հայ-ազգի ժողովրդականաց»։ Սահիմոնոս Մխի-թարեան սրբազանը, մեծ համարձակութեամբ



247. Դավրէժ.— Բերդաձորի տեսարանը։

ցաւ բազաքս։ Աթէոնեան Սահակ եպիսկո-պոս կառուցած է առաջնորդարանը և Աբա-մեան պարոյր՝ 1857ին, որ ժամանակին նշանաւոր շէնք կրնար համարուիլ. առաջնոր-դարանը այժմ վերաշինութեան պէտք ունի։ Աբամեան պարոյրի անուամբ Հայոց ազա-բան մը բացուած է Թադիս մէջ, Ա. Մխի-թարեանց եպիսկոպոսի ժամանակ։ Հոս կը ապրին դանազան ընկերութեանց անդամ-գրերը և այլ գրագէտներ։ Դալայի Հայոց ե-կեղեցին կը կոչուի Ս. Աստուածամայր, որուն հիմնարկութեան բուն թուականը մեզ անյայտ է, երկրաշարժէն կործանուած լինե-լով, 1782 թուականին հիմէն վերստին շի-

նուած է Տէր Յովհէփ ուսոյ քահանայ Մե-լիք Յակոբեանի ջանքերով։ Եկեղեցւոյս մուտքի վրան ճակատը, մարմարիոն քարի վրայ արձանագրուած է հետեւեալն. «Շի-նեցաւ սուրբ Աստուածամայր եկեղեցիս ի 1 Այր. 1782 ամի և ի թ. Հայոց ՌՄԼԱ. ի հայրապետութեան Տէառն Դաւիտ, աշխա-տութեամբ Յովսէփ ուսոյ քահանայի Մելիք Յովհաննիսեան արդեամբ բարեպաշտ հայ-ազգի ժողովրդականաց»։ Սահիմոնոս Մխի-թարեան սրբազանը, մեծ համարձակութեամբ

յաջողեր է եկեղեցւոյս գմբէթի վրայ խաչ մը գնել։ Այս թաղի մէջ բաց ի Աբամեան ազգային ուսումնարանէն, որ ունի մօտ 140 աշակերտ, դասարան Ե, տարի Ը. կայ նաև Ս. Աննայեան օրիորդաց դպրոց՝ հաստա-տուած 1883 թուին, Թումանեան Եղբարց շնորհիւ. ունի 100 աշակերտուհի, դասա-րան Դ, տարի Ե։ Այս երկուս դպրոց-ները ունին 13 ուսուցիչ և ուսուցչուհի։ Այս թաղի մէջ 1895ին հաստատուած է նաև Մանկապարտէզ մը, Հայուհեաց Բար. Ընկերութեան ծախքով, ունի 40ի մօտ ե-րեխաներ. նոյն ընկերութիւնը միեւնոյն թուա-կանին հաստատած է նաև աղջկանց համար

կարևաձև Աբհեստանոց մը, ուր կը յաճախեն 30 օրիորդներ։ Դալայի մէջ են Թուսաց, Անգլիացւոց, Գաղղիոյ և Թրքաց հիւպատոսարաններ և եւրոպացւոց տներ։ Լսուած է 1888ին հոս եպիսկոպոսարան մը հաստատելին և Հռովմայ Քահանայապետը 90 000 րուբլի տուաւ եպիսկոպոսարանի, եկեղեցւոյ և ուսումնարանի շէնքեր պնդելու համար. սակայն ցարդ եպիսկոպոսարանը միացած է առանց եպիսկոպոսի, որուն պէտք ալ չկայ, որովհետև խիստ քիչ են եւրոպացի լատինք։ 1901 թուին Լազարեան Միաբանութեան Հարք, բացին ազատոց դպրոց մը, ուր կը յաճախեն 40 հայ աշակերտներ։ Այս թաղի մէջ Ամերիկացի միսիոնարները ունին օրիորդաց դպրոց մը՝ 80 աշակերտուհիներով և Մանկապարտէզ մը՝ 30 երեխաներով, բոլորն ալ հայ. ունին 5 ուսուցիչ և ուսուցչուհի։

Իլլավայի կամ Դրսի թաղի Հայք 400 տան չափ են, մեծագոյն մասը հասարակ պաշէ, կը պարապին հիւսնութեամբ, ոսկերչութեամբ, դերձակութեամբ, և այլ արհեստներով. կան նաև վաճառականներ, սակայն միայն չոր ապրանք կրնան վաճառել, վասն զի պարոիկները քրիստոնեաներէն իրաց բան առնուլը մեղք կը համարին։ Ռուս–Պարսկական պատերազմէն վերջ հայ արհեստաւորները ամէն տեսակ տուրքերէ ազատ էին. քանի մը տարի առաջ կառավարութիւնը փորձեր է այդ իրաւունքը խլել, այժմ քիչ քանակութեամբ տուրք կ'առնու։ Թաղիս Հայոց եկեղեցին կառուցուած է 1845ին և կը կոչուի Ս. Սարգիս, աշխատութեամբ Զաքարիա ատեն քահանայ Տէր Զաքարեանցի և արդեամբ ժողովրդոց, ինչպէս կը յայտնէ արձանագրութիւնը։ Իլլավայի մէջ Հայք ունին Հայկազնեան ազատոց ուսումնարան՝ 1877ին Թումանեան եղբարց կողմէ հաստատուած. աշակերտ 150, դասարան Ե, տարի Ը. և Թամարեան օրիորդաց ուսումնարան՝ 100 աշակերտուհիներով, դասարան Բ, տարի Գ։ Այս երկուս դպրոցները ունին 13 ուսուցիչ և ուսուցչուհի։ Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը 1895ին այս թաղի մէջ ևս բացած է Մանկապարտէզ մը 25 երեխաներով և մէկ Աբհեստանոց 40 աշակերտուհիներով։ Այս թաղի ուսումնարանաց մէջ, նշանաւոր է իւր յարմարութեամբ և ընդարձակութեամբ օրիորդաց Թամարեան ուսումնարանը, զոր կառուցած են իրենց ծախքով Թումանեան յայտնի վաճառականները։ Իլլավայի մէջ 1876ին Ամերիկացի միսիոնարներ «Պարա» ընկերութեան առաքեալները, բացին աղայոց դպրոց մը. ունին 100 աշակերտ, 6 ուսուցիչ և ուսուցչուհի. բացած են նաև Մանկապարտէզ մը 30 երեխաներով։ Բողբականեր ևս ունին երկուս դպրոցներ մօտ 160 հայ աշակերտներով։ Դավրէժի Հայք ունեցեր են և ունին նաև շատ ընկերութիւններ. Իլլավայի մէջ է «Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկ.» որ ունի հին է և հարուստ, իսկ Դալայի մէջ է «Աթպաթականի Հայուհեաց Բարեգործական Ընկ.», որ ունի նոր է։ Վերջին տարին(1898) հաստատուած է նաև «Թաւրիզի Լսարանական Ընկերութիւն», որ օգտակար դասախօսութիւններ կ'ընէ և հասարակութեան մտաւոր յառաջադիմութեան միջոցներ կը նպատակէ։ Աբրեցողութեան պատճառած չարիքներէն ու վնասներէն նոր սերունդը փրկելու բարի նպատակով 1899 թուականին կազմուած է «Պարսկաստանի Հակակրօնական Ընկերութիւնը»։ Գեղարուեստի ճաշակը հասարակութեան մէջ տարածելու և բարքերը ազնուացնելու նպատակով 1901 թուին կազմուեցաւ «Երաժշտասիրաց Ընկերութիւնը»։ Ուրիշ բազմաթիւ ընկերութիւններ ևս եղած և անյայտացած են դանադան ժամանակաց մէջ։ Բարեգործական ընկերութիւնները մեծ օգտակարութիւն ունին, ոչ միայն քաղաքիս մէջ, այլ և գիւղերը տարածելով գիտութեան լոյսը նորահաստատ ուսումնարաններով։ Դավրէժի կրկին հայուհեաց բարեգործական ընկերութիւնները 1901 թուին միացան, և այժմ կը կոչուին «Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութիւն»։ Ցիշենք նաև Դալայի «Գրագարանական Ընկերութիւնը» որ մօտ 20 տարուան գոյութիւն ունի. իւր գրադարան — ընթերցարանի մէջ կան 2000էն աւելի գրքեր, բաւական թուով լրագիրներ ևս կ'առանայ. ընթերցարան և գրադարան կայ նաև Իլլավայի թաղի մէջ։

Դավրիժի երկու հայկական թաղերն ևս ունին իրենց առանձին թաղերական գահ-լիճները, ուր երբեմն երբեմն կը լինին պրա-կան երեկոյներ և ներկայացումներ, յօգուտ ուսումնարաններու և կամ ուրիշ բարեգոր-ծական նպատակներու։ Ներկայացումներու ներկայ կը գտնուին շատ անգամ գահա-ժառանգը, պարսիկ խաներ, պաշտօնեաներ և հիւպատոսներ։ Դավրիժի բնակչաց մէջ ա-մէնէն աւելի մուսուրմանէս յառաջադիմած ժողովուրդը հայն է, որ հասկնալով ուսման կարիքը ըստ այմմ կը գործէ։ Նա Պարս-կաստանի Հայերէն հպարտն է բնաւորու-թեամբ և միանգամայն վեհանձն։ Թէև ի հնումն քաղաքիս Հայք բազմաթիւ էին և Մարթինէի բռնած հեռմեան Պարսիկներէն աւելի քաջ էին վաճառականութեան մէջ, բայց անցեալ պարու սկիզբը հազիւ կային 40 տուն։ Դրեթէ մէկ պարու շրջանի մէջ այս տանց թիւն բազմացեր եղեր է մինչև 700։ Այժմեան հայ բնակիչք մեծ մասամբ Գարատաղէն եկած են։ Դավրիժի Հայ ծե-րերը կը պահեն պարսիկ քաղաքացիի ճա-շակով, իսկ երիտասարդները եւրոպական տարազ։ Կանանց տարազը Կովկասեան է, միայն անոնցն դուրս ելնելու միջոց վրանին կապոյտ ծածկոյթ կ'առնուն։

Դավրիժի օդն առողջարար է և աւելի օդտակար կրնար ըլլալ ժողովրդեան, եթէ քաղաքին մաքրութեան խնամք տարուէր։ Խմելու ջուրը՝ ջրամբարներու մէջ անշարժ կենալով անմաքուր է և երբեմն գարշահոտ։ Բնակիչները հակառակ քաղցր օդին և սի-



248. Դավրիժ. — Հայ Մանկապարտիզի աշակերտաց խումբը։

բուն բնութեան, առհասարակ վատառողջ են. ոակայն խոստովանելու է որ Հայք առու-գութեամբ իրենց գրացի ազգերէն շատ կը տարբերին։ Բարեխառն գօտւոյ ամէն տեսակ բերքեր հոս առատ կու գան, և պատուղնե-րէն շատերը, մանաւանդ նուշն և ծիրան՝ խիստ անուանի են. ունի 40 տեսակ խա-դող։ Քաղաքիս ամենաշահաբեր արհեստն է գորգագործութիւնը, տեղական ապրանքը շատ նուրբ, ճաշակաւոր և յարգի է։ Ամառը հա-րուստները հանգիստ առնելու կ'երթան Ար-հանդի հովտաւոր և զուարճալի գիւղերը և հանդրայնի ջրերու քովերը. Լալայի բարձիք-

նոքը՝ Միրաթարեանի մօտ, շատ յաճախորդներ ունին։

Դավրէժը գտնուելով Պարսկաստանի հիւսիս–արեւմտեան անկիւնը մէջ Թաւրիզիոյ և Ռուսիոյ սահմանաց մօտ, ոչ միայն առաջնակարգ մեծ կարեւորութիւն ունի, այլ և կեդրոն մ՚է միջազգային վաճառականու-

մէ Թէհրան հաստատուած «Պարսկաստանի կայսերական Գանձարան» մեծ մասնաճիւղ մ՚ունի քաղաքիս մէջ. 1901 թուին Ռուսական Սուրհանդակ ալ հոս մասնաճիւղ մը հաստատեց։

Քաղաքիս մօտ հիւսիսային արեւմտեան կողմը, Աճի գետի վրայ կայ 18 ակն ու-



249. Դավրէժ. — Օրիորդաց Թամարեան ուսումնարանը։

թեան, վերոյիշեալ երկու ափրութեանց և Ազգլիոյ հետ Պաղտատի և Թէհրանի միջոցով։ Վաճառականական տարեկան եղեւմուտքը կը հասնի 30 միլիոն ֆրանկաց։ Ներմուծութեան գլխաւոր նիւթերն են բամբակեղէն, բրդեղէն, ապակեղէն, շաքար, թէյ, և այլն։ Իսկ արտածութեան նիւթերն են գլխաւորաբար գորգեր, չամիչ, նուշ, շալեր, և այլն։ Երկար տարիներէ ի վեր Ազգլիացիներու կոզ-


նեցող հայակապ կամուրջ մը։ Իսկ միջնակայ լերան վրայ ի հնումն կար Հայոց գերդաստանէն մնացուածն մը, որ յետոյ մզկիթի փոխուած է։ Մեծ հրապարակին մօտ ևս կը յիշէ Խոճիճեան մզկիթ մը, որ կանխաւ Ս. Յակոբեան Մկրտչի եկեղեցի է եղեր, ուր կ՚ըսեն՝ թէ կը պահուէր երկար ժամանակ նոյն սրբոյն մկկ ձեռքը։ Դավրէժի մէջ ծներ է պատմարան Լազարեվ վարդապետը,

որ գրած է իր ժամանակի 60 տարուան պատմութիւնը 1602 թիւէն սկսեալ մինչեւ 1662։ — Ցիշեալ Հայք կը գործածեն առաւահայոց լեզուն, պլրտցիներն ալ նոյն ուղղութեան կը հետեւին։ Հայք քաղաքէս 40 վայրկեան հեռու Մ. Աստուածածին անուամբ ախտաւոգի մը ունին՝ փոքրիկ մատուռով մը, շրջապատուած գերեզմանոցով և մեծ

ԴԱՏԱԿԵՑ. — Ի հնումն այս անուամբ մեծ բերդ մը կար Հայոց և Մարաց սահմանի վրայ։

ԴԱՏԱՑԻ. — Գիւղ Ա. Լուսաւորչայ Մատենադարանի գաւառի մէջ։

ԴԱՏԱՇԵՆ. — Ազարակ եկեղեցւոյ և դպրոցի Տայոց կող գաւառի մէջ։ Կ'ատանդին, թէ երբ վրացիներէն անհաւ թագաւոր



250. Դավրէժի հայոց թաղի տեսարանը։

պարսիկով. պարտէզը ունի շրջապատ։ Թէև Հայք ունին մատնատուր գերեզմանատուն, բայց երբեմն այս ախտաւոգեցոյս գերեզմանոցին մէջ մեռելներ կը թաղեն։ — Դավրէժի շուրջը հայաբնակ գիւղեր չկան, միայն հիւսիս արեւմտեան կողմը 6–7 ժամ հեռու կան Մուժամբար, Սհօղրիւլ և Աչյամուղը հայ գիւղերը։ Աչյամուղը Մուժամբարէն 5 վերստ հեռու է. ունի 36 տուն բնակիչ և եկեղեցի։ Միւս երկու գիւղերու նկարագիրը տես իրենց կարգին։ — Ն. Հայաստան, 404–408։ Աշրարատ ամսագիր, 1898, էջ 301–302։ Արաքս, 1892 Բ 52–54. և այլն։

կ'իշխէր կող գաւառի վրայ, սա հրամայեր է տեղւոյն իշխանին հոս շինել եկեղեցի և դպնակ. իշխանը նախ շիներ և փութով աւարտեր է մեծ եկեղեցի մը։ Թագաւորը, որ ամառը հոս կ'անցընէր, խոյս տալով Արտանուչայ սօթէին, քաղաքէն կը մեկնի յոնթոսի մէջ, յուսալով որ աւարտած կը գտնէ դպնկին շինութիւնը, և տեսնելով որ եկեղեցին աւարտած է և դպնակը ոչ, տեղւոյն իշխանը պահացը կանչելով կը յանդիմանէ. իսկ նա կ'ըսէ. Երկրաւոր իշխանէ աւելի մեծ է երկնից Աստուածը։ Թագաւորը այս լսելով դես աւելի բարկանալով, կը հրամայէ պիշխանը կախել եկեղեցւոյն սիւնէն։

խակ գիւղի բնակիչները այնուհետեւ քաջալե-
ցան և անցը լքուած թողին։ Այլ եկեղեց-
ւոյ արմերը ցարդ կը մնան։ Գիւղս այսպէս
կոչուած կը թուի Դատ իշխանի մը անուամբ։
Այժմ կայ Դատաշէն անուամբ այլագգա-
բնակ գիւղ մը Տայոց նոյն գաւառի մէջ,
30 տուն բնակչօք։

ԴԱՏԵՄ կամ ԹԱԴԻՄ. — Հայաբնակ գիւղ
Խարբերդի, 200 տուն բնակչօք։ Ունին
Ս. Աստուածածնի անուամբ եկեղեցի մը և
համանուն վարժարան մը՝ 100 աշակերա-
նեռով։ Բնակչաց գլխաւոր զբաղմունքն է հո-
զագործութիւն։

ԴԱՏԵՄՈՒ ՎԱՆՔ. — Գաւառի գիւղի մօտ
կը գտնուի վանքս, որ շքեղ և համարա-
կապ գմբէթաւոր քարաշէն տաճար մ'ունի
Ս. Աստուածածնի անուամբ։ Կ'ասանդին թէ
Ս. Թադէոս առաքեալէն հիմնուած է. տա-
ճարի շէնքը հին է և անկոծ մնացած։ Մե-
նեակները և միւս բոլոր շէնքերը ասիր, և
կործանեալ վիճակի մէջ են։ Ըստիր այդի-
ներ և պտղատու ծառեր կան վանքիս շուր-
ջը, ունի նաև շատ արտեր և հողեր. տա-
րին մօտ 100 քիլէ ցորեն, 50 քիլէ գարի
և 100 քաշ բամբակ կ'ընդունի։ Թեմերէն
են ինը գիւղ, որոնցմէ պտղի կ'ասանայ։
Վանացս բոլոր հասոյթները այժմ յատկա-
ցեալ են Խարբերդի առաջնորդարանին։

ԴԱՏԻԿ. Տես ՏԱՏԻԿ։

ԴԱՏՈՒԱՆ կամ ԴԱՏՎԱՆ. — Հին և նշա-
նաւոր հայաբնակ գիւղ կամ գիւղաքաղաք
Բաղէշի՝ յորմէ հեռու է 4 ժամու ճանա-
պարհ, և վանայ ծովակի արեւմտակողմը,
տափարակ գաշտի մը վրայ։ Նշանաւոր է
ոչ միայն բազմաճաշ և ցանցակերպ ուլի-
ներովք, գեղեցիկ և զուարճալի տեսարան-
ներովք, պատուական օդովք ու ջրով, այլ և
հին և պատմական սրբատուէր յիշատակաց
համար։ Ունի նաև անպորր և կարեւոր նա-
ւահանգիստ մը, ուր խարխոխ կը ձգեն վա-
նայ առագաստաւոր նաւերու մեկ մասը։ Դա-
տուանի անուանական առաւգաբանութեան
համար բացատրութիւն կը պարսի Թէ՝ Դատ
և աւան բառից բարդութեամբ Դատաւան
եղած է։ Դատուանի սկզբնաւորութիւնը
բաւական հին է. Բագրատունեաց հարստա-
տութեան ժամանակ, երբեմն ընդ հովա-
նաւ նոցա իշխանաց կը կառավարուէր
Հայոց ասն, յորս էին և Արծրունեաց պա-
տգամաւորները ժ–ԺԱ դարուց ժամանակները։
Ի հնումն հայ ինքնակալաց և իշխանաց ա-
ղօրութիւն էր ամարել և ձմերել այս կամ
այն պատշաճ վայրաց մէջ. անշուշտ Արծ-
րունեաց ասհմի վիճակումը ևս այսպէս ը-
րած են, ուստի ժողովրդական աւանդութիւնն՝
որ Դատուանի հանդիպակաց բլրակին վրայ
գտնուած աւերակաց բեկորները Աճեկբերի-
մի Ամարանոց կ'անուանէ, կարելի չէ ա-
ռասպել համարել, քանի որ այդ սքանչելի
անունոյն բարձրաւանդակին իրաւամբ ամա-
րանոցի արժանի է։ Այդ երբ Աճեկբերիմ
արքային ամարանոցն ասա էր, բնական է
Թէ, ոճրագործք, եղեռնագործք, գողք, մար-
գասպանք, պէտպէտ գաւերու համար, կա-
լաւածական, ժառանգական, և այլն, հոս
կը զրկուէին և հոս գատ կը կարէին, և այդ
պատճառաւ կարելի է եզրակացնել որ նախ
Դատի աւան կոչուած է և յետոյ Դատուան։

Գիւղաքաղաքս ունի խիտ ատ խիտ, սրա-
ծայր կաւերներով աներ, որոց թիւն է 90–
100՝ մօտ 650–700 բնակչօք, մինչդեռ
ի հնումն ունի եղեր 1500–2000 տուն
բնակիչ։ Ունի Ս. Թեոդորոս անուամբ ան-
շուք եկեղեցի մը. ատա կայ նաև Մխիթարեան
Ընկերութենէն բացուած նախակրթարան մը։
Դատուան՝ իբրեն երկու գրացի նահանգաց
վանայ և Բաղէշի կեդրոնավայրն և հաղոր-
դակցութեանց միջոց լինելով՝ յինքն իւրա-
յատկացած է անոնց բարոյական, նիւթական
յատկութիւնները, հանգամանքները ու բնու-
թիւնները։ Վաճառականաց աշխարհի գաւա-
ռական արագասահ ու գժուարահատանալի
բարբառներու շնորհին զուարթախառնուածով
Տուրուբերանի ծանրահնչիւն՝ այլ քաղցրալուր
գրաբարատիպ և ճկուն բացատրութեանց հետ,
կը կազմեն Դատուանցոց մեղրախառն լե-
զուն, միանգամայն պարտնակելով միոյն
կամ միւսոյն ազգաւորութիւնները։ Բնակչաց
գլխաւոր զբաղմունքն է առհասարակ երկ-
րագործութիւնը և ունին շատ կալուած-
ներ։ Ծովեզերեայ և ջրարբի վայրեր մա-
քուր ցորեն ու առատ առուտր կը մշակուի.
իսկ լեռնային գար ու գուր արտերու մէջ
ալ հաճար, որ տեղացւոց սարեկան ցորենն

է. կը մշակեն նաև կապամբ, վարսակ և բազուկ։ Վերջին տարիներու մէջ անկած են ու կը անկեն բարաի, սալորի, ծիրանի, խնձորի և թթի ծառեր։ Գիւղաքաղաքիս բնակչաց մեծագոյն մասը իգական սեռէ կը բազկանայ, որ իւր մանուածոյ գեղեցկութեամբ առաջին տեղին կը գրաւէ այս կողմերու վիճակէն մէջ։ Աբրահան տեղն կարճ և աշխոյժ է։ Տեղւոյս հարստանալոյ եղանակը հեռաքրքրական է։ Բազմաբանութեան քաղաքիչք ասա ևս մուտ գտած են և բաւական հետեւողներ ունին։ Դատաւանցոյ երկրորդական զբաղմունքն է վանէն եկող նաւուց բեռներն փոխադրել ի Բաղէշ և առ ակն անդր. գարնան զրատներով կը փոխադրեն, իսկ ձմեռը դահուիներով և բալխիներով, զոր անձամբ կը վարեն, վասն զի նոյն եղանակի մէջ անհնար է զրաստուց երթեւեկն. նաև վանայ համար նաւուց կը մատակարարեն մեծ քանակութեամբ ածուխ։ Տեղւոյս նաւահանգիստը մեծ կիրութիւն և զարկ տուած է և կու տայ վանայ Բաղէշի հետ ունեցած առեւտրական գործին. վասն զի մինչեւս ծովով 28 ժամուան մէջ կը փոխադրուին ապրանք Բաղէշէն վան՝ և փոխադարձաբար, ցամաքով 7–8 օր պէտք է, այն ալ երկիզի կասկածներով և ճանապարհի բնական դժուարութեամբը։ Մշոյ դաշտի մշուշն՝ որ ձմեռը այնքան տաք է, այս կողմերը գալով կը դառնայ բքալիր հոգմ, որ ըստ տեղացւոց Բալօղ կ'անուանուի։

Դատաւանայ մատակայ տահմանին մէջ իրարմէ ½ ժամ հեռաւորութեամբ կան 6 եկեղեցիք, որք են՝ Ս. Կիրակոս, Ս. Գրիգոր, Ս. Սիոնի, Ս. Սարգիս, Ս. Քառասուն Մանուկ և Ս. Աստուածածնայ. այս եկեղեցիներէն միայն Ս. Սարգիս կանգուն է, իսկ միւսները հիմնայատակ աւերակ են, որոնց հիմնաքարերնք և այլոց տեղերը միայն կը նշմարուին։ Ս. Սարգիս՝ ճարտարապետական շինուած գեղեցիկ ու փոքրիկ տաճար մ'է, որուն տարին անգամ մը Դատաւանցիք մատաղ ընելու սովորութիւնը ցարդ պահած են։ Այս տաճարի շուրջը կը տարածուի Դատաւանի ընդարձակ գերեզմանատունը, յորում կան ոչ սակաւ խաչքարեր՝ հանդերձ տապանագրութեամբք. ծանօթ թուականաւ հնագոյն համարուածը ՌԻ դարու կը վերագրեի. սակայն կան գեւ աւելի հնագոյններ՝ որոց արձանագրութիւնք կիսեղծ են։ Գիւղաքաղաքիս արեւելեան հանդիպակաց կողմն դէպ ի ծովակ կարկառեալ թերակղզին ունի երկու մասեր, մին լեզուակ և միւսն հրուանդան, որոյ ալ կողմը ձեւացած է նաւահանգիստ։ Դէպ ի բլրակին բարձրանդակն է Անենքերիմի Ամարանոց ըստացածի հսկայաշէն աւերակն. քառակ խորշեր խաչաձև կը ձեւացնեն շէնքին յատակագիծն, որոյ ճակատն կը նայի դէպ ի ծովակ. արեւմտեան դասիճափին վրայ զբաղաձև միակաւոր քարերէ ճարտարակերտեալ սենեակներն՝ էին գանձարանները՝ ըստ աւանդութեան, որոնց մէջ երկաթը անվիճար ծնացած են։ — Դատաւանայ կեդրոնը կը բարձրանայ ամրաշէն մեծ աւերակ մը, որոյ հսկայ պարիսպաց մեծագոյն մասը քայքայեալ է։ Այս շէնքը կը կարծուի թէ եղած լինի իւր սիրոյ ուժոյնները կամ հիւրընկալութեան տեղին։ Տեղւոյս կեդրոնական հարաւը կը տեսնուի անկատար ճարտարապետ խաչաձեւ մը, զոր կանոյք աւելի շատ կը յարգեն։ Դատաւանայ հիւսիսային կողմը 20 վայրկեան հեռու 6–7 տեղերէ ըմպելի ջրեր կը բղխեն, որոց ամբողջութիւնը ջազացք մը կը բանեցնէ. տաս կան նաև հանքային ջրոյ քանի մը աղբիւրներ։ — Եկեղեցագրական ուղեւորութիւն, Ա. 81–84։ Եւ այլն։

ԴԱՐԱԲԱՍ. Տես ԴԱՐԲԱՍ։

ԴԱՐԱԼԱՆԿ կամ ԴԱՐԱԼՔԳ. — Գիւղ Աղբրաւանի Յօղուխպուլագ գաւառակի։ 30 տուն հայ կայ և եկեղեցի մը։

ԴԱՐԱԿ. — Գետակ Աղբրաւայ կազմիա գաւառի, օժանդակ Առուն գետոյն։ — Նոյն գաւառի մէջ վերին և Տաորին Դարակ անուամբ կրկին գիւղեր կան։

ԴԱՐԱԿՆ. — Բարձր Հայոց Գարանաղի գաւառի Մեղուհ լերան ոտքատեղիներէն մին՝ ծանօթ է այս անուամբ, ուր հովիւներէն Թադեւոս Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որուն հայր Յովհաննէս կաթողիկոսը հետեւեալ տողերը կը գրէ. «Ահ հոգ օրհնութեան ի վերուստ Գարակէն, յորում պատուական գանձ հոգեւոր ի հովուաց էր ծածկեալ. յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան

զայս խնամ հրամանաւ ի մեհարձանաց ինչ կրով ձուլածոյ»։ Ներկայ վիճակին անծանօթ է։

ԴԱՐԱՀՈՃ. — Գիւղ կը յիշուի սրբոյն Գրիգորիսի նշխարաց գիւաի պատմութեան մէջ, և կը թուի բլլալ Ագուանից մէջ։

ԴԱՐԱՆԱԿ. Տես ՍՈՂԻ։

ԴԱՐԱՆԱՊՅ. — Բարձր Հայոց հին անուանէ գաւառներէն մին, որ սահմանակից է Եկեղեաց գաւառի և այժմ կը կոչուի Պասմախ։ Յոյներէն Պաղռէսս կոչած է Դարանիսսա (Δαρανισσα). մեր մատենագիրներն ալ կը կոչեն նաև Դարանաղեաց երկիր և աշխարհ, ինչպէս նաև Աղեաց գաւառ։ Յովհաննէս վարդապետ Երզնկացին Ս. Լուսաւորչի ճառին մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ գաւառս ձիրքերը և անուան առաւ գարանութիւնը. «Լիառատք ծագկաւէա. ձոխութք չթաթուղս, եղեմնաթուղս ազրերն Եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ... այլ և ի ծործորս քո լերանց ի ներքոյ երկրի ազբիւրս ազի զարհուրելոյ ունիս, և ի խորութենէ ի վեր եկեալ ի չեմարիտն արեգականն՝ զնաւունեալ ջուրսն առանց ապի ծծէ հրոյն զօրութիւն. և յատակեալ պարզի ազն համեմիչ անուշահոտ. որով և Դարանաւի կոչես յայտ ներզործութենէ»։ Նոյն Երզնկացին կը գրէ նաև թէ հրաշալի բան մը կը պատմուի գաւառս համար, իբր թէ ամառնային եղանակին երբ ձիւները կը հալին՝ ջրոց կաթուածքները գաւառս անձաւներու մէջ վրայէ վրայ պիտակով կը սառին, որ առողջարար զօրութիւն ունենալով, ի հնումն հետաւոր տեղեր կը առնէին թագաւորաց համար. իսկ ձիւս ժամանակ երբ ուրիշ ջրեր կը սառին, տեղւոյս անձաւաց սառերն կ'սկսին հալիլ։

Գաւառս նախնի բնակիչները պիտի թեանց և կախարդութեանց հետէ շատ կ'ըլլային. իսկ ուղղափառ հաւատքը ընդունեցան մեծամեծ նշաններով և անմիջական քարոզութեամբ սրբոյն Գրիգորի՝ որ Ագաթանգեղոսի (էջ 588–9) գրածի համեմատ. «Երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն... ձեռնարկեալ զգաւառսն, հանդերձ միամիտ առաքութեամբ թագաւորին՝ զերկիր զամենեսեան ի հայրենեաց աստղելոյն ի սատանայապաշտ պիտակէն ի սպասաւորութենէն, ի հնազանդութիւն ծառայութեան Քրիստոսի մատուցանէր... որ և յայտնի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երեւեալ, կերպակերպ նմանութեամբք պիտոյն փախստական լինելով անկանել ի կողմանս խաղաղաց»։ — Դարանաղեաց մէջ է պատմական և սրբանունէր Սեպուհ լերն՝ որ Դարանաղեաց լեառն ևս կոչուած է, Թորդան աւանը և Աղի ամրոցը։ Տես նաև ԿԱՄԱԽ։

ԴԱՐԱՆ ԴԱՇՏ. — Վասպուրականի Գառնի գաւառի մէջ կը գտնուի գաշտ, որ ամառան բնակութեան վայր էր Հուլաւուն խանին։ Անոնց կը յիշուի վարպետայ պատմութեան յաւելուածի մէջ։

ԴԱՐԱՆՑ կամ ՏԱՐՕՆՑ. Տես ՍՈՂԻ։

ԴԱՐԱՇԱՄԲ. Տես ՇԱՄԲ։

ԴԱՐԱՋԻՋԱԿ. Տես ԾԱՂԿՈՒՆԻՔ։

ԴԱՐԱՊԱՍ. — Այս անուամբ բլուր մը կը յիշուի Աբգարատայ կռապաշտ գաւառի մէջ։


ԴԱՐԱՏԱՓ. — Կը թուի լինել հին պիտ կամ այլ ինչ վայր Սիւնեաց Տաթեւի վանաց կալուածներու շարքին մէջ։

ԴԱՐԲ. — Հին պիտ Սիւնեաց վայրց ձոր գաւառի մէջ։ Այժմ այլազգարնակ է, մնացեալ հին եկեղեցւոյ աւերակներ և գիրեմանններ։

ԴԱՐԲԱՆՑ կամ ՏԻՐՊԻՆՑ. Գ. DERBENT. Ռ. Дербендъ. — Հին և հռչակաւոր ամուր քաղաք, որ Ագուանից երկրի նախադուռն է, հիմնուած կովկասեան փոքր լեռնաշղթային դէպի կասպից ծով կախուած լեռնաբազկի մը վրայ։ Բերդաքաղաքս երկու միջնապատերով բաժնուած է եղեր երեք մասի և միացած երկու զուգահեռական պարիսպներով, որոց արեւմտեան ծայրերը նեղնալով հպած են վերնաբերդին, որ կը կոչուի Նարին–Ղալա, իսկ արեւելեան ծայրերը միացած են եղեր ծովի մէջ։ Այս կերպով Դարբանաց բաժնուած է եղեր չորս մասի՝ ծովային բերդ, ստորին քաղաք, միջին քաղաք և վերին բերդ։ Առաջին ծովային մասի համար խորհուրդը գրած է. «աշտարակ ահագին ի ծովեայն կացեալ»։ Աբուբացի էդբէս անուամբ աշխարհագիր մը գրած է, թէ ծովի մէջ մտած մասը կը ներկայացնէր նաւերու պաշտպանութեան համար ամուր

նաւահանգիստ մը։ Անցլիացի ճանապարհորդ մ՚ալ ԺԹ դարուն, կ՚ըսէ թէ կէս մղոն ծովի մէջ մտած էր պարիսպներու շարունակութիւնը և ունէր ահագին բուրգեր։ Այժմ թէև բոլորովին քանդուած է այս մասը՝ սակայն դեռ կարելի է նշմարել պարսպի հետքերը՝ նաւակով հետազօտած ժամանակ, այդ պատճառաւ շոգենաւերն ծովեզերքէն խիստ

երեքը հիւսիսային պարսպէն և հինգը հարաւային պարսպէն էին։ Հիւսիսային գնեցը ցարդ կանգուն են և ծովեզերքէն սկսեալ կը կոչուին՝ Դաշ–Ղափու (Քարեղուռն), Ղրեղար–Ղափու (Քառասնից դուռն) և Ջաուչի–Ղափու (Մունետիկի դուռն)։ Հարաւային պարսպի Բայաթ–Ղափու (Հին դուռն) և Ղալա–Ղափու (Բերդի դուռն) դեռ կը մնան



251. Դարբանդի ընդհանուր տեսարանը։

հեռու խարխափ կը ձգեն, որպէս զի պատրաստներու հիմքերուն զարնուելով չվնասուին։ Երկրորդ մասը, որ կ՚սկսի ծովեզերքէն, Հայոց և Ռուսաց բնակավայրն է. հոն են նաև վաճառանոցները։ Երրորդ մասի մէջ կը բնակին Շեխ և Սիւննի մահմեդականները։ Չորրորդ մասի՝ Նարին Ղալայի մէջ կը բնակին քաղաքապահ պետուրականները իրենց մեծաւորներով միասին։ Երկրորդ և երրորդ մասերն ունեցած են ութ դռներ, որոնցմէ կանգուն. իսկ հետեւեալ Դաւպաթա–Ղափու (Կրկնադուռն), Էնի–Ղափու (Նոր դուռն), Օրթա–Ղափու (Մէջնադուռն) երեք դռները և պարսպի մէկ մասը գետպատիա Երմոլովի ժամանակ քանդուած են։ Բոլոր դռներու ճակատակալ քարերն ունին արձանագրութիւններ՝ պարսկերէն լեզուով։ Դարբանդի բերդերու այժմեան ամբողջական շրջապատն է 5 վերստ, երկայնութիւնը 2 վերստէն աւելի և լայնութիւնը

1 վերատէ պակաս. պարիսպներու բարձրութիւնը՝ 4–5 սաժէն է և հաստութիւնը՝ 1 սաժէն։

Աղուանից թագաւորական պալատը, կաթողիկոսական վեհարանը և մայր եկեղեցին կը գտնուին երրորդ մասի մէջ, իրարու կից։ Այժմ պարսիկները՝ պալատը փոխած են ուսումնարան, իսկ մայր եկեղեցին՝ ազօթատեղի, որ կը կոչուի Ջումա–մեչիտի։ Եկեղեցիս իւր մէջ ունի 40 հաստատուն սիւներ, և հաստ որմեր, որոնք ապացոյց են իւրաց հնութեան։ Արաբացիք Դարբանդի պարիսպները քանդած ժամանակ՝ անբակ պահած են Աղուանից կաթողիկոսարանը, որուն կը վկայէ Մովս. Կաղանկայուացի (էջ 159) գրելով. «Եւ ի հարիւր ութսուն թուականին Հայոց (732ին) Դարձեալ Մուհման շինէ զԴարբանա յանուն Ցաճկաց (Արաբացւոց), այլ զկաթողիկոսարանն Աղուանից ո՛չ ուներ, որ դեռ ևս կայ ի նմա»։

Նարին Դարա կոչուած բերդն, շինուած է լեռնաբազկի դիրքով, այսինքն լայն է արեւելեան կողմը, նեղ ու եռանկիւնաձեւ արեւմտեան կողմը, իսկ խորանդունդ ձոր պարսպի հիւսիսային կողմն։ Բերդս ևս ունի հաստ և բարձր ամրացոյց պարիսպ, հաստատուն բուրգեր և երեք դուռն արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերէն. ունի նաև մեծ, խոր ու խաչաձեւ ջրամբար մը։ Ջուրը որ այժմ ևս կը վազէ, բերուած է սոսկրիկայ խեցեղէն խողովակներով, երկու վերստ հեռաւորութենէ։ Նարին Դաշտային վերին ծայրէն սկսեալ շղթայաձեւ, հաստ, բարձր և ամուր պարիսպն կը շարունակուի մօտ 400 վերստ երկայնութեամբ։ Դարբանաէ չորս վերստ հեռու, պարսպիս շարունակութեան վրայ հին դղեակ մը կայ չորս բուրգերով և մի գռնով. դղեակս ամբողջապէս շինուած է տաշած քարերով։ Դարբանտի հրամայագրի պարսպի շարունակութեան վրայ, գտնուզան հեռաւորութեամբ շինուած են ամուր բուրգեր, որք ծառայած են թէ՛ պարիսպի հաստատութեան և թէ իբր պահակատեղիներ՝ պարապապահ զինուորականներու համար։ Թէև տեղ տեղ խրամատած է պարիսպս, սակայն դեռ կանգուն է ամենամեծ մասամբ։ Հոչակաւոր պարիսպս պատմութեանց և ճանապարհորդական գրուածոց մէջ կը գրաւէ նշանաւոր էջեր։

Դարբանտի գոյութիւնն 2000 տարիներէ աւելի է, և միանգամայն հոչակաւոր իւր պատմական և քաղաքական անցեալով։ Քանի երկար ժամանակ (Ն. Ք.) տիրեցին Հայք, Ա գարէն մինչև Ե դարս սկիզբը Աղուանք, Ե գարուն մէջ Պարսիկք, Զ գարուն Խազիրք, Է գարս գարձեալ Պարսիկք, Ը գարուն Արաբացիք, ԺԱ–ԺԲ դարուց մէջ Աղուանից Սելճուքերիմ և Գրիգոր Թագաւորները, յետոյ Թամերք, ապա Լէկի Թիմուր, երրորդ անգամ գարձեալ Պարսիկք և հուսկ ուրեմն Ռուսք 1806ին։ Աչելով կը համարինք մեր խօսքը երկարել, այդ ժամանակաց մէջ հանդիպած պատմական դիպաց վրայ. միայն ըսենք, թէ մեծ տարաձայնութիւն կայ և գտնազան կարծիքներ Դարբանտի և իւր պարիսպներու հիմնադրի մասին։ Ահագին պարիսպներով ամրափակել այս երկիրը և բոլորովին խզել Եւրոպայի հիւսիսային հաղորդակցութիւնը Ասիայէն, այսպիսի մեծ գործի մը հանճարն, ոմանք կը համարին միայն Աղեքսանդր Մակեդոնացին։ Այս կարծեաց նպաստաւոր են նաև Հայոց պատմագիրներէն ոմանք։ Ագաթանգեղոս (էջ 30) գրած է. «Որպանէր խօսրով Ա թագաւորն Հայոց... բանալ զդրունս Ալբանից և զիբերոյ պահակին, հանել զգօրս Հոնաց»։ Այս խօսքերէն յայտնի կ'երեւի, որ Վաղարշի և Խոսրովի ժամանակ արդէն կային թէ՛ Դարբանտի բերդերը և թէ երկաթէղ պարիսպը՝ պահակներով հանդերձ։ Այսպէս կը վկայէ նաև Խորենացին. «ուր ածեալ էր զպարիսպն Դարբանտայ...»։ Իսկ Դեւոնդ պատմագիրը (էջ 40–41) գրած է. «Ջօրավարին Մուհմայ... եկեալ և մարտ եղեալ ընդ զօրս Հոնաց՝ որ ի Դարբանդ քաղաքի՝ հարին զնոսա և հալածեցին, և քանդեալ աւերեցին զդղեակապատրիսպ ամրոցին։ Եւ մինչդեռ քանդէին զպատրիսպ ամրոցին՝ գտին վէմ մի մեծ ի հիմունս նորա, որ ունէր վերնագիր զրուիակ օրինակ գայս. Մարիխանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաք և զաշտարակս գայս յառաջագոյն տապանիօք յիւրոց զանձուց. և ի յետին

ժամանակս որդիքն Խոհայէլի քակեացան զսա և յիւրեանց գանձուց վերստին շինեացեն։ Ես իբրև զմեր զզրաշմ զբոյն... զազարեցին ի քակելոյ զպարիսպն, եւ կացուցեալ գործավարս ի վերայ՝ վերստին շինեցին զկործանեալ պարիսպն»։ Նոյն խօսքերը կը կրկնէ նաև Կիրակոս՝ բայց կը գրէ «Մաւուն կայսր»։ Ասողիկ ալ կը գրէ Նոյնպէս «Մաւուն»։ Գրեթէ 15 տարի առաջ, Օտեսայի ընդհանուր պատմ. և հնախուզութեան ընկերութեան անդամն կարայիմ Ֆերկովիչ, փորել տալով Դարբանտի հարաւային կրկնապարիսպի դրան ներսի կողմը կը գտնէ մեծ քար մը յունարէն արձանագրութեամբ, որուն սկզբնատառերն եղած են A. M.։ Նոյս ճանապարհորդն Պ. Ի. Բերեզինա (Ի. Հատ. էջ 22) կը գրէ. «Ես տեսայ աչքովս Գ. Բուչկինի մօտ... Դարբանտի վերաբերեալ վաղեմի հնութիւն, մնհէ պաշտպանուելու գործիք (թուր) մը, որոյ վրայ կարդացուեցաւ A. և M. (Աղեքսանդր Մակեդոնացի)»։ Պ. Ի. Բերեզինան յիշելով այս երկու տառերու, քարի և թրի արձանագրութեանց վրայ, Աղեքսանդրեան դղեակ և Աղեքսանդրեան պարիսպ կ'անուանէ քաղաքիս փոքրիկ դղեակը և երկարաձիգ պարիսպը։ — Եղիշէն (էջ 228) և ակնառու կաղանկատուացին (էջ 105) Դարբանտի պարիսպներու շինութիւնը կը յատկացնեն Պարսից թագաւորներուն. «Որպէս և յայժ իսկ արբանեակ էր թագաւորն (Յազկերտ), ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ եւ առաւել ընդ աւերել պահակին՝ զոր ի բազում ժամանակաց հաղիւ ուրեմն կարացին շինել. որ և յայնմ ժամանակի դիւրաւ առեալ քանդեցաւ»։ «Բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարիւով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նենգս ի շինուածս մեծաքանչ գործոյն, որով փակեցին աղխեցին ընդ լեառն կովկաս և ընդ մեծ ծովն արեւելից»։ Աղտարակուսելի ճշմարտութիւն է, որ Հայոց վաղարշ, խոստով և Տրդատ թագաւորներու ժամանակ արդէն կային Դարբանտի բերդերը և պահակներու երկարաձիգ պարիսպն։ Ճշմարիտ է նաև, որ բուն Եղիշէի և կաղանկատուացիի, Պարսից թագաւորները հիմնական նորոգութիւններ ըրած են քաղաքիս բերդերու և պարսպի վրայ։ Սոսկ է որ Ալբաթացիք ևս քանդած և վերստին շինած են։ Այդ բոլոր նորոգութիւնները յայտնի կը նշմարուին պարիսպներու և բերդերու վրայ, բայց ի զղեկէն, որոյ գոյութիւնն խիստ հին է և մնացած է անփոփոխ։ Որոշակի կը տեսնուին տարբեր ժամանակի, տարբեր քարերու և տարբեր ճարտարապետութեան զանազանութիւնները։ Այս ամէնը կ'ապացուցանեն նաև պարսկերէն ու արաբերէն արձանագրութիւնները և տախտի անպրէն. անյայտ կը մնայ ուրեմն միայն քաղաքիս և բերդերուս բուն հիմնադիրն, այն ալ ժամանակն պիտի պարզէ։ — Քաղաքէս դուրս Քառասնից դրան հիւսիսային կողմը կայ Դրխտար կոչուած արարական հանդստարանն, ուր ամփոփուած են 40 արարներ, որք իրրև թէ պատերազմի մէջ մեռած են։ Տապանաքարերու երկայնութիւնն է 10–12 թիզ, և զարդարուած են արձանագրութիւններով. ասոնց անուամբ կոչուած է դուռն Դրխտար–Դափու։ Վերնաբերդի արեւելեան դրան հարաւակողմը ևս կան երեք գերեզմաններ, արաբական արձանագրութեամբք։ — Դարբանդի մէջ սկսած է Աղուանից թագաւորութիւնը Ա. Վաչականով և վերջացած է Նոյնպէս քաղաքիս մէջ Գրիգոր Թագաւորով ԺԱ. դարու վերջերը, կամ ԺԲ. սկիզբները։

Դարբանտի բնակիչք այժմ կը հաշուին 16000 հոգի, զանազան ազգերէ. բազմաթիւ են Պարսիկք, յետոյ կու գան Հրեայք, Թաթարք, Հայք, Ռուսք, և այլն։ Հայք կը հաշուին մօտ 900–1000 հոգի. պաղթած են մեծ մասամբ Աբգամէն, Շամախէն և Ղզլարէն։ Դարբանտի օդն և կլիման առանց ծանր է։ Հայք՝ ինչպէս կանոնաւ բոլորք, կը բնակին քաղաքիս երկրորդ մասի մէջ, և ունին նորաշէն, խաչաձեւ, միջակ մեծութեամբ և սրբատաշ քարերով շինուած Աստուածափրկիչ անուամբ եկեղեցի մը։ Տաճարիս հիմքը ձգած է ծխական ժողովուրդը հին եկեղեցւոյն պատրաստի դրամով և դեռևէն բարձրացուցած է մօտ երեք կանգուն։ Իսկ միացեալ մասերը ամբողջապէս աւարտած են իրենց սեպհական ծախքովը, բարե-

պաշա եղբարքն Աթրպիս և Սանփան կաճկա-ճեանց։ Ոսկեզօծ և զեղեցկագոյն խաչկալը և մեծ կաթուղիկէն ալ շինել տուած է բա-րեպաշտուհի տիկին կաճկաճեանց։ Զանգա-կատունը իր վայելուչ կաթուղիկէով, շինել տուած են պատուաբժան Ղազարէ Բաբա-յեանց և Քալհաննէս Փանեանց։ Արձանա-գրութիւնները տակաւին փորագրուած չեն, միայն եկեղեցւոյ հարաւային կողմը՝ վերեւի քիւի մօտ՝ քարի մը վրայ գրուած է կա-ռուցման համառօտ յիշատակարանը 1860 թուին։ Եկեղեցիս ունի մէկ քահանայ և 2250 բուբլի դրամագլուխ. ունի նաև պա-տուական զարդեր և զգեստներ։ Քաղաքիս Հայք ունին Մարիամեան անուամբ զպրոց և ընթերցարան մը 500 կտոր գրքերով, ուր կ'ստացուի մօտ 10 լրագիր, օրագիր, և շաբաթաթերթ հայ և ռուս լեզուներով։ — Դարբանտը զարդարուած է ծառատունկ-ներով, պարտէզներով և ծաղկանոցներով, ինչպէս նաև ընդարձակ այգիներով։ Ա.յգի-ները բաց ի առատ խաղողէ, կու տան նաև առատ նուշ, այս այգիները մշակուած են ռուսերէն արտերու սեկերը 1877 թուակա-նէն սկսեալ։ Նոյն թուականէն առաջ տե-ղական նշանաւոր բերքն էր ռուռկ նիկի արտահանութիւնն, որոյ փութին կը ծախուէր 9–11 բուբլիով. բայց երբ գանուեցաւ ալի-զարէն կոչուած եւրոպական քիմիական ներ-կը, ռուռկի 1 փութի գինն իջաւ 1–2 բու-բլիի, և այլ պատճառաւ բաւական անձինք մնանկացեր են։ Ա.յնուհետեւ սկսեր են Դար-բանցիք այգեգործութեամբ զբաղիլ. բա-ւական լաւ գինի կը շինեն ար և այժմեան վաճառականութեան գլխաւոր նիւթն կրնայ համարուիլ։ — Դարբանտ քաղաքի և շրջա-կայ գիւղերու, ինչպէս նաև Մօղրա խալիլի, Պօղոս Քեանդի, և այլ գիւղերու հայ բնա-կիչներ, ինչպէս կը պատմեն տեղացիք, 1800–1810 թուներուն գաղթեր են Ախր-կովկասեան քաղաքներէ ու գիւղերէ, որք են Ղզլար, Մոզդօք, Պետրովսկի, Մահաճ, որոց լեզուն, սովորութիւնն և աւանդութիւնն այժմեան Դարբանտի, Թաշմասի, Քլխլարի Հայոց նման է։ Քաղաքիս մօտ կը տարա-ծուի ընդարձակ վայրեւան գաշտ, ուր բոլ ազգային պատմութեան Ադուանից, նահա-տակուեր է Ս. Գրիգորիս, Ադուանից ա-ռաջին կաթողիկոսը, որոյ նահատակութեան տեղը, Մոլլա խալիլ գիւղի մօտ, այժմ ևս կայ Ս. Գրիգորիս անուամբ մատուռ մը, զոր 1879 թուին նորոգեր է բարեպաշտուհի տիկինն Եղիսաբէթ կաճկաճեանց, ինչպէս կը ցուցընէ զրան վրայի արձանագրութիւնը։ — Դարբանտի երկաթէ գունէն, Քրիստոսի 80 թուին, անցեր է մեծ յաղթանակաւ մեր Արտաշէս Ա. թագաւորը, երբ յաղթե-լով Ա.ւանաց՝ առացաւ անոնց Սաթ կամ Շաթ թագաւորի գուսար Սաթինիկը իբրև կին։ Նոյնպիսի հանդիսիս 285 թուին ան-ցեր է նոյն գունէն Մեծն Խոսրով՝ Հայոց թագաւորը՝ յաղթելով բոլոր լեռնային և հիւսիսային ազգերուն, ինչպէս նաև Ա.նդր կասպեան աշխարհի ազգերուն՝ մինչև Ա.մու-Դարիա նշանաւոր գետը։ Նոյնպէս անցեր է Դարբանտի գունէն 325 թուին Մեծն Տրդատ մեծ յաղթանակաւ, որ բոլոր լեռնա-կանաց յաղթելով, արդիւնց այն գունէն այս կողմն անցնիլ, ինչպէս երբեմն Մեծն Ադեք-սանդր Մակեդոնացին. Մեծին Արտաշէսի նման Տրդատ ևս իբր կին զնաց թագուհին, Ա-լաններէն առացաւ։ Ա.յսպէս մեր թագաւոր-ներէն շատեր պատերազմով կամ խաղա-ղութեամբ եկած հանդիպած են Դարբանտի պարիսպներուն և գարձած, և շատ անգամ օգնած են Ադուանից ազգին, իբրև զրացոյ և կրօնակցի։ — Ադուանք, 110–223։ Նը-կարագիր Շամախւոյ բեմի, 505–533։ Եւ այլն։

ԴԱՐԲԱՆԴ. — Հայաբնակ գիւղ Ա.լբարա-ծայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ, Ա.ղեքանդրապոլի հիւսիսային կողմը։ Ունի 495 բնակիչ, բաժնուած 52 տան։

ԴԱՐԲԱՆԴԻ ԴՈՒՈՆ կամ ԱՆՑՔ. — Դար-բանտ քաղաքի անուամբ ծանօթ է այն հըր-չակաւոր անցքն՝ որ ամրափակուած է նեղ ծովեզերքէն մինչև Բալաքեանի կիրճը չի-նական պատուարի նման ամուր պարիսպ-ներով, անմատչելի բուրգերով, երկաթեայ գռներով և ամրագոյն պահակներով։ Անցքս մերձաւոր ազգաց և քաղաքներու անուամբ ստացած է զանազան դարուց մէջ այլ և այլ անուններ, ինչպէս են Դրունք Ա.լանաց, Դրունք կասպից, Դուռն, Պահակ կամ կա-

պան Ձորայ, Դառան, Դրուեր կամ Կապան Ձորա, Դառան Ագուանից, Դառան Խազրաց, Դառան Հոնաց. և այլն։ Հայաստանի, Վրաստանի, Ադուանից երկրի և մինչև անդամ Պարսկաստանի ապահովութիւնն, հիւսիսային ազգաց արշաւանքներու նկատմամբ, համարեա թէ կախուած էր այս նշանաւոր անցքի բերդերու, պահակներու, և զօներու ամրութենէն։

ԴԱՐԲԱՒՈՒ.—Գիւղ Ալաշկաւակերտի Մալմատա գաւառի Քեաղրզուրատ գաւառակի մէջ։ 40 տուն հայ կայ։

ԴԱՐԲԱՒ կամ ԴԱՐԱԲԱՒ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի (Զանգեզուր), Լոռաձորի մէջ, Շնախագ գետի ձախակողմը։ Ա-բեւմտահիւսիսային կողմը կը բարձրանայ Ճիպիր–տաշ մացառուտ սարը, արեւելեան կողմը՝ Մարանուճի լերկ լեռը, իսկ հիւսիսային կողմէն կը պատեն Հանազուր բլրակները։ Ներ ձորակ մը գիւղս կը բաժնէ հայկական և թրքական կրկին թաղերու, երկուքն ալ այգիներով պատած են։ Հայկական թաղի մէջ կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին։ Ս. Աստուածածին եկեղեցիները։ Ս. Աստուածածնի եկեղեցին, յորում այժմ կը կատարին ժամասացութիւն, շատ հասարակ և առանց գմբէթի շէնք է. շուրջը կան միաբաններու խցերու և պարսպի հետքեր։ Խորաններու մօտ կան մի մի խաչարձան, որոնցմէ միոյն վրայ կայ ԶԼԷ. (= 1288) Թուականաւ արձանագրութիւն։ Ս. Աստուածածնի եկեղեցին փոքր է, շինուած՝ կամարի սրբատաշ քարերով, որուն ձեղունը այժմ բոլորովին քանդուած է։ Ներսը հիւսիսային որմի վրայ շինուխնան ընդարձակ արձանագրութիւն մը կայ, ՉԻԱ (= 1272) Թուականաւ, յորմէ կը յայտնուի, թէ շինող է Սիւնեաց Լիպարիտ իշխանի Տարսայիճ որդին. այդ արձանագրութեան ներքև կայ ուրիշ յիշատակարան մը, որով կը յայտնուի, թէ ՌՃԻԶ (= 1677) Թուին եկեղեցիս նորոգած են Ս. Աստուածածնի եկեղեցիէն քիչ մը վեր կայ գերեզմանատուն, ուր զարու վերաբերեալ արձանագրութիւններով։ — Հին քարեայ կամուրջ մը ձգուած է գետի վրայ, որ ունի եղծուած արձանագրութիւն։ Ամենայնայնիւ այս կամուրջը Աղջուժանի կամուրջ կը կոչուի։ Աչխ-մեան գիւղի տները բոլորն ալ, բաց ի մէկէն, կիսագետնափոր են, այգիներու մէջ ցրուած։ Հայկական մասը համեմատաբար մաքուր է։ Գիւղիս բնակչաց թիւը ընդամենը 886 հոգի կը հաշուեն, բաժնուած 152 տան, յորոց Հայք են 333 հոգի, բաժնուած 42 տան։ Հայք և Թուրքք այս տեղ միմեանց հետ սիրով կ'ապրին, կրօնական առելութիւն և կռիւներ չեն պատահիր։ Թուրքք ունին մզկիթ մը. կ'ըսեն թէ իրենք Սիւնեաց Աշոտ իշխանի ցեղէն են, իրենց պապերն հայ են եղեր։ Բոլոր Հայերը՝ գիտեն Թուրքերէն լեզուն, իսկ Թուրքերէն՝ միայն մէկ քանին կրնան Հայերէն խօսիլ։ կը պարապին երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ՝ այգեգործութեամբ և մեղուապահութեամբ։ Գիւղիս վարչահողք կը գտնուին Ալչ–Թէփէլերի մօտ, որոնց գետոյն ձախ եղերքը, ուր Դարբասցիք շինած են կալեր, յարդանոցներ, գոմերնի շահաբաններ և գոմեր՝ յորս ձմեռը կը պահեն իրենց անասուններըը։ Ամէն այդ անդը զարձած է գիւղ 24 տուն բնակիչներով, և անդոյն ճահճային լիճնէուն պատճառաւ կը կոչուի Շաղ։ Ցեղոյս բնակիչք ուրիշ գիւղերու համեմատութեամբ աւելի կոպիտ են։ — Զանգեզուրի գաւառ, Ա. 64–66։

ԴԱՐԲԱՐԻ. — Գիւղ Ալաշկաւակերտի Բաբանդուզ գաւառակի մէջ։ 25 տուն հայ կայ. եկեղեցիէ և դպրոցէ զուրկ են։

ԴԱՐԲՆԱՑ ՓԱՐ կամ ԴԱՐԲՆԱՓԱՐ. — Վասպուրականի Աղձնեացոց գաւառի մէջ, Կանգուար ամրոցի մօտ կը յիշուի այս անուամբ տեղ մը։

ԴԱՐԴԱՆԷԼ կամ ՏԱՐՏԱՆԷԼ (Թ. Չանաղ գալէ, Գարայի–Սուլթանիէ). — Հին պատմական քաղաք Թուրքիոյ Համանուն նահանգին վրայ. կառավարչանիստ է ընդ կուսակալութեամբ Լխիրնէի և առաջնորդութեամբ Ռատոսթոյի։ Քաղաքիս մէջ Հայք ունին եկեղեցի մը նորաշէն և գոմեաձեւ Ս. Գէորգ անուամբ, Լերսոպացիք մատուռ մը, Մահմետականք 8 մզկիթ, Հրեայք ժողովարան մը և տակաւին Հայ բողոքականք ժողովարան մը՝ տան մէջ յատնա-

բնակ։ Կառավարութիւնն ասա ունի ալիրի գործարան և հիւանդանոց։ Կան երկու պանդոկք և հիւպատոսարանք։ Հայք 170 տուն են. ունին քարաւիղ նորաշէն պարոյ մը՝ նպաստաւք Աբրահամ փաշայի Էրամեան։ Տիգրան Հայոց նոր սերունդը սկսած է խօսիլ հայերէն, շնորհիւ պարոյին, ուր հայերէն լեզուի ուսուցիչ պարտաւորիչ է, և ունի մօտ 200 աշակերտներ՝ երկու սնոր միասին։ Նշանաւոր են Հայք եկեղեցասիրութեան և ուսումնասիրութեան մէջ, և տակաւին պահած են իրենց հին հայկական կեանքն ու կենցաղ։ Հայկական եկեղեցին՝ որ պարսոր ժամանակ առաջ կառուցուած էր, և Պիզճեան Աժիրայի ձեռնտուութեամբ վերանորոգուած, 1889 թուին չորրորդ անգամ վերաշինեցաւ ժողովրդական հանգանակութեամբ։ Աւանդաբար կը պատմուի, թէ տեզրայ նախնի Հայք, Պիզայի Հայոց հետ՝ Պիզայէ 4–5 ժամ հեռու Թանիչմանդը գիւղի մէջ կը բնակէին և եկեղեցի ու վարժարան ունէին, սակայն ի վերջոյ 1658ին տեղիները փոխադրուեր են կէսն ի Պիզա և կէսը ի Դարպանէլ։

Թուրքք 800 տուն են. դրեթէ նոյնչափ ալ Հոյնք կան, իսկ Հրեայք 180 տուն են, քանի մը տուն ալ Եւրոպացիք. ընդհանուր տանց թիւն 2000ի կը հասնի, և բնակիչք 11000ի մօտ։ Դարպանէլ՝ որ համանուն նահանգին ամէնէն բանուկ ու ծաղկեալ քաղաքն է, Միջերկրականի արեւմտեան կողմը ծովուն եզրը շինուած է և կ'ընդարձակի հարաւէն ի հիւսիս։ Դիրքը տափարակ է. օդը թէև երբեմն մօտակայ ճահիճներէ ապականուելով վնասակար կը լինէր, բայց անոնց մը մասրէ հետ թէ այդպիսի [illegible] լցուելով և թէ փողոցաց մաքրու[illegible] թնում մասրելով այժմ բաւական [illegible]ացած է։ Ջուրն այնչափ [illegible] պիւրակեցիկ՝ հանդիպակաց յունաց Մայտոս անուն դիւղէն բերել կու[illegible] պատուական ջուր։

Քաղաքիս [illegible]պիրը և առաջին թագաւորը եղած [illegible]արպանոս անուամբ մէկը, որ Քրիս[illegible]է 1568 տարի առաջ օտար երկրէ [illegible] գալով Իպա լերին արեւմտեան [illegible]ակոյսին վրայ շինած է քաղաք՝ այժմ [illegible]արլեզ կոչուած լայն գաշտին մէջ, և իր անուամբ Դարպանոս կոչուած է թէ քաղաքն և թէ սիրած երկիրը. իսկ յետոյ ասոր յաջորդաց միջին՝ Տրոսի անուամբը լսուած է Տրոյիա, Տրովա կամ Տրովադա։ Դարդանոյ ծաղկեալ քաղաքներն էին ի հնումն Սեստոս և Աբիդոս, որոնք դէմ առ դէմ իրր մի մարմին նկատուելով Դարդանեանք կը կոչուէին, և կիրճն Դարդանեան նեղուց, մինչդեռ յառաջագոյն Հելլեսպոնտեան կը կոչուէր, ինչպէս յայտնի է Հելլէսի և ոսկեգեղմեան առասպելախառն պատմութենէն։ — Օսմանեան սուլթաններէն Ղազի Մէհէմմէտ Դ, յիշեալ նեղուցին կարեւորութենէն զգալով բաւական չհամարեցաւ Պովալը և Նագարա անուն բերդերը, փութացաւ երկու հատ ալ կանգնել 1658 թուին, որք են դէմ առ դէմ այժմեան Չանագ–գալէի և Քիլիա–իւլ–Պահրի բերդերն։ Այնուհետեւ քաղաքս ծաղկիլ սկսելով, կը ժառանգէ հին Սեստոսի և Աբիդոսի յատկացեալ Դարպանէլ անունը, որոյ նեղուցը Օսմանեանք հետզհետէ ամրացնելով՝ իրրեւ ամրոցափակ դուռ մը գործածած են զայն, և կը կոչեն Դալայի–Սուլթանիյէ, թէև սովին Չանագգալէ ևս կ'անուանէ, ի վազուց հետէ հոս գտնուած բրտի գործարանաց պատճառաւ։ Դարպանէլի ասիական ափանց վրայ են Եազարա, Քօսէպրուն, Մէճիտիյէ, Համիտիյէ և Գումգալէ անուն բերդերը. իսկ եւրոպական ափունքը կը գտնուին Պովալը, Զամպուրնը, Զիմէնլիք, Տէյիրմէնպուրնը, Քիլիա–իւլ–Պահր, Նամազկահ և Սէստոս–իւլ–Պահր անուն բերդորայք։

ԴԱՐԵԱԼ կամ ԴԱՐԻԱԼ. — Այս անուամբ ծանօթ է Ազուանից աշխարհի նշանաւոր կիրճերէն մին՝ որ այժմ կը կոչուի Վլատիկաւկասի կիրճ։ Կովկասու քարաժայռ բլուրմ է, ձոր տեղ մը բարձրացած, ուր երկու կողմերէ իրար մօտեցած են ահաւոր սեպաձեւ լեռներ՝ ձեւացնելով սոսկալի կիրճ մը։ Նոյն բլրոյն կատարը կայ հինաւուրց ամուր բերդ մը հանդերձ պատուարաւ, որ այժմ ամայի է։ Թերէք գետը, որ կը բղխէ Կովկասու բարձունքներէն, իր մէջ ընդունելով զանազան ձորերէ բազմաթիւ վտակներ, կ'անցնի կրճիս միջէն։

ԴԱՐԵՆՑ. — Այս անուամբ վերին և ներ-

քին կրկին ռահաւարնակ Հայոց գիւղեր կան Մոկաց աշխարհի Շատախու գաւառակի մէջ։ Ներքին Դարենց ունի Ս. Շմաւոն առաքեալ եկեղեցի մը։ Վերին Դարենցի մօտ է Ս. Աստուածածին անուամբ վանք մը։

ԴԱՐԵՆՑ. — Հայաբնակ գիւղ Ագձնեաց աշխարհի ալժիան խիզան գաւառակի մէջ. ունի մօտ 300 բնակիչ և Ս. Գէորգ անուամբ եկեղեցի մը։

ԴԱՐԻ ԳՕԼ. — Գիւղ Տիգրանակերտի. հայ բնակիչք 10 տուն են։

ԴԱՐԻ–ՔԱՐՔԱՆՋ. — Գիւղ Շամախու գաւառի, որ հեռու է Աբիւառա գիւղէն 2 ժամ դէպի արեւմուտք, խոր ձորի մը մէջ։ Բնակիչք 38 տուն, 210 հոգի, ամբողջ հայ են, որոց նախնիք 1798 թուին գաղթած են Արցախի Ցոր, Ծամձոր, Թաղլար և Ճարտար գիւղերէն։ Տեղւոյս օդը ամրան ոսկեայ է և ջուրն ոչ լաւ։

ԴԱՐՉՕՐ. — Կը յիշուի Սասնոյ մէջ։

ԴԱՐՄԱՆ. Տես ՏԱՐՄԱՆ։

ԴԱՐՈՑՆՔ, ԴԱՐՕՆՔ կամ ԴԱՐՈՒՆԻՑ ԲԵՐԴ. — Հին և հռչակաւոր ամրոց Աբրահամեայ կոզովիտ գաւառի, որ ժէ դարէն սկսեալ ծանօթ է Բայազիդ անուամբ։ Կը յիշուի ի պատմութիւն Դ դարու մէջ, նախ իբրև հզօր ամրոց և ապաստանարան արքունի անձանց և գանձուց, իսկ յետոյ իբրև հայրենի առն Բագրատունեաց պայազատներու։ Նախ կը յիշուի Մեծին Տրդատայ մահէն վերջ, հիւսիսացոց կամ Մազքութաց ի Հայս արշաւանաց առեն, որոց երկիւղէն «խոյս եա թագաւորն Հայոց խոսրով... և անկաւ յամուր բերդն Դարօնից, և ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց»։ Բերդիս մէջ ամրացաւ երբեմն նաև Աբշակ Բ, Պարսից Շապուհ թագաւորի հետ բրած երկար պատերազմաց ժամանակ, որոնք անոր գերութենէն վերջ սիրեցին նաև ամրոցիս. իսկ երբ իւր որդին Պապ թագաւորեց, ուրիշ ամբոցներու հետ «թափեաց յինքն... և զբերդն Դարօնից որ է յերկրին Տրպատ, ուր կային գանձք Աբշակունեացն սահմանեալ»։ Ամբոցս Բագրատունեաց սեփհականութենէն եղած միջոց, հոս էին ոչ միայն անոնց արքունիքը այլ և գերեզմանները. 616 թուին բազմայարդ Ամրատ մարզպանը Պարսից գունդ վախճանելով, հանդիսով և փառօք հոս բերին «ի բնիկ հանգստարանին, և եղին ի սապանի, ի գեղն Դարբևս, որ է ի կողմն վիտ գաւառի»։ Նոյնպէս 642ին, իբ որդւոյն վարազտիրոցի «բարձին զմարմին և



252. Դարեսալի կիրճը։

առան թագեցին առ հօր իւրում ի Դարբնոն»։ Աշոտ Պատրիկ անուանի իշխանապետն Հայոց եօթնեւերորդ գարու մէջ, «շինէր զեկեղեցին Դարաւնից յիւրում ոստանին», յորում գրաւ նաև Բրխուասի մարզպետութեան պատկերն՝ արեւմուտքէն բերած, և եկեղեցին անուանից Աստուածփրկիչ, ինչպէս կ'ասանդէն մեր պատմիչներէն ասնք։ Վերոյիշեալ պատկերը՝ յետոյ տարած են ի Հաւուց Թառ, և այժմ կը պահուի Էջմիա-

ծին։ Հէզէմ ամիրապետէն 734 թուին իշխանապետ դրուած է այլ ոմն պայազատ Բագրատունիներէն Աշոտ Պատրիկ՝ որպէս վասակայ, որուն վրայ նախաձեռնած Մամիկոնեաններն Գրիգոր և Գաւիթ, տասը տարի վերջ ուզեցին զաւառանել զինքը. իսկ Աշոտ «ժողովէր զախտ տան իւրոյ յամրոցս Գարիւնից, և զռիխինն և զամենայն ընտանիս իւր, և թողոյր ի վերայ պահապան զամրոցն պահել. և ինքն անցեալ գնայր յաշխարհն Աղձոց առ իշխանն Խաղիկի Մրուան»։ Մրուան ամիրապետի մեծ օգնութիւն բրաւ Աշոտ, անոր թշնամիները քաջութեամբ վանելով, և մեծարուելով զարձաւ իր աշխարհը. բայց քանի մը տարի վերջ (751ին) Գրիգոր իշխէն ձերբակալուելով զրկուեցաւ աչքերէն, որուն վրայ սպային Հայոց աշխարհի բոլոր նախարարները։ Այս դէպքէն վերջ Աշոտ տասնեւրեք տարի ևս ապրելով վախճանեցաւ ծեր հասակի մէջ և փառաւորա-



253. Դաւիթ Բէկի բերդը։

պէս թագաւեցաւ ի Դարբինս։ 774 թուին Արաբացւոց դէմ միաբանած Հայոց նախարարներն ամենք ապստամբեցան այս ամուր բերդը։ — Իշխանական գահուն հետ, հարկ էր որ հոս բլլար գէթ ժամանակ մը, նաև Բագրատունեաց ատեն եպիսկոպոսարանը, վասն զի 628ին կը յիշուի Դարունից եպիսկոպոս անն Քրիստափոր։ Տաճկերէրդ գարաւսկիզբը Դաւիթ Աղծքունի թագաւորը երթալով կոզովիա գաւառ, պաշարելով «զանառն Դարբինս, զոզացեալ առնու ի գիշերի, ըստ յաջազելոյ նմա ի վերուստ»։ պատմիչը չի յայտներ թէ որպէս ձեռքէն, բայց կը թուի Հագարացիներէն։ Այնուհետեւ ժամանակ մը Աղծքունեաց իշխանութեան ներքեւ ճնած է ամրոցս և նոյնանուն գիւղը։ Ժէ դարուն մէջ վերջին անգամ կը յիշէ բերդս և գիւղս Թ. Մեծոփեցի։ — Ա յրարատ, 496–499։ Տես ԲԱՅԱԶԻԹ։

ԴԱՐՈՒ կամ ԴԱՐՈՒԱՑ ԼԵԱՌՆ։ — կը բարձրանայ Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Ջուղայի արեւելեան հիւսիսային կողմը. այժմ կը կոչուի Տապրի տաղ և բարձրութիւնն է 7503 ոտք։ Լերանս անունը գրուած կը գտնենք նաև Գարուայ լեառն։ Այնուամենայնիւ Գարուայ երկանաքարը, որ վաճառանոցաց մէջ ծանօթ է Նախճաւանի անուամբ, և կը գրկուի Առւստց Հայաստանի բոլոր գաւառները։

ԴԱՐՈՒԻԿ։ — կը յիշուի Սասնոյ մէջ, տես գեհենթիանք կը պատկէն։

ԴԱՐՊԱՆ։ — Գիւղ Պօղոչալու գաւառի. ունի տասնաւթիւ հայ բնակիչներ։ — Ա յս անուամբ ուրիշ գիւղ մ՚ալ կայ նոյն գաւառի մէջ, որոյ բնակիչք այլազգիներ են։

ԴԱՐՊԱՆ։ — Հայարնակ գիւղ Ա յրարատայ, Ախթամարզպանի գաւառի մէջ։ Ունի 340 բնակիչ, բաժնուած 36 տան։

ԴԱՐՊԱՆ։ — Ա յս անուամբ գետ, ձոր և գիւղ կան լեռնային կիլիկիոյ մէջ։ Տես ԴԱՐՊԱՆ։

ԴԱՐՊԱՆԵՐ։ — Արքեպիսկոպոսական թեմի մէջ ծանօթ է այս անուամբ Ջալալեան մեծատոհմիկ իշխանազն տոհմի ապարանն։ Կը գտնուի վանքաշէնն գիւղի հարաւային հանդիպ, Թաչեն գետակի ձախ կողմի բարձրութեան վրայ և Հաւատաւոյ վանքի արեւմտեան կողմը։ Այժմ ամայի և ընդարձակ շինութիւն մ՚է ապարանս, ունի շատ սենեակներ և քարակիր պարսպով շրջապատեալ է։ Այս սենեկաց մէջ նշանաւոր են ընդունարանն և ուրիշ սենեակ մը, որք կը ներկայացնեն ժամանակին ճարտարապետութեան և ճաշակին ոճը։ — Ապարանէս քանի մը քայլ վար, կան անտառ քարով շինուած միջակ մեծութեամբ երկու եկեղեցիներ, որոց հիւսուածքներ ունի մի աւազ և մի փոքր խորան, իսկ մեանն ունի երկու փոքր և մի աւազ խորան։ Վերոյիշեալ ապարանի և այս եկեղեցիներու արձանագիր քարերն անյայտացած են։

ԴԱՐՊԱՍԱԿ։ — Ծովային կիլիկիոյ հին մասերնէն մին։

ԴԱՐՕՆԻ։ Տես ԴԱՐՈՅՆԻ։

ԴԱՒԱԼԱՆՈՅ։ Տես ՍՈՂԻ։

ԴԱՒԹԻ ԲԵՐԴ։ — Սիւնեաց Հաբանդ գաւառի Հալիձորի մէջ կը գտնուի նշանաւոր բերդս, ամայի վիճակի մէջ։ Կառուցած է բերդս ԺԱ դարու Սիւնեցի կարիճն Դաւիթ, իր ընդդէմ Օսմանեանց մղած պատերազմաց ժամանակ։ Դաւիթ Բէկի պատերազմիներն և քաջութիւնքն, լաւ կերպով նկարագրած է Րաֆֆիի, իր Դաւիթ Բէկ գրքի մէջ։

ԴԱՒԹԻ–ՄՐՋՈ կամ ՄԵՆՐԻ։ — Գիւղ Բասլուի, ունի 30 տուն հայ՝ Ս. Թորոս առաջնորդութեամբ եկեղեցի մը և պարսպաւոր բակ։ Բալու քաղաքէն 3 ժամու ճանապարհ հեռու է՝ արեւմտեան կողմը լեռնային ձորակի մը մէջ։ Բնակիչք հողագործ են։

ԴԱՒԹԻ ՇԻՆ։ — Դաշտային կիլիկիոյ մէջ, այս անուամբ գիւղ մը կը յիշուի. քննութեան կը կարօտի։

ԴԱՒՈՅ։ — Գիւղ Ա յրարատայ Բագրեւանդ գաւառի, Գարատնայ արեւելեան կողմը ½ ժամ հեռու, և Շեռանայ ձախ ափին վրայ։ Դիւրքովը Ա լաշկերտի դաշտի մէջ գտնուած գիւղերէն ամենաբնակերն է։ Գիւղս 1852–56ին գուա հայաբնակ էր, 130-150 տուն բնակչօք. բայց այդ միջոցի արիւնահեղ պատերազմներուն մեծ մասամբ գաղթած են Ա յրարատեան դաշտը, փոքր մասն մ՚ալ Ա լաշկերտ։ Վերջիններքը մօտ 15–20 տարի ժամանակ պաշտպանած ու հսկած են իրենց կալուածոց վրայ և եկեղեցին ու հանգուցատեղը նախնական պրկութեան մէջ պահած։ Նոյն ժամանակներքը իրենց գիւղի պահպանութիւնը յանձնած էին քանի մը անձնա-

բլրակրու, որք տակաւ առ տակաւ ածելով՝ այժմ գրաւած են ամբողջ դիւղս և ունին մօտ 40 տուն։ Տիւրւ է դիւղիս այժմեան անուն. եկեղեցին աղբանոց գարձուցած են անօրէնները, հարիւրաւոր տապանաքարեր և խաչարձաններ գործածած են բլրակրը իրենց գոմերու սալայատակի համար, լաւ լաւ անուն և հիւրանոցներըր բլրական հիւղեակներու ձեւի փոխարկած։ — Բագրեւանդ, 210–214։

ԴԱՒՐԱՅ. — Հայարնակ դիւղ Սերաստիոյ հիւսիսային կողմը, մէկ ժամու ճանապարհ հեռու, որուն մէջէն կ'անցնի նոյնանուն գետ մը։ Գիւղս շինուած է Մայրագոմ կոչուած լեռնաշղթայի ստորոտը բլրի մը վրայ։ Կը պատմուի թէ կռապաշտական դարուց մէջ ատա կը բնակէր Դաւուռ անուն պէտ մը, որուն անուամբ կը կոչուի եղեր բնակավայրն ալ. այս պէտն՝ գիւղիս դիմաց բարձրացած Սէյրան Թէփէսի կոչուած բլրակաձեւ լերան վրայ մերթ կանգնելով՝ շուրջը կը դիտէ և ուղեւորաց շատ անգթութիւններ կ'ընէ եղեր, և բլուրն իրրև ապացոյց անոր տեսարանն և դիտարանն լինելուն՝ Սէյրան անունը պահած է։ Երբ քրիստոնէութիւնն մտեր է ի Սերաստիա, քրիստոնեայք բերել տուեր են Ս. Աթանագինէս հայրապետը, որ համար՝ աւանդութիւն է թէ, Սերաստիոյ արեւմտեան կողմն Աստիկ անուն լերան և գետոյն մօտ Պետահատուն անուամբ վանք մ'ունէր, որուն աւերակաց մէկ մասն ցարդ կ'երեւի։ Հայրապետն գալով Սէյրան–Թէփէսիի մօտ քանիցս խաչակնքեր և հրէշն իսկոյն փախեր և ապաստաներ է Դաւուռի մէջ, հայրապետը ինքն ևս հաստելով անդր՝ հալածեր է այդ սահմաններէն, և այնուհետեւ ժայռերու վրայ հազարաւոր խաչանշաններ գրոշմեր է, որք մինչև ցարդ կան։ Կը գտնուին նաև շատ այրեր և փապարներ, որոնցմէ նշանաւոր են Ս. Յակոբ, Ս. Վարվառ և Զաբաղ Ս. Սարգիս, վերջինս գետնէն քանի մը մետր բարձր, ապառաժէ փորուած աստիճաններով և նեղ երկդռնակով ընդարձակ այր մ'է, յորում փորուած են պահարաններ, խաչեր և խորաններ. կ'ըսուի նաև թէ Ս. Աթանագինէս հայրապետը ատ պատրաստ մնացուցած է։ Ոմանք այդ այրերը բրիստոնէական հալածանաց ժամանակին կը վերագրեն. քաղաքէն փախչող հաւատացեալք եկած ապաստանած են այդ ծակերու և ծերպերու մէջ. ոմանք անդ ծնած, ապրած և իրենց կրօնական ու նիւթական պէտքերն հոգացած և անդ մեռած են։ Կ'ըսուի նաև թէ երբ Սենեքերիմ Արծրունին փոխադրեցաւ ի Սերաստիա, անոր որդին Դաւիթ, յիշեալ Դաւուռ վայրը ամարանոց մը կը հաստատէ և իր անուամբ Դաւիթպիւղ կը կոչէ. մինչև մօտ ժամանակներս գիւղին մէջ ապօրիքի մնան այդ ամարանոցի հնութեան ինչ ինչ հետքերն կը գտնուէին։ — Խալիլ Բիֆաթ փաշայի նորակառոյց ալիւրի գործարանէն բսակը անակ, մինչև գիւղիս ստորոտը և դէպ ի քաղաքը, լայն ձոր մը կայ որու մէջէն կը հոսի Մայրագոմ լեռներէն բղխած ջուրն՝ որ իր բազմաթիւ վտակներով շատ չրագացնարու երկանաքարերն կը շարժէ, և քաղաքին առատ ջուր կը մատակարարէ։ Գիւղիս բնակիչք 160–180 տուն՝ առհասարակ ազօրեցականներ են և երկրագործ։ Դաւրայի օդը շատ գեղեցիկ է և փերքը՝ բարձրահայեաց։ Բնակիչք ունին Ս. Սարգիս անուն եկեղեցի մը և Դաւիթան անուամբ վարժարան։ — Ս. Յակոբ՝ գիւղիս դիմաց բլրակի մը վրայ կառուցուած է. շուրջը քիչ տարիներ առաջ բնդարձակ ծառաշատ պարտէզ մը շինուած է և չորս կողմը քարեայ պատնէշ հիւսուած։ Նախ քանի մը խաչերէ բազկացեալ փոքրիկ և անշուք մատուռ մ'էր. իսկ այժմ բաւական մեծ և շքեղ վանք մը գարձած է և ունի ոչ սակաւ սենեակներ։ Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտի տօնի օրը ամէն տարի Ս. Յակորայ վանուց ուխտագնացութեան հանդէսը կը կատարուի, զոր տեղացիք Ս. Յակորայ կամ Դաւրայ փանայիրի կ'անուանեն։ Ս. Յակորայ վանքէն քիչ մը հեռու, կրկին գառիվայրի մը գագաթը կայ Ս. Վարվառ սրբատայրն, որ ունի շրջապարիսպ։

ԴԱՒՐԻԺ. — Ակս ձեռով ևս կը գրուի Դաւրէժ քաղաքի անունը։

ԴԱՓՈՒԻ ՎԱՆՔ. — Սինոպաց Գեղարքունի գաւառի հին վանքերէն մին, որ է ըստ Միքէոն կաթողիկոսի (Ջամչ. էջ 284), այժմեան Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որ կը գտնուի Նորատուս գիւղի հարաւային կողմն՝ վերա

մը հետու։ Եկեղեցիս թէև փոքր՝ բայց գեղեցիկ է, անսխեն և սուր գմբէթով։ Շինուած է սրբատաշ քարերով, որմունդն և առաստաղը բուսական խախտուած և քայքայուած են։ Ունի որմոց վրայ շատ արձանագրութիւններ, որոնցմէ կը յայտնուի թէ կառուցուած է ԺԴ դարու սկիզբը յանուն Ս. Գրիգորի։

Նմանայ վանքս, որ այժմ Համարիա ամայի վիճակի մէջ կը գտնուի։ Եկեղեցւոյ մօտ կան խաչքարեր, Հանգերձ արձանագրութեամբք, հնագոյն ծանօթ արձանագրութիւնն ունի ՈԿ (= 1211) թուականը։

ԴԱՓ. — Ցիշատակարանի մը համաձայն կը յիշուի Արցախի Դիզակ գաւառի մէջ։



254. Դափուց վանք կամ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նորատունն։

գորի, և նորոգուած է 1344ին։ Դեռ անմբնակաց ձեացած են բնակ իր սեղանատ. բնակ երկու կողմերը կան մէկ մէկ փոքրիկ պատհարաններ՝ փոքրիկ լուսամուտներով։ Թէ ինչ հնոյան վրայ կառուցուց վանք կը համարուի այս եկեղեցիս, և թէ Դափուց վանք անունն ճշդ որուեր է տալ, յայտնի չէ և կը կարօտի քննութեան։ Ս. Լուսաւորչի եւ բնիկ տեղեաց բազմաթիւ ուխտատեղիներ կ'ու-

ԴԱՓԱ. Տես ԹԱՓԱ։

ԴԴՄԱՃ. — Հայարնակ գիւղ Սիսատաղոյ՝ արեւելեան կողմը. 3 ժամ հետու։ Ունի 80–90 տուն բնակիչ, Ս. Սարգիս եկեղեցի մը և դպրոց մը Ղեւոնդեան անուամբ։

ԴԴՄԱՇԷՆ. — Հայարնակ գիւղ Ա.յրարատայ վաղաժունեաց գաւառի մէջ։ Ունի հին քարաշէն կամարակապ եկեղեցի մը, որուն տանիքը կործանած լինելով՝ նոր բնակիչը

փայտով ծածկեցին և կոչեցին Ս. Թադէոս։ Ունի մօտ 1700 բնակիչ, բաժնուած 210 տան։ Գեմաշէնի այժմեան բնակչաց նախնիք գաղթած են Մակուէն։

ԴԵԶՊԱՆԱՐՏ. — Այս անուամբ հարթ տեղ մը կը յիշուի Սիւնեաց վայոց ձոր գաւառի Սուլեմայ ձորին մէջ։

ԴԵԿՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԴԵԿԱՊՕՂԻՍ. Տես ՍԵԼԵՒԿԻԱ։

ԴԵՂԱՍԱՐ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի, սակաւաթիւ հայ և թաթար բնակիչներով։ Ամենք գիւղս անունը կը գրեն Դխասար. Ազուլիսի և Ջղնա մէջտեղը կը գտնուի։

ԴԵՂԱՍՊԱՐ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Շատախու (վան). ունի Ս. Յովհաննէս և Ս. Գէորգ քարաւիղը եկեղեցի մը։

ԴԵՂԹԱՔ կամ ՂՂՏԱԽ. — Լիս Բարձր Հայոց Մանանագի (Թէքման) գաւառի. կը բարձրանայ Խնուսայ և Թէքմանայ մէջտեղ։

ԴԵՂՅՆԵՒԱՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց Դարանագի (Կամախ) գաւառի մէջ։

ԴԵՂՋԱՁՈՐ կամ ԴԵՂՆԱՁՈՐ. — Կը հասմարուի թէ կը գտնուի այս անուամբ տեղ՝ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, զոր Աշտ Սիւնեաց իշխանը նուիրած է Տաթեւի վանաց։

ԴԵՂՋԱՆԱԳԵՏ. — Կը յիշուի Սիւնեաց Սոզք գաւառի Մաքենոցաց վանաց արձանագրութեան մը մէջ։

ԴԵՂՋԻՍ. — Գիւղ Վանայ Գաւաշ գաւառակի. երբեմն հայաբնակ, իսկ այժմ Քրդաց ձեռքն է։

ԴԵՂՋՈՒՏ. Տես ԴԵՂՁՆՈՒՏԻ ՎԱՆՔ։

ԴԵՂՋՄԵՐ. — Մշու գիւղերէն մին, Բանասիրու, խաւթայ կամ Աատոյ սահմանաց մէջ։ Բնակիչք այլազգի են և կը նեղեն միթձակայ հայ գիւղերը։

ԴԵՂՁՆԱՎԱՆՔ. — Կը յիշէ Սիմէոն կաթողիկոս, իբրև թեմ Աղբարատայ (Ասատան) խոր վիրապի վանաց։

ԴԵՂՁՆՈՒՏԻ ՎԱՆՔ. — Կը գտնուի Աբցախի Ջաւէ գաւառի մէջ. հիմնուած է Կենդանց վանքի հարաւ–արեւելեան կողմի անտառապատ բարձր լերան մը լանջին վրայ. Առաքելոց վանքէն հեռու է երկու ժամու ճանապարհ։ Գրուած գանձ վանքիս անուն նաև Դեղձուտ, չգիտեմ սխալմամբ՝ թէ այլ նպատակաւ։ Շինուած է ամբողջապէս սրբատաշ քարերով և ունի գրեթէ Մակարայ վանքի մեծութիւնը։ Տաճարը ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան և մի գաւիթ՝ արեւմտեան կողմէն։ Տաճարի կից է 12 քայլ երկայնութեամբ և նոյնքան լայնութեամբ գաւիթ մը, որոյ առնիքը խնամարհած է. կոթծանած է նաև տաճարի կամոզիկէն։ Վանական արձանագրութիւններէն չէ կարելի որոշել շինութեան ճիշդ թուականը, բայց խաչքարի մը գրութենէն կը յայտնուի թէ կատարուած է ՉԻԴ (= 1275) թուին։ Տաճարի գրան եզերքը բնական բարձրաքանդակներով զարդարուած է. ուշագրաւ են գաւթի մէջ երկու գեղեցկաքանդակ խաչարձաններ, որոց գեղարուեստի նրբութիւնն կը ներկայացնէ ժամանակին ճարտարապետութեան յառաջդիմութիւնը։ Տաճարի հիւսիսային կողմէ կայ աւերչ քարաշէն եկեղեցի մը, հասարակ կերպով շինուած։

ԴԵՂՆԱՁՈՐ. Տես ԴԵՂՋԱՁՈՐ։

ԴԵՂՆԵՒԱՐ. — Կիլիկիոյ հին ամրոցներէն մին, որոյ շինութեան կարեւոր արձանագրութեան սեպագիր քարն 0,80 մետր երկայնութեամբ և 0,55 լայնութեամբ, այժմ կը գտնուի ապուցուած Տարսոնի եկեղեցւոյն բեմի սեղանին մէջ։ Արձանագրութիւնն անաղարտ մնացած է, և կը յայտնէ թէ ամբողջ հիմնած է Օշին թագաւորը և աւարտած է կոստանդին ՉԿԲ (= 1319) թուին։ Հաւանօրէն Տարսոնի մնացորդ կը գտնուի ամբողջ, որուն աւերակները հետազօտութեան կը կարօտին։

ԴԵՂՍԱՐ. Տես ԳՈՂԹՆ։

ԴԵՐԲԱՎԱՆՔ. — Կը յիշուի Սիւնեաց վանքերու շարքին մէջ։

ԴԵՐԵՆ. — Հին գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի, որոյ բնակիչք այժմ այլազգի են։

ԴԵՐՋՆԻ. — Գիւղ Աղձնիք (Աղձնիք), որ գրեթէ զար մը յառաջ Զաքարեան գիւղաքաղաքն էր 700 տուն բնակչօք։ Դես կ'ենթարկուին շատ անգամ և երկու բազանեաց աւերակները։ Այժմ փոքրիկ գիւղ մ'է 20 տուն հայ և 10 տուն քուրդ բնակչօք։ Հայք ունին Ս. Յովհաննէս անուամբ եկեղեցի։ Այս եկեղեցւոյն մէջ 1886ին տեսած են

շատ պըշտպրեր, յորոց 15ի չափ պըքեր խա-նաւութենէն մէկիմէկու կպած և գանգուած մը գարձած են եղեր, մէկ քանին ալ հոգ գարձած։

ԴԵՐԻՇԿ. — Հայարնակ գիւղ Աբգարատա-կանի Մալմատա գաւառի։ Ունի 144 բնա-կիչ, բաժնուած 23 տան, և եկեղեցի մը։

ԴԵՐՋԱՆ կամ ԹԻՐՃԱՆ. — Բարձր Հայոց գաւառներէն մին, կարնոյ կուսակալութեան և առաջնորդութեան ներքեւ։ Գաւառս մէջ գանուող ազգային 700 տուն կը հաշուին, արեւելքէ արեւմուտք ցիրուցան տարածուած 12 ժամու հեռաւորութեամբ։ Այս տներր բաժնուած են 32 գիւղերու մէջ, որոց շա-տերու մէջ կան նաև բուրդ և խառըն բնա-կիչներ։ Դերջան գաւառի Հայր շատ ին-տապէմ կացութեան մէջ կր գտնուին. բա-հանայք ընդհանրապէս մշակութեամբ կը հայթհայթեն իրենց ներքնական ապրուստն, մինչ դի ժողովուրդը առհասարակ ապրուս է։ Կը պրագին ընդհանրապէս ցորեան, գա-րի, կորեկ և կաւաւամի մշակութեամբ. անոնք աչխար, այծ, կով, ձեղ և սեր։ Օդն բարեխառն է. երկրագործութեան յարմար հոգ, ջուր և ամէն միջոց կայ. երկիրը ըն-դունակ է այգիներու, պտղատու և անպտուղ ծառերու, բամբակի, կանեփի մշակութեան, բայց ժողովուրդը անհոգ, ծոյլ և ապէս լի-նելով՝ այս արդիւնաւոր մշակութեանց ձեռք չի գարներ։ Գաւառս ապրկուներ ամուրիու-թեան ժամանակ, և հարսնանալէն քանի մը տարի ետքն ալ եկեղեցի երթալ ամօթ կը համարին։ Ամուսնացեալ կին մը կր պար-տաւորի՝ գոնէ 30 տարիքն լրացունելէն վերջ եկեղեցի երթալ և ուսանիլ կրօնքն և եկե-ղեցւոյ խորհուրդները. այս հիմնաւորց և ար-մատացեալ վատ սովորութենէն մ՚է։ Գաւա-ռս կեդրոնատեղին է Մամախաթուն գիւղա-քաղաքն։ Դերջանի արեւելեան կողմն է կա-րին, հարաւ՝ Սասրին կիզի, հիւսիս՝ Խոդ-ատաց լերինք (կոփ տաղի) և արեւմուտքն գիւղօրէք, Գաղչանի և Երիզայի հետ։ Տա-րածութենին բաւական ընդարձակ է. Երիզաս գետը արեւելեան հիւսիսէ դէպի արեւմտեան հարաւ հոսելով գաւառս երկու մասանց կը բաժնէ։ Ծովս մակերեւութենէն 1800 մետր բարձր լեռնապարշտ մ՚է Դերջան, որոյ շրջ-ջագիծը կազմող լերինք 2000–2500 մետր բարձրութենէն անցին. ասոնց մէջ են Պապրր-Պապա (Մանանաղի գաւառի հին Պախր լեռն) խոյ լեռ՝ հարաւային սահմանաց վրայ, Զախ-չախ և Խալիսայ՝ արեւելեան սահմանաց վր-րայ, Մարխալ՝ արեւելեան հիւսիսային կողմն կոփ անուանի լեռնաշղթային մէկ գագաթն։ Գաւառս ցորեան բնաւոր է կարծրութեան և հիւթեղութեան պատճառաւ, և կը լինի շրջակայ քաղաքաց հրապարակները։ — Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջին աշակերտած գաւառներէն մին է սա, որուն համար Ա-գաթանգեղոս (էջ 593) կր գրէ. «Ապա փու-թայցեալ հասանէր ի գաւառն Դերջան, ուր և անդ յառաջեալ լինի ընդ գառաքելական քարոզութեանն գարուեսս մշակութեանն, և գերծուցանել գնոսա ի գարշելի պիղծական սատանայական բարուցն ճշմարտութենէ։ Ջնու-ժգաւժ կոմմանան աշակերտելոյ, գխոշտա-գան և գխնջեկակոդին բարս հեմանուոսութեան շրջել ի գղաուսութիւն առաւաժանագոյց խոս-տութեան, և ծանօթս առնառարանական ա-ւետեացն յարդարեալս ընդեղս կացուցանէր»։ Գաւառս եպիսկոպոսանիրէն յանուանէ կը յիշուի սուն Գիմիր կամ Գնիր։ Դերջանի հին գիւղերէն նշանաւոր է Բագաւոհ, որ առ-կաւին գոյութիւն ունի, իսկ վանքերէն կը յիշուին Խոռնորի վանք Ծակքարի Ս. Գա-ւիր, Արիկր Ս. Թորոսի կամ Գորոբոս վանք։

ԴԵՒՈՅԱՆ կամ ՏԻՎՔՈՒՆ. — Հայարնակ գիւղ՝ Աբգառատիայ արեւելեան հարաւային կողմն՝ 11 ժամ հեռու։ Բնակիչք սակա-ւութիւն են. ունին Ս. Կարապետ անուամբ եկեղեցի մը։ Գիւղիս մօտ երբեմն կար Ս. Գէորգ անուամբ վանք մը, որոյ աւե-րակները դեռ կ՚երեւին. վանքին սեփհա-կան արտօրայք և անտառք՝ մատնատրաց ձեռքն են։ Բնտ աւանդութեան՝ վանքին տե-ղը յառաջագոյն դեւեր կր բնակին եղեր, վերջը գեւք հալածուեր ու Ս. Գէորգայ վանքը շինուեր է, և այս պատճառաւ Գեւո-գայ վանք բսուեր է։

ԴԷԳԵՒ. — Զորորդ Հայոց հին գաւառնե-րէն մին։

ԴԷԳՈՒՋ. — Բագաք Ռումանիոյ համա-նուն գաւառի։ Ի հնումն քաղաքիս մէջ կային

շատ հայեր և անցեալ պարս. սիկղին իբենց թիւն 200է աւելի էր և ունէին եկեղեցի. իսկ այժմ միայն 7 տուն հայ կայ, առանց եկեղեցւոյ և վարժարանի: Այս գաւառի հինգ գիւղաքաղաքաց և գիւղօրէից մէջ կան 25 հայ բնտանիք, առանց եկեղեցւոյ և վարժարանի:

ԴԷՊ. — Այս անուամբ ամրոց մը կը յիշէ Կիրակոս (էջ 176) Արցախի մէջ, զոր Մխիթարեաքար և ուրիշ գրկաց հետ կործաներ են այլազգի հարկահաններբ:

ԴԻՃԻՐԱՊԱՏ. Տես ՏԱՃԱՐԱԲԱԿ:

ԴԻՄԻՐՋԻ կամ ՏԷՄԻՐՃԻ. — Գիւղ Բալուի՝ հիւսիսային կողմը: Կան 10 տուն հայ և 15 տան չափ ալ Զազա: Հայք չունին ոչ եկեղեցի և ոչ գպրոց: Տես ՏԷՄԻՐՃԻ:

ԴԻՐԿՈՒՑ–ԱՄՈՒՑ. — Գիւղ Աղերթի Ծրնտանի գաւառի Պշէրիկ գաւառակի. 15 տուն հայ կայ:

ԴԻՐԻԲԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Վանքս կը գտնուի Աղուանից Մալմնաս գաւառի մէջ. աւերակ վիճակի մէջ է 1894 թուին յունիսի մէջ քրդերը ծպտեալ գիշերոյ հետ յարձակելով վանացս վրայ, յաջողեցան նախիրը միայն յափշտակել: Այնուհետեւ միաբանութիւնը ցրուեցաւ և Սուքիաս Արրազանի հրամանով, վանացս եկեղեցական գոյքը Հաֆիժեանի եկեղեցւոյն պահ տրուեցաւ: Այժմեան վիճակն ծանօթ չէ:

ԴՐՆԲ. Տես ՏԵՂԵՐ:

ԴՐՎՆԻԿ կամ ԴՈՒՆԻԿ. — Գիւղ Կարնոյ. ունի 80 տուն բնակիչ, որոց 60ը հայ և մնացեալք մահմետական են: Արհետս. հողագործ են և սրճեպոր. ունին Ս. Աստուածածնի անուամբ եկեղեցի մը: Գիւղիս մօտ 1880 թուին, Գոմգի Մամիկոնեան Յովհաննէս վարպապետը, գետնի տակ գտաւ հինաւուրց մատուռ մը՝ 37 ոտք երկայնութեամբ, 17 ոտք լայնութեամբ. որմերը գրեթէ անվնաս մնացած: Ներսէն կը կարծեն թէ Լէոնկիմնարի երկիրէն և կամ գետնաշարժէ տեղւոյն բնակիչք մատրան մէջ ապաստանելով մնացեր են անոր փլատակաց տակ: Գիւղիս երկտեղ գպրոցը կատուցած է վերոյիշեալ վարպապետը: Դրվնիկի արեւելեան հիւսիսային կողմն երկու արտաչափ հեռու կը գտնուի հին գերեզմանատունն, ուր գտնուած է մեր յիշատակ մատուռն, և գտնուած խաչարձաններ՝ հանդերձ արձանագրութեամբք:

ԴԺԱՐԱԲԱԿ. Տես ՏԱՃԱՐԱԲԱԿ:

ԴԺԱՐԱԴԻՄ. Տես ԱՐՋՆԻ:

ԴԺՆԿՈՒՏ. — Գիւղ և լճանապաշտ Հէքիմխանէյէն ½ ժամու ճանապարհ հեռու, Աղճամաղ լերանց կից Քեաքըլուկազ լերան վրայ: Գիւղի մէջ կայ մօտ 60 տուն հայ բնակիչ: Օդը շատ մաքուր է, լաւ ջուրեր, պարտէզներ և մշակեալ արտեր կան. տները պարզ խրճիթներ են:

ԴԻՒՑԻ կամ ԹԻԹՈՑԻ ԽԱՐԱՊԱ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ: Ունի 30 տուն հայ (կաթուլիկէ) բնակիչներ:

ԴԻԶԱԹԱՓԱՑ. — Գիւղ Աթպատականի Բարանդուզ գաւառակի. ունի 25 տուն հայ:

ԴԻԶԱԿ կամ ՊԱԶԿԱՆՔ. — Արցախի հին լճանային գաւառներէն մին, որ այժմ ծանօթ է Ճիպրայիլ անուամբ: Սահմանքն են հարաւէն՝ Երասխ, արեւելքէն՝ Պիան, հիւսիսէն՝ Վարանդայ և արեւմտեքէն՝ Քերպաձոր գաւառի սահմաններբ: Գաւառիս գլխաւոր տեղն է այժմ Ճիպրայիլ կամ Ջարրայէլ անունբ:

ԴԻԶԱՓԱՑՏ կամ ԴԻԶԱԿ. — Լճանաշղթայ Արցախի Դիզակ գաւառի վերի ծայրը: Բայսմաւուրաց մէջ հետեւեալը գրուած է լեռնաս նկատմամբ. «Որ ազգն Հնոյց հիւսիսականաց նահատակեցին զրազումն ի զօրաց իւրեանց վասն ի Քրիստոս հաւատոցն. և պիղծալ զմարմինս նոցա իբրև գիւթս, այրեցին անդ. և վասն այնորիկ կոչեցաւ անուն լերինն այնորիկ՝ Դիզափայտ»:

ԴԻԶԱՓԱՑՏԻ ԲԵՐԴ. — Կը գտնուի Արցախի Դիզակ գաւառի մէջ, որ կառուցուած է Դիզափայտ սարի մէկ բազկին վրայ, որ կատուած է Ցումի գիւղի վրայ և առանձնացած ամէն կողմէ: Պարսպուած են սարի հարաւային և արեւելեան կողմերն և կատարեալ ծաւալ նեղուցներն ու կիրճերը: Պարսպի ներսը կան բնակութեանց բակեր. բերդիս անառասպատ մակերեւոյթը հարթ չէ: Ամբողջիս մէջ չուր կը բերուի եղեր արեւմտեան ստորոտը եղած թաղալ անուն պատուականի աղբիւրէն: Ամբողջիս հիւսիսային կողմը քեր-

ծի գլուխը կայ աւերակ մատուռ մը՝ Օխտը–դռնե–խուր անուամբ։ Ա֊յս տեղէն բա֊ւական հեռու կը գտնուի Դիզափայտի հին վանքի տեղը։ — Դիզափայտ սարի բարձ֊րութիւնն է 8186 ոտք. կատարի վրայ ի հնումն եղած է կատարոյ անուն նշանաւոր վանքը։ Ա֊յդ վանքի մէջ ապաստանարան դասած էին Յովհաննէս Թագաւորի երիք որ֊դիքը Մովսէս, Դանիէլ և Եղիա 3870 մար֊գով, որ հաւատացած էին Յիսուսի Քրիս֊տոսի՝ քարոզութեամբ Ս. Գրիգորիսի։ Մատ֊թէոս Յովհաննէս Թագաւորը հոս գալով, կը նահատակէ Թէ՛ իւր որդիքը և Թէ այն բո֊լոր հաւատացեալները՝ որք կատարոյ վան֊քը ապաստանած էին։

ԴԻԶՆ. — Գիւղ Խոյի. 8 տուն հայ կայ և եկեղեցի մը։

ԴԻԶՈՒՅ կամ ԴԻԶԿԻ. — Գիւղ Ա֊յրարա֊տայ Բասէն (վերին) գաւառի մէջ։

ԴԻԼԱՄԱՇԷՆ. — Վախուշտ կը յիշէ այս անուամբ գիւղ մը Դաւնեայց երկրի մէջ։

ԴԻԼԱՆ ՕՂԼԻ. — Գիւղ Զարահճապի Մեծ֊կերա գաւառակի. 10 տուն հայ կայ՝ առանց եկեղեցւոյ։

ԴԻԼԻՄԻԼԻ կամ ՏԻԼԻՄԼԻ. — Հայարնակ գիւղ Բալուի՝ 5 ժամու ճանապարհ հեռու, հիւսիսային կողմը։ Ունի 10 տուն բնակիչ, որոնց 5ը հայ են, և միւսներն՝ քուրդ։ Հայք ունին եկեղեցի, բայց գերոց չունին։

ԴԻԼԻՋԱՆ, ՏԻԼԻՃԱՆ կամ ՏԻԼԻՃԱՆ. — Ա֊ղցախի Քուռի գաւառի և Ղազախի ձորի ամենանշանաւոր ու մեծ գիւղն է, որ աւելի աւան կոչուելու արժանի է, և պատճառն՝ իւր հիանալի դիրքն է. ասա կը միանան նա֊մակատարաց կրկին մեծ ճանապարհները, որոց մէկը կը տանի յԵրեւան՝ Ա֊յրարա֊տեան գաշտ, և միւսը Բամբակի ձորով Ագեքսանդրապոլ և Կարս։ Հիմնուած է Եղ֊ջերասարի (Մայմէխ) արեւմտահայեաց լանջի վրայ, Ազատ գետակի աջակողմը։ Քնակիչք տեղափոխուած են Սեւ–քար, Հա֊չա–ջուր և Ջրաբերդի գիւղերէն։ Գեղա֊զանց է օդն, կլիման և ջուրը։ Գիւղս ունի բաւական գեղեցիկ շէնքեր, բազմաթիւ խա֊նութներ, թղթատարութեան և հեռագրութեան կայարան։ Դիլիջան իւր սքանչելի դիրքովն, բարձրաբերձ անտառաց հովանւոյն ներքեւ ամարանոց գարձած է շրջակայ քաղաքաց ազնուական դասուն։ Բնակիչք կը հաշուին 1048 հոգի, բաժնուած 133 տան. մեծա֊մասնութիւն կը կազմեն Հայք՝ որոնց թիւը 1000ի կը հասնի և բաժնուած են 120 տան. միւսներն են տակաւաթիւ Թուրք և Թաթարք։ Հոս հաստատուած է նաև զօրա֊նոց մը։ Ռուս Մալականք կը պարապին երկրագործութեամբ և կառապանութեամբ. իսկ Հայք՝ մեծ մասն երկրագործութեամբ, առեւտրով և արհեստիւք։ Տեղական բեր֊քերն են ցորեն, գարի, ոչխար, տաւար և գոմէշ։ Գիւղիս Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին, հնոյն տեղը կառուցուած է 1862 թուին. հաստատակ քար ու կրով շինուած է կամարակապ. միայն տեղտեղ սրբատաշ է։ Դիլիջան երկու վերին և ներ֊քին թաղերու բաժնուած է։ Հայք այժմ շի֊նած են նաև նոր եկեղեցի մը։ Ունին մի֊պատեան երկսեռ ուսումնարան, գեղեցիկ և օրիորդաց ուսումնարանի շէնք, ուր կ'ուսա֊նին մօտ 30 օրիորդներ։ — Դիլիջանի հան֊դիպահայեաց բլրալանջակ արեւմտեան ձորի մէջ կան ալիւրի գործարաններ և տախտակ֊ներ ձեւելու սղոցներ. ջրոյ զօրութեամբ և բազմաթիւ մեքենաներով կ'ապան ցորենը և կը ձեւեն տախտակները։ — Ղազախի գա֊ւառի մէջ այժմ կայ Դիլիջան անուամբ ռու֊սաբնակ նոր գիւղ մի ևս 76 տուն բնակչօք, յորս կան 2 տուն հայ։ — Դիլիջանի հովիտը հրաշալի է գեղեցկութեամբն և կա֊րելի է ըսել անուման։ Մարտովցիք ռուս ճանապարհորդն՝ իւր Ուղեւորութիւն Ա֊յրա֊րատ գրքին մէջ սքանչացած հովտիս գեղեց֊կութեամբն, էջէ մը աւելի նուիրած է անոր նկարագրին։ — Դիլիջանի ճանապարհի վը֊րայ արեւելեան կողմն է Դիլի անուամբ աւերակ գիւղն, եկեղեցին և հանգուստարանը։ Դիլիջանի մէջ կայ հին եկեղեցի մը աւե֊րակ վիճակի մէջ, որոյ երկայնութիւնն է 14 մետր, լայնութիւնն 6,80 մետր. կայ նաև հին ընդարձակ գերեզմանատուն։ Գիւ֊ղաքաղաքիս մօտ է Բախտիարի գիւղատե֊ղին և հանգուստարանը Ազատի աջակողմը։ Կիսաւեր եկեղեցի մ'ալ կը գտնուի Ազատ գետի և Դիլիջան վտակի խառնուրդի մօտ։

ԴԻ ԽԱՆ կամ ՕՀԱՆ ԽԱՆ. — Աւերակ

գիւղատեղի Ագուանից, Քիլիմար գիւղէն 1 ժամ հեռու, արեւելեան կողմը։ Որոշ կը տեւուին անոնք ու հանդուրժանները։ Արձանագրութիւն ունեցող քարերը տարած են մահմետականները և հազիւ կը տեսնին։ Աւանդութեամբ կը պատմեն թէ Օհան խանն Աբցախեցի եղած է և հարիւր բնակիչը հետ բերելով հաստատուած է այս տեղ և գիւղը կոչուեր է իր անունէն։ Ձի գիտցուիր թէ ինչ պատճառու Օհան խանէն առած են նաև Դի խան անունն։

բանդի մօտ, հիւսիսային արեւմտեան կողմը։ 1874 թուին հրատարակուած Տուեալ Ընտանեկան դրքի համեմատ ունէր 809 բնակիչ, յորոց 118 Հայք էին։ Ետուստ 1893 տարուց վիճակագրութեան համեմատ գիտ ունի 450 բնակիչ, բաժնուած 65 տան։ Մեզ յայտնի չէ թէ այժմ ևս հայ բնակիչներ ունի։

ԴԻՆԱՐՋ. — Վախուշա կը յիշէ գիտ Ազոցք գաւառի մէջ։

ԴԻՈՒ. — Լեռ Արեւեցոց Գողթն և Երկնագոյն գաւառի մէջ։



255. Դվինքանի տեսարանը։

Գիտցիս բնակիչք Թաւաբէ, Խաչիճ, Ուլիար և ուրիշ գիւղերու բնակչաց հետ գաղթած են և հաստատուած Մոզաորքի կողմերը։

ԴԻՒԼԻ. — Գիտ Ուրմիոյ. ունի 25 տուն հայ և եկեղեցի մը։

ԴԻՒՂ կամ ՏԻՒՐ. — Հին գիտ Արեւեցոց Մխս Բագր գաւառի։

ԴԻՒԱՐԳԻՄ կամ ՏԻՒԱՐԳԻՄ. — Գիտ կարնոյ։ Ունի 50 տուն հայ և 40 տուն մահմետական բնակիչներ։ Հայք ունին Ս. Աթենաս անուամբ պարզ եկեղեցի մը և վարժարան։ Ունին նաև գեղատիպ եկեղեցի մը, որ այժմ անգործածելի է։

ԴԻՇԼԱՂԱՐ. — Գիտ Տարօնոյ, Դարձեալ մօտ, հիւսիսային արեւմտեան կողմը։ 1874 թուին հրատարակուած Տուեալ Ընտանեկան դրքի համեմատ ունէր 809 բնակիչ, յորոց 118 Հայք էին։ Ետուստ 1893 տարուց վիճակագրութեան համեմատ գիտ ունի 450 բնակիչ, բաժնուած 65 տան։ Մեզ յայտնի չէ թէ այժմ ևս հայ բնակիչներ ունի։

ԴԻՆԱՐՋ. — Վախուշա կը յիշէ գիտ Ազոցք գաւառի մէջ։

ԴԻՈՒ. — Լեռ Արեւեցոց Գողթն և Երկնագոյն գաւառի մէջ

Ա֊ժամեան հայ բնակչաց շատերը հարուստ են. գժբաղդաբար միայն մէկ քանին կրնան արտառանել հայերէն քանի մը բառ։ Հայը կը պարապին վաճառականութեամբ և մասնաւորաբար անասնոց վաճառականն են։ Հայոց եկեղեցին ի սկզբան փայտակերտ եղած է, որ հրդեհէ մը այրելով, 1750 թուին շինուեցաւ փառաւորապէս, քարաշէն և վայելուչ. նուիրուած է Ս. Աստուածածնի, բայց աւագ խորանին հրաշագործ Ս. Գայէգեանոսի պատկերին համար, նոյն սրբոյն անուամբ ևս կը կոչուի։

ԴԻՎԱ. Տես ՏԵՒԻ։

ԴԻՏԱՎԱՆԻ կամ ԴԻՏՎԱՆԻ. — Լիս Միւնեաց Գնդաբջուռի գաւառի, Քղլա–սարի դիմաց, որոյ գագաթան վրայ կան շիրիմներ և ամրակներ. գուցէ ի հնումն այդտեղ վանք եղած լինի։

ԴԻՏԱՒՈՐ, — Լիս Միւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, այս լեռնէն ժամանակաւ ջուր առուած է Գնդեվանք. Զկնարած կոչուած գետոյն ակունքն ալ այս լեռնէն կը բղխեն։

ԴԻՏԻ–ԿՈՆԴ. Տես ՕՇԱԿԱՆ։

ԴԻՐԻ. — Գիւղ Տփղիսու Նահանգի Կորիի գաւառի, Քիւրնվալէն դէպի հարաւ, 13 վերստ հեռաւորութեամբ։ Ունի 250 տուն հայ և վրացի բնակիչներ։ Հայը մօտ 450 հոգի են, բաժնուած 100 տան. ունին փոքրիկ եկեղեցի մը։

ԴԻՐԻ. Տես ԴՈՒՐԱԳԱՏ։

ԴԻՐՔՆ. Տես ԿՈՎՄԱԿԱՆ։

ԴԻՐՔԻՎԱՆԻ կամ ՆԵՐՔԻՎԱՆԻ. — Մշոյ գիւղերէն մին, ուր բաւական տարածուած է բազմաքանութիւնը։

ԴԻՑ ՄԱՅՐԻ. — Ըստ Ցայսմաւուրքաց, կը թուի թէ այս անուամբ լեռ կար Ա֊յրարատայ Գարնիոյնից գաւառի մէջ, Վիշապաձորի մօտ. սուրբն վարոս «բնակեցաւ յանձաւս լերանցն՝ որ կոչի Դից Մայրի»։ Տես ԿՈՎՄԱԿԱՆ։

ԴԻՒԱՒՈՒ. — Լերան մը անուն. գիրքն ու գաւառն անյայտ։

ԴԻՒԱԿՈՒՒ. — Ա֊յս անուամբ ժայռ մը կայ Խլաթի հիւսիսային կողմը։

ԴԻՒԱՁՈՐ. — Գիւղ կը կոչուի Տայոց աշխարհի մէջ։

ԴԻՒԱՏՈՒՆ. — կը կոչուի Բջնիի (Ա֊յրարատ) Ս. Աստուածածնի եկեղեցւոյ արձանագրութեան մը մէջ։

ԴԻՒԱՒԱՆ. — Գիւղ Ա֊յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Մեծ Դօրմալուի արեւմտակողմը։ Ունի 10 տուն բնակիչ և բազմաթիւ ասբակներ։

ԴԻՒԹԱԿԱՆ. Տես ԴՈՒՏԱԿԱՆ։

ԴԻՒՄԻ ՏԱՂ. — կը գտնուի Ա֊յրարատայ Աշոցք գաւառի մէջ։

ԴԼԻՒԿՆ. — Աղղիկ (Գ. Ի՛) կը կոչէ գիւղս Գուգարաց Ջաւախք գաւառի մէջ, Ա֊ստուած ի֊նէ համար ըսելով, թէ «...գնաց առնոսա ի գաւառն Ջաւախայ, բանակին ի գիւղն որ կոչի Դլուկն»։

ԴԿԱԹ. Տես ՏԻԳՐԻՍ։

ԴՂԵԱԿ ԽՈՍՐՈՎՈՒ. — կը կոչուի վահան Գաղթեցւոյ հօր անուամբ գղեակ՝ Միւնեաց Գողթն գաւառի մէջ։

ԴՄԼՈՒԾ. — Գիւղ Շապին Գարահիսարի։ 30 տուն հայ և 20 տուն մահմետական կայ։ Հայը ունին եկեղեցի մը։ Հողագործ ու հովիւ են։

ԴՄԱՆԵԱՑ ԵՐԿԻՐ. — Գուգարաց աշխարհի մէջ այս անուամբ երկիր մը կար, որուն գլխաւոր տեղն Դմանեաց քաղաք կը կոչուէր. այժմ այս քաղաքը ծանօթ է Դուսանիս կամ Դմանիս անուամբ։

ԴՄԱՆԵԻ, ԴՄԱՆԵՒ կամ ԴՈՒՄԱՆԻՍ ՄԵՆ. — Հին Դմանիս քաղաքի համապատասխանող գիւղ, Պօռչալու գաւառի մէջ, Տփղիսի հարաւ արեւմտեան կողմը, մօտ 50 վերստ հեռու, ընդարձակ լեռնապաշտակի մը վրայ։ Ա֊ճմանի է գիրքը, օդը և ջուրը պատուական. գարեւոր բարձրաբերձ անտառներէ շրջապատեալ է։ Կառուցուած է Մոշուժար դեմի եզերքը, որ վրացերէն կը նշանակէ գոռում գոչիւն բարձրացնող ջուր։ Գիւղս կալուած է Օրբէլեան իշխաններու։ Բնակիչք 264 հոգի, բաժնուած 39 տան. որոնցմէ 216 հոգի վրաթոս հայ են, բաժնուած 30 տան, և միւսներն՝ վրացի։ Ունին քարաշէն և աղքատիկ Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի։ Կը պարապին գլխաւորապէս երկրագործութեամբ և անասնապահութեամբ. վերձակայ անտառաց մէջ կ'որսան վարազ, արջ, գայլ, աղուէս և այծեամն, որոնք երբեմն գիւղիս բնակարանաց ևս կը մօտենան։

Զինորսութիւն ալ կ'ընեն, ինչպէս նաև այդոգծութիւն և հովուութիւն։ Գիւղիս անուն վրացերէն կը նշանակէ «երկիր լի ամեն բարութեամբ»։ — Գիւղէս երեք վերստ հեռու բարձր լերան վրայ կառուցուած է ընդարձակ, հինաւուրց և ամուր բերդ մը, որուն մէջ բաց ի ուրիշ շինութիւններէ և բաղնիքներէ կան նաև երեք փառաւոր և հոյակապ եկեղեցիներ՝ որոնցմէ մեկը վրաց արտաքին կողմէն կան վրացերէն արձանագրութիւններ. այդ եկեղեցւոյ և նրբանկար գեղաքանդակ գաւթի մէջ կան շատ գերեզմաններ առանց արձանագրութեանց։ Նշանաւոր է նաև եկեղեցիներու կից գտնուող երկյարկեայ քարաշէն շտեմարանն, որուն ճակատը կայ մէկ տող վրացերէն արձանագրութիւն։ Տաճարներդ գաւթ մէջ Աստղիկն (Գ. Լ) յիշուած քաղաքանիւտ դիակն այս բերդն է, որուն տիրոջ Գաւիթ Անհոգ՝ իր Սմբատ եղբօր հետ միասին. իսկ ԺԴ դարուն Դմանիսի տիրոջ Թեղեարց Զաղագա իշխանը։ Բերդիս դիմաց լերան լանջակողմի վրայ հարաւ արեւմտեան կողմը կան քանի մը մզկիթաձև փոքրիկ շինուածոց մնացորդներ։

ԴՄԱՆԻՍ ՓՈՒՐ. — Մեծ Դմանիսի հարաւային կողմը, ոչ այնչափ հեռու կը գտնուի փոքրիկ գիւղս 12 տուն բնակիչներով, մէկ տունը հայ է, իսկ մնացեալներն վրացի։

ԴՆՈՒՍ. — Գիւղ Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, խլաթի արեւելեան հարաւային կողմը, Հարկընձոն և Սօս գիւղերու մէջտեղ։ Գիւղիս ներկայ վիճակը անծանօթ է։ — Այս անուամբ գիւղ մ'ալ կը յիշէ Վախուշտ Դմանիսեաց մէջ։

ԴՈՂՈՊԱՆ. — Լիս Միունեաց՝ վայոց ձոր գաւառի, Ամազուայ արեւմտեան կողմը. բարձր է 6385 անգլիական ոտք։

ԴՈՂ. — Ալան Արցախի Դիզակ գաւառի մէջ. հիմնուած է համանուն բերդատարի ափերեվերայեաց լանջի վրայ և ունի գեղեցիկ տեսարան։ Պտուղական են օդն, կլիման և ջուրը, իսկ երկիրը բերրի։ Տեղական բերքերն են ցորեն, գարի, խաղող, գինի և բոժոժ։ Բնակիչները 1460 հոգի են, բաժնուած 280 տան։ Ունին Ս. Յովհաննէս առնուամբ հոյակապ եկեղեցի մը, կառուցուած չորս սիւներու վրայ. երկայնութիւնն է 21,70 մետր և լայնութիւն 12,92 մետր։ Եկեղեցիս ունի նաև կամարակիկ, որուն նորոգութեան արձանագրութիւնն կայ դրան ճակատակալ քարի վրայ ՌՃՉԵ թուականաւ։ Եկեղեցիս ունի քարեայ խաչկալ, որ և ունի յատուկ յիշատակարան ՌՃԼ թուականաւ։ Եկեղեցւոյ մէջ կը պահուին հինգ սրբատան մասունքներ, որոնցմէ ամենք ունին յիշատակարաններ։ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հարաւային կողմը պահակից շինուած է նեղ և երկայն մատուռ մը, իբրև դամբարան աւանիս մելիքներու, հոս ամփոփուած են բոլոր մելիքները և անոնց սերունդը։ Տապանաներու վրայ փորագրուած են առանձաւոր և արձակ յիշատակարաններ, ՌՃԿԴ թուականէն սկսեալ մինչև ՌՄԼՀ թուականը։ Մելիքներու մէջ նշանաւոր է Մելիք–Եկանն, որուն յիշատակն է եկեղեցւոյ խաչկալը։ Աւոր ապարանք կը գտնուի աւանիս մէջ, որ երկյարկ շինութիւն է և կառուցեալ է համակ սրբատաշ քարով. գետնայարկի դրան ճակատակալ քարի վրայ կայ ՌՃԺԶ թուականաւ արձանագրութիւն։ Դաղ աւանս ապնեցած է ամուր շրջապարիսպ, բայց այժմ այնպէս քանդած և քարերը տարած են, որ հազիւ տեղ տեղ կը նշմարուին շրջապարիսպի հետքերը։ — Աւանիս հարաւային կողմի հանդստարանի մէջ կայ Ս. Աստուածածնայ Նախավկայ անուամբ մեծամեծ քարերով շինուած եկեղեցի մը։ Եկեղեցիս հին է, հաւանիւա վեց դար առաջ շինուած. դրան ճակատակալ քարի վրայ կայ Մելիք–Եկանի նորոգութեան յիշատակարանը ՌՃՂԶ թուականաւ։ Նոյն հանդստարանի վերեւի ծայրը կայ ուրիշ քարակերտ եկեղեցի մը, կառուցեալ մէկ կամարի վրայ. ճակատակալ քարի վրայ կը կարդացուի միայն «Խաչս վարդան»։ Եկեղեցւոյ մէջ է Մելիք Բախտամի դերեզմանը։ Կը պատմեն թէ այս եկեղեցիս ժամանակաւ Կուռանայ Աճապատ կոչուած մենաստան մը եղած է. եկեղեցւոյս շուրջը նշմարուող խուցերու և այլ աւերակաց ծագորդները նոյնը կը հաստատեն։ — Արցախ, 73–78։

ԴՈՂՍ. — Հին գիւղ Այրարատեայ Արտագծոյն գաւառի, վաղարշապատու հիւսիսային կողմը, Սամզար և Ֆրանկանոց գիւ-

գերա մէջտեղ։ Ունի Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը և 501 բնակիչ, բաժնուած 76 տան։ Հայք 25 տուն են, իսկ մնացեալք այլազգի են։ Խնկաբերդ գաւառն վերջերը գիտես մօտ բանակեցաւ Ազիզին Հապարաց ին, երբ կը գիմէր Ամրատ Ա. Թագաւորի վրայ, յորմէ յաղթուելով հաշտութիւն ըրաւ։

ԴՈՄՆԱ. Տես ԹՈՄՆԱՆ։

ԴՈՆԵՎԱՆԻ. — Գիւղ Տարտարեանի Հարք գաւառի մէջ։ Կը յիշուի ՉԿԶ (= 1316) թուին գրուած աւետարանի մը յիշատակարանին մէջ. «Ձրդ գրեցաւ ի գաւառս Հարքայ, ի գեղս որ կոչի Դոնեվանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնիս»։

ԴՈՆԻ-ՇԷՆ. — Գիւղ Ագրակի Ջրաբերդ գաւառի. հիմնուած է Թարխան գետի ձախ կողմը, Մատագիս գիւղէն բաւական վեր։ Բնակիչք տեղափոխուած են Մաղավուզէն։ Երկիրը լեռնային է, ունի գերազանց օդ և պատեսական ջուր։ Եկեղեցին Ս. Գէորգ՝ խիստ հին է և փոքր, շինուած անտաշ քարերով, 6 մետր երկայնութեամբ և 4 մետր լայնութեամբ. դրան ճակատակալ քարի վրայ կայ նորոգութեան արձանագրութիւն՝ առանց թուականի։ Գիւղս խիստ հին է ինչպէս նաև հանգստատարանը. առ ժամանակ մի գիւղուելով նախկին բնակիչներէն, յետոյ ունեցեր է այժմեանները. որոնց թիւը 250ի կը հասնի, բաժնուած 35 տան։ — Հին գիւղատեղւոյ մը աւերակներ կը գտնուին Դոնի Շէնէն վեր, ուր օդն պատեսական է և կայ առատ ջուր, անտառ և ընտիր հիւսուրց ծառեր։ — Ջոխտակ մատուռ՝ երկու քարուկիր մատուռներ են, գիւղէն վեր, շինուած Ուղտը–կեռանք կոչուած տեղը։ Հոս ևս կայ գիւղի աւերակ, քարուկիր շինութեանց հետքեր և կազամախի ծառեր։ — Արցախ, 231–232։

ԴՈՍՏԼՈՒ. — Գիւղ Ագրակի Ջաւէ (Ղազախ) գաւառի. շինուած է Գէղէզ գիւղի ապետչեան կողմը, տարի մը հիւսիսահայեաց լանջի վրայ։ Ունի 623 բնակիչ, բաժնուած 72 տան։ Եկեղեցին՝ Ս. Գէորգ՝ ծածկը փայտաշէն է։ Գիւղիս արեւմտեան կողմը կայ Ալեհատիկիչ կամ Բարձրեալ անուամբ քարակիր, հին ու խարխուլ մատուռ մը։

ԴՈՎԼՈ կամ ԴՎԼՈ. — Գիւղ Ագրակի Ջաւէ (Ղազախ) գաւառի. կառուցուած է Դաւիթայ Ս. Յարգիս վանքէն վար։ Ունի 30 տուն բնակիչ, որոնք գաղթած են Բերդպուղէն։ Եկեղեցին Ս. Սարգիս՝ նորաշէն է, փայտեայ ծածքով։

ԴՈՎԼՈՑ կամ ԴՎԼՈՑ Ս. ԱՍՊԻՍ. — վանքս կը գտնուի Ագրակի Ջաւէ (Ղազախ) գաւառի մէջ, հիմնուած անտառապատ և խոր ձորի մը ալ լանջի հարթակի վրայ, որուն հիւսիսային կողմը վխմահերձ ապառաժ է։ վանքս շինուած է ամբողջապէս սրբատաշ քարերով. ունի երկու փոքր և մի աւագ խորան. առանձին խորան մ՚ալ հիւսիսային սրահի մէջ, դուռն մը հարաւային կողմէն, քանի մը լուսամուտ և զանգակատուն մը։ Հին են աւագ և հիւսիսային երկու խորանները, իսկ մնացեալ բոլոր մասերը նորոգուած են։ Եկեղեցւոյ գրան ճակատը կայ շինութեան յիշատակարանը, որ կը ցուցնէ, թէ հիմնարկուած է 1845ին և աւարտած 1849ին, արիւք բարեպաշտից և վերակացութեամբ Տփխիսեցի Էսայեան Նուբենց։ Հաւաքային կամարի վրայ կայ ուրիշ՝ յատակի շինութեան յիշատակարան մը։ — վանքիս հիւսիսային կողմը Ս. Կիւրակէ անուամբ մատուռ մը կայ, որուն հիւսիսային խոր ձորի մէջ ժայռէն կը բղխէ Օրհնած աղբիւր անուամբ պատեսական ջուր մը։ Ս. Յարգսի վանքի մօտ շինուած են ուխտաւորաց մի քանի անեակներ։ Ջաւակին է ուխտի օրն, ուր կը գիմեն մեծ բազմութեամբ։ — Արցախ, 382–383։

ԴՈՐՊԱՏ. Գ. DORPAT. — Քաղաք Հաւսիսոյ, գեղեցկազարդ գաշտի մը մէջ. նշանաւոր է փողոցաց մաքրութեամբ և գրօսավայրերով։ Ունի քաղաքիս գերմանացի համալսարանը, զոր հիմնեց Կուստաւոս Ադոլիոս 1632ին և կրկին կարգաւորեաց 1802ին։ Ունի մատենադարան, պարակ բուսաբանութեան, գիտանոց, և այլն։ Այս համալսարանին ուսուցիչ եղած են Ակիթ և Պարրոտ, որոնք Մասիս լեռը եկան, մին 1829ին և միւսն 1845ին։ Այս համալսարանի մէջ կ՚ուսանին նաև Հայք։ Սահակ Ասկարեան երեւանցի հայ ուսանողն 1858ին մեռաւ է քաղաքիս մէջ, որուն գերեզմանը՝ հանգերձ խաչարձանաւ կը գտնուի գերմանական գերեզմանատան հարաւային

ւային կողմը։ Քաղաքիս բնակչաց թիւն է 30000։

ԴՈՎՐԻՔ. — Զորրորդ Հայոց գաւառներէն մին, որ Ակնայ արեւելեան հիւսիսային կողմը Դիւրիքի կամ Տերիքի երկիր բուսածին կը համապատասխանէ։

ԴՈՒ. — Հին պատմական գիւղ Աշրարատայ Բասեն գաւառի մէջ, Հասանպալէի ա. բեւմտեան կողմը և կարնոյ լիրանց Թիւխ տագի կոչուածի արեւելեան սահմանը։ Աշխ. ազգիք Թիւխ կ'անուանեն գիւղս և լեռն ալ նոյն անուամբ կը կոչեն։ Գիւղիս մօտ է հին Որդոյոց գիւղը։ Աչս երկու հին գիւղերն այժմ ծանօթ են Մեծ և Փոքր Դու անուամբ։ Դու գիւղի վերաբերեալ պատմական տեղեկութիւններ կը գտնենք Որդոյոց գիւղի նկարագրի մէջ։

ԴՈՒԱՐԻ ՇԷՆ. Տես ՏՈՒԱՐԻ ՇԷՆ։

ԴՈՒԻՆ, ԴՎԻՆ կամ ԴԻՒՆ. Գղ. DOUIN. Ր. Двинъ. — Հին հռչակաւոր քաղաք Աշրարատայ Ոստան գաւառի մէջ, գրեթէ Արտաշատի փառաց հաւասար, որուն արեւելեան հիւսիսային կողմը կը գտնուին քաղաքիս ծանօթ ամրակները։ Դուին այժմ բաժնուած է երկին գիւղերու, սահմանը կամ Արտաշատի մօտ եղողը կը կոչուի Հայ-Դուին, իսկ վերինը և Ազատ գիւղն մերձագոյնը՝ Ատրի-Դուին։ — Ըստ մեզ ծանօթ պատմութեան, քաղաքս շինած է չորրորդ դարու մէջ, Մեծին Տրդատայ որդի Խոսրովէն, որ «և զարքունեան փոխէ վերոյ անտառին յոտս մի, ապարանս հովանաւորս շինեալ, ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»։ Երբեմն գեաղ Արտաշատէն հեռանալով, քաղաքը չզոլացնելէ զատ, գեաղն հին հունն ճախճախուտ ձեւանալով ի'ապականէր քաղաքին օդն, ուստի խոսրով ի սկզբան Դուինայ տեղը կատուցանել տուաւ իրեն համար ապարանք։ Դուինայ շէննալուն և պայծառանալուն սկիզբն կը լինի և գարու վերջերը, երբ բոլորովին սկսաւ Արտաշատ նուազիլ բնակիչներէ և ամայանալ։ Աչխուհան Դուին կոչուեցաւ Ոստան և Բուն Ոստան Հայոց։ Սակայ կը յիշուի քաղաքս Վահան Մամիկոնեանի ժամանակ, երբ միակ և բուն ոստան Հայոց, ուր կը գտնէին յաղթանակաւ հայ զօրքերը։ Վահան նոյ երկրորդ գարձն ի Պարսից շատ պանծալի եղած է, որ յետ երկար պատերազմաց, քաջութեանց և յաղթանակներու, Մասանեաց վաղարշ թագաւորի հաճութեամբ, իբրեւ ապարանեալ Հայոց մնաւ քաղաքս։ Գարձեալ մեծ հանդէս կատարեցին քաղաքիս մէջ, երբ Վահան մարզպանութեան արքունի հրամարտակ ընդունեցաւ, և կը «խնդրէր վաղվաղակի անդրուաքար՝ երթալ ի տուն Աստուծոյ և լուսալ զայս մարդկանն որ ի քաղաքին՝ զրահ առեալ առ հասարակ ամենայն մարդոյ՝ նախարարաց և ազատաց, ոստանիկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց... վամեալ ընթանային յեկեղեցին. և աչ բաւեալ ընդունել զամենեսեան՝ ատեն Աստուծոյ՝ ընաին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի. և էր այն օր անյագ խնդութիւն և անսպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն և ողջախորհուրդ մտաց լաւահայեցից, և սուգ թանձրանձալից և արտմութիւն անմխիթար՝ խօթամտացն և խարդախաց։ Եւ սրբոյ կաթողիկոսին Հայոց Յովհաննու (Մանդակունւոյ)... բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր տպմուսել ի ժամուն. Եկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղերացն Իսրայելի. և առեալ զխաչագուրծեան ողջոյնն», գոհութիւն կը մատուցանէր Աստուծոյ և յորդորական խօսքեր կ'ուղղէր առ իւր հօտը, որոնցմով ճարտար պատմիչն Ղազար՝ կը կնքէ իւր պատմութիւնը։

Հինգերորդ գարու մէջ Դուին պարսպապատ եղաւ և գարձաւ կաթողիկոսանիստ, ինչպէս կը յայտնուի Թովմայի Արծրունւոյ հետեւեալ տողերէն. «Քանդեն առերեն զմեհեանն (որմզդական, որուն մէջ կը վառէին հուր) և յատակեալ զտեղին, շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զՍուրբ Գրիգորի ի Բզուր (= Դուին) անուանն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունական և զատատեղիս ախտաւորս, և զքաղաքն (Դուին) սրմանիակօք պարսպեն»։ Կաթողիկոսական աթոռոյն վաղարշապատէն Դուին փոխադրութիւնը կը յիշեն նաև միւս պատմիչները, ինչպէս նաև Յովհաննէս

կաթողիկոս՝ որ Մեծին Վարդանայ կու տայ եկեղեցւոյն շինուիլն, և կաթողիկոսական ամենայն փոխադրութիւնը։ Այս վարդանաշէն եկեղեցիս ինչպէս նաև ուրիշներ՝ Պարսիկներէն քակուելով, վերսաին նորոգուեցան Վահանէն, ինչպէս կը վկայէ Մեբիոս պատմիչ. «Շինեաց (Վահան) զեկեղեցիս մեծամեծս՝ զորս աւերեալ էր Պարսից ի վաղարշապատ քաղաք և ի Դուին և ի Մզբայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց»։ Այս նորոգութիւնէն վերջ, գարձեալ 9 տարի մէջ Վարդանայ կ'ընծայուի փայտաշէն և ագիւսակերտ եկեղեցւոյս շինութիւնն. նոյն ժամանակ Վարդանէն և Վահանէն վերջ առաջին քոյն Հայոց Սմբատ Վրկան մարզպան՝ քաղաքիս մէջ «արիանէ հին եկեղեցւոյն սրբոյ՝ կոփածոյ քարամբ, գեղեցկագոյր շինուածով, կրով ձուլեալ ի մի»։

Դուինայ մէջ կը նստէին պարսիկ մարզպաններ, որոնցմէ ոմանք լաւ կը խնամէին ազգն և ոմանք ալ կը նեղէին։ Վկայերորդ դարու մէջ 553 թուին պարսիկ ոմն Ձիֆիտբուզիտ՝ կը նահատակուի հոս, քրիստոսանուն կրօնից համար, և Հայոց Ներսէս Հայրապետան մեծ հանդիսով կը թաղէ անոր մարմինը կաթողիկոսարանի եկեղեցւոյ արեւելեան կողմը, վրան կոփածոյ քարերով վրկայարան շինելով։ Նոյն Ներսէս Բ կաթողիկոսը 553ին կամ յաջորդ տարին, քաղաքիս մէջ մեծ ժողով գումարեց բազմաթիւ եպիսկոպոսներով՝ որոնցմէ քանիք յանուանէ կը յիշուին, և քառասուն չափ իշխաններով։ Բարգէն կաթողիկոսն ալ առ ժողով գումարած է. յետոյ գումարուած են նաև ուրիշ եկեղեցական ժողովներ, որոնք ի պատմութեան կը յիշուին Դուինայ անուամբ։ Մինչէն աւելի հռչակաւոր է Ներսէս Բի ժողովը, որ ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական և ազգութեան տեսակէտով նշանաւոր է. այս ժողովոյն մէջ եղած է նորոգութիւն տումարին և հաստատութիւն Հայոց թուականին, սկսած Փերոսոսի 552 թուականի յուլիս 11էն։ — Նոր թուականին քանիերորդ տարին, այսինքն է 572ի փետրուար 3ին, Մամիկոնէից վարդան իշխանը՝ վասակայ սրովին՝ պայազատն Մեծին Վարդանայ և Վահանայ, այլ նաև չհանդուրժելով Պարսից մարզպանաց զգուելի գործոց, բոլոր Հայոց հետ միաբանած Պարսից դէմ ապստամբեցաւ, և հպատակութիւնն ձգեց, Յազկերտ մարզպանը քաղաքիս մէջ սպաննելով, շատ աւարով գնաց Ճունաց կողմը անցաւ և սկսաւ անոնց հպատակիլ։ Ճոխները կայսերական զօրքով գիմեցին Դուին քաղաքի վրայ և պաշարելով զայն կործանեցին և մէջը գտնուող Պարսից զօրքերը հալածեցին։ Այս և յաջորդող ուրիշ պատերազմաց մէջ թէև շատ քաջութիւն ցոյց տուին Հայք, բայց մինչ նոյն ժամանակ շատ ապիրից, խռովութիւնն և բժամանից պատճառ եղան, մանր գի երկրին և ազգին բժանուին Պարսից և Ճունաց հետ, շատ ընդարձակեցաւ։ Վարդանայ հետ կ. Պոլիս գնաց նաև Մովսէս կաթողիկոսը և առանձին առաջնորդ եղաւ Ճունաց բաժնի Հայոց, ամենայն հաստատութեամբ մերթ Աւան գիւղը և մերթ Կարնոյ քաղաքը, ուր փոխադրեցին նաև Դուինայ Ս. Գրիգորի եկեղեցւոյ սպասները։ Պարսից բաժնի Հայոց վրայ ալ գրուեցան անդադարհներ, Վրդանէս և ուրիշներ, և այսպիսի բժանութեան վիճակի մէջ մնացին աշխարհն ու ազգը երեսուն տարիէն աւելի։ Այդ միջոցին շատ արիւնհեղութիւններ եղան Հայաստանի մէջ, երկու աշխարհակալ ազգաց պատերազմաց պատճառաւ, և Դուին մերթ մոյն և մերթ մոյն պատուանդան կամ գահ կը լինէր։ Դուինայ Վարդանէն շինուած եկեղեցին վերսկիզբ պատերազմաց միջոց այրելով, ինչպէս ըսինք, 606 թուին Սմբատ Բագրատունիի՝ Պարսից թագաւորի հրամանաւ փառաւորապէս շինեց, և եկեղեցւոյ շինութեան հետ հոգաց նաև ազգին մասնութիւնը, ժողով գումարելով երկու կողմանց եպիսկոպոսներով, և երկար տարիներ աթոռոյն պարապութենէ վերջ կաթողիկոս ղրկին Աբրահամ՝ Դուինայ մէջ։ Պարսից թագաւորն ալ երախտեաց համար Հայաստանի մեծ մասը Մօրիկ կայսեր տուած ժամանակ, միայն Դուինը իրեն պահեց՝ մերձաւոր քանի մը գաւառներով։ Գնաց տարի վերջ նոյն թագաւորը Սմբատայ որդին Վաթուզտխրոջը իրեն մարզպան քաղաքս ղրկեց, «զի զաշխարհն ի շինութեան պահեսցէ. և իբրև եկն

նա ի Հայս՝ խնդութեամբ ընկալաւ զնա ա-մենայն աշխարհն Հայաստանեայց»։ Բայց ոմանք ասեն վրայ նախանձելով, զգոնեցին Աթոթապատականի կողմնակալը, որ իբր եղբայրը զրկից Դաւին, ձմեռն հոն բնակելու և գաւիւղս գմաղզպաներ. իսկ Վարազախրոց սիրելի լլլալով Պարսից՝ անոնցմէ խնացաւ դաւթ, և փախաւ անցաւ Ցուռաց բաժինը։ Քիչ տարիներ առաջ (622–3), Հերակլ կայսր իբր ի Պարսս բրած մեծ արշաւանաց միջոց՝ Դաւինը ևս աւերից։

Բաւական տարիներ վերջը, 640ին, յանկարծ Աթոթաց գունդ մը Ասորեստանէն գալով, «Թափեցան յԱյգրատաս. և ոչ որ կացաց ի գօրացն Հայոց արկանել գոյժ ի Դաւին. բայց արք երիք յիշխանացն որք ժողովել զզօրան ճասպատական, Թէոդորոս Վահեւունի և Խալեան Աբաւեղեան և Շապուհ Աշատունի, որք գնացեալ փախստական ի Դաւին և հասեալ ի կամուրջն Մեծամօրի՝ ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալ գոյժ արկանել ի յաւանին, և ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ, որք եկեալ էին ի կաւեմս այգեստանի։ Եւ հասեալ Թշնամեացն անցեալ ընդ կամուրջն Մեծամօրի՝ հարին ասպատակաւ զամենայն երիվրին. և ժողովեալ զաւար և զգերութիւնն բազում յոյժ՝ եկեալ բանակեցան ի յեզր մարզոյն խոսրովակերտ. և եղև յաւուրն հինգերորդի (6 հոկտ.) պիտեցին ի վերայ քաղաքին. մնաւնեցաւ քաղքն ի ձեռս նոցա քանզի արիւն մարդ շուրջանակի, սերտեցին մուխ և նետաձգութեամբ զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս ի պարիսպն և անկեալ ի ներքս՝ բացին զդուռն քաղաքին. և պիտեալ ի ներքս զօրք Թշնամեացն՝ սատակեցին սրով զրազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ բանակին՝ ելին և բանակեցան ի նմին բանակեանդն, որ (օր) քան էր արկ ամենայն յաւուրն ուրբաթի. և զաղաւնեալ աւուրս հինգ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էին, և խաղացուցին զրազմութիւնն գերւոյն երեսուն և հինգ հազար հոգի»։ Այս պիտակի վէպքին վեց կամ եօթ տարի վերջ գաղեալ յարձակեցան Աթոթացիք և Դաւին մնանելով բաւական կտաւրած բրին, բայց մեր պատմիչները այս կրկին դէպքերը կը շփոթեն. և կը կարծուի թէ երկրորդ յարձակման միջոց Ներսէս Դ Շինող կաթողիկոսը «հաւաքեալ զրազմութիւն գիանցն՝ թագէր, և ի նմին տեղւոջ շինէր գկղպեհեալ վկայարան Սրբոյն Սարգսի»։

Երբ Հայք կամայ և ակամայ նուաճուեցան Աթոթացիներէն, կաստանդին կայսրը փութաց Հայաստանը անոնց ձեռքէն առնուլ. կարնէն անցնելով (651–3 թուին), «Գնայ յԱյգրատաս քան հազարաւ, և երթեալ ի Դաւին նոստաւ ի տան կաթողիկոսին»։ Քաղաքէս մեկնելով աշխարհին գօրավար և պահապան թագուց Մաւրիանոս անուամբ մեկը, որ տեսնելով Աթոթացւոց նորէն գալը, Դաւնայ բերդը աւերեց և գնաց Նախճաւան, և հոն ալ Աթոթացիներէն յաղթուելով վրաստան փախաւ։ Հայերը անգամ մը ևս փորձելով ապստամբիլ Աթոթացիներէն (656–7 թուին), և չկարենալով դիմանալ, նուաճուեցան անոնց իշխանութեան ներքոյ, մանաւանդ երբ Աթոթաց ամիրապետը իրենց իշխան կարգեց Գրիգոր Մամիկոնեանը (661–2)։ Վերջնոյս մնահէն վերջ, թէպէտ զարձեալ խլրտեցան, զարկին և զարնուեցան, բայց էլ զարու վերջերը բոլորովին նուաճուեցան, և Յասիկան անուամբ Աթոթաց կուսակալներ գրուեցան Հայոց, գրեթէ երկուք ու կէս զար։ Աթոթացիներէն ինչպէս նաև ի Թուրքաց քաղաքս կոչուեցաւ Տուին دبين, կամ Տկպի لبذ։ Նոյն ժամանակները գրամներ ևս շինուած են Դաւնոյ մէջ Ամիրապետաց անուամբ, ինչպէս Ա վ.ի.ի.ի 712 թուին, և ուրիշներ՝ 735 տարիէն առաջ։ Նախ ատենին եղած է Մրուան, յետոյ Աբդրլա իսկ Հարեմ, որ եկաւ 693 թուին, և բան ժամանակակից գրչի մը, էր «զան և չտրտարոյ, որ միշտ հեղմամբ արեամբ անմեղաց զտարբանայր յապղմանէ չարին. յայնմ ժամանակի բմբռնեալ լինէր երանելին Դաւիթ»։ Սա է յատկապէս Դաւնեցի կոչուածն, որ ապստ տրտ էր և Հայաստանի մէջ ընդունած քրիստոնէութիւնը, և նոյն սուրբ կրօնից համար վկայեցաւ քաղաքիս մէջ, և մարմինը մեծ պատուով, Սարգսակ Ամատունեաց եպիսկոպոսը բազմութիւն քահանայիւք, Մուշեղ Մամիկոնեան Հայոց սպարապետը՝ եղբայրը Աբ-

տաւագպ, և ուրիշ իշխաններ ու բազմաթիւ ժողովուրդը, կը տանէին նախ Ս. Գրիգոր եկեղեցին և յետոյ կը գնէին Ս. Հիփիփոսեանց վկայարանի մէջ։ Սրբոյս նահատակութիւնը եղաւ 695 տարուց յունուար 24ին. որուն յիշատակը ամէն տարի կը տօնէ մեր եկեղեցին։ Աբրահամեան Ազուբլեայէն վերջ, տասիկան եղաւ անոր Աբդրագիզ եղբայրը, որ թէև ականջօք խուլ էր, բայց շատ խորատակ և խնամատար։ Գևոնդ պատմչի տանդաժի համեմատ. «Շինէր (Աբդլազիզ) վերատին զքաղաքն Դաւին, հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր զրամբք և զնախահօք. անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից, լցեալ ջուր, ապատան ամրացին»։ Քաջորդները իրեն նման չեղան, այլ շատ կամ քիչ կը նեղէին զՀայս, մանաւանդ Հասան խոկ կաթողիկոսի ժամանակ, որ գրեթէ 769ին տաճարները եկաւ խորտակելի գնդաւ և հայ աշխարհի ազէաքը և հեծուխիւնները բազմացուց, մինչև նախարարներ խորհուրդ բրին ապստամբել. «և սկիզբն բանիցս այսոցիկ լինէր ի ձեռն Աբասեաղպայ որ ի տանէն Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դվին՝ կազմեաիին մեծ առնէր գօրաց խրոց, և առնոյր անդ զէնս և առօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սպառազինութեամբ»։ Նոյն խռովարարութեան միջոց, երբ հայ քաջ նախարարներէն առանք Աբրաացիներուն անդ անդ կը յաղթէին (770–1), «լուր ազեաի հասանէր ի քաղաքն Դաւին առ գօրավարն Խամայէլի Մահվէա, յամենայն կողմանց ատփնապ մեծ յառնէր ի վերայ նորա. և դադարեալ դղօրս քաղաքին Դվեայ», կը դրկէր Ապու Նաֆիպ անուն ումն՝ չորս հազար զօրքով ապրատամբաց վրայ, որ Բագրեւանի մէջ Հայոց հետ գարնանէով՝ յաղթեցան և սպանուեցան, իսկ իր զօրքերէն սպատաղները «փախստեայք անկան ի քաղաքն Դվին, սակաւք ի բազմաց. ապա ընդ առաջ լինէին նորա համագղեցն արք և կանայք, վայրք և ճչօք, հոգ ի գլուխ լինելով՝ զնաացան հարկանէին և զօձիս պատառէին, և սգալ և աշխարանօք ընդայ ամենայն փողոց լայնանիստ քաղաքին. և ահ մեծ անկանէր ի վերայ սատակիչաց գնդին, և ոչ լինէր նոցա համարձակ ելանել ի քաղաքէն, այլ անձնապահ լինէին յամրութեան քաղաքին», մինչև որ ամիրապետը իրենց օգնութեան զրկից երեսուն հազար խորասանցի զօրք, և վերջապէս նուաճից գՀայս։ Տասը տարի վերջը սատիկան եկաւ խուզիմայ կամ «խազմ սին, որ արդարև ըստ անուանն խոկ խազմարար և գժոխաձեւ. որ իբրև եհաս ի քաղաքն Դվին՝ ընդ առաջ եղեն նմա ամենայն նախարարք Հայոց. ընդ առաջ լինէին նմա և իշխանք սանն Աբժունեայ՝ Համազասպ և Սահակ և Մեհրուժան»։ և որովհետև վերջինքս կանխաւ Աբրաացոց հետ կռուելով յաղթեր էին, անմիջապէս բանտարկուեցան։ Մեհրուժանը կրօնքը ուրացաւ, իսկ Սահակ և Համազասպ իշխանները նահատակուեցան Յայտնութեան տօնին օրը։—Խազմին յաջորդից վատթարագոյն սին խան–Դակ, «որ եկեալ ի քաղաքն Դաւին՝ սատիկ գժոգակութեամբ խոշտանգէր զրնակիչս հարկապահանջութեամբ. առ որ ժողովեալ ամենայն նախարարք և առաջիկք, հանդերձ եկեղեցականօք և կաթողիկոսին որոյ անուն էր Եղիայիսա, ազաչէին թեթեւացուցանել զանաւր ծանրութիւնն սակին՝ զոր պահանջէր, և ոչինչ օգտէին». մանաւանդ որ կ'սկսէր գեռ աւելի նեղել, և շատերը անանկացած կը թողուին ու կը հեռանային իրենց հայրենի աշխարհէն։ Նոյն ժամանակ Դաւնոյ կաթողիկէ եկեղեցւոյն ընտիր գանձերը և սպասները ևս այս անյագ սատիկանէն կողոպտուեցան։ Ալեծորով գառն վերջերը, ժամանակին անօրէն սատիկանը սկսաւ նախանձել կաթողիկոսարանին գաստակերաց վրայ, որոնք կը գնուէին Աբասիայի, Կաւակերաի և Հոռոնց–Մարգի մէջ, և Յովհէփ կաթողիկոսը բանտարկելով գանոնք յափշտակից, որոնցմէ երկուքը շատ աշխատութեամբ հայրապետը ետ առաւ, բայց Աբասիայինը ձեռքէն բոլորովին եղաւ։—Տարիներ վերջը (818–9) Հոլոյ սատիկանութեան ժամանակ, Մեսրոպ Ջուանշատեան «ի կայսեի առնմէ որ առեալ էր իւր կին զԱբուսահակ ի Բագրատունի տանէ, և ի ձեռն այսորիկ զմեծ մասն երկրին բրո-

նակալեալ սեփհականաբար իմն տիրէր», միաբանեցուց իրեն հետ Ամբատ Հայոց սպասրապետը և Սահակ Սիւնեաց ափրը, պատերազմեցաւ Հօրայ հետ Կաւակերտի մէջ, Հրազդան գետոյն մօտ և յաղթուելով փախաւ։ Իսկ Սիւնեաց ափրը սպանուեցաւ, ուրուն մնալովներ «բարձեալ տանէր մեծ հայրապետական դասիր ի հայրապետանոցն սուրբ և անդ դնէր ի քաոարանի մօտ ի սուրբ քաւարանն»։ Իններորդ գարու կիսուն (852) հասաւ մեր երկրի վաճառագոյն պատուհասներէն և բռնակալներէն մին՝ Բուղա, որ խարէութեամբ և բռնութեամբ բռնելով և սպանելով Հայոց նախարարները, ձմեռը մնաւ Դուին, հետը առնելով բազմաթիւ կապեալներ և գերիներ, «որոց ոչ գոյր թիւ» կ'ըսէ պատմիչը։ Այս միջոցին հայ ազնուականներէն շատերը չուրանալով քրիստոնէական սուրբ կրօնը, անօրէնի հրամանով նահատակուեցան, տասնցմէ յիշենք հետեւեալները. Աւտոմ Աճեձացի, Մրեան Վաթաճուհի, Գէորգ Նոդկացի և վաճառական Թովմա Արծրունին կը նկարագրէ, թէ ինչպէս Բուղա, երբ ձմեռն սկսաւ մեղմանալ «... և հարաւային կիսոյդոյն օդն շնչեաց ի խոթոպոյն գաշտն Դաւնոյ... (սկսաւ Բուղա) ամառաւորի լինել, փողպայր իրրև գէր խըտեւթաթ, մերթ տապալէր իրրև զօճ, մերթ դոչէր իրրև զառիծ և իրրև զխոզ վայրենի կինչէր կոնչէր, փրփուր ի վեր բերելով, պատմռտուն կրճտելով... հրամայեաց տալ փութով ամենեցուն պատրաստական գտանել ի գաշտն քաղաքին.. և գումարեալ այնուհետեւ զանհուն բազմութիւն զօրացն՝ բարձրադոյն քան զառաջինն, և ել խաղաց հասանել ի վերայ արեւելից աշխարհին»։ — Բուղայի մեկնելէ վերջ, Հայոց սպարապետ և զօր. Աշոտ՝ Ամբատ խռոռոմանոցի որդին, ուրուն քանի մը տարի վերջը տուեցաւ իշխանաց իշխան Հայոց կոչուելու պատիւը. այլ պատճառաւ ասոիկանները չէին կրնար համարձակ նեղել, այլ ուելի գաւերով. իսկ Աշոտ խոհականութեամբն և քաջութեամբ կը պաշտպանէր իր անձը, քաղաքը և աշխարհը։ Ահեղատ ասոիկանի Դաւին եկած միջոց, «եկն (Աշոտ) առ նա մեծաշուք պատուաւրութեամբ, և պարգեւս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր... բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի ճանալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել», իրեն Աբասեան սպարապետ եղբայրը, գաղտ գինուած զօրքերով ոստիկանին դրկեց և անոր տուաւ այն մտանութեան թուղթը՝ զոր գրած էր ուրիշ զօրավարի մը՝ Հայերը դաւելու համար, ու ապարդիւնութեամբ գինքը հեծցնելով «ի ջորւոյն զոր պատրաստեալ ունէին անդէն առ գրանն վրանին. և հանին արտաքոյ դաշիկ բանակին գարձուցեալ՝ գտանել ընդ նոյն ուսոյ ելին». Թովմ. Արծրունի։

Այսքան շփոթութեանց և անիրաւութեանց միջոց, Դաւին ամեռս լինելով անօրէն ոստիկանն, կը մնար սակաւին շէն. բայց Բուղայի հարուածներէն վերջ և Աշմաան գէզքէն առաջ՝ 862 թուին ձմեռը, «ահագին իմն շարժմանց եղելոց ի Դվին քաղաքի՝ բազում սասանութիւնս և փլուզմունս առնոյ և պարսպաց և ապարանից լինէր, և առ հասարակ քանդումն և գղջումն առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վասնզ ոստնապին՝ մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հառաչէին. իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմերայնոյն առաւել բերէր գղջումն հիծութեանն, զի յոլովք մնալոք և ծայրատեալք լինէին». Յովհ. Կաթողիկոս։ Ելեւէմտոսի և շատ իշատաբեր եղաւ Դաւնոյ երկրորդ ժամն ու կործանումը, երեսուն տարի վերջ (893), զոր կը յիշեն ժամանակակից պատմիչներէն երկու երեք հոգի, որոնցմէ մին (Թովմմաս), ժամին պատճառն ալ իրեն գիտութեան համեմատ կը յայտնէ բանալով. «Բարիութեան հոգմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց ի կոխակս անդնդոցս, գիմանձրայատակ երկրի գկարծր և ծանրագիր անկշիռ անդրաւութիւնն տատանեալ, մինչև յիրեսս երկրի ի վեր մղեալ, հանդիպ քաղաքին Գրատշատաւ որ Բլուրն ասի. յորում Շահատաճանի Դաւին մարգախիտ, պարսպապատ պատնիշօք պատուարեալ, և տաբերատուիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրա-

թեալ յղիացեալ. զնա ի հմմանց առպա-
լեալ, բերանաբաց գժոխարար լայնեալ զբե-
րան իւր, յորմանց քան թէ սահուց ա-
րար վիժել յանդունդս. որոց ոմանց և առնը
նոցա զերիզմանք նոցին եղեն... նաև ա-
զիք սրբոյն Գրիգորի առնը ազօխին՝ գշարժ-
մանն կիրս կրեալ՝ պատառմամբ որմնշարժ
լինելով... և ասի լինել թէ մարգկանն ա-
պահանեցոյն ի շարժմանէն՝ սիս առաւել
քան եօթանասուն հազար:... Ընդ հանդի-
պեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրի-
գոր Աչառնեաց... ոչ կարաց խրախուսիլն
զերծանել... և նորայրն ոմանք ի նմին
շարժմանէ զերիզմանացան ի նմին: Բայց
երանելի հայրապետն Ցէր Գէորգ... թողեալ
զինակին ի Գառին՝ եղեալ բնակեցաւ ի Նոր-
քաղաքն»: Ձեզի կսկիծով կը նկարագրէ
Յովհաննէս կաթողիկոս, որ թերեւս զէպքին
ականատես ևս եղած լինի, որ և Մաշտո-
ցի զեղեցկարան և սրատաչ ու մխիթարա-
կան ոգոյ՝ առ մեհուանէ զերծոդս, ի մէջ կը
բերէ: — Ձյսպիսի մեծ երկրաշարժ մը հար-
կաւ փառաւած լինելու են նաև Գառնայ առա-
ջնորդն, սակայն պատմիչը միայն մեծ քաղա-
քին ոգով վարակուած, բան մը չեն յիշեր:
Մեծն Աշոտ՝ որ սրբազնական պատուոյ հա-
սաւ (887), իր գահը Գառնայ մէջ չհաստա-
տեց, այլ Յերազգաւորս, և ասոր պատճառ կը
համարին կամ առաջին ժամը և կամ ամիրա-
պետաց երեսփոխանները և հարկահաւաքները
մեր աշխարհէն բոլորին վերցուած չլինելն.
բայց հոն նստելով հաստիքէ՝ իր որդին Սմբատ
Ա, երկրորդ և մեծ ժամէն վերջ, նոյն
միջոցին քաղաքին սիրող այլազգիներու հետ
պատերազմեցաւ և Գառնայ սիրեց 894ին,
ուազ ուրբաթ օրը: Գառնայ մէջ (913–4
թուին), առողջում և ապաստամբ Յաւոտի
ասպիկանէն, Սմբատ՝ փայլակ կախուելով,
խռովմանական մահուամբ վկայեալ. նոյն
անգութ գազանը արքայազուն սիրիններէն
քաղաքին մէջ բանտարկած էր, որոնցմէ
Շուշան Սիւնեաց սիրելին՝ հոն վախճանեցաւ:
Յաւոտի բանտապետն հրամանաւ նահապա-
կուեցան ութ մանուկ Մ՚իրայիլ՝ Գագարաց
աշխարհէն, երկու Գնունի եղբարքն Գաբրիէլ
և Գաբիր: — Ձբնտահեղ Յաւոտիայ Հայաս-
տանէն մեկնելէ վերջ՝ անոր տեղակալները՝

Ապուբ, Նըսր և Բշր, նոտան գրձեալ Գառ-
նայ մէջ, բայց գիշանելով Սիւնեաց իշխան-
ներու ազաչանաց, փրկանք առնելով գե-
րիները արձակեցին: Սպուբ տեղակալի օրով,
Ամրասայ որդին Աշոտ Թագաւորը, այլազ-
գիներու հետ հաշտուած կը թուի, վասն զի
Ասողկայ պատմածի համեմատ, 919ին մա-
նուկները, որ Ցունաց զօրքերը եկան
պաշարեցին քաղաքը և չկարենալով տիրել
հոն գարձան, Գառնայ մէջ էր իրրև օգնա-
կան Սպուբի նաև Աշոտ Շահնշահը: — Ա-
շոտի եղբօր՝ Աբասայ օրով՝ առաքելոյն գա-
րու երկրորդ քառորդի մէջ, ուրիշ ինքնա-
գլուխ արաբացի մը բանտեհամբ տիրեց
Գառնայ և մերձակայ գաւառաց. որուն հետ
պատերազմելով Աբասա՝ յաղթուեցաւ և փա-
խաւ. իսկ Գագիկ Աբծրունին, Աբասայ հօ-
րաքրոջ խոտը, յաղթեց արաբացւոյն զօրաց
Գենոյ բլուր առհմանաց մօտ: — Ասոնցմէ վերջ
ալ չեն յիշուիր Հայաստանի մէջ ամիրա-
պետաց ասպիկաններ, վասն զի միահեծան
տիրապետութիւնը տկարացաւ և գանազան
տոհմեր շատացան իշխանութեան աչերը. ասոնց
նման Հայք ևս տկան, ինչպէս յայտնի է
պատմութենէ, առանձին Թագաւորութիւններ
կազմելու: Բայց այլազգի ամիրաներու կամ
իշխաններու որ մեր աշխարհին մէկ քանի
մասերուն կը տիրէին, կը նստէին նաև
Գառնիոյ, երբեմն առանձին անոր իշխանագլուխ
ալ լինելով, և երբեմն՝ ուրիշ հզօրագոյն
տիրոջ մը հնազանդելով. այսպիսիներէն կը
յիշուի ի գարուն վերջերը սմն Ապրնաձի,
որուն ձեռքէն առաւ Գառնիոյ Ապուսաւրի՝
Գագիկեան ամիրայն 982 թուին, ասոր ձեռ-
քէն ալ առաւ 987ին Աղթպատականի մեծ
ամիրայն Ապրնաձա: Վերջնոյս մեռնելուն պէս
Ապուսաւրի գրձեալ նոտանից Գառնիոյ. նոյն
միջոցին «երեմնեան գաշտից հաստատեալ Թա-
գաւորն Հայոց Սմբատ ընդ նմա, միջնոր-
դութեամբ Ցէր Խաչիկայ, խաղաղութեամբ
կեալ առ միմեանս»:

Ի՚Ա գարու սկիզբը Գառնի անցաւ Շեա-
ռատեան կամ Շուարեան պարսիկ տոհմի
ամիրաներու ձեռքը. ասոնց տոհմապետաց
Փառուան Ա, որ «սիրեաց Գառնայ, եղ
հարիս ի վերայ Հայոց երիք հարիւր հա-
զար զրամ». վարդան պատմ. ԺՉ: Սմբատ

Դ՚ (Քավհաննէս) Իպատուրեմեան սկիզբը, Ապիրատ՝ Հայոց քաջ իշխանը ապատամբելով՝ առաւելիւր հազար ձիաւորներով եկաւ Դուին Ապուսուար Պարսից զօրավարի մօտ, և զաւով անօրէն սպանուեցաւ։ Նոյն ժամանակներս Աղուց անդակային Աբիս՝ «բազում զօրօք խռովայ ի վերայ քաղաքին Դուինայ, իսկ Ապուսուար ակն քաղաքին պահապահ առեալ ընդ նմա՝ անչափ կռուեցան ամս ի զուն քաղաքին. յորում տեղոջ մեռաւ մեծ իշխանն Հայոց Վահրամ՝ հանգերձ որդուովն (Գրիգորիս), որ մեծ սուգ հասոյց Հայոց»։ Այս յաղթութեան և խափսաւ արեանց ի վրէժ կայսրէն զրկուեցաւ (1046–7) նեղքինի զօրավար մը, զոր Տէր Յհաբէս կ՚անուանէ մեր Յովհաննէսի պատմիչը. որ «զայր ահագին բազմութեամբ և անթիւ զօրօք ի վերայ քաղաքին Դունայ, և բանակ հարկանէր ի զուն քաղաքին, և էր ձմերնային ժամանակ, և ի սառակութենէ սառամանեացն և ի բախմանէ յորդաբուղխ անձրեւացն՝ սկսին կարաց առնել, այլ զասնայր անյագութենէ, խռովայր գնայր ի Հոռոմոց աշխարհն. իսկ յորժամ փախեցաւ թուական Հայոց ՆՂԲ (= 1047–8) ամին, զարձեալ գայ Տէր Յհաբէս զօրօք բազմօք և իջանէ ի վերայ քաղաքին Դունայ. և բազում չարչարանս և առգեստս զործեաց այնմ զաւառի, որպէս և գերութենամբ ապականեաց զամենայն ազգն Տաճկաց, և զարձաւ յաշխարհն Ցունաց խաղաղութեամբ»։ — Ապուսուար զօրավարը կը յիշէ նաև Լասթիվերացին 1055 թուին, ըսելով «այն որ զԴուին և զԳանձակ առնէր»։ Ասոր որդին էր Մանուչէ, որ Արծրունեաց Աղթ քաղաքը գնաց և իրեն պայազատաց ձեռքը մնաց մինչև ԺԲ զարու վերջերը։ Մեր պատմիչներէն կիրակոս և Վարդան կը պատմեն, թէ 1105ին, Պարսից իշխանութենան շփոթութենան միջոց, Ղզլ անուամբ սկիւթացի ազգի մը մէջտեղ եղաւ, որ Լօռէ աւանը առնելով կռ գայ բռնութեամբ կը մտնէ նաև Դուին և կ՚սպանէ Մանուչէի Աբուսնասր եղբայրը. իսկ Մանուչէ Պարսից թագաւորէն զօրք առնելով զՂզլ կ՚սպաննէ իւր եղբօրը դեղեցմանին վրայ և Դուին քաղաքը Պարսից կռ տայ։ Գրեթէ քսան տարի վերջը, երբ Աղին վրացիներէն առնցա զարձեալ Ճէաւաւահանց ձեռքը, փառուն (Բ) առաւ նաև Դուինը։ Փառունի վրայ գալով Թուրբ անուամբ մը՝ Ղօզ ազգէ, 1130ին կը սիրէ Դուին քաղաքին, «վիրաւորեալ ի պատերազմին զխաւարն, զոր նենգիչք զգայ խեղդեցին պատճառելով զվէրն՝ որ չէր մահ. և առ գամիրայութենան կրասեր եղբայրն փառունի խռչչիրճ. և զինի սակաւս՝ առաջն Մահմուտ»։ Վերոյիշեալ Թուրքմաններէն , Դաւնիի մէջ վրացւոց հա յաղթելով , ձիերայնն «կարեաց զղլուխն՝ եփեաց թանով, և զգանկոն գնէր ի բարձրութենան (Դաւնայ) ի շարս քարտմանցն»։ Բայց ասոր ի վրէժ վրաց յաղթող Թագաւորն Գէորգի՝ Աղին առնէլ վերջ (1161), «կռաւ առ ինքն զիւիհասային զօրն, և գայ առնու զԴուին (1163), խառապոյն խայտառակեալ գնասա ի սուր և ի հուր, բաց ի քրիստոնէից որ անդ. և զգաստ ծառան Թանեփեացս՝ առեալ ի ձիերայէն, զարդարէ սակեմել հանդերձիւք, և եղեալ ի զագաղ՝ բառնայ ի յուսս մուկրեաց, և բակ առիւք տայ առնել մինչև ի Տփիս...։ Զոր լուեալ Ելտկուզն՝ գայ յայրեցիալն և ի քանդելն Դուին, և խոցառեալ սրսիս» կը հռառնայ։ Անկէց վերջ առէպ մերթ վրացիներէն և մերթ այլազգիներէն կը նեղուէր քաղաքս, զոր 1184ին Թամար Թագուհւոյն պայազատութենան սկիզբը՝ առին վրացիք. երկու տարի վերջ (1186) կը յիշուի Աիւչէր անուամբ ոմն ամիրայ Դունայ։ — ԺԲ զարու սկիզբը քաջարի սպասալարն Զաքարիա և իւր Իւանէ եղբայրը՝ ուրիշ զաւառներէ և քաղաքներէ վերջ՝ առին նաև Դուին (1203ին), երկու անգամ յաղթելով այլազգիներու և շատ ատեր առնելով. նոյն ժամանակ անոյշ իշխողը կը կոչուէր Աբուսգէրը։ Ձէլալէտտին Խորասանի սուլտանը Թամարինէրէն փախչելով ապաստանեցաւ այս կողմերը (1225) և պաշարելով Դուինը առաւ ու կողոպտելով շատ ատեր մնինեցաւ։ Այս միջոցին կը թուի թէ դեռ սուլտանին բոլոր զօրքերը չմիհնած, հոս հասնելով քաջն Պռօշ, կը կռտրէ «զխոսրովին և զՏաճիկն», ինչպէս կ՚ըսէ ժամանակագիրը պատմիչն մեր Մխիթար Այրիվանեցի։

Հռչակաւոր քաղաքս, որեմն չորս կամ հինգ դար Հայոց սահման լինելէ վերջ, ԺԲ դարու առաջին կիսուն մէջ կը գտնուի յիշուիլ մեր ազգային պատմութեան մէջ։ Զարմանալի է մանաւանդ այն, որ Թաթարաց արշաւանաց միջոց, մինչդեռ կը յիշուին բոլոր նշանաւոր քաղաքներու աւերմունքները, Դունայ վրայ ամենևին խօսք չի լինիր։ Այսպիսով անծանօթ կը մնայ մեզ թէ ինչպէս եղած է քաղաքիս վաճառը, լքումը, աւերումը և ամայութիւնը. արդեօք թշնամւոյ ձեռքը հրաչակաւոր քաղաքս խոպան ամայութեան և լքման մատնած է, թէ երկրաշարժը։ — Նշանաւոր եղած է քաղաքս և շատ ծաղկած վաճառականութեան մէջ, ամէն կողմէ և հեռաւոր աշխարհներէ բնակիչներով ամենազգի վաճառականաց կարաւաններ։ Ասոր վկայ է նաև հին, համաւօտ, բայց կարևոր ցանկ մը Պոնտոսփուրեանց, որ Դունէն՝ իբրև մեծ կեդրոնէ մը սկսելով, կ'երկրնայ զկնի գտնուած քաղաքներ և աշխարհներ, նշանակելով անոնց հեռաւորութիւնները մղոնով (= 100 քայլի)։ Գուին նոյն ժամանակները կեդրոն էր վաճառականութեան և յատկապէս շահատած կը նշուի, ոչ միայն մեր աշխարհի քաղաքաց մէջ իբրև առաջին կը համարուէր, այլ և մեծաւոր աշխարհաց շահատուններու հետ կը մրցէր։ Պրոկոպիոս՝ Զ դարու կիսուն, Դունայ մարզպետաց ատեները և գործերը յիշելէ վերջ, կը վկայէ թէ շատ գործատուններ կային և գործակատարներ, որոնք վաճառականութեան համար կը բնակէին Դունայ մէջ։ Հնդկաստանէն եկողները կը բերէին նաև ձենաց պատուականագոյն վաճառքները, յատկապէս նշանաւոր է մետաքս. Քաղաստանէն եկող վաճառականներն ալ կը բերէին արևմտեան աշխարհաց Եւրոպիոյ բոլոր վաճառքները և փոխադարձաբար կը տանէին այն ամենայն բերքեր և վաճառքներ, որոնք չէին գտնուեր իրենց աշխարհը։ Մեր վերը յիշած Պղոնագիրը կը ցուցընէ Դունէն սկսեալ հինգ գծերը կամ ճանապարհներ. Ա, զկնի արևմուտք, որ երկնաւոյն մինչև կարին քաղաքը (200 մղոն հեռու), անկէ Մեծ և Փոքր Հայոց սահմաններէն զկնի կողմնից (Գաբահիտար), Եղոկեաբիա, Ամասիա, և այլն, կը հասնէր մինչև Կ. Պոլիս, ուրկէ կ'երթային Եւրոպիոյ գտնուած քաղաքները։ Բ, զկնի հարաւային արևմուտք՝ նախ Խլաթ, Բղնունեաց ծովուն եղերքը (170 մղոն), անկէց Գղիմար (Աղձնիք), Ուռհա, Եմեսիա (Հեմն), Դամասկոս, ուրկէ Երուսաղէմ, Աղէքսանդրիա (Եգիպտոս) և Աֆրիկէի ծանօթ քաղաքները։ Գ, զկնի արևելք՝ Բերկաւնս (60 մղոն) որ կը թուի բլլալ Սիւնեաց կամ Արցախի մէջ, անկէ անցնելով Ադուանից Պարսաւ մայրաքաղաքը, կը հասնի Կասպից ծովը։ Դ, զկնի հարաւային արևելք, Նախճաւան (60 կամ 70 մղոն), անկէց Դաւրէժ, Տիգրան, Ակսպա (Քաւիա), Պասրա, և Պարսկային ծովով նաւերով մինչև Հընդկաստան։ Գաւրէժէն (որ Գանձակ Շահասան կոչուած է) կը գտնուէր ուրիշ գիծ մ'ալ տանելով Նխուէ, Մծբին, Ուռհա, և այլն։ Գարձեալ Նախճաւանէն ալ ուրիշ գիծ մը կը տանէր Արտաւիլ, Վաղդանակերտ, Փայտակարան և կը հասնէր կապրից ծովը։ Ե, զկնի հիւսիս, կողր (30 մղ.), յայտնի է թէ Ճակատը գտնուի կողրը չէ, այլ Գուգարաց կողրսիոր գտնուր, Տփղիս՝ վրաց մայրաքաղաքը, Հունարակերտ (կտորած կամուրջը) և կը վերջանար Պարսաւ, ուր կը միանար Գ գծին հետ։ Այսպէս Գունէն հրաշակաւոր եղած է ոչ միայն ազգային եկեղեցական և քաղաքական վարչութեանց բնակավայր լինելով, այլ և բարգաւաճ կեդրոն մը՝ համապզային վաճառականութեան։

Բազմապիսի անցքերով հռչակաւոր քաղաքիս Ճեպորտներն ալ նշանաւոր պէտք են լինել, որոնք յատուկ քննութեան կը կարօտին։ Մեզ ծանօթ են այժմ, ինչպէս կանխաւ յիշեցինք, Հայ և Աւորի Գունի կրկին դիւղեր։ Նաւասց վերջին վիճակագրութեան համեմատ այժմ կան երեք Գունի դիւղեր, մէկ մէկու մօտ։ Աւորի Գունը ունի 327 բնակիչ, բաժնուած 63 տան, որոնցմէ 2 տուն Հայոց են։ Յայտնի չէ թէ այս Աւորիք Գունը բարգաւաճանաց միջոց անդ բնակող Աւորիներուն կ'պատկանի են, թէ վերջին գաղթականներ։ Ընդհանրապէս ազգաս են, և պատճառն այն է որ հողերու մեծ մասին վրայ այդի անկած են, և առացած խաղողէն գինի պատրաստելով, փոխանակ ծախե-

լու և իրեց պետությը հոգալու, անխնայաբար կը խանն ամբողջ տարին։ Քաջ են և չարքաշ. տարի կառապը կ'օգնեն իրենց պատերազմներուն մէջ։ Ունին Ս. Քառասուն նահատակաց մը։ — Հայ Դուինը՝ Աբուաշահի մօտ է, և Թաւուշայ վիճակապրութեան մէջ ծանօթ է իբր Դուին անուամբ։ Ունի 484 բնակիչ, բաժնուած 100 տան, որոնցմէ 365 հոգի հայ են, բաժնուած 77 տան, իսկ մնացեալը՝ այլազգի։ Գիւղիս բոլոր բնակիչը կը խօսին հայերէն. Հայը ունին նահատակ մը Ս. Աստուածածնի անուամբ։ Տները բնակհանրապէս կէս գետնափոր են։ Հայոց նախնական վիճակը բաւական լաւ է. վերին տոհմանի հիւրասէր են ու գովելի է իրենց մտերմասիրական վարմունքը։ Թաւուշայ վիճակապրի համնմատ հրամով Դուինը կը կոչուի Դուին Քաղքենի և հաւատոլէն կը գանուի վերին և Տարին Դուին գիւղերու մէջտեղ։ Ունի 433 գուա հայ բնակիչ, բաժնուած 71 տան։ Ա.յս գիւղս չեն յիշեր ոչ Քաջբերունի և ոչ Ցովհ. Ալամանուանցը իրենց ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ (1877). և բեւ ի վերջոյ ձեւացած է գիւղս, որուն մնարամաան անգնութիւնը մեզ կը պակսին։ — Վերին Դուինայ մօտ կայ բարձրաւանդակ մը, որ լինելու է անշուշտ, պատմական հին Բզուրն, որուն պատճառաւ Դուին կոչուեցաւ հին քաղաքը։ Հոն կը տեսնուին աւեր բու և եկեղեցիներու հետքեր և այլ աւերակներ, բայց տակաւին մէկը իսամբով քննած չէ։ Փափաքելի է որ ազգասէր ոք հետազօտէ այս երեք գիւղերու մերձակայ վայրերը, և հին Դուինայ ճիշդ տեղն յայտնէ։ Տիւպուա՝ որ այս կողմերը հետազօտեց 1834 տարւոյ մարտ 21–22ին, կ'ուզէր մնարամաան քննութիւն լինել և գտնալ Դուինայ տեղը, բայց իրեն առաջնորդները Տարին Դուին տարին գիտցը, ուր բան մը չգտաւ։ Տիւպուայէն 160 տարի առաջ՝ Շարաէն հոչակաւոր ճանապարհորդը, Դուինայ մէջ գիշերեց 1673ի ապրիլ 8ին, և կը յիշէ իրեւ շատ գեղեցիկ և մեծ գիւղ։ Ժէ. դարու սկիզբը, բան Աստքէլ պատմչի, Մոկացի Պօղոս վարդապետ գիշերեց Դուինայ մէջ և բժշկեց մանկան մը զօսացած ձեռքը։

Աճիւնացած և աւերակօքն անծանօթ մեռացած մայրաքաղաքէս էր վեհափառն Հանճայրը կամ բանահիւսն և հոգեպուն Հայոց եկեղեցւոյ՝ Ստեփաննոս, Լ՚ դարու կէսէն վերջ, որ քաղաքին աւագ երէցին որդին էր և կոչուեցաւ Սիմեոնի՝ նոյն աշխարհին եպիսկոպոս լինելուն պատճառաւ։ Նոյն դարուն սկիզբը ասկից էր նաև Եպիփան Գրակաց վանահայրը, և Լ՚ դարուն Ստեփաննոս կաթողիկոսը, որ տարի մը միայն պաշտօնավարեց (787), և յետոյ իրեն կաշառք ուսաց՝ պաշտօնէն գրկուեցաւ։ Երեւելի վարդապետաց հետ ԺԲ դարու սկիզբը կը գտնուի Գրիգոր Դուինցի, որ գանուեցաւ Լօռուայ ժողովին մէջ։ Տես ՈՍՏԱՆ։ — Սարգր. Հայաս. 462–469։ Մշակ, Զ. 83։ Փորձ, Ա. 380։ Աբրահամ, 404–414։ Եւ այլն։

ԴՈՒՆԿԻՖԱՐԱ. — Ջուտ հայաբնակ գիւղ Աբգպատականի Գարատաղ գաւառի Քէչլան գաւառակին մէջ։ Ունի 180 բնակիչ, բաժնուած 33 տան և եկեղեցի մը։

ԴՈՒՄԱՆԵՒ. Տես ԴՄԱՆԵՒ։

ԴՈՒՄՊՈՒԼ, ԹՈՒՄԲՈՒԼ կամ ԹՄԲՈՒԼ. — Գիւղ Սիւնեաց Նախճաւան գաւառի, Հին Նախճաւանէն 3 վերստ հեռու դէպի հարաւ, Եղամսի ափանց վրայ։ Հ. Ալիշան այս գիւղս կը համարի հին Տամբատ, զոր Հայկապն Տիգրանը տուաւ Աժդահակայ գաղմին բնակուելման համար. թէև փոքր Մասեաց տարբան ալ կայ համանուն տեղ մը։ Ունի 855 բնակիչ, բաժնուած 174 տան, որոնցմէ 542 հոգի հայ են, բաժնուած 132 տան, իսկ մնացեալը՝ այլազգի։ Գիւղիս բնակիչը նշանաւոր են և ծանօթ Թումբուլի անուամբ. գալմած են Աբգպատականի Սալմաստ գաղթէն. բարձրահասակ և նիհարապէմ են։ Ամբողջ տարւոյն մէջ միայն ձմեռները տուն կու գան ընդհանրապէս, միւս եղանակաց հետաւոր վայրեր կը թափառին, կ'ապրին ուրիշի հաշուով մուրացութեամբ և սպրմանթեամբ. շատերը՝ Տէվրիշի անուամբ կը շրջագային այն քաղաքներուն, որ սրբազան են մահմետականութեան, Մեքքէ, Մէտինէ և Քրպէլա. կ'իրացընեն անոնց ապրանքները ու ձկները և կ'ապօթեն անոնց հաշ. ջեմմեանց մահմետականաց ազգմանթեամբը և առատաձեռն նուէրներով կը հատուցին

շատ պրամ, և յիսուն ի՛անդներն բրիստոնէից մէջ. Երուսաղէմի մօտերտով կը փոխեն տէվրիշական պիտոն և կիրպաբանքն, կը հագնին սեւ պատմուճան, կը պատեան կրօնաւոր, և հեզութեան ու ապաւաժպաշտութեան պիտակ կը մնանն Երուսաղէմ։ Կարելի է թուտիրուլցոյն հանդիսել Հոգեկատարի, Աֆղանիստանի, Աւրիոյ, Ռուսիոյ, Սիպերիոյ մէջ և վերջապէս ամէն տեղ։ Մասնագիտական հատուած պրամով շրջագրէն կը պահեն իրենց բնութիւնքը. գեղեցիկ տուն մի, կոկիկ անասնակներ կը կազմեն իրենց պէտուր հոգն ու խնամքը. իրենց տներ մէջ աւելի կը նմանին վանականին։ Գիտիս շատ անգամ մէջ կը պատրեն բոլոր ժամանակաց ու ազգաց ձեռակերտ արձանիկ աղօթներ, անգղիական, գագղիական, ռուսական և ասիական, մասնաւորապէս ծաձկոյիներ, վարագոյրներ, խաչ, Քաշմիրի շալեր, խոտատոնի գորգեր, և այլն, և այլն։ Ամբ և կանայք կը հագնին մաքուր, ճոխ ու շքեղ. մասնաւորապէս պատատուներ են անոնց ամենօրեայ զարդերը. ապամանդ, յակինթ, պերոզակ, զմրուխտ, մարգարիտ, յաճախ կը գործածուին իրր գարդ կանանց։ Վերջին ժամանակներս կառավարութիւնը բոլորովին պատրեցուցած է ասոնց խափտաշխիկ կեանքը, և հարկադրուած են գրաւել պիտական գործերով։ Կը ցանեն ցորեն, գարի, կաուտաս, բամբակ, այգեգործութիւն ևս կ՚ընեն։ Հայը անոնց ապիտաշէն եկեղեցի մը և վարժարան։

ԴՈՒՆԻԿ. — Հայարնակ գիւղ Տարտարիսա-նի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ, ունի մօտ 50 տուն բնակիչ։ Տես ԹԿՈՒՆԻԿ։

ԴՈՒՇԱՓ. Տես ՏԻՒՇԱՏ։

ԴՈՒՈՆ կամ ԴՈՒՈՆՔ. — Այս անուամբ ծանօթ են Կիլիկիոյ մէջ քանի մը կապանները և անցքեր. ինչպէս Դուռն Ագուրց, Կիլիկիոյ, Ակնթոյ Դրունք, և այլն։ Տես ԴԱՐԲԱՆԴԻ ԴՈՒՈՆ։

ԴՈՒՈՆԱ. — Այս անուամբ լիս մը կայ Մարաշի կողմերը։

ԴՈՒՈՆԱ ԿՅՕԼ (կաթկին չիմ). — Այս անուամբ լճակ մը կայ Այրտասայ Գարիդէնք գաւառակին, Պուրա-բելիճ լերան մօտ։

ԴՈՒՈՆԱ ՕՎԱՍԻ. — Հովիտ լեռնային Կիլիկիոյ մէջ։

ԴՈՒՈՆՅՈՒԿ. — Գիւղ Տիգրիսու գաւառի։ Ունի 596 բնակիչ, բաժնուած 92 տան, որոնցմէ 580ը հայ են բաժնուած 76 տան, իսկ մնացեալք՝ մեծաւ մասամբ Քիւրդ։ Հայք ունին եկեղեցի և վարժարան։

ԴՈՒՏԱԿԱՆ կամ ԴՈՒՏԱԿԱՆ ԳԻՒՂ. — Հին գիւղ Արցախի Ջրաբերդ գաւառի, որուն աւերակները ցարդ կը տեսնուին Թարխ և Մատապիս գիւղերու միջեւ, Թարխման գետոյն եզերքը։ Շուրջն խաւխուժ անտառ է և մացառապատ։ Փոքրիկ բլրան մը վրայ, կը տեսնուի բաւական ճաշակով շինուած կիսաւեր եկեղեցի մը՝ 15 մետր երկայնութեամբ, 7մ. լայնութեամբ։ Ըստ Ջալալեանցի՝ այս փոքր եկեղեցին կամ մատուռ կառուցած է ոմն Ղեբէս եպիսկոպոս հին Արտանիոյ վաչական թագաւորէն շինուած եկեղեցւոյ աւերակաց վրայ, հայկական 0 (= 1151) թուին։ Վաչական թագաւորի շինած եկեղեցւոյն, որուն մէջ ամփոփուած էին Ս. Գրիգորիսի մասունքները, Ջալալեանց տեսած է միայն հիմունքը, որուն երկայնութիւնն էր 17 քայլ և լայնութիւնը 11 քայլ։ Աչքժիան կիսակործան մատրան արեւմտեան և հիւսիսային կողմերը չի են պերեզմաններով, սակայն ամենամեծ մասամբ ծածկուած՝ անտառի ծառերով։ Հիւսնալի ապրիլ, ուշագրաւ տեսարան ունի աւերակս։ Աչնուշա իր այդ յաւակութիւններով և Ս. Գրիգորիսի նշխարները իր մէջ ամփոփելուն համար, ժամանակաւ եղած է ամենանոց Արտանիոյ կաթողիկոսներու, ուստի և կոչուած է կաթողիկոսարան. կողմանցս բնակիչք տակաւին կ՚անուանեն կրօնաւորական, այսինքն կաթողիկոսարան կամ կաթողիկոսի տար, որ կը նշանակէ ամբոնաց։ Վաչական թագաւորը կառուցանել տուաւ նաև վարժարան մը, և ժողովելով դերեզմանատեղեաց մնացուկները, սիրաւ անոնց ուսուցանել աւալ աստուածային օրէնքներն և տեղեկացնել բրիստոնէական սուրբ կրօնքի վարդապետութիւններէն, ինչպէս կը պատմէ Արտանիոյ պատմիչը. «Յառաջոյ պատկառէն այն վաչական ժողովեալ զգաստ մանկանց գերեզմանաց և քրմաց և մատուռահատաց, հրամայեաց անել ի դպրոցս և ուսուցանել գաս-

առաջնէն ուսմանն և անդեակս առնել վա-
րուց քրիստոնէութեան. . . : Իսկ գյուղս
մանկանցն յիւր սեպհական գիւղն Դուռատ
անուն ժողովել և կարգել ոսկիկս և զպրա-
պետս ի վերայ: Եւ հրամայէր վարժել և
հմուտս լինել կարգի քրիստոնէութեան. և ի
դալն իւրում ի գիւղն կատարել գյիշատակ
սրբոցն. նախ զիւրն Թագաւորն և զանն
զպղատցան և զորդիս գերեցան և զրանցն



256. Դպրեվանք կամ Կարմիր վանք:

գինքեանմ կացուցանէր գորովարար, բակ
առեալ բազմութիւն յոյժ, և ամանց գիրս և
ամանց տախտակս ի ձեռս ունելով և առ
հասարակ ի մի ձայն հրամայէր ամենեցուն
կարդալ և ինքն զուարճացեալ ի մէջ նոցա
յօրանդայր իբրև մեծագոյն լիմն գտեալ պար-
գեւս համարէր անձին»: Գիւտական գիւղ
Թէն բնական գիրքովն ի հնումն Ջրարերդ գա-
ւառի կը վերաբերէր, սակայն յետոյ Կիւլիս-
տանի մելիքութեան ենթարկած են: — Ջա-
ղաթանց, Բ. 348–9: Աբցախ, 230–1:

ԴՈՒՐԱՊԱՆ *կամ* ԴԵՐԻ. — Գիւղ Աղներայ *Բակաղ գաւառի, որ կը կարծուի լինել հին Տրեայ գիւղը: Կը գտնուի Ջաղնդուրի և-*
րասխի հետ խառնըրդոց արեւելեան անկիւնը
ըլրոյ մը կողը, որուն գագաթը կայ բերդի
աւերակ: Ազգ. բնակիչք 325 հոգի,
բաժնուած 82 ատն, ամբողջ այլազգի են:

ԴՈՒՐՈՒՇ. — *Հանգրուան Ազրատատ, Ճիրակ գաւառի մէջ, Թուճիկի հարաւակողմը:*

ԴՊՐԱՒԱԿ. *Տես* ՍՈՂԲ:

ԴՊՐԱՎԱՆԱՅ ԱՅԳԻ. — *Ազրատատայ Ազրագածոտն գաւառի Յովհաննաւանից արձա-*
նագրութեան մը մէջ կը յիշուի այգիս, զոր
ունի Վահրամ և ամուսինն Թագիկ, 1218
թուին ընծայած են նոյն վանքին:

ԴՊՐԱՎԱՆՔ, ԴՊՐԵՎԱՆՔ *կամ* ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ (Դգրլ–Գիլիսէ). — *Հայարնակ գիւղ Ազրատատայ Ճիրակ գաւառի մէջ, Անիի հիւ-*
սիսային կողմը 2 ժամ հեռու, գետակի մը
ակօսակողմը: Ունի 151 բնակիչ, բաժնուած
18 ատն: Հողը շատ արգաւանդ է, իսկ ցուրտը՝ կատղահաւատ, ագնիւ ու բնութիւր:
Նշանաւոր է գիւղս հայկական եկեղեցիովը,
որ Լուր գարու կը վերաբերի, և թէպէտ
շատ մեծ չէ, բայց շինուածքին նրբա-
թեամբն՝ նախնեաց բնաբերազդոյն շէնքերէն
մին կրնայ համարուիլ: Ոչ միայն խորանի
երկու կողմն ունի աւանդատուներ կամ
մատուռներ, այլ և արեւմտեան գրան երկու
կողմը, որոնցմէ միոյն գրան վրայ կայ ՈՀԷ
(= 1228) թուականաւ արձանագրութիւն:
Այս մատուռներն՝ ինչպէս արձանագրութեան
թուականն ևս կը յայտնէ, կառուցուած են
եկեղեցիէն շատ վերջը: Աւանդատանց միոյն
գրան վրայի խաղողատուած արձանագրու-
թեան մէջ կը կարդացուի Ձեռն Բարսղի ա-
նուն, որուն անուամբ ևս կը կոչուի եկե-
ղեցիս կամ վանքս: Այս Ձեռն, որ Ներսէս
Գ. հրամանաւ Շարակնաց բնաբերութիւն ը-
րաւ, Լ. գարու կիսուն էր, և բուն Վարդա-
նայ (Լ.) «առաջնորդ սուրբ սիսեան՝ որ
Դպրեվանքն կոչեցաւ»: Ժամանակաւ հրա-
շակաւոր վիճակաւոր է եղեր Դպրեվանք, որ
Թէև գոյութիւն ունէր եօթնեերորդ գարուն,
բայց ժ. գարու առաջին կիսուն մէջ, Աբաս
Թագաւորի օրով նորոգութեան և մեծաշէ-
նեցով նորոգ հաստատութեան, ինչպէս կը վե-
կայեն Ասողիկն ակսեալ մեր բոլոր պատմիչ-
ները և Առաքէլն վանաց գիւանագիրը: Ա-
կայն յայտնի չէ Թէ Դպրեվանք անունն ի՞ր

գարան սուգեր է, թէ ի վերջոյ։ Տ. Դաւթեան Տ. Սաղաթիէլ քահանայն իր ծախքով վերանորոգած է եկեղեցւոյն աւերեալ գմբէթը և խարխարեալ սիւները, անձամբ ևս աշխատելով. իսկ ասոր կինն Շողակաթ՝ կանդնած է կաթուղիկէի խաչը։ Վանացւոց մէջ կար հոչակաւոր խաչ մը՝ որուն համար կը գրէ Վարդան. «Ի Դպրավանից տաբան պիտի ըսէն որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ կոչի, յայժմաժ Ճոխանց կոչիւր... և է սրբոյն Մեսրոպայ օրհնեալ, և կամ Բարսղի սրբոյ Ճոխին. և ունի գիր հայերէն յայլ թիւն, և ծածկեալ են սակաւ»։ Այս խաչին հրաշքով բժշկուեցաւ վրաց Դեմետր թագաւորի կինը, և այլ պատճառաւ Դպրեվանքէն փոխադրեցին ի Վարձիա։

ԴԻԼԱՇԷՆ. Տես ՏՈՒԼԱՇԷՆ։

ԴԻՆԱԿԵՏ. Տես ԿՈՎՈՒԱԿԱՆ։

ԴԻՆԱՎԱՋ. — Հայարնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի. հիմնուած է Պօղրխանայ սարի հարաւ արեւմտահայեաց լանջի վրայ։ Երկիրը աւազուտ, անջրդի և սակաւ արդիւնաբեր է. բերքերն են ցորեն, գարի, կարեկ, խաղող, պտուղներ և բոժոժ։ Ամբան օդն ի կլիման չերմին է, իսկ ձմերն պատուական։ Բնակիչք 828 հոգի են, բաժնուած 120 տան։ Ունին միջահասակ ուսումնարան՝ 65 աշակերտներով։ Եկեղեցին Ս. Աստուածածին հիմնուած է Հայոց ՈՄԶ թուին. երկայնութիւնն է 17,60 մեար, իսկ լայնութիւնը 8,90 մեար։ — Ագին Դանիէլեան՝ կը կոչուի գիւղիս հիւսիսային կողմը բլրակի մը վրայ անառագ քարերով շինուած հին ու փոքրիկ եկեղեցի մը, 7,94 մեար երկայնութեամբ և 5,12մ. լայնութեամբ։ Բեմի ժողովրդահայեաց կողմը խաչագարդ է. եկեղեցւոյս շուրջը կան հանգստարան և սենեակ մը, իսկ բլրի վարի կողմը գիւղատեղի։ Աւերակին վրայ կայ «Էջ Աչեան Աստուծով սուրբ խաչս կանգնեցի» արձանագրութիւնը. կան նաև ուրիշ յիշատակարաններ։ Եկեղեցիէս քիչ մը վերի կայ սրբատաշ քարով շինուած բեմ մը, որուն արեւմտահայեաց ճակատը զեղազարդած են երեք զեղեցկաքանդակ և նրբագործ խաչաթձաններ, Շի (= 1071) թուականու արձանագրութեամբ։ — Արցախ, 130–131։

ԴՈՒՄ, կամ ԴՈՒՄԱ. — Հայկական գիւղ Գաղարայ Ջաբախար գաւառի Ջաբադեսի ապ եկեղեցւոյ վրայ, ուր կը միանան անոր երկու մեծ ճիւղերը։ Կը կարծուի թէ Դանդ անուններ Դաւրս անդ բառէն ձեւացած է, և այս անուններ արուած է, գիւղին գաւառած գիրքին պատճառաւ։ Ունի 1095 բնակիչ, բաժնուած 97 տան. քանի են ու կարովի, կը պարապին երկրագործութեամբ և արուարդութեամբ։ Գիւղիս գիրքը շատ ամուր է. բազմաթիւ աւերակներ կ'ապացուցանեն թէ աշխարհահռչակ փոխարկիներ անցեր են այս տեղին վրայ։ Հին բնակիչք խոսվութեան, սրոյ և հալածանաց պատճառաւ գրեթէ են գաղթած կողմեր և նոր գիւղեր կազմեր. ժամանակ եղեր է որ ամբողջ գիւղը ամայի և անմարդաբնակ մնացեր է։ Հին նշանաւորէն կ'երեւի թէ երբեմն մեծ ու հարուստ աւան մը եղեր է։ Գիւղիս սահմանաց մէջ շինութեան համար քար հանած մէջոց, գետնի տակէն գտած են աման սրմիր, զանազան տեսակ անասնական անօթներու բեկորներ և այլ իրեր։ Գիւղացիներէն մին աման տեղ փորելու ժամանակ գետնի տակ տեսած է երկու մեծ անուկաց տեղեր՝ կամարաններով պատուանդերով աշխատ, մէկ կողմը փոքրիկ աշտարակաձեւ բարեայ աւազան. գիւղացիք Թագաւորի աղբիւր յաղագիս կ'անուանեն այդ տեղը։ Դետղի շրջակայքը կան շատ հանգստարանք, որոնցմէ մէկ քանին արդէն անհետացած են և տեղերը երկրագործի խոփը կը վարէ։ Գիւղիս մէջ կը գտնուին երկու հանգստարանք՝ հին և նոր. հինն որ բաւական մեծ է, լի է խաչարձաններով, որոնցմէ երկուքը նշանաւոր են, զորս գիւղացիք քոյր և եղբայր կ'անուանեն և բաւական փառաւորով կը հաստատուի թէ առաջինը Գրիգոր Մամիկոնեան Մարզպանի կը վերաբերի, որ կ'ապրէր ԺԲ դարու մէջ և սպանուեցաւ չարաչար, իսկ երկրորդը՝ անոր Խորիշահ քրոջ։ Հանգստարանիս մէջ կայ սպաշէն եկեղեցի մը ձԳ թուին շինուած. կայ նաև ուրիշ գեղեցկաքանդակ խաչ մը, Փրկչի, Աստուածամօր, Յովհաննու աւետարանչի, Յովսեփայ և Նիկոդիմոսի պատկերաքանդակներով և արձանագրութեամբը։ Գիւղս ունի Ս. Լուսաւորիչ անուամբ եկե-

դեպի մը և արեւելեան վարժարան։ Դանդի մօտ կը գտնուի Թիլ անուամբ փոքրիկ բլուր մը, և կ՚երեւի թէ դիտիկ բառէն յօրինուած է ա-նուանն։ — Թիլդէս մար կայ զմբէվմազարկ փոքրիկ եկեղեցի մը Քառասուն մանկանց, որուն չորքը՝ խաչազարդ հոդուածարան է. իսկ դիմդէս վեր կայ փոքրիկ լճակ մը լի ապրուկնե-րով, որուն մօտ է Ս. Սարգիս անուամբ մա-տուռն՝ անուանվելով շրջապատուած. ասկէ մար հիւսիսային կողմն խաչազարդ հոդուածա-րանի մը մէջ աչքի կը զարնէ, Մամիկոնեան իշխաններու յիշատակին կանգնած Միրուճ խաչն, որուն մօտ է Քարձրաբերձ Ս. Աստուա-ծածնի վանքն, զոր նկարագրած ենք իրեն կարգին։ Դանդի ստորոտը կայ Աշանայ քար կոչուած բնազանդը. նոյնպէս դիտիկ ստո-րոտը կան երկաթուղւոյ կրկին ներքնատուն-ներ։ Դանդի բարձրութենէն կ՚երեւի Խրա-հատ, Ծձուն դիւղերու և Լալվար սարի ան-տառները։

ԹՎԵՂ. Տես ԹՈՎԵՂ։

ԴՐԱԶԱՐԿ կամ ԹՐԱԶԱՐԿ. — Կիլիկիոյ մաղեմի մայրաքաղաքի Սսի սահմանաց մէջ պէտք է լինի հռչակաւոր վանքը, որ ոչ միայն իրրեւ մայրաքաղաքի եպիսկոպոսի ա-թոռ այլ և իբր կարգ ու կանոններով դի-րադանց էր Կիլիկիոյ մեծ բոլոր վանքերէն։ Յովհաննէս՝ հետեւեալ տողերով կը յայտնէ, այժմ մեզ անյայտ վանացս անուն. «Դրա-զարկ անապատ. եկեղեցի յանուանսխիտ ձո-րամիջի, հետ ի Սսոյ իրրեւ մերձեալ, յա-րեւմտեան կողմն նորա, իսկ յԱռաւարզայ իրրեւ երկօրեայ. անցանէ առ նովաւ և ա-ռու. երեքին անդէն նաև աւերակք ինչ նախ-նի հռչակաւոր մենաստանին . . . ։ Լինի ի Դրազարկ ուրկուժիկ (պատուդ) գտնուի դեղին, և կողին առատ, որպէս և ի Սիս»։ Այս տողերու բացատրութենան համեմատ հարկ է քննել և ճանաչելով անուանի մենաստա-նիս աւերակաց։ Մեր պատմիչներէն տեղւոյս տասնիւն յիշատակողն է Մատթէոս Ուռ-հայեցին, որ «ի գաւառն Աղաւարզայ» կը դնէ, և պէտք է նկատել որ նոյն ժամանակ Սիս այն-չափ մեծցած չէր, իսկ Աղաւարզա՝ ոչ միայն գաւառ այլ և աշխարհ կը կոչուէր, Սիսն ևս ի-րեն մէջ բովանդակելով։ Իսկ ուրիշ գրիչներ ամենեւին վանացս պիտոյք չեն նշանակեր, իրենց ժամանակ աշխարհաճանաչ լինելուն պատճառաւ։ Աղեմմեակք՝ զուարճալի պարզ-մասէիմեր մը, Դրազարկ անուան հայելէն ձայնին զուգելով պաղպեհատար, թարգմա-նած են Trois–arcs, և լատիներէնի մէջ երից կամարաց վանք կամ Աբբայ, Abbas Trium Arcium. Հետաքննելի է նաև հայե-րէն անուանս առաւգաբանութիւնը, միր պատ-միչները և յիշատակագրիրը միաբան կը գրեն Դրազարկ, որ կարելի է առաւգաբանել Դրան զարկ՝ բառուին, բայց արդիհետեւ հնագիր և ընտիր արբուներ պատմիչը Թ դարով կը դրէ միշտ Թրազարկ, հարկ է մէկ ուղղի հիմ-նաւոր պատճառ մը լինի, որով և ուղղի հա-ւատացեալ կը լինի առաւգաբանել զայն իբ-րեւ մէկ կամ առանձի զարկուած։ Հիմնար-կութեան ժամանակը յայտնի չէ։ Երկոտա-սանեւերորդ դարու սկիզբը Ս. Թորոսէն նորո-գուած կ՚առանձնաբեր, Երկոտր Վկայասիրի եր-կու աշակերտներու և գործակիցներու ձեռ-քով, որոնք էին Գէորգ Մեղրիկ և Կիրակոս։ Առաջինը կազմեց վանքի թոռան կանոնները, կարգաւորեց ձաշոց գիրքը՝ աւելցնելով նո-րահաս ծառեր և պատշաճ ընթերցուածներ, հրամանաւ և հաճութեամբ Գր. Վկայասիրի։ Վանքս գանազան գրոց յիշատակարանաց մէջ կը յիշուի հետեւեալ ածականներով մեծ, առաջ, նշանաւոր, գեղանչակ։ Մեղրեցւոյն վարդա-պետն Գէորգ՝ հօրմանեցւոյն տարեկան վախ-ճանեցաւ և թաղեցաւ վանացս մէջ 1114 թուին. ինչպէս նաև Կիրակոս վարդապետիս, և դոյն ժամանակին տասից չորեքտղ այ տակաւ նշանաւոր աշակերտներ։ Դրազարկի բացի վարդապետներէ հանդուսարան եղած է նաև գանազան թագաւորաց և հայրապե-տաց։ Ինչպէս Յովհաննէս Ա և Բ Թորոս-նեանք, և Ա. Հեթում թագաւոր Թորոս Գէ, որ թաղուելէն տարուընացաւ իր Սիրուս եղբօրէն։ Հոն հանդչեցաւ նաև Մեծին Լեւո-նի եղբայրը, Յովհէն Բ հետնորդն երկուա-տարդը. հոն՝ Հեթում Ա, որ միր թագա-ւորաց մէջ ամենէն աւելի երկարակեաց իշ-խեց (45 տարի), և յետոյ սրեմազգիսա Մա-կար անուան ներքն ծաղկելով իր փառքն հանդչեցաւ անդ՝ ուր իրմէ առաջ կանխեր թագաւոր էր (1252) իր

զազակիցը և կիլիկիոյ հայ թագաւորաց մէջ պատճառելոյ՝ Լեւոնածին Զապէլ Ա թամբիչը։ Հան իբ մեծամեծ և զօրաւոր նախնեաց մէջ ամփոփեցաւ նաև Լեւոն Բ որդին՝ մանկիկն Սահփանէ, բիչ վերջը իբեն հանդուսակից ունենալով նաև իր եղ-

ւսւդզօրեաց համ ազնուականութեան հանդրաստան եղած է։

Վանացս եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի, ինչպէս գրուած կը հանդիպինք գրոց յիշատակարանաց մէջ։ Դրագարկի վանահայրերէն գաս մեզ ծանօթ առաջնորդ-



257. Լեւոն Դ զաւակատանի ատեան։—Նկար Սարգիս Պիծակի։

բայրներէն Ալինախ և Օշին թագաւորը։ Իսկ եկեղեցական կարգէ վանացս քնարանին մէջ ամփոփեցաւ մեծագլի Պահլաւիկ կաթողիկոսն Գրիգոր Տգայ. ուր յետոյ գրուեցան նաև կաթողիկոսներէն, Գրիգոր Փառաւէժ, Մեծարարոյ Յովհաննէս Ը, Կոստանդին Բարձրբերդցի, և Կոստանդին Գ Լամբրոնացի։ Ապագայով Դրագարկը նոյն ժամանակի հայ

նեերը և միանգամայն Սուրբ աբբեղայիկոսատունքը են՝ Գէորգ Մեղրիկ, Կիրակոս, Սամուէլ, Յովհաննէս, Հեղի–Հեթում, Յովհաննէս, Բարսեղ, Բարսեղ արքայեղբայր, Յովհաննէս, Կոստանդին Գ կաթողիկոս, և այլն։ Դրագարկի վանքն, անշուշտ իր գրից պատճառաւ, և կամ անոր մէկ մասն կոչուած է Փոքոյ վանք. վանքս կոչուած է նաև Աչազ

վանք։ — Վանացս մխարանեցին յիշելու արժանի է նաեւ Թորոս եպաժիշան կամ գաւազպետ, որ 1307ին Լեւոն Դ.ին և Հեթում Բ.ին գեսպան դրկուած էր, Աղգպիոյ եղուարդ Բ թագաւորին։ Յիշենք նաեւ սրբասէր քահանայն Սարգիս Պիծակ՝ որ ժամանակին հայ նկարչաց, ոսկերաց և ծաղկողաց մէջ առաջինն կրնայ համարուիլ։ — Դրագարկ շէն և բարգաւաճ եղած է գրեթէ ԺԲ դար սակայն մինչև ԺԴ դարու կէսը։ Այդ ժամանակաց մէջ յայտնի է թէ շատ, մեծաւ մասամբ եկեղեցական, գրքեր գրուած են վանացս մէջ, որոնցմէ մէկ քանին ազատուելով կարաւանէ կը պահուին այժմ գանազան գրադարանաց մէջ։ — Մխուռան, 230–236։

ԴՐԱԽՏ. — Ա.յրարատայ Ծոպկոան գաւառի մէջ կը յիշէ Առաքել գանձասացը այս անուամբ լեռ, ուր նահատակուեցան Ս. Ռսկեանք։

ԴՐԱԽՏԱԿ. — Գիւղ Պարսկաստանի Փէրիա գաւառակի. ունի 20 տուն հայ և եկեղեցի մը։

ԴՐԱԽՏԻԿ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի Արեգունի վիճակի, համանուն ձորակաւոյն մէջ։ Ա.յժմ այլազգիներէն կը կոչուի Թօխլուձա և ունի 104 տուն այլազգի բնակիչներ։ Տես ՁԱՀՈՒԿ։

ԴՐԱԽՏԻԿ ՆՈՐ. — Հայաբնակ գիւղ Արցախի վարանդա գաւառի. հիմնուած է սարի մը ծայրը՝ արեւելահայեաց լանջի վրայ։ Դիրքն վեհապանծ և տեսարանն զմայլելի է, խակ օդն, կլիման և ջուրն գերազանց։ Բնակիչք 250 հոգի են, բաժնուած 47 տան. ունին Ս. Գրիգոր Նարեկացւոյ քարաշէն եկեղեցի մը, շինուած հայոց ՌՂԴ (= 1645) թուին, բլրի մը վրայ, ուր կան հին ծառեր և հանգստարաններ։

ԴՐԱԽՏԻԿ ՀԻՆ. — Ա.յս անուամբ գիւղատեղի մը կայ քարափիր եկեղեցիով Նոր Դրախտիկ գիւղէն վար, կալերու մէջ։ Գիւղատեղիս գէպի հեռու բարձր բլրի մը գագաթը կայ կոփած անուամբ ուխտատեղի մը։ Կ'երեւի որ այս հին ու փոքր վանքի մը ուերակն է, հինաւուրց ծառերու փառաւոր հովանիներու ներքեւ լքեալ մնացած։

ԴՐԱՇԱՑ. — Հին գիւղ Ա.յրարատայ վանանդ գաւառի, զոր կը յիշէ Ղեւոնդ պատմիչ։ Հոս Հայք թօխտափելով Հոգարացիներու ծանր լուծէ՝ Յունաց օգնութեամբ և Ամրամ կիւրապաղատի առաջնորդութեամբ, 705 թուին, պատերազմէցան Մահմէտ զօրավարին հետ։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՑ կամ ԴԱՍՀՈՆԱԿԵՑ. — Ի հնումն այս անուամբ մեծ գաւառակ կամ աւան մը կար Ա.յրարատայ մէջ, զոր շինեց Հայոց Արտաշէս թագաւորը։ Կանխաւ կը կոչուէր Դասահակերտ Արտաշէսի, բայց վերջը կոչուեցաւ Դասհոնակերտ, զոր Հայոց Տրդատ թագաւորը ժառանգութիւն աւաւ կամնարայ։ Ակնէց էր Յովհաննէս պատմարան կաթողիկոսը, ինչպէս գրուած կը գտնենք գաւազանապրի մէջ, «Հայրենեօք ի մեծ գաւառակերաէն Դրասխանաակերաէ»։ Պատմիական աւանիս աւերակներն և պիրքն անգամ ցարդ անծանօթ կը մնան մեզ։

ԴՐԱՍՊԱՐ. — Կը յիշուի Ա.յրարատայ Շիրակ գաւառի Հոռոմոսի վանաց արձանագրութեան մէջ։

ԴՊԻՇԿ կամ ԴԵՐԻՇԿ. — Հայաբնակ գիւղ Ա.արգաւառականի Այրմառա գաւառի։ Ունի 144 բնակիչ, բաժնուած 23 տան, և եկեղեցի մը։

ԴՐՄԵՐՏ. Տես ՏՐՄԵՐՏ։

ԴՐՈՒՆՔ. Տես ԴՈՒՈՆ, ՍՈՐԲ և ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԴՐՍԵՂ. Տես ԴՍԵՂ։

ԴՐՍԻ ՏՈՒՆ. Տես ԱՂԹԱՄԱՐ։

ԴՕՏՕՐԻՇՏ. Տես ՍՈՒՉԱՒԱ։

ԴՕՐՄԱԼՅՈՒ կամ ՏՈՒՐՄԱԼՅ ՄԵՆ. — Գիւղ Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. Գիւաւանէն 1 ժամ հեռու՝ արեւելեան կողմը։ Ունի 24 տուն բնակիչ։

ԴՕՐՄԱԼՅՈՒ ՓԻՒՐ. — Նոյնպէս գիւղ Ա.յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 16 տուն բնակիչ։ Գիւղիս մօտ կայ բարձր սարի վրայ հին բերդ մը։

ԴԻՈՒԳԵՒԻՂ. — Ա.յսպէս ևս կոչուած է, Սիրասախոյ Գաւրայ գիւղը։

Ե

ԵԱՊՈՊԻՅԻ. — Գիւղ Հալէպի նահանգի, լեռնանման բլրոյ մը արեւելեան վրայ։ Ունի 120 տուն զուտ հայ բնակիչ, որոնցմէ ոմանք լատինացած են։ Հիւդանման խարխուլ ու անշուք եկեղեցի մը ունին. նաև ունին կիսատիր մենաստան մը Ս. Գեորգ անուամբ։ Օդը մաքուր և զով է։ Գիւղիս բերքն ու եկամուտն են դիմատուորաբար ձիթապտուղ, խաղող, թուզ, նուռ, ցորեն, գարի, սոգ, և այլն։ Աղտաուներ են՝ ձի, ջորի, էշ, այծ, ոչխար, հաւ, ագռաւի, և այլն։ Մայրենի լեզուէ զուրկ են և արաբերէն կը խօսին. ունին նաև վարժարան մը։

ԵԱՊՈՊՇԻԳ. Տես ՍՈՒՉԱՒԱ։

ԵԱՋԵՊՈՒՏ կամ ՄԱՐՏԻՊՈՍ. — Գետաձոր բաղ Միւնեաց վայոց ձոր գաւառի հարաւային մասի մէջ, որ արեւելեան հարաւային կողմէն ընթանալով դէպի արեւմտեան հիւսիս կը խառնուի Ազթայի հետ։

ԵԱՋՐԼՈՒ կամ ԵԱՋԼԻ ԴԱՇ. — Քոյան տուն քուրդ բնակչօք գիւղ մ՚է Ակբարատայ Բագրեւանդ գաւառի, ահագին ու մեծ քարայրան մը հարաւ արեւմտեան սահրատը։ Այս լեռը հիւսիսային կողմէ ունի խոր ձոր. ամբողջապէս կազմուած է դիւրաւեր քարերէ, որոնք հսկայ շերտերու բաժնուած՝ իրարու վրայ կուտուած են։ Այս հսկայ և անսպառ ակռի քարահանքը կրնայ քար մատակարարել ամբողջ Բագրեւանդի և Բասենի, սակայն դիւրամատչելի ճանապարհներ չկան։ Գիւղս իր անունն առած է բեւեռաձեւ արձանագրութենէ մը, որ կը գտնուի գրեթէ մէկ հազարամեայ զէպի հարաւային արեւելք և Տաղարայ հիւսիս արեւմտեան կողմը եղած փարախ հետաքրքրութեամբ, ապառաժ լերան մը հարաւային երեսին վրայ։ Այս ձանապրութիւնը գրուած է յղկուած տախտակի նման քարի մը վրայ, և ամբողջ երեսն է վնաս տոզ է. բաւական անազատ մնացած, ինչպէս կը տեսնուի պատկերի մէջ։

ԵԱՋԻԿԻՒ. — Հայարնակ գիւղ Ակբարատայ կազմիա (Պայազիտ) գաւառի։ Ունի 40 տուն երկրագործ բնակիչներ, Ս. Աստուածածնայ անուամբ եկեղեցի մը և վարժարան։

ԵԱՔՄՐՇ. — Գիւղ Էջմիածնի. 38 տուն հայ կայ։ Ունին Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը և երկսեռ վարժարան։

ԵԱԼԱԳ կամ ԵԱԼԱՒ ՏԻՐԻ. — Հայարնակ գիւղ Նիկոմիդիոյ առաջնորդական վիճակի մէջ, Գարամուսալէ 3 ժամու ճանապարհ հեռու։ Ունի 140 տուն, 650 բնակիչներ։ Եկեղեցին Ս. Հրեշտակապետ՝ 50 տարի յառաջ ի հիմանց կառուցուեր է վերրայնին։ Կը կարծուի թէ 250 տարուան գիւղ մ՚է սա։ Օդն այնչափ լաւ չէ. բայց մանուկներն ունի լաւ ջուր և օդասուն վայրեր։ Գրեթէ կէս ժամ հեռու կը գտնուի մեծ անտառ մը, որ Հին գիւղ կը կոչուի և ուր յառաջագոյն կը բնակէին հսկայ Եալագ Տէրէսիք, բայց ձմրան խստութեան պատճառաւ փոխադրուեր են ձորին մէջ, որուն առնուամբ կոչուած է նոր գիւղն։ Տեղւոյս բնա-

կիչք աշխատասէր են և հիւրընկալ. կը պահպանեն երկրագործութիւնը և շիրամնապահութիւնը։ Ունին Ղերսխանան անուամբ վարժարան մը՝ 60 աշակերտներով։

ԵԱՂՆԲՋ–ՊԱՂ. — Գիւղ Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ։ Ունի 10 տուն հայ և 11 տուն մահմետական բնակիչներ. կը պարապին երկրագործութեամբ։

ԵԱՂՈՆ. ՈՒ. Яama. — Նոր և փոքր քաղաք Խասիայ, Խրիմու թերակղզւոյն հարաւային ծայրը, Սեւ ծովու վրայ։ Ունի շատ գեղեցիկ դիրք և առողջարար օդ՝ մանաւանդ կուրծքի հիւանդութիւնն ունեցողներու համար։ Քաղաքս շինուած է ծովեզրեայ և եռանկիւնաձեւ, երեք կողմն պարսպուր լեռներէ շրջապատուած է, իսկ արեւելեան կողմէն դէպի հարաւ՝ ծովն է։ Ունի փոքրիկ և ապահով նաւահանգիստ։ Թաղերը՝ գրեթէ ձորերու մէջ են։ Կան լաւ լաւ լոզարաններ, հետաւոր տեղերէ հազարաւոր անձինք կու գան պարմանի և օգտուելու համար, և մայիսի սկզբէն մինչեւ հոկտեմբերի կէսը կը մնան։ Տեղւոյն ձմեռն ալ մեղմ է և գրեթէ գարնան պէս։ Քաղաքիս բնակիչք են՝ ռուս, հայ, յոյն, թաթար, հրեայ, և այլք։ Ամէն ազգ ունի իր սեպհական եկեղեցին։ Հայք 30 տուն հազիւ կան. ունին Ս. Պօղոսն, Տրապիզոնէն, Բարերգէն և Կալկաուէն. ունին աս ժամանակներս ապօթատուն մը. կան նաև 300ի չափ պատղամաւոր հայ գիւղացի գործատուներ, որոնց մեծամասնութիւնը Բարերգէն են. Մշէն, Շապին Գարահիսարէն և այլ տեղերէ ևս կան։ Հայք կը զբաղին վաճառականութեամբ, դերձակութեամբ, կօշկակարութեամբ, են. արհեստաւորաց գրեթէ մեծամասնութիւնը հրեայ է։ Լալիայի տուներն տարուէ տարի տունկի նման կը շատանան, որովհետեւ երկրին ներսերէն կուգան հարուստ անձինք, և բարձր գիներով կը գնեն պարապ դեռներ կամ իրենց համար ամարանոց կը շինեն պարտէզներով, և կամ վարձու կու տան տուր գնով։ Քաղաքիս կէս ժամ հեռու հարաւային արեւմտեան կողմն Լիմանիկ բսուած տեղը շինուած է կայսերական ամարանոցը, ուր տարուէ տարի Յունուար կայսրը կու գայ բնականօք։ Ալ տեղւոյ ջուրը ու օդը գերազանց է. տպարանքը շինուած է լերանց կատարի վրայ անտառախիտ ծառոց մէջ, գեղեցիկ դիրքով։ Լալիայի հիւսիսային արեւելեան կողմն ալ է Մատանդարա բսուած տեղը 1½ ժամ հեռաւորութեամբ, ուր է կայսերական նորակառոյց ամարանոցը. հոն ևս բնութեան պարզութիւնը կը փայլի, օդոյն անուշութիւնը, պտուղներ կան ջուրն, երիւներանգ ծաղկանց անուշահոտութիւնը, թռչնոց ճլվլոցը զմայլեցնեն։ Լալիա 55–60 տարի առաջ, անտառի մը մէջ՝ 10 տունէ բաղկացեալ փոքրիկ գիւղ մ'է եղեր, յետոյ հետզհետէ առողջարար օդոյն և կլիմային պատճառաւ բազմացեր են բնակիչք և սկսեր է շէննալ, քաղաք դառնալ. կայսերական ամարանոցի շինուելովն ալ գեղ ուելի սկսաւ զարգանալ։ Տեղւոյս գլխաւոր բերքն է ծխախոտ, խաղող և ամէն տեսակ պտուղներ. խաղողին ազնիւ գիրաբանութենէն տեսակն է շատ բսուածն, որուն համար կու գան ուտելու 20 օրի չափ, և անոնք ալ կը մնան մինչեւ խաղողին հասնիլը։ Ծառերէք կը բերեն Սիմֆերոպոլէն և Թէոդոսիայէն՝ խնդ, հաւ, ձու, և այլն. իսկ ապրանք ամէն կողմէ։ Կը վերջացնենք քաղաքիս համառօտ նկարագիրն, ակնառութեամբ մը հետ բսելով թէ՝ Լալիա՝ յիրաւի իր գեղեցիկ ծովովն, մշտապայծառ լեռներով, գեղեցիկ տպարանքներով և ճեմատղի վերնաստուններով, կրնխանայ թուիլ բերով, և այլն, բնութեան և արուեստի սակաւագիւտ հետաքրքրութեանց մէն կ'ըսծայէ. այնու ծովու կողմէն տեսիլն ևս անհնար է։

ԵԱՂՈՒՋ–ԱՂԱՃ. — Վտապարակին Տօսպ գաւառի մէջ խառակոնիս գիւղի արեւմտեան կողմն և Հաչակ լճակի մօտ, գրեթէ 70–80 տարի առաջ, այս անուամբ գիւղ մը կար 100ի չափ Հայոց անդերով. իսկ այժմ քանի մը կանգուն՝ և քանի մը գետնատուն խաչքարեր կը տեսնուին, և անոնց մօտ կը բնակին քանի մը տուն Քուրդք։

ԵԱՂՈՒՋՏԱՄ. — Գիւղ Սիւնեաց Աղահէնը գաւառի մէջ։

ԵԱՂՈՆ կամ ԵԱՂՈՒ. — Ալտակէս կոչուած է ի Հայոց Ալտի այն ծովիզրը, ուր վեհանակներք կը հանէին վաճառքներր, որուն

համար յատուկ ապերասպրով հրամանագիր առին 1320 թուին։

ԵԱՂՊՈՒԶ. — Գետակ պաշտային Կիլիկիոյ, կը թափի Ջահան գետը։

ԵԱՂՕՎԱ. — Փոքր Ասիոյ եզերաց վրայ այս գիւղաքաղաքը, պատմութեան մէջ նշանաւոր տեղ մը կը գրաւէ՝ հնութեամբը և այն ահռելի պատերազմներով, զորս Սարակինոսք մղեցին մերթ ընդ մերթ Բիւժանդիոյ փոքրիկ պետութեան և ապա Խաչակրաց դէմ։ Հոն տարբեր զանազան եղանակաց մէջ։ Թաւուտ հովտի մը մէջ, որուն երկու կողմերը կը բարձրանան կրաքարային կապտավեհամէ լեռնակներ, այս չերմուկները կը սառնան ամենահաճոյ տեսարան մը ամրան եղանակի մէջ։ Անոնց կամարակապ գմբէթները, որ ցոլոց կը ծածկեն այս չերմուկները, ըստ պատմութեան՝ Հելինէ կայսրուհւոյն շինուածներն են։ Բիչ մը հեռու կը տեսնուին զանազան աւերակներ, որ Հելինէի և որդւոյն Կոստանդիանոսի հիւրանոցի և ապարանաց մնացորդներն են։ Մեծն Կոստանդիանոս ի պատիւ մօրը՝ Տրեփանոն գիւղը քաղաքաց կարգը անցուց, և Հէլէնոպոլիս կոչեց զայն, և այս անունը բաւական ժամանակ մնաց։ Կը պատմեի, թէ Մեծն Կոստանդիանոս իր կենաց վերջին օրերու մէջ բանի մը անգամ այցելեց այս կողմերն, և մեռաւ Ազեխրոնի ամարանոցի մէջ։ Նիկոմիդիոյ մօտ։ Խաչակրաց բանակը, Պետրոս Ճգնաւորի և անարժան Կոխիէի հրամանա-



259. Նալթային տեսարանը։

գլխաւորութեամբ գէմ։ Հնոյն Տրեփանոնի՝ որ Սարակինոսներէն աւերեցաւ և քանդեցաւ՝ աւերակաց վրայ վերստին կառուցաւ գիւղաքաղաքն՝ շնորհիւ Հելինէ կայսրուհւոյն, որ՝ երբոտագէմէն գանուելէ վերջ այցելելով, շրջակայքը գտնուած չերմուկները՝ մեծամեծ շէնքերով զարդարեց։ Այս չերմուկները, որ կը գտնուին գիւղաքաղաքին արեւմտեան հատակին կողմը 4–4½ ժամ հեռու, և հնութեան համբաւաւոր էին, և Բիւզանդիոնէն շատ ուխտաւորներ և բարեկեցիկներ կը

տարածեամբ , տախտակեայ Հէլէնոպոլսի մէջ պահ մը ծեալ. Նիկիան Սարակինոսաց ձեռքը թողլէ վերջ՝ եկաւ քաղաքս, որպէս զի ծովային ճանապարհաւ հաղորդակցութիւն ունենայ և կապուրէ իւր երկարատև պատերազմներով ակարացած զօրութիւնը, և վերջը պատճհ տեղիս վերստին յարձակի Նիկիա քաղաքի վրայ: Այս պատճառի պատերազմէն վերջ, Սարակինոսք խաչակիր զօրաց սակրնկերով բուրդ մը կանդնեցին, որոնցմէ պատերազմին մէջ իմիան, բոլ պատմագրին Ալէքսիս Կոմնենոսի , 25000 հոգի:

Եալօվա անուն՝ որ յայսմդեց Տրնփանան և Հէլէնոպոլիս անուանց, գրուած է աշխարհագրական դիրքէն առնելով: Ըստ բաձակ, բարերիր և արդաւանդ հողիս մը կը տարածուի շարջանակի մինչև ծովեզերքը, որ այժմ ծանօթ են Տար–Ճամաձը անուամբ, և ջուրերը երկրէն գուրս կը ժայթքեն եռացնալ վիճակի մէջ, և Խանայիր–տեբեսի անուամբ գետակ մը՝ քովէն հոսելով կը բաբնիսանել տարբերեան տատիճաներ: Վերջին ժամանակներս հիւրանոցներ և բնակարաններ շինուեցան, այցելուաց գիւրութեան և հանգրստեան համար: Այս ջերմուկներու արեւմտեան կողմը, 1 ժամ հեռու, բնաիր քարահանք կայ, 150 մեար երկայնութեամբ և 70մ. լայնութեամբ տարածութեան վրայ: Եալօվա՝ Նիկոմիդիայ ծոցի հարաւային արեւմտեան եզերաց վրայ կը գտնուի, և Գաբամուռալի գաւազագանութեան կերդն է: Ունի 150 տուն թուրք բնակիչներ. շուկայի մէջ 10է տնէլի խանութ կիայ: Շրջակայ գիւղերու Հայք կ'երթեւեկին շաբաթական տուրարով և գնահատն գործերով:

ԵԱԽՆԻ–ԹԼՓԼ. — *Հայարնակ գիւղ Ա. Յարարատայ Կոգովիա (Պայազիա) գաւառի: Ունի 50 տուն բնակիչ, Ս. Աստուածածնայ տանեցի մը և մարմարան: Կը պատկան երկրագործութեամբ:*

ԵԱՀԻՆ. — *Կը կիշուի Տուրաբերանի Տարածատատի գաւառի մէջ:*

ԵԱՀՆԻ. — *Ա. յս անուամբ Մեծ և Փոքր կիրճեր լեռներ կան Ա. յրարատայ վանանդ գաւառի արեւելակողմը: Մեծ Եահնի բարձր է 2270 մեար, իսկ Փոքր Եահնի՝ 2080մ.:*

ԵԱՂԱՆ. — *Հայարնակ գիւղ Ա. յրարատայ Բասէն գաւառի մէջ բարձր և զարմանալի դիրքով. ունի 60 տուն բնակիչ: Գիւղիս մօտ կ'երեւին հին շինուածոց աւերակներ: Գերեզմանատան մէջ կայ գեղեցիկ մատրան ձեւ շինուած մը, զոր կը համարին մարտիրոսի մը կամ թագաւորի մը գամբարան շինելու:*

ԵԱՂԻՆ. — *Գիւղ Սիւնեաց Ագահէճք գաւառի մէջ:*

ԵԱՂԼՃԱ. — *Լիս Ա. յրարատայ Շիրակ գաւառի մէջ. 9752՛ բարձրութեամբ:*

ԵԱՂԼԻ. — *Գիւղ Ա. յրարատայ Ճակատաք գաւառի մէջ. ունի տակաւին մի յազգի բնակիչներ:*

ԵԱՂՈՒՊԼՈՒ. — *Հայարնակ գիւղ Նոտիի՝ 40 վերստ քաղաքէն հեռու: Ունի 160 տուն հայ բնակիչներ: Եկեղեցին գիւղի վերի ծայրն է: Բարձր դիրք, մարքուր օդ և առողջարար ու մարսեցուցիչ ջուր ունի: Թէ՛ արք և թէ կանայք առողջակազմ են և յաղթանդամ. կանայքն 'աշխատին արանց հաւասար: Կը վաճառեն ցորեն, գարի, կաուաստ և կարեկ. ցորենն համբաւաւոր է սարաչա անուամբ: Գիւղս ունի ախատանդի մը, Ս. Սարգիս անուն, որուն յատուկ տօնի օրերն են Քարսեթեան ասնի երկուշաբթին, և Ս. Սարգսի տօնին:*

ԵԱՂՎԱՐՏ. *Տես* ԵԼԻՎԱՊ:


ԵԱՄԱՆՃԱՂ. — *Փոքրիկ ազգապարնակ գիւղ Ա. յրարատայ Ասատան գաւառի:*

ԵԱՄԱՐ. — *Կը կիշուի գիւղս Ա. յրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. 1877ին ունէր 98 տուն, իսկ 1882ին 67 տուն. այժմ ոչինչ վիճակն չգիտենք:*

ԵԱՄԻԱՆԱ. — *Գիւղ Սիւնեաց Դահճաւան գաւառի, Երասխի աջակողմը: Ունի 110 տուն Պարսկաստանէն գաղթած հայ բնակիչներ և քանի մը ազգգիներ:*

ԵԱՑՃԻ. — *Հայարնակ գիւղ Ա. յրարատայ վարաժնունեաց գաւառի, Ոնոտամոյայ հարաւային կողմը: Ունի 905 բնակիչ, բաժնուած 78 տան: Եկեղեցին Ս. Աստուածածնայ՝ հին և անշուք է: — Ա. յս անուամբ ուրեք գիւղատեղի մը կը կիշէ Ամիրատանց՝ Ա. յրարատայ Մազազ գաւառի մէջ, ուր կան երկու եկեղեցւոյ հնաքներ և գերեզմանատուն:*

ԵԱՅԱԲ. — Գիւղ Սիւնեաց Մրգուի գաւառակ, Լոռաձորի և Տաթեւի սահմաններու մէջ, որ կը կազմուի բլլալ հին Հարժիր գիւղը։ Կը գտնուի Պաղար–չայի ձախակողմը, հովտի լանջին վրայ. հիւսիսային կողմէն պատած է բարձր ժայռերով, որոնց մէջ կան մի մեծ և քանի մը փոքր քարայրներ։ Արեւմտեան կողմն ալ, գետի աջ ափունքը կը ներկայէ հին ամրոցի մը հետքերը։ Գիւղս կեղրոնը կը գտնուի հին և չափաւոր



260. Եանար հրապոյց վիհը։

գեղեցիկ եկեղեցին Ս. Մինաս անուամբ, որուն գաւիթը կան բաւական խուռն հին գերեզմաններ։ Բնակիչք 420 հոգի են՝ ամբողջ հայ, բաժնուած 58 տան։ Կը պարապին անասնապահութեամբ և երկրագործութեամբ։

Եայճիէն գէպի արեւելահիւսիս, Քիւրակար գիւղի արեւմտեան կողմն և Արատեայ գետի ձախ ափունքը, կը գտնուի աւերակ եկեղեցի մը, մասամբ սրբատաշ և մասամբ հասարակ քարերէ շինուած։ Եկեղեցւոյ գաւթի գուռը կրկնականաւ է և բաւական գեղեցիկ։ Գաւթի մէջ կայ ապառնաքար մը ՉՀԵ թուականաւ արձանագրութեամբ և ձիաւորի մը քանդակով։ Դրան մօտ խաչքարի մը վրայ կայ ՆՂԲ (= 1043) թուականը, իսկ կամարին վրայ՝ արձանագրութիւն մը։ Եկեղեցիս պարսպապատ է. շուրջը կան հին գերեզմաններ և աներեւ աւերակներ։ — Զաղկազուրի գաւառ, Ա. 67–68։

ԵԱՂՊԱՍԱՆ. — Գիւղ Չաճնոյ (Կիլիկիա). ունի 20 հայ և 600 այլազգի բնակիչներ։

ԵԱՆԱՐ. — Պաղիիլիլոյ արեւմտեան հարաւային ափունքը, այս անուամբ հրապոյց վիհ մը կայ, Տէլիկպաշ գիւղի և լերան մօտ։ Ի հնուց շուրջը որմ հաստած են. ասկէ միշտ պայծառ կրակի բոց կ'ելլէ։

ԵԱՆԵԱ. Տես ՍԷԼԱՆԻԿ։

ԵԱՆԸՂ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի. այժմ ունի 53 տուն այլազգի բնակիչներ։ Մէջը կը տեսնուի եկեղեցւոյ աւերակ։

ԵԱՆՇԱՂ. — Արցախի վաճենեղէն մին։

ԵԱՇ. Գ. JASSY. — Ի հնումն Մոլտաւիոյ մայրաքաղաքն էր, իսկ այժմ Համանուն նահանգի գլխաւոր քաղաքն է, կառուցուած Գարսուլ և Ճօրօկան բլլոց հիւսիսային ծայրը Պահլու գետակի ափանց վրայ. Պուքրէշի հիւսիսային արեւելեան կողմը 585 հզմ. հեռու, և կալացկէն հեռու է 354 հզմ.։ Գիրքն խիտ գեղեցիկ է, օդն առողջարար և երկիրն բերրի։ Բնակիչք 90000 հոգի են, մեծագոյն մասը հրեայ։ Ի հնումն բազմաթիւ Հայք գաղթած են հոս. բայց այժմ միայն 70 տուն են, և ամէնքն ալ կառավարչական և մանաւանդ բարձր պաշտօններով կը զբաղին. առեւտրական հրապարակի վրայ կան միայն վիմաձակագործներու չորս կրպակ. կան նաև երկու արձագործներ՝ ոմանք վերջին հայկական դէպքերուն, Եկեղեցւոյ Բազմաթիւ գիւղէն փախստական եկած հոս հաստատուած են։ Կը պատմուի, թէ 1551 թուին Պուղտանու Սահիան բէկը մեծ հալածանք հաներ է Հայոց դէմ, և շատ չարչարեր է որ յանդատան լինին, բայց չէ յաջողեր, վասն զի Հայերէն շա-

ահրը եղեր ուրիշ տեղեր գացեր են։ Ժամանակաւ քաղաքիս մէջ կան եղեր բազմաթիւ Հայք, բայց զանազան պատճառներով հետզհետէ այս ու այն կողմն գաղթելով, մնացած են, բաղդատմամբ ուրիշ ազգաց, սակաւաթիւ հասարակութիւն մը, որ օր աւուր նուազելու վրայ է։ Ազգասիրական զգացումն ներն ցարդ մաս պահած են և հայ եկեղեցւոյ ծէսերուն ու սովորութեանց խիստ նախանձախնդիր. բայց ցաւ է ըսել, որ կորսուած են ազգային լեզուն, ու կը գործածեն աւելի կառավարութեան լեզուն։ Իրրև զգայուն Հայեր, ցաւելով իրենց նախնեաց հայրենիքի մէջ, համազգի քերց և եղբարց կրած բազմապիսի հալածանաց և հարստահարութեանց վրայ, իրենց կարեաց չափով օգնած են անոնց նիւթական օժանդակութեամբ, որ ապացոյց մ'է իրենց ազգասիրական սուրբ զգացմանց։

Ի հնումն Հայք քաղաքիս մէջ չինեցին քանի մը եկեղեցիներ, և ունէին առանձին հսկակապս։ Այդ եկեղեցիներէն այժմ մնացած են միայն Ս. Լուսաւորիչ և Ս. Աստուածածին։ Ս. Լուսաւորիչ՝ որ երկար ու կէս գարէ աւելի հնութիւն ունի, այժմ գոց է։ Իսկ Ս. Աստուածածին՝ այժմեան գործածական եկեղեցին է, որ շինուած է յոյժ փառաւոր, մեծագիր և վայելուչ, ու կը մնայ իրրև գոհարիկ յիշատակ մը, Հայոց անցեալ փառաց։ Եկեղեցւոյս գրան ճակատին վրայ ոսկեզօծ տառերով քանդակուած է, թէ՝ հին շինութիւնն և թէ նորոգութիւնն արձանագրութիւնը հետեւեալ կերպով. «Շնորհիւ և ողորմութեամբ Աստուծոյ ի թիւն արկեցաւ Եաշու Ս. Աստուածածնայ եկեղեցիս ձեռամբ եկեղեցպան Թաւլիսին և Սիսխանցի Տէր Յակոբին, Ջուղացի մանուկն Մարգարին և մանուկն Գրիգորին թվին Հայոց ՊՁԽԴ (= 1395)։ Եւ այժմ վերանորոգեցաւ ի ձեռն բարեպաշտօն իշխանաց և նամագի մարդոմբդոց աշխատանօք և ծախիւք ի թիւս կանոշեան փրկչին 1803ին»։ — Եկեղեցիս այժմ ունի նիւթական բարելաւ վիճակ մը, և տարեկան եկամուտն կը հասնի 18–20000 ֆրանկի. այդ եկամուտն կը գոյանայ առեւտրական հրապարակի վրայ ունեցած իրեն սեպհական կրպակներէ՝ որոնք նոր և գեղեցիկ շինուածքներ են, և շատ մը բնակարաններէ՝ զոր կտակած են Եաշի հայ գաղութի երջանկայիշատակ նախնիքը։ Այս եկամուտներով կը մատակարարուին, մէկ քահանայի, երկու դպրի, երկու ժամկոչի, մէկ մոմավաճառի, մէկ հաւաքիչ գանձապետի և անոր օժանդակ քարտուղարի թոշակները. ասոնցմէ զատ եկեղեցին թոշակ յատկացուցած է կարգ մը այլ կանանց։ Եկեղեցւոյ կալուածոց և բոլոր գործառնութեան վերահսկող մարմինն է Ազգային խորհուրդը՝ երեք անդամներէ բաղկացած։ Այս անդամները կ'ընտրուին կարող և գործօն Հայերէ և ընդհանրապէս Պրյբլեան ազնիւ գերդաստանի ազգասէր անդամներէն, որոնք ազգային կալուածոց, հասաւորութեանց պայծառութեան և շէնութեան, նմանապէս եկեղեցւոյ շքեղութեան ոչի ի բոլն հոգ տարած են և կը տանին միշտ. անոնց հոգատար ջանից չնորհիւ անշարժ կալուածոց թիւն հետզհետէ կ'աւելնայ։ Եաշի Հայք՝ ժամանակաւ ունեցեր են բարձրագոյն դասակարգութեան մը և կարող ուսուցիչներ. սակայն այժմ, հակառակ իրենց նիւթական բարելաւ վիճակին՝ զպրոց չունին, ուր իրենց սեռունդը ուսանի ազգային լեզուն ու պատմութիւնը։ Հոս կար նաև հայ տպարան մը, ուր կը տպագրուէին մանաւանդ պատգրքեր, սակայն ազգային լեզուի բարձման պատճառաւ այժմ փակուած է։ Քաղաքիս գրեթէ կէս մասը հետզհետէ հին սխ՝ բարձր գրից վրայ, Հայք ունին



261 · Եաշի Հայոց Ս. Աստուածածնի եկեղեցին։

ական ընդարձակ գերեզմանատ[illegible], ա-

բան գեաները գնած են Ագդին պրանով 1876 թուին, և հոն կառուցած են 1882ին, փայտի ու շքեղ մատուռ մը և հսկող պահակին համար տուն մը։

ԵԱՍԱՂՈՒԼ կամ ԵՍԱՂՈՒԼ. — Հայարնակ գիւղ Աչլրաթաղայ Շիրակ գաւառի, կամրջաձև լերան առոգաթաղ. ունի 1121 բնակիչ, բաժնուած 139 տան։

ԵԱՎԱՔ կամ ՌԱՍԻՒԼ–ՓՇԼԱՂԸ. — Պարտկարնակ գիւղ Արենաց վայոց ձոր գաւառի մէջ, ուր կ'երեւին Հայոց հին բնակատեղեաց հետքեր, գերեզմաններ և խաչվէմներ։

ԵԱՐԸՄՃԱՁ. — Գիւղ Արենաց Նախճաւան գաւառի, Հին–Նախճաւանէն 3 վերստ հեռու, 148 տուն հայ բնակիչներով։ Կը պարապին երկրագործութեամբ. առատ են ցորեն, գարի, կորեկ, և այլն, և պատուղք։ Գիւղս կ'ողողուի Քոփրաճ առուով։ Գրեթէ 75 տարի առաջ Աստուածատի մելիքական գիւղացի գաղթականները վերանորոգեր են գիւղս։ Հարմարաճիւղ բնակարանութեամբ և կերպարանքով բաւական նման են Թումբուլցիներուն, որոնց հետ բարեկամական կապեր ևս ունին։ Կը սիրեն երկրագործութիւնը և առատապէս։ Ժիր են և բաւական քաղաքավար. որքան կարելի է լաւ կը հագնին, մանաւանդ կանայք։ Տները մեծ մասամբ պարտէզներով շրջապատուած են. փողոցները ջրի նուազութեան պատճառաւ այնչափ մաքուր չեն։ Գիւղս շրջապատուած է լաւ մշակուած այգիներով։ Տեղւոյն գլխաւոր բերքերէն մին է նաև բամպակը, որով գիւղացիք կը պարապանին տեսակ մը կծու քիմափոշի՝ որ անուանի է այս կողմերը և բաւական կը ծախսուի։ Եկեղեցին շինուած է 1860 թուականին, ապիւռաչէն կամարներով, այս կողմերը հոչակուած Տէր Աթոյի (այժմ մեռած) ձեռքով։ — Մշակ, էջ 87։ — Կարնոյ գաշտին մէջ ևս այս անուամբ գիւղ մը կայ։

ԵԱՐ–ԹԼՓԻՒ. — Լեռնակ՝ Արենաց վայոց ձոր գաւառի հիւսիսային արեւմտեան կողմը։

ԵԱՐՀԻՈԱՐ. — Գիւղ Սերաստիոյ՝ 8 ժամ հեռու արեւելակողմը. 80 տուն հայ կայ. ունին Ս. Աթոյիս եկեղեցի՝ և Պարթեւեան անուամբ վարժարան մը։

ԵԱՐՄՋԱՆ. — Հայարնակ գիւղ Ագցախի Ասի Ալանձակ գաւառի, Թարխան գետի աջ կողմը, Ակսուլան գիւղի մօտ։ Ունի 55 բնակիչ, բաժնուած 11 տան. երկիրը բերրի է։

ԵԱՐՓՈՒՋ. — Գիւղ Զէյթունէ 10 ժամու ճանապարհ և Էչմիածնէ 3 ժամու ճանապարհ հեռու։ Ունի 70 տուն հայ և բազմաթիւ մահմետական բնակիչներ։ Հայք ունին եկեղեցի և վարժարան՝ 60 աշակերտներով։

ԵԱՐՓՈՒՋԼՈՒ. — Ալլաղպարնակ գիւղ Արենաց Գեղարքունի գաւառի, Զազալուէն 4–5 վերստ հեռու։ Ի հնումն կը կոչուէր Գադձաձոց. ժէջը կայ ուերակ եկեղեցի՝ խաչքարերով շրջապատուած։

ԵԱՐՓՈՒՋԼՈՒ. — Արենաց ժէջ, Մարենոցաց գետն այլազգիներէ այսպէս կը կոչուի, վերայիշեալ գիւղի անուամբ։

ԵԱՒՐԻ ԽՈՒՓ. Տես ԲԵՐԻԱԶՈՐ։

ԵԱՖԱ. Տես ՅՈՊՊԷ։

ԵԳՈՒՐՆԻ. — Գիւղ Պոլիսուշանի (Ռումելիա), 2 ժամու ճանապարհ հեռու։ Ազգ. բնակչաց ժէջ կան միայն 2 տուն հայ։ Գիւղս սնգհականութեան է խաչերես ազգի Մանուկեանց։

ԵԳԵՐԱՍՏԱՆ կամ ԶԷՐՔԷԶԻ ԵՐԿԻՐ. — Կովկաս լերանց արեւելեան ծայրը, Քասպեան գետոյն ձախակողմը կը դառնայ այս երկիրը, որուն լեռներուն ու գաշտերուն մէկ մասին ժէջ բնակած են ժամանակաւ, զրեթէ ինքնագլուխ, հայ բնակիչներ, որոնք յետոյ կառուցած են Նոր Աբուսիր քաղաքը։ Ազգ. Հայոց վրայ Պ. Աթոյիս Զամհրեանեան Քովհաննիսեան, առաւելեալ գրուածքի մը քաղելով կարեւոր տեղեկութիւններ հրատարակեց 1856ին, Մասեաց Աղաւնիի ժէջ, ժինչ ալ ետքէն կ'ամփոփենք հետեւեալները։ Ազգ. եղեռնահայք, կամ ինչպէս իրենք կ'ըսեն, Զէրքէզ–Հայք՝ կը պատմեն առասպելաձեւի թէ իրենց նախնիքը Խրիմէն, Տրապիզոնէն, Սինոպէն ու Տաճկաստանի ուրիշ նաւահանգիստներէն գացեր են հոն։ Ասկէց 250 տարի առաջ այն տեղերուն հայ վաճառականները առուտուրի համար Զէրքէզի երկիրը երթալով ու գալով, լեռնական իշխաններուն հետ բարեկամացեր ու ազգական սովորութիւններուն վարժեր են և անոնց բոլոր վաճառականութիւնը Հայոց ձեռքը ան-

ցիր է։ Կամաց կամաց այնչափ սիրելի եղեր են Հայը Չերքէզի իշխաններուն՝ որ զանոնք իրենց երկրին մէջ բռնելու մաքով շատ հայ երիտասարդներու իրենց աղջիկները հարսնացուցեր են։ Նոյն ժամանակները այն կողմի Չերքէզները գեռ մահմէտական չէին, այլ իրենց հաւատքը քրիստոնէութենէ, կռապաշտութենէ ու մահմէտականութենէ ձեւացած խառնուրդ մ'էր։ Տրապիզոնի ու Սինոպի Հայերէն շատ մարդիկ, վերջն ալ Խրիմէն շատ հարուստ անձինք, լսելով թէ Չերքէզի երիտը գնացող Հայը մեծ հանգրուանութեան ու պատուոյ մէջ են, հետզհետէ հոն անցան սեպհականութեան։ Շատ սիրով ընդունուեցան Չերքէզներէն ու փեսայացան անոնց, բայց այս պայմանով՝ որ իրենց հարսերն ալ մկրտուին քրիստոնեայ ըլլան, և Չերքէզ իշխանները ամենևին չխառնուին իրենց կրօնական պաշտամունց։ Չերքէզներն ալ խօսք առին որ ոչ միայն Հայոց աստուածպաշտութիւնը արգիլք չըլլան, այլ և թող տան որ քաղաքական խնդիրները ու պատասխանատուները ալ Հայք իրենց մէջ որոշեն, ու իրենք զիրենք ուղածնուն պէս կառավարեն։ Այսուհետև Հայք համարձակ ցրուեցան լեռնականաց գիւղերուն մէջ, խնամութիւն բերին անոնց հետ ու քանի գնացին շատցան, այնպէս որ շատ գիւղերու բնակչաց մեծ մասը Հայ եղաւ, և ամէն մէկ գիւղի մէջ եղած Հայոց գլխաւորը երէցփոխան կ'բռուէր, երբեմն ալ Թեմատուռ։ Երէցփոխան բռուելուն պատճառն այս էր որ Հայք այն կողմերը սեպհականած տաճարներն չէին կրնար միշտ հետերնին քահանայ առնեալ. քահանայն մէկ գիւղին հազիւ պիտոյքը հոգալէ վերջ մնացածին կ'երթար, և իր տեղը փոխանորդ կը դնէր ժողովրդեան հաւնած մէկ անձը, որ պատասխանները կը կարէր, և երբեմն եկեղեցական պաշտամունք անգամ կը կատարէր։ Չերքէզները Հայոց գօնուց՝ այսինքն հիւր անունը կու տային, որ իրենց մէջ բարեկամ բռնելու չափ գօրութիւն ունի. և յիրաւի հիւրասիրութիւնը Չերքէզաց համար սրբազան պարտք մ'է։ Հայք անոնց հիւրասիրութեան ուժովը ամենևին նեղքին կամ արատաբին թշնամի ներէ վախ չունէին։ Չերքէզ իշխանները քիչ առնէն իրենց հայ հիւրերուն Լօզոնէ այսինքն ազնուական բռնելու պատիւն ալ տուին. ասով Հայք ևս իրաւունք ունեցան գերիներ ունենալու, և մինչև յետոյ անուսա գերի ունեցող Հայեր կային մէջերնին. բայց այս պատճառաւ իրենց քաղաքական ազատութիւնը քիչ մը պակսեցաւ, վասն զի գերիները երբեմն գանգատ կ'բռնէին նոյն տեղի Չերքէզ իշխանին իրենց տէրերուն դէմ. իշխանն ալ եթէ գաժան մարդ հանդիպէր, շատ նեղութիւն կու տար տէրերուն։ Հայք Խրիմէն և Թամանէն կ'անցընէին Չերքէզներուն երկիրը գանագան տեսակ վաճառքներ ու ձեռագործներ, և մանաւանդ աղ ու երկաթեղէն. իսկ ասոնց փոխարէն ոչ միայն մորթ, կաշի, ձի, ոչխար, մեղր, մոմ և ասոնց նման բերքեր կ'առնէին անոնցմէ, այլ երբեմն նաև մանչ ու աղջիկ պատանիներ՝ գորս կը տանէին ծախելու Խրիմու թաթար խաներուն։ — Ասկէ գրեթէ 150 տարի առաջ, երբ Յունկաստանէն մահմէտական քարոզիչներ գնացին Չերքէզներու երկիրը և շատ մարդ սրտացին, սկսան Հայոց խաղաղութիւնն վրդովիլ, որովհետև Չերքէզները սկսան Հայոց վրայ ծուռ նայիլ, ու անոնց բրիստոնէութիւնը աչքերնուն փուշ եղաւ։ Պելկրատի պաշտպրութեան տարին՝ 1739ին, կապարթայի բնակիչները որ Քաւսի ափերուն հպատակ ճանչցուած էին, որոշուեցաւ որ ինքնագլուխ ըլլան, տալով մահմէտականութիւնը տալի զօրացաւ Չերքէզներու մէջ։ Հայք ի սկզբան հաստատուն ձեացին իրենց կրօնքին վրայ. բայց որովհետև մինչև այն ժամանակները Չերքէզներու մէջ ցրուած կը կենային, վասնզ կար որ իրենց հայրենի հաւատքը ձեռքերնէն երթայ, ուստի սկսան իրարու հետ խօսք դնել որ հետևեան Եգերաց երկրէն։ — Կ'ըսեն թէ նոյն ժամանակները Ալեքսէյ–Էյվէզ անուանով Չերքէզ իշխանին մէկը խորհուրդ տուաւ Հայոց որ ամէնքը մէկտեղ ժողովուին ու ի միասին բնակին, տեղ մը ևս որոշեց երկրին մէջ Շահվաշէ գետին մօտ, որ հոն հաստատուն բնակութիւններ։ Հայք բաժնուելով լեռնականներէն սկսան գալ բնակիլ այն որոշուած տեղերը, որով շատ մը երեք մեծամեծ տաճարներ և քանի մը մանր գե-

դեր ձեւացան։ Նոյն միջոցին Խրիմէն և ապա Էջմիածնէն մէկ մէկ այցելու վարպապետներ եկան Եգերահայոց հոգեւոր պիտոյքը հոգալու։ Աղրւմեանց Յովսէփ արքեպիսկոպոսն, շատ անգամ քահանայ դրկեց լեռնական Հայոց, և երբ 1781ին Խրիմու Հայք Նոր Նախիջեւան փոխադրուեցան, ասոնցմէ ալ նոյն առաջարկեցաւ նաև Ջէրքէզի Հայոց որ եթէ կ՚ուզեն Թուրքաստան անցնին։ Երկրորդ անգամ ևս նոյն առաջարկն եղաւ բայց միայն հինգ ընտանիք փոխադրուեցան, իսկ միւսները տեղերնին մնացին, որովհետև իրենց Ջէրքէզ կառոյց չէին ուզած հայրենիքնին թողուլ։


Անցեալ դարու սկիզբները քանի մը հայ ընտանիք Շէյխ Մանսուր անունով սուտ մարգարէին խօսքերուն հաւատալով տեղահանցան և գնացին բնակեցան Ընտիա քաղաքը։ Այնուհետև լեռնական իշխաններու ամէն չանք ըրած են որ քահանայ չերթայ Հայոց, ուրով տոիպոսին տեղհատարար։ Թուրաց և Օսմանեանց մէջ 1828–29ին եղած պատերազմներէն վերջ, Սեւ ծովուն եզերքը Թուրաց ձեռքն անցնելով, Ջէրքէզներու և Հայոց վաճառականութիւնն ալ ծովու կողմէն կրնայ, և Հայք սկսան կովկասի հիւսիսային կողմը գտնուող Թուրաց գաւառներուն հետ առեւտուր ընել։ Ջէրքէզները այնուհետև առատիկ հալածանք հանեցին Հայոց դէմ, ձեռքերնէն շատ ապառաժութիւններ առին, իրենց գերիներու կարգը անցուցին, շատ մարդ մեռուցին և շատեր ալ լեռներու ներսի կողմերը քշեցին։ Թեպէտ Հայերը վրձեցին 1838ին Թուրաց Ջաւ զօրապետին և անոր պաշտպանութեամբ դիմեցին Թուրաց տեղմանին մօտ անառաներու մէջ վրաններով բնակեցան հինգ հարիւր տուներէ աւելի։ Ջաւ զօրապետը աէրութեան ծախքով եկեղեցի մը շինեց և յորդորեց Հայոց որ անոր քով հաստատուն բնակարաններ շինեն և քաղաք մը ձեւացընեն։ Ջէրքէզները 1841ին յարձակեցան Հայոց վրայ, տներնին այրեցին, կողոպտեցին, քանի մը հոգի մեռուցին և շատեր ալ գերի տարին. բայց Հայք ատով ալ չյուսահատեցան. Թուրաց աէրութենէն և Թուրահայերէն տասի ընդունելով իրենց քաղաքը շինեցին և անունը դրին Նոր Ախմատիր՝ զոր նկարագրած ենք ի կարգին։ — Մատեաց Ագաւեի, Բ. 319–323։

ԵԳԻՊՏՈՍ, ՄՍԲ. Գ. EGYPTE. — Աֆրիկէի ամենէն ծանօթ և ամենէն նշանաւոր աշխարհ, մանաւանդ հին հոյակապ շինուածոց պատճառաւ, որոնք անխիթ են։ Թեպետ հին ժամանակներէ սկսեալ Հայք վերաբերութիւն ունեցած են Եգիպտոսի հետ, որուն հինաւուրց և անհոգծանելի արձանագրութեանց մէջ, պետուններէն ամենը գրոշմուած կը համարին ազգիս անունը Ամենեհե։ Որովհետև պատմական գարուց սկիզբէն ի վեր միշտ բարգաւաճ եղած է Եգիպտոս իրեն այլ և այլ քաղաքներով և շահաստաններով, մեր ազգն ալ նոյն ժամանակներէն սկսեալ անընդհատ վաճառականական յարաբերութեան մէջ եղած է։ Մինչեւ գարուց մէջ Հայոց գաղթականութիւն սկսեր է ձեւանալ ատա և կամաց կամաց բազմանալ. ԺԱ գարուն հազարաւոր հայ տուներ կային, երբ մեր մեծ վկայասէրը Գրիգոր՝ իրենց այցելութիւն բրաւ և իր քեռորդին անունց հովիւ կարգեց։ Նոյն ժամանակ և վերջն ալ երկար տարիներ հազարապետ և գրեթէ աէրութեան մարիչն էր Հայազգի անի Պետր–էֆ–Ճեմալ, ինչպէս նաև ուրիշներ՝ ԺՌ գարու մէջ։ Նոյն գարուն Հայք հաճութեամբ Սալահէտտինի Դիմիներու ձեռքէն առին իրենց կրկին եկեղեցիները՝ զոր անունք գրաւած էին. անոնք այդ միջոց Հայոց վաճառականութիւնն ալ լաւ վիճակի մէջ էր։ Թէպէտև ԺԶ–ԺԴ գարուց մէջ շատ անգամներ հակառակութիւններ եղան Եգիպտոսի սուլտանաց և մեր Կիլիկիոյ թագաւորաց մէջ, բայց հաշտութեան ժամանակ վաճառականութեան պաշտպանութիւն ունէին։ Կիլիկիոյ գլխաւոր վաճառքի տեղին էր երկրին երկաթը, որուն հին ժամանակի փարաւոնները ևս կը փափագէին։ Իսկ յաջորդ գարուց մէջ և Շահ Աբասի ժամանակ դեռ աւելի զարգացած է Հայոց վաճառականութիւնը, ինչպէս ուրիշ աշխարհաց, նոյնպէս և Եգիպտոսի հետ։ Յիշելու ենք նաև, որ ԺԱ–ԺԲ գարուց հանգոյն մեր ժամանակներն ևս, Եգիպտական աէրութեան յատուկ պաշտօնեաներ և հազարապետներ եղած են և կան տակաւին Հայեր, մանաւանդ Անգղիոյ Եգիպտոս մնա-

լէն առաջ։ Եգիպտոսի գլխաւոր քաղաքներն այժմ են Ալեքսանդրիա և Գահիրէ, որոնց նկարագիրը իրենց կարգին բրած չլինելով, կը դնենք ահա առաջ։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ (Alexandrie) քաղաքն հոյակերպ դասակերտն է Մեծին Ալեքսանդրի, որուն ուրիշ ձեռակերտները շատով անհետացան, բայց սա կայ և կը մնայ իր պրից պատճառաւ, որ կը գարձնէ զինքը կեդրոն միջնորդութեան և յարաբերութեան Ափրիկէի, Ասիոյ և Եւրոպիոյ։ Հիմնարկութենէն անմիջապէս վերջ, Միջերկրականի և բոլոր ծովուց անհամեմատ և անպիտան պրելի դիրքին եղաւ, ոչ միայն յաջորդելով աշխարհի հնագոյն նաւահանգստ ազգին մեծահռչակ մայրաքաղաքին Տիւրոսի, այլ և գօրեղապէս մրցելով կարթեգոնի հետ։ Ալեքսանդրիա միայն վաճառականութեամբ և հարստութեամբ չտիրեց Միջերկրականի, այլ նաև քաղաքակրթութեամբ, ուսմամբ, գիտութեամբը և արուեստիւք, որոնց միակ վառարանն եղաւ՝ իր մէջ ամփոփելով և լաւ կերպով փայլեցնելով բնիկ եգիպտական, Ալեքսանդրի բանակաց հաւէն յորդող յունական, և այդ երկուքի հետ խառնուող պարսկական քաղաքակրթութիւնն՝ երեքին բազմազան երեսյիններին և վատ ու յոռի կողմերուն. քաղաքակրթութիւն մը՝ որ Ալեքսանդրեան կրնայ կոչուիլ, ինչպէս կարն իրօք Ալեքսանդրեան կոչուեցաւ։ Ալեքսանդրիա այդ ժամանակներն իր փառաց գագաթը կը պահուէր, բան որում իր մէջ ձուլուած էին Մեմֆիս և Թեբայիդ, Ասիէնք ու Կորնթոս, Պերսապոլիս և Բաբելոն, Տիւրոս ու Կարքեդոն։ Քաղաքս միշտ կարեւոր դիրք մ՚ունեցաւ մինչև փրկչական 640 թուականը, երբ նուաճուեցաւ Արաբացիներէն Ամրու զօրավարի ձեռքով՝ որ արաբական մեծ արշաւանաց երեք պետացներէն մին է։ Երբ Ամրու Ալեքսանդրիոյ տիրեց, մէջը 4000 պալատ, 4000 բաղնիք և 400 թատրոն կային. ասոնց մէ կարելի է ենթադրել նաև բնակչաց թիւը։ Կ. Պոլսի Հերակլ կայսրը, լսելով քաղաքիս կորուստը, սրտին ցաւէն մեռաւ. Ալեքսանդրիոյ կորուստն էր միանգամայն կորուստ Բիւզանդիան իշխանութեան ներքոյ եղած բոլոր Ափրիկէի գաւառաց. Ալեքսանդրիայ ափերը, ափ էր և Եգիպտոսի։ Այսպէս եղաւ Մեծին Ալեքսանդրի օրով, այսպէս և 1882ին, երբ անգլիական բանակը անապատ մնաւ յԵգիպտոս՝ Ալեքսանդրիան ամրակածելով գրաւելէն անմիջապէս յետը։ — Երկու գարէ աւելի էր, որ Պաբսիկները կը տիրէին բուրգերը շինողաց աշխարհին, երբ Մակեդոնացի աշխարհակալն 331ին (Ն. Ք.) իր ազատարար Եգիպտացիներէն ընդունուեցաւ։ Պարսիկները բռնութեամբ կը նեղէին զԵգիպտացիս և անոնց կրօնքը ի՛արհամարհէին. Ալեքսանդր անոնց կրօնից և օրինաց նկատմամբ շատ ազատութիւններ շնորհեց և հիմնեց իրանուն քաղաքս։ Ալեքսանդրիա թէպէտ համաշխարհական վաճառականութեամբը հարստացուց Եգիպտոսը, բայց պատճառ եղաւ Մեմֆիսի և ուրիշ նշանաւոր քաղաքաց անկման։ Ալեքսանդրի մահէն (323էն) սկսեալ մայրաքաղաք եղաւ իր այս ձեռակերտը, անոր աշխարհաժառալ պետութեան բնակարնէրէ կազմուած նախ բազմաթիւ, ապա երեքի յանգած այն երեք պետութիւնները էին միայն, որ Պաղոմեան անուամբ ծանօթ է և որ տէրէ երկար տեւեց քան միւս երկուքը, Մակեդոնականը ու Սելեւկեանը, և վերջացաւ հռովմ. 31ին (Ն. Ք.)։ Պաղոմեան նախկին երեք թագաւորները, Հայր, որդի և թոռն, Պաղամէս Սոտեր, Փիլադելփոս և Եւերգետէս անուամբ, որոնք իշխեցին յաջորդաբար գրեթէ 100 տարի, աշխարհի տակաւաթիւ միապետներէն են. անոնց օրով Եգիպտոս հասաւ բարգաւաճութեան, պայծառութեան վերջին ծայր, մտաւորական՝ գիտական՝ արուեստական ու բարոյական տեսակէտով։ Անոնց ժամանակ կառուցած է Փարոսի ահեղաբարձակ նաւահպանգ լուսատու աշտարակն՝ որ աշխարհիս եօթն հրաշալեաց մէն կը համարուէր. նոյնպէս ասոնց օրով կարմիր ծովը միացաւ Միջերկրականի հետ՝ միջնորդութեամբ Նեղոսի։ Այդ ջրանցքն Եգիպտոսի նախկին փարաւոններէն Նեքաւով սկսած էր նախ փորել տալ, որ Դարեհ Վշտասպեան պարսիկ աշխարհակալը շարունակեց, բայց կարծելով թէ կարմիր ծով Եգիպտոսէն աւելի բարձր չինելով պիտի ողողէ ձգից, իսկ Պաղամէս Փիլադելփոս դիանալով այդ երկիւղն ան-

հին լինելը՝ ատարաց, որ թէև ներկայ ջրանցքին նման կառուցուած պիրամիդներ չէր ըլլար, բայց ժամանակին պիտոյից և նուագ կը բաւէր։ Պատմական մեծագործութեանց արդասաց մին է նաև Ակեքսանդրիան պրաստան հաստատութիւնն, որուն մէջ 700 հազար գիրք գեսեղուած էր, երբ ոչ թուղթ և ոչ տպագրութիւն կար, այլ պապիրոս կամ մագաղաթ և ձեռագ մատուներ կը տեսնէին այդ գործեր. հոս գրուեցաւ նաև




262. Ակեքսանդրիոյ Հայոց Ս. Գէորգ Պետրոս եկեղեցին։

Լօխմանութենից թարգմանութեամբ Աստուածաշունչը։ Այն ժամանակները ոչ մի պատճառն կամ խնդրատէր առանց այս գրատունն այցելելու չէր կրնար հեղինակութիւն մը լինել։ Նախ Յուլիոս Կեսարու արշաւանաց ժամանակ (48 Ն. Ք.) հրդեհ մը գրատունս կէսը լափեց և վերսաին նորոգուեցաւ։ Յետոյ, ըստ ամենց, Աբարացոց հարձման ժամանակ Ամրու գօրավարը հարցուցած լինի Լօմէր Ամիրապետին թէ ինչ լինելու է մատենադարանին գրքերը, և նա պէտք է այրել ըսեր, որով Ակեքսանդրիոյ բաղնիքներն այնուհետև վեց ամիս միայն գիրք վառեր են։ Սակայն, ըստ այլոց և աւելի հմուտաց, Մեծին Թէոդոս կայսեր ժամանակ (378–395 Ք. Ք.) Ակեքսանդրիոյ մէջ տակաւին կանգուն էր Սերապիոն հիւսուածոյ մեհեանն, ուր երբեմն Ասպիս եզը կը պաշտուէր։ Քրիստոնեայք նախանձայուզութեամբ կործանել կ'ուզեն զայն, բուրվերը և իրենց կուռակիցք կը պնդրեն, կռիւը կը մեծնայ. կայսրը խնդրուիլ կը հրամայէ վինու գօրութեամբ վանել ընդդիմութիւնը և կործանել։ Նոյն ժամանակ, կ'ըսեն, Սերապիոնին հետ կը կործանի նաև գրատունն՝ որ անոր մասն է եղեր և կ'այրուին գրքերը իբրև նախապատրաստիչք հեթանոսութեան և մոլորեցուցիչք քրիստոնէութեան։ Բայց ճիշդ է թէ Ամրու ևս գրքեր այրեց քաղաքին մէջ, սակայն անոնք նոր գրուած և գրուած էին հոն քրիստոնէական ոգով և գրչով։ — Երեք Պատմահոց յաջորդները ամէն տեսակ մոլութեամբ լի էին, մանաւանդ յաջորդական կամ ժառանգական ինդրոց համար։ Այնուհետև անուանապէս անկախ, բայց իրապէս Հռոմայեցւոց հրամանով կը կառավարուէր Պատմհան ազգութենէն, մինչև որ վերջապէս կործանեցաւ Ակահոնի ճակատամարտով, կղէոպատրա թագուհւոյն օրով։ Այս վայրկէր կղէոպատրան, որ Պատմհանց վերջին ժառանգն եղաւ, պրհատել տուաւ մեր Ա. Աբրահամեանց որ և իրեն արդուց ու ազգականաց ալ չէր խնայած։ Հռոմայեցւոց տիրապետութեամբ կորաւ Ակեքսանդրիոյ և Եգիպտոսի կեանքը։ Ի վերջոյ, Աբարացիք գրաւելով գԱհիրէ հիմնեցին, հետեւապէս Ակեքսանդրիա երկրորդական քաղաք դարձաւ, պահելով միայն իր ծովային առեւտրութիւնն։

Այժմ Ակեքսանդրիա, Միջերկրականի եզերքը՝ Նեղոսի անգքէն մօտ 12000 քայլ հեռու, Գահիրէէն վերջ, Ափրիկէի մեծագոյն քաղաքն է, բայց գեղեցկութեամբ ու ճոխութեամբ գերազանց քան զնա, և թէպէտ ափրիկեան հողի վրայ, բայց ամենայն մասամբ եւրոպական քաղաք մ'է։ Երկայնաձգած ու լայնարձակ փողոցները, յատակաց ամենամաքուր սալարկութիւնն, ատոնց

պալատանման շինուածքն և արձանչելատեսիլ շքեղութիւնն, կրկնակ նաւահանգստին անհամար նաւերով և անուսուցիչ կայմերով ծածկուիլը, առեւտրական մեծ շարժումն, բանուկ ճոխ վաճառանոցն՝ ուր ամբարուած կան աշխարհիս ամէն վաճառք, Նեղոսի ձեռագործ ջրանցքին ընդհատակայութիւն, յորմէ կ'ընդունի խմելու և գործածելու ջուրն անհատապալի առատութեամբ, Գահիրէի հետ միացնող երկաթուղին՝ որ անդադար մարդ ու իր կը փոխադրէ, հազարաւոր կառքերն որ գիշեր ու ցերեկ կը շառաչեն հարթայատակ ասֆարիներու վրայ, գիշերային լուսաւորութիւնն, պրօսարանաց՝ խաղատանց՝ թատրոնաց՝ սրճարանաց ու գինետանց յաճախութիւնն, որոնք գրեթէ գիշերներն ալ բաց են մինչև առաւօտ, աշխարհի ամէն մասանց հետ հեռագրական ու շոգենաւական հազորդակցութիւնը, բիւրաւոր եւրոպացւոց անդարնակութիւնը և հազարաւորաց յաճախական այցելութիւնքն, այլ և անհամար սեւ ու ճերմակ, ասիացի ու աֆրիկեցի բնակչաց հոսել ու գեռալն և անոնց գանագան լեզուներու ու բարբառոց խժալոյր ու ներդաշնակ խառնուրդը, և ամէն բանէ աւելի քաղաքական կանոնաւոր ու ապահով վարչութիւնն զԱղեքսանդրիա հոչակաւոր կ'ընեն։ Բնակիչք մօտ 320000 կը հաշուին։ Ասկէ 16 տարի առաջ Հայոց թիւը 400ը չէր անցներ, իսկ այժմ 3000ի կը մօտենայ։

Քաղաքիս արեւելակողմը կառուցուած է Հայոց եկեղեցին՝ 1884 թուականին. այս թուականէն առաջ եկեղեցական արարողութիւնք կը կատարէին այժմեան եկեղեցւոյ շուրջը տարածուող պարտէզի տան մը մէջ, որ ժամանակաւ սեպհականութիւն էր Պօղոս Պէյ Էուսուֆեանի։ Երբ Պօղոս Պէյ 1844 թուին մեռաւ և Թադուհեցւոյ տեղ ծառայող շէնքին մօտ, յաջորդ տարին իրեն ազգականներէն մէկը Էուսուֆ Պէյ՝ Զմիւռնեայէն գալով աճուրդի հանից հանդուցեալին բոլոր կալուածները, որոնց մէջ էր նաև եկեղեցւոյ շուրջը տարածուող 18–20 տաւարաւոր երկիրը, ուր կը հանդչէր Պօղոս Պէյ և ուր կը գտնուէր Հայոց առժամանակեայ եկեղեցին։ Էուսուֆ Պէյ անշուշտ այդ շէնքը և Պօղոս Պէյի գերեզմանը պիտի դաստէր և մեռցած գեղերը պիտի ծախէր։ Բայց Թախիր Մուհամմէտ Ալի Փաշան՝ չուզեց որ իր սիրեցնալ եպարքոսին գերեզմանին շրջակաները օտարաց սեպհականութիւն դառնան, ուստի ինքն ալ աճուրդին մասնակցելով աւելի բարձր գինը վճարեց և ամբողջ գեղերը Հայոց նուիրեց։ Եկեղեցին կառուցած է ազգին ըրամով և հանդուցեալ Թադոս Փաշայ Յակոբեանի նախաձեռնութեամբը, որ նոյն տան Թադոսեան խոշորագոյն տէրն էր։ Նուիրուած է յանուն Ս. Պօղոս Պետրոսի՝ ի յիշատակ հանդուցեալ Պօղոս Պէյի։ Եկեղեցիս տարեկան մօտաւորապէս 1500 անգ. ոսկի հաստատուն եկամուտ ունի։ — 1800 թուին կատարուած ըրխատնէից կոտորածէն



283. Աղեքսանդրիոյ Հայ ուղղափառաց եկեղեցին։

վերջ, Գահիրէի Հայ ուղղափառներէն մնացք եկած հաստատուած են քաղաքս, որոնք մինչև 1890 թուականը առանձին եկեղեցի չունենալով, Լատինաց եկեղեցւոյն մէջ կը կատարէին իրենց հոգեւոր պէտքերը։ 1890ին Գեր. Աղէքսիոսեան Բառնաբաս եպիսկոպոսի ջանքով ունեցան գեղեցիկ առաջնորդարան մը և մատուռ մը՝ նուիրուած Ս. Աստուածածնի Ամարաս Քոյրենաց։ Այս մատուռն փոքրութեան պատճառաւ հարկ եղաւ 1894ին փլցընել զայն և տեղը կառուցանել այժմեան եկեղեցին, որ գրեթէ 20 մատր երկայնութիւն և 12մ. լայնութիւն ունի։ Եկեղեցւոյս շինութեան համար, նոյն հայ հասարակութենէն ազնուաշուքն Թալիճ Թադոս Փաշայ առած է 35000 ֆրանկ։ Շի-

նուիրուն ատարանէ վերջ, նոյն ատեն փաշան և եղբայրն Նասըի Պէյ, խնամքով զարդարուին գայն վայելուչ կերպով, և 1895 մարտի մարտ 24ին կատարուեցաւ մեծ հանդիսով ամոր օծումները։ — Փաշազունի Հայը ունին մէկ մանչ ազգակից ու մէկ աղջկանց նախակրթարան. երկուս երախայից

են, և ակնարեան գանազան պաշտօններու պյուխ կեցած։ Փոքր խումբ վաճառականներ են, և մասնաւորապէս ծխախոտի գործը անոնց ձեռքն է. արհեստներու մէջ սակաւաթիւներ ի հնուց ծագած է Հայոց ձեռքը. կան նաև ուրիշ գանազան զբաղմունքի արհեստաւորներ։ Վերջին հայ գաղթականու-



264. Խալիլ Խայալի Փաշայ։

համար ունին նաև մանկապարտէզ մը։ Աշակերտաց համագումարն է 210, կէսը մանչ, կէսը աղջիկ. աւարիան նիամուան է 700 անգլ. ոսկի։ Հայկական վարժարանն ալ Պօղոս Պէյի շնորհիւ հաստատուած է. բաւական բնդարձակ շէնք մ'է յատուկ զբաղմունքներու բաժնուած։ Աղեքսանդրիոյ Հայը, ի հնուց բարձր կերպ մը ունեցած

թիւնէն (մեծ մասամբ Պոլսէն) ի վեր, վաճառատան և պրամատան պաշտօնեաներ, մեծ խումբ բանուորներ, կօշկակարներ, կերձակներ, և այլն, աւելցած են։ Գաղթականութեան մէջ կեանքացի Հայը հնուց ի վեր մեծ տեղ գրաւած են։ — Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած բնիկ Թալասցի Յակոբ Էֆ. Աշըգեան, կենդանութեան միջոց, բազաքիս

մէջ իրեն անգհատան 7 կալուածոց տարեկան հասոյթին (մօտ 2000 լիրա) 100ին 58 մասը կտակած է ազգային այլ և այլ հասարակութեանց համար, եկեղեցական Շէհրիի Մանչեսթէի մէջ արձանագրել տալով բան օրինի, հետեւեալ բաժանմամբ. 100ին 5՝ Երուսաղէմայ վանքի ժառանգաւորաց վարժարանին. 100ին 5՝ կ. Պոլսի Ս. Փրկիչեան հիւանդանոցի. 100ին 3՝ կեսարիոյ Թալաս տանի մէջ իր անունը կրող օրիորդաց վարժարանին. 100ին 3՝ կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանին. 100ին 2՝ Աղեքսանդրիոյ Հայոց վարժարանի ապագա ուսանողաց. իսկ 100ին 40ը պիտի գործածուի կալուածոց գնման, և երբ 15000 անգլիական լիրա չինի գնուած կամ շինուած կալուածոց արժէքը, անոնց հասոյթով Հայաստանի մէջ արուեստից վարժարան մը պիտի բացուի 3000 լիրա ծախքով, և 2000 լիրա ալ պիտի գործածուի Հայաստանի մէջ եկեղեցական հաստատութեան մը համար։ — Թաղարիս մէջ հաստատուած նշանաւոր ազգայիններէն բնիկ Զմիւռնիացի կարապետ էֆ. Յակոբեան 1887ի հոկտ. 13ին վախճանելով, յուղարկաւորութիւնը մեծաշուք հանդիսով կատարուեցաւ և մարմինը խոժիմի հրամանատ թաղուեցաւ եկեղեցւոյն պարտիզին հին գերեզմանատան մէջ։ Ասոր եղբայրը նա Թաղար փաշայ 1888ի օգոստ. 7ին կնքելով մահկանացուն, նոյնպէս խոժիմի հրամանատ մեծ հանդիսով թաղուեցաւ նոյն գերեզմանատան մէջ։ Ա՛ս 5000 ոսկւոյ դումար մը կտակած է Զմիւռնիոյ մէջ օրիորդական դպրոցի մը հաստատութեան համար, պայմանատ որ այս դումարը շահու դրուի իրեն կտակակատար Նուպար՝ և որուն Պօղոս փաշայի ձեռամբ, մինչև որ չափահաս չինի իրեն Վահան Պէյ որդին և գործադրէ հօրը կամքը։ Վարժարանը պիտի կոչուի Դարուհեան՝ իրեն վախճանած գաւակ անուամբ։ Հայկական կրկին՝ հին և նոր գերեզմանատուններ կան քաղաքիս մէջ։ Հինն՝ որ բազմաթիւ ծառերով և գմբէթեայրկ մատուռներով զարդարուած է, եկեղեցւոյն մօտ է և ունի գրեթէ 1½ արտաւար ընդարձակութիւն։ Գերեզմանատանս մտից աջ կողմը մարմարեայ քարի մը վրայ հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Յիշեցէք զոգի մեծատուն Էտուարտ Պօղոս Պէյի Զմիւռնացւոյ բարեբարիւ Աղգի և Նորին ի Տէր հանգուցեալ հանգչի բարեպաշտ բնութենացն։ 31 դեկտ. 1888»։ Հին գերեզմանատունը առաջ փոքր էր և վերջը պարտիզէն մաս մը ուելցուցին. ասոր յիշատակարանը կը տեսնուի մտից ձախ կողմը. «Նորոգ՝ շինեալ գերեզմանատունս վերացաւ ընդ հանգուցեալն, արեւամբք և ծախիւք ազգային եկամտից ի



265. Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդարանը և Վարժարանը։


հոգեբարձուբեան վաեմ. Էտուարտ փաշայի և վերակացուբեամբ նորին գործակատարի»։ Լուսնափեան Պօղոս Պէյի գերեզմանին կը գտնուի եկեղեցւոյն ձախակողմը համակ մարմարիոնեայ և գմբէթայի գմբէթաձեւ կամարի մը ներքեւ։ Մահարձանի վարի կողմի ճակատին վրայ՝ ուսման, հանճարի, արհեստի և վաճառականութեան վերաբերեալ պատկերներ քանդակուած են. վերի կողմն թագ և կշիռ, որոնց վրայ կը կենան թաչ և Միրտ Ս. Կուսին Մարիամու արձանագ. աջ կողմը ախրագգեցիկ հրեշտակ մը, իսկ ձախ կողմը

սահարը ձեռքը պլխիկը կայս մը։ Մահաձանին ձախ կողմը հետեւեալ արձանագիրը կայ. «Ո՛վ հոգի ազգասէր, Պօղոս Էուտոֆիեան, որ զմայրն Հայաստան և զհօրա հանգստաս ի սուգ տարաժամ թողեալ վերացար. Հայոց 29 դեկտեմբեր 1843. զայս յաւերժ յիշատակ չնաշխարհիկ հանձարոյդ ի քոյինդ դաստակերտ տաճար տէրունական յազգակցացդ սիրոյն ընկալ և հանգիր. Ցրտաձկաց 10 յունվար 1844»։ Այս արձանագրութեան մէջտեղը գաղղիերէն ևս գրուած է։ Պօղոս Պէյի գերեզմանին դէմ՝ պէկ յաբեւմուտս, խարխուլի կառափարիչ Աւաքիլ Պէյ Նուպարի գերեզմանը կայ շուքջանակի վանդակապատ. այս գերեզմանի փառաւոր և հոյակապ մահարձանն՝ որ քառակուսի ձեւ մ՚ունի, հինգ աստիճան կը բարձրանայ ձիւնափայլ մարմարիոններով. մահարձանին դագաղաձեւ չորս անկիւնները մարդակերպ չորս առիւծներ նռռած են. դագաղին կափարչին վրայ երկայն խաչ մը տարածուած է, և խաչին ներքեւէն մօտ 3մ. լայն և 4մ. երկայնութեամբ սառան մը ձգուած է, որուն ծալքերը այնպէս աքանչելապէս ճարտարութեամբ պրուպուած են, որ սպիտակ կտաւի մը բնական ծերքը կը ներկայացնէն. մահարձանին պլխի կողմը երբ 8 տարեկան աղեկ մը նռռած է ձեռնամած և պլխիկոր, շապիկն երկուքի բաժնուած, սիրտը բաց, որունքները մերկ և պլուխը գաղկ մը։ Գրեթէ 1000 ոսկի ծախք եղած է այս մահարձանին համար. վրան հետեւեալ տապանագիրը կայ. «Աւաքիլ Պէյ Նուպար ծնեալ ի Զմիւռնիա 27 դեկտ. 1826 ամի. կոչնակալ Աղեքսանդրի և խարրուբի, վախճանեցաւ ի խարրուբ 13 սեպ. 1858 ամի. յիշեցէք յաղօթս»։ Այս տապանագրին ներքեւ նոյն խնամատով գաղղիերէն ևս գրուած է։ Նուպար Փաշայ Նուպարեանի դամբարանն ալ այս հանգստարանի մէջ կը գտնուի։ Իսկ երկրորդ և նոր գերեզմանատունը քաղաքին հարաւակողմը կապուշարդի կոչուած տեղն է, մօտ 17000 մեռ տեղ, որ առաջնորդ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ շնորհուած է թաղիէն, քաղաքիս մէջ մեռել թաղելն արգիլուած ժամանակ։

Աղեքսանդրիա՝ իրեն ափրիկեան երկիր բնականաբար ունի յատուկ կլիմայ. կը բերէ սոսկալիքիմբար բոյսեր, առնիկներ և պտուղներ՝ ոչ շատ առատ։ Քաղաքիս մէջ կը շրջարիերն ոչ միայն բնիկ եղիպտական պրանին, այլ և բոլոր ծանօթ ազգաց պրանիներ։ Տիրող պաշտօնական լեզուն թէև արաբերէն է, բայց հաւատար և ուղիի կը գործածուին կարեւորութեան կարգաւ յունարէն, իտալերէն, գաղիերէն և անգլիերէն։ Կրօնական տեսութեամբ ևս կարեւորութիւն ունի Աղեքսանդրիա, վասն զի Մարկոս Աւետարանչին գերեզմանն ունի և է Աթոռ Խոտոր Եկեղեցւոյն. Բոյնք ևս ունին իրենց չորս պատրիարքական Աթոռանիերէն մին. Լատինք ևս ունին եպիսկոպոսական Աթոռ. իսկ մեր կրկին հայ հաւատակուիեան համար ալ առաջնորդական երկրորդ կամ հաւատար բնակավայրն է հանդոյն կամ յետ Դահիրէի։ Քաղաքիս կեդրոնական հրապարակին մէջ, որ արաբերէն Մէնշիյէ կը կոչուի, կանդնուած է Մէհմէտ Ալի Փաշայի արուէ վիթխարի արձանը՝ ձիու վրայ նստած։ Այս հրապարակը քարէ սիւնակներով և երկաթեայ շղթաներով շրջապատուած է. քաղաքիս ամենէն բանուկ տեղն է, որուն չորս կողմը կը բարձրանան գեղեցիկ շէնքեր և ուր պէշեր ու ցերեկ կը գրօսնու ժողովուրդը։

ԳԱՀԻՐԷ (Le Caire) մայրաքաղաք է Եգիպտոսի Խեդիվութեան. ունի 580000 բնակիչ։ Կառուցուած է Նեղոսէն քիչ հեռու աջ՝ կամ արեւելեան կողմը. Աղեքսանդրիայէն ճեպընթաց կառամբով 4 ժամու ճանապարհ հեռու է դէպի հարաւային արեւելք։ Քաղաքս հետզհետէ մեծցած, ընդարձակած ու գեղեցկացած է. ունի ոչ սակաւ լայն ու կանոնաւոր պողոտաներ, որոնց գրեթէ երեսէ քանչելին ծայրը կան փաքրիկ հրապարակներ, ամէնքն ալ իրենց աւազանով շրջապատուած ծառերով. հրապարակները բաժնուած են ծառուղիներու։ Աղնուական թաղերու մէջ մեծատուններու բնակարանները փառաւոր տեսք ունին, ուր եւրոպական և արաբական ճարտարապետութիւնք միմեանց հետ կը մրցին. հասարակ շէնքերն ընդարձակ ու գեղեցիկ են։ Ապահով պաշտան ուր կը բնակի խեդիվ, հսկայ շէնք մ՚է, համանուն հրապարակին վրայ կառուցուած. արտաքին տեսքը թէև

պարզ ու միօրինակ է, սակայն հրաշալի են ներքին ճախարիքները։ Կարծես թէ քաղաքիս մէջ եկած միացած են արուեստը և առևտուրը, բարուց՝ սովորութիւնից և տարաբնոյց ներդաշնակ խառնուրդ մը կազմելով։ Աքանչելի է Շուպրան ծառապարկ շքեղ ուղին. նշանաւոր են Լօզդէքիյէ և Խամիրիյէ թաղերն՝ որ կը պարզեն զեղեցկաշէն ապարանաց ու զարդարուն պարտիզաց երկար շարք մը. նշանաւոր է Թէվֆիգիյէի թաղն, ուր կը տեսնուին բնպարձակ վառ



266. Գահիրէի ընդհանուր տեսարանը։

ճառատունք, մեծ մասն սիմնապարպ պարիսներով ու պատշգամներով. կան փառաւոր դրօսավայրը, թատրոններ և իջեւաններ՝ որոնց մեծագոյնն ունի 200է աւելի սենեակ ու պատկառելի տեսք։ Գահիրէ քաղաքին հին մասերը նորին հակապատկերն են, ուր կը բնակին բնիկք. տարիներու բնակարաններր հաս ընդհանրապէս կիսախուղ հիւղակներ են, հողէ կամ գէշ թրծուած ապիւղ շինուած. կարգապետիան տէր եղդիներուն տները ունին մինչև երեք յարկ, և գաւիթներ՝ տեղ տեղ ժանդաքիզներով ծածկուած։ Նեղոսի վրայ


հաստատուած Ձիզէի կամուրջը՝ քաղաքին ու անապատին միջեւան գիծ մ'է. մէկ կողմը կը պարզուի Գահիրէ՝ իր բոլոր ճարտարապետական շքեղութեամբք, և միւս կողմը ծառազի մը՝ լայն ու հովասուն, որ կը տարածուի գետոյն երկայնութեամբ բաւական տեղ, և յետոյ կիսաբոլորակ մը կազմելով կը յանդի մեծատարած գաշտօրէից անհուն անապատին, ուր կը գտնուին բարդերը։ Նեղոսի միւս կողմը, ծառազինեալէն քիչ մը հեռու, եզերաց երկայնութեան վր

266. Գահիրէի ընդհանուր տեսարանը։

բայ, փոքրիկ սիրուն տաղաւարներ կան՝ պարսիկներով զարդարուած և տարփիտաներով ծածկուած։ Հանդիպակաց եզերքին վրայ կը բարձրանայ Գաստ–էլ–Նիլ կոչուած հայկական զօրանոցը, որուն հիմունքը ջրի մէջ մխուած են. զօրանոցիս գանազան կողմերը կ'երեւին ցիրուցան բնակարաններ և հետեւն ծառազարդ կղզեակ մը։ Գաղաքիս մէջ կան հարիւրաւոր մզկիթներ, մեծ մասն այժմ աւերակ. ամենահոչակաւորն է Մուհամմէտ Ալիի մզկիթն, քաղաքին արեւելահարաւային կողմը բերդի շրջապատին մէջ։ Բերդը իր ամբակուռ շի-

նուաճով և ընդարձակութեամբ նշանաւոր է, որուն շրջափակին մէջ կը գտնուի նաև Յովսեփեայ ջրհորն, նեղ ու մանուպատ ճանապարհով մը. ահագին քարաժայռի մը մէջ փորուած է 300 սաքէն աւելի խորութեամբ. անդ անդ ունի պատուհանի ձեւով բացուածքներ. մէջին ու խնուռ յատակը կ'իջցուի քարէ պղտորապատոյտ ասոխճաններով։ Նեղոսի ափանց մօտ կառուցուած է Պաւլաքի թանգարանը, որ միայարկ, պարզ ու անշուք շէնք մ'է, բայց կը պարունակէ ապակեւոր դարակներու մէջ աշխարհի նշանաւորագոյն հնութիւնները. որոշեալ օրեր կը բացուի հասարակութեան համար. քանի չափ սրահներէ կը բազկանայ, յորս ճաշակաւոր կերպով դասեզուած են թանկագին առարկաները՝ փոքրագունէն սկսեալ մինչև մեծամեծները, իրենց թիւերով և յիշատակութեամբ. զրաններ՝ ամէն գարուց, անօթներ, զէնքեր, մետաղներ, զարդարանք՝ առնական և կանացի, սպասներ, հանդերձեղէնք, անցած ժամանակաց սովորոյթները ու բարքերը ներկայացնող հազարաւոր յիշատակներ։ Դարակներէն վերջ կու գան արձաններ՝ մարմարէ, կրանիտէ և ոսկիէ. հսկայակաւոր մումիաներ՝ որոնք կը ներկայացնեն հազարաւոր տարի առաջ սերտօրէն աշխարհակալներէն զանուած, իրենց խնկան մարմնով անոնք մեծացած։ Վերնայարկը Պօղոս Պէյ Նուսուֆեան՝ 1825 թուին վերնահսկ Ս. Դազարոս վանաց Մխիթարեան Մխիթարեան նուիրեց եգիպտական հնութիւնց մումիայ մը, որ Երուսղիմ մուտքներու մէջ գտնուածներէն լաւագոյն պահուածը համարուած է։


Պատմութիւնը և գտնուած յիշատակարանները կը յայտնեն թէ ի հնումն քաղաքիս մէջ Հայոց մեծ գաղթականութիւն մը կար, սակայն ասոնց թիւն նուազած է գրեթէ աներեւոյթ անցեալ գարու սկիզբը եղած մեծ արծութեան պատճառաւ։ Մուհամմէտ Ալիէն ապին հայ գաղթականութեան նոր հաստատը մը սկսած է. բայց դեռ 12 տարի առաջ Գահիրէի և շրջակայից մէջ հազիւ 1000 Հայը կը գտնուէին։ Գլխաւորաբար կ. Պոլսէ 1896ի դէպքերուն հետեւանքով մեծ յաւելում կրեց այդ թիւը և այսօր նոյն շրջանակին մէջ 3000է աւելի Հայք կը հաշուուին։ Հին և նոր գաղթականաց մէջ մեծամասնութիւն կը կազմեն Պոլսեցիք, Կեսարացիք, Ագարկեցիք և Վանեցիք։ Անցեալ գարու մէջ շատ թուով Հայք պետական ծառայութեանց մէջ գտնուած են, իբր նախարար, նախարարապետ, նախարարութեան խորհրդական, դատաւոր, և այլն, որոնցմէ անոնք այժմ ևս պաշտօնի վրայ են։ Պօղոս Պէյ Նուսուֆեան և Նուպար Փաշայ Նուպարեան, երկուքն



267. Եգիպտական մումիայ Ս. Դազարու։

ալ Զմիւռնիացի, կրնան իրաւամբ համարուիլ Եգիպտոսի վերանորոգիչները։ Հայոց մեծ մասը անցկոյն մէջ եղած է անգամաւոր, բայց այժմ բիչ է անոնց թիւը և կան կալուածատէրներ, փառաւորներ, բժիշկներ, վաճառականներ, արուեստաւորներ, եւն.։ Հայք ունին երկու եկեղեցի, մին Ս. Յարգիս՝ 1749ին շինուած է կամ վերաշինուած տան մը վերնայարկը և այժմ լքուած է. երկրորդն որ է մայր եկեղեցին կառուցուած է 1839ին։ Նուպար Փաշայի նախարարապետութեան

օրավ և իրեն միջնորդութեան շնորհիւ, կառավարութեան կողմանէ 1000 ֆէտտան հող նուիրեցաւ եկեղեցւոյ, ինչպէս նաև 500 ֆէտտան՝ Ազգքառնպրիայ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ։ Ազգքառնպրիայ ազգային երեսփխներէն Թադէոս Փաշայ Հակոբեան, 1888ին, 2000 լիրայի չափ ծախք ընելով



268. Նուպար Փաշայ Նուպարեան։

նորոգել տուաւ Ս. Աստուածածնին եկեղեցին, հոգեւորները, դերեզմանատունը և Ս. Մինաի մնաւուն՝ որ յատարկութեան և հոգեհանգստեան պաշտամունց յատկացուած է։ Քաղաքին մէկ կողմը կը գտնուի լեռնանման հողակոյտ մը՝ Քօմ-էլ-Ազմէ անունով, որ կը նշանակէ Հայոց թաղ, վասն զի հնուանի հոն են եղեր Հայոց առներըը. այս տեղւոյն ծայրն է հայկական բոզարձակ գերեզմանատունը, ուր գտնուած մեծ խաչքարով ու մաքրութեամբ կը պահուին Ս. Մինաի մնաւոն մնա է թափուներու եկեղեցին։ Գահիրէի Հայք 1870ին հաստատուած են բարեգործական ընկերութիւն մը՝ որ Լօզպէքիյէի բազմաշէն թաղին մէջ դեղեցիկ գրօսարան մ'ունի. չահուն 100ին 25ը՝ բերդարձութեան, և 75ը՝ բաժանորդաց յատկացուած է։ Ընկերութիւնս՝ 1887ին, երբ Պ. Սահեան Միքայէլեան յիշատակութիւնը, գրի մը յանձնեց անոր առ Մէնէլիք Բ թագաւորը ուղղուած, և թագաւորը՝ որ համակիր է Հայոց ազգին, գրին ընդունելով, 1900 ֆրանկի արժանութեամբ 30 եկեղեցական սահի նուիրեց ընկերութեան՝ յիշեալ պատճառի միջոցով, հանդերձ ընկերու

թեան նպաստակը չատագովող պատասխանատրով մը։ Նոյն Մէնէլիք թագաւորը՝ 1891ին, արքայական հրովարտակով արծաթեայ խաչ մը դրկեց Եգիպտոսի Հայոց (նախկին) առաջնորդ Գեր. Խզմիրլեան Տ. Մատթէոս եպիսկոպոսին, և պատուանշան մը՝ Գահիրէի ազգայիններէն կարապետեան Պօղոս Էֆէնտիի։ Գաղաքիս հայ գաղթականներէն վանեցի Գալուստեան կարապետ ագա կառուցած է Թորէնեան երկտեղ վարժարանն ազգային գեանի մը վրայ, և նոյն վարժարանին պահպանութեան և ապրուստ նպաստի համար, կտակած Ազգին թողած է երեք տարակ իրենց շէնքերով և հազարաւոր արմաւենիներով և Ազեքսանդրիոյ մէջ Մահմուտիէյ գետակին վրայ երկու տուն՝ հանդերձ պարտիզօք։ Հայոց յիշեալ վարժարանը՝ որ Գալուստեան ևս կը կոչուի, կառուցուած է եկեղեցւոյ մօտ, ունի մօտ 140 երկտեղ աշակերտներ. հոս լեզուներէն կ'ուսանին հայերէն, արաբերէն, անգլիերէն և ֆրանսերէն։ կարապետ ագա Գալուստեան՝ մանկութեան հասակին եկած է Գահիրէ, ուր և մեռեր է 1864 տարւոյ ապրիլ 8ին, և ունի յատուկ շիրիմ ազգային գերեզմանատան մէջ։

Գահիրէի մէջ ի հնուց կան եղեր ուղղափառ Հայեր, որոնք 1734 թուականէն սկսեալ կը կազմեն եղեր զատ հատուածկոթիւն մը, յատին քարոզչաց պաշտպանութեան ներքև. ունեցեր են շատ անգամ ևս առանձին հայ քահանայ։ 1837 թուին քաղաքիս մէջ կը գտնուի եղեր, բոլ տարձանագրութեանց, կիպրացի Յակոբոս անուն վարպետ մը, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ մատուռ մը մէջ կը կատարէ եղեր ատտուածային պաշտամունք, մկրտութեան և պսակի խորհուրդները. իսկ տնօրինական կարգերը կը թողուն եղեր լատինաց գերեզմանատունը։ Մինչև 1800 թուականը՝ քաղաքիս հայ ուղղափառք 30 բնտանիք կը հաշուուին, որոնց հոգեւոր պիտոյքը հոգալու համար Լիբանանու կաթոլիկոսները դրկած են շարունակաբար քահանաներ։ 1832ին Սեբաստիոյ Վ. Ակոպեանի և Ալեքսանդրիոյ Պետրոս վարդապետի ձեռքով Ամառաջոց կոչուած տեղը՝ Հին Եգիպտոսի մէջ, երկու կտոր երկիր գներ են ուր և կառուցեր են Տիրամօր կաթսի անուամբ մատուռ մը։ Ապագին գործոց և վանահայրութեան նախաթոռ Աբեղեան Պէկի արժանաւոր որդին Յակոբ Աբեղեան փաշայ իր առաքինի ամուսնոյն հետ 1898 թուին, մատուռս մօտ գտնուող հայ ուղղափառաց գերեզմանատունը ընդարձակեցին և ծառեր անկելով գեղեցիկ տեսք մը տուին։ Մատուռս ցարդ կը մնայ խարխուլ վիճակի մէջ, զոր մտադիր է Մեծ. Յակոբ Աբեղեան փաշայ նորոգելու և վայելչապէս գեղեցկացնելու։ Մուհամէտ Ալիի օրով հայ ուղղափառք հին Եգիպտոսն թողլով, սկսեր են խմբովին գալ բնակիլ ի Գահիրէ, ուր և Աղաթոնեան Պետրոս վարդապետի անխոնջ չանքեր կատարած են եկեղեցի մը Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ որուն օծումն կատարեր են 1841 թուին Ս. Կուսի Վերափոխման տնօրէն օրը։ Եկեղեցիս շինուած է կամարակապ, աւազ խորանը նուիրուած է Ս. Գրիգորի, ունի նաև ուրիշ չորս խորաններ, երկութը գաղէն վար. երկայնութիւնն է 25 մեար, լայնութիւնը 12մ. իսկ բարձրութիւնը 18մ.։ Եկեղեցւոյս գաւիթն մեծ և ընդարձակ է, որուն հարաւային կողմը շինուած է առաջնորդարանը ևսիկ խուցերով։ 1849էն Եգիպտոսի հայ ուղղափառք սկսեր են ունենալ յատուկ եպիսկոպոս՝ որուն աթոռն հաստատուած է քաղաքիս մէջ։ 1868ին Ս. Գրիգորի կամարակապ եկեղեցին երկրաշարժէ վնասուելով, վերանոր շիներ են, առատապէս ամրոցնալէս փայտաշէն ընդերքն։ Եգիպտոսի ընդհանուր հայ ուղղափառաց թիւն կը հաշուուի 2000 հոգի 230–50 տուն. որոնք մեծ մասամբ կը բնակին Գահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ։ — Հայք ի հնուն Եգիպտոսի մէջ հրատարակած են Արմանեճի և Ղեղոս անուն թերթերը, առաջինը Գահիրէի մէջ 1865ին և երկրորդը Աղեքսանդրիոյ մէջ 1889ին, սակայն երկուքն ալ կարճ կեանք մը ունեցած են։ Վերջին գաղթականութեան շնորհիւ Եգիպտոսի հայ թերթերուն թիւն սկսաւ շատնալ, որոնցմէ ներկայիս կը հրատարակուին Գահիրէի մէջ Արշալոյս, Փարոս, Նոր Օր, Արտեմիս. իսկ Աղեքսանդրիոյ մէջ Փիւնիկ։

Գահիրէ քանի մը մղոն հեռու դէպի արեւելեան հարաւ, Էյ–Պետրահ կամ Էյ–Պե-

սարիճ կոչուած բնդարձակ այգեստանին յարակից հայ վանք մը կար երբեմն Ս. Յակոբ անուամբ։ Ա֊յս վանքին հիմնարկութեան ժամանակն անծանօթ է. վերաշինութիւնն եղած է ԺԱ դարու վերջին քառորդի մէջ, յորում Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը՝ որ 1065ին գահակալած և 1105ին վախճանած է, սրբոց վկայաբանութիւններու հաւաքելու և թարգմանելու համար Բիւզանդիոն դացած և անկէ Պաղեստին երթալու առեն, նաեւ փոխորկի բռնուեր և վկայասէրն ասիպտուր է Եգիպտոս ելնել՝ հաւանաբար 1076 թուին։ Ա֊յս վանքն՝ որ գոյութիւն ունէր մինչև ԺԴ. դարու սկիզբները, Եգիպտոսի Մուսթանդիր վեհապետի (1036–1094) Պետր–էլ–Ջէմալ կամ Էմիր–էլ–Ջիւյուշ–Պետր կոչուած հայազգի պաշտօնակալին կառուածն էր, և անոր ամեական 10 ոսկի պահեկան տուրք կը վճարէր։ Պետր–էլ–Ջէմալ՝ որ նոյն առեն վզրուկ էր, օժանդակած է վանացս շինութեան, որ կը կատարուէր նախաձեռնութեամբ Գրիգորի վկայասիրի, որուն համար վարդան պատմիչ կը գրէ, թէ եկաւ «ի Մսր, և մեծարեցաւ յայժ ի սուլտանէն, և շինեաց վանս Հայոց, և ձեռնադրեաց զեղբօրորդի իւր Գրիգորէս՝ և պիսկոպոս»։ Գրիգորիս եպիսկոպոսի յաջորդեր է Ա֊նանիա եպիսկոպոս, և 1140ին տակաւին է Ջուհրիի վանքին մէջ։ Ս. Յակորայ վանքն ու առաջը՝ որ ունէր բարձրարերձ գմբէթ կամ կաթուղիկէ, կամարակապ շինուածք և մեծամեծ գոներ, ամայացեր է 1168ին, երբ Սալահէտտին սիրեր է այդ կողմանց։ Էլ–Շէյխ Ապու–Մուհ–էլ–Լրմէյնի կամ Ա֊բուսահլ անուն հայ կրօնաւոր մը՝ որ յԵրուսաղէմ ապրած է ԺԴ. դարու սկիզբները, թողած է արաբերէն դրուած պատմութիւն մը, որ կը խօսի Եգիպտոսի վանքերուն ու եկեղեցիներուն վրայ։ Ա֊յդ գրքի ձեռագիր մէկ օրինակն գտնուեցաւ ԺԹ. դարու վերջերն, և հրատարակուեցաւ Ա֊նգլիոյ Օքսֆորտ քաղաքը՝ անգղիերէն թարգմանութեամբ Հանդերձ, յորմէ և մեր Մեծ. Հ. Ա֊լիշան՝ թարգմանաբար գրքոյկ մը հրատարակեց՝ ինքնագիր յաւելուածներով 1895ին, Ա֊ռաւաջ հայ վերնագրով։ Ա֊յդ պատմիչը կը գրէ թէ «Սալահէտտինի սիրապատութեան առեն ատենապետ եկան Եգիպտոս բնակողաց վրայ. Հայոց պատրիարքը և կրօնաւորները հանուեցան Ս. Յակորայ վանքէն, անոր գռները գոցուեցան և ոչ ոք կը համարձակէր մօտենալու ամայացած եկեղեցիներուն»։ Ա֊յս վանքի առաջարին մօտ՝ Պետր–էլ–Ջէմալ շինած էր ուրիշ եկեղեցի մ'ալ, ուր ապա թաղուած է իր մարմինն։ Ս. Յակորայ վանքէն արտաքուստ պատրիարքին և կրօնաւորաց վրայ արգահատելով Դամասկոսցի պետական արար մը՝ Էլ–Ֆայէզ–էլ–Պահա–Ալի անուն՝ իրեն անգահակալութիւնն եղող վերոյիշեալ այգեստանին անունց արամագրութեան ներքև դրեր կամ նաւերեր է Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցին, որ շինուած էր Հարա–Զաուիլա թաղին մէջ Տիրամօր կաւսի եկեղեցւոյն վրայ. նոյն պատրիարքը քանի մը տարի բնակեր է սոյն եկեղեցւոյ մէջ, որուն յարակից Ս. կուսի (էլ–Ազարա) եկեղեցին ցարդ կը մնայ հնութեան յայտնի նշաններով։ Հայոց պատրիարք բուսած, 1172ին իր անգր փոխանորդ կարգելով քահանայ մը, գացեր է Երուսաղէմ, հետը առնելով 75 հատ Ս. Գիրք, որոնց հետ գրչագիր բնաիր Աւետարան մը՝ պատկերազարդ՝ գանազան գոյներով ու ոսկւով նկարուած, որ՝ կը կարծուի թէ կիլիկիայէն բերուած ըլլայ Գրիգոր Վկայասիրի ձեռքով։ Ա֊յս պատրիարքին վրայ, որուն անուանը անծանօթ է, պատմիչը անգեկութիւն կու տայ, թէ նախ եպիսկոպոս էր Գահիրէի հարաւակողմը գտնուող Ա֊ֆֆիհ փոքր քաղաքին, ժամանակին վեհապետ Էլ–Իմամ–Հաֆիզ–Մանսուրի (1130–1149) սիրելի էր և անոր շնորհե՝ Եգիպտոսի Հայոց պատրիարք եղած է. ունէր գեղեցիկ գէմք, փառահեղ մօրուք, վայելուչ հասակ. տեղեակ էր Ս. Գրոց, յայտող մեկնիչ և գիտուն պատմագէտ. շաբաթը երկու օր վեհապետի Դասը–էլ–Ջիմրիա կոչուած պալատը կ'երթար ներկայ կը գտնուէր Էմիր–ներու և մեծամեծ պաշտօնատարաց ժողովին. ասոնցմէ օրերը կը մանեակցէր շնորհաւորական արարողութեանց, և շատ անգամ մասնաւորապէս ընդունելով վեհապետէն՝ Եգիպտոսի վրայ պատմական նորագիւտ ծանօթութիւններ կը հաղորդէր։ Ա֊յս

պատրաստրեր՝ յիշատակելմ, ժԲ։ գաւս մէջ բանտարկ սպանուեր է եպիսկոպոսէ մը, 80 տարեկան հասակին մէջ. սպանիչն ալ ա- նոր վախճանէն 20 օր վերջը մեռեր է։ — Մեր վերը յիշած Ամիֆիհ քաղաքը, նոյն ժամանակ ունէր 2800 բնակիչ, քաղաքին անուամբ կը կոչուէր նաև գաւառակը, ուր է հռչակաւոր Ս. Աննան անապատականի վանքը, որուն մօտ երբեմն կար Հայոց մե- նաստան մը Ս. Գևորգայ անուամբ։

Եդեսիոյ կը բաժնուի վերին և Սառբին մասանց. վերինը կը պարունակէ Գահիրէի հարաւակողմն ամբողջ գաւառը մինչև Ա- սուան. իսկ Սառբինը կը տարածուի Գա- հիրէէն մինչև ծով, և Նեղոսի միջոցով բաժ- նուած է երեք տարբեր մասանց, որոնց ա- ռաջինն է գետոյն երկու ճիւղերուն մէջ գրա- նուած մասը. երկրորդը՝ Պէհէրայի գաւառը, որուն սահմանին մէջ է նաև Ալեքսանդրիա. երրորդը՝ Տամիէթի ճիւղին արեւմտեան կող- մը գտնուող գաւառները, որ կը տարածուին մինչև Միւէզի ջրանցքը։ Այս երեք մասանց երկուքի մէջ ջրանցքներ բացուած են, ո- րոնց մին Ջրանցք Մէհամուտիյէի՝ կ'սոսկ կոչուներ, իսկ մեսն՝ Ջրանցք Պէհէրայի՝ կ'սոսկ համանուն գաւառը։ Պէհէրայի ջրանց- քին մէկ մերձաւորագոյն կէտին վրայ կը գտնուի խարաբայ, ուր Պօղոս Եդեսար Փաշայի ջրաշխատական գործարանն հաստա- տուած է, ծառայելով բնակարձակ պարտի- զով մը շրջապատուած, և նշանաւոր է իր հսկայ մեքենաներով ու փիլիսարի գործիք- ներով. գործարանին պիտոյ, պարտիզին մէկ ծայրը Պօղոս Փաշայի բնակարանն է, ծառերու մէջ բարձրացած սիրուն շէնք մը։ Այս գործարանը հաստատուած է Պէհէրա- յի գաւառի առողջման համար։ — Կը վեր- ջացնենք Եդեսիոյ նկարագիրը, յայտ- նելով միանգամայն, թէ Հայոց հին ժամա- նակաց մէջ Եդեսիոյ հետ ունեցած վա- ճարաբերութեանց, և զանազան վանքերու, և կեդրոններու և նշանաւոր Հայոց վրայ կա- րելի է առանձին ուսումնասիրութիւն ընել, հետազօտելով հին արձանագրութիւնները և եդեսիական դիւանագրութիւնը։

ԵԳԼԻՍԻԱ. Տես ԳԱՐԱՒԱՆ ՊԻԿԱՅԻ։


ԵՒԵՒԻԱ, ՈՒՐՀԱ կամ ՈՒՐՖԱ. ԳԼ. EDESSE, ORFA. Աստ. ᵴᵴᵴᵴᵴ. Թ. ᵴᵴᵴ. — Ի հնումն նշանաւոր ամուր մայրաքաղաք Միջագետաց, այժմ կառավարչանիստ քա- ղաք Բերիոյ կուսակալութեան՝ երբեմն պատմական քաղաքս, իր նահա- պետական յիշատակներով, արքայական գահերով, հայրապետական աթոռներով և ծագման ճեմարաններով հին պատմութեանց մէջ փառաւոր տեղ մը գրաւած է, այնպէս որ Յունաստանի պարծանք և փիլիսոփայից մայր հռչակաւոր Ակնէրի գաւակները ի- րենց անչափաց յաղուրդ առնու բաղձանօք գիմած են Աբգարու այս քաղաքը և ճեմա- րանին ու հարուստ մատենադարանին մէջ գտած են ինչ որ ի զուր կ'սրտնէին Աթենս։ Էր- բեմն ալ Պարսից, Արաբացւոց և Թրանկաց պատերազմաց ժամանակաւ չէնելով՝ գա- րաւոր յարձակմանց պատճառաւ աւերակ գարձաւ և այլ փլատակաց ներքեւ անհե- տացան ճեմարան, մատենադարան, և այլն։ Երբ (1637ին) Օսմանեան պետութեան գր- ծոյն սկսաւ ծաձանիլ գարաւոր բերդին պա- րիսպաց վրայ, Եդեսիա սկսաւ գաղթականնե- րով լիցուիլ։ Քաղաքիս արդի Հայոց մէկ մասը Աշխատասիրաց ճեմարանէն կը բաղ- կանայ, մէկ մասն ալ Պարսկաստանէ գաղ- թած են է. ժամուն ժողովրդեան մեծագոյն մասն ալ Պարսկաստանէն եկած է։ Քաղաքս ունի մօտ 2500 տուն հայ բնակիչներ. ո- Բնակի համեմատ Եդեսիոյ բնակչաց թիւն է 55000, բաժնուած հետեւեալ կերպով.

Մահմետականք (Թուրք, քուրդ, ևն.) .	40835
Քրիստոնեայք (հայ, յոյն, ասորի, ևն.) .	13843
Հրեայք	322
Գումարն...	55000

Սակայն այս թիւերը, ինչպէս արդի տեղե- րու համար բոլոր ենք, նոյնպէս առա ևս կ'ըսենք, թէ Հայոց նկատմամբ քիչ են. վասն զի արդի վիճակագրութեանց համե- մատ քաղաքս ունի մօտ 12000 հայ բնա- կիչներ։

Հայկական եկեղեցին Ս. Աստուածածին հոյակապ և վեհ հատուածութիւն մ'է. 1845ին վերաշինուած է առաջնորդութեամբ բնիկ տեղացի Գասպարեան Տ. Յարութիւն ե-

պիսկոպոսի փոխիճառնդն աշխատասիրեամբ, և կրօնասէր ու առատաձեռն ժողովրդեան սրտց արդեամբը, և մանաւանդ Մ. Ղազար Տատեանի՝ որ 1000 օսմ. ոսկի տուած է։ Մխիթարեան Տ. Խորէն եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ ևս ազգային հաստատութիւններ զարգացուած են նորագործութիւններով ու յաւելուածներով։ Քաղաքիս արեւմտակողմ ½ ժամու ճանապարհ հեռու Ս. Աստղոյ վանաց մէջ ալ նոր շինուած բրդակի մը գառխայրին վրայ շինուած լինելով, դժուար էր ջրհորներ պեղել, ուստի այս բլրակի համանուն խոզի



269. Եղեսիոյ ընդհանուր տեսարանը։

նութիւններ եղան Մխիթարեանի ջանքով. վանքի գաւիթն և մէջի սենեակները որ անշուք ու անկեղտարան վիճակ մ՚ունէին, վերցուեցան և անոնց տեղ փառաւոր շէնքեր կառուցուեցան։ Այս վանքի հիմնարկութեան թուականը տակաւին անյայտ է. կ՚ուսանողութիւ թէ Թադէոս առաքեալ հիմնած է, և կ՚ըսուի թէ Աբգարու թագաւորութեան առեն գոյութիւն ունեցեր է։ Քաղաքիս հիւսիսային կողմ Սամսատ գափուսը կոչուած

բրիստոնեայ և ոչ քրիստոնեայ բնակիչները անջրպետելով տգաւոց, քաղաքէն 2 ժամու ճանապարհ հեռու Թաուսա–Ակբի կոչուած տեղը եղած ջուրը բերել տալով այս թաղի մէջ, ինչպէս նաև Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւթի մէջ։ Վերջին պէյլերբէյ Հայիք՝ մեծ կոթուածներ և անթիւ գոհեր ունեցան։ Եկեղեցւոյ գաւթին մէջ է ազգային վարժարանն, ուր կ՚ուսանին 475 աղջիկ և 665 մանչ աշակերտներ։ Կայ նաև ազգային

սրբանոց մը Ս. Սարգսի վանքին մէջ հաստատուած, և ունի 66 սրբեր։ Ամենամէ գաւ հայ Լուսաւորչականաց մօտ 450 աշակերտներ՝ մանչ և աղջիկ, կը յաճախեն քաղաքիս կաթուղիկէ Հայոց, Հայ Բողոքականաց և մասնաւոր անձի մը պարագիրը։ — Էջմիածնի մէջ կան նաև Հայ կաթուղիկէ և Հայ Բողոքական հաստատութիւնք, որոնց ճիշդ թիւն չգիտենք։ Կաթուղիկէ Հայք ունին իրենց յատուկ եկեղեցի և 6 տարրական պարագիրներ մօտ 350 աշակերտներով։ Բողոքական Հայք ևս ունին ժողովարան և տարրական պարագիր. ժողովարանը կը գտնուի Թրքիրտաղի Հայարնակ թաղին մէջ բլրոյ մը տատրատ. թէ՛ արտաքուստ և թէ ներքուստ գեղանի դիրք մ՚ունի՝ հմնուած հաստատուն սիւներու վրայ, և ունի արուեստաշէն գմբէթ մը՝ զարդարուն զանգակատնով։ — Տեղւոյս կլիման բաւական է. ձմեռը շատ կ՚անձրեւէ։ Շէնքերը քարուկիր են, և մեծ մասը ճարտարապետական հին ոճով կառուցուած։ Վաճառականներ Բերիացի գաղթականք իւրացուցած են. տարեկան ան նուազն 400 հազար լիրայի արտածուած ապրանքները՝ բուրդ, խուզ, շուշմայ, ցորեն, ոչխար, ձի, և այլն, անոնք կ՚առնեն կը դրկեն Ալբարիա և Էրզրում. նոյնպէս անոնց ձեռքով կու գայ ու կը սպասի ներմուծուած ապրանքն ալ։ Նշանաւոր են քաղաքիս Պոյաճի և Պաղտաճի արհեստաւորք, մեծ մասն հայ. հաղարաւոր լինանիք կ՚ապրին այս արհեստներով, և կանայք ու օրիորդք ալ կը մասնակցին. սպասնայն և կարմիր կաւը մինչև Դամասկոս կ՚երթայ, Բերիոյ մէջ շատ կ՚սպառի, և կ. Պոլիս ալ բաւական կը դրկուի անկողնոյ, վերմակի, բարձի, վարագուրի, և այլն, համար։ Ամէն թէ՛ այս և թէ ուրիշ արհեստներ ևս կամաց կամաց կ՚ոչնչանան. արհեստաւորը չբաւարարութեան կը մատնուին և ապրուստիւնը կը ծանրանայ Հայոց վրայ։ — Քաղաքիս հարաւ—արեւելեան դաշտերը կը տարածուին մինչև Պաղտատ. ձմեռնային և գարնանի մէջ, գրեթէ բոլոր դիւղացի խաշնարածները իրենց հօտերը կը տանին այս ընդարձակատարած դաշտին խորը, որուն բարեխառն կլիման և արօտները շատ կը յարմարին դուարթասիրտներու գործին և կը նպաստեն անոնց արագ պարարտացման։

Քաղաքիս ապրուստներէն մին 1888ին վրանարուեստ մը գտնել է կնիք մը. գանազան առարկութիւններով Պետրոս առաքելոյն գործածած կնիքն համարելով զայն՝ հնագիտաց ուշադրութիւնն հրաւիրեց։ — Կը պատմուի թէ Սուլթան Մուրատ Դ ի Միջագետս ուղեւորած առեն, Թոփճըօղլու մականուամբ հայ գերդաստանի մը պլուխը, անոր անցնելիք ճանապարհին վրայ, գրեթէ մէկ ժամու տեղ երկայնութեամբ, մինչև քաղաքս դիպակ կը փռէ, և հանդիսաւոր անցքէն վերջը հասարակութեան առաջ կը թողու դիպակը և արժանաւորեալ կոչումնք մը կու տայ վեհապետին. երբ Սուլթանն բան առանձական ասլորութեան նախնի թագաւորաց, կ՚առաջարկէ հայ երեւելւոյն՝ իրմէ շնորհ մը խնդրել, սա կը յայտնէ թէ անձնական բան մը չի խնդրեր, այլ անոր ուշադրութիւնը կը հրաւիրէ Հայոց Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյն վրայ, որ շատ մօտ գտնուող մզկիթին պաշտօնէից և յաճախորդաց կողմանէ գանազան նեղութիւն ու հալածանք կը կրէ եղեր։ Սուլթանը քննել տալով և տեսնելով որ Հայոց եկեղեցին հիմնարկուած է մզկիթէն շատ առաջ, կը հրամայէ մզկիթը անկէց վերցնել, որ կը գտնուէր եկեղեցւոյ գաւթին արեւմտեան հատուածին անկեան դիմաց. այժմ այն մըզկիթին տեղ հաստատուած են հայկական տներ, որոնցմէ իրրև խոզպին տարեկան թեթեւ տուրք մը կը վճարուի ցարդ ուրիշ մզկիթի մը։ Կը պատմուի նաև, թէ Ս. Սարգսի վանուց վանահայրն ևս, Մուրատ Դ. վանքին մօտէն անցնելու առեն, ճանապարհին վրայ հարիւրաւոր ոչխարներ զոհել կու տայ, և խընջակալը զոհ լինելով, յատուկ հրովարտակ ազատ կ՚ընէ վանքը ոչխարաց և ուրիշ տուրքերէ։ Այս հրովարտակը և ուրիշ կարեւոր հրովարտակներ և յիշատակագրեր, կը պահուին եկեղեցւոյն մատեան մէջ։ 1889ին քաղաքիս հիւսիսային պարսպալին վրայ, նոր շինութեանց առիթ, գետնին մէջ թաղուած այր մը յայտնուեցաւ, որուն յատակը գտնուեցան գոյնզգոյն քրիստոնեական նշանակալից ձուլուած երեք կարգ

պատկերներ, որոնցմէ կարելի է գաղափար առնուլ հին զարերու զգեստաւոր և այլ հանդամանաց վրայ։ Առաջին կարգը՝ ամառնային պատկեր մը, երկու կողմը ունենալով երկու կին և երկու մանուկ. երկրորդ կարգը՝ երկու արք և երեք կանայք. երրորդ կարգը՝ երեք արք և երկու կանայք։ Պատկերաց բազմազարդ արձանագրութիւններէն կը մեկնաբերուի՝ թէ այս այրը Քրիստոսէ առաջ դամբարան մ'է և կը վերաբերի Պալայի և Ապրանի գերդաստանաց։ — Քաղաքիս հիւսիսակողմը, 3—4 ժամու ճանապարհ հեռու դաշտավայրին մէջ, կայ հին ու աւերած աւազան մը, որ երբեմն նշանաւոր ուխտատեղի էր, և Թադէոս առաքելոյն ասնին օրը Հայը խնկով ու մոմով ուխտի կ'երթայէր. փոքրիկ գաւակներն ուսոց վրայ առած երեսներն խաչակնքելով աւազանին մէջ կը լոգային կամ լոգանք կ'ընէին, և յետոյ մեր ձակայ ծառոց հովանւոյն ներքև կը պօսնուին համեհատութեամբ։ Աւանդաբար կը պատմուի թէ Թադէոս առաքեալ այս աւազանին մէջ մկրատած է քանի մը հազար հայ։ Երբեմն երեք մեծ խորհրդեամբ ջուր պարունակող աւազանս այժմ կէս մեծ ջուր հազիւ ունի և ուխտադնացութիւնը դադրած են։ Քաղաքիս վերի ծայրն է զով, քաղցր, առողջարար և վճիտ ջրոյ լճակ մը, որուն եռքը կողմերը զարդարուած են սոսիի, բարտիի և թիթեռնիի ծառերով։ Այս լճակի ափունքը ամառնային ուրբաթին աւուրց մէջ ժողովրդեան գրօսավայրն են։ Գրեթէ խոնարհող աւազանի մը ձեւն ունի լճակս. շուրջը անկանոն կերպով շինուած քարափանց վրայ յառնախող բազմատեսակ գրօսատնակ առուակայն են ջրոյն մէջի ձկները, որ մարդոց բնակուցած՝ չեն վախնար, կը յափշտակեն մարդոց ձեռաց կերը ու կը փախչին. ոչ ոք կը համարձակի որսալ այս բնաւանի ձկները։ Եկեսացիք, մանաւանդ եպիսկոպոսները, հայ, թուրք և արաբ, այս լճակի մէջ կը լոգան մրցմամբ զանազան ձեւերով։ Այս լճակին՝ որ այժմ ծանօթ է Աճ—զրկիա անունեմբ և ուրիշ մը որ Հայր Աբրահամ կը կոչէ, գեղեցիկ կերպով կը նկարագրէ Շնորհալին՝ Եպիսկոպոսի ոդոց մէջ։ Պատմական աշխարհագրութիւնք և ժողովրդական աւանդութիւնք կը հաւատան թէ՝ Աբգար Թագաւորի գերեզմանը քաղաքիս հարաւային արեւմտեան կողմն երեք քառորդ ժամու ճանապարհ հեռու լերանց ծայրն է։ Ցունիսի առաջին օրը, քաղաքիս Հայք, առաւոտն կանուխ ճամբայ կ'ելնեն, ձորերէ՝ հովիտներէ ու կիրճերէ կ'անցնին, կը հասնին տափարակ վայր մը, որ կը կարծուի ըլլալ Աբգարու ամարանոցի լեռնագաշտն կամ ձիարշաւի տպարէզն. ուխտաւորք տեղւոյս արեւելակողմէն կը մտնեն և դէպ ի հարաւ կ'երթան, կիրճէ մը կ'անցնին և արեւմուտք կը դառնան. աջկողմը քարայր մը կը տեսնեն, որուն ներքին կողմը քառակուսի փառաւոր սրահի մը բարէ կամարներ և վիմափոր աթոռներու հետքերը վկայ են անոր հին թագաւորի մը խորհրդարանը կամ բնակավայրն լինելուն. այժմ ամառ ծաչնոց բոյն և ձմեռ գիշու արարներու օրջ եղած է։ Ուխտաւորները այս սրահի առջևի բնպարձակ դաշտավայրէն կը բարձրանան դէպի արեւմուտք, և կը մտնեն երկու բարլինկէց հեռու, ճակատն արեւելք նայող նկուղաձեւ բնպարձակ բարայր մը, որուն ներսը գրան մօտ կան Աբգար Թագաւորի գերեզմանին նշխարները. կ'ըսուի թէ Աբգիս իշխանի գերեզմանն ալ այս տեղն է։ Աբգարու յիշատակը պահելու համար շատ անգամ հսկայ ապառաքարեր գրած են այդ գերեզմանին վրայ, բայց անգամ ձեռքեր միշտ կտրտած են. երբ տակաւին տապանաքարն ամբողջ էր, հայ քահանայք՝ մեծ հանդիսով Պատարագ կը մատուցանէին հոս, բայց բառական տարի է որ կրօնական պաշտամունք վերջացան։ Ուխտաւորները գերեզմանի հետքին վրայ Հայր մեր ըսելէն վերջ, կը հանդչին բնպարձակ բարանձաւաց ներքև զովագին տեղեր. թմբուկներու և փողի ձայները օդը կը թնդացնեն։ — Եկեսիոյէն մէկ քառորդ ժամու ճանապարհ հեռու, Ս. Սարգիս վանքին տեսարանական կողմը գտնուած բլրոյն հարաւային կողմէն վրայ կը գտնուի քրկերէ բնակուած Գրրգ—Մաղարա (Քառասուն քարայր) կոչուած գիւղակն, որ՝ հաւանականաբար՝ ի հնումն մատն էր վանքին շրջակայ Սարգսապետիս անուն արտաքնանին, որուն հետքերը, գրեթէ կը գտնուին ամէն

անգամ, երբ պետութիւնը տեղի կ'ունենայ։ Նոյն վիլայէի արեւելեան կողմը՝ որ միջագետք է կոչուի, կայ դէպի հարաւ նայող մեծ ու նկուղաձեւ քարայր մը՝ անյիշատակ ժամանակէ ի վեր սեպհականութիւն Թէլիլանը կոչուած աղքատիկ լեռնանոց մը. բայց 1889ին այս լեռնանիքը Թորոս գալն՝ սարսափելով քանի մը երեւոյթներէ, որ տեղի ունեցեր են. քանի մը գիշեր երբ ճրագը մարեր են, քարայրին մերձ արեւելեան և մերձ արեւմտեան կողմէն բաւական խոշոր քարեր ուժգնութեամբ արձակուեր և գնացեր բաղխեր են պատուհանի պատերուն, առանց տակայն բնակիչը վնասելու. քանի մը անգամ ալ երբ կ'ընթերցեն եղեր, անեւոյթ ոգի մը գալով՝ կերակրոյն մէկ մասը կը լափէ եղեր. և գիւղացիներէն ամենը ասոնք լսելով և չհաւատալով՝ քանի մը գիշեր ականատես եղեր են քարաձգութեան։

— Բաղաքիս հարաւակողմը, բաւական ժամ հեռու, Աղբարս ամարանոցի լերանց շղթայի վերջին օգակը կազմող բլրակի մը արեւելեան լանջքին վրայ՝ աւերակ մատրան մը բնակարանին մէջ, չորս հատ անշուք քարէ տապաններ կան, իրարանցիր քարի վրայ հնգական խաչ փորուած. շատ տարիներ չեն, որ դեռ կանգուն էին մատրան պատերը։ Նոյեմբերի 15ը օրը բաղաքիս Հայք ուխտ կու գան այստեղ, կանխաւ պատրաստելով մատուռի համար աքաղաղ, լաւ ծեծուած՝ բայց չեփած մի, ձուար և այլն. երբ ուխտաւորաց բազմութիւնը կը հասնի, քահանայք «Եկեալ եմք ի տեղիս սրբոց վկայից» շարականը կ'երգեն. ժամակոչը խաչի կը ծխէ. ուխտաւորները իրենց մատաղները կը մորթեն կէս մետր խոր և 8մ. տրամագիծ ունեցող փոսի մը մէջ դեռնիմանաց վրայ, որոնց երեքին մէջ Գաբրիսայ, Սամոսատայ և Աբիրայ սարկաւագ նահատակաց չարչարանաց մարմնոց նշխարները ամփոփուած են, և բուն Եղեսացւոց՝ Եդեսի Աղբար կը կոչուին։ Թուրքն Աղբար—տար կ'անուանէ այս ուխտատեղին. իսկ անցած դարուց մէջ տարբեր անուն ունէր։ Փրկչական 239 թուին, երբ քաղաքս Աբգարէն սերած Ջոհարայի իշխանութեան ներքև էր, Հռոմայեցի Անտոնիոս զօրքը Դիոկղեսիանոս իջեւանական հրամանատ Գաբրիաս և Սամոնաս անուն երկու բրիստոնեայ չարչարելէն վերջը, դիշեր տանն Եղիսեայ Հարաւային Յամանիա անուն գնէն (այժմ Հասան գաւուսը) հանելով գլխատել կու տայ Վէրակիկիոս կամ Փերեակիկիոս անուն չարչարանաց լերան վրայ. հետեւեալ օրը քրիստոնեայք անոնց մարմինները կ'ամփոփեն դերեզմանաց մէջ։ Վեց տարի վերջը Թրլըկ գիւղի (տրլի Թրլըմուտա անուն գիւղը) եկեղեցւոյ Աբիրայ սարկաւագր Անտոնիոսի յաջորդին հրամանատ նոյն լերան վրայ կ'ոգջակիպի, և տեղը նախորդ երկուքին քով կ'ամփոփուի։ Ասոնց քով կը թաղուի նաև նոյն գարուն Եղեսեայ Գապռատ եպիսկոպոսը՝ Հռոմայեցիներէն սպանուելով։ Կ'բսուի թէ Ջոհարայի մարմինն ալ ասոր թաղուած է։ Մեծին Կոստանդիանոսի հրամանատ հոյակապ եկեղեցի մը շինուած է այդ շիրմաց վրայ։ Ըստ ոմանց՝ տրդի Շէխ Մաքսուտի միջազգային ուխտատեղին է այդ, որ կ'իյնայ երեք Աղբար լերան արեւմտեան հիւսիսային կողմը՝ բաւական ժամու ճանապարհ հեռու։

Բաղաքիս հարաւակողմեան Թառանտանէն կէս ժամու ճանապարհ դէպի հարաւ, կայ Ս. Գաւառաւակ կամ Աղբիւր գաւառակի բուսած ուխտատեղին, և ասոր արեւմտեան կողմը 1½ ժամ հեռու բարձր լերան մը գագաթան վրայ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի վանուց աւերակները, որուն բնադարձակ տարածութենէն, դեռ կանգուն մնացած քանի մը միջնապարիսպ և մանաւանդ ներքնապարիսպ երեւութէն կը մակաբերուի թէ ի հնումն բազմաթիւ վանականաց բնակավայր և գաղղացած հաստատութիւն մ'էր։ Թուրքք Տէր Լեզուշ կ'անուանեն. դեռ անփուլ կը մնան երկու բարձրարձրձ բրգաձեւ շէնք. կը կարծուի թէ արեւելակողմեանը՝ տաճարին մնացորդ մէկ մասն է, որուն հիմատուրց թաղձրախառն ծեփին վրայ դեռ քանի մը տարի առաջ կը տեսնուէին սրբոց պատկերաց նշխարներ. իսկ արեւմտակողմեանը՝ վանքին գանգակատունը կը կարծուի. տասը վրայ քանի մը տարի առաջ լսած ներբէն հակիրճ արձանագրութիւն մը կար, որ կը յայտնէր թէ Աբգար չորրորդէն շի-

նուած է։ Մեծն Աբգարէ վերջ՝ Եդեսիոյ կառավարութիւնը սառնձնողք՝ յաջորդարար անխափ կը կրէին Աբգար մականիրը, որ Եդեսիոյ իշխանութեան պատուանունը դարձած էր։ Այս մենաստանը՝ որուն անդը կ՚ըսուի թէ ի հնումն մեհենատուն էր, կառուցուած կը համարուի Մծբնայ Հայրապետէն, բայց անշուշտ յետագայ ժամանակաց մէջ նորոգութիւններ կրած է։ Հայրապետին ասնին օրը՝ ուխտաւորաց խումբեր, կէս գիշերէն սկսեալ մինչև երեկոյ, երկու ժամուան լեռնային զժուարակ ճամբորդութեամբ հասնիան ուխտի կու գան այս տեղ, և բահանայք ալ գալով պարզ ժամերգութիւն կը կատարեն, վասն զի Պատարագ մատուցանելու առիթները քանի մը տարիէ հետէ վերցուած է։ Մենաստանիս հիւսիսային արեւելեան կողմը կան երկու վիմափոր եկեղեցիներ, մին՝ բաւական ընդարձակ, և հարաւ արեւելեան կողմն ալ առանձին օթմարան մը, զոր ծերք կ՚անուանեն Ս. Յակոբայ ձգնաբան։

Վաղարիս Հայոց Ս. Աստուածածնին մայր եկեղեցւոյն մէջ թաղուած է սուրբ Թադէոս առաքեալէն ձեռնադրուած Աղուէ հայրապետը, որ Աբգարու Ունանուն որդւոյն հրամանու նահատակուած է։ Կ՚ատանին թէ այս եկեղեցին ի սկզբան հօմն յարակից գմբէթ կամ կամարակապ էր, և 6ր քանի պիցամնէն Աննանուն՝ հօրը մահէն վերջ։ Գաղէնճեան Տ. Յարութիւն եպիսկոպոսի անուն, իբր վերաշինող, ցարդ կը յիշատակուի Պատարագի առեն Աստուածածնի և Լուս առաքելոցի և Լուս առաքելոցի մէջ. սակայն այս եկեղեցականը քիչ մը կը մեղադրուի՝ առաքելական աւանդ ամբակուռ հայկական կամարակապ գմբէթը քանդել տալուն համար, զոր պահել կարելի էր, կ՚ըսեն։ Սա՝ Աղուէի տապանը բացած, անոր նշխարքը խնկալից վիմափոր յիշատակարանի մը մէջ գնեղեցիկ վերաշինած եկեղեցւոյ Ճախակողմեան պատուն կից՝ արծաթեայ մշտավառ կանթեղով զմբէթաւոր փառաւոր դամբարանի մը մէջ ամփոփած է վերատին։ Հայրապետի ասնին օրը կը զարդարուի այս դամբարանը և նախատօնակ ու առաւօտեան ժամերգութիւնը կը կատարուին։ Ասոր արեւելակողմը պահարան մը կայ, ի յիշատակ Ս. Աբեքսիոսի քանդուած մասին, ուր՝ Աղուէի տապանին մօտ կը նշուէր կամարաւոր պատկառ։ Այժմ կողմեան պատուն մնացորդներն ալ, Աղուէի տապանին դիմաց, համանուն գմբէթաւոր խորանի մը մէջ պահուած է այն աւանդական վէմը, որուն վրայ եկեղեցւոյն անուանակոչութեան նախընթաց գիշերը, Թադէոս առաքեալ՝ դաս է Տիրամօր պատկերը՝ հանդերձ Աստուածորդւով, և այն օրէն մինչև յայդ և կեդեցին կոչուեր է Խրիսեակար Աստուածածին։ — Եդեսիոյ արեւմտեան պարսպէն քառորդ ժամու ճանապարհ հետու, Ս. Սարգսի վանուց տաճարին տակ եղող կրկին քարայրներու ներքնոյն մէջ՝ որ ի հնումն գամբարան եպիսկոպոսաց կը կոչուէր, փոխադրուած է Աբբայ Եփրեմի մարմինը, որ ժամանակ մ՚ալ ճգնութեամբ առանձնացեր է վանքին դէմ պարսպին ներքև գտնուած քարայրի մը մէջ։ Այս շիրմին տապանաքարին վրայ՝ զոր վեր հանած էին 1873ին, 1889ին շինուելիք գմբէթաւոր վայելչաձև խորան մը, նուիրատուութեամբ Պաղտասար և Եղբարք Պատմաճեան գերդաստանէն։ Նոյն մարմարեայ տապանաքարի վրայ փորագրուած է հետեւեալն. «Աս է շիրիմ Հայր Եփրեմի վեհատաւնի Հայոց այրի, արձանագրեալ ի տապանի, բուխն Հայոց ինն հարիւրի»։ Ներսէս աստուածատեմեամբ կ՚ըսուի թէ յիշեալ քարայրներէն արտաքնոյն մէջ, հարաւային պատին վրայ դուռ ծեփով ծածկուած երբոր այլ մը կայ, որ՝ նախկին անապահով գարերու մէջ վանքին եկեղեցական թանկագին նիւթոց պահարան է եղեր։ Եփրեմ խորհրդի յիշատակին հետ կապուած ուրիշ ուխտատեղիներ ևս կան։ — Վաղարիս հարաւային կողմը, Ներսովիայ և ի վերջոյ Մանիակայ բերդ կոչուած ամրոցին արեւելեան ստորոտին մօտ եղող Ծիռանց Աբբահամու ըսուած հանգստեան ուխտատեղւոյն արեւմտեան հիւսիսի կողմերը գտնուած Հայր Աբբահամ առուն ձկնաւէտ գեղածիծաղ լճակին շուրջը, որուն համար կ՚ըսուի թէ սնոդհականուհիին էր Աբբահամու՝ անոր խոտանէն եղնիկ առաջ, կան հնութիւններ ի հնումն հաչատուած եղեսիոյ ճեմարանին։ Այս ճեմարանին յարակից եկեղեցւոյ բուսանիւթի հնա-

պարեան զանգակատունն դեռ կանգուն է, բայց քիչ շատ խարխլած։ Միւս կողմն, քաղաքին հիւսիսային արեւմտեան անկեան դիմաց՝ կէս ժամ հեռու գտնուող բլրոյն հիւսիսային կատարի արեւելակողմը, ուր վերջին ժամանակներս անհետացած են արձեր, կը տեսնուին Լիւրեմ խուրիի վանաց աւերակները։ Հոն՝ ամէն քայլափոխի գրեթէ կը հանդիպին սիւներու, ճարտարապետական սիւնապատներու, յղկուած կարմիր կամ ճերմակ մարմարիոնի և կրանիտի բեկորներու և այլ ուշագրաւ առարկաներու։ Յովհաննէս անուն ազգայնոյ մը կտակի շնորհիւ, այս բլուրը վերջին ժամանակներս հայկական սեպհականութեանց կարգն անցաւ։

Տնզացի սինոդան մէջ աւանդութիւն է թէ՝ երբեմն Եփեսոյ մերձաւոր շրջակայից մէջ 361 եկեղեցիներ կային, և այս անհաւանական չէ, քանի որ պատմական ծանօթութիւններ կան թէ քաղաքիս շրջակայքը հարուստ վանորայք և վանականներ կային, և ցարդ շրջակայ լերանց մէջ կը տեսնուին կրօնական նշաններ և տեղ տեղ արձանագրութիւններ ունեցող անհամար բնակարաններ, վանքեր կամ ապօթատեղիք։ Քաղաքիս մէջ և պարսպաց մօտ տեղերը շատ հին եկեղեցիներու հետքերը կը տեսնուին, բայց քիչերու միայն անուանք ծանօթ են, ինչպէս Ս. Աստուածածին, Ս. Պետրոս–Պօղոս, Ս. Փրկիչ, Քառասուն Մանկունք, Ս. Սոփիա, Ս. Յովհաննէս Մկրտիչ, Ս. Անաքլետոս, Գտուածոյ Ս. Գէորգ, Ս. Թորոս, Ս. Կիրակոս՝ երկու հատ, Ս. Գաստառակ, Ս. Մինաս, Ս. Աճարծար քժիշկք, Ս. Նահատակաց եկեղեցի, Ս. Թորոսի մեծ վկայարան՝ բլրոյն մէջ. Ս. Սարգիս՝ բլրոյն մէջ, Ս. Վկայք, Ս. Սարգիս (վանք), Ս. Աբգարու եկեղեցի, Խաչավանք կամ Նոր Վկայարան, Աբիձի վանք։ — Եփեսոյ արեւմտեան կողմը, քառորդ ժամու ճանապարհ հեռու, 1890ին, կատուզոյ շինութեանց առթիւ, դուրս եկան գետնի տակ թաղուած հնադարեան ամրակուռ շէնքեր, որոնց մեծերէն քանի մը տարի առաջ գտնուած էին նաև մարմարեայ սիւներ և ուրիշ առարկաներ. կը կարծուի թէ այս տեղ կանխաւ եկեղեցավայր էր. կը կարծուի նաև թէ պարսպաց առաջ հոն զօրանոց կար, ուր կը բնակէին պահակներ՝ միաձակայ Ագապիան հնոցէն քաղաքիս վրայ անակնկալ յարձակումներու դէմ առնելու համար։ — Վերջերս ներքնատեսակ շինութեանց առթիւ պեղումնց առեն փաղոցներու մէջ դուրս եկան շատ հին շէնքեր, որոնց մէջ նշանաւոր են Ս. Աստուածածին եկեղեցիէն 1–2 քարընկէց հեռու դէպի արեւելք տեսնուած Ս. Գրիգոր Նարեկացւոյ անուամբ եկեղեցւոյ մը աւերակները. չէ կարելի ընդարձակութեամբ վրայ գաղափար ունենալ, վասն զի գետնի տակ ծածկուած աւերակներու մէկ մասին վրայ կը գտնուին խիտ ու խիտ կառուցուած Հայոց տները։ Այս աւերակներու կից կայ տուն մը, որ ի հնուց Տուն Նարեկացւոյ կոչուած է, որուն մէջ կը գտնուի եղեր ձեռագիր հրաշագործ Նարեկ մը, և 1845ին՝ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ վերաշինութեան առեն, Գասպէնճեան Քարութիւն եպիսկոպոսի ձեռքով գրեթէ բոլոր փոխագրուեր է եկեղեցին, ուր կը պահուի ցարդ՝ անագարտ յիշատակարանով մը, յորմէ կ'իմացուի թէ Հայոց ՊԻԱ (= 1372) թուին գրուած է։ Ականպատար կը պատմուի թէ՝ այդ Նարեկը, համանուն եկեղեցւոյ աւերումէն վերջ, աւերակներու կից բնակող ընտանիք մը պահած է, և առեն անցնելէ վերջ, այդ ընտանեաց ժառանգորդ եղբայր և քոյր մը, հայրենի ժառանգութեան բաժանման միջոց չեն կրցած համաձայնիլ Նարեկին համար, և վերջապէս քոյրն առած է գայն՝ անոր ծանրութեամբ ոսկի առլով եղբօրը, այդ պատճառաւ Ոսկեկիր Նարեկ կը կոչուի։ Մինչև ցարդ այս Նարեկին անուամբ շատ հրաշքներ կը պատմուին։ — Եփեսոյ աթեմնեան պարսպի ներքև, 1891ին, հայազգւոյ մը առն տակ գտնուեցաւ գամբանարան մը, որ՝ կը կարծուի թէ Աբգարու դերպատանին յատուկ գերեզմանատունն է. առաջ յայտնուեցան գեղանկար քարերով կատուցուած կամարներ, գետնատան քանդակազարդութեամբ խոշոր քարեր, որոնց վրայ խճանկարներ, ճարտարապետական արձաններ, և այլն։ Կ. Պոլսէն կայսերական թանգարանի անդամներ ձեռք գրաւ այս հնութեանց վրայ։

Աղի պատմագիտները կասկած ունին քաղաքիս նախնեաց Ուր քաղաքի յաջորդը լինելուն։ Հնախոյզները կ՚երթան Սատրին փաղդէա՝ վարքա անուն ընդարձակ ան֊բակներն պրպտել Ուր քաղաքի հնագր գրա֊նելու համար. բայց քաղաքիս խորերէն ե֊լած արձաններու, կիսանդրիներու և բեւե֊ռագրոց վիմագրութիւնք կը հաւաստեն թէ ար֊դի Եղեսիան հին Ուր քաղաքի յաջորդն է. մեծ ապացոյց է Թարայի այն արձանը՝ որ մօտ 35 տարի առաջ քաղաքիս հարաւ֊ա֊բեւմտեան պարսպին մէջէն ելաւ և ի կ. Պոլիս տանեցաւ թանգարանի մէջ դրուե֊ցաւ, և որուն վրայ հին քաղդէական տա֊ռերով Թարա անունը գրուած է։ Աստուա֊ծաշունչը՝ Փադդէացւոց Ուր քաղաքը էր֊կիր Թարայի կ՚անուանէ, հան ծնաւ Աբրա֊համ նահապետը. Թարայի ձեռակերտ ար֊ձանները՝ ինչպէս Փադդէացւոց, նոյնպէս Ուր քաղաքի բնակչաց աստուածներ էին. Թարա ևս իր ձեռակերտաց երկրպագան էր մինչև Աբրահամու Ուր քաղաքէն խոտան դալեհէն, ուր մեռաւ Թարա։ Խոտան՝ Եղե֊սիոյ հարաւակողմը աւազուտ, ընդարձակ ու տափարակ դաշտ մ՚է. ունի շատ աւերակ և տնայի գիւղեր և տեղեր, որոնց մէջ եղէ նոր բնակիչներ գեռեզուին և երկիրը հա֊զարդակցութեան մէջ գրուելով երկրագործու֊թեան նոր մղում արուի, Եղեսիա երկրորդ Եփրատաս մը կրնայ դառնալ. մանաւանդ այն տաեն՝ երբ փոխանակ Եդեսոյ, Եփրա֊տայ ջուրը ոռոգէ այս ընդարձակ դաշտե֊րը։ Պատմութիւնը Եդեսացւոյ կը վերա֊գրէ Ուր քաղաքի հիմնարկութիւնը։ Եդե֊սացւոյ գայն հիմնարկելով՝ մօտ 200 տարի կ՚ունենայ իրեն իշխանութեան ներքև, Եր֊կիր Թարայի անուամբ, մինչև այն ժամա֊նակ, երբ Մեծին Աղեքսանդրի զօրապետ֊ներէն Սելեւկիոս (Նիկատոր Անախոբայ) կը գրաւէ, անոր օրէն գեղեցկութեամբ և ջրոյն պատուականութեամբ հրապուրուելով իր Եղեսէ անուն գտաեր կը նուիրէ, և քա֊ղաքն այնուհետև կոչուէր է Եղեսէ կամ Եղեսիա։ Իսկ Ռուհա անունը Ռուհէ անուն սիրադեաէն ծագած է, որ ժամանակ մը սիրած է քաղաքիս։ Ռուհա անուան ն տառն ի վերջոյ ի փոխուելով՝ այժմեան Թրքական Ուռֆա անուանը առացած է։ — Եղեսիա ի հնումն մայրաքաղաք եղած է Օսրոյենայ գա֊ւառին, որ և կոչուած է Եղեսացւոց գաւառ։ Կրկին անգամ վերանորոգուելով մեր Աբ֊շամէն և Աբգարէն՝ եղաւ մայրաքաղաք Հա֊յոց և Աւսրի֊Աբշակունի թագաւորներու և անոնց յաջորդաց։ Ազգային պատմութիւնէ յայտնի է, թէ Աբգար Մեծրիէն արքայա֊կան գահը հոս փոխադրած ժամանակ, քա֊քաքիս մէջ սիեզերահռչակ պիւռն մը քա֊նալ տուաւ, որուն մէջ գնահիլ տուաւ նաև Մեծրնայ բոլոր պետականական գրուածները, ինչպէս նաև Պանտացւոց Պիոնոպ քաղաքին մեհենական պատմութեանց գրքերը։ Այս պետներ երեսունդ երկրորդի օրով գնա ուելի ճոխացան, երբ Հայք Հռոմէացւոց հար֊կատու եղան, ու անոնց կողմանէ գրուած կուսակալները չկանգին զարդարել զայն։ Աստ ուելորդ կը համարինք երկարել մեր խօսքը, յիշելով հանրածանօթ դէպք մը՝ Աբ֊գարու առ Քրիստոս Տէրն մեր գրած թուղթն իրեն բժշկութեան համար, անոր պատաս֊խանն, Թադէոսի գալուստն, և սորը գաս֊տատակին պատմութիւնը։ — Խոչակրաց ժա֊մանակ մի միայն քաղաքն եղաւ սա Աւխայ մէջ, որ ազատ մնաց մահմետականաց յաղ֊թանակէն և եղաւ իշխանանիստ։ 1144ին Բերիոյ Զանգի ամիրան Եղեսոյ սերոց շատ արիւն հեղլով, զոր ազատած է մեր Շնոր֊հալին։ 1393ին տարի առնուած է Լէնկ֊թեմուրի ձեռքով, և վերջը ժամանակ մը Պարսկաստանի կցուած։ — Հայրենիք կը համարուի քաղաքս մեր պատմիչներէն Ան֊գարս մէջ ապրող Մատթէոս Ուռհայեցւոյն, որ գրած է ժամանակագրական պատմութիւն մը՝ որ կ՚սկսի 952 էն և կը հասցնէ մին֊չև 1136 թուականը, որուն շարունակու֊թիւն ալ գրած է Գրիգոր երէց և հասու֊ցած է մինչև 1162 տարին։ Այս պատ֊մութեան նիւթն է նոյն ժամանակի մեծա֊մեծ յեղափոխութիւնները, որոնց թատր և֊դած է Եղեսիա։ — Եղեսոյ գաւառի բնակ֊չաց ընդհանուր թիւն կը համարուի մօտ 150000։ Կը պարունակէ Սուրուճ, Պիրէ֊ճիկ և Բումլուճէ գաւառակները և 1326 գիւղ։ Եղեսոյ ազգային վարչութիւնը սահ֊մանադրական է, և քաղաքս առաջնորդա֊

նման է, որուն թեմերն են կարմուճ, Ա-ղերկ, Նիգիպ, Լինկ, Ճիպկն, Աւերան, և Պիրեճիկ։ — Ն. Հայաստան, 330–336։ Ազատ, 1889 բ 17–21։ Վ. Բիւն, բ 248–271։ եւ այլն։

ԵՐԵՍԻՆ. — Քաղաք Առասիոյ Մոդոկի գաւառի, Ազատիանոյ առաջնորդութեան ներքն, Մոդոց քաղաքի մօտ՝ հիւսիսային կողմը։ Տիզայս Հայք թէև թրքախօս են, սակայն մեծ փոյթ կը տանին պղպջակաւոր յառաջադիմութեան համար, 1885ին շինեցին չորս սենեկէ բաղկացած ուսումնարան մը եկեղեցւոյ գաւթի արեւմտեան կողմը, հանդանակութեամբ տեղացւոց և ուրիշ տեղեաց ազգայնոց։ Փոքրիկ քաղաքս այժմ ի Առասց կը կոչուի Քասապիվա էաման. նորիկայ վիճակն մեզ անծանօթ է։

ԵՉԱՏՈՒՆԻ. Տես ՁԱՀՈՒԿ։

ԵՉԻՏԼԻՔ. Տես ԱԻԱԳԵՆԻ։

ԵՉՆԱԳՈՄԵՐ. Տես ԱՂԱՀԼՃԻ։

ԵՉՆԱՆԻՍ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԵՉՆԹԼՓԻՉ կամ ԲԼՈՒՐ. — Գիւղ Քաղաքացւոյ (Ազրատաս). Տես ԲԼՈՒՐ։

ԵՉՆԻ. Տես ՀԱՔԱՆԻ։

ԵՉՆԿԱՑ, ԵՐՉՆԿԱ, ԵՐԻՉԱՆ կամ ԱՐՉՆԿԱՑ. Պ. ERZINDJAN. թ. ارجنجان. — Քարձր Հայոց ուխ գաւառաց միոյն եկեղեցաց գրքխաւոր, հին ու պատմական քաղաքն է, որ կոչուած և նաև Քուսաթիխանաւոյրիս, յայսնի է թէ Քուսաթիխանաս կայսրէն վերակառուցուած կամ նորոգուած ըլլալուն համար։ Ա.յժմ՝ համանուն գաւառի գլխաւոր քաղաքն է, ուր կը նստի վերատարիքը։ Կը գտնուի Կարնոյ արեւմտեան կողմը՝ 176 հղմ. հեռու, Եկեղեցաց Քուսաձև գեղեցիկ պաշտի արեւմտակողմէ՝ գրեթէ երկու մղոն Էփրատէն (Ֆրաթ) հեռու դէպի հիւսիս և մղոն մը վարեկեր վտակէն հեռու դէպի արեւելք։ Երկնակայ ինչպէս պիտի տեսնուի, գտնուած երկրաշարժներէ կործանուելով հետզհետէ հեռացած է դեպի երկիր, ասոր ապացոյց քաղաքիս մէկ թաղը, որ ցարդ Հին քաղաք կ'ըսուի, և է անտարակոյս նախկին ընդարձակ քաղաքաանդուղն մէկ մասը. այս մասին օդը միառակար է, ջուրը ոչ բոլորովին լաւ, հողը ծծմբային և բորակաւոր, նեղնակայ երկրաշարժի, որով շատ անգամ նոր ցնցումներ կրած է։ Օդին ու ջրին անյարմարութեան և Եփրատայ մերձաւոր ճահճներուն պատճառաւ, երկնակացիք ամրան միջոց չեմայկին հիւանդութիւններ և աչացաւ կ'ունենան. ասոնցմէ զատ ոչ նուազ հիւանդութիւններու բնապատճառ են ասոնց ապականի ջրոց ընդունարան սոսրերկրեայ ճահիճն, ամանց բացօթեայ ասիներն որ կիլլը, գետնափոր խոներ գործածելու սովորութիւնը, և այլն։ Քաղաքիս բոլոր չէնքերը ապիւտակերա և փայտեայ են, իսկ քարակիրք սակաւ. շատերու առնիքները հողածած, իսկ քիչերունը կղմինտրաւոր։ Փողոցները հողոտ, այնպէս որ երբ քամին փչէ՝ մարդոց աչքեր, սենեակներ և անոր փոշով կը լեցնէ։ Ա.յս տուներէն հնաշէնք ամանք հակատակ են առողջապահական օրինաց և անճաշակ, իսկ նորաշէնք առ հասարակ լաւ են և ճաշակաւոր. անոնք ջրարբի պարտէզներ և ծառաստաններ և են միայարկ կամ կրկնայարկ։ Երկնակ կը գտնուի բուռ պարեզեան միջօրէի երկայնութեան 39, 5 և հիւսիսային լայնութեան 37 աստիճանաց վրայ, բուռ սրում ամենաերկայն օրը կ'ըլլի գրեթէ $14^{3}/_{4}$ ժամ, իսկ ամենակարճն՝ $9^{1}/_{4}$։ Կլիման ամրան տաք է և այս չեմայնութեան ժամանակ մանհէտականները օգտակարութեան կ'ելնեն գիշերը, իսկ Հայք ատեանացութեան մը միայն ունին։

Քաղաքիս բնակիչք են Հայք, Քրդք, Բազրգանք և Թուրքք։ Վ. Քինէ ընդհանուր բնակչաց թիւը 23,000 կը դնէ, հետեւեալ կերպով բաժնելով.

Մահմետականք	15000
Հայք	7500
Քրդք	200
Ասի և այլք	300
Գումարն...	23000

Ազգային սեղագրոցի մը համեմատ, Հայք ունին մօտ 1600 տուն՝ չորս թաղի բաժնուած. Քրդք և Բազրգանք տասն և հինգական տուն են, իսկ Թուրքք 2500։ Ա.յս ամէն ազգերն ալ ունին իրենց մէջ պրոեցի դպրեվանքներ Ա.կնէն, Գերմանիանէն, են.։ Հայոց և Թրքաց թաղերը զատ են, փոքր մօտ մը կայ խառն։

Մեր պատմութիւնն ալ Քրիստոսէ զատ մի առալ կը սկսի Երզնկայի անունը ու փառքը՝ որ նոյն ժամանակները Երզնգա անուամբ քաղաքացած էր։ Տիգրան Միջին կամ Բ, իր հօրը սեղը անցնելով, Ադուաշէսի Յունաստանէն գրկած Աբահամայ կամ Աննահաս ոսկի արձանը, որ աս ժամանակիս կը պահուէր Անի Ամրոցը, հրամայեց որ զայն փոխադրեն և կանգնեն Երզնգա ատանին մէջ։ Հայը որ ի հնուց Աննահատ չկրմեանով էին՝ մեծ յարգութեամբ քաղաքը Երզնկայ բառած է՝ այսինքն նոր կայր։ Տիգրան Բ ի օրով Միհրդատայ նահէն արշաւող Հռոմայեցիք տեսնելով Երիզայի մարգագետիններու մէջ գիցուհւոյն նուիրած կաղ այս եղնիկը, չեն համարձակած անոնց մեռնելու։ Ադուաշէս Բ թագաւորը իրեն վիրջին հիւանդութեան ժամանակ, որ կը բաղձար տեսնել «գեղեց ծիսանի և գառատօտ նաւատարպի», ուրիշ անձի մեհենները թողլով հոս կը գրկէր Աբեղենից Աբեղ նահապետը, որ իրեն համար բժշկութիւն և



270. Երզնկայի ընդհանուր տեսարանը։

սկսան պաշտել այս կատրը. թագաւորներն ալ գառատուր շատ երիվրներով՝ տաճարին կալուածք տուին, անոր համար բոլոր այն երիվրները Աճառական գառատ բառնցան, և մեհեններով ու քուրմերով լեցուեցան. ամէն կողմէ նուէրներ կու գային այս տաճարներուն։ Գիցուհւոյն նուիրուած եղնիկը ևս կային, որոնցմէ ճերմակները և բնաիրները իրեն հաճոյացոյն զոհ համարուած էին. ասոնց ճակատը չահաձև թարան գարկած որ մարդ չի դպչի՝ կը թողուին որ խումբ խումբ արածեն Եփրատայ և Գայլի խոտաւէտ ափունքները. գուցէ այս պատճառաւ

երկար կեանք խնդրել կուգէին։ Երէցի բնակչաց մեծ մասը Աննահատ ծառայութեանը նուիրուած էին իրեն քուրմ և ծառայող տաճարներուն մէջ։ Գարնան և աշնան մեծամեծ հանդէս թափօրով չահերով կը պատացրնէին կուռքը մեհենէն դուրս շուրջանակի. յատուկ Աննահատ մեծ ատր նուաստարդի 15ին կը կատարէին։

Շարունակաբար պատուած է Երիզայի մեհենն և Աննահատ անդրին 400 տարի, մինչև Դ. դարու սկիզբը Տրդատայ օրերը, որ թագաւորութիւնը առած կու գար Երզատանս շնորհակալութիւն և պատարագներ

մասուցանելու «Մեծի Աստուածոյ սիկոսջ, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ. զոր թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց», և պատուէր կու տար Լուսաւորչին՝ որ նայն տաճն իւր պինակիրն կամ սպասաւորն էր, զալար և տերեւալից ոսկեր ու ծագիկներ նուիրել դիցուհոյն բազնին. և հոն կը յայտնուի Մեծ Լուսաւորչին քրիստոնէութիւնն։ Նայն ինքն Գրիգոր Լուսաւորիչ յետ անչափ սիրալի նահատակութեանց և տանջանաց, վիրապէն ելնելով կը կոթծանէ ուրիշ մեհեաններու հետ նաև այս մեհեանս և տեղը կը կատուցանէ Աստուածամօր տաճար մը։ Բայց յայտնի է թէ, ինչպէս կանխաւ ըսինք, հին Երիզայի տեղը ճիշդ այժմեան Երզնկայի վայրը չէ, այլ աւելի վեր դէպի հիւսիս, և ինչպէս կ'ըսեն, վասկերա տանի մօտ կամ խոխոյ և Թիլն տանի մօտ։ — Երզնկայի երկրաշարժները իրեն նշանաւոր դէպքերէն կրնան համարուիլ, և թերևս քիչ քաղաքներ գտնուին ասոր նման ահեղ վնասուած, կոթծանուած և վերաշէն չինուած։ Մեր պատմիչները քան անդամէն աւելի կը հաշուեն քաղաքիս ժաժերը ԺԱ դարէն սկսեալ մինչև ցայժմ, զոր կարգալ յիշելը աւելորդ չեմ համարիր։ Առաջին մեծ և ահաւոր տատանումիներ եղաւ 1045 թուին, երկիրը պատռելով և շատ եկեղեցիներ և շէնքեր կոթծանելով ամբողջ Եկեղեաց գաւառի մէջ, և քաղաքս «փլաւ առ հասարակ, և պատռեցաւ երկիրն, և արք և կանայք ի խորս անդնդոց, և զաւուրս բազումս գայր ձայն ազազակի նոցա ի խորոց անդնդոց. և էր յամառնային ժամանակին և աւուր աւուր շարժէր երկիրն յամին յայնմիկ». յայտնի է թէ շատազ վերատին շինուեցաւ քաղաքս, վասն որ քիչ տարիներ վերջը (1057ին) աւարի և աւերմանի մատնեցաւ Թուրքերէն։ — Մաղաքիա գոչիր կը գրէ, թէ 1066ին «Շարժ եղև յԵղնկան և կոթծանեցաւ»։ — Ահեղ երկու տարի վերջը 1168ին, ըստ Վարպետայ. «Ահագին շարժ եղև և կոթծանեցաւ Եղնկայն». «և երկաստան մարդիկ մեռան» կը յաւելու Ասաքել։ — Ըստ ժամանակագրաց, 1236ին ևս շարժ եղաւ և եկեղեցի մը փլաւ։ — Տասը տարի վերջը 1246ին զարձեալ շարժ եղաւ և փլաւ Ս. Գրիգոր եկեղեցին։ — Իսկ ութ տարի վերջ 1254ին, մեծ տատանումիւն եղաւ և 14000 հոգի կորան. գրեթէ ասոր ատենները եղաւ հին ուղեւոր միանձն անուն փոռնկ Բիսպրինցի անուն, որ կու գար Թաթարաց երկրէն և անցաւ Երզնկայէն 1255ին, ուր կ'ըսէ մեծատուններէն և հարուստներէն 10000 հոգի մեռան, չհաշուելով աղքատները. և երեք օր ձիավարելով տեսեր է ահաւոր պատուաստներ և վկեր գետնի մէջ և կոյտ կոյտ դիրքուկներ և քարեր՝ բարձր լեռներէ հոսելի մէջ գլորած, այնպէս որ, կ'ըսէ, եթէ ժամն քիչ մ'ալ երկարած լինէր, պիտի կատարուէր Եսայի մարգարէի խօսքը, «Աժենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին»։ — Այսպէս նաև 14 տարի վերջ 1268ին, կիրակի օրով պատահեցաւ մեծ շարժ մը, մեծնելով 15000 հոգի։ — 13 տարի վերջ ալ, ըստ Ասաքելի, 1281 թուին շարժ եղաւ, բայց Աստուծոյ առանց մեծ վնասու։ — Փիչ տարիներ վերջ 1287 տարւոյ մայիս 6ին սաստիկ ժաժ եղաւ և շատեր մեռան, Աստուծոյ յայտնի է, կ'ըսէ ժամանակագիրը։ — Դարձեալ 1290ին բաւական տատանեցաւ քաղաքս, բայց չի փլաւ։ — ԺԴ դարու վերջին կիսուն բուռն և սաստկ եղած շարժերէն վերջ, մինչև 1356 թուականը շարժ չի յիշուիր, յորում սաստկ կը շարժէր Երզնկա, օրը հօծին և ութ անգամ, բայց չվտանգուեցաւ։ — Իսկ 1374 տարւոյ գեկտ. 8ին անգամ մը շարժեցաւ և ժամ մը հանգստացաւ. կարծեցին թէ ալ չի շարժիր. բայց կրկին շարժեցաւ և պատիսպը փլաւ։ — Վաթսուն տարի վերջ, յիշատակագիր մին կը գրէ. «Ի թուին ՊՀԲ (= 1433) ի մարտի 28, Երզնկա քաղաքս հօծին անգամ շարժ եկաւ, որ ամենեքեան տարակուսի կանք, թէ ահա աշխարհս այժմ կ'անցնի, և թէ մեկալ պահն կ'անցնի աշխարհս, զոր ակն Աստուած վերացուցէ ցաւուն»։ — Բայց գրեթէ 25 տարի վերջը 1458ին պատահած շարժն, խոսա ահաւոր կը յիշուի, վասն որ 32000 հոգի մեռած են։ — Նոյնպէս քիչ տարիներ վերջը 1462ին, երկրաշարժ կորան 30000 հոգի։ — Նոյնպէս ալ քան տարի վերջը 1482ին, եթէ գրուածներու թիւերու մէջ վրիպակ չկայ, «30000

հոգիք ներքև հողին ձեացին»։ — Ականէց վերջ գրեթէ ամբողջ դար մը չենք գտնար երկրաշարժի յիշատակ, բայց ԺԶ դարու վերջերը սաստկ. 1576 թուին «շարժ եղեւ յԵզընկան յոյժ ահագին ի նոյեմբերի հնգին ի մէջ գիշերին. մարդ ի շէն չկարաց պատկիլ չորս ամիս, և ապա զգաստացաւ»։ Ուրիշ ժամանակագիր մը այս շարժը հանդիպած կը գնէ յաջորդ 1577 թուին, և շատ գիւղեր գետին անցան, կ'ըսէ։ — Նոյնը կը յիշէ նաև 1583ին եղած սաստանութիւններ։ Իսկ յաջորդ տարին, 1584ին, լսա Մագաքիայի. «շարժ եղև յԵզնկան յունիսի ժէ, սուրբ Լուսաւորչի երկուշաբաթի, գ ժամին. յանկարծ գոչումն եղև, քաղաքն առ հասարակ փլաւ. 15000 այր և կին մեռան. 5000 մարդ այլ ի ներքոյ հողոյն ձեացին՝ զամենեսին կիսամահ հանեցին»։ Այս դէպքս ուրիշ ժամանակագիր մը, հինգ տարի ասկէ հանդիպած կը գնէ 1579 թուին։ — Ականէց վերջն ալ Երզնկային անուամբ շարժ չի յիշուիր գար մը, մինչև 1667 տարին, յորում կ'ըսէ ժամանակագիրը, «փլան շատ չենք՝ հինգ ևկեղեցւով»։ — Իսկ ամենէն վերջի ժամն և մեծ կործանումը եղաւ 1784 տարւոյ յուլիս 30ին, երբ գրեթէ բոլորովին հիմնայատակ եղաւ Երզնկա և իրեն բնակչացը գերեզման, որուն հետ նաև երեք մօտաւոր գիւղերը։ Ականէց վերջ չի յիշուիր քաղաքիս պատահած մեծ սաստանութիւն, որ ի հնումն ինչպէս կը անուանի մեր այս յիշատնեներէն, շատ անգամ կործանեցաւ և բնաբաւ մարդկանց մահուան պատճառ գարձաւ։ Վերջապէս նորոգուելով շինուեցաւ Երզնկա իր գեղեցիկ և յարմար գրիցը, ինչպէս նաև շարժուն ճանապարհի վրայ լինելուն պատճառաւ, գանուելով կարնոյ և Փոքր Ասիոյ մէջտեղ, նոյնպէս Պոնտոսի և Գրզաստանի։ Հին ժամանակներու քաղաքէս կ'անցնէին անոնք՝ որ մեր աշխարհի արեւելեան կամ հարաւային կողմէն կ'երթային Ցունաց երկիրը, ինչպէս նաև Տրզատ և Լուսաւորիչ և ուրիշներ կեսարիա երթալու միջոց, ինչպէս և Հերակլ և կայսրներէն ու զօրավարներէն շատեր. մանաւանդ որ Հայաստաներ երկու մասանց բաժնուած միջոց, Ցունաց բաժնին մէջ մեռց Երզնկա, և հակառ երբէք բռնաբարուեցաւ Պարսիկներէն և Արաբացիներէն, մինչև որ Թուրքերը իրենց առաջին արշաւանքին առին և աւերեցին 1057ին. և իրենց իշխանութիւնը փոքր Ասիոյ վրայ սփռած միջոց՝ Երզնկա ալ իրենց ենթակայ եղաւ։ ԺԲ դարու կիսուն Աչփասլան կը սիրէր քաղաքիս. յետոյ Իկոնիոնի սուլտանաց իշխանութեան տակ անցաւ։ ԺԳ դարու սկիզբը, Օսմանեանց նախահայր Սիւլէյման շահ, Թաթարներէն հոս ապաստանեցաւ։ 1230 թուին քաղաքիս սահմանները զարնուեցաւ Ջէլալէտտին խորազմի շահը, որ փախած էր Թաթարներէն։ Թաթարք փոխեալ հասան և զսուլտանը զարնելով մեծ կոտորած բրին նաև Երզնկայի և սահմանաց մէջ. հոն հաստատեց իր բանակն, անոնց Բաչու մեծ զօրավարը։ Հոն նոստաւ նաև ժամանակ մը Թաթարաց մեծ դռնն Ալաղայ (1279), որուն միջոց Երզնկայի շահապետ կամ Հայոց իշխան գրուած էր Պարոն Յովհաննէս՝ որուն հայկն ալ քաղաքին հոգեւոր տէրն էր, Սարգիս անուն արքեպիսկոպոսը (1250–1279), որ խոհական և խնամատար մարդ մ'էր, «պատուական Աստուծոյ, մեծարեալ յարգոյ և յարգանց և ի խաղաղարար մեծաց, որ և շինեաց գհրաշագեղ խորանն Աստուծոյ զդեղեցկահամարն եկեղեցի, որ յանուն Փրկչին մերոյ և Տեառն Յիսուսի, բարեւէր և աստուածապարգև գաւակաւն Յովհաննիսիս», ինչպէս կը պատմէ ժամանակակից գրիչ։ Ս. Փրկչի եկեղեցւոյ հիմնարկութիւնը ժամանակագրի համեմատ, եղաւ 1269ին, զոր և գեղապատճոյճ տաճար կ'անուանէ և «ի թուին ՉԻԳ (= 1274) կատարեցաւ գմբէթ սուրբ Փրկչին, և եղ Տէր Սարգիս գխաչն ի վերայ գմբէթին»։ Սարգիս արքեպիսկոպոսը, Հուլաղու գանի հրամանաւ Յունաստան գնաց, և 1266ին, Դեսբինա օրիորդը՝ ինքնակալի դուստրը՝ գանին կուտեհան բերաւ, և որովհետև Հուլաղու մեռած էր՝ գայն առաւ Ապաղայ գան, զոր կ'ըսեն թէ մկրտեց Սարգիս՝ Աղաթօրդու պատարիքին հետ։ Նոյն ժամանակներու հոս կը փայլէր նաև մեծ բանաէրն Յովհաննէս Վարդապետ Պռուզ, որ և քաղաքին անուամբ կը կոչուի Երզնկացի, ինչպէս նաև Ծործորեցի, ուսումն և կրթու-

թիւն առնելով Կամախայ և Եկեղեաց գաւառի վանքերու մէջ։ 1275 թուին, Մեծին Ներսեհի նշխարները յայտնուելով Թիլն առանի մէջ, Տ. Յարպիս առնելով բերաւ Երզնկա, «մինչև շինեսցի եկեղեցին ի վերայ գերեզմանին... Իսկ զՁեռն առաքելաշնորհ եւ զեալ արքեպիսկոպոսն Տէր Յարպիս յիւրաշէն եկեղեցին որ ի քաղաքն, ի նորոգաւսէս շինեալն հրաշատես և զարմանալի փառօք և մեծաճախ զարգուք երից թուով խառնեաց, յանուն Փրկչին մերոյ Յիսուսի զաւագ խորանն, և միւսն Կաթուղիկէ, և միւնն յանուն սրբոց Առաքելոցն. և եղեալ անդ զՁեռն սրբոյն Ներսեհի ի զարգ և ի պահպանութիւն սրբոյ տաճարին, մնալ մշտնջենաւոր կայիք։ Եւ զմիւս բազուկ ձեռինն կազմեալ մասամբքն մեքուր, տարեալ ի հռչակաւոր և ի գեղեցկաշէն ուխտն Տիրաշիհին, անդէն մնալ յեկեղեցւոյն փառաւորապէս. որ և ընդ մէջ լինելով եղեմբուխ գեղոյն Երիւասայ... խնամասարար և մեծ յուսով արարեալ խոհեմականն Տ. Յարգիս, զի զերկոսեան բազուկսն և զձեռն առաջաւոր շնորհս լցեալ Ս. Ներսեհի, զերկրորդ մեր Լուսաւորչին, տեղիս կոզմանս գեղոյն, որպէս թէ տարածեալ ունելով զձեռն հովանի գաւառին», և այլն։ Թուրքերը 1279ին վերստին առնելով քաղաքս, նախանձով սպանեցին Տ. Յարգիսը և իր որդին, 38 հոգւով, ինչպէս կը գրէ նոյն ժամանակի յիշատակագիր մը. այս լսելով Ապաղայ շատ արտմեցաւ և նորէն Երզնկայի տիրելով, կ'արգահատէր սպանուղներու մերձաւորաց և կը մեծարէր անոնց թոռունը։ Ապաղայի մահէն վերջ, Թեմիրները Երզնկայի մէջ սպանեցին Իկոնիոնի Դխաչեսաի Բ սուլտանը. այնուհետև 1285ին Երզնկա եկած ձմերած է Ապաղայի եղբայրը Հուլայչու, և Քայդաթուն մեծ զօրաւորը։ — Թեմիրաց տիրապետութեան ժամանակ, ԺԴ դարու վերջերը (1300ին) վենետիկեցի մեծ աշխարհաշրջիկ ճանապարհորդն Մարկոս-Պօղոս՝ Երզնկայէն անցաւ և պատմեցաւ արհեստաւորաց գործած բամբակեայ բնաւոր կտաւներուն և ջերմ ջրոյ բաղանիքներուն. գեղեցիկ շինուածոց վրայ. սա կը յիշէ բնակչաց մեծ մասն հայ լեալ, Թեմիրաց իշխանութեան ներքոյ, և անոնց ներսէս արքեպիսկոպոսը։ Ան երկու հանգամանքները՝ հայ բնակչաց բազմութիւնն և անուանի կտաւը՝ կը յիշէ նաև Խոճա-Պատրա՝ որ քանի մը տարի վերջը անցած է քաղաքէս, կը յիշէ նաև պղնձահանքը՝ Երզնկայի մօտ կամ մէջը։ Թուրքաց մէջ առակի կարգ անցած է անցեալ անուանի կտաւն, որուն համար կ'ըսեն. Լերգնձաձերն պէզի, Պայպուրդրն գըզը, Քէմախըն դուզը։ — 1314 տարւոյ մարտ 15ին քաղաքիս մէջ նահատակուեցան երեք փրանկիսկեան կրօնաւորներ, Մանալտաս Ազբռնացի, Փրանկիսկոս և Անտոնիոս, միաձայնակամաց մէջ համարձակ պերճասաս քարոզելնուն համար. որոնք իրենց վենետիկեան հայրապետութեամբ հրապարակին մէջ սրակոսաց բրին, և անոնցմէ միւսն գլուխը կապեցին Հայոց երէցի գլուխը՝ որ գկրօնաւորները խնամած էր, և մերկ շրջեցուցին քաղքին մէջ գանահարելով։ Բայց նոյն երէցը, յետոյ իրեն հետ հաւատարիմ մարդիներ առնելով, ժողվեց նահատակելոց նշխարները և թաղեց. յետոյ գալով անոնց կրօնակիցները փառքով և շքով թաղումն կատարեցին, Հայոց եպիսկոպոսի ընծիրատակութեամբ. իսկ կաթողիկոսը, բան գրեց ժամանակակից մը, պատուիրեց անոնց յիշատակը կատարել։ Կը թուի, թէ քիչ տարիներ առաջ հոս նահատակուած է նաև ուրիշ փրանկիսկեան մը՝ Աճեմոյ անուն։ — Թեմիրները ի սկզբան սիրով կը վարուէին Հայոց հետ, բայց ոչ երկար ժամանակ, վասն զի 1343ին յիշատակագիր մը կ'ըսէ. «ի գան և յանհնդիսա ժամանակի, զի զօրացեալ են ազգն Նետազաց ի վերայ Քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշեն և յաւարի հարկանեն և ի գերութիւն վարեն զրազում գաւառս, և բազում անիրաւ հարկապահանջութիւն գասին գամենեսեան». ևն։ Այս ԺԴ դարուն մէջ շատերէն նեղուեցաւ Երզնկա քաղաքը, երբ սկսաւ սկսարանալ Թեմիրաց բռնակալութիւնը և սկսան սիրել Թուրքերը և Թուրքմէնները։ 1386ին քաղաքիս տէր կը յիշուի ումն Թախրախան, որ Լէնկթիմուրի հոս եկած միջոց նուաճուեցաւ և հաւատաւուեցաւ իբ իշխանութեան մէջ (1393 . բայց քրիստոնէից շատ

վառնդներ հասան, վասն զի բնաւոր Լէնկթեմուրը հրամայից քակել «զմեծ կամուրջն զԿ. Սարգիս ի հնանէ, և զայլ եւ կեղեցիս զամենայն կործանեցաւ, չարաչարաւելեամբ Թաթարաձան պարսին, և այլ ամենայն Ջանիկաց քաղաքին։ Եւ վարպետան Գէորգ աշակերտ Յովհաննու Որոտնեցւոյ գնաց առ նա. և յահէ և յերկիւղէ պղծոյն՝ շրեմուրքն պատառեցան, և արիւն ի՛ջանէր. և չարով և արատաւոր յետս դարձաւ այրն Աստուծոյ. վասն զի հրաման եա քակել զամենայն եկեղեցիսն, և ասէ մեծ

բայց Փիր Լօմէրի միջնորդութեամբ, առաջին անգամ հաշտեցաւ անոր հետ. յետոյ Օսման որ կը սկսէր Ամիրայ մէջ գՀօմէր (1418) սպաննեց և քաղաքին սկսաւ մինչև 1435 թուականը, յորում Լէնկթեմուրի թոռը Խալկէնամէր, սպաննեց զինքն և Պայէզիտ սրբին։ Եւյն ժամանակ (1425) կը յիշուի քաղաքիս Հայոց գլխաւորը կամ վերակացուն Եաղուպ ագա՝ հօրեղբօրորդի Խաթէշ և Միրէյման պարոններուն, որոնք Հայոց իշխաններէն էին։ — Ինաչխարհի պատմիչ Թուրքաց և Թաթարաց վրայ աւելցան դառն և



271. Եզնկայի հայ պատուհան։

հզօր։» Ինոր մեհնած ժամանակ ԺԴ. դարու վերջերը, սուլտան Պայէզիտ իրեն իշխանութեան ներքոյ ձգեց. բայց Լէնկթեմուր առանց պանդպիկու եա գարձաւ (1400) և վերստին նուաճեց զայն, հնազանդեցուց Գարագօյունլու Թուրքմէններու առհմապետ Գարա Եուսուֆը, որ Թաթարաձանի մահէն վերջ սկսեր էր բռնանալ այս կողմանց։ Ժէ դարու սկիզբը քաղաքիս տէրն էր Շէյխ Հասան, զոր հալածելով Ագգօյունլու առհմէն ոմն Գարա Օսման (1410), իշխան դրաւ զՓիր Լօմէր. յետոյ գարձեալ զօրանալով Եուսուֆ Օսմանի վրայ Երզնկայի տիրից,

գիպաացիք, որոնք 1437ին գալով Երզնկայի մէջ կոտորեցին Խակէնաէրի զօրքերը, և Թխմաբեանները նուազելով վերստին զօրացան Թուրքմէնները, մանաւանդ Ագգօյունլու առհմէն, մինչև ուրիշ նոր երիրակալ մ՚ալ ելաւ ի Պարսս՝ Ուզուն Հասան անուամբ. սա հակառակորդ չինելով Օսմանեանց Սուլտան Մէհէմմէտ աշխարհակալին, անոր վրայ գնաց և Երզնկայի առհմանները յաղթեց Ձխանշահի և 1473ին Օսմանցւոց. բայց յետոյ ինքն ալ անոնցմէ յաղթուելով տեղիք տուաւ։ Այնուհետև Օսմանեանց իշխանութիւնը տարածուեցաւ այս կողմերը.

բայց առաւելն ԺԶ դարու սկիզբը (1502) շահերու նոր ցնցագետ Իսմայէլ, Երզնկա գալով զօրք կը հաւաքէր Օսմանեանց դէմ, որոնք բոլորովին սիրացան կոմնենոս 1514 թուին, քաշայագէմ Ակչիմի օրով։ 1548ին Շահ Թահմազ քաղաքին սիրեց և աւերեալ գնաց։ — Երզնկայի այսքան բնաւրութիւնները, կը ցուցընեն իրեն միջին դարուց մէջ ունեցած բարգաւաճ վիճակը. այս պատճառաւ ԺԴ դարէն սկսեալ, ինչպէս վերը յիշեցինք, Եւրոպացի ճանապարհորդներ և ուղեւորներ այցելած են քաղաքս և գովութեամբ յիշած իրենց գրքերու մէջ. ասոնց շարքէն է նաև Յովսեփաան Պարպարոյ Վենետկեցին, որ 1471ին քաղաքէս անցաւ և մեծ մասն երկրաշարժէ կործանած գտաւ. սա կը յիշէ նաև Էթիոպաց քարաշէն մեծ կամուրջը՝ աասն և հօթը կամարներով, զոր կը յիշէ Ամպիացի Նիկոլբի անուն ճանապարհորդն ևս 1581ին։ Ուզուն Հասանի պատերազմաց միջոց՝ վենետկեցիք անոր հետ դաշնակցելով գեսպաններ ղրկած էին Երզնկա, որոնց հետ էր նաև Փաթերիոյ Մինոյ՝ որ գրեց նոյն պատերազմաց վրայ։



272. Եզնկայի սահմանները գտնուած հին քանդակասատկեր։

Նշանաւոր է քաղաքիս բերդը՝ որ կը գտնուի արեւելեան հարաւային կողմը, բարձր վիրքով. շինուած է կոփածոյ քարերով, անկանոն բազմանկիւն ձեւով. ունի գրեթէ 250 քայլ երկայնութիւն և 12 քայլ լայնութեամբ արամադիծ. քառակոյս քայլ մէկ մէկ հեռու կան մարտկոցներ կամ բուրգեր. երեք պարիսպներով պատած է, որոնց բարձրութիւնն է մօտ 30 ոտք և թանձրութիւնը 6–8 ոտք։ Առաջին պարիսպը խրամ ունի և միջինը բնակութիւն է քաղաքացւոց, իսկ ներքինը զօրաց ապաստան. աշտարակները քայքայած են, բայց պարիսպները դեռ կանգուն։ Բերդիս մէջ կը պահուին հին զէնքեր, ադեղներ, նետեր և մեծամեծ ակռեր։ Բնակիչք կ'ըսեն, թէ բերդս շինուած է Ձենովացիներէն (Ձինովիզ), և կամ Ալայէտտին փաշայէն՝ փոխանակ բսլու Իսկոնոնի Ալայէտտին խան Քէյքոպատ սուլտանէն, որուն կը վկայէ նաև Մուսթաֆի աշխարհագրին ԺԴ դարու։ Որմերուն վրայ կան արձանագրութիւններ։ Բերդիս մէջի շէնքերը մեծ մասամբ աւերակ ըլլալով, ի վերջոյ նոր շէնքեր շինուած են արքունի գօրաց համար։ Մարտկոցի մը վրայ կը տեսնուի Ակճաուգհան նշան, երկու սուիծներ և մէջտեղ օձ մը քանդակուած։ Բերդիս մէջ ի հնումն կար նաև մեծ բաղնիք մը, որ ի վերջոյ բոլորովին քայքայուեր է։

Մեր հին պատմիչներէն նշանաւոր շէնքեր չեն յիշուիր Երզնկա, բայց եթէ, մեր վերոյիշեալ Տիրամոր անուամբ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչէն շինուած փոխանակ Աստուածածնայ մեհենին. անկէց վերջ յայտնի է թէ ուրիշներ ևս շինուեցան, մանաւանդ քաղաքիս Քաւսոխինհանոս կայսրէ նորոգուած ժամանակ. նոյն միջոցին եպիսկոպոսանիստ է եղած Երզնկա Քաւնայ կամ Քաւնահայոց, սրընդմէջ 4 կամ 5 հոգի կը յիշուին Զ–Ի դարուց ժողովոց պատմութեան մէջ. իսկ հայոց եպիսկոպոսներէն կը յիշուի նախ միայն Յարտէն Ծանօթ Սարգիան, և անկէ վերջ յիշուած կը գտնենք քանի մը հոգի միայն, ինչպէս, Ներսես՝ 1278ին, Յովհաննես՝ 1439ին, Մարտիրոս՝ 1489 96, Ներսես՝ 1561, Աչեաիք՝ (յետոյ պատրիարք Կ. Պոլսի) ԺԷ դարու վերջերը, Սարգիս Սանտալի՝ (Լեռնկիացի) ԺԸ դարու սկիզբը։ Երզնկայի ազգային հոգեւոր կառավարութիւնը, եղեր է ժամանակ մը որ 12 առաջնորդներէ կը բաղկանայ եղեր, խրաքանչիւրը մէկ մէկ վանքի մէջ՝ գլուխ և թագեր մէջերնին

բաժնելով։ Երբեմն ունեցեր է երկու առաջնորդ մին քաղաքի և միւսը ալ Մէրճանի վանուց և հինգ միաբեր։ 1860էն սկսեալ քաղաքս կը նայի միակ առաջնորդ՝ եպիսկոպոս կամ վարդապետ, իրեն իշխանութեան ներքև ունենալով բոլոր վանքերը ու միաբերը։ 1860էն մինչև ցայժմ Երզընկա ունեցած է հօթէն աւելի առաջնորդներ և տեղապահներ, որոնցմէ յիշելու արժանի է Աբէտարեան Գրիգորիս վարդապետը (յետոյ եպիսկոպոս Տարօնոյ), որ շինած է Քրիստինեան օրիորդաց վարժարանը հանգանակութեամբ. ինչպէս նաև Հմայեակ Դիմաքսեան եպիսկոպոսը, որ ներկայ առաջնորդարանը շինելէ վերջ, մեծ գարկ տուած է նաև կրթական գործին։ Ներկայն առաջնորդն է Դանիէլ Ե. վ. Յակոբեան՝ որ իբր իշխանութեան ներքև ունի 33 եկեղեցի և 11 վանք։ Հայք ունին չորս նորաշէն եկեղեցիներ, որոն գլխաւորները 1784էն երկրաշարժէն կործաներ են. առաջինը Ս. Նշան քարաշէն է օրօցաձեւ տանիքով և վեց սիւներով, որուն շինութիւնը աւարտած է 1849 թուին. կ՚բսուի թէ նախ Ս. Լուսաւորիչ շինած է առա Ս. Նշան կամ Ս. Խաչ անուամբ եկեղեցի, մէջը գնելով Հռոմէն բերած խաչ մը, որ և ցարդ կը պահուի և Տրպատայ խաչ կը կոչուի։ Եկեղեցւոյս մէջ թաղուած են Յովհաննէս վարդապետ Պլուզ՝ ինչպէս կը ցուցընէր հին եկեղեցւոյն սեան վրայի արձանագրութիւնը՝ և Գէորգ վարդապետ։ Եկեղեցւոյս նորոգ շինութեան միջոց առաջնոյն նշխարները հանելով, նորէն ամփոփեցին արկղով սեան մօտ գտնուն աջակողմը, որուն տապանաքարին վրայ գրուած է. «Այս է տապան Յակոբաեան, Յովհաննէս Պլուզ Երէցոյ, էր վարդապետ ձարտարապետ»։ Երկրորդ և երրորդ եկեղեցիները Ս. Երրորդութիւն և Ս. Աստղիկ փայտաշէն են։ Զորրորդ եկեղեցին Ս. Փրկիչ՝ քարաշէն է ու փոքրիկ։ Կայ նաև հինգերորդ եկեղեցի մը Ս. Աստուածածին՝ 1784էն կործանած, որ լինելու է անշուշտ 1343 թուէն յիշուածը։ Երզնկայի մէջ 1850էն կար միայն մէկ ազգային վարժարան 140 աշակերտներով. տարեկան ծախքն էր միայն 10–20 ոսկի և կեղեցիներու տուուկներէն։ 1886էն գործոցաց թիւն եղեր է ութ, իսկ աշակերտները՝ երկու տեղ միասին՝ 1000է աւելի, դասախաբակ, ուսուցիչ, և այլն, 30–40 հոգի և տարեկան ծախքը 7–800 ոսկի։ Այս համեմատութենէն կարելի է եզրակացնել քաղաքիս ազգային վարժարանաց դան ներկայ վիճակին։ Այս վարժարաններէն չուներն մեծ կալուածներ և ուրիշ եկամուտի աղբիւրներ. բոլոր ծախքը Ազգը կը հոգայ եկեղեցւոյ կալուածներէ, ազատոց թոշակներէ և նուիրատուութիւններէ։ Աստղիկ զատ կրթական գործին կը նպաստեն նախկին և բարեյաջող Պատ. Միացեալ և Հայրենեաց ընկերութիւնները։ Յիշելու արժանի են թուրքաց պետական և քաղաքական վարժարանները։ Յոյնք և Բողոքականք ևս ունին մէկ մէկ ազօթատեղի և դպրոց։ Երզընկայի ազգային կրթական գործը բազմատեսակ Հայասատանի ուրիշ գաւառներու բան ուական մխիթարական է։ Պակաս չեն քաղաքիս ազգայնոց մէջ օգտակար և տա Ազգն ունեցած սրբազան պարտաւորութիւնները կատարող անձինք՝ խօսքով, գրչով և անձնական ծառայութեամբ։ Տեղւոյս հայ երիտասարդութիւնն ալ ունի տանէ աւելի բարի նպատակներու ծառայող ընկերութիւններ։ Ուսումնական յիշատակով նշանաւոր եղած են նաև քաղաքիս ԺԴ և ԺԵ դարերը, որոնց մէջ ծաղկեցան բաց ի Յովհաննէս Պլուզէն, Մովսէս, Կիրակոս, Գէորգ և Գրիգոր վարդապետները, և այլն։

Հետաքրքրական կարելի է գաղափար մը տալու թէ քաղաքիս և թէ գաւառին բերոց վրայ. այս ցանկերը պատրաստուած են համաբերա տասը տարի առաջ, և կը ներկայացնեն միջին հաշուով մէկ տարուան մէջ առած եկած բերքերը։

Ցորեն	4935000	չինիկ
Սարք–պաշ	2236000	»
Գարի	4767000	»
Հաճար	215000	»
Կտաւատ	17000	»
Կտրեակ	42000	»
Ոսպ	400	»
Ըսկզդ	25000	»
Գումարն…	12337400	չինիկ

Լուբիա	646000	հատ
Ոլխախոտ	1450	»
Ալեւ և Ճմերուկ	315000	»
Սոխ	355000	»
Եղիպտացորեն	5000	»
Վանաձիաձոր	33000	»
Բակ	89300	»
Կեռաս	69900	»
Խնձոր	18900	»
Տանձ	42950	»
Խաղող	512000	»
Սերկեւիլ	5000	»
Թուէի	199800	»
Պնդան	15000	»
Ոլխոն	47000	»
Ալոր	31400	»
Շագդամ	75000	»
Կապամէ	108000	»
Պաճիա	20000	»
Սխտոր	87600	»
Գումարն...	2677300	հատ

Ջաճապաճ բերքեր

փեթիակ մեղուաց	30450	
Կաչի և մոմի գմիչ և ձգան	35000	
Բուրդ	75000	հատ
Պատն կամ ալճամազ	53000	»

Տարւան մէջ մինչեւ հաշուով կենդանիներէն առաջ կու գան Էրզնկա գաւառի մէջ.

Ձի	31755	
Կով	36700	
Գամէշ	7580	97885
Ցուլ	2350	
Հորթ	19500	
Ամբողջ ցեղէն ամրողջ...	97885	
Ջի կաստրեալ	2638	
» մակեալ	3250	11308
Մատակ ձի	3735	
Մարուկ	1685	
Ջիաց ցեղէն ամրողջ...	11308	
Էշ	13400	20525
Ջոբի	7125	
Իշոց ցեղէն ամրողջ...	20525	
Ուխտ	171700	
Ոչխար	9141	
Գառն	55594	495361
Նոխազ	6775	
Աւծ	160840	
Ուլ	91311	
Ոչխարաց ցեղէն ամրողջ...	495361	
Ամրողջ կենդանեաց գումարն...	625079	

Տեղացին արհեստաւորներն են պէսպէս տարազագործներուն և պղնձագործներուն։ 2000 բնակիչէ աւելի կ'ապրին մանաւանդ շինելով. կան նաեւ խաւատներ, երվանձի, ներկարար, ոսկերիչ, կերտակ, կօշկակար, դեղատարագործ, գաղջին, տաղտկագործ, երկրագործ. այս արհեստները բնիկ հանրապետէս Հայոց ձեռքն են։ Տաճիկներն են փերեզակ, բրուտ, երկաթագործ, պարտիզպան և կառավարութեան պաշտօնեայ։ Նպարեղէնք ծա-

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԵՋՆԿԱՑԻ

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԳԻՒՂԻՑ

ԱՆՈՒՆԱՔ ԳԻՒՂԻՑ	ՀԱՑՔ		ԹՈՒՔԱՑ ՏՈՒՆ	ՀՐԱՑ ՏՈՒՆ
	Տուն	Հոգի		
Աւագ Օհան	17	99	—	5
Գօչէքէնի Բալանկա	10	48	—	—
Մէհենի	85	540	—	—
Կարմրի և Լաէսի	22	123	60	10
Եալընըզ Պաղ	3	23	100	—
Տընգհաւկ	3	17	10	—
Ախոռճաղ	13	?	—	—
Չայրապաճի	20	114	20	10
Շեխլի	9	30	42	19
Խնձորկ	30	227	—	25
Ս. Նիկողայոսի վանք	2	10	—	—
Բէմաթճ	50	245	80	20
Պաթա Փէյխէ	26	111	—	44
Աղճաքէնտ	6	31	14	—
Վէրի ագարակ (չիֆլիկ)	42	254	—	—
Կամուրջ գլուխ Բալանկա	4	27	1	—
Քուրդ	1	9	—	30
Տաճրակ կամ Տաճարակ	17	130	—	7
Եկան	67	420	8	—
Կէչէնցիք	31	183	—	—
Չամամ ագարակ	18	141	40	10
Ուռկ	5	30	40	—
Ղամիգիւղ	52	285	10	—
Մեղուցիկ	185	1150	35	—
Պաթմաուշ	20	133	17	4
Մեծ ագարակ	57	354	50	8
Բզման	54	205	24	—
Մահմատցիք	67	397	—	—
Վարի ագարակ (չիֆլիկ)	23	141	—	2
Պաթաուկէն	19	141	—	3
Գիւլիւճէ	66	408	—	—

նաց, և մանրավաճառութիւնը մնասամբ մը Բազոքականաց ձեռքն է։ Խրատքանչիւր աւարի Էրզրումէն Տրապիզոնի ճամբով 15000 հազարապրամէն աւելի պղնձեայ ապրանքներ կը նեռնուծուին Էրզնկայ և իր շրջակայքը, ուր ճարտար արհեստաւորք կը շինեն ամէն տեսակ անօթներ, գաւաթներ, գործիքներ, և այլն։ Էրզնկայի պղնձագործութիւնը նշա-

նաւար հանդիսացած և պարգեւ ընդունած է Փարիզու, Վիեննայի և Ֆիլատելֆիոյ համաշխարհային արուեստահանդէսներու մէջ։ Ա՛յս գաւառիս հայ արհեստաւորք նոյնպէս շատ ճարտար են արծաթէ և պղպատէ ճարտարապետ իրեղէններ շինելուն մէջ։

Երզնկա ունի շատ մը գիւղեր, որոնցմէ գաւառ հայաբնակք և Թրքաց ու Քրդաց հետ խառն բնակողաց վիճակագիրն կը դնենք առանձին, յայտնելով միանգամայն, թէ նոր մարդահամարը ձեռքերնիս չունենալով, սահմանած ենք դնել ասկէ 20 տարի առաջ նշանակուած թիւերը, որոնց վրայ յայտնի է մեծ փոփոխութիւն եղած է մինչև ցայժմ։ Մեր վիճակացոյց տախտակի մէջ գտնուած գիւղերէն գաւ Երզնկայի շրջակայքը կան ուրիշ 40է աւելի գիւղեր՝ այլազգի բնակիչներով, որոնց բազմաց անուններըը հայկական են, ինչպէս Ս. Գրիգոր, Մեղրաչուր, Ձանձիկ, Փրկչի բաղ, Գազառիճ, Նոր գիւղ, Վաղաւեր, Վարդանիշան, Վասկերա կամ Վասակակերտ, Խախ, և այլն։

Երզնկայի մէջ կան վեց բաղնիք և 5 պրիւներ՝ որոնց ջուրը յատկապէս Վասակակերէն ապուզանով բերուած է, երեք պանդոկ՝ Սուրբ խան, Թաշ խան և Փափաս Օղլու խան՝ մինչեւ անոնք ան են։ Կայ Թրքաց վինուորական շայախի գործարան, հիւանդանոց, զօրանոց, վառօդարան, կաշիի, զգեստուց, կօշկի գործարաններ՝ որոնք բանակի զօրաց զգեստուց և կօշիկներու պիտոյքը կը հոգան, ինչպէս նաև վիմագրատուն մը։ Շէնքերու մէջ նշանաւոր են պէկլերու և փաշաներու բնակարանները, հայ և Թուրք երեւելիներու տունները, վինուորական վարժարաններ, նոյնպէս ազգային Թաղրոնն՝ որ այժմ տանց վերածուած է։ Երզրնկա ունի նաև ընդարձակ վաճառատոց մը և երեք հրապարակներ, յորս կը վաճառեն պայտ, ցորեն, և այլ ամէն տեսակ վաճառքներ։ Երզնկայի հնութիւններէն են վանքերը և վանքերու աւերակները, միջնաբերդը, գետնուղին, Խակնաձր անուամբ բաղնիքը՝ որ ի հնումն եկեղեցի եղած է և Գաւրշունի մկիթիը՝ որ քարուկիր շէնք է և ունի արձանագրութիւն։ Երզնկայի վանքերու նկարագրութիւնները ըրած ենք իրենց կարգին։

— 1888 տարւոյ ապրիլի սկիզբները 10–12 օր շարունակ յորդահոս անձրեւներ տեղալով, և էփրատ գետն ու հետեւաբար Գայլ, Վասկերա և այլ գետակներ յորդելով ողողելին գիւղ ու քաղաք։ Փլան քայքայեցան շատ տուներ, ջրաղացներ, կրպակներ, կամուրջներ, և այլն։ Հեղեղներէն քաղքիս հիւսիսակողմը Ագիճայ անուն 50 տուն քրդարնակ գիւղի վրայ լեռ մը փլչելով 30 տուներ գետնին խոր անդնդոց մէջ թաղեց հանգերձ 142 բնակիչներով և անասուններով։ Ա՛յս ողողումն մեծ թշուառութեան պատճառ եղաւ քաղաքիս և շրջակայ բնակչաց համար։ — Երզնկայի ժողովուրդը նկատմամբ անցելոյն բաւական քաղաքակրթուած է. լեզուին ու առոգանութիւնին մաքուր է, շատ քիչ անգամ ապաւաղեալ բառեր կ'արտասանեն։ Մեր (եր. 271) պատկերը կը ներկայացնէ Երզնկայի պատուներու տարազը. այժմ սկսեր է ընդհանրանալ եւրոպական տարազը, թէ արանց և թէ կանանց մէջ։ — Երզնկայի դաշտի երկայնութիւնը 7 ժամու և լայնութիւնը 3 ժամու ճանապարհ է. զարդարուած է պտղատու և անպտուղ ծառերով, այգիներով և պարտէզներով։ Ընդհանրապէս լեռներու տարատեսակները ցրուած են գիւղերը և վանքերը. օդը բարեխառն է։ Ունի քաղցրահամ ջուրեր, մանաւանդ գիւղերու և վանքերու մէջ։ Երզնկայ շրջապատուած է Տաւրոս լերան շղթաներով, Գահանամ և Քէշիշ տաղի լեռներով, ամէնքն ալ ապառաժ։ — Վերջին ծանօթ դէպքերուն Երզնկայ քաղաքի և գիւղերու հայ բնակիչք ևս զոհեր, կորուստներ և տառապանքներ ունեցան։ — Ն. Հայաստան, 98–99։ Ստեր. Հայաս. 12–20։ Թորոս Ագրաթ, Բ 47–51։ Խառն Դամակներ, 9–21։ Բազմավէպ, Ը 296–300։ Մասիս, 3841։ Վ. Փիւն, Ա 210–216։ Եւ այլն։

ԵՋՆԱՁ. — Կը յիշուի Ա՛յրարատայ Շիրակ գաւառի Մարմաշէնու վանաց արձանագրութեան մը մէջ։

ԵՋՆԱՁՈՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց Կամախ գաւառի մէջ։

ԵԼՆԻ ԳԻՒՂ. — Գիւղ Շապին Գարահիսարի, 30 տուն հայ և 7 տուն մահմետական բնակչօք։ Հայք ունին Ս. Մկրտիչ ա-

նուամբ եկեղեցի և վարժարան մը՝ 30 աշակերտներով։ Տես ՆՈՐ ՇԼՆ։

ԵԼՆԻ ԹԱՆ կամ ՆՈՐ ԹԱՆ. — Գիւղ Սեբաստիոյ արեւմտակողմը, ուր կը նստի գայմագամ։ 150 տան չափ հայ կայ, և ունին Ս. Խաչ անուամբ փայտաշէն եկեղեցի մը՝ որուն մօտ կայ նաև Աւետիքեփիսեան անուն դպրոց մը։ Ա.յս տեղէն կը կառաւրուի Սամսոնի ճանապարհաբաժնի Կ. Պոլիս երթեւեկութիւնը.

ԵԼՆԻՃԼՔ. — Ջուտ հայաբնակ գիւղ Պրուսայի կուսակալութեան և առաջնորդութեան ներքեւ. կառուցուած է Ողիմպոս լերան արեւելեան հարաւային ծայրը կրկին բլրակաց հարթ կողերուն և բլրակներն իրարմէ բաժնող առուակի մը երկու եզերաց վրայ։ Ունի 1200 տուն. բնակիչք պէսպէսութեամբ երկրագործ են։ Ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի՝ և երկտեղ վարժարան մը գեղացիկ ու հոյակապ, 1885ին կառուցուած՝ առաջնորդ Տ. Բարթողիմէոս արքեպիսկոպոսի մասնաւոր ջանիք և առաջարկութեամբ ժողովրդեան։ Վարժարանին օգնելու համար հաստատուած է նաև ուսումնասիրաց ընկերութիւն մը, որ բաժանորդութեամբ ու հանգանակութեամբ դրօսարան մը շինած է։ Տեղւոյն բերքն է ցորեն, եղիպատցորեն, գարի, և այլն. շրջանաբուծութեամբ ևս կը զբաղին։ Կը պատմուի թէ մօտ հինգ դար առաջ Հայաստանի խորերէն եօթն երկրագործ ընտանիք եկած բնակութիւն հաստատած են նախ գիւղէս կէս ժամ հեռու գէպի հարաւ բլրակի մը վրայ. սակայն ետքը գրացեաց թեղադրութեամբ յետոյ փոխուիր են այժմեան վայրը. ուստի Թուրքերը ուրիշ գեղացիներէ որոշելու համար կոչած են Եփխանէ խարեան օրանքար (Նոր բնակիչք), և ապա կրճատուելով եւ դեր է Եէնիճէ։ Գիւղս Ողիմպոս լեռնէն 1 ժամ հեռու է։ Եէնիճէէն 1/2 ժամ հեռու կը տեսնուին բերդի մը աւերակներ. լերան ու գիւղի մօտ ալ դեռ կը նշմարուին յունական գերեզմանաց ճեռացորդներ։ Կան քանի մը տուն բողոքական, ինչպէս նաև կաթոլիկ Հայք։ Գիւղին մէջէն հոսող առուակը կը բղխէ Ողիմպոսի կողերէն ապառաժէ մը, ու շազանակենիներէ, կեռասենիներէ և սալոր ենիներէ ձեւացած սուսերախիտ անտառակներն ճեղքելով՝ առատութեամբ կը բաշխէ գիւղացւոց բազմաթիւ պարտէզներու ջուրն, և գիւղէն դուրս գաշտն անցնելով՝ կ'ոռոգէ թթենիներն, ձմերուկներու, վարունգներու և առատահոտներու պարտէզները։ Գիւղացիք գարնան ու ամրան կը դիմեն Տէրէ–պաշի բուսած տեղը և կը զբօսնուն։ Գիւղիս օդը թէև աշնան ու ձմրան քիչ մը խոնաւուտ է, սակայն ուրիշ ժամանակներ շատ առողջարար է։

ԵԼՆԻՃԼՔ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ։ Բնակիչք են 16 տուն՝ 94 հոգի. ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։

ԵԼՆԻՃԼՔ. — Մարզուանի մերձակայ գիւղ. 50 տուն հայ կան և ունին եկեղեցի։

ԵԼՆԻՃԼՔ, ՍՏԱՆՕՍ կամ ԽՈՏԱՆՕՋ. — Գիւղ Սեբաստիոյ. քաղաքէն 8 ժամ հեռու՝ սրբեւելեան կողմը։ Բնակիչք հայ և թուրք խառն են։ Հայք 70 տուն են, և ունին Ս. Թորոս անուամբ եկեղեցի ու Աւետեաց անուն վարժարան մը։

ԵԼՆԻՃԼՔ ԳԱԼԼ (Նոր բերդ). — Հայաբնակ գիւղ լեռնային Կիլիկիոյ, Ֆրնուզէն 4 ժամ հեռու։ Ունի մօտ 400 տուն բնակիչ և վարժարան եկեղեցի մը։

ԵԼՆԻ ՓԱՋԱՐ. — Հայաբնակ գիւղ Պիլեճիկի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի Խորէնեան անուամբ վարժարան մը՝ 20 աշակերտներով։

ԵԼՆԻ ՓԻՕՒ (Նոր գիւղ). — Գիւղ Տարսոնի գաւառի։ Ունի 30 տուն՝ 350 բնակիչ։ Տես ՆՈՐ ԳԻՒՂ։

ԵԼՇԻԿ, ԸՐՄԱՔ. — Փոքր Ասիոյ գետերէն մին, որ կը կոչուի նաև Թօքաթ սույը, Ամասիոյ գետ, Զարչեգիճի սույը, և ի հնումն Իրիս։ Կը ձեւանայ երկու մեծ վտակներէ, որոնց մեծագոյնը Սեբաստիոյ հիւսիսակողմի լեռներէն բղխելով կու գայ կ'անցնի Թօքաթէն, Թըրհալէն, Ամասիայէն, և այնուհետեւ կ'երթայ կը միանայ միւս վտակին հետ՝ որ Եըլդըզ–սուղիէն կը բղխէ։ Եէշիլ ըրմաք այսպէս երկու վտակներու միաւորութենէն վերջը կ'երթայ կը թափի Սեւ ծովը։ Մեծ վտակը ի հնումն Լիքոս կ'ըսուէր՝ որ Գայլ բսել է, և փոքրը՝ Իրիս կ'անուանէր՝ որ Ծխածան բսել է. այս վեր-

ջինը բան գնաբ կը համարուէր. իսկ Լխգոս անոր մէկ վտակը։ — Ճնգոր. ի Բաբելոն. 5։

ԵԼՇԻԿ ՏԷՐԼ. — *Մարաշի շրջակայ գիւղերէն մին։*

ԵԼՏԻ ԳԱՐՏԱՇ (*լօրի նդբայրներ*). — *Լեռ Կիլիկիոյ, Զէյթունի հիւսիսային կողմը։*

ԵԼՏԻ ԳԻԼՅՈՒՆ (*լօրի նկեղեցիներ*). — *Ա-բարառայ վանական գաւառի արեւմտակողմը փոքրիկ հովիտ. այս անուամբ գիւղատեղի ևս կայ, ուր կան եօթն նկեղեցիներու աւերակներ։*

ԵԼՏԻ ՊՈՒԼԱՂ (*լօրի վտակներ*). — *Միևնոյն Հարանդ գաւառի մէջ այս անուամբ ագրեբակունք կան։*

ԵԼՐԿՊԱԳԱՆ. — *Գիւղ լեռնային Կիլիկիոյ, Սարսս գետոյն մօտ։ Ունի շատ այգիներ։ Բնակիչք 1863ին էին 80 տուն հայ. այժմեան թիւն չգիտենք։*

ԵԼՐԿՕՁ. *Տես* ՁՈՒՐՁՈՎԱ։

ԵԼՔՄԱԼ. — *Հայաբնակ գիւղ Տարսեբանի Մանազկերտ գաւառի, 11 տուն բնակչօք։*

ԵԼԼԱՆ. — *Գիւղ լեռնային Կիլիկիոյ մէջ 1100մ. բարձր դիրքով, համանուն Երբանատագ լեռնաբլրոյն տարբատը։*

ԵԼԼԱՆ ԳԱԼԷՍԻ. *Տես* ՇԱՀԻ–ՄԱՐԱՆ։

ԵԼԼԱՆԼՒ (*Օձուա*). — *Լեռ Ա.յրարատայ Մազազ–Աստան և Ուրծ–Ագած գաւառաց մէջտեղ։*

ԵԼԼԱՆԼՒ. — *Թուրքաբնակ գիւղ Ա.յրարատայ Վանական գաւառի մէջ։ Նոյն անուամբ գիւղ կայ նաև Շիրակայ մէջ։*

ԵԼԼԱՆՁԱԼԱՆ. — *Հայաբնակ գիւղ Ա.յրարատայ Արագածոտն գաւառի կարբի Պաարի վիճակի մէջ։ Ա.յս գիւղը լոտ Շահխաթունեանի է Զաքարիա պատմչի Որդիաբր։*


ԵԼԼԱՆ ՏԱՂ. — *Լեռ Տիվրիկու. ունի հանքային ջուր, որուն մէջ կը լուացուին բորոտներ։ Տես* ԲՕԼՈՒ ՍԱՐ։

ԵԼՏՐՋ ՏԱՂ. *Տես* ԱՍՏՂԻԿ։

ԵԹՈՎՊԻԱ, ԱԲԻՍԻՆԻԱ *կամ* ՀԱՊԷՇԱՏԱՆ. Գ. ABYSSINIE, ÉTHIOPIE. — *Ա-նախ ա.էրեվթեան Ափրիկէի. տարածութիւնն է 540000 քառ. հղմտ. և ունի 6500000 բնակիչ. մայրաքաղաքն է Ատտիս Ապեպա։ Վերջին դարուց մէջ նկեղեցական յարմարութեան մէջ եղած է աշխարհս Հայոց հետ, ունեցեր է հայ վերատեսուչներ։ Եդիպատոսի հայ առաջնորդներէն ամենք պարբերաբար յարաբերութեան մէջ գտնուած են Հապէշ կառավարութեան հետ։ Դեռ շատ ժամանակ չէ, որ Հապէշատան Երուսաղէմայ Հայոց պատրիարքէն խնդրից երկու վարդապետ քարոզիչ կարգել Հապէշներու, սակայն յանձնառու վարդապետ չգտնուելուն համար՝ խնդիրը մերժուեցաւ, և Հապէշները հարկադրուեցան թագուհիներուն գիմել։ Իսկ Թէոդոս խորհրդէն Օրթոդոքս կղերը՝ յանձն առաւ մինչև այս աշխարհը գալու, ոչ միայն կրօնական այլ և ուրիշ նպատակներով։ Հայք վաճառականութեամբ ևս եկած են այս երկիրը, գտնելով յաջողութիւն և համակրութիւն։ Հայերէն եղած են նոյն իսկ թագաւորի գանձապետ՝ ինչպէս ութեւտասներորդ դարու մէջ Ալեֆ ուռուտ կոչուած Ագարկերցին, որուն յաջորդեց 1762ին Բուխ. Թովմասեան, և յետոյ ասոր որդին Պօղոս։ Հայոց Եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութեան սկիզբը շատ հին լինելու է։ Հետեւեալ զէպքէն ևս կը յայտնուի Հայոց Եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութեան հնութիւնը. Հեթում՝ կաթողիկոսի աչքը գրած է Հռոմմայ քահանայապետին, որ յորդորական թուղթ գրէ Եկեղեցւոց թագաւորին խաչակրութեան երթալու համար, և այդ թուղթը գրկէ Հայոց թագաւորին, որ թարգմանել տալով Եկեղեցւոց լեզուի՝ այնպէս գրկէ կամ տանի առ թագաւորն։ — Ա.յս աշխարհի վաճառականներուն մէջ ծանօթ է փղոսկրն կամ փղոց ժանիքը, Հնդկաց աշխարհի մէջ եղածներէն մեծագոյն, զորս հայ վաճառականներ կը տանէին մինչև Հնդկաստան և Զինաստան։ — Միաստացի հայ մը՝ վարժեան տոհմէն՝ որ բժշկական դեղերու ծանօթութիւններ ունի եղեր, այս երկրին մէջ հաստատուելով և մինչև անգամ հապէշ արքունեաց բժիշկ ըլլալով, մեծ հարստութեան տէր եղեր է, և 1899ին կանչեր է Մարզար անուն երիտասարդ եղբօրորդին, և նա գացեր Եգիպտոս վերադարձեր է՝ հետը բերելով ձայլ ոսկի, փղոսկր, առիւծի, գայլի, ագռաւի մորթ, և այլն։ 1899ին Հապէշներու բանակին պետութեամբ հայիհայ-*

թիչը Թէրզեան մականուամբ հայ մ՚էր, և իւր գործին կեդրոնը Ձիթուխի հաստատած էր։ Ա.յժմ ևս կը գտնուին Հայեր Եմոսվիոյ մէջ, վաճառականական գործերով։ Ա.յս երկրի բնակչաց բարոյական, քաղաքական և կրօնական պատմութիւնն գրած է Տիմոթէոս վարդապետ Ասիրիչեան, և տպած է 1871ին Երուսաղէմ, «Երկաւնայ պանդխտութիւն ի Հապեշստան» վերնագրով։

ԵՒԻԶԼԻՒԲ կամ ԵՒԻԶԼԷ. — Գլխաւոր շէն ծովային Կիլիկիոյ մէջ, 130 տունէ ա. ւելի բնակչօք։




273. Ելեւսպի մէջ շիրիմ։

ԵՒԻԶՎԷՐԱՆ. — Հայարնակ գիւղ Ա.յրաբատայ Բասէն գաւառի մէջ. Հասանգալէէն դէպի արեւելք 6 ժամու ճանապարհ հեռու։ Բնակիչք հազը մշակելու լաւ կերպը գիտնալով, 1 սմար ցորեն ցանողը արտի մը մէջ 100 սմար վերուցեր է, և այս պատճառաւ գիւղս կոչուեր է Իզմիրան (Հարիւր տուող)։

ԵՒԻՋ կամ ԻՒՋ ՓԻԼԻՒՆ. Տես ԲԱԳԱՒԱՆ և ՎԱՐՋՈՒՀԱՆ։

ԵԼՖԻՆ. Տես ԷԼՖԻՆ։

ԵԼԵՆԷՆԴՈՐՖ. Ռ. Еленендорфъ.—Ա.յան և գերմանական գաղթավայր Գանձակ գաւառի. քաղաքի հարաւակողմը մօտ 7 վերստ հեռու, հարթութեան մը վրայ, Գանձակ գետի աջ կողմը։ Հինգ կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներ կը ձգուին գրեթէ մէկ վերստ երկայնութեամբ, որոնց երկու կողմը արնկուած կազամախի, բարտիի և ասպի ծառեր, յատուկ գեղեցկութիւն մը կու տան։ Գրեթէ կեդրոնը կը բարձրանայ գոմեական ոճով սրբատաշ կարմիր քարէ շինուած և կեղեցին, որուն մէկ կողմը կը գտնուի պետական երկրագործական գեղեցիկ պարտէզ։ Եկեղեցին ունի հրապարակ, նոյնպէս կաղամախի ծառերով հսկանաւորուած։ Տները մէկ երկու և մինչև հարյարկանի են, իրենց առջև ունենալով բնդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ։ — Ա.ւանիս մէջ կան բաւական թուով գեղեցիկ, հարուստ խանութներ, արհեստանոցներ, հիւրանոց, հասարակաց այրի, դամփատուն, հեռագրատուն, և այլն։ Բնակիչները 249 տուն՝ 1457 հոգի են, վիրթեմպերգի Գերմանացիներ, և 50 տուն՝ 160 հոգի մնատկայ գիւղերէ և Գանձակէ եկած հաստատուած Հայեր. կան նաև երկերկու տուն ռուս և թուրք։ Հայերը ունին շարժական խորան գահլիճի մը մէջ, ուր կը կատարեն իրենց հոգեւոր և ծիսական պէտքերը։ Գերմանացիք գլխաւորապէս կը պարապին երկրագործութեամբ, այգեպանութեամբ, գինեգործութեամբ և գարեջրոյ պատրաստութեամբ, իսկ Հայերը՝ բացառապէս առեւտրով ու արհեստներով։ Ա.յս գաղութի մէջ նշանաւոր է Ֆորէր գերմանացին, որ միլիոնատէր է, ունի բաւական թուով այգիներ, արտեր, բնդարձակ արօտատեղիներ, ձիթաւծարան, գինւոյ և գարեջրոյ գործարաններ, և այլն։ — Գանձակի գաւառ, Ա. 146–147։



274. Ելեւսս քաղաքի դրամ։

ԵԼԵՒՍԱ, ԵԼԷՈՒՍԱ, ՍԵԲԱՍՏԻ կամ ԱՑԱՇ. Ἐλεούσα, Σεβάστη. — Ի հնումն նշանաւոր քաղաք Ծովային Կիլիկիոյ. Կոմիկոսի հիւսիսային արեւելեան կողմը, որուն տեղը այժմ կայ Ա.յաշ գիւղը գեղեցկագիր բարձր և ծովահայեաց։ Կանխաւ բարձրաժայռ կզգեակ մ՚էր, ուր կապպադովկացւոց Ա.րքեղայոս Թագաւորը, փրկչական Թուէն քիչ առաջ բերդ մը կառոյց. յետոյ աւազով լեցուելով և միանալով ցամաքի հետ գարձած է թերակղզի։ Ա.յժմ կը տեսնուին հին աւերակաց մնացորդներ, շիրիմներ, ջրամբար, կն.։ Քաղաքին անուամբ դրամներ ևս կան։

ԵԼԹԻ. — Լեռ Միջնեայ Գողթն գաւառի։


ԵԼԻ. — Նոյն կը համարուի Ալլիի հետ։

ԵԼԻՍԱԲԵԹՈՒՊՈԼ. — Գանձակի կամ Եղիսաբեթուպոլի անունն այսպէս ևս կը գրուի։

ԵԼԻԶԱՑ կամ ԲԱԼԻԶԱՑ. — Աւերակ գիւղաքաղաք Ալբարաւայ Մազազ գաւառի, ուր կան եկեղեցւոյ հետքեր և խաչքարեր՝ հանդերձ արձանագրութեամբ։

ԵԼՂԱՒԱՆ կամ ԲԱՐՁԱԲԻ. Տես ԷԼՓՈՎԱՆ։

ԵԿԱՆ. — Այս անուամբ կրկին վերին և Սաոբին գիւղեր կան Մարանդէն կէս մղոն հեռու։ Գիւղիս անուան համար այլազգիք աւանդութեամբ կ'ըսեն, թէ Եկանը հասանելէն առաջ եկած է, ուր առաջին անգամ յետ ջրհեղեղի եկած է Նոյեայ կինը։



275. Եկեւոսի մէջ շիրիմ։

ԵԿԱՏԵՐԻՆԵՒԼԱՒ. Ռ. Екатеринославъ. — Մեծ և վաճառաշահ քաղաք Ռուսիոյ, Տնեփերի վրայ։ 1781ին, 80 տուն կաթուղիկէ Հայք Խրիմէն հոս գաղթեցին, Տ. Յակոբ վարդապետին վարդապետի առաջնորդութեամբ, և կառուցին փայտաշէն եկեղեցի մը՝ Ս. Լուսաւորիչ անուամբ. բայց մեծաւոյն մասը 1790ին գնացին հաստատուելու ի Խարսաւ՝ Խրիմու կեդրոնական քաղաքը։

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ. Գ. IEKATERINODAR. Ռ. Екатеринодаръ. — Որոշ յայտնի չէ, թէ առաջին անգամ, ո՞ր թուականէն սկսեալ այստեղ բնակութիւն հաստատուած է. բայց կը պատմուի, որ 200 տարի առաջ Ռուսիոյ խորհրդէն զրկուած են ոմն կազմերը մարդիկ և բնակութիւն հիմնած են, գլխաւորաբար Քուպանի ափերը Զերքէզներու յարձակումներէն պաշտպանելու համար. իսկ Եկատերինոդար անուամբ, առաջին անգամ պաշտօնապէս գրուած է տեղւոյս վրայ, 1793 թուի գեկտ. 1ին, ի պատիւ Ռուսաց Եկատերինա մեծ թագուհւոյն։ Եկատերինոդար՝ Քուպանեան երկրի նահանգական քաղաքն է, և կը գտնուի Քուպան գետոյն աջ ափունքը, ու իրեն շէնլերով և պիտնեռով կը բռնէ 10 քառակուսի վերստ տարածութիւնը։ Երկիրը շատ արգաւանդ է և պտղաբեր, կլիման բարեխառն, իսկ օդը և ջուրը բուսական առողջարար։ Քաղաքս իր բնակչաց բազմութեամբը հիւսիսային կովկասի քաղաքներու մէջ առաջին տեղը կը բռնէ, իսկ ամրողջ կովկասի մէջ երրորդ։ Բնակիչներն են ռուս, հայ, յոյն, հրէայ, թուրք, գերմանացի, կասպիւ և պարսիկ՝ տակաւաթիւ։ Քաղաքիս բնակչաց թիւը հետզհետէ զգալի կերպով աճած է, այլ կարելի է տեսնել հետեւեալ ցանկէն.

1871ին երկտես բնակչաց թիւն էր 17222
1881ին » » » 28017
1897ին » » » 65697

Մեծամասնութիւնը կը կազմեն Ռուսները, որոնք ունին 12 մեծ ու փոքր եկեղեցիներ և զանազան միջնակարգ քաղաքային երկտես դպրոցներ։ Լուսաւորչական Հայոց թիւն է 1391 հոգի, բաժնուած 300 տան, որոնք բոլորն ալ գաղթած են զանազան տեղերէ, Խրիմէ, Նոր-Նախիջեւանէ, Նոր-Ազտարէ, Տաճկաստանէ, Պարսկաստանէ, և այլն։ Ունին փայտաշէն փոքրիկ, գեղեցիկ եկեղեցի մը՝ նուիրուած Ս. Աստուածամօր անուան, որ օծուած է 1868 թուին Հանգուցեալ Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանի ձեռամբ։ Ներկայ ժողովրդեան բազմութեան պատճառաւ սէկաք կայ ունէլ մեծ ազիւաչէն եկեղեցւոյ, զոր կառուցանելը պիտին է տեղւոյս հայ ժողովրդեան համար, քանի որ վերջինս բան նախնեականին բաւական ապահով վիճակի մէջ է։ Ունէին նայնպէս, 1863 թուին հիմնուած Միաբոպեան անուամբ հոգեւոր ծխական դպրոց մը, որուն մօտ 1870ին բացին նաև օրիորդաց ուսումնարան, տեղացի ուխտնոց խնամատարութեամբ։ Հայոց ծխական դպրոցի մէջ մինչև 1897 թուականը կ'ուսանէին միայն հայ մանուկներ, բայց նոյն թուէն սկսեալ երբ դպրոցը անցաւ նախարարութեան ձեռքը,

կ՚ընդունուին նաև ուս մանուկներ և պրպ-
բոցը կը կոչուի այժմ «Եկատերինոդարի հայ հասարակութեան դպրոց». Թէև գա-
ձեալ դպրոցի պահպանութեան համար եկե-
դեցին կը ծախսէ իւր սեպհական գրամէն տարեկան 3000 րուբլի. երկուս մանուկ-
ներու թիւն է 100 հայ և 40 ուս: — Կաթուղիկէ Հայոց թիւը 250 կարելի է հա-
շուել, որոնք են խոտրջուրցի (հայգագործք), Ախալցխացի ու Տրապիզոնցի: Ասոնց-
մէ միայն 10–15 ընտանիք կան միայն: Կաթուղիկէ Հայք առանձին եկեղեցի չունին, իսկ քաղաքիս մէջ կայ 1893ին կառուցուած քարաշէն եկեղեցի Համկապատան հասարակու-
թեան համար՝ որոնց թիւը 6000ի կը հաս-
նի: — Եկատերինոդարի Հայք առ հասարակ մեծ մասամբ կը պարապին վաճառականու-
թեամբ, կան նաև քանի մը արհեստաւոր-
ներ, ինչպէս ոսկերիչներ, ժամագործներ, կօշիկակարներ, դերձակներ, և այլն: Տեղա-
կան նշանաւոր վաճառականական տները գլխաւորաբար Հայոց կը պատկանին, որոնց մէջ ամենէն նշանաւորն է Թորոսեանց եղ-
բայրներու «Վաճառականական ընկերութիւ-
նը», որ տարեկան քանի մը միլիոններու շրջանառութիւն կը կատարէ: 1895 թուի փետր. 15ին Հայոց վեհափառ Հայրիկը ի-
ջեւանեց այս անուանի ընտանիքի տունը և ամբողջ շաբաթ մը անոնց մօտ հիւրասի-
րուեցաւ: Նշանաւոր է նոյնպէս Պարսկաս-
տանցի հայ Աւետարանիներու ձիմագործարա-
նը, որ իր տեսակին մէջ ամենամեծը և ա-
մենատաղջինն է ամբողջ Ռուսիոյ մէջ: — Իբրև Ռուսաց քաղաք, գործածական լեզուն ռուսերէնն է: Տեղական Հայերը, բացի Տաճ-
կատանի և Պարսկատանի գաղթականնե-
րէ, ճնացած բոլոր մասը կը խօսի օտար լեզուով, և ցաւօք սրտի պէտք է խոստովա-
նիլ, որ մայրենի լեզուն օրէ օր բոլորովին կը մոռցուի բազմաթիւ հայ ընտանիքներու մէջ:

Փողոցները շատ կանոնաւոր են և ուղղա-
ձիգ: Մեծամեծ տները կը գտնուին քաղա-
քի կեդրոնը՝ հրապարակներու և գլխաւոր փողոցի վրայ, մեծ մասամբ շինուած են բակերու մէջ և հոյանաւորուած տերեւախիտ ծառերով, այնպէս որ հեռուէն նայողի մտքէ Եկատերինոդար՝ գիտցի տպաւորութիւն կը թողնէ: Ամենագլխաւոր փողոցը կը կոչուի Կարմիր փողոց՝ որ կը ձգուի հիւսիսէն հա-
րաւ և գիշերները կը լուսաւորուի եղեկտրա-
կան լուսով, և բոլոր փողոցի ուղղութեամբ կ՚անցնի եղեկտրաշարժ հանրակառքը՝ որ կը պատկանի Պելճիական ընկերութեան մը: Կարմիր փողոցի հիւսիսային ծայրը քաղաքիս հաշուով կանգնուած է գեղեցիկ կոթող մը՝ ի պատիւ Ղազախ զօրաց քրանամեայ երկրորդ դարեդարձի, որ կատարուեցաւ 1896 թուին. կոթողը կը ներկայացնէ քառանկիւնաձեւ սիւն, որուն վրայ ոսկեղէն տառերով գրուած են 1696–1896 թուականները. նոյն փո-
ղոցի հարաւային ծայրը կը գտնուի բաւա-
կան ընդարձակ հրապարակ մը, ուր շուտով պիտի կանգնուի Ռուսաց Եկատերինա Բ մեծ կայսրուհւոյն փառահեղ արձանը:

Վաճառականատեղիները բաւական ծագկած վիճակի մէջ է. ամենախոշոր վաճառական-
ներ ձեռնարկութիւնները կը կատարուին քաղաքիս հիւսիսային ծայրը, որտեղ տա-
րուան մէջ երեք անգամ տօնավաճառ կը լինի: Ապրահանութեան գլխաւոր նիւթերն են՝ ցորեն, ալիւր, ձէթ, խոզ, ձի, եղն, ոչ-
խար, կաշի, խոտ, փայտ, երկրագործական մեքենաներ, և այլն: Ասոնցմէ գատ քա-
ղաքս ամէն տարի կ՚արտահանէ մեծ քա-
նակութեամբ գանազան տեսակ պտուղներ և բոստեղէններ, ինչպէս խաղող, տանձ, խնձոր, կեռաս, բալ, սալոր, դեղձ, ծիրան, սեխ, ձմերուկ, լուբիայ, պամիա, կապամ, ճակնդեղ, գետնախնձոր, գազար, սոխ, սխտոր և ուրիշ շատ տեսակ կանաչեղէններ: Եկատերինոդարի տեւտարական շրջանառու-
թիւնը կը հասնի տարեկան 20 միլիոն ռուբ-
լիի, որուն մէջ ամենագլխաւոր տեղը կը բռնեն ցորենը, ծխախոտը և ձէթը. այս վեր-
ջին բերքերը ոչ միայն ընդարձակ պետու-
թիւնս հեռաւոր գաւառները, այլ և մեծ քա-
նակութեամբ կ՚ուղարկուին արտասահման: Քաղաքիս արեւմտահիւսիսային կողմը, Քու-
պան գետի ափունքը շինուած են բազմա-
թիւ գործարաններ՝ կաշիի, օճառի, ա-
պիսի, և այլն: Եկատերինոդար ունի սեպ-
հական հիւանդանոց, դրպարան, արական

և իգական դիմագիծներ, տղայոց և աղջկանց ուսումնարաններ, ուսուցչական դպրոց, արհեստական դպրոց, ջրմուղ և սպասդանոց։ Քաղաքիս մէջ կան երկու փառաւոր բազնիքներ և քանի մը մեծ, գեղեցիկ ու մաքուր կահաւորուած հիւրանոցներ։ Վերջիններու մէջ իր գեղեցկութեամբ և մաքրութեամբ առաջին տեղը կը բռնէ «Կեդրոնական հիւրանոցը», որուն փառաւոր շինուածքը կը պատկանի Ազմուխրցի Բօղարսուկեան հայ եղբայրներուն։ Շէնքերու մէկ մասը՝ մօտ 2300ը, կառուցուած է թրծած աղիւսով, իսկ աւելի մեծ մասը 12500 շինուածքներ՝ կառուցուած են փայտ, եղէգ և աւրիշ նիւթերէ. որոնք նեռէն և դրսէն ծեփուած են կաւով և գաճով ճերմկցուցած։ Քաղաքս իր յարդող վաճառականութեան և ճանապարհներու դիւրութեան շնորհիւ կը ծաղկի օր աւուր և հոկայաքայլ կը յառաջդիմէ։ Երկաթուղւոյ գծով միացած է թէ Սեւ ծովի հետ Նովոռոսիյսքի նաւահանգիստով և թէ բոլոր Ռուսիոյ և Կովկասի նշանաւոր քաղաքաց։ Եկատերինոդարի շրջակայ դիւղերէից մէջ ևս կը գտնուին հազարէ աւելի Հայեր, ամէնքն ալ գաղթած են Տրապիզոնէ և մօտակայ տեղերէ. որոնց գլխաւոր զբաղմունքն է ծխախոտի մշակութիւն։ Ըստ հոգեւոր վարչութեան Եկատերինոդար և Քուպանի աշխարհը կը պատկանի Նախիջեւանու և Պեսարապիոյ թեմին։

ԵԿԱՏԵՐԻՆՈՎԿԱ.— Հայարնակ գիւղ Նոր Նախիջեւանի 1886ին հաստատուած. քաղաքէն 12 վերստ հեռու է գէպ ի Թայղան գնացող ճանապարհին վրայ։ Սա Նախիջեւանի հայարնակ գիւղերէն վեցերորդն է։

ԵԿԵԱՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԵԿԵՂԵԱՑ ԳԱՒԱՌ.— Բարձր Հայոց հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմ Երզնկա։ Ըստաց ծանօթ էր Ակիլիսինի (Ακιλισηνή) անուամբ, և Հռովմայեցւոց Աքիլիսէնէ (Acilisene) և կրճատելով Գելթզնի (Κελτζηνή) կամ Ձլղիճէ. որուն նահանգիստն ունի այժմ գաւառս դիւղերէն մին՝ Ձլղիճէ կամ Ձրզրզնի։ Կոչուեցաւ նաև Ակնունական գաւառ՝ Աղնհատայ վրայ պաշտամանն համար, որ հոչակուած էր նաև այս կողմերը։ Յայտնի չէ Եկեղեաց անուան ծագումը, բայց առնուած է Եկեղեաց տհմէն, որ կը յիշուի Ներսէսի պահնամակին մէջ. գրուած կը գտնենք նաև Եկեղեցեաց։ Վիճերորդ դարու մէջ, Յուստինիանոս կայսեր բազմաթիւ շինութեանց պատճառաւ, Բիւզանդացիներէն Յուստինիանուպոլոյ գաւառ կոչուած է։ Սարաբոն կը յիշէ գաւառս և կը դնէ Եփրատայ ու Ախտամարտոսի մէջտեղ. կ'ըսէ թէ կանխաւ Յոփայ նախարարի իշխանութեան ներքև էր, և Աբշահունեաց Թագաւորութէն առաջ՝ Զահրիատ զայն Սելեւկիացւոց կառավարներու ձեռքէն առնելով միրձակայ գաւառներով հանդերձ, հաստատեց Փոքր Հայոց Թագաւորութիւնը, որ տեւեց, ըստ Սարաբոնի կարծեաց, մինչև վաղարշակայ Թոնորրուգն Տիգրանայ Թագաւորութիւնը։ Տիգրանայ քեռայրը Մեծն Մհերդատ իբ իշխանութիւնը տարածած



276. Զահրիատ Թագաւորի դրամ։

էր մինչև Եկեղեաց սահմանները, որուն լեռնոց և Գաստերա (Δαστειρα) ամրոցի մէջ ապաւինեցաւ ժամանակ մը, Պոմպէի եկած միջոց. այս ամրոցը այժմ անծանօթ է, որ կը թուի լինել գաւառիս հիւսիսային արեւմտեան կողմը, և զուգէ բնիկ հայկական սահմաններէն ալ դուրս։ — Գաւառս՝ ինչպէս ի հնումն հեթանոսական պաշտամունց մէջ, նոյնպէս քրիստոնէական կրօնից մէջ ևս գնքազանց եղաւ, «մանաւանդ քան զրնտա աշխարհս, գաւառս այս Եկեղեաց, զճարտարապետական հիմնարկութեան և շինութեան եկեղեցւոյ Հայաստանեայց յինքն ընկալեալ կենօք, ի բարիոք կենաց պատճառ. և չարչարանօք՝ յանմոռաց երախտեաց յիշատակ, և մահուամբ՝ զեղ բժշկական միշտ մահացելոց մարդկան»։ Վասն զի ոչ միայն Լուսաւորչի՝ այլ և անոր որդւոցը ու թոռանցը հանգստավայր եղաւ գաւառս։ Եկեղեաց

բերաց, վիճակագրութեան, և այլ հանդամանաց մասին, ընդարձակ գրած ենք Եղընկայի նկարագրութեան մէջ։

ԵԿԵՂԵՑԱԶՈՐ. — Կը յիշուի Ալբակի մէջ։

ԵԿԵՆԱՁԻ կամ ԵԿԱՆԱՁԱՐ. — Հայարնակ գիւղ Ալբարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ. Պաշ–Գիւղի հիւսիսային կողմը և Կարիաջանի ձորի ապառաժուտ եզրի վրայ։ Բնակիչք 65–70 տուն, եկած են Կաբսի Բաւիկ և Ձամուշի գիւղերէ։ Ագրի եկեղեցւոյ մօտ ի հնումն բերդ կայ եղեր, որուն փորուածքներէն դուրս կու գան բազմաթիւ փուտած դիակներ։ Կը պատմեն, թէ երբ Լէգկիները եկեր են, ժողովուրդը պատսպարուեր է բերդի մէջ, թշնամին առնելով ապառաժածները սրակոսը բրեր է։ Բաւիկ գիւղէ Հալաճեան մականունով ապագային մը՝ իր անձնական ծախքով և իր սեպհական գետնի վրայ վարժարան շինել տուեր է գիւղիս մէջ, ուր կ'ուսանին նաև շրջակայ գիւղերու տղայք։

ԵԿՄԱԼ. — Մակաւարնակ գիւղ վաստպրականի վանայ շրջակայքը. թիւր կատց անապատաի։

ԵԿՄԱԼ կամ ԵՔՄԱԼ. — Նայնպէս սակաւարնակ (6 տուն) գիւղ Ալբարատայ Բասրիւնդ գաւառի, Գումբէն $1^1/_2$ ժամ հեռու, Պէօշկի գիւղից։

ԵԿՏԱՍՏԱՆ. — Միջնեաց Արեւիք գաւառի մէջ, Կաղնի գիւղի հիւսիսակողմը, վտակի մը եզերքը կը նշանակուի տեղս, որ հայրենիք եղած է Սանփանոս Շահուճեանցի։ Սա թելադիր եղած է Դաւիթ բէկի կամ Ղափանեցւոց պատմութեան գրուելուն, որուն հայրը վարպետն Ղափանեցւոց զօրավարներէն մին էր։ Ի. գարու կէսէն մինչև ԺԴ կէսը Շահուճանց տոհմի անուամբ հաստատուած բարգաւաճ վաճառատուն մը կար վենետիկ։ Այս տոհմի պայազատներէն հետեւեալ երկքը՝ Սանփանոս, Զաքար և Նահապետ, 1736 թուին Ս. Ղազարու վանաց եկեղեցւոյն մէջ իրենց ծախքով շինել տուին վայելուչ խորան մը Ս. Լուսաւորչի՝ և սեղանին դիմաց 1737ին պատրաստեցին իրենց տոհմի գամբարան մը՝ հանդերձ արձանագրութեամբ։ Շահուճանք նշանաւոր եղած են ուրիշ գանազան բարեգործութիւններով և միշտ նոյն ժամանակի վենետկոյ հայ գաղթականութեան մէջ առաջին կը յիշուին, մանաւանդ Սանփանոս Շահուճանցը՝ որ վենետկոյ Հայոց Ս. Խաչի եկեղեցւոյ ապագային շինութեան 100 վենետկեան լիրայ տուած է։ Եկատասան տարի պատմական դէպքերն և նորայ վիճակն ինձ ծանօթ կը ընեն։ — Միսակեան, 300–301։

ԵՂ. Տես ՕՂՈՒ։

ԵՂԱԿԵՐ. — Գիւղ Ալբակի Ջրաբերդ գաւառի. հիմնուած է սարի մը հարաւային լանջի վրայ, իսկ ձորի մէջ։ Բնակիչք 35 տուն, որոնք 20 տարի առաջ փոխադրուած են Մեծ Սիւնեաց Տեղ տանէն։ Երկիրն լեռնոտ է և անասնապահութեան յարմար. օդն, կլիման և ջուրն գերազանց են։ Եկեղեցին Ս. Աստուածածին՝ քարակիր է և հին, կառուցուած կամարի մը վրայ. երկայն 12,5 մետր և 7,50մ. լայն։ Եկեղեցւոյ մօտ կայ հին մեծ հանգստարան, որուն մէջ կայ նաև ՌՃՂԹ թուականու և արձանագրութեամբ տապանաքար մը։

ԵՂԱՆՁ ԲԵՐԻ կամ ԵՂՆՈՒՏ. — Հին ժամանակ ամրոց Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Կը յիշէ Ցոհան Մամիկոնեան ըսելով. «Եւ տանիլ յԵղանց բերդն, զոր դու Եղնուտն կոչեն»։ Կը յիշէ նաև Լասախիերացին (Գլ. ԺԸ.) Լիպարտին որդւոյն Իսահէի համար ըսելով. «Գնաց և խաբանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեալ»։

ԵՂԱՆՁ ՄԱՐԻ. — Կը յիշուի Ալբարատայ Շիրակ գաւառի Բոմաձորի մէջ։

ԵՂԲԱՐՑ ՍԱՐԱԿ. — Պատմութենէ մեզ ծանօթ է անուն՝ Ալբարատայ Կոգովիտ գաւառի մէջ։ Թէոդորոս Ռշտունի իշխանը ասիկ ներորդ գարու մէջ, ինչպէս կը գրէ Ղեւոնդ պատմիչ, Ալբարացւոց արշաւելն խնդրալով, «... հրամայէր զօրացն, որք ընդ իւրով իշխանութեամբն էին... և նոքա... զարանս նամուսս եղեն ի Սարակն որում Եղբարան կոչէին. և կալեալ զառաջս կրճիցն՝ զրահս ի նոցանէ առառակէին»։

ԵՂԵԳԱԿ. — Հին գիւղ Տուրուբերանի Հարք գաւառի, զոր կը յիշէ Ասողիկ (Բ. Ե) Սահակ Բ կաթողիկոսի համար գրած առանն. «Ձէր Սահակ ի գաւառէն Հարքայ ի գեղջէն Եղեգակայ։ Գիւղիս անունը ուրիշ

նոյէ դրուած կը գտնուի. «ի գաւառէ Հարքայ Ցղկայ», և «ի գեղջէն Ուղկայ»։

ԵՂԵԳԵԱԿ կամ ԵՂԵԳԵԿ. — *Հին պիղ Աղբարատայ Բագրեւանդ գաւառի, ուսկից էր Մ. Աբշէն երէցը՝ նահատակեցեալ Դեւոնդեանց, և գիւղիս քահանայ, ինչպէս կը յայտնէ պատմիչն Ղազար ըսելով. «Տէր Աբշէն երէց Եղեգեկի»։*

ԵՂԵԳԵԱՅ ԱԻԱՆ. *Տես* ԵՂԵԳԻՔ։

ԵՂԵԳԵԱՅ ՁՈՐ. — *Միւնեաց վայոց ձոր գաւառը թէև այս անուամբ ևս կը կոչուի, սակայն աւելի ծանօթ է Եղեգեաց աւանի ձորն՝ որ վայոց ձորի գեղեցկագոյն մասն է։ Զարդար արեւելեան մասը շատ գիւղեր չունի. իսկ ծանօթ գիւղերն գրած ենք ի բնոց կարգին։*

ԵՂԵԳԻՔ, ԵՂԵՔԻՔ կամ ԿՕՂԼԻԿ. — *Կեղրոնական գիւղ վանայ կարճկան գաւառակի. ուր Խիզանու ուռումեաներաց ընկերութեան Պօլսոյ, վարժարան մը ունի։ Բոլորովին հայաբնակ է, 60 տուն ունի և քարուկիր հոյակապ եկեղեցի մը՝ Մ. Թովմաս անուամբ։ Արեւելեան և արեւմտեան կողմերն կան մէկ մէկ աւերակներ և հին հանդերձատարաններ, որոնց համար կ'ըսուի թէ ի հնումն մէկ մէկ եկեղեցի էին։ Գիւղիս բնակիչք համբաւաւոր են իրենց նահապետական ազնիւ հիւրասիրութեամբ։ Ներքինէն մինչև բազէ և վան տանող ճանապարհը գիւղիս մէջէն կ'անցնի, և գրեթէ ամէն օր ձի կը կերակրուին 20–30 ուղեւորք։ Եղեգիսէ վեր կը գտնուին ճերմակ կրաքարեայ հանքեր, որ շինութեանց առատ նիւթ կու տան։ Դէպ ի արեւելք բարձրացող լեռան գագաթը կը տեսնուին ընդարձակ բերդի մը գարաւոր հետքերը. այս լերան գագաթէն մինչև սիրար կը նշմարուին նաև հին պարսպի մը հետքեր, և այս շրջապատի մէջ, 1½ ժամ քառակուսի տարածութեամբ, կան հին շէնքերու տեղեր և աւերակներ, որոյ համար տեղացիք աւանդաբար կ'ըսեն, թէ քաղաք էր ի հնումն։*


Եղեգիսի գաշար, թէև ոչ գեղեցիկ, բայց խիստ բերրի է։ Այս երկրի տարօրինակ կազմութեան պատճառաւ կարճկանի վտակը որ շրջակայներէն ծնունդ կ'առնու, Եղեգիսցիներուն կը շռայլէ այն բարիքները, որ Նեղոսը կ'ընծայէ Եղիպտացիներուն։ Գաշտի հիւսիսային կողմը՝ այսինքն ծայրի և գաշտին մէջև երկարաձգուած է Լճնաձանաքիսարի կրային լերկ ժայռերու շղթան, որուն հոծ կազմութիւնը չի թողուր անձրեւաջրի կամ ձիւնահալքի թափանցումը երկրի ներսը, այնպէս որ անձրեւի և ձեան ջրերը քերելով սրբելով ժայռերու վրայի պարաւութիւնները՝ գաշար կ'իջնան։ Եղեգիսի գաշտի մէջ ադբիւր չկայ և բնակիչները ստիպուած են ջուրն հորերու մէջ փնտռել։ Այս գաշար երբեմն շատ աւելի մեծ բազմութիւն մնուցեր է իր բերրիութեամբ և գանուած պահեր է իրեն բնական ամրութիւններով։ Այսօր թէև անհամեմատ կերպով քիչ մարդկանց ապացուածն է արդաւանդ գաշտս, բայց բնակիչները նախանձելի վիճակ մը ունենալէ շատ հեռու են։ Բազէշի տղրուկներ՝ որ վանեցիներէն աւելի անգութ և գործունեայ են վաշխառութեան մէջ, գաշտիս գիւղացւոց կալուածոց շատերուն աէր գարձած են։ Եղեգիսի գաշտացիներու պարապմունքը գլխաւորապէս հողագործութիւն և ոչխարաբուծութիւն է։ Երբիշ տեղացիներու պէս անոնք չեն կրնար տարին երկու անգամ ցանք ընել։ Աշնան չի յաջողիր, որովհետև գաշար գարնան ջրով կը ծածկուի։ Ոչխարներու ուտեստը՝ կը հայթհայթեն կադնիի պուրակներէ։ — Արւեհա, Գ 25–26։

ԵՂԵԳԻՔ կամ ԵՂԵԳԵԱՅ ԱԻԱՆ. — *Հին աւան Միւնեաց վայոց ձոր գաւառի, Եղեգեաց ձորի մէջ, որ այժմ Աղագաղ կը կոչուի և ունի մօտ 40 տուն այլազգի բնակիչներ։ Նշանաւոր է աւերակներովն և բարձր դիրքովը։ Երբեմն աթոռ եղած է վայոց ձորի իշխաններու և նոյն խոկ Միւնեաց երկրորդ հարուստներու բոլոր տերանց, և վայոց Օրբելեան մեծաշուք իշխաններու։ Այս պատճառաւ ոչ միայն գիւղաքաղաք, այլ և մայրաքաղաք գրուած կը գտնենք։ Եղեգեաց շինութեան ժամանակը յայտնի չէ, բայց կը գուշակուի Միւնեաց աշխարհի հնագոյն աւաններէն մին լինել և գաւառապահ աթոռ. անունն առած է այս կողմանց եղեգնարեր լճակներէն։ Միւնեաց իշխանութեան վատակ նահապետէն նորոգուած միջոց, կ'ե-*

բաւ թէ հոս հաստատուած է ամբոխ, ինչպէս յայտնապէս կը վկայուի վաստակաշէն թոռնորդւոյն Մեծին Սմբատայ համար, որ Բշրայ կամ Նարայ արշաւանաց միջոց՝ 923 թուին, «հորդան առեալ զօրացն՝ ամբոխս բազումս ոտայեակոյս զօրու շուրջ զիւրեան կացուցանէր յիւրում արքունական ապարանսն՝ ի պիղաքաղաքն Եղեգիս. եկեալ ապա Նարն, և անտեառ գնա այնպիսի պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ, զդուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անտի, այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա... չուէ և երթայ». Յոհն. Կաթ: Ա.յս Սմբատ իշխանը 936 թուին կը յիշէ նաև Օրբէլեան. որուն համար կ'ըսէ «...եկեալ յաւուր միում յարքունեացս իւր՝ որ էր յԵղեգիս պիղաքաղաքի»: Ասոր վերջին պայազատները ուրիշներու ձեռքը թողլով Եղեգիս, իրենց դահը փոխեցին Բաղաց և կապանի մէջ. բայց երբ Զաքարեանները այս կողմերը այլազգիներու ձեռքէն ազատեցին և Օրբէլեանց տուին, ասոնք իրենց ամբոխը հաստատեցին Եղեգիսի մէջ՝ Եղիկումն և որպէս Սմբատ. իսկ ասոր եղբայրը Տարսայիճ մեծ՝ յետոյ իրեն բնակավայր ընտրեց Աբիա գիւղը. բայց կը թուի թէ անոր որդին նորէն այս տեղս հաստատուեր է. վասն զի կը յիշուի տեղւոյս իշխող ուրիշ Տարսայիճ անուամբ մէկը 1314ին: Հաւանական է թէ այս Տարսայիճը Զալալայ որդին լինի: Ա.յս անուամբ ուրիշ պայազատներ ևս եղած են, որոնց իշխանութիւնը տեւած է մինչև ԺԷ դարու սկիզբը, երբ Շահաբաս ուրիշ գաւառաց հետ Եղեգեաց ձորի բնակիչներն ալ Պարսկաստան տարաւ: Նոյն միջոցին թիւրեւս ազատեցան այս իշխանաց սերնդէն մանուկ, Սիւնեաց և Օրբէլեանց անշքացեալ տոհմին ծերպերու մէջ, ուր գրեթէ 700 տարիէ ասդին կամ նուազ, պանծալի իշխաններ իրարու յաջորդեցին:

Հոյակապ և գեղեցիկ են տեղւոյս աւերակներն, որոնց գլխաւորը կը համարուի բերդը՝ որ ամուր պահապանն էր տեղւոյն արքունեացը և ճոխութեանցը: Կառուցուած է ասանիս արեւմտեան հիւսիսային կողմը, կէս փարսախ հեռու՝ երկու ձորակաց մէջտեղ. զօրաւոր պատնիշով ամրացած է, տաշած և անտաշ քարերով շինուած: Բուն բերդը կը գտնուի բլրի մը վրայ. ներս մտնելու ճանապարհը հիւսիսային կողմէն է: Նոյն այդ ճանապարհն որ հին ժամանակները ծառայեր է բերդին, առանձնաբար կը բարձրանայ Գիւմիշ–Բուլախի ձախ ափէն, յետոյ բերդատարի հիւսիսային մասի արեւմտեան լանջով անցնելով մացառներու մէջ կը մտնէ բերդին: Որովհետև բերդիս արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերը բնական դիրքով ամուր են անմատչելի ուղղահայեաց ցից ժայռերով և մասչելի և թոյլ կողմերն են հիւսիսային, հիւսիս–արեւելեան և հիւսիս–արեւմտեան մասերը, այդ պատճառաւ պատնէշը շինուած է միայն այդ կողմերը, որոյ հիւսիս–արեւելեան անկիւնը արդէն քանդուած է: Հիւսիսային պարսպի հաստութիւնը երկու սաժէնէն աւելի է, իսկ մեա պարիսպներու հաստութիւնը մէկ սաժէն: Ա.յս ամրոցաձեւ պարիսպը ամրացած է տասը մեծ աշտարակներով: Բերդս ունի երեք կամարաշէն մեծ դարպասներ, արբաստաշ քարերով՝ արեւելեան, հիւսիսային և հիւսիս–արեւմտեան կողմերը. ամենէն մեծն ու լայնը հիւսիսայինն է, որ եղած է անշուշտ իր ժամանակին աւազ դուռն, որուն ասկի կան քանդուած քարէ ասոիճաններ: Բերդի ներսը կը տեսնուին սենեակներ, անհաւասար փլատակներ, և խիտ ու խիտ քարահոյտեր: Խարխլած սենեակները շինուած են պարիսպներու կից անոնց երկայնութեամբ. ամէնքն ալ աւերակ դարձած են, աւերակներէն հաշուելով բոլոր սենեակներու թիւն 120էն աւելի է: Բերդիս կեդրոնը բարձր ժայռի գլուխը կան չորս միմեանց կից կրապատ սենեակներ, որոնք թերեւս իշխանաց բնակավայր եղած լինին. ասոնց մօտ կայ նաև կրապատ ջրամբար մը: Ա.յս սենեակներէն քիչ հեռու, դէպի հիւսիս, սուր ժայռի մը ծայրը կայ երեք պատով սենեակ մը՝ առանց չորրորդ՝ հիւսիսային պատի, գուցէ այս դիտառոց եղած լինի: Բերդիս մէջ կանգնած ժամանակ, մարդուս աչաց կը ներկայանան չորս կողմի գեղեցիկ տեսարանները. հեռուէն կ'երեւին Տարսայիճի ալեծածան գագաթները, սեպաձեւ ժայռերը և սոս-

կալի ձորերը, և աւելի մօտիկ գէպ ի հիւսիս, բերդէս աւելի բարձր գիրքի վրայ կ'երեւին Դ.օշա վանքերը, իրենց սրածայր կաթուղիկէքը։ Դէպ ի արեւելք անդունդի մէջ ինկած է Եղեգեաց (Ալագեազ) ձորը, ուր կիչք կ'աւանդեն, թէ Ամբաս շինած է բերդս և անոր անուամբ Ամբասայ բերդ կը կոչեն. եթէ այս ճիշդ է, լինելու է այլ Մեծն Ամբաս գահերէց իշխանը, որ՝ ինչպէս տեսանք ի բուն ամուր գիրքովը նա զարձուց Յուսուփայ



277. Եղեգեաց ձոր Ամբասայ բերդ։

զօրավարը. — Ժէ դարու վերջերը աւանիս մէջ աւետարան մը գրելով սոն Ջաքարիա քահանայ, երեք կ'ըսէ և չորս կը գնէ եկեղեցիները գրելով. « ... ընդ հովանեաւ և բից տաղաւարացս, Սուրբ Կարապետիկեան և Սուրբ Աստուածածնին և Սուրբ Ստեփանո-

անուն գեաւղ, որոյ աջկողմը և բերդիս սահրոտը ցանուցիր թափթփած են քարակոյտներ՝ հին Եղեգեաց աւանի աւերակները. այս աւերակներէն քիչ մը վեր, ձորի մէջ է այժմեան Ալագեազ գիւղը ծառերով, այգիներով և հին վանքերով։—Կողմանցս բնա-

սիս, և կենդանաբար Սուրբ Նշանիս»։ Ջա-
լալեան ևս չորս եկեղեցի կը յիշէ առանց
անուան աւանիս և բերդիս այլ և այլ կողմե-
րը։ Մին կը գտնուի ամրոցի արեւելակող-
մը, պարսպապատ գերեզմանատան մէջ,
վայելուչ կաթուղիկէով, շինուած Սահեփա-
նոս Սիւնեաց պատմիչ եպիսկոպոսէն, ինչ-
պէս կը յայտնէ արեւելեան կողմի լուսամը-
ոի ճակատին արձանագրութիւնը։ Լուսամոի
եղերքն ալ արձանագրութիւն կայ. իսկ և-
կեղեցւոյս շուրջը կան գամբարներ, հան-
դերձ ԺԴ դարու վերաբերեալ արձանագրու-
թեամբք։ Եկեղեցիէս քիչ մը հեռու դէպ ի
վար, քարաժայռի մը առորոտը կայ 3 մեծ
բարձր խաչարձան մը՝ ՉԻՀ (= 1279)
թուականաւ արձանագրութեամբ մը՝ Տար-
սայիճի որդւոյն Գրիգորի։ Երկրորդ եկեղեցին
աւանիս արեւելակողմն է 10 քայլ երկայ-
նութեամբ և 8 քայլ լայնութեամբ, բայց
քայքայած է. ունի նաև ընդարձակ գաւիթ՝
չորս սիւներով. պահին վրայ 1290 թուա-
կանաւ տապանագիր մը կայ։ Երրորդ եկե-
ղեցին աւելի հեռու է դէպի արեւելք. երկ-
րորդէն աւելի ընդարձակ՝ 20 քայլ երկայն
և 18 լայն, բարձրացած չորս սիւներու վրայ
ապաշէն, մանր և նուրբ քանդակներով։
Խորանին երկու կողմերը ունի աւանդատուն-
ներ՝ հանդերձ պատարագի սեղաններով։ Ճա-
տակը սալարկուած է. աւագ սեղանոյն եղերք-
ները քանդակներու մէջ կը նշմարուին Սրմ-
բատ, Աշոտ և Շահնշահ կիսեղծ անուններ-
րը։ Եկեղեցւոյս հիւսիսային արեւելեան կող-
մը ընդարձակ գերեզմանոց է և կան շատ
տապաններ ու խաչվէմներ, գեղեցիկ քան-
դակներով և արձանագրութեամբք։ Չորրորդ
եկեղեցին փոքր է 6 քայլ լայն և նոյնչափ
երկայն, և կը գտնուի գերեզմանատանն
հիւսիսային կողմը գեռոյն ձորափը։ Ունի
վայելուչ կաթուղիկէ. որուն մէջը շինուած
է կարմիր և սեւ քարերով, երկու սրմանից
սիւներու վրայ։ Աղջիւը ունի 10 քայլ եր-
կայն և 8 քայլ լայն գաւիթ մը, որոյ գրան
շրջանակն զարդարուած է մանր քանդակ-
ներով։ Հարաւային սրմի վրայ քանդակուած
է երկգլխի վիշապ մը և մէջը ժամացուցակ։—
Գերեզմանատան արեւմտակողմը նահատակի
մը տապանը կայ պատուհասած կողմանցս
Հայերէն և Պարսկիներէն, որուն վրայ ար-
ձանագրութիւն ևս կայ՝ բայց խնդարուած։
Գերեզմանատան պարսպի հարաւակողմը ա-
գուցուած է նշանաւոր քար մը՝ Տարսայիճի
և իւր Մինայ կնոջ քանդակապատկերներով,
այրը պերճ զգեստիւք՝ գլուխը թագ և գա-
հոյից վրայ նստած. իսկ կինն գանգրահեր
և զարդարուն զգեստիւք ու գլուխը խայր.
քարիս վրայ կայ 1274 թուականաւ ար-
ձանագրութիւն։ — Բերդի հիւսիսային կողմը
ձորի մէջ կայ ուրիշ ընդարձակագոյն գե-
րեզմանատուն մը, բազմաթիւ մանրաքան-
դակ մահարձաններով, յորս նշանաւոր են
երեք մեծամեծ խաչքարեր՝ խիստ ճարտար
կերպով քանդակուած. արձանագրութիւնք
ԺԴ և ԺԴ դարուց կը վերաբերին։ Ա՛յս բո-
լոր խաչարձանները և աւերակներուն շա-
տերը կը ցուցընեն Օրբելեանց իշխանու-
թեան բարգաւաճ ժամանակին՝ ԺԴ դարու
կէսէն մինչ ԺԴ կէսը։ — Եղեգեաց աւա-
նի մօտ այգիներու մէջ ծառերու ներքև կայ
խաչարձան մը՝ գեղեցիկ քանդակագործ շրջ-
չանակով, որուն մէջտեղ քանդակուած է
խաչն. բայց ափսո՛ս, որ անձրեւ և այլ
պատճառներէ, գուցէ և բիրտ ձեռքերէ մա-
սամբ մը աչնչացեր է. խաչի վերեւի կիսա-
բոլոր քարի վրայ քանդակուած է Ս. Ա-
ստուածածնի պատկերը գահի վրայ նստած,
և երկու կողմերն են Մարիամ Մագդաղե-
նացին և միւս Մարիամն։ Քանդակազարդ
շրջանակի լուսանցքի մէջ բոլորակի գրուած
է արձանագրութիւն մը, որ տեղ տեղ քան-
դուած և մաշուած լինելով, ժամուարընթեռ-
նելի է։ Ա՛յս խաչարձանը շինուած է մա-
քուր սրբատաշ մեծ քարերով։ Երկայնու-
թիւնն է վեց արշին և լայնութիւնը երկու
արշին. քանդակը արեւմտեան ճակատի վը-
րայ է. իսկ երեք կողմերը բան չկայ։ Ա՛ն
կը գտնուի Եղեգեաց աւանի կամ Ա՛ղագեղ
գիւղի թուրքի մը այգիին մէջ. վրան ո՛ և
է աւանդութիւն կամ տեղեկութիւն չկայ։
— Մխակաե, 146–152։ Հնութիւնք վանա-
յական, թ. 288։ Եւ այլն։

ԵՂԵԳՆԻՒ. — Կ՚ըսուի, թէ այսպէս ևս կը
կոչուի Բագրեւանդայ Բողի գիւղը։

ԵՂԵԳՆԱՁՈՐ. — Ա՛յսպէս ևս գրուած կը
գտնանք Եղեգեաց ձորի անունն։

ԵՂԷԳԻ. — Գիւղ խարբերդի. 125 տուն հայ, 15 տուն բազոքական և 470 տուն թուրք կայ։ Հայք ունին եկեղեցի մը Սուրբ Գէորգ անուամբ, և վարժարան՝ Ս. Նշան։ կը պարապին հողագործութեամբ։

ԵՂԷԳՆԱՔԵՐԱՆ. — Աչրարատայ Մազազ–Ոսման գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ վայր մը։

ԵՂԻ. — Գիւղ Սղերտի (Տիգրանակերտ) խան գաւառակի. 76 տուն հայ կայ. ունին Ս. Էղիա անուամբ եկեղեցի մը։ Եկեղեցւոյն վրայ հող լցած չեն, միայն տեղերնուրջ ծածկած են և կ'ըսեն. «Մեր տուրը չէ մեռեր, հող չհմլէր, կնիկէ չհմլէր յինէ, կայ է»։

ԵՂԻԱ (Ս.). — Հին և աւերակ վանք Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ։

ԵՂՅՈՒՆ. — Հին գիւղ Սիւնեաց Բազք գաւառի Աճանան վիճակի մէջ։ Կը յիշուի ԺԵ. դարուն գրուած գրոց քանի մը յիշատակարանաց մէջ։ Գիւղս գրուած կը գրանուին նաև Եղինկ 1671ին։

ԵՂՅՈՒՆ. — Ղազար Փարպեցի կը յիշէ գիւղս Վասպուրականի Աբաղ գաւառի մէջ. «Եւ եկեալ Մամիկոնեանն վահան ի գաւառն որ կոչի Աբաղ, ի գիւղն որ անուանեն Եղինք»։

ԵՂՇԱՑ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՏ. — Կը գտնուի Աղցախի վարանդա գաւառի մէջ, Շուշիէն դէպի արեւելք, Սօս գիւղի, Լուսաւորչի սարի, Փեթի և Ղազի ձարատար գիւղերու միջև բարձրացող բաւական բարձր սարի վրայ։ Սարիս գագաթը զարդարուած է թեղի և տխկի ծառերով և հին ու նոր տապանաքարերով։ Եկեղեցւոյ երկայնութիւնն է 16 մեար, լայնութիւնը 8,75 և բարձրութիւնը 5 մեար։ Երկու հատարակ սիւներու վրայ կը բոլորուին ռոմանական կամարներ և կամարակապ ձեղունը, որու մէջտեղէն կը բարձրանայ փոքրիկ կամուղիկէ մը՝ որ կը ծառայէ եղեր իբրև զանգակատուն։ Շինուած է անտաշ արձաքարով, բացի կամարներէն և անկիւնաքարերէն, որոնք սրբատաշ են։ Ունի երկու փոքր և մի ւազ խարան, երկու խորհրդարան, աւազան, չորս (ըստ Բարխուդարեանի վկ.) լուսամուտ, և մէկ դուռն արեւմտեան կողմէն։ Աւագ խորանի ներքին անիսփուած են Ս. Եղիշայ կուսի նշխարները, և բեմի մէջ կայ փոքրիկ խորանաձեւ բացուածք մը, ուր կայ նաև փոքրիկ՝ բայց շատ խոր ծակ, որ հաւանականօրէն կը հասնի մինչև սրբուհւոյն գերեզմանը։ Հիւանդները ազօթելէ և մոմ վառելէ վերջ անմիջ երեխայի մը ձեռքը շորերով փաթաթելով երկնցընել կուտան այդ խորանի մէջ։ Կ'ըսեն թէ քանի մը րոպէ վերջը հիւանդի ցաւած տեղին համապատասխանող սակր մը կը թուչի կը կանգնի երեխայի թեւերն վրայ։ Անմիջապէս կը վերցնեն այդ սակրը, ջրի մէջ կը ձգեն և այդ ջրով կը լուան հիւանդի ցաւոց մասը, որ խոկոյն կ'առողջանայ։ Ունապատառ ունի նաև քարեայ խաչկալ հանդերձ ՌՃԳ թուականաւ արձանագրութեամբ։ Դրան ճակատակալ քարի վրայ կայ շինութեան հիմնական արձանագրութիւնը. «Կարդուրեամբ ամենագթին Աստուծոյ ես նուաստ տէր Յոհաննէս անձամբ տկար արհղայս և արդիկիր Փարր տէր Յովանես շինեցաք սուրբ զեկեղեցիս ըստ անուան Սրբուհւոյ կուսին Եղիսէի ի կարուղիկոսութեան տեառն Երեմիայի և տանս Աղուանից որ ի մայր արուոյն Գանձասարայ յիշոյ ազգէնէ հանդերձ ծնողովք մերովք ՌՃՒԴ.»։ Եկեղեցւոյս արեւմտեան պատի արտաքին երեսն զարդարուած է խաչքարերով։ Նոյն պատի լուսամտի վրայ կայ եկեղեցիս շինող արհեստաւորի ուռուցիկ կոթրկի կամ Գաթրկի արձանագրութիւնը։ — Աղցախ, 115–117։ Վարանդա, 46–47։

ԵՂԻՇ–ԱՌԱՔԵԼԻ, կամ ՋՐՎՇՏԻԿ ՎԱՆՔ. — Կը գտնուի Աղցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Մառ սարի բարձրէն երկու ձորերու մէջ խոնարհած լեռնաբազկի մը բլրակի վրայ։ Շրջապատուած է աղխաղենաձ և սոսկալի կիրճերով. այդ պատճառաւ լայնարձակ հորիզոնէ զուրկ է։ Վտակ մը՝ Ջրվշտիկ անուամբ, արեւմտեան կողմէն շրջապատելով կը վազէ շատ բարձրէն, կ'անցնի վանքին հարաւային սահրոտի խորագոյն ձորով, կը դառնայ դէպի արեւելք և սրբոհծաց կը վազէ դէպի Թարթառ։ Բլրակիս հարաւային կողմը սոսկալի վիմահարթ է, իսկ միւս երեք կողմերն՝ պարապուած բարուկիր պատով, որ

ունի երեք դուռն՝ արեւմտեան, հիւսիսային և արեւելեան կողմերէն։ – Վանքը կառուցուած է բլրակի գագաթը անառաջ քարերով. շինութիւնը շատ հին է, ճարտարապետութիւնն հասարակ ու անճաշակ ոճով և բարձրութիւնն չափազանց։ Այսու ամենայնիւ այցելուաց վրայ պատկառանք և սրբութիւն կ'ազդէ։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ վանքս հիմնարկած է բարեպաշտ վաչկան Գ. թագաւորը։ Նախ կոչուեր է Նէրսեհներայ կամ Նէրս–Մինրայ ուխտ, և յետոյ Ջրվշոիկ՝ անշուշտ մօտէն վխտող ջրվէժի պատճառաւ։ Բայց սուրբ Եղիշէ առաքելոյն մարմինը Հիւրնկայ կամ Ուռնկան վանքէն տատ փոխադրելէ վերջ, կոչուած է Եղիշ Առաքեալ։ Տաճարն ունի երկու դուռն հարաւային և արեւմտեան կողմերէն. երկայնութիւնն է 10 մետր և լայնութիւնն 5,80մ.։ Այժմ խոնարհուած է ամբողջ ձեղունը և խորանի արեւելեան պատը։ Ունի նաև գաւիթ կամ ժամատուն՝ շինուած անառաջ քարերով միեղոյն ճաշակով և չորս սիւներու վրայ. 9,5 մետր երկայն և 8,45 մետր լայն. միակ դուռն կը գտնուի արեւմտակողմը։ Ունի ՉԺԴ (= 1264) թուականաւ արձանագրութիւն, որ կը յայտնէ, թէ շինողն է ումն Խաչատուր, աէր Սիմէոնի առաջնորդութեան ժամանակ։ Թէ տաճարի շուրջը և թէ գաթիս յատակը ծածկուած է հանդուցեալ եպիսկոպոսաց, վարդապետաց և միաբանից տապանաքարերով հանդերձ արձանագրութեամբ։ – Մինաստանիս երկու կողմերը կան մատուռներ։ Հիւսիսային կողմէն դէպի հարաւ երթալով, Ա. մատուռը ունի երկու խորան և երկու սեղան, որ շինուած է անառաջ քարով։ Բ. մատուռն, նոյնպէս անառաջ քարով շինուած է և ունի մէկ խորան և մէկ սեղան։ Գ. մատրան մէջ, որ շինուած է սիմեայն ոճով, կայ Աղուանից վաչկան Գ. թագաւորի գերեզմանն, որուն վրայ ձգուած է 1,60 մետր երկայնութեամբ եռանկիւնի տապանաքար մը, պատրաստուած առանձին խնամքով և լաւ յղկուած. բայց արձանագրութիւն չունի։ Տապանաքարիս մօտ կայ խաչարձան մը, որ նշանաւոր է խիստ հնութեամբ և ճարտարարուեստ քանդակագործութեամբը. այսպէս է նաև խորանի աջկողմը եղած ուրիշ խաչարձան մը։ Մատուռս ունի մէկ խորան. գրան ճակատակալ քարի վրայ քանդակուած է. «Այս է նահատիպ վաչկական թագաւորին. Աստուած ողորմի Հայրապետայ և ոյր (իր) ծնողացն, որ շինեց զկենդեցիս յաստուածդրեան տեր Սիմեոնի բիւ. Զկ. եր»։ Մատրանս գրան դիմացն է Ջրաբերով գաւառի իշխող հռչակաւոր Մէլիք Ադամ մեծի գերեզմանը։ Յաւալի է սակայն որ անկիրթ այլազգիները ջարդեր են արձանագրութիւն կրող մարմարիոնը, որ գետնուած է եղեր մէլիքիս տապանաքարի մէջ. սակայն գաւառիս բնակիչը մեծ ու փոքր ամէնքն ալ աստուածեամբ գիտեն իրենց սիրելի իշխանի գերեզմանը։ Գ. մատուռը, որ կանգնած է վանքի հարաւակողմը, բաւական հին է և ունի երկու խորան։ Մէջը կայ տէր Մեսրոպ անուամբ մէկու մը գերեզմանը, որ ունի ՌՃԿԲ թուականաւ տապանագիր։ Ե. մատուռն՝ որ Դէ հարաւային կողմն է, ունի մէկ խորան։ Զ. մատուռը ունի մէկ սեղան, աւելի հնաշէնն է և ունի կիսատ արձանագրութիւն, որով կը յայտնուին շինողաց անուններն, որք են Աղաթիլ վարդապետ և աէր Մատթէոս։ Է. մատուռն ունի միայն մէկ սեղան։ – Վանացս մէջ կան երկու գանգակներ. մին հնագոյն՝ երկայնաձեւ է ու կոպիտ, իսկ միւսն կոտրած, և ունի արձանագրութիւն, որ կը յայտնէ թէ նուիրուած է ումն Ղազար, և ձուլուած Շահնա. գիտեն է եղեր նոյն ժամանակ երեք թուման։ — Վանքս ցարդ սրբութեամբ պահած է Գաղանիք Ղարաբաղի վիցգաղներէն երկու քաջերու յիշատակը, որոնք են Գալի–Մահրատան և Տանմազ։ Վանքիս արեւելեան պարսպի մօտ է Աւազ–Վարդապետ–Գալի–Մահրատայի բնակած սենեակը, որ ունի նեղ և փոքր լուսամուտներ և ամուր գիրք։ Հիւսիսային պարսպի փակուած դրան մօտ ներքուստ գրուած է Տանմազի ՌՃՀԲ թուականաւ յիշատակարանը։ Պարսպի ներսը կան նաև քանի մը հին սենեակներ և գոմ։ – Վանքիս ներկայ դրութիւնը խիստ խղճալի է. անպիտագրելի ժամանակը կը քանդէ ամենայն ինչ. կարօտ է նորոգութեան, բայց իր սեպհական կալուածները վիճի տակ բնակած են և արդիանց ապրիմները սպա-

առած։ Իրրև պահապան մէջը կայ միայն սի-
բացու մը, որ շինած է վանքին ճանապար-
հը և նորոգած է Զ. մատուռը։ — Ուղի
մատուռ՝ կը կոչուի վանքին մօտակայ սարի
ուսին վրայի կիսաւեր մատուռն, ուր կայ
նաև գիւղատեղի և հանդստարան։ — Էղիշ–
Առաքեալ վանքի և Էղակեր գիւղի մէջտեղ,
տեսարժանաւոր բլրի մը վրայ կը գտնուի Մա-
տուռ անուամբ կիսաւեր և փոքրիկ հին շի-
նութիւն մը, որուն դրան վրայի արձանա-
գրութենէն կը յայտնուի շինողի անունն
Գրիգոր։ Մատրան մօտ կայ հանդստարան
մեգաւոյաններով ծածկուած։ Ակսպիսի կի-
սաւեր եկեղեցի, հանդստարան և գիւղատե-
ղի կայ նաև Թրատ կոչուած տեղը, որ կը
գտնուի աւերակիս հարաւակողմը։ — Ար-
ցախ, 234–237։

ԵԼԻՇ–ԱՌԱՔԵԱԼ։ — Ագուանից մէջ այս
անուամբ կը կոչուի հայ և թուրք հասա-
րակութիւններէն այն սրբավայրն, որ կը
գտնուի Կովկաս սարէն Բուժի վրայ կա-
խուած լեռնաբազկի մը վրայ։ Հոս եղած է
մահտպարաններու այն հորը, որուն մէջ չա-
րագործները ձգած են Էղիշէ–Առաքեալի
սուրբ մարմինը նահատակութենէն վերջ։ Ճե-
ւոյ Ագուանից վաչկատն թագաւորը սուրբ
մատունքները հանել տալով կը փոխադրէ
Արցախ, և վերադիշեալ վանքը Թարեմաո գե-
ւակի ձորի մէջ կառուցանելէ վերջ, հոն դնել
կու տայ։ Բայց խոր հորին վրայ շինել կու
տայ նաև սիւն մը, որ այժմ անյայտացած
է և հորն ալ լցուած, բայց ի մէկ կանգուն
խորութենէ։ Հոս կը յաճախէ հայ և մահ-
մետական ուխտաւորաց մեծ բազմութիւն։ —
Ագուանք, 256։

ԵԼԻՇԷ ԱՌԱՔԵԱԼ։ — Այս անուամբ ևս
կը կոչուի Ագուանից Գիս կամ Գիշ վան-
քը, զոր նկարագրած ենք ի կարգին։

ԵԼԻՍԱՏՈՒՇ կամ ԱՂԱՊԱՏՈՒՇ։ — Հին
գիւղ Ալբարատայ Նիզ գաւառի մէջ։ Ասկից
էր Ը դարու վերջին քառորդի մէջ (774–87)
Եսայի կաթողիկոսը, որուն համար Ենեցի
պատմիչը կը գրէ. «.. էր միամօր որդի, որ
վասն աղքատութեան մուրացիկ գոլով սարն-
դեայ մանկամէն յարեցաւ ի սուն կաթող-
ղիկոսարանին, և ոչ մտեալ ընդ յարկաւ
խորշակաւ և ցրտով ապտապեալ պաշտէր
զղբունս եկեղեցւոյն. զոր հարցեալ քահա-
նայիցն՝ թէ զի այդչափ ապտապիս, և նա
ասէ. Ոչ գիտէք՝ սակս կաթողիկոսութեան
մնուցանեմ զորգեակս իմ. որ և մնեալ ի
նմին եկեղեցւոջ, լինի նախ եպիսկոպոս Գաղ-
թեան, և ապա կաթողիկոս Հայոց»։

ԵԼԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ, ԷԼԻԶԱՊԷԹԳԱՏ, Ի-
ՊԱՇՎԱՅՈՎ, ՊԱՇՊԱՅՈՎ, կամ ԷՐԻՒՊԷԹ–
ՎԱՐՕՇ. Գ. EBESFALVA. Գերմ. ELISA-
BETHSTADT. Հունգ. ERZSEBETVAROS. —
Երբեմն նշանաւոր զուտ հայարնակ քաղաք
Հունգարիոյ Թրանսիլվանիա նահանգի մէջ։
Քաղաքս ի սկզբան Լոպաշ–ֆալվա կը կոչուէր՝
մերձակայ գիւղի մը անուամբ, ուր նախ
բնակած են Հայք, և ապա երբ Ժ. դարու
կէսէն վերջ (1658) սկսան շինել այս քա-
ղաքը՝ իսպառ անուանեցին. նոյն գիւղը
այժմ քաղաքիս մէկ արուարձանը կը հա-
մարուի։ Քաղաքս շինուած է լայն ձորի մը
մէջ, երկու կողմէն շրջապատեալ մշակելի տա-
փարակ բլուրներով, Թուրնոմա գետոյն ա-
րեւելակողմն, որուն վրայ փայտաշէն՝ բայց
չափաւոր մեծութեամբ կամուրջ մը ձգուած է։
Ալ արեւելակողմն է Հայոց բնակավայրը,
լայն ու ուղղահայեաց փողոցներով, միայարկ
կամ երկայարկ քարաշէն ու ապիւտակերտ
մեծ տուներով. ամէն տուն իրեն սեփհական
գեհին ունի քաղաքի շրջակայքը։ Գար մը
առաջ 2300ի չափ հայ կար 450 տներով.
օր ըստ օրէ ցրուելով, օտարաց հետ խնա-
մութեամբ և մատամբ մաղ ուրիշ տեղեր
փոխադրուելով այժմ հազիւ 400–500ի
չափ հայ ճեացած է, և այս՝ տուներ միայն։
Հայոց մեծամեծ ու փառաւոր տները այժմ
Մաճառներով ու Ռումանիներով լեցուած են։
Քաղաքս մինչև 1848 թուականը շատ վա-
ճառաշահ էր, սակայն Մաճառաց նոյն թուի
յեղափոխութենէն վերջն ալ նախնի վիճա-
կը չունեցաւ։ Հայոց տներու մէջ հազիւ
40–50 այր կը գտնուին. որովհետեւ շա-
տեր շահու համար ուրիշ տեղեր կը պան-
դխտին։ Հայք ունին չորս եկեղեցիներ. ա-
ռաջինն է հին տաճարն Ս. Երրորդութեան,
միջակ մեծութեամբ. գրան վրայի արձա-
նագրութիւնը կը յայտնէ թէ շինուած է բոլոր
հայ հաւատացեալ ժողովրդոց գործակցու-
թեամբ։ Այս փոքրիկ տաճարը բաւական

չլինելով, անցեալ դարու առաջին կիսուն մէջ հիմնեցին մեծ հրապարակին վրայ ընդարձակ քարաշէն մայր եկեղեցի մը՝ Մաճառաց Ս. Երիսաբէթ գլխոյն անուամբ. ճակատը երկու բարձր զանգակատուն կայ։ Աւագ խորանի երկու կողմերը ունի վեց գեղեցիկ խորաններ, և կրկնայարկ աւանդատուններ. ազակոմեան վերնատունը ազնուական ընտանեաց յատկացուած է. իսկ ձախակողմեանը՝ Թադեպարան կամ դրասուն մ'է,



278. Եղիսաբեթուպոլիս. — Կաթուղիկէ հայոց մայր եկեղեցին։

որուն մէջ ժամանակաւ, Աղիէն բերուած և մագաղաթի վրայ գրուած, շատ գրքեր կային, որոնց մէկ մասը առանձնականաց սեփհականութիւն դարձած է, մէկ մասն ալ գրուած և մէկ մասն ալ գողցուած է, այժմ անոնց շատ մաս մը կայ փոշիներու տակ թաղուած։ Սոյն եկեղեցւոյ ճակատն արձաններով ու սիւներով զարդարուած է. վրան պղնձայարկ բարձր գմբէթ մ'ունի. գմբէթն մինչև աւագ խորանը՝ երկայնութիւնն 105 ոտք է։ Երբոր եկեղեցին վերնոյն պիտոյն է՝ հրապարակին արեւմտեան կողմը, կառուցուած 1795 թուին, մեր Մխիթարեան Միաբանութենէն։ Գեղեցիկ է և համեմատական. ունի երեք ոսկեզօծ խորաններ՝ զարդարուած արձաններով, արուեստական պատկերներով ու գեղեցիկ սիւներով։ Աւագ բեմին երկու կողմերը կան աւանդատուններ և անոնց վրայ կրկին վերնատուններ՝ շրջապատեալ ոսկեզօծ վանդակներով ազնուականաց համար։ Եկեղեցիս միակամար է և որմերը զարդարուած են զանազան գրուագներով. նուիրուած է դլխաւոր առաքելոց Պետրոսի և Պօղոսի։ Մօտն է Ս. Ղազարու Մխիթարեան Հարց վանատունը որ ժամանակաւ բակին մէջ ունէր գպրատուն, ուր հայ մանուկները կ'ուսանէին հայերէն լեզուն, բայց ի վերջոյ բարձաւ հայերէն լեզուի ուսումն, և հայ տղայք կը յաճախեն քաղաքին գպրոցը։ Այժմ քաղաքիս մէջ չկայ հայ երիտասարդ կամ օրիորդ մը, որ հայերէն բան մը գիտնայ։ Զօրրորդ եկեղեցին Յովհաննու Մկրտչի անուամբ, զոր Թուրքիանց ցեղէ հայ իշխանէ մը շինուած է, որուն անունը եկեղեցւոյն ճակատը գրուած կը կենայ։ Ունի երեք խորան և գեղեցիկ զարդեր։ Ասոնցմէ զատ չեխան դպրեվին ալ հայկական մատուռ մը կայ և մեծ խաչելութիւն մը։ Աւագ շաբթուն Հայք քահանայիւք մեծ խռնդոյով հոն ուխտի կ'երթան իբր Գողգոթայի լեռը։ Գերեզմանքիս մէջ Մահմետականք և Հրէայք ևս ունին իրենց յատուկ եկեղեցիներ և ժողովրդապետներ։ Հայոց նախնիք 60000 ֆիորինի չափ տարեկան եկամուտ թողած են քաղաքիս հայ քահանայից, եկեղեցիներու և աղքատաց համար, բայց այժմ օտարներ կը վայելեն զայն։ 1874ին քաղաքիս Հայերէն Մելիք անուամբ հարուստ ու բարեպաշտ անձ մը վիճակայի մէջ մեռնելով 80000 ֆիորինի արժէքով մէկ տուներ, կտակած է տեղւոյս Հայոց համար եկամուտը գործածելու պայմանաւ. բայց յայտնի չէ թէ ինչ եղած է։ Մահուան կառավարութիւնը Հայերէն ևս գրքեր կառնու. հայ գերեզմանաց մէջ մեծ ու նշանաւոր մարդիկ եղած են և կան. բայց իրենց մահուան կը յիշուին և կը ճարչցուին օտարներէն։ Հայ ծերունիներու սրտին մէջ

դեռ սակաւ մը կենդանի ձեացած է հայաբերութիւնը։ Հայերէն գիր գրել գիտցող գրեթէ չկայ, հունգարերէն առաւելով կը գրուին հայերէն բառերը։ Հայոց խօսած լեզուն խառնողեալ է հունգարերէն, ռումաներէն, սերմաներէն, լատիներէն և թաթարերէն բառերով։ — Ձին շինուածոց մէջ նշանաւոր է Աբաթի բռնակալէն կառուցուած բերդը, որուն

տաքրքրական պատմական տեղեկութիւններ՝ քաղաքին սկզբնաւորութեանը, արուեստներու և արքունի կալուածոց վաճառման մասին։ Էդիսաբեթուպոլսի Հայոց կառավարութեան, գաւառապետ ընտրութեան և այլ տեղական մասին գրուած է նաեւ Ճանապարհ. ի Լեհաստան գրոց 195–199 էջերու և Բազմավէպի Թիւ տարւոյ մէջ։



279. Եղիսաբեթուպոլս. — Վենետկոյ Մխիթարեան հարց վանատան ճակատը։

անունը հին լատին գրով փորագրուած է պրան վրայ։ Երբեմն քաղաքին կառավարութիւնն ծերակուտական էր և Հայք կ'իշխէին ու կը կառավարէին իրենց հասարակութիւնը և ուրիշ ազգերը՝ որոնք կը համարուէին իբրև իրենց ծառաներ։ Ունէին յատուկ արուեստներ և տեղական, որոնց վրայ չենք կրնար աստ երկարել։ 1892 տարւոյ Հանգէս Ամսօրեայի էջերուն մէջ, փափաքողը կրնան գտնել ընդարձակ և հե-

ԵՂԻՎԱՆԻ. — Ձիշտ ակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ վանք մը Բարձր Հայոց կամախ (Գարանտպի) գաւառի մէջ։

ԵՂԻՎԱՐԴ, ԵՂՅԻԱՐԴ կամ ԱՂԻՎԱՐԴ. — Ի հնումն նշանաւոր քաղաքաւան Աղբրատայ Աբրագածոտն գաւառի և այժմ բազմամարդ հայաբնակ գիւղ Երեւանու նահանգի Էջմիածնի գաւառի։ Կը գտնուի գաշտի մէջ և հաւասարապէս հեռու է հարաւային կող-

մը բարձրացող Խշմէվէվէր և հիւսիսային

կողմը գտնուող Ագայի լեռնէն. հաւասարապէս հեռու է նաեւ և գրեթէ մէջտեղ կը գտնուի արեւելեան ու արեւմտեան կողմերէն հոսող Հրազդան և Քասադ գետոց։ Ցեղուցս հնութեան և մեծութեան նշան են քաղաքագնող կոչումն ի պատմագրաց և հին շինուածոց մնացորդները։ Առաջին անգամ կը յիշուի Զ դարու մէջ իբրև հայրենիք Մովսես Բ կաթողիկոսի, և նոյն դարուն վերջերը կամ յաջորդին սկիզբը՝ նախապատ եւ բաւարն ի պատերազմին, և զմնացեալսն փախստական արարեալ հալածական առնէին. և առեալ զառ և զաւար բանակին Պարսից՝ դարձան ի բանակեալ խրիճսդ, որ կայ ի վերայ գետակերն, որ կոչի Հոռոմոց մարգ»։ — Նոյն դարուն վերջերը աւելի պայծառացաւ Եղիվարդ՝ Գրիգոր Մամիկոնէն կառուցուած մերձակայ վանքի շինութեամբը, ինչպէս վարը պիտի տեսնենք. բայց տեղւոյս զարգացումն և փառքն յայտնի է նաեւ



280. Եղիսաբեթուպոլիս. — Վեներտիոյ Մխիթարեան հարց Ս. Պետրոս–Պօղոս եկեղեցին։

բիցանց հետ կը յիշուի նաեւ աւանիս վանաց երէցն ոմն Յաւիտեան։ Նոյն ժամանակները կը հանդիպին (603ին) նաեւ Պարսից և և Յունաց պատերազմները, որոնք կատաղութեան Եղիվարդայ գաշտին վրայ. ինչպէս յայտնի է Սեբէոս պատմչի հետեւեալ խօսքերէն. «Յայնժամ ապա և զօրն Յունաց ժողովեալ գումարեցան ի քաղաքապետն Եղիվարդ. և հասեալ ՚ի վերայ նոցա զօրն Պարսից՝ եղեւ պատերազմ ի գաշտին Եղիվարդայ. հարին զզօրն Պարսից, կոտծանեցին կոտծանմամբ մեծաւ. և սպանին զզօրն երկու հայրապետաներուին զօրս ընծայից Թ դարու վերջերը, Գէորգ Բ և Մաշտոց՝ որ նորոգ շինեց Սիւան կղզւոյ մենաստանը և եկեղեցիները։ Բայց նոյն ժամանակներէն մնացած հին եկեղեցի կամ արձանագրութիւն յայտնի չէ այժմ Եղիվարդայ մէջ։ Այժմ գտնուող փոքր քարաշէն, վայելչագեղ և բարձր եկեղեցեակը, շինուած է ԺԴ դարու սկիզբը, ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնները. հոսկէ է, մէկ մէկու վրայ շինուած են պատարագի խորանները, և երբորդին վրայ կը բարձրանայ սիմնազարդ

զանգակաիւր կաթուղիկէն, որուն մէջ ապիտակագեղով գրուած է. «Ի թվին ՉՀԷ. շինեցաւ», այսինքն է 1328ին. իսկ գրան վրայ գրուած է. «Ի թվին ՉՀ. շինեցաւ և կնքեցաւ»։ Եկեղեցւոյն արեւմտեան կողմէն կցուած է յետոյ հաստարակ քարուկիւր և փայտայարկ ժամատուն մը, ուր կը կատարեն ժամասացութիւնը։ Եկեղեցւոյն շինողը կը թուի Աղիքեկ անուամբ ոմն տեղւոյս պայազատներէն և Զաքարեանց Շահանշահի պաշտօնեայն, նորոգող Եղիվարդայ վանաց և բոլոր սահմանաց, որ ամուսնոյն վախճանիւ հետ, ինչպէս կը գտնանք ՁԼ թուին գրուած աւետարանի մը յիշատակարանին մէջ. «... գնացեալ ի սուրբ ուխտն Աստուածընկալ և տեսեալ զդնացս Ջրոյն Եղիվարդայ աւերեալս և խոպանացեալ, որպէս զի գնա եւս երեւէին հետք նորա, և աստուածային նախախնամութեամբն վառեալ սիրտ նորա, և աչքին ապիտիպ թագաւորին Քրիստոսի գօրացան և պնդեցին իրը այր զմէջս... արիացան, ոչ հաշվելով զծախսն, որպէս զաւարիճն հրեղէն ատգնապէին, ոչ ունելով զհանգիստ և զքուն ի տուէ և ի գիշերի. և շրջապատեալ զիեսն Աբարատեան հասուցին զջուրն յորդառատ վտակօք փոյթ-ընթաց յԵղիվարդ. և զգժուարութիւնն սահմանեցին և գյոլով աշխատութիւնս և գոյութս արուեստաւորացն և գամենայն ծախսն ոմ կարէ ընդ գրով արկանել, և գանհատանելի երկրաչափ գհեռաւորութիւնն տեղւոյս... որ ի քաղաքէն Բ֊ղնոյ մինչև կարբի ոչ գատ նէին ջուր յարբուն մարգկան, և պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ յատուս ամարայնոյ...»։ Քառազ գեսոյն մօտ գտնուղ Աստուածընկալ գիւղի գերքէն յայտնի է թէ նոյն գեսէն առու բանալով առնուած է ջուր և ստորերկրեայ խողովակներով բերուած մինչև Եղիվարդայ գաշտը, ինչպէս կ'երեւի նաեւ այժմ, որ արեւմտեան կողմէն կ'ոռոգէ անոր այգիները, ինչպէս նաև արեւելեան կողմէն բերուած ուրիշ առու մը։ Նոյն Աղիքէկն շինուէր և ապնիւ, իր զուգակից հետ կը թուի թէ բուն Եղիվարդի մէջ կամ մօտը, ժամանակակից յիշատակարի մը համաձայն «սկսան շինել վանս ի կորզոյ, գՈւխտրձ Սրբոյն Յակովբայ, յանուն սուրբ Աստուածածնի, և գարդարեցին գնա մեծամեծ վայելչութեամբ. ստացան բազում այգիս շուրջ գրնակութեամբն ուխտին և գներքս եկեղեցին զարդարեցին, քանզակով նազաշուքեամբ՝ ձեւացուցին զպատկեր Ամենափրկչին և գմօրն իւրոյ Աստուածածնին, և գառաքելոց և գմարգարէից... և զմեծագին գրեանս ագգի ագգի, և մեծագին զգեստիւք գարդարեցին զսա և արարին բնակութիւն կատարեալ, և նաեւն գամենայն ուխտս զգեստից և կերակրոց, և ոչինչ կարօտ եղեն յամենայնէ՝ զոր ինչ պէտս էր հոգեւոր և մարմնաւոր։ Եւ աստուածասէր սիրին մեր ուրախութիւն և ցնծութիւն մեծ արար բազում գաւառաց և մեծ մենաստանիս Եղիվարդայ»։ Մեծ մենաստան բսուածը զոր յետոյ պիտի յիշենք հնագոյն է, իսկ Ս. Յակոբայ վանքս փոքր է և հետեւեալ ԺԵ գարս յիշատակարանին մէջ առանց անուան կը յիշուի, Միմեոն Բաղուեցւոպատի († 1428) հատար բսելով թէ «...նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի սիրելեամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանսն որ ի մէջ գեղին. և բազում արդիւնս արարեալ ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ մեծագգի և փառաւոր աղքատասէր ազատածին տէն՝ Աղիզ բեկին և որդւոց նորին Աւագին և Զաքարէին, բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյն ժողովեալ յաստուցանել գՀին և գնոր մատեանս աստուածաշունչ գրոց, գնուրբ և գարաւաքին փիլիսոփայութիւն, տէս տան»։ Վերոյիշեալ Աւագի որդին Մանուէլ արքեպիսկոպոսը՝ հետեւելով հայրենի շինարարութեանց, վայելչացուց Եղիվարդայ եկեղեցիները և սահմանները, ինչպէս կը յիշեն ժամանակի յիշատակագիրները՝ ԺԵ գարու կէսէն վերջ. և ինքն ալ արձանագրած է 1471ին, եկեղեցւոյ գրան մէջին յարկին վրայ իրեն նուէրներու յիշատակարանը։ Յիշատակագիրներէն մին 1469ին կը նկարագրէ եկեղեցւոյն կամ զանգակատան շինուածքը բսելով. «Ի գիւղաքաղաքն Եղիվարդ, որ կայ առ ոտս Հարատոյ լերին հովանեաւ սուրբ և կմախաձեւ և խարխաչատակ և հռոմակատոյց վիմօք շինեալ սուրբ Զանգակատունս՝ որ յանուն սուրբ Աստուածածնէ անուանեալ, և սուրբ Յակոբոս, և սուրբ

կուսանաց, և ասաուածընկալ յուսատու ուրբ Նշանիս, յաստղնորդութեան վանիցս նմին Տէր Մանուէլի և եղբօրն Բիշքէնի»։ Թէ ինչ սուրբերու նշխարներ պրսած էին նոյն ժամանակ ասա յայտնի չէ. բայց երկու պար վերջը եկեղեցւոյս մօտ հանդուցին նոր պարկեշտութեան նահատակ կայս մը՝ Թամամ կամ Կատարևալ անուամբ, որ էր Գազիան Շաղկիրա գիւղէն, Մալխաս անուն ժանտ մարդու մը զաւակը։ Մալխաս՝ գիւղին աւագն էր, և պարտքի փոխարէն խոստացած իր զաւակը տալ Նախիջևանի խանին և բռնի գրկից էրևան. իսկ կոյսը ինքզինքը ապարանի բարձրէն նետեց Հրազդանի քարափը, և ողջ մնալով՝ փախչելով եկաւ մինչև Եղիվարդ. ուր գիւղի վաստատիրա Մահակ անուն աւագը, երկիւղէն՝ արիասիրտ օրիորդին գահիճ և մահնիչ եղաւ, խեղդել տալով և ծածկելով քարերու տակ սրբուհին և յետոյ հայրը գալով Թազից գայն եկեղեցւոյ հարաւային սրմնոյն մօտ։ Ասոր վրայ մանրամասն գրելով ժամանակակից Զաքարիա Սարկաւագը (Բ. ՀՔ) իր պատմութեան մէջ, կը յաւելու լուսոյ կայծերու երեւումը գերեզմանին վրայ. «Գնացի խնդացայ հաւատասեաւ ի Մկրտիչ երիցոյն (որ հաղորդած էր նահատակը), և գրեցի զանունն ի վերայ տապանին և գիտասկան ՌՃԽ», 1691։ Եկեղեցւոյն մօտ կան նաեւ ուրիշ շատ գերեզմաններ՝ բաղմաթիւ խաչարձաններով։ — Թամամայ նահատակութենէն քիչ ժամանակ առաջ պատահած է աւանիս գլխաւորի Աւազագի սպանութիւնը, որ էր «այր ճարտար և առնեսիսօս և պնդերես և առաջի մեծամեծաց յարգոյ»։ Այս անգութ ջրի պակասութեան պատճառաւ, Ագիղբէկի նման հնարք գտաւ ջուր բերել Հրազդանի ժայռակներէն, Նգայ Գաբաճէօրէն գիւղի սահմաններէն. իսկ Հապուշ Գասիմ անուն մահմետականը քակել տալով ագուգանները՝ ջուրը իրեն գիւղը դարձուց. ասոր համար ամբաստանուելով էրեւանայ խանին, անոր հրամանով եղիվարդեցիներէն չարաչար ծեծուեցաւ. բայց յետոյ խաբէութեամբ Աւազը բռնելով սպաննեց։ — Եղիվարդ Էջմիածնի սեփհականն կազմած հինգ գիւղերէն մին էր, ԺԶ դարու կիսուն մեծ մասամբ ($4^1/_2$) կազմած էր էրեւանցի խոջա–Ակբի, որուն որդին Յակոբջան՝ շնորհեց Յակոբ կաթողիկոսի. յետոյ Պարսկներէն գրաւուելով՝ ամբողջն վերապարձուց Սիմէոն կաթողիկոսը 1768ին։ ԺԱ դարու սկիզբը կը յիշուի Կիրակոս վարպապետ եպիսկոպոսի եպիսկոպոս ձեռնադրուած Աղեքսանդր կաթողիկոսէն, 1708 թուին։ Բայց եղիվարդայ եպիսկոպոսական ամբոց, ըստ Ոսկանայ, խափանուած էր ԺԱ դարու կիսուն։ Եղիվարդ այժմ ունի 1358է աւելի բնակիչ՝ բաժնուած 202 տան։

Եղիվարդայ Ս. Թէոդորոս կամ Ս. Զօրավար մենաստանը կը գտնուի աւանին արեւելեան հիւսիսային կողմը, գրեթէ կէս ժամ հեռու։ Էօմնևրոզ գարու վերջերը ճոխ կերպով կառուցուած է Հայոց իշխանապետ Գրիգոր Մամիկոնէն, և կը յիշուի շատ պատմիչներէ, որոնցմէ մին է և Յովհաննէս կաթողիկոս, որ կ'ըսէ. «Շինէ նաեւ նուիրատոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարդարեալ, ըստ արուեստից կուսէ պատահեր» մին մեծի Եղիվարդայ, աւուն բնակութեան կուսակրօնից գնա հաստատէն, ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»։ Մենաստանը կամ բնակարանները քայքայած են այժմ և քիչ բան կը մնայ քարեայ շինուածքէն՝ եկեղեցւոյն արեւմտեան հարաւային կողմը։ Իսկ արդարև պայծառապաճոյճ բառելու արժանաւոր եկեղեցին, բայց ի կործանած գմբեթէն, գոն կանգուն է տասուերկու գարերէ ի վեր։ Արտաքին ձեւը բոլորշի ութանկիւնի է, իսկ ներսը կան ութը կիսաբոլորակներ, որոնք առանց սեան վեր կը բանէին գմբեթը։ Շինութեան արձանագրութիւն չերեւիր, բայց վերջիններէն գրուած կայ 1191 թուականական նուիրատուութեան յիշատակարան մը։ Եկեղեցիէն գրեթէ քարընկէց մը հեռու հիւսիսային կողմն է գերեզմանատունը, ուր կայ մատրանամման սրսգաձեւ շիրիմ։ Նուիրատուց ուրիշ արձանագրութիւններու մէջ Ս. Զօրավար կը կոչուի եկեղեցիս, իսկ յիշատակարանաց մէջ՝ Ս. Թէոդորոս. ինչպէս Մաշտոց կաթողիկոսի վարուց մէջ, գրուած անոր Սահփանոս աշակերտէն 894 թուին, թէ նա էր «ի ժառանգաւորաց մենաստանին՝ որ անուամբ սրբոյն Թէոդորոսի

էր. և ի զօրանալ բռնակալութեան Տաճկաց ի վերայ գաւառին (որուն մէջ էր Եղիվարդ), ելեալ հայր նորա ի տիս մանկութեան և գնաց բնակեցաւ պանդխտութեամբ ի գաւառին Մոդից», և այլն։ Գրոց նորագոյն յիշատակարան մը՝ 1427ին գրուած, բնագրին համար կ'ըսէ թէ գրուած է 1197ին «Ի սուրբ ուխտն Եղիվարդու, ի գուռն սուրբ եկեղեցւոյն Թէոդորոսի»։ Այս մենաստանն ևս նորոգեցին մեզ նախածանօթ Ագիպրէկը և իր կինը, որոնք Եղիվարդ աւանը գալով և տեսնելով ամենայն ինչ կործանուած, շատ նեղութիւններով «... բազում և յոլով աշխատութեամբ, ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց Շահինշահի և խունկպզայի... և ամենայն ինչք հատուցեցին զմեծ մենաստանս ղեղիվարդ, շինեալ գամենայն քանդեալս»։ — Մեզ յայտնի չեն թէ ինչ գէպքեր հանդիպեցան Եղիվարդայ կրկին վանքերուն, որոնք եղած են առաջնորդներ և սրչափ ժամանակ շէն մնացին՝ անթիւ ասպատակաց և պատերազմներու ենթէն, որոնք մղուեցան Եղիվարդայ ընդարձակ գաշտի վրայ։ Ինչպէս վերոյիշեալ Պարսից և Ցուցաց մարտէն հազար ասրի վերջը, հոս իրարու հետ գարնուեցան Շահաբասի օրով Պարսիկները և Թուրքերը։ Վերջինքս խմնալով որ Երեւանայ խանը Թահմազ Ղուլի Ալիբզունայ որդին գացած էր վրաստանի վրայ, ասպատակելով Շիրակ, Նիկ և կոտայք գաւառները, եկան Եղիվարդ պիտը և ամրոցը շրջապատեցին. իսկ վերոգրեալ քարիերով պատերազմեցան, և քարերը ապառիկով Օսմանցիք վերստին տիրեցին, կոտորեցին երեսուն հոգի և մնացածները գերի առին, «ըմբռնեցին ևս այր մի Ծատուր անուն, և կապեցին գձեռս յետս, և ձաղէին զնա ցուցանել գինչս, քանզի ասպ էր գեղջն. և նա ցանգեալ և խղճաց գիասն, և յերգոյն անկաւ ի տուն մի, և հնարիւք ելեալ յառաստաղ, և ատամբ և ձեռօք բմբռնեալ զդեռանն և եկաց ի կախ. և Օսմանցիք մտին ի տունն, որոնեցին և ոչ գտին. ելին արտաքս և գնացին փախստեայ. քանզի լուան թէ Թահմազ խանն գարձեալ է ի վրաց աշխարհէն և գայ»։ Որ եղած վնասները տեսնելով ատաւիկ բարկացած գօրք ժողվից նաեւ հրացանակիր Հայերէն և եղիվարդեցիներէն, և մնալով Օսմանցւոց սահմանը մինչև կարս քշից։ Այս պատերազմի դէպքերն գրած է Զաքարիա պատմիչ, լսելով ականատես Յակոբ անուն միայնակեաց մը։ — Դեռ ատկի նշանաւոր արիւնահեղ պատերազմներ անցի ունեցան այս կողմերս գար մը վերջը, Նատիր Շահի օրով։ Այս պատմութիւններէն վերջնոյն և գլխաւորին ականատես եղած է Աբրահամ կաթողիկոս Թրակացին։ Թահմազ խանը յաղթող հանդիսացած է այս պատերազմի մէջ, և Մուղարէք բէխ կոչուած բլրոյն վրայ շինել տուած է Աբրահամ կաթողիկոսի բլրաձեւ յիշատակարան մը, որ այժմ կործանած և ատրակ գարձած է։ Եղիվարդայ մօտ է Մուրատ բէխ կոչուած մեծ բլուրն, որ վերջին պատերազմիս գլխաւոր հանդիսավայրն եղած է։ — Ակտարատ, 196–201։ Եւ այլն։

ԵՂԻՏԱԿ կամ ԵՂՅՈՒՆ. — Ի հնումն հայկական և այժմ Ցուցաց գիւղ Լօռի (Գուգարք) գաւառի մէջ։ Հոս խաչ մը կանգնած է Գրիգոր Ամիրայ Մամիկոնանց, որ պատանդպանէն խնամարհած է։ Հոս պահուցաւ երբեմն երբեմն Սանահնի վանաց Քեօրիկ կոչուած կաշուեայ գիրը։

ԵԼ–ՄՈՒԿ. — Գիւղ Տիգրանակերտի Բէյ չար գաւառի. 4 տուն հայ կայ։

ԵՂՆԱՐԵԲ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՆ. — Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի աւերակ վանքերէն մին։

ԵՂՆԱԽԱՂ. — Կը յիշուի Գուգարաց Զոբոփոր գաւառի մէջ։

ԵՂՆԱՋՈՐ. — Մոկաց աշխարհի Շատախ գաւառի մէջ, որուն միջէն հոսող վտակն օժանդակ է Տիգրիսի։

ԵՂՆԱՍԱՐ ԱՆԱՊԱՏ կամ ՎԱՆԵՑ. — Աբցախի Գարգման գաւառի մէջ. հիմնուած է Գետաշէն աւանի հարաւային կողմի լեռնաբազկի սարահարթի վրայ՝ Եղիչէ առաքելոյն անուամբ։ Եկեղեցին կառուցուած է երկու սիւներու վրայ, ամբողջ սրբատաշ քարով. երկայնութիւնն է 12,43 մետր և լայնութիւնը 10,33 մետր։ Դրան հարաւային սեմի վրայ կայ Ռաձէ թուականաւ կիսեղծ արձանագրութիւն։ 1311 թուականաւ ար-

ձանապրութիւն կայ նաև հիւսիսային սահմ վրայ։ Կ՚երևի թէ վանքս երբեմն երբեմն նորոգուած է։ Ունեցած է շրջապարիսպ և դիզեցիկ սենեակներ, որոնցմէ այժմ հօիմն կանգուն և հօիմն կիսակործան են։ Նոյնպէս կործանուած են շրջապարսպի արևելեան և արևմտեան պատերը և վանքի հիւսիսային սրմի արտաքին երեսը։—Աբցախ, 265–266։

ԵՂՆԳԱՐ. — Միևնոյն Մշոյ դաշտի մէջ այս անուամբ կոչուած են երեք սեւ քարեր։

ԵՂՆՈՒՏ. Տես ԵՂԱՆՑ ԲԵՐԴ։

ԵՂՈՒՆՁԻՆ. — Մակաւարնակ գիւղ Սպարկերտի (Մոկք)։

ԵՂՈՒՆՑ. — Ձիշատակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ գիւղ յԱղուանս Հայոց։

ԵՂՋԵՐՈՒԱԴՈՄ. — Գիւղ Աբցախի Ջար գաւառի մէջ։ Այժմ թէև այլազգարնակ է, բայց ունի հայկական եկեղեցւոյ և հանդրուանարանի մնացորդներ։

ԵՂՋԵՐՈՒԻ ԽՈՌ կամ ԵՂՋԻՐԽՈՒՐ. — Լճակ Միևնոյն Աղահէնց գաւառի։

ԵՂՋԵՐՈՒԵՆՑԻ. Տես ՍՈՂԻ։

ԵՂՋԵՐ. — Հին անուամբ ծանօթ լճակ Աչքարաւայ կոզովիտ գաւառի. այսպէս կոչուած է անշուշտ եղջերաձև ցցուած ժայռերուն համար, ինչպէս կը տեսնուի նաև աշխարհացոյց տախտակաց վրայ։ Պատմութիւնը կը յայտնէ թէ Մերուժան Աղծրունի ուզելով կոզովիտէն բազրեւանդ երթալ՝ ճանապարհը կը հարցնէր. «և ուղեւորացան առնել պատասխանի առացին (ծպտածութեամբ), ճանապարհ ընդ Եղջերս է. և մեծապէս խորհեաց Մերուժանն ընդ միտս իւր... առյր հրամայ չարաչար քաշել զուղեւորսն և ձեռնել, և ինքն անցեալ ընդ ուղին՝ իջանէր..» և այլն։

ԵՂՋԻՐԽՈՒՐ. Տես ԵՂՋԵՐՈՒԻ-ԽՈՌ։

ԵՂՑՈՒՆ. Տես ԵՂՑԱԿ։

ԵՂՑՈՒՏԻ կամ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ. — Կը գտնուի Տարսերեանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արևմտակողմը՝ 4 ժամ քաղաքէն հեռու։ Վանքս կը կոչուի նաև Եղեգնի Ս. Յովհաննէս և Շէյ խոյ վանք։ Երբոր գաբէն ի վեր գոյութիւն ունեցած կը թուի և հիմնարկութիւնը աւանդութեամբ Ս. Թադէոս առաքեալին կը սրուի, բայց խորենացին Ս. Վրթանէսի կու տայ։ Կառուցուած է Մշոյ դաշտի արևմտեան հարաւային կողմը Միմ լերան վրայ՝ անտառախիտ տեղ մը, շրջապատեալ բերդանման պարսպով, ունի անտման դիրք մը, գիզեցիկ և ակնատպարար տեսարան, աքանչելի և առողջարար օդ ու ջուր. վանքէս դիտողի աչքի առաջ կը պարզուի Մշոյ ընդարձակ դաշտ՝ իբրև կանաչ ծով մը՝ իր պատմական և սրբատուչ յիշատակներով։ Ինճիճեան՝ մեռոտանէս եկեղեցւոյ խորաններէն երեք կը դնէ, մին Ս. Կարապետի անուամբ, ուր է սրբոյն ձախ թեւը. միւս երկուքը նուիրուած են Ս. Աստուածածնի և Ս. Յակոբեանց։ Հոն կը ցուցնեն նաև Յովսէփ արեմաթիացւոյն աջը, նարդեան ալաին իւղի շիշն, կենաց փայտի մաս մը և ուրիշ նշխարներ։ Իսկ ականատեսն Հ. Ներսէս Վարգսեան՝ երկու եկեղեցի կը գտնէ, մին յորում պաշտօն կը կատարէին անշուք և մթին. իսկ միւս եկեղեցին Ս. Յակոբեանց՝ արձակից առաջնոյն՝ վայելուչ ճարտարապետութեամբ շինուած է և ունի գմբէթ։ Վանքիս եկեղեցւոյն կաթողիկէն ծածկով կապարբ, վերուցեր է Ալատան պէյն։ Մենաստանիս միւս բոլոր շինուածքներն սենեակները ու անձուկ սրահները բոլորովին անշուք են ու մթին։ Վանքիս պարսպի մօտ կայ փոքրիկ մատուռ մը, որուն մօտ եղբայրաց ծառ մը գտնուելուն պատճառաւ եղբայրաց վանք անուն տուած է. հոս կայ նաև պատուական սառնորոյ ադբիւր մը։ Սուրբ Խզոյն պատմութեան մէջ մանրամասն գրուած է նաև վանացս հիմնարկութեան վրայ։ Վանքիս այժմեան վիճակը անմխիթարելի է, մէկ կամ երկու վարպետ միաբաններ ու քանի մը հատ աշխարհական սպասաւորներ միայն կը գտնուին։ Պարիսպն և եկեղեցւոյ պատերը երկրաշարժէ ճեղքուտուած են։ Ուխտաւորաց ժամանակն է վարդավառի, Աստուածածնի և խաչվերացի մօտ օրերը. իր թեմերն են՝ Ալիխան, Խուրի, Խիան և Պասուն։

ԵՃԵԱՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԵՄԱՆՈՒ ՁՈՐ. — Կը յիշուի Տարսերեանի Տարօն գաւառի մէջ։

ԵՄԻՆԱՆԱ. — Այսպէս եւս կը գրուի Միևնոյց Նախճաւան գաւառի Եամխանա գիւղի անունը։

ԵՅՍՔ. — Քաղաք Առւսիոյ Քուպանի նահանգի Եկատերինոսլաւ գաւառի, Ազովու ծովուն վրայ։ Քաղաքիս մէջ կան 25 հայ ընտանիք Նախիջեւանէն եկած, և ունին անշուք եկեղեցի մը՝ փոքրիկ բակով։

ԵՆ–ԳԻՒՂ. – Զաբանճագի մէջ կը գտնուի գիւղս, որ երբեմն հայաբնակ եղած է։ Ցեղ ոմանք գաղթած են եւ մէկ մասն քրդացած։ Կը տեսնուին եկեղեցիներու աւերակներ։

ԵՆԿԻՃԷ. — Հայաբնակ գիւղ Միւնեայց վայոց ձոր գաւառի մէջ։ Ունի 400 բնակիչ, բաժնուած 30 տան։ Կը կարծուի բլլալ հին Նորիք գիւղը։

ԵՆԿԻՃԷ կամ ԵՆԿԻՋԱ. — Գիւղ Արցախի Վարանդա գաւառ. հիմնուած է Նէնկի գիւղէն բաւական վար։ Բնակիչք 30 տուն ամբողջ հայ են և եկած են Նէնկի գիւղէն. ունին նոյնաշէն եկեղեցի։

ԵՈՒՄՈՒԹԱՒՏՊ (Զուանց). — Գիւղ ծովային կիլիկիոյ, Այասի արեւմտակողմը. ունի ածուղի հանք։

ԵՈՒՎԱ. — Գիւղ Ալբարատայ Ոստան գաւառի, Քէմէրլիի գիւղերու արեւելեան կողմը, արքունի ճանապարհի վրայ։ Ունի 1710 բնակիչ, բաժնուած 241 տան, որոնց 1550 հոգի հայ են, բաժնուած 212 տան և մնացեալը թաթար։ Հայք ունին մեծ եկեղեցի մը. ուրբա կը շինեն մեծամեծ կարասներ։ Հ. Ալիշան՝ սա կը համարի Ովայից գիւղը, որ երբեմն ի հնումն կոչուէր գաւառի մէջ կը գրուէր, ուսկից էր Յովհաննէս ե կաթողիկոսը (832–853)։

ԵՈՒՎԱՃՔՂ. Տես ՕՎԱՃՔՂ։

ԵՈՒՐԹՊԱՆ. — Լեռնաբլուր Շիրակ գաւառի։

ԵՒԱՍՏ. Տես ԱՒԵՍՏ։

ԵՒԱՂՈՒԿ. Տես ԵԱՒԱՂՈՒԿ։

ԵՒԱՎԱՆՔ. — Հայաբնակ՝ բայց այժմ այլազգաբնակ գիւղ Կարնոյ գաւառ. Սալաձոր և Բազկաւիճ գիւղերու մէջտեղ։

ԵՒՐՈՆՔ. Տես ՑԵՒՐՈՆՔ։

ԵՒՈՂԻՍ կամ ԵՂՈՎԻՍ. — Ինճիճեան՝ կը յիշէ գիւղս Համշինի վիճակին ծայրը, որուն բնակիչները կանխաւ հայ էին, բայց վերջը ոմանցիկներ են։ Երկիրը բարեբեր է։ Ալժմեան վիճակին անծանօթ։ Գիւղիս ա. նուամբ գետ մը կայ Համշինի մէջ։

ԵՏԵՅԻՒՔ. Տես ՍՈՒՔ։

ԵՏՈՓ. — Վախուշէն յիշուած գիւղ Մանգլեացփորի մէջ։

ԵՒ. — Լես Ալբարատայ Վանանդ գաւառի Զարիշատ վիճակի մէջ. բարձր է 2400 մետր։

ԵՐԱԶԳԱՒՈՐՔ. Տես ՇԻՐԱԿԱՒԱՆ։

ԵՐԱԶՄՈՑՆ ՄԵՀԵԱՆ. — Ալբարատայ Ոստան գաւառի մէջ այս անուամբ մեհեան մը կար ի հնումն Արտաշէս Բ.ին կառուցուած, Արտաշատ քաղաքէն դուրս, որուն մէջ կանգնած էր Ապոլոնի պատկերը։

ԵՐԱՄՕՆ. Տես ԱՐԱՄՈՒՆ։

ԵՐԱՆԳԱՆԻ. — Փոքրիկ գիւղս կը յիշէ Թովմա Արծրունի առանց գաւառն յայտնելու. բայց հաւանական է որ կը գտնուէր Վասպուրականի մէջ. «Ես երթեալ հասանէր (Գաւրգէն) ի գիւղակ մի Երանգանի անուն, առ մեծագոն մի որ էր հրէց վանիցն»։

ԵՐԱՆՈՍ. — Գիւղ Ալբարատայ Բագրեւանդ գաւառի Գարա Քիլիսէի վիճակի մէջ, Դաշլի գետակի ձախ ափին վրայ։ Ունի 15 տուն հայ և 10 քուրդ բնակիչներ։ Հայք ունին նոյնաշէն Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը, զոր մեծ աշխատանքով շինած է Նոյեմբեակ Աստուածի Շիրին Ափոյի Կրպոյ սրդոն։ Կալուածներու մեծ մասը Հայոց կը պատկանի. շատ չըտա վայր մը լինելուն՝ շուրջը զարգարուած են բազմաթիւ ուռենիներով։ Բնակիչք հոգագործ են։

ԵՐԱՆՈՍ կամ ՁԱՓ. — Գիւղ Միւնեայց Գեղարքունի գաւառի մէջ։ Ունի Ս. Աստուածածնի նուիրուած եկեղեցի մը. բեմի վրայ յարթարցուցած են երկու հատարակ խաչքարեր, որոնց միւսն վրայ կայ 1215 թուականաւ արձանագրութիւն։ Գիւղիս բնակիչք են՝ 1470 հոգի հայ, բաժնուած 116 տան։ — Երանոս գիւղի գաշտի հիւսիսային ծայրը կայ Ղուռւ խարսպա (Ճամաք աւերակ) անուամբ դիւղատեղի, որուն աւերակ եկեղեցւոյն շուրջը գտնուող խաչքարի մը վրայ կայ 1595 թուականաւ արձանագրութիւն։ Նոյն տեղը կան նաեւ ուրիշ գերեզմանաքարեր ԺԶ դարու վերաբերեալ արձանագրութիւններով։ Եկեղեցւոյն մէջ կանգնած նրբաքանդակ խաչքար մը ունի 1337 թուականը։ Այս Ճամաք աւերակ կոչուած դիւղատեղը ծով-

եղերքն է, և աւելի մօտ է Պաշքէնտ գիւղին։ — Երանոսէն դէպի արեւմուտք բարձր լերան վրայ կը գտնուի Ս. Յովհաննէս առաքեալ ուխտատեղին որ ի հնումն Սարկաւագի անապատ կոչուած է և Մաքենոց վանքի թեմական դիւղերու կարգին մէջ յիշուած Սիմէոն կաթուղիկոսէն։ Ուխտատեղւոյս մատուռը շատ հրաշագործ է և ամէն հատատքով պիտոյ կ'առողջանայ. մատրանս նկատմամբ յատկացուած է Երանոս գիւղի պըտղոցին։ Մատուռէն վեր ուրիշ մատուռ մը եւս կայ Սոֆիա անուամբ, և այս պատճառաւ ժողովուրդը այս երկու մատրանց սուրբերը կը համարի քոյր և եղբայր։ — Երանոսի եկեղեցւոյն մէջ կան երկու ձեռագիր աւետարաններ, մին գրուած Տաթեւու Շէնհոր գիւղը 1551 թուին, ինչպէս կը յայտնէ յիշատակարանն։ Եկեղեցւոյ շուրջը կան ընդհանրապէս ԺԶ դարու վերաբերեալ արձանագրութեամբ խաչքարեր։ — Գէղարքունի, 504–507։


ԵՐԱՇԽԱՒՈՐ. Տես ՍԻՒՆԵԱՑԻԱԳՈՐԾ։

ԵՐԱՇԽՈՒՏ. — Հին գիւղ կը յիշուի ի պատմութեան, որուն համապատասխան կը կարծուի բլլալ Թորթումի խաչուտ գիւղը։

ԵՐԱՊԱՆ. — Գիւղ Հաճընոյ (կիլիկիա). ունի 100 տան չափ Հայեր, կարօտ վիճակի մէջ։

ԵՐԱՍԽ, ԱՐԱՔՍ կամ ԱՐԱՋ. Պղ. ARAS, ARAXES. Թ. اراس կամ ياس. Վ. Հանես Ե. Аракъ. — Նշանաւոր և բնիկ մեծ գետ Հայաստանի, որ այսպէս կոչուած է մեր Ազգային նահապետի թոռանը Արտաշէս անունով։ Յոյն մատենագիրները կը կոչեն Արաքսէս, Հռովմայեցիք Արաքէ, իսկ Արաբացիք կրճատելով Ռաս կամ Ռաս։ Գիտնականներն ամենք կ'ապացուցանեն և կը համարին Երասխը Մովսէսի յիշած Գեհոն գետը, որ երրայեցերէն սաստիկ յորձանքնեալ վազող ըսել է։ Սկիզբն կ'առնու Բարձր Հայոց Մանազկերտի գետաւի կողմերը, կարնոյ լերանց կողերէն. գլխաւոր օժանդակն կը բլլայ Կարնէն գրեթէ 40 հազարամեայ հեռու հարաւային կողմը Բիւրակն կամ Արրամանց (Պին–կէօլ–տաղ) լեռնէն և կը կոչուի Մուրց կամ Պինկէօլ–սու։ Ձախ կողմէն կ'ընդունի Հասանղալայու ջուրը՝ որ կը բղխէ Կարնոյ գաշտի արեւելեան սահմանը կազմող բարձրաւթիւններէն։ Նախ կ'առաջ Երասխ Ալբարատայ Բասենի գաւառը և ընդհանրապէս դէպի արեւելք վազելով կ'անցնի Գարնզէնք, Աշտարունիք (կամ իւր անուամբ Երասխաձոր), Ճահատք, Արագածոտն գաւառներէն. յետոյ դէպի արեւելեան հարաւ գիմելով կ'անցնի Ոստան, Ուրծ–Վրաց և Շարուր գաւառներէն և առաջ կ'երթայ գծելով Սիւնեաց հարաւային սահմանն։ Կամսականց գաւառի հարաւային ծայրէն կը շեղի կ'ընթանայ դէպի արեւելահիւսիս ու կը մտնէ Արցախի գաշտը. անդ անդ կը հասի սրընթաց և յետոյ կը խառնուի Կուր գետոյն հետ և ապա բաժնուելով՝ ճիղ առուրուած կը թափի Կասպից ծովը։ Երասխ ունի բազմաթիւ մեծ ու փոքրիկ օժանդակներ։ Ալբարատայ մէջ նախ վերոյիշեալներէն գատ կ'ընդունի կարնոյ և Տայոց լեռներէն բղխած-ները առատ չափ, և յետոյ ձախ կողմէն Ազապ–սու, Արտազ չայ, Թաւրի չայ, Ախուրեան, աջ կողմէն ալ աւելի մանր գետակներ։ Բասենի արեւելեան կողմէն մինչեւ Ախուրեանի խառնուրդը՝ Երասխ երկու կողմերէն լեռներու մէջ զապուած՝ կ'ընթանայ նեղ հովիտ մը, այդ պատճառաւ նոյն երկրին կոչուած է յատկապէս Երասխաձոր։ Իսկ Ախուրեանը ընդունելէ վերջ՝ քիչ մ'ալ առաջ երթալով նեղ ձորերէ և գառնալով դէպի հարաւ կ'եկնէ Ալբարատայ լայնածաւալ գաշտը։ Ալս գաշտին մէջ, երկար տարիներէ աւելի շարունակաբար վազելով, և իր գիմաց ար և է արգելք չգտնելով, և մանաւանդ հանդիպելով կակուղ և աւազուտ երկրի իր անկողինը փոփոխող է, որով մեր պատմութեան մէջ բաւական մեծութիւն և շրջմանց պատճառ եղած է Գ և Ե դարուց մատենագիրներէն սկսեալ մինչեւ ցայժմ։ Իր անկողնոյն փոփոխման պատճառ կը համարուին նաև երկրաշարժները։ Պատմութենէն և գոհատան քննիչներէ մեզ ծանօթ է՝ որ Երասխ շատ մղձաւերով հիւսիսէն հարաւ խոտորեր է հեռանալով Հայոց հին մայրաքաղաքներէն Արմաւրէն, վաղարշապատէն և Արտաշատէն, որոց մօտէն կ'անցնէր երբեմն և յատուկ կամուրջներ

ունէր. այս պատճառաւ մեր Թագաւորները երկաւ և երեք անգամ սահպանեցան փոխել արքունիքը և հաստատել գնացք կամ ուրիշ ջրոց եզերքները։ Ուստի անհատ մըն է գետոյս այժմեան ընթացից և հին պաշտաի շինուածեան պատճառը յիշած ժամանակ, Ա. գարու վերջերը, ինչպէս նաեւ Դանդայի Գ. գարու կիսուն։ — Ախաբեանէն վերջ Երասխ Աբարատեան պաշտին մէջ ձախ կողմէն կ'ընդունի Արագածու կողերէն հո-



281 · Վտակաւոր հովտաձև

բազաքաց կամ անոնց աւերակաց գրեց հաւանական հատատակ մեր հին պատմչաց Ակամեմանգեսոսի, Կտեսան, Խորենացւոյ և Դ. գարու խօսքերը կամ նկարագրութիւնները։ Խորենացին եւս երկաւ անգամ կը վերկայէ Երասխի անգափոխութեանը, Երուան-

ատղ ջուրերը, որոնցմէ նշանաւոր է Մեծամօր կամ Ալաւ չուր (Գարա—սու) բուսածը։ Գետաղ գետը կամ Կարբոյ չուր բուսածը, որ բազմաթիւ վտակներով առատացած՝ անցնելով Վաղարշապատի արեւմտեան կողմէն և քիչ մը վեր հարաւային արեւելք հոսե-

լով կը խառնուի Երասխի հետ։ Գրեթէ Քաստաղի զուգահեռական ընթացքով արեւելակողմէն կը հոսի Հրազդան գետը, որ այժմ Ջնկի և Երևանայ չոր ևս կը կոչուի ու կը թափի յԵրասխ Քաստաղի բերանէն քիչ հետու։ Ոտան գետաւի մէջ Երասխ կ'ընդունի Ագատ գետը կամ Գառնոյ չոր բուռածը։ Ագատ գետէն վերջ կ'ընդունի կարգաւ Վեռի, Զանախաի և այլ գետակներ իւր ձախակողմէն. Շարուր գետաւի մէջ կ'ընդունի նաև Միւնեաց Աղթա գետը, որ Աշտարակ աշխարհի մէջ Երասխայ ձախակողմեան օժանդակներէն վերջինն է։ Նոյն աշխարհի մէջ Երասխայ աջակողմեան օժանդակներն, ինչպէս ըսինք, աւելի փոքր և աննշան գետակներ են, որոնցմէ մէկ քանին յիշենք. Կապոյտ գետ, Ջաղարան, Վարդանարգ, Գիհոյ գետ, Դարա–սու, Տամբատ։ – Երասխ Աշտարակէն դուրս ելնելով և Միւնեաց Դախճաւան, Երնջակ, Գողթն, Արեւիք, Կոմսականն և Բաղք գաւառներու հարաւ արեւմտեան, հարաւային և հարաւ արեւելեան սահմաններէն ոռոգած ժամանակ, հիւսիսային կամ ձախ կողմէն կ'ընդունի Միւնեաց աշխարհի բազմաթիւ գետերն ու գետակները, որոնցմէ գլխաւորները կարգաւ յիշենք, զանց ընելով փոքրագոյնները, և են. Նախճաւանու գետ, Երնջակայ գետ, Կիրևան չայ, Ցեռնիս գետ, Որդուատայ գետ, Մեղրայ գետ, Պատուռ գետ, Զաբնդուբայ գետ, և Բարկուշատայ ու Հանգարու հզօրագոյն գետերը։ Երասխ՝ իւր այս շրջանին մէջ աջակողմէն ևս կ'ընդունի գետեր և գետակներ՝ բայց ոչ այնչափ բազմաթիւ, որոնցմէ յիշենք Ցղուռա, Աք–չայ, Կոտորայ չոր, Աղբանա, Գըրք–սու, Տէրթաի–Բուռա, և այլն։ Միւնեաց աշխարհէն մտնելով Արցախի մէջ, հոն ևս աջ ու ձախ կողմերէն կ'ընդունի գետեր ու գետակներ։ Հարճլանք գաւառէն կ'ընդունի ձախ կողմէն Հազարաթաղ և Վազդաթիմ, իսկ Ճարարի չոր և Ղազրու վտակն Բերդաձոր գաւառէն։ Երասխի նոյնպէս ձախ կողմէն կը խառնուին Թաղլարի և Գազայ վտակները՝ որոնք իրարու հետ միանալով Ղազրու–չայ կը կոչուին։ — Երասխ նշանաւոր սահանք մը ունի Միւնեաց աշխարհի Գողթն գաւառի հարաւ արեւելեան կողմը, Որդուատի մօտ։ Խորենացւոյն հետեւեալ տողերը հատուկան կը թուի կարծելն թէ այս նշանաւոր սահանքը կ'ակնարկեն. «... ուր գետն Երասխ հասանել զբարձրաձուռս լերանց անցանել ընդ խոխոմն ձիպո և նեղս, ահագին զդշմամբ ի ջանէ ի գաշան»։ Ճոխհան կաթողիկոս կը յայտնէ թէ յաւուրս Քարտավազ անուանն սուացած է այդ սահանքն. «Մինչ ի գաշա ինչ՝ ընդ որ հասանել անցանել գետն Երասխ յորձանուտ խոխոջիւք վազս առնել, և թափ անկանել ընդ նեղ և ընդ նեղս խոխոմն քարանձաւի միոյ՝ որ այժմ ի բազմաց Քարտավազ անուանի»։ Այս գաշտը ոտով և քարտավազը Միւնեաց մէկ լինելուն ապացոյց են խորենացւոյն անմիջապէս յառաջ հետեւեալ խօսքերը. «Ասա բնակեալ Սիսակ ընդ շինութեամբ զառհմանս բնակութեան իւրոյ. և գաշտարէն կոչէ իւրով անուամբն Սիւնիք»։ Նոյնը աւելի որոշակի կը նշանակէ Սամուէլ՝ ըսելով. «Ծոնանի Գնդառ և գԱխատ. և սահմանս հաստատէ նմա ի ծովէն ընդ արեւելս կոյս, ընդ որ անցանէ գետն Երասխ յորձանուտս խոխոջիք ի գաշան՝ որ կոչի Քարտավազ. և աշխարհն այն անուանի Սիւնիս»։ Քարտավազիս վրայ գրելու զանց բրած չեն նաեւ օտարազգի մատենագիրները, որոնց մէջ է նաեւ Յարաբան և Պոմպոնիոս։ Որդուատէն վար Երասխի մակերեւոյթը կասպից ծովու մակերեւոյթէն բարձր է 1940'. անկէց առաջ երթալով երկիրը կամաց կամաց կը ցածնայ, մէջը ամփոփելով կաւաքարաւոր սեւագոյն ապառաժներ և ուրիշ տեսակ ապարներ քարեր, որոնց տարօրինակ գրեթէ գետոյն արապրեթայց ալեայց մօտէն կ'անցնի Մեղրիի նեղ և ահաւոր ճանապարհը։ Իւր կամ տասը մղոնի չափ ընթացքէն վերջ, գետոյն հունը դես աւելի կը նեղնայ և ձախակողմէն կը բարձրանան պարսիլ կատարներ՝ զանազան ձեւերով բնական բերդեր և կոթողներ՝ բոլորովին լերկ և մերկ։ Աւելորդ չենք համարիր հոս գնել Տիգրանայի Երասխայ այս քարտավազին նկատմամբ բրած նկարագիրը՝ Հ. Ալիշանէն թարգմանուած. «Զայսպիսի խոչ և խոիթ գտանել Երասխայ՝ առտակացուցանէ զոյժ հոսանացն. զի ոչ ևս են կատարին և կրային սեռ գայլախազատ հեր-

ձոտեալ զանգուածք դիւրամիկնելիք, այլ կոշ-
կոռք մեծամեծք իբրեւ զաւազն, ընդ որս հարկ
է ջուրցն յանձկութիեան անդ յատակին՝
փրփրիլ և վազս առնուլ։ Զմի ի կոշիոռոց
այսի ցուցեալ Շահ Աբասայ առ պրանիկոն
շազմարաբս՝ ասէր. Ահա այսպէս արժան է
զդէմ ունել թշնամւոյն։ — Դիւրին է առնել
զայդ, պատասխանեաց սմա ի նոցանէ, զայս-
պիսի ունելով պատուաբս. և մատանիշ
ցուցանէր զատաւարատարր զանգուածն՝ որ
շրջապատեն զքարաւազան։ — Ձիք ուրեք տես-
սանիլ վայր խժռոտագոյն և ամենագոյն քան
զշրջապատեալս այս զժոխաձեւ ջրովք. յա-
զօտապատճառ երեսս արեւմտեան ափանցն՝
թանձր և ուղղաձիգ ատուերք կերպարանեն
ձեւս անկիւնաւորս և պատառուածս երկայնս
զորշագոյն և ժանգագոյն ժայռից, զորոց
հազիւ սակաւ ինչ բուսական ծածկէ զմերկու-
թիւն. կարկառք թաւալելք և կատակիելք՝
ամբարտակ իմն ահռելիկ կանգնեն ի գետ-
եզերն, և ի միջոյ վիհիցն վերաձգին թռուիք
ինչ հանդագազ ողողելք ի ցայտից խոռո-
չական փուշոյ, զոր հոսանք գետոյն վերա-
ցուցեալ ցնդեն և լնուն զայնոսա։ Իսկ մերս գետ-
ափն խրխնագոյն և առատարագոյն՝ ատուե-
րանայ սառներակարկաս սեւատարաս ուռոյք
լերանց, որք թռուին չնայել պինդ ունել զհաս-
տատուածն մերձ ի տապալել»։ Տիւզատա
այսպէս նկարագրելէ վերջ, կը համարի թէ
գետինը և գետը Որդուատէն մինչեւ մեծ Քա-
բաւազը 800 ոտնաչափ կը խոնարհի. Քա-
բաւազը կը համարի մօտ 100′ վար թա-
փոզ, իսկ Մեղրիի մեծ սահանքը 400′,
ամբողջ 1300′, և անկէց մինչեւ ընթացից
աւարտումը 1200′. բայց այս թիւերը չա-
փագանց կամ անատոյգ են, որովհետեւ նոյն
ժամանակներս տակաւին չափուած չէին այս
կողմերը։ Մեր (թ. 281) պատկերը ըստ
Տիւզատայի կը ներկայացնէ Երասխայ քարա-
վազը, որուն տեսլեան վրայ սքանչա-
նալով Տնեփերի սահանքէն թէեւ փոքր,
բայց դեղեցկագոյն կը համարի։ — Հին ժա-
մանակ գանազան կամուրջներ կային Երաս-
խայ վրայ. Աբասաշատի և Վաղարշապատու
մօտ եղած կամուրջները կը յիշէ Ագաթան-
գեղոս հետեւեալ տողերու մէջ. «Հասեալ ի
խեչս կամրջացն առ գրունս Աբասաշատ քա-
ղաքի. ի գետն Երասխ յարուցեալ զայր
դարիւ և դարիւ, սառնահալ ջրակուսակ
ձիւնասոյզ ձիւնախառազ բազմութիեամբ յա-
ւուրս խրոյ պղտորութիեանց. էէաքն անցեալ
ընդ կամուրջն վաղարշապատ քաղաքի, զոր
և կամուրջ Մեծամօրի կոչեն. և անասպարէզն
հասանել յատաջ ի խեչս կամրջին Աբասա-
շատու, ի կիրճս ճանապարհացն արգելին
զնոսա, ի մէջ արարեալ զնոսա Տափերա-
կան կամրջացն գետալէժս առնէին զնոսա»։
Տափերայ կամուրջն կը յիշէ նաեւ Բուզանդ.
«Իբրեւ լուաւ արքայն, ընդ առաջ ելանէր
նմա ի գաշտն յայնկոյս գետոյն Տափերն
կամրջի ամենայն բանակօքն բազմութիեամբք.
անցեալ ընդ կամուրջն Տափերական, մտեալ
ի քաղաքն մեծ Աբաշատ, յեկեղեցին
գառնային». Նոյնը Շապուհ Պարսից թա-
գաւորի Աբաշատի քանդիչն պատմելէ վերջ
կ'ըսէ. «Եւ անցուցին (զդերեան) ըստ Տա-
փերն կամուրջ, և առնէին համար գերւոյն,
ի մէջ շերտաւոր զօրացն պատէին»։ Բու-
զանդի այս խօսքերէն յայտնի է թէ Ագա-
թանգեղոսէն յիշուած Աբասաշատի կամուրջը՝
է նոյն Տափերայ կամուրջը, ձգուած Երաս-
խայ վրայ Աբասաշատի մօտ, զոր կը յիշէ
նաեւ Տաճիտոս և մերս Ղազար Փարպեցի.
«Յաստիկ և բազում այրիսնեաւ զօրօք պի-
տիալ անցանէր (Պարսից զօրավարը) առի-
պով ընդ կամուրջ գետոյն Երասխայ. և ի
գիւղաքաղաքին՝ որ կոչի Աբասաշատ՝ բնակէր
այն օր»։ — Այս կամուրջներու քարաշէն
կամ փայտաշէն բլլալուն համար որոշ բան
մը գրուած չէ. բայց կը պատմուի թէ հին
ժամանակներուն Երասխայ վրայ քարաշէն կա-
մուրջներ ձգուած էին, և Վիրգիլիոսի բանէն
համեմատ, Ագեքսանդրի և Հռոմայեցւոց
շինած կամուրջները քարաբանդ կը լի-
նէին Երասխայ սրընթացութիեան առջեւ. որ-
չափ շինէին նա կը քակէր անդադար. այս
պատճառաւ կամուրջի չնամբերող անուանե-
ցին Երասխը։ Հասանդալէի կոմսենց բնա-
կիչք աւանդաբար կը պատմեն, թէ այժմեան
Զոլան Քհօրիւխա բսուած կամուրջի տե-
ղը, քանի անգամ որ կամուրջներ շինած
են, անհամբեր Երասխը գլորեր, քանդեր ու
տարեր է։ Քեռայ հայ հովիւ մը հնարքով
մը յաջողած է այժմեան կամուրջի հիմնա-

քարինքը ձգել, որուն վրայ տեղացիք կրբ-ցած են վիրաւորեալը կամուրջը շինել եօթն քարաշէն կամարներով. ահա այս պատճա-ռաւ կոչուեր է Հովոյի կամուրջ՝ և այլազգի-ներէն Զօպան Քեօփրիւսիւ։ — Մեր պատ-միչներէն կը յիշուին տեղ տեղ Երաս-խայ հուները կամ ծանծաղ տեղերը. որ-տեղերէն կարելի է վիրաւորեալը առանց նաւակի անցնիլ։ Ղազար կը յիշէ Աբաս-շաոի մօտ եղած հունը. «Եւ հասեալք յեղր գետոյն առատապէս բուռ ժամանակի իւրոյ պղտորութեան, և գիամուրջն Աբասշաոու գոին աւերեալ, և էր ինչ որ ի տեղեացն բնակչաց, և էր ինչ որ ի առատութենէ ջուրցն գիմեցմանց. և տարակուսեալ զօրքն ինդրէին տեղիս անցից և ոչ գտանէին. . . իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամի-կոնեան մերձեալ ի տեղի մի յեղր գետոյն, և տեառնապրեալ գինքն նշանաւ խաչին սրբ-բոյ կենսատուի իջանէր ի գետն. և ոչ լինդ յոյժ տեղի ծանծաղ անցանէր խազադու-թեամբ ընդ ջուրն, որ և տեղին ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգու-թեամբ»։ Ջուգա քաղաքին մօտ ուրիշ հուն մ'ալ կը յիշէ Ղևոնդ (Գլ. Ե). «Առնուին ի գերութիւն... զպատահակիսս Նախճաւա-նու ... և զայլս գերի վարեալ կանգմբք և մանկտեաւ, անցուցանէին ընդ գետն Երասխ, ընդ հունն Ջուղայու»։ Ջուղայի նկարա-գրութեան մէջ պիտի հանդիպինք սրատաուշ և ողբալի դէպքի մը, թէ ինչպէս Շահ Ա-բասի գերեվարութեան միջոց բազմաթիւ Հա-յեր Երասխայ մէջ խեղդուեցան։ — Երաս-խայ ջուրը պատուական է և շատ առողջա-բար ու բոյսերու օգտակար։ Մէջը գտնուած ձկները ուրիշ գետերու ձկներէն աւելի հա-մեղ են. գլխաւոր ձուկն է ձանաւս կոչուա-ծը երկայն և սպիտակ, բաւական կոզմերը կը գտնուի. մեծութիւնը մինչև երկու կան-գունի կը հասնի և ուրիշ ամէն ձկներէ ա-ւելի համեղաճաշակ է։ Ձանաւսն աւելի մեծ երկայն և նուրբ է լեզգ լսուածը, այս ձու-կը Եփրատի մէջ ևս կը գտնուի և մեծու-թեանը համար կեռ կը կոչուի։ Դեղին պոչա-լսուածը մինչև մէկ օթայ կը կշռէ և Ե-փրատի մէջ Դեղիկ կը կոչուի։ Մորդ ըն-չաւոր ձուկը, որ Եփրատի մէջ Մոխ կը կո-չուի, մինչև մէկ օթայ կը կշռէ։ Կարմրա-խտ (Ալապալըդը), այսպէս կոչուած է մոր-թի գունին համար. այս ձուկը պատուական կերակուր բլլալէ զատ, գիդ է նաև ջիլերը լուծելու համար՝ կապելով գայն կարիճամած անդամին վրայ. տեղ տեղ կը գործածեն նաև իրեւ գեղ ամէն տեսակ վէրքերու։ Այս ձուկը առատ կը գտնուի մանաւանդ Թէքլիանի մէջ, ուր Երասխայ ձորափորը ա-պատաժուտ է, վասն զի կարմրախէտը ա-պատաժուտ տեղեր կը սիրէ։ Գետէն կ'ելնէ նաև Սազան և ուրիշ լուսիր ձկներ։ Ա-տատպատի գիմաց կը գտնուի սպիտակ մի-ախայ՝ զոր բնակիչք կը կոչեն Արաճկաչ, բայց ուտելու տաղորութիւն չունին։ — Հնախ. Հայաստ. Ա. 109–121։ Ա. Յյրատատ, 4–6։ Միսեկան 321–322։ Տիգրուա, Գ. 43, եև.։ Նոր Հայաստան, 24–27։ Եւ այլն։

ԵՐԱՍԽԱՁՈՐ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԵՐԳԵՎԱՆԵՔ կամ ԵՐԳԵՎԱՆԻՑ ԲԵՐԴ. — Հին և ամուր բերդ կը յիշէ Կիրակոս պատմիչ Աղուանից Փառիսոս գաւառի մէջ՝ Ղուլալի գիւղի գիմաց։ Ի. դարու սկիզբները Զա-քարէ և Իւանէ քաջ իշխաններդ այս ամրո-ցը գարձից ձեռքէն առին։ Հոս շատ ան-գամ ամրացեր և պաշտպանուեր են Ղու-լալի գիւղի և շրջակայ բնակիչները ժէ. գա-րու վերջերը և ԺԷ. սկիզբները։ Բերդիս բուրգերէն սահացեր է մերձակայ գիւղն Ղու-լալի անունը, որովհետև գուռս տաճկերէն կը նշանակէ բուրգ կամ աշտարակ։ — Ան-շուշտ ի հնումն երգեվանք անուամբ վանք մի ևս կար, որուն անուամբ Թերեւս կո-չուեր է բերդս։ Գեր. Բարխուդարեան Փա-ռիսոս գաւառի բերդերու վրայ գրած միջոց, այս բերդիս վրայ յատուկ բան մը բսած չէ. կարելի է որ ուրիշ անուամբ նկարա-գրած է գայն։

ԵՐԳԻՆԱ. Տես ԱՐԳԻՆԱ։

ԵՐԴԵՋ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԵՐԴՆԿԻ. — Գիւղ Խաբրերդի. 60 տուն հայ կայ։ Ունին Ս. Աստուածածին եկեղե-ցի մը և նոյն անուամբ վարժարան մը՝ 50 աշակերտներով։ Հողագործ են։

ԵՐԿԵԻՔ. Տես ԿՈՎԱԿԱՆ։

ԵՐԵՄՔ կամ ԵՐԵՄԻ. Տես ՆՂՈՒԿ։

ԵՐԵՄԻՆ. — Սիւնեաց Աղահէնք գաւառի

282. Երեսուց եկեղեցոյ արձանագրութիւնը.

վաակնաբէն մին, որ կը յիշեցնէ Ծղուկի Երեմի վիպը, որուն սահմանաց մօտ է։

ԵՐԵՐԻ. Տես ՍՈՒԻՔ։

ԵՐԵՐԻՆ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ և ԷՐԷՐԻՆ։

յակապ՝ բայց այժմ աւերակ եկեղեցիով մը, որուն կոփածոյ կամարապատ քարերու և գմբէթի ձեւին նայելով՝ այլազգիները տուած են Գաղղ Գաւիթ անունը։ Եկեղեցւոյն երկայ-

ԵՐԵՐՆԱՑ Ս. ՍԱՀԱԿ. Տես ՍԱՀԱԿ (Ս.)։

ԵՐԵՐՈՒԱՑ ԳԻԻՂ, կամ ԵՐԵՐՈՒԻՔ. — Այբարաւոյ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Ախուրեանի ալ կոզմը կայ այս անուամբ ամայի վիճակաւեղի մը՝ երբեմն հո-

նութիւնն է 23 մեար և լայնութիւնն 14մ. չորս անկիւնները ունի փոքրիկ մատուռներ կամ անեակներ, և բաց ի արեւելեան կողմէն, միւս կողմերը ունի սիւնազարդ դաւիթներ՝ ձեղունները կործանած։ Կը տեսնուին

ատան պատուհանաց տեղեր և երեք գահեր. ուղղ գաւոր արեւմտեան կողմէն. հարաւային գահերէն միայն արեւաքին կողմը արձանագրուած է 1038 թուականու կարեւոր յիշատակարան մը (թ. 282)։ Գիւղիս մէջ և Ախուրեանի եզերքը կան քարաշէն բնակութիւններու աւերակներ, գերեզմաններ և խաչքարեր, որոնք նորանոր քննութեանց կը կարօտին։

ԵՐԵՐՈՒՆՔ. — Ա. յս անուամբ կրկին հին գիւղեր կը յիշուին Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ։ — Ա. յս անուամբ լիս ևս կայ։

ԵՐԵՐՈՒՆՔ. — Կը յիշուի այս անուամբ գիւղ Ա. յրարատայ Արտազատան գաւառի Աղմոսաւանից արձանագրութեան մը մէջ։

ԵՐԵՐՈՒՔ. Տես ԵՐԵՐՈՒՆՔ Գիւղ։

ԵՐԵՒՕՆ. — Երիսունք անունն այսպէս ևս գրուած է։


ԵՐԵՒԱՆ. Գղ. ÈRIVAN. Ռ. Эривань. Պրակ. اوزى كمر اوايدا. — Գլխաւոր և իր պատմական գէպքերովն նշանաւոր բերդաքաղաք Հայաստան կուսակալութեան և գաւառին. ըստ հին աշխարհագրական բաժանման կը գտնուի Ա. յրարատայ կոստայք գաւառի հարաւային մասի մէջ։ Հրազդան և Գըրգպուլաղ գետերու միջանկեալն է, փարիզու միջօրէի 40° 10′ 16″ լայնութեան և 42° 10′ 5″ երկայնութեան ներքոյ, պատմական տարածութեան մը վրայ, ծովու երեսէն մօտ 3000′ բարձր, Էջմիածնի արեւելեան կողմը 10 մղոն հեռու։ Երեւան փոխանակած է մեր Հայկազանց, Արշակունեաց և Բագրատունեաց փառապանծ մայրաքաղաքներու։ Հիմնարկութեան կամ սկզբնաւորութեան պատմութիւնն մեզ անյայտ կը մնայ. անհաւան կը թուի բլլալն հին Երուանդապատն, ինչպէս ոմանց թուեցաւ, կամ Երուանդ Բ ա. րիշ պատահականութենէն մին։ Զենք կարող հաւատալ նաեւ այն աւանդութիւնը, որով ոմանք կը համարին, թէ համաշխարհական ջրհեղեղէն վերջ առաջին անգամ երեւցած բլլայ քաղաքիս տեղն, և անոր առած է. րեւան անունը։ — Մեր հնագոյն մատենագիրներէն չի յիշուիր մինչեւ Ե դարը, յորում Ա. բրահամ կաթողիկոսի ժողովոյն մէջ կը նշանակուի իբրեւ նշանաւոր աւան, ուստի պէտք է. րեւանցւոց վանականներու շարքին մէջ կը յիշուի նաեւ ասորը՝ Դաւիթ անուամբ։ Փիլ ասբիներ վերջը 642–3 թուին, Արաբացւոց արշաւանաց սկիզբը կը յայտնուի նաեւ անոյշ բերդն, վասն զի «եկին ժողովեցան ի յԵրեւան (կ՚ըսէ Սեբէոս), և մարտանան ընդ Թերդին և ոչ կարացին առնուլ»։ Նոյնպէս քիչ ասբիներ վերջը (658) ուրիշ նշանաւոր կռիւ մը ունեցած են Ա. րաբացիք Երեւան քաղաքապետի մէջ. բայց ցաւալին այն է, որ բոլոր պատմիչները համաձայն յիշելով նախորդ պատմիչներու կը պրկին, որոնք չգտնուելուն, մեզ մանրամասնութիւնք անծանօթ կը մնան։ Աստեղի չէ բանասիրի մը այն կարծիքն, թէ Ա. րաբացիք քաղաքս նուաճելով իրենց ամուր ապաստան շինած են, Ա. յրարատայ ուրիշ բերդերու նուաճումէն վերջ։ Ժէ դարու կիսան Թովմա Մեծոփեցին հաս գալով, գնդաքաղաք կ՚անուանէ, իսկ անոր ժամանակակից երիցպոյն՝ Գրիգոր Երեւնց, յիշելով տեղւոյս պատահարը 1388ին Լէնկթեմուրի հրոսակաց արշաւանաց միջոց, կ՚ըսէ.

«Եւ յԵրեւան մեծ աւանին
Այս հինգ հարիւր կատորիցին»։

Կամաց կամաց բարգաւաճելով քաղաք գարձեր է և կը թուի թէ Լէնկթեմուրի հարուածներէն վերջ իշխանանիստ եղած է թագաւորաց, որոնցմէ առաջին կը յիշուի 1440 թուին Եաղուպ բեկ։ Ան կը թուի լինել Ագգոյունլու առհմէն և հաւանօրէն եղբօրորդի անուոց Գարա Օսման առհմապետին։ Ասկէց վերջ իշխան եղեր է ուրիշ Եաղուպ բեկ մը՝ Ուզուն Հասանայ որդին։ ԺԶ դարուն սկիզբը կուսակալ գրուելով Ռէվան խան՝ շինեց Երեւանայ բերդը, որ կը թուի թէ բազաքին անուանէն առած է իր Ռէվան խան կամ Երեւանի իշխան կոչումը։ Երեւանայ պայծառութեան սկզբնաւորութիւնը և կամ իրրեւ ամուր վայր նշանաւոր գտնուն այս ժամանակէն սկսած կրնանք համարիլ, որով և ամբողջ երկու դար վէճի և կռուի պատճառ գարձաւ երկու նախանձելի ազգի՝ Օսմանեանց և Պարսից միջեւ։ Աւելորդ կը համարինք մի առ մի յիշել Երեւանայ Պարսից խաները, կը բաւականանանք յիշելով միայն անոնք՝ որոնց

283. Դրսից տեսարան մեծ վիմեղ եկեղեցւոյ Էջմիածնի։

միջոց կարեւոր դէպքեր պատահած են։ Թօքմաք Մահմուտ խանը՝ 1579 թուի սեպտեմբեր ամսուն մէջ, Օսմանեանց Լալա փաշայի քաղաքին վրայ եկած միջոց, ասկէ փախաւ, և քաղաքը անձնատուր լինելով, աւերեցաւ կատակալին հոյակապ ապարանքը։ Ա֊յս դէպքին ժամանակակից ումն Յահանէս՝ չափական խօսքերով կը նկարագրէ քաղաքին և գաւառին աւերումն և բազմաց դերի առնուիլն։ Յետոյ Թուրքերը հաշտութիւն լինելով՝ քաղաքը Պարսից ձեռքը մնաց՝ քակել. իսկ ումն վարդապետ Առաքել անուն, որ և յետոյ կաթողիկոս եղեւ, յիշատակ ձգած օրհնութեամբ եղիցի, եմուտ առաջի Ֆահրատին զօրապետի զօրուն, և ոչ եա թոյլ քակելոյ զեկեղեցին։ Բայց վայ լսելեացս և պատմութեանս, զի յաւուրս երեսուն՝ չորիք և երիվարք և բազում Տաճկիք յինքեանց անծանօթք՝ բնակեցան յեկեղեցիս »։ Տատեամեայ կամ երկոտասաներեակ պատերազմներէ վերջ, մեծն Շահ Աբաս իրեն ենթակայութեան սկիզբը (1590)




284. Երեւանայ Գարմիր կամուրջը։

դարձին. բայց երկու տարի վերջը գարձեալ տիրեցին Ֆէհրատ փաշայի ձեռքով, որ Թօքմաքի ապարանքի և պարսկերու տեղը բերդ շինեց, խրամով պատեց, ջուր բերելով Գէրգպուլաքէն. հրանօթներով ամրացուց նաեւ աշտարակները և յանձնեց Զոլֆաղ Էյուուֆ փաշային։ Ա֊յս տեղամ Ծարեցի Յովհաննէս վարդապետի գրածի համեմատ, «բազում եկեղեցիս քակեալ՝ զքարինս ի շինութիւն բերդին տանէին. որք և կամեցան գինծ եկեղեցին եա՝ որ Երկուերեսի խնդրեց և հաշտութիւն բրաւ Օսմանցւոց հետ, անոնց թողլով Երեւանը Ազատատեան բոլոր դահանդներովը։ Շահ Աբասի պատերազմներու և աշխարհակալութեան սկիզբները երբոր սա Դաւրէժը առաւ (1603), Նախճաւան գաւառի Թուրքերը փախստական հոս եկան, «և ի հարաւային կողմն բերդին Երեւանայ տնակից բնդ նմին պատեցին պարիսպ և շինեցին միւս եւս բերդ, և մնին ինքեանք ի ներս պատերազմական գինուք։ ... Յետ սակաւուց ինքնին Շահ Աբաս և֊

հաս յԵրեւան, պատեալ պաշարեաց զբերդն շուրջանակի, և ամենեւեին առանց խիզ մըտանգի և աշխատանաց նստեալ կայր ի վերայ նորա. քանզի զշրջակայ երկիրն ընդ իւրով հրամանաւ ունէր գրաւեալ, որ էր շէն և լի ամենայն բարիօք, ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից։ ... Եւ մինչ նստեալ էր Շահն ի վերայ Երեւանայ բերդին և պատեբազմէր, յայնժամ եւս գերեւանայ երկիրն Ամիրգիւնայ խանին, զոր կարգեաց խան երկրին այնորիկ։... Բայց զօրքն Օսմանցւոց որք էին ի մէջ բերդին Երեւանու, որոց գլուխ էր Սալիմ փաշէն և Սիւլէյման փաշէն որպէ խաբէ փաշային, քաջութեամբ զդէմ կալեալ արքային և զօրացն Պարսից պատերազմէին, և զմնակաց եղեն ամիս ութ, և յինեւնըստղում ամենեան անճառ մեացեալ՝ եւս զերդն» (1604)։ Ցոհաննէս Մակուեցի անուամբ մէկը, 140 տող ատենագիր գրուածիան մը մէջ ոգրալով կը սատարպէ Երեւան քաղաքին և նահանգին առումը և աւերումը։ Շահ Աբասէն գրուած Աբրահամեան աշխարհի Ամիրգիւնա կուսակալը, Զաքարիա պատմչի գրածի համեմատ, էր «այր քաջ և արագպինդ, անահ և աներկիւղ, շէնառաբ և սիրող քրիստոնէից. սա ի սիրելն Իւրում Երեւանայ՝ իսկոյն ձեռն էարկ շինուածեան և մարգարտաւածեան. նախ սկսաւ շինել գրեր զրն. և ապա ապարանս և գայթիս և գրուբահատոն և զպարտէզս, և հանել զառուս և առաւելուլ զՂուբան...»։ Շահ անդամ առ պատահելով սա կարծեց, Մշոյ և Վանայ կողմերը՝ այն կողմերէն գերի բերածները բնակեցուց ի «գեղօրայքն որ ի մէջ Երեւանայ և էջմիածնայ են, այսինքն, Փառար, Դօղդուճքէր, Կաւակերտ, Փարպարար, և Նաւպատ և այլք...։ Եւ այսպէս կեայր նա քաջութեամբ և փոյթ ի շինուածին աշխարհին Աբրահամեան. այլ և սիրեաց զազգս Հայոց, և միշտ գնայր ի տունս քրիստոնէից, ուտէր և ըմպէր ընդ նոսա, և կարգեաց գաւառապետս, որ է Մէլիք» ի Հայոց։ Առ իշխանութեան ժամանակ 1616 թուին «Էօրքիզ Աղամա փաշէն եկն ի վերայ Երեւանայ, երկու ամիս և կէս նստաւ, չկարաց առնուլ և յետս գարձաւ»։ Ամիրգիւնա քան սարքէն աւելի իշխելով մեռաւ է 1625ին վասն պատերազմի մէջ, և ըստ ումանց գաղտ սպանուեր է իր Թահմազ բէկ որդիէն, որ յաջորդեր է Շահ Աբասի հրամանով։ Բայց ասկէ առաջ՝ 1614ին մեր յիշատակարանաց մէջ կը յիշուի Ամիրգիւնայի ուրիշ որդի մը Աբաս Ղուլի անուամբ, և անկէց ալ առաջ Նահաճի դուլի անի կուսակալ։ Տասը տարի վերջը (1635) ըստ Առաքելի (Պլ. ժէ.) «Սուլդան Մուրատ թագաւոր 700000 մարդով եկն ի վերայ Երեւանայ բերդին Նասուհ. Թօփալ Ահմետ զբերդն մեծաւ զօրութեամբ, և յինն օրն էառ զբերդն. և պիշխան բերդին զԹահմազ Ղուլի խանն՝ իւրով պարտեպրոնէն առաքեաց ի Սատմրօլ. 12000 քաջ պատերազմով եղ ի մէջ բերդին, և ինքն էանց գնաց ի Թաւրէզ», և այլն։ Բայց յաջորդ տարին (1636) «Թագաւորն Պարսից Շահ Սէֆի 100000 մարդով եկն ի վերայ Երեւանայ, նստաւ և բնակ ամիս, բազում աշխատութեամբ և պատերազմեաւ էառ զբերդն Օսմանցւոց, և պիշխան բերդին զՄուբրուզայ փաշէն և զայլ բազում զօրս ի նոցանէ սպան... և յԵրեւան կարգեաց իշխան զԲայիով Աղի խանն»։ Օսմանցւոց առումէն առաջ Երեւանէն անցաւ Թաւրիզի գալլիացի ճանապարհորդը, որ կը յիշէ քաղաքիս Հայոց չորս եկեղեցիներ և մենաստան մը, և նորաշէն կարաւանատունը։ — Այս անգամ Երեւան և Աբարատայ երկիրը Պարսից ձեռքը մնաց գրեթէ 88 տարի, և իրարու յաջորդեցին այլ և այլ կուսակալներ։ 1679ին Զալ խան կուսակալի օրով, որ ազգաւ վրացի էր և քրիստոնէից բարեբար ու շինարար, պատահեցաւ յուխտի մէջ Աղրարատայ մեծ երկրաշարժը, որ սովորաբար քաղաքիս անուամբ կը կոչուի Շարժ Երեւանայ կամ Մեծ Շարժ, որով բերդը հիմէն տապալեցաւ, ըստ Զաքարիայի, նոյնպէս Հայոց երեք եկեղեցիներ և Տաճկաց շատ մզկիթներ և մինարեներ. «իսկ խանն ի նոյն օր առաքեաց դեսպանս առ շահն և ծանոյց զաւերումն շարժին. և յետ հնգետասան աւուր եկն փութապտոյն և հրաման շինելոյ բերդին և եկեղեցեացն. և մանեաւիկն գոչէր, թէ հրաման է շահին զի քրիստոնեայք շինեսցեն զեկեղեցիսն զոր

քակեալ է... և ապա եկն մեծ իշխանն Մխիթա Իպրահիմն, զոր ասէին Հասրբէճան վազրի, նստաւ յԵրեւան, և կոչեաց զմեծաձակայ զանուրայս, զԱխչաւանայ, զՊարաւայ, և այլն, և եկին սպա և շինեցին զբերդն երեքտրամեայ, ամրագոյն քան զառաջինն. և զկամաւթն որ ի ներքոյ բերդին



285. Երեւանայ աշտարակը։

էր՝ ի վերայ Հուրաստան գետոյ՝ որ ասի Զանգի, զնա ևս շինեցին և բերդն զկարն ի քաղաքն Երեւան։ Եւ ապա հաստատեցաւ կարգն Երեւանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք, որքան և իշխէր սա (Զալ) Երեւանայ»։ Քաղաքիս հին երեքակնեայ կամարջը գտնւելեամբ կը յիշեն Երեւոպացի առաջին ուղեւորները, ինչպէս վերոյիշեալ Թաւեռնիէ գալլիացին և Շարաէն՝ որ շարժէն քիչ առաջ անցաւ Երեւանէն, և կը նկատրէ զայն՝ ոչ իբրեւ մեծ՝ այլ գեղեցիկ քաղաք, ինչպէս նաեւ ձուաձեւ բերդն՝ մօտ 4000 քայլաչափ շրջապատով և 800 Պարսից անեռով, իսկ Հայոց անեռը քաղաքին մէջ էին։ Կը նկարագրէ նաեւ կուսակալին գեղեցիկ ապարանքը և Քհէյի գաւ (Ալաձից բերդ) ըսուած ամրութիւնը։ Բերդը ամրաձիգ մը հետու էր քաղաքէն, և այն տարածութեան վրայ կային տուներ և շուկաներ, Հայոց շատ եկեղեցիներ, որոնցմէ գլխաւորները և հնաշէնները կը յիշէ Կաթուղիկէն և Երկուեւերեակն կամ Էջմիածնոյ տաճարը. մեռելները նորաշէն, փառք և ցած էին։ Երկրորդն մօտ կար հին Աշտարակ մը բազմանկիւնի, բոլորագմբէթ, որքառաշ քարերով ու գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած. շուրջը աւերակներ լինելուն, Շարաէն կը կարծէ ի հնումն նոյն տեղը վանք եղած։ Այժմ անհետացած է այս աշտարակը, հաւանօրէն մեծ երկրաշարժէն, բայց բարերազդաբար գալլիացի ուղեւորը զայն գծած լինելով, մենք ալ կը կարողանանք աւեր պատկերը աստ ներկայացնել՝ որ բաւական նման է Նախճաւանի մէջ ցարդ կանգուն մնացած Ամիրէկներու աշտարակին։ Աշտարակի վրանցն էր վանքատեղին և քիչ հետու քառակուսի և ծառապատ մեծ հրապարակը՝ 400 քայլ տրամագծով։ Շատ բաղնիքներ կային թէ՛ քաղաքի և թէ բերդի մէջ և բաւական թուով կարաւանատներ, որոնցմէ գեղեցիկ և մեծագոյնն կը դնէ Շարաէն բերդի մօտ նոր շինուածը, յորում կային երեք մեծ և վեհաշէն փոքր սենեակներ, ընդարձակ սրահներ, մեծ բանտիներ, գեղեցիկ մզկիթ մը և երկու սրճարաններ։ Շարաեւ, Բ 218-210։ — Այս բոլոր շինութիւնները թէպէտեւ մեծ երկրաշարժէն քայքայեցան, բայց Զաքարիա պատմչի վերը գրածի համեմատ, Զալի իշխանութեան օրով և յետոյ զարձեալ նորոգուեցան։ Զալէն վերջը, իբրեւ տեղակալ Երեւանայ մէջ նստան, նախ Նախ-


ճառանի խանի որդին Մուրթուզա Դ.ուլի (1688–90), որ կեղեքելով բնակիչները նեղից, և ապա Մահմատ Դ.ուլի (1690–93), որ առաջնոյն հակառակ «բարութիւն ցուցցեալ ամենայնի և արար բարութիւն և սէր առ ամիկ հարկատուքն. ի բազումս թեթեւացոյց զհարկն և զձեռնամաքս ի ճանապարհաց երթալ և զամենայն գոդս և առագաս. և հրաման արար շինութեան եկեղեցեացն, և ի գառնատանի ճշմարտասէր և առանց կաշառաց: ... Ջկնի նորա առաքեցաւ ի թագաւորէն իշխան Երեւանայ Ֆարգալի անն որ էր ի թոռանց Ամիրգունայ խանին, այր ազահ և ոխշա, կողոպտող և գերիող և կաշառող, անիրաւ ի գառնատանի... բազմացան և գողք ի շէնս և առագակք ի ճանապարհս և յանդառնատնս: ... Եւ էր առաքեալ մեծ յաշխարհին Աբարատեան. և ի թուի ՌՃԽԹ (= 1700) այսպէս է զոր գրեցաք»: Մեհրալի խանի իշխանութեան օրով (1719–1724), Օսմանցիք սիրեցին Երեւանայ, և գրեթէ բոլոր Հայոց աշխարհի, երկար պահպանմամբ և բուռն պատերազմով: Այս պատերազմներու մէջ Հայերն ալ շատ քաջութիւններ բրած են, ինչպէս կը պատմէ մանրամասն ականատես անն Երեւանցի: 1755 թուին Թահմազ Դ.ուլի խանը զարձեալ նուաճեց քաղաքս Պարսից իշխանութեան ներքոյ, և այսպէս անկէց վերջ գրեթէ պար մը, մինչեւ Ռուսներէն բոլորովին նուաճուիլը (1827): Երեւանայ վերջին այլազգի իշխան կամ սերտար եղած է Հիւսէին խան, որ շատ հռչակուած է իր քաջութեանց համար, բայց երբ 1827 տարւոյ հոկտ. 19ին Ռուսները փառակից զօրապետի ձեռքով քաղաքիս տիրեցին, Հիւսէին Պարսկաստան գնաց և իրեն թագաւորէն անարգուելով, խեղճութեամբ մեռաւ, ինչպէս կ'ըսեն, գոմի մը մէջ: Այս մեծ յաղթութեան և Աբրաատեան երկրի նուաճման ի յիշատակ Ռուսները միաւոր մը շինեցին, մէկ կողմը պատկերով Երեւան՝ և մեռ կողմը Մասիս լեռը խաչակիր գագաթով: Երեւանը այնուհետեւ կոչուեցաւ Սպարապետ Հայկական Երեւանգի, բայց 1840էն սկսեալ այս անուան փոխանակեց Երեւանեան գաւառ կոչումը: Իսկ յաղթող և նուաճող փառակից զօրապետին ալ տուին Երեւանեան կամ ըստ Ռուսաց Երեւանցի պատուանունը:

Երեւան նշանաւոր եղած է գլխաւորաբար իր ամուր բերդովը, որ մօտ մղոնի մը չորրորդ մասին չափ քաղաքէն հեռու է հարաւային կողմը, Հրազդանայ խորաձորյն արեւելեան սարափին վրայ: Աբեւմտեան կողմէն բնական ահաւոր դիրքով ամրացած լինելով պարապաց պէտք չունի և միայն հրանօթներով զինուած է. իսկ միւս երեք կողմերը ունի խոր խրամ և կրկին պարիսպներ, ինչպէս նաեւ յիսնի չափ բուրգեր և երեք դռներ: Գրեթէ երեք դար արեւելքի նշանաւոր բերդերու կարգին անցած էր, բայց չէր կարող մեր գարու հրազինուց և պատերազմական արհեստին դէմ դնել: Բէր–փորթերը անդլիացին, որ Ռուսաց գրաւումէն առաջ առաջ տեսած է քաղաքս, խիստ զօրաւոր կը նկարագրէ բերդիս դիրքը և ահաւոր: Ամրտեթինէն առելի նշանաւոր էր ընդարձակութեամբը, յորում ամէն բանի կարեւոր տեղեր և մթերանոցներ կային: Նշանաւոր էր նաեւ խաներու հայակապ և շքեղազարդ ապարանքը: Հիւսէին խանը շրջապատեցն զարդարած էր այդ ապարանքը, շինելով նաեւ զահլեճին համար փառաւոր պատշգամ մը՝ Հրազդան գետոյն վրայ նայող, ուսկից կը տեսնուէին նաեւ Մասիս լեռնոց ձիւնապատ գագաթները և Աբարատեան գաշտի վրայ տեսարանն: Ոմանք կ'ըսեն, թէ այս պատշգամէն ինքզինքը վար նետեց, վրացի գեղեցիկ աղջկին Մարիամ, երբ իր տարփածուն ու խօսեցեալը՝ Աղբա, կամբջին վրայ իրեն կ'սպասէր, և իմանալով ուռնին ծառերու վրայ, վիրաւորուած վերցուցին. բայց յետոյ առողջանալով, սէրտերը զինքը շնորհեց իրեն սիրելուն. այդ պատճառաւ պատշգամն կոչուեր է Աղիկավագը, և այս դէպքս Հաճի–Պապա կոչուած վիպասանութեան առիթ եղած է: Հայերն ալ առելի առաջ կը պատմեն, թէ այլազգի նորահարս մը Հիւսէին խանի հրամանով գնդէ մը յափշտակուած էր, որ լսելով փեսային երդը, կանուխէն պատուհանէն ինքզինքը վար կը նետէ և ձերբակալուելով փեսային հետ՝ կ'արձակուին հանդերձ պարգեւներով: Զահլեճ առաստաղի մեծ մասը,

286 · Գրգեվ · գաղթ — Դավիթ վարդապետ մեսրոպյան ։

պատերու և սիւներու երեսները ապուցուած են հայելիներ, և գոյնզգոյն գեղեցիկ զարդեր նկարուած, ինչպէս նաև Պարսից պիւցայն շահերու և խաներու կենդանագիրները. յատակը կճատակ է: Ապարանքի մէկ կողմն էր ընդարձակ և բազմայարկ կառոյցը, մօտ 200 ոտք երկայն և 125 ոտք լայն, չորս դահլիճներով և ամենայն շքեղութեամբ: Այս բոլոր փափկութեան և յղփութեան շէնքերը, Յաւուներէն փոխուելոյն զօրականներու անկէլանոց, անոնց ցաւերու և հիւծութիւններու բժշկութեան վայր: Ապարանքի ճոխութեան և շքեղութեան համեմատ պատրաստած էին նաև գեղազուարճ պարտէզներ, բուրաստաններ և այգիներ՝ գեղոյն միւս կողմը, հովանոցներով և ջրերու շատրուաններով. այս զբօսարաններու մեծ մասն այժմ լքուած և ամայացած է: Վայելչակերտ էր նաև Հիւսէին խանի բերդի մէջ կառուցած և գմբէթը ու ճակատը կանուչ ու կապոյտ յախճապակիներով զարդարուած մզկիթը, որ յետոյ վնասուելոյն փոխուելոյս: Ներիշ մզկիթ մ՚ալ կար բերդին մէջ Օսմանցիներէն շինուած 1725 թուին, զոր Պատանները սրբելով եկեղեցւոյ վերածելին և նուիրելին Տիրամօր: — Պարսից իշխանութեան օրով, երբեմն Երեւանայ մէջ կար Դրամահոց, ուր կը կարկէին արծաթէ և պղնձէ դրամներ, ինչպէս կը վկայէ 1694ին խաւարացի ակադեմիս ուղեւորն Շամպլլի:

Քաղաքի և բերդի միջավայրը կայ ընդարձակ հրապարակ մը, որ ի հնուց գանազան թագերու կը բաժնուի: Այս թագերէն առաջինը, բերդին և գեղոյն հիւսիսային կողմն է և գրիցը համեմատ Զորագիղ կը կոչուի և բուն այլազգիներու Տէրեքնեռ. իսկ ի հնուս Զաքարիա Սարիւաղի հաւնիատ խնկենոյ—Զոր: Այստեղ կը բնակին Հայք և Մահմետականք. վերին կողմն է Զորագիղի Աճապատ կոչուած վանատեղին, որ սեհկական է և օթեւան Լչմիածնի կաթողիկոսներու: Նախ շինուած է Նահապետ կաթողիկոսէն, և յետոյ մեծ շարժէն վերջ Յակոբ Եչ, ուր կար նաև Ս. Գէորգայ առուամբ եկեղեցի: 1837 թուին վանքս ըրին Երեւանայ Թեմին Դիւանատուները և հոս կը նստին կաթողիկոսի փոխանորդ արքեպիսկոպոսները: Եկեղեցիներէն մին կը կոչուի Ս. Յակոբ, ապիւռաշէն և հողաթաղն՝ շինուած է վանահայրներէ: Ներիշ եկեղեցի մ՚ալ Ս. Սարգսի Զօրավարի անուամբ շինած է Նահապետ կաթողիկոսը, կաթողիկոսներու օթեւանի հարաւային կողմը. զոր հնութեանը պատճառ 1835 թուին քակել տալով Յովհաննէս Շահխաթունեան՝ վերրոպեին շինել տուաւ քարուկիր: Անոնց արեւելակողմն են այգիներ, ծառաստաններ և պարտէզներ: Ս. Սարգսի բակի մէջ 1860 թուին փառաւորապէս շինուած է քաղաքիս առաջնորդարանը, որուն արեւմտեան պատրաստմանը գեղեցիկ տեսարան ունի:—Ինապատիս կամ եպիսկոպոսարանին մօտ ի հնումն կը բարձրանար Շարաւէնի յիշած Աշտարակը, որուն հնաքերը փնտռելով Փէր—փորթըր 1818 թուին, խնդրատ գիտցուէ մը՝ թէ քիչ տարիներ առաջ կայծակնահար լինելով կործաներ է և քարերը ուրիշ շէնքերու գործածած են: Նոյն Շարաւէն ուղեւորը կը վկայէ, թէ առաջնորդարանին եկեղեցին կը կոչուէր Երկուքրեսնի, որ և ուրիշ եկեղեցիներու հետ կը յիշուի 1537 թուականէն սկսեալ, Երկուքրեսնի Ս. Նշան անուամբ. ասկէ կը յայտնուի թէ նորոգուած էր Ս. Խաչի. թագն ալ ժամանակ մը կոչուած է Երկուներեսուրթագ:— Զօրաթաղիս հիւսիսային արեւելեան կողմը Հրազդանի մօտ է երկրորդ թագը Կռնդ անուամբ և բուն այլազգիներու Թէփէպաշի, և է ընդարձակ քարուտ սարատափ մը՝ տարածուած դէպի հարաւ և արեւելք. հիւսիսային կողմն է Կոզնոյ բլրակը, այսպէս կոչուած ԺԱ դարու առաջին կիսուն ապրող Յովհաննէս վարպապետի անուամբ: Բլրակս վրայ կայ փոքրիկ մատուռ մը 1829 թուին նորոգուած Աշտարակաւ Մկրիչ Սահակեն, ուր և թագուհացաւ ինքը 1834ին. արեւմտեան կողմը կը տարածուին այգիներ՝ գեղոյն գարատափին վրայ: Թագիս եկեղեցին Ս. Յովհաննէս Մկրտիչ՝ շինուած է քառակերտ 1710ին. ունի երեք սեղան, երկու աւանդատուն և շուրջը քահանայից բնակարան: Այս թագիս և Նոր թագի մէջ, Ս. Յովհաննու եկեղեցւոյն մօտ, Նոր տեղապրող մը կը յիշէ Ծիծեռնակ անուամբ բերդ: Կոնդ թագի մէկ մասը կը կոչուէր և այժմ ևս




287. Երեւան. — Անապատի եկեղեցին։

կ՚բռնէ Ծիրանի բաղ։ Կոնդի արեւելակողմն է Նոր թաղը, որ այսպէս կոչուած է, Ռուսաց տիրելէն վերջ, Աստրախանէն եկած նոր գաղթականներու բնակութեան պատճառաւ, վասն զի նոյն տեղը առաջ Երեւանայ խաներու այգիները կը տարածուէին և կը կոչուէր Խանկրղ կամ Խանիրու–պաղ։ Հոն էր ի հնուց Ս. Աճանիայի Աճապատը, հին մատուռ մը՝ շինուած սրբոյն նշխարաց վրայ՝ և շուրջը խցիկներ. որ Առաքելի (Դէ. ԻԹ) պատմութեան համեմատ ԺԲ. դարու սկիզբներն, «էր աւերակ և անմատրպարնակ, որոյ վասն ասաց խանն (Ամիրգունա) առ վարդապետն (Մովսէս Սիւնեցի). Տեսանե՞ս զայս եկեղեցի որ ամայի կայ. արդ լուր ինձ և մի գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն, և զպարիսա ասասէն,զի իրից մերձակայութեամբ և տեսութեամբ մխիթարեսցուք. այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք ազաչելով գնոյն խնդրէին ի վարդապետէն։ Որոց հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին արդեամբք և ձեռնտուութեամբ բրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ ապրին տուրս ողորմութեան ի շինուին տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին, զի բնակեսցէ ի մէջ խրեանց. վասն որոյ փութիանակի շինեցին, շուրջանակի պարիսպ և խցիկ և գժամատուն, և տարաւոք, և զայլ տունս յաղով. և կատարեալ զամենայն շինուածոն, բնակեցաւ անդէն վարդապետն խրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ անապատն։ Այս որ ժողովեցան միաբանք բազումք, միաչնակեացք և զրոց աշակերտք խմաստունք և սրբակեացք. կային ի միասին մեծք և փոքրերք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցուածն սուրբ գրոց։ ... Ապա Մելքիսէթ կաթուղիկոսն եկեալ ի դամբարանս սրբոյ առաքելոյն Ադամայի, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին Աճապատ. և անդ օրհնեաց գնա եպիսկոպոս յատուկ երիուշարաթի առաւուտն»։ Այս վանքի մէջ ամփոփուած են Յովհաննէս Կոգնան վարդապետի, Մելքիսէթ և Մովսէս վարդապետաց մասունները։ Մովսէս վարդապետի և ապա կաթողիկոսի գերեզմանին վրայ կայ ՌՋԲ թուականաւ ամենողի տապանագիր։ — Փիլիպպոս կաթողիկոսը 1636ին նորոգեց այս Աղապատը, որ Սուլթան Մուրատի Պարսից հետ բրած պատերազմի ժամանակ աւերած էր. «վերըսկսին շինեաց, ոչ լիէ փայտիւ, այլ քարիւ և բոսով, զմրեխեակ գժամատունն, զսեղանատունն, զխուցսն և զայլս ևս շինուածս առժինեսեան»։ Երեւանայ երկրաշարժէն վերջ, Նահապետ կաթողիկոսի օրով՝ 1693 թուին, խօշոյ փաճուս անուռով մէկը ընդարձակից մատուռը՝ նոր քարակերտ շինութեամբ չորս սիւներու վրայ, հանդերձ սիւնազարդ ժամատնով և երկու աւանդատներով. միջին գրան վրայ ալ գանգակատուն շինից, ու նոյնից Ս. Աստուածածնի, ինչպէս կը տեսնուի գրան մօտ եղած անուն շարադրութեամբ արձանագրութենէն։ ԺԲ դարու վերջերը (1793) տաճարը գարձեալ նորոգից Երեւանցի տէր Գաբրիէլ՝ հարիւրապետ կոչուած, և հարաւային գրան վրայ գրից իր քսան տոզէ բաղկացած չիշատակարանը։ Ս. Աճանիա առաքելոյն նշխարաց տապանը փոքրիկ խորանայարկի մը մէջ է եկեղեցւոյն տակ՝ ուր կ՚իջնուն աստիճաններով, և նշանաւոր ուխտատեղի է. այս եկեղեցին կը կոչուի նաեւ Ջօրաւոր՝ հրաշագործ համարուած աւետարանի մը անուամբ։ — Նոր թաղի արեւելեան հարաւային կողմն է չորրորդ թաղը Շնար՝ ընդարձակ և շատ պարտէզներով. որուն մէջ Հայք երկու եկեղեցի ունին։ Մին՝ կաթուղիկէ, օրացանիւ է չորս սիւներու վրայ, կաթուղիկէ կամ՝ գլխէթ ունի երկայնաձիր սեղանոյն վրայ՝ որ նոյնուած է Ս. Աստուածածնի. ունի նաեւ երկու աւանդատուն, երկու փոքրիկ խորաններ՝ Ս. Յովհաննու Մկրտչի և Ս. Անդրէասի անուամբ, որոնք եւս առանձին կաթուղիկէ ունին. շրջապատեալ է պարսպով։ Եկեղեցւոյս շինութիւնն հին է զոր 1537 թուին չիշատակարիր մը հրաշափառ Ս. Կարապետիկ կը կոչէ, սակայն կ՚երեւի թէ երկրաշարժէն վերջ նորոգուեր է և հին արձանագրութիւնք անյայտացեր են։ Շինութեան արձանագրութիւն չունի, միայն արեւմտեան ճակատի մեծամեծ քարի վրայ գրուած է. «Չիշատակ և

Աւերք խաչս Օհանեսի որդի Աղաւալիճ թվ. ՌՃԽԲ» 1693։ Եկեղեցւոյս զանգակատան ճակատի հարաւային դրան վրայ ալ կայ հետեւեալ նորոգութեան արձանագրութիւնը.

ապրիլից Պետրոսի և Պօղոսի. կառուցուած է չորս սիւներու վրայ 1690 թուին։ Գրեթէ կէս դար առաջ այս եկեղեցւոյս մէջ-շինուեցան Ս. Յովհ. Մկրտչի և Ս. Աստիածնա-



288. Երեւանայ պիւռաւոր մզկիթ։

«Նորոգեցաւ գաւիթս արդեամբ ժողովրդոյս։ Երաշխաւոր երեսփոխան Օհան Էսայեան Օհանեվեսով թվ. 1861 Փրկչական. ծախսեալ է 1150 մեք»։ Երկրորդ եկեղեցին մեծագոյն է և ամենահարուստ, նուիրուած Ս. Աստուածամօր երկու խորաններ՝ հանդիսաւոր կաթուղիկէներով, արդեամբ երեւանցի վաճառական Կարապետեանի և Աստիածատուր Ջալալեանցի։ Եկեղեցւոյս վրայ նորոգութիւններ բրած են 1778 և 1830 թուականներուն։

Հարաւային որմի ճակատը արձանագրուած է առաջին նորոգութեան յիշատակարանը, և կը սկսի թէ նոյն ժամանակ Միհէռն կաթուղիկոսի հոգածութեամբ նորոգած են պլխաւորաբար տանիքը և որմերու ու սեղներու ուրիշ խախտած տեղերը։ Եկեղեցւոյ պարսպին մէջ է քաղաքիս Հայոց Գայիանեան Օրիորդաց գպրոցը, որ շինուած, կարգաւորուած ու ապահովուած է աշխատութեամբ արժանապատիւ Յովսէփ Աւագ քահանայ Մելանցեան։ — Շհարի հարաւակողմը և բերդին արեւելակոյսն է Քարաճանճը կոչուած թաղը, որ այսպէս կոչուած է մեծաձակայ քարահանքի պատճառաւ, և այլազգիներէն կը կոչուի Տէմիրքափաղ (երկաթագործ), երկաթային չորս ագրեսի մը համար։ Այս թաղի մէջ աւելի բազմաթիւ են այլազգիք, իսկ Հայք սակաւաթիւ են և առանձին եկեղեցի չունին։ — Երեւանայ թաղերէն մին կը համարուի նաեւ Նորք կոչուած այգեվէտ մեծ գիւղը՝ որ կը գտնուի հիւսիսային արեւելեան կողմը և Թուրքերէն Զեօմլիկ կը կոչուի բրուտներու գործարաններու համար։ Այս թաղիս հայ բնակիչք 2500ը կ'անցնին. կը խտի թէ հին ժամանակ մեծ չէն մը եղած լինի, թերեւս նաեւ Երեւանայ բերդի դիւաւոր աւանը։ Եկեղեցին նորոգուած է Ս. Միհեռ ծերունւոյն. հոս կը գտնուի նաեւ Ս. Աստուածածնի անուամբ ուխտատեղի մը, ուր կը յաճախեն Երեւանցիք Զաակի երկրորդ կիւրակէին։ 1679 տարւոյ մեծ երկրաշարժէն կործանեցան նաեւ Նորքայ շէնքերը։ Շահ Աբասի արշաւանքներէն և երկիրն ամայանալէ վերջ, Զաքարիա պատմիչ ազուսալի դէպք մը կը յայտնէ ըսելով. «Կին մի ի Նորք գեղջէ նստէր ի գրան խրամ, ի գիրկս ունելով զմանուկ զուսար իւր. և ահա գայլ մի սեսեալ ի հեռաստանէ և եկեալ յարձակ դհանդերձից մանկանն, և քաշէր առ ինքն. և կինն ազազակէր, գրկեալ զմանուկն ոչ թողոյր ի բաց. և ի ձայնէ կնոջն եկին ամենք և հալածեցին զգայլն և զմանուկն խլեցին մեռեալ»։ Հին՝ Ս. Միհէռն եկեղեցին նորոգած են և հոն կը կատարին աստուածային պաշտամունք։ Հոս կայ Շողակաթ անուամբ օրիորդաց վարժարան, ինչպէս նաեւ ազգայոց գպրոց։ — Երեւանայ թաղերէն ամենը կը կոչուին նաեւ եկեղեցիներու անուններով, ինչպէս Ս. Աստուածածնի թաղ, Ջօրաւորի թաղ. կը յիշուի եւս Ջուաղեցց թաղ, Հին Երեւան թաղ, Խանի թաղ, Շեն թաղ, Ջումա–Մէչիթի թաղ, Մաշտոցեաց թաղ, և այլն։

Յիշատակարիք մը 1537ին, կաթողիկէի և Երիւանիանի Սուրբ Նշանի հետ կը յիշէ նաեւ Ս. Աստուածածնի և Ս. Յարութիւն անուամբ եկեղեցիներ, որոնց որ թաղի մէջ գտնուիլն յայտնի չէ։ Թերեւս առաջինը բլլայ Նորքայ վերոյիշեալ ուխտատեղին։ Ս. Թադեոս կամ Գերասիմեան անուամբ ուխտատեղի մը եւս կայ այլազգիի մը այգիի մէջ, որուն որմերը այգեաէրը անհետացընելու վրայ է։ Գէորգ կաթողիկոսի հրամանաւ 1867ին հիմնարկեցին Ս. Գէորգ անուամբ ուրիշ եկեղեցի մը, որուն շինութիւնն տակաւին կը շարունակուէր (1890ին) Երեւանի Համբարձումեան Եղիազարեանցի հոգոյզութեան ներքոյ։ — 1684 թուին Պարսից Շահի հրովարտակով Երեւան եկաւ քարոզութեան համար Հ. Լուճոյ, և շատ մեծութիւն իրեն յայտնեց Հ. Ռոս. սա եւս երկու տարի վերջ վախճանելով (1686), մեծ հանդիսով թաղուեցաւ Հայոց քահանաներու գերեզմանաց մօտ, Եղիազար կաթողիկոսի հրամանով։ Ուրիշ մի քանի Յիսուսեաններ եւս եկած են քաղաքս և ԺԷ դարու սկիզբը կաթողիկոսէն ընդունելով կը քարոզէին Հայոց եկեղեցիներու մէջ։ Առնց մէ տասը ալ Հ. Գաբրիէլ Շիոն վիզարաւոր կրօնաւորը, հոս եկեղեցի մը կառուցեր է Զէյկի Ագարիա անուամբ մեծատան մը նպաստիւք. բայց Էջմիածնի միաբանները փակել տուեր են, և Շիոն մեռեր է 1668ին։ — Երեւան մօտ լինելով կաթողիկոսական աթոռոյն, իրեն առաջնորդները կամ եպիսկոպոսները աթոռակալ կամ փոխանորդ կ'անուանուին, որոնց մէջ արքեպիսկոպոսներ եւս կան։ Տեղւոյ սովութեան պատճառաւ գոնց կ'ընենք քաղաքիս թէ՛ առաջնորդաց և թէ կառավարչաց ցանկերէն։ Երեւանայ գաւառին վիճակու և քաղաքի բնակչաց նոր մարդահամարն չունենալով կը գնենք 1893ին հրատարակուած վիճակագրութեան համեմատ. քաղաքի մէջ կան.

Հայք	1481 տուն,	7142 հոգի
Պարսիկք	1385 »	7228 »
Թուրք	88 »	313 »
Այլ ազգ	14 »	55 »
Գումարն...	2968 տուն,	14738 հոգի:

Ռուսները բերդի մէջ ունին փառաւոր եկեղեցի մը Ս. Նիկողայոս սքանչելագործ հայրապետի նուիրուած՝ որ պաշտպան է Ռուսաց զօրքերուն: Կառուցուած է 1850ին Նիկողայոս Պօղոսեան կայսեր ի պատիւ: Քաղքին մէջտեղը կը գտնուի կամարակապ ագիւսակերտ մեծ շուկայն, բազմաթիւ կրպակներով և կարաւանատուներով, որոնց մէ մեծագոյնը կը կոչուի վրաց անուամբ կիրճի Քեփվանգրայ. հոն է նաեւ մեծ ու հայակապ մզկիթը՝ յախճապակիէ գմբեթով, որուն բակի մէջ կայ մեծ աւազան և մօտը զպրոց, շինուած Հիւսէին Ալի խանէն, քաղքին Նատիրշահէն նուաճուելէն վերջ: Պարսիկները ունին նաեւ ուրիշ քանի մը մզկիթներ. զուրկ են կանոնաւոր վարժարաններէ, միայն իրենց խօջաները մզկիթներու ներս Խոնա խուցերուն մէջ դասեր կ'ուսանցնեն: Շուկային արեւելակողմը կայ մեծ հրապարակ մը, ուր Ռուսները կառուցած են մեծ վարժարան մը. Ռուսաց, Հայոց և Պարսից համար. այս վարժարանի աշակերտաց մէջ մեծ թիւ կը կազմեն Հայք: Հայոց եկեղեցիներն ալ ունին իրենց ծիսական վարժարանները, որոնցմէ զատ Հայք ունին վեց մասնաւոր վարժարաններ՝ չորս օրիորդաց կան: Ս. Սարգսի եկեղեցւոյն մօտ է Հայոց թեմական ժառանգաւորաց վարժարանը, որուն յիսնամեայ յոբելեանը կատարեցին 1888ին. վասն զի հաստատուած է 1837ին Էջմիածնի Սիմեոնի հրամանով, և փակուեցաւ 1869ին, վերստին բացուեցաւ 1877ին նոր շէնքով վերոյիշեալ եկեղեցւոյ մօտ. յոբելենին ի յիշատակ անուշները հրատարակեցին խնամքով այս վարժարանին պատմութիւնը, որուն վերնագիրն է «1837–1887, Յիսնամեակ Հայոց հոգեւոր թեմական Դպրանոցի Երեւանայ». տպ. Տփղիս, 1888: — Քաղաքիս մանրավաճառութիւնը՝ բնդհանրապէս Պարսից ձեռքն է, հնամենաճառութիւնը՝ Հրէից, պղնձագործութիւնն և կառավարական պաշտօնէութիւնն՝ Հայոց: Վաճառքներ կը բերուին Նիժնի-Նովկորոտէն, Տփղիսէն, Օռէսայէն և Մոսկուայէն, որոնց հետ հաղորդակցութիւնն մէջ է քաղքս կանոնաւոր ճանապարհներով և մեծ նաւատղ այժմ նոր կառուցուած երկաթուղիով: Պարսկաստանէն, Թուրքիայէն և Եւրոպայէն շատ քիչ քանակութեամբ վաճառք կը ներմուծուի՝ մաքսատուրց բարձրութեան պատճառաւ: Երեւան ունի երեք հասարակաց պարտէզ՝ զանազան անպտուղ ծառերով զարդարուած, որոնց մէջ կան նստարաններ և լապտերներ, ուր արք և կանայք կը զբօսնուն մինչեւ կէս գիշեր: Ունի նաեւ վարչական ժողովատուն, հաշտարար դատարան, քաղաքապետութիւն, գաւառապետութիւն, ոստիկանատուն, հիւանդոց, պանդոկ, տպարան, գրավաճառատուն, և այլն: Քաղաքիս Հայոց տպարանէն լոյս տեսած է Պատկ քաղաքական լրագիրը 1879ին և Առողջապահական թերթը 1881–2: — Երեւանայ գաշտի մէջ եղած Արխուրեւոյ (Ղանլի–Թափայ) անունով բլրակի գագաթը հին բերդի մէջ 1891ին, Նորքցի Պ. Նազար Մատթէոսեանը գտեր է չորս տող բեւեռաձեւ արձանագրութիւն մը, զոր հնագէտ Պ. Նիկոլսկին 1894ին հրատարակեց ատենէն տեսարակով ուսուցչէն ծանօթութիւններով: — Քաղաքիս խաներէն շատերը Հրազդան գետէն ստուներ հանած են. այս ստուներէն գլխաւորը Մատնի՝ կը համարուի թէ հանած է Բագրատունեաց Յովհաննէս Թագաւորի օրով Ապիրատ իշխանը, ինչպէս Մխիթար Այրիվանեցի պատմչի հետեւեալ խօսքերն ալ կը հաստատեն. «Ներ (= 1036) Ապիրատ իշխան ԺԲՌ. հեծելի (12000 ձիաւոր զօրաց սպարապետ) շինեաց գիւղաքաղաքս և եհան զառուն Երեւանայ»: Երեւանայ գաւառը և քաղաքը հարուստ են զանազան բերքերով և պտուղներով: Նշանաւոր են տանձն ու խնձորը, ծիրանն, դեղձը, սերկեւիլ, սալոր, կեռաս, նուռ, թուզ, սեխ՝ որուն տեսակներուն մէջ ազնուագոյնը և համեղն է Դաւրմա բսուածը: Հռչակուած են նաեւ Երեւանայ մեծ և քաղցր ձմերուկները և մանաւանդ խաղողն՝ որուն որթերը ձմեռը հողի տակը կը թաղեն: Խաղողի բազմաթիւ տեսակներէն, հետեւեալ երեքը ընտրելագոյն կը համարուին, Աբգէրի՝ փոքր

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԵՐԵՒԱՆՅԱՑ ԳԱՒԱՌԻ

ՀԱՑԱԲՆԱԿ ԳԻՒՂՈՐԼԻՑ

	ԱՆՈՒԱՆՔ ՏՆՂԵՑԻՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
		Տուն	Հոգի	Տուն
	Ա· ԹԼՃԻՐԱՊԱՏԻ ՎԻՃԱԿ			
1	Ադապօր	30	155	2
2	Ախինէ	75	578	—
3	Բրամաւա	158	1128	—
4	Աւան	60	416	—
5	Գազա Հայոց	25	244	—
6	Եղդաւան	62	427	—
7	Ջար	40	287	73
8	Լչտա	69	428	—
9	Թազաքէնտ, Նորագիւղ	64	518	—
10	Թէֆերապատ	62	537	—
11	Կեամրիա	115	962	—
12	Կէօք գէլիսէ	51	396	45
13	Ճաֆթզաան	114	941	—
14	Մէհիւպ	15	89	—
15	Նոր Նիկոլայեւկա	14	96	12
16	Շահապ	57	456	—
17	Պաշ-Գաձնի	115	1236	—
18	Պաշքէնտ	86	684	1
19	Պողուշք	36	214	—
20	Ջրվէժ	60	428	5
21	Քանաքեռ	196	1203	1
	Ամբողջ Թէֆերապատի վիճակի մէջ	1504	11423	139
	Բ· ՀԱՃԻ-ԷԼԻԱՉԻ ՎԻՃԱԿ			
1	Ադամդալու	57	311	64
2	Գալէլի	52	323	—
3	Գարատաղլը	21	110	49
4	Թազաքէնտ, Նորագիւղ	187	846	—
5	Խամշալու	141	1094	2
6	Ճաֆթարապատ	33	130	—
7	Նորագաւիթ	82	362	—
8	Շիհովիտ վերին	24	73	—
9	» ստորին	34	118	—
10	Շիրապատ	87	536	—
11	Վարմաղեաթ	48	279	—
	Ամբողջ Հաճի-Էլիազի վիճակի մէջ	768	4170	115
	Գ· ՔԻՄԻՐԼԻԻ ՎԻՃԱԿ			
1	Ագճաղշլաղ Բ·	37	232	—
2	Ագպաշ ստորին	94	486	—
3	Ախալու	74	407	9
4	Ահուշար	137	1069	4
5	Գաբահամզալու	63	434	41
6	Գըրխ Բզովանդ	26	131	2
7	Գուլամ Ալի Բզովանդ	57	443	—
8	Գույլասար ստորին	21	90	91
9	Գույլասար վերին	28	149	3
10	Գաւին	77	365	23
11	Գաւին Ախալ	2	3	61
12	Գաւին Բաւրգքէնտ	71	433	—
13	Լուսա կամ Ովայ	212	1549	29
14	Ջօհրապլու	36	206	—
15	Թամամշու	49	325	3
16	Թէֆեպաշի Մէհրապ	25	119	—
17	Իփէկլու	3	7	24
18	Մէհրապլու	24	118	—
19	Մէհրապ Քաւրգքէնտ	29	148	—
20	Նաւասզլու	136	1002	17
21	Չիբտամլու	146	873	28
22	Պաշնալու	73	570	10
23	Պէկճիպզլու	137	1035	2
24	Տարզալու	153	909	6
25	Տէլիէր Մեծ	79	577	14
26	Տէլիէր Փոքր	96	871	—
27	Տողանշահլու	60	404	—
28	Տօխքուզ	45	262	26
29	Քեմէրլիս	228	1416	99
30	Օղուրպէկլու	65	337	19
	Ամբողջ Քեմէրլիսի վիճակի մէջ	2283	14770	511
	Դ· ՏԷՎԷԼՈՒԻ ՎԻՃԱԿ			
1	Գարախաչ	30	288	34
2	Ջինճիրլի	108	1277	—
3	Ջանախճի ստորին	81	877	—
4	Պիրալի	35	553	
5	Ռէզանլու կամ Վէտի-Պաապ	48	325	—
6	Տէվէլու	291	1975	64
7	Փաչխա	37	416	—
8	Քէզիշվերան	31	344	—
	Ամբողջ Տէվէլուի վիճակի մէջ	661	6055	98
	Ընդհանուր երեւանեան գաւառի	5216	36426	863

հատիկներով, անկորիզ, սոկէգոյն, նուրբ կեղեւով և շատ համեղ. Բիշմիշ (կիշմիշ) մեծ ու կլոր հատիկներով ու անկորիզ, և խտրուն–փարմազ բուսածը. առնցուկ զատ կը յիշէ Ա֊ճառեանցից՝ Ա֊յծպտուկ, Գառանգիման, Սխտորուկ կամ Թիրքի գուշրուղը, Շիրշիրա և այլ տեսակներ։ Տեղւոյս պատուական դիներն Էջմիածնի և Կախէթու գինիներու չի հատուածրիր. Տիզաւա՝ համովը Մատերայի և Պորտոյի գինիներուն նման կը դնէ, իսկ Թումանիոր սքանչելի ածականն կուտայ Երեւանայ գինւոյն։ Հայը քաղաքի թաղերուն անուամբ կ'որոշէ այգիները և բնաբիլագոյն կը համարին Նորքի այգիները։ Այս կողմանց ամէն տեսակ պիտանի բուսոց վրայ կարեւոր տեղեկութիւններ գրելով Պ. Յովհ. Ա֊ճառեանցից՝ հրատարակեր է Երեւանայ մէջ 1881 թուին, Երեւանի նահանգի բուսաբանութիւնը վերնագրով։ Օտարազգիներէն ալ գիտնական Քոխ բժիշկը և բուսաբանը Երեւանայ նահանգի ուրիշ վիճակներէն զատ, առանձին քններ է 1837 տարւոյ մայիս ամսուն մէջ Երեւանայ սահմանները։ Երեւանայ բերդը ու պարսպ առաջուներէն համար հատարակաց առածը կ'ըսէ. «Երեւանայ Զանգուն բերդում էր տարեկան մի փութ ոսկի. իսկ Էջմիածնայ գետը (Քասաղը) բերում էր մի փութ արծաթ». որ է տարեկան արքունի հարկը. բայց այժմ հարկաւ հասպատիկն ու քառապատիկը, որովհետեւ ժողովուրդը բազմացեր, և ինչպէս սովորաբար կ'ըսեն, «12 տեսակ սերմ են ցանւում Ադարատեան դաշտումն»։ Երեւանայ բերքին յիշենք նաեւ ցորենն, գարի, բրինձ, կտաւատ, հաճար, բամբակ, և այլն. ինչպէս նաեւ արջու, գայլի, աղուէսի ու նապատակի մորթեր։ Երեւանայ վաճառականութիւնը կը կայանայ պղնձաւորապէս բամբակի և բիշմիշի առեւտուրի մէջ։ Բամբակի մշակութիւնը գետնին ու նահանգին պղնձաւոր հարստութեան ապրիւրն է. մեծ քանակութեամբ կը հաւաքուի քաղաքի մէջ և անկէ կը տանին Տփղիս, Մոսկուա և ուրիշ տեղեր։ Գնողները կամ արտահանողները կը լինին ըստ մեծի մասին Ղազուխցի հայ վաճառականներ, որոնք աշնան սկիզբը գալով այստեղ, կը մնան մինչեւ ձմեռը և բամբակ կը հաւաքեն։ Երեւանայ բամբակի տեսակը բաւական ազնուացաւ երբ սկսան Ամերիկայի մաքուր սերմ ցանել. այս բանին առաջին պատճառ եղած է Տաճկաստանցի Ակլան Օղլի անուն հայ վաճառականը, որ քաղաքին մօտ հիմնեց բամբակ մաքրելու գործարան մը։ Բիշմիշը Երեւանայ արտիւնաբերութիւնն չէ, կը բերուի Պարսկաստանի Ուրմի քաղաքէն և Երեւանցիք գնելով ցրի կամ օղի կը քաշեն։ Ալյուճ կը պատրաստեն նաեւ թթի օղի։

Որչափ որ գեղեցիկ և առատ են Երեւանայ բերքերը և չուրը բաւական շատ և լաւ բաժնուած, սակայն կարելի չէ փափագելի բնակավայր մը համարել քաղաքս, իրեն ունեցած ամառան և ձմրան ծայրայեղ եղանակաց համար, վասն զի անառանելի են ասթը և ցուրտը։ Թէպէտեւ միջին հաշուով 20 Ռէօմ. կը համարուի ամառան ջերմութիւնը, բայց սաստիկ շուք տեղը 30°ը կ'անցնի, կը հասնի երբեմն մինչեւ 35° և բերդին սպասներու վկայութեան համեմատ՝ մինչեւ 38°. նոյնպէս ձմեռ ժամանակ եւս թէ և միջին տաքութիւն կը համարուի 6–10°, բայց սաստիկ կ'իջնէ 20°էն ալ վար և մինչեւ 24° և 26° եւս։ Երբեմն կը հանդիպին յորդահոս անձրեւներ և կ'ողողեն այգիները ու բնակարանները. ինչպէս եղաւ 1873 տարւոյ օգոստ. 14ին, և շատ վնասներ հասուց, տուներ անգամ քանդելով և մեռցընելով մարդ ու անասուն։ Բնակիչք ջերմ եղանակին օգտախտութիւն կ'ընեն Ծաղկանոց ձորը (Ջերմչիչէկ)։ Երեւանայ ոչ բարեխառն կլիմայի պատճառաւ, բնակիչք չեն բազմանար, և մանուկները փոքրիկ հասակի մէջ բազմութեամբ կը մեռնին։ Գովելի են տեղւոյս Հայք իրենց հիւրասիրութեամբ և եկեղեցասիրութեամբ. իսկ Հայոց վատ կամ ցաւալի սովորութիւն կը համարի, ազգային տեղապրող մը, երիտասարդներու երկար ժամանակ ամուրի մնալն, օրիորդներէն գրամ օժիտ պահանջուիլն և ամէն տեղ տուներէն խօսելու նորատիրութիւնն։ Իրենց խօսակցութեան մէջ կը գործածեն պարսկական, թրքական, ռուսական և ազատագնալ հայկական բառեր։ Ամբ միջահասակ են, սեւ և կապուտակն, ուժեղ, դիւցազն և ծածկա-

միա. կանայք ազնիւ, աժգոյն և նիհար են. արք կը հագնին ռուսական և եւրոպական ձեւով. կանայք շրջազգեստ, բայց գլուխնին պարզ կապուած նազմանիւրով, կը գործածեն նաեւ ապարանջան, ոսկեմանեակ, ճակատնոց, մատանի և այլն։ Հայք առհասարակ եւրոպական սեղանի վրայ կը ճաշեն, կը խմեն պատուական գինի Էրեւանայ անուանի խորոված֊ի վրայ. կանոնիերին հանդիսաւ է և կենցաղավարութեան մէջ ուրախ են։

Էրեւանէն ունեցեր ենք բաւական նշանաւոր մարդիկ, ինչպէս Միհէան կաթողիկոսը. 1763 թուի ապրիլ 20ին, որ վախճանելով 1780 թուի յուլ. 26ին, թաղուած է Ս. Գայիանէի վանուց առաջի գաւթի մէջ։ Ասոր օրով բացուեցաւ Էջմիածնի տպարանը և գանազան գրքեր հրատարակուեցան։ Էրեւանցի էր նոյնպէս Եփրեմ կաթողիկոսը՝ 9 նոյեմբ. 1810, որ վախճ. 16 յուլ. 1835, և թաղուած է Էջմիածնի մատրանաւթեան դիւրմանատան կողքին։ Քաղաքէս էր նաեւ Յոհան վարպապետը՝ որ 1670 թուին Ամստէրտամի մէջ հաստատուց Էջմիածնի անուանով Հայոց տպարան և տպուց Աստուածաշունչը և ուրիշ գրքեր։ Էրեւանցի Զօրապետի բնակիչ կարբիցիներէն էր և Քոճհաննէս Ը. կաթողիկոսը. նոյն տեղէն էր նաեւ հանգուցեալ վարժապետ Մկրտիչ Դաւթեան Թադիպատեանցը, որ գրեց ու հրատարակեց կալկաթայի մէջ քանի մը գրքեր։ Քաղաքէս էր նաեւ ազգասէր Աբրահամ վարդապետ Խրիմեան Միհէան Գուլամիրեանց։ Էրեւանայ Հայոց մէջ իրրեւ անուանի կը յիշուին Գահրաման աղա Մէլիքեանց Աղամալեանց և վասիլ Գեղամեանց, առաջինը հարստութեամբ, ազգասիրութեամբ և ազնիւ ցեղովն ոչ միայն Էրեւանայ մէջ այլ և բոլոր Ռուսիոյ. ասոր քոյրը վերջին Աղբաքունդր թագաւորին թագուհին էր, որ մեռաւ 1884ին. իսկ երկրորդը անուանի է առհմային ազնուութեամբ՝ և Էրեւանայ քաղաքապետ լինելովն, որուն հայրը ռուս կառավարութենէն առացաւ ցմահ 25 րուբլի ամսական, Գեղամեան նախարարութեան շառաւիղ լինելուն պատճառաւ։ — Վերջին գաւթոյ մէջ, Էրեւանայ սեպհական վիճակը և երկիրը կը կոչուէր Սանահապոս կամ Սանահի փոս. ինչպէս 1603ին յիշատակագիր մը կ'ըսէ. «Եկի յերկիրն Այրարատայ, զոր Սանահիտոս կոչեն, և այժմ Էրեւան ասեն»։ Իսկ այլազգիներէն կը կոչուէր Զուգուր֊Սատ։ — Էրեւանայ այժմեան նահանգը կամ կուսակալութիւնը ձեւացած է 1867ին, որուն մայրաքաղաքն է Էրեւան, և որ կը բաժնուի եօթն գաւառներու. Էրեւան, Ագինքանդրապոլ, Նախիջեւան Նոր֊Բայազիտ, Միւրմիլի, Շարուր֊Դարալագեզ և Լճմիածին։ Նահանգիս սահմանքն են Հս.էն Տփղիսի նահանգը, Հս. – Ար.էն և Ար.էն Գանձակ, Հր.էն և Մ.էն Պարսից Հայաստան և Թրքաց Հայաստան։ Կը գտնուի 38° 50′ և 40° 50′ հիւսիսային լայնութեան և 40° 52′ և 43° 47′ արեւելեան երկայնութեան սակ։ Բոլոր նահանգի բնակչաց թիւն է 670405 հոգի, և Հայք են 375700 հոգի ու կը կազմեն նահանգին ամբողջ ազգաբնակութեանց մէջ բազմաթիւ տարբեր։ — Ալիշան, 299–319։ Շահխաթունեանց, Բ 134–156։ Նոր Հայաստան, 252–255։ Գնդարբուեի, 4–24։ Փորձ, Բ. գ 230–233։ Եւ այլն։

ԵՐԵՒԱՐԲ, ԵՐԻՎԱՐԲ կամ ԵՐԻՒԱՐԿ. — Տաւրիսեանի հին գաւառներէն մին։ Սահմանակից կը կարծուի լինել Մոկաց Աստանից ձորոյն, թեմմայի Աբծրունեաց հետեւեալ տողերէն. «Գարձեալ գայ (Գագիկ) ի գաւառն անուանեալն Էրիւարկ. ամուր և անդ գիւղքն Պաղայ և գՓարնուաց. գայ և ի ձորն Աստանից, ամուր և գայն ևս ամրոց, և սիրէ գաւառացն»։

ԵՐԵՒԼ. — Ալրարատայ վանանդ գաւառի մէջ կը կարծուի լինել նշանաւոր պատմական գաշտ, ուր՝ կ'ըսէ Բուզանդ, Արշակ Բ֊ի սպարապետ Վասակը պատերազմելով Պարսից Հազարաւուխտ զօրավարի հետ, շատ աւար և փիղեր առաւ։ Զօրրորդ գարու վերջերն ալ Արշակ Գ և Խոսրով Գ «պատահեն միմեանց ի գաշտին որ կոչի Երեւիլ, և ամն պատերազմ ընդ միմեանս առաւել յոյժ. հարկանեն զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Գարա Սիւնի ի պատերազմին, և փախստական լինի Արշակ առաւել»։ Խոր. Գ. ԽԶ։

ԵՐԵՒՈՒՄՆ կամ Ս. ՓՐԿԻՉ ՎԱՆՔ. Տես ԱՒԶ։

ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ կամ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ. — *Արցախի Ջրաբերդ գաւառի մէջ. կառուցուած է Մուռ սարէն դէպի արեւելք խոնարհուած լեռնաթաղկի մը հարաւահայեաց լանջի հարթակի վրայ, որուն սաւրսաը սրբոյց կը խոխոջայ Թարթառի ձախակողմեան Թրղին գետակը։ Տաճարը շինուած է չորս սիւներու վրայ փոքր գիրքով և անճաշակ ոճով։ Դրան ճակատակալ քարի և խորանի ճակատը ունի շինութեան վերաբերեալ արձանագրութիւններ, մին՝ ՌՂԽ և միւսն՝ ՌՃԺԴ թուին։ Վանքը ունի երկու քարաշէն խուցեր։ Արցախ, 232։*

ԵՐԶՆԿԱ. *Տես* ԵԶՆԿԱՑ։

ԵՐԼՋ. *Տես* ԵԶՆԿԱՑ և ՍՈՒՔ։

ԵՐԼՈՐ. *Տես* ՇՂՈՒԿ։

ԵՐԼՑ. *Տես* ԲԱՂՔ։

ԵՐԼՑԱԳՐԱԿ կամ ԵՐԻՑԱԳԱՐԱԿ. — *Գիւղ Ջրմկածագաւ. ունի 34 տուն հայ, Ս. Խաչ տաճարով եկեղեցի և վարժարան։ Հողագործ են։*

ԵՐՆԿԱՆ. *Տես* ԷՐՆԿԱՆ։

ԵՐՆՋԻԼ. — *Տիգրանակերտի շուրջը գըտնուած գիւղերէն մին. ունի 20 տուն հայ։*

ԵՐԻԶԱ կամ ԵՐԼՋ. — *Տուրուբերանի Աշմունիք գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ գիւղ կամ քաղաք։ Ղազար Փարպեցին կը գրէ վասնանայ համար՝ «Գնայր ի սահմանս Հաշտենից, և հասեալ բնակէր ի գաւառն Արշամունեաց՝ ի գիւղն որ կոչէր Երէզ. կամեցաւ հանգչիլ առաւս երկուս։ ... և հաւանեցուցեալ զարսն ի գեղջ Երիզայ.»։ Իսկ Ասողիկ ալ կը յիշէ հետեւեալ տողերու մէջ. «Ելանէ (վասիլ կայսրն) ի լեռանն կոհերայ... որ ընդ մէջ Հաշտենից, Ծոփաց և Խորձենոյ, և անաւասա գայ հասանէ ի գաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիզայ»։ Տես* ԵԶՆԿԱՑ։

ԵՐԻԶԱԿ. — *Կը յիշուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։*

ԵՐԻԶԿԱՑԻ կամ ԵՐԻՍԿՈՑԻ. *Տես* ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԵՐԻԹՈՒՆԻՔ. *Տես* ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ։

ԵՐԻ–ԳԻՒՂԱԹԱՂ. *Տես* ՄԱՄՈՒԱԿԵՐՏ։

ԵՐԻԺՈՒ. *Տես* ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԵՐԻԿԱՒ. — *Հին բերդ վասպուրականի Աղբերանի գաւառի, Բերկրի քաղաքի սահմանաց մօտ. զոր Աշուագեցիք առած էին Բերկրեցոց ձեռքէն և Սմբատ Ա. Թագաւորը նորէն զարձուց իրենց, ինչպէս կը վկայէ Թովմա Արծրունին։*

ԵՐԻ–ՀՈՒԱԹԱՂ. — *Աւերակ գիւղատեղի Արցախի Խաչէն գաւառի մէջ, Ազոխինասար գիւղի արեւելեան կողմը, ուր կայ հանգստարան և կանգուն եկեղեցի։*

ԵՐԻՇԱՑ. — *Սիւնեաց Սոպք գաւառի մէջ, երբեմն փոքր վիճակ մը ծանօթ էր այս անուամբ Սարգիս կաթուղիկոսի կոնդակի մէջ յիշուած։*

ԵՐԻՇԱՑ կամ ԽՐԻՇԱՑ. — *Վասպուրականի Ազձիշահովիտ գաւառի մէջ այս անուամբ գիւղ կամ քաղաք և բերդ կար, որուն աւերակները կը գտնեն ամանք Ականցի հիւսիսային արեւմտեան կողմը երկու վիրաս հետս սպիտակ բլրակի մը վրայ։ Շինուելեանց հմուտները սպիտակ քարերէ լինելով, բոլոր քաղաքի յատակագիծը յայտնի որոշ կ'երեւի, փողոցներ, հրապարակներ, տան բակ և սենեակներ։ Փողոցները ուղիղ և մէկ չափով ձգուած են. քաղաքը բաժնուած է բազմաթիւ թաղերու։ Աւերակաց այցելու ազգային մը կ'ըսէ. «Հայկական աւերակներու մէջ առաջին անգամն էի անանում ես մի այսպիսի կանոնաւոր յատակագիծ ունեցող բերդաքաղաք, որի համար մեր պատմութեան մէջ ոչինչ չէ յիշատակուած»։ — Մշակ, ժ. 121։*

ԵՐԻ ՎԱՆՔ. *Տես* ՀԻՆ ՂԱՐԱ–ԲՈՒԼԱՂ։

ԵՐԻՑԱԳԱՐԱԿ. *Տես* ԵՐԼՑԱԳՐԱԿ։

ԵՐԻՑԱԹՈՒՄԲ կամ ՔԻՒՐՔԻԿ. — *Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Զանգեզուր գաւառի մէջ։ Ունի 222 բնակիչ, բաժնուած 25 տան։*

ԵՐԻՑԱՆՔ. — *կը յիշուի Շատախու մէջ։*

ԵՐԻՑԱՇԷՆ. *Տես* ՍՈՒՔ։

ԵՐԻՑԱՎԱՆՔ. *Տես* ԵՐԻՑՈՒ ՎԱՆՔ.

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ. *Տես* ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ։

ԵՐԻՑՈՒ *իամ* ԵՐԻՑՈՒ ԳԻՒՂ. — *Գիւղ Աղբարատայ Բագրեւանդ գաւառի, Դայրէկէն ¼ ժամ հեռու արեւելակողմը. ունի 35 տուն հայ կաթոլիկ բնակիչներ։ Այս գիւղս Ջալալու Խրիցու գիւղէն որոշելու համար, տեղացիք կ'ըսեն Ֆրանկ կամ Սև Խրիցու գիւղ։ Տես* ՋԱՂՈՒՆ։

ԵՐԻՑՈՒ ՎԱՆՔ, ԵՐԻՑՎԱՆԻԿ, ԵՐԻՑԱՎԱՆՔ կամ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ. — կը հանդիսանայ լինել Սիւնեաց Բաղք գաւառի Բարկուշատ վիճակի մէջ։ Հ. Ագիշան կ'ըսէ, անապատելու և անծանօթ մնացած լինելով վանքս վերջին ուղեւորաց, նախատապատ պէտք ենք լինել պատմչին՝ (Օրպէլեան, ԺԹ) որ վանացս վրայ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ. «Էր վանքն այն տեղի գեղեցիկ և զամանատիպ ի վերայ բարձրաւանդակի մերձ, շինեալ եկեղեցի յանուն սրբոյն Նախավկային նորին երիցակայ ձեռամբ և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարսպին խցիկունք թուով միայն 40. մշանջենաւորք, խարազնապզեսք, լուռք. որք իբրեւ զկանթեղանս մշտատեսս և անշէջս յիւրաքանչիւր իւղի հանապազ տքնութեամբ վառեալք լինէին բացով շնորհաց Հոգւոյն։ Իսկ երիցակս այս սնեալ էր նախ բազում ամօք (ե դարու վերջերը) ի Բաղք գաւառի, ի տեղի մի քարանձաւ. և ապա գնացեալ ի վանս Բանակերոյն Գիւտայ, և անդ անցուցեալ բազում աւուրս անտանելի ճգնութեամբ. և ապա օժանդակութեամբ և հրամանաւ սրբոյ Տեառն Գիւտայ՝ եկեալ ի տեղին յայն 12 կրօնաւորօք և բազում ընչիւք, զոր պարգեւեալ էր Հայրն Գիւտ, շինեաց զեկեղեցին որ կայ։ Նոր երուսաղէմ։ Բայց ուրուքն որ ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր տեղիս, բնակեցուցեալ էր սուրբ Հօրն Գիւտայ յայնմ վայրի. որք հակառակէին շինութեան երիցակայ. զոր լուեալ սուրբ Հօրն եկն և համոզեաց գնոսա ի խաղաղութիւն. և սահմանեաց գպէտս ընձեռել ի վանիցն ըստ չափոյ. և ինքն օր ըստ օրէ գործակից լինէր շինուածոյն, և զճաշ շինողացն յղէր։ Եւ այսպէս շինեալ տուն Աստուծոյ և կանգնեալ տեղի փառաբանութեան, յարգարէ գնա ի բնակութիւն հրեշտակակրօն անձանց»։ Սիւնեաց Մուշէ եպիսկոպոսի վախճանէն վերջ (519ին առնուները), աշխարհին տիկինը Սահակիա՝ բոլոր ժողովրդեան հետ հրաւիրեալ համանուն Տէր Մուշէ Հայոց կաթուղիկոսը, իբրեն երկրին տեսուչ խնդրեց այս երիցակը, որ չանձն չառաւ, անոր համար կաթողիկոսը գալով «ի սրահ նորա, և ի սրամուտութեամբ ցասուցեալ կնքեաց նշանաւ խաչին, ասէ. Լսեմք այդպէս յամառեալ կաս. դու գոյ ի քեզ. սատակեցէ Աստուած ի չարն, և հալածեսցէ։ Յայնժամ լնդ բան սրբոյն ել ծուխ թանձր իբր զփոթորիկ հողմոյ և վերացաւ ի առնէն. և ապա եկեալ երամք սպիտակ աղաւնեաց իջան ի ցուս սրահին, և մին ի նոցանէ սլացեալ եկն իջաւ ի վերայ երիցակայ, և շրջէր ի վերայ խորշոր քուսիմացին, և նուազ ձայնիւ խօսէր մարդկօրէն. Աւժան է, աւժան է. իսկ բազմութիւնն տեսեալ զայն, մեծապէս զոչէին միաբան. Աւժան է, աւժան է։ Զայն տեսեալ սուրբ Հայրն՝ այլ ոչինչ իշխեաց ընդդիմաբանել, այլ ի գուռն անկեալ առաջի կաթողիկոսին արտասուաթոր կականմամբ ասէր. Կամք Տեառնդ լիցի և ոչ իմն. ապա առեալ Տեառնէն զձեռանէն՝ առնի յեկեղեցին, և հանեալ ի բեմն՝ օծանէ զնա միւռոպօղիտ Սիւնեաց, և բերեալ նստուցանէ յաթոռն։ ...Իսկ երանելին Երիցակ կալեալ զաթոռն առ մի՝ փոխի ի վերինն Երուսաղէմ»։ — Վանքս և Աճարան վանահայրը կը յիշուին նաեւ Սիւնեաց նոր իշխանաց պայծառութեան օրով 843 թուին։ Իննսերորդ գարուն վերջերը Գեորգ Սիւնեաւն անուն երիտասարդը, ցանկալով ներածնեական վարուց, կը թողու կինը և ծնողքը և «զգեցեալ մազեղէն խաշոր և գլզլէնս պատառոտուն, գընայր ի մեծ առաքինարանն Երիցու վանաց, առ աստուածազգեաց և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ էգումենոն Թէոդորոս քահանայ. և նա յոյժ ուրախութեամբ ընկալաւ գնա, իսկ ի մացեալ մեր նորա և կնոջն և առեալ գհամազգի իշխանն Սիւնեաց, գիմեցին ի վանսն Երիցու. և բազում և գանազան մեղեսաւոք ջանացին, և ոչինչ կարացին գնա շարժել յայնմ կամաց... Թողին գնա ի կամս իւր և գնացին»։ Որ վերջը երթալով Սիւնեաց Հ. Մաշտոց մեծ ճգնաւորի մօտ և անկէ մարգուելով, գարձաւ գարձեալ Երիցու վանքը. երկրորդ անգամ նա Սիւնեաց երթալով և անկէ դիր առնելով Գէորգ կաթողիկոսի հրամանով քահանայ ձեռնադրուեցաւ և կը միխիթարուէր Մաշտոցի թղթերով, որուն վախճանէն վերջը՝ երթալ «բերէր գշարժանն և գվենգզուկն խայրակերով, և գպարե-

զօա երանելոյն, նշան յանուն Միհնաց. և ինքն բնակէր յերիցս վանս ընդ Թէո-դորոսի հրեշտակակրօն վարուք. և անդէն վախճանեալ, եղաւ սրբատնեալ մարմին նո-ա ընդ երիցս երանեալ սուրբ հօրն երից-ցակաց, ի նմին սրբարանի»: — Միհնաց պատմութեան մէջ, աշխարհին նշանաւոր վանքերէն կը համարուի վանքս, որուն կրօ-նաւորներն էին խստակրօն և մշտապաշտօն: Դարերի բէկի ժամանակ վանացս մօտ եղած պիղծն կոչուած է Կարմիր վանք, հնաւեա-բար և վանքս. իսկ եկեղեցին՝ Ս. Աստուա-ծածին: Յանկալի էր նորագոյն տեղեկու-թիւնք հինաւուրց վանացս վրայ: — Միսա-կան, 280–281:

ԵՐԻՑՎԱՆԻԿ. Տես ԵՐԻՑՈՒ ՎԱՆՔ:

ԵՐԿԱԹԱՀԱՆՔ. — Այս անուամբ բլուր մը կը յիշուի Ագնձենաց աշխարհի մէջ:

ԵՐԿԱԹԱՀԱՏԱՅ ԼԵՌ և ՁՈՐ. — Կը յիշէ Բուզանդ Աղձնաց աշխարհի մէջ. լեռս սահ-մանակից է Վասպուրականի Իշտունեաց գաւառի. այս լեռներէն կը հանէին երկաթ:

ԵՐԿԱԹԱՍԱՐ. — Այրարատեայ կոստայք գաւառի մէջ, Պագնի պիղծի մօտ կը գտնուի այս անուամբ բլուր մը:

ԵՐԿԱՅՆ–ԱՐՏ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ:

ԵՐԿԱՅՆՈՐԻՔ.—Կը յիշէ Եղիշէ Հայոց աշ-խարհի ամուր տեղերու հետ, զորս Հայոց նախարարները վարդանայ հետ միաբանած առին Պարսից ձեռքէն:

ԵՐԿԱՅՆ կամ ԼԵՐԿԱՆ. — Գիւղ Երզնկայի (Բարձր Հայք). 50 տուն հայ և 10 տուն մահմէտական կայ: Հայք ունին Ս. Աստուա-ծածին անուամբ եկեղեցի և վարժարան մը: Հողագործ ու կտաւագործ են:

ԵՐԿԱՅՆ ՄԱՆՈՒՈՒԻՐ. — Կարնոյ պիղծ, 15 տուն հայ և 20 տուն մահմէտական բնա-կիչներով: Հողագործ են:

ԵՐԿԱՆ կամ ԵՐԿԱՆ ԸՆԿՈՑՋ. — Գիւղ Զարեհաւանդի խոզագ գաւառակի. միայն 10 տուն հայ կայ: Եկեղեցին է Ս. Կարապետ անուն վանքը, որուն շէնքը հոյակապ է և մեծագործ. բայց քայքայուած են քանի մը մասերը: Վանացս ձեւն, բնաւոր ճարտարա-պետութենն և քանդակները երբոպացի ու-ղեւորաց անգամ հիացումն պատճառեր են: Տաճարը Ս. Աստուածածնի անունով է և դրան ճակատին վրայ կայ շինութեան յիշատա-կարան մը Հայոց ՆԽԴ թուականաւ: Բրդե-րը յափշտակած են վանացս կաղուածները:

ԵՐԿԻ կամ ԼԵՐԿԻ. — Գիւղ Բաբերդի ա-բեմանան հիւսիսային կողմը, 3 ժամու հե-ռաւորութեամբ. ունի 56–60 տուն զուտ հայ հողագործ բնակիչ: Ժողովուրդն ընդհանրա-պէս մաքուր՝ չարքաշ ու տաճուն է: Գիւղին պիրքն բարձր լլլալով՝ գրեթէ բնաւ ջրաղբի հոգ չունի. բայց՝ ընդհակառակն՝ ցուրնեը շատ բնաւոր է և շրջակայ դիւղերու ցուրնէն ծանր կշռելուն պատճառաւ՝ միշտ աւելի կ'արժէ և նախապատիւ է հաց շինելու հա-մար: Գիւղս ունի նաեւ ջրաղացքի քար կարելու նշանաւոր քարահանք մը, ուրկէ կը առնուի նաեւ կարնոյ և մերձակայ նահան-գաց բոլոր ջաղացքներու համար: Կայ Ս. Լուսաւորչի անուամբ եկեղեցի մը և վարժա-րան՝ 45 աշակերտներով:

ԵՐԿՆԻՍ. — Գիւղ կարնոյ. ունի 10 տուն հայ և 25 տուն մահմէտական: Հայք հո-ղագործ են, և ունին Ս. Հրեշտակապետ ա-նուամբ եկեղեցի մը ու վարժարան:

ԵՐԿՈՐԵԱԿ կամ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ ԼԵՌ. — Ա-ռաջին Հայոց մէջ և կեսարիա քաղաքի մօտ է երկրագործ լեռս, որուն այլազգիք Ազիոտա-ղը (Տես) կ'ըսեն:

ԵՐԿՈՒ ԳՈՄԵՐ. — Ինճիճեան կը յիշէ գիւղս, Տարսերեանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտակողմն:

ԵՐԿՈՒ ԽՉՆԵՐ. — Նոյնպէս Ինճիճեան կը յիշէ այս անուամբ գիւղ Տարօնի մէջ:

ԵՐՆԱՍԱՆԵԱՑ ՎԱՆՔ. — Միհնաց աշխար-հի վանքերէն մին:

ԵՐՆԱՍԱՆՑ. — Այսպէս եւս գրուած է Միհնաց (Արեւիք) եկաւառան աւանի ա-նունն:

ԵՐՆՋԱԿ. — Միհնաց աշխարհի գաւառ-ներէն մին, որ համանուն գետոյն ընթացիկ համեմատ երկնցած է հիւսիսէ դէպի հարաւ: Սահմանքն են արեւելքէն Գողթն, արեւ-մուտքէն Ձահուկ և Նախճաւան: Հարաւէն Երասխ, հիւսիսէն Ծղուկ և Ձահուկ: Օր-պէլեան պատմիչը յիշելով աշխարհին ա-նուանի բերդերը, կը յայտնէ, թէ «մի սին ի կանանց տահապետացն (Միհնաց) երբեմն անուն՝ շինէ և զանհնարին ամուրս երկն-

ջակ, յիւր անուն՝ բերդն և գաւառն կոչի Երնջակայ, և գնեն ի նմա առն գանձու և հարկաց աշխարհին»։ Իւր ամուր դիրքովը շատ անգամներ փրկութիւն և կորստեան պատճառ եղաւ. վասն զի երբեմն պատերազմի վտանգներու միջոց իւր մէջ կ՚ապաստանէին իշխաններըը և ժողովուրդը ու կ՚ազատէին. և երբեմն ալ մատնութեամբ կամ բռնութեամբ թշնամիներէն բերդի մէջ ամբացուղները չարաչար կը պատուհասէին շատ արիւն թափելով, ինչպէս Յուսուփէն՝ Ա. Սմբատի ժամանակ, Լէնկթիմուրէն և ուրիշներ. որոնցմէ վերջապէս բոլորովին քանդուեր է հռչակաւոր բերդը։ — Յուսուփ բռնաւորը քաջութեան ոճրագործութիւններով գաւառէս մեհենէ վերջ, Գողթան ամրանները երբեմն ջակայ ախոյեցին. յետոյ երկիրը խաղաղած միջոց Չանացին Սիւնեաց իշխանները գրաւել, և երբ ամրանները չէին ուզել տալ, Հայք սկսան պատերազմով ախոյեանել և ամրացին զօրաց յաղթեցին։ Այս պատճառաւ գաւառ ճանաչութեամբ կ՚ապտուի Սիւնեաց նախարահ իշխանին վասակ Սուրբերը, որուն մահը սպառով պատմիչը, կը մոռնայ յաւելուլ պատերազմին վախճանը, պարեօք Սիւնեցիք ախոյեցին գաւառիս Թէ ոչ։

Կրօնական տեսութեամբ նոյն նշանաւոր եղած է Երնջակ, նախ ունենալով երբեմն առանձին եպիսկոպոս՝ Թէեւ ոչ օրինաւորապէս, ինչպէս կը յայտնէ Սարգիս կաթողիկոս Ժ.Դ դարու սկիզբները. բայց որոշ չի գիտցուիր երբ սկսած է գաւառիս եպիսկոպոսութիւնն։ Վերոյիշեալ կաթողիկոսը խափանելով գաւառիս եպիսկոպոսութիւնն՝ զայն Տաթեւու մեծաւորած Թեմին հետ միացուց. բայց գարձեալ վերջը եպիսկոպոսներ եղած են, որոնք բան պատմին պահպանեալ էին։ Վասն զի ոմն Յովհաննէս Ապրակունեցի, Սկզբաբոյ երիցու որդին, ԺԴ դարու կէսէն վերջ, երեմալով Կոստանդին կաթողիկոսին «և պատրեալ զնա խաբող բանիւք, ձեռնադրի եպիսկոպոս, և դայ յԵրնջակու վանս, յօդելով պատճառս այսպիսի. Թէ և այս ամէնս է եպիսկոպոսաց, զի զոն ասա զերեզմանք հայրապետաց. որք էին պատահմամբ եկեալ վասն ամրութեան բերդին, ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւնեաց, անդ վախճանեալ։ Եւ Թիկունս ապարեալ յայլազգեացն հազարապետ մի, բանաբար յափշտակեաց զԵրնջակ գաւառ. վասն որոյ ելեալ եպիսկոպոսացն Տէր Սարգսի ի Ներաւանից և Տէր Յովհաննէս ի Տաթեւոյ», կ՚երթան կոստանդնի յաջորդ Յակոբ կաթողիկոսին, նզածը կ՚իմացնեն, և անկէց արգիլական գիր առնելով, կու տան Պօղոս քաջ և հզօր իշխանին՝ որ պաշտպան էր եպիսկոպոսին, և անկէ հրաժարականի ձեռագիր կ՚ընդունին. յետոյ բռնելով Յովհաննէս եպիսկոպոսը, վրայէն զգեստը և կարգը կը հանեն։ — Դար մը վերջը Ս. կաթողիկոսի վանքը նորոգուելով կը թուի թէ վիճակին առաջնորդարան եղած է, և ոչ եպիսկոպոսարան. բայց տեղւոյն կրկին վերաշինութենէն վերջ, Ժ. դարու կիսուն, գարձեալ կը յայտնուին Երնջակայ եպիսկոպոսներ, որոնք միանգամայն առաջնորդ եղած են Ս. կաթողիկոսի վանաց։ — Երնջակայ երկրորդ կրօնական նշանաւոր երեւոյթն ալ է Մխոյանոց կոչուած Հայոց ընկերութիւնը և անոնց կրօնաւորները, որոնք յարած էին Բարդզդաց կամ Դամինիկեանց կարգին։ Ասոնք որովհետեւ մասամբ մը հայկական ծէսերը փոխած էին լատինականի, ազգայնոց առելի գարձան, և այս պատճառաւ ի սկզբան շատ անպատեհութեանց և խռովութեանց առիթներ եղած են, եթէ անաչառութեամբ քննենք, ոչ միայն լատինածէս հայ Մխոյանոցը՝ այլ և հայածէս ազգայնոց կողմէ։ Քանի այս ընկերութիւնը հաստատուելով, Հռովմայ Քահանայապետի հաճութեամբ առան ձին եպիսկոպոս ևս գրուելով՝ յաւուրս գաւառ ունեցան Մխոյանոցները Եպիսկոպոսանիստ անուամբ։ Այնուհետեւ հանգարտած սկսան հոլուել իրենց հօտը, չորս գրի ածելի, առէլ նեղութիւններ ևս կրելով ազգայիններէ ու այլազգիներէ։ Պարսից և Օսմանցոց բանակներէն երկիրը բոլորովին աւերած միջոց, ասոնք ալ գաղթեցին այլ և այլ հեռաւոր կողմեր։ Ասոնց միջէն եղած են առաքելական, վիճակական և գործունեայ մարդիկներ՝ որոնք մինչեւ անգամ Պարսից Շահերու գոնէն գեսպանութեամբ գրկուած են եւրոպական տէրութեանց և

Հռոմմայ գնները, և փոխադարձաբար։ Մեր նիւթէն դուրս եղած կը լինինք, եթէ երկաթինք մեր խօսքը այս Միթարեղաց նկատագիրն և գործունէութիւնն առաջ գնելով, որոնց վրայ փափագողները կրնան ընդարձակ ծանօթութիւն առնուլ Հ. Ալիշանի Սիսական գրոց 381–408 էջերու մէջ ամփոփուած և հմտութեամբ գրուած գրուագէն։

Երնջակ տարածութեամբ այնչափ մեծ չէ, մանն պի միայն գետ մը ունի և մանր ձորակներ. բազմաթիւ վիճակներու չի բաժնուիր, մանաւանդ որ երկրին մեծ մասը կը գրաւեն լերանց ստքերը. միայն արեւելակողմը, Բրսաւաձորի սահմանակից կայ գետակ մը, որ կը ձեւանայ երկու ակունքներէ՝ որոնցմէ մին կը կոչուի Ժաղաժուր։ Իսկ լեռներէն յիշելու արժանաւոր են Երբան տաղ, Տպրի տաղ և Պալը գայա։ — Գաւառիս գիւղերը, Սիսնոց ամէնուն հին ցուցակի համեմատ, որովհետեւ Գողթան հետ խառն էին՝ հոն նշանակեցինք. իսկ հոս կը դնենք այժմեան վիճակագրութենէն մեզ ծանօթ եղածներուս աւելուածք, սկսելով հիւսիսէն գետոյն ընթացիկ համեմատ և աւարտելով դէպ ի հարաւ՝ մինչեւ Երասխ.

Լեռաքաղաղ
Աքաւսեակ. Աքաւիս
Ջուվալա
Ղազանճի. Շահկերտ
Թէյլազ
Ընզուր Վերին
— Միջին
— Ներքին
Շոռոթ. Շուռուխ
Գաղ կամ Կեալ Ժաղաժուր
Փարադաշտ. Փորադաշտ
Խօշկաշէն
Խան–աղա
Ներաշէն
Խաչափարախ
Ալիճաղ
Պանամեար. Ապարաներ
Քունա
Ապրակունիք
Գզըլճա
Աբազին
Ճամալտին–Պաշ
— Եախ
Քիւզնիւտ. Կզնուտ
Ջուղայ
Միլախ կամ Միլան

Եւ Մագրա, Բերդիկ, Տարաժարգ կամ Թազաւորաժարգ, և այլ աւերակներ։ Հ. Ալիշան՝ գաւառս երկու մասանց կը բաժնէ. ժաղաժուր, Երնջակ առանձին և Ջուղայ։ — Երնջակ գաւառը Նախիջեւանի մասն լինելով, անոր նման իր արգասաւոր ծոցէն յառաջ կը բերէ և մեր մշակին կը պարգեւէ անոնց անոնց տեսակ բարիքներ, բայց ի քանի մը լեռնային մասերէն, որոնց ցուրտ կլիմային չեն դիմանար ջերմով աճեցող բերքեր։ Տեղւոյն երկրագործութիւնը բաւական լաւ լինելով, կ'առաջացուին առատ և մաքուր տեսակ ցորեն, գարի, բամբակ, հաճար, կնջիթ, կաղհաղ, սեխ, ձմերուկ, վարունգ, և այլն։ Ընտիր է ծիրանը կամ գամոնը, նոյնպէս տեղ տեղ նուռն ու թուզ, տանձ, խնձոր, սերկեվիլ, ընկոյզ, կաղին, և այլն։ Այգիներ շատ կան, գոյներգոյն գինիներով։ Գաւառիս մէջ կը գտնուին նաեւ Հայաստանի գաշտաց և լերանց մէջ գտնուած բնաւանի և վայրենի անասնոց, գազանաց, թռչնոց և սողնոց գրեթէ ամէն տեսակները։ Երնջակայ գաւառի մէջ ցարդ յայտնուած հանքերն են՝ ոսկի, արծաթ, պղինձ, կիր, կայծքար, ջրաղացաքար, աժսուխ, և այլն. ինչպէս նաեւ տեղ տեղ տեսակ տեսակ հանքային ջրեր։

Երնջակ գետոյն ձախ ափեւ վրայ, Նոբաշէն գիւղէն երկու վերստ հեռու կը գտնուի, գաւառին հռչակաւոր և ըստ պատմչին «անհնարին ամուրն» կոչուած Երնջակայ բերդը, տեղացած քարաշէնքն մը վրայ բարձրացած։ Ամրոցիս գլխէն անցած գառնապէտ և քառանկեայ անցից յիշատակը զմայլ կը զարհուրեցնէ։ Երբեմն Սիւնեաց պայազատներու հարկաց և գանձուց տուն եղած է, և յետոյ, ինչպէս կանխաւ ըսինք, շատ անգամ բազմաց ապաստանարան մինչեւ ժէ դար։ Պատմութեան մէջ առաջին անգամ նշանաւոր կը հանդիպանայ Քաւառի բռնաւորի պաշարմամբը և Բագրատունի Աբա-

բաա բաբեպաշա թագաւորի սպրալի կա-
տարածովը։ Նոյն ժամանակները Միհնաց
իշխանները և թագաւորի եղբայրը, անուա-
նի ամրութեան վրայ վատահացած, իրենց գան-
ձերը և գանձերէն աւելի սիրելի սիիիններր
հոս ապահոված էին, զգուշութեան համար
կապկելով բաւական թուով պահապաններ։
Այգուէթ ոսոիկները հոս գիմելով, երբ պա-
շարմամբ և պատերազմով չկրցաւ ա-
րիլ, խորհեցաւ Ամրաա թագաւորի ձեռ-
քով (ինչպէս իմուցեր էր գինքը կամովի
Աբրահաբեցի ամրացէն), այս ամրացին ևս
առիլ. և բերդապահները թոյլ չտալով ա-
նոնց աչքերուն գիմաց բերդին տարտար,
անհնարին տանջանքներու կ'ենթարկէ գիտ-
գաւորը, որ մեծ համբերութեամբ և սուրբ
հաւատքով խոտովանական մահուամբ կը
վախճանի։ Այսօրէն ոսոիկաբը Ամրաատայ
կեանքը գրաւելէն վերջ, որչափ և բերդի
պաշարումն ու պատերազմը կը տատակացնէ,
տակաւին անհնարին կը լինի, մինչեւ որ ա-
մենահաս և արագահաս նենգութեան ուժաս-
նութեան մեքենաները թշնամին յանկարծ
մերկազէն գէպի ներս խուժել կու տան, ա-
հարեկելով և անհնարին գանութեան սուգի
մէջ համակելով մէջիններբը. թշնամին՝ անպի-
տան և ագեղ մարդիկ տրամարկէ վերջ,
առյդները ու գեղեցիկները գերեց. նոյնպէս
մեծատանց կանայքը ու մանուկները։ Մինչեւ
ԺԴ դար, տեղւոյս գէպքերը անծանօթ կը
մնան. նոյն միջոց Թամեարաց եղեկէն ա-
ռաջ՝ Պարսից ամարկէր կամ սուլտաններ,
Էրզնկակայ բերդը, Ձահուկ և անոնց տահ-
մանները պարգեւաց Էյիկուժ Օրթեկեանցին.
որուն որդիքը Թամեարաց մօտ շնորհ գտան
և ժառանգեցին։ Կը թուի թէ քրիստոնէից
ձեռք մնաց ամրոցս շատ ժամանակ, վասն
զի Մխարանոզները վատահարար կը բնա-
կէին գաւառս գիւղերու մէջ մինչեւ ԺԴ
դար. այս բանս կը հաստատէ 1358ին
ած կիսագծ յիշատակագիր մը, ըսելով.
«Ս ոօրէն Սարմիչն ի բերդ Էրզնկակայ,
և շա ինդեցիք տապալեաց վասն մերոց
խնդ. և պերի են բերել ի բերդ...
բազում աշ ոօր ու ընչիք թափեցի
զգիրքս»։ Ժամա ոիկից Մխիթար Ապա-
բանեցիի համեմատ, Էրզնկակայ բերդը Մխա-
բանոզաց ձեռքը ևս եղած է. վասն զի
Մաղաքիա Գրիմեցւոյն համար կ'ըսէ, թէ
հետը առնելով «զամենս ի յաշակերտաց
Սարգիս վարդապետին ի բերդն Էրզնջակոյ,
և նա ահացուցանել գնոսա չարչարանօք
մահու, զի ուրացին զձշմարտութիւն, և
ապա տարեալ գնոսա ի վանս իւր՝ էլհնաց
գնոսա բազում չարչարանօք և փեսաց
զամենայն հետս նոցա»։

Քիչ տարիներ վերջ անտսիկ բերդիս վրայ
հասաւ Լէնկթիմուրի հրամանատարը 1387
տարւոյ գարնան, առաջնորդութեամբ Մեհմ-
մետ Տէրվիշ Պէրթաի. յետոյ օգնական և-
կան Ագքուդայի որդին Թիմուր խօճայ, և
ապա Միրան Շահ՝ որ շատ ամիսներ պա-
շարելով նոսա բերդի շուրջը. վասն զի
պաշարուդներէն ոչ միայն ընդդիմութեան
այլ և ընդդիմամարտութեան հանդիպեցաւ.
որովհետեւ անոնց արտաքուստ օգնութեան
հասան վրաց Գէորգ թագաւորը Աբտնաց
(Օսից) օգնութեամբ և ուրիշ իշխաններ. թա-
գաւորը յաղթահարեց աշխարհաւեր բռնա-
տրի որդւոց բանակը բերդի մօտ, ապատեց
անոր մէջ ապաստնած Թիր կամ Դահիր
անուն բերդապահը, որ բուա սմանց Պապ-
տատու իշխողի Ահմէտ Ձելայիրեանի որդին
էր. բայց կը կարծուի բլլալ Գաղիան աէրը,
վասն զի վրաց պատմիչ մ'ալ զանիկա աէր
Ձալաթեայ կը կոչէ և կ'անուանէ Թիր Սուլ-
տան։ Մեր տարեգրիներէն մին 1391ին
համառօտիւ կը գրէ. «Էր սուլտան Ահմա-
թի որդին Դայիրէ Յէրզնջայ բերդն. և վրաց
թագաւորն եկն ի վերայ բերդին և էառ.
սուլտան Դայիրն տարաւ ի Տպղիս»։ Լէնկ-
թիմուր այս բանս լսելով և բարկացած հրա-
մայից ծեծով պատժել թուլ և փախստա-
կան զօրավարները, և ապագանք առնուլ ա-
նոնց ձիերը և դինուորաց բաշխել. վարձա-
տրից իրեն Ապուպէքր թոսը, որ պատերազ-
մին մէջ սպանուած էր Շարքի Սիսի Ալի
անուն իշխանը։ Էրզնկակեցւոց պահակալու-
թիւնն ունեց երեք տարիէ աւելի, պաշա-
րողներուն օգնութեան հասան Լէնկթիմուրի
նորանոր զունդերը, որոնց մէջ էին նաեւ ի-
րեն մէկ ուրիշ հոչակաւոր որդին Շահ–Ռուհ,
և Ցիրուզ Շահ և ուրիշներ. բայց տոնը
գնս չհասած, սպառելով բերդի մէջ ուտե-

լիք և նոյն խոկ մարմ և նոյն անսակ բա-
ներ, զորս ուրիշ բան չըլլալով կ'ուտէին,
սոխակուհյան անձնասուր ըլլալ։ Տարիներ
վերջը, Լէնկթիմուր Աղուանից կոզմերը գա-
ցած միջոց, անսնելու եկաւ ամրոցիս՝ որ
այնչափ նեղից իւր զօրքերը, հետը բերած
էր նաև իւր սիկիններն ու սիրելիները.
եկաւ քարալերին մինչև գագաթը, ամէն
բան խնամքով քննեց և զարձաւ։ — Ասոր
մահէն վերջ Գարագոյունլու Թուրքերը, չի
գիտցուիր ինչ կերպով, յաջողեցան ձեռք
ձգել բերդս Թավարներէն, և հոն ամրա-
նալով պատերազմասէր Խակհաճի Գարա
Եուսուֆի որդին՝ իրեն վրայ երբ Շահ-
Ռուհ եկաւ (1435) և բերդը մեքենաներով
պաշարեց, փախչելու հնարք գտաւ, թերևս
մատնուելնէ ալ կասկածելով։ Խակհաճէր
ուրիշ ասպատակութիւններէ և արիւնհեղու-
թիւններէ վերջ, իրենները իրմէ զգուելով
գնացին Ձիանշահ եղբօրը մօտ, և «Ինքն
մեռցիալ սակաւ ատամբ՝ մոզապատիճ եղեալ
յեղբօրէ իւրմէ, գաղտագողի երթեալ յա-
մուրն Էրնջակու ձմեռն մի լման անդ ան-
ցոյց գիհանաս իւր ի բերդին, աբրեցութեամբ։
Իսկ եղբօրն շրջապատեալ պաշարեաց գնա
զօրօք իւրովք՝ մինչ ի յեղդանակ գարնա-
նային ժամանակին, ամրոցս և բնակութիւնս
շինելով շուրջ զամրոցսն։... Եւ էր Աքան-
գարայ որդի մի, Շահուշբան անուն, միա-
բանեալ ինքն և մայր իւր և տատն զօրեղ զօ-
րականս և քաջ մենամարտիկս, և ի գիշերի
երթեալ գոն գնա ի քուն, աբրեալ ի կին-
ւոյ, հանեալ զսուրս իւրեանց սրախողխող
արարեալ սպանին գնա, ոչ գիտելով բարև-
կամաց նորա ... և զգլուխ նորա հատեալ
հատն տանել գնա առ եղբայրն իւր Ջհան-
շայ, որ շուրջ նստեալ պաշարէին գնա. և
նորա տեսեալ ուրախութիւն մեծ արարեալ
և նաւակատիս կատարեալ՝ փառս տային
Աստուծոյ, ի գիշերամիս իւրեանց՝ ծնեալ
որդին ի նմանէ սիրեցեալ՝ սպան, և ոչ ին-
քեանք սպանին գնա. և բարձաւ չարն ի
միջոյ»։ այս գէպքը հանդիպեցաւ 1437ին։

Ցայտնի է թէ անկէց վերջ եւս բերդը մնաց նոյն Թուրքմաններու ձեռքը, բայց չի գիտցուիր մինչև երբ։ 1480ին տեղւոյն տիրող կը յիշուի տէն Սկյար Ադիբէկ։ Ժ. դարու սկիզբը Շահ Աբասի Օսմանցւոց վրայ բրած արշաւանք-
ներու միջոց, Երեւանայ կուսակալ Ամիր-
գիեանա խանը (1603ին) կը նստէր Երնջա-
կայ բերդին մէջ, և երբ լսեց Օսմանցւոց
Գեղամայ երկիրը տապատակելը, անոնց վը-
րայ գրկից Գառապէկը և վանից կոմայ
սահմաններըը։ Հաւանօրէն վերջին գարուց
մէջ եւս գանազան դէպքեր հանդիպեցան
բերդիս, որուն մէջ պահապաններ կը գնէին
Դախճաւանի կոզմիակալները, մինչև որ
համանուն քաղաքի հետ բերդս ալ բոլորո-
վին ամայացաւ. բայց ամայանալուն կամ
վերջին լրման դէպքը անծանօթ կը մնայ.
միայն հաւանական կը թուի թէ սա եւս
Շահկերտի և ուրիշ վերձաւորներու հանգոյն,
Նաւսիր Շահի ժամանակ և անոր մահէն վերջ
ամայացած ըլլայ։ Վերջին Ռուս–Պարսիկ
պատերազմից ժամանակ, այստեղ ապաս-
տաներ են Պարսից զօրքերը. անոնցմէ վերջն
Ռուսաց սակաւաթիւ բանակը, մինչև որ
ամբողջ երկրին տիրացան։


Այս բերդս որ անմառիկ և անառիկ համարուած է մեր պատմիչներէն և գնա-
զան դէպքերով ալ հաւաստուած, մեր աշխար-
հի ամենէն նշանաւոր ամրոցներէն մին է։
Երկու զժուարին ճանապարհներ ունի, մին
հարաւային և միսն հիւսիսային կոզմէն.
վասն զի արեւմտեան կոզմէն լեռներ և ա-
րեւելքէն Երնջակ գետը կը պատսպարեն։
Հիւսիսային ճանապարհը կտիսաւ այնպէս
շինուած է եղեր, որ մէկ ձիով կարելի է
եղեր երթալ. իսկ այժմ շէնքերու փլատակ-
ներով և լերան գլխէն թափած սալերով պա-
կասած է. այսու հանդերձ ոտքով գնացողի
համար միւսէն գիւրին է. այս ճանապարհով
բարձրացած ժամանակ, ուղեւորն կը տեսնէ
երեք ամրապինդ պարիսպներ քարուկիր շի-
նուածքներ. առաջնապարիսպը ըստ կիսոյն
քանդուած է, միայն պահակներու տեղերը
աւելի դիմացեր են. միջնապարիսպը առաջ-
նոյն չափ վեռասուած չէ. իսկ ներքնապարիս-
պը գեռ մեծաւ մասամբ կանգուն մնացած
ամուր և բարձր շէնք մի է. այս պարսպի
քովերը կան քարուկիր և ամանք թրծած

ագիւռ շինուած սենեակներ՝ մեծաւ մասամբ անվնաս։ Պարսպէն ներս եւս կան բազմաթիւ մեծ ու փոքր սենեակներ, շինուած քարուկրով և ագիւռով, որոնց տանիքները միայն կը պակսին։ Լերան արեւմտեան հարաւային ծայրը տակաւին կը ծածկ ամբողջ քարաշէն դիւաթան մը։ Ուշադրութեան արժանի են բերդիս խուռով ինկած ջրամբարները, խրթնաքնդրը մեծ քայլ լայնութեամբ՝ քսան չորս քայլ երկայնութեամբ և վեց կանգուն խորութեամբ։ Այս ջրամբարները լեռ քարէ կարուած և աւազանի վերածուած են, որոնց մէջ անձրեւի և ձեան ջուրերը կը հաւաքուին յատուկ մանր փոքրած առուակներով։ Լերան գագաթը երկու ճիւղի բաժնուած է. այցելուն մէկ ճիւղի տարածութիւնը և վրայի շէնքերը դիտելէն վերջ կը պարտաւորի միւս գագաթն ալ հասուցանել, որ առաջինէն շատ բարձր է. այս ճիւղի վրայ գտնուած շէնքերը մեծ մասամբ կանգուն են. լերան մերկ ու միապաղաղ գագաթին վրայ կանգնած հոյակապ կամարները, ընդարձակ քառակուսի դահլիճ և չորս կողմի վայելուչ ճարտարապետուած շէնքերը ցոյց կու տան իշխանական արքունիք լինելը, որով և իրաւամբ մերձակայ բնակիչները Շահ–բահար (թագաւորագահ) կ՚անուանեն։ Աքանչելի և դիտելի է այս բարձրութեան անապատը, հարաւէն անմուխելով Երասխ և Գարատաղի լեռները, արեւմուտքէն Ալլարատ՝ իր բարձրաբերձ լեռներով, հիւսիսէն և արեւելքէն Սիւնեաց բարձրաւանդակները։ Հարաւային ճանապարհը չնայելով որ արդէն գժուարագնաց և տաժանցուցիչ է, գարձեալ երեք պարիսպներով ամրացած է. առաջ ներքնաբերդը, որ լեռան գլուխն է, այնպէս ամբոր և անվտանգ է, որ կարծես նոր շինուած է. աջ և ձախ կողմ կան երկու գեղեցիկ և անվնաս սենեակներ։ Բերդիս սահարտը կը նշմարուին պարսպաց և պատնիշաց հետքեր, ինչպէս նաև գէպի հիւսիս Շահկերտի կողմը բլրակի մը վրայ աւերակներ, որոնց մերձակայ բնակիչները կ՚աւանդեն լինել բերդը պաշարողաց բանակատեղին։ Բերդի մօտ կան նաև բազմաթիւ գերեզմաններ։

Վերոյիշեալ բերդի հարաւակողմը և անկէ չորս վերստ հեռաւորութեամբ կան և մեռեալ գիւղի մը մնացորդներ։ Գիւղաքաղաքի կամ աւանի հանդիսացող աւերակները։ Գաղաքս շինուած կ՚երեւի կէս մը հարթ լեռնագագաթի կի և կէս մը լեռներու վրայ, բայց ափսոս որ տգէտ ու հնութիւնս չսիրող մերձակայ խանապատ գիւղի թուրք բնակիչները, անցեալ գարու երկրորդ կիսուն մէջ տակաւ առ տակաւ քանդելով աւերակները՝ ապարակներ գարձուցած են, այնպէս որ այժմ հազիւ կան ու կը նշմարուին տան և ցից հիմքերու մնացորդներ։ Գաղաքաշինութեան պիտացը լեռնագագաթի վրայ է գերեզմանատունն, որ իր բազմաթիւ հին գերեզմաններով՝ գաղաքին երբեմն անցեալ բազմամարդութիւնն կը յայտնէ։ Ազգային այցելու մին՝ «Հնութիւնս ժանիքն ծակել է, կ՚ըսէ, գերեզմանաց բոլոր արձանագրութիւնները, պահելով միայն ի նշան քրիստոնէութեան մամռապատ խաչերը. այնքան երկար գեղերիլով քարերի մէջ հազիւ միայն մէկի վրայ այս գրերս որոշել կարացի թվին ՌԻԲ»։ Յաւուկ քննութիւնս և պեղմանց կը կարծեմ գաղաքիս աւերակներն։ Գերեզմաններու մէկ մասն ալ վերոյիշեալ թուրք գիւղացիք հերկելով գաշտի վերածած են։ — Երնջակ գաղաքը պատմութեան մէջ քիչ անգամ կը յիշուի, և բարգաւաճած կ՚երեւի Թ և Ժ գարուց մէջ։ Գաղաքիս մէջ ազգային ժողով գումարուեցաւ 841ին, յորում ներկայ էին իշխաններ և եպիսկոպոսներ, որոնք քննեցին և արգարացուցին Ովսէփի Յովհաննէս կաթողիկոսը, զոր Հայոց Գագարաց իշխանապետ, գիւբաւ մանկ ընդելով ամբաստանութեան, սպրծած էր սխոռէն։

Գաւառիս մէջ կը գտնուի Երնջակայ Ս. Կարապետ անուանի վանքը, Ալբակունեաց արեւմտակողմը, հարթ և գեղեցկատեսիլ տեղւոյ մը վրայ։ Հիմնարկութեան ժամանակն որոշ յայտնի չէ. միայն կը կարծուի ԺԱ. գարու վերջերը շինուած ըլլալ։ Պատմութիւնէն յայտնի է վանացս նորոգութիւն ԺԴ. գարու մէջ, այսինքն 1381ին Գրիգորի Մագաքիա վարպապետի ձեռքով։ Նոյն ժամանակ կը յիշուի տեղւոյն փակակալ անն Սահակ, որ վանքս բերաւ սնծանուն վար-

պապան Կախիկ, որ է Յովհ. Որոտնեցի, և շատ աշակերտներ ժողուեց, ուր մեռնելով Որոտնեցին 1388ին թողուեցաւ Ս. Գէորգայ վանքը։ Որոտնեցւոյն յաջորդած է վանացս իրրեւ առաջնորդ իրեն աշակերտներէն մին, իրեն ուներ յաջորդութեան կարգը և անուններըն կը ծածկուին անյայտութեան մէջ մինչեւ 1654 թուականը, յորում Մելքիսէդեկ կաթողիկոսի պատուիրակն գալով Լուսայի վարպապետ, Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներէն մին, իրեն ու-




Ձեղքի վանքն ի Տարօն. 289

ար Գրիգոր Տաթեւացին, որ իրեն վարպապետին շատացը հետեւելով կը ժողուէ շատ աշակերտներ և կ'ուսուցանէ. որ և երկու տարի վերջը ժամանակի վրդովմանց պատճառաւ խոյս կու տայ Տաթեւի վանքը։ Գրիգոր Տաթեւացիէն վերջ վանացս առաջնորդ

ութեան վիկայութեան համեմատ, «բազում աշխատութեամբ և անհանգիստ աշխատութեամբ ի հիմանդ ի վեր նոր իմն սքանչելագործեալ թեամբ շինեաց զեկեղեցի Սրբոյ Կարապետին, պարսպատն ամենայնիւ և կոփուածոյ

վիմաք և ձուլածոյ կրով»։ Վանացս բուրգերով պարիսպները հոդաշէն են, իսկ նկուղային քարակոփ հայակապ և գեղեցիկ, շինուած Լեսայիէն 1655 թուին, Դ. ազգ. վարդապետի օգնութեամբը. բարձր և վայելուչ կաթողիկէն միայն ապիւսաշէն է։ Տաճարն ունի երկու դուռն՝ արեւմտեան և հարաւայինն կողմերէն. արեւմտեան դրան եզերքը զարդարած են նուրբ քանդակագործութեամբ և կայ շինողայ յիշատակարանը։ Երկայնութիւնն է 23 քայլ և լայնութիւնը 10. հաստատուած է չորս մեծամեծ սիւներու վրայ և կամարակապ է։ Ունի մէկ պատարագի սեղան, որուն երկու կողմ կան կրկնայարկ աւանդատներ կամ մատուռներ։ Զախակողմեան մատրան մէջ կը պահուին սրբոց նշխարներ. ասոր յատակը ապիւսով ծածկած ժամանակ, Երեմիա վարդապետը անսած է գաղտնարանի դուռն մը և ներս մտնելով գտած է բաւական թուով ձեռագիր մատեաններ, Թեւիւս և ուրիշ անօթիներէններ և զարդեր։ Խորքանչիւր աւանդատան դրան վրայ գրուած է մէկ մէկ փոքրիկ դեղաքանդակ խաչքար, ամէն մէկի պատուանդանի վրայ կան արձանագրութիւններ, մին 1475 և միւսն 1605 թուականաւ։ Եկեղեցւոյ մէջը նկարներով զարդարուած է և ղեր, որուն մեացորդները սեպհոյն առասպազի և կաթողիկէին վրայ կը նշմարուին։ Արտաքուստ հիւսիսային որմոյն վրայ լուսամուխէն վեր կայ ուրիշ խաչքար մը 1655 թուականաւ արձանագրութեամբ Լեսայի վարդապետի։ Ուրիշ մեծ խաչքար մ՚ալ կայ վանացս մէջ (եր. 290) խոցագեղ անունով մէկու մը արձանագրութեամբ։ — Եկեղեցիս արեւմտեան կողմէն ունեցած է գաւիթ փոքրիկ քարերով և թրծած ապիւսով շինուած. այժմ միայն գաւթի կամարներու հիմունքը կը նշմարուին. վերջին առաջնորդներէն մին Երեմիա վարդապետ, հոս այս հիմանց վրայ սկսաւ է շինել կափածոյ քարերով փոքրիկ զանգակատուն մը, զոր չէ կարողացած աւարտել մահը կանխելով (1865ին)։ Եկեղեցւոյ հարաւային որմոյն կցուած է գեղեցիկ քարաշէն երկարաձեւ մատուռ մը՝ Սուրբ Աստվածածնայ նուիրուած, որուն շինութիւնն թուականը (1714) և շինողին՝ Շուրբեցի Խոչայ Ալվազին յիշատակարանն, ի ներքուստ գրուած է կարմիր ներկով կամարին վրայ։ Այս Աստիանոսի մատուռը ունի տասնեակը վրայ հատատաուած երկչարի զանգակատուն մը. առաջին քարաշէն յարկը, ինչպէս 1705 թուականաւ արձանագրութիւնն կը յայտնէ, յիշատակ է Նախիջեւանցի Պարոն Աղաճալի. երկրորդ յարկն շինուած է Երեմիա վարդապետի օրով թրծած ապիւսով և յիշատակ է Շուշեցի բա-



290. Երիշակաւոր Ս. Կարապետի վանաց խաչքար։

հպատշաճն կարապետ աղա Շահնազարեանց, որ և ունի զանգակատան արեւմտեան որմոյն մէջ ագուցուած փոքրիկ մարմարիոնի վրայ իրեն յիշատակագիրը։

Վանքս հռչակուած է իբրեւ բուժիչ օձահարներու. հաւատքով կը գիմեն նաեւ այլազգիներէն, և առնելով աւանդատան մէջ պահուած օրհնած հողէն, կը գնեն խայտուածին վրայ։ — Հոս պահուած սրբազան մասունքներէն նշանաւոր է Հազարփրկիչ անուամբ խաչը՝ ոսկեզօծ պահարանի մէջ, որուն

մէջ կը կարծուի ամիսփուած Քրիստոսի կոնքի մէկ մասը կամ թաշկինակը. քսա ամանց սա նոյն է Մարդպաւհնաց խաչին հետ. սակայ թափօրով կը տանին այլ և այլ կողմեր բժշկութեան համար, ինչպէս նաև 1878 տարւոյ սկիզբը Ազուլիս տարին, հոն հիւանդութիւններ ճարակած միջոց։ Կան նաև ուրիշ խաչեր, որոնց մէջ ամիսփուած են Ս. կարապետի նշխարաց մասունքները, ինչպէս նաև մեռոր աջը և Ս. Յակիրեանի՝ ոսկեզօծ պահարանի մէջ. խաչերէն մին նուիրած է Յակովբ կաթողիկոսը 1656 թուին։ Ասոնց հետ կը պահուին նաև հին և նոր կտակարան ձեռագիր մասնաւոններ, որոնցմէ մին (Աստուածաշունչ) 1663ին կ՚ընծայուի, քսա յիշատակարանին, «ի վանս երնջակայ, ի վայելումն հեղհեղոյի մեծ վարժապետին Եսայեայ, զոր յայս աւուրս նոր նորոգեալ կոփածու վիմով և գեղեցկագան յօրինուածով զսուրբ հիկեցին սր Ս. կարապետ վերձայնի. սր և իսկ յորմորիչ եղեւ սուրբ գրոցս, զի անչնջելի յիշատակ կայցէ ի սուրբ ուխտս Ազգականութեանց»։ Աւելորդ կը համարինք մես գրչագրաց յիշատակարանները եւս աստ յիշել։ — Անցեալ գարու կիսուն վանացս բնակարանները քայքայուած էին, միայն մնացած էր առաջնորդարանը, և յետոյ Երեմիա վարդապետը սենեակներ աւելցուց։ — Վանացս հիւսիսային պարսպի մօտ կայ բլրակ մը՝ որ միաբանից գերեզմանատեղին է. պարսպաց տարտան ալ կան հնագոյն գերեզմաններ խոյանձև քարերով. իսկ պարսպին հարաւակողմն յայտնաւեր են սենեակաձև գետնափոր գերեզմաններ՝ միայն ոսկորներով։ Վանքս ունի բաւական կալուածներ, ձիթհանք, ջրաղացներ. ասոնցմէ գաս նուէրներ կ՚ընդունի ուխտաւորներէն, մանաւանդ վարդավառին։ — Եկեղեցւոյն արեւելեան կողմը բաւական խոր փորուած ջրոյ աւազան մը կայ, որ կը լեցուէր, կ՚ըսեն, ջրոյ կաթուածներով՝ և այլ պատճառաւ Ս. կարաքեր կ՚ըսեն։ Արդարեն կը համարուէր այս աւազանը, և ինչպէս կը պատմեն, ամէն կիւրակամուտ երեկոները մոմ կը վառէին այս տեղ։ Աւանդութեամբ կ՚ըսեն թէ ժամանակաւ խոտ առատ և պատուական ցուրտ ջուր կը վազէր այս սուրբ աղբիւրէն, և ցամքած է վատաբարոյ մարդու մը վնասը պատճառաւ, որ գարշ գործով անարգած է ասոր յարգը վարդավառի խանդաղատանօք բազմութեան ժամանակ։ — Հնութիւնք հայրենեաց, 1–35, 89–100։ Միսակեան, 348–51. 363–65. 378–80։ Եւ այլն։


ԵՐՈՒԱՆԴԱԿԱՆ. Տես ՎԱՐԱԳ։

ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ. — Ա. յերեսաստեայ Աբշարունեաց գաւառի մէջ, Երուանդաշատի մօտ կը դնեն ոմանք Երուանդայ այս գաւառակերտին վայրը։ Խորենացին ալ առանց դիրքը ճշդելու, հետեւեալ կերպով կը նկարագրէ. «Բաղդր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ գաւառակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ, գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Բանզի զմիջոց հովիտն մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ականբիր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտաբուրոց կազմութիւն, որպէս շուրջ զրբոյն զայլ բոլորակութիւն ականայ։ Իսկ պրակմութիւն այգեստանոյ, իբր զարեւուտեաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ արտարեւ գեղաւոր կուսից յօնից զարեւուտեաց համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն գաշտաց, ծըռնոտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ գարեւուտից՝ ձախանցն՝ գերկրկերկրեան նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անբաժանելի ինն գոգցս ի բարձրաւանդակ թագաւորանիստն գհայեցուածսն ունի. և արտարեւ բերդի և թագաւորական գաւառակերտն»։

Ինչպէս այս նկարագրէն յայտնի կը տեսնուի, Երուանդակերտ ճոխացած էր գեղեցկութեամբ և ոչ ամրութեամբ, անոր համար շատով անպիտանի եղած է և պատմութեան մէջ ալ չի յիշուիր. միայն Ստեփ. պատմիչ (Դ) կը յիշէ ըսելով. «Երուանդակերտն՝ որ այժմ ասի Ադյադաչայ». և անոր հետեւելով, կը դնէ նաև Բագրատ աշխարհագրութեանը մէջ, ինչպէս նաև Գէորգ՝ Օմանեան պատմութեան մէջ։ Այս Ադյադաչայ բառացը չէ անշուշտ համեմատի վիճակի բերդը և ոչ ալ կէչտանի մօտ եղած գիղը. վասն զի ասոնք Երասխէն շատ հե-

ատ են։ Ամենը փոխանակ Ագճագալէի՝ կը համարին Միւրմէլիի հարաւային և կողմայ արեւելեան կողմը գտնուզ Գարագալէն, բայց այս եւս երասխէն հեռու կը թուի։

ըսուած տեղը։ Հելուեթիացի ճանապարհորդին այս պնդության աւերակաց վրայ ըրած նկարագիրն ալ կը համաձայնի Խորենացւոյն նկարագրութեան։ — Աւերակներուն մէջ կ'ո-




Ներկայացում խոխոջաքարի մացառներու։ 162

Հաւանական է Տիգրանի նշանակածը, երբոր անդամ քաղաքի մօտ, Ախուրեանի ձախակողմը, Հաճի Պայրամլուի հարաւակողմը և անկէ հեռու, Ռուսաց ընդարձակ աշխարհացոյցին վրայ նշանակուած Գղզի գայլ

ըոշուին երիս եկեղեցիներ՝ երկրաշարժէ հիմնայատակ եղած, և փղոցներու հետքեր. արեւելեան կողմն ալ գտնագան ձեւերով գեղմնաքարեր, որոնք՝ ինչպէս նաև աւերակներս, յատուկ քննութեան կը կարօտին։

Բնաշխ. Բառարան



292. Երուանդաշատի մօտ մահարձան։


Եթէ սուտկա մեր յետին պատմիչներն ալ այս տեղս համաձայնեան՝ Երուանդակերտ, այն ժամանակ Ժէ. դարու սկիզբը Ագնագալ կը կոչուէր և ունէր ամրոց, ուր եկաւ, Ա-

նան փախչելէ զալուսաբ, և սկսաւ Հայերը գերի առնել Պարսկաստան։ — Ա յրարատ, 62–64։ Եւ այլն։ Տես ԲԱՂՔ։

ԵՐՈՒԱՆԴԱՑ ԳԱՒԱՌ. *Տես ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ։*

ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ *կամ* ՄԱՐՄԱՆՑ. — *Ա յրարատայ Աշխարհնեաց գաւառի կամ Երուանդ Բ թագաւորի անուամբ կոչուած Երուանդեայ գաւառի մէջ կառուցուած էր հին արքայանիստ մայրաքաղաքս, Եբատեայ ձախ և Ախուրեանի աբեւմտեան կողմը։ Խորենացին (Բ. ԼԹ) քաղաքիս շինուելեան պատճառը և շինուելեան նկարագրութիւնը հետեւեալ տողերու մէջ կը տատրագրէ. «Յաւուրս սորա (Երուանդ Բ) փոխին արքունիքն Յամուերին անուանեալ ըլլոյն. քանզի էր հետացեալ գետն Երասխ, և յերկարել ձմերայնոյն, և ի գառնանոյն փշանալ հիւսիսոյ պատգեալ ձուլեալ վտակն, ոչ ուստանէք արբուցանեն բաւական թաղաքացւոցն գառնէր տեղւոյ։ Ընդ որ նեղեալ Երուանդայ, նաեւ ամրագունի եւս տեղւոյ եղեալ ի խնդիր, փոխէ զարքունեան յաբեւմուտս կոյս ի քարակաւոր մի բլուր. զորով պատ առեալ Երասխայ ընդդէմ Ախուրեանն հասի գետս։ Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կարեալ զքարինան մինչեւ յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչեւ գիտել ջուրց գետոյն ի փորուածն, յորմիկեալս պատրաստուելիսն։ Եւ զմիջոցս բերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և գրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցգրունն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ ատաղձանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ թէ ոք գաղտ ելանելով գաւիճ կամիցի զարքայն։ Եւ էր, ասէն, երկդիմի. որպէս զի մինն լի-*

ցի սպասաւորացն արքունի և ամենայն հլեհնամիկ ճանապարհ տուընջնոյին, իսկ մեսն գիշերային և մարդապատաց»։ Երուանդ՝ այս ամէն ամրութիւններով ու որոգայթներով չկարողացաւ իր փափագին հասնիլ. վասն զի թագաւորութեան օրինաւոր ժառանգն Արտաշէս Բ, իր Աքրաքալ Ամրատ սպարապետին ձեռքով, յաղթեց Երուանդայ բանակին Երուանդաւան կոչուած տեղը, և հալածեց քշեց գինքը մինչև իր քաղաքը, և խորենացւոյ (Բ. Խ) գրածի համեմատ. «Ամրատայ գիշերայն գհետ Երուանդայ եկեալ՝ սակաւ վաշտիանաւ, զդուան քաղաքին պահէր մինչեւ ի գալն Արտաշիսի և չուխիններըը և գահը հոն փոխադրեց։ Իսկ Երուանդայ շէնքերը՝ արքունի կալուածք եղան. զորս յետոյ մեծն Տրդատ պարգեւեց կամաւորականաց ցեղին. որոնք իրենց իշխանական աթոռը հաստատեցին քաղաքիս մէջ։ Թէ և քիչ ժամանակ վերջը՝ Տրդատայ թոռն սպին Արշակ Բ յափշտակեց Երուանդաշատայ կամաւորականներէն, բայց իրմէ զօրաւորն ալ և իր անհաշտ թշնամին Շապուհ Պարսից թագաւորը իր ձեռքէն առաւ, և բոլոր շէնքերը կործանել տուաւ, գերի առնելով, ըստ Բուզանդայ. «երկս քաղաքդ հազար Հայ և երկս երեսուն հազար Հրեայ, և զքաղաքն ի հիմանց ապստամբեալ բրեալ



293· Երուանդաշատ։

զօրացն ամենեցուն։ Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին, անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին, և բացին զդուռն քաղաքին։ Իսկ մի ումն ի գինուորացն մնալով և հար վազելով զդուխն Երուանդայ, և զրուեաց զգուխն ի յատակս տանն. և այսպիսի չախմամբ վախճանեցաւ, կալեալ գվճռատուրութիւնն ամն քսան։ Բայց Արտաշիսի յիշեալ՝ թէ խոտնուած արշակունոյ է Երուանդ, հրամայէ զդի նորա թագել մահարձանօք»։ Այսպէս Երուանդայ մահուամբը մարեցաւ ու նսեմացաւ նաեւ քաղաքիս փառքը, վասն զի Արտաշէս Արտաշատը շինելէ վերջ, Երուանդաշատի արքունի վայելչութիւնները և գահը հոն փոխադրեց։ Իսկ Երուանդայ շէնքերը՝ արքունի կալուածք եղան. զորս յետոյ մեծն Տրդատ պարգեւեց կամաւորականաց ցեղին. որոնք իրենց իշխանական աթոռը հաստատեցին քաղաքիս մէջ։ Թէ և քիչ ժամանակ վերջը՝ Տրդատայ թոռն սպին Արշակ Բ յափշտակեց Երուանդաշատայ կամաւորականներէն, բայց իրմէ զօրաւորն ալ և իր անհաշտ թշնամին Շապուհ Պարսից թագաւորը իր ձեռքէն առաւ, և բոլոր շէնքերը կործանել տուաւ, գերի առնելով, ըստ Բուզանդայ. «երկս քաղաքդ հազար Հայ և երկս երեսուն հազար Հրեայ, և զքաղաքն ի հիմանց ապստամբեալ բրեալ

յատակէին»։ Հաւանական է այս աւերումէն վերջ, լքեալ և աւերակ մնացած բլլայ ճարտարաբուեստ և ամուր բերդը, վասն զի ալ չի յիշուիր Հայոց ապրոյնները և զօրանիստ վայրերու կարգին մէջ։ Բայց քաղաքը վերստին շինուեր և զարձեալ կամաւորականներու ոստան եղեր է մինչեւ Ը դար, կու չուելով ուրիշ անուամբ Մարմնա, որ ծագած է Մար—ամատ պարսիկ կոչումէն։ Քաղաքիս այսպէս կոչուելուն պատճառը կը յայտնէ Խորենացին Արտաշիսի և Երուանդայ պատերազմին պատմած ժամանակ. «Եւ ինքն (Արտաշէս) չուեաց ի քաղաքն Երուանդայ. յատակ քան զմիջօրեայ հասեալ ի

պատահական Երուանդայ, և միաբան կոչեմք հրամայեաց ազգագիկ զօրացն՝ Մար ամար, որ թարգմանի Մարս նկն. յիշեցուցանելով զիշնամանան զոր յղէր Երուանդ առ Թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար գնա կոչելով: Ձայսմ ի սոյն ձայն անուանեցաւ պատահական Մարմէտ, իբր ի կամաց Աբրաշէսի, բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն»: Բազաքս սակս խորհուրդ ցիէն և ուրիշներէ կոչուած է նաեւ Երուանդայ քաղաք, և ամրոցին զրից պատճառաւ՝ Երուանդաբար եւս կոչուած է: Մարմէտ ազգանուամբ կը յիշուի Բագնայրի արձանագրութեանց մէջ. ԺԴ դարու սկիզբը 1209ին, խաչերէս անուամբ Լօռեցի ոմն Աբրահամու որդի, Ս. Աստուածածնի վանաց կը նուիրէ իրեն այգին. և Մարգիս անուամբ մէկն ալ նոյն դարուն մէջ՝ կը նուիրէ իրեն «այգին որ ի Մարմէտ՝ ի վերայ Երասխայ»: Այնանեա Շիրակացին եւս երկու անգամ կը յիշէ Մարմէտ անունն իր համաբարզական գրոց մէջ: Չի գիտցուիր թէ երբ բոլորովին անշքացաւ քաղաքս, բայց կը թուի վերջին գարուց մէջ, Թաւրիզայ և Պարսից պատերազմաց միջոց: Այս կողմերս առաջին անգամ խնամքով քննած է Տէքսթուա Հերտենթացին, որ միայն Երուանդաշատը կը շփոթէ Երուանդակերտի հետ: Ճանկալի էր և արժանի է քաղաքիս վայրը նորանոր քննութեանց և պեղմանց: Բերդի քարաբլրան մօտ կայ ուրիշ բլրակ մը, ուր կան շատ գերեզմաններ: Մեր (թ. 292) պատկերը կը ներկայացնէ Երուանդաշատի մօտ գտնուած մեհաբձան մը 1425 թուականու արձանագրութեամբ: — Ակրտատ, 49–61: Եւ այլն:

ԵՐՈՒԱՆԴԱՑ ՎԱՆ. Տես ԵՐՈՒԱՆԴԱՎԱՆ:

ԵՐՈՒԱՆԴԱՑ ՔԱՂԱՔ. Տես ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ:

ԵՐՈՒԱՆԴԱՎԱՆ. — Ակրտատայ Աբշառունեաց գաւառի մէջ է նաեւ այս բանակավայրս Երուանդայ, որ հետու է Երուանդաշատէն իբր 38 մղոն՝ հիւսիսային կողմը, ինչպէս կը յայտնէ Խորենացին (Բ. ԽԹ) բանիով. «Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին ասելի քան զձ ասպարիսաւ (= 38 մղոն), ի հիւսիսոյ ի վերայ գետոյն Ախուրեան»: Ակտ անունս գրաւ Աբրաշէս, երբ հոն յաղթելով Երուանդայ, վանից անկէ զերաւանդ. «Եւ անուանեաց զհովիտն՝ ուր ի վերայ դիակացն բանակեցաւ՝ Մարաց մարդ, (վասն զի Մարաց զօրքերով հոն բանակ գրաւ Աբրաշէս): Եւ զանգի ճամբարէն՝ Երուանդայ վանէ, որ կայ մինչեւ ցայսօր ժամանակի, այսինքն և մինչ յայսմ անգամ վանենաց զերաւանդ»: Տեղւոյս անուններ գրուած կը գտնենք նաեւ Երուանդապատում:

ԵՐՈՒԱՆԴԱՔԱՐ. Տես ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ:


ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ կամ ԵՐԵՔՈՒՆԻՔ. — Վասպուրականի հին գաւառներէն մին: Գաւառիս անունն գրուած է նաեւ բ տառով Երուանդունիք. Թովմա Արծրունին կը գրէ Աբուանդունիք: Երուանդունիք գաւառի կը համապատասխանէ Հայոց ձորը: Երկիրը հարաւէն և հիւսիսէն անտառ լեռներով պատած լինելով՝ բնական դիրքով ձոր մը ձեւացած է, որուն բնակիչները ի հնուց Հայեր լինելով, կոչուեր է Հայոց ձոր: Գաւառիս սահմանն է արեւելքէն վերին Խօշապ, արեւմտաքէն վանայ ծովակը, հարաւէն Արշամունեաց և Աձնեւացեաց գաւառները և հիւսիսէն վան Տոսպ: Կլիման բարեխառն է, օդը գեղեցիկ, ջուրը լաւ և հողը արգաւանդ: Ժողովրդը առ հասարակ երկրագործ է և մասամբ մը անասնաբոյծ. յառաջ կուգան ոչխար, գոմէշ, կով, եզ և քիչ ձի: Դիւրաւոր բերքերն են ցորեն, հաճար, գարի, կորեկ, կտաւատ, ոսպ, բակլայ, կանեփակ, սխտոր, սոխ, շողգամ, վուշ: Ծառատեսակներ շատ չունի, մանաւանդ պտղատու տեսակներէն: Գաւառիս գլխաւոր գիւղերն են Խօշապայ գետ և Շամիրամայ գետ: — Նկարագրական Ուղեւորութիւն, Ա 120–122:

ԵՐՈՒՍԱՂԷՄ. Գ. JÉRUSALEM. — Ահա աշխարհիս միակ քաղաքն, որուն անունն որեւէ կը յուզէ, իր բազմադիմի նուիրական և անմահ յիշատակներով: Քրիստոնեայք, Հրեայք և Մահմետականք սուրբ քաղաք կը կոչեն, բուն Աբրահամեան և Տաճկաց Էլքուտս կամ Պուռտի Շերիֆ. բուն Հրէից՝ Երուշալայիմ: Երուսաղէմ Միջերկրական ծովէն 64 և Յորդանանէն 32 հազարամեայ հեռու կը տարածուի Պաղեստինու ալեծուփ լեռնապաշտի բարձր բլրոց վրայ. Միջերկրա-

կան ծովէն մօտ 2400 ոտք բարձր է։ Դեմ-
ասիները արեւելեան կողմն ի սկզբան մեղմ և
ապա ոտստիկ զառիվայր է։ Հարաւային
կողմէն կը վերջանայ Ենովմայ խոր ու նեղ
ձորը, որ քաղաքին հարաւային սահմանն
է. արեւմտեան կողմէն զառիվեր կը վերջա-
նայ հիւսիսային արեւմտեան բարձրաւան-
դակը. արեւելեան կողմէն Յովսափատայ և
կեդրոնի ձորը։ Քաղաքիս մէջ ևս կան եր-
կու ձորակ կամ նեղ հովիտներ, որ քա-
ղաքին շինութիւնը մասը կը բաժնեն երեք
գլխաւոր թաղի կամ բլուրի։ Միօն՝ այս
բլուրներէն բարձրագոյնը, քաղաքին հարաւ-
արեւմտեան թաղն էր, որուն հարաւային և
արեւմտեան եզերքէն կը քերէր Ենովմայ խո-
րաձորը. իսկ հիւսիս-արեւմտեան կողմէն
Տիրոպէոնի ուղիի նեղ ձորն՝ որ հարաւ-
արեւելեան կողմէ կը յանդէր կեդրոնի հո-
վիտատին։ Նաեւ Տիրոպէոն կամ Պանրա-
գործնեաց ձորը կը միանար Միօնի հիւսիս-
արեւելեան սառոտին մօտ, ուրիշ ձորի մը
հետ։ Միօն՝ կը կոչուէր Դաւթի քաղաք կամ
վերին քաղաք. ի հնումն պարիսպներով և
խորաձորներով պատած էր և քաղաքին ամ-
րագոյն մասն էր, ուր էին նաեւ միջնաբեր-
դը ու թագաւորին պալատը։ Հին պարիսպ-
ներու մնացորդները այժմ կ'երեւին Միօնի
հարաւային կողմը։ Ակրա՝ Միօնէն ուղիի
ցած էր և Տիրոպէոնի ձորով կը բաժնուէր
անկէ։ Ակրա՝ կը կոչուէր Մորիա քաղաք։
Մորիա բլուրը Միօնի հիւսիս-արեւելեան
կողմն է. ի հնումն սա միացած էր Միօնի
հետ Տիրոպէոն ձորի վրայ ձգուած կամուրջ-
ով մը. Մորիա ի սկզբան փոքր բարձրա-
ւանդակ մ'էր, բայց յետոյ ընդարձակուե-
ցաւ տաճարին բանելու համար և կը կո-
չուէր Նոր քաղաք։ Ասա քաղաքիս վրայ
համառօտ պատմական ակնարկ մը տալը
կարեւոր կը համարիմ։

Աբրահամու հաւատոց Ասուծոյ կողմէն
փորձուելովն՝ շատ կանուխ նուիրական հո-
գաս երուսաղեմայ տեղը։ Աբրահամու ժա-
մանակ Սալէմ կը կոչուէր այս երկիրը. իսկ
երբ Իսրայէլացիք գրաւեցին՝ Յեբուս կոչուե-
ցաւ, և բնակիչները՝ Յեբուսացիք։ Թերեւս
Սալէմ և Յեբուս անուններէն շինուեցաւ
Յերուսաղէմ անունն և ապա փոխուելով հա-
գաս Երուսաղէմ՝ որ երբայերէն կը նշա-
նակէ Խաղաղութեան տացուած կամ Խա-
դաղութեան հիմն։ Յետոյ՝ Երուսաղէմը պա-
շարելով Սաղէմի կողմը առաւ և հոն գըտ-
նուող հինգ Իսպաւրները սպաննել տուաւ.
բայց Յեբուսացիք անխախտ ժնացին իրենց
շինել տուած բերդին մէջ 800 տարուց չափ,
մինչեւ Դաւիթ յարձակմամբ առաւ Երու-
սաղէմը՝ որ այնուհետեւ Քաղաք Դաւթի
սկսաւ կոչուիլ։ Դաւիթ Յեբուսացւոց բեր-
դին մօտ ուրիշ շատ բերդեր շինել տուաւ,
որոնք իր անուամբը կը կոչուէին, և Միօն
լերան վրայ իր պալատը կառուցանել տա-
լով հոն գրաւ Տապանակ Ուխտին։ Դաւթի
մահէն վերջը, Սողոմոն որպէս շինել տուաւ
տաճարը, և քաղաքն ալ Միօն լերան կող-
մէն շատ ընդարձակեց։ Երբ Ռոբովամ՝ իր
հօր, Սողոմոնի գահը բազմեցաւ, Սիսա կամ
Սուսակիմ եգիպտացւոց Իսպաւրը Երու-
սաղէմը պաշարեց և առնելով կողոպտեց.
150 տարի վերջն ալ Իսրայէլացւոց Յովաս
Իսպաւրը եկաւ քաղաքը առաւ։ Ամորիք
եւս Երուսաղէմի սահմանին և Բաբելոն գերի
տարին Հրէից Մանասէ Իսպաւրը։ Սեկե-
կիայի Իսպաւրութեան ժամանակ ալ, Նա-
բուգոդոնոսոր Իսպաւրը Երուսաղէմը պա-
շարելով կործանեց զայն, հրդեհեց Սողո-
մոնի տաճարը և բոլոր Հրեայ բնակիչները
գերի տարաւ Բաբելոն, Քրիստոսէ 600
տարուց չափ առաջ։ Հրեայք 70 տարի վեր-
ջը, իրենց գերութենէն դառնալէն յետոյ,
վերաշինեցին քաղաքը, և Ջանքեր ըրին
առաջին պայծառութեան հասցնելու հա-
մար։ Ալեքսանդր Մակեդոնացին, 332ին
(Ն. Ք.) սահեց Երուսաղէմի և շատ ըն-
ծաներ նուիրեց ու զոհ մատուց հոն։ Ա-
սոր մահէն քիչ ժամանակ վերջը, եգիպ-
տացւոց Պտղոմէոս Իսպաւրը, շաբաթ օր
մը, յարձակմամբ Երուսաղէմը առաւ, մինչ-
դեռ Հրեայք, ինչպէս կ'ըսեն, կը խղճէին
կռուիլ։ Քրիստոսէ առաջ 170ին, Երու-
սաղէմ Անտիոքոս Եպիփանէսի բռնութեան
ներքեւ ինկաւ, որ կործանեց քաղաքին պա-
րիսպները, անհամար մարդ սպաննեց և ժո-
ղովրդեան շատ նեղութիւններ տուաւ։ Ա-
կայն Մակաբայեցիք իրենց երկիրն ազատելով
Թշնամեաց ձեռքէն անոնց դէմ կռիւ։ Քա-

նի ալ սարի հարքը, Աբրահամեանց և Հիւբհանոս երկու գահակից եղբայրներ, թագաւորութեան համար իրենց մէջ վիճելով՝ Հռովմայեցոց օգնութիւնը խնդրեցին. եկաւ Հռովմայեցոց Պոմպէոս զօրավարը և Երուսաղէմի տիրեց։ Ասոր մահէն վերջը կրասոս եկաւ և տաճարն ալ աւարեց։ Հրէից ինքնիշխան թագաւորութենէն ճիշդ գար մը վերջը Հռոմայեցիք տիրեցին Երուսաղէմի։ Հինգերորդ շատ ծախք բրաւ քաղաքը գեղեցկացընելու համար և յաջողեցաւ. այս պատճառով քաղաքը եկաւ Փրիոտոս. բայց Երուսաղէմ մերժելով գնա և ի խաչ հանելով՝ լցուց իր անօրէնութեան բաժակը։




294. Երուսաղէմի ընդհանուր տեսարանը։

Հրէից ազգը կորաւ իր հայրենի երկրի երեսէն, վասն զի Տիտոս 70–71ին պաշարեց քաղաքը և յուլիսի երկրորդ օրը տիրեց մեծ չարպ տալով ժողովրդեան և 100 հազար հոգիի չափ ալ գերի տանելով՝ անոնց կէսը Հռովմայ մէջ ժողովրդեան առջև գազաններու կեր բրաւ, և միւսներն ալ ճարպի հանելով 30 հոգին մէկ պնարի վաճառեցին։ 134ին, Ադրիանոս կայսրը հռովմէական գաղթականութիւն սը հաստատեց, Տիտոսի աւերմունքէն մնացած շէնքերը բոլորովին կործանելով, Դաւթի քաղաքի աւերակներու վրայ նոր քաղաք սը շինեց և անունը Էլիա դրաւ, և գայն հեթանոս չաստուածներու նուիրելով, հրաման հանեց որ Հրէաներէն և ոչ մին մտնէ քաղաքը, և ով որ գաղտ կը մտնէր՝ Ադրիանոս լսածին պէս սպաննել կու տար։ Այժմ տեսուած Երուսաղէմը Ադրիանոսի շինել տուածն է, ուր է նաև Գողգոթայ լեռը, որ հին Երուսաղէմի ժամանակ պարսպէն դուրս էր։ Այն ատենէն սկսեալ՝ Էլիա անունը այնպէս հաստատակ եղաւ, որ Երուսաղէմ անունը պահուեցաւ միայն Քրիստոնէից և Հրէից գիտցողներուն մէջ։ Բայց մեծին Կոստանդիանոսի ժամանակ Երուսաղէմ դարձեալ իրեն հին անունը առաւ։ Մեծին Կոստանդիանոսի և իր Յուլիանոս եղբօրորդւոյն սէրտլեթենէն վերջը, Փրիոտոսի 613 թուականին Պարսից թոսրով թագաւորը Երուսաղէմը Հռովմայեցոց ձեռքէն առնելով՝ անհնարին զօրութեամբ չարաց չնջել ինչ որ նախնական էր Քրիստոնէից համար։ Հրեայք 90 հազար քրիստոնեայ դերի գնելով սպաննեցին զանազան տանջանքներով։ Հերակլ կայսրը 627ին յաղթեց թոսրովու, և Երուսաղէմ դարձեալ անցաւ Հռովմայեցոց. Հերակլ Ս. խաչը վերադարձոյց Երուսաղէմ և ինքն անձամբ գրաւ Գողգոթայ լերան վրայ։ Ինն տարի վերջը, Լօմէր խալիֆային խոն խաթիճաղ, որ Մէհմէտ Ա օրէնսդրի երրորդ յաջորդն էր, քառասնամեայ պաշարմանէ վերջ Երուսաղէմը առաւ։ Քաղաքս և աւրողջ Հրէաստան այնուհետև մնաց Պաղտատու ամիրապետներու ձեռքը, մինչև 868 թիւը։ Այսկէս վերջ Եգիպտոսի Ալհմէտ իշխանը տիրեց քաղաքիս, և մօտ 220 տարի Երուսաղէմ հպատակ եղաւ թուրք ու տարակիրտոս իշխողաց։ — Խաչակիրները 1099ին գալով՝ քաղաքս առին, առաջնորդութեամբ կոմսիրուա Պուլիոնի, որ Երուսաղէմի թագաւոր ընտրուեցաւ։ Քրիստոնեայ իշխանները սպկսին թագ դնել կառիրուայի գլուխը,

բայց նա մերժից բանալով. «Քրիստոսի դուխը փշեղէն պսակ դրած ևն, ես իմ գլուխս ականագարդ պսակ չեմ գներ»։ Ա֊յս միջոցին Եգիպտոսի իշխանն Թէև շատ աշխատեցաւ կրկին առնուլ Երուսաղէմ, բայց չյաջողեցաւ։ Կռաֆրուայի յաջորդ քանի մը Թագաւորներէ յետոյ, Պալատին Գի ժամանակ եղաւ երկրորդ խաչակրաց զօրքը առաջնորդութեամբ Գալլիոյ Լուդովիկոս Գ Թագաւորի և Գերմանիոյ Կոնրատոս կայսեր։ 1187ին Սալահէտտին արեւելից սուլտանը Երուսաղէմի տիրեց։ 1242ին անցաւ Դամասկոսի իշխաններու ձեռքը, և այն ժամանակ կ'իշխէր Էմիր (իշխան) Սալէհ Իսմայէլ։ 1291ին Գամասկոսի իշխանները Երուսաղէմ յանձնեցին Եգիպտոսի իշխաններուն, և մինչև 1382 մեռց առնց ձեռքը։ 1517ին, Օսմանեան Սուլթան Սէլիմ Ա վերջ տուաւ ապստամբութեանց, տիրելով Եգիպտոսի։ Ա֊սոր որդին, Սուլթան Սիւլէյման Ա շինեց կամ նորոգեց այժմեան պարիսպը։ Ա֊յն ժամանակէն սկսեալ Երուսաղէմ կը մնայ օսմանեան տէրութեան ներքեւ, միայն 1833–34ին քաղաքիս տիրեց Եգիպտոսի Իպրահիմ փաշան։ Երուսաղէմ այժմ կը վերաբերի Դամասկոսի կուսակալութեան, բայց ունի յատուկ կառավարիչ։

Երուսաղէմի նախնի պարսպաց հետգոյներ, այն է Դաւթի և Սողոմոնի, կը պաւէր ոչ միայն ամբողջ Սիոն լեռը, այլ և Մորիան և Որագը։ Հարաւային կողմի պարիսպը, Թագաւորաց և Քրիստոսի ժամանակ կ'անցնէր այն բլրոց գագաթէն, որ յինքեան կը պարունակէր Սիլոամի աւազանը, Որագը, Թեւեաւ նաև Ենոմմայ և Կեդրոնի ձորոց մէկ մասը։ Երրորդ պարիսպը՝ զոր շինեցին Յովթամ, Եզեկիա և Մանասէ, կը սկսէր փոքր ինչ յարեւելից Հիպպիկոսի աշտարակին, որ էր Սիոնի հիւսիս–արեւմտեան սահմանին վրայ, և իրեն մէջ ունէր Ակրա և Բեզեթայի մէկ մասն, և կը միանար արեւելեան կողմի հին պարսպին հետ։ Հրէից դերութեան միջոց այս պարիսպը՝ ինչպէս նաև աւաջինը կործանուած էր. բայց յետոյ նորոգուքն ալ վերաշինեցան, ինչպէս կը կարծուի, գրեթէ նոյն գծի վրայ։ Երրորդ պարիսպը սկսաւ Հերովդէս, Քրիստոսի խաչելութենէն մօտ տասը տարի վերջը։ Ա֊յն պարիսպը կը ձգուէր Հիպպիկոսի աշտարակէն մօտ կէս մղոն հիւսիսային արեւմուտք մինչև փեսեփինոսի աշտարակը և կը միանար արեւելեան հին պարսպին։ – Ա֊յժմեան Երուսաղէմը, որ անտարակոյս հնոյն մեծն է, հայկական պարիսպներով, բազմաթիւ աշտարակներով ու գմբէթներով՝ հանուէն արեւմտեան կողմէն նայողին յայժ շրջեղ երեւոյթ մը կ'ընծայէ։ Ներկայ պարիսպը Սուլթան Սէլիմի որդի Սուլթան Սիւլէյմանի ձեռքով նորոգուած է 1542–1545 թուին, 20է մինչև 60 տարբ բարձրութեամբ, և շրջապատած է մօտ $2^1/_2$ մղոն։ Պարիսպն ունի տեղ տեղ իրարմէ ոչ հաւասար հեռու քառակուսի բազմաթիւ աշտարակներ. հիւսիսային երկայնքը պաշտպանուած է վիմափոր խրամատով մը, որ այժմ կիսովին լեցուած է։ Ունի եօթն դռներ բացի գոցուած Ոսկեմուտքեան և Ոսկեայ անուն երկու դռներէն. ա. հիւսիսային կողմէն Դամասկոսի կամ Նապլուսի դուռն (Պապ էլ Շամ կամ Պապ էլ Ամուտ). գեղեցկագոյն և ամէնէն լաւ շինուած դուռն է, որ Մինչեւ գարս մէջ Ս. Ստեփանոսի դուռ կը կոչուէր, մօտ գտնուող նոյն սրբոյն եկեղեցւոյն անունէն։ բ. Հերովդեսի դուռն (Պապ էլ Զահրէ) արեւելակողմէ, որուն վրայ տախտակեայ փեղկ մը կայ և միշտ գոց կը մնայ։ գ. Աստուածածնայ դուռն (Պապ էլ Սթամ կամ Պապ Սիտի Մէրիէմ) արեւելեան կողմը, Աստուածամօր գերեզմանը տանող ճամբուն վրայ է. քրիստոնեայք Ս. Ստեփանոսի դուռ ալ կ'անուանեն, նոյն սրբոյն, ըստ աւանդութեան, գտնէս քիչ մը վար տեղւոյ մը վրայ քարկոծուելուն համար։ դ. Հարաւակողմի՝ Ագբիւոյ դուռն (Պապ էլ Մադրախէ)։ ե. Սիոնի դուռն (Պապ էլ Նապի Տաւիտ կամ Պապ էլ Նէպի Տաւիտ) հարաւային կողմը, որ կը տանի դէպի Սիոնի վերնատունը, ուր ըստ աւանդութեան կը գտնուի Դաւթի մարգարէի գերեզմանն, և մեր փրկչեայ վանքը՝ որ կայիափայի տունն է։ զ. Յոպպէի դուռն (Պապ էլ Խալիլ) արեւմտեան կողմը։ Յոպպէի ճամբով եկող ուխտաւորք և ևրոպացի ուղեւորք այս դռնէն ներս կը մտնեն։ է. Պապ էլ Ամուտ նոր

մեծ գուռ մ՚ալ 1891ին բացին պարսպի հիւսիս–արեւմտեան վերին կողմը, Լատինաց վանքի մօտ։ — Քաղաքին արեւմտահայ կողմը պարսպէն դուրս կրնայ ամբողջովին նորանոր շէնքերով, բարեգործական հաստատութիւններով, Հրէից թաղերով և պարտէզներով զարդարուած է, և կանոնաւոր ու նոր քաղաք մը կարծած ու հետզհետէ ալ շէնցնելու և զարգանալու վրայ է. իսկ պարսպէն ներս փողոցները նեղ են, շատ անգամ անել ու խորտուբորդ. բայց քանի մը տարիէ հետէ քաղաքապետութեան ծախքով




295. Երուսաղէմ. — Ս. Յակովբեանց վանքի արեւմտեան տեսք դուռը։

սկսած են փողոցները կանոնաւորելով և կը յատակուին գեղեցիկ և մեհատաստար քարերով. տուները կոփածոյ քարերէ են՝ փողոցի վրայ նայող փոքր պատուհաններով, և իրենց տանեաց վրայ փոքր փոքր գմբէթներով։ Քաղաքին գեղեցկագոյն տեղն է Միսի լերան պարսպէն ներս եղած մասին վրայ կառուցուած, մեր Ազգին սեպհական Ս. Յակոբեանց վանքը, որ գեղեցիկ պարտէզներով, բարձր նոճիներովը ու ընդարձակութեամբը կը գմայլեցնէ դիտողները։ Մեծ մզկիթին վերաբերեալ գեհենն ալ իրեն խոտաւէտ ածուներով, նոճի ծառերով բաւական շքեղութիւն և գայթառութիւն ունի։ Շուկաները դրեթէ ամէնքն ալ կամարակապ են, և մեծ մասամբ խաչակրաց ժամանակ շինուած։ Քաղաքին այլ և այլ կողմերը կը տեսնուին 8 մզկիթաց աշտարակներ։ Բնակչաց արդի թիւն կը համարուի 60000, որոնց գրեթէ կէսը հրէայ են, մնացեալին կէսը մահմէտական, և միւս կէսը այլ և այլ ծէսէ քրիստոնեայք։ Հայ ժողովրդեան թիւը 500 է, որոնց նախնիքը գաղթած են հոս մեծաւ մասամբ Կիլիկիայէն, մասամբ ալ փոքր Ասիոյ և Հայաստանի զանազան գաւառներէն։ Ազգայնոց մէկ մասը միջակ հարստութեան տէր արհեստաւորներ են, մէկ մասն ալ աղքատ՝ որոնց բնակարան և հաց կը հայթհայթէ Ս. Յակոբեանց վանքը։ Մահմէտականք կը բնակին քաղաքին կեդրոնը և գէպի հիւսիսային արեւելք. Հրէից թաղը թէեւ Սիոնի հիւսիսային արեւելեան կողմն է, բայց իրենք տարածուած են նաեւ քաղաքին այլ և այլ կողմերը և մանաւանդ պարսպէն դուրս նոր շէնքերու մէջ։ Յոյնք, Հայք, Լատինք, Ասորիք, Յակոբիք և ուրիշներ կը բնակին դիւանաւորաբար իւրաքանչիւրն իրենց վանուց մօտ։

Երուսաղէմ ոչ միայն կրօնական այլ և ազգային տեսակէտով մեծ նշանակութիւն ունի մանաւանդ մեր ազգին համար։ Հայոց նախահաւատ Թագաւորի Աբգարու քրիստոնեայ Թագուհին Հեղինէ, Քրիստոսի 40–50 թուականներուն քաղաքս գալով շատ մը այլ և այլ շինութիւններէ զատ, որոնց կարգէն են Ս. Յարութեան, Ս. Խաչի, Ս. Աստուածածնի, Ս. Համբարձման լերան վրայ շինուած մատուռներն, շինած է նաեւ Գլխադիր Ս. Յակովբ Առաքելոյն անուանեալ Տեառն եղբայր, գերեզմանին վրայ մատուռ մը, որ հետզհետէ ազգիս քրիստոնեայ Թագաւորաց, իշխանաց և մեծամեծաց միջոցաւ աւելնալով գանազան շինութիւններ և նորոգութիւններ, կազմուած է այժմեան Ս. Յակովբեանց վանքը և ընդարձակ եկեղեցին, ինչպէս նաեւ Ս. Հրեշտակապետի և Ս. Փրկչայ հոյակապ վանքերը։ Երեմիայեղրդ գարուվերջերը կամ Ը դարուն սկիզբները Հայոց Աթաթաս վարդապետէն շարադրուած համառօտ

գրուած մը, կը յայտնէ Երուսաղէմի մէջ Հայոց իշխանաց կառուցած եօթանասուն վանքերու անուանք, համառօտ նկարագրութեամբ. մենք ալ հետաքրքրական կը համարինք այդ վանքերու անուններէն գէթ մէկ մասն աստ դնել. Պետրոսի վանք, Պանդայ վ. Բատին վ. Ս. Գէորգայ վ. Նորավանք, Խաղայ վ. Աղթռունեաց վ. Զարեհաւանի վ. Մամիկոնեանց վ. Գուգարաց վ. Բկղէխի վ. Սիւնեաց վ. Ըռբշտունեաց վ. Խոռխոռունեաց վ. Երիցավանք, Ս. Դևոնդեանց վ. Աճեաւագեաց վ. և այլն: Մենք պիտի չանդրադառնանք այժմ, որչափ հնար է ամիսի նկարագիրը սը տալ քաղաքիս ազգային հասատաւութեանց վրայ, որոնք իրրև տոհմային շինուածք և իրրև պատմական յիշատակարան, մեր փառքը ու պատիւն են: Եւ սկսինք Սուրբ Յակոբեանց վանքէն, որուն մեծ գուռն գեղեցկաշէն և կամարակապ է, և գուռն համակ երկաթ: Դրան կամարի ճակատն արարեալէն արձանագրութիւն մը կայ, զոր շնորհած է Եգիպտոսի սուլթաններէն էլ–Զահիր Ալու–Մէհմէտ Այթիս Զագմագ, 954ին Հիճրէթի (1437): Այս արձանագրութեան ճիշդ մէկ օրինակն ալ գրուած է ներս գմբեթի պատին մէջ գեղեցկագրուած է. ասով արձանագրողը կ'արգիլէ այն ամէն նեղութիւնները, որոնք տեղի ունեցած են վանացս նկատմամբ, և կը վերջացնէ խօսքն ըսելով. «ով որ այդ ամէն արգիլուած նեղութիւնները ու վնասները նորոգելու ըլլայ, անիծուի Աստուծոյ կողմէն»: Դրան ներսի կողմը, արաբական արձանագրութեան ճիշդ հառաբ՝ մարմարեայ քարի մը վրայ կայ Գրիգոր պատրիարքի հայերէն արձանագրութիւնն՝ արեւմտեան պատոպի, դրանց և խուցերու շինութեան վերաբերեալ, ՌՃՂԲ թուականէ: Ս. Յակովբայ մեծ եկեղեցին փառաւոր, ակնապարար և հրաշագործ շինուածք մ'ունի, և կը փայլի լուսաւորութեամբ ու գեղեցիկ զարդերով: Երկայնութիւնն է 35 կանգուն և լայնութիւնը 25: Եկեղեցիս վերջին նորոգութիւն տեսած և զարդարուած է, Շղթայակիր Գրիգոր պատրիարքի ժամանակ, ձեռնտուութեամբ իր հայրենակից Կ. Պոլսի պատրիարք Կոլոա Յովհաննէսի, ինչպէս կը վկայեն յիշատակարանք: Աւազ խորանն և սեղանը շատ պայծառ է իր գեղեցիկ ճարտարագործ խաչկալով. ասոր տակ թաղուած է Տէառն Եղբայր արդար առաքելոյն մարմինը: Խաչկալին զանազան տեղերը, ոսկեզօծ և երկաթագիր տառերով քանդակուած են, երեք արձանագրութիւններ. առաջինը՝ 1723 թուականաւ կը վերաբերի շինութեանը, իսկ երկրորդը և երրորդը կը վերաբերին նորոգութեանը: Սեղանին և պատերուն յատակը, գոյնզգոյն քարերով և ճարտարապետական հիանալի արհեստով շինել տուած է 1652ին Փիլիպպոս կաթողիկոսը, որ նոյն թուին ուխտի եկած է Երուսաղէմ: Մարմարեայ բեմը շինուեր է, ըստ արձանագրին, 1730ին՝ Ակնցի Երեւանեանց ապրածի մահտեսի Սեդրաքորսին ի յիշատակ: Աւազ սեղանի աջակողմեան սեղանը նուիրուած է Ս. Կարապետի և ձախակողմեանը Ս. Աստուածածնի: Հին առեղներ եկեղեցին ըստ երկայնութեանը ունի փոքր լինելով առանգութեամբ կ'ըսուի թէ, Հեթում թագաւորը ընդարձակած է, Աւազ սեղանի հետ քովի երկու սեղանները դուրս քաշել տալով: Եկեղեցւոյ աջակողմեան դասի մէջ պատրիարքական աթոռոյն քով փառաւոր և սատափագարդ կաթողիկէ եղած մեծ աթոռը, Տէառն Եղբօր է, ուր տարին անգամ մը, Ս. Յակոբեայն ծնունդ օրը, ժամանակին գանուած պատրիարքը կ'նստի և առանց նստելու կը կայնի «փառք ի բարձունս» երգի միջոց մինչեւ: Աթոռոյս կաթողիկէի թէ' ներքին և թէ արտաքին կողմերը կան ՌՃԻԹ և ՌՄԿԱ թուականաւ արձանագրութիւններ: Եկեղեցին քառակուսի քարիղէն չորս սիւներու վրայ շինուած փոքր՝ բայց շատ սիրուն և պայծառ գմբէթ մ'ունի ութ պատուհաններով: Գմբէթին մէջ ոսկեզօծ երկաթեայ վանդակ մը կայ վրայէն կախեղեր կախուած և մէջտեղէն ապակեայ մեծ ջահ մը: Գմբէթի արտաքին բոլորտիքը կայ 1765 թուականաւ յիշատակարան մը զանազան նորոգութեանց վերաբերեալ: Եկեղեցւոյ որմերու ներքին կողմի ամբողջ երեսները գետնէն մինչեւ երկու կանգուն բարձրութեամբ յատկապատկեայ քարերով զարդարուած, և անկէ վեր երկու կարգ քիւոսէի անօբէնութեան, սրբոց և մարտիրոսաց

պատկերներով ծածկուած են ոսկեզօծ շրջանակներով. երկու գաւերուն մէջ եղած վարի կարգի պատկերները աջակողմէն՝ կը ներկայացնեն Երուսաղէմի երեւելի պատրիարքները, իսկ ձախ կողմինները Հայոց հայրապետները՝ համակ զգեստաւորուած։ Իւրաքանչիւր պատկեր իր մէջ կը պարունակէ Ղեղեայեաիր Գրիգոր պատրիարքի ժամանակ գտնուք յիշատակ աուտղներու անուններըւ Եկեղեցւոյն մէջ 26 մշտավառ կանթեղներ կան, ասոնցմէ զատ կան նաեւ 200էն աւելի կանթեղներ, որոնք կը վառուին հանդիսաւոր օրեր։ Ա.յս եկեղեցին մեծաշուք ընծաներով և Ս. Աթոռը մեծ յիշատակներով ճոխացած է, բարեպաշտ և հարուստ ազնուականներէ, որոնց համար եկեղեցւոյ ձախակողմեան վերջին սեան վրայ գժուարընթեռնելի երկաթագիր յիշատակարան մը կայ ՌՃԼԵ (= 1286) թուականեաւ։ Անոնց բրած շինութիւնոց նկատմամբ, ուրիշ յիշատակարան մը եւս կայ աջակողմեան առաջին սեան վրայ ՌՃ (= 1351) թուականեաւ։ Ա.յս երկին յիշատակարաններն այժմ պատկերաց տակ ծածկուած են։ — Եկեղեցւոյն ձախակողմի է Լ.ՃՎիածին անուամբ եկեղեցին, որուն դուռը փառաւոր, կամարակապ և սիւնազարդ է։ Ա.ւագ խորանն է յանուն Ս. Լ.ՃՎիածնի. Եղիազար կաթողիկոսը շինել տուած է թէ՛ եկեղեցին և թէ՛ խաչկալն 1670ին, և յետոյ Գրիգոր Ղեղեայեաիր պատրիարքը նորոգած է 1725ին, և հարաւային պատին կից խորանաձեւ և փոքրիկ կաթողիկէով սեղան մը եւս կանգնած է Ս. Սիոնայի անուամբ, որուն ներքեւ երեք խաշոր նաւթրական քարեր կան, մին Սիւէական լեռնէն, միւսն Յորդանան գետէն և երրորդն Թափորական լեռնէն բերուած։ Եկեղեցւոյս երկայնութիւնը 35 և լայնութիւնը 10 կանգուն է։ Դասին դիմաց պատրիարքական աթոռ մը կայ։ Եկեղեցւոյս խաչկալն, բեմն, սեղանի շարժական խաչքարն և հիւսիսային պատին վրայի ուրիշ խաչքար մը, ունին յատուկ յիշատակարաններ։ Լ.ՃՎիածնի եկեղեցւոյն հարաւային արեւմտեան կողմէն, պատին կից 16 աստիճաններով կանգուն վերնատուն կայ, ուր կան Պայծառակերպութեան և Ըմբերեաց կրկին փոքրիկ սեղաններ։ Ա.յս վերնատունը



296. Երուսաղէմ. — Ս. Յակովբայ տաճարի ներքին տեսքը։

1835ին շինուեցաւ Գաբրիէլ պատրիարքի օրով, ինչպէս նաեւ եկեղեցւոյն ծեփերը նոր բազուեցան աշխատութեամբ և ջանիւք Կ. Պոլսի պատրիարք Աղբիանոպոլսեցի Տ. Պօղոս արքեպիսկոպոսի, որ ժամանակաւ ապդին անօրէնութեամբ կառավարիչ ընտրուած էր Ս. Աթոռոյն պարտապան եղած ատեն, որ պարքը վճարելէ վերջը բրաւ այս շինութիւնը։ Վերնատունէն վար իջնելով, Ս. Էջմիածնի միջնապատէն Ս. Յակոբայ եկեղեցին մանելու առեն, աջակողմը՝ հայրապետաց պատկերներու կարգին, առաւօտեայ միափեղկ դուռ մը կ'երեւի, յորմէ 21 աստիճան պատին միջէն վար կ'իջնելով ձախ կողմը պատշգամով պատուհան մը կայ, որ եկեղեցւոյն գասին մէջ կը նայի, ուր երբեմն Ս. Միսն անուամբ փոքրիկ սեղան մը կար. աջ կողմն ալ պատուհան մը կայ Ս. Էջմիածնի առանձաց վրայ նայող։ Ձախէց ալ 3 աստիճան վեր կայ Ս. Պօղոսի նուիրուած մատուռ մը, որ եկեղեցւոյն ձախակողմեան սեղանոյն վրայ է։ Եկեղեցւոյն աջակողմն Ս. Էջմիածնի միջնապատի դիմացը նոյն ձեւաձեւութեամբ ուրիշ դուռ մ'ալ կայ, սակայն այս դուռն այժմ երկուքի բաժնուած է հորիզոնաբար. վերի մասը ամպիոն շինուած է, ուր կը կարդացուի Յայտնութիւնը, վարի մասի սառափեայ երկփեղկ դռնէն՝ որուն վրայ կայ ՕՒՇՐ թուով յիշատակարան, նոյնս կը մտցուի Ս. Առաքելոց մատուռը, որ կառուցուած է երկու բաժակուան սիւներու վրայ և երեք սեղան ունի։ Աջագոյն սեղանն նուիրուած է Ս. Առաքելոց, յաջակողմեանը՝ Ս. Լուսաւորչի և ձախակողմեանը՝ Ս. Կիւրղի Երուսաղէմի հայրապետին։ Վերջնոյս սեղանաքարին առակ գետնուած է հին մկրտութեան այն աւազանը, որուն մէջ նոյն սուրբ հայրապետը 100 հազար հրեայ մկրտած է Երեւման թաչին պատճառաւ։ Մատրանս երկու առաջին սեղանները, բուն արձանագրին, շինուած են ՈՃՀԳ թուին։ Այս մատրան մէջ է մկրտութեան սուրբ աւազանը, ուր կը մկրտուին ուխտաւորաց երեխայք. հոս կը զգեստաւորին մատրաքը։ Մատրանս հիւսիսային արեւմտեան կողմը երկաթեայ դուռ մը կայ, յորմէ կ'երթան մոմատուն, և այլ սենեակ ու թաղեր։ Ս. Առաքելոց դրան արեւմտեան կողմը պատին վրայ սեանուած սէբաստական պատկերը Ս. Յակոբայ բաժակաբերու առաքելոյն պլխատումը կը ներկայացնէ, որուն առջեւ կճեպ սպիտակ սեղանաքար սը կայ 10 թզաչափ երկայնութեամբ. վրան գրուած է աշտանակ մը և կախուած մշտավառ կանթեղ մը։ Այս պատկերի աջ կոմն է Գլխադիր Ս. Յակովբայ մատուռն, որուն գետնի առատափագարդ և ամենագեղեցիկ յօրինուած է։ Այս ամիսոսուած է առաքելոյն գլուխը,



297. Երուսաղէմ. — Գլխադիր Ս. Յակովբայ մատուռը։

զոր գլխատից Հերովդէս Ագրիպպաս չորրորդապետ ի Կեսարիա Պաղեստինի, յամին 42 կամ 44ին, և հրեշտակի միջոցաւ առնոյ գլուխը բերուեցաւ Ս. Առաւաձածնի, Յովհաննու Աւետարանչի և Տհաւն Եղբայր Յակովբայ արդարոյն վիմացը, որոնք նոսաց կը սպային անոր մահը։ Ս. Առաւաձածնի հրամանաւ առա ամիսոսուեցաւ արիւնամած գլուխը և կը գտնուի մինչև յայսօր։ Մատրանս երկայնութիւնն է 5 քայլաչափ և լայնութիւնը 3. սեղանն կիսագնդակ բոլորաձեւ է ամրողջ սպիտակ կճեպ բարիւրով շի-

նուած, զարմանակերտ փորուածներով ու քանդակներով. յատակն ալ զարդարուած է բազմագոյն կճեայ քարերով։ Սուրբ փոսն՝ ուր աւփոփուած է առաքելոյն գլուխը՝ արծաթապատ է և շուրջը կան վեց մշտավառ կանթեղներ։ Մատուռս ունի բաղորաշէն կաթողիկէ մը, չորս փոքրիկ լուսամուտով։ Այս մատրան զարդարանքն բրած է 1727ին Շըղթայակիր Գրիգոր պատրիարքը. սեղանի ճերմակ մարմարիոնի վրայի յիշատակարանը

ամէն տեսակ հասարակ և ընտիր գաւազաններով։ Երեք խորան ունի, մէջտեղինը Ս. Յակոբոս Մծբնայ և Ձախակողմեանը Ս. Աթգոն։ Մատրան արեւմտեան հիւսիսային անկիւնն է աւանդատան կամ գանձարանի վարագուրուած դուռը. ներսը կը պահուին եկեղեցւոյ բոլոր զարդերը, անօթներն և զգեստները։ Ս. Մինասայ մատրան արտաքին բակին հարաւային սաստիկայ երկփեղկ դրան (1737 թուա-



298. Երուսաղէմ. — Ս. Յակովբայ արտաքին գաւթին մէջ անգատան և եկեղեցւոյն արտաքին տեսքը։

անընթեռնելի է, բայց դրան՝ ՌՃՉ թուակա-նաւ յիշատակարանը անազարտ մնացած է։ Ս. Գլխագրի մատուռը իր սաստիկայ դրանէն զատ դուռ մը ևս ունի արեւմտակողմը, որուն առջևը փոքրիկ քառակուսի բակ մը կայ։ Բակիս հիւսիսային կողմն է, միշտ դոց և վարագուրով ծածկուած Ս. Մինասայ մատրան երկաթեայ դուռը, որ 1733 թուակնաւ յիշատակարան ունի։ Ս. Մինասայ մատրան ներսը յախճապակեայ պատերը զարդարուած են գեղեցիկ վարագոյրներով,

կանաւ արձանագրութեամբ) արեւմտակողմն է Ս. Մակարայ մատուռն, որուն սեղանոյն ներքեւ ամփոփուած է նոյն սուրբին մարմինը։ Մատրանս հիւսիսային կողմն ալ կը ճեայ սպիտակ նեղ սեղան մը ևս կայ՝ ներքեւը ամփոփուած Ս. Լուսաւորչի մատուռքէն։ Ս. Մակարայ դրան և հիւսիսային սեղանի վրայ կան յիշատակարաններ, մին ՌՃԺԱ և միւսն ՌԲՃ թուականաւ։ Այս մատրան առջևը երկաթեայ գրատիզով բաժնուած է, որ Գլխագրի դաս կը կոչուի։ Այս

պատն մէջ եղած պատրիարքական ամրոցին հաւուր փոքր դուռ մը կայ երկաթեայ փեղկով, ուրկէ մտնելով՝ պատին մէջէն 30 աստիճաններով վեր Ս. Նշանի խորանը կ'հասնուի, ուր ժամանակաւ կը պահուէր կենաց փայտն։ Ա֊յս մատրան դրան կից ուրիշ դուռ մը կայ երկաստաւան Գոլգոթայ նուիրուած մատուռն մտնելու համար, որ թագաւորաց ազօթարան կը համարուի։ Մատրանս ա֊րեւմտեան պատին վրայ շատ փոքր դուռ մը կայ, որ հին ատենք սը կը հանէ, ա֊րուն հիւսիսային կողմը Ս. Համբարձման սեղան մը կայ։ Հին ժամանակէն մնացած պատկերներ կան։ Ս. Գէորգայ եւ Ս. Նիկո֊դայոսի անուամբ։ Եկեղեցին այս մեծ գունէն զատ՝ որուն ներքին կողմը 1863 թուակա֊նաւ նորոգութեան յիշատակարան կայ, ու֊րիշ դուռ մ'ալ ունի հիւսիսային կողմն Գոլ֊գոթայի դուռ անուամբ, ուրկէ սովորաբար եկեղեցականք կը մտնեն։ Գաւթին մէջ պատ֊րիարքներու և եպիսկոպոսներու գերեզման֊նաքարեր և 22 հին խաչքարեր և արձա֊նագրութիւններ կան, չորս կողմի պատե֊րուն և սիւներուն վրայ գետնզած, որոնց շատերու յիշատակարանք անընթեռնելի եղած են. իսկ կարգացուածներն են տապանա֊գիր Աբրահամ Գ. պատրիարքի (†1192),




299. Երուսաղէմՙ. — Պատրիարքարանին դահլիճը։

Ս. Համբարձման սեղանոյն բակի պատե֊րուն վրայ գետնզած շատ հին խաչքա֊րեր կան, որոնց բազմաց գրերը եղծուած և անընթեռնելի եղած են։ Ա֊յս վերոյիշեալ մա֊տուռներուն մէջ տարուան մէջ որոշեալ օրեր պատարագ կը մատուցուին։ Ա֊կէ վերսոյն եկեղեցին իջնելով և արեւմտեան գունէն դուրս գաւիթը. եղնելով, դրան վրայ, նկա֊րուած պատատուանի մեծ պատկեր մը կը տեսնանք և երկու կողմն ալ ուրիշ պատկեր֊ներ։ Ա֊յս դրան երկու կողմը դարակի ձե֊ւով երկու սեղաններ կան. աջակողմեանը Ս. Գէորգայ և ձախակողմեանը Ս. Նիկո֊դայոսի անուամբ։ Եկեղեցին այս մեծ գունէն զատ՝ որուն ներքին կողմը 1863 թուակա֊նաւ նորոգութեան յիշատակարան կայ, ու֊րիշ դուռ մ'ալ ունի հիւսիսային կողմն Գոլ֊գոթայի դուռ անուամբ, ուրկէ սովորաբար եկեղեցականք կը մտնեն։ Գաւթին մէջ պատ֊րիարքներու և եպիսկոպոսներու գերեզման֊նաքարեր և 22 հին խաչքարեր և արձա֊նագրութիւններ կան, չորս կողմի պատե֊րուն և սիւներուն վրայ գետնզած, որոնց շատերու յիշատակարանք անընթեռնելի եղած են. իսկ կարգացուածներն են տապանա֊գիր Աբրահամ Գ. պատրիարքի (†1192), Գաւիթ պատրիարքի (†1321), Վարդան եպիսկոպոսի (†1638), և այլն։ Գաւթի հարաւային արեւելեան անկիւնը կախուած են երկաթեայ և տախտակեայ կոչնակներ, որոնց քով եղած գուռը վանքի մեծ գաւի֊թը կը տանի. գաւթին հիւսիսային արեւ֊մըտեան և արեւելեան անկիւնները եղած աստիճանները Աբեղայ բադ կ'առաջնորդեն. իսկ հարաւային արեւմտեան անկիւնի 30 աստիճաններով մեծ գուռն ալ վանքի Պատ֊րիարքարանը կը տանի։ Աստիճաններու կող֊մնակի սենեակներն Ս. Մինասայ բադ կը կո֊չուին, որ 1831–35ին Աղբիանապոլսեցի

Պօղոս պատրիարքի ժամանակ շինուած է. այս թագի մէջ են վանքի հաշուակալութեան և թղթակցութեանց գիւանաւորը: Պատրիարքարանի հոյակապ շէնքը ի հիմանց շինել տուած է Զմիւռնիացի Տ. Յովհաննէս պատրիարքը 1853ին, որուն դրան վրայ կայ յատուկ յիշատակարան: Յիշելու արժանի է 21 մեթր երկայն և 7½ մ. լայն ընդարձակ սրահն՝ մէջտեղը գեղեցիկ գմբէթով. այս սրահը զարդարուած է Թուրքիոյ, Աւստրիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ թագաւորաց և կայսերաց ու կայսրուհեաց արքայանուէր մեծագին լուսանկարներով, ինչպէս նաեւ Յունական, Յովհաննէս և Եսայի Հանգուցեալ պատրիարքներու և այլ գնահատ պատկերներով: — Վանացոց մատենադարանի դրան վրայ կայ 1727 թուականու շինութեան արձանագրութիւն: Ս. Աթոռոյն տպարանը 1832 թուին այս շէնքին մէջ հաստատուած էր, և նոյն թուականին առաջին դիրքը արտադրեցաւ, որ է Ագօթամատոյց. բուսական ժամանակ վերջ մանուշն և տատիկ ուրիշ տեղ փոխադրուելով, տեղը նորոգութիւն չը տեսնալէ վերջ, ժամանակ մ՚ալ վարժատուն եղաւ. բայց այժմ կանոնաւոր մատենադարան է, չնայելով և աշխատութեամբ Հանգուցեալ Թալասցի Տ. Եսայի արքեպիսկոպոս պատրիարքի, որուն մէջ կան մօտ 2000 կտոր ձեռագիր հին մատեաններ: Վանացոց տպագրուած գրքերու մատենադարանին և ընթերցարանի մէջ կան 1250 տետակ և 4500 կտոր մատեաններ. այս գրքերու մեծագոյն մասը ԺԶ, ԺԷ, ԺԸ դարերու մէջ տպուած հազուագիւտ գրքերէն են, վերջին դարուց մէջ տպուած գրքերու կազմանէ ալքատ է: — Մատենադարանի արեւմտեան պատին վերջին ծայրը բաց դուռ մը կայ առանց փեղկի, ուրկէ ներս ձախ կողմն է հիւանդանոցի դուռը: Հիւանդանոցը բուսական ընդարձակ սենեակ մ՚է և կը պարունակէ առանի չափ մահճակալներ՝ հիւանդ միաբանից համար: Այս սենեակը առաջ հանդերձատուն էր, որուն ճակատը կայ ՌՃՉԳ թուականու արձանագրութիւն: Հիւանդանոցի դրան վրայի դուռն կը տանի մատուռներ, նոր հանդերձատունը և այլ թագեր, իսկ ձախ կողմը քանի մը աստիճան վեր կ՚ելլէ դէպ ի պարտէզ, աջ ու ձախ, դէմ առ դէմ երկու նկարչութեան յատկացած սենեակներ կան: Այս սենեակաց միջեւը եղած անցքին վրայ, ուրիշ նեղ անցք մ՚ալ կայ, ուրկէ անցնելով և քիչ մը առաջ, ձախ կողմը՝ առանձին վրայ կը տեսնուի Հոգւոյն Սրբոյ փոքրիկ մատուռն, որուն դրան ճակատը կախուած է Հոգւոյն Սրբոյ գալուստը ներկայացնող խղտաներկ պատկեր մը: — Ս. Թէոդորոսի եկեղեցին մօտ է Ս. Յակոբոսի եկեղեցւոյն. շինուած է առանց սիւնի ՉԼԸ (= 1286) թուականին հայ բարեպաշտ հարուստներու ծախքով: Ունի 23 կանգուն երկայնութիւն և 10 կանգուն լայնութիւն: Աւազ խորանը նորոգուած է Ս. Թէոդորոսի: Սկզբնական շինութենէն վերջ զանազան ժամանակներ նորոգուած է եկեղեցիս: Արեւմտակողմը երկաթեայ դուռ մը ունի որ հազիւ երբէք կը գործածուի. վրան ունի ՈՀԴ և ՌՄԻԲ թուականու կրկին արձանագրութիւններ: Բուն դուռը հարաւային է, որուն վրայ նոյնպէս յիշատակարաններ կան. այս դրան առջեւ փոքրիկ գաւիթ մը մէջ, Ս. Թադէոսի և Յակոբոսի կուսի սեղան ալ կայ հնձեայ քանդակագործ և բնաւոր ձեռակերտ զանազան պատկերներով: Եկեղեցւոյս աջակողմեան պատուհան մէջ, գետնէն երկու կանգուն բարձրութեամբ մկրտութեան աւազանի պէս սեղ մը կայ և մէջը խաչքար սը 1590 թուականու արձանագրութեամբ: Ըստ աւանդութեան, այս եկեղեցին շինած է Լեւոն Գ, ի յիշատակ իր Թորոս եղբօրը, որուն գերեզմանն կը համարուի վերոյիշեալ մկրտութեան աւազանի տեղը: Եկեղեցւոյս պատուհան մէջէն 3 աստիճանով պահարանը կ՚ելլուի, ուր կայ Ս. Կարապետի փոքր սեղան մը: Աւազ սեղանի հարաւային կողմի փոքր դռնէն երկու աստիճանով վեր փոքրիկ մատուռ ալ կայ, որուն սեղանը նուիրուած է Ս. Մերկեսիոսի: Թէ՛ այս մատեան և թէ պահարանի մէջ պատերու վրայ ապուցուած են բուսական թուով հին խաչքարեր, որոնց շատերու վրայի արձանագրութիւնները անընթեռնելի եղած են. մանոյ թուականներն են, 1151, 1454, 1524, 1591, և այլն: — Վանքի Յարեւմտեայ բուսած հրապարակի տակ կը

գանուի աղօրիքն, որուն գործիքները այժմ ցրուած են և ցորենը ազալ կու տան քա-ղաքի շոգեշարժ աղօրիաց մէջ։ Պէտրա բաղ բռուածն մօտ է Քարենաէմադի. վերջնոյս կից է նաեւ հին ախոռ բռուած տեղն, որ շի-նուած է Պարոն Տէր Գրիգոր պատրիարքի ժամանակ 1641 թուին։ Քարենաէմադի հրա-պարակին հարաւային կողմն է Նոր Քար-տախ բռուած փառաւոր շէնքն, չորս գեղե-ցիկ սենեակներով, որ շինուած է 1849ին կիրակոս պատրիարքի օրով. այս տեղս կը կոչուի նաեւ Կալի վրան։ — Վանացոց մեծ գաղթի հարաւային կողմը երկաթեայ վան-դակներով պատապարուած լայնարձակ տեղն հատատուած է տպարանը։ Այս տեղը ի հնումն ախոռ էր, որ յետոյ մէկ մասը հիւ-րանոց և մեռ մնան ալ փայտանոց եղաւ, զոր Հանդերձ վրայի թագերով շինել տուած էր Եղիազար պատրիարքը 1675 թուականին։ Տ. Եսայի պատրիարքը 1866ին նո-նոգել տալով վարի կողմը, հոս փոխադրել տուաւ տպարանը, որ այժմ հինգ մասերու բաժնուած է. դրաշարաց տեղ, կազմարան, մամուլներու մասը, ձուլարան և բնպարձակ դրատուն. վերջին երկու մասերն, 1871 թուականին շինել տուած է Թալասցի և Ա-զգքանդրիարքական Յակոբ Եփ. Աշըղեան, ո-րուն յիշատակարանն դրուած է տպարանի դրան արեւելակողմն պատին վրայ։ Տպարա-նի դրան մօտ գիրք վաճառելու սենեակ մը կայ։ Տպարանն ունի գեղեցիկ պարտէզ մը, որ երբեմն պատրիարքներու յատկացեալ էր և կը կոչուէր Ղեռսի պարտէզ։ — Տպարանի արեւելեան կողմը՝ անկիւնն, երկու կամար-ներ կ'երեւին, որոնց վրայի սենեակները փոքր Զարտախ կը կոչուին. ձախ կողմի կիսակամարի տակէն Պահէ բաղ կ'երթցուի, զոր 1848ին շինել տուած է Կիրակոս պատ-րիարքը, իսկ աջակողմեան կամարի տակ և-դած երկաթեայ փոքր դռնէն կ'երթցուի վան-քի ժառանգաւորաց վարժարանը և Ս. Հրեշ-տակապետի վանքը։ Այս փոքր դռնէն դուրս քիչ մը առաջ, կայ կրկնայարկ և մայրի ծառերով շրջապատուած Զամ բաղն, որ կը պարունակէ 45 սենեակներ, զոր շինել տուած է Զմիւռնիացի բազմաթիւն Յովհան-նէս պատրիարքը 1853 թուականին. դրան ճակատը կայ շինութեան յիշատակարանը։ Այս թաղի արեւելակողմը շինուած է ժա-ռանգաւորաց վարժարանը, ուր կ'ուսլցուի 10 կճեայ աստիճաններով. ներքին ձեր խա-չաձեւ է և չորս անկիւնը՝ չորս բնպար-ձակ գմբէթաւոր սենեակներ բռնած են. և-րեք թեւերուն մէջ երեքական մեծ պատու-հաններ, և երկու կողմը չորսական մեծ պարանոներ կան, յորս պատապարուած են վանքի անչհական գանազան հնութիւնները։



300. Երուսաղէմ. — Ս. Հրեշտակապետի եկեղեցին։

— Ս. Յակոբեանց բնպարձակ վանքի մէջ 20ի չափ թաղ կայ՝ որոշեալ անուններով. այս թաղերը կը պարունակեն 450էն 500 սենեակներ։ Եպիսկոպոսաց, վարդապետաց և սարկաւագաց նստած թաղին մէջ, որ Ա-բեղայ թաղ կը կոչուի, 46 սենեակ կայ։ Այս վանքս իւր ծախքով բացած է երկու պղոց մին՝ մանկանց և միւսն աղջկանց համար։ Միաբանից ընդհանուր թիւն է 170, եպիսկոպոս, վարդապետ, սարկաւագ, պիր, ժառանգաւոր աշակերտ, աշխատաւոր եղ-

բարք և մայրապետք միասին։ Աբեղայ թա-
դին հիւսիսային կողմն է վանացս սեղա-
նատունը, խոհանոցը, մատուռը, և այլն. սե-
դանատան և խոհանոցի դրանց վրայ կան
յիշատակարաններ։ — Հայ ազգի պարծանք
եղող հոյակապ ու փառաւոր վանքէս վերջ,
համառօտ ակնարկ մ՚ալ ասենք, քաղաքիս
ազգային ուրիշ սրբատան տեղեաց վրայ։ —
Ս. Հրեշտակապետ՝ որ վերոյիշեալ վանքի
մէկ մասը կը համարուի, գոյութեամբ ժա-
մանակակից է Ս. Տեղեաց շինութեան և
հիմնադիրը ևս կը կարծուի թէ Հեղինէն է։
Մինչև պահպանուած է Ս. Յակոբեանց վան-
քի միաբանութենէն, որոնց ձեռքով գանա-
զան անգամներ նորոգուած է։ Վանացս տես-
ւելն համար աւանդութիւն մը կայ և կ՚ը-
սուի թէ Գաւիթի մարգարէն այս տեղէն տե-
սաւ Աստուծոյ հրեշտակը ձեռքը սուր բըռ-
նած և Երուսաղէմի վրայ երկնցուցած։ Քրիս-
տոսի ժամանակ այս վանքին տեղն էր Ան-
նա քահանայապետի տունը, ուր Փրկիչն
մեր բանտարկուած լինելուն պատճառաւ՝ կը
կոչուի նաև Առաջին բանտ Քրիստոսի։ Ա-
րտաքինէ վանացս Տէր–իւ–Զկյրուն (վանք
Չիվիճնեաց) անունը կու տան, իսկ Երու-
սաղէմ Ալճայի տուն։ Եկեղեցին երկու մա-
սի բաժնուած է, առաջին մասին մէջ պա-
տարագամատոյց սեղան մը կայ յանուն
Զարչարանաց Յիսուսի Քրիստոսի. ասա է
նաև մկրտութեան աւազանը 1849 թուա-
կանաւ յիշատակարանաւ։ Երկրորդ մասն է
բուն եկեղեցին, չորս քառակուսի սիւներու
վրայ կառուցուած, 40 ոտնաչափ երկայն
և 28 ոտն. լայն։ Ունի երեք սեղաններ.
Աւագ սեղանը նուիրուած է Ս. Աստուա-
ծածնի և միւս երկուքը Միքայէլ և Գաբրիէլ
Հրեշտակապետաց։ Գրիգոր Ղեմայակիր
պատրիարքը վերջին անգամ նորոգած է եկե-
ղեցիս 1726ին և աւանդատունն ալ մեծցը-
նելով մէջը Ս. Հռիփսիմէ կուսին սեղան
մը կանգնած է։ Աւանդատան տախտա-
կեայ գրան վրայ կայ 1649 թուականաւ
յիշատակարան։ Եկեղեցւոյն որմերը գեղ-
նէն մինչեւ երկու կանգուն բարձրութեամբ
յախճապակեայ սալիկներով պատուած են, և անկէ վեր գանա-
զան անօրինակ պատկերներով զարդա-
րուած. յախճապակիներն ըստ 1795 թուի
յիշատակարանի մը, յիշատակ են Աստուա-
ծի մահկանացու Տէր Օհան քահանայի։ Եկե-
ղեցւոյս հիւսիս արեւմտեան կողմն, Քրիս-
տոսի առաջին բանտի տեղը, Ս. Գլխագիր
մատրան ձեւով գեղեցիկ մատուռ մը կայ։
— Ս. Յարութեան հոյակապ տաճարի գաւ-
թին վրայ բացուած փոքրիկ դռնէ մը կը
մտցուի Հայոց Ս. Յովհաննու Մկրտչի մա-
տուռը, որ փոքրիկ բայց պայծառ է։ Ունի
երեք սեղան, Աւագն է Ս. Յովհաննու Ա-
ւետարանչի, աջակողմեանը՝ Զարչարանաց
և կապանաց Քրիստոսի, իսկ ձախակողմեա-
նը՝ յանուն Հայր Աբրահամու և Չինման
Խաչակալ։ Մատուռս կը գտնուի Քառաց
Հայր Աբրահամու վանքի ներքեւ։ Աջակող-
մեան փոքր սեղանին մէջ է Յիսուսի չար-
չարանաց սիւնին մէկ մասը, որ արծաթա-
պատ է և առջեւը մշտավառ կանթեղ մը
կայ։ Կիրակոս պատրիարքի ժամանակ 1849
թուականին, մատրանս ներքին կողմը ամ-
բողջապէս նորոգուեցաւ։ Գրան վրայ կան
քանի մը յիշատակարաններ։ — Երուսաղէ-
մի մէջ առաջին, ղլխաւոր և համայն քրիս-
տոնէից ուխտադնացութեան միակ նպատակն
համարուած սրբավայրն է Ս. Յարութեան
հոյակապ տաճարն, որուն մէջ կը գտնուին
Փրկչի Գերեզմանն ու Golgotha։ Աստ-
ղութիւնը կ՚ըսէ թէ՝ նախահօր Ադամին
դրախտէն արտաքսուելէն և մահէն յետոյ
Հրէաստան ընդունեցաւ անոր նշխարքն, և
անոր գլուխը թաղուեցաւ այն տեղն որ կո-
չուեցաւ Կրանիոն (Cranion), Տեղի Գա-
գաթան, այն է Golgotha։ Տէրն մեր Քի-
ստոս Քրիստոս ևս խաչուեցաւ Golgothayի
վրայ և անոր մօտը թաղուելով երեք օրէն
յարեաւ հրաշափառապէս։ Ցետոյ քրիստո-
նէութիւնն հոսկայաքայլ յառաջադիմելով,
Golgothayն և Գերեզմանն սկսան մեծ յարգ
ու պատիւ ընդունիլ նորընծայ հաւատացեալ-
ներէն։ Առաջին անգամ Ս. Տեղիքը շինող
և պահպանող Հայոց Աբգար թագաւորի Հե-
դինէ բարեպաշտ թուղուհին վերջը, որուն՝
Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ շինած
մատուռն Աշխարհամատեան կը կոչուէր,
երկրորդ անգամ Հեղինէի և որդւոյն մեծին
Կոստանդիանոսի կայսեր, և Տրդատ թագա-
ւորի ժամանակ, արքայական ծախիւք շի-

նուեցաւ Ս. Յարութեան տաճարն ու Գեթսեմանին, և բաւական ժամանակ շէն մնաց։ Պարսից խոսրով Թագաւորը աւերեց 615ին, բայց քիչ տաեին մէջ վերանորոգուեցաւ։ 1342 Թուականին փոքր նորոգութիւններ եղան և 1555ին Լատինական պետուր Տէրութեանց նուէրներով Ս. Գերեզմանի շէնքը նորոգ կառուցուեցաւ։ 1800 տարուոյ սկսած. 30ի գիշերը հրդեհելով, գմբէթը տաստակաշուառ ազդուելով մը փլաւ։ Քոյները Ռ. Դրան հրամանաւ առնելով այրած և վնասուած տեղերը նորոգ կառուցին և շատ տեղեր յունական յիշատակարաններ աւելցուցին։ Մեծ գմբէթն 1863 Թուականին վերահին շինուեցաւ Օսմանեան տէրութեան խնամքով և Գաղղիոյ ու Ռուսիոյ տէրութեանց մասնակցութեամբ. ծախքը 200 հազար ֆրանկ կը հաշուեն։ Այս տաճարին մէջ երեք ազգք՝ Հայք, Քոյնք և Լատինք, ուրոյն և ընդհանրական իրաւունք կը վայելեն, և կրօնական արարողութիւններ կը կատարեն, իրաքանչիւրն ըստ իւր կարգաց. իսկ Խաչին և Աստրիք իրրեւ հետեւակք Հայոց։ Ասոնց երեք ազգերը, իրենց սեփական եկեղեցիէ և մատուռներէ զատ, ունին բնակութեան տեղ սոյն տաճարի մէջ։ Խաչաթիք միայն մատուռ մը և բնակութեան սենեակ մը ունին. իսկ Աստրիք ոչինչ։ Ս. Յարութեան պարսպէլի տաճարին երկփեղկեայ միակ մեծ դուռը, զոր Հարաւ կը նայի և ընդհանրապէս գոց կը մնայ։ Դրան բանալին, Հայոց, Քուռաց և Լատինաց միարան հաւանութեամբ՝ երկու գռնապան մահմէտական Աբրաջուց քով կը պահուի։ Հայոց, Քուռաց և Լատինաց տասուչ վարդապետները միայն իրաւունք ունին՝ գռնապանները կանչել, դուռն բանալ և փակել տալ երբ որ ուզեն։ Ի հնումն երբեմն դուռը օրերով ու շաբաթներով գոց կը մնար. բայց այժմ գրեթէ ամէն օր առաւօտ և երեկոյ, մանաւանդ տուրք Պատարագի և հանդիսաւոր օրերուն և վերջապէս ամէն կարեւոր պարագայից մէջ կը բացուի։ Դուռը բանալու և գոցելու յատուկ սովորութիւններ կան և գռնապանաց վճարմունք։ Նախնեաց աւանդութեան համեմատ, Ս. Յարութեան տաճարի այս մեծ դուռն, և ասոր արեւելեան կողմը մի և նոյն ձեւով և մեծութեամբ հիւսուած ուրիշ դուռ մ'ալ, Հայոց ազգի սեփականութիւն էր, և գրան վրայի փոքր գռնակի բանալին ևս Հայոց ձեռքն էր, բայց յետոյ ամբողջ դուռը բաժանուրդութեան կարգն և փոքր գռնակի բանալին ևս Քուռաց ձեռքը անցաւ։ Ս. Յարութեան մէջ Հայոց Տեառն սեղանի գրան քովի 38 աստիճաններով կ'ելնուի վերնատունը, ուր կայ մեր ազգին սեփական եկեղեցի, յորում կը կատարուին գիշերային և ուսնջեան ժամերգութիւնք։ Ունի երկու սեղաններ, Աւագն՝ Խաչելութեան և երկրորդը Երեքհատուր Ս. Աստուածածնի անուամբ։ Այս տեղս Երկրորդ Գաղգոթայ ևս կը կոչուի, վասն զի յիշատակարանք կը ծանուցանեն թէ Եղիպտացի Մարիամ պատրիարքը, չը կարենալով վրաց հետ գլուխ ելնել, որուն 1422 Թուականէն սկսեալ քանի մը անգամներ Հայոց ձեռքէն առած էին զԳողգոթայն, վերջին և չորրորդ անգամ երեմայով Եղիպտոս, այս տեղը խնդրեց Մուլեմանէն և փոխարէնը վճարելով առաւ, և վերադառնալով յաւուկ եկեղեցի մը շինեց 1439ին ու անուանեց Երկրորդ Գաղգոթայ, ճիշդ Գողգոթայի դիմացն ըլլալուն համար։ Այս տեղն ի հնումն Թագաւորաց հանդստարան էր, կ'ըսեն, և հոս՝ երբ ուխտի գային, կը բնակէին Թագաւորք և Թագաւորազունք։ Վերնատունս առաջ այսչափ ընդարձակութիւն չունէր, 1631ին Պարոն Տ. Գրիգոր պատրիարքը Լատիններէն երեք կամար առնելով զէպի երկայնութիւնն ընդարձակած է, փոխարէն առելով եկեղեցւոյն առջեւը եղած պարտիզին վրայի կանթեղաց մին և լատիններու երեհտեի կից խուցն։ Այժմ վերնատունն ունի վեց կամար Ս. Գերեզմանի վրայ, որոնց իւրաքանչիւրին մէջ կանթեղներու շարաններ, և այս շարանները կախուած երեքական կանթեղներ կան միաձև, որք կը վառին ազգային եկեղեցական ամէն հանդէսներուն և օտարաց հանդիսին ի պահու սահմանեալ օրերուն։ Աբեւելեան առաջին կամարին մէջ կախուած են նաեւ զանկեր, իսկ չորրորդ կամարին մէջ երկաթեայ ու տախտակեայ կոչնակներ։ Վերնատան հարաւային արեւելակողմը փոքր վեր-

նաւուն մը ևս կայ 8 ասպիճաններով, ուր կը տնջին ձմեռ ժամանակ Ս. Յարութեան մէջ ծառայող հայ միաբանք։ Եկեղեցւոյս խաչկալի և պատկերի վրայ յիշատակարանները կան։ — Հայք՝ Իղդաթերից սեղան մը ունին Ոժարափնան տեղէն քանի մը քայլ ի հիւսիս՝ աջ կողմը, առաջին կամարի արեւելեան ասքին վրայ հաստատուած։ Այս տեղ եկան խզաթեր կանգայք միաշաբաթի առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու համար, որ արդէն յարութիւն առած էր։ — Իւղաբերից սեղանէն 4 մետր դէպի հիւսիսային արեւմուտք կամարակապ նորաշէն մեծ գմբէթ նաեւ կայ 8 ասպիճաններով, ուր կը տնջին ձմեռ ժամանակ Ս. Յարութեան մէջ ծառայող հայ միաբանք։ Եկեղեցւոյս խաչկալի և պատկերի վրայ յիշատակարանները կան։ — Հայք՝ Իղդաթերից սեղան մը ունին Ոժարափնան տեղէն քանի մը քայլ ի հիւսիս՝ աջ կողմը, առաջին կամարի արեւելեան ասքին վրայ հաստատուած։ Այս տեղ եկան խզաթեր կանգայք միաշաբաթի առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու համար, որ արդէն յարութիւն առած էր։ — Իւղաբերից սեղանէն 4 մետր դէպի հիւսիսային արեւմուտք կամարակապ նորաշէն մեծ գմբէթ



301 • Երուսաղէմ. — Ս. Յարութեան տաճարը։

թին ներքեւ կլորաձեւ սրահակի մը մէջ է Տեառն մերոյ փրկչին Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանը։ Թէպէտ արտաքուստ միայնակ յարկ մը կ'երեւի, սակայն ի ներքուստ երկու մասի բաժնուած է կրկին գոներով։ Ս. Գերեզմանի դրսի դրան երկու կողմերը բարձրիկի քարաշէն պարանոցներ ունին, որոնց վրայ դրուած են երեք զոյգ միջակ մեծութեամբ կերոնաարարձ աշտանակներ։ Առաջին կճեպայ աշտանակները Յունաց, երկրորդը Հայոց և երրորդը Լատինաց են։ Ս. Գերեզմանին առաջին դուռը յարեւելս կը նայի. դրան անմիջապէս վրան կայ Հայոց պատկեր մը՝ Կիրակէնկեան գերդաստանէն Սերովբէ Եպիսկ. և Յարգիս Եփեսեան յիշատակ եղած, որ կը ներկայացնէ Քրիստոսի յարութիւնն, որուն առջեւ զգեստաւորեալ կայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Այս պատկերի առջեւ մշտավառ կանթեղ մը կախուած է՝ որ Լուսաւորչի կաթերեղ կ'ըսուի։ Մեր պատկերին վրայ է Յունաց Ս. Յարութեան պատկերը՝ մարմարիոնի վրայ քանդակուած, որուն առջեւ մշտավառ կանթեղ մը կայ. Յունաց պատկերին վրայ ալ Լատինաց պատկերն է նոյնպէս մշտավառ կանթեղով։ — Ս. Գերեզմանին վրայ սուրբ Պատարագ մատուցանելու իրաւունքն ու միայն Հայոց, Յունաց և Լատինաց միաբանութեանց սեփականած է. սրբիշ որ և է ազգի միաբանութիւն իրաւունք չունի պատարագելու, բայց բաւական տարիներէ ի վեր Յոյնք իրենց պատարագելու կարգն երբեմն Յունաց կուտան։ Ս. Գերեզմանի գմբէթին հաստատուած է 12 սիւներու և կամարներու վրայ՝ զոյգ զոյգ խարխեալ, սոնց բարձրութիւնը 10 թզաչափ է, և չորսական թիզ մէկ մէկ հետու. գմբէթին կապարապատ և տախտակամած է։ Գմբէթի սիւներու միջեւ 36 աշտանակներ և նոյնչափ կանթեղներ կան կախուած, որոնց 12 աշտանակներն և 12 կանթեղներն Հայոց են, նոյնչափ ալ Յունաց և Լատինաց։ Ս. Գերեզմանի առջեւի դեղեցիկ քարերով յատակուած փոքր հրապարակն, երեք ազգաց ընդհանրապէս իրաւունքն է։ — Ս. Յարութեան տաճարի մեծ գմբէթին կառուցուած է 18 սիւներու վրայ, որոնցմէ 1, 2, 3 թիւ կրող սիւներն և կամարները Լատինաց, 4, 5, 6, 7, 13, 14 թիւ կրողները Յունաց, 8, 9, 15, 16, 17, 18 թիւ կրողները Հայոց և 10 ու 11 թիւ կրող երկու սիւներն ալ Խալուց են, միայն 12 թիւ ունեցող սիւնն՝ որ Զոյգ սիւն կ'ըսուի, երեք ազգաց կը վերաբերի, որոնք

առանձին պատկերներ ունին։ Այս սիներ-
րու վրայ խրաքանչիւր ազգ մեծագիր և ոս-
կեզօծ շրջանակներով պատկերներ ունին և
անոնց առջեւը կանթեղներ կախուած են։
Հայոց սեփական 18 թիւ սեան վրայ կախուած
են Ղազարու Յարութեան և Քրիստոսի Յաղ-
ութեան պատկերները։ Միւս սիներու վրայ
Հայոց ունեցած պատկերներն են՝ Փաւղ Պատ-
կի, Խաչելութեան, Թովմայի Քրիստոսի
կողին մէջ դնելը, Ս. Մերոպայ, Ս. Սա-
հակայ և Քրիստոսի խաղաղութիւն տալն։
Գմբէթի չորս անկիւնները նկարուած են
չորս Աւետարանչաց պատկերները. — Ս.
Գերեզմանին կից արեւմտակողմը ժամանա-
կաւ Հայք մատուռ մ'ունէին, զոր յետոյ
Թագուց տուած են, և այժմ իրենց ձեռքն
է, փոխարէն Եգիպտոսի մէջ եկեղեցի մ'ա-
նելով։ — Թագուց մատրան դիմաց է Հայոց
սեփական Յովսէփ Արիմաթացւոյն
գերեզմանը։ — Ս. Յարութեան տաճարին
մէջ Հայք ունին նաեւ, միայն իրենց յա-
տուկ, Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին։ Շինուած
է չորս սիներու վրայ, գմբէթի կեդրոնէն
կախուած է մեծ ջահ մը։ Ունի երկու սե-
ղան առանձին պատով բաժնուած։ Աւագ սե-
ղանը Ս. Լուսաւորչայ, իսկ միւսն՝ որ ա-
ջակողմն է Ս. Յովհաննու Մկրտչի։ Եկե-
ղեցիս զարդարուած է գանագան պատկեր-
ներով և զարդերով։ Սեղաններու վրայ կան
արձանագրութիւնք, մին՝ ՌՃՀՐ և միւսն՝
ՌՃՀԼ թուականաւ։ Աւագ սեղանին ձախա-
կողմը պատուհանաձեւ փոքր տեղ մը կայ,
ուրկէ կը նայուի Գիւտ խաչին մէջ. ասան-
գաթար կ'ըսուի թէ Հեղինէ դշխոյն ատա
կ'աղօթէր, երբ իրեն հրամանաւ խաչափայ-
տը գտնելու համար գետինը կը փորէին
գործաւորք։ Գիւտ խաչի այրն ևս սեփա-
կանութիւն է երեք ազգաց։ — Ս. Դողգո-
թայ՝ Ս. Խաչը կանգնուած տեղն է, որուն
վրայ Փրկիչն մեր խաչուեցաւ։ Այս սրբա-
վայրը Հայոց սեփական էր, 1422–39 թուա-
կաններուն վրացիք առին, և ապա անցաւ
Յունաց ձեռքը. շատ պայծառ է և գանա-
զան գեղեցիկ նկարներով, ոսկեզօծ ու ար-
ծաթապատ պատկերներով և հարիւրաւոր
կանթեղներով զարդարուած. յատակն ալ
ամբողջ մարմարիոնով ծածկուած է։ — Ս.
Յարութեան տաճարի մէջ Հայոց ունեցած
դլխաւոր սրբավայրերու հետ, ընդհանուր
կերպով ծանօթանալէ վերջ ակնարկ մ'ալ
տանք Պապ–էլ–Ապտէ դռնէն ու պարսպէն
դուրս եղած Սուրբ Աստուածածնայ Տաճա-
րին, որ կը գտնուի Գեթսեմանի ձորին հիւ-
սիսային ծայրը, յորում է նաեւ սուրբ կու-
սի գերեզմանը։ Այսոր առաջին հիմնադիրն
եղած է Աբգարու Հեղինէ դշխոյն և յետոյ
Մեծն Կոստանդիանոս և իւր մայրը մեծամեծ
նորոգութիւններ ընելով՝ տաճարս կրկնայար-
կով ու գմբէթով զարդարեցին, որ մինչեւ
հօմներորդ դար կանգուն մնաց, բայց վերջը
վերին յարկը ու գմբէթը բոլորովին քանդուե-
ցաւ և եղաւ ժամանակ մը որ տաճարս ան-
ձէր և աւերակ մնաց։ Յետոյ Պատկառին
խաղաղելով, Հայք և Յոյնք լրնկերութեամբ
ժառանգեցին սրբավայրս։ 1300 թուականին
Հեթում Բ Երուսաղէմ եկած ժամանակ,
ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս ալ այս սուրբ
տաճարի մէջ նորոգութիւններ ընելով Ս. կու-
սի գերեզմանին արտաքին սրմին կից արեւ-
մտեան գրան քով սեղան մը կանգնել
տուաւ՝ արձանագրութեամբ և յիշատակա-
րանաւ, որոնք մինչեւ ցայսօր կը մնան։
Տաճարիս մէջ Հայք և Յոյնք որոշեալ սե-
ղաններ և մասեր ունին։ Ս. Յովսէփայ Աս-
տուածահօր սեղանն, որուն ներքեւ է սրբ-
բոյն գերեզմանը, Հայոց սեփական է։ Ս. Աս-
տուածածնի գերեզմանը, որ փորուած է
ժայռի մէջ և վրան գմբէթով մատուռ մը
շինուած, երկու հատուածր մասի բաժնուած
է. հիւսիսային մասը Հայոց և հարաւայինը
Յունաց յատկացուած է։ Ս. Գերեզմանի
գրսի կողմն, արեւմտեան պատին կից է
Հայոց սեփական Աւազ Սեղանն, որ մեր վե-
րը յիշած Հեթում Թագաւորի շինել տուածն
է։ Հայք Ս. Թադէոսի և Բարթուղիմէոս
յատուկ սեղան մ'ալ ունին գերեզմանի

հիսխասային կողմը պատին մէջ՝ առանձինն լայն կամարով մը, որուն Աւետման Սեղան ալ կ՚ըսեն։ Տաճարի արեւմտեան թեւին մէջ ալ է Հայոց Ընծայման Սեղանն։

Ս. Յակոբայ վանուց հարաւային կողմն և քաղաքին պարսպէն դուրս է Հայոց Ս. Փրկչայ վանքն, գրեթէ քառորդ ժամու հեռաւորութեամբ։ Այս վանքիս և եկեղեցւոյն տեղը, ինչպէս ամէն ազգեր կը վկայեն, կայսերական քահանայապետի տունն է. ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս մանուկութենէն յետոյ բերուելով, հարցաքննութեան ենթարկեցին քահանայապետին դիմացը։ Այս այն տեղն է՝ որ Պետրոս առաքեալը երեք անգամ ուրացաւ Քրիստոսն. «Թէ ոչ գիտեմ զայրն» ըսելով. և հինգշաբթի գիշերն այս տան մէջ անցուց Յիսուս հազար ու մէկ նախատանաց համբերելով։ Վանացս եկեղեցւոյ գրան հարաւային կողմը եղած սեղանն շինուած է յանուն Ս. Զաքարեանց։ Ս. Փրկչայ եկեղեցին սիրուն գիրք մ՚ունի և առանց սիւնի է. մէկ սեղան միայն ունի, որուն վրէն է Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանի կափարիչն, զոր հրեշտակը շրջից ու վրան նստաւ։ Այս վէմը որ գրեթէ կէս բոլորակի ձեւ ունի, ամբողջ սեղանը կը ծածկէ, և երեք տեղէ բաց թողուած է համբուրելու համար։ Աստր վաւերականութիւնն կը հաստատեն նաեւ ուրիշ քրիստոնեայ ազգերը և ուխտի ու երկրպագութեան կուգան։ Այսպ սեղանին ձախ կողմը փոքր դուռ մը և ներսը՝ ուր հազիւ երկու հոգի կրնան կենալ, փոքրիկ սեղան մը կայ որ Ս. Բանտ կը կոչուի։ Այսպ սեղանի եաեի կողմն ալ պահարան կամ աւանդատուն մը կայ, որ Ս. Երրորդութեան սեղան մը ունի. այս պահարանի դուռը շատ ժամանակէ հետէ հիւսուած էր և ներսն ալ աւերակ։ 1886 թուականին, Թալասցի Տ. Պետրոս վ. Պալեանի առաջնորդութեան օրով, անոր աշխատութեամբ և ջանիւք, դուռը բացուեցաւ և ներքին կողմը նորոգուելով, սեղանն ալ վերրսաին կանգնեցաւ։ Ս. Փրկչայ վանուց դպրութիւնը մինչեւ Քրիստոնէութեան առաջին դարը կ՚երթայ և Հայոց ազգի սեփական կալուածք եղած է իր հիմնարկութենէն ի վեր. երբեմն լքեալ թողուած և երբեմն պայծառացած։ Յարեքառասնեերորդ դարուն մէջ, Յովհաննու Աբծիշեցւոյ աշակերտներէն ոմն կարապետ Տօսպեցի ուխտի գալով Երուսաղէմ՝ ոտօրինակն Ս. Տեղեաց և տեսնելով վանացս խեղճ վիճակին, յիշխատոս կ՚իջնէ, այն տեղի սուլթանէն կրկին անգամ ծախու կ՚առնէ վանքն և վերազանալով յԵրուսաղէմ, կը նորոգէ զայն և միաբանութիւն հաստատելով կը պայծառացնէ։ Այնուհետեւ Ս. Աթոռոյն Պատրիարքներն յաջորդաբար պէտք եղած նորոգութիւններ րրած են։ Վանացս եկեղեցւոյ գաւթին մէջ է գերեզմանատունն Ս. Աթոռոյն պատրիարքաց, վաստակաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց, ինչպէս կը ցուցնեն տապանաքարերու արձանագրութիւնք, որոնցմէ գլխաւորաց անուանք և մահուան թուականն յիշենք. պատրիարքներէն՝ Պարոն Տէր Գրիգոր († 1645), Ամատուած տուր († 1671), Յովհաննէս († 1697), Մխեաս († 1704), Գրիգոր Ղեմայակիր († 1749), Կարապետ († 1768), Թէոդորոս Խոբենացի († 1761), Պօղոս վանեցի († 1775), Յովսէփ Ումաճէն († 1793), Թէոդորոս վանեցի († 1819), Գաբրիէլ Նիկոմիդացի († 1840), Կիրակոս († 1850), Յովհաննէս Կոլոտ, Պետրոս կաթողիկոս Կիլիկեցւոց († 1728), Հաննէ վարպապետ († 1733). և այլն։ Հոս թաղուած են նաեւ Պօղոս պատրիարք Ակրիտանապոլսեցի, Յովհաննէս պատրիարք Զմիւռնիացի († 1860), Յակոբ կ. Պօլսի պատրիարքը († 1862), Եսայի պատրիարք Թալասցի († 1886)։ — Երուսաղէմի մեծ արքեպս և յիշատակաց արժանաւոր վայրերէ մէկն ալ է Զիրեեանց թաղ կամ Ս. Համբարձում։ Սրբավայրիս բակը բաղարաձեւ է և ճիշդ կեդրոնն է տրփի մեծաւուն ութանկիւնի, 6-7 մետր տրամագծով և տրաբական ձեւով գմբէթով մը։ Մեծաւուին մէջ Քրիստոսի Համբարձման օրը թաղուած ոտնատեղւոյն նշանը կ՚երեւի ժայռի վրայ գրոշմուած։ Ամբողջ բակը պարսպապատ է, ներքին կողմը զատ զատ քարէ սեղաններ շինուած են երեք ազգի սեփական։ Դռնէն սկսեալ ամբողջովին հիւսիսային կողմը և արեւելեան կողմի պարսպին կից երեք առանձին սեղանները Հայոց են։ Ս. Համբարձման օրը բոլոր քրիստոնեայ ազգերը

մեծ հանդէսներ կը կատարուին ատոր։ Համբարձման լերան վրայ Զէյթուն անուամբ Ա-րապացւոց գիւղ մը կայ. այդ գիւղի արեւելեան կողմն է Ռուսաց Նոթրաշէն վանքն ու եկեղեցին։ Զանգակատունը շինած են 1886 թուին 50 մեթր բարձրութեամբ։ Այս վանքի և եկեղեցւոյ տեղը 1868ին գնեցին Ա-րապացւոցմէ, և 1871ին շինուելեան ձեռնարկեցով, պեղմանց միջոց նախ այր մը գտան 9 խորշերով՝ որոնք գերեզմաններ էին, որոնց վրայ կային մխսխան քարերով զարդեր և նոյն քարերով երեքին վրայ հայերէն տառերով Ջուխիկ, Շուշան և Մարիա անուններուն։ Ա.յրին վրան առջեւ գտնուած է նաեւ ուրիշ քառակուսի ձեւով գերեզման մը, որուն մակերեւոյթը մխսխան քարերով զարդարուած և նկարուած է և ունի չորս տող հայերէն յիշատակարան մը։ Ա.յրին մուտքին հիւսիսակողմը որմին վրայ եւս կան երեք խաչքարեր, առանց թուականի և արձանագրութեան։ Ցետոյ գտան սոյն գամբարանները վերի կողմը ընդարձակ սրահ մը, որուն յատակին վրայ մխսխան քարերով շինուած քառակուսիի մէջ, կան գտնուած գեղեցիկ նկարներ, որոնք են՝ ձուկ, աքաղաղ, սագ, գառն, ոչխար, լեռնէն, կիտրոն, և այլն, և հայերէն գրերով յիշատակարանի մը հետեւեալ մնացորդը. «Ա.յս դիր է երանելոյ Շուշանիկայ մարդն Ա.բրահամայ. Հոգի ի՛ր»։ Ցիշեալ սրահէն մօտ ուրիշ տեղ մ'ալ գտան, նոյնպէս յատակը մխսխան քարերով զարդարուած և հայերէն յիշատակարանի մը հետեւեալ մնացորդով. «վասն ա-զարիայ և փրկութեան Թէոդոս, Ա.բրահամ և Մարկոսի»։ 1883 տարւոյ սկիզբները այս ընդարձակ տեղւոյն վրայ հին եկեղեցւոյ փլատակներն եւս գտան, առանց պեղելու յատակին հնութեանց ասոր վրայ կատուցին հոյակապ, փառաւոր, խաչաձեւ և գմբէթաւոր եկեղեցի մը։ Եկեղեցւոյ շուրջը, ամրողջ գետինն, որ բաւական ընդարձակ է, շրջապատեցին, որ այժմ գեղեցիկ վանք մը եղած է։ Վերոյիշեալ հնութիւնները և հայերէն յիշատակարանները լաւ կերպով կը պահպանուի Ռուսներէն Տ. Եսայի պատրիարքը՝ Ռուսաց Ա.րշիմանտրիտ Գ. Ա-ռաքելեան թոյլտուութեամբ, այս հնութիւնները և յիշատակարանները, գարպերովը ու նկարներով, համեմատաբար չափով և գոյնով ճիշդ օրինակները իւզանկիով հանել տուաւ և շրջանակի մէջ անցնելով Ս. Յակովբեանց վանուց Պատրիարքարանի սրահին մէջ կախել տուաւ։ 1892 տարւոյ պեկեմբերը 19 ին եւս, Շուշանեան արձանագրութեան մեծ սրահէն քիչ հեռու, գտնուած մի և նոյն պատկառելիութեամբ սրահ մը, հանդերձ նոյնը միւսոյն նկարներով և հայերէն յիշատակարանով մը։ Ա.յս յիշատակարանաց դրերն, եթէ ճիշդ է հնագիտաց և պատմագիտաց կարծիքը՝ Մեսրոպեան դրերու վերածէն անմիջապէս յետոյ կը համարուին, և բուն այնմ այս հին շինութիւնք տասն և չորս դարու հնութիւն ունին։ Ա.յս հնութեանց գտնուած տեղն, կը կարծուի թէ մեր հին 70 վանքերէն Պանկայ վանք բուսածն է, որ Ս. Համբարձման արեւելեան կողմը կ'իյնար։ — Երուսաղէմի մէջ կան ոչինչ թուով կաթոլիկեայ Հայեր, որոնք ունին փոքրիկ մատուռ մը։ — Կը վերջացնենք սուրբ քաղաքիս մեր ազգի վերաբերեալ վայրերու նկարագրութիւնն, զոր քահանիք Մեծ. Տրպատ վ. Պալեանի, 1894ին հրատարակած Սուրբ Երկիր գրքէն։ Փափագողք՝ նոյն գրքի մէջ կրնան գտնել ընդարձակ տեղեկութիւններ, նաեւ օտար ազգաց սրբատեղեաց նկատմամբ. ինչպէս նաեւ սրբազան տեղեաց մէջ կատարուած հանդէսներու, թափորներու, արարողութեանց և սովորութեանց վրայ, մանրամասն ծանօթութիւններ։ Քաղաքիս Հայոց պատրիարքաց յաջորդութեան վրայ գիրք մը հրատարակած է ի կ. Պոլիս 1872ին Ս. Յակովբեանց ուխտի միաբան Բառնաբաս վ. Գանձակեցին։ Երուսաղէմի պատմութիւնը գրած է Հաննէ (Յովհաննէս) վարդապետը, որ և-րեք անգամ տպուած է, առաջինը՝ 1727ին Լերուսաղէմ, իսկ երկրորդ և երրորդը՝ կ. Պոլիս 1763ին և 1782ին։ Քաղաքիս վրայ գրած են բազմաթիւ օտարազգի հեղինակներ. իսկ ազգային հրատարակութիւններէն յիշենք նաեւ Տճօրհնական Տեղիք, տպ. կ. Պոլիս. Առաջնորդութիւն սրբոյ քաղաքիս Երուսաղէմի, տպ. Երուսաղէմ, 1859. Ուղեցոյց Ս. Տեղեաց, տպ. Երուսաղէմ, 1872։ Եւլն։

ԵՊՈՒՏԱԿԻՔ. — կը յիշուի այս անուամբ եպիսկոպոս Ա. Լուսաւորչեան տեղոյն եպիսկոպոսներու շարքին մէջ՝ ԻԹ դարուն սկիզբ։

ԵՒԱՆԱԿԱՅ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԵՒԴՈԿԻԱ, ԵՒԴՈՔՍԻԱ կամ՝ ԹՈՒՔԱԹ. Գլ. TOKAT. ՅՆ. Ευδοξια. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Միւռատիայ տեղոյն մէջ։ Կ'ինայ 34° 16′ արեւելեան երկայնութեան և 40° 21′ հիւսիսային լայնութեան մէջ, բարձր է 650 մեթր, Թոսաանդր կամ Թոզպաղը սուր իրենի օժանդակ գետակի ձախակողմը. ճնշուած է լեռներու և ժայռերու մէջ. Միւռատիայէն 75 հազարամեթր հեռու է հիւսիս–արեւմտեան կողմը։ Քաղաքս իր անունն առացած կը կարծուի Բրիսոնէութեան Դէդ գարու մէջ, Թէոզոս կայսեր մօր Եւդոքսիա կայսրուհւոյն անունէն։ Եւդոկիա ունի բաս վ. Բինէի 6000 տուն և 29890 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	18250
Հայք Լուսաւորչական	9000
» Կաթոլիկէ	1300
» Բողոքական	150
Յոյք	750
Հրեայք	400
Այլ և այլք	40
Գումարն...	29890

Քաղաքիս Հայը առանձին թաղերու մէջ կը բնակին և ունին մեծ ու փոքր հօթը եկեղեցիներ, որոնք նշանաւոր են պայծառ շինուածով, ճոխ զգեստներով, արծաթեղէն և ոսկի զարդերով ու անօթներով. ոմանք ունէլի հարուստ են գրամագլխով և եկամուտներով։ Ս. Երրորդութիւն, Ս. Մինաս և Ս. Աստուածածին գրեթէ իրարու կից են. իսկ Ս. Լուսաւորիչ և Մ. Կարապետ գատ թաղերու մէջ. Ս. Գէորգ և Ս. Քառասունք քաղաքին երկու թեւից ծայրերը շինուած են։ Մայր եկեղեցին է Ս. Աստուածածին՝ որուն մօտ շինուած է Առաջնորդարանը։ Հայք ունին հինգ վարժարան, Վարպետեան, Վարդուհեան, Ս. Աստուածածնի, Ս. Երրորդութեան և Ս. Գէորգի անուամբ։ Վիճակիս հանգուցեալ առաջնորդներէն Գէորգ եպիսկոպոս 6000 դրշ. և Յակոբ եպիսկոպոս 10000 դրշ. կտակած են՝ կէսն վարժարանաց և կէսը աղքատաց համար. Երուսաղէմի Տ. Էսայի պատրիարքն ալ վանքին կալուածներէն քանի մը կտոր շէնք նուիրած է տեղւոյս վարժարանաց, որոնցմէ տարին 2000 դրշ. ի՛նտանան։ Կաթուղիկէ Հայք ունին յատուկ եկեղեցի մը և վարժարան։ Բողոքական Հայք ժողովարան մը և նախակրթարան։ Հոս հաստատուած են նաեւ լաթին Քհանայութիւնք, և ունին եկեղեցի մը ու վարժարան։ Յոյնք ունին մէկ եկեղեցի և մէկ նախակրթարան. յունարէն չեն գիտեր կամ սակաւ, հայերէն կամ թուրքերէն կը խօսին և վաճառականութեան մէջ բաւական ծագիկաւ են։ Տեղւոյս ամենահարուստ գաղափարը կը կազմեն Մահմէտականք, և ունին բազմաթիւ մեծ ու փոքր մզկիթներ, որոնցմէ գլխաւորն է Ալի Փաշա ձամիսի, որուն գաւթին մէջ ութը հատ մարմարիոն սիւներ կան՝ խարխիններով ծածկու պղնձէ, ասոնց վրան ալ քարաշէն վերնատուն մը՝ որ մզկիթին մէջ կը նայի։ Երկրորդն է Մէյտան ձամիսի, որուն գմբեթը մեծ հրապարակ մը կայ, կը կոչուի նաեւ Աւէյրանիէ։ Եւդոկիոյ նշանաւոր շինուածքները կրնան համարուիլ երեք Թիմարխանէ կամ Մէտրեսէ ըսուածները, որ խիստ հին, ամրակազմ ու մաքուր պահուած են։ Բուն Թիմարխանէ ըսուածին երեսը բոլոր տաճկական փորուածքներով զարդարուած է. ասոր չորս կողմը եղած սենեակներէն մէկուն մէջ տապանի ձեւով գերեզմաններ կան, դրսի մեծ դրան վրայ ալ երկու տախտակ կայ փորուած։ Երկրորդը իջեան է և առաջուն պէս զարդարուն. միայն սա երկու կարգ սենեակ ունի վրայէ վրայ շինուած և յախճապակիով պատած։ Երրորդը փոքր է և ունէլի նուազ զարդարուն։ Ասոնք երեքն ալ քաղաքին բանուկ տեղը մէկ թաղի մէջ շինուած են իրարմէ քիչ հեռու։ Այս տեղէն քիչ հեռու պարտիզի մը մէջ սրածայր գմբէթով մահարձան մը կը ցուցընեն իբրեւ գերեզման Էյնկէմիսլիի որդւոյն։ Նշանաւոր է քաղաքիս Ղալեսանէ (պղնձի հալոց). մեծ և հերոսական ոճով սուլթան Մահմուտի ժամանակ, շինուած գործարանը. բոլոր մերձակայ սահմանաց

պղնձի հանքերը հոս կը հալեն և գոտա-զան տեղեր կը դրկուին։ — Ազեմեանան կողմէն ապառաժուտ լերան ծայրը կը գրա-նուի հին, կիսաւեր և անշուք բերդը, որուն մէջ կայ մեծագործ գեղեցուկ ջրամբար՝ բայց իջնելու ճամբան և սանդուղները աւեր են։ Բերդին վանդակապատ երկաթէ դրան ձախակողմը ներսէն կայ յունարէն արձա-նագրութիւն։ Ջրերու կողմանէ առատ է Ե-զոկիա Պրուսայի նման և գուցէ անկէց ալ աւելի. ջրերը կը բղխին Պէկգատ բլուրէն ակունքէն, և գեղեցիկ ջրանցքներով կը բաժնուին քաղաքին փողոցներ ու տները։ Եւզոկիոյ մէջ կան 12 հասարակաց բաղ-նիք և 40 ազբիւրներ։ Օդը ամառը սաս-տիկ տաք է և ձմեռը ցուրտ. ամառ առեն բնակիչները պարտէզները կը քաշուին ու կը գուարճանան տեսակ տեսակ բերքեր այդի-ներուն և պտղատու ծառերու շքին տակ։ Տները թէև ընդհանրապես փայտէ և հում աղիւսով շինուած են և արտաքին տեսքով անշուք, սակայն ներքուստ բաւալ՝ շքեղ ու ճոխ կահ կարասիներով զարդարուած, ա-սիական պերճութեամբ. եւրոպական խիստ քիչ է։ Տարազներն ևս աւելի ասիական են քան եւրոպական։ — Եւրոպացի ճանա-պարհորդներէն քաղաքիս առաջին տորա-դրողներէն մին է Թուրնըֆոր գալլիացին, որ շատ գովեստով կը խօսի վրան։ 1825ին քաղաքս մեծ երկրաշարժ ունեցաւ և շատ վնասուեցաւ։ — Եւզոկիացի Հայոց մեծ պար-ծանքն է իրենց հայրենակից ու անմահ յի-շատակաց արժանի մեր ազգային բարերա-րը՝ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատ ազ-նուական պարոնը, որ իր հօրը հետ վա-ճառականութեամբ Հնդկաբերա երթալէ վերջ հանգիպեցաւ վենետիկ Ս. Ղազարու վանքը, ու իրեն ազգասիրութեան յորմոր մէջուց տեսնելով մեր միաբանութեան վախճանն ու ջանքը, երբ Հնդկաստան գնաց և հոն իր բնական հանճարովն ու ջանքով հարստա-ցաւ, 1815ին կտակով Մխիթարեան միա-բանութեան թողուց յաւուրկ գումար մը, որուն եկամուտով կրթուած են և կը կրթուին ազգիս զաւակները։ Ուրիշ պարծանք մ՚ալ կը համարուի Եւզոկիոյ բարեյիշատակ Հ. Մատթէոս վ. Գարագաշեան, որ Մեծին Մխիթարայ առենապետին էր, քաջ առուտա-ծարան և նորոգիչ հայկաբանութեան։ Քա-ղաքէս ունեցինք նաև վերջին գարուս մէջ նաև քանի մը ժողովրդական բանաստեղծ-ներ, ինչպէս Խաչատուր Գալրտեան, Սան-փանոս վ. և այլն։ — Գաղթական գերեզմա-նոցները թուով 32 են և կը բաժնուին այս-պէս. 20ը՝ Մահմէտականաց, 9ը՝ Հայոց, 2ը՝ Յունաց և 1ը՝ Հրէից։ Այս 32 գե-րեզմանոցներէն հնագոյն է Հայոց Գառատուն Մանկանց եկեղեցւոյն գմբեայը գտնուողը։ Բազմաթիւ հնագոյն գերեզմաններու մէջ է



302 · Մուրատ։

Նաև կոմանացի Պօղոս անունով անձի ւբ, որ մեռեր է 965ին (?) և տապանագրին հա-մեմատ քարակոփ էր. ժողովրդական աւան-դութիւն այս անձը կը համարի Թոռակլը-սուլի վրայ ձգուած գեղեցիկ քարաշէն կամրջին ճար-տարապետը։ Պօղոսի տապանաքարը զար-դարուած է բարձրաքանդակ ծաղիկներով որոնց մէջ է քանդակուած նաև իր զէնքը։

ԵՒԴՈԿԻԱ գաւառն կ՚ինայ Սերաստիոյ նահանգի հիւսիսային կողմը, 33° 16′ էն 35° 14′ արեւելեան երկայնութեան և 39° 53′ էն 40° 49′ հիւսիսային լայնութեան

մէջ։ Սահմանքն են հիւսիսէն՝ Տրապիզոնի նահանգը, արեւելքէն՝ Գարահիսար–Շարքի և Սերաստիոյ գաւառները, հարաւէն՝ վերջինս և Անկիւրիա, արեւմուտքէն՝ նոյնպէս Անկիւրիոյ գաւառը և հիւսիս–արեւմուտքէն Ամասիոյ գաւառը։ Տարածութիւնն է 10000 քառ. հղմ։ Բաժնուած է 4 գաւառակներու և 45 վիճակաց, ունի 1155 գիւղ։ Բոլոր գաւառին բնակչաց թիւն Փինէ կը հաշուէ 208800, որոնց մէջէն 40000ը հայ։

Եւդոկիոյ շուկան ճոխ է, բայց անկանոն և խանութները ցիր ու ցան։ Քաղաքին և գաւառին գլխաւոր արհեստներն են՝ պղնձագործութիւն, ոսկերչականութիւն, ներկարարութիւն, կաւաւոպագործութիւն, կաւազործութիւն, բրուտութիւն և կաշեգործութիւն։ Երբեմն քաղաքին հայ բնակչաց մեծ մասը պղնձագործ էին և ամէն տեսակ պղնձի անօթներ շինելով կը ղրկէին այլ և այլ կողմեր ու լաւ վաճառակ կ'ընէին, բայց այժմ վաճառակը պակասած է։ Ածելի ծագիած է կաւելինաց և քողերու նուրբ ապակրութիւնք, այս գործարանաց մէջ այժմ 1500 աշխատաւորք կան։ Այս արուեստի արտադրութիւնք ժամանակաւ ածելի կը փոխադրէին, բայց հետզհետէ մուտ գործելով արտաքին նոյն տեսակ ապրանքներ՝ որոնք թէեւ ոչ նոյնպէս նուրբ, սակայն իրենց աժան գնով տեղական ապրանքի վաճառման արգելք կ'ըլլան։ Քաղաքի և շրջակայից մէջ տասնէ ածելի կաշեգործարաններ կան 500է ածելի աշխատաւորներով, որոնք կօշիկներու և մուճակներու կաշի կը պատրաստեն։ Այս կաշեգործարաններէն մին միայն կը պատկանի կաթուղիկէ հայու մը՝ նախկին աշակերտ վենետկոյ Մխիթարեանց, որուն արտադրութիւնք կը համապատասխանեն արդի եւրոպական արուեստին։ Բրուտութիւնը մեծ նշանակութիւն մը չունի. կը պատրաստեն տեղական պիտոյից համար զանազան անօթներ և գինւոյ մեծամեծ կարասներ. այս արուեստին աշխատող կան մօտ 200 անձ և վից գործարան։ Ոսկերչականութիւնք և ներկարարութիւնք յառաջադէմ վիճակի մէջ են։ Ամէն տան մէջ կանայք և աղջկունք կը հիւսեն ձեռագործներ սպիտակ բամբակէ և յետոյ կարմիր ներկելով կը վաճառեն։ Գաւառին և քաղաքի գատարանաց մէջ տարին առ նուազն 100000 հոխայ օղի կը պատրաստեն։ Խրաքանչիւր այգեգործ իր տան մէջ օղի կը քաշէ։ Երկրի բերքերուն գազափար մը կրնայ տալ մեր վարը դրած ցուցակը. իսկ վաճառականական շարժմունքն ալ կը յայտնեն առանձին դրուած արտածութեան և ներմուծութեան տախտակները։

Եւդոկիոյ գաւառի երկրագործական բերքերէն տարեկան կը տացուի միջին հաշուով.

Ցորեն	40000000	հոխայ
Գարի	10000000	»
Հաճար	1150000	»
Վարսակ	100000	»
Եգիպտացորեն	10010410	»
Կտաւակ	6340000	»
Բրինձ	90000	»
Բակլայ	15500	»
Լուբիա	2000000	»
Ոսպ	1000000	»
Սիսեռն	2000000	»
Պամիայ	215000	»
Խաղող	1000000	»
Տանձ և խնձոր	2000000	»
Ձանազան պտուղներ	3000000	»
Ալաժահրի (ձէհրի)	100000	»
Գազի խէժ	3200	»
Մէղրապ	5000	»
Չրխախաս	1000000	»
Անիսեռն	1000	»
Ափիոն	2500	»
Խաշխաշի հունտ	100000	»
Կանեփի թել	100000	»
Մոմ	3500	»
Մէղր	700	»
Պըօն (թէֆթէֆկ)	41500	»
Նօրգենի (Mahaleb)	40400	»
Նուշ	200000	»
Ձամիչ	500000	»
Գինի	180000	»
Ռուփ	819000	»

Գումարն... 82746110 հոխայ

կամ գրեթէ 100 միլիոն հազարագրամ։

Տարուան մէջ միջին հաշուով կենդանիներէն առաջ կու գան.

Եզ և կով	18333	գլուխ
Ձի	9166	»
Էշ	4000	»
Ուխտ և այծ	173389	»

Գումարն... 204888 գլուխ կենդանի։

Էլզոկիա և իր շրջակայ գիւղերն ու կըր-
կին վանքերն ետ 1896 տարւոյ աղետալի
դէպքերուն ենթակայ եղան։ Քաղաքի մէջ
ժամանակաւ խիտ հարուստ հայ վաճառա-
կաններ և տարազագործներ կան եղեր, ո-
րոնցմէ ոմանք անհետացած և մէկ մասն ալ

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ՎԱՃԱՌՈՒԱԾ	ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ կամ կշիռ		ԱՐԺԷՔՆ ֆրանկով
Ցորեն	30000	ակռչփ.	300000
Գարի	600	»	4800
Սիսեռն	1000000	հղրգր.	150000
Ոսպ	500000	»	76000
Աւժաշէրի	1253	»	1150
Ալիքան	500	»	18200
Խաշխաշի հունտ	20000	»	10000
Գազի խէժ	15075	»	28750
Նոթգինի	40000	»	15000
Մեղրապակ	852	»	1840
Կանեփ	50000	»	34500
Պտուղներ	2000000	»	230000
Կանաչեղէնք	1000000	»	120000
Խաղող	50000	»	16500
Կարագ	40000	»	40000
Մաղ	2778	»	2990
Մեղր	300	»	900
Բուրդ	150500	»	120000
Պըռն (թիթեղիկ)	36000	»	64000
Ճրագու	50000	»	24010
Գինի	10000	»	5000
Ուխտը	?		60000
Զի	?		30000
Աքծու մորթի	50000	կաոր	75000
Կովու »	?		24000
Ոչխարի »	?		48000
Ուխտի »	25000	»	45000
Գառան »	?		30000
Նապաստակի »	6000	»	2220
Ջրջան »	50	»	1250
Սամսարի »	500	»	2500
Սամդրի »	400	»	3680
Աղուեսու »	1000	»	23000
Շինուածեան փայտ	?		7000
Գորգեր	?		200000
	Գումարն....		1822090

գաղթած են ուրիշ երկիրներ։ Քաղաքի ա-
րեւելեան ծայրն է հայ բոշաներու թաղն,
որ գրեթէ գիւղի մը երեւոյթ ունի։ Էլզոկիոյ
առաջնորդական վիճակի հայաբնակ գիւղե-
րու նոր վիճակագիրն չունենալով, կը դնենք
1879ին պատրաստուածը։ — Էլզոկիա ու-
նի երկու վանք. մին՝ քաղաքէն չորս ժա-
մու ճանապարհ հեռու Պիզէտի գիւղի մօտ
Ս. Յովհաննէս Ոսկեբերան կամ Ս. Նշան, և

միւսն՝ Ս. Յովակիմ Աննայի վանք։ Վեր-
ջինս կառուցուած է լեռնակողի մը վրայ.
պարսպապատ է և ունի երկու դուռ, մին կը
բացուի դէպի հիւսիս և միւսն՝ յարեւմուտս։
Վանքի մէջտեղը շինուած է քարաշէն տա-
ճարը. արեւելեան կողմն է ուխտաւորաց

ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ՎԱՃԱՌՈՒԱԾ	ՎԱՃԱՌՈՂ ՏԵՂԵՐԸ	ԱՐԺԷՔՆ ֆրանկով
Իրինձ	Թոսոխա–Պէյազատ	92026
Օճառ	Ախթամար–Ադաթուր	28750
Լեզակ	Մարթիլիա	12500
Երկաթի	Շուխա–Խուսխա	75670
Ածագ	Մարթիլիա	7027
Ձէթ	Քիլիա–Մեհրլինէ	5610
Պաղպաղ	Շուխա–Խուսխա	1993
Քարիւղ	Պահմամ	48000
Մամ	Մարթիլիա	2070
Ապակեղէն	Գերմանիա	12175
Անելիքի ներկ	Մարթիլիա	13800
Երբաբեւեռ	Փարիզ	6900
Շաքար	Թրիեսթ–Մարթիլիա	51750
Սուրճ	Մարթիլիա	74520
Բամբակ	Ատանա–Թարբերդ	184000
Լուցկի	Թրիեսթ	36000
Թուղթի	»	36000
Մանր երկաթեղէնք	Գերմանիա	12000
Կաշի	Մարթիլիա	20000
Հնդիկ պատառոտ	Մէհնէսլեթը–Սանասար	155000
Բալէքրեի կտաւ	» »	180000
Ջուխայ	Գերմանիա–Ուսխա	95000
Ֆէս	Թրիեսթ	15000
Կարմրիա	Մարթիլիա	30000
Եղն	Կարս–Կարին	95000
Գամէշ	Պաղտատ	98000
Ռում	Ալեքսիա–Ամերիկա	6300
Ալբոլ	Ալեքսիա	2815
Գոնեակ	Մարթիլիա	3200
Օղի	Զանազան տեղեր	13000
	Գումարն....	1414106

Թաղն՝ 16 միայարկ տներակներով։ Տաճա-
րին հարաւը շինուած է միաբանից թաղը
12 տներակներով. վիմայարկի մէջ կան
երկու տներակներ իրր հիւրանոց կամ պըռ-
սարան միաբանից։ Տաճարի հիւսիսային
կողմն վերին յարկը կառուցուած է կանո-
նաւոր շէնք մը՝ ճեմարան կամ վարժարան.
այս յարկին ներքեւն է սեղանատունն, խո-
հանոց և մառան։ Վանքս ունի աղբիւր,
շատրուանով պարտէզ և աւազան։ Միաբա-
նից և ուխտաւորաց տներակներու ներքեւն
է ընդարձակ ամբարանոցը, ուր կը պահեն
արմտիք, ալիւր, գինի, իւղ, պանիր և այլ

նպարեղէնք։ Վանքին հիւսիսային մեծ պրան հանդէպ շինուած են անասնոց ախոռները և տուն մը՝ զոր Զիֆրլիկ կ՚անուանեն։ Վանքին հիմնարկութենան ժամանակն յայտնի չէ. կայ միայն յիշատակագրութիւն մը

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԵՒԴՈԿԻՈՑ

ՀԱՑԱՐՆԱԿ ԳԻՒՂԱՐԷՑ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ	ՀԱՑՔ	ՕՏԱՐՔ
Թագդլպայ	262	—
Եամիրճը	374	—
Գէտաղազ	308	—
Զիֆիթլիկ	326	—
Պօլիս	200	234
Պէսկինճէք	291	—
Վարազ	39	171
Լնամիկ	60	95
Կրիգորիս	245	—
Գուրջի	31	195
Կէտաբա	9	—
Կէբան	18	—
Պիզէան, հն. Պիծէան	34	340
Չէրէք աւան	1126	4702
Աղաղաղը	79	—
Զօղչար	92	—
Իլվազայ	113	—
Մարը Գայեան	63	—
Սախար Զալ	30	—
Նիկսար քաղաք	2053	3705
Ղափու Աղզի	360	—
Զիլէ քաղաք	2012	16688
Գումարն...	8125	26130

1841ին գրուած, յորմէ կը յայտնուի թէ 1659ին նորոգուած է. երկրորդ անգամ ևս նորոգուած է 1710ին, փառաւոր խորանով և պատշաճաւոր սեղնակներով։ Նոյն յիշատակագրութենէն կը յայտնուի նաև վանքիս զանազան անգամներ այլազգինեբէն քանդուիլն և աւերի ատնուիլն։ Վերջին նորոգողն եղած է Իզմիրցի Գէորգ եպիսկոպոսը 1828ին, որուն արձանագրութիւնը քանդակուած է տաճարի պրան ճակատի վրայ։ Այս նորոգութիւնը հիմնովին եղած է բոլոր սեղնակներով, շրջապարսպով և արտաքին շինութիւններով։ Տաճարի պրան պիմաց է Գէորգ եպիսկոպոսի գերեզմանը՝ մուխ մարմարիոն քարով, որ մեռած է 1832ին։ Վանքս ունի բաւական լաւ և շատ անօթեներ ու կահ կարասիներ. շէնքերը կանոնաւոր շինուած և լաւ պահպանուած են. երբեմն նախանձելի վիճակի մէջ կը գտնուէր ուսումնական վարպետներով և բարեկարգ վարժարանով։ Ունի քիչ թուով գրչագիր մատեաններ և բաւական հարուստ է տպագիր գրքերով։ Վանքի սեփական հողերը շատ պաղարիւր չեն։ Եկամուտներն են տարեկան ափիոնէ, ծխախոտէ, ալաժահրիէ, պաղինեբէ, քաղաքի մէջ եղած երկու խանութէ, վաճառուած բուրդէ, ուխտաւորաց նաւէրներէ, և այլն։ Վանքս ունի իր մշակներն, եզ, կով, գոմէշ, էշ, ոչխար և այծ։ Ներկայ վիճակագրութիւնն չունինք։ Վանքս իր առնաւան յատուկ ասնախմբութենան օրէն զատ, գարնան և ամրան եղանակաց մէջ միշտ կ՚ունենայ ուխտաւորներ, որոնք շատ աջին կը ծնան հոն օգտախնամութենան համար, վասն զի շատ լաւ դիրք ունի և շրջապատեալ է այգիներով ու ծառուդիներով։ Այս վանքէն գրեթէ ¼ ժամու ճանապարհ հեռու է Ցուռնաց Կեսրի գիւղը և փոքր մենաստանը, ուր կառուցուած է Ս. Աստուածածնի տաճար մը։

Ս. Յովհան Ոսկեբերանի վանքը, լսա առնդութենան և լսա ձեռագիր յիշատակարանաց, հիմնարկուած կը համարուի Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորի երեք որդիներէն։ Աբքայորդիք մէկ մէկ խորան կառուցած են իրենց յիշատակին, աւագ խորանն՝ Ս. Նշան, որուն անուամբ ևս կը կոչուի վանքն, միւսներն կը կոչուին Ս. Գրիգոր և Ս. Կարապետ։ Շինութենէն իբր չորս տարի վերջը Սենեքերիմ Թագաւորը կամանայէն բերել տուած է Ս. Յովհան Ոսկեբերանի տապանաքարը և գետեղած է Ս. Նշանի տաճարի ձախ կողմը սրմին կից։ Այս տապանաքարը նրբիբական և պաշտելի հնութիւն մ՚է. թէ տապանը և թէ կափարիչը մի և նոյն կապտականանչ գունով մարմարիոնէ շինուած։ Մատնաւորապէս ծննդարերութենան և ուրիշ խնդրուածոց կատարման համար ուխտ կու գան հոս ոչ միայն Էջմիածնայէն և իր գիւղերէն, այլ և Ամասիայէն, Զիլէէն, Չէրքէզէն, Նիկսարէն և այլ տեղերէ։ Ուխտի օրերն են Ս. Աստուածածնի և Ս. Խաչի տօները և մեծ պահոց Աւագ ուրբաթը։ Վանքիս՝ երբեմն երբեմն ցոյներ ուղեր են տիրանալ, տարակուսով թէ ի սկզբան մեր

է եղած, բայց չեն յաջողած. վասն զի ոչ միայն արձանագրութիւն մը և նշան մը չէ գտնուած իրենց, այլ և դիւղին ծերունի թուրքերը աւանդութեամբ միշտ վկայած են Հայոց վանք լինելը. կարծողներ կան թէ՝ նոյն իսկ Պիզէի թուրքերն ալ յառաջագոյն հայ եղած են։ Երեք խաչանիշերու հիմունք և արմունք հնագոյն են. բայց փոքրիկ լինելուն համար՝ 1842ին Յակոբոս պատրիարքը նորոգեր է Ս. Նշանն և Ս. Գրիգորը և միշտոնին վերցնելով իրարու միացուցեր է. իսկ Ս. կարապետը նոյնութեամբ կը մնայ։ Հին ժամատունը կամ գաւիթը՝ որ հողով ծածկուած և նեմ շէնք մ'է եղեր, յիշեալ Յակոբոս սրբազանը փլուցեր և կամարաձև պայծառ եկեղեցի ալ շիներ է հանդերձ պատարագամատոյց սեղանով և բեմով, աւանանելով Ս. Յովհան Ոսկեբերան։ Այս նորաշէն եկեղեցւոյս աջակողմեան պատին մէջէն կը բացուի Ս. Գրիգորը և Ս. Նշանը մտնելու դուռը. իսկ ձախակողմեան պատէն Ս. կարապետի մատուռն դուռն։ Յաճարիս գրան վրայ կայ քանի մը տողով ատանաւոր արձանագրութիւն մը. և անկէ վար կայ շինութեան հետեւեալ յիշատակարանը. «Շինեցաւ Ս. Յովհան Ոսկեբերանի տաճարս բոլոր շրչապատ պարապօք և ամենայն շինուածովք, Լեւոկիոյ և վիճակաց նորա ազգիս Հայոց բարեպաշտ օրինեալ ժողովրդոց սրտովք և ողորմութեամբ։ 1842. ԱՄՂԱ»։ Տաճարին հարաւակողմը կը բարձրանայ կրկնայարկ գեղեցիկ շէնք մը՝ 14 սենեակներով։ Բոլոր սենեակները ճաշակի յարմար, մաքուր և կանոնաւոր կահաւորուած են. մանաւորապէս առաւելութիւն ունի առաջնորդարանը կամ ինչպէս կ'ըսեն՝ վիհարանը, որուն կահ կարասին եւս շքեղ է. հոս կ'ընդունուին պատուաւոր հիւրերը։ Վանացս սուրբ տաճարին և միս շինուածոց մաքրութիւնը, կանոնաւորութիւնը, անօթոց և կահ կարասեաց առատութիւնը, նախնեան վիճակը, կարգաւորեալ ծանգարանը, ծառայից, մշակաց, ուխտաւորաց և վարդապետաց գոհունակութիւնն, կը գարմացնէ այցելու մը։ Տաճարի գրան հանդէպ փոքր գանգակատուն մը կայ, ուր կախուած են երկաթի և ընկուզենի կոչնակներ, անոր կից է մատնատունն, որուն առակ մշտահոս աղբիւր մը կայ։ Տաճարին եռակ փոքրիկ գրախտ մը կայ, ուր կը գտնուին պտղատու ծառեր, բանջարեղինաց ածուներ, մեղուաց փեթակ։ Գրախտը մտնելու գրան կից է վանացս խոհանոցը ու մատանը։ Ախտաւորաց թաղը տաճարի հիւսիսակողմը առանձին շէնք մ'է 23 սենեակներով, որուն բակին մէջ կը հոսի աղբիւր մը։ Վանքի պարապէն գուրս մեծ գրան գիմաց շինուած են ախոռները և Զիփրիկ ըսուած շէնքը 12 սենեակներով և երկու խանութներով։ Աւազ կից է մարագն և կալատեղն։ Կալատեղւոյն կից բարձր բլրակի մը վրայ է վանականաց և շինականաց գերեզմանատունն։ Վանացս արտարայք՝ որ շուրջանակի առուներով կ'ոռոգուին, շատ բարերեր են և մեծ չափ ունին իրենց առատ արգիւնաբերութեան պատճառաւ, մանաւանդ ծխախոտի դաշտերը համբաւաւոր են՝ իրենց արտադրած ծխախոտի առաջին տեսակի պատուականութեան համար։ Լեւոկիայէն մինչեւ վանքս եղած ճանապարհը գուարճալի է. ուղեւորը նախ կ'անցնի արգաւոտներ և պտղալից պարտէզաց միջէն. յետոյ այգիները կը չարչրկեն ժամուան մը ճանապարհ. վերջը ցօղունի, խաշխաշի, ծխախոտի, և այլ բերքերու արտերայք, որոնց միջտեղէն կ'անցնի ոլորտապտոյտ իրիս գետը՝ երկու կողմանց մշակուած ափերը բերելով։ Ցառաջ երթալով կը հանդիպի Գըզըլ–բօփրագ (կարմրահող) ըսուած արտին, որուն մէջ, աւանդութեամբ կ'ըսուի, թէ վախճանած է Ս. Յովհաննէս Ոսկեբերան, և մարմինն փոխադրած են Կոստանդ. Քիչ մ'ալ հետու կը տեսնուի Ս. Թէոդոս կոչուած քար մը, որուն համար աւանդութիւն կայ թէ Գրիգորիս վիպի լեռնէն լծելով հոս բերեր է Ս. Գրիգոր սքանչելագործի հրաշքով։ Գրեթէ մինչեւ այս քարը կ'երեւին հին կամանայի աւերակաց հետքերը և այգիներ, իսկ բուն կամանան՝ բլրաձեւ աւերակոյտ մ'է։ Ասկէց ալ առաջ մինչեւ Ս. Ոսկեբերանի վանքը, ճանապարհը աւելի լեռնային կրնայ ըսուիլ, ամէն կողմէ ուռենազով հրաշալի և ուշագրաւ տեսարաններ։ — Նոր Հայաստան, 289–293։ Ճանապարհորդ. ի Բաբերդ, 10–12։ Տեղգր.

Հոտա, 59–61։ Թորոս Ագլար, Ա. 80–130 վ. Քրիստ, Ա. 703–724։ Բազմավէպ, Դ. 6–9։ Եւ այլն։

ԵՒԳԻ. Տես ԲԱՂԷ։

ԵՒՊԱՏՈՐԻԱ. Գ. EUPATORIA. Ռ. *Evpatoria*. — Գլխաւոր քաղաք Համանուն գաւառին, Ղրիմու թերակղզւոյն հարաւ արեւմտեան կողմը. Սիմֆերոպոլէն 68 հգմտ. հեռու, հիւսիս–արեւմտեան կողմը։ Բնակիչք կը հաշուուին մօտ 20000, ռուս, յոյն, կարայիմ, թաթար, հայ և հրեայ։ Ամառներն 5–6000 հոգի, ուրկէ հայ և ռուս բնակութիւններ՝ Ռուսաստանէն հոս կու գան ծովու և օդափոխութեան համար. վասն զի քաղաքիս օդը աքանչելի է և ծովը շատ օգտակար. մանաւանդ յօգացաւի բուժիչ Սասըխ լճովը՝ համայն Ռուսիոյ մէջ անուանի եղած է, ամէն կողմ բժշկուած է, մինչեւ անգամ անդամալոյծներ ու կաթուածահարներ առողջացած են։ Կան հիւրանոցներ և տուներ՝ որոնց վարձքը, ամառը խիստ ծանրագին է։ Ամրողջ ծովեզերքը լի է մարդ տուներով և տարուէ տարի նորանոր շէնքերով կը զարդարուի քաղաքս։ Ի հնումն Թաթարներէն կեօզլեվ կը կոչուէր և Եւպատորիա անունն դրուեցաւ 1784ին Ռուսաց կայսրուհի Եկատերինա Բ.ին։ Թաթար խաներու ժամանակ, սա եղած է Ղրիմու մայրաքաղաքը ու նաւահանգիստը։ Նշանաւոր էին հին հինգ մեծ դռներով բերդը և բազմաթիւ մզկիթներն՝ որոնցմէ ոմանք տակաւին կը մնան, և նշանաւոր է մին 1552ին կառուցուած՝ Կ. Պոլսի Ս. Սոփիայի նմանութեամբ և շատ գեղեցիկ ճարտարապետութեամբ։ Թաթարաց ուրիշ քաղաքներու նման պարսպապատ էր, բերդն ու նէղ լայն խրամ, զոր յետոյ Ռուսները լեցուցին և բերդը քանդեցին։ Քաղաքիս մէջ իւրաքանչիւր ազգ ունի իրեն եկեղեցին, մզկիթն կամ ժողովարանն։ Կան վաճառատուներ, պազարներ, բաղնիքներ, և այլն։ Հ. Բժշկեան՝ իւր այցելութեան մէջից քաղաքիս մէջ 90 տուն հայ գտած է, որոնց թիւն այժմ աւելի նուազ է։ Կը պարապին վաճառականութեամբ և ունին Ս. Նիկողայոս անուանի մեծ ու գեղեցիկ եկեղեցի մը։ Կան նաև քանի մը տուն Կաթուղիկոսական Հայք և ունին մատուռ մը։ Եւպատորիա՝ քաղաքի մը յատուկ ամէն տեսակ հասարակաց շինութիւններ և զբօսանաց վայրեր ունի։ Գլխաւոր առեւտրոյ նիւթն է ալը, որ մեծաքանակ ապային չափէն կը հանուի տարին 16 միլիոն փութէն աւելի. ի՛արտածեն նաեւ ցորեն, գարի, կաշի, բուրդ, և այլն։ — Ճանապարհ. Ի Լեհաստան, 283–287։

ԵՒՐԱԼԱ կամ ԷՖՆԷՐ. — Ջուտ հայաբնակ գիւղ, Կեսարիայէն երեք ժամու ճանապարհ հեռու և Ս. Կարապետի վանքին 10 վայրկեան մօտ։ Բնակիչք 420 տունէ աւելի են. ունին փառաւոր եկեղեցի մը Ս. Յակոբեանց նուիրուած, գեղեցիկ զանգակատունով և գմբէթով 1871ին շինուած։ Ունին երկու վարժարան, ազայոցը՝ Թորգոմեան կը կոչուի և ունի 130 աշակերտ. իսկ աղջկանցը՝ Ագապեան, և ունի 40 աշակերտուհի։ Հայախօս են և զարմանալի գաւառաբարբառ մ'ունին։ Հայրենիք է գիւղս Դոկտոր Եահատեան Ռուսինեանի, որ կ. Պոլսի մէջ ազգային պաշտօնավարութեամբ և օրէնսդրութեամբ նշանաւոր էր։ Գիւղիս մէջ Ս. Յարգիս և ուրիշ անուններով ուխտատեղիներէ զատ, կայ նաև Ս. Գէորգ անուամբ մատուռ մը, որ փորածոյ է փոքր խցիկով և խորշերով. ունի խորան մը և դուռ՝ զոր կը փակեն և տարին անգամ մը բանալով, Ս. Գէորգի ծնունդն պատարագ կը մատուցանեն։

ԵՒՐՈՊԱ. — Հին աշխարհի երեք մասերէն աւելի յառաջադիմը. տարածութիւնն է 9732250 քր. հգմտ. և բնակիչք 37803800։ Այս աշխարհի զանազան ազգութեանց մէջ գաղթող և բնակող հազարաւոր Հայոց վրայ կը խօսուի իրենց կարգին։

ԵՓԵՍՈՍ. Տես ԳՈՒՇ ԱՏԱ։

ԵՓՐԱՏ. Գ. EUPHRATE. Թ. فرات. Ռ. *Efpamъ*. — Հայաստանի գլխաւոր գետերէն մին, որ Ս. Գրոց մէջ կը մականուանի Մեծ գետ, Ագաթանգեղոսէն՝ Եփրատական գետ, Եղիշեէն՝ Գետ եղեւեաւորդիս։ Բղխելով Հայոց լեռներէն, կը միանայ Տիգրիսի հետ և ձեւացնելով Շատ–էլ–Ագրաբ գետը կը թափի Պարսից ծոցը։ Գետս կը բղխէ երկու զանազան տեղերէ, ինչպէս յայտնի կը դնէ նաև Վարդան աշխարհա-

դիրը ըսելով. «Գետն Եփրատ յԵկեղեաց գաւառին է, և մի ակն ի յԱրդրումի է, և երկրորդ ակն ի յԱրճէշ է. ի Սարդ Ոսկենից ելանէ և անցանէ ընդ Տարօն և գնայ ընդ Ասորեստան». այս պատճառաւ աշխարհագրութեան հեռւը ապուած չորս գետերու առարագրութեան մէջ, Եփրատայ ականց վրայ գրուած է. «Ելանէ ի Հայք ի Բագրեւանդայ, և ի կարնոյ լերանց մեծ ի յԱրծն քաղաք»։ Բագրեւանդ ուրիշ տեղ է և Կարին ուրիշ. բայց առով կ'ուզէ ըսել, թէ երկու այլ և այլ տեղեր ունէր իրեն անունները, մին Բագրեւանդայ կամ մեծաւանդ Ծագկոտն գաւառի մէջ, որ սահմանակից էր Բագրեւանդայ և միւսը Կարնոյ լերանց մէջ։ Նոյն բանը կ'ուզէ յայտնել նաեւ Խորենացին (Գ. ԿԹ) Կարնոյ քաղաքին գրից համար ըսելովը. «Ոչ կարի ի բացեայ տեղեացն՝ ուր Եփրատայ մասինն ինչ բղխեն աղբիւրք ականց»։ Եփրատայ այս երկու գլխաւոր ճիւղերու ընդհանուր ընթացքը գրեթէ զուգահեռական է արեւելքէ արեւմուտք։ Հարաւային ճիւղն է Արածանի որ այլազգիներէն Մուրատ կը կոչուի և կը բղխէ Տիատինի հարաւային կողմի Ծաղկանց լեռներէն, որուն նկարագիրն արդէն բրած ենք Արածանի անուան ներքոյ։ Այս ճիւղին քանակն աւելի առատ է և ունի բազմաթիւ օժանդակներ։ Երկրորդ ճիւղն՝ հիւսիսայինը, կը բղխի Կարնոյ մերձաւոր լեռներէն, որ սովորաբար ծանօթ է Եփրատ անուամբ, թէպէտեւ այս գաւառական անունն գործածական չէ տեղացի այլազգիներէն, որուն Գարա–սու (Սեւ–ջուր) անունը կու տան։ Այս ճիւղն ալ նկարագրած ենք Գարա–Սու անուան ներքոյ։ Թողլով բազմաթիւ օտար ազգի և ազգային գրիչներու նկարագիրն Եփրատայ, ինձ քաղցր է ի մէջ բերել Հայոց Նահապետի հետեւեալ տողերը. «Եփրատ գետ մեր աշխարհին բարձրագոյն գաշտագաւառէն թափ ու թափ սահելով, քանի որ կ'իջնայ՝ թէ՛ ջրերուն շատութեամբը և թէ երկրին ցածնալովն՝ ուժգնալով, այս երկու Հայոց (Մեծ և Փոքր) սահմանաց մէջ ամենէն աւելի դժ կը բանեցընէ, այդ անտիառաւերան բնակասոյց պարապաց հանդիպելով. ժայռք և ջուրք պնդակէմ կամ մէջ ընդ մէջ կը զարնուին կը կտրտին, և այն կակուղ ջուրերն պնդապինդ ապառաժ քարերու յաղթող կ'երեւան. կը փորին կը խոթին զանոնք, իրենց ճամբայ կը բանան, ի հարկէ ի սկզբան նեղ և զժուարին, զոր մեծամեծ ժայռք և կոշտոնք կարծես հակառակելով արգելուլ կը չանան. Եփրատայ ալիքն ժամերով կը կռւին, ու փրփրալով քարէ քար զարնուելով փշրելով ու մմնալով առաջ կ'անցնին»։ Կապան Մաւէնէն քիչ մը վեր, Եփրատայ երկու ճիւղերը կը միանան և այնուհետեւ Եփրատ հզօրացած կ'իջնէ գէպի հարաւ և ապա գէպի արեւելք գառնալով լայն և ընդարձակ գաշտերու մէջէն կը մտնէ յԱսորեստան և ի Բաբելոն, ուր Տիգրիսի հետ Միջագետքը ձեւացնելով, յուռթի և յարգասիական ալիքներովը վերջապէս կը միանայ իր գաշնակցի (Տիգրիսի) հետ, և մինչեւ Պարսից և Արաբիոյ սահմաններուն մօտենալով՝ կ'անհետանայ Պարսկային ծովի մէջ։ Եփրատ երբեմն կը յորդէ սաստիկ անձրեւներէ և ձեան հալած ջուրերէն առատանալով. սակայն Նեղոսի հանդոյն կանոնաւոր չէ իր յորդութիւնն։ Զգալի կ'ըլլայ մարտի սկիզբները, և աստիճանաբար առատանալով մինչեւ մայիսի վերջերը իր առատութեան վերջին կէտին կը հասնի, գրեթէ չորս մեթր սովորականէն աւելի բարձր։ Եփրատայ և Տիգրիսի ջուրց քանակութիւնն բազդատելով, Տիգրիս՝ Եփրատայ կրկնապատիկը ջուր ունի և աւելի խոր ու երազրնթաց է քան զԵփրատ։ Սարաբան և ուրիշ հին մատենագիրներ ևս կը յիշեն Եփրատայ առատանալը, որուն համար Ասորեստանի մէջ յատուկ փոսեր կը բանային։ Գետոյս նաւարկելի լինելէն կը յիշեն Պլինիոս, Երոդոտոս և Սարաբան։ Յատուկ ճարտարապետներու յանձնախումբ մը քննելով Եփրատայ նաւարկելիութիւնն՝ որուն գլուխն պիտի լինի Պիրէճիկ, 1893ին ա. տարեկան իրեն քննութիւնը. կանոնաւոր նաւարկելու համար հարկաւոր ծախքը հանած են 1430000 ֆրանկաց, ոչինչ գումար մը, որուն շնորհիւ ապահով նաւարկութիւն պիտի ըլլայ Եփրատայ վրայ փոքրիկ շոգենաւներով և պիտի միանայ Պարսկային ծովը Միջերկրականի հետ, Պիրէճիկէ Հալէպ–

Ալեքսանդրեատա շինուելիք երկաթուղով։ Եփրատայ վերին կողմերը կը նաւարկեն փոքր առափակայաւոր նաւակներով. իսկ Պիրէճիկէն մինչեւ Հիլլէ, Քելեք կոչուած լաստերով, զոր կը շինեն գերաններ մէկ մէկու կապելով երկու կարգ, մէկ կարգը երկայնութեամբ և միւս կարգը լայնութեամբ գնելով. գերաններու մէջտեղ ծեացած քառակուսիներուն մէջ կը կապեն օդով ուռած ափիկներ։ Լաստը այս կերպով պատրաստե-



303. Եփրատ։

լով ձեռքերնին ձող բռնած անմատոյց կը նաւարկեն և կը կառավարեն անոր ընթացքը. ծայրը կայ նաև առագաստ մը գնկի տեղ։ Եփրատայ վրայ ի հնումն նաւած են և այժմ ալ կան կամուրջներ։ Զորս կամուրջներէն մին Կարնոյ շամրին մէջ է, քաղաքէն և բազմակամար, որ Թաւրիզի գիպի անուամբ կը կոչուի Թաւրիզի կամուրջ. երկրորդն՝ նոյն շամրէն վար քաղաքէն. երրորդն՝ Բիւնկեան գիպի գիմաց գտնուիշէն և չորրորդն ի կամախ գտնուիշէն։ Գետս ունի նաև այլ և այլ նեղուցներ։ Եփրատայ ձկները համեղաճաշակ են. Հայաստանի մէջ ունի զանազան տեսակներ, որոնք կը կոչուին Թեփուկ, Գեղիկ, Կարապետիկ, Մոխ և Ըճխաւոր ձուկ՝ որ կը մնայի մաքուր ջրով և գարնան Եփրատայ պղտորած միջոց կը փախչի մաքուր առուակներու մէջ, և հոն արգելքներ գնելով բնակիչք գիւրաւ կ'որսան. կը գտնուի նաև ձկան տեսակ մը մարդագուխ և ուղիղ մեծութեամբ, զոր կէտ կը կոչեն. կը գտնուի նաև Սազան և ուրիշ ձկներ։ — Անցեալ գարու մէջ և մինչեւ մեր ժամանակները Եփրատայ գետահովտին վրայ հրատարակուած են զանազան լեզուներով այլ և այլ հանդէսներու կամ գրքերու մէջ բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ, — Նոր Հայաստան, 16–22։ Հնախոս. Հայաստանի, Ա. 123–135։ Նշմարք, Ա. 3–4։ Բազմավէպ, ԼԹ. 133. ԼԶ. 233։ Գաղղ. Նոր Աշխրհգր. Բառարան։ Մասխ, ԼԹ. 416–418։ Եւ այլն, և այլն։

ԵՓՐԱԼ. Տես ԵԿՄԱԼ։


ԵՕԶՂԱՏ. Գղ. YUSGAT. — Գլխաւոր քաղաք Անկիւրիոյ նահանգին համանուն գաւառին. առաջնորդանիստ է և կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայ։ Շինուած է ընդարձակ ձորի մը մէջ, Նօհուտու և Սօղուգ-Օրուզ անուն լերանց կողերուն վրայ գեղեցիկ դիրքով։ Ա. հասարակ շէնքերը եւրոպական հեռաւորութեամբ կառուցուած են իրարմէ անջատ. գետքէն շէնքերը նեղկուած են սպիտակ կրով և առնիքները կղմինտրով ծածկուած են։ Երկու հարիւր տարուան քաղաք է եօզղատ՝ մահմետրապէս անուանի Զափան-օղլու անուն խուրքէ մը շէնցուած է, որուն անուամբ կանգնուած մզկիթը քաղաքին միակ երեւելի շէնքն է, շատ գեղեցիկ ու հոյակապ։ Քաղաքիս բնակչաց թիւն թէև վ. Քինէ 15000 կը գնէ, սակայն մօտ 20000 լինելու է, որոնցմէ գրեթէ 9000 հոգի հայ են, բաղկացած 2000 ընտանիքէ։ Հայք վաճառականութեամբ, գործունէութեամբ, գերձակութեամբ և այլ արհեստներով կը զբաղին և յառաջացած են ըստ արժանւոյն։ Կան նաև սակաւաթիւ կաթոլիկ Հայք, որոնք ունին Ս. Աստուածա-

մայր անուն եկեղեցի մը։ Բողոքական Հայք 20–30 տուն են, և հակառակ իրենց նուա-զութեան ունին ժողովարան մը և կանոնաւոր երկսեռ վարժարան, ուր կը յաճախեն 100 լուսաւորչական հայ աշակերտներ։ Մահ-մէտականք 3000 տուն են. կան նաեւ 300 տուն Յոյնք։ Բազաքին տուներն, խանութ-ներն ու շուկայն շատ վայելուչ են և բա-րեձեւ. խանութներուն ու վաճառատանց շատերը քարուկիր են։ Թրքաց բնակարան-ները Հայոց և Յունաց բնակարաններէն բաժնուած են. բայց Հայոց և Յունաց թա-ղերու մէջ տեղ տեղ կը գտնուին նաեւ Թրք-քաց տուներ, որոնք չեն ուզեր բաժնուիլ իրենց պապերէն ձեացած բնակավայրերէ և կամ իրենց քրիստոնեայ դրացիներէ։ Օդն և ջուրը խիստ առողջապահիկ. ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ ամառը չդնդատելու չափ տաք։ Ջուրը հարաւային կողմի թա-ղերու մէջ առատ, իսկ հիւսիսային թաղե-րու մէջ սակաւ է։ Նշանաւոր է Շէքէր–փու-նարը անուն աղբիր ջուրը, որ արդարեւ շաքարի նման քաղցրահամ և մաքուր է. նաեւ Ալմէտ Բէհէա աղբիր ջուրն նշանա-ւոր է թեթեւութեամբն. այս երկու աղբիւր-ներն հիւսիսային կողմն են և ամրան կը նուագին։ — Եօզղատի գաւառն կը գտնուի Գասթեմունիի, Սիրասոխոյ կուսակալու-թեան, և Քիր–Շէհիրի ու Կեսարիոյ գաւա-ռաց մէջ. բնակիչները, ըստ Վ. Քինէի, են 279897 հոգի, բաժնուած հետեւեալ կեր-պով.

Մահմետականք . . .	242989 հոգի
Հայք Լուսաւորչական . .	26989 »
» Կաթոլիկք . . .	1510 »
» Բողոքական . . .	542 »
Յունք	4870 »
Պոհէմացիք	997 »
Գումարն...	279897 հոգի։

Կը բաժնուի Եօզղատ, Զորում, Սոնկուր-ու, Ագ–Տաղ–Մաահէ և Պօղազքէհան հինգ գաւառաց, և ի՛նսորարաժանի վեց գաւառակ-ներու։ Բացի բազմաթիւ թրքաբնակ գիւղե-րէ, կան 42 հայ գիւղօրայք, յորս բնա-կող Հայերէն շատերը հայախօս են և ու-նին յատուկ գաւառաբարբառ մը։ Ասոնք ամէնքն ալ գպրեցած են Սիրասոխոյ վիճակ կէմէրէքէ, Սիրասոխոյ գիւղերէ և այլ տե-ղերէ. ոմանք յայտնի չէ թէ երբ գպրեցած են։ Եօզղատի գիւղերու վիճակապրութիւնն ձեռքերնիս չհասնելով չենք կարող ատա դնել. 42 գիւղերէն հազիւ մէկ երրորդ մա-սին մէջ վարժարաններ կան, մեծ մասն ազգասութեան պատճառաւ զուրկ ձեացած են գպրոցէ։ Բազաքին մէջ Հայք ունին ե-րեք վարժարան, որոնք կը կոչուին Մայր վարժարան, Վահանեան և Խորէնեան. ա-շակերտներու և աշակերտուհիներու թիւն է միահամուռ 832։ Եօզղատի ամբողջ առաջ-նորդական վիճակի մէջ Հայք ունին 43 ե-կեղեցի։ Գաւառիս մէջ շատ տեղեր կան, որ հինաւուրց յիշատակներ կը կրեն. հին փորագրութիւններ, մարմարեայ և աղնիւ քարերէ սիւներ, խորհրդաւոր բարձրաքան-դակներ, բեւեռագրեր, և այլն։ Կան նաեւ երեք ջերմուկներ. որոնցմէ մին կը կոչուի Թէրզիլիի. երկաթային է և օգտակար է յօդացաւի, թեթեւ կաթուածի և ուրիշ քա-նի ւր հիւանդութեանց։ Երկրորդն է Պու-լամաձը, որ առաջինէն աւելի ազդու է և առողջարար։ Երրորդն է Քեօհնէի ջերմուկն, որ ո՛ և է առողջարար յատկութենէն զուրկ է և միայն Քէօհնէ օգտակարութեան գացող-ները, գրօսանքի համար մէջը կը մտնեն։ Գաւառիս մէջ կան և տեղ տեղ յաճախ կը տեսնուին հայ մաղադոզծներ կամ բոշաներ, թափառաշրջիկ և անդաստանական։ Ասոնց մէջ գտնուած հարուստն արտաքուստ որոշել դրե-թէ անհնար է։ Ամէնքն ալ ցնցոտի հա-գուստներով կը փայլին. խիստ բաւականա-ւէր, չարքաշ և չուտ կենցաղ մ՛ունին. ա-սոնց հարստութիւնը բնդհանրապէս ջորի է. նշանաւոր պայտարներն իսկ ասոնց չափ չեն ճանչնար այս կենդանւոյն յատկու-թիւնները։ Ասոնց կանայք, հարսունք և աղջկունք թափառական Քրդաց կիներէ ա-ւելի ազատ են, և համբերաւոր, ու ամէն բանի մէջ իրենց արանց հնազանդ։ — Եօզ-ղատ գաւառի պէտուր բերքերն են. դիտոր, մեղրապ, ափիոն, ալաժահրի, պրօն, բուրդ, ցորեն, հաճար, գարի, և այլն։ Ամրանք շատ առատ և ընտիր են. տարուան մէջ բնդհան-րապէս 1000000 քիլէ արմտիք կ՛արտա-

ծուխն։ Իսկ ուրիշ բերքերէն, ինչպէս բուրդ ափիոն, գաղի խէժ, տարին 800000 օս. մանանան ոսկիի արտածութիւն կ՚ընէ. այս հաշուին մէջ են նաեւ կեսարիայէն և Փիր Շէհիրէն եկած նոյն տեսակ բերքերը։ Եօզղատ տարեկան տօնավաճառ մ՚ունի, որ կ՚սկսի յունիս 15ին ու կը տեւէ մինչեւ յուլիսի վերջը. երեքշաբթի օրերն քաղաքին մէջ իւր մանուածոյ տեղը, իսկ չորեքշաբթի և հինգշաբթի օրերն տեղւոյս հարաւային արեւելեան կողմը լեռնապաշտի վրայ. բերաւոր անձինք թուրք, քուրդ, չէրքէզ, հայ և յոյն վաճառականներ, ասիականն շատ գաւառներէ օտար ապրանքով մեծ գումարներ կը բերեն, կը գնեն արջառ, ոչխար, ձի, ջորի. այս տօնավաճառը՝ մեծ մասամբ՝ չորքոտանի շահաբեր անասնոց կը պատկանի։ Մեր ազգայիններէն արմրեանց վաճառականութեամբ զբաղողց կլիտուրն է փափազեան տունն, ասիական շատ գաւառներու և Իրտոսիոյ ծովեզերեայ քաղաքներու ծանօթ՝ իր գրամական ուժովն, ընդարձակ գործառնութեամբ և յարձր պիրքով ու վարկով։ Ա.յս տան մէջ կան ուսեալ պաշտաբարոյ գպրոցասէր և կրօնասէր անդամք։ Հայք ունին նորահաստատ Աղբատասիրաց ընկերութիւն մը, որուց, աղքատաց, անօգնականաց այրեաց ու թշուառաց օգնելու նպատակաւ։ — Եօզղատ քաղաքը թէպէտ անուանի գրօսավայրեր չունի, սակայն Սօղուգ–Օլուգ անուն լերան վրայ կը գտնուի անտառակ մը, որ 1500էն աւելի մայրի, սոճի ծառերով շրջապատեալ է. Մերմեր–փուռնար աղբիւր մ՚ունի, որուն ջուրը շատ մա-



304. Եօզղատի ընդհանուր տեսարանը։

քուր պաղպաջուն ու ախտանակիա է. քաղաքապետութիւնը 80 լիրա ծախք ընելով հովանոց մը կառուցանել տուած և ճանապարհը խճուղիով յարդարած է. Սօղուգ–Օլուգ լսուած տեղը գտա ի վեր լեռ մը լինելով գրօսանաց և օդափոխութեան համար հոն գնացողները յառաջ մեծ գժուարութիւն կը կրէին։ — Վ. Փիճէ, Ա. 292–299։ Սուրմանգակ, 1901 բիւ 784։ եւ այլն։

ԵՕԹ ԴՈՒԻՒ ԿՈՆՈՆՈՍ. Տես ԿՈՆՈՆՈՍԻ ՎԱՆՔ։

ԵՕԹՆԱԳԻՒՒՐ. — Մխիթար Ապարանեցին

կը յիշէ այս անուամբ գիւղ մը, որ հայ բնիկք էր ԺԴ դարու մէջ ապրող Հայրապետ անուն վարպապետի մը։

ԵՕԹՆՓՈՐԱԿԵԱՆ ԲԱԳԻՆՔ. — Փայտակառանի հին գաւառներէն մին։ Տես ԲԱԳԻՆ։

ԵՕԼՄԷՋ. — Գիւղ կեղիի (Զօրրորդ Հայք). ունի 30 տուն հայ և 13 տուն մահմէտական։ Հողագործ են։

ԵՕՂՈՒՆ ՕԼՈՒԽ. — Հայաբնակ գիւղաքաղաք Ակռիթքի Սուէյտիյէ գաւառակի. Ակռիթք քաղաքէն 4–5 ժամու ճանապարհ հեռու։ Ամբացած է երկու ահագին լեռնեղու մէջ. մէջտեղէն կը վազէ առատահոս գետ մը։ Ունի առատ և ընտիր ամէն տեսակ պտուղներ, ինչպէս նաեւ նարինջ և լիմոն։ 600 տուն բնակիչներէն միայն 60 տուներ են հայ կաթոլիկէ և բողոքական։ Ժողովրդեան մեծ մասն շերամաբուծութեամբ կը զբաղի. ունեք միտաքէ ճամկատոր շալեր, փողկապներ, և այլն, կը գործեն ու կը վաճառեն։ Շատեր ալ առեսր կը շինեն փայտէ և ոսկրէ։ Տեղւոյն Հայը ունին Ազգային վարժարան մը՝ 32 աշակերտներով։

ԵՕՆՃԱԼՈՒ. — Գիւղ Ազրարատայ Բասրեւանդ գաւառի Գարապիլիսէի վիճակի մէջ։ Դիրքը գեղեցիկ է. ունի 53–60 տուն հայ բնակիչ, մեծ մասամբ 1880 թուականի գաղթականութենէն վերադարձած, որոնք ի սկզբան թէեւ ազբատ վիճակ մ'ունէին, սակայն իրենց երկրի բարեբերութեան շնորհիւ 10 տարուան մէջ բաւական հարստացան, բայց վերջին տարիներու մէջ ամէն ինչ կորուսին։ Եօնճալու իր բնական դիրքովը և յարմարութեամբը կարաւան իջեւանելու վայր է. գիւղի եռակի կողին վրայ կայ ընդարձակ պերեզմանատուն, որուն արեւելեան կողմը անկուած են բազմաթիւ բարի և ուժի ծառեր. ասոնք քիչ տարուան մէջ աճած և անտառ դարձած են, առատ ջուր ունենալուն պատճառաւ։ Այս ծառատառները հակեալ լինելով գիւղի արտօրէից և Արածանիի վրայ, հիանալի տեսարան կ'ընծայէ։ Գիւղիս երիտասարդները վարժած են միշտ Տփղիս երթալ՝ մշակութեամբ պարապիլ և դրամ շահիլ։ Գիւղս ունի Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը։ Եօնճալու՝ կը նշանակէ առուատանոց, այժմ եւս այստեղ առուտուր լաւ կ'ածի, որուն համար կարաւանք հոս դադար կ'առնէ։ Հաւանական է կարծելէն թէ Եօնճալու ըլլայ հին Ազահիտաց գիւղն։ — Բագրեւանդ, 260–261։

ԵՕՆՃԱԼՈՒ. — Հայաբնակ գիւղ վերին Պուլանըխի. ունի 1400 բնակիչ, բաժնուած 153 տան, յորս կան նաեւ քանի մը տուն բողոքական հայ։ Ունի եկեղեցի մը և վարժարան։ Գիւղս թէպէտեւ ծառատառ չէ. սակայն ունի գեղեցիկ տեսարան։

Զ

ՋԱԿ. — Հայարնակ գիւղ Ջաւախքի Ա-խալքալաք . ունի 380 բնակիչ, բաժնուած 40 տան։

ՋԱԿԱՄ. — Գեղակ Արցախի կողմի գաւառի մէջ, որուն գաշտերը կը կազմեն նոյն գաւառի միջին մասը։ Այս գեղջն անուամբ ժամանակաւ ձեւացած են կողմի գաւառի երկրորդ մասը կազմող կրկին Ջակամիները՝ վերին և Տաթրին անուամբ։ Ջակամ գեղակի հովիտն իրեն երկրագործու գաշտի շարու-նակութիւնն մտած է լեռներու մէջ։ Հովիտս կը ներկայացնէ հեռուէն հնութիւններ և բեկորներ, աւերակներու թափուած քարեր, հին և կոպիտ խեցեղէն անօթներու կտորներ, և այլն։ Այս հովտի Տաթրին Ջակամի մէջ են հին խաչքար քարաքի աւերակները. կան նաեւ գեղակի ալ ու ձախ կողմերը եկեղեցիներու աւերակներ և հանգստարաններ։ Երկու Ջակամները միա-սին Աղուանից Եսայի կաթուղիկոսը կ'անուանէ Ամիրշամ Շատինու. իսկ Ստեփ. պատմիչ կը յիշէ վերին Ջակամ՝ ըսելով. «Մեկնեսեմ եպիսկոպոսն ի վերին Ջակամայ»։ Վարդան աշխարհագիրն ևս կը յիշէ Ջակամ՝ ըսելով. «Գանձակ կանգնա է իւր վիճակին և Ջակամով, ..»։ Արցախի Փառսաի գաւառի Հախում գիւղի տաճարի մէջ պահուած, և ՌՃՁ (= 1633) թուին գրուած աւետարանի ար յիշատակարանի մէջ ևս կը յիշուի. «Գրեցաւ սուրբ աւետարանս և ի գաւն և ի նոյ ժամանակիս, ի լաւ, ընտիր աւրինակէ ի յիրիկիս վերին Ջակամ, ի գիւղս՝ որ կոչի Շաբար բեկ..»։ Արցախ, 60։

ՋԱԿՈՇ. — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, գրած ենք նաեւ Ակոշ ձեւով։


ՋԱԿՈՅ. — Գիւղ Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ։

ՋԱԿՈՍ. — Շղթայ լերանց Հայաստանի հարաւ արեւելեան կողմը։ Վանայ և Որմիոյ ծովակաց մէջ կ'երկննան Պարսից կողմերէն դէպի արեւմտեան հիւսիս, և Հայաստանը կը բաժնեն Պարսկաստանէն։ Օտարազգի հին գրիչներէն կոչուած է նաեւ Ջարկոս։

ՋԱՂԱԼՈՒ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Սողք գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հա-րաւ–արեւելեան ափունքը։ Բնակիչք [695 հոգի են, բաժնուած 83 տան, որոնց նախնիք գաղթած են Մշոյ, Պուլանըխոյ և Մանազ-կերտի գաւառներէն. ունին Ս. Աստուածա-ծին անուամբ եկեղեցի մը։ Գիւղս շամբուտ և եղեգնուտ ճահիճի մօտ լինելով, օդը այն-չափ լաւ չէ։ Կը խմեն ծովի ջուրը յատկապէս ամառը թէեւ ունին աղբիւր, բայց ձմեռը ձիւնով ու սառուցով կը ծածկուի։ Այս գիւղացիք վարելահող չունենալու պատ-ճառաւ՝ ձկնորսութեամբ կը պարապին։ Գիւ-ղիս արեւմտեան կողմը և շրջակայքը կան հին տներու և եկեղեցւոյ աւերակներ, որոնց մօտ նաեւ խաչքարներ ու գերեզմաններ. հոս կայ նաեւ ձիու բնական մեծութեամբ պատ-կեր մը։ — Ջաղալու գիւղի մէջ 1883

թախին գանուելուս համար ինն տարով բնեռաձեւ պատմական արձանագրութիւն մը Շարդուխ թէ։

գիւղ և բերդի ճանապարհներ կան, որ կը կապուին նաեւ Վերօղոյր՝ վիրացնատած և հրոչակուած զոյգ քերդերի անուամբ։



305. Զաղարանի դիմաստղ։

ՋԱՂԱՐԱՆ. — Գետակ Ալբարատայ ձախակողմեան ճաւալի մէջ. աջակողմեան ծոյնդակ երբախայ։

ՋԱՂԻՆ կամ ՋԵՂԻՆ. — Ալբարատայ Բասէն (Պասբին) գետակի մէջ այս անուամբ գիւղ և բերդի ճանապարհներ կան, որ կը կապուին նաեւ Վերօղոյր՝ վիրացնատած և հրոչակուած զոյգ քերդերի անուամբ։

ՋԱՂՕՆՔ. — Կը յիշուի այս անուամբ գիւղ Ալբարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։

ՋԱՄԱՆ. — Ալիրակ գիւղաքաղքի Միհնեւոց Սոզք գաւառի մէջ, ինակ լերան հարաւ արեւելեան կողմը, գետեզրի մօտ։

ՉԱՄԱՆԴԻ կամ ԾԱՄԱՆԴԱՒ. — Լեռնային կիլիկիոյ մէջ արեւմտեան օժանդակ Սարոսի, կը բղխէ Գաչէ–տաղ լեռնէն և կը ձեւացնէ ձորահովիտ մը։

ՉԱՄԲԵՂ. — Գիւղ Զարսանճագի խոզաղ գաւառակի։ 10 տուն հայ կայ՝ Ս. Մինաս անուամբ եկեղեցիով։

ՉԱՅԻՄ. — Գիւղ Ա. Լուսաւորչայ վանանդ գաւառի Զարիշատ վիճակի մէջ, կարուց գետոյն ձախակողմը։ Հոս՝ 1877ին, Ռուսները զբրին իրենց բանակը կարսը պաշարելու համար, ուր և մեռաւ անոնց Զելոքայէֆ զօրավարը, վիրաւորուելով մայիսի 16ին կռւին մէջ, նոյն տան մէջ՝ ուր քանուելիք տարի առաջ, նախընթաց Ռուս և Թուրք պատերազմին, մեռած էր Օրպէլեան զօրավարը։ Գիւղիս բնակիչք հայ են 255 հոգի, բաժնուած 29 տան։

ՉԱՆԳԵԶՈՒՐ կամ ՉԱՆԿԵԱԶՈՐ. — Հայոց տիրապետութեան ժամանակ այս գաւառս կը կազմէր Սիւնեաց աշխարհի մէկ մասը՝ այժմ կ'իյնայ Գանձակի նահանգի մէջ։ Սահմաններն են արեւելքէ և արեւելահիւսիսէ՝ Ձիպրայիլի և Շուշիի գաւառները, հիւսիսէ Ջուանշիրի գաւառը, արեւմուտքէ և արեւմըտահարաւէ՝ Շարուր–Նարալաղըզի և Նախիջեւանի գաւառները, և հարաւէն ու արեւելահարաւէն Երասխ գետը։ Ա. յս ընդարձակ գաւառը կը բռնէ 13732 քառակ. մղոն տարածութիւն և կ'ամորարաժանուի չորս ոստիկանական մասերու՝ Սիսիան, Զանգեզուր, Ղափան և Մեղրի։ Բուն Զանգեզուր գաւառամասի սահմաններն են հիւսիսէն Ջուանշիրի գաւառը, Մուխտարքեան, Գելլիս, Զիլգետ, Ալաղայա լեռներով. արեւելքէն՝ Շուշիի գաւառը, Ղըրխ–ղըզ լեռնաշղթայով, Սարի–պապա, Փիրս, և Ջիաբատ լեռներով. հարաւէն՝ Մեղրիի ոստիկանական շրջանը, Փիւշիկ չայով և Գիւմպէզ լեռնով. արեւմուտքէն՝ Սիսիանու ոստիկանական շրջանը, Քարահունջի և Շնհէրի ձորերով, Ալլա–կեօլ լճով և Խմայրատ գագաթով։ — Զանգեզուրի գաւառը կը ներկայացնէ Նախիջեւանի և Ղարաբաղի լեռնաշղթաներու մէջ ընկած հովիտ մը, որուն բարձրութիւնն է 1200 մետր և ժամանակ մը Սեւանի պէս լիճ է եղեր, որ Բարկուշատ և Հազար գետերու միջոցով պատարկուեր է։ Ա. յս չրամբարի կեդրոնը կը բարձրանայ Իշղլու կամ Քաչալ–տաղ կոչուած լեռը, 11695 ոտնաչափ բարձրութեամբ. շրջակայ հրաբուղիներէ ժայթքած և նախկին լճի յատակը քանի մը ոտնաչափ բարձրութեամբ նստած մնացորդ և լաւան, գետերու միջոցով տարուելով ձեւացեր են խոր ձորեր։ Զեչաքարի դարատափերը, որ ծածկուած են հացահատիկներու արտերով կը ցցուին կանաչ հովիտներու մէջ մերթապոյն, կանաչ, կապոյտ և մինչեւ անգամ բաց կարմիր քարաժայռերով, որոնց վրայ տեղացող անձրեւը, շաբաթի պէսու և կոխտղնելու ձեւ տուեր է. ասոնք տեղ տեղ կը կազմեն քարախառն հողակոյտեր, որոնցմէ մէկ քանին իրենց ծայրերը ունին քարերու խոշոր հատորներ։ — Զանգեզուր՝ ստատիկ լեռնոտ է, բազմաթիւ մեծ ու փոքր լեռներ դանազան ուղղութեամբ միմեանց կարելով կը ձեւացնեն մեծ ու փոքր ձորեր ու հովիտներ, որոնց միջով կը հոսին վտակներ ու գետակներ։ Ամենամեծ գագաթը Իշղլուն է, որ կը բարձրանայ գետախ արեւմտեան սահմանը։ Լերկ լեռ մ'է, երկու բարձր գագաթներէ ձեւացած, որոնցմէ բարձրագոյնը 11625 ոտնաչափ է։ Ասոր հարաւակողմը կը ձգուին Ուչ–թափաթարի լեռները, որ մէկ մէկէ բաւական հեռու և բոլորովին առանձին կանգնած երկու գագաթներ են։ Ասոնց մօտ կը գտնուին նաեւ Եանի–թափա (7519), Տաշ–թափա, Շիշ–թափա (7327) և Ուրու–թափա (6698) գագաթները։ Հարաւային սահմանի մօտ գտնուող լեռներն են Դուրբան–թափա, մին՝ Մազանջուկի մօտ (4557), միսը Մազմազակ (3353) լերան մօտ (3340), Ամրդըդ–տաղ (4131), Բաշարկա (4347)։ Արեւելեան կողմն է Տիւտաղ լեռնաշղթան, Եղիլա (7066), Սաղասդան (7083), Սարի–բաբա (7574), Ֆիճգեան (7903), Զիլագ, Դալի–տաղ, Սարի–եօխուշ, Ղըրխ–ղըզ լեռնաշղթան (7324) Ղըդ–դարս գագաթով, Դալիկ–դուշ, Գիւրու–տաղ (6916), և Ալաղայա (7672). հիւսիսային կողմը՝ Զիլիկլի, Զիլգետ (7777), Գելլիս, Մուխտարքեան լեռնաշղթան (11651), Դալի–տաղ (11907) և Գետաչիճ–դաշ (11002)։ Ներքին լեռներէն նշա-

ԱԶԽԱՐՀԱԳԻՐ ՋԱՆԿԵՋՈՒԹԻՆ ԳԱԽԱՆԻՆ

ՀԱՑԱԲՆԱԿ ԳԻՒՂՈՐԼԻՑ

	ԱՆՈՒՆՔ ՏԵՂԵԱՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Ա· ՎԻՃԱԿ	Տուն	Հոգի	Տուն
1	Ագ–քէնտ	42	365	—
2	Ալիւռ	79	562	—
3	Ախլաթեան	111	1088	—
4	Անգեղակոթ	179	1631	—
5	Բէռունեա	36	282	—
6	Բռնակոթ	178	2060	—
7	Գարագիլիսէ	69	680	37
8	Գարագիլիսէ (Գալէֆիկ)	43	379	—
9	Գետաթաղ	33	265	—
10	Գուշէմ (Թաղաքէնտ)	69	481	—
11	Դարագաս	42	333	110
12	Եայմէ	41	418	1
13	Երիցաթաւմէ	25	222	—
14	Լծեն	27	211	—
15	Լոր	37	384	—
16	Խոտ	134	909	—
17	Հալիճոր	66	534	—
18	Մազրա	76	821	—
19	Շաղատ	125	1214	1
20	Շնաթաղ	61	562	—
21	Շնհէր	186	1509	—
22	Ռէզ	125	904	1
23	Պալեաղ	39	360	2
24	Սուագանց	21	269	1
25	Տաթեւ	192	1865	8
26	Տանձատափ	31	312	1
27	Տլորա, Տլուա	60	563	22
28	Քարահունջ	104	976	1
	Ամբողջ Ա վիճակի մէջ	2231	20159	185
	Բ· ՎԻՃԱԿ			
1	Ալիղուլիքէնտ Ա	76	643	20
2	Ալիղուլիքէնտ Բ	99	883	—
3	Ախուխ	15	134	—
4	Գալէ–ասէրկսի	337	2631	—
5	Գորէս (Ջանդկսար)	459	3142	1
6	Գաշքէնտ	58	600	—
7	Խնածախ	188	1465	50
8	Խնձորկոկ	613	4219	—
9	Խոզնատար	57	509	36
10	Կէրէնզար (Կոռնձոր)	219	1334	—
11	Հարար (Խարար)	134	1004	—
12	Հերու	58	446	—
13	Մազանջուկ	23	263	—
13	Մինքէնտ	47	453	23
15	Ջհանատաղաս	37	317	—
16	Տէղ	472	3159	—
	Ամբողջ Բ վիճակի մէջ	2892	21202	130

	ԱՆՈՒՆՔ ՏԵՂԵԱՑ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Գ· ՎԻՃԱԿ	Տուն	Հոգի	Տուն
1	Ագարակ	76	969	—
2	Ախտախանա	26	279	—
3	Աղահօրդ	67	700	—
4	Արծուենիկ	98	855	—
5	Արջաձոր	57	510	—
6	Զէյվա	59	592	—
7	Խոտանան վէր· և Ներք·	42	446	—
8	Մուլքէչան	23	258	—
9	Ղարաշինիկ	62	421	10
10	Զափնի	38	394	—
11	Սեւաքար	84	694	—
12	Սիրքեագազ	28	290	—
13	Վժանիս	36	382	—
14	Տակմատակու	22	236	—
	Ամբողջ Գ վիճակի մէջ	718	7026	10
	Դ· ՎԻՃԱԿ			
1	Ագարակ	17	142	—
2	Աւտագօր	99	795	—
3	Բաղաւիրջ (Բնախեւիրջի)	38	324	—
4	Բանիսլու	33	365	—
5	Բնի	29	267	—
6	Բուհրաւա	23	242	—
7	Գեշտին (Գաշտօնք)	28	238	—
8	Լիշկ (Շեշկեա)	48	364	—
9	Կալեր (Գեղալար)	30	315	—
10	Կաւարա	54	453	—
11	Կէճանան (Գաջարանց)	46	465	—
12	Կուակում (Ըակում)	48	507	—
13	Կուբիս	23	190	—
14	Մալվալան	41	281	—
15	Մեղրի	167	947	—
16	Շաշկեա	27	267	—
17	Շիկահող	84	744	—
18	Զաբաւանին (Ձբաւէն)	38	351	—
19	Պառաւաւան	41	332	—
20	Վաղրավար (Պուղավար)	19	176	—
21	Վանք	34	292	—
22	Վէչագան	43	385	—
23	Փիլիսաքէնտ	19	154	—
24	Փուրդքէնտ	36	442	—
	Ամբողջ Դ վիճակի մէջ	1065	9038	—
	Համագումար Ջանգեզուրի գաւառի	6906	57425	325

նաւար են, հիւսիսէն դէպի հարաւ՝ Քէչիշ–թափա (7560), Ջուղաղար, Քեապիր–դաշ (10492), Լիւլապար, Ղապան–կեապղղ (7016), Ղուրնաճ–թաբա (6124), Աքտաշաւի (4456), Վէսկիլ (6006), Պիրչան (4794), Ձիրանալի թաշի (6099), Լկանատ թափասի (6364), Եաղրթափա (6298), Տեզ (5180), Ղզղզ–բողազ–դարի (11059), Հոչաս (6342), Լալին (8328), Եալգուզ–ագաղ (5410), Ջամնճ–գեօմ (5294), Գատամնիլիք (6761), Բիգովչի–դարի (8448), Քէչալ–ագաղ (10648), Ջալբուռն (6287), Ղազի գիւրան թաշի (7450), Ղամիւր–թափա (4449), Տօրթանճ–նալի (4490), Դաշքենտ–նալ (6824), Մազմազակ (3843), Բէզմիճ ագաղ (3656), Քարահունճ–թափա (5535)։ — Ջանգեզուրի մէջ մեծ լճեր չկան. գլխաւորն է Ղարա–կեօղ լճակը. միւս լճակներն են. Ղարնի–կեօղ, Ղազի–կեօղ՝ որ ամբողջապէս եղէգով ծածկուած է, Օյօուղլար, Ալակեօզնար, Ձիֆտլիկ լճակ, Շնճեր–կեօղ և Ուչթափա կեօղ։ Ասոնց բոլոր լճակները կը գոյանան գարնան հալուող ձիւներէն և ամառը կը նուազին ու կը քաշուին։ — Գաւառիս ամենանշանաւոր գետն է Հազարու գետ՝ որ իւր աջ ու ձախ կողմերէն կ'ընդունի ոչ սակաւ վտակներ. նշանաւոր է նաեւ Գորիսի գետը։ Ջանգեզուր ունի նաեւ ջրվէժ մը Քարահունջ գիւղի հիւսիսային կողմը, որ կը վիժէ մօտ 16 սաժէն բարձրութենէ և գեղեցիկ տեսարան կ'ընծայէ. ժողովուրդը ջրի հանած ձայնէն ջրվէժս Շրռաան կը կոչէ։ — Թէեւ Ջանգեզուրի ոստիկանական բաժնի մէջ չկան մշակուող հանքեր, սակայն տեղ տեղ յայտնուած են հանքեր, որոնք թերեւս ժամանակին շահագործուին։ Ասոնցմէ նշանաւոր են Քարահունջ գիւղի երկաթի և կաւճի հանքերը, Գաւառւի պղնձի հանքը՝ որ կ'երեւի թէ ի հնումն շահագործուած է, Խնձորեսկիի ագի և պղնձի հանքերը ու Հաճի Սամլուի պղնձի և հանքային ձիթի հանքերը։ Բաւական հարուստ է հանքայնին ջրերով, սակայն ոչ մէկն ալ կանոնաւոր կերպով չեն շահագործուիր։ Գաւառիս կլիման ընդհանրապէս առողջարար է և տեղւոյ բարձրութեան համեմատ փոփոխական. մինչդեռ բարձրաւանդակներու վրայ ցուրտ է, Հագարի և Բարկուշատի հովիտներու մէջ առատիկ տաք է։ Բարձրաւանդակներու վրայ ձմեռը կը տեւէ 6 ամիս և թէպէտ շատ խիստ չէ, բայց առատիկ ձիւն կու գայ և բուք կը լինի։ Ուչթափաարի բարձրաւանդակի վրայ այնպէս խիստ կը լինին այս բուքերը, որ Գորիսի և Սիսիանի մէջ հաղորդակցութիւնն կ'ընդհատուի քանի մը ամիս։ Դեռ հին ժամանակներէն այս տեղերը բարձր քարեր ցցուած են և մեծ ծառ մը թողած են ճանապարհի եզերքը՝ որպէս զի բքէն բռնուած ուղեւորը կարողանայ ճանապարհ գտնել. բայց գարնանալ գրեթէ ամէն տարի զոհեր կը պատահին։ Գարունը և աշունը անձրեւային են և ամպամած։ Ճաճախ տեղացող անձրեւները թէեւ կը նպաստեն բուսականութեան ամման, սակայն ցորենին կը վնասեն, ցօղունը ամեցնելով՝ թոյլ չեն տար լաւ հասկ բռնելու։ Օդի խոնաւութենէն բնակիչներու մէջ շատ տարածուած է ոսկրացաւը։ Հագարի և Բարկուշատի հովիտներու մէջ երբեմն այն աստիճանի առատիկ ծօթ կը լինի, որ մարդ զժուարաւ կրնայ շունչ առնել։ — Գաւառամատոյց ունի Հաճի Սամլուի կողմը ծածկուած է խիտ անառոտ, ուր կը գտնուին գլխաւորապէս՝ կաղնի, բոխի, հաճարիի, հացիկի, ցրտենի, սղնի, նարնջափայտ, և այլն։ Պաղատու ծառերէն թէ՛ անառոտները և թէ՛ այգիները կը գտնուին խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, թթենի, և այլն։ Այտերու մէջ կը ցանուի գարնացան տեսակ ցորեն, գարի և հաճար։ Ընտանի կենդանիներէն ունի կը պահեն՝ ոչխար, այծ, կով, էշ, ջոր, ձի։ Վայրենի կենդանիներէն անառոտները կը գտնուին նապաստակ, եղնիկ, այծեամն, աղուէս, գայլ և երբեմն արջ։ Վայրենի թռչուններէն կը գտնուին՝ աղաւնի, կաքաւ, տատրակ, փասիան, լոր, բաղէ, բուէն, շահէն, արծիւ, և այլն. ընտանիներն գլխաւորապէս կը պահեն՝ հաւ, տեղ տեղ ալ հնդկահաւ, սագ և բադ։

Ջանգեզուրի ոստիկանական շրջանը կ'իյնայ համանուն գաւառի արեւելահիւսիսային կողմը և ամբողջովին կը բռնէ նախկին Հաբանդ գաւառը, որ կ'ստորաբաժանուի երեք

մասի Բարիուշատայ ձոր, Զագեձոր և Ա-
զահէձք։ Բարիուշատայ ձորը՝ այժմեան
Շնհէրի ձորն է, Զագեձորը՝ Գորիսը իր
շրջակայքով, իսկ Ազահէձքը՝ այժմեան Մա-
զաւուզը։ Այս հին անուններըը ընդհանրա-
պէս ալ չեն գործածուիր և ամենուն ակզ կը
գործածուի Զանգեզուր անունը։ Հ. Ալիշան՝
Զանգեզուր անունը ծագած կը համարի Զա-

բազմաթիւ ծակերու համ արհեստական քա-
րայրներու պատճառաւ։ Զանգեզուր անուան
սուգագրանութեան մասին ժողովրդական
աւանդութիւն մ՚ալ կայ, զոր յիշած ենք
Գորիսի նկարագրութեան վերջը։ — Զան-
գեզուրի շրջանը սասաիկ լեռնոտ լինելով
և հաղորդակցութեան ճանապարհներ չու-
նենալով՝ ինչպէս այժմ, նոյնպէս և անցեա-



306. Զանգեզուրցի հայ կինը ամուսնի ձեռքին չուր կը լեցնէ։

գեձոր անուան պատճառն է, իսկ վերջինս
Զագ նահապետի անունէն. հաւանական
կարելի է համարել այս ենթադրութիւնը,
բայց կարծողներ կան նաև որ Զագեձորը
յառաջ եկած է ոչ թէ Զագ նահապետի, այլ
Ծակերու—ձոր անունէն, որովհետև այժմ
ևս, Գորիսէն քիչ մը բարձր գտնուող ձորը,
ուր եղած է խիստ հին ժամանակները բնա-
կութիւն, կը կոչուի Ծակերու—ձոր, անոնց

լի մէջ շատ անծանօթ ճեապեր է, այնպէս որ
միայն հաւանական տեղեկութիւններ կարե-
լի է գտնել մատենագրաց մօտ, որոնք մի-
փոփ գաղափար չեն տար գաւառիս պատ-
մական զարգացման մասին։ Նորագոյն պատ-
մութենէն ալ յայտնի են Մելիք—Հիւսէյնեան-
ներու, Մելիք—Բարխուդարեանններու, Մե-
լիք-Հայկազի և Մելիք—Փարամազի տիրա-
պետութիւնները, որոնք իրրև մելիք կառա-

վարեր են, առաջին տոհմը Գարխար, երկրորդը՝ Տեղը և Խնձորեսկը, երրորդը՝ Խնամախը և չորրորդը՝ Խնձորեսկը իրենց շրջակայքով։ Զանգեզուրի կեդրոնատեղին և գլխաւոր աւանն է Գարիս։ Աւանձին տախտակով կը ներկայացնենք Զանգեզուր գաւառի հայաբնակ գիւղերու վիճակագիրը։ Այդ գիւղերէ գաւառիս մէջ կան ութիշ ոչ սակաւ հայաձայն կամ հայերէն անուններով գիւղեր, որոնց բնակիչը այժմ այլազան տարրեր տեղերէ եկած վերաբնակուած են այս տեղ, որովհետեւ բարբառներով իրարմէ կը տարբերին։ Այսպէս աւանձին բարբառով կը խօսին. ա. Գարիս և Քարահանջ բ. Խնձորեսկ և Մինքէնտ. գ. Տեղ, Կամձոր և Աբուխ. դ. Հարար, ե. Խոզնաւար և Խոտածախ. զ. Շնհէր և Խատ. է. Հալիձոր։ Բնաւորութեամբ Զանգեզուրցին կոպիտ է, կատածատ, ծածկամիտ և խորամանկ։ Կրթութիւնը կը պակսի այս տեղ, նոր սե-



307. Զանգեզուրցի հայ ընտանիք։

րունդէ շատ քչերը գպրոց կը յաճախեն, և այս առիկանական ամբողջ շրջանի մէջ միայն չորս տարրական պետական գպրոց կայ։ Բարբառականութիւնը բաւական ընկած է և կը շարունակէ զգալի կերպով ընկնիլ, և այն՝ շնորհիւ Բագուի կործանիչ ազդեցութեան։ Այդ տարի գաւառս հազարաւոր հոգւով և մարմնով առաջ երիտասարդներ, անտնտական պատճառներէ ստիպուած և մասամբ ալ Բագուի հարստութեան և վա-

վիճներ են։ Ամբողջ գաւառի բնակչաց թիւն է 323997, բազկացած բազմաթիւ ազգութիւններէ։ Զանգեզուրի շրջանի վանքերու մէջ նշանաւոր է Ծիծեռնավանքը։

Գաւառիս հայ բնակչաց մեծագոյն մասը բնիկներ կը համարուին, իսկ փոքրագոյնը՝ Պարսկաստանէն 1828 թուին եկած գաղթականներ են. բայց բնիկ համարուածներն ալ, ինչպէս կ'երեւի, հին ժամանակները

յիչքներու հրապոյրէն գրաւուած, կը դիմեն Բաղու, բայց ցաւալին այն է, որ ընդհանրապէս քանի մը տարիէ վերջ ֆիզիքապէս և հոգեպէս փճացած կը վերադառնան հայրենիք, դանազան ախտերով ապականուած։ — Ջանգեզուր գաւառամասի բնակարանները արհեստական քարայրներ են, որոնք տեղական բարբառով քարտակ կը կոչուին։ Հին ժամանակները գրեթէ բոլոր բնակարանները այդ տեսակ այրեր եղած են, իսկ այժմ կան և կը շինուին նաեւ կանոնաւոր տներ։ Հեազհեազ ժողովուրդը դուրս կու գայ քարտակներէն, կը շինէ կանոնաւոր երկյարկանի տներ և քարտակները կը գործածէ իբրեւ գոմ կամ խոտանոց։ Գաւառիս հայ բնակիչները ընդհանրապէս, թէ տղամարդիկ և թէ մանուկներ կանայք շատ աշխատասէր են։ Ա՛ս հատարակ կանայք կը կատարեն հետեւեալ աշխատանքները. երեխաները խնամել, կերակուր եփել, հաց թխել, ճախարակ մանել, շալ՝ գուլպայ՝ կապերա և գորգ գործել, իղ և պանիր շինել, կարկել, կարկատել, ջուր բերել, և գաշտային թեթեւ աշխատութիւններ. իսկ տղամարդիկ՝ վարել, հնձել, փայտ բերել ու կոտրել, անասուններու պարմանել, բնակարութիւն ընել, արեւ կարել. կան նաեւ արհեստներով պարապողներ։ Գաւառիս բնակչաց զգեստուց և զարդուց, ինչպէս նաեւ բնաւանեկան բարուց վրայ փափագողը՝ տեղեկութիւններ կրնան գտնալ, Ե. Լալայեանի, 1898–9ին Թիֆլիս հրատարակուած, Ջանգեզուրի գաւառ գրքի մէջ, յորմէ քաղած ենք այս տեղեկութեանց մեծագոյն մասը։

ՋԱՆԳԻ. Տես ՀՐԱԶԴԱՆ։

ՋԱՆԿԵԱԶՈՒՐ. Տես ՋԱՆԳԵԶՈՒՐ։

ՋԱՆԿԵԱՆ. — Գիւղ Պարսկաստանի. ուր ևի քանի մը տուն հայ, որոնք զուրկ են ամենայն կրօնական արարողութիւններէ։

ՋԱՆԿԻ. Տես ՀՐԱԶԴԱՆ։

ՋԱՆԿԻՋՕՐ. — Ձոր Ա. Լերարատայ կողմը վիտ գաւառի մէջ, կրճնաձիկ գետակի մօտ և Բայազիդի արեւմտակողմը։ Քաղաքի մօտ լինելով երբեմն շէն և բարգաւաճ վիճակ ունեցեր է։ Վերջին Ռուսաց և Թուրքաց պատերազմին պատճառաւ և Քրդաց ասպատակէն աւերեցաւ։ Ա. յժմեան վիճակն անծանօթ կը մնայ։ Հ. Ինճիճեան՝ գիւղիս մէջ կը յիշէ բրգաձեւ շինուած մը և եկեղեցի։ Ա. յժմ գերեզմաններու մէջ կը տեսնուի աւերակ մատուռ մը, և տապանի մը քարին վրայ ՉԻԱ (= 1272) թուականը։

ՋԱՆԿԻ ՊԱՍԱՐ. — Վերջին գարուս մէջ այլազգիներէն այս անուամբ կոչուած է կատայք (Ազարատ) գաւառի ստորին մասը, Երեւան քաղաքէն սկսեալ՝ մինչեւ Երասխ գետը։

ՋԱՆՐԱՆԱԿԵԱՆ. — Գեղակ Սիմեոնաց Ա. գահէճք գաւառի. ունի շատ օժանդակ աղբիւրներ կամ վտակներ։

ՋԱՋՈՒՐԱԲԱԿ. Տես ՍՈՂՔ։

ՋԱՊ ՄԵՆ. — Գետ Տիգրիսի գլխաւոր օժանդակներէն մին է, որ յառնարէն Լիգոս՝ այսինքն Գայլ և Զերպիս ալ կը կոչուէր. կը բղխէ Ամէտիոյ հիւսիսային լեռներէն, վանայ նահանգի հարաւային կողմի ջուրերն ևս կը սկզբնաւորուին այս գետս, ինչպէս նաեւ Շէհրիզուր նահանգէն բղխած ջուրերը։ Շրջապատյա և արագ ընթացքով առաջ երթալով, Մուսուլէն օր մը վար, Հատիւ քաղաքին մօտ՝ Թօֆիրաք–գաւեի առջեւ կը թափի Տիգրիսի մէջ։ Գետէս քիչ հեռու է Փոքր Զապ բուսած վտակը։

ՋԱՊՈՒԽ. — Ա. յլազգաբնակ գիւղ Սիմեոնաց Ագահէճք գաւառի. որուն անուամբ եւս կը կոչուի Հազարու ազգակցական օժանդակին Ագ–օղրան գետ։ Նշանաւոր է գիւղս պաղատու ծառերով։

ՋԱՌ կամ ՋԱՐ. — Գիւղ Ա. յրարատայ կոտայք գաւառի։ Ունի 921 բնակիչ, բաժնուած 113 տան, որոնցմէ 40 տունը Հայոց են, իսկ մնացեալը Թաթարաց։ Հայք ունին Ս. Կարապետ անուամբ պայծառ եկեղեցի մը։

ՋԱՌԱԳԱՐԱԿ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ՋԱՌԱՑ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ գաւառի Հէյմէյ գաւառակի. 5 տուն հայ կայ։ Տես ՋԱՐԱՑ։

ՋԱՌԱՓ. — Գիւղ Աղուանից Հողի գաւառի մէջ. գիրքն արեւելահայեաց է. օդն, կլիման և ջուրն պատուական։ Ա. յգեւէտ է, գլխաւոր բերքերն են՝ ցորեն և գինի։ Ունի 760 տուն հայ, բաժնուած 140 տան. [illegible] չաց նախնիք ամրոցնաչէս գաղթած են։

չեն և Ջրաբերդ գաւառներէն. ունին Սուրբ Գէորգ անուամբ եկեղեցի մը։ — Գիւղիս հա-
րաւ-արեւմտեան կողմը կայ հին գերեզմա-
նատուն և Ս. Յովհաննէս անուամբ հին ու
փոքր եկեղեցի մը՝ փայտաշէն ծածկով, որ
այժմ ախոռատեղի է։ Բնիմի ժողովրդահա-
յեաց երեսը գրած են երեք մեծ, հին և
անարձանագիր խաչեր։ Գերեզմանատան մէջ
քարի մը վրայ գրուած է. «Աչս է տապան
Իրափղուղի որդի Մովսեսի բովն ՌՄԻԵ»։

ՋԱՌԻՆՃ. Տես ՋԱՐՉՆՃԻ։

ՋԱՌԻՍ. — Աւերակ գիւղատեղի Արցախի
վարանդա գաւառի մէջ։

ՋԱՌՆԱՏՈՒՆ. — Հայանուն՝ բայց այլազ-
գարնակ (40 տուն) գիւղ Միւնեաց Շահապօնք
գաւառի մէջ։

ՋԱՌՆՈՒԿ. — Ջորրորդ գարու կիսուն այս
անուամբ Աղուանց վանք մը շինուած է Ե-
փրատայ մօտ (Մելիտինէ)։ — Նոյն անուամբ
գետ մ'ալ կը յիշուի Սամուշատի և Մելի-
տինէի մէջտեղ։

ՋԱՎՈՒՏԻՈ. Տես ՋԱՒՈՒՐՏԵԱՑ։

ՋԱՏՈՑ. — Գիւղ Ալբարատայ Բագրեւանդ
գաւառի, Եղմալի հարաւակողմը 2 ժամ
հեռու, Արածանիի ալ ափին վրայ։ Գիւղիս
բարձրը՝ բլրան մը վրայ կը գտնուին հայկա-
կան ընդարձակ գերեզմանատուն, խաչքա-
րեր և եկեղեցւոյ մը աւերակը։

ՋԱՐ. Տես ՋԱՌ և ԾԱՐ։

ՋԱՐԱՑ կամ ՋԱՌԱՑ. — Սերտատիպ ա-
բեւելեան կողմը 12 ժամ հեռաւորութեամբ
գիւղաքաղաք մ'է գրեթէ հինգ հարիւր հայ
և թուրք տուներէ բաղկացած։ Հայք մօտ
300 տուն են և կը բնակին մանաւանդ
թաղերու մէջ։ Ունին Ս. Լուսաւորիչ ան-
ուամբ հին եկեղեցի մը և Աբրշակունեան
անուն վարժարան մը։ Կան նաեւ քանի մը
տուն հայ Բողոքականք։

ՋԱՐԱՆՑ. — Սակաւաբնակ Հայոց գիւղ
վանայ շրջակայքը. ունի Ս. Յարգիս ան-
ուամբ եկեղեցի մը։

ՋԱՐԱՊԻԱՆԷ. — Քրդարնակ գիւղ Ալբա-
րատայ Արեղէնք (Արեւել. Սասրին Բասէն)
գաւառի մէջ, որուն անուամբ գետ և ձոր
ևս կայ։

ՋԱՐԱՒԱՆԴ. Տես ՋԱՐՈՒԱՆԴ։

ՋԱՐԲԱՂ, ՆԵՐՔԻՆ. — Գիւղ Նոր Ջուղայու
(Պարսկաստան) Պուրլարի գաւառակի։ 30
տուն հայ կայ, առանց եկեղեցւոյ և վար-
ժարանի։

ՋԱՐԲԱՂ, ՎԵՐԻՆ. — Գիւղ Նոր Ջուղայու
(Պարսկաստան) Պուրլարի գաւառակի։ 61
տուն հայ կայ. ունին եկեղեցի և վարժա-
րան։

ՋԱՐԳԱՐԱՆ. Տես ՋԱՐԿԵԱՐԱՆ։

ՋԱՐԴ. — Լսա Թ. Աթթուեանց, Աբաա-
շէս Բ, երբ աւարառեց Աբասեանս քաղաքի
շինութիւնը, «և անմատչելի անկասկածելի
զամրոցն պատրաստեաց, կոչեաց զանուն
ամրոցին Ջարդ, այսինքն Պայծառութիւն,
ի վերայ պայծառապարտար պատրաստու-
թեան շինուածոյն»։

ՋԱՐԴԱՆԱՇԷՆ. — Հայաբնակ գիւղ Գան-
ձակու, Շուշիի գաւառի մէջ։ Ունի 816
բնակիչ, բաժնուած 130 տան։

ՋԱՐԴԱՐԵԱՑ ՈՎԻՏ. — Մակաց աշխարհի
հին Արքասաովիա գաւառը այսպէս ևս կո-
չուած է։

ՋԱՐԴԱՐԻՋ. — Գիւղ Խարբերդի (Ջորրորդ
Հայք) առաջնորդական վիճակի մէջ. 60
տուն հայ կայ. ունին Ս. Խաչ անուամբ
եկեղեցի մը։

ՋԱՐԴԱՐԻՋԻ ՎԱՆՔ. — Կը գտնուի Ջար-
դարիչ գիւղի և Իչմային մօտ, ուսոի կը
բղխէ առատ ջուր։ Այս վանքը՝ իր պա-
րիսպներով, խցերով և տաճարով աւերակ
էր բոլորովին, բայց վանահայր Կարապետ
վարդապետը († 1889) բաւական վերանո-
րոգեց։ Ունի շատ արտ, այգի, ծառ և 24
գիւղ թեմ։ Ս. Տաճարը Ս. Աթոմանեի նուի-
րուած է։

ՋԱՐԴԻՒՆԻ ԴԱՇՏ. — Դաշտ կը գտնուի
Ադուանից աշխարհի մէջ, ուր Նահատակուե-
ցան Եղիշէ առաքեալը։

ՋԱՐԵՀԱՒԱՆ կամ ՋԱՐԵՀՈՒԱՆ. — Պարս-
կահայոց հին գաւառներէն մին։

ՋԱՐԵՀԱՒԱՆ, ՋԱՐԵՀԱՒԱՆԴ կամ ՋԱՐԵ-
ՀԱՎԱՆ. — Հին քաղաք Ալբարատայ Բագ-
րեւանդ գաւառի մէջ, Բագաւանի մօտ։ Առա-
ջին անգամ կը յիշէ Բուզանդ՝ Արշակ Բ-ի
վարանդուխտենէն վերջ, Պարսից տեղւոյն
տիրելն պատմելով. «Անուին զքաղաքն
Բագրեւանդայ Ջարեհաւան, և խազացուցա-
նէին անտի հինգ հազար երդ հայ և ութ

հազար երդ հրեայ, և զքաղաքն ի հինանց տապալէին յատակէին»։ Որ քիչ վերջ Շապուհ Թագաւորը գալով «յաւերս քաղաքին, .. հրաման տայր զամենայն այր ի չափ հասեալ կոխան առնել փղաց, և զամենայն կին և զմանուկ հանել ընդ ցից սայլից. հազարք հազարաց և բիւրք բիւրոց սպանան.. և զկանայս ապառաժն և նախարարացն զխախուցիկոցն՝ հրաման տայր ածել յասպարէզն որ էր ի Զարեհաւան քաղաքի... գործել զանօրէնութիւն»։ Որչափ որ պատմիչը բոլորովին կործանած, աւերած կը յիշէ քաղաքս, սակայն և ոչ գար մը վերջը (450ին), գարձեալ կը յիշուի Զարեհաւան՝ իբրև գիւղ, ուր ընդդէմ Պարսից վարդանայ հետ միաբանողները, կոտորիցին Պարսից մոգերէն զոմանս։ Կը յիշուի Զարեհաւան երկու հարիւր տարի վերջն ալ (իբր 655) թուին, Արաբացւոց առաջին արշաւանքներու ժամանակ, որոնք Ցունաց զօրքերէն անգամ մը նեղուելով՝ հոս ապաստանեցան։ — Այս գիւղէն էր հայրենեաց թ գարու վերջերը Սմբատ Թոնդրակեցի ազանպատուելու առաջնորդը, ինչպէս կը վկայեն Ասողիկ և Դր. Մագիստրոս, ԺԱ գարու կիսուն։ Այնուհետեւ մեր նախնեաց գրքերու մէջ չի յիշուիր Զարեհաւանի անունը։ Ինչպէս գիտնականք կը կարծեն, մեր մատենագիրներէն առաջ քաղաքս յիշուած է Պաղոմէոս աշխարհագրէն, Բ գարու կիսուն մէջ, և գրուած է այսպէս Ζαρόυανα, Zaruana, և նոյն ժամանակները քաղաքիս մէջ կային նաեւ բազմաթիւ Հրեաներ, ու բարգաւած վիճակի մէջ էր վաճառականութիւնն։ Դր. Մագիստրոս Զարեհաւանը կը գնէ Ծաղկոտն գաւառի մէջ, և այս՝ կամ շփոթմամբ և կամ Ծաղկոտն Բագրեւանդայ սահմանակից լինելով, սահմանաց վրայ փոփոխութիւն եղած է ի վերջոյ։ — Եօթներորդ գարուն, Ս. Թաթղոյ վարուց պատմիչը կը յիշէ տեղս իբրեւ քաղաքագիւղ, և կը գրէ Զարեհաւանի. «Ի Զարեհաւանի քաղաքագիւղն յաշնանային ժամանակն՝ հոդն կարիճ բիտաց որպէս գազաղ. խածանէր զմարդիկն, և հազիւ թէ ապրէր ոք, և մեծ տագնապ հասուցանէր. խորհեցան Թողուլ զգիւղն, և եկեալ ի տուրբ տեղիս (Թաթղոյ վանաց), և զգիշերն հրսկեցին. և այսպէս առեալ գտուրբ նշխարսն՝ փութացին ի Զարեհաւան. շրջեցան ընդ սահմանսն սպրմոսիք և արտասուօք աղաչելով զԱստուած.. և Աստուած շնորհեաց գիւրք ողորմութիւն։ Եւ յայնմ օրէ մինչեւ ցայսօր ոչ ոք տես կարիճ ի Զարեհաւանի, և ոչ մի. և ուրախութեամբ օրհնեցին զԱստուած, և ուրախացին ի տուրբ տեղիսն՝ յիւրաքանչիւր ամ յամէ, զոր և ցայժմ ամենայն ուխտաւորքն հաւատով անխափան կատարեն»։ Այժմ անծանօթ կը մնան Զարեհաւանի աւերակներն, որոնք արդարեւ քննութեան կը կարօտին։ — Ստորգր. Հայստ. 410–411։ Այրարատ, 41, 517։

ՁԱՐԵՒՏԱԿԵՐՏ. — Սիւնեաց Բաղք գաւառի հին գիւղերէն մին։

ՁԱՐՁԻՊԻԼ. — Ալլազգաբնակ գիւղ Սիւնեաց Սաղք գաւառի. որուն մէջ կայ քարքանուած եկեղեցի մը, սեպհական աղբիւր գրուած են երկու ծաղկանկար պատուական խաչքարեր՝ միոյն վրայ քանդակուած՝ «Կանգնեցաւ սուրբ խաչս Աւանեսին, թվ. ՋԿԳ. (1514)։

ՁԱՐԸՆՁԻ կամ ՁԱՒԻՆՁ. — Գիւղ Ալբրատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Պօղոսղան գիւղի հարաւային կողմը՝ 10 վերստ հեռու, բաւական ընդարձակ սարաշատի մը վրայ, որ շրջապատուած է բլուրներով։ Ալեվի հեռուները, հիւսիսային կողմն է Արագած, արեւելեան կողմն՝ Մասիս, հարաւային կողմն՝ Կաղզուանի լեռն ու Ալաճա՝ իրենց կատարները կը ցուցնեն։ Մերձաւոր բլուրները զանազան անուններ ունին. արեւելեան կողմը Ղարլանի ձորն ու Մատատաղայի բլրակներն են. հարաւային կողմն՝ Սարայի թէփէ, հիւսիսային կողմն՝ Զարընձի թէփէ և արեւմտեան կողմն Ալճաշի թէփէ։ Գիւղիս մէջ աղբիւր չկայ և Ալբագածէն կու գայ առուակ մը։ Զարընձիի մէկ կողմը լճակ մը շինած են, ուր ժողովուած ջուրը թէ՛ մարդոց և թէ անասնոց համար կը գործածուի։ Եկեղեցին՝ գիւղի հիւսիսային կողմն է, որ շինուած կը համարուի Ալնի ժամանակ և կը կոչուի Սուրբ Խաչ։ Անշուշտ արդի հայ բնակիչներէն նորոգուած է, վասն զի Հ. Ալիշան իր Շիրակին մէջ կործանած վիճակի մէջ կը յիշէ

եկեղեցիս փոքրիկ և խաչաձեւ, անոնկն և կամարներու վրայ զմբեթաւորեալ։ Ամրողջապէս շինուած էր կարմիր կոփածոյ քարեբոլ, և հիւսիսային թեւին վրայ կար անուշան արձանագրութեան մնացորդ մը։ Ունի 397 հայ բնակիչ բաժնուած 55 տան, ուրոնք գաղթած են Համրակաձորէ, Բասենէ և ուրիշ կողմերէ։ Գիւղս 1886ին քրդաբնակ է եղեր։ Տ. Գէորգ Հայրապետի միջնորդութեամբ Քուրդերը հանուեր և գիւղն Հայոց յանձնուեր է կառավարութեան կողմէ։

ՋԱՐԹԱՂ, — Գիւղ Նոր Ջուղայու (Պարսկաստան) Փեամարա գաւառակի։ 12 տուն հայ կայ. չունին ո՛չ եկեղեցի և ո՛չ վարժարան։

ՋԱՐԻՇԱՏ, — Ալբարատայ վանանդ գաւառի հիւսիսային մասը առանձին վիճակ մը կը ձեւացնէ և կը կոչուի այս անուամբ, չի գիտցուի ո՛ր դարէն սկսեալ։ Մեր նախնիներէն իրրեւ շէն յիշուած է Ջարիշատ և ոչ վիճակ, և դանազանելու համար Աղիսվիս գաւառի մէջ գտնուած նոյնանուն քաղաքէն, խորենացին կը կոչէ Ջարիշատ վանդայ։ Ամրողջ Ջարիշատի վիճակի մէջ կայ մօտ 60 գիւղ՝ 12382 բնակչօք, ասոնց մէջէն հազիւ 1000 հոգի հայ են, մնացեալը մեծաւ մասամբ են թուրք, քուրդ, ռուս, և այլն։ — Բուն Ջարիշատ աւանը կը գտնուի Համանուն Ջարիշատայ գետ և Գմբեթի գետակի խառնուրդոյ անկեան մէջ։ Այս՝ Հայոց ամուր քաղաքաց նման զիրքովը և անուամբը, թէեւ այժմ ոդորմելի գիւղ մ'է (ռուսաբնակ), սակայն կը թուի թէ ի հնումն բաւական նշանաւոր վայր մը եղած է։ Հ. Ալիշան՝ կը համարի լինել գաստակերտ Աբատաշէս Բէ Ջարեհ որդւոյն, Բ դարու առաջին կիսուն, որ հօրմէն զինուորականն կոզմնակալ դրուեցաւ հիւսիսային Հայոց։ Ջարեհի անուամբ կը կարծուի թէ նախ աւանն կոչուեր է Ջարեհշատ, որ յետոյ եղեր է Ջարիշատ։ Այժմեան աւանդութիւնն մ'ալ կ'ըսէ, թէ Ջարուհի դիւղի մը անուամբ կոչուեր է աւանն և վիճակը։ — Ջարիշատէն էր Տիրոկ քահանայ, որդի Մովսիսեան, որ՝ ինչպէս կը թուի, խմաստուն և ճարտասան մէկն էր, զոր Ս. Մեսրոպ և Հայոց եկեղեցւոյն ուխտը, ազգասէր դրկեցին Պարսից Վռամ թագաւորին, որ զՄեծն Սահակ իրեն ամեռոր դարձնէ։ Ջարիշատ աւանի անունն շատ ժամանակներէ ի վեր գաղրած է յիշուիլ և մինչեւ վիճակն ծանօթ է։ Հին մեծութեան ի յիշատակ կը մնայ միայն ամայի քառակուսի ամրոց մը։ Ջարիշատի տեղը այժմ Իսաաց գիւղ մը կայ կրճատուելով անուամբ, և ունի 344 բնակիչ, բաժնուած 63 տան։ — Ա յրարատ, 106–108։

ՋԱՐԻՇԱՏ, — Հին արքունական քաղաք Տուրուբերանի Աղիովիտ գաւառի, որ կառուցուած է Ջարա կամ Ջուրա անուամբ մէկ մը, կամ ի յիշատակ անոր։ Խորենացին Գնէլի Թագուհի կը պատմէ ըսելով. «Ի լուցեալ ի գաշան Աղուանից զկին Թրնեկոյ՝ Թագուհոյ յարքունական քաղաքին Ջարիշատի»։ Բուզանդի գրածին համեմատ (Դ. ԻԵ), Հայոց Արշակ Բ Թագաւորի ժամանակ, Պարսիկները քաղաքս կործանեցին. «Ամուսին և գքաղաքն մեծ Ջարիշատ, որ էր ի գաւառին յԱղձովոմի, ժդ երդ Հրեայս, և ժո երդ Հայս. և զնա ի հիմանց քանդեալ ապականէին»։ Բայց գարձեալ շինուածք, ուսկից գի Թովմաս Մեծոփեցին կը յիշէ գայն իրրեւ գիւղաքաղաք ԺԵ գարու մէջ։

ՋԱՐԻՒՈՒ ՇԷՆ. — Հայարնակ գիւղ Աղուանից Շամախոյ գաւառի, հիմնուած է Սալիան գիւղի հիւսիսակողմը։ Բնակիչք 22 տուն են, որոնց նախնիք 1830ին գաղթած են Նոր Ջուղայի Ղարղուն, Ֆերեայ և Ղարադաղ գիւղերէն։ Եկեղեցի չունենալով հոգեւոր պէտքերը կը կատարուին Սալիանի վանքի մէջ։

ՋԱՐԿԵԱՐԱՆ, ՋԱՐԳԱՐԱՆ, — Գիւղ Շամախոյ Գարդման գաւառի. հիմնուած է կովկաս մեծ լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վրայ։ Աքանչելի է օդն և ջուրն, կլիման և տեսարանը։ Տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, կորեկ, հաճար, բակլայ, խաշխաշ։ Նշանաւոր են տանձն ու խնձորը։ Պաղի ժամանակ տանձենեաց և խնձորենեաց պարտէզներէն անպակաս են արջերու վհատակներ, մանաւանդ գիշերը։ Բնակիչք ամբողջ հայ են 1009 հոգի, բաժնուած 103

տան։ Ունին Ս. Աստուածածին անուանեալ եկեղեցի մը։ — Գիւղիս մօտ բլուրի մը վրայ անտառի մէջ խաչաձեւ անուամբ ուխտատեղի մը կայ։

ՋԱՐՈՒԱՆԴ, ՋԱՐԱԻԱՆԴ կամ ՋԱՐԵԱՆԴ. — Պարսկահայոց հին գաւառներէն մին, այսպէս կոչուած է Ջրուանդայ անուամբ։ Հին գաւառիս այժմ կը համապատասխանէ Սարմատուր։

ՋԱՐՊ. — Տիգրիսի օժանդակ գետ կը գրէ Խոճիճեան՝ որ է անշուշտ մեր Ի կարգին նկարագրած Ջապ գետը։

ՋԱՐՊԻԱՆՆ. — Այս անուամբ գետ մը կայ Ալյրատատայ Արեգնանք (Արեւել. Սատրին Բասեն) գաւառի մէջ։ Նոյն է Ջարապխաճեի հետ։

ՋԱՐՍ. Տես ՅԱՐՍ։

ՋԱՒ. — Այս անուամբ գետ մը կը յիշէ Թ. Արծրունին կորճէից Որսիրանք գաւառի մէջ. «Եւ զօրքն որ եկեալ էին զհետ Գուրգենայ, եկին հասին ի սահմանս երկրին՝ ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք, և բնակեցան յեզր գետոյն Ջաւ կոչեցեալ»։

ՋԱՒԱՋՐԻ ՎԱՆՔ. — Կը յիշուի Սիւնեաց երկնչակ գաւառի մէջ։

ՋԱՒԻՇ. — Արցախի հին գաւառներէն մին, որուն այժմ կը համապատասխանէ Դաշտաս գաւառը։

ՋԱՒԻԹԱ. — Ձոռն կորճէից Ալյատաք գաւառի մէջ. բնակիչք Քաղդէացի են։

ՋԱՒՈՒՐՏԵԱՑ կամ ՋԱՎՈՒՐՏԻՍ. — Գիւղ Տրապիզոնի, հայ և մահմէտական բնակչօք։ Հայք 40 տուն են և ունին Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը և վարժարան մը՝ 30 աշակերտներով։ Հողագործ ու հովիւ են։

ՋԱՔ. Տես ՁԻԿ։

ՋԱՔԱՐԱՊԱՏ. — Կը յիշուի Ալյրատատայ Արագածոտն գաւառի մէջ։

ՋԱՔԱՐ. — Գիւղ Բարձր Հայոց այժմեան կամախ գաւառի մէջ. 50 հայ բնակիչ ունի։

ՋԱՔԻՆ ՎԱՆՔ. Տես ՅՈՂՈՒՆԻ։

ՋԱՔԱԹԱԼԱՅ. — Գլխաւոր քաղաք (կովկաս) համանուն նահանգին. Աւազանի հովտէն 26 և Նախիջեւան 120 վերստ հեռու։ Ունի մօտ 300 տուն բնակիչք, որոնց մեծ մասը իրը 200 բնակութիւնք հայ են, ամէնքն ալ զաղթած գանազան տեղերէ, մանաւանդ Ագուլիսէն, սկսեալ 1815էն։ Ունի Ս. Գէորգ անուամբ եկեղեցի և արքունական տպարան ուսումնարան ու օրիորդաց դպրոց։ 1870 թուին քաղաքիս հայ երիտասարդները Պ. Մ. Քոչարեանցի ջանիւք հաստատեցին Հայկական ընթերցարան մը, որ 1873 թուին ունէր մօտ 200 կտոր գրեանք։ Հայոց մեծ մասը վաճառականութեամբ և փոքր մասը՝ արհեստով, շերամապահութեամբ ու այգեգործութեամբ կը պարապին։ Մնացեալ 100 տունը ռուս, վրացի և լեհ են. քանի մը մահմէտական եւս կան, առանց բնակութեաց, ու վաճառականութեամբ կը զբաղին։ Քաղաքս կը գտնուի Տաղստանէն գէպի հարաւ արեւելք ձգուող լեռնաբէն կազմուած անտառապատ ձորակի մը մէջ, որուն երկք կողմերը պարապի պէս կը բարձրանան անտառաշատ լեռներ. բարեխառն կլիմայի ամէն առատճանի և միանգամայն ցուրտ կլիմայի ամէն տեսակ բոյսեր կը զարգարեն այս լեռներու տարբատները, լանջերն ու կատարները. շագանակի, կաղնի, արքայակաղնի, ընկուզի, հիւի, շլորի, խնձորի, թզի և այլ ծառեր շար ի շար կանգնած են միմեանց հետ։ Տեղ տեղ կ'երեւին ամէնագեղեցիկ պուրակք և ծմակք, զորս կ'առոգեն բազմաթիւ աղբիւրներ և վտակներ։ Ջնարատց մէջ լի են՝ արջ, գայլ, ազուէս, ճագար, եղնիկ, կաքաւ, լոր, փասիան և այլ տեսակ կենդանիներ և թռչուններ։ Գեղեցիկ է քաղաքիս դիրքը, տները միայարկ, հասարակ՝ բայց վայելուչ տեսքով. ունի ծառատարդ ուղիղ փողոցներ։ Ջաքաթալայի ամէն կողմերը կը գտնուին մաքուր ջրոյ հորեր և աւազաններ։ Քաղաքին կեդրոնը գտնուած մեծ աւազանի և հրապարակի մօտ են Հայոց եկեղեցին և ուսումնարանը։ Նշանաւոր է առջոցը։ Քաղաքիս անուան համար կը պատմուի թէ ժամանակաւ Ջաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Ջաքար, հիւսիս արեւելեան կողմը Ձոռ գետի մէջ կը բնակի և դեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ գետի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու գետից մէջ գրաւած քաղաքն՝ Ջաքարթալայ, և հետզհետէ գործածուելով՝ ի առն ոչնչացեր է։ — Ջաքաթալի նահանգը կը պարունակէ 100

գիւղ՝ չորս վիճակաց մէջ. բնակչաց թիւն է 74800՝ երկու սեռ միասին, մեծ մասամբ լեզուի, թուրք, ենդիլով և այլ ազգերէ։ Վաճառականութիւնն գլխաւորաբար Հայոց ձեռքն է։

ՉԱՓԱՐ–ՔԼՈՑ. — Հայաբնակ փոքրիկ գիւղ Նիկոմիդիոյ գաւառի, Պարախիսակէ երկու ժամու ճանապարհ հեռու։ Կառուցուած է բլրոյ մը վրայ, որ շրջապատեալ է անտառային լեռներով։ Այդ անտառներէն գիւղացիք կը պատրաստեն առագձ, տախտակներ, տաշտեր, գուշեր և կը վաճառեն շրջակայքը. ձմեռնային վառելափայտ ևս այդ անտառներէն կը կտրեն։ Գիւղս ունի ընդարձակ պարարտաբեր մարգագետիններ, մօտէն գետակ մը կ'անցնի. օդն ու ջուրն կազդուրիչ ու առողջարար են։ — Գիւղէս մէկ ժամ հեռու կը գտնուի վարդապետին Աղբիւր կոչուած ջուրը, որուն համար ասանդարապետ կ'ըսեն, թէ Պարախիսակցի Յովհաննէս անուն մենակեաց և մաքրաբարոյ վարդապետ մը բղխեցուցած էր իր գաւազանով։ — Կէս ժամ հեռու դէպի արեւելք, Սուրբ կոչուած տեղ մը կայ, ուր հնութեան հետքեր կը նշմարուին։ Չաքար–քէօյի բնակիչք գաղթած են Տրապիզոնի կողմերէն, մանաւանդ Օրտուէ ու Կիրասունէ, 80 տարի յառաջ՝ թուով 70, և հետզհետէ շատցած են. 1895ին՝ 150 հոգի էին, 50 տուն բաժնուած։ Այս գիւղացւոց լեզուն շատ մաքուր է. գրաբար ձեր ու տացցուածներ կը գործածեն, և ոչ երբէք օտար բառեր։ Ունին փոքրիկ եկեղեցի մը, որուն գրքերն, պատարագի սպասներն ու զգեստներն նուիրած ու հայթհայթած է Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան։

ՉԱՓԻՆ ՆԱՀԱՏԱԿ. — Այս անուամբ կիսակործան փոքր եկեղեցի մը, հանգստարան և գիւղատեղի կայ Կիւլտաման (Արցախ) Գաւառ-Քէկանց կիսատեր վանքի հիւսիսային կողմը, Պարանպատ անուն անտառի մէջ, Ինջայի ձախ կողմը։

ՉՐԻԼ. — Արցախի Մար գաւառի գիւղ, որուն բնակիչք թէև այժմ այլազգիներ են, սակայն մէջը դեռ կան հայկական մնացորդներ։ Գիւղիս արեւմտեան կողմի ձորէն կը վազէ մեծ աղբիւր մը։

ՉԹՈՒՆ. Տես ՉԻՉԹՈՒՆ։

ՉԵԴԵԱՅ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ՉԵՄԻ ՉԱՅ. — Գետակ Միւնեաց Հաբանդ գաւառի. ունի գեղեցիկ և արգասաբեր հովիտներ։

ՉԵՆԱԿՈ. — Ղազար Փարպեցի կը դնէ գիւղս Տայոց մէջ, ըսելով. «Երանելին Աբրահամ երէց՝ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն որում անուն էր Ջևնակս»։

ՉԵՈՆԱԳ. — Գիւղաքաղաք Բրզաց (Վան) խօշապ քաղաքէն 4 ժամ հեռու. մօտէն կ'անցնի խօշապ գետը։ Ունի փոքրիկ քարաշէն բերդ և պատուական այգեստաններ։

ՉԵՏԿԱՆ կամ ՉԻՉՏԻՒԱՆ. — Հայաբնակ գիւղ Աչրարատայ Բագրեւանդ գաւառի, Վարդաշակերտի հարաւ արեւմտեան կողմը 3 ժամ հեռու։ Նախ ունէր 60–65 տուն հարուստ բնակիչներ. իսկ այժմ հազիւ 30 տուն ունի. միւս մասը 1877ի պատերազմին գաղթած է Ռուսաց բաժինը։ Ունի բերրի հողեր, ամենալաւ մարգագետիններ։ Լեռնային մասի մէջ առանց ջրելու ցորեններ կ'աճին, իսկ գաշտային մասը ջրարբի լինելով՝ առատութեամբ ցորեն, գարի և կարտաւս կ'արտադրէ։ Չեսկան կարաւանի ճանապարհի վրայ կը գտնուի և վաճառականութիւնը լաւ դիրքի մէջ է։ Ունի նորաշէն եկեղեցի մը։ Չեսկանի դիրքը շատ գեղեցիկ է և քիչ որ հակակալ է յարձակում. ապրելական կողմի տեսարանն է Ակշկերտի և Գարաքիլիսէի գաշտն, Սիմակ, Նպատ և Մասիս լեռները, Դլիճ–կատուկ և Ծազկանց լեռներու հիւսիսային և Ջրարաշխի հարաւային կողերը։ Կան նաեւ առուն ադրիւրներ և քանի մը ջրազացներ՝ որոնց առուներու եզրն կը զարդարեն հինաւուրց բարտի ծառեր, որոնք գիւղին յատուկ գեղեցկութիւն կ'ընծայեն։ Գիւղիս գերեզմանատունը նշանաւոր չէ, բայց արեւելեան կողմը յայտնուած է 2–3 կանգուն հողի տակ ծածկուած հին ու ընդարձակ գերեզմանատուն մը։ Դուրս հանած քանի մը սրբատաշ խաչքարներու նշաններէն կ'երեւի՝ որ արձանագրութիւն ունեցող քարեր ևս դուրս պիտի գան։ Չեսկանի Հայոց թիւը թէև փոքր է, սակայն բաւական ինքնապաշտպանութիւն ունին. ճանապարհի վրայ լինելով միշտ աւազակներու հետ ընդհարումներ ունեցած

են, որով և պահպանելու վարժուած։ — Բառգրեաց, 89–93։

ՉԵՐԻ (Զարդ). — Ի հնումն հայարնակ՝ և այժմ այլազգարնակ գիւղ Աղուանից Հարճլանք գաւառի։

ՉԵՐՉԱՏ. Տես ՍԱՐԿԱ։


ՉԵՐՏ. — Գիւղ Գօրի (Տփղիս) քաղաքէն 20 վերստ հեռու, դէպի հիւսիս արեւելեան կողմը. 178 տուն բնակիչ կայ, որոնցմէ 105ը Հայոց և մնացեալք՝ վրաց են, որոնք ունին փոքր եկեղեցի մը։ Հայք՝ 1885ին փառաւոր եկեղեցի մը շինեցին։ Գիւղիս բնակիչք կը պարապին երկրագործութեամբ և այգեպանութեամբ։ Հողը բարերար է. առատութեամբ կը բուսնին ցորեն, գարի, և գիպատացորեն և սխտոր. քանի մը տեսակ պտուղներ ևս կան։

ՉԵՒՈՒ. — Բերդ Սիւնեաց Զորք գաւառի Բաղաբերդ վիճակի մէջ, Բաղաբերդի մօտ, երկու գետակաց խառնուրդի անկեան մէջ։ Հոս Աբասղազ Դ.ուլի խանն կամ Պարսից կողմնապահը, զօրաժողով կը լինէր ընդդէմ Դաւիթ բէկի, որ իրենեռով արշաւելով Դարաչիմէն գիւղէն, «պաշարեաց զբերդն Ջեւու, այլ գժտաբերն եղեւ առնուլ զայն. զի էր բարձրաբերձ և անառիկ յոյժ. յետ բազմելոյն զայն աւուրս երկուս՝ Մխիթար սպարապետն և Տէր Աւետիքն զրոհ առեալ ի վեր խաղացին, իսկ նոքա ի պարսպէ անտի զսաստ ի բաց մերժեցին. բայց Տէր Աւետիքն խարանօք ի յամուր անդր եւանէր, և զգլխաւորն նոցա ձերբակալ առնէր։ Յայսմ վայրի զօրքն ամենայն որք շուրջ զբերդատն էին՝ ի պարապացն ի ներքս զեղանէին, և սուր ի վերայ եղեալ զամենեսեան զնոսա առ հասել սատակէին. և ի դմին աւուր յամրոցի անդ կոտորեցին ի թուրքացն արս 4000. և ի սոցանէ մեռան սակաւք ոմանք»։ Բաֆֆի՝ բերդիս պաշարման և առման վիպասանութիւնը շատ երկար կը նկարագրէ, մտահրնաւ հանգամանքներով։ Այժմ ամայի է Ջեւու բերդը, ինչպէս նաեւ համանուն գիւղը։ — Ջեւու անուամբ գետակ մը եւս կայ Սիւնեաց մէջ։ — Միսակեան, 293։

ՉԻԿ կամ ՉԱՔ. — Սակաւարնակ գիւղ Սասրին Բասենի (Այրարատ)։ Նոյն անուամբ գետակ մը եւս կայ։

ՉԻՑՈՒՆ, ՉԵՑՈՒՆ կամ ՈՒԼՆԻԱ. Գղ. ZÉITOUN. — Ջահան գետի լեռնահովտի մէջ ամենէն կարեւոր վայրն է Զէյթուն, որ թէեւ չի յիշուիր կիլիկեան պատմիչներէն, բայց հաւանական է թէ Ֆռոնտոսի և Արեգնի հետ մի և նոյն վիճակը կը կազմէր։ Զէյթուն մեր քաղաքորով վերջապէս բնակավայրը՝ լեռներու մէջ հաստատուած աւան մ՚է, ուր մտնելու համար, պէտք է անցնիլ անձուկ ձորակներէ և ժժաւարակոխ շաւիղներէ։ Զէյթունը կ՚իյնայ Հալէպի կառավարութեան տակ և Մարաշի գաւառի մէջ։ Զէյթուն՝ ըստ արդի աշխարհագրական բաժանման Մարաշի գաւառակներէն մին է, որուն սահմանը հիւսիսէն՝ կը հասնի մինչեւ Երիմէկ գիւղը կամ Լեռն–տէրէ–պօղազը՝ Զէյթուն աւանէն 10 ժամ հեռաւորութեամբ, արեւելքէն՝ Մարաշ աւանակարնակ գիւղը՝ 9 ժամ հեռու, հարաւէն՝ Արեգնի Եկեղեցեանք հայարնակ գիւղը՝ նոյնպէս 9 ժամ հեռու և արեւմուտքէն՝ Զուրզուր–Ճխաար (կանչի) աւանկարնակ գիւղը՝ 10 ժամ հեռու։ Զէյթուն՝ ծովու երեսէն 3500 ոտք բարձրութեամբ լեռնային երկիր մ՚է, որուն գլխաւոր լեռներն են, հիւսիսէն՝ Զըրզգ, Պէրխո, Աղ–տաղ, Աղտաւոր և Լէռն–գարատաշ, արեւելքէն՝ Պէրդիկայ, Մավրլը և Աչագ, հարաւէն՝ Կիւրեւրմեն լեռը համանուն բերդով մը, արեւմուտքէն՝ Սօղանլը–տեռե լեռը։ Այս լեռներէն նշանաւոր է Պէրխո իր բարձրութեամբը, իսկ Զըրզգ՝ որ Զրիկի ազատագրութիւնն է, այսպէս կոչուած է, կապին վրայ բղխող փոքրիկ աղբիւրի մը պատճառաւ, բուսաբերութենէ զուրկ և լերկ ապառաժ է, ասոր համար ի հնումն Այրած լեռ կը կոչուի եղեր. լերանս հատած տեղը, որ տեղական բարբառով Քերծէր (Քարծայր) կը կոչուի, կը բնակին 30 տուն հայ։ Այս լեռները բնակած պարիսպ մը ձեւացնելով Զէյթունի շուրջը, տեսակ մը հանգամանքը տուած են անոր. ժողովուրդն ալ գիտցած է միշտ օգուտ քաղել իր դիրքի առաւելութենէն, բայց այնու հանդերձ՝ բաղդատմամբ Հաձինի՝ կ՚ըսէ, Զէյթունի դիրքը այնքան անառիկ չէ։ Ուշնեցի կարապետ կաթողիկոսը 1727ին, աւանս բազաբաղիդ կ՚անուանէ և հետեւեալ նկա-

բազիրը կ՚ընէ. «Որ չինեալ կայ ի մէջ եւ-
րից մերձակայ լերանց Պազնկայ, Ակրածոյ
և Կանկռռոյ, ընդ զոգացեալ ներ ձորում
բարիքերի, ուր լինի այգի, ձիթենի, նռնենի,
թզենի, և այլն, և ամենայն բան կարգի,
այլ և բանջակ և մեռաքս՝ որ է ապրշում,
և հանք երկաթի. որ ընդէ զջուր բարե-
համ կարիաջուն փոքր գետայն որ հոսի ի
լեռնէն Պրիսոյ, որ թարգմանի ցուրտ, վասն
մշտապիւռ ձեանն որ ի նմա։ Ածացեալս
գետոյ ունի զրժշկարար չուրն Ջերմկոյ, և՛
տեղ՝ մեծ մասամբ միւռներէն ձեւացած. ա-
ռանցմէ յիշենք, Աւազ–Կեռիկ, Ջաթօլ–քօր,
Սախօր–եղէ, Ակերզոկ (Ըկերզեկ), Քէչ–տաղ,
Ղանտըլ, Ջամօտ, Կարմըր, Շէնգեկ, Ագա-
յր, Ղավխըրդ, Սաղիր, Դրախտիկ, և այլն։
Դրախտիկ՝ իր կարգին յիշած չլինելով ասա
ըսենք, որ կը գտնուի Ֆրնտուզի Մ. կարա-
պետի վանքի հիւսիսային արեւմտեան կող-
մը 2 ժամ հեռաւորութեամբ և արտարեւ ճշ-
մարիտ դրախտ մ՚է՝ իւր բազդրաբոյր ծա-
ղիկներով և զալարագեղ բոյսերով։ Ամեան



308. Զէյթունի ընդհանուր տեսարանը։

դաքանչելի եկեղեցին Ամենափրկչին»։ Զէյ-
թունը թէև լեռնային բարձրաւանդակի վը-
րայ է, բայց ձորանիստ դիրք ունենալով՝
կլիման բարեխառն և առողջարար է, և թէև
տեղ տեղ բարձր ու ցած դիրքերուն հա-
մեմատ կը տարբերի, սակայն ընդհանրա-
պէս օդառակար և կազդուրիչ է, այնպէս որ
ժողովուրդը ամառ առեն առ հասարակ տա-
նիքներու և այլ բացօդեայ տեղեր կը գի-
շերէ։ – Վերոյիշեալ լեռներէն զատ՝ Զէյ-
թուն իր շուրջը ունի բազմաթիւ փոքր լեռ-
տեզացիք լերանց գլուխը կը բարձրանան
իրենց հօտերով և արջառներով։ Այս լեռ-
ներու մէջ կան բազմաթիւ ու կարեւոր քա-
րայրներ. իսկ առուրառները՝ գեղեցիկ պօ-
տատեղիներ՝ ինչպէս Ֆրնտուզ, Էրկէզ–օղու,
Գանկրը–ագաղը, Գօրգմազ, Ջաւտօր, և այլն։
Ասոնց մեծ մասը կը գտնուի նշանաւոր Միւրեկիւր-
կեօղ (ապրուկի–լիճ)։ — Զէյթունի շուրջը կը
հոսին այլ և այլ գետակներու ջրեր. Պէբիա
լերան առորառէն հոսող ջրերէն կը կազմուի
Շուղուր գետակը՝ որ աւանի արեւմտեան

կոզմէն կ'անցնի և կը հասի դէպի հարաւ՝ սեւ ապրիւրն ալ մէջը ունենալով. ասոր վրայ Զէյթունի սահմանին մէջ կան երկու կամուրջ, մին՝ կարսի կամուրջ անուամբ, որ կը տանի Սուրէնեան թաղը, իսկ միսը Շուղրի կամուրջ՝ 35 միտր բարձրութեամբ, զոր շինել տուած են Պալճեանը, կը տանի

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԶԻՅԹՈՒՆԻ

ՆԻ ԵՐՋԱԿԱՑ ԳԻՒՂԱՐԻՑ


ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂՆԱՑ	ԲՆԱԿԻՉՔ		ԶԷյթուղէի հեռաւորութիւնը թուով մղոններով
	ՀԱՅՔ	ՕՏԱՐՔ	
Զէթուն կամ Զէյթուն. .	17600	240	
Պէչէն	40	480	3
Քէթիմէն	—	164	4
Սարը կիւզել, կամ Քիւրեէկ	60	560	5
Գաղագ Թէփէ . . .	—	480	8
Գանաիլ, Կանաըլ . .	—	160	10
Զաֆիթլիկ	—	280	9
Քիւրթիւլ կամ Քիւրթիւլի .	—	400	8
Աւիշար	40	990	10
Գաբամանլը . . .	—	400	9
Պէյլէմէտր	24	800	11
Գաբաթուխ . . .	—	790	11
Իրիճէք կամ Իճէնաէրէ	16	400	7
Թամպաք	—	360	11
Մալաթիա	—	280	9
Սոյսալի	—	320	10
Թանուր	—	240	5
Հաճի սէբէ . . .	320	160	4
Տօնկէլ	—	160	6
Զուգուր հխար (կանչի) .	—	400	12
Ֆիրնուս	2400	—	6
Մբխալ կամ Աւագ-կալ .	2800	—	3
Աւազաշ-Արեգին. . .	3200	40	5
Ֆէնկ կամ Խեպի . .	144	—	3
Աւազօղան-Աղզրէասեանք .	56	—	4
Տէօնիլլէր կամ Տօնիկնէք .	—	240	3
Մուրմաւար կամ Վալըճնէք.	280	—	2 1/2
Եղխալէր-Աւագնք . .	160	—	2
Ըկլէճնէք կամ Թէքեճ մահալէսի . . .	320	—	1/2
Գումարն...	27460	8344	

Էղաղպեան թաղը։ Զոր գետակ կոչուածը Սաղ-աւալը լերան աղբիւրներէն ձեւացած է, Պերզնկայ լերան սաորոտի ձորէն հոսելով, հիւսիսէն դէպի հարաւ կ'երթայ և յարեւմտեան խառնրիւով կը միանայ Շուղուրի հետ, Զէյթունի թերակղզւոյ մը ձեւ տալով։ Զոր գետակի վրայ ձգուած են երեք կամուրջ՝ Պաղ աղբիւրի կամուրջ, Ս. Պօղոս

Պետրոսի կամուրջ և կոստրածի ձորի կամուրջ։ Զահան գետը Զէյթունի հարաւային արեւելեան կողմէն կ'անցնի, 5 ժամ հեռուէն։ Ասոր՝ հարաւային արեւմտեան կողմը 2 ժամ հեռու. Տարախանցը ձոր՝ արեւմտեան կողմը 8 վայրկ. հեռու. Թեքիր՝ 8 ժամ հեռու. Սու-չարը 6 ժամ հեռու. Աճի ձոր՝ 3 ժամ հեռու։ Ասոնք՝ Շուղուրի և Ֆրնուզի գետակին հետ միասին դէպի հարաւ հոսելով կը թափին Զահան գետը։

Զէյթուն աւանը ունի իրար վրայ թաւեւթաձեւ բարձրացած 1500 տուն՝ ամբողջովին հայ, կայծն նաեւ 24 տուն թուրքեր, որոնք 1896ին գաղթեցին։ Հայոց մէջ կան 300 կամուղիկեայք և 400 բազմականեր։ Վ. Քինէ Զէյթունի գաւառակի մէջ կը դնէ 39 գիւղ և 24023 բնակիչ։ Մեր ունեցած Ազգային Պատրիարքարանի երեսնամեայ վիճակագրութենէն, ինչպէս կը տեսնուի, Զէյթուն նոյն ժամանակ ունէր 28 գիւղ և ամբողջ գաւառակի Հայոց թիւն էր 27460 և Մահմէտականաց 8344։ Իսկ Զէյթունցին՝ իր 1900ին հրատարակած գրքի մէջ, Զէյթունի հայ և թուրք գիւղերու թիւը կը դնէ 32 և բնակիչը 21500, որոնցմէ 18500ը հայ, իսկ մնացեալը թուրք։ — Զէյթունի աղբիւրներէն նշանաւոր է Պաղ-աղբիւրը (Պօղ-աղբըր), որ իր անուանը համեմատ խիստ պաղ է. ասոր շէնքը Գարա-Պօյուճի անուն Մարաշցի գաղթական մը շինել տուած է մարմարիոնէ, երեք բերնով, կամարակապ և շքեղ քանդակներով։ Փայրևից աղբիւրը կը գտնուի Ս. Աստուածածնի վանքի մօտ, ջուրը խիստ պաղ, առատ և մարսեցուցիչ է։ Նահատակ աղբիւր՝ կարսի կամուրջի և Զէյթունի մէջ տեղն է. ասոր մօտ ժամանակաւ սպանուեր է Քակոր անուն Մարաշցի կօշիկակար մը, և տակէ բղխուած է անունն։ Ակ աղբիւր՝ աւանէն կէս ժամ հեռու դէպի արեւմուտք, որ գրօսավայր է Զէյթունցւոց։ Սուս-աղբիւր (ասոսիի աղբիւր), արեւմտեան հիւսիսակողմը մէկ ժամ հեռու, ցուրտ և առատ է ջուրն։ Էտի-գարտաշ (եօթն եղբայր), նոյնանուն լերան ստորոտէն եօթն ակէ կը բղխէ։ Աչրան-փուճարը՝ 8 ժամ հեռու, Պէրիա լերան ստորոտէն կը բղխէ, որուն

ջուրը կաթի նման սպիտակ է ու փրփրուն։ Նշանաւոր է նաեւ խեաւ–ադրըր ։ Չէյթունն ընտանի և վայրենի կենդանիներէն ունի կով, եզ, այծ, ձի, ջորի, էշ. լերանց մէջ՝ գայլ, արջ, վարազ, կուզ, ազուէս, նապաստակ, վիթէ (եղջերու), էօշէկ (վարշակ), որուն մորթը մինչեւ 2–3 հարիւր դահեկանի կը վաճառուի։ Գետերուն մէջ կան պատուական կարմրախայտ, գեղին պորտ բի, ասպ, սիսեռ, լուբիա, ոլոռն, եգիպտացորեն, քիւշէ, շոգգամ, գետնախնձոր, բողկ, ճակնդեղ, գոռոզխատեր (ազատաքեղ), ոսեպդին, պատնջան, խաղող՝ որ մինչեւ 21 տեսակ կը համրուի, որոնց մէջ խիստ նշանաւոր է ընկուզի մեծութեամբ թագաւորի խաղող կոչուածը, զանազան տեսակ խընձորներ, սալոր՝ հաւկթի մեծութեամբ, թուզ, պատուական տանձ ու դեղձ, նուռ, սեր–



309. Քաղաքս պատասպատած է Չէյթունցիի հատանութեամբ։

և օձաձուկ, նաեւ շնջրուկ (ջրշուն)։ Թռչուններէն կայ ուռ կոչուած գեղեցիկ տեսակ կաքաւ մը՝ որ միայն Պէրիա լեռը կը գըտնուի. կան նաեւ հասարակ կաքաւ, տատրակ, աղաւնի, սագ, սոխակ, կկու, արծիւ, բազէ, հաւրաշ, բոպ, սարեակ, ագռաւ, մեղուաթռչուն, ճագռով, իրմ՝ որ խայտ թռչուն մ՚է, մածնապուր՝ որ սպիտակ մեծ թռչուն մ՚է, ճումբ, և այլն։ – Երկիրը թէեւ լեռնային և քարուտ է, սակայն իր փոքրիկ դաշտերու մէջ ի՚արտադրէ ցորեն, գարի, կեռաս, թուխ, ընկոյզ, ադտոր (սուման), սամսրդ, ունկումրդ, ալոճ, ախորժահամ ձիթապտուղ, նուշ, պիստակ, մոլեկն, շինկիրօր կամ աճուռ, վարսնկ, ձմերուկ. ունի նաեւ բնաին ու պատուական մեղր, որ շատ անգամ իրեւ նուէր կը դրկուի հեռաւոր տեղեր։ Վայրի ծառերէն յիշենք՝ խնկենի, լուսուն դրունկ, ճապկի, բաղիկնոց, մայրի, փիճի, գէ (գիհի), բևեռկնի, կաղնի, թեղի, թըռնիկ, ասօսկ, մամուզը, բարսի, ուռենի, սօսի, թմբի, մազաղքի,

ցրպի, փշաւի, և այլն։ Նշանաւոր է Չէյթունն նաեւ բազմաւեսակ ծաղիկներով, Հաւաքնեխա գիմանացին 1865ին, միայն Պէրխա լերան վրայ 200 տեսակէ աւելի գանազան տեսակ բոյսեր և քաղցրաբոյր ծաղիկներ գտաւ։ Նոյն լերան վրայ կը գտնուի նաեւ կէյիկ կեօղկի (մուշկ) կոչուած տեսակ ծաղիկը՝ որ չորնալէն քանի տարի վերջն ալ իր հոտը կը պահէ։ — Բերքերուն մէջ ամենէն առատ խաղողն է, որմէ կը պատրաստուին գինի, չամիչ, պաստեղ, ռուփ, շարոց, օղի, և այլն։ Միւս բերքերը նուազ լինելուն պատճառաւ, անհրաժեշտ կարեւոր ցորենն ու գարին կը բերուին Ադըլջիճէնէն, Էարփուզէն և Կոկիսոնէն։ Հանքերէ ունի միայն ամենաբնաւոր տեսակէն երկաթ. կը հանուին Պէրխա լեռնէն նահապետական ձեւով և կը շինուին հրացան, տարճանակ, սուր և այլ գանազան գործիքներ։ Կը պատրաստուին նաեւ բնաւոր վառօդ։ Չէյթունէն կ'արտահանուին միայն չամիչ, մեղր, ռուփ, մորթ, երկաթ և տախտակ։ — Գլխաւոր արհեստներն են՝ այգեգործութիւնն, խաղտխորդութիւնն, վառօդաշինութիւնն, կօշկակարութիւնն, համեստագործութիւնն, տապաձագործութիւնն, գարբնութիւնն, սրճեաշինութիւնն, մետաքսագործութիւնն, չորեսպանութիւնն։

Չէյթունի նախկին բնակչաց համար ազանգութեամբ կ'ըսուի, թէ ի սկզբան, բաց ի բնիկ Հայերէ, եօթը տուն Եզեսխայէն գաղթած Հայեր ունի եղեր. ասոնք կառուցեր են Ս. Լուսաւորչի մատուռ մը, որուն վրայ վերջը կառուցուեցաւ արդի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին։ Այս փոքր հատուածին վրայ կ'աւելնան մեծաւ մասամբ Ուշնեցիներ և նոյնպէս Անիէն գաղթող Շէհիրթօղցիներ, որոնց նախկին բնակավայրը Շէհիրթօղը այժմ ամայի է։ Ուշնեցի գաղթականներու պատճառաւ Ուշնիա եւս կը կոչուի Չէյթուն, մինչդեռ Ուշնիա կը գտնուի Ֆրնուզի կողմը, Հին–գիւղ կ'ըսուի և 6 ժամ Չէյթունէն հեռու է։ Բագրատունիներու անկումէն յետոյ (1045), Անիի գաղթականներէն մաս մ'ալ կու գան Չէյթուն. այսպէս ասոնին Հայոց աներու թիւն 700 կը հասնի, և իրենց մէջ բնակած Բոյները վաղուով գուա հայաբնակ կը լինի Չէյթուն։ — Հին գրոց մէջ սովորաբար Զէյթուն գրուած է ասոնց անունը, իսկ այժմ ասոր հասարակ Չէյրուն կը գրեն, որուն ծագման մասին, Ս. Աստղոյ եկեղեցւոյ մէջ գտնուած Գանձ անուամբ ձեռագիր պատմութեան մէջ, որ գրուած է 1624 թուին, հետեւեալ բացատրութիւնը կը տրուի։ Երբ գաղթականներու յաջորդաբար բազմանալովը Չէյթունի բնակչաց թիւը աճեցաւ, գաւառս–կառավարչի մը պէտքը զգալի եղաւ. ուստի արժանաւոր մարդ մը ընտրելու համար ժողովով միաձայն հաւանութեամբ իրենց պետ նշանակեցին Մեր անուն բարեբասական հսկայ մը՝ Չէյթունի առաջին հայ բնակիչ եօթը տան սերունդներէն։ Ան արդարութեամբ ու անաչառութեամբ կառավարելով ժողովուրդը, մեծ համբաւ հանից, այնպէս որ շրջակայ գիւղօրէից բնակիչներն ալ, նոյն իսկ օտարազգիք, փոխանակ Մարաշի պէյին դիմելու՝ ասոր կու գային, իրարու լսելով, թէ Աբրին գնացէք. այս յարջորջումը այնչափ կրկնուած է, որ յետոյ տեղւոյն անունն ալ Աբրին՝ և ապա Չէրին կամ Չէյրինի փոխուած է 1545ին։ Վերոյիշեալ բացատրութիւնէն տարբեր՝ ուրիշ կարծիք մ'ալ կայ, որ աւելի արդ և բնական կը թուի. Չէյթունցիք իրենց անկած այրիներու հետ մեծ քանակութեամբ ձիթենիներ ալ անկած էին և տակէ Չէյրուն կոչուած է երկիրն։ 1780 թուականին Լօմէր փաշան բոլոր այս ձիթենիները կարել տուաւ իր զօրքերուն, որոնց հետքերը դեռ եւս կը տեսնուին։ — Այսպէս Չէյթուն անունն գրքերու մէջ եւս ծանօթ է ԺԶ դարու մէջէն սկսեալ։ Նոյն դարուն վերջերը կը տեսնուի Չէյթունի եպիսկոպոսի մը տասրագրութիւնը Գրիգոր ԺԶ քահանայապետի ուղղած վիճակական թղթի մը մէջ (1586ին)։ Տասը տարի վերջն ալ, Յակոբ եպիսկոպոսի համար գրուած ձեռնադրութեան գրքի մը յիշատակարանի մէջ. «Ի Չէյրունոյ վանքն ի Ս. Աստուածածնէն գուան, յաստիճանութեան Տէր Գրիգոր արհիեպիսկոպոսին»։ ԺԶ դարու վերջերը և ԺԷ–ի սկիզբը շատ անգամ կը յիշուի վանաւ անուն Չէյթունցի երէցն քահանայապետ, որուն շատեր աշակերտած էին, ինչպէս Յակոբիկ պոլիր՝ որ էր «ի գիւղա-

քաղաքէն Չեմուշայ», որ Սերաստիա երթալով, օտարութեան մէջ տրամութեամբ կ'ընդօրինակէր գրքեր, երախտագիտութեամբ յիշելով իր ուսուցիչները. նոյնը 1608ին կը գրէր. «Դարիպ էի և սրտիկս արբուամ... ոչ ոք ի մարդկանէ ի վրայս խնամք չառաւ, հանապազ լայի և տարակուսեալ էի. բայց հէմշէհրին իմ Չեմուշկոյ մկտեսի Աստուածէն՝ որ էր վաճառական, նա տանէր գիս իւր օտայն և միխիթարէր...»: Վերադիշեալ Վահան նահապետ Մովսէս վարդապետի հետ ուխտի կ'երթայ Երուսաղէմ, Հռոմկլայ և Չէյթուն. այս մասին կը գրէ Մովսէս վարդապետը. «Ելոյ (ի Չեմուշ) գուխաս մեր կաստաբեւ ցաքլ, թէ ի Ս. Փրկիչն, թէ ի Ս. Աստուածածնայ վանքն, և թէ յԱկնաիկա առաքելոյն սուրբ աչն, որ ի Չէյթունոյ վանքն կայ, և ուսուցչին մերոյ գերեզմանն (Պահփանոս եպիսկոպոսի), և անդէն գտեղի կալաք աւուրս հարիւր և քսան, յահէ թոռնատուն

մը ունի, բաժնուած է չորս գլխաւոր թա-
ղերու. ա. Շօվրօնան թաղ (Պօղ–պայիր), ա-
բեւելեան կողմը, որուն հարաւն և արեւելքն
քերելով կ'անցնի Ջոր գետակը. բ. Էպաղա-
պետան թաղ (Թարկըլար), հարաւային կող-
մը. նոյն գետը ասոր ալ հարաւէն կ'անցնի.
գ. Էնի–ախպեան կամ վերին թաղ, հիւսի-
սային կողմը՝ Քերծէրի սառոյցը, որուն
արեւմտեան կողմէն կը հոսի Շուղուր գետը
և արեւելքէն Ջոր գետակը. դ. Սուրէնեան
կամ Միյին թաղ՝ որ Էպաղապետան, Շօվրօնան
և Էնի–ախպեան թաղերու մէջտեղ կ'իյնայ
և արեւմտեան կողմէն կը հոսի Շուղուր
գետը: Ա.յս թաղերէն իւրաքանչիւրը իր
անունն առացեր է իր վրայ իշխող հայ ցե-
դերու մեհանուններէն, որոնք նշանաւոր հան-
գիսացած են իրենց խելքով, քաջութեամբ
և հայրենասիրութեամբ: Ա.յս չորս թաղե-
րու իշխանութիւններէն ամենէն հինն Սու-
րէնեան թաղինն է, որ 1545 թուին սկսած
է վերոյիշեալ Սեթէն և իր անունն առած
է ասոր եղբայր Սուրեն իշխանի անունէն:
Ջէյթունի մէջտեղերուն սէրն ըլլալով առանձ
մինչեւ ցարդ այնտեղ կը բնակին, 30 առա-
նձ կը բազկանան և եօթն ճիւղ ունին. Սու-
րենեան, Սերեան (Սիրենք), Բասխրանեան,
Կէյիկեան, Մահանէ Վարդիվարեան, Ախ-
պաշեան և Թումիկեան: Եղուպեանց հիմնա-
դիրն է Քաղոբ անունով անձ մը, որ 1780ին
Ջէյթունի վրայ արշաւող Լօմէր փաշան
սպաննելց զարմանալի ճարպարութեամբ մը
ու տարօրինակ միջոցաւ: Էնի–ախպեան թա-
ղի իշխանութիւնն նախ Աբարեան ցեղին կը
պատկանէր, բայց յետոյ Էնի–ախպեան Հա-
ճի Ղազար աղայի հօր յանձնուեցաւ, քա-
զաքապետի կրօնական և աշխարհական ի-
րենիքներու հաճութեամբը. սա կապանի
մէջ սիրապետող նշանաւոր թուրք հարըս-
տահարիչ մը սպաններ է 1790ին՝ ատա-
սիրով հայ հարս մը և ինքը եկեր է Ադա-
նայէն. սպանութիւնը յաղագնելէ վերջ բսեր
է. «Էնի ախպեայա կէլմիք = Նոր աշխարհ
եկանք», և այս խօսքէն առեր է իր մեհա-
նունն: Շօվրօնան թաղի իշխանութիւնն կը
սկսի 1800ին հաճի Սահակ աղա Շօվրօնա-
նէն, որ քաջութեամբն նշանաւոր եղած է
Ղալէնտէր փաշայի դէմ մղուած պատերազ-
մի մէջ և գրեթէ ամէս սը չուվրո (չօրպա,
ապուր) կերցուցած է ապրքաս ժողովրդեան,
և առիէ ծագումն առած է Շօվրօնան մեհա-
նունը: Ա.յս չորս իշխանները 1865էն
առաջ իւրաքանչիւրը իր թաղին վրայ իշ-
խելէ զատ կը տիրէին նաեւ քանի մը գիւ-
ղերու. Սուրէնեանք՝ Ղօզլուղաղի, Հաճի
տէրէի, Թանըրի և Տէօկէլի. Եղաւպեանք՝
Աւազ–կալի, Թէրէզէճի, Ղասրի և Գափու
գայայի. Էնի–ախպեան ցեղն՝ Աբեկնի, Եկ-
լէնճէնքի, Քէթիմէնի և Ասրը կիւղլի. Շօվ-
րօնանք՝ Ֆէնկի և Տէօնիւքլէրի: 1865 թուին



311 · Իշխան Նազարէթ Սուրէնեան:

եղբ թուրք կառավարութիւնը մուտ գտաւ
Ջէյթունի մէջ, թէեւ այս ժառանգական իշ-
խանութիւնները վերցան, սակայն միշտ մին-
չեւ ցարդ, ժողովուրդը յարգանքով կը վա-
րուի իշխանական ցեղերու հետ, մանաւանդ
պատերազմներու ժամանակ: Ա.յս չորս իշ-
խանական ցեղերու սերունդներէն մնացած
են այժմ, Եղաւպեան Մկրտիչ աղայի թո-
ռը Լիւսն էֆէնտի, Շօվրօնան Հազօր (Ղա-
զար) աղայի հղրօրորդին Կարապետ էֆէնտի,
Սուրէնեան Նազարէթ աղայի զաւակն Կա-
րապետ էֆէնտի և Էնի–Տիւնեայեան Ա-

առաջաւորը ազգի զաւակն Յակոբ էֆէնեան։

Եօթնեւտասներորդ դարու առաջին կիսուն կը յիշուին Չէյթունի մէջ հետեւեալ եկեղեցիները, Ս. Աստղիկ, Ս. Հրեշտակապետ, Ս. Յակոբ Մծբնայ, Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Պարսամ և Թէոդորոս։ Աստիճէ գան շինուած էին յետոյ նաեւ Ս. Պօղոս Պետրոս և Ս. Յովհաննէս՝ որուն մէջ կը պահուէր համբաւաւոր վարսի Աւետարանը՝ որ 1884ի հրդեհին ուրիշ կարեւոր և անգին ձե-



312. Խրիմեան Մկրտիչ Եպարքոսեան։

ռագիրներու հետ այրեցաւ։ Վերոյիշեալ եկեղեցիներէ հին յիշատակարան չունին, միայն Ս. Յակոբ եկեղեցին, որ 1847ին շինուած էր՝ արեւմտեան որմի վրայ փոքր քարի մը վրայ փորագրուած հետեւեալ հին յիշատակարանն ունէր. «Շինեցաւ ատաձարս ի թուին Հայոց ՉՂԴ, ի հրամանէ (հայրապետուրեան) Տճ. Սիմէոն կրին (կաթողիկոսին), ի թեմակալութենէ Տաճկաց Սուլիման խոնդքարին. զոր ի շարժէ կործանեալ էր, նոր նորոգեց ձեռամբ մեղաւոր Գաբրիէլի»։ Այժմ Չէյթունի մէջ կան նորաշէն չորս եկեղեցիներ. ա. Ս. Աստուածածին՝ Սուրբէնեան թաղի մէջ, բ. Ս. Սարգիս՝ Եղուպեան թաղի մէջ, գ. Ս. Յովհաննէս՝ Շօլրօեան թաղի մէջ և Ս. Լուսաւորիչ՝ Էնի–ախէնեա թաղի մէջ։ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ կը պահուի, գրեթէ եօթը դար յառաջ Հռոմկլայի մէջ գրուած, մագաղաթեայ և շատ գեղեցիկ պատկերազարդ Աւետարան սբ. կը բաղկանայ 776 էջերէ, որոնց ուժը՝ յիշատակարան են. աքանչելի կերպով նկարուած են չորս Աւետարանչաց պատկերները։ Կաթուղիկէ Հայք՝ որոնք 1866–67ին, քաղաքական ազնուական մը հետեւանքով առանձին հաստարակութիւն կազմած են; ունին եկեղեցի մը և դպրոց։ Բողոքականութիւնը մտած է 1870 թուին Գերմանիկի ամերիկեան միսիոնարներու ձեռքով. ունին ժողովարան և վարժարան Միջին թաղի մէջ. 1881ին վերի թաղի մէջ ալ հաստատեցին կեդրոն մը և սկսան մանուկներ հաւաքել պատուիրատուութեան պատրուակաւ և փողոցներու ու կրպակներու մէջ քարոզել։ Քաղաքաւանի կեդրոնը Միջին թաղը կը դանուի մեծ շուկայն, ուր կան բաւական թուով կրպակներ. միւս թաղերու մէջ ևս կան քանի մը խանութներ։ 1879ին շինուեցաւ պարսպապատ մեծ զօրանոց մը Չէյթունի արեւելեան կողմը բլրի մը վրայ, ուր կան թուրք զօրականք և թնդանօթներ հակոզութեան համար։ — Չէյթուն երկու մեծ հրդեհներ ունեցեր է. մին՝ 1884 ապրիլ սեպտեմբեր 8ին շաբաթ երեկոյ մը պատահելով՝ ամբողջ շուկայն, 600 տուն, Ս. Յովհաննէս եկեղեցին, դպրոց մը և Բողոքականաց վարժարան սը հրոյ ճարակ եղան և ժողովուրդը անպատասպար, թշուառ և օգնութեան կարօտ մնաց։ Ս. Լուսաւորչի թաղի մէջ անզգայուց ծախքով նոր կառուցուած և կ. Պոլսի Միացեալ Ընկերութեան երկսեռ վարժարանաց յատկացուած շէնքն ալ այրեցաւ բոլոր գրքերովն ու գոյքերով։ Այլ և այլ կողմերէ ղրկուած նպաստներու շնորհիւ, բոլոր նկարահանները և փողոցները քիչ մը կանոնաւորուեցան և հոզաշէն տները մեծ մասամբ փայտաշէն եղան։ Երկրորդ մեծ հրդեհն պատահեցաւ 1887ի յուլիս 26ին և գրեթէ ամբողջապէս քաղաքաւանս աւերեց,

մոխիր պահչինելով 736 տուներ, բազմաթիւ կրպակներ, 5 եկեղեցի, 2 մատուռ, 6 ընբաղարք, 4 վարժարան և ուրիշ հասարակութիւններ. անդուր չքաւորութեան մատնուեցաւ ժողովուրդը (3000էն աւելի), որ կը տառապէր արդէն երեք տարի առաջ պատահած նոյնօրինակ աղետի մը ազիմանց պատճառաւ: Կառավարութիւնը նպաստեց թշուառներու և Պատրիարքարանն յանձնաժողով մը կարգեց՝ հրկիզուած եկեղեցիներու և վարժարաններու ի նպաստ հանգանակութիւն ընելու պաշտօնով: Հրդեհը գիշեր առին ծագելով թուրքի մը տունէն՝ ժողովուրդը չկրցաւ փրկել նաև զոյքը ու կարասիքը: Նոյն գիշերը քաջարի հայ երիտասարդ մը օրօրոցի մանկիկ մը փրկելու համար բոցերուն զոհ գնաց. հետևեալ օրը չորս երիտասարդներ փլատակներու ներքեւ մնացին: Այս հրդեհէն քանի մը օր վերջը, Մրտբը Մարտին անուն ամերիկացի քարոզիչն Չէյթուն գալով՝ 50 ոսկի ծախք բրաւ քսան խղճիկ բնակարան ւր շինել տուաւ: Պատրիարքարանի յանձնաժողովը յայողեցաւ լաւ կերպով կատարել իրեն յանձնուած պաշտօնը: Թուրքիոյ մէջ զանազան տեղեր, Մանչեսթըրի, Փարիզու և այլ քաղաքներու մէջ բնակող Հայք, ինչպէս նաեւ Ռուսահայք՝ Տ. Տ. Մակար կաթողիկոսի յորդորական կոնդակի համեմատ, առատօրէն մասնակցեցան հանգանակութեան, և քիչ ժամանակի մէջ վերաշինուեցան Ս. Լուսաւորիչ, Ս. Յովհաննէս, Ս. Սարգիս և Ս. Աստուածածին եկեղեցիները, մեծ վարժարան մը՝ քաղաքաւանին կեդրոնը հիմնայատակ եղած Ս. Յակորայ եկեղեցւոյն գեղեցիկ վրայ՝ բարձր ու հոյակապ, որուն նմանը մատակայ քաղաքներու մէջ չի գըտնուիր. երկու ծաղկոց՝ արտաքին ու ներքին՝ Ս. Սարգսի թաղը և երկու ծաղկոց Ս. Լուսաւորչի թաղը, վարժարան մը՝ Ս. Աստուածածնի թաղը, երկու աղբիւր, երկու լուացատեղի, և այլն: Այս յանձնաժողովը գործեց և գրամ ալ բաշխեց կարօտեալներուն: Չէյթունի իւրաքանչիւր թաղի մէջ այժմ կան չորս եկեղեցիներու անուամբ մէկ մէկ մանչերու վարժարան. կայ նաեւ աղջկանց վարժարան մը և կեդր. նախակրթարան մը. աշակերտներու ամրողջական թիւն է 340, իսկ աշակերտուհիք 120 են: Քաղաքաւանիս մէջ Հայ Բողոքականք բացած են որբանոց մը, ուր կը խնամուին 30 հայ որբեր:

Չէյթունցիք՝ թէև քաջ ու կորովի կռիւներու մէջ, սակայն ընդհանրապէս բնաւորութեամբ ծոյլ են. գարնան և ամրան այգեգործութեամբ կ'զբաղին, իսկ ձմեռը առօրեայ վաճառականութեամբ բերելէ վերջ՝ մէկ մէկու տուն հաւաքուելով ժամավաճառ կը լինին: Ժողովրդեան գրեթէ կէսը անգրագէտ է և ապիտութեան մէջ: Կը պատմուի թէ յանցեալ կէս դրի կորնեկէ ծագած կռիւ մը, թաղային պատերազմի փոխուելով՝ երկու կողմանէ հարիւրաւոր մարդիկ մեռած են. թաղային պատերազմներ ի հնումն աւելի յաճախ տեղի կ'ունենային, այժմ ժամանակաց բերմամբ աստիճանաբար նուազած են: Վերին աստիճանի նախանձախնդիր են ազգային եկեղեցական կանոններու և սովորութիւններու պահպանութեան: Չէյթունի մէջ եղած են ժամանակաւ և այժմ ալ կան մի քանի կրթասիրական ընկերութիւններ: — Չէյթուն՝ երկու վանք ունի, Ս. Աստուածածին և Ս. Փրկիչ. առաջինը արեւելեան կողմն է մէկ ժամ հեռաւորութեամբ, ներկայիս լերան կողին վրայ, ուր կը պահուի Անանիա առաքելոյն Ս. Ձէռ. ունի 15էն աւելի սեմնակ, խոհանոց և պատուհանի չուր: Երկրորդը՝ կը գտնուի $2\frac{1}{2}$ ժամ հեռու դէպի արեւելեան հարաւ, բարձրադիր և օդաւէտ: Այս վանքը շինուած է, ըստ դրութեան Չէյթունցւոյն, Ս. Բարդողիմէոս առաքելոյն ազօթած տեղը, ուր նախ մատուռ մը կանգնած են բարեպաշտ քրիստոնեայք և յետոյ 1829ին Տ. Յովհաննէս եպիսկոպոս Ակնեցւոյն առաջնորդը և Չէյթունցի Տ. Յակորոս եպիսկոպոս, տեղւոյն ժողովրդեան աջակցութեամբ՝ հին մատրան տեղ, Էջմիածնի ճարտարապետներու ձեռքով, գմբէթաւոր շքեղ եկեղեցի մը կառուցին, գեղեցիկ նկարներով ու պատկերներով. 1895 տարւոյ գեկտ. 2ի Թրքական կուսոյն ժամանակ գմբէթը քանդուեցաւ: Այ ունի զով պատուական չուր, գեղեցիկ ու հիանալի տեսարան: Ս. Աստուածածնի վանքի մէջ կը նայի Վանահայր—Առաջնորդն և

քանի մը վարպապետներ. կայ նաեւ որբանոց մը 83 սաներով, և այցելութ անպակաս են. իսկ Ս. Փրկչի վանքը աւելի ամայութեան մէջ է։ Ս.յս երկու վանքերը ունին շատ անպատատներ, այգի, դաստր և բաւական բնական գարաձ անասուն. տարեկ տարի Աստուածածնի ուխտին Գերմանիկէ եկող ուխտաւորները բաւական գրամական հասոյթ կը մատակարարեն։ Ուխտաւորները՝ վերապարձին ի՛այցելեն նաեւ Ս. Փրկչի վանաց, իսկ Զէյթունէ գացողները անպակաս են։ Հայք ունին հինգ գերեզմանատուն, երեքը քաղաքաւանի մէջ, և երկուքը վանքերու շուրջը։ Ս. Փրկչի վանաց առաքելական հաստատութեան ըլլալուն ապացոյց՝ ժողովրդական հին երգ մը կայ։ Զէյթունցիք իրենց նուիրական արարողութիւններ՝ յարգանք կը տածեն նաեւ հեռուեալ բարերուն. Աչրնա—քարտօղ՝ մեծ քար մ՚է արեւելեան կողմ՝ 5 վայրկեան հեռու, որուն գագաթը ի հեռուց անկուած է երկաթէ օձեալ խաչ մը։ Սուրբ—քար (կլոր քար), արեւմտեան կողմը, նոյն հեռաւորութեամբ. վրան երկաթէ մեծ խաչ մը կայ։ Թօզլնց—քար՝ հարաւային արեւելակողմը։ Տափօք—քար (տափակ քար), հարաւային կողմը։ Պուչախչիլց—մօտ՝ արեւելակողմը և Դուզ (մարակոց), հարաւային արեւմտակողմը։ Ս.յս նուիրագործեալ քարերը, Զէյթունի իրեւ անառնալի պատնէշներ նկատուած են, և յիրաւի այնքան բազմաթիւ կռիւներու և պատերազմներու մէջ, գէթ անգամ մը թշնամւոյն ոտքը այս սահմաններէն ներս անցնելու յանդգնած չէ։

Զէյթունի բնական ամուր դիրքը, ինքնապաշտպանութեան մեծ դիւրութիւն տալով, կարծես միշտ ապստամբութեան հոգի ներշնչեր է անոր բնակիչներուն։ Ժամանակի երկար շրջանի մէջ ոչ միայն դիւցազներ, այլ և դիւցազնուհիներ ունեցած է Զէյթուն, որոնցմէ ծանօթագոյն և հնագոյնն է Զարմանուհին՝ Ռաբինանց Հեթում սպարապետի քոյարի սիրելին, որ ամուսնի հետ միասին կը պատերազմի Եգիպտացիներու դէմ և մինչեւ իսկ կը ձերբակալէ Սուլթանի որդին։ Ձեռագ, հայ Գրիգոր անուն վարդապետ մը ի՛սպանէ իր սիրելի ամուսինը և ի՛արձակէ Սուլթանի որդին։ Զարմանուհին՝ Ռաբինանց անկուժէն վերջ փախած կսկիծանի և Իշխոյ լեռները, և այն ամրերը հինգ տարի թափառելէ վերջ, իր Գէորգ որդւոյն հետ քալ լեռնականներէն 300 հոգի հետն առած, յարձակեցաւ այլազգիներու վրայ և կապանայ տիրից 65 տարի։ Ասոր գերեզմանը մը կողմը ըլլալը թէեւ յայտնի չէ, բայց տեղացիք աւանդութեամբ կ՚ըսեն, թէ նա Զէյթունի տէրն է եղեր։ Ս.յս արիասիրտ և քալ գիւցազնուհիի յիշատակին՝ շատերը Զարմանի կը կոչեն իրենց աղջկանց անունը և այս անուամբ խիստ շատ կիներ կան Զէյթունի մէջ։ Զարմանուհիի որդւոյն Գէորգայ սերունդէն էր Հեթում անուամբ ուսեալ քահանան, որ կը պաշտօնավարէր Մինչ թաղի Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ, և որուն համար աւանդութեամբ կ՚ըսուի, թէ Կ. Պոլիս երթալով՝ յաջողած է ձեռք բերել Սուլթան Մուրատ Դ-ի նշանաւոր հրովարտակը, որ այրեցաւ 1884ի հրդեհին ուրիշ անգին հնութիւններու հետ։ Ս.յս հրովարտակով որ տրուած է 1618ին, Զէյթունը ազատ կը մնար գրեթէ հարկի տուրքէ և միայն տարեկան 15000 դահեկան տուրք մը կու տար Կ. Պոլսի Ս.յս Սոֆիա մզկիթին՝ իրեւ ձէթի գին, նոյնպէս ալ իրենց եկեղեցիներուն։ Բառարանիս ծաւալն չի ներէր մանրամասն ատ յիշել քաղաքաւանիս հին ու նոր պատմական անցքերն ու պատերազմները, ուստի մենք համոզուած ակնարկ մը միայն կու տանք։ Զէյթունցիք իրենց ազատ դիրքովը և արտօնութիւններով, միշտակայ Թուրք ժողովրդեան դահանձը իրենց վրայ շարժած էին, այս պատճառաւ 1780ին Մարաշի կառավարիչ Լօմէր փաշան բաւական զօրքով եկաւ քաղաքաւանի վրայ և 7 ամիս պաշարեց, բայց արիասիրտ Ձակոր անուն կարիճ ճարտարութեամբ Լօմէր սպանուցաւ և Հայք յաղթեցին Թուրքաց։ Լօմէրի յաջորդն Ալի փաշայ ուզելով իր նախորդին կորուստն վրէժխնդիր լինել, 1782ին բազմաթիւ զօրքերով եկաւ կիւրեան՝ որուն կիրճը իսկոյն Հայք բռնեցին և թշնամին յաղթուեցաւ. այս պատերազմի մէջ նշանաւոր եղած է Ձիկիր հայ իշխանը։ Լօմէր և Ալի փաշաներու պարտութենէ վերջ, Զէյթուն շատ

տարիներ հանդիսա ունայ մինչև 1808 թուա-
կանը, երբ Մարաշի Գալէնտէր փաշան մեծ
բանակով գալով ինն ամիս քաղաքաւանը
պաշարեց և ժողովուրդը քանի մը անգնա-
պատերազմներէ վերջ խոստացաւ տարեկան
60 քսակ կամ 30000 դահեկան տուրք
վճարել թուրք կառավարութեան. սակայն
այս խոստումը չկատարեցին և ընդհանրա-
պէս Սուլթան Մուրատի հրովարտակի հա-
մեմատ 15000 դահեկան կը վճարէին։
1819 թուին Եօզղատի բնակիչ Ջաֆան-
օղլուն Հալէպը նուաճելէն վերջ երբ Մարա-
շէն կ'անցնէր, տեղացի Թուրքերու ազա-
չանքով ուզեց Ջէյթունն ալ նուաճել, սա-
կայն զօրաց կորուստ տալով յետսակատար
դարձաւ Եօզղատ։ 1829ին կեսարիոյ կա-
ռավարիչ Քէօսէ փաշան բազմաթիւ հեծեալ-
ներով եկաւ Ջէյթունէն 12 ժամ հեռու մին-
չեւ Կոկիսան. ուր հասնելով նաեւ Ջէյթուն-
ցւոց փոքրաթիւ զունդը և այն ինչ պատե-
րազմը սկսեր էր տաքնալ, Եազուպեան Հա-
ճի Ասատուռատուր ազան մէկ գնդակով գե-
տին փռեց Թշնամւոյն զրօշակակիրը և կո-
րսակոր փախաւ Թշնամին։ 1830 թուին Ջէյ-
թունի Սուրէնեան թաղի մէջ կային 14
տուն տաճիկ, չորս իշխանները վճռեցին այդ
այլազգիները հեռացնել Ջէյթունէ, բայց ա-
սոնք գիշերանց Սուրէնեան թաղը թողլով
անցան Եազուպեանց թաղ և անոնց իշխա-
նին շատ թախանձելով անոր հովանւոյն
տակ մնան։ Ասով երկպառակութիւնք և
վէճք ծագեցան Սուրէնեան և Եազուպեան
իշխաններու մէջ։ Վէճերը ազնատալի պատե-
րազմի փոխուեցան. Եազուպեանի միացաւ
Շօվրօեան և Սուրէնեանի Էնի–սևնեա իշ-
խանը և այսպէս ամբողջ Ջէյթունը երկու
հակառակ կուսակցութեան բաժնուեցաւ։ Այս
կորստաբեր պատերազմը 7 ամիս տևեց,
300 պատերազմիկ կարիճներ զոհ ունեցաւ,
և հուսկ ուրեմն քանի մը պայմաններով
հաշտուեցան երկու հակառակորդ կուսակ-
ցութիւնները։ Այս միակ դէպքն է, որ Ջէյ-
թունի իշխաններու տարեգրութեանց մէջ
սեւ բիծ մը կը թողու։ Այս ցաւալի պա-
տահարներէն ինն ամիս վերջը Սուրէնեանք
յարձակելով Թանուր Թրքարնակ գիւղի վրայ
Հաճի–Խալահմէ–ուշաղիներէն և Գաւռնագ-
ներէն սպաննեցին 16 մարդ։ Ասոր վրայ
Մարաշի Սուլէյման փաշան ահագին բա-
նակ մը կազմելով 1832ին եկաւ բանակ
դրաւ Ջերմուկի դաշտը։ Ջէյթունի իշխաննե-
րը ամէն անձնական կիրքեր մէկդի թող-
լով իրարու հետ միացան և գիշեր մը յար-
ձակելով Թշնամւոյն վրայ չորս կէտերէ լաւ
ջարդ մը տուին։ Այս պատերազմին ինկան
309 թուրք, իսկ Հայերէն միայն 5 հոգի։
Սուլէյման փաշայի յաջորդն Թօսուն փա-
շայ՝ 1835ին, խարդախութեամբ Սուրէնեան
Մարտիրոս իշխանը Մարաշ հրաւիրելով
բանտարկեց, պահանջելով որ Ջէյթունցիք
7 տարի չվճարուած տուրքը ամբողջ վճա-
րեն. բայց Հայք Սուրէնեանի նամակէն ի-
մանալով որ Մարաշի թուրք երեւելիները
Գազմա ըսուած տեղը զօսանքի պիտի ել-
թան, յարմար պահուն յարձակեցան ա-
նոնց վրայ և ինն թուրք մեծամեծներ դերի
բռնեցին և շղթայակապ բերդի մէջ բանա-
արկեցին։ Թէեւ Թօսուն փաշայ սոխակու-
ցաւ այս թուրքերն ազատելու համար Սու-
րէնեան իշխանը պատասխ Ջէյթուն գարձ-
նելու։ Ջէյթունի եկեղեցականներու մէջ եւս
եղած են անձնանուէր հայրենասէրներ, ո-
րոնցմէ հռչակուած է իր բազմաթիւ քա-
ջագործութիւններով Տ. Օհան կամ Տէլի
Քէշիշ դիւցազնը։ Ասոր օրով Եպիսկոպոսի
Մէհէմմէտ Ալիի աշխարհակալ սրտին խա-
բահիմ փաշա՝ փոքր Ասիոյ գանազան մա-
սանց տիրած միջոց, չյաջողեցաւ Ջէյթունը
նուաճել. սա ի սկզբան սիրով գնաց հայ
լեռնականաց հետ և Տէլի Քէշիշի մէջքը բռն-
կալին սուր մը կապից ըսելով. «Սուլթան
Մահմուտ քեզի խաչ տուեր է, ես ալ սուր կու
տամ որ ըստ հարկին գործածես երբեմն մին,
երբեմն միսը»։ Յետոյ փաշան Մահմուտ-
կանները դրկեալ որոշեց արշաւել Ջէյթունի
վրայ. սակայն Տէլի Քէշիշ իր կարիճներով
դիւցազնական և արիւնահեղ պատերազմ մը
դիմադրելով, հարկադրեցաւ փաշան ա-
մեթաղիլ ետ քաշուիլ։ Մինչև 1859 թուա-
կանը Ջէյթունցիք ունեցան այլ և այլ կռիւ-
ներ ու յաղթանակներ և դիմաւորաբար Թեր-
ճիլի Թիւրքմէնները հարկադրեցին Ջէյթունէ
50 ժամ հեռու Զուքուր–օվա ըսուած տեղը
փոխադրուելու։ 1860 թուականի յունիս

8ին Մարաշի կառավարիչ Խուրշիտ փաշան իբրեն նահատրներու օրինակներէն չխրատուած՝ կանոնաւոր զօրքերով դիմաց Զէյթունի վրայ և Թուրքիոյ ուրիշ գաւառաց համեմատ աւելի պահանջից։ Զէյթունցիք իրենց որոշուած տուրքէն աւելի բան մը չուզեցին ճանչնալ, և միաբան յարձակելով թշնամւոյն վրայ, խայտառակաբար ետ դարձուցին։ 1862ին թուրք կառավարութիւնն ուզից վերջ տալ լեռնաքաղաքին շարժումներուն, որոնցմով իր պատիւն կ'արատաւորէր և մեծամեծ զրամական և զինուորական կորուստներ կ'ունենար, ուստի և որոշից բռնադատիլ Զէյթունը։ Այս արշաւանաց պլուխն էր Աղիզ փաշայ, որ բստ ոմանց 35000 և բստ այլոց մինչև 87000 կանոնաւոր և անկանոն զօրքերով եկաւ Զէյթունի վրայ. սակայն հայ կարիճները 5000 հոգւով այս անգամ ևս առանց երկիւղի քաջութեամբ յաղթեցին, և թշնամին ամենապարտ ետ դարձաւ թողլով երկու թնդանօթ, զէնքեր և պաշար։ Հազիւ թէ Սուլթանը խնացաւ իր գունդերուն պարտութիւնը, որոշից զեռ աւելի բազմութիւն զրկել, և անոնց պատմածին համեմատ մինչև 100000 հոգի։ Այնուհետև Պոլսէն փարիզ Նափոլէոն Գ. կայսեր զրկուեցաւ Զէյթունցի պատգամաւոր մը՝ միջամտութիւնը հայցելով. նոյն առեն Զէյթունի չորս իշխաններն և մի քանի ուրիշ անձինք Պոլսի մէջ բանտարկուեցան։ Այս ժամանակ Զէյթունցիք քաղաքական ազատութիւն ձեռք բերելու համար, փոփոք ունեցած են հայ հռոմէական հասարակութեան հետ միանալու։ Մէկ կողմանէ Նափոլէոն կայսեր միջամտութեամբ և միւս կողմանէ հայ բարձրաստիճան ամիրաներու միջնորդութեամբ բանտարկեալը կ'արձակուին և Զէյթունի վրայ քալելու համար նոր ճամբայ հանուած զօրքերը ետ կը դարձուին։ Այս թուականիս սկսաւ Զէյթունի ինքնավարութեան հիմքը խախտիլ և օսմանեան իշխանութիւնը աւելի հաստատուեցաւ։ Սակայն Զէյթունը, ինչպէս Թուրքերը կ'ըսեն, միշտ ակռայի ցաւ մ'էր Սուլթանի համար, որ չէր կրնար հանդիստ ձնալ, մինչև որ ուրիշ գաւառաց վարչական վիճակին չհնթարկէր զայն։ 1865 թուին Զէյթուն մնան ամիր Սալիհ էֆէնտի իբրեն գայմագամ և պատուար մը ու հազարապետ մը՝ իբրեն բանտորպիչ։ Առնք սկսան ժողովուրդը հնազդել ծանր տուրքերով և Զէյթունցիք քանի մը տարի հպատակելէ վերջ, Տավլաթ Նեապի էֆէնտիի գայմագամութեան օրով, անոր անհանդուրժելի արարքներէն զրգռուած վերջապէս կ'յարձակին ու կը քանդեն կառավարութեան պաշտօնատունը և թուրք պաշտօնեաները կ'արտաքսեն։ 1875էն 1878 թուականները Զէյթուն անկախ ձեաց և իրեն պլխաւոր ունեցաւ Էնի–Տիւնիա իշխան Աստուածատուրի հօրեղբօրորդին Պապիկ փաշայ, որ իր կենաց մէջ 15 տարի շարունակ ապզօգուտ քաջագործութիւններով զբաղեցաւ։ 1878 տարւոյ հոկտեմբեր ամսոյ սկիզբը, կայսերական հրամանով Մարաշէն մեծ բանակով կու գայ Զէյթունի վրայ Վէյսի փաշան։ Ֆոնտուղ վանահայր Նիկոդայոս եպիսկոպոսի առաջնորդութեամբ խումբ մը Հայեր կը պնդրկեն օսմանեան զօրքերուն. Պապիկ փաշան ալ իր հրամանատարութեան տակ գտնուող 400 ի չափ հրազակներով կ'սկսի պատերազմիլ։ Այս միջոցին կառոյ կամ աւելի գաւառ Զէյթունցիներէն մօտ 300 հոգի կը ձերբակալուին, որոնց մէջ էր նաև Նիկոդայոս եպիսկոպոսը, իսկ 150 հոգի լեռներու գլուխը կ'ապաստանին։ Վէյսի փաշայ 250 չէրքէզ կը զրկէ այս փախստականներու վրայ, բայց Չէրքէզներէն շատը կը ջարդուին։ Այս պէսքերը և բանտարկեալոց գառն վիճակն, ամէն ջանք գործ գնելով, Ամերիկացի հայասէր միսիոնարն Մըսթըր Մոնթգոմրի, հետպրեց կ. Պոլսի Անգլիոյ դեսպանին և Բ. Դրան ու Հայոց Պատրիարքարանին։ Բ. Դուռը դեսպանին և պատրիարքի պահանջմանց համաձայնելով հրամայեց որ Զէյթունի վրայ յարձակողները ետ քաշուին։ Ռաւս–Ջանկիան պատերազմը և Պոլսէն վհատոդոլը աւարտելէն վերջ, Բ. Դուռը մտիկ ընելով բռնկամ խորհրդատուներու, քաղցրութեամբ ուզեց շահիլ Զէյթունի ժողովուրդը։ Նոր բարեկարգութիւններ խոստացաւ. 1879ին Սուլթան առանձին իրատեով Զէյթուն զրկեց Մազհար փաշան և Նուրհան էֆէնտին, որոնց յետոյ ընակերակցեցան Հալէպի անդլիական

հիւպատոսն Ճերմանոյ և Կիլիկիոյ Հայոց Տ. Մկրտիչ կաթողիկոսը, որոնք կայսերա-կան կառավարութեան անուամբ ներումն շնորհեցին բոլոր Զէյթունցւոց և տուրքերը չատ նուազեցուցին։ Յետոյ Զէյթունի մէջ զօրանոց մը շինելու խնդիրը յարմարցուցին, որուն շինութիւնը Զէյթունցիք անձամբ բրին և երբ աւարտեցաւ 800 կանոնաւոր զօրք պահել, գայմագամի հսկողութեան գործը բաւական դիւրացաւ և այսպէս 5 տարի առանց միջադէպի անցաւ։ 1884ի հրկիզէն վերջ, Տէտէ փաշան որ կառավարական նպաս-տը բաշխելու պաշտօն ունէր, սկսաւ նեղել Արեգնցիները տուրքերը կրկնապատիկ պա-հանջելով, որուն դէմ ապստամբեցան և Շամը – քէշիշեան անուն երիտասարդի ա-ռաջնորդութեամբ՝ յունիս 24ին յաղթեցին թուրք զօրաց։ Օգոստոսի մէջ նոյն Հայք յաղթութիւն մը բրին 1886 տարւոյ սեպտ. 9ին։ Հայկական խնդրոյ յուղուած միջոց-ները կառավարութեան խստութիւնները սկը-սան աւելնալ քաղաքատներս վրայ։ Մարա-շի կառավարիչ Սալիհ փաշան Զէյթուն կու գայ 1890 տարւոյ յունիս 2ին և կը նստի երկու ամիս։ Այդ միջոցին քաղաքային բժշկէն թունաւոր պատատաստ տանտալով կը մեռնին 500է աւելի Զէյթունցի անմեղ մա-նուկներ։ Ժողովրդեան վրայ ամրատանու-թիւն, լրտեսութիւն և բռնութիւն կը գոր-ծադրուի։ Զէյթունը քանդելու, աւերելու յայտնի նպատակ կը տեսնուի։ Վերջապէս Օսման անուն ոստիկանի մը սպանութեա-տեղէն օգտուելով Սալիհ փաշան զօրանոցէն երեք խումբ կանոնաւոր զօրք կը հանէ և քաղաքատներ հրացանի կը բռնէ։ Զէյթուն-ցիք թէեւ անպատրաստ՝ կը պատասխանեն գնդակներով։ Այդ կռիւը (1890, սեպտ. 24) կը տեւէ 3 ժամ և թէեւ երկու կող-մէն եւս մահեր կը պատահին, բայց զօր-քերը կը հարիպարութեան եա քաշուելու։ Սա-լիհ փաշան զայրացած՝ Մարաշի, Ալպիս-թանի և Ամասրդնի բնակիչ զօրքերէն 3000 հոգւով կ'աւերէ շրջակայ հայ գիւղերը և պաշարման վիճակ հաստատելով մահմէ-տական հասարակութեան իրաւունք կու տայ Զէյթունցւոց կենաց և ինչքերու վրայ։ Այս յուսահատական վիճակի մէջ Զէյթուն կ'ընկ-ճուի և 46 հոգի Հալէպի բանտը կը դրը-կուին։ Զէյթունի մէջ խստութիւն և տան-ջանք կը շարունակուին և թուրք պաշտօ-նեաները անօրինակ կերպով կը կեղեքեն ժո-ղովուրդը։ 1895 տարւոյ հոկտ. 28ին (ն. տ.) Զէյթունցիք կը պաշարեն զօրանոցը, իրենց հետ էր նաեւ Ազատ. չկայելով որ ներ-սէն թնդանօթի ռումբեր կ'արձակուէին ան-դադար, 60 ժամու կատաղի պատերազմէ վերջ պահակազօր գունդը, 600ի չափ, ի-րենց հրամանատարներով անձնատուր կը լինին և բոլոր ռազմամթերքը կը յանձնեն։ Գերուած զօրքերը իրենց ընտանիքով Զէյ-թունցիներէն լաւ խնամք կը վայելեն։ Թուրք կառավարութիւնը բազմաթիւ կանոնաւոր զօրաց բանակ և թնդանօթներ կը դրկէ Զէյթունի վրայ և շրջակայ գիւղերը աւե-րակ կը դարձնէ. հայ գիւղերու բնակիչնե-րէն շատերն ալ Զէյթուն կ'ապաստանին։ 1895–1896 տարիներու մէջ Զէյթունցւոց թուրք զօրաց դէմ մղած պատերազմներն և յաղթութիւնները մի առ մի առտ յիշել չենք կարող. փափաքողք կարող են կար-դալ նոյն տարիներու Հնչակի համարներու մէջ։ Այս միայն ըսենք, որ թուրք կա-ռավարութեան ահագին բանակը յաղթա-հարեցաւ Զէյթունի գիւղացիներէն և յատուկ պատճառութիւններով եւրոպական մեծ պե-տութեանց միջամտութեամբ հաշտութիւն գոյացաւ։ Այս վերջին դէպքերու մասնա-մասն պատմութիւնն պիտի հրատարակէ տարւոյս (1902) մէջ Զէյթունցին՝ տասնեակ գրքով մը՝ որ պիտի կազմէ իր տպչեն ծա-նօթ գրուածքին Բ մասը։ Զէյթունի վրայ հետաքրքրական և օգտաշատ երկու հատոր խտալ լեզուով դիրք մ'ալ հրատարակեց 1897ին, Պէյրութի Խաալիոյ հիւպատոս, Մեծ. Հենրիկոս Վիլմոյ՝ Ազատոյիոյ Լատինոյ ծածկանունամբ։ Զէյթունի վրայ տասնեակ գիրք մը հրատարակած է Յ. Յ. Ալլահվեր-տեան 1885ին, յորում տեղագրականէն ա-ւելի կան նաեւ ազգագրական, բանաստեղծ-կան, լեզուաբանական և այլ օգտակար տե-ղեկութիւններ։ — Միսակեան. 170-188։ Կիլիկիա, 327–342։ Ն. Հայոց. 374–376։ Եւ այլն։

ԶԷՅՆԱԼՈՒ. — [illegible] Ուրմիոյ (Աստպա-

տական). 6 տուն հայ կայ, առանց եկեղեցւոյ և դպրոցի։

ՉԻՅՆԻՍ. — Գիւղ վանայ Խօշապ գաւառակի, $1\frac{1}{2}$ ժամու ճանապարհ հեռու կասր գիւղէն։ 10 տուն եկաւոր քուրդ և 3 տուն քրիստ հայ կայ։ Հայք ունին Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը, բոլորովին անշքացած և ամայացած է, իր գիւղցիկ գրից և մօտ 800 տարուան հաստատուն շինուածքին հակառակ։ Գիւղս շինուած է բլուրի մը հարաւային կողմնուն վրայ. ունի գիւղցիկ տեսարան, լաւ օդ ու ջուր և խոտաշատ դաշտեր։

ՉԻՅՎԱՃՈՒԿ. — Գիւղ Աւրպատականի Սալմաստ գաւառի։ 10 տուն հայ կայ։

ՉԻՅՎԱՑ. — Հայարնակ գիւղ Չանղեղուր գաւառի Գ վիճակի մէջ. ունի 502 բնակիչ, բաժնուած 50 տան։

ՉԻՅՎԱՑ. — Ա.յրարատեայ Աւրագածոտն գաւառի մէջ կայ այս անուամբ Հայոց մեծ գիւղ մը։ Ունի 1062 բնակիչ, բաժնուած 163 տան։ Գիւղէս երկու մղոն հեռու ա. բեւմտակողմը կը գտնուի Չիլվայ–Թարթարայ ուրիշ գիւղ մը՝ 111 տուն բնակչօք։ Ա.յս կրկին գիւղերու մօտ քննութեան արժանաւոր տեղեր կան։

ՉԻՅՎԱՑ. — Ա.յսպէս եւս կը կոչուի Սիւնեաց Բաղք գաւառի Չեմի–չայ գետակը։

ՉԻՅՎԱՑ. — Գիւղ կարճկանի, սարահարթի մը վրայ։ Վանայ ծովակը երկու քառբլոնկէյ հեռաւորութեամբ կը տարածուի ա. սոր առջեւը։ Ա.յժմ հայկական եկեղեցւոյ տանյի շէնք մը միայն կը տեսնուի և բոլորովին քրդաբնակ է։

ՉԻՅՏԻՒՔԱՆ. Տես ՉԵՏԿԱՆ։

ՉԻՆԿԻ. Տես ՀՐԱՉԴԱՆ։

ՉԻՐՉԻՐԼ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի։ 32 տուն հայ կայ. ունին եկեղեցի մը։

ՉԻՐՏԻԿԼ. — կարնոյ գիւղերէն մին. 20 հայ բնակիչ կայ, առանց եկեղեցւոյ։

ՉԻՐՔ. — Գիւղ Տիգրանակերտի Ալխա. նու գաւառակի, Եփրկերտի հարաւակողմը, գրեթէ 2 ժամ հեռու։ Բնակիչք՝ 80 տուն քրդախօս Հայեր են. եկեղեցի և վարժարան չունին։ Տարին անգամ մը մերձակայ գիւղ մը քահանայ կը հրաւիրուի և գիւղա. պետի տան մէջ ժամերգութիւն և հոգեւոր պէտքեր կը կատարուին, մեծ մասն քուրդ լեզուով։ Մկրտութեան, պսակի և թաղման համար ալ մերձակայ գիւղի քահանայն կը կոչուի։ Տուներն քարաշէն են, օդն՝ առողջ և ջուրն պատեհական։ Գիւղս Չէրք կոչուած է հողին արգիւնաբերութեան համար. գէր՝ քրդերէն ոսկի ըսել է, և գերք՝ ոսկեզէն։ Գեղեցիկ դիրք ունի, շուրջը կան պարարտաբեր վայրեր, ծառեր, ծառաստաններ, առուակներ և բազմաթիւ գիւղեր։

ՉԻՖԱՆՕՋ. — Գիւղ Տրապիզոնի. ունի 60 տուն հայ բնակիչ, Ս. Թորոս անուամբ եկեղեցի մը և Մեսրոպեան անուն վարժարան մը՝ 50 աշակերտներով։ Կան նաեւ ոսկաւաթիթ Մահմէտականք և Յոյնք։ Հոզագործ են։ 1895 տարւոյ պէտքերու ժամանակ գիւղիս տուներու մեծագոյն մասը կրակի ճարակ եղաւ, բնակչաց մեծ մասը Ս. Փրկիչ վանքը ապաստանեցաւ և փոքրամասնութեան մը գիւղի մէջ զէն ի ձեռին ինքնապաշտպանութեան դիմեց։

ՉՐՄԱՌԱ կամ ՉԻՄԱՌԱՑ. — Գիւղ Տիվրիկի հիւսիս արեւելեան կողմը՝ հովտի մը մէջ, 6–8 ժամու ճանապարհ հեռու։ Ունի 70 տուն հայ և 30 տուն թուրք բնակիչներ։ Գիւրքը գեղեցիկ է՝ լերան մը կատարին վրայ շինուած. առջեւը կը տարածուի փոքրիկ դաշտ մը, արտարայք, այգիք և պարտէզք. օդն՝ առողջարար, ջուրն՝ զով ու քաղցրահամ։ Բնակիչք ընդհանրապէս հոգատէր են. կանայք՝ բարձրահասակ, առուգակազմ և գեղադէմ են։ Ունին Ս. Երրորդութիւն անուամբ եկեղեցի մը՝ պայծառ ու ընդարձակ, և Նալեան անուն քարուկիր վարժարան մը՝ 60 աշակերտներով։ Գիւղս հայրենիք է պատրիարք Յակոբ Նալեանի, որ իւրանուն վարժարանը և ուրիշ հաստատութիւններ հիմնած է։ Ջրմառայէն շատ պանդուխտներ կան Կ. Պոլիս և մեծ մասը հայցագործ են։ Տուները բաւական ճաշակաւոր շինուած են։ Կանայք աշխատակից են արանց։ Գիւղիս բաւական հասոյթ կը բերեն բազմապարիան հսկայ ընկուզենիներ։ Ջրմառայի սարորտը կը գտնուի չինչ լճակ մը հովտաուն ծառերով։ Կան Ս. Պօղոս–Պետրոս և Ս. Նիկողայոս վանքերու փլա-

տակներ և ուրիշ 36 ուխտատեղիներու ա-ւերակներ՝ որ երբեմն եկեղեցի են եղեր։ Այս ուխտատեղիներէն նշանաւոր է վերի վանք բսուածը, որ բարձր դիրք ունի և ուր ընդհանրապէս ամառները կ'այցելեն պատուական տան ջուրը և առողջարար օդը վայելելու համար։

ՋՐՆՋՐՆ. — Գիւղ Տիգրանակերտի Սղիւան գաւառ. 40 տուն հայ ունի և եկեղեցի մը։

ՋՐՈՉԻ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ, Նախճաւանի արեւմտեան կողմը, հրաբղխային կաթնիր գեղին քարերով երկրի մը վրայ։ Բնակիչը 952 հոգի են, բաժնուած 109 տան։

ՋԻՄԱՐԿԻ. — Գիւղ Տարօնի գաւառի, Մշոյ դաշտի մէջ, արեւմտեան հիւսիսային կողմը. Մուշէն 4 ժամու ճանապարհ և Ալաքիլոց վանքէն 2 ժամ հեռու է։ Ունի 120 տուն հայ և եկեղեցի ու վարժարան՝ զոր 1885ին հաստատեց Պոլսի Միացեալ ընկերութիւնը։ Աղբիւրն կ'անցնի Ագռաւանին։ Գիւղիս անունը Ջիմաքեր (Ոխտաւայր) բսուած է, որովհետեւ կը գտնուի այն լերան առքը, որուն վրայ նստած է Ս. Կարապետի վանքը։

ՋԻՄԱՐԿԻ. — Լճակ Այրարատայ Արագածան գաւառի արեւմտեան կողմը, Շիրակայ սահմանին մէջ, 10000՛ բարձրութեամբ։ — Այս անուամբ ուրիշ լճակներ և այլազգեստ գիւղեր եւս կան։

ՋԻԼԱՆ. — Այս անուամբ գեղակ սբ կայ Այրարատայ Մարգոսան գաւառի մէջ, որուն ձորն ալ կը յիշուի Ջիլանաց–ձոր անուամբ և կը թուի, թէ ի հնումն առանձին վիճակ համարուած ըլլայ։ Այս կողմանց քուրդ բնակիչը Ջիլանցի կը կոչուին։ Ջիլանայ ձորի մէջ կան ծծմբային ջերմուկներ, ուր կը նշմարուին հին մարմարեայ աւազաններ. կան նաեւ պղնձի հանքեր։

ՋԻԼԱՆ կամ ՋԵԼԵԱՆ. — Ամայի գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի Ջարիշատ վիճակի մէջ։

ՋԻԼԱՆԱՑ ՁՈՐ. Տես ՋԻԼԱՆ։

ՋԻԼԳԱԼԻ. — Ամայի և լքուած բերդ կամ մեծ աշտարակ մը Պաշ Համշէնէն օր մը հեռու։ Մէջը կը տեսնուին հին կամարակապ շինութիւններ։

ՋԻԼԻ. Գ. ZILÈH. — Եւդոկիոյ գաւառի համանուն գաւառակի գլխաւոր և վաճառաշահ քաղաքն է, Եւդոկիոյ հարաւ արեւմտեան կողմն 55 հգմ. կամ 12 ժամու ճանապարհ հեռու։ Ջիլէի դիրքը գեղեցիկ է, կառուցուած կոնաձեւ բլուրի մը վրայ. տուներն տարածուած են բլուրին շուրջը, իսկ հին բերդը կը գտնուի գագաթը, որուն պարիսպներն քանած ու զօրաշունչ շինած են։ Ունի 4000 տուն բնակիչ, որ կը բաղկանայ հայ, տաճիկ և գնչու հատարակութիւններէ. կան նաեւ քիչ թուով Հրէաներ։ Հայք 400 տուն են և գնչուք 40–50 տուն։ Վ. Քինէ քաղաքիս բնակչաց թիւն 20000 կը դնէ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	15700
Հայք	4000
Հրէայք	300
Գումարն. .	20000

Հայք և Տաճիկք գրեթէ խառն կը բնակին. փողոցները անմաքուր են, տուները ահեղ, հազուստները ազատ։ Ջիլէ՝ իր դիրքովը ուրիշ քաղաքներու հետ շատ յարաբերութեան յարմարութիւն ունենալով, վաճառականութիւնն լաւ վիճակի մէջ է։ Այժմ թէեւ ոչ այնչափ, որչափ երբեմն՝ նշանաւոր էր Ջիլէ փեսայիրէն, ուր ամէն տարի գեղեցիկ ամանի կու գան ոչ միայն շրջակայիներէն, այլ և Հալէպէն, Շամէն, Գազատիայէն, Կեսարիայէն բազմաթիւ վաճառականներ և մեծ առուտուր կ'ընեն։ Գազիս մէջ կը գտնուին ասիական գրեթէ ամէն տեսակ արհեստներ. խաղախորտուքներ Տաճկաց ձեռքն է և մեծ շահ կը քաղեն ասկէ, վասն զի շատ տեղեր կը դրկուին հոս բանուած կաշիներէն։ Մագաղաթ է նաեւ բաւական ճերմակ կաւ գործելը, որ ընտիր է ու դիմացկուն. շատ տեղեր կը դրկուին այս կաւներէն. այսպէս նաեւ մանիտա, այծու մազէ և կանեփէ չուաններ, մեծ ու փոքր առպրակներ, և այլ նիւթեր։ Վաճառականութիւնը կեսարացւոց ձեռ-

քըն է և բնիկները մեծ մասամբ հոգաւոր են։ Գլխաւոր բերքերն են՝ ցորեն, գարի, սիսեռ, ոլոռ և ռուփ։ Միջին հաշուով Ջիլէն տարին 150 հազար լիտրայի ապրանք դուրս կը գրկուի։ Ջինուորական տեսակէտով նշանաւոր է իր ամրոցիկ կիրճերով և ի հնումն հռչակաւոր եղած է կրկին պատնրազմներով։ Առաջին պատերազմին Միհրդատ Եւպատոր յաղթեց Տրիանոսի Լուկուլլոսի տեղակալին։ Երկրորդ պատերազմին մէջ Փառնակ յաղթուելուցաւ կեսարէն, որ այս յաղթութեան առթիւ գրեց Հռոմ իրեն նշանաւոր «Veni, vidi, vici = Եկի, տեսի, յաղթեցի» խօսքերը։ Մարտական գազրիկ հեծելազրը կը համարի Շամիրամ։ Հայք ունին Ս. Քակոր անուամբ եկեղեցի մը, որուն բակի մէջ են շրջիկ առաջնորդաքարեր, Ս. Մեսրոպեան վարժարանը, քանի մը սենեակ և գերեզմանոցը։ Եկեղեցին ունի յատուկ կալուածներ և վարժատան ծախքը իրեն կը հոգայ։ Քաղաքիս Հայոց ազգային անուանի, բայց եկեղեցւոյն հասոյթներէն, տարեկ տարի 400 օսմանեան լիրայ եկամուտ ունի գանազան կալուածներէ։ Եկեղեցին ունի բաւական թուով ձեռագիրներ։

Քաղաքիս արեւմտեան կողմն իր տանն վայրկեան հեռու Սիմրիչա անուամբ բլուր մը կայ, որ Պաղրչա ևս կը կոչուի, ասոր առատաբար տարածուած են շատ այգեստաններ. տարեկ բլուրը գերբուկներով լի է վերէն վար և նայն իսկ այդիներու մէջ շէնքերու աւերակներ կան։ Ամէկ կը հանեն երբեմն քարէ սիներ, խարխիններ, խցակներ, գանուած է նաեւ արձան մը՝ զոր փոխադրած են Հայոց եկեղեցւոյն բակը. այս արձանը փոքրիկ գերբով կանգնած պատկեր մ'է, ձեռքը կուրծքին մօտ գաւաթ մը բռնած. անտարակոյս այս արձանը քրիստոնէութեան ժամանակէ յառաջ է։ Դրամ և ուրիշ հնութիւններ ևս կը գտնուին այս բլուրի հողերուն մէջ։ — Երկու բլուրներ ալ քաղաքին հարաւային կողմը կան քանորդ ժամ հեռու. մեծագոյնը՝ որ կոպի պապա կ'ըսուի, գագաթը և առատաբար՝ ասոր ջուր կը բղխէ, կան մէկ մէկ ուխտատեղիներ։ Միւս բլուրը կ'ըսուի Կիւվէրճինլիք (Աղաւնոց)։ Իսմայիլ տեսակ անուն ուխտատեղի մ'ալ կայ քաղաքէն իբր ժամ մը հեռու, ուր Հայք և Յունիկք կը յաճախեն։ — Ջիլէի հարաւակողմը երկու ժամ հեռու է Զէրեկ ըսուած աւերակ վանատեղին, զոր Հայք Ս. Աբրահամիս հայրապետ կ'անուանեն. աւերակ է և քարէ սիւն մը կայ կանգուն. լուսնտանները և այլ սխտաժէտներ հոս ուխտի կու գան ու կը բժշկուին. յունարէն գրերով խաչքարեր կը նշմարուին։ Ըստ աւանդութեան՝ մեր Ս. Աբրահամիս հայրապետը Նիկիոյ ժողովին երթալուն, հոս եկեր, ապօթքով և հրաշքով աղբիւր մը բղխեցուցեր է, որ ցարդ կայ և Լոյս աղբիւր կը կոչուի, որուն ջրով կը մկրտուին ու կը բուժուին հիւանդները։ Ս. Աստուածածնայ գօտին հոս գտնուած է, ինչպէս օգոստ ԼԱ֊ին գրուած է Յայտնութեան մէջ, առանց տեղւոյ անուանը տալու. «... Յայտնեցաւ Ս. Գօտի Տիրուհւոյն մերոյ յեպիսկոպոսէն Ջիլիւ ի թագաւորութեան բարեպաշտին Յուստինիանոս...»։ Ուրիշ շատ ուխտատեղիներ ունի Ջիլէ որոնց մէկ մասն այժմ Թուրքաց ձեռքն է. ժամանակաւ բռնութեամբ քրիստոնեայ բնակիչներէն շատերը Թրքանալով, իրենց ուխտատեղիներն ալ Թրքացուցած են։ Ասոր ապացոյց մ'է նաեւ Հայոց հին թաղի Ս. Սարգիս եկեղեցին, զոր Թուրքերը Դեդէ Լօնիւ եվլիա փոխած են այսօր, ուր դեռ Հայերը ուխտի կ'երթան։ Տեղւոյս Թուրքերը խիստ բռնութեամբ կը վարուին Հայոց հետ, և այդ բռնութեան պատճառաւ Ջիլէի ամբողջ Հայք Թուրքերէն կը խօսին։ 1895ի դէպքերուն քաղաքիս Հայոց տուները կողոպտուեցան և 200 անձ աւելի զոհ գացին։ — Թորոս Աղբար, Ա. 69–79։ Եւ այլն։

ՋԻՒԵԱՆ. — Գիւղ Պարսկաստանի Փէբիա գաւառակի. 1880ի վիճակագրութեան համեմատ, ունի 11 տուն հայ և եկեղեցի մը։

ՋԻՄԱՌԱՑ. Տես ԶՐՄԱՌԱ։

ՋԻՆԱԻՈՐ. Տես ՆՈՐ ՓԵԱՖՈՒԿ։

ՋԻՆՃԻ ՏԷՐԷ. — Գիւղ կեսարիոյ, ուր Ցուցաց վանք մը կայ։

ՋԻՆՁԻՐԼԻ. — Հայաբնակ մեծ գիւղ Ա֊րարատայ Ուրծ և Աբած գաւառի մէջ։ Ունի 1227 բնակիչ, բաժնուած 108 տան։

Մօտը կան քարաշէն տուներու, եկեղեցւոյ և Ս. Յովհաննու Մկրտչի անուամբ մենաստանի մը աւերակներ։

ՋԻՆՁԻՐԼԻ. — Լճոյ Ակրաբատայ Նէզ գաւառի հիւսիսային կողմը. 8716′ բարձրութեամբ։

ՋԻՋԱՒՍԱՆ. — Հայաբնակ գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի թաղային վարժարան մը 25 աշակերտներով։

ՋԻՒԱԿ. — Ակլազգաբնակ փոքր գիւղ Սիւնեաց վայոց գաւառի հիւսիսային մասի մէջ։ Ասոր մօտ կը նշմարուին հայութեան հին ճեմարտներ, եկեղեցւոյ աւերակներ, խաչարձաններ և գերեզմաններ։

ՋԻՒԱՒԼՈՒ. — Հայաբնակ գիւղ Վանայ Ականց գաւառակի։ Ունի Ս. Աստուածածնայ անուամբ եկեղեցի մը։

ՋԻՒՑ. — Հայաբնակ գիւղ Ակրաբատայ Բագրեւանդ գաւառի Գարա–քիլիսէի վիճակի մէջ, Ղազի արեւելակողմը ժամ մը հեռու։ Կը գտնուի ճանապարհի ձախ կողմն գարի բարձրութեան վրայ։ 1880 թուին ունէր 40–50 տուն բնակիչ և 10 ընտանիքի չափ եզիտիներ։ Այս գիւղս միշտ ենթակայ եղած է Քրդաց հարուածներու. տակաւ տակաւ բնակիչք ցրուած են և ծագած քանի մը տան Հայերու գրութիւնն խիստ ցաւալի է։

ՋՄԻՒՌՆԻԱ կամ ԻԶՄԻՐ. Գ. SMYRNE.— փոքր Ասիոյ ծովեզերեայ քաղաքաց գլխոյն և աշխարհիս ամենահին վաճառաշահ վայրն է Զմիւռնիա, որ կառուցուած է Ակայրի կառավարութեան արեւմտեան կողմը, Եդեան ծովուն վրայ և համանուն ծովախորշին խորը, Պագոս լերան ոտքը։ Լամարթին՝ Զմիւռնիան արեւելքի ասող կը համարի, իսկ Փիէռ ու Լուպոյ՝ բազմաթիւ տկանաս անձանց տեղեկութեանց վրայ հիմնեալ՝ Զմիւռնիոյ ծովախորշը Մարմարիայի, Ձիմովայի և Նափոլիի խորշերէն աւելի սիրուն և գեղեցիկ է, կ'ըսէ։ Նկարչական է քաղաքիս տեսքն, հեռուէն կը տեսնուին կարգ մը բլրակներու և անոնց սառոյտը շինուած եկեղեցիներու զմբէթաւոր յարկերը, մզկիթներու զմբէթներն ու աշտարակները. իսկ քարափին վրայ վերէն վար շինուած գեղեցիկ շէնքերը, եւրոպական քաղաքի մը երեւոյթ կ'ընծայեն։ Զմիւռնիոյ խորշին մէջտեղէն ակնարկ մը տալով կը տեսնուին քաղաքին հետեւ կողմը նոճիի մշտազալար անտառակներ, որոնց հետեւը բարձրացած է Պագոս՝ իր աւերակներով։ Հարաւակողմը գէպի Եփեսոս կը տարածուին արդասաբեր դաշտագետիններ, որոնց վրայ կարծես կ'իշխէ բարձրածայր Երկու Եղբարը (Իբի գարատաշլար) լեռը։ Հիւսիսային կողմն կը տեսնուին Միսիլ լերանց շարքը և քանի մը գիւղեր։ Իսկ հիւսիս–արեւելեան կողմն կը տեսնուին Պունարպաշ և Հաճըլար գիւղերու ձորերն ու ծործորները։ Զմիւռնիոյ ծովն և երկինքն անոյշ կապուտակ են, օդն այնպէս մաքուր և յստակ, որ խորշին արեւմտեան կողմը՝ հետուն ու շուրջը բարձրացած լեռները մերձաւոր կ'երեւան։ — Զմիւռնիոյ առաջին հիմնարկողը կը համարուի Անտիոգոս Լիւդիոյ թագաւորը։ Ի սկզբան Նաւլօքօն (Ναυλοχον = Նաւահանգիստ) կը կոչուէր. հին քաղաքը զարհուրելի երկրաշարժէ մը բոլորովին աւերուելուէն յետոյ կը պատմեն մատենագիրք։ Զմիւռնիոյ երկրորդ հիմնարկութեան որոշ թուականն ալ յայտնի չէ. Հերոդոտոս՝ կամ այն անձն որ իր անուան տակ Հոմերի կեանքը գրած է, քաղաքիս հիմնարկութիւնը Թէսէոսի կ'ընծայէ, որ իր կնոջը յիշատակին անոր անուամբ Զմիւռնիա կոչած է։ Զմիւռնիա երկրորդ շինուածքն վերջ ևս աւերեր է, որուն հնադոյն աւերակները ժամանակ ժամանակ գտնուած են ու կը գտնուին։ Երրորդ անգամ քաղաքս շինուեր է, հին վայրէն 12000 ոտք հեռու, Պագոս լերան վրայ. պատմագիրներէն անունք այս երրորդ շինուածքին կու տան Ադեքսանդրի կամ իր յաջորդաց և անունք Լիսիմախոս։ Ադեքսանդրի կամ յաջորդացը շինած կամ վերահիմնած Զմիւռնիան 2100 տարիէ աւելի կանգուն ծնալով իր տեղը երբեմն միայն պատահական քաղաքական պատերազմներէ, երկրաշարժներէ, հրդեհներէ փոփոխութիւն կրած է։ Ադեքսանդրի մահէն վերջ Անտիգոնոս իր ամբոխ Զմիւռնիա հաստատեց։ Նոյն ժամանակները քաղաքս բուռ ամենայնի ծագկած և բարգաւաճ վիճակ մ'ունէր։ Հռովմայեցւոց

կայսերք միշտ աշխատած են Զմիւռնիան ծաղկած վիճակի մէջ պահել։ Քրիստոսի 177 թուականին, սոսկալի երկրաշարժ մը հիմնայատակ տապալեց Զմիւռնիան, սա՝ կայն Մարկոս Աւրելիոս կայսեր ջանքով վերաշէն ընդարձակեցաւ և սկսաւ ծաղկիլ։ Շատ գարեր ետք Հռովմայեցւոց կայսրութեան ներքեւ։ 1684ին ձախաւ անուն թուրք ծովահէնն իր ընկերներէն թագաւոր Զմիւռնիոյ տիրեց, նշանաւոր շէնքերը հարթ յատակ ըրաւ, Ասպետները հեռացուց և հազարաւոր բանտարկելոց գլուխները կտրեց և ինքը մեկնելով իշխանութիւնը յանձնեց Քիւճիւքի։ 1624ին Մուրատ Գ քաղաքս գրաւեց և Քիւճիւքը վռնտելով ուրիշ կառավար մը դրաւ։ Այս ժամանակէն սկսեալ միշտ օրս Զմիւռնիա միշտ մեծ օսմանեան կառավարութեան ներքեւ և վերջա-



313. Զմիւռնիոյ ընդհանուր տեսարանը։

նուանուելով, յարձակմամբ քաղաքին տիրեց. բայց չկրցաւ երկայն իշխել։ Աչխատեցաւ սկսաւ իր փառքը և փարթամութիւնը կորնչցընել։ Ամուր՝ 1332ին քաղաքին տիրեց. ասոր ժամանակ Հռոդոսի Ասպետները գալով ծովուն քով կառուցուած գիհակին առին և քաղաքին մէկ մասին տէր եղան։ Աչսպէս 50 տարի մաս մը Թուրքաց և մաս մը Ասպետաց իշխանութեան տակ մնաց, մինչև որ 1402ին Լէնկթիմուր գալով տին ծաղկեցաւ։ Թէպէտև 1694ին, Ահմէտ Բ օրով, ուզեցին վերահաստատել, բայց եւրոպական հիւպատոսներու միջամտութեամբ առանց բան մ՚ընելու մեկնեցան։

Պագոսի բարձանց վրայ եղած հին ծաղկեալ քաղաքին տեղը կան այժմ ցիրուցան նորաշէն տնակներ ու խրճիթներ և հնագոյն կամարներու և այլ շինութիւններու մնացորդներ։ Բուն քաղաքը շինուած է Պագոսի կո-

դերան վրայ և առջորայ։ Առջորայ կառուցուած առուներու անդը շատ բնդարձակուած է ժամանակ ժամանակ ծովը լեցնելով։ Չմիւռնիոյ քարափը (որուն շինութիւնը սկսաւ 1868ին և աւարտեցաւ 1880ին) շինուելէ վերջ քաղաքս մեծապէս փոխուած է։ Ծովեզերեայ սալայատակ ափունքէն և աջոր զուգահեռական եղող կրկին փողոցնեբէն, ինչպէս նաեւ ուրիշ քանի մը անցքարձի ենթակայ փողոցներէն զատ, ընդհանրապէս մեծ փողոցները խառնաշփոթ, նեղ ու ծուռ են. Հայոց թաղի փողոցները կանոնաւոր են։ Շէնքերը ընդհանրապէս կրկնայարկ են և շատ քիչ կան երեք չորս պատմիկն աւելցող աուներ։ Երկրաշարժի պատճառով աուները ցած ու յատուկ ճարտարապետութեամբ մը կը շինեն։ Չմիւռնիոյ ամենաշքեղ շէնքերը կը գտնուին Փրանկաց բուսած փողոցին և քարափանց վրայ, ուր է նաեւ Ս. Ազարեմեանների ամբողջ մարմարաշէն ճակատով փառաւոր տունը։ Չմիւռնիոյ մէջ կը լսուին շատ մեծակ լճզուններ, մեծակ մեծակ շէշտերու տակ։ Կան բազմաթիւ զանազան հասարակութիւններ, որոնք իրենց լեզուն կը պահեն։ Քաղաքիս հասարակութիւնը կ'անցնի 200000 կը դնեն։ Մահմետականք՝ 89000 են, Հրեայք՝ 52000, Հայք՝ 16000, Յոյնք՝ 6–7000. իսկ միացեալք են հետեւեալ՝ ազգերը Իտալացիք, Աւստրիացիք, Հունգարացիք, Գալլիացիք, Անգլիացիք, Ամերիկացիք, Հոլանտացիք, Պարսիկք, Ռուսք, և այլն։ — Վաճառականական տեսակէտով Չմիւռնիա Թուրքիոյ նաւահանգիստ քաղաքներու մէջէն գլխաւորը կրնայ համարուիլ. իր դիրքովը՝ առեւտրական կեդրոնական հրապարակ մ'է և բանուկ վաճառականութիւն ունի Աւստրիոյ, Անգլիոյ, Իտալիոյ, Գալլիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ, Ռումանիոյ, Ցունաստանի և Ամերիկայի հետ։ Մթերանոց է արեւելեան վաճառքներու, ինչպէս նաեւ եւրոպական ապրանքներու։ Սիւէզի պարանոցի բացմամբ Թէհէ Ադենոնդրիա և Փորթ Սայիտ բաւական վնաս հասուցին Չմիւռնիոյ, Զմիւռնի, Ձմրնի և Էրնեկաստանի հետ վաճառականական յարաբերութեան մէջ մնանելով, սակայն դարձեալ ներկայիս մեծ դեր կը խաղայ Փոքր Ասիոյ ներքին քաղաքաց բերքերու արտածութեան և եւրոպական վաճառքներու ներմուծութեան գործին մէջ։ Երկրի նշանաւոր բերքերն են սքանչելի և տեսակ տեսակ խագող՝ մանաւանդ անկուտ տեսակը, նուռ, համեղաճաշակ թուզ, մեծկակ չամիչ, զուարթաբար և զօրացուցիչ գինի, բալ, քաղցրահամ նարինջ և ուրիշ պտուղներ. ցորեն, գարի, ձիթապտուղ, բանջար, որոնցմէ անոնք Եւրոպիոյ և Ամերիկոյ հետ եղած վաճառականութեան գլխաւոր նիւթերն են, ինչպէս նաեւ ափիոնը, բամբակը, խոզակաւիրը, են.։ Եւրոպացին կ'ընդունի ընդհանրապէս ծագկեայ կերպասներ. կառուցողներ՝ Անգլիացին. զարդի տղոնի նիւթեր, կերպասեղէններ՝ Գալլիացին. իսկ Աւստրիացին ու Գերմանիացին ապակեղէն




314. Չմիւռնիոյ նաւահանգիստը։

ներ, պատրաստ զգեստներ, և այլն։ Ջմիւռնիոյ նահանգի տարեկան բերքերու արժէքն է միջին հաշուով 142252500 ֆրանկ։ Արտածուած բերքերու արժէքն կը հասնի 95 միլիոն ֆրանկայ. իսկ ներմուծուած ապրանքներու գինն է 72 միլիոն ֆրանկ։ Բազաքիս նաւահանգիստը կը մտնան տարին միջին հաշուով գոնազան ազգաց շոգենաւեր և առագաստանաւեր 4000էն աւելի, որոնցմէ իրը 2500ը շոգենաւ են։

Ջմիւռնիա իր մարքաց օդին և ջրոյ երկրին տակ ունեցած է ու կ'ունենայ երթեմն ճարակող հիւանդութիւններ և բնութեան ապիտաբեր հարուածներ։ Սոսկալի երկրաշարժներ ի հնուց անպակաս եղած են։ Հնագոյներն թողլով, որոնցմէ մին բոլորովին հիմնայատակ րրած է քաղաքն, և ինչպէս յիշեցինք, Մարկոս Աւրելիոսէն վերաշին նուած է, գնենք ասա 1688 տարւոյ երկրաշարժին պատմութիւնը, որ գաղափար կրնայ տալ նաև անցեալներուն վրայ։ Եգյն տարւոյ յունիսի $^{10}/_{28}$ին, կէս օրէն քիչ յառաջ կը սկսի ցնցումն և նախ ծովախորշին դիմացը գտնուած ամրոցը կը փլչի և ծովի ջրերով կը ծածկուի. շուրջը գտնուած տուներու երկք քառորդը կը տապալին և քանի մը ծառ արմատաքի կը խլին. գրեթէ միեւնոյն ատեն քաղաքին մէջ ցնցում մը կը զգացուի և հին մարքտատան պատերուն ու ծածկոյթի մէկ մասն կը փլչի. ամբողջ քաղաքը այնպէս կը զգրգի որ տուներու երկք քառորդը կը կործանի, 15–16000 հոգի կը կորսուին. ամէնէն աւելի Մահմետականք կը վնասուին, վասն զի երկրաշարժին պատճառաւ տունէ մը հրկեզ պատահելով և բուռն կերպով ճարակելով հովին հակառակ ամէն կողմ կը յառաջանայ և ամբողջ թաղին մէջ պատ մ'անգամ չի թողուր. կ'անցնի նաև Հայոց թաղը և մեծագոյն կը վնասէ. կը լափէ նաև շուկայն և այսպէս քաղաքին կէսը. բոլոր բնակչաց մթերքները, ինչքերը և կարասիք կ'այրին, կ'սչնչանան, խանները ու մթերանոցները կ'այրին ու կը փլչին, ի բաց առեալ շուկային մէջ գտնուող խան մը. այս խանին մէջ մնացող 5–600 անձինք փլատակաց տերքեւ կը մնան։ Գալլիացիք, Հոլանտացիք և Անգլիացիք, մէկ միլիոն դահեկանի դրամ և ինչք կը կորսուանեն և անցացուց վրայ իրենց ունեցած պահանջը։ Կաթոլիկեացյց երեք եկեղեցիները կ'այրին ու կը կործանին։ Յունաց մեծ եկեղեցին բոլորովին կը փլչի և կ'այրի. կիսով չափ կը փլչի նաև իրենց Ս. Գէորգ՝ գերեզմանատան մատուռը։ Հայոց միակ եկեղեցին բոլորովին կ'այրի և կը փլչի։ 17 մզկիթներէ միայն երեքը կանգուն կը մնան՝ վնասուած։ Պագոս լեռան և Ս. Պետրոսի պրոտեսթանտները քիչ կը վնասուին. քաղաքին մէջ բնակելի տուն չի մնար։ Առաջին ցնցման ատեն գետինը կը ճեղքուի և տեւ ու ժամս ջուր կը բղխէ՝ որ կը կործանի թէ կ'հասյր. գետնի ճեղքերու վրայ շատ անկենդան էրկներ կը մնան, որով կը կործանի թէ ջուրը ծովէն եկած է։ Քաղաքէն 3 փարսախ հեռու Ակվաիրէօյի կոզմերը ապրիլեանները կը ցամքին և նորեր կը բղխին։ Շուներու փոցոցները լեցուած անթիւ մնեռաչներու դիակներ իրարմէ կը յափշտակեն. եթէ շարժը դիշերը պատահէր ոչ ոք պիտի ազատէր։ Շատ բարեկեցիկ բնակութիւններ միայն իրենց հագած զգեստով կը մնան. չարագործներ՝ ընդհանուր աղէտէն օգուտ քաղելով քաղաքին մէջ կը ցրուին կողոպուտ գտնելու համար. ցնցումները կը շարունակուին յունիս 10էն մինչեւ 31։ Կան ոչ սակաւ յիշատակարաններ, բայց բուսական անդնդութիւն չեն պարունակեր Հայոց կորսուածներու վրայ. յիշատակարաններէն մին մանուածապէս կը յիշէ նորընծայ վարդապետի մը և քահանայի մը Ս. Սահակ նոսի եկեղեցւոյ փլատակաց տակ մնալ ու մեռնիլն։ Այս շարժէն գրեթէ դար մը վերջ 1778 թուին յունիս 3ին զարձեալ սաստիկ երկրաշարժ տակին ու վրայ կ'ընկ քաղաքս։ Երկրաշարժներու ժամանակ պատահած հրդեհներէն զատ, եղած են նաև երթեմն երբեմն կրակներ, որոնք ամբողջ թաղեր և հարիւրաւոր տուներ մոխիր դարձուցած են։ 1645 թուի սաստիկ հրդեհն, անթիւ տուներ և խանութներ լափելով հարիւրաւոր բնակութեանց սէր մարդիկներ մոխրի վրայ նստեցուցած է։ Հիւանդութիւններն ալ քաղաքիս մեծ վնասներ հասուցած են, միայն 1812ի

ժամանակէն 45 հազարէն աւելի մարդ մեռած է։ Բաւական տարիներէ ի վեր ազատ մնացած է Զմիւռնիա այս զարհուրելի ախտէն։

Հայք, պխտարարար երեք ժամանակամիջոցին մէջ գաղթած կը համարուին Զմիւռնիա. առաջին անգամ 1380ի միջոցները. երկրորդ անգամ 1610 թուականէն վերջը և երրորդ անգամ 1800ի վերջերը։ Առաջին գաղթականները իրենց բնակութիւնը հաստատած են եղեր այժմեան վերին փոքր բուսած տեղը, ուր յաւուրմ մեռելոց մ՚ալ ունէին շուրջը գերեզմանոցով։ Հաւանօրէն 1500ի վերջերը Հայք թողլով իրենց նախկին մատրան վայրը և թաղը, հաստատուած են այժմեան գտնուած տեղերին, ուր գեղեցիկ և բնդարձակ թաղ մը կազմած են, ուր իրենց անուամբ Հայոց թաղ կը կոչուի։ Այս թաղը 1845 թուին պատահած մեծ հրդեհին ամբողջապէս այրելէ վերջ, ներկայ կանոնաւոր ձեւին վերածուած է, որ Զմիւռնիոյ ուրիշ թաղերու բաղդատմամբ առաջին տեղին կրնայ բռնել։ Ազգային ամենակարեւոր հաստատութիւնները, ինչպէս և կեդեցին, առաջնորդարանը, դպրոցները, հիւանդանոցը, են. կը գտնուին այս թաղին մէջ կամ մօտերը. գանազան թաղերու մէջ ետ կան բաւական թուով հայ բնակիչներ. հարուստ գտնակարգէն մին մ՚ալ կը բնակի ծովեզերեայ բարափանց վրայ։ Քաղաքիս Հայոց թիւը միշտ նոյն եղած չէ, երբեմն երբեմն պատահած հիւանդութիւններէ կամ ուրիշ դէպքերէ նուազած և երբեմն ալ ուրիշ տեղերէ նորեր գալով աւելցած է։ 1631ին 90000 բնակիչներէն 8000ը հայ են եղեր. գար մը վերջը 7000ի իջեր է և 1776ին 6000ի. 1812ին և 1836ին նշանակուած կը գտնենք 10000 հայ, իսկ 1837ին 6000 ու 1840ին 5000. 1862ին բարձրացեր է 12000ի. 1890ին, Թ. Ձեռնարկեան՝ կը գնէ 6683. իսկ այժմ կը համարուի 12000՝ հաշուելով նաև շրջակայ գիւղերու հայ բնակիչները ու պանդխտները։ Հայք թէև քաղաքին բնդհանուր բնակչաց թուոյն քսի փոքր թիւ մը կը կազմեն, բայց միշտ կարեւոր և նշանաւոր դիրք մը բռնած են. թէպէտ թուով բազմացած չեն, բայց միշտ ժամանակին պահանջմանց համեմատ յառաջադէմ բլլալու, գարգանալու փոյթ տանցած են. ազգի մը յառաջդիմութեան կարեւոր ամէն հիմնարկութիւններ



315. Զմիւռնիոյ քարտէզը և մատուռները։

ունին, որոնց վրայ համառօտ ակնարկ մը կուտանք, բնդարձակ տեղեկութիւններ հաւաքելով Հ. Յակոբոս Վ. Քասեանէ, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս գրքի վրայ, յորմէ քաղած ենք կարեւոր ծանօթութիւնները։ Քաղաքիս մէջ կառուցուած գանազան ազգաց և կեդեցիներու մէջ առաջին կրնայ համարուիլ Հայոց Ս. Յակոբեանց գեղեցկաշէն եկեղեցին, որ բարձրացած է քաղաքին գրեթէ միջամասերը։ Հոյակապ առձարս եօթն գուռ ունի, որոնցմէ ամենագեղեցիկն է աւագ գուռն, որուն աջ ու ձախ կողմերը պատին վրայ հաստատուած երկու մարմարեայ քա-

բերու վրայ կան մաքուր գրերով փորագրուած յիշատակարաններ. աջակողմեան է դաւթի յատակը շինող բարերարներու Պալեօղեան եղբարց և կը կրէ 1885 թուականը. իսկ երկրորդը Պօղոս Բ պատրիարքի մահարձանն է 1872 թուականաւ, որուն ասկեղն է նաեւ հանգուցեալին շիրիմը՝ յատակ արձանագրութեամբ: Աւազ գրան ճակտին վրայ կան ուրիշ երկու մարմարիոն քարեր՝ որոնց վրայի արձանագրութիւնները կը յայտնեն հին տաճարի 1688ի երկրաշարժէն կործանիլը, 1689ին վերստին շինուիլը, 1845ին այրիլը և դարձեալ շինուիլը 1853 թուին:



316. Ջմիւռնիոյ քարտիի տեսարանը:

Եկեղեցւոյ գիւանատան արձանագրութեանց գրքին մէջ եղած այլ և այլ յիշատակարաններ չեն յայտներ հնագոյն եկեղեցւոյ շինութեան թուականը: Ներքին տեսքը և ճարտարապետութիւնն աքանչելի է. աչք կը շլացնէն, շքեղ գմբէթը, ոսկեփայլ գեղեցիկ խոյանները, մարմարաշէն բարձր բեմն, մարմարեայ սպիտակափայլ և միակտուր 10 սիւները՝ հինգ մէկ կողմը և հինգ միւսը, կամարակապ ձեղունն, բարձրակառոյց վերնատուներն, բազմաթիւ բարձր լուսամուտներն և սպիտակափայլ մարմարեայ յատակը: Աւազ խորանը նորոգած է Ա. Յակոբ վարդապետ Նախավկային, աջակողմեանը՝ Ա. Յովհաննու Կարապետի և ձախակողմեանը՝ Ա. Աստուածածնի: Եկեղեցւոյ թեւերուն վրայ խաչաձեւ դէպի պարակը բաց եղած երկու փոքրիկ տաճարներ կան. աջակողմեանը՝ Ա. Բարթողիմէոս և ձախակողմեանը Ա. Գէորգիր: Եկեղեցւոյն կռնակը կը բարձանայ սիւնազարդ և գմբէթաւոր գանգակատուներ՝ երկու զանգակներով: 1878ին եկեղեցւոյ մարմարեայ յատակը շինել տուած է Խաչատուր ազգ Գաբրագաշեան, որուն յատակ յիշատակարանը կայ սրահին վրայ հատատաուած մարմարեայ քարի վրայ. ուրիշ յիշատակարան մ՚ալ կայ Խաչատուր ազգ Գաբրիէլեանի՝ որ 1878ին եկեղեցւոյ սրահը ծեփել տուած է իր ծախքով: Եկեղեցւոյ Ա. Գէորգիրի վերնատան պատէն կախուած պատառատանի պատկերը, կրնայ գրեթէ ուր որ համարուիլ, որ նկարուած կը կարծուի 1750ին միջոցները, հայ պատկերահանէ մը. 1845 թուի հրդեհէն այրած են յիշատակարանը և հեղինակի անունը: Ա. Յակոբ վարդապետի եկեղեցւոյ ճարտարապետը եղած է հայազգի էօթակ Մինասի աշխատակիցն Մելքոն Եբրաեան, որ կ. Պոլսէն եկած և անխոնջ հսկողութեամբ աւարտած է շքեղ տաճարս: Աստ գերեզմանը եկեղեցւոյ աւազ գրան կողմը, գաւթի կիսաթոյոր ատիճանի ճիշդ առջեւն է, որուն վրայ կայ 1853 թուականաւ հայերէն և թուրքերէն յիշատակարան: Ա. Յակոբ վարդապետի արեւմտեան, հարաւային և հիւսիսային կողմն սիւնազարդ և մարմարեայ յատակով գեղեցիկ գաւիթ է: — Եկեղեցւոյ պարակը ժամանակաւ գործածուած է իբրեւ գերեզմանոց, ուր կան բազմաթիւ հին՝ 1567 թուէն սկսեալ՝ արձանագրութիւններ ունեցող տապանաքարեր: Պարակը շրջապա-

տող սրմիրու մէջ և ի մասնաւորի մեծ պրան ալ ու ձախ կողմերը ներքուստ հատատուած են քանի մը քարեր՝ Հռոմմայեցւոց ժամանակէն մնացած։ Մեծ հրեհը տապանաքարերու շատերը ապականած է, որոնց մնացորդները յետոյ եկեղեցւոյ շինութեան գործածած են։ Կան նաեւ Գ և Դ. դարերու բարձրաքանդակներ՝ իրր զարդ մնացաքար գործածուած։ Այս զարդերու մէջ է նաեւ Մեծ. Պետրոս Լուսաւորչեանի մահարձանը՝ հանգերձ յիշատակարանով։ Առաջնորդարանը կը գտնուի եկեղեցւոյ պարակին արեւմտեան անկիւնի վրայ, շինուած է 1858ին, արդեամբ Բալեցի Դաւիթեան Թաչատուրի։ Հոս կը կատարուին ու կը կարգադրուին քաղաքիս Հայոց կրօնական, քաղաքական, կրթական ու ազգային գանազան հաստատութեանց վերաբերեալ գործերն ու խնդիրները։ Ազգային վարչութիւնը ունի այլ և այլ ժողովներ՝ Գաւառական, Երեսփոխանական, Կրօնական, Քաղաքական, Առուժնական, Տնտեսական, Դատաստանական, և այլն։ Ազգային վարչութեան և ժողովոյ նախագահն է միշտ տեղւոյն առաջնորդը։ Ջմիւռնիոյ առաջնորդներէն ամենէն ուշի գործունեայ կեանք ունեցած են Պօղոս Թաղիադեան (1872) և Գեր. Մեսրոպ Մուրատեանց՝ որ պաշտօնավարած է նախ 1877էն մինչեւ 1888 յորում հրաժարած է և իրր 12 տարի վերջը պարձեալ տեղացած է նոյն պաշտօնն ու կը վարէ մինչեւ ցայսօր. տասնց ժամանակ հատատուած են բարեգործական և կրթական հիմնարկութեանց շատերը։ Ջմիւռնիոյ առաջնորդական վիճակի մէջ 12 եկեղեցի կայ։

Քաղաքիս ազգային կրթական գլխաւոր հաստատութիւնն է Ս. Մեսրոպեան վարժարանը, որուն տեղը ի սկզբան 1799ին պզտոց մը բացուեր է, և ուր Տէր Յովհաննէս Վանանդեցին սկսած է հայ մանկտւոյն կրթութեան պարապիլ։ Ներկայ վարժարանը հիմնուած է 1825 թուին, Ս. Յակոբեանոս եկեղեցւոյն եկամուտներով, ինչպէս կը յայտնէ պրան ճակատի յիշատակարանը։ Վարժարանիս շինութեան մեծապէս օգնած են ժամանակին Ազգիոյ հիւպատոսաթարգման Պապօեան Գրիգոր ագա և Էքիդեան Աւետիս ագա, որոնց պաշտպանութեամբ, և հսկողութեամբ շէնքը կ'աւարտի և հանդիսապէս կը բացուի։ Այս վարժարանի ամենափայլուն և ոսկի տարիները կ'ըլլան 1831–1845ի միջոցները։ Մեծ առնուն և համբաւ կը հանէ. օտար լեզուաց թատրներ կը ներկայացնէն. հետաւոր վայրերէ աղգամ կը յաճախեն հոս՝ ուսմունք տալիկու և վարժարանէս եկած աշակերտ-



317. Ջմիւռնիոյ Ս. Մեսրոպեան վարժարանը։

ները մեծամեծ պաշտօններու կը հասնին։ Տէր Յովհաննէս վարդապետիէն վերջ, վարժարանիս գլուխ եղած է Յուսիկ Աղբիւրեան Ց. Փափազեան։ Եպիսկոպոսի փոխարքային Պօղոս Պէյ Լուսաւորեան վարժարանիս գաղղիերէն և անգլիերէն լեզուաց ուսուցիչներու համար կատակած է 40000 ֆիորին։ Աղբիւրեան վարժապետը վախճանելով 1877ին, իրեն երախտապարտ աշակերտները հանգանակութիւն բնելով շիրիմ որ կանգնեցին եկեղեցւոյ պարտիզին մէջ։ Վարժարանիս վրայ յաջորդարար աշխատող տեսուչներու

մէջ նշանաւոր հանդիսացած է Մատթէոս Մամուրեան՝ որ երկարժամանակեայ տեսչութեամբը ապրուսի պիրք մ՚ունեցած է. իր օրով կառուցուեցաւ (1875ին) վարժարանիս առաջին յարկերանը։ Վարժարանիս շէնքը 61 մարի ծառայելէ վերջ, հինցած և անյարմար լինելով առողջապահական սկզբանց, Մեծ. Յովհաննէս Սպարթալեանի առաջնորդութեամբ՝ 1886ին հնոյն անդր նոր՝ այժմեան շքեղ շէնքը (թ. 317) կառուցուեցաւ, որուն համար կայ յատուկ յիշատակարան։ Վարժարանս ունի փոքրիկ բաղնիքներ և խմոգարան մը, յորում յատուկ պահարաններու մէջ կան մօտ 2000 կտոր հայերէն, գալլիերէն, անգլիերէն, իտալերէն, ռուսկերէն, յունարէն և ռուսերէն կարեւոր գրքեր։ Ուսումնական խորհրդոյ հրատարակած վերջին տեղեկագրի համեմատ, Մխոթարեան վարժարանս ունի 305 աշակերտ և 17 ուսուցիչ։ Ջմիւռնիոյ ազգկանց Սուրբ Հոխիսխաչեան վարժարանը կառուցուած է նախ 1830–35ի միջոցներն Մեծ. Յակոբ Սարգսեանի ծախքով։ 1845ին ուերիչ հրդեհէն կ՚այրի նաեւ այս վարժարանին շէնքը և երկարդ անգամ կը շինուի կրկնայարկ ու բարուկիր, 1849 թուին, ազնուափայլ Հոխիսխմէ Տիկին Կասանդեանի ծախքով։ Այս վարժարանը 1884ին հնութեանը և անձկութեանը համար կը քանդուի ապրին հաստատութեամբ և ամիջապէս սկսելով նորին շինութիւնը, կ՚աւարտեն շքեղ յօրինուածով ու հանդիսաւոր բացումն կ՚ընեն նոյն տարին։ Ունի 200 կտոր հայերէն և գալլիերէն կարեւոր գրքերու հաւաքածոյ մը։ Աշակերտաց հինգերորդ թիւն է 210 և վարժուհիք 9։ — Ազգային հաստատութեանց մէջ նշանաւոր է նաեւ Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը՝ որ Հայոց թագի հիւսիս արեւելեան կողմը կ՚երեւայ։ Ներկայ հոյակապ հիւանդանոցը, ինչպէս գրան վերը գտեղուած քարի մը վրայի հայերէն, գալլիերէն և թուրքերէն յիշատակարանն կը յայտնէ, նորոգ կառուցած են ի հինգերորդ 1879 թուականին, երկու եղբարքն Յակոբ և Յովհաննէս Սպարթալեանց։ Հիւանդանոցիս անցեալն վրայ, ինչպէս յիշատակարանն կը յայտնէ, առաջին անգամ հիւանդաց ապաստանարան շինուած է 1801ին։ Բարերար Սպարթալեանց մեհարձանները կը գտնուին հիւանդանոցիս պարտէզին մէջ և անոնք յատուկ արձանագրութիւններ. հոն կայ նաեւ գրիւթ մը 1879ին նորոգուած, ինչպէս կը ցուցնէ յիշատակարանն։ Հիւանդանոցս շինուած է ընդարձակ գետնի վրայ և այսպիսի գիմատիրական հիմնարկութեան մը յատուկ ամէն կարեւոր մասերն ունի։ Շէնքին գանազան մասանց մէջ կը տեսնուին Ս. Գրքէն առնուած և ուրիշ յիշատակարաններ։ Եկեղեցին նուիրուած է Ս. Լուսաւորչի, որուն արտաքին տեսքը պարզ է. աջնէն և աջ ու ձախ կողմերը իրեւ զարդ կանդնուած են սիւներ. մասնք վեր կը բանան եկեղեցւոյն շուրջը հատատուած համանուագ ծաղքը։ Ներսի երկու դուռ. աւագ գրան ճակատը հատատուած մարմարեան քարի վրայ արձանագրուած են շինութիւնն՝ որ եղած է 1842ին՝ և նորոգութիւնն (1879ին) յիշատակարանները։ Ընդհանուր է ներքնատան առանց վերնատան. 12 մեթր երկայնութեամբ և 7,50 լայնութեամբ։ Աջակողմեան խորանի պատկերն է Ս. Քառասնից, ձախակողմեանը Ս. Երրորդութիւն և աջակողմեանը Ս. Աստուածածին՝ Յիսուս մանուկը գիրկը։ Դասի ձախ կողմէն գնով մը կը մտցուի ատենապետաց կամ փոքրիկ տաճարը՝ որ ունի արեւելեան պատին վրայ խորանիկ մը՝ պատկերը կը ներկայացնէ Յիսուս և աջ ու ձախը Ս. Յակոբ և Ս. Յովհաննէս առաքեալները։ Այս տաճարս ալ կառուցուած է 1879 թուին, Սպարթալեան եղբարց արդեամբ, ինչպէս կը ցուցնէ, պարտէզին վրայ նայող գրան արտաքին ճակատին վրայ հատատուած մարմարեան քարի վրայի յիշատակարանն։ Եկեղեցւոյն աջ կողմն ալ կայ փոքրիկ մատուռ մը, որ երեք կողմերը սրմեր ունի և ատջնի կողմը բաց է, ուր երկարձեւ զարդատեղ մը հատատուած և ապակեայ փեղկով ու գնակով գոցուած է։ Մատրան մէջ արեւելեան պատին վրայ կախուած է սուրբ Լուսաւորչի պատկեր մը ու աջ և ձախ կողմերն ալ ուրիշ երկու պատկերներ։ Հիւանդանոցս ընդհանրապէս 30–40 հիւանդ կ՚ունենայ միշտ. տարեկան ծախսուց գումարն է

1000–1200 օտանոցան ոսկի, որ կը գոյանայ յատուկ կալուածներէ և Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ մոմի սառկէն։ Հիւանդասոցի հոգաբարձութիւնը կը խնամէ նաև 10–15 անկարող ծերեր և սանդխի շէնքի մը մէջ կը պահէ 20–25 յիմարներ։

Ջմիւռնիոյ մէջ եղած են և կան, Մեսրոպեան և Հռիփսիմեան կրթական հասարակութիւններէ զատ, բաւական մեծ թիւով բարեգործական հիմնարկութիւններ և ընկերութիւններ, որոնց խրթաքանչիւրի վրայ հատուածաձև ծանօթութիւններ տանք։ Սիրելագ ընկերութիւն՝ առաջին անգամ հաստատուած է 1841ին Մեսրոպեան վարժարանէն ելլող աշակերտներէն, որոնց նպատակն էր լրացում մայրենի գաղափարագումն, Աշխարհ, Պայրնարբի, Մանթայի և Մելնէյէնի մէջ կը բանան դպրոցներ. այս ընկերութիւնը 1845ին հրդեհին կ'ոչնչանայ։ Թէև 1879 թուին վերաբան նոյն անուանը ընկերութիւնն մը կ'ելլէ՝ բայց առանց յիշատակելի արդիւնքի մը, կարճ կեանք մը կ'ունենայ։ Աղքատասիրաց ընկերութիւնն հիմնուած է 1843ին և տեւած է մինչև 1846 տարին։ Այս ընկերութիւնն ապարան ալ եւս բանալով հրատարակած է Հայրենասէր անուն քաղաքական, բանասիրական և առեւտրական օրագիրը։ Այս ընկերութիւնն նման Հաշտանոցի Միութիւն անուամբ ընկերութիւն մը՝ թիրթ մը հրատարակած է 1861–1862½, և նիհիլական պետութիւն պահպանութեամբ կարճ կեանք մը ունեցած է և ընկերութիւնն քայքայած։ Աղքատասիրաց ընկերութիւնն 1861 թուին ունեւոր և ազգասիրական անձանց նախաձեռնութեամբ, երկար ու արդիւնաւոր կեանք մը ունենալէ վերջ 1894 թուին ոչնչացաւ։ Ընկերութիւնս ունէր 40 յօդուածէ բաղկացած կանոնագիր մը։ Ազքատախնամ ընկերութիւնն հաստատուած է 1896ին, բազմաթիւ գաւառներէ գաղթող Հայերու օգնելու նպատակաւ. այս ընկերութիւնը տակաւին գոյութիւն ունի և իր գործունէութեամբ կարող է օր մը հատասարիլ նախորդ Աղքատասիրաց ընկերութեան։ Գաղթական Հայ Ընկերակցարան հիմնուած է 1868ին և արդիւնաւոր տարիներ բոլորած։ Այս Ընկերակցարանի հիմնուելուն գաղափարն յղացած են Գարեգին Յ. Փափազեան և Գաբրիէլ Կասատունեան հայ պետականագէտները։ Ասոր նպատակն է ազգին մէջ ընկերակցական ոգին տարածել. ունի յատուկ կանոններ։ Ընկերակցարանս ժամանակաւ




318. Ջմիւռնիոյ Ս. Լուսաւորչեան հիւանդանոցի ճակատը։

քաղաքական ընկերակցութիւն հաստատուած է 1896ին, բազմաթիւ գաւառներէ գաղթող Հայերու օգնելու նպատակաւ. այս ընկերութիւնը տակաւին գոյութիւն ունի և իր գործունէութեամբ կարող է օր մը հատասարիլ նախորդ Աղքատասիրաց ընկերութեան։ Գաղթական Հայ Ընկերակցարան հիմնուած է 1868ին և արդիւնաւոր տարիներ բոլորած։ Այս Ընկերակցարանի հիմնուելուն գաղափարն յղացած են Գարեգին Յ. Փափազեան և Գաբրիէլ Կասատունեան հայ պետականագէտները։ Ասոր նպատակն է ազգին մէջ ընկերակցական ոգին տարածել. ունի յատուկ կանոններ։ Ընկերակցարանս ժամանակաւ

տարեկան է Հայրենասէր անուն քաղաքական, բանասիրական և առեւտրական օրագիրը։ Այս ընկերութեան նման Հաշտանոցի Միութիւն անուամբ ընկերութիւն մը՝ թիրթ մը հրատարակած է 1861–1862½, և նիհիլական պետութիւն պահպանութեամբ կարճ կեանք մը ունեցած է և ընկերութիւնն քայքայած։ Աղքատասիրաց ընկերութիւնն 1861 թուին ունեւոր և ազգասիրական անձանց նախաձեռնութեամբ, երկար ու արդիւնաւոր կեանք մը ունենալէ վերջ 1894 թուին ոչնչացաւ։ Ընկերութիւնս ունէր 40 յօդուածէ բաղկացած կանոնագիր մը։ Ազգասիրական

կրկին սրահներու, մին՝ իր պատուն, յատուկ 5000է աւելի գրքեր կան, և միւսն՝ իր ընթերցասրահ։ Ունի նաեւ բազմաթիւ անպիսիներէն և գալլիերէն գրքեր և ազգային ու օտարազգի լրագիրներ ու հանդէսներ։ Ընթերցարանիս նիւթապէս և բարոյապէս պաշտպան հանդիսացած են բազմաթիւ ազգային յայտնի անձնաւորութիւններ։ Ազնուական ընկերութիւն կազմուելով 1873ին, նախ կը կոչուի Ազատմնասիրաց անուամբ. սա գոյութիւն ի՛նունեայ մինչեւ 1882 թուականը և իր իննամեայ կենաց մէջ բաւականաչափ օգտակար կ՛ըլլայ. ոչ սակաւ աշակերտներ



319. Զմիւռնիոյ Ս. Լուսաւորչի եկեղեցին։

յառաջած են ընկերութեանս գաւառացիները և իրենց սորվածին շնորհիւ քիչ շատ ապրուստնին ճարած։ Վահան Գողմիացւոյն անուամբ կոչուած վանականաւ ընկերութիւն տեւած է 1874էն 1878. սոր նպատակն էր երաժշտութեան ոգին արծարծել ազգին մէջ։ Հոգեւոր ընկերութիւնը հաստատուած է 1879ին քաղաքիս քանի մը պիտասիրտ տիկիններէ և օրիորդներէ. սոր նպատակն է Մեսրոպեան և Հռիփսիմեան վարժարաններու ազգատիկ տուներու պիտոյք հոգալ. 18 տարի անպատար գործած է իր նպատակին համաձայն։ Որբախնամ ընկերութիւնն ալ հայ օրիորդնե-

րէ հաստատուած է 1891 թուին. սոր ալ նպատակն է նիւթապէս և բարոյապէս որբ աղջիկներ խնամել ու կրթել։ 1893ին Հոգեւոր և Որբախնամ ընկերութիւնները միանալով բացին աղջկանց որբանոց մը, յորում կը պահուին 36 որբուհիներ։ Նոյնպէս օրիորդներէ հաստատուած է Հռիփսիմեան կրթասէր ընկերութիւն 1881ին. սոր առաջին նախագահ եղած է Մ. Մամուրեան։ 1888ին ընկերութիւնս կը բանայ մանկապարտէզ մը, որուն երկսեռ աշակերտաց թիւն այժմ է 64։ Ունի յատուկ կանոնադրութիւն և ծրագիր։ Ուրիշ մանկապարտէզ մը եւս կայ կրթութեան ընկերութեան խնամոց ներքեւ և ունի 148 երկսեռ աշակերտներ։ Աբեղեան Ակումբը հաստատուած է 1886ին ազգին կարող և ձեռնհաս անձինքներէ. նպատակն է անդամ և բաժանորդ գրասղներու գրօսանաց միջոցներ հայթհայթել, տեղական և մասնաւոր բոլոր եւրոպական թերթերու ընթերցանութիւնը պատրաստել։ Աղպամեան թաղն է մօտ 100. ունի յատուկ կանոնադրիր։ Ազատմնասէր ընկերութիւն կազմուած է 1887ին. նպատակն է երբեմն երբեմն Մեսրոպեան կամ Հռիփսիմեան աշակերտներէն մէկ քանին Եւրոպա դրկել բարձրագոյն ուսմունք սորվելու նպատակաւ. այդ աշակերտները պարտական են քանի մը տարի վերադիշեալ վարժարաններու մէջ ուսուցչութեան պաշտօն վարել։ Մեսրոպեան գրասիրաց ընկերութիւն հաստատած են 1891ին Մեսրոպեան վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները, որոնց նպատակն է հասակաւոր անուս ազգայնոց գասեր աւանդել, կարդալ, գրել և հաշիւ սորվեցընել։ Ընկերութիւնս 1897ին, Եւրոպայ մէջ կազմուած «Երիտասարդաց Քրիստոնէական Միութիւն» անուն ընկե-

բութեան 5383ով ճիւղն անուանուեցաւ։ Ունի մասնաւոր կանոնագիր։ 1895 թուին Մեծ. կարապետ Ազգապետ իր ծախքով շինել կու տայ քաղաքիս Ս. Յակոբեանոսի պարտէզի մէջ Աղուհատաձոց մը, որուն մէջ կան հիւանդութեան, թիֆիզագործութեան և կոշկակարութեան յատուկ բաժանմունքներ։ Գրատիրաց ընկերութիւնը հաստատուած է 1896ի դեկտեմբերին և հազիւ տարի մը կեանք ունեցած է։ Հաստատողներն էին Հոխոխեան վարժարանի բարձրագոյն կարգի ուսանողք. նպատակն էր թշուառներու վիճակը բարւոքել։ Նկարահանութեան ընկերութիւնն հաստատուած է 1897ին, թումբ ու զեղատիրա երիտասարդներէ. ունին կանոնագիր և կը խնամեն ու կը կրճեն 50ի չափ հայ որբեր։

Ակնարկ մ'ալ տանք Ջմիւռնիոյ ազգային տպարաններու և այլ և այլ հրատարակութեանց վրայ։ Քաղաքիս առաջին հայ տպարանն կը բանայ ոմն Մարկոս 1759ին, ուր կը տպուին Մեկնութիւն ժամակարգութեան, Եղնիկ և խորհրդատետր մը։ 1832–40ի միջոցները կը յիշուի Ս. Մեսրոպեան վարժարանի տպարանը, ուր այլ և այլ գրքեր դատ լոյս կը տեսնէ նաեւ Յովհան վարդապետ Ակնցիի Ակնարքը։ Նոյն միջոցները ամերիկեան և անգլիացի բողոքական ընկերութիւններ՝ Մալթայէն Ջմիւռնիա փոխադրելով իրենց տպարանը, հայկական տառերով բայց տաճկերէն լեզուով կը հրատարակեն այլ և այլ աննշան տետրակներ և Շոտլանդաց պիտանի գիտելեաց ամսաթերթ։ 1840 տարւոյն Յակոբեանոս Պապօճանցի տպարանի մէջ սկսաւ հրատարակուիլ Աչքալոյս Ազգասէրաց քաղաքական, բանասիրական և առեւտրական օրագիրը, որ 1844 թուին ունեցաւ յատուկ տպարան իր տնօրէնը և հրատարակութեան մինչեւ 1886 թուականը։ Ցարտաս և արդիւնաբեր կեանք ունեցած է Ցէտէեան Եղբարց տպարանը, որուն հրատարակութիւնը կ'սկսի 1853ին։ Այս տպարանէն լոյս տեսած է Աւրիի Ազատասէրաց բանասիրական, ուսումնական և տնտեսական օրագիրը 1853էն մինչեւ 1856 թուականը։ Հրատարակուած են տպարանէս 80 ի չափ վէպեր և պատմութիւններ, 20ի չափ կրօնական գրքեր և 10ի չափ կրօնական գրքեր։ Հոս տպուած են Մ. Մամուրեանի, Գրիգոր Մսերեանի, Տիգրան Ց. Տէտէեանի, Գրիգոր Զիլինկիրեանի, Մ. Նուպարեանի, և ուրիշներու թարգմանութիւնները. Գ. Պատկանեանի, Խորէն և պիսկոպոս Մխիթարեանի և այլոց հեղինակութիւնները։ Նոյնպէս հոս լոյս տեսած են Գարուն Հայաստանի թերթը 1862ին, Ցաւերժահաս հանդէսը 1862ին, Ծաղիկ՝ 1862–1867, Մխոյրիճ՝ 1861–62½ և Դիմակ՝ 1862՝ հանդէսները, որոնք շատ կարճ կեանք ունեցեր են. ինչպէս նաեւ Սարգիս Մի-



320. Մ. Մամուրեան։

նասեանի Իրաւունք քաղաքական լրագիրը 1867–8։ 1854 թուին կը յիշուին Թուրքակի և Երիկաւի տպարանները։ Ասոնք հաստատուած էին Մեսրոպեան վարժարանի երկու խումբ կազմած աշակերտներէն, որոնք տպարան բանելու արժանաւորութիւն չունէին և ամենաքարճատեւ ժամանակ գործած են իրարու մրցակից։ Քաղաքիս հայ տպարաններու մէջ ամենէն կատարելագործեալը կընայ համարուիլ Թաթիկեան տպարանը, որ ի սկզբան 1844ին իբրեւ վիմագրատուն նշանաւոր եղած է և 1864ին բուն տպագրատուն դառնալով հրատարակած է հայերէն, յունարէն, գալլիերէն, անգլիե-

բէն, խոալերէն, տաճկերէն և երբայեցերէն լեզուներով այլ և այլ թերթեր, տեարներ, տեղեկագրեր և պլրոցական գրքեր։ Courrier de Smyrne թերթն ևս հոս կը տպուի։ Տպարանս շատ լեզուներու տառեր, արագատիպ մամուլ և զանազան գործիքներ ունի. իսկ վիմագրութեան մէջ ալ մաքրութեամբ և գեղեցկութեամբ մրցակից է ուրիշ ազգաց նոյն տեսակ հաստատութեանց հետ։ Կարճատեւ կեանք մը ունեցած է Գրիգոր Մսերեանի տպարանը 1877էն 1880, ուր լոյս տեսած է վեցամսեայ Մեսրոբա անուն ուսումնական թերթը։ Հոսկ ուրիշ իրրեւ նորագոյն հաստատութիւն ւը՝ յիշենք Մամուրեան տպարանը, հիմնուած 1883ին. այդ թուական տառէն առաջ Աբեղեան Մամուլը կը տպուէր քաղաքիս ուրիշ տպարաններու մէջ։ Մամուրեան տպարանը Աբեղ. Մամուլէն գատ տպած է ու կը տպէ զանազան պլրոցական գրքեր, տեարներ և տեղեկագրեր։

Տեղւոյս հայ ժողովուրդը իր կրօնական և կրթական ազգային հաստատութեանց միշտ բարերարութիւն րրած է. այսպիսի բարերար անձանց շնորհիւ եկեղեցիները, հիւանդանոցը և պլրոցները շինուած և կազմածներու տէր եղած են։ 1850 թուականէն սկսեալ նշանակուած կան այդ բարերարներու և նուիրատուներու անուանները, անկէ առաջ եղող բարերարներու անուններու ցանկ չկայ, թերեւս 1845 թուի հրդեհը մոխիր դարձուցած է ուրիշ արձանագրութեանց հետ։ — Ջմիւռնիոյ Հայոց մէջ ամէն գաւակարգէ անձինք թէ անցելոյն մէջ եղած են և թէ ներկայիս կը գտնուին։ Պակաս եղած չեն այնպիսիները՝ որ տեղական կառավարութեան առջեւ՝ իրենց պիրքով մեծ ազդեցութիւն ունեցած և օտարներէ մեծ պատիւ գտած են։ Քաղաքիս հայն տուած է ազգին՝ կաթողիկոսներ, պատրիարքներ, նշանաւոր եկեղեցականներ, վարժապետներ, գրագէտներ, արհեստագէտներ, վաճառականներ, և այլն։ Տեղւոյս Հայերէն Ապրօեան գերդաստանը ի հնումն շատ նշանաւոր եղած է։ Աբրահամ (Ապրօ) չէլէպին Պէլկրատէն կ'ելնէ, յԱմերիա կ'երթէ, հոն եկեղեցի կը շինէ ու կը զարգարէ. Մալթա կը մնայ, կը հաստի կրնայ և հոն եկեղեցի կը գնէ ու ծանրագին կահիրով կը զարգարէ. Ջմիւռնիոյ մէջ ևս բարիքներ կ'ընէ. կը մնայ կ. Պոլիս՝ գերիներ կ'ազատէ. կ'երթայ Օֆիա, հոն ևս եկեղեցի կը հիմնարկէ և վերջապէս կը մնայ յԱրիանուպոլիս։ Այս գերդաստանի շառաւիղներէն գոն կան և մին՝ Ալեքս Ապրօ՝ իշխան Բագրատունի կոչուածը, կը բնակի Նափոլի։ Աբրահամ չէլէպին է, որ անծանօթաբար կը մնեմնայ Ռուսաց Մեծն Պետրոս կայսեր, և օր մը Մեծն Պետրոս՝ ի ցոյց իրեն բարեկամութեան՝ անոր յիշատակարիր մը կու տայ, զոր բանալով ընթերցողի կը հանդիպայ լէ իր բարեկամն Մեծն Պետրոս է, և այդ գրով հրամայած՝ որ Ապրօեան գերդաստանի ներկայ ու ապագայ որդւոց վաճառքն Ռուսիա մտնելու առեն կէս մաքս միայն առնուի։ Այս յիշատակարիրն Ջմիւռնիա է այժմ Ապրօի միւս ճիւղի ժառանգներու քով և մինչև 3000 ոսկի առաջարկուած է շատերէ։ Անցեալ գարու առաջին քառորդին կը յիշուին Պապաճան և Լքիզեան ընտանիքները, քանի մը տասնեակ տարիներ առաջ ալ Սպարթալեան Յակոբ և Յովհաննէս եղբարք՝ մեծ անուն ունէին առեւտրական աշխարհի մէջ։ Նկարագիս շատեր՝ իրենց հմտութեամբ՝ կառավարութեան այլ և այլ պաշտօններու բարձրացած են։ Հայեր պաշտօն կը վարեն հիւպատոսներու մօտ, իրրեւ առաջին թարգման, շատեր՝ իրրեւ առաջին կամ երկրորդ կարգի պաշտօնեայ կը գործեն հանրօգուտ հաստատութեանց և բնակութեանց մէջ։ Հայերը դիւանագործարար նշանաւոր եղած են վաճառականութեամբ. տեղւոյս հայն երկու դար առաջ Հոլանտացւոց և դեռ աւելի առաջ Պարսկաստանի հետ առեւտրական յարաբերութեանց մէջ էր։ Յարաբերութիւն ունի նաեւ եւրոպական զանազան քաղաքներէ գատ Հնդկաստանի, Եգիպտոսի, Դամասկոսի, Հալէպի և Ամերիկայի հետ։ Արուեստները այնչափ ընդհանուր տարածուած չեն Հայոց մէջ. կը գրանուին անոնք թուով ժամագործ, ոսկերիչ, երկաթագործ, կօշկակար, տաղտկագործ, դերձակ, վերմակագործ, դեղագործ և այլն։ Կը գտնուին նաեւ բժիշկներ, փաստաբաններ և հրատարակագիրներ, որոնցմէ ոմանք՝

իրենց մասնագիտութեամբ մեծ անուն և համբաւ ունին։ Կան քանի չափ բաւական պրամագլխոյ ալէր կալուածատէրներ, իբր քանի առաջին կարգի եւրոպական ձեռնարկներու վաճառականներ. բամբակի, ցորենի, թուղի, չամչի և ափիոնի վաճառականաց թիւն է 30։ Մանրավաճառք թուով հինգ. նոյնչափ ալ ոսկեթել նախիճիրնաց վաճառական։ Տեղւոյ ազգութեան պատճառաւ գանց կ'ընենք յիշել յանուանէ ոչ սակաւ ազգային գրագէտներ, հրապարակագիրներ և լրագրաց խմբագիրներ։ — Ս. Աստիսանոսի եկեղեցւոյն պարապմունքն գաս, Հայք ունին նորագոյն գերեզմանատուն մը քաղաքին հարաւ–արեւելեան կողմը, Գան–Զէյմէ բառած տեղը, հաստատուած 1884 թուին։ Գերեզմանատունս շրջապատեալ է քարաշէն սրմոմ. մէջը կը գտնուի փոքրիկ մատուռ մը՝ Ս. Յարութիւն անուամբ, կառուցուած 1884 թուին, Գէորգ Մ. Սուլթանեանի ծախքով, ինչպէս կը յայտնէ հիւսիսային սրմի վրայի յիշատակարանն։ Կան բաւական շքեղ շիրիմներ, գամբարաններ և մահարձաններ մարմարիոն քարէ. նշանաւոր և ամենաշքեղ է Յակոբ Թոզուոր Զելիկի շիրիմն։

Կաթոլիկէ Հայոց վրայ եւս ակնարկ մը ասնք, որոնք գաղմած են գանազան ժամանակներ. առաջին գաղթականներն են Պարսկահայք, գրեթէ մէկ ու կէս դար առաջ, երկրորդն են Ակնիբացիք՝ դար մը առաջ, և երրորդք՝ Կարնոյ, Սկաւառիոյ, Տիգրանակերտի և այլ կողմերէ եկածներք, անցեալ դարու կէսէն սկսեալ մինչեւ մեր օրերը։ Առաջին գաղթականք իրենց հոգեւոր հովիւներու՝ Մխիթարեան Երդարց առաջնորդութեամբ, եկած են Զմիւռնիա հաւանականօրէն 1730–40ի միջոցներր. ասոնք ի սկզբան 40–50 տարի իրենց կրօնական ազգային սովորութիւններր անխախտ կր պահեն, բայց կամաց կամաց անհոգ գանուելով իրենց սերնդոց աւանդելու ազգային լեզուն ու սովորութիւնները, խառնուած են օտարներու հետ և այժմ կան իրր 150–200 ընտանիք, որոնց սերունդը լաւին հասարակութեան մէջ առաջնակարգ դիրք մր բռնած են և միայն իրենց երրացեալ հնչմամբ կր յայտնուի հայ ծագումն ունենալնին։ Պարսկահայք ի սկզբան իրենց հոգեւոր պաշտամունք կր կատարէին Ս. Կուսի նուիրուած մատրան մր մէջ, յորում սեղանի վրայ կանգնած էին հայերէն երկրէն բերուած հնամակ արձանիկ՝ Ս. Աստուածածնի արձանր։ 1775ին կատարուած նորոգութեանց առթիւ՝ մատուռս ալ կ'անուսի ամբողջովին Ս. Պողիկարպոս եկեղեցւոյն մէջ, և իրրեւ անոր գերթ եղած թիւ մր կր ձեւանայ։ Միաբանող Երդարց կարգին վերջանալով՝ կաթոլիկեայ Հայք կր մնան առանց հովիւի և օտարաց հետ կր ձուլուին։ Պարսկահայ գաղթականութեան իրր յուշարար կր մնան տապանաքարեր՝ հայերէն արձանագրութիւններով. ասոնք կր գտնուին եկեղեցւոյն յատակր հոս հոն գրուած կամ գաւիթը. շատերն ալ շինութեանց գործածուած են։ — Երկրորդ կաթոլիկեայ հայ գաղթականք են Գաղատացի վաճառականներ՝ 1790ին վերջր եկած Զմիւռնիա. ասոնք ի սկզբան Պարսկահայոց հետ այնչափ սերտ յարաբերութեան մէջ չէին։ Մինչեւ 1828 թուականը, ասոնց մկրտութիւն, պսակ և թաղումն կր կատարէին Հայոց ախթարէրերր և առանձին հովիւ չունէին. սակայն իրենց մէջ գրեթէ անպակաս գտնուած են վարդապետներ և կրօնաւորներ։ Այս գաղթականք եւս եկեղեցի և դպրոց չունենալով, կամաց կամաց Պարսկահայոց վիճակին կր լծուին։ Ս. Պողիկարպոս եկեղեցւոյն յատակր ծածկող Պարսկահայոց հայերէն գրերով գերեզմանաքարերն քով կան շատ թուով Գաղատացի Հայոց գերեզմանաքարեր, որոնց վրայ հայերէնի տող խառնուելն կամ լսուիլն յիշատակարաններ քանդակուած են։ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնր 1840 թուականէն սկսեալ կ'աշխատի քաղաքիս Կաթոլիկեայ Հայոց վրայ և 1854ին ունեցած են յատուկ մատուռ մր։ Անցեալ դարու կէսէն վերջր երթալով բազմացած էր Գաղատացւոց թիւր, մանաւանդ ուրիշ այլ և այլ քաղաքներէ՝ նորանոր բնակութիւններու Զմիւռնիա գաղթելովը, պատկառելի թիւ մր կազմուած էր։ Վերջին գաղթականներու ջանքով և միմիւներով, 1883 թուին քաղաքիս կեդր. Հայք առանձին ժողովրդապետութիւն մր

կազմեցին և առաջին ժողովրդապետն եղաւ Հ. Սահակ Վ. Թոռնեան. որուն յաջորդած են մինչեւ ցայժմ Վիեննայի Մխիթարեան-ներէն։ 1894 թուին, Աբեղայութէր Լուսն ԺԴ. քահանայապետի մէկ կոնդակին հա-մաձայն, անզուգ կ[illegible]. Հայք՝ լսարին իրաւասութենէ բոլորովին անկախ և ազատ եղան, միանգամայն Կ. Պոլսոյ կ[illegible]. Հայոց հոգեւոր իշխանութեան հետ. իրենց առաջին առաջնորդ եղաւ Գեր. Հ. Ներկոզեան Ծ. Վ. Աւգերեան։ Այսօր լսարին ծխին յարող ընտանիքներէն ամենք գաթան և իրենց նախկին ծխին գրուեցան Կաթոլիկեայ հայ ժողովրդապետութեան ցանկին մէջ։ կ[illegible]. Հայք 1883ին կը հաշուէին 30 ընտանիք, 1890ին եղան 90 և այժմ են 150 ընտանիք աւելի. մեծամասնութիւնը կը կազմեն Գաղատացիները և ապա Կարնեցի, Եւդոկիացի, Սիւրմատացի, Կեսարացի, Տիգրանակերտցի և Կ. Պոլսեցի ընտանիքներ։ Այսոնց մէջ կը գտնուին ամէն կարգի և առեւտրանի անձինք. բժիշկ, դեղագործ, փաստաբան, վաճառական, արուեստաւոր և գործաւոր վաճառատանց և հաստատութեանց մէջ առաջին կամ երկրորդ կարգի պաշտօնեաներ։ Վիեննայի Մխիթարեանք ունին վարժարան մը որ ժամանակաւ գիշերօթիկ աշակերտներ եւս պահած է. այժմ ունի 60–70 աշակերտներ՝ հայ, յոյն և լսարին։ — Զմիւռնիոյ թեմգպարանաց գլխաւորն ու հարուստագոյնն յունականն է. ուր կան 300000 հաւատք գիրք և 200 եկեղեցիք. ասոր մէջ, բազմաթիւ և այլ և այլ պատճառներէ զատ կը պահպանի Հայոց Լուսն թագաւորի անմոռանալի յիշատակը, որուն վրայ քանդակուած են առիւծի և ոչխարի գլուխներ՝ ծագկազարդ գլուխներով և մէջտեղ կանգնած է Լուսն՝ գլուխը թագ և ձեռքը գաւազան. նոյնը ճաշակաւ և ընտիր արուեստով գործ մ'է։

Այժմ համառօտիւ ծանօթանանք նաեւ Զմիւռնիոյ շրջակայ Պուռնապատ, Թորաքիւ, Գարագաշ և կեօզ–Թէփէ անուն գիւղերու հետ։ Պուռնապատ՝ որ այս գիւղերէն առաջին տեղին կը բռնէ, կ'իյնայ Զմիւռնիոյ արեւելեան կողմը բարձրացած լերանց շղթային առջեւ՝ գաշտագեղ մը վրայ։ Ունի գեղեցիկ և ճաշակաւոր զարդարուն եւրոպական պարտէզներ, լայն ու ընդարձակ ծառուղիներ և ջրոյ յատուկ ճամբաներ։ Բնակիչներն են Յոյնք, Լատինք և Հայք։ Յոյնք ունին մեծ ու փոքր երկու եկեղեցի, Լատինք նոյնպէս երկու եկեղեցի և մատուռ մը. իսկ Հայք՝ որ հազիւ 15–20 տուն կրնան ըլլալ, ունին Ս. Խաչ անուամբ եկեղեցի մը։ Հայոց եկեղեցին կառուցուած է քարաշէն 1863ին և ատոգ գրան ճակատը ունի յիշատակարան. 1880ին երկրաշարժէ մեծապէս վնասուելով, հաստատուն կերպով նորոգուեցաւ, որպեսզի Էջմիածնի Յակոբ և Յովհան սրանելոց, ինչպէս կը յայտնէ ատոգ գրան դիմացը, չորս սիւներու միջավայրը հաստատուած մարմարիոն քարի մը յիշատակարանն։ Ներքնատան պարզ՝ բայց սիրուն է. յատակը ծածկուած է մարմարիոն քարերով։ Ատոգ խորանի պատկերը կը ներկայացնէ Ս. Աստուածածնին, աջ ու ձախ գտնուած խորաններէն մին Սիրա Քիսուսի և միւսն Ս. Յովհաննու պատկերները։ Ունի քանի մը պատկերներ, հանդերձ յիշատակարաններով։ Զանգակատունն ալ յիշատակարան ունի. շինուած է 1880ին, եկեղեցիս նորոգող Յակոբ և Յովհան Եսայեանց ձեռքով։ Գիւղս գպրոց չունենալով, հարուստներու տղայք կ'երթեւեկեն քաղաքին վարժարանները, իսկ աղքատները կը յաճախեն Քուռաց գպրոցը։ Քանի մը տուն Կաթոլիկեայ Հայեր եւս կան հոս։ — Թորաքիւ գիւղը Զմիւռնիոյ հիւսիսային կողմը՝ ճիշդ դիմացը կ'իյնայ։ Առաջակողմը կը տարածուի ծովախորշը, կռնակը մերկ ու չոր ապառաժուտ լեռներ, որոնց ստորոտը կը տեսնուին այգիներ և պտղատու ծառեր։ Իր ընդարձակութեամբը և նորանոր շինութիւններով գիւղաքաղաքի մը կերպարանք առած է։ Մոլէն փոքր շոգենաւերով և գամպէնն շոգեշարժ կառախմբով հաղորդակցութեան մէջ է Զմիւռնիոյ հետ՝ որուն կայարանէն 11 հազարամեայ հեռաւորութիւն ունի։ Գիւղս Հայերը բաւական բազմաթիւ են, իբր 150 տուն, և յատկապէս գիրք մ'ունին. կան նաեւ 10 տուն Կաթոլիկեայ Հայեր։ Ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին՝ կառուցուած, արձանագրութեան համեմատ՝ 1871 թուին, Զմիւռնիոյ և գիւղս

բարեսէր ազգայնոց արդեամբ։ Վերնատունը շինուած է 1895 թուին, եկեղեցւոյս արդեամբ և ունի յատուկ յիշատակարան։ Եկեղեցիս ներքուստ անզարդ է և պարզ։ Տեղւոյս Հայերը 1897ին ունեցան քարաշէն, երկու յարկով երկհեա վարժարան մը, ուր ճակատը հաստատուած է յիշատակարան մը. կառուցուած է Ազահիքեան բնատնիքէն։ Վարժարանս կը կոչուի Սահակ–Վարդուհեան. վարի յարկը մանչերու, իսկ վերինն աղջիկներու յատկացուած է. աշակերտութիւնը 80ը կ'անցնի։ Ունին նաեւ Մանկապարտէզ մը 25 աշակերտներով։ 1891ին ունեցան յատուկ գերեզմանատուն Ակա–Պէյ անուն գիւղակին կռնակը, շրջապատուած քարաշէն ոմով. ունի յիշատակարան, որ կը յայտնէ թէ գերեզմանատունս իր ծախքով գնած և պարսպապատած է վսեմ. Կարապետ էֆ. Պալեօզեան, և նուիրած է գիւղիս ազգայնոց։ Ամէն առաջ Հայք իրենց ննջեցեալները կը թաղէին Զմիւռնիոյ մեծ գերեզմանոցը։ – Գարաբաշ՝ կառուցուած է ապառաժուտ տեղ մը, քաղաքէն հեռուն գրեթէ քառորդ ժամու հեռաւորութիւն ունի։ Զոր ու քարուտ լերանց հողի վրայ շինուած տուներուը գեղեցիկ տեսարան մը կ'ընծայեն։ Բնակչաց մեծագոյն մասն են հայ և հրեայ։ Հայերը ունին Պայծառակերպութիւն անուամբ եկեղեցի մը 1843ին կառուցուած. աւազ խորանը նուիրուած է Քրիստոսի Պայծառակերպութեան, իսկ աջ ու ձախ գտնուած խորաններէն մին՝ Ս. Պօղիկարպոսի և միւսն՝ Ս. Նիկողայոսի։ Ձախակողմեան աւազա-



321. Զմիւռնիոյ Գարաբաշ գիւղի տեսարանը։

նան մէջ գտնուած է մարմարեայ մկրտարանն, որ ունի 1872 թուականեան նուիրատուին յիշատակարանը։ Որմերու վրայ կախուած քանի մը պատկերներն ալ ունին նոյնպէս յիշատակարաններ։ Եկեղեցիս երկրորդ անուն մ'ալ ունի Ս. Կարապետ (Գերեզմանատունը), որուն պատկերը կանգնուած և արծաթեայ գանազան նուէրներով զարդարուած է։ Եկեղեցւոյս պարտէզին մէջ կը թաղէին իրենց ննջեցեալները մինչեւ 1889 թուականը. իսկ այժմ քաղաքի մեծ գերեզմա-

նոցը կը տանին։ Պարտէզի մէջ գտնուած շիրիմներու թուականները 1860էն ասդին են և հիներ չկան։ Հայոց վարպետնան երկսեռ վարժարանն կառուցուած է գեղեցիկ դիրքով եկեղեցւոյ հիւսիսային կողմը։ Շինուելնան թուականն է 1890. ճակատն ուղիղ յիշատակարան։ Երկսեռ աշակերտաց թիւը 100ը կ'անցնի։ Գարաթաշի Հայերը ունին նաեւ Մանկապարտէզ մը՝ 60–70 աշակերտներով։ Տեղւոյս Հայերը 250 տուն չեն ալ, մեծաւակաս դիրքերու Հայերն ալ տանելով, ինչպէս Սարահանեի, Գարահրիճայի, ուր չկան եկեղեցի և դպրոց, ամբողջին թիւը կը հասնի 320 տան։ — Կէօզ–Թէփէ գիւղն Ջմիւռնիոյ հարաւ–արեւմտեան կողմը տարածուող լեռնաբլրակներուն վրայ և տասրոտ ծովուն ափունքը շինուած է։ Բնակիչք մեծ մասամբ Քոյներ են, իսկ Հայերը ձմեռը հազիւ քանի ութ տուն, ամառը 25–30 ընտանիք կը հաշուին։ Ջմիւռնիոյ Հայ հարուստ դասակարգէն ոմանք գիւղս ամառնային օգտախուսիման վայր ընտրած են և ունին սեպհական երկիրներ, տուներ ու պարտէզներ։ Տեղւոյս Հայերը ունին փոքրիկ եկեղեցի կամ մատուռ մը Ս. Երրորդութեան նուիրուած, որ կառուցուած է ամբողջ քարաշէն 1870ին, և պարտէզով շրջապատուած է։

ՋՄՈՒՆՑ. — Գիւղ Ռումանիոյ Տէգուչ գաւառի, հազիւ քանի մը տուն հայ բնակիչ ունցած են։

ՋՈՒ կամ ՖԱՓԻՀ ՊԷՑ ԴԻՒՂ. — Գիւղ Սղերտի. երբեմն բոլորովին հայաբնակ էր և 200 տուն կար. իսկ այժմ միայն 80 տուն հայ և 150 տուն քուրդ ունի։ Հայերը եկեղեցի մը ունին, բայց դպրոցէ զուրկ են. կը խօսին հայերէն խորթ լեզու մը։

ՋՈՒՆՔ. — Գիւղ Խարզան կամ Արգան (Աղձնիք) գաւառակի, որուն մէջէն կ'անցնի Արգն անուանով վտակ մը, զոր տեղացիք Արգան–սույը կը կոչեն։

ՋՈՒԱՆՑ. — Կարնոյ գիւղերէն մին, աւերմտեան հարաւային կողմը։

ՋՈՒԱՐ կամ ՋՈՒԱՐԻ ՎԱՆՔ. — Միւնեաց Արեւիք գաւառի մէջ կայ այս անուամբ հին պիւզանդեի մը. կանգուն է միայն եկեղեցին, ուր ուխտի կու գան վարպետներ։ Ղափանեցւոց պատմութեան մէջ կը յիշուի իբրեւ աւան, ուր գրկեց Պապ Լեւոնդ ձորի թագը գիւղերու կապուտը ու կողպուտը։ Մեղրիի գետն գիւղս անուամբ Ջուար չայ եւս կոչուած է։

ՋՈՒԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑԻ. — Հնապաշտեան եկեղեցւոյ նկարագրութիւնն բրած ենք Ագապարի Ս. Գրիգոր անուան ներքոյ, ուր և փափաք յայտնած էինք ատեարիս աւերակները քննելու։ Այժմ ուրախութեամբ պէտք է ըսենք, որ մեր փափաքն իրագործուած է, Լ.Ջմիածնի միաբան Հ. Խաչիկ վարպապետի 1900 թուականին կատարած պեղումներով։ Գտնուած են չորս քանդակազարդ գեղեցիկ արձիններ, խոյակներ, սիւներու բեկորներ, որոնք բաւական որոշ գաղափար կու տան եկեղեցւոյ հոյակապ շինուելնան։ Կան հայ, ասորի, յոյն և վրացի արձանագրութիւններ. յայտնուած է մզկիթի խաչի մը մասը և ի միջի այլոց սեպագիր արձանագրութիւն մը՝ հատուածով հիւսիս արեւմտեան պրան մասս։ Արձանագրութիւնս կը վերաբերի Խուշաս Բէ. փորագրուած է կոմզոգաձեւ արձաքարի սեան վրայ, որ պատուանդանով հատուածուած է եղեր քարի մը մէջ հին խաչքարերու նման։ Արձանագրութիւնս 47 տող է։ — Արարատ տարագիր, Լ.Դ. 380–1։ Բազմավէպ, ԾԹ. 20–24։ Եւ այլն։

ՋՈՒԱՐԻ ՎԱՆՔ. Տես ՋՈՒԱՐ։

ՋՈՒԽՆ. — Բերդագիւղ Ագրարատայ Բասենի (Տարօնի) գաւառի մէջ, Գարաուրկան գիւղի հարաւակողմը և խանի գետոյն եզերքը։ Ջուխի գալ անուն բերդը կը գտնուի 1750 մետր բարձրութեամբ լեռնաթլրի մը վրայ. ի հնուց նշանաւոր եղած է իբրեւ Բասենի գաւառի պաշտպանութեան յարմար և ամուր վայր։ Ռուսաց և Թուրքաց առաջին պատերազմին, Թուրքերը յաղթուեցան։ Երկրորդ Թուրք–Ռուս պատերազմին, 1855ի յունիս 5ին, անգլիացի սպանիէն ոմանք լերան կատարը եկան բերդին աւերակները քննելու։ Վերջին պատերազմին (1877), Թուրքաց Մուխթար փաշայ ապարապետը, նախ բուն բանակը գրած էր Ջուխն և լաւ ամրացուցած էր զայն ու շրջակայքը. այս պատճառաւ այն ինչ Ռուսները յարձակե-

ցան (25 յունիսի) առաջնորդութեամբ Լ. ոսիս Մելիքով հայ սպարապետի և Քամբրոճի զօրավարութեամբ, Թուրքաց առաջնորդ Ֆէյզի փաշան՝ ազգաւ Հունգարացի, քաջութեամբ թշնամւոյն դէմ պրաւ. այս պատերազմին Լուսնեցիք Ձուինայ անուամբ կը յիշեն, որուն մէջ կորնչցուցին իրենք 1000 հոգի, իսկ Թուրքերը կորնչցուցին 500 հոգի։ — Դիւցիս մօտ հոսող գետակ մը իր անուամբ կը կոչուի։ Ձուինի ներկայ վիճակն կը ծանօթանամ։

ՁՈՒԻՆԻ ՁԵՐՄՈՒԿ. — Խորասանի և Մժրնկերտի (Ալբարաս) մէջտեղ կայ այս անուամբ ինքնաբուղխ առողջարար ջերմ ջուր։

ՁՈՒՆԻ. Տես ՆՊՆԻ։

ՁՈՒՎԱԼԱ. — Ալժմ այլազգաբնակ փոքր գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի, որուն անունը մասամբ կը յիշեցնէ, հին ցանկին Ձաւալդի վանք անուն գիւղը։

ՁՈՒՆԻ, ՁՈՒՆՅԻ կամ ՁՈՂՆՅԻ. — Հին ամրոց Մոկաց Ձերմաձոր (Շատախ) գաւառի։ Կը յիշէ Թ. Արծրունի Գագկայ եղբօր Գուրգենի համար գրած առնն. «Առնու և զբերդն Ձնի, և զգաւառն կոչեցեալ Ձերմաձոր՝ որ է մեան երկրին Մոկաց»։ Նոյնը ուրիշ տեղ առաջին ձեւով կը գրէ և կամ ընդօրինակողաց կողմէն այլայլուած է. «վարդան Մամիկոնեան (կ'ըսէ)... խոյս առեալ գնաց (ը)կողմանիքն Մոկաց ի խոխոմն Տօրոսականն լերինն ի լեռսւրս Ձերմաձորոյ, և բնակէ յամրոցին՝ որ այժմ Ձոդայ վանն անխեղեղ աւրութեանն գեղջակարանին»։ Ուրիշ տեղ մ'ալ Ձաայլ կը գրէ նոյն Արծրունին։

ՁՈՒՆԱՏՈՒՆ. — Գիւղ Սիւնեաց Շահապօնք գաւառի, Քղնաղի արեւելեան հարաւակողմը, գետակի մը եզերքը։

ՁՈՒՆԵԼ. — Գիւղ Սիւնեաց Շահապօնք գաւառի։

ՁՈՒՆԵՒ. — Այս անուամբ ջուր և ձոր կայ Ալբարատայ Գարեղինք գաւառի մէջ։ Ձորի երկու կողմերը կը բարձրանան ժայռեր՝ որոնց գագաթը կան հսկայ եղեւնի ծառեր։

ՁՐԱՎԱՆ. — Ալժմ այլազգաբնակ գիւղ կարնոյ. ի հնումն կը կոչուէր Երիցավանք։

ՁՐԵՍԿ. — Ալբարատայ Շիրակ գաւառի մէջ այս անուամբ սուրբ ուխտ մը կը յիշուի, ուր կը պայծառանար ճղնութիւններով



322. Ջուարթնոց եկեղեցւոյն աւերակները։

Ը դարու վերջերը Յոհաննէս Գաբունեցին՝ որ ծերութեան հասակին մէջ կաթողիկոս եղաւ։

ՁՐՈՒԱՆԴԱՆՑ. — Վանայ շրջակայ գիւղերէն մին. երբեմն գուա հայաբնակ էր և շատ բնակիչներ ունէր. իսկ այժմ սակաւաթիւ Հայեր ունի Քրդերու հետ խառն։

ՁՕԹ. Տես ՍՈԴՒ։

ՁՕԼԱԽԱՁ. Տես ՁՕՐԱԽԱՁ։

ՁՕԿ կամ ՁՈՒԿ. — Այս անուամբ ծանօթ են Ագուլիս վիճակի բնակիչները, որոնք հարազատ սերունդ կը թուին Գողթնեցւոց։

Իրենց յատուկ լեզու մը ունին, որ կը կոչուի Ձոկերեն։ Տես ԱԳՈՒԼԻՈ։

ՁՕՀՐԱՊ ԵԱՅԼԱ.— Ա.յլազգարնակ փոքր գիւղ Ա.յրարատայ վանանդ գաւառի, Ջաբխ-չաւայ վիճակի մէջ։

ՁՕՀՐԱՊԼՈՒ.— Գիւղ Ա.յրարատ Մազազ-Ոսաան գաւառի։ Ունի 36 տուն հայ բնակիչներ։

ՁՈՒՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔ.— կը գտնուի Շատախ (Վան) գաւառի մէջ, կապի գիւղի մօտ։

ՁՕՐ ՔԼՇԻՇ.— Գիւղ Միւնեաց Ազահէձք գաւառի հիւսիս-արեւմտեան կողմը։

ՁՕՐ կամ ՁՈՐ.— Քրդարնակ գիւղ Ա.յրարատ գաւառի, Աւրմալու վիճակի մէջ։ Գիւղիս մէջ է կաթոլիկաձորոյ Ս. Աստուածածնի վանքը աւերակ վիճակի մէջ, ուր կը յաճախեն ուխտաւորներ վարդավառի ատենին և արդիւնքը Ս. Լուսիաձին կ'առնու։ Ա.յժմ Ձօրավանք կը կոչուի։ Ամանիա կաթոլիկոսի ժամանակ հիմնուեր է վանքս. 300 միաբան և շատ կալուածներ ունեցեր է։ Յետոյ բարբարոսութեանց զոհուեր են միաբանները և կալուածներուն տիրեր են թափառական եզիտի Քուրդերը։ 1873 թուին Լուսիաձնի կաթոլիկոսէն հոս դրկուեցաւ Հմայեակ Վ. Աբշարունին, վանքը նորոգելու և պտրոց հաստատելու. յետոյ տաճարն նորոգելով նուիրեցին Ս. Աստուածածնի, և միաձակայ Ազգապահպանական գիւղի առնուաէրներէն՝ Ա-զգրպանդր Մելիք Վրէժանիսեանը վանքին իրրև կալուած հող նուիրեց։

ՁՕՐԱԽԱՉ կամ ՁՈՐԱԽԱՉ.— Գիւղ Միւնեաց Գեղարքունի գաւառի, ի հիւսիս կը կոչուէր Ա.կնախաւ. այսպէս կը կոչուի մեծ միաձուռ խաչքարի սր անուամբ, որուն բարձրութիւնն է իրր 4 մետր և լայնութիւնն 1մ. որ ունի նաեւ պատուանդան և քանդակներ։ Խաչքարս կը գտնուի գիւղի միջավայրը, յիշատակարան չունի. շուրջը կ'երեւան հին շինութեանց մնացորդներ և գերեզմանաքարեր։ Խաչքարիս մերձաւոր գերեզմանաքարի արձանագրութիւն, ՉԾԴ (= 1304) թուականաւ, կարծել կու տայ, թէ երկայն խաչքարս կանգնուած է Հասան իշխանի մը յիշատակին։ Եկեղեցին նուիրուած է Ս. Գէորգայ, որուն շուրջը կան բաւական թուով հին գերեզմաններ։ Եկեղեցւոյ մօտ մատուռն մը մէջ կայ խաչքարձան մը և գերեզման։ Գիւղիս արեւմտեան կողմը, սեւ քարէ և մեչակ բարձրութեամբ և լայնութեամբ խաչքար մը կայ, Գաւիթ անուն երէցի մը, ինչպէս կը յայտնէ ճակատի վրայ գրուած ՉԶԱ (= 1342) թուականաւ երկու տող յիշատակարանն։ Գիւղիս բոլոր շրջապատը, գարպարուած են մեծ ու փոքր խաչքարերով, որոնց ամենց վրայ կան յիշատակարաններ և քանդակազարդ գրուածներ։ Ձօրախաչ բարձր դիրք ունենալով աքանչելի է տեսարանն. գիմացը կը տարածուի Հալէպեան գեղածիծաղ Գեղամայ ծովակը։ Գիւղս ունի 1696 զուտ հայ բնակիչներ, բաժնուած 204 տան։ — Գեղարքունի, 545–547։

ՁՕՐԱՎԱՅ.— Գիւղ Մշոյ Բանաշէն գաւառակի։ 5 տուն հայ և 10 տուն քուրդ բնակիչ ունի։ Հայերը ունին Ս. Թորոս անուամբ խանգարեալ եկեղեցի մը։

ՁՕՐԱՎԱՅ.— Գիւղ Տիգրանակերտի, Սալոս գիւղի մօտ. 4 տուն հայ կայ։

ՁՕՐԱՎԱՆՔ. Տես ՁՕՐ։

ՁՕՐԱՎԱՐ.— Ա.յս անուամբ կոչուած են մի քանի եկեղեցիներ. ինչպէս Ա.րագածոտն (Ա.յրարատ) գաւառի Ուշոյ Ս. Սարգիս վանքը, Եղիվարդայ եկեղեցին, և այլն։

ՁՕՐԻ.— Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի. 4 տուն հայ կայ։

ՁՕՐԻԿ կամ ՍՈՐԻԿ.— Լիս Ա.յրարատայ Բասէն գաւառի, յորմէ կը հոսին Ա.ղձոյ գետի սպիւրքահունքը։

Ե

ԷԳԷՋՈՐ. — Գիւղ Բարձր Հայոց Սպեր գաւառի Բնակիչք հայ և թուրք՝ հողագործ են։ Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը, բայց պղտոցէ զուրկ են։ Հայու մը տան մէջ մագաղաթի վրայ գրուած Աւետարան մը կայ կարմիր կոչուած։ Ամէն կողմ Սպերի Ս. Յովհաննէս վանքը ուխտի գնացողները այս Աւետարանին ալ ուխտի կու գան։ Տեղացիք կը պատմեն թէ՝ ժամանակներ առաջ աւազակներ եկեղեցին կողոպտելով՝ տարեր են ծանրագին սպասներն ու անօթները, որոնց մէջ է եղեր այս հրաշագործ Աւետարանը. բայց աւազակները չեն կրցեր զայն պահել, և վրայի արծաթներն հանելով վերադարձուցեր են. ճանապարհին Ձորոթ գետէն անցնելու առեն ջուրը կ'իյնայ, և շատ ժամանակ վերջը քանի մը անգամ կայր կնոջ մը երազը գալով, գիւղացիք կ'երթան ու կը գտնեն զայն ջրին մէջ ժայռի մը առակ, ուրկէ կարմիր ջուր կը բղխէ եղեր, այդ պատճառաւ կարմիր Աւետարան կոչուած է. մինչեւ ցարդ կը շաբաթնակէ Ձորոթի մէջէն ուրոյն կարմիր ջուր պղպջակիլ։

ԷԳԷՋՈՐ. — Մակաւարնակ Հայոց գիւղ Տուրուբերանի խորխոռունեաց (Աբծկէ) գաւառի. ունի Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը։

ԷԳԷՊԱՏ. — Հայաբնակ գիւղ Ալբարատայ Բասէն (Վերին) գաւառի մէջ, Պասէվանէն 1 ժամ հեռու. երբեմն վրացի բնակիչներ ևս ունէր։

ԷԳԻՆԿ. — Ալպակէս ևս կը գրուին քանի մը Ագարակ անուամբ գիւղեր։

ԷՁԻՆՋ, ԷՃՆՋ կամ ԻՃՆՋ (Հն. Վիրանիա). — Գիւղաքաղաք Գարգանէզի կառավարութեան և Ռոտոսթոյի առաջնորդական վիճակի մէջ, Գարգանէզէն 8 ժամու ճանապարհ հեռու դէպի հարաւ։ Կառուցուած է գեղեցիկ ձորի մը մէջ. օդը բարեխառն է և ջուրն յատակ, զով ու քաղցրահամ. անդացիք շնորհալի, վաւաշուն և հուժկու դէմքեր ունին։ Նշանաւոր է Էպինէի գետն, որ այժմ Մէնտերէս կ'ըսուի, իսկ հին առեն կը կոչուէր Ակամանդրոս կամ Փռաճրոս՝ հիներու Տրօվադա լուսաց երկրին մէջ։ Այս գետը Իպա (Գազ—ատար) լեռնէն բղխելով կու գայ Միկէռնի հրատարակչին մօտ, արդի Գումգալէի քովէն ծովը կը թափի. ասոր ջուրը լաւ մարսողական է։ Գիւղաքաղաքիս մէջ կը բնակին 60 հայ բնտանիք. կան նաեւ հայ գրչուներ՝ 28 վրանով։ Բնակչաց մեծագոյն մասն թուրք են իբր 600 տուն. 150 տուն ալ յոյն կայ, իսկ հրեայ 35 տուն։ Հայոց առաջ հաստատուելու թուականին վրայ ստոյգ տեղեկութիւն չկայ. միայն ապագիր հին Հայամատուրքի մը ծայրը երեւցող Բալոցի Տ. Մարտիրոս անուն քահանայէ մը ստանգուած իբր 120 տարուան ձեռագիր յիշատակարան մը, և գերեզմանը գտնուող Գափուլիճքեցի Տ. Թադէոսի 177 տարուան տապանագիրը կը հաստատեն թէ՝ 200է աւելի տարիներ առաջ գոյութիւն ունեցող մեծ

Հայեր, թեւրեւս մեծ մասն Գարպանկէ և փոքր մաս մ'ալ զանազան կողմերէ և կէզ-լիպօլուէ։ Հայոց Ս. Գեորգ անուն եկեղեցին որ 1839 շինուած էր, 1889ին վերա-նորոգուեցաւ՝ 500 ոսկի ծախքով։ Հայերը ունին Ազամեան վարժարան մը 70–80 երկտես աշակերտներով։ — Փայտաշէն կա-մուրջ մը էզինէ երկու թաղի կը բաժնէ. մին զուտ թուրքարնակ է. իսկ միւսն թէեւ յատ-կացուած է Հայոց, Յունաց և Հրէից, սա-կայն բաւական թուով թուրք ընտանիքներ եւս եկած բնակութիւն հաստատած են։ Եր-կու թաղերու մէջ եւս յիշատակութիւնն ար-ժանի շէնքեր չկան. միայն Հայոց թաղի մէջ Ազնիւեան Պօղոս աղայի բնակարանը, քարուկիր, հոյակապ և ճարտարապետական շինուածովը եզական է։ Բազմաթիւ այգիներ և պարտէզներ կը շրջապատեն գիւղաքա-ղաքս։ Տեղւոյս Հայերը Թրքախօս են. բայց թէ՛ արուց և թէ կանանց մէջ կը տեսնուին հայախօսներ, և երիտասարդներէ ոմանք բա-րի սովորութիւն բրած են իրարու հետ ա-մէն տեղ հայերէն խօսիլ և կամ գիշերները դասատութեամբ իրենց մայրենի լեզուն զար-գացնելու փոյթ տանիլ։ Տեղւոյս Հայերը գոր-ծունէութեամբ և աշխատասիրութեամբ ազ-դեցիկ են և գործելի. շատերը արհեստաւոր կը դրաղին. մեծ մաս մը առեւտրով. շուկայի փայլն ու շուքն աւելցնողներն ալ մէկ քա-նի ապագոյի հայ վաճառականներն են։ Լ-զինէի Հայերու մէջ կրօնական բաժանումն չկայ. թէեւ ամերիկեան միսիոնարները քա-նի մը անգամ փորձեր են հոս եւս հաստա-տուելու, բայց չեն յաջողեր։ — Հայ գրա-չոները գիւղաքաղաքիս հարաւակողմն Գազ-ատպրի ճանապարհին վրայ շինուած Գըզըլ և Պալըգլը Թրքարնակ գիւղերու մէջ կը բնա-կին ձմեռը. կորովի և անձնապաշտպան են. ատոնց ձիերը և արջառները ժամերով հետու գաշտերու մէջ կ'արածեն և ոչ ոք կը յանդըգ-նի անոնց պակչելու. մեծ մասն՝ անասնաբոյծ և հողագործ են. այժմ սկսած են հողեր ալ գնել. հայրենի հին աւանդութիւններ պա-հած են ու կը խօսին հայերէն ազատաղեալ լեզուաւ։ Ծմեռային չերմուկ մը կայ Լզին-դէէ 3 ժամու ճանապարհ հետու Կէյիքլի-խորհէսի լոսւած ծովեզերքը՝ Լակի Խրաճ-պօլի աւերակներու մօտ, Թէոնեաոս կղզւոյն դիմաց։

ԷԼԱՆ կամ ԷԼՅԱՐ. — Հայարնակ գիւղ Ա-կրաթաւայ կոտայք գաւառի, Ջազ գիւղի հիւսիսային կողմը. ունի 70 տուն։ Այս գիւղը կ'անուի Ազարէկն, Օրպէլեանի գրածի համեմատ, 1250 թուին, նուիրած էր Լի-պարիտ Օրպելեանցի։ Գիւղիս եկեղեցին Ս. Յակոբեանց՝ շինուած է 1851 թուին, որուն հարաւային դրան վրայի սրբատաշ քարով գանգակատունը, շինուած է ծախիւք Էրիւան-ցի աստիճանաւոր Աղամալ Աղամալեանցի։ Լչաւի մօտ բլրակի ծայրը կան հինաւուրց բերդի մնացորդներ, և ոչ այնչափ հեռու ձո-րակի քարափի վրայ, աւան տոզով բեւե-ռագիր արձանագրութիւն մը, զոր առաջին անգամ ծանօթացուց 1863ին Գեր. Մ. Ամրատեանց և հրատարակուեցաւ նախ Մոս-կուայի Համբարձեան լրագրի մէջ. որուն վրայ յետոյ գրեցին նաեւ ուրիշ գիտնա-կաններ. արձանագրութիւնը կը վերաբերի Մենուագայ որդւոյ Արգիստիսի։

ԷԼԵՒՆ կամ ԵԼԻՒՆ. — Գեղատակ Սիւնեաց վայոց ձոր գաւառի. որուն ձորակը Ազո-պեանց կ'անուանէ Ազիշան, հին Ազոպէն գիւղին անուամբ։

ԷԼԷՀ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 15 տուն հայ կայ և եկեղեցի մը։

ԷԼԷՄԻ. — Գիւղ Խարբերդի. ունի 30 տուն հայ, Ս. Գեորգ անուամբ եկեղեցի և վարժարան մը։

ԷԼԷՎԻ. — Տրապիզոնէ 8–9 ժամու ճա-նապարհ հետու դէպի արեւմտեան հիւսիս, և Թրիպօլիէ 3 ժամ ապին ծովեզերեայ մեծ աւան մ'է, Սեւ ծովու դրացի և պահա-պան լեռնաշղթայից ստորոտը կառուցուած։ Ազատքին երեւոյթը խիստ անշուք և նախ-նական է։ Կը պատմուի թէ իբր 200 տա-րի առաջ, տակէզ 3–4 քառորդ ժամու ճա-նապարհ հետու դէպի Տրապիզոնի կողմը ծովահայեաց ու ապառաժուտ լերան սր ճիշդ գառիվայր կողին վրայ մեծ գիւղաքա-ղաք մ'էր Կէօրէկ անուամբ, որուն ամայի և աւերակ տեղը տակաւին կայ։ Էլէվի մին-չեւ ցայսօր կառավարական պաշտօնագրու-թեանց և վիճակագրութեանց մէջ Կէօրէկ կը կոչուի, հին ու կործանեալ գիւղաքա-

զաքին անուամբ։ Ա.րդ պատմական գիւղաքաղաքին մէջ մինչեւ ցայդ կը տեսնուին գեղեցկաշէն մզկիթներու, եկեղեցիներու, տաճարներու, բաղնիքներու, ապրիւրներու կիսափուլ աւերակներ. նոյնպէս կը նշմարուին կոյտ կոյտ կամ կիսականգուն տուներու, բնակարաններու, կրպակներու ու պանդոկներու աւերակներ։ Ըստ աւանդութեան՝ հին Էլէվի կամ Կէօրէլէ՝ կանգուն եղած տաներն 5–600 տուն ժողովուրդ ունի եղեր, մեծագոյն մասը թուրք, և մնացեալն, յոյն ու հայ։ Եթէ ոչ արհեստից ու վաճառականութեան, բայց հողագործութեան մէջ բաւական զարգացած էին իր բնակիչները։ Կարծանման պատճառ կը կարծուի երկրաշարժը, որովհետեւ ամայացած ատեն ապառաժուտ ու լեռնային է, և փլատակները ցանուցիր վիճակի մէջ կը դտնուին։ — Էլէվի այժմ 250 տան չափ բնակիչ ունի. 40 տուն՝ հայ, 75 տուն՝ յոյն և մնացեալը՝ թուրք։ Երկրորդ կարգի գաւմագամութիւն է Տրապիզոնի կուսակալութեան ներքոյ։ Օդն՝ ձմեռը բաւական, գարնան կամ ամբան ջերմ ու վտաւոտոյ։ Ժողովուրդը կը զբաղի հողագործութեամբ, այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ։ Ա.րհեստաներն են՝ հացագործութիւն, կօշկակարութիւն, ներկարարութիւն, ոսկերչութիւն, մանրագործութիւն, դերձակութիւն, սրճագործութիւն, պղնձագործութիւն, և այլն։ Առհեստաները մեծ մասամբ Հայերու ձեռքն են. նոյնպէս շուկային առեւտուրը։ Բերքերն են՝ կաղին, ընկոյզ, խաղող, օղի, գինի, տեսակ տեսակ պաուղներ, ցորեն, եգիպտացորեն, այծ, ոչխար ու արջառ։ Անտէլի կ'արտածեն կաղին ու ընկոյզ, որոնց մէ տարին 30 հազար կենդինար կը գրկուին Եւրոպա։ Ամէն ուրբաթ օր պազար ունի և շրջակայ գիւղերէ բաւական բազմութիւն կու գայ։ — Հայերը 50–60 տարիէ ի վեր գաղթած են գանագան երկիրներէ. մեծագոյն մասն՝ Թոմգարացի են. գործի մէջ բաւական ձեռներէց, ժրաջան և անտեսագէտ. ընդհանրապէս հարուստ են։ Ունին 1869ին կառուցուած քարուկիր ու վայելչաշէն եկեղեցի մը, ինչպէս նաեւ վարպետական անուամբ երկսեռ վարժարան մը 36 աշակերտներով։

ԷԼԼԻՄ ՏԱՂԻ. — Հայաբնակ գիւղ Ճանիկու առաջնորդական վիճակի. ունի եկեղեցի և Ս. Գէորգեան անուամբ վարժարան մը՝ 45 աշակերտներով։

ԷԼԹԻ. — Լճա Սիւնեաց Գողթն գաւառի մէջ։

ԷԼԻՆՃԷ. — Ա.յժմ այլազգարնակ (23 տուն) գիւղ Ա.յրարատայ Մազազ գաւառի մէջ, համանուն լերան մօտ, Հասուց Թաղէն ոչ այնչափ հեռու։ Ասոր մէջ կը յիշուի քննութեան արժանի շէն կամ կիսաւեր եկեղեցի բիւզանդական ոճով. իսկ մօտն է Ս. Աստուածոսի վանքը գեղաքանդակ խաչքարերով։ Վանքին մօտ կայ Ս. Պետրոս Պօղոս առաքելոց նուիրուած մատուռ մը, որուն պատկերի (թ. 323) վրայ կը նշմարուին քանդակներու հետքեր։

ԷԼԻԶԱՊԷԹԹԱՍ. Տես ԵԼԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ։

ԷԼՄԱ. — Լեռնային կիլիկիոյ մէջ կայ այս անուամբ լիս մը։

ԷԼՄԱԼՔ կամ ԷԼՄԱԼՈՒ. — Գիւղ Գաղատիոյ կուսակալութեան մէջ. բնակիչներու մեծագոյն մասը մահմետական են, կան նաեւ 60 տուն հայ և 30 տուն յոյն։ Գիւղը գեղեցիկ չէ և օդն վտաւոտոյ է. սակայն ջրաւէտ է և խմելու համար մաքուր ջուրեր կան։ Հայոց Թաղը շատ կարօտ լինելով ջրի, իրենց երեւելիներէն Յարութիւն ագա Նիկողոսեան մեծ ծախք ընելով հինգ ապրիւր շինել տուած է։ Տեղւոյն Հայերը սերտնդ են՝ 1740ին Ագաա խանի բռնակալութիւնէն խոյս տուած հայ գաղթականութեան մը։ Ունին Ս. Լուսաւորիչ անուամբ եկեղեցի և վարժարան մը. ընդհանրապէս գործ են մայրենի լեզուէ։ Գիւղս գրեթէ 150 տարիէ հետէ հիմնուած է։ Բերքերն են՝ ցորեն, հաճար, գարի և եգիպտացորեն. բոլոր արտերը Թուրքերու սեպհական են. վաճառականներու մէջ կան քանի մը հայ և յոյն։

ԷԼՄԱԼՒԳ. — Ա.յլազգարնակ գիւղ Սիւնեաց Ձահուկ գաւառի մէջ։ Ա.յս անուամբ ուրիշ գիւղեր եւս կան գանագան կողմեր։

ԷԼՄԻՏԻ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 22 տուն հայ կայ։

ԷԼՊԻՑԻ. — Գիւղ բարձրին Կիլիկիոյ, Մուպայ սահմաններէն։

ԷԼՊԻՍ *կամ* ԷԼՓԻՍ. — *Հայաբնակ գիւղ Խնուսի (Տարբերան). ունի* 52 *տուն։*


ԷԼՊԻՍՏԱՆ. — *Փաղաքաւան կիլիկիոյ. նկարագրած ենք Այպիստան անուան ներքոյ։ Տեղւոյս Հայք ունին Ազգային վարժարան մը՝ 100է աւելի աշակերտներով։*

ԷՄԱՆ. — *Կը յիշուի Թռնգք գաւառի մէջ։*

ԷՄԻՐԼԻԽ. — *Լիս կարնոյ, Փալան–ուէօքէնի արեւմտեան կողմը, քաղաքէն* 2 *ժամ հեռու։*

ԷՄԻՒ. *Տես* ԱՄԻ։

ԷՄԻՆ. *Տես* ԱՄՆ։



323· Էլիճէի մօտ Ս. Պետրոս–Պօղոսի մատուռ։

ԷԼՓԻՍ. *Տես* ԷԼՊԻՍ։

ԷԼՓՈՎԱՆ, ԵԼՂԱՒԱՆ *կամ* ԲԱՂՋԱՔԻ. — *Հայաբնակ գիւղ Ակրաւատայ կոտայք գաւառի։ Բնակիչք* 518 *հոգի են, բաժնուած* 62 *տան։ Եկեղեցին նաւթրուած է Ս. Յովհաննու։*

ԷՄԻՆՃԵՆՔ, ԷՅԼԷՆՃԻ *կամ* ԹԼՓՔԻ ՄԱՀԱԼԼԵՍԻ. — *Հայաբնակ գիւղ կիլիկիոյ, Ջէյթունէն կէս ժամ հեռու. ունի* 320 *բնակիչ։*

ԷՄՊԷՋ. — *Գիւղ Պէրբէրէ–տաղրի. երբեմն* 70 *տուն հայ բնակիչ ունէր, բայց*

վերջերը մնացեր են 27 աուն։ Բիլիսէ 12 ժամու չափ հեռու է։

ԷԿԻՒ ՁԱՅ. — Գետ Ազատանից. կը բղխէ Ագպուլախ լեռնէն։

ԷԿԻՒ ՁԱՅ. — Դաշտ և արօտներ Նոր Բայազիտ գաւառի մէջ։

ԷՀՆԻՇԻՒ. — Գիւղ Աբարկերի, հայ և թուրք բնակիչներով։ Հայը ունին Ս. Աստուածամայր եկեղեցի մը և երկսեռ վարժարան մը՝ 30 աշակերտներով։ Բազաքանութիւնը մուտ գաւած է։ Ընդհանրապէս երկրագործ են։

ԷՀՆԻՇ կամ ՆԵՊԱՅԻՆ. — Հայարնակ գիւղ Աչիմապի և Էրեսիայ առաջնորդական վիճակի մէջ, Էրիւաւայ եզերքը, բարձր դիրքով և գեղեցիկ տեսարանով։ Հռոմկլայէ դէպի հարաւ 3 ժամ և Աչիմապէն դէպի արեւելք 12 ժամ հեռու է, հաստատուած ժայռոտ լեռնակի մը կողին վրայ։ Բնակիչը 70 աուն են, կը խօսին թուրքերէն. հարուստ մշակութեամբ, ընդարձակ պարտէզներով ու պիտակի անուպատ բերքով գերազանց վիճակ մ՚ունին. շաւերը ուրիշ տեղէ եկած հաստատուած են։ Ունին եկեղեցի և վարժարան մը՝ 42 աշակերտներով։ Գիւղիս բնակիչը ժիր մշակ, ճարպիկ լուդորդ և վարպետ որսորդ են. մեծ ու փոքր՝ արական ցեղին մազերն բոլորովին կ՚ածիլեն, զգալեին վրայ մաս մը թողլով. նպատակը մաքրութիւն, և աշխատութեան ժամանակ նեղութենէ փախչիլ է։ Լէհնէշի աբեւմտեան բարձունքը Հապիպ տաղը կը կոչուի։ Հապիպի գաշար և շուրջը գտնուած մանր անուանները գիւղիս համար բաւական շահաբեր են։ Ա՛յս լերան մէկ ձորակն՝ որ գիւղի հարաւակողմն կը ձգուի, Ս. Աստղիս վանքի անուամբ Ս. Աստղիս տէրեսի կ՚ըսուի։ Ա՛յս ձորակն դէպի Էրիւաս կը բացուի. իր ձախ կողմի վրայ գտնուող քանի մը ընդարձակ քարայրները ուշադրութիւն կը գրաւեն. ասոնք հին առեն ճիմնադարձարան են եղեր. իսկ այժմ գիւղացւոց իրը բակնիք կը ծառայեն։ Ա՛յս ձորակի ժայռերու մէջէն կը բղխի վճիտ և պաղ ջուր մը՝ Ս. Աստղիս փուներ կոչուած, որ գիւղացւոց միակ ջուրն է։ Ս. Աստղոյ առաւելին խոխոջն, բարձրաբերձ ապառաժներու թանձր շուքն, հովասուն ձորակին ցանցառ պիտակի ծառերն, որոնց մէջ կը ցցուի աւերակ վանքի գագաթը, զուարճալի վայր մը կ՚ընծայեն գիւղացւոց և ուխտաւորներու։ Գիւղիս մօտ Էրիւաւայ ձուաձեւ դեռակրզուդն վրայ կը մշակեն Գապիչէ բուսած աեսակ մը խաշոր ու անոյշ սեխ։

Լէհնէշի ծագման պատմութիւնն անորոշ է. բայց հին յիշատակներ, տեղական աւանդութիւններ, տարազներ, գիւղին արեւմտեան կողմէն՝ մինչեւ Հռոմկլայ ձգուող քարաբլուրներու մէջ բացուած մեծ ու փոքր անձաւներ, Ս. Աստղոյ վանքն, վիմափոր եկեղեցին, և մանաւանդ իր բնական դիրքն, որ երկար ժամանակ գոյութիւն պահելու յարմարագոյն և սեպհական տեղերէ մին է, կը հաստատեն թէ պատմական անցեալ մը ունեցած է։ Խաչակրաց նշաններ յայտնի են լաւին արձանագրութիւններով։ Լէհնէշ՝ Շնորհալւոյն անուամբ Լեբաես ևս կը կոչուի, որուն ժամանակ հոծ բնակիչներով ու շէնքերով աւան մ՚էր։ Գիւղիս հնութեանց մէջ առաջին անգամ ուշադրութիւն գրաւողն է Ս. Աստուածածնի վիմափոր եկեղեցին՝ հիւսիսային կողմը։ Ա՛կէց առաջ եկեղեցի մը ունեցեր է գիւղս, որուն մնացորդն ցարդ կը տեսնուի արեւմտեան եկեղեցւոյն հարաւային արեւմտեան։ Ս. Աստուածածնին փոքր է, ունի երկու խորան. աւազանը գետնցուած է եկեղեցւոյն ձախ կողմն, նոյնպէս վիմափոր՝ երկու աստիճան ցած խցիկի մը մէջ և միջնորմով բաժնուած։ Եկեղեցւոյն բոլոր պատերն տեսակ տեսակ խաչերով քանդակուած են. ցած, մութ ու խանուտ է. ոչ պատուհան ունի և ոչ պահարան։ Գիւղիս երկրորդ հնութիւնն է Ս. Աստղոյ վանքը՝ հարաւ արեւմտեան կողմն՝ ¼ ժամու հեռաւորութեամբ։ Ա՛յս վանքը գրեթէ փլած է, և միայն կամարակիէին հաստահիմն պատերը մնացած, փոքրիկ աւանդատունով մը, որուն արեւմտեան պատին վրայ՝ եկեղեցւոյն մէջ ձեւաւոր և ամուր պուռ մը կայ, բայց յայտնի չէ ինչ բանի ծառայած լինելն։ Եկեղեցւոյն շուրջը գրաւնուած և գետնի հաւասարած սրմերու աւերակներըՆ՝ բաւական մեծ տարածութեամբ վանքիս սահմանը կը գծեն։ Ա՛յս կիսաւեր

շինուածքին ոճը, քարերու խոշորութիւնը, արտաքին արուեստեան և հարուստային պատուրու վրայի կիսեղծ յունատառ արձանագրութիւնները՝ ապացոյց են վանքին հնութեան։ Կործանման ժամանակին ալ յայտնի չէ, բայց աւերակին դիրքն ու տեսքը և խորանին առջեւ աճած հինաւուրց պիստակի ծառ մը, քանի մը հարիւր տարիներու հնութիւն կը ցուցընեն։ — Միւս հնութիւնները քարանձաւներ են, որոնք հին տաճն իրրեւ ապաստարաններ և գերեզմաններ եղած կը կարծուին. այժմ ամենք ալ ուրուած են, ամենք իրրեւ մարագ կը գործածուին և ամենք ալ եկեղեցւոյ շինութեան քար կը հայթհայթեն։ Ասոնցմէ մին՝ գիւղէն $^3/_4$ ժամու ճանապարհ հեռու Հռոմկլայի ճամբուն վրայ, Ս. Յակոբ կամ Մէհէի անուամբ ուխտատեղի մ'է. ուր այժմ նշանաւոր բան չկայ, բայց եթէ ծխտա մրուա մարթեր, ուխտաւորներու մսկրէն, ձկիձէն թանձրացած նիւթեր, փայտեայ դպրներ և վիրէն կախիխոց վճիռ ջրի օրօնաձեւ շիթեր։ Ոչ միայն հայն, այլ և քուրդն ու եզիան ուխտի կ'երթայ։ Մէհէլի անուն առած է այն ջրի կաթիլնեբէն, որոնք քարէ առաստաղին վրայ ծծի պատկերաու նման ամիսներով կը կաթկթեն։ Ջրի այդ կաթիլները քանի մը տարի առաջ ատելի առատ են եղեր. արդի նուազման համար ցաւելով կը յայտնեն թէ չար մը մտած է այն տեղ, և Ս. Յակոբ պապան բարկանալով իրր պատիժ քիչցուցեր է ջուրը. բայց յայտնի է թէ այդպիսի բարձրաբերձ ժայռերու մէջ ջրի առատանալը կամ նուազիլը անանց ծծոզականութենէն կախում ունի։ Շատ ուշադրաւ են շինուած այրերը պարունակող լեռը և ատոր լերկ երեսին վրայ բացուած քանի մը ծակերն, որոնք ճիշդ ուխտատեղւոյն վրայ կ'իյնան անմատչելի բարձրութեամբ։ Կ'ատանեն թէ այդ ծակերը առաջ չկային. ժայռի խառնուածքին մէջ բացուած են լերան երկայնութեամբ գտնուող ներքնատիի մը վրայ. գիւղացիք աւանդաբար կ'ըսեն, թէ գանձ կայ հոն։ Բայց ինչ որ ալ ըլլան այդպիսի զրոյցներ, թէ՛ ներքնատին և թէ՛ այլ նշաններ կը ցուցընեն թէ յանցեալին այդ տեղերը անմատչելի չէին։ — Էհնէշ գիւղի շինուեան ճոն բոլորովին հին է. տուները քարաշէն են և իրարու կից. տանիքներն ընդհանրապէս մին միւսին իրր բակ կը ծառայէ։ Հապիսի գաշտին և Եփրատայ ընդարձակ տեսարանը կը մշակեն Էհնէշցիք. ունին կիսկիլ բուսած տեսակ մը կտրիճ, ցորեն, գարի, և այլն։ Կան ոսկերիչ, ներկարար, կօշկակար, ջուլհակ։ Կանայք առ հասարակ մեծ ճարտարութիւն կը ցուցընեն շինական նուրբ ասեղնագործութեանց մէջ։ Ասոնց գրազմանց մէջ նշանակելի է պաղնական և պատմական լաստաւարութիւնը։

Էձանանն. — Այսպէս ևս գրուած է Ա-ձանան (տես) անունը։

Էմիրլէր. — Գիւղ Այրարատայ Գաբեղէնք գաւառի, կազդուռնայ հարուստագոմը։ Այս անուամբ գիւղ մ'ալ ունի Խարբերդ, ուրիշ մ'ալ Գիւմիւշխանէ։

Էմիրխանլոյ. — Քունարնակ գիւղ Այրարատայ վանանդ (կարս) գաւառի մէջ։

Էմլիկ տաղ. — Լեռնային կիլիկիոյ մէջ այս անուամբ լեռ մը կայ։

Էյերլի. — Լեռ կարնոյ հարաւային կողմը։

Էյիրլօդա. — Հին գիւղ Աղցախու, կը յիշուի Փիլիպպոս կաթուղիկոսի մէկ կոնդակի մէջ։

Էյլէնճէ. — Հայարնակ գիւղ Եօզղատի 35 տուն բնակչօք. ունին եկեղեցի և վարժարան։ Կան նաեւ 10 տուն հայ Բողոքականք՝ հանդերձ ժողովարանաւ։ Հայկական եկեղեցւոյ անունն է Ս. Աստուածածին, իսկ վարժարանն կը կոչուի Աբգարեան։ Հոգաւորք են։ Տես Էկէյճէնճէ։

Էզոլջ. — Հայարնակ գիւղ Ծովային կիլիկիոյ։

Էզրիտէրէ. — Գիւղ Զարշամպա գաւառի և Ճանիկի առաջնորդական վիճակի մէջ։ Ունի 80 տուն հայ բնակիչ, Ս. Երրորդութիւն անուամբ եկեղեցի մը և Ս. Երրորդութեան վարժարան՝ 32 աշակերտներով։

Էնգարչ. — Այրազգիներէն այսպէս կը կոչուի Ագկիւրեան։

Էնգէլի. — Գիւղ Կասպից ծովու եղերքը. նախապատն է Պարսկաստանի։ Ունի 15 տուն հայ, մատուռ մը և նախակրթարան։

Մշտակայ քահանայ չունենալով, երբ պէտք ունենան Ռէչա քաղաքէն բերել կու տան, որ դիւղէս քանի մը ժամու ճանապարհ հեռու է։

ԷՆԿԻՒՐԻԻ. Տես ԱՆԿԻՒՐԻԱ։

ԷՆԹԱՊ. — Ամեծապ անունը այսպէս ևս կը գրուի։

ԷՆՏԷԿ. Տես ԱՆԴԻՒԿ։

ԷՆՏԷՐՈՒՆ. — Լեռնային կիլիկիոյ վիճակ մը։

ԷՆՏԻՋ. — Գիւղ Էւդոկիոյ. 18 տուն հայ և 95 հոգի մահմետական բնակիչներով։ Հայերը ունին Ս. Փրկիչ անուամբ եկեղեցի մը։

ԷՆՏԻՐԼԻՔ կամ ԷՆՏԻՐԼԻՒՔ. — Գիւղ Կեսարիոյ, Թալասէն իբր $^1/_2$ ժամ հեռու. բնակիչներու մեծագոյն մասը յոյն։ Շրջակայքը ունի շատ պարտէզներ և այգիներ։

ԷՆՏՈՒՐ. — Գետակ Ամասիոյ կամ բղխէ Արհանա լեռնէն և կը բաժնուի Դաւրիժոյ այգեստաններէն. միայն առատացած մի ջուց իր մէկ մասը կը թափի Սէբավրուա գետը։

ԷՇԷԿ ԽԱՒԱՍ. — Գիւղ Ակրաբատայ Բասէն (վերին) գաւառի մէջ։

ԷՇԷԿ ԽԱՒԻԱՆ.—Գիւղ Ակրաբատայ Բազբեւնոյ գաւառի։

ԷՇԷԿ ՄԿՅՏԱՆ.—Լեռնանցք Ակրաբատայ վանանդ գաւառի։ Ակս անուամբ լեռ մը ևս կը յիշուի վարաժնականաց մէջ։

ԷՇԿԱՋՈՐ. — Կը յիշուի Ոքազէ (Տայք) գաւառի մէջ։

ԷՋՄԻ. — Գիւղ Նիկոմիդիոյ Կէրմէ գաւառակի. ձեւացած է Օրթագիւղի բնիկներէ տան և չորս անձանց ընկերութեամբ 1866ին։ Ամենէքէն Օրթագիւղի բարձունքը և արեւմուտքէն Կէրմէկի գաշտավայրն ունենալով մէջ տեղը բնադարձակ բլրակներու վրայ հաստատուած է, լայնածաւալ թեթաւանոցներով ու այգիներով զարդարուած։ Բլրակներու բնադարձակութեան վրայ, իրարմէ հեռու, շերամաբուծութեան համար կառուցուած 4–500ի չափ շէնքեր կը տեսնուին, ցրուեալ գրից մէջ, որոնց մէջ Օրթագիւղէ իջած 100է աւելի բնակիչ կը պատսպարուին։ Գիւղիս մէջ կայ հայկական փայտաշէն մատուռ մը Ս. Աստուածածնի։ 1893ին ունեցան յաւուկ վարժարան մը՝ 80–90ի չափ աղջկանց, Եղիշեան անուամբ։ Այժմեան վարժարանը կը կոչուի Ազատեան–Գայլեանեան և ունի 120է աւելի երկսեռ աշակերտներ։

ԷՋՄԻԱԾԻՆ. Գ. ETCHMIADSIN. Ռ. Эчмиадзинъ. — Ակրաբատայ Արագածոտն գաւառի մէջ, վաղարշապատ հարաւային կողմն կը գտնուի հնագարեան և հայ ազգի կաթողիկոսներու բնակավայր հռչակաւոր վանքը։ Թուրքերը Իչ–Քիլիսէ (երեք եկեղեցիք) կ'անուանեն՝ Շողակաթ Ս. Աստուածածնի, Ս. Հռիփսիմեայ և Ս. Գայիանեայ երեք եկեղեցիներու համար։ Տրպատայ սքանչելի գարձն պատճառ եղաւ Հայաստանի պարծանք Մայր եկեղեցւոյ կառուցմանը՝ ի պատիւ Ս. Հռիփսիմեանց նահատակութեան, ինչպէս որ հրեշտակի Ս. Գրիգորի տեսչեան մէջ ցոյց տուած էր. Ագաթանգեղոս այս մասին կը գրէ. «Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ՝ որ գաւազան ունէր և գէջան ի վերուստ մինչեւ ի խոնարհ... և ի ձեռին իւրում ունի մի մեծ ոսկի... ինքն սկսեալ գայր ըստ արագութեան ոտից նուիրեան արծուոյ և եկն, էջ, եհաս մօտ ի յատակ երկրիս ի շինուածէն քաղաքին. և բախեաց գլխանձրեւիւն լայնատարած գետնոյ... և տեսանեմ ի մէջ քաղաքին մօտ յատակարանս արքունի... խարխոխ ոսկի», և այլն։ Այս տեսլեան նշանակութիւնը հրեշտակի ինքնին բացատրելով Ս. Լուսաւորչի կ'ըսէ. «Արդ զգոյշ լեր աւանդիդ որ քեզ հաստատացաւ ի Տիառնէ Յիսուսէ Քրիստոսէ, շինեսջիր գաւազար անուանն Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն՝ ուր սիւնն հրեղէն ունէր գոսկի խարխոխն». և կանխեց միանգամայն ըսաւ, թէ «տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, և տուն աղօթից ինդրուածոց ամենայն հաւատացելոց, և սեծաս քահանայութեանն»։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, տեսլեան այն ոսկեղէն ուռոյ գարնուած տեղը սկսաւ շինել քրիստոնէական մայր տաճարը. որ այժմ ևս ծանօթ է և կը կոչուի Իչմանէ տեղի, և իսրանը՝ Շողակաթ Աստուածածին. ասոր շինութեան մասնակցած նաև Տրպատ թագաւորը իր պալատականներով և ժողովրդով և աւարտեց 303

թուին։ Տաճարն և վանքն ևս կը կոչուի Էջմիածին իբր Էջէ Միածնի (Որդւոյ Աստուծոյ, կամ հոն Էջ (իջաւ) Միածինն, ինչպէս սովորաբար կը հասկնայ մեր ազգը՝ ունայնապար ահաւոր սեպհականէ յայտնուելուն Ս. Գրիգորի. թէպէտև մեկնիչ հրեշտակը յայտնապէս Որդին Աստուծոյ չի ցուցներ, այլ կ'ըսէ. «այս Տեսլութիւնն Աստուծոյ է, որ հայի յերկիր և տայ գողալ։ ... Այն ահ աստուածութեանն՝ հարթեաց այս անուամբ կոչած է, քննութեան կը կապտի։ Ակիշանի կը թուի թէ շատ հին չէ այս անուան գործածութիւնն և վերոյիշեալ շարականէն վերջ առաջին անգամ գործածած է Օրպէլեան՝ վաղարշապատի Որդին ՀԺ։ Տեսլեան որոշակի Էջմիածին կոչուելն ժէ դարէն առաջ չի յայտնուիր. և գրեթէ առաջին անգամ Ամուռյն վերանորոգութեան ժամանակ Թովմաս Մեծոփեցիէն կը յիշուի. իսկ նոյն դարու գրոց յիշատակա-



324. Էջմիածին ընդհանուր տեսարանը։


կութեանց բնկեաց զմեղսութիւնս յերկրէ»։ Բայց Շողակաթին շարականը կը վկայէ՝ թէ ազգիս քրիստոնէութեան առաջին պատրիքն, այսպէս կը հաւատային տեսլեան մէջ երեւցող սքանչելի մարդը բլլալ Որդին Աստուծոյ, անոր համար և երկեր են ու կ'երգեն.

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ Նմա։
Զայրք հնչեցին Սանդարամետք անդնդոց», և այլն։

Ակնկէց յատկացուած է տեղույն Էջմիածին անունը. բայց թէ ե՞րբ և կամ ո՞վ նախ զայն անուաներ կոչած է, քննութեան կը կապտի։ Ակիշանի կը թուի թէ շատ հին չէ այս անուան գործածութիւնն և վերոյիշեալ շարականէն վերջ առաջին անգամ գործածած է Օրպէլեան՝ վաղարշապատի Որդին ՀԺ։ Տեսլեան որոշակի Էջմիածին կոչուելն ժէ դարէն առաջ չի յայտնուիր. և գրեթէ առաջին անգամ Ամուռյն վերանորոգութեան ժամանակ Թովմաս Մեծոփեցիէն կը յիշուի. իսկ նոյն դարու գրոց յիշատակա-

մարներու մէջ միասին կը գրուին վաղարշապատի և Էջմիածնի անունները։ Մայր եկեղեցւոյ հետ շինեցին նաև հայրապետական և եկեղեցւոյ սպասուորներու համար հարկաւոր բնակարաններ։ Դարձեալ Սուրբ Գրիգորի տեսիլքէն Շողակաթ կոչուած է խորանն, իբր նոյն տեղը «սկսան գործեցաց լոյսն շողացեալ», ինչպէս կ'ըսէ Ագաթանգեղոս։ Մեր յետագայ պատմիչները սովորաբար կ'անուանեն Շողակաթ Աստուածածնին, Էջմիածին և Մայր եկեղեցւոյ։ Էջ-


միածին անմիջապէս եղաւ Հայոց քահանայապետութեան կամ կաթողիկոսութեան աթոռ, որուն առաջին քահանայապետն եղաւ Ս. Գրիգոր 302 թուին. մինչեւ 453 թուականը 18 կաթողիկոսներ նստան Էջմիածին և նոյն թուին քաղաքական հանգամանքին բու սահմանեալ Աթոռը Դուին փոխադրեցին. այնուհետեւ մինչեւ ԺԹ դար զուրկ մնացած հայրապետական աթոռ լինելէ։ — Ի հնումն Էջմիածինը մատն էր վաղարշապատի, բայց բառական ժամանակ է որ անկէ զատուեր և մի քիչ հեռացեր է։ Ամբողջովին պարսպապատ է և քառակուսի ձեւով, ունի իր 275 մետր երկայնութիւն արեւմտեան-արեւելք և 235 մետր լայնութիւն հիւսիս-հարաւ. շինուած է Սիմէոն կաթողիկոսէն 1868 թուին. հիմունքը կոփածոյ քարերով և վերին մասը աղիւսով. ունի տասն և վեց բոլորշի բաւղեր անկեանց պլուխները և չորս կողմերը տեղ տեղ, որով ամրոցի նմանութիւն ունի։ Պարսպին ներսը միջավայրը կայ հաւասարակողմն քառանկիւն մը, շուրջը վանաց գանազան շինութիւնները, և կեդրոնը կաթողիկէ եկեղեցին՝ որուն չորս կողմը ընդարձակ բակ է։ Այս քառանկիւնն և արտաքին պարսպի մէջ կան այլ և այլ կարեւոր շինութիւններ և արձակ վայրեր, ինչպէս կը տեսնուին յատակագծի մէջ։ — Պարիսպը ունի չորս մեծամեծ և կամարակապ դռներ, մին արեւմտեան հիւսիսային ծայրը որ կը նայի դէպի վաղարշապատ և կը կոչուի Դիւղի Դարպաս կամ Շուկայի դուռն։ Երկրորդը՝ Դուռն Վաղարշապատի կը գտնուի արեւմտեան հարաւակողմը, որ մեծ բակ մը կը տանի, որուն մէջ աւազան կայ և շուրջը ուխտաւորներու կամ հիւրերու բնակարաններ և ամբարանոցներ. ասոր արեւելակողմն է Դուռն Մարի կոչուածը, որ կը հանէ Վաղարշապատի ընդարձակ հրապարակը. նոյն տեղը կը հանէ նաեւ հարաւային կողմի աթեւելեան ծայրէն Դուռն Կալի բսուածը, ուսկից կը բերեն Աթոռոյն կալուածներու արդիւնքը. փոքրիկ մուտք մ՚ալ կայ արեւմտահայկական հարաւային ծայրը՝ Բաղաջեաց դուռն կոչուած։ Քառանկիւնը մշտնելու համար ալ հինգ դուռներ կան որոնց դխաւորն է արեւմտեան կողմինը, կաթողիկէի մուտքի դիմաց և կը կոչուի Տրդատայ անուամբ, վասն զի կը համարին թէ այն կողմն եղած է արքունի ապարանքը։ Մեծ պարսպի շինութեան յիշատակարանն արձանագրուած է կալի դրան վրայ, շինարար Սիմէոն կաթողիկոսի անուամբ, համաոտ կերպով, ՈՄԺԷ (1768) թուականաւ։ Բուրգերէն ամանց վրայ կան արձանագրութիւններ։ — Էջմիածնի Գրիգորաշէն և Տրդատաշէն տաճարը թէեւ գանազան ժամանակաց մէջ աւերեցաւ, սակայն ատենօրհնեալ է, թէ



325. Էջմիածնի կաթողիկէի յատակագիծը։

չափը և ձեւը նոյնպէս անփոփոխ մնացած են։ Քառակուսի խաչաձեւ է, կարճ թեւերով և միջակ մեծութեամբ, իրր 35 մետր երկայն, 33½ մ. լայն և 23 մ. կամ աւելի բարձր, իսկ գրսի բակով միասին մինչեւ արեւմտեան դուռն հաշուելով՝ երկայնութիւնն կ՚ընէ 42 մետր։ Ջորս սիւներ խաչաձեւ խարխոխներով տաճարին մէջտեղէն վեր կը բռնեն գմբէթը։ Գայտնի չէ թէ ինչ նեղմով շինուած էր տաճարս Դ. դարու մէջ, բայց կը թուի թէ ոչ ամբողջովին քարէ, այլ փայտակերտ, ինչպէս էր նաեւ երկրորդ տա-

Արեւելք



Հիւսիս

Հարաւ

ՅԱՏԱԿԱԶԵԻ ԷՋՄԻԱԾՆԻ

1. կաթողիկէ եկեղեցի. — 2. թանգարան. — 3. Շիրիմ Մաքսիմալոսի. — 4, 5. Դանիէլ և Նիքսէս ին կաթողիկոսներու շիրիմներ. — 6, 7. Յովհաննէս Ը և Գէորգ Դ կաթող. շիրիմ. — 8. Աղբիւր. — 9. Դուռն (Դարպաս) Տրդատայ. — 10. Դա. վեհարանի. — 11. Դա. Սիւնհդոսի. — 12. Ներքնայարկ վեհարանի. — 13. Գանձատուն. — 14. Նպիսկոպոսներու կրկնայարկ բնակարաններ. — 15. Ծառայից բնակարաններ. — 16. Միաբաններու խուցեր. — 17. Ամամատան դուռն. — 18. Ամամատուն, պարտէզ և բնակարաններ. — 19. Հին վարժարան. Միաբաններու խուցեր. — 20 Ճեմարանի ելք. — 21. Ծառայից և անուանի անձնաւորներ. — 22. Փուռն. — 23. Տպարան. — 24. Մառան (Շիրախանոյ). — 25. Հացատուն և չուխմարան. — 26. Պարպաս Ջրուկի. — 27. Տնտեսատուն և խոհանոց. — 28. Սեղանատուն ամարան. — 29. Սեղան. Ձմերան. — 30. Մատենադարան. — 31. Վաղարշապատ. — 32. Աւազան. — 33. Վաղարշապատի դուռն. — 34. Լիճ և փոքրիկ աւազան Ներսիսեան. — 35. Մօր դուռն. — 36. Կալի դուռն. — 37. Աւազան կհեայ. — 38. Վեհարանի պարտէզ. — 39. Հին վեհարան (թանգարէ). — 40. Ժողովարան (Սիւնհդոս) և Դիւան. — 41, 42. Բաղնիք և դուռն. — 43. Շուկայի դարպաս. — Վեհարան՝ հատատուած 9, 10, 11, 12. 13 թուոց վրայ։

գամ շինուածն նոյն պարսն վերջերը. վասն զի հաւանօրէն աւերեցաւ կաթողիկէս ուրացող Մերուժանէն և Պարսիկներէն, որոնք ի հիմանց քանդեցին վաղարշապատը, և նորոգուեցաւ Մամիկոնեաններէն։ Առաջին կամ երկրորդ շինութեան ժամանակէն և հայ տա-



327. Էջմիածնի կաթողիկէի մէջ Ս. Պօղոսի և Թեկղի բարձրաքանդակ։


ռից գիտէն առաջ քանդակուած կը թուին երկու յունաւատ արձանագրութիւններ և բարձրաքանդակներ՝ ազուցուած հիւսիսարեւելեան սիմոյն բաւական վերը։ Առնոցմէ մին՝ կը ներկայացնէ Պօղոս առաքեալն և Թեկղ կուսի պատկերները հանդերձ նոյն առարկաներու անուններով. միւս արձանագրութիւնը, բուա Պռոէի՝ նկիցեաչներու անուններ և ազօթք կը կրէ. բազմաթիւ մը մէջ կայ հաւատարմեի խաչաձեւ մը, շուրջը գրուած է յունարէն. «Օգնեա ամենայն ազօխազաց յեկեղեցւոջ». վերի երկու անկիւնները կան երկու ազատներ. խաչին թեւերուն մէջ գրուած է մաղթանք մը Զաւիթայի. բազմաթիւէն դուրս այ կողմն կը կարդացուի «Տէր ողորմեա ծառայի քումմ Աբքայ», իսկ ձախ կողմը. «Տէր ողորմեա Եղպիդեայ», վարն ալ կան երեք անուններ Դաճիկ, Տիրեր (Տիրայր) և Գարեգին։ Այս արձանագրութիւնները վերջին անգամ ուսումնասիրեց Գ. Յովսէփ Սարգիսովսկի, 1901ին, Էջմիածնի Աւետարանին վրայ գրած միջոց, որուն հայերէն թարգմանութիւնն քաղուածօրէն հրատարակուեցաւ Հանդէս Ամսօրեայի նոյն տարուան ապրիլի և մայիսի պրակներուն մէջ, հանդերձ նոր և ճիշդ գծուած պատկերներով։ — Վասն Մամիկոնեանց մարզպանութեան իշխանութեան հաստելով, ինչպէս կ'ըսէ ժամանակակից Ղազար Փարպեցին, «հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց». շինուածքի նախշոյն վրայ թէեւ խօսք չկայ բայց հաւանական է որ քարաշէն եզած լինի և միայն տանիքը փայտեայ. վասն զի Սերիոս կ'ըսէ, գրեթէ 100 տարի վերջ Կամիտաս կաթողիկոսի համար, թէ Ս. Հոիփսիմէի եկեղեցւոյն շինութենէն վերջ, «վերացոյց և զփայտակերտս սրբոյ կաթուղիկէին, նորոգեաց և զխախտս տանցն, շինեաց զքարայարկսն». իսկ Յովհաննէս կաթողիկոս պատմիչը՝ գովութեամբ կ'ըսէ. «Շինէ զնա զեղեցկայարմար և չքնաղատես կոփածոյ քարամբք»։ Շինութեան քարերը հրաբղխային են՝ սեւ և կարմիր և սրմերը հաստատուն ու թանձր, այնպէս որ, Մորիէ Անգլիացին կ'ըսէ, միայն ոստոյիկ երկրաշարժով կամ ամրաձգութեամբ կարելի է



328. Էջմիածնի կաթողիկէի մէջ յունարէն արձանագրութիւն։

զայն կործանել։ — Ներսէս Գ Շինողն որ Առապարի Ս. Գրիգորը և Դուռնայ եկեղեցին շինեց, այս կաթուղիկէ եկեղեցւոյս մէջ ալ շինութիւններ բրաւ, բայց յայտնի չէ ինչ մասեր։ Այսչափ կը ծանօթ նաև է զարու կէսէն մինչեւ Ժ. դար, կաթողիկոսներու գործն նստած ժամանակ, հանդիպած բոլոր դէպքեր. բայց միայն կը յիշուի թէ

միշտ պատուի մէջ էր վանքը, և զանազան կողմերէ ուխտի կու գային։ — Ա. Գրիգոր Լուսաւորչի ժամանակէն հաւանական է որ կաթողիկէի մօտ վանականներու և եկեղեցւոյ սպասաւորներու յատուկ բնակարան կար, և Ասողիկ պատմչի մէկ խօսքէն, Հ. Ալիշան կը կարծէ թէ այդ տեղը կը կոչուէր Սուրենեայ անապատ, վասն Մամիկոնեանէն առաջ։ Վասն՝ եկեղեցին նորոգած միջոց՝ Ղազար Փարպեցի պատմիչը վանահայր դրաւ, ինչպէս յայտնի է պատմութենէն. «Կամեցեալ մեծի խնամատարեանն Վահանայ Մարզպանին... զնա իւր առաւել մերձ




329. Էջմիածնի Կաթողիկէի հին ձեւը։

ձաւուր և սիրելի առնել, շնորհէր նմա զնոյականապ և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի (Վաղարշապատ), որում անունն էր Սուրբ Կարապետի եկեղեցի, վանօքն. և նոքա ընկալեալ զբանն Մարզպանին՝ խնամածէր զտեղին։ Պատահեաց նմա կրկին տրամութիւն ի վայրապար մարդկանց. զի ի հրոյ ճեռնեալ փայտակերան եկեղեցւոյն», գինքը կը մեղադրէին. այդ պատճառաւ ժամանակ մը Ամիդ գնաց, ուրտեղէն գրից իր անձին ջատագովութեան թուղթ մը և նորէն դարձաւ Համազասպ Մամիկոնեանի բարեխօսութեամբը։ Այդ թղթի մէջ Ղազար կը յայտնէ ուսումնատեաց արեղաներու նախանձը, տեղւոյն վրայ ըրած խնամքին ու շինութիւնները։ Ղազարէն վերջ մինչև Կիւրիոն, չի յիշուիր վանահայր. իսկ Կիւրիոն, Մովսէս կաթողիկոսի օրով նոյն տեսչութեան մէջ ծեց հօթը տարի, և յետոյ վրաց աշխարհին կաթողիկոս ընտրուեցաւ։ Ի դարու սկիզբը կաթողիկէի վանաց երէց էր Աբրահամ անուամբ մէկը, որ ի Դուին համանուն կաթողիկոսի ժողովին մէջ գրաւուեցաւ. անկէ վերջ եղած է Յովհան կամ Յովհաննիկ՝ կոմիտաս կաթողիկոսի օրով 618ին, Վաղարշապատի եկեղեցիներու նորոգութեան ժամանակ։ Ասկէ վերջ եղբ՝ իրեն փակակալ կաթողիկէին, որ վերջը կաթողիկոս եղաւ և իրեն օրով ժամանակ մը նոյն պաշտօնին մէջ կեցաւ Յովհաննէս Մայրաւանեցին։ Որմէ վերջ չեն յայտնուիր յաջորդներ. թերեւս անմիջապէս նոյն առիւնները Աբրաքացւոյմէ աւերեցաւ տեղը, որոնք (637—646) արշաւեցին Հայոց Ոստանի վրայ, և թերեւս Ներսէս Շինող՝ ասոնց աւերածները նորոգեց ու կարկատեց։ Յայսմաւուրքս հասմամա, Նուռէի խաչի պատմութեան մէջ կ'ըսուի Սիսի ասպիկանին համար, թէ աւելոր է «զմեծ կաթողիկէն զվաղարշապատ՝ որ ասի Էջմիածին». բայց ասոր յիշատակութիւնն ուրիշ պատմիչներ չեն ըներ։ Բագրատունեաց Գագիկ Բ վերջին թագաւորն Վաղարշապատ այցելած միջոց, տակաւին շէն էր կաթողիկէն, բայց անկէ վերջ անյիշատակ կը մնայ և մինչև այն ատենները կը հասնի ամայանալէն, որ ԺԴ. դարու վերջերը Սիւնեաց եպիսկոպոսը յատուկ ողբ կը գրէ։ Բայց վանքը բոլորովին տապալի և անտերունչ մնացած չլինելուն վկայ են նոյն ժամանակները այցելող ուխտաւորներն։ Էջմիածնի աթոռոյն նորոգութեան գլխաւոր պատճառ եղած է Թովմաս Մեծոփեցի պատմիչը, որ շատ երազաբանութիւններէ վերջ, մանրամասն կը պատմէ ժողովոյն հանգամանքները և կաթողիկոսի ընտրութիւնն։ Կը յայտնէ մի առ մի ժողովին ներկայ եղող բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ, կրօնաւորներ, երէցներ, տանուտէրներ, ևն. այդ եպիսկոպոսներու մէջ կը յիշուի նաև ժամանակին Էջմիածնի եպիսկոպոսն Գաբրիէլ։ Այս ժողովով վիճակ եղելով Կիրակոսի, մեծ հանդէսով կը ձեռնադրեն ու կը

նահանգներն զինքը հայրապետական գահը։ Բայց երկու տարի միայն պաշտօն կը վարէ, վասն զի մի քանի հոգի անվաւեր հրաւարակելով ընտրութիւնը, իրեն տեղ զրին Գրիգոր Մակուեցին։ Այս ամբոխային նորոգութեան միջոց փոյթ բրաւ ապահովելու միաբանութեան և սպասաւորներու անառնութիւնը. այլ պատճառաւ գնաց վաղարշապատ աւանը կամ անոր եկամուտները, ինչպէս նաև իր յաջորդները ուրիշ գիտեր։ Ա.յս միջոցները չեն յիշուիր եղած ս և է շինութիւն կամ նորոգութիւն վանաց և եկեղեցւոյն վրայ։ Թումման Մեծոփեցին սկսեալ մինչև Առաքել Դաւրիժեցի 200 տարուց ժամանակ, ազգային պատմիչ մը չունենալով, անյայտ կը մնան մեզ անոյշ դէպքերը, ինչպէս նաև ուրիշ շատ եղելութիւններ, մինչև ԺԷ դարու սկիզբը՝ Շահաբասի աշխարհակալութեան միջոց, որ մինչ հայրապետական աթոռը ծանր պարտքի տակ ընկճուած էր, Այրարատ նահանգին հետ անոր ալ տիրեց։ Երբ 1629ին, Մովսէս Գ Միւնեցին հասարակաց հաւանութեամբ կաթողիկոս եղաւ, քիչ տարուան մէջ աթոռը պարտքերէն ազատեց և սկսաւ ու բրաւ շատ նորոգութիւններ թէ՛ վանքի և թէ եկեղեցւոյ վրայ. իրեն արժանաւոր հետեւողները և անմիջական յաջորդները Փիլիպպոս Ա և Յակովբ Դ, գրեթէ բոլորովին նոր կառուցին ամբողջ շինուածքը, և պակասներն ալ շինեցին կամ փոխեցին յետագայ կաթողիկոսներն Եղիազար, Նահապետ և աւելի Ղազար ու Սիմեոն, և գրեթէ հարիւր յիսուն տարի տևեց (1629–1880) Էջմիածնի ամբողջական շինութիւնը. վերջը եղած շինութիւնները մինչև Մակար կաթողիկոսի ժամանակ, յաւելուածներ կրնան համարիլ. Մակար ձեռնարկեց նորոգել կաթողիկէն և վանքի մէկ մասը։

Մովսէսի ընտրութենէն առաջ Դաւիթ և Մելքիսեդեկ կաթողիկոսներու հակառակութեան ժամանակ, 1614ին, Շահաբաս խորհրդով և բանի Էջմիածնէն Ապահան փոխադրած էր Ս. Լուսաւորչի Աջոյն հետ նաև տասն և հինգ քարեր Իջման տեղէն և Սեղանէն, երկու քարիղէն մեծ աշտանակներ, և այլն. այս սճով կ'ուզէր նոր Էջմիածին մը կառուցանել Պարսից մայրաքաղաքին մէջ, որպէս զի գաղթական Հայոց սիրտը որոյ և զանոնք բնիկ կաթողիկէին ուծացրնէ. քարերը պահուեցան կամ ապուցան Նոր Ջուղայի եկեղեցիները, իսկ հին Էջմիածինը փոխանակ աւերման, սկսաւ վերանորոգուիլ Մովսէսի գալստեամբը։ Ականատես պատմիչն Առաքել, հետեւեալ կերպով կը նկարագրէ կաթողիկէի վիճակը. «Ամենևին ունայնացեալ էր ի սաստուածոց և կոզոպատեալ ի զարդուց. ոչ դիրք, զի ոչ էր անդ ժամատացութիւն կամ ընթերցուած, ոչ զգեստ և ոչ շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ. մինչ զի Քրիստոսի իջման տեղն և սուրբ սեղանն ոչ ունէին զծածկոցս... և մեծամեծ լուսամուտքն գորս ունի՝ ամէնն ի բաց կայր առանց վանդակի. ուստի մտեալ ի ներքս թռչունք լուսին զեկեղեցին ծրտովք, ծղովք և այլօք գոհիւք. զոր ամէնայն աւուր հարկի սրբէաք... իսկ արտաքուստ կուտ գլուխ կաթողիկէին և տանիքն ամէնայն և երեսք սրմոցն՝ քանդեալք և քարինքն թափեալք, և սրմոց յատակաց վէմքն փշրեալք և ծակոտեալք. և որ... շուրջ զեկեղեցեան շինութիւն եղեալ էր՝ և գարձեալ աւերեալ և ի վերայ մխեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամենայն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր ապրիւսն, և հողն եկեալ և ծածկեալ էր զխմոյսս և զասեաճանս եկեղեցւոյն որք կան արտաքուստ կողմանէ։... Ասացեալ բանքս որք ի մէնջ ցուցանեն զանկին անբնակ զոլ ի մարդկանէ. և ասեմ զիսկն. ոչ էր ամենևին անբնակ, այլ զու համարեաց իրրև զանբնակս. վասն զի կաթողիկոսունքն անդ Էջմիածին ոչ բնակէին այլ յԵրեւան քաղաքի ի կաթուղիկէ եկեղեցւոյն... բայց սեւագլուխք ամանք սինկրոնք և գոհիկք, որպէս զգիշական հողագործս որք վարձնորդիք մշակօք բնակէին Էջմիածին, և զաւուրս տարւոյն զրազումն ի գեղոբայսն անցուցանէին քան թէ Էջմիածին»։ Ա.յս վիճակին մէջ էր երբ Մովսէս եկաւ և աւերակները մաքրելով կարկատեց տաճարին որմերը և տանիքը. և յետոյ հողագնդ բառակուսի պարսպա-

պով պատեց. «Եւ ապա ի մէջ պարսպին յարեւմտեան կոմն զդարպասս և զաւետս ի պէտս ինքեանց և հիւրոց. և ի հիւսիսային կողմն և յարեւելեան կողմն՝ շինեցին խուցս ի բնակութիւն միաբանից. և ի հարաւային և թրծեալ ագիւսով և կրով և բոլով շինեցին, գեղեցիկ և վայելուչ յօրինուածով»։ Մովսէսի աշակերտն և Յովհաննուայնից առաջնորդ Զաքարիա վարդապետը, մէկ խօսքով կը բովանդակէ անոր շինուածքին գո-




330. Էջմիածնի Կաթողիկէին ղանգակատունը։

կոմն շինեցին զՍեղանատուն, զՓառնատուն, զՑնծանատուն և զՀամբարանոցս ցորենոյ և այլոց նպեմոց։ Եւ ամենայն շինուածքս այսոքիկ՝ միայն պարիսպն ի հողոյ եղեւ շինեալ. իսկ այլքն ամենայն լիամեալ քարիւ եհատ, ընդոյ. «Զմեծոս սուրբ ի վեր առեալ՝ հատատար արար երկնից»։ Մովսէս իր այս բոլոր շինութիւնաց և նորոգութիւնաց ծախքերն հայիհայիներ է ազգին երեւելի և կարող անձանց յօժարակամ նուէրներով։




331. Էջմիածնի զանգակատան կամ Սուտ դուռը։

Պարսից և Օսմանցւոց պատերազմի երեսէն աւերած կամ երկրաշարժէ ինաուսած և Մոմխէի պահաս թողած փայտէ շինութիւնները կը նորոգէ յաջորդ Փիլիպպոս կաթողիկոսը. «բազմաների վաստակօք զամենայն շինուածսն վերստին շինեաց». բայց վանդակ սրբատաշ քարերով բաց ի գմբէթէն. սալայատակից դաեւ եկեղեցւոյ շրջապատը, և միաբաններու սենեակներու առջեւ չորս կանգուն լայնութեամբ. նոյնպէս սեղանատան մէջ քարէ շինեց հացկերութեի սեղանը և նստարանները: Այս շինութեամբ կաթողիկոսը ուրիշ շատ յիշատակաց արժանի գործեր եւս բրաւ. երկու ձիժանոնք շինեց պարսպի հարաւային կողմը, Յովհաննու վանքի մէջ եղած դպրատունը հոս փոխադրեց, Սպահանէն Ս. Լուսաւորչի Ձէռը գարձուց. նոյնպէս Ջէնկիի առուն բացաւ Սեւանայ ծովէն Հրազդան գետ և Աբգամած լճակէն բղխող գետակ մը Քասապի հետ միացուց. յետոյ գործով կ. Պոլիս և Երուսաղէմ գնաց և վերադառնալով 1654 թուին, սկսաւ տաճարի արեւմտեան դրան առջեւ քանդակեալ զարդարուած գանգակատան շինութիւնը, Աճառե չէկի Ապրահամի ծախքով, և գեռ չաւարտած վախճանեցաւ: Ասոր աշակերտն ու յաջորդը Յակոբ կաթողիկոս վերջացուց շէնքը վայելչաձեւ գմբէթով և անուանեց Հրեշտակապետ. եապարկ է և միջնապարիսպ մէջ կայ խորան և սեղան: Վերէն վար արտաքին կողմը հիանալի և սքանչելի քանդակներով զարդարուած է. վերի կամարապուճներու երեք կողմերը քանդակուած են երեք պատկերներ, արեւմտեան կողմն Քիստոս պատկերը, որ իր աջովը կ'օրհնէ մեռածները, հիւսիսային կողմն Ծղոտաց արքայական պատկերը, իսկ հարաւային կողմը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ հայրապետական զգեստով: Գմբէթին արտաքին երեսները ուրիշ սիներու վրայ. ներքուստ կայ շինուածեան արձանագրութիւնը և աւարտած տարւոյն թուականը, որ է ՌՃՉ (= 1657): Էջմիածնի գանգակատան մէջ կայ Թիւրքէական հսկայական զանգակ մը, որուն վրայ կայ Թիւրքերէն արձանագրութիւն մը: — Զանգակատան գմբէթի նման և աւելի պարզ է մեծ կաթողիկէն կամ տաճարի գմբէթը, 12 լուսամուտներով և սիւնազարդ, շուրջը վանդակապատով, բարձրացած է չորս հատ սիներու վրայ, որոնք նորոգուած են Աստուածատուր, Միքէոն և Դուկաս կաթողիկոսներէն, ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնները: Մեծ կաթողիկէին ճիշտ դիմացը կայ քառասիւն փոքրիկ կաթողիկէ մը, զոր նախ 1684ին շինեց Եղիազար կաթողիկոսը, հանդերձ պատարագի սեղանով Իջմանի




332. Էջմիածնի զանգակի թիւրքերէն արձանագրութիւնը:

ծովէն Հրազդան գետ և Աբգամած լճակէն բղխող գետակ մը Քասապի հետ միացուց. յետոյ գործով կ. Պոլիս և Երուսաղէմ գնաց և վերադառնալով 1654 թուին, սկսաւ տաճարի արեւմտեան դրան առջեւ քանդակեալ զարդարուած գանգակատան շինութիւնը, Աճառե չէկի Ապրահամի ծախքով, և գեռ չաւարտած վախճանեցաւ: Ասոր աշակերտն ու յաջորդը Յակոբ կաթողիկոս վերջացուց շէնքը վայելչաձեւ գմբէթով և անուանեց Հրեշտակապետ. եապարկ է և միջնապարիսպ մէջ կայ խորան և սեղան: Վերէն վար արտաքին կողմը հիանալի և սքանչելի քանդակներով զարդարուած է. վերի կամարապուճներու երեք կողմերը քանդակուած են երեք պատկերներ, արեւմտեան կողմն Քիստոս պատկերը, որ իր աջովը կ'օրհնէ մեռածները, հիւսիսային կողմն Ծղոտաց արքայական պատկերը, իսկ հարաւային կողմը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ հայրապետական զգեստով: Գմբէթին արտաքին երեսները ուրիշ սիներու վրայ՝ որուն վէմը աւարած է Շահաթաս, և շուրջը քարեայ բարձրաւանդակ շինեց՝ որպէս զի սեղանը ամենուն տեսնուի. յետոյ Աստուածատուր կաթողիկոսը վերջացուցին Իջմանի տեղւոյն վրայ, վայելչագոյն շինեց կաթողիկէն կճեայ սիրուն սիներով. իսկ Աբրահամ Բ կաթողիկոսը պղնձեղէն պատուհասներով սեղանը շուրջառակի պատեց, երկրացիկ գոներով արեւմտեան և հարաւային կողմերէն, արեւմտեան վրայ գրելով ՌՃՀԱ (= 1732) թուականը յիշատակարան մը. իսկ միւս դրան վրայ Մխիթարի կարնեցի պղնձագործը գրած է իր յիշատակարանը: Եղիազար կաթողիկոսը շիներ է տանիքի երեք՝ հարաւային, արեւելեան և հիւսիսային կողմերը զանգակատան նման փոքրիկ գմբէթներ: Իջմանի տեղւոյ սեղանէն զատ եկեղեցւոյ մէջ կան ուրիշ վեց սեղաններ, որոնց ամենայինն է Աւագ սեղանը, շինուած բեմի վրայ արեւելա-



333. Էջմիածնի թանգարանի ճակատը։

թանկագին սկիհներ, և այլն։ Կան բազմաթիւ ականակուռ մեծերներ, որոնցմէ մին կը համարուի Լուկիոս Գ. քահանայապետին առ Թրիզոր Տղայ զրկածը 1184ին։ Այս անգին և պատուական հնութիւններէ շատերը Գէորգ Դ. կաթողիկոսի օրով հատաքուած են. թանգարանի շէնքն ալ նոյն կաթողիկոսը կառուցած է առաջարի կից՝ արեւելակողմը, որուն ճակատը կը ցուցընէ ներկայ պատկերը (թ. 333)։ Զգեստներու մէջ աչքի կ'ելնեայ նուրբ ասեղնագործութեամբ և խորհրդաւոր նկարներով զարդարուած շուրջառ մը՝ Հրեղկատառանի մէջ գործուած և բերուած Վլխմանէս եպիսկոպոսի ձեռամբ։ Լծմիածնի թանգարանը փակուած է երկաթեայ գռնով, որուն բանալիները երեք են և կը գտնուին մին կաթողիկոսի մօտ, մին գանձապետի և մին սիւնհոդական անդամներու մօտ, առանց այս երեքին բացուիլը անկարելի է։ Տաճարի մէջ կան երկու կաթողիկոսական աթոռներ. մին՝ ընկուզի փայտէ շինուած, շատ գեղեցիկ քանդակներով, և ունի փոքրիկ գմբէթ՝ հինգ փոքրիկ կաթողիկէներով. աւանդաբար կը պատմուի թէ Հռոմէն բնծայ զրկուած է. միւս աթոռն ալ ընկուզի փայտէ է բայց աւելի բնդարձակ. զարդարուած է մարդ առաւիններով և կրնայի ոսկրի կտորներով. ասոր բոլորաձեւ գմբէթը հաստատուած է չորս բարակ սիւներու վրայ և ունի չորս փոքրիկ կաթողիկէներ. 1721ին այս աթոռը զրկած են Զմիւռնիայ Հայերը, ունի յատուկ յիշատակարան։ Տաճարի բոլոր նկարները սրմիրը և առաստաղը նկարուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686ին, Յովհաննէս ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արարածներ, ծաղիկներ, թռչուններ, եւն.։ Կան նաեւ կտաւի վրայ նկարուած բաներ թուով սրբոց պատկերներ, շատերը Յակոբեան Լեհացիէն և նազար Յովհաննէն նկարուած. հատ մ'ալ զրկած է Բէր Փորթըր Ագղլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Էջմիածնի կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Քիւռս մանուկները օրհնելով։ Տաճարը ունի երեք դուռ, գլխաւոր դուռը արեւմտեան կողմը գանգակատան առջեւ յարկի մէջ է. միւս երկուքը՝ որ առաջինէն աւելի փոքր են, հիւսիսային և հարաւային պատերու մէջ են։ Կայ նաեւ ուրիշ դռան մը տեղը Ս. Լուսաւորչի սեղանին մօտ, որուն համար աւանդաբար կ'ըսուի թէ միայն կաթողիկոսներու, թագաւորներու և անոնց ընտանեաց համար եղած է։ Եկեղեցւոյն արտաքին կողմերը և երեսները պարզ և անպաճոյճ են. հիմքերու մօտ շուրջանակի կը պատեն երեք անպղաձեւ առոխճաններ,



334. Էջմիածնի կաթողիկոսական գաւազան։

որոնցմէ վեր սրմիրու առաջին մասը չորս կարգ քարով նորոգած է Ղուկաս կաթողիկոսը, ինչպէս կը յայտնէ ՌՄԼԹ (= 1784) թուականաւ արձանագրութիւնը։ Որմիրու առաջին կողմերը շատ անգամ նորոգուած են, այլ պատճառաւ աւելի հին են որմիրու վերին կողմերը։ Տաճարի շուրջ եղած բնդարձակ բակերը նախ սալարկեցան Յակոբ կաթողիկոսի ժամանակ 1658ին, արդեամբ Յովհաննէսամտից առաջնորդ Զաքարիա Վարդապետեանցւոյն, որ շատ նախանձաւոր էր Էջմիածնի շինութեան. ան 1659 թուին վախճանելով թագուհեցաւ գանգակա-

տան առջև արևմտեան կողմը, իրմէ պատրաստած տապանի մը մէջ։ Չարխը քանի և հօմն տարի վերջ Ղուկաս կաթողիկոսը նորոգել տուաւ այս սալայատակը և իր յիշատակարանն գրեց տապ դրան հիւսիսակողմը։ Ատ դրան հարաւակողմն ալ կը

մնա է նաև Պարսկաստանի Ջուղայեցի պետան Մաքսոնալտի շիրիմը։ Միաբաններու գերեզմանատունն է վանքի հարաւ արևելեան կողմը, Ղազարապատի մօտ։ Վերոյիշեալ շիրիմներն ունին տապանագիրներ։

Տեղւոյս կաթողիկէ եկեղեցիէն վերջ նշա-




335. Գէորգ Դ կաթողիկոս։

անուն Տփղիսեցի կրպակաւոր և բանուոր նուիրատուաց արձանագրութիւն մը՝ 1682 թուականաւ։ Գլխաւոր դրան առջևը և երկու կողմերը թաղուած են առանձին տապաններու մէջ կաթողիկոսներէն ոմանք. ինչպէս, Ազեքսանդր Ա և Ազեքսանդր Բ, Դանիէլ, Յովհաննէս Ը, Ներսէս Ե, որոնց

նաւոր վայրն է կաթողիկոսարանը, որուն առաջինները Պատրիարքարան անունը կու տային, իսկ այժմ Վեհարան կ'ըսուի, և կը գտնուի վանքի ներքին քառակուսւոյն արևմտեան կողմը և Տրպատայ համարակապ դրան ալ կողմը գէպի հարաւ։ Էջմիածնի առաջին նորոգող Մովսէս կաթողիկոսը նախ

շինած էր նոյն կողմը՝ բայց զէպի հիւսիս. յետոյ իր յաջորդը Փիլիպպոս աւելի վայելուչ կերպով շինեց ներքնայարկին վրայ. իսկ Ղազար կաթողիկոս վերջապէս շինեց այժմեան պրըքով, ընդարձակ և շքեղ, տասը սենեակներով. հարաւային ծայրը կամարայարկ մեծ քառակուսի դահլիճ մը շինելով, որուն հիւսիսակողմը պատշգամ կայ, արեւելակողմն՝ սեղանատան մուխ գուռը և արեւմտակողմը Ղազարապատ հանող գուռ մը, որուն վրայ կը տեսնուի Ղազար կաթողիկոսի յիշատակարանը։ Դահլճին արեւ-



336. Էջմիածնի Գէորգեան ճեմարանը։

ելակողմը ուրիշ գուռ մ'ալ բացաւ, որ անկէ երթալ կաթողիկոսը հանդիսի օրերը սեղանատուն մտնելու համար. այս գրան վրայ ալ արձանագրած է նոյն կաթողիկոսը 1741 թուին։ Միմէոն կաթողիկոսը աւելցուց նաեւ կաթողիկոսի ձմերային բնակարանը՝ մեծ ու փոքր սենեակներով։ Արեւմտեան կողմի հիւսիսային մասը, ամբողջ հիւսիսակողմը և արեւելակողմեան մէկ մասը, միաբաններու երկայարկ բնակարանները կը գրաւեն. սորին յարկը՝ ընդհանրապէս ապագ աստիճանաւորներու, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, վարդապետներու, և այլն. վերին յարկը՝ սարկաւագներու, կղերիկոսներու և այլոց։ Հիւսիսակողմեան արեւելեան ծայրը կը գտնուին ծառաներու և սպասաւորներու բնակարանները։ Միաբանները ճիշդ թիւն չէ կարելի որոշել, վասն զի մերթ կը յաւելու և մերթ կը նուազի, սակայն միշտ հարիւրէ աւելի են. 1685ին Եղիազար կաթողիկոսի օրով, յիշատակարիր մը կ'ըսէ անոր համար. «Ցէր Աստուած տացէ սմա յերկար կեանս. զոր (զէջմիածին) վայելչազարդ վայելչացոյց, և զեղեցկազարդ պայծառացոյց զսուրբ աթոռս, միաբանօք մինչեւ աւելի քան բազմարիւր յիսուն այր, մեծ և փոքր, սեւազգեստք և եկեղեցւոյ մանկունք»։ Վանքի քառակուսւոյն արեւելեան կողմը մեծ մասամբ սեփհական է ուսումնարանին. վարժարանը Յովհաննես վանքէն զէջմիածին փոխադրուելով, բաւական բարգաւաճեցաւ. Ժէ. դարու վերջը և ԺԲ. սկիզբը. հոն ուսաւ հայերէն պարապեցաւ նաեւ վարպետ Յովհաննես՝ որ յետոյ Լեհահայոց եպիսկոպոս եղաւ։ Միմէոն կաթողիկոսը երկու վարժարան շինեց մէկը՝ հիւսիսային կողմը, ուր ուսուցիչ դրուեցաւ Պետրոս Բերթուսեանց կամ Աղամալեան՝ անուանի գիտնական եպիսկոպոսը։ Այս վարժարանն յետոյ սեղուն խնամատարեան պատճառաւ ձգուեցաւ և անցեալ դարու սկիզբը փոխադրուեցաւ արեւմտակողմը, Տրպատոյ գրան վերնայարկը. տարիներ վերջ (1813) Եփրեմ կաթողիկոսի ժամանակ նոր վարժարան շինուեցաւ վանքի արեւելակ[illegible]։ Ժամանակի յառաջադիմութիւնն և [illegible]նց ու գիտութեանց բարգաւաճները կը [illegible]հանջէին բարձրագոյն ուսումնարան մը, այդ

նպատակի համար արդիւնաշատ Գէորգ Դ կաթողիկոսը, անձնական և ազգայինները նպիրուած մեծ գումարով հիմնեց իր անունով կոչուող հոյակապ Գէորգեան ձեմարանը՝ արեւելեան կողմը, մեծահանդէս նախատօնիք կատարելով 1874 տարւոյ սեպտեմբերի մէջ. բայց դրեթէ տարի մը վերջը (հոկտ. 16ին) դիպուածով կրակ իյնալով տասը ժամ հրդեհելով շէնքին կէսը այրեց. տակայն շուտով և արիւթար վերանին շինեց. կարգեց դիտնական ուսուցիչներ զանազան ուսմանց և լեզուներու, յատուկ կանոններով և 80ի չափ աշակերտներով, յետոյ շինեց նաեւ աշակերտաց ննջարան և հիւանդանոց։ Ձեմարանի հիւսիսային կողմը վերին ճակատի վրայ կայ շինութեան յիշատակարան։ — Արեւելակողմեան հարաւային ծայրը՝ Մովսէս կաթողիկոսի օրէն շինուած էր հացի փուռ, զոր փռնատուն կը կոչեն և նորոգուած է Աբրահամ Բ 1731ին, փոռն հարաւակողմը Միքէոն կաթողիկոս շինել տուաւ Համբարանոց, որ և այժմ կը կոչուի Օշականայ ամբար, ուստի դի այն դիպին բերքերը հոս կը պահէին։ Գուկաս կաթողիկոսն ալ ուրիշ արմնակաց կրկնայարկ ամբարանոցներ շինել տուաւ, հարաւակողմեան արեւելեան ծայրը, Քշուկի կոչուած գրան մօտ, որուն կամարին վրայ արձանագրուած է շինութեան յիշատակարանը՝ ՌՄԼԴ (= 1785) թուականաւ։ Աղոնց կից հարաւակողմեան թեւին արեւելեան մասին մէջ էր մեծ խոհանոցը, վերաշինուած Գուկաս կաթողիկոսէն. ուստի դի գայն կանխաւ 1718ին շինած էր Աստուածատուր կաթողիկոսը՝ Ցեղատուն կոչելով, ինչպէս կը ցուցնէ արտաքուստ հիւսիսային որմի վրայի արձանագրութիւնը։ Էջմիածնի մէջ առաջին անգամ տպարան հաստատած է Միքէոն կաթողիկոսը 1771 թուին. կար նաեւ Թղթատուն՝ 1776ին հաստատուած. նախ կը գտնուէր կաթողիկոսի ձմեռնային բնակութեան մօտ, յետոյ փոխադրուեցաւ վերոյիշեալ խոհանոցի տեղը և ի վերջոյ, Մակար կաթողիկոսի օրով, կառուցուեցաւ վանքի արեւելեան կողմը գտնուող մեծ հրապարակի հարաւային կողմը. կանոնաւոր, ընդարձակ, ապառ և տպարան անուանելու արժանի շինութիւն մի է. իր մէջ կը պարունակէ առանձին բաժանմունքներ, ձուլարան, մխիթարեանց, գրաշարներու սրահ, տպագրատուն՝ եւ րեք ձեռաց և երկու արագատիպ մամուլներով։ Մ. Ամատունեան և Յ. Մ. Ամատունց և թերեւս ուրիշներ ալ, տպարանիս ճոխութեան և հարստութեան գլխաւոր պատճառներն եղած են իրենց նպատակներով։ 1869ին ըսկսաւ հոս կը տպուի Աբրահամ ամագիրը. տպուած են ու կը տպուին նաեւ ուրիշ գրքեր, որոնց մէջ յիշելու արժանի է մեծագիր ձաշոյն։ Վանացս հարաւային թեւին ամբողջ միջին և արեւմտեան մասը կը գրաւեն ամարան և ձմերան երկայն սեղանատուները՝ իրարու կից, նշանաւոր ընդարձակութեամբ և քարէ ամուր շինուածքով, մինչ երկու հարիւր հոգի կրնան ընդունիլ։ Սեղանատունն ի հնուց կառուցուած և երկու բաժնուած էր. ամառնայինը Միքէոն կաթողիկոսը վերանին շինել տուաւ կոփածոյ քարերով. բայց Գուկաս կաթողիկոսը նոր շինութեամբ աւելի ընդարձակեց, սեղաններն ու նստարանները ամբողջ միակտուր քարերով շինելով և արեւմտեան ծայրը գրաւ կաթողիկոսի գահը՝ չորս սիւներով կամարիկի մը ներքեւ, որ յետոյ փոխագրուեցաւ արեւելեան ծայրը. միայն Հանդիսի օրեր հոն կը բազմի կաթողիկոսը միաբանից հետ։ Կրկին գմբեթով ասիկ կը մըացուի ձմեռան սեղանատունը, զոր ըստ արձանագրին 1713ին նորոգած է Ագներսանդր կաթողիկոսը։ Նոր խոհանոցն է ամբողջ սեղանատան հարաւակողմը՝ գրեթէ հարաւակողմեան թեւին միջամասը. անոր մօտ են մառանն, գինետունն և առնետունն, որոնց ամենուն վրայ ընդարձակ ամբարանոցը, շինուած Գուկաս կաթողիկոսի օրով, 1788ին, Զուղայեցի Մարգար Խաչատեանցի ծախքով, ինչպէս կը տեսնուի արձանագրութենէն։ Եպիսկոպոսներու սեղանատունը առանձին է արեւմտեան և հիւսիսային թեւերու անկիւնը, հին շուկայի մօտ։ — Հարաւային կողմը ամառնային սեղանատան և Դպրոցապատի գրան վրայ, կաթողիկոսարանի մօտ շինուած է Էջմիածնի Հարուստ Մատենադարանը կամ Գրատունը, ուր առանձին խնամքով պատրաստուած պահարաններու մէջ դասաւորած

են հին ու նոր ձեռագիր և տպեալ գրքեր, թէ՛ մագաղաթի և թէ թղթի վրայ. կան դեղեցիկ նկարներով զարդարուած ձեռագիրներ. աչքի կ'իյնայ ի միջի այլոց փղոսկրեայ կազմով ձեռագիր Աւետարան մը՝ Պարսկաստանէն բերուած. հրաշակերտ է ասոր կողքի վրայի բարձրաքանդակ նկարն: Մատենադարանի մէջ կը գտնուին կաթողիկոսական հրովարտակները զարդարուած կայսերական կնիքով: Յակոբ վարժապետ Կարինեանի 1863ին ի Տփղիս հրատարակած ցուցակի մէջ նշանակուած են 2340 ձեռագիր մատեանք, որոնց վրայ յիշուց մինչեւ ցարդ աւելցեր են ուրիշ շատեր: Բազոր Էջմիածնի բանասէր ուղեւորները մեծ փափաքով ընդրած են տեսնել ու քննել տեղւոյս գրքերը, բայց քիչեր կրցած են տեսնել: 1837ին գրատունը ընդարձակած միջոց՝ գրքերը նոթի կարգաւ դասաւորեցին: 1879 թուին Գէորգ կաթողիկոսը գրատան առջեւ առանձին սենեակ մը պատրաստել տուաւ, իբրեւ Ընթերցարան:

Վանացս նոթրին քառակուսիէն դուրս եղած դիւանաց շէնքերէն մին է Սիոնհոդոսի կամ Սիոնի տաճարը և դիւանատունը՝ աբեւմտեան հարաւային կողմը, ուր առաջ հիւրանոց էր փոքր Ղազարապատ անուամբ: Սիոնը հաստատուած է Թուականց կայսեր հրամանաւ 1836 թուին, և գործել սկսաւ 1837ին կարգերի Յովհաննէս կաթողիկոսի օրով. սա իբրեւ վերահսկող և տահմանիչ է Էջմիածին Ազգային եկեղեցական գործոց տեսչութեան, որուն նախագահն է կաթողիկոսը և անդամները՝ երկու արքեպիսկոպոս, երկու եպիսկոպոս, չորս վարդապետ, հոգաբարձու և քարտուղար հանգերձ գրագիրներով, և այլն: — Պարսից արեւմտեան հարաւային անկիւնը կը գտնուի Բազինիքը, որուն անուամբ կը կոչուի նաև մերձակայ դաշտ: Աբեւմտեան կողմի պարսպէն ներս մեծ մատեամբ պարակ է և ծառատունկ և մեծ աւազան մը կայ վեհարանի դիմաց. ծառատունկներու մեծ մասը և աւազանը՝ Ներսէս Ե՛ արդիւնք են, որ գրեթէ 30000 ծառ անկաց և կ'ուզէր գնո հազարներ անկել Էջմիածնի մէջ: Էջմիածնի նորոգութեան սկիզբէն ի վեր՝ ջրի համար կաթողիկոսները շատ հոգ տարած են, և իրենց մեծ և պիտանի վատահներէն մին կարելի է համարել ջրի գնապատ շահաբաժինները և ճանապարհները, զոր շինեցին Էջմիածնի մէջ և տահմաններու, շատ աշխատութեամբ և ծախքով: Նախ Փիլիպպոս կաթողիկոսը, ինչպէս առաջ յիշեցինք, Ագռագածայ կիրճէ տեղ անուն վտակը գարձուց դէպի Քասաղ, և արքունի հրամանով անոր կէսը սեփհականեց Վաղարշապատի և Էջմիածնի. որուն համար ուրիշ գիւղեր յաւոյ շատ վիճեցին բայց չկրցան գրաւել: Նոյն կաթողիկոսը վանաց գնանալարկի խնդութիւններ գտմբեցընելու համար, տասերկրկիայ ճանապարհ շինել տուաւ: Այս տեսակ ջրի ճանապարհներուն Քանքան կ'ըսեն: Միհէռն կաթողիկոսը 1768 թուին ուրիշ քանքան մ'ալ փորել տուաւ, յատակի ջուրերը հաւաքելու համար և միացուց հին քանքանի հետ: Գարեհակ Ջուղայեցի Յակոբ կաթողիկոսը ջուր բերել տուաւ Քասաղ գետէն Վաղարշապատի վրէն և երկրի տակէն անցընելով վանքի հիւսիսային կողմէն հանել կաթողիկոսարանի պարտէզը և անկէց քարուկիր ապուպաներով մինչեւ Ղազարապատ: Նոյն Յակոբ կաթողիկոսը շինած էր նաև ուրիշ ջրի ճանապարհներ և անպատանիներ սատկելու համար լճակներ: Վերջին կաթողիկոսներէն ոմանք եւս, ինչպէս նաև Գէորգ Դ, նորոգութիւններ ըրին ապուպաներու և քանքանի վրայ: — Էջմիածնի հիւրանոցը՝ որ Ղազարապատ անուամբ ծանօթ է, կը գրաւէ գրեթէ հարաւակողմեան բոլոր շէնքը. շինուած է Ղազար կաթողիկոսէն 1750 թուին, ինչպէս արձանագրուած է հարաւային մեծ գրան վրայ. կրկնայարկ և եռայարկ է և ունի բնաւոնէ աւելի սենեակներ: Ղազարապատի արեւմտեան մասի վերնայարկի մէջ Պօղոս և Պետրոս Եւստաֆեանք Եգիպտոսի փոխարքայի պաշտօնեաները, և Յովհան Յահակեան՝ անոնց գործակիցը, 1839 թուին նոր սենեակներ նորոգեցին իրենց ծախքով, իբրեւ քանքարչիբի արեւելեան կողմը գրեթէ մէկ մէկ յիշատակարան: Հիւրանոցը նորոգուած է վերջին անգամ 1879 թուին: Ղազարապատի արեւմտեան մասի մէջ կայ քառակուսի գեղեցիկ պարակ և մէջը աւազան. իսկ

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌԻ

ՀԱՑԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐՈՒ

	ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԱՑԻ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Ա· ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՎԻՃԱԿ	Տուն	Հոգի	Տուն
1	Ախակէմ	4	33	29
2	Արմուտլու (Տանձուտ)	50	372	24
3	Գուզուկիւտան կամ Ղուզուկիւտան	89	729	—
4	Գուրտուզուլի կամ Ղուրտուզուլի	111	975	—
5	Թալին Հին	164	1173	—
6	Թափա–ախպէր	61	527	—
7	Կէչէբլի	257	2242	—
8	Կէօղլու	83	697	—
9	Ղըմըղլու	77	616	—
10	Ձափարապատ	139	604	—
11	Մազարբէկ	43	320	—
12	Մատաթա	122	1545	—
13	Մօլլա պայէզիթ	170	1537	—
14	Շահրիար Մեծ	198	1573	—
15	Շահրիար Փոքր	26	190	—
16	Իւղուն–օպա	105	788	—
17	Վարտաւարապատ	234	1688	—
18	Տատալու	77	615	—
19	Քնալակբիս	62	486	—
	Ամբողջ Ա վիճակի մէջ	2072	16710	53
	Բ· ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԻՃԱԿ			
1	Ագճա–գալէ	44	277	1
2	Ախբէկլու	92	538	—
3	Ադաւանատուն	104	635	—
4	Ամանլու–Նշասաթլու	83	537	—
5	Ամիալը – Ապատրահման (վէրին)	37	224	—
6	Արտաշար	50	330	—
7	Դոդա	25	171	51
8	Ծէյվա Չայոց	165	1062	—
9	Էվախկէր	78	648	—
10	Թահմազ–արթ Աստրին	182	1273	—
11	Թահմազ–արթ վէրին	71	414	—
12	Իրգնաւուզ	94	623	—
13	Կըամփա կամ Քամըշլը	55	337	19
14	Չաճխէր	24	191	19
15	Չայթաղ	133	879	—
16	Մարգարա	95	764	—
17	Մուգանճուղ	67	439	—
18	Մօլլա Տուրսուն	25	146	22
19	Զըգուխճի	50	346	—
20	Սամազար	144	961	—
21	Վաղարշապատ	680	3422	—
22	Քէօրփալու	161	1070	—
23	Ֆռանեկանոց	81	505	—
	Ամբողջ Բ վիճակի մէջ	2540	15792	112

	ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԱՑԻ	ՀԱՑՔ		ՕՏԱՐՔ
	Գ· ԱՇՏԱՐԱԿԻ ՎԻՃԱԿ	Տուն	Հոգի	Տուն
1	Աշտարակ	410	3210	—
2	Արգել	56	1003	—
3	Բիւրական	106	458	39
4	Գաբաճէօբէն	52	424	—
5	Գաբրա–վանք	24	162	—
6	Գղըլճամիր	159	1282	—
7	Գովրա–խարապա	26	233	—
8	Եղիվարդ	202	1350	—
9	Թալիչ	60	482	—
10	Ինճկի	18	139	—
11	Կարբի	131	1008	—
12	Կոշ, Կուշ	89	566	36
13	Չաճի–գարա	37	280	—
14	Մուղնի, Մօղնի	38	202	—
15	Յովհաննավանք	70	507	—
16	Տեղեր	44	402	—
17	Փարպի	91	599	21
18	Օշական	274	1916	—
	Ամբողջ Գ վիճակի մէջ	1907	14228	96
	Դ· ՊԱՇ–ԱՊԱՐԱՆԻ ՎԻՃԱԿ			
1	Ալիքուչակ	163	1412	—
2	Աստուածընկալ	27	257	—
3	Ախնագկ	111	866	—
4	Գաբանլըգ	45	469	—
5	Գաբապուլաղ	84	636	—
6	Գաբագիլիսէ	84	818	—
7	Գիւլագլի	57	574	—
8	Գիւլլիճէ	117	889	—
9	Թամամէրլի	96	877	—
10	Թագեաճիլու	49	387	—
11	Իշանչալան	44	345	—
12	Իմէրլի	46	535	—
13	Չաճի Պագըր	27	297	—
14	Վազանփար	144	1216	—
15	Վայայիճի	46	439	—
16	Վաչճի	29	287	—
17	Փիւլքի	49	495	—
18	Մալլա–գասըմ	82	776	—
19	Նորաշէն	13	142	—
20	Շիրազալայ	102	806	—
21	Զամըրլու	112	1022	—
22	Պագարճըգ	53	491	—
23	Պաշ–Ապարան	152	1353	—
24	Պիւնկր	71	692	—
25	Ապամոսավանք	10	97	14
26	Ամասաէրլիչ	46	426	—
27	Այչլու	87	616	—
28	Քոմիսար	18	122	11
	Ամբողջ Դ վիճակի մէջ	1964	17242	25
	Համագումար Էջմիածնի գաւառի	8483	64007	286

արեւելեան մասն է ընդարձակ պարակ, որուն հիւսիսակողմը՝ արեւելեան պարսպին կից կան ախոռներ, դաժիր և պարակցիներ։

Էջմիածնի կաթողիկոսի հանրածանօթ միապետական իշխանութիւնը, քնաշխարհի և ուրիշ կողմեր գաղթող Հայոց վրայ կը տարածուի. եպիսկոպոսներու թեմերու բաժանութիւնը, կաթողիկոսի ընծերակայ արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, այլ և այլ պաշտօնեաները, վանքի միաբանութիւնը, հիւրեր, պանդուխտներ, բազմաթիւ մշակներ, սպասաւորներ, և այլն, այս ամէնուն համար հարկաւոր են հարեւան կալուածներ և նկամտութիւններ։ Այդպիսի իշխանութեան օրով, կամ մինչեւ այն ժամանակ, երբ կը պահպանէին նախնեաց իրաւունքները, մեծամեծ և բազմաթիւ կալուածներ ունէր կաթողիկոսարանը, որոնց համար ԺԲ դարու պատմիչ մը կ'ըսէ թէ կը հասասարէին արքունեաց կալուածներու. վանն ալ ունէր հինգ հարիւր մեծամեծ և շահաւէտ գիւղեր։ Բազմաթիւ անցքերէ և փոփոխութիւններէ վերջ, Ամենայն անփխական կալուած մնացին միայն հետեւեալ հինգ գիւղերը՝ երկու կամ երեք գաւառէ ի վեր, Վաղարշապատ, Օշական, Մուղնի, Եղիվարդ և Մաստարա. որոնց վրայ երկարօրէն կը խօսի Սիմէոն կաթողիկոս Ջամբռ գրքին մէջ ինչպէս նաեւ Շահխաթունեան։ Ասոնցմէ զատ՝ մերձաւոր գիւղերու մէջ և հեռուները ունի ոչ սակաւ կալուածներ՝ այգիներ, դաշտեր, ձիթահանք, կրպակներ (Ալեքսանդրապոլ, Տիֆլիս, և այլն), և ժողովրդեան առատ նուիրատուութիւններ ու տուրքեր՝ զորս կը հաւաքեն Էջմիածնի նուիրակները որոշեալ ժամանակաց մէջ, բոլոր Հայաբնակ վայրերէ։ — Պատմական և մեծ վանքին և Էջմիածնի ամենայն վրայ ճոխագոյն ուղեկութիւններու ցանկացողներ, կրնան գտնել Սիմէոն կաթողիկոսի Ջամբռ գրքի, Շահխաթունեան եպիսկոպոսի Ստորագրութիւն կարողիկէ Էջմիածնի անուն գրքի և այլ ոչ սակաւ ցարդ հրատարակուած գրքերու, լրագիրներու և հանդէսներու մէջ։ Յանկալի է որ Էջմիածնի միաբաններէն մին հաւաքէր և ճոխ կերպով հրատարակէր ասոնց գանազան քաղաքական և եկեղեցական անցքերը՝ քաղելով գրքերու յիշատակարան-

ներէ և պետական գրութիւններէ, որոնց հետ նաեւ Պարսից թագաւորներու հրովարտակաց պատճէնները, սահմանոյն նորոգութիւնէն մինչեւ Ռուսաց տիրապետութիւնը։ Կարեւոր է նաեւ կաթողիկոսներու ճիգը շարքը գտնել Էջմիածնի ամենայն հաստատութենէն մինչեւ ցայժմ։ Շահխաթունեանը իր ստորագրութեան մէջ և ուրիշներ իրմէ վերջ կերպակս վիրապեցիէն մինչեւ այժմեան Տ. Մկրտիչ Ա., իրարմէ տարբեր թիւեր կը գտնեն, վասն զի ոմանք կը հաշուեն նաեւ ամենահին կամ փոխանորդ կաթողիկոսները և ոմանք զանց կ'ընեն։ — Երկրի խառնակ վարչութեան և Էջմիածնի վանատեարներու ճանապարհէ դուրս գտնուելուն պատճառու ԺԷ և ԺԸ դարերու մէջ Երասպացի ուղեւորներու աչքէ վրիպած կը կարծուի վանքը, և նախ կը համարուի Էջմիածնի առնուան հոչակուիլն Աստիճանոս կաթողիկոսի յարեւմտեան ըրած ուղեւորութենամբ և ապա Աղթարու և իր Աւետարանշահ որդւոյն՝ իրրեւ Հայոց ազգապետ, երկար ժամանակ Հռոմի բնակելովն։ ԺԷ. դարու սկիզբը Շահաբասի աշխարհակալութեամբ Աղբրատապ քաղաքական կամ վարչական մեծ յեղափոխութիւններով, դիրքնգան Երասպացի գեղապանեու, վանատեարներու և քարոզիչներու երթեւեկութիւնը։ Հին ուղեւորներէն յիշենք Թեքէմանտաճ, Թաւէրնիէ, Շարտէն և այլն, կարեւոր թուականներ։ Վերջին ժամանակաց մէջ Էջմիածին ունեցած է բազմաթիւ ազգային և օտար այցելուներ, որոնք գանազան կերպով նկարագրած են զայն, վերջին ու նոր այցելուներու մէջ նշանաւոր է Պ. Լինչ՝ որ բաւական մանրամասն կը նկարագրէ։ — Ներսէս Ե կաթողիկոսը 1847 թիւէն սկսեալ Էջմիածնի վանքէն դուրս արեւելեան հարաւակողմը անկել տուաւ բաւական կազմախիներ և ուռենիներ՝ 250000 ծառ աւելի, որոնց մէջ կային նաեւ 40000 թթենիներ՝ շերամի համար. այս կաթողիկոսը փորել տուաւ նաեւ մեծ աւազան կամ ձկնարոյթ լճակ մը՝ 160 մեար երկայնութեամբ և 60մ. լայնութեամբ, եկեղեցիները քարէ, ջուրը բերելով Շաւ—արխ առուէն. կ'ըսեն, թէ կ'ուզէր անկել միլիոն մը ծառ։ — Էջմիածնի մօտ՝ արեւելեան կողմը գտնուող

Երեւանը՝ Ա. Լուսաւորչեան աշխարհի ամուր քաղաքապետութիւնը լինելով, շատ անգամներ իրեն կը ձգէր աշխարհակալներ և աշխարհաւերներ, որոնց ագահից և աւերմանց շատ անգամ վիճակակից եղած է նաեւ վանքս։ Էջմիածնի մօտ սակայ պատերազմներ տեղի ունեցած են Թուրքաց դէմ Պարսիկներէն և Ռուսներէն։ Վերջահամ կաթողիկոսը կը պատմէ Թահմազ Ղուլի խանի Էջմիածին գալն, 1735 տարւոյ յունիսի մէջ. սա նոյն տարին Օսմանցիներէն առնելով Երեւան քաղաքը, հօթանասուն տարի երկիրը խաղաղացաւ մինչեւ անցեալ դարու սկիզբը (1804), երբ Ռուսներու հետ պատերազմ բացուելով Պարսիկները Ագպաս-Միրզայ արքայորդւոյն առաջնորդութեամբ Էջմիածնի շուրջը բանակ գրին հարաւային, արեւելեան և արեւմտեան կողմէն։ Ռուսաց Յիցիանով զօրավարը բուն բանակը հաստատեց հիւսիսային կողմը, որ յաճախ կոնդ կոչուած բլրակի վրայ. յարձակելով գրուեց Պարսից բանակը, և Էջմիածնի մէջ թողլով հիւանդները, վիրաւորները և կարասին, փախստականներու հետէն գնաց մինչեւ Գանձակ։ Բայց երբ բանակին մէջ հիւանդութիւն տարածուելով ստիպուեցաւ Երեւանայ պաշարումը վերցընել, զարձաւ եկաւ Էջմիածին, անկէ վերց սպառնալէն մաս մը հանդերձ մաս մը միաբաններով, որպէս զի Պարսից վրէժխնդրութենէն չ'ենթարկուին, տարաւ Վրաստան. ուսկից յետոյ մաս մը զարձաւ։ Նշանաւոր կէտերը պատահեցան նաեւ Ռուսներու և Պարսից երկրորդ պատերազմի միջոց 1827 թուին, Էջմիածնի առհմանները, որուն պաշտպանութեան համար ռուս գունդ մը եկաւ, որոնք զարկին և զարնուեցան Պարսիկներէն՝ առաջնորդութեամբ Գրայինովի գնդապետին. յետոյ 1833 թուին, Եփրեմ կաթողիկոսը, այս պատերազմի մէջ ընկնողներու վրայ մնաղարձան և յիշատակի կոթող մը կանգնեց։ 1827–28 տարիներու պատերազմէն վերջ, Ա. Լուսաւորչեան աշխարհի հետ Էջմիածինն ալ ռուս պետութեան իշխանութեան տակ անցաւ և պատեցաւ այլազգիներու տուած նեղութիւններէն։ — Էջմիածին՝ Երեւանու նահանգի հօմն վիճակներէն վերջինն է, որուն հայաբնակ գիւղերու ցանկն գրած ենք առանձին։ — Ա. Լուսաւորչ, 209 234։ Հնութիւնք վանօրէից, Զ։ եւ այլն։

ԷՋՄԻԱՆԻՆ. — Անուշան գիւղ վան–Տօսպ (վասպուրական) գաւառի Թիմարայ մասին մէջ։ — Ա. յս անուամբ փոքրիկ ապառաժուտ լեռ մ'ալ կայ վանայ հիւսիսակողմը, Սուրբ Յակոբայ լեռնէն իբր կէս ժամ հեռու, ուր կը յիշէ Յոհաննէս Էջմիածին անուամբ փոքրիկ վանք մը, որ այժմ անբնակ է։ — Էջմիածին անուն վանք մը եւս կը յիշուի Երզնկայի մէջ, որ այժմ Թոխ անայի։

ԷՄԷՆ ՏԻՐԻ. — Զորակ կիլիկիոյ, Զէյթունէ 7 ժամ հեռու, որուն անուամբ եւս կը կոչուի Էրիճէք գիւղը։

ԷՄԻՆ ՄԱՏԻՆ. — Լեռնային կիլիկիոյ մէջ այս անուամբ ծանօթ կապարահանք կայ, Ակիշլար անուն լիրան տակրատը։

ԷՍԿԻՇԷՀԻՐ (Հին քաղաք). — Կուտինայէ 12 ժամ հեռու քաղաքս շինուած է ժայռոտ բլուրի մը տակրատը. 200 տուն հայ կայ, մեծ մասն կուտինայէ և Միխրիհիսարէ գաղթած, բացի բազմաթիւ հայ պանդուխտներէ. ունի Ս. Երրորդութիւն անուամբ մեծաւոր մը և Ս. Մեսրոպեան ու Ս. Գանգիսեան երկսեռ վարժարան, 221 աշակերտներով. կան նաեւ 40–50 տուն կաթողիկէ Հայեր։ Բոլոր գիւղի բնակիչներն են 10000 հոգի, բաժնուած 3000 տան, մեծագոյն մասն Թուրք. Հոյներ եւս կան, որոնք Հայոց պէս վաճառականութեամբ և արհեստով կը զբաղին։ Քաղաքիս բնակարանները են այծի մազ, ափիոն և մանուածով ծովափրիսուր ըսուած բանջ՝ որ համբաւաւոր է ու մեծ շահու ազբիւր — Էսկիշէհիր, ինչպէս անունն իսկ կը յայտնէ, հին ու պատմական է։ Հռոմէացիներէն ու Բիւզանդիոյ կայսերէ շատ մը յիշատակներ ունի քաղաքիս անունով եւ Յօսիփոս անուամբ և զանազան պատերազմներով, մինչեւ Օսմանեան տիրապետութիւնը։ Ըղզարձակ գաշտի մը մէջ փոխադրուած է բարձրաւանդակէ մը՝ ուր կառուցուած էր հին Յօսիլէէն և որուն հնութիւնները ցարդ կը մնան փլփլած պարիսպներով։ Քաղաքիս մէջէն կ'անցնին Գօձասու և Սար–սու գետակները, որոնց վրայ կան հնաշէն կամուրջներ։ Վերջին ժամանակներս հրկիզութեն բաւական զարգացաց տեղւոյս վաճառականութիւնն։

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Հայաբնակ գիւղ Շապին–Գարահիսարի, 50 տուն բնակչօք։ Ունի վարժարան Ս. Աստուածածնի անուն վանքի մէջ 25 աշակերտներով։ Հոգագործ ևն։

ԷՍՊԻՎԷՐԿ. — Գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի։ Ունի 40 տուն հայ և Սուրբ Գևորգ անուն եկեղեցի մը։

ԷՎԷՐԿ կամ ԱՒԵՐԱԿ. — Գիւղաքաղաք կեսարիոյ. 1700 տուն հայ բնակիչ կայ բուն գիւղաքաղաքին և Ֆէնէկ կոչուած ա-բուարձանի մէջ. կեսարիայէն 5 ժամու ճա-նապարհ հեռու է արեւելակողմն, գեղեցիկ և զուարճալի վիրքով, առատ ջրով, և պար-տէզներով շրջապատեալ։ Ունի Մխոպեան երկսեռ վարժարան մը 440 աշակերտներով և ընթերցարան մը՝ որուն հասոյթը վար-ժարանին յատկացուած է. այս հաստատու-թիւնները կը կառավարուին Մխոպեան ա-նուն ընկերութենէն մը ջանքով։ Ունին Ս. Թորոս անուամբ եկեղեցի։ Կան բաւական թիւով բողոքական Հայեր։ Տեղւոյն Հայերը կը խօսին աղաւաղեալ հայերէն մը։ Էվէ-րէկ՝ բաւական լաւ տուներ ունի, որոնք կառուցուած են պարտէզներու մէջ։ Ամէն տարի Հայերէն 30–40 հոգի կ. Պոլիս և ուրիշ տեղեր կը գաղթեն. կան նաեւ 400 տան չափ թիւրք և յոյն բնակիչներ։ Էվէ-րէկ՝ Ակերակ բառին աղաւաղեալն կը կար-ծուի, և հաւանական է, որովհետեւ Էվէրէ-կէն 2–5 ժամ դէպի հիւսիս կը տեսնուին աւերակ պարսպած շէնքերու հին մնացորդներ։ — Էվէրէկ բսնելով կը հասկցուի իրարու կից չորս գիւղերու ամրողջութիւնը. այն է՝ բուն Էվէրէկ՝ 8–900 զուտ հայաբնակ տուներով. Ֆէնէկ՝ նոյնպէս հայաբնակ 7–800 տուներով. Թուրք գիւղ՝ թիւրքաբնակ է 500 տուներով. Ակ–կոստան՝ որ ունի 400 յոյն և թիւրք բնակիչներ։ Ֆէնէկէի մէջ ալ կայ Ռաբինեան երկսեռ վարժարան մը՝ 420 աշակերտներով։ Գիւղաքաղաքին մէջ Հայք ունին բացի վերոյիշեալ Մխոպեան ընկե-րութենէն նաեւ Ռաբինեան ընկերութիւն մը։ — Էվէրէկի արեւելեան կողմն, քառորդ ժամ հեռու, խաչին ձեւը բռնած բլուր մը կայ բաւական բարձր, որու գագաթի հիւ-սիսային ու հարաւային կողմերը մէկ մէկ հսկայ ժայռեր ցցուած են։ Ամէն տարի Աստուածածնի ծնեան շաբաթ երեկոյ այդ երկու ժայռերու վրայ մեծ հրավառութիւն կ'ըլլայ. տղայք 2–3 օր առաջ կը պատ-րաստուին՝ փայտեր և այլ այրելի նիւթեր վառելու համար. երկար ցցի մը ծայրը կապ կոչուած տեսակ մը փշալից և վիրաւոր խոտը կամ ուրիշ նիւթեր վառած՝ ցատկըտ-տելով կ'ազդարարեն անդադար. «Խաչին լեռը կը վառի»։ Գիւղաքաղաքէն 15 վայրկեան հեռու կայ Լոքմ անուանով լճակ մը։

ԷՎԼԻԱ. Տես ԱՎԼԻԱՐ։

ԷՎՃԱՆ. — Ինճիճեան կը յիշէ տանս Ամասիոյ գաւառին մէջ. կառուցուած՝ Սրհան-դի առատաբար. բնակիչը թիւրք և քրիստո-նեայք խառն։ Ունի իր անուամբ վանք մը։

ԷՎՃԻԼԱՐ. — Գիւղ Ալթարատայ ձո-կատաք գաւառի Սարմաշուի վիճակի մէջ, 1277 հայ բնակիչներով բաժնուած 172 տան։ Ունին դպրոց և եկեղեցի մը՝ որուն մէջ կայ Ս. Վարդանայ քարը։ Շատ ուխ-տաւորներ կու գան Գիւտ Խաչի տօնին։

ԷՎՃԻԼԱՐ. — Գիւղ Ալթարատայ Ամասիոյ (Լչմիածնի) գաւառի մէջ։ Ունի 648 հայ բնակիչ, բաժնուած 78 տան. ունին Ս. Աստուածածնի անուամբ եկեղեցի մը։

ԷՏԻՆՃԻԿ կամ ԿԷՏԻՆՃԻԿ. — Գիւղաքա-ղաք՝ Պանտըրմայէ $1^1/_2$ ժամու ճանապարհ հեռու, Զրնարըր լսուած անուանի նաւա-հանգստի հարաւակողմը. չորս լերանց գո-ահներու մէջտեղ բարձրացած։ Հին տանն նշանաւոր, ընդարձակ և բազմաբնակ քա-ղաք մ'էր. դեռ հնութիւններու բնակարներ կը տեսնուին։ 1000է աւելի տուն կայ. 300ը՝ Հայոց, 23ը՝ Յունաց և մնացեալը՝ Թուրքաց։ Ընդհանրապէս լայն ու ընդարձակ են տուները. Հայոց տուներու մեծ մասը հա-բաւականին է, իսկ փոքր մասն ալ՝ տեղ ի տեղս ցրուած։ Դիրքը բարձր է, և ձմեռը բաւական ցուրտ ու ամառը գով կը լինի. ջուրը առատ է ու չափաւոր ա-ռողջարար։ Պտղատու բնութիւն են. ցորեն, գարի, հաճար, ձիթապտուղ, շաղգամ, վուշ. կան ամէն տեսակ միրգեր, որոնց մէջէն ապրիկոտ է խաղողն. կը գտնուին արջառ և ոչխարք. այծը նշանաւոր է մեծութեամբ ու պարարտութեամբ։ Թիւնիները առատ են և շերամաբուծութիւնը բնակիչներու շահուն

գլխաւոր աղբիւրն եղած է։ Բնակիչներու մէկ մասն կը զբաղի մեռաքսի, ձկնի, բուրդի և այլ այս տեսակ իրաց վաճառականութեամբ, մեծ մասն հողագործ է. կան նաեւ կօշկակար, երկաթագործ, պայտար, սափրիչ, հացագործ, և այլն։ Կանայք և օրիորդներ շատ պարագաներու մէջ արանց վաստակակից են։ Բարեկեցիկ բնտանեաց կանայք շար շար ոսկիներ կը կախեն իրենց պարանոցէն մինչեւ կուրծքը։ Ընդհանրապէս ընկերասէր, հիւրասէր, պարկեշտ, հեզ, արժան ու հնազանդ են։ — Հնութիւններու ճեպագրիներ, աւերակներ, ծերբեր վկայութիւններ և այլ պարագաներ կը հաստատեն, թէ Հայերը 5–6 դարէ հետէ բնակութիւն հաստատած են Դիզաքաղաքին մէջ, Ռաբբինանց թագաւորութեան առեն կամ վերջը և կամ պարսկական Հայաստանէն գաղթելով։ Ծերերու պատմութեան համեմատ՝ հին ժամանակները Հայկական երեք եկեղեցիներ կան եղեր, բայց բարբարոս ձեռքեր երկուքը աւերակ գարձուցեր ու անհետ ըրեր են և միայն երրորդը մնացեր է Ս. Յարութիւն անուամբ. 1835ին ի հիմանց նորոգուեր է. 100 քառակուսի կանգուն տարածութիւն ունի. բոլորտիքը քարուկիր և առաստաղը փայտաշէն է, 8 փայտեայ հաստ սիւներու վրայ կը կանգնի. բեմն սրբատաշ մարմարիոններէ շինուած։ Եկեղեցւոյ վերաշինութեան առեն Ս. Նշանի գերեզմանատունէն բերուած քարի մը վրայ 584 տարուան յիշատակագիր մը տեսնուած է։ Եկեղեցւոյ բակին մէջ կայ բաւական ընդարձակ պարտէզ։ Անոնի Ս. Գևոնդեան անուն վարժարան մը։ Ընդհանրապէս Թրքաբնակ են։ — Դիզաքաղաքէն 8–10 վայրկենի ճանապարհ հետու դէպի արեւմուտք է Հայկական գերեզմանատունը, երկու արտաւարի չափ ընդարձակութեամբ. բոլորտիքը անպարիսպ, իսկ մէջը քանի մը անպտուղ ծառեր կան. մէջտեղը բարձրացող հինաւուրց կաղնիի մը ներքեւ Ս. Նշան անուամբ քարակոյտ սեղան մը շինուած է և դես կայ. 180–200 տարի յառաջ, այս կաղնիի ներքեւ կանգնելով եկեղեցական պաշտօն կը կատարեն եղեր։ Ցեղս Հայերը սովորութեան ուժեն եկեղեցւոյ հաստատէն մինչեւ հինգ տարի 1000–1200 դահեկան տարեթոշակ տալ նորընծայ քահանաներու։ Թուրքերը ունին 7 մզկիթ, մեծ և փոքր։ Դիւզաքաղաքի կառուցուած է Խորտկլիզ կոչուած բլուրի մը արեւելեան ստորոտին վրայ. կլիման բարեխառն է. ձիթենիներով և թմենիներով պարպարուած լայնածաւալ դաշտ մը չորս կողմէ կը շրջապատէ։ — Ըստ պատմութեան, հռովմէական պետութեան երեւելի քաղաքներէն մին էր, որուն մէջ Միհրդատ և Պոմպէոս զօրապետները միմեանց դէմ մեծամեծ ճակատամարտներ մղելով մէկ մասը աւերակ դարձուցած են Կիլիկիոն քաղաքի պաշարումն առտակացնելու կամ բառնալու դիտմամբ։ Դիւզաքաղաքին միջակայքը՝ սրբատաշ քարերով հոյակապ շէնք մը կայ, որ այժմ Թուրքաց գպրոց է. ստոր գետնից կը անուանուի չրնարի—տիպի կոչուած ստկայլի վայրը, որ ի հնումն արքունական մարդկանց զբօսատեղին՝ այսինքն կառափնտակայրն եղած է, հազարամեայ ծառ մը կը գտնուի հոն, որ 30 ոտք բարձրութիւն 20 ոտք հաստութիւն ունի և իր խորշին մէջ ի հարկին 20 մարդիկ կրնան ապաստանիլ պատսպարուիլ։ Լամնճիկի հիւսիսային կողմն կէս ժամու ճանապարհ հետու է Կիպիկոն քաղաքի բազմատարեան աւերակը։

ԷՏԻՆՃ կամ ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. Գաղ. ANDRINOPLE. — Եւրոպական Թուրքիոյ մէջ գլխաւոր քաղաք համանուն կուսակալութեան, Մարիցա, Թունճա և Ագրաս գետերու խառնուրդի մօտ, 220 հգմ. կ. Պոլսէն հետու արեւմտեան հիւսիսային կողմը։ Պարսպապատ է և բերդատեր. հաստացած կամ զբօսարան է Ագրիանոս կայսրը. որուն անուամբ կը կոչուի։ Բիւզանդական կայսերաց ժամանակ շատ դէպքեր ունեցած է։ 1360ին Մուրատ Ա. տիրելով, գրեթէ 100 տարի 1362էն 1453 թուականը, օսմանեան թագաւորները հոս նստան։ Հաստները քաղաքին տիրեցին 1828ին և հաշտութեան գալն կնքելով հեռացան։ Ունի 140000 բնակիչ, Թուրք, Հայ, Յոյն, Հրէայ, են։ Հայերը իրր 1000 տուն են. կը բնակին երկու թաղերու մէջ, որոնք կրկին եկեղեցիներու անուամբ՝ Ս. Թորոսի կամ Թեոդորոսի և Ս. Կարապետի թաղեր կը կոչուին.

այս թաղերը մերթ իրենց հին անուամբ Գալէ–իչի և Ալ–պազարը ևս կը կոչուին։ Անոնք արաբական և իտալական վարժարաններ՝ Աբշահունեան–Հոխոխեան, Թորգոմեան և Լուսաւորչեան անուամբ. երկուս աշակերտներու թիւն է 450. օտար վարժարաններ ալ կը յաճախեն 40ի չափ աղջիկ և մանչ հայ ազգէ։ Հայերը չունին այժմ այն հարբուսաւթիւնները, զոր ունեցեր են երբեմն անցեալ դարերու մէջ, և այդ ժամանակի հաստատութիւնները՝ սեղանատուր ու պրամատէր, նկիզիցյն կտակներ կամ նուիրեր են շատ կալուածներ։ Քաղաքս ունի վիճ պերճութիւն, բայց օդն ու ջուրը առողջարար չեն։ Տիզուցյ հայկական պերեզմանատունն գնած է Մեծ. Ալբս չէլէպի և իր մօտիկներն ալ հոն թաղուած է։ Շէնքերու մեծ մասը կառուցուած է նախնի ճարտարապետութեամբ։ Նշանաւոր է Սուլթան Ակլիմ Բի մզկիթը. շատ գեղեցիկ է Ակբայ–իչի անուն գրօսավայրը։ Գլխաւոր բնակիչներն են զանազան արմատիկ և խառզ։ – քաղաքիս Հայերը ունին 1856ին հիմնուած բնակարանութիւն մը՝ «Ի սէր Քիստոսի ապրատացելոյն», անուամբ որ հետզհետէ զարգացած հարստացած է ժողովրդեան նպաստներով։ Այս բնակարանները կը թնամէ ապրատները, բժիշկ ու դեղ կը դրկէ չքաւոր հիւանդներու, և այս բնակարանութեան շնորհիւ քաղաքիս մէջ հայ մուրացիկ չի տեսնուիր։ – Հաստատական կը կարծուի թէ՝ Ակրիանուպոլսի Հայերը գաղթած բլլան այն տեղն, երբ Հայերը գունապատնով կը գաղթէին Լեհաստան, Մոլտաւիա և ուրիշ տեղեր։ Իսկ ժողովրդեան մէջ աւանդաբար կը պատմուի թէ՝ օսմանեան թագաւորներէն Սուլթան Ակլիմի օրով (1500ին) քաղաքիս մէջ կառավարական հայ պաշտօնեայ մը պղտղարական ծէսով պսակուած է՝ հայ քահանայ չգտնուելուն համար, թէեւ հայ գաղթականները միշտ իրենց հետ անբաժան ունէին հայ քահանաներ։ Ուրիշ աւանդութեան մը համեմատ՝ քաղաքիս Հայերը եկած են Սուլթան Ակլիմի հրաւիրմամբ, իր շինել տուած համանուն մզկիթին կառուցման իրր արհեստաւոր աշխատելու համար, և մզկիթին երկարատեւ կառուցման պատճառաւ՝ հայ գործաւորները սոխրտեր են՝ իրենց ընտանիքն ալ փոխադրելով հաստատուիլ, և այնուհետեւ ուրիշ Հայեր ալ աւելնալով բազմացեր են։ Քաղաքիս Հայերը տակաւին մեծ մասամբ անդէտ են իրենց մայրենի լեզուին. ընդհանրապէս վաճառականութեամբ կը զբաղին և արհեստաւորներ տակաւին են։ Աբեւելեան երկաթուղիներու երկաթագործարանին շնորհիւ երկաթագործութեան արհեստն բաւական զարգացած է։ Տիզուցյ Հրեայք վաճառականութեան մէջ անմրցելի յառաջադիմութիւն ունեցած են և ցարդ ունին։ Հայկական Ս. Թէոդորոս եկեղեցին ժամանակաւ Յոյներէ առնուած Հայոց սրուակ է, և այս պատճառաւ ցարդ պահուած է հին անուամբ։

ԷՐԱՒ. — Բրդարնակ գիւղ Քաղէշի Մօտկան գաւառակի։

ԷՐԱՒԱՆԻ. — Բազանոց՝ վաճառական Մամիկոնէի վրայ գրած առեն կը յիշէ բերդս Տայոց մէջ. «Ապա երթեալ գառնէին գնա յիւրաքանչիւր գաւառի ի Տայս, յիւր ամուր բերդին, ուրաքանչիւր անուն էրաւանի կոչի»։

ԷՐԵՆՃ կամ ԷՐԵՒՋ. — Հայաբնակ գիւղ Ալբյաքի կիւլտան (Ջուանշիր) գաւառի, խոր և հովիտներ ունեցող ձորի մը մէջ, որուն արեւելեան, հարաւային և հիւսիսային կողմերը բարձր լեռներ կան։ Օդն, կլիման և ջուրն լաւ են. բնակիչները բնիկ, որոնք մերիքներու հետ զգացած են բնակելու Բոլնոս և յետոյ վերադարձած են։ Ընդամէնը 748 հոգի են, բաժնուած 78 տան։ Ունին Ս. Սարգիս անուամբ փոյ սիներով բարձրաշէն եկեղեցի մը. մէջը կան մի քանի յիշատակարաններ և հնագոյնն ունի 1450 թուականը։ Գիւղիս արեւմտեան ստորոտի խոր ձորէն կը հոսէ Կուրակ գետակի ժանդակ փոքր–Կուրակ անուամբ վտակ մը։

ԷՐԻՆՃ. — Կը յիշէ Ինճիճեան Ալբսւիսի գեղերու շարքի մէջ։

ԷՐԻՉ կամ ԷՐԻՋ. — Ա.յժմ ալլազգայնակ գեղեցկադիր գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, Համամուն ձորակի մէջ։ Հարաւային կողմէ ունի աւերակ բերդ մը քարաբլուրի ծայրը և գերեզմաններ։ Սիւնեաց նոյն գաւառի մէջ Էրդիչ պաշի անուամբ երկարաձիգ լեռ մը կայ։

ԷՐԶԷՆԻ ՋՈՒՐ կամ ԱՊԻ ԷՐԶԷՆ. — Գե-

ական Աղձնեաց Խոտ գաւառի մէջ, ունի քա-
րաշէն կամուրջ. օժանդակ է Տիգրիսի։

ԷՐԶԻՆՃԵԱՆ. — Թուրքերէն անուն Երզն-
կայի։

ԷՐԶԻՈՒՄ կամ ԷՐԶՐՈՒՄ. Տես ԿԱՐԻՆ։

ԷՐԶՆ. Տես ԱՐԶՆ։

ԷՐԶՈՒՆԻ. — Գիւղ Ծոփային Կիլիկիոյ. ծա-
ռաւէա է և ճոխ բուսականութեամբ։

ԷՐԻԿԻ, ԷՐԻՑԻ, ԱՌԱԿԻ կամ ՀԵՐԱԿԻԱ.
— Քաղաք լճանային Կիլիկիոյ, Իկոնիոնի
կառավարութեան և կեսարիոյ առաջնորդու-
թեան համանուն վիճակի մէջ։ Կը պրա-
նուին Պուլիար և Գարաճա լճակներու մի-
ջակայքը, գալարագարշ բլուրի մը վրայ։
Ունի 20000ի մօտ բնակիչ, մեծամասնու-
թիւնը թուրք։ Հայերը 130 տուն են և ու-
նին Ս. Աստուածածին եկեղեցի մը և Ռու-
բինեան անուամբ վարժարան մը՝ 50 աշա-
կերտներով. կան նաև Ցոյներ։ Պատմիչ-
ները կ'աւանդեն՝ թէ «Լեւոն էառ զԱռակ-
լիա և զիսաւրիա, և ընդ գանձուց փոխա-
նակեաց բազում ամրոցս և զղեակս»։ Հայե-
րը կարճատեւ իշխանութիւն ունեցած են
Առակլիի վրայ, բայց արեւելեան սահման-
ները երկար ժամանակ պահած են իրենց
ձեռքը։ Սուլթան Քէյքաուս պատերազմ
մղեց Առակլիի համար։ Հեծեմի օրով Հայոց
ձեռքը չէր քաղաքս։ Էրէկլի կը համարուի
հին Կիւբիստառան, որ կապադովկիայի թեմ
էր։ Քաղաքս Կիլիկեանի ձմերանոց եղած է,
երբ նա կառավարէր Կիլիկիոյ և երկիրը կը
պաշտպանէր Հայերու և Պարթեւներու դէմ։
— Միսուռաճ, 153–176։

ԷՐԻՄԻՐՈՒ. Տես ՀԷՐԻՄԻՐՈՒ։

ԷՐԻՑԻ. Տես ԷՐԻԿԻ։

ԷՐԻՆՃԻԿ. — Գիւղ Զարշամպայի՝ բարձր
բլուրի մը վրայ հաստատուած. բնակչաց
մեծ մասը հայ են։

ԷՐԻՐԻՆ կամ ԵՐԵՐԻՆ. — Հայաբնակ գիւղ
Վան–Տոսպ գաւառակի Թիմարայ մասին մէջ։
Ունի 100 տուն, Ս. Աստուածածին անուն
վանք մը, եկեղեցի մը և գպրոց։ Գիւղիս
մէջ կը գտնուին խաղողի քանի մը այգի-
ներ։ Էրէրինի մօտ է Աղուզ բուսած բերդը,
վանայ ծովակի եզերքը։ Գիւղս կը գտնուի
խաչկատար լերան հիւսիսակողմը, որ այժմ
Էրիրնայ սար կը կոչուի։ Այս բլուրի արեւմ-
տեան կողմը, Ս. Աստուածածնի վանքի պէս
Ե Բազեւիից ամսոյ վանքը։

ԷՐԸՆԿԱՆ կամ ԵՐԸՆԿԱՆ. — Գիւղ Վաս-
պուրականի Աղբակ գաւառի, Ս. Բարթու-
ղիմէոսի վանքէն $1\frac{1}{2}$ ժամու ճանապարհ
հեռու։ Ունի 60 տուն. 45ը՝ հայ, իսկ
մնացեալք՝ քուրդ։ Հայերը ունին կոփածոյ
սեւ, բայց ընտիր քարէ շինուած, փոքր պա-
տուհաններով մեծին եկեղեցի մը՝ Ս. Յով-
հաննէսի նուիրուած, որ կը կրէ հայկական
ՌՃՄ (= 1660) թուականը։ Ունի նաև
ծագկոց մը։ Գիւղիս մէջ Ս. Աստղիկ և Ս.
Մինասեանց անուններով երկու հին եկեղե-
ցիներու տեղերը կը տեսնուին, որոնք շրջ-
ջապատեալ են բազմաթիւ տապանաքարերով։
6–650 տարուան անյիշատակարար թուա-
կաններ կը նշմարուին տապանաքարերու
վրայ։ Ըստ աւանդութեան՝ 200–250 տա-
րի յառաջ գիւղիս հայ բնակիչները 500
տուն էին. այս աւանդութիւնն հաւանական
կ'ընեն իր շրջապատին մէջ գտնուած հին-
աւուրց տուներու փլատակները։ Էրընկան
ունի հոգային ընդարձակ կալուածներ և
խաշնարածութեան համար շատ արգաւառներ
վայրեր. միայն մէկ չրոյ քիչ մը նուազու-
թիւն կայ։ Ցեսարանը լաւ է և երեք կող-
մերէ հեռաւոր ու մերձաւոր լճակներէ շրջա-
պատեալ։ Ջմեռը տատիկ ցուրտ կը փչէ
լճակներու միջավայրերէն, այնպէս որ գիւ-
ղէս 10 վայրկեան հեռու երբեմն մարդ կը
դատի կամ բուքի բանուելով կը խեղդուի։
— Արեւմտեան կողմը, $\frac{1}{2}$ ժամու ճանապարհ
հեռու, կան երկու լայնայատակ լճակներ, ո-
րոնց մին՝ Մայրայրա կը կոչուի, գագաթը
կայ անծանօթ սուրբի կամ ճգնաւորի մը
գերեզման, և միւսն՝ Մայրանկայ սար։ Այս
երկու լճակներու արեւելեան տարածքը շի-
նուած է Աստուածածնի անուամբ փոքրիկ՝
բայց կոկիկ ու գեղեցիկ կամարակիւով վանք
մը, որ ցարդ հաստատուն և կանգուն կը
կենայ։ Կ'աւանդեն թէ գրեթէ երեք գար
յառաջ այս վանքը ունեցած է կանոնաւոր
միաբանական ուխտ և հայի համար մեծա-
մեծ ամրարներ, ինչպէս կը հաւատան վա-
րագայ վանքի մէջ պահուած ձեռագիրները։
Այս վանքը ուխտատեղի է կողմանց հայ
գիւղացիներու. Աստուածածնի ատենի խուռն

բաղմութեամբ կը պահեն և հանդիսաւոր ասոն կը կատարեն։

ԷՐԻԶԱԿ կամ ԵՐԻԶԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի մէջ։ Ունի 50 տուն հայ և քանի մը տուն քուրդ բնակիչներ։

ԷՐԻԿ–ՏԷՐԷ. — Գետակ քարայրն կիլիկիոյ, օժանդակ Կալիկադնոսի։

ԷՐԻՁԷՔ. — Գիւղ Զէյթունի, Լաչն–ափրէ կոչուած ձորակի սաորատը։ Բնակիչք այլազգի են. Զէյթունէն հեռու է 7 ժամ։

ԷՐԻՇՏԻՔ (Երաշտ եր). — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն (Մուշ) գաւառի, խաս-գիւղի արեւելեան հարաւային կողմը, $^3/_4$ ժամու ճանապարհ հեռու։ Ունի 50 տուն բնակիչ, եկեղեցի և վարժարան։

ԷՐԿԱՆ. Տես ԵՐԿԱՑՆ։

ԷՐԿԵՆԱՆՑ. — Գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի, Բարկուշատի վիճակի մէջ։

ԷՐԿԻ. Տես ԵՐԿԻ։

ԷՐՈՎ. — Ալլազդաբնակ գիւղ Ալբարատայ Ապագածոտն գաւառի Թալիշ վիճակի մէջ. Տէղեր գիւղէն մղոն մը հեռու։

ԷՐՁԷ ԿԱՏԻԻ. — Լեռ Կիլիկիոյ, 5000 ոտք բարձրութեամբ։


ԷՐՁԻՇ. Տես ԱՐԳԻՈՒ։

ԷՐՁԻՇ. — Գաւառակալ անուն Աբճէլի։

ԷՐՄԷՆԻ. — Գլխաւոր քաղաք Համանուն գաւառակի, Առատայի կառավարութեան մէջ։ Գաւառակն ունի 63 գիւղ՝ 27000 բնակիչներով. իսկ քաղաքն 8000 բնակիչ։ Կառուցուած է 1300 մեթր բարձրութեամբ լեռներու մէջ և 120 հազարամեթր հեռու է Սիւնիքիայէն, հիւսիս–արեւմտեան կողմը։ Նշանաւոր է այգիներովը ու ճոխ բուսականութեամբ։ Լրմէնէկ՝ հին ժամանակները Ծանօթ էր Գերմանիկուպոլիս կամ Ժերմանիկ անունով, որուն աւերակները կը շրջապատեն այժմեան քաղաքը։ Երբեմն եղեր է խոշոր մայրաքաղաք և եպիսկոպոսանիստ։ Ժամանակ մը առոր բնակիչները վաճառականութեամբ չէին զբաղիր և իրենց մեծաքանակ առաքաւորութիւնները կը պահէին Տօրոսի ծերպերու մէջ։ Լրմէնէկի բերդը շինուած լինելով 1800 ոտք բարձր լերան մը գագաթը՝ ձորերէն վրայ, անմատչելի է. հոն կը տեսնուին այժմ քարափոր սենեակներ և հռովմէական շինութիւններու մնացորդներ։ Քաղաքին արեւելեան կողմը գերեզմանատեղի է հին խաչապրշմ նշաններով, շատերը վիմափոր են. կայ նաեւ մատուռի հետք։ Ցայտնուած արձանագրութիւններէն մին կը կարդացուի այսպէս. «Գերմանիկոս, Հայերու դէմ պրկուած, հիմնեց այս քաղաքը, մեր թուականի 17րդ տարին»։ Մեր Ռուբինեանները Բիւզանեացիներէն վերջ ափրեցին Լրմէնէկի. ժի դարու վերջերը բերդաւէրն էր Հալկամ իշխանը, որուն ձեռքն էր նաեւ Լամասը և Ալնամասը։ Գրկեց Աղանի կառավարչէն ազատած 700 խաչակիրները հոս ապաստանած էին։ Ժամանակ մը քաղաքիս սահմանները վրայ, Թաթարներու արշաւանքէն փախած՝ հաստատուեցան Թիւրքմէնները։ Իկոնիոնի Սուլթան Ալայէտտին Քէյքուպատ, տեղւոյս տիրոջ 1228ին։ Ցետոյ տիրեցին Գարամանները։ – Լրմէնէկի շրջակաները կան անմատչելի բարձրութեամբ վիմափոր անձաւներ՝ որոնք ապաստանարան և թաքստոց եղեր են։ Կը պատմեն, իբր 17 տարի առաջ, կառավարական պաշտօնեայի մը խղդիրքով երկու բոշաներ մտեր են այս անձաւներու մէկի մէջ. հոն տեսեր են ընդարձակ վիմաւաշ սրահ, և տասը քեր են զանազան հնութիւններ, զրահ, սաղաւարտ, զէնք, մատանի, զրամ, և այլն։ Սիւռահ, 280–291։ Կիլիկիա, 268–271։

ԷՐՄԷՆԻ ՔԻՕՑ, ՀԱՑ–ԳԻՒՂ կամ ՀԱՑՈՑ ԳԻՒՂ. — Ջուտ հայաբնակ գիւղ Պանարբրմայի. ունի իբր 200 տուն, Ս. Աստղիկ եկեղեցի և Ս. Մեսրոպեան անուամբ երկսեռ վարժարան մը։ Հիմնուած է Մարմարայի ծովափանց վրայ Պագարաչ անուն նաւահանգիստին բերանը. Պանարմայէն ծովով $^3/_4$ և ցամաքով $2^1/_2$էն 3 ժամու ճանապարհ հեռու է։ Դիրքը լեռնային՝ երեք կողմերէ բարձր լեռնաբով շրջապատեալ։ Կլիման բարեխառն է. ունի պատուական և բազցրահամ ջուրեր, զոր նաւերով և էշերով կը կրեն Պանարմայի Հայերը։ Բնակիչները կը զբաղին բարեհաւատութեամբ, երկրագործութեամբ, շերամարուծութեամբ, ձկնորսութեամբ և ածխագործութեամբ։ Գիւղս երեք դարէ հետէ հիմնուած է հին կիզիկոն քաղաքի գերեզմանատեղւոյն վրայ. շրջապատեալ է 30ի չափ

յայն ու թաւրք դիպերէ, որոնք կը բաժանան Կիպիկոնի Թերակղզւոյն վրայ։ 1888 Թուին սոսկալի կարկտահատ փոթորիկ մը և դիպիս առուակի յորդումը 16 տուն և մէկ սրճարան կործանեց և երկրագործներու վնասեց։ Գիւղիս հիմնադիրն եղած է Պարսկաստանի սահմաններէն գալով Տ. Կոստանդ քահանայ Կոստանդեան։ Անոր Թոռան Թոն Սարքիս Կոստանդեանով, 1878ին 90 արբեկան և ողջ, պատմած է ինչ իր մեծ հաւն Կոստանդ քահանայ իրր երեք տար յառաջ գիւղին վերի կողմի լերան վրայ առաջին բնակութիւնն հաստատեր և այլն, անասուններն են եղեր, գոմէշ, այծ, և այլն։ Ամէն ամէնը հազիւ կը բաւէ բնակչաց, տան դի վարելու և սերմանելու ընդարձակ հող չունին։ Հայերէն չեն գիտեր, արք և կանայք ընդհանրապէս Թուրքերէն կը խօսին։ Կանայք կը գործեն իրենց հանդերձեղինաց վերաբերեալ կտաւն և կը հիւսեն փոխանակ։ Ի հնումն երկու եկեղեցի ունէին, երկուքն ալ Ս. Սարգիս անուամբ. հին եկեղեցին գիւղէն իրր կէս ժամու ճանապարհ հեռու՝ վերի լերան սոսրոտ շինուած է, ուր այժմ միայն մատուռ մը կայ, որ՝ հաւանականաբար Տ. Կոստան-



337. Էշքայ եկեղեցին հիւսիսային կողմէն։

տաեր և քաջութեամբ նաւաճելով իր վրայ յարձակող յիւղպահները, յաջողեր է բնաւնիւք հանդերձ խաղաղութեամբ ապրիլ. յետոյ լերան սարաւանդն և գէպի ծովեզերն յարմար գտնելով հոն փոխադրուիր է։ Գիւղիս գերեզմանատան մէջ կայ Տ. Կոստանդի գերեզմանն անշուք, անխուսական և առանց յիշատակարանի։ Հայոց գիւղի արեւելեան և արեւմտեան կողմերը կան գեղեցիկ և պազատէա պարտէզներ, արտօրայք և ականակիտ վտակներ. երկիրն ամէն տեսակ բանջարեղէն ու մրգեղէն յառաջ կը բերէ, մանաւանդ ձմերուկ։ Բնիքներն են ցորեն, գարի, բրինձ, ձիթապտուղ, լուբիա, սիսեռն, և այլն, անասուններն են եզն, գոմէշ, այծ, և այլն։ Ամէն ամէնը հազիւ կը բաւէ բնակչաց, տան դի վարելու և սերմանելու ընդարձակ հող չունին։ Հայերէն չեն գիտեր, արք և կանայք ընդհանրապէս Թուրքերէն կը խօսին։ Կանայք կը գործեն իրենց հանդերձեղինաց վերաբերեալ կտաւն և կը հիւսեն փոխանակ։ Ի հնումն երկու եկեղեցի ունէին, երկուքն ալ Ս. Սարգիս անուամբ. հին եկեղեցին գիւղէն իրր կէս ժամու ճանապարհ հեռու՝ վերի լերան սոսրոտ շինուած է, ուր այժմ միայն մատուռ մը կայ, որ՝ հաւանականաբար Տ. Կոստանդի գերեզմանատան մէջ հիւսիսային արեւմտեան կողմը պէտ է բլուրն ի վեր է, հաւանականաբար իրր 200–220 սարիէ ի վեր հիմնուած է. 1858ին հիմէն նորոգ շինուած է, ամբողջ քարուկիր և հոյակապ, հաստատուն սրմերով և սիւներով. բնին ու դրան շրջանակին սրբատաշ մարմարիոններէ. ներսի դրան վրայ օսմանեան արքունեաց ճարտարապետ Պալեան կարապետ Ամիրայի յիշատակագիրը կայ, որով կը յայտնուի թէ ինքն՝ իր Աստուած ազատ սրբոյն միջոցով մեծապէս նպաստած է վերաշինութեան համար։ — Գիւղին արեւմտեան կողմն լերան մը

ատորան է գերեզմանատունը՝ իբր 1½ արտաւար ընդարձակութեամբ. ամբողջ գերեզմանաքարերը եկեղեցւոյ շինութեան համար գործածուած են. պարիսպ չունի. մէջը կան քանի մը վայրի ծառեր և մեռոր շինուած է 1862ին աղբիւր մը։ Այդ գերեզմանատան վրայ բարձրացած լեռները Գափուտ–տաղի կը կոչուին. այս լեռներէն կ'ելնէ սեռակ մը արձաքար և կոփուելով կ. Պոլիս կը փոխադրուի։ Գերեզմանատան կից 3 արտաւար ընդարձակութեամբ բանջարեղէնաց դեղեցիկ պարտէզ մը կայ՝ որ աղբյուրի սեփհականութիւն է։ Ս. Սարգսի եկեղեցւոյն առաջ սեղանի դրսի պատին վրայ գետնուած է միակաւոր եռակամար խաչքար մը, որուն իւրաքանչիւր կամարի մէջ մէկ մէկ խաչ քանդակուած է և մէջտեղի խաչին վրայ արձանագրուած է. Ծիշատակ է սուրբ խաչս Մխիթաճին, ձախ կողմինին վրայ՝ Յուսեփին, աջակողմեանին վրայ՝ Նուրիճանին. կ'երեւի թէ վերի մասուէն բերուած է այս խաչքարը։

ԷՐՄԷՐՈՒ. *Տես* ՀԷՐՄԷՐՈՒ։

ԷՐՏԱԲԻՆ. *Տես* ԱՐՏԱԲՈՑՆ։

ԷՐՏԷՊԻԼ. *Տես* ԱՐՏԱԻԻԼ։

ԷՐՒԱՋ. *Տես* ԷՐԳԻՃ։

ԷՐԻՆՆՋ. — Մարաշու գաշտի մէջ հռոսղ հօթը գետակներէն մին։

ԷՐԻՒԼՄ. — Գիւղ կեսարիոյ, գէպի արեւմուտք 2½ ժամ հեռու, լերան մը կուշտը շինուած. դիրքը բարձր, օգառուն. այգիներով և պարտէզներով զարդարուած։ Երբեմն ունէր բազմաթիւ Հայեր, որունք յետոյ զաղթելով այլ և այլ տեղեր, այժմ միացեր են 25 տուն, և թրքախօս են. ունին Ս. Գէորգ անուն եկեղեցի մը և վարժարան։ Գիւղին մէջ կան նաեւ 1000ի չափ մահմետականն և 450 յոյն։

ԷՒԻՋԼԷՐ. — Լիս Ագրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ։

ԷՒՐԼԵԿ. — Հայաբնակ գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի, 30 տուն բնակիչներով։ Ունի Ս. Թորոս անուամբ եկեղեցի մը։

ԷՒՐԼԵԿ. — Գիւղ Եօզղատի, հայ և թուրք բնակիչներով։ Հայերը 320 տուն են և ունին եկեղեցի ու վարժարան։

ԷՕԶԼԻԼԻ. — Գիւղ Ալաճայի Բայաս գաւառի, Ջորք–Մարզուանէն 10 րոպէ ճանապարհ հեռու։ Ունի 300ի չափ տուն, որոնց 250ը Հայոց են և միացեալն Թուրքաց։ Հայերը Թրքախօս են. ունին հոյակապ եկեղեցի Տիրամօր անուամբ և վարժարան. կան նաեւ 15 տուն բողոքական Հայեր։ Գիւղս ունի շուկայ, պարտէզներ, արտեր, ծխախոտի վարչատուն։ Ամառները հոս կը փոխադրուի Բայասի գայմագամութիւնը։

ԷՕԶՊԻՆ. — Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ, 20 տուն հայ և 10 տուն մահ-




338. Էօշքայ եկեղեցւոյ հարաւային կողմը։

մէտական հոզագործ բնակիչներով։ Հայերը ունին Ս. Թադէոս ու Բարթուղիմէոս անուամբ եկեղեցի։

ԷՕՃԻՒԲԻԻԻ. — Լիս Ագրարատայ կազմիա գաւառի հիւսիսային կողմը. 1630 մետր բարձրութեամբ։

ԷՕՇՔ. — Թորթումայ (Տայք) լճին գլխոյն մօտ՝ հարաւային կողմը, գէպի արեւմուտք փոքրիկ վտակի մը եզերքը կը գտնուի գիւղս և կէս ժամ հեռու ալ նոյն անուամբ ամայացած վանք մը։ Դիրքը գեղեցիկ ու զուարճալի է, բարձր լեռներու սառոյցը,

սարատափ բլուրի մը վրայ, ճոխ բուսակատնեւթեամբ զարդարուած։ Վանքի շինուվիճները կործանած են և մնացեր է միայն հայկական եկեղեցին։ Շինուած է գեղնագոյն փայլուն քարերով. խաչաձեւ, 34 մետր երկայն և 22 մետր լայն թեւէ թեւ։ Զորս մեծամեծ բոլորաձեւ սիւներ կը վերցընեն շրջապոլոր գմբէթը, որ Հայոց ու Վրաց եկեղեցիներու ոճով վարի կողմը լայն կլոր է,



339. Հօշքայ եկեղեցւոյ արեւմտեան պատուհան։

վերը երթալով կը սրանայ և կոնաձեւ կը վերջանայ։ Գմբէթը հնուվիճամբը փլեր է, և այլազգիները շէնքը իրենց մզկիթի դարձնելով, անշնորհք և տգեղ կերպով ծածկած են գմբէթի գլուխը։ Գմբէթի շուրջը ներսէն սրահակի պէս պտրտելու տեղ կայ։ Սիւներու հաւասար բարձր կամարներ կը բռնեն եկեղեցւոյ բոլոր ձեղունը։ Արեւելակողմն է կիսաբոլորակ խորանն, երկու կողմէն ալ նեղ ու կրկնայարկ աւանդատուններ. թեւերուն քովերը երկերկու փոքր սենեակներ կան, իսկ եկեղեցւոյն վարը երկու կողմ ունի մեծ սենեակներ։ Երեք կողմէ ալ դռներ ունի, մեծ դուռն է արեւմտեանը, որուն առջեւ քառակուսի և նեղ գաւիթ մը կայ կիսակործան կամարներով։ Դրսէն հարաւային կողմի վրայ կիսաքանդակ քարէ պատկերներ կան լայնազգեստ մարդկանց, որոնք կը թուին եկեղեցւոյն շինողները, վասն զի անոր գաղափարն ալ ձեռքերնին է, ուրիշ կողմի քանդակներէն և զարդերէն զատ՝ խաչանին եզերքը նկարէն պատկերներ ալ կան։ Արձանագրութիւնները կարմիր ներկով գրուած են և ոչ փորուած, գեւ շատը անհետ մնացած. մեծաւ մասամբ վրացերէն են։ Ասոնցմէ կ'իմացուի որ շինողներն եղեր են Ամրներսեհ կիւրապաղատ, Բագրատ իշխանաց իշխան և Գաւիթ Մագիստրոս, ասոնցն ալ ժ. դարու առաջի կիսուն ապրող։ Եկեղեցիէն իբր քարընկէց մը հեռու քարշէն սենեակ կամ սրահ մը կայ ութ սիւներու վրայ բարձրացած, որուն ձեղունը ընկած է և կը կարծուի թէ վանքի խոհանոցն եղած ըլլայ. քովն ալ ուրիշ սենեակ մը կայ։ — Նշմարք, Գ 85։

ՀՕՏԻՄԻՇ. — Քաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան և առաջնորդութեան նեղքեւ. կառուցուած է Զմիւռնիոյ հարաւ–արեւելեան կողմը գեղեցիկ ու բարեբեր դաշտի մը վրայ։ Աւանդաբար կ'ըսուի թէ հին աւանն գեղեցիկ ազարակ մ'էր այդ դաշտը. մօտակայ գիւղէ ւը հետզհետէ գաղթականներ գալով արտեր գներ և բնակութիւն հաստատեր են արտերու մէջ, և թէ այդ արտերու գիւները վճարուելուն համար՝ ժողովուրդն սկսած է այդ նոր բնակավայրը կոչել Հօտէմիշ (վճարեալ)։ Հօտէմիշի առաջակողմը տարածուած դաշտագետինը կը հասցընէ ցորեն, գարի, կանեփ, բամբակ, ծխախոտ. ունի նաեւ այգիստաններ, ձիթենի, թզենի, խնձորի, տանձի և ուրիշ պտղատու ծառեր. կլիման բարեխառն և մեղմ է և ջուրն լաւ։ Զմիւռնիայէն երկաթուղիով 4 ժամ հեռու է։ Բնակիչք 18000 են՝ Թուրք, Յոյն, Հայ և անշնչան Թուով Հրեայ։ Ցոյները 550 տուն կը հաշուին, ունին երկու եկե-

գեղի, հիւանդանոց մը և երկու վարժարան. վաճառականութիւնը ընդհանրապէս իրենց ձեռքն է։ Հայերը 180 տուն են, որոնց նախնիք երեք հարիւր տարի յառաջ մայրենի երկրէն գաղթած են Պերկի անուն քաղաքաւանը որ Լօռէմիշէն 1½ ժամ հեռու է և ցոյց, գրեթէ 150 տարի յառաջ, ե՛կած հաստատուած են քաղաքս։ Ունին Ս. Հռիփսիմէ եկեղեցի մը՝ կառուցուած 1805ին, փոխանակ հնոյն՝ Ոզուն ազգ անուն փոզոցի ծայրը։ Քարաշէն է, ունի երկու դուռ, որոնց ճակատը կան քիչ տարածութեամբ պատկերներ։ Ազգ գրան երկու կողմն, ինչպէս նաև կողմնակի գրան ալ ու ձախին հաստատուած են գեղեցիկ բարձրաքանդակ խաչքարեր՝ հանգերձ յիշատակարաններով։ Ներքուստ ունի վեց սիւն և երեք խորան. աւագը՝ նուիրեալ է Ս. Հռիփսիմէի, ալա՛ կողմանը՝ Ս. Լուսաւորչի, և ձախակողմեանը՝ Ս. Յակոբոսի։ Այս խորաններու ալ ու ձախ կողմերն վերով պատին մէջ հաստատուած են գեղեցիկ քանդակուած խաչքարեր՝ 1805 թուականու յիշատակարաններով։ Որմերու վրայ կախուած պատկերներն ևս ունին նուիրատուաց յիշատակարաններ։ Եկեղեցիս ունի բաւական սուրբ անօթներ, արծաթեայ սպասներ և զարդեր, որոնց վրայ յիշատակարաններ ևս կան։ Եկեղեցւոյն պարտէզին մէջ կը գտնուի աղջկանց վարժարանը վարդուհեան անուամբ, ուր կը յաճախեն 100ի չափ աշակերտուհիներ։ Մանչերու Ս. Լուսաւորչեան դպրոցը կը գտնուի Ոզուն ազգագի մէջտեղը, ունի 100է աւելի աշակերտներ։ Լօռէմիշի Հայերը ժամանակ մը ունեցած են Ընթերցարան և ուրիշ քանի մը բարեսիրական ընկերութիւններ, որոնք հազիւ քանի մը տարի կեանք ունեցած են. ընթերցարանը կը գտնուի աղջկանց վարժարանի վարի յարկին մէջ։ Ցեղւոյս Հայերու անցեալը փայլուն եղած կ'երեւի. 25 տարի յառաջ պատահած աղետաբեր հրդեհն Հայերու թաղը աւերակ դարձընելով, իրենց յառաջադիմութեան մեծ հարուած մը տուած է և փայլուն վիճակնին նսեմացուցած։ Այժմ սովորաբար կը զբաղին առեւտուրով, կան բաւական թուով կօշկակար, դերձակ, դարբին, տաղաձագործ, սափրիչ, և այլն. հայ արհեստներ և օրթոդոքս մտաւոր գործուածներ կը հիւսեն։ Կը խօսին ընդհանրապէս մաքուր աշխարհաբար, ինչպէս նաև տաճկերէն. աշխուժները ունին խոսակցութեան յատուկ կերպ մը, որ պարսկահայոց և տաճկահայոց լեզուներու խառնուրդ մ'է։ Նշանաւոր են տեղւոյս Հայերը հիւրասիրութեան մէջ։ Մեզմէ պաշտ անուն փոզոցին ծայրը կը գտնուի գերեզմանոցը՝ քարաշէն որմերով շրջապատեալ, ուր կան երկու աղբիւրներ՝ շինել տուողներու յիշատակարաններով։ Գերեզմանատան մէջ կը տեսնուին բազմաթիւ տապանաքարեր՝ սիրուն գաղտաքանդակներով. յիշատակարաններէն հնագոյնը ունի ՌՃ (= 1651) թուականը։ Լօռէմիշի մէջ կան նաև քիչ թուով բողոքական Հայեր, որոնք ունին ազօթատան ու վարժարան։ — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, բ. 67–96։

ԷՕՐԹԻՒԼԻՒ. — Լիս Ա. Լուսաւորչի Նիզդաւան։

ԷՕՐԹԻՒԼԻՒ. — Եղիսաբեթակ կիզ Ա. Լուսաւորչ կոզովիա գաւառի. Կոզայուլաի շամլի արեւելակողմը։

ԷՕՐՏԷԿԱՒՒ. — Գիւղ Մխենաց Կամախան գաւառի մէջ։ Տես ՊՈՐՏԱԿ։

ԷՕՒԻՋ. — Գիւղ Տրապիզոնի. ունի 60 տուն հայ, Ս. Լուսաւորիչ անուամբ եկեղեցի մը և վարժարան։ Հողագործ են։

ԷՕՒԻՋ. — Լիս Ա. Լուսաւորչ Շիրակ գաւառի հիւսիսային սահմանի վրայ։

ԷՖԻՆՏԻ. — Գիւղ Ա. Լուսաւորչ Շիրակ (Ագնքասնպրապոլ) գաւառի մէջ. ունի 160 հայ բնակիչներ, բաժնուած 22 տան։

ԷՖԻՐԿ կամ ԷՎԻՐԿ. — Գիւղ կեսարիոյ առաջնորդական վիճակի. քաղաքէն 3 ժամու, Նիրղէէն և Ս. Կարապետի վանքէն ¼ ճանապարհ հեռու, ձորի մը երկու կողերուն վրայ։ Ունի 450 տուն հայ և 50 տուն մահմետական։ 1888էն սկսեալ կան նաև կաթոլիկ Հայեր և ունին առանձին եկեղեցի ու վարժարան։ Հայերը ունին Ս. Յակոբոս անուամբ եկեղեցի և Թորգոմեան–Ագապեան երկսեռ վարժարան մը՝ 170 աշակերտներով։ Գիւղիս ազգայինք մեծ մասամբ երկաթագործ են. կը խօսին հայե-

բէն, բայց աղաւաղեալ և երբեմն թրքախառն։ Գիւղս կը բաղկանայ երեք թաղերէ, թուքքերը կը բնակին հիւսիսային ու հարաւային ծայրերը։ Շուկային մէջ կան 20–30 խանութ, պէտք եղած ապրանքները միշտ կհասարիայէն կը բերեն։ Շէնքերը բաւական ճաշակաւոր են։ Ս. Յակոբեանս եկեղեցւոյն հիւսիսային արեւմտեան կողմը վայրկեան մը հեռու կը գտնուի Ս. Գէորգ անուամբ վիմափոր ուխտական մատուռ մը. մէջը կան 4 փայտեայ խաչեր, 3 պատկեր և փոքր սեղան մը, ուր տարին անգամ մը սուրբ Գէորգայ տօնին պատարագ կը մատուցուի. իսկ ամէն շաբաթ արբ և կանայք ուխտի կ'երթան։ Նոյնպէս՝ եկեղեցւոյն հարաւային արեւելեան կողմն, վիմափոր մատուռ մը կայ Ս. Աստղիկ, փոքրիկ սեղանով, 2 պատկերով և 4 փայտեայ խաչերով. կանայք Աստուածորդւոյ պահքի ժամանակ եթէ երեք օր ծոմ պահեն, չորեքշաբաթի երեկոյն կ'երթան մոմ կը վառեն այս մատրան մէջ, ուխտ կ'ընեն և ապա ուղղակի եկեղեցի երթալով Ս. Հաղորդութիւնը կ'առնուն։ Էֆքէրէի հարաւային կողմը փոքրիկ լեռնադաշտի ը ծայրը, կը տեսնուին անշէն հիւղակի մը չորս որմերը, որոնց արեւելեանի վրայ կը գտնուի Ս. Եղիայի անուամբ փոքրիկ սեղան մը, ուր ամէն տարի Ս. Եղիայի կիրակի օրը Պատարագ կը մատուցուի և մատաղ մը կ'ընեն, որուն կը մասնակցին գիւղացւոց ամէնքն ալ, հարուստ ու աղքատ։ Նոյն օրը շրջակայ գիւղերէն ալ բազմաթիւ երկսեռ ժողովուրդ կը գտնուի։

Ը

ԸԶՆԱԶՈՐ, ԸՂՆԱԶՈՐ կամ ԱՁՆԱԶՈՐ. — *Հայաբնակ գիւղ Միւնեաց Վայոց ձոր գաւառի։ Բնակիչք 400 հոգի են, բաժնուած 43 տան։ Գիւղս թէեւ հին է, բայց դեռ քննուած չեն հնութիւնները, եկեղեցւոյն և գերեզմանատան արձանագրութիւնները։*

ԸԼՃԱՆ. *Տես* ԻԼՃԱՆ։

ԸԽԵՅԻՒ. — *Գիւղ Արցախի Պագրատեան գաւառի, հիմնուած է սարի մը ստորոտը. բնակիչք 165 հոգի, բաժնուած 20 տան։*

ԸՂԸՐ ԹԼՓԻՂ. — *Լեռ Միւնեաց Ազահէճք գաւառի։*

ԸՂՆԱԶՈՐ. *Տես* ԱՁՆԱԶՈՐ։

ԸՂՈՒԵՐՋ. — *Հին գիւղ Միւնեաց Ծղուկ գաւառի։ Կը յիշուի գիւղս 1574–5 թուին Ս. Ստեփանոս ու Ս. Աստուածածին եկեղեցիներովը։ — Այս անուամբ գիւղ մ'ալ կը յիշուի Միւնեաց Հարանդ գաւառի մէջ, որ 12 բեռն հարկ կու տար Միւնեաց եկեղեցւոյն։*

ԸՂՏԱԶՈՐ. — *Գիւղ Կարնոյ, 60 տուն հայ և 30 տուն մահմէտական բնակիչներով։ Հայերը ունին Ս. Յակոբ անուն եկեղեցի և վարժարան։ Հողագործ են։*

ԸՂՏՈՒ ՔԱՐԵՐ. *Տես* ՆԵՐՈՎՔ։

ԸՆԾԱՑԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. *Տես* ՏԻՐԱՄԱՅՐ։

ԸՆԾՐՈՒՔ. — *Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի Խուլի գաւառակի։ Ունի 55 տուն հայ և Ս. Գէորգ անուամբ եկեղեցի մը։*

ԸՆԿՃԻԿ կամ ԸՆԿՈՒՃԻԿ. — *Գիւղ Խարբերդի. բնակչաց մեծագոյն մասը թուրք է, կան միայն 4 տուն հայ, առանց եկեղեցւոյ և վարժարանի։*

ԸՆԿՈՒՃԱՁՈՐ. — *Միւնեաց Երնջակ գաւառի մէջ կը գտնուի այս անուամբ ձոր մը՝ լի ընկուզենիներով։*

ԸՆԿՈՒՃԵԿ. — *Գիւղ Թորթումայ, որուն մօտ բերդ մը կայ Ընկուզիկ բերդ կոչուած։*

ԸՆԿՈՒՃԵԿ կամ ԱՆԿՃՈՒԿ. — *Լեռ Կիլիկիոյ, Զէյթունի մօտ, արեւելեան հարաւային կողմը։*

ԸՆԿՈՒՃԻԿ. — *Գիւղ Մշոյ Բանաշէն գաւառակի։ 10 տուն հայ կան, Ս. Յակոբեանց անուամբ խանգարուած եկեղեցիով մը, և 8 տուն քուրդ։*

ԸՆԿՈՒՃՆԱԿ. — *Գիւղ Տիգրանակերտի Խիան գաւառի։ Ունի 60 տուն հայ և եկեղեցի մը։*

ԸՆԿՈՒՃՈՒԿ. — *Լեռ Աղբատաւայ Գաբիզնը գաւառի։*

ԸՆԿՈՒՃՈՒՏ. — *Կիլիկիոյ մէջ կը յիշուի ի հնումն այս անուամբ բերդ և վանք մը։*

ԸՆԶԱՀԻՑ ՁՈՐ. *Տես* ԱՆԶԱԻԻՁՈՐ։

ԸՆԶԱՔ կամ ԸՆԶԱՔՈՒՔ. — *Հայաբնակ գիւղ Վանայ Գաւաշ գաւառակի։ Ունի իրը 30 տուն բնակիչ և եկեղեցի մը։*

ԸՆԶԱՔԻԱՐՍ կամ ԸՆԶԱՔԻԱՆ. *Տես* ԿԱՊՈՒՏԿՈՂ։

ԸՆՃՂԱԿ. — *Գիւղ Զարսանճագի Խոզագ գաւառակի. ունի 28 տուն հայ, Ս. Սարգիս անուն եկեղեցի մը և 20 տուն թուրք։*

ԸՆՁՂԱԿԵՐՏ. *Տես* ՁԱՀՈՒԿ։

ԸՆԶԻՆ *կամ* ԱՐԻԵԱՆՍ. — *Բիզանդ կը յիշէ գիւղս Աչրարատայ մէջ, ըսելով. «Վազ հասուցանէք ի գաւառն Աչրարատու, ի մեծ գիւղն Ըճչին արքունի որում Արդեանան կոչեն»։*

ԸՆՏՐՈՒՆԻՔ. — *Անուն նախարարական տոհմի և գաւառի. կը թուի բղլալ վասպուրականի մէջ։*

ԸՇԸԳԱՒԻՒ. — *Լիս Սիւնեաց Աղահէնք գաւառի,* 1087′ *բարձրութեամբ։*

ԸՇՏԻ. *Տես* ՇՏԻ։

ԸՇՏԿԱՄԱՅՐԻ. *Տես* ՆՂՈՒԿ։

ԸՇՐԼՖԹԵԱՆ. — *Մահաւարտակ Հայոց գիւղ Տարսիսեանի Տարօն գաւառի, Մշոյ դաշտի մէջ։*

ԸՈՐՏԻ. *Տես* ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԸՈՐՄԲԻ ԽՈՒ *կամ* ՌՄԲԱՍԱՐ. — *Լիս Աբցախի, յորմէ կը բղխէ Թարթառ գետը։*

ԸՈՒՆՑ *կամ* ԻՐՆՑ. — *Ալիմ Թաւրքաբնակ* (44 *տուն*) *գիւղ Աչրարատայ Արագածոտն գաւառի։*

ԸՈՒԿԱՒԱՅ. — *Գիւղ Սալմաստ գաւառի.* 8 *տուն հայ կայ։*

ԸՈՒՆԱ *կամ* ԱՈՒՆԱ. — *Պարսկահայոց հին գաւառներէն մին։*

ԸՈՒՆԱՁՈՐ *կամ* ԼՈՒՆԱՁՈՐ. — *Գիւղ և ձոր Սիւնեաց Աբեւիք գաւառի մէջ. բնակիչները այլազգի են։*

ԸՈՒՇՏՈՒՆԻՔ. *Տես* ՈՇՏՈՒՆԻՔ։

ԸՈՒՏՄԱՆՑ. *Տես* ԿՈՎԱԿԱՆ։

ԸՈՒՏՍՏԱԿ. *Տես* ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

ԸՈՒՇԱՆԱ. — *Գիւղ Ագուանից կոկիսան գաւառի, շինուած Պօղ–ապուի հիւսիսային կողմի բարձրութեան վրայ, անտառներու մէջ։ Օդն և կլիման ծանր, բայց ջուրն առողջարար է։ Բնակիչները գաղթած են Խաչենի Խանձէ և վարանդայի կիշի և Նիւնկի գիւղերէն. 62 տուն են. անոնք Ս. Աստուածածնի փայտաշէն եկեղեցի մը։ Գիւղիս հիւսիսային կողմերը կան հին գիւղերու տեղին և հանդուսարաններ, որոնց մէջ կան հայկական արձանագրութիւններով խաչքարեր։*

ԸՈՒՍԹԱԻԱ. *Տես* ՈՐՄԻ։

ԸՈՒՍԿԵԱՀ. — *Հին գիւղ Սիւնեաց Բաղք (Ձճանան) գաւառի մէջ։*

ԸՈՒՍՏԱԿ. *Տես* ՀԱՔԵՐՔ։

ԸՈՒՍՏՄԱՆՑ. *Տես* ԲԱՂՔ։

ԸՍՏԻՄԱԿԱՆ ԴԱԻԱՒ. *Տես* ՀԱՔԵՐՔ։

ԸՍՏՇՈՒ ՅՈՎ. *Տես* ԱԼՀԱՐԱԿ։

ԸՐԿԵՆԱՆՑ. *Տես* ԲԱՂՔ։

ԸՐՎԷՆԲ. *Տես* ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՏԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

Էջ	սիւն	տող	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՒ
2	Բ	18	Ջրաբերդ	Գաբդման
117	Ա.	16	Զէթ	Զեթ
227	Ա.	10	և Ս. Յովսէփայ	և կրկին Ս. Սահակայ
267	Ա.	4	Սէօհրիկ	Սէօհրիւլ
344	Ա.	18	Յակովբ	Յովաբ

472–3 Գաբդմանայ նկարագրին մէջ կրկին Գաբդման գաւառները սխալմամբ միացուցած են, որոնց մին կը կոչուի Շամախու Գաբդման և միւսն Աղբակի Գաբդման. կան նաեւ կրկին Գաբդման գեաւղեր։

422 էջի մէջ սխալմամբ տպուեր է Ս. Հռիփսիմէի վանքի պատկերը փոխանակ Ս. Գայիանէի։

